ԱՆԴՐ - ,,լեառն մի է յոյժ անհնարին բարձր, որոյ անդր քան զնա չի՛ք բնակութիւն մարդկան,,. – 48. այսր անդր կորզեալ զկարգ բնութեան առ ի յընդդէմս հրամանին Աստուծոյ դիմագրաւեալք – 28. Արդ եթէ Սոդոմայեցիքն, որ հրով զվրիժուցն հատուցին փոխարէնս, և դարձեալ տանջելոց են՝ որ բովանդակ չարիւք անդր երթալոց են ո՞րպիսի ակնկալութիւն տանջանաց զանց արասցէ զնոքօք. – 336. բաժանեն զաշխարհս յերիս մասունս. տալով Աշոտի … Իսկ Գագիկ զկողմանս Ռշտունեաց այլովք մօտակացիւք գաւառօք, և որքան իցէ հասումն ուժոյ՝ անդր ևս յաշխարհն Մոկաց: - 360. գտանէ և ի վերագոյն լերինն անդր ի հարաւոյ կողմանէ աղբիւր սակաւաբուղխ – 88. և զՄարդաստան գաւառ զբուն բաժին տուեալ ցԳուրգէն, և նորա զիւր գործակալս թողեալ անդր: - 326. և կարաւան գաղթականին տեսանէր զփայլիւն զինուցն և զշողալ սուսերացն, և այսր և անդր խուճապական լեալ հալածեալս, իբրև զոչխարս ի գայլոց: - 228. և անդ լինէին ժողովեալ ամենայն բազմութիւն աշխարհակոյտ ամբոխից գաղթականաց գաւառացն կողմանցն Աղբակոյ, Զարէհվանի և Ակէոյ և ի լեռնակողմանցն Աղզոյ և Ոտնն Առնոյ, մի կողմն ի Ջողայ լեռնէն և անդր: - 226. և անդր գումարեալ են ամենայն զօրք և ռամիկք աշխարհիս, արք կորովիք և պատերազմողք, որք ոչ դառնան ի սրոյ. – 212. և բազմութիւն զինուորաց վառելոց աստի և անտի, և վարոցաւորք և սակրաւորք այսր անդր քշել զամբոխն դռոթեալ. – 236. Եւ դարձոյց անդ զսահմանս անդր փոխելոյ գեօղիցն: - 396. և երթեալ ի բուրաստանն՝ գտին զնա ի թաւի անդ ղուղեալ, կալան զնա և եկին աձին զնա ի դախղիճ անդր: - 152. Եւ զԶրադաշտ մոգ արքայ Բակտրիացւոց և Մեդաց ընկճեալ հալածեաց մինչև ի սահմանս Խեփտաղաց, հզօրապէս տիրեալ բովանդակ Խուժաստանի և կողմանց արևելից և Պարսից, անդր ևս քան զԲահխ և զԴեպուհան , ի Գովմայիդ և ի Գուզբան, ի Շերիբամական /գրքում՝ Շերիբամամական/ և ի Խոճիհրաստան, և միանգամայն ասել մինչև ի ծովն Հնդկաց՝ յոյժ արութեամբ – 44. և ի հասանելն նորա անդր թողեալ զհակառակաբար մարտն՝ խօսին ի խաղաղութիւն, առաջի եդեալ զիրամանն արքունի, զգլխաւորին Տաճկաց, և Աշոտի հաւատալ զբոլոր տէրութիւնս Վասպուրականի: - 316. Եւ ի վաղիւ անդր մինչ դեռ արևն ընդ ծայրս հարկանէր՝ կարգեցաւ պատերազմ սաստիկ – 140. և կարգել նմա ռոճիկս առատապէս, մինչ ինքն պարապագոյն ժամու անդր հասանիցէ: - 70. և կացին մնացեալ անդր մինչև ի դարձն Արտաշէսի որդւոյ Սանատրկոյ, որ եկեալ այսր թագաւորեաց, սպանեալ զԵրուանդ: - 82. զոր անյապաղ փութով զզօրսն հարաւայինս և հիւսիսայինս տալ ի ձեռս Քսերքսեայ և Արշէզայ որդւոյ նորուն Քսերքսեայ զի փութով անդր հասցեն. – 64. զորոյ չունի բան ասել անդր ևս քան զնա յարևելս ունել բնակութիւն մարդկան. – 18. մինչ նոքա գունդ առ գունդ ընդդէմ միմեանց ճակատեալ կազմէին զռազմն, և փողքն գոչէին և դրօշքն տարածանէին

և նշանքն փողփողէին, վահանաւորքն և նիզակաւորքն գոչէին, այրուձին այսր անդր վազս առնէին և ախոյեանքն յարձակէին, կապարճակիրքն աղեղանցն յուրային: - 174. յերկրորդն հարկ է մեզ զոճն կանոնել, որ յետ Նոյի և անդր ազգացն բաժանմունք յառաջ խաղան, ըստ ցեղից ցեղից ի կարգ անկեալ աշխարհաբաժին ցեղակարգութեամբ. – 12. Փութանակի և վաղվաղակի իւրաքանչիւր զօրօք անդր հասանէին՝ իշխան Աշոտ և եղբարք իւր Գուրգէն և Գրիգոր զօրօք իւրեանց – 174.

ԱՆԴՐԱՆԻԿ - Դարձեալ և յընդդիմակէն՝ ած և Աբէլ ի յանդրանկացն և ի պարարտիցն: - 24. Իսկ եթէ՝ մշակն մեղաց և անդրանիկն ամենայն չարեաց, որ ի յօձն բունեալ ոչ անիծաւ, որպիսիս ուսուցանէ վնասապարտութիւն օձին առ ի պատժականութեանն գտանել պարտաւորութիւն, որ ոչ յընքենէ միայն, այլ մանաւանդ ի գտողէն չարեաց: - 22.

ԱՆԴՐԴՈՒԵԼԻ - Իսկ թագաւորն գիտացեալ զհաստատուն և զանդրդուելի միտս նոցա՝ ոչ ինչ փոյթ արարեալ թողու ի կամս կամաց իւրեանց, կեալ որպէս հաճոյ թուի: - 132.

ԱՆԴՐԷՆ - ասէ, զի կացուցի թագաւոր ձեզ յազգէ և ի դենէ ձերմէ, մի՛ ծանր թուիցի ձեզ դառնալ անդրէն և ունել զիւրաքանչիւր ժառանգութիւն. – 110. Գրէ բազում անգամ Սմբատ առ Ահմատ՝ թողուլ անդրէն զաշխարհն, տալ ի ձեռս Աշոտի որդւոյ իշխանին Դաւթայ. - 366. դառնալ անդրէն ոչ կամէին, զի կարի սաստիկ ամօթս համարէր զգործեցեալսն, կալ տևել ժուժկալել ընդդէմ նոցա ոչ կամէին, զի բազում անկան ի զօրաց իւրեանց: - 276. և իբրև զեկուցաւ նմա եղեալքն՝ դարձաւ անդրէն գնաց յիւր ճանապարհ: - 332. և ինքեանք դարձան անդրէն. կարծէին ի սպառ հարկանել զգունդն Հայոց. – 308. և Սահակայ յղեալ առ Սմբատ՝ մի կալ մնալ ի լերինն, այլ փութալ ելանել դառնալ անդրէն ի հետևի զօրս անդ զի ոչ ելանէ, ասէ, Երուանդ զօրու ի սահմանս Մարաց. – 84. Իսկ թագաւորն Պարսից ընդունէր զպատարագսն բերեալս ի կայսերէն,/144/և զհրեշտակսն անդրէն ոչ արձակեաց, և ոչ հրովարտակացն պատասխանի առնէր. -146. մասնաւոր ինչ մարգարէական ոգւով եղելում ի մարդն օժնդակ խորհրդածութեան արծարծել անդրէն ի ձեռն ապաշաւանացն զվրիպանացն կորուստ. ըստ այսմիկ և այլոց կենդանեացն զգայականօքն և թէ ունայնացելովք առ ի դոյզն ինչ զգուշաւորականս: - 22. Յետ այսր՝ յերկրորդ ամի պաշարեն զԿարնային քաղաքն զօրքն Յունաց. և դարձեալ անդրէն ի կամս իւրեանց թողեալ գնացին: - 358. որով առնիցեն ելանել ի կապանաց իշխանին Աշոտի և Գուրգինի, և դարձուցանել զիշխանութիւնն անդրէն առ իւրեանս – 368.

ԱՆԴՐԻ - զոր և անդրի ոսկեղէն կանգնեալ թագաւորին Բաբելացւոց՝ արձան քաջութեան առ ի յիշատակ: - 38.

ԱՆԵԲԻՍ - Անեբիս ծնանի զԱրբէլ - 42. Բաբ ծնանի զԱնեբիս – 42.

ԱՆԵԼ - Իբրև իմացան զօրքն Տաճկաց, թէ եմուտ իշխանն յամրոցն՝ զհետ մտեալ բազմութեանն այնուհետև, և շուրջ փակեալ անդէն զամուրն զանել գառագիղն: - 208.

ԱՆԵՂ - Ապա ուրեմն յայտ է ըստ կարգի ասացելոցս, եթէ որ շարժէ զերկնային մարմինն՝ մի է և անբաւ զօրութիւն ունի և անմարմին է և անեղ է անապական, և ինքն ոչ յումեքէ, և այլք ամենեքեանք նովաւ. – 54. և յայսմանէ յայտ է թէ անեղ է. – 54. Իսկ նա անեղ է և անբաւ, և ոչ յումեքէ եղեալ. և որ անեղ՝ նոյն և անապական և որ անապական՝ նոյն և մշտնջենաւոր. – 54. Իսկ նա անեղ է և անբաւ, և ոչ յումեքէ եղեալ. և որ անեղ՝ նոյն և անապական և որ անապական՝ նոյն և մշտնջենաւոր. – 54.

ԱՆԵՂԾ - և փոխեցին զփառս /52/ անեղծին Աստուծոյ ի նմանութիւն զոյիցս եղծանելեացս,,: - 54.

ԱՆԵՂԾԱՆԵԼԻ - Եւ յոյժ զուարճացեալ քաղցր բարբառովն Քրիստոսի, որ է անեղծանելի վճիռ քրիստոսասիրաց անձանց - 252.

ԱՆԵՐ - նուաճեաց զանձն, հրապոյրս պղտորս արբուցանէ Վահանայ Մամիկոնէի, որ էր աներ Մեհուժանայ, և անցեալ գնացին առ Շապուհ. – 102.

ԱՆԵՐԵԻԵԼԻ - և չորեքվտակեան անյաղթ և զօրաւոր գետովք ելանէ յաներևելոյն յերևելի աշխարհս: - 20.

ԱՆԵՐԵՒՈՅԹ - ,,զի աներևոյթքն աստուածայինք յարարածոց աստի, ասէ, իմացեալ տեսանին, այսինքն մշտնջենաւորութիւն և զօրութիւն և աստուածութիւն նորա – 54. Բայց բացումն

դրան քան զամենայն այս չար է որ յանեբևոյթս է բացեալ, դուռն կորստեան հոգոց՝ առաւել քան թէ մարմնոց – 196. Եւ ոչ արմատոցն միայն օտար և անիմանալի սարասիցն տիպք, այլ և անեբևոյթ պահպանողական և անհպելի զգուշաւորութիւնն. – 50. և տանջեալ զնա ջղոք՝ տայ նմա և զգանձս անեբևոյթս – 66. որք և ի մերձենալն անգամ տանջեալ լինէին յանեբևոյթ զօրութենէն – 50.

ԱՆԵՐԵՒՈՒԹԱԿԱՆ - ի խնամոտ և ի զգուշացուցիչ անեբևութականացն պահպանեալ ըստ օրինակի ցանկոյ ամրագունի – 52.

ԱՆԵՐԿԲԱՅ - Արդ ի գալ միւսոյ ամին որ յոբելեանք Զ և ոլըմպիատք ՀԲ, ընդիքտիոնք Ի … անեբկբայ խորհուրդ ի մէջ առեալ թագաւորն սինկղիտոսօքն հանդերձ և ամենայն մեծամեծօքն Բաբելացւոց , զի զիշխանս աշխարհին Հայոց ի բաց բարձցէ յիւրաքանչիւր տէրութենէ – 184. զի անսայթաք և անեբկբայ հաստատուն հաւատով ընկալցին զվճիռ մարտիրոսական, համբերութեամբ բազմաւ և գոհացողական օրհնութեամբ – 266.

ԱՆԵՐԿԲԱՅՈՒԹԻՒՆ - Բայց իբրև ետես բռնաւորն զանդառնալի միտսն և զանեբկբայութիւն հաւատոցն և զանեբկիւղ և զյանդուգն պատասխանիսն և զմեծ անարգութիւնն զոր հասոյց ի վերայ նորա և նոցին օրէնսդրին…բարկացեալ յոյժ հրաման ետ փութով զրաւ առնել կենաց նորա: - 206. և անեբկբայութեամբ փակես զամենայն ընդ լծով հնազանդութեան քո: - 196.

ԱՆԵՐԿԻՒՂ - անեբկիւղ համարձակութեամբ, բանիբուն համառօտութեամբ կարգեցին եդին առաջի բռնաւորին բանս գեղեցկայարմարս յԱստուածաշունչ գրոց վասն ի Քրիստոս հաւատոցն – 250. Բայց իբրև ետես բռնաւորն զանդառնալի միտսն և զանեբկբայութիւն հաւատոցն և զանեբկիւղ և զյանդուգն պատասխանիսն և զմեծ անարգութիւնն զոր հասոյց ի վերայ նորա և նոցին օրէնսդրին…բարկացեալ յոյժ հրաման ետ փութով զրաւ առնել կենաց նորա: - 206. Երկրորդ՝ չարասէր և անեբկիւղ նախանձուցն բարք, եթէ ընդէ՞ր ոչ և նորայն ըստ նմին օրինակի եղև արատաձգեալ յԱստուծոյ: - 24. և անեբկիւղ համարձակութեամբ լի ամբարտաւանութեամբ առնէր ասպատակ ընդ ամենայն կողմանս տէրութեան նոցա: - 274. և այլ ոմն յարտաքին իմաստնոց ասէ, ընդ անեբկիւղ ի ճանապարհ մի երթալ: - 354. Եւ Բուխայ հրամայեաց սպարապետին, զի անեբկիւղ կացցէ մնասցէ Գուրգէն առ սպարապետին մեծաւ շնորհակալիւք: - 304. Եւ ելեալ Աշոտ զհետ կոչնականաց Աւշնի՝ գնաց անեբկիւղ համարձակութեամբ: - 362. և եկեալ մտեալ յաշխարհս Հայոց անեբկիւղ համարձակութեամբ, խորհեալ խորհուրդ զոր ոչ կարաց հաստատել: - 106. Եւ երթայր անեբկիւղ համարձակութեամբ, քաջալերեալ ի միտս և խորհուրդս իւր ըստ պնդութեան արութեան իւրոյ քաջ նահատակն Ապումուսէ: - 288. և սկսան այնուհետև անեբկիւղ տարածանել ի վերայ երկրին. քանզի ոչ կասկածէին ի պատերազմէ իմեքէ: - 162. Եւ քանզի իշխանութիւնն Պարսից յոյժ լքեալ էր՝ և անեբկիւղ շինեցին զքաղաքն Մադիամ և բնակեցան ի նմա: - 156. զայն զինեալ ի վերայ անձանց՝ սաստկացուցանեն զպատերազմն, անեբկիւղ մնալով ի հրոյն տոչորմանէ. – 208. զի ասէ, ,,որ անեբկիւղն է՝ անկանի յորոգայթս և ի վիհս, և ի տեղիս ուր ոչ եղիցի այցելութիւն յաւիտենից,,: - 354. զի յորմէ սակաւ մի կասկածս ունէր՝ անտի ևս անեբկիւղ հաստատեցան: - 238. զոր արհամարհեալ Շաւասպ /114/ արձակերեսան զերիվարն ի սիգաքայլ արշաւանս արարեալ՝ անեբկիւղ համարձակութեամբ էանց գնաց ճեմ զճեմի առ զօրավարն Անատողի: - 116. Յայնժամ համարձակեալ եմուտ յատեան բռնաւորին և եկաց առաջի զօրավարին անեբկիւղ համարձակութեամբ առանց պատկառանաց, և ասէ – 218. որոց թողեալ զգործ պատերազմի ամրոցին՝ դարձաւ գնաց անեբկիւղ քաջասրտութեամբ ընդդէմ նորա օժնդակ զօրու Գուրգէնի – 334. սկսան այնուհետև անեբկիւղ համարձակութեամբ սփռել տարածանել ի վերայ երեսաց երկրիս ամենայն ազգքն Տաճկաց – 238.

ԱՆԵՐԿԻՒՂՈՒԹԻՒՆ - Եւ ի մեռանելն իւրում Աղէքսանդրու հաստատագոյն անեբկիւղութեամբ զթագաւորութիւնն իւր միապետեալ՝ կացուցանէ չորս զօրավարս չորեքծագեան

կողմանց աշխարհի, զՊտղոմէոս Եգիպտոսի և Հնդկաց, զՍելևկոս Ասիացւոց և ամենայն հիւսիսականաց, զԱնդիպատրոս Պարսից և ամենայն արևելից: - 70.

ԱՆԵՐԿԻՒՂՍ - Եւ այնպէս յանհոգս աներ<u>կիւղս</u> շհարկապահանջ գործակալօք վարէին: - 372. Իսկ առաւելեալն իմաստութեամբ Աշոտ ոչ յանհոգս և յաներ<u>կիւղս</u> կայր մնայր, այլ զգուշանալ հրամայէր ի խելս կամրջաց և յանապատս և ի կիրճս ձորոց: - 340. և արկանէին վիճակս և լարս ձգէին ի վերայ սահմանաց և բնակէին յամուրս աշխարհիս աներ<u>կիւղս</u>. – 238.

ԱՆՋԲԱՂԵԼ - որոյ սկիզբն է ,,<u>Անզբաղել</u> ական սրտի նայեցող անձն իմ ի միւսանգամ գալուստն,, , Ե տուն ի յութերորդ վանգէ: - 284.

ԱՆՋԳԱՄ - զոր և սուրբքն ասեն, եթէ ձայն դակուացն և բախումն խմբիցն առ ի հեղուսել զփայտսն՝ /28/ այնպէս իբրև յորոտման ամպոյ յամենեցունց հնչէր լսելիս, ի մօտաւորս և ի հեռաւորս, առ ի յերկիւղ և ի զգուշութիւն <u>անզգամ</u> ազգին, թերևս դարձցին և կեցցեն. – 30. Իսկ նա ի հրապոյրս ապստամբ վիշապին ելեալ, որ բազմախարդախ չարութեամբն եհեղ առատութեամբ զդառնութիւն խրատոյն յունկն կնոջն <u>անզգամի</u>: - 20.

ԱՆՋԳԱՅ - Բայց երանելիս այս Գէորգ, մինչ կայր ընդդէմ սրոյն և դահիճն ծեծէր իբրև <u>զանզգայ</u> ինչ, և ոչ փոքր մի գիծ կարացեալ հարկանել ի մարմին սրբոյն զխոցումն սրոյն – 266. նոյնժամայն առ յոյժ ամբարտաւանութեանն և սաստիկ բարկութեանն և անհուն սրտմտութեանն և առանց բուժելի կատաղութեանն, յապուշ միտքն կրթեալ իբրև զարբեալ <u>զանզգայ</u> արբեցութեամբ - 264.

ԱՆՋԳԱՅԵԱԼ - Ո՞վ անծախելի բարերարութեանն Աստուծոյ. ո՞վ անհատական մարդասիրութեանն, որ և դեռ ևս խնայել ասէ <u>յանզգացեալսն:</u> - 30.

ԱՆՋԳՈՒՇԱԲԱՐ - պատահեն միմեանց և մեռանի անդ <u>անզգուշաբար</u> ի յաւակնայեղց դիմացուածոյն: - 90.

ԱՆՋԳՈՒՇՈՒԹԻՒՆ - և լրտեսք քաղաքապետին փութացեալ ասեն, ,,ահա մեկնեալ ի զօրացն զհետ որսոց ինչ յանհոգս <u>յանզգուշութեան</u> գայ ընդ այս ինչ տեղի. - 352. Եւ ի միւսում առաւօտին հասին ի վերայ բանակին խոնջեալ երիվարօք, <u>անզգուշութեամբ</u> առ մուտն պատրաստեալ, և անկան ի նմին ժամու Բ ոմանք, Վլիթ և Մարաճայ. – 402.

ԱՆՋԻՂՋ - Եւ զի մի երկայնեալ որ ինչ վասն նորա ապիրատ և ինքնակամ և <u>անզիղջ</u> և անխիղճ առանց պատկառանաց մոլորութիւն սորա լի անամօթութեամբ՝ի բաց դիցուք զսա ի միջոյ յիշատակի նախարարացն – 248.

ԱՆՋՈՒԳԱԿԱՆ - Եւ ինձ ի վերայ տրտմականացն դէմ եղեալ առ կատարելագոյն և առ <u>անզուգական</u> անհամեմատ խնդութիւնն դեգերել, առ հոգևորական ուրախութիւնսն ընթանալ յետ մարմնական տրտմականացն յաճախութեանցն: - 386.

ԱՆՋՐԱԻ - Եւ Գուրգէն երկրորդ հրեշտակս յղէ առ նա զայս օրինակ, եթէ ,,ընդ իս հաստատեա <u>զանզրաւ</u> կապակցութիւն ուխտի խաղաղութեան. և ես ապստամբեցայց յԱշոտէ, և ի միասին բաժանեալ զերկիրս կեցցուք յապահովս,,: - 316. Թախիծք <u>անզրաւք</u>, քան թէ խնդութեանցն աճեն բողբոջք. – 384. որ անցուցանէ զանցանէ զանասնական խառնակութեամբքն երիքովեան և սոդոմական լրբութեամբ, անամօթաբար այր զարամբք բորբոքեալ, դեզադէզ զհրացանն բերելով յերկնուստ <u>զանզրաւ</u> կիզումնն, անցուցեալ զանցուցեալ զսատակչական կործանմանն ջրհեղեղին:- 336. քանզի որդիքն Սենեքերիմայ մեծաւ ցասմամբ և <u>անզրաւ</u> հաշտմամբ ընդ Աշդահակայն լինէին – 62.

ԱՆԷԾՔ - անմահից կենաց հաղորդն՝ ի ձեռն <u>անիծիցն</u> հողացաւ -.22. Առ որս ասեմք՝ եթէ ըստ ամենայն յեղանակի անբոյժն ի բարւոյ, ո՞չ մի ինչ ո՞չ ունի մասն ազնիւ՝ թէ ասիցէ ոք <u>անիծիւք</u> ի բաց բառնալ. – 22. և բանք սրբոյ Ներսէսի ընդ կենդանի բանին Աստուծոյ խառնեալ՝ դիւրագոյնս զհատուցումն արհամարհողացն հատուցանէր յօրհնութիւնս և <u>յանէծս</u>, անյապաղ զգործն կատարելով. – 100. Իսկ սրբոյն Ներսէսի իրազէկ եղեալ չարին չարաբարոյ չարախորհրդութեանն՝ <u>անէծս</u> մեծամեծս և ազդոյս և զօրաւորս դնէ ի վերայ Մարդպետին – 100. յետուստ երբեմն գտանէր ի ձեռն <u>անիծիցն</u> իմացեալք երկոքին. – 22.

Ուստի և ըստ կարգի մեղանացն՝ և դժուարինք անիծիցն հետևին, նախ օձին և ապա կնոջն: - 22.

ԱՆԸՄԲԵՐԵԼԻ - Բայց մեզ կայ առաջի ասել վասն Ջափրայ և չար գործոց նորա, անգիրս մնացեալ յայլոց, զոր կատարեաց ի վերայ աշխարհիս Հայոց երկայնագոյն ժամանակաւ և անըմբերելի նեղութեամբ ի մերս հանդիպեալ աւուրս, որ էր Հայոց Ց թուական: - 168.

ԱՆԸՆԴԵԼ - ,,ընդէ՞ր, ով աստուածասէր թագաւոր, իբրև ընդ համհարզս և ընդ ստամբակս, իբրև ընդ աննշանս կամ ընդ անընդել վայրագս խօսիս ընդ մեզ – 242. զի ինքն երթիցէ յարքունիս կեղծոտելով զսաստկութիւն ձմեռնային ժամանակին ի վերայ եղելոյ և զխստութիւն հիւսիսային օդոյն սառնամանեաց, անընդել զինքն այնոցիկ վարկանելով: - 186.

ԱՆԸՆԴՄԻՋԱԲԱՐ - Որով պատառեցան ամենայն աղբերք անդնդոց, և սահանք երկնից բացան անընդմիջաբար երկրի և երկնային ծովուն լինել, և համատարած ջրովն զրաւ առնել համօրէն ամենայն շնչաւոր կենդանեաց – 32.

ԱՆԸՆԴՈՒՆԱԿ - և անընդունակք լինէիք՝ որ ի մէնջ առաքեցեալքն հազարապետք և վերակացուք աշխարհիս մերոյ և խնամատարք արքունի հոգաբարձութեան գային առ ձեզ. – 244. Իբրև գիտաց իշխանն, եթէ վճարեալ է չարութիւնն յաչս նոցա, և այլ ընդ այլոյ խօսին, և ի գաղտնիս քրթմնջեն, և անտեղի և անընդունակ հրամանաց նորա լինէին՝ ետ պատասխանի և ասէ – 214. և խոտեալ ի բաց ընկենուք զմիոյ անընկեր և անվերոյ իրաց հանդէս, որպէս և իսկ կոչեցեալ մարգարէն ձեր Մահումաթ – 246.

ԱՆԸՆՉԱՍԻՐՈՒԹԻՒՆ - Այլ և ուսումնական բանգիտութեանն քաջահմտագոյն, անընչասիրութեամբն մեռելագոյն. առատաձեռնութեամբն կենդանագոյն: - 376.

ԱՆԹ - Եւ մեկնակազէնքն պատեցին շուրջ զեկեղեցեաւն, և ելեալ առ նա ոմանց ընդ փորուած գմբեթին՝ և եհար մի ոմն աշտէիւն ընդ միջոց թիկանցն՝ և ընդ անթովքն հանեալ ի ներքոյ թոքացն՝ փչեաց զոգին և թաղեցաւ զթաղումն իշոյ: - 190.

ԱՆԹԱՂ - և կացեալ զաւուրս բազումս անթաղ՝ և ոչ ինչ ամենևին արատեցան մարմինք սրբոցն, և ոչ գոյր հոտ ժախու ի վերայ նոցա: - 268. գունդ անթիւ բազմութեամբ եկեալ ի կողմանս Ատրպատականի ի Վառարատ գաւատի: - 138.

ԱՆԹԻԻ - և քանդեալ աւերեաց զամենայն ապարանս թագաւորին և այրեաց զնոսա հրով, և բազում գանձս մթերեալս յափշտակեաց անչափ աւարաւ գանձս ոսկոյ և արծաթոյ և հանդերձից, և անասուն բազում յոյժ, և բազմութիւն գերեաց իբրև զաւազ ծովու անթիւ: - 150. որպէս ցուցանեն յիշատակարանքն առաջնոց պատմագրաց, զաւերումն Հայոց և զյաճախել նեղութեանցն և զանթիւ բազմութիւն վկայից, որք վասն Քրիստոսի նահատակեցան,և զքաջապէս արիանալ սրբոց քահանայիցն – 128.

ԱՆԺԱՄԱՆԱԿ - Այլ անժամանակն Բէլ ծախի ժամանակաւ, նշկահեալ ի Հայկայ որդւոյ Թորգոմայ, որ ի տանէ Յաբէթի – 40. Իսկ սա ասաց զինքն հնագունիցն լինել անժամանակ Բէլ՝ /36/ ոչ հայր աստուածոց, այլ և հրամանատու Արամազդայ: - 38.

ԱՆԺՈՒԺԿԱԼ - սրտմտեալ անժուժկալ ի բարկութեանն ջերմագոյն արեանն մրրկալից շարժմանն, և սկսաւ թափել զմահածին թոյնս իւր ի վերայ կապելոցն, իբրև զթոյնս իժի – 242.

ԱՆԻԱՆՈՍ - և ի նոյն պատիւ թագաւորութեան կացուցանէ զԱնիանոս Բագրատունի: - 76. և կալեալ զԱնիանոս նահապետ Բագրատունեաց և սպարապետ Հայոց հանդերձ ընտանեօք և ամենայն ազգաբանութեամբ՝ արկանէ ընդ բազում չարչարանօք – 74. և կատարեալ զխնդիրն իջուցանէ զԱնիանոս ի փայտէն – 76. Եւ ոչ յանձին կալեալ Արջամայ վստահաբար առ իւր ունել զԱնիանոս՝ յղէ զնա ի Հայս: - 76. Իսկ Ջաջուռ Արծրունի ձեռն ի գործ արարեալ՝ մատուցեալ առ թագաւորն խնդրէ զԱնիանոս – 76.

ԱՆԻԱՆՈՍ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ - և ի նոյն պատիւ թագաւորութեան կացուցանէ զԱնիանոս Բագրատունի: - 76.

ԱՆԻԾԵԱԼ - որում պատուէր տուաւ չխառնակել յանիծեալ զաւակն Կայէնի. -26.

ԱՆԻԾԵԼ - Իսկ եթէ՝ մշակն մեղաց և անդրանիկն ամենայն չարեաց, որ ի յօձն բունեալ ոչ անիծաւ, որպիսիս ուսուցանէ վնասապարտութիւն օձին առ ի պատժականութեանն գտանել պարտաւորութիւն, որ ոչ յընդենէ միայն, այլ մանաւանդ ի գտողէն չարեաց: - 22.

ԱՆԻՄԱՆԱԼԻ - Եւ ոչ արմատոցն միայն օտար և անիմանալի սարասիցն տիպք, այլ և աներևոյթ պահպանողական և անհպելի զգուշաւորութիւնն. – 50.

ԱՆԻՄԱՍՏԱԲԱՐ - այլ փոխանակ սոցա մատեայ ի տեղիս յայս, ձեռն արկեալ անիմաստաբար լի անհմտութեամբ և անհանճարութեամբ բուռն հարկանելով զմեծ զայս քերթուածութենէ: - 122.

ԱՆԻՄԱՍՏԱՍԷՐ - Ընդ որ յոյժ զչարեալ սքանչելին Աղան Արծրունի որդի Վասակայ ընդ հօրն անիմաստասէր բարուցն անխորհրդածութիւն և ընդ այնպիսւոյ աստուածամարտին Մեհուժանայ գթասիրաբար վարել ազգականութեամբ – 112.

ԱՆԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ - Իսկ յետ Կ ամի անցանելոյ Աղէքսանդրի և անիշխանութեանն Հայոց և Պարսից՝ թագաւորէ Արշակ Քաջ Մարաց և Պարսից և Եգիպտացւոց և Ելիմացւոց ի Բախլ քաղաքի. – 72. Արդ են թագաւորք Ասորեստանեայց ի միւսմէ կողմանէն այսոքիկ. անիշխանութեան ամք ԻԸ: - 60. Արդ են ժամանակք թագաւորութեանն Պարսից, սկսեալ ի Կիւրոսէ ցԴարեհիոն … և ամք անիշխանութեանն զոր ոմանք ի պատմագրաց գրեն Կ, և այլք Հ – 166. Եւ առ այսոքիւք պատեհագոյնս իմն գտեալ իբրև յանիշխանութեան՝ ոմանք Ասորեստանեայք և Քաղդէացիք, յազգէ թագաւորացն … զօր բազում գումարեալ՝ յետ ԻԸ ամի անիշխանութեան Ասորեստանեայց ի ձեռն Փուայ թագաւորեցելոյ դարձեալ տիրեն Բաբելոնի և ստորին Ասորւոց – 60. Եւ առ այսոքիւք պատեհագոյնս իմն գտեալ իբրև յանիշխանութեան՝ ոմանք Ասորեստանեայք և Քաղդէացիք, յազգէ թագաւորացն … զօր բազում գումարեալ՝ յետ ԻԸ ամի անիշխանութեան Ասորեստանեայց ի ձեռն Փուայ թագաւորեցելոյ դարձեալ տիրեն Բաբելոնի և ստորին Ասորւոց – 60. Իսկ յետ այսց գործոց եղելոց ի բառնալ թագաւորութեանն Հայկազնեայցն, ոմն այսպէս ոմն այնպէս շփոթաբար կեցեալ անիշխանութեամբ - 68. ՈՐ ԻՆՉ ԶԿՆԻ ԱՆԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԵՑԱԻ ԵԻ ՊԱՏԵՐԱԶՄԱՑՆ: - 298. քանզի ըստ օրինակի իսրայէլականումն, որ յաւուրս անիշխանութեանն էին անկարգութիւնք, և այր իւրաքանչիւր զհաճոյս աչաց իւրոց առնէր՝ սոյնպիսիք և այժմուս եհաս լինել. – 300.

ԱՆԻԻ - որ ի բախմանէ քարի և երկաթոյ կայծակունք արտաթափին, այլ և ի փայտից ընդ միմեանս յիրար շփելոյ, որպէս և անուոյ բնաւորեցաւ լինել, որ ի սաստիկ շրջագայութենէ սայլիցն բազում անգամ և առեղք փայտիցն վառմամբ հրոյ հրդեհին: - 52.

ԱՆԼՈՅԾ - ամենայն հնարիւք խորամանկութեամբ կապեալ անլոյծ գօտեամբ ընդ ոգւոյ երիցս թշուառականին – 248. Իսկ իբրև ծանուցաւ նմա անլոյծ միաբանութիւն ուխտի ընդ միմեանս Աշոտոյ և Բագարատայ՝ ոչ ինչ յայտնեաց զխորհուրդս չարութեանն, զոր խորհեալ էին ի վերայ նոցա. – 172.

ԱՆԽԱՅԵԱԼ - Գունակ Կորխային բանակին յանդնդաքակ տունսն զբնակութիւնսն արարին, անխայեալ ի նինուէականն ստրջացեալ նախ անդ ո՛չ անխայեալ առ քարեղէն սիրտ քաղաքացւոցն Դունայ: - 358. Գունակ Կորխային բանակին յանդնդաքակ տունսն զբնակութիւնսն արարին, անխայեալ ի նինուէականն ստրջացեալ նախ անդ ո՛չ անխայեալ առ քարեղէն սիրտ քաղաքացւոցն Դունայ: - 358.

ԱՆԽԱՓԱՆ - Իբրև գիտացին սուրբքն զանհուն պատերազմ չարին՝ վառեալ և նոքա զինքեանս հանապազակռիւ լինել ի ճակատուն, անխափան սաղմոսերգութեամբ զանուշահոտ աղօթս իւրեանց միշտ ի բարձունս առաքելով – 250.

ԱՆԽԵԴԵԴ - և բնակէ յամրոցին, որ այժմ Զռայլ վասն անխեղեղ ամրութեանն գեղջկաբանեն: - 122.

ԱՆԽՋԵԼԻ - Եւ քանզի էին երեքին սոքա անքակ անխզելի առ միմեանս, զմիաբանական կապակցութիւն շաղկապեալ, Աշոտի և Գագկայ և Գուրգինայ, որդիք Դերանկին – 364.

ԱՆԽԻՂՃ - և ահա հասեալ կայք յատենի առաջի իմ անտրտում և անտխուր երեսօք, որպէս անմեղս և զբարեգործակս, և լի ամենայն կամարարութեամբ մեր, անխիղճ

համարձակութեամբ – 244. Եւ զի մի երկայնեալ որ ինչ վասն նորա ապիրատ և ինքնակամ և անզիղջ և անխիղճ առանց պատկառանաց մոլորութիւն սորա լի անամօթութեամբ՝ի բաց դիցուք զսա ի միջոյ յիշատակի նախարարացն – 248. Իսկ իշխանն Բագարատ … ել գնաց անխիղճ համարձակութեամբ, տիրասէր խորհրդովք, կատարել զսպաս զինուորութեան, ըստ աստուածեղէն պատուիրանին և ըստ թագաւորական հրամանին, զհետ եկելոյ կոչնականացն, ոչինչ իմացեալ զպատրանս խաբէութեան նորա, որով վրիպեացն: - 186.

ԱՆԽՈՆԱՐՀԵԼԻ - Իսկ նա չանսաւորութիւն անխոնարհելի մնացեալ, և անցեալ օթագայեցեալ ի գեօղն Փեռոտակ յանդիման քաղաքին: - 352.

ԱՆԽՈՐՀՈՒՐԴ - որ և ամբարտաւանեալ մոլեգնականս տալ հրաման զանխորհուրդ միաբանութեան զրաջան վաստակոց, կանգնել բուրգն յերկրէ, որոյ գլուխն հասցէ յերկինս. – 40.

ԱՆԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ - Ընդ որ յոյժ զչարեալ սքանչելին Աղան Արծրունի որդի Վասակայ ընդ հօրն անիմաստասէր բարուցն անխորհրդածութիւն և ընդ այնպիսւոյ աստուածամարտին Մեհուժանայ գթասիրաբար վարել ազգականութեամբ – 112.

ԱՆԽՏԻՐ - Իսկ Արտաշիր յանդգնագոյնս և առանց պատկառանաց զհետ ամօթալից ախտին գիջութեան իգամոլ ցանկութեանցն ընթացեալ՝ ոչ միայն ի գիշերի այլ և ի տունջեան յանդիման արեգական, անխտիր կատարէր զցանկականն, զանասնական գիջութեամբքն զանցուցեալ: - 116.

ԱՆՃԱԽ - Իսկ նա անփոյթ արարեալ երկրաւոր մեծութեանս, զի անցաւոր է՝ անսպառ և անվախճան և անծերանալի և անճախ և առանց ըմբռնելի ի գողոց խնդրեաց պարգևաց առիթ լինել. – 218.

ԱՆՃԱԽԵԼԻ - Ո՞վ անճախելի բարերարութեանն Աստուծոյ. ո՞վ անհատական մարդասիրութեանն, որ և դեռ ևս խնայել ասէ յանզգացեալսն: - 30.

ԱՆՃԱՆՕԹ - և անճանօթ զարմանալի ծառոյն դէպք՝ ի միում աւուր ունել աճմունս փոյթ ընդ փոյթ. և դարձեալ սուզականութիւնս յանկարճօրէնս լինել – 50. Եւ այնքան խրթնի անճանօթք պատահեն առ միմեանս, մինչև թարգմանաց անգամ կարօտանան. – 190. Եւ զնախնին մեր Ադամ ոչ ասել առաջին մարդ, այլ այլոյ ումեմն որդի Շուռելայ, արըռտաբոյծ ուղտուց, զզուեալ յանճանօթ /գրքում՝յանճանոթ/ աշխարհի և անհաւատարիմ յայնմ գտեալ՝ հալածեալ եղև կնաւ իւրով ի միջոց երկրի – 48. և ի տունջեան ամպ թանձրախոճ իբրև զթաղ լմեալ բալաձև սպիտակափայլ յոյժ. զայնմանէ ասէին՝ երկիր օտար անճանօթ: - 48. Եւ իմ զհետ երթեալ բանից նորա հարցանէի՝ ո՞ւր ուրեք ասէք լինել զերկիրն զայն անճանօթ. – 48.

ԱՆՃԵՐԱՆԱԼԻ - Իսկ նա անփոյթ արարեալ երկրաւոր մեծութեանս, զի անցաւոր է՝ անսպառ և անվախճան և անճերանալի և անճախ և առանց ըմբռնելի ի գողոց խնդրեաց պարգևաց առիթ լինել. – 218.

ԱՆԿԱՅՈՒՆ - Իսկ վասն ձեանն անկայուն զօրութեանն որ այն ինչ յամպոյն ի վայր զեղեալ լինին՝ հնարաւորեալ իւրեանց փայտս իբրև զանուրս չուանօք պարունակեալ շուրջ զոտամբք, դիւրաւ ընթանան ի վերայ ձեանն իբրև ընդ ցամաք երկիր: - 192.

ԱՆԿԱՆԳՆԵԼԻ - Կարծելով Վահանայ խոնարհել զորդին իւր յանկանգնելի կործանումն, զոր մեկուսեալ Սամուէլի զհայր իւր Վահան, իբր այն թէ խորհիցին ինչ վասն որոյ եկեալն էին – 106. մինչև եկին հասին ի վերայ մեր մեծամեծ չարիքս այսոքիկ և անկանգնելի գլորումնս – 182.

ԱՆԿԱՆԵԼ/ԻԼ/ - և մնացեալքն փախստեամբ ի Մանազաւեանն անկանէին քաղաք: - 382. յոր դիմեալ երթայր՝ /228/ անկանել ի ժանիս արիւնարբու գազանացն: - 230. զի ասէ, ,,որ աներկիւղն է՝ անկանի յորոգայթս և ի վիհս, և ի տեղիս ուր ոչ եղիցի այցելութիւն յաւիտենից,,: - 354. այլ մնացեալքն ի սրոյն փախստական անկանէին յամուրս մայրեացն: - 176. անցցուք ի վեր Եղկղեսիանոսաց, ի ժամանակի հալածանաց որք անկան ի կռապաշտութեանն մոլորութիւն. – 256. արդ ընդ արութիւնս իմ վատութի՞ւն խառնիցեմ և

ընդ երկիւղիւ մահու անկանիցի՞մ: - 296. Բայց ինքն կարծեցեալ մարզպանն փախստեայ անկանի ի բարձրաբերձ եկեղեցին – 190. դառնալ անդրէն ոչ կամէին, զի կարի սաստիկ ամօթս համարէր զգործեցեալսն, կալ տնել ժուժկալել ընդդէմ նոցա ոչ կամէին, զի բազում անկան ի զօրաց իւրեանց: - 276. և այր եղբօր իւրում ոչ ողորմէր, ըստ այնմ զոր ասաց դարձեալ Եսայի, ,,անկցի, ասէ, այր ընդ այր, և այր ընդ ընկերի իւրում, ընդհարցի մանուկն /298/ ընդ ծերոյն և անարգն ընդ պատուականին,,. – 300. և ապա մտին ի տունն Աստուծոյ, և տարածեալ զհրովարտակն առաջի սրբոյ սեղանոյն՝ անկան ի վերայ երեսաց իւրեանց յերկիր առաջի Տեառն և լացին դառնապէս – 146. Եւ է զի ի նուրբ և ի հուն տեղիս ջուրցն անկեալ՝ ի նմին խրեալ կան անշարժ, և դիւրաւ անկանիցի ի ձեռս որսորդաց. – 260. Եւ ի միւսում առաւօտին հասին ի վերայ բանակին խոնջեալ երիվարօք, անզգուշութեամբ առ մուտն պատրաստեալ, և անկան ի նմին ժամու Բ ոմանք, Վլիթ և Մարաճայ. – 402. և կողմնեալք ի սիրոյ աստուածութեանն անկաւ ի վերայ նոցա զարհուրումն մահու, մանաւանդ ոչ կամելով ելանել /246/ ի սնոտի կենացս դիւրափոփոխ աշխարհիս՝ ասեն. - 248. և յանկարծակի ի մէջ գիշերին Գրիգոր ախոյեանայարձակ դիմեալ շուրջանակի փակեցին ի ներքս զբանակն, սրով և աղեղամբ / 330/ վէրս մահաբերս ի վերայ եդեալ՝ յոլովք անկան ի զօրուէն. - 332. և նոցա պարտասեալք ի ծանրութենէ զինուցն և ի ջերմութենէ տապոյ արեգականն և ի սաստկութենէ աւազոյն, որ ոչ ունէր զկայ ոտից, և ի հետևակագնացութենէն և ամենեքումբք թշուառացեալք՝ անկան ի ձեռս թշնամեացն – 162. Եւ ոչ ևս այնուհետև համարձակ ելանէին և մտանէին յաշխարհս Վասպուրական զօրքն Տաճկաց. զի անկաւ ահ սաստիկ ի վերայ նոցա: - 308. Եւ Վահրամ գնաց փախստական և անկաւ ի Բախտ Շախստան. որ և յետոյ իսկ սպանաւ ի հրամանէ Խոսրովայ: - 140. և փախուցեալ նա անկաւ ի զօրն Թետաղաց, որ էին եկեալ նմա յօգնականութիւն, որ և սպանին զնա հրամանաւ Իսմայէլի, կալեալ զթագաւորութիւնն ամս Ի: - 166. Զի որովք բարձրացար և ամբարտաւանեցար՝ նոքիմբք խոնարհեսցիս և անկցիս: - 148. մի գուցէ ոչ առնելով իմ զոր խնդրեն՝ առ կայսր հատուածեալ անկանիցին նախարարքն, հարկել և զինաւորել կայսեր: - 118. միթէ դո՞ւ միայն առաջին յաղթեցար և հարար ի թշնամեաց, կամ քո՞ միայն զօրքդ անկան, կամ քո՞ և եթ աւար բաժանեցաւ: - 282. մինչ ինքն Հերովդէս փախստեայ անձնապուր լեալ հանդերձ Ուրեղիանոսիւ զինակրաւ՝ անկանի առ քեռին իւր որդի Հիւրկանու քահանայի ի քաղաքն Ասկաղոն: - 78. որոյ գլուխ անկեան /ճիշտը՝անկաւ/ Քրիստոս - 250. և անհնարին բեկմամբ խորտակեցաւ գունդն Հայոց, մինչև ի բազմացն սակաւուց հազիւ ուրեմն մազապուր զերծեալ՝ անկան յաւուր յայնմիկ ի տարապարտ պատերազմին արք անուանիք իբրև Շ - 402. և զերծեալքն փախստեայ անկանէին ի կողմանս կողմանս աշխարհաց, յաւեր դարձուցեալ զբնաւ աշխարհն, բայց ի լեռնայնոցն՝ որ յամուրս իւրեանց մնային ի լերինն Խոյթ անուանեալ: - 188.

ԱՆԿԱՆԵԼ Ի ՄՏԱՑ - և նա տրտմեալ գնաց ի տուն իւր, քանզի հանապազ ստիպէր ի դիւէ անտի, թերևս թոյլ տալովն Աստուծոյ, զոր համարէր ի հրեշտակէ զանկանելն ի մտաց: - 160.

ԱՆԿԱՍԿԱԾ - Որում ունկնդիր եղեալ երեքեան նախարարութիւնքն առն իմաստնոյ Վահանայ Ամատունւոյ՝ գան զկնի նորա անկասկած համարձակութեամբ – 98. ,,և այս ևս քաջահաճոյ թուիցի քեզ, վեհդ և ամենեցուն գիտելիդ. և զի եղիցի ի մէջ քո և Դերենկիդ անկասկած միաւորութիւն՝ զդուստր քո տացես կնութեան Դերենկիդ, տիկնութեան Վասպուրականի,,: - 322. ասէ՝ զի դայեկաբար զորդիսն Սանատրկոյ սնուցանէաք, և դու ի թագաւորելդ քոյ որոյ երդմունս արարեալ յԱրտեմի և յԱրամազդ անկասկած կալ մնալ վասն որոյ երկիւղն ունէր: - 82. Եւ Գուրգէն յանհոգս անկասկած բնակէր անդ Ն արամբք: - 306. և զպատճառսն ստուգեալ, գրէ ի ձեռն Վահանայ ումեմն ի տոհմէն Ամատունեաց՝ դառնալ գալ բնակել անկասկած կենօք, ի բարձ և ի պատիւ իւրաքանչիւր յառաջանալ: - 98. և ընկալեալք ի թագաւորէն Արշակայ ըստ գրելոյն ի ձեռն Վահանայ՝ կացին անկասկած: - 98. Եւ գրեն թուղթ առ Յամանիկն, եթէ ,,ի մտանելն իմ ի Դուին քաղաք և

զհարկս արքունի յիս գրաւել՝ և յանկասկած առեալ զիշխանս Հայոց՝ և եկեսցեն առ իս. – 340.

ԱՆԿԱՍԿԱԾԱԳՈՅՆ - և թափառական զվէմս ապաստան արարեալ յանկասկածագոյն տեղիս դարանի ի փոքր վիմամէջս ի կարկառս հովտաձևս հանդէպ հարաւոյ քաղաքաբերդին Վանի, մօտ այն տեղի, յորում բղխէ աղբիւրաբար առ ստորոտով բլրակի միոյ, մօտ յեզր ծովուն – 84.

ԱՆԿԱՍԿԱԾԵԼԻ - Բայց Աշոտ գնացեալ տալ պատերազմ ընդ ծովեզրեցիսն որք Ութմանիկ կոչին, որք ամրանային ի յԱմիւկ անկասկածելի քարանձաւին. – 332. Բայց նոքա քանզի ապաստան լեալ յանկասկածելի յամուրս և ի բազմութիւն զօրացն և ի քաջութիւն արանց պատերազմողաց՝ և ո՛չ առ փոքր մի խոնարհեցան ի բանս նորա կամ ետուն տեղի պատասխանւոյ. – 274. Եւ ամուրք յոյժ և անկասկածելիք ի ձեռս նոցա են, ամուրն Ջլմար և Սրինգ, և Ճախուկ բերդն. – 212. Եւ անդ գտեալ ամրագոյն անձաւ տեղի անկասկածելի ի պատերազմական գործոց և զնա պարսպեալ պատուարօք շուրջանակի – 392. Եւ իբրև կատարեաց զյօրինուած շինութեան քաղաքին և անմատչելի անկասկածելի զամրոցն պատրաստեաց – 88. և շէն մարգարիտ զքարաբլուրն յօրինէ պարսպաւոր անկասկածելիս անմատչելիս ձեռաց պատերազմողաց – 88. Եւ քանզի յոյժ անկասկածելի էր ամրոցն, և գանձս ոչ սակաւս մթերեալ ի նմա ի բազում ամաց – 346. զԱշոտ տարեալ յանկասկածելին Նկան, զԳագիկ յամուրն Սևան, զԳուրգէն ի Կոտորն բերդ: - 364. թողուլ լքանել զաշխարհս բազմագաւառս, զամուրս անկասկածելիս – 386. նազելով և սիգալով, իբրև զկորիւն առիւծու ճեմէր, անկասկածելի մնալով, առ ոչինչ համարելով զհէնն եկեալ հասեալ, փակեալ շուրջ զնովաւ. – 210. իբրև ի մեծ և յանկասկածելի ամուր ապաւինեալ լինէին ի քաջ զօրավարն Գուրգէն և որք ընդ նմա զօրք Հայոց. – 226.

ԱՆԿԱՐԳ - Եւ մինչ այսպէս կայր աշխարհս յանկարգ խաղաղութեան՝ եհաս լուր գործոյն առ Աւշին և առ իշխանն Աշոտ, եթէ ,,վրդովեալ է երկիրն, և կան ի տարակուսի՝ որք զամուրսն քո ունին. – 362. Իսկ նախարարքն Հայոց իբրև տեսին յերկոցունց կողմանց զանկարգ և զանտեղի աշխարհիս պիտաւորութիւն՝ յապաշաւանս դարձեալ ի վերայ անցիցն անցելոց զոր ախորժելովն խնդրեցին՝ դարձան առ Վռամ – 118.

ԱՆԿԱՐԳԱԲԱՐ - Սոքա մերժեալք ի տէրութենէն իւրեանց, զոր տուեալ էր Տիգրանայ և Կիւրոսի՝ կէին անկարգաբար զինչ պիտկէն մինչ ի Կիւրոս Շահակեան: - 72.

ԱՆԿԱՐԳՈՒԹԻՒՆ - և այսպէս աղմկեալ և շփոթեալ երկիրս Հայոց՝կեայր անմիաբանութեամբ, լի անկարգութեամբ, ըստ յօժարութեան Վաչէի Արծրունոյ: - 120. ոչ ևս զբանականաց բերելով խորհուրդս, այլ իբրև երամակք վայրենիք վայրածեալք անկարգութեամբ և պէս պէս անառակութեամբք – 28. քանզի ըստ օրինակի իսրայէլականումն, որ յաւուրս անիշխանութեանն էին անկարգութիւնք, և այր իւրաքանչիւր զհաճոյս աչաց իւրոց առնէր՝ սոյնպիսիք և այժմուս եհաս լինել. – 300.

ԱՆԿԱՐԾ - մտեալ Վահան աղերսէր համոզէր՝ մի կալ մնալ, մինչ զքաջանունութիւնն ընդ վատասրտութիւն կարծել յոմանց խառնել, թէպէտ և անկարծ վարկանէր զկեղակարծն: - 328.

ԱՆԿԱՐՕՏ - և այնպէս անկարօտս առ պիտանացուս հոգ տարեալ՝ գլխաւորեաց որ ինչ շինութեան և խաղաղութեան աշխարհիս նպաստաւոր առ օգտակարագոյնսն պահանջէր գործառնութեան եղանակք – 392.

ԱՆԿԵԱԼ - ,,ձայն իմն ահաւոր հրեշտակի անկեալ ի վերայ իմ՝ հրամայեաց երթալ պատգամաւոր յազգն իմ, ցուցանել զԱստուած արարիչ երկնի և երկրի. առնուլ ինձ անուն գլխաւորութեան, և զստութիւն հաւատոց որ ի կուռս՝ յանդիմանել և քակտել,,: - 158. Այլ սա ի վեց ամին լքեալ ի Կիւրոսէ, և աստ անկեալ կենօք շրջէր մինչև իսպառ բարձաւ թագաւորութիւնն Ասորեստանեայց և Մարաց ի Կիւրոսէ որ թագաւոր …<այստեղ նախադասությունը չի ավարտված>: - 62. Անդանօր քաջն մեր Աշոտ զհիւանդութիւնն կեղծաւորեալ ի տեղւոջ օթոցին անկեալ դնէր, մինչ ակն ունէին յառաջանալ ի գործ պատերազմին: - 328. անկեալ Աղան յերեսս առաջի սրբոյն Սահակայ

և առաջի սպարապետին Սահակայ՝ ընդունել զսքեմ կրօնաւորութեան մոնազնութեան անապատասէր միայնական ստանալ իւր վարս: - 114. անկեալ առ ոտս նորա մեծաւ հառաչանօք՝ մի՛ յիշել զանցս զանցիցն անցելոց, զոր արարինն առ սուրբն, այլ դարձեալ կալցի զաթոռ հայրապետութեանն. – 120. Անկեալ էր յայնժամ ի պատերազմին Աշոտ Հայկազնեայ Գեղարքունեաց իշխան, որ Սուփանայ որդին ճանաչէր. – 368. Բայց զի մի և մեք անկեալք լիցուք ի նոյն՝ ուսցուք ի յԱստուածաշունչ գրոց - 256. Եւ զյաճախութիւն ամբաստանութեանն ունի բողոք, թէ նախ զբնութեան օրէնս անարգեալ, և յերեսացն Աստուծոյ անկեալք եղեն: - 54. Եւ այլք յայլ ինչ բազում յածմունս անկեալ ցնդին ժամանակաւ և իրօք. – 36. և անդ գտեալ զբնակիչսն Ռշտունեաց, թափառականս անկեալ յանողորմ և ի մարդախոշոշ շանցն գիշակերաց – 202. Եւ ելեալ գնաց զհետ կոչնականացն ի գութ հարազատութեան, և ի կարծիս սաստիկ հիւանդութեան, թէ մերձ ի մահ անկեալ դնիցի, ըստ ստուգելոյ կոչնականացն: - 348. Եւ եղև ի միում աւուրց, ի գալ նորա ի նմանէն՝ ձայն օտարոտի, և ազդումն ահագին և դիւական անկեալ ի վերայ /գրքում՝ վերա/ նորա՝ ուշաթափ անկեալ դնէր – 158. Եւ եղև ի միում աւուրց, ի գալ նորա ի նմանէն՝ ձայն օտարոտի, և ազդումն ահագին և դիւական անկեալ ի վերայ /գրքում՝ վերա/ նորա՝ ուշաթափ անկեալ դնէր – 158. Եւ է զի ի նուրբ և ի հուն տեղիս ջուրցն անկեալ՝ ի նմին խրեալ կան անշարժ, և դիւրաւ անկանիցի ի ձեռս որսորդաց. – 260. և իջեալ ի դաշտավայրն, խումբ արարեալ, ճակատ կազմեալ ընդխառնեցան ի պատերազմ. և զբազումս դիաթաւալ կացուցեալ, ընդ որս էր Շապուհ նահապետն Ամատունեաց յանկելոց վիրաւորացն: - 310. Եւ հրամայեցին համար առնել անկելոց դիակացն, գտաւ թիւ սպանելոցն ՃԷՌ մարդ: - 142. զի անկեալ էր ի սիրտս նոցա հաւատ սուրբ առաքելոցն – 246. իսկ և իսկ եհաս գուժկան անկելոցն ի պատերազմին ի պարսկական քաղաքն և յԱտրպատական սահմանսն. – 398. Իսկ իշխանքն զհետ մտեալ փախստէիցն անկելոցն յամուրսն՝ ածեն մերձ ի պաշարումն զքաղաքն և զամրոցն 176. Կալան և զհայրապետն Զաքարիայ, և ի խնդիր անկեալ աստուածային սուրբ նշանին՝ սկսան զնոսա տանջել, մինչև զբազումս ի պաշտօնէիցն կառափեալ սատակեցին. – 142. Յայնմ հետէ ի տարակոյս անկեալ Երուանդ՝ ոչ քաղցրանայր նմա քուն գիշերոյ, և ոչ համեղանայր կերակուր ի քիմս նորա: - 84. յերկրորդն հարկ է մեզ զոճն կանոնել, որ յետ Նոյի և անդր ազգացն բաժանմունք յառաջ խաղան, ըստ ցեղից ցեղից ի կարգ անկեալ աշխարհաբաժին ցեղակարգութեամբ. – 12. յորս բազումք անկեալ ի նա հաւատացին ի Քրիստոս, որպէս Ծանարքն և Աւրհազքն. – 274.

ԱՆԿԵԱԼ Ի ՄՏԱՑ - քանզի հարցեալ ցնա որք նորին ուղեկից՝ թէ ո՞րպիսի պատճառաւ անկեալ եղեր ի մտաց՝ ասէ – 158.

ԱՆԿԵՂՃԱՒՈՐ - անկեղճաւոր և աննենգ տիրասիրութեամբ ցուցանել հնազանդութիւն հպատակութեամբ, մինչ յարիւն և յապաժոյժ նահատակութեամբ առնուլ վրէժս ի Պարսկացն հինիցն՝ զաւեր եկեղեցեացն Հայաստանի և զնեղութեանցն և զգերփանացն և զասաստիկ արիւնահեղութեանցն զքրիստոնէից և զուխտի մանկանց եկեղեցւոյ սրբոյ: - 134.

ԱՆԿՇԻՌ - և առ եղբայրականն զհնազանդութեանն չափ ցուցանելով, անկշիռ վայելչութեամբ զմիմեանս լաւ համարելով քան զանձինս, հասարակ զճոխութիւն իշխանական գահընկալութեանն վարկանելով – 360. Ի սորա յերրորդ ամի թագաւորութեանն ի վերայ Հայոց աստուածատուր բարկութեամբ անդնդաշարժ վրդովմամբք ներքնագոյն խորոցն պատահեալ միմեանց սահանախաղաց դղրդմամբ, հիմնաշարժ տապալմամբ, /356/ ներքսագոյն երկրի թուլացեալ պնդափակ աղխեալ սանդարամետական սահմանին, բարկութեան հողմոց շնչեալ ընդ ջրոցն խաւարայնոց, ի կոհակս անդնդաքակս զթանձրայատակ երկրի զկարծր և զծանրալիր անկշիռ անբաւութիւնն տատանեալ, մինչ յերեսս երկրի ի վեր մղեալ հանդէպ քաղաքին Արտաշատու/ գրքում՝ Արտաշասու/, որ Բլուրն նորուն ասի – 358.

ԱՆԿՈՒԽ - Արդ այսքանեաց վկայութեանց ի մի վայր եկելոց՝ մի ելցուք զհետ առասպելաբանիցն թէ ընդ անկոխն գնալով ճանապարհ. – 260. Իսկ Պարսկահայոց գոեահին խուժան ածեալ, գաղտագնաց եղեալ ընդ անկոխ ճանապարհս՝ գան հասանեն ի Մարդաստան գաւառ յաւանն Վիտահոտ – 400.

ԱՆԿՈՒԽԵԼԻ - զոր և ես գիտեմ յաշխարհագրութեանց անտի Պտղոմեայ՝ զԵմաւոն լեառն յարևելս, որ արդարև բարձր է քան զամենայն երկիր, անկոխելի ոտից մարդոց – 48.

ԱՆԿՈՂԻՆ - սակայն կանոնական սահմանադրութեանն արտաքոյ մնացեալ, գայթ ի գայթս զքրիստոնէութեանն վարս բերելով անառակութեամբք և արբեցութեամբ, խառն անկողնօք և պղծութեամբք աղտապիղծ սարսափելի և գարշելի խառնակութեամբ արուապղծութեամբք – 336.

ԱՆԿՈՒԱԾ - և փոխանակ ծաղկեալ պատմուճանի գունագոյն երանգ երանգ անկուածոցն՝ զսուրբ և զվարդագոյն կարմրատեսիլ արիւնն իւրեանց ի վերայ սուրբ մարմնոյն, և փոխանակ ոսկեհուռ թագակապ զարդու պսակացն՝ զերկրպագութիւնն Քրիստոսի. – 266.

ԱՆԿՈՒՄՆ - զի զոր անձանց՝ զնոյն և այլոց գիտասցեն հրաժարել ի զօշոտութենէն, որ առաջնոյ անկմանն եղև պատճառ – 26. ընտանեգոյնս ևս ձայնի կոչելով՝ ո՞ւր ես Ադամ, աւաղականս նմա գորովալիր զանկումնն, թերևս ինքեամբ իսկ զօգտակարօքն տածիցի: - 20.

ԱՆԿՌՈՒԵԼԻ - զի թագաւորն Լիդէացւոց ասպազինեալ զերիվարն շուրջանակի պղնձի արկանելեօք յոտից մինչ ի գլուխ բովանդակ չթողեալ տեղի՝ անկռուելի լինել զինուի – 64.

ԱՆՀԱԿԱՌԱԿՈՂ - և անհակառակող գտեալ բարուք՝ բաժանեն զաշխարհս յերիս մասունս. – 360. և անհակառակող հաւանութեամբ հեզահայեաց առ միմեանս սիրոյ յորդորմամբ արտաքոյ վատթարին խոհականաբար մնալով, քաջախորհուրդ առատաբուղխ խաղացմամբ իմաստութեանն զմիմեանս բռնահարելով, զօտարոտին ի բաց վարատելով զբղջախոհութեան անհանճարութիւն՝ զլաւն և զյոյժ օգտակարագոյն ընտրութեամբն գիրկս արկին. – 388.

ԱՆՀԱՄԲՈՅՐ - և կէսքն վրիպեալք ի բնական հայրենի լեզուէն, յաղագս հեռաբնակ լինելոյ և անհամբոյրք միմեանց հանդիպեալք, և խօսս միմեանց եղեալ կարկատուն մուրացածի բանիւք: - 190.

ԱՆՀԱՄԵՄԱՏ - Եւ դառնայ մեծաւ պարգևօք և անհամեմատ խնդութեամբ: - 384. Եւ ինձ ի վերայ տրտմականացն դէմ եղեալ առ կատարելագոյն և առ անզուգական անհամեմատ խնդութիւնն դեգերել, առ հոգևորական ուրախութիւնսն ընթանալ յետ մարմնական տրտմականացն յաճախութեանցն: - 386. որոց և շիթք ցօղոյն ունէր զանհամեմատ անուշահոտութիւն: - 50.

ԱՆՀԱՆԳԻՍՏ - և նախ քան զմտացն յօժարագոյն առ հանդէսսն յառաջանալ՝ զմարմնոյն պնդութիւն անհանգիստ առ ճակատամարտսն յարատևել: - 308. և ոգորել ընդ բնաւ աշխարհս անդուլ շրջաբերութեամբ, անհանգիստ մնալով, և կեղծաւորական սիրով ընդ Վասպուրական աշխարհիս և ընդ նոցուն պետացս, համարէր լինել կատարելանալ առ սէր. – 370.

ԱՆՀԱՆԴՈՒՐԺԵԼԻ - Բայց իշխանաց իշխանն Աշոտ անհանդուրժելի մնալով խորհրդոց չարին ի գլուխ ելանել - 344. Յայնժամ Սմբատ Բագրատունի … Մոկաց իշխեցող … անհանդուրժելի լեալ /216/ անցիցն անցելոց – 218. Նոյնպէս և բնակիչք Աղձնեաց անհանդուրժելիք լեալք անցիցն անցելոց և առ զայսոսիկ յամբաստանելն – 180.

ԱՆՀԱՆՃԱՐ - և ելեալ գնաց զհետ անհանճար իմացմանց առ Պերոզ արքայ Պարսից – 124.

ԱՆՀԱՆՃԱՐՈՒԹԻՒՆ - այլ փոխանակ սոցա մատեայ ի տեղիս յայս, ձեռն արկեալ անիմաստաբար լի անհմտութեամբ և անհանճարութեամբ բուռն հարկանելով զմեծ զայս քերթուածութենէ: - 122. և անհակառակող հաւանութեամբ հեզահայեաց առ միմեանս սիրոյ յորդորմամբ արտաքոյ վատթարին խոհականաբար մնալով, քաջախորհուրդ առատաբուղխ խաղացմամբ իմաստութեանն զմիմեանս բռնահարելով, զօտարոտին ի

բաց վարատելով զբղջախոհութեան անհանճարութիւն՝ զլաւն և զյոյժ օգտակարագոյն ընտրութեամբն գիրկս արկին. – 388.

ԱՆՀԱՍԱԿԱՆ - անհասական իմն շնորհիւ փառօք և պատուով պսակեալ զմարդն իշխանական ճոխութեամբ՝ վայելեցուցանէ դրախտին, տալով նմա բազմամեայ կենաց սահման իբրև զմի օր - 20.

ԱՆՀԱՍՏԱՏ - ապա հնարաւորեալ պատիր խաբէութեամբ ի կատարումն հասուցանել զխորհրդոյն /346/ զանհաստատ իմացմունսն, և զնաց եմուտ յամրոցն, և զհիւանդութեան կեղծաւորութիւն մերձ առ մահ եդ առաջի: - 348. Եւ վասն իւրեանց թուլամորթութեանն և անհաստատ և յողդողդ մտաց սիրեցին զփառս մարդկան առաւել քան զփառս Աստուծոյ. – 246.

ԱՆՀԱՍՏԱՏԱԳՈՅՆ - յերկուս կողմանս բաժանեալ զնայեցուած խորհրդոցն, և կայր կեղծաւորութեամբ անհաստատագոյն և անօգուտ հնարիմացութեամբ, ընդ քրիստոնեայսն քրիստոնեայ և ընդ պարսկականսն զնոցայսն կեղծաւորէր: - 112.

ԱՆՀԱՏԱԿԱՆ - Ո՞վ անծախելի բարերարութեանն Աստուծոյ. ո՞վ անհատական մարդասիրութեանն, որ և դեռ ևս խնայել ասէ յանզգացեալսն: - 30.

ԱՆՀԱՒԱՆ - ՎԱՍՆ ՈՐ ԻՆՉ ԳՈՐԾԵՑԱՒ ԸՆԴ ՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՐՀՍ ՀԱՅՈՑ. ԵՒ ԵՐԿՊԱՌԱԿՈՒԹԻՒՆ ԻՇԽԱՆԱՑՆ, ԱՆՀԱՒԱՆՔ ԵՒ ԱՆՀՆԱԶԱՆԴՔ ՄԻՄԵԱՆՑ ԼԻՆԵԼՈՎ, ԵՒ ՈՐ ԻՆՉ ԸՆԴ ՍՈՔՕՔ: - 194.

ԱՆՀԱՒԱՍՏԻ - Իսկ ոմանք ասեն ի Ղաւոդիկեայ Փռիւգացւոց շինեալ տապանին, որ յերից մասանց երկրի՝ Ասիական կոչի կողմ. և յոյժ անհաւաստի են ասացեալքն.- 30.

ԱՆՀԱՒԱՏ - ,,որդեակ, ի վախճանելս իմում մի կայցես յայսմ աշխարհի, զի մի կորուսցես զկարգ քո ի մէջ անհաւատից, այլ երթիցես ի կողմանս Եգիպտոսի՝ բնակել ի մէջ բազմութեան եղբարց, զի շահեսցիս զոգիդ քո,,: - 162. եթէ հաւանեալք արդարոյն և ապաւինեալք ի նա՝ յուսացան ի բան նորա, ծառայել երկիւղիւ հրամայելոցն ի նմանէ՝ զի՞նչ անհաւատ թուի և ի փրկութենէն ընդ նմին վայելել. - 32. համարձակապէս անցանել գնալ ընդ իշխանութիւնս և ընդ պետութիւնս, ընդ աշխարհակալս խաւարիս այսորիկ, որ անհաւատից քան եթէ հաւատացելոց ոգւոց և ապաշաւելոց զտիրելն բռնաձգեալ կորզեն յինքեանցն կորուստ: - 388. և գունդ անհաւատից դառնացեալ ոգւով ի վերայ կանանց և որդւոց իւրեանց ազգականաց՝ յարձակեցան ի վերայ նոցա ուժգին սաստկութեամբ և սուր ի գործ արարեալ յանխնայ կոտորեցին. – 402.

ԱՆՀԱՒԱՏԱՐԻՄ - Եւ զնախնին մեր Ադամ ոչ ասել առաջին մարդ, այլ այլոյ ումեմն որդի Շուռելայ, արըռտաբոյծ ուղտուց, զգուեալ յանծանօթ /գրքում՝յանծանոթ/ աշխարհի և անհաւատարիմ յայնմ գտեալ՝ հալածեալ եղև կնաւ իւրով ի միջոց երկրի – 48. զի մի սպառ սպուռ տապալիցի զօրութիւն շինուածոյ աշխարհի, ի բաց ընկենլով զծառայական պաշտօնատրութիւն կողմնակալաց, և քաղաքային անհաւատարիմ կամարարողաց, և հարկաց բեկման և զօրաց – 186.

ԱՆՀԱՒԱՏՈՒԹԻՒՆ - եղև սմա կեալ անհաւատութեամբ և մեռանել անյոյս: - 250.

ԱՆՀԵԴԵԴ - Այսր աղագաւ արտաքս վազեցի զմեծս զայս բանգտութեան ընթանալ ասպարէզ, զօրաւորաց մտահարուստ արանց կարօտացեալ բաւականանալ իմով անհեդեդ պատմողական հանդիսիւ – 352. Աստանօր և ի դէպ ելանէ մարգարէութիւնն Դանիէլի, տեսութիւն անհեդեդ պատկերին բազմախառն նիւթօքն ի վերայ խեցեղէն և երկաթեղէն ոտիցն: -156.

ԱՆՀԵՏԱԶՕՏԵԼԻ - Եւ յաղագս խրթնի և անհետազօտելի խօսիցն և բարուցն կոչին Խութ, յորոց անուն և լեառնն Խոյթ անուանի: - 192.

ԱՆՀՄՏՈՒԹԻՒՆ - այլ փոխանակ սոցա մատեայ ի տեղիս յայս, ձեռն արկեալ անհմաստաբար լի անհմտութեամբ և անհանճարութեամբ բուռն հարկանելով զմեծ զայս քերթուածութենէ: - 122.

ԱՆՀՆԱԶԱՆԴ - Բայց մեք քանզի ոչ երբէք ստունգանեցաք հրամանի թագաւորին և ոչ խափանիչ գտաք հարկաց արքունի, իբրև զապստամբս և զանհնազանդս և զստահակս ի

ծառայութենէ տէրանց – 178. և նորա կալեալ զնա և ի կապանս մատնեալ որպէս զանհնազանդ ոմն՝ և եկն անց յՈստանն Ռշտունեաց: - 322. որ զծայրագոյն շնորհացն Աստուծոյ առեալ պարգևս՝ կենդանւոյն ի կարգս անմահիցն փոխանորդեաց վերագրիլ, որ և յառաջ քան զփոխիլն ծանոյց զհամաջինջ բարկութիւն Աստուծոյ խոտորեալ ազգին և որդւոցն անհնազանդից – 26. Որում ոչ անհնազանդ գտեալ՝ իմաստնախորհ զօրութեամբ ելանէ յամրոցացն: - 316. ՎԱՍՆ ՈՐ ԻՆՉ ԳՈՐԾԵՑԱԻ ԸՆԴ ՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՐՀՍ ՀԱՅՈՑ. ԵԻ ԵՐԿՊԱՌԱԿՈՒԹԻԻՆ ԻՇԽԱՆԱՑՆ, ԱՆՀԱԻԱՆՔ ԵԻ ԱՆՀՆԱԶԱՆԴՔ ՄԻՄԵԱՆՑ ԼԻՆԵԼՈՎ, ԵԻ ՈՐ ԻՆՉ ԸՆԴ ՍՈՔՕՔ: - 194.

ԱՆՀՆԱՐ Է - Մի ջանասցի քանզի յԱստուծոյ հաստատեալ է, և բառնալ զսա անհնար է, բայց թէ Աստուծոյ այնպէս հաճոյ իցէ՝ կամք Աստուծոյ կատարեսցին: - 144. Զոր մարդկային կարողութեան անհնար է /196/ փակել զբացումն դրանն ի կորուստ. – 198. որում անհնար է երկոցունց ի միասին բնակել, և ոչ ոք կարէ երկուց տերանց ծառայել, որպէս ասաց Փրկիչն – 248.

ԱՆՀՆԱՐԻՆ - ,,լեառն մի է յոյժ անհնարին բարձր, որոյ անդր քան զնա չի՛ք բնակութիւն մարդկան,,. – 48. ,,ոչ կարեմք զդէմ ունել անհնարին ուժոյ բռնութեանն արքունի – 216. անդ և տապանն շինեալ եղև և անհնարին չարեացն զեղեալ ի վերայ երկրի. – 30. և անհնարին բեկմամբ խորտակեցաւ գունդն Հայոց, մինչև ի բազմացն սակաւուց հազիւ ուրեմն մազապուր զերծեալ՝ անկան յաւուր յայնմիկ ի տարապարտ պատերազմին արք անուանիք իբրև Շ - 402. և հեղմունք արեանց եղեն անհնարինք: - 178. Հինգերորդ՝ զի զծնօղսն անհնարին դառնութեամբ նոր սգովն ելից: - 24. ճակատ առ ճակատու ձգին խումբ և անհնարին խառնուրդ. և մարտուցեալ ընդ միմեանս յայգուէ մինչև ընդ երեկս քաջապէս - 140. Յայնժամ տեսեալ Երուսաղէմացւոցն զանհնարին դիպուածսն անօգնականութեանն՝ առին զաստուածային սուրբ նշանն տէրունական հանդերձ այլ սպասիւք եկեղեցեացն, փախուցին ի քաղաքն թագաւորական ի Կոստանդին. – 162. Որոյ յօժարութիւն կամաց ախորժակաց իւրոց էր մարմին և արիւն անմեղ մարդկան, առ ի յագումն անհնարին գազանաբարոյ կատաղութեանն: - 200. վկայեցին վասն Քրիստոսի …բազմագոյնք և յազատաց աշխարհիս և ի տիկնանց նոցա անհնարին և դառն տանջանօք – 106.

ԱՆՀՈՒՆ - Բայց Աշոտ, իբրև եհաս ժամ ելիցն իւր յաշխարհէս՝ յանհունս բերեալ զզեղջ և զապաշաւանս յորդահոսան արտասուօք զխոստովանողականն ի դիմի հարեալ միջնորդութիւնն – 336. Բայց ես յանհունս ձգեմ զզարմացմանն յեղանակս, թէ զիա՞րդ բաւել տոկայր, անձանձրանալի բերելով զաշխատութեանն աճմունսն. – 308. և ահա աղաղակ և փողք և քնարք և ջնարք, և վառեալ զինու և սրոյ և ամենայն պատրաստութեամբ անհուն զօրացն, մինչ գրեթէ /գրքումէ՝գրէթէ/ ի հիմանց զլեառնն տապալել – 284. Եւ զումարեալ այնուհետև զանհուն բազմութիւն զօրացն բարձրագոյն քան զառաջինն՝ և ել խաղաց հասանել ի վերայ արևելից աշխարհին – 270. Եւ ելեալ թագաւորն նստաւ յատենի ի բարձրաբերձ բեմի միջոց, ի մէջ աշխարհակոյտ ամբոխի անհուն բազմութեանն – 242. Եւ էին անհուն բազմութիւնն մածեալ շուրջ զլերամբն իբրև զմարախ և իբրև զաւազ ծովու առանց թուոյ. – 226. և ժողովեալ ազգք ազգք յընտրելոց զօրաւորաց արանց քաջամարտկաց, զզօրս Կապուդկացւոց, զՎրաց և զԱղուանից և զԱյրարատեան գազանամարտիկ զանճառնի զօրսն և զբոլոր բովանդակեալ գունդս զօրացն և զորդիսն Սենեքերիմայ, ամենայարդար պատրաստութեամբ անհուն բազմութեամբ, աճապարել երագել անյապաղ լինել նախ քան զԱշդահակայ դիմեցումն – 62. և յայնչափ սաստիկ և անհուն ամբոխին սուտ վկայութեանն զբոլոր բարկութիւն բռնաւորին զարթուցին ի վերայ առնն, որպիսի ոչ ի միոյ ուրուք վերայ այնքան ժամանակս եհեղ զբարկութիւն իւր զօրավարն Բուխայ: - 290. և սլացեալ իբրև զարծիւ ի վերայ որսոյ՝ պատահէին անհուն բազմութեանն ի Փայտակշտան գեօղ – 400. զի ոչ իսկ է կարողութիւն լռութեամբ ծածկել թաքուցանել անյայտ առնել զանհուն և զանբաւ վիշտս աղէտս եկեալ հասեալ մեզ: - 240. Իբրև գիտացին սուրբքն զանհուն պատերազմ չարին՝

վառեալ և նոքա զինքեանս հանապազակռիւ լինել ի ճակատուն, անխափան սաղմոսերգութեամբ զանուշահոտ աղօթս իւրեանց միշտ ի բարձունս առաքելով – 250. Իբրև հասին ուր հանդերձեալն էին՝ և երկոցունց զօրքն անհուն բազմութեամբ յանդիման եղեն միմեանց, և ճակատ առ ճակատ զգործս պատերազմին յարդարէին – 328. Իսկ Մեհուժան ոչ թողանայր զթագաւորելն Հայոց, կուտեալ առ ինքն անհուն բազմութիւն վաշտից և դրօշուց և նշանաց որոց ոչ գոյր թիւ. – 106. նոյնժամայն առ յոյժ ամբարտաւանութեանն և սաստիկ բարկութեանն և անհուն սրտմտութեանն և առանց բուժելի կատաղութեանն, յապուշ միտքն կրթեալ իբրև զարբեալ զանզգայ արբեցութեամբ - 264.

ԱՆՀՊԵԼԻ - Եւ ոչ արմատոցն միայն օտար և անիմանալի սարասիցն տիպք, այլ և աներևոյթ պահպանողական և անհպելի զգուշաւորութիւնն. – 50.

ԱՆՀՐԱԺԵՇՏ - նա և կենդանականն որ ի նմա՝ ոչ ի բարի ինչ, այլ զի անհրաժեշտ չարին կալով անմահականս չարչարեսցի: - 22.

ԱՆՁԱՀԻՑ ՁՈՐ - դառնայ Երուանդ առ սահմանօքն Ատրպատականի ի ձորն Անձահից: - 84. Իսկ Անձահից ձոր վասն այսր կոչեցին. – 84. Իսկ Գուրգինի մարզպանի Հայոց առեալ էր ի բաժնի յելս կոյս և /388/ որ ելանէ ի հարաւակողմն, զԱնձահից ձոր, զԿրճունիս, զԿուղան ովիտ, և զբուն զՄարդաստան գաւառ, զԱրճիշակովիտ. զոտն Առնոյ, զԱղբագ Մեծ և զՓոքր, Ակե, Տամբէր, Տագրեան. Ըռնայ, Զարեհաւան: - 390.

ԱՆՁԱՄԲ - բայց և նշանակս և դրօշս փողփողել առաջի, և դնել թագ իշխանական ի գլուխ և զգեստս արքունականս զանձամբ. – 236. և մօտ եղեալ մերկեաց զսուսերն և զսաղավարտն և զզրահսն, զոր արկեալ էր զանձամբ – 228. և անդ կեցեալ և մեռեալ անձամբ զիւրովի երթեալ, ըստ սահմանելոյ ի վերայ նորա բանի առնն Աստուծոյ սրբոյն Ներսէսի: - 102. Եւ ինքեանք արկեալ զրահ զանձամբ – 208. և լինիցիս իբրև զմի ի մահապարտաց, որ անձամբ զանձինս հերքեցին ի կենաց վտանգաւոր մահուամբ, որպէս և քեզ պատրաստեալ է – 294. և մեռանի անձամբ ընդ այլ շղոմարարսն յաշխարհին Մարաց ի Բակուրակերտ աւանի: - 92. զի թէ հնար իցէ՝ անյապաղ երագութեամբ անձամբ իւրով և զօրու և զինու ձեռնտու լիցի հասանել յօգնականութիւն նմա: - 172.

ԱՆՁԱՄԲ ԱՆՁԻՆ - մինչև անձամբ անձին արարեալ ի հուր սատակի: - 58.

ԱՆՁԱՆՁՐԱՆԱԼԻ - Բայց ես յանհունս ձգեմ զզարմացմանն յեղանակս, թէ զիա՞րդ բաւել տոկայր, անձանձրանալի բերելով զաշխատութեանն աճմունսն. – 308.

ԱՆՁԱՆՁՐՈՑԹ - և կարգէ զդասս պաշտօնէից կատարել զպաշտօն Տեառն ի տուէ և ի գիշերի անձանձրոյթ աշխատութեամբ և առատաձեռն տեսչութեամբ աղքատաց, զի գտցեն զողորմութիւն ի Քրիստոսէ: - 122.

ԱՆՁԱՒ - ելանել ի գագաթն Ամբակայն անձաւին զբօսնուլ նովաւ առ վճարումն բաւականութեան, ըստ մասանց պիտոյից օժնդակութեան քաղաքայարդար ապարանից թագաւորական պաղատի իւրոյ ձեռակերտին – 392. Եւ անդ գտեալ ամրագոյն անձաւ տեղի անկասկածելի ի պատերազմական գործոց և զնա պարսպեալ պատուարօք շուրջանակի – 392. Եւ նոյնժամայն շուրջ փակեալ բազմութեան՝ արգելին զնա իբրև յամուրս անձաւաց, զվարմ մահաբեր, շուրջ ձգեալ ի կործանումն քաջ նահատակին: - 352. զի կարծէր ևս համախորհ և միագործ զնիզակակիցսն իւր, զզօրսն և զզօրագլուխս զգունդ ազատացն, որ մտեալ էին ընդ նմա յանձաւն Նկանի: - 210. Իսկ ի հարաւակողմն կուսէ ի ջրամբար արձանագործ քարեղինէն ճանապարհ աշտիճանեալ /390/ ներքուստ ի վեր մինչ ի կատար անձաւին հեշտալիր զելս և զէջս յօրինեալ, քարագործ աւազամած կրագործութեամբ: - 392.

ԱՆՁԱՒԱՑԻՔ - ,,եթէ հաճոյ թուիցիմ քեզ կնութեան, և դու կամիցիս քեզ զտիրելն Անձաւացեաց՝ մի վեհերեալ յապաղելով դանդաղկոտ լինիր և վերջանար զփութալն,,. – 324. Ապա յետ այսր զեկուցաւ նմա վասն Գուրգինի տիրելն Անձաւացեաց. – 330. Առնէր ասպատակ և ի կողմն Անձաւացեաց տէրութեանն, և անտի ևս առնուին աւար ի պատճառս ռոճկաց պիտոյից այրուձիոյն: - 176. արդ թողոցո զերկրորդ մասն Անձաւացեաց որդւոյ իմոյ

Դերանկիդ, և այլ մի յաւելուր ընդ հակառակս ինչ ձեռն ի գործ արկանել - 330. Բայց յետ բազում յուզիցն և պատերազմացն եհաս տիրել նմա Անձաւացեաց տէրութեանն զայս օրինակ: - 324. Բայց զերկրորդ մասն Անձաւացեաց հանդերձ Նորաբերդ ամրոցաւն Դերանկին նուաճեալ ընդ իւր գործակալօք. – 326. և Աշոտ զօրու ծանու եկն եմուտ յերկիրն Անձաւացեաց, բանակեցաւ ի Բլրակին գեաւղջն Անձաւացեաց. – 330. և Աշոտ զօրու ծանու եկն եմուտ յերկիրն Անձաւացեաց, բանակեցաւ ի Բլրակին գեաւղջն Անձաւացեաց. – 330. Եւ ելեալ գնաց եմուտ յամուրն Կանգուար, և կատարեալ զոր ինչ ախորժեացն՝ տիրեաց Անձաւացեաց մեծաւ զօրութեամբ: - 324. Եւ եղև ընդ մեռանելն տեառնն Անձաւացեաց, նորին տիկինն Հեղինէ գրէ առ Գուրգէն – 324. և միապետէ զտէրութիւնն Անձաւացեաց և խաղաղեցուցանէ զերկիրն և բնակէ յանհոգս զապահովացեալ ի հինից. շինէ եկեղեցիս և կատարէ տօն նաւակատեաց խաղաղութեան: - 326. էր ընդ իշխանսն և մեծ իշխանն Վասպուրական Աշոտ, որդի Դերանկին, և ընդ նմա Գրիգոր իշխանն Մոկաց և զօրքն Անձաւացեաց: - 380. Իսկ Գուրգէն օր ըստ օրէ աճէր զօրութեամբ ի բազում քան թէ ի սակաւ տեղիս, զոր ի Տարօն և զոր յԱնձաւացիս և զոր յԱրզն և զոր առ այլ ամենայն ուրեք – 324. Իսկ իշխանն Աշոտ և իշխանն Մոկաց և զօրքն Անձաւացեաց քաջագոյնս արիացան կացին յոտնկայի. – 380. Մուշեղ Անձաւացեաց տէր հիւանդացեալ զյետին կեալն, ունելով որդի ստնդեայ. – 324. Նոյնժամայն ի բարկութիւն ցասմամբ մեծաւ շարժեալ թագաւորն Սմբատ՝ գրէ առ Գուրգէն Անձաւացեաց տէր և առ Գագիկ Ապումրուան, ասէ. – 362. ՎԱՍՆ ԱՆՁԱԻԱՑԵԱՑ ՅՈԻԶՄԱՆՅՆ ԱՇՈՏԻ ԵԻ ԴԱՐՁԵԱԼ ԽԱՂԱՂԱՆԱԼՈՅ – 330. Վասն զի իշխանն Մոկաց և իշխանն Անձաւացեաց նուաճեալ էին ընդ ձեռամբ Վասպուրական իշխանութեանն: - 380. փութացոյց գիր պաղատանաց առ Տաճատ Ռշտունեաց տէր և առ Վախրիճ Անձաւացեաց տէր, զեկուցանել նոցա զեղեալսն: - 126. Եւ կոչեալ առ ինքն զեպիսկոպոսն Մոկաց զՅօհան և զեպիսկոպոսն Ռշտունեաց Սահակ և զեպիսկոպոսն Անձաւացեաց Շմաւոն – 122.

ԱՆՁԵԻԱՅԻ - Բայց երիցս երանելի ոմն երիտասարդ հասակաւ, ինքն տաճիկ և ազգաւ պարսիկ՝ ելեալ զհետ սիրոյն Քրիստոսի հաւատոցն եկն յարեցաւ ի Պատրիկն Անձևացի – 222. Սոցա անուանք ճանաչին՝ Ատոմ Անձևացի և Մլեահ Վարաժնունի և Գէորգ Բողկացի և Վասակ, և այլք բազումք, որոց անուանք գրեալ են յերկինս: - 266. Փութանակի և վաղվաղակի իւրաքանչիւր զօրօք անդր հասանէին … և այլք ի նախարարացն Վասպուրական իշխանին, Սմբատ Ապահունի, Գրիգոր Քաջբերունի, Վահան Հաւնունի, սեպուհն Դաւիթ, Գազրիկն Ապուհարազ, Թոդորոս Վարազն, Խոսրով Վահևունի, Խոսրով Ակէացի, Վարդան Գաբայեղէն, Սմբատ Մարացեան, սեպուհ մի Սահակ, Պատրիկն Անձևացի, Գորգ Հարմացի, Դաւիթ Գունդսաղար. – 174.

ԱՆՁԵԻԱՅԻՔ - Եւ գունդն Հայոց խաղացին ընդդէմ նոցա … ի տանէն Արծրունեաց՝ Գուրգէն … և Անձևացիքն՝ Պատրիկն և Գէորգ, Դաւիթ և Հասան և Դաւիթ գունդսաղար – 230.

ԱՆՁԿԱԼԻ - և զանձկալից տեսութիւնն հրաշափառապէս և անճառաբար ի վարշամակի տպաւորեալ ելից զկարօտութիւնն Աբգարու աղբիւրն կենաց Քրիստոս: - 76.

ԱՆՁՆ - Թողեալ այնուհետև ի խնամս արարչին, յանձն արարեալ շնորհացն Աստուծոյ: - 346 . ,,յանձն առնումք գիրամանս արքունականս,, - 248. Այլ ձայն իմն գայր՝ մի՛ ժողովել և մի՛ հատանել, թե ոչ՝ եղիցի անձն այն մեռեալ, և ժանտ ախտիւ սատակեսցի գումարտակդ: - 50. Այլ սոքա թէպէտ և յանձն առնուին և մտադիւրութեամբ լսէին նմա սակայն ոչ մեկնեալ լինէին ի ժանդագործ պղծութենէն զազրալից սովոմական ախտիցն – 182. Այնուհետև ել գնաց դէմ եղեալ զյունականօքն շրջել զկողմամբքն, յանձն արարեալ գհոգս իւր շնորհացն Աստուծոյ. – 316. Ասէ, ,,զի՞նչ է նոր հաւատդ, որ այժմ ի քէն երևի. եթէ այլ ևս յաւելցիս ասել՝ անձին քում դու եղիջիր պարտական,,. – 160. Արդ ոչ կարեմք փոյթ ընդ փոյթ շղումարար/ճիշտը՝ շղոմարար/ հաճութեամբ թագաւորիդ յանձն առնուլ՝ զոր հրամայէ կայսերական ճոխութիւնդ. – 132. բազում անգամ աղուեսք թագաւորել խորհեցան, բայց շունք ոչ առին յանձն: - 108. Բազում անգամ թղթովք աղաչեալ զնա ո՛չ առնոյր յանձն. – 346. Բայց Աւշին որդի Ապուսեճի, քանզի էր այր խոռվասէր, ատեցող

ԱՆՊԱՏՈՒՄ - Եւ զերկնային պարգևացն որ ի հանդերձեալսն խոստացաւ Տէրն, զանպատում և զիրեշտակային նորոգութեան՝ նա ասաց լինել անդ կերակուրք և ըմպելիք ուժգին. զոր և կամեսցի ուտել անյագաբար՝ պատրաստ գտանիցէ, և կանանց կուսից մնացելոց հանապազ անյագաբար խառնակումն: - 164. Իսկ երանելիքն գոհացեալ զանպատում պարգևաց Քրիստոսի, որ արժանի արար զնոսա մեռանել վասն անուան նորա - 266. Յայնժամ ելեալ իշխանն Գրիգոր յերեսաց արքայի մեծաւ ուրախութեամբ և անպատում խնդութեամբ՝ և եկն եմուտ յերկիր իւր յիշխանութիւն Վասպուրական կոչեցեալ: - 314.

ԱՆՊԱՐԱՊ - Նոքա պատասխանեալ ասեն. ,,վասն զի մեք ի պարսկական հինից անդուլ և անպարապ գոլով ի բաց լքաք զկրթութիւնն գրոց սրբոց՝ առ ընտրել զհաւատոց խոստովանութեան կանոնադրութիւն. – 132.

ԱՆՊԱՐՏԵԼԻ - Շինէ անդ եկեղեցի վայելչապէս պայծառութեամբ և անուանէ զնա յանուն սուրբ Պետրոսի առաքելոյն անպարտելի դժոխական առաջնորդի: - 394.

ԱՆՊԻՏԱՆ - ,,Աստուծոց պատուական և ամենայն թագաւորաց, տէր երկրի և ծովու, ծնունդ մեծին Արամազդայ Խոսրով թագաւոր. առ Հայրակղոս անմիտ և առ անպիտան ծառայ մեր: - 146. և առեալ ի ձեռանէ նորա զսուսերն շողացուցեալ՝ հայեցաւ /266/ յայսկոյս յայնկոյս և ասէ, ,,ո՛վ անարի վատ արանց և կանացի այր, թշուառական զինուոր, շուն անպիտան տեառն իւրոյ,, - 268. և լի ծաղու և կատականօք այպն արարեալ՝ արհամարհանօք անարգեցին զբռնաւորն, իբրև զմանուկ մի անպիտան կամ զծեր զառանցեալ և խելագարեալ, որ ոչ ըստ իւրոց կամաց զոր ինչ ախորժիցէ խօսիցի: - 264.

ԱՆՋԻՆՋ - գլխաւորագոյն և բարձրագոյն յիշատակ արձանացուցեալ անջինջ կտակ առ բազմախաղաց ժամանակս տրամադրեաց: - 392.

ԱՆՍԱԼ - այլ և ինքն թագաւորն հրամանի նորա անսայր: - 200. և հրաման պատուիրանի տայր յանդիման բազմութեանն, զի խրատու նորա լուիցեն, և հրամանի նորա անսայցեն: - 200. և յարգելուլ զնա մեծամեծաց նախարարացն՝ չանսաց բնաւ ումեք – 228. Եւ անցանելով ընդ գաւառն Բզնունական գայ մտանէ ի Խլաթ. քանզի կամէր անսալ ժամու դիպողագունի, զի որսայցեն նենգութեամբ խաբել: - 186. և առ չանսալ իշխանին՝ անդէն նոյն ժամայն ի մարտ պատրաստին: - 364. Եւ առ չանսալն յետուստ կողմանէ Վահան հարեալ ի գաղտնիս զգարշապար երիվարին՝ արար կաղանալ նժոյգ ասպարակողին. – 334. Եւ ընկալեալ զխրատ նորա երանելոյն Աղանայ անսայր դիպող աւուր: - 114. - Եւ յարգելուլ զնա ազատագունդ վաշտիցն՝չանսայր, քանզի լուեալ էր նոցա, եթէ շրջաբերական թղթով դարան գործեալ էր նմա Աշոտոյ իշխանաց իշխանի: - 352. և յարգելուլ զնա ազատանւոյն՝ չանսաց բնաւ ումեք: - 352. և ոչ առ փոքր մի ինչ ներեաց կամ անսաց /264/ տալ տեղի պատասխանոյ, այլ հրամայեաց դահճացն տալ ի վերայ նորա զվճիռ մահու, փութով զրաւ առնել նոցա ի սատակումն սրոյ: - 266. Իսկ թագաւորն Հայոց Սմբատ անպատկան վարկանելով զերթալն Աշոտի առ Աւշին, մի՛ գուցէ արդեօք և այլք

դրդուիցին յիշխանացն զնորայն հետեւել ուղևորութիւն, և արգելուլն զԱշոտ՝ չանսաց ումեք: - 362. հազար ամ անսացեալ իմ քեզ, արդ դու ինձ անսա: - 46. Նստան երկոքին կողմանքն պահել զպահպանութիւն իւրեանց մեծաւ զգուշութեամբ, և ետուն ժամ անսալ միմեանց՝ ոչ ելանել ի պատերազմ, մինչև եկեսցեն հրեշտակքն յարքայէ, զոր առաքեցինն: - 286. Ոչ ամենևին /գրքում՝ամենեւին/ գոնէ փոքր մի խոտորեցան ի բանս նորա և ոչ առին յանձն ի պատրել մեծութիւն ընչից և ոչ անսացին հնազանդել փառաց աշխարհական ցանկութեանց – 264.

ԱՆՍԱՅԹԱՔ - Եւ խնդրէին ի բազումողորմէն Աստուծոյ՝ հանել ի գլուխ զառօրեայ ժամանակս անսայթաք և հաստատուն հաւատովք – 252. զի անսայթաք և աներկբայ հաստատուն հաւատով ընկալցին զվճիռ մարտիրոսական, համբերութեամբ բազմաւ և գոհացողական օրհնութեամբ – 266. զի կարասցէ անսայթաք հաւատով յաղթել հնարից բանսարկուին, որ ի ծածուկ և յայտնի պատերազմին – 206. Որ անսայթաք հաւատով յառաջացաւ առ աւարտումն պատերազմին փութացեալ, և ելեալ յամրական տեղւոյն սակաւաձեռն զօրականաւն, որ պահէին զպահպանութիւն Շամիրամ բերդին – 400.

ԱՆՍԱՍԱՆԵԼԻ - Եւ թէ հաստատել ոք կամեսցի՝ անսասանելի կացցէ նա յայսմ աշխարհիս. ամէն: - 356.

ԱՆՍԱՑԵԱԼ - հազար ամ անսացեալ իմ քեզ, արդ դու ինձ անսա: - 46.

ԱՆՍԽԱԼ - Յայնժամ դարձեալ ի խորհուրդ եմուտ թագաւորն հանդերձ մեծամեծօքն իւրոյ տէրութեանն, տեսանել զանվրէպ և զանսխալ իմացումն կատարածի ի վերայ աշխարհիս Հայոց: - 196.

ԱՆՍԿԻԶԲՆ - իսկ մշտնջենաւորն՝ է անսկիզբն և անվախճան: - 54.

ԱՆՍՈՒՏ - Եւ արդ ասացից փոքր ի շատէ զյայտնի գործեցեալսն, զի և որ ինչ ընդ սոքօք և յետ սոցա ի գլուխ ելին հանգամանք իրաց՝ և այնմ առանց երկբայութեան հաւատասցես, իբրև ճշմարիտ և անսուտ պատմողի: - 240.

ԱՆՍՈՒՐԲ - Քանզի այնչափ թանձրացաւ յաճախութիւն սովոյն՝ որ ոչ միայն անսուրբ կենդանիս ուտէին ըստ սրբութեան կարգի, այլ և զսարսափելի և զդժնդակ, որ զգազանայինն անցուցանէ զվայրենամտութիւնն, զմարմինս մեռելոց՝ առանց խղճելոյ ուտէին, ի գերեզմանացն հանեալ զհետ միոյ և երկուց ամաց թաղելոյ: - 374.

ԱՆՍՊԱՌ - և յաւիտենական և անսպառ և անվախճան են կեանքն և պարգևքն, զոր պատրաստեաց Աստուած սիրելեաց իւրոց և որք կան համբերութեամբ ի հաւատս ճշմարտութեանն. – 264. Իսկ նա անփոյթ արարեալ երկրաւոր մեծութեանս, զի անցաւոր է՝ անսպառ և անվախճան և անծերանալի և անծախ և առանց ըմբռնելի ի գողոց խնդրեաց պարգևաց առիթ լինել. – 218. նոյնպէս և տանջանքն նմին նման յաւիտենականք և մշտնջենաւորք յանսպառ յաւիտեանս և յանմահ խոշտանգանս՝ պղծոցն և ուրացողացն ի սուրբ և յանբիծ հաւատոց քրիստոնէութեանն. – 264.

ԱՆՍՏԱՆԱԼԻ - Եւ ի բազում յուզիցն և ի խնդրոցն և զօրաժողովն լինելոյ և պատերազմ ընդդէմ վառելոյ և զձև ամրական մաքառմանցն յարդարելոյ և բռնալիր ուժեղագոյն մեքենային բախմանց քարձգութեանցն, զոր և ընդունայն աշխատութեամբ վարանեալ, անընդստանելի /հավանաբար՝ անսստանալի/ մնալով ամրոցին՝դառնայ յիւր իշխանութիւնն: - 326.

ԱՆՍՏԱՆ ԳԻՒՂ - և վերակացու նմա թողոյր զՅովհաննէս ոմն քահանայ ի Բոգունի գաւառէ ի յԱնստան գեղջէ: - 394.

ԱՆՎԱԽՃԱՆ - և յաւիտենական և անսպառ և անվախճան են կեանքն և պարգևքն, զոր պատրաստեաց Աստուած սիրելեաց իւրոց և որք կան համբերութեամբ ի հաւատս ճշմարտութեանն. – 264. իսկ մշտնջենաւորն՝ է անսկիզբն և անվախճան: - 54. Իսկ նա անփոյթ արարեալ երկրաւոր մեծութեանս, զի անցաւոր է՝ անսպառ և անվախճան և անծերանալի և անծախ և առանց ըմբռնելի ի գողոց խնդրեաց պարգևաց առիթ լինել. – 218. Քանզի թէպէտ և տարաժամ լրմամբ ժամանակի չափաբերեալ կենացն Աշոտի՝

հաստատնագոյն և անվրէպ լուծման կենացս առ հոգևորսն և յաւիտենականսն և անվախճան կենացն առաւելութիւնն անցեալ գնացեալ ժամանեաց – 386.

ԱՆՎԱՅԵԼՈՒՉ - Եւ յայտ յանդիման ի վերայ հասանել ոչ կարէր. գունդ կազմել և ճակատ պատրաստել ընդդէմ՝ անվայելուչ էր. – 346.

ԱՆՎԱՅՐԱՓԱԿ - տեսանեն զկողմանս արևելից, դաշտ յոյժ մեծանիստ, լայնատարած, հարթայատակ, անվայրապատակ առ ի սահման, անբաւական ի տեսութիւն աչաց, սաստիկ լուսով զարդարեալ ի գիշերի, բազմակերպ երևմամբ – 48.

ԱՆՎԱՒԵՐ - Քանզի թէպէտ և անվաւեր ի նոցանէ գրեցեալքն ասացան՝ այլ բազում ինչ և առ ճշմարիտն ստուերաբանեն – 18.

ԱՆՎԵՀԵՐ - և երկից և երից և բազում անգամ զնոյն հաստատեցին երդմամբ, զի անվեհեր համարձակութեամբ եկեսցէ առ նոսա. – 226.

ԱՆՎԵՐՈՅ - և խոտեալ ի բաց ընկենուք զմիոյ անընկեր և անվերոյ իրաց հանդէս, որպէս և իսկ կոչեցեալ մարգարէն ձեր Մահումաթ – 246.

ԱՆՎԿԱՅ - Եւ ոչ անվկայ բանս, որպէս վերագոյնն գրեալ է մեր զդերահատուցականս սորա, վկայութեամբ մարգարէական տառիցն, որպէս և ի պատահմանէ իրացն ճարտար գիտեն՝ որք են ի ժամանակս յայսոսիկ մնացեալ յայն ժամու անդ հանդիպելոցն: - 262.

ԱՆՎՐԷՊ - Եւ թէպէտ յայնմանէ վրիպեցոյց ճշմարիտն Աստուծոյ պատուհաս՝ այլ չարն սովորական բնաւորեալ պահեցաւ անվրէպ: - 38. Յայնժամ դարձեալ ի խորհուրդ եմուտ թագաւորն հանդերձ մեծամեծօքն իւրոյ տէրութեանն, տեսանել զանվրէպ և զանսխալ իմացումն կատարածի ի վերայ աշխարհիս Հայոց: - 196. Քանզի թէպէտ և տարաժամ լրմամբ ժամանակի չափաբերեալ կենացն Աշոտի՝ հաստատնագոյն և անվրէպ լուծման կենացս առ հոգևորսն և յաւիտենականսն և անվախճան կենացն առաւելութիւնն անցեալ գնացեալ ժամանեաց – 386.

ԱՆՎՐԻՊԱԳՈՅՆ - Ես իսկ առ ընթեր գոլով անվրիպագոյն իրազեկ եղէ բովանդակ նորա հաստատնագոյն առ յոյսն կազմեալ փրկութիւն. – 388.

ԱՆՏԱՆԵԼԻ - Զնոյն տեսեալ ազատացն Վասպուրականի, անտանելի մնալով առ դիպուածն զոր ինչ գործեաց Ապումբուան՝ ելին գնացին առ Ատոմ որդի մեծին Գուրգինայ յամուրն Կանգուար, գտանել զելս իրացն – 364.

ԱՆՏԱՌԱԽԻՏ - ,,արջք գիսակագեղք սպիտակայեղցք որջացեալ ի պրակս անտառախիտ մայրեացդ. արդ թէ հաճոյ թուիցի՝ երթիցուք որսալ զնոսա,,. – 100. առաջի տեսանելով զկապուտակ ծիրանափայլ դաշտաձև ծովն. դաստակերտս մեծամեծս շուրջ զեզերբն անտառախիտ ծառովք և գիներեր որթովք և զանազան պտղովք. – 86. և դահճացն հանեալ զսուսերն՝ դիմեցին ի վերայ նոցա իբրև զգազանս արիւնարբուս, և ծեծէին սրովն, իբրև ոք զի հատանիցէ փայտ ի մայրս անտառախիտս հարեալ կացնաւ, և յանխնայ անողորմ յօշէին անդամ անդամ: - 266.

ԱՆՏԵՂԵԱԿ - Բայց մի և այսմ անտեղեակ լինիցիս – 212.

ԱՆՏԵՂԻ - Իբրև գիտաց իշխանն, եթէ վճարեալ է չարութիւնն յաչս նոցա, և այլ ընդ այլոյ խօսին, և ի գաղտնիս քրթմնջեն, և անտեղի և անընդունակ հրամանաց նորա լինէին՝ ետ պատասխանի և ասէ – 214. Իսկ նախարարքն Հայոց իբրև տեսին յերկոցունց կողմանց զանկարգ և զանտեղի աշխարհիս պիտաւորութիւն՝ յապաշաւանս դարձեալ ի վերայ անցիցն անցելոց զոր ախորժելովն խնդրեցին՝ դարձան առ Վռամ – 118.

ԱՆՏԵՍ ԱՐԱՐԵԱԼ - զորոյ զպաղատանս ոչ անտես արարեալ Քրիստոսի՝ ներէ նմա հանել ի գլուխ զսուրբ քառասնորդսն, խաչակից լինելով Քրիստոսի, մինչև ի պարտ զատկին – 254. Եւ մեր անտես արարեալ զգործս վնասուց ձերոց, զոր մեղայք մեզ, և լիցին անձինք ձեր ի գիւտս, և կեցջիք և տիրեցէք աշխարհի և տանց ձերոց, դուք և որդիք ձեր – 244.

ԱՆՏԻ - և աստի և անտի երիվարի փորոյն տախտակագործ գրգեալ ըստ փորոյն չափու մածուցեալ ի ձև վահանի զգործ արուեստի զինուն ցուցանեն: - 208. անտի և անդ ոչ ոք զօրէր Զրուանայ թագաւորել. բայց միայն կին մի անուանի Դիոնիսեայ, հարստայեղց վավաշոտ հրամանի բարուք. – 16. Առնէր ասպատակ և ի կողմն Անձաւացեաց

տէրութեանն, և անտի ևս առնուին աւար ի պատճառս ռոճկաց պիտոյից այրուձիոյն: - 176. ասէ՝ կինս զոր ետուր /20/ ընդ իս, սա ետ ինձ ի ծառոյ անտի և կերայ. – 22. գրէ թուղթ հաւատոց առ Ղևոն կայսր Յունաց, և ընկալեալ ի նմանէ պատասխանիս՝ բազում ինչ ի Կուրանէ անտի իւրեանց արտաքս ընկէց զոյժ առասպելագոյնն, քանզի ստուգապէս ծանեաւ զզօրութիւնն. – 166. եթէ եբաց Տէր զգանձս իւր և եհան անտի զանօթս բարկութեան – 196. Եւ ինքն/302/ անցեալ գնայր առ իշխանիկն ի յամուրն Աշխարհաբերդն կոչեցեալ. և անտի արիաբար քաջասրտագոյն դիմացուածով ելեալ գնաց դարձեալ առ սպարապետն Սմբատ: - 304. Եւ այլք մերձ կացեալ առ Դերանիկն՝ ամբաստան լեալ Աշոտոյ կորապաղատէ, որպէս թէ նախանձու լցեալ, և քսութեամբ վարէր ի մէջ հազարապետին, և թէ արկանել ևս ջանայր զնա յիշխանութենէ անտի նորա: - 342. և անտի գնացեալ ի ձորն Ածանայ ի խնդիր փախստէիցն և հասեալ ի յետոյ կողմանցն՝ ի սուր և ի գերութիւն զբազումս ի նոցանէ արկանեն: - 202. Եւ անտի դարձեալ դառնայր Աշոտ ընդ միւս ևս ամրականն ընդ ոստոզերծ քարանձաւի, ի յարևելից կուսէ լերինն Վարագայ, ի վերայ գեաւղջն Կոխպանից, հանդէպ եկեղեցւոյն սրբոյն Հռիփսիմեայ – 334. և անտի դարձեալ ի Բաբելոն, ընդ իւր տանելով զԼիդէացին.- 66. Եւ ապա անտի ոչ սակաւ ինչ լինէր յաւուր յայնմիկ ձայն լալոյ, հեղումն արտասուաց յահագին բորբոքմանէ սրտից նոցա և գութ խանդաղատանաց թագաւորին և իշխանացն և զօրացն ամենեցուն և բնակչաց քաղաքին. – 154. և բազմութիւն զինուորաց վառելոց աստի և անտի, և վարոցաւորք և սակրաւորք այսր անդր քշել զամբոխն դռոթեալ. – 236. և դարձեալ անտի սպան և զմայր իւր զՏաճատուհի – 106. և դիմեցին ի մէջ նոցա ի չորս առաջս, ըստ նմանութեան տեառնանման խաչին, և բախեցին զճակատն և պատառեցին զռազմն և դարձուցին ընդ զառ ի վայրն և իջուցին ի լեռնէ անտի, և հարին ի հարուածս մեծամեծս. – 286. Եւ եղև զկնի այսորիկ գնաց անտի Ժիրաք և եկն եմուտ ի Վանտոսպ – 206. Եւ զի ստեալ Դերանկին Գուրգենայ եհան անտի զգործակալսն՝ նոյն գունակ Գուրգէն հնարաւորեալ առնու զամրոցն և հանէ զնորա գործակալսն – 326. և զի ըստ կամաց նորա հանցէ ի բանակէ անտի զգերիս Վասպուրականի: - 218. Եւ զոր ինչ ոչ իմացեալ մեր՝ և ոչ գրել արժանի վարկաք, բայց միայն զի բարձրագոյնք և նախապատիւք ի թագաւորաց անտի էին: - 96. Եւ զօրուն գնացեալ անտի ձմերեցին ի Սուրիա: - 144. և ինքն գնաց անտի և եմուտ ի Պարտաւ՝ ձմերել անդ, և տեսանել վասն յետին կատարածին աշխարհիս Հայոց, թէ որպէս ի գլուխ ելանիցէ. – 298. և ինքն հեռացեալ գնաց զկնի Աղէքսանդրի ի Բաբելոն, և անտի եկեալ յԵրուսաղէմ պագին անդ երկիր Աստուծոյ: - 70. և լեռնային զօրքն Ապումուսէի զհետ մտեալ փախստէիցն՝ իջուցին ի լեռնէ անտի և դարձան առնել դիակապուտ – 282. Եւ յայնմ ժամանակի երթեալ ժողովէին ի քաղաքն Եդեսացւոց արք ԺԲՌ յամենայն ցեղիցն Իսրայէլի զի տեսին եթէ մեկնեցաւ անտի զօրն Պարսից, և թողին ի բաց զքաղաքն. – 156. և նա տրտմեալ գնաց ի տուն իւր, քանզի հանապազ ստիպէր ի դիւէ անտի, թերևս թոյլ տալովն Աստուծոյ, զոր համարէր ի հրեշտակէ զանկանելն ի մտաց: - 160. զի անտի և անտի ի բաց կացցեն /12/ տարակուսական մտածութեանց ծուփս խորհրդոց ի քումմէ հանճարեղ խոհականալիր բանգիտութենէ: - 14. զի անտի և անտի ի բաց կացցեն /12/ տարակուսական մտածութեանց ծուփս խորհրդոց ի քումմէ հանճարեղ խոհականալիր բանգիտութենէ: - 14. զի յորմէ սակաւ մի կասկածս ունէր՝ անտի ևս աներկիւղ հաստատեցան: - 238. զոր և ես գիտեմ յաշխարհագրութեանց անտի Պտղոմեայ՝ զԵմաւոն լեառն յարևելս, որ արդարև բարձր է քան զամենայն երկիր, անկոխելի ոտից մարդոց – 48. թէպէտ և ոչ համարձակեաց զամենայն բառնալ, այլ յոյժ պատկառանօք ամաչեցեալ՝ լքաւ ի ստութենէ անտի, որ յանդիմանեցաւ ի թղթոյ կայսերն, և ի ձեռն այսորիկ ցուցանէր բարեմտութիւն մեծ առ ազգս /166/ քրիստոնէից. – 168. ի սորա ԻԵ ամին առաւ Ելիոն քաղաք ի յԱթենացւոց անտի – 58. Իսկ իբրև ընթերցաւ զօրավարն Աղուանից զթուղթ թագաւորին՝ փութացաւ էջ ի լեռնէ անտի և եկն եկաց առաջի Բուխայի. – 288. Կարգեաց հրամանատարս և զօրագլուխս ինքեան յիսմայէլականաց անտի՝ զԱլի և զԱպուբաքր և զԱմր և զՈւթման: - 160. Նա և ջուր մաքուր

յապակի զուտ և վճիտ արկեալ, ի տապ արեգականն դնելով, և զնիւթ հրոյն առ ընթեր՝ ի շողոյ անտի արևակէզ եղեալ տոչորի նիւթն: - 52. Նախ զի և լեզուքն շփոթեալք՝ունէին զանմիաբանութեան փոյթս, կամ թէ զի և վատութիւնք քաջաց ապիհարկեալք ոչ գրեցաւ ի մատենագրաց անտի Քաղդէացւոց – 44. Նոյնժամայն ելեալ զհետ Դերանկին կորապաղատն ի նոյն աղագս ի բաց մեկնել ի դիմաց հազարապետին, գիտելով զոր ինչ խորհեալն էր յաղագս նախարարացն Հայոց եկելոյն առ նա, և մեկնեալ լինէին ի զօրացն անտի ասպարէզս Ե – 342. որ ի նախկին բարբառոյ անտի թարգմանի Արբումն: - 24. Ցոյցք ժամանակացս այսոցիկ, ըստ որում յառաջագոյն ասացաք, որ յաւուրց անտի Բէլայ մինչև ի Նինոս՝ երևելիք ինչ և նշանաւորք ի /42/ մատենիցն առաջնոցն ոչ երևի, թերևս ի բազում խափանմանց: - 44. Քանզի ասէ, թէ ,,էին ոմանք յելելոց անտի հեթանոսաց, որք եկեալ էին յԵրուսաղէմ ի տօնն, զի երկիրպագանիցեն. – 76.

ԱՆՏԻՈՔ,ԱՆՏԻՕՔ - Եւ սրբեալ զերկիրս ի պղծութենէ և ի նենգութենէ նեղութեանցն, իբրև զՅուդայ Մակաբայեցի զԱնտիոքայն սրբելով զանաստուածութիւնն յԻսրայէլէ՝ արար խաղաղութիւն նոցա որոց տիրէրն: - 312. արդ ո՞ւր է Աստուածն այն, զոր դուդ ասես, վասն է՞ր ոչ փրկեաց զԿեսարիայ և զԱնտիոք և զՏարսոն և զԱմասիայ և զԵրուսաղէմ և զԱղէքսանդրիս և զԹեբայիտ և զայլ աշխարս: 146.

ԱՆՏԻՈՔԱՑԻՔ - Եւ հաւանեալ Խոռեմայ՝ եկն առ Հայրակղոս արքայ Յունաց, թողեալ ի նա զԵրուսաղէմ և զԿեսարիայ Պաղեստինացւոց և զամենայն կողմանս Անտիոքացոց և զամենայն քաղաքս գաւառացն այնոցիկ, և զՏարսոն Կիւլիկեցւոց և զմեծ մասն Հայոց և զամենայն զոր միանգամ կամեցաւ Հայրակղոս. – 152.

ԱՆՏԻՕՔ - Տե՛ս ԱՆՏԻՈՔ

ԱՆՏԽՈՒՐ - և ահա հասեալ կայք յատենի առաջի իմ անտրտում և անտխուր երեսօք, որպէս անմեղս և զբարեգործակս, և լի ամենայն կամարարութեամբ մեր, անխիղճ համարձակութեամբ – 244.

ԱՆՏՐՏՈՒՄ - անտրտում խնդութեամբ դիմեցին ի տեղի սպանմանն, իբրև ի հարսանիս երիտասարդական ամուսնութեանն, ուրախ լինել որպէս փեսայ առ հարսին. – 266. և ահա հասեալ կայք յատենի առաջի իմ անտրտում և անտխուր երեսօք, որպէս անմեղս և զբարեգործակս, և լի ամենայն կամարարութեամբ մեր, անխիղճ համարձակութեամբ – 244. Եւ արձակեաց զնա ի տուն իւր մեծաւ ուրախութեամբ և անտրտում խնդութեամբ – 218. և դառնային մեծաւ ուրախութեամբ և անտրտում խնդութեամբ յիւրաքանչիւր տեղիս: - 176. և չոգան ի բանակետղ իւրեանց մեծաւ յաղթութեամբ, ուրախացեալ անտրտում խնդութեամբ – 282.

ԱՆՑ - այլ և ոչ զծիծաղականս նոցա համբաւեալ քաջութիւն, որպէս կարծեն՝ առանց եպերանաց անցից զխելագարութեամբքն: - 36. անկեալ առ ոտս նորա մեծաւ հառաչանօք՝ մի՛ յիշել զանցս զանցիցն անցելոց, զոր արարինն առ սուրբն, այլ դարձեալ կալցի զաթոռ հայրապետութեանն. – 120. անկեալ առ ոտս նորա մեծաւ հառաչանօք՝ մի՛ յիշել զանցս զանցիցն անցելոց, զոր արարինն առ սուրբն, այլ դարձեալ կալցի զաթոռ հայրապետութեանն. – 120. և ահա հնչէր առ հասարակ երկիրն ամենայն իբրև զծով ալեաց կուտակելոյ, և սաստկացաւ պատերազմն, յառլուսանալ աւուրն մինչև ի սպառել անցից տունջեանն իշխեցողին երկոտասան ժամու աւուրն. – 276. Եւ եղև իբրև կատարեաց Բուխայ զանցս անցից ընդ Վասպուրական աշխարհս և խաղաց յարևելս կոյս՝ եւ գնաց Գուրգէն ի Սպեր գաւառ. – 302. Եւ եղև իբրև կատարեաց Բուխայ զանցս անցից ընդ Վասպուրական աշխարհս և խաղաց յարևելս կոյս՝ եւ գնաց Գուրգէն ի Սպեր գաւառ. – 302. և ոչ եմ բաւական պատմել զանցս անցիցն կորստականութեանն նոցա մոլորութեան, վրիպել յուղիղ և յամբիծ առաքելաքարոզ դաւանութեան հաւատոց կաթողիկէ եկեղեցւոյ ի Հայր և յՈրդի և ի Հոգին սուրբ. – 240. զի տացէ վրէժս անցիցն անցելոց ի նմանէ և ապստամբութեամբ ի պետութենէն Տաճկաց: - 202. Իսկ նախարարքն Հայոց իբրև տեսին յերկոցունց կողմանց զանկարգ և զանտեղի աշխարհիս պիտաւորութիւն՝ յապաշաւանս դարձեալ ի վերայ անցիցն անցելոց զոր ախորժելովն

խնդրեցին՝ դարձան առ Վռամ – 118. հանեն ընդ սուր, վարեն ի գերութիւն և առնուն աւար, և ի յանցին դառնան ի Ճուաշ և ի Թոռնաւան գաւառ, անցեալ ընդ Կրճունեաց գաւառն: - 400. հարկ եղև ակամայ կարգել դնել առաջի զդէմս անցիցն ըստ իւրաքանչիւր պատահմանց: - 234. Յայնժամ Սմբատ Բագրատունի … Մոկաց իշխեցող … անհանդուրժելի լեալ /216/ անցիցն անցելոց – 218. Նոյնպէս և բնակիչք Աղձնեաց անհանդուրժելիք լեալք անցիցն անցելոց և առ զայսոսիկ յամբաստանելն – 180. և ոչ եմ բաւական պատմել զանցս անցիցն կորստականութեանն նոցա մոլորութեան, վրիպել յուղիղ և յամբիծ առաքելաքարոզ դաւանութեան հաւատոց կաթողիկէ եկեղեցւոյ ի Հայր և յՈրդի և ի Հոգին սուրբ. – 240.

ԱՆՑԱՆԵԼ - այլ ես ասեմ քեզ, եթէ Տէր կամեսցի՝ վաղիւ պատելոց է զքեզ պատերազմ քաջաց. և ճեթեսցեն ի վերայ քո իբրև զամպս երկնից ի բռնալիր նիզակօք անցանիցեն ընդ մէջ բազմութեան քո իբրև զփայլատակունս հրոյ շանթից: - 140. այլ հրաման տայր զօրացն՝ նաւս կազմել և անցանել ի Կոստանդնուպօլիս: - 146. անցցուք ի վեր Եղկղեսիանոսաց, ի ժամանակի հալածանաց որք անկան ի կռապաշտութեանն մոլորութիւն. – 256. Բայց յետ աւուրց բազմաց անցանելոյ շփոթմանցն՝ Գուրգէնի ընդարձակեալ նախախնամութեամբն Քրիստոսի և ելեալ փրծեալ ի բանտէն՝ եկն եմուտ յաշխարհ իւր: - 320. բայց ակամայ և ի հարկէ գրեցից կարգեցից ի փոքր և ի դուզնաքեայ բանից, բովանդակեցից համառօտ սուղ և սակաւ բանիւ անցանել ընդ պատմութիւն իրիս այսմիկ – 240. Բայց հասեալ Բուխայ անց ընդ գետն մեծ զոր Կուրն կոչեն, և յորձանուտ շարժման գարնանային հոսանացն տեղի տուեալ ելանել զօրուն և բնակել շուրջ զքաղաքաւն. – 270. Բայց յետոյ անմիաբան գտեալք նախարարքն Հայոց՝ թողին զոր խորհեցանն վասն թագաւորելոյ Վահանայ, և անցին /126/ գնացին առ մեծն Վարդան. – 128. դարձեալ յետ փոքր ինչ աւուրց անցանելոյ՝ և խռնեցաւ միւս անգամ պատերազմն, և և՛ս սաստիկ հարան զօրքն արքունի. – 276. երկեաւ Վարդան ի մարզպանէն բնակել յանդորրու, այլ այնր աղագաւ էանց գնաց յամուրսն Մոկաց, և կայր մնայր ի նախախնամութենէ Աստուծոյ այցելել աշխարհիս Հայոց: - 122. Եւ զինուորք ի մահու վտանգ տուեալ զանձինս՝ի ղոյղս անցանել ի նաւէն ի կղզին. – 50. Եւ անյապաղ գլխաւորեալ խորհրդոցն՝ առնու ընդ իւր զԴերենիկն, և էանց գնաց ի տուն իւր ի Բագարան: - 322. Եւ անցանելով ընդ գաւառն Բզնունական գայ մտանէ ի Խլաթ. քանզի կամէր անսալ ժամու դիպողագունի, զի որսայցեն նենգութեամբ խաբել: - 186. և անցանէ ի Շիրակ, և հասեալ ի Դուին՝ աւերէ զնա և զՆախճաւան և զՈրմի – 148. և առնու զԲաբելոն, և շինէ զՏարսոն ի ձև Բաբելոնի, գետոյ ընդ մէջ անցանելոյ որպէս խոնարհագոյն մասնաւորաբար գրեմ: - 16. Եւ եղև զի անցանէր ընդ այն Մուկաթլ ոմն ի Վանանդ կոչեցեալ ազատութենէ – 288. Եւ եղև զկնի երից աւուրց անցանելոյ ետուն թուղթ մի տանել առ Գուրգէն, գրեալ Բուխայի լի դառնութեամբ, կնքեալ մատանեաւ արքայի, իբրև այն թէ ի դիմաց արքային և յարքունուստ եկեալ. – 236. Եւ եղև յաւուրն ինն և տասներորդի, յամսեանն մարգաց, որ օր ԻԸ էր ամսոյն, յամի քսան և հինգերորդի թագաւորութեանն Խոսրովու, որ կոչէր Ապրուէզ, զկնի Ժ աւուր անցանելոյ զատկին՝ առին զքաղաքն. – 142. և ես մի՛ իշխեցից քան զԱրասխ անցանել յայդկոյս: - 138. և թուէ մի ըստ միոջէ, սկսեալ յԱբրահամէ և գայ անցանէ մինչ ի Յովսէփ - 16. Եւ իբրև անցին աւուրք ինչ՝ վախճանեցաւ տանուտէր տանն: - 158. և ինքն անցանելով խաղաղութեամբ ընդ աշխարհն Վասպուրական սակաւատոյժ վնասիւք՝ զպատանդսն ընդ իւր առեալ տանի: - 186. Եւ ինքն Աբրահիմ եկն անց յայնկոյս յոստանն Ռշտունեաց և անդ լինէր: - 306. Եւ ինքն թագաւորն ժողովեալ զօր հարուստ աւելի քան զհազարաց հնգից և քսանից, և եկն անց յայնկոյս գետոյն Երասխայ, և բանակեցան ի տեղւոջն: - 382. Եւ կուտեալ զբազմութիւն զօրացն մերձ ի քաղաքն որ էր ձմերոց իշխանին Հայոց՝ անցանէր բանակէր ամենայն զօրօք իւրովք. – 172. և հասեալ ի Բագրաւանդ գաւառ ի Ձիրաւ գեօղ՝ կամէր անցանել ի թագաւորաբնակ տեղիսն Հայոց: - 106. Եւ յամենայն ազգաց որ ընդ ձեռամբ քո են՝ հաւաքեա առ քեզ զընտիրն այրուձիոց, և անց յայնկոյս գետոյն: - 196. Եւ յետ այսորիկ գումարեցոյց զօրս բազունս Խոռեմ, և ել ի Քաղկեդոն և նստաւ յանդիման Բիւզանդայ, և

խնդրէր անցանել և կործանել զքաղաքն թագաւորանիստ: - 142. Եւ յետ անցանելոյ աւուր, գնացեալ Աշոտ որդի Դերանկին, առեալ զդի նորա՝ տարեալ հանգոյց առ հարս իւր յԱղբակ գաւառի ի վանս սուրբ Խաչին: - 354. և նորա կալեալ զնա և ի կապանս մատնեալ որպէս զանհնազանդ ոմն՝ և եկն անց յՈստանն Ռշտունեաց: - 322. զոր արհամարհեալ Շաւասպ /114/ արձակերեսան զերիվարն ի սիգաքայլ արշաւանս արարեալ՝ աներկիւղ համարձակութեամբ էանց գնաց ճեմ զճեմի առ զօրավարն Անատողի: - 116. Ի նմին ամի յետ վեց ամսոյ անցանելոյ փոխի և սուրբ վարդապետն Մաշտոց. – 120. Իսկ յետ Կ ամի անցանելոյ Աղէքսանդրի և անհիշխանութեանն Հայոց և Պարսից՝ թագաւորէ Արշակ Քաջ Մարաց և Պարսից և Եգիպտացւոց և Ելիմացւոց ի Բախլ քաղաքի. – 72. Իսկ զԱհմատ ընդ Վասպուրական աշխարհին անցանել գնալ՝ ելեալ զհետ նորա Շապուհ որդի Աշոտի, մինչ տանել հասուցանել զնա ի մուտս Ասորեստանեայց ճանապարհին: - 346. Իսկ յետ անցանելոյ աւուրց ինչ՝ ետ տանել զնա առ թագաւորն, և ընդ նմա գունդս զինուորաց վառելոց և ընտիր այրուձիոց: - 288. համարձակապէս անցանել գնալ ընդ իշխանութիւնս և ընդ պետութիւնս, ընդ աշխարհակալս խաւարիս այսորիկ, որ անհաւատից քան եթէ հաւատացելոց ոգւոց և ապաշաւելոց զտիրելն բռնաձգեալ կորզեն յինքեանցն կորուստ: - 388. յայնժամ մերկացեալ և ի բաց եդեալ զաշխարհական պատրանաց զբաղումն՝ և էանց գնաց ի վեր քան զերևելիսս – 284. Յետ անցանելոյ չորից ամաց … դարձեալ Գրիգոր եղբայր Աշոտի Վասպուրական իշխանի յԱփհազաց աշխարհէն՝ նոցուն օգնականութեամբ և Վրաց զօրու ընտիր գոլով՝ եկն եմուտ յաշխարհս Վասպուրական՝ տալ պատերազմ ընդ Գուրգինայ. – 310. Նոյն ժամայն առեալ Սմբատայ զԱրտաշէս գայ անցանէ ի վայր ի լեռնէն. – 84. Սոյնպէս և այրն այն Յովսէփ զօրավարն Տաճկաց մնայր անցանել ձմերանն, զի ելցէ ի վերայ աշխարհիս Հայոց սրով և գերութեամբ և մեծամեծ հարուածովք և զմեծամեծս աշխարհիս խաղացուցանէ ի գերութիւն – 188. Սոքա հրամանաւ Վահանայ Արծրունւոյ փոյթ յանձին կալեալ՝ խուզել քննել կարգել ի համառօտ բանս զաճմունս ազգացն անցելոց ոչ կարի ինչ ընդ երկայնագոյնս աշխատասիրաբար անցանել պատմութիւնս: - 74. Յայնժամ երդուեալ միաբանութեամբ գնացին ի գիշերի և անցին ընդ զոմ ի Վեհկաւատ – 150.

ԱՆՑԱԻՈՐ - Իսկ նա անփոյթ արարեալ երկրաւոր մեծութեանս, զի անցաւոր է՝ անսպառ և անվախճան և անծերանալի և անծախ և առանց ըմբռնելի ի գողոց խնդրեաց պարգևաց առիթ լինել. – 218.

ԱՆՑԵԱԼ - ամենեքեան ընդ նմա անցեալ գնացին ի կողմն Ատրպատականի – 212. անկեալ առ ոտս նորա մեծաւ հառաչանօք՝ մի՛ յիշել զանցս զանցիցն անցելոց, զոր արարինն առ սուրբն, այլ դարձեալ կալցի զաթոռ հայրապետութեանն. – 120. Գունդ մի հարուստ անցեալ մնացին ի Համբոյրազան աւանի Մարդաստան գաւառի, ուր եպիսկոպոսական աթոռ մարդպետականին յայնժամ փոխեալ դնէր ի Նախճաւան քաղաքէ. – 372. Եւ այգուն անցեալ ընդ գետն Երասխ յայնկոյս ի դաշտն Շարուր՝ բանակին զգետովն: - 382. Եւ ինքն /302/ անցեալ գնայր առ իշխանիկն ի յամուրն Աշխարհաբերդն կոչեցեալ. և անտի արիաբար քաջասրտագոյն դիմացուածով ելեալ գնաց դարձեալ առ սպարապետն Սմբատ: - 304. և անցեալ պատմեցին զօրավարին: - 224. Եւ անցեալ բնակեալ էին զօրքն Հայոց ի դաշտին Օշական ի Մանազաւեան նահանգին: - 380. Եւ անցեալ գնացաք ի տեղեացն երկուցեալք – 50. և ելեալ ի Յադամակերտ քաղաքէ ի Թ ժամու ուրբաթու աւուրն, և անցեալ ընդ ծովակն Յըմբեայ, և ընդ Վարազի Զարեհաւանի. – 402. և թողեալ զքաղաքն Պարտաւ՝ առնու զզօրս իւր երագապէս անցեալ գնացեալ ի յաշխարհն Ասորեստանի: - 374. Եւ Խոսրով արքայ փախստական գնաց, և անցեալ զԴեկղաթաւ ի Վեհկաւատ՝ հրամայեաց զլար կամուրջացն կտրել. – 150. և կինն անցեալ պատմեաց թագաւորին որ ինչ եղևն, զբողոք բառնալն իւր և զկացուցանելն վկայս՝ թէ ոչ վայել եմ քեզ կին, այլ արքայի, և որ ինչ եղևն – 272. և հնախօսս շարագրական մատեանս և ի բազում վէպս պատմութեանց անցեալ գրեցի, որ ինչ բաւականանալ ձեռնհաս եղէ, սկսեալ յԱդամայ մինչ առ մեզ հասեալ ժամանակացս գիւտ: - 12. Եւ նորա զեկուցեալ վասն նորա

Բուխայի՝ ասէ. ,,այրս այս Գուրգէն ի տոհմէն Արծրունեաց, այր քաջ և պատերազմող, ի յահէ քումմէ անցեալ գնացեալ զկողմամբքն Յունաց – 304. զի Գագիկ անցեալ ամրանայր ի ճախուկ բերդի, ի կասկածի կալով ի Դերանկէն, ըստ զեկուցմանն զոր ինչ գործեաց Հասան առ Դերանիկն: - 350. զի տացէ վրէժս անցիցն անցելոց ի նմանէ և ապստամբութեամբ ի պետութենէն Տաճկաց: - 202. Զոր և մեր ըստ հրամանի քում, Գագիկ զօրավար Հայոց և Վասպուրական իշխան, ջան յանձին տարեալ ընդ համառօտութիւն զրուցատրութեանցն անցեալ – 74. ի մէջ անցեալ սուրբն Ներսէս համոզէ զնոսա և խաղաղացուցանէ զաղմուկն: - 100. Իբրև ստուգեցաւ որ ինչ եղեալն էր՝ փութացան խնդրել ի քաղաքին և ի կիրճս ճանապարհին, յոր կողմ և աճապարեաց ոք, մինչ անցեալ գտին զհարեալն դիւի չարի, զի կայր դեռ կիսամեռ: - 378. Իսկ նախարարքն Հայոց իբրև տեսին յերկոցունց կողմանց զանկարգ և զանտեղի աշխարհիս պիտաւորութիւն՝ յապաշաւանս դարձեալ ի վերայ անցիցն անցելոց զոր ախորժելովն խնդրեցին՝ դարձան առ Վռամ – 118. Իսկ այլազգեացն անցեալ գնացեալ մտին ի Թրաբ գաւառ և ի Շնաւհ: - 402. Իսկ Ապուջափր անցեալ ի կողմն Աղբագոյ՝ և ժողովեցան առ նա գունդք գունդ յամենայն կողմանց: - 306. Իսկ ի միում յաւուրս անցեալ գնացեալ Գուրգէն՝ հանդիպի նմա ի քաղաքին Պարտաւ - 370. Իսկ նա անցեալ ի գաւառն Որսիրանից, և ընդ նմա բազմութիւն ազատաց և մեծամեծացն Արծրունեաց նախարարութեանց և ամենայն զօրաց նոցա – 224. Իսկ նա չանսաւորութիւն անխոնարհելի մնացեալ, և անցեալ օթագայեցեալ ի գեօղն Փեռոտակ յանդիման քաղաքին: - 352. հանեն ընդ սուր, վարեն ի գերութիւն և առնուն աւար, և ի յանցին դառնան ի Ճուաշ և ի Թոռնաւան գաւառ, անցեալ ընդ Կրճունեաց գաւառն: - 400. Յայնժամ Սմբատ Բագրատունի … Մոկաց իշխեցող … անհանդուրժելի լեալ /216/ անցիցն անցելոց – 218. յառաջ խաղացուցից զբանսն, արագաքայլ արշաւանօք անցեալ գնացից ընդ շարագրածս անցնիւր պատմագրաց, զազգաբանութիւնն միայն ոճով դրոշմեցից ի շարի աստ – 74. յորում տեղւոջ քաղաքն Տարունոյ շինեալ էր, ուր բնակեալ բայանայր զօրավարն Տաճկաց, զօրհասական արջոյն բերելով նմանութիւն, որ յաւուրս ձմերայնոյ արմատովք պարենաւորեալ՝ ի մէջ կենաց և մահու անցեալ որջանան ի բոյնս իւրեանց: - 188. Նոյնպէս և բնակիչք Աղձնեաց անհանդուրժելիք լեալք անցիցն անցելոց և առ զայսոսիկ յամբաստանելն – 180. Նոր ոմն Նաբուզարդան կամ Զամրի յայտնեալ ի յաղանդոյն Նեստորի, երեքթշուառեան վատաշուէր, վատմիրհ, զազահութեանն չարիս ախտացեալ՝ սպրդեալ եմուտ ընդ մութ գիշերին յամրական պարսպեալ բլուր, և անցեալ ի սուրբ կոչարանին օթագացեալ. – 378. նուաճեաց զանձն, հրապոյրս պղտորս արբուցանէ Վահանայ Մամիկոնէի, որ էր աներ Մեհուժանայ, և անցեալ գնացին առ Շապուհ. – 102. Ուստի և մեք ըստ կարի մերում անցեալ գտաք զհամառօտութիւն զրուցատրութեանս – 122. Սոքա հրամանաւ Վահանայ Արծրունւոյ փոյթ յանձին կալեալ՝ խուզել քննել կարգել ի համառօտ բանս զաճմունս ազգացն անցելոց ոչ կարի ինչ ընդ երկայնագոյնս աշխատասիրաբար անցանել պատմութիւնս: - 74. Քանզի թէպէտ և տարաժամ լրմամբ ժամանակի չափաբերեալ կենացն Աշոտի՝ հաստատնագոյն և անվրէպ լուծման կենացս առ հոգևորսն և յաւիտենականսն և անվախճան կենացն առաւելութիւնն անցեալ գնացեալ ժամանեաց – 386. Քանզի Վարդան անցեալ գնացեալ էր սուրբ վարդապետաւն Մաշտոցիւ առ կայսր Թէոդոս և առ Ատտիկոս արքեպիսկոպոս հանդերձ թղթովք սրբոյն Սահակայ, տանելով ընդ իւրեանց և զգիր և զբառ հայերէն դպրութեան. – 116.

ԱՆՑՆԻՒՐ - բայց իբրև գիտացին զօրքն որ ընդ նմա եկեալ էին զնորա քաջակարծրագոյն արիութիւնն՝ և պատճառանօք այս ինչ այն ինչ դարձեալ դարձան յանցնիւր տեղի: - 310. Եւ արդ ՆԺԱ են մարգարէք, որ զվկայութիւն աստուածութեանն Քրիստոսի ստուգաբանեն ճշմարտութեամբ յանցնիւր ժամանակս, իբրև ի միջէ բերանոյ, թող զԱւետարանն և զառաքեալս նորա: - 246. յառաջ խաղացուցից զբանսն, արագաքայլ արշաւանօք անցեալ գնացից ընդ շարագրածս անցնիւր պատմագրաց, զազգաբանութիւնն միայն ոճով դրոշմեցից ի շարի աստ – 74.

ԱՆՑՈՒՑԱՆԵԼ - գրէթէ անցուցանէր զանցուցանէր զքաջութեամբքն Արշակայ Պարթևի, ընդ քաջացն Քուշանաց, Մարաց և Ելիմացւոց. – 72. Եւ առեալ զնոսա անցուցանէ յիւրաքանչիւր սահմանս բնակութեան, ինքնին զհետ նոցա ելանելով, որպէս Կիւրոս արքայ Պարսից զհետ դարձելոցն ի գերութենէն Բաբելոնի. – 218. և զփախստեայսն տանին անցուցանեն յայնկոյս քան զքաղաքն Նախճաւան – 126. յորոց վերայ սուր եղեալ զբազումս սպանին և զևս բազումս վիրաւորեցին և զյոլովագոյնսն ի գերելոցն հանդերձ ընտանիւք իւրեանց զերծին ի նոցանէ և անցուցին ընդ պահակ ձորոյն յամրական կողմանս լերին: - 220. Քանզի այնչափ թանձրացաւ յաճախութիւն սովոյն՝ որ ոչ միայն անսուրբ կենդանիս ուտէին ըստ սրբութեան կարգի, այլ և զսարսափելի և զդժնդակ, որ զգազանայինն անցուցանէ զվայրենամտութիւնն, զմարմինս մեռելոց՝ առանց խղճելոյ ուտէին, ի գերեզմանացն հանեալ զհետ միոյ և երկուց ամաց թաղելոյ: - 374. Քաջապէս մարտուցեալ Գուրգէն եղբայր իշխանին և Վահան Հաւնունի՝ առին անուն յաղթութեան, անցուցանելով ընդ սուր զկողմն թշնամեացն. – 178.

ԱՆՑՈՒՑԱՆԵԼ ԶԱՆՑԱՆԵԼ - որ անցուցանէ զանցանէ զանասնական խառնակութեամբքն երիքովեան և սողոմական լրբութեամբ, անամօթաբար այր զարամբք բորբոքեալ, դեզադէզ զհրացանն բերելով յերկնուստ զանզրաւ կիզումնն, անցուցեալ զանցուցեալ զատակչական կործանմանն ջրհեղեղին: - 336.

ԱՆՑՈՒՑԵԱԼ ԶԱՆՑՈՒՑԵԱԼ - որ անցուցանէ զանցանէ զանասնական խառնակութեամբքն երիքովեան և սողոմական լրբութեամբ, անամօթաբար այր զարամբք բորբոքեալ, դեզադէզ զհրացանն բերելով յերկնուստ զանզրաւ կիզումնն, անցուցեալ զանցուցեալ զատակչական կործանմանն ջրհեղեղին: - 336.

ԱՆՑՔ - Եւ հրամանաւ ինքնակալին Թէոդոսի կայսեր հաւատայ նմա զհազարապետութիւն բաժնին Հայոց, զՄիջագետս մինչև ի յանցս Եփրատ գետոյ: - 116.

ԱՆՓՈՅԹ - արդ դու մի անփոյթ յանհոգս յաղագս այդր մնայցես, անյապաղ հնարիցիս գտանել զխորհրդոցն նորա դատարկութիւն,,: - 346. Եւ զի ասեն զՆինոս թագաւորեալ յետ Բէլայ՝ անփոյթ զայսքանեօք արարեալ. – 42.

ԱՆՓՈՅԹ ԱՌՆԵԼ - Բանն զմեօք զանց առնէ. և ոչ վայելուչ է լռութեամբ և մոռացկոտ մտօք անփոյթ առնել զայնքան մեծիւ յաղթութեամբ, որ գործեցաւ ի ձեռն զօրացն Վասպուրական ազատանոյն: - 176. Գեղեցիկ էր և տեառն Գրիգորի Արծրունւոյ՝ ոչ անփոյթ առնել և զիւրոյ համանուանն զսրբոյն Գրիգորի առնուլ յանձն զխաւարամուտն լինել ի խորին խաւարային վիրապն կապանօք հանդերձ. – 250.Եւ մեք ահա անփոյթ այդմ ամենայնի արարաք, զի յայտնի լիցի սէրն և գութ խնամոյն, զոր ասեմք ունել ընդ ձեզ: - 244.

ԱՆՓՈՅԹ ԱՐԱՐԵԱԼ - Իսկ նա անփոյթ արարեալ երկրաւոր մեծութեանս, զի անցաւոր է՝ անսպառ և անվախճան և անծերանալի և անծախ և առանց ըմբռնելի ի գողոց խնդրեաց պարգևաց առիթ լինել. – 218. զոր ոչ անփոյթ արարեալ լի բարեմտութեամբ յղփացեալն Աշոտ՝ խօսի ընդ թագաւորին զխաղաղութիւն. – 382.

ԱՆՓՈՐՁ - յետ ջրհեղեղին արբ գինի Նոյ, վասն որոյ և անփորձ իրացն եղելոյ՝ արբեալ եղև: - 30.

ԱՆՓՈՓՈԽ - իբր ոչ անգիտանալով Աստուծոյ զառ ի նոսայսն լինելոյ, այլ բնաւորեալն բարի անփոփոխ բնութեամբ մնալով ամենայնիւ՝ առ ի չարասէրն զուղիղ հատուցումն յապաղէր. – 30.

ԱՆՓՐԿԱՆԱԿ - Երրորդ՝ խժաբար նենգութիւնն, զոր անփրկանակ ի ծնօղացն մեկուսի տարեալ սպան տարապարտ: - 24.

ԱՆՔԱԿ - Եւ գունդն Հայոց խաղացին ընդդէմ նոցա, վիմաձև անքակ ի միմեանց ըստ տոհմս ազգաց, ի տանէն Արծրունեաց՝ Գուրգէն և Վասակ և Պելճ և Մուշեղ և Սահակ և Ապումկդէմ և Աշոտ – 230. Եւ եղև մինչ կային իշխանքն ի միաբանութեան առանց կարծեաց կասկածանաց ի հպատակութեան ելեալ յարքունուստ հազարապետին / 340 / որդւոյն Հալթի, և զմիաբանական սիրոյն շաղկապ ի միասին յօդեալ պնդեալ անքակ պահէին – 342. Եւ քանզի էին երեքին սոքա անքակ անխզելի առ միմեանս,

զմիաբանական կապակցութիւն շաղկապեալ, Աշոտի և Գագկայ և Գուրգինայ, որդիք Դերանկին – 364. Որպէս և այրս այս արար, անքակ և անմեկնելի զգեցաւ պատեանս յինքեան զզօրութիւն բանսարկուին: - 248.

ԱՆՕԳՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ - Յայնժամ տեսեալ Երուսաղէմացւոցն զանհնարին դիպուածսն անօգնականութեանն՝ առին զաստուածային սուրբ նշանն տէրունական հանդերձ այլ սպասիւք եկեղեցեացն, փախուցին ի քաղաքն թագաւորական ի Կոստանդին. – 162.

ԱՆՕԳՈՒՏ - Եւ գրէ առ իշխանաց իշխան՝ ի բաց լքանել եթէ ունիցի ինչ անօգուտս խորհել, ապա թէ ոչ՝ տեսից զքեզ, ասէ, ի զէն և յասպազէն և ի ճակատամարտ. – 322. Եւ իշխանն Աշոտ գրէ առ իշխանն Սմբատ, անօգուտ զապստամբութիւնն համարելով. – 382. յերկուս կողմանս բաժանեալ զնայեցուած խորհրդոցն, և կայր կեղծաւորութեամբ անհաստատագոյն և անօգուտ հնարիմացութեամբ, ընդ քրիստոնեայսն քրիստոնեայ և ընդ պարսկականսն զնոցայսն կեղծաւորէր: - 112. յղեն զոմն ի ճգնաւորացն առ տիկինն, զկռոցն յանդիմանելով զսնոտի և զանօգուտ պաշտօնն, որպէս և սուրբն Քռիւսի առ Արտաշէս: - 88. Նոյն ժամայն մատուցեալ ոմանց առ Դերանիկն՝ ստուգագոյնս քսէին վասն Գագկայ Ապումրուանայ. խորհել ընդ կորապաղատին, զոր ինչ գործեաց Հասան զանօգուտսն. – 348.

ԱՆՕԹ - Այլ և հուր և ծծումբ նաւթիւ բարձեալ ի գործ պատերազմին, և զլոյծ բնութիւնն յանօթս ապակեղէնս եդեալ, և մանր զծծումբն ընդ նմին խառնեալ, եդեալ ի պարսատիկ մեքենայից, և զհուրն առ ընթեր նմին, հնարաւորեալ արկանել զամրոցաւն: - 208. եթէ եբաց Տէր զգանձս իւր և եհան անտի զանօթս բարկութեան – 196.

ԱՆՕՐԷՆ - Եւ յայնմհետէ համարձակութիւն առեալ անօրինացն՝ սկսան գունդս ռամկականս ժողովեալ ըստ օրինակի մարախոյ անչափ բազմութեամբ, այնոքիկ որ Շեխետիքն կոչէին. և այլ որ ուստեք ուստեք ի հեռաւոր աշխարհաց /402/ Պարսից, ի Ժանգանայ և ի Ջուրջանայ և որք ի Վարառատ գաւառէ – 404. զի ոչ եթէ ատեաց զանօրէնն իբրև զանամօթն. զի քան զմեղանչելն առաւել չար այն է՝ չունել զինքն ընդ յանցաւորսն – 248. Ի վեր կառուցեալ զաչս սրբոյն Վարդանայ՝ տեսանէ զանօրէնն Վասակ Սիւնեաց տէր – 128. Իսկ անօրէն զօրավարն … գնաց եմուտ ի ջերմագոյն տեղիս ի քաղաքն Դուին ձմերել անդ. – 262. Յայնժամ իբրև ետես անօրէն զօրավարն Մուսէ, թէ ոչ ելին ի գլուխ խորհուրդ չարին յօժարութեանն … փութացաւ արձակել գուժկան յարքունիս, ծանուցանելով արքայի զոր ինչ գործեաց Աշոտ իշխանն Վասպուրական: - 176. Որոյ ունկնդիր եղեալ Տիրան՝ տայ հրաման յանգ հանել զխորհուրդ անօրէն աստուածատեաց առն: - 98. Որով ետ հրաման արդարոյն կազմել զտապանն ի գուշակումն անօրինաց կորստեանն: - 28. քանզի գրեալ է, ,,թագաւոր արդար կանգնէ զաշխարհ, կործանումն է աշխարհի թագաւոր անօրէն,,: - 182. Բայց միայն զԱրշակ ոմն ի տոհմէն Վարաժնունեաց */փրկվեց/* խնդրեալ դստերն Շապհոյ Բագրատունոյ, զոր առեալ յայնժամ Աւշնի կնութեան յանօրէն ամուսնութիւն. - 372.

ԱՆՕՐԷՆՈՒԹԻՒՆ - Այր ոմն Ջափր խրոխտ և ամբարհաւաճ. և սկսաւ եղջիւր ածել անօրէնութեամբ և գոռալով ոգորէր ընդ չորս կողմանս երկրին և նեղեալ տագնապէր զխաղաղասէրս կենաց – 170. Աւելորդ համարիմ մի ըստ միոջէ զանօրէնութիւն քաղաքին ընդ գրով բացայայտել, զառաւելեալն Սոդովմայ և Երիքովի, լցեալ չարագործութեամբք: - 270. եկեալ հասեալ վրէժխնդրութեան պատիժք, վասն անօրէնութեանց մերոց զոր գործէաք առ հասարակ ի փոքրկանց մինչև ցմեծամեծս. – 196.

ԱՇԱԿԵՐՏ - և մինչ այսմ գործոյ պարապէր՝ դէպ եղև նմա ի կողմանս Եգիպտացւոց հանդիպել առն միոյ մոնազնի, որում կոչէին Սարգիս Բհիրայ, որ էր եղեալ աշակերտ մոլեգնութեանն արիանոսաց. – 158. զոր և երանելին Կորիւն, ուսումնակից Մովսէսի և աշակերտ սրբոյն Մեսրովպայ՝ յիւրումն ստուգաբանեալ պատմութեան զայսոսիկ մեզ հաւատարմացուցանէ: - 122. էր և նորա աշակերտ մի, որում անուն էր Սաղման. որ ի ժամ մահու միայնակեցին՝ պատուիրէր նմա և ասէր – 162. Յետ բառնալոյ թագաւորութեանն ի տանէն Արշակունեաց, և հայրապետութեանն ի տանէն սրբոյն

Գրիգորի՝ Ղևոնդ ոմն աշակերտ սրբոյն Մաշտոցի տեղապահ լինէր սրբոյն Սահակայ, և Յովսէփ եպիսկոպոս և Մովսէս և Մեղէս: - 120. որ էր աշակարտ և հետևող սրբոց Ղևոնդեանց – 106. որ էր աշակերտ սրբոյն Սահակայ – 132. տայր հրաման փշրել և խորտակել զկենդանագրեալ պատկերս ճշմարիտ մարդեղութեան Փրկչին և նորին աշակերտաց: - 168. Քանզի ասէր զինքն՝ մխիթարիչն, զոր խոստացաւ տէր Քրիստոս առաքել աշակերտացն իւրոց – 164.

ԱՇԱԿԵՐՏՈՒԹԻՒՆ - որք լեալ էին յաշակերտութենէ Ղևոնդ քահանայի, որ ի Պարսսն մարտիրոսացաւ ընդ այլ սուրբ եպիսկոպոսսն և քահանայսն: - 74.

ԱՇԴԱՀԱԿ - Ազդ եղև մեծին Տիգրանայ պատրաստ պնդութիւն Աշդահակայ. – 62. Բայց երկուք ոմանք ի զաւակէ Աշդահակայ ձերբակալ արարեալ Տիգրանայ առեալ աձէ ի Հայս. – 64. Բայց կին ոմն յազգէն Աշդահակայ բնակէ յամուրսն Ջլմար և ի Սրինգ, ի գաւառին ի Փոքր Աղբագ – 90. Բայց մինչդեռ չև առ միմեանս հասեալ Տիգրան և Կիւրոս՝ յղէ Աշդահակ պատարագս Կիւրոսի - 62. և անդ ոչ սակաւ վտանգ հասանէր Աշդահակայ վասն հասանելոյ ի վերայ նորա Տիգրանայ զօրու ծանու: - 62. և ժողովեալ ազգք ազգք յընտրելոց զօրաւորաց արանց քաջամարտկաց, զզօրս Կապուդկացւոց, զՎրաց և զԱղուանից և զԱյրարատեան գազանամարտիկ զանճռռնի զօրսն և զբոլոր բովանդակեալ գունդս զօրացն և զորդիսն Սենեքերիմայ, ամենայարդար պատրաստութեամբ անհուն բազմութեամբ, աճապարել երագել անյապաղ լինել նախ քան զԱշդահակայ դիմեցումն – 62. Զայս իմացեալ խորհրդականութիւն Քսերքսէս յԱդրամելեայ և Սանասարայ յորդւոցն Սենեքերիմայ՝ ապա գան առ Տիգրան Հայոց թագաւոր և զեկուցանեն նմա վասն որոյ խորհի Աշդահակ. – 62. մինչև միահաղոյն զօրսն Աշդահակայ վատնեալ սուսերաւ՝ տիրէ Մարաց և Պարսից: - 64. յետուստ կողմանէ աճապարեալ Քսերքսէս բուռն հարեալ զդիակաց պղնձակուռ վարապանին Աշդահակայ ի վերայ թիկանցն զգաւակս երիվարին արկեալ – 64. Պատերազմ յուզեալ Աշդահակայ Մարաց թագաւորի ընդ մեծին Տիգրանայ Հայկազնոյ – 62. քանզի յառաջագոյն տուեալ էր զնոսա ի ծառայութիւն քեռ իւրոյ Տիգրանուհեայ կնոջ Աշդահակայ, յասացեալ տեղիս բնակեցուցանելով: - 64. քանզի որդիքն Սենեքերիմայ մեծաւ ցասմամբ և անզրաւ հաշտմամբ ընդ Աշդահակայն լինէին – 62. զի յայն վայր ոմանք ի զարմիցն Աշդահակայ Մարի բնակէին անդ, արք քաջք, կորովազէնք և դիպաղեղունք – 90.

ԱՇԽԱՏ ԱՌՆԵԼ - Եւ արդ խնայեալ իմ ի ձեզ, և դուք առանց յապաղանաց և զիս աշխատ առնելոյ ի բաց լերուք յերկրպագութենէն Քրիստոսի, և եղիցեն անձինք ձեր ի գիւտս և կեցջիք. – 246.

ԱՇԽԱՏԱՍԷՐ - և աշխատասէր մշակքն պատրաստեցան ի գործ երկրասէր վաստակոցն – 268. ուր զսեղանն սուրբ և զգաւազան հովուական և զմատանին պատկերեալ և զգօտին աշխատասէր միջոյն թողեալ ի հանապազորդ յիշատակ լուսաւորութեանն մերոյ հօրն: - 104.

ԱՇԽԱՏԱՍԻՐԱԲԱՐ - Սոքա հրամանաւ Վահանայ Արծրունւոյ փոյթ յանձին կալեալ՝ խուզել քննել կարգել ի համառօտ բանս զաճմունս ազգացն անցելոց ոչ կարի ինչ ընդ երկայնագոյնս աշխատասիրաբար անցանել պատմութիւնս: - 74.

ԱՇԽԱՏԵԱԼ - եթէ ,,եկայք առ իս ամենայն աշխատեալք և բեռնաւորք, և ես հանգուցից զձեզ,, , և թէ ,,որ ուրասցի զանձն իւր վասն իմ՝ գտցէ զնա,,. - 252.

ԱՇԽԱՏԵԼ - գուցէ ակամայ երթալովն, և նեղիչն աշխատելով ի պահելն՝ յաճախեսցէ ի վնաս և ի քէն, և օճան բարւոյ յայնմ հետէ ոչ ևս ումեք հասցէ գտանել,,: - 216. ո՞վ ասասցէ յիմար արքային Զրադաշտի՝ ասա՛ ձրավաստակ աստուածոյդ քո Որմզդի՝ չաշխատել տարապարտ. – 46.

ԱՇԽԱՏ ԼԻՆԻԼ - մեք տացուք զԱշոտ ի ձեռս քո առանց զինու և մարտից և ճակատուց կազմութեան, և մի ինչ յայնոսիկ աշխատ լինիցիս. – 212.

ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆ - Քանզի բազում աշխատութեամբ է գտանել զշար ազգաբանութեան տանն Արծրունեաց, վասն հեռաւոր ժամանակաց կացեալ և դիւանացն անյայտութեանց ի մէջ

Հայաստանեայցս – 12. այլ դարձջիք այսրէն, և առանց աշխատութեան զերկիր իւրաքանչիւր կալարուք: - 110. Այլ թերևս զայս տարակուսիցիս առ իմաստն՝ յանդիմանակացոյցս առնել զԳուրգէն ընդ աշխատութեան յօժարագոյն առ մարմնական զինուորութեամբն լինել: - 398. Բայց ես յանհունս ձգեմ զզարմացմանն յեղանակս, թէ զիա՞րդ բաւել տոկայր, անձանձրանալի բերելով զաշխատութեանն աճմունսն. – 308. բայց միայն զազգին շարս ըստ գիւտի աշխատութեանն բաւական համարեցաք յառաջ վարել մինչ ի թագաւորել Տրդատայ – 94. Եւ անդէն զտարակարծելի գիւտիցն յոյս երկբայութեան՝ յայլոց քննողական աշխատութեանց եդից առ ընթեր թելադրութեամբ. – 12. և երիվարին ընդ վազս փռնգալիր խրոխտանացն փրծուցեալ զնա ի ցաւոցն, քանզի այն ինչ կազդուրեալ էր Գուրգէն ի հիւանդութենէ և ի կրից աշխատութեանցն և ի տառապանաց բանտին: - 320. և թէ նոքա յերիս կամ ի չորս կամ ևս աւելիս բաժանեալ օգնական առնիցեն իւրեանց զամուրսն՝ մեծ աշխատութիւն քեզ հասուցանիցեն, և ամենայն խորհրդոց քոց խափանիչք /212/ գտանիցին – 214. Եւ ի բազում յուզիցն և ի խնդրոցն և զօրաժողովն լինելոյ և պատերազմ ընդդէմ վառելոյ և զձև ամրական մաքառմանցն յարդարելոյ և բռնալիր ուժեղագոյն մեքենային բախմանց քարձգութեանցն, զոր և ընդունայն աշխատութեամբ վարանեալ, անըստնանելի /հավանաբար՝ անստանալի/ մնալով ամրոցին՝դառնայ յիւր իշխանութիւնն: - 326. և կարգէ զդասս պաշտօնէից կատարել զպաշտօն Տեառն ի տուէ և ի գիշերի անձանձրոյթ աշխատութեամբ և առատաձեռն տեսչութեամբ աղքատաց, զի գտցեն զողորմութիւն ի Քրիստոսէ: - 122. և մեծաւ աշխատութեամբ և ի բազում ժամանակաց փոյթ յանձին կալեալ անդուլ զցայգ և զցերեկ ի մեծ տարակուսանս ըմբռնեալ կայր վարանեալ – 242. և ո՞րպէս՝ հնարաւորեալ յապրուստ անձանց վճարեն զկարևոր պէտս իւրեանց լի աշխատութեամբ և սաստիկ տառապանօք. – 190. Եւ քանզի որպէս ասացաւ՝ ի յերկարագնացս աշխատութեանց երիվարացն և հեծելոցն ծանրութիւն ի տքնութենէն ի վերայ հասելոյ, և տօթն արեգականակէզ տապախառն ջերմութեանն, և թանձր ծարաւոյն պասքեցելոց երիվարացն հանդերձ հեծելովքն – 402. Զի յառաջնումն ոչ ինչ գոյր հոգ ինչ զբաղմանց, և ոչ մի ինչ ըստ աշխարհաշէն /90/ խնամակալութեանց, կամ պատերազմասէր աշխատութեանց – 92. Իսկ զՎահագն Հայկազնեայ … կացուցանեն ի դրան արքունի, յառաջանալ ի գործ պատերազմին մեծաւ աշխատութեամբ՝ կամ մեռանել ի սրոյ թշնամեաց դիպելոց, կամ յաղթել քաջասրտութեամբ: - 70. սրբոյ թագաւորին և քաջ նահատակին Տրդատայ զբարիոք պատերազմեալ ընդդէմ անմարմին և մարմնաւոր պատերազմողաց, փոխի յերկրաւոր աշխատութեանցս ի հանգիստ, մեծաւ պատուով թագաւորական շքեղ և երևելի դիւազարդութեամբ – 96.

ԱՇԽԱՐԱՆՔ - և այլքն զաղաղակ բարձեալ ի ձայնարկու աշխարանս՝ խնդրեցին զապրուստ ի սրոյ քաջամարտիկ ախոյանէն Շերեփեանն Թադէոսի: - 400.

ԱՇԽԱՐԵԼ - Նոյնժամայն իբրև ետես տիկինն, եթէ վարեցան որդիք նորա ի գերութիւն՝ գնաց և ինքն զհետ նոցա, զհերս խզեալ և զօձիս պատառեալ, կոծելով և աշխարելով – 238.

ԱՇԽԱՐՀ - Իսկ Նինոս և Շամիրամ տիրեն Ասիացւոց և Եգիպտացւոց հարկապահանջ հնազանդութեամբ, այլ ոչ զազգին ի բաց բառնալով զպայազատութիւն աշխարհին: - 18. ,,բնութեամբ ճշմարտութեամբ աշխարհիդ Վասպուրական ձեր լեալ էր ժառանգութիւն, և զձեզ արտաքս հանեալ թողեալ են նախնեացն Աշոտի: - 362. ,,եթէ կամիս կեալ ընդ իս և վայելես ի կեանս աշխարհիս, և ընդունել պարգևս և պատիւս յինէն՝ հաւանեա հրամանի կամաց իմոց և ի բաց լեր ի հաւատոց քրիստոնէութեանդ, զոր պաշտես – 294. ,,Ելեր դու յաշխարհս Հայոց հրամանաւ արքունի՝ առնուլ զհարկս արքունի. մի՞թէ /176/ և հրաման ունիս յարքունուստ, գերել գերփել յաւեր դարձուցանել զաշխարհս մեր: - 178. ,,Ելեր դու յաշխարհս Հայոց հրամանաւ արքունի՝ առնուլ զհարկս արքունի. մի՞թէ /176/ և հրաման ունիս յարքունուստ, գերել գերփել յաւեր դարձուցանել զաշխարհս մեր: - 178. ,,ընդէ՞ր լքանես զձեռն քո և ընդ արութիւն դոցա խառնես վատութիւն և առնես զօրացեալ ի վերայ քո ամենայն աշխարհաց – 282. ,,Թագաւորաց աշխարհակալաց օրէնք են՝ մեծաւ

հոգաբարձութեամբ խնամ տանել վասն շինութեան աշխարհի և թեթևացուցանել զլուծ բռնութեան /184/ ծանրակի բեռանց, թուլացուցանելով զասստկութիւն հարկապահանջ խոշտանգանաց – 186. ,,Ի յարքունուստ ընկալեալ քո զվերակացութիւն աշխարհիս Հայոց – 212. ,,ո՞վ ոք էք դուք և յորմէ՞ աշխարհէ, և զի՞նչ անուն է ձեր. թերևս արդեօք դո՞ւք էք ապստամբեալքն յինէն,,: - 242. ,,որդեակ, ի վախճանելս իմում մի կայցես յայսմ աշխարհի, զի մի կորուսցես զկարգ քո ի մէջ անհաւատից, այլ երթիցես ի կողմանս Եգիպտոսի՝ բնակել ի մէջ բազմութեան եղբարց, զի շահեսցիս զոգիդ քո,,: - 162. ,,վասն այնր ելի յաշխարհս, զի մի Գուրգէն բռնաբար յինքն կորզեալ ձգիցէ զամուրս աշխարհիս, և յինքն բռնաբար զզօրս քո յանգուցանիցէ: - 362. ,,վասն այնր ելի յաշխարհս, զի մի Գուրգէն բռնաբար յինքն կորզեալ ձգիցէ զամուրս աշխարհիս, և յինքն բռնաբար զզօրս քո յանգուցանիցէ: - 362. այլ իբրև եմուտ Բուխայ յաշխարհս Վասպուրական՝ ել գնաց Գուրգէն առ Քուրդիկ Մամիկոնէից տէր ի Բագրևանդ գաւառ, և անդ լինէր, զի էր Քուրդիկ քեռի Գուրգինայ: - 302. Այլ հինից ասպատակքն, սովոյն բռնութիւն, գերիվարացն տառապանք, գազանաց յարձակմունքն, ներքին և արտաքին վրդովմունքն հոլանի առնէին զաշխարհս: - 316. Այլ քանզի յոյժ առաւելեալ էր իմաստութեամբ Գագիկ՝ տեղի տայր բովանդակ գաւառապետաց զօրագլխաց աշխարհիս, գնայր ընդ նոսա իմաստութեամբ խորագէտ հնարաւորութեամբ, ըստ անձնիւր գահու մեծարեալ պատուադրութեամբ հաճոյանալ ախորժէր նոցա: - 354. Այնուհետև սկսաւ կորապաղատն արկանել բանս խարդախութեան ի մէջ Դերանկին և Հասանայ, որ էր որդի քեռն Դերանկին, որպէս թէ ոչ ուղիղ նայի ընդ նա Դերանիկն, այլ թէ՝ և հանել ի նմանէ զամրոցն և զաշխարհն նկրտել. – 346. Այսպէս տակաւին ի բազումս քայքայեալ լինէր միաբանութիւն աշխարհիս -194. այր իւրաքանչիւր մազապուր զերծեալ փախստեայ գնացեալ հասին յաշխարհն իւրեանց: - 354. այրէր և խորովէր ի սիրտ իւր ի ծածուկ ընդ աւեր աշխարհին և ընդ անողորմ չարչարանս գերելոցն ի թշնամեացն: - 218. Անդ Բաբգեան և ասպետն մեծ Աշոտ նիզակակիցք միմեանց զերծեալ ի մեծ պատերազմէն՝ փութանակի մտին յաշխարհս Հայոց – 92. Ապա յղէ զնա ի Խորասան, և նմա հաւատաց զվերակացութիւն աշխարհին. – 326. առնու զնա Սահակ կնութեան հրամանաւ Արտաշէսի, և կնքեալ աշխարհն հաստատէ Սահակայ ի սեպհական ժառանգութիւն. – 90. Արդ ելէք ի վերայ աշխարհիդ զօրացեալ զօրութեամբ, և ձեր լիցի երկիրդ ի ժառանգութիւն,,: - 362. արդ ո՞ւր է Աստուածն այն, զոր դուդ ասես, վասն է՞ր ոչ փրկեաց զԿեսարիայ և զԱնտիօք և զՏարսոն և զԱմասիայ և զԵրուսաղէմ և զԱղէքսանդրիս և զԹեբայիտ և զայլ աշխարս: 146. արկանել զնա ի կապանս և ի տանջանս մահաբերս, զամուրսն յինքն գրաւել, զաշխարհն տալ ի ձեռս իւրոյ գործավարացն, ըստ պարսկայնոցն հատուցմանց հատուցանել նոցա: - 370. բաժանեն զաշխարհս յերիս մասունս. տալով Աշոտի … Իսկ Գագիկ զկողմանս Ռշտունեաց այլովք մօտակացիւք գաւառօք, և որքան իցէ հասումն ուժոյ՝ անդր ևս յաշխարհն Մոկաց: - 360. Բայց Գուրգէն ընտրեաց զսէրն Քրիստոսի, քան զսէր փոքրամեայ աշխարհիս. ոչ խնդրելով զվրէժ արեան սպանելոյ հօր նորա ի պապոյն նորա – 320. Բայց յետ աւուրց բազմաց անցանելոյ շփոթմանցն՝ Գուրգէնի ընդարձակեալ նախախնամութեամբն Քրիստոսի և ելեալ փրծեալ ի բանտէն՝ եկն եմուտ յաշխարհ իւր: - 320. Բայց քանզի արդ տեսանեմք զձեզ անձնեայս և գեղեցիկս, և գեղ երեսաց ձերոց պատշաճագոյնս և վայելուչս, և որդիք թագաւորացն այսր աշխարհի լեալ էք դուք, և արժանի էք արգահատելոյ – 244. բայց ազդ լինէր իշխանին ի նոյն գնդէն Տաճկաց՝ մի տեսանել զերեսս նորա, ծանուցանելով նմա՝ զոր ինչ խորհեալ էր վասն նորա և վասն աշխարհին նորա: - 184. բայց այլ ամենայն իշխանք արևելեայք խոյս տուեալ յերեսաց նորա՝ ետուն տեղի, ելին կալան զամրական տեղիս, ի բերդս և ի քաղաքս և ի լերինս, ընդ ինքեանս գումարեալ զզօրս և զբնակիչս աշխարհաց իւրեանց ամենայն պատրաստութեամբ: - 270. Բայց Աշոտ, իբրև եհաս ժամ ելիցն իւր յաշխարհէս՝ յանհունս բերեալ զզեղջ և զապաշաւանս յորդահոսան արտասուօք զխոստովանողականն ի դիմի հարեալ միջնորդութիւնն – 336. Բայց Ապումրուան երկնէր գայր զիշխանասիրականն

ծնանել գահակալութիւն ի վերայ աշխարհիս: - 364. Բայց Գուրգէն զմի ամ կեցեալ փոխի յաշխարհէս, դարձեալ յուրացողական ամբարշտութենէն: - 318. Բայց Գուրգէն խոկայր զմասն աշխարհին յինքն գրաւել, մանաւանդ զՈստանն Ռշտունեաց, որ էր տեղի սպանման հօր իւրոյ, գինս արեան զնա համարելով: - 362. Բայց Գուրգէն կասկած ունելով յԱշոտէ, թէ գուցէ իբրև զապստամբէ ումեմնէ զեկուցանիցէ զնմանէ առաջնորդին Տաճկաց՝ ել գնաց կեալ շրջաբերական յեղափոխմամբ, արիական քաջասրտութեամբ, սիրեցեալ ընդ բնաւ աշխարհաց: - 322. Բայց Դերանիկն խօսի ընդ Հասանայ զխաղաղութիւն, խոստանայ առնել զդարձ ամրոցին Սևանի և աշխարհին նորա. – 350. Բայց զաշխարհն Յիսէ որդին Շեհայ բռնազբօսեալ յինքն գրաւեաց և կացոյց ի վերայ նոցա զիւր գործավարս: - 344. Բայց զգոյշ լերուք, մի՛ գուցէ ոչ հաճեսցի Աստուած, և խնդրեսցէ ի ձէնջ զվրէժ արեան կոտորածի աշխարհի: - 144. Բայց ի գնալ մեծ հազարապետին յարքունիս՝ հաւատաց զվերակացութիւնն աշխարհիս Հայոց և հարկս արքունի ի ձեռս Մուսէի ումեմն որդւոյ Զօրահայի հազարացւոյ – 172. Բայց մեզ կայ առաջի ասել վասն Ջափրայ և չար գործոց նորա, անգիրս մնացեալ յայլոց, զոր կատարեաց ի վերայ աշխարհիս Հայոց երկայնագոյն ժամանակաւ և անըմբերելի նեղութեամբ ի մերս հանդիպեալ աւուրս, որ էր Հայոց Յ թուական: - 168. բայց մինչ էաք յաշխարհին մեր՝ առաջնորդքն մեր ոչ ետուն տեղի ընդունել զասացեալսն ի սահմանին խոստովանութեան: - 132. Բայց յո՛վ ոք կամ ո՞ր աշխարհ, զոր ոչ կործանեաց Աւշին պէսպէս լլկանօք հինի ասպատակաւ, աւարառու յափշտակութեամբ, սպանմամբ սրոյ և սովոյ: - 374. Բայց ոչ գիտեմ, թէ յանուն աշխարհի՞ն թէ ըստ կերպարանին անուանեաց զնոսա Արծրունիս: - 72. Բայց քանզի ամենայնիւ ամենայն ուրեք ոչ ոք զօրեաց կալ ընդդէմ նորա յամենայն գործս զոր և կամք իւր ախորժէին՝ սկսաւ ձեռնամուխ լինել կարգաւ ընդ բոլոր աշխարհս արևելեայս – 274. Բայց քանզի հաւատացեալ էր վերակացութիւն աշխարհիս Հայոց Աշոտի, որ իշխանաց իշխան՝ ձեռն ի գործ արկեալ նուաճել զիշխանս Հայոց, զՎրաց և զԱղուանից, որ եղև իսկ: - 322. Գրեալ ի թղթի անդ՝ ի ձեռն նորա հաւատալ աշխարհիս Հայաստանեայց – 186. Գրէ բազում անգամ Սմբատ առ Ահմատ՝ թողուլ անդրէն զաշխարհն, տալ ի ձեռս Աշոտի որդւոյ իշխանին Դաւթայ. - 366. գրէ յականէ յանուանէ առ որ մնացեալն էին յաշխարհս յամուրս իւրեանց, զի փութով յիւրաքանչիւր տեղեաց առանց կասկածանաց և երկիւղի առ նա հասանիցեն – 296. Դարձեալ ի նոյն յարեալ՝ և այլ հոգաբարձութեան աշխարհի խնամ տանէր, ի մեղադրանս մատուցեալ մարգարէիւն հանդերձ սպառնալեօք – 182. Դարձեալ քանզի Մեստրիմ ի Քամայ ըստ բաժանման ազգին և աշխարհին շինէ զԵգիպտոս և անդ հարստանան ազգապետաբար – 18. դնէր ուխտս ընդ իշխանս աշխարհիս Հայոց՝ գնալ ըստ արժանի /180/ հաւատոցն Քրիստոսի, զի վկայեսցեն ըստ անուան քրիստոնէութեանն և գործքն: - 182. եթէ ,,Օրէն է աշխարհակալաց արքունի խնամակալութեամբ գնալ ընդ աշխարհ իբրև առ հնազանդս, և զնեղութիւնս տառապելոց բառնալ և ի դիւր հանել իբրև զինամարկուս, և ոչ աւազակաբար աւարել, և սրով և գերութեամբ յաւեր դարձուցանել. – 278. Ելեալ փութանակի եկն եհաս յաշխարհս Վասպուրական սպարապետին կամակցութեամբ: - 306. երկեաւ Վարդան ի մարզպանէն բնակել յանդորրու, այլ այնր աղագաւ էանց գնաց յամուրսն Մոկաց, և կայր մնայր ի նախախնամութենէ Աստուծոյ այցելել աշխարհիս Հայոց:- 122. և անդ Խուրան բազում նահատակութիւնս և յաղթութիւնս կատարեալ զօրականօքն որ ընդ նմա երթեալ էին յաշխարհէս Հայոց. – 80. և անհակառակող գտեալ բարուք՝ բաժանեն զաշխարհս յերիս մասունս. – 360. և բռնազբօսեալ զաշխարհն Ահմաթ որդի Յիսէի Շեհայ յինքն նուաճել – 358. և դուք անդէն յաշխարհին կալարուք ձեզ բնակութիւն – 198. և ելեալ ի վերայ աշխարհիս՝ յերկուս բաժինս հատին զաշխարհս: - 362. և ելեալ ի վերայ աշխարհիս՝ յերկուս բաժինս հատին զաշխարհս: - 362. Եւ զԳագիկ որ և Ապումբռւան՝ զնա ոստիկան կարգեաց ի վերայ աշխարհին, տեղապահութեամբ տիրել, զի կարի մատաղօրեայք էին որդիք Դերանկին. Աշոտ էր Թ ամաց, յորժամ մեռաւ Դերանիկն, Գագիկ էր Է ամաց, Գուրգէն Ե ամաց: - 354.

Աշոտ ոչ յանհոգս և յաներկիւղս կայր մնայր, այլ զգուշանալ հրամայէր ի խելս կամրջաց և յանապատս և ի կիրճս ձորոց: - 340. Իսկ զԱհմատ ընդ Վասպուրական աշխարհին անցանել գնալ՝ ելեալ զհետ նորա Շապուհ որդի Աշոտի, մինչ տանել հասուցանել զնա ի մուտս Ասորեստանեայց ճանապարհին: - 346. Իսկ թագաւորն Հայոց Սմբատ անպատկան վարկանելով զերթալն Աշոտի առ Աւշին, մի՛ գուցէ արդեօք և այլք դրդուիցին յիշխանացն զնորայն հետեւել ուղևորութիւն, և արգելուլն զԱշոտ՝ չանսաց ումեք: - 362. Իսկ թագաւորն Հայոց Սմբատ անպատկան վարկանելով զերթալն Աշոտի առ Աւշին, մի՛ գուցէ արդեօք և այլք դրդուիցին յիշխանացն զնորայն հետեւել ուղևորութիւն, և արգելուլն զԱշոտ՝ չանսաց ումեք: - 362. Իսկ իբրև ծանուցաւ նմա անլոյծ միաբանութիւն ուխտի ընդ միմեանս Աշոտոյ և Բագարատայ՝ ոչ ինչ յայտնեաց զխորհուրդս չարութեանն, զոր խորհեալ էին ի վերայ նոցա. – 172. Իսկ իշխանն Աշոտ … Մուշեղ Վահևունի … և Վահրամ սեպուհ թիկնապահ իշխանին, և Վահրամ Տրունի և Հասան և այլք ի սեպուհ պաշտօնէից … եկին մտին ի բերդն Դղեակ, յամրոցն Նկան, որ ի Թոռնավան գաւառի. – 206. Իսկ իշխանն Աշոտ և եղբարք իւր խոյս տուեալ զկողմամբքն Փոքր Աղբագոյ, մերձ առ յամուրսն Ջղմար և Սրինգ: - 372. Իսկ իշխանն Աշոտ և իշխանն Մոկաց և զօրքն Անձաւացեաց քաջագոյնս արիացան կացին յոտնկայի. – 380. խօսի Գուրգէն ընդ Աշոտի յայտնապէս զոր խորհէրն. – 364. կասկած ունելով որ ինչ գործեացն ընդ Աշոտ: - 316. մեք տացուք զԱշոտ ի ձեռս քո առանց զինու և մարտից և ճակատուց կազմութեան, և մի ինչ յայնոսիկ աշխատ լինիցիս. – 212. միայն ըստ ամացն ծննդաբանութեան հաւատացին Աշոտի զիշխանականն տալ պատուադրութիւն – 360. միայն ոչ ելցէ ի ձեռաց իմոց Աշոտ հանդերձ ազգականօք իւրովք,,: - 214. մինչ ելեալ արտաքս տիկինն ի հետիոտս լի հառաչանօք՝ բաւական համարել զգործ նահատակութեանն, զոր ետ Աստուած ի ձեռս Աշոտոյ. – 176. Մնաց միայն Աշոտ որդի սպարապետին և Մուշեղ և Սմբատ եղբայր Աշոտոյ – 298. յայնժամ հրամայեաց ածել առաջի իւր զԱշոտ և զորդի նորա Գրիգոր: - 314. Յայնժամ թագաւորն փութացոյց դեսպանս մի զմիոյ կնի առ իշխանն Աշոտ, զի անյապաղ երագութեամբ հասցէ առ նա: - 382. Յայնժամ իսկ և իսկ փութացեալ /գրքում՝փութեցեալ/ եհաս գուժկանն առ հոյակապն Աշոտ իշխանաց իշխան, զեկուցանելով նմա որ ինչ գործեցաւն: - 348. Յետ անցանելոյ չորից ամաց … դարձեալ Գրիգոր եղբայր Աշոտի Վասպուրական իշխանի յԱփհազաց աշխարհէն՝ նոցուն օգնականութեամբ և Վրաց զօրու ընտիր գոլով՝ եկն եմուտ յաշխարհս Վասպուրական՝ տալ պատերազմ ընդ Գուրգինայ. – 310. Յետ բառնալոյ իշխանութեանն ի Վասպուրական երկրէն մնացին տոհմք_Արծրունեաց ըստ ազգս ազգս … և Ապուջափր և Ապումքդէմ և Վասակ և միւս Վասակ և դարձեալ այլ Վասակ և Մուշեղ և Աշոտ և Սահակ , և այլք ի տանէն Արծրունեաց. և ազատք նոցա: - 298. Յետ մահուանն Աշոտի և կատարելոյ զաւուրս սգոյ նորա առնու զիշխանութիւնն Վասպուրական տէրութեանս Գագիկ եղբայր նորին. – 388. յիշեցուցանէր զոր ինչ գործեաց ընդ Աշոտ և ընդ աշխարհ նորա, յուշ առնէր և զքաջութիւն արիութեան նորա – 268. Յութերորդ ամի գերութեանն դառնայ Գուրգէն եղբայր Աշոտի միապետել զիշխանութիւն տէրութեանն և յարդարել կարգել յօրինել զկարգս /314/ շփոթեալ աւերեալ երկրիս: - 314. Նա և մայր իշխանին Աշոտի, քոյր Սահակայ և Բագարատայ իշխանին Տարաւնոյ… երթե՛լ ընծայիւք բազմօք յանդիման լինէր Յովսէփայն և խնդրէր զհաշտութիւն և զխաղաղութիւն հաստատել առ որդիսն իւր և առ բոլոր աշխարհն Վասպուրական: - 186. Նորա խոստացեալ էր առնել դառնալ Աշոտի յիւր բնիկ տէրութիւնն. – 328. որ կացեալ իշխան ի վերայ Տարունոյ ամս Է՝ յաւելաւ առ հարս իւր, թողեալ զաւակ իւր Աշոտ անուն: - 342. որով առնիցեն ելանել ի կապանաց իշխանին Աշոտի և Գուրգինի, և դարձուցանել զիշխանութիւնն անդրէն առ իւրեանս – 368. Սահակայ առեալ ի պարգևի զաշխարհն՝ թողու զորդին զԱշոտ զլեառնակողմամբքն առաջին իւրեանց տէրութեանն՝ շինել, բնակել, ժառանգեցուցանել զերկիրն ի ժառանգութիւն իւրեանց ազգի ի զաւակ տանն Արծրունեաց: - 90. ՎԱՍՆ ԴԱՌՆԱԼՈՅ ԱՇՈՏՈՅ ԻՇԽԱՆԻՆ Ի ԳԵՐՈՒԹԵՆԷՆ ԵՒ ՎԱՍՆ ՎԱՀԱՆԱՅ ԱՐԾՐՈՒՆԻՈՅ: - 328.

ՎԱՍՆ ԱՆՁԱՒԱՅԵԱՅ ՅՈՒԶՄԱՆՑՆ ԱՇՈՏԻ ԵՒ ԴԱՐՁԵԱԼ ԽԱՂԱՂԱՆԱԼՈՅ – 330. ՎԱՍՆ ՄԱՀՈՒՆ ԱՇՈՏԻ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ ԻՇԽԱՆԻՆ Ի ՆԱԽՃԱՒԱՆ ՔԱՂԱՔԻ: - 384. ՎԱՍՆ ՄԱՔԱՌՄԱՆ ԱՇՈՏ ԻՇԽԱՆԻ ԸՆԴ ՈՒԹՄԱՆԻԿՍՆ ԵՒ ՏԵՂԱԹԱՓՍ ԱՌՆԵԼՈՅ ՋՅԱՓՇՏԱԿԵԱԼՍՆ Ի ՆՈՅԱՆԷ: - 332. ՎԱՍՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ԲԱԳԱՐԱՏԱՅ ԻՇԽԱՆԻՆ ՀԱՅՈՑ ԵՒ ՄՈՒՍԷԻ ԵՒ ՅԱՂԹՈՒԹԵԱՆՆ Ի ՉԵՌՆ ԱՇՈՏՈՅ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ ԻՇԽԱՆԻՆ, ՋԻ ԵԿՆ ՁՕՐԱՎԻԳՆ ԲԱԳԱՐԱՏԱՅ: -172. տարան ետուն ի բանտ արքունի, ուր կայր Աշոտ իշխան և այլ նախարարք ի տանէն Արծրունեաց: - 238. ՓՈԽԱՆԱԿ ԱՇՈՏԻ ԹԱԳԱՒՈՐԵԼ ՍՄԲԱՏԱՅ: - 356. Փութանակի և վաղվաղակի իւրաքանչիւր զօրօք անդր հասանէին՝ իշխան Աշոտ և եղբարք իւր Գուրգէն և Գրիգոր զօրօք իւրեանց – 174. Քանզի թէպէտ և տարաժամ լրմամբ ժամանակի չափաբերեալ կենացն Աշոտի՝ հաստատնագոյն և անվրէպ լուծման կենացս առ հոգևորսն և յաւիտենականսն և անվախճան կենացն առաւելութիւնն անցեալ գնացեալ ժամանեաց – 386. քող արկեալ զդաւաճանող կեղծաւորութիւնն, զբարձումն բոլոր իշխանացն Հայոց, մանաւանդ զնախագահանստեալն զԱշոտ իշխանաց իշխան: - 340.

ԱՇՈՏ ՀԱՅԿԱԶՆԵԱՅ - Անկեալ էր յայնժամ ի պատերազմին Աշոտ Հայկազնեայ Գեղարքունեաց իշխան, որ Սուփանայ որդին ճանաչէր. – 368.

ԱՇՈՑՔ - Իսկ Վաչէ Արծրունեաց տէր և Հմայեակ Աշոցաց տէր և այլք յանգուցեալ ի նոսա՝ հաճեցին զկամս Վռամայ – 118.

ԱՇՏԱՆԱԿ - այլ ի վերայ դնիցի բարձրաբերձ աշտանակի առաքելական եկեղեցւոյ, որպէս զի տեսցեն և փառաւորեսցեն զՀայրն երկնաւոր: - 204.

ԱՇՏԱՆԱԿԵԱԼ - Նոյնժամայն աճապարեալ աշտանակեալ ի նիւս նժոյգ երիվարին, զէն զանձամբ արկեալ, նիզակ ի ձեռն առեալ, խրախոյս ի ձայն բարձր բարձեալ առ իւր ազատագունդ վաշտն՝ ասէ՝ - 328.

ԱՇՏԱՐԱԿ - արկանեն տոռունս ի սրունսն, կախեն զհիւսիսայինն աշտարակէն. – 102. Բայց ոչ ժամանեալ կատարման պատերազմին, զաշտարակն, զոր շինէր որդին Աբգարու փլուզեալ ի վերայ սպան զնա, վրէժխնդիր եղեալ մահուն Աղդէի սրբոյ: - 80. Իսկ ի մէջ երեքարմատեան գոգաձև հովտին փոքու, որ յերից բլրոցն խոնարհի՝ շինէ աշտարակ բարձրաբերձ փորուածոյ միջոցաւ – 88. որ ոչ հաւանեցաւ մտանել յանմիտ խորհուրդ շինութեան աշտարակին. – 40.

ԱՇՏԱՐԱԿԱՇԻՆՈՒԹԻՒՆ - և ի մէջ առից, թէ ըստ բազմաշուրթն լեզուացն յետ աշտարակաշինութեանն, յորմէ ցեղէ սկիզբն առ աճել սերունդք Արծրունեաց տոհմին – 12.

ԱՇՏԵԱՅ - Եւ մեկնակազէնքն պատեցին շուրջ զեկեղեցեաւն, և ելեալ առ նա ոմանց ընդ փորուած գմբեթին՝ և եհար մի ոմն աշտէիւն ընդ միջոց թիկանցն՝ և ընդ անթովքն հանեալ ի ներքոյ թոքացն՝ փչեաց զոգին և թաղեցաւ զթաղումն իշոյ: - 190. Եւ բարձեալ աշտեայս հանապազակիրս ի պատրաստութիւն գազանացն որ ի մայրիսն որջանան, կամ թշնամեաց ի վերայ հասելոց – 190. և են ստացեալ զէնս աշտեայս հանապազ կրելով ընդ ինքեանս, ի պատրաստութիւն գազանացն որք ի լերինն բնակեն: - 192.

ԱՇՏԻՃԱՆ - նորին հրահանգեալ կրթարանի ուսումնասիրութեանն վարժիւք ոռոգացեալ, այր քաղցրաբարոյ և հեզահայեաց, հասարակաբար առ հասարակ զինքն վարկանելով, արտաքոյ ամբարտաւանական բարձրայօնութեանն՝ կալով յաշտիճան հեզոցն, դրուատեալ ի փրկչէն մերմէ Յիսուսէ Քրիստոսէ: - 376.

ԱՇՏԻՃԱՆԵԱԼ - Իսկ ի հարաւակողմն կուսէ ի ջրամբար արձանագործ քարեղինէն ճանապարհ աշտիճանեալ /390/ ներքուստ ի վեր մինչ ի կատար անձաւին հեշտալիր զելս և զէջս յօրինեալ, քարագործ աւազամած կրագործութեամբ: - 392.

ԱՇՏԻՃԱՆԵԱՆ - զոր և Պօղոս հոգացաւ բացայայտել զ-Է աշտիճանեան մասունս ի Հոգւոյն սրբոյ աւանդեալ եկեղեցւոյ սրբոյ: - 398.

ԱՇՏԻՇԱՏ - և հասեալ յԱշտիշատ Տարունւոյ ի վկայարանս սրբոյն Յովհաննու և Մկրտչի, և Աթանագինէի վկային – 100. և տարեալ հանգուցանեն զնշխարս սրբոյն յԱշտիշատ Տարօնոյ ի տեղւոջ վկայարանի սրբոյն Յոհաննու Մկրտչին և Աթանագինի վկային: - 120.

ԱՉՔ - ամբարձին զաչս իւրեանց և տեսին, զի զկանայս և զմանկունս իւրեանց տեսին ընդ աշխարհական գերիսն: - 220. ապա ետ հրաման և փորեցին զաչս երանելւոյն, անդամ անդամ յօշեցին զնա, որ մատոյց զինքն պատարագ կենդանի որդւոյն Աստուծոյ. – 290. արտօսր յորդառատ վտակաց ծաւալին յաչաց, քան թէ ծաղուն խողխոջեն խխնջիւնք. – 384. Բայց նոքա ոչ վերակնեալք յօրէնս Տեառն, այլ ստացան իւրեանց անունկնդիր լսարանս, զչարագոյնն իժի և զանբժշկականն քարբի, արբեցան գինով յիմարութեանն. ստացան աչս, որովք ոչ տեսանիցեն, և ականջս, որովք ոչ լուիցեն. – 182. եթէ չար ինչ թուիցիմ յաչս ձեր, և ապիրատս գործեալ եմ առ ձեզ և խարդախութեամբ բնակեալ եմ ընդ ձեզ՝ աւասիկ յանդիման երեսաց իմոց տուք պատասխանի – 214. Եթէ, որպէս ասացի, ի բաց գնաս յինէն՝ խաղաղութիւն է, և թէ ոչ՝ պատերազմ և կռիւ և ճակատամարտ … և դու իբրև զեղջերու առանց եղջեր՝ և մեք արծուիք ի վերայ քո, կուրացուցիչք աչաց քոց, և զէշ զքեզ արկանել ձագաց իմոց և աղուեսուց ի ծակս բնակեցելոյ: - 280. Ես ինքնին աչօք իմովք տեսի զայրն զայն, որ հարեալն էր զնա, և ի նմանէ ստուգեցի վասն նորա: - 190. Եւ հատաւ քուն յաչաց նորա, և ոչ ոք մտանէր և ելանէր առ նա զաւուրս Ժ, զի եմուտ ի սենեակ ամօթալի երեսօք. – 282. և ելեալ ի հրապոյրս ցոփութեան ըստ խրատու առնն, յուսացեալ յամրոցն և ի գանձսն, և ի ցանկութիւն իշխանասիրութեան համբարձեալ զաչս – 346. Եւ եղև զի ամբարձ զաչս իւր և ետես, զի պնդեալ գայր հեծեալն զկնի նորա – 230. և զաչս առ Աստուած համբարձեալ եկաց յաղօթս – 216. և ինքն Աշխէթ զինեալ զինքն ի զէն և յասպազէն, զոր կարծեալ ոմանց երկաթեղէն պատկեր գոգցես զերիվարն և զհեծեալն, աչացն միայն ոչ գոլով ծածկոյթ. – 272. և կուրացեալ աչօք կեցեալ և մեռեալ ըստ արժանի իւր վաստակոցն – 98. և հաճոյ թուեալ յաչս նորա՝ շինէ զքարաբլուրն ապարանս արքայանիստ, աշնանայինս, պայծառայարդարս, գեղեցկայարմարս պարսպաւորս – 86. և հաճոյ թուեցաւ յաչս զօրավարին: - 204. Զաչս ի վեր ամբարձեալ իշխանն Աշոտ՝ ետես զմի ոմն հարեալ ի զօրաց իւրոց. – 174. զի զմահուն սպառնացեալ հօրն պատուհաս՝ աչօք իւրովք տեսցէ – 22. Ի վեր կառուցեալ զաչս սրբոյն Վարդանայ՝ տեսանէ զանօրէնն Վասակ Սիւնեաց տէր – 128. Իբրև գիտաց իշխանն, եթէ վճարեալ է չարութիւնն յաչս նոցա, և այլ ընդ այլոյ խօսին, և ի գաղտնիս քրթմնջեն, և անտեղի և անընդունակ հրամանաց նորա լինէին՝ ետ պատասխանի և ասէ – 214. Իսկ սպառնալիք քո և չարչարանք, զոր ասես ի վերայ իմ հասուցանել՝ խաղ մանկտոյ կամ զառանցելոց թուի յաչս իմ, և բանք քո նոյնպէս, որպէս առն անմտի և խելագար և ցնորեալ ծերոյ,,: - 290. Իսկ ըստ բաւականութեան աչաց տեսութեանց դաշտավայրին ի մուտս կոյս, և առ եզերբ ծովուն պարսպաւորս յօրինէ զգոգն - 88. իսկ նա առ երազութեան ձեռին ձգեալ զսուսերն՝ եհար զերեսս Ջուանշիրայն, և խլեաց զաչս նորա, և ինքն դարձաւ մեծաւ յաղթութեամբ, եմուտ յամրական տեղիսն: Եւ նոքա յո՛վ և աճապարեցին: - 310. լի թունիւք սատանայական խորհրդոցն, ծածկեալ յաչս իշխանին գառնենի զգեստիւք ի հանդերձս ոչխարաց, և ներքոյքն զապականիչ գայլոցն բերելով զլրբութիւն – 210. հազիւ ուրեք ականակառոյց աչօք նկատել զկատար լերինն – 48. յայնժամ ամօթալից աչօք տեսցես զբազմափառ և զպայծառացեալ նշանս դրոշմացն բարձրացելոց: - 148. Յայնժամ ողորմագին զաչսն շրջշրջեալ առ քաջ նիզակակիցսն իւր, թէ ո՛վ ոք արդեօք թերևս յօգնութիւն ինչ նմա հասանիցեն. – 354. ոչ միայն ի տեսիլ խղդման աչաց և զուարճումն հոտոտելեաց՝ այլ և ի կազմութիւն դեղոյ բժշկական հնարագիւտ իմաստասիրութեանց կազմեալ Ասկղեպեայ վարժմամբն: - 86. Վէմս զերեսօք արկեալ արտօսր յորդառատս ի խղդտելի աչաց ի վայր հեղեղատելով, զնորափթիթ ծաղկազարդ ոսկեճաճանչն մորուացն ճիրանամբքն զխզումնն, և որ առաւելեալն քան զսյն զապաշաւանացն զանյագութիւնն: - 386. տեսանեն զկողմանս արևելից, դաշտ յոյժ մեծանիստ, լայնատարած, հարթայատակ, անվայրափակ առ ի սահման, անբաւական ի տեսութիւն

աչաց, սաստիկ լուսով զարդարեալ ի գիշերի, բազմակերպ երևմամբ – 48. քանզի ըստ օրինակի իսրայէլականումն, որ յաւուրս անիշխանութեանն էին անկարգութիւնք, և այր իւրաքանչիւր զհաճոյս աչաց իւրոց առնէր՝ սոյնպիսիք և այժմուս եհաս լինել. – 300.

ԱՊԱ - Ապա յղէ զնա ի Խորասան, և նմա հաւատաց զվերակացութիւն աշխարհին. – 326. այլ որպէս արմատն՝ նոյնպէս և ուռն և պտուղն. եթէ սկիզբն սուրբ է՝ ապա և արմատն, ապա զինչ ուռն՝ նոյն և տեսակ: - 258. այլ որպէս արմատն՝ նոյնպէս և ուռն և պտուղն. եթէ սկիզբն սուրբ է՝ ապա և արմատն, ապա զինչ ուռն՝ նոյն և տեսակ: - 258. ապա անարգեաց զնա և Կաւատ արքայ, եհատ ի վերայ նորա դատաստան մահու, և հրամայէ արանց մտանել և սպանանել զնա. – 152. ապա հնարաւորեալ պատիր խաբէութեամբ ի կատարումն հասուցանել զխորհրդոյն /346/ զանհաստատ իմացմունսն, և զնաց եմուտ յամրոցն, և զհիւանդութեան կեղծաւորութիւն մերձ առ մահ եդ առաջի: - 348. Ապա յղէ առ թագաւորն լինել նմա կին. – 272. Ապա այնուհետև դարձեալ յղեաց զՀամդոյ զՊարսից ամիրայ, և ի զօրաց արքունի զՀէթմ ազգաւ թուրք, և ընդ նոսա հեծեալս Ժ հազարաց, կազմեալ սպառազէն պատրաստեալ բարձրագոյն քան զառաջինն – 234. Ապա այնուհետև ոչ կարաց կալ համարձակութեամբ ի բացեայ առնել զբանակն իւր, այլ ետ զկէս զօրուն յոմն գլխաւոր և նստոյց զնա ի կողմանէ հիւսիսի կողմն. – 280. ապա բանս մեղադրականս բազումս յաճախեաց եդ առաջի նորա. – 216. Ապա բարեկամացեալ ընդ Աբգարու թագաւորի Հայոց և ընդ մեծ զօրավարին Խուրանայ Արծրունւոյ՝ յղէ նմա պատարագս և առնու յօգնականութիւն զԽուրէն Արծրունի, զայր իմաստուն և քաջամարտիկ, կորովի յաղեղն և ի զէն և յասպազէն. - 78. Ապա դարձան Վաչէ և Արշաւիր ընդ Արտաշէսի, առեալ զթագաւորութիւնն Երուանդայ ի ԼԱ ամի Արտաշէսի արքայից արքայի և թագաւորին Յունաց … ամի. – 86. Ապա ելեալ ի նաւ՝ եկն ի մէջ ծովուն խօսել ընդ զօրավարին Պարսից. – 144. ապա ետ հրաման և փորեցին զաչս երանելւոյն, անդամ անդամ յօշեցին զնա – 290. Ապա երկոքին նոքա դեսպանս արձակեցին առ թագաւորն ի հաւատարիմ արանց ըստ Եսայեայ զոր ասէ – 286. Ապա թագաւորեցուցին զԲորն զդուստրն Խոսրովայ, որ էր կին նորին, որում բամբիշն կոչէին. – 154. Ապա իբրև վախճան առնոյր կարգեալ եպիսկոպոսացն որ ի Պարսից … միաբան ապա նախարարքն Հայոց եկին առ սուրբն Սահակ – 120. Ապա իբրև վախճան առնոյր կարգեալ եպիսկոպոսացն որ ի Պարսից, … միաբան ապա նախարարքն Հայոց եկին առ սուրբն Սահակ – 120. Ապա համբարձեալ զձեռս իւր յերկինս՝ ասէ, ,,յիշեա՛ զիս, Տէր, յորժամ գաս արքայութեամբ քո,,. – 254. ապա համոզեալ Սահակայ և Սմբատայ այլովքն նս՝ բարձին ի միջոյ զաղմունկն, և սէր բարեկամութեան ի մէջ երկոցունց հաստատեալ՝ գնացին յիւրաքանչիւր տեղիս: - 332. ապա հրամայեաց զերկոսին զձեռսն և զերկոսին զոտսն հատանել. - 290. ապա մտախորհ եղեն բազում քննութեամբ, և յանբաւ և յառաւել իմացմանց ընտրեցին՝ գրել և ծանուցանել թագաւորին վասն առնն այնորիկ. – 280. Ապա մտախորհ եղեն դարձեալ վառել ի պատերազմ. – 276. ապա յամառեալ զարբանեալքն իւր հրամայեաց կապել կրկին շղթայիւք և արկանել ի ներքին բանտ: - 250. Ապա յետ այսր զեկուցաւ նմա վասն Գուրգինի տիրելն Անձաւացեաց. – 330. Ապա յետ փոքր ինչ աւուրց վառեալ զզօրսն ի պատերազմ ընդ բերդայինսն, առնուլ զամրոցն: - 208. ապա նոքա մերկացեալ զկեալն կասկածանօք առ Ապումրուան՝ գան առ նա առանց ակնածութեան. – 364. Ապա ոմանք թագաւորեցուցին զԱզարմիկ դուստր Խոսրովու, և զօրն Խոռեմայ թագաւորեցուցին զՈրմզդ ոմն ի Մծուին քաղաքի. – 156. ապա ցուցին զտեղին ուր ծածկեալն էր. զոր առեալ վարեցին ի գերութեան, և ոսկի և արծաթ անբաւ խաղացուցին ի դուռն թագաւորին: - 142. Ապա փոյթ ինձ Թովմայի, որ ոչ վերջոտնեալ կալայ ամօթով զյետին տեղին – 122. Բայց ապա հաճոյ թուիցի ձեզ՝ ի բաց կալ ի դոցանէ և միաբանել ընդ իս. – 138. բայց կանոնեցի զանուանս ի մատենիս: Տիգրան. Աղրամելէք. Ներս. Ներսէխ. Մարոդ. Արշամ. Արշաւիր. Ասուդ: Պարսից թագաւորք. Քսերքսէս. Արտաշէս երկայնաձեռն. Դարեհ. Արտաշէս. Ողոքոս. Զարսէս. Դարեհ: Ապա Աղէքսանդրոս Փիլիպպեայ Մակեդոնացի տիեզերակալ թագաւոր: - 68. և ի բողոքել արդարոյն յետ Ճ ամի՝ ապա

հրաման միայնոյ և ահաւորին Աստուծոյ ասէ. – 30. և նստան ի ներքս ի քաղաքին ԻԱ օր. ապա ելեալ բանակեցան արտաքոյ քաղաքին, և զքաղաքն այրեցին հրով: - 142. Զայս իմացեալ խորհրդականութիւն Քսերքսէս յԱդրամելեայ և Սանասարայ յորդւոցն Սենեքերիմայ՝ ապա գան առ Տիգրան Հայոց թագաւոր և զեկուցանեն նմա վասն որոյ խորհի Աշդահակ. – 62. Զի Վռամ և Յազկերտ զկէս աշխարհիս յինքեանս յանգուցեալ՝ զբոլոր ապա աշխարհիս զտիրելն յոխորտային: - 114. Իբրև լուաւ զայսքան և առաւել քան զսոյնս յանդուգն և առանց երկիւղի զընդդէմ պատասխանատրութիւնն մեծաւ համարձակութեամբ՝ապա հրաման ետ փութով ի կենաց բառնալ զգլուխ նորա սուսերաւ: - 296. Իսկ զկնի վերանալոյն Քրիստոսի, յետ ԺԵ աւուր, ապա հասանէր Գրիգոր ի քրիստոսակոչ կատարումն. – 254. Յայնժամ իբրև գիտացին երկոքին կողմանքն, եթէ ոչ գոյ հնար գտանել զելս իրացն և տալ խաղաղութիւն՝ ապա հաճեցան և հաւանեցան գրել առ թագաւորն. – 286. Յետ Արտաշէսի թագաւորէ Արտաւազդ, ապա Տիրան որդի Արտաշէսի, ապա Տիրան, ապա Տիգրան Վերջին, ապա Վաղարշակ: - 92. Յետ բառնալոյ թագաւորութեանն Հայոց ի տանէն Արշակունեաց՝ ապա մարզպանք Պարսից կալեալ տիրէին աշխարհիս. – 124. Յետ հազար ամի ապա ծնաւ Որմզդ – 46. որ ապա ի /80/գնալն տիկնոջն յԵռուսաղէմ՝ Վաչէ և Արշաւիր երկեան երթալ առ Սանատրուկ – 82. Որ ապա յետ սպանմանն Սենեքերիմայ յորդւոց իւրոց՝ բուռն գնդաւ Ադրամելէք և Սանասար գան մտանեն ի լեառն Սիմ - 16. Ապա առեալ հրաման մեծամեծացն մեր Արծրունեացն՝ գրեն առ Աբրահամ Մամիկոնէից եպիսկոպոս … և ծանուցանեն նմա զոր խնդրէ արքայ: - 132.

ԱՊԱԳԱՅ - Ո՞վ յիմարութեան առաջնոցն. ո՞րպիսի կատաղութիւն և գիւտք դիւացն նախկին ժամանակաւ սպրդեալ մուծաւ յաշխարհ, ապստամբութիւն առ Աստուած և տրտմութիւն սրբոց հրեշտակաց, և պատճառ վտանգաւոր մահու ծառայիցն Աստուծոյ յաւուրս ապագայիցն. – 38.

ԱՊԱ ԵԹԷ ՈՉ - ապա եթէ ոչ՝ պաշտելիք եղիցին եկեղեցիքն, որ փրկիչն անուանին և երկրպագելիքն աստուածային երկրպագութեամբքն. որ է յոյժ ծիծաղելի. – 394.

ԱՊԱ ԹԷ - Ապա թէ փութաս ելանել ի կենաց աստի առ զայրուցս կատաղութեան քո և զոսկերս ցրուես յանապատս և լինել կերակուր գազանաց երկրի և թռչնոց երկնից՝ քո կամք լիցին, և ես քաւեալ եմ յարենէ քումմէ – 278. Ապա թէ իբրև զհայր գրգեալ և զգուեալ էի զձեզ – 214.

ԱՊԱ ԹԷ ՈՉ - ապա թէ ոչ ի կամս կամաց զայդ առնես՝ ակամայութիւն ի վերայ հասեալ՝ և զոր ունիսդ հարկաւորաբար առնէ քեզ զայդ ևս թողուլ,,: - 330. այլ և ոչ հուր մեկնեալ յամպոյ, ապա թէ ոչ՝ հարկ էր և ի գիշերի երևել. – 32. Ապա թէ ոչ՝ մի խաբեսցէ զքեզ յոյսն քո սնոտի – 146. Ապա թէ ոչ՝ տեսից վասն քո,,: - 236. Եւ գրէ առ իշխանաց իշխան՝ ի բաց լքանել եթէ ունիցի ինչ անօգուտս խորհել, ապա թէ ոչ՝ տեսից զքեզ, ասէ, ի զէն և յասպազէն և ի ճակատամարտ. – 322. և ծառայեա ճշմարտութեան օրինաց և հաւատոց, զոր ուսաք ի մարգարէէն Մահումաթայ. ապա թէ ոչ՝ զնորին հակառակն ընկալցիս, տանջանս և մահ, և ելցես ի կենաց աստի չարաչար մահուամբ,,: - 294. տուք ի մեզ զերկիրդ մեր խաղաղութեամբ, ապա թէ ոչ առցուք պատերազմաւ, ոչ միայն զայդ, այլ և զայլ ևս բազումս,,: - 162.

ԱՊԱԺԱՄԱՆԱԿ - Իսկ նա անդէն և անդ հերքեալ ապաժամանակ առ ուղղակի տեսութիւն մեղանաց՝ առ Աստուած վերաբերէ զպատճառն – 20.

ԱՊԱԺԱՄԱՆՈՒԹԻՒՆ - ոչ պիտոյացեալ եկամուտ լուսոյ, որով նսեմասցի առ ի հասանել երեկոյին, ոչ ապաժամանութիւն արեգական առ ի մերժել զմութ գիշերի լուսազգեստ ստեղծուածոյն, որ յետ առաջնոցն կարգի և դասու՝ զերկրորդն փոխանորդեցաւ վիճակ, ոչ կերակուր հոսանուտ առ ի լրութիւն տարաբարձ ունակութեանց անապականին, որ դոյզն ինչ փոքրագոյն քան զհրեշտակս գոլ. – 20.

ԱՊԱԺՈՅԺ - զի մի /68/ վատութիւն քան զքաջութիւն ճոխասցի, որ կանանցաբարոյիցն քաջ յարմարի, թէպէտ և յարիւն և յապաժոյժ զզօրսն կենացն առնուցուն,,: - 70. անկեղծաւոր և աննենգ տիրասիրութեամբ ցուցանել հնազանդութիւն հպատակութեամբ, մինչ յարիւն և

յապաժոյժ նահատակութեամբ առնուլ վրէժս ի Պարսկացն հինից՝ զաւեր եկեղեցեացն Հայաստանի և զնեղութեանցն և զգերփանացն և զսաստիկ արիւնահեղութեանցն զքրիստոնէից և զուխտի մանկանց եկեղեցւոյ սրբոյ: - 134. և իբրև զքաջ հովիւն դրուատեալ ի փրկչէն՝ զանձն իւր եդ ի վերայ խաշանց ընդդէմ ապականարար գայլոցն, յարձակեալ յանխնայ դիմեցուածովք, յարիւն և յապաժոյժ, ի սատակումն և ի ծախումն սրոյ մատնեաց բոլորովիմբ զյարձակեալս նեղիչս աշխարհիս. – 312. Զի ոչ միայն առ շինութիւնն՝ այլ և յարիւն և յապաժոյժ առաքինաբար զանձինս եդեալ ի վերայ խաշանցն մեռանել իբրև զքաջ հովիւ – 392. ընդդէմ արաբացի ասպատակողացն յարիւն և յապաժոյժ ի վերայ հայրենի աշխարհի մարտուցեալ և զհոգի և զմարմին փոխանակ սրբոց եկեղեցեաց Քրիստոսի և ի նոյն հաւատացելոց ի Հայր և յՈրդի և ի Հոգին սուրբ, առ զնոսա ամբողջ և անբիծ պահելոյ – 300.

ԱՊԱԿԱՆ - սա անառակութեամբ զեղծ և ապական յիրս թագաւորութեանն եղեալ – 58.

ԱՊԱԿԱՆԱԳՈՐԾ - և մերկացեալք ի մէջ ամբոխին … ի բաց ընկեցին զհանդերձս ծածկոյթս ապականագործ հնութեան մեղացն – 266. իսկ զօրավարն զիւրն կերպամտեալ խորհուրդս ապականագործս աշխարհաւերս – 268.

ԱՊԱԿԱՆԱՐԱՐ - Եթէ, որպէս ասացի, ի բաց գնաս յինէն՝ խաղաղութիւն է, և թէ ոչ՝ պատերազմ և կռիւ և ճակատամարտ … դու ծաղիկ՝ և մեք խորշակ թառամեցուցիչք, դու անդ պտղալից՝ և մեք կարկուտ ապականարար – 280. և իբրև զքաջ հովիւն դրուատեալ ի փրկչէն՝ զանձն իւր եդ ի վերայ խաշանց ընդդէմ ապականարար գայլոցն, յարձակեալ յանխնայ դիմեցուածովք, յարիւն և յապաժոյժ, ի սատակումն և ի ծախումն սրոյ մատնեաց բոլորովիմբ զյարձակեալս նեղիչս աշխարհիս. – 312.

ԱՊԱԿԱՆԵԱԼ - և ամենայն խորհուրդք իւր ապականեալ ցրուեցան. եթէ զի՞նչ գործիցէ ոչ գիտէր. – 280. Եւ դարձեալ՝ ետես Տէր Աստուած զերկիր և էր ապականեալ. – 28. Եւ եկեալ երեկոյին խնդալից՝ ակն ունէր առլնուլ կերակրովն, եգիտ ապականեալ և գիշակեր. – 46. Եւ ասի լինել թիւ մարդկանն ապականելոց ի շարժմանէ՝ ոգի առաւել քան ՀՌ: - 358.

ԱՊԱԿԱՆԵԼ - և զաշխարհս ապականեաց գերութեամբ: - 166. զի ապականեաց ամենայն մարմին զճանապարհս իւր ի վերայ երկրի. – 28. Իսկ սուրբն վառեալ Հոգւովն սրբով՝ յիշէ զասացեալն ի Փրկչէն, թէ ,,մի երկնչիք յայնցանէ, որ սպանանեն զմարմինն, և զոգին ոչ կարեն ապականել,, - 204. Որպես և Յոյնք երբեմն համբաւեցին՝ Հերակղէս աստուած յիսուն կոյս ի միում գիշերի ապականէր. – 38.

ԱՊԱԿԱՆԻՉ - լի թունիւք սատանայական խորհրդոցն, ծածկեալ յաչս իշխանին գառնենի զգեստիւք ի հանդերձս ոչխարաց, և ներքոյքն զապականիչ գայլոցն բերելով զլրբութիւն – 210.

ԱՊԱԿԱՆՈՒԹԻՒՆ - ,,իբրև զդրախտ փափկութեան երկիրն առաջի, և զկնի նորա դաշտ ապականութեան – 238. առանց վեր ի վերայ /ճիշտը՝վեր ի վերոյ/ դնելոյ սփռել տարածանել ի կորուստ և յապականութիւն բազմաց: - 242. Եւ ջանայր զպարիսպն պղնձի կործանել. զգաւազանն երկաթի խորտակել, զհովիւն մատնել ի կորուստ և զհօտն յապականութիւն: - 344. զտարի մի ողջոյն մնալ յապականութեան երկրի. – 32. Որ կամէին դառնաբեր քինահարութեամբ ելանել ի վերայ աշխարհիս առ հասարակ յապականութիւն դարձուցանել: - 404. որով զեղծագործ ապականութիւն նոցա յայտ առնէ, յուսակորոյս յայնմանէ, որ զպատիւ սիրոյ եցոյց ի նոսա՝ որդիս իւր ասելով – 28.

ԱՊԱԿԵՂԷՆ - Այլ և հուր և ծծումբ նաւթիւ բարձեալ ի գործ պատերազմին, և զլոյծ բնութիւնն յանօթս ապակեղէնս եդեալ, և մանր զծծումբն ընդ նմին խառնեալ, եդեալ ի պարսատիկ մեքենայից, և զհուրն առ ընթեր նմին, հնարաւորեալ արկանել զամրոցսն: - 208.

ԱՊԱԿԻ - Նա և ջուր մաքուր յապակի զուտ և վճիտ արկեալ, ի տապ արեգականն դնելով, և զնիւթ հրոյն առ ընթեր՝ ի շողոյ անտի արևակէզ եղեալ տոչորի նիւթն: - 52.

ԱՊԱՀԱՐԿԵԼ - զՊարոյր Հայկազնեայ ապահարկէ ի հարկաբարձութենէ – 58.

ԱՊԱՀՈՎԱՆԱԼ - և երկիրս Հայոց յապահովանայր ի հինից Պարսից. – 128.

ԱՊԱՀՈՎԱՅԵԱԼ - և անդէն կացեալ զաւուրս բազումս յապահովացեալ ի կասկածանաց երկիւղէ Երուանդայ: - 84. և միապետէ զտէրութիւնն Անձաւացեաց և խաղաղեցուցանէ զերկիրն և բնակէ յանհոգս զապահովացեալ ի հինից. շինէ եկեղեցիս և կատարէ տօն նաւակատեաց խաղաղութեան: - 326.

ԱՊԱՀՈՒՆԻ - Փութանակի և վաղվաղակի իւրաքանչիւր զօրօք անդր հասանէին … և այլք ի նախարարացն Վասպուրական իշխանին, Սմբատ Ապահունի, Գրիգոր Քաջբերունի, Վահան Հաւնունի, սեպուհն Դաւիթ, Գազրիկն Ապուհարազ, Թոդորոս Վարազն, Խոսրով Վահևունի, Խոսրով Ակէացի, Վարդան Գաբայեղէն, Սմբատ Մարացեան, սեպուհ մի Սահակ, Պատրիկն Անձևացի, Գորգ Հարմացի, Դաւիթ Գունդսաղար. – 174.

ԱՊԱՀՈՒՆԻՔ - ելեալ իշխանքն Հայոց յանձնիւր տեղեաց գնացին յանդիման լինել նմա, Դերանիկն, տէր Գագիկ և տէր Գրիգոր և միւս այլ տէր Գրիգոր Վասպուրական իշխան, Աշոտ կորապաղատ Հայոց իշխան, Մուշէղ իշխանն Մոկաց, Շապուհ եղբայր իշխանաց իշխանի և Ապլբառ Կայսիկ Ապահունեաց բռնաւորն և այլք ոմանք: - 340. Ազդ լինէր յոմանց գրումն անյայտիցն, թէ ,,այս ոմանք այսորակ երիվարօք յայս նիշ նիւս կեղթում, ի մէջ բդեդի պահարանեալ նամակ տանին ընդ կողմն Ապահունեաց. արդ զգուշացիր ճանապարհիդ,,. - 340. և գնացեալ ընդ եզր ծովուն Բզնունեաց, ընդ կողմն Ապահունեաց՝ և բանակեցաւ յափն գետոյն, որ իջանէ յԱղձնեաց խոխոմացն: - 366. Եւ գրեթէ ամենայն իշխանք Հայոց, Վրաց և Աղուանից եկեալ էին ընդ զօրս Հայոց ի վերայ աշխարհին Ապահունեաց. – 380. և զայլ բազմութիւն զօրացն առեալ ընդ իւր՝ երթայ ընդ սահմանս Ապահունեաց – 202. Եւ զի էր պաշարել նորա յայնժամ զքաղաքն Մանազկերտ Ապահունեաց աշխարհին, որ ի ձեռս Ապլբառայն էր, և ածեալ հասուցեալ մերձ ի պաշարումն. և ի հասանել գուժկանացն եթող զնոսա, տալով նոցա հրովարտակս ի խաղաղութիւն: - 348. Եւ էր գրեալ ի միում թղթի անդ, յիշեցուցանելով զոր ինչ գործեաց Աշոտ ի զօրսն Ապահունեաց զյաղթանակ պատերազմին և զհոյակապ անուն ստանալոյն՝ ասէ – 382. Եւ մեկնեալ զզօրսն ի նմանէ ընդ կողմն Ապահունեաց, մերկ ի զինէ և յասպազինէ թողեալ, ոչ առնել այլ կողոպուտ, գնացին աղխիւ և երիվարօք իւրեանց: - 346. և նա ձեռնամուխ եղև զընդ նովաւ հնազանդեալս ի բաց կորզել քեցել ի նմանէ շրջաբերական թղթովք, զիշխան Վասպուրական զԴերանիկն, զԱպլբառ Կայսիկ զբռնաւորն Ապահունեաց, նմանապէս և զայլսն զոր և կարաց հրապուրել. – 350. Ընդ այն ժամանակս զօրաժողով եղև թագաւորն Հայոց Սմբատ ի վերայ Ապահունեաց աշխարհին: - 380. Իսկ որ տիրէր աշխարհին Ապահունեաց Կայսիկն՝ զիւր զօրսն առ ինքն գումարեալ և որ շուրջ զնովաւ քաղաքայինք և ասպատակքն Պարսից, որք ի Յունացն վերայ առնէին արշաւանս: - 380. Յայնմ ժամանակի Բուհայ եկն եմուտ ի Խլաթ քաղաք, ճանապարհ արարեալ ընդ կողմն Ապահունեաց. – 200.

ԱՊԱՇԱՒ - և Զ ամ կեցեալ յետ գերադարձն լինելոյ, և մտեալ յաշխարհս՝ համարձակ զքրիստոնէութեանն ունելով զկրօնաւորութիւն, և ի զղջել յապաշաւ ի վերայ ուրացութեանն զՔրիստոս լինելով: - 336. Բայց Աշոտ, իբրև եհաս ժամ ելիցն իւր յաշխարհէս՝ յանհունս բերեալ զզեղջ և զապաշաւանս յորդահոսան արտասուօք զխոստովանողականն ի դիմի հարեալ միջնորդութիւնն – 336. և ապաշաւանք ոչ սակաւք դիմեցին հոլովեալ ի վերայ իմ. – 378. Զոր /336/ և ես ոչ արհամարհելով այպանեմ զզղջմանն և զապաշաւանացն, զի ,,որ կարդասցէ զանուն Տեառն կեցցէ,,: - 338. Իսկ նախարարքն Հայոց իբրև տեսին յերկոցունց կողմանց զանկարգ և զանտեղի աշխարհիս պիտաւորութիւն՝ յապաշաւանս դարձեալ ի վերայ անցիցն անցելոց զոր ախորժելովն խնդրեցին՝ դարձան առ Վռամ – 118. մասնաւոր ինչ մարգարէական ոգւով եղելում ի մարդն օժնդակ խորհրդածութեան արծարծել անդրէն ի ձեռն ապաշաւանացն զվրիպանացն կորուստ. ըստ այսմիկ և այլոց կենդանեացն զգայականօքն և թէ ունայնացելովք առ ի դոյզն ինչ զգուշաւորականս: - 22. յապաշաւանս և ի զիղջ առեկեալ ի վերայ երիտասարդական դիւրահոս արագաւէժ առ չարեացն միտեալ խակութիւն: - 386. վասն որոյ զերկայնութիւն կենաց տալով նահապետացն Աստուծոյ՝ յանդիման

դրախտին բնակեցուցանէր, ուսուցանելով՝ ի ձեռն ապաշաւանաց ի նոյն վերադարձիլ կեանս. – 26. Վէմս զերեսօք արկեալ արտօսր յորդառատս ի խտղտելի աչաց ի վայր հեղեղատելով, զնորափթիթ ծաղկազարդ ոսկեճաճանչն մորուացն ճիրանամբքն զխզումնն, և որ առաւելեալն քան զսոյն զապաշաւանացն զանյագութիւնն: - 386.

ԱՊԱՇԱԻԵԱԼ - համարձակապէս անցանել գնալ ընդ իշխանութիւնս և ընդ պետութիւնս, ընդ աշխարհակալս խաւարիս այսորիկ, որ անհաւատից քան եթէ հաւատացելոց ոգւոց և ապաշաւելոց զտիրելն բռնաձգեալ կորզեն յինքեանցն կորուստ: - 388.

ԱՊԱՇԱԻԵԼ - ,,Գրեցի ձեզ, ի բաց կալ յայդմանէ, ուրեմն ոչ կամեցարուք լսել, ես զձեզ ապաշաւեմ, ասէ: - 138. և մի եղիցի յիշատակ սորա ընդ սոցա, որք թէպէտ և վրիպեցին և կործանեցան՝ սակայն և ապաշաւեցին և կանգնեցան յետ դարձին իւրեանց ի մեծ կարաւանէ գերութեանն ի միջոյ ժանեաց բռնաւորին. – 248. բայց դու պարտիս յանձն քո ապաշաւել քան թէ ի մեզ. – 138.

ԱՊԱՇԽԱՐՈՂ - և նա զբոլոր իսկ զաշխարհն կործանեաց, պաշտօնարար լինել սնոտեացն, թէպէտ յետոյ ընդունէր զապաշխարողսն: - 256. որք ի դադարել հալածանացն՝ զամենայն ի զոհելոյ կռոցն ոչ ընդունէր զապաշխարողսն: - 256.

ԱՊԱՇԽԱՐՈՒԹԻԻՆ - Այլ ի հրամանէ Աստուծոյ յանդիման դրախտին բնակելով պահոք ապաշխարութեան սգացեալ եղեն, ողբալով զվրիպումն առաջին կենացն, ամենայնիւ հրաժարեալ ի մարմնականաց, հոգիազարդ մարգարէութեամբ ժուժկալեալք ի մսոյ և ի գինւոյ: - 30. Եւ սա բազումս արգել ի կռապաշտութենէ, թէպէտ և մոլորեցոյց անյուսութեամբ զդարձեալսն յապաշխարութիւն – 256. կոչեաց զերիցունսն նորոյ կտակիս, զեպիսկոպոսս և զքահանայս, առաջի արկեալ զհաւատոցն կատարելաբանութիւն, զմկրտութեանն լուսաւորութիւն. զառեկելոցն յապաշխարութիւն, զյոյսն յետ վախճանին, զմարդասիրելն Քրիստոսի - 386.

ԱՊԱ ՈՒՐԵՄՆ - Ապա ուրեմն յայտ է ըստ կարգի ասացելոցս, եթէ որ շարժէ զերկնային մարմինն՝ մի է և անբաւ զօրութիւն ունի և անմարմին է և անեղ է անապական, և ինքն ոչ յումեքէ, և այլք ամենեքեանք նովաւ. – 54. և յայտ է թէ յայլմէ շարժի. և եթէ յայլմէ՝ ապա ուրեմն է՛ ոմն, որ շարժէ զերկնային մարմինն: - 54.

ԱՊԱՌԱԺ - և հասեալ ի տեղի ապառաժ քուաւոր՝ անդէն զետեղէր և զգրաստն: - 34. Յայնմ ժամանակի էին եղբարք բռնակալք ոմանք ի կողմանս ապառաժ Արաբիոյ ի տեղւոջն Փառան որ այժմ կոչի Մաքայ, արք պատերազմողք /156/ զօրագլուխք, պաշտօնատարք մեհենին Ամովնացւոց պատկերին, որ կոչի Սամամ և Քաբար: - 158.

ԱՊԱՌԱԺՈՒՏ - Իսկ շուրջ զբերդանման ապարանօքն՝ պարսպէ զբլուրն շուրջանակի յապառաժուտ տաշելոց քարանց, քաղաք ամենալից զհովիտն ամրացուցանելով: - 86.

ԱՊԱՍՏԱՆ - Բայց նոքա քանզի ապաստան լեալ յանկասկածելի յամուրս և ի բազմութիւն զօրացն և ի քաջութիւն արանց պատերազմողաց՝ և ո՛չ առ փոքր մի խոնարհեցան ի բանս նորա կամ ետուն տեղի պատասխանւոյ. – 274. և թափառական զվէմս ապաստան արարեալ յանկասկածագոյն տեղիս դարանի ի փոքր վիմամէջս ի կարկառս հովտաձևս հանդէպ հարաւոյ քաղաքաբերդին Վանի, մօտ այն տեղի, յորում բղխէ աղբիւրաբար առ ստորոտով բլրակի միոյ, մօտ յեզր ծովուն – 84. թէ գուցէ դրդուիցի ինչ ի միջոցէ ապաստանին վիմին հաստատնոյ – 204.

ԱՊԱՍՏԱՆ ԱՐԱՐԵԱԼ - Զնա որպէս զերկիւղած Աստուծոյ ապաստան յինքեան արարեալ՝ խնդրէր պահպանել նմա. – 320.

ԱՊԱՍՏԱՆԵԱԼ - ի յաղթանդամութիւն ապաստանեալք, և ապարասանք հպարտացեալք ի զօրութիւն բազկի. – 28. յօրացեալ և ապաստանեալ ի յոյժ բազկի և ի յաղթանդամութիւն հասակի – 38.

ԱՊԱՐԱՆՔ - ելանել ի գագաթն Ամրական անձաւին զբօսնուլ նովաւ առ վճարումն բաւականութեան, ըստ մասանց պիտոյից օժնդակութեան քաղաքայարդար ապարանից թագաւորական պաղատի իւրոյ ձեռակերտին – 392. Եւ ածեալ զտիկինն Սաթինիկ զբօսնուլ յաշնանային յեղանակս յամարաստուն գեղեցկաշէն յապարանս զարդարեալ

բերդին: - 88. և ի փայտից մայրեաց շինեալ էր քաղաքն նոցա, պարիսպք և պատուարք և ապարանք նոցա և ամենայն տուն բնակաց քաղաքին և ամենայն կազմած պատրաստութեան նոցա: - 270. և կանգնեցին պատնէշս և շինեցին ապարանս և արարին տուն բնակութեան – 276. և հաճոյ թուեալ յաչս նորա՝ շինէ զքարաբլուրն ապարանս արքայանիստ, աշնանայինս, պայծառայարդարս, գեղեցկայարմարս պարսպաւորս – 86. և հարան զօրքն արքունի ի հարուածս մեծամեծս և դարձան փախստական ի բանակն իւրեանց և մտին յապարանսն զոր շինեալ էին. – 282. և յօրինեաց պատրաստեաց ապարանս պատուաւորս գեղազարդ խրախճանական կարգադրութեանց դրուագս – 392. և շինեցին ապարանս ամուրս և պարսպեցին մեծաւ զգուշութեամբ. – 280. և քանդեալ աւերեաց զամենայն ապարանս թագաւորին և այրեաց զնոսա հրով, և բազում գանձս մթերեալս յափշտակեաց անչափ աւարաւ գանձս ոսկոյ և արծաթոյ և հանդերձից, և անասուն բազում յոյժ, և բազմութիւն գերեաց իբրև զաւազ ծովու անթիւ: - 150. զի էր նորա /178/ գանձ բազում ի կարաս թաքուցեալ ի գետնափոր տան, ի ներքոյ դրացն ապարանից տան - 180. Իսկ շուրջ զբերդանման ապարանօքն՝ պարսպէ զբլուրն շուրջանակի յապառաժուտ տաշելոց քարանց, քաղաք ամենալից զհովիտն ամրացուցանելով: - 86. յորում տեղւոջ յառաջագոյն ապարանք պարսպաւորք եղեալ էր Վարդ պատրկի Ռշտունւոյ հայկազնոյ – 394. շինէ և անդ ամրական տեղի, դժուարամատչելի ասպատակող հինից, դնելով ի նմա նմանապէս ապարանս փողոցայարդարս, տաճարակերտս սենեկագործս, բաւական ի պէտսն պատրաստեալ – 392.

ԱՊԱՐ ԱՇԽԱՐՀ - և անդ զբարիոք պատերազմն պատերազմեալ ի մեծ անապատին յԱպար աշխարհին, և որ ինչ այլն ամենայն. – 128.

ԱՊԱՐԱՍԱՆ - ի յաղթանդամութիւն ապաստանեալք, և ապարասանք հպարտացեալք ի զօրութիւն բազկի. – 28.

ԱՊԱՐԱՍԱՆՈՒԹԻՒՆ - կորզել ապարասանութեամբ յինքեան և զպատիւ Արարչին – 20. Որկեն և եղեցանն առ նորա բերեալ բացայայտ ի խորհուրդ տապանին, ի Փռիւգացւոց ապարասանութենէ ի մեզ ճախրեալ ապրուստն. ի տանն Աստուծոյ զընթացսն քաջայարմարագոյն հաւատով բերեալ: - 396.

ԱՊԱՒԻՆԵԱԼ - եթէ հաւանեալք արդարոյն և ապաւինեալք ի նա՝ յուսացան ի բան նորա, ծառայել երկիւղիւ հրամայելոցն ի նմանէ՝ զի՞նչ անհաւատ թուի և ի փրկութենէն ընդ նմին վայելել. - 32. իբրև ի մեծ և յանկասկածելի ամուր ապաւինեալ լինէին ի քաջ զօրավարն Գուրգէն և որք ընդ նմա զօրք Հայոց. – 226. միայն միաբանութեամբ սրտիւ կացցուք ապաւինեալ յօգնականութիւնն Աստուծոյ. – 276.

ԱՊԱՒԻՆԻԼ - Զայն ի փոքր ինչ աւուրց զապստամբութիւն ի մէջ առեալ Խոսրովայ ի Շապհոյ՝ ի Յոյնս ապաւինի – 112.

ԱՊԻԿԱՐ - Դարձեալ զի երկրպագէ հրոյ, և արեգական, որ է Հեփեստոս, մասն աստուծոյ ասելով, զիա՞րդ իցէ, զի գողն և ապիկարն իբրև զաստուած երկրպագիցի: - 52.

ԱՊԻՀԱՐԿԵԱԼ - Նախ զի և լեզուքն շփոթեալք՝ունէին զանմիաբանութեան փոյթս, կամ թէ զի և վատութիւնք քաջաց ապիհարկեալք ոչ գրեցաւ ի մատենագրաց անտի Քաղդէացւոց – 44.

ԱՊԻՐԱՏ - եթէ չար ինչ թուիցիմ յաչս ձեր, և ապիրատս գործեալ եմ առ ձեզ և խարդախութեամբ բնակեալ եմ ընդ ձեզ՝ աւասիկ յանդիման երեսաց իմոց տուք պատասխանի – 214. Եւ զի մի երկայնեալ որ ինչ վասն նորա ապիրատ և ինքնակամ և անզիղջ և անխիղճ առանց պատկառանաց մոլորութիւն սորա լի անամօթութեամբ՝ի բաց դիցուք զսա ի միջոյ յիշատակի նախարարացն – 248. և իմ խնայել ի ձեզ ոչ արարից զրաւ կենաց ձերոց ըստ արժանի ապիրատ գործոց և վնասուցն, զոր յանցեայքն առ իս դուք. - 244. Եւ յորդորականիւ հրաժարեցուցանէր զնոսա ի բաց կալ յապիրատ և ի վնասակար գործոցն զոր գործէին – 182. Որ զապիրատ և զլի հնարիւք սատանայական իմաստից, չարահնար խորհրդոց բուռն հարեալ՝ մեծամեծս փքայր փոնքտալով – 200.

ԱՊԻՐԱՏՈՒԹԻՒՆ - և զապստամբս և զընդդիմակայսն ըստ արժանի ապիրատութեանն իւրեանց խրատել գանիւ և բանտիւ և պէսպէս տանջանօք – 212. և ինքն Յամանիկն գրէր առ Աշոտ զԴերանկէն՝ լի ապիրատութեամբ խորհել վասն Աշոտի: - 350.

ԱՊԼԱԲԱՍ - Իսկ Սմբատ որ և Ապլաբաս սպարապետն Հայոց, իբրև գիտաց թէ ոչինչ օգուտ բերէ արտաքոյ հրամանացն նորա լինել՝ փութացաւ եկն առ նա, և ընկալեալ ի նմանէ՝ բնակեաց ինքն և իւրքն հանդերձ իւրաքանչիւր կալուածովք առանց կասկածանաց. – 270.

ԱՊԼԲԱՌ - Բայց Յամանիկն և Ահմատն և Ապլբառն և այլ ևս Տաճկաց միաւորութեամբ զնոյն չարիս երկնէին գային: - 340. Եւ զի էր պաշարել նորա յայնժամ զքաղաքն Մանազկերտ Ապահունեաց աշխարհին, որ ի ձեռս Ապլբառայն էր, և ածեալ հասուցեալ մերձ ի պաշարումն. և ի հասանել գուժկանացն եթող զնոսա, տալով նոցա հրովարտակս ի խաղաղութիւն: -348.

ԱՊԼԲԱՌ ԿԱՅՍԻԿ - և նա ձեռնամուխ եղև զընդ նովաւ հնազանդեալս ի բաց կորզել քեցել ի նմանէ շրջաբերական թղթովք, զիշխան Վասպուրական զԴերանիկն, զԱպլբառ Կայսիկ զբռնաւորն Ապահունեաց, նմանապէս և զայլսն զոր և կարաց հրապուրել. – 350. Բայց չարեացն այսորիկ հաւատարմութիւն յայտ եղեալ հաստատեցաւ ի վերայ Կայսկին Ապլբառայ: - 342. ելեալ իշխանքն Հայոց յանձնիւր տեղեաց գնացին յանդիման լինել նմա, Դերանիկն, տէր Գագիկ և տէր Գրիգոր և միւս այլ տէր Գրիգոր Վասպուրական իշխան, Աշոտ կորապաղատ Հայոց իշխան, Մուշէղ իշխանն Մոկաց, Շապուհ եղբայր իշխանաց իշխանի և Ապլբառ Կայսիկ Ապահունեաց բռնաւորն և այլք ոմանք: - 340.

ԱՊԼԲԵՐՍ - Իսկ քաղաքապետն որում Ապլբերս կոչէին, ձեռնտուութեամբ պարսկային զօրու սպասէր նմա ի չարիս ի բազում աւուրց. – 352.

ԱՊՂԱՍՏԱՆ - որոց դէպ եղև ինձ հանդիպել եկելոց ոմանց ի յԱպղաստան աշխարհէ – 48.

ԱՊՂՋԷՀՐ - և ելեալք ի վերայ Փառանու՝ արարին մեծ խորտակումն դիմադարձացն, սպանին և զԱպղջէհրն և զբազումս ի զօրէն Ամովնացւոց և Մովաբացւոց – 160. Եւ եկեալ ի Փառան՝ զնոյն ասաց երկրորդել զբանս զայսոսիկ առ հօրեղբօրն իւրոյ որ կոչէր Ապղջէհր: - 158.

ԱՊՈՒԲԱՔՐ - և ինքն կացուցանէ ի գլխաւորութիւն Տաճկաց զԱպուբաքր, և սա կեցեալ ամս Բ մեռանի: - 164. Կարգեաց հրամանատարս և զօրագլուխս ինքեան յիսմայէլականաց անտի՝ զԱլի և զԱպուբաքր և զԱմր և զՈւթման: - 160.

ԱՊՈՒՀԱՐԱՋ - Փութանակի և վաղվաղակի իւրաքանչիւր զօրօք անդր հասանէին … և այլք ի նախարարացն Վասպուրական իշխանին, Սմբատ Ապահունի, Գրիգոր Քաջբերունի, Վահան Հաւնունի, սեպուհն Դաւիթ, Գազրիկն Ապուհաբազ, Թոդորոս Վարազն, Խոսրով Վահևունի, Խոսրով Ակէացի, Վարդան Գաբայողէն, Սմբատ Մարացեան, սեպուհ մի Սահակ, Պատրիկն Անձևացի, Գորգ Հարմացի, Դաւիթ Գունդսաղար. – 174.

ԱՊՈՒՀԵՇՄ - Եւ զօրագլուխք զօրացն էին այսոքիկ, Մուքադմ, Յուսփ ի Թփղիս քաղաքէ, Յուսփ որդի Ռահմայ և Ապուհեշմ՝ Ելոյ տէր և ընդ նոսա զօրք Համդոյի Պարսից ամիրայի: - 226. Եւ մինչ նոքա դեռ չև հասեալ էին մերձ առ գունդն Հայոց՝ փութացաւ զօրավարն Գուրգէն յղեաց դեսպանս առ Ապուհեշմ և որ ընդ նմա զօրագլուխքն՝ աղաչել ի խաղաղութիւն – 230.

ԱՊՈՒՄԱՅԵԱՅ - Փութանակի և վաղվաղակի իւրաքանչիւր զօրօք անդր հասանէին … և ի տոհմէն Արծրունեաց՝ Վահան և Վասակ և Մուշեղ և Ապուպէղճ և Գուրգէն և Վասակ և Ապուջափր և Մուշեղ և Ապումայեայ և Վասակ և Վահան և Համազասպ և Վասակ որդի Գրիգորի և Ապումկդէմ և Մեհուժան և Գրիգոր – 174.

ԱՊՈՒՄԿԴԷՄ - բայց միայն տէր Ապումկդէմ և որք ընդ նմա պահէին զպահպանութիւն գիշերոյն և դիտէին զդիտաւորութիւն զօրացն – 228. և առաջնորդ կացուցանէին իւրեանց զԱպուջափր Արծրունի, և ընդ նմա Սպահակ Ապումկդէմ քեռորդի Ապուջափրի, այր քաջ և պատերազմող: - 304. Եւ գունդն Հայոց խաղացին ընդդէմ նոցա, վիմաձև անքակ ի միմեանց ըստ տոհմս ազգաց, ի տանէն Արծրունեաց՝ Գուրգէն և Վասակ և Պելճ և Մուշեղ և Սահակ և Ապումկդէմ և Աշոտ – 230. և եհար սատակեաց Ապումկդէմ ի միում ասպատակի Ը այր, և զերիվարս նոցա, և զէնս և զզարդ մերկեաց ի նոցանէ, եհար

զայլազգիսն ի հարուածս մեծամեծս և ինքն դարձեալ ասպատակեաց զկնի նոցա: - 304. և զաջ թևն տուեալ լինէր ի ձեռն Ապումկդէմայ: - 230. Եւ մինչ երթայր և խորհէր՝ խոցեալ նորա երիվարն, և յանկարծակի այն ինչ ոտն երիվարին շաղեալ ընդ փոքր թուփ մի, որպէս ասեն, զուլումբեալ ի վերայ գլխոյն ջարդեալ զողն ու լարն՝ ի բաց ընկէց զհեծեալն զքաջ զօրավարն Ապումկդէմ: - 304. զի և այլազգիքն տեղի ետուն և փախեան յերեսաց Ապումկդէմայ. – 304. Փութանակի և վաղվաղակի իւրաքանչիւր զօրօք անդր հասանէին … և ի տոհմէն Արծրունեաց՝ Վահան և Վասակ և Մուշեղ և Ապուպէլճ և Գուրգէն և Վասակ և Ապուջափր և Մուշեղ և Ապումայեայ և Վասակ և Վահան և Համազասպ և Վասակ որդի Գրիգորի և Ապումկդէմ և Մեհուժան և Գրիգոր – 174.

ԱՊՈՒՄՈՒՍԷ - Բայց տուաւ յաղթութիւնն այն մեծ ի ձեռն զօրավարին Ապումուսէի, զի լցցի զոր ասաց Տէր ի բերանոյ Ամովսայ Մարգարէի, ,,խորտակեցից զնիզակս Դամասկոսի,, , որում այժմ Դմիշկն կոչեն, ուր ելին զհետ Բուխայի: - 286. և ահա Ապումուսէ, որ ճանաչէր երիցու որդի՝ հանդէպ նոցա ել պատերազմ և հանդիսացաւ ընդդէմ նոցա. – 284. Եւ երթայր աներկիւղ համարձակութեամբ, քաջալերեալ ի միտս և խորհուրդս իւր ըստ պնդութեան արութեան իւրոյ քաջ նահատակն Ապումուսէ: - 288. և լեռնային զօրքն Ապումուսէի զհետ մտեալ փախստէիցն՝ իջուցին ի լեռնէ անտի և դարձան առնել դիակապուտ – 282. Եւ մինչ նոքա կային մնային հրաման ինչ ընդունել յարքունուստ՝ /286/ դարձան հրեշտակքն և եկին փութանակի, և բերին թուղթ յարքայէ առ Ապումուսէ՝ գալ ի հնազանդութիւն նոցա և երթալ առ Բուխայ. – 288. և ոչ ի միում ճակատու դարձոյց Ապումուսէ զերեսս իւր յերեսաց Բուխայի. – 286. և տիրէր յայնժամ մեծի կողմանն Աղուանից Ապումուսէ ոմն, որում վերծանութեանն յայտնութիւն՝ երիցու որդի ճանաչէր: - 276. Իսկ Ապումուսէ վառեալ և զինեալ զինքն ամենայն զօրութեամբ իւրով՝ խաղաց էջ ի վերայ նոցա և եհար ի հարուածս մեծամեծս – 280. Իսկ նա փոքր ինչ ժամանակ ներեաց նոցա դիմօք սիրոյ խաղաղութեան, մինչև ի գլուխ ելին որ ինչ յաղագս Ապումուսէին էին հանդէսք. – 296. որոց անուանք ճանաչի սոցա … և Ներսեհ իշխան Գարիթայանից և ապա Ընայի Ապումուսէ, որ զշատ պատերազմունսն եհար: - 298.

ԱՊՈՒՄՐՈՒԱՆ - ,,միայն, ասէ, զԳագիկ Ապումրուան առ իս ածցես հնարաւորեալ վասն նորա,,. – 350. ապա նոքա մերկացեալ զկեալն կասկածանօք առ Ապումրուան՝ գան առ նա առանց ակնածութեան. – 364. Բայց Ապումրուան պատճառելով Աշոտի՝ ասէ. – 362. Բայց Ապումրուան երկնէր գայր զիշխանասիրականն ծնանել գահակալութիւն ի վերայ աշխարհիս: - 364. Բայց Ապումրուան զԳագիկ որդի Դերանկին պահէր ընդարձակի, հանեալ ի կապանաց բանտին: - 368. Եւ զԳագիկ որ և Ապումրուան՝ զնա ոստիկան կարգեաց ի վերայ աշխարհին, տեղապահութեամբ տիրել, զի կարի մատաղօրեայք էին որդիք Դերանկին. Աշոտ էր Թ ամաց, յորժամ մեռաւ Դերանիկն, Գագիկ էր Է ամաց, Գուրգէն Ե ամաց: - 354. և ընդ նմա Շապուհ յԱմատունի տոհմէ, այն որ զործակիցն եղև Գագկայ առ սպանումն Ապումրուանայ, զոր վերագոյնն յիշեցաք – 372. և որք ի տանէն Ամատունեաց՝ Շապուհ և Վահան և Սարայ եղբարք միմեանց, Ապուսակր Վահունի և այլք ընդ նոսա, միաբանական խորհրդակցութեամբ խորհրդածեալ ընդ Գագկայ առ ի սպանումն Ապումրուանայ – 368. Զկնի այսորիկ եկն Աշոտ թագաւորն Հայոց մխիթարել զդուստր իւր և զթոռունս, և ևս առատանայր զհաստատութիւն իշխանութեանն Աշոտի և զոստիկանութիւնն Ապումրուանայ: - 356. Զնոյն տեսեալ ազատացն Վասպուրականի, անտանելի մնալով առ դիպուածն զոր ինչ գործեաց Ապումրուան՝ ելին գնացին առ Ատոմ որդի մեծին Գուրգինայ յամուրն Կանգուար, գտանել զելս իրացն – 364. զսա աղերսեալ տիկինն Վասպուրական Սեդայ, կին Աշոտի և դուստր Ապումրուանայ՝ զերծին զնա ի սրոյն Աւշնի: - 374. Իբրև հեռացաւ թագաւորն զերկուց աւուրց ճանապարհ՝ Ապումրուան ելեալ ի ձիընթացիկ ասպարէզն զգնայր. – 368. Իսկ Ապումրուանայ ի պատճառ ոստիկանութեան զմանկականն նոցա պատճառելով խաժութիւն հասակի՝ առ սակաւ սակաւ սկսաւ զամուրսն յինքն գրաւել, զհետ իշխանական ցանկութեանն զերասանակ մտացն ձգեալ - 360. իսկ իբրև եկն Ապումրուան զհետ փախստէիցն ի Վանտոսպ զկնի

թագաւորին՝ և խորհուրդն Գագկայ հաստատնագոյնք զկատարումն առին: - 368. Յայնժամ Վահան հայր Գագկայ Ապումբռւանայ և ինքն Գագիկ առնէին համոզել ի մէջ նոցա: - 334. Յորոց միջի կացեալ Ապումբռւան համոզեալ նոցա ցածոյց զճակատ առ ճակատ վառեալ պատերազմն – 364. Նոյն ժամայն մատուցեալ ոմանց առ Դերանիկն՝ ստուգագոյնս քսէին վասն Գագկայ Ապումբռւանայ. խորհել ընդ կորապաղատին, զոր ինչ գործեաց Հասան զանօգուտսն. – 348. Նոյնժամայն ի բարկութիւն ցասմամբ մեծաւ շարժեալ թագաւորն Սմբատ՝ գրէ առ Գուրգէն Անձաւացեաց տէր և առ Գագիկ Ապումբռւան, ասէ. – 362. Նորա խորհեալ հաստատնագոյնս վասն Ապումբռւանայ՝ քաջասրտագոյնս լինել ի սպանումն. – 368. որ և Ապումբռւան կոչէր - 220. ՎԱՍՆ ՄԱՀՈՒԱՆՆ ԱՊՈՒՄՐՈՒԱՆԱՅ – 368.

ԱՊՈՒՄՔԴԷՄ - Յետ բառնալոյ իշխանութեանն ի Վասպուրական երկրէն մնացին տոհմք Արծրունեաց ըստ ազգս ազգս … և Ապուջափր և Ապումքդէմ և Վասակ և միւս Վասակ և դարձեալ այլ Վասակ և Մուշեղ և Աշոտ և Սահակ, և այլք ի տանէն Արծրունեաց. և ազատք նոցա: - 298.

ԱՊՈՒՇ - զոր սարսափեմ և հիացմամբ մեծաւ յապուշ կրթին միտք իմ ընդ ժուժկալութիւն այնքանեաց բազմահնար մեքենաւոր չարչարանաց. – 106. հրախառն տոչորմամբ եռացեալ շուրջ զսրտիւն արիւնն՝ մաղձախառն բերմամբ յապուշ զմիտսն կրթեալ՝ կայր ի մէջ տարակուսի – 180. Յապուշ կրթին միտք իմ զմտաւ ածել զաղետից, խորհրդածել գրել յիշատակարանս. լքեալ լինին ընթացք ձեռացս առ կորովութիւն գրաւորականիս. – 350. Նաև սրբոց հրեշտակացն ի տեսաւորութիւն ձևացեալ, որոց սարսափմամբ առ նորա զնայեցած յապուշ միտքն կրթեալ, շուրջ փակեալ զնայեցածն՝ ի հարց մատուցեալ ասէ – 386. նոյնժամայն առ յոյժ ամբարտաւանութեանն և սաստիկ բարկութեանն և անհուն սրտմտութեանն և առանց բուժելի կատաղութեանն, յապուշ միտքն կրթեալ իբրև զարբեալ զանզգայ արբեցութեամբ - 264.

ԱՊՈՒՊԵԼՃ,ԱՊՈՒՊԷԼՃ - Գուրգէն որդի Ապուպելճի Վասպուրական իշխանի, ի շփոթի ժամանակին Բուխայի և ի հայրապետութեանն Յովհաննու Հայոց կաթողիկոսի, իմաստութեամբ գործեալ՝ ոչ եկաց հակառակ չարին. – 302. Եւ զգունդն երկրորդ ի ձեռս Գուրգինայ Ապուպելճի, և նիզակակից էր նորա Վահան Արծրունի: - 178. Յայնժամ ետ զզօրսն ի ձեռն Մուշեղի Ապուպելճի եղբօր Գուրգինայ, և ինք ել գնաց զհետ եկելոց կոչնականացն. – 228. Փութանակի և վաղվաղակի իւրաքանչիւր զօրօք անդր հասանէին … և ի տոհմէն Արծրունեաց՝ Վահան և Վասակ և Մուշեղ և Ապուպէլճ և Գուրգէն և Վասակ և Ապուջափր և Մուշեղ և Ապումայեայ և Վասակ և Վահան և Համազասպ և Վասակ որդի Գրիգորի և Ապումկդէմ և Մեհուժան և Գրիգոր – 174.

ԱՊՈՒՊԷԼՃ - Տե՛ս ԱՊՈՒՊԵԼՃ

ԱՊՈՒՋԱՓՐ - Բայց տէր Ապուջափր և որ ընդ նմա՝ քաջապէս մարտեան ընդ այլազգիսն և առին: - 306. և առաջնորդ կացուցանէին իւրեանց զԱպուջափր Արծրունի, և ընդ նմա Սահակ Ապումկդէմ քեռորդի Ապուջափրի, այր քաջ և պատերազմող: - 304. և առաջնորդ կացուցանէին իւրեանց զԱպուջափր Արծրունի, և ընդ նմա Սահակ Ապումկդէմ քեռորդի Ապուջափրի, այր քաջ և պատերազմող: - 304. Իսկ Ապուջափր անցեալ ի կողմն Աղբագոյ՝ և ժողովեցան առ նա գունդք գունդ յամենայն կողմանց: - 306. կէսքն զԳուրգէն յառաջ ածեն ի պատիւ իշխանութեանն և այլք զԱպուջափր, ոմանք զՎասակ. – 298. Յետ բառնալոյ իշխանութեանն ի Վասպուրական երկրէն մնացին տոհմք Արծրունեաց ըստ ազգս ազգս … և Ապուջափր և Ապումքդէմ և Վասակ և միւս Վասակ և դարձեալ այլ Վասակ և Մուշեղ և Աշոտ և Սահակ , և այլք ի տանէն Արծրունեաց. և ազատք նոցա: - 298. Փութանակի և վաղվաղակի իւրաքանչիւր զօրօք անդր հասանէին … և ի տոհմէն Արծրունեաց՝ Վահան և Վասակ և Մուշեղ և Ապուպէլճ և Գուրգէն և Վասակ և Ապուջափր և Մուշեղ և Ապումայեայ և Վասակ և Վահան և Համազասպ և Վասակ որդի Գրիգորի և Ապումկդէմ և Մեհուժան և Գրիգոր – 174.

ԱՊՈՒՋԱՓՐ ԱՐԾՐՈՒՆԻ - և առաջնորդ կացուցանէին իւրեանց զԱպուջափր Արծրունի, և ընդ նմա Սահակ Ապումկդէմ քեռորդի Ապուջափրի, այր քաջ և պատերազմող: - 304.

ԱՊՈՒՋԱՓՐԻ ԲԵՐԴ - ելանէ մարզպանն ի վերայ նոցա և յինքն հանէ զՏամբեր և զԸռնայ գաւառ և որ ասի Ապուջափրի բերդ, ի Վիրի քաղաքին Կորճէից զիւր կացուցանէ ոստիկանս ի պահպանութիւն ամրոցին: - 400.

ԱՊՈՒՍԱԿՐ - Բայց միայն զնահապետն Ամատունեաց զԱպուսակր ձերբակալ արարեալ, առին գնացին ի քաղաքն – 354. և որք ի տանէն Ամատունեաց՝ Շապուհ և Վահան և Սարայ եղբարք միմեանց, Ապուսակր Վահունի և այլք ընդ նոսա, միաբանական խորհրդակցութեամբ խորհրդածեալ ընդ Գագկայ առ ի սպանումն Ապումրուանայ – 368.

ԱՊՈՒՍԱԿՐ ՎԱՀՈՒՆԻ - և որք ի տանէն Ամատունեաց՝ Շապուհ և Վահան և Սարայ եղբարք միմեանց, Ապուսակր Վահունի և այլք ընդ նոսա, միաբանական խորհրդակցութեամբ խորհրդածեալ ընդ Գագկայ առ ի սպանումն Ապումրուանայ – 368.

ԱՊՈՒՍԱՀԱԿ - Եւ այսպէս կատարեցաւ երանելին Ապուսահակ: - 206. Ըմբռնեալ լինէր յայնժամ մի ոմն ի Հայոց ազատանոյն տոհմից Վահևունեաց, Ապուսահակ ոմն, եղբայր Սահակայ եպիսկոպոսի ոստանին Նախճաւանու և Մարդպետականի. – 204.

ԱՊՈՒՍԵԼՄ - Եւ գունդն Հայոց խաղացին ընդդէմ նոցա … ի տանէն Արծրունեաց՝ Գուրգէն … և Գնունիք՝ Վահան և Շապուհ և Ապուսէթ և Պատրիկ և Ապուսելմ և Վարդան. – 230. Եւ գունդն Հայոց խաղացին ընդդէմ նոցա … ի տանէն Արծրունեաց՝ Գուրգէն … և Գաղրիկքն՝ Ապուսելմ և Վասակ և Վահան. … և Ամատունիքն՝ Մուշեղ և Ասիթ և Սահակ. – 230.

ԱՊՈՒՍԵՃ - Որդին Ապուսեճի Աւշին, որ զպարսկային հարստութիւնն հզօրապէս յաղթութեամբ ի գլուխ եհան՝ ձեռնամուխ ախորժեաց լինել ի վերայ Հայոց – 360.

ԱՊՈՒՍԷԹ - Եւ գունդն Հայոց խաղացին ընդդէմ նոցա … ի տանէն Արծրունեաց՝ Գուրգէն … և Գնունիք՝ Վահան և Շապուհ և Ապուսէթ և Պատրիկ և Ապուսելմ և Վարդան. – 230. և նմա յանձն առնէ զաշխարհս, փոխանակ հօր իւրոյ Ապուսէթի. – 184. Զնա յղէ Ապուսէթ ելանել յերկիրն Վասպուրական և անդէն մնալ զօրօք բազմօք, մինչև զբովանդակ զհարկս և զհասս արքունի յամենայն կողմանցն Հայոց առ նա բերցեն յիւրաքանչիւր սահմանաց: - 176. Ընդ նոյն ժամանակս յղէ թագաւորն զոմն ի յաւագ նախարարացն վերակացու Հայոց և հաւատարիմ ի վերայ հարկաց արքունի Ապուսէթ անուամբ, ըստ տաճկական լեզուին, յարելութեամբ եբրայական դպրութեանն: - 170. Ի դառնալն Ապուսէթի յԱսորիս և Մուսէի հաւատալ զվերակացութիւն հարկաց արքունի, և ընդդէմ եկեալ յարքունուստ հազարապետ ոմն հարկաց, Ծովափի կոչեցեալ ամիրայ Ալայ անուն: - 176. Նոյնժամայն զօր գումարեալ, գունդ կազմեալ յընտիր ընտիր հեծելոց արանց զօրաւորաց, զօրօք և զօրագլխօք, և տայ ի ձեռս Յովսեփու ումեմն որդւոյ Ապուսէթի – 184.

ԱՊՈՒՍԷՃ - Բայց Աւշին որդի Ապուսեճի, քանզի էր այր խռովասէր, ատեցող զխաղաղութիւն, անյագ առ արբումն արեան մարդկան, և զայն բարգաւաճանս անձին քաջ լաւ համարէր. – 370.

ԱՊՈՒՏԱԼՊ - Եւ էր պատերազմ սաստիկ ի մէջ Ալեայ Որդւոյ Ապուտալպի և Մաւեայ ամս Ե և ամիսս Գ: - 166. Եւ յաւուր միում լեալ նորա ի տխրութեան ի սպառնալեաց հօրեղբօրն իւրոյ՝ եկն եմուտ առ նա Ալի որդի Ապուտալպի և ասէ, զի՞նչ են պատճառքդ զի նստիս տխրեալ. – 160. զոր առեալ սնուցանէր հօրեղբայր իւր Ապուտալպ մինչև ցարբունս հասակի. – 158.

ԱՊՍՏԱՄԲ - ,,իշխանք ձեր ապստամբք, ասէ, գողակիցք են գողոց, սիրեն զկաշառս, վրիժապարտք են: - 182. ,,յարուցեալ երթիցես դու ինքնին և քեզէն լուիցես ի նմանէ զոր ինչ ախորժիցէ, և բարձցի ի քէն ապստամբութիւնն, զորմէ կարծեն ապստամբ լինել ի թագաւորէն,,: - 214. այլ և ոչ զմեզ ապստամբս կարծիցես գոլ յինքնակալ թագաւորէն և ի քումմէ ճոխութենէդ, եթէ հաւաստեաւ քննիցես: - 212. Բայց Գուրգէն կասկած ունելով յԱշոտէ, թէ գուցէ իբրև զապստամբէ ումեմնէ զեկուցանիցէ զնմանէ առաջնորդին Տաճկաց՝ ել գնաց կեալ շրջաբերական յեղափոխմամբ, արիական քաջասրտութեամբ,

սիրեցեալ ընդ բնաւ աշխարհաց: - 322. Բայց մեք քանզի ոչ երբէք ստունգանեցաք հրամանի թագաւորին և ոչ խափանիչ գտաք հարկաց արքունի, իբրև զապստամբս և զանհնազանդս և զստահակս ի ծառայութենէ տէրանց – 178. Բայց ոչ ետ տեղի Գուրգէն այսմ՝ յերկուց պատճառաց, մի՝ զի մի՛ ապստամբ երևեցայց Տաճկաց բռնաւորին – 316. Դու աւաղիկ ելեր մտար յերկիր Հայոց, ելեր ի կողմն թշնամեաց իմոց և ապստամբացդ զքեզ միաբանեցեր, զի յապաղեցեր հրամանաց իմոց: - 236. և զապստամբս և զընդդիմակայսն ըստ արժանի ապիրատութեանն իւրեանց խրատել գանիւ և բանտիւ և պէսպէս տանջանօք – 212. և ի մտանելն առաջի զօրավարին՝ ոչինչ փոյթ արարեալ զվնասուցն և զհարուածոց զօրացն, իբրև զապստամբէ ինչ ամբաստանել. – 236. և մեք ոչ եմք ապստամբք ի քումմէ ինքնակալ թագաւորութենէդ. – 242. զի ասաց զօրավարն Աղուանից, եթէ ,,մի՛ կարծիցէ ոք զիս ապստամբ գոլ ի թագաւորէն և վասն այնր հարկանել զզօրսդ Ասորեստանի,,. – 286. Իսկ նա ի հրապոյրս ապստամբ վիշապին ելեալ, որ բազմախարդախ չարութեամբն եհեղ առատութեամբ զդառնութիւն խրատոյն յունկն կնոջն անզգամի: - 20. հնազանդեցուցին և զամենայն բնակիչս սահմանացն մերձակայից, և զապստամբսն միահաղոյն բարձին սրով: - 160.

ԱՊՏԱՄԲԵԱԼ - ,,ո՞վ ոք էք դուք և յորմէ՞ աշխարհէ, և զի՞նչ անուն է ձեր. թերևս արդեօք դո՞ւք էք ապստամբեալքն յինէն,,: - 242. Զի որդիքն Աբդռհամանի, որ Կայսիկքն անուանին՝ ապստամբեալ էին ի պետութենէ թագաւորին տալ հարկս և զինուորել որպէս օրէն էր: - 380. Ընդ այն ժամանակս ապստամբեալ ի պետութենէն Տաճկաց քաղաքացիքն, որում Կզուինն ասեն: - 328.

ԱՊՏԱՄԲԵԼ/ԻԼ/ - Եւ անդէն իսկ և իսկ փութացաւ, եհաս գուժկան առ թագաւորն, եթէ սպանաւ զօրավարն քո և ապստամբեաց ի պետութենէ քումմէ աշխարհն Հայոց: - 190. Եւ Գուրգէն երկրորդ հրեշտակս յղէ առ նա զայս օրինակ, եթէ ,,ընդ իս հաստատեա զանզրաւ կապակցութիւն ուխտի խաղաղութեան. և ես ապստամբեցայց յԱշոտէ, և ի միասին բաժանեալ զերկիրս կեցցուք յապահովս,,: - 316. Եւ քան ընդ ապստամբելն ի նմանէ՝ ընդ յոյժ անմտութեամբ գալն առ նա զարմացաւ: - 272. նոքա երթեալ մտին անդ, փակեցին զդրունսն և ամրացան ի նմա և սկսան ապստամբել ի Հռովմայեցւոց տէրութենէն: - 156. Եւ եղև յամի չորեքտասաներորդի Խոսրովայ արքայի, ի քսաներորդ ամի Մուրկայ թագաւորութեանն՝ ապստամբեցան ի կայսերէ զօրքն Յունաց, որք ի Թրակացւոց կողմանէն – 140. Եւ ոմն ընթացեալ ետ գոյժ վաղվաղակի /150/ Խոսրովու, թէ ,,ապստամբեցաւ ամենայն Արեաց երկիր ի քէն, և զորդի քո Կաւատ նստուցին թագաւոր, և ահաւադիկ դիմեալ գա ի վերայ քո,,: - 152.

ԱՊՏԱՄԲԻԼ – Տե՛ս ԱՊՏԱՄԲԵԼ

ԱՊՏԱՄԲՈՒԹԻՒՆ - ,, վնասս և զբեկումն հարկաց արքունի և զկոտորումն զօրաց քոց Աշոտ գործեաց, և նա է պատճառ ամենայն ապստամբութեան Հայոց ի քումմէ թագաւորութենէդ, ասեն, ո՛վ քաջդ և հաւասար աստուածայնոց կարողութեան ինքնակալ, և ընդհանուր իշխեցօղ կենաց և մահու,,: - 180. ,,ես եկի խաղաղութեամբ յարքունուստ հրամանէ, և ոչ նման քեզ զապստամբութիւն ի գործ արկեալ. – 330. ,,յարուցեալ երթիցես դու ինքնին և քեզէն լուիցես ի նմանէ զոր ինչ ախորժիցէ, և բարձցի ի քէն ապստամբութիւնն, զորմէ կարծեն ապստամբ լինել ի թագաւորէն,,: - 214. այլ կուտեաց եդ ի վերայ Բուխայի զապստամբութեան վնասն և զհարուածս զօրացն – 286. և ամենայն ուրեք դա է պատճառ ապստամբութեան Հայոց յարքայից արքայէ. – 104. և ասէր, թէ ,,զայս ամենայն զոր գրէ կաթողիկոսն Հայոց և առ ապստամբութիւն խորհել առ ի քէն, և զնախարարսն Հայոց զՅունաց թագաւորին խորհել հնազանդութիւն. արդ տեսանել պարտ է վասն այդր,,: - 130. և զամենայն վնասս և զգործս ապստամբութեանն ի վերայ Աշոտի կուտէին: - 194. Եւ թէ որպիսի օրինակաւ գալուստ նորա և պատերազմ վասն սորին իրաց, և արիական ձեռակերտացն շինուածք, որ և յոյժ արժանաւորք զարմանալեաց, և դարձեալ ապստամբութիւն Զրադաշտին և մահն Շամիրամայ և բան յուռթիցն որ զնմանէ – 44. և իմ թողեալ ձեզ զչարիս ապստամբութեանն ձեր, վայելեսջիք

ընդ իս և տիրեցէք աշխարհին ձեր,,: - 246. Եւ իշխանն Աշոտ գրէ առ իշխանն Սմբատ, անօգուտ զապստամբութիւնն համարելով. – 382. և հայր քո Վասակ խորհիցի ինչ առ արքայի, և աղմուկ և շփոթ ինչ յուզիցէ հայր քո, որպէս թէ զապստամբութեան ինչ խորհել կարծիս զմէնջ առնուցուն: - 114. և հարցեալ ցնա յաղագս մահուանն Յովսէփու ի վրէժխնդրութեանն աղագս երկրորդ նահատակութեան նորա, որ եկաց ընդդէմ զօրավարին, յուշ առնելով նմա զապստամբութենէ և ընդխառնելոյ նորա ի վնասս արքունի – 294. Եւ վասն այսր ամենայնի հարկ է քեզ երթալ, զի և կարծիք ապստամբութեանդ բարձցի – 216. Զայն ի փոքր ինչ աւուրց զապստամբութիւն ի մէջ առեալ Խոսրովայ ի Շապհոյ՝ ի Յոյնս ապաւինի – 112. զի տացէ վրէժս անցիցն անցելոց ի նմանէ և ապստամբութեամբ ի պետութենէն Տաճկաց: - 202. Իսկ Արշակ յերկուս թագաւորսն ձեռնտու եղեալ, երբեմն ի Պարսս երբեմն ի Յոյնս, և զապստամբութիւն ի մէջ առեալ Արշակ յերկոցունց կողմանս: - 100. Ո՞վ յիմարութեան առաջնոցն. ո՞րպիսի կատաղութիւն և գիւտք դիւացն նախկին ժամանակաւ սպրդեալ մուծաւ յաշխարհ, ապստամբութիւն առ Աստուած և տրտմութիւն սրբոց հրեշտակաց, և պատճառ վտանգաւոր մահու ծառայիցն Աստուծոյ յաւուրս ապագայիցն. – 38. ՎԱՍՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԵԱՆ ՏԱՃԿԱՑՆ ՈՐ ԿԱՅՍԻԿՔՆ ԿՈՉԻՆ ԵՒ ԻՇԽԱՆԻՆ ՍԻՒՆԵԱՑ Ի ԹԱԳԱՒՈՐԵՆ/ՃԻՇՏ՝ ԹԱԳԱՒՈՐԷՆ/ ՍՄԲԱՏԱՅ, ԵՒ ԴԱՐՁԵԱԼ ԵՐԿՈՑՈՒՆՑ ՀՆԱԶԱՆԴՈՒԹԻՒՆ: - 380.

ԱՊՐԵԱԼ - և ամենայն ուրեք ուր և հանդիպէր զօրուն Պարսից՝ առ հասարակ սատակէր զամենեսեան, մինչ ոչ մնալոյ ապրեալ: - 148. և բազում այն են որ ի նմին իսկ սատակին. և կէսքն դիւրըմբռնելի որսորդաց լինին. և ապրեալքն սաստիկս հասուցանեն վտանգս ուր և դիպիցին, եթէ մարդկան և եթէ այլոց ինչ կենդանեաց: - 188.

ԱՊՐԵԼ/ԻԼ/ - Յայնժամ խորհուրդ միաբանութեան ի մէջ առեալ ամենեցուն նոցա ասեն. ,,թէպէտ և ի թշնամեացն ապրեցաք՝ սակայն ի ձեռաց դորա մեզ չիք ապրել. արդ եկայք իմասցուք ինչ,,: - 150. Յայնժամ խորհուրդ միաբանութեան ի մէջ առեալ ամենեցուն նոցա ասեն. ,,թէպէտ և ի թշնամեացն ապրեցաք՝ սակայն ի ձեռաց դորա մեզ չիք ապրել. արդ եկայք իմասցուք ինչ,,: - 150. այլ ի ձեռն արդարոյն և նուազունքն ապրեցան: - 32.

մանաւանդ զՈստանն Ռշտունեաց, որ էր տեղի սպանման հօր իւրոյ, գինս արեան զնա համարելով: - 362. Բայց զգոյշ լերուք, մի՛ գուցէ ոչ հաճեսցի Աստուած, և խնդրեսցէ ի ձէնջ զվրէժ արեան կոտորածի աշխարհի: - 144. դիմեցին առ կայսրն Վաղէտիանոս, թէ հնար ինչ իցէ առնուլ զվրէժ արեան Խոսրովու և ի /92/ վերջ նահանջել զբռնակալութիւն Ստահրացոյն. – 94. և կերիցեն քարինք և փայտք և այլ կահք երկաթեղէնք, որպէս և զայն որ ի նմայն պատարագի մարմին և արիւն որդւոյն Աստուծոյ, մանաւանդ թէ ինքն իսկ ճշմարտապէս որդին Աստուծոյ. – 396. Եւ ահա լոյս սաստիկ իջեալ յերկնից և ցոլացեալ ի վերայ սուրբ մարմնոյն, և շուրջ փակեալ զտեղեաւն, թէ ուրեք յարենէ նորա ցայտեալ կայր: - 224. Եւ աղբերքն որ ի տեղւոջն և այլ ջրոցն քամուածքն ի ծործորացն ի վայր՝ յարիւն դարձան: - 306. և այնչափ սաստիկ լինէր կոտորածն՝ մինչ զի սաստկութիւն վտակաց արեանն խաղացեալ ոռոգանէր զերկիրն ամենայն: - 140. և առաջի արկեալ զհառաչանսն, զարտասուսն, զխոստովանութիւնն, զողորմագին պաղատանսն, մինչ ի մահ զտրտմելն, զկենաց դեղն հայցել, զմարմին և զարիւն որդւոյն Աստուծոյ ի թողութիւն մեղաց – 386. Եւ առեալ զմանրեալ և զխորտակեալ ի մասունս զԽաչն՝ բերին առ զօրավարն, լուացեալ զարիւն պղծոյն, որ ի վերայ խաչին շաղախեալ կայր ի գլորմանէ այսահարին: - 378. Եւ եթէ զքէն արեանն Մուրկայ խնդրէ՝ զքէն արեանն Մուրկայ խնդրեաց Աստուած ի Փոկասայ ի ձեռն հօր իմոյ Հայրակղի. և եթէ երկիր խնդրիցէ՝ եհան Աստուած ի մէնջ և ետ ի ձեռս ձեր: - 144. Եւ եթէ զքէն արեանն Մուրկայ խնդրէ՝ զքէն արեանն Մուրկայ խնդրեաց Աստուած ի Փոկասայ ի ձեռն հօր իմոյ Հայրակղի. և եթէ երկիր խնդրիցէ՝ եհան Աստուած ի մէնջ և ետ ի ձեռս ձեր: -144. և իբրև զքաջ հովիւն դրուատեալ ի փրկչէն՝ զանձն իւր եդ ի վերայ խաշանց ընդդէմ ապականարար գայլոցն, յարձակեալ յանխնայ դիմեցուածովք, յարիւն և յապաժոյժ, ի սատակումն և ի ծախումն սրոյ մատնեաց բոլորովիմբ զյարձակեալս նեղիչս աշխարհիս. – 312. և հեղմունք արեանց եղեն անհնարինք: - 178. և յարձակեալ բազում անգամ ի վերայ յունական զօրուն որք ընդդէմ զօրաց քոց պատերազմէին՝ և անդ ոչ սակաւ հեղմունս արեանց արարեալ փոխանակ զօրաց քոց ի զօրացն Յունաց. – 304. և փոխանակ ծաղկեալ պատմուճանի գունագոյն երանգ երանգ անկուածոցն՝ զսուրբ և զվարդագոյն կարմրատեսիլ արիւնն իւրեանց ի վերայ սուրբ մարմնոյն, և փոխանակ ոսկեհուռ թագակապ զարդու պսակացն՝ զերկրպագութիւնն Քրիստոսի. – 266. և քամուածք ջրոյն որ ի ծործորացն ի վայր զեղուին՝ յարիւն դառնային ի բազմութենէ սպանելոցն. – 178. զի մի /68/ վատութիւն քան զքաջութիւն ճոխասցի, որ կանանցաբարոյիցն քաջ յարմարի, թէպէտ և յարիւն և յապաժոյժ զզօրսն կենացն առնուցուն,,: - 70. Զի ոչ միայն առ շինութիւնն՝ այլ և յարիւն և յապաժոյժ առաքինաբար զանձինս եդեալ ի վերայ խաշանցն մեռանել իբրև զքաջ հովիւ – 392. ընդդէմ արաբացի ասպատակողացն յարիւն և յապաժոյժ ի վերայ հայրենի աշխարհի մարտուցեալ և զհոգի և զմարմին փոխանակ սրբոց եկեղեցեաց Քրիստոսի և ի նոյն հաւատացելոց ի Հայր և յՈրդի և ի Հոգին սուրբ, առ զնոսա ամբողջ և անբիծ պահելոյ – 300. Իբրև լուաւ Խոսրով արքայ զլուր համբաւոյն այնորիկ՝ շարժեցաւ ի բարկութիւն մեծ, լինել վրէժխնդիր արեանն Մուրկայ: - 140. հրախառն տոչորմամբ եռացեալ շուրջ զսրտիւն արիւնն՝ մաղձախառն բերմամբ յապուշ զմիտսն կրթեալ՝ կայր ի մէջ տարակուսի – 180. ճաշակեալ ճաշակս զհացն կենդանի, և զաղբիւր արեանն կենդանի և կենդանարար որդւոյն Աստուծոյ՝ աւանդեաց զհոգին ի ձեռս սրբոց հրեշտակաց – 388. Մինչև յե՞րբ ոչ կամիցի յագենալ արեամբ. – 144. յնքան խնամոցն արժանի՝ զի և զվրէժ արեան նոցա առնուլ ի տանէն Սաւուղայ: - 32. յորոց վերայ սուր եդեալ կոտորէին, և լնուին արեամբ զերկիրն: - 202. յուսացեալ ի մարդասիրութիւնն Քրիստոսի, զմաքսաւորին և զաւազակին զյետնորդսն բարբառեալ, և զփրկական մարմին և արիւն որդւոյն Աստուծոյ հայցեալ հաւատով ի թողութիւն մեղաց, յուսացեալ ի քաղցրութիւնն Աստուծոյ: - 336. որ ի վերայ եկեղեցեաց Քրիստոսի և սուրբ ուղղափառ հաւատոյ արեամբ չափ ճգնեալ նահատակեցան, և զխոստովանողական անուն ձայն ի վերայ եղեալ կարդային: - 132. Որոյ յօժարութիւն կամաց ախորժակաց իւրոց էր մարմին և արիւն անմեղ մարդկան, առ

ի յագումն անհնարին գազանաբարոյ կատաղութեանն: - 200. որք հեղին զարիւնս իւրեանց վասն ուղիղ և անբիծ դաւանութեանն ի Քրիստոս – 314. սրտմտեալ անժուժկալ ի բարկութեանն ջերմագոյն արեանն մրրկալից շարժմանն, և սկսաւ թափել զմահածին թոյնս իւր ի վերայ կապելոցն, իբրև զթոյնս իժի – 242.

ԱՐԻՒՆԱԼԻՑ - հրեշտակի Աստուծոյ հարեալ ի հարուածս անբժշկականս ըստ օրինի Հերովդիայ ախտակրութեան, տորոմեալ խղխայթմամբ, չարալլուկ ուռուցմամբ զտրորումն առնոյր արիւնալից արիւնապարտ մարմինն գազանեղինին. – 376.

ԱՐԻՒՆԱՀԵՂ - ՎԱՍՆ ԱՐԻՒՆԱՀԵՂԻՆ ԲԱՐՕՒՄԱՅԻ - 130.

ԱՐԻՒՆԱՀԵՂՈՒԹԻԻՆ - անկեղծաւոր և աննենգ տիրասիրութեամբ ցուցանել հնազանդութիւն հպատակութեամբ, մինչ յարիւն և յապաժոյժ նահատակութեամբ առնուլ վրէժս ի Պարսկացն հինից՝ զաւեր եկեղեցեացն Հայաստանի և զնեղութեանցն և զգերփանացն և զասստիկ արիւնահեղութեանցն զքրիստոնէից և զուխտի մանկանց եկեղեցւոյ սրբոյ: - 134.

ԱՐԻՒՆԱՆՄԱՆ - վառեալ լինէր իբրև զբոց հնոցի, իբրև զալիս ծովու դիզեալ կուտմամբ փրփրեալ ծիրանագոյն արիւնանման, ուժգին գոչելով անդնդաքակ յուզմամբ, իբրև զհեղեղատ յորդահոս ի ճայթմանէ կարկտահոս ամպոց – 180.

ԱՐԻՒՆԱՊԱՐՏ - հրեշտակի Աստուծոյ հարեալ ի հարուածս անբժշկականս ըստ օրինի Հերովդիայ ախտակրութեան, տորոմեալ խղխայթմամբ, չարալլուկ ուռուցմամբ զտրորումն առնոյր արիւնալից արիւնապարտ մարմինն գազանեղինին. – 376.

ԱՐԻՒՆԱՐԲՈՒ - Եւ Աւշնի հաւատացեալ զաշխարս ծառայի ումեմն Սափի անուն ի գերելոցն Յունաց ներքինի, թողեալ զհաւատսն որ ի Քրիստոս, մսլիմանակ դեն ստացեալ, արիւնարբու ուսմամբ բնաւորեալ. – 372. և դահճացն հանեալ զսուսերն՝ դիմեցին ի վերայ նոցա իբրև զգազանս արիւնարբուս, և ծեծէին սրովն, իբրև ոք զի հատանիցէ փայտ ի մայրս անտառախիտս հարեալ կացնաւ, և յանխնայ անողորմ յօշէին անդամ անդամ: - 266. Եւ են գազանաբարոյք, արիւնարբուք, առ ոչինչ համարելով զսպանումն եղբարց հարազատաց, նա և զանձանց նս. – 192. և զգոյն երեսաց իւրոց բոցագոյն դարձուցեալ, խրոխտացեալ և մրմռեալ իբրև զգազան արիւնարբու՝ հրաման ետ տանել արտաքս յերեսաց ատենին – 246. Եւ նոյնժամայն սուսերամերկք խուռն նիզակօքն ի վերայ յարձակեալ իբրև զգազանս արիւնարբուս մարդախանձս՝ սրախողխող արարեալ սպանին զնա – 352. և նոքա ըստ ձախողակի սովորութեանն իւրեանց օրինադրութեանն, արիւնարբու առանց բարւոյ բարեգործութեանցն մանաւանդ թէ լցեալք սատանայական չարութեամբք՝ ձայն արկեալ յամենայն քաղաքսն, խռովեալ ըստ գազանեղէն իւրեանց մոլեգնութեանցն – 398. յոր դիմեալ երթայր՝ /228/ անկանել ի ժանիս արիւնարբու գազանացն: - 230. Չորրորդ՝ զի զեղբայր և ոչ զօտար ոք, զոր ոչ երկիւղն Աստուծոյ և ոչ գութ բնութեան մեղկացոյց լքմամբ զձեռս արիւնարբու գազանին: - 24.

ԱՐԻՒՆԱՐԲՈՒԹԻԻՆ - Եւ եթէ քաղաքս խնդրիցէ՝ ահաւադիկ է քաղաքք մեծամեծք և պարսպաւորք. այլ զանձս խնդրիցէ՝ ասացի թէ տաց որչափ և ձեռն հասանիցէ. և ոչ կամեցաւ լսել, այլ տակաւին ծարաւի է արիւնարբութեան: - 144.

ԱՐԻՒՆՀԵՂՈՒԹԻԻՆ - Ընդ ժամանակս Պերոզի արքայից արքայի, ոմն յաղանդոյն Նեստորի Բարծումայ անուն, որ ունէր զանուն եպիսկոպոսութեան, զօրեղագոյնս զնեստորական հերձուածոյն բուռն հարեալ, և քսութեամբ զնախարարացն Հայոց առ Պերոզ վարելով՝ բազում օճիրս արիւնհեղութեան գործեաց: - 130. քանզի կարի սիրելի էր նմա խռովութիւն և արիւնհեղութիւն. – 170.

ԱՐԻՔ - ասէ ,,երէցդ այդ եկեալ է գհետ գերելոց քրիստոնէիցն՝ հակառակ կալ հրամանաց արքայիդ և օրինաց Մազդեզանց և Արեաց – 104. Եւ զգանձդ Արեաց թագաւորութեան այնչափ արձակեցից՝ մինչև շատ լիցի ասել ձեզ, և բազմութիւն զօրաց՝ որքան և պիտոյ իցէ ձեզ, մինչև ձեր թագաւորութիւնն հաստատեսցի,,: - 138.

ԱՐՕԱԹ - ապա ցուցին զտեղին ուր ծածկեալն էր. զոր առեալ վարեցին ի գերութեան, և ոսկի և արծաթ անբաւ խաղացուցին ի դուռն թագաւորին: - 142. և արծաթագործ եօթնփորձեան

հրաբորբոք ճարտարապետն ի բովս հալոցացն զուտ և վճիտ արծաթ ընտրելով, արծաթեղինեաւն զփայտեղէնն պատեալ արտաքուստ – 378. և զի թագաւորութիւնն Եբրայեցւոց յերկուս հակառակս բաժանեալ էր՝ հնազանդ իւր արարեալ Փուայ Ասորեստանւոյ առնու հարկս ի Մանասէէ արքայէ հազար տաղանդ արծաթոյ: - 60. Եւ հրամայեաց աճել ոսկերիչ և նորոգեալ նորացոյց զանյաղթ փայտ խաչին Քրիստոսի, մատուցեալ զբեկորսն առ իւրաքանչիւր յօդս, պատեալ մաքուր արծաթով վայելչագոյն քան զառաջինն, ի պարծանս քրիստոնէից և յամօթ և ի նախատինս թշնամեաց խաչին Քրիստոսի: - 378. և յաւարի առնուին զբանակետղն, դիակապուտ առնէին, ժողովէին աւար բազում, և կուտէին արծաթ և ոսկի յոյժ և զզէնս պատենազարդս, զզարդս և զզէնս արի արանց և զընտիրս երիվարաց և զզարդս նոցա. – 176. Եւ յելանելն նորա և մօտ լինել ի սահմանս Հայոց զօրօք բազմօք, մերձ ի սահմանս Տարունոյ, Առաջին կոչեցեալ Հայոց՝ իշխան Տարունոյ Բագարատ … առաքէ զոմանս ի մեծամեծաց իւրոց ընդ առաջ նորա պատարագօք ոսկոյ և արծաթոյ և պատուական հանդերձից, համոզեալ մի ելանել յերկիրս Հայոց: - 170. և քանդեալ աւերեաց զամենայն ապարանս թագաւորին և այրեաց զնոսա հրով, և բազում գանձս մթերեալս յափշտակեաց անչափ աւարաւ գանձս ոսկոյ և արծաթոյ և հանդերձից, և անասուն բազում յոյժ, և բազմութիւն գերեաց իբրև զաւազ ծովու անթիւ: - 150. մինչ զդի նորա գտելոցն յետ աւուրց ինչ ետ Բուխայ ԺՌ արծաթ, զի այնչափ պատուական էր այրն նմա: - 272. Ողբացէք բնակիչք կոտորելոցդ, զի նմանեցան ամենայն ժողովուրդք Քանանացւոց, և սատակեցան ամենեքին, որ հպարտացեալ էին արծաթով,,: - 180.

ԱՐԾԱԹԱԳՈՐԾ - և արծաթագործ եօթնփորձեան հրաբորբոք ճարտարապետն ի բովս հալոցացն զուտ և վճիտ արծաթ ընտրելով, արծաթեղինեաւն զփայտեղէնն պատեալ արտաքուստ – 378. և նոյնգունակ զարդու զարդարեաց զնա բուրուառօք արծաթեղինօք և ընտիր և փորձ արծաթագործ դրոշաձօք նշանի խաչին Քրիստոսի: - 390. կապարճս և աղեղունս պատրաստականս զառաջեաւ ի նիւսն ունելով, և զարդս ոսկեզարդս և արծաթագործս և կամարս ընդ մէջ ածեալ – 208.

ԱՐԾԱԹԵՂԷՆ - և արծաթագործ եօթնփորձեան հրաբորբոք ճարտարապետն ի բովս հալոցացն զուտ և վճիտ արծաթ ընտրելով, արծաթեղինեաւն զփայտեղէնն պատեալ արտաքուստ – 378. և նոյնգունակ զարդու զարդարեաց զնա բուրուառօք արծաթեղինօք և ընտիր և փորձ արծաթագործ դրոշաձօք նշանի խաչին Քրիստոսի: - 390. որջացեալ ի մուտս կոյս յափն ծովուն ի փապար յարձանախիտ քարին և մանրեալ զարծաթեղէնն ընդ փայտեղինին. – 378.

ԱՐԾԱՐԾԵԱԼ - այն ինչ արծարծեալ առ նորոգումն շինութեան եկեղեցւոյ Քրիստոսի ի կործանմանէ հինի յետ մեծ պատերազմին սրբոյն Վարդանայ. – 134. Իսկ Խոսրովու կարծեալ արծարծեալ զզօրս իւր և որք ի դրանէն արքունի որ կոչին համհարզք և փուշտիպանք, և ամենայն արք ընտիրք /148/ տան թագաւորին ոյժ առեալ դարձեալ պատերազմել ընդ Հայրակղի: - 150.

ԱՐԾԱՐԾԵԼ - մասնաւոր ինչ մարգարէական ոգւով եղելում ի մարդն օժնդակ խորհրդածութեան արծարծել անդրէն ի ձեռն ապաշաւանացն զվրիպանացն կորուստ. ըստ այսմիկ և այլոց կենդանեացն զգայականօքն և թէ ունայնացելովք առ ի դոյզն ինչ զգուշաւորականս: - 22.

ԱՐԾԻՒ - և սլացեալ իբրև զարծիւ ի վերայ որսոյ՝ պատահէին անհուն բազմութեանն ի Փայտակշտան գետ – 400.

ԱՐԾԿԵՑԻ - մատուցեալ առ Վռամ հանդերձ Սդրմակայ ումեմն Արծկեցւոյ մոլեգնոտ փառամոլ աբեղայի՝ սկսան ազգի ազգի լեզուագարութեամբ չարախօսել զսրբոյն Սահակայ – 118.

ԱՐԾՈՒԱԲԱՐ - Երրորդ վասն արիութեան քաջութեանն, արծուաբար քաջասրտապէս խիզախութեանցն ի մարտս պատերազմացն՝ յարծուիս առակեցին զնոսա: - 72.

ԱՐԾՈՒԻ - որպէս ասաց Ամովս մարգարէ, ,,գերծիր և կտրեա ի վերայ փափուկ որդւոց քոց, լայնեա զխզումն քո իբրև զարծուոյ, զի գերեցան ի քէն,,: - 238. Եթէ, որպէս ասացի, ի բաց

գնաս յինէն՝ խաղաղութիւն է, և թէ ոչ՝ պատերազմ և կռիւ և ճակատամարտ … և դու իբրև զեղջերու առանց եղջեր՝ և մեք արծուիք ի վերայ քո, կուրացուցիչք աչաց քոց, և գէշ զքեզ արկանել ձագաց իմոց և աղուեսուց ի ծակս բնակեցելոյ: - 280. Երրորդ վասն արիութեան քաջութեանն, արծուաբար քաջասրտապէս խիզախութեանցն ի մարտս պատերազմացն՝ յարծուիս առակեցին զնոսա: - 72. Եւ դիմեսցեն երիվարք նոցա, դիմեսցեն որպէս զարծուիս ի վերայ կերոյ. – 200. և կացուցեալ զնոսա ի կարգի ստրկութեան, որոյ զփոյթ հպատակութեան ցուցեալ՝ կարգէ զնոսա ի գործ ծառայութեան, կրել արծուիս և բազէս. – 64. իբրև զարծուիս կանչելով, իբրև զկորիւն առիւծուց ի վերայ որսոյ հասեալ բեկանէին: - 174.

ԱՐԾՈՒԻՔ - և անուանէ զնա Արծրունի, առաջին լինելով նորա ի դաշտավայրին Արծուիք կոչելոյ. դարձեալ ըստ պատահման և տարբերութեան՝ արծռունգն կերպարանօք: - 72.

ԱՐԾՌՈՒՆԳՆ - և անուանէ զնա Արծրունի, առաջին լինելով նորա ի դաշտավայրին Արծուիք կոչելոյ. դարձեալ ըստ պատահման և տարբերութեան՝ արծռունգն կերպարանօք: - 72.

ԱՐԾՐՈՒՆԻ - և զիշխանն Աշոտ և զորդի նորա Գրիգոր և զՎահան Արծրունի և զորդի նորա Գագիկ … և զՄուշեղ եղբայր Վահանայ և զտիկնայս նոցա և զտիկինն Հրանուշ և զայլս յազատատանէ կապեալ և բարձեալ ի վերայ ուղտուց՝ վտարեաց ի Սամառայ – 220. անդ Վահան Արծրունի ընդմիջեալ զգունդն Պարսից դարձուցանէ ընդդէմ Վարդանայ. – 128. Անդէն վաղվաղակի մատուցեալ Շաւասպ Արծրունի առ Մարդպետն՝ ասէ – 100. Ապա բարեկամացեալ ընդ Աբգարու թագաւորի Հայոց և ընդ մեծ զօրավարին Խուրրանայ Արծրունւոյ՝ յղէ նմա պատարագս և առնու յօգնականութիւն զԽուրէն Արծրունի, զայր իմաստուն և քաջամարտիկ, կորովի յաղեղն և ի զէն և յասպազէն. - 78. Ապա բարեկամացեալ ընդ Աբգարու թագաւորի Հայոց և ընդ մեծ զօրավարին Խուրանայ Արծրունւոյ՝ յղէ նմա պատարագս և առնու յօգնականութիւն զԽուրէն Արծրունի, զայր իմաստուն և քաջամարտիկ, կորովի յաղեղն և ի զէն և յասպազէն. - 78. առաջապահեստ ճանապարհորդութեանն արարեալ զՄերշապուհ Արծրունի զօրավար Հայոց և զՎահան Ամատունի և եղբայր Մեհուժանայ՝ տարեալ հանգուցանեն ի տեղւոջ հայրենեացն վկայարանի ի Թորդան: - 108. Բայց հրաման ետ Դերանիկն Գրիգոր հարազատի իւրոյ ի նոյն տանէ Արծրունոյ, և կալաւ զնա և եդ ի յամուրսն Սևան. և հրամայեաց Հասանկան քեռորդւոյն իւրոյ՝ պահել զնա յընդարձակի: - 342. Բայց Մեհուժան Արծրունի ոչ եղեալ ունկնդիր սրբոյն Ներսէսի, և ոչ ընդ թագաւորին հնազանդութեամբ. – 102. Գեղեցիկ էր և տեառն Գրիգորի Արծրունւոյ՝ ոչ անփոյթ առնել և զիւրոյ համանուանն զսրբոյն Գրիգորի առնուլ յանձն զխաւարամուտն լինել ի խորին խաւարային վիրապն կապանօք հանդերձ. – 250. գնացին առ Արկադ … Սամուէլ Մամիկոնեան … և Վասակ Արծրունի: - 110. գնացին առ Ներսէհ արքայ Ասորոց, ընդ իւրեանս ունելով զգիր ուխտի խաղաղութեան Աբգարու և Ներսէհի և զԽուրենէ Արծրունւոյ. – 82. և զԽուրանն Արծրունի մեծ զօրավար արկեալ ընդ ուռկանաւ խարդախութեան, հետևել զկնի իւրոյ մոլորութեանն. – 80. և այսպէս աղմկեալ և շփոթեալ երկիրս Հայոց՝կեայր անմիաբանութեամբ, լի անկարգութեամբ, ըստ յօժարութեան Վաչէի Արծրունոյ: - 120. Եւ անդ Վահան Արծրունի խոյակապ և յականաւոր քաջամարտութեամբ ընդ սրբոյն Վարդանայ ճակատ առ ճակատ վառեալ զպատերազմն, իբրև հուր ընդ եղէգն ճեմելով ի մէջ քաջ ախոյեանացն Պարսից: - 128. և անուանէ զնա Արծրունի, առաջին լինելով նորա ի դաշտավայրին Արծուիք կոչելոյ. դարձեալ ըստ պատահման և տարբերութեան՝ արծռունգն կերպարանօք: - 72. և առաջնորդ կացուցանէին իւրեանց զԱպուջափր Արծրունի, և ընդ նմա Սահակ Ապումկդէմ քեռորդի Ապուջափրի, այր քաջ և պատերազմող: - 304. և առեալ զնա մտանեն ի մէջ մայրեացն, և ընդ գիրկս մտեալ Շաւասպայ Արծրունւոյ՝ զլայնալիճն լի քարշեալ հարկանէ ի թիկանց ընդ մէջ ողինն զկորովալիր մատանցն զազդոյ շարժումն թռուցեալ թափանցիկ ընդ չարախորհուրդ սրտին միջոցն դիպեցուցանէ. – 100. Եւ Գուրգէն Արծրունի և Մուշեղ Բագրատունի, և ինքն փութացաւ հանդերձ կաթողիկոսիւն, եկն բանակեցաւ յամուրն մերձ, ուր էր արգելեալ Դերանիկն: - 348. և եղբայր Մեհուժան

Արծրունի յղէ դեսպան առ Շապուհ զնոյն խորհուրդ հաստատել: - 108. Եւ եղև ի դառնալն սրբոյն Սահակայ ի Պարսից՝ եկն առ նա դարձեալ Աղան Արծրունի, և ընկալաւ ի նմանէ սքեմ կրօնաւորութեան. – 120. Եւ զայս առ այժմ բաւական համարեալ նշանակութիւն ցուցանել զլաւութիւն երանելի առնն Խուրանայ Արծրունւոյ, խոհեմագունիցն բաւականանալ առ բովանդակ իմացմունս: - 78. Եւ զգունդն երկրորդ ի ձեռս Գուրգինայ Ապուպելճի, և նիզակակից էր նորա Վահան Արծրունի: - 178. ԵՒ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆՆ Ի ՔՐԻՍՏՈՍ ՏԵԱՌՆ ԳՐԻԳՈՐԻ ԱՐԾՐՈՒՆԻՈՅ ԵՒ ՏԵԱՌՆ ՅՈՎՀԱՆՆԻՍԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԱՐԾՐՈՒՆԵԱՑ ԵՒ ԳՐԻԳՈՐ ՔԱՀԱՆԱՅԻ, ԵՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՆՈՑԱ: - 240. և հանին զնա յարգելանէ բանտին, պատանդ թողեալ նմա զԳագիկ որդի Դերանկին և որդի Գրիգորի Արծրունոյ: - 348. Եւ հասեալ Շաւասպայ Արծրունւոյ ամբարշտի յԱրտաշատ հանդերձ մարզպանաւն՝ շինեն ի դուռն քաղաքին զորմզդական մեհեանն, /124/ և զկրակապաշտութեան մոլութիւն բորբոքեն ի նմա. – 126. և մանաւանդ զի հարկ փութոյ եղև մեզ գիտել զպայազատութիւնս երանաց տիրեցելոց մեր աշխարհի և որ յառաջ քան զնոսա թագաւորք Ասորեստանեայց, որդի /34/ ի հօրէ առեալ մինչև ի Սենեքարիմ արքայ, որ առ Եզեկիայիւ Երուսաղէմի արքայիւ եղեալ ազգապետ տանս Արծրունի: - 36. Եւ վասն այսր իրաց նենգութեամբ և չարակնութեամբ առլցեալ, մանաւանդ յերկիւղէ՝ կարի յոյժ գրգռեցաւ պատերազմ սաստիկ ի ձեռն Վասակայ Արծրունոյ. – 178. Եւ քանզի էին բանակեալ ի խառնուրդս Երասխայ և Մաւրին մեծի՝ պատահի յառաջ Շաւասպ Արծրունի – 126. և քաջն Վահան Արծրունի ընդ նմա նիզակակցեալ՝ մեռանին ի միասին քաջքն և ընտիրքն, մեծ նահատակք Վարդան և Վահան – 128. Եւս քաջասրտագոյն Շաւասպ Արծրունի, խաղս ձիընթացիկ արշաւանաց գնդակացն՝ զհետ մտրակեալ հանէ ի նմանէ զգնդակն բազում անգամ ասելով – 114. Ընդ նոյն ժամանակս խորհուրդ ի մէջ առեալ Շաւասպ Արծրունի եղբայր Վասակայ հօր Աղանայ Արծրունոյ, և խորհեցաւ զտիրելն Հայոց – 124. Ընդ նոյն ժամանակս խորհուրդ ի մէջ առեալ Շաւասպ Արծրունի եղբայր Վասակայ հօր Աղանայ Արծրունոյ, և խորհեցաւ զտիրելն Հայոց – 124. Ընդ որ յոյժ զչարեալ սքանչելին Աղան Արծրունի որդի Վասակայ ընդ հօրն անիմաստասէր բարուցն անխորհրդածութիւն և ընդ այնպիսւոյ աստուածամարտին Մեհուժանայ գթասիրաբար վարել ազգականութեամբ – 112. Իսկ զթագաւորաբնակ տեղին մեծին Տրդատայ տան ի ձեռս Վահանայ Արծրունւոյ՝ շինել նմա տուն թագաւորաց, արարս պատրաստութեամբ. – 126. Իսկ երանելոյն Աղանայ Արծրունւոյ որդւոյ Վասակայ դարձեալ ի Յունաց աշխարհէն՝ եկն յերկիրս Հայոց, նովին կրօնաւորական խստամբերութեամբ /132/ և հրեշտակակրօն առաքինութեամբ կեցեալ՝ վերափոխի յաշխարհէս ի դասս սրբոց. – 134. Իսկ երիցս երանելի սուրբքն տէր Յոհաննէս Արծրունեաց եպիսկոպոս և երանելի քահանայն Գրիգոր և տէր Գրիգոր Արծրունի խրախուսեալք յԱստուած, կացեալ յատենի ի մեծ ասպարիսի հոգևորական պատերազմին – 250. Իսկ Ջաջուռ Արծրունի ձեռն ի գործ արարեալ՝մատուցեալ առ թագաւորն խնդրէ զԱնիանոս – 76. Իսկ Վասակ Արծրունի խոյս տուեալ գնաց առ Արտաշիր Պարսից – 112. Իսկ Վասակ Արծրունի, հայր Աղանայ սրբոյ, առեալ զՏաճատ և զԳոտեր զեղբայր իւր՝ գնաց առ կայսր. մեկուսի եղեալ ի շփոթմանց պարսկական վրդովմանցն և աւերման աշխարհիս. – 132. Իսկ Վասակ Արծրունւոյ եկեալ առ Խոսրով և կալեալ զժառանգութիւն և զգահ – 112. Մարկիանոս կայսր թագաւորեալ Յունաց յերկրորդն Թէոդոսի, որ արար զժողովն ի Քաղկեդոն ՈԼԳ եպիսկոպոսաց. առ որով վկայեաց սուրբն Վարդան և Վահան Արծրունի: - 132. մինչ կալ մնալ միայն երեսուն արանց ընդ քաջին Վահանայ, Մերշապուհ և Յաշկուր Արծրունիք, և Կամսարն Ներսէհ, և ի տանէն Ամատունեաց՝ զորոց զանուանսն անգիտանամ – 134. Յայնժամ ետուն զոտս նորա ի կապանս երկաթիս, և ընդ նմա զտէր Գրիգոր Արծրունի – 238. Յայնժամ ի խորհուրդ եմուտ իշխանն և տոհմակիցք իւր, Վահան և Մուշեղ Արծրունիք, և գունդքն ազատանոյն որ ընդ նմա - 210. յափշտակեցին զՇաւասպ որդի Վաչէի Արծրունւոյ, և զՄեհէդակ Ռշտունի – 98. յղէ առ Գուրգէն զՎահան Արծրունի և զվանաց երէցն Թէոդորոս

զգլխաւորն Հոգեաց վանից, ասէ. – 330. Նորա զչարեալ ընդ հասանել պատգամին՝ առ զայրուցս բարկութեան քինահանութիւն վրէժխնդրութեան արարեալ՝ ի բաց եհան ի գրոցն պատմութենէ՝ որ ինչ վասն տանն Արծրունեաց էր գործոց հանգամանք, և որ ինչ օրինակ մարտիրոսութեան Վահանայ Արծրունոյ: - 130. որք հեղին զարիւնս իւրեանց … և վասն ճգնութեան երանելոյն Գրիգորի Արծրունոյ քաջ նահատակին, յաղթող վկային, խոստովանողին Քրիստոսի – 314. Սոքա հրամանաւ Վահանայ Արծրունւոյ փոյթ յանձին կալեալ՝ խուզել քննել կարգել ի համառօտ բանս զաճմունս ազգացն անցելոց ոչ կարի ինչ ընդ երկայնագոյնս աշխատասիրաբար անցանել պատմութիւնս: - 74. ՎԱՍՆ ԴԱՌՆԱԼՈՅ ԱՇՈՏՈՅ ԻՇԽԱՆԻՆ Ի ԳԵՐՈՒԹԵՆԷՆ ԵԻ ՎԱՍՆ ՎԱՀԱՆԱՅ ԱՐԾՐՈՒՆԻՈՅ: - 328.

ԱՐԾՐՈՒՆԻՔ - Յետ բառնալոյ իշխանութեանն ի Վասպուրական երկրէն մնացին տոհմք Արծրունեաց ըստ ազգս ազգս՝ քաջն Գուրգէն և Մուշեղ եղբայր իւր – 298. Փութանակի և վաղվաղակի իւրաքանչիւր զօրօք անդր հասանէին … և ի տոհմէն Արծրունեաց՝ Վահան և Վասակ և Մուշեղ և Ապուպէլճ և Գուրգէն և Վասակ և Ապուջափր և Մուշեղ և Ապումայեայ և Վասակ և Վահան և Համազասպ և Վասակ որդի Գրիգորի և Ապումկդէմ և Մեհուժան և Գրիգոր – 174. Այս առաջին խնամանալ եղև ընդ միմեանս Բագրատունեաց և Արծրունեաց: - 76. անդր հասանէին … սոքա ամենեքին արք ԺԶ ի տանէն Արծրունեաց զօրօքն իւրեանց. – 174. Ապա առեալ հրաման մեծամեծացն մեր Արծրունեացն՝ գրեն առ Աբրահամ Մամիկոնէից եպիսկոպոս … և ծանուցանեն նմա զոր խնդրէ արքայ: - 132. Առ սոքօք էին ազգք Արծրունեաց ծննդաբանութեամբ՝ Համազասպ. Շաւարշ. Ասուդ. Բաբգեան: - 92. Առաւել ի սուգ մտեալ և յողբս անմխիթարս վասն ազգին իւրոյ Արծրունեաց – 112. Աստանօր ոչ է ինձ յայտ թէ զի՞նչ կամ ո՞րպէս դիպեցաւ լինել տոհմին Արծրունեաց, կամ ո՞ւր, կամ զիա՞րդ. – 94. Արդ որպէս յառաջագոյն ասացաք՝ սակս կարևոր յուզմանցն միապետեալ ի շարս կանոնաց, միայն յայտարարութիւնս առնել զազգացն Արծրունեաց – 96. - Բայց աղերսեալ թագաւորն զարս պատուականս, զՎասակ և զՏաճատ և զԳոտեր, որք էին ի մեծ նախարարութենէ տանն Արծրունեաց՝ զի զժողովն ընկալցին ընդ երից սուրբ ժողովոցն: - 132. բայց զտոհմէն Արծրունեաց ոչ ինչ այլ իմանալ կարացաք, թէ զինչ գործ գործեալ նոցա, բայց միայն զխաղաղասէր կեանս կեալ առ թագաւորն և առ նախարարսն – 96. Բայց ոչ գիտեմ, թէ յանուն աշխարհի՞ն թէ ըստ կերպարանին անուանեաց զնոսա Արծրունիս: - 72. Բայց Վասակս այս … վասն ազգակից գոլ նոցա ընդ տոհմին Արծրունեաց… ել գնաց իւրովք կամօք ի Սամառայ և եղև աստուածուրաց – 248. բովանդակաբար բացայայտել զհաւատարիմն գրել, թէ արդեօք Ասուր, որ զՆինուէ շինեաց, հաւ Նինոսի՞ իցէ ի ծննդոց Սեմայ, ուստի Նեբրովթ, կամ թէ արդեօք ազգն Արծրունեաց Սեմա՞յ սերունդք իցեն, թէ Քամայ ի Նեբրովթայ: - 14. Դարձեալ վերստին հրճուանօք ոռոգեալ լինի պատմութեան աստ սակս բարձրագահ, համաթոռ, ճոխազգի ազգապետութեանն Արծրունեացս, /76/ մեծ զարմի Սենեքերիմայ ծննդոց. – 78. Եւ այս են ծնունդք Արծրունեաց. ի Բաբգենայ Մուշեղ. Վահան. Ներսէհ. միւս Բաբգէն. Տիրոց: - 94. և բանակեցաւ ի յԱդամակերտ ոստանին Արծրունեաց, և անդէն սկսաւ ասպատակս սփռել, աւար առնել, կուտել առ ինքն զկապուտ աշխարհին յոյժ սաստկութեամբ: - 184. Եւ զունդն Հայոց խաղացին ընդդէմ նոցա, վիմաձև անքակ ի միմեանց ըստ տոհմս ազգաց, ի տանէն Արծրունեաց՝ Գուրգէն և Վասակ և Պելճ և Մուշեղ և Սահակ և Ապումկդէմ և Աշոտ – 230. և ի մէջ առից, թէ ըստ բազմաշուրթն լեզուացն յետ աշտարակաշինութեանն, յորմէ ցեղէ սկիզբն առ աճել սերունդք Արծրունեաց տոհմին – 12. Եւ ինքն եկն /186/ ձմերել ի Մուշ քաղաքին Տարօնոյ, ունելով ընդ իւր պատանդս, և Վասպուրականի ի նախարարութենէն Արծրունեաց և յազատաց նորա: - 188. ԵԻ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆՆ Ի ՔՐԻՍՏՈՍ ՏԵԱՌՆ ԳՐԻԳՈՐԻ ԱՐԾՐՈՒՆԻՈՅ ԵԻ ՏԵԱՌՆ ՅՈՎՀԱՆՆԻՍԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԱՐԾՐՈՒՆԵԱՅ ԵԻ ԳՐԻԳՈՐ ՔԱՀԱՆԱՅԻ, ԵԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՆՈՅԱ: - 240. Եւ նորա զեկուցեալ վասն նորա Բուխայի՝ ասէ. ,,այրս այս Գուրգէն ի_տոհմէն Արծրունեաց, այր քաջ և պատերազմող, ի յահէ քումմէ անցեալ

գնացեալ զկողմամբքն Յունաց – 304. Եւ նուազեալ ազգին Արծրունեաց ոչ ոք մնաց, բայց միայն մանուկ մի Համամ անուն, որդի Արշաւիրի ծերոյ եղբօր Խուրէնայ, որ կայր ի դրան արքունի – 90. Եւ նոքա էին արք փառաւորագոյնք ի տանէ Արծրունեաց և յայլոց նախարարաց, որոց Տէր եղիցի այցելու: - 402. զի Գուրգէն եղբայր իշխանիս և այլ տոհմն Արծրունեաց և բազմութիւն ազատաց և ազատորդեաց և նոցուն զօրաց քաջաց Վասպուրական տէրութեանս … անցեալ գնացին ի կողմն Ատրպատականի – 212. զոր ցուցանեմ յայլում տեղւոջ, և զոր ինչ արար արքայն Պարսից ընդ տունն Արծրունեաց ի սադրելոյ Բարծումայի ամբարշտի: - 130. Զուգակշիռ հաւասարութեամբ մարզպանն Հայոց Գուրգէն հրաշազան յօրինուածով շինէ զեկեղեցին ի քաղաքին Հաղամակերտ ի Մեծն Աղբակ, ի բուն իշխանական սեփհականութեանն իշխանութեան զարմին Արծրունեաց – 396. Ընդ որում և մեծ իշխանն Արծրունեաց Խուրան և գլխապետ զօրավար զօրու, և միահեծան թագաւորութեան Հայոց մեծաց, որ առաջին ի Քրիստոս հաւատացեալ եղև իշխանս Խուրան և մկրտեալ ի ձեռաց Թադէոսի առաքելոյ. – 78. Ի նմին ժամու զգացեալ վասն նորա մեծ իշխանին Արծրունեաց Մերշապհոյ, որ յայնժամ ի Տմորեացն ամրանայր բերդի՝ յղէ առ նա ելանել գնալ ի սահմանացն յայնոցիկ. – 130. Ի նոցանէ աճեալ ազգք երկոցունց Արծրունեացն և Ռշտունեաց – 98. Ի սոյն աւուրս որք մնացեալ էին ի տանէն Արծրունեաց իբրև լուան զպարտումն զօրացն արքունի ի Ծանարացն՝ ի մի վայր եկեալ գունդ կազմեալ հետևազօրքն մարտակցօք հանդերձ խառնաղանջ ամբոխիւ՝ լինին թուեալ արք Տ – 304. Ի սորա ժամանակս տիրէր Վասպուրական աշխարհիս Աշոտ ի տանէն Արծրունեաց, այր քաջայայտ և ճոխ ի բարձրագոյնս. – 170. Իսկ երիցս երանելի սուրբքն տէր Յոհաննէս Արծրունեաց եպիսկոպոս և երանելի քահանայն Գրիգոր և տէր Գրիգոր Արծրունի խրախուսեալք յԱստուած, կացեալ յատենի ի մեծ ասպարիսի հոգևորական պատերազմին – 250. Իսկ ի Վասպուրական տէրութեանն ի տեղւոջ զօր արութեան մնաց Գուրգէն, և այլ տոհմք Արծրունիք: - 298. Իսկ ի տանէն Արծրունեաց ընդ մեծ նախարարսն Հայոց մկրտեալ լինի Տիրոց որդի Բաբգէնի երկրորդի - 94. Իսկ նա անցեալ ի գաւառն Որսիրանից, և ընդ նմա բազմութիւն ազատաց և մեծամեծացն Արծրունեաց նախարարութեանց և ամենայն զօրաց նոցա – 224. Իսկ Վաչէ Արծրունեաց տէր և Հմայեակ Աշոցաց տէր և այլք յանգուցեալ ի նոսա՝ հաճեցին զկամս Վռամայ – 118. Կատարեցաւ Դպրութիւն Առաջին Պատմութեան Հայոց ըստ ազգաբանութեան Արծրունեաց սեռի: - 122. ճանապարհ արարեալ ընդ Ատրպատական, կասկածելով թէ գուցէ Գուրգէն և կամ մի ոք ի տոհմէն Արծրունեաց և նոցին ազատաց ի կորովացն Վասպուրական հեծելոցն հասանիցէ ի վերայ և թափիցէ զնա ի զօրացն և հանցէ ի ձեռաց իմոց: - 220. Յետ բառնալոյ իշխանութեանն ի Վասպուրական երկրէն մնացին տոհմք Արծրունեաց ըստ ազգս ազգս … և Ապուջափր և Ապումքդէմ և Վասակ և միւս Վասակ և դարձեալ այլ Վասակ և Մուշեղ և Աշոտ և Սահակ, և այլք ի տանէն Արծրունեաց. և ազատք նոցա: - 298. Նորա զչարեալ ընդ հասանել պատգամին՝ առ զայրուցս բարկութեան քինահանութիւն վրէժխնդրութեան արարեալ՝ ի բաց եհան ի գրոցն պատմութենէ՝ որ ինչ վասն տանն Արծրունեաց էր գործոց հանգամանք, և որ ինչ օրինակ մարտիրոսութեան Վահանայ Արծրունոյ: - 130. սա մատուցեալ առ թագաւորն Տիրան՝սկսաւ քսութեամբ խօսել ի գաղտնի զտանէն Արծրունեաց և զՌշտունեաց - 98. Սահակայ առեալ ի պարգևի զաշխարհն՝ թողու զորդին զԱշոտ զլեառնակողմամբքն առաջին իւրեանց տէրութեանն՝ շինել, բնակել, ժառանգեցուցանել զերկիրն ի ժառանգութիւն իւրեանց ազգի ի զաւակ տանն Արծրունեաց: - 90. ՎԱՍՆ ՉԱՐ ՅԱՆՁՆԱՌՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐԱՑՆ ԱՐՇՐՈՒՆԵԱՑ – 240. տարան ետուն ի բանտ արքունի, ուր կայր Աշոտ իշխան և այլ նախարարք ի տանէն Արծրունեաց: - 238. տեղեկացեալ և վասն տոհմին Արծրունեաց և Ռշտունեաց և որք ի նախարարութենէն Մամիկոնէից հասեալ գնացեալ ամրանային ի յամուրսն Տայոց – 98. Քանզի բազում աշխատութեամբ է գտանել զշար ազգաբանութեան տանն Արծրունեաց, վասն հեռաւոր ժամանակաց կացեալ և դիւանացն անյայտութեանց ի մէջ Հայաստանեայցս – 12. փոխէ

անդ գեօղս և շինէ զբլուրն, որ տեղի բանակի ղաշիկ առնելոյ էր տանն Արծրունեաց, և անուանեաց յանուն իւր զձեռակերտն Գագկակերտ: - 396.

ԱՐԿԱԴ - այլ և բազումք ի նախարարացն Հայոց ելեալ զհետ Արշակայ գնացին առ Արկադ – 110. Արկադեալ կայսեր թագաւորեալ ամս ԻԳ մեռանի սաստկակոծ պատուհասիւ յաղագս մեղանացն առ Յոհան Ոսկեբերան: - 114. Որ և հուպ ժամանակաւ վախճանի և կայսր Թէոդոս, և առնուն զթագաւորութիւնն Ոնորէոս և Արկադ որդիքն Թէոդոսի: - 110.

ԱՐԿԱՆԵԼ - ,,ընդէ՞ր որպէս մանուկ տղայ համարիս, արկանել առաջի իմ զպատրանս, սնոտի, առասպելաբան, խաբեբայ և պատիր յոյս խոստանալով ինձ՝ հանել զիս ի ճշմարիտ յուսոյն, զոր ի մանկութենէ ի վերայ հասեալ ճշմարտութեանն,,: - 294.,,ոչ են օրէնք թագաւորութեանս մերոյ ի պայքար բանից զոք արկանել, և յերկարել ի բանս, որչափ արարաք ընդ ձեզ, զոր ինչ այլ արասցուք. – 246. Ազդ առնէ քաղաքապետին Տփղեաց. և խնդրեալ զնա առ ինքն՝ /316/ ստիպէր տագնապէր ահիւ արկանելով, թողուլ զօրէնս քրիստոնէութեան և յանդորր ելանել: - 318. Այլ և հուր և ծծումբ նաւթիւ բարձեալ ի գործ պատերազմին, և զլոյծ բնութիւնն յանօթս ապակեղէնս եդեալ, և մանր զծծումբն ընդ նմին խառնեալ, եդեալ ի պարսատիկ մեքենայից, և զհուրն առ ընթեր նմին, հնարաւորեալ արկանել զամրոցաւն: - 208. այլ և ընդ միմեանս արկանէին բանս քսութեան – 194. Այնուհետև սկսաւ կորապաղատն արկանել բանս խարդախութեան ի մէջ Դերանկին և Հասանայ, որ էր որդի քեռն Դերանկին, որպէս թէ ոչ ուղիղ նայի ընդ նա Դերանիկն, այլ թէ՝ և հանել ի նմանէ զամրոցն և զաշխարհն նկրտել. – 346. ապա յամառեալ զարբանեալքն իւր հրամայեաց կապել կրկին շղթայիւք և արկանել ի ներքին բանտ: - 250. արդ թողոցո զերկրորդ մասն Անձաւացեաց որդւոյ իմոյ Դերանկիդ, և այլ մի յաւելուր ընդ հակառակս ինչ ձեռն ի գործ արկանել - 330. արկանել զնա ի կապանս և ի տանջանս մահաբերս, զամուրսն յինքն գրաւել, զաշխարհն տալ ի ձեռս իւրոյ գործավարացն, ըստ պարսկայնոցն հատուցմանց հատուցանել նոցա: - 370. արկանեն տոռունս ի սրունսն, կախեն զհիւսիսայինն աշտարակէն. – 102. Արջամ թագաւորեալ Հայոց՝ զազգն Բագրատունեաց արկանէ ընդ բազում տառապանօք, վասն արձակմանն Հիւրկանոս քահանայի ի կապանաց բանտին – 74. բանսարկուք ոմանք հրապոյրս պղտորս քսութեան ածէին տանէին ի միջօէն առ միւսն, որպէս թէ զչարիսն իրերաց առ հազարապետն խորհել նիւթել յայտ ածէին և զպատճառն զմիմեամբք արկանէին ի գաղտնիս քրթմնջելով: - 342. գոչեաց առիւծաբար, յարձակեցաւ ի վերայ ընտիր այրուձիոյն, և զաջ թևն բեկեալ՝ զձախոյ կողմամբն արկանէր -174. Եթէ, որպէս ասացի, ի բաց գնաս յինէն՝ խաղաղութիւն է, և թէ ոչ՝ պատերազմ և կռիւ և ճակատամարտ … և դու իբրև զեղջերու առանց եղջեր՝ և մեք արծուիք ի վերայ քո, կուրացուցիչք աչաց քոց, և գէշ զքեզ արկանել ձագաց իմոց և աղուեսուց ի ծակս բնակեցելոյ: - 280. և անհակառակող հաւանութեամբ հեզահայեաց առ միմեանս սիրոյ յորդորմամբ արտաքոյ վատթարին խոհականաբար մնալով, քաջախորհուրդ առատաբուղխ խաղացմամբ իմաստութեանն զմիմեանս բռնահարելով, զօտարոտին ի բաց վարատելով զբղջախոհութեան անհանճարութիւն՝ զլաւն և զյոյժ օգտակարագոյն ընտրութեամբն գիրկս արկին. – 388. մխիթար բարի ունէր ի բարբառոյ մարգարէին որ ասէր. թէ /գրքում՝ թե/ ,,մանուկ մատաղ ի ծակ իժից արկցէ զձեռս իւր՝ և ոչ մեղիցեն նմա,,: - 252. և վիշապաձայն որոտալով ահ արկանել հեռաւորաց և մերձաւորաց: - 200. և աղօթականքն արկանէին առաջի Տեառն զպաղատանսն – 232. Եւ այլք մերձ կացեալ առ Դերանիկն՝ ամբաստան լեալ Աշոտոյ կորապաղատէ, որպէս թէ նախանձու լցեալ, և քսութեամբ վարէր ի մէջ հազարապետին, և թէ արկանել ևս ջանայր զնա յիշխանութենէ անտի նորա: - 342. և այն ինչ ի քթթել ականն դարձուցին զղաշիկն, և զհետ մտեալ փախստէիցն սուր ի գործ արկեալ՝ դիւթալ կուտակս կուտակս արկանէին. – 382. Եւ այսոսիկ Ահմաթայ յինքն առեալ արկանէր ի կամս ևս յառաջանալ – 366. և անտի գնացեալ ի ձորն Ածանայ ի խնդիր փախստէիցն և հասեալ ի յետոյ կողմանցն՝ ի սուր և ի գերութիւն զբազումս ի նոցանէ արկանեն: - 202. և արկանէին վիճակս և լարս ձգէին ի վերայ սահմանաց և բնակէին յամուրս աշխարհիս աներկիւղս. – 238. և զերթալն

Մեսրովպայ և Վարդանայ ի Յոյնս առաջի արկանէին, և զգալն Անատողեայ և զշինել քաղաքին ի Կարին գաւառ: - 118. և զի չզօրեաց կալ ընդդէմ նորա, ահ արկանէր, սպառնայր չար ևս կտտանօք լլկել զնոսա, ոտնատորփ լինելով փռնգայր իբրև զձի խստերախ: - 270. և զհետ նորա աճապարեալ արկանէն զնա ի յամրափակ զինեալ վաշտն ի մէջ փղացն. – 128. և իբրև եղ առաջի զվնասուցն որով կարծէր արկանել զնա ի հաղբս կորստեան՝ ասէ ցերանելին – 294. Եւ իբրև ետուն զթուղթն կարծեցեալ իբրև յերեսաց արքայի՝ ,,ընթերցիր զայդ, ասէ, մի՛ ինչ ընդ մեղադրութեամբ արկաներ զիս, և կարծել նենգութեամբ գնալ առ քեզ և դրժել ինչ քեզ և ստել երդմանց /236/ մերոց. – 238. Եւ իմաստուն և հանճարեղ խորհրդովք, քաղցր և կակուղ բանիւք ողոքեալ զմանկագոյն Հասան, առաջի արկանելով նմա զարժանի ալեացն պատուականութիւն և զիշխանական ճոխութեան զբարձրագահութիւն և որ ինչ այդմ հետևէր. – 348. և ինքն /232/ կայր հեծեալ ի վերայ սպիտակ ձիոյ, և ցանէր զծուխն ընդդէմ թշնամեացն, և օդ քաղցր, որ արկանէր զծուխն զերեսօք նոցա. – 234. և խոշտանգեսցես զնոսա գանիւ և բանտիւ և պէսպէս տանջանօք սպառնալեօք և ողոքանօք և ընչից պատրանօք արկցուք զնոսա ի ներքոյ կամաց թագաւորութեան մերոյ. – 196. և կալեալ զԱնիանոս նահապետ Բագրատունեաց և սպարապետ Հայոց հանդերձ ընտանեօք և ամենայն ազգաբանութեամբ՝ արկանէ ընդ բազում չարչարանօք – 74. և կարծէր յայնժամ ի ձեռն խոշտանգանաց դիւրաւ արկանել զնոսա ի հաղբս կորուսելոցն և մոլորելոցն ի հաւատէն Քրիստոսի: - 264. և նախ ձեռս արկցէ յԱշոտ և տուն նորա և ի Բագարատ և տուն նորա – 184. և նախ քան ընդ պատժական տանջանաւոր խոշտանգանօք արկանելն զմեզ՝ բանիւք քո իբրև քարամբք հարեալ զմեզ՝ շտապ տագնապի ի վերայ արկանես թափել զոգիս մեր: - 242. և նախ քան ընդ պատժական տանջանաւոր խոշտանգանօք արկանելն զմեզ՝ բանիւք քո իբրև քարամբք հարեալ զմեզ՝ շտապ տագնապի ի վերայ արկանես թափել զոգիս մեր: - 242. և ոչ եղեն ունկնդիր մաղձահամ և ժախահոտ բանիցն, իբրև ի փեռեկեալ գերեզմանէ զնեխահոտութիւնն արտաքս արկանելոյ. – 292. Եւ ուժեղացեալ դաշիկն քաղաքային ի վերայ Մուսէի զօրուն, մինչ ածին արկին զբուն բանական ուր և Աշոտն մեր թուէր գոլ խօթացեալ. – 328. զի թերևս կարասցէ արկանել զերանելին ի ներքոյ պղտոր հրապուրեցուցիչս ժախուն մահածին հնազանդութեանն - 204. զի կարծէր դիւրաւ արկանել զնոսա ի հաղբս պատրանաց զկնի դարձելոցն ի ճշմարտութենէն. – 250. Իսկ ի չորրորդ ամին դարձեալ ի բարձրագոյն քան զառաջինն կազմեալ զմեքենայս չարին արկանել զԳրիգոր ի քուրայս նեղութեան. – 252. կամ թէ յամպոց ինչ ճայթիւն արձակելոյ և ի վայր հրաձգութիւնն արկանէ ի կարկտաբեր և յանձրևաբեր ժամանակի - 228. համօրէն ընտանիւք արկանել ի բերան վիշապի - 216. Հրաման ետ արքայ Կաւատ արկանել զնա ի տուն մի արքունական սենեկացն. – 152. Յայնժամ բարկացեալ բռնաւորն իբրև գազան մի կատաղեալ, յարձակեալ ի վերայ գառանց գէշ արկանել զնոսա՝ հրամայեաց պնդել զնոսա ի ցիցս կապեալ ոտիւք և ձեռօք. – 292. սոցա ի թիկունս հասեալ և հովիւ մի՝ պարսատկաւ քարինս ի վերայ արկանէին. – 202.

ԱՐԿԱՆԵԼԻ - զի թագաւորն Լիդէացւոց ասպազինեալ զերիվարն շուրջանակի պղնձի արկանելեօք յոտից մինչ ի գլուխ բովանդակ չթողեալ տեղի՝ անկռուելի լինել զինուի – 64.

ԱՐԿԵԱԼ - Նոյնժամայն աճապարեալ աշտանակեալ ի նիւս նժոյգ երիվարին, զէն զանձամբ արկեալ, նիզակ ի ձեռն առեալ, խրախոյս ի ձայն բարձր բարձեալ առ իւր ազատագունդ վաշտն՝ ասէ՝ - 328. ,,ես եկի խաղաղութեամբ յարքունուստ հրամանէ, և ոչ նման քեզ զապստամբութիւն ի գործ արկեալ. – 330. Այլ և զոամիկ Նորագեղջ աւանին Ռշտունեաց առեալ ածեն ի տեղի վաճառուն Ոստանին Ռշտունեաց, արկեալ տոռունս ի պարանոցն հանեն ընդ սուր. – 202. այլ փոխանակ սոցա մատեայ ի տեղիս յայս, ձեռն արկեալ անիմաստաբար լի անհմտութեամբ և անհանճարութեամբ բուռն հարկանելով զմեծ զայս քերթուածութենէ: - 122. արկեալ զիւրև պատմուճան լուսակիզն փայլեալ իբրև զարուսեակ, և յաջոյ ձեռինն ունէր սուսեր, և ի ձախոյն՝ բուրուառ լի խնկով – 232. բազպանս ի ձեռն արկեալ – 208. Բայց Դերենիկն կալեալ զնա պահէ ի զգուշութեան, ոչ

ինչ ստնանել նմա, բաց ի կապանացն յորս արկեալ էր զնա, ըստ հատուցմանն բարւոյ. առ ձեռն պատրաստ կշռեաց նմա և օրհնեցաւ ի սրբոյն Զաքարիայէ: - 320. Բայց քանզի հաւատացեալ էր վերակացութիւն աշխարհիս Հայոց Աշոտի, որ իշխանաց իշխան՝ ձեռն ի գործ արկեալ նուաճել զիշխանս Հայոց, զՎրաց և զԱղուանից, որ եղև իսկ: - 322. Դարձեալ բողոք հարեալ, ձեռն զօձիւք արկեալ և զհերս խզեալ, զդէմս կեղեքեալ և ձայնս առեալ կական ողբօք արտասուալից հառաչանօք, վայ ի բերան առեալ և խիղբ – 180. Եւ /106/ նոյնժամայն հուպ ընդ հուպ ի դիմի հարեալ Մեհուժանայ և կարթակոտոր զասպազինեալ երիվարն արարեալ քաջին Սմբատայ՝ տոռն արկեալ ի պարանոցն Մեհուժանայ ասէ. – 108. և ազատացն յետուստ կողմանէ սուր ի գործ արկեալ սպանին զնա, և զգլուխ նորա հատեալ առ /368/ բերդայինսն յղէին: - 370. և զխուրանն Արծրունի մեծ զօրավար արկեալ ընդ ուռկանաւ խարդախութեան, հետևել զկնի իւրոյ մոլորութեանն. – 80. և մօտ եղեալ մերկեաց զսուսերն և զսաղավարտն և զզրահսն, զոր արկեալ էր զանձամբ – 228. և այն ինչ ի քթթել ականն դարձուցին զղաշիկն, և զհետ մտեալ փախստէիցն սուր ի գործ արկեալ՝ դիթաւալ կուտակս կուտակս արկանէին. – 382. և առաջի արկեալ զհառաչանսն, զարտասուսն, զխոստովանութիւնն, զողորմագին պաղատանսն, մինչ ի մահ զտրտմելն, զկենաց դեղն հայցել, զմարմին և զարիւն որդւոյն Աստուծոյ ի թողութիւն մեղաց – 386. և ետ բերել նմա ըստ օրինի գլխապետութեան սուսեր իշխանական ընդ մէջ արկեալ և զօտի արիական շրջապատեալ զմիջաւ, քուրք խիզախողք և երիվար բարձրավիզ, ոտնատորոփ, խրոխտալիր, յարմարական առ ընթացս պատերազմականս: - 308. Եւ ինքեանք արկեալ զրահ զանձամբ – 208. և նորա արկեալ զնա ի փոքրագոյն տեղի մի նեղ, և ինքն փութացաւ գոյժ ետ վասն նորա՝ մահու պատահել, լի անմտութեամբ մոլի աբեղայն, որում ոչ հրամայեցաւ. – 320. և նոքա ըստ ձախողակի սովորութեանն իւրեանց օրինադրութեանն, արիւնարբու առանց բարւոյ բարեգործութեանցն մանաւանդ թէ լցեալք սատանայական չարութեամբք՝ զայն արկեալ յամենայն քաղաքսն, խռովեալ ըստ գազանեղէն իւրեանց մոլեգնութեանցն – 398. և շտապով փութանակի յասպազինէ երիվարէն ի վայր արկեալ զինքն առաջի Աղէքսանդրի, առ ոչինչ համարեալ յահռնաբար/գրքում՝յահուռնաբար/ գործսն զոր գործեաց՝ փութացաւ ետ ողջոյն արքայի և ասէ. – 68. զբազումս տապալեալ արկեալ ի սուրս իւրեանց – 98. Իսկ Ասուդ զհետ Դարէհի ելեալ ի պատերազմ ընդդէմ զօրագլխացն Աղէքսանդրի՝ Հերակղեայ նահատակութեամբն դիւցազնաբար ի դիմի հարեալ՝ ի բաց նահանջէ զուժեղագոյնս զօրագլխացն Աղէքսանդրի հարուստ ժամ մի, մինչ հիացումն զօրօքն արկեալ՝ տային տեղի փախստէի. – 68. Իսկ քաղաքապետն Սահակ ելեալ ընդ դուռնն, որ ելանէ ի բերդն Շամշղտայ, սամոյր զինքեամբ արկեալ և գաւազան ի ձեռն առեալ, յիմարեալ մտօք կորոյս զփախուստն իւր, որ կարող էր գնալ յով և կամիցի. – 272. կոչեաց զերիցունսն նորոյ կտակիս, զեպիսկոպոսս և զքահանայս, առաջի արկեալ զհաւատոցն կատարելաբանութիւն, զմկրտութեանն լուսաւորութիւն. զառեկելոցն յապաշխարութիւն, զյոյսն յետ վախճանին, զմարդասիրելն Քրիստոսի - 386. մինչ հանդէպ երեսանալ Աղէքսանդրու ի յանդուգն դիմացուածին, և հայեցեալ ի դէմս Աղէքսանդրու իբր յաստուածոց դիւցազանց՝ զերեսս ի վայր արկեալ զերկիր նշմարէր – 68. յետուստ կողմանէ աճապարեալ Քսերքսէս բուռն հարեալ զդիակաց պղնձակուռ վարապանին Աշդահակայ ի վերայ թիկանցն զգաւակս երիվարին արկեալ – 64. Նա և ջուր մաքուր յապակի զուտ և վճիտ արկեալ, ի տապ արեգականն դնելով, և զնիւթ հրոյն առ ընթեր՝ ի շողոյ անտի արևակէզ եղեալ տոչորի նիւթն: - 52. որպէս ժողովուրդն Աստուծոյ առ գետսն նստէին և լային ի յիշելն իւրեանց զՍիօն, և կամ իբրև զնոյն ինքն զերիս մանկունսն, կապեալք և արկեալք ի հնոց նեղութեան – 252. Վէմս զերեսօք արկեալ արտօսր յորդառատս ի խաղտելի աչաց ի վայր հեղեղատելով, զնորափթիթ ծաղկազարդ ոսկեճաճանչն մորուացն ճիրանամբքն զխզումնն, և որ առաւելեալն քան զսոյն զապաշաւանացն զանյագութիւնն: - 386. քող արկեալ զդաւաճանող կեղծաւորութիւնն,

զբարձումն բոլոր իշխանացն Հայոց, մանաւանդ զնախագահանստեալն զԱշոտ իշխանաց իշխան: - 340.

ԱՐԿՈՒՄՆ - և ղաշիկ արարեալ յայնկոյս քան զՎանտոսպ, ի տեղւոջն արձանաշար քարակարկառ գոգաձև միջոցի երկուց բլրակաց, որ հայի յԵրիվպարաց արկման դաշտն, ի վերայ Լեզւոյ գեաւղջն, որ զաւրացն գեղեցիկ առասպելաբանեն սպիանած վերայն սպանելոցն ի մանկանցն Շամիրամայ: - 334.

ԱՐՀԱՄԱՐՀԱՆՔ - Առ որ հայեցեալ նախարարքն Հայոց՝ կատականօք և արհամարհանօք ընդ նա նայէին – 114. Բարկացաւ յոյժ իշխանն ընդ արհամարհանսն, և յոյժ զայրացեալ մեծաւ ցասմամբ՝ առնու զբազմութիւն ազատագունդ զօրաց ըստ տոհմս ազգաց իւրաքանչիւր զօրօք. – 178. և լի ծաղու և կատականօք այպն արարեալ՝ արհամարհանօք անարգեցին զբռնաւորն, իբրև զմանուկ մի անպիտան կամ զծեր զառանցեալ և խելագարեալ, որ ոչ ըստ իւրոց կամաց զոր ինչ ախորժիցէ խօսիցի: - 264.

ԱՐՀԱՄԱՐՀԵԱԼ - Բայց Ահմատ ոչ խոնարհեալ ունկն դնել ասացելոցն, արհամարհեալ զառաքեցելովքն: - 366. և նա արհամարհեալ յոչինչ համարեալ զզեկուցմանն, զամբարտաւանս բարբառեալ. – 330. զոր արհամարհեալ Շաւասպ /114/ արձակերեսան զերիվարն ի սիգաքայլ արշաւանս արարեալ՝ աներկիւղ համարձակութեամբ էանց գնաց ճեմ զճեմի առ զօրավարն Անատողի: - 116. Նորա արհամարհեալ զառաքեցելովք, չվարկանելով արժանի պատասխանոյ, և նովին օրինակաւ սկսաւ շրջել ընդ բոլոր աշխարհս Վասպուրական: - 178. Որպէս Պօղոս ուսուցանէ. ,,արհամարհեալ ասէ, ուրուք զօրէնս Մովսէսի՝ մեռանէր, ի բերանոյ Բ կամ Գ վկայիւք. քանի սաստկագոյն համարիմք զայն, որ զորդին Աստուծոյ առ ոտն եհար,, , և որ ի կարգին է: - 380.

ԱՐՀԱՄԱՐՀԵԼ - Ասէ թագաւորն. ,,մի՛ արհամարհեր զթագաւորական բանքս իմ և կորուսաներ /գրքում՝ կորուստաներ/ զկեանս քո – 294. Զոր /336/ և ես ոչ արհամարհելով այպանեմ զզղջմանն և զապաշաւանացն, զի ,,որ կարդասցէ զանուն Տեառն կեցցէ,,: - 338. զոր այպն արարեալ արհամարհեաց զնովաւ: - 80. զոր արհամարհեաց մերժեաց Աբգար - 80.

ԱՐՀԱՄԱՐՀՈՂ - և բանք սրբոյ Ներսէսի ընդ կենդանի բանին Աստուծոյ խառնեալ՝ դիւրագոյնս զհատուցումն արհամարհողացն հատուցանէր յօրհնութիւնս և յանէծս, անյապաղ զգործն կատարելով. – 100. Իսկ իբրև գիտաց բռնաւորն, եթէ չելին ի գլուխ կարծիքն զոր ի վերայ սրբոցն խորհեցաւ, որպէս գրեալ է, ,,կարծողն և արհամարհողն այր ամբարտաւան է և ոչ ինչ վճարեսցէ,,- 264.

ԱՐՀԱՄԱՐՀՈՏ - ,,տեսէք, արհամարհոտք, և զարմացարուք և եղծարուք – 200.

ԱՐՀԱՒԻՐՔ - Եւ ամբարձ զմիտս իւր ի հանդերձեալ գալուստն Քրիստոսի, և որ յայնժամ լինէին ահեղ որոտմունք և թնդիւնք և հրձգութիւնք և արհաւիրք մեծամեծք յերկնից և յերկրէ – 284. Եւ էր ահեղ որոտումն և արհաւիրք և թնդիւնք. – 228.

ԱՐՀՄՆ - Արհմն արար զխաւար. - 46. Եւ գիտացեալ Արհմին զյետարկելն իւր՝ խեռեալ ստամբակեաց Որմզդի, հակառակ աստուած լինելով: - 46.

ԱՐՁԱԳԱՆԳ - Եւ բնակեն առանձին ըստ տունս ազգաց, և այնչափ ի բացեայ են ի միմեանց՝ մինչ թէ ոք յարանց զօրաւորաց ի բարձրաբերձ տեղեաց ուժգին խանչիցէ՝ հազիւ թէ ուրեք կարիցէ առնուլ զբոմբիւն ձայնին, իբրև ի վիմաց ինչ արձագանգ /գրքում՝ արձագան/ լինելոյ կարծիս բերելով – 190.

ԱՐՁԱԿԵԱԼ - Բայց դեսպան արձակեալ Արտաշէսի զՀամամ առ կայսր Ադրիանոս վասն Բարքոբայ աւազակի և նորուն պատերազմին յԱսորիս. – 92. Յայնժամ հրովարտակս արարեալ, պնդադեսպանս արձակեալ ընդ ամենայն սահմանս իւրոյ տէրութեանն – 198.

ԱՐՁԱԿԵԼ - ,,հրամայեա արձակել արս հաւատարիմս, և ես յորժամ հասից ի դուռն արքունի՝ ի նմին ժամու խնդիր արարից Խաչին, և գտեալ զնա տայց բերել առ քեզ,,: - 154. ,,հրեշտակս արձակիցեն որ լայցեն դառնապէս,, - 286. ,,նիստ դու աստ, մինչև արձակեցից զքեզ և արարից զկամս հայցուածոց քոց վասն որոյ եկեալ ես,,: - 226. Ապա երկոքին նոքա դեսպանս արձակեցին առ թագաւորն ի հաւատարիմ արանց ըստ Եսայեայ զոր ասէ – 286. Արձակէ առ Բագարատ, կոչողս պատճենիւք հանդերձ, զի եկեսցէ առ նա առանց

պատճառանաց և երկիւղի: - 186. բայց զՎասակն յամենայն ժամ իբրև ընդ խաղ ի բուռն առնելով արձակէր խաղաղութեամբ: - 310. Բայց Մուսէ ոչ հաստատնագոյնս վասն Աշոտի զխոստմանն բերելով յանձնառութիւն արձակել զնա յիւր իշխանութիւնն – 330. և արձակեաց զզօրս իւրաքանչիւր զօրագլխօք եկելոց առ նա յամենայն ազգաց յաշխարհէս /գրքում յաշխարէս/ Հայոց՝ երթալ ձմերել յիւրաքանչիւր տեղիս բնակութեանց – 262. Եւ արձակեաց զնա ի տուն իւր մեծաւ ուրախութեամբ և անտրտում խնդութեամբ – 218. և դեսպանս առ զօրավարն արձակէր: - 184. Եւ եթէ ասիցէ, եթէ այլ թագաւոր նստուցից՝ արասցէ զո և կամեսցի և արձակեսցէ և մեք ընդունիմք, ահաւասիկ է տեղի թագաւորութեանս: - 144. և եթէ զաւր պիտոյ իցէ յօգնականութիւն՝ արձակեցից որչափ և կամիս. 152. Եւ եհան արձակեաց զնա Տէր Աստուած ի դրախտէն փափկութեան՝ գործել զերկիր ուստի առաւ: - 22. Եւ ես աւասիկ արձակեցից թագաւորին ձերում պատարագս և հրեշտակս հրովարտակօք, խնդրել ի նմանէ զխաղաղութիւն աշխարհի և ընդ իս հաշտութիւն,,: - 144. և ետ բերողացն Հայրակղոս ինչս բազումս և մեծարեալ արձակեաց պատուով: - 154. Եւ զգանձդ Արեաց թագաւորութեան այնչափ արձակեցից՝ մինչև շատ լիցի ասել ձեզ, և բազմութիւն զօրաց՝ որքան և պիտոյ իցէ ձեզ, մինչև ձեր թագաւորութիւնն հաստատեսցի,,:- 138. Իսկ թագաւորն Պարսից ընդունէր զպատարագսն բերեալս ի կայսերէն,/144/և զհրեշտակսն անդրէն ոչ արձակեաց, և ոչ հրովարտակացն պատասխանի առնէր. - 146. Իսկ իբրև միապետեցաւ թագաւորութիւն Պարսից Կիւրոսի՝ առնու զԲաբելոն և արձակէ զգերին Հրէից: - 66. կամ թէ յամպոց ինչ ճայթիւն արձակելոյ և ի վայր հրաձգութիւնն արկանէ ի կարկտաբեր և յանձրևաբեր ժամանակի - 228. Յայնժամ արձակեաց Հայրակղոս արս հաւատարիմս առ Խոռեմ վասն աստուածընկալ սուրբ Խաչին. – 154. Յայնժամ իբրև ետես անօրէն զօրավարն Մուսէ, թէ ոչ ելին ի գլուխ խորհուրդ չարին յօժարութեանն … փութացաւ արձակել գուժկան յարքունիս, ծանուցանելով արքայի զոր ինչ գործեաց Աշոտ իշխանն Վասպուրական: - 176. տե՛ս քեզէն և ծանի՛ր, զի ոչ գոյ վնաս իմ յիրիդ յայդմիկ կամ կարողութիւն արձակել զքեզ,,: - 238.

ԱՐՁԱԿԵՐԱՍԱՆ - զոր արհամարհեալ Շաւասպ /114/ արձակերասան /գրքում՝ արձակերեսան/ զերիվարն ի սիգաքայլ արշաւանս արարեալ՝ աներկիւղ համարձակութեամբ էանց գնաց ճեմ զճեմի առ զօրավարն Անատողի: - 116.

ԱՐՁԱԿՈՒՄՆ - Արջամ թագաւորեալ Հայոց՝ զազգն Բագրատունեաց արկանէ ընդ բազում տառապանօք, վասն արձակմանն Հիւրկանոս քահանայի ի կապանաց բանտին – 74. զերծեալ ի բանտէն յոր տուանն՝ և գան հասանեն յերկիրս այս մեր, բերելով զաւետիս արձակման գերելոցն – 324.

ԱՐՁԱԿՈՒՐԴ - և տառապելոցդ որ եկեալ յեցեալ են ընդունայն գաղթականութեամբ՝ եղիցի արձակուրդ ի տեղիս իւրաքանչիւր – 216.

ԱՐՁԱՆ - այլ և Մակեդոնացին Աղէքսանդրոս ոչ սակաւ դրուատեօք արձանս գրէր ի մատեանս դիւանապահ աւանդութիւնս զսրայս մեծափառ գլխաւորութիւն: - 96. զոր և անդրի ոսկեղէն կանգնեալ թագաւորին Բաբելացւոց՝ արձան քաջութեան առ ի յիշատակ: - 38. քանզի ասեն զկնոջէն, յորմէ նեռնն է ծնանելոց՝ ճանապարհորդել յԵգիպտոսէ յաշխարհն Պաղեստինացւոց, և ցանկացեալ տեսանել զարձան կնոջն Ղաւտայ երթեալ դադարէ անդ հանգստութեամբ. – 158.

ԱՐՁԱՆԱԳՈՐԾ - Իսկ ի հարաւակողմն կուսէ ի ջրամբար արձանագործ քարեղինէն ճանապարհ աշտիճանեալ /390/ ներքուստ ի վեր մինչ ի կատար անձաւին հեշտալիր զելս և զէջս յօրինեալ, քարագործ աւազամած կրագործութեամբ: - 392.

ԱՐՁԱՆԱԽԻՏ - որջացեալ ի մուտս կոյս յափն ծովուն ի փապար յարձանախիտ քարին և մանրեալ զարծաթեղէնն ընդ փայտեղինին. – 378.

ԱՐՁԱՆԱՆԱԼ - և եղեն իբրև զմի այր կամ թէ իբրև զվէմ մի բլրաձև, արձանացան կարծրացան պնդութեամբ՝ անմատոյց լինել ի նոսա զօրութիւն երկաթի. – 230. և վառեալ ի զէն և յասպազէն՝ արձանացան իբրև զմի այր՝ և յանդուգն դիմացուածով խուռն յարձակմամբ

հարեալ ի դիմի, ուր քաջքն այլազգեացն ճակատէին ընդ աջաթև /380/ կողմն. և պատառեցին զգունդն, և պարտեցին զախոյեանսն. – 382.

ԱՐՁԱՆԱՇԱՐ - և ղաշիկ արարեալ յայնկոյս քան զՎանտոսպ, ի տեղւոջն արձանաշար քարակարկառ գոգաձև միջոցի երկուց բլրակաց, որ հայի յԵրիվարաց արկման դաշտն, ի վերայ Լեզւոյ գեաւղջն, որ զաւրացն գեղեցիկ առասպելաբանեն սպիանած վերայն սպանելոցն ի մանկանցն Շամիրամայ: - 334.

ԱՐՁԱՆԱՑՈՒՑԵԱԼ - գլխաւորագոյն և բարձրագոյն յիշատակ արձանացուցեալ անջինջ կտակ առ բազմախաղաց ժամանակս տրամադրեաց: - 392.

ԱՐՃԻՇԱԿՈՎԻՏ - Իսկ Գուրգինի մարզպանի Հայոց առեալ էր ի բաժնի յելս կոյս և /388/ որ ելանէ ի հարաւակողմն, զԱնձահից ձոր, զԿրճունիս, զԿուղան ովիտ, և զբուն զՄարդաստան գաւառ, զԱրճիշակովիտ. զոտն Առնոյ, զԱղբագ Մեծ և զՓոքր, Ակե, Տամբէր, Տագրեան. Ըռնայ, Զարեհաւան: - 390.

ԱՐՃՈՒՃՔ - Եւ հասեալ ի գեօղն Արճուճս՝ մնայր անդէն, և դիտակս թողոյր ի վերայ բլրոցն բարձրաւանդակաց: - 178. այլ որպէս արմատն՝ նոյնպէս և ուռն և պտուղն. եթէ սկիզբն սուրբ է՝ ապա և արմատն, ապա զինչ ուռն՝ նոյն և տեսակ: - 258. այլ որպէս արմատն՝ նոյնպէս և ուռն և պտուղն. եթէ սկիզբն սուրբ է՝ ապա և արմատն, ապա զինչ ուռն՝ նոյն և տեսակ: - 258. բայց վասն զի ոչ ունէր արմատս՝ վաղվաղակի չորացաւ ի տապոյ բանսարկուին – 246. դա աւադիկ արմատ դառնութեան ի վեր երևեալ, և բազումք պղծին նովաւ: - 254. և ընդարմացեալ արմատքն և բոյսքն զգենուլ սկսան զզօրութիւն – 268. և հասեալ ի վերայ ծառոց ի բարձրաբերձ գագաթունսն տերևաթափ առնիցէ /260/ և ընդարմացուցանէ զզօրութիւն արմատոյն – 262. Եւ ոչ արմատոցն միայն օտար և անիմանալի սարասիցն տիպք, այլ և աներևոյթ պահպանողական և անհպելի զգուշաւորութիւնն. – 50. Իսկ ի շնչել հարաւային օդոյն, եռացուցանելով երկրի ի վեր զջերմային զօրութիւնն, զուարթացուցանելով անդնդական բերմամբն զընդարմացեալ արմատս և զբոյսս ի հիւսիսային սառնամանեաց օդոյն շնչելոյ - 188. յորում տեղւոջ քաղաքն Տարունոյ շինեալ էր, ուր բնակեալ բայանայր զօրավարն Տաճկաց, զօրհասական արջոյն բերելով նմանութիւն, որ յաւուրս ձմերայնոյ արմատովք պարենաւորեալ՝ ի մէջ կենաց և մահու անցեալ որջանան ի բոյնս իւրեանց: - 188. որ ունիցի արմատս ինչ ինքնաբոյս և սակաւախնամս – 52.

ԱՐՄԱԻԻՐ - Զայս զգացեալ Երուանդայ՝ ետ տանել զՍահակ կապանօք յԱրմաւիր. – 84.

ԱՐՇԱԿ - այլ և բազումք ի նախարարացն Հայոց ելեալ գհետ Արշակայ գնացին առ Արկադ – 110. Արշակ թագաւորեալ փոխանակ Տիրանայ հօր իւրոյ – 98. Արշակ տուեալ պատերազմ ընդ Մակեդոնացիսն՝ և անդ Կիւրոս քաջապէս արիացեալ առաւելանայր ի գործ պատերազմին. – 72. Արշակայ գնացեալ զկողմամբ Միջագետաց, լաւ համարեալ ընդ ձեռամբ քրիստոնեայ թագաւորի հնազանդել, քան Պարսկականն հնազանդել տէրութեանն. – 110. Բայց միայն զԱրշակ ոմն ի տոհմէն Վարաժնունեաց */փրկվեց/* խնդրեալ դստերն Շապհոյ Բագրատունոյ, զոր առեալ յայնժամ Աւշնի կնութեան յանօրէն ամուսնութիւն. - 372. Բայց յետ բազում պատերազմացն խորամանկ խաբէութեամբ կոչէ առ ինքն Շապուհ զԱրշակ ի դէմս սիրոյ խաղաղութեան, ոչ ինչ յիշատակ զչարեացն գործելոց ի մէջ առնելով. – 102. գնաց Արշակ փախստական յԵկեղեց գաւառ և անդ վախճանի իւրով մահու, թագաւորեալ ամս Է: - 112. գրէթէ անցուցանէր զանցուցանէր զքաջութեամբքն Արշակայ Պարթևի, ընդ քաջացն Քուշանաց, Մարաց և Ելիմացւոց. – 72. և առեալ զգանձս Արշակայ բերին առ Խոսրով: - 112. և առեալ սուրբն Ներսէս զՊապ որդի Արշակայ՝ հանդերձ յունական զօրուն թագաւորեցուցանեն զՊապ ի վերայ Հայոց ի տեղի բուն թագաւորութեանն Արշակունեաց: - 108. Եւ եղեալ պատերազմ մեծ Արշակայ և Խոսրովու յեզր ծովուն Գեղամայ ի մօրին տեղւոջ – 112. և զնախարարսն դարձեալսն յԱրշակայ՝ կացոյց յանձն իւր գահու – 112. Եւ էր ի մէջ Շապհոյ և Արշակայ պատերազմ մեծ զժամանակս կենաց Արշակայ: - 102. Եւ էր ի մէջ Շապհոյ և Արշակայ պատերազմ մեծ զժամանակս կենաց Արշակայ: - 102. և ընկալեալք ի թագաւորէն Արշակայ ըստ գրելոյն ի

ձեռն Վահանայ՝ կացին անկասկած: - 98. Եւ կալեալ Արշակայ զթագաւորութիւնն ամս ԼՋ՝ վախճանի ըստ օրինակի ասացելոց: - 104. Իբրև գիտաց Շապուհ արքայ զոր գործեաց Արշակ՝ թագաւորեցոյց ի վերայ Հայոց զԽոսրով ոմն յազգէն Արշակունեաց: - 110. Իբրև ստուգեաց զազգն, զգաւառն, զաշխարհին, զպատճառ հատուածին, զզետեղելն, զիարդն, զորպէսն, զեղանակն, զդիպուածն, զպատահն և զայլն ամենայն՝ խնդրէ զնա Վաղարշակ յԱրշակայ և առնու ածէ զնա ընդ իւր ի Հայս – 72. Իսկ Արշակ յերկուս թագաւորսն ձեռնտու եղեալ, երբեմն ի Պարսս երբեմն ի Յոյնս, և զապստամբութիւն ի մէջ առեալ Արշակ յերկոցունց կողմանս: - 100. Իսկ Արշակ յերկուս թագաւորսն ձեռնտու եղեալ, երբեմն ի Պարսս երբեմն ի Յոյնս, և զապստամբութիւն ի մէջ առեալ Արշակ յերկոցունց կողմանս: - 100. Իսկ թագաւորն աղաչեալ /100/ զսուրբն Ներսէս զհաշտութիւն խօսել Վաղէսի ընդ Արշակայ, զոր և արար իսկ զհաշտութիւնն: - 102. Իսկ Յունաց առեալ կացուցին ի բաժնին Արշակայ հիւպատս և զօրավարս և կոմսունս, ոչ զոք թագաւորեցուցեալ այնուհետև: - 112. Իսկ նախարարքն Հայոց ի սադրելոյ Վաղէսի գրգռեալ ի մարտ ընդ Արշակայ ի պատերազմ յառաջանան – 100. Մատուցեալ առ թագաւորն Արշակ ասէ. ,,ոչ բարեօք իմացեալ առաջնոց թագաւորացն, զի ոչ կալան զտեղիս զի զայս ի բնակեալ ճոխութեան թագաւորական վայելչապէս խրախճանութեանց. – 100. Մեծն Թէոդոս յետ Վարազդատայ թագաւորեցոյց ի վերայ Հայոց զԱրշակ և զՎաղարշակ զորդիսն Պապայ թագաւորի Հայոց. – 110. մի՛ յամառիք զհետ Արշակայ և բնաւ սպառ սպուռ մերժեալ լինիք ի հայրենեաց բնակութենէ – 110. Ընդ ժամանակսն ընդ այնոսիկ խաղաց գնաց Արշակ ի մուտս կոյս – 98.

ԱՐՇԱԿ ՊԱՐԹԵԻ - գրէթէ անցուցանէր զանցուցանէր զքաջութեամբքն Արշակայ Պարթևի, ընդ քաջացն Քուշանաց, Մարաց և Ելիմացւոց. – 72.

ԱՐՇԱԿ ՔԱՋ - Իսկ յետ Կ ամի անցանելոյ Աղէքսանդրի և անիշխանութեանն Հայոց և Պարսից՝ թագաւորէ Արշակ Քաջ Մարաց և Պարսից և Եգիպտացւոց և Ելիմացւոց ի Բախլ քաղաքի. – 72.

ԱՐՇԱԿՈՒՆԻ - Եւ թագաւորեաց կայսր Թէոդոս փոխանակ Պապայ զՎարազդատ ոմն յԱրշակունի տոհմէ, այր քաջ և պատերազմող, ահարկու մեծամեծաց և փոքունց. – 108.

ԱՐՇԱԿՈՒՆԻՔ - Յետ բառնալոյ թագաւորութեանն Հայոց ի տանէն Արշակունեաց՝ ապա մարզպանք Պարսից կալեալ տիրէին աշխարհիս. – 124. և ըստ մեղաց տանն Արշակունեաց առաջին թագաւորացն մերոց հետազօտեալ լինէին, գնային ոտնխեթի,/ճիշտը՝ոտնխթի/ գայթ ի գայթս և աղտեղասէրս – 182. և առեալ սուրբն Ներսէս զՊապ որդի Արշակայ՝ հանդերձ յունական զօրուն թագաւորեցուցանեն զՊապ ի վերայ Հայոց ի տեղի բուն թագաւորութեանն Արշակունեաց: - 108. և թագաւորեցուցանէ զնա ի վերայ Հայոց փոխանակ հօր իւրոյ Սանատրկոյ, ի տեղի թագաւորութեան քաջացն Արշակունեաց: - 86. Իբրև գիտաց Շապուհ արքայ զոր գործեաց Արշակ՝ թագաւորեցոյց ի վերայ Հայոց զԽոսրով ոմն յազգէն Արշակունեաց: - 110. Յետ բառնալոյ թագաւորութեանն ի տանէն Արշակունեաց, և հայրապետութեանն ի տանէն սրբոյն Գրիգորի՝ Ղևոնդ ոմն աշակերտ սրբոյն Մաշտոցի տեղապահ լինէր սրբոյն Սահակայ, և Յովսէփ եպիսկոպոս և Մովսէս և Մեղէս: - 120. ոչ առ յանձն Յազկերտ նստուցանել զոք ի տոհմէ Արշակունեաց թագաւորել Հայոց – 114. պատմեաց նոցա զհանգամանս տեսլեանն … և դարձեալ զնորոգումն հայրապետութեան և թագաւորութեան ի նոյն զարմէ Արշակունեաց, և զգալուստ նեռինն, և զգալուստն Քրիստոսի, և զհանդերձեալ դատաստանացն, և զհատուցումն իւրաքանչիւր ըստ գործս իւր – 120. պատմեաց նոցա զհանգամանս տեսլեանն … զբառնալ եպիսկոպոսապետութեանն և թագաւորութեանն ի տանէն Արշակունեաց, և զկարգապետել անարժանիցն, և զընտրութիւնն սրբոց – 120.

ԱՐՇԱՄ - բայց կանոնեցի զանուանս ի մատենիս: Տիգրան. Աղրամելէք. Ներս. Ներսէխ. Մարոդ. Արշամ. Արշաւիր. Ասուդ: Պարսից թագաւորք. Քսերքսէս. Արտաշէս երկայնաձեռն. Դարեհ. Արտաշէս. Ողոքոս. Զարսէս. Դարեհ: Ապա Աղէքսանդրոս Փիլիպպեայ Մակեդոնացի տիեզերակալ թագաւոր: - 68.

ԱՐՇԱԻԱՆՍ ԵԴԵԱԼ - և զոր ասէն այսպիսի ինչ է. ,,վա՛յ քեզ, եղո՛ւկ դու երկիրդ Պարսից, յորժամ բազմախուռն գունդք զօրացն Յունաց ի քեզ <u>արշաւանս եդեալ</u>՝ հասանիցեն և հարկանիցեն զքեզ ի սուր սուսերաց, և յառաթուր սմբակաց: - 148.

ԱՐՇԱԻԱՆՔ - և ոչ ինչ փոյթ եղև ումեք հոգալ զուստեք <u>արշաւանս</u> և զգերփանս - 96. Եւս քաջասրտագոյն Շաւասպ Արծրունի, խաղս ձիընթացիկ <u>արշաւանաց</u> գնդակացն՝ զհետ մտրակեալ հանէ ի նմանէ զգնդակն բազում անգամ ասելով – 114. զոր արհամարհեալ Շաւասպ /114/ արձակերեսան զերիվարն ի սիգաքայլ <u>արշաւանս</u> արարեալ՝ աներկիւղ համարձակութեամբ էանց գնաց ճեմ զճեմի առ զօրավարն Անատողի: - 116. Զոր հոյակապն Տրդատ կարգադրեալ վայելչապէս հոգաբարձութեամբ զպատերազմականն հարկանել հարկս ընդդէմ հինից <u>արշաւանաց</u>. զոր կարգապետութիւն և առ սուրբ հրեշտակն գտանեմք /գրքում՝ զտանեմք/ յարարչական նախախնամութենէն, զաշխարհի զօգուտն բերելով: - 398. Իսկ որ տիրէր աշխարհին Ապահունեաց Կայսիկն՝ զիւր զօրսն առ ինքն գումարեալ և որ շուրջ զնովաւ քաղաքայինք և ասպատակքն Պարսից, որք ի Յունացն վերայ առնէին <u>արշաւանս</u>: - 380. յառաջ խաղացուցից զբանսն, արագաքայլ <u>արշաւանօք</u> անցեալ գնացից ընդ շարագրածս անցնիւր պատմագրաց, զազգաբանութիւնն միայն ոճով դրոշմեցից ի շարի աստ – 74. Փութաճեմ ընթացող <u>արշաւանս</u> ի վերայ ձգեալ՝ հասանել ի լեառն տեառն և ի տուն Աստուծոյ մերոյ, ըստ յորդորման մարգարէիցն – 392.

ԱՐՇԱԻԻՐ - այլ վասն բանսարկուացն ելեալ Վաչէ և <u>Արշաւիր</u> գնացին առ Արտաշէս արքայ Պարսից – 82. Ապա դարձան Վաչէ և <u>Արշաւիր</u> ընդ Արտաշէսի, առեալ զթագաւորութիւնն Երուանդայ ի ԼԱ ամի Արտաշէսի արքայից արքայի և թագաւորին Յունաց … ամի. – 86. և զ<u>Արշաւիր</u> ի գործ պատերազմի զօրագլուխ կարգեաց: - 82. Եւ նուազեալ ազգին Արծրունեաց ոչ ոք մնաց, բայց միայն մանուկ մի Համամ անուն, որդի <u>Արշաւիրի</u> ծերոյ եղբօր Խուրէնայ, որ կայր ի դրան արքունի – 90. Զի ահա բարեկամացեալ էր Խուրան Հայր Վաչէի և եղբայր <u>Արշաւրի</u> ընդ Արտաշէսի Պարսից արքայի յերթալն Աբգարու ի Պարս, և եղեալ են դաշինս ի միջի. – 82. որ ապա ի /80/գնալն տիկնոջն յԵուսաղէմ՝ Վաչէ և <u>Արշաւիր</u> երկեան երթալ առ Սանատրուկ – 82. Բայց ի գնալն Խուրէնայ առ Տիբէր կայսր՝ եթող զորդին իւր զՎաչէ և զեղբայր իւր զ<u>Արշաւիր</u> ի Խառան առ տիկնոջն Հեղինէի. - 80. բայց կանոնեցի զանուանս ի մատենիս: Տիգրան. Աղրամելէք. Ներս. Ներսէխ. Մարոդ. Արշամ. <u>Արշաւիր</u>. Ասուդ: Պարսից թագաւորք. Քսերքսէս. Արտաշէս երկայնաձեռն. Դարեհ. Արտաշէս. Ողոքոս. Զարսէս. Դարեհ: Ապա Աղէքսանդրոս Փիլիպպեայ Մակեդոնացի տիեզերակալ թագաւոր: - 68.

ԱՐՇԱԻՐԵԱՆ - Զայսու ժամանակաւ թագաւորեալ Աղէքսանդր Մակեդովնացի տիեզերակալութեամբ երագահաս հասեալ ի վերայ Դարէհի սպանանել զնա. և բառնայ զթագաւորութիւնն Պարսից <u>Արշաւրեան:</u> - 68. ՉԱՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ ՆԱԽԱՐԱՐԱՑՆ ՆԵՐՍԵՀԻ ԶՎԱՉԷԷ ԵԻ ԶԱՐՇԱԻՐԵԱՆ: - 80.

ԱՐՇԷԶ - Առ որ զբարեկամութիւնն ողջ պահելով յղէ զնոյն Քսերքսէս և զ<u>Արշէզ</u> որդի նորուն քառասուն հազարաւ. – 66. և առաջնորդեաց նոցա Քսերքսէս և <u>Արշէզ</u> մինչ ի սուրբ քաղաքն յԵրուսաղէմ. – 66. և <u>Արշէզայ</u> շուրջ փակեալ վահանաւորօք զԼիդէացւոց թագաւորաւն, տագնապ մեծ լինէր. – 64. զոր անյապաղ փութով զզօրսն հարաւային և հիւսիսայինս տալ ի ձեռս Քսերքսեայ և <u>Արշէզայ</u> որդւոյ նորուն Քսերքսեայ զի փութով անդր հասցեն. – 64. Յայնժամ ձայն բարձեալ Քսերքսէս և <u>Արշէզ</u> լի իմաստութեամբ, որպէս թէ ի զօրացն Լիդէացւոց իցեն, ասեն՝ հարան /64/ զօրքն Կիւրոսի, և փախեաւ արքայն: - 66. Նոյն ժամայն Քսերքսէս և <u>Արշէզ</u> վազս առեալ պատահեն Լիդէացւոյն. – 66.

ԱՐՈՒ - և ոչ զոք թուլացուցանէր թագաւորել Զրուանայ, դաշնաւորել երդմամբ՝ մինչև որ ի կնոջէն Ըռեա որ ի Զրուանայ զարմից էր ծնեալ <u>արու</u>՝ անդէն ի ծննդեանն սատակէր. – 14. իսկ որք <u>արուք</u> ընդ արուս զխայտառակութիւն գործէին՝ ծծմբախառն հրով բորբոքեցան, զյաւիտենական հրոյն զառհաւատչեայս յինքեանս կրելով – 336. իսկ որք

արուք ընդ արուս զխայտառակութիւն գործէին՝ ծծմբախառն հրով բորբոքեցան, զյաւիտենական հրոյն զառհաւատչեայս յինքեանս կրելով – 336.

ԱՐՈՒԱՆԹՈՒՆԻ ԳԱՒԱՌ - և հանդիպեցան միմեանց յՈրդոք գեօղ, ի գլուխս ձորոյն Հայոց, որ հանէ յԱրուանթունի գաւառն: - 306.

ԱՐՈՒԱՊՂԾՈՒԹԻՒՆ - սակայն կանոնական սահմանադրութեանն արտաքոյ մնացեալ, գայթ ի գայթս զքրիստոնէութեանն վարս բերելով անառակութեամբք և արբեցութեամբ, խառն անկողնօք և պղծութեամբք աղտապիղծ սարսափելի և զարշելի խառնակութեամբ արուապղծութեամբք – 336.

ԱՐՈՒԵՍՏ - և աստի և անտի երիվարի փորոյն տախտակագործ գրգեալ ըստ փորոյն չափու մածուցեալ ի ձև վահանի զգործ արուեստի զինուն ցուցանեն: - 208. Եւ եղև այր թանգար արուեստիւ և հմուտ վաճառականութեան. հարկանէր ճանապարհս հեռաւորս ի գործ վաճառականութեանն, յԵգիպտոս և ի կողմանս Պաղեստինացւոց. – 158. զոր կազմեաց իւր սատանայ գործի աջողակ յամենայն արուեստ գիտութիւն խարդախութեան, իբրև զպատշաճ դարան դեղեալ նետիւք ընդ խաւար թռուցելոյ յոգիս խաւարամածս: - 248.

ԱՐՈՒԵՍՏԱԳՈՐԾԵԱԼ - Նշանն քրիստոսեան քառածրագիծ փայտիւ արուեստագործեալ ճարտարապետի ումեմն հիւսնեալ – 378.

ԱՐՈՒԵՍՏԱՒՈՐԵԱԼ - օդ ոտիցն կօշկաձև արուեստաւորեալ – 208.

ԱՐՈՒԵՍՏԳԻՏՈՒԹԻՒՆ - Յայնժամ բնակիչք լերինն իբրև տեսին, թէ վարեցաւ իշխանն ի գերութիւն … հասին միաբան բազմութիւնն մեկնակազէնքն Խութայ ի հնարս արուեստգիտութեանն իւրեանց, զոր ի պէտս օժանդակութեան ձմերայնոյ հնարաւորեալ էին: - 190.

ԱՐՈՒԹԻՒՆ - ,,ընդէ՞ր լքանես զձեռն քո և ընդ արութիւն դոցա խառնես վատութիւն և առնես զօրացեալ ի վերայ քո ամենայն աշխարհաց – 282. արդ ընդ արութիւնս իմ վատութի՞ւն խառնիցեմ և ընդ երկիւղիւ մահու անկանիցի՞մ: - 296. դարձեալ զի թէ և գեցաւ ևս՝ այլ քաջութիւնք արութեանն Նինոսի, ըստ օրինակի Բէլայ, առաւել ամբարձաւ անձնասէր ամբարտաւանութեամբ – 44. և անդ Գուրգէն բազում արութիւն ցուցեալ ընդդէմ յունական զօրացն, ոչ միանգամ այլ բազում անգամ – 302. Եւ երթայր աներկիւղ համարձակութեամբ, քաջալերեալ ի միտս և խորհուրդս իւր ըստ պնդութեան արութեան իւրոյ քաջ նահատակն Ապումուսէ: - 288. Եւ զՋրադաշտ մոգ արքայ Բակտրիացւոց և Մեդաց ընկճեալ հալածեաց մինչև ի սահմանս Խեփտաղաց, հզօրապէս տիրեալ բովանդակ Խուժաստանի և կողմանց արևելից և Պարսից, անդր ևս քան զԲահխ և զԴեպուհան , ի Գովմայիդ և ի Գուզբան, ի Շերիբամական /գրքում՝ Շերիբամամական/ և ի Խոճիհրաստան, և միանգամայն ասել մինչև ի ծովն Հնդկաց՝ յոյժ արութեամբ – 44. Իսկ եթէ վատացն՝ արութի՛ւն զերկիւղն համարելի է, ո՞րչափ ևս առաւել քաջացն քաջութիւն ստացեալ երկիւղիւն պատսպարել իւրեանց: - 354. Իսկ ի Վասպուրական տէրութեանն ի տեղւոջ զօր արութեան մնաց Գուրգէն, և այլ տոհմք Արծրունիք: - 298. յոյր ձեռն բազում արութիւն նահատակութեան երևեալ լինէին ի մարտս պատերազմաց և ի հանդէսս ճակատեցելոց ի միայնամարտիկ զինուորութեան: - 170. որոց յիշատակ նոցա եղիցի բազմաց նպաստ յարութիւն քաջութեան և ի զօրութիւն անարեանցն և ի յորդորումն քաջ նահատակացն: - 202.

ԱՐՈՒՍԵԱԿ - արկեալ զիւրև պատմուճան լուսակիզն փայլեալ իբրև զարուսեակ, և յաջոյ ձեռինն ունէր սուսեր, և ի ձախոյն՝ բուրուառ լի խնկով – 232. որոյ տեսեալ զբարձրաբերձ վայելչութիւն հասակին և զպատշաճ գեղ երեսացն, զփաղփեալ գոյնն ի տեսիլ արուսեկի ի մէջ սպիտակափայլ ալեացն պատուաբերի – 204.

ԱՐՋ - ,,արջք գիսակազեղք սպիտակայեղջք որջացեալ ի պրակս անտառախիտ մայրեացդ. արդ թէ հաճոյ թուիցի՝ երթիցուք որսալ զնոսա,,. – 100. Իսկ իբրև լուաւ թագաւորն զայս գոյժ աղաղակի հասեալ ի դուռն արքայի՝ մրմռեալ իբրև զառիւծ և իբրև զարջ տարակուսեալ – 180. յորում տեղւոջ քաղաքն Տարունոյ շինեալ էր, ուր բնակեալ բայանայր զօրավարն

Տաճկաց, զօրհասական արջոյն բերելով նմանութիւն, որ յաւուրս ձմերայնոյ արմատովք պարենաւորեալ՝ ի մէջ կենաց և մահու անցեալ որջանան ի բոյնս իւրեանց: - 188.

ԱՐՋԱՄ - Արջամ թագաւորեալ Հայոց՝ զազգն Բագրատունեաց արկանէ ընդ բազում տառապանօք, վասն արձակմանն Հիւրկանոս քահանայի ի կապանաց բանտին – 74. Եւ կեցեալ Արջամ ամս Ի վախճանի – 76. Եւ ոչ յանձին կալեալ Արջամայ վստահաբար առ իւր ունել զԱնիանոս՝ յղէ զնա ի Հայս: - 76.

ԱՐՏԱՋ - առեալ էր ի բաժնէ /ճիշտը՝ ի բաժնի/ Գագիկ իշխանի … զճուաշ գաւառն և զԹոռնաւան, Արտազ,Մարդաստան, Գառնի, Առբերանի, Աղանդռոտ, Բառիլովիտ, Պալունիք և Մեծնունիք, Տոսպոշտունիք, Բոգունիք, Գուգան գաւառ, Արտաշէսեան: - 388.

ԱՐՏԱՋԱԿԱՆ ԳԱՒԱՌ - Բայց իբրև եղև մեծ պատերազմ սրբոյն Վարդանայ ընդ Մշկանին և ընդ զօրս Պարսից ի յԱւարայրեան դաշտին, յԱրտազական գաւառին. – 128.

ԱՐՏԱԹԱՓԻԼ - որ ի բախմանէ քարի և երկաթոյ կայծակունք արտաթափին, այլ և ի փայտից ընդ միմեանս յիրար շփելոյ, որպէս և անուոյ բնաւորեցաւ լինել, որ ի սաստիկ շրջագայութենէ սայլիցն բազում անգամ և առեղք փայտիցն վառմամբ հրոյ հրդեհին: - 52.

ԱՐՏԱՄԱՏ,ԱՐՏԱՄԵՏ - Իսկ զանուն քաղաքին կոչեցին Արտամատ, որ թարգմանեալ ստուգաբանի Արտաշէսի ձեռակերտ, կամ թէ՝ Արտաշէսի եկք – 88. և ի յանցին հրձիգ արար զմեծ եկեղեցին յաւանին Արտամետոյ: - 206. Պատմեաց զայս մեզ մեծ քահանայն Սամուէլ յաւանին Արտամետ. – 206.

ԱՐՏԱՄԵՏ - Տե՛ս ԱՐՏԱՄԱՏ

ԱՐՏԱՇԱՏ - Գնայ զկնի նոցա և երջանիկն Զուիթայ երէց յԱրտաշատէ զկնի հաւատացեալ Հրէիցն – 104. և խաղացուցանեն յԱսպահան, առնուն և զՎաղարշապատ և զԱրտաշատ. – 104. Եւ հասեալ Շաւասպայ Արծրունւոյ ամբարշտի յԱրտաշատ հանդերձ մարզպանաւն՝ շինեն ի դուռն քաղաքին զորմզդական մեհեանն, /124/ և զկրակապաշտութեան մոլութիւն բորբոքեն ի նմա. – 126. Ի սորա յերրորդ ամի թագաւորութեանն ի վերայ Հայոց աստուածատուր բարկութեամբ անդնդաշարժ վրդովմամբք ներքնագոյն խորոցն պատահեալ միմեանց սահանախաղաց դղրդմամբ, հիմնաշարժ տապալմամբ, /356/ ներքսագոյն երկրի թուլացեալ պնդափակ աղխեալ սանդարամետական սահմանին, բարկութեան հողմոց շնչեալ ընդ ջրոցն խաւարայնոց, ի կոհակս անդնդաքակս զթանձրայատակ երկրի զկարծր և զծանրալիր անկշիռ անբաւութիւնն տատանեալ, մինչ յերեսս երկրի ի վեր մղեալ հանդէպ քաղաքին Արտաշատու /գրքում՝ Արտաշասու/, որ Բլուրն նորուն ասի – 358.

ԱՐՏԱՇԷՍ - ԹԱԳԱՒՈՐԵԼՆ ԱՐՏԱՇԷՍԻ Ի ՎԵՐԱՅ ՀԱՅՈՑ: - 86. այլ վասն բանսարկուացն ելեալ Վաչէ և Արշաւիր զնացին առ Արտաշէս արքայ Պարսից – 82. Ապա դարձան Վաչէ և Արշաւիր ընդ Արտաշէսի, առեալ զթագաւորութիւնն Երուանդայ ի ԼԱ ամի Արտաշէսի արքայից արքայի և թագաւորին Յունաց … ամի. – 86. Ապա դարձան Վաչէ և Արշաւիր ընդ Արտաշէսի, առեալ զթագաւորութիւնն Երուանդայ ի ԼԱ ամի Արտաշէսի արքայից արքայի և թագաւորին Յունաց … ամի. – 86. առնու զնա Սահակ կնութեան հրամանաւ Արտաշէսի, և կնքեալ աշխարհն հաստատէ Սահակայ ի սեպհական ժառանգութիւն. – 90. Բայց դեսպան արձակեալ Արտաշէսի զՀամամ առ կայսր Ադրիանոս վասն Բարքոբայ աւազակի և նորուն պատերազմին յԱսորիս. – 92. բայց կանոնեցի զանուանս ի մատենիս: Տիգրան. Ադրամելէք. Ներս. Ներսէխ. Մարոդ. Արշամ. Արշաւիր. Ասուդ: Պարսից թագաւորք. Քսերքսէս. Արտաշէս երկայնաձեռն. Դարեհ. Արտաշէս. Ողոքոս. Զարսէս. Դարեհ: Ապա Աղէքսանդրոս Փիլիպպեայ Մակեդոնացի տիեզերակալ թագաւոր: - 68. գուցէ յորժամ կատարիցեն զչարիսն զոր խորհեալ են ի վերայ քո, որպէս լուաք ի հաւատարմաց իւրեանց՝ օժանդակութեամբ Արտաշէսի մերժիցեն և զզարմ և զզաւակ քո ի թագաւորութենէ Ասորոց: - 82. Եւ անդէն ոչ կարացեալ շինել զերկիրն այն հուպ ընդ հուպ մինչ յութերորդ ամն Արտաշէսի – 90. և գրէ առ Սմբատ, թերևս տացէ ի ձեռն նորա զմանուկն Արտաշէս: - 84. Եւ զհետ մտեալ Երուանդայ խոյզ և խնդիր լինել Արտաշէսի. –

82. և ի խնդրոց նախարարացն և սրբոյն Սահակայ թագաւորեցուցանէ Հայոց Վռամ երկրորդ զԱրտաշէս, որ և Արտաշիր: - 116. և կացին մնացեալ անդր մինչև ի դարձն Արտաշէսի որդւոյ Սանատրկոյ, որ եկեալ այսր թագաւորեաց, սպանեալ զԵրուանդ: - 82. և մեծարի յԱրտաշէսէ Պարսից արքայէ, մինչ ձեռնտու լինի նմա /84/ զօրու օգնականութեամբ – 86. Եւ յարբունս հասելոյ Արտաշէսի՝ երթայ գնայ առ Արտաշէս Պարսից արքայն – 84. Եւ յարբունս հասելոյ Արտաշէսի՝ երթայ գնայ առ Արտաշէս Պարսից արքայն – 84. և յերթալն նորա և ի դառնալն՝ գայ գտանէ վախճանեալ զթագաւորն Արտաշէս ի Մարինդ – 92. Զի ահա բարեկամացեալ էր Խուրան Հայր Վաչէի և եղբայր Արշաւրի ընդ Արտաշէսի Պարսից արքայի յերթալն Աբգարու ի Պարս, և եղեալ են դաշինս ի միջի. – 82. զի ի գնալ Արտաշէսի յայսմ տեղւոջէ՝ ոչ ևս յաւել ձեռն Երուանդայ տագնապել զնա – 88. Իբրև յաջողեցաւ Արտաշէսի ամենայարդար պատրաստութեամբ և աշխարհաշէն հոգաբարձութեամբ, որպէս բացայայտեն գիրք պատմագրաց – 86. Իսկ զանուն քաղաքին կոչեցին Արտամատ, որ թարգմանեալ ստուգաբանի Արտաշէսի ձեռակերտ, կամ թէ՝ Արտաշէսի եկք – 88. Իսկ զանուն քաղաքին կոչեցին Արտամատ, որ թարգմանեալ ստուգաբանի Արտաշէսի ձեռակարտ, կամ թէ՝ Արտաշէսի եկք – 88. Իսկ Սմբատ առեալ զԱրտաշէս բնակէ ի Զարաւանդ Ատրպատականի – 82. իսկ Սմբատ առեալ զԱրտաշէս գայ բնակէ ի բարձրաւանդակ լերինն Վարագ: - 82. մանաւանդ զի աւերեալ էր երկիրն յասպատակէ Պարսից, այն ինչ հուպ մեռանելն Երուանդայ և ընդ թագաւորելն Արտաշէսի: - 90. Յետ այսր առեալ Սմբատայ զԱրտաշէս ըստ ձևոյ տառապելոյ միոյ, որ շրջիցի խնդրիցէ օր ըստ օրէ զբաւականութիւն աւուրն – 84. Յետ Արտաշէսի թագաւորէ Արտաւազդ, ապա Տիրան որդի Արտաշէսի, ապա Տիրան, ապա Տիգրան Վերջին, ապա Վաղարշակ: - 92. Յետ Արտաշէսի թագաւորէ Արտաւազդ, ապա Տիրան որդի Արտաշէսի, ապա Տիրան, ապա Տիգրան Վերջին, ապա Վաղարշակ: - 92. յղեն զոմն ի ճգնաւորացն առ տիկինն, զկռոցն յանդիմանելով զսնոտի և զանօգուտ պաշտօնն, որպէս և սուրբն Քռիւսի առ Արտաշէս: - 88. յոր ձեռն հաւատաց Արտաշէս զգաւառն Աղբագ. – 90. Նոյն ժամայն առեալ Սմբատայ զԱրտաշէս գայ անցանէ ի վայր ի լեռնէն. – 84. Սահակ որդի Վաչէի կացեալ ի դրան Արտաշէսի շքեղ և երևելի ճոխութեամբ – 90. վասն զի ըստ Պտղոմեայ և Աղէքսանդրի սահմանադրութեանն, կամ թէ մեր Արտաշէսի որդւոյ Սանատրկոյ՝ ի Վասպուրական գաւառացն համար թուեալ է գաւառն այն – 332. - Քանզի ոչ կարացեալ իմանալ զդէմ փախստէի Արտաշէսի, և այն ի տեսչութենէ Աստուծոյ այնպէս պահեալ լինէր – 84.

ԱՐՏԱՇԷՍԵԱՆ - առեալ էր ի բաժնէ /ճիշտը՝ ի բաժնի/ Գագիկ իշխանի … զճուաշ գաւառն և զԹոռնաւան, Արտազ,Մարդաստան, Գառնի, Առբերանի, Աղանդռոտ, Բառիլովիտ, Պալունիք և Մեծնունիք, Տոսպոշտունիք, Բոգունիք, Գուգան գաւառ, Արտաշէսեան: - 388. ընդդէմ նայելով լերանցն Այրարատեան ազատն Մասեաց, ուր Արտաւազդն Արտաշէսեան քարավիժեալ խոհամանայր ի կոշտն կոհակին: - 392.

ԱՐՏԱՇԷՍԵԱՆ ԱՒԱՆ - զոր ոչ անունկնդիր լեալ Աշոտ՝ վերջոտնեալ եկն բանակեցաւ յԱրտաշէսեան աւանին, և Ցիսէ ի Վան քաղաքի: - 334.

ԱՐՏԱՇԷՍ ԵՐԿԱՅՆԱՁԵՌՆ - բայց կանոնեցի զանուանս ի մատենիս: Տիգրան. Աղրամելէք. Ներս. Ներսէխ. Մարոդ. Արշամ. Արշաւիր. Ասուդ: Պարսից թագաւորք. Քսերքսէս. Արտաշէս երկայնաձեռն. Դարեհ. Արտաշէս. Ողոքոս. Զարսէս. Դարեհ: Ապա Աղէքսանդրոս Փիլիպպեայ Մակեդոնացի տիեզերակալ թագաւոր: - 68.

ԱՐՏԱՇԻՐ - Եւ անմիաբանք լեալ ընկեցին զսուրբն Սահակ յաթոռոյ եպիսկոպոսապետութեանն և զԱրտաշիր ի պատուոյ թագաւորութեան. – 118. Եւ ի թագաւորել Արտաշրի խաղաղանայր երկիրս առ վայր մի ի շփոթմանց պարսկական զնդի. – 116. և ի խնդրոց նախարարացն և սրբոյն Սահակայ թագաւորեցուցանէ Հայոց Վռամ երկրորդ զԱրտաշէս, որ և Արտաշիր: - 116. և հարցեալ վասն որոյ ամբաստանն եղեն զԱրտաշրէ. – 118. Եւ յետ մահու նորա նստուցին թագաւոր զորդի նորին զԱրտաշիր, կարի տղայ մանուկ: - 152. և ոչ առ զխաղաղութիւն մինչև ի Պոռբոս կայսր, որ արար խաղաղութիւն ընդ Արտաշրի: -

94. Եւ Վռամ … փութացաւ կոչեաց դարձեալ ի դուռն զԱրտաշիր և զսուրբն Սահակ բազմութեամբ նախարարացն Հայոց. - 118. զոր ոչ առ յանձն սուրբն Սահակ գրել ինչ վասն որոյ չարաբանեն զԱրտաշրէ: - 118. զոր սպան Ստախպրացին Արտաշիր որդի Սասանայ – 166. Ընդ որ զչարեալ նախարարքն Հայոց՝ տաղտկացան ընդ գիջանալն, և խորհեցան զոչ թագաւորելն Արտաշրի ի վերայ Հայոց.– 116. Իսկ Արտաշիր յանդգնագոյնս և առանց պատկառանաց զհետ ամօթալից ախտին գիջութեան իգամոլ ցանկութեանցն ընթացեալ՝ ոչ միայն ի գիշերի այլ և ի տունջեան յանդիման արեգական, անխտիր կատարէր զցանկականն, զանասնական գիջութեամբքն զանցուցեալ: - 116. Իսկ Խոռեմայ առեալ զզօրսն երթեալ ի թագաւորանիստն, հրաման տուեալ այլոց ոմանց՝ սպանին զտղայ թագաւորն զԱրտաշիր: - 154. Իսկ Վասակ Արծրունի խոյս տուեալ գնաց առ Արտաշիր Պարսից – 112. մի գուցէ մատուցեալ առ Արտաշիր ոմանց սուտակասպաս չարախորհաց կեղծաւորութիւն իմն զմէնջ առնուցուն – 114. Մշկանս այս փոխանակ Արտաշրի մեր թագաւորի մտեալ ունի զաշխարս հրամանաւ Վռամայ Պարսից արքայի: - 118. յեղակարծում ժամանակի հասանէ համբաւ մահուն Արտաւանայ, և տիրել Պարսից Ստահրացւոյն Արտաշրի Սասանականի. – 92. յղէ ի Հայս զԱրտաշիր որդի իւր - 112.

ԱՐՏԱՇԻՐ ՍԱՍԱՆԱԿԱՆ - յեղակարծում ժամանակի հասանէ համբաւ մահուն Արտաւանայ, և տիրել Պարսից Ստահրացւոյն Արտաշրի Սասանականի. – 92.

ԱՐՏԱՇԻՐ ՍՏԱԽՐԱՑԻ - զոր սպան Ստախպրացին Արտաշիր որդի Սասանայ – 166.

ԱՐՏԱՍՈՒԱԼԻՑ - Դարձեալ բողոք հարեալ, ձեռն զօձիւք արկեալ և զհերս խզեալ, զդէմս կեղեքեալ և ձայնս առեալ կական ողբօք արտասուալից հառաչանօք, վայ ի բերան առեալ և խիղբ – 180. ձայն բարձեալ արտասուալից առ Դերենիկն, և զսուսեր մերկ ի ձեռին ունելով, և վաղր և սակր մի՝ ասէ. „որդեա՛կ իմ Դերենիկ, ողջոյն քեզ, ողջոյն քեզ, ողջոյն քեզ. ես ելի գնացի ի յաշխարհն Յունաց„: - 320.

ԱՐՏԱՍՈՒՔ - Բայց Աշոտ, իբրև եհաս ժամ ելիցն իւր յաշխարհէս՝ յանհունս բերեալ զզեղջ և զապաշաւանս յորդահոսան արտասուօք զխոստովանողականն ի դիմի հարեալ միջնորդութիւնն – 336. և ամենեքեան միաբան յարտասուս եղեալ լային. – 228. Եւ ապա անտի ոչ սակաւ ինչ լինէր յաւուր յայնմիկ ձայն լալոյ, հեղումն արտասուաց յահագին բորբոքմանէ սրտից նոցա և գութ խանդաղատանաց թագարորին և իշխանացն և զօրացն ամենեցուն և բնակչաց քաղաքին. – 154. և առաջի արկեալ զհառաչանսն, զարտասուսն, զխոստովանութիւնն, զողորմագին պաղատանսն, մինչ ի մահ զտրտմելն, զկենաց դեղն հայցել, զմարմին և զարիւն որդւոյն Աստուծոյ ի թողութիւն մեղաց – 386. և ելեալ արտաքոյ բանակին յորդառատ հեղոյր արտասուս ի վերայ բեկման իշխանին և այլոց նախարարացն. – 218. և ինքն ամբարձ զձեռս իւր յերկինս, յորդառատ արտասուօք եկաց յաղօթս, ասելով զերեսուն և չորրորդ սաղմոսն և զութսուն երկու – 230. և միաբան յարտասուս հեղեալ լային, և դառնապէս ողբս յողբս հարեալ անմխիթար սգոյ – 114. Եւ յերկարեալ Աղան զողբսն, ջերմեռանդն յորդահոս արտասուաց բղխմունս առաջի սրբոյն Սահակայ և մեծ սպարապետին Սահակայ և այլոց նախարարացն. – 112. և ոչ ոք կարէր երգել զօրհնութիւն սաղմոսացն և կամ լսել ի գթալից արտասուաց ժողովրդեանն միանգամայն և յայնչափ խնդութենէն: - 154. Եօթներորդ՝ զի զվարկ փոխարինին լուեալ ի Տեառնէ՝ ոչ զարհուրեցաւ վերադարձիլ արտասուօք ի ջնջումն մեղացն. – 24. իսկ եթէ առ փոքրն այնչափ ամբաստանէր զանձն մարգարէին՝ քանի՞ ևս ողբոց և արտասուաց արժանի են՝ որ յՈրդին Աստուծոյ ամբարշտեն շրթամբք իւրեանց: - 258. լի արտասուօք է բանս – 240. լի արտասուօք և հեծեծանօք յիշեցեալք զվերին Սիօն մայրաքաղաքն սուրբ – 252.

ԱՐՏԱՒԱԶԴ - և դիմեցին քաջասրտագոյնս ի վերայ սուսերամերկք զինեալք ի մէջ ամբոխին, Արտաւազդ և Վասակ Մամիկոնեանք - 98. ընդդէմ նայելով լերանցն Այրարատեան ազատն Մասեաց, ուր Արտաւազդն Արտաշէսեան քարավիժեալ խոհամանայր ի կոշտն կոհակին: - 392. Յետ Արտաշէսի թագաւորէ Արտաւազդ, ապա Տիրան որդի Արտաշէսի, ապա Տիրան, ապա Տիգրան Վերջին, ապա Վաղարշակ: - 92. Փութանակի և վաղվաղակի

իւրաքանչիւր զօրօք անդր հասանէին … ի տոհմէն Գնունեաց Գրիգոր որդի Հազրի Զ այլ ևս հարազատօք և զօրօք իւրեանց. ի տոհմէն Ընտրունեաց Արտաւազդ Է հարազատօք և զօրօք իւրեանց. – 174.

ԱՐՏԱԻԱԶԴ ԱՐՏԱՇԷՍԵԱՆ - ընդդէմ նայելով լերանցն Այրարատեան ազատն Մասեաց, ուր Արտաւազդն Արտաշէսեան քարավիժեալ խոհամանայր ի կոշտն կոհակին: - 392.

ԱՐՏԱԻԱՆ - ետուն գոյժ զմահուանէ թագաւորին և կացուցին փոխանակ Վաղարշու թագաւոր զորդի իւր զԽոսրով ձեռնտուութեամբ Արտաւանու Պարսից արքայի: - 92. ի կոր կործանման կացեալ Խոսրով մեր թագաւոր, և ջանայր առնուլ զվրէժ մահու հարազատին իւրոյ, թագաւորին Արտաւանայ, զոր և առնէր իսկ – 92. յեղակարծում ժամանակի հասանէ համբաւ մահուն Արտաւանայ, և տիրել Պարսից Ստահրացւոյն Արտաշրի Սասանականի. – 92.

ԱՐՏԱՔԻՆ - այլ ըստ օրինակի ասացելումն ի Տեառնէ Մովսէսիւ՝ առ ի յանդիմանութիւն արտաքնոցն, զճարպ մեռելոտւոյ տանել ի գործ ինչ արտաքին, այլ ոչ թէ ի կերակուր: - 54. այլ ըստ օրինակի ասացելումն ի Տեառնէ Մովսէսիւ՝ առ ի յանդիմանութիւն արտաքնոցն, զճարպ մեռելոտւոյ տանել ի գործ ինչ արտաքին, այլ ոչ թէ ի կերակուր: - 54. Այլ հինիցն ասպատակքն, սովոյն բռնութիւն, գերիվարացն տառապանք, գազանաց յարձակմունքն, ներքին և արտաքին վրդովմունքն հոլանի առնէին զաշխարհս: - 316. Այլ ներքին և արտաքին յարձակմունքն ոչ կարէին ի ներքս դիմել մարտնչել ընդ անյաղթ զօրութեան զօրացելոյն ի Քրիստոսէ: - 308. և ամենայն ուրեք ամենեցուն բնակաց աշխարհիս անդորրեալ յանհոգս և յապահովս լինել ի ներքին և յարտաքին հազմարարաց: - 388. և այլ ոմն յարտաքին իմաստնոց ասէ, ընդ աներկիւղ ի ճանապարհ մի երթալ: - 354. և արտաքնոցն ուշիմագոյնքն ասեն, եթէ, ամենայն մարմին շարժուն՝ յայլմէ բնաւորեցաւ շարժիլ. – 54. և էր ալևոր ըստ մարմնոյ և հնացեալ արտաքին մարմինն, բայց ներքինն նորոգեալ և գեղեցկատեսիլ ըստ պատկերի արարչին. – 204. զի և աստուածատուր ասացելովքն թևակոխեսցուք յարտաքնոցն վէպս – 18. Զի թէպէտ և Գուրգէն մեծաւ զօրութեամբ ունէր զդէմ յարձակելոցն ի վերայ, որոց զիշխանականն ճեպէին հասանել գահ, կամ որ արտաքին տաճկական պատերազմունքն բռնաբար ի ներքս դիմէին՝ սակայն ոչ յապահովանայր դեռ երկիրն: - 316. Իսկ ի վերայ բազում հինիցն եկելոց ի վերայ Գուրգինի և սաստիկ պատերազմացն զոր պատերազմեցաւ յաղթող նահատակութեամբ. ոչ միայն յարտաքին թշնամեացն որ շուրջանակի պաշարէին, բազում այն էր որ ի ներքին ընտանեաց հարազատաց, ազգականաց դրժողաց, ուխտազանցաց, ստոց և ստերդմանց յուզէին աղմուկք: - 308. սոքա բնակին յամուրս լեռնականս, յանհոգս խաղաղացեալք յարտաքին թշնամեաց, և հարկք և հասք արքունի ի յինքեանս մնալով – 274.

ԱՐՏԱՔՈՅ - բայց քանզի պատմագրութեան է ժամս և ոչ գովասանականութեան՝ արտաքոյ եղէց յոլովից բանբասանաց. – 300. ,,իսկ եթէ եկեսցէ առ իս գիր յարքունուստ, կնքեալ մատանեաւ արքայի. և իցէ գրեալ ի նմա հրաման՝ գալ ինձ առ քեզ կամ երթալ յարքունիսն՝ ոչ ելից արտաքոյ հրամանաց նորա: - 286. Բայց հրաման քո ճոխութեանդ ձգեաց զիս յայս մեծ ձեռնարկութիւնս, սակս որոյ բացաձգեցայց արտաքոյ շաղակրատոյ լեզուաց փառամոլ ոգոց: - 122. Բայց արդ որպէս յառաջագոյն հատուցի զարտաքոյ պարսաւանաց զիս ներքոյ գրել, վասն ոչ ոճով զսրայս կարգել դնել ի շարի աստ զշարագրածս, վասն ոչ բաւելոյ զանչափութիւնն ի մի վայր գումարել յանմասնաւորաբար նշանակութեամբ – 308. և անհակառակող հաւանութեամբ հեզահայեաց առ միմեանս սիրոյ յորդորմամբ արտաքոյ վատթարին խոհականաբար մնալով, քաջախորհուրդ առատաբուղխ խաղացմամբ իմաստութեանն զմիմեանս բռնահարելով, զօտարոտին ի բաց վարատելով զբղջախոհութեան անհանճարութիւն՝ զլաւն և զյոյժ օգտակարագոյն ընտրութեամբն գիրկս արկին. – 388. Եւ այս արտաքոյ անյուսութեանն ելանելով, հայեցեալ ի քաղցրութիւնն Աստուծոյ: - 338. Եւ արտաքոյ յետ ճանապարհին իմացաք էշ մատակ, որ ունի յաւանակ – 50. և բախեցին արտաքոյ զդուռնն ուր մտեալ էր իշխանն, և

կալեալ զնա հանին ի բարձրագոյն տեղիս ամրոցին, և եդին ի բանտի ի ներքսագոյն սենեկացն. – 348. Եւ Գուրգէն հեզաբար, արտաքոյ ամբարտաւանութիւն առնէ նմա պատասխանիս, ասէ. – 330. և ելեալ արտաքոյ բանակին յորդառատ հեղոյր արտասուս ի վերայ բեկման իշխանին և այլոց նախարարացն. – 218. և ելեալ նստաւ ի ջորւոջն, զոր պատրաստեալն ունէին անդէն առ դրան վրանին, և հանին արտաքոյ ղաշիկ բանակին՝ դարձուցեալ դառնալ ընդ նոյն ուստի եկն: - 346. և նստան ի ներքս ի քաղաքին ԻԱ օր. ապա ելեալ բանակեցան արտաքոյ քաղաքին, և զքաղաքն այրեցին հրով: - 142. և ոչ ոք ամենևին իշխէր ելանել արտաքոյ կամաց ձեռին նորա ի մեծամեծաց մինչև ի փոքունս. – 200. Եւ փակեաց Տէր Աստուած արտաքոյ նորա, ասէ, զտապանն: - 32. Զայս ոչ եթէ սակս ուրացութեան ինչ ամբաստան լինի զինքեանէ, կամ վասն ժողովոցն, այլ զի ոչ յանդիմանեցին զթագաւորն, որ արտաքոյ օրինացն ամբարշտէր. – 258. Զոր և Աղէքսանդրի Մակեդոնացւոյ ի դէպ ելանէ առ Ողըմպիադայ վիպագրութիւնք. թերևս ի մասն ինչ արտաքոյ սահմանաց դրախտին հասանել. – 50. թերևս արտաքոյ տանջանացն կայցեն մնայցեն, թէպէտ և ոչ ընդ փեսային վայելեն ի հարսանիսն: - 338. Իսկ սահմանք վայրիցն ահաւորք և զգալիք միանգամայն և արտաքոյ զգալեաց. – 52. Իսկ Սմբատ որ և Ապլաբաս սպարապետն Հայոց, իբրև գիտաց թէ ոչինչ օգուտ բերէ արտաքոյ հրամանացն նորա լինել՝ փութացաւ եկն առ նա, և ընկալեալ ի նմանէ՝ բնակեաց ինքն և իւրքն հանդերձ իւրաքանչիւր կալուածովք առանց կասկածանաց. – 270. մանաւանդ յառաջագոյն պատրաստեալ պատսպարեաց թղթովք և պատարագօք առ թագաւորն և առ զօրավարն գնալ ըստ հրամանաց նոցա, և ոչ ինչ արտաքոյ կամաց նոցա խորհել կամ գործել ինչ: - 270. միայն զի եկեսցէ ի բան արքունի և մի ելցէ արտաքոյ կամաց թագաւորին. – 288. Յայնժամ հրամայեաց զօրավարն քարշել զմարմինս սրբոցն արտաքոյ քաղաքին, լինել կերակուր շանց և թռչնոց երկնից. – 268. նորին հրահանգեալ կրթարանի ուսումնասիրութեանն վարժիւք ոռոգացեալ, այր քաղցրաբարոյ և հեզահայեաց, հասարակաբար առ հասարակ զինքն վարկանելով, արտաքոյ ամբարտաւանական բարձրայօնութեանն՝ կալով յաշտիճան հեզոցն, դրուատեալ ի փրկչէն մերմէ Յիսուսէ Քրիստոսէ: - 376. որ արտաքոյ պարսպեալ բուրաստանին արքունի կացցէ: - 52. որ յետ Ե ամաց վախճանի, կեցեալ կեանս արտաքոյ իրաւանց: - 118. սակայն կանոնական սահմանադրութեանն արտաքոյ մնացեալ, գայթ ի գայթս զքրիստոնէութեանն վարս բերելով անառակութեամբք և արբեցութեամբ, խառն անկողնօք և պղծութեամբք աղտապիղծ սարսափելի և գարշելի խառնակութեամբ արուապղծութեամբք – 336.

ԱՐՏԱՔՈՒՍ - և արծաթագործ եօթնփորձեան հրաբորբոք ճարտարապետն ի բովս հալոցացն զուտ և վճիտ արծաթ ընտրելով, արծաթեղինեան զփայտեղէնն պատեալ արտաքուստ – 378.

ԱՐՏԱՔՍ - Այսր աղագաւ արտաքս վազեցի զմեծս զայս բանգտութեան ընթանալ ասպարէզ, զօրաւորաց մտահարուստ արանց կարօտացեալ բաւականանալ իմով անհեդեդ պատմողական հանդիսիւ – 352. Բուռն հարեալ սպարապետն զձեռանէ նորա և հանեալ արտաքս, քաջալերելով լինել առանց /344/ երկիւղի. – 346. գրէ թուղթ հաւատոց առ Ղևոն կայսր Յունաց, և ընկալեալ ի նմանէ պատասխանիս՝ բազում ինչ ի Կուրանէ անտի իւրեանց արտաքս ընկէց զյոյժ առասպելագոյնն, քանզի ստուգապէս ծանեաւ զզօրութիւնն. –166. և գոռոթ /ճիշտը՝ դոռոթ/ տուեալ յանձնիւր որջարանաց զօրէն մեղուացն ի մեղուանոցացն արտաքս դիմեալ ի ժամանակս խաղացման ծննդոցն, առաջնորդութեամբ իւրեանց որդնածին առաջնորդին – 398. և զգոյն երեսաց իւրոց բոցագոյն դարձուցեալ, խրոխտացեալ և մրմռեալ իբրև զգազան արիւնարբու՝ հրաման ետ տանել արտաքս յերեսաց ատենին – 246. և ոչ եղեն ունկնդիր մաղձահամ և ժախահոտ բանիցն, իբրև ի փեռեկեալ գերեզմանէ զնեխահոտութիւնն արտաքս արկանելոյ. – 292. Եւ ոսկեգործ ականակապ կազմեալ՝ պատեաց ոսկով զփրկագործ սուրբ խաչն, և ընդելուզեալ մարգարտով զարդարեաց զսխրագործ փայտն, հիւսնեալ ի

մէջ անուշահոտ փայտից, թողեալ մասն ինչ արտաքս ոսկեպատ պահարանին, յառաջնում իւրոյ քառածրագիծ խաչակերտ փայտեղէն զգրոցկանն: - 394.

ԱՐՏԱՔՍ ԵԼԱՆԵԼ - Եւ ի սաստիկ բախմանէ խուռն նիզակացն և ի զինուց փայլելոյ և շողալոյ սուսերացն և սրնգելոյ աղեղանցն լարելոյ՝ հրաձգութիւն իմն արտաքս ելանէր իբրև յամպոց ճայթմանէ – 232.

ԱՐՏԱՔՍ ԵԼԵԱԼ - Այլ ելեալ արտաքս ի ռազմէն՝ դարձաւ փախստեայ ընդ ճանապարհին Հողցայ. – 368. Եւ ելեալ արտաքս ի սենեկէն՝ և նստան ուրախ լինել: - 284. Եւ ելեալ արտաքս հանգոյն մատնչին ի տնօրինականս Փրկչին, ունելով ընդ ինքեան զհրովարտակն գրեալ այսպէս. – 212. Եւ ելեալ նոցա արտաքս՝ սկսաւ խօսել Մահմէտ հրապարակաւ զնոյն բանս. – 160. մինչ ելեալ արտաքս տիկինն ի հետիոտս լի հառաչանօք՝ բաւական համարել զգործ նահատակութեանն, զոր ետ Աստուած ի ձեռս Աշոտոյ. – 176. մինչ քաղցրատենչ քունն ի վերայ հասանէր որ զպահպանութիւն գիշերոյն պահէին՝ նորա ամբարձեալ զպղծալից ձեռն ի սրբութիւն սրբոցն և առեալ զսուրբ նշան խաչին Քրիստոսի և ընդ պատուհանն արտաքս ելեալ – 378. Նոցա ելեալ արտաքս յատենէն մեծաւ խնդութեամբ, և յոյժ զուարճացեալք փութային ելանել ի մարմնոյ աստի և մտանել առ Աստուած – 266. Որոց դիպող ժամ գտեալ՝ արտաքս ելեալ ի բանակէն, զերծեալք իբրև զայծեամն ի հնարից որսորդաց՝ գնացին խաղաղութեամբ յիւրեանց տեղիս և զնա թողին լքեալ ամօթալից: - 344.

ԱՐՏԱՔՍ ՀԱՆԵԱԼ - ,,բնութեամբ ճշմարտութեամբ աշխարհիդ Վասպուրական ձեր լեալ էր ժառանգութիւն, և զձեզ արտաքս հանեալ թողեալ են նախնեացն Աշոտի: - 362. ,,ի հայրենեացն արտաքս հանեալ էք ի ժառանգութենէ և մերժեալ ի բաժնէ եղբայրական հասէ. զա՞յս ևս բռնազբօսել ջանայք, զոր Աստուած ժառանգեցոյց ինձ: -330.

ԱՐՏԵՄ - ասէ՝ զի դայեկաբար զորդիսն Սանատրկոյ սնուցանէաք, և դու ի թագաւորելդ քոյ որոյ երդմունս արարեալ յԱրտեմի և յԱրամազդ աննկասկած կալ մնալ վասն որոյ երկիւղն ունէր: - 82.

ԱՐՏԵԻԱՆ - և յետ այնորիկ պահպանիկ թագաւորաց ժամանակք, որ կոչին Պարթևք, մինչև յԱրտևան որդի Վաղարշու – 166.

ԱՐՏՕՍՐ - արտօսր յորդառատ վտակաց ծաւալին յաչաց, քան թէ ծաղուն խողխոջեն խխնջիւնք. – 384. և նա առաւել յորդորագոյն հնչէր և արտօսր ի վեր բերեալ հեղոյր, ասէ – 222. Պղպջաձիգ արտօսր իբրև յեռանդնոտ կատսայէ ի վեր յորձանախաղաց սահին. տարակուսանք անյուսալի շուրջ զինև պարագրին ի վերայ եղելոցն: - 350. Վէմս զերեսօք արկեալ արտօսր յորդառատս ի խտղտելի աչաց ի վայր հեղեղատելով, զնորափթիթ ծաղկազարդ ոսկեճաճանչն մորուացն ճիրանամբքն զխզումնն, և որ առաւելեալն քան զսոյն զապաշաւանացն զանյագութիւնն: - 386.

ԱՐՓԱՔՍԱԹ - Սեմ ծնանի զԵղամ և զԱսուր և զԱրփաքսաթ և զԱրամ և զՂուդ: - 14.

ԱՐՔԱՅ - զոր գրեաց իսկ և ծանոյց արքայի. – 286. ,,իսկ եթէ եկեսցէ առ իս գիր յարքունուստ, կնքեալ մատանեաւ արքայի. և իցէ գրեալ ի նմա հրաման՝ գալ ինձ առ քեզ կամ երթալ յարքունիսն՝ ոչ ելից արտաքոյ հրամանաց նորա: - 286. այլ առնու զզօրսն Պարսից և գայ թագաւորել Հայոց հրամանաւ Շապհոյ արքայի, ունելով ընդ իւր զՎահան Մամիկոնեան. – 106. այլ վասն բանսարկուացն ելեալ Վաչէ և Արշաւիր գնացին առ Արտաշէս արքայ Պարսից – 82. Այս եղև յամի յութուտասաներորդի արքայի Պարսից: - 76. ապա անարգեաց զնա և Կաւատ արքայ, եհատ ի վերայ նորա դատաստան մահու, և հրամայէ արանց մտանել և սպանանել զնա. – 152. Ապա առեալ հրաման մեծամեծացն մեր Արծրունեացն՝ գրեն առ Աբրահամ Մամիկոնէից եպիսկոպոս … և ծանուցանեն նմա զոր խնդրէ արքայ: - 132. Ապա դարձան Վաչէ և Արշաւիր ընդ Արտաշէսի, առեալ զթագաւորութիւնն Երուանդայ ի ԼԱ ամի Արտաշէսի արքայից արքայի և թագաւորին Յունաց … ամի. – 86. ասէ ,,երէցդ այդ եկեալ է զհետ գերելոց քրիստոնէիցն՝ հակառակ կալ հրամանաց արքայիդ և օրինաց Մազդեզանց և Արեաց – 104. ասէ. ,,թէ ոչ բառնաս կորուսանես ի միջոյ զերկուս նախարարութիւնդ՝ ոչ բարիոքագոյն քո թագաւորութեանդ

խորհին խորհուրդ. զի ձեռն նոցա է ընդ Շապհոյ արքայից արքայի,,. – 98. արդ զրաւ եղիցի կենաց դորա, և հրաման արքային դիւրաւ զկատարումն առնուցու,,: - 104. բայց ընդ Յունաց թագաւորին միայն հնազանդութեամբ նուաճեալ զինքեանս, ի բաց կալով ի հարկատուութենէ Շապհոյ արքայից արքայի. - 96. Բայց արքայն Պարսից հեռացեալ պատերազմաւ ի Քուշանն ի դուռն Ճորայ. – 128. Բայց տիկնայքն և հարճքն և ամենայն որդիքն արքայի և արքունի երիվարացն՝ էին անդէն ի Վեհկաւատ. – 150. գնացին առ Ներսէհ արքայ Ասորոց, ընդ իւրեանս ունելով զգիր ուխտի խաղաղութեան Աբգարու և Ներսէհի և զԽուրենէ Արծրունւոյ. – 82. գրգռէ զարքայ կատարել զասացեալսն Վարազդատայ թագաւորի Հայոց: - 110. ետուն գոյժ զմահուանէ թագաւորին և կացուցին փոխանակ Վաղարշու թագաւոր զորդի իւր զԽոսրով ձեռնտուութեամբ Արտաւանու Պարսից արքայի: - 92. ԵՐԿՐՈՐԴ ՆՈՐԻՆ ԵԻ ԵՐԹԱԼՆ ԳՈՒՐԳԷՆԻ ՋՀԵՏ ԿՈՉՈՂԱՑՆ ԲՈՒԽԱՅԻ ԵԻ ՈՐ ԻՆՉ ԳՈՐԾԵՑԱԻՆ, ԵԻ ԹՈՒՂԹՆ ԻԲՐԵԻ Ի ԴԻՄԱՑ ԱՐՔԱՅԻ: - 234. և առաքեցին դեսպանս առ արքայ և ինքեանք նստան շուրջ զլերամբն, մինչև փութով եկեսցէ նոցա հրաման ինչ յարքունուստ: - 280. և սկսաւ Խոսրով արքայ ժողովել զմնացեալ նախարարս զօրացն և զզօրն, որ զերծեալ էին ի պատերազմէն: - 150. և ամենայն ուրեք դա է պատճառ ապստամբութեան Հայոց յարքայից արքայէ. – 104. և անդ սպանանի արքայն ի Քուշանաց. – 128. Եւ առաքեաց հրեշտակս մեծապէս զանձիւք և հրովարտակօք առ արքայ Խոսրով, խնդրել ի նմանէ զխաղաղութիւն մեծաւ թախանձանօք – 140. Եւ առեալ զնոսա անցուցանէ յիւրաքանչիւր սահմանս բնակութեան, ինքնին զհետ նոցա ելանելով, որպէս Կիւրոս արքայ Պարսից զհետ դարձելոցն ի գերութենէն Բաբելոնի. – 218. Եւ արքայ Խոսրով զարհուրեալ պատրաստի ի փախուստ, քանզի զօրացաւ յաղթութիւնն Հայրակղի. – 148. և բարձակից լինել մեծամեծացն արքայի ի գլխաւոր բազմականի անդ, յորժամ ատեանն արքունական յարդարիցի: - 204. և գրեցին և ծանուցին արքայի՝ զոր ինչ գործեցին և որպէս հարան զօրքն արքունի: - 286. և ելեալ գնաց զհետ անհանճար իմացմանց առ Պերոզ արքայ Պարսից – 124. Եւ եղև զկնի երից աւուրց անցանելոյ ետուն թուղթ մի տանել առ Գուրգէն, գրեալ Բուխայի լի դառնութեամբ, կնքեալ մատանեաւ արքայի, իբրև այն թէ ի դիմաց արքային և յարքունուստ եկեալ. – 236. Եւ եղև յամի չորեքտասաներորդի Խոսրովայ արքայի, ի քսաներորդ ամի Մուրկայ թագաւորութեանն՝ ապստամբեցան ի կայսերէ զօրքն Յունաց, որք ի Թրակացւոց կողմանէն – 140. Եւ զԶրադաշտ մոգ արքայ Բակտրիացւոց և Մեդաց ընկճեալ հալածեաց մինչև ի սահմանս Խեփտաղաց, հզօրապէս տիրեալ բովանդակ Խուժաստանի և կողմանց արևելից և Պարսից, անդր ևս քան զԲահխ և զԴեպուհան , ի Գովմայիդ և ի Գուզբան, ի Շերիբամական /գրքում՝ Շերիբամամական/ և ի Խոճիհրաստան, և միանգամայն ասել մինչև ի ծովն Հնդկաց՝ յոյժ արութեամբ – 44. և զի թագաւորութիւնն Եբրայեցւոց յերկուս հակառակս բաժանեալ էր՝ հնազանդ իւր արարեալ Փուայ Ասորեստանւոյ առնու հարկս ի Մանասէէ արքայէ հազար տաղանդ արծաթոյ: - 60. և զի չև էր դարձեալ պատասխանի յարքայէն՝ հրաման եհաս ի կայսերէ առ Վարազդատ անյապաղ առ նա հասանել: - 110 Եւ զօր Պարսից արքային որ յաշխարհին՝ ոչ գիտացին. – 148. Եւ էր յղեալ յառաջագոյն զԱշոտ որդի իւր ընդ առաջ նորա, անդստին յելանելն նորա յերեսաց արքայի – 270. և ընկա՛լ օրէնս և հաւատս արժանի կենաց և գովութեան ի մեծ արքայէն և ի մեր իշխեցող հրամանակատար թագաւորին հնազանդութենէ: - 204. և թոյլ ետուն զով և հաճոյ թուիցի արքայի. – 118. Եւ ի նմին ամի մեռաւ արքայն իշխան Տարունոյ – 358. Եւ իբրև ետուն զթուղթն կարծեցեալ իբրև յերեսաց արքայի՝ ,,ընթերցիր զայդ, ասէ, մի՛ ինչ ընդ մեղադրութեամբ արկաներ զիս, և կարծել նենգութեամբ գնալ առ քեզ և դրժել ինչ քեզ և ստել երդմանց /236/ մերոց. – 238. Եւ իւր հազարապետին գրեալ և ծանուցեալ էր արքայի, զոր ինչ գործեաց ցայն վայր ժամանակի: - 220. և խնդրեալ յարքայէ զիշխանութիւն Հայոց: - 124. Եւ Խոսրով արքայ փախստական գնաց, և անցեալ զԴեկղաթաւ ի Վեհկաւատ՝ հրամայեաց զլար կամուրջացն կտրել. – 150. և կալան անդ զտիկնայսն ամենայն և զհարճսն և զորդիսն

արքայի, և զերիվարսն արքունական, որով եկեալ էր Խոսրով արքայ ի Տիսպոն՝ հանին գաղտաբար ի գիշերի, և արքայ Խոսրով ոչ միոյ իւիք չէր տեղեակ. – 150. և կալան անդ զտիկնայսն ամենայն և զհարճսն և զորդիսն արքայի, և զերիվարսն արքունական, որով եկեալ էր Խոսրով արքայ ի Տիսպոն՝ հանին գաղտաբար ի գիշերի, և արքայ Խոսրով ոչ միոյ իւիք չէր տեղեակ. – 150. և կալան անդ զտիկնայսն ամենայն և զհարճսն և զորդիսն արքայի, և զերիվարսն արքունական, որով եկեալ էր Խոսրով արքայ ի Տիսպոն՝ հանին գաղտաբար ի գիշերի, և արքայ Խոսրով ոչ միոյ իւիք չէր տեղեակ. – 150. Եւ Կաւատ արքայ հաստատեցաւ յաթոռ թագաւորութեան և արար խաղաղութիւն մեծ ընդ կայսեր և ընդ ամենայն երկիր իշխանութեան իւրոյ: - 152. Եւ Կաւատ արքայ հրամայեաց խնդիր առնել. – 152. և կինն անցեալ պատմեաց թագաւորին որ ինչ եղևն, զբողոք բառնալն իւր և զկացուցանելն վկայս՝ թէ ոչ վայել եմ քեզ կին, այլ արքայի, և որ ինչ եղևն – 272. և հայր քո Վասակ խորհիցի ինչ առ արքայի, և աղմուկ և շփոթ ինչ յուզիցէ հայր քո, որպէս թէ զապստամբութեան ինչ խորհել կարծիս զմէնջ առնուցուն: - 114. Եւ հաւանեալ Խոռեմայ՝ եկն առ Հայրակղոս արքայ Յունաց, թողեալ ի նա զԵրուսաղէմ և զԿեսարիայ Պաղեստինացւոց և զամենայն կողմանս Անտիոքացոց և զամենայն քաղաքս գաւառացն այնոցիկ, և զՏարսոն Կիւլիկեցւոց և զմեծ մասն Հայոց և զամենայն զոր միանգամ կամեցաւ Հայրակղոս. – 152. և հրովարտակ արքայի ի ձեռս քարոզչացն, թէ յղեաց արքայ զԳրիգոր որդի Աշոտոյ յերկիր իւր՝ տիրել աշխարհի իւրոյ փոխանակ հօր իւրոյ: - 314. և հրովարտակ արքայի ի ձեռս քարոզչացն, թէ յղեաց արքայ զԳրիգոր որդի Աշոտոյ յերկիր իւր՝ տիրել աշխարհի իւրոյ փոխանակ հօր իւրոյ: - 314. և մանաւանդ զի հարկ փութոյ եղև մեզ գիտել զպայազատութիւնս երանաց տիրեցելոց մեր աշխարհի և որ յառաջ քան զնոսա թագաւորք Ասորեստանեայց, որդի /34/ ի հօրէ առեալ մինչև ի Սենեքարիմ արքայ, որ առ Եզեկիայիւ Երուսաղէմի արքայիւ եղեալ ազգապետ տանս Արծրունի: - 36. և մանաւանդ զի հարկ փութոյ եղև մեզ գիտել զպայազատութիւնս երանաց տիրեցելոց մեր աշխարհի և որ յառաջ քան զնոսա թագաւորք Ասորեստանեայց, որդի /34/ ի հօրէ առեալ մինչև ի Սենեքարիմ արքայ, որ առ Եզեկիայիւ Երուսաղէմի արքայիւ եղեալ ազգապետ տանս Արծրունի: - 36. և մեծարի յԱրտաշէսէ Պարսից արքայէ, մինչ ձեռնտու լինի նմա /84/ զօրու օգնականութեամբ – 86 Եւ մի հարկաց ինչ կամ զօրաց կամ այլ ծառայութեան խափանիչ լինելոյ կամ ի վնասս արքայի խառնելոյ փոյթ արասցուք պահանջել վրէժս. – 196. Եւ մինչ նոքա կային մնային հրաման ինչ ընդունել յարքունուստ՝ /286/ դարձան հրեշտակքն և եկին փութանակի, և բերին թուղթ յարքայէ առ Ապումուսէ՝ գալ ի հնազանդութիւն նոցա և երթալ առ Բուխայ. – 288 և մինչդեռ խորհէր արքայ Կաւատ վասն շինութեան աշխարհի և խաղաղութեան՝ եհաս նմա վախճան կենաց և մեռաւ, կեցեալ ամիսս Ջ: - 152. Եւ յարբունս հասելոյ Արտաշէսի՝ երթայ գնայ առ Արտաշէս Պարսից արքայն – 84. Եւ յաւել գրգռել ի սիրտս իւր արքայ Խոսրով. զի Տէր խստացուցանէր զսիրտ նորա, զի կործանելոց էր զթագաւորութիւն նորա. – 146. Եւ նոյնժամայն եհաս հրաման յարքունուստ՝մի տաղտկալ և վհատել և մի ի բաց կալ պատերազմել ընդ նմա. մինչև եկեսցէ ակամայ կամօք ի հնազանդութիւն արքայի: - 284. Եւ նոցա ընկալեալ զխնդիրսն՝ հաւանեցան առնել ըստ կամաց նորա, մինչև տեսցեն եթէ զի՞նչ պատասխանի եկեսցէ նոցա յարքայէն իւրեանց, և կամ զօրուն զի՛նչ հրամայեսցէ առնել: - 144. և շտապով փութանակի յասպազինէ երիվարէն ի վայր արկեալ զինքն առաջի Աղէքսանդրի, առ ոչինչ համարեալ յահռնաբար/գրքում՝յահուռնաբար/ գործոն զոր գործեաց՝ փութացաւ ետ ողջոյն արքայի և ասէ. – 68. և սա նշկահեալ զկայսերբ՝ յղէ առ Շապուհ ապրքայից արքայ նուաճել ընդ նմա – 108. Զի ահա բարեկամացեալ էր Խուրան Հայր Վաչէի և եղբայր Արշաւրի ընդ Արտաշէսի Պարսից արքայի յերթալն Աբգարու ի Պարս, և եղեալ են դաշինս ի միջի. – 82. Զի հրամայեաց Դերանիկն ազատագունդ զօրացն իւրոցն դառնալ զկնի արքայինն տիրել բոլոր աշխարհին հանդերձ ամրոցօքն: - 342. Զոր զթուղթսն խաբող պատրանօք ի բուռն առեալ Բարծումայ՝ ետ տանել առ արքայ Պերոզ – 130. զոր աւերեացն Իսրայէլ յելանելն իւրում յԵգիպտոսէ և ընդ պատերազմելն ընդ

Բաղակայ արքայի Մովաբայ: - 156. զոր ցուցանեմ յայլում տեղւոջ, և զոր ինչ արար արքայն Պարսից ընդ տունն Արծրունեաց ի սաղրելոյ Բարծումայի ամբարշտի: - 130. Ընդ ժամանակս Պերոզի արքայից արքայի, ոմն յաղանդոյն Նեստորի Բարծումայ անուն, որ ունէր զանուն եպիսկոպոսութեան, զօրեղագոյնս զնեստորական հերձուածոյն բուռն հարեալ, և քսութեամբ զնախարարացն Հայոց առ Պերոզ վարելով՝ բազում օճիրս արիւնհեղութեան գործեաց: - 130. Ընդ ժամանակսն ընդ այնոսիկ թագաւորէ Յունաց Վաղէս կայսր, և Պարսից՝ Շապուհ արքայից արքայ: - 100. Ըստ նմին օրինակի և զօրավարն Բուխայ, ի հասանել ամառնային ջերմութեանն իբրև ի խորոց անդնդոց ի վեր մղեալ զինքն, ելեալ յերեսաց արքայի բազում և ծանր զօրու՝ եհաս ի վերայ երկրիս ի կողմն հիւսիսոյ ի մուտս Հայաստան աշխարհիս. – 262. Իբրև գիտաց Շապուհ արքայ զոր գործեաց Արշակ՝ թագաւորեցոյց ի վերայ Հայոց զԽոսրով ոմն յազգէն Արշակունեաց: - 110. Իբրև լուաւ Խոսրով արքայ զլուր համբաւոյն այնորիկ՝ շարժեցաւ ի բարկութիւն մեծ, լինել վրէժխնդիր արեանն Մուրկայ: - 140. Իսկ իբրև եհաս Բուխայ զօրօք բազմօք մերձ ի սահմանս նոցա, և գրեաց հրովարտակս դիմօք խաղաղութեան՝ դառնալ սիրով միաբանութեան ի հնազանդութիւն արքային – 274. Իսկ իբրև լուաւ թագաւորն զայս գոյժ աղաղակի հասեալ ի դուռն արքայի՝ մրմռեալ իբրև զառիւծ և իբրև զարջ տարակուսեալ – 180. Իսկ Մանիթոպ արքայ Խեփտաղաց ևս յաւելուածով զայսոսիկ հաստատէ. – 48. հասանէ արքայն Կիւրոս և Քսերքսէս. – 64. Հրաման ետ արքայ Կաւատ արկանել զնա ի տուն մի արքունական սենեկացն. – 152. հրամանաւ Շապհոյ արքայից արքայի՝ ժողովէ զնախարարութիւնս Հայոց առ ինքն - 98. Մշկանս այս փոխանակ Արտաշրի մեր թագաւորի մտեալ ունի զաշխարս հրամանաւ Վռամայ Պարսից արքայի: - 118. Յայնժամ արքայ Խոսրով յայլակերպս եղեալ գնաց եմուտ ի բուրաստանն արքունի – 152. Յայնժամ ելեալ իշխանն Գրիգոր յերեսաց արքայի մեծաւ ուրախութեամբ և անպատում խնդութեամբ՝ և եկն եմուտ յերկիր իւր յիշխանութիւն Վասպուրական կոչեցեալ: - 314. Յայնժամ իբրև ետես անօրէն զօրավարն Մուսէ, թէ ոչ ելին ի գլուխ խորհուրդ չարին յօժարութեանն … փութացաւ արձակել գումխան յարքունիս, ծանուցանելով արքայի զոր ինչ գործեաց Աշոտ իշխանն Վասպուրական: - 176 Յայնժամ ձայն բարձեալ Քսերքսէս և Արշէզ լի իմաստութեամբ, որպէս թէ ի զօրացն Լիդէացւոց իցեն, ասեն՝ հարան /64/ զօրքն Կիւրոսի, և փախեաւ արքայն: - 66. Յերկարեալ վտանգ նեղութեան Հայոց, որպէս ցուցանեն բազումք ի պատմագրաց, մինչ ի ժամանակս Ջամասպայ և Կաւատայ, մինչ ի Խոսրով արքայ: - 134. յորոց աճմամբ յառաջանայ կարգն և գայ հասանէ ի Մենեքերիմ արքայ, առ Եզեկիայիւ Եբրայեցւոցն առաջնորդաւ և առ մերովն Հարամայիւ: - 14. Նոյնժամայն ելեալ մեկնեցաւ յերեսաց արքայի այրն այն Բուղայ – 200. Նորա դարձեալ դառնայ ի Սամառայ և ծանուցանէ արքայի զոր ինչ գործեաց, և թէ զիա՛րդ են առ միմեանս միաբանութեամբ իշխանք Հայոց: - 172. Նստան երկոքին կողմանքն պահել զպահպանութիւն իւրեանց մեծաւ զգուշութեամբ, և ետուն ժամ անսալ միմեանց՝ ոչ ելանել ի պատերազմ, մինչև եկեսցեն հրեշտակքն յարքայէ, զոր առաքեցինն: - 286. Շապուհ արքայ թագաւորեալ՝ բազում և անչափ չարիս հասուցանէր ի վերայ Հայոց աշխարհիս և Ասորեստանեայց և Պաղեստինացւոց – 104. ո՞վ ասասցէ յիմար արքային Զրադաշտի՝ ասա՛ ձրավաստակ աստուածոյդ քո Որմզդի՝ չաշխատել տարապարտ. – 46. ինչ ձեռնամուխ լինելով ի նա, վասն կասկածանաց Պարսից արքային, միայն սպառնական խոստաբանութեամբ յղէ առ նա պատգամս: - 130. Որոյ առեալ զթոռունս իւր զՀմայեակ և Համազասպեան գնաց առ արքայ ի Տպոն: - 116. Որոյ երթեալ առ Շապուհ յիշեցուցանէ նմա զհարազատէն իւրմէ Մեհուժանայ՝ միամիտ և հպատակ /108/ լինիլ արքային, և զպատերազմացն գործ և զբազում աւարառութիւնս և զգերփանս Հայոց աշխարհիս ի Մեհուժանայ, և զմահն նորա ի ձեռանէ քաջին Սմբատայ Մամիկոնէի- 110. որպէս յայնժամ ի մահուն Ոզիայ արքային, յաւուրս Եսայեայ մարգարէի՝ ի ձայնէ սրովբէից շարժեալ տաճարին տեառն, մինչ բարձրանալ դրանդեացն: - 358. մատուցեալ առ սուրբն Սահակ զեկուցանել նմա զոր ինչ խորհինն, և թևակոխէին առ Պարսից արքայն, զոր և

արարին /116/ իսկ. – 118. Սա հալածեաց զՅոյնս, և գումարեալ զօր բազում գնաց ի վերայ լքեալ թագաւորութեանն Պարսից յերկիրն Պարթևաց, ի վերայ Յազկերտի անուանեալ արքային Պարսից: - 164. Սորա որդիք հինգ ծնանի, յորոց մինն Հերովդէս և միւսն Փիլիպպոս, զորոյ կինն հանեալ Հերովդէի՝ թող զկինն իւր զառաջին, զդուստր Արէտայ արքայի Պատրէացւոց. – 78. Սոքա են գռեահք Ասորոց, որ չուեցին զկնի Ադրամելեքայ և Սանասարայ որդւոց Սենեքերիմ արքայի՝ թագաւորի Ասորեստանի և Նինուէի, յորոց անուն ինքեանք Սանասնայք զինքեանս անուանեն. – 192. Վա՛յ քեզ, եղո՛ւկ դու, այր քաջ, արքայդ մեծանուն, յորժամ կարկառիցէ բարձրեալն զձեռն իւր ի կործանել զքեզ և ի խորտակել զզաւազան ամբարտաւանութեան քո: - 148. ՎԱՍՆ ՈՒՆԵԼՈՅՆ ԴԵՐԱՆԿԻՆ ԶԿՈՐԱՊԱՂԱՏՆ ԻՇԽԱՆ ՏԱՐՈՒՆՈՅ, ԵՒ ԶԴԱՒԻԹ, ՈՐ ԱՐՔԱՅՆ ՃԱՆԱՉԷՐ՝ ԻՇԽԱՆԱՅՈՒՅԱՆԵԼՈՅ: - 340.

ԱՐՔԱՅԱԿԱՆ - և զսակաւուց քան թէ յոլովից գրեաց անուանս ի յիշատակարանի անդ զՇահդոսդ, որ թարգմանի արքայասէր, և զԳոհշթասդ, որ թարգմանի ներկագործ ծիրանեաց արքայական զգեստու, և զՇմաւոն եպիսկոպոս, վէմ եկեղեցւոյ Քրիստոսի ընդ նմին և այլ եպիսկոպոսք և քահանայք արք Ճ - 106.

ԱՐՔԱՅԱՆԻՍՏ - և հաճոյ թուեալ յաչս նորա՝ շինէ զքարաբլուրն ապարանս արքայանիստ, աշնանայինս, պայծառայարդարս, գեղեցկայարմարս պարսպաւորս – 86. նստէր փորող պողոտային նրբափողոց ճանապարհին, որ հանէր ի վերին մայրաքաղաքն Սիոն, ի բանակետղն երկնաւոր զօրացն յարքայանիստ քրիստոսական թագաւորութեան: - 204.

ԱՐՔԱՅԱՍԷՐ - և զսակաւուց քան թէ յոլովից գրեաց անուանս ի յիշատակարանի անդ զՇահդոսդ, որ թարգմանի արքայասէր, և զԳոհշթասդ, որ թարգմանի ներկագործ ծիրանեաց արքայական զգեստու, և զՇմաւոն եպիսկոպոս, վէմ եկեղեցւոյ Քրիստոսի ընդ նմին և այլ եպիսկոպոսք և քահանայք արք Ճ - 106.

ԱՐՔԱՅԻՑ ԱՐՔԱՅ - Ապա դարձան Վաչէ և Արշաւիր ընդ Արտաշէսի, առեալ զթագաւորութիւնն Երուանդայ ի ԼԱ ամի Արտաշէսի արքայից արքայի և թագաւորին Յունաց … ամի. – 86. ասէ. ,,թէ ոչ բառնաս կորուսանես ի միջոյ զերկուս նախարարութիւնդ՝ ոչ բարիոքագոյն քո թագաւորութեանդ խորհին խորհուրդ. զի ձեռն նոցա է ընդ Շապհոյ արքայից արքայի,,. – 98. բայց ընդ Յունաց թագաւորին միայն հնազանդութեամբ նուաճեալ զինքեանս, ի բաց կալով ի հարկատուութենէ Շապհոյ արքայից արքայի. - 96. և ամենայն ուրեք դա է պատճառ ապստամբութեան Հայոց յարքայից արքայէ. – 104. և սա նշկահեալ զկայսերբ՝ յղէ առ Շապուհ արքայից արքայ նուաճել ընդ նմա – 108. Ընդ ժամանակս Պերոզի արքայից արքայի, ոմն յաղանդոյն Նեստորի Բարծումայ անուն, որ ունէր զանուն եպիսկոպոսութեան, զօրեղագոյնս զնեստորական հերձուածոյն բուռն հարեալ, և քսութեամբ զնախարարացն Հայոց առ Պերոզ վարելով՝ բազում օճիրս արիւնհեղութեան գործեաց: - 130. Ընդ ժամանակսն ընդ այնոսիկ թագաւորէ Յունաց Վաղէս կայսր, և Պարսից՝ Շապուհ արքայից արքայ: - 100. հրամանաւ Շապհոյ արքայից արքայի՝ ժողովէ զնախարարութիւնս Հայոց առ ինքն - 98.

ԱՐՔԱՅՈՒԹԻՒՆ - Ապա համբարձեալ զձեռս իւր յերկինս՝ ասէ, ,,յիշեա՛ զիս, Տէր, յորժամ գաս արքայութեամբ քո,,. – 254. և զբնակիչս արքայութեան արար բնակիչս յաւիտենական հրոյն - 264.

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ - Քանզի Վարդան անցեալ գնացեալ էր սուրբ վարդապետաւն Մաշտոցիւ առ կայսր Թէոդոս և առ Ատտիկոս արքեպիսկոպոս հանդերձ թղթովք սրբոյն Սահակայ, տանելով ընդ իւրեանց և զգիր և զբառ հայերէն դպրութեան. – 116.

ԱՐՔՈՒՆԱԿԱՆ - ,,յանձն առնումք զհրամանս արքունականս,, - 248. բայց և նշանակս և դրօշս փողփողել առաջի, և դնել թագ իշխանական ի գլուխ և զգեստս արքունականս զանձամբ. – 236. և բարձակից լինել մեծամեծացն արքայի ի գլխաւոր բազմականի անդ, յորժամ ատեանն արքունական յարդարիցի: - 204. և կալան անդ զտիկնայսն ամենայն և զհարճսն և զորդիսն արքայի, և զերիվարսն արքունական, որով եկեալ էր Խոսրով արքայ ի Տիսպոն՝ հանին գաղտաբար ի գիշերի, և արքայ Խոսրով ոչ միոյ իւիք չէր տեղեակ. – 150. և կացցէ

ինքն և իւրքն ամենեքեան ի հնազանդութեան արքունի, ի հարկս և ի հասս չափոյ սակի արքունական աւանդութեանց: -226. և շինեն նախարարքն Հայոց իւրաքանչիւր պալատս արքունականս և դաստակերտս յականաւորս, և զքաղաքն որմափակօք պարսպեն, և խաղաղեցուցանեն զերկիրս: - 126. Հրաման ետ արքայ Կաւատ արկանել զնա ի տուն մի արքունական սենեկացն. – 152.

ԱՐՔՈՒՆԻ - Յայն ժամանակս գայ ոմն Բուտել անուն ի զօրացն արքունի հրամանաւ Բուխայի, հասանել ի վերայ Գուրգինի – 306. ,, վնասս և զբեկումն հարկաց արքունի և զկոտորումն զօրաց քոց Աշոտ գործեաց, և նա է պատճառ ամենայն ապստամբութեան Հայոց ի քումմէ թագաւորութենէդ, ասեն, ո՛վ քաջդ և հաւասար աստուածայնոց կարողութեան ինքնակալ, և ընդհանուր իշխեցօղ կենաց և մահու,,: - 180. ,,Ելեր դու յաշխարհս Հայոց հրամանաւ արքունի՝ առնուլ զհարկս արքունի. մի՞թէ /176/ և հրաման ունիս յարքունուստ, գերել գերփել յաւեր դարձուցանել զաշխարհս մեր: - 178. ,,Ելեր դու յաշխարհս Հայոց հրամանաւ արքունի՝ առնուլ զհարկս արքունի. մի՞թէ /176/ և հրաման ունիս յարքունուստ, գերել գերփել յաւեր դարձուցանել զաշխարհս մեր: - 178. ,,հրամայեա արձակել արս հաւատարիմս, և ես յորժամ հասից ի դուրն արքունի՝ ի նմին ժամու խնդիր արարից Խաչին, և գտեալ զնա տայց բերել առ քեզ,,: - 154. ,,ոչ կարեմք զդէմ ունել անհնարին ուժոյ բռնութեանն արքունի – 216. ,,որովհետև գտի շնորհս առաջի քո, և արարեր մեծարանս երեսաց իմոց, և առաւել քան զամենայն իշխանս Հայաստանեայց և մեծամեծս արքունի զիս նախամեծար և մեծարգի ցուցեր – 218. Ապա այնուհետև դարձեալ յղեաց զՀամդոյ զՊարսից ամիրայ, և ի զօրաց արքունի զՀէթմ ազգաւ թուրք, և ընդ նոսա հեծեալս Ժ հազարաց, կազմեալ սպառազէն պատրաստեալ բարձրագոյն քան զառաջինն – 234. Բայց ի գնալ մեծ հազարապետին յարքունիս՝ հաւատաց զվերակացութիւնն աշխարհիս Հայոց և հարկս արքունի ի ձեռս Մուսէի ումեմն որդւոյ Զօրահայի հազարացւոյ – 172. Բայց մեք քանզի ոչ երբէք ստունգանեցաք հրամանի թագաւորին և ոչ խափանիչ գտաք հարկաց արքունի, իբրև զապստամբս և զանհնազանդս և զստահակս ի ծառայութենէ տէրանց – 178. բայց միայն ի դրան արքունի մտանել և ելանել ընդ հաւատարիմս թագաւորին ի տունս դիւանաց և գանձուց: - 92. Բայց տիկնայքն և հարճքն և ամենայն որդիքն արքայի և արքունի երիվարացն՝ էին անդէն ի Վեհկաւատ. – 150. դարձեալ յետ փոքր ինչ աւուրց անցանելոյ՝ և խռնեցաւ միւս անգամ պատերազմն, և և՛ս սաստիկ հարան զօրքն արքունի. – 276. եթէ ,,Օրէն է աշխարհակալաց արքունի խնամակալութեամբ գնալ ընդ աշխարհ իբրև առ հնազանդս, և զնեղութիւնս տառապելոց բառնալ և ի դիւր հանել իբրև զխնամարկուս, և ոչ աւազակաբար աւարել, և սրով և գերութեամբ յաւեր դարձուցանել. – 278. Եւ ամենայն մեծամեծքն հանդերձ խառնաղանճ / 240/ ամբոխիւն դռոթ տուեալ, ոչ միայն ըստ հրամանի թագաւորին ելանել զհետ աղաղակի փողոյն և արքունի կոչնականացն՝ այլ փութացան տեսանել, թէ ո՛վ ոք և ո՛րպիսիք են սոքա – 242. Եւ անդէն վաղվաղակի կատարէին զհրաման արքունի. – 142. և անընդունակք լինէիք՝ որ ի մէնջ առաքեցեալքն հազարապետք և վերակացուք աշխարհիս մերոյ և խնամատարք արքունի հոգաբարձութեան գային առ ձեզ. – 244. և բազում վնասս ի գործս արքունի կուտէին ի վերայ իշխանին Աշոտի. և քմազարդ բանիւք գրգռեն զթագաւորն ի վերայ իշխանին ի չարիս: - 180. Եւ գրեն թուղթ առ Յամանիկն, եթէ ,,ի մտանելն իմ ի Դուին քաղաք և զհարկս արքունի յիս գրաւել՝ և յանկասկած առեալ զիշխանս Հայոց՝ և եկեսցեն առ իս. – 340. և գրեցին և ծանուցին արքայի՝ զոր ինչ գործեցին և որպէս հարան զօրքն արքունի: - 286. և եթէ յերկարիցի գործոյս այսորիկ հանդէս և մարտիցն հանգամանք ոչ փութանակի վարիցին՝ գուցէ օգնականութեամբ գիշերոյ եկեսցէ ի վերայ քո և մեծամեծ աւճիրս ի վերայ քո և զօրացդ արքունի հասուցանիցէ: - 212. և զոր ինչ խնդրիցէ՝ առնիցէ ըստ կամաց նորա, կնքել և տալ նմա գեօղս և ագարակս, և տալ հարկս արքունիս և պատանդս խաղաղութեան: - 210. Եւ զօրաժողով եղեալ Մուսէի պատճառաւ հարկաց արքունի՝ եկն եմուտ յերկիրն Տարաւնոյ, տալ պատերազմ ընդ Բագարատայ: - 172. և ընդ նմա քաղաքացիքն Բերկրոյ որ

Ութմանիկքն կոչին, և յազատացն Վասպուրականի որ միաբանեալ էին ընդ զօրսն արքունի, արք իբրև Ս – 306. և ի հասանելն նորա անդր թողեալ զհակառակաբար մարտն՝ խօսին ի խաղաղութիւն, առաջի եդեալ զիրամանն արքունի, զգլխաւորին Տաճկաց, և Աշոտի հաւատալ զբոլոր տէրութիւնս Վասպուրականի: - 316. Եւ Խոռեմայ առեալ զթագաւորութիւնն՝ յաւուր միում զգեցեալ էր հանդերձ թագաւորական և հեծեալ յերիվար արքունի, և շրջէր ի մէջ ամենայն զօրացն իւրոց, ցուցանել զինքն և քաջալերել զզօրսն. – 154. և խոստանայր շքեղ և երևելի կացուցանել ի մէջ աշխարհակոյտ ամբոխից ի դրան արքունի – 204. և կալցին զիւրաքանչիւր իշխանութիւն և վայելեսցեն ի պարգևս և ի պատիւս արքունի և կացցեն ի հնազանդութեան թագաւորին: - 296. և կանայք կոտորելոցն հանդերձ խառնիճաղանճ ամբոխիւն լրբենի դիմօք, հոլանեալք և ի բաց ընկեցեալ զձև կանացի բնութեան, որպէս օրէն է նոցա, մանաւանդ տաճկական ազանց, և ի հետիոտս դիմեալք ի դուռն արքունի հասանէին: - 180. և կացցէ ինքն և իւրքն ամենեքեան ի հնազանդութեան արքունի, ի հարկս և ի հասս չափոյ սակի արքունական աւանդութեանց: - 226. և հարան զօրքն արքունի և դարձան ի բանակն իւրեանց – 276. և հարան զօրքն արքունի ի հարուածս մեծամեծս և դարձան փախստական ի բանակն իւրեանց և մտին յապարանսն զոր շինեալ էին. – 282. և հարկացն արքունի կանգնեցան դիւանքն, զի այն Ե ամ բեկեալ հարկք և զաւրք ի յարքունէ Պարսից: - 116. և հարցեալ ցնա յաղագս մահուանն Յովսէփու ի վրէժխնդրութեանն աղագս երկրորդ նահատակութեան նորա, որ եկաց ընդդէմ զօրավարին, յուշ առնելով նմա զապստամբութենէ և ընդխառնելոյ նորա ի վնասս արքունի – 294. և մեկնեաց յինքենէ զԱբրահիմ ոմն և յղեաց զնա հազարապետ Հայոց, և վերակացու ի վերայ հարկաց արքունի, և տիրել փոխանակ իշխանաց սորա: - 298. Եւ յետ աւուր միոյ ընդ մէջ լինելոյ՝ դարձեալ խմբեցաւ պատերազմն, և հարան զօրքն արքունի. – 276. Եւ նուազեալ ազգին Արծրունեաց ոչ ոք մնաց, բայց միայն մանուկ մի Համամ անուն, որդի Արշաւիրի ծերոյ եղբօր Խուրէնայ, որ կայր ի դրան արքունի – 90. և նոքա տան տանել նմա զհարկս և հասս արքունի և դարձուցանեն զնա ընդ նոյն ուստի եկն: - 172. և որպէս պատմի՝ եղև թիւ պատերազմաց նոցա ԻԸ անգամ, և հարան զօրքն արքունի յայսքան հանդէսս և ի կռիւ: - 286. զայս խորհելով թէ զայսպիսի քաջ այր և պատերազմող ոչ պատշաճ վարկանելի է ի հեռաբնակ վայրս ի դրանէ արքունի կացուցանել: - 330. զի ամենայն մեծամեծք քաղաքին և գլխաւորք և իշխանք յարքունի նախարարութենէն անդ գումարեսցին – 240. զի երկիր ի շինութեան լինելով և ի խաղաղութեան՝ և հարկք արքունի կանգուն երթիցեն: - 186. զի ոչ դուք նուազիցիք ի սովոյ, և ոչ հարկք արքունի կորնչիցին: - 144. զի ուր և իցէ՝ ածցեն զնա առ նա, թէ՛ պատիր խաբէութեամբ և խորամանկ կեղծաւորութեամբ և խարդախութեամբ, կամ պատերազմաւ և մեծամեծ զօրութեամբ, ամենայն պատրաստութեամբ, արքունի կարողութեամբ, որպէս զիարդ և կարասցեն՝ առ նա հասուցանեն: - 224. Զնա յղէ Ապուսէթ ելանել յերկիրն Վասպուրական և անդէն մնալ զօրօք բազմօք, մինչև զբովանդակ զհարկս և զհասս արքունի յամենայն կողմանցն Հայոց առ նա բերցեն յիւրաքանչիւր սահմանաց: - 176. զորոյ լոյծ և մեղկ բարս ուսեալ թագաւորին՝ կացուցանէ զնա ի վերակացութիւն գործակալաց դրան արքունի – 90. Զսա ըմբռնեալ զօրաց Տաճկաց ածին առ զօրավարն. և բազում վնասս ի գործս արքունի կուտեցին ի վերայ նորա և ստութեամբ առաւել քան թէ ճշմարտութեամբ պարտաւորեցին զնա: - 288. զՎաչէ կացոյց ի դրան արքունի, զի ամենայն ոք նովաւ մտցէ և ելցէ յարքունիսն – 82. Ընդ նոյն ժամանակս յղէ թագաւորն զոմն ի յաւագ նախարարացն վերակացու Հայոց և հաւատարիմ ի վերայ հարկաց արքունի Ապուսէթ անուամբ, ըստ տաճկական լեզուին, յարելութեամբ եբրայական դպրութեանն: - 170. ընդ որս էր և քաջն մեր Աշոտ ախոյեանայարձակ զօրութեամբ և ելեալ զհետ արքունի զօրուն. – 328. Ի դառնալն Ապուսէթի յԱսորիս և Մուսէի հաւատալ զվերակացութիւն հարկաց արքունի, և ընդդէմ եկեալ յարքունուստ հազարապետ ոմն հարկաց, Ծովափի կոչեցեալ ամիրայ Ալայ անուն: - 176. Ի սոյն աւուրս որք մնացեալ էին ի տանէն Արծրունեաց իբրև լուան զպարտումն

ԳԱԶԱՆ - այլ ի շարժելն իւրում՝ ահ առնուն ամենայն լողակք և գազանք ծովայինք, որոյ և կերակուր նոյն լողակք և զեռունք այլովք կենդանեօք: - 260. Այլ հինիցն ասպատակքն, սովոյն բռնութիւն, գերիվարացն տառապանք, գազանաց յարձակմունքն, ներքին և արտաքին վրդովմունքն հոլանի առնէին զաշխարհս: - 316. Ապա թէ փութաս ելանել ի կենաց աստի առ զայրուցս կատաղութեան քո և զոսկերս ցրուես յանապատս և լինել կերակուր գազանաց երկրի և թռչնոց երկնից՝ քո կամք լիցին, և ես քաւեալ եմ յարենէ քումմէ – 278. Եթէ, որպէս ասացի, ի բաց գնաս յինէն՝ խաղաղութիւն է, և թէ ոչ՝ պատերազմ և կռիւ և ճակատամարտ … դու գէշ՝ զօրքն իմ պատառիչ գազան, որ պատառեն զառագաստ սրտի քո. – 280. Եւ առ յոյժ յիմարութեանն հարեալ ցանկութեամբ, խլրդենի դիմօք, իբրև զգազան մի կատաղեալ՝ սկսաւ յարձակել ի վերայ աշխարհիս Հայոց. – 170. և բայացեալքն եթէ գազանք և եթէ թռչունք, յորժամ զգան զջերմութիւն օդոյն ի հասարակել տունջեան և գիշերոյ՝ ի գարնանային եղանակի ելեալք յիւրաքանչիւր կայենից. – 188. Եւ բարձեալ աշտեայս հանապազակիրս ի պատրաստութիւն գազանացն որ ի մայրիսն որջանան, կամ թշնամեաց ի վերայ հասելոց – 190. և դահճացն հանեալ զսուսերն՝ դիմեցին ի վերայ նոցա իբրև զգազանս արիւնարբուս, և ծեծէին սրովն, իբրև ոք զի հատանիցէ փայտ ի մայրս անտառախիտս հարեալ կացնաւ, և յանխնայ անողորմ յօշէին անդամ անդամ: - 266. և են ստացեալ զէնս աշտեայս հանապազ կրելով ընդ ինքեանս, ի պատրաստութիւն գազանացն որք ի լերինն բնակեն: - 192. և զգոյն երեսաց իւրոց բոցագոյն դարձուցեալ, խրոխտացեալ և մրմռեալ իբրև զգազան արիւնարբու՝ հրաման ետ տանել արտաքս յերեսաց ատենին – 246. և զտարի մի կացեալ մարմինք սպանելոցն անյօշելիք ի գազանաց և ի թռչնոց: - 368. և թռչունք և գազանք ծանեան զժամանակս գալստեանն իւրեանց – 268. Եւ նոյնժամայն սուսերամերկք խուռն նիզակօքն ի վերայ յարձակեալ իբրև զգազանս արիւնարբուս մարդախանձս՝ սրախողխող արարեալ սպանին զնա – 352. և ոչ ևս այնուհետև ինչ ոչ տեսանէաք, ոչ հաւ և ոչ գազան, բայց զերկին և զերկիր: - 50. Իսկ տէր Գրիգոր ի մէջ մարդակերպ գազանաց ի ժողովս խուժադուժ բարբարոսաց բնակէր, որ ևս չար քան զթունաւոր գազանս են առ մեզ – 252. Իսկ տէր Գրիգոր ի մէջ մարդակերպ գազանաց ի ժողովս խուժադուժ բարբարոսաց բնակէր, որ ևս չար քան զթունաւոր գազանս են առ մեզ – 252. մանաւանդ/370/ թէ նախախնամող և պահպանական աջն Քրիստոսի հովանաւորեալ առ ապրուստ հրածին կարկտաբեր հասեալ կորստական դիպուածին, օգնութիւն հասեալ յԱստուծոյ՝ քաջասրտագոյնս զնա գործեաց և շուրթափեալ զնա ի ժանեաց գազանին – 372. Յայնժամ բարկացեալ բռնաւորն իբրև գազան մի կատաղեալ, յարձակեալ ի վերայ գառանց գէշ արկանել զնոսա՝ հրամայեաց պնդել զնոսա ի ցիցս կապեալ ոտիւք և ձեռօք. – 292. յոր դիմեալ երթայր՝ /228/ անկանել ի ժանիս արիւնարբու գազանացն: - 230. Նոյնպէս բանայ, որպէս և այլ թռչունք և գազանք՝ բնաւորեալ բաժանեն զժամանակս տարւոյն յերկուս կամ յերիս ամարանոցս և ձմերանոցս ինքեանց կենաց պաճարին – 262. Չորրորդ՝ զի զեղբայր և ոչ զօտար ոք, զոր ոչ երկիւղն Աստուծոյ և ոչ գութ բնութեան մեղկացոյց լքմամբ զձեռս արիւնարբու գազանին: - 24. քանզի նուազագոյնքն և տկարք՝ թափառեալք աղքատութեամբ վտանգէին, իսկ կարողագոյնքն և բռնաւորք ըստ բնութեան գազանաց վայրենամիտք լեալ, անամօթ և անարգել յափշտակութեամբ վրդովէին զբոլոր երկիրս: - 300.

ԳԱԶԱՆԱԲԱՐՈՅ - այր գազանաբարոյ, վայրենամիտ, առատաձեռն առ արբումն մարդկան, այր զօրաւոր զօրութեամբ ի գործս պատերազմաց, ահարկու ազանց, կարողութիւն և ուժեղութիւն Աւշնի ի սորա ձեռս բաւականացեալ: - 374. Եւ են գազանաբարոյք, արիւնարբուք, առ ոչինչ համարելով զսպանումն եղբարց հարազատաց, նա և զանձանց ևս. – 192. Որոյ յօժարութիւն կամաց ախորժակաց իւրոց էր մարմին և արիւն անմեղ մարդկան, առ ի յագումն անհնարին գազանաբարոյ կատաղութեանն: - 200.

ԳԱԶԱՆԱՄԱՐՏԻԿ - և ժողովեալ ազգք ազգք յընտրելոց զօրաւորաց արանց քաջամարտկաց, զզօրս Կապուդկացւոց, զՎրաց և զԱղուանից և զԱյրարատեան գազանամարտիկ

զանճռոնի զօրսն և զբոլոր բովանդակեալ գունդս զօրացն և զորդիսն Սենեքերիմայ, ամենայարդար պատրաստութեամբ անհուն բազմութեամբ, աճապարել երագել անյապաղ լինել նախ քան զԱշդահակայ դիմեցումն – 62.

ԳԱԶԱՆԱՅԻՆ - Քանզի այնչափ թանձրացաւ յաճախութիւն սովոյն՝ որ ոչ միայն անսուրբ կենդանիս ուտէին ըստ սրբութեան կարգի, այլ և զսարսափելի և զդժնդակ, որ զգազանայինն անցուցանէ զվայրենամտութիւնն, զմարմինս մեռելոց՝ առանց խղճելոյ ուտէին, ի գերեզմանացն հանեալ զհետ միոյ և երկուց ամաց թաղելոյ: - 374.

ԳԱԶԱՆԱՆԱԼ - զի Աղէքսանդր թէպէտ և լի իմաստութեամբ և հանճարով առաւելանայր՝ սակայն գազանանայր ընդդիմակացաց հրոսաւղացն. – 70.

ԳԱԶԱՆԵՂԷՆ - Ելեալ խրոխտ և դառնաշունչ փռնկալով մռմռեալ յանձնիւր գազանեղեն /ճիշտը՝գազանեղէն/ զայրացմամբ յարձակեալ յեղակարծում եկն եմուտ ի քաղաքն Շամիրամայ ի Վանտոսպ: - 372. Եւ առ չհանդուրժել այնքան եկեալ հասեալ վտանգաւոր նեղութեանցն, և գազանեղէն զայրացմամբ մրմռեալ յոգի իւր ի վերայ կորստեան սուրբ հաւատոյս և կործանման աշխարհիս Հայոց – 126. և նոքա ըստ ձախողակի սովորութեանն իւրեանց օրինադրութեանն, արիւնարբու առանց բարւոյ բարեգործութեանցն մանաւանդ թէ լցեալք սատանայական չարութեամբք՝ ձայն արկեալ յամենայն քաղաքսն, խռովեալ ըստ գազանեղէն իւրեանց մոլեգնութեանցն – 398. Իսկ նա ըստ սովորականի ցանկասէր պղծալից անյագութեանն՝ խրոխտացեալ մռմռեալ յանձն գազանեղէն թունիւք առաւելեալ, բորբոքեալ տապախառն բոցով հեղուլ զմահածին թոյնսն ի վերայ Բուխայի. – 326. հրեշտակի Աստուծոյ հարեալ ի հարուածս անբժշկականս ըստ օրինի Հերովդիայ ախտակրութեան, տորոմեալ խղխայթմամբ, չարալլուկ ուռուցմամբ զտրորումն առնոյր արիւնալից արիւնապարտ մարմինն գազանեղինին. – 376.

ԳԱԶԱՆՈՒԹԻՒՆ - որով փոքր մի ցածուցին զլեռնացեալ ալիսն, և զկոհակսն մրրկալիցս դադարեցուցին և զգազանութիւն բռնաւորին յընտանութիւն ածին: - 234.

ԳԱԶՐԻԿ ԱՊՈՒՀԱՐԱԶ - Փութանակի և վաղվաղակի իւրաքանչիւր զօրօք անդր հասանէին … և այլք ի նախարարացն Վասպուրական իշխանին, Սմբատ Ապահունի, Գրիգոր Քաջբերունի, Վահան Հաւնունի, սեպուհն Դաւիթ, Գազրիկն Ապուհաբազ, Թոդորոս Վարազն, Խոսրով Վահունի, Խոսրով Ակէացի, Վարդան Գաբայեղէն, Սմբատ Մարացեան, սեպուհ մի Սահակ, Պատրիկն Անձևացի, Գորգ Հարմացի, Դաւիթ Գունդսաղար. – 174.

ԳԱԼ - Եւ եկն եհաս առ նա Ատրներսէհ իշխանն Վրաց: - 366. Եւ մինչ նոքա կային մնային հրաման ինչ ընդունել յարքունուստ՝ /286/ դարձան հրեշտակքն և եկին փութանակի, և բերին թուղթ յարքայէ առ Ապումուսէ՝ գալ ի հնազանդութիւն նոցա և երթալ առ Բուխայ. – 288. մինչն եկեսցէ նմա պատասխանի ի բուն զօրավարէն, և ոչ լուան աղաչելութեան նորա. – 230. ,,բարի՛ է քեզ, թագաւոր Հայոց, է՛կ այսր զի պսակեցից զքեզ ես սպարապետս,,. – 108. ,,ես եկի խաղաղութեամբ յարքունուստ հրամանէ, և ոչ նման քեզ զապստամբութիւն ի գործ արկեալ. – 330. ,,զի՞նչ կամիք, ասէ, առնել, և վասն է՞ր եկիք ի տեղիս յայս. – 144. ,,իսկ եթէ եկեսցէ առ իս գիր յարքունուստ, կնքեալ մատանեաւ արքայի. և իցէ գրեալ ի նմա հրաման՝ գալ ինձ առ քեզ կամ երթալ յարքունիսն՝ ոչ ելից արտաքոյ հրամանաց նորա: - 286. ,,իսկ եթէ եկեսցէ առ իս գիր յարքունուստ, կնքեալ մատանեաւ արքայի. և իցէ գրեալ ի նմա հրաման՝ գալ ինձ առ քեզ կամ երթալ յարքունիսն՝ ոչ ելից արտաքոյ հրամանաց նորա: - 286. Ազդ եղև քաջին Վահանայ, եթէ զօր բազում առեալ Հազարաւուխտ յընտրելոցն Պարսից և ահաւադիկ հասեալ գայ ի վերայ: - 134. Այլ իբրև այն ինչ մերձ լինէր ամրոցն ի պաշարումն՝ Ամդայինն Յիսէ, որ Շեհի որդին, որ զզօրապետութիւնն Հայոց ունէր, ճանաչէր՝ ի հրապոյրս Մանազաւեան պետոյն և Ութմանացն ելեալ՝ երագապէս եկն եհաս ի վերայ Աշոտի ԺԵ հազարաւ հեծելօք վառելովք. – 334. այլ առնու զզօրսն Պարսից և գայ թագաւորել Հայոց հրամանաւ Շապհոյ արքայի, ունելով ընդ իւր զՎահան Մամիկոնեան. – 106. այլ ելեալ գայ ի սուրբ քաղաքն

Երուսաղէմ, և անդ կեալ բարեպաշտութեամբ – 80. այլ եկ պատմեաց նոցա զհանգամանս տեսլեանն – 120. այլ ես ոչ երկեայց ի ժողովելոց երիցանցդ Հռոմայեցւոց, որ գումարեալ գան ի վերայ իմ: - 138. Այլ և ի ժամանակս հասելոց թշնամեաց յերկիրն իւրեանց՝ գան միաբան լեռնայինքն յօգնութիւն իշխանացն, զի են տիրասէրք: - 192. Այլ ձայն իմն գայր՝ մի՛ ժողովել և մի՛ հատանել, թե ոչ՝ եղիցի անձն այն մեռեալ, և ժանտ ախտիւ սատակեսցի գումարտակդ: - 50. Ապա ելեալ ի նաւ՝ եկն ի մէջ ծովուն խօսել ընդ զօրավարին Պարսից. – 144. Ապա իբրև վախճան առնոյր կարգեալ եպիսկոպոսացն որ ի Պարսից … միաբան ապա նախարարքն Հայոց եկին առ սուրբն Սահակ – 120. Ապա համբարձեալ զձեռս իւր յերկինս՝ ասէ, ,,յիշեա՛ զիս, Տէր, յորժամ գաս արքայութեամբ քո,,. – 254. ապա նոքա մերկացեալ զկեալն կասկածանօք առ Ապումրուան՝ գան առ նա առանց ակնածութեան. – 364. առ սովաւ այլ թագաւոր եկաց ի Թեսաղեայ: - 58. Առնուն Մեհուժան և Վահան զզօրս Պարսից, գան մտանեն յերկիրս Հայոց – 102. Արդ եկայք դիցուք զյանդիմանութիւն սոցա առ փոքր ինչ և դուզնաքեայ ի գրոց սրբոց – 254. Արդ ի գալ միւսոյ ամին որ յորելեանք Զ և ոլրմպիատք ՀԲ, ընդիքտիոնք Ի … աներկբայ խորհուրդ ի մէջ առեալ թագաւորն սինկղիտոսօքն հանդերձ և ամենայն մեծամեծօքն Բաբելացւոց , զի զիշխանս աշխարհին Հայոց ի բաց բարձցէ յիւրաքանչիւր տէրութենէ – 184. Արդ յայսմ հետէ ըստ նեպակի գեղջն/գրքում՝գեաղջն/ կապճահամար ժժակք յամենայն ի դուռն արքունի ի սատակումն եկեսցեն. – 46. Արձակէ առ Բագարատ, կոչողս պատճենիւք հանդերձ, զի եկեսցէ առ նա առանց պատճառանաց և երկիւղի: - 186. Բայց արդ զամենայն յանցանս քո և զվնաս զոր արարեր թողում քեզ. արի առ զկին քո և զորդիս և եկ այսր. – 146. Բայց յետ աւուրց բազմաց անցանելոյ շփոթմանցն՝ Գուրգէնի ընդարձակեալ նախախնամութեամբն Քրիստոսի և ելեալ փրծեալ ի բանտէն՝ եկն եմուտ յաշխարհ իւր: - 320. Բայց քանզի ընդարձակ էր պահն Հողցայ՝ փութանակի եկն եհաս Ժիրաք ի գաւառն Ռշտունեաց և զզօրսն առխթեալ ի ձորն Առուանից, ի սահմանս Մոկաց. – 202. Բայց անյայտք են եթէ կատարելանան, զի հազիւ սպիքն գան, ըստ որումն սրբազանի տրամաբանութեան: - 338. Բայց Աշոտ վերջոտնեալ հանդերձ Վահանաւ՝ եկն եհաս խաղաղութեամբ և բերկրեալ սրտիւ բազմադէմ յերկիր իւր: - 330. Բայց Ապումրուան երկնէր գայր զիշխանասիրականն ծնանել գահակալութիւն ի վերայ աշխարհիս: - 364. բայց արդ եկ ի կողմանցդ յայդցանէ, եկից և ես յԱսորեստան. – 152. Բայց երիցս երանելի ոմն երիտասարդ հասակաւ, ինքն տաճիկ և ազգաւ պարսիկ՝ ելեալ զհետ սիրոյն Քրիստոսի հաւատոցն եկն յարեցաւ ի Պատրիկն Անձևացի – 222. Բայց իշխանն Դերենիկ անգիտացեալ զեղեալսն՝ ի նմին աւուր եկն բազմաձեռն զօրու բանակեցաւ ի հարաւ կողմն բերդին – 332. Բայց Յամանիկն և Ահմատն և Ապլբառն և այլ ևս Տաճկաց միաւորութեամբ զնոյն չարիս երկնէին գային: - 340. բարիատեացն և չարասէրն Աւշին նիւթէր գայր ի վերայ Գուրգինի հասուցանել չարիս մեծամեծս – 370. գալ իջանել յելից ի ստորոտէ լերինն Վարագայ առշեղեալ ի հարաւոյ ի հիւսիսի ի խաղաղ ընդլայնանիստ գոգաձև դաշտականացսն – 392. գայ դարձեալ ի տեղին զբօսնուլ ի նմա. – 86. գայր յանդիմանակաց Պտղոմէի: - 70. Գան դարձեալ Մեհուժան և Վահան և առնուն զՎանտոսպ – 104. Դէպ եղև նմա ճանապարհաւ գալ ի քաղաքն Մադիամ, էր և ծանօթ գիտութեան գրոց, թէպէտ և ոչ կատարելապէս: - 162. դիմեալ գայր և սա ընդ աջաթև կողմն վկայելոցն, ընդդէմ սրոյն մատուցանել զինքն պատարագ կենդանի Որդւոյն Աստուծոյ: - 222. Դուք աւադիկ ժողովեալ գայք ի վերայ իմ պատերազմաւ. – 138. ԵԹԷ ՈՐՊԷՍ ԿԱՐԳ ԸՍՏ ԿԱՐԳԻ ԵԿԱՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹԻՒՆՆ /ՃԻՇՏ՝ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆՆ/ ԱՍՈՐԵՍՏԱՆԵԱՑՑ ՄԻՆՉԵԻ Ի ԿԻՒՐՈՍ ՊԱՐՍԻԿ: - 56. եթէ ,,եկայք առ իս ամենայն աշխատեալք և բեռնաւորք, և ես հանգուցից զձեզ,, , և թէ ,,որ ուրասցի զանձն իւր վասն իմ՝ գտցէ զնա,,. - 252. Ելեալ խրոխտ և դառնաշունչ փռնկալով մռմռեալ յանձնիւր գազանեղեն զայրացմամբ յարձակեալ յեղակարծում եկն եմուտ ի քաղաքն Շամիրամայ ի Վանտոսպ: - 372. Ելեալ փութանակի եկն եհաս յաշխարհս Վասպուրական սպարապետին կամակցութեամբ: - 306. Եկն այնուհետև Շապուհ որդի

թագաւորին Աշոտի և ետ զիշխանութիւնն ի ձեռս Աշոտի որդւոյ Դերանկին, փոխանակ հօր իւրոյ: - 354. Եկն եմուտ ի գաւառն Աղբագ, և ասպատակ սփռէր ընդ կողմանս կողմանս յերկիրն Վասպուրական, գերփէր, աւերէր, յափշտակէր, կապուտ կողոպուտ գործէր ընչից և ստացուածոց. – 176. եկն և նա առ նա յԵրուսաղէմ – 80. և ապա յառաջիկայիցն եկեսցուք տեսութիւն: - 18. և առաքեցին դեսպանս առ արքայ և ինքեանք նստան շուրջ զլերամբն, մինչև փութով եկեսցէ նոցա հրաման ինչ յարքունուստ: - 280. և եկաք յերկուս աւուրս ի տեղիսն, ուր արեգակն ոչ ծագէ. – 50. և լեռնայինքն գային յիւրեանց բանակն: - 276. և լրտեսք քաղաքապետին փութացեալ ասեն, ,,ահա մեկնեալ ի զօրացն զհետ որսոց ինչ յանհոգս յանզգուշութեան գայ ընդ այս ինչ տեղի. - 352. Եւ ամենեցուն ըստ հրամանի թագաւորին յիւրաքանչիւր կողմանց այրուձի գումարեալ՝ հանդերձ այլովք սպառազէն յօրինուածովք անյապաղ երագութեամբ գային ի ժամադրեալ կոչումն: - 198. և այրուձի կազմեալ՝ գալ մտանել յաշխարհս Հայոց, առնել որպէս նիւթեաց զչարիսն: - 62. և անընդունակք լինէիք՝ որ ի մէնջ առաքեցեալքն հազարապետք և վերակացուք աշխարհիս մերոյ և խնամատարք արքունի հոգաբարձութեան գային առ ձեզ. – 244. Եւ անցանելով ընդ գաւառն Բզնունական գայ մտանէ ի Խլաթ. քանզի կամէր անսալ ժամու դիպողագունի, զի որսայցեն նենգութեամբ խաբել: - 186. և Աշոտ զօրու ծանու եկն եմուտ յերկիրն Անձաւացեաց, բանակեցաւ ի Բլրակին գեաւղջն Անձաւացեաց. – 330. և առեալ զնա գան առ Տիգրան - 64. և առեալ զնա եկն եհաս ի վերայ որդւոյն Աբգարու բառնալ ի նմանէ զթագաւորութիւնն զոր ունէր: - 80. և ասէ ,,Ահաւասիկ եկն Տէր բիւրովք հրեշտակօք առնել դատաստան ըստ ամենայնի – 26. Եւ արդ եկ ասացից քեզ, ո՛րպիսի ողբովք ողբայ զնոսա հին մատենագիրն ասելով. – 164. Եւ Գուրգէն Արծրունի և Մուշեղ Բագրատունի, և ինքն փութացաւ հանդերձ կաթողիկոսիւն, եկն բանակեցաւ յամուրն մերձ, ուր էր արգելեալ Դերանիկն: - 348. գրեն թուղթ առ Յամանիկն, եթէ ,,ի մտանելն իմ ի Դուին քաղաք և զհարկս արքունի յիս գրաւել՝ և յանկասկած առեալ զիշխանս Հայոց՝ և եկեսցեն առ իս. – 340. և դաստիարակ առընթեր ունելով զբանն տէրունական … և թէ ,,զի՞նչ օգուտ իցէ մարդոյ, եթէ զաշխարհս ամենայն շահեսցի և զանձն իւր տուժեսցէ, կամ զի՞նչ տացէ մարդ փրկանս ընդ անձին իւրոյ. զի եկն որդի մարդոյ խնդրել և կեցուցանել զկորուսեալն,, - 264. և դարձան եկին պաշարել զքաղաքն: - 382. և դու նոյնպէս սակաւուք եկ, կամ թէ ևս աւելի արամբք, և տեսցուք /226/ զմիմեանս,,: - 228. և եթէ յերկարիցի գործոյս այսորիկ հանդէս և մարտիցն հանգամանք ոչ փութանակի վարիցին՝ գուցէ օգնականութեամբ գիշերոյ եկեսցէ ի վերայ քո և մեծամեծ աւճիրս ի վերայ քո և զօրացդ արքունի հասուցանիցէ: - 212. Եւ ելեալ իշխանաց իշխանն, որ բարձրագոյն և հանճարեղագոյնն էր քան զբնաւ Հայաստանեայցս և զընդհանուր կացեալս ի ներքոյ երկնից՝ եկն առ նա մեծաշուք պատուաւորութեամբ, և պարգևս և պատիւս ոչ սակաւս նմա յառաջաբերեաց. – 344. Եւ ելեալ յիւրաքանչիւր տեղեաց մի քան զմի յառաջանալ ի կոչումն Բուխայի, և ժողովեցան ի մի վայրի և եկին կացին առաջի զօրավարին Տաճկաց: - 296. և ելեալ նստաւ ի ջորւոջն, զոր պատրաստեալն ունէին անդէն առ դրան վրանին, և հանին արտաքոյ ղաշիկ բանակին՝ դարձուցեալ դառնալ ընդ նոյն ուստի եկն: - 346. Եւ եկաց Նոյ յետ ջրհեղեղին առ որդւովքն ամս ԼԾ մինչև ի ՀԳ ամն Եբերայ – 34. և եկին մտին յաշխարհն իւրեանց: - 372. Եւ եկին տալ պատերազմ ընդ ամրոցին Վան քաղաքի - 362. Եւ եղև զի ամբարձ զաչս իւր և ետես, զի պնդեալ գայր հեծեալն զկնի նորա – 230 Եւ եղև զկնի այսորիկ գնաց անտի Ժիրաք և եկն եմուտ ի Վանտոսպ – 206. Եւ եղև ի գալ միւսոյ տարւոյն՝ Սմբատ իշխանն Սիւնեաց ի բաց եկաց ի հնազանդութենէ թագաւորին Հայոց, արգել առնելով հարկացն տալ թագաւորին, թևակոխելով Պարսից բռնաւորին հատուցանել զհարկս և զհասս. 382. Եւ եղև ի դառնալն սրբոյն Սահակայ ի Պարսից՝ եկն առ նա դարձեալ Աղան Արծրունի, և ընկալաւ ի նմանէ սքեմ կրօնաւորութեան. – 120. Եւ եղև ի միում աւուրց, ի գալ նորա ի նմանէն՝ ձայն օտարոտի, և ազդումն ահագին և դիւական անկեալ ի վերայ /գրքում՝ վերա/ նորա՝ ուշաթափ անկեալ դնէր – 158. և երթեալ ի բուրաստանն՝ գտին զնա ի թաւի անդ ղուղեալ,

կալան զնա և եկին ածին զնա ի դախղիճ անդր: - 152. և երկից և երից և բազում անգամ զնոյն հաստատեցին երդմամբ, զի անվեհեր համարձակութեամբ եկեսցէ առ նոսա. – 226. և զերթալն Մեսրովպայ և Վարդանայ ի Յոյնս առաջի արկանէին, և զգալն Անատողեայ և զշինել քաղաքին ի Կարին գաւառ: - 118. և զպատճառսն ստուգեալ, գրէ ի ձեռն Վահանայ ումեմն ի տոհմէն Ամատունեաց՝ դառնալ գալ բնակել անկասկած կենօք, ի բարձ և ի պատիւ իւրաքանչիւր յառաջանալ: - 98. Եւ զօր զումարեալ եկն ի Վանտոսպ, և Դերենիկն յանդիման եղև նմա. – 322. Եւ զօրաժողով եղեալ Մուսէի պատճառաւ հարկաց արքունի՝ եկն եմուտ յերկիրն Տարաւնոյ, տալ պատերազմ ընդ Բագարատայ: - 172. Եւ զօրքն, որ ելեալ էին զհետ Գուրգինայ՝ եկին հասին ի սահմանս երկրին, ուր կայր Գուրգէն զօրօքն իւրովք – 226. և թուէ մի ըստ միոջէ, սկսեալ յԱբրահամէ և գայ անցանէ մինչ ի Յովսէփ -16. Եւ ինքն Աբրահիմ եկն անց յայնկոյս յոստանն Ռշտունեաց և անդ լինէր: - 306. Եւ ինքն Բարձումայ ի չքմեղս լինելով՝ եկն ի Հայս յԱրզնարզիւն և յաշխարհն Մոկաց, զի անդ զնեստորական աղանդոցն սերմանիցէ սերմանս: - 130. Եւ ինքն եկն /186/ ձմերել ի Մուշ քաղաքին Տարօնոյ, ունելով ընդ իւր պատանդս, և Վասպուրականի ի նախարարութենէն Արծրունեաց և յազատաց նորա: - 188. Եւ ինքն թագաւորն ժողովեալ զօր հարուստ աւելի քան զհազարաց հնգից և քսանից, և եկն անց յայնկոյս գետոյն Երասխայ, և բանակեցան ի տեղւոջն: - 382. և ինքն ժողովեալ զզօրս իւր ԺՌ արանց զօրաւորաց՝ եկն եմուտ յամուրսն Վայոց ձորոյ: - 382. Եւ խօսէր ընդ նոսա սաստիկ և ահագին դատաստանօք և սպառնալեօք, թէ ընդէ՞ր և դուք ոչ մեռարուք ի պատերազմին, քան թէ ելեալ փախստական գնացէք գալ առ իս և տալ համարձակութիւն ծառայի իմում ի յայսքան վնաս. մի՞թէ արդեօք զԽոսրով մեռեալ կարծէիք,,: - 150. Եւ կոչնականքն ընդ այգն ընդ առաւօտն փութացուցեալ ասեն, ,,եկ, տեսցուք զմիմեանս սիրով խաղաղութեան,,. – 352. Եւ հասեալ ի մի վայր գան հովիտն Կուղան, ուր Գուրգէն բանակ արարեալ /362/ էր ի Կարկինեանս տեղւոջ բազմաձեռն զօրու. – 364. Եւ հաւանեալ Խոռեմայ՝ եկն առ Հայրակղոս արքայ Յունաց, թողեալ ի նա զԵրուսաղէմ և զԿեսարիայ Պաղեստինացւոց և զամենայն կողմանս Անտիոքացոց և զամենայն քաղաքս գաւառացն այնոցիկ, և զՏարսոն Կիւլիկեցւոց և զմեծ մասն Հայոց և զամենայն զոր միանգամ կամեցաւ Հայրակղոս. – 152. Եւ մինչ նոքա կային մնային հրաման ինչ ընդունել յարքունուստ՝ /286/ դարձան հրեշտակքն և եկին փութանակի, և բերին թուղթ յարքայէ առ Ապումուսէ՝ գալ ի հնազանդութիւն նոցա և երթալ առ Բուխայ. – 288 Եւ միջնորդէր նմա հետևել հաւատոյ առաջնոյ Իսրայէլականացն, ,,զի թէ յայս եկեսցես՝ իմով հրամանաւ եղիցիս զօրագլուխ մեծ և առաջնորդ ամենայն տոհմի քո,,: - 158. Եւ յաւուր միում լեալ նորա ի տխրութեան ի սպառնալեաց հօրեղբօրն իւրոյ՝ եկն եմուտ առ նա Ալի որդի Ապուտալպի և ասէ, զի՞նչ են պատճառքդ զի նստիս տխրեալ. – 160. և յերթալն նորա և ի դառնալն՝ գայ գտանէ վախճանեալ զթագաւորն Արտաշէս ի Մարինդ – 92. և նա դիմեալ եկն ի վերայ նորա: - 150. Եւ նոյնժամայն եհաս հրաման յարքունուստ՝ մի տաղտկալ և վհատել և մի ի բաց կալ պատերազմել ընդ նմա. մինչև եկեսցէ ակամայ կամօք ի հնազանդութիւն արքայի: - 284. և նորա կալեալ զնա և ի կապանս մատնեալ որպէս զանհնազանդ ոմն՝ և եկն անց յՈստանն Ռշտունեաց: - 322. Եւ նոցա ընկալեալ զխնդիրսն՝ հաւանեցան առնել ըստ կամաց նորա, մինչև տեսցեն եթէ զի՞նչ պատասխանի եկեսցէ նոցա յարքայէն իւրեանց, և կամ զօրուն զի՛նչ հրամայեսցէ առնել: - 144. Եւ նոքա թափառնակի անյապաղ հանդերձ իւրաքանչիւր զօրու եկին հասին առ մեծն Վարդան – 126. և նոքա տան տանել նմա զհարկս և հասս արքունի և դարձուցանեն զնա ընդ նոյն ուստի եկն: - 172. Եւ ոմն ընթացեալ ետ գոյժ վաղվաղակի /150/ Խոսրովու, թէ ,,ապստամբեցաւ ամենայն Արեաց երկիր ի քէն, և զորդի քո Կաւատ նստուցին թագաւոր, և ահաւադիկ դիմեալ գա ի վերայ քո,,: - 152. և փախստական եղեալ Մահմէտ և Ալի և ընդ նոսա իբրև արք Խ՝ եկին ի քաղաքն Մադիամ – 160. Եւ փութացաւ գալ առ նա Դերանիկն. – 350. Եւ քան ընդ ապստամբելն ի նմանէ՝ ընդ յոյժ անմտութեամբ գալն առ նա զարմացաւ: - 272. Զայս իմացեալ խորհրդականութիւն Քսերքսէս յԱդրամելեայ և Սանասարայ յորդւոցն

Սենեքերիմայ՝ ապա գան առ Տիգրան Հայոց թագաւոր և զեկուցանեն նմա վասն որոյ խորհի Աշդահակ. – 62. զերծեալ ի բանտէն յոր տուանն՝ և գան հասանեն յերկիրս այս մեր, բերելով զաւետիս արձակման գերելոցն – 324. զի սուսեր մերկ ի ձեռին ունի, և միայն առանձին գայ զհետ մեր – 230. Զի ազգ բարբարոս խուժադուժ ի դիմի ելեալ գան տալ պատերազմ, կորզել յինքեան զգերին Հրէից: - 66. զի եկեսցէ առ նոսա առանց պատկառանաց և երկիւղի և առանց միոյ իւիք կասկածանաց – 226. զի մինչ ընդխոնեցաւ պատերազմն և դէմ առ դէմ ճակատէին՝ յանկարծակի այր մի ի նմանութիւն լուսոյ եկն եկաց ի մէջ ռազմի ճակատուն – 232. Զկնի այսորիկ եկն Աշոտ թագաւորն Հայոց մխիթարել զդուստր իւր և զթոռունս, և ևս առատանայր զհաստատութիւն իշխանութեանն Աշոտի և զոստիկանութիւնն Ապումրուանայ: - 356. զոր ոչ անունկնդիր լեալ Աշոտ՝ վերջոտնեալ եկն բանակեցաւ յԱրտաշէսեան աւանին, և Յիսէ ի Վան քաղաքի: - 334. Զորոյ իրազեկ եղեալ գալուստ նորա առ Ահմատ, և նորա գումարեալ առ ինքն զզօրս իւրոյ նահանգին և Միջագետաց և զԳեթացիսն՝ և եկն եհաս յանդիման նմա: - 366. Ընդ նոյն ժամանակս եկն Վահան Աշոտի որդի, հօրեղբօրորդի Սահակայ ի գերութենէն՝ նուաճել զաշխարհս, և գունդ կազմեալ ընդդէմ Գուրգինայ՝ և ինքն զպարտութիւն քան զյաղթութիւն յինքն կրէր: - 310. ի հօրէ զՍենեքերիմայն և ի մօրէ զՄամգոնեացն, ըստ ծննդաբանութեան գալ հասանել՝ մինչ յորում եմքս հասեալ ժամանակ – 300. Ի ՅԷ ամի Հայոց թուականութեանս եկն Աշոտ Վասպուրական իշխան ի գերութենէն: - 326. Իբրև ետես կայսր Հայրակղէս զչարիսն ամենայն, որ եկին հասին ի վերայ նորա՝ ակամայ կամեցեալ ցուցանել բարեկամութիւն՝ ել ընդ առաջ նոցա, մեծարել իբրև զվաստակեալս և զհիւրս, ընկալաւ զնոսա մեծամեծ /142/ ընծայիւք. – 144. Իսկ աբեղայն արիոսեան, զոր յառաջագոյն ասացաք վարդապետ Մահմէտի, տեսեալ զյաջողութիւն իրացն՝ յարուցեալ եկն առ Մահմէտ, ցուցանել նմա զգութ երախտեաց, իբրև յիւրմէ վարդապետէ ուսեալ եհաս այնպիսի իրաց. – 162. Իսկ երանելոյն Աղանայ Արծրունւոյ որդւոյ Վասակայ դարձեալ ի Յունաց աշխարհէն՝ եկն յերկիրս Հայոց, նովին կրօնաւորական խստամբերութեամբ /132/ և հրեշտակակրօն առաքինութեամբ կեցեալ՝ վերափոխի յաշխարհէս ի դասս սրբոց. – 134. Իսկ Երուանդայ հետազօտեալ գայ բնակի առ ստորոտով լերինն ի գլուխս Տոսպ գաւառի, և կոչէ զտեղին /82/ Երուանդականս. – 84. Իսկ ի գալ միւսոյ ամին … առեալ զօրականս այրուձի կազմութեամբ իբրև Չ խաղաց գնաց երկայնագոյն հեռաւորութեամբ հասանել ի վերայ բանակին պարսկական աղխին – 402. իսկ իբրև եկն Ապումրուան զհետ փախստէիցն ի Վանտոսպ զկնի թագաւորին՝ և խորհուրդն Գագկայ հաստատնագոյնք զկատարումն առին: - 368. Իսկ իբրև եկն Գուրգէն երկրորդ՝ փութացաւ գնաց հասանել ի վերայ առաջնոյն Գուրգինի. – 316. Իսկ իբրև ընթերցաւ զօրավարն Աղուանից զթուղթ թագաւորին՝ փութացաւ էջ ի լեռնէ անտի և եկն եկաց առաջի Բուխայի. – 288. Իսկ իբրև լուաւ, թէ ահա առեալ Բուխայ զզօրս իւր գալ հասանել ի վերայ նորա՝ հրաման ետ բոլոր աշխարհին իւրոյ ելանել ունել զլեռնակողմն – 276. Իսկ իշխանն Աշոտ … Մուշեղ Վահևունի … և Վահրամ սեպուհ թիկնապահ իշխանին, և Վահրամ Տրունի և Հասան և այլք ի սեպուհ պաշտօնէից … եկին մտին ի բերդն Դղեակ, յամրոցն Նկան, որ ի Թոռնավան գաւառի. – 206. Իսկ իշխանն Վասպուրական, այն ինչ հուպ ընդ հուպ եկն ի ժամադրեալ տեղին. ընդ որ յոյժ ուրախացեալ թագաւորն, իբրև զերծեալ ի կասկածանացն, զոր ունէր յիշխանէն Սիւնեաց: - 382. իսկ խարդախն ի նոցանէ ստիպեալ նախաժաման եկն յառաջ: - 46. Իսկ նոցա ոչ յայտնեալ զխորհուրդ չարութեանն՝ դարձուցանեն զնա անդէն, զի մի յերկբայս եղիցի գալ առ նոսա. – 226. Իսկ Պարսկահայոց գոեահն խուժան ածեալ, գաղտագնաց եղեալ ընդ անկոխ ճանապարհս՝ գան հասանեն ի Մարդաստան գաւառ յաւանն Վիտահոտ – 400. իսկ Սմբատ առեալ զԱրտաշէս գայ բնակէ ի բարձրաւանդակ լերինն Վարագ: - 82. Իսկ Սմբատ որ և Ապլաբաս սպարապետն Հայոց, իբրև գիտաց թէ ոչինչ օգուտ բերէ արտաքոյ հրամանացն նորա լինել՝ փութացաւ եկն առ նա, և ընկալեալ ի նմանէ՝ բնակեաց ինքն և իւրքն հանդերձ իւրաքանչիւր կալուածովք առանց կասկածանաց. – 270. համոզեաց ի մէջ

երկոցունց և գլխաւորեաց զխաղաղութիւն /382/ առ նոսա, մինչ գալ Սահակայ եղբօր իշխանին Սիւնեաց, ընդ իւր բերելով զհարկսն: - 384. միայն զի եկեսցէ ի բան արքունի և մի ելցէ արտաքոյ կամաց թագաւորին. – 288. մինչև եկին հասին ի վերայ մեր մեծամեծ չարիքս այսոքիկ և անկանգնելի գլորումնս – 182. մինչև եկից հասից ի լայնանիստ ընդարձակ ասպարէզս մատենից պատմութեանցս՝ ոճով մի ըստ միոջէ շարեցից, կարգեցից, գրեցից զախորժելին քեզ: - 74. Յայն ժամանակս գայ ոմն Բուտել անուն ի զօրացն արքունի հրամանաւ Բուխայի, հասանել ի վերայ Գուրգինի – 306. Յայնժամ ելեալ իշխանն Գրիգոր յերեսաց արքայի մեծաւ ուրախութեամբ և անպատում խնդութեամբ՝ և եկն եմուտ յերկիր իւր յիշխանութիւն Վասպուրական կոչեցեալ: - 314. Յայնժամ խորհուրդ միաբանութեան ի մէջ առեալ ամենեցուն նոցա ասեն. ,,թէպէտ և ի թշնամեացն ապրեցաք՝ սակայն ի ձեռաց դորա մեզ չիք ապրել. արդ եկայք իմասցուք ինչ,,: - 150. Յայնժամ մեկնեալ ի նմանէ զօրավարն, լցեալ խորհրդովք չարին հնարագիտութեամբ՝ եկն եմուտ ընդ կողմն Ատրպատական յԱղբագ գաւառ յերկիրն Վասպուրական – 184. Յայնմ ժամանակի Բուհայ եկն եմուտ ի Խլաթ քաղաք, ճանապարհ արարեալ ընդ կողմն Ապահունեաց. – 200. Յետ անցանելոյ չորից ամաց … դարձեալ Գրիգոր եղբայր Աշոտի Վասպուրական իշխանի յԱփհազաց աշխարհէն՝ նոցուն օգնականութեամբ և Վրաց զօրու ընտիր գոլով՝ եկն եմուտ յաշխարհս Վասպուրական՝ տալ պատերազմ ընդ Գուրգինայ. – 310. Յղէին պատգամս առ որդիսն Իսմայէլի և ցուցանէին զմտերիմ հարազատութիւն, թէ ,,որդիք Աբրահամու եմք մեք և դուք, եղբարք. պարտ է ձեզ գալ յօգնականութիւն մեզ, և առցուք զերկիր ժառանգութեան մերոյ,,: - 156. յորոց աճմամբ յառաջանայ կարգն և գայ հասանէ ի Սենեքերիմ արքայ, առ Եզեկիայիւ Եբրայեցւոցն առաջնորդաւ և առ մերովն Հարամայիւ: - 14. Նա և բազմախոհեմն Կիւրոս Պարսիկ խաղայ գայ իւրովք հեծելազօր մարտակցովքն՝ գալ օգնել Տիգրանայ. – 62. Նոյն ժամայն առեալ Սմբատայ զԱրտաշէս գայ անցանէ ի վայր ի լեռնէն. – 84. Նորա ունկնդիր եղեալ գայ առանց յապաղանաց – 82. նոցա ի մտի եղեալ էր, զի թէ գայցէ զհետ կոչնականացն՝ կալցուք զնա և զօրքն նորա լքանիցին, և դիւրաւ յաղթեսցուք նոցա: - 228. Նստան երկոքին կողմանքն պահել զպահպանութիւն իւրեանց մեծաւ զգուշութեամբ, և ետուն ժամ անսալ միմեանց՝ ոչ ելանել ի պատերազմ, մինչև եկեսցեն հրեշտակքն յարքայէ, զոր առաքեցինն: - 286. ո՞չ ապաքէն տունդ Սասանայ եբարձ զերկիր ձեր և զտէրութիւնդ, և դուք դիմեալ գայք ի վերայ իմ: - 138. Որ ապա յետ սպանմանն Սենեքերիմայ յորդւոց իւրոց՝ բուռն զնդաւ Ադրամելէք և Սանասար գան մտանեն ի լեառն Սիմ - 16. Որով օրինակաւ կամք քո հրամայեն՝ եկեսցէ ի վերայ մեր պատիժ պատուհասի. – 246. Որոց ոչ զպատաղումն բերելով՝ գայ զօրու Աւշնի հասանէ ի վերայ նոցա: - 362. Որում ունկնդիր եղեալ երեքեան նախարարութիւնքն առն իմաստնոյ Վահանայ Ամատունւոյ՝ գան զկնի նորա անկասկած համարձակութեամբ – 98. ՎԱՍՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ԲԱԳԱՐԱՏԱՅ ԻՇԽԱՆԻՆ ՀԱՅՈՑ ԵԻ ՄՈՒՍԷԻ ԵԻ ՅԱՂԹՈՒԹԵԱՆՆ Ի ՁԵՌՆ ԱՇՈՏՈՅ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ ԻՇԽԱՆԻՆ, ՋԻ ԵԿՆ ԶՕՐԱՎԻԳՆ ԲԱԳԱՐԱՏԱՅ: -172. Քանզի Ասիականք արևելից Սեմայ լեալ վիճակ՝ խոյս տուեալ Հայկայ գայ հատուածեալ ի Բէլայ ի Բաբելոնէ յարևելս Ասիական. – 42. Քանզի իբրև լուաւ երանելին Զաքարիայ, եթէ ըմբռնեցաւ Գուրգէն՝ փութացաւ և եկն հանդերձ եպիսկոպոսօք աշխարհին. – 320. բայց արդ եկ ի կողմանցդ յայդցանէ, եկից և ես յԱսորեստան. – 152. Նա և բազմախոհեմն Կիւրոս Պարսիկ խաղայ գայ իւրովք հեծելազօր մարտակցովքն՝ գալ օգնել Տիգրանայ. – 62.

ԳԱԼՈՅ - և ի վերայ նորա շինեաց եկեղեցի գհամբարձմանն ի յերկինս ի Հօրն գահակցել աթոռ, և զերկրորդ գալստեանն զյիշատակ ունելով, որ գալոցն է հայրենի փառօք, ըստ հրեշտակացն առաքեալսն զմխիթարականն և զքաջալերականն աւետիս նոցա առբերելով: - 390. և լուսաւոր առնել զամենայն մարդ, որ յաշխարհ գալոց է. – 76.

ԳԱԼՈՒՍ - բայց միայն զհարկաց և զայլ հոգաբարձութենէ ծանուցանէ զպատճառ գալստեանն. – 172. Եւ ամբարձ զմիտս իւր ի հանդերձեալ գալուստն Քրիստոսի, և որ յայնժամ լինէին ահեղ որոտմունք և թնդիւնք և հրձգութիւնք և արհաւիրք մեծամեծք յերկնից և յերկրէ –

284. Եւ եղև մօտ ի կատարումն հասանել ամին երկրորդի գալստեան նորա՝ ել գնաց ի կողմանս Աղուանից. – 276. Եւ թէ որպիսի օրինակաւ գալուստ նորա և պատերազմ վասն սորին իրաց, և արիական ձեռակերտացն շինուածք, որ և յոյժ արժանաւորք զարմանալեաց, և դարձեալ ապստամբութիւն Զրադաշտին և մահն Շամիրամայ և բան յուռթիցն որ զնմանէ – 44. և թռչունք և գազանք ծանեան զժամանակս գալստեանն իւրեանց – 268. և ի վերայ նորա շինեաց եկեղեցի զհամբարձմանն ի յերկինս ի Հօրն գահակցել աթոռ, և զերկրորդ գալստեանն գլխատակ ունելով, որ գալոցն է հայրենի փառօք, ըստ հրեշտակացն առաքեալսն զմխիթարականն և զքաջալերականն աւետիս նոցա առբերելով: - 390. և որ ինչ այդմ հետևին ի հանդերձեալ գալստեանն Քրիստոսի ի վերջնումն աւուրն. – 284. Զորոյ իրազեկ եղեալ գալուստ նորա առ Ահմատ, և նորա գումարեալ առ ինքն զզօրս իւրոյ նահանգին և Միջագետաց և զԳեթացիսն՝ և եկն եհաս յանդիման նմա: - 366. որ ամենատես ակնարկութեամբ ստորիջեալ ի խնդիր կորուսելոյն հեզագնաց գարշապարօք՝ ընդելականս նմա գուշակէր /գրքում՝ գուշակեր/ գալուստ – 20. ՈՐ ԻՆՉ ԳՈՐԾԵՑԱԻ ՅԵՐԿՐՈՐԴՈՒՄ ԱՄԻՆ ԳԱԼՍՏԵԱՆՆ ԲՈՒԽԱՅԻ, ՈՐՔ ԵՆ ՈԼՈՄԲԻԱԹՔ ՎԱՍՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ԸՆԴ ՍԱՀԱԿԱՅ ԻՍՄԱՅԷԼԱՑՈՑ,ՈՐ ԻՍՄԱՅԷԼԻ ՈՐԴԻ ՃԱՆԱՉԷՐ, ԵԻ ՎԱՍՆ ՊԱՇԱՐՄԱՆ ՔԱՂԱՔԻՆ: - 268. որոյ գալուստն ազդ եղեալ գնդի այլազգեացն՝ փախեան գնացին բացագոյն, կալան զամրական տեղիս, ցրուեալ ընդ լեռնայինսն անյայտ թաքստեամբ: - 402. պատմեաց նոցա զհանգամանս տեսլեանն … և դարձեալ զնորոգումն հայրապետութեան և թագաւորութեան ի նոյն զարմէ Արշակունեաց, և զգալուստ նեռինն, և զգալուստն Քրիստոսի, և զհանդերձեալ դատաստանացն, և զհատուցումն իւրաքանչիւր ըստ գործս իւր – 120. պատմեաց նոցա զհանգամանս տեսլեանն … և դարձեալ զնորոգումն հայրապետութեան և թագաւորութեան ի նոյն զարմէ Արշակունեաց, և զգալուստ նեռինն, և զգալուստն Քրիստոսի, և զհանդերձեալ դատաստանացն, և զհատուցումն իւրաքանչիւր ըստ գործս իւր – 120. որոյ սկիզբն է ,,Անզբաղել ական սրտի նայեցող անձն իմ ի միւսանգամ գալուստն,, , Ե տուն ի յութերորդ վանգէ: - 284.

ԳԱՀ - Իսկ թագաւորն գրէ առ զօրավարն թերևս կարասցէ հաւանեցուցանել զԳուրգէն՝ երթալ ի թագաւորական քաղաքն առ կայսր, և մեծաց պարգևաց և պատուի և գահու յառաջագութեամբ ընկալցի պարգև ի թագաւորէն: - 302. Այլ քանզի յոյժ առաւելեալ էր իմաստութեամբ Գագիկ՝ տեղի տայր բովանդակ գաւառապետաց զօրագլխաց աշխարհիս, գնայր ընդ նոսա իմաստութեամբ խորագէտ հնարաւորութեամբ, ըստ անձնիւր գահու մեծարեալ պատուադրութեամբ հաճոյանալ ախորժէր նոցա: - 354. և առեալ զյաղթութեանն քաջանունութիւն, առաւել զհանճարեղութեանն խոհեմութիւն՝ յառաջանայր ի գահ, ի բարձ և ի պարգև - 72. և զնախարարսն դարձեալսն յԱրշակայ՝ կացոյց յանձն իւր գահու – 112. և ի գինարբուսն ի տեղի մատռուակութեան յառաջացուցեալ՝ ի գահ նախարարութեան ձգեալ կացուցանէ – 64. և կեայք պանդխտութեամբ կեանս, իւրաքանչիւր ի սուր իւր գտանել զբարձ և զգահ նախարարութեան. – 110. Եւ նախարարութիւնս յօրինէ, յանուն և ի բարձ և ի գահ յառաջ մատուցեալ: - 72. Զի թէպէտ և Գուրգէն մեծաւ զօրութեամբ ունէր զդէմ յարձակելոցն ի վերայ, որոց զիշխանականն ճեպէին հասանել գահ, կամ որ արտաքին տաճկական պատերազմունքն բռնաբար ի ներքս դիմէին՝ սակայն ոչ յապահովանայր դեռ երկիրն: - 316. զորոյ նախնեացն ջան և վաստակ յուշ արարեալ թագաւորին՝ Համամայ յառաջ մատուցեալ, ի գահ և ի բարձ հայրենեացն ձգել զնա՝ ժառանգեցուցանէ զերկիրն Աղբազ, որպէս Սահակայ նոյնպէս և Համամայ: - 90. Իսկ Վասակ Արծրունւոյ եկեալ առ Խոսրով և կալեալ զժառանգութիւն և զգահ – 112. որ յետ ՁԸ ամի Սենեքերիմ յառաջանայ ի գահ հայրենի իւրոյ թագաւորութեանն մեծաւ զօրութեամբ - 16. տալով Աշոտի … զգահն նախնական իշխանութեան այլովք յոլովագոյն միջոցօք աշխարհիս, մինչև յամուրն Նախճաւանու: - 360.

ԳԱՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ - Բայց Ապումբռաան երկնէր գայր զիշխանասիրականն ծնանել գահակալութիւն ի վերայ աշխարհիս: - 364. և եկեալ ի մի վայր Գագիկ և Գուրգէն եղբարք համահարք և միոյ մօր ծնունդք, յերկուց քաջատոհմիկ գահակալութենէ Սենէքարիմայ և Դաւթի – 388. Եւ Գուրգինի նորին եղբօրն զպատիւ մարզպանութեան գահակալութեան հաւատացեալ, ըստ կարգի բարձաբերձութեան թագաւորացն Հայոց, մանաւանդ մեծին Տրդատայ թագաւորի: - 370. Իսկ Ասուդ թէպէտ և այնպէս շքեղութեամբ ճոխանայր եգիպտական և հնդկային հարստութեամբն՝ այլ յիշելով զբուն իւր սեփհական թագաւորութիւն Ասորեստանի՝ ոչ հաճոյանայր կեալ եգիպտացի գահակալութեամբն. – 70.

ԳԱՀԱԿՑԵԼ -և ի վերայ նորա շինեաց եկեղեցի զհամբարձմանն ի յերկինս ի Հօրն գահակցել աթոռ, և զերկրորդ գալստեանն զյիշատակ ունելով, որ գալոցն է հայրենի փառօք, ըստ հրեշտակացն առաքեալսն զմխիթարականն և զքաջալերականն աւետիս նոցա առբերելով: - 390.

ԳԱՀԱՎԻԺՈՒԹԻՒՆ - զի մի հօտն առանց հովուի յանապատս և ի վիհս կորստեան թափառական յածիցին գայլոցն գահավիժութեամբ: - 104.

ԳԱՀԸՆԿԱԼ - յերկուց թագաւորազանց զաճմանն սեռի բերելով զբողբոջս զՍենեքերիմայն և զՄամգունեաց ճենազնւոյ, ի միասին զզուգամասն պայազատեալ գահընկալ թագաւորական զարմ - 300.

ԳԱՀԸՆԿԱԼՈՒԹԻՒՆ - և առ եղբայրականն զհնազանդութեանն չափ ցուցանելով, անկշիռ վայելչութեամբ զմիմեանս լաւ համարելով քան զանձինս, հասարակ զճոխութիւն իշխանական գահընկալութեանն վարկանելով – 360.

ԳԱՂԱԲԱՐ - և էր յայնժամ առեալ Յունաց Գաղաբար /գրքում՝ գաղաբար, հավանաբար պետք է ընդունել որպես հատուկ անուն՝ Գաղաբար/ իշխանիկ կոչեցեալ ի տոհմէ Բագրատունի՝ զբերդն Արամանեակ կոչեցեալ. – 302.

ԳԱՂԱՏԱՑԻՔ - Եւ հարան զօրքն Գաղատացւոց, ի մեծամեծաց մինչև ի փոքունս նոցա, և ոչ մնաց ի նոցանէ և ոչ մի: - 66. Ընդդէմ նորա զօրաժողով եղեալ տունն Գագայ ազգն Գաղատացւոց, երկոտասան բիւրու – 66.

ԳԱՂԹԱԿԱՆ - և կարաւան գաղթականին տեսանէր զփայլիւն զինուցն և զշողալ սուսերացն, և այսր և անդր խուճապական լեալ հալածեալս, իբրև զոչխարս ի գայլոց: - 228. և անդ լինէին ժողովեալ ամենայն բազմութիւն աշխարհակոյտ ամբոխից գաղթականաց գաւառացն կողմանցն Աղբակոյ, Զարէհվանի և Ակէոյ և ի լեռնակողմանցն Աղզոյ և Ոտնն Առնոյ, մի կողմն ի Ջողայ լեռնէն և անդր: - 226. և իբրև զպարիսպ անդամանդեայ՝ այնպէս եդին զանձինս ի վերայ բազմութեան գաղթականին աշխարհակոյտ ամբոխիցն, իբրև քաջ հովիւ ի վերայ խաշանց մեռանել յանձն առին: - 230. Զեռնամուխ եղեն ի գործ պատերազմին և քահանայքն, որ կային ի բազմութեան գաղթականին – 232.

ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԻՒՆ - և տառապելոցդ որ եկեալ յեցեալ են ընդունայն գաղթականութեամբ՝ եղիցի արձակուրդ ի տեղիս իւրաքանչիւր – 216.

ԳԱՂՏԱԲԱՐ - բայց միայն մանուկ մի Դիոս անուն, զոր գաղտաբար ապրեցոյց մայրն, որպէս յետ բազում ժամանակաց զՄովսէս ի յԵգիպտոս – 14. և կալան անդ զտիկնայսն ամենայն և զհարճսն և զորդիսն արքայի, և զերիվարսն արքունական, որով եկեալ էր Խոսրով արքայ ի Տիսպոն՝ հանին գաղտաբար ի գիշերի, և արքայ Խոսրով ոչ միոյ իւիք չէր տեղեակ. – 150.

ԳԱՂՏԱԳՆԱՑ ԵՂԵԱԼ - Իսկ Պարսկահայոց գոեահն խուժան ածեալ, գաղտագնաց եղեալ ընդ անկոխ ճանապարհս՝ գան հասանեն ի Մարդաստան գաւառ յաւանն Վիտահոտ – 400.

ԳԱՂՏՆԻ - ,,զի՞նչ է այդ, զոր դուք ի ծածուկ գործէք, և ընդէ՞ր խորհուրդք գաղտնիք ընդ միմեանս խորհիք. – 214. Ասաց Բագարատ յուրացութեանն իւրում, թէ առ վտանգի նեղութեանցն՝ ուրացութիւնն ոչ ինչ վնասէ, եթէ ի սրտին գաղտնի պահէ զխոստովանութիւնն հաւատոց: - 254. սա մատուցեալ առ թագաւորն Տիրան՝ սկսաւ քսութեամբ խօսել ի գաղտնի զտանէն Արծրունեաց և զՌշտունեաց - 98.

ԳԱՂՐԻԿՔ - Եւ գունդն Հայոց խաղացին ընդդէմ նոցա … ի տանէն Արծրունեաց՝ Գուրգէն … և Գաղրիկքն՝ Ապուսելմ և Վասակ և Վահան. … և Ամատունիքն՝ Մուշեղ և Ասիթ և Սահակ. – 230.

ԳԱՄԱԳԻՏ - հեծելագունդ զօրացն Կայսկին զկնի նորա, զգացեալ զպատճառ ելիցն նորա ի բանակէն. որում ոչինչ գամագիտ կարացեալ լինել՝ դարձան ամօթալից կորակնեալք, յանգէտս համարեալ զինչ գործեցինն: - 342.

ԳԱՄԱԳԻՏ ԼԻՆԵԼ - և տարածեալ սփռեալ գործավարս յամենայն երկիրս, բայց միայն յամուրսն ոչ կարացին լինել գամագիտ: - 372.

ԳԱՅԹ - և ըստ մեղաց տանն Արշակունեաց առաջին թագաւորացն մերոց հետազօտեալ լինէին, գնային ոտնխեթի, /ճիշտը՝ ոտնխթի/ գայթ ի գայթս և աղտեղասէրս – 182. սակայն կանոնական սահմանադրութեանն արտաքոյ մնացեալ, գայթ ի գայթս զքրիստոնէութեանն վարս բերելով անառակութեամբք և արբեցութեամբ, խառն անկողնօք և պղծութեամբք աղտապիղծ սարսափելի և գարշելի խառնակութեամբ արուապղծութեամբք – 336.

ԳԱՅԹ Ի ԳԱՅԹ - և ըստ մեղաց տանն Արշակունեաց առաջին թագաւորացն մերոց հետազօտեալ լինէին, գնային ոտնխեթի,/ճիշտը՝ոտնխթի/ գայթ ի գայթս և աղտեղասէրս – 182. սակայն կանոնական սահմանադրութեանն արտաքոյ մնացեալ, գայթ ի գայթս զքրիստոնէութեանն վարս բերելով անառակութեամբք և արբեցութեամբ, խառն անկողնօք և պղծութեամբք աղտապիղծ սարսափելի և գարշելի խառնակութեամբ արուապղծութեամբք – 336.

ԳԱՅԹԱԿՂԵԱԼ - և արդ քանզի խօսեցայ ընդ ձեզ բանիւք ողոքանաց՝ և դուք թերևս յայդ գայթակղեալ խաբեցայք և պնդեալ կայք յամառեալ: - 246.

ԳԱՅԻՈՍ - և թագաւորեաց փոխանակ Տիբէրի Գայիոս փոքրն ամս Գ և կէս: - 80.

ԳԱՅԻՈՍ ՓՈՔՐ - և թագաւորեաց փոխանակ Տիբէրի Գայիոս փոքրն ամս Գ և կէս: - 80.

ԳԱՅԼ - և կարաւան գաղթականին տեսանէր զփայլիւն զինուցն և զշողալ սուսերացն, և այսր և անդր խուճապական լեալ հալածելս, իբրև զոչխարս ի գայլոց: - 228. և իբրև զքաջ հովիւն դրուատեալ ի փրկչէն՝ զանձն իւր եդ ի վերայ խաշանց ընդդէմ ապականարար գայլոցն, յարձակեալ յանխնայ դիմեցուածովք, յարիւն և յապաժոյժ, ի սատակումն և ի ծախումն սրոյ մատնեաց բոլորովիմբ զյարձակեալս նեղիչս աշխարհիս. – 312. Եւ վազեսցեն առաւել քան զինծ երիվարք նոցա, և երագունք քան զգայլս Արաբացւոց: - 200. զի մի հօտն առանց հովուի յանապատս և ի վիհս կորստեան թափառական յածիցին գայլոցն գահավիժութեամբ: - 104. լի թունիւք սատանայական խորհրդոցն, ծածկեալ յաչս իշխանին գառնենի զգեստիւք ի հանդերձս ոչխարաց, և ներքոյքն զապականիչ գայլոցն բերելով զլրբութիւն – 210.

ԳԱՅՌԱԼԻՐ - այլ և առ Աստուած ևս և առ սուրբս նորա յաւակնեալ՝ յերկինս բացեալ զգայռալիր բերանն և որպէս շուն լիրբ պատուհաթափ եղեալ ածէր զլեզուն զերկրաւ: - 100.

ԳԱՆ - այլ դարձուցին անդրէն զպատգամաւորսն անարգանօք, արբուցեալ նոցա գան սաստիկ – 274. և զապստամբս և զընդդիմակայսն ըստ արժանի ապիրատութեանն իւրեանց խրատել գանիւ և բանտիւ և պէսպէս տանջանօք – 212. և խոշտանգեսցես զնոսա գանիւ և բանտիւ և պէսպէս տանջանօք սպառնալեօք և ողոքանօք և ընչից պատրանօք արկցուք զնոսա ի ներքոյ կամաց թագաւորութեան մերոյ. – 196. պատրաստ եմք ի կապանս, ի բանտս, ի գանս, ի հուր, ի սուր, ի ջուր, ի տանջանս հարուածոց և յամենայն հնարս չարչարանաց,,: - 246. տանջեաց զնոսա գանիւ, և նոքա ևս առաւել պնդեցան ի հաւատսն և ի յոյս բարեաց և ի սէրն Քրիստոսի: - 222.

ԳԱՆՁ - և նա երթեալ առանց մեր հրամանի թագաւորեաց, և զմեր գանձս մեզ ընծայ մատուցանէ, ոչ գիտելով եթէ համարս խնդրեցից գանձիս այսմիկ, և ոչ դադարեցից մինչև առից զնա ի բուռն իմ,,: - 142. ամենածախ գանձիւք առատաձեռն պատուով հոմանեաց և եթ ունելով ուշ – 44. բայց միայն ի դրան արքունի մտանել և ելանել ընդ հաւատարիմս թագաւորին ի տուչս դիւանաց և գանձուց: - 92. գումար արարեալ են, ամենայն զինուոր ի

գանձարանս ի տունս գանձուց թագաւորին, զոր դարձեալ ուղտիւք կրէին ընդ ինքեանս: - 282. Դահեկին/ճիշտը՝դայեկին/ նորա մնալով ի ներքոյ կախաղանին՝ ամփոփէ /102/ զսուրբ գանձն ի ծոց իւր, տարեալ փոխէ ի վկայարան հանգստի ի ձեռն սրբոյն Ներսէսի – 104. եթէ եբաց Տէր զգանձս իւր և եհան անտի զանօթս բարկութեան – 196. Եւ բացեալ զմթերս գանձուցն բաշխէր առատապէս ամենեցուն իւրոց սպայիցն: - 168. և յերկիւղ կասկածանաց եղեալ, թէ իցէ ընդելուզեալ Տաճկաց՝ գտեալ զպահեստ գանձին ծախիցեն զզօրութիւն նորա: - 180. Եւ առաքեաց հրեշտակս մեծապէս գանձիւք և հրովարտակօք առ արքայ Խոսրով, խնդրել ի նմանէ զխաղաղութիւն մեծաւ թախանձանօք – 140. և առեալ զգանձս Արշակայ բերին առ Խոսրով: - 112. Եւ առեալ զգանձսն՝ հրամայեաց սպանանել զընծայաբերսն, և բանիցն Հայրակղի ոչ արար պատասխանի, այլ առնէր վնասս սաստիկս ի կողմանս կողմանս, աւարառութիւն և գերութիւն և սուր. – 142. Եւ գումարեալ Հայրակղի զամենայն զօրս իւր յորդոր և խնդալից սրտիւ, բազմութեամբ զօրաց ել ընդ առաջ սուրբ նշանին, ի պատիւ հրաշալի և երկնաւոր գանձուն – 154. Եւ եթէ քաղաքս խնդրիցէ՝ ահաւադիկ է քաղաքք մեծամեծք և պարսպաւորք. այլ գանձս խնդրիցէ՝ ասացի թէ տաց որչափ և ձեռն հասանիցէ. և ոչ կամեցաւ լսել, այլ տակաւին ծարաւի է արիւնարբութեան: - 144. և ելեալ ի հրապոյրս ցոփութեան ըստ խրատու առնն, յուսացեալ յամրոցն և ի գանձսն, և ի ցանկութիւն իշխանասիրութեան համբարձեալ զաչս – 346. Եւ զգանձդ Արեաց թագաւորութեան այնչափ արձակեցից՝ մինչև շատ լիցի ասել ձեզ, և բազմութիւն զօրաց՝ որքան և պիտոյ իցէ ձեզ, մինչև ձեր թագաւորութիւնն հաստատեսցի„: - 138. և զտունսն գանձի նորա հրամայեաց ածել յաւարի. – 66. և ընդ այգն ընդ առաւօտն առին յաւարի զբանակն հանդերձ ախիւն և զտունսն գանձուցն զորս առ ինքեանց: - 332. և ի վերայ նորա կանգնէ զԱստղկեան պատկերն, և մօտ նորա զտունն գանձու պաշտպանութեան կռոցն. – 88. Եւ լուեալ կնոջն Սահակայ, թէ ըմբռնեցաւ … փութացաւ գնաց եկաց առաջի Բուխայի, թերևս կարասցէ ըստ պատշաճ գեղոյն և ըստ բազմաձեռն գանձուց ապրեցուցանել զայրն իւր, որ առաւել մահու քան թէ կենաց պատճառ եղև նմա: - 272. և նա երթեալ առանց մեր հրամանի թագաւորեաց, և զմեր գանձս մեզ ընծայ մատուցանէ, ոչ գիտելով եթէ համարս խնդրեցից գանձիս այսմիկ, և ոչ դադարեցից մինչև առից զնա ի բուռն իմ„: - 142. և ունէր կինն գանձ բազում, և նորա դուստր մի Անուշ անուն. – 90. և տանջեալ զնա ջղօք՝ տայ նմա և զգանձս աներևոյթս – 66 և քանդեալ աւերեաց զամենայն ապարանս թագաւորին և այրեաց զնոսա հրով, և բազում գանձս մթերեալս յափշտակեաց անչափ աւարաւ գանձս ոսկոյ և արծաթոյ և հանդերձից, և անասուն բազում յոյժ, և բազմութիւն գերեաց իբրև զաւազ ծովու անթիւ: - 150. Եւ քանզի յոյժ անկասկածելի էր ամրոցն, և գանձս ոչ սակաւս մթերեալ ի նմա ի բազում ամաց – 346. զի և զմեծութիւն ընչից, որ ի գանձս իմ՝ ամի ամի յաւար տալով՝ զուարթամիտ սրտիւ ինձ համարէի զյափշտակութիւն տան իմոյ որ ի ձէնջ և առ ձեզ - 216. զի էր նորա /178/ գանձ բազում ի կարաս թաքուցեալ ի գետնափոր տան, ի ներքոյ դրացն ապարանից տան - 180. զոր ընթերցասէրն Պտղոմէոս գրեալ և յարդարեալ ստուգաբանութեամբ, դնեն զգուշութեամբ ի դիւանապահ տունս գանձուց մինչև ի Կղէոպատրա կին, որպէս վերագոյնն գրեցաք: - 74. խոստացաւ տալ նոցա գանձս, գեօղս և ագարակս, գրել կնքել և կացուցանել նոցա վկայս - 230. Ոչ կամեցար կամօք տալ զանձն ի ծառայութիւն մեզ, այլ տէր և թագաւոր կոչես զքեզ. զգանձն արքունի որ իմ առ քեզ է՝ ծախես, և զայդ ոչ գիտես, եթէ վաղիւ համարս տալոց ես: - 146. որ յանուն Փրկչին մերոյ շինեալ էր յիշխանէն Բագարատայ, ի ծախս մեծամեծ գանձուց իբրև Յ հազարաց: - 190.

ԳԱՆՁԱԿ - և դիմեալ ի Գանձակն Ատրպատականի՝ բրէ զնա, աւերէ զԱհմատան և զՄայ կործանէ և զբագինն հրատին մեծի, որում Վշնապն կոչեն – 148.

ԳԱՆՁԱՐԱՆ - գումար արարեալ են, ամենայն զինուոր ի գանձարանս ի տունս գանձուց թագաւորին, զոր դարձեալ ուղտիւք կրէին ընդ ինքեանս: - 282.

ԳԱՌԱԳԻՂ - իբրև զորսորդս ինչ առիւծուց կամ այլոց ինչ նոյնպիսեաց, շուրջ ձգեալ զգառագիղն՝ ի մէջ փակել զկորովին և զքաջ արանցն զիշխանն Աշոտ – 202. Իբրև

իմացան զօրքն Տաճկաց, թէ եմուտ իշխանն յամրոցն՝ զհետ մտեալ բազմութեանն այնուհետև, և շուրջ փակեալ անդէն զամուրն զանել գառագիղն: - 208.

ԳԱՌԵԱԼ - բայց Տիրան պղծութեան աղտեղութեամբն զգառեալ մատնի ի ձեռս Շապհոյ – 98.

ԳԱՌՆ - և հովիւքն տաւաղելով զգառինսն քշէին ի դալարաբեր հովիտն – 268. Յայնժամ բարկացեալ բռնաւորն իբրև գազան մի կատաղեալ, յարձակեալ ի վերայ գառանց գէշ արկանել զնոսա՝ հրամայեաց պնդել զնոսա ի ցիցս կապեալ ոտիւք և ձեռօք. – 292.

ԳԱՌՆԵՆԻ - լի թունիւք սատանայական խորհրդոցն, ծածկեալ յաչս իշխանին գառնենի զգեստիւք ի հանդերձս ոչխարաց, և ներքոյքն զապականիչ գայլոցն բերելով զլրբութիւն – 210.

ԳԱՌՆԻ - առեալ էր ի բաժնէ /ճիշտը՝ ի բաժնի/ Գագիկ իշխանի … զճուաշ գաւառն և զԹոռնաւան, Արտազ,Մարդաստան, Գառնի, Առբերանի, Աղանդռոտ, Բառիլովիտ, Պալունիք և Մեծնունիք, Տոսպոշտունիք, Բոգունիք, Գուգան գաւառ, Արտաշէսեան: - 388. ետ նմա զԱրևաստան զամենայն մինչև ցՄծուին և զերկիրն Հայոց մինչև ցգետն Հուրասդան, և զգաւառն Կոտայից մինչև յաւանն Գառնի յեզր ծովուն Բզնունեաց և մինչև յԱռեստն աւան և զԿոգովիտ գաւառ մինչև զՀացիւն և ցՄակու: - 140.

ԳԱՐԳԱՐԱՑԻՔ - Իսկ Բուխայի առեալ զբազմութիւն զօրացն իւրոց՝ իջանէ ի դաշտն Գարգարացւոց, և երթեալ մտանէ ի քաղաքն մեծ Պարտաւ: - 276.

ԳԱՐԴԱՅ - որ եկեալ էր ընդ զօրսն արքունի ի Գարդայ Պարսիցն – 232.

ԳԱՐԵԳԻՆ - գնացին մտին ի գաւառն Ռշտունեաց, և առին յաւարի զտունն Գարեգնի Ռշտունեաց տեառն. – 102. ճողոպրեալ Գարեգինն անձնապուրծ գնաց փախստեայ առ կայսրն Յունաց. – 102. նոցա կալեալ զտիկինն Ռշտունեաց զկին Գարեգնի զքոյր Վարդանայ Մամիկոնէի աձեալ ի Վանտոսպ ի քաղաքն Շամիրամայ, մատնեն ի խոշտանգանս և ի տանջանս դառնագոյնս. – 102.

ԳԱՐԻԹԱՅԱՆՔ - որոց անուանք ճանաչի սոցա … և Ներսեհ իշխան Գարիթայանից և ապա Եսայի Ապումուսէ, որ զշատ պատերազմունսն եհար: - 298.

ԳԱՐՆԱՆԱՅԻՆ - Բայց հասեալ Բուխայ անց ընդ գետն մեծ զոր Կուրն կոչեն, և յորձանուտ շարժման գարնանային հոսանացն տեղի տուեալ ելանել զօրուն և բնակել շուրջ զքաղաքաւն. – 270. և բայացեալքն եթէ գազանք և եթէ թռչունք, յորժամ զգան զջերմութիւն օդոյն ի հասարակել տունջեան և գիշերոյ՝ ի գարնանային եղանակի ելեալք յիւրաքանչիւր կայենից. – 188. Եւ եղև իբրև ձմեռն փոքրացաւ և ժամանակ գարնանային եղանակին մերձեցաւ և օդն մառախլաձև միգախառն յստակեցաւ - 268. և ինքն ել գնաց երթալ մտանել ի քաղաքն Դուին, ձմերոց ինքեան պատրաստեալ զնա, մինչ ի ժամ գարնանայինս, ունելով ընդ իւր կապեալս բազումս. – 240. և որ ի նմա են կենդանիքն՝ զնոյն առ ի վերայ հասուցանէ և նոքօք զպէտս քաղցոյն վճարէ մինչ ի ժամանակս գարնանայինս: - 262. զգարնանայինսն ի բարձրագոյն գագաթունսն լերանց և ի փապարս վիմաց և ի վերայ բարձրաբերձ ծառոց կենցաղավարին – 262. հրաման տուեալ ամենեցուն, զի իբրև մերձ լինիցի գարնանային ժամանակն՝ փութով առանց յապաղանաց առ նա հասանիցեն ամենայն պատրաստութեամբ: - 262.

ԳԱՐՇԱՊԱՐ - որ ամենատես ակնարկութեամբ ստորիջեալ ի խնդիր կորուսելոյն հեզագնաց գարշապարօք՝ ընդելականս նմա գուշակէր /գրքում՝ զուշակեր/ գալուստ – 20. Եւ առ չանսալն յետուստ կողմանէ Վահան հարեալ ի գաղտնիս զգարշապար երիվարին՝ արար կաղանալ նժոյգ ասպարակողին. – 334.

ԳԱՐՇԵԼԻ - սակայն կանոնական սահմանադրութեանն արտաքոյ մնացեալ, գայթ ի գայթս զքրիստոնէութեանն վարս բերելով անառակութեամբք և արբեցութեամբ, խառն անկողնօք և պղծութեամբք աղտապիղծ սարսափելի և գարշելի խառնակութեամբ արուապղծութեամբք – 336.

ԳԱՒԱԶԱՆ - Եւ ջանայր զպարիսպն պղնձի կործանել. զգաւազանն երկաթի խորտակել, զհովիւն մատնել ի կորուստ և զհօտն յապականութիւն: - 344. Իսկ քաղաքապետն Սահակ ելեալ ընդ դուռնն, որ ելանէ ի բերդն Շամշղտայ, սամոյր զինքեամբ արկեալ և գաւազան ի ձեռն

առեալ, յիմարեալ մտօք կորոյս զփախուստն իւր, որ կարող էր գնալ յով և կամիցի. – 272. ուր զսեղանն սուրբ և զգաւազան հովուական և զմատանին պատկերեալ և զգօտին աշխատասէր միջոյն թողեալ ի հանապազորդ յիշատակ լուսաւորութեանն մերոյ հօրն: - 104. Վա՛յ քեզ, եղո՛ւկ դու, այր քաջ, արքայդ մեծանուն, յորժամ կարկառիցէ բարձրեալն զձեռն իւր ի կործանել զքեզ և ի խորտակել զգաւազան ամբարտաւանութեան քո: - 148.

ԳԱՒԱԿ - յետուստ կողմանէ աճապարեալ Քսերքսէս բուռն հարեալ զդիակաց պղնձակուռ վարապանին Աշդահակայ ի վերայ թիկանցն զգաւակս երիվարին արկեալ – 64. շռնջապահս ձիոցն և տաշտս գաւակացն և զանգապանս ի չորս կողմանս, ձգեալ և լանջացն զէն, և բարձրավիզ խրոխտանացն զրահս, և ոտնատորոփ փռնկալոյն մանեակս զանգակեալս, և մահիկս լուսնաձևս ի մէջ ճակատուն կապեալ – 208.

ԳԱՒԱՌ - Այլ և Վահան Ամատունեաց գաւառին փախստեայ եկեալ ի ձորն, որ մերձ է յամրոցն, ուր տէրն իւրեանց կայր: - 208. այլ իբրև եմուտ Բուխայ յաշխարհս Վասպուրական՝ ել գնաց Գուրգէն առ Քուրդիկ Մամիկոնէից տէր ի Բագրևանդ գաւառ, և անդ լինէր, զի էր Քուրդիկ քեռի Գուրգինայ: - 302. Այսոքիկ գաւառք անուանիք, զոր յառաջին ժամանակս իւրոյ իշխանութեանն սեփհականս իւր արարեալ ունէր հայրն նենգութեան Մարդպետն կոչեցեալ … և մանաւանդ քաղաքն Շամիրամայ հռչակելին և յոյժ փառաւորագոյնն յամենայն կողմանց Վասպուրականի: - 388. առեալ էր ի բաժնէ/ճիշտը՝ ի բաժնի/ Գագիկ իշխանի … զճուաշ գաւառն և զթոռնաւան, Արտազ,Մարդաստան, Գառնի, Առբերանի, Աղանդռոտ, Բառիլովիտ, Պալունիք և Մեծնունիք, Տոսպոշտունիք, Բոգունիք, Գուգան գաւառ, Արտաշէսեան: - 388. առեալ էր ի բաժնէ/ճիշտը՝ ի բաժնի/ Գագիկ իշխանի … զճուաշ գաւառն և զթոռնաւան, Արտազ,Մարդաստան, Գառնի, Առբերանի, Աղանդռոտ, Բառիլովիտ, Պալունիք և Մեծնունիք, Տոսպոշտունիք, Բոգունիք, Գուգան գաւառ, Արտաշէսեան: - 388. բաժանեն զաշխարհս յերիս մասունս. տալով Աշոտի … Իսկ Գագիկ զկողմանս Ռշտունեաց այլովք մօտակացիւք գաւառօք, և որքան իցէ հասումն ուժոյ՝ անդր ևս յաշխարհն Մոկաց: - 360. Բայց քանզի ընդարձակ էր պահն Հողցայ՝ փութանակի եկն եհաս Ժիրաք ի գաւառն Ռշտունեաց և զզօրսն առխթեալ ի ձորն Առուանից, ի սահմանս Մոկաց. – 202. Բայց զՏամբէր և զԸռնայն և զԶարեհաւան գաւառ հանեալ էր ի Պարսկահայոց – 390. Բայց իբրև եղև մեծ պատերազմ սրբոյն Վարդանայ ընդ Մշկանին և ընդ զօրս Պարսից ի յԱւարայրեան դաշտին, յԱրտազակայն գաւառին. – 128. Բայց կին ոմն յազգէն Աշդահակայ բնակէ յամուրսն Ջլմար և ի Սրինգ, ի գաւառին ի Փոքր Աղբագ – 90. Գիտեն զայս և բնակիչքն Ռշտունեաց գաւառին – 206. գնաց Արշակ փախստական յԵկեղեղեց գաւառ և անդ վախճանի իւրով մահու, թագաւորեալ ամս է: - 112. գնացին մտին ի գաւառն Ռշտունեաց, և առին յաւարի զտունն Գարեգնի Ռշտունեաց տեառն. – 102. Գունդ մի հարուստ անցեալ մնացին ի Համբոյրազան աւանի Մարդաստան գաւառի, ուր եպիսկոպոսական աթոռ մարդպետականին յայնժամ փոխեալ դնէր ի Նախճաւան քաղաքէ. – 372. գունդ անթիւ բազմութեամբ եկեալ ի կողմանս Ատրպատականի ի Վաղարշապատ գաւառի: - 138. ելանէ մարզպանն ի վերայ նոցա և յինքն հանէ զՏամբեր և զԸռնայ գաւառ և որ ասի Ապուջափրի բերդ, ի Վիրի քաղաքին Կորճէից զիւր կացուցանէ ոստիկանս ի պահպանութիւն ամրոցին: - 400. Եկն եմուտ ի գաւառն Աղբագ, և ասպատակ սփռէր ընդ կողմանս կողմանս յերկիրն Վասպուրական, գերփէր, աւերէր, յափշտակէր, կապուտ կողոպուտ գործէր ընչից և ՄՏԱՆԵԼ - ստացուածոց. – 176. ետ նմա զԱրևաստան զամենայն մինչև ցՄծուին և զերկիրն Հայոց մինչև ցգետն Հուրասդան, և զգաւառն Կոտայից մինչև յաւանն Գառնի յեզր ծովուն Բզնունեաց և մինչև յԱռեստն աւան և զԿոգովիտ գաւառ մինչև զՀացիւն և ցՄակու: - 140. ետ նմա զԱրևաստան զամենայն մինչև ցՄծուին և զերկիրն Հայոց մինչև ցգետն Հուրասդան, և զգաւառն Կոտայից մինչև յաւանն Գառնի յեզր ծովուն Բզնունեաց և մինչև յԱռեստն աւան և զԿոգովիտ գաւառ մինչև զՀացիւն և ցՄակու: - 140. և զՄարդաստան գաւառ զբուն բաժին տուեալ ցԳուրգէն, և նորա զիւր գործակալս թողեալ անդր: - 326. և զօրինակ մահու նորա, և որպէս զմռեալ դի նորա բարձաւ ի գաւառն Հարքայ ի տեսիլ բազմաց: - 42. և անդ լինէին ժողովեալ

ամենայն բազմութիւն աշխարհակոյտ ամբոխից գաղթականաց գաւառացն կողմանցն Աղբակոյ, Զարէհվանի և Ակէոյ և ի լեռնակողմանցն Աղզոյ և Ոտնն Առնոյ, մի կողմն ի Ջողայ լեռնէն և անդր: - 226. Եւ անցանելով ընդ գաւառն Բզնունեացն գայ մտանէ ի Խլաթ. քանզի կամէր անսալ ժամու դիպողազունի, զի որսայցեն նենգութեամբ խաբել: - 186. Եւ ասպատակեալ ի Ճուաշ և ի Թոռնաւան գաւառ՝ յաւարի առնուն. – 304. և բազում և ազգի ազգի հոգաբարձութեամբ տուեալ օգնականութիւնս Հայոց աշխարհիս, շինելով քաղաք Թէոդուպօլիս ի Կարին գաւառի, և զօրս կողմնակալս ի պահեստ՝ ընդդէմ կալ պարսկական յարձակմանցն: - 114. և բնակեցուցանէ զնոսա ի գաւառն Աղբագ, յետ բնակեցուցանելոյն զնոսա ի Ջողախել, ի Վրնջունիս և ի Հախրամի, տեսեալ մինչև ի ժամանակս ինչ – 64. և եղեն բանակք մեծ ի գաւառին Զարևան: - 404. Եւ եղև ի գնալ Դերանկին ի ձմերոցս Վասպուրական իշխանացս, ճանապարհ արարեալ ընդ ձորն Ընծայից, որոյ ելքն ընդ գաւառն Հեր քաղաքի: - 352. Եւ եղև իբրև կատարեաց Բուխայ զանցս անցից ընդ Վասպուրական աշխարհս և խաղաց յարևելս կոյս՝ ել գնաց Գուրգէն ի Սպեր գաւառ. – 302. և երթեալ բնակէ առանձնապէս ի Գողթն գաւառի ի տեղւոջ վարդապետութեան սրբոյն Մեսրովպայ, ճգնասէր հրեշտակակրօն վարուք, երանելի մարդկան և ահարկու դիւաց: - 120. և զերթալն Մեսրովպայ և Վարդանայ ի Յոյնս առաջի արկանէին, և զգալն Անատողեայ և զշինել քաղաքին ի Կապրին գաւառ: - 118. և զՄարդաստան գաւառն զբուն բաժին Գուրգենայ դարձոյց առ նա Դերենիկն: - 322. Եւ ի հասանելն նորա ի Թէոդոսի քաղաքն ի Կապրին գաւառ՝ եհաս լուր նորա առ կայսր Միքայէլ թագաւոր Յունաց. – 316. և ինքն վիրաւորեալ սրով մեռանի ի գեօղն Գիւղիկ ի Ճուաշ գաւառի, մարտիրոսական հասեալ նահատակութեան, ի վերայ խաշանցն Քրիստոսի տուեալ զանձն ի մահ:- 402. Եւ խնդրեալ զդի նորա վաճառականաց՝ պատեցին զնա ի ձեռս եպիսկոպոսին Դաւթի նորուն գաւառի և եդին ի տապանի յեկեղեցւոջն որ ի նմա: - 354. և խոստանայր տալ նմա քաղաքս, գաւառս, գեօղս և ագարակս: - 382. Եւ կատարեալ Աշոտ զկեանս իւր՝ մեռաւ ի Վանտոսպ գաւառի, ՅԻԳ թուականութեանն Հայոց, յամսեանն հոռի, որ օր Զ էր ամսոյն, յաւուր հինգշաբաթոջ. և տարեալ հանգուցանեն ընդ եղբարս իւր ի վանս սուրբ Խաչին յԱղբագ գաւառի: - 338. Եւ կատարեալ Աշոտ զկեանս իւր՝ մեռաւ ի Վանտոսպ գաւառի, ՅԻԳ թուականութեանն Հայոց, յամսեանն հոռի, որ օր Զ էր ամսոյն, յաւուր հինգշաբաթոջ. և տարեալ հանգուցանեն ընդ եղբարս իւր ի վանս սուրբ Խաչին յԱղբագ գաւառի: - 338. և հանդիպեցան միմեանց յՈրդոք գեօղ, ի գլուխս ձորոյն Հայոց, որ հանէ յԱրտւանթունի գաւառն: - 306. և հասեալ ի Բագրաւանդ գաւառ ի Ձիրաւ գեօղ՝ կամէր անցանել ի թագաւորաբնակ տեղիսն Հայոց: - 106. Եւ հաւանեալ Խոռեմայ՝ եկն առ Հայրակղոս արքայ Յունաց, թողեալ ի նա զԵրուսաղէմ և զԿեսարիայ Պաղեստինացւոց և զամենայն կողմանս Անտիոքացոց և զամենայն քաղաքս գաւառացն այնոցիկ, և զՏարսոն Կիւլիկեցւոց և զմեծ մասն Հայոց և զամենայն զոր միանգամ կամեցաւ Հայրակղոս. – 152. Եւ յայնմհետէ համարձակութիւն առեալ անօրինացն՝ սկսան գունդս ռամկականս ժողովեալ ըստ օրինակի մարախոյ անչափ բազմութեամբ, այնոքիկ որ Շեխետիքն կոչէին. և այլ որ ուստեք ուստեք ի հեռաւոր աշխարհաց /402/ Պարսից, ի Ժանգանայ և ի Ջուրջանայ և որք ի Վաչրաւրպատ գաւառէ – 404. յետ անցանելոյ աւուր, գնացեալ Աշոտ որդի Դերանկին, առեալ զդի նորա՝ տարեալ հանգոյց առ հարս իւր յԱղբակ գաւառի ի վանս սուրբ Խաչին: - 354. Եւ յետ սակաւ աւուրց ել գնաց Դերանիկն ի Ճուաշ գաւառ՝ ձմերել յաւանին Մառական: - 350. Եւ վարեն ի գերութիւն աւարառութեամբ զԼեկ և զԱղզի և զԿրերեացն և ի ճախուկ գաւառէ: - 400. և վերակացու նմա թողոյր զՅովհաննէս ոմն քահանայ ի Բոգունի գաւառէ ի յԱնստան գեղջէ: - 394. և տարեալ հանգուցանեն զնա ի Յօշական գեօղ, ի գաւառին որ կոչի Ոտն Արագածոյ: - 120. Եւ տարեալ հանգուցանեն զնա ի վանս սուրբ Խաչին յԱղբագ գաւառի: - 310. Եւ քանզի հաւատացեալ էր զգաւառսն Բուխայի ի ձեռն սպարապետին Սմբատայ՝ գրէ առ ամիրայն Նախճաւանու Աբրահամ անուն, զեկուցանելով նմա զզօրացն Վասպուրականի. – 304. ըստ սովորութեան

առաջնոցն մատենագրեալ դրոշմեալ կայ ի գիրս ընդ ժամանակս ժամանակս սոցա քաջարութիւնք և արժանաւորք յոլովագունի և մեծամեծաց գովութեանց: - 96 զոր մեք գիտեմք յետ ջրհեղեղին եղեալ գիր: - 36. զոր ոչ է հաճոյ երկրորդել ի գիրս աստ. – 108. Զսա տեսեալ Մահմէտի՝ /162/ կոչեաց և յարեցոյց առ ինքն, հրամայեալ նմա գրել գիրս օրինաց ազգին իւրոյ, ձեռամբ Աբութուռաբայ իսմայէլացւոյ. քանզի ինքն ոչ գիտէր գիր և ոչ դպրութիւն: - 164. Զսա տեսեալ Մահմէտի՝ /162/ կոչեաց և յարեցոյց առ ինքն, հրամայեալ նմա գրել գիրս օրինաց ազգին իւրոյ, ձեռամբ Աբութուռաբայ իսմայէլացւոյ. քանզի ինքն ոչ գիտէր գիր և ոչ դպրութիւն: - 164. ըստ այսմիկ և այլ առասպելականք, և գիր մատենական ի նմանէ գրեալ և պահեալ ի Բաբելոնի բազում զգուշութեամբ. -36. Իբրև ետես իշխանն Հայոց զզօրսն Տաճկաց եկեալ բազում կազմութեամբ, հայեցեալ և յիւրեանց սակաւութիւնն՝ գիր պաղատանաց փութանակի տայր առ քաջ նահատակն Աշոտ իշխան - 172. Իբրև յանդիման եղեն դեսպանքն մեծ /172/ իշխանին Աշոտոյ, և ընթերցաւ զգիր պաղատանացն և զյիշատակարան նախնեացն, և զմերձաւորութիւն հարազատութեանն և զկապակցութիւն ուխտին … համագունդ ժողով առնէր ամենայն աշխարհին և ամենայն նախարարօք Վասպուրական տէրութեանն: -174. Իսկ ի դառնալ գրոցն ի յաշխարհն Մոկաց՝ ոչ ինչ ումեք փոյթ վասն այն լինելով, կարծել՝ վարդապետին զայս այսպէս կանոնեալ. – 130. Իսկ Սաղման յանձն առ գրել նմա. և գրէր գիրս յօդուածոյս, էր ինչ որ ի ստոյգ յիշողութենէ, և էր ինչ որ կարծողական բանք. – 164. Նա և զայլ հիացականսն որ ըստ այսոցիկ ուսցիս ի նորին գրոց. – 50. Նորա զչարեալ ընդ հասանել պատգամին՝ առ զայրուցս բարկութեան քինահանութիւն վրէժխնդրութեան արարեալ՝ ի բաց եհան ի գրոցն պատմութենէ՝ որ ինչ վասն տանն Արծրունեաց էր գործոց հանգամանք, և որ ինչ օրինակ մարտիրոսութեան Վահանայ Արծրունոյ: - 130. Նոքա պատասխանեալ ասեն. ,,վասն զի մեք ի պարսկական հինից անդուլ և անպարապ գոլով ի բաց լքաք զկրթութիւնն գրոց սրբոց՝ առ ընտրել զհաւատոց խոստովանութեան կանոնադրութիւն. – 132. որպէս ընթեռնուք ի գիրս պատմութեան վկայելոցն, որ Արևելեայ ասի գրոցն վերագրութիւն – 106. Որպէս կայ և այս ի գիրս տեսութեանն Յովելեայ մարգարէի: - 240. որպէս Րոբովամ որդին Նաբատայ, որ մեղաւ և յանցոյցն զԻսրայէլ, որպէս գրեալ է ի գիրս թագաւորացն Իսրայէլի – 248. Սահակս այս այն Սահակ է, որոյ հրամանաւ գրեաց մեծ վարդապետն Մովսէս տիեզերահռչակեալ քերթողն զգիրս Պատմութեան Հայոց մեծաց, հրաշազան յօրինուածով, սկսեալ յԱդամայ մինչ ի կայսր Զենոն. – 122. Սովորութիւն է գրոց, որպէս զիրն նոյնպէս և զտեղին վերաբերեալ, կամ ըստ ծանօթութեան, կամ ըստ պատուոյ: - 288. տեղեակ և հմուտ Աստուածաշունչ գրոց, և ընդել և ծանօթս. – 204. փութացոյց գիր պաղատանաց առ Տաճատ Ռշտունեաց տէր և առ Վախրիճ Անձաւացեաց տէր, զեկուցանել նոցա զեղեալսն: - 126. քանզի Յունաց հուսկ երբեմն յետոյ գտաւ գիր ի Կաղմեա յումեմնէ Փիւնիկեցւոյ: - 18 . Քանզի Վարդան անցեալ գնացեալ էր սուրբ վարդապետաւն Մաշտոցիւ առ կայսր Թէոդոս և առ Ատտիկոս արքեպիսկոպոս հանդերձ թղթովք սրբոյն Սահակայ, տանելով ընդ իւրեանց և զգիր և զբառ հայերէն դպրութեան. – 116.

ԳԻՐԿ/Ք/ - և առեալ զնա մտանեն ի մէջ մայրեացն, և ընդ գիրկս մտեալ Շաւասպայ Արծրունւոյ՝ զլայնալիճն լի քարշեալ հարկանէ ի թիկանց ընդ մէջ ողինն զկորովալիր մատանցն զազդոյ շարժումն թռուցեալ թափանցիկ ընդ չարախորհուրդ սրտին միջոցն դիպեցուցանէ. – 100. և զորդիս ձեր և զմանկունս տեսանելով ի գութ խանդաղատանաց ի գիրկս իմ ընդունէի ընծայիւք մեծաւ զգուանաց, իբրև զառ ի յինէն ծնեալս: - 216. և մուտ եղեալ ի տեղին … ետուն տանել զթուղթն, լի թիւնիւք սատանայական իմացմանց, իբրև զկապարճս լի նետիւք դեղեալ ի գաղտնիս ի գրկաց թռուցանել ի նպատակն: - 234.

ԳԻՐԿՍ ԱՐԿԱՆԵԼ - և անհակառակող հաւանութեամբ հեզահայեաց առ միմեանս սիրոյ յորդորմամբ արտաքոյ վատթարին խոհականաբար մնալով, քաջախորհուրդ առատաբուղխ խաղացմամբ իմաստութեանն զմիմեանս բռնահարելով, զօտարոտին ի

բաց վարատելով զբղջախոհութեան անհանճարութիւն՝ զլաւն և զյոյժ օգտակարագոյն ընտրութեամբն գիրկս արկին. – 388.

ԳԻՐՔ - Արդ եկայք դիցուք զյանդիմանութիւն սոցա առ փոքր ինչ և դուզնաքեայ ի գրոց սրբոց – 254. Բայց զի մի և մեք անկեալք լիցուք ի նոյն՝ ուսցուք ի յԱստուածաշունչ գրոց - 256. և զի էր վարժեալ ուսմամբ Աստուածաշունչ գրոց և ընդել և ծանոթ էր ճարտասանական հրահանգիցն՝ եդ առ յայն ժամու իմացական տեսութիւնն զերգս – 284. Եւ մեք հետևեալ Աստուածաչունչ գրոց՝ պահեսցուք անբիծ զհաւատս սրտից, և մաքուր զխոստովանութիւն շրթանց, ըստ սրբոյն Պօղոսի վերաբերեալ զօրինականն – 258. Իբրև յաջողեցաւ Արտաշէսի ամենայարդար պատրաստութեամբ և աշխարհաշէն հոգաբարձութեամբ, որպէս բացայայտեն գիրք պատմագրաց – 86. իսկ մեք աստուածեղէն գրոց հետևեալք՝ ոչ յօտարաց աստի հաստատեմք զճշմարտութիւն, օ՛ն անդր. – 54. Որպէս ընթեռնուս ի գիրս մարգարէականս զհանգամանս այսոցիկ. որպէս և ի վեցերորդ տեսլեանն Դանիէլի և Զաքարիայի բանագործութեանն – 398. որպէս ընթեռնուք ի գիրս պատմութեան վկայելոցն, որ Արևելեայ ասի գրոցն վերագրութիւն – 106. որպէս ուսուցանէ գիրք Եւսեբի Կեսարացւոյ: - 34. Տես և զմիւս ևս նման սմին ի գրոց Գործոց առաքելոց: - 258.

ԳԻՐՔ ԱՐԱՐԱԾՈՑ - զոր գիրք Արարածոցն հայր Նեբրովթայ ասեն - 42. Իսկ գիրք Արարածոցն ասեն զՆեբրովթ. – 42.

ԳԻՐՔ ԱՐԵԻԵԼԵԱՅ - որպէս ընթեռնուք ի գիրս պատմութեան վկայելոցն, որ Արևելեայ ասի գրոցն վերագրութիւն – 106.

ԳԻՒՂ - Տե՛ս ԳԵՒՂ

ԳԻՒՂԱԿ - Եւ երթեալ հասանէ ի գիւղակ մի Երանգանի անուն առ մոնազն մի, որ էր երէց վանիցն:- 320.

ԳԻՒՂԻԿ - և ինքն վիրաւորեալ սրով մեռանի ի գեօղն Գիւղիկ ի ճուաշ գաւառի, մարտիրոսական հասեալ նահատակութեան, ի վերայ խաշանցն Քրիստոսի տուեալ զանձն ի մահ: - 402.

ԳԻՒՏ - այլ այսոքիկ փոյթք յօժարութեան առ ի յայլոց ասացելոց նախագունից տեղեկութիւն, և ոչ ինքեամբ և կամ նովաւ գտանել զինարս գիւտի գրոց, թէպէտ և յառաջ քան զնա, այլ ոչ թէ և քան զԲաբելացւոցն իրս – 18. բայց միայն զազգին շարս ըստ գիւտի աշխատութեանն բաւական համարեցաք յառաջ վարել մինչ ի թագաւորել Տրդատայ – 94. Եւ այսոքիկ իմաստնագոյն գիւտք. – 54. Եւ անդէն զտարակարծելի գիւտիցն յոյս երկբայութեան՝ յայլոց քննողական աշխատութեանց եդից առ ընթեր թելադրութեամբ. – 12. Եւ արդ խնայեալ իմ ի ձեզ, և դուք առանց յապաղանաց և զիս աշխատ առնելոյ ի բաց լերուք յերկրպագութենէն Քրիստոսի, և եղիցեն անձինք ձեր ի գիւտս և կեցջիք. – 246. և հնախօսս շարագրական մատեանս և ի բազում վէպս պատմութեանց անցեալ գրեցի, որ ինչ բաւականանալ ձեռնհաս եղէ, սկսեալ յԱդամայ մինչ առ մեզ հասեալ ժամանակացս գիւտ: - 12. և հրաման հարկեցուցանող ճոխութեան քո ստիպէ զմեզ, ճեպել փութալ առ գիւտն հանդիսանալ և կարգել ոճով զփափագելին յայտարարական գրով, դրոշմել կանոնել ի գիրս աստ – 12. Եւ մեր անտես արարեալ զգործս վնասուց ձերոց, զոր մեղայք մեզ, և լիցին անձինք ձեր ի գիւտս, և կեցջիք և տիրեցէք աշխարհի և տանց ձերոց, դուք և որդիք ձեր – 244. և փոխեն անդ զկաթողիկոսն Հայոց զԳիւտ – 126. Իսկ Դերանիկն գործ առնէր ի գիւտս հնարիմացութեան, և տարուբերէր յանձն իւր՝ գտանել զելս իրացն, որով կարիցէ հանել զամուրսն ի Գուրգինայ և տիրել աշխարհին: - 326. Ո՞վ յիմարութեան առաջնոցն. ո՞րպիսի կատաղութիւն և գիւտք դիւացն նախկին ժամանակաւ սպրդեալ մուծաւ յաշխարհ, ապստամբութիւն առ Աստուած և տրտմութիւն սրբոց հրեշտակաց, և պատճառ վտանգաւոր մահու ծառայիցն Աստուծոյ յաւուրս ապագայիցն. – 38. սա առաւելեաց յամենայն հոգածութիւնս ի գիւտս իմաստութեան ուսումնասիրութեան և այլն ամենայնի՝ քան զհարս և զհաւս իւր: - 334.

ԳԼԵԼ - զի այնու թերևս քաջ կարասցէ գլել զինքեամբ զզօրս Հայոց նախարարօքն հանդերձ. – 114.

ԳԼԽԱՊԱՆ - նա և զիւրեաւ տախտակափակ լանջապահս, թիկնապահս, զանգապանս, առնապանս, գլխապանս, որ գրեթէ բովանդակ պղնձեղէնս զնա իմանալ թուէր, և զետեղեալ բլրաձև զօրու անմատչելի կարծելով. – 64.

ԳԼԽԱՊԵՏ - Ընդ որում և մեծ իշխանն Արծրունեաց Խուրան և գլխապետ զօրավար զօրու, և միահեծան թագաւորութեան Հայոց մեծաց, որ առաջին ի Քրիստոս հաւատացեալ եղև իշխանս Խուրան և մկրտեալ ի ձեռաց Թադէոսի առաքելոյ. – 78.

ԳԼԽԱՊԵՏՈՒԹԻՒՆ - և ետ բերել նմա ըստ օրինի գլխապետութեան սուսեր իշխանական ընդ մէջ արկեալ և զօտի արիական շրջապատեալ զմիջաւ, քուքք խիզախողք և երիվար բարձրավիզ, ոտնատորոփ, խրոխտալիր, յարմարական առ ընթացս պատերազմականս: - 308.

ԳԼԽԱՒՈՐ - Ապա այնուհետև ոչ կարաց կալ համարձակութեամբ ի բացեայ առնել զբանակն իւր, այլ ետ զկէս զօրուն յոմն գլխաւոր և նստոյց զնա ի կողմանէ հիւսիսի կողմն. – 280. գլխաւորն ի նոցանէ Համիս, և միւսն որ ի կողմանց Ժանգանայ՝ ոչ իրաւացի ըստ պատգամաւորին իւրեանց ասացին առնել զայս: - 404. և բարձակից լինել մեծամեծացն արքայի ի գլխաւոր բազմականի անդ, յորժամ ատեանն արքունական յարդարիցի: - 204. և գլխաւորք Հայոց մեծաց ամրանային ի քարանձաւս ամրաշէն բերդիցս, ըստ տեղիս տեղիս և ըստ աշխարհս աշխարհս. –124. և ի հասանելն նորա անդր թողեալ զհակառակաբար մարտն՝ խօսին ի խաղաղութիւն, առաջի եդեալ զհրամանն արքունի, զգլխաւորին Տաճկաց, և Աշոտի հաւատալ զբոլոր տէրութիւնս Վասպուրականի: - 316. զի ամենայն մեծամեծք քաղաքին և գլխաւորք և իշխանք յարքունի նախարարութենէն անդ գումարեսցին – 240. զի յինքեանս գրաւեալ ընդ հարկաւ ծառայեցուցանէին զպաշտօնեայս սրբոյ Խաչին, մանաւանդ զի և զգլխաւոր վանացն զհայրն, որում Գրիգոր անուանէր՝ զնա կալեալ եդեալ ի խորափոր խաւարային բանտի: - 334. զոր ընկալեալ սուրբ հայրապետին և բարեպաշտ թագաւորին Թէոդոսի հինգ թղթովք և հինգ պատասխանեօք՝ կարգէ զսուրբ վարդապետն ընդ վարդապետութեան աթոռակալութեան սրբոյն Յոհաննու Ոսկեբերանի և այլոց քաջաց և գլխաւոր վարդապետացն – 116. զորոյ ցուցականութիւն պատմեալ գլխաւորին Տաճկաց Ջափրի: - 326. յղէ առ Գուրգէն զՎահան Արծրունի և զվանաց երէցն Թէոդորոս զգլխաւորն Հոգեաց վանից, ասէ. – 330. Նորա ի բաց կացեալ ի հնազանդութենէ իւրոյ պետականին հանդերձ քաղաքային գլխաւորօքն. – 338. ՎԱՍՆ ԱՍՈՐԵՍՏԱՆԵԱՅՑ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆՆ. ԵՒ ԹԷ ՈՐՊԷՍ ԶՐԱԴԱՇՏ ԵՒ ՄԱՆԻԹՈՊ ԿԱՑԵԱԼ ԳԼԽԱՒՈՐՔ ԱՐԵՒԵԼԻՑ ԿՈՂՄԱՆ, ԵՒ ՄՈԼԱՐ ՈՒՍՄԱՆՑ ՆՈՑԱ - 42. Քանզի հարցեալ և բռնազբօսեալ զերկոսին գլխաւորին Տաճկաց, անունկնդիր լինելով ասացելոցն, և ի տեսչութենէ Աստուծոյ թողացուցեալ նոցա առանց վտանգից՝ որպէս հաճոյ թուիցի կեալ ի հաւատսն Քրիստոսի համարձակաբար. – 324.

ԳԼԽԱՒՈՐԱԳՈՅՆ - գլխաւորագոյն և բարձրագոյն յիշատակ արձանացուցեալ անջինջ կտակ առ բազմախաղաց ժամանակս տրամադրեաց: - 392.

ԳԼԽԱՒՈՐԵԱԼ - Եւ անյապաղ գլխաւորեալ խորհրդոցն՝ առնու ընդ իւր զԴերենիկն, և էանց գնաց ի տուն իւր ի Բագարան: - 322.

ԳԼԽԱՒՈՐԵԼ - և այնպէս անկարօտս առ պիտանացուս հոգ տարեալ՝ գլխաւորեաց որ ինչ շինութեան և խաղաղութեան աշխարհիս նպաստաւոր առ օգտակարագոյնսն պահանջէր գործառնութեան եղանակք – 392. և ըստ օրինակի կեղծաւորական հիւանդութեանն, զոր առ Դերենիկն հնարաւորեցաւ՝ զնոյն և առ Գագիկ գլխաւորեաց: - 350. և իբրև հողմ հոսեալ զփոշի ամարայնոյ՝ այնպէս արագապէս զպատերազմին գլխաւորեցին նահատակութիւն: - 330. զորոց զանուանս և զժամանակս գլխաւորելով նշանակեցից փոքր ինչ որ և առ նոքիմբք եղեն: - 56. համոզեաց ի մէջ երկոցունց և գլխաւորեաց զխաղաղութիւն /382/ առ նոսա, մինչ գալ Սահակայ եղբօր իշխանին Սիւնեաց, ընդ իւր բերելով զհարկսն: - 384.

ԳԼԽԱՒՈՐԻԼ - Իբրև աջողութիւն գործոյն գլխաւորեցաւ՝ եղև դառնալ Քսերքսեանց, առեալ ի պարգևի զՏմորիս ամրոցաւն և զգետափնեայսն Նինուէի: - 66.

ԳԼԽԱՒՈՐՈՒԹԻՒՆ - ,,Ձայն իմն ահաւոր հրեշտակի անկեալ ի վերայ իմ՝ հրամայեաց երթալ պատգամաւոր յազգն իմ, ցուցանել զԱստուած արարիչ երկնի և երկրի. առնուլ ինձ անուն գլխաւորութեան, և զստութիւն հաւատոց որ ի կուռս՝ յանդիմանել և քակտել,,: - 158. այլ և Մակեդոնացին Աղէքսանդրոս ոչ սակաւ դրուատեօք արձանս գրէր ի մատեանս դիւանապահ աւանդութիւնս զսորայս մեծափառ գլխաւորութիւն: - 96. և ինքն կացուցանէ ի գլխաւորութիւն Տաճկաց զԱպուբաքր, և սա կեցեալ ամս Բ մեռանի: - 164. Յետ այսորիկ կայ ի գլխաւորութիւն տաճկաց Ամր, որդի Հատապայ ամս Ի և ամիսս Ջ: - 164. վասն զի ունէր յայնժամ զգլխաւորութիւն բարձակցութիւն իշխանաց Հայոց - 170. Քանզի ասէր Ալի անգաւոր ինքեան զգլխաւորութիւնն Տաճկաց: - 166.

ԳԼԽՈՎԻՆ - Եւ ինքն իսկ գլխովին զօրավարն Բուհայ, հեծեալ յերիվարն, պնդեալ զինքն զինու ի պատերազմ ընդդէմ իշխանին, և զկորովին աղեղնաւորացն Ելիմացւոցն և զընտիրս հեծելոց նոցա ընդ ինքեան վառեալ ի ճակատի: - 208.

ԳԼՈՐԵԼ - Այլ ճշմարտագոյնք են Սողոմօնեանքն, զի ասէ, ,,վա՛յ միումն. յորժամ գլորիցէ, ո՞ յարուցանիցէ զնա,,. և եթէ ,,լաւ են երկուք քան զմի, զի եթէ միովն գլորիցի ոք՝ կանգնեսցի,,: - 354. Այլ ճշմարտագոյնք են Սողոմօնեանքն, զի ասէ, ,,վա՛յ միումն. յորժամ գլորիցէ, ո՞ յարուցանիցէ զնա,,. և եթէ ,,լաւ են երկուք քան զմի, զի եթէ միովն գլորիցի ոք՝ կանգնեսցի,,: - 354.

ԳԼՈՐՈՒՄՆ - գլորումն, քան թէ կանգնումն յառաջատեն – 384. Եւ առեալ զմանրեալ և զխորտակեալ ի մասունս զԽաչն՝ բերին առ զօրավարն, լուացեալ զարիւն պղծոյն, որ ի վերայ խաչին շաղախեալ կայր ի գլորմանէ այսահարին: - 378. մինչև եկին հասին ի վերայ մեր մեծամեծ չարիքս այսոքիկ և անկանգնելի գլորումնս – 182.

ԳԼՈԽ/մարմնի մաս, գագաթ,, գլխավոր, առաջնորդ/ - ,,Բուխայ գլուխ զօրավարաց ընդհանուր Թագաւորութեան Տաճկաց, Ջափր իշխեցող ծովու և ցամաքի, հաւասար և օրէնսդրին մերոյ Մահումաթի, և հաւատարիմ միջնորդ Աստուծոյ և մարդկան, և թագաւոր ընդհանուր ազգաց հարաւային աթոռակալութեան … Յղեցի զքեզ ելանել ի վերայ երկրիդ Հայոց ամենայն կենդանեաց – 236. ,,և այս ևս գործ կամ խաղաղութեան կամ պատերազմօք և ելցեն ի գլուխ, միայն զյապաղանացն ի բաց լքցես զդեգերանս,,. – 382. այլ հատեալ զգլուխն ետ տանել յարքունիս և զկինն ա՛ռ իւր Բուխայ կնութեան: - 272. Այնուհետև հրաման ետ սրով բառնալ զգլուխս նոցա. – 222. բայց և նշանակս և դրօշս փողփողել առաջի, և դնել թագ իշխանական ի գլուխ և զգեստս արքունականս զանձամբ. – 236. Բայց իշխանաց իշխանն Աշոտ անհանդուրժելի մնալով խորհրդոց չարին ի գլուխ ելանել.- 344. Դարձեալ շինէ զօրավարն Գագիկ ի գլուխս Օձ ձորոյ, որ վասն խստութեանն սաստկաշունչ դառնալիր մահածին հողմոյն շնչելոյ այսպէս անուանեն – 396. և ազատացն յետուստ կողմանէ սուր ի գործ արկեալ սպանին զնա, և զգլուխ նորա հատեալ առ /368/ բերդապինսն յղէին:- 370. Եւ արդ մեք, նահապետք ազատաց Վասպուրական իշխանիս՝ Մուշեղ ի ցեղէ Վահևունեաց, Վահրամ յազգէ Տրունեաց, Վահրամ միւս, որ ի թիկնապահ իշխանիս … գրեցաք առ քեզ Բուխայ գլուխ զօրավարաց Տաճկաց և բարձակից մեծ թագաւորին. – 212. Եւ ընթանային ամենեքեան յաճիւռ՝ տեսանել զնոսա և ի վերայ հասանել, թէ զիա՛րդ ի գլուխ ելանիցէ ատեանն: - 242. Եւ հրամայեաց Բուխայ դահճացն՝ բառնալ զգլուխ նորա. – 272. և առեալ դահճին զսուրն՝ եհար զերանելին և եհատ զգլուխ նորա, և նոյնժամայն /գրքում՝ նույնժամայն/ աւանդեաց զոգին ի ձեռս Աստուծոյ: - 294. և առեալ մի ոմն զսուրն՝ եհար զերանելին և եհատ զգլուխ նորա: - 206. և ասէ, ,,եթէ աջողեսցին քեզ խորհուրդ մեր, զոր խորհեցաք ի վերայ Հայոց և իշխանաց նոցա, և ըստ ախորժակաց մերոց ի գլուխ ելանիցեն, որ ինչ կամք յօժարութեանց մերոց ըղձանայցեն- 184. Եւ արդ ասացից փոքր ի շատէ զյայտնի գործեցեալսն, զի և որ ինչ ընդ սոքօք և յետ սոցա ի գլուխ ելին հանգամանք իրաց՝ և այնմ առանց երկբայութեան հաւատասցես, իբրև ճշմարիտ և անսուտ պատմողի: - 240. և եկեալ կացին մօտ առ Կանգուար բերդ, և պատերազմեալ զամիսս Բ՝ ոչ ինչ գործ ի գլուխ ելեալ ըստ ախորժման. – 332. և եհան զզօրսն մինչ մերձ ի գլուխ լերինն և ընդ նոսա նշանս բազումս, իբրև Ռ

արանց ընտրելոց քաջ երիվարօք. – 284. Եւ եղև յետ մեծ պատերազմին, որ յառաջ քան զզրուցացդ գրելոյ ելին, ի գլուխս Մանազաւեան նահանգին և Յուշոյ դաշտին, և զխռովարարս քաղաքացն ի մի վայր գումարելոցն, որք և յունայն ասպատակէին աշխարհ – 398. և զկէսն մահու դատապարտեալ, զգլուխս նոցա հատեալ ի փայտի բարձրացուցանէին ի վերայ դրանդեաց պարսպին: - 372. և զնշան փրկական Խաչին ի վերայ գլխոցն դրօշմէին – 266. և ինքն գնաց անտի և եմուտ ի Պարտաւ՝ ձմերել անդ, և տեսանել վասն յետին կատարածին աշխարհիս Հայոց, թէ որպէս ի գլուխ ելանիցէ. – 298. և իջուցեալ ի փայտէն հատին սուսերաւ զգլուխ նորա. – 290. և հարեալ զպարանոց դահճին՝ ի բաց առ զգլուխ նորա: - 268. և մատուցեալ զպարանոցն առ դահիճն՝ եհատ զգլուխ նորա – 296. Եւ մինչ երթայր և խորհէր՝ խոցեալ նորա երիվարն, և յանկարծակի այն ինչ ոտն երիվարին շաղեալ ընդ փոքր թուփ մի, որպէս ասեն, զուլումբեալ ի վերայ գլխոյն ջարդեալ զողն ու լարն՝ ի բաց ընկէց զհեծեալն զքաջ զօրավարն Ապումկդէմ: - 304. և մինչ ոչ ելին ի գլուխ կարծիքն, այլ իբրև զմեքենայ ինչ յամուր անդամանդեայ պարսպէ ի բաց դառնայր – 250. Եւ նոցա ի գլուխ հասնեալ զգործ պատերազմին՝ դառնան զօրքն Հայոց մեծաւ յաղթութեամբ – 176. և պաշտօն աւուրն ի գլուխ ելեալ, ընթերցան քահանայքն զսուրբ Աւետարանն ի տեղիս տեղիս ի բանակին – 228. և սաղաւարտ ի գլուխ եդեալ – 208. զի թագաւորն Լիդէացւոց ասպազինեալ զերիվարն շուրջանակի պղնձի արկանելեօք յոտից մինչ ի գլուխ բովանդակ չթողեալ տեղի՝ անկռուելի լինել զինուի – 64. զորոյ զպաղատանս ոչ անտես արարեալ Քրիստոսի՝ ներէ նմա հասնել ի գլուխ զսուրբ քառասնորդսն, խաչակից լինելով Քրիստոսի, մինչև ի պարտ զատկին – 254. Է՞ր աղագաւ կամ վասն ո՞յր պատճառանաց. զի ի քաջէն իմմէ և ի մեծ իշխանէն, ի քաջատոհմիկ և ի բարեփառ գլխոյն իմմէ զրկեալ լինիմ: - 384. ժամ տուեալ ի գլուխ հասնել, յոր չոգանն զգործ պատերազմին: - 328. Իբրև լուաւ զայսքան և առաւել քան զսոյնս յանդուգն և առանց երկիւղի զընդդէմ պատասխանատրութիւնն մեծաւ համարձակութեամբ՝ապա հրաման ետ փութով ի կենաց բառնալ զգլուխ նորա սուսերաւ: - 296. Իսկ Երուանդայ հետազօտեալ գայ բնակի առ ստորոտով լերինն ի գլուխս Տոսպ գաւառի, և կոչէ զտեղին /82/ Երուանդականս. – 84. Իսկ զկնի աւուրցն տասանց ի գլուխ ելանելոյ՝ խնդրեաց սպարապետն մտանել առ նա, և կալեալ զձեռանէ նորա՝ սկսաւ խօսել ընդ նմա և ասէ. – 282. Իսկ իբրև գիտաց բռնաւորն, եթէ չելին ի գլուխ կարծիքն զոր ի վերայ սրբոցն խորհեցաւ, որպէս գրեալ է, ,,կարծողն և արհամարհողն այր ամբարտաւան է և ոչ ինչ վճարեսցէ,,- 264. Իսկ նա փոքր ինչ ժամանակ ներեաց նոցա դիմօք սիրոյ խաղաղութեան, մինչև ի գլուխ ելին որ ինչ յաղագս Ապումուսէին էին հանդէսք. – 296. Կամ դարձո՝ զխորհեալ նոցա չարիս ի գլուխ իւրեանց, կամ թող զի ելցեն գնասցեն՝ յով և կամեսցին,,: - 82. մինչև զայրանալ դահճացն, և խուռն ի վերայ դիմեալ ի մեծ հրապարակին՝ հարին սրով զերանելին և ի բաց առին զգլուխ նորա – 224. Յայնժամ դիմեցին ի վերայ նորա և ի բաց առին զգլուխ նորա և տարան ետուն առ զօրավարն իւրեանց Աբրահիմ. – 304. Յայնժամ իբրև գիտաց զօրավարն, եթէ յաջողեցաւ նմա ամենայն ինչ ըստ կամաց իւրոց և ըստ հրամանի ամբարիշտ թագաւորին, ի գլուխ ելին խորհուրդ չարութեան նոցա - 238. Յայնժամ իբրև ետես անօրէն զօրավարն Մուսէ, թէ ոչ ելին ի գլուխ խորհուրդ չարին յօժարութեանն … փութացաւ արձակել զուժկան յարքունիս, ծանուցանելով արքայի զոր ինչ գործեաց Աշոտ իշխանն Վասպուրական: - 176. որ և ամբարտաւանեալ մոլեգնականս տալ հրաման զանխորհուրդ միաբանութեան զրաջան վաստակոց, կանգնել բուրգն յերկրէ, որոյ գլուխն հասցէ յերկինս. – 40. Որդին Ապուսեճի Աւշին, որ զպարսկային հարստութիւնն հզօրապէս յաղթութեամբ ի գլուխ եհան՝ ձեռնամուխ ախորժեաց լինել ի վերայ Հայոց – 360. որոյ գլուխ անկեան Քրիստոս - 250. որպէս պատմէ ի գլուխ երկրորդի պատմագրութեանն: - 96. ՎԱՍՆ ԹԱԳԱՒՈՐԻՆ ՋԱՓՐԱՅ, ԶՈՐ ԻՆՉ ԽՈՐՀԵՑԱՒ Ի ՎԵՐԱՅ ԱՇԽԱՐՀԻՍ ՀԱՅՈՑ, ԵԻ Ի ԳԼՈՒԽՆ ԵՀԱՆ ԶԿԱՄՍ ՉԱՐՈՒԹԵԱՆՆ, ԵԻ ՈՐ ԻՆՉ ԸՆԴ ՍՈՎԱՒ ՆԱԽ ՔԱՆ ԶԼՆՈՒԼ ՎԵՑԵՐՈՐԴ ՅՈԲԵԼԻՆԻ, ԵԻ ԵՕԹԱՆԱՍՈՒՆԵՐՈՐԴ ՈԼՈՄՊԻԱԴԻՆ, ՅԵՏ ԻՆՆԵԻՏԱՍՆ ԸՆԴԻՔՏԻՈՆԻՆ, ՅՈՐՈՒՄ ԲՈՎԱՆԴԱԿԻՆ

ԺԱՄԱՆԱԿՔ ԲՌՆԱԿԱԼՈՒԹԵԱՆՆ ՏԱՃԿԱՑ ԱՄՔ ՄԻԲ ԸՍՏ ԹՈՒՈՑ ՀԱՅԵՐԷՆ ՏՈՒՄԱՐԻ. – 170. Տեսեալ Մահմէտի զյաջողութիւն իրացն և զմիաբանութիւն Հրէիցն՝ ասաց զինքն գլուխ և առաջնորդ ամենեցուն: - 160. Եւ խնդրէին ի բազումողորմէն Աստուծոյ՝ հանել ի գլուխ զառօրեայ ժամանակս անսայթաք և հաստատուն հաւատովք – 252. և հանդիպեցան միմեանց յՈրդոք գեօղ, ի գլուխս ձորոյն Հայոց, որ հանէ յԱրուանթունի գաւառն: - 306.

ԳՄԲԵԹ - Եւ մեկնակազէնքն պատեցին շուրջ զեկեղեցեաւն, և ելեալ առ նա ոմանց ընդ փորուած գմբեթին՝ և եհար մի ոմն աշտէիւն ընդ միջոց թիկանցն՝ և ընդ անթովքն հանեալ ի ներքոյ թոքացն՝ փչեաց զոգին և թաղեցաւ զթաղումն իշոյ: - 190. Եւ անդ ի միջոց գմբեթիւն ղօղեալ սալարեալ սարսռալից դողմամբ զետեղեալ լինէր: - 190.

ԳՆԱԼ - ամենեքեան ընդ նմա անցեալ գնացին ի կողմն Ատրպատականի – 212. այլ գնաց զխոտորնակ և զձախողակի ճանապարհ աղտեղասէր բազմադիմակ պղծութեամբք – 108. այլ և բազումք ի նախարարացն Հայոց ելեալ զհետ Արշակայ գնացին առ Արկադ – 110. այլ իբրև եմուտ Բուխայ յաշխարհս Վասպուրական՝ ել գնաց Գուրգէն առ Քուրդիկ Մամիկոնէից տէր ի Բագրևանդ գաւառ, և անդ լինէր, զի էր Քուրդիկ քեռի Գուրգինայ: - 302. այլ վասն բանսարկուացն ելեալ Վաչէ և Արշաւիր գնացին առ Արտաշէս արքայ Պարսից – 82. Այլ քանզի յոյժ առաւելեալ էր իմաստութեամբ Գագիկ՝ տեղի տայր բովանդակ գաւառապետաց զօրագլխաց աշխարհիս, գնայր ընդ նոսա իմաստութեամբ խորագէտ հնարաւորութեամբ, ըստ անձնիւր գահու մեծարեալ պատուադրութեամբ հաճոյանալ ախորժէր նոցա: - 354. Այնուհետև ել գնաց դէմ եդեալ զյունականօքն շրջել զկողմամբքն, յանձն արարեալ զհոգս իւր շնորհացն Աստուծոյ. – 316. ապա հնարաւորեալ պատիր խաբէութեամբ ի կատարումն հասուցանել զխորհրդոյն /346/ զանհաստատ իմացմունսն, և գնաց եմուտ յամրոցն, և զհիւանդութեան կեղծաւորութիւն մերձ առ մահ եդ առաջի: - 348. ապա համոզեալ Սահակայ և Սմբատայ այլովքն նս՝ բարձին ի միջոյ զաղմուկն, և սէր բարեկամութեան ի մէջ երկոցունց հաստատեալ՝ գնացին յիւրաքանչիւր տեղիս: - 332. արդ ի բաց գնա, այր դու, /222/ ես մեռանիմ վասն Քրիստոսի„: - 224. Արդ այսքանեաց վկայութեանց ի մի վայր եկելոց՝ մի ելցուք զհետ առասպելաբանիցն թէ ընդ անկոխն գնալով ճանապարհ. – 260. արդ դու յարուցեալ գնասցես ի մի քաղաքացդ Հայոց, որպէս օրէն է աշխարհակալաց. – 178. Բայց Գուրգէն կասկած ունելով յԱշոտէ, թէ գուցէ իբրև զապստամբէ ումեմնէ զեկուցանիցէ զնմանէ առաջնորդին Տաճկաց՝ ել գնաց կեալ շրջաբերական յեղափոխմամբ, արիական քաջասրտութեամբ, սիրեցեալ ընդ բնաւ աշխարհաց: - 322. Բայց ի գնալ մեծ հազարապետին յարքունիս՝ հաւատաց զվերակացութիւնն աշխարհիս Հայոց և հարկս արքունի ի ձեռս Մուսէի ումեմն որդւոյ Զօրահայի հազարացւոյ – 172. բայց ի գնալն աստի ի Մարս և ի Պարսս, դարձեալ դառնայ ուժով մեծաւ և թագաւորական ճոխութեամբ, տիրէ Հայոց մեծաց - 88. Բայց ի գնալն Խուրէնայ առ Տիբէր կայսր՝ եթող զորդին իւր զՎաչէ և զեղբայր իւր զԱրշաւիր ի Խառան առ տիկնոջն Հեղինէի. – 80 Բայց միայն զնահապետն Ամատունեաց զԱպուսակր ձերբակալ արարեալ, առին գնացին ի քաղաքն – 354. Բայց յետոյ անմիաբան գտեալք նախարարքն Հայոց՝ թողին զոր խորհեցանն վասն թագաւորելոյ Վահանայ, և անցին /126/ գնացին առ մեծն Վարդան. – 128. Բայց Վասակս այս … վասն ազգակից գոլ նոցա ընդ տոհմին Արծրունեաց… ել գնաց իւրովք կամօք ի Սամառայ և եղև աստուածուրաց – 248. Գնայ զկնի նոցա և երջանիկն Զուիթայ երէց յԱրտաշատէ զկնի հաւատացեալ Հրէիցն – 104. գնաց Արշակ փախստական յԵկեղէց գաւառ և անդ վախճանի իւրով մահու, թագաւորեալ ամս Է: - 112. գնաց և Վահան զհետ նախարարացն առ Վարդան յառաջագոյն, տալ նմա զվերակացութիւն Հայոց. – 128. գնացին առ Ներսէհ արքայ Ասորոց, ընդ իւրեանս ունելով զգիր ուխտի խաղաղութեան Աբգարու և Ներսէհի և զԽուրենէ Արծրունւոյ. – 82. գնացին մտին ի գաւառն Ռշտունեաց, և առին յաւարի զտունն Գարեգնի Ռշտունեաց տեառն. – 102. գուցէ, ասէ, ի գնալն ի բուռն առեալ ի մահ դատապարտեսցի: - 84. դնէր ուխտս ընդ իշխանս աշխարհիս Հայոց՝ գնալ

ըստ արժանի /180/ հաւատոցն Քրիստոսի, զի վկայեսցեն ըստ անուան քրիստոնէութեանն և գործքն: - 182. եթէ ,,Օրէն է աշխարհակալաց արքունի խնամակալութեամբ գնալ ընդ աշխարհ իբրև առ հնազանդս, և զնեղութիւնս տառապելոց բառնալ և ի դիւր հանել իբրև զինամարկուս, և ոչ աւազակաբար աւարել, և սրով և գերութեամբ յաւեր դարձուցանել. – 278. Եթէ, որպէս ասացի, ի բաց գնաս յինէն՝ խաղաղութիւն է, և թէ ոչ՝ պատերազմ և կռիւ և ճակատամարտ – 278. Ել գնաց զկնի փառաց իշխանասիրութեանն ցանկութեան յորմէ վրիպեացն: - 236. երկեաւ Վարդան ի մարզպանէն բնակել յանդորրու, այլ այնր աղագաւ էանց գնաց յամուրսն Մոկաց, և կայր մնայր ի նախախնամութենէ Աստուծոյ այցելել աշխարհիս Հայոց: - 122. և ըստ մեղաց տանն Արշակունեաց առաջին թագաւորացն մերոց հետազօտեալ լինէին, գնային ոտնխեթի,/ճիշտը՝ոտնխթի/ գայթ ի գայթս և աղտեղասէրս – 182. Եւ իբրև ազդ եղև Դերենկին՝ գնաց ընդդէմ նորա պատերազմաւ, և դառնայր փախստեայ: -320. Եւ ինքն /302/ անցեալ գնայր առ իշխանիկն ի յամուրն Աշխարհաբերդն կոչեցեալ. և անտի արիաբար քաջասրտագոյն դիմացուածով ելեալ գնաց դարձեալ առ սպարապետն Սմբատ: - 304. Եւ ինքն /302/ անցեալ գնայր առ իշխանիկն ի յամուրն Աշխարհաբերդն կոչեցեալ. և անտի արիաբար քաջասրտագոյն դիմացուածով ելեալ գնաց դարձեալ առ սպարապետն Սմբատ: - 304. Եւ նա գնաց ընդդէմ նոցա սաստիկ զօրութեամբ. – 150. Եւ ահա դիմեալ գնաց հասանել ի վերայ կողմանց հիւսիսոյ, յերկիրն յորում Ծանակ կոչի. – 274. Եւ այլք յաւագ նախարարացն գնացին ամենայն պնդակազմ սպառազինութեամբ ի Պարսս՝ հնազանդել ընդ ձեռամբ հեթանոսական և բարբարիկոն ազգին Սասանականին. – 110. և անդուստ խաղացեալք ընդ անապատ ճանապարհ գնացաք ի ծովակողմն կոյս – 50. Եւ անյապաղ գլխաւորեալ խորհրդոցն՝ առնու ընդ իւր զԴերենիկն, և էանց գնաց ի տուն իւր ի Բագարան: - 322. Եւ անցեալ գնացաք ի տեղեացն երկուցեալք – 50. Եւ բարձեալ զօրքն Հայոց դիակապուտ արարեալ զզարդ և զզէնս զարի արանց և զքաջ երիվարաց, առեալ աւար բազում՝ գնան յիւրաքանչիւր տեղիս մեծաւ յաղթութեամբ: - 178. և գնացին կալան զամրական տեղիս ով ոք և փութացաւ մտանել յամուրս ի բերդսն որ ի Վասպուրականի. – 238. և Գուրգէն դարձեալ գնաց յաշխարն իւր յամուրն Կանգուար: - 364. Եւ Գուրգէն ելեալ գնաց փութանակի անյայտ առնել զինքն, մինչև յաջողեսցի ըստ կամաց Քրիստոսի յո՛վ և երթիցէ: - 320 և դարձեալ գնաց եհաս ի Պարտաւ յաշխարհն Գագարացւոց: - 336. և ել գնաց զկնի իշխանութեանն ցանկութեան ինքնամոլորութեանն անգիւտ կորստեանն. – 250. Եւ ելեալ ազատացն Վասպուրականի դէմ եղեալ տարադէմ գնացին յԱմդացւոց քաղաքն առ Ահմաթ որդի Յիսէի Շեհայ – 366. և ելեալ Աղան գնաց առ սուրբն Սահակ, և զէնընկեց եղեալ առաջի նորա՝ մերկանայր զհանդերձն զինաւորական - 112. Եւ ելեալ Աշոտ զհետ կոչնականաց Աւշնի՝ գնաց աներկիւղ համարձակութեամբ: - 362. Եւ ելեալ գնաց եմուտ յամուրն Կանգուար, և կատարեալ զոր ինչ ախորժեացն՝ տիրեաց Անձաւացեաց մեծաւ զօրութեամբ: - 324. և ելեալ գնաց զհետ անհանճար իմացմանց առ Պերոզ արքայ Պարսից – 124. Եւ ելեալ գնաց զհետ կոչնականացն ի գութ հարազատութեան, և ի կարծիս սաստիկ հիւանդութեան, թէ մերձ ի մահ անկեալ դնիցի, ըստ ստուգելոյ կոչնականացն: - 348. Եւ եղև զկնի այսորիկ գնաց անտի Ժիրաք և եկն եմուտ ի Վանտոսպ – 206. Եւ եղև ի գնալ Դերանկին ի ձմերոցս Վասպուրական իշխանացս, ճանապարհ արարեալ ընդ ձորն Ընծայից, որոյ ելքն ընդ գաւառն Հեր քաղաքի: - 352. Եւ եղև ի մտանելն նորա ի Դատուան աւանն … ելեալ իշխանքն Հայոց յանձնիւր տեղեաց գնացին յանդիման լինել նմա – 340. Եւ եղև իբրև կատարեաց Բուխայ զանցս անցից ընդ Վասպուրական աշխարհս և խաղաց յարևելս կոյս՝ ել գնաց Գուրգէն ի Սպեր գաւառ. – 302. Եւ եղև մօտ ի կատարումն հասանել ամին երկրորդի գալստեան նորա՝ ել գնաց ի կողմանս Աղուանից. – 276. և զբազմութիւն գերւոցն զերծանեն գնալ յամուրս երկրին: - 202. և զի ի գնալ Աշոտի թողեալ էր անդ զտիկինն Վասպուրական զՍետայ – 362. Եւ զորդիսն Իսրայէլի առեալ գնացին յաշխարհն իւրեանց – 66. և ընդ հարթն գնասցուք ճանապարհ, և մի խոտորեսցուք մի յաջ և մի յահեակ. – 256. Եւ իբրև ետուն զթուղթն կարծեցեալ իբրև յերեսաց արքայի՝ ,,ընթերցիր

զայդ, ասէ, մի՛ ինչ ընդ մեղադրութեամբ արկաներ զիս, և կարծել նենգութեամբ գնալ առ քեզ և դրժել ինչ քեզ և ստել երդմանց /236/ մերոց. – 238. և իբրև զեկուցաւ նմա եղեալքն՝ դարձաւ անդրէն գնաց յիւր ճանապարհ: - 332. և ինքեանք գնացին յարևելս հիւսիսոյ որպէս ասացաւ ի վեր անդ: - 60. և ինքն Ատոմ հատեալ գնայ ի կողմն Մարաց: - 114. Եւ ինքն Աւշին զտանջանացն փորձական կիրս կրեալ, դառնագոյն քան զլեղի իժի ճաշակս ճաշակեալ՝ գնաց զկորստական ճանապարհին. – 376. և ինքն գնաց անտի և եմուտ ի Պարտաւ՝ ձմերել անդ, և տեսանել վասն յետին կատարածին աշխարհիս Հայոց, թէ որպէս ի գլուխ ելանիցէ. – 298. և ինքն գնաց ի Միջագետս Ասորոց, զի կալեալ հաստատեսցէ ինքեան զքաղաքսն և զսահմանսն ամենայն, որ առ Խոսրովաւ և առ Մուրկաւ հաստատեալ էր: - 154. և ինքն գնաց փախստական ի Պարսից ի կողմանս Խաղտեաց: - 106. և ինքն ել գնաց երթալ մտանել ի քաղաքն Դուին, ձմերոց ինքեան պատրաստեալ զնա, մինչ ի ժամ գարնանայինս, ունելով ընդ իւր կապեալս բազումս. – 240. Եւ ինքն Խուրան առեալ զմեծ մասն զօրուն գնաց ի Շաւարշան ի Սանատրուկ. – 80. և ինքն Հազարաւուխտ առնու զընտիրս այրուձիոց, զկորովի պատերազմողս ի վառելոցն պարսկային հարստութենէն, և խաղայ գնայ զկողմամբքն Հաշտենից և Ծոփայ, ի վերայ Վահանայ յանկարծօրէն: - 134. և ինքն հանդերձեալ կազմել գնալ ընդ արևելս նաւել ի Քաղկեդոն: - 148. և ինքն հեռացեալ գնաց զկնի Աղէքսանդրի ի Բաբելոն, և անտի եկեալ յԵրուսաղէմ պագին անդ երկիր Աստուծոյ: - 70. և ինքն Ովայ զերծեալ սակաւ ոմամբք գնաց փախստական ընդ կողմն Բերկրոյ: - 178. Եւ լուեալ կնոջն Սահակայ, թէ ըմբռնեցաւ … փութացաւ գնաց եկաց առաջի Բուխայի, թերևս կարասցէ ըստ պատշաճ գեղոյն և ըստ բազմաձեռն գանձուց ապրեցուցանել զայրն իւր, որ առաւել մահու քան թէ կենաց պատճառ եղև նմա: - 272. և խոստանային գնալ ըստ հրամանի նորա: - 120. Եւ Խոսրով արքայ փախստական գնաց, և անցեալ զԴեկղաթաւ ի Վեհկաւատ՝ հրամայեաց զլար կամուրջացն կտրել. – 150. Եւ խօսէր ընդ նոսա սաստիկ և ահագին դատաստանօք և սպառնալեօք, թէ ընդէ՞ր և դուք ոչ մեռարուք ի պատերազմին, քան թէ ելեալ փախստական գնացէք գալ առ իս և տալ համարձակութիւն ծառայի իմում ի յայսքան վնաս. մի՞թէ արդեօք զԽոսրով մեռեալ կարծէիք,,: - 150. և կիսոցն անունկնդիր եղեալ՝ գնացին ի նոյն կործանման մինչև ցայսօր ժամանակի – 274. և ձմեռնայինն խաղան գնան ի խորագոյն երկիր – 262. Եւ մեկնեալ զզօրսն ի նմանէ ընդ կողմն Ապահունեաց, մերկ ի զինէ և յասպազինէ թողեալ, ոչ առնել այլ կողոպուտ, գնացին աղխիւ և երիվարօք իւրեանց: - 346. և մտանէին առ նա արք ի նախարարացն, խօսէին դատաստանօք և նախատէին զնա, անարգէին և գնային: - 152. Եւ յարբունս հասելոյ Արտաշէսի՝ երթայ գնայ առ Արտաշէս Պարսից արքայն – 84. Եւ յետ սակաւ աւուրց ել գնաց Դերանիկն ի Ճուաշ գաւառ՝ ձմերել յաւանին Մառական: - 350. և նա տրտմեալ գնաց ի տուն իւր, քանզի հանապազ ստիպէր ի դիւէ անտի, թերևս թոյլ տալովն Աստուծոյ, զոր համարէր ի հրեշտակէ զանկանելն ի մտաց: - 160. և նոցա կալեալ զճանապարհն անապատի՝ գնացին ի Տաճկաստան առ որդիսն Իսմայէլի, ի քաղաքն որ կոչի Մադիամ – 156. Եւ նոքա կամեցեալ անձնապահ լինել աշխարհին՝ գնացին ընդդէմ նոցա. – 162. և որդի Որմզդի Խոսրով գնաց փախստական առ Մուրիկ թագաւորն Յունաց՝ զոր առեալ քեռիք նորա Վնդոյ և Վստամ գնացին փախստական ի դուռն կայսերական: - 136. և որդի Որմզդի Խոսրով գնաց փախստական առ Մուրիկ թագաւորն Յունաց՝ զոր առեալ քեռիք նորա Վնդոյ և Վստամ գնացին փախստական ի դուռն կայսերական: - 136. Եւ Վահրամ գնաց փախստական և անկաւ ի Բախտ Շախստան. որ և յետոյ իսկ սպանաւ ի հրամանէ Խոսրովայ: - 140. և փախստեայ գնացին զհետ մինչ ի սահմանս իւրեանց. – 308. և փութացաւ գրեաց առ Սափի որ ի Վանտոսպ նստեալ և ճոխանայր Վասպուրական տէրութեամբն. որ առանց յապաղանաց զփոյթն յառաջաբերեալ՝ գնաց եհաս առ Աւշին ի Մարակայ քաղաք: - 374. և քակեցին զռազմն և աւերեցին զճակատն և լքին զմիմեանս, և թողին զպատերազմն և գնացին փախստական ամենայն այր յո՛վ և կարաց զերծանել. - 306. և քեզ եթէ հաճոյ թուիցի ապրեցուցանել զքեզ և զզօրս քո՝ արի ել աստի և գնա ի

սահմանաց իմոց: - 278. Զի ահա ես զարթուցանեմ ի վերայ ձեր զազգ դառն և զերագ, որ գնայ ընդ լայնութիւն երկրի, ժառանգել զխորանս որ ոչ իւր են, ահեղ և երևելի: - 200. զի ի գնալ Արտաշէսի յայսմ տեղւոջէ՝ ոչ ևս յաւել ձեռն Երուանդայ տագնապել զնա – 88. զի ոչ կարաց զերծանել գնալ յով և կամիցի – 84. Զնոյն տեսեալ ազատացն Վասպուրականի, անտանելի մնալով առ դիպուածն զոր ինչ գործեաց Ապումրուան՝ ելին գնացին առ Ատոմ որդի մեծին Գուրգինայ յամուրն Կանգուար, գտանել զելս իրացն – 364. զոր արհամարհեալ Շաւասպ /114/ արձակերեսան զերիվարն ի սիգաքայլ արշաւանս արարեալ՝ աներկիւղ համարձակութեամբ էանց գնաց ճեմ զճեմի առ զօրավարն Անատողի: - 116. զոր ոմանք ի պատմագրաց ասեն՝ փախստեամբ դարձեալ գնաց յԱսորեստան: - 42. Զորոց տեղի տուեալ գնացին յամուրս իւրեանց – 362. զորս եթող Բուխայ տիրել աշխարհին իւրեանց յաղագս յառաջագոյն մտերմութեան հօրն նոցա առ թագաւորն և առ զօրավարն, զի գնաց ըստ կամաց նոցա յամենայն ուժոյ զօրութեան մտաց իւրոց: - 298. զորս վաճառակուր արարեալ յօտար ազգս, վարել ի ծառայութիւն, գնալ հեռանալ մերժել ի տանց, հայրենի ժառանգութենէ իւրեանց: - 262. Ընդ ժամանակսն ընդ այնոսիկ խաղաց գնաց Արշակ ի մուտս կոյս – 98. Ի նմին ժամու զգացեալ վասն նորա մեծ իշխանին Արծրունեաց Մերշապհոյ, որ յայնժամ ի Տմորեացն ամրանայր բերդի՝ յղէ առ նա ելանել գնալ ի սահմանացն յայնոցիկ. – 130. Իբրև զեկուցաւ նմա յոմանց զոր ինչ խորհի վասն նորա Աւշին /370/ … ելեալ գնաց մեկնեցաւ օգնութեամբ ի վերայ հասեալ գիշերոյն – 372. ինքն իսկ փոյթ յանձին կալեալ՝ ել գնաց մեծաւ հոգաբարձութեամբ, լուծանել զնա ի տառապանաց արգելանին. սակայն և այնպէս ոչ կարաց գտանել զելս իրացն վտանգի առնն: - 346. Իսկ անօրէն զօրավարն … գնաց եմուտ ի ջերմագոյն տեղիս ի քաղաքն Դուին ձմերել անդ. – 262. Իսկ զԱհմատ ընդ Վասպուրական աշխարհին անցանել գնալ՝ ելեալ զհետ նորա Շապուհ որդի Աշոտի, մինչ տանել հասուցանել զնա ի մուտս Ասորեստանեայց ճանապարհին: - 346. իսկ թագաւորն հրաման ետ՝ երթալ գնալ ի սահմանաց իւրոց. – 156. Իսկ ի գալ միւսոյ ամին … առեալ զօրականս այրուձի կազմութեամբ իբրև Չ խաղաց գնաց երկայնագոյն հեռաւորութեամբ հասանել ի վերայ բանակին պարսկական աղխին – 402. Իսկ իբրև եկն Գուրգէն երկրորդ՝ փութացաւ գնաց հասանել ի վերայ առաջնոյն Գուրգինի. – 316. Իսկ իբրև սկսաւ սպրդել մտանել ի ներքս երկպառակութիւնն ի մէջ միաբանութեանն, հեռացաւ մեկնեցաւ գնաց շնորհ աստուածատուր զօրութեանն. – 194. Իսկ իբրև տեսին զբազմութիւն պարսկային զօրուն՝ վհատեալ գնդին Հայոց լքին զմիմեանս և գնացին յետս կոյս – 134. Իսկ իշխանն Բագարատ … ել գնաց անխիղճ համարձակութեամբ, տիրասէր խորհրդովք, կատարել զսպաս զինուորութեան, ըստ աստուածեղէն պատուիրանին և ըստ թագաւորական հրամանին, զհետ եկելոյ կոչնականացն, ոչինչ իմացեալ զպատրանս խաբէութեան նորա, որով վրիպեացն: - 186. Իսկ Խուրան ոչ կացեալ առ Սանատրկոյ գնաց յերկիրն Յունաց, առ Կեսար Տիբերիոս – 80. Իսկ Հասան ըստ յանձնառութեանն գնաց մեկնեցաւ ի Դերանկէն, եմուտ առ Գագիկ յամուրն և զտրտունջն զԴերանկէն հաւատարմացոյց առաջի Գագկայ, որ դիւրաւ առ հաւատալն հաստատնագոյն երևէր. – 350. Իսկ Շապհոյ լուեալ զհիւանդանալ հօր իւրոյ՝ փութացաւ գնաց ի Պարսս. – 116. Իսկ Սահակ որդի Վաչէի խոյս տուեալ գնայ զկողմամբքն Մարաց, ընդ կողմն Ատրպատականի – 82. Իսկ Վասակ Արծրունի խոյս տուեալ գնաց առ Արտաշիր Պարսից – 112 Իսկ Վասակ Արծրունի, հայր Աղանայ սրբոյ, առեալ զՏաճատ և զԳոտեր զեղբայր իւր՝ գնաց առ կայսր. մեկուսի եղեալ ի շփոթմանց պարսկական վրդովմանցն և աւերման աշխարհիս. – 132. Իսկ Վարդան Մամիկոնեան, որդի Համազասպայ Մամիկոնէի, թոռն սրբոյն Սահակայ, խոյս տուեալ գնաց զկողմամբքն Մոկաց, ի խոխոմս Տաւրոսական լերինն, ի լեսուրս Ջերմաձորոյ – 122. Իսկ քաղաքապետն Սահակ ելեալ ընդ դուռնն, որ ելանէ ի բերդն Շամշղտայ, սամոյր զինքեամբ արկեալ և գաւազան ի ձեռն առեալ, յիմարեալ մտօք կորոյս զփախուստն իւր, որ կարող էր գնալ յով և կամիցի. – 272. իւրաքանչիւր զօրօք գումարեալ, ի մի վայր խաղացեալ՝ գնացին հասին յայն վայր – 174. Կամ դարձո՝

զխորհեալ նոցա չարիս ի գլուխ իւրեանց, կամ թող զի ելցեն գնասցեն՝ յով և կամեսցին„: - 82. համարձակապէս անցանել գնալ ընդ իշխանութիւնս և ընդ պետութիւնս, ընդ աշխարհակալս խաւարիս այսորիկ, որ անհաւատից քան եթէ հաւատացելոց ոգւոց և ապաշաւելոց զտիրելն բռնաձգեալ կորզեն յինքեանցն կորուստ: - 388. ձայն բարձեալ արտասուալից առ Դերենիկն, և զսուսեր մերկ ի ձեռին ունելով, և վաղր և սակր մի՝ ասէ. ,,որդեա՛կ իմ Դերենիկ, ողջոյն քեզ, ողջոյն քեզ, ողջոյն քեզ. ես ելի գնացի ի յաշխարհին Յունաց„: - 320. ճողոպրեալ Գարեգինն անձնապուրծ գնաց փախստեայ առ կայսրն Յունաց. – 102 մանաւանդ յառաջագոյն պատրաստեալ պատսպարեաց թղթովք և պատարագօք առ թագաւորն և առ զօրավարն գնալ ըստ հրամանաց նոցա, և ոչ ինչ արտաքոյ կամաց նոցա խորհել կամ գործել ինչ: - 270. Յայնժամ առեալ հրովարտակ Սանասարեանց ի Տիգրանայ պատարագօք գնացին առ Կիւրոս. – 64. Յայնժամ արքայ Խոսրով յայլակերպս եղեալ գնաց եմուտ ի բուրաստանն արքունի – 152. Յայնժամ ետ զզօրսն ի ձեռն Մուշեղի Ապուպելճի եղբօր Գուրգինայ, և ինք ել գնաց զհետ եկելոց կոչնականացն. – 228. Յայնժամ երդուեալ միաբանութեամբ գնացին ի գիշերի և անցին ընդ զոմ ի Վեհկաւատ – 150. յայնժամ մերկացեալ և ի բաց եդեալ զաշխարհական պատրանաց զբաղումն՝ և էանց գնաց ի վեր քան զերևելիսս – 284. յառաջ խաղացուցից զբանսն, արագաքայլ արշաւանօք անցեալ գնացից ընդ շարագրածս անցնիւր պատմագրաց, զազգաբանութիւնն միայն ոճով դրոշմեցից ի շարի աստ – 74. Յետ այսր՝ յերկրորդ ամի պաշարեն զԿարնային քաղաքն զօրքն Յունաց. և դարձեալ անդրէն ի կամս իւրեանց թողեալ գնացին: - 358. Նոյնժամայն գնացին Դերանիկն և Գագիկ մտին առաջի Յիսէի, խօսեցան բանս խաղաղութեան, ետուն պատանդս յանձնառութեամբ հարկացն արքունի - 334. Նոյնժամայն իբրև ետես տիկինն, եթէ վարեցան որդիք նորա ի գերութիւն՝ գնաց և ինքն զհետ նոցա, զհերս խզեալ և զօձիս պատառեալ, կոծելով և աշխարելով – 238. նուաճեաց զանձն, հրապոյրս պղտորս արբուցանէ Վահանայ Մամիկոնէի, որ էր աներ Մեհուժանայ, և անցեալ գնացին առ Շապուհ. – 102. նոքա առեալ գնացին փութանակի. – 154. որ ապա ի /80/ գնալն տիկնոջն յԵուսաղէմ՝ Վաչէ և Արշաւիր երկեան երթալ առ Սանատրուկ – 82. Որոյ առեալ զթոռունս իւր զՀմայեակ և Համազասպեան գնաց առ արքայ ի Տսպոն: - 116. որոյ գալուստն ազդ եղեալ գնդի այլազգեացն՝ փախեան գնացին բացագոյն, կալան զամրական տեղիս, ցրուեալ ընդ լեռնայինսն անյայտ թաքստեամբ: - 402. Որոց դիպօղ ժամ գտեալ՝ արտաքս ելեալ ի բանակէն, զերծեալք իբրև զայծեամն ի հնարից որսորդաց՝ գնացին խաղաղութեամբ յիւրեանց տեղիս և զնա թողին լքեալ ամօթալից: - 344. որպէս ասաց Պաւղոս, եթէ ,,դուք տաճար էք Աստուծոյ կենդանւոյ„ , և դարձեալ ասէ թէ ,,տուն Աստուծոյ եմք մեք„. և դարձեալ մարգարէիւն ասէ, բնակեցայց ի նոսա և գնացից ի նոսա„: - 394. որպէս յարդ ի հողմոյ վարեալ, կամ ծուխ վատնեալ ի մրրկէ՝ այնպէս կորեան գնացին յերեսաց զօրացն Աղուանից: - 286. որք գնացին առ Վռամ, և ոչ առ Թէոդոս բարեպաշտ և զուգափառ քրիստոնեայ թագաւոր, զեղխեցան ամբարշտաբար առանց խորհրդոց: - 118. ուրացան զանձինս և առին զխաչն Քրիստոսի և գնացին զհետ կոչողին, կորուսին զանձինս, այսինքն զկեանս աշխարհիս, զի զյաւիտենիցն գտցեն զկեանս. – 292. Սա հալածեաց զՅոյնս, և զումարեալ զօր բազում գնաց ի վերայ լքեալ թագաւորութեանն Պարսից յերկիրն Պարթևաց, ի վերայ Յազկերտի անուանեալ արքային Պարսից: - 164. Սոքա ամենեքեան վառեալք սպառազէն պատրաստութեամբ և բազմաձեռն առատալիր պատարագօք՝ գնացին, զի առեալ տարցեն մուծցեն զնա ի Դուին քաղաքն: - 340. քանզի էին մանկագոյնք տիովք. առին գնացին յամուրսն Տայոց. – 98. Քանզի ի գնալ նորա զօրացուցանել զքեռին իւր զթագաւորն Հայոց, իսկոյն յելանելն նորա ի տանէ իւրմէ ի Վան քաղաքէ՝ տիրէ ի վերայ նորա ցաւք հիւանդագինք կարապետք մահու, անմերձենալիք ճարտարաց բժշկական ձեռնարկութեանն: - 384. Քանզի Սամուէլ որդի Վահանայ գնաց ընդ առաջ հօր իւրոյ: - 106. և առեալ ոսկի զտիկնոջն և զիւր՝ գնաց յԵգիպտոս գնել ցորեան յաւուրս

սովոյն որ եղև առ Կղաւդեաւ. – 80. որոց թողեալ զգործ պատերազմի ամրոցին՝ դարձաւ գնաց աներկիւղ քաջասրտութեամբ ընդդէմ նորա օժնդակ զօրու Գուրգէնի – 334.

ԳՆԱՑ/Ք/ - Այլ և պատկանաբար իմաստութեամբ պատրաստեաց ջրմուղ ներքսագոյն երկրի ի քարանց տաշելոյ փողոցս գնացից ջրոյն կազմեալ – 392.

ԳՆԱՑԵԱԼ - այր իւրաքանչիւր մազապուր զերծեալ փախստեայ գնացեալ հասին յաշխարհն իւրեանց: - 354. Առ սոսա գնացեալ Գրիգորէս երեց որդին Վրթանայ՝ քարոզեաց նոցա զբանն կենաց. – 274. Արշակայ գնացեալ զկողմամբ Միջագետաց, լաւ համարեալ ընդ ձեռամբ քրիստոնեայ թագաւորի հնազանդել, քան Պարսկականն հնազանդել տէրութեանն. – 110. Բայց Աշոտ գնացեալ տալ պատերազմ ընդ ծովեզրեցիսն որք Ութմանիկ կոչին, որք ամրանային ի յԱմիւկ անկասկածելի քարանձաւին. – 332. գնացեալ պատահին նմա ի սպառուածս Տաւրոսական լերինն: - 66. և գնացեալ միաբանութեամբ ի Կոստանդնուպօլիս՝ սպանին զՄուրիկ թագաւոր և նստուցին զՓոկաս յաթոռ թագաւորութեան: - 140. և անտի գնացեալ ի ձորն Ածանայ ի խնդիր փախստէիցն և հասեալ ի յետոյ կողմանցն՝ ի սուր և ի գերութիւն զբազումս ի նոցանէ արկանեն: - 202. և գնացեալ ընդ եզր ծովուն Բզնունեաց, ընդ կողմն Ապահունեաց՝ և բանակեցաւ յափն գետոյն, որ իջանէ յԱղձնեաց խոխոմացն: - 366. և գնացեալ Ժիրաքն առնու զնա ածէ կացուցանէ առաջի Բուխայի: - 272. Եւ զօրուն գնացեալ անտի ձմերեցին ի Սուրիա: - 144. և ինքն գնացեալ ի Միջագետս՝ հնազանդեցուցանէր ինքեան քաջութեամբ զԵմաթ և զԱրբաթ և զամենայն կողմանս Դամասկոսի և Կիւլիկեայ և զայլ բազումս: - 60. և ինքն գնացեալ յԱսորեստանէ յերկիր Հայոց, ի տոփանս համբաւուց ուրումն Հայկազնոյ: - 44. Եւ յետ անցանելոյ աւուր, գնացեալ Աշոտ որդի Դերանկին, առեալ զդի նորա՝ տարեալ հանգոյց առ հարս իւր յԱղբակ գաւառի ի վանս սուրբ Խաչին: - 354. և նորա գնացեալ զհետ կոչնականացն լի անմտութեամբ: - 102. Եւ նորա զեկուցեալ վասն նորա Բուխայի՝ ասէ. ,,այրս այս Գուրգէն ի տոհմէն Արծրունեաց, այր քաջ և պատերազմող, ի յահէ քումմէ անցեալ գնացեալ զկողմամբքն Յունաց – 304. Եւ ոչ գնացեալ ըստ խրատու սրբոյն Ներսէսի Պապ թագաւորն Հայոց – 108 ի սորա Ժ ամին գնացեալ Մովսէս յԵգիպտոսէ առաքինանայր յանապատին: - 58. Իբրև եհաս գուժկան առ մարզպանն Հայոց Գուրգէն՝ ելեալ զհետ նոցա Ռ արամբք, վառեալ ի զէն և յասպազէն, և գնացեալ եհաս յԱյլի գաւառ. – 402. Իսկ այլազգեացն անցեալ գնացեալ մտին ի Թրաբ գաւառ և ի Շնաւհ: - 402. Իսկ ի միում յաւուրս անցեալ գնացեալ Գուրգէն՝ հանդիպի նմա ի քաղաքին Պարտաւ - 370. որոյ գնացեալ առնու յինքն զԳագիկ և յղէ սպառազէն պատրաստութեամբ ի Վանտոսպ առ տիկինն Վասպուրական, և պահել ի զգուշութիւն: - 350. որոց գնացեալ պատահեն նմա ի Դնբուինդ Պարսից: - 64. տեղեկացեալ և վասն տոհմին Արծրունեաց և Ռշտունեաց և որք ի նախարարութենէն Մամիկոնէից հասեալ գնացեալ ամրանային ի յամուրսն Տայոց – 98. Քանզի թէպէտ և տարաժամ լրմամբ ժամանակի չափաբերեալ կենացն Աշոտի՝ հաստատնագոյն և անվրէպ լուծման կենացս առ հոգևորսն և յաւիտենականսն և անվախճան կենացն առաւելութիւնն անցեալ գնացեալ ժամանեաց – 386. Քանզի Վարդան անցեալ գնացեալ էր սուրբ վարդապետաւն Մաշտոցիւ առ կայսր Թէոդոս և առ Ատտիկոս արքեպիսկոպոս հանդերձ թղթովք սրբոյն Սահակայ, տանելով ընդ իւրեանց և զգիր և զբառ հայերէն դպրութեան. – 116. և թողեալ զքաղաքն Պարտաւ՝ առնու զզօրս իւր երագապէս անցեալ գնացեալ ի յաշխարհն Ասորեստանի: - 374.

ԳՆԴԱԿ - Եւս քաջասրտագոյն Շաւասպ Արծրունի, խաղս ձիընթացիկ արշաւանաց գնդակացն՝ զհետ մտրակեալ հանէ ի նմանէ զգնդակն բազում անգամ ասելով – 114. Եւս քաջասրտագոյն Շաւասպ Արծրունի, խաղս ձիընթացիկ արշաւանաց գնդակացն՝ զհետ մտրակեալ հանէ ի նմանէ զգնդակն բազում անգամ ասելով – 114. շահատակելով գունակ ի խաղս գնդակաց, զակաւաւորութիւնն իւր հազարաւորս համարելով, քանզի ոչ ունէր աւելի քան զերկու հազարս հեծելոց: - 334.

ԳՆԵԼ - և առեալ ոսկի զտիկնոջն և զիւր՝ գնաց յԵգիպտոս գնել ցորեան յաւուրս սովոյն որ եղև առ Կղաւդեաւ. – 80.

ԳՆՈՒՆԻ - նոցա հանեալ էր ի Գինունի ազգէն, ի զարմէ Մեժեժի Գնունոյ, ի Վասպուրական բաժնէ, նաև Բերկրի բաժին եղեալ էր Վասպուրականի. և դարձուցանէ անդէն առ բերկրացիսն – 382.

ԳՆՈՒՆԻՔ - Եւ գունդն Հայոց խաղացին ընդդէմ նոցա … ի տանէն Արծրունեաց՝ Գուրգէն … և Գնունիք՝ Վահան և Շապուհ և Ապուսէթ և Պատրիկ և Ապուսելմ և Վարդան. – 230. Փութանակի և վաղվաղակի իւրաքանչիւր զօրօք անդր հասանէին …ի տոհմէն Գնունեաց Գրիգոր որդի Հազրի Զ այլ ևս հարազատօք և զօրօք իւրեանց. ի տոհմէն Ընտրունեաց Արտաւազդ Է հարազատօք և զօրօք իւրեանց. – 174.

ԳՈԳ[1] - Իսկ ըստ բաւականութեան աչաց տեսութեանց դաշտավայրին ի մուտս կոյս, և առ եզերբ ծովուն պարսպաւորս յօրինէ զԳոգն - 88. պատշաճագոյն զպատերազմին խրոխտական բարձրավզութեամբ վանել զախոյեանսն, և առեալ զբանակն յաւարի, և ընդ սուր հանեալ յոլովս քան թէ սակաւս, հասին ի Գոգ տեղի մի ի Մղունիս գեօղ: - 402.

ԳՈԳ[2] /պակասավոր բայ/ - մինչև նոքա խոնարհեալ առ նորայն խորհրդական առ յապա պատահմունսն, որ հանդերձեցաւ աշխարհիս Հայոց, իբր մարգարէական իմն գոգցես տեսաւորութիւն – 114. և ինքն Աշխէթ զինեալ զինքն ի զէն և յասպազէն, զոր կարծեալ ոմանց երկաթեղէն պատկեր գոգցես զերիվարն և զհեծեալն, աչացն միայն ոչ գոլով ծածկոյթ. – 272.

ԳՈԳԱՁԵՒ - գալ իջանել յելից ի ստորոտէ լերինն Վարագայ առշեղեալ ի հարաւոյ ի հիւսիսի ի խաղաղ ընդլայնանիստ գոգաձև դաշտականացսն – 392. - և դաշիկ արարեալ յայնկոյս քան զՎանտոսպ, ի տեղւոջն արձանաշար քարակարկառ գոգաձև միջոցի երկուց բլրակաց, որ հայի յԵրիվարաց արկման դաշտն, ի վերայ Լեզւոյ գեաւղջն, որ զաւրացն գեղեցիկ առասպելաբանեն սպիանած վերայն սպանելոցն ի մանկանցն Շամիրամայ: - 334. Իսկ ի մէջ երեքարմատեան գոգաձև հովտին փոքու, որ յերից բլրոցն խոնարհի՝ շինէ աշտարակ բարձրաբերձ փորուածոյ միջոցաւ – 88. Իսպառ ստորև ամրականին ի գոգաձև տեղւոջն … շինեաց եկեղեցի հրաշագործ հրաշազան յօրինուածով եկեղեցի ի տաշեալ քարանց ի Մանազաւեան քաղաքին ի Վանտոսպ, և հիմնեցուցեալ յանուն սրբոյն Սիօնի, որ ի սուրբ քաղաքն Երուսաղէմ. – 390.

ԳՈԹՈՂԻԱՅ - քանզի ոչ էր օրէն թագաւորացն և օրինադրացն զկանանց ազգի թիւ ազգաբանութեան շարել, բայց միայն ըստ ժամանակագրութեանն կանոնի, որպէս և յԻսրայէլի զԳոթողիայ, և յԵգիպտոս զԿղէոպատրեայ դուստր Պտղոմեայ Դիոնիսեայ: - 16.

ԳՈՒԺԿԱՆ - Յայնժամ իբրև ետես անօրէն զօրավարն Մուսէ, թէ ոչ ելին ի գլուխ խորհուրդ չարին յօժարութեանն … փութացաւ արձակել գուժկան յարքունիս, ծանուցանելով արքայի զոր ինչ գործեաց Աշոտ իշխանն Վասպուրական: - 176.

ԳՈՀ - „Գո՞յ թողութիւն իմոց չարեացն /386/ գործելոց, թողո՞ւ Աստուած զիմ պարտեացն յաճախութիւն. ասացէք ինձ, տուք ինձ պատասխանի„: - 388. „ի քո իսկ ինքնակալ թագաւորութեանդ և ի յօրէնս առաջնորդին ձերոյ գրեալ է՝ ոչ գոլ ճշմարիտ վկայութիւն միոյ ուրուք և հաւատարիմ – 244. այլ և ոչ զմեզ ապստամբս կարծիցես գոլ յինքնակալ թագաւորէն և ի քումմէ ճոխութենէդ, եթէ հաւաստեաւ քննիցես: - 212. Բայց Վասակս այս … վասն ազգակից գոլ նոցա ընդ տոհմին Արծրունեաց… ել գնաց իւրովք կամօք ի Սամառայ և եղև աստուածուրաց – 248. և առ Տիմոթէոս գրէ, հաւատարիմ գոլ զզօրութիւն հաւատոցն, ասէ, „թէ ուրանամք՝ և նա ուրանայ զմեզ. թէ չհաւատամք՝ նա հաւատարիմ մնայ„: - 258. Եւ դարձան կուտեցին աւար, որոց ոչ գոյր թիւ: - 286. Եւ եղև ի մտանելն նորա ի քաղաքն, ունելով ընդ իւր կապեալս բազումս և գերեալս, որոց ոչ գոյր թիւ. – 262. և թէ Ադամ առ նմանն իւր և օգնական զայսոսիկ՝ զի՞նչ ի դէպ իցէ կնոջն անմեղադրելի գոլ՝ օձին պատճառել, որ ևս վատթարագոյն քան զանասունն լինիցի: - 22. և ի դիմաց ձերոց երևի, զի զօրութիւն բազում գոլ ի ձեզ, զի այդչափ վնասս գործեալ է ձեր առ իս - 244. Եւ իբրև եհաս առ թագաւորն որ ինչ գործեցաւն՝ ոչինչ գոյր տեղի այլ պատասխանւոյ. բայց ասէ, „արժանապէս այն գործ նոյն գործեցաւ„: - 370. և կանխածան իմն ոգւովն Աստուծոյ ասէ զնա գոլ որդիս – 22. և կացեալ զաւուրս բազումս անթաղ՝ և ոչ

ինչ ամենևին արատեցան մարմինք սրբոցն, և ոչ գոյր հոտ ժախու ի վերայ նոցա: - 268. և յոյժ հաւաստի և ընդունակ գոլ զառ ի բազմաց /244/ վկայութիւն ի վերայ մեծի և կամ փոքու ինչ իրաց կամ ի վերայ կենաց և մահու. – 246. Եւ ուժեղացեալ դաշիկն քաղաքային ի վերայ Մուսէի զօրուն, մինչ ածին արկին զբուն բանակաւն ուր և Աշոտն մեր թուէր գոլ խօթացեալ. – 328. Զի յառաջնումն ոչ ինչ գոյր հոգ ինչ զբաղմանց, և ոչ մի ինչ ըստ աշխարհաշէն /90/ խնամակալութեանց, կամ պատերազմասէր աշխատութեանց – 92. զի ասաց զօրավարն Աղուանից, եթէ ,,մի՛ կարծիցէ ոք զիս ապստամբ գոլ ի թագաւորէն և վասն այնր հարկանել զզօրսդ Ասորեստանի,,. – 286. զի ոչ գոնեայ մի ոք գոլ, որ զճշմարտութիւնն վկայէ ուսուցանելով նորա, թող թէ զբազումս: - 246. զինքն գոլ ասել սկիզբն քաջաց և թագաւոր առաջին - 44. զոր ի դէպ է այժմ ասել նենգաւոր գոլ և անմիտ. – 20. Իսկ Մեհուժան ոչ թողանայր զթագաւորելն Հայոց, կուտեալ առ ինքն անհուն բազմութիւն վաշտից և դրօշուց և նշանաց որոց ոչ գոյր թիւ. – 106. Մինչդեռ այսպէս յանդորրութեան կեանս յապահովանայր երկիս Հայոց, և ոչ ուստեք գոյր վտանգ կրել – 92. յաղագս գոլ զնա սերունդ Վարբակայ Մարի, որ եբարձ զթագաւորութիւնն ի Սարդանապաղեայ, հաւուցն Սենեքերիմանց: - 62. Յայնժամ իբրև գիտացին երկոքին կողմանքն, եթէ ոչ գոյ հնար գտանել զելս իրացն և տալ խաղաղութիւն՝ ապա հաճեցան և հաւանեցան գրել առ թագաւորն. – 286. որք քակէին գոլ նոցա ամենայն ուրեք /210/ ուր և դիպէին զմիաբանութիւն ուխտի խաղաղութեան եղբարց և ազգականաց և բարեկամաց: - 212. ոչ պիտոյացեալ եկամուտ լուսոյ, որով նսեմասցի առ ի հասանել երեկոյին, ոչ ապաժամանութիւն արեգական առ ի մերժել զմութ գիշերի լուսազգեստ ստեղծուածոյն, որ յետ առաջնոցն կարգի և դասու՝ զերկրորդն փոխանորդեցաւ վիճակ, ոչ կերակուր հոսանուտ առ ի լրութիւն տարաբարձ ունակութեանց անապականին, որ դոյզն ինչ փոքրագոյն քան զհրեշտակս գոլ. – 20. սմա ծանօթացեալ և սիրողացեալ ժամանակաւ ուսուցանէր բազում ինչ նմա և յոլովագոյնս զինոց կտակարանաց, և եթէ ոչ գոյ բնութեամբ որդի Աստուծոյ: - 158. տես քեզէն և ծանի՛ր, զի ոչ գոյ վնաս իմ յիրիդ յայդմիկ կամ կարողութիւն արձակել զքեզ,,: - 238. քանզի նա խարկանօք առն մոզի և կախարդի ասաց լինել որդի Ամովնայ և Արամազդայ, այլ ոչ ուրացաւ մահկանացու գոլ: - 36.

ԳՈԼՈՎ - Ես իսկ առ ընթեր գոլով անվրիպագոյն իրազեկ եղէ բովանդակ նորա հաստատնագոյն առ յոյսն կազմեալ փրկութիւն. – 388. և ինքն Աշխէթ զինեալ զինքն ի զէն և յասպազէն, զոր կարծեալ ոմանց երկաթեղէն պատկեր գոգցես զերիվարն և զհեծեալն, աչացն միայն ոչ գոլով ծածկոյթ. – 272. Յետ անցանելոյ չորից ամաց … դարձեալ Գրիգոր եղբայր Աշոտի Վասպուրական իշխանի յԱփհազաց աշխարհէն՝ նոցուն օգնականութեամբ և Վրաց զօրու ընտիր գոլով՝ եկն եմուտ յաշխարհս Վասպուրական՝ տալ պատերազմ ընդ Գուրգինայ. – 310. Նոքա պատասխանեալ ասեն. ,,վասն զի մեք ի պարսկական հինիցն անդուլ և անպարապ գոլով ի բաց լքաք զկրթութիւնն գրոց սրբոց՝ առ ընտրել զհաւատոց խոստովանութեան կանոնադրութիւն. – 132.

ԳՈՀԱԲԱՆԵԼ - զոր և Դաւիթ գոհաբանէ – 34.

ԳՈՀԱՆԱԼ - այլ աստուածայինն Պօղոս ճշմարտագոյնս զայսոսիկ յայտնէ ասելով՝,,ծանեան զԱստուած, և ոչ իբր զԱստուած փառաւորեցին կամ գոհացան. – 52. Եւ մինչդեռ կային կենդանի և գոհանային զՔրիստոսէ զանյաղթ զօրութենէն զոր զօրացոյց զսուրբսն մեծ ասպարիսի ի հոգևորական պատերազմին՝ ևս առաւել բարկացեալ թագաւորն՝ իբրև զինոց վառեալ բորբոքէր. – 292. և նոքա կային մեծաւ ուժով և գոհանային զանբաւ և զառատաշնորհ պարգևացն Քրիստոսի, որ արժանի արար զնոսա մեռանել վասն անուանն Քրիստոսի և առնուլ զմարտիրոսական պսակն: - 292. ճաշակեալ սակաւ ինչ հաց և գինի գոհացաւ, և առ ընտանիս իւր դարձեալ թախանձագին՝ յարուցեալ էջ ի յամրոցացն – 216.

ԳՈՀԱՑԵԱԼ - և բազմութիւն քրիստոնէիցն … գոհացեալ միաբան ետուն փառս Աստուծոյ, որ զօրացոյց զսուրբսն և արար յամօթ զսատանայ հանդերձ գործակցովքն իւրեանց: - 268. և կատարեալ զաղօթսն և գոհացեալ՝ ետուն զփառս Աստուծոյ և հատուցին զամէնն և

նստան ուտել հաց. – 228. Իսկ աշխարհս ոգի առեալ բնակեցան խաղաղութեամբ իւրաքանչիւր ըստ չափոյ հասակի ի մեծամեծաց մինչ ի փոքունս, և գոհացեալ գթութեանցն Աստուծոյ. – 376. Իսկ երանելիքն գոհացեալ զանպատում պարգևաց Քրիստոսի, որ արժանի արար զնոսա մեռանել վասն անուան նորա - 266.

ԳՈՀԱՑՈՂ - գոհացող համբերութեամբ ընդունի զվճիռ մարտիրոսական: - 102.

ԳՈՀԱՑՈՂԱԿԱՆ - զի անսայթաք և աներկբայ հաստատուն հաւատով ընկալցին զվճիռ մարտիրոսական, համբերութեամբ բազմաւ և գոհացողական օրինութեամբ – 266.

ԳՈՀՇԹԱՍԴ - և զսակաւուց քան թէ յոլովից գրեաց անուանս ի յիշատակարանի անդ զՇահդոսդ, որ թարգմանի արքայասէր, և զԳոհշթասդ, որ թարգմանի ներկագործ ծիրանեաց արքայական զգեստու, և զՇմաւոն եպիսկոպոս, վէմ եկեղեցւոյ Քրիստոսի ընդ նմին և այլ եպիսկոպոսաք և քահանայք արք ճ - 106.

ԳՈՀՈՒԹԻՒՆ - և կայր դեռ ևս մեծաւ ուժով, և գոհութեամբք ընդունէր զեկեալ ի վերայ նորա չարչարանս վասն սիրոյն Քրիստոսի: - 290. և մտեալ ի խորագոյն բանտ, տարեալ յամենայնի գոհութեամբք վասն անուանն Քրիստոսի, սովով և ծարաւով ժուժկալութեամբ մեծաւ: - 318. Եւ յաճախեցին բազմապատիկս վասն նորա գոհութիւնս Աստուծոյ: - 330. և նահապետն ողջակէզ գոհութեան Աստուծոյ մատուցանէր. – 32. Եւ վասն յաղթութեանն գոհութիւն մատուցեալ Քրիստոսի՝ ասէին. – 252. Իսկ հաւատացելեցն տեսեալ, եթէ բարի խոստովանութեամբ ննջեաց տէր սուրբ Գրիգոր՝ գոհութիւն մատուցանէին ամենազօրին Քրիստոսի – 254.

ԳՈՂ - ,,իշխանք ձեր ապստամբք, ասէ, գողակիցք են գողոց, սիրեն զկաշառս, վրիժապարտք են: - 182. Դարձեալ զի երկրպագէ հրոյ, և արեգական, որ է Հեփեստոս, մասն աստուծոյ ասելով, զիա՞րդ իցէ, զի գողն և ապիկարն իբրև զաստուած երկրպագիցի: - 52. Իսկ նա անփոյթ արարեալ երկրաւոր մեծութեանս, զի անցաւոր է՝ անսպառ և անվախճան և անծերանալի և անծախ և առանց ըմբռնելի ի գողոց խնդրեաց պարգևաց առիթ լինել. – 218.

ԳՈՂԱԿԻՑ - ,,իշխանք ձեր ապստամբք, ասէ, գողակիցք են գողոց, սիրեն զկաշառս, վրիժապարտք են: - 182.

ԳՈՂԱՆԱԼ - Արդ եթէ զկէսն Որմզդի գողացաւ կաղն, և նա ոչ գիտաց, զիա՞րդ իցէ աստուած կիսատուրն և ի կաղէն գողացեալն: - 52. և Հեփեստոս և Պռոմիթոս, որ է արեգակն և լուսին՝ գողացան զհուրն յՈրմզդայ և մասն ինչ ետուն ի մարդիկ. – 48. և տեսեալ զուարակ մի՝ գողացաւ և տարեալ մեկուսի յազեաց զնա և կարկառեալ քարամբք՝ մնայր երեկոյինն – 46. որք ասեն զՀեփեստեայ գողանալ զհուրն յաստուծոյն, մասն ինչ մարդկան շնորհել և զյոլովն ինքեան ունել – 52.

ԳՈՂԱՆՔ - զի տարցի անյայտաբար զգողանս /գրքում՝ զգողաւսն/ առ իւր և լցցէ զսովառնութիւն իւր: - 46.

ԳՈՂԱՑԵԱԼ - Արդ եթէ զկէսն Որմզդի գողացաւ կաղն, և նա ոչ գիտաց, զիա՞րդ իցէ աստուած կիսատուրն և ի կաղէն գողացեալն: - 52.

ԳՈՂԳՈԹԱՅ - Եւ կարգեալ հաստատեաց Հայրակղոս զսուրբ նշանն անդէն ի տեղւոջ իւրում ի սուրբ Գողգոթայ: - 154. և յաջմէ սեղանոյն շինեալ ընդ նովիմբ հիմամբ ի տեղի յիշատակարանի խաչելութիւն տեառն Գողգոթայ տեղւոջ – 390. Իսկ տեղի շիրմին յորում նախահօրն եդան ոսկերք՝ կատարման և կառափման, որ նոյն ինքն է գագաթն և Գողգոթայ ըստ եբրայականին, երկակի անուամբ. – 34.

ԳՈՂԹՆ - և երթեալ բնակէ առանձնապէս ի Գողթն գաւառի ի տեղւոջ վարդապետութեան սրբոյն Մեսրովպայ, ճգնասէր հրեշտակակրօն վարուք, երանելի մարդկան և ահարկու դիւաց: - 120. Իսկ զԳողթն գաւառ ի ժամանակի կատարման սրբոյն Վահանայ, յամի ՃՋԶ թուականութեանց, յորում ամի կատարեցաւ սուրբն Վահան, որ էր որդի Խոսրովայ Գողթան տեառն: - 390. իսկ զՆախճաւան քաղաք և զԳողթն հանեալ էր ի Վասպուրականէ բազում ժամանակօք յառաջ, ՄԺԱ ամօք, յամի այրման եկեղեցւոյն Գրիգորի և վտանգաւոր մահու զօրացն Հայոց: - 390.

ԳՈՂԻԱԹ - մանաւանդ զի բարեպաշտութիւն մեծ համարիմ սատակել զթշնամիսդ Աստուծոյ, որպէս Մովսէս զԱմաղէկ, և Յեսու զՔանանացիսն, և Սամուէլ զԱգագ, և Դաւիթ զԳողիաթ, և համանգամայն իսկ որպէս սատակեցին Իսրայէլացիքն զայլազգիսն – 278.

ԳՈՄՈՐԱՑԻՔ - և սաստիկ կսկծեցուցանէր զնոսա բանիւք, ունելով իւր վկայ զԵսայի մարգարէ՝ յասելն, ,,լուարուք, իշխանք Սոդոմայեցւոց, ունկն դիք օրիացն Աստուծոյ ժողովուրդ Գոմորացւոց,,. – 182.

ԳՈՅ - ասա ի բուն մինչև աւերեսցին՝ քաղաքք ի բնակչաց, և տուն առ ի չգոյէ մարդկան. – 182. և փոխեցին զփառս /52/ անեղծին Աստուծոյ ի նմանութիւն գոյիցս եղծանելեացս,,: - 54.

ԳՈՅԱՑՈՒԹԻՒՆ - և զոր օրինակ ոք զբոլոր անդամս մարմնոյ յօշիցէ ի մասունս, և ոչ երևի տեսակ կենդանի մարդոյն, որպէս է գոյացութիւն խառնուածոյն. – 194.

ԳՈՒՆԴ ԳՈՒՆԴ - Եւ ելանէին գունդք գունդք շտապով և ճեպով մի զմիոյ կնի, և ամենայն ոք որ տեսանէր՝ ընդ մեծաւ երկիւղիւ ներքաղրեալ լինէր: - 284. Եւ եղև ի մերձենալն նորա ի բանակն՝ եհան ընդ առաջ նորա գունդք գունդք զօրաց. – 236. Եւ եղև իբրև երրորդ ժամ լինէր աւուրն, որ էր միաշաբաթի՝ և ահա ելանէին գունդք գունդք հեծելոցն ընդ կողմն անապատին Սմբատայ կոչեցեալ բերդին – 228. և թէ զիա՛րդ գունդք գունդք հրեշտակաց մի զմիոյ կնի ելևելս առնեն, և զիա՛րդ փայլեալ նշանն տէրունական ահաւոր ճառագայթիւք – 284. և կարգեցին ճակատս, և բոլորեցին ռազմ, և գունդս գունդս յընտրելոց զօրացն ըստ ազգս ազգս, շուրջանակի ի ներքս փակեցին զլեառնն և դրօշս և նշանս բարձրագոյնս լայնատարածս կանգնեցին. – 280. և մինչ չև հասեալ առ զօրավարն՝ եհան ընդ առաջ նորա գունդս գունդս վառեալ զինու և ընտրեալ երիվարօք – 288. կարգեցին ըստ գունդս գունդս առ Շ այր նշանակ մի. – 280. ունելով ընդ իւր զզօրսն Յունաց բազմամբոխ վահանաւորաց և դրօշուց սաւառնացելոց, և փողք կայսերալուրք և գունդք գունդք վառելոցն վաշտիցն – 106. Իսկ Ապուջափր անցեալ ի կողմն Աղբագոյ՝ և ժողովեցան առ նա գունդք գունդ/ճիշտը՝ գունդք գունդք/ յամենայն կողմանց: - 306.

ԳՈՒՆԴՍԱՂԱՐ - Եւ գունդն Հայոց խաղացին ընդդէմ նոցա … ի տանէն Արծրունեաց՝ Գուրգէն … և Անձևացիքն՝ Պատրիկն և Գէորգ, Դաւիթ և Հասան և Դաւիթ գունդսաղար – 230. Տեղեկանայր … և կամ քանի՛ ըմբշամարտիկք, և կամ քանի՛ գունդսաղարք իցեն – 198. Փութանակի և վաղվաղակի իւրաքանչիւր զօրօք անդր հասանէին … և այլք ի նախարարացն Վասպուրական իշխանին, Սմբատ Ապահունի, Գրիգոր Քաջբերունի, Վահան Հաւնունի, սեպուհն Դաւիթ, Գազրիկն Ապուհարազ, Թոդորոս Վարազն, Խոսրով Վահևունի, Խոսրով Ակէացի, Վարդան Գաբայեղէն, Սմբատ Մարացեան, սեպուհ մի Սահակ, Պատրիկն Անձևացի, Գորգ Հարմացի, Դաւիթ Գունդսաղար. – 174.

ԳՈՒՇԱԿԵԼ - Նորա զերկիր նկատեալ՝ ոչ ունէր նայել ի վեր, կայր կորակնեալ, ոչ ունել ոյժ պնդութեանն, զօրհասն ի վերայ իւր գուշակէր եկեալ հասեալ: - 344. որ ամենատես ակնարկութեամբ ստորիջեալ ի խնդիր կորուսելոյն հեզազնաց գարշապարօք՝ ընդելականս նմա գուշակէր /գրքում՝ զուշակեր/ գալուստ – 20. որ զբրիեղեղին իրս գուշակեաց Քսիւսիւթրեայ, և զառաջինս իւր գործոց բնաբանապէս գրել և դնել յաման պղնձի մածեալ կապարով ի պահեստի ի Սիպարացւոց քաղաքին: - 36.

ԳՈՒՇԱԿՈՒՄՆ - Որով ետ հրաման արդարոյն կազմել զտապանն ի գուշակումն անօրինաց կորստեանն: - 28.

ԳՈՒՐԳԷՆ - Եւ Գուրգէն ելեալ գնաց փութանակի անյայտ առնել զինքն, մինչև յաջողեսցի ըստ կամաց Քրիստոսի յո՛վ և երթիցէ: - 320. Եւ մինչ նոքա դեռ չև հասեալ էին մերձ առ գունդն Հայոց՝ փութացաւ զօրավարն Գուրգէն յղեաց դեսպանս առ Ապուհեշմ և որ ընդ նմա զօրագլուխքն՝ աղաչել ի խաղաղութիւն – 230. Սապէս և Գուրգէն կատարելագործեալ ի բարձրաւանդակ ի սարաւանդակ տեղւոջն բարեձևագունի վայելչացուցեալ զիրաշակերտ յաջմէ և յահեկէ սեղանոյն երկուս ևս եկեղեցեօք: - 396. ,,վասն այնր ելի յաշխարհս, զի մի Գուրգէն բռնաբար յինքն կորզեալ ձգիցէ զամուրս աշխարհիս, և յինքն բռնաբար զզօրս քո յանգուցանիցէ: - 362. Այլ և իշխանն Գուրգէն հանապազ գրէր աղաչանս առ ծերսն և առ աւագագոյնսն նոցա, իբրև փորձութիւն և դիպուած համարէր

զեղեալսն, և ոչ իսպառ քինահարութեամբ վարիլ առ հարկատուսն և առ հնազանդս իւրեանց: - 404. Այլ թերևս զայս տարակուսիցիս առ իմաստն՝ յանդիմանակացոյցս առնել զԳուրգէն ընդ աշխատութեան յօժարագոյն առ մարմնական զինուորութեամբն լինել: - 398. այլ իբրև եմուտ Բուխայ յաշխարհս Վասպուրական՝ ել գնաց Գուրգէն առ Քուրդիկ Մամիկոնէից տէր ի Բագրեւանդ գաւառ, և անդ լինէր, զի էր Քուրդիկ քեռի Գուրգինայ: - 302. այլ իբրև եմուտ Բուխայ յաշխարհս Վասպուրական՝ ել գնաց Գուրգէն առ Քուրդիկ Մամիկոնէից տէր ի Բագրեւանդ գաւառ, և անդ լինէր, զի էր Քուրդիկ քեռի Գուրգինայ: - 302. Ապա յետ այսր զեկուցաւ նմա վասն Գուրգինի տիրելն Անձաւացեաց. – 330. Արդ ի հասանել նամակիդ՝ փութով զԳուրգէն և զազգատոհմ իւր հանդերձ ազատօքդ Վասպուրականի կապեալս առ մեզ հասուցես: - 236. բաժանեն զաշխարհս յերիս մասունս. տալով Աշոտի … Եւ Գուրգէն զկողմանս արևելից, յելից Աղբագոյ և որ շուրջ զնովաւ ամենայն Պարսկահայք մինչև ի մուտս Կորդաց, և ուր և ըստ այնմ իցէ հնար ածել զձեռամբ: - 360. Բայց Գուրգէն ընտրեաց զսէրն Քրիստոսի, քան զսէր փոքրամեայ աշխարհիս. ոչ խնդրելով զվրէժ արեան սպանելոյ հօր նորա ի պապոյն նորա – 320. Բայց յետ աւուրց բազմաց անցանելոյ շփոթմանցն՝ Գուրգենի ընդարձակեալ նախախնամութեամբն Քրիստոսի և ելեալ փրծեալ ի բանտէն՝ եկն եմուտ յաշխարհ իւր: - 320. Բայց առողացեալ իմաստութեամբ իշխանաց իշխան՝ փութացաւ առ կատարումն գրելեացն Գուրգինի: - 322. Բայց Գուրգէն զմի ամ կեցեալ փոխի յաշխարհէս, դարձեալ յուրացողական ամբարշտութենէն: - 318. Բայց Գուրգէն թէպէտ և գտանէր զնենգիչսն իւր՝ ոչ ումեք զփոխարէն չարին հատուցանէր. – 310. Բայց Գուրգէն խոկայր զմասն աշխարհին յինքն գրաւել, մանաւանդ զՈստանն Ռշտունեաց, որ էր տեղի սպանման հօր իւրոյ, գինս արեան զնա համարելով: - 362. Բայց Գուրգէն կասկած ունելով յԱշոտէ, թէ գուցէ իբրև զապստամբէ ումեմնէ զեկուցանիցէ զնմանէ առաջնորդին Տաճկաց՝ ել գնաց կեալ շրջաբերական յեղափոխմամբ, արիական քաջասրտութեամբ, սիրեցեալ ընդ բնաւ աշխարհաց: - 322. Բայց ոչ ետ տեղի Գուրգէն այսմ՝ յերկուց պատճառաց, մի՝ զի մի՛ ապստամբ երևեցայց Տաճկաց բռնաւորին – 316. Բայց որդիքն Դերանկին, Աշոտ և Գագիկ և Գուրգէն, զըստ մարմնոյ /358/ աճմանն չափ առոգ և բարձրաբերձ ձգմամբ յառաջ տանէին. – 360. բայց պարտեալ եղև գունդքն Տաճկաց ի քաջէն Գուրգինայ և բեկաւ զօրութիւն նոցա: - 308. բարիատեացն և չարասէրն Աւշին նիւթէր գայր ի վերայ Գուրգինի հասուցանել չարիս մեծամեծս – 370. Գուրգէն որդի Ապուպելձի Վասպուրական իշխանի, ի շփոթի ժամանակին Բուխայի և ի հայրապետութեանն Յովհաննու Հայոց կաթողիկոսի, իմաստութեամբ գործեալ՝ ոչ եկաց հակառակ չարին. – 302. Երևեալ նմա յայնժամ ի բանտին այր մի գեղեցկատեսիլ ի կերպարանս ալևորի, լուսակիզն փայլմամբ՝ ասէ ցԳուրգէն – 318. ԵՐԿՐՈՐԴ ՆՈՐԻՆ ԵՒ ԵՐԹԱԼՆ ԳՈՒՐԳԷՆԻ ԶՀԵՏ ԿՈՉՈՂԱՑՆ ԲՈՒԽԱՅԻ ԵՒ ՈՐ ԻՆՉ ԳՈՐԾԵՑԱԻՆ, ԵՒ ԹՈՒՂԹՆ ԻԲՐԵՒ Ի ԴԻՄԱՑ ԱՐՔԱՅԻ: - 234. Երկրորդ՝ զի և ոչ հաւատայր Գուրգենի՝ ամբողջ պահելով, զոր ինչ միջնորդեն երդմամբ, զհօրն իւր կիրսն ի նորայն հօրէն կրեալ յուշ առնելով: - 316. և աճապարեալ Գուրգէն հեծեալ յերիվարն. – 306. Եւ Գուրգէն նստէր յՈստանին Ռշտունեաց յամրաձև բերդին. – 310. և եկեալ ի մի վայր Գագիկ և Գուրգէն եղբարք համահարք և միոյ մօր ծնունդք, յերկուց քաջատոհմիկ գահակալութենէ Սենէքարիմայ և Դաւթի – 388. Եւ զԳագիկ որ և Ապումրուան՝ զնա ոստիկան կարգեաց ի վերայ աշխարհին, տեղապահութեամբ տիրել, զի կարի մատաղօրեայք էին որդիք Դերանկին. Աշոտ էր Թ ամաց, յորժամ մեռաւ Դերանիկն, Գագիկ էր Է ամաց, Գուրգէն Ե ամաց: - 354. և զՄարդաստան գաւառ զբուն բաժին տուեալ ցԳուրգէն, և նորա զիւր գործակալս թողեալ անդր: - 326. Եւ հանեալ զԱշոտ և զԳուրգէն ի կապանաց՝ տիրեցին զօրութեամբ մեծաւ իւրեանց բնիկ իշխանութեանն, և կէին յանհոգս յանկասկածս այնուհետև: - 370. Եւ այն ինչ պատահեալ Գուրգէն հարուստ գնդի Վահանայ ի յառաւամէջս մուրին՝ ի բազում քան թէ սակաւ սուսերս ծեծեցին զնա, մինչև ոմն Ջուանշէր անուն յետուստ յանկարծ հարեալ վիրաւորեաց զԳուրգէն – 310. Եւ այն ինչ պատահեալ Գուրգէն հարուստ գնդի Վահանայ ի

յառուամէջս մուրին՝ ի բազում քան թէ սակաւ սուսերս ծեծեցին զնա, մինչև ոմն Ջուանշէր անուն յետուստ յանկարծ հարեալ վիրաւորեաց զԳուրգէն – 310. և անդ Գուրգէն բազում արութիւն ցուցեալ ընդդէմ յունական զօրացն, ոչ միանգամ այլ բազում անգամ – 302. Եւ Բուխայ հրամայեաց սպարապետին, զի աներկիւղ կացցէ մնասցէ Գուրգէն առ սպարապետին մեծաւ շնորհակալիւք: - 304. Եւ գունդն Հայոց խաղացին ընդդէմ նոցա, վիմաձև անքակ ի միմեանց ըստ տոհմս ազգաց, ի տանէն Արծրունեաց՝ Գուրգէն և Վասակ և Պելճ և Մուշեղ և Սահակ և Ապումկդէմ և Աշոտ – 230. Եւ Գուրգէն երկրորդ հրեշտակս յղէ առ նա զայս օրինակ, եթէ ,,ընդ իս հաստատեա զանզրաւ կապակցութիւն ուխտի խաղաղութեան. և ես ապստամբեցայց յԱշոտէ, և ի միասին բաժանեալ զերկիրս կեցցուք յապահովս,,: - 316. Եւ Գուրգէն Արծրունի և Մուշեղ Բագրատունի, և ինքն փութացաւ հանդերձ կաթողիկոսիւն, եկն բանակեցաւ յամուրն մերձ, ուր էր արգելեալ Դերանիկն: - 348. և Գուրգէն դարձեալ գնաց յաշխարն իւր յամուրն Կանգուար: - 364. և Գուրգէն ելեալ ընդդէմ նոցա բազում անգամ՝ ոչ սակաւ օճիրս գործէր ընդ զօրս Տաճկաց: - 302. Եւ Գուրգէն և Աշոտ առանձին միմեանց պատահեալ ետուն ողջոյն միմեանց և ուխտեցին ուխտ խաղաղութեան մինչև ցայսօր ժամանակի: - 332. Եւ Գուրգէն հեզաբար, արտաքոյ ամբարտաւանութիւն առնէ նմա պատասխանիս, ասէ. – 330. Եւ Գուրգէն յանհոգս անկասկած բնակէր անդ Ն արամբք: - 306. Եւ Գուրգինի նորին եղբօրն զպատիւ մարզպանութեան գահակալութեան հաւատացեալ, ըստ կարգի բարձաբերձութեան թագաւորացն Հայոց, մանաւանդ մեծին Տրդատայ թագաւորի: - 370. Եւ դարձեալ ուժեղացեալ դարձաւ ընդդէմ Գուրգինի. – 320. Եւ եղև ընդ մեռանելն տեառնն Անձաւացեաց, նորին տիկինն Հեղինէ գրէ առ Գուրգէն – 324. Եւ եղև զկնի երից աւուրց անցանելոյ ետուն թուղթ մի տանել առ Գուրգէն, գրեալ Բուխայի լի դառնութեամբ, կնքեալ մատանեաւ արքայի, իբրև այն թէ ի դիմաց արքային և յարքունուստ եկեալ. – 236. Եւ եղև իբրև կատարեաց Բուխայ զանցս անցից ընդ Վասպուրական աշխարհս և խաղաց յարևելս կոյս՝ ել գնաց Գուրգէն ի Սպեր գաւառ. – 302. Եւ երթայր զհետ և սատակէր զնոսա անչափ զօրութեամբ. և բազումք այն էին, որ մեռանն ի սրոյն Գուրգէնի քան որ մնացինն. և զօրքն զհետ մտեալ մնացելոցն հանին յերկրէն իւրեանց: - 308. և երիվարին ընդ վազս փռնգալիր խրոխտանացն փրծուցեալ զնա ի ցաւոցն, քանզի այն ինչ կազդուրեալ էր Գուրգէն ի հիւանդութենէ և ի կրից աշխատութեանցն և ի տառապանաց բանտին: - 320. Եւ զգունդն երկրորդ ի ձեռս Գուրգինայ Ապուպելճի, և նիզակակից էր նորա Վահան Արծրունի: - 178. Եւ զի ստեալ Դերանկին Գուրգենայ եհան անտի զգործակալսն՝ նոյն գունակ Գուրգէն հնարաւորեալ առնու զամրոցն և հանէ զնորա գործակալսն – 326. Եւ զի ստեալ Դերանկին Գուրգենայ եհան անտի զգործակալսն՝ նոյն գունակ Գուրգէն հնարաւորեալ առնու զամրոցն և հանէ զնորա գործակալսն – 326. Եւ զօրքն, որ ելեալ էին զհետ Գուրգինայ՝ եկին հասին ի սահմանս երկրին, ուր կայր Գուրգէն զօրօքն իւրովք – 226. Եւ զօրքն, որ ելեալ էին զհետ Գուրգինայ՝ եկին հասին ի սահմանս երկրին, ուր կայր Գուրգէն զօրօքն իւրովք – 226. Եւ ինքն զօրավարն Գուրգէն եկաց ի ձախու կողման ճակատուն՝ ի թիկունս լինել գնդին հետևակազօր մարտակցացն – 230. և ծառայն զչարիս խորհեալ սպանանել զԴերենիկն և զաշխարհս նուաճել զիշխանութիւն Գուրգինի, զի և դիպող էր ժամն: - 320. Եւ ծնան նորա երիս որդիս, Սարգիս որ և Աշոտ՝ ՅԻՋ թուականութեանն Հայոց, Խաչիկ որ և Գագիկ ՅԻԸ, և Գուրգէն. մանկունք կայտառք և գեղապանծք և բարենշանք և ամենեցուն ցանկալիք. ծնաւ և երկուս դստերս: - 338. և հաճոյ թուեցաւ Գուրգինայ խորհուրդք տիկնոջն Հեղինէի: - 324. Եւ հասեալ ի մի վայր գան հովիտն Կուղան, ուր Գուրգէն բանակ արարեալ /362/ էր ի Կարկինեանս տեղւոջ բազմաձեռն զօրու. – 364. Եւ հեծեալ փութացաւ պնդեցաւ զհետ Գուրգինի – 228. և հրաման ետ Գուրգէն իւրում գնդին պատրաստել ի պատերազմ, կազմել ռազմ և տալ ճակատ ընդդէմ այլազգեացն – 230. և մի զմիոյ հետ ստիպէր՝ փութալ միոյ միոյ ի նոցանէ յանդիման նմա հատուցանել ծառայական սպասաւորութիւնս, զոր և արարին իսկ Աշոտ և Գագիկ և Գուրգէն, կամաւոր և ակամայ զնորայն կատարելով հրամայեալս – 370. Եւ յետ

այսորիկ որդիք նորա Գագիկ և Աշոտ և Գուրգէն կանոնեցին զյիշատակութիւն նոցա ի տօնի սրբոյ Խաչին – 356. Եւ նորա զեկուցեալ վասն նորա Բուխայի՝ ասէ. ,,այրս այս Գուրգէն ի տոհմէն Արծրունեաց, այր քաջ և պատերազմող, ի յահէ քումմէ անցեալ գնացեալ զկողմամբքն Յունաց – 304. և սպանանի Գուրգէն իշխան որդի կորապաղատին նենգութեամբ ի զօրագլխացն Ահմաթայ, այր քաջ և երևելի և քաջայայտ ի մէջ Հայաստանեայցս: - 358. և Վահան հասեալ յանկարծուստ ի վերայ նորա, այն ինչ ընդ միտ ածելով ստնանել ինչ Գուրգինայ. – 310. և փախեան այլազգիքն յերեսաց Գուրգէնի մի կողմն: - 308. Եւ քանզի այն ինչ վախճանեալ էր կին Դերենկին՝ գրէ Գուրգէն առ Աշոտ, ասէ. – 322. Եւ քանզի էին երեքին սոքա անքակ անխզելի առ միմեանս, զմիաբանական կապակցութիւն շաղկապեալ, Աշոտի և Գագկայ և Գուրգինայ, որդիք Դերանկին – 364. և քարոզն աղաղակէր, թէ ,,առաւ իշխանութիւնն Վասպուրականի աշխարհին ի ձեռս Գուրգէնի փոխանակ եղբօր իւրոյ Աշոտոյ տիրել ընդ նոսա,,: - 236. զԱշոտ տարեալ յանկասկածելին Նկան, զԳագիկ յամուրն Սևան, զԳուրգէն ի Կոտորն բերդ: - 364. Զգունդն առաջին տուեալ լինէր ի ձեռս Գուրգինայ և Վահանայ Հաւնունոյ, որ և նիզակակից նմա էր: - 178. զի Գուրգէն եղբայր իշխանիս և այլ տոհմն Արծրունեաց և բազմութիւն ազատաց և ազատորդեաց և նոցուն զօրաց քաջաց Վասպուրական տէրութեանս … անցեալ գնացին ի կողմն Ատրպատականի – 212. Զի թէպէտ և Գուրգէն մեծաւ զօրութեամբ ունէր զդէմ յարձակելոցն ի վերայ, որոց զիշխանականն ճեպէին հասանել գահ, կամ որ արտաքին տաճկական պատերազմունքն բռնաբար ի ներքս դիմէին՝ սակայն ոչ յապահովանայր դեռ երկիրն: - 316. Զկնի այսորիկ մեկնեաց Բուխայ յինքենէ արս զօրաւորս յամենայն ազգաց և յամենայն մեծամեծաց և ամենայն աշխարհակալաց, և ի Պարսից և յԵլիմացւոց և ի Բաբելացւոց և յԱրաբացւոց … արս աւելի քան ԺԵ հազարաց և եհան զնոսա զհետ Գուրգինայ – 224. Զնոյն տեսեալ ազատացն Վասպուրականի, անտանելի մնալով առ դիպուածն զոր ինչ գործեաց Ապումրուան՝ ելին գնացին առ Ատոմ որդի մեծին Գուրգինայ յամուրն Կանգուար, գտանել զելս իրացն – 364. Զուգակշիռ հաւասարութեամբ մարզպանն Հայոց Գուրգէն հրաշազան յօրինուածով շինէ զեկեղեցին ի քաղաքին Հադամակերտ ի Մեծն Աղբակ, ի բուն իշխանական սեփհականութեանն իշխանութեան զարմին Արծրունեաց – 396. Ընդ նոյն ժամանակս եկն Վահան Աշոտի որդի, հօրեղբօրորդի Սահակայ ի գերութենէն՝ նուաճել զաշխարհս, և գունդ կազմեալ ընդդէմ Գուրգինայ՝ և ինքն զպարտութիւն քան զյաղթութիւն յինքն կրէր: - 310. Ընդ որ ոչ հաճոյացեալ Գուրգէնայ երթալ ի Յոյնս. բայց հաւանեցուցեալ զԳրիգորն տալ զբերդն ցզօրավարն, և հաճեսցի զմիտս թագաւորին: - 302. Իբրև եհաս գուժկան առ մարզպանն Հայոց Գուրգէն՝ ելեալ զհետ նոցա Ռ արամբք, վառեալ ի զէն և յասպազէն, և գնացեալ եհաս յԱյլի գաւառ. – 402. իբրև ի մեծ և յանկասկածելի ամուր ապաւինեալ լինէին ի քաջ զօրավարն Գուրգէն և որք ընդ նմա զօրք Հայոց. – 226. Իսկ Գուրգէն ընթացեալ զհետ հանդիսի պատերազմող նահատակութեանցն, /310/ անդուլ լինելով զցայգ և զցերեկ հանդերձ որ ընդ նմա միաբանեալ ազատագունդ զօրացն – 312. Իսկ Գուրգէն օր ըստ օրէ աճէր զօրութեամբ ի բազում քան թէ ի սակաւ տեղիս, զոր ի Տարօն և զոր յԱնձաւացիս և զոր յԱրզն և զոր առ այլ ամենայն ուրեք – 324. Իսկ Գուրգինի մարզպանի Հայոց առեալ էր ի բաժնի յելս կոյս և /388/ որ ելանէ ի հարաւակողմն, զԱնձահից ձոր, զԿրճունիս, զԿուղան ովիտ, և զբուն զՄարդաստան գաւառ, զԱրճիշակովիտ. զոտն Առնոյ, զԱղբագ Մեծ և զՓոքր, Ակե, Տամբէր, Տագրեան. Ըռնայ, Զարեհաւան: - 390. Իսկ Դերանիկն գործ առնէր ի գիւտս հնարիմացութեան, և տարուբերէր յանձն իւր՝ գտանել զելս իրացն, որով կարիցէ հանել զամուրսն ի Գուրգինայ և տիրել աշխարհին: - 326. Իսկ թագաւորն գրէ առ զօրավարն թերևս կարասցէ հաւանեցուցանել զԳուրգէն՝ երթալ ի թագաւորական քաղաքն առ կայսր, և մեծաց պարգևաց և պատուի և գահու յառաջագութեամբ ընկալցի պարգև ի թագաւորէն: - 302. Իսկ ի զօրացն Հայոց զսակաւս յաննշանից ոմանց սպանին, և զտէր Գուրգէն վիրաւորեցին: - 178. Իսկ ի միում յաւուրս անցեալ գնացեալ Գուրգէն՝ հանդիպի նմա ի քաղաքին Պարտաւ - 370. Իսկ ի Վասպուրական տէրութեանն ի տեղւոջ

զօր արութեան մնաց Գուրգէն, և այլ տոհմք Արծրունիք: - 298. Իսկ ի վերայ բազում հինից եկելոց ի վերայ Գուրգինի և սաստիկ պատերազմացն զոր պատերազմեցաւ յաղթող նահատակութեամբ. ոչ միայն յարտաքին թշնամեացն որ շուրջանակի պաշարէին, բազում այն էր որ ի ներքին ընտանեաց հարազատաց, ազգականաց դրժողաց, ուխտազանցաց, ստոց և ստերդմանց յուզէին աղմուկք: - 308. Իսկ իբրև եկն Գուրգէն երկրորդ՝ փութացաւ գնաց հասանել ի վերայ առաջնոյն Գուրգինի. – 316. Իսկ իբրև եկն Գուրգէն երկրորդ՝ փութացաւ գնաց հասանել ի վերայ առաջնոյն Գուրգինի. – 316. Լուր եղև այս առ քաջն Գուրգէն պարտումն Վասպուրականի ի Տաճկաց և իշխանանալն Վասակայ: - 306. խօսի Գուրգէն ընդ Աշոտի յայտնապէս զոր խորհէրն. – 364. կէսքն զԳուրգէն յառաջ ածեն ի պատիւ իշխանութեանն և այլք զԱպուջափր, ոմանք զՎասակ. – 298. ճանապարհ արարեալ ընդ Ատրպատական, կասկածելով թէ գուցէ Գուրգէն և կամ մի ոք ի տոհմէն Արծրունեաց և նոցին ազատաց ի կորովացն Վասպուրական հեծելոցն հասանիցէ ի վերայ և թափիցէ զնա ի զօրացն և հանցէ ի ձեռաց իմոց: - 220. ՅԱՂԱԳՍ ԳՈՒՐԳԻՆԱՅ ՄԻԱՅՆ ՄՆԱԼՈՅ, ԵԻ ՇԱՏ ՊԱՏԵՐԱԶՄԱՅՆ ՅԱՇԽԱՐՀԻՍ – 300. յաճախագոյնս վասն Գուրգինայ վայելէ զդրուատեացն, կարևոր է բազմաձեռն աճմամբ զդրուատեացն յերկարագոյնս հատուցանել զճարտասանութիւնս. - 300. Յայն ժամանակս գայ ոմն Բուտել անուն ի զօրացն արքունի հրամանաւ Բուխայի, հասանել ի վերայ Գուրգինի – 306. Յայնժամ ետ զզօրսն ի ձեռն Մուշեղի Ապուպելճի եղբօր Գուրգինայ, և ինք ել գնաց զհետ եկելոց կոչնականացն. – 228. Յայնժամ տէր Գուրգէն առ /306/ չժուժել սրտին, մտրակեալ զքաջ երիվարն յորում նստեալն էր՝ և եհար զզունդն զձախակողմն Տաճկաց և պատառեաց զոռազմն և դարձոյց զերեսս նոցա- 308. Յաւէտ խրախճանութեամբ բուռն հարկանել ախորժելի է ինձ զպատմութենէ քաջատոհմիկ և բարեփառ բարեյաղթ նահատակէն , զԳուրգինայ ասեմ – 300. Յետ անցանելոյ չորից ամաց … դարձեալ Գրիգոր եղբայր Աշոտի Վասպուրական իշխանի յԱփհազաց աշխարհէն՝ նոցուն օգնականութեամբ և Վրաց զօրու ընտիր գոլով՝ եկն եմուտ յաշխարհս Վասպուրական՝ տալ պատերազմ ընդ Գուրգինայ. – 310. Յետ բառնալոյ իշխանութեանն ի Վասպուրական երկրէն մնացին տոհմք Արծրունեաց ըստ ազգս ազգս՝ քաջն Գուրգէն և Մուշեղ եղբայր իւր – 298. Յղեն առ Գուրգէն դեսպանս. – 226. յղէ առ Գուրգէն զՎահան Արծրունի և զվանաց երէցն Թէոդորոս զգլխաւորն Հոգեաց վանից, ասէ. – 330. Յութերորդ ամի գերութեանն դառնայ Գուրգէն եղբայր Աշոտի միապետել զիշխանութիւն տէրութեանն և յարդարել կարգել յօրինել զկարգս /314/ շփոթեալ աւերեալ երկրիս: - 314. Նմանապէս, կամ թէ ևս հրաշափառագոյն զյաղթութեան մարտսն յօրինեալ յարդարեաց զպարտութիւն ի վերայ ազգին Իսմայէլի մեծ զօրավարն Գուրգէն, և իսպառ կանգնեաց զնշանակ յաղթութեան ամենևին ամենայն ուրեք ընդ ամենայն տեղիս. – 312. Նոյնժամայն ի բարկութիւն ցասմամբ մեծաւ շարժեալ թագաւորն Սմբատ՝ գրէ առ Գուրգէն Անձաւացեաց տէր և առ Գագիկ Ապումրուան, ասէ. – 362. որով առնիցեն ելանել ի կապանաց իշխանին Աշոտի և Գուրգինի, և դարձուցանել զիշխանութիւնն անդրէն առ իւրեանս – 368. որոց թողեալ զգործ պատերազմի ամրոցին՝ դարձաւ գնաց աներկիւղ քաջասրտութեամբ ընդդէմ նորա օժնդակ զօրու Գուրգենի – 334. Որոց կապեալ զԳուրգէն երեքկին կապանօք և դարձեալ ի պարանոցն եդեալ շղթայս՝ յղեն ընդ Ատրպատական Պարսից և տան ի բանդ ընդ կապեալսն. – 318. Փութանակի և վաղվաղակի իւրաքանչիւր զօրօք անդր հասանէին՝ իշխան Աշոտ և եղբարք իւր Գուրգէն և Գրիգոր զօրօք իւրեանց – 174. Քանզի իբրև լուաւ երանելին Զաքարիայ, եթէ ըմբռնեցաւ Գուրգէն՝ փութացաւ և եկն հանդերձ եպիսկոպոսօք աշխարհին. – 320. Քաջապէս մարտուցեալ Գուրգէն եղբայր իշխանին և Վահան Հաւնունի՝ առին անուն յաղթութեան, անցուցանելով ընդ սուր զկողմն թշնամեացն. – 178. Ազդ եղև Գուրգենի վասն Դերենկին, և զիա՛րդ ընբռնեցաւ. – 322. և զՄարդաստան գաւառն զբուն բաժին Գուրգենայ դարձոյց առ նա Դերենիկն: - 322. Փութանակի և վաղվաղակի իւրաքանչիւր զօրօք անդր հասանէին … և ի տոհմէն Արծրունեաց՝ Վահան և Վասակ և Մուշեղ և Ապուպէլճ և Գուրգէն և Վասակ և Ապուջափր

և Մուշեղ և Ապումայեայ և Վասակ և Վահան և Համազասպ և Վասակ որդի Գրիգորի և Ապումկդէմ և Մեհուժան և Գրիգոր – 174.

ԳՈՒՐԳԷՆ ԱՊՈՒՊԵԼՃ - Եւ զգունդն երկրորդ ի ձեռս Գուրգինայ Ապուպելճի, և նիզակակից էր նորա Վահան Արծրունի: - 178.

ԳՈՒՐԳԷՆ ԱՐԾՐՈՒՆԻ - Եւ Գուրգէն Արծրունի և Մուշեղ Բագրատունի, և ինքն փութացաւ հանդերձ կաթողիկոսիւն, եկն բանակեցաւ յամուրն մերձ, ուր էր արգելեալ Դերանիկն: - 348.

ԳՈՒՅԷ - Բայց Գուրգէն կասկած ունելով յԱշոտէ, թէ գուցէ իբրև զապստամբէ ումեմնէ զեկուցանիցէ զնմանէ առաջնորդին Տաճկաց՝ ել գնաց կեալ շրջաբերական յեղափոխմամբ, արիական քաջասրտութեամբ, սիրեցեալ ընդ բնաւ աշխարհաց: - 322. Գուցե /ճիշտը՝ գուցէ/ կատարիցեն չարիս ի վերայ քո, և կորզեն յընքեանս զթագաւորութիւն Նինուէի: - 82. գուցէ ներհակդ առ ընթեր կալով՝ ի միում ժամու բարկացեալ, և զքեզ ևս վարատիցէ: - 46. գուցէ ակամայ երթալովն, և նեղիչն աշխատելով ի պահելն՝ յաճախեսցէ ի վնաս և ի քէն, և օճան բարւոյ յայնմ հետէ ոչ ևս ումեք հասցէ գտանել,,: - 216. գուցէ յորժամ կատարիցեն զչարիսն զոր խորհեալ են ի վերայ քո, որպէս լուաք ի հաւատարմաց իւրեանց՝ օժանդակութեամբ Արտաշէսի մերժիցեն և զզարմ և զզաւակ քո ի թագաւորութենէ Ասորոց: - 82. գուցէ, ասէ, ի գնալն ի բուռն առեալ ի մահ դատապարտեսցի: - 84. և եթէ յերկարիցի գործոյս այսորիկ հանդէս և մարտիցն հանգամանք ոչ փութանակի վարիցին՝ գուցէ օգնականութեամբ գիշերոյ եկեսցէ ի վերայ քո և մեծամեծ աւճիրս ի վերայ քո և զօրացդ արքունի հասուցանիցէ: - 212. ընդ ակամբ հայելով, թէ գուցէ ճողոպրեալ ելանիցէ ի ձեռաց մերոց, կամ ի գիշերամարտս յանկարծ հասանիցէ ի վերայ մեր մեծամեծ ոճիրս գործիցէ: - 202. թէ գուցէ դրդուիցի ինչ ի միջոցէ ապաստանին վիմին հաստատնոյ – 204. ճանապարհ արարեալ ընդ Ատրպատական, կասկածելով թէ գուցէ Գուրգէն և կամ մի ոք ի տոհմէն Արծրունեաց և նոցին ազատաց ի կորովացն Վասպուրական հեծելոցն հասանիցէ ի վերայ և թափիցէ զնա ի զօրացն և հանցէ ի ձեռաց իմոց: - 220. որք ծանուցեալ զբռնանալն նորա ի վերայ պարսկական պետացն և զինչ կրեցին, զմտաւ ածեալ և զխառն ընդ աշխարհիս զդրակցութիւնն, և թէ գուցէ զպարսկայինն հասանիցէ մեզ կրել և աշխարհիս մեր՝ ձեռն ետուն հաւանութեան ի նորայն կալ մնալ հպատակութեան: - 360.

ԳՌԵԱՀ - և Ահմատայ ընդ մէջ փակեալ զղաշիկն՝ յանխնայ հարուածովք հարին, մանաւանդ զհետևակազօր գրոխսն և զգռեահսն որք ընդ նոսա. – 368. և ելեալ ի վերայ Պարսկահայոց գռեհացն և անդ բազում քաջութիւն նահատակութեան ցուցեալ՝ յոլովից գերելոցն ընդարձակեաց, հանելով /400/ և զաւարն ի ձեռաց նոցա – 402. Իսկ Պարսկահայոց գռեահն խուժան ածեալ, գաղտագնաց եղեալ ընդ անկոխ ճանապարհս՝ զան հասանեն ի Մարդաստան գաւառ յաւանն Վիտահոտ – 400. Սոքա են գռեահք Ասորոց, որ չուեցին զկնի Ադրամելեքայ և Սանասարայ որդւոց Սենեքերիմ արքայի՝ թագաւորի Ասորեստանի և Նինուէի, յորոց անուն ինքեանք Սանասնայք զինքեանս անուանեն. – 192.

ԳՏԱԿ - և նախ նոքա եղեն գտակք գրոց – 18.

ԳՏԱՆԵԼ - Եւ իբրև ստուգեաց և տեղեկացաւ զամենայն՝ եգիպտ բազմագոյն քան զամենեսեան զկապարճաւորս և զկորովիս աղեղնաւորացն Ելեմացւոց և Արաբացւոց, աջողակք յերկոցունց ձեռաց – 200. ,,որովհետև գտի շնորհս առաջի քո, և արարեր մեծարանս երեսաց իմոց, և առաւել քան զամենայն իշխանս Հայաստանեայց և մեծամեծս արքունի զիս նախամեծար և մեծարգի ցուցեր – 218. այլ այսոքիկ փոյթք յօժարութեան առ ի յայլոց ասացելոց նախագունից տեղեկութիւն, և ոչ ինքեամբ և կամ նովաւ գտանել զհնարս գիւտի գրոց, թէպէտ և յառաջ քան զնա, այլ ոչ թէ և քան զԲաբելացւոցն իրս – 18. այս ամենայն գտանի յայլոց ասացեալ. – 44. արդ դու մի անփոյթ յանհոգս յաղագս այդր մնայցես, անյապաղ հնարիցիս գտանել զխորհրդոցն նորա դատարկութիւն,,: - 346. Բայց Գուրգէն թէպէտ և գտանէր զնենգիչսն իւր՝ ոչ ումեք զփոխարէն չարին հատուցանէր. – 310. Բայց մեք քանզի ոչ երբէք ստունգանեցաք հրամանի թագաւորին և ոչ խափանիչ

գտաք հարկաց արքունի, իբրև զապստամբս և զանհնազանդս և զստահակս ի ծառայութենէ տէրանց – 178. գուցէ ակամայ երթալովն, և նեղիչն աշխատելով ի պահելն՝ յաճախեսցէ ի վնաս և ի քէն, և օճան բարւոյ յայնմ հետէ ոչ ևս ումեք հասցէ գտանել,,: - 216. գտանէ և ի վերագոյն լերինն անդր ի հարաւոյ կողմանէ աղբիւր սակաւաբուղխ – 88. գրէ առ սուրբ եպիսկոպոսն Գրիգոր Ամատունեաց տանն … գտանել զելս իրացն եկեալ հասեալ հինին. – 400. եթէ ,,եկայք առ իս ամենայն աշխատեալք և բեռնաւորք, և ես հանգուցից զձեզ,, , և թէ ,,որ ուրասցի զանձն իւր վասն իմ՝ գտցէ զնա,,. - 252. և դաստիարակ առընթեր ունելով զբանն տէրունական … և թէ ,,որ կամիցի կեցուցանել զանձն իւր՝ կորուսցէ զնա, և որ կորոյս զանձն իւր վասն իմ՝ գտցնէ /հավանաբար՝գտցէ/ զնա,, - 264. Եւ եկեալ երեկոյին խնդալից՝ ակն ունէր առլնուլ կերակրովն, եգիտ ապականեալ և գիշակեր. – 46. և երթեալ ի բուրաստանն՝ գտին զնա ի թաւի անդ ղուղեալ, կալան զնա և եկին ածին զնա ի դախղիճ անդր: -152. և զազգատոհմ մեր ընդ մեծ նեղութեամբ պաշարէիք և աշխարհի մերոյ աւերիչք գտանէիք և հարկացն եղելոց խափանիչք լինէիք: - 244. Եւ զերկնային պարգևացն որ ի հանդերձեալսն խոստացաւ Տէրն, զանպատում և զիրեշտակային նորոգութեան՝ նա ասաց լինել անդ կերակուրք և ըմպելիք ուժգին. զոր և կամեսցի ուտել անյագաբար՝ պատրաստ գտանիցէ, և կանանց կուսից մնացելոց հանապազ անյագաբար խառնակումն: - 164. և թէ նոքա յերիս կամ ի չորս կամ ևս աւելիս բաժանեալ օգնական առնիցեն իւրեանց զամուրսն՝ մեծ աշխատութիւն քեզ հասուցանիցեն, և ամենայն խորհրդոց քոց խափանիչք /212/ գտանիցին – 214 և ի ձէնջ խնդրեցից երիս ինչս, և լուարուք ինձ – ի բաց արարէք յաշխարհէ զսուր և զհուր և զգերութիւն, և յերիցդ օգուտ գտանէք. – 144. և ի մեր կար տաժանմամբ ի խոյզ և ի խնդիր ելեալ զհաւաստին գտանել – 12. Եւ իշխանքն Հայոց կային ի տագնապի և խնդրէին զելս իրացն գտանել ի Քրիստոսէ, յորմէ լքեալն էին: - 320. և խնդրէին տեսանել թէ ո՛րպէս կարասցեն գտանել զելս իրաց վտանգին ի վերայ հասելոյ: - 206. և կարգէ զդասս պաշտօնէից կատարել զպաշտօն Տեառն ի տուէ և ի գիշերի անձանձրոյթ աշխատութեամբ և առատաձեռն տեսչութեամբ աղքատաց, զի գտցեն զողորմութիւն ի Քրիստոսէ: - 122. և կեայք պանդխտութեամբ կեանս, իւրաքանչիւր ի սուր իւր գտանել զբարձ և զգահ նախարարութեան. – 110. և յերթալն նորա և ի դառնալն՝ գայ գտանէ վախճանեալ զթագաւորն Արտաշէս ի Մարինդ – 92. և նորա խնդիր արարեալ մեծաւ ստիպով, մինչև կարացին գտանել նովիմբ կազմածաւ, և ետ յարսն որք եկեալ էին. – 154. և ոչ ուրեք գտանէր հնար ելիցն ի վտանգաւոր արգելանէն, թէպէտ և բազմաց հոգ յանձին կալեալ վասն առն պատուականի – 346. Եւ ոչ ոք գտանէր ամենևին ի կողմանէ /174/ թշնամեացն որ կարէր կալ ընդդէմ նոցա, և ոչ մի ոք. – 176. զի մի յերկարաձգեալ զղեր հատուցական բանիս՝ յետնեալ գտցուք յառաջիկայ մեզ գրաւորութենէն, որ սակս պատմութեանցն են հանդէսք: - 260. զի ոչ գտանիցին ամենևին տալ պատասխանի: - 54. Զնոյն տեսեալ ազատացն Վասպուրականի, անտանելի մնալով առ դիպուածն զոր ինչ գործեաց Ապումրուան՝ ելին գնացին առ Ատոմ որդի մեծին Գուրգինայ յամուրն Կանգուար, գտանել զելս իրացն – 364. Զոր հոյակապն Տրդատ կարգադրեալ վայելչապէս հոգաբարձութեամբ զպատերազմականն հարկանել հարկս ընդդէմ հինից արշաւանաց. զոր կարգապետութիւն և առ սուրբ հրեշտակն գտանեմք/գրքում՝ զտանեմք/ յարարչական նախախնամութենէն, զաշխաwրհի զօգուտն բերելով: -398. Զորոյ իմացմանց հանգամանս իմացեալ ազատացն Վասպուրականի՝ ոչ հաճոյանայր նոցա թևակոխելն Գագկայ, և զելս իրացն ջանային գտանել, առանց խռովասէր հանդարտութեան. – 360. ի կանոնի անդ գտցես զՆինոս և զՇամիրամ և զԱբրահամ և զվեշտասաներորդ հարստութիւն Եգիպտացւոց, և ի չորրորդ դպրութեանն Յուլիանու Աղիկառնացւոյ, որպէս և ի չորրորդ դպրութեանն Մովսէսի: - 18. Իբրև ստուգեցաւ որ ինչ եղեալն էր՝ փութացան խնդրել ի քաղաքին և ի կիրճս ճանապարհին, յոր կողմ և աճապարեաց ոք, մինչ անցեալ գտին զհարեալն դիւի չարի, զի կայր դեռ կիսամեռ: - 378. ինքն իսկ փոյթ յանձին կալեալ՝ ել գնաց մեծաւ հոգաբարձութեամբ, լուծանել զնա ի տառապանաց արգելանին. սակայն և

այնպէս ոչ կարաց գտանել զելս իրացն վտանգի առնն: - 346. Իսկ Դերանիկն գործ առնէր ի գիւտս հնարիմացութեան, և տարուբերէր յանձն իւր՝ գտանել զելս իրացն, որով կարիցէ հանել զամուրսն ի Գուրգինայ և տիրել աշխարհին: - 326. Իսկ եթէ՝ մշակն մեղաց և անդրանիկն ամենայն չարեաց, որ ի յօձն բունեալ ոչ անիծաւ, որպիսիս ուսուցանէ վնասապարտութիւն օձին առ ի պատժականութեանն գտանել պարտաւորութիւն, որ ոչ յընքենէ միայն, այլ մանաւանդ ի գտողէն չարեաց: - 22. Իսկ զօրավարն Բուխայ կայր ի կոր կործանմանն, ի տարակուսանս ըմբռնեալ փղձկէր ի միտս իւր, ցնորակոծ լինէր, հնարէր ելս իրացն գտանել ի վրանայարկն փակեալ, և ոչ առնոյր դուլ և դադար: - 282. խնդրէր գտանել զելն իրացն եկելոցն առ նա գուժկանացն – 180. խնդրէր և զդիւան թուոյ զօրացն. քննեցին և գտին: - 198. Հրաման տայր փութով ամենեցուն պատրաստական գտանել ի դաշտն քաղաքին. – 270. Յայնժամ իբրև գիտացին երկոքին կողմանքն, եթէ ոչ գոյ հնար գտանել զելս իրացն և տալ խաղաղութիւն՝ ապա հաճեցան և հաւանեցան գրել առ թագաւորն. – 286. յետուստ երբեմն գտանէր ի ձեռն անիծիցն իմացեալք երկոքին. – 22. Նոյն գունակ և զՂուկա ազգաբանութիւնն գտցես շարաճեալ ի վերջէ յառաջ, և ասէր որպէս կարծէր զՅիսուսէ՝ ի Յովսէփայ ի Յակովբայ ի Հեղեայ, և ապա մի ըստ միոջէքն: - 16. որպէս թէ ոչ կամի զթագաւորելն Պարսից և հարկել Հայոց և զօրավարել, այլ զթագաւորելն Յունաց ցանկայ գտանել. – 118. Ուստի և մեք ըստ կարի մերում անցեալ գտաք զհամառօտութիւն զրուցատրութեանս – 122. ուրացան զանձինս և առին զխաչն Քրիստոսի և գնացին զհետ կոչողին, կորուսին զանձինս, այսինքն զկեանս աշխարհիս, զի զյաւիտենիցն գտցեն զկեանս. – 292. Սա առաջին գտաւ պտուղ մարտիրոսական ի մեծ վտանգի նեղութեանն, որ եհաս ի վերայ բոլոր Հայաստանեայցս: - 206. Քանզի բազում աշխատութեամբ է գտանել զշար ազգաբանութեան տանն Արծրունեաց, վասն հեռաւոր ժամանակաց կացեալ և դիւանացն անյայտութեանց ի մէջ Հայաստանեայցս – 12. քանզի Յունաց հուսկ երբեմն յետոյ գտաւ գիր ի Կադմեա յումեմնէ Փիւնիկեցւոյ: - 18 .

ԳՏԱՆԻԼ - Եւ հրամայեցին համար առնել անկելոց դիակացն, գտաւ թիւ սպանելոցն ՃԷՌ մարդ: - 142. որոց հնազանդութիւնն կորստեան պատճառք գտաւ աշխարհիս Հայոց: - 110.

ԳՏԵԱԼ - ,,հրամայեա արձակել արս հաւատարիմս, և ես յորժամ հասից ի դուռն արքունի՝ ի նմին ժամու խնդիր արարից Խաչին, և գտեալ զնա տայց բերել առ քեզ,,: - 154. Բայց յետոյ անմիաբան գտեալք նախարարքն Հայոց՝ թողին զոր խորհեցանն վասն թագաւորելոյ Վահանայ, և անցին /126/ գնացին առ մեծն Վարդան. – 128. և անհակառակող գտեալ բարուք՝ բաժանեն զաշխարհս յերիս մասունս. – 360. և յերկիւղ կասկածանաց եղեալ, թէ իցէ ընդելուզեալ Տաճկաց՝ գտեալ զպահեստ գանձին ծախիցեն զզօրութիւն նորա: - 180. Եւ անդ գտեալ ամրագոյն անձաւ տեղի անկասկածելի ի պատերազմական գործոց և զնա պարսպեալ պատուարօք շուրջանակի – 392. և անդ գտեալ զբնակիչսն Ռշտունեաց, թափառականս անկեալ յանողորմ և ի մարդախոշոշ շանցն գիշակերաց – 202. Եւ առ այսոքիւք պատեհագոյնս իմն գտեալ իբրև յանիշխանութեան՝ ոմանք Ասորեստանեայք և Քաղդէացիք, յազգէ թագաւորացն …զօր բազում գումարեալ՝ յետ ԻՀ ամի անիշխանութեան Ասորեստանեայց ի ձեռն Փուայ թագաւորեցելոյ դարձեալ տիրեն Բաբելոնի և ստորին Ասորւոց – 60. և բացեալ զտուն դիւանապահ մատենիցն և գտեալ զսերունդս Սենեքերիմայ, և զգործս նոցա զմիոյ միոյ ուրուք յանուանէ զառն իւրաքանչիւր զանուն և զքաջութիւն իւր, նոյնպէս և զայլն ամենայն ըստ տոհմից տեղեաց - 74. Եւ զնախնին մեր Ադամ ոչ ասել առաջին մարդ, այլ այլոյ ումեմն որդի Շուռելայ, արըռտաբոյծ ուղտուց, զզուեալ յանծանօթ /գրքում՝յանծանոթ/ աշխարհի և անհաւատարիմ յայնմ գտեալ՝ հալածեալ եղև կնաւ իւրով ի միջոց երկրի – 48. և տիկինն սպարապետական ի Տարունոյ եկեալ և նշանացի զդի նորա գտեալ՝ տարաւ ի Պորպ յիւր աւան և եդ ի գերեզմանի: - 368. մինչ զդի նորա գտելոցն յետ աւուրց ինչ ետ Բուխայ ԺՌ արծաթ, զի այնչափ պատուական էր այրն նմա: - 272. Ո՞չ ածէք զմտաւ և ոչ զմի ինչ ի բարեացն, զոր ձեր յինէն գտեալ. – 214. որոյ դիպող ժամ գտեալ ի միասին կալով նոցա՝ կալեալ զնոսա տայ յամուրս աշխարհին, կապեալս կապանօք երկաթեօք. – 364. Որոց

դիպող ժամ գտեալ՝ արտաքս ելեալ ի բանակէն, զերծեալք իբրև զայծեամն ի հնարից որսորդաց՝ գնացին խաղաղութեամբ յիւրեանց տեղիս և զնա թողին լքեալ ամօթալից: - 344. Որում ոչ անհնազանդ գտեալ՝ իմաստնախորհ զօրութեամբ ելանէ յամրոցացն: - 316.

ԳՏՈՂ - Իսկ եթէ՝ մշակն մեղաց և անդրանիկն ամենայն չարեաց, որ ի յօձն բունեալ ոչ անիծաւ, որպիսիս ուսուցանէ վնասապարտութիւն օձին առ ի պատժականութեանն գտանել պարտաւորութիւն, որ ոչ յընքենէ միայն, այլ մանաւանդ ի գտողէն չարեաց: - 22.

ԳՐԱԿԱՐԳՈՒԹԻՒՆ - որպէս ընթեռնուք ի բանիբուն գրակարգութեանն Մովսէսի տիեզերահռչակեալ վարդապետի և քերթողի և մերոյ լուսաւորութեանցս հաստատագոյն յօրինողի – 96.

ԳՐԱՍՏ - և հասեալ ի տեղի ապառաժ քուաւոր՝ անդէն զետեղէր և զգրաստն: - 34. զոսկերսն Ադամայ բարձեալ Սէմայ գրաստու՝ տարաւ յերկիր ժառանգութեան իւրոյ - 34.

ԳՐԱԻԵԱԼ - և յինքն գրաւեալ զթագաւորութիւնն – 14. զի յինքեանս գրաւեալ ընդ հարկաւ ծառայեցուցանէին զպաշտօնեայս սրբոյ Խաչին, մանաւանդ զի և զգլխաւոր վանացն զհայրն, որում Գրիգոր անուանէր՝ զնա կալեալ եդեալ ի խորափոր խաւարային բանտի: - 334.

ԳՐԱԻԵԼ - արկանել զնա ի կապանս և ի տանջանս մահաբերս, զամուրսն յինքն գրաւել, զաշխարհն տալ ի ձեռս իւրոյ գործավարացն, ըստ պարսկայնոցն հատուցմանց հատուցանել նոցա: - 370. Բայց Գուրգէն խոկայր զմասն աշխարհին յինքն գրաւել, մանաւանդ զՈստանն Ռշտունեաց, որ էր տեղի սպանման հօր իւրոյ, գինս արեան զնա համարելով: - 362. Բայց զաշխարհն Յիսէ որդին Շեհայ բռնազբօսեալ յինքն գրաւեաց և կացոյց ի վերայ նոցա զիւր գործավարս: - 344. Եւ այն ինչ ընդ մտանելն՝ երագապէս հասեալ ի վերայ ամրոցացն Ջղմար և Սրինգ կոչեցեալ՝ յինքն գրաւէ զամրոցսն. և կալեալ զՎասակ՝ յինքն գրաւեաց զզօրավարութիւնն բոլոր Վասպուրական տէրութեանս: - 306. Եւ այն ինչ ընդ մտանելն՝ երագապէս հասեալ ի վերայ ամրոցացն Ջղմար և Սրինգ կոչեցեալ՝ յինքն գրաւէ զամրոցսն. և կալեալ զՎասակ՝ յինքն գրաւեաց զզօրավարութիւնն բոլոր Վասպուրական տէրութեանս: - 306. Եւ գրեն թուղթ առ Յամանիկն, եթէ ,,ի մտանելն իմ ի Դուին քաղաք և զհարկս արքունի յիս գրաւել՝ և յանկասկած առեալ զիշխանս Հայոց՝ և եկեսցեն առ իս. – 340. Եւ քանզի էր Բաբելոն վիճակեալ Սեմա՝ և բռնազբօսութեամբ Նեբրովթ յինքն գրաւէ և հաստատէ անդ զթագաւորութիւնն Եթովպացւոց: - 14. զի և զնախարարս Հայոց գրաւեսցէ մեծապատիւ սիրով – 366. Իսկ Ապումրուանայ ի պատճառ ոստիկանութեան զմանկականն նոցա պատճառելով խաժութիւն հասակի՝ առ սակաւ սակաւ սկսաւ զամուրսն յինքն գրաւել, զհետ իշխանական ցանկութեանն զերասանակ մտացն ձգեալ - 360. Որպէս վերագոյնն յիշեցաք սակաւուք վասն Ահմատայ՝ յինքն գրաւել զաշխարհն Տարունոյ, հանեալ ի Հայոց պետութենէ: - 366.

ԳՐԱԻՈՐԱԿԱՆ - Յապուշ կրթին միտք իմ զմտաւ ածել զաղետիցն, խորհրդածել գրել յիշատակարանս. լքեալ լինին ընթացք ձեռացս առ կորովութիւն գրաւորականիս. – 350.

ԳՐԱԻՈՐՈՒԹԻՒՆ - Դարձեալ նմին նման ասէ Պօղոս, զօրինացն ստորոգելով գրաւորութիւն, այսպէս ասելով, ,,մերձ է բան ի բերան քո և ի սրտի քում, այսինքն է /256/ բան հաւատոց զոր քարոզեմք,,. – 258. զի մի յերկարաձգեալ զդեր հատուցական բանիս՝ յետնեալ գտցուք յառաջիկայ մեզ գրաւորութենէն, որ սակս պատմութեանցն են հանդէսք: - 260.

ԳՐԳԵԱԼ - Ապա թէ իբրև զհայր գրգեալ և զգուեալ էի զձեզ – 214. և աստի և անտի երիվարի փորոյն տախտակագործ գրգեալ ըստ փորոյն չափու մածուցեալ ի ձև վահանի զգործ արուեստի զինուն ցուցանեն: - 208.

ԳՐԳՌԵԱԼ - Եւ իսկոյն անյապաղ յական քթթել սպառազինեալ այրուձի պնդակազմ /366/ պատրաստութեամբ, ռազմ բոլորեալ ղաշիկ դիմացուածով զմարտն գրգռեալ - 368. Իսկ նախարարքն Հայոց ի սադրելոյ Վաղէսի գրգռեալ ի մարտ ընդ Արշակայ ի պատերազմ յառաջանան – 100. յորում և ոմն հաւատարիմ Յիսէի Սէմ անուն յառաջ խաղացեալ՝

պատահէ իշխանին, ընդ Վահանայ խորհրդակցեալ խորհել զխաղաղութիւն և զմարտն գրգռեալ ցածուցանել և զվառեալ պատերազմն շիջուցանել. – 334.

ԳՐԳՌԵԼ - գրգռէ զարքայ կատարել զասացեալսն Վարազդատայ թագաւորի Հայոց: - 110. և ահա այլազգիքն հասին ի դիմի գրգռել զմարտն և զօրագլուխք փութացան զհետ զօրուն: - 230. և բազում վնասս ի գործս արքունի կուտէին ի վերայ իշխանին Աշոտի. և քմազարդ բանիւք գրգռեն զթագաւորն ի վերայ իշխանին ի չարիս: - 180. Եւ մինչդեռ զայսքան և զայսօրինակ մարտն գրգռէր՝ ահա յանկարծակի հասանէր քաջն մեր Աշոտ. – 174. Եւ յաւել գրգռել ի սիրտս իւր արքայ Խոսրով. զի Տէր խստացուցանէր զսիրտ նորա, զի կործանելոց էր զթագաւորութիւն նորա. – 146. Եւ որք մերձ առ պարսպօքն զճակատն վառէին և զմարտն գրգռէին՝ զգեստն ինքեանց յասուէից կազմեալ – 208. Եւ վասն այսր իրաց նենգութեամբ և չարակնութեամբ առլցեալ, մանաւանդ յերկիւղէ՝ կարի յոյժ գրգռեցաւ պատերազմ սաստիկ ի ձեռն Վասակայ Արծրունոյ.– 178. Զնոյն և կողմնակալքն Պարսից գրգռէին զթագաւորն ամբաստան լեալ՝ ամբաստան լինել Աշոտի զպետութենէն Տաճկաց: - 172. զօրս գումարէիք, այրուձի կազմէիք, մարտ և պատերազմունս գրգռէիք, ճակատ դնէիք և զզօրս մեր ի սատակումն սրոյ մատնէիք – 244. Ընդ որս զչարեալ նախարարացն Ներսէհի՝ գրգռեն զոմն ի մերձաւորաց Ներսէհի, Դարէի անուն. – 82. Իսկ Կայսիկքն և որք ընդ նոսա և զօրքն Պարսից զմարտն ի գաղտնիս գրգռէին – 380.

ԳՐԵԱԼ - որպէս և գրեալ է, թէ ,,փակիցէ, և ոչ ոք իցէ որ բանայցէ, և բանայցէ, և ոչ ոք իցէ որ փակիցէ,,: -198. ,,ի քո իսկ ինքնակալ թագաւորութեանդ և ի յօրէնս առաջնորդին ձերոյ գրեալ է՝ ոչ գոլ ճշմարիտ վկայութիւն միոյ ուրուք և հաւատարիմ – 244. ,,իսկ եթէ եկեսցէ առ իս գիր յարքունուստ, կնքեալ մատանեաւ արքայի. և իցէ գրեալ ի նմա հրաման՝ գալ ինձ առ քեզ կամ երթալ յարքունիսն՝ ոչ ելից արտաքոյ հրամանաց նորա: - 286. Առաքեցին առ Մուրիկ թագաւորն արս ճոխս մեծամեծ ընծայիւք և պատարագօք և թուղթ գրեալ ի բերանոյ Խոսրովայ զայս ինչ. – 136. Բայց թէ է՞ր աղագաւ պատմութիւն վկայութեան Վահանայ ոչ է գրեալ ի գիրս պատմագրի՝ ստուգապէս առանց յերկուանալոյ ցուցանեմ քում ուսումնասէր քաջահմտութեանդ: - 128. Գրեալ ի թղթի անդ՝ ի ձեռն նորա հաւատալ աշխարհիս Հայաստանեայց – 186. և գրեալ էր առ Բուխայ, զի մի՛ ինչ չարիս խորհիցի կամ գործիցէ առնն այնմիկ, այլ տացէ տանել զնա առ թագաւորն մեծաւ պատուով և զգուշութեամբ: - 288. Եւ ելեալ արտաքս հանգոյն մատնչին ի տնօրինականս Փրկչին, ունելով ընդ ինքեան զիրովարտակն գրեալ այսպէս. – 212. Եւ եղև զկնի երից աւուրց անցանելոյ ետուն թուղթ մի տանել առ Գուրգէն, գրեալ Բուխայի լի դառնութեամբ, կնքեալ մատանեաւ արքայի, իբրև այն թէ ի դիմաց արքային և յարքունուստ եկեալ. – 236. Եւ զի Ժ ազգացն շարք առանց ստութեան կան գրեալ յամենայն մատենադարս - 12. Եւ զրոյցք ժամանակաց սոցա յայլոց գրեալ յառաջագոյն, աւելորդ համարեցաք երկրորդել: - 168. Եւ էր գրեալ ի միում թղթի անդ, յիշեցուցանելով զոր ինչ գործեաց Աշոտ ի զօրսն Ապահունեաց զյաղթանակ պատերազմին և զհոյակապ անուն ստանալոյն՝ ասէ – 382. և էր գրեալ ի նմա թողութիւն վնասուցն և հարուածոցն զօրացն և բազում աւարացն, և երդումն ի հաստատութիւն ասացելոցն, և պարգևս ի պատուական և մեծագնի հանդերձից, և սաղաւարտ ծաղկեայ և սուսեր. – 288. և թուղթ մի գրեալ և կնքեալ լի խորամանկութեամբ և կեղծաւոր խարդախութեամբ ըստ հնարագիտութեան որդւոցն Իսմայէլի. – 234. Եւ ի ժամու մինչ ազևորեալքն կամէին մտանել զառաջեաւ … յայնժամ շուրջ կացեալ զվրանաւն մեծ սպարապետին զկազմեալ գնդաւ վահանաւոր և նիզակաւոր ամրափակ պնդութեամբ, և մտեալ մատոյց զթուղթն, զոր էր գրեալ առ Յամանիկն ի քաղաքն Պարտաւ Ահմաթայ նենգութեամբ: - 344. Եւ իւր հազարապետին գրեալ և ծանուցեալ էր արքայի, զոր ինչ գործեաց ցայն վայր ժամանակի: - 220. Եւ ոչ անվկայ բանս, որպէս վերագոյնն գրեալ է մեր զդերահատուցականս սորա, վկայութեամբ մարգարէական տառիցն, որպէս և ի պատահմանէ իրացն ճարտար գիտեն՝ որք են ի ժամանակս յայսոսիկ մնացեալ յայն ժամու անդ հանդիպելոցն: - 262. և որ այլ այսպիսիք զմտաւ ածեալ, որ գրեալ է ի սուրբ Աւետարանն – 264. Եւ սրբոյ վարդապետին մեր

Եղիշէի, որ յայնմ ժամանակի ի Մոկաց բնակէր աշխարհին՝ եկեալ առ նա Բարծումայ, խնդրեալ զպատմողական գիրսն Հայոց, զոր գրեալ էր հրամանաւ սրբոյն Վարդանայ. – 130. Զի գրեալ է՝յաւելորդէ սրտի խօսի բերանն – 258. զի ի փոնգալոյ նորա կայծակունք հատանին և ընդ ռնգունս նորա ելանէ ծուխ հնոցի կայծականց, որպէս գրեալ է ի Յովբ: - 246. զոր ընթերցասէրն Պտղոմէոս գրեալ և յարդարեալ ստուգաբանութեամբ, դնեն զգուշութեամբ ի դիւանապահ տունս գանձուց մինչև ի Կղէոպատրա կին, որպէս վերագոյնն գրեցաք: - 74. ըստ այսմիկ և այլ առասպելականք, և գիր մատենական ի նմանէ գրեալ և պահեալ ի Բաբելոնի բազում զգուշութեամբ. -36. Իսկ իբրև գիտաց բռնաւորն, եթէ չելին ի գլուխ կարծիքն զոր ի վերայ սրբոցն խորհեցաւ, որպէս գրեալ է, ,,կարծողն և արհամարհողն այր ամբարտաւան է և ոչ ինչ վճարեսցէ,,- 264. իբրև ընթերցաւ զնամակն, գրեալ երդմունս ի ծանականս կանանցն իւրեանց և ի մոլար օրէնսդիրն իւրեանց Մահումաթ. – 236. իսկ որպէս գրեալ հաստատեալ կայ հաւատարմապէս վարդապետացս քաջաբան և լի իմաստութեամբ շարագրածք հրաշափառագոյնք: - 122. մանաւանդ զի յառաջագոյն /308/քան զմեզ այլոց ոմանց բանակարգեալ գրեալ հաւաքեալ է ի մի շար: - 310. Յաւել և զինչ գրեալն է զվավաշոտ ցանկասիրութեամբ թեւակոխել: -16. որոյ անունն գրեալ է ի դպրութեան կենաց: - 224. որպէս գրեալ աւանդեցաւ մեզ այս ի չորրորդ դրուագի խոստաբանեալ պատմութեանն Մովսէսի Խորենացւոյ, վերադարձութեան ի վերայ երեցունց դրուագեալ հատուածին – 122. որպէս գրեալ ցուցանին հանգամանք իրացն գործելոց – 94. որպէս և գրեալ է ի մարգարէութեանն Երեմիայի – 196. որպէս սահմանեաց Աստուած ի վերայ ժողովրդեանն Իսրայէլի գերելոցն ի Բաբելոն, որպէս գրեալ է ի մարգարէութեանն Երեմիայի, ,,զ-ՀԷ-երորդն ասէ գիտասցես, և խելամուտ լիցիս յելից բանին տալ պատասխանի. մինչև յօծեալն /312/ առաջնորդ եօթներորդ է և եօթներորդք ԿԲ,,. – 314. որպէս Րոբովամ որդին Նաբատայ, որ մեղաւ և յանցոյցն զԻսրայէլ, որպէս գրեալ է ի գիրս թագաւորացն Իսրայէլի – 248. Սոցա անուանք ճանաչին՝ Ատոմ Անձևացի և Մլեահ Վարաժնունի և Գէորգ Բողկացի և Վասակ, և այլք բազումք, որոց անուանք գրեալ են յերկինս: - 266. Ցայս վայր զայս գրեալ Աղէքսանդրի՝ Մակեդոնացւոյ, ի Մենեքերիմայ յառաջ մինչև ի Պտղոմէոս եգիպտացի, զոր և նոքա Պտղոմեանքն կոչէին. – 74. քանզի գրեալ է, ,,թագաւոր արդար կանգնէ զաշխարհ, կործանումն է աշխարհի թագաւոր անօրէն,,: - 182.

ԳՐԵԹԷ,ԳՐԷԹԷ - գրէթէ անցուցանէր զանցուցանէր զքաջութեամբքն Արշակայ Պարթևի, ընդ քաջացն Քուշանաց, Մարաց և Ելիմացւոց. – 72. և ահա աղաղակ և փողք և քնարք և ջնարք, և վառեալ զինու և սրոյ և ամենայն պատրաստութեամբ անհուն զօրացն, մինչ գրէթէ ի հիմանց զլեառնն տապալել – 284. և գրէթէ ոչ ամենևին ուրեք երևեցաւ այնպիսի ահաւոր տեսիլ զօրու և սպառազէն կազմութեան՝ ամենայն թագաւորաց, որ կացեալ էին ընդ ծագս տիեզերաց. զորոյ սաստիկ և ահագին որոտումնն և ճայթումնն և փայլիւն զինուցն, և որ ինչ յայնժամ զարդարեալ և զինեալ պատրաստեցան զօրքն Տաճկաց: - 284. Եւ գրեթէ ամենայն իշխանք Հայոց, Վրաց և Աղուանից եկեալ էին ընդ զօրս Հայոց ի վերայ աշխարհին Ապահունեաց. – 380. նա և զիւրեաւ տախտակափակ լանջապահս, թիկնապահս, զանգապանս, սռնապանս, գլխապանս, որ գրեթէ բովանդակ պղնձեղէնս զնա իմանալ թուէր, և զետեղեալ բլրաձև զօրու անմատչելի կարծելով. – 64. որ յետ հաւատոցն որ ի Քրիստոս բազում ուղղութեամբ և երկիւղածութեամբ կրօնս ըստ արժանի հաւատոյն ցուցեալ, գրէթէ ի ծայրս առաքինութեան զաճումն հաւատոցն տարեալ հասուցեալ, որ ինչ յորդորումն աւետարանական վարժիցն ունին դաստիարակութեան ցոյցք: - 78.

ԳՐԵԼ - ,,Գրեցի ձեզ, ի բաց կալ յայդմանէ, ուրեմն ոչ կամեցարուք լսել, ես զձեզ ապաշաւեմ, ասէ: - 138 այլ և ինքն Մահմէտ, մոլեկան հոգւով շարժեցեալ՝ տայ գրել զանուղղայս, զոր մեք ի բազմաց զսակաւս յիշեսցուք: - 164 Այլ և իշխանն Գուրգէն հանապազ գրէր աղաչանս առ ծերսն և առ աւագագոյնսն նոցա, իբրև փորձութիւն և դիպուած համարէր զեղեալսն, և ոչ իսպառ քինահարութեամբ վարիլ առ հարկատուսն և առ հնազանդս իւրեանց: - 404. այլ և

Մակեդոնացին Աղէքսանդրոս ոչ սակաւ դրուատեօք արձանս գրէր ի մատեանս դիւանապահ աւանդութիւնս զսորայս մեծափառ գլխաւորութիւն: - 96. այլ հրամայեսցէ մեզ գրել ի Հայս և հարցանել առաջնորդացն Հայոց, և ընդունել պատասխանիս„: - 132. Այս այն խաչ է զոր վերագոյնն գրեցաք վասն սորա – 394. Ապա առեալ հրաման մեծամեծացն մեր Արծրունեացն՝ գրեն առ Աբրահամ Մամիկոնէից եպիսկոպոս … և ծանուցանեն նմա զոր խնդրէ արքայ: - 132. ապա մտախորհ եղեն բազում քննութեամբ, և յանբաւ և յառաւել իմացմանց ընտրեցին՝ գրել և ծանուցանել թագաւորին վասն առնն այնորիկ.– 280 Աստանօր լաւագոյնս իմն աստուածայինն Մովսէս գրէ ի բերանոյ Աստուծոյ զյաճախութիւն ամբաստանութեան ամբարշտելոցն, ըստ իւրաքանչիւրոցն և զվնասն նշանակելով: - 28. Արդ են ժամանակք թագաւորութեանն Պարսից, սկսեալ ի Կիւրոսէ ցԴարեհիոն … և ամք անիշխանութեանն զոր ոմանք ի պատմագրաց գրեն Կ, և այլք Հ – 166 բայց եթէ ստութեամբ և թէ ճշմարտութեամբ՝ մեզ չէ յայտ, և զոչն ստուգեալ՝ և ոչ գրել լաւ համարեցայ: - 348. բայց ակամայ և ի հարկէ գրեցից կարգեցից ի փոքր և ի դուզնաքեայ բանից, բովանդակեցից համառօտ սուղ և սակաւ բանիւ անցանել ընդ պատմութիւն իրիս այսմիկ – 240. Բայց արդ որպէս յառաջագոյն հատուցի զարտաքոյ պարսաւանաց զիս ներքոյ գրել, վասն ոչ ոճով զսորայս կարգել դնել ի շարի աստ զշարագրածս, վասն ոչ բաւելոյ զանչափութիւնն ի մի վայր գումարել յանմասնաւորաբար նշանակութեամբ – 308. Բայց զի՞ մի մի զիւրաքանչիւր հանդէս պատերազմաց նոցա գրեցից յականէ յանուանէ. ասացից կարճառօտ և համառօտեցից զբանս. – 286. Բայց քանզի մեր ոչ ոք յայնժամ հանդիպեր ի պատասխանատրութիւնս երանելոյն՝ և ոչ գրել արժանի համարեցաք: - 206. բովանդակաբար բացայայտել զհաւատարիմն գրել, թէ արդեօք Ասուր, որ զՆինուէ շինեաց, հաւ Նինոսի՞ իցէ ի ծննդոց Սեմայ, ուստի Ներբովթ, կամ թէ արդեօք ազգն Արծրունեաց Սեմա՞յ սերունդք իցեն, թէ Քամայ ի Ներբովթայ: - 14. գրել և ծանուցանել բուն զօրավարին ոչ իշխէին – 234. և զպատասխանի թղթոյն ի ձեռն Թովմայի առաքելոյ, և զխոստաբանութիւն՝ զԹադէոս առաքեալ լնուլ զփափագումն խնդրոյն. - 76. գրէ առ կողմանս Ասորեստանի զգուշացուցանելով՝ մի խառնել ընդ նեստորականսն. – 130. գրէ առ սուրբ եպիսկոպոսն Գրիգոր Ամատունեաց տանն … գտանել զելս իրացնՆ եկեալ հասեալ հինին. – 400. Գրէ բազում անգամ Սմբատ առ Ահմատ՝ թողուլ անդրէն զաշխարհն, տալ ի ձեռս Աշոտի որդւոյ իշխանին Դաւթայ. - 366. Գրէ դարձեալ թուղթս երկրորդս և ասէ. – 138. Գրէ և Վահրամ առ Մուշեղ և այլ զօրագլուխսն այսպէս. – 138. թուղթ հաւատոց առ Ղևոն կայսր Յունաց, և ընկալեալ ի նմանէ պատասխանիս՝ բազում ինչ ի Կուրանէ անտի իւրեանց արտաքս ընկէց զյոյժ առասպելագոյնն, քանզի ստուգապէս ծանեաւ զզօրութիւնն. – 166. Գրէ Կայսիկն առ թագաւորն՝ խնդրել զխաղաղութիւն, և զոր միանգամ կամիցի՝ եղիցի. յայտնիքն այսպէս, իսկ ծածուկքն՝ որպէս յայտնեցանն: - 380. գրէ Կիւրոս առ Տիգրան վասն օգնականութեան մատուցանել նմա: - 66. Գրէ հրովարտակ մի զայս օրինակ: -184. գրէ հրովարտակ նախատանաց առ կայսր, որ ունէր օրինակ այս. – 146. գրէ յականէ յանուանէ առ որ մնացեալն էին յաշխարհս յամուրս իւրեանց, զի փութով յիւրաքանչիւր տեղեաց առանց կասկածանաց և երկիւղի առ նա հասանիցեն – 296. Գրէ պատասխանի Մուշեղ նմա այսպէս. – 138. Դարձեալ գրէ և ի կողմն Դերջանոյ, և Խաղտաց ձորոյ բնակիչսն և աշխարհակալ տեառս և առ եպիսկոպոսունսն: - 130. դարձեալ զի թէ և գեցաւ նս՝ այլ քաջութիւնք արութեանն Նինոսի, ըստ օրինակի Բէլայ, առաւել ամբարձաւ անձնասէր ամբարտաւանութեամբ – 44. Եւ արդ մեք, նահապետք ազատաց Վասպուրական իշխանիս՝ Մուշեղ ի ցեղէ Վահևունեաց, Վահրամ յազգէ Տրունեաց, Վահրամ միւս, որ ի թիկնապահ իշխանիս … գրեցաք առ քեզ Բուխայ գլուխ զօրավարաց Տաճկաց և բարձակից մեծ թագաւորին. – 212. և յառնուլ զՍաթինիկ տիկին կնութեան Հայոց՝ յիշէ զնժդեհանալն իւր ի վիմամէջսն զոր վերագոյն գրեցաք – 86 Եւ յոլով այն լինէր զոր ինչ գրէինն՝ զոր ոչ էր գործեալ Հայոց - 194. և անդ նորա զդատավճիռն ընկալան ի սրոյ քաջացն Վասպուրականի, որպէս գրեցաքն – 398. և առ Տիմոթէոս գրէ, հաւատարիմ զոլ

զզօրութիւն հաւատոցն, ասէ, ,,թէ ուրանամք՝ և նա ուրանայ զմեզ. թէ չհաւատամք՝ նա հաւատարիմ մնայ,,: - 258. և առնու զԲաբելոն, և շինէ զՏարսոն ի ձև Բաբելոնի, գետոյ ընդ մէջ անցանելոյ որպէս խոնարհագոյն մասնաւորաբար գրեամ: - 16. և ասէր, թէ ,,զայս ամենայն զոր գրէ կաթողիկոսն Հայոց և առ ապստամբութիւն խորհել առ ի քէն, և զնախարարսն Հայոց զՅունաց թագաւորին խորհել հնազանդութիւն. արդ տեսանել պարտ է վասն այդր,,: - 130. Եւ արդ ըստ Եւսեբեա բազմայեղ յեղանակաց խուզմանցն և ըստ Ափրիկանոսի հաւատարմաբանութեանն և ըստ Մովսէսի Քերթողի՝ նախ ի մէջ առից զորպիսութիւն ազգացն բաժանմանցն գրել: - 12. Եւ գրեաց թուղթ զկնի նախարարացն Շապուհ, լուծանելով զպատճառ հատուածի նոցա. –110. Եւ գրել Դերանիկն առ որդին Հալթի հաստատել զնա իշխան իւրով հրամանաւ. – 342. Եւ գրեն թուղթ առ Յամանիկն, եթէ ,,ի մտանելն իմ ի Դուին քաղաք և զհարկս արքունի յիս գրաւել՝ և յանկասկած առեալ զիշխանս Հայոց՝ և եկեսցեն առ իս. – 340. և գրեցին և ծանուցին արքայի՝ զոր ինչ գործեցին և որպէս հարան զօրքն արքունի: - 286. Եւ գրէ առ իշխանաց իշխան՝ ի բաց լքանել եթէ ունիցի ինչ անօգուտս խորհել, ապա թէ ոչ՝ տեսից զքեզ, ասէ, ի զէն և յասպազէն և ի ճակատամարտ. – 322. և գրէ առ Սահակ դառնալ առ Երուանդ. թերևս հնար լիցի խորհել ինչ վասն Երուանդայ: - 82. գրէ առ Սմբատ, թերևս տացէ ի ձեռն նորա զմանուկն Արտաշէս: - 84. Եւ եղև ընդ մեռանելն տեառնն Անձաւացեաց, նորին տիկինն Հեղինէ գրէ առ Գուրգէն – 324. Եւ եղև յետ մեծ պատերազմին, որ յառաջ քան զզրուցացդ գրելոյ ելին, ի գլուխս Մանազաւեան նահանգին և Յուշոյ դաշտին, և զխռովարարս քաղաքացն ի մի վայր գումարելոցն, որք և յունայն ասպատակէին աշխարհ – 398. Եւ զայսոսիկ ոչ վայրապար ինչ եհաս մեզ գրել – 46. Եւ զոր ոչ հաւատարմանայ մեզ՝ և ոչ գրել կարևոր համարեցայ: - 100. Եւ զոր ինչ ոչ իմացեալ մեր՝ և ոչ գրել արժանի վարկաք, բայց միայն զի բարձրագոյնք և նախապատիւք ի թագաւորաց անտի էին: - 96. և զպատճառսն ստուգեալ, գրէ ի ձեռն Վահանայ ումեմն ի տոհմէն Ամատունեաց՝ դառնալ գալ բնակել անկասկած կենօք, ի բարձ և ի պատիւ իւրաքանչիւր յառաջանալ: - 98. և զսակաւուց քան թէ յոլովից գրեաց անուանս ի յիշատակարանի անդ զՇահդոսդ, որ թարգմանի արքայասէր, և զԳոհշթասդ, որ թարգմանի ներկագործ ծիրանեաց արքայական զգեստու, և զՇմաւոն եպիսկոպոս, վէմ եկեղեցւոյ Քրիստոսի ընդ նմին և այլ եպիսկոպոսք և քահանայք արք Ճ - 106. և ընկալեալք ի թագաւորէն Արշակայ ըստ գրելոյն ի ձեռն Վահանայ՝ կացին անկասկած: - 98. և ինքն մանկագոյն տիովք, ի ժամանակի անձնիշխանութեան լեալ ամաց ԺԵ, զի ,,մանկութիւն և անմտութիւն ընդունայնութիւն է,, , որպէս գրէ Սողոմոն – 346. և ինքն Յամանիկն գրէր առ Աշոտ զԴերանկէն՝ լի ապիրատութեամբ խորհել վասն Աշոտի: - 350. Եւ իշխանն Աշոտ գրէ առ իշխանն Սմբատ, անօգուտ զապստամբութիւնն համարելով. – 382. Եւ լուաւ տէր աղօթից նոցա, և դարձաւ ի բարկութենէ սրտմտութեան իւրոյ գթութեամբ և ողորմութեամբ, որպէս գրեցին երանելի մարգարէքն: - 314 և հնախօսս շարագրական մատեանս և ի բազում վէպս պատմութեանց անցեալ գրեցի, որ ինչ բաւականանալ ձեռնհաս եղէ, սկսեալ յԱդամայ մինչ առ մեզ հասեալ ժամանակացս գիւտ: - 12. և մերկ կապուտ կողոպուտ առնէր զնոսա, մինչև զարմանալ զօրավարին ընդ սորայս քաջութիւն՝ գրէ առ Միքայէլ թագաւորն Յունաց զեկուցանելով վասն նորա: - 302. և ոչ մեք գրել զմտաւ ածել ջանասցուք. – 68. և փութացաւ գրեաց առ Սափի որ ի Վանտոսպ նստեալ և ճոխանայր Վասպուրական տէրութեամբն. որ առանց յապաղանաց զփոյթն յառաջաբերեալ՝ գնաց եհաս առ Աւշին ի Մարակայ քաղաք: - 374 Եւ քանզի այն ինչ վախճանեալ էր կին Դերենկին՝ գրէ Գուրգէն առ Աշոտ, ասէ. – 322. Եւ քանզի հաւատացեալ էր զգաւառսն Բուխայի ի ձեռն սպարապետին Սմբատայ՝ գրէ առ ամիրայն Նախճաւանու Աբրահամ անուն, զեկուցանելով նմա զզօրացն Վասպուրականի. – 304. Զայս սակաւուք ի մասնէ գրեցի ճանաչել միայն զազգս: - 18. զի ահա հասեալ է պատրաստութեամբ Տէր ի վերայ մեր, որպէս գրեաց Մովսէս: - 196. զի ի մատեանս առաջնոցն ունէին պատուէր ի թագաւորացն զնշանաւոր իրս քաջաց գրել, և ոչ վատաց. – 42. զնոյն գրէ և առ որս ի Խուժաստանին էին

ժողովուրդ ուղղափառացն: - 130. զոր գրեաց իսկ և ծանոյց արքայի. – 286. զոր ընթերցասէրն Պտղոմէոս գրեալ և յարդարեալ ստուգաբանութեամբ, դնեն զգուշութեամբ ի դիւանապահ տունս գանձուց մինչև ի Կղէոպատրա կին, որպէս վերագոյնն գրեցաք: - 74. զոր յիւրում տեղւոջն կարգաբանութեան գրեցից որ ինչ վասն սորա: - 74. զոր ոչ առ յանձն սուրբն Սահակ գրել ինչ վասն որոյ չարաբանեն զԱրտաշրէ: - 118. զոր վերագոյնն գրեցի. - 16. զորոյ զօրաժողով լինելն իմացեալ Կիւրոսի՝ գրէ առ Տիգրան՝ զօրս յօգնականութիւն առաքել նմա. – 64. զորոյ ձախողակի իմացմունս ծանուցեալ իշխանացն Հայոց՝ միով հաւանութեամբ գրեն յարքունիս և խնդրեն զԱհմաթ /338/ որդի Հալթի. – 340. զորս գրեաց երանելի քահանայն Եղիշէ: - 48 Զսա տեսեալ Մահմէտի՝ /162/ կոչեաց և յարեցոյց առ ինքն, հրամայեալ նմա գրել գիրս օրինաց ազգին իւրոյ, ձեռամբ Աբութուռաբայ իսմայէլացւոյ. քանզի ինքն ոչ գիտէր գիր և ոչ դպրութիւն: - 164. զՓրկչին մերոյ Տեառն Յիսուսի Քրիստոսի զըստ մարմնոյ ազգաբանութիւնն գրելով աւետարանիչն Մատթէոս - 16. Իսկ առ մեզ ծանուցեալ զոր ինքն ասաց, թէ Քրիստոնեայ եմ, ըստ այնմ թէ ,,ծառայի իմոյ կոչեսցի անուն նոր, որ օրհնեսցի վերայ /ճիշտը՝ի վերայ/ երկրի,,՝ գրեցաւ յիշատակարանս սրբոյն: - 224. Իսկ թագաւորն գրէ առ զօրավարն թերևս կարասցէ հաւանեցուցանել զԳուրգէն՝ երթալ ի թագաւորական քաղաքն առ կայսր, և մեծաց պարգևաց և պատուի և գահու յառաջագութեամբ ընկալցի պարգև ի թագաւորէն: - 302 Իսկ իբրև եհաս Բուխայ զօրօք բազմօք մերձ ի սահմանս նոցա, և գրեաց հրովարտակս դիմօք խաղաղութեան՝ դառնալ սիրով միաբանութեան ի հնազանդութիւն արքային – 274. Իսկ Սաղման յանձն առ գրել նմա. և գրէր գիրս յօդուածոյս, էր ինչ որ ի ստոյգ յիշողութենէ, և էր ինչ որ կարծողական բանք. – 164. Իսկ Սաղման յանձն առ գրել նմա. և գրէր գիրս յօդուածոյս, էր ինչ որ ի ստոյգ յիշողութենէ, և էր ինչ որ կարծողական բանք. – 164. Խոստացայ վերագոյնն գրել վասն Բուխայի մասնաւորաբար զվրիժուցն հատուցանել զպարտիս, այլ ոչ զբովանդակն: - 326 խոստացաւ տալ նոցա գանձս, գեօղս և ագարակս, գրել կնքել և կացուցանել նոցա վկայս - 230. մինչև եկից հասից ի լայնանիստ ընդարձակ ասպարէզս մատենից պատմութեանցս՝ ոճով մի ըստ միոջէ շարեցից, կարգեցից, գրեցից զախորժելին քեզ: - 74. Յայնժամ իբրև գիտացին երկոքին կողմանքն, եթէ ոչ զոյ հնար գտանել զելս իրացն և տալ խաղաղութիւն՝ ապա հաճեցան և հաւանեցան գրել առ թագաւորն. – 286. Յայնժամ Հայրակղէս գրէ առ Խոռեամ և ասէ. – 152. Յայսմ վայրի ոչ մտադիւր ախորժակօք գրեմ զճառս պատմութեանս, որ տրտմականքն, քան թէ ուրախականքն յառաջանան տիրել ինձ: - 384. Յապուշ կրթին միտք իմ զմտաւ աճել զաղետիցն, խորհրդածել գրել յիշատակարանս. լքեալ լինին ընթացք ձեռացս առ կորովութիւն գրաւորականիս. – 350. Յաւելում պատկանաբար գրել քեզ զարիական նահատակութենէն հանդիսական ժուժկալութեամբ ողջախոհաբար կրթութեամբ զզինուորական երկասիրութեամբն յօժարաբար դեգերել զմարզպանութեանն արդիւնաւորել անուանակոչութիւն: - 398. Նախ զի և լեզուքն շփոթեալք՝ունէին զանմիաբանութեան փոյթս, կամ թէ զի և վատութիւնք քաջաց ապիհարկեալք ոչ գրեցաւ ի մատենագրաց անտի Քաղդէացւոց – 44. Նոյնժամայն ի բարկութիւն ցասմամբ մեծաւ շարժեալ թագաւորն Սմբատ՝ գրէ առ Գուրգէն Անձաւացեաց տէր և առ Գագիկ Ապումրուան, ասէ. – 362. որ զջրհեղեղին իրս գուշակեաց Քսիւսիւթրեայ, և զառաջինս իւր գործոց բնաբանապէս գրել և դնել յաման պղնձի մաձեալ կապարով ի պահեստի ի Սիպարացւոց քաղաքին: - 36. որ կարի սիրելի է ինձ, մանաւանդ թէ յոլովից, կամ թէ ամենայն հաւատացելոց ի Քրիստոս՝ յերկարագոյնս առնել ի ճառիս զղեգերումն շահատակութեան, ձեզ լսել և ինձ գրել: - 76. Որգունակ և յաղագս փրկչական տնտեսութեանն գրէ Յոհաննէս ի կատարածի աւետարանական շարագրածին: - 302. Սահակս այս այն Սահակ է, որոյ հրամանաւ գրեաց մեծ վարդապետն Մովսէս տիեզերահռչակեալ քերթողն զգիրս Պատմութեան Հայոց մեծաց, հրաշազան յօրինուածով, սկսեալ յԱդամայ մինչ ի կայսր Զենոն. – 122. Քանզի որպէս գրեցաւն՝Ասուր ի Սեմայ շինէ զՆինուէ – 14. Նա ևս ծանօթագոյն քեզ գրեմ – 16. որպէս Պօղոսի հաճոյ

թուի գրել յառ Եբրայեցիս թղթին, թէ ,,չէ բաւական ժամանակս պատմելոյ,, վասն դատաւորացն Իսրայէլի և սրբոց մարգարէիցն – 302.

ԳՐԵԼԻ - Բայց առոգացեալ իմաստութեամբ իշխանաց իշխան՝ փութացաւ առ կատարումն գրելեացն Գուրգինի: - 322.

ԳՐԵՑԵԱԼ - որոց դատաստանն ի բնէ ոչ դատարկանայ ըստ գրեցելումն – 52. Քանզի թէպէտ և անվաւեր ի նոցանէ գրեցեալքն ասացան՝ այլ բազում ինչ և առ ճշմարիտն ստուերաբանեն – 18.

ԳՐԷԹԷ Տե՛ս ԳՐԵԹԷ

ԳՐԻԳՈՐ - և քարոզքն բարձրացուցանէին զերգսն մեծ և սաստիկ զոչմամբ, եթէ տուաւ իշխանութիւն Վասպուրական աշխարհին Աշոտոյ և որդւոյ իւրոյ Գրիգորի. – 314. և սկիզբն լինել լուսաւորութեան Հայոց աշխարհիս ի ձեռն մեծին Գրիգորի Լուսաւորչին: - 94. Անդ հանդիպեալ լինէր և երանելի եպիսկոպոսն Գրիգոր Ռշտունեաց վսամ. ոչ կարաց իւրայնովքն զերծանել, իբրև յայնժամ առողթաւ/հավանաբար ,,աղօթել,, բայն է / ի լեառն: - 358. առատապէս հեղեալ զգութ … և ի ձեռն հովուապետին սրբոյն Յովհաննիսի եպիսկոպոսի և ճգնաւոր քահանայի Գրիգորի, որք միշտ զողորմութեանց խնդրուածս վասն ժողովրդեանն տեառն ի վեր առաքէին, զոր օրինակ և հրեշտակն տեառն աղերսէր Աստուծոյ, ասէ – 314. Բայց Գրիգոր կեցեալ յետ դարձին իւրոյ զմի ամ՝ մեռանի իւրով մահուամբ: - 310 Բայց երանելի հայրապետն Տէր Գէորգ սաստկագոյն քան զտիեզերական կործանմանն առ Նոյիւ բերելով զտրտմութեանն թախիծս, հանդերձ եպիսկոպոսիւն Գրիգորիւ՝ զաբրահամեանն վաղնջուց աղաչանսն ի կործանմանն Սոդովմայ յառաջաբերեալ մարդասիրին Աստուծոյ. – 358. Բայց հրաման ետ Դերանիկն Գրիգոր հարազատի իւրոյ ի նոյն տանէ Արծրունոյ, և կալաւ զնա և եդ ի յամուրսն Սևան. և հրամայեաց Հասանկան քեռորդւոյն իւրոյ՝ պահել զնա յընդարձակի: - 342. Գեղեցիկ էր և տեառն Գրիգորի Արծրունւոյ՝ ոչ անփոյթ առնել և զիւրոյ համանուանն զսրբոյն Գրիգորի առնուլ յանձն զխաւարամուտն լինել ի խորին խաւարային վիրապն կապանօք հանդերձ. – 250. Գեղեցիկ էր և տեառն Գրիգորի Արծրունւոյ՝ ոչ անփոյթ առնել և զիւրոյ համանուանն զսրբոյն Գրիգորի առնուլ յանձն զխաւարամուտն լինել ի խորին խաւարային վիրապն կապանօք հանդերձ. – 250. գրէ առ սուրբ եպիսկոպոսն Գրիգոր Ամատունեաց տանն … գտանել զելս իրացն եկեալ հասեալ հինին. – 400. ելեալ իշխանքն Հայոց յանձնիւր տեղեաց գնացին յանդիման լինել նմա, Դերանիկն, տէր Գագիկ և տէր Գրիգոր և միւս այլ տէր Գրիգոր Վասպուրական իշխան, Աշոտ կորապաղատ Հայոց իշխան, Մուշէղ իշխանն Մոկաց, Շապուհ եղբայր իշխանաց իշխանի և Ապլբառ Կայսիկ Ապահունեաց բռնաւորն և այլք ոմանք: - 340 ելեալ իշխանքն Հայոց յանձնիւր տեղեաց գնացին յանդիման լինել նմա, Դերանիկն, տէր Գագիկ և տէր Գրիգոր և միւս այլ տէր Գրիգոր Վասպուրական իշխան, Աշոտ կորապաղատ Հայոց իշխան, Մուշէղ իշխանն Մոկաց, Շապուհ եղբայր իշխանաց իշխանի և Ապլբառ Կայսիկ Ապահունեաց բռնաւորն և այլք ոմանք: - 340. Եւ յաջորդեալ փոխանակ նորա կացեալ յաթոռ սրբոյն Գրիգորի երանելին Մաշտոց, ելեալ ի կղզոյն Գեղարքունի լճէն, զՅօհաննու Կարապետին զվարուցն բերեալ զօրինակ. – 376. և զիշխանն Աշոտ և զորդի նորա Գրիգոր և զՎահան Արծրունի և զորդի նորա Գագիկ … և զՄուշեղ եղբայր Վահանայ և զտիկնայս նոցա և զտիկինն Հրանուշ և զայլս յազատատանէ կապեալ և բարձեալ ի վերայ ուղտուց՝ վտարեաց ի Սամառայ – 220 և զՀրէայսն որ յաւուրց սրբոյն Գրիգորի հաւատացեալ էին ի Քրիստոս՝ վարեն ի գերութիւն, աւելի վտանգ նոցա քան այլոց Հրէիցն հասուցանելով վասն ի Քրիստոս հաւատոցն: - 104. և ընդ նմա Գրիգոր որդի Վասակայ, և սա նմանապէս ոգեզուարճ իմաստութեամբ առ լցեալ հոյակապ և անուանի ի մէջ Հայկականացս և ցանկալի լսողացս և ուրախարար տեսողաց. – 344. և թողեալ զբնակելն ի Դուինն՝ ելեալ բնակեցաւ ի Նոր քաղաքին ի մեծ եկեղեցւոջն որ յանուն սրբոյն Գրիգորի շինեալ էր երանելւոյ տեառն Ներսիսի երկրորդի Հայոց կաթողիկոսի: - 358. Եւ ինքն զԳրիգոր եղբօրորդի իւր հանդերձ ընտրելովք ոմաբք զօրաւորօք վառեալ ի զէն և յասպազէն արք

Մ, զոր զգացուցին Աշոտի. – 330. ԵՒ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆՆ Ի ՔՐԻՍՏՈՍ ՏԵԱՌՆ ԳՐԻԳՈՐԻ ԱՐԾՐՈՒՆԻՈՅ ԵՒ ՏԵԱՌՆ ՅՈՎՀԱՆՆԻՍԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԱՐԾՐՈՒՆԵԱՑ ԵՒ ԳՐԻԳՈՐ ՔԱՀԱՆԱՅԻ, ԵՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՆՈՑԱ: - 240. ԵՒ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆՆ Ի ՔՐԻՍՏՈՍ ՏԵԱՌՆ ԳՐԻԳՈՐԻ ԱՐԾՐՈՒՆԻՈՅ ԵՒ ՏԵԱՌՆ ՅՈՎՀԱՆՆԻՍԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԱՐԾՐՈՒՆԵԱՑ ԵՒ ԳՐԻԳՈՐ ՔԱՀԱՆԱՅԻ, ԵՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՆՈՑԱ: - 240. և հանին զնա յարգելանէ բանտին, պատանդ թողեալ նմա զԳագիկ որդի Դերանկին և որդի Գրիգորի Արծրունոյ: - 348. և հրովարտակ արքայի ի ձեռս քարոզչացն, թէ յղեաց արքայ զԳրիգոր որդի Աշոտոյ յերկիր իւր՝ տիրել աշխարհի իւրոյ փոխանակ հօր իւրոյ: - 314. և մկրտեալ սուրբ և անբիծ խոստովանութեամբ ի Հայր և յՈրդի և ի սուրբ Հոգին, ի ձեռն մեծին Գրիգորի հանդերձ ամենայն նախարարօքն Հայոց մեծաց: - 94. Եւ յայսմ պատերազմի ոչ միայն երանելի եպիսկոպոսն և ճգնաւոր քահանայն մարտակից էին տեառն Գրիգորի, այլ և զօրք հրեղինաց – 252. և յանկարծակի ի մէջ գիշերին Գրիգոր ախոյեանայարձակ դիմեալ շուրջանակի փակեցին ի ներքս զբանակն, սրով և աղեղամբ / 330/ վէրս մահաբերս ի վերայ եդեալ՝ յոլովք անկան ի զօրուէն. - 332. Եւ քանդեն աւերեն զմեհեանն և յատակեալ զտեղին՝ շինեն նորին քարամբք զմեծ եկեղեցին զսուրբ Գրիգորն ի Բլուր տեղւոջն – 126. զի յինքեանս գրաւեալ ընդ հարկաւ ծառայեցուցանէին զպաշտօնեայս սրբոյ Խաչին, մանաւանդ զի և զգլխաւոր վանացն զհայրն, որում Գրիգոր անուանէր՝ զնա կալեալ եդեալ ի խորափոր խաւարային բանտի: - 334. զոր շինեալ էր սրբոյն Գրիգորի ի վերայ գեաւղջն Ահևականից ի կատարածի լուսաւորութեանն Հայոց: - 334 զոր շինեալ էր սրբոյ Լուսաւորչին մերոյ Գրիգորի ի դառնալն նորա ի ձեռնադրութենէ քահանայապետութեանն: - 100. զոր շինեալ էր սրբոյն Գրիգորի – 104. էր ընդ իշխանսն և մեծ իշխանն Վասպուրական Աշոտ, որդի Դերանկին, և ընդ նմա Գրիգոր իշխանն Մոկաց և զօրքն Անձաւացեաց: - 380. Ընդ նոսին և երանելի եպիսկոպոսն Յոհաննէս և ճգնաւոր քահանայ Գրիգոր – 324. Ընդ որ ոչ հաճոյացեալ Գուրգէնայ երթալ ի Յոյնս. բայց հաւանեցուցեալ զԳրիգորն տալ զբերդն ցզօրավարն, և հաճեսցի զմիտս թագաւորին: - 302. Ի ժամանակին յայնմիկ էր ճոխացեալ պանծալի աթոռակալութեամբ սրբոյն Գրիգորի տէր Քրիստափոր Հայոց կաթողիկոս. - 130. Իբրև գիտաց բռնաւորն, եթէ յաղթեցաւ ի սրբոց արանցն, մանաւանդ ի քաջէն Գրիգորէ – 250. Իսկ Գրիգորի ոչ բերելով զընդդիմակացսն նորա կատարել՝ խօսի ընդ նմա սիրով խաղաղութեան, և բաժանել զաշխահս յերկուս՝ տեղի ետուն միմեանց ի խաղաղութիւն: - 310. Իսկ երիցս երանելի սուրբքն տէր Յոհաննէս Արծրունեաց եպիսկոպոս և երանելի քահանայն Գրիգոր և տէր Գրիգոր Արծրունի խրախուսեալք յԱստուած, կացեալ յատենի ի մեծ ասպարիսի հոգևորական պատերազմին – 250. Իսկ երիցս երանելի սուրբքն տէր Յոհաննէս Արծրունեաց եպիսկոպոս և երանելի քահանայն Գրիգոր և տէր Գրիգոր Արծրունի խրախուսեալք յԱստուած, կացեալ յատենի ի մեծ ասպարիսի հոգևորական պատերազմին – 250. Իսկ զկնի վերանալոյն Քրիստոսի, յետ ԺԵ աւուր, ապա հասանէր Գրիգոր ի քրիստոսակոչ կատարումն. – 254. իսկ զՆախճաւան քաղաք և զԳողթն գաւառ հանեալ էր ի Վասպուրականէ բազում ժամանակօք յառաջ, ՄԺԱ ամօք, յամի այրման եկեղեցւոյն Գրիգորի և վտանգաւոր մահու զօրացն Հայոց: - 390. Իսկ ի չորրորդ ամին դարձեալ ի բարձրագոյն քան զառաջինն կազմեալ զմեքենայս չարին արկանել զԳրիգոր ի քուրայս նեղութեան. – 252. Իսկ հաւատացելեցն տեսեալ, եթէ բարի խոստովանութեամբ ննջեաց տէր սուրբ Գրիգոր՝ գոհութիւն մատուցանէին ամենազօրին Քրիստոսի – 254. Իսկ տէր Գրիգոր ի մէջ մարդակերպ գազանաց ի ժողովս խուժադուժ բարբարոսաց բնակէր, որ ևս չար քան զթունաւոր գազանս են առ մեզ – 252. յայնժամ հրամայեաց ածել առաջի իւր զԱշոտ և զորդի նորա Գրիգոր: - 314. Յայնժամ ելեալ իշխանն Գրիգոր յերեսաց արքայի մեծաւ ուրախութեամբ և անպատում խնդութեամբ՝ և եկն եմուտ յերկիր իւր յիշխանութիւն Վասպուրական կոչեցեալ: - 314. Յայնժամ ետուն զոտս նորա ի կապանս երկաթիս, և ընդ նմա զտէր Գրիգոր Արծրունի – 238. Յետ անցանելոյ չորից ամաց … դարձեալ Գրիգոր եղբայր Աշոտի Վասպուրական իշխանի յԱփհազաց աշխարհէն՝

նոցուն օգնականութեամբ և Վրաց զօրու ընտիր գոլով՝ եկն եմուտ յաշխարհս Վասպուրական՝ տալ պատերազմ ընդ Գուրգինայ.–310. Յետ բառնալոյ թագաւորութեանն ի տանէն Արշակունեաց, և հայրապետութեանն ի տանէն սրբոյն Գրիգորի՝ Ղևոնդ ոմն աշակերտ սրբոյն Մաշտոցի տեղապահ լինէր սրբոյն Սահակայ, և Յովսէփ եպիսկոպոս և Մովսէս և Մեղէս: - 120. յոյժ վայելուչ էր և երանելի քահանային Գրիգորի՝ միաբանել ընդ նոսա և լնուլ զերրեակ թիւն – 250. որոց անուանք ճանաչի սոցա՝ տէր Սմբատ սպարապետ Հայոց, և Գրիգոր Քուրդկայ որդի Մամիկոնէից տէր, և Ատրներսեհ /296/ Աղուանից իշխան, և Գրիգոր Սիւնեաց տէր – 298 որոց անուանք ճանաչի սոցա՝ տէր Սմբատ սպարապետ Հայոց, և Գրիգոր Քուրդկայ որդի Մամիկոնէից տէր, և Ատրներսեհ /296/ Աղուանից իշխան, և Գրիգոր Սիւնեաց տէր – 298. որք հեղին զարիւնս իւրեանց … և վասն ճգնութեան երանելոյն Գրիգորի Արծրունոյ քաջ նահատկին, յաղթող վկային, խոստովանողին Քրիստոսի – 314. Փութանակի և վաղվաղակի իւրաքանչիւր զօրօք անդր հասանէին … և ի տոհմէն Արծրունեաց՝ Վահան և Վասակ և Մուշեղ և Ապուպէլճ և Գուրգէն և Վասակ և Ապուջափր և Մուշեղ և Ապումայեայ և Վասակ և Վահան և Համազասպ և Վասակ որդի Գրիգորի և Ապումկդէմ և Մեհուժան և Գրիգոր – 174. Փութանակի և վաղվաղակի իւրաքանչիւր զօրօք անդր հասանէին … և ի տոհմէն Արծրունեաց՝ Վահան և Վասակ և Մուշեղ և Ապուպէլճ և Գուրգէն և Վասակ և Ապուջափր և Մուշեղ և Ապումայեայ և Վասակ և Վահան և Համազասպ և Վասակ որդի Գրիգորի և Ապումկդէմ և Մեհուժան և Գրիգոր – 174. Փութանակի և վաղվաղակի իւրաքանչիւր զօրօք անդր հասանէին … ի տոհմէն Գնունեաց Գրիգոր որդի Հազրի Զ այլ ևս հարազատօք և զօրօք իւրեանց. ի տոհմէն Ընտրունեաց Արտաւազդ Է հարազատօք և զօրօք իւրեանց. – 174. Փութանակի և վաղվաղակի իւրաքանչիւր զօրօք անդր հասանէին՝ իշխան Աշոտ և եղբարք իւր Գուրգէն և Գրիգոր զօրօք իւրեանց – 174. Քանզի և ի ժամու անդ յորում զմեծն Գրիգոր առեալ տանէին ի քաղաքն Կեսարացւոց ձեռնադրել զնա ի քահանայութիւն, ի լուսաւոր վարդապետութիւն աշխարհիս Հայոց – 94. Քանզի սուրբ Գրիգոր Հայոց լուսաւորիչն ասէր, թէ ,,ի մէջ օձիցն էր բնակութիւն իմ, և կոտռային զանդամօք իմովք,,: - 252.

ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ - Գեղեցիկ էր և տեառն Գրիգորի Արծրունւոյ՝ ոչ անփոյթ առնել և զիւրոյ համանուանն զսրբոյն Գրիգորի առնուլ յանձն զխաւարամուտն լինել ի խորին խաւարային վիրապն կապանօք հանդերձ. – 250. ԵԻ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆՆ Ի ՔՐԻՍՏՈՍ ՏԵԱՌՆ ԳՐԻԳՈՐԻ ԱՐԾՐՈՒՆԻՈՅ ԵԻ ՏԵԱՌՆ ՅՈՎՀԱՆՆԻՍԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԱՐԾՐՈՒՆԵԱՑ ԵԻ ԳՐԻԳՈՐ ՔԱՀԱՆԱՅԻ, ԵԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՆՈՑԱ: - 240. և հանին զնա յարգելանէ բանտին, պատանդ թողեալ նմա զԳագիկ որդի Դերանկին և որդի Գրիգորի Արծրունոյ: - 348. Իսկ երիցս երանելի սուրբքն տէր Յոհաննէս Արծրունեաց եպիսկոպոս և երանելի քահանայն Գրիգոր և տէր Գրիգոր Արծրունի խրախուսեալք յԱստուած, կացեալ յատենի ի մեծ ասպարիսի հոգևորական պատերազմին – 250. Յայնժամ ետուն զոտս նորա ի կապանս երկաթիս, և ընդ նմա զտէր Գրիգոր Արծրունի – 238. որք հեղին զարիւնս իւրեանց … և վասն ճգնութեան երանելոյն Գրիգորի Արծրունոյ քաջ նահատկին, յաղթող վկային, խոստովանողին Քրիստոսի – 314.

ԳՐԻԳՈՐԷՍ,ԳՐԻԳՈՐԻՍ - Առ սոսա գնացեալ Գրիգորէս երեց որդին Վրթանայ՝ քարոզեաց նոցա զբանն կենաց. – 274. յորոց և զկատարումն մարտիրոսական ի նոցունց բարբարոսաց ընկալաւ սուրբն Գրիգորիս ի Վատնիանեայն դաշտին: - 274.

ԳՐԻԳՈՐԻՍ Տե՛ս ԳՐԻԳՈՐԷՍ

ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ - և սկիզբն լինել լուսաւորութեան Հայոց աշխարհիս ի ձեռն մեծին Գրիգորի Լուսաւորչին: - 94.

ԳՐԻԳՈՐ ՔԱՋԲԵՐՈՒՆԻ - Փութանակի և վաղվաղակի իւրաքանչիւր զօրօք անդր հասանէին … և այլք ի նախարարացն Վասպուրական իշխանին, Սմբատ Ապահունի, Գրիգոր Քաջբերունի, Վահան Հաւնունի, սեպուհն Դաւիթ, Գազրիկն Ապուհարազ, Թոդորոս Վարազն, Խոսրով Վահևունի, Խոսրով Ակէացի, Վարդան Գաբայեղէն, Սմբատ

Մարացեան, սեպուհ մի Սահակ, Պատրիկն Անձևացի, Գորգ Հարմացի, Դաւիթ Գունդսաղար. – 174.

ԳՐՈՒԽ - անդ հասեալ քաջացն մերոց եղբարցն երեցունց ազատագունդ սակաւաձեռն գրոհիւ ի ձմեռնային ժամանակի, և ընդ լրթնատեսիլ լուսոյն վազս ի վերայ եղեալ՝ հանին ընդ սուր յոլովս քան թէ սակաւս: - 372. և Ահմատայ ընդ մէջ փակեալ զղաշիկն՝ յանխնայ հարուածովք հարին, մանաւանդ զհետևակազօր գրոհսն և զգռեահսն որք ընդ նոսա. – 368. այլ տուն Քրիստոսի սուրբ առաքեալքն են և ասին այլոց սրբոց գրոհիւք. – 394. Եւ թէպէտ տածէր և խնամէր Գագիկ աշխարհս՝ այլ ոչ ուրախ լինէին ի նա ազատատերանցն գրոհք, և կացին ի տարակուսի: - 354.

ԳՐՈՒԱՆ - և զի մի՛ ճրագն եօթնաստեղն ընդ գրուանաւ զփայլումն լուսոյն ծածկիցէ – 204.

ԳՕԳԵԱՆ - Իսկ սերունդք Ասուդայ Սանասարեանց կային յոր պէտս և դիպուածն պատահէր, երբեմն այսպէս և երբեմն այնպէս. Շաւարշ. Գօգեան. Շաւասպ. Պերոզ. Շահակ. Կիւրոս: - 72.

ԳՕՏԻ - ամենայն հնարիւք խորամանկութեամբ կապեալ անլոյծ գօտեամբ ընդ ոգւոյ երիցս թշուառականին – 248. և ետ բերել նմա ըստ օրինի գլխապետութեան սուսեր իշխանական ընդ մէջ արկեալ և գօտի արիական շրջապատեալ զմիջաւ, քուքք խիզախողք և երիվար բարձրավիզ, ոտնատորոփ, խրոխտալիր, յարմարական առ ընթացս պատերազմականս: - 308. զոր ոմանք հուր մեկնեալ յամպոյ ասացին, և որդիք տարրապաշտիցն՝ գօտի Արամազդայ: - 32. Իսկ եթէ Բէլ հրամանատու Արամազդայ իցէ՝ զիա՞րդ իցէ, զի Արամազդ ի գօտոյ իւրմէ խաշիցի հրամանաւ Բէլայ. – 32. ուր զսեղանն սուրբ և զգաւազան հովուական և զմատանին պատկերեալ և զգօտին աշխատասէր միջոյն թողեալ ի հանապազորդ յիշատակ լուսաւորութեանն մերոյ հօրն: - 104.

Դ

Դ /թիվ՝ չորս/ - /թագաւորեաց/ Յեզիտ ամս Զ … Մահմետ որդի Ահարոնի և կնոջ Զուպետայ ամս Դ. Մայմաւն եղբայր նորա ամս ԻԱ. - 168. Արդ են թագաւորք Ասորեստանեայց ի միւսմէ կողմանէն այսոքիկ … Ներեղիբոս ամս Դ … Նաբուպաղսարոս /60/ ամս Ի … Ներիգղիսարոս ամս Դ: - 62. Գործեցաւ այս ՅՕԱ թուականութեանս Հայոց և ի Դ ամի հայրապետութեանն Յօհաննու Հայոց կաթողիկոսի: - 382. Եւ եղև ի վախճանելն Խոսրովու Հայոց թագաւորի, որ եկաց ի տերութեանն ամս Դ – 114. և ետուն ի սուրբ եկեղեցին Դ ագարակս. զվանքն Փշոց և զագարակն Ահավանք, յանդիման եկեղեցւոյն որ ի կղզին, և զքարն Մանակերտ, որ է հանդէպ հարաւոյ կուսէ, և զԲերկրի և այլ բազում տեղիս – 356. Եւ կացեալ Շաւասպ առ կայսեր ամս Դ: - 116. Իսկ նորա տուեալ զնա ի կղզիս Ռվկիանու վախճանի անդ, թագաւորեալ ամս Դ: - 110. լեալ ամաց ԻԹ՝ փոխի յաշխարհէս յամսեանն արեգ, որ օր Դ էր ամսոյն յաւուր երկշաբաթուջ ի յիններորդ ժամու աւուրն. – 384. քաջավայելչագոյնս զթագաւորութեանն կատարելագործեալ զժամանակն, Ե ամ յիշխանական ճոխութեան, ԻԵ ամ յիշխանաց իշխանական պետութեանն, Դ ամ ի թագակապ շքեղութեանն. – 356.

ԴԱ - ,,ընդէ՞ր լքանես զձեռն քո և ընդ արութիւն դոցա խառնես վատութիւն և առնես զօրացեալ ի վերայ քո ամենայն աշխարհաց – 282. արդ զրաւ եղիցի կենաց դորա, և հրաման արքայիդ դիւրաւ զկատարումն առնուցու,,: - 104. Բայց ապա հաճոյ թուիցի ձեզ՝ ի բաց կալ ի դոցանէ և միաբանել ընդ իս. – 138. դա աւադիկ արմատ դառնութեան ի վեր երևեալ, և

բազումք պղծին նովաւ: - 254. ահա դոքա են յորդւոց ազգի Սենեքերիմայ ի Նինուէ – 82. և ամենայն ուրեք դա է պատճառ ապստամբութեան Հայոց յարքայից արքայէ. – 104. Եւ մինչ կարի և ահագին սաստիկս կուտեցաւ ի վերայ նորա ամբոխն, և ամբաստանքն միաբարբառ զաղաղակ /288/ բարձեալ առաջի բռնաւորին զօձիս պատառեալ ասէին, ,,մահապարտ է, չէ պարտ դմա կեալ, և ոչ առնուլ տեղի պատասխանւոյ,, - 290. Եւ որք ոչ այսոցիկ նման՝ լուան ի Տեառնէ՝ մի մնասցէ ոգի իմ ի մարդկանդ յայդմիկ յաւիտեան, վասն լինելոյ դոցա մարմին. այսինքն մարմնասէրք և ոչ հոգիասէրք: - 30. մերժել հեռանալ … և որ այլ քաղցրագոյն վայելք ընդ երկնաւս ի վերայ երկրի, պայծառ գեղ արեգական և լուսնի, հանդերձ աստեղացն ճոխագործութեամբքն ընդ տարերք երկնի յեղյեղլով, ծովու և այլոց ցամաքայնոց, և ջրայնոցն բարեփառ հոլովմանցն հրճուանաց, և որ ինչ ընդ այլք ընդ դոքօք պատկանին յարմարաբար տնտեսութիւնք առ սկզբնատիպն պատկերակերպութիւն: - 386 Յայնժամ խորհուրդ միաբանութեան ի մէջ առեալ ամենեցուն նոցա ասեն. ,,թէպէտ և ի թշնամեացն ապրեցաք՝ սակայն ի ձեռաց դորա մեզ չիք ապրել. արդ եկայք իմասցուք ինչ,,: - 150.

ԴԱԴԱՐ - Իսկ զօրավարն Բուխայ կայր ի կոր կործանմանն, ի տարակուսանս ըմբռնեալ փղձկէր ի միտս իւր, ցնորակոծ լինէր, հնարէր ելս իրացն գտանել ի վրանայարկն փակեալ, և ոչ առնոյր դուլ և դադար: - 282. խոկայր և մտախորհ լինէր և վասն այլոց աշխարհաց և աշխարհակալաց չառնուլ դուլ և դադար – 268.

ԴԱԴԱՐԵԼ - Բայց խռովիչքն ատեցողքն խաղաղութեան ոչ դադարէին նիւթել զհակառակս բարւոյն և զաճմունս չարին. մանաւանդ Վասակ որ զկարծեալ իշխանական անունն յինքեան բերէր: - 310. և երթեալ ի թաւ պուրակս բուրաստանացն, մտեալ ի ներքոյ թաւ թփոյ ծաղկոցն որ էր մուրտ բազում ղուղեալ դադարեաց: - 152. և հիացմամբ առ նորայն հայելով, թէ ո՛վ ոք էր, և ո՛րպիսի, և ո՛րպէս կորեաւ՝ ասեն, ,,զիա՛րդ դադարեաց պահանջողն, հանգեաւ տագնապոյն. եթէ ո՛րպէս իջին ի դժոխս փառք նորա,,: - 376. և նա երթեալ առանց մեր հրամանի թագաւորեաց, և զմեր գանձս մեզ ընծայ մատուցանէ, ոչ գիտելով եթէ համարս խնդրեցից գանձիս այսմիկ, և ոչ դադարեցից մինչև առից զնա ի բուռն իմ,,: - 142. ծփայր ի խորհուրդս իւր իբրև զծով, որ ոչ դադարէ զալիսն յուզելոյ. – 268. որք ի դադարել հալածանացն՝ զամենայն ի զոհելոյ կռոցն ոչ ընդունէր զապաշխարողսն: - 256. քանզի ասեն զկնոջէն, յորմէ նեռնն է ծնանելոց՝ ճանապարհորդել յԵգիպտոսէ յաշխարհն Պաղեստինացւոց, և ցանկացեալ տեսանել զարձան կնոջն Ղաւտայ երթեալ դադարէ անդ հանգստութեամբ. – 158. Այլ չարիմացն հայր կոչեցեալ Մարդպետ և բնաւորեալ խորհրդոցն չարին ոչ երբէք դադարէր: - 98.

ԴԱԴԱՐԵՑՈՒՑԱՆԵԼ - Իսկ թագաւորն իբրև գիտաց զընդխառնել ընդ միմեանս զօրացն, կամեցաւ մի՞թէ արդեօք կարասցէ դադարեցուցանել զմաքառումն. – 368. որով փոքր մի ցածուցին զլեռնացեալ ալիսն, և զկոհակսն մրրկալիցս դադարեցուցին և զգազանութիւն բռնաւորին յընտանութիւն ածին: - 234.

ԴԱԴԱՐՈՒՄՆ - Եւ դադարումն լինէր յաւուրս սորա հինից և ասպատակաց ի վերայ երկրիս, և քաջավայելչապէս բարեձևանայր կարգ սրբոյ եկեղեցւոյ Քրիստոսի, և երկիւղ և կասկած և ոչ ուստեք: - 338.

ԴԱԼԱՐԱԲԵՐ - և հովիւքն տաւաղելով զգառինսն քշէին ի դալարաբեր հովիտն – 268.

ԴԱԽՂԻՃ - և երթեալ ի բուրաստանն՝ գտին զնա ի թաւի անդ ղուղեալ, կալան զնա և եկին ածին զնա ի դախղիճ անդր: - 152.

ԴԱԿՈՒ - զոր և սուրբքն ասեն, եթէ ձայն դակուացն և բախումն խմբիցն առ ի հեղուսել զփայտսն՝ /28/ այնպէս իբրև յորոտման ամպոյ յամենեցունց հնչէր լսելիս, ի մօտաւորս և ի հեռաւորս, առ ի յերկիւղ և ի զգուշութիւն անզգամ ազգին, թերևս դարձցին և կեցցեն. – 30.

ԴԱՀԵԿԱՆ - և տայր զօրավարին և իշխանացն ամենեցուն պարգևս մեծամեծս, և բաշխէր զօրացն ամենեցուն դահեկանս ի խռոկս, և ճաշս և ընթրիս ուրախութեան կազմէր ամենայն զօրացն մինչև է օր: - 144.

ԴԱՀԻՃ - այն ինչ սուր ի վերայ բերեալ դահճին՝ ձայնէ բարձր և ասէ. – 222. Բայց երանելիս այս Գէորգ … դարձաւ ի դահիճն կոյս պատճառաւ աղաչելութեան՝ տեսանել, թէ ընդէ՞ր ոչ հատանիցէ սուսերն – 266. Բայց երանելիս այս Գէորգ, մինչ կայր ընդդէմ սրոյն և դահիճն ծեծէր իբրև զանզգայ ինչ, և ոչ փոքր մի գիծ կարացեալ հարկանել ի մարմին սրբոյն զխոցումն սրոյն – 266. Եւ առեալ դահճացն զերանելին՝ ածին ի տեղի սպանմանն. – 296. Եւ հրամայեաց Բուխայ դահճացն՝ բառնալ զգլուխ նորա. – 272. և առեալ դահճին զսուրն՝ եհար զերանելին և եհատ զգլուխ նորա, և նոյնժամայն /գրքում՝ նույնժամայն/ աւանդեաց զոգին ի ձեռս Աստուծոյ: - 294. և դահճացն հանեալ զսուսերն՝ դիմեցին ի վերայ նոցա իբրև զգազանս արիւնարբուս, և ծեծէին սրովն, իբրև ոք զի հատանիցէ փայտ ի մայրս անտառախիտս հարեալ կացնաւ, և յանխնայ անողորմ յօշէին անդամ անդամ: - 266 Եւ զձեռս յերկինս համբարձեալ, ունելով զպարանոցն առաջի դահճացն. – 206. Եւ ըստ հրամանի բռնաւորին դահճացն ձգեալ ի նա նետս շուրջանակի՝ աւանդեաց զոգին ի փառս Աստուծոյ երանելի նահատակն Քրիստոսի: - 292. և հարեալ զպարանոց դահճին՝ ի բաց առ զգլուխ նորա: - 268. և մատուցեալ զպարանոցն առ դահիճն՝ եհատ զգլուխ նորա – 296. և ոչ առ փոքր մի ինչ ներեաց կամ անսաց /264/ տալ տեղի պատասխանոյ, այլ հրամայեաց դահճացն տալ ի վերայ նորա զվճիռ մահու, փութով զրաւ առնել նոցա ի սատակումն սրոյ: - 266. Իսկ սուրբն ելեալ հանդերձ դահճօքն ի տեղի ասպարիսի կատարմանն երկնաւոր նահատակութեանն՝ ի ծունր իջեալ կայր յաղօթս – 206. մինչև զայրանալ դահճացն, և խուռն ի վերայ դիմեալ ի մեծ հրապարակին՝ հարին սրով զերանելին և ի բաց առին զգլուխ նորա – 224. նորա լուեալ էր ի պարսկէ ումեմնէ, ի ձորոյն Շատուանոյ, որ էր ընդ դահիճսն, և ի սկզբան վկայութեան մինչ ի կատարումն սրբոյն՝ ի տեղւոջ անդ հանդիպեալ լինէր – 206.

ԴԱՄԱՍԿՈՍ - Բայց տուաւ յաղթութիւնն այն մեծ ի ձեռն զօրավարին Ապումուսէի, զի լցցի զոր ասաց Տէր ի բերանոյ Ամովսայ Մարգարէի, „խորտակեցից զնիզակս Դամասկոսի„ , որում այժմ Դմիշկն կոչեն, ուր ելին զհետ Բուխայի: - 286 և թագաւորութիւնն Ասորեստանեայց նուաղեալ՝ բռնակալք ոմանք կացին ի նոցանէ ի կողմանս Դամասկոսի: - 58. և ինքն գնացեալ ի Միջագետս՝ հնազանդեցուցանէր ինքեան քաջութեամբ զԵմաթ և զԱրբաթ և զամենայն կողմանս Դամասկոսի և Կիւլիկեայ և զայլ բազումս: - 60. որ ի կողմանս Դամասկոսի կացեալ՝ ոմանք թագաւոր ասէին զինքեանս, և այլք յԱսորեստանի կացեալ՝ զինքեանս ասէին թագաւոր, մինչև ի ժամանակս Աբդլայի – 168. որ յառաջագոյն՝ հատուածեալք ի կողմանս Դամասկոսի և Նինուէի – 60.

ԴԱՄԲԱՆԱԿԱՆ - վասն զի իմ ոչ բերեալ ոյժ առ այսքան եկեալ հասեալ աղետիցս զդամբանականն երգել երգս: - 352.

ԴԱՅԵԱԿ – Դայեկին /գրքում՝դահեկին/ նորա մնալով ի ներքոյ կախաղանին՝ ամփոփէ /102/ զսուրբ գանձն ի ծոց իւր, տարեալ փոխէ ի վկայարան հանգստի ի ձեռն սրբոյն Ներսէսի – 104. Իսկ Աշոտ եղբայր Վաչէի քանզի էր մանկագոյն տիովք՝ առեալ դայեկին իւրոյ մատուցանէ առաջի Երուանդայ – 84.

ԴԱՅԵԿԱԲԱՐ - ասէ՝ զի դայեկաբար զորդիսն Սանատրկոյ սնուցանէաք, և դու ի թագաւորելդ քոյ որոյ երդմունս արարեալ յԱրտեմի և յԱրամազդ անկասկած կալ մնալ վասն որոյ երկիւղն ունէր: - 82.

ԴԱՆ - և ի նիրհելն իւրում՝ ձայնէ հոգին աւտար ի բերանոյ կնոջն քարացելոյ եթէ՝ ծնցիս որդի աշխարհակալ. որ և ի պոռնկութենէ յղացեալ իսկ էր դուստր ցեղի Դանայ: - 158.

ԴԱՆԳ - այս այն Աբդլայն է, զոր ազգ իւր ասացին Աբդլանգէ, այսինքն ծառայ դանգի և ոչ Աստուծոյ, վասն սաստիկ զօշութեանն և անյագ ագահութեանն: - 168.

ԴԱՆԴԱՂԵԼԻ - Բայց ինձ ոչ դանդաղելի կամ պատկառելի կամ մեղանչելի է զուգակշիռ նահատակելոցն նահատակակից վարկանել զսա և մարտիրոսականաւն զսորայս դրուատել ճգնողական մրցմունս – 300.

ԴԱՆԴԱՂԻԼ - ահաւասիկ կամ, մի դանդաղիր կատարել՝ զոր ինչ կամիս առնել„: - 296.

ԴԱՆԴԱՂԿՈՏ - ,,եթէ հաճոյ թուիցիմ քեզ կնութեան, և դու կամիցիս քեզ զտիրելն Անձաւացեաց՝ մի վեհերեալ յապաղելով դանդաղկոտ լինիր և վերջանար զփութալն,,. – 324.

ԴԱՆԴԱՋԵԱԼ - զի Նեստորականացն /գրքում՝ Նստորականացն/ և Քաղկեդոնականին է այս իմացմունք այլովքն ևս երկաբնակօք, որք բանին՝ տուն և տաղաւար զառ ի կուսէն առեալ մարմին դանդաջեալ ասացին, և ոչ միութեամբ բնութեամբ բանին մարմին լինելով. – 394.

ԴԱՆԻԷԼ - Աստանօր և ի դէպ ելանէ մարգարէութիւնն Դանիէլի, տեսութիւն անհեդեդ պատկերին բազմախառն նիւթօքն ի վերայ խեցեղէն և երկաթեղէն ոտիցն: -156. զոր գործեաց ընդ սուրբսն Վրթանէս և Յուսիկ և ընդ քահանայն մեծ Դանիէլ – 98. նմանապէս զնոյն ընծայեցուցանէ Դանիէլ: - 314. Որպէս ընթեռնուս ի գիրս մարգարէականս զհանգամանս այսոցիկ. որպէս և ի վեցերորդ տեսլեանն Դանիէլի և Զաքարիայի բանագործութեանն – 398. վասն որոյ պարծանօք իմն խնդալից սրտիւ ասէ թագաւորն Դանիէլի – 38.

ԴԱՇԻՆՔ - և առ ինքն ժողովեալ նախարարքն Հայոց՝ դնեն ուխտ և դաշինս աստուածայինս, միջնորդութեամբ սուրբ Աւետարանին – 134. Զի ահա բարեկամացեալ էր Խուրան Հայր Վաչէի և եղբայր Արշաւրի ընդ Արտաշէսի Պարսից արքայի յերթալն Աբգարու ի Պարս, և եդեալ են դաշինս ի միջի. – 82.

ԴԱՇՆԱԻՈՐԵԱԼ - Եւ դաշնաւորեալ ի մէջ երկոցունց՝ մնալ առանց կասկածանաց. – 322.

ԴԱՇՆԱԻՈՐԵԼ - և ոչ զոք թուլացուցանէր թագաւորել Զրուանայ, դաշնաւորել երդմամբ՝ մինչև որ ի կնոջէն Ըռեա որ ի Զրուանայ զարմիցն էր ծնեալ արու՝ անդէն ի ծննդեանն սատակէր. – 14.

ԴԱՇՆԱԻՈՐՈՒԹԻՒՆ - Եւ էր սէր դաշնաւորութեան մեծի ի մէջ երկոցունց թագաւորացն Պարսից և Յունաց: - 140.

ԴԱՇՏ - ,,իբրև զդրախտ փափկութեան երկիրն առաջի, և զկնի նորա դաշտ ապականութեան – 238. Բայց իբրև եղև մեծ պատերազմ սրբոյն Վարդանայ ընդ Մշկանին և ընդ զօրս Պարսից ի յԱւարայրեան դաշտին, յԱրտազական գաւառին. – 128. Եւ այգուն անցեալ ընդ գետն Երասխ յայնկոյս ի դաշտն Շարուր՝ բանակին զգետովն: - 382. Եւ անցեալ բնակեալ էին զօրքն Հայոց ի դաշտին Օշական ի Մանազաւեան նահանգին: - 380. Եւ եղև յետ մեծ պատերազմին, որ յառաջ քան զզրուցացդ գրելոյ ելին, ի գլուխս Մանազաւեան նահանգին և Յուշոյ դաշտին, և զխոռվարարս քաղաքացն ի մի վայր գումարելոցն, որք և յունայն ասպատակէին աշխարհ – 398. Եւ զի հուպ առ հուպ են խառն աշխարհք երկոցունցն, և քաղաքն ի հովտաձև դաշտին՝ նպաստաւորէր խոշոշ վիրագին քաջասրտագոյնս լինել: - 352 և հարաւային ջերմագոյն օդն շնչեաց ի խորագոյն դաշտն քաղաքին Դվնայ – 268. և ղաշիկ արարեալ յայնկոյս քան զՎանտոսպ, ի տեղւոջն արձանաշար քարակարկառ գոգաձև միջոցի երկուց բլրակաց, որ հայի յԷրիվարաց ադկման դաշտն, ի վերայ Լեզւոյ գեաւղջն, որ զաւրացն գեղեցիկ առասպելաբանեն սպիանած վերայն սպանելոցն ի մանկանցն Շամիրամայ: - 334. Իսկ Բուխայի առեալ զբազմութիւն զօրացն իւրոց՝ իջանէ ի դաշտն Գարգարացւոց, և երթեալ մտանէ ի քաղաքն մեծ Պարտաւ: - 276. Հրաման տայր փութով ամենեցուն պատրաստական գտանել ի դաշտն քաղաքին. – 270. յական քթթել ելից դիակամբք սպանելոցն և վիրաւորացն զերեսս դաշտին. – 400. Յայնժամ թանձրացեալ մթասցի, բալ և մառախուղ խաւար ի վերայ լերանց և դաշտաց քոց. – 148. յորոց և զկատարումն մարտիրոսական ի նոցունց բարբարոսաց ընկալաւ սուրբն Գրիգորիս ի Վայտնիանեայն դաշտին: - 274. տեսանեն զկողմանս արևելից, դաշտ յոյժ մեծանիստ, լայնատարած, հարթայատակ, անվայրափակ առ ի սահման, անբաւական ի տեսութիւն աչաց, սաստիկ լուսով զարդարեալ ի գիշերի, բազմակերպ երևմամբ – 48.

ԴԱՇՏԱԿԱՆ - գալ իջանել յելից ի ստորոտէ լերինն Վարագայ առշեղեալ ի հարաւոյ ի հիւսիսի ի խաղաղ ընդլայնանիստ գոգաձև դաշտականացսն – 392. դուզնաքեայ երասանակալ փայտիւն վազս առեալ սիգաքայլ ճեմարանօք ընդ կապուտակաձև երկնագոյն լեռնային և դաշտական ասպարէզս – 396.

ԴԱՇՏԱԿՈՂՄՆ - բլուր մի պարսպեալ տաճարախիտ շինուածովք, որոյ հայեցածն առ դաշտակողմն ի վայր կոյս բերի, ի խաղս գետոյն Երասխայ – 392.

ԴԱՇՏԱՁԵՒ - առաջի տեսանելով զկապուտակ ծիրանափայլ դաշտաձև ծովն. դաստակերտս մեծամեծս շուրջ զեզերբն անտառախիտ ծառովք և գինեբեր որթովք և զանազան պտղովք. – 86. գունդ կազմեալ ռազմ արարեալ զբոլոր դաշտաձև հովիտն ի ներքս փակէր, վառեալք զինու և ամենայն պատրաստութեամբ ընդդէմ գնդին Հայոց: - 172. Յորոց վերայ սուր եղեալ կոտորեցին, և լցին դիակամբք սպանելոցն զդաշտաձև հովիտն: - 306.

ԴԱՇՏԱՅԻՆ - ինքեանք պատրաստեալ են զնոյն փարշմանն կրել զոր դաշտայինքն կրեցին – 190.

ԴԱՇՏԱՎԱՅՐ - և անուանէ զնա Արծրունի, առաջին լինելով նորա ի դաշտավայրին Արծուիք կոչելոյ. դարձեալ ըստ պատահման և տարբերութեան՝ արծռունգն կերպարանօք: - 72. և իջեալ ի դաշտավայրն, խումբ արարեալ, ճակատ կազմեալ ընդխառնեցան ի պատերազմ. և զբազումս դիաթաւալ կացուցեալ, ընդ որս էր Շապուհ նահապետն Ամատունեաց յանկելոց վիրաւորացն: - 310. և իսկոյն հարեալ զնա այսոյն պղծոյ և ընդ զառիվայր լերինն թաւագլոր խաղաղացուցեալ հարուստ ձգմամբ մինչ ի դաշտավայր տեղին ուր այգեստանքն: -378. Եւ վազս առեալ փութացան մտին ընդ կողմն Մականայ, բանակեցան ի դաշտավայրին Մեդիացւոց – 62. Իսկ ըստ բաւականութեան աչաց տեսութեանց դաշտավայրին ի մուտս կոյս, և առ եզերբ ծովուն պարսպաւորս յօրինէ զգոգն - 88.

ԴԱՌՆ - անհնարին և դառն տանջանօք – 106. առանց ի տանջանս և ի չարչարանս լի դառն հարուածոց մտանելոյ հաւանեալ մեզ և օրէնսդրին մերոյ Մահումաթայ – 244. բայց ոչինչ ձեռնհաս լինէր օգնել նոցա վասն դառն հրամանի ամբարիշտ թագաւորին. – 218. Զի ահա ես զարթուցանեմ ի վերայ ձեր զազգ դառն և զերագ, որ գնայ ընդ լայնութիւն երկրի, ժառանգել զխորանս որ ոչ իւր են, ահեղ և երևելի: - 200.

ԴԱՌՆԱԲԵՐ - Որ կամէին դառնաբեր քինահարութեամբ ելանել ի վերայ աշխարհիս առ հասարակ յապականութիւն դարձուցանել: - 404.

ԴԱՌՆԱԳՈՅՆ - Եւ բազում այն էր որ մարտիրոսական ճգնութեամբ վկայեցին, քան որք դրդուեցան, առ ոչինչ համարելով զյափշտակութիւն ընչից և ստացուածոց և զմահս դառնագոյնս: - 124. Եւ ինքն Աւշին զտանջանացն փորձական կիրս կրեալ, դառնագոյն քան զլեղի իժի ճաշակս ճաշակեալ՝ գնաց զկորստական ճանապարհն. – 376. նոցա կալեալ զտիկինն Ռշտունեաց զկին Գարեգնի զքոյր Վարդանայ Մամիկոնէի ածեալ ի Վանտոսպ ի քաղաքն Շամիրամայ, մատնեն ի խոշտանգանս և ի տանջանս դառնագոյնս. – 102. որգունակ Խորէն /գրքում՝ խորէն/ և Աբրահամ խոստովանողքն Քրիստոսի ի պարսկայինն զերծեալ լլկանաց դառնագոյն կրիցն՝ զընդարձակութենէ նախարարացն Հայոց մատուցին ողջոյնս աւետաբերս՝ դարձուցանել տեառն զգերութիւն ժողովրդեան իւրոյ: - 324.

ԴԱՌՆԱԼ - զոր առեալ Կիւրոս դառնայ ի Խորասան. – 66. Ի դառնալն Ապուսէթի յԱսորիս և Մուսէի հաւատալ զվերակացութիւն հարկաց արքունի, և ընդդէմ եկեալ յարքունուստ հազարապետ ոմն հարկաց, Ծովափի կոչեցեալ ամիրայ Ալայ անուն: - 176. հանեն ընդ սուր, վարեն ի գերութիւն և առնուն աւար, և ի յանցին դառնան ի Ճուաշ և ի Թոռնաւան գաւառ, անցեալ ընդ Կրճունեաց գաւառն: - 400. ,,բազում անգամ աղաչեցին զիս բարեկամքն դառնալ, և ես ոչ կամեցայ – 50. այլ յետս կացեալ յուխտէ սրբութեանն դառնալ զհետ պաշտաման կոռցն –80. այլ դարձջիք այսրէն, և առանց աշխատութեան զերկիր իւրաքանչիւր կալարուք: - 110. Այլ նոքա թէպէտ առ փոքր մի ոչ կամեցան դառնալ յերկրպագութենէ Աստուածորդւոյն – 246. Ապա դարձան Վաչէ և Արշաւիր ընդ Արտաշէսի, առեալ զթագաւորութիւնն Երուանդայ ի ԼԱ ամի Արտաշէսի արքայից արքայի և թագաւորին Յունաց … ամի. – 86. ասէ, զի կացուցի թագաւոր ձեզ յազգէ և ի դենէ ձերմէ, մի՛ ծանր թուիցի ձեզ դառնալ անդրէն և ունել զիւրաքանչիւր ժառանգութիւն. – 110. աստէն իսկ դարձաւ յետս երես իւր ի /248/ թիկունս կոյս, ըստ ձախողակի խոտորմանն յետս ընդդէմ զխոտորմանն ժառանգեաց: - 250. Բայց երանելիս այս Գէորգ … դարձաւ ի դահիճն կոյս պատճառաւ աղաչելութեան՝ տեսանել, թէ ընդէ՞ր ոչ հատանիցէ

սուսերն – 266. բայց ի գնալն աստի ի Մարս և ի Պարսս, դարձեալ դառնայ ուժով մեծաւ և թագաւորական ճոխութեամբ, տիրէ Հայոց մեծաց - 88. բայց իբրև գիտացին զօրքն որ ընդ նմա եկեալ էին զնորա քաջակարծրագոյն արիութիւնն՝ և պատճառանօք այս ինչ այն ինչ դարձեալ դարձան յանցնիւր տեղի: - 310. բայց սա յերթալ և ի դառնալ իւրում նովին մտօք և նովին մոլորութեամբ վարեցաւ, լրբեալ լի թշուառութեամբ. – 248. դառնալ անդրէն ոչ կամէին, զի կարի սաստիկ ամօթս համարէր զգործեցեալսն, կալ տնել ժուժկալել ընդդէմ նոցա ոչ կամէին, զի բազում անկան ի զօրաց իւրեանց: - 276. ԴԱՌՆԱԼ ԴԵՐԱՆԿԻՆ Ի ՀԱՅՍ, ԵԻ ՍԿԻԶԲՆ ԴԱՐՁՈՒՑԱՆԵԼ ՏԵԱՌՆ ԶԳԵՐՈՒԹԻՒՆ ԻՇԽԱՆԱՑՆ ԲՈԼՈՐ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՑՑ: - 312. դառնայ Երուանդ առ սահմանօքն Ատրպատականի ի ձորն Անձահից: - 84. Դարձեալ պիտոյ է մեզ դառնալ առ ի վերագոյնսն, որ նախ քան զպատերազմն Աղձնեաց եղեալ են հանգամանք գործոց ի զօրացն Տաճկաց, և թէ ո՛րպէս եկաց ընդդէմ նոցա իշխանն Աշոտ և վանեաց զնոսա սրով սուսերի: - 176. Եւ դարձան ուժեղ զօրութեամբ և մեծաւ յաղթութեամբ: - 66. Եւ իբրև ազդ եղև Դերենկին՝ գնաց ընդդէմ նորա պատերազմաւ, և դառնայր փախստեայ: - 320. և խորհեցաւ սա զմիտս զայս, եթէ որ առ վտանգի նեղութեան դարձցի ոք առ ի պաշտօն կռոցն՝ ոչինչ է, եթէ սիրտ իւր ուղիղ պահեսցէ զհաւատսն Քրիստոսի: - 256. և հեծելագունդ զօրացն Կայսկին զկնի նորա, զգացեալ զպատճառ ելիցն նորա ի բանակէն. որում ոչինչ գամագիտ կարացեալ լինել՝ դարձան ամօթալից կորակնեալք, յանգէտս համարեալ զինչ գործեցինն: - 342. և ահա իբրև արք Ռ ի յընտրելոցն Աղուանից պատահեալ նոցա հարին զնոսա և ածին փախստեայ ի բանակն և ինքեանք դարձան ողջանդամ, և ոչ մի ոք վիրաւորեցաւ. – 282. և աղաղակեալ զկնի նորա՝ զի թերևս ի լուր ձայնին և ի փայլումն զինուցն և ի շողալ սուսերին և ի խխնջիւն քաջ երիվարին և ի վազս երագութեանն ուժոյ ազդ լինիցի և դարձցի ի ձայն նոցա և ծանիցէ, և դարձցի ի կորստական ճանապարհէն – 228. և աղաղակեալ զկնի նորա՝ զի թերևս ի լուր ձայնին և ի փայլումն զինուցն և ի շողալ սուսերին և ի խխնջիւն քաջ երիվարին և ի վազս երագութեանն ուժոյ ազդ լինիցի և դարձցի ի ձայն նոցա և ծանիցէ, և դարձցի ի կորստական ճանապարհէն – 228. Եւ աղբերքն որ ի տեղւոջն և այլ ջրոցն քամուածքն ի ծործորացն ի վայր՝ յարիւն դարձան: - 306. և անդր գումարեալ են ամենայն զօրք և ռամիկք աշխարհիս, արք կորովիք և պատերազմողք, որք ոչ դառնան ի սրոյ. – 212. Եւ անտի դարձեալ դառնայր Աշոտ ընդ միւս ևս ամրականն ընդ ոստոզերծ քարանձաւի, ի յարևելից կուսէ լերինն Վարագայ, ի վերայ գեաւղջն Կոխպանից, հանդէպ եկեղեցւոյն սրբոյն Հռիփսիմեայ – 334. և առ աւար բազում և դարձաւ ի տեղի իւր ի բանակն իւրեանց: - 280. և գրէ առ Սահակ դառնալ առ Երուանդ. թերևս հնար լիցի խորհել ինչ վասն Երուանդայ: - 82. Եւ դառնայ մեծաւ պարգևօք և անհամեմատ խնդութեամբ: - 384. և դառնային մեծաւ ուրախութեամբ և անտրտում խնդութեամբ յիւրաքանչիւր տեղիս: - 176. Եւ դարձան առնել դիակապուտ: - 232. և դարձան եկին պաշարել զքաղաքն: - 382. և դարձան կորակնեալք ամօթալից խայտառակեալք, լի ծանականօք և մեծ բեկմամբ: - 276. Եւ դարձան կուտեցին աւար, որոց ոչ գոյր թիւ: - 286. Եւ դարձան մտին յՈստանն Ռշտունեաց և կացուցին յանձանց իւրեանց իշխան զՎասակ Կովակեր, եղբայր Վահանայ: - 306. Եւ դարձաւ ի տեղի իւր ի Նախճաւան: - 306. և դարձաւ սիրտ նորա ի վերայ նորա սիրով խաղաղութեան. – 308. Եւ դարձեալ ուժեղացեալ դարձաւ ընդդէմ Գուրգինի. – 320. և դարձեալ դառնայ ի Հայս. ընդ իւր ածելով մարզպան զՎնդոյ Պարսից մոգպետ: - 124. և դարձոյց զերեսանակ երիվարին ընդդէմ նորա, և հասեալ ընդդէմ միմեանց՝ դարձան հասին ի բանակն իւրեանց: - 230. և ելեալ նստաւ ի ջորւոջն, զոր պատրաստեալն ունէին անդէն առ դրան վրանին, և հանին արտաքոյ դաշիկ բանակին՝ դարձուցեալ դառնալ ընդ նոյն ուստի եկն: - 346. Եւ եղև ի դառնալն սրբոյն Սահակայ ի Պարսից՝ եկն առ նա դարձեալ Աղան Արծրունի, և ընկալաւ ի նմանէ սքեմ կրօնաւորութեան.– 120. և երթային մի մի նոյնպէս և դառնային: - 370. և զօրացն Վասպուրականի դարձեալ զկնի Աշոտի: - 362. Եւ ի բազում յուզիցն և ի խնդրոցն և

զօրաժողովն լինելոյ և պատերազմ ընդդէմ վառելոյ և զձև ամրական մաքառմանցն յարդարելոյ և բռնալիր ուժեղագոյն մեքենային բախմանց քարձգութեանցն, զոր և ընդունայն աշխատութեամբ վարանեալ, անըստնանելի /հավանաբար՝ անստանալի/ մնալով ամրոցին՝դառնայ յիւր իշխանութիւնն: - 326. և իբրև զեկուցաւ նմա եղեալքն՝ դարձաւ անդրէն գնաց յիւր ճանապարհ: - 332. և իբրև զմի անձն, վառեալ ի զէն և ի սուր և ի ճակատամարտ՝ հասեալ յամուրս՝ տապալէր զզօրութիւն նոցա սրով և աղեղամբ, ի փայլիւն սուսերի և նիզակի և ի գիշերամարտ նահատակութեանց, ըստ նմանութեանն քաջ զօրավարին Իսրայէլի Յեսուայ կամ Գէդէովնի կամ թէ նոյն ինքն նահապետին Աբրահամու, ի վերայ հասեալ Քանանացւոց, զյաւէտ յաղթութեան նահատակութիւն նահատակեալ՝ և դառնայ մեծաւ յաղթութեամբ: - 312. և ինքեանք դառնային մեծաւ յաղթութեամբ անպայման խնդութեամբ: - 382 և ինքեանք դառնան մեծաւ յաղթութեամբ: - 126. և ինքեանք դարձան անդրէն. կարծէին ի սպառ հարկանել զգունդն Հայոց. – 308. և ինքեանք դարձան մեծաւ յաղթութեամբ, մատուցին պատարագս Աստուծոյ և լցուցին զպէտս տնանկաց և աղքատաց այրեաց և որբոց: - 136. և լեռնային զօրքն Ապումուսէի զհետ մտեալ փախստէիցն՝ իջուցին ի լեռնէ անտի և դարձան առնել դիակապուտ – 282. Եւ լուաւ տէր աղօթից նոցա, և դարձաւ ի բարկութենէ սրտմտութեան իւրոյ զթութեամբ և ողորմութեամբ, որպէս գրեցին երանելի մարգարէքն: - 314. և հարան զօրքն արքունի և դարձան ի բանակն իւրեանց – 276. և հարան զօրքն արքունի ի հարուածս մեծամեծս և դարձան փախստական ի բանակն իւրեանց և մտին յապարանսն զոր շինեալ էին. – 282 Եւ հրաման տուեալ ընդ ամենայն երկիրն՝ զի այր իւրաքանչիւր դարձցի յերկիր իւր և կալցի զիւր ժառանգութիւն – 234 և մի եղիցի յիշատակ սորա ընդ սոցա, որք թէպէտ և վրիպեցին և կործանեցան՝ սակայն և ապաշաւեցին և կանգնեցան յետ դարձին իւրեանց ի մեծ կարաւանէ գերութեանն ի միջոյ ժանեաց բռնաւորին. – 248. Եւ մինչ նոքա կային մնային հրաման ինչ ընդունել յարքունուստ՝ /286/ դարձան հրեշտակքն և եկին փութանակի, և բերին թուղթ յարքայէ առ Ապումուսէ՝ գալ ի հնազանդութիւն նոցա և երթալ առ Բուխայ. – 288 և մինչ ոչ ելին ի գլուխ կարծիքն, այլ իբրև զմեքենայ ինչ յամուր անդամանդեայ պարսպէ ի բաց դառնայր – 250. և յաւեր դարձան գեւղք և ագարակք և աւանք, ի բաց մերկացեալ զզարդ և զբարեձևութիւն, և ընդ ազգականութեամբ փակեալ զանազան բոյսք և տունկք, որ ի վերայ երեսաց երկրի. – 238. Եւ յետ աւուրց ինչ դարձեալ դառնայ Վահան ի Սամառայ, զեկուցանել Աշոտի որ ինչ գործեցաւն: - 310. և յերթալն նորա և ի դառնալն՝ գայ գտանէ վախճանեալ զթագաւորն Արտաշէս ի Մարինդ – 92. և Յիսէ տուեալ պատերազմ ընդ քաղաքին, զտարի մի հանդերձ ամենայն նախարարօքն Հայոց, անգամազիտ լինելով՝ դառնայ յԱսորիս. և այս եղև երկիցս անգամ: - 338. և նա դարձաւ ի Նինուէ. – 60. Եւ նոցա ի գլուխ հանեալ զգործ պատերազմին՝ դառնան զօրքն Հայոց մեծաւ յաղթութեամբ – 176. և որպէս պատմեն զնմանէ՝ զի դարձաւ յետս յԱստուծոյ և դարձոյց զերեսս իւր ի ճշմարիտ դաւանութենէ յերկրպագութենէ Աստուածորդւոյն, որպէս ասաց՝ դարձուցին յիս զթիկունս և ոչ զերեսս իւրեանց. – 248. և Սահակայ յղեալ առ Սմբատ՝ մի կալ մնալ ի լերինն, այլ փութալ ելանել դառնալ անդրէն ի հետևի զօրս անդ զի ոչ ելանէ, ասէ, Երուանդ զօրու ի սահմանս Մարաց. – 84. Եւ սկսաւ երկիրս առնուլ զնորոգումն, և եկեղեցիքն պայծառանալ ի զարդ և ի պաշտօնս շքեղութեան, և ցրուեալքն դոռոթ տուեալ դարձան յիւրաքանչիւր տեղիս՝ շինել, տնկել, մոռանալ զցաւսն և զտրտմութիւնսն զոր կրեցին: - 318. և քամուածք ջրոյն որ ի ծորձորացն ի վայր զեղուին՝ յարիւն դառնային ի բազմութենէ սպանելոցն. – 178. զի թէպէտ դառնալով դարձան յայտնապէս յերկրպագութիւնն Քրիստոսի Աստուծոյ մերոյ՝ այլ զկանոնական սահմանադրութիւնսն ոչ բերելով ուղղակի, ոչ միայն Աշոտ, այլ և ամենայն իշխանքն Հայոց, որք գերադարձքն եղեն. – 336. զի թէպէտ դառնալով դարձան յայտնապէս յերկրպագութիւնն Քրիստոսի Աստուծոյ մերոյ՝ այլ զկանոնական սահմանադրութիւնսն ոչ բերելով ուղղակի, ոչ միայն Աշոտ, այլ և ամենայն իշխանքն Հայոց, որք գերադարձքն եղեն. – 336. Զի հրամայեաց Դերանիկն ազատագունդ զօրացն իւրոցն դառնալ զկնի արքային տիրել բոլոր աշխարհին

հանդերձ ամրոցօքն: - 342. զոր և սուրբքն ասեն, եթէ ձայն դակուացն և բախումն խմբիցն առ ի հեղուսել զփայտսն՝ /28/ այնպէս իբրև յորոտման ամպոյ յամենեցունց հնչէր լսելիս, ի մօտաւորս և ի հեռաւորս, առ ի յերկիւղ և ի զգուշութիւն անզգամ ազգին, թերևս դարձցին և կեցցեն. – 30. զոր շինեալ էր սրբոյ Լուսաւորչին մերոյ Գրիգորի ի դառնալն նորա ի ձեռնադրութենէ քահանայապետութեանն: - 100. ընդ կրունկն դարձիր, թշուառական, քանզի զերջանիկ կամարարացն կղզիս կոխել ոչ կարես. զի՞ յերկինս ելանել բռնանաս,,: - 50. Ընդ նոյն ժամանակս ընդարձակեալ բարերարին Աստուծոյ իշխանացն Հայոց՝ դարձան յիւրաքանչիւր բնիկ տէրութիւնս. – 322. ժամ տուեալ նմա դառնալ առ նա ի ձմերոց նորա ի քաղաքն Դուին: - 218. Ի դառնալն Բուխայի յարքունիսն, և կայր զյօնսն պոզտեալ, փքացեալ լի ամբարտաւանութեամբ՝ կոկոզաբանէր ի վերայ մեծամեծ գործոցն գործելոց – 326. Իբրև աջողութիւն գործոյն գլխաւորեցաւ՝ եղև դառնալ Քսերքսեանց, առեալ ի պարգևի զՏմորիս ամրոցաւն և զգետափնեայսն Նինուէի: - 66. Իսկ նախարարքն Հայոց իբրև տեսին յերկոցունց կողմանց զանկարգ և զանտեղի աշխարհիս պիտաւորութիւն՝ յապաշաւանս դարձեալ ի վերայ անցիցն անցելոց զոր ախորժելովն խնդրեցին՝ դարձան առ Վռամ – 118. իսկ եթէ մի յանդամոցն կորիցէ՝ զպատահումն խեղութեան ընդունիցի, այլ ոչ ի բաց դարձցի կենդանի: - 194. Իսկ երանելոյն Աղանայ Արծրունւոյ որդւոյ Վասակայ դարձեալ ի Յունաց աշխարհէն՝ եկն յերկիրս Հայոց, նովին կրօնաւորական խստամբերութեամբ/132/և հրեշտակակրօն առաքինութեամբ կեցեալ՝ վերափոխի յաշխարհէս ի դասս սրբոց. – 134. Իսկ ի դառնալ գրոցն ի յաշխարհն Մոկաց՝ ոչ ինչ ումեք փոյթ վասն այն լինելով, կարծել՝ վարդապետին զայս այսպէս կանոնեալ. – 130. Իսկ իբրև գիտացին եթէ սպանաւ զօրավարն, և խորտակեցաւ բազուկ աջոյ ձեռին, եղեալ ի փախուստ դարձան – 306. Իսկ իբրև եհաս Բուխայ զօրօք բազմօք մերձ ի սահմանս նոցա, և գրեաց հրովարտակս դիմօք խաղաղութեան՝ դառնալ սիրով միաբանութեան ի հնազանդութիւն արքային – 274. Իսկ Մեհուժան ծանեաւ զինչ պատահելոց էր նմա ի կայսերէ և ի նախարարացն Հայոց, ոչ յաւել դառնալ ի Հայս. – 110. իսկ նա առ երազութեան ձեռին ձգեալ զսուսերն՝ եհար զերեսս Ջուանշիրայն, և խլեաց զաչս նորա, և ինքն դարձաւ մեծաւ յաղթութեամբ, եմուտ յամրական տեղիսն: Եւ նոքա յո՛վ և աճապարեցին: - 310. մանաւանդ զի և թագաւորին նախ ակն ունէր զդառնալն ի կոռոցն ի յերկրպագութիւն Քրիստոսի ճշմարտին Աստուծոյ. - 88. Յութերորդ ամի գերութեանն դառնայ Գուրգէն եղբայր Աշոտի միապետել զիշխանութիւն տէրութեանն և յարդարել կարգել յօրինել զկարգս /314/ շփոթեալ աւերեալ երկրիս: - 314. Նորա դարձեալ դառնայ ի Սամառայ և ծանուցանէ արքայի զոր ինչ գործեաց, և թէ զիա՛րդ են առ միմեանս միաբանութեամբ իշխանք Հայոց: - 172. Նորա խոստացեալ էր առնել դառնալ Աշոտի յիւր բնիկ տէրութիւնն. – 328. որոց թողեալ զգործ պատերազմի ամրոցին՝ դարձաւ գնաց աներկիւղ քաջասրտութեամբ ընդդէմ նորա օժնդակ զօրու Գուրգէնի – 334. Որում /110/ ունկնդիր եղեալ՝ դարձան այր իւրաքանչիւր ի բնակութիւն իւր - 112. ՎԱՍՆ ԴԱՌՆԱԼՈՅ ԱՇՈՏՈՅ ԻՇԽԱՆԻՆ Ի ԳԵՐՈՒԹԵՆԷՆ ԵԻ ՎԱՍՆ ՎԱՀԱՆԱՅ ԱՐԾՐՈՒՆԻՈՅ: - 328. Այլ ելեալ արտաքս ի ռազմէն՝ դարձաւ փախստեայ ընդ ճանապարհն Հողցայ. – 368. և զպատճառսն ստուգեալ, գրէ ի ձեռն Վահանայ ումեմն ի տոհմէն Ամատունեաց՝ դառնալ գալ բնակել անկասկած կենօք, ի բարձ և ի պատիւ իւրաքանչիւր յառաջանալ: - 98.

ԴԱՌՆԱԼԻՐ - Դարձեալ շինէ զօրավարն Գագիկ ի գլուխս Օձ ձորոյ, որ վասն խստութեանն սաստկաշունչ դառնալիր մահածին հողմոյն շնչելոյ այսպէս անուանեն – 396.

ԴԱՌՆԱՆԱԼ - և դժոխք ի ներքուստ դառնացան ի պատահել նմա զանբաւութիւն չարեացն ընդ իւր տանելով: - 376.

ԴԱՌՆԱՇՈՒՆՉ - Ելեալ խրոխտ և դառնաշունչ փռնկալով մռմռեալ յանձնիւր գազանեղեն զայրացմամբ յարձակեալ յեղակարծում եկն եմուտ ի քաղաքն Շամիրամայ ի Վանտոսպ: - 372.

ԴԱՌՆԱՊԷՍ - ,,հրեշտակս արձակիցեն որ լայցեն դառնապէս,, - 286. դառնապէս չարալլուկ չարչարել զքահանայս զպաշտօնեայս նորոց Կտակարանացն, զարս և զկանայս մատնել ի բանդս խոշտանգանս ծանրաբեռն հարկապահանջութեամբ. – 124. և ապա մտին ի տունն Աստուծոյ, և տարածեալ զհրովարտակն առաջի սրբոյ սեղանոյն՝ անկան ի վերայ երեսաց իւրեանց յերկիր առաջի Տեառն և լացին դառնապէս – 146. և միաբան յարտասուս հեղեալ լային, և դառնապէս ողբս յողբս հարեալ անմխիթար սգոյ – 114.

ԴԱՌՆԱՑԵԱԼ - և գունդ անհաւատից դառնացեալ ոգւով ի վերայ կանանց և որդւոց իւրեանց ազգականաց՝ յարձակեցան ի վերայ նոցա ուժգին սաստկութեամբ և սուր ի գործ արարեալ յանխնայ կոտորեցին. – 402.

ԴԱՌՆՈՒԹԻՒՆ - Այս լուր դառնութեան եհաս առ մեծն Վարդան Մամիկոնեան, որ էր ամրացեալ ի Տաւրոսականն Ջռայլ: - 126. դա աւադիկ արմատ դառնութեան ի վեր երևեալ, և բազումք պղծին նովաւ: - 254. և հանապազ յանձն իւր տարակուսանօք տարուբերէր, թէ յո՞վ և կամ յո՞յր կողմանս թափիցէ զդառնութիւն մահաբեր թունից իւրոց – 170. Եւ եղև զկնի երից աւուրց անցանելոյ ետուն թուղթ մի տանել առ Գուրգէն, գրեալ Բուխայի լի դառնութեամբ, կնքեալ մատանեաւ արքայի, իբրև այն թէ ի դիմաց արքային և յարքունուստ եկեալ. – 236. Եւ կայր զյօնսն պռզտեալ, կոկոզաբանէր լի յոխորտանօք, խրոխտայր, եռացուցանէր ի վեր մղէր զդառնութիւն ժահահոտ մաղձոյն չարաթոյն վատախառնութեանն – 242. և չարչարէին զնոսա ի գործս խիստ սաստկասառոյց ձմերանն դառնութեան. – 188. Իսկ նա ի հրապոյրս ապստամբ վիշապին ելեալ, որ բազմախարդախ չարութեամբն եհեղ առատութեամբ զդառնութիւն խրատոյն յունկն կնոջն անզգամի: - 20. Հինգերորդ՝ զի զծնօղսն անհնարին դառնութեամբ նոր սգովն ելից: - 24.Սաստիկ և վտանգաւորք և լի դառնութեամբ որ ինչ ի ճառի աստ են յիշատակարանք, սակս յանձնառութեան մեծ նախարարացն և իշխանացն մերոց. – 240.

ԴԱՍ - Բարձեալ ևս ընդ իւր զսուրբ կտակարանս աստուածաշունչ գրոց բազմութեամբ պաշտօնէից քահանայական դասուց: - 186. և կարգէ զդասս պաշտօնէից կատարել զպաշտօն Տեառն ի տուէ և ի գիշերի անձանձրոյթ աշխատութեամբ և առատաձեռն տեսչութեամբ աղքատաց, զի գտցեն զողորմութիւն ի Քրիստոսէ: - 122. Իսկ երանելոյն Աղանայ Արծրունւոյ որդւոյ Վասակայ դարձեալ ի Յունաց աշխարհէն՝ եկն յերկիրս Հայոց, նովին կրօնաւորական խստամբերութեամբ /132/ և հրեշտակակրօն առաքինութեամբ կեցեալ՝ վերափոխի յաշխարհէս ի դասս սրբոց. – 134. ոչ պիտոյացեալ եկամուտ լուսոյ, որով նսեմասցի առ ի հասանել երեկոյին, ոչ ապաժամանութիւն արեգական առ ի մերժել զմութ գիշերի լուսազգեստ ստեղծուածոյն, որ յետ առաջնոցն կարգի և դասու՝ զերկրորդն փոխանորդեցաւ վիճակ, ոչ կերակուր հոսանուտ առ ի լրութիւն տարաբարձ ունակութեանց անապականին, որ դոյզն ինչ փոքրագոյն քան զհրեշտակս գոլ. – 20.

ԴԱՍՏԱԿԵՐՏ - առաջի տեսանելով զկապուտակ ծիրանափայլ դաշտաձև ծովն. դաստակերտս մեծամեծս շուրջ զեզերբն անտառախիտ ծառովք և գինեբեր որթովք և զանազան պտղովք. – 86. և շինեն նախարարքն Հայոց իւրաքաքնչիւր պալատս արքունականս և դաստակերտս յականաւորս, և զքաղաքն որմափակօք պարսպեն, և խաղաղեցուցանեն զերկիրս: - 126.

ԴԱՍՏԻԱՐԱԿ - և դաստիարակ առընթեր ունելով զբանն տէրունական, թէ ,,որ ուրասցի զիս առաջի մարդկան՝ ուրացայց և ես զնա առաջի Հօր իմոյ,, - 264.

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ - որ յետ հաւատոցն որ ի Քրիստոս բազում ուղղութեամբ և երկիւղածութեամբ կրօնս ըստ արժանի հաւատոյն ցուցեալ, գրէթէ ի ծայրս առաքինութեան զաճումն հաւատոցն տարեալ հասուցեալ, որ ինչ յորդորումն աւետարանական վարժիցն ունին դաստիարակութեան ցոյցք: - 78.

ԴԱՏ ԱՌՆԵԼ - Տեսցէ տէր և դատ արասցէ և հանցէ իրաւունս ինձ, որպէս սովոր է արդար դատաւորն,,: - 330.

ԴԱՏԱՊԱՐՏԵԱԼ - և զկէսն մահու դատապարտեալ, զգլուխս նոցա հատեալ ի փայտի բարձրացուցանէին ի վերայ դրանդեաց պարսպին: - 372.

ԴԱՏԱՊԱՐՏԵԼ - գուցէ, ասէ, ի գնալն ի բուռն առեալ ի մահ դատապարտեսցի: - 84. Իսկ զձերբակալսն յղեցին առ Աւշին ի Պարտաւ, որք տուեալ ի կապանս բանտի և դատապարտեցան ի մահ, սրախողխող միջակտուր արարեալ: - 372.

ԴԱՏԱՊԱՐՏԻՉ - Եթէ, որպէս ասացի, ի բաց գնաս յինէն՝ խաղաղութիւն է, և թէ ոչ՝ պատերազմ և կռիւ և ճակատամարտ ... դու ախոյեան՝ և մանկունք իմ յաղթանակ, դու ոսոխ՝ և զօրք իմ դատապարտիչք. – 278.

ԴԱՏԱՊԱՐՏՈՒԹԻՒՆ - այլ նա ըստ կամս իւր կատարեաց ի վերայ իւր զարենապարտն լինել, որ տալոց է հատուցումն վրիժուց յաւուր դատապարտութեան իւրոյ: - 320.

ԴԱՏԱՍՏԱՆ - ապա անարգեաց զնա և Կաւատ արքայ, եհատ ի վերայ նորա դատաստան մահու, և հրամայէ արանց մտանել և սպանանել զնա. – 152. և դատաստանաւ փրկեսցէ զնոսա – 218. և ասէ ,,Ահաւասիկ եկն Տէր բիւրովք հրեշտակօք առնել դատաստան ըստ ամենայնի – 26. Եւ դատաստան իւր յանձնէ եղիցի, և առած յինքենէ ելցէ: - 200. և դարձեալ՝ թէ ,,դատաստանս արդա՛ր դատեցարուք, և ողորմութիւն և իրաւունս արարէք, քանզի առ ձեզ են բանք իմ, ո՛վ բռնաւորք,, , ասէ Սողոմոն. – 182. Եւ խօսէր ընդ նոսա սաստիկ և ահագին դատաստանօք և սպառնալեօք, թէ ընդէ՞ր և դուք ոչ մեռարուք ի պատերազմին, քան թէ ելեալ փախստական գնացէք գալ առ իս և տալ համարձակութիւն ծառայի իմում ի յայսքան վնաս. մի՞թէ արդեօք զԽոսրով մեռեալ կարծէիք,,: - 150. զի առ զօրաւորսն զօրաւոր դատաստան առաքէ Աստուած, իսկ խառնաղանջն ներելի ողորմութեան է: - 182. մինչ ինքն նստցի յատենի և մուծցէ զնոսա ի դատաստան հարցափորձի և քննութեան վարուցն – 220. Որբոց իրաւունս ոչ առնեն, և դատաստանի այրեաց ունկն ոչ դնեն,,: - 182. որոց դատաստանն ի բնէ ոչ դատարկանայ ըստ գրեցելումն – 52. պատմեաց նոցա զհանգամանս տեսլեանն ...և դարձեալ զնորոգումն հայրապետութեան և թագաւորութեան ի նոյն զարմէ Արշակունեաց, և զգալուստ նեռինն, և զգալուստն Քրիստոսի, և զհանդերձեալ դատաստանացն, և զհատուցումն իւրաքանչիւր ըստ գործս իւր – 120. Սպառնայ և աստուածային դատաստանն Երեմիայիւ – 38. և մտանէին առ նա արք ի նախարարացն, խօսէին դատաստանօք և նախատէին զնա, անարգէին և գնային: - 152.

ԴԱՏԱՎՃԻՌ - և անդ նորա զդատավճիռն ընկալան ի սրոյ քաջացն Վասպուրականի, որպէս գրեցաքն – 398.

ԴԱՏԱՐԿ - և լուան ամենեքեան զառնելն քո ընդ իս՝ մի՛ ընդունայն և դատարկ լիցի սիրելութիւն քո առ իս – 218.

ԴԱՏԱՐԿԱՆԱԼ - որոց դատաստանն ի բնէ ոչ դատարկանայ ըստ գրեցելումն – 52.

ԴԱՏԱՐԿԱՑԵԱԼ - Իսկ Աւշին դատարկացեալ ի խորհրդոցն զոր խորհեցաւն՝ յաւել զայս օրինակ կատարել զկամս չարագոյնս: - 372.

ԴԱՏԱՐԿՈՒԹԻՒՆ - արդ դու մի անփոյթ յանհոգս յաղագս այդր մնայցես, անյապաղ հնարիցիս գտանել զխորհրդոցն նորա դատարկութիւն,,: - 346.

ԴԱՏԱՒՈՐ - այլ տանելով մեր առաջի թագաւորաց և դատաւորաց վասն իմ ի վկայութիւն՝ պահեսցուք զբարիոք դաւանութիւն և վկայեսցուք որպէս Փրկիչն առաջի Պոնտացւոյ Պիղատոսի. – 260. որպէս Պօղոսի հաճոյ թուի գրել յառ Եբրայեցիս թղթին, թէ ,,չէ բաւական ժամանակս պատմելոյ,, վասն դատաւորացն Իսրայէլի և սրբոց մարգարէիցն – 302. Տեսցէ տէր և դատ արասցէ և հանցէ իրաւունս ինձ, որպէս սովոր է արդար դատաւորն,,: - 330.

ԴԱՏԵԼ - և դարձեալ՝ թէ ,,դատաստանս արդա՛ր դատեցարուք, և ողորմութիւն և իրաւունս արարէք, քանզի առ ձեզ են բանք իմ, ո՛վ բռնաւորք,, , ասէ Սողոմոն. – 182. Եւ զլեզուդ պղծութեամբ զոր սրէիր ի վերայ մեծազաւր թագաւորին՝ արդ նոր և զարմանալի վիրաւք դատեսցէ զքեզ քան զամենայն տիեզերս: - 164. որք դատեցին ի սուրս իւրեանց, և եկեալ ի տեղի բանակի նոցա՝ առին աւար բազում - 162.

ԴԱՏՈՒԱՆ ԱՒԱՆ - Եւ եղև ի մտանելն նորա ի Դատուան աւանն ... ելեալ իշխանքն Հայոց յանձնիւր տեղեաց գնացին յանդիման լինել նմա – 340.

ԴԱՐ - և իբրև մօտ եղև յափն գետոյն՝ քարշեալ ոմն զլայնալիճն, նստելով ընդ դարիւն, և հարեալ նետիւ ընդ բացատն, և երեսանակալ ձեռնն թուլացեալ. կրկնեալ այլ ոմն ճօճ նիզակաւն ընդ նոյն ակն՝ գետավէժ արարին զԱշխէթն. – 272. Որ և այլոց կարող տուիչ լինել ժամանակաց, որպէս և արանցն որ յառաջ քան զջրհեղեղն քառասուն ևս աւելի բիւրս ամաց և դարս փոխադրական այլաձևս և խժականս, շարս և ներս և սոսս - 38.

ԴԱՐԱՆ - և թափառական զվէմս ապաստան արարեալ յանկասկածագոյն տեղիս դարանի ի փոքր վիմամէջս ի կարկառս հովտաձևս հանդէպ հարաւոյ քաղաքաբերդին Վանի, մօտ այն տեղի, յորում բղխէ աղբիւրաբար առ ստորոտով բլրակի միոյ, մօտ յեզր ծովուն – 84. Եւ յարգելուլ զնա ազատագունդ վաշտիցն՝չանապայր, քանզի լուեալ էր նոցա, եթէ շրջաբերական թղթով դարան գործեալ էր նմա Աշոտոյ իշխանաց իշխանի: - 352. զոր կազմեաց իւր սատանայ գործի աջողակ յամենայն արուեստ գիտութիւն խարդախութեան, իբրև զպատշաճ դարան դեղեալ նետիւք ընդ խաւար թռուցելոյ յոգիս խաւարամածս: - 248.

ԴԱՐԲՆԵԼ - և զՀեփեստես ասեն կաղ յերկոցունց ոտիցն, և կայծակնավարս ունի ի ձեռնն աքցանս և կռանս, և նստեալ դարբնէ մարդկան: - 52.

ԴԱՐԵՀ - բայց կանոնեցի զանուանս ի մատենիս: Տիգրան. Ադրամելէք. Ներս. Ներսէհ. Մարոդ. Արշամ. Արշաւիր. Ասուդ: Պարսից թագաւորք. Քսերքսէս. Արտաշէս երկայնաձեռն. Դարեհ. Արտաշէս. Ողոքոս. Զարսէս. Դարեհ: Ապա Աղէքսանդրոս Փիլիպպեայ Մակեդոնացի տիեզերակալ թագաւոր: - 68. բայց կանոնեցի զանուանս ի մատենիս: Տիգրան. Ադրամելէք. Ներս. Ներսէհ. Մարոդ. Արշամ. Արշաւիր. Ասուդ: Պարսից թագաւորք. Քսերքսէս. Արտաշէս երկայնաձեռն. Դարեհ. Արտաշէս. Ողոքոս. Զարսէս. Դարեհ: Ապա Աղէքսանդրոս Փիլիպպեայ Մակեդոնացի տիեզերակալ թագաւոր: - 68. երթեալ տուայտի ի դրան Մարաց Դարէհի, մինչ զգալ վասն նորա Երուանդայ. – 84. Զայսու ժամանակաւ թագաւորեալ Աղէքսանդր Մակեդովնացի տիեզերակալութեամբ երագահաս հասեալ ի վերայ Դարէհի սպանանել զնա. և բառնայ զթագաւորութիւնն Պարսից Արշաւրեան: - 68. Ի ՔՍԱՆԵՐՈՐԴԻ ԱՄԻ ԴԱՐԵՀԻ ՄԵՌԱՒ ՏԻԳՐԱՆ ՀԱՅԿԱԶՆԵԱՅ: - 68. Ընդ որս զչարեալ նախարարացն Ներսէհի՝ գրգռեն զոմն ի մերձաւորաց Ներսէհի, Դարէհ անուն. – 82. Իսկ Ասուդ զհետ Դարէհի ելեալ ի պատերազմ ընդդէմ զօրագլխացն Աղէքսանդրի՝ Հերակղեայ նահատակութեամբն դիւցազնաբար ի դիմի հարեալ՝ ի բաց նահանջէ զուժեղագոյնս զօրագլխացն Աղէքսանդրի հարուստ ժամ մի, մինչ հիացումն զօրօքն արկեալ՝ տային տեղի փախստէի. – 68. Իսկ Ներսէհ ունկնդիր եղեալ Դարէհի, բայց ոչ կարաց հաւատարմացուցանել զասացեալսն. – 82. ՅԵՏ ԿԻԻՐՈՍԻ /թագավորում են/ ԿԱՄԲԻՒՍԷՍ, ՇՄԵՐԳԻՍ ՄՈԳ, ԴԱՐԵՀ ՎՇՏԱՍՊԱ. /ՃԻՇՏ՝ ՎՇՏԱՍՊԱՅ/ - 68.

ԴԱՐԵՀ ՎՇՏԱՍՊԱՅ - ՅԵՏ ԿԻԻՐՈՍԻ /թագավորում են/ ԿԱՄԲԻՒՍԷՍ, ՇՄԵՐԳԻՍ ՄՈԳ, ԴԱՐԵՀ ՎՇՏԱՍՊԱ. /ՃԻՇՏ՝ ՎՇՏԱՍՊԱՅ/ - 68.

ԴԱՐԵՀԻՈՆ - Արդ են ժամանակք թագաւորութեանն Պարսից, սկսեալ ի Կիւրոսէ ցԴարեհիոն … և ամք անիշխանութեանն զոր ոմանք ի պատմագրաց գրեն Կ, և այլք Հ – 166.

ԴԱՐԷՀ – Տե՛ս ԴԱՐԵՀ

ԴԱՐՁ - Բայց Գրիգոր կեցեալ յետ դարձին իւրոյ զմի ամ՝ մեռանի իւրով մահուամբ: - 310. ԴԱՐՁ ԳԵՐՈՒԹԵԱՆ ԻՇԽԱՆԱՑՆ: - 322. ԴԱՐՁՆ ՏՐԴԱՏԱՅ Ի ՅԵՐԿՐԷՆ ՅՈՒՆԱՑ - 94. և կացին մնացեալ անդր մինչև ի դարձն Արտաշէսի որդւոյ Սանատրկոյ, որ եկեալ այսր թագաւորեաց, սպանեալ զԵրուանդ: - 82. և ոչ գիտացին զօրն Պարսից զդարձն Հայրակղի ի վերայ նոցա՝ մինչև երթեալ խառնեցան և բախեցին զմիմեանս պատերազմօք: - 150.

ԴԱՐՁ ԱՌՆԵԼ - Բայց Դերանիկն խօսի ընդ Հասանայ զխաղաղութիւն, խոստանայ առնել զդարձ ամրոցին Սևանի և աշխարհին նորա. – 350.

ԴԱՐՁԵԱԼ/անց.դերբ., մակբայ/ - Դարձեալ քանզի Մեստրիմ ի Քամայ ըստ բաժանման ազգին և աշխարհին շինէ զԵգիպտոս և անդ հարստանան ազգապետաբար – 18. անկեալ առ ոտս նորա մեծաւ հառաչանօք՝ մի՛ յիշել զանցս զանցիցն անցելոց, զոր արարինն առ սուրբն,

զքաղաքապետս և զմարզպետս բոլոր Հայաստանեայցս – 212. և թէ նոքա յերիս կամ ի չորս կամ ևս աւելիս բաժանեալ օգնական առնիցեն իւրեանց զամուրսն՝ մեծ աշխատութիւն քեզ հասուցանիցեն, և ամենայն խորհրդոց քոց խափանիչք /212/ գտանիցին – 214. և ի դիմաց ձերոց երևի, զի զօրութիւն բազում գոյ ի ձեզ, զի այդչափ վնասս գործեալ է ձեր առ իս - 244. և ի ձէնջ խնդրեցից երիս ինչս, և լուարուք ինձ – ի բաց արարէք յաշխարհէ զսուր և զհուր և զգերութիւն, և յերիցդ օգուտ գտանէք. – 144. Եւ իբրև ետուն զթուղթն կարծեցեալ իբրև յերեսաց արքայի՝ ,,ընթերցիր զայդ, ասէ, մի՛ ինչ ընդ մեղադրութեամբ արկաներ զիս, և կարծել նենգութեամբ գնալ առ քեզ և դրժել ինչ քեզ և ստել երդմանց /236/ մերոց. – 238. և իմ թողեալ ձեզ զչարիս ապստամբութեանն ձեր, վայելեսջիք ընդ իս և տիրեցէք աշխարհին ձեր,,: - 246 և իմ խնայել ի ձեզ ոչ արարից զրաւ կենաց ձերոց ըստ արժանի ապիրատ գործոց և վնասուցն, զոր յանցեայքն առ իս դուք. - 244. և լինիցիս իբրև զմի ի մահապարտաց, որ անձամբ զանձինս հերքեցին ի կենաց վտանգաւոր մահուամբ, որպէս և քեզ պատրաստեալ է – 294 և խոտեալ ի բաց ընկենուք զմիոյ անընկեր և անվերոյ իրաց հանդէս, որպէս և իսկ կոչեցեալ մարգարէն ձեր Մահուամաթ – 246. Եւ խօսէր ընդ նոսա սաստիկ և ահագին դատաստանօք և սպառնալեօք, թէ ընդէ՞ր և դուք ոչ մեռարուք ի պատերազմին, քան թէ ելեալ փախստական գնացէք գալ առ իս և տալ համարձակութիւն ծառայի իմում ի յայսքան վնաս. մի՞թէ արդեօք զԽոսրով մեռեալ կարծէիք,,: - 150. և կարիցես զիշխանս Հայոց կապանօք առ մեզ հասուցանել, մանաւանդ զիշխանն Վասպուրական զԱշոտ՝ քեզ և զաւակի քում տաց զերկիրն զայն ի ժառանգութիւն: - 184. և կինն անցեալ պատմեաց թագաւորին որ ինչ եղևն, զբողոք բառնալն իւր և զկացուցանելն վկայս՝ թէ ոչ վայել եմ քեզ կին, այլ արքայի, և որ ինչ եղևն – 272. և հայր քո Վասակ խորհիցի ինչ առ արքայի, և աղմուկ և շփոթ ինչ յուզիցէ հայր քո, որպէս թէ զապստամբութեան ինչ խորհել կարծիս զմէնջ առնուցուն: - 114. և հրաման հարկեցուցանող ճոխութեան քո ստիպէ զմեզ, ճեպել փութալ առ գիւտն հանդիսանալ և կարգել ոճով զփափագելին յայտարարական գրով, դրոշմել կանոնել ի գիրս աստ – 12. և ձեր լիցի երկիրն այն ի ժառանգութիւն և որդւոց ձերոց: - 198. և մատնեաց զմեզ Աստուած ի ձեռս քո. – 242. Եւ մեր անտես արարեալ զգործս վնասուց ձերոց, զոր մեղայք մեզ, և լիցին անձինք ձեր ի գիւտս, և կեցջիք և տիրեցէք աշխարհի և տանց ձերոց, դուք և որդիք ձեր – 244. Եւ մեր անտես արարեալ զգործս վնասուց ձերոց, զոր մեղայք մեզ, և լիցին անձինք ձեր ի գիւտս, և կեցջիք և տիրեցէք աշխարհի և տանց ձերոց, դուք և որդիք ձեր – 244. Եւ մեք ահա անփոյթ այդմ ամենայնի արարաք, զի յայտնի լիցի սէրն և գութ խնամոյն, զոր ասեմք ունել ընդ ձեզ: - 244. և մեք տացուք քեզ զհասս հարկացն և հաճեսցուք զմիտս քո – 178. և մի ի վերայ մեծ յանցանացն զոր յանցեար, որպէս լսեմդ զոր ինչ ամբաստանեն զքէն՝ յայդ ևս յաւելուր - 290. և միաբան զաղաղակ բարձեալ ասէին, ,,Աստուած, յօգնել մեզ նայեաց, և Տէր, յընկերել մեզ փութայ,, և որ ի կարգին, ,,զի վասն քո մեռանիմք զօրհանապազ, համարեցաք որպէս զոչխար ի սպանումն,,: - 266. Եւ մինչ այսպէս կայր աշխարհս յանկարգ խաղաղութեան՝ եհաս լուր գործոյն առ Աւշին և առ իշխանն Աշոտ, եթէ ,,վրդովեալ է երկիրն, և կան ի տարակուսի՝ որք զամուրսն քո ունին. – 362. Եւ միջնորդէր նմա հետևել հաւատոյ առաջնոյ Իսրայէլականացն, ,,զի թէ յայս եկեսցես՝ իմով հրամանաւ եղիցիս զօրագլուխ մեծ և առաջնորդ ամենայն տոհմի քո,,: - 158. Եւ յամենայն ազգաց որ ընդ ձեռամբ քո են՝ հաւաքեա առ քեզ զընտիրն այրուձիոց, և անց յայնկոյս գետոյն: - 196. Եւ յետ սակաւու միոյ ասէ. ,,ձեզ տաց զերկիրն Քանանու զվիճակ ժառանգութեան ձերոյ,,. – 34. և նախ քան ընդ պատժական տանջանաւոր խոշտանգանօք արկանելն զմեզ՝ բանիւք քո իբրև քարամբք հարեալ զմեզ՝ շտապ տագնապի ի վերայ արկանես թափել զոգիս մեր: - 242. Եւ ոմն ընթացեալ ետ գոյժ վաղվաղակի /150/ Խոսրովու, թէ ,,ապստամբեցաւ ամենայն Արեաց երկիր ի քէն, և զորդի քո Կաւատ նստուցին թագաւոր, և ահաւադիկ դիմեալ գա ի վերայ քո,,: - 152. և ոչ առ մի ոք այդչափ խնամ և հոգաբարձութիւն առնէաք, որչափ ընդ ձեզ և ընդ աշխարհ ձեր. – 244. և ունին

զզօրս քո ընդ իւրեանս – 82. Եւ սաղմոսէին միաբան՝ ,,վասն քո մեռանիմք զօրհանապազ. համարեցաք որպէս զոչխար ի սպանումն,,: - 250. և սուսեր ընդ մէջ ածեալ զբանն տերունական, զոր ասացն, թէ ,,յորժամ մատնիցեն զձեզ, մի՛ հոգայցէք թէ ո՛րպէս, կամ զի՛նչ խօսիցիք – 204. Եւ վասն այսր ամենայնի հարկ է քեզ երթալ, զի և կարծիք ապստամբութեանդ բարձցի – 216. և տաց քեզ զկողմանս Ասորոց և զամենայն Արեւաստան մինչև զՄծուին քաղաք, և ի յերկրէ Հայոց՝ զաշխարհս տանուտերական իշխանութեանն մինչև յԱյրարատ և ընդ Դուին քաղաք և յեզր ծովուն Բզնունեաց և ցԱռեստն աւան, և զմեծ մասն աշխարհին Վրաց մինչև ցՏփղիս քաղաք. – 136. և տեսանելով մեր զխնամարկութիւն բարի կամաց քոց ի վերայ աշխարհի, և զսէր երախտեաց որ առ մեզ՝ յօժարագոյնս եղիցուք և մեք մտերմութեամբ ծառայել և փութով մեծաւ կատարել զհրամայեալսն ի քէն,,: - 186. և քեզ եթէ հաճոյ թուիցի ապրեցուցանել զքեզ և զզօրս քո՝ արի ել աստի և գնա ի սահմանաց իմոց: - 278. զի Քրիստոսն այն, որ զանձն իւր ոչ կարաց ապրեցուցանել ի Հրէիցն, այլ կալան զնա և սպանին ի վերայ փայտի՝ իսկ արդ զքեզ զիա՞րդ կարէ ապրեցուցանել ի ձեռաց իմոց: - 146. Զի ահա ես զարթուցանեմ ի վերայ ձեր զազգ դառն և զերագ, որ գնայ ընդ լայնութիւն երկրի, ժառանգել զխորանս որ ոչ իւր են, աւեղ և երևելի: - 200. զի գործ մի գործեմ ես յաւուրս ձեր, գործ որում ոչ հաւատայցէք, թէ ոք պատմեսցէ ձեզ: - 200. զի ես տաց ձեզ բերան և իմաստութիւն, որում ոչ կարիցեն կալ հակառակ կամ տալ պատասպանի ամենայն հակառակորդքն ձեր,,: - 204. զի և զմեծութիւն ընչից, որ ի գանձս իմ՝ ամի ամի յաւար տալով՝ զուարթամիտ սրտիւ ինձ համարէի զյափշտակութիւն տան իմոյ որ ի ձէնջ և առ ձեզ - 216. զի ըստ իւրաքանչիւր հասակաց՝ զմի մի ոք ի ձէնջ /214/ գթալիր/ճիշտը՝գթալի/ սիրով մեծարէի այնչափ – 216. զի թէ ես յաղթեցից՝ երդուեալ ի մեծ աստուածն Որմազդ և յարեգակն և ի լուսին և ի հուր և ի ջուր և ի Միհր և յամենայն աստուածս՝ զի ձեզ տուեալ լիցի թագաւորութիւն Հայոց. – 138. Զի թէ իջանիցես յանդունդս ծովու՝ ձգեցից զցանցս իմ և ըմբռնեցից զքեզ. և ապա տեսանիցես զիս այնպէս՝ որպէս դու ոչ կամիցիս,,: - 146. զի թէ կարացից հարկանել զթշնամին իմ և կանգնել զթագաւորութիւնն իմ՝ ես եղէց քեզ որդի հնազանդութեան - 136. զի ոչ դուք նուազիցիք ի սովոյ, և ոչ հարկք արքունի կորնչիցին: - 144. զի ոչ ևս ունիմ շատ խօսիլ ընդ քեզ,,: - 290. զի տեսանեմ զքեզ այր պոռտաբան, /138/ զի յանձն քո խրախուսես և ոչ յԱստուած, ի բազմութիւն զօրաց և ի փղաց զօրութիւն. – 140. զի՞ կացուցեր զարդ զայդ ի գործակալութիւն աշխարհի քո - 82. Զոր և մեք ակն ունիմք և քեզ զսոյն զայս կամել – 186. զոր շարագրեալ յայտարարութեամբ յանդիման կացուցաք քեզ, քա՛ջդ բանասիրաց, Գագիկ Վասպուրական և մեծ զօրավար Հայոց – 122. ըստ այնմ զոր մարգարէն Եսայի ասաց, ,,յաւուր յայնմիկ բուռն հարկանիցէ այր զեղբօրէ կամ ազգակցէ իւրմէ և ասասցեն՝ լեր մեր իշխան, և կերակուր մեր ընդ քեզ լիցի,,. – 298. թէ ,,մերձ է բան ի բերան քո և ի սրտի քում, այսինքն է բան հաւատոյ զոր քարոզեմք,, - 258. ի քո ձեռս է խաղաղութիւն և խռովութիւն: - 278. Իսկ սպառնալիք քո և չարչարանք, զոր ասես ի վերայ իմ հասուցանել՝ խաղ մանկտոյ կամ զառանցելոց թուի յաչս իմ, և բանք քո նոյնպէս, որպէս առն անմտի և խելագար և ցնորեալ ծերոյ,,: - 290. կարող է Ատուած, եթէ կամեսցի՝ ցամաքեցուցանել զծովս առաջի ձեր: - 144. Կինն դարձեալ ճիչ բարձեալ ասէ. ,,վասն իմ սպաներ զտէրն իմ. ես ոչ վայել եմ քեզ կին, այլ մեծի թագաւորին,,. – 272. հազար ամ անսացեալ իմ քեզ, արդ դու ինձ անսա: - 46. հազար ամ անսացեալ իմ քեզ, արդ դու ինձ անսա: - 46. ձայն բարձեալ արտասուալից առ Դերենիկն, և զսուսեր մերկ ի ձեռին ունելով, և վաղր և սակր մի՝ ասէ. ,,որդեա՛կ իմ Դերենիկ, ողջոյն քեզ, ողջոյն քեզ, ողջոյն քեզ. ես ելի գնացի ի յաշխարհն Յունաց,,: - 320. ձայն բարձեալ արտասուալից առ Դերենիկն, և զսուսեր մերկ ի ձեռին ունելով, և վաղր և սակր մի՝ ասէ. ,,որդեա՛կ իմ Դերենիկ, ողջոյն քեզ, ողջոյն քեզ, ողջոյն քեզ. ես ելի գնացի ի յաշխարհն Յունաց,,: - 320. մեղք մեր արարին և ոչ քաջութիւն ձեր: - 144. մեք տացուք զԱշոտ ի ձեռս քո առանց զինու և մարտից և ճակատուց կազմութեան, և մի ինչ յայնոսիկ աշխատ լինիցիս. – 212. միթէ դո՞ւ միայն առաջին յաղթեցար և հարար ի թշնամեաց, կամ քո՞ միայն զօրքդ անկան, կամ

քո՞ և եթ աւար բաժանեցաւ: - 282. Միթէ դո՞ւ միայն բնակելոց ես յերկրի: - 330. մինչև եկից հասից ի լայնանիստ ընդարձակ ասպարէզս մատենից պատմութեանցս՝ ոճով մի ըստ միոջէ շարեցից, կարգեցից, գրեցից զախորժելին քեզ: - 74. Յայնժամ թանձրացեալ մթասցի, բալ և մառախուղ խաւար ի վերայ լերանց և դաշտաց քոց. – 148. յայնժամ ելցէ հուր ի քէն ծնեալ, և կերիցէ զքեզ և զբազմութիւն ուստերաց և դստերաց քոց, ի քէն ակն ունելով զբորբոքումն: - 148. յայնժամ ահագինս որոտալով ճայթիցէ ի վերայ քո երկինք, և լսիցէ հնչիւն և բոմբիւն և դղրդիւն յանդնդոց, ձայն որոտալոյ սմբակաց բազում ամբոխից երիվարաց և աղաղակ բազում սպառազինաց յարձակեսցին ի վերայ քո. - 148. յայնժամ կերիցէ սուր զպատերազմողս քո. – 148. Յայնժամ մերկասցի արեգակն զլոյս իւր ի քէն և զգեցուսցէ քեզ խաւար. – 148. Յաւելում պատկանաբար գրել քեզ զարիական նահատակութենէն հանդիսական ժուժկալութեամբ ողջախոհաբար կրթութեամբ զզինուորական երկասիրութեամբն յօժարաբար դեգերել զմարզպանութեանն արդիւնաւորել անուանակոչութիւն: - 398. Յղէին պատգամս առ որդիսն Իսմայէլի և ցուցանէին զմտերիմ հարազատութիւն, թէ ,,որդիք Աբրահամու եմք մեք և դուք, եղբարք. պարտ է ձեզ գալ յօգնականութիւն մեզ, և առցուք զերկիր ժառանգութեան մերոյ,,: - 156. Նա ևս ծանօթագոյն քեզ գրեմ – 16. նոյնպէս արարից ընդ քեզ և ընդ զօրս քո: - 278. Ո՞չ ածէք զմտաւ և ոչ զմի ինչ ի բարեացն, զոր ձեր յինէն գտեալ. – 214. Ո՞չ ապաքէն դու իսկ տեսանէիր, զի մտանէի և ելանէի ի սուրբ եկեղեցին ընդ ամենայն հաւատացեալսն – 222. ո՞չ ապաքէն տունդ Սասանայ եբարձ զերկիր ձեր և զտէրութիւնդ, և դուք դիմեալ գայք ի վերայ իմ: - 138. ո՞վ ասասցէ յիմար արքային Զրադաշտի՝ ասա՛ ձրավաստակ աստուածոյդ քո Որմզդի՝ չաշխատել տարապարտ. – 46. ո՞վ ես դու՝ ասէ. ես եմ որդին քո Որմզդ. – 46. Ոչ կամեցար կամօք տալ զանձն ի ծառայութիւն մեզ, այլ տէր և թագաւոր կոչես զքեզ. զգանձն արքունի որ իմ առ քեզ է՝ ծախես, և զայդ ոչ գիտես, եթէ վաղիւ համարս տալոց ես: - 146. որ տեղասցեն ի վերայ ձեր նետս երկաթեղէնս և շուառունս մուխս պաղաւատիկք սլաքովք և հաստաձիգք աղեղանց և կռուիք բազմադիմիք՝ որչափ Խոսրովայ և ձեզ պիտոյ իցէ,,: - 138.. որ կարի սիրելի է ինձ, մանաւանդ թէ յոլովից, կամ թէ ամենայն հաւատացելոց ի Քրիստոս՝ յերկարագոյնս առնել ի ճառիս զղեգերումն շահատակութեան, ձեզ լսել և ինձ գրել: - 76. որով մահուամբ և կամիս՝ պատրաստ եմք յամենայն հնարս չարչարանաց մտանել, զոր ուսոյց քեզ վարդապետն չարեաց հայրն քո սատանայ. – 292. Որով օրինակաւ կամք քո հրամայեն՝ եկեսցէ ի վերայ մեր պատիժ պատուհասի. – 246. որպէս ասաց Ամովս մարգարէ, ,,գերծիր և կտրեա ի վերայ փափուկ որդւոց քոց, լայնեա զխզումն քո իբրև զարծուոյ, զի գերեցան ի քէն,,: - 238. որպէս ասաց Ամովս մարգարէ, ,,գերծիր և կտրեա ի վերայ փափուկ որդւոց քոց, լայնեա զխզումն քո իբրև զարծուոյ, զի գերեցան ի քէն,,: - 238. որպէս ասաց Պաւղոս, եթէ ,,դուք տաճար էք Աստուծոյ կենդանւոյ,, , և դարձեալ ասէ թէ ,,տուն Աստուծոյ եմք մեք,,. և դարձեալ մարգարէին ասէ, բնակեցայց ի նոսա և գնացից ի նոսա,,: - 394. Որպէս և Եզեկիէլ մարգարէ ասէ, ,,հայր քո քանանացի էր և մայր քո քետացի,,: - 182. որպէս և ցուցանէ քեզ պատմութիւնք սրբոց Վարդանանց – 48. Չիցէ՞ լուեալ ձեր զոր ասաց Սողոմոն, թէ ,,որ հատուցանէ չար փոխանակ բարւոյ՝ չար ի տանէ նորա մի պակասեսցէ,,: - 214. Վա՛յ քեզ, եղո՛ւկ դու, այր քաջ, արքայդ մեծանուն, յորժամ կարկառիցէ բարձրեալն զձեռն իւր ի կործանել զքեզ և ի խորտակել զգաւազան ամբարտաւանութեան քո: - 148. Վասն մարմնաւորացն այնչափ նահատակեցայ, որպէս գիտացերն և որպէս այժմ լսես յինէն, վասն Քրիստոսի և վասն յաւիտենական կենացն ո՞չ մեռանիցիմ, կամ արդեօք ի քէ՞ն երկնչիցիմ. քա՛ւ լիցի. – 296. տես քեզէն և ծանի՛ր, զի ոչ գոյ վնաս իմ յիրիդ յայդմիկ կամ կարողութիւն արձակել զքեզ,,: -238. Քանզի թէ Աստուած կամեսցի՝ տանելոց է սաստկութիւն հողմոյ զզօրութիւն քո իբրև զփոշի,,: - 140. Քանզի վաղիւ առաւօտուն ցուցանեմ ձեզ փիղս վառեալս, և ի վերայ հզօր սպառազէնս ի քաջաց – 138. Եւ արդ եկ ասացից քեզ, ո՛րպիսի ողբովք ողբայ զնոսա հին մատենագիրն ասելով. – 164. զի գործ մի գործեմ ես յաւուրս ձեր, գործ որում ոչ հաւատայցէք, թէ ոք պատմեսցէ ձեզ: - 200.

ԴՈՒՋՆԱՔԵԱՅ - Արդ եկայք դիցուք զյանդիմանութիւն սոցա առ փոքր ինչ և դուզնաքեայ ի գրոց սրբոց – 254. բայց ակամայ և ի հարկէ գրեցից կարգեցից ի փոքր և ի դուզնաքեայ բանից, բովանդակեցից համառօտ սուղ և սակաւ բանիւ անցանել ընդ պատմութիւն իրիս այսմիկ – 240. Բաւականասցի իմ դուզնաքեայ բանքս առ հերձուածող մոլորութեանց: - 258. դուզնաքեայ երասանակալ փայտիւն վազս առեալ սիգաքայլ ճեմարանօք ընդ կապուտակաձև երկնագոյն լեռնային և դաշտական ասպարէզս – 396.

ԴՈՒԻՆ - Գունակ Կորխային բանակին յանդնդաքակ տունսն զբնակութիւնսն արարին, անխայեալ ի նինուէականն ստրջացեալ նախ անդ ո՛չ անխայեալ առ քարեղէն սիրտ քաղաքացւոցն Դունայ: - 358. և անցանէ ի Շիրակ, և հասեալ ի Դուին՝ աւերէ զնա և զՆախճաւան և զՈրմի – 148. Եւ գրեն թուղթ առ Յամանիկն, եթէ ,,ի մտանելն իմ ի Դուին քաղաք և զհարկս արքունի յիս գրաւել՝ և յանկասկած առեալ զիշխանս Հայոց՝ և եկեսցեն առ իս. – 340. և թողեալ զբնակելն ի Դուինն՝ ելեալ բնակեցաւ ի Նոր քաղաքին ի մեծ եկեղեցւոջն որ յանուն սրբոյն Գրիգորի շինեալ էր երանելւոյ տեառն Ներսիսի երկրորդի Հայոց կաթողիկոսի: - 358. և ինքն ել գնաց երթալ մտանել ի քաղաքն Դուին, ձմերոց ինքեան պատրաստեալ զնա, մինչ ի ժամ գարնանայինս, ունելով ընդ իւր կապեալս բազումս. – 240. և տաց քեզ զկողմանս Ասորոց և զամենայն Արեւաստան մինչև զՄծուին քաղաք, և ի յերկրէ Հայոց՝ զաշխարհս տանուտերական իշխանութեանն մինչև յԱյրարատ և ընդ Դուին քաղաք և յեզր ծովուն Բզնունեաց և ցԱռեստն աւան, և զմեծ մասն աշխարհին Վրաց մինչև ցՏփղիս քաղաք. – 136. Զկնի այսորիկ յառաջ խաղացեալ Ահմաթ և որ ընդ նմա կայսկազենիցն գունդք, երթեալ մտանել ի քաղաքն Դուին, թերևս կարասցէ ի կատարումն՝ զոր ինչ խորհեցան՝ հասուցանել զչարիսն: - 344. ժամ տուեալ նմա դառնալ առ նա ի ձմերոց նորա ի քաղաքն Դուին: - 218. Իսկ անօրէն զօրավարն … գնաց եմուտ ի ջերմագոյն տեղիս ի քաղաքն Դուին ձմերել անդ. – 262. ԿՈՐԾԱՆՈՒՄՆ ՔԱՂԱՔԻՆ ԴՈՒՆԻ Ի ՍԱՍՏԻԿ ՇԱՐԺՄԱՆԷՆ: - 356. յորում շահաստանն Դուին, մարդախիտ պարսպաւոր պատնիշօք պատուարեալ և տուրևառիկ վաճառականութեամբ և ազգի ազգի պղծութեամբ յափրացեալ յդփացեալ: - 358. ՈՐ ԻՆՉ ԶԿՆԻ ԱՅՍՈՐԻԿ ԳՈՐԾԵԱՑ ԲՈՒՀԱՅ Ի ԴՈՒԻՆ ՔԱՂԱՔԻ, ԵԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՎԿԱՅԻՑՆ: - 260. Սոքա ամենեքեան վառեալք սպառազէն պատրաստութեամբ և բազմաձեռն առատալիր պատարագօք՝ գնացին, զի առեալ տարցեն մուծցեն զնա ի Դուին քաղաքն: - 340.

ԴՈՒԼ ԵԻ ԴԱԴԱՐ - Իսկ զօրավարն Բուխայ կայր ի կոր կործանմանն, ի տարակուսանս ըմբռնեալ փղձկէր ի միտս իւր, ցնորակոծ լինէր, հնարէր ելս իրացն գտանել ի վրանայարկն փակեալ, և ոչ առնոյր դուլ և դադար: - 282. խոկայր և մտախորհ լինէր և վասն այլոց աշխարհաց և աշխարհակալաց չառնուլ դուլ և դադար – 268.

ԴՈՒՌՆ - և Հայրակղի հասեալ բանակեցաւ առ դուրս Տիսպոն քաղաքի. – 150. ապա ցուցին զտեղին ուր ծածկեալն էր. զոր առեալ վարեցին ի գերութեան, և ոսկի և արծաթ անբաւ խաղացուցին ի դուռն թագաւորին: - 142. Բայց բացումն դրան քան զամենայն այս չար է որ յաներևոյթս է բացեալ, դուռն կորստեան հոգոց՝ առաւել քան թէ մարմնոց – 196. Բայց բացումն դրան քան զամենայն այս չար է որ յաներևոյթս է բացեալ, դուռն կորստեան հոգոց՝ առաւել քան թէ մարմնոց – 196. Բայց արքայն Պարսից հեռացեալ պատերազմաւ ի Քուշանն ի դուռն ճորայ. – 128. եկեալ հասեալ աւուր կորստեան մերձ առ դուրս մեր – 196. երթեալ տուայտի ի դրան Մարաց Դարէհի, մինչ զգալ վասն նորա Երուանդայ. – 84. Եւ լցաւ ասացեալն ի Սոփոնիայ մարգարէէն, թէ ,,եղիցի յաւուր յայնմիկ ձայն ի դրանէ օցոտելոցն և գոյժ յերկրորդ դրանէն և բեկումն ի վերայ բլրոց: - 180. Եւ լցաւ ասացեալն ի Սոփոնիայ մարգարէէն, թէ ,,եղիցի յաւուր յայնմիկ ձայն ի դրանէ օցոտելոցն և գոյժ յերկրորդ դրանէն և բեկումն ի վերայ բլրոց: - 180. և բախեցին արտաքոյ զդուռնն ուր մտեալ էր իշխանն, և կալեալ զնա հանին ի բարձրագոյն տեղիս ամրոցին, և եդին ի բանտի ի ներքսագոյն սենեկացն. – 348. և ելեալ նստաւ ի ջորւոջն, զոր պատրաստեալն ունէին անդէն առ դրան վրանին, և հանին արտաքոյ դաշիկ բանակին՝ դարձուցեալ դառնալ ընդ նոյն ուստի եկն: - 346. Եւ թագաւորեալ Վռամ որդի Յազկերտի՝ կոչէ ի դուռն

զսուրբն Սահակ Հայոց կաթողիկոս: - 116. և կարգեցին հրամանատար ի դրանն զԽոռոխ Որմզդ, որ և սպանաւ ի բամբշանէն որ կոչէին Բոր: - 154. Եւ հասեալ Շաւասպայ Արծրունւոյ ամբարշտի յԱրտաշատ հանդերձ մարզպանաւն՝ շինեն ի դուռն քաղաքին զորմզդական մեհեանն, /124/ և զկրակապաշտութեան մոլութիւն բորբոքեն ի նմա. – 126. և որդի Որմզդի Խոսրով գնաց փախստական առ Մուրիկ թագաւորն Յունաց՝ զոր առեալ քեռիք նորա Վնդոյ և Վստամ գնացին փախստական ի դուռն կայսերական: - 136. Եւ Վռամ … փութացաւ կոչեաց դարձեալ ի դուռն զԱրտաշիր և զսուրբն Սահակ բազմութեամբ նախարարացն Հայոց. - 118. Զոր յառաջ մատուցեալ ասացից ըստ կարգի, թէպէտ և ոչ խնդամիտ յօժարութեամբ՝ սակայն ակամայ և ի հարկէ ճառագրեցից զբացումն դրան աստուածասաստ բարկութեան ի վերայ մեր – 196. Զոր մարդկային կարողութեան անհնար է /196/ փակել զբացումն դրանն ի կորուստ. – 198. Իսկ ի հասանել սրբոյն Սահակայ ի դուռն հանդերձ նախարարօքն՝ զիջանէ ցածնու Վռամ ի բարկութենէ վրէժխնդրութեան Հայոց քինահարութեան անարգանաց Շապհոյ, և ընդ Յունաց զսերտ խաղաղութիւն ունելով.- 116. Իսկ իբրև լուաւ թագաւորն զայս գոյժ աղաղակի հասեալ ի դուռն արքայի՝ մրմռեալ իբրև զառիւծ և իբրև զարջ տարակուսեալ – 180. Իսկ քաղաքապետն Սահակ ելեալ ընդ դուռնն, որ ելանէ ի բերդն Շամշղտայ, սամոյր զինքեամբ արկեալ և գաւազան ի ձեռն առեալ, յիմարեալ մտօք կորոյս զփախուստն իւր, որ կարող էր գնալ յով և կամիցի. – 272. նոքա երթեալ մտին անդ, փակեցին զդրունսն և ամրացան ի նմա և սկսան ապստամբել ի Հռովմայեցւոց տէրութենէն: - 156. Սահակ որդի Վաչէի կացեալ ի դրան Արտաշէսի շքեղ և երևելի ճոխութեամբ – 90. զի էր նորա /178/ գանձ բազում ի կարաս թաքուցեալ ի գետնափոր տան, ի ներքոյ դրացն ապարանից տան - 180.

ԴՈՒՌՆ ԱՐՔՈՒՆԻ - ,,հրամայեա արձակել արս հաւատարիմս, և ես յորժամ հասից ի դուռն արքունի՝ ի նմին ժամու խնդիր արարից Խաչին, և գտեալ զնա տայց բերել առ քեզ,,: - 154. Արդ յայսմ հետէ ըստ նեպակի գեղջն/գրքում՝գեաղջն/ կապճահամար ժժակք յամենայն ի դուռն արքունի ի սատակումն եկեսցեն. – 46. բայց միայն ի դրան արքունի մտանել և ելանել ընդ հաւատարիմս թագաւորին ի տունս դիւանաց և գանձուց: - 92. և խոստանայր շքեղ և երևելի կացուցանել ի մէջ աշխարհակոյտ ամբոխից ի դրան արքունի – 204. և կանայք կոտորելոցն հանդերձ խառնիճաղանճ ամբոխիւն լրբենի դիմօք, հոլանեալք և ի բաց ընկեցեալ զձև կանացի բնութեան, որպէս օրէն է նոցա, մանաւանդ տաճկական ազանց, և ի հետիոտս դիմեալք ի դուռն արքունի հասանէին: - 180. Եւ նուազեալ ազգին Արծրունեաց ոչ ոք մնաց, բայց միայն մանուկ մի Համամ անուն, որդի Արշաւիրի ծերոյ եղբօր Խուրէնայ, որ կայր ի դրան արքունի – 90. զայս խորհելով թէ զայսպիսի քաջ այր և պատերազմող ոչ պատշաճ վարկանելի է ի հեռաբնակ վայրս ի դրանէ արքունի կացուցանել: - 330. զորոյ լոյծ և մեղկ բարս ուսեալ թագաւորին՝ կացուցանէ զնա ի վերակացութիւն գործակալաց դրան արքունի – 90. զՎաչէ կացոյց ի դրան արքունի, զի ամենայն ոք նովաւ մտցէ և ելցէ յարքունիսն – 82. Իսկ զՎահագն Հայկազնեայ … կացուցանեն ի դրան արքունի, յառաջանալ ի գործ պատերազմին մեծաւ աշխատութեամբ՝ կամ մեռանել ի սրոյ թշնամեաց դիպելոց, կամ յաղթել քաջասրտութեամբ: - 70. Իսկ Խոսրովու կարծեալ արծարծեալ զզօրս իւր և որք ի դրանէն արքունի որ կոչին համհարզք և փուշտիպանք, և ամենայն արք ընտիրք/148/ տան թագաւորին ոյժ առեալ դարձեալ պատերազմել ընդ Հայրակղի: - 150.

ԴՈՒՍՏ - ,,և այս ևս քաջահաճոյ թուիցի քեզ, վեհդ և ամենեցուն գիտելիդ. և զի եղիցի ի մէջ քո և Դերենկիդ անկասկած միաւորութիւն՝ զդուստր քո տացես կնութեան Դերենկիդ, տիկնութեան Վասպուրականի,,: - 322. Ապա թագաւորեցուցին զԲորն զդուստրն Խոսրովայ, որ էր կին նորին, որում բամբիշն կոչէին. – 154. Ապա ոմանք թագաւորեցուցին զԱզարմիկ դուստր Խոսրովու, և զօրն Խոռեմայ թագաւորեցուցին զՈրմզդ ոմն ի Մծուին քաղաքի. – 156. առ որ զչարեալ Արէտ՝ խորհէր վրէժ առնուլ զանարգանաց դստերն, և ոչ իշխէր համարձակ յինքնակալէն Օգոստեայ Տիբերի կայսեր: - 78. Բայց միայն զԱրշակ

ոմն ի տոհմէն Վարաժնունեաց */փրկվեց/* խնդրեալ դստերն Շապհոյ Բագրատունոյ, զոր առեալ յայնժամ Աւշնի կնութեան յանօրէն ամուսնութիւն. - 372. Եւ առնու Ջաջուռ զդուստր Ենիանեայ կնութեան Սահակայ որդւոյ իւրոյ, որում անուն կոչէր Սմբատուհի: - 76. և ի նիրհելն իւրում՝ ձայնէ հոգին աւտար ի բերանոյ կնոջն քարացելոյ եթէ՝ ծնցիս որդի աշխարհակալ. որ և ի պոռնկութենէ յղացեալ իսկ էր դուստր ցեղի Դանայ: - 158. և ի չափ հասեալ ի տիոց տղայականաց՝ ետուն զդստերս իւրեանց կնութեան մանկանցն: - 98. Եւ ծնան նորա երիս որդիս, Սարգիս որ և Աշոտ՝ ՅԻԶ թուականութեանն Հայոց, Խաչիկ որ և Գագիկ ՅԻԸ, և Գուրգէն. մանկունք կայտառք և գեղապանծք և բարենշանք և ամենեցուն ցանկալիք. ծնաւ և երկուս դստերս: - 338. և ունէր կինն զանձ բազում, և նորա դուստր մի Անուշ անուն. – 90. Զի նոքա վասն ի կանայսն մոլելոյ ընդ դստերսն Կայէնի խառնակելով՝ ջրով կործանեցան. – 336. Զկնի այսորիկ եկն Աշոտ թագաւորն Հայոց մխիթարել զդուստր իւր և զթոռունս, և ևս առատանայր զհաստատութիւն իշխանութեանն Աշոտի և զոստիկանութիւնն Ապումրուանայ: - 356. զսա աղերսեալ տիկինն Վասպուրական Սեդայ, կին Աշոտի և դուստր Ապումրուանայ՝ զերծին զնա ի սրոյն Աւշնի: - 374 իսկ աշխարհն վերին Հնդկաց ասի լինել դստեր նորա: - 30. Իսկ ոմանք ի պատմագրաց ասեն, թէ և դուստր Նոյի և ճարտարապետ նաւին կնաւ և որդւովք և կարևոր բարեկամօք. (տապանի մեջ են մտել) որ և ինձ հաւանականք այսոքիկ թուին. – 30. մանաւանդ զի փեսայացուցեալ էր Շապուհ զԳագիկ ի դուստր իւր. – 364 յայնժամ ելցէ հուր ի քէն ծնեալ, և կերիցէ զքեզ և զբազմութիւն ուստերաց և դստերաց քոց, ի քէն ակն ունելով զբորբոքումն: - 148. Յանգ հանեալ Պտղոմեանց զժամանակ թագաւորութեանցն, և հասեալ /72/ մինչ ի Կղէոպատրեայ, դուստր Պտղոմէի Դիոնիսի. – 74. Սորա որդիք հինգ ծնանի, յորոց մինն Հերովդէս և միւսն Փիլիպպոս, զորոյ կինն հանեալ Հերովդէի՝ թող զկինն իւր զառաջին, զդուստր Արէտայ արքայի Պատրէացւոց. – 78. քանզի էին Ադամայ և այլ ուստերք և դստերք բազումք, այլ ոչ արժանաժառանգք պայազատութեան աշխարհահայր լինելոյ. – 24. քանզի ոչ էր օրէն թագաւորացն և օրինադրացն զկանանց ազգի թիւ ազգաբանութեան շարել, բայց միայն ըստ ժամանակագրութեանն կանոնի, որպէս և յԻսրայէլի զԳոթողիայ, և յԵգիպտոս զԿղէոպատրեայ դուստր Պտղոմեայ Դիոնիսեայ: - 16. Քանզի տեսեալ, ասէ, որդւոցն Աստուծոյ զդստերսն մարդկան զի գեղեցիկ էին՝ առին իւրեանց կանայս յամենեցունց զոր ընտրեցին: - 28.

ԴՈՓԻՆ - և սուսեր ընդ մէջ ածեալ, և հեծուցեալ ի մեծազարդ ջորւոջ, և նժոյգս առաջի և զկնի ի զարդ և ի զէն սպառազինեալ և ձայնք փողոց և դոփիւնք թմբկաց և այլ երաժշտական գործոց հնչեցուցանէին շուրջանակի. – 236.

ԴՊՐԱՊԵՏ - Իսկ զհարկացն տուրս յարքունիսն Կեսարու՝ ի ձեռն դպրապետին վճարէ առ կայսր. – 96.

ԴՊՐՈՒԹԻՒՆ - ԴՊՐՈՒԹԻՒՆ ԵՐՐՈՐԴ – 194. ԴՊՐՈՒԹԻՒՆ ԱՌԱՋԻՆ – 12. ԴՊՐՈՒԹԻՒՆ ԵՐԿՐՈՐԴ – 124. Զսա տեսեալ Մահմէտի՝ /162/ կոչեաց և յարեցոյց առ ինքն, հրամայեալ նմա գրել գիրս օրինաց ազգին իւրոյ, ձեռամբ Աբութուռաբայ իսմայէլացւոյ. քանզի ինքն ոչ գիտէր գիր և ոչ դպրութիւն: - 164. Ընդ նոյն ժամանակս յղէ թագաւորն զոմն ի յաւագ նախարարացն վերակացու Հայոց և հաւատարիմ ի վերայ հարկաց արքունի Ապուսէթ անուամբ, ըստ տաճկական լեզուին, յարելութեամբ եբրայական դպրութեանն: - 170. ի կանոնի անդ գտցես զՆինոս և զՇամիրամ և զԱբրահամ և զվեշտասաներորդ հարստութիւն Եգիպտացւոց, և ի չորրորդ դպրութեանն Յուլիանու Աղիկառնացւոյ, որպէս և ի չորրորդ դպրութեանն Մովսէսի: - 18. ի կանոնի անդ գտցես զՆինոս և զՇամիրամ և զԱբրահամ և զվեշտասաներորդ հարստութիւն Եգիպտացւոց, և ի չորրորդ դպրութեանն Յուլիանու Աղիկառնացւոյ, որպէս և ի չորրորդ դպրութեանն Մովսէսի: - 18. Կատարեցաւ Դպրութիւն Առաջին Պատմութեան Հայոց ըստ ազգաբանութեան Արծրունեաց սեռի: - 122. որոյ անունն գրեալ է ի դպրութեան կենաց: - 224. Քանզի Վարդան անցեալ գնացեալ էր սուրբ վարդապետաւն Մաշտոցիւ առ կայսր Թէոդոս և առ Ատտիկոս արքեպիսկոպոս

հանդերձ թղթովք սրբոյն Սահակայ, տանելով ընդ իւրեանց և զգիր և զբառ հայերէն դպրութեան. – 116.

ԴՌ - Եւ թողին զնոսա արք իբրև ԴՌ, վիրաւորք, բոկք և մերկք և հետևակք: - 150. Եւ կորեան ի զօրացն Պարսից յաւուր յայնմիկ սպառազէնք հեծելոց ԴՌ հանդերձ նաւօք իւրեանց: - 146.

ԴՌՈԹԵԱԼ - և բազմութիւն զինուորաց վառելոց աստի և անտի, և վարոցաւորք և սակրաւորք այսր անդր քշել զամբոխն դռոթեալ. – 236.

ԴՌՈԹ ՏՈՒԵԱԼ - Եւ ամենայն մեծամեծքն հանդերձ խառնաղանճ / 240/ ամբոխիւն դռոթ տուեալ, ոչ միայն ըստ հրամանի թագաւորին ելանել զհետ աղաղակի փողոյն և արքունի կոչնականացն՝ այլ փութացան տեսանել, թէ ո՛վ ոք և ո՛րպիսիք են սոքա – 242. և գռոթ/ճիշտը՝դռոթ/ տուեալ յանձնիւր որջարանաց զօրէն մեղուացն ի մեղուանոցացն արտաքս դիմեալ ի ժամանակս խաղացման ծննդոցն, առաջնորդութեամբ իւրեանց որդնածին առաջնորդին – 398. Եւ սկսաւ երկիրս առնուլ զնորոգումն, և եկեղեցիքն պայծառանալ ի զարդ և ի պաշտօնս շքեղութեան, և ցրուեալքն դռոթ տուեալ դարձան յիւրաքանչիւր տեղիս՝ շինել, տնկել, մոռանալ զցաւսն և զտրտմութիւնսն զոր կրեցին: - 318.

ԴՎԻՆ - և հարաւային ջերմագոյն օդն շնչեաց ի խորագոյն դաշտն քաղաքին Դվնայ – 268.

ԴՐԱԽՏ - որ արբուցանելով զդրախտն ընկղմի ընդ երկրաւ – 20. ,,իբրև զդրախտ փափկութեան երկիրն առաջի, և զկնի նորա դաշտ ապականութեան – 238. այլ և ոչ տարաբարձական, որպէս և /48/ արդ ևս ոմանք կարծեն, ոչ գիտելով զասացեալսն ի Տեառնէ աւազակին՝ այսօր ընդ իս իցես ի դրախտին: - 50. Այլ ի հրամանէ Աստուծոյ յանդիման դրախտին բնակելով պահոք ապաշխարութեան սգացեալ եղեն, ողբալով զվրիպումն առաջին կենացն, ամենայնիւ հրաժարեալ ի մարմնականաց, հոգիազարդ մարգարէութեամբ ժուժկալեալք ի մսոյ և ի գինւոյ: - 30. անհասական իմն շնորհիւ փառօք և պատուով պսակեալ զմարդն իշխանական ճոխութեամբ՝ վայելեցուցանէ դրախտին, տալով նմա բազմամեայ կենաց սահման իբրև զմի օր - 20. Եւ եհան արձակեաց զնա Տէր Աստուած ի դրախտէն փափկութեան՝ գործել զերկիր ուստի առաւ: - 22. և զի ասէ՝ գործել և պահել՝ ոչ իբր ի լիութիւն ամենակատար դրախտին կամ պահպանութիւն ի վնասակարաց – 20. Զոր և Աղէքսանդրի Մակեդոնացւոյ ի դէպ ելանէ առ Ողըմպիադայ վիպագրութիւնք. թերևս ի մասն ինչ արտաքոյ սահմանաց դրախտին հասանել. – 50. որով իցէ ասել արևմտական զդրախտն կամ /18/ ի միջոցի ուրեք. – 20. վասն որոյ զերկայնութիւն կենաց տալով նահապետացն Աստուծոյ՝ յանդիման դրախտին բնակեցուցանէր, ուսուցանելով՝ ի ձեռն ապաշաւանաց ի նոյն վերադարձիլ կեանս. – 26. Տնկեաց, ասէ, Աստուած զդրախտն յԵդեմ ընդ արևելս. այսինքն յերկրի յարևելս – 18. քանզի արդարև զգալի և շօշափելի էր դրախտն, և ոչ իմանալի կամ ի մէջ երկուց աշխարհաց – 48.

ԴՐԱԿՑՈՒԹԻՒՆ - որք ծանուցեալ զբռնանալն նորա ի վերայ պարսկական պետացն և զինչ կրեցին, զմտաւ ածեալ և զխառն ընդ աշխարհիս զդրակցութիւնն, և թէ գուցէ զպարսկայինն հասանիցէ մեզ կրել և աշխարհիս մեր՝ ձեռն ետուն հաւանութեան ի նորայն կալ մնալ հպատակութեան: - 360. Քանզի խառն դրակցութեամբ սահմանին առ միմեանս Փոքր Աղբագ և աշխարհն Կորճէից և Պարսկահայոց՝ և հանապազ առ միմեանս զգժտութիւն կեղծաբերէին, մարզպանն և որ զԿորճէիցն ունէին զգործավարութիւն. – 400.

ԴՐԱՆԴԻ - և զկէսն մահու դատապարտեալ, զգլուխս նոցա հատեալ ի փայտի բարձրացուցանէին ի վերայ դրանդեաց պարսպին: - 372. որպէս յայնժամ ի մահուն Ոզիայ արքայի, յաւուրս Եսայեայ մարգարէի՝ ի ձայնէ սրովբէից շարժեալ տաճարին տեառն, մինչ բարձրանալ դրանդեացն: - 358.

ԴՐԴՈՒԵԼ - Բայց այս ոչ իմացեալ եմ, թէ արդեօք թագաւորն դրդուեցաւ ի հրապոյրս նորա թէ ոչ: - 100. Եւ բազում այն էր որ մարտիրոսական ճգնութեամբ վկայեցին, քան որք դրդուեցան, առ ոչինչ համարելով զյափշտակութիւն ընչից և ստացուածոց և զմահս դառնագոյնս: - 124. և բազումք դրդուեցան և ելին զկնի սատանայի – 222. թէ գուցէ դրդուիցի ինչ ի միջոցէ ապաստանին վիմին հաստատնոյ – 204. Իսկ թագաւորն Հայոց Սմբատ անպատկան

վարկանելով զերթալն Աշոտի առ Աւշին, մի՛ գուցէ արդեօք և այլք դրդուիցին յիշխանացն զնորայն հետեւել ուղևորութիւն, և արգելուլն զԱշոտ՝ չանսաց ումեք: - 362.

ԴՐԴՈՒԵՑՈՒՑԱՆԵԼ - որով զբազումս դրդուեցոյց ի յաստուածային օրինացն և յերկրպագութենէ յաստուածորդւոյն: - 292.

ԴՐԺԱՆՔ - Զոր բան և վասն օձին սքանչելապէս ուսուցանէ Փիլոն Աղէքսանդրացի՝ յառաջ քան զդրժանացն դիպուածս՝ յոլովութիւն իմաստից ունել ամենայն շնչականաց. – 22. քանզի ոչինչ ունէր զկարծիս դրժանաց առ թագաւորն և առ զօրս նորա – 186.

ԴՐԺԵԼ - Եւ իբրև ետուն զթուղթն կարծեցեալ իբրև յերեսաց արքայի՝ ,,ընթերցիր զայդ, ասէ, մի՛ ինչ ընդ մեղադրութեամբ արկաներ զիս, և կարծել նենգութեամբ գնալ առ քեզ և դրժել ինչ քեզ և ստել երդմանց /236/ մերոց. – 238.

ԴՐԺՈՂ - Իսկ ի վերայ բազում հինիցն եկելոց ի վերայ Գուրգինի և սաստիկ պատերազմացն զոր պատերազմեցաւ յաղթող նահատակութեամբ. ոչ միայն յարտաքին թշնամեացն որ շուրջանակի պաշարէին, բազում այն էր որ ի ներքին ընտանեաց հարազատաց, ազգականաց դրժողաց, ուխտազանցաց, ստոց և ստերդմանց յուզէին աղմուկք: - 308.

ԴՐՈՇՄ - յայնժամ ամօթալից աչօք տեսցես զբազմափառ և զպայծառացեալ նշանս դրոշմացն բարձրացելոց: - 148.

ԴՐՈՇՄԵԱԼ - և զի հաւասարութիւն երից ազգացն, այսինքն որդւոցն Նոյի, կարգաւ կանոնեալ դրոշմեալ կան յոլովից գիրս ոչ է մեզ հարկաւոր զնոյն երկայնաբանութեամբ երկրորդել: - 12. զոր առաջնոցն մատենագրեալ դրոշմեալ կայ ի գիրս ընդ ժամանակս ժամանակս սոցա քաջարութիւնք և արժանաւորք յոլովագունի և մեծամեծաց գովութեանց: - 96.

ԴՐՈՇՄԵԼ - և հրաման հարկեցուցանող ճոխութեան քո ստիպէ զմեզ, ճեպել փութալ առ գիւտն հանդիսանալ և կարգել ոճով զփափագելին յայտարարական գրով, դրոշմել կանոնել ի գիրս աստ – 12. յառաջ խաղացուցից զբանսն, արագաքայլ արշաւանօք անցեալ գնացից ընդ շարագրածս անցնիւր պատմագրաց, զազգաբանութիւնն միայն ոճով դրոշմեցից ի շարի աստ – 74.

ԴՐՈՒԱԳ - և յօրինեաց պատրաստեաց ապարանս պատուաւորս գեղազարդ խրախճանական կարգադրութեանց դրուագս – 392. որպէս գրեալ աւանդեցաւ մեզ այս ի չորրորդ դրուագի խոստաբանեալ պատմութեանն Մովսէսի Խորենացւոյ, վերադարձութեան ի վերայ երեցունց դրուագեալ հատուածին – 122.

ԴՐՈՒԱԳԵԱԼ - որպէս գրեալ աւանդեցաւ մեզ այս ի չորրորդ դրուագի խոստաբանեալ պատմութեանն Մովսէսի Խորենացւոյ, վերադարձութեան ի վերայ երեցունց դրուագեալ հատուածին – 122.

ԴՐՈՒԱՏԵԱԼ - և իբրև զքաջ հովիւն դրուատեալ ի փրկչէն՝ զանձն իւր եդ ի վերայ խաշանց ընդդէմ ապականարար գայլոցն, յարձակեալ յանխնայ դիմեցուածովք, յարիւն և յապաժոյժ, ի սատակումն և ի ծախումն սրոյ մատնեաց բոլորովիմբ զյարձակեալս նեղիչս աշխարհիս. – 312. նորին հրահանգեալ կրթարանի ուսումնասիրութեանն վարժիւք ոռոգացեալ, այր քաղցրաբարոյ և հեզահայեաց, հասարակաբար առ հասարակ զինքն վարկանելով, արտաքոյ ամբարտաւանական բարձրայօնութեանն՝ կալով յաշտիճան հեզոցն, դրուատեալ ի փրկչէն մերմէ Յիսուսէ Քրիստոսէ: - 376.

ԴՐՈՒԱՏԵԼ - Բայց ինձ ոչ դանդաղելի կամ պատկառելի կամ մեղանչելի է զուգակշիռ նահատակելոցն նահատակակից վարկանել զսա և մարտիրոսականաւն զսորայս դրուատել ճգնողական մրցմունս – 300. և օրինեցաւ և դրուատեցաւ ի հեռաւորաց և ի մերձաւորաց, բնակաց և եկաց աշխարհիս: - 312.

ԴՐՈՒԱՏԻՔ - այլ և Մակեդոնացին Աղէքսանդրոս ոչ սակաւ դրուատեօք արձանս գրէր ի մատեանս դիւանապահ աւանդութիւնս զսորայս մեծափառ գլխաւորութիւն: - 96. յաճախագոյնս վասն Գուրգինայ վայելէ զդրուատեացն, կարևոր է բազմաձեռն աճմամբ զդրուատեացն յերկարագոյնս հատուցանել զճարտասանութիւնս. - 300. յաճախագոյնս վասն Գուրգինայ վայելէ զդրուատեացն, կարևոր է բազմաձեռն աճմամբ զդրուատեացն յերկարագոյնս հատուցանել զճարտասանութիւնս. - 300.

ԴՐՕՇ - բայց և նշանակս և դրօշս փողփողել առաջի, և դնել թագ իշխանական ի գլուխ և զգեստս արքունականս զանձամբ. – 236. դրօշ և վերջաւորս փողփողեալս՝ սաւառնաձայն հնչմամբ զլեառնն դնդեցուցանէին – 208. Եւ դրօշք փողփողեալ ըստ միոյ միոյ գնդի – 228. և կարգեցին ճակատս, և բոլորեցին ռազմ, և գունդս գունդս յընտրելոց զօրացն ըստ ազգս ազգս, շուրջանակի ի ներքս փակեցին զլեառնն և դրօշս և նշանս բարձրագոյնս լայնատարածս կանգնեցին. – 280. և փութացոյց վասն նորա զի անյապաղ առ նա հասցէ, և ի մեծ պատիւս հիւպատութեան հասուսցէ զնա, և խաչանշան դրօշիւք ճոխասցի: - 316. Իսկ Մեհուժան ոչ թողանայր զթագաւորելն Հայոց, կուտեալ առ ինքն անհուն բազմութիւն վաշտից և դրօշուց և նշանաց որոց ոչ գոյր թիւ. – 106. Խնդրէ և տեղեկութիւն թէ քանի՛ դրօշք /198/ են, կամ քանի՛ նշանք, և կամ քանի՛ առաջս զօրքն բաժանիցին, և կամ քանի՛ փողք գոչիցեն, և կամ քանի՛ թմբուկք դափիցեն: - 200. մինչ նոքա գունդ առ գունդ ընդդէմ միմեանց ճակատեալ կազմէին զռազմն, և փողքն գոչէին և դրօշքն տարածանէին և նշանքն փողփողէին, վահանաւորքն և նիզակաւորքն գոչէին, այրուձին այսր անդր վազս առնէին և ախոյեանքն յարձակէին, կապարճակիրքն աղեղանցն յուրային: - 174. ունելով ընդ իւր զզօրսն Յունաց բազմամբոխ վահանաւորաց և դրօշուց սաւառնացելոց, և փողք կայսերալուրք և գունդք գունդք վառելոցն վաշտիցն – 106.

ԴՐՕՇԱԾ - և նոյնգունակ զարդու զարդարեաց զնա բուրուառօք արծաթեղինօք և ընտիր և փորձ արծաթագործ դրոշածօք /պետք է լինի դրօշածօք/ նշանի խաչին Քրիստոսի: - 390.

ԴՐՕՇՄԵԼ - և զնշան փրկական Խաչին ի վերայ գլխոցն դրօշմէին – 266.

Ե

Ե - /թագաւորեաց/ Յեզիտ ամս Զ … Ահարոն ամս Ե … Ահարոն որդի Մահմետի ամս Ե և ամիսս Զ. - 168. Արդ Աշոտի կեցեալ ամս ԺԹ, տևեալ իշխանական ճոխութեանն ԺԶ ամ յառաջ քան զգերութիւնն Հայոց, և Ե ամ ի գերութեանն արարեալ - 336. Եւ զԳագիկ որ և Ապումրուան՝ զնա ոստիկան կարգեաց ի վերայ աշխարհին, տեղապահութեամբ տիրել, զի կարի մատաղօրեայք էին որդիք Դերանկին. Աշոտ էր Թ ամաց, յորժամ մեռաւ Դերանիկն, Գագիկ էր Է ամաց, Գուրգէն Ե ամաց: - 354. և զինքն յանձն արար երանելի եպիսկոպոսին և ճգնաւոր քահանային, հանգեաւ բարի խոստովանութեամբ ի հոռի ամսեան, որ օր Ե էր ամսոյն յաւուր ուրբաթու՝ ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր – 254. Եւ էր պատերազմ սաստիկ ի մէջ Ալեայ Որդւոյ Ապուտալպի և Մաւեայ ամս Ե և ամիսս Գ: - 166. և հարկացն արքունի կանգնեցան դիւանքն, զի այն Ե ամ բեկեալ հարկք և զաւրք ի յարքունէ Պարսից: - 116. Նոյնժամայն ելեալ զհետ Դերանկին կորապաղատն ի նոյն աղագս ի բաց մեկնել ի դիմաց հազարապետին, գիտելով զոր ինչ խորհեալն էր յաղագս նախարարացն Հայոց եկելոյն առ նա, և մեկնեալ լինէին ի զօրացն անտի ասպարէզս Ե – 342. որ յետ Ե ամաց վախճանի, կեցեալ կեանս արտաքոյ իրաւանց: - 118. որոյ սկիզբն է ,,Անզբաղել ական սրտի նայեցող անձն իմ ի միւսանգամ գալուստն,, , Ե տուն ի յութերորդ վանգէ: - 284. քաջավայելչագոյնս զթագաւորութեանն կատարելագործեալ զժամանակն, Ե ամ յիշխանական ճոխութեան, ԻԵ ամ յիշխանաց իշխանական պետութեանն, Դ ամ ի թագակապ շքեղութեանն. – 356.

Ե՞ՐԲ - զի հարցեալ լինէր, թէ ո՞վ ոք, և յորո՞ց, և յումմէ՞, և ե՞րք, և առ որո՞վք: - 72.

ԵԲԵՐ - Եւ եկաց Նոյ յետ ջրհեղեղին առ որդւովքն ամս ԼԾ մինչև ի ՀԳ ամն Եբերայ – 34. զոր սովորութիւն թէ առցէ ոք արդեօք ասել ի վերայ Փաղեգայ որդւոյ Եբերայ և կամ Առանայ

որդւոյ Թարայի: - 40. մի միայն մնացեալ զիւրականն պահելով լեզու. որ Եբրայեցւոցն ասի նահապետ Եբեր որդի Սաղայի - 40.

ԵԲՐԱՅԱԿԱՆ - զոր բարբառն եբրայական իբր ծեքելով իմն զբանն՝ թուեցուցանէ իմն ասելով Աւաւրիշըլիմ, այսինքն Երուսաղէմ – 34. Զոր ի մեկնութեան Եբրայականացն անուանց ասէ Փիլոն – 34. Ընդ նոյն ժամանակս յղէ թագաւորն զոմն ի յաւագ նախարարացն վերակացու Հայոց և հաւատարիմ ի վերայ հարկաց արքունի Ապուսէթ անուամբ, ըստ տաճկական լեզուին, յարելութեամբ եբրայական դպրութեանն: - 170. Իսկ տեղի շիրմին յորում նախահօրն եդան ոսկերք՝ կատարման և կառափման, որ նոյն ինքն է գագաթն և Գողգոթայ ըստ եբրայականին, երկակի անուամբ. – 34.

ԵԲՐԱՅԵՑԻ - և աստի գիտելի է մեզ բարբառն առաջին Եբրայեցի լեալ: - 40.

ԵԲՐԱՅԵՑԻՔ - և զի թագաւորութիւնն Եբրայեցւոց յերկուս հակառակս բաժանեալ էր՝ հնազանդ իւր արարեալ Փուայ Ասորեստանեայ առնու հարկս ի Մանասէէ արքայէ հազար տաղանդ արծաթոյ: - 60. մի միայն մնացեալ զիւրականն պահելով լեզու. որ Եբրայեցւոցն ասի նահապետ Եբեր որդի Սաղայի - 40. յորոց աճմամբ յառաջանայ կարգն և գայ հասանէ ի Սենեքերիմ արքայ, առ Եզեկիայիւ Եբրայեցւոցն առաջնորդաւ և առ մերովն Հարամայիւ: - 14. որպէս Պօղոսի հաճոյ թուի գրել յառ Եբրայեցիս թղթին, թէ „չէ բաւական ժամանակս պատմելոյ„ վասն դատաւորացն Իսրայէլի և սրբոց մարգարէիցն – 302.

ԵԳԻՊՏԱԿԱՆ - Իսկ Ասուդ թէպէտ և այնպէս շքեղութեամբ ճոխանայր եգիպտական և հնդկային հարստութեամբն՝ այլ յիշելով զբուն իւր սեփհական թագաւորութիւն Ասորեստանի՝ ոչ հաճոյանայր կեալ եգիպտացի գահակալութեամբն. – 70.

ԵԳԻՊՏԱՑԻ - բայց մնայ ի հարստութեան Պտղոմէականն միայն, մինչ տիրել Կղէոպատրեայ կնոջ միոյ եգիպտացւոյ որ յետ բազում ժամանակաց, մինչն յՕգոստոս կայսր: - 72. Իսկ Ասուդ թէպէտ և այնպէս շքեղութեամբ ճոխանայր եգիպտական և հնդկային հարստութեամբն՝ այլ յիշելով զբուն իւր սեփհական թագաւորութիւն Ասորեստանի՝ ոչ հաճոյանայր կեալ եգիպտացի գահակալութեամբն. – 70. Ցայս վայր զայս գրեալ Աղէքսանդրի՝ Մակեդոնացւոյ, ի Սենեքերիմայ յառաջ մինչն ի Պտղոմէոս եգիպտացի, զոր և նոքա Պտղոմեանքն կոչէին. – 74.

ԵԳԻՊՏԱՑԻՔ - և մինչ այսմ գործոյ պարապէր՝ դէպ եղև նմա ի կողմանս Եգիպտացւոց հանդիպել առն միոյ մոնազնի, որում կոչէին Սարգիս Բհիրայ, որ էր եղեալ աշակերտ մոլեգնութեանն արիանոսաց. – 158. ի կանոնի անդ գտցես զՆինոս և զՇամիրամ և զԱբրահամ և զվեշտասաներորդ հարստութիւն Եգիպտացւոց, և ի չորրորդ դպրութեանն Յուլիանու Աղիկառնացւոյ, որպէս և ի չորրորդ դպրութեանն Մովսէսի: - 18. ի վերջին ամի սորա տիրեն Եգիպտացւոց հովիւքն… - 56. Իսկ յետ Կ ամի անցանելոյ Աղէքսանդրի և անիշխանութեանն Հայոց և Պարսից՝ թագաւորէ Արշակ Քաջ Մարաց և Պարսից և Եգիպտացւոց և Ելիմացւոց ի Բախլ քաղաքի. – 72. Իսկ Նինոս և Շամիրամ տիրեն Ասիացւոց և Եգիպտացւոց հարկապահանջ հնազանդութեամբ, այլ ոչ զազգին ի բաց բառնալով զպայազատութիւն աշխարհին: - 18. Յայնժամ հրովարտակս արարեալ, պնդադեսպանս արձակեալ ընդ ամենայն սահմանս իւրոյ տէրութեանն … Եգիպտացւոց և մինչև ի ներքին կողմն Տաճկաստանի – 198.

ԵԳԻՊՏՈՍ - „որդեակ, ի վախճանելս իմում մի կայցես յայսմ աշխարհի, զի մի կորուսցես զկարգ քո ի մէջ անհաւատից, այլ երթիցես ի կողմանս Եգիպտոսի՝ բնակել ի մէջ բազմութեան եղբարց, զի շահեսցիս զոգիդ քո„: - 162. բայց միայն մանուկ մի Դիոս անուն, զոր գաղտաբար ապրեցոյց մայրն, որպէս յետ բազում ժամանակաց զՄովսէս ի յԵգիպտոս – 14. Դարձեալ քանզի Մեստրիմ ի Քամայ ըստ բաժանման ազգին և աշխարհին շինէ զԵգիպտոս և անդ հարստանան ազգապետաբար – 18. և առեալ ոսկի զտիկնոջն և զիւր՝ գնաց յԵգիպտոս գնել ցորեան յաւուրս սովոյն որ եղև առ Կղաւդեաւ. – 80. և առեալ Պտղոմեայ զԱսուդ՝ տայ տանել յԵգիպտոս, ի պարգևեալ աշխարհն նմա յԱղէքսանդրէ – 70. և Եթովպիայ է մասն Եգիպտոսի և ամենայն Լիբէաստանեայց: - 42. Եւ եղև այր թանգար արուեստիւ և հմուտ վաճառականութեան. հարկանէր ճանապարհս հեռաւորս ի

գործ վաճառականութեանն, յԵգիպտոս և ի կողմանս Պաղեստինացւոց. – 158. Եւ զբազումս ի նոցանէ իջուցեալ յԵգիպտոս բնակեցուցանէր: - 70. Եւ ի մեռանելն իւրում Աղէքսանդրու հաստատագոյն աներկիւղութեամբ զթագաւորութիւնն իւր միապետեալ՝ կացուցանէ չորս զօրավարս չորեքծագեան կողմանց աշխարհի, զՊտղոմէոս Եգիպտոսի և Հնդկաց, զՍելևկոս Ասիացւոց և ամենայն հիւսիսականաց, զԱնդիպատրոս Պարսից և ամենայն արևելից: - 70. զոր աւերեացն Իսրայէլ յելանելն իւրում յԵգիպտոսէ և ընդ պատերազմելն ընդ Բաղակայ արքայի Մովաբայ: - 156. ի սորա Ժ ամին գնացեալ Մովսէս յԵգիպտոսէ առաքինանայր յանապատին: - 58. Կեցեալ անդ ամս բազումս մեռանի յԵգիպտոս և կայ անդէն: - 70. որ կոչի Մեծրայիմ, այսինքն Եգիպտոս, վասն ժառանգութեան սահմանաց Եգիպտոսի. – 42. Պտղոմեայ հասեալ ի տէրութիւն ժառանգաւորութեանն՝ փոխանակ իւր կացուցանէ զԱսուդ, տալով ի ձեռս նորա զբոլոր իշխանութիւն Եգիպտոսի և Հնդկաց - 70. սա թագաւորեալ Եգիպտոսի և Աղէքսանդրի - 74. քանզի ասեն զկնոջէն, յորմէ նեռնն է ծնանելոց՝ ճանապարհորդել յԵգիպտոսէ յաշխարհին Պաղեստինացւոց, և ցանկացեալ տեսանել զարձան կնոջն Ղաւտայ երթեալ դադարէ անդ հանգստութեամբ. – 158. քանզի ոչ էր օրէն թագաւորացն և օրինադրացն զկանանց ազգի թիւ ազգաբանութեան շարել, բայց միայն ըստ ժամանակագրութեանն կանոնի, որպէս և յԻսրայէլի զԳոթողիայ, և յԵգիպտոս զԿղէոպատրեայ դուստր Պտղոմեայ Դիոնիսեայ: - 16. քանզի Քամայ տուաւ ի հօրէն Եգիպտոս և Լիբէաստան և մինչև յարևմուտս հարաւոյ: - 34.

ԵԴԵԱԼ - Այլ և հուր և ծծումբ նաւթիւ բարձեալ ի գործ պատերազմին, և զլոյծ բնութիւնն յանօթս ապակեղէնս եդեալ, և մանր զծծումբն ընդ նմին խառնեալ, եդեալ ի պարսատիկ մեքենայից, և զհուրն առ ընթեր նմին, հնարաւորեալ արկանել զամրոցաւն: - 208. Այլ և հուր և ծծումբ նաւթիւ բարձեալ ի գործ պատերազմին, և զլոյծ բնութիւնն յանօթս ապակեղէնս եդեալ, և մանր զծծումբն ընդ նմին խառնեալ, եդեալ ի պարսատիկ մեքենայից, և զհուրն առ ընթեր նմին, հնարաւորեալ արկանել զամրոցաւն: - 208. Այնուհետև ել գնաց դէմ եդեալ զյունականօքն շրջել զկողմամբքն, յանձն արարեալ զհոգս իւր շնորհացն Աստուծոյ. – 316. անդ հասեալ քաջացն մերոց եղբարցն երեցունց ազատագունդ սակաւաձեռն գրոխիւ ի ձմեռնային ժամանակի, և ընդ լրթնատեսիլ լուսոյն վազս ի վերայ եդեալ՝ հանին ընդ սուր յոլովս քան թէ սակաւս: - 372. Բայց նոքա ի մտի եդեալ էին, թերևս պատիր խաբէութեամբ /170/ կարասցեն բառնալ զնոսա յիւրաքանչիւր տէրութենէ: - 172. ետ բերել փայտս, և եդեալ ի վերայ փայտին զերանելին Սողոմոն՝ և մօտ առ փայտն կացուցին զսուրբն Կահայ, զի գոնեայ մինն ի միւսոյ տանջանացն երկուցեալ հնազանդիցի հրամանի թագաւորին: - 292. և եդեալ ի ներքոյ արգոբայ տաղաւարաց և յղեաց ընդ կողմն Պարսից – 220. և դեռ զիւրաքանչիւր սուսեր ածեալ ունէին ընդ մէջ իւր և վահան ի վերայ թիկանց եդեալ. – 220. և եդեալ ի վերայ ուղտուց խաղացուցին ի Սամառայ – 238. Եւ ելեալ ազատացն Վասպուրականի դէմ եդեալ տարադէմ գնացին յԱմդացւոց քաղաքն առ Ահմաթ որդի Յիսէի Շեհայ – 366. Եւ եղև իբրև հասին ի տեղի կատարմանն ասպարիսի նահատակութեանն՝ ծունր եդեալ կային յաղօթս – 266. և զազգատոհմ մեր ընդ մեծ նեղութեամբ պաշարէիք և աշխարհի մերոյ աւերիչք գտանէիք և հարկացն եղելոց խափանիչք լինէիք: - 244. և զոր ասէն այսպիսի ինչ է. ,,վա՛յ քեզ, եղո՛ւկ դու երկիրդ Պարսից, յորժամ բազմախուռն գունդք զօրացն Յունաց ի քեզ արշաւանս եդեալ՝ հասանիցեն և հարկանիցեն զքեզ ի սուր սուսերաց, և յառաթուր սմբակաց: - 148. և ի հասանելն նորա անդր թողեալ զհակառակաբար մարտն՝ խօսին ի խաղաղութիւն, առաջի եդեալ զհրամանն արքունի, զգլխաւորին Տաճկաց, և Աշոտի հաւատալ զբոլոր տէրութիւնս Վասպուրականի: - 316. Եւ ինձ ի վերայ տրտմականացն դէմ եդեալ առ կատարելագոյն և առ անզուգական անհամեմատ խնդութիւնն դեգերել, առ հոգևորական ուրախութիւնսն ընթանալ յետ մարմնական տրտմականացն յաճախութեանցն: - 386. և կէսքն վրիպեալք ի բնական հայրենի լեզուէն, յաղագս հեռաբնակ լինելոյ և անհամբոյրք միմեանց հանդիպեալք, և

խօսս միմեանց եդեալ կարկատուն մուրացածի բանիւք: - 190. և յանկարծակի ի մէջ գիշերին Գրիգոր ախոյեանայարձակ դիմեալ շուրջանակի փակեցին ի ներքս զբանակն, սրով և աղեղամբ / 330/ վէրս մահաբերս ի վերայ եդեալ՝ յոլովք անկան ի զօրուէն. - 332. և սաղաւարտ ի գլուխ եդեալ – 208. և վահան ի թիկունս եդեալ ի բոլոր սրտէ զհաւատս անբիծս, և համբարձեալք զձեռս իւրեանց յերկինս իբրև զաղեղն հաստ – 252. և օգնութիւն հասեալ նոցա յԱստուծոյ՝ ի պարտութիւն մատնեն զայլազգիսն, բազում վէրս ի վերայ եդեալ – 202. Զի ահա բարեկամացեալ էր Խուրան Հայր Վաչէի և եղբայր Արշաւրի ընդ Արտաշէսի Պարսից արքայի յերթալն Աբգարու ի Պարս, և եդեալ են դաշինս ի միջի. – 82. զի յինքեանս գրաւեալ ընդ հարկաւ ծառայեցուցանէին զպաշտօնեայս սրբոյ Խաչին, մանաւանդ զի և զգլխաւոր վանացն զհայրն, որում Գրիգոր անուանէր՝ զնա կալեալ եդեալ ի խորափոր խաւարային բանտի: - 334. Զի ոչ միայն առ շինութիւնն՝ այլ և յարիւն և յապաժոյժ առաքինաբար զանձինս եդեալ ի վերայ խաշանցն մեռանել իբրև զքաջ հովիւ – 392. զոր ի ջուր եդեալ՝ ծծէ իբրև զպտուկ – 208. զոր կուտեալ եդեալ էին ի վերայ իշխանին: - 220. ի մտի եդեալ զի այն ինչ, իբրև թէ ի վերին երեսս հաճիցեն զմիտս թագաւորին, և ի ներքին խորհուրդս պահիցեն զխոստովանութիւնն որ ի Քրիստոս. – 248. իբրև զքաջ հովիվ եդեալ զանձն ի վերայ խաշանց մեռանել, նմանակերպեալ պատկերակից լինել որդւոյն Աստուծոյ – 300. իբրև հարուստ մի մեկնեցան ի գնդէն Պարսից՝ ամբարձեալ Սամուէլ զմիողնին՝ ազդոյ վէրս ի վերայ եդեալ առ ժամայն եհատ զնա ի կենաց. – 106. Իսկ նոքա պատահեալ Պարսից ի գեօղն Երիզ կոչեցեալ, իբրև մրրիկ զփոշի պտուտեալ, իբրև հուր ընդ եղէգն ընթացեալ՝ սուր ի վերայ եդեալ վանեցին զբազումն քան եթէ զսակաւս – 136. յայնժամ մերկացեալ և ի բաց եդեալ զաշխարհական պատրանաց զբաղումն՝ և էանց գնաց ի վեր քան զերևելիսս – 284. յորոց վերայ սուր եդեալ կոտորէին, և լնուին արեամբ զերկիրն: - 202. յորոց վերայ սուր եդեալ զբազումս սպանին և զևս բազումս վիրաւորեցին և զյոլովագոյնսն ի գերելոցն հանդերձ ընտանիւք իւրեանց զերծին ի նոցանէ և անցուցին ընդ պահակ ձորոյն յամրական կողմանս լերին: - 220. Յորոց վերայ սուր եդեալ կոտորեցին, և լցին դիակամբք սպանելոցն զդաշտաձև հովիտն: - 306. որ ի վերայ եկեղեցեաց Քրիստոսի և սուրբ ուղղափառ հաւատոյ արեամբ չափ ճգնեալ նահատակեցան, և զխոստովանողական անուն ձայն ի վերայ եդեալ կարդային: - 132. Որոց կապեալ զԳուրգէն երեքկին կապանօք և դարձեալ ի պարանոցն եդեալ շղթայս՝ յղեն ընդ Ատրպատական Պարսից և տան ի բանդ ընդ կապեալսն. – 318. ուշ եդեալ ուժեղութեամբ և քաջութեամբ սրտիւ ընդդիմանալ, մանաւանդ ի Ծանարացն զնա տեսեալ ի պարտութիւն մատնեալ և յաղթահարեալ: - 276. վահան ի թիկունս եդեալ, սուսեր ընդ մէջ ածեալ, նիզակ ի ձեռին ունելով - 208. վահան ի թիկունս եդեալ, նիզակ ի ձեռին ունելով, ի կապարճս աղեղանց ի դիմի հարեալ զօրացն – 202. նոցա ի մտի եդեալ էր, զի թէ գայցէ զհետ կոչնականացն՝ կալցուք զնա և զօրքն նորա լքանիցին, և դիւրաւ յաղթեսցուք նոցա: - 228.

ԵԴԵՄ - Տնկեաց, ասէ, Աստուած զդրախտն յԵդեմ ընդ արևելս. այսինքն յերկրի յարևելս – 18.

ԵԴԵՍԱՑԻՔ - Եւ յայնմ ժամանակի երթեալ ժողովէին ի քաղաքն Եդեսացւոց արք ԺԲՌ յամենայն ցեղիցն Իսրայէլի զի տեսին եթէ մեկնեցաւ անտի զօրն Պարսից, և թողին ի բաց զքաղաքն. – 156.

ԵԶԵԿԻԱ - և մանաւանդ զի հարկ փութոյ եղև մեզ գիտել զպայազատութիւնս երանաց տիրեցելոց մեր աշխարհի և որ յառաջ քան զնոսա թագաւորք Ասորեստանեայց, որդի /34/ ի հօրէ առեալ մինչև ի Սենեքարիմ արքայ, որ առ Եզեկիայիւ Երուսաղէմի արքայիւ եղեալ ազգապետ տանս Արծրունի: - 36. յորոց աճմամբ յառաջանայ կարգն և գայ հասանէ ի Սենեքերիմ արքայ, առ Եզեկիայիւ Եբրայեցւոցն առաջնորդաւ և առ մերովն Հարամայիւ: - 14.

ԵԶԵԿԻԷԼ - Այս այն Գովգ և Մագովգ զոր յիշեն գիր մարգարէիցն, Ամովս և Եզեկիէլ /գրքում՝ Եզակիէլ /: - 66.

ԵՋԵԿԻԷԼ ՄԱՐԳԱՐԷ - Որպէս և Եզեկիէլ մարգարէ ասէ, ,,հայր քո քանանացի էր և մայր քո քետացի,,: - 182.

ԵՋՐ - առաջի տեսանելով զկապուտակ ծիրանափայլ դաշտաձև ծովն. դաստակերտս մեծամեծս շուրջ զեզերքն անտառախիտ ծառովք և գիներբեր որթովք և զանազան պտղովք. – 86. ետ նմա զԱրևաստան զամենայն մինչև ցՄծուին և զերկիրն Հայոց մինչև ցգետն Հուրասդան, և զգաւառն Կոտայից մինչև յաւանն Գառնի յեզր ծովուն Բզնունեաց և մինչև յԱռեստն աւան և զԿոգովիտ գաւառ մինչև զՀացիւն և ցՄակու: - 140. և բնակեցան յեզր գետոյն Զաւ կոչեցեալ: - 226. և գնացեալ ընդ եզր ծովուն Բզնունեաց, ընդ կողմն Ապահունեաց՝ և բանակեցաւ յափն գետոյն, որ իջանէ յԱղձնեաց խոխոմացն: - 366. Եւ եղեալ պատերազմ մեծ Արշակայ և Խոսրովու յեզր ծովուն Գեղամայ ի մօրին տեղւոջ – 112. և թափառական զվէմս ապաստան արարեալ յանկասկածագոյն տեղիս դարանի ի փոքր վիմամէջս ի կարկառս հովտաձևս հանդէպ հարաւոյ քաղաքաբերդին Վանի, մօտ այն տեղի, յորում բղխէ աղբիւրաբար առ ստորոտով բլրակի միոյ, մօտ յեզր ծովուն – 84. և տաց քեզ զկողմանս Ասորոց և զամենայն Արեւաստան մինչև զՄծուին քաղաք, և ի յերկրէ Հայոց՝ զաշխարհս տանուտերական իշխանութեանն մինչև յԱյրարատ և ընդ Դուին քաղաք և յեզր ծովուն Բզնունեաց և ցԱռեստն աւան, և զմեծ մասն աշխարհին Վրաց մինչև ցՏփղիս քաղաք. – 136. Իսկ ըստ բաւականութեան աչաց տեսութեանց դաշտավայրին ի մուտս կոյս, և առ եզերք ծովուն պարսպաւորս յօրինէ զգոգն - 88. սա ևս աւելի խորհեցաւ չար և պատրանօք խաբէութեան որսացեալ զնախարարս աշխարհիս Հայոց՝ արար հրկէզ զամենեսեան ի քաղաքին Նախճաւան և յաւանին Խրամի, որ է ի ներքոյ Աստապատոյ վանացն, յեզր Երասխայ. – 166.

ԵՋՐ ՄԱՐԳԱՐԷ - և անդ մարգարէն Եզր և թագաւորն Սաղաթիէլ վախճանեալ թաղի ի Մարբակատինա ի բլրակի մի տեղւոջ. – 66.

ԵԹԷ - Եւ եթէ ասիցէ, եթէ այլ թագաւոր նստուցից՝ արասցէ զո և կամեսցի և արձակեսցէ և մեք ընդունիմք, ահաւասիկ է տեղի թագաւորութեանս: - 144. զմտաւ ածեալ զքսութիւնն զոր զեկուցին զԱշոտոյ կորապաղատէ առ Դերանիկն, եթէ ստութեամբ և եթէ ճշմարտութեամբ՝ մեզ չէ յայտ: - 342. ,,եթէ կամիս կեալ ընդ իս և վայելես ի կեանս աշխարհիս, և ընդունել պարգևս և պատիւս յինէն՝ հաւանեա հրամանի կամաց իմոց և ի բաց լեր ի հաւատոց քրիստոնէութեանդ, զոր պաշտես – 294. ,,եթէ հաճոյ թուիցիմ քեզ կնութեան, և դու կամիցիս քեզ զտիրելն Անձաւացեաց՝ մի վեհերեալ յապաղելով դանդաղկոտ լինիր և վերջանար զփութալն,,. – 324. ,,Զբանս քո լուեալ՝ ասեմ, եթէ յԱստուծոյ է թագաւորութիւն և ում կամի տացէ. – 138. ,,իսկ եթէ եկեսցէ առ իս գիր յարքունուստ, կնքեալ մատանեաւ արքայի. և իցէ գրեալ ի նմա հրաման՝ գալ ինձ առ քեզ կամ երթալ յարքունիսն՝ ոչ ելից արտաքոյ հրամանաց նորա: - 286. Ազդ եղև քաջին Վահանայ, եթէ զօր բազում առեալ Հազարաւուխտ յընտրելոցն Պարսից և ահաւադիկ հասեալ գայ ի վերայ: - 134. այլ ես ասեմ քեզ, եթէ Տէր կամեսցի՝ վաղիւ պատելոց է զքեզ պատերազմ քաջաց. և ճեթեսցեն ի վերայ քո իբրև զամպս երկնից ի բռնալիր նիզակօք անցանիցեն ընդ մէջ բազմութեան քո իբրև զփայլատակունս հրոյ շանթից: - 140. Այլ և զայս ևս եդին առաջի թագաւորին աղերսական մեղադրանս, եթէ ընդէ՞ր իբրև ժողովն գումարէր՝ ոչ զոք ի Հայոց հարկաւոր համարեցայք կոչել ի միաբանութիւն հաւատոց: - 132. այլ և ոչ զմեզ ապստամբս կարծիցես գոլ յինքնակալ թագաւորէն և ի քումմէ ճոխութենէդ, եթէ հաւաստեաւ քննիցես: - 212. Այլ ճշմարտագոյնք են Սողոմօնեանքն, զի ասէ, ,,վա՛յ միումն. յորժամ գլորիցէ, ո՞ յարուցանիցէ զնա,,. և եթէ ,,լաւ են երկուք քան զմի, զի եթէ միովն գլորիցի ոք՝ կանգնեսցի,,: - 354. այլ որպէս արմատն՝ նոյնպէս և ուռն և պտուղն. եթէ սկիզբն սուրբ է՝ ապա և արմատն, ապա զինչ ուռն՝ նոյն և տեսակ: - 258. այր հեզ, խոհական, խորհրդական, համեստ ի բանս, համեստ ի նայեցուածս, որ ոչ բազմաց քան եթէ միոյն, այսինքն Քրիստոսի՝ զինքն ծանօթ ջանայր կացուցանել: - 94. Ապա ուրեմն յայտ է ըստ կարգի ասացելոցս, եթէ որ շարժէ զերկնային մարմինն՝ մի է և անբաւ զօրութիւն ունի և անմարմին է և անեղ է անապական, և ինքն ոչ յումեքէ, և այլք

ամենեքեանք նովաւ. – 54. Առ որս ասեմք՝ եթէ ըստ ամենայն յեղանակի անբոյժն ի բարւոյ, ո՞չ մի ինչ ո՞չ ունի մասն ազնիւ՝ թէ ասիցէ ոք անիծիւք ի բաց բառնալ. – 22. Ասաց Բազարատ յուրացութեանն իւրում, թէ առ վտանգի նեղութեանցն՝ ուրացութիւնն ոչ ինչ վնասէ, եթէ ի սրտին գաղտնի պահէ զխոստովանութիւնն հաւատոց: - 254. Ասէ, ,,զի՞նչ է նոր հաւատդ, որ այժմ ի քէն երևի. եթէ այլ ևս յաւելցիս ասել՝ անձին քում դու եղիջիր պարտական,,. – 160. Արդ եթէ զկէսն Որմզդի գողացաւ կաղն, և նա ոչ գիտաց, զիա՞րդ իցէ աստուած կիսատուրն և ի կաղէն գողացեալն: - 52. Արդ եթէ Սողոմայեցիքն, որ հրով զվրիժուցն հատուցին փոխարէնս, և դարձեալ տանջելոց են՝ որ բովանդակ չարիւք անդր երթալոց են ո՞րպիսի ակնկալութիւն տանջանաց զանց արասցէ զնոքօք. – 336. քայց եթէ ստութեամբ և թէ ճշմարտութեամբ՝ մեզ չէ յայտ, և զոչն ստուգեալ՝ և ոչ գրել լաւ համարեցայ: - 348. Բայց անյայտք են եթէ կատարելանան, զի հազիւ սպիքն գան, ըստ որումն սրբազանի տրամաբանութեան: - 338. Բայց եթէ այդ այդպէս ոչ եղիցի, որպէս ասացի՝ աւելի ևս տեսցես քան զոր տեսեր, սուր և պատերազմ,,: - 286. Բայց յաւելեալ լինի պատճառ ունելոյն զնա զայս օրինակ, եթէ էր փեսայացուցեալ զԴաւիթ զեղբայր կորապաղատին ի քոյր իւր Մարիամ. – 342. դու ընդէ՞ր ոչ երկիրպագանես Բէլայ, եթէ ո՞չ տեսանես ո՞րչափ ուտէ և ըմպէ: - 38. եթէ դէպ եղև լինել պատերազմ Որմզդի ընդ Հարամանւոյն. – 46. Եթէ երկոքումբք թևովք ոչ թռչիցի թռչուն՝ ոչ վերասցի ի բարձունս: - 256. ԵԹԷ Ո՛ՐՊԷՍ ԿԵՂԾԱԻՈՐԱԿԱՆ ՍԻՐՈՎ ՆԻՒԹԷՐ ՉԱՐԻՍ ԱԻՇԻՆ Ի ՎԵՐԱՅ ՀԱՅՈՑ Եւ ԻՇԽԱՆԱՑ ՆՈՑԱ: - 370. ԵԹԷ ՈՐՊԷՍ ԿԱՐԳ ԸՍՏ ԿԱՐԳԻ ԵԿԱՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹԻՒՆՆ /ՃԻՇՏԸ՝ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆՆ/ ԱՍՈՐԵՍՏԱՆԵԱՅՑ ՄԻՆՉԵՒ Ի ԿԻՒՐՈՍ ՊԱՐՍԻԿ: - 56. եթէ չար ինչ թուիցիմ յաչս ձեր, և ապիրատս գործեալ եմ առ ձեզ և խարդախութեամբ բնակեալ եմ ընդ ձեզ՝ աւասիկ յանդիման երեսաց իմոց տուք պատասխանի – 214. եթէ ,,եկայք առ իս ամենայն աշխատեալք և բեռնաւորք, և ես հանգուցից զձեզ,, , և թէ ,,որ ուրասցի զանձն իւր վասն իմ՝ գտցէ զնա,,. - 252. եթէ ,,Օրէն է աշխարհակալաց արքունի խնամակալութեամբ գնալ ընդ աշխարհ իբրև առ հնազանդս, և զնեղութիւնս տառապելոց բառնալ և ի դիւր հանել իբրև զխնամարկուս, և ոչ աւազակաբար աւարել, և սրով և գերութեամբ յաւեր դարձուցանել. – 278. եթէ եբաց Տէր զգանձս իւր և եհան անտի զանօթս բարկութեան – 196. եթէ կացցես ի նմին յամառութեան ի հաւատդ Յիսուսի որդւոյն Մարիամայ կնոջ հրէի,,: - 294. եթէ հաւանեալք արդարոյն և ապաւինեալք ի նա՝ յուսացան ի բան նորա, ծառայել երկիւղիւ հրամայելոցն ի նմանէ՝ զի՞նչ անհաւատ թուի և ի փրկութենէն ընդ նմին վայելել. - 32. ԵԹԷ Ո՛ՐՊԷՍ ԱՍՏՈՒԱԾԱՍԱՍՏ ԲԱՐԿՈՒԹԵԱՄԲ ՍԱՏԱԿԵՑԱԻ ԱԻՇԻՆ ԵԻ ՀԱՄՕՐԷՆ ՋՕՐՔ ԻՒՐ: - 374. ԵԹԷ Ո՞ՐՊԷՍ ԵՂԵԻ ԲԱՐՁՈՒՄՆ ՉԱՐ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆՆ ՊԱՐՍԻՑ ՏԱՆՆ ՍԱՍԱՆԱԿԱՆ: - 136. Եթէ, որպէս ասացի, ի բաց գնաս յինէն՝ խաղաղութիւն է, և թէ ոչ՝ պատերազմ և կռիւ և ճակատամարտ – 278. Երկրորդ՝ չարասէր և աներկիւղ նախանձուցն բարք, եթէ ընդէ՞ր ոչ և նորայն ըստ նմին օրինակի եղև արատաձգեալ յԱստուծոյ: - 24. Եւ ասէին այնքիկ զորոց և բանս է, եթէ ,,ի մասն ինչ լերինն յայնմիկ հասեալք բազումք ի մերոց – 48. և խորհեցաւ սա զմիտս զայս, եթէ որ առ վտանգի նեղութեան դարձցի ոք առ ի պաշտօն կռոցն՝ ոչինչ է, եթէ սիրտ իւր ուղիղ պահեսցէ զհաւատսն Քրիստոսի: - 256. և քարոզքն բարձրացուցանէին զերգսն մեծ և սաստիկ գոչմամբ, եթէ տուաւ իշխանութիւն Վասպուրական աշխարհին Աշոտոյ և որդւոյ իւրոյ Գրիգորի. – 314. և ամենայն խորհուրդք իւր ապականեալ ցրուեցան. եթէ զի՞նչ գործիցէ ոչ գիտէր. – 280. Եւ անդէն իսկ և իսկ փութացաւ, եհաս գուժկան առ թագաւորն, եթէ սպանաւ զօրավարն քո և ապստամբեաց ի պետութենէ քումմէ աշխարհն Հայոց: - 190. և ասէ, ,,եթէ աջողեսցին քեզ խորհուրդ մեր, զոր խորհեցաք ի վերայ Հայոց և իշխանաց նոցա, և ըստ ախորժակաց մերոց ի գլուխ ելանիցեն, որ ինչ կամք յօժարութեանց մերոց ըղձանայցեն- 184. և արտաքնոցն ուշիմագոյնքն ասեն, եթէ, ամենայն մարմին շարժուն՝ յայլմէ բնաւորեցաւ շարժիլ. – 54. և բազում այն են որ ի նմին իսկ սատակին. և կէսքն դիւրըմբռնելի որսորդաց լինին. և ապրեալքն սաստիկս հասուցանեն վտանգս ուր և

դիպիցին, եթէ մարդկան և եթէ այլոց ինչ կենդանեաց: - 188. և բայացեալքն եթէ գազանք և եթէ թռչունք, յորժամ զգան զջերմութիւն օդոյն ի հասարակել տունջեան և գիշերոյ՝ ի գարնանային եղանակի ելեալք յիւրաքանչիւր կայենից. – 188. Եւ Գուրգէն երկրորդ հրեշտակս յղէ առ նա զայս օրինակ, եթէ ,,ընդ իս հաստատեա զանզրաւ կապակցութիւն ուխտի խաղաղութեան. և ես ապստամբեցայց յԱշոտէ, և ի միասին բաժանեալ զերկիրս կեցցուք յապահովս,,: - 316. Եւ գրեն թուղթ առ Յամանիկն, եթէ ,,ի մտանելն իմ ի Դուին քաղաք և զհարկս արքունի յիս գրաւել՝ և յանկասկած առեալ զիշխանս Հայոց՝ և եկեսցեն առ իս. – 340. Եւ գրէ առ իշխանաց իշխան՝ ի բաց լքանել եթէ ունիցի ինչ անօգուտս խորհել, ապա թէ ոչ՝ տեսից զքեզ, ասէ, ի զէն և յասպազէն և ի ճակատամարտ. – 322. և դաստիարակ առընթեր ունելով զբանն տէրունական … և թէ ,,զի՞նչ օգուտ իցէ մարդոյ, եթէ զաշխարհս ամենայն շահեսցի և զանձն իւր տուժեսցէ, կամ զի՞նչ տացէ մարդ փրկանս ընդ անձին իւրոյ. զի եկն որդի մարդոյ խնդրել և կեցուցանել զկորուսեալն,, - 264. Եւ դարձեալ՝ եթէ յարոյց ինձ Աստուած զաւակ այլ՝ փոխանակ Հաբէլի զոր սպան Կայէն: - 24. և Դաւիթ ասէ, ,,յոր հաւատացի զնոյն և խօսեցայ,,. և Պօղոս՝ ,,մեք հաւատամք զոր խօսիմքն,,. և դարձեալ Պօղոս՝ ,,եթէ խոստովանեսցիս բերանով քով զտէր Յիսուս, և հաւատասցես ի սրտի քում թէ Աստուած յարոյց … - 258. և եթէ յերկարիցի գործոյս այսորիկ հանդէս և մարտիցն հանգամանք ոչ փութանակի վարիցին՝ գուցէ օգնականութեամբ գիշերոյ եկեսցէ ի վերայ քո և մեծամեծ աւճիրս ի վերայ քո և զօրացդ արքունի հասուցանիցէ: - 212. Եւ եթէ ասիցէ, եթէ այլ թագաւոր նստուցից՝ արասցէ զո և կամեսցի և արձակեսցէ և մեք ընդունիմք, ահաւասիկ է տեղի թագաւորութեանս: - 144. և եթէ զաւր պիտոյ իցէ յօգնականութիւն՝ արձակեցից որչափ և կամիս. 152. Եւ եթէ զքէն արեանն Մուրկայ խնդրէ՝ զքէն արեանն Մուրկայ խնդրեաց Աստուած ի Փոկասայ ի ձեռն հօր իմոյ Հայրակղի. և եթէ երկիր խնդրիցէ՝ եհան Աստուած ի մէնջ և ետ ի ձեռս ձեր: - 144. և եթէ ոք խախտել ջանայ՝ ի հրամանէն Աստուծոյ ոչ ժառանգէ նա զաթոռ իւր և զթագաւորութիւն: - 356. Եւ եթէ քաղաքս խնդրիցէ՝ ահաւադիկ է քաղաքք մեծամեծք և պարսպաւորք. այլ զանձս խնդրիցէ՝ ասացի թէ տաց որչափ և ձեռն հասանիցէ. և ոչ կամեցաւ լսել, այլ տակաւին ծարաւի է արիւնարբութեան: - 144. Եւ եթէ քոյին կամաւ երթիցես՝ թերևս օգուտ բազմաց և անձին քում եղիցի. – 216. Եւ եհարց եթէ դո՞ւ իցես Աշոտ. ասէ այո ես եմ. երկրորդեալ և երրորդեալ և զսոյն լուաւ. – 216. Եւ զի ասէ զիր՝ ոգիք իբրև ութ՝ երկբայականս իմն և զայն. առ որս ասեմք, եթէ նոցա տուաւ հրամանն այն. այլ թէ ի ձեռն նոցա և այլք եղեն փրկեալք: - 32. Եւ զի զսրբոցն իսկ ասացից բանս. եթէ զիարդ ամենեքեան սուրբքն որպէս ժառանգութիւն իմն հայրենի ընկալեալ այնպէս պատահեսցին հարք որդւոց աւանդելով զպահոցն պէտս. - 26. և ի նիրհելն իւրում՝ ձայնէ հոգին աւտար ի բերանոյ կնոջն քարացելոյ եթէ՝ ծնցիս որդի աշխարհակալ. որ և ի պոռնկութենէ յղացեալ իսկ էր դուստր ցեղի Դանայ: - 158. և հիացմամբ առ նորայն հայելով, թէ ո՛վ ոք էր, և ո՛րպիսի, և ո՛րպէս կորեաւ՝ ասեն, ,,զիա՛րդ դադարեաց պահանջողն, հանգեաւ տագնապօղն. եթէ ո՛րպէս իջին ի դժոխս փառք նորա,,: - 376. Եւ մինչ այսպէս կայր աշխարհս յանկարգ խաղաղութեան՝ եհաս լուր գործոյն առ Աւշին և առ իշխանն Աշոտ, եթէ ,,վրդովեալ է երկիրն, և կան ի տարակուսի՝ որք զամուրսն քո ունին. – 362. Եւ յայնմ ժամանակի երթեալ ժողովէին ի քաղաքն Եդեսացւոց արք ԺԲՌ յամենայն ցեղիցն Իսրայէլի զի տեսին եթէ մեկնեցաւ անտի զօրն Պարսից, և թողին ի բաց զքաղաքն. – 156. և յայտ է թէ յայլմէ շարժի. և եթէ յայլմէ՝ ապա ուրեմն է՛ ոմն, որ շարժէ զերկնային մարմինն: - 54. Եւ յարգելուլ զնա ազատագունդ վաշտիցն՝չանսայր, քանզի լուեալ էր նոցա, եթէ շրջաբերական թղթով դարան գործեալ էր նմա Աշոտոյ իշխանաց իշխանի: - 352. Եւ յղէ պատգամ առ Թէոդորոս եղբայր Հայրակղի, ըստ այնմ որում Հրէայքն եղեն ձեռնտու, եթէ ,,զերկիրդ զայդ Աբրահամու խոստացաւ Աստուած և զաւակի նորա, և ի ձեռս նոցա էր բազում ժամանակս. – 160. և նա երթեալ առանց մեր հրամանի թագաւորեաց, և զմեր գանձս մեզ ընծայ մատուցանէ, ոչ գիտելով եթէ համարս խնդրեցից գանձիս այսմիկ, և ոչ դադարեցից մինչև առից զնա ի բուռն իմ,,: - 142. Եւ նոցա ընկալեալ

զխնդիրսն՝ հաւանեցան առնել ըստ կամաց նորա, մինչև տեսցեն եթէ զի՞նչ պատասխանի եկեսցէ նոցա յարքայէն իւրեանց, և կամ զօրուն զի՛նչ հրամայեսցէ առնել: - 144. Եւ նոցա ձայն բարձեալ ողորմագին պաղատանօք առ Հայրակղոս, եթէ ,,աստուածասէր և բարերար տէր, արա/գրքում՝ ապա/ ի վերայ մեր ողորմութիւն, թէպէտ և չեմք արժանի ողորմութեան,,: - 150. և որ ինչ կրեցին թշուառութիւն զոգւոց առաւել քան եթէ մարմնոց. – 240. Եւ պատճառ այսոցիկ զի՞նչ, եթէ ոչ այն զոր Պօղոսն ասաց, եթէ ,,վասն զի ոչ ընտրեցին զԱստուած ունել ի գիտութեան՝ մատնեաց զնոսա ի միտս անարգութեան գործել զանարժանս,,: - 374. Եւ վասն զի մշտաշարժ է երկինն՝ յայտ է եթէ որ շարժէն զնա՝ անբաւ զօրութիւն ունի. – 54. Եւ վասն զի մի և նոյն շարժումն է երկնի՝ յայտ է եթէ ի միոջէ ումեմնէ է և ոչ ի բազմաց. - 54. և Փրկիչն՝ ,,եթէ ոք ամօթ համարեսցի զբանս իմ,,: - 260. և քեզ եթէ հաճոյ թուիցի ապրեցուցանել զքեզ և զզօրս քո՝ արի ել աստի և գնա ի սահմանաց իմոց: - 278. եօ՞թն արդեօք իցեն մեղանացն պարտիք, եթէ ըստ յաւելուածոյ սաստից իմասցին ասացեալքն Աստուծոյ – 24. զի սմա և եթ յաւելու ասել, եթէ ծնաւ ըստ կերպարանաց իւրոց, և ըստ պատկերի իւրոյ: - 24. զի ասաց զօրավարն Աղուանից, եթէ ,,մի՛ կարծիցէ ոք զիս ապստամբ գոլ ի թագաւորէն և վասն այնր հարկանել զզօրսդ Ասորեստանի,,. – 286. զի եթէ երկոքեան միով բարեպաշտութեամբ ոչ վառեսցին՝ ոչ ինչ օգուտ ի միոջէն բերցի: - 256. Զի եթէ ոչ ստուգութիւն սրտին և ճշմարտութիւն բերանոյն համամիտ առ հաւատոցն խոստովանութիւն ուղղակի մատչիցին՝ խոտան և ի բաց ընկենլի է և օտար ի սրբոյ առաքելական եկեղեցւոյ: - 258. զոր և սուրբքն ասեն, եթէ ձայն դակուացն և բախումն խմբիցն առ ի հեղուսել զփայտսն՝ /28/ այնպէս իբրև յորոտման ամպոյ յամենեցունց հնչէր լսելիս, ի մօտաւորս և ի հեռաւորս, առ ի յերկիւղ և ի զգուշութիւն անզգամ ազգին, թերևս դարձցին և կեցցեն. – 30. զոր ոչ և զմի ոք յիշխանաց ոմանց առաջնոց լուեալ ուրուք եթէ իցէ այսպիսի ինչ արարեալ. – 216. ըստ ասացելումն ի Սողոմոնէ, եթէ ,,հայր թախծեալ տարաժամ սգով՝ վասն վաղամեռիկ լինելոյ որդւոյ արար պատկեր,,: - 40. Իբրև գիտաց բռնաւորն, եթէ յաղթեցաւ ի սրբոց արանցն, մանաւանդ ի քաջէն Գրիգորէ – 250. Իբրև գիտաց իշխանն, եթէ վճարեալ է չարութիւնն յաչս նոցա, և այլ ընդ այլոյ խօսին, և ի գաղտնիս քրթմնջեն, և անտեղի և անընդունակ հրամանաց նորա լինէին՝ ետ պատասխանի և ասէ – 214. Իբրև օր մի լինէր պարապոյ … և ահա հնչեցին փողք ուժգին գոչմամբ ազդ առնել քաղաքին՝ եթէ ել նստաւ թագաւորն յատենի – 240. իսկ եթէ առ փոքրն այնչափ ամբաստանէր զանձն մարգարէին՝ քանի՞ ևս ողբոց և արտասուաց արժանի են՝ որ յՈրդին Աստուծոյ ամբարշտեն շրթամբք իւրեանց: - 258. Իսկ եթէ Բէլ հրամանատու Արամազդայ իցէ՝ զիա՞րդ իցէ, զի Արամազդ ի գօտոյ իւրմէ խաշիցի հրամանաւ Բէլայ. – 32. իսկ եթէ ընդէ՞ր ոչ ի ծննդաբանութեան՝ վասն զի ոչ իսկ ունէր զաւակ Հաբէլ: - 26. իսկ եթէ մի յանդամոցն կորիցէ՝ զպատահումն խեղութեան ընդունիցի, այլ ոչ ի բաց դարձցի կենդանի: - 194. - Իսկ եթէ սովորութիւնն այլանդակեալ ի չարէն ի սոյն, կանգնել պատկերս սկայից և քաջաց և բարբարոսական թագաւորաց ի պատիւ – 40. Իսկ եթէ վատացն՝ արութի՛ւն զերկիւղն համարելի է, ո՞րչափ ևս առաւել քաջացն քաջութիւն ստացեալ երկիւղիւն պատսպարել իւրեանց: - 354. Իսկ եթէ՝ մշակն մեղաց և անդրանիկն ամենայն չարեաց, որ ի յօձն բունեալ ոչ անիծաւ, որպիսիս ուսուցանէ վնասապարտութիւն օձին առ ի պատժականութեանն գտանել պարտաւորութիւն, որ ոչ յընքենէ միայն, այլ մանաւանդ ի գտողէն չարեաց: - 22. Իսկ իբրև գիտաց բռնաւորն, եթէ չելին ի գլուխ կարծիքն զոր ի վերայ սրբոցն խորհեցաւ, որպէս գրեալ է, ,,կարծողն և արհամարհողն այր ամբարտաւան է և ոչ ինչ վճարեսցէ,,- 264. Իսկ իբրև գիտացին եթէ սպանաւ զօրավարն, և խորտակեցաւ բազուկ աջոյ ձեռին, եղեալ ի փախուստ դարձան – 306. իսկ իբրև նա ըմբռնեցաւ, և գիտաց զօրավարն եթէ ոչ ոք այնուհետև յիշխանացն Հայոց մնաց, որ ոչ համագունդ ժողովեալ են առ նա՝ մերկացաւ յայնժամ զպատրուակ կեղծաւորութեանն, զոր սերմանել էր սատանայ ի սիրտ առնն: - 296. Իսկ հաւատացելեցն տեսեալ, եթէ բարի խոստովանութեամբ ննջեաց տէր սուրբ Գրիգոր՝ գոհութիւն մատուցանէին ամենազօրին Քրիստոսի – 254. Իսկ նոքա պատահեալ

Պարսից ի գեօղն Երիզ կոչեցեալ, իբրև մրրիկ զփոշի պտուտեալ, իբրև հուր ընդ եղէգն ընթացեալ՝ սուր ի վերայ եդեալ վանեցին զբազումն քան եթէ զսակաւս – 136. Լո՛ւր և զարմացի՛ր և աստանօր ևս առաւել, եթէ զիա՞րդ ողորմութիւն բարերարին՝ արդարադատ բարկութեանն յաղթէր – 28. կարող է Ատուած, եթէ կամեսցի՝ ցամաքեցուցանել զծովս առաջի ձեր: - 144. համարձակապէս անցանել գնալ ընդ իշխանութիւնս և ընդ պետութիւնս, ընդ աշխարհակալս խաւարիս այսորիկ, որ անհաւատից քան եթէ հաւատացելոց ոգւոց և ապաշաւելոց զտիրելն բռնաձգեալ կորզեն յինքեանցն կորուստ: - 388. մի՛ ասիցէ այլազգին, որ եկեալ յեցեալ իցէ ի Տէր՝ եթէ մերժելով մերժէ զիս Տէր ի ժողովրդենէ իւրմէ,,. – 224. Յայնժամ իբրև գիտաց զօրավարն, եթէ յաջողեցաւ նմա ամենայն ինչ ըստ կամաց իւրոց և ըստ հրամանի ամբարիշտ թագաւորին, ի գլուխ ելին խորհուրդ չարութեան նոցա - 238. Յայնժամ իբրև գիտացին երկոքին կողմանքն, եթէ ոչ գոյ հնար գտանել զելս իրացն և տալ խաղաղութիւն՝ ապա հաճեցան և հաւանեցան գրել առ թագաւորն. – 286. Նախ առաջին՝ զի յետ աւուրց ինչ, իբր անագան իմն այլ ոչ նախապատիւ և կարևոր. և զայն արատաւոր, այլ ոչ անարատ՝ երևի յասացելոցն՝ եթէ ուղիղ մատուցանես և ուղիղ ոչ բաժանես՝ մեղար: - 24. Նոյնժամայն իբրև ետես տիկինն, եթէ վարեցան որդիք նորա ի գերութիւն՝ գնաց և ինքն զհետ նոցա, զհերս խզեալ և զօձիս պատառեալ, կոծելով և աշխարելով – 238. Նոյնպէս եթէ ոչ հաւատք սրտի և խոստովանութիւն շրթանց ամբողջ պահիցին՝ ոչ կարասցէ հետևել ճշմարիտ դաւանութեանն ի Հայր և յՈրդի և ի Հոգին սուրբ – 256. Ոչ կամեցար կամօք տալ զանձն ի ծառայութիւն մեզ, այլ տէր և թագաւոր կոչես զքեզ. զգանձն արքունի որ իմ առ քեզ է՝ ծախես, և զայդ ոչ գիտես, եթէ վաղիւ համարս տալոց ես: - 146. որով ժամ ի դէպ իսկ է, առ յայնժամ զարժանապէս նոցա ասել փոխարէն և անմեղադրելի բազմաց, եթէ այնչափ մթերեալ համբարք կերակրոց կուտեցին ի հալոցսն Բէլայ – 38. որպէս ասաց Պաւղոս, եթէ ,,դուք տաճար էք Աստուծոյ կենդանւոյ,, , և դարձեալ ասէ թէ ,,տուն Աստուծոյ եմք մեք,,. և դարձեալ մարգարէիւն ասէ, բնակեցայց ի նոսա և գնացից ի նոսա,,: - 394. որպէս ասաց Քրիստոս, եթէ ,,ուր երկու կամ երեք ժողովեալ են յանուն իմ՝ անդ եմ և ես ի մէջ նոցա,,: - 250. Սա ցանկացաւ լինել, ասէ, հայր Որմզդի և ասէ՝ իցէ՞ եթէ լինէր իմ որդի Որմիզդ անուն, որ արասցէ զերկինս և զերկիր. – 46. Քանզի իբրև լուաւ երանելին Զաքարիայ, եթէ ըմբռնեցաւ Գուրգէն՝ փութացաւ և եկն հանդերձ եպիսկոպոսօք աշխարհին. – 320. և բազում այն են որ ի նմին իսկ սատակին. և կէսքն դիւրըմբռնելի որսորդաց լինին. և ապրեալքն սաստիկս հասուցանեն վտանգս ուր և դիպիցին, եթէ մարդկան և եթէ այլոց ինչ կենդանեաց: - 188. եթէ ոչ այլ ինչ յակն ունելեաց բարւոյ ունիցիս ասել, զի՞նչ ինչ բարգաւաճանք քեզ լրութիւն անյագ որովայնին Բէլայ իցէ: - 38.

ԵԹԷ ՈՉ - Եւ պատճառ այսոցիկ զի՞նչ, եթէ ոչ այն զոր Պօղոսն ասաց, եթէ ,,վասն զի ոչ ընտրեցին զԱստուած ունել ի գիտութեան՝ մատնեաց զնոսա ի միտս անարգութեան գործել զանարժանս,,: - 374.

ԵԹՈՎՊԱՑԻ - քանզի Եթովպացի իսկ ասի Քուշ որդի Քամայ. – 42.

ԵԹՈՎՊԱՑԻՔ - Եւ քանզի էր Բաբելոն վիճակեալ Սեմա՝ և բռնազբօսութեամբ Ներբովթ յինքն գրաւէ և հաստատէ անդ զթագաւորութիւնն Եթովպացւոց: - 14.

ԵԹՈՎՊԻԱՅ - և Եթովպիայ է մասն Եգիպտոսի և ամենայն Լիբէաստանեայց: - 42.

ԵԼ/Ք/ - և հեծելագունդ զօրացն Կայսկին զկնի նորա, զգացեալ զպատճառ ելիցն նորա ի բանակէն. որում ոչինչ գամագիտ կարացեալ լինել՝ դարձան ամօթալից կորակնեալք, յանգէտս համարեալ զինչ գործեցինն: - 342. և ընդ նմա Տաճիկք Հայաստանեայց, որ բնակեալ էին ի կողմանս կողմանս աշխարհիս՝ առաջնորդէին Բուհայի ի մուտս և ելս աշխարհիս: - 206. և խնդրէին տեսանել թէ ո՛րպէս կարասցեն գտանել զելս իրաց վտանգին ի վերայ հասելոյ: - 206. խնդրէր գտանել զելն իրացն եկելոցն առ նա գուժկանացն – 180. Բայց Աշոտ, իբրև եհաս ժամ ելիցն իւր յաշխարհէս՝ յանհունս բերեալ զզեղջ և զապաշաւանս յորդահոսան արտասուօք զխոստովանողականն ի դիմի հարեալ

միջնորդութիւնն – 336. այլ հրամայէր միայն զգուշանալ և ոչ ելանել պատերազմաւ ընդդէմ նոցա, մինչև տեսցէ զելս իրացն. – 162. Ասեն. թո՛ղ տեսցուք զելս այսր համբաւոց: - 352. արեգակնային ի վերայ խաղալով ճառագայթաձիգ ճեմականացն, յելս և ի մուտս. – 86. բաժանեն զաշխարհս յերիս մասունս. տալով Աշոտի … Եւ Գուրգէն զկողմանս արևելից, յելից Աղբագոյ և որ շուրջ զնովաւ ամենայն Պարսկահայք մինչև ի մուտս Կորդաց, և ուր և ըստ այնմ իցէ հնար ածել զձեռամբ: - 360. գալ իջանել յելից ի ստորոտէ լերինն Վարագայ առշեղեալ ի հարաւոյ ի հիւսիսի ի խաղաղ ընդլայնանիստ գոգաձև դաշտականացսն – 392. գրէ առ սուրբ եպիսկոպոսն Գրիգոր Ամատունեաց տանն … գտանել զելս իրացն եկեալ հասեալ հինին. – 400. և առաջնորդէր նորա սպարապետն ի գործս պատերազմացն և յելս և ի մուտս աշխարհացն. – 270. Եւ Ալի էր այր քաջ. ասէ ցնա, արի՛ ելցուք, քանզի են և ընդ մեզ արք բազումք, թերևս լիցի ելք իրացդ պիտանութեամբ: - 160. Եւ եղև ի գնալ Դերանկին ի ձմերոցս Վասպուրական իշխանացս, ճանապարհ արարեալ ընդ ձորն Ընծայից, որոյ ելքն ընդ գաւառն Հեր քաղաքի: - 352. Եւ իշխանքն Հայոց կային ի տագնապի և խնդրէին զելս իրացն գտանել ի Քրիստոսէ, յորմէ լքեալն էին: - 320. և հարկապահանջք գունդքն եւ և ելս առնէին սաստիկ խոշտանգանօք: - 124. և ոչ ուրեք գտանէր հնար ելից ի վտանգաւոր արգելանէն, թէպէտ և բազմաց հոգ յանձին կալեալ վասն առն պատուականի – 346. Զի ի հասանել ի վերայ նորա ցաւոցն մահաբերաց՝ ոչ հոգացաւ զմանկականն իւր տարաժամ ելսն յաշխարհէս – 386. Զնոյն տեսեալ ազատացն Վասպուրականի, անտանելի մնալով առ դիպուածն զոր ինչ գործեաց Ապումրուան՝ ելին գնացին առ Ատոմ որդի մեծին Գուրգինայ յամուրն Կանգուար, գտանել զելս իրացն – 364. Զորոյ իմացմանց հանգամանս իմացեալ ազատացն Վասպուրականի՝ ոչ հաճոյանայր նոցա թևակոխելն Գագկայ, և զելս իրացն ջանային գտանել, առանց խռովասէր հանդարտութեան. – 360. ինքն իսկ փոյթ յանձին կալեալ՝ ել գնաց մեծաւ հոգաբարձութեամբ, լուծանել զնա ի տառապանաց արգելանին. սակայն և այնպէս ոչ կարաց գտանել զելս իրացն վտանգի առնն: - 346. Իսկ Գուրգինի մարզպանի Հայոց առեալ էր ի բաժնի յելս կոյս և /388/ որ ելանէ ի հարաւակողմն, զԱնձահից ձոր, զԿրճունիս, զԿուղան ովիտ, և զբուն զՄարդաստան գաւառ, զԱրճիշակովիտ. զոտն Առնոյ, զԱղբագ Մեծ և զՓոքր, Ակե, Տամբէր, Տագրեան. Ըռնայ, Զարեհաւան: - 390. Իսկ Դերանիկն գործ առնէր ի գիւտս հնարիմացութեան, և տարուբերէր յանձն իւր՝ գտանել զելս իրացն, որով կարիցէ հանել զամուրսն ի Գուրգինայ և տիրել աշխարհին: - 326. Իսկ զօրավարն Բուխայ կայր ի կոր կործանմանն, ի տարակուսանս ըմբռնեալ փղձկէր ի միտս իւր, ցնորակոծ լինէր, հնարէր ելս իրացն գտանել ի վրանայարկն փակեալ, և ոչ առնոյր դուլ և դադար: - 282. Իսկ ի հարաւակողմն կուսէ ի ջրամբար արձանագործ քարեղինէն ճանապարհ աշտիճանեալ /390/ ներքուստ ի վեր մինչ ի կատար անձաւին հեշտալիր զելս և զէջս յօրինեալ, քարագործ աւազամած կրագործութեամբ: - 392. Իսկ ի տիրական զօրավարութեանն Գագկայ սկզբնաւորեալ ձեռակերտ իւր՝ շինեաց զհողաբլուր բարձրաւանդակն ի Մահռաշտ գեօղ յափն գետոյն յելս կոյս, որ հայի յՈստանն Ռշտունեաց – 394. Յայնժամ իբրև գիտացին երկոքին կողմանքն, եթէ ոչ գոյ հնար գտանել զելս իրացն և տալ խաղաղութիւն՝ ապա հաճեցան և հաւանեցան գրել առ թագաւորն. – 286. Յելս կոյս և ի մուտս որ առ հիւսիսի գհայեցածն բերէ՝ առեալ էր ի բաժնէ /ճիշտը՝ ի բաժնի/ Գագիկ իշխանի – 388. Նոքա առ լուրն խնդացեալ՝ լքին զամրացեալ գունդն՝ աճապարել զհետ Կիւրոսի, եւ և ելս արարեալ զմիմեամբք – 66. Շինեաց և ի վերայ Ամրական քարանձաւին յելս և ի մուտս կոյս տունս խրախճից ոսկեզօծս պատեշգամեալ, յաւելլով ի յառաջագոյն ի հօրէ նորա Դերանկէն շինեալ: - 390. ո՞չ ապաքէն ըստ այնմ և ելքն ի նմանէ լինիցին շահ ի փառս Բաբելացւոցն ըստ կարծեաց նոցա: - 38. որպէս սահմանեաց Աստուած ի վերայ ժողովրդեանն Իսրայէլի գերելոցն ի Բաբելոն, որպէս գրեալ է ի մարգարէութեանն Երեմիայի, ,,զ-ՀԷ-երորդն ասէ գիտասցես, և խելամուտ լիցիս յելից բանին տալ պատասխանի. մինչև յօծեալն /312/ առաջնորդ եօթներորդ է և եօթներորդք ԿԲ,,. – 314.

ԵԼԱՆԵԼ - ,,Բուխայ գլուխ զօրավարաց ընդհանուր Թագաւորութեան Տաճկաց, Ջափր իշխեցող ծովու և ցամաքի, հաւասար և օրէնսդրին մերոյ Մահումաթի, և հաւատարիմ միջնորդ Աստուծոյ և մարդկան, և թագաւոր ընդհանուր ազգաց հարաւային աթոռակալութեան … Յղեցի զքեզ ելանել ի վերայ երկրիդ Հայոց ամենայն կենդանեաց – 236. ,,Ելեր դու յաշխարհս Հայոց հրամանաւ արքունի՝ առնուլ զհարկս արքունի. մի՞թէ /176/ և հրաման ունիս յարքունուստ, գերել գերփել յաւեր դարձուցանել զաշխարհս մեր: - 178. ,,և այս ևս գործ կամ խաղաղութեան կամ պատերազմօք և ելցեն ի գլուխ, միայն զյապաղանացն ի բաց լքցես զդեգերանս,,. – 382. ,,իսկ եթէ եկեսցէ առ իս գիր յարքունուստ, կնքեալ մատանեաւ արքայի. և իցէ գրեալ ի նմա հրաման՝ գալ ինձ առ քեզ կամ երթալ յարքունիսն՝ ոչ ելից արտաքոյ հրամանաց նորա: - 286. ,,վասն այնր ելի յաշխարհս, զի մի Գուրգէն բռնաբար յինքն կորզեալ ձգիցէ զամուրս աշխարհիս, և յինքն բռնաբար զզօրս քո յանգուցանիցէ: - 362. Ազդ առնէ քաղաքապետին Տփղեաց. և խնդրեալ զնա առ ինքն՝ /316/ ստիպէր տագնապէր ահս արկանելով, թողուլ զօրէնս քրիստոնէութեան և յանդորր ելանել: - 318. այլ իբրև եմուտ Բուխայ յաշխարհս Վասպուրական՝ ել գնաց Գուրգէն առ Քուրդիկ Մամիկոնէից տէր ի Բագրևանդ գաւառ, և անդ լինէր, զի էր Քուրդիկ քեռի Գուրգինայ: - 302. այլ հրամայէր միայն զգուշանալ և ոչ ելանել պատերազմաւ ընդդէմ նոցա, մինչև տեսցէ զելս իրացն. – 162. Այնուհետև ել գնաց դէմ եղեալ զյունականօքն շրջել զկողմամբքն, յանձն արարեալ զհոգս իւր շնորհացն Աստուծոյ. – 316. այսր աղագաւ խնամ տարեալ թագաւորին կնոջն՝ զի ոչ ել առ Երուանդ և ոչ միով իւիք պաշտպանութեամբ: - 90. Ապա թէ փութաս ելանել ի կենաց աստի առ զայրուցս կատաղութեան քո և զոսկերս ցրուես յանապատս և լինել կերակուր գազանաց երկրի և թռչնոց երկնից՝ քո կամք լիցին, և ես քաւեալ եմ յարենէ քումմէ – 278. Առ սա ինձ ի ճախ ելանէ քերթողական առասպելն որ ասէ. – 108. Աստանօր և ի դէպ ելանէ մարգարէութիւնն Դանիէլի, տեսութիւն անհեդեդ պատկերին բազմախառն նիւթօքն ի վերայ խեցեղէն և երկաթեղէն ոտիցն: -156. Աստանօր ի դէպ ելանէ և մարգարէախառն օրհնութիւնք մեծի նահապետին /40/ և աշխարհահօրն Նոյի յասելն՝ ընդարձակեսցէ Աստուած Յարէթի, և բնակեսցէ ի տան Սեմայ: - 42. Արդ այսքանեաց վկայութեանց ի մի վայր եկելոց՝ մի ելցուք զհետ առասպելաբանիցն թէ ընդ աննոխն գնալով ճանապարհ. – 260. Արդ ելէք ի վերայ աշխարհիդ զօրացեալ զօրութեամբ, և ձեր լիցի երկիրդ ի ժառանգութիւն,,: - 362. Արդ փութա՛, պնդեա՛, է՛լ զհետ նոցա, և մի ինչ յայդոսիկ յերկուանայցես, թուլագոյն կալով մնալով յիրիդ յայդմիկ,,: - 184. Բայց Գուրգէն կասկած ունելով յԱշոտէ, թէ գուցէ իբրև զապստամբէ ումեմնէ զեկուցանիցէ զնմանէ առաջնորդին Տաճկաց՝ ել գնաց կեալ շրջաբերական յեղափոխմամբ, արիական քաջասրտութեամբ, սիրեցեալ ընդ բնաւ աշխարհաց: - 322. Բայց իշխանաց իշխանն Աշոտ անհանդուրժելի մնալով խորհրդոց չարին ի գլուխ ելանել - 344. Բայց հասեալ Բուխայ անց ընդ գետն մեծ զոր Կուրն կոչեն, և յորձանուտ շարժման գարնանային հոսանացն տեղի տուեալ ելանել զօրուն և բնակել շուրջ զքաղաքաւն. – 270. Բայց Վասակս այս … վասն ազգակից գոլ նոցա ընդ տոհմին Արծրունեաց… ել գնաց իւրովք կամօք ի Սամառայ և եղև աստուածուրաց – 248. Բայց քանզի յերկնուստ էր հասեալ վտանգն, և աստուածառաք էր բարկութիւնն՝ և ոչ ոք զօրեաց և եկաց ընդդէմ նորա ելանել ի պատերազմ, այլ որ եհարն՝ նոյն և բժշկեաց: - 374. Դու աւադիկ ելեր մտար յերկիր Հայոց, ելեր ի կողմն թշնամեաց իմոց և ապստամբացդ զքեզ միաբանեցեր, զի յապաղեցեր հրամանաց իմոց: - 236. դու դիմօք մարտի առ իս զօր գումարեա և ել ընդդէմ իմ ի պատերազմ, և ի միասին մխեցից զձեռս ի սոսա և բարձից զսոսա ի պետութենէ Հայոց,,: - 340. Ել գնաց զկնի փառաց իշխանասիրութեանն ցանկութեան յորմէ վրիպեացն: - 236. ելանել ի գագաթն Ամրական անձաւին զբօսնուլ նովաւ առ վճարումն բաւականութեան, ըստ մասանց պիտոյից օժնդակութեան քաղաքայարդար ապարանից թագաւորական պաղատի իւրոյ ձեռակերտին – 392. ելանէ մարզպանն ի վերայ նոցա և յինքն հանէ զՏամբեր և զԸռնայ գաւառ և որ ասի Ապուջափրի բերդ, ի Վհրի քաղաքին Կորճէից զիւր կացուցանէ ոստիկանս ի

պահպանութիւն ամրոցին: - 400. Ելին ի պատերազմ և պատերազմեցան, ըստ որում սաստկացաւ պատերազմն: - 282. ելցեն ի քեզ փայտահարք բազումք և կոտորեսցեն զմայրս քո մեծամեծս և զմատաղատունկս բարձունս. – 148. և ետուն ձայն այր առն ախոյեան ելանել. – 284. Եւ ընթանային ամենեքեան յաճիւռ՝ տեսանել զնոսա և ի վերայ հասանել, թէ զիա՛րդ ի գլուխ ելանիցէ ատեանն: - 242. և կորապաղատին ընդարձակեաց ելանել, զի երթիցէ ուր և կարասցէ հասանել ըստ յաջողելոյ իրին: - 348. Եւ հատաւ քուն յաչաց նորա, և ոչ ոք մտանէր և ելանէր առ նա զաւուրս Ժ, զի եմուտ ի սենեակ ամօթալի երեսօք. – 282. Եւ Ալի էր այր քաջ. ասէ ցնա, արի՛ ելցուք, քանզի են և ընդ մեզ արք բազումք, թերևս լիցի ելք իրացդ պիտանութեամբ: - 160. և ահա Ապումուսէ, որ ճանաչէր երիցու որդի՝ հանդէպ նոցա ել պատերազմ և հանդիսացաւ ընդդէմ նոցա. – 284. Եւ ամենայն մեծամեծքն հանդերձ խառնաղանճ / 240/ ամբոխիւն դռոթ տուեալ, ոչ միայն ըստ հրամանի թագաւորին ելանել զհետ աղաղակի փողոյն և արքունի կոչնականացն՝ այլ փութացան տեսանել, թէ ո՛վ ոք և ո՛րպիսիք են սոքա – 242. և ամենայն ոք ըստ ազգս ազգս փութայր ի հնարս ինքեանց վաստակոցն մի զմիով ելանել. – 268. և այլ ոչ ևս յաւելին ելանել ի վերայ աշխարհիս ասպատակաւորք հինիցն պարսկայնոցն: - 400. և այնպէս ել յաշխարհէս թշուառականն: - 108. Եւ այս արտաքոյ անյուսութեանն ելանելով, հայեցեալ ի քաղցրութիւնն Աստուծոյ: - 338. Եւ առեալ զնոսա անցուցանէ յիւրաքանչիւր սահմանս բնակութեան, ինքնին զհետ նոցա ելանելով, որպէս Կիւրոս արքայ Պարսից զհետ դարձելոցն ի գերութենէն Բաբելոնի. – 218. և ասէ, ,,եթէ աջողեսցին քեզ խորհուրդ մեր, զոր խորհեցաք ի վերայ Հայոց և իշխանաց նոցա, և ըստ ախորժակաց մերոց ի գլուխ ելանիցեն, որ ինչ կամք յօժարութեանց մերոց ըղձանայցեն- 184. Եւ արդ ասացից փոքր ի շատէ զյայտնի գործեցեալսն, զի և որ ինչ ընդ սոքօք և յետ սոցա ի գլուխ ելին հանգամանք իրաց՝ և այնմ առանց երկբայութեան հաւատասցես , իբրև ճշմարիտ և անսուտ պատմողի: - 240. Եւ արդ քաջալերեցարուք, լերո՛ւք արք. ելէք ի վերայ աշխարհին Հայոց սովով և սրով և գերութեամբ. – 198. և աւերեալ էր զերկիրս մեր ի մտանել և յելանելն իւրում: - 240. և բազումք դրդուեցան և ելին զկնի սատանայի – 222. Եւ գումարեալ այնուհետև զանհուն բազմութիւն զօրացն բարձրագոյն քան զառաջինն՝ և ել խաղաց հասանել ի վերայ արևելից աշխարհին – 270. Եւ գումարեալ Հայրակղի զամենայն զօրս իւր յորդոր և խնդալից սրտիւ, բազմութեամբ զօրաց ել ընդ առաջ սուրբ նշանին, ի պատիւ հրաշալի և երկնաւոր գանձուն – 154. և գունդք ճակատելոցն ելին կացին մօտ առ քաջն մեր Աշոտ և ընտիր զօրավարն Հայոց առ մեծն իշխանաց: - 210. Եւ դատաստան իւր յանձնէ եղիցի, և առած յինքենէ ելցէ: - 200. և դարձուցին ընդ նոյն ճանապարհ ընդ որ եկեալ էր, ոչ թողացուցին նմա ելանել ընդ աշխարն Վասպուրական. – 336. և ել գնաց զկնի իշխանութեանն ցանկութեան ինքնամոլորութեանն անգիւտ կորստեանն. – 250. Եւ ելեալ ի տեղին սրբութեան և կատարեալ զաղօթսն՝ ելին շրջել զբօսնուլ յայլ ևս տեղիսն: - 100. Եւ եղև ընդ ժամանակսն ընդ այնոսիկ ել Հազարաւուխտ Պարսից զօրավար ծանր զօրու ի վերայ Հայոց՝ տալ պատերազմ ընդ զօրս Հայոց, աւերել գերել գերփել զաշխարհս – 134. Եւ եղև իբրև երրորդ ժամ լինէր աւուրն, որ էր միաշաբաթի՝ և ահա ելանէին գունդք գունդք հեծելոցն ընդ կողմն անապատին Սմբատայ կոչեցեալ բերդին – 228. Եւ եղև իբրև կատարեաց Բուխայ զանցս անցից ընդ Վասպուրական աշխարհս և խաղաց յարևելս կոյս՝ ել գնաց Գուրգէն ի Սպեր գաւառ. – 302. Եւ եղև մօտ ի կատարումն հասանել ամին երկրորդի գալստեան նորա՝ ել գնաց ի կողմանս Աղուանից. – 276. Եւ եղև յելանել նախարարացն Հայոց յերեսաց ամիրային՝ մնայ առ նմա միայն Մուշէղ Մոկաց իշխեցողն, այր քաջայայտ և բարձրագահ – 344. Եւ եղև յետ մեծ պատերազմին, որ յառաջ քան զզրուցացդ գրելոյ ելին, ի գլուխս Մանազաւեան նահանգին և Յուշոյ դաշտին, և զխռովարարս քաղաքացն ի մի վայր գումարելոցն, որք և յունայն ասպատակէին աշխարհ – 398. Եւ զկնի այսորիկ, որ է երկրորդ հարուածք այլազգեացն՝ դարձեալ հրաման ետ ելանել ի պատերազմ, և հետամուտ հասեալ առ նոսա. – 282. և զօր գումարեալ ել ընդ առաջ նորա: - 352. Եւ էր յղեալ յառաջագոյն զԱշոտ որդի իւր ընդ առաջ նորա, անդստին

յելանելն նորա յերեսաց արքայի – 270. և թագաւորն յանկասկածս լինելով՝ փութացան ելին ի բանակէն փախստեայ հարուստ ասպարիսօք: - 380. Եւ ի սաստիկ բախմանէ խուռն նիզակացն և ի զինուց փայլելոյ և շողալոյ սուսերացն և սրնգելոյ աղեղանցն լարելոյ՝ հրաձգութիւն իմն արտաքս ելանէր իբրև յամպոց ճայթմանէ – 232. և ինքն գնաց անտի և եմուտ ի Պարտաւ՝ ձմերել անդ, և տեսանել վասն յետին կատարածին աշխարհիս Հայոց, թէ որպէս ի գլուխ ելանիցէ. – 298. և ինքն ել գնաց երթալ մտանել ի քաղաքն Դուին, ձմերոց ինքեան պատրաստեալ գնա, մինչ ի ժամ գարնանայինս, ունելով ընդ իւր կապեալս բազումս. – 240. և խեցգետի մի ել, կորզեալ ձգեաց ի ջուրն զինուորս ՃԴ: - 50. Եւ խնդրէր /252/ ի Քրիստոսէ ելանել ի մարմնոյ աստի և մտանել առ Աստուած. – 254. և ծառայեա ճշմարտութեան օրինաց և հաւատոց, զոր ուսաք ի մարգարէէն Մահումաթայ. ապա թէ ոչ՝ զնորին հակառակն ընկալցիս, տանջանս և մահ, և ելցես ի կենաց աստի չարաչար մահուամբ,,: - 294. և կողմնեալք ի սիրոյ աստուածութեանն անկաւ ի վերայ նոցա զարհուրումն մահու, մանաւանդ ոչ կամելով ելանել /246/ ի սնոտի կենացս դիւրափոփոխ աշխարհիս՝ ասեն. - 248. և հատեալ զզօրսն յերկուս առաջս, և հրաման տուեալ ելանել յերկիրն Վասպուրական, ողողել գերել գերփել /200/ զաշխարհն, աւերել և բնաջինջ առնել և մաշել ի սուր սուսերի. – 202. Եւ ճանապարհ արարեալ ընդ կողմն հիւսիսոյ՝ ել դէպուղի ի Կարնոյ քաղաք – 148. և մի ի ձեռն տանջանաւոր մահու ելանիցէք ի բնակութենէ ձերմէ և բնակիցէք ի դժոխս: - 244. և մինչ ոչ ելին ի գլուխ կարծիքն, այլ իբրև զմեքենայ ինչ յամուր անդամանդեայ պարսպէ ի բաց դառնայր – 250. Եւ յելանելն նորա և մօտ լինել ի սահմանս Հայոց զօրօք բազմօք, մերձ ի սահմանս Տարունոյ, Առաջին կոչեցեալ Հայոց՝ իշխան Տարունոյ Բագարատ … առաքէ զոմանս ի մեծամեծաց իւրոց ընդ առաջ նորա պատարագօք ոսկոյ և արծաթոյ և պատուական հանդերձից, համոզեալ մի ելանել յերկիրս Հայոց: - 170. Եւ յետ այսորիկ գումարեցոյց զօրս բազումս Խոռեմ, և ել ի Քաղկեդոն և նստաւ յանդիման Բիւզանդայ, և խնդրէր անցանել և կործանել զքաղաքն թագաւորանիստ: - 142. Եւ յետ այսորիկ ել ի վերայ երկրին Պաղեստինացւոց և Երուսաղէմի՝ պաշարել զնա. – 60. Եւ յետ սակաւ աւուրց ել գնաց Դերանիկն ի Ճուաշ գաւառ՝ ձմերել յաւանին Մառական: - 350. Եւ յետ փոքր ինչ աւուրց հրաման ետ Բուխայ ելանել ի պատերազմ. – 280. Եւ նոյնժամայն վառեցան պատրաստեցան, հեծեալ յիւրաքանչիւր յերիվարս ելին ընդդէմ նոցա: - 134. և նոքա կային անշարժ, և ոչ ել /284/ այր քան զընկեր յառաջ. – 286. Եւ ոչ ևս այնուհետև համարձակ ելանէին և մտանէին յաշխարհս Վասպուրական զօրքն Տաճկաց. զի անկաւ ահ սաստիկ ի վերայ նոցա: - 308. և ոչ ոք ամենևին իշխէր ելանել արտաքոյ կամաց ձեռին նորա ի մեծամեծաց մինչև ի փոքունս. – 200. և չորեքվտակեան անյաղթ և զօրաւոր գետովք ելանէ յաներևելոյն յերևելի աշխարհս: - 20. և Սահակայ յղեալ առ Սմբատ՝ մի կալ մնալ ի լերինն, այլ փութալ ելանել դառնալ անդրէն ի հետևի զօրս անդ զի ոչ ելանէ, ասէ, Երուանդ զօրու ի սահմանս Մարաց. – 84. Եւ վասն մնացելոցն որք ի քաղաքին և ի սահմանս նորա՝ ել հրաման յարքունուստ առնել ի վերայ նոցա ողորմութիւն, շինել զքաղաքն և հաստատել զամենեսին յիւրաքանչիւր կարգ: - 142. և քեզ եթէ հաճոյ թուիցի ապրեցուցանել զքեզ և զզօրս քո՝ արի ել աստի և գնա ի սահմանաց իմոց: - 278. Զայս գործ լուեալ Լիդէացւոց թագաւորին Կրոսիսեայ բազմաշփոթ յուզմամբ ամբոխ արարեալ, զօրս բազումս գումարեալ, ելանել տալ պատերազմ ընդ Կիւրոսի – 64. զի ի փռնգալոյ նորա կայծակունք հատանին և ընդ ռնգունս նորա ելանէ ծուխ հնոցի կայծականց, որպէս գրեալ է ի Յովբ: - 246. զի մեռաւ նա ի ճանապարհի, ի կողմանս Ասորոց, յելանել նորա ի վերայ աշխարհիս Հայոց՝ չարչարեալ զսոսա որպէս խորհեցանն. – 184. Զնա յղէ Ապուսէթ ելանել յերկիրն Վասպուրական և անդէն մնալ զօրօք բազմօք, մինչև զբովանդակ զհարկս և զհասս արքունի յամենայն կողմանցն Հայոց առ նա բերցեն յիւրաքանչիւր սահմանաց: - 176. Զնոյն տեսեալ ազատացն Վասպուրականի, անտանելի մնալով առ դիպուածն զոր ինչ գործեաց Ապումրուան՝ ելին գնացին առ Ատոմ որդի մեծին Գուրգինայ յամուրն Կանգուար, գտանել զելս իրացն – 364. Զոր և Աղէքսանդրի Մակեդոնացւոյ ի դէպ ելանէ

առ Ողբմպիադայ վիպագրութիւնք. թերևս ի մասն ինչ արտաքոյ սահմանաց դրախտին հասանել. – 50. զոր աւերեացն Իսրայէլ յելանելն իւրում յԵգիպտոսէ և ընդ պատերազմելն ընդ Բաղակայ արքայի Մովաբայ: - 156. զՎաչէ կացոյց ի դրան արքունի, զի ամենայն ոք նովաւ մտցէ և ելցէ յարքունիսն – 82. ընդ կրունկն դարձիր, թշուառական, քանզի զերջանիկ կամարարացն կղզիս կոխել ոչ կարես. զի՞ յերկինս ելանել բռնանաս,,: - 50. ընդ ակամբ հայելով, թէ գուցէ ճողոպրեալ ելանիցէ ի ձեռաց մերոց, կամ ի գիշերամարտս յանկարծ հասանիցէ ի վերայ մեր մեծամեծ ոճիրս գործիցէ: - 202. թողեալ զերիվարս իւրեանց, ի հետիոտս ելին ընդդէմ նոցա: - 162. Ի դէպ ելանէ և հին առասպելն Ոլպիանու փիլիսոփայի, որ վասն առիւծուն և զուարակացն են բարառնութիւնք. – 196. Ի նմին ժամու զգացեալ վասն նորա մեծ իշխանին Արծրունեաց Մերշապհոյ, որ յայնժամ ի Տմորեացն ամրանայր բերդի՝ յղէ առ նա ելանել գնալ ի սահմանացն յայնոցիկ. – 130. Իբրև օր մի լինէր պարապոյ … և ահա հնչեցին փողք ուժգին գոչմամբ ազդ առնել քաղաքին՝ եթէ ել նստաւ թագաւորն յատենի – 240. ինքն իսկ փոյթ յանձին կալեալ՝ ել գնաց մեծաւ հոգաբարձութեամբ, լուծանել զնա ի տառապանաց արգելանին. սակայն և այնպէս ոչ կարաց գտանել զելս իրացն վտանգի առնն: - 346. Իսկ Գուրգինի մարզպանի Հայոց առեալ էր ի բաժնի յելս կոյս և /388/ որ ելանէ ի հարաւակողմն, զԱնձահից ձոր, զԿրճունիս, զԿուղան ովիտ, և զբուն զՄարդաստան գաւառ, զԱրճիշակովիտ. զոտն Առնոյ, զԱղբագ Մեծ և զՓոքր, Ակե, Տամբէր, Տագրեան. Ըռնայ, Զարեհաւան: - 390. Իսկ իբրև լուաւ, թէ ահա առեալ Բուխայ զզօրս իւր գալ հասանել ի վերայ նորա՝ հրաման ետ բոլոր աշխարհին իւրոյ ելանել ունել զլեռնակողմն – 276. Իսկ իշխանն Բագարատ … ել գնաց անխիղճ համարձակութեամբ, տիրասէր խորհրդովք, կատարել զսպաս զինուորութեան, ըստ աստուածեղէն պատուիրանին և ըստ թագաւորական հրամանին, զհետ եկելոյ կոչնականացն, ոչինչ իմացեալ զպատրանս խաբէութեան նորա, որով վրիպեացն: - 186. Իսկ Յամանիկն ի վերայ Հայոց խորհէր ելանել, կամելով և տիրել Հայոց. – 338. Իսկ նա փոքր ինչ ժամանակ ներեաց նոցա դիմօք սիրոյ խաղաղութեան, մինչև ի գլուխ ելին որ ինչ յաղագս Ապումուսէին էին հանդէսք. – 296. Իսկ քաղաքապետն Սահակ ելեալ ընդ դուռնն, որ ելանէ ի բերդն Շամշղտայ, սամոյր զինքեամբ արկեալ և գաւազան ի ձեռն առեալ, յիմարեալ մտօք կորոյս զփախուստն իւր, որ կարող էր գնալ յով և կամիցի. – 272. Կամ դարձո՝ զխորհեալ նոցա չարիս ի գլուխ իւրեանց, կամ թող զի ելցեն գնասցեն՝ յով և կամեսցին,,: - 82. համառել պնդել ի հաւատսն Քրիստոսի զոր պաշտեսդ, և ի ձեռն չարաչար տանջանաց ելանել ի կենաց աստի – 290. ձայն բարձեալ արտասուալից առ Դերենիկն, և զսուսեր մերկ ի ձեռին ունելով, և վաղր և սակր մի՝ ասէ. ,,որդեա՛կ իմ Դերենիկ, ողջոյն քեզ, ողջոյն քեզ, ողջոյն քեզ. ես ելի գնացի ի յաշխարհին Յունաց,,: - 320. միայն զի եկեսցէ ի բան արքունի և մի ելցէ արտաքոյ կամաց թագաւորին. – 288. միայն ոչ ելցէ ի ձեռաց իմոց Աշոտ հանդերձ ազգականօք իւրովք,,: - 214. յայնժամ ելցէ հուր ի քէն ծնեալ, և կերիցէ զքեզ և զբազմութիւն ուստերաց և դստերաց քոց, ի քէն ակն ունելով զբորբոքումն: - 148. Յայնժամ ետ զզօրսն ի ձեռն Մուշեղի Ապուպելճի եղբօր Գուրգինայ, և ինք ել գնաց զհետ եկելոց կոչնականացն. – 228. Յայնժամ իբրև գիտաց զօրավարն Հայոց և ոչ միով իւիք կարաց հաճել զմիտս նոցա, այլ միաբան ետուն հրաման ելանել ի պատերազմ – 230. Յայնժամ իբրև գիտաց զօրավարն, եթէ յաջողեցաւ նմա ամենայն ինչ ըստ կամաց իւրոց և ըստ հրամանի ամբարիշտ թագաւորին, ի գլուխ ելին խորհուրդ չարութեան նոցա - 238. Յայնժամ իբրև ետես անօրէն զօրավարն Մուսէ, թէ ոչ ելին ի գլուխ խորհուրդ չարին յօժարութեանն … փութացաւ արձակել գուժկան յարքունիս, ծանուցանելով արքայի զոր ինչ գործեաց Աշոտ իշխանն Վասպուրական: - 176. Յայնժամ հրաման ետ զօրավարն Բուխայ զօրաց իւրոց՝ ելանել ընդ առաջ նոցա ի պատերազմ. – 274. Յայնժամ հրաման ետուն ամենայն զօրացն ելանել ի պատերազմ. – 284. Նոյն ժամայն ել հրաման յարքունուստ, զի զսուրբն Սողոմոն ի նմին փայտի սպանցեն, նետաձիգ լինել ի նա: - 292. Նոցա ելեալ արտաքս յատենէն մեծաւ խնդութեամբ, և յոյժ զուարճացեալք փութային ելանել ի մարմնոյ աստի և մտանել առ Աստուած – 266. Նստան երկոքին

կողմանքն պահել զպահպանութիւն իւրեանց մեծաւ զգուշութեամբ, և ետուն ժամ անսալ միմեանց՝ ոչ ելանել ի պատերազմ, մինչև եկեսցեն հրեշտակքն յարքայէ, զոր առաքեցինն: - 286. Ո՞չ ապաքէն դու իսկ տեսանէիր, զի մտանէի և ելանէի ի սուրբ եկեղեցին ընդ ամենայն հաւատացեալսն – 222. Որ կամէին դառնաբեր քինահարութեամբ ելանել ի վերայ աշխարհիս առ հասարակ յապականութիւն դարձուցանել: - 404. որով առնիցեն ելանել ի կապանաց իշխանին Աշոտի և Գուրգինի, և դարձուցանել զիշխանութիւնն անդրէն առ իւրեանս – 368. Որում ոչ անհնազանդ գտեալ՝ իմաստնախորհ զօրութեամբ ելանէ յամրոցացն: - 316. սա այն է, որ մինչ յելանելն Բուխայի ի սկզբանն մտանելոյ նորա ի Հայս՝ եկաց ընդդէմ նորա բնակչօք լերինն և հարուածս մեծամեծս հասոյց ի վերայ զօրացն արքունի. – 294. սա ել ի վերայ Հրէաստանի և մեծ մասն ժողովրդեանն գերեաց յԱսորեստան…/Յետ նորա թագաւորեաց/ Սաղմանասար. – 60. սակայն և յայնմ ոչ ետուն հրաման զօրուն մի ելանել ի պատերազմ: - 230. Սոյնպէս և այրն այն Յովսէփ զօրավարն Տաճկաց մնայր անցանել ձմերանն, զի ելցէ ի վերայ աշխարհիս Հայոց սրով և գերութեամբ և մեծամեծ հարուածովք և զմեծամեծս աշխարհիս խաղացուցանէ ի գերութիւն – 188. Քանզի ի գնալ նորա զօրացուցանել զքեռին իւր զթագաւորն Հայոց, իսկոյն յելանելն նորա ի տանէ իւրմէ ի Վան քաղաքէ՝ տիրէ ի վերայ նորա ցաւք հիւանդագինք կարապետք մահու, անմերձենալիք ճարտարաց բժշկական ձեռնարկութեանն: - 384. բայց այլ ամենայն իշխանք արևելեայք խոյս տուեալ յերեսաց նորա՝ ետուն տեղի, ելին կալան զամրական տեղիս, ի բերդս և ի քաղաքս և ի լերինս, ընդ ինքեանս գումարեալ զզօրս և զբնակիչս աշխարհաց իւրեանց ամենայն պատրաստութեամբ: - 270. Բայց տուաւ յաղթութիւնն այն մեծ ի ձեռն զօրավարին Ապումուսէի, զի լցցի զոր ասաց Տէր ի բերանոյ Ամովսայ Մարգարէի, „խորտակեցից զնիզակս Դամասկոսի„ , որում այժմ Դմիշկն կոչեն, ուր ելին զհետ Բուխայի: - 286. Եւ ելանէին գունդք գունդք շտապով և ճեպով մի զմիոյ կնի, և ամենայն ոք որ տեսանէր՝ ընդ մեծաւ երկիւղիւ ներքադրեալ լինէր: - 284. Իբրև ետես կայսր Հայրակղէս զչարիսն ամենայն, որ եկին հասին ի վերայ նորա՝ ակամայ կամեցեալ ցուցանել բարեկամութիւն՝ ել ընդ առաջ նոցա, մեծարել իբրև զվաստակեալս և զիւրս, ընկալաւ զնոսա մեծամեծ /142/ ընծայիւք. – 144. Եւ գումարեալ Հայրակղի զամենայն զօրս իւր յորդոր և խնդալից սրտիւ, բազմութեամբ զօրաց ել ընդ առաջ սուրբ նշանին, ի պատիւ հրաշալի և երկնաւոր գանձուն – 154.

ԵԼԱՆԵԼ ԸՆԴ - բայց միայն ի դրան արքունի մտանել և ելանել ընդ հաւատարիմս թագաւորին ի տունս դիւանաց և գանձուց: - 92.

ԵԼԵԱԼ - Եւ ելեալ ազատացն Վասպուրականի դէմ եդեալ տարադէմ գնացին յԱմդացւոց քաղաքն առ Ահմաթ որդի Յիսէի Շեհայ – 366. Եւ ելեալ գնաց եմուտ յամուրն Կանգուար, և կատարեալ զոր ինչ ախորժեացն՝ տիրեաց Անձաւացեաց մեծաւ զօրութեամբ: - 324. Եւ ելեալ ի տեղին սրբութեան և կատարեալ զաղօթսն՝ ելին շրջել զբօսնուլ յայլ ևս տեղիսն: - 100. Այլ իբրև այն ինչ մերձ լինէր ամրոցն ի պաշարումն՝ Ամդայինն Յիսէ, որ Շեհի որդին, որ զզօրապետութիւնն Հայոց ունէր, ճանաչէր՝ ի հրապոյրս Մանազաւեան պետոյն և Ութմանացն ելեալ՝ երագապէս եկն եհաս ի վերայ Աշոտի ԺԵ հազարաւ հեծելօք վառելովք. – 334. Այլ ելեալ արտաքս ի ռազմէն՝ դարձաւ փախստեայ ընդ ճանապարհն Հողցայ. – 368. այլ ելեալ գայ ի սուրբ քաղաքն Երուսաղէմ, և անդ կեալ բարեպաշտութեամբ – 80. այլ և բազումք ի նախարարացն Հայոց ելեալ զհետ Արշակայ գնացին առ Արկադ – 110. այլ վասն բանսարկուացն ելեալ Վաչէ և Արշաւիր գնացին առ Արտաշէս արքայ Պարսից – 82. Ապա ելեալ ի նաւ՝ եկն ի մէջ ծովուն խօսել ընդ զօրավարին Պարսից. – 144. Բայց յետ աւուրց բազմաց անցանելոյ շփոթմանցն՝ Գուրգէնի ընդարձակեալ նախախնամութեամբն Քրիստոսի և ելեալ փրծեալ ի բանտէն՝ եկն եմուտ յաշխարհ իւր: - 320. Բայց երիցս երանելի ոմն երիտասարդ հասակաւ, ինքն տաճիկ և ազգաւ պարսիկ՝ ելեալ զհետ սիրոյն Քրիստոսի հաւատոցն եկն յարեցաւ ի Պատրիկն Անձևացի – 222. Ելեալ խրոխտ և դառնաշունչ փռնկալով մռմռեալ յանձնիւր գազանեղեն զայրացմամբ յարձակեալ յեղակարծում եկն եմուտ ի քաղաքն Շամիրամայ ի Վանտոսպ: -

372. Ելեալ փութանակի եկն եհաս յաշխարհս Վասպուրական սպարապետին կամակցութեամբ: - 306. Եւ ելեալ ապտակս ի սենեկէն՝ և նստան ուրախ լինել: - 284. և ելեալ ի վերայ աշխարհիս՝ յերկուս բաժինս հատին զաշխարհս: - 362. և ի սաստիկ սովոյն ելեալ Որմզդի յածէր ընդ վայրս ի խնդիր կերակրոց. – 46. Եւ ինքն /302/ անցեալ գնայր առ իշխանիկն ի յամուրն Աշխարհաբերդն կոչեցեալ. և անտի արիաբար քաջասրտագոյն դիմացուածով ելեալ գնաց դարձեալ առ սպարապետն Սմբատ: - 304. Եւ մեկնակազէնքն պատեցին շուրջ զեկեղեցեաւն, և ելեալ առ նա ոմանց ընդ փորուած գմբեթին՝ և եհար մի ոմն աշտէիւն ընդ միջոց թիկանցն՝ և ընդ անթովքն հանեալ ի ներքոյ թոքացն՝ փչեաց զոգին և թաղեցաւ զթաղումն իշոյ: - 190. Եւ յաջորդեալ փոխանակ նորա կացեալ յաթոռ սրբոյն Գրիգորի երանելին Մաշտոց, ելեալ ի կղզոյն Գեղարքունի լճէն, զՅօհաննու Կարապետին զվարուցն բերեալ զօրինակ. – 376. Եւ այն ինչ ընդ ջեռնուլն արեգականն, մինչ ագևորեալքն մտանէին զառաջեաւ ամիրային, որպէս որսոյ ինչ պատճառանօք հեծեալ յընտիր երիվարս հանդերձ մերձաւոր հարազատօք իւրովք և ազատովք յընտրելոցն Վասպուրականի՝ ելեալ մեկնեցաւ իբրև վտաւանս երկուս. – 342. և անյապաղ փութով զգործ պատերազմին վճարեալ քաջք ընդ քաջս ելեալ. – 64. և բայացեալքն եթէ գազանք և եթէ թռչունք, յորժամ զգան զջերմութիւն օդոյն ի հասարակել տունջեան և գիշերոյ՝ ի գարնանային եղանակի ելեալք յիւրաքանչիւր կայենից. – 188. Եւ Գուրգէն ելեալ գնաց փութանակի անյայտ առնել զինքն, մինչև յաջողեսցի ըստ կամաց Քրիստոսի յո՛վ և երթիցէ: - 320. և Գուրգէն ելեալ ընդդէմ նոցա բազում անգամ՝ոչ սակաւ օճիրս գործէր ընդ զօրս Տաճկաց: - 302. և ելեալ ի Յադամակերտ քաղաքէ ի Թ ժամու ուրբաթու աւուրն, և անցեալ ընդ ծովակն Յըմբեայ, և ընդ Վարազի Զարեհաւանի. – 402. և ելեալ Աղան գնաց առ սուրբն Սահակ, և զէնընկեց եղեալ առաջի նորա՝ մերկանայր զհանդերձն զինաւորական - 112. Եւ ելեալ Աշոտ զհետ կոչնականաց Աւշնի՝ գնաց աներկիւղ համարձակութեամբ: - 362. և ելեալ արտաքոյ բանակին յորդառատ հեղոյր արտասուս ի վերայ բեկման իշխանին և այլոց նախարարացն. – 218. Եւ ելեալ արտաքս հանգոյն մատնչին ի տնօրինականս Փրկչին, ունելով ընդ ինքեան զհրովարտակն գրեալ այսպէս. – 212. և ելեալ գնաց զհետ անհանճար իմացմանց առ Պերոզ արքայ Պարսից – 124. Եւ ելեալ գնաց զհետ կոչնականացն ի գութ հարազատութեան, և ի կարծիս սաստիկ հիւանդութեան, թէ մերձ ի մահ անկեալ դնիցի, ըստ ստուգելոյ կոչնականացն: - 348 Եւ ելեալ թագաւորն նստաւ յատենի ի բարձրաբերձ բեմի միջոց, ի մէջ աշխարհակոյտ ամբոխի անհուն բազմութեանն – 242. և ելեալ ի հրապոյրս ցոփութեան ըստ խրատու առնն, յուսացեալ յամրոցն և ի գանձսն, և ի ցանկութիւն իշխանասիրութեան համբարձեալ զաչս – 346. և ելեալ ի վերայ Պարսկահայոց գոհեացն և անդ բազում քաջութիւն նահատակութեան ցուցեալ՝ յոլովից գերելոցն ընդարձակեաց, հանելով /400/ և զաւարն ի ձեռաց նոցա – 402. Եւ ելեալ իշխանաց իշխանն, որ բարձրագոյն և հանճարեղագոյնն էր քան զբնաւ Հայաստանեայցս և զընդհանուր կացեալս ի ներքոյ երկնից՝ եկն առ նա մեծաշուք պատուաւորութեամբ, և պարգևս և պատիւս ոչ սակաւս նմա յառաջաբերեաց. – 344. և ելեալ յերեսացն Տեառն՝ սնոտի տաժանմամբ շինէր քաղաք, չհամարեալն յազգս զղջալից և արդարաքարոզ նահապետացն:-24. Եւ ելեալ յիւրաքանչիւր տեղեաց մի քան զմի յառաջանալ ի կոչումն Բուխայի, և ժողովեցան ի մի վայրի և եկին կացին առաջի զօրավարին Տաճկաց: - 296. Եւ ելեալ նոցա արտաքս՝ սկսաւ խօսել Մահմէտ հրապարակաւ զնոյն բանս. – 160. և ելեալ նստաւ ի ջորւոջն, զոր պատրաստեալն ունէին անդէն առ դրան վրանին, և հանին արտաքոյ դաշիկ բանակին՝ դարձուցեալ դառնալ ընդ նոյն ուստի եկն: - 346. և ելեալք ի վերայ Փառանու՝ արարին մեծ խորտակումն դիմադարձացն, սպանին և զԱպղջէհրն և զբազումս ի զօրէն Ամովնացւոց և Մովաբացւոց – 160. և եկեալ կացին մօտ առ Կանգուար բերդ, և պատերազմեալ զամիսս Բ՝ ոչ ինչ գործ ի գլուխ ելեալ ըստ ախորժման. – 332. Եւ եղև ի մտանելն նորա ի Դատուան աւանն … ելեալ իշխանքն Հայոց յանձնիւր տեղեաց գնացին յանդիման լինել նմա – 340. Եւ եղև մինչ կային իշխանքն ի միաբանութեան առանց կարծեաց

կասկածանաց ի հպատակութեան ելեալ յարքունուստ հազարապետին /340/ որդւոյն Հալթի, և զմիաբանական սիրոյն շաղկապ ի միասին յօդեալ պնդեալ անքակ պահէին – 342. և թշնամիքն հանգստեամբ ելեալ ի վերայ նոցա ի լիճս աղեղանց և նիզակաց ձերբակալ արարեալ զոմանս – 372. և թողեալ զբնակելն ի Դուինն՝ ելեալ բնակեցաւ ի Նոր քաղաքին ի մեծ եկեղեցւոջն որ յանուն սրբոյն Գրիգորի շինեալ էր երանելւոյ տեառն Ներսիսի երկրորդի Հայոց կաթողիկոսի: - 358. և ի մեր կար տաժանմամբ ի խոյզ և ի խնդիր ելեալ զհաւաստին գտանել – 12. և ինքն Աշոտ ճողոպրեալ միաձի ելեալ եհաս փախստեայ մինչ յՈստանն Ռշտունեաց, թողլով զբուն բանակն ի նմին տեղւոջ. – 332. Եւ խօսէր ընդ նոսա սաստիկ և ահագին դատաստանօք և սպառնալեօք, թէ ընդէ՞ր և դուք ոչ մեռարուք ի պատերազմին, քան թէ ելեալ փախստական գնացէք գալ առ իս և տալ համարձակութիւն ծառայի իմում ի յայսքան վնաս. մի՞թէ արդեօք զԽոսրով մեռեալ կարծէիք,,: - 150. և նորա ելեալ սակաւ արամբք՝ իբրև ջուր ընդ զառ ի վայրն հոսեալ՝ արար հալածական զՎահան և զզօրս նորա. – 310. և նստան ի ներքս ի քաղաքին ԻԱ օր. ապա ելեալ բանակեցան արտաքոյ քաղաքին, և զքաղաքն այրեցին հրով: - 142. և պաշտօն աւուրն ի գլուխ ելեալ, ընթերցան քահանայքն զսուրբ Աւետարանն ի տեղիս տեղիս ի բանակին – 228. Զի ազգ բարբարոս խուժադուժ ի դիմի ելեալ գան տալ պատերազմ, կորզել յինքեան զգերին Հրէից: - 66. ընդ որս էր և քաջն մեր Աշոտ ախոյեանայարձակ զօրութեամբ և ելեալ զհետ արքունի զօրուն. – 328. Ըստ նմին օրինակի և զօրավարն Բուխայ, ի հասանել ամառնային ջերմութեանն իբրև ի խորոց անդնդոց ի վեր մղեալ զինքն, ելեալ յերեսաց արքայի բազում և ծանր զօրու՝ եհաս ի վերայ երկրիս ի կողմն հիւսիսոյ ի մուտս Հայաստան աշխարհիս. – 262. ի ծովէ ելեալ, այսինքն յերկրէ և յանդնդական խորոց, ի թագաւորաբնակ քաղաքէն – 262. Իբրև եհաս գուժկան առ մարզպանն Հայոց Գուրգէն՝ ելեալ զհետ նոցա Ռ արամբք, վառեալ ի զէն և յասպազէն, և գնացեալ եհաս յԱյլի գաւառ. – 402. Իբրև զեկուցաւ նմա յոմանց զոր ինչ խորհի վասն նորա Աւշին / 370/ … ելեալ գնաց մեկնեցաւ օգնութեամբ ի վերայ հասեալ գիշերոյն – 372. Իբրև հեռացաւ թագաւորն զերկուց աւուրց ճանապարհ՝ Ապումրուան ելեալ ի ձիընթացիկ ասպարէզն զգնայր. – 368. Իսկ սուրբն ելեալ հանդերձ դահճօքն ի տեղի ասպարիսի կատարմանն երկնաւոր նահատակութեանն՝ ի ծուռն իջեալ կայր յաղօթս – 206. Իսկ Ասուդ զհետ Դարէհի ելեալ ի պատերազմ ընդդէմ զօրագլխացն Աղէքսանդրի՝ Հերակղեայ նահատակութեամբն դիւցազնաբար ի դիմի հարեալ՝ ի բաց նահանջէ զուժեղագոյնս զօրագլխացն Աղէքսանդրի հարուստ ժամ մի, մինչ հիացումն զօրօքն արկեալ՝ տային տեղի փախստէի. – 68. Իսկ զԱհմատ ընդ Վասպուրական աշխարհն անցանել գնալ՝ ելեալ զհետ նորա Շապուհ որդի Աշոտի, մինչ տանել հասուցանել զնա ի մուտս Ասորեստանեայց ճանապարհին: - 346. Իսկ իշխանն ելեալ կայր ի վերայ պարսպին – 210. Իսկ նա ի հրապոյրս ապստամբ վիշապին ելեալ, որ բազմախարդախ չարութեամբն եհեղ առատութեամբ զդառնութիւն խրատոյն յունկն կնոջն անզգամի: - 20. Իսկ քաղաքապետն Սահակ ելեալ ընդ դուռնն, որ ելանէ ի բերդն Շամշղտայ, սամոյր զինքեամբ արկեալ և գաւազան ի ձեռն առեալ, յիմարեալ մտօք կորոյս զփախուստն իւր, որ կարող էր գնալ յով և կամիցի. – 272. մինչ ելեալ արտաքս տիկինն ի հետիոտս լի հառաչանօք՝ բաւական համարել զգործ նահատակութեանն, զոր ետ Աստուած ի ձեռս Աշոտոյ. – 176. մինչ քաղցրատենչ քունն ի վերայ հասանէր որ զպահպանութիւն գիշերոյն պահէին՝ նորա ամբարձեալ զպղծալից ձեռն ի սրբութիւն սրբոցն և առեալ զսուրբ նշան խաչին Քրիստոսի և ընդ պատուհանն արտաքս ելեալ – 378. Յայնժամ ելեալ իշխանն Գրիգոր յերեսաց արքայի մեծաւ ուրախութեամբ և անպատում խնդութեամբ՝ և եկն եմուտ յերկիր իւր յիշխանութիւն Վասպուրական կոչեցեալ: - 314. Նահատակք ոմանք կային յայնժամ ելեալ յարգելանէն ընդ կալանաւորսն – 220. Նոյնժամայն ելեալ մեկնեցաւ յերեսաց արքայի այրն այն Բուղայ – 200. նորա փութանակի հասեալ ի քաղաքն Բերկրի, և միաբանութեամբ քաղաքացուացն ելեալ պատահեն զօրացն ի զօրագլխացն Վասապուրականի ի գեօղն որում Խոզաղբերքն ասեն. – 304. Նոցա ելեալ արտաքս

յատենէն մեծաւ խնդութեամբ, և յոյժ զուարճացեալք փութային ելանել ի մարմնոյ աստի և մտանել առ Աստուած – 266. Որ անսայթաք հաւատով յառաջացաւ առ աւարտումն պատերազմին փութացեալ, և ելեալ յամրական տեղւոյն սակաւաձեռն զօրականաւն, որ պահէին զպահպանութիւն Շամիրամ բերդին – 400. Որոց դիպօղ ժամ գտեալ՝ արտաքս ելեալ ի բանակէն, զերծեալք իբրև զայծեամն ի հնարից որսորդաց՝ գնացին խաղաղութեամբ յիւրեանց տեղիս և զնա թողին լքեալ ամօթալից: - 344. սա ելեալ ի Հայս պատերազմաւ արար ընդ իւրով ձեռամբ. – 56. Եւ զօրքն, որ ելեալ էին զհետ Գուրգինայ՝ եկին հասին ի սահմանս երկրին, ուր կայր Գուրգէն զօրօքն իւրովք – 226. Եւ յանդորր ելեալ աշխարհս Վասպուրական կեցին յապահովս յանհոգս. – 400. Նոյնժամայն ելեալ զհետ Դերանկին կորապաղատն ի նոյն աղագս ի բաց մեկնել ի դիմաց հազարապետին, գիտելով զոր ինչ խորհեալն էր յաղագս նախարարացն Հայոց եկելոյն առ նա, և մեկնեալ լինէին ի զօրացն անտի ասպարէզս Ե – 342. Քանզի ասէ, թէ ,,էին ոմանք յելելոց անտի հեթանոսաց, որք եկեալ էին յԵրուսաղէմ ի տօնն, զի երկիրպագանիցեն. – 76.

ԵԼԵՄԱՑԻՔ - Ելեմացիք, ասէ, առեալ զկապարճս, հեծեալ յերիվարս. – 210. Եւ իբրև ստուգեաց և տեղեկացաւ զամենայն՝ եգիտ բազմագոյն քան զամենեսեան զկապարճաւորս և զկորովիս աղեղնաւորացն Ելեմացւոց և Արաբացւոց, աջողակք յերկոցունց ձեռաց – 200. սագունակ հասեալ ի վերայ Վասպուրական աշխարհիս պարսկական խուժանն ըստ ազգս ազգս և ըստ քաղաքս քաղաքս ի Մարաց և ի Պարսից, յԵլամացւոց և ի Խուժաստանէ, ի Կրմանայ և ի Մուկանաց, ի Թուրքաստանէ և ի Խորասանայ, և յեղակարծում հասին ի Ճուաշն գաւառ – 398.

ԵԼ ԵՒ ԵԼՍ ԱՌՆԵԼ - և հարկապահանջք գունդքն ել և ելս առնէին սաստիկ խոշտանգանօք: - 124.

ԵԼԵՒԵԼՍ ԱՌՆԵԼ - և թէ զիա՛րդ գունդք գունդք հրեշտակաց մի զմիոյ կնի ելևելս առնեն, և զիա՛րդ փայլեալ նշանն տէրունական ահաւոր ճառագայթիւք – 284. և քաջքն և հոյակապքն ելևելս զմիմեամբք առնէին ախոյեանայարձակ խրոխտանօք: - 328.

ԵԼ ԵՒ ԵԼՍ ԱՐԱՐԵԱԼ - Նոքա առ լուրն խնդացեալ՝ լքին զամրացեալ գունդն՝ աճապարել զհետ Կիւրոսի, ել և ելս արարեալ զմիմեամբք – 66.

ԵԼԻ/ծն.ԵԼԻ/ - Եւ զօրագլուխք զօրացն էին այսոքիկ, Մուքադմ, Յուսփ ի Թփղիս քաղաքէ, Յուսփ որդի Ռահմայ և Ապուհեշմ՝ Ելոյ տէր և ընդ նոսա զօրք Համդոյի Պարսից ամիրայի: - 226. և կէսքն զհետ մտեալ փախստէից, մինչ թանձրացաւ մութ գիշերին՝ հանին ի սահմանացն Հայոց, էր որ ի կողմն Ելոյ և էր որ ի կողմն Ատրպատականի և Պարսից: - 232.

ԵԼԻՄԱՑԻՔ - գրէթէ անցուցանէր զանցուցանէր զքաջութեամբքն Արշակայ Պարթևի, ընդ քաջացն Քուշանաց, Մարաց և Ելիմացւոց. – 72. Եւ ինքն իսկ գլխովին զօրավարն Բուհայ, հեծեալ յերիվարն, պնդեալ զինքն զինու ի պատերազմ ընդդէմ իշխանին, և զկորովին աղեղնաւորացն Ելիմացւոցն և զընտիրս հեծելոց նոցա ընդ ինքեան վառեալ ի ճակատի: - 208. Զկնի այսորիկ մեկնեաց Բուխայ յինքենէ արս զօրաւորս յամենայն ազգաց և յամենայն մեծամեծաց և ամենայն աշխարհակալաց, և ի Պարսից և յԵլիմացւոց և ի Բաբելացւոց և յԱրաբացւոց … արս աւելի քան ԺԵ հազարաց և եհան զնոսա զհետ Գուրգինայ – 224. Իսկ յետ Կ ամի անցանելոյ Աղէքսանդրի և անիշխանութեանն Հայոց և Պարսից՝ թագաւորէ Արշակ Քաջ Մարաց և Պարսից և Եգիպտացւոց և Ելիմացւոց ի Բախլ քաղաքի. – 72.

ԵԼԻՈՆ - ի սորա ԻԵ ամին առաւ Ելիոն քաղաք ի յԱթենացւոց անտի – 58.

ԵԿ - և օրհնեցաւ և դրուատեցաւ ի հեռաւորաց և ի մերձաւորաց, բնակաց և եկաց աշխարհիս: - 312.

ԵԿԱՄՈՒՏ - ոչ պիտոյացեալ եկամուտ լուսոյ, որով նսեմասցի առ ի հասանել երեկոյին, ոչ ապաժամանութիւն արեգական առ ի մերժել զմութ գիշերի լուսազգեստ ստեղծուածոյն,

որ յետ առաջնոցն կարգի և դասու՝ զերկրորդն փոխանորդեցաւ վիճակ, ոչ կերակուր հոսանուտ առ ի լրութիւն տարաբարձ ունակութեանց անապականին, որ դոյզն ինչ փոքրագոյն քան զհրեշտակս գոլ. – 20.

ԵԿԵԱԼ - զի մողեսք և կովիդայք, քարաթաթօշք և բնդոունք ի վերայ եկեալ կերան զորս նորա: - 46. ,,և զտանջողացն, ասէ, զճողփիւնն լսէաք, և զհարուածսն եկեալս ի վերայ թիկանցն տեսանէաք – 50. և եկեալ ի տեղի մի ծովային և զվրանսն և զբանակն զամենայն ի ներքս եդեալ մտանէաք ի նաւսն – 50. ,,նիստ դու աստ, մինչև արձակեցից զքեզ և արարից զկամս հայցուածոց քոց վասն որոյ եկեալ ես,,: - 226. Այլ և Վահան Ամատունեաց գաւառին փախստեայ եկեալ ի ձորն, որ մերձ է յամրոցն, ուր տէրն իւրեանց կայր: - 208. Անդանօր եկեալ Շապուհ եղբայր թագաւորին, և կացուցանէ զԳագիկ՝ իշխան Վասպուրական տէրութեանն. – 364. ասէ ,,երէցդ այդ եկեալ է զհետ գերելոց քրիստոնէիցն՝ հակառակ կալ հրամանաց արքայիդ և օրինաց Մազդեզանց և Արեաց – 104. Արդ այսքանեաց վկայութեանց ի մի վայր եկելոց՝ մի ելցուք զհետ առասպելաբանիցն թէ ընդ անկոխն գնալով ճանապարհ. – 260. բայց զանուանս միայն ըստ կարգի կանոնել բաւական հանարեցաք, որպէս և այլոց առաջնոցն մատենագրացն յայս եկեալ ձև պատմագրութեան. – 68. բայց իբրև գիտացին զօրքն որ ընդ նմա եկեալ էին զնորա քաջակարծրագոյն արիութիւնն՝ և պատճառանօք այս ինչ այն ինչ դարձեալ դարձան յանցնիւր տեղի: - 310. գունդ անթիւ բազմութեամբ եկեալ ի կողմանս Ատրպատականի ի Վառարատ գաւատի: - 138. գրէ առ սուրբ եպիսկոպոսն Գրիգոր Ամատունեաց տանն … գտանել զելս իրացն եկեալ հասեալ հինին. – 400. եկեալ հասեալ վրէժխնդրութեան պատիժք, վասն անօրէնութեանց մերոց զոր գործէաք առ հասարակ ի փոքրկանց մինչև ցմեծամեծս. – 196. եկեալ հասեալ աւուր կորստեան մերձ առ դուրս մեր – 196. և այսրէն եկեալ ցեղապետ մեր եղև: - 48. և եկեալ ի մի վայր Գագիկ և Գուրգէն եղբարք համահարք և միոյ մօր ծնունդք, յերկուց քաջատոհմիկ գահակալութենէ Սենէքարիմայ և Դաւթի – 388. և տառապելոցդ որ եկեալ յեցեալ են ընդունայն գաղթականութեամբ՝ եղիցի արձակուրդ ի տեղիս իւրաքանչիւր – 216. և աշխարհ զրաւ առցէ յասպատակէ թշնամեաց, որ եկեալ հասեալ է յաւեր և յեղծումն: - 216. Եւ առ չհանդուրժել այնքան եկեալ հասեալ վտանգաւոր նեղութեանցն, և գազանեղէն զայրացմամբ մրմռեալ յոգի իւր ի վերայ կորստեան սուրբ հաւատոյս և կործանման աշխարհիս Հայոց – 126. Եւ արևելեաց զօրավարին եկեալ պատերազմել ընդ իշխանականն առնուլ զամրոցն, - 302. և արձակեաց զզօրս իւրաքանչիւր զօրագլխօք եկելոց առ նա յամենայն ազգաց յաշխարհէս /գրքում յաշխարէս/ Հայոց՝ երթալ ձմերել յիւրաքանչիւր տեղիս բնակութեանց – 262. և բռնութեամբ Մարապարսացւոցն ոչ կարացեալ ընդդիմանալ՝ ի կողմանս Պաղեստինացւոց եկեալ պատերազմաւ պաշարեն զՍամարիա – 60. Եւ գրեթէ ամենայն իշխանք Հայոց, Վրաց և Աղուանից եկեալ էին ընդ զօրս Հայոց ի վերայ աշխարհին Ապահունեաց. – 380. և դարձուցին ընդ նոյն ճանապարհ ընդ որ եկեալ էր, ոչ թողացուցին նմա ելանել ընդ աշխարն Վասպուրական. – 336. Եւ Դերանիկն զօրացեալ զօրութեամբ Քրստոսի, և հոյակապ և անուանի եղեալ ընդ բոլոր աշխարհ Հայաստանեայց՝ և խաղաղանայր երկիրս ի շփոթմանցն ի վերայ եկելոցն: - 318. և դու թէ ոստիկան խաղաղութեան էիր եկեալ յարքունուստ՝ զշինութիւն պարգևաբաշխէիր սոցա, և ոչ զաւերս և զխռովութիւն: - 278. և եկեալ եկաց առաջի ոսոխ վիրագին, և տուեալ ողջոյն ըստ սովորութեան նոցա: - 216. Եւ եկեալ երեկոյին խնդալից՝ ակն ունէր առլնուլ կերակրովն, եգիտ ապականեալ և գիշակեր. – 46. և եկեալ ի վերայ քաղաքին պաշարեն զնա, և զզօրսն մատնեն ի սատակումն սրոյ, և զպատանդսն Վասպուրականի հանեն յարգելարանէն. և գերեացն ընդարձակեն, զկապուտ նոցա բաժանեն յինքեանս: - 190. և եկեալ ի տեղի մի ծովային և զվրանսն և զբանակն զամենայն ի ներքս եդեալ մտանէաք ի նաւսն – 50. Եւ եկեալ ի Փառան՝ զնոյն ասաց երկրորդել զբանս զայսոսիկ առ հօրեղբօրն իւրոյ որ կոչէր Ապղջէհր: - 158. և եկեալ կացին մօտ առ Կանգուար բերդ, և պատերազմեալ զամիսս Բ՝ ոչ ինչ գործ ի գլուխ ելեալ ըստ ախորժման. – 332. և եկեալ

Հայրակղի կայսեր Հռոմոց էր հասեալ ի վախճան թագաւորութեանն Պարսից: - 156. ի հօրէ զՍենեքերիմայն և ի մօրէ զՄամգոնեացն, ըստ ծննդաբանութեան գալ հասանել՝ մինչ յորում եամքս հասեալ ժամանակ – 300. Ի սոյն աւուրս որք մնացեալ էին ի տանէն Արծրունեաց իբրև լուան զպարտումն զօրացն արքունի ի Ծանարացն՝ ի մի վայր եկեալ գունդ կազմեալ հետևազօրքն մարտակցօք հանդերձ խառնաղանջ ամբոխիւ՝ լինին թուեալ արք S – 304. Իբրև գիտաց իշխանն, եթէ վճարեալ է չարութիւնն յաչս նոցա, և այլ ընդ այլոյ խօսին, և ի գաղտնիս քրթմնջեն, և անտեղի և անընդունակ հրամանաց նորա լինէին՝ ետ պատասխանի և ասէ – 214. Իբրև հասին ուր հանդերձեալն էին՝ և երկոցունց զօրքն անհուն բազմութեամբ յանդիման եղեն միմեանց, և ճակատ առ ճակատ զգործս պատերազմին յարդարէին – 328. Իբրև ստուգեցաւ որ ինչ եղեալն էր՝ փութացան խնդրել ի քաղաքին և ի կիրճս ճանապարհին, յոր կողմ և աճապարեաց ոք, մինչ անցեալ գտին զհարեալն դիւի չարի, զի կայր դեռ կիսամեռ: - 378. ինքեանք պատրաստեալ են զնոյն փարշմանն կրել զոր դաշտայինքն կրեցին – 190. Իսկ որք էին արգելեալք ի քաղաքն աղօթականս և պաղատանս առ մեծ իշխանն Աշոտ յղէին, զի համոզեսցէ ի մէջ նոցա զխաղաղութիւն. – 382. Իսկ Գուրգինի մարզպանի Հայոց առեալ էր ի բաժնի յելս կոյս և /388/ որ ելանէ ի հարաւակողմն, զԱնձահից ձոր, զԿրճունիս, զԿուղան ովիտ, և զբուն զՄարդաստան գաւառ, զԱրճիշակովիտ. զոտն Առնոյ, զԱղբագ Մեծ և զՓոքր, Ակե, Տամբէր, Տագրեան. Ըռնայ, Զարեհաւան: - 390. իսկ զՆախճաւան քաղաք և զԳողթն գաւառ հանեալ էր ի Վասպուրականէ բազում ժամանակօք յառաջ, ՄԺԱ ամօք, յամի այրման եկեղեցւոյն Գրիգորի և վտանգաւոր մահու զօրացն Հայոց: - 390. Իսկ ընդ աւուրսն ընդ այնոսիկ սպանեալ էր Ութմանկացն, որ յամուրսն նստէին՝ զՌստոմ Վարաժնունի, որ զտանուտերական պատիւն յայնժամ ունէր զՎասպուրական աշխարհիս. – 332. Իսկ իբրև գիտաց բռնաւորն, եթէ չելին ի գլուխ կարծիքն զոր ի վերայ սրբոցն խորհեցաւ, որպէս գրեալ է, ,,կարծողն և արհամարհողն այր ամբարտաւան է և ոչ ինչ վճարեսցէ,,- 264. Իսկ իբրև ծանուցաւ նմա անլոյծ միաբանութիւն ուխտի ընդ միմեանս Աշոտոյ և Բագարատայ՝ ոչ ինչ յայտնեաց զխորհուրդս չարութեանն, զոր խորհեալ էին ի վերայ նոցա. – 172. իսկ իբրև նա ըմբռնեցաւ, և գիտաց զօրավարն եթէ ոչ ոք այնուհետև յիշխանացն Հայոց մնաց, որ ոչ համագունդ ժողովեալ են առ նա՝ մերկացաւ յայնժամ զպատրուակ կեղծաւորութեանն, զոր սերմանել էր սատանայ ի սիրտ առնն: - 296. Իսկ նոքա թէպէտ և հաւանէին՝ այլ էր և հակառակութիւն մեծ ի մէջ նոցա. քանզի որոշեալ էին պաշտամամբ կռոց ըստ իւրաքանչիւր կամաց: - 156. Կարծելով Վահանայ խոնարհել զորդին իւր յանկանգնելի կործանումն, զոր մեկուսեալ Սամուէլի զհայր իւր Վահան, իբր այն թէ խորհիցին ինչ վասն որոյ եկեալն էին – 106. մանաւանդ զի աւերեալ էր երկիրն յասպատակէ Պարսից, այն ինչ հուպ մեռանելն Երուանդայ և ընդ թագաւորելն Արտաշէսի: - 90. մանաւանդ զի յառաջագոյն /308/քան զմեզ այլոց ոմանց բանակարգեալ գրեալ հաւաքեալ է ի մի շար: - 310. մանաւանդ զի փեսայացուցեալ էր Շապուհ զԳագիկ ի դուստր իւր. – 364 մարդ եմ և պիղծ շրթունս ունիմ, և ի մէջ պղծաշուրթն ժողովրդեան բնակեալ եմ ես,,: - 258. Մի ջանասցի քանզի յԱստուծոյ հաստատեալ է, և բառնալ զսա անհնար է, բայց թէ Աստուծոյ այնպէս հաճոյ իցէ՝ կամք Աստուծոյ կատարեսցին: - 144. մի՛ ասիցէ այլազգին, որ եկեալ յեցեալ իցէ ի Տէր՝ եթէ մերժելով մերժէ զիս Տէր ի ժողովրդենէ իւրմէ,,. – 224 մինչև հարկեցաւ թագաւորն յամենայն ուժով կարողութեան իւրոյ զօրս գումարել յամենայն ազգաց, որ ընդ ձեռամբ իւրոյ տէրութեանն էին հնազանդեալ թագաւորք և թագաւորազունք – 24 Յայնժամ բնակիչք լերինն իբրև տեսին, թէ վարեցաւ իշխանն ի գերութիւն … հասին միաբան բազմութիւնն մեկնակազէնքն Խութայ ի հնարս արուեստգիտութեանն իւրեանց, զոր ի պէտս օժանդակութեան ձմերայնոյ հնարաւորեալ էին: - 190. Յայնժամ տէր Գուրգէն առ /306/ չժուժել սրտին, մտրակեալ զքաջ երիվարն յորում նստեալն էր՝ և եհար զգունդն զձախակողմն Տաճկաց և պատառեաց զոռազմն և դարձոյց զերեսս նոցա- 308. Յաւել և զինչ գրեալն է զվավաշոտ ցանկասիրութեամբ թեւակոխել: -16 Յելս կոյս և ի մուտս որ առ հիւսիսի զհայեցածն

բերէ՝ առեալ էր ի բաժնէ Գագիկ իշխանի – 388. յորում տեղւոջ յառաջագոյն ապարանք պարսպաւորք եղեալ էր Վարդ պատրկի Ռշտունւոյ հայկազնոյ – 394. Նորա խոստացեալ էր առնել դառնալ Աշոտի յիւր բնիկ տէրութիւնն. – 328. նորա լուեալ էր ի պարսկէ ումեմնէ, ի ձորոյն Շատուանոյ, որ էր ընդ դահիճսն, և ի սկզբան վկայութեան մինչ ի կատարումն սրբոյն՝ ի տեղւոջ անդ հանդիպեալ լինէր – 206. նոցա ի մտի եղեալ էր, զի թէ գայցէ զհետ կոչնականացն՝ կալցուք զնա և զօրքն նորա լքանիցին, և դիւրաւ յաղթեսցուք նոցա: - 228. նոցա հանեալ էր ի Գինունի ազգէն, ի զարմէ Մեժեժի Գնունոյ, ի Վասպուրական բաժնէ, նաև Բերկրի բաժին եղեալ էր Վասպուրականի. և դարձուցանէ անդէն առ բերկրացիսն – 382. որ եկեալ էին զհետ նորա ընտանեօք իւրեանց – 238. որ եկեալ էր ընդ զօրսն արքունի ի Գարդայ Պարսիցն – 232. որ ի ժամանակին կալեալ էր զմարզպանութիւն և զզօրավարութիւն Հայոց ի խնդրոյ սրբոյն Սահակայ յերկուց թագաւորացն Յունաց և Պարսից – 116. որ յանուն հաւոյն իւրոյ Սեման անուանեալ էր լեառն: - 16. որ յանուն Փրկչին մերոյ շինեալ էր յիշխանէն Բագարատայ, ի ծախս մեծամեծ գանձուց իբրև Յ հազարաց: - 190. որոց սրտի մտօք ի մանկութենէ զհարկ ծառայութեան հատուցեալ էին ըստ օրինի վայելչութեան հնազանդողաց և հնազանդելոց, ըստ յորդորման հեթանոսաց վարդապետին: - 364. որպէս ասաց Քրիստոս,եթէ ,,ուր երկու կամ երեք ժողովեալ են յանուն իմ՝ անդ եմ և ես ի մէջ նոցա,,: - 250. որպէս և գրեալ է ի մարգարէութեանն Երեմիայի – 196. որպէս և գրեալ է, թէ ,,փակիցէ, և ոչ ոք իցէ որ բանայցէ, և բանայցէ, և ոչ ոք իցէ որ փակիցէ,,: -198. որպէս սահմանեաց Աստուած ի վերայ ժողովրդեանն Իսրայէլի գերելոցն ի Բաբելոն, որպէս գրեալ է ի մարգարէութեանն Երեմիայի, ,,զ-ՀԷ-երորդն ասէ գիտասցես, և խելամուտ լիցիս յելից բանին տալ պատասխանի. մինչև յօծեալն /312/ առաջնորդ եօթներորդ է և եօթներորդք ԿԲ,,. – 314. որպէս Րոբովամ որդին Նաբատայ, որ մեղաւ և յանցոյցն զԻսրայէլ, որպէս գրեալ է ի գիրս թագաւորացն Իսրայէլի – 248. Չիցէ՞ լուեալ ձեր զոր ասաց Սողոմոն, թէ ,,որ հատուցանէ չար փոխանակ բարւոյ՝ չար ի տանէ նորա մի պակասեսցէ,,: - 214. Սոցա անուանք ճանաչին՝ Ատոմ Անձևացի և Մլեահ Վարաժնունի և Գէորգ Բողկացի և Վասակ, և այլք բազումք, որոց անուանք գրեալ են յերկինս: - 266. Սոքա մերժեալք ի տէրութենէն իւրեանց, զոր տուեալ էր Տիգրանայ և Կիւրոսի՝ կէին անկարգաբար զինչ պիտկէն մինչ ի Կիւրոս Շահակեան: - 72. Վայել էր իսկ եպիսկոպոսին Յոհաննու՝ առնուլ զլուծ համանուանն իւրոյ զՅոհաննու Մկրտչի, որ կապեալն էր ի Հերովդեայ և տուեալ ի բանտ: - 250. Վասն զի այլոց գործք մի կամ երկու կամ այլս ևս գործք գործեալ է. իսկ սորայս՝ գերազանցեալ յաճախեաց քան զբազմացն իրողութիւնս. – 302. վասն զի ըստ Պտղոմեայ և Աղէքսանդրի սահմանադրութեանն, կամ թէ մեր Արտաշէսի որդւոյ Սանատրկոյ՝ ի Վասպուրական գաւառացն համար թուեալ է գաւառն այն – 332. Վասն զի իշխանն Մոկաց և իշխանն Անձաւացեաց նուաճեալ էին ընդ ձեռամբ Վասպուրական իշխանութեանն: - 380. քանզի գրեալ է, ,,թագաւոր արդար կանգնէ զաշխարհ, կործանումն է աշխարհի թագաւոր անօրէն,,: - 182. Քանզի և զոստանն Նախճաւան տուեալ էր ի կալուած զյաղթութեանն մանազաւենին Կայսկի: - 382. քանզի էին հնազանդեալք յառաջագոյն ընդ թագաւորութեամբն Յունաց – 142. քանզի յառաջագոյն տուեալ էր զնոսա ի ծառայութիւն քեռ իւրոյ Տիգրանուհեայ կնոջ Աշղահակայ, յասացեալ տեղիս բնակեցուցանելով: - 64. քանզի յետ վախճանի Ասպուրակայ նստուցեալ էր Խոսրովու յաթոռ հայրապետութեան Հայոց զսուրբն Սահակ որդի սրբոյն Ներսէսի. – 112. Քանզի Վարդան անցեալ գնացեալ էր սուրբ վարդապետաւն Մաշտոցիւ առ կայսր Թէոդոս և առ Ատտիկոս արքեպիսկոպոս հանդերձ թղթովք սրբոյն Սահակայ, տանելով ընդ իւրեանց և զգիր և զբառ հայերէն դպրութեան. – 116. Քանզի ասէ, թէ ,,էին ոմանք յելելոց անտի հեթանոսաց, որք եկեալ էին յԵրուսաղէմ ի տօնն, զի երկիրպագանիցեն. – 76. Ի ժամանակին յայնմիկ էր ճոխացեալ պանծալի աթոռակալութեամբ սրբոյն Գրիգորի տէր Քրիստափոր Հայոց կաթողիկոս. - 130. Բայց թէ է՞ր աղագաւ պատմութիւն վկայութեան Վահանայ ոչ է գրեալ ի գիրս պատմագրի՝ ստուգապէս առանց յերկուանալոյ ցուցանեմ քում ուսումնասէր

քաջահմտութեանդ: - 128. և զի ի գնալ Աշոտի թողեալ էր անդ զտիկինն Վասպուրական զՄետայ – 362. և զպատրաստութիւն պատերազմողական մարտի ամրոցին հաւատացեալ էր Յիսէի եղբօր Թադէոսի – 362. Զի որդիքն Աբդռհամանի, որ Կայսիկքն անուանին՝ ապստամբեալ էին ի պետութենէ թագաւորին տալ հարկս և զինուորել որպէս օրէն էր: - 380. բազմեալ էին ընդ Քրիստոսի իբրև զմանկունս առագաստի: - 254. թութիւնս կատարեալ զօրականօքն որ ընդ նմա երթեալ էին յաշխարհէս Հայոց. – 80. և ետու ի ձեռս քո զզօրս իմ հանդերձ զօրագլխովք մեծամեծօք իմովք, յամենայն ազգաց որ ընդ ձեռամբ իմով նուաճեալ են թագաւորազունք – 236. և էր մտեալ սա ընդ արգելականսն ի բերդն – 222. Զի գրեալ է՝ յաւելորդէ սրտի խօսի բերանն – 258. զի ստուգեալ քննեցին՝ միոյ առն երկուս յինքեանց հարեալ ընկեցեալ էր, թող զվիրաւորսն և զկողոպուտ և զձերբակալսն – 234. այլ ես ասեմ քեզ, եթէ Տէր կամեսցի՝ վաղիւ պատելոց է զքեզ պատերազմ քաջաց. - 140. այլ նա ըստ կամս իւր կատարեաց ի վերայ իւր զարենապարտն լինել, որ տալոց է հատուցումն վրիժուց յաւուր դատապարտութեան իւրոյ: - 320. Արդ եթէ Սողոմայեցիքն, որ հրով զվրիժուցն հատուցին փոխարէնս, և դարձեալ տանջելոց են՝ որ բովանդակ չարիւք անդր երթալոց են ո՞րպիսի ակնկալութիւն տանջանաց զանց արասցէ զնոքօք. – 336. որ ի նայն հաւատալոց էին: - 76. և հանդերձեալ աշխարհին պսակելոց է ի Քրիստոսէ, հանդերձ տիկնաւն Հեղինեայ ընդ ամենայն սուրբս Քրիստոսի Աստուծոյ մերոյ. ամէն: - 80. Եւ յաւել գրգռել ի սիրտս իւր արքայ Խոսրով. զի Տէր խստացուցանէր զսիրտ նորա, զի կործանելոց էր զթագաւորութիւն նորա. – 146. զոր եցոյց նմա Հոգին սուրբ՝ որ ինչ առ յապա ժամանակս գործելոց էր – 120 Իսկ Մեհուժան ծանեաւ զինչ պատահելոց էր նմա ի կայսերէ և ի նախարարացն Հայոց, ոչ յաւել դառնալ ի Հայս. – 110. և պսակելոց են ի Քրիստոսէ ընդ ամենայն սուրբս. ամէն: - 324. Միթէ դո՞ւ միայն բնակելոց ես յերկրի: - 330. Ողբացէք բնակիչք կոտորելոցդ, զի նմանեցան ամենայն ժողովուրդք Քանանացւոց, և սատակեցան ամենեքին, որ հպարտացեալ էին արծաթով,,: - 180. Ոչ կամեցար կամօք տալ զանձն ի ծառայութիւն մեզ, այլ տէր և թագաւոր կոչես զքեզ. զգանձն արքունի որ իմ առ քեզ է՝ ծախես, և զայդ ոչ գիտես, եթէ վաղիւ համարս տալոց ես: - 146. քանզի ասեն զկնոջէն, յորմէ նեռնն է ծնանելոց՝ ճանապարհորդել յԵգիպտոսէ յաշխարհն Պաղեստինացւոց, և ցանկացեալ տեսանել զարձան կնոջն Ղաւտայ երթեալ դադարէ անդ հանգստութեամբ. – 158. Քանզի թէ Աստուած կամեսցի՝ տանելոց է սաստկութիւն հողմոյ զզօրութիւն քո իբրև զփոշի,,: - 140. և ի վերայ նորա շինեաց եկեղեցի զհամբարձմանն ի յերկինս ի Հօրն գահակցել աթոռ, և զերկրորդ գալստեանն զյիշատակ ունելով, որ գալոցն է հայրենի փառօք, ըստ հրեշտակացն առաքեալսն զմխիթարականն և զքաջալերականն աւետիս նոցա առբերելով: - 390. որոյ անունն գրեալ է ի դպրութեան կենաց: - 224. և զայդ ոչ գիտես, եթէ վաղիւ համարս տալոց ես: - 146. և երիվարին ընդ վազս փռնգալիր խրոխտանացն փրծուցեալ զնա ի ցաւոցն, քանզի այն ինչ կազդուրեալ էր Գուրգէն ի հիւանդութենէ և ի կրից աշխատութեանցն և ի տառապանաց բանտին: - 320.

ԵՄԱԹ - և ինքն գնացեալ ի Միջագետս՝ հնազանդեցուցանէր ինքեան քաջութեամբ զԵմաթ և զԱրբաթ և զամենայն կողմանս Դամասկոսի և Կիւլիկեայ և զայլ բազումս: - 60.

ԵՄԱԻՈՆ - զոր և ես գիտեմ յաշխարհագրութեանց անտի Պտղոմեայ՝ զԵմաւոն լեառն յարևելս, որ արդարև բարձր է քան զամենայն երկիր, անկոխելի ոտից մարդոց – 48.

ԵՆԻԱՆՈՍ - Եւ առնու Ջաջուռ զդուստր Ենիանեայ կնութեան Սահակայ որդւոյ իւրոյ, որում անուն կոչէր Սմբատուհի: - 76.

ԵՆՈՎՍ - Ենովս լեալ ամաց ՃՂ ծնաւ զԿայիանան: - 26. Եւ են ի թուել մինչ ցայս վայր այսոքիկ. Ադամ, Սէթ, Ենովս, Կայիանան, Մաղաղայէլ, Յարէդ, Ենովք, Մաթուսաղայ, Ղամէք, Նոյ, Քամ, Քուշ, Նեբրովթ որս և Բէլ: - 36. Եւ Սէթ լեալ ամաց ՄԵ ծնանի զԵնովս. – 26.

ԵՆՈՎՔ - Արդ Ենովք լեալ ամաց ՃԿԵ ծնանի զՄաթուսաղայ – 28. Եւ են ի թուել մինչ ցայս վայր այսոքիկ. Ադամ, Սէթ, Ենովս, Կայիանան, Մաղաղայէլ, Յարէդ, Ենովք, Մաթուսաղայ,

Ղամէք, Նոյ, Քամ, Քուշ, Նեբրովթ որս և Բէլ: - 36. Զոր վկայէ ոմն ի սրբոցն, թէ Մարգարէացաւ ութերորդն յԱդամայ Ենովք – 26.

ԵՊԵՐԱՆՔ - այլ և ոչ զծիծաղականս նոցա համբաւեալ քաջութիւն, որպէս կարծեն՝ առանց եպերանաց անցից զխելագարութեամբքն: - 36.

ԵՊԵՐԵԼ - Եւ իբրև կացին նոքա առաջի թագաւորին՝ եհարց հեգնական բանիւք եպերելով լի ամբարհաւաճութեամբ – 242.

ԵՊԻՍԿՈՊՈՍ - Անդ հանդիպեալ լինէր և երանելի եպիսկոպոսն Գրիգոր Ռշտունեաց վսամ. ոչ կարաց իւրայնովքն զերծանել, իբրև յայնժամ առղոթաւ/հավանաբար ,,աղօթել,, բայն է / ի լեառն: - 358. Ապա իբրև վախճան առնոյր կարգեալ եպիսկոպոսացն որ ի Պարսից … միաբան ապա նախարարքն Հայոց եկին առ սուրբն Սահակ – 120. առատապէս հեղեալ զգութ … և ի ձեռն հովուապետին սրբոյն Յովհաննիսի եպիսկոպոսի և ճգնաւոր քահանայի Գրիգորի , որք միշտ զողորմութեանց խնդրուածս վասն ժողովրդեանն տեառն ի վեր առաքէին , զոր օրինակ և հրեշտակն տեառն աղերսէր Աստուծոյ, ասէ – 314. Բայց երանելի հայրապետն Տէր Գէորգ սաստկագոյն քան զտիեզերական կործանմանն առ Նոյիւ բերելով զտրտմութեանն թախիծս, հանդերձ եպիսկոպոսիւն Գրիգորիւ՝ զաբրահամեանն վաղնջուց աղաչանսն ի կործանմանն Սոդովմայ յառաջաբերեալ մարդասիրին Աստուծոյ. – 358. գրէ առ սուրբ եպիսկոպոսն Գրիգոր Ամատունեաց տանն … գտանել զելս իրացն եկեալ հասեալ հինին. – 400. Դարձեալ գրէ և ի կողմն Դերջանոյ, և Խաղտաց ձորոյ բնակիչսն և աշխարհակալ տեարս և առ եպիսկոպոսունսն: - 130. Եւ կոչեալ առ ինքն զեպիսկոպոսն Մոկաց զՅօհան և զեպիսկոպոսն Ռշտունեաց Սահակ և զեպիսկոպոսն Անձաւացեաց Շմաւոն – 122. Ապա առեալ հրաման մեծամեծացն մեր Արծրունեացն՝ գրեն առ Աբրահամ Մամիկոնէից եպիսկոպոս … և ծանուցանեն նմա զոր խնդրէ արքայ: - 132. և զինքն յանձն արար երանելի եպիսկոպոսին և ճգնաւոր քահանային, հանգեաւ բարի խոստովանութեամբ ի հոռի ամսեան, որ օր Ե էր ամսոյն յաւուր ուրբաթու՝ ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր – 254. և զսակաւուց քան թէ յոլովից գրեաց անուանս ի յիշատակարանի անդ զՇահդոսդ, որ թարգմանի արքայասէր, և զԳոհշթասդ, որ թարգմանի ներկագործ ծիրանեաց արքայական զգեստու, և զՇմաւոն եպիսկոպոս, վէմ եկեղեցւոյ Քրիստոսի ընդ նմին և այլ եպիսկոպոսք և քահանայք արք Ճ - 106. Եւ խնդրեալ զդի նորա վաճառականաց՝ պատեցին զնա ի ձեռս եպիսկոպոսին Դաւթի նորուն գաւառի և եդին ի տապանի յեկեղեցւոջն որ ի նմա: - 354. ԵՒ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆՆ Ի ՔՐԻՍՏՈՍ ՏԵԱՌՆ ԳՐԻԳՈՐԻ ԱՐԾՐՈՒՆԻՈՅ ԵՒ ՏԵԱՌՆ ՅՈՎՀԱՆՆԻՍԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԱՐԾՐՈՒՆԵԱՑ ԵՒ ԳՐԻԳՈՐ ՔԱՀԱՆԱՅԻ, ԵՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՆՈՑԱ: - 240. Եւ կացին եպիսկոպոսապետք Հայոց յետ մահու սրբոյն Ներսէսի ոմանք ի զաւակէ Աղբիանոսի եպիսկոպոսի Բզնունեաց, առն պատուականի, Շահակ և Զաւէն և Ասպուրակէս – 108. Եւ յայսմ պատերազմի ոչ միայն երանելի եպիսկոպոսն և ճգնաւոր քահանայն մարտակից էին տեառն Գրիգորի, այլ և զօրք հրեղինաց – 252. Ընդոնեալ լինէր յայնժամ մի ոմն ի Հայոց ազատանոյն տոհմից Վահևունեաց, Ապուսահակ ոմն, եղբայր Սահակայ եպիսկոպոսի ոստանին Նախճաւանու և Մարդպետականի. – 204. Ընդ նոսին և երանելի եպիսկոպոսն Յոհաննէս և ճգնաւոր քահանայ Գրիգոր – 324. Իսկ երանելի եպիսկոպոսին Յոհաննու ընտրեալ իւր առանձնակ միայնաստան տեղեակ, աղօթից միայն պարապեալ, ի բաց կալով յեպիսկոպոսական հովուապետութենէ: - 324. Իսկ երիցս երանելի սուրբքն տէր Յոհաննէս Արծրունեաց եպիսկոպոս և երանելի քահանայն Գրիգոր և տէր Գրիգոր Արծրունի խրախուսեալք յԱստուած, կացեալ յատենի ի մեծ ասպարիսի հոգևորական պատերազմին – 250. կոչեաց զերիցունսն նորոյ կտակիս, զեպիսկոպոսս և զքահանայս, առաջի արկեալ զհաւատոցն կատարելաբանութիւն, զմկրտութեանն լուսաւորութիւն. զառեկելոցն յապաշխարութիւն, զյոյսն յետ վախճանին, զմարդասիրելն Քրիստոսի - 386. Մարկիանոս կայսր թագաւորեալ Յունաց յերկրորդն Թէոդոսի, որ արար զժողովն ի Քաղկեդոն ՈԼԳ եպիսկոպոսաց. առ որով վկայեաց սուրբն Վարդան և Վահան Արծրունի:

- 132. Յետ բառնալոյ թագաւորութեանն ի տանէն Արշակունեաց, և հայրապետութեանն ի տանէն սրբոյն Գրիգորի՝ Ղևոնդ ոմն աշակերտ սրբոյն Մաշտոցի տեղապահ լինէր սրբոյն Սահակայ, և Յովսէփ եպիսկոպոս և Մովսէս և Մեղէս: - 120. որք առանց եպիսկոպոսին Կեսարու ձեռնադրեցան յերանեալ եպիսկոպոսէ – 120. որք լեալ էին յաշակերտութենէ Ղևոնդ քահանայի, որ ի Պարսսն մարտիրոսացաւ ընդ այլ սուրբ եպիսկոպոսսն և քահանայսն: - 74. Վայել էր իսկ եպիսկոպոսին Յոհաննու՝ առնուլ զլուծ համանուանն իւրոյ զՅոհաննու Մկրտչի, որ կապեալն էր ի Հերովդեայ և տուեալ ի բանտ: - 250. վկայեցին վասն Քրիստոսի …բազումք յեպիսկոպոսաց, ի քահանայից և յայլ կարգէ յեկեղեցական գնդէ – 106. Քանզի իբրև լուաւ երանելին Զաքարիայ, եթէ ըմբռնեցաւ Գուրգէն՝ փութացաւ և եկն հանդերձ եպիսկոպոսօք աշխարհին. – 320.

ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ - Գունդ մի հարուստ անցեալ մնացին ի Համբոյրազան աւանի Մարդաստան գաւառի, ուր եպիսկոպոսական աթոռ մարդպետականին յայնժամ փոխեալ դնէր ի Նախճաւան քաղաքէ. – 372. Իսկ երանելի եպիսկոպոսին Յոհաննու ընտրեալ իւր առանձնակ միայնաստան տեղեակ, աղօթից միայն պարապեալ, ի բաց կալով յեպիսկոպոսական հովուապետութենէ: - 324.

ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ - Եւ էր կացեալ եպիսկոպոսապետ Հայոց Զաւէն, զոր յառաջագոյն ասացաք, յետ չորրորդ ամի Շահակայ: - 110. Եւ կացին եպիսկոպոսապետք Հայոց յետ մահու սրբոյն Ներսէսի ոմանք ի զաւակէ Աղբիանոսի եպիսկոպոսի Բզնունեաց, առն պատուականի, Շահակ և Զաւէն և Ասպուրակէս – 108. Իսկ Անատողի զօրավարն Յունաց զՀաւուկ ոմն Կուկոճացի կացոյց /118/ մասինն Յունաց եպիսկոպոսապետ. – 120.

ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏՈՒԹԻՒՆ - Եւ անմիաբանք լեալ ընկեցին զսուրբն Սահակ յաթոռոյ եպիսկոպոսապետութեանն և զԱրտաշիր ի պատուոյ թագաւորութեան. – 118. նորա զՍամուէլն զայն կացուցանէ ի տեղի եպիսկոպոսապետութեանն Հայոց – 118. պատմեաց նոցա զհանգամանս տեսլեանն … զբառնալ եպիսկոպոսապետութեանն և թագաւորութեանն ի տանէն Արշակունեաց, և զկարգապետել անարժանիցն, և զընտրութիւնն սրբոց – 120.

ԵՊԻՍԿՈՊՈՍՈՒԹԻՒՆ - Ընդ ժամանակս Պերոզի արքայից արքայի, ոմն յաղանդոյն Նեստորի Բարձումայ անուն, որ ունէր զանուն եպիսկոպոսութեան, զօրեղագոյնս զնեստորական հերձուածոյն բուռն հարեալ, և քսութեամբ զնախարարացն Հայոց առ Պերոզ վարելով՝ բազում օճիրս արիւնհեղութեան գործեաց: - 130.

ԵՊԻՓԱՆՈՍ - զոր ասէ մի ըստ միոջէ մեծն Եպիփանոս: - 34.

ԵՌ - վարեն ի գերութիւն զբնակիչս քաղաքին ԵՌ զՀրէայսն, և ԺԸՌ զքրիստոնեայսն և զորս ածեալ գերի Բարզափրանայ զՀրէայսն հրամանաւ Տիգրանայ – 104.

ԵՌԱՆԴՆՈՏ - Պղպջաձիգ արտօսր իբրև յեռանդնոտ կատսայէ ի վեր յորձանախաղաց սահին. տարակուսանք անյուսալի շուրջ զինն պարագրին ի վերայ եղելոցն: - 350.

ԵՌԱՇԱՐԺ - Եւս առաւել քան զանդնդականն յուզմանցն բռնալիր հողմոցն զծիրանեգոյն ալիսն, զլեռնաձև կուտակսն և զվիշապաձայն գոչմունսն՝ ևս յաւէտ ահագնակի վրդովմամբ զմրրիկ անձանց ի մէջ եռաշարժ ընթացմանցն, ի հոլովմանց խոհարանի իշխանական սրտին ի ներքս հարկաւորաբար բռնազբօսեալ /350/ ձգեն: - 352.

ԵՌԱՑԵԱԼ - հրախառն տոչորմամբ եռացեալ շուրջ զսրտիւն արիւնն՝ մաղձախառն բերմամբ յապուշ զմիտսն կրթեալ՝ կայր ի մէջ տարակուսի – 180.

ԵՌԱՑՈՒՑԱՆԵԼ - Եւ կայր զյօնսն պռզտեալ, կոկոզաբանէր լի յոխորտանօք, խրոխտայր, եռացուցանէր ի վեր մղէր զդառնութիւն ժահահոտ մաղձոյն չարաթոյն վատախառնութեանն – 242. Իսկ ի շնչել հարաւային օդոյն, եռացուցանելով երկրի ի վեր զջերմային զօրութիւնն, զուարթացուցանելով անդնդական բերմամբն զընդարմացեալ արմատս և զբոյսս ի հիւսիսային սառնամանեաց օդոյն շնչելոյ - 188.

ԵՌՕՐԵԱՅ - Իսկ ի յահեակ կոյս սեղանոյն շինեաց եկեղեցի ի յիշատակ յարութեանն Քրիստոսի յեռօրեայ թաղմանէն վերելեկեալ աւարառութեամբ դժոխոցն – 390.

ԵՍ - ,,ընդէ՞ր, ով աստուածասէր թագաւոր, իբրև ընդ համհարզս և ընդ ստամբակս, իբրև ընդ աննշանս կամ ընդ անընդել վայրագս խօսիս ընդ մեզ – 242. ,,հա՛պա, քաջք Հայոց, և յայսմ ծանիցեն զմեզ և զարիանալն մեր,,: - 328. այլ ես ոչ երկեայց ի ժողովելոց երիցանցդ Հռոմայեցւոց, որ գումարեալ գան ի վերայ իմ: - 138. Առ սա ինձ թուի ասացեալն մարգարէին Ամբակումայ. – 200. Բայց ինձ ոչ դանդաղելի կամ պատկառելի կամ մեղանչելի է զուգակշիռ նահատակելոցն նահատակակից վարկանել զսա և մարտիրոսականաւն զսորայս դրուատել ճգնողական մրցմունս – 300. Բայց քանզի մեր ոչ ոք յայնժամ հանդիպեր ի պատասխանատրութիւնս երանելոյն՝ և ոչ գրել արժանի համարեցաք: - 206. Եւ արդ խնայեալ իմ ի ձեզ, և դուք առանց յապաղանաց և զիս աշխատ առնելոյ ի բաց լերուք յերկրպագութենէն Քրիստոսի, և եղիցեն անձինք ձեր ի գիւտս և կեցջիք. – 246. կարիցես զիշխանս Հայոց կապանօք առ մեզ հասուցանել, մանաւանդ զիշխանն Վասպուրական զԱշոտ՝ քեզ և զաւակի քում տաց զերկիրն զայն ի ժառանգութիւն: - 184. ,,ամենայն ազգք շրջեցան զինն, և անուամբ Տեառն վանեցի զնոսա,, - 136. ,,Աստուծոց պատուական և ամենայն թագաւորաց, տէր երկրի և ծովու, ծնունդ մեծին Արամազդայ Խոսրով թագաւոր. առ Հայրակղոս անմիտ և առ անպիտան ծառայ մեր: - 146. ,,բազում անգամ աղաչեցին զիս բարեկամքն դառնալ, և ես ոչ կամեցայ – 50. ,,բազում անգամ, ասէ, և իմ ստուգեալ զայդ ի հաւատարմաց խորհրդականացն նորա. – 346. ,,բարի՛ է քեզ, թագաւոր Հայոց, ե՛կ այսր զի պսակեցից զքեզ ես սպարապետս,,. – 108. ,,զո՞յ թողութիւն իմոց չարեացն /386/ գործելոց, թողո՞ւ Աստուած զիմ պարտեացն յաճախութիւն. ասացէք ինձ, տուք ինձ պատասխանի,,: - 388. ,,Գրեցի ձեզ, ի բաց կալ յայդմանէ, ուրեմն ոչ կամեցարուք լսել, ես զձեզ ապաշաւեմ, ասէ: - 138. ,,եթէ կամիս կեալ ընդ իս և վայելես ի կեանս աշխարհիս, և ընդունել պարգևս և պատիւս յինէն՝ հաւանեա հրամանի կամաց իմոց և ի բաց լեր ի հաւատոց քրիստոնէութեանդ, զոր պաշտես – 294. ,,Ելեր դու յաշխարհս Հայոց հրամանաւ արքունի՝ առնուլ զհարկս արքունի. մի՞թէ /176/ և հրաման ունիս յարքունուստ, գերել գերփել յաւեր դարձուցանել զաշխարհս մեր: - 178 ,,են ոչխարք իմ, որ ոչ են յայսմ գաւթէ, և զայն ևս պարտ է ինձ ածել այսր, և ձայնի իմում լուիցեն և եղիցին մի հօտ և մի հովիւ. – 224. ,,Ես այսպէս կարծէի, թէ յորժամ ես ընդ թշնամիս ձեր մարտնչիմ՝ դուք յայդմ կողմանէ օգնական ինձ լինիցիք, և միաբանութեամբ բարձցուք ի միջոյ զտիեզերական պատուհասն, զտունդ Սասանայ: - 138. ,,ես եկի խաղաղութեամբ յարքունուստ հրամանէ, և ոչ նման քեզ զապստամբութիւն ի գործ արկեալ. – 330. ,,և ո՛վ տայր ինձ վկայել ի վերայ ճշմարտութեանն և մեռանել վասն անուանն Քրիստոսի, և զարիւն իմ փոխանակ արեանն Քրիստոսի հեղուլ և զմարմին իմ փոխանակ մարմնոյ նորա ի մահ մատնել և զչարչարանս իմ ընդ նորա չարչարանսն խառնել, զի և ընդ նմա փառաւորեցայց. – 290. ,,ընդէ՞ր որպէս մանուկ տղայ համարիս, արկանել առաջի իմ զպատրանս, սնոտի, առասպելաբան, խաբեբայ և պատիր յոյս խոստանալով ինձ՝ հանել զիս ի ճշմարիտ յուսոյն, զոր ի մանկութենէ ի վերայ հասեալ ճշմարտութեանն,,: - 294. ,,Թագաւոր մեծ, իշխան ծովու և ցամաքի, տո՛ւր ինձ զօր յօգնականութիւն և հաստատեա՛ զիս ի տեղի թագաւորութեան հարց իմոց – 136. ,,ի հայրենեացն արտաքս հանեալ էք ի ժառանգութենէ և մերժեալ ի բաժնէ եղբայրական հասէ. զա՞յս ևս բռնազբօսել ջանայք, զոր Աստուած ժառանգեցոյց ինձ: - 330. ,,ի սկզբան թագաւորութեան նախնեաց մերոց, յորժամ ետ Աստուած զաթոռ բազում թագաւորաց ի ձեռս նոցա, և մինչ առ մեզ հասեալ՝ ոչ ոք զօրեաց կալ ընդդէմ մեր, ոչ ի հեռաւոր աշխարհաց և ոչ ի մերձաւորաց: - 198. ,,իսկ եթէ եկեսցէ առ իս գիր յարքունուստ, կնքեալ մատանեաւ արքայի. և իցէ գրեալ ի նմա հրաման՝ գալ ինձ առ քեզ կամ երթալ յարքունիսն՝ ոչ ելից արտաքոյ հրամանաց նորա: - 286. ,,Կաւատ թագաւորն ձեր վախճանեցաւ, և որդի նորա մանուկ տղայ է. բայց արդ ի քեզ հասեալ թագաւորութիւնդ, և ես քեզ տայց զնա – 152. ,,հա՛պա, քաջք Հայոց, և յայսմ ծանիցեն զմեզ և զարիանալն մեր,,: - 328. ,,հրամայեա արձակել արս հաւատարիմս, և ես յորժամ հասից ի դուռն արքունի՝ ի նմին ժամու խնդիր արարից Խաչին, և գտեալ զնա տայց բերել առ քեզ,,: - 154. ,,ձայն իմն

ահաւոր հրեշտակի անկեալ ի վերայ իմ՝ հրամայեաց երթալ պատգամաւոր յազգն իմ, ցուցանել զԱստուած արարիչ երկնի և երկրի. առնուլ ինձ անուն գլխաւորութեան, և զստութիւն հաւատոց որ ի կուռս՝ յանդիմանել և քակտել,,: - 158. ,,մարդ եմ և պիղծ շրթունս ունիմ, և ի մէջ պղծաշուրթն ժողովրդեան բնակեալ եմ ես,,: - 258. ,,միայն, ասէ, զԳագիկ Ապումրուան առ իս ածցես հնարաւորեալ վասն նորա,,. – 350. ,,ո՞վ ոք էք դուք և յորմէ՞ աշխարհէ, և զի՞նչ անուն է ձեր. թերևս արդեօք դո՞ւք էք ապստամբեալքն յինէն,,: - 242. ,,Ոչ, ասէ, վատագոյն մեք քան զՕանարսն եղիցուք, զի և ամուրս հզօրագոյնս և բարձրագոյնս քան զնոսա ունիմք և դիւրափակս՝ առ ի յունել զմուտս կրճիցն. – 276. ,,որովհետև գտի շնորհս առաջի քո, և արարեր մեծարանս երեսաց իմոց, և առաւել քան զամենայն իշխանս Հայաստանեայց և մեծամեծս արքունի զիս նախամեծար և մեծարգի ցուցեր – 218. ,,տո՛ւր ինձ, ասէ, ի գերելոց այտի՝ որչափ և կամք քո հրամայեսցեն,,: - 218. ,,օրհնեալ է տէր Աստուած մեր, որ ուսոյց զձեռս մեր ի պատերազմ, և զմատունս մեր ի ճակատամարտ,, , և որ ի կարգին է: - 252. այլ բազմացան չարիք մեր, զի մեղաք առաջի տեառն Աստուծոյ մերոյ և յետս հարաք զիրաւունս պատուիրանաց նորա – 242. այլ ես ասեմ քեզ, եթէ Տէր կամեսցի՝ վաղիւ պատելոց է զքեզ պատերազմ քաջաց. և ճեթեսցեն ի վերայ քո իբրև զամպս երկնից ի բռնալիր նիզակօք անցանիցեն ընդ մէջ բազմութեան քո իբրև զփայլատակունս հրոյ շանթից: - 140. այլ և ինքն Մահմէտ, մոլեկան հոգւով շարժեցեալ՝ տայ գրել զանուղղայս, զոր մեք ի բազմաց զսակաւս յիշեսցուք: - 164. այլ և ոչ զմեզ ապստամբս կարծիցես գոլ յինքնակալ թագաւորէն և ի քումմէ ճոխութենէդ, եթէ հաւաստեաւ քննիցես: - 212. այլ և ոչ տարաբարձական, որպէս և /48/ արդ ևս ոմանք կարծեն, ոչ գիտելով զասացեալսն ի Տեառնէ աւազակին՝ այսօր ընդ իս իցես ի դրախտին: - 50. Այլ զմեզ գիտես ո՛վ ոք եմք և ուստի՛ և յումմէ, և թէ զի՛նչ անուն է մեր՝ կարի քաջայայտ է քեզ - 242. այլ թէ ,,որ ուրասցի զիս առաջի մարդկան՝ ուրացայց և ես զնա առաջի Հօր իմոյ որ յերկինս է. – 256. այլ հրամայեսցէ մեզ գրել ի Հայս և հարցանել առաջնորդացն Հայոց, և ընդունել պատասխանիս,,: - 132. այլ տանելով մեր առաջի թագաւորաց և դատաւորաց վասն իմ ի վկայութիւն՝ պահեսցուք զբարիոք դաւանութիւն և վկայեսցուք որպէս Փրկիչն առաջի Պոնտացւոյ Պիղատոսի. – 260. Այսպիսիք իմն ինձ թուեցեալ համարեցան այնոքիկ վայրք. այլոց որպէս կամք իցեն: - 52. Անդանօր քաջն մեր Աշոտ զհիւանդութիւնն կեղծաւորեալ ի տեղւոջ օթոցին անկեալ դնէր, մինչ ակն ունէին յառաջանալ ի գործ պատերազմին: - 328. Ապա առեալ հրաման մեծամեծացն մեր Արծրունեացն՝ գրեն առ Աբրահամ Մամիկոնէից եպիսկոպոս … և ծանուցանեն նմա զոր խնդրէ արքայ: - 132. Ապա թէ փութաս ելանել ի կենաց աստի առ զայրուցս կատաղութեան քո և զոսկերս ցրուես յանապատս և լինել կերակուր գազանաց երկրի և թռչնոց երկնից՝ քո կամք լիցին, և ես քաւեալ եմ յարենէ քումմէ – 278. Ապա համբարձեալ զձեռս իւր յերկինս՝ ասէ, ,,յիշեա՛ զիս, Տէր, յորժամ գաս արքայութեամբ քո,,. – 254. Ապա փոյթ ինձ Թովմայի, որ ոչ վերջոտնեալ կալայ ամօթով զյետին տեղին – 122. Առ սա ինձ թուեցաւ ասացեալն ի մարգարէէն – 224. Առ սա ինձ ի ճախ ելանէ քերթողական առասպելն որ ասէ. – 108. առանց ի տանջանս և ի չարչարանս լի դառն հարուածոց մտանելոյ հաւանեալ մեզ և օրէնսդրին մերոյ Մահումաթայ – 244. Ասէ թագաւորն. ,,մի արհամարհեր զթագաւորական բանքս իմ և կորուսաներ /գրքում՝ կորուստաներ/ զկեանս քո – 294. ասէ. ,,զվրէժ արեանն Մուրկայ /140/ առի ի թշնամոյ նորա արդ կա՛մ եղիցի առնել ընդ իս զխաղաղութիւն և արգելուլ զսուր քո յերկրէ իմմէ,,: - 142. ասէ՝ կինս զոր ետուր /20/ ընդ իս, սա ետ ինձ ի ծառոյ անտի և կերայ. – 22. Աստանօր զվկայեալ բանիս՝ և մեք ի ճեպելն փութասցուք – 260. Աստանօր ոչ է ինձ յայտ թէ զի՞նչ կամ ո՞րպէս դիպեցաւ լինել տոհմին Արծրունեաց, կամ ո՞ւր, կամ զիա՞րդ. – 94. Աստանօր ոչ հեշտալիր թուին ինձ պատմութիւն ճառիս շարագրութեան: - 350. արդ ի բաց գնա, այր դու, /222/ ես մեռանիմ վասն Քրիստոսի,,: - 224. Արդ ի հասանել նամակիդ՝ փութով զԳուրգէն և զազգատոհմդ իւր հանդերձ ազատօքդ Վասպուրականի կապեալս առ մեզ հասուսցես: - 236. արդ ընդ արութիւնս իմ վատութի՞ւն խառնիցեմ և ընդ երկիւղիւ մահու

անկանիցի՞մ: - 296. Արդ խօսեաց ընդ իս ի խաղաղութիւն, զպատրուակ կեղծաւորութեան ի միջոյ երկոցունց ի բաց պարուրեալ,,: - 362. Արդ նոցա այնքան, իսկ մեզ ի մասնէ զբոլորն համառօտեալ ի թիւս միակաց լրման, և զբովանդակութեան ամաց ըստ տասանց եօթներորդացն որ թուոցն է լիագոյն Է - 314. բայց եթէ ստութեամբ և թէ ճշմարտութեամբ՝ մեզ չէ յայտ, և զոչն ստուգեալ՝ և ոչ գրել լաւ համարեցայ: - 348. Բայց հրաման քո ճոխութեանդ ձգեաց զիս յայս մեծ ձեռնարկութիւնս, սակս որոյ բացաձգեցայց արտաքոյ շաղակրատոյ լեզուաց փառամոլ ոգոց: - 122. Բայց ապա հաճոյ թուիցի ձեզ՝ ի բաց կալ ի դոցանէ և միաբանել ընդ իս. – 138. բայց արդ եկ ի կողմանցդ յայդցանէ, եկից և ես յԱսորեստան. – 152. Բայց արդ ես զնոյն բարիս խօսեցայց և խնդրեցից ի նմանէ հաշտութիւն և սէր – 144. Բայց արդ որպէս յառաջագոյն հատուցի զարտաքոյ պարսաւանաց զիս ներքոյ գրել, վասն ոչ ոճով զսրայս կարգել դնել ի շարի աստ զշարագրածս, վասն ոչ բաւելոյ զանչափութիւնն ի մի վայր գումարել յանմասնաւորաբար նշանակութեամբ – 308. բայց դու պարտիս յանձն քո ապաշաւել քան թէ ի մեզ. – 138. Բայց ես յանհունս ձգեմ զզարմացմանն յեղանակս, թէ զիա՞րդ բաւել տոկայր, անձանձրանալի բերելով զաշխատութեանն աճմունսն. – 308. Բայց զի մի և մեք անկեալք լիցուք ի նոյն՝ ուսցուք ի յԱստուածաշունչ գրոց - 256. Բայց զի՞նչ աստանօր ինձ ասելի է – 336. Բայց զի՞նչ իսկ խնդրիցէ թագաւորն ձեր յինէն, որ ոչ առնէ զխաղաղութիւն, բառնա՞լ կամի զթագաւորութիւնս զայս: - 144. բայց թէ որպէս եղև կատարումն իրացն մեզ չէ յայտ: - 88. Բայց թէպէտ և երկոքին պատճառք անուանակոչութեանցն պատկանաբար վարկանելի է՝որպէս իմաստասիրացն հաճոյ թուի, այլ ինձ զառաջինն ախորժելի զհաւատարմութիւնն ի մէջ առնուլ: - 72. Բայց մեզ կայ առաջի ասել վասն Ջափրայ և չար գործոց նորա, անգիրս մնացեալ յայլոց, զոր կատարեաց ի վերայ աշխարհիս Հայոց երկայնագոյն ժամանակաւ և անըմբերելի նեղութեամբ ի մերս հանդիպեալ աւուրս, որ էր Հայոց Ց թուական: - 168. Բայց մեք զոյժ հռչակեալսն միայն նշանակեցաք. – 96. Բայց մեք քանզի ոչ երբէք ստունգանեցաք հրամանի թագաւորին և ոչ խափանիչ գտաք հարկաց արքունի, իբրև զապստամբս և զանհնազանդս և զստահակս ի ծառայութենէ տէրանց – 178. Բայց մի ինձ մեղադիր լինիր, ո՛վ ուսումնասէր դու, սակս ոչ զբովանդակ սորա գործս շարել ի ճառս մանրապատումս: - 302. Բայց մի՛ ինձ բասրանս դիցես՝ զօրինականին առ աւետարանականս /378/ դնել համեմատութիւն, զոր և ոչ ես անգիտանամ զմեծն և զփոքրն, զօրինակն և զճշմարտութիւնն: - 380. բայց մինչ էաք յաշխարհին մեր՝ առաջնորդքն մեր ոչ ետուն տեղի ընդունել զասացեալսն ի սահմանին խոստովանութեան: - 132. Բայց քանզի ոչ ոք յայնժամ ընդ գրով զայնոսիկ ներքադրեաց, որպէս օրէն է թագաւորաց՝ և ոչ մեք երկրորդել պատկան վարկաք: - 246. Բանն զմեօք զանց առնէ. և ոչ վայելուչ է լռութեամբ և մոռացկոտ մտօք անփոյթ առնել զայնքան մեծիւ յաղթութեամբ, որ գործեցաւ ի ձեռն զօրացն Վասպուրական ազատանոյն: - 176. Բաւականասցի իմ դուզնաքեայ բանքս առ հերձուածող մոլորութեանց:- 258. Բնաբանաբար /ճիշտը՝բնականաբար/ իսկ հետևեալ մեր կարգի ազգաբանութեանս որ վասն առաջի կացելոցս մեզ փութոյ Ասորեստանեայց թագաւորութեանն – 56. Դարձեալ պիտոյ է մեզ դառնալ առ ի վերագոյնսն, որ նախ քան զպատերազմն Աղձնեաց եղեալ են հանգամանք գործոց ի զօրացն Տաճկաց, և թէ ո՛րպէս եկաց ընդդէմ նոցա իշխանն Աշոտ և վանեաց զնոսա սրով սուսերի: - 176. դու դիմօք մարտի առ իս զօր գումարեա և ել ընդդէմ իմ ի պատերազմ, և ի միասին մխեցից զձեռս ի սոսա և բարձից զսոսա ի պետութենէ Հայոց,,: - 340. դուք աւադիկ զընդդէմսն ինձ խոկայիք միշտ – 244. Դուք աւադիկ ժողովեալ գայք ի վերայ իմ պատերազմաւ. – 138. եթէ ,,եկայք առ իս ամենայն աշխատեալք և բեռնաւորք, և ես հանգուցից զձեզ,, , և թէ ,,որ ուրասցի զանձն իւր վասն իմ՝ գտցէ զնա,,. - 252. Եթէ, որպէս ասացի, ի բաց գնաս յինէն՝ խաղաղութիւն է, և թէ ոչ՝ պատերազմ և կռիւ և ճակատամարտ ... և դու նպատակ՝ և աղեղն իմ խոցոտիչ – 278. Եթէ, որպէս ասացի, ի բաց գնաս յինէն՝ խաղաղութիւն է, և թէ ոչ՝ պատերազմ և կռիւ և ճակատամարտ ... դու ախոյեան՝ և մանկունք իմ յաղթանակ, դու ոսոխ՝ և զօրք իմ դատապարտիչք. – 278. Եթէ,

որպէս ասացի, ի բաց գնաս յինէն՝ խաղաղութիւն է, և թէ ոչ՝ պատերազմ և կռիւ և ճակատամարտ ... քո պատերազմ՝ և մեք յաղթութիւն, քո մարմին՝ և իմ նիզակ, քո պարանոց՝ և իմ սուսեր. – 278. Եթէ, որպէս ասացի, ի բաց գնաս յինէն՝ խաղաղութիւն է, և թէ ոչ՝ պատերազմ և կռիւ և ճակատամարտ ... քո ստացուածք՝ և մեք ժառանգորդք, քո աւար՝ և մեք աւարառուք. դու աւազակ՝ և մեք կողոպտիչք - 278. Եթէ, որպէս ասացի, ի բաց գնաս յինէն՝ խաղաղութիւն է, և թէ ոչ՝ պատերազմ և կռիւ և ճակատամարտ ... դու եղէգն՝ և մեք հուր դիւրաճախ, դու յարդ՝ և մեք հողմք դիւրափուչ – 280. Եթէ, որպէս ասացի, ի բաց գնաս յինէն՝ խաղաղութիւն է, և թէ ոչ՝ պատերազմ և կռիւ և ճակատամարտ … դու ծաղիկ՝ և մեք խորշակ թառամեցուցիչք, դու անդ պտղալից՝ և մեք կարկուտ ապականարար – 280. Եթէ, որպէս ասացի, ի բաց գնաս յինէն՝ խաղաղութիւն է, և թէ ոչ՝ պատերազմ և կռիւ և ճակատամարտ … դու շինուած առանց հիման՝ և ես հեղեղ հիմն ի վեր տապալիչ – 280. Եթէ, որպէս ասացի, ի բաց գնաս յինէն՝ խաղաղութիւն է, և թէ ոչ՝ պատերազմ և կռիւ և ճակատամարտ … դու գէշ՝ զօրքն իմ պատառիչ գազան, որ պատառեն զառագաստ սրտի քո. – 280. Եթէ, որպէս ասացի, ի բաց գնաս յինէն՝ խաղաղութիւն է, և թէ ոչ՝ պատերազմ և կռիւ և ճակատամարտ … դու խաղալիկ՝ և մեք մանկունք, ի ձեռն առեալ զզօրութիւն քո՝ խաղալով խաղամք ընդ քեզ և ամենայն հպարտութիւն ամբարհաւաճութեան քո. – 280. Եթէ, որպէս ասացի, ի բաց գնաս յինէն՝ խաղաղութիւն է, և թէ ոչ՝ պատերազմ և կռիւ և ճակատամարտ … դու երէ վայրի՝ և մեք որսորդք, դու թռչուն՝ և մեք ի բարձանց ի վայր իջուցանեմք և վարմ ձգեալ. – 280. Եթէ, որպէս ասացի, ի բաց գնաս յինէն՝ խաղաղութիւն է, և թէ ոչ՝ պատերազմ և կռիւ և ճակատամարտ … դու վիշապ ծովական՝ և մեք կարթ, ի քիմս քո ի վեր ձգելով զքեզ ի խորոց անդնդոց. – 280. Եթէ, որպէս ասացի, ի բաց գնաս յինէն՝ խաղաղութիւն է, և թէ ոչ՝ պատերազմ և կռիւ և ճակատամարտ … և դու իբրև զեղջերու առանց եղջեր՝ և մեք արծուիք ի վերայ քո, կուրացուցիչք աչաց քոց, և գէշ զքեզ արկանել ձագաց իմոց և աղուեսուց ի ծակս բնակեցելոյ: - 280. եկեալ հասեալ աւուր կորստեան մերձ առ դուրս մեր – 196. Եհարց սաստիւ կամ թէ հրամանաւ տէրութեան իւրոյ, ,,ի բաց լեր, ասէ, ի հաւատոցն Քրիստոսի, և իմ թողեալ քեզ զբազում վնասսն զոր գործեցեր – 290. Ես իսկ առ ընթեր գոլով անվրիպագոյն իրազեկ եղէ բովանդակ նորա հաստատնագոյն առ յոյսն կազմեալ փրկութիւն. – 388. Ես իսկ լուայ յորժամ կարդային զԱւետարանն, թէ ասաց Քրիստոս, ,,որ խոստովանեսցի զիս առաջի մարդկան՝ խոստովանեցայց և ես զնա առաջի Հօր իմոյ որ յերկինս է,,. – 222. ես վաղ անարգեցի զքեզ, և ոչ փոքր ինչ երկիւղ կալայ ի սրտի իմում վասն քո, զի քամահելով ի վերայ քո՝ զզօրավարն քո հանդերձ զօրօքն ի սուր մատնեցի, և զաւար նորա բաշխեցի, /294/ և յերկրորդումն ոչ փոքր նախճիրս համարեցի զօրացն քոց. – 296. երկունք իբրև ծննդկանի ի վերայ իմ հասեալ լինին՝ մատենաւորել զայսր աղետաբեր համբաւուց ցոյցս. – 350. Եւ ամենայն խորհուրդք մեր դիւրաւ կատարեսցին. – 196. և այսրէն եկեալ ցեղապետ մեր եղև: - 48. Եւ արդ մեք, նահապետք ազատաց Վասպուրական իշխանիս՝ Մուշեղ ի ցեղէ Վահևունեաց, Վահրամ յազգէ Տրունեաց, Վահրամ միւս, որ ի թիկնապահ իշխանիս … գրեցաք առ քեզ Բուխայ գլուխ զօրավարաց Տաճկաց և բարձակից մեծ թագաւորին. – 212. և լուան ամենեքեան զառնելն քո ընդ ես՝ մի՛ ընդունայն և դատարկ լիցի սիրելութիւն քո առ իս – 218. և տաց քեզ ագարակս, այգիս և ձիթենիս և սերմանս, զի վարեսցես և հնձեսցես, և մեք սիրով նայեսցուք ի քեզ: - 146. Եւ Ալի էր այր քաջ. ասէ ցնա, արի՛ ելցուք, քանզի են և ընդ մեզ արք բազումք, թերևս լիցի ելք իրացդ պիտանութեամբ: - 160. Եւ ահա դարձեալ ասեմ, չկայ ինչ քո. և զի մի կրիցես զոր ինչ խօսեցայ ընդ պատգամաւորս քո, և աւելի քան որոգել ջանար ընդ մեզ՝ զդոյն ընդունիցիս վտանգաւորս,,: - 280. և ահա հասեալ կայք յատենի առաջի իմ անտրտում և անտխուր երեսօք, որպէս անմեղս և զբարեգործակս, և լի ամենայն կամարարութեամբ մեք, անխիղճ համարձակութեամբ – 244. և ամենեքեան որ պահիցեն զշաբաթս իմ և ոչ պղծիցեն, և պահիցեն զպատուիրանս իմ և կացցեն յուխտին իմում՝ տարայց զնոսա ի լեառն սրբութեան իմոյ – 224. Եւ այնչափ և առաւել քան զսոյն

կազմութեան սպառազէն պատրաստութեանն՝ սաստիկ տարակուսանօք և մեծ երկիւղիւ պակչէին յահէ հայկասիրտ իշխանին և յաղթող նահատակին մեր Աշոտոյ – 210. և անընդունակք լինէիք՝ որ ի մէնջ առաքեցեալքն հազարապետք և վերակացուք աշխարհիս մերոյ և խնամատարք արքունի հոգաբարձութեան գային առ ձեզ. – 244. և ապաշաւանք ոչ սակաւք դիմեցին հոլովեալ ի վերայ իմ. – 378. և առ Տիմոթէոս գրէ, հաւատարիմ գոլ զզօրութիւն հաւատոցն, ասէ, ,,թէ ուրանամք՝ և նա ուրանայ զմեզ. թէ չհաւատամք՝ նա հաւատարիմ մնայ,,: - 258. Եւ ասեն ցթագաւորն, ,,լաւ է մեզ մեռանել վասն անուանն Քրիստոսի, քան վայելել ընդ քեզ. – 292. և ասեն. ,,ահա մեկնեցաք ի մէնջ զզօրսն, և սակաւք են առ մեզ – 226. և ասէ, ,,եթէ աջողեսցին քեզ խորհուրդ մեր, զոր խորհեցաք ի վերայ Հայոց և իշխանաց նոցա, և ըստ ախորժակաց մերոց ի գլուխ ելանիցեն, որ ինչ կամք յօժարութեանց մերոց ըղձանայցեն- 184. և աստի գիտելի է մեզ բարբառն առաջին Եբրայեցի լեալ: - 40. Եւ արդ խնայեալ իմ ի ձեզ, և դուք առանց յապաղանաց և զիս աշխատ առնելոյ ի բաց լերուք յերկրպագութենէն Քրիստոսի, և եղիցեն անձինք ձեր ի գիւտս և կեցջիք. – 246. և արդ մեք զաւակ Աբրահամու եմք, և գիտէք դուք զխոստումնն /160/ որ առ Իսմայէլ հայրն մեր. – 162. Եւ արդ յայտնի լիցի, զի որչափ բաւէ զօրութիւն իմ և իցեմ կենդանի՝ կացից ընդդէմ զօրութեամբ և ուժով տեառն Աստուծոյ, և ոչ տեսից զքեզ սիրով խաղաղութեան. – 278. Եւ արդ քանզի կարգ բանիցս էած զմեզ առ այս խնդիր՝ պարտ է նախ գիտել թէ որով օրինակաւ Քաղդէացւոցն մատենագրութիւնք զթիւ նահապետացն տասամբք համարին թուով ըստ աստուածահրաման գրոցս - 18. և աւերեալ էր զերկիրս մեր ի մտանել և յելանելն իւրում: - 240. և բազում այն էր որ ի մէնջ հարեալ լինէին, քան թէ մեք հարկանէաք – 194. և գունդք ճակատելոցն ելին կացին մօտ առ քաջն մեր Աշոտ և ընտիր զօրավարն Հայոց առ մեծն իշխանաց: - 210. Եւ Գուրգէն երկրորդ հրեշտակս յղէ առ նա զայս օրինակ, եթէ ,,ընդ իս հաստատեա զանզրաւ կապակցութիւն ուխտի խաղաղութեան. և ես ապստամբեցայց յԱշոտէ, և ի միասին բաժանեալ զերկիրս կեցցուք յապահովս,,: - 316. Եւ գրեն թուղթ առ Յամանիկն, եթէ ,,ի մտանելն իմ ի Դուին քաղաք և զհարկս արքունի յիս գրաւել՝ և յանկասկած առեալ զիշխանս Հայոց՝ և եկեսցեն առ իս. – 340. և դաստիարակ առընթեր ունելով զբանն տէրունական … և թէ ,,որ կամիցի կեցուցանել զանձն իւր՝ կորուսցէ զնա, և որ կորոյս զանձն իւր վասն իմ՝ գտցնէ զնա,, - 264. և դաստիարակ առընթեր ունելով զբանն տէրունական, թէ ,,որ ուրասցի զիս առաջի մարդկան՝ ուրացայց և ես զնա առաջի Հօր իմոյ,, -264. և դարձեալ թէ՝ ի գերութիւն մատնեսցի ժողովուրդ իմ, վասն ոչ ճանաչելոյ նոցա զՏէր. – 182. Եւ դարձեալ՝ եթէ յարոյց ինձ Աստուած զաւակ այլ՝ փոխանակ Հաբէլի զոր սպան Կայէն: - 24. և դարձեալ՝ թէ ,,դատաստանս արդա՛ր դատեցարուք, և ողորմութիւն և իրաւունս արարէք, քանզի առ ձեզ են բանք իմ, ո՛վ բռնաւորք,, , ասէ Սողոմոն. – 182. և Դաւիթ ասէ, ,,յոր հաւատացի զնոյն և խօսեցայ,,. և Պօղոս՝ ,,մեք հաւատամք զոր խօսիմքն,,. և դարձեալ Պօղոս՝ ,,եթէ խոստովանեսցիս բերանով քով զտէր Յիսուս, և հաւատասցես ի սրտի քում թէ Աստուած յարոյց … - 258. և դու ջանաս մոլորեցուցանել զիս ի հաւատէն Քրիստոսի: - 222. և դուք զայսքան հատուցումն հատուցանէք ինձ, չիմացեալ ձեր զոր ասաց Դաւիթ – 214 Եւ եթէ ասիցէ, եթէ այլ թագաւոր նստուցից՝ արասցէ զո և կամեսցի և արձակեսցէ և մեք ընդունիմք, ահաւասիկ է տեղի թագաւորութեանս: - 144. Եւ եթէ զքէն արեանն Մուրկայ խնդրէ՝ զքէն արեանն Մուրկայ խնդրեաց Աստուած ի Փոկասայ ի ձեռն հօր իմոյ Հայրակղի. և եթէ երկիր խնդրիցէ՝ եհան Աստուած ի մէնջ և ետ ի ձեռս ձեր: - 144. Եւ եհարց եթէ դո՞ւ իցես Աշոտ. ասէ այո ես եմ. երկրորդեալ և երրորդեալ և զսոյն լուաւ. – 216. Եւ ես զայլովք հայեցեալ բանիւք քամահեալ՝ ուժգնակի կարծիք ի միտս իմ ընթացան առ ի հաւատ ասացելոցս վերջնոյ – 48. և ես ամայացեալ ոչ ինչ փոյթ առնէի, միայն ձեզ զլիանալն սիրելով առ այսոքիւք. – 216. Եւ ես աւասիկ արձակեցից թագաւորին ձերում պատարագս և հրեշտակս հրովարտակօք, խնդրել ի նմանէ զխաղաղութիւն աշխարհի և ընդ իս հաշտութիւն,,: - 144. և ես մի՛ իշխեցից քան զԱրաասխ անցանել յայդկոյս: - 138. և ես տամ նոցա զկեանսն յաւիտենից,,: -

224. և ետու ի ձեռս քո զզօրս իմ հանդերձ զօրագլխովք մեծամեծօք իմովք, յամենայն ազգաց որ ընդ ձեռամբ իմով նուաճեալ են թագաւորազունք – 236. և երդումն արարեալ ուխտ դիցուք ի մէջ մեր երկոցունց՝ խաղաղութեամբ ունել զթագաւորութիւնն,,: - 152. և զազգատոհմ մեր ընդ մեծ նեղութեամբ պաշարէիք և աշխարհի մերոյ աւերիչք գտանէիք և հարկացն եղելոց խափանիչք լինէիք: - 244. և զայն երիս ամս կերակրեալ լինէին սուրբքն ձեռնարուեստիւք իւրեանց, որպէս զնոյն ինքն զաստուածազարդն Պօղոս, թէ ,,զպէտս իմ և որ ընդ իմն էին՝ պաշտէին ձեռքս այս,,: - 252. Եւ զայս Եղկղեսիանոսք. բայց ինձ այսպէս թուէր, թէ աղանդն Եղկղեսիանոսաց վաղուց շիջեալ խափանեալ լինէր ի քաջաց վարդապետացն սրբոց, զոր եղն Աստուած յեկեղեցւոջ. – 254. Եւ զայսոսիկ ոչ վայրապար ինչ եհաս մեզ գրել – 46. և զերծի զիս ի պարսաւանաց բարձրագունից: - 300. Եւ զի առ այսոսիկ փոյթ եղև մեզ քննասիրութեամբ լինել հասու և ոչ զանց առնել – 18. և զի հաւասարութիւն երից ազգացն, այսինքն որդւոցն Նոյի, կարգաւ կանոնեալ դրոշմեալ կան յոլովից գիրս ոչ է մեզ հարկաւոր զնոյն երկայնաբանութեամբ երկրորդել: - 12. և զինքն յանձն արար երանելի եպիսկոպոսին և ճգնաւոր քահանային, հանգեաւ բարի խոստովանութեամբ ի հոռի ամսեան, որ օր Ե էր ամսոյն յաւուր ուրբաթու՝ ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր – 254. և զմտաւ ածեալ զքսութիւնն զոր զեկուցին զԱշոտոյ կորապաղատէ առ Դերանիկն, եթէ ստութեամբ և եթէ ճշմարտութեամբ՝ մեզ չէ յայտ: - 342. Եւ զնախնին մեր Ադամ ոչ ասել առաջին մարդ, այլ այլոյ ումեմն որդի Շուռելայ, արըռտաբոյծ ուղտուց, զզուեալ յանծանօթ /գրքում՝յանծանոթ/ աշխարհի և անհաւատարիմ յայնմ գտեալ՝ հալածեալ եղև կնաւ իւրով ի միջոց երկրի – 48. Եւ զոր ոչ հաւատարմանայ մեզ՝ և ոչ գրել կարևոր համարեցայ: - 100. Եւ զոր ինչ ոչ իմացեալ մեր՝ և ոչ գրել արժանի վարկաք, բայց միայն զի բարձրագոյնք և նախապատիւք ի թագաւորաց անտի էին: - 96. և զորդիս ձեր և զմանկունս տեսանելով ի գութ խանդաղատանաց ի գիրկս իմ ընդունէի ընծայիւք մեծաւ զգուանաց, իբրև զառ ի յինէն ծնեալս: - 216. և զօր մահուան սրբոյն ամենայն Ասորեստան տօնախմբեալ մեծաւ ուրախութեամբ ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր - 254. և ընկա՛լ օրէնս և հաւատս արժանի կենաց և գովութեան ի մեծ արքայէն և ի մեր իշխեցող հրամանակատար թագաւորին հնազանդութենէ: - 204. և ի դիմաց ձերոց երևի, զի զօրութիւն բազում գոյ ի ձեզ, զի այդչափ վնասս գործեալ է ձեր առ իս - 244. և ի ձէնջ խնդրեցից երիս ինչս, և լուարուք ինձ – ի բաց արարէք յաշխարհէ զսուր և զհուր և զգերութիւն, և յերիցդ օգուտ գտանէք. – 144. և ի մատնելն մերում լարօք հնգետասան՝ հաւք երկու պատահեցին մեզ – 50. և ի մեր կար տաժանմամբ ի խոյզ և ի խնդիր ելեալ զհաւաստին գտանել – 12. և իբրև հուր ընդ եղէգն ընթացեալ՝ այնպէս հասեալ ի վերայ մեր իբրև զմարախ, իբրև զջորեակ և իբրև զթրթուր խառնիճաւն /238/ հանդերձ – 240. Եւ իբրև ետուն զթուղթն կարծեցեալ իբրև յերեսաց արքայի՝ ,,ընթերցիր զայդ, ասէ, մի՛ ինչ ընդ մեղադրութեամբ արկաներ զիս, և կարծել նենգութեամբ գնալ առ քեզ և դրժել ինչ քեզ և ստել երդմանց /236/ մերոց. – 238. Եւ իմ զհետ երթեալ բանից նորա հարցանէի՝ ո՞ւր ուրեք ասէք լինել զերկիրն զայն անծանօթ. – 48. և իմ թողեալ ձեզ զչարիս ապստամբութեանն ձեր, վայելեսջիք ընդ իս և տիրեցէք աշխարհին ձեր,,: - 246. և իմ խնայել ի ձեզ ոչ արարից զրաւ կենաց ձերոց ըստ արժանի ապիրատ գործոց և վնասուցն, զոր յանցեայքն առ իս դուք. -244. Եւ ինձ ի վերայ տրտմականացն դէմ եդեալ առ կատարելագոյն և առ անզուգական անհամեմատ խնդութիւնն դեգերել, առ հոգևորական ուրախութիւնսն ընթանալ յետ մարմնական տրտմականացն յաճախութեանցն: - 386. Եւ իշխանքն մեր ստացան ճոխագոյն հոյակապ անուն ի մէջ Հայաստանեայց – 336. և խոստացեալ պատարագընկալին՝ ոչ ևս զնոյն հատուցանել երկրի ուխտ յաւիտենական հաստատեալ՝ զաղեղն իմ եդից յամպս, որ է ծիածանդ – 32. Եւ խօսէր ընդ նոսա սաստիկ և ահագին դատաստանօք և սպառնալեօք, թէ ընդէ՞ր և դուք ոչ մեռարուք ի պատերազմին, քան թէ ելեալ փախստական գնացէք գալ առ իս և տալ համարձակութիւն ծառայի իմում ի յայսքան վնաս. մի՞թէ արդեօք զԽոսրով մեռեալ կարծէիք,,: - 150. և կալցուք ուխտ խաղաղութեան /136/ ի մէջ մեր երկոցունց, և անշուշտ լիցի այս երդումն և

պայման ի մէջ մեք և որդւոց մերոց յետ մեք թագաւորելոյ,,: - 138. և կամեցեալ իմ պատմել և ձեռնարկել տեսանել ի ձեռն ծառայից, ուր էր երջանկացն վայր - 50. և հայր քո Վասակ խորհիցի ինչ առ արքայի, և աղմուկ և շփոթ ինչ յուզիցէ հայր քո, որպէս թէ զապստամբութեան ինչ խորհել կարծիս զմէնջ առնուցուն: -114. և հնախօսս շարագրական մատեանս և ի բազում վէպս պատմութեանց անցեալ գրեցի, որ ինչ բաւականանալ ձեռնհաս եղէ, սկսեալ յԱդամայ մինչ առ մեզ հասեալ ժամանակացս գիւտ: - 12. և հրաման հարկեցուցանող ճոխութեան քո ստիպէ զմեզ, ճեպել փութալ առ գիւտն հանդիսանալ և կարգել ոճով զփափագելին յայտարարական գրով, դրոշմել կանոնել ի գիրս աստ – 12. և մանաւանդ զի հարկ փութոյ եղև մեզ գիտել զպայազատութիւնս երանաց տիրեցելոց մեր աշխարհի և որ յառաջ քան զնոսա թագաւորք Ասորեստանեայց, որդի /34/ ի հօրէ առեալ մինչև ի Սենեքարիմ արքայ, որ առ Եզեկիայիւ Երուսաղէմի արքայիւ եղեալ ազգապետ տանս Արծրունի: - 36. և մատնեաց զմեզ Աստուած ի ձեռս քո. – 242. Եւ մեր անտես արարեալ զգործս վնասուց ձերոց, զոր մեղայք մեզ, և լիցին անձինք ձեր ի գիւտս, և կեցջիք և տիրեցէք աշխարհի և տանց ձերոց, դուք և որդիք ձեր – 244. Եւ մեր ընկալեալ և հաւատացեալ ճշմարտութեանն՝ և ոչ կարեմք փոխանակել զճշմարտութիւն ընդ սնոտի, առասպելաբան և կարկատուն, ստայօդ և պաճուճազարդ մոլար ուսմանդ ձերոյ: - 246. Եւ մեք ահա անփոյթ այդմ ամենայնի արարաք, զի յայտնի լիցի սէրն և գութ խնամոյն, զոր ասեմք ունել ընդ ձեզ: - 244. Եւ մեք այժմ զկարգն յառաջ վարեսցուք. Կիւրոս. Վարգէն. Վահան. Շամբիթ. Ջաջ. Ջաջուռ: - 74. Եւ մեք զայլս ի բանիցն առասպելականաց և որ անպատճառ սոյն է ասացեալ ըստ նոցայցն արժանաբանութեանց առ ի յեղծումն առցուք. – 52. Եւ մեք զկարգ պատմութեանցս մասնաւորաբար և համառօտապէս յառաջ վարեսցուք – 78. և մեք զպատմողականն համառօտաբար յառաջ վարեսցուք հարկաւորութիւն: - 302. Եւ մեք հետևեալ Աստուածաչունչ գրոց՝ պահեսցուք անբիծ զհաւատս սրտից, և մաքուր զխոստովանութիւն շրթանց, ըստ սրբոյն Պօղոսի վերաբերեալ զօրինականն – 258. և մեք ոչ եմք ապստամբք ի քումմէ ինքնակալ թագաւորութենէդ. – 242. և մեք տացուք քեզ զհաւս հարկացն և հաճեսցուք զմիտս քո – 178. և մի յանխնայ ասպատակելով յաւեր դարձուցանես զերկիր իմ,,: - 178. և միաբան զաղաղակ բարձեալ ասէին, ,,Աստուած, յօգնել մեզ նայեաց, և Տէր, յընկերել մեզ փութայ,, և որ ի կարգին, ,,զի վասն քո մեռանիմք զօրհանապազ, համարեցաք որպէս զոչխար ի սպանումն,,: - 266. Եւ մինչդեռ զայսքան և զայսօրինակ մարտն գրգռէր՝ ահա յանկարծակի հասանէր քաջն մեր Աշոտ. – 174. և նա ասէ՝ զԱստուած արարիչ երկնի և երկրի պատմեմ, և անարգեն զիս սպառնալեօք: - 160. և նա երթեալ առանց մեր հրամանի թագաւորեաց, և զմեր գանձս մեզ ընծայ մատուցանէ, ոչ գիտելով եթէ համարս խնդրեցից գանձիս այսմիկ, և ոչ դադարեցից մինչև առից զնա ի բուռն իմ,,: - 142. և նախ քան ընդ պատժական տանջանաւոր խոշտանգանօք արկանելն զմեզ՝ բանիւք քո իբրև քարամբք հարեալ զմեզ՝ շտապ տագնապի ի վերայ արկանես թափել զոգիս մեր: - 242. Եւ նորա առ ահն պակուցեալ, ասէ. հայր իմ, խնայեա յիս. և այլ ոչ զօրեաց բարբառել ինչ: - 320. Եւ նոցա ձայն բարձեալ ողորմագին պաղատանօք առ Հայրակղոս, եթէ ,,աստուածասէր և բարերար տէր, արա/գրքում՝ ապա/ ի վերայ մեր ողորմութիւն, թէպէտ և չեմք արժանի ողորմութեան,,: - 150. Եւ ոչ անվկայ բանս, որպէս վերագոյնն գրեալ է մեր զդերահատուցականս սորա, վկայութեամբ մարգարէական տառիցն, որպէս և ի պատահմանէ իրացն ճարտար գիտեն՝ որք են ի ժամանակս յայսոսիկ մնացեալ յայն ժամու անդ հանդիպելոցն: - 262. և ոչ են կամք իմ փութալ պատմել ընդ գրով փակել զկործանումն տերանց իշխանաց մերոց - 240. և ոչ մեք գրել զմտաւ ածել ջանասցուք. – 68. Եւ ոչ ոք այսքան աղէտս տարակուսանս հասոյց ի վերայ մեր և ի վերայ ազգի և զօրաց և զօրավարաց մերոց, որչափ գործեաց Աշոտ իշխան Վասպուրական: - 198. և որ խոստովանեսցի զիս առաջի մարդկան՝ խոստովանեցայց և ես զնա առաջի Հօր իմոյ որ յերկինսն է,,: - 256. և որպէս պատմեն զնմանէ՝ զի դարձաւ յետս յԱստուծոյ և դարձոյց զերեսս իւր ի ճշմարիտ դաւանութենէ յերկրպագութենէ

Աստուածորդւոյն, որպէս ասաց՝ դարձուցին յիս զթիկունս և ոչ զերեսս իւրեանց. – 248. Եւ որք ոչ այսոցիկ նման՝ լուան ի Տեառնէ՝ մի մնասցէ ոգի իմ ի մարդկանդ յայդմիկ յաւիտեան, վասն լինելոյ դոցա մարմին. այսինքն մարմնասէրք և ոչ հոգիասէրք: - 30. Եւ ուժեղացեալ ղաշիկն քաղաքային ի վերայ Մուսէի զօրուն, մինչ ածին արկին զբուն բանական ուր և Աշոտն մեք թուէր գոլ խօթացեալ. – 328. Եւ սրբոյ վարդապետին մեր Եղիշէի, որ յայնմ ժամանակի ի Մոկաց բնակէր աշխարհին՝ եկեալ առ նա Բարծումայ, խնդրեալ զպատմողական գիրսն Հայոց, զոր գրեալ էր հրամանաւ սրբոյն Վարդանայ. – 130. Եւ վազէր ընդ բանակն, կանչէր, հնչէր, շարժէր զձեռնն և ասէր, ,,ես քրիստոնեայ եմ, քրիստոնեայ եմ,, - 224. և տեսանելով մեր զխնամարկութիւն բարի կամաց քոց ի վերայ աշխարհի, և զսէր երախտեաց որ առ մեզ՝ յօժարագոյնս եղիցուք և մեք մտերմութեամբ ծառայել և փութով մեծաւ կատարել զհրամայեալսն ի քէն,,: - 186. և Փրկիչն՝ ,,եթէ ոք ամօթ համարեսցի զբանս իմ,,: - 260. և ես իսկ տեղեկացեալ գիտացի ի բազմաց, յայնցանէ որ Շախրիքն կոչին. – 48. զերծեալ ի բանտէն յոր տուանն՝ և գան հասանեն յերկիրս այս մեր, բերելով զաւետիս արձակման գերելոցն – 324. զի սուսեր մերկ ի ձեռին ունի, և միայն առանձին գայ զհետ մեր – 230. զի ,,ժողովուրդս այս շրթամբք պաշտեն զիս, և սիրտք իւրեանց հեռացեալ մեկուսի են յինէն,,. – 246. զի ,,ժողովուրդս այս, ասէ, շրթամբք իւրեանց պատուեն, և սիրտք իւրեանց հեռացեալ մեկուսի են յինէն,,: - 256. Զի ահա ես զարթուցանեմ ի վերայ ձեր զազգ դառն և զերագ, որ գնայ ընդ լայնութիւն երկրի, ժառանգել զխորանս որ ոչ իւր են, ահեղ և երևելի: - 200. զի ահա հասեալ է պատրաստութեամբ Տէր ի վերայ մեր, որպէս գրեաց Մովսէս: - 196. զի ասաց զօրավարն Աղուանից, եթէ ,,մի՛ կարծիցէ ոք զիս ապստամբ գոլ ի թագաւորէն և վասն այնր հարկանել զզօրդ Ասորեստանի,,. – 286. զի ասեն, թէ նոքա ի միջոյ բառնայցեն՝ ոչ ոք կարասցէ կալ ի կայի իւրում ունել զդէմ մեր: - 184. զի գործ մի գործեմ ես յաւուրս ձեր, գործ որում ոչ հաւատայցէք, թէ ոք պատմեսցէ ձեզ: - 200. զի ես տաց ձեզ բերան և իմաստութիւն, որում ոչ կարիցեն կալ հակառակ կամ տալ պատասպանի ամենայն հակառակորդքն ձեր,,: - 204. զի և զմեծութիւն ընչից, որ ի գանձս իմ՝ ամի ամի յաւար տալով՝ զուարթամիտ սրտիւ ինձ համարէի զյափշտակութիւն տան իմոյ որ ի ձէնջ և առ ձեզ - 216. զի և որք յոյժ ատեցողքն են մեր և թշնամիքն՝ տեսցեն և յամօթ լիցին, և բարեկամքն և սիրելիքն յոյժ ուրախ եղիցին,,: - 218. զի զԱշոտ և զեղբարսն իւր փութով առ մեզ հասուսցես: - 236 զի թէ ես յաղթեցից՝ երդուեալ ի մեծ աստուածն Որմազդ և յարեգակն և ի լուսին և ի հուր և ի ջուր և ի Միհր և յամենայն աստուածս՝ զի ձեզ տուեալ լիցի թագաւորութիւն Հայոց. – 138. Զի թէ իջանիցես յանդունդս ծովու՝ ձգեցից զցանցս իմ և ըմբռնեցից զքեզ. և ապա տեսանիցես զիս այնպէս՝ որպէս դու ոչ կամիցիս,,: - 146. զի թէ կարացից հարկանել զթշնամին իմ և կանգնել զթագաւորութիւնն իմ՝ ես եղէց քեզ որդի հնազանդութեան - 136. զի մեք լիցի ժառանգութիւն նոցա. – 184. զի մի յերկարաձգեալ զդեր հատուցական բանիս՝ յետնեալ գտցուք յառաջիկայ մեզ գրաւորութենէն, որ սակս պատմութեանցն են հանդէպք: - 260. զի ոչ է ժամ մեզ զներբողականօքն զդեգերումն առնել, զպատմողական զրուցատրութեան կարգաւն զանց առնել: - 78. զի ոչ իսկ է կարողութիւն լռութեամբ ծածկել թաքուցանել անյայտ առնել զանհուն և զանբաւ վիշտս աղէտս եկեալ հասեալ մեզ: - 240. զի տուն իմ տուն աղօթից կոչեսցի ամենայն հեթանոսաց, ասաց Տէր,,: - 224. զիշխանս և զտեարս կողմնակալս և զկուսակալս աշխարհին, զազատս և զազատորդիս փութով առ մեզ հասուսջիք կապանօք – 198. Զծառայս իմ պատրես, և զզօրս աւազակաց ժողովեալ՝ ոչ տաս ինձ հանգչել, այլ հանապազ պատրաստիս ինձ ի պատերազմ, և ասես վստահանալ յԱստուածն իմ: - 146. զշրթունս մեր մաքրեսցուք ի մաքուր խոստովանութիւն հպելով և զմիտս մեր սուրբ պահելով ի հաւատս ճշմարիտս. – 256. զոր ժողովեալ պահեալ և կնքեալ ունէր յօր հատուցման վրիժուց՝ հատուցանել մեզ ըստ գործս մեր, ի հարկանել զբարի զոտս մեր. – 196. Զոր յառաջ մատուցեալ ասացից ըստ կարգի, թէպէտ և ոչ խնդամիտ յօժարութեամբ՝ սակայն ակամայ և ի հարկէ ճառագրեցից զբացումն դրան աստուածասաստ

բարկութեան ի վերայ մեր – 196. Զոր /336/ և ես ոչ արհամարհելով այպանեմ զզղջմանն և զապաշաւանացն, զի ,,որ կարդասցէ զանուն Տեառն կեցցէ,,: - 338. զոր ես ոչ հաւանիմ ասել ի դիւաց. – 50. զոր և այլուր ասէ՝ կենդանի եմ ես Տէր Տէր - 30. զոր և ես գիտեմ յաշխարհագրութեանց անտի Պտղոմեայ՝ զԵմաւոն լեառն յարևելս, որ արդարև բարձր է քան զամենայն երկիր, անկոխելի ոտից մարդոց – 48. զոր և երանելին Կորիւն, ուսումնակից Մովսէսի և աշակերտ սրբոյն Մեսրովպայ՝ յիւրումն ստուգաբանեալ պատմութեան զայսոսիկ մեզ հաւատարմացուցանէ: - 122. Զոր և մեր ըստ հրամանի քում, Գագիկ զօրավար Հայոց և Վասպուրական իշխան, ջան յանձին տարեալ ընդ համառօտութիւն զրուցատրութեանցն անցեալ – 74. Զոր և մեք ակն ունիմք և քեզ զսոյն զայս կամել – 186. զոր մեք գիտեմք յետ ջրհեղեղին եղեալ գիր: - 36. զոր մեք ոչ յաւելցուք այժմ յառասպելս նոցա յամել – 32. Զոր մեք սակաւուք այժմ յիշատակեալ զազգաբանութիւն բնաւին մարդկութեան ի նահապետացն առաջնոցն. – 34. զոր ոչ է ժամ մեզ պատմել - 274. զոր սարսափեմ և հիացմամբ մեծաւ յապուշ կրթին միտք իմ ընդ ժուժկալութիւն այնքանեաց բազմահնար մեքենաւոր չարչարանաց. – 106. զօրս գումարէիք, այրուձի կազմէիք, մարտ և պատերազմունս գրգռէիք, ճակատ դնէիք և զզօրս մեր ի սատակումն սրոյ մատնէիք – 244. ընդ ակամբ հայելով, թէ գուցէ ճողոպրեալ ելանիցէ ի ձեռաց մերոց, կամ ի գիշերամարտս յանկարծ հասանիցէ ի վերայ մեր մեծամեծ ոճիրս գործիցէ: - 202. Ընդ ժամանակսն ընդ այնոսիկ մինչ ճոխացեալ մեծամեծս փքայր Ջափրմոթոքլ ի վերայ քրիստոնէից, որպէս Սենեքէրիմ նախնին մեր ի վերայ Երուսաղէմի և ժողովրդեանն Իսրայէլի՝ յեղակարծում հասեալ ի վերայ նորա որդին իւր Մոթէին սպան զնա – 318. ընդ որս էր և քաջն մեր Աշոտ ախոյեանայարձակ զօրութեամբ և ելեալ զհետ արքունի զօրուն. – 328. ըստ այնմ զոր մարգարէն Եսայի ասաց, ,,յաւուր յայնմիկ բուռն հարկանիցէ այր զեղբօրէ կամ ազգակցէ իւրմէ և ասասցեն՝ լեր մեր իշխան, և կերակուր մեր ընդ քեզ լիցի,,. – 298. թուի ինձ թէ և զարդարն Հաբէլ ի սոյն շարի կարգեալ համարեցաւ. – 26. ի բազում ժամանակաց լեալ թագաւոր նախնեաց մերոց և մինչ առ մեզ հասեալ – 244. ի կոր կործանման կացեալ Խոսրով մեր թագաւոր, և ջանայր առնուլ զվրէժ մահու հարազատին իւրոյ, թագաւորին Արտաւանայ, զոր և առնէր իսկ – 92. ի ձեռս մեր է հոգաբարձութիւն աշխարհիս – 212. իբրև լուայ զայս դողդոջումն և սարսափումն զիս կալեալ յահէ յերկիւղէն եղելոյ. – 52. Իսկ սպառնալիք քո և չարչարանք, զոր ասես ի վերայ իմ հասուցանել՝ խաղ մանկտոյ կամ զառանցելոց թուի յաչս իմ, և բանք քո նոյնպէս, որպէս առն անմտի և խելագար և ցնորեալ ծերոյ,,: - 290. Իսկ առ մեզ ծանուցեալ զոր ինքն ասաց, թէ Քրիստոնեայ եմ, ըստ այնմ թէ ,,ծառայի իմոյ կոչեսցի անուն նոր, որ օրհնեսցի վերայ /ճիշտը՝ի վերայ/ երկրի,,՝ գրեցաւ յիշատակարանս սրբոյն: - 224. Իսկ առ մեզ հասին զրոյցքս այս ըստ մնացորդաց պատմագրացն առաջնոց, ի Մամբրէէ Վերծանողէ և ի նորուն եղբօրէ Մովսէս կոչեցելոյ, և միւսումն Թէոդորոս Քերթող – 74. իսկ կինն ճիչ բարձեալ ասէ. ,,առ թագաւորն հասցէ գոյժ իմ,, , շրջելով ընդ բանակն հոլանի, զոր չէր օրէն տաճկական ազգի կանանց, բայց ոչինչ օգնեաց. – 272. իսկ մեք աստուածեղէն գրոց հետևեալք՝ ոչ յօտարաց աստի հաստատեմք զճշմարտութիւն, օ՛ն անդր. – 54. Իսկ ոմանք ի պատմագրաց ասեն, թէ և դուստր Նոյի և ճարտարապետ նաւին կնաւ և որդւովք և կարևոր բարեկամօք. (տապանի մեջ են մտել) որ և ինձ հաւանականք այսոքիկ թուին. – 30. Իսկ տէր Գրիգոր ի մէջ մարդակերպ գազանաց ի ժողովս խուժադուժ բարբարոսաց բնակէր, որ ևս չար քան զթունաւոր գազանս են առ մեզ – 252. Կաղղիսթենէս, իմ բարեկամ, խրատ ետ ինձ մտանել հանդերձ բարեկամօք Խ, և մանկամբք Ճ, և զինուորօք ՌՄ միայնովք: - 50. Կինն դարձեալ ճիչ բարձեալ ասէ. ,,վասն իմ սպաներ զտէրն իմ. ես ոչ վայել եմ քեզ կին, այլ մեծի թագաւորին,,. – 272. հազար ամ անսացեալ իմ քեզ, արդ դու ինձ անսա: - 46. Հաւաստիս այս մեզ Եւսեբիոս Կեսարացի, Յուլիանոս Աղիկառնացի՝ ստուգաբանեն զթագաւորս Ասորոց ի զաւակէ Սեմայ զաճմունս առնել, որպէս ի կանոնեալ սահմանէն իմանալ: - 14. ձայն բարձեալ արտասուալից առ Դերենիկն, և զսուսեր մերկ ի ձեռին ունելով, և վաղր և սակր մի՝ ասէ.

,,որդեա՛կ իմ Դերենիկ, ողջոյն քեզ, ողջոյն քեզ, ողջոյն քեզ. ես ելի գնացի ի յաշխարհն Յունաց,,: - 320. մանաւանդ զի յառաջագոյն /308/քան զմեզ այլոց ոմանց բանակարգեալ գրեալ հաւաքեալ է ի մի շար: - 310. մեղք մեր արարին և ոչ քաջութիւն ձեր: - 144. մեք ոչ ի բաց կամք ի սիրոյն Քրիստոսի և ոչ մեկնիմք ի կենացն յաւիտենից և ոչ լինիմք ժառանգորդ յաւիտենական տանջանացն,,: - 292. մեք տացուք զԱշոտ ի ձեռս քո առանց զինու և մարտից և ճակատուց կազմութեան, և մի ինչ յայնոսիկ աշխատ լինիցիս. – 212. մի գուցէ մատուցեալ առ Արտաշիր ոմանց սուտակասպաս չարախորհաց կեղծաւորութիւն իմն զմէնջ առնուցուն – 114. մի գուցէ ոչ առնելով իմ զոր խնդրեն՝ առ կայսր հատուածեալ անկանիցին նախարարքն, հարկել և զինաւորել կայսեր: - 118. մի՛ ասիցէ այլազգին, որ եկեալ յեցեալ իցէ ի Տէր՝ եթէ մերժելով մերժէ զիս Տէր ի ժողովրդենէ իւրմէ,,. – 224. Մի՞թէ և այժմ ոչ գիտիցես, թէ զամենայն երկիր զծով և զցամաք ինձ հնազանդեցուցի. արդ զԿոստանդնուպօլի՞ս միայն ոչ կարիցեմ բերել: - 146. մի՞թէ ոչ կարէին Հոռոմք սպանանել զնա, և բառնալ զթագաւորութիւնն Պարսից ի ժամանակի, իբրև ետ Աստուած զսա ի ձեռս մեր. այլ արարին ի վերայ նորա ողորմութիւն: - 144. միայն թէ ընդարձակեսցես մեզ և տոհմի մերոյ, բնակաց երկրի մերոյ՝ մնալ յիւրաքանչիւր տունս բնակութեանց կալ խաղաղութեամբ – 212. միթէ զծով իբրև զցամա՞ք համարիցիք, մարտնչել ի սմա ընդ մեզ. – 144. մինչև եկին հասին ի վերայ մեր մեծամեծ չարիքս այսոքիկ և աննկանգնելի գլորումնս – 182. Մշկանս այս փոխանակ Արտաշրի մեր թագաւորի մտեալ ունի զաշխարս հրամանաւ Վռամայ Պարսից արքայի: - 118. Յայնժամ խորհուրդ միաբանութեան ի մէջ առեալ ամենեցուն նոցա ասեն. ,,թէպէտ և ի թշնամեացն ապրեցաք՝ սակայն ի ձեռաց դորա մեզ չիք ապրել. արդ եկայք իմասցուք ինչ,,: - 150. Յայսմ վայրի ոչ մտադիւր ախորժակօք գրեմ զճառս պատմութեանս, որ տրտմականքն, քան թէ ուրախականքն յառաջանան տիրել ինձ: - 384. Յապուշ կրթին միտք իմ զմտաւ ածել զաղետից, խորհրդածել գրել յիշատակարանս. լքեալ լինին ընթացք ձեռացս առ կորովութիւն գրաւորականիս. – 350. Յաւէտ խրախճանութեամբ բուռն հարկանել ախորժելի է ինձ զպատմութենէ քաջատոհմիկ և բարեփառ բարեյաղթ նահատակէն , զԳուրգինայ ասեմ – 300. յերկրորդն հարկ է մեզ զոճն կանոնել, որ յետ Նոյի և անդր ազգացն բաժանմունք յառաջ խաղան, ըստ ցեղից ցեղից ի կարգ անկեալ աշխարհաբաժին ցեղակարգութեամբ. – 12. յղեաց առ զօրավարն Ժիրաք, ասէ, ,,փութա՛ ի հանդիպումն իմ,,. – 272. Յղէին պատգամս առ որդիսն Իսմայէլի և ցուցանէին զմտերիմ հարազատութիւն, թէ ,,որդիք Աբրահամու եմք մեք և դուք, եղբարք. պարտ է ձեզ գալ յօգնականութիւն մեզ, և առցուք զերկիր ժառանգութեան մերոյ,,: - 156. Նա և զանուանս նոցա և զթիւ ժամանակացն այլափոխս ետուն մեզ, թերևս վասն շփոթեալ և հակառակասէր ազգին – 168 Նոքա պատասխանեալ ասեն. ,,վասն զի մեք ի պարսկական հինիցն անդուլ և անպարապ գոլով ի բաց լքաք զկրթութիւնն գրոց սրբոց՝ առ ընտրել զհաւատոց խոստովանութեան կանոնադրութիւն. – 132. Ո՞չ ածէք զմտաւ և ոչ զմի ինչ ի բարեացն, զոր ձեր յինէն գտեալ. – 214. ո՞չ ապաքէն տունդ Սասանայ եբարձ զերկիր ձեր և զտէրութիւնդ, և դուք դիմեալ գայք ի վերայ իմ: - 138. ո՞վ ես դու՝ ասէ. ես եմ որդին քո Որմզդ. – 46. ոչ ամուրքն պատրաստական առ ի յամրութիւն, որպէս թուէր մեզ – 216. Ոչ կամեցար կամօք տալ զանձն ի ծառայութիւն մեզ, այլ տէր և թագաւոր կոչես զքեզ. զգանձն արքունի որ իմ առ քեզ է՝ ծախես, և զայդ ոչ գիտես, եթէ վաղիւ համարս տալոց ես: - 146. Ոչ վարկպարազի, որպէս ինձ թուի, ի ճախ է զանց առնել զինդրոյս այսորիկ զպատճառն - 14. Ոչինչ զանգիտեալ մեր մինչ ցայս վայր, պատմել զվտանգս և զնենգութիւնս եկեալ հասեալ ի վերայ մեր ի թշնամեացն ճշմարտութեանն. – 194. որ ունէին մարդկեղէն երեսս, և մեծ էին քան զհաւսն որ առ մեզ լինին - 50. որ կարի սիրելի է ինձ, մանաւանդ թէ յոլովից, կամ թէ ամենայն հաւատացելոց ի Քրիստոս՝ յերկարագոյնս առնել ի ճառիս զդեգերումն շահատակութեան, ձեզ լսել և ինձ գրել: - 76. որդին իմ Որմզդ լուսաւոր է և անուշահոտ – 46. Որկեն և եղեցանն առ նորա բերեալ բացայայտ ի խորհուրդ տապանին, ի Փռիւգացւոց ապարասանութենէ ի մեզ ճախրեալ ապրուստն. ի

տանն Աստուծոյ զընթացսն քաջայարմարագոյն հաւատով բերեալ: - 396. որոյ սկիզբն է ,,Անզբաղել ական սրտի նայեցող անձն իմ ի միւսանգամ գալուստն,, , Ե տուն ի յութերորդ վանգէ: - 284. Որով օրինակաւ կամք քո հրամայեն՝ եկեսցէ ի վերայ մեր պատիժ պատուհասի. – 246. որոց դէպ եղև ինձ հանդիպել եկելոց ոմանց ի յԱպղաստան աշխարհէ – 48. Որում ոչ կամեցեալ լսել Խոսրովայ՝ ասէ. իմ է թագաւորութիւնն այն և ես զորդին Մուրկայ նստուցի թագաւոր - 142. որպէս ասաց Պաւղոս, եթէ ,,դուք տաճար էք Աստուծոյ կենդանւոյ,, , և դարձեալ ասէ թէ ,,տուն Աստուծոյ եմք մեք,,. և դարձեալ մարգարէին ասէ, բնակեցայց ի նոսա և գնացից ի նոսա,,: - 394. որպէս ասաց Քրիստոս, թէ ,,ես յորժամ բարձրացայց առ Հայր՝ զամենեսեան ձգեցից առ իս,,: - 254. որպէս ասաց Քրիստոս,եթէ ,,ուր երկու կամ երեք ժողովեալ են յանուն իմ՝ անդ եմ և ես ի մէջ նոցա,,: - 250. որպէս գրեալ աւանդեցաւ մեզ այս ի չորրորդ դրուագի խոստաբանեալ պատմութեանն Մովսէսի Խորենացւոյ, վերադարձութեան ի վերայ երեցունց դրուագեալ հատուածին – 122. Որպէս Յովսեպոս մեզ զրուցաբանէ և զինչ գործեաց ընդ մանկունսն: - 78. որպէս ցուցանեն յիշատակարանքն որք յառաջ քան զմեզ հոգացան, զոր ինձ աւելորդ թուի երկրորդել: - 324. որպէս ցուցանեն մեզ առաջինքն ի պատմագրացն. – 62. որք ծանուցեալ զբռնանալն նորա ի վերայ պարսկական պետացն և զինչ կրեցին, զմտաւ ածեալ և զխառն ընդ աշխարհիս զդրակցութիւնն, և թէ գուցէ զպարսկայինն հասանիցէ մեզ կրել և աշխարհիս մեր՝ ձեռն ետուն հաւանութեան ի նորայն կալ մնալ հպատակութեան: - 360. ուստի և մեզ կարգաւորութիւն փոփոխմանց պահեցաւ ստացուածս այս: - 26. Ուստի և մեք ըստ կարի մերում անցեալ գտաք զհամառօտութիւն զրուցատրութեանս – 122. Պատմեաց զայս մեզ մեծ քահանայն Սամուէլ յաւանին Արտամետ. – 206. Պղպջաձիգ արտօսր իբրև յեռանդնոտ կատսայէ ի վեր յորձանախաղաց սահին. տարակուսանք անյուսալի շուրջ զինև պարագրին ի վերայ եղելոցն: - 350. Սա ցանկացաւ լինել, ասէ, հայր Որմզդի և ասէ՝ իցէ՞ եթէ լինէր իմ որդի Որմիզդ անուն, որ արասցէ զերկինս և զերկիր. – 46. վասն զի ըստ Պտղոմեայ և Աղէքսանդրի սահմանադրութեանն, կամ թէ մեր Արտաշէսի որդւոյ Սանատրկոյ՝ ի Վասպուրական գաւառացն համար թուեալ է գաւառն այն – 332. վասն զի իմ ոչ բերեալ ոյժ առ այսքան եկեալ հասեալ աղետիցս զդամբանականն երգել երգս: - 352.

ԵՍ - Վասն մարմնաւորացն այնչափ նահատակեցայ, որպէս գիտացերն և որպէս այժմ լսես յինէն, վասն Քրիստոսի և վասն յաւիտենական կենացն ո՞չ մեռանիցիմ, կամ արդեօք ի քէ՞ն երկնչիցիմ. քա՛ւ լիցի. – 296. տես քեզէն և ծանի՛ր, զի ոչ գոյ վնաս իմ յիրիդ յայդմիկ կամ կարողութիւն արձակել զքեզ,,: - 238. Տեսցէ տէր և դատ արասցէ և հանցէ իրաւունս ինձ, որպէս սովոր է արդար դատաւորն,,: - 330. Տէր խորտակէ զպատերազմողսն, Տեառն է պատերազմ, Տէր տկար առնէ զհակառակորդսն, Տէր է յոյս մեր,,: - 134. տուք ի մեզ զերկիրդ մեր խաղաղութեամբ, ապա թէ ոչ առցուք պատերազմաւ, ոչ միայն զայդ, այլ և զայլ ևս բազումս,,: - 162. ցաւ է ինձ ի վերայ բեկմանն որ ի նախատորդէն խորտակեցայ: - 350. Քանզի սուրբ Գրիգոր Հայոց լուսաւորիչն ասէր, թէ ,,ի մէջ օձիցն էր բնակութիւն իմ, և կոտռային զանդամօք իմովք,,: - 252.

ԵՍԱՅԻ - Ապա երկոքին նոքա դեսպանս արձակեցին առ թագաւորն ի հաւատարիմ արանց ըստ Եսայեայ զոր ասէ – 286. և այր եղբօր իւրում ոչ ողորմէր, ըստ այնմ զոր ասաց դարձեալ Եսայի, ,,անկցի, ասէ, այր ընդ այր, և այր ընդ ընկերի իւրում, ընդհարցի մանուկն /298/ ընդ ծերոյն և անարգն ընդ պատուականին,,. – 300. և ըստ Եսայեայ՝ թէ ,, բարբառոյ միոյ հազարք կորիցեն, և ի բարբառոյ հնգից բազումք փախիցեն,,: - 202. զայս ասաց Եսայի միով բանիւ. – 210. որոց անուանք ճանաչի սոցա … և Ներսեհ իշխան Գարիթայանից և ապա Եսայի Ապումուսէ, որ զշատ պատերազմունսն եհար: - 298.

ԵՍԱՅԻ ԱՊՈՒՄՈՒՍԷ - որոց անուանք ճանաչի սոցա …և Ներսեհ իշխան Գարիթայանից և ապա Եսայի Ապումուսէ, որ զշատ պատերազմունսն եհար: - 298.

ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԷ - և զինքն համեմատ Փրկչին ասաց լինել և ուղեկից ճանապարհի նորա, յասելն Եսայեայ մարգարէի, ,,հեծեալ մի իշոյ, և հեծեալ մի ուղտու,,՝ զայս ամենայն յինքն

յարակցէր: - 164. Եւ կատարեցաւ ի վերայ Սմբատայ ասացեալն յԵսայեայ մարգարէէ – 218. և սաստիկ կսկծեցուցանէր զնոսա բանիւք, ունելով իւր վկայ զԵսայի մարգարէ՝ յասելն, ,,լուարուք, իշխանք Սոդոմայեցւոց, ունկն դիք օրիացն Աստուծոյ ժողովուրդ Գոմորացւոց,,. – 182. իբրև շունք համրացեալք, որ ոչ կարեն հաջել, որպէս ասէ Եսայի մարգարէ, ընդդէմ Տեառն փոխելով զկատաղութիւն մահածին թիւնիցն սատակչական զօրութիւնն – 210. մինչև կատարեցաւ ասացեալն ի ձեռն Եսայեայ մարգարէի, ,,լսելով լուիջիք և մի՛ իմասջիք, տեսանելով տեսջիք և մի՛ գիտաջիք. /ճիշտը՝ գիտասջիք/ – 182. որպէս յայնժամ ի մահուն Ոզիայ արքային, յաւուրս Եսայեայ մարգարէի՝ ի ձայնէ սրովբէից շարժեալ տաճարին տեառն, մինչ բարձրանալ դրանդեացն: - 358. ըստ այնմ զոր մարգարէն Եսայի ասաց, ,,յաւուր յայնմիկ բուռն հարկանիցէ այր զեղբօրէ կամ ազգակցէ իւրմէ և ասասցեն՝ լեր մեր իշխան, և կերակուր մեր ընդ քեզ լիցի,,. – 298.

ԵՍԱՅԻԱՍ – Տե՛ս և զերանելին Եսայիաս զինչ ասէ – 258. զի ո՞վ ոք այլ ճոխ քան զՍենեքերիմայսն, /94/ զոր համարձակախօսն Եսայիաս հրապարակէ առ Իսրայէլեան զարմն զտրայս մեծափառութիւն. – 96.

ԵՍԱՒ - ի վերջին ամի սորա եղեն Եսաւ և Յակոբ, որ կոչին երկու նահապետք. – 56.

ԵՐԱԳ - այնպէս թուէր ի խխնջել երիվարացն և յերագ ի վերայ դիմելոցն: - 228. Զի ահա ես զարթուցանեմ ի վերայ ձեր զազգ դառն և զերագ, որ գնայ ընդ լայնութիւն երկրի, ժառանգել զխորանս որ ոչ իւր են, ահեղ և երևելի: - 200.

ԵՐԱԳԱԳՈՅՆ - փութացաւ ի կողմանցն Տարունոյ երագագոյն ճեպ զճեպի. – 322.

ԵՐԱԳԱՀԱՍ - Զայսու ժամանակաւ թագաւորեալ Աղէքսանդր Մակեդովնացի տիեզերակալութեամբ երագահաս հասեալ ի վերայ Դարէհի սպանանել զնա. և բառնայ զթագաւորութիւնն Պարսից Արշաւրեան: - 68.

ԵՐԱԳԱՀՈՍ - զի գիտացին և ծանեան, թէ ունայնութիւն և ստութիւն են կեանք աշխարհիս և երազ դիւրամոռաց և ստուեր երագահոս – 264.

ԵՐԱԳԱՊԷՍ - Այլ իբրև այն ինչ մերձ լինէր ամրոցն ի պաշարումն՝ Ամդայինն Յիսէ, որ Շեհի որդին, որ զզօրապետութիւնն Հայոց ունէր, ճանաչէր՝ ի հրապոյրս Մանազաւեան պետոյն և Ութմանացն ելեալ՝ երագապէս եկն եհաս ի վերայ Աշոտի ԺԵ հազարաւ հեծելօք վառելովք. – 334. Եւ այն ինչ ընդ մտանելն՝ երագապէս հասեալ ի վերայ ամրոցացն Ջղմար և Սրինգ կոչեցեալ՝ յինքն գրաւէ զամրոցսն. և կալեալ զՎասակ՝ յինքն գրաւեաց զզօրավարութիւնն բոլոր Վասպուրական տէրութեանս: - 306. և երագապէս աճապարեալ հասին հանդէպ զօրուն Հայոց. – 380. և թողեալ զքաղաքն Պարտաւ՝ առնու զզօրս իւր երագապէս անցեալ գնացեալ ի յաշխարհն Ասորեստանի: - 374.

ԵՐԱԳԵԼ - և ժողովեալ ազգք ազգք յընտրելոց զօրաւորաց արանց քաջամարտկաց, զզօրս Կապուտկացւոց, զՎրաց և զԱղուանից և զԱյրարատեան գազանամարտիկ զանճոռնի զօրսն և զբոլոր բովանդակեալ գունդս զօրացն և զորդիսն Սենեքերիմայ, ամենայարդար պատրաստութեամբ անհուն բազմութեամբ, աճապարել երագել անյապաղ լինել նախ քան զԱշդահակայ դիմեցումն – 62.

ԵՐԱԳՈՒԹԻՒՆ - Անդէն փութով և անյապաղ երագութեամբ հրաման ետ, զի որ ոք և հաճոյ թուիցի Սմբատայ՝ մի ոք իշխեսցէ արգել լինել: - 218. և Տիգրան առ երագութեան ձեռինն հարեալ նիզակաւ ընդ սրտադուրսն ի բաց կորզէր զթոքակէսն. – 64. և աղաղակեալ զկնի նորա՝ զի թերևս ի լուր ձայնին և ի փայլումն զինուցն և ի շողալ սուսերին և ի խխնջիւն քաջ երիվարին և ի վազս երագութեանն ուժոյ ազդ լինիցի և դարձցի ի ձայն նոցա և ծանիցէ, և դարձցի ի կորստական ճանապարհէն – 228. Եւ ամենեցուն ըստ հրամանի թագաւորին յիւրաքանչիւր կողմանց այրուձի գումարեալ՝ հանդերձ այլովք սպառազէն յօրինուածովք անյապաղ երագութեամբ գային ի ժամադրեալ կոչումն: - 198. և յանկարծօրէն յեղակարծ երագութեամբ հասին ի վերայ Շաւասպայ և մարզպանին Վնդոյի: - 126. զի թէ հնար իցէ՝ անյապաղ երագութեամբ անձամբ իւրով և զօրու և զինու ձեռնտու լիցի հասանել յօգնականութիւն նմա: - 172. իսկ նա առ երագութեան ձեռին ձգեալ զսուսերն՝ եհար զերեսս Ջուանշիրայն, և խլեաց զաչս նորա, և ինքն դարձաւ մեծաւ

յաղթութեամբ, եմուտ յամրական տեղիսն: Եւ նոքա յո՛վ և աճապարեցին: - 310. Յայնժամ թագաւորն փութացոյց դեսպանս մի զմիոյ կնի առ իշխանն Աշոտ, զի անյապաղ երագութեամբ հասցէ առ նա: - 382. յորոյ վերայ կալեալ և կանչեալ քաջն Վարդան իբրև զառիւծ, իբրև զկորիւն առիւծու, և առ ուժոյ և երագութեան ձեռինն ի վերայ ձգեալ զմիողնին՝ յերկուս կտրէ զՇաւասպն: - 126.

ԵՐԱԳՈՒՆ - Եւ վազեսցեն առաւել քան զինծ երիվարք նոցա, և երագունք քան զգայլս Արաբացւոց: - 200.

ԵՐԱՋ - զի գիտացին և ծանեան, թէ ունայնութիւն և ստութիւն են կեանք աշխարհիս և երազ դիւրամոռաց և ստուեր երագահոս – 264.

ԵՐԱՋԱԿԱՆ - Ոչ կարծողականս ինչ ըստ առաջնոցն Բէլայ ասացելում, կամ այլոց ստուերականացն երևեցելոց երազականաց և խաբեբայ դիւաց, այլ ձեռագործ մեռելականս իսկ եցոյց ի պաշտօն – 40.

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ - և երաժշտականքն երգս առեալ զյաղթութեանն Փարաւոնի՝ գոչէին ,,Տէր խորտակէ զպատերազմունս, Տէր է անուն նորա,,: - 232. և ետ տանել ընդ առաջ նորա նժոյգս մեծազարդս և երևելիս, և երգեցիկս և գովասացս և բազում գործիս երաժշտականս առաջի և զկնի՝ մինչև եմուտ ի բանակ նոցա: - 288. և սուսեր ընդ մէջ ածեալ, և հեծուցեալ ի մեծազարդ ջորւոջ, և նժոյգս առաջի և զկնի ի զարդ և ի զէն սպառազինեալ և ձայնք փողոց և դոփիւնք թմբկաց և այլ երաժշտական գործոց հնչեցուցանէին շուրջանակի. – 236.

ԵՐԱԽՏԻՔ - և տեսանելով մեր զխնամարկութիւն բարի կամաց քոց ի վերայ աշխարհի, և զսէր երախտեաց որ առ մեզ՝ յօժարագոյնս եղիցուք և մեք մտերմութեամբ ծառայել և փութով մեծաւ կատարել զհրամայեալսն ի քէն,,: - 186. Իսկ աբեղայն արիոսեան, զոր յառաջագոյն ասացաք վարդապետ Մահմէտի, տեսեալ զյաջողութիւն իրացն՝ յարուցեալ եկն առ Մահմէտ, ցուցանել նմա զգութ երախտեաց, իբրև յիւրմէ վարդապետէ ուսեալ եհաս այնպիսի իրաց. – 162. որ դիւրամոռաց զերախտիսն Քրիստոսի համարէին, միայն զկնի փառաց աշխարհիս ընթանային և մոգութեան մոխրապաշտութեանն հետևէին: - 112. Որով ընթադրեալ զսիրողական երախտիս Արարչին, միանգամայն և զպատուէրն՝առ սպանողն հատուածեցաւ - 20.

ԵՐԱՄ - որով պարծի և պսակի ի Քրիստոս հաւատացելոց թագաւորաց երամք: - 394.

ԵՐԱՄԱԿ - ,,ոչ միայն զի չես աստուած՝ այլ շուն ես դու, և երամակ շանց՝ որ զկնի քո տողեալ սահին,,: - 40. նաև երամակ ձիոցն և իշոցն և ուղտուցն նովին կեղով վառեալ սատակեցան: - 376. ոչ ևս զբանականաց բերելով խորհուրդս, այլ իբրև երամակք վայրենիք վայրածեալք անկարգութեամբ և պէս պէս անառակութեամբք – 28. ուր հոյլքն էրէոցն խայտան և վայրենեացն խոզից և առիւծուցն մորիքն և երամակք ցոռոց պատրաստական առ որսոյն հրճուանք առ ձեռն պատրաստ հոլովին – 392.

ԵՐԱՆ - և մանաւանդ զի հարկ փութոյ եղև մեզ գիտել զպայազատութիւնս երանաց տիրեցելոց մեր աշխարհի և որ յառաջ քան զնոսա թագաւորք Ասորեստանեայց, որդի /34/ ի հօրէ առեալ մինչև ի Սենեքարիմ արքայ, որ առ Եզեկիայիւ Երուսաղէմի արքայիւ եղեալ ազգապետ տանս Արծրունի: - 36.

ԵՐԱՆԳ - և փոխանակ ծաղկեալ պատմուճանի գունագոյն երանգ երանգ անկուածոցն՝ զուարք և զվարդագոյն կարմրատեսիլ արիւնն իւրեանց ի վերայ սուրբ մարմնոյն, և փոխանակ ոսկեհուռ թագակապ զարդու պսակացն՝ զերկրպագութիւնն Քրիստոսի. – 266.

ԵՐԱՆԳ ԵՐԱՆԳ - և փոխանակ ծաղկեալ պատմուճանի գունագոյն երանգ երանգ անկուածոցն՝ զուարք և զվարդագոյն կարմրատեսիլ արիւնն իւրեանց ի վերայ սուրբ մարմնոյն, և փոխանակ ոսկեհուռ թագակապ զարդու պսակացն՝ զերկրպագութիւնն Քրիստոսի. – 266.

ԵՐԱՆԳԱՆԻ ԳԻՒՂԱԿ - Եւ երթեալ հասանէ ի գիւղակ մի Երանգանի անուն առ մոնազն մի, որ էր երէց վանիցն:- 320.

ԵՐԱՆԵԱԼ - որք առանց եպիսկոպոսին Կեսարու ձեռնադրեցան յերանեալ եպիսկոպոսէ – 120.

ԵՐԱՆԵԼԻ - Այսպէս վկայեցին երանելիքն ի փառս սուրբ Երրորդութեանն յաւիտեանս յաւիտենից: - 294. Անդ հանդիպեալ լինէր և երանելի եպիսկոպոսն Գրիգոր Ռշտունեաց վսամ. ոչ կարաց իւրայնովքն զերծանել, իբրև յայնժամ առղոթաւ/հավանաբար ,,աղօթել,, բայն է / ի լեառն: - 358. ապա ետ հրաման և փորեցին զաչս երանելւոյն, անդամ անդամ յօշեցին զնա, որ մատոյց զինքն պատարագ կենդանի որդւոյն Աստուծոյ. – 290. Ասէ երանելին. ,,տեսանեմ զքեզ որպէս զմի ի զառանցելոց խելագարեալ որպէս խօսիսդ. – 294. Բայց երանելի հայրապետն Տէր Գէորգ սաստկագոյն քան զտիեզերական կործանմանն առ Նոյիւ բերելով զտրտմութեանն թախիծս, հանդերձ եպիսկոպոսիւն Գրիգորիւ՝ զաբրահամեանն վաղնջուց աղաչանսն ի կործանմանն Սողովմայ յառաջաբերեալ մարդասիրին Աստուծոյ. – 358. Բայց երանելիս այս Գէորգ, մինչ կայր ընդդէմ սրոյն և դահիճն ծեծէր իբրև զանզգայ ինչ, և ոչ փոքր մի գիծ կարացեալ հարկանել ի մարմին սրբոյն զխոցումն սրոյն – 266. Բայց երիցս երանելի ոմն երիտասարդ հասակաւ, ինքն տաճիկ և ազգաւ պարսիկ՝ ելեալ զհետ սիրոյն Քրիստոսի հաւատոցն եկն յարեցաւ ի Պատրիկն Անձևացի – 222. Բայց քանզի մեր ոչ ոք յայնժամ հանդիպէր ի պատասխանատրութիւնս երանելոյն՝ և ոչ գրել արժանի համարեցաք: - 206. ետ բերել փայտս, և եդեալ ի վերայ փայտին զերանելին Սողոմոն՝ և մօտ առ փայտն կացուցին զսուրբն Կահայ, զի գոնեայ մինն ի միւսոյ տանջանացն երկուցեալ հնազանդիցի հրամանի թագաւորին: - 292. Ետ պատասպանի երանելի Մուկաթլ լի հաւատովք և ճշմարիտ խոստովանութեամբ ի Հայր և յՈրդի և ի Հոգին սուրբ, ասէ. – 290. Եւ առեալ դահճացն զերանելին՝ ածին ի տեղի սպանմանն. – 296. Եւ յաջորդեալ փոխանակ նորա կացեալ յաթոռ սրբոյն Գրիգորի երանելին Մաշտոց, ելեալ ի կղզոյն Գեղարքունի լՃէն, զՅօհաննու Կարապետին զվարուցն բերեալ զօրինակ. – 376. Եւ այսպէս կատարեցաւ երանելին Ապուսահակ: - 206. և առեալ դահճին զսուրն՝ եհար զերանելին և եհատ զգլուխ նորա, և նոյնժամայն /գրքում՝ նույնժամայն/ աւանդեաց զոգին ի ձեռս Աստուծոյ: - 294. և առեալ մի ոմն զսուրն՝ եհար զերանելին և եհատ զգլուխ նորա: - 206. և աւանդեաց զոգին երանելին Յովնան ճշմարիտ խոստովանութեամբ ի Հայր և յՈրդի և սուրբ Հոգին, որում փառք յաւիտեանս: - 296. և երթեալ բնակէ առանձնապէս ի Գողթն գաւառի ի տեղւոջ վարդապետութեան սրբոյն Մեսրովպայ, ճգնասէր հրեշտակակրօն վարուք, երանելի մարդկան և ահարկու դիւաց: - 120. Եւ զայս առ այժմ բաւական համարեալ նշանակութիւն ցուցանել զլաւութիւն երանելի առնն Խուրանայ Արծրունւոյ, խոհեմագունիցն բաւականանալ առ բովանդակ իմացմունս: - 78. Եւ զարմանք կալան զամենայն բազմութիւնն ի վերայ պնդութեան սրտին և զօրութեան ուժոյն և քաջութեան նահատակութեանն, զոր գործեաց երանելին Գէորգ. – 268. և զինքն յանձն արար երանելի եպիսկոպոսին և ճգնաւոր քահանային, հանգեաւ բարի խոստովանութեամբ ի հոռի ամսեան, որ օր Ե էր ամսոյն յաւուր ուրբաթու՝ ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր – 254. Եւ ընկալեալ զխրատ նորա երանելոյն Աղանայ անսայր դիպող աւուր: - 114. Եւ ըստ հրամանի բռնաւորին դահճացն ձգեալ ի նա նետս շուրջանակի՝ աւանդեաց զոգին ի փառս Աստուծոյ երանելի նահատակն Քրիստոսի: - 292. և թողեալ զբնակելն ի Դուինն՝ ելեալ բնակեցաւ ի Նոր քաղաքին ի մեծ եկեղեցւոջն որ յանուն սրբոյն Գրիգորի շինեալ էր երանելւոյ տեառն Ներսիսի երկրորդի Հայոց կաթողիկոսի: - 358. և ի միտ առեալ էր զսաղմոսն, զոր ասացեալ էր երանելին: - 206. և իբրև եդ առաջի զվնասուցն որով կարծէր արկանել զնա ի հաղբս կորստեան՝ ասէ ցերանելին – 294. Եւ լուաւ տէր աղօթից նոցա, և դարձաւ ի բարկութենէ սրտմտութեան իւրոյ գթութեամբ և ողորմութեամբ, որպէս գրեցին երանելի մարգարէքն: - 314. և հորդեաց երանելին Զուիթայ ճանապարհ բարի բազմաց վկայից ի մէջ Հայաստան աշխարհիս, որ յարևելս և յարևմուտս: - 104. Եւ հրամայեաց ածել առաջի զոմանս յերանելի արանց յազատէ տանէ, և զայլս որք ի բնիկ հեծելազանց, ըստ ազգս և ըստ տոհմս աշխարհաց – 264. Եւ յայսմ պատերազմի ոչ միայն երանելի եպիսկոպոսն և ճգնաւոր քահանայն մարտակից էին տեառն Գրիգորի, այլ և զօրք հրեղինաց – 252. Եւ փոխանակ նորա ժառանգէ զաթոռ հայրապետական երանելին տէր

Յօհաննէս, որ և սնեալ և ուսեալ առ ոտս սրբոյն Մաշտոցի. – 376. զի թերևս կարասցէ արկանել զերանելին ի ներքոյ պղտոր հրապուրեցուցիչս ժախուն մահածին հնազանդութեանն - 204. զոր և երանելին Կորիւն, ուսումնակից Մովսէսի և աշակերտ սրբոյն Մեսրովպայ՝ յիւրումն ստուգաբանեալ պատմութեան զայսոսիկ մեզ հաւատարմացուցանէ: - 122. զոր շարագրեաց երանելի խոստովանողն Քրիստոսի Աբրահամի ի գեղջէն Արածոյ. – 106. զորս գրեաց երանելի քահանայն Եղիշէ: - 48. Ընդ նոսին և երանելի եպիսկոպոսն Յոհաննէս և ճգնաւոր քահանայ Գրիգոր – 324. Իսկ երանելի եպիսկոպոսին Յոհաննու ընտրեալ իւր առանձնակ միայնաստան տեղեակ, աղօթից միայն պարապեալ, ի բաց կալով յեպիսկոպոսական հովուապետութենէ: - 324. Իսկ երանելիքն գոհացեալ զանպատում պարգևաց Քրիստոսի, որ արժանի արար զնոսա մեռանել վասն անուան նորա - 266. Իսկ երանելոյն Աղանայ Արծրունւոյ որդւոյ Վասակայ դարձեալ ի Յունաց աշխարհէն՝ եկն յերկիրս Հայոց, նովին կրօնաւորական խստամբերութեամբ /132/ և հրեշտակակրօն առաքինութեամբ կեցեալ՝ վերափոխի յաշխարհէս ի դասս սրբոց. – 134. Իսկ երիցս երանելի սուրբքն տէր Յոհաննէս Արծրունեաց եպիսկոպոս և երանելի քահանայն Գրիգոր և տէր Գրիգոր Արծրունի խրախուսեալք յԱստուած, կացեալ յատենի ի մեծ ասպարիսի հոգևորական պատերազմին – 250. իսկ իբրև ընդդէմ կացին լեռնայնոցն գունդքն Տաճկաց և հարին զլեռնայինսն՝ ձերբակալ արարեալ զերանելին Յովնան տարան ետուն կապանօք ի բանդ արքունի: - 294. մինչև զայրանալ դահճացն, և խուռն ի վերայ դիմեալ ի մեծ հրապարակին՝ հարին սրով զերանելին և ի բաց առին զգլուխ նորա – 224. յոյժ վայելուչ էր և երանելի քահանային Գրիգորի՝ միաբանել ընդ նոսա և լնուլ զերրեակ թիւն – 250. Նմանապէս կամ թէ ևս հրաշափառագոյն երիցս երանելիք Սողովմոն, որ Սևորդին ճանաչի, և Կախայ վերին աշխարհեցին՝ ոչ խոտորեցան ի բանս թագաւորին – 292. որք հեղին զարիւնս իւրեանց … և վասն ճգնութեան երանելւոյն Գրիգորի Արծրունւոյ քաջ նահատկին, յաղթող վկային, խոստովանողին Քրիստոսի – 314. Տե՛ս և զերանելին Եսայիաս զինչ ասէ – 258. Քանզի իբրև լուաւ երանելին Զաքարիայ, եթէ ըմբռնեցաւ Գուրգէն՝ փութացաւ և եկն հանդերձ եպիսկոպոսօք աշխարհին. – 320.

ԵՐԱՍԱՆԱԿ - Նոյնժամայն դարձուցեալ զերասանակ երիվարին ի պատերազմ յառաջանալ, և անդ բազում արիութիւն նահատակութեան ցուցեալ, սակայն ոչինչ օգուտ բերեալ: - 368. Իսկ Ապումրուանայ ի պատճառ ոստիկանութեան զմանկականն նոցա պատճառելով խաժութիւն հասակի՝ առ սակաւ սակաւ սկսաւ զամուրսն յինքն գրաւել, զհետ իշխանական ցանկութեանն զերասանակ մտացն ձգեալ - 360.

ԵՐԱՍԱՆԱԿԱԼ - դուզնաքեայ երասանակալ փայտիւն վազս առեալ սիգաքայլ ճեմարանօք ընդ կապուտակաձև երկնագոյն լեռնային և դաշտական ասպարէզս – 396.

ԵՐԱՍԽ - բլուր մի պարսպեալ տաճարախիտ շինուածովք, որոյ հայեցածն առ դաշտակողմն ի վայր կոյս բերի, ի խաղս գետոյն Երասխայ – 392. Եւ այգուն անցեալ ընդ գետն Երասխ յայնկոյս ի դաշտն Շարուր՝ բանակին զգետովն: - 382. Եւ ինքն թագաւորն ժողովեալ զօր հարուստ աւելի քան զհազարաց հնգից և քսանից, և եկն անց յայնկոյս գետոյն Երասխայ, և բանակեցան ի տեղւոջն: - 382. Եւ քանզի էին բանակեալ ի խառնուրդս Երասխայ և Մաւրին մեծի՝ պատահի յառաջ Շաւասպ Արծրունի – 126. Իսկ վայր խաղացեալ ի Մառականն աւան, առ Կարմիրն կոչեցեալ գետով, որ իջանէ ի գետն Երասխ – 392. սա ևս աւելի խորհեցաւ չար և պատրանօք խաբէութեան որսացեալ զնախարարս աշխարհիս Հայոց՝ արար հրկէզ զամենեսեան ի քաղաքին Նախճաւան և յաւանին Խրամի, որ է ի ներքոյ Աստապատոյ վանացն, յեզր Երասխայ. – 166.

ԵՐԲԵՄՆ - թէ և Յոյնք համարին Պտղոմէիւ պարծիլ՝ երբեմն ի հաւաքումն միահամուռն ազգաց ազգաց, և յեղուլ ի լեզու յոյն. – 18. Իսկ Արշակ յերկուս թագաւորսն ձեռնտու եղեալ, երբեմն ի Պարսս երբեմն ի Յոյնս, և զապստամբութիւն ի մէջ առեալ Արշակ յերկոցունց կողմանս: - 100. Իսկ սերունդք Ասուդայ Սանասարեանց կային յոր պէտս և դիպուածն պատահէր, երբեմն այսպէս և երբեմն այնպէս. Շաւարշ. Գօգեան. Շաւասպ. Պերոզ.

Շահակ. Կիւրոս: - 72. յետուստ երբեմն գտանէր ի ձեռն անիծիցն իմացեալք երկոքին. – 22. Ո՞չ ածեր զմտաւ, թէ յիսկզբանացն մինչ ցայսօր ժամանակի ամենայն ուրեք ուր և գումարէր զօրն և լինէր պատերազմ և սուր և ճակատամարտ՝ երբեմն յաղթեն և երբեմն ի պարտութիւն մատնին. – 282. Որպես և Յոյնք երբեմն համբաւեցին՝ Հերակղէս աստուած յիսուն կոյս ի միում գիշերի ապականէր. – 38. քանզի Յունաց հուսկ երբեմն յետոյ գտաւ գիր ի Կադմեա յումեմնէ Փիւնիկեցւոյ: - 18 .

ԵՐԳ - և երաժշտականքն երգս առեալ զյաղթութեանն Փարաւոնի՝ գոչէին ,,Տէր խորտակէ զպատերազմունս, Տէր է անուն նորա,,: - 232. և քարոզքն բարձրացուցանէին զերգսն մեծ և սաստիկ գոչմամբ, եթէ տուաւ իշխանութիւն Վասպուրական աշխարհին Աշոտոյ և որդւոյ իւրոյ Գրիգորի. – 314. և եհան զնոսա յատենէն հոյակապ և շքեղ և երևելի պատուով ի ձայնս երգոց և ի հնչիւնս փողոց. – 314. և զի էր վարժեալ ուսմամբ Աստուածաշունչ գրոց և ընդել և ծանոթ էր ճարտասանական հրահանգիցն՝ եդ առ յայն ժամու իմացական տեսութիւնն զերգս – 284. վասն զի իմ ոչ բերեալ ոյժ առ այսքան եկեալ հասեալ աղետիցս զդամբանականն երգել երգս: - 352.

ԵՐԳԵԼ - Եւ այլք զցաւագծին օրհնութիւն հնոցին երգէին, ի վերուստ կոչել զօրավիգն զհրեշտակ Աստուծոյ – 232. և ոչ ոք կարէր երգել զօրհնութիւն սաղմոսացն և կամ լսել ի գթալից արտասուաց ժողովրդեանն միանգամայն և յայնչափ խնդութենէն: - 154. վասն զի իմ ոչ բերեալ ոյժ առ այսքան եկեալ հասեալ աղետիցս զդամբանականն երգել երգս: - 352.

ԵՐԳԵՑԻԿ - և ետ տանել ընդ առաջ նորա նժոյգս մեծազարդս և երևելիս, և երգեցիկս և գովասացս և բազում գործիս երաժշտականս առաջի և զկնի՝ մինչև եմուտ ի բանակ նոցա: - 288.

ԵՐԴՆՈՒԼ - Յայնժամ երդուաւ նմա Խոռեամ և ասէ. – 154.

ԵՐԴՈՒԵԱԼ - Եւ ըստ կարգի օրինաց իւրեանց երդուեալ, և աղ ծրարեալ ընդ հրովարտակին ետ տանել. և նոցա առեալ և ընթերցեալ՝ ոչ արարին բանիցն պատասխանի: - 138. զի թէ ես յաղթեցից՝ երդուեալ ի մեծ աստուածն Որմազդ և յարեգակն և ի լուսին և ի հուր և ի ջուր և ի Միհր և յամենայն աստուածս՝ զի ձեզ տուեալ լիցի թագաւորութիւն Հայոց. – 138. Յայնժամ երդուեալ միաբանութեամբ գնացին ի գիշերի և անցին ընդ զոմ ի Վեհկաւատ – 150.

ԵՐԴՈՒՄՆ - ասէ՝ զի դայեկաբար զորդիսն Սանատրկոյ սնուցանէաք, և դու ի թագաւորելդ քոյ որոյ երդմունս արարեալ յԱրտեմի և յԱրամազդ անկասկած կալ մնալ վասն որոյ երկիւղն ունէր: - 82. Բայց ինքն Դերանիկն ստեաց երդման ուխտի խաղաղութեանն, զոր եդ ի մէջ իւր և ի մէջ Հասանայ – 348. երդմամբ հաստատեալ ասէ – 214. Երկրորդ՝ զի և ոչ հաւատայր Գուրգէնի՝ ամբողջ պահելով, զոր ինչ միջնորդեն երդմամբ, զհօրն իւր կիրսն ի նորայն հօրէն կրեալ յուշ առնելով: - 316. Եւ արար նմա հաւատարմութիւն յոյժ գրով, և կնքեալ աղիւ ըստ սովորութեանն իւրեանց երդումն, և խնդրեաց ի նմանէ զօր ինչ սակաւ յերևելի մարդկանէ, յորս ինքն վստահն էր: - 154. և երդումն արարեալ ուխտ դիցուք ի մէջ մեր երկոցունց՝ խաղաղութեամբ ունել զթագաւորութիւնն,,: - 152. և երկից և երից և բազում անգամ զնոյն հաստատեցին երդմամբ, զի անվեհեր համարձակութեամբ եկեսցէ առ նոսա. – 226. և էր գրեալ ի նմա թողութիւն վնասուցն և հարուածոցն զօրացն և բազում աւարացն, և երդումն ի հաստատութիւն ասացելոցն, և պարգևս ի պատուական և մեծագնի հանդերձից, և սաղաւարտ ծաղկեայ և սուսեր. – 288. Եւ իբրև ետուն զթուղթն կարծեցեալ իբրև յերեսաց արքայի՝ ,,ընթերցիր զայդ, ասէ, մի՛ ինչ ընդ մեղադրութեամբ արկաներ զիս, և կարծել նենգութեամբ գնալ առ քեզ և դրժել ինչ քեզ և ստել երդմանց /236/ մերոց. – 238. և կալցուք ուխտ խաղաղութեան /136/ ի մէջ մեր երկոցունց, և անշուշտ լիցի այս երդումն և պայման ի մէջ մեր և որդւոց մերոց յետ մեր թագաւորելոյ,,: - 138. Եւ կայսր Մուրիկ հաւանեալ նմա՝ յղէր առ նա զՓիլիպիկոս փեսայ իւր. և տայր տանել նմա գիր ընդունելութեան, և առնոյր ի նմանէ երդումն: - 138. և ոչ զոք թուլացուցանէր թագաւորել Զրուանայ, դաշնաւորել երդմամբ՝ մինչև որ ի կնոջէն Ըռեա որ ի Զրուանայ զարմից էր ծնեալ արու՝ անդէն ի ծննդեանն սատակէր. – 14. Իսկ զօրավարն խոստացաւ

երդմամբ տալ նմա զի՛նչ և խնդրիցէ, մինչև հաւասար իւրոյ տէրութեանն բարձակից և պատուակից կացուսցէ: - 218. Իսկ իբրև ընթերցաւ զնամակն, գրեալ երդմունս ի ծանականս կանանցն իւրեանց և ի մոլար օրէնսդիրն իւրեանց Մահումաթ. – 236. միջնորդեալ հայրապետին երդմամբ ուխտի խաղաղութեան՝ ի բաց լքանել անյիշելի մոռացմամբ զչարեացն գործելոց զվնասս. – 348. որ ընդ միմեանս երդմամբք հաստատեալ սուրբ Աւետարանաւն և տէրունական նշանաւն – 174. Իսկ Երուանդ պահեալ զերդումն հօրն նորա՝ թողացուցանէ երթալ բնակել և կեալ ուր և հաճոյ թուիցի. – 84.

ԵՐԵԿՈՅԻՆ - և նոցա հետամուտ եղեալ մինչև ի մութ երեկոյին, լցին դիակամբք զերկիրն. – 140. ոչ պիտոյացեալ եկամուտ լուսոյ, որով նսեմասցի առ ի հասանել երեկոյին, ոչ ապաժամանութիւն արեգական առ ի մերժել զմութ գիշերի լուսազգեստ ստեղծուածոյն, որ յետ առաջնոցն կարգի և դասու՝ զերկրորդն փոխանորդեցաւ վիճակ, ոչ կերակուր հոսանուտ առ ի լրութիւն տարաբարձ ունակութեանց անապականին, որ դոյզն ինչ փոքրագոյն քան զիրեշտակս գոլ. – 20. Եւ եկեալ երեկոյին խնդալից՝ ակն ունէր առլնուլ կերակրովն, եգիտ ապականեալ և գիշակեր. – 46. և տեսեալ զուարակ մի՝ գողացաւ և տարեալ մեկուսի յագեաց զնա և կարկառեալ քարամբք՝ մնայր երեկոյինն – 46.

ԵՐԵՄԻԱՅ - որպէս և գրեալ է ի մարգարէութեանն Երեմիայի – 196. որպէս սահմանեաց Աստուած ի վերայ ժողովրդեանն Իսրայէլի գերելոցն ի Բաբելոն, որպէս գրեալ է ի մարգարէութեանն Երեմիայի, ,,զ-ՀԷ-երորդն ասէ գիտասցես, և խելամուտ լիցիս յելից բանին տալ պատասխանի. մինչև յօծեալն /312/ առաջնորդ եօթներորդ Է և եօթներորդք ԿԲ,,. – 314. Սպառնայ և աստուածային դատաստանն Երեմիայիւ – 38.

ԵՐԵՍ/Ք/ - աստէն իսկ դարձաւ յետս երես իւր ի /248/ թիկունս կոյս, ըստ ձախողակի խոտորմանն յետս ընդդէմ զխոտորմանն ժառանգեաց: - 250. և ապա մտին ի տունն Աստուծոյ, և տարածեալ զիրովարտակն առաջի սրբոյ սեղանոյն՝ անկան ի վերայ երեսաց իւրեանց յերկիր առաջի Տեառն և լացին դառնապէս – 146. Զայս ասելով, և յերեսն ի վայր ի վերայ մահճացն զգետնեալ՝ ի վայն և յեղուկն զողբոցն խառնուածսն յաճախագոյնս մանուածէր: - 388. Վեցերորդ՝ զի խաւարաւ չարեացն պատրուակեալ զոգին, մինչև զԱստուած ևս անգէտ կարծելով՝ լրբենի երեսօք պատասխանէր – 24. Վէմս զերեսօք արկեալ արտօսր յորդառատս ի խտղտելի աչաց ի վայր հեղեղատելով, զնորափթիթ ծաղկազարդ ոսկեճաճանչն մորուացն ճիրանամբքն զխզումն, և որ առաւելեալն քան զսոյն զապաշաւանացն զանյագութիւնն: - 386. ,,որովհետև գտի շնորհս առաջի քո, և արարեր մեծարանս երեսաց իմոց, և առաւել քան զամենայն իշխանս Հայաստանեայց և մեծամեծս արքունի զիս նախամեծար և մեծարգի ցուցեր – 218. անկեալ Աղան յերեսս առաջի սրբոյն Սահակայ և առաջի սպարապետին Սահակայ՝ ընդունել զսքեմ կրօնաւորութեան մոնազնութեան անապատասէր միայնական ստանալ իւր վարս: - 114. Բայց քանզի արդ տեսանեմք զձեզ անձնեայս և գեղեցիկս, և գեղ երեսաց ձերոց պատշաճագոյնս և վայելուչս, և որդիք թագաւորացն այսր աշխարհի լեալ էք դուք, և արժանի էք արգահատելոյ – 244. բայց ազդ լինէր իշխանին ի նոյն գնդէն Տաճկաց՝ մի տեսանել զերեսս նորա, ծանուցանելով նմա՝ զոր ինչ խորհեալ էր վասն նորա և վասն աշխարհին նորա: - 184. բայց այլ ամենայն իշխանք արևելեայք խոյս տուեալ յերեսաց նորա՝ ետուն տեղի, ելին կալան զամրական տեղիս, ի բերդս և ի քաղաքս և ի լերինս, ընդ ինքեանս գումարեալ զզօրս և զբնակիչս աշխարհաց իւրեանց ամենայն պատրաստութեամբ: - 270. եթէ չար ինչ թուիցիմ յաչս ձեր, և ապիրատս գործեալ եմ առ ձեզ և խարդախութեամբ բնակեալ եմ ընդ ձեզ՝ աւասիկ յանդիման երեսաց իմոց տուք պատասխանի – 214. Եւ զյաճախութիւն ամբաստանութեանն ունի բողոք, թէ նախ զբնութեան օրէնս անարգեալ, և յերեսացն Աստուծոյ անկեալք եղեն: - 54. Եւ հատաւ քուն յաչաց նորա, և ոչ ոք մտանէր և ելանէր առ նա զաւուրս Ժ, զի եմուտ ի սենեակ ամօթալի երեսօք. – 282. և ահա հասեալ կայք յատենի առաջի իմ անտրտում և անտխուր երեսօք, որպէս անմեղս և զբարեգործակս, և լի ամենայն կամարարութեամբ մեր, անխիղճ համարձակութեամբ – 244. և ելեալ յերեսացն Տեառն՝ սնոտի տաժանմամբ շինէր

քաղաք, չհամարեալն յազգս զղջալից և արդարաքարոզ նահապետացն: -24. և եղև բալ և մութ թանձրամած խաւարին ի վերայ երեսաց ամենայն երկրի. – 150. Եւ եղև յելանել նախարարացն Հայոց յերեսաց ամիրային՝ մնայ առ նմա միայն Մուշէղ Մոկաց իշխեցողն, այր քաջայայտ և բարձրագահ – 344. և զգոյն երեսաց իւրոց բոցագոյն դարձուցեալ, խրոխտացեալ և մրմռեալ իբրև զգազան արիւնարբու՝ հրաման ետ տանել արտաքս յերեսաց ատենին – 246. և զօրքն ցրուեցան քայքայեցան ընդ ամենայն երեսս երկրին: -238. Եւ էր յղեալ յառաջագոյն զԱշոտ որդի իւր ընդ առաջ նորա, անդստին յելանելն նորա յերեսաց արքայի – 270. Եւ իբրև ետուն զթուղթն կարծեցեալ իբրև յերեսաց արքայի՝ ,,ընթերցիր զայդ, ասէ, մի՛ ինչ ընդ մեղադրութեամբ արկաներ զիս, և կարծել նենգութեամբ գնալ առ քեզ և դրժել ինչ քեզ և ստել երդմանց /236/ մերոց. – 238. և ինքն /232/ կայր հեծեալ ի վերայ սպիտակ ձիոյ, և ցանէր զծուխն ընդդէմ թշնամեացն, և օդ քաղցր, որ արկանէր զծուխն զերեսօք նոցա. – 234. Եւ խռովեցան առ հասարակ ազգքն տաճկականք յերեսաց նորա և ահիւ մեծաւ ըմբռնեալք լինէին. – 312. և մնացեալքն կէսքն փախեան երեսաց յո՛վ և կարաց ոք զերծանել – 400 և յաւեր դարձան գեւղք և ագարակք և աւանք, ի բաց մերկացեալ զզարդ և զբարեձևութիւն, և ընդ ազգականութեամբ փակեալ զանազան բոյսք և տունկք, որ ի վերայ երեսաց երկրի. – 238. և ոչ ի միում ճակատու դարձոյց Ապումուսէ զերեսս իւր յերեսաց Բուխայի. – 286. և ոչ ի միում ճակատու դարձոյց Ապումուսէ զերեսս իւր յերեսաց Բուխայի. – 286. Եւ ոչինչ ամենևին զչարացաւ ընդ նմա Բուխայ և ոչ յիշեաց զգործսն զոր գործեաց, և ոչ տրտմեցոյց զերեսս իւր. – 288. և որպէս պատմեն զնմանէ՝ զի դարձաւ յետս յԱստուածոյ և դարձոյց զերեսս իւր ի ճշմարիտ դաւանութենէ յերկրպագութենէ Աստուածորդւոյն, որպէս ասաց՝ դարձուցին յիս զթիկունս և ոչ զերեսս իւրեանց. – 248. և փախեան այլազգիքն յերեսաց Գուրգէնի մի կողմն: - 308. Եւ փախեաւ Յազկերտ յերեսաց /164/ նոցա և ոչ կարաց ճողոպրել. քանզի հասին զհետ նորա մերձ ի սահմանս Քուշանաց, և կոտորեցին զամենայն զօրս նորա. – 166. զի և այլազգիքն տեղի ետուն և փախեան յերեսաց Ապումկդէմայ. – 304. Ըստ նմին օրինակի և զօրավարն Բուխայ, ի հասանել ամառնային ջերմութեանն իբրև ի խորոց անդնդոց ի վեր մղեալ զինքն, ելեալ յերեսաց արքայի բազում և ծանր զօրու՝ եհաս ի վերայ երկրիս ի կողմն հիւսիսոյ ի մուտս Հայաստան աշխարհիս. – 262. ի մտի եդեալ զի այն ինչ, իբրև թէ ի վերին երեսս հաճիցեն զմիտս թագաւորին, և ի ներքին խորհուրդս պահիցեն զխոստովանութիւնն որ ի Քրիստոս. – 248. Ի սորա յերրորդ ամի թագաւորութեանն ի վերայ Հայոց աստուածատուր բարկութեամբ անդնդաշարժ վրդովմամբք ներքնագոյն խորոցն պատահեալ միմեանց սահանախաղաց դղրդմամբ, հիմնաշարժ տապալմամբ, /356/ ներքսագոյն երկրի թուլացեալ պնդափակ աղխեալ սանդարամետական սահմանին, բարկութեան հողմոց շնչեալ ընդ ջրոցն խաւարայնոց, ի կոհակս անդնդաքակս զթանձրայատակ երկրի զկարծր և զծանրալիր անկշիռ անբաւութիւնն տատանեալ, մինչ յերեսս երկրի ի վեր մղեալ հանդէպ քաղաքին Արտաշատու/ գրքում՝ Արտաշասու/, որ Բլուրն նորուն ասի – 358. իսկ նա առ երագութեան ձեռին ձգեալ զսուսերն՝ եհար զերեսս Ջուանշիրայն, և խլեաց զաչս նորա, և ինքն դարձաւ մեծաւ յաղթութեամբ, եմուտ յամրական տեղիսն: Եւ նոքա յո՛վ և աճապարեցին: - 310. մինչ հանդէպ երեսանալ Աղէքսանդրու ի յանդուգն դիմացուածին, և հայեցեալ ի դէմս Աղէքսանդրու իբր յաստուածոց դիւցազանց՝ զերեսս ի վայր արկեալ զերկիր նշմարէր – 68 յական քթթել ելից դիակամբք սպանելոցն և վիրաւորացն զերեսս դաշտին. – 400. Յայնժամ ելեալ իշխանն Գրիգոր յերեսաց արքայի մեծաւ ուրախութեամբ և անպատում խնդութեամբ՝ և եկն եմուտ յերկիր իւր յիշխանութիւն Վասպուրական կոչեցեալ: - 314. Յայնժամ տէր Գուրգէն առ /306/ չժուժել սրտին, մտրակեալ զքաջ երիվարն յորում նստեալն էր՝ և եհար զգունդն զձախակողմն Տաճկաց և պատառեաց զոռազմն և դարձոյց զերեսս նոցա- 308. Նոյնժամայն ելեալ մեկնեցաւ յերեսաց արքայի այրն այն Բուղայ – 200. որ ունէին մարդկեղէն երեսս, և մեծ էին քան զհաւսն որ առ մեզ լինին - 50. որոյ տեսեալ զբարձրաբերձ վայելչութիւն հասակին և զպատշաճ գեղ

երեսացն, զփաղփեալ գոյնն ի տեսիլ արուսեկի ի մէջ սպիտակափայլ ալեացն պատուաբերի – 204. որպէս յարդ ի հողմոյ վարեալ, կամ ծուխ վատնեալ ի մրրկէ՝ այնպէս կորեան գնացին յերեսաց զօրացն Աղուանից: - 286. սկսան այնուհետև աներկիւղ համարձակութեամբ սփռել տարածանել ի վերայ երեսաց երկրիս ամենայն ազգքն Տաճկաց – 238. սփռեալ տարածանեն հէնս ասպատակաւորս ընդ բոլոր երեսս երկրիս Հայոց – 102.

ԵՐԵՍԱՆԱԼ - մինչ հանդէպ երեսանալ Աղէքսանդրու ի յանդուգն դիմացուածին, և հայեցեալ ի դէմս Աղէքսանդրու իբր յաստուածոց դիւցազանց՝ զերեսս ի վայր արկեալ զերկիր նշմարէր – 68.

ԵՐԵՍԱՆԱԿ - և դարձոյց զերեսանակ երիվարին ընդդէմ նորա, և հասեալ ընդդէմ միմեանց՝ դարձան հասին ի բանակն իւրեանց: - 230.

ԵՐԵՍԱՆԱԿԱԼ - և իբրև մօտ եղև յափն գետոյն՝ քարշեալ ոմն զլայնալիճն, նստելով ընդ դարիւն, և հարեալ նետիւ ընդ բացատն, և երեսանակալ ձեռնն թուլացեալ. կրկնեալ այլ ոմն ճօճ նիզակաւն ընդ նոյն ակն՝ գետավէժ արարին զԱշխէթն. – 272.

ԵՐԵՍՈՒՆ - մինչ կալ մնալ միայն երեսուն արանց ընդ քաջին Վահանայ, Մերշապուհ և Յաշկուր Արծրունիք, և Կամսարն Ներսէհ, և ի տանէն Ամատունեաց՝ զորոց զանուանսն անգիտանամ – 134.

ԵՐԵՍՈՒՆ ԵՒ ՉՈՐՐՈՐԴ - և ինքն ամբարձ զձեռս իւր յերկինս, յորդառատ արտասուօք եկաց յաղօթս, ասելով զերեսուն և չորրորդ սաղմոսն և զութսուն երկու – 230.

ԵՐԵՒԵԱԼ - դա աւադիկ արմատ դառնութեան ի վեր երևեալ, և բազումք պղծին նովաւ: - 254. Երևեալ նմա յայնժամ ի բանտին այր մի գեղեցկատեսիլ ի կերպարանս ալևորի, լուսակիզն փայլմամբ՝ ասէ ցԳուրգէն – 318. Եւ էին ի կասկածի ի մէջ բանակին ի հազարապետէն, զի յայտնի երևեալ լինէր զոր խորհէրն վասն նոցա Ահմատն: - 344. յոյր ձեռն բազում արութիւն նահատակութեան երևեալ լինէին ի մարտս պատերազմաց և ի հանդէսս ճակատեցելոց ի միայնամարտիկ զինուորութեան: - 170.

ԵՐԵՒԵԼ - այլ և ոչ հուր մեկնեալ յամպոյ, ապա թէ ոչ՝ հարկ էր և ի գիշերի երևել. – 32.

ԵՐԵՒԵԼԻ - Եւ արար նմա հաւատարմութիւն յոյժ գրով, և կնքեալ աղիւ ըստ սովորութեանն իւրեանց երդումն, և խնդրեաց ի նմանէ զօր ինչ սակաւ յերևելի մարդկանէ, յորս ինքն վստահն էր: - 154. և եհան զնոսա յատենէն հոյակապ և շքեղ և երևելի պատուով ի ձայնս երգոց և ի հնչիւնս փողոց. – 314. և ետ տանել ընդ առաջ նորա նժոյգս մեծազարդս և երևելիս, և երգեցիկս և գովասացս և բազում գործիս երաժշտականս առաջի և զկնի՝ մինչև եմուտ ի բանակ նոցա: - 288. և խոստանայր շքեղ և երևելի կացուցանել ի մէջ աշխարհակոյտ ամբոխից ի դրան արքունի – 204. Եւ կացոյց զնա իշխան յիւրում հաւատարիմ տեղւոջ, և այնպէս բարեձևագոյն ճոխացոյց զայրն երևելի: - 308. և չորեքվտակեան անյաղթ և զօրաւոր գետովք ելանէ յաներևելոյն յերևելի աշխարհս: - 20. և սպանանի Գուրգէն իշխան որդի կորապաղատին նենգութեամբ ի զօրագլխացն Ահմաթայ, այր քաջ և երևելի և քաջայայտ ի մէջ Հայաստանեայցս: - 358. Զի ահա ես զարթուցանեմ ի վերայ ձեր զազգ դառն և զերագ, որ գնայ ընդ լայնութիւն երկրի, ժառանգել զխորանս որ ոչ իւր են, ահեղ և երևելի: - 200. զի էին ազգք ճոխք և երևելիք, քաջք և անուանիք, և ամենեցուն պատկառելիք – 98. յայնժամ մերկացեալ և ի բաց եդեալ զաշխարհական պատրանաց զբաղումն՝ և էանց գնաց ի վեր քան զերևելիսս – 284. ոչ յառաջանայր ի բարձր նախագահս ճոխանալ երևելեօքս և /*նստէր* / լքանելեօքս – 94. Ուստի պարտ իսկ էր նախ զանձանց և եթ գիտել, և ապա յերևելեացս աստի զճարտարապետն սոցա իմանալ. – 54. Սահակ որդի Վաչէի կացեալ ի դրան Արտաշէսի շքեղ և երևելի ճոխութեամբ – 90. սուրբքն ոչ եթէ զերևելի տեղիս ախորժեն, զի թէ ոչ այսպէս, ո՞չ նոքա զնեղ և զանձուկ կեանս կան մահու չափ,,: - 100. սրբոյ թագաւորին և քաջ նահատակին Տրդատայ զբարիոք պատերազմեալ ընդդէմ անմարմին և մարմնաւոր պատերազմողաց, փոխի յերկրաւոր աշխատութեանցս ի հանգիստ, մեծաւ պատուով թագաւորական շքեղ և երևելի դիւազարդութեամբ – 96. Ցոյցք ժամանակացս այսոցիկ, ըստ

որում յառաջագոյն ասացաք, որ յաւուրց անտի Բէլայ մինչև ի Նինոս՝ երևելիք ինչ և նշանաւորք ի /42/ մատենիցն առաջնոցն ոչ երևի, թերևս ի բազում խափանմանց: - 44.

ԵՐԵԻԵՑԵԱԼ - Ոչ կարծողականս ինչ ըստ առաջնոցն Բէլայ ասացելում, կամ այլոց ստուերականացն երևեցելոց երազականաց և խաբեբայ դիւաց, այլ ձեռագործ մեռելականս իսկ եցոյց ի պաշտօն – 40.

ԵՐԵԻԻ - Նախ առաջին՝ զի յետ աւուրց ինչ, իբր անագան իմն այլ ոչ նախապատիւ և կարևոր. և զայն արատաւոր, այլ ոչ անարատ՝ երևի յասացելոցն՝ եթէ ուղիղ մատուցանես և ուղիղ ոչ բաժանես՝ մեղար: - 24. ոչ ստեղծեալ յումեքէ, այլ որպէս երևիդ՝ նոյնպէս էր. և կայ մնայ, և զմարդ ինքնածին: - 48. քանզի յետ ջրհեղեղին ոչ երևի լինել դարձեալ որդիս նահապետին. – 30. Ասէ, ,,զի՞նչ է նոր հաւատդ, որ այժմ ի քէն երևի. եթէ այլ ևս յաւելցիս ասել՝ անձին քում դու եղիջիր պարտական,,. – 160. և զոր օրինակ ոք զբոլոր անդամս մարմնոյ յօշիցէ ի մասունս, և ոչ երևի տեսակ կենդանի մարդոյն, որպէս է գոյացութիւն խառնուածոյն. – 194. և ի դիմաց ձերոց երևի, զի զօրութիւն բազում գոյ ի ձեզ, զի այդչափ վնասս գործեալ է ձեր առ իս - 244. Ցոյցք ժամանակացս այսոցիկ, ըստ որում յառաջագոյն ասացաք, որ յաւուրց անտի Բէլայ մինչև ի Նինոս՝ երևելիք ինչ և նշանաւորք ի /42/ մատենիցն առաջնոցն ոչ երևի, թերևս ի բազում խափանմանց: - 44. քանզի սուրբ նահապետացն տասանց բնաւ ոչ երբէք ումեք երևի ասել ի Մէջերկրայս ունել բնակութիւն: - 30.

ԵՐԵԻԻ - առ սովաւ Ատղաս աստեղագէտ երևեցաւ: - 56. զոր ոչ միայն Յոյնք՝ այլ և այլազգք ոչ երևին այսուիկ նախկինք – 18. Այնպիսիք և առ սովաւ երևեցան. – 158. առ սովաւ Պիգասոսն երեւեցաւ – 58. առ սովաւ Պրոմիթէս այր իմաստուն երևեցաւ: - 56. Բայց ոչ ետ տեղի Գուրգէն այսմ՝ յերկուց պատճառաց, մի՝ զի մի՛ ապստամբ երևեցայց Տաճկաց բռնաւորին – 316. Եւ առ վտանգի երկիւղի զօրավարին՝ աձին ի մէջ զիրս տեսլեանն, որ երևեցաւ յերկնից հրեշտակ Աստուծոյ. – 234. և գրեթէ /գրքում՝ գրէթէ/ ոչ ամենևին ուրեք երևեցաւ այնպիսի ահաւոր տեսիլ զօրու և սպառազէն կազմութեան՝ ամենայն թագաւորաց, որ կացեալ էին ընդ ծագս տիեզերաց. զորոյ սաստիկ և ահագին որոտումնն և ճայթումնն և փայլիւն զինուցն, և որ ինչ յայնժամ զարդարեալ և զինեալ պատրաստեցան զօրքն Տաճկաց: - 284. և լեառնն իբրև ի հրոյ վառեալ երևէր: - 232. զի և եօթամբք իսկ շարագրեալք չարիւք ժանդացաւ վիրագն այն ի վնաս, թէ և միատեսակ երևեսցի. - 24. զի և հետք ևս յիշատակի այլոց անուանեաց մի երևեսցի, բայց ինքեան միայնոյ: - 44. Իսկ Հասան ըստ յանձնառութեանն գնաց մեկնեցաւ ի Դերանկէն, եմուտ առ Գագիկ յամուրն և զտրտունջն զԴերանկէն հաւատարմացոյց առաջի Գագկայ, որ դիւրաւ առ հաւատալն հաստատնագոյն երևէր. – 350. Նաև յութիցն մտելոց ի տապանն ոչ ամենէքին ընտիրք երևեցան -32. որ և ոչ տեղի գերեզմանի անգամ երևեցաւ նոցա մինչև ցայսօր: - 402.

ԵՐԵՒՒԻՄՆ - յորոյ աւուրս Փրկչին մերոյ տեառն Յիսուսի Քրիստոսի Աստուծոյ մերոյ մարմնով յաշխարհի երևումն եղև - 76. տեսանեն զկողմանս արևելից, դաշտ յոյժ մեծանիստ, լայնատարած, հարթայատակ, անվայրափակ առ ի սահման, անբաւական ի տեսութիւն աչաց, սաստիկ լուսով զարդարեալ ի գիշերի, բազմակերպ երևմամբ – 48.

ԵՐԵՔ - Բայց աղերսեալ թագաւորն զարս պատուականս, զՎասակ և զՏաճատ և զԳոտեր, որք էին ի մեծ նախարարութենէ տանն Արծրունեաց՝ զի զժողովն ընկալցին ընդ երից սուրբ ժողովոցն: - 132. և անհակառակող գտեալ բարուք՝ բաժանեն զաշխարհս յերից մասունս. – 360. Եւ դէտն ազդ արարեալ զօրացն այլազգեաց՝ վառեն և նոքա ընդդէմ նոցա ի պատերազմ, և ի դիմի հարեալ միմեանց և հատանէին յերից առաջս: - 178. Եւ եղև զկնի երից աւուրց անցանելոյ ետուն թուղթ մի տանել առ Գուրգէն, գրեալ Բուխայի լի դառնութեամբ, կնքեալ մատանեաւ արքայի, իբրև այն թէ ի դիմաց արքային և յարքունուստ եկեալ. – 236. և երկից և երից և բազում անգամ զնոյն հաստատեցին երդմամբ, զի անվեհեր համարձակութեամբ եկեսցէ առ նոսա. – 226. և զայն երիս ամս կերակրեալ լինէին սուրբքն ձեռնարուեստիւք իւրեանց, որպէս զնոյն ինքն

զաստուածազարդն Պօղոս, թէ ,,զպէտս իմ և որ ընդ իսն էին՝ պաշտէին ձեռքս այս,,: - 252. և զի հաւասարութիւն երից ազգացն, այսինքն որդւոցն Նոյի, կարգաւ կանոնեալ դրոշմեալ կան յոլովից գիրս ոչ է մեզ հարկաւոր զնոյն երկայնաբանութեամբ երկրորդել: - 12. և թէ նոքա յերիս կամ ի չորս կամ ևս աւելիս բաժանեալ օգնական առնիցեն իւրեանց զամուրսն՝ մեծ աշխատութիւն քեզ հասուցանիցեն, և ամենայն խորհրդոց քոց խափանիչք /212/ գտանիցին – 214. և ի ձէնջ խնդրեցից երիս ինչս, և լուարուք ինձ – ի բաց արարէք յաշխարհէ զսուր և զհուր և զգերութիւն, և յերիցդ օգուտ գտանէք. – 144. Եւ ծնան նորա երիս որդիս, Սարգիս որ և Աշոտ՝ ՅԻԶ թուականութեանն Հայոց, Խաչիկ որ և Գագիկ ՅԻԸ, և Գուրգէն. մանկունք կայտառք և գեղապանծք և բարենշանք և ամենեցուն ցանկալիք. ծնաւ և երկուս դստերս: - 338. Եւ կացեալ սուրբքն ի կապանս զերիս ամս ի ներքին բանտին: - 252. Եւ յետ այնորիկ ի բազմանալ որդւոց մարդկան՝ յերիս մասունս և զերկիր բաժանեալ, ըստ ասացելումն Հերոդոտեայն – 34. և սուր ի գործ արարեալ զերիս աւուրս՝ սպառեցին զամենայն մարդ ի քաղաքին. – 142. Իսկ ի մէջ երեքարմատեան գոգաձև հովտին փոքու, որ յերից բլրոցն խոնարհի՝ շինէ աշտարակ բարձրաբերձ փորուածոյ միջոցաւ – 88. Իսկ ոմանք ասեն ի Ղաւոդիկեայ Փռիւգացւոց շինեալ տապանին, որ յերից մասանց երկրի՝ Ասիական կոչի կողմ. և յոյժ անհաւաստի են ասացեալքն.- 30. հարուստ մի հեռի զքարանցն տաշելոյ զհոլովումն բերելով առ տրամադրութիւն կոչարանին իբրև ասպարիսօք երիւք, զբացագոյնն մօտագոյնս գործելով սայլիցն հոլովմամբ. – 396. Նոյ ծնանի երիս որդիս, զՋրուան և զՏիտան և զՅապիտոսթէ, որ են Սեմ, Քամ և Յաբէթ: - 14. Նոյնպէս բանայ, որպէս և այլ թռչունք և գազանք՝ բնաւորեալ բաժանեն զժամանակս տարւոյն յերկուս կամ յերիս ամարանոցս և ձմերանոցս ինքեանց կենաց պաճարին – 262. որպէս ասաց Քրիստոս,եթէ ,,ուր երկու կամ երեք ժողովեալ են յանուն իմ՝ անդ եմ և ես ի մէջ նոցա,,: - 250. որպէս ժողովուրդն Աստուծոյ առ գետսն նստէին և լային ի յիշելն իւրեանց զՍիօն, և կամ իբրև զնոյն ինքն զերիս մանկունսն, կապեալք և արկեալք ի հնոց նեղութեան – 252. քանզի բանականն յերիս յայսոսիկ տեսանի, ի հրեշտակս, ի մարդիկ և ի դևս. այլ ոչ ի հաւս կամ ի յայլ կենդանիս: - 52.

ԵՐԵՔ ՏԱՍՆԵԱԿ - նիզակակիցք միմեանց եղեալք երեք տասնեակք թուովն, զսուրբ Երրորդութիւնն յօգնականութիւն /134/ իւրեանց վերաձայնեալ՝ լքին զօգնականութիւն մարդկան. – 136.

ԵՐԵՔԱՐՄԱՏԵԱՆ - Իսկ ի մէջ երեքարմատեան գոգաձև հովտին փոքու, որ յերից բլրոցն խոնարհի՝ շինէ աշտարակ բարձրաբերձ փորուածոյ միջոցաւ – 88.

ԵՐԵՔԵԱՆ - անդ հասեալ քաջացն մերոց եղբարցն երեցունց ազատագունդ սակաւաձեռն գրոխիւ ի ձմեռնային ժամանակի, և ընդ լրթնատեսիլ լուսոյն վազս ի վերայ եղեալ՝ հանին ընդ սուր յոլովս քան թէ սակաւս: - 372. Որում ունկնդիր եղեալ երեքեան նախարարութիւնքն առն իմաստնոյ Վահանայ Ամատունւոյ՝ գան զկնի նորա անկասկած համարձակութեամբ – 98. որպէս գրեալ աւանդեցաւ մեզ այս ի չորրորդ դրուագի խոստաբանեալ պատմութեանն Մովսէսի Խորենացւոյ, վերադարձութեան ի վերայ երեցունց դրուագեալ հատուածին – 122.

ԵՐԵՔԹՇՈՒԱՌԵԱՆ - Նոր ոմն Նաբուզարդան կամ Զամրի յայտնեալ ի յաղանդոյն Նեստորի, երեքթշուառեան վատաշուէր, վատմիրհ, զազահութեանն չարիս ախտացեալ՝ սպրդեալ եմուտ ընդ մութ գիշերին յամրական պարսպեալ բլուր, և անցեալ ի սուրբ կոչարանին օթագացեալ. – 378.

ԵՐԵՔԻՆ - Եւ քանզի էին երեքին սոքա անքակ անխզելի առ միմեանս, զմիաբանական կապակցութիւն շաղկապեալ, Աշոտի և Գագկայ և Գուրգինայ, որդիք Դերանկին – 364.

ԵՐԵՔԿԻՆ - Որոց կապեալ զԳուրգէն երեքկին կապանօք և դարձեալ ի պարանոցն եղեալ շղթայս՝ յղեն ընդ Ատրպատական Պարսից և տան ի բանդ ընդ կապեալսն. – 318.

ԵՐԵՔԿՆԵԼ - և նորա ոչ հաւատայր երթելոց կոչնականացն, մինչև կրկնեաց և երեքկնեաց. – 272.

ԵՐԷ - Եթէ, որպէս ասացի, ի բաց գնաս յինէն՝ խաղաղութիւն է, և թէ ոչ՝ պատերազմ և կռիւ և ճակատամարտ … դու երէ վայրի՝ և մեք որսորդք, դու թռչուն՝ և մեք ի բարձանց ի վայր իջուցանեմք և վարմ ձգեալ. – 280.

ԵՐԷՑ - այլ ես ոչ երկեայց ի ժողովելոց երիցանցդ Հռոմայեցւոց, որ գումարեալ գան ի վերայ իմ: - 138. ասէ ,,երէցդ այդ եկեալ է զհետ գերելոց քրիստոնէիցն՝ հակառակ կալ հրամանաց արքայիդ և օրինաց Մազդեզանց և Արեաց – 104. Գնայ զկնի նոցա և երջանիկն Զուիթայ երէց յԱրտաշատէ զկնի հաւատացեալ Հրէիցն – 104. Երէց մի Շապուհ անուն, և մի ոմն յոամկաց ձորոյն՝ լնուլ զթիւ գնդիցն - 202. և ահա Ապումուսէ, որ ճանաչէր երիցու որդի՝ հանդէպ նոցա ել պատերազմ և հանդիսացաւ ընդդէմ նոցա. – 284. Եւ երթեալ հասանէ ի գիւղակ մի Երանգանի անուն առ մոնազն մի, որ էր երէց վանիցն:- 320. և տիրէր յայնժամ մեծի կողմանն Աղուանից Ապումուսէ ոմն, որում վերծանութեանն յայտնութիւն՝ երիցու որդի ճանաչէր: - 276. Զընդ նոյն ժամանակս և Նաւատիոս երէց ի Հռովմ առաքէր ընդդիմակս Եղկղեսիանոսացն – 256. կոչեաց զերիցունսն նորոյ կտակիս, զեպիսկոպոսս և զքահանայս, առաջի արկեալ զհաւատոցն կատարելաբանութիւն, զմկրտութեանն լուսաւորութիւն. զառեկելոցն յապաշխարութիւն, զյոյսն յետ վախճանին, զմարդասիրելն Քրիստոսի - 386. յղէ առ Գուրգէն զՎահան Արծրունի և զվանաց երէցն Թէոդորոս զգլխաւորն Հոգեաց վանից, ասէ. – 330. Առ սոսա գնացեալ Գրիգորէս երէց/գրքում՝երեց/ որդին Վրթանայ՝ քարոզեաց նոցա զբանն կենաց. – 274.

ԵՐԹԱԼ - ,,արիք երթայք առ զօրավարն, տեսէք հաւաստի, և ի վերայ հասեալ գիտասցուք, թէ ի՞ւ իւիք կարասցուք հաճել զմիտս նորա ի խաղաղութիւն,,: - 214. ,,արջք գիսակագեղք սպիտակայեղցք որջացեալ ի պրակս անտառախիտ մայրեացդ. արդ թէ հաճոյ թուիցի՝ երթիցուք որսալ զնոսա,,. – 100. ,,զօր գումարեա, գունդ կազմեա, խաղացո երթալ մտանել յերկիրն Հայոց: - 196. ,,իսկ եթէ եկեսցէ առ իս գիր յարքունուստ, կնքեալ մատանեաւ արքայի. և իցէ գրեալ ի նմա հրաման՝ գալ ինձ առ քեզ կամ երթալ յարքունիսն՝ ոչ ելից արտաքոյ հրամանաց նորա: - 286. ,,ձայն իմն ահաւոր հրեշտակի անկեալ ի վերայ իմ՝ հրամայեաց երթալ պատգամաւոր յազգն իմ, ցուցանել զԱստուած արարիչ երկնի և երկրի. առնուլ ինձ անուն գլխաւորութեան, և զստութիւն հաւատոց որ ի կուռս՝ յանդիմանել և քակտել,,: - 158 ,,յարուցեալ երթիցես դու ինքնին և քեզէն լուիցես ի նմանէ զոր ինչ ախորժիցէ, և բարձցի ի քէն ապստամբութիւնն, զորմէ կարծեն ապստամբ լինել ի թագաւորէն,,: - 214. ,,որդեակ, ի վախճանելս իմում մի կայցես յայսմ աշխարհի, զի մի կորուսցես զկարգ քո ի մէջ անհաւատից, այլ երթիցես ի կողմանս Եգիպտոսի՝ բնակել ի մէջ բազմութեան եղբարց, զի շահեսցիս զոգիդ քո,,: - 162. Այլ այժմիկ ի կարգ բանին երթիցուք: - 26. բայց սա յերթալ և ի դառնալ իւրում նովին մտօք և նովին մոլորութեամբ վարեցաւ, լրբեալ լի թշուառութեամբ. – 248. գուցէ ակամայ երթալովն, և նեղիչն աշխատելով ի պահելն՝ յաճախեսցէ ի վնաս և ի քէն, և օճան բարւոյ յայնմ հետէ ոչ ևս ումեք հասցէ գտանել,,: - 216. ԵՐԿՐՈՐԴ ՆՈՐԻՆ ԵԻ ԵՐԹԱԼՆ ԳՈՒՐԳԷՆԻ ԶՀԵՏ ԿՈՉՈՂԱՑՆ ԲՈՒԽԱՅԻ ԵԻ ՈՐ ԻՆՉ ԳՈՐԾԵՑԱԻՆ, ԵԻ ԹՈՒՂԹՆ ԻԲՐԵԻ Ի ԴԻՄԱՑ ԱՐՔԱՅԻ: - 234. Եւ ազատորերոյն Վասպուրականի աղերսեալ՝ մի երթալ զայն ճանապարհ, առաջի դնելով զախտակրելն՝ նորա ընտրեալ զմահ ի վերայ քեռոյն իւր, քան զկեանս կեղակարծ ինչ խորհել զնմանէ: - 384. և կորապաղատին ընդարձակեաց ելանել, զի երթիցէ ուր և կարասցէ հասանել ըստ յաջողելոյ իրին: - 348. Եւ ուժեղացեալ ցաւոյն խստութեան որովայնացաւածութեան՝ երթալ մտանէ ի քաղաքն Նախճաւան – 384. և այլ ոմն յարտաքին իմաստնոց ասէ, ընդ աներկիւղ ի ճանապարհ մի երթալ: - 354. և արձակեաց զզօրս իւրաքանչիւր զօրագլխօք եկելոց առ նա յամենայն ազգաց յաշխարհէս /գրքում յաշխարէս/ Հայոց՝ երթալ ձմերել յիւրաքանչիւր տեղիս բնակութեանց – 262. Եւ Գուրգէն ելեալ գնաց փութանակի անյայտ առնել զինքն, մինչև յաջողեսցի ըստ կամաց Քրիստոսի յո՛վ և երթիցէ: - 320. Եւ եթէ քոյին կամաւ երթիցես՝ թերևս օգուտ բազմաց և անձին քում եղիցի. – 216. և երթալ զետեղի ի Նախճաւանն աւանի յոստանին Վասպուրական աշխարհին: - 84. և երթային մի մի նոյնպէս և դառնային: - 370. Եւ երթայր

ԵԻՍԵԲԻՈՍ ԿԵՍԱՐԱՑԻ - և Նինոս ի զաւակէ Քամայ ըստ Արիսդոնեա Քաղդէացւոյ և ըստ Եւսեբեա Կեսարացւոյ և ըստ Մովսէսի Խորենացւոյ և ըստ Յուլիանու Աղիկառնացւոյ ստուգաբանի: - 14. Հաւաստիս այս մեզ Եւսեբիոս Կեսարացի, Յուլիանոս Աղիկառնացի՝ ստուգաբանեն զթագաւորս Ասորոց ի զաւակէ Սեմայ զաճմունս առնել, որպէս ի կանոնեալ սահմանէն իմանալ: - 14.

ԵԻՍ ՔԱՆ ՋԵԻՍ - Բայց նոքա ևս քան զևս սաստկացուցանէին զմարտն: - 210. և նա ևս քան զևս զկարծեցեալ հիւանդութեանն աճեցուցանէր զխստութիւն ցաւոցն ծանրանալն նմա: - 328. Եւ նա ևս քան զևս պնդեալ հաստատեալ կայր ի հաւատս, ի սէր և ի յոյսն Քրիստոսի. – 318.

ԵԻՐՈՊ - Եւ Յաբէթի Եւրոպն ամենայն յԱմման լեռնէ մինչև ի մուտս հիւսիսոյ: - 34.

ԵՓՐԱՏ - Եւ հրամանաւ ինքնակալին Թէոդոսի կայսեր հաւատայ նմա զհազարապետութիւն բաժնին Հայոց, զՄիջագետս մինչև ի յանցս Եփրատ գետոյ: - 116.

ԵՓՐԵՄ - որք ոչ վրիպէին ի մազոյ, որպէս և յայնժամ յԻսրայէլի էին արք զօրաւորք, գունդք տանն Եփրեմի և Բենիամինի: - 200.

ԵՕԹԱՆԱՍՈՒՆԵՐՈՐԴ - ՎԱՍՆ ԹԱԳԱՒՈՐԻՆ ՋԱՓՐԱՅ, ԶՈՐ ԻՆՉ ԽՈՐՀԵՑԱՒ Ի ՎԵՐԱՅ ԱՇԽԱՐՀԻՍ ՀԱՅՈՑ, ԵԻ Ի ԳԼՈՒԽ ԵՀԱՆ ԶԿԱՄՍ ՉԱՐՈՒԹԵԱՆՆ, ԵԻ ՈՐ ԻՆՉ ԸՆԴ ՍՈՎԱԻ ՆԱԽ ՔԱՆ ԶԼՆՈՒԼ ՎԵՑԵՐՈՐԴ ՅՈԲԵԼԻՆԻ, ԵԻ ԵՕԹԱՆԱՍՈՒՆԵՐՈՐԴ ՈՂՈՄՊԻԱԴԻՆ, ՅԵՏ ԻՆՆԵԻՏԱՍՆ ԸՆԴԻՔՏԻՈՆԻՆ, ՅՈՐՈՒՄ ԲՈՎԱՆԴԱԿԻՆ ԺԱՄԱՆԱԿՔ ԲՌՆԱԿԱԼՈՒԹԵԱՆՆ ՏԱՃԿԱՑ ԱՄՔ ՄԻԲ ԸՍՏ ԹՈՒՈՑ ՀԱՅԵՐԷՆ ՏՈՒՄԱՐԻ. – 170.

ԵՕԹՆ - եօ՞թն արդեօք իցեն մեղանացն պարտիք, եթէ ըստ յաւելուածոյ սաստից իմասցին ասացեալքն Աստուածոյ – 24. զի ահա ևս եօթն օր՝ և ածից ջրհեղեղ ջուրց ի վերայ երկրի՝ սատակել զամենայն, յորում է շունչ կենդանի,, . – 30. զի և եօթամբք իսկ շարագրեալք չարիւք ժանդացաւ վիրագն այն ի վնաս, թէ և միատեսակ երևեսցի. - 24. Իսկ ասելն՝ ամենայն որ սպանանէ զԿայէն՝ եօթն վրէժս լուծցէ – 22. յայտ առնելով ի թիւ եօթանցն այլ ևս ներողութիւն: - 30.

ԵՕԹՆԱՍՏԵՂՆ - և զի մի՛ ճրագն եօթնաստեղն ընդ գրուանաւ զփայլումն լուսոյն ծածկիցէ – 204.

ԵՕԹՆԵԿԻ - և ունի յոբելեանք Զ և ոլոմպիադր և ընդիքտիոնք, և Գ ամ հայրապետութեան Հայոց կաթողիկոսի տեառն Զաքարիայի, և մուտ եօթներորդ ամի, յորում կային յարքունիսն իշխանքն, ըստ եօթնեկի չափոյ շարժման ժամանակաց. – 312.

ԵՕԹՆԵՐՈՐԴ - Արդ նոցա այնքան, իսկ մեզ ի մասնէ զբոլորն համառօտեալ ի թիւս միակաց լրման, և զբովանդակութեան ամաց ըստ տասանց եօթներորդացն որ թուոցն է լիագոյն է - 314. Եւ զի զթիւ եօթներորդիս յաւելուածով ասաց ութս լինել - 26. և ունի յոբելեանք Զ և ոլոմպիադր և ընդիքտիոնք, և Գ ամ հայրապետութեան Հայոց կաթողիկոսի տեառն Զաքարիայի, և մուտ եօթներորդ ամի, յորում կային յարքունիսն իշխանքն, ըստ եօթնեկի չափոյ շարժման ժամանակաց. – 312. Եօթներորդ՝ զի զվարկ փոխարինին լուեալ ի Տեառնէ՝ ոչ զարհուրեցաւ վերադարձիլ արտասուօք ի ջնջումն մեղացն. – 24. որպէս սահմանեաց Աստուած ի վերայ ժողովրդեանն Իսրայէլի գերելոցն ի Բաբելոն, որպէս գրեալ է ի մարգարէութեանն Երեմիայի, ,,զ-ՀԷ-երորդն ասէ գիտասցես, և խելամուտ լիցիս յելից բանին տալ պատասխանի. մինչև յօծեալն /312/ առաջնորդ եօթներորդ Է և եօթներորդք ԿԲ,,. – 314.

ԵՕԹՆՓՈՐՁԵԱՆ - և արծաթագործ եօթնփորձեան հրաբորբոք ճարտարապետն ի բովս հալոցացն զուտ և վճիտ արծաթ ընտրելով, արծաթեղինեան զփայտեղէնն պատեալ արտաքուստ – 378.

Զ

Զ /թիվ՝ վեց/ - /թագաւորեաց/ Յեզիտ ամս Զ … Շամորեհեշմ ամս ԺԹ. Վլիթ ամս Բ. Մրուան ամս Զ … Ահարոն որդի Մահմետի ամս Ե և ամիսս Զ. - 168. Այս Զ ամ էր գերութեանն Հայոց, և ՅԶ նորուն թուականութեան: - 326. և անդ սպանին հրամանաւ կայսեր, թագաւորեալ ամս Զ: - 108. և Զ ամ կեցեալ յետ գերադարձն լինելոյ, և մտեալ յաշխարհս՝ համարձակ զքրիստոնէութեանն ունելով զկրօնաւորութիւն, և ի զղջել յապաշաւ ի վերայ ուրացութեանն զՔրիստոս լինելով: - 336. Եւ կատարեալ Աշոտ զկեանս իւր՝ մեռաւ ի Վանտոսպ գաւառի, ՅԻԳ թուականութեանն Հայոց, յամսեանն հոռի, որ օր Զ էր ամսոյն, յաւուր հինգշաբաթոջ. - 338. Յետ այսորիկ կայ ի գլխաւորութիւն տաճկաց Ամր, որդի Հատապայ ամս Ի և ամիսս Զ: - 164. և ինքն թագաւորեաց փոխանակ /318/ ընդ հօր իւրոյ, և յետ Զ ամսոց մեռանի: - 320. և մինչդեռ խորհէր արքայ Կաւատ վասն շինութեան աշխարհի և խաղաղութեան՝ եհաս նմա վախճան կենաց և մեռաւ, կեցեալ ամիսս Զ: - 152. և ոչ ոք ի նոցանէ նուազագոյն քան Զ-ի ամ կալաւ զիշխանութիւն. – 56. և ունի յորելեանք Զ և ոլոմպիադր և ընդիքտիոնք, և Գ ամ հայրապետութեան Հայոց կաթողիկոսի տեառն Զաքարիայի, և մուտ եօթներորդ ամի, յորում կային յարքունիսն իշխանքն, ըստ եօթնեկի չափոյ շարժման ժամանակաց. – 312.

Զ-ը նախդիրը հոլովների հետ օգտագործված է 3808 անգամ:

Զ-ը նախդիրը կապակցությունների մեջ - և զոր օրինակ ոք զբոլոր անդամս մարմնոյ յօշիցէ ի մասունս, և ոչ երևի տեսակ կենդանի մարդոյն, որպէս է գոյացութիւն խառնուածոյն. – 194. և եբարձ զամենայն արս զօրութեանց, և ոչ ոք էր այնուհետև որ կարէր կալ ի կայի իւրում ունել զդէմ նորա – 238. Բայց յաւելեալ լինի պատճառ ունելոյն զնա զայս օրինակ, եթէ էր փեսայացուցեալ զԴաւիթ զեղբայր կորապաղատին ի քոյր իւր Մարիամ. – 342. ,,ոչ կարեմք զդէմ ունել անհնարին ուժոյ բռնութեանն արքունի – 216. Բայց յետ բազում յուզիցն և պատերազմացն եհաս տիրել նմա Անձաւացեաց տէրութեանն զայս օրինակ: - 324. Գրէ հրովարտակ մի զայս օրինակ: -184. և առեալ դահճին զսուրն՝ եհար զերանելին և եհատ զգլուխ նորա, և նոյնժամայն /գրքում՝ նույնժամայն/ աւանդեաց զոգին ի ձեռս Աստուծոյ: - 294. Եւ Գուրգէն երկրորդ հրեշտակս յղէ առ նա զայս օրինակ, եթէ ,,ընդ իս հաստատեա զանզրաւ կապակցութիւն ուխտի խաղաղութեան. և ես ապստամբեցայց յԱշոտէ, և ի միասին բաժանեալ զերկիրս կեցցուք յապահովս,,: - 316. Եւ զոր օրինակ զնա վիշապ առակեցաք յաղագս սաստիկ ուժոյ զօրութեան ձեռին նորա – 262. Եւ ըստ հրամանի բռնաւորին դահճացն ձգեալ ի նա նետս շուրջանակի՝ աւանդեաց զոգին ի փառս Աստուծոյ երանելի նահատակն Քրիստոսի: - 292. Եւ մինչդեռ զայս օրինակ խոկային և խորհէին ի միասին՝ միանգամայն արգելականք բերդին անդէն իսկ և իսկ քակեալ ի միաբանութենէ ուխտին – 210. և նա նաս քան զնս զկարծեցեալ հիւանդութեանն աճեցուցանէր զխստութիւն ցաւոցն ծանրանալն նմա: - 328. Եւ նա նաս քան զնս պնդեալ հաստատեալ կայր ի հաւատս, ի սէր և ի յոյսն Քրիստոսի. – 318. Եւ ոչ կարացեալ ունել զդէմ զօրն Վահրամայ՝ փախստական լինէր առաջի զօրացն Յունաց. – 140. և ոչ մեք գրել զմտաւ ածել ջանասցուք. – 68. և որ այլ այսպիսիք զմտաւ ածեալ, որ գրեալ է ի սուրբ

Աւետարանն – 264. զի ասեն, թէ նոքա ի միջոյ բառնայցեն՝ ոչ ոք կարասցէ կալ ի կայի իւրում ունել զդէմ մեր: - 184. Զի թէպէտ և Գուրգէն մեծաւ զօրութեամբ ունէր զդէմ յարձակելոցն ի վերայ, որոց զիշխանականն ճեպէին հասանել գահ, կամ որ արտաքին տաճկական պատերազմունքն բռնաբար ի ներքս դիմէին՝ սակայն ոչ յապահովանայր դեռ երկիրն: - 316. Զոր օրինակ փոքր մի վերագոյնն պատմեցաք զծովային վիշապէն ըստ բարոյականի՝ նոյնպէս և այժմ դարձեալ արարից զյիշատակ սորա աղագաւ պատմութեանս խորհրդոյ: - 260. Իսկ Աւշին դատարկացեալ ի խորհրդոցն զոր խորհեցաւն՝ յաւել զայս օրինակ կատարել զկամս չարագոյնս: - 372. Յապուշ կրթին միտք իմ զմտաւ ածել զաղետիցն, խորհրդածել գրել յիշատակարանս. լքեալ լինին ընթացք ձեռացս առ կորովութիւն գրաւորականիս. – 350. յորում տեղւոջ քաղաքն Տարունոյ շինեալ էր, ուր բնակեալ բայանայր զօրավարն Տաճկաց, զօրհասական արջոյն քերելով նմանութիւն, որ յաւուրս ձմերայնոյ արմատովք պարենաւորեալ՝ ի մէջ կենաց և մահու անցեալ որջանան ի բոյնս իւրեանց: - 188. Նոյնժամայն աճապարեալ աշտանակեալ ի նիւս նժոյգ երիվարին, զէն զանձամբ արկեալ, նիզակ ի ձեռն առեալ, խրախոյս ի ձայն բարձր բարձեալ առ իւր ազատագունդ վաշտն՝ ասէ՝ - 328. Ո՞չ ածէք զմտաւ, թէ յիսկզբանացն մինչ ցայսօր ժամանակի ամենայն ուրեք ուր և գումարէր զօրն և լինէր պատերազմ և սուր և ճակատամարտ՝ երբեմն յաղթեն և երբեմն ի պարտութիւն մատնին. – 282. Ո՞չ ածէք զմտաւ և ոչ զմի ինչ ի բարեացն, զոր ձեր յինէն գտեալ. – 214. որք ծանուցեալ զբռնանալն նորա ի վերայ պարսկական պետացն և զինչ կրեցին, զմտաւ ածեալ և զխառն ընդ աշխարհիս զդրակցութիւնն, և թէ գուցէ զպարսկայինն հասանիցէ մեզ կրել և աշխարհիս մեր՝ ձեռն ետուն հաւանութեան ի նորայն կալ մնալ հպատակութեան: - 360. փութացաւ ի կողմանցն Տարունոյ երագագոյն ճեպ զճեպի. – 322. և զմտաւ ածեալ զքսութիւնն զոր զեկուցին զԱշոտոյ կորապաղատէ առ Դերանիկն, եթէ ստութեամբ և եթէ ճշմարտութեամբ՝ մեզ չէ յայտ: - 342. և անդ զբարիոք պատերազմն պատերազմեալ՝ որպէս քաջ հովիւ զանձն իւր եդ ի վերայ հօտին – 104. Եւ ելեալ յիւրաքանչիւր տեղեաց մի քան զմի յառաջանալ ի կոչումն Բուխայի, և ժողովեցան ի մի վայրի և եկին կացին առաջի զօրավարին Տաճկաց: - 296. զոր ժողովեալ պահեալ և կնքեալ ունէր յօր հատուցման վրիժուց՝ հատուցանել մեզ ըստ գործս մեր, ի հպարկանել զքարդի զոտս մեր. – 196. զոր արհամարհեալ Շաւասպ /114/ արձակերեսան զերիվարն ի սիգաքայլ արշաւանս արարեալ՝ աներկիւղ համարձակութեամբ էանց գնաց ճեմ զճեմի առ զօրավարն Անատողի: - 116. իբրև զքաջ հովիվ եղեալ զանձն ի վերայ խաշանց մեռանել, նմանակերպեալ պատկերակից լինել որդւոյն Աստուծոյ – 300. Իսկ ըստ պատմագրաց՝ կարգ ծննդաբանութեանդ ունի զայս օրինակ. – 42.

ԶԱԶԻՐ - և զսոյն իսկ ասէին զայսոսիկ այլովք զազիր չարեօք: - 48.

ԶԱԶՐԱԼԻՑ - Այլ սոքա թէպէտ և յանձն առնուին և մտադիւրութեամբ լսէին նմա սակայն ոչ մեկնեալ լինէին ի ժանդագործ պղծութենէն զազրալից սողոմական ախտիցն – 182.

ԶԱԶՐԱՑԵԱԼ - միանգամայն և զերկիր զազրացեալ ի բազմադէմ չարեացն գործելոցն ի նմա: - 28.

ԶԱՄԵՍՈՍ - զոր պայազատեաց առաջին Զամեսոս, որ և Նինուաս, որդի Նինեայ և Շամիրամայ, ի ԾԳ ամի կենաց Աբրահամու նահապետի – 56.

ԶԱՄԷՍ - Եւ առեալ զիշխանութիւն նորա Զամեայ որդի նորա – 44.

ԶԱՄՐԻ - Նոր ոմն Նաբուզարդան կամ Զամրի յայտնեալ ի յաղանդոյն Նեստորի, երեքթշուառեան վատաշուէր, վատմիրհ, զագահութեանն չարիս ախտացեալ՝ սպրդեալ եմուտ ընդ մութ գիշերին յամրական պարսպեալ բլուր, և անցեալ ի սուրբ կոչարանին օթագացեալ. – 378.

ԶԱՅՍ ՕՐԻՆԱԿ - Բայց յետ բազում յուզիցն և պատերազմացն եհաս տիրել նմա Անձաւացեաց տէրութեանն զայս օրինակ: - 324. Բայց յաւելեալ լինի պատճառ ունելոյն զնա զայս օրինակ, եթէ էր փեսայացուցեալ զԴաւիթ զեղբայր կորապաղատին ի քոյր իւր Մարիամ. – 342. Գրէ հրովարտակ մի զայս օրինակ: -184. Եւ Գուրգէն երկրորդ հրեշտակս յղէ առ նա

զայս օրինակ, եթէ ,,ընդ իս հաստատեա զանզրաւ կապակցութիւն ուխտի խաղաղութեան. և ես ապստամբեցայց յԱշոտէ, և ի միասին բաժանեալ զերկիրս կեցցուք յապահովս,,: - 316. Իսկ Աւշին դատարկացեալ ի խորհրդոցն զոր խորհեցաւն՝ յաւել զայս օրինակ կատարել զկամս չարագոյնս: - 372. Իսկ ըստ պատմագրաց՝ կարգ ծննդաբանութեանդ ունի զայս օրինակ. – 42. Եւ մինչդեռ զայս օրինակ խոկային և խորհէին ի միասին՝ միանգամայն արգելականք բերդին անդէն իսկ և իսկ քակեալ ի միաբանութենէ ուխտին – 210.

ԶԱՅՐԱՆԱԼ - մինչև զայրանալ դահճացն, և խուռն ի վերայ դիմեալ ի մեծ հրապարակին՝ հարին սրով զերանելին և ի բաց առին զգլուխ նորա – 224.

ԶԱՅՐԱՑԵԱԼ - Բարկացաւ յոյժ իշխանն ընդ արհամարհանսն, և յոյժ զայրացեալ մեծաւ ցասմամբ՝ առնու զբազմութիւն ազատագունդ զօրաց ըստ տոհմս ազգաց իւրաքանչիւր զօրօք. – 178.

ԶԱՅՐԱՑՈՒՄՆ - Ելեալ խրոխտ և դառնաշունչ փռնկալով մռմռեալ յանձնիւր գազանեղեն զայրացմամբ յարձակեալ յեղակարծում եկն եմուտ ի քաղաքն Շամիրամայ ի Վանտոսպ: - 372. Եւ առ չհանդուրժել այնքան եկեալ հասեալ վտանգաւոր նեղութեանցն, և գազանեղէն զայրացմամբ մրմռեալ յոգի իւր ի վերայ կորստեան սուրբ հաւատոյս և կործանման աշխարհիս Հայոց – 126.

ԶԱՅՐՈՒՑ - Ապա թէ փութաս ելանել ի կենաց աստի առ զայրուցս կատաղութեան քո և զոսկերս ցրուես յանապատս և լինել կերակուր գազանաց երկրի և թռչնոց երկնից՝ քո կամք լիցին, և ես քաւեալ եմ յարենէ քումմէ – 278. և առ զայրուցն առ մարդկայինն դիմեալ ազգ՝ կարծել նոցա ստնանէր, յինքեանք ձգել կորզել զաստակչական դարձուածէ. – 398. Նորա զչարեալ ընդ հասանել պատգամին՝ առ զայրուցս բարկութեան քինահանութիւն վրէժխնդրութեան արարեալ՝ ի բաց եհան ի գրոցն պատմութենէ՝ որ ինչ վասն տանն Արծրունեաց էր գործոց հանգամանք, և որ ինչ օրինակ մարտիրոսութեան Վահանայ Արծրունոյ: - 130.

ԶԱՆԱԶԱՆ - առաջի տեսանելով զկապուտակ ծիրանափայլ դաշտաձև ծովն. դաստակերտս մեծամեծս շուրջ զեզերբն անտառախիտ ծառովք և գինեբեր որթովք և զանազան պտղովք. – 86. և յաւեր դարձան գետք և ագարակք և աւանք, ի բաց մերկացեալ զզարդ և զբարեձևութիւն, և ընդ ազգականութեամբ փակեալ զանազան բոյսք և տունկք, որ ի վերայ երեսաց երկրի. – 238. զշէնս պատրաստեալ, և շուրջ զամրոցաւն տնկախիտս բուրաստանս ծաղկաւէտս և անուշահոտս ի զանազան ծաղկանց. – 86.

ԶԱՆԳԱԿԵԱԼ - շռնջապահս ձիոցն և տաշտս գաւակացն և զանգապանս ի չորս կողմանս, ձգեալ և լանջացն զէն, և բարձրավիզ խրոխտանացն զրահս, և ոտնատորոփ փռնկալոյն մանեակս զանգակեալս, և մահիկս լուսնաձևս ի մէջ ճակատուն կապեալ – 208.

ԶԱՆԳԱՊԱՆ - զանգապանս ի վերայ բարձիցն պնդեալ – 208. նա և զիւրեաւ տախտակափակ լանջապահս, թիկնապահս, զանգապանս, սռնապանս, գլխապանս, որ գրեթէ բովանդակ պղնձեղէնս զնա իմանալ թուէր, և զետեղեալ բլրաձև զօրու անմատչելի կարծելով. – 64. շռնջապահս ձիոցն և տաշտս գաւակացն և զանգապանս ի չորս կողմանս, ձգեալ և լանջացն զէն, և բարձրավիզ խրոխտանացն զրահս, և ոտնատորոփ փռնկալոյն մանեակս զանգակեալս, և մահիկս լուսնաձևս ի մէջ ճակատուն կապեալ – 208.

ԶԱՆԳԻՏԵԱԼ - Ոչինչ զանգիտեալ մեր մինչ ցայս վայր, պատմել զվտանգս և զնենգութիւնս եկեալ հասեալ ի վերայ մեր ի թշնամեացն ճշմարտութեանն. – 194.

ԶԱՆԳԻՏԵԼ - Նա թէպէտ և զչարացաւ ընդ եղեալսն՝ սակայն զանգիտեաց թողուլ զնա երթալ, ակնածելով ի չարայոյզ ազգէն Իսմայէլի, զի դեռ ևս տիրէր բռնութիւնն, և գերեալքն և հայրն իւր սպարապետն յարքունիս էին: - 316.

ԶԱՆԳՈՒԱԾ - որով անգիտացեալ զհողանիւթեայ իւր զանգուած՝ յահաւորէն Աստուծոյ և յարարչէն խորհեցաւ թիկունս դարձուցանել – 20.

ԶԱՆԽՈՒԼ - և յանդիմանեալ ի սրբոյն Ներսիսէ՝ արբուցանեն նմա դեղ մահու, զանխուլ կարծիս բերելով. – 108.

ԶԱՆԶԱՄԲ ԱՐԿԵԱԼ - Նոյնժամայն աճապարեալ աշտանակեալ ի նիւս նժոյգ երիվարին, զէն զանձամբ արկեալ, նիզակ ի ձեռն առեալ, խրախոյս ի ձայն բարձր բարձեալ առ իւր ազատագունդ վաշտն՝ ասէ՝ - 328.

ԶԱՆԶՆ ԴՆԵԼ Ի ՎԵՐԱՅ - և անդ զբարիոք պատերազմն պատերազմեալ՝ որպէս քաջ հովիւ զանձն իւր եդ ի վերայ հօտին – 104.

ԶԱՆՑԱՆԵԼ - որ անցուցանէ զանցանէ զանասնական խառնակութեամբքն երիքովեան և սոդոմական լրբութեամբ, անամօթաբար այր զարամբք բորբոքեալ, դեզադէզ զհրացանն բերելով յերկնուստ զանզրաւ կիզումնն, անցուցեալ զանցուցեալ զաստակչական կործանմանն ջրհեղեղին: - 336.

ԶԱՆՑ ԱՌՆԵԼ - Արդ եթէ Սոդոմայեցիքն, որ հրով զվրիժուցն հատուցին փոխարէնս, և դարձեալ տանջելոց են՝ որ բովանդակ չարիւք անդր երթալոց են ո՞րպիսի ակնկալութիւն տանջանաց զանց արասցէ զնոքօք. – 336. Բանն զմեօք զանց առնէ. և ոչ վայելուչ է լռութեամբ և մոռացկոտ մտօք անփոյթ առնել զայնքան մեծիւ յաղթութեամբ, որ գործեցաւ ի ձեռն զօրացն Վասպուրական ազատանոյն: - 176. Եւ զի առ այսոսիկ փոյթ եղև մեզ քննասիրութեամբ լինել հասու և ոչ զանց առնել – 18. զի ոչ է ժամ մեզ զներբողականօքն զդեգերումն առնել, զպատմողական զրուցատրութեան կարգաւն զանց առնել: - 78. Ոչ վարկպարազի, որպէս ինձ թուի, ի ճախ է զանց առնել զխնդրոյս այսորիկ զպատճառն - 14.

ԶԱՆՑՈՒՑԱՆԵԼ - գրէթէ անցուցանէր զանցուցանէր զքաջութեամբքն Արշակայ Պարթևի, ընդ քաջացն Քուշանաց, Մարաց և Ելիմացւոց. – 72.

ԶԱՆՑՈՒՑԵԱԼ - Իսկ Արտաշիր յանդգնագոյնս և առանց պատկառանաց զհետ ամօթալից ախտին գիջութեան իգամոլ ցանկութեանցն ընթացեալ՝ ոչ միայն ի գիշերի այլ և ի տունջեան յանդիման արեգական, անխտիր կատարէր զցանկականն, զանասնական գիջութեամբքն զանցուցեալ: - 116. որ անցուցանէ զանցանէ զանասնական խառնակութեամբքն երիքովեան և սոդոմական լրբութեամբ, անամօթաբար այր զարամբք բորբոքեալ, դեզադէզ զհրացանն բերելով յերկնուստ զանզրաւ կիզումնն, անցուցեալ զանցուցեալ զաստակչական կործանմանն ջրհեղեղին: - 336.

ԶԱՌԱԾԱՆԻԼ - Եւ այսպէս զառաջանէր, զՍեմ որդի Նոյի ասել նոր Զրուան, որ և սկիզբն աստուածոց: - 46.

ԶԱՌԱԾԵԱԼ - զայս ասէր, ոչ զի սոդոմայեցիք էին, այլ զի ընդ նոյն մեղս սոդոմական պղծութեանն զառաջեալ լինէին՝ սոդոմայեցիս կոչէ: - 182.

ԶԱՌԱՆՑԱԿԱՆ - Բազում և այլ ինչ զառանցականս բարբանջանաց օրինադրեաց: - 46.

ԶԱՌԱՆՑԵԱԼ - Ասէ երանելին. ,,տեսանեմ զքեզ որպէս զմի ի զառանցելոց խելագարեալ որպէս խօսիսդ. – 294. և լի ծաղու և կատականօք այպն արարեալ՝ արհամարհանօք անարգեցին զբռնաւորն, իբրև զմանուկ մի անպիտան կամ զծեր զառանցեալ և խելագարեալ, որ ոչ ըստ իւրոց կամաց զոր ինչ ախորժիցէ խօսիցի: - 264. Իսկ սպառնալիք քո և չարչարանք, զոր ասես ի վերայ իմ հասուցանել՝ խաղ մանկտոյ կամ զառանցելոց թուի յաչս իմ, և բանք քո նոյնպէս, որպէս առն անմտի և խելագար և ցնորեալ ծերոյ,,: - 290.

ԶԱՌԱՆՑՈՒԹԻՒՆ - Թէպէտ և ոչ ինչ նպաստաւորութիւն առաջիկայ տեսութեանս ունին հետագայից ցոյցք որ վասն Բէլայ և նոցուն իսկ Քաղդէացւոց դիւցազնական զառանցութեանցն – 36.

ԶԱՌԱՋԵԱՒ - Եւ այն ինչ ընդ ջեռնուլն արեգականն, մինչ ազևորեալքն մտանէին զառաջեաւ ամիրային, որպէս որսոյ ինչ պատճառանօք հեծեալ յընտիր երիվարս հանդերձ մերձաւոր հարազատօք իւրովք և ազատովք յընտրելոցն Վասպուրականի՝ ելեալ մեկնեցաւ իբրև վտաւանս երկուս. – 342. Եւ ի ժամու մինչ ազևորեալքն կամէին մտանել զառաջեաւ … յայնժամ շուրջ կացեալ զվրանաւն մեծ սպարապետին զկազմեալ գնդաւ վահանաւոր և նիզակաւոր ամրափակ պնդութեամբ, և մտեալ մատոյց զթուղթն, զոր էր գրեալ առ Յամանիկն ի քաղաքն Պարտաւ Ահմաթայ նենգութեամբ: - 344. Եւ յաւուր միոջ հրաման ետ թագաւորն ածել զառաջեաւ. – 294. կապարճս և աղեղունս պատրաստականս

զառաջեաւ ի նիւսն ունելով, և զարդս ոսկեզարդս և արծաթագործս և կամարս ընդ մէջ ածեալ – 208.

ՁԱՌԻՎԱՅՐ - և իսկոյն հարեալ զնա այսոյն պղծոյ և ընդ զառիվայր լերինն թաւագլոր խաղաղացուցեալ հարուստ ձգմամբ մինչ ի դաշտավայր տեղին ուր այգեստանքն: -378.

ՁԱՌ Ի ՎԱՅՐ - և անդ ընդ փոքր զառ ի վայրն իբրև զհեղեղատ յորդեալ հոսեալ հասաւ ի վերայ նոցա, ի Քրիստոս խրախուսեալ – 400. և դիմեցին ի մէջ նոցա ի չորս առաջս, ըստ նմանութեան տեառնանման խաչին, և բախեցին զճակատն և պատառեցին զռազմն և դարձուցին ընդ զառ ի վայրն և իջուցին ի լեռնէ անտի, և հարին ի հարուածս մեծամեծս. – 286. և նորա ելեալ սակաւ արամբք՝ իբրև ջուր ընդ զառ ի վայրն հոսեալ՝ արար հալածական զՎահան և զզօրս նորա. – 310.

ՁԱՏԱՆԻԼ - իսկ զանուանս նոցա այլափոխ ասելով զատանին: - 18.

ՁԱՏԻԿ - որ կատարեցան միանգամայն սրով ի միում աւուր ի մեծի ուրբաթի զատկին: - 106. Եւ եղև յաւուրն ինն և տասներորդի, յամսեանն մարգաց, որ օր ԻԸ էր ամսոյն, յամի քսան և հինգերորդի թագաւորութեանն Խոսրովու, որ կոչէր Ապրուէզ, զկնի Ժ աւուր անցանելոյ զատկին՝ առին զքաղաքն. – 142. զորոյ զպաղատանս ոչ անտես արարեալ Քրիստոսի՝ ներէ նմա հանել ի գլուխ զսուրբ քառասնորդսն, խաչակից լինելով Քրիստոսի, մինչև ի պարտ զատկին – 254.

ՁԱՏՈՒՑԱՆԵԼ - և զատուցանէ զօրավարն վանիցն գեօղս բաւական առ ընկալումն հիւրոցն և ի տեսչութիւն աղքատացն: - 394.

ՁԱՐԱԻԱՆԴ - Իսկ Սմբատ առեալ զԱրտաշէս բնակէ ի Զարաւանդ Ատրպատականի – 82.

ՁԱՐԴ - և արևն ի վերայ հասեալ սպառազէն զարդուն՝ և մերկ սուսերացն փայլեալ՝ ճառագայթս արեգակնայինս յինքեանց ձգէին շուրջ զլերամբն. – 208. Եւ բարձեալ զօրքն Հայոց դիակապուտ արարեալ զզարդ և զզէնս զարի արանց և զքաջ երիվարաց, առեալ աւար բազում՝ գնան յիւրաքանչիւր տեղիս մեծաւ յաղթութեամբ: - 178. և եհար սատակեաց Ապումկդէմ ի միում ասպատակի Ը այր, և զերիվարս նոցա, և զէնս և զզարդ մերկեաց ի նոցանէ, եհար զայլազգիսն ի հարուածս մեծամեծս և ինքն դարձեալ ասպատակեաց զկնի նոցա: - 304. և հրաման ետ զինել վառել ի զէն և ի զարդ և ի սուր, և զընտիրս երիվարացն յիւրեանց զէնսն պատրաստել: - 228. և յաւարի առնուին զբանակետղն, դիակապուտ առնէին, ժողովէին աւար բազում, և կուտէին արծաթ և ոսկի յոյժ և զզէնս պատենազարդս, զզարդս և զզէնս արի արանց և զընտիրս երիվարաց և զզարդս նոցա. – 176. և յաւարի առնուին զբանակետղն, դիակապուտ առնէին, ժողովէին աւար բազում, և կուտէին արծաթ և ոսկի յոյժ և զզէնս պատենազարդս, զզարդս և զզէնս արի արանց և զընտիրս երիվարաց և զզարդս նոցա. – 176. և յաւեր դարձան գեղք և ագարակք և աւանք, ի բաց մերկացեալ զզարդ և զբարեձևութիւն, և ընդ ազգականութեամբ փակեալ զանազան բոյսք և տունկք, որ ի վերայ երեսաց երկրի. – 238. և նոյնգունակ զարդու զարդարեաց զնա բուրուառօք արծաթեղինօք և ընտիր և փորձ արծաթագործ դրոշածօք նշանի խաչին Քրիստոսի: - 390. Եւ սկսաւ երկիրս առնուլ զնորոգումն, և եկեղեցիքն պայծառանալ ի զարդ և ի պաշտօնս շքեղութեան, և ցրուեալքն դռոթ տուեալ դարձան յիւրաքանչիւր տեղիս՝ շինել, տնկել, մոռանալ զցաւսն և զտրտմութիւնսն զոր կրեցին: - 318. և սուսեր ընդ մէջ ածեալ, և հեծուցեալ ի մեծազարդ ջորւոջ, և նժոյգս առաջի և զկնի ի զարդ և ի զէն սպառազինեալ և ձայնք փողոց և դոփիւնք թմբկաց և այլ երաժշտական գործոց հնչեցուցանէին շուրջանակի. – 236. և փոխանակ ծաղկեալ պատմուճանի գունագոյն երանգ երանգ անկուածոցն՝ զսուրբ և զվարդագոյն կարմրատեսիլ արիւնն իւրեանց ի վերայ սուրբ մարմնոյն, և փոխանակ ոսկեհուռ թագակապ զարդու պսակացն՝ զերկրպագութիւնն Քրիստոսի. – 266. կապարճս և աղեղունս պատրաստականս զառաջեաւ ի նիւսն ունելով, և զարդս ոսկեզարդս և արծաթագործս և կամարս ընդ մէջ ածեալ – 208. կոչեաց զանուն ամրոցին Զարդ, այսինքն պայծառութիւն ի վերայ պայծառայարդար շինուածոյն: - 88. յաւուր միում … ետ հրաման իշխանն առնն կորովի եղբօր իւրոյ Աբասայ Հայոց սպարապետի՝ վառել պնդակազմ պատրաստութեամբ, զօրու

և զինու և զարդու ամենայարդար հնարաւորութեամբ, որպէս օրէն է նահատակաց քաջ արանց – 344.

ԶԱՐԴԱՐԵԱԼ - Եւ ածեալ զտիկինն Սաթինիկ զբօսնուլ յաշնանային յեղանակս յամարաստուն գեղեցկաշէն յապարանս զարդարեալ բերդին: - 88. և գրեթէ /գրքում՝ գրէթէ/ ոչ ամենևին ուրեք երևեցաւ այնպիսի ահաւոր տեսիլ զօրու և սպառազէն կազմութեան՝ ամենայն թագաւորաց, որ կացեալ էին ընդ ծագս տիեզերաց. զորոյ սաստիկ և ահագին որոտումնն և ճայթումնն և փայլիւն զինուցն, և որ ինչ յայնժամ զարդարեալ և զինեալ պատրաստեցան զօրքն Տաճկաց: - 284. տեսանեն զկողմանս արևելից, դաշտ յոյժ մեծանիստ, լայնատարած, հարթայատակ, անվայրափակ առ ի սահման, անբաւական ի տեսութիւն աչաց, սաստիկ լուսով զարդարեալ ի գիշերի, բազմակերպ երևմամբ – 48.

ԶԱՐԴԱՐԵԼ - և նոյնգունակ զարդու զարդարեաց զնա բուրուառօք արծաթեղինօք և ընտիր և փորձ արծաթագործ դրոշածօք նշանի խաչին Քրիստոսի: - 390. Եւ ոսկեգործ ականակապ կազմեալ՝ պատեաց ոսկով զփրկագործ սուրբ խաչն, և ընդելուզեալ մարգարտով զարդարեաց զսխրագործ փայտն, հիւսնեալ ի մէջ անուշահոտ փայտից, թողեալ մասն ինչ արտաքս ոսկեպատ պահարանին, յառաջնում իւրոյ քառածրագիծ խաչակերտ փայտեղէն զզրոցկանն: - 394. շինեալ նորոգեաց և զեկեղեցին որ ի նմա յանուանակոչութիւն սուրբ Աստուածածնին Մարիամայ և զարդարեաց զնա մեծագանձ սպասուք և եդ ի նմա զԽաչն, զոր յիշեցաք վերագոյնն, յորոյ ձեռն ծանուցաւ զօրութիւնն հրաշագործ: - 390. ստացան բարեկարգաբար զարդարել զմերկացեալն ի բարեզարդութենէ, զմերժեալն և զհեռացեալն ի հայրենեաց և ի տանց՝ յանձնիւրս առնել դարձումն. – 388.

ԶԱՐԴԱՐՈՒՄՆ - Եւ սկիզբն արարեալ շինութեան և խաղաղութեան աշխարհիս իրաւադատութեամբ, վերակացութեամբ որբոց և այրեաց, աղքատսիրութեանն լրջմտութեամբ եկեղեցւոյ զարդարմամբ. – 390.

ԶԱՐԵՀԱՒԱՆ - Բայց զՏամբէր և զԸռնայն և զՋաբեհաւան գաւառ հանեալ էր ի Պարսկահայոց – 390. և ելեալ ի Յաղամակերտ քաղաքէ ի Թ ժամու ուրբաթու աւուրն, և անցեալ ընդ ծովակն Յըմբեայ, և ընդ Վարազի Ջարեհաւանի. – 402. Իսկ Գուրգինի մարզպանի Հայոց առեալ էր ի բաժնի յելս կոյս և /388/ որ ելանէ ի հարաւակողմն, զԱնձահից ձոր, զԿրճունիս, զԿուղան ովիտ, և զբուն զՄարդաստան գաւառ, զԱրճիշակովիտ,զոտն Առնոյ, զԱղբագ Մեծ և զՓոքր, Ակե, Տամբէր, Տագրեան. Ընռնայ, Ջաբեհաւան: - 390.

ԶԱՐԵԻԱՆ - և եղեն բանակք մեծ ի գաւառին Ջարևան: - 404.

ԶԱՐԷՀՎԱՆ - և անդ լինէին ժողովեալ ամենայն բազմութիւն աշխարհակոյտ ամբոխից գաղթականաց գաւառացն կողմանցն Աղբակոյ, Ջարէհվանի և Ակէոյ և ի լեռնակողմանցն Աղզոյ և Ոտնն Առնոյ, մի կողմն ի Ջողայ լեռնէն և անդր: - 226.

ԶԱՐԹՆՈՒԻ - Եւ այս եղև, զի լցցի որ ասէ, „զարթի՛ր սուր ի վերայ հովուի և ի վերայ առն ընկերի նորա. – 238.

ԶԱՐԹՈՒՑԱՆԵԼ - և յայնչափ սաստիկ և անհուն ամբոխին սուտ վկայութեանն զբոլոր բարկութիւն բռնաւորին զարթուցին ի վերայ առնն, որպիսի ոչ ի միոյ ուրուք վերայ այնքան ժամանակս եհեղ զբարկութիւն իւր զօրավարն Բուխայ: - 290. Զի ահա ես զարթուցանեմ ի վերայ ձեր զազգ դառն և զերագ, որ գնայ ընդ լայնութիւն երկրի, ժառանգել զխորանս որ ոչ իւր են, ահեղ և երևելի: - 200.

ԶԱՐՀՈՒՐԵԱԼ - Եւ արքայ Խոսրով զարհուրեալ պատրաստի ի փախուստ, քանզի զօրացաւ յաղթութիւնն Հայրակղի. – 148. և զանուն քաջութեան քո քեզէն կորուսանես, որով ամենայն աշխարհ զարհուրեալ դողաց և ոչ ոք եկաց ընդդէմ քո – 282. Եւ ընդոստուցեալ Խոսրով ի յահէն և զարհուրեալ մեծաւ դողութեամբ՝ խնդրեաց իւր տեղի փախստեան, աղաղակեաց և ասէ՝ ձի, ձի, և մտեալ յասպաստանն՝ ոչ հանդիպեցան ձիոյ: - 152.

ԶԱՐՀՈՒՐԻԼ - Եօթներորդ՝ զի զվարկ փոխարինին լուեալ ի Տեառնէ՝ ոչ զարհուրեցաւ վերադարձիլ արտասուօք ի ջնջումն մեղացն. – 24.

ԶԱՐՀՈՒՐՈՒՄՆ - և կողմնեալք ի սիրոյ աստուածութեանն անկաւ ի վերայ նոցա զարհուրումն մահու, մանաւանդ ոչ կամելով ելանել /246/ ի սնոտի կենացս դիւրափոփոխ աշխարհիս՝ ասեն. - 248.

ԶԱՐՄ - զոյժ փառացի և ճոխ և նազելի զնախագահ նստեալ զարմէ – 300. գուցէ յորժամ կատարիցեն զչարիսն զոր խորհեալ են ի վերայ քո, որպէս լուաք ի հաւատարմաց իւրեանց՝ օժանդակութեամբ Արտաշէսի մերժիցեն և զզարմ և զզաւակ քո ի թագաւորութենէ Ասորոց: - 82. Դարձեալ վերստին հրաճուանօք ոռոգեալ լինի պատմութեան աստ սակս բարձրագահ, համաթոռ, ճոխազգի ազգապետութեանն Արծրունեացս, /76/ մեծ զարմի Սենեքերիմայ ծննդոց. – 78. և ոչ զոք թուլացուցանէր թագաւորել Զրուանայ, դաշնաւորել երդմամբ՝ մինչև որ ի կնոջէն Ըռեա որ ի Զրուանայ զարմիցն էր ծնեալ արու՝ անդէն ի ծննդեանն սատակէր. – 14. զի յայն վայր ոմանք ի զարմիցն Աշդահակայ Մարի բնակէին անդ, արք քաջք, կորովազէնք և դիպաղեղունք – 90. զի ո՞վ ոք այլ ճոխ քան զՍենեքերիմայսն, /94/ զոր համարձակախօսն Եսայիաս հրապարակէ առ Իսրայէլեան զարմն զսորայս մեծափառութիւն. – 96. Զուգակշիռ հաւասարութեամբ մարզպանն Հայոց Գուրգէն հրաշազան յօրինուածով շինէ զեկեղեցին ի քաղաքին Հադամակերտ ի Մեծն Աղբակ, ի բուն իշխանական սեփհականութեանն իշխանութեան զարմին Արծրունեաց – 396. յերկուց թագաւորազանց զաճմանն սեռի բերելով զբողբոջս զՍենեքերիմայն և զՄամգունեաց ճենազնւոյ, ի միասին զզուգամասն պայազատեալ գահընկալ թագաւորական զարմ - 300. նոցա հանեալ էր ի Գինունի ազգէն, ի զարմէ Մեժեժի Գնունոյ, ի Վասպուրական բաժնէ, նաև Բերկրի բաժին եղեալ էր Վասպուրականի. և դարձուցանէ անդէն առ բերկրացիսն – 382. պատմեաց նոցա զհանգամանս տեսլեանն … և դարձեալ զնորոգումն հայրապետութեան և թագաւորութեան ի նոյն զարմէ Արշակունեաց, և զգալուստ նեռինն, և զգալուստն Քրիստոսի, և զհանդերձեալ դատաստանացն, և զհատուցումն իւրաքանչիւր ըստ գործս իւր – 120.

ԶԱՐՄԱՆԱԼ - ,,տեսէք, արհամարհոտք, և զարմացարուք և եղծարուք – 200. և մերկ կապուտ կողոպուտ առնէր զնոսա, մինչև զարմանալ զօրավարին ընդ սորայս քաջութիւն՝ գրէ առ Միքայէլ թագաւորն Յունաց զեկուցանելով վասն նորա: - 302. Եւ քան ընդ ապստամբելն ի նմանէ՝ ընդ յոյժ անմտութեամբ գալն առ նա զարմացաւ: - 272. Լո՛ւր և զարմացի՛ր և աստանօր ևս առաւել, եթէ զիա՞րդ ողորմութիւն բարերարին՝ արդարադատ բարկութեանն յաղթէր – 28.

ԶԱՐՄԱՆԱԼԻ - և անծանօթ զարմանալի ծառոյն դէպք՝ ի միում աւուր ունել աճմունս փոյթ ընդ փոյթ. և դարձեալ սուզականութիւնս յանկարծօրէնս լինել – 50. Եւ զլեզուդ պղծութեամբ զոր սրէիր ի վերայ մեծազաւր թագաւորին՝ արդ նոր և զարմանալի վիրաւք դատեսցէ զքեզ քան զամենայն տիեզերս: - 164.

ԶԱՐՄԱՆԱԼԻՔ - Եւ թէ որպիսի օրինակաւ գալուստ նորա և պատերազմ վասն սորին իրաց, և արիական ձեռակերտացն շինուածք, որ և յոյժ արժանաւորք զարմանալեաց, և դարձեալ ապստամբութիւն Զրադաշտին և մահն Շամիրամայ և բան յուռթիցն որ զնմանէ – 44. ըստ այսմ զարմանալիք և Բաբելացւոցն Բէլայ ասացաւ – 38.

ԶԱՐՄԱՆՔ - Եւ զարմանք կալան զամենայն բազմութիւնն ի վերայ պնդութեան սրտին և զօրութեան ուժոյն և քաջութեան նահատակութեանն, զոր գործեաց երանելին Գէորգ. – 268. Եւ յանդուգն դիմեցուածովն ի վեր քան զզարմանս՝ այն ինչ ի քթթել ական դարձուցին /328/ զխրոսակսն, և զոազմն դաշիկ քակեցին և զյառաջագահ ախոյեանսն փայլակնահար արարեալ դիաթաւալ կացուցին – 330. յորում ոչ սակաւ քաջութիւն նահատակութեան զօրացն Հայոց, որ ի զարմանս կրթեաց զբովանդակ զօրս Պարսից բարբարոսօքն հանդերձ: - 66.

ԶԱՐՄԱՑՈՒՄՆ - առնէր և նշանս կախարդութեամբ և առ աչօք մինչև ի զարմացումն ամենեցուն: - 40. Բայց ես յանհունս ձգեմ զզարմացմանն յեղանակս, թէ զիա՞րդ բաւել տոկայր, անձանձրանալի բերելով զաշխատութեանն աճմունսն. – 308. Եւ նստէր անդ ի բացեայ ի

վերայ բլրի միջոջ տէր Մուշեղ որդի սպարապետին և կայր հիացեալ ահեղ և մեծ զարմացմամբ: - 284.

ԶԱՐՈՒԱՆԴ - Որպէս և պարսկային ձայնին ի Զրուանն անուն զՋարուանդն անուանեն: - 16.

ԶԱՐՍԷՍ - բայց կանոնեցի զանուանս ի մատենիս: Տիգրան. Ադրամելէք. Ներս. Ներսէխ. Մարոդ. Արշամ. Արշաւիր. Ասուդ: Պարսից թագաւորք. Քսերքսէս. Արտաշէս երկայնաձեռն. Դարեհ. Արտաշէս. Ողոքոս. Զարսէս. Դարեհ: Ապա Աղէքսանդրոս Փիլիպպեայ Մակեդոնացի տիեզերակալ թագաւոր: - 68.

ԶԱՒԱԿ - Բայց երկուք ոմանք ի զաւակէ Աշդահակայ ձերբակալ արարեալ Տիգրանայ առեալ ածէ ի Հայս. – 64. գուցէ յորժամ կատարիցեն զչարիսն զոր խորհեալ են ի վերայ քո, որպէս լուաք ի հաւատարմաց իւրեանց՝ օժանդակութեամբ Արտաշէսի մերժիցեն և զզարմ և զզաւակ քո ի թագաւորութենէ Ասորոց: - 82. Եւ արդ այսքի՞կ են փոխարէնք, զի ետուք յօժարութիւն նենգագործ խորհրդով՝ լինել յարգելանի, և առնել դիւր որսալ ի խնդրողաց անձին իմոյ և իմոց զաւակաց – 216. և արդ մեք զաւակ Աբրահամու եմք, և գիտէք դուք զխոստումնն /160/ որ առ Իսմայէլ հայրն մեր. – 162. Եւ դարձեալ՝ եթէ յարոյց ինձ Աստուած զաւակ այլ՝ փոխանակ Հաբէլի զոր սպան Կայէն: - 24. և կարիցես զիշխանս Հայոց կապանօք առ մեզ հասուցանել, մանաւանդ զիշխանն Վասպուրական զԱշոտ՝ քեզ և զաւակի քում տաց զերկիրն զայն ի ժառանգութիւն: - 184. Եւ կացին եպիսկոպոսապետք Հայոց յետ մահու սրբոյն Ներսէսի ոմանք ի զաւակէ Աղբիանոսի եպիսկոպոսի Բզնունեաց, առն պատուականի, Շահակ և Զաւէն և Ասպուրակէս – 108. Եւ յղէ պատգամ առ Թէոդորոս եղբայր Հայրակղի, ըստ այնմ որում Հրէայքն եղեն ձեռնտու, եթէ „զերկիրդ զայդ Աբրահամու խոստացաւ Աստուած և զաւակի նորա, և ի ձեռս նոցա էր բազում ժամանակս. – 160. և Նինոս ի զաւակէ Քամայ ըստ Արիսդոնեա Քաղդէացւոյ և ըստ Եւսեբեա Կեսարացւոյ և ըստ Մովսէսի Խորենացւոյ և ըստ Յուլիանու Աղիկառնացւոյ ստուգաբանի: - 14. իսկ եթէ ընդէ՞ր ոչ ի ծննդաբանութեան՝ վասն զի ոչ իսկ ունէր զաւակ Հաբէլ: - 26. Հաւաստիս այս մեզ Եւսեբիոս Կեսարացի, Յուլիանոս Աղիկառնացի՝ ստուգաբանեն զթագաւորս Ասորոց ի զաւակէ Սեմայ զաճմունս առնել, որպէս ի կանոնեալ սահմանէն իմանալ: - 14. որ կացեալ իշխան ի վերայ Տարունոյ ամս է՝ յաւելաւ առ հարս իւր, թողեալ զաւակ իւր Աշոտ անուն: - 342. որում պատուէր տուաւ չխառնակել յանիծեալ զաւակն Կայէնի. -26. Սահակայ առեալ ի պարգևի զաշխարհն՝ թողու զորդին զԱշոտ զլեառնակողմամբքն առաջին իւրեանց տէրութեանն՝ շինել, բնակել, ժառանգեցուցանել զերկիրն ի ժառանգութիւն իւրեանց ազգի ի զաւակ տանն Արծրունեաց: - 90.

ԶԱՒ ԳԵՏ - և բնակեցան յեզր գետոյն Զաւ կոչեցեալ: - 226.

ԶԱՒԷՆ - Եւ էր կացեալ եպիսկոպոսապետ Հայոց Զաւէն, զոր յառաջագոյն ասացաք, յետ չորրորդ ամի Շահակայ: - 110. Եւ կացին եպիսկոպոսապետք Հայոց յետ մահու սրբոյն Ներսէսի ոմանք ի զաւակէ Աղբիանոսի եպիսկոպոսի Բզնունեաց, առն պատուականի, Շահակ և Զաւէն և Ասպուրակէս – 108.

ԶԱՒՐ - և հարկացն արքունի կանգնեցան դիւանքն, զի այն Ե ամ բեկեալ հարկք և զաւրք ի յարքունէ Պարսից: - 116. և դաշիկ արարեալ յայնկոյս քան զՎանտոսպ, ի տեղւոջն արձանաշար քարակարկառ գոգաձև միջոցի երկուց բլրակաց, որ հայի յԵրիվարաց արկման դաշտն, ի վերայ Լեզւոյ գեաւղջն, որ զաւրացն գեղեցիկ առասպելաբանեն սպիանած վերայն սպանելոցն ի մանկանցն Շամիրամայ: - 334. և եթէ զաւր պիտոյ իցէ յօգնականութիւն՝ արձակեցից որչափ և կամիս. 152.

ԶԱՔԱՐԻԱՅ - Այս շարժումն սաստկագոյն քան որ եղև յամս Զաքարիայի Հայոց կաթողիկոսի, յետ Է ամի գերութեանն Հայոց: - 358. Բայց Դերենիկն կալեալ զնա պահէ ի զգուշութեան, ոչ ինչ ստնանել նմա, բաց ի կապանացն յորս արկեալ էր զնա, ըստ հատուցմանն բարւոյ. առ ձեռն պատրաստ կշռեաց նմա և օրհնեցաւ ի սրբոյն Զաքարիայէ: - 320. և ունի յոբելեանք Զ և ոլոմպիադր և ընդիքտիոնք, և Գ ամ հայրապետութեան Հայոց կաթողիկոսի տեառն Զաքարիայի, և մուտ եօթներորդ ամի, յորում կային յարքունիսն իշխանքն, ըստ

եօթնեկի չափոյ շարժման ժամանակաց. – 312. Ընդ այն ժամանակս տէր Զաքարիայ հանգեաւ ի Քրիստոս, կեցեալ ի հայրապետութեանն Հայոց ամս ԺԸ, և հաջորդէ փոխանակ նորա տէր Գէորգ: - 338. Կալան և զհայրապետն Զաքարիայ, և ի խնդիր անկեալ աստուածային սուրբ նշանին՝ սկսան զնոսա տանջել, մինչև զբազումս ի պաշտօնէիցն կառափեալ սատակեցին. – 142. յորում ժամանակի տէր Զաքարիայ ունէր զաթոռ հայրապետութեան Հայոց կաթողիկոսութեան – 310. Որպէս ընթեռնուս ի գիրս մարգարէականս զհանգամանս այսոցիկ. որպէս և ի վեցերորդ տեսլեանն Դանիէլի և Զաքարիայի բանագործութեանն – 398. Քանզի իբրև լուաւ երանելին Զաքարիայ, եթէ ըմբռնեցաւ Գուրգէն՝ փութացաւ և եկն հանդերձ եպիսկոպոսօք աշխարհին. – 320.

ԶԱՔԱՐԻԱՅ ՄԱՐԳԱՐԷ - Որպէս և առ Զաքարիայիւ մարգարէիւ շարժեալ մինչ ի լեառն Զիթենեաց: - 358.

ԶԲԱՂԵՑՈՒՑԱՆԵԼ - ոչ ինչ փոյթ զբաղեցուցանելով՝ /գրքում՝ զբազմացուցանելով/ հեշտասէր և անպատերազմասէր մտօք վարելով կեայր ի խաղաղութեան: - 44.

ԶԲԱՂՈՒՄՆ - Զի յառաջնումն ոչ ինչ գոյր հոգ ինչ զբաղմանց, և ոչ մի ինչ ըստ աշխարհաշէն /90/ խնամակալութեանց, կամ պատերազմասէր աշխատութեանց – 92. յայնժամ մերկացեալ և ի բաց եդեալ զաշխարհական պատրանաց զբաղումն՝ և էանց գնաց ի վեր քան զերևելիսս – 284.

ԶԲՕՍՆՈՒԼ - գայ դարձեալ ի տեղին զբօսնուլ ի նմա. – 86. ելանել ի գագաթն Ամրական անձաւին զբօսնուլ նովաւ առ վճարումն բաւականութեան, ըստ մասանց պիտոյից օժնդակութեան քաղաքայարդար ապարանից թագաւորական պաղատի իւրոյ ձեռակերտին – 392. Եւ ածեալ զտիկինն Սաթինիկ զբօսնուլ յաշնանային յեղանակս յամարաստուն գեղեցկաշէն յապարանս զարդարեալ բերդին: - 88. Եւ ելեալ ի տեղին սրբութեան և կատարեալ զաղօթսն՝ ելին շրջել զբօսնուլ յայլ ևս տեղիսն: - 100.

ԶԳԱԼ - և բայացեալքն եթէ գազանք և եթէ թռչունք, յորժամ զգան զջերմութիւն օդոյն ի հասարակել տունջեան և գիշերոյ՝ ի գարնանային եղանակի ելեալք յիւրաքանչիւր կայենից. – 188. երթեալ տուայտի ի դրան Մարաց Դարէհի, մինչ զգալ վասն նորա Երուանդայ. – 84. և յորժամ զգան ջերմութեանն՝ զուարթանան զուարճանան, հրճուին կայտռելով ի վեր փքալով հասանել ի ջերմագոյն վայրսն, ի ջրշիղջսն ծովափնեայս ջանան հասանել – 260.

ԶԳԱԼԻ - Իսկ սահմանք վայրիցն ահաւորք և զգալիք միանգամայն և արտաքոյ զգալեաց. – 52. քանզի արդարև զգալի և շօշափելի էր դրախտն, և ոչ իմանալի կամ ի մէջ երկուց աշխարհաց – 48.

ԶԳԱՅԱԿԱՆ - բարձրաճիչ աղաղակաւ քարոզեալ. իբրև բանիւ զբարբառ հնչեցուցեալ ազդեցուցանող իմացունակութեամբ, զգայական ազդարարութեամբ՝ զեկուցանել զպատրաստութիւն նիւթոյն առ կատարումն սրբոյ եկեղեցւոյն աւարտագործեալ: - 396. մասնաւոր ինչ մարգարէական ոգւով եղելում ի մարդն օժնդակ խորհրդածութեան արծարծել անդրէն ի ձեռն ապաշաւանացն զվրիպանացն կորուստ. ըստ այսմիկ և այլոց կենդանեացն զգայականօքն և թէ ունայնացելովք առ ի դոյզն ինչ զգուշաւորականս: - 22.

ԶԳԱՅԵԱԼ - և հեծելագունդ զօրացն Կայսկին զկնի նորա, զգացեալ զպատճառ ելիցն նորա ի բանակէն. որում ոչինչ գամագիտ կարացեալ լինել՝ դարձան ամօթալից կորակնեալք, յանգէտս համարեալ զինչ գործեցինն: - 342. Զայս զգացեալ Երուանդայ՝ ետ տանել զՍահակ կապանօք յԱրմաւիր. – 84. Ի նմին ժամու զգացեալ վասն նորա մեծ իշխանին Արծրունեաց Մերշապհոյ, որ յայնժամ ի Տմորեացն ամրանայր բերդի՝ յղէ առ նա ելանել գնալ ի սահմանացն յայնոցիկ. – 130.

ԶԳԱՅՈՒՑԱՆԵԼ - Եւ ինքն զԳրիգոր եղբօրորդի իւր հանդերձ ընտրելովք ոմաբք զօրաւորօք վառեալ ի զէն և յասպազէն արք Մ, զոր զգացուցին Աշոտի. – 330.

ԶԳԵՆՈՒԼ - և ընդարմացեալ արմատքն և բոյսքն զգենուլ սկսան զզօրութիւն – 268. զոր չառեալ յանձն սուրբ տիկնոջն Համազասպուհեայ՝ տանին հանեն ի բարձրաւանդակ ամրական բերդաքաղաքն, մերկանան ի հանդերձիցն, զի քրիստոսեան փառօքն զգեցցի. – 102.

Որպէս և այրս այս արար, անքակ և անմեկնելի զգեցաւ պատեանս յինքեան զզօրութիւն բանսարկուին: - 248.

ԶԳԵՍՏ - բայց և նշանակս և դրօշս փողփողել առաջի, և դնել թագ իշխանական ի գլուխ և զգեստս արքունականս զանձամբ. – 236. և զսակաւուց քան թէ յոլովից գրեաց անուանս ի յիշատակարանի անդ զՇահդոսդ, որ թարգմանի արքայասէր, և զԳոհշթաւդ, որ թարգմանի ներկագործ ծիրանեաց արքայական զգեստու, և զՇմաւոն եպիսկոպոս, վէմ եկեղեցւոյ Քրիստոսի ընդ նմին և այլ եպիսկոպոսք և քահանայք արք Ճ - 106. և է զգեստ նոցա ասուիս ի ծածկոյթ մերկութեանն, և օդ ոտիցն հնարաւորեն զձև կաւշկաց, ի մորթոց այծից կազմեալ – 192. Եւ որք մերձ առ պարսպօքն զճակատն վառէին և զմարտն գրգռէին՝ զգեստն ինքեանց յասուէից կազմեալ – 208. և փոխանակ զգեստու հարսանեաց զգեստ մկրտութեանն ծանուցեալ ցուցին, զոր ջրով և Հոգւովն սրբով զգեցեալ էին – 266. և փոխանակ զգեստու հարսանեաց զգեստ մկրտութեանն ծանուցեալ ցուցին, զոր ջրով և Հոգւովն սրբով զգեցեալ էին – 266. լի թունիւք սատանայական խորհրդոցն, ծածկեալ յաչս իշխանին գառնենի զգեստիւք ի հանդերձս ոչխարաց, և ներքոյքն զապականիչ գայլոցն բերելով զլրբութիւն – 210.

ԶԳԵՏՆԵԱԼ - Զայս ասելով, և յերեսն ի վայր ի վերայ մահճացն զգետնեալ՝ ի վայն և յեղուկն զողբոցն խառնուածսն յաճախագոյնս մանուածէր: - 388.

ԶԳԵՑԵԱԼ - Եւ Խոռեմայ առեալ զթագաւորութիւնն՝ յաւուր միում զգեցեալ էր հանդերձ թագաւորական և հեծեալ յերիվար արքունի, և շրջէր ի մէջ ամենայն զօրացն իւրոց, ցուցանել զինքն և քաջալերել զզօրսն. – 154. և վառեալ զինքեանս յընթացս պատերազմին, զգեցեալ զզրահս արդարութեան և պնդեալ զմէջս ճշմարտութեամբ – 252. և փոխանակ զգեստու հարսանեաց զգեստ մկրտութեանն ծանուցեալ ցուցին, զոր ջրով և Հոգւովն սրբով զգեցեալ էին – 266.

ԶԳԵՑՈՒՑԱՆԵԼ - Եւ զգեցոյց նոցա հանդերձս և կանգնեաց նշանակ իշխանական և էած սուսեր ընդ մէջ և կամար ականակապ և երիվար ընտիր մեծազարդ. – 314. Յայնժամ մերկասցի արեգակն զլոյս իւր ի քէն և զգեցուսցէ քեզ խաւար. – 148.

ԶԳՆԱԼ - Իբրև հեռացաւ թագաւորն զերկուց աւուրց ճանապարհ՝ Ապումբուան ելեալ ի ձիընթացիկ ասպարէզն զգնայր. – 368.

ԶԳՈՅՇ ԼԻՆԻԼ - Բայց զգոյշ լերուք, մի ՛գուցէ ոչ հաճեսցի Աստուած, և խնդրեսցէ ի ձէնջ զվրէժ արեան կոտորածի աշխարհի: - 144. ,,զգոյշ լեր, արիաբար մարտեաց, քաջապէս վառեաց, Քրիստոսի զինուորեաց: - 318.

ԶԳՈՒՇԱՆԱԼ - Ազդ լինէր յոմանց գրումն անյայտիցն, թէ ,,այս ոմանք այսորակ երիվարօք յայս նիշ նիւս կեղթում, ի մէջ բդեղի պահարանեալ նամակ տանին ընդ կողմն Ապահունեաց. արդ զգուշացիր ճանապարհիդ,,. - 340. այլ հրամայէր միայն զգուշանալ և ոչ ելանել պատերազմաւ ընդդէմ նոցա, մինչև տեսցէ զելս իրացն. – 162. Իսկ առաւելեալն իմաստութեամբ Աշոտ ոչ յանհոգս և յաներկիւղս կայր մնայր, այլ զգուշանալ հրամայէր ի խելս կամրջաց և յանապատս և ի կիրճս ձորոց: - 340.

ԶԳՈՒՇԱՑՈՒՑԱՆԵԼ - գրէ առ կողմանս Ասորեստանի զգուշացուցանելով՝ մի խառնել ընդ նեստորականսն. – 130. Եւ կալեալ զդեսպանսն հանին զթուղթսն, և զարսն պահեցին ի զգուշութեան, ոչինչ ումեք զգուշացուցանելով որ ինչ եղևն: - 340.

ԶԳՈՒՇԱՑՈՒՑԻՉ - ի խնամոտ և ի զգուշացուցիչ աներևութականացն պահպանեալ ըստ օրինակի ցանկոյ ամրագունի – 52.

ԶԳՈՒՇԱՒՈՐԱԿԱՆ - մասնաւոր ինչ մարգարէական ոգւով եղելում ի մարդն օժնդակ խորհրդածութեան արծարծել անդրէն ի ձեռն ապաշաւանացն զվրիպանացն կորուստ. ըստ այսմիկ և այլոց կենդանեացն զգայականօքն և թէ ունայնացելովք առ ի դոյզն ինչ զգուշաւորականս: - 22.

ԶԳՈՒՇԱՒՈՐՈՒԹԻՒՆ - Եւ ոչ արմատոցն միայն օտար և անիմանալի սարասիցն տիպք, այլ և աներևոյթ պահպանողական և անհպելի զգուշաւորութիւնն. – 50.

ԶԳՈՒՇՈՒԹԻՒՆ - և դուք ամենայն ուրեք ամրացեալ ի զգուշութիւն իբրև յամուր քաղաքի ընդ ձեռամբ իմով յանհոգս լեալ լինել ձեզ. – 214. Եւ կալեալ զդեսպանսն հանին զթուղթսն, և զարսն պահեցին ի զգուշութեան, ոչինչ ումեք զգուշացուցանելով որ ինչ եղևն: - 340. և շինեցին ապարանս ամուրս և պարսպեցին մեծաւ զգուշութեամբ. – 280. զի անպատերազմասէր և խաղաղասէր բարք նոցա յամուր զգուշութեան պահէր զնոսա. – 56. զոր և սուրբքն ասեն, եթէ ձայն դակուացն և բախումն խմբիցն առ ի հեղուսել զփայտսն՝ /28/ այնպէս իբրև յորոտման ամպոյ յամենեցունց հնչէր լսելիս, ի մօտաւորս և ի հեռաւորս, առ ի յերկիւղ և ի զգուշութիւն անզգամ ազգին, թերևս դարձցին և կեցցեն. – 30. զոր ընթերցասէրն Պտղոմէոս գրեալ և յարդարեալ ստուգաբանութեամբ, դնեն զգուշութեամբ ի դիւանապահ տունս գանձուց մինչև ի Կղէոպատրա կին, որպէս վերագոյնն գրեցաք: - 74. ըստ այսմիկ և այլ առասպելականք, և գիր մատենական ի նմանէ գրեալ և պահեալ ի Բաբելոնի բազում զգուշութեամբ. - 36. հեշտալիր առ զգուշութիւնն յօրինեալ՝ ի խորագոյնս ծովուն զպարիսպն յօրինեալ կազմէ: - 88. Նստան երկոքին կողմանքն պահել զպահպանութիւն իւրեանց մեծաւ զգուշութեամբ, և ետուն ժամ անսալ միմեանց՝ ոչ ելանել ի պատերազմ, մինչև եկեսցեն հրեշտակքն յարքայէ, զոր առաքեցինն: - 286. որ միապետեալ զամենայն, շինեալ քաղաք և տուն արքունի, վասն ամուր զգուշութեան արքունեաց, զԲաղդադ: - 168. որոյ գնացեալ առնու յինքն զԳագիկ և յղէ սպառազէն պատրաստութեամբ ի Վանտոսպ առ տիկինն Վասպուրական, և պահել ի զգուշութիւն: - 350. Բայց Դերենիկն կալեալ զնա պահէ ի զգուշութեան, ոչ ինչ ստնանել նմա, բաց ի կապանացն յորս արկեալ էր զնա, ըստ հատուցմանն բարւոյ. առ ձեռն պատրաստ կշռեաց նմա և օրհնեցաւ ի սրբոյն Զաքարիայէ: - 320. և գրեալ էր առ Բուխայ, զի մի՛ ինչ չարիս խորհիցի կամ գործիցէ առնն այնմիկ, այլ տացէ տանել զնա առ թագաւորն մեծաւ պատուով և զգուշութեամբ: - 288.

ԶԴԷՄ ՈՒՆԵԼ - „ոչ կարեմք զդէմ ունել անհնարին ուժոյ բռնութեանն արքունի – 216. և եբարձ զամենայն արս զօրութեանց, և ոչ ոք էր այնուհետև որ կարէր կալ ի կայի իւրում ունել զդէմ նորա – 238. Եւ ոչ կարացեալ ունել զդէմ զօրն Վահրամայ՝ փախստական լինէր առաջի զօրացն Յունաց. – 140. զի ասեն, թէ նոքա ի միջոյ բառնայցեն՝ ոչ ոք կարասցէ կալ ի կայի իւրում ունել զդէմ մեր: - 184. Զի թէպէտ և Գուրգէն մեծաւ զօրութեամբ ունէր զդէմ յարձակելոցն ի վերայ, որոց զիշխանականն ճեպէին հասանել գահ, կամ որ արտաքին տաճկական պատերազմունքն բռնաբար ի ներքս դիմէին՝ սակայն ոչ յապահովանայր դեռ երկիրն: - 316.

ԶԵԿՈՒՑԱՆԵԼ - Ապա յետ այսր զեկուցաւ նմա վասն Գուրգինի տիրելն Անձաւացեաց. – 330. Բայց Գուրգէն կասկած ունելով յԱշոտէ, թէ գուցէ իբրև զապստամբէ ումեմնէ զեկուցանիցէ զնմանէ առաջնորդին Տաճկաց՝ ել գնաց կեալ շրջաբերական յեղափոխմամբ, արիական քաջասրտութեամբ, սիրեցեալ ընդ բնաւ աշխարհաց: - 322. բարձրաճիչ աղաղակաւ քարոզեալ. իբրև բանիւ զբարբառ հնչեցուցեալ ազդեցուցանօղ իմացունակութեամբ, զգայական ազդարարութեամբ՝ զեկուցանել զպատրաստութիւն նիւթոյն առ կատարումն սրբոյ եկեղեցւոյն աւարտագործեալ: - 396. Եւ զչարեալ ընդ խափանումն խորհրդոցն իւրոց՝ ամբաստան յոյժ լինէր զԱշոտոյ հանդերձ թղթովք Տաճկաց, որք էին ի կողմանս Հայոց, բազում այն ինչ զոր ստութեամբ քան թէ ճշմարտութեամբ զեկուցանեն զնմանէ զգործս, և թէ հակառակս ևս թագաւորութեան քոյ բանընդդէմ լինի հանապազ: - 172. և իբրև զեկուցաւ նմա եղեալքն՝ դարձաւ անդրէն գնաց յիւր ճանապարհ: - 332. և մերկ կապուտ կողոպուտ առնէր զնոսա, մինչև զարմանալ զօրավարին ընդ սորայս քաջութիւն՝ գրէ առ Միքայէլ թագաւորն Յունաց զեկուցանելով վասն նորա: - 302. Եւ յետ աւուրց ինչ դարձեալ դառնայ Վահան ի Սամառայ, զեկուցանել Աշոտի որ ինչ գործեցաւն: - 310. Եւ քանզի հաւատացեալ էր զգաւառսն Բուխայի ի ձեռն սպարապետին Սմբատայ՝ գրէ առ ամիրայն Նախճաւանու Աբրահամ անուն, զեկուցանելով նմա զզօրացն Վասպուրականի. – 304. Զայս իմացեալ խորհրդականութիւն Քսերքսէս յԱդրամելեայ և Սանասարայ յորդւոցն Սենեքերիմայ՝ ապա գան առ Տիգրան

Հայոց թագաւոր և զեկուցանեն նմա վասն որոյ խորհի Աշղահակ. – 62. Իբրև զեկուցաւ նմա յոմանց զոր ինչ խորհի վասն նորա Աւշին /370/ … ելեալ գնաց մեկնեցաւ օգնութեամբ ի վերայ հասեալ գիշերոյն – 372. Յայնժամ իսկ և իսկ փութացեալ /գրքում՝փութեցեալ/ եհաս գուժկանն առ հոյակապն Աշոտ իշխանաց իշխան, զեկուցանելով նմա որ ինչ գործեցաւն: - 348. որք մատուցեալ առ սուրբն Սահակ զեկուցանել նմա զոր ինչ խորհինն, և թևակոխէին առ Պարսից արքայն, զոր և արարին /116/ իսկ. – 118. փութացոյց գիր պաղատանաց առ Տաճատ Ռշտունեաց տէր և առ Վախրիճ Անձաւացեաց տէր, զեկուցանել նոցա զեղեալսն: - 126. և զմտաւ ածեալ զքսութիւնն զոր զեկուցին զԱշոտոյ կորապաղատէ առ Դերանիկն, եթէ ստութեամբ և եթէ ճշմարտութեամբ՝ մեզ չէ յայտ: - 342.

ԶԵԿՈՒՑԵԱԼ - Եւ նորա զեկուցեալ վասն նորա Բուխայի՝ ասէ. ,,այրս այս Գուրգէն ի տոհմէն Արծրունեաց, այր քաջ և պատերազմող, ի յահէ քումմէ անցեալ գնացեալ զկողմամբքն Յունաց – 304.

ԶԵԿՈՒՑՈՒՄՆ - զի Գագիկ անցեալ ամրանայր ի ճախուկ բերդի, ի կասկածի կալով ի Դերանկէն, ըստ զեկուցմանն զոր ինչ գործեաց Հասան առ Դերանիկն: - 350. և նա արհամարհեալ յոչինչ համարեալ զզեկուցմանն, զամբարտաւանս բարբառեալ. – 330.

ԶԵՂԵԱԼ - անդ և տապանն շինեալ եղև և անհնարին չարեացն զեղեալ ի վերայ երկրի. – 30. Իսկ վասն ձեանն անկայուն զօրութեանն որ այն ինչ յամպոյն ի վայր զեղեալ լինին՝ հնարաւորեալ իւրեանց փայտս իբրև զանուրս չուանօք պարունակեալ շուրջ զոտամբք, դիւրաւ ընթանան ի վերայ ձեանն իբրև ընդ ցամաք երկիր: - 192.

ԶԵՂԽԻԼ - որք գնացին առ Վռամ, և ոչ առ Թէոդոս բարեպաշտ և զուգափառ քրիստոնեայ թագաւոր, զեղխեցան ամբարշտաբար առանց խորհրդոց: - 118.

ԶԵՂԾ - սա անառակութեամբ զեղծ և ապական յիրս թագաւորութեանն եղեալ – 58.

ԶԵՂԾԱԳՈՐԾ - որով զեղծագործ ապականութիւն նոցա յայտ առնէ, յուսակորոյս յայնմանէ, որ զպատիւ սիրոյ եցոյց ի նոսա՝ որդիս իւր ասելով – 28.

ԶԵՂՈՒԻԼ - և քամուածք ջրոյն որ ի ծործորացն ի վայր զեղուին՝ յարիւն դառնային ի բազմութենէ սպանելոցն. – 178.

ԶԵՂՋ - Բայց Աշոտ, իբրև եհաս ժամ ելիցն իւր յաշխարհէս՝ յանհունս բերեալ զզեղջ և զապաշաւանս յորդահոսան արտասուօք զխոստովանողականն ի դիմի հարեալ միջնորդութիւնն – 336.

ԶԵՆՈՆ - Սահակս այս այն Սահակ է, որոյ հրամանաւ գրեաց մեծ վարդապետն Մովսէս տիեզերահռչակեալ քերթողն զգիրս Պատմութեան Հայոց մեծաց, հրաշազան յօրինուածով, սկսեալ յԱդամայ մինչ ի կայսր Զենոն. – 122.

ԶԵՌՈՒՆ - այլ ի շարժելն իւրում՝ ահ առնուն ամենայն լողակք և գազանք ծովայինք, որոյ և կերակուր նոյն լողակք և զեռունք այլովք կենդանեօք: - 260.

ԶԵՏԵՂԵԱԼ - նա և զիւրեաւ տախտակափակ լանջապահս, թիկնապահս, զանգապանս, սռնապանս, գլխապանս, որ գրեթէ բովանդակ պղնձեղէնս զնա իմանալ թուէր, և զետեղեալ բլրաձև զօրու անմատչելի կարծելով. – 64. Եւ անդ ի միջոց գմբեթիւն ղօղեալ սալարեալ սարսռալից դողմամբ զետեղեալ լինէր: - 190.

ԶԵՏԵՂԵԼ - և հասեալ ի տեղի ապառաժ քուաւոր՝ անդէն զետեղէր և զգրաստն: - 34. Իբրև ստուգեաց զազգն, զգաւառն, զաշխարհն, զպատճառ հատուածին, զզետեղելն, զիարդն, զորպէսն, զեղանակն, զդիպուածն, զպատահն և զայլն ամենայն՝ խնդրէ զնա Վաղարշակ յԱրշակայ և առնու ածէ զնա ընդ իւր ի Հայս – 72.

ԶԵՏԵՂԻԼ - և երթայ զետեղի ի Նախճաւանն աւանի յոստանին Վասպուրական աշխարհին: - 84.

ԶԵՐԾ - բազում ունելով ինչս ի կոխակս բարձրաւանդակս և ի կիրճս նրբականս, ի զերծս և ի խոխոմս ձորոյն ի թոխ և ի բոխ երկրին անբնակ մարդկան յասպատակէ հինիցն Երուանդայ – 84.

ԶԵՐԾԱՆԵԼ - Անդ հանդիպեալ լինէր և երանելի եպիսկոպոսն Գրիգոր Ռշտունեաց վսամ. ոչ կարաց իւրայնովքն զերծանել, իբրև յայնժամ առղոթաւ/հավանաբար ,,աղօթել,, բայն է / ի

լեառն: - 358. և զբազմութիւն գերւոցն զերծանեն գնալ յամուրս երկրին: - 202. և զերծի զիս ի պարսաւանաց բարձրագունից: - 300. և մնացեալքն կէսքն փախեան երեսաց յո՛վ և կարաց ոք զերծանել – 400. և քակեցին զռազմն և աւերեցին զճակատն և լքին զմիմեանս, և թողին զպատերազմն և գնացին փախստական ամենայն այր յո՛վ և կարաց զերծանել. - 306. զի ոչ կարաց զերծանել գնալ յով և կամիցի – 84. զսա աղերսեալ տիկինն Վասպուրական Սեդայ, կին Աշոտի և դուստր Ապումրուանայ՝ զերծին զնա ի սրոյն Աւշնի: - 374. յորոց վերայ սուր եդեալ զբազումս սպանին և զնս բազումս վիրաւորեցին և զյոլովագոյնսն ի գերելոցն հանդերձ ընտանիւք իւրեանց զերծին ի նոցանէ և անցուցին ընդ պահակ ձորոյն յամրական կողմանս լերին: - 220.

ՋԵՐԾԵԱԼ - այր իւրաքանչիւր մազապուր զերծեալ փախստեայ գնացեալ հասին յաշխարհն իւրեանց: - 354. Անդ Բաբգեան և ասպետն մեծ Աշոտ նիզակակիցք միմեանց զերծեալ ի մեծ պատերազմէն՝ փութանակի մտին յաշխարհս Հայոց – 92. և սկսաւ Խոսրով արքայ ժողովել զմնացեալ նախարարս զօրացն և զզօրն, որ զերծեալ էին ի պատերազմէն: - 150. և անհնարին բեկմամբ խորտակեցաւ գունդն Հայոց, մինչև ի բազմացն սակաւուց հազիւ ուրեմն մազապուր զերծեալ՝ անկան յաւուր յայնմիկ ի տարապարտ պատերազմին արք անուանիք իբրև Շ - 402. և զերծեալքն փախստեայ անկանէին ի կողմանս կողմանս աշխարհաց, յաւեր դարձուցեալ զբնաւ աշխարհն, բայց ի լեռնայնոցն՝ որ յամուրս իւրեանց մնային ի լերինն Խոյթ անուանեալ: - 188. և ինքն Ովայ զերծեալ սակաւ ոմամբք գնաց փախստական ընդ կողմն Բերկրոյ: - 178. Եւ սկսան յաւելուլ ի վերայ չարեացն այլ չարիս, զի ընդ միմեանս մարտ և կռիւս դնէին յաղագս իշխանութեանն ցանկութեան, և ճեղքեցան ի միմեանց և զօրս գումարեցին ի զերծելոցն ի սրոյն և ի գերութենէն Բուխայի. – 298. զերծեալ ի բանտէն յոր տուանն՝ և գան հասանեն յերկիրս այս մեր, բերելով զաւետիս արձակման գերելոցն – 324. Իսկ իշխանն Վասպուրական, այն ինչ հուպ ընդ հուպ եկն ի ժամադրեալ տեղին. ընդ որ յոյժ ուրախացեալ թագաւորն, իբրև զերծեալ ի կասկածանացն, զոր ունէր յիշխանէն Սիւնեաց: - 382. որգունակ Խորէն /գրքում՝ խորէն/ և Աբրահամ խոստովանողքն Քրիստոսի ի պարսկայինն զերծեալ լլկանաց դառնագոյն կրիցն՝ զընդարձակութենէ նախարարացն Հայոց մատուցին ողջոյնս աւետաբերս՝ դարձուցանել տեառն զգերութիւն ժողովրդեան իւրոյ: - 324. Որոց դիպօղ ժամ գտեալ՝ արտաքս ելեալ ի բանակէն, զերծեալք իբրև զայծեամն ի հնարից որսորդաց՝ գնացին խաղաղութեամբ յիւրեանց տեղիս և զնա թողին լքեալ ամօթալից: - 344.

ՋՋՈՒԵԱԼ - Եւ զնախնին մեր Ադամ ոչ ասել առաջին մարդ, այլ այլոյ ումեմն որդի Շուռելայ, արըռտաբոյծ ուղտուց, զզուեալ յանծանօթ /գրքում՝յանծանոթ/ աշխարհի և անհաւատարիմ յայնմ գտեալ՝ հալածեալ եղև կնաւ իւրով ի միջոց երկրի – 48.

ՋԷՆ - ,,հապա, քաջք, վառեալ ի զէն և յասպազէն, արիաբար մարտիցուք. – 134. այլ տեսից զքեզ զինու և աղեղամբ և սրով, քաջ արամբք և ընտիր երիվարօք.– 278. Ապա բարեկամացեալ ընդ Աբգարու թագաւորի Հայոց և ընդ մեծ զօրավարին Խուրանայ Արծրունւոյ՝ յղէ նմա պատարագս և առնու յօգնականութիւն զԽուրէն Արծրունի, զայր իմաստուն և քաջամարտիկ, կորովի յաղեղն և ի զէն և յասպազէն. - 78. գունդ կազմեալ ռազմ արարեալ զբոլոր դաշտաձև հովիտն ի ներքս փակէր, վառեալք զինու և ամենայն պատրաստութեամբ ընդդէմ գնդին Հայոց: - 172. Դարձեալ զՍողոմոն Բագրատունի վառեալ ի զէն սատանայական՝ յղէ առ նա բազում անգամ զնոյն խորհելով. – 318. և կարաւան գաղթականին տեսանէր զփայլիւն զինուցն և զշողալ սուսերացն, և այսր և անդր խուճապական լեալ հալածելս, իբրև զոչխարս ի գայլոց: - 228. և ձերբակալ արարեալ մերկանան ի զինէ և յասպազինէ և տանին կացուցանեն առաջի Կիւրոսի. – 66. և ահա աղաղակ և փողք և քնարք և ջնարք, և վառեալ զինու և սրոյ և ամենայն պատրաստութեամբ անհուն զօրացն, մինչ գրեթէ /գրքումէ՝գրէթէ/ ի հիմանց զլեառնն տապալել – 284. և աղաղակեալ զկնի նորա՝ զի թերևս ի լուր ձայնին և ի փայլումն զինուցն և ի շողալ սուսերին և ի խխնջիւն քաջ երիվարին և ի վազս երագութեանն ուժոյ ազդ լինիցի և դարձցի ի ձայն նոցա և ծանիցէ, և դարձցի ի կորստական ճանապարհէն –

228. և առանց զինու խոցոտեցաւ – 250. և աստի և անտի երիվարի փորոյն տախտակագործ գրգեալ ըստ փորոյն չափու մածուցեալ ի ձև վահանի զգործ արուեստի զինուն ցուցանեն: - 208. և բանակեցաւ Ն արամբք, վառեալ ի զէն և յասպազէն, ի Նորագեօղ Ռշտունեաց: - 322. Եւ բարձեալ զօրքն Հայոց դիակապուտ արարեալ զզարդ և զզէնս զարի արանց և զքաջ երիվարաց, առեալ աւար բազում՝ գնան յիւրաքանչիւր տեղիս մեծաւ յաղթութեամբ: - 178. Եւ գրէ առ իշխանաց իշխան՝ ի բաց լքանել եթէ ունիցի ինչ անօգուտս խորհել, ապա թէ ոչ՝ տեսից զքեզ, ասէ, ի զէն և յասպազէն և ի ճակատամարտ. – 322. և եհաս ի վերայ նորա վառեալ զինու սպառազէն երիվարաց ընտիր հեծելովք այրուձիոյ: - 178. և եհար սատակեաց Ապումկդէմ ի միում ասպատակի Ը այր, և զերիվարս նոցա, և զէնս և զզարդ մերկեաց ի նոցանէ, եհար զայլազգիսն ի հարուածս մեծամեծս և ինքն դարձեալ ասպատակեաց զկնի նոցա: - 304. և են ստացեալ զէնս աշտեայս հանապազ կրելով ընդ ինքեանս, ի պատրաստութիւն գազանացն որք ի լերինն բնակեն: - 192. և զի մի մի թուիցէ յանուանէ զյաճախութիւն զինուցն և զսպառազէն կազմութեանցն զձիոցն և զհեծելոց նոցա. – 280. Եւ զօրացն քաջալերեալ ընթացան յիւրաքանչիւր զէնսն և հեծեալ յընտիրս երիվարացն՝ կացին ի հանդիպոջ և հանդիսացան գումարեցան ի մի վայր և պնդեցան կարգեցան մածեան հոլովեցան յինքեանս – 230. Եւ ի սաստիկ բախմանէ խուռն նիզակացն և ի զինուց փայլելոյ և շողալոյ սուսերացն և սրնգելոյ աղեղանցն լարելոյ՝ հրաձգութիւն իմն արտաքս ելանէր իբրև յամպոց ճայթմանէ – 232. և ի սաստիկ փայլմանէ զինուցն և սուսերացն շողալոյ, և ի փայլիւնն սպառազէն երիվարացն վառելոցն՝ զկարծիս բերէր զհրոյ վառեալ լերինն – 228. և իբրև զմի անձն, վառեալ ի զէն և ի սուր և ի ճակատամարտ՝ հասեալ յամուրս՝ տապալէր զզօրութիւն նոցա սրով և աղեղամբ, ի փայլիւն սուսերի և նիզակի և ի գիշերամարտ նահատակութեանց, ըստ նմանութեանն քաջ զօրավարին Իսրայէլի Յեսուայ կամ Գէդէովնի կամ թէ նոյն ինքն նահապետին Աբրահամու, ի վերայ հասեալ Քանանացւոց, զյաւէտ յաղթութեան նահատակութիւն նահատակեալ՝ և դառնայ մեծաւ յաղթութեամբ: - 312. և ինքն Աշխէթ զինեալ զինքն ի զէն և յասպազէն, զոր կարծեալ ոմանց երկաթեղէն պատկեր գոգցես զերիվարն և զհեծեալն, աչացն միայն ոչ գոլով ծածկոյթ. – 272. Եւ ինքն զԳրիգոր եղբօրորդի իւր հանդերձ ընտրելովք ոմաբք զօրաւորօք վառեալ ի զէն և յասպազէն արք Մ, զոր զգացուցին Աշոտի. – 330. Եւ ինքն իսկ գլխովին զօրավարն Բուհայ, հեծեալ յերիվարն, պնդեալ զինքն զինու ի պատերազմ ընդդէմ իշխանին, և զկորովին աղեղնաւորացն Ելիմացւոցն և զընտիրս հեծելոց նոցա ընդ ինքեան վառեալ ի ճակատի: - 208. Եւ իշխանն վառեալ զինքն բազում պատրաստութեամբ զինու և զօրօք ազատակոյտ գնդաւ իւրով, և ամենայն բնակ տերամբք իւրոյ իշխանութեանն, և խոյս առեալ շրջէր զկողմամբքն Մարդաստանի և Զորոյն հասկոյ -184. և հրամայեաց զինուց վառելոց զինուորաց պահել զնա – 220. և հրաման ետ զինել վառել ի զէն և ի զարդ և ի սուր, և զընտիրս երիվարացն յիւրեանց զէնսն պատրաստել: - 228. և հրաման ետ զինել վառել ի զէն և ի զարդ և ի սուր, և զընտիրս երիվարացն յիւրեանց զէնսն պատրաստել: - 228. Եւ մեկնեալ զզօրսն ի նմանէ ընդ կողմն Ապահունեաց, մերկ ի զինէ և յասպազինէ թողեալ, ոչ առնել այլ կողոպուտ, գնացին աղխիւ և երիվարօք իւրեանց: - 346. և մինչ չև հասեալ առ զօրավարն՝ եհան ընդ առաջ նորա գունդս գունդս վառեալ զինու և ընտրեալ երիվարօք – 288. և յաւարի առնուին զբանակետղն, դիակապուտ առնէին, ժողովէին աւար բազում, և կուտէին արծաթ և ոսկի յոյժ և զզէնս պատենազարդս, զզարդս և զզէնս արի արանց և զընտիրս երիվարաց և զզարդս նոցա. – 176. և յաւարի առնուին զբանակետղն, դիակապուտ առնէին, ժողովէին աւար բազում, և կուտէին արծաթ և ոսկի յոյժ և զզէնս պատենազարդս, զզարդս և զզէնս արի արանց և զընտիրս երիվարաց և զզարդս նոցա. – 176. Եւ նախարարքն Հայոց կրէին կիրս ծանրաբեռինս ի զէն և ի ճակատամարտ: - 134. և նոցա պարտասեալք ի ծանրութենէ զինուցն և ի ջերմութենէ տապոյ արեգականն և ի սաստկութենէ աւազոյն, որ ոչ ունէր զկայ ոտից, և ի հետևակագնացութենէն և ամենեքումբք թշուառացեալք՝ անկան ի ձեռս թշնամեացն –

162. և սուսեր ընդ մէջ ածեալ, և հեծուցեալ ի մեծազարդ ջորւոջ, և նժոյգս առաջի և զկնի ի զարդ և ի զէն սպառազինեալ և ձայնք փողոց և դոփիւնք թմբկաց և այլ երաժշտական գործոց հնչեցուցանէին շուրջանակի. – 236. և վառեալ ի զէն և յասպազէն՝ արձանացան իբրև զմի այր՝ և յանդուգն դիմացուածով խուռն յարձակմամբ հարեալ ի դիմի, ուր քաջքն այլազգեացն ճակատէին ընդ աջաթև /380/ կողմն. և պատառեցին զգունդն, և պարտեցին զախոյեանսն. – 382. զի թագաւորն Լիդէացւոց ասպազինեալ զերիվարն շուրջանակի պղնձի արկանելեօք յոտից մինչ ի գլուխ բովանդակ չթողեալ տեղի՝ անկոռւելի լինել զինուի – 64. զի թէ հնար իցէ՝ անյապաղ երագութեամբ անձամբ իւրով և զօրու և զինու ձեռնտու լիցի հասանել յօգնականութիւն նմա: - 172. Ընդ աւուրսն ընդ այնոսիկ … կազմեալ գունդ զինուորաց և ընտիրս այրուձիոց, վառեալ զինու բազում պատրաստութեամբ – 220. Իբրև եհաս գուժական առ մարզպանն Հայոց Գուրգէն՝ ելեալ զհետ նոցա Ռ արամբք, վառեալ ի զէն և յասպազէն, և գնացեալ եհաս յԱյլի գաւառ. – 402. մեք տացուք զԱշոտ ի ձեռս քո առանց զինու և մարտից և ճակատուց կազմութեան, և մի ինչ յայնոսիկ աշխատ լինիցիս. – 212. յաւուր միում … ետ հրաման իշխանն առնն կորովի եղբօր իւրոյ Աբասայ Հայոց սպարապետի՝ վառել պնդակազմ պատրաստութեամբ, զօրու և զինու և զարդու ամենայարդար հնարաւորութեամբ, որպէս օրէն է նահատակաց քաջ արանց – 344. Նոյնժամայն աճապարեալ աշտանակեալ ի նիւս նժոյգ երիվարին, զէն զանձամբ արկեալ, նիզակ ի ձեռն առեալ, խրախոյս ի ձայն բարձր բարձեալ առ իւր ազատագունդ վաշտն՝ ասէ՝ - 328. շռնջապահս ձիոցն և տաշտս գաւակացն և զանգապանս ի չորս կողմանս, ձգեալ և լանջացն զէն, և բարձրավիզ խրոխտանացն զրահս, և ոտնատորոփ փռնկալոյն մանեակս զանգակեալս, և մահիկս լուսնաձևս ի մէջ ճակատուն կապեալ – 208. և գրեթէ /գրքում՝ գրէթէ/ ոչ ամենևին ուրեք երևեցաւ այնպիսի ահաւոր տեսիլ զօրու և սպառազէն կազմութեան՝ ամենայն թագաւորաց, որ կացեալ էին ընդ ծագս տիեզերաց. զորոյ սաստիկ և ահագին որոտումնն և ճայթումնն և փայլիւն զինուցն, և որ ինչ յայնժամ զարդարեալ և զինեալ պատրաստեցան զօրքն Տաճկաց: - 284.

ՋԷՆԸՆԿԷՑ ԵՂԵԱԼ - և ելեալ Աղան գնաց առ սուրբն Սահակ, և զէնընկեց /ճիշտը՝զէնընկէց/ եղեալ առաջի նորա՝ մերկանայր զհանդերձն զինաւորական - 112.

ՋԺԹ - և նստան անդէն զաւուրս Թ և պատերազմեցան ընդ նոսա աւելի քան ՋԺԹ անգամ. – 276.

ՋԻ,ՋԻ՞ - դառնալ անդրէն ոչ կամէին, զի կարի սաստիկ ամօթս համարէր զգործեցեալսն, կալ տևել ժուժկալել ընդդէմ նոցա ոչ կամէին, զի բազում անկան ի զօրաց իւրեանց: - 276. և զի չզօրեաց կալ ընդդէմ նորա, ահ արկանէր, սպառնայր չար ևս կտտանօք լլկել զնոսա, ոտնատորփ լինելով փռնգայր իբրև զձի խստերախ: - 270. Եւ ինքն Բարձումայ ի չքմեղս լինելով՝ եկն ի Հայս յԱրզնարզիւն և յաշխարհն Մոկաց, զի անդ զնեստորական աղանդոցն սերմանիցէ սերմանս: - 130. զի անկեալ էր ի սիրտս նոցա հաւատ սուրբ առաքելոցն – 246. զի ոչ եթէ ատեաց զանօրէնն իբրև զանամօթն. զի քան զմեղանչելն առաւել չար այն է՝ չունել զինքն ընդ յանցաւորսն – 248. զի ոչ իսկ է կարողութիւն լռութեամբ ծածկել թաքուցանել անյայտ առնել զանհուն և զանբաւ վիշտս աղէտս եկեալ հասեալ մեզ: - 240. ,,բարի՛ է քեզ, թագաւոր Հայոց, ե՛կ այսր զի պսակեցից զքեզ ես սպարապետս,,. – 108. ,,և այս ևս քաջահաճոյ թուիցի քեզ, վեհդ և ամենեցուն գիտելիդ. և զի եղիցի ի մէջ քո և Դերենկիդ անկասկած միաւորութիւն՝ զդուստր քո տացես կնութեան Դերենկիդ, տիկնութեան Վասպուրականի,,: - 322. ,,զի աներևոյթքն աստուածայինք յարարածոց աստի, ասէ, իմացեալ տեսանին, այսինքն մշտնջենաւորութիւն և զօրութիւն և աստուածութիւն նորա – 54. ,,զի սրտիւ հաւատամք յարդարութիւն, և բերանով խոստովանիմք ի փրկութիւն,, , որպէս ասաց առաքեալն – 256. ,,ոչ միայն զի չես աստուած՝ այլ շուն ես դու, և երամակ շանց՝ որ զկնի քո տողեալ սահին,,: - 40. ,,որդեակ, ի վախճանելս իմում մի կայցես յայսմ աշխարհի, զի մի կորուսցես զկարգ քո ի մէջ անհաւատից, այլ երթիցես ի կողմանս Եգիպտոսի՝ բնակել ի մէջ բազմութեան եղբարց, զի շահեսցիս զոգիդ քո,,: - 162. ,,որդեակ, ի վախճանելս իմում մի կայցես յայսմ աշխարհի, զի մի կորուսցես զկարգ քո ի մէջ անհաւատից, այլ երթիցես ի կողմանս Եգիպտոսի՝

բնակել ի մէջ բազմութեան եղբարց, զի շահեսցիս զոգիդ քո,,: - 162. ,,վասն այնր ելի յաշխարհս, զի մի Գուրգէն բռնաբար յինքն կորզեալ ձգիցէ զամուրս աշխարհիս, և յինքն բռնաբար զզօրս քո յանգուցանիցէ: - 362. ամբարձին զաչս իւրեանց և տեսին, զի զկանայս և զմանկունս իւրեանց տեսին ընդ աշխարհական գերիսն: - 220. այլ բազմացան չարիք մեր, զի մեղաք առաջի տեառն Աստուծոյ մերոյ և յետս հարաք զիրաւունս պատուիրանաց նորա – 242. այլ և երկիւղ ոչ սակաւ ունէր զնա, զի բազում գունդք սուսերամերկաց շուրջանակի պահէին զնա: - 282. Այլ և ի ժամանակս հասելոց թշնամեաց յերկիրն իւրեանց՝ գան միաբան լեռնայինքն յօգնութիւն իշխանացն, զի են տիրասէրք: - 192. այլ զի բազում նեղութիւն և սուր, ի ձեռն այսր /46/ սատանայական ուսման՝ սպառեալ կործանեաց զերկիրս Հայոց – 48. այլ իբրև եմուտ Բուխայ յաշխարհս Վասպուրական՝ ել գնաց Գուրգէն առ Քուրդիկ Մամիկոնէից տէր ի Բագրևանդ գաւառ, և անդ լինէր, զի էր Քուրդիկ քեռի Գուրգինայ: - 302. Այլ ճշմարտագոյնք են Սողոմօնեանքն, զի ասէ, ,,վա՛յ միումն. յորժամ գլորիցէ, ո՞ յարուցանիցէ զնա,,. և եթէ ,,լաւ են երկուք քան զմի, զի եթէ միովն գլորիցի ոք՝ կանգնեսցի,,: - 354. Այլ ճշմարտագոյնք են Սողոմօնեանքն, զի ասէ, ,,վա՛յ միումն. յորժամ գլորիցէ, ո՞ յարուցանիցէ զնա,,. և եթէ ,,լաւ են երկուք քան զմի, զի եթէ միովն գլորիցի ոք՝ կանգնեսցի,,: - 354. այսր աղագաւ խնամ տարեալ թագաւորին կնոջն՝ զի ոչ ել առ Երուանդ և ոչ միով իւիք պաշտպանութեամբ: - 90. Անդէն փութով և անյապաղ երագութեամբ հրաման ետ, զի որ ոք և հաճոյ թուիցի Սմբատայ՝ մի ոք իշխեսցէ արգել լինել: - 218. ասէ, զի կացուցի թագաւոր ձեզ յազգէ և ի դենէ ձերմէ, մի՛ ծանր թուիցի ձեզ դառնալ անդրէն և ունել զիւրաքանչիւր ժառանգութիւն. – 110. ասէ. ,,թէ ոչ բառնաս կորուսանես ի միջոյ զերկուս նախարարութիւնդ՝ ոչ բարիոքագոյն քո թագաւորութեանդ խորհին խորհուրդ. զի ձեռն նոցա է ընդ Շապհոյ արքայից արքայի,,. – 98. ասէ՝ զի դայեկաբար զորդիսն Սանատրկոյ սնուցանէաք, և դու ի թագաւորելդ քոյ որոյ երդմունս արարեալ յԱրտեմի և յԱրամազդ աննկասկած կալ մնալ վասն որոյ երկիւղն ունէր: - 82. արդ տեսանեմք զերկնային մարմինն, զի կարգաւորաբար անդադար շարժութիւն ունի, այսինքն արեգակն և լուսինն և աստեղք և այլք նոյնպիսիք. – 54. արդ փութա պատահեաց նմա, զի մատնեաց զնա Աստուած ի ձեռս քո,,: - 352. Արձակէ առ Բագարատ, կոչողս պատճենիւք հանդերձ, զի եկեսցէ առ նա առանց պատճառանաց և երկիւղի: - 186. Բայց աղերսեալ թագաւորն զարս պատուականս, զՎասակ և զՏաճատ և զԳոտեր, որք էին ի մեծ նախարարութենէ տանն Արծրունեաց՝ զի զժողովն ընկալցին ընդ երից սուրբ ժողովոցն: - 132. Բայց անյայտք են եթէ կատարելանան, զի հազիւ սպիքն գան, ըստ որումն սրբազանի տրամաբանութեան: - 338. Բայց զի մի և մեք անկեալք լիցուք ի նոյն՝ ուսցուք ի յԱստուածաշունչ գրոց - 256. Բայց ոչ ետ տեղի Գուրգէն այսմ՝ յերկուց պատճառաց, մի՝ զի մի՛ ապստամբ երևեցայց Տաճկաց բռնաւորին – 316. Բայց տուաւ յաղթութիւնն այն մեծ ի ձեռն զօրավարին Ապումուսէի, զի լցցի զոր ասաց Տէր ի բերանոյ Ամովսայ Մարգարէի, ,,խորտակեցից զնիզակս Դամասկոսի,, , որում այժմ Դմիշկն կոչեն, ուր ելին զհետ Բուխայի: - 286. գրէ յականէ յանուանէ առ որ մնացեալն էին յաշխարհս յամուրս իւրեանց, զի փութով յիւրաքանչիւր տեղեաց առանց կասկածանաց և երկիւղի առ նա հասանիցեն – 296. դառնալ անդրէն ոչ կամէին, զի կարի սաստիկ ամօթս համարէր զգործեցեալսն, կալ տևել ժուժկալել ընդդէմ նոցա ոչ կամէին, զի բազում անկան ի զօրաց իւրեանց: - 276. Դարձեալ զի երկրպագէ հրոյ, և արեգական, որ է Հեփեստոս, մասն աստուծոյ ասելով, զիա՞րդ իցէ, զի գողն և ապիկարն իբրև զաստուած երկրպագիցի: - 52. դարձեալ զի թէ և գեցաւ ևս՝ այլ քաջութիւնք արութեանն Նինոսի, ըստ օրինակի Բէլայ, առաւել ամբարձաւ անձնասէր ամբարտաւանութեամբ – 44. դնէր ուխտս ընդ իշխանս աշխարհիս Հայոց՝ գնալ ըստ արժանի /180/ հաւատոցն Քրիստոսի, զի վկայեսցեն ըստ անուան քրիստոնէութեանն և գործքն: - 182. Դու աւադիկ ելեր մտար յերկիր Հայոց, ելեր ի կողմն թշնամեաց իմոց և ապստամբացդ զքեզ միաբանեցեր, զի յապաղեցեր հրամանաց իմոց: - 236. ես վաղ անարգեցի զքեզ, և ոչ փոքր ինչ երկիւղ կալայ ի սրտի իմում վասն քո, զի քամահելով ի վերայ քո՝ զզօրավարն քո հանդերձ զօրօքն ի սուր մատնեցի, և զաւար

նորա բաշխեցի, /294/ և յերկրորդումն ոչ փոքր նախճիրս համարեցի զօրացն քոց. – 296. ետ բերել փայտս, և եդեալ ի վերայ փայտին զերանելին Սողոմոն՝ և մօտ առ փայտն կացուցին զսուրբն Կահայ, զի գոնեայ մինն ի միւսոյ տանջանացն երկուցեալ հնազանդիցի հրամանի թագաւորին: - 292. և գրեալ էր առ Բուխայ, զի մի՛ ինչ չարիս խորհիցի կամ գործիցէ առնն այնմիկ, այլ տացէ տանել զնա առ թագաւորն մեծաւ պատուով և զգուշութեամբ: - 288. Եւ զԳագիկ որ և Ապումբուան՝ զնա ոստիկան կարգեաց ի վերայ աշխարհին, տեղապահութեամբ տիրել, զի կարի մատաղօրեայք էին որդիք Դերանկին. Աշոտ էր Թ ամաց, յորժամ մեռաւ Դերանիկն, Գագիկ էր Է ամաց, Գուրգէն Ե ամաց: - 354. և կորապաղատին ընդարձակեաց ելանել, զի երթիցէ ուր և կարասցէ հասանել ըստ յաջողելոյ իրին: - 348. Եւ հատաւ քուն յաչաց նորա, և ոչ ոք մտանէր և ելանէր առ նա զաւուրս Ժ, զի եմուտ ի սենեակ ամօթալի երեսօք. – 282. և հրաման պատուիրանի տայր յանդիման բազմութեանն, զի խրատու նորա լուիցեն, և հրամանի նորա անսայցեն: - 200. և տաց քեզ ագարակս, այգիս և ձիթենիս և սերմանս, զի վարեսցես և հնձեսցես, և մեք սիրով նայեսցուք ի քեզ: - 146. Եւ ահա դարձեալ ասեմ, չկայ ինչ քո. և զի մի կրիցես զոր ինչ խօսեցայ ընդ պատգամաւորս քո, և աւելի քան որոգել ջանար ընդ մեզ՝ զդոյն ընդունիցիս վտանգաւորս,,: - 280. և աղաղակեալ զկնի նորա՝ զի թերևս ի լուր ձայնին և ի փայլումն զինուցն և ի շողալ սուսերին և ի խխնջիւն քաջ երիվարին և ի վազս երագութեանն ուժոյ ազդ լինիցի և դարձցի ի ձայն նոցա և ծանիցէ, և դարձցի ի կորստական ճանապարհէն – 228. և աղերսեալ զիշխան Դերենիկ, զի լուծցէ զնա /320/ ի կապանացն: - 322. Եւ այս եղև, զի լցցի որ ասէ, ,,զարթի՛ր սուր ի վերայ հովուի և ի վերայ առն ընկերի նորա. – 238. Եւ անցանելով ընդ գաւառն Բզնունական գայ մտանէ ի Խլաթ. քանզի կամէր անսալ ժամու դիպողագունի, զի որսայցեն նենգութեամբ խաբել: -186. Եւ արդ այսոքի՞կ են փոխարէնք, զի ետուք յօժարութիւն նենգագործ խորհրդով՝ լինել յարգելանի, և առնել դիւր որսալ ի խնդրողաց անձին իմոյ և իմոց զաւակաց – 216. Եւ արդ զի այսոքիկ այսպէս իցեն՝ ո՛րպիսի ինչ առ մոխրապաշտսն առ այնս իմանալի է – 52. Եւ արդ յայտնի լիցի, զի որչափ բաւէ զօրութիւն իմ և իցեմ կենդանի՝ կացից ընդդէմ զօրութեամբ և ուժով տեառն Աստուծոյ, և ոչ տեսից զքեզ սիրով խաղաղութեան. – 278. Եւ Բուխայ հրամայեաց սպարապետին, զի աներկիւղ կացցէ մնասցէ Գուրգէն առ սպարապետին մեծաւ շնորհակալիւք: - 304. և դահճացն հանեալ զսուսերն՝ դիմեցին ի վերայ նոցա իբրև զգազանս արիւնարբուս, և ծեծէին սրովն, իբրև ոք զի հատանիցէ փայտ ի մայրս անտառախիտս հարեալ կացնաւ, և յանխնայ անողորմ յօշէին անդամ անդամ: - 266. և դաստիարակ առընթեր ունելով զբանն տէրունական … և թէ ,,զի՞նչ օգուտ իցէ մարդոյ, եթէ զաշխարհս ամենայն շահեսցի և զանձն իւր տուժեսցէ, կամ զի՞նչ տացէ մարդ փրկանս ընդ անձին իւրոյ. զի եկն որդի մարդոյ խնդրել և կեցուցանել զկորուսեալն,, - 264. Եւ եղև զի ամբարձ զաչս իւր և ետես, զի պնդեալ գայր հեծեալն զկնի նորա – 230. Եւ եղև զի ամբարձ զաչս իւր և ետես, զի պնդեալ գայր հեծեալն զկնի նորա – 230. Եւ եղև զի անցանէր ընդ այն Մուկաթլ ոմն ի Վանանդ կոչեցեալ ազատութենէ – 288. Եւ երկայնագոյնս է զամենայն բանս պղծութեան նորա շարագրել, զի յոյժ բազում է և ընդդիմակ Աստուծոյ: - 164. և երկից և երից և բազում անգամ զնոյն հաստատեցին երդմամբ, զի անվեհեր համարձակութեամբ եկեսցէ առ նոսա. – 226. Եւ զի առ այսոսիկ փոյթ եղև մեզ քննասիրութեամբ լինել հասու և ոչ զանց առնել – 18. Եւ զի զարբոցն իսկ ասացից բանս. եթէ զիարդ ամենեքեան սուրբքն որպէս ժառանգութիւն իմն հայրենի ընկալեալ այնպէս պատահեսցին հարք որդւոց աւանդելով զպահոցն պէտս. - 26. Եւ զի էր պաշարել նորա յայնժամ զքաղաքն Մանազկերտ Ապահունեաց աշխարհին, որ ի ձեռս Ապլբառայն էր, և ածեալ հասուցեալ մերձ ի պաշարումն. և ի հասանել գուժկանացն եթող զնոսա, տալով նոցա հրովարտակս ի խաղաղութիւն: -348. և զի էր վարժեալ ուսմամբ Աստուածաշունչ գրոց և ընդել և ծանոթ էր ճարտասանական հրահանգիցն՝ եդ առ յայն ժամու իմացական տեսութիւնն զերգս – 284. և զի թագաւորութիւնն Եբրայեցւոց յերկուս հակառակս բաժանեալ էր՝ հնազանդ իւր

արարեալ Փուայ Ասորեստանւոյ առնու հարկս ի Մանասէէ արքայէ հազար տաղանդ արծաթոյ: - 60. Եւ զի Ժ ազգացն շարք առանց ստութեան կան գրեալ յամենայն մատենադարս - 12. և զի ի գնալ Աշոտի թողեալ էր անդ զտիկինն Վասպուրական զՍետայ – 362. և զի հաւասարութիւն երից ազգացն, այսինքն որդւոցն Նոյի, կարգաւ կանոնեալ դրոշմեալ կան յոլովից գիրս ոչ է մեզ հարկաւոր զնոյն երկայնաբանութեամբ երկրորդել: - 12. Եւ զի հուպ առ հուպ են խառն աշխարհք երկոցունցն, և քաղաքն ի հովտաձև դաշտին՝ նպաստաւորէր խոշոշ վիրագին քաջասրտագոյնս լինել: - 352. Եւ զի մի երկայնեալ որ ինչ վասն նորա ապիրատ և ինքնակամ և անզիղջ և անխիղճ առանց պատկառանաց մոլորութիւն սորա լի անամօթութեամբ՝ի բաց դիցուք զսա ի միջոյ յիշատակի նախարարացն – 248. և զի մի մի թուիցէ յանուանէ զյաճախութիւն զինուցն և զսպառազէն կազմութեանցն զձիոցն և զհեծելոց նոցա. – 280. և զի մի՛ ճրագն եօթնաստեղն ընդ գրուանաւ զփայլումն լուսոյն ծածկիցէ – 204. և զի ոչ ըստ հրամանի նորա յօրինէին զպէսպէս պատրաստութեան ամրոցին - 214. և զի չև էր դարձեալ պատասխանի յարքայէն՝ հրաման եհաս ի կայսերէ առ Վարազդատ անյապաղ առ նա հասանել: - 110. Եւ զոր ինչ ոչ իմացեալ մեր՝ և ոչ գրել արժանի վարկաք, բայց միայն զի բարձրագոյնք և նախապատիւք ի թագաւորաց անտի էին: - 96. և զքեզ կորակնեալ ամօթալից ի պարտութիւն մատնիցին, որպէս զյառաջագոյն եկեալ հազարապետն արքունուստ, զի ոչ կարաց կալ ընդդէմ նոցա, և ոչ Ճ այր առ Ժ զօրացն Հայոց,,: - 214. Եւ է զի ի նուրբ և ի հուն տեղիս ջուրցն անկեալ՝ ի նմին խրեալ կան անշարժ, և դիւրաւ անկանիցի ի ձեռս որսորդաց. – 260. Եւ էին ի կասկածի ի մէջ բանակին ի հազարապետէն, զի յայտնի երևեալ լինէր զոր խորհէրն վասն նոցա Ահմատն: - 344. և ի դիմաց ձերոց երևի, զի զօրութիւն բազում գոյ ի ձեզ, զի այդչափ վնասս գործեալ է ձեր առ իս - 244. և ի դիմաց ձերոց երևի, զի զօրութիւն բազում գոյ ի ձեզ, զի այդչափ վնասս գործեալ է ձեր առ իս - 244. և ի ժամուն յայնմիկ մինչ առաւ ամրոցն և զըմբռնեալսն ստիպէին, զի որք ի բաց կացցեն ի Քրիստոսէ՝ և մի մեռցին – 222. և ինքն գնաց ի Միջագետս Ասորոց, զի կալեալ հաստատեսցէ ինքեան զքաղաքսն և զսահմանսն ամենայն, որ առ Խոսրովաւ և առ Մուրկաւ հաստատեալ էր: - 154. և ինքն մանկագոյն տիովք, ի ժամանակի անձնիշխանութեան լեալ ամաց ԺԵ, զի ,,մանկութիւն և անմտութիւն ընդունայնութիւն է,, , որպէս գրէ Սողոմոն – 346. և խնդրէր առնուլ զտէրունական կնիքն, զի կատարեալ լիցի ի գործս պատուիրանաց Տեառն – 222. և կարգէ զդասս պաշտօնէից կատարել զպաշտօն Տեառն ի տուէ և ի գիշերի անձանձրոյթ աշխատութեամբ և առատաձեռն տեսչութեամբ աղքատաց, զի գտցեն զողորմութիւն ի Քրիստոսէ: - 122. և համոզեալ ի միջի նոցա յուղարկել զնոսա, զի էր քոյր Բագարատայ: - 176. և հարկացն արքունի կանգնեցան դիւանքն, զի այն Ե ամ բեկեալ հարկք և զաւրք ի յարքունէ Պարսից: - 116. Եւ հրաման ետ այնուհետև, զի զբազմութիւն գերելոցն վաճառակուր արասցեն յազգս ազգս ում և հաճոյ թուիցի. – 240. Եւ հրաման տուեալ ընդ ամենայն երկիրն՝ զի այր իւրաքանչիւր դարձցի յերկիր իւր և կալցի զիւր ժառանգութիւն – 234. և մանաւանդ զի հարկ փութոյ եղև մեզ գիտել զպայազատութիւնս երանաց տիրեցելոց մեր աշխարհի և որ յառաջ քան զնոսա թագաւորք Ասորեստանեայց, որդի /34/ ի հօրէ առեալ մինչև ի Սենեքարիմ արքայ, որ առ Եզեկիայիւ Երուսաղէմի արքայիւ եղեալ ազգապետ տանս Արծրունի: - 36. Եւ մեք ահա անփոյթ այդմ ամենայնի արարաք, զի յայտնի լիցի սէրն և գութ խնամոյն, զոր ասեմք ունել ընդ ձեզ: - 244. և միաբան զաղաղակ բարձեալ ասէին, ,,Աստուած, յօգնել մեզ նայեաց, և Տէր, յընկերել մեզ փութայ,, և որ ի կարգին, ,,զի վասն քո մեռանիմք զօրհանապազ, համարեցաք որպէս զոչխար ի սպանումն,,: - 266. Եւ միջնորդէր նմա հետևել հաւատոյ առաջնոյ Իսրայէլականացն, ,,զի թէ յայս եկեսցես՝ իմով հրամանաւ եղիցիս զօրագլուխ մեծ և առաջնորդ ամենայն տոհմի քո,,: - 158. և յաղագս անճոռնի և թանձր բլրաձև ծանրակիր մարմնոյ՝ և դժուարաշարժ զի վեր բերումն առնեն: - 260. Եւ յայնմ ժամանակի երթեալ ժողովէին ի քաղաքն Եդեսացւոց արք ԺԲՌ յամենայն ցեղիցն Իսրայէլի զի տեսին եթէ մեկնեցաւ անտի զօրն Պարսից, և թողին ի բաց

զքաղաքն. – 156. Եւ յաւել գրգռել ի սիրտս իւր արքայ Խոսրով. զի Տէր խստացուցանէր զսիրտ նորա, զի կործանելոց էր զթագաւորութիւն նորա. – 146. Եւ յաւել գրգռել ի սիրտս իւր արքայ Խոսրով. զի Տէր խստացուցանէր զսիրտ նորա, զի կործանելոց էր զթագաւորութիւն նորա. – 146. Եւ յաւուր միում լեալ նորա ի տխրութեան ի սպառնալեաց հօրեղբօրն իւրոյ՝ եկն եմուտ առ նա Ալի որդի Ապուտալպի և ասէ, զի՞նչ են պատճառքդ զի նստիս տխրեալ. – 160. և նորա համբարձեալ զձեռս իւր յերկինս յաղօթս կալ, զի կարասցէ յաղթել նահատակութեամբ և նոքա յոյժ ուրախ եղեն, զի վասն անուանն Տեառն արժանի եղեն մեռանել. – 222. Եւ ոչ ևս այնուհետև համարձակ ելանէին և մտանէին յաշխարհս Վասպուրական զօրքն Տաճկաց. զի անկաւ ահ սաստիկ ի վերայ նոցա: - 308. և որպէս պատմեն զնմանէ՝ զի դարձաւ յետս յԱստուծոյ և դարձոյց զերեսս իւր ի ճշմարիտ դաւանութենէ յերկրպագութենէ Աստուածորդւոյն, որպէս ասաց՝ դարձուցին յիս զթիկունս և ոչ զերեսս իւրեանց. – 248. և Սահակայ յղեալ առ Սմբատ՝ մի կալ մնալ ի լերինն, այլ փութալ ելանել դառնալ անդրէն ի հետևի զօրս անդ զի ոչ ելանէ, ասէ, Երուանդ զօրու ի սահմանս Մարաց. – 84. Եւ սկսան յաւելուլ ի վերայ չարեացն այլ չարիս, զի ընդ միմեանս մարտ և կռիւս դնէին յաղագս իշխանութեանն ցանկութեան, և ճեղքեցան ի միմեանց և զօրս գումարեցին ի զերծելոցն ի սրոյն և ի գերութենէն Բուխայի. – 298. և փութացոյց վասն նորա զի անյապաղ առ նա հասցէ, և ի մեծ պատիւս հիւպատութեան հասուսցէ զնա, և խաչանշան դրօշիւք ճոխասցի: - 316. Եօթներորդ՝ զի զվարկ փոխարինին լուեալ ի Տեառնէ՝ ոչ զարհուրեցաւ վերադարձիլ արտասուօք ի ջնջումն մեղացն. – 24. զայս ասէր, ոչ զի սոդոմայեցիք էին, այլ զի ընդ նոյն մեղս սոդոմական պղծութեանն զառածեալ լինէին՝ սոդոմայեցիս կոչէ: - 182. զայս ասէր, ոչ զի սոդոմայեցիք էին, այլ զի ընդ նոյն մեղս սոդոմական պղծութեանն զառածեալ լինէին՝ սոդոմայեցիս կոչէ: - 182. Զայս ոչ եթէ սակս ուրացութեան ինչ ամբաստան լինի զինքենէ, կամ վասն ժողովոցն, այլ զի ոչ յանդիմանեցին զթագաւորն, որ արտաքոյ օրինացն ամբարշտէր. – 258 զի անպատերազմասէր և խաղաղասէր բարք նոցա յամուր զգուշութեան պահէր զնոսա. – 56. զի ապականեաց ամենայն մարմին զճանապարհս իւր ի վերայ երկրի. – 28. զի դեռ ևս կենդանիք են բազումք ի նոցանէ: - 206. զի զոր անձանց՝ զնոյն և այլոց գիտասցեն հրաժարել ի զօշոտութենէն, որ առաջնոյ անկմանն եղև պատճառ – 26. զի մողեսք և կովիդայք, քարաթաթօշք և բնդռունք ի վերայ եկեալ կերան զորս նորա: - 46. Զի յառաջնումն ոչ ինչ գոյր հոգ ինչ զբաղմանց, և ոչ մի ինչ ըստ աշխարհաշէն /90/ խնամակալութեանց, կամ պատերազմասէր աշխատութեանց – 92. զի ողջախոհացն քան զամենայն չար տանջանս ամօթն է. – 248. Զի որովք բարձրացար և ամբարտաւանեցար՝ նոքիմբք խոնարհեացիս և անկցիս: - 148. զի սմա և եթ յաւելու ասել, եթէ ծնաւ ըստ կերպարանաց իւրոց, և ըստ պատկերի իւրոյ: - 24. զի սուսեր մերկ ի ձեռին ունի, և միայն առանձին գայ զհետ մեր – 230. զի տեղեակ էր մոլար վարդապետութեանն նոցա – 206. զի Քրիստոսն այն, որ զանձն իւր ոչ կարաց ապրեցուցանել ի Հրէից, այլ կալան զնա և սպանին ի վերայ փայտի՝ իսկ արդ զքեզ զիա՞րդ կարէ ապրեցուցանել ի ձեռաց իմոց: - 146. զի ,,ժողովուրդս այս շրթամբք պաշտեն զիս, և սիրտք իւրեանց հեռացեալ մեկուսի են յինէն,,. – 246. ,,ժողովուրդս այս, ասէ, շրթամբք իւրեանց պատուեն, և սիրտք իւրեանց հեռացեալ մեկուսի են յինէն,,: - 256 զի ,,ոչ կարէ ծառ պտուղ չար առնել, և ոչ ծառ չար՝ պտուղ բարի առնել,, , որպէս ասաց Փրկիչն – 256. զի /258/ սրտիւ հաւատամք յարդարութիւն և բերանով խոստովանիմք ի փրկութիւն,,: - 260. Զի ազգ բարբարոս խուժադուժ ի դիմի ելեալ գան տալ պատերազմ, կորզել յինքեան զգերին Հրէից: - 66. Զի ահա բարեկամացեալ էր Խուրան Հայր Վաչէի և եղբայր Արշաւրի ընդ Արտաշէսի Պարսից արքայի յերթալն Աբգարու ի Պարս, և եդեալ են դաշինս ի միջի. – 82. Զի ահա ես զարթուցանեմ ի վերայ ձեր զազգ դառն և զերագ, որ գնայ ընդ լայնութիւն երկրի, ժառանգել զխորանս որ ոչ իւր են, ահեղ և երևելի: - 200. զի ահա ևս եօթն օր՝ և ածից ջրհեղեղ ջուրց ի վերայ երկրի՝ սատակել զամենայն, յորում է շունչ կենդանի,,. – 30. զի ահա հասեալ է պատրաստութեամբ Տէր ի վերայ մեր, որպէս գրեաց

Մովսէս: - 196. զի Աղէքսանդր թէպէտ և լի իմաստութեամբ և հանճարով առաւելանայր՝ սակայն գազանանայր ընդդիմակացաց հրոսաւղացն. – 70. զի ամենայն մեծամեծք քաղաքին և գլխաւորք և իշխանք յարքունի նախարարութենէն անդ գումարեսցին – զի այնու դիւրաւ կարասցեն հերքել մերժել ի բաց կալ ի սուրբ հաւատոյ պարկեշտ կրօնից քրիստոնէութեան: - 124. զի այնու թերևս քաջ կարասցէ գլել զինքեամբ զզօրս Հայոց նախարարօքն հանդերձ. – 114. զի այնու հպատակութեամբ լցցէ զպաշտպանակս թագաւորին – 90. զի այնու փքացեալ առ հուրն յաւակնեալ զինքն տացէ. – 114. Զի այր քաջ է և պատերազմող, և միաբանք են որք ընդ նմա են զօրքն, և զանձինս ի մահ դնիցեն ի վերայ տանց և աշխարհաց և ազանց և տոհմից իւրեանց: - 212. զի անմեկնելի եղիցի Քրիստոս ի նոցանէ – 250. զի անսայթաք և աներկբայ հաստատուն հաւատով ընկալցին զվճիռ մարտիրոսական, համբերութեամբ բազմաւ և գոհացողական օրհնութեամբ – 266. զի անտի և անտի ի բաց կացցեն /12/ տարակուսական մտածութեանց ծուփս խորհրդոց ի քումմէ հանճարեղ խոհականալիր բանգիտութենէ: - 14. զի առ զօրաւորսն զօրաւոր դատաստան առաքէ Աստուած, իսկ խառնաղանջն ներելի ողորմութեան է: - 182. զի ասաց զօրավարն Աղուանից, եթէ ,,մի՛ կարծիցէ ոք զիս ապստամբ գոլ ի թագաւորէն և վասն այնր հարկանել զզօրսդ Ասորեստանի,,. – 286. զի ասեն, թէ նոքա ի միջոյ բառնայցեն՝ ոչ ոք կարասցէ կալ ի կայի իւրում ունել զդէմ մեր: - 184. զի ասէ, ,,որ աներկիւղն է՝ անկանի յորոգայթս և ի վիհս, և ի տեղիս ուր ոչ եղիցի այցելութիւն յաւիտենից,,: - 354. զի բռնացեալ բնակէր յամուրսն Սրինգ և Ջղմար. - 316. զի Գագիկ անցեալ ամրանայր ի Ճախուկ բերդի, ի կասկածի կալով ի Դերանկէն, ըստ զեկուցմանն զոր ինչ գործեաց Հասան առ Դերանիկն: - 350. զի գիտացին և ծանեան, թէ ունայնութիւն և ստութիւն են կեանք աշխարհիս և երազ դիւրամոռաց և ստուեր երագահոս – 264. զի գործ մի գործեմ ես յաւուրս ձեր, գործ որում ոչ հաւատայցէք, թէ ոք պատմեսցէ ձեզ: - 200. զի Գուրգէն եղբայր իշխանիս և այլ տոհմն Արծրունեաց և բազմութիւն ազատաց և ազատորդեաց և նոցուն զօրաց քաջաց Վասպուրական տէրութեանս … անցեալ գնացին ի կողմն Ատրպատականի – 212. Զի գրեալ է՝յաւելորդէ սրտի խօսի բերանն – 258. զի եթէ երկոքեան միով բարեպաշտութեամբ ոչ վառեսցին՝ ոչ ինչ օգուտ ի միոջէն բերցի: - 256. Զի եթէ ոչ ստուգութիւն սրտին և ճշմարտութիւն բերանոյն համամիտ առ հաւատոցն խոստովանութիւն ուղղակի մատչիցին՝ խոտան և ի բաց ընկենլի է և օտար ի սրբոյ առաքելական եկեղեցւոյ: - 258. զի եկեսցէ առ նոսա առանց պատկառանաց և երկիւղի և առանց միոյ իւիք կասկածանաց – 226. զի եղեալն՝ ի նիւթոյ և ի տեսակէ է, որ ի նիւթոյ է՝ ոչ է անմարմին, և ոչ անբաւ զօրութիւն ունի: - 54. զի ես տաց ձեզ բերան և իմաստութիւն, որում ոչ կարիցեն կալ հակառակ կամ տալ պատասպանի ամենայն հակառակորդքն ձեր,,: - 204. զի երկիր ի շինութեան լինելով և ի խաղաղութեան՝ և հարկք արքունի կանգուն երթիցեն: - 186. զի երկոքինն ուրացեալ էին ի Քրիստոսէ. – 106. զի զԱշոտ և զեղբարսն իւր փութով առ մեզ հասուսցես: - 236. զի զիշխանս աշխարհին Հայոց ի բաց բարձցէ յիւրաքանչիւր տէրութենէ – 184. զի զկապեալսն յառաջ մատուսցեն ի հանդէս հարցափորձի քննութեան: - 240. զի զմահուն սպառնացեալ հօրն պատուհաս՝ աչօք իւրովք տեսցէ – 22. զի զօրհասն ի վերայ ինքեանց առանց երկբայութեան հաստատեալ տեսանէին: - 312. զի է անդ լիճ մի մեծ մօտ ի տեղին, որ էր տեղի ասպարիսի ճակատամարտ զօրու նահատակութեան քաջացն մերոց իշխանացն Վասպուրականի – 226. զի էին ազգք ճոխք և երևելիք, քաջք և անուանիք, և ամենեցուն պատկառելիք – 98. զի էր աւերեալ առ նախնեօքն ի զօրացն Պարսից: - 228. զի էր կախեալ զփայտէ – 76. զի էր նորա /178/ գանձ բազում ի կարաս թաքուցեալ ի գետնափոր տան, ի ներքոյ դրացն ապարանից տան - 180. զի ըստ իւրաքանչիւր հասակաց՝ զմի մի ոք ի ձէնջ /214/ գթալիր սիրով մեծարէի այնչափ – 214. զի ըստ Պարսիկ ձայնի Մատ՝ Եկք թարգմանի. – 88. զի թագաւորն Լիդէացւոց ասպազինեալ զերիվարն շուրջանակի պղնձի արկանելեօք յոտից մինչ ի գլուխ բովանդակ չթողեալ տեղի՝ անկոռւելի լինել զինուի – 64. զի թանձրացաւ սիրտ ժողովրդեանս այսորիկ – 182. զի թերևս կարասցեն հաճել զմիտս զօրավարին՝ ի

բաց կալ ի խորհրդոցն զոր ինչ խորհեալ էր – 210. զի թերևս կարասցէ արկանել զերանելին ի ներքոյ պղտոր հրապուրեցուցիչս ժախուն մահածին հնազանդութեանն - 204. Զի թէ առագաստ նաւին յերկոսին կոյս ոչ պարզիցի՝ ոչ ուղղակի նաւարկութիւնն ճանապարհորդիցի, կամ թէ նաւաբեկեսցի իսկ ի բռնութենէ մրրկալից հողմոյն զալիսն կուտակելով: - 256. զի թէ բովանդակ զօրութիւն ունէր՝ ոչ հանդուրժէր անդադար շարժել զերկնային մարմինն. - 54. զի թէ ես յաղթեցից՝ երդուեալ ի մեծ աստուածն Որմազդ և յարեգակն և ի լուսին և ի հուր և ի ջուր և ի Միհր և յամենայն աստուածս՝ զի ձեզ տուեալ լիցի թագաւորութիւն Հայոց. – 138. զի թէ ես յաղթեցից՝ երդուեալ ի մեծ աստուածն Որմազդ և յարեգակն և ի լուսին և ի հուր և ի ջուր և ի Միհր և յամենայն աստուածս՝ զի ձեզ տուեալ լիցի թագաւորութիւն Հայոց. – 138. զի թէ ի բազմաց էր՝ այլայլակ և շփոթեալ լինէր ի բազմաց շարժումնն և ոչ կարգաւորաբար: - 54. Զի թէ իջանիցես յանդունդս ծովու՝ ձգեցից զցանցս իմ և ըմբռնեցից զքեզ. և ապա տեսանիցես զիս այնպէս՝ որպէս դու ոչ կամիցիս,,: - 146. զի թէ կարացից հարկանել զթշնամին իմ և կանգնել զթագաւորութիւնն իմ՝ ես եղէց քեզ որդի հնազանդութեան - 136. զի թէ հնար իցէ՝ անյապաղ երագութեամբ անձամբ իւրով և զօրու և զինու ձեռնտու լիցի հասանել յօգնականութիւն նմա: - 172. Զի թէ միոյ փայլատակման ընթացք և ճայթումն ամպոց բաւական է պակուցանել քաղել զուշեղութիւն ոգւոց, զի՞նչ ինչ յայնժամ կրէին ոգիք մնացելոցն յերկրի, ի սահանաբաց և յանդնդաքակ վրդովմանցն հոսելոց, նախ քան զջրհեղեղ ջուրց սատակումնն: - 32. զի թէպէտ դառնալով դարձան յայտնապէս յերկրպագութիւնն Քրիստոսի Աստուծոյ մերոյ՝ այլ զկանոնական սահմանադրութիւնսն ոչ բերելով ուղղակի, ոչ միայն Աշոտ, այլ և ամենայն իշխանքն Հայոց, որք գերադարձքն եղեն. – 336. Զի թէպէտ և Գուրգէն մեծաւ զօրութեամբ ունէր զդէմ յարձակելոցն ի վերայ, որոց զիշխանականն ճեպէին հասանել գահ, կամ որ արտաքին տաճկական պատերազմունքն բռնաբար ի ներքս դիմէին՝ սակայն ոչ յապահովանայր դեռ երկիրն: - 316. զի թէպէտ նեղեալք և չարչարեալք լինէաք պէսպէս կտտանօք ի զօրացն իսմայէլական ազգացն տաճկական տէրութենէն՝ այլ սակաւագոյնք և առ փոքր ինչ ժամանակս – 194. Զի ի հասանել ի վերայ նորա ցաւոցն մահաբերաց՝ ոչ հոգացաւ զմանկականն իւր տարաժամ ելսն յաշխարհէս – 386. զի ի բաց խլիցի ամբարշտութիւն աղանդոյն այնորիկ /254/ յեկեղեցեաց ուղղափառ հաւատացելոց. – 256. զի ի գնալ Արտաշէսի յայսմ տեղւոջէ՝ ոչ ևս յաւել ձեռն Երուանդայ տագնապել զնա – 88. զի ի փոնգալոյ նորա կայծակունք հատանին և ընդ ոնգունս նորա ելանէ ծուխ հնոցի կայծականց, որպէս գրեալ է ի Յովբ: - 246. ինքն երթիցէ յարքունիս կեղծոտելով զսաստկութիւն ձմեռնային ժամանակին ի վերայ եղելոյ և զխստութիւն հիւսիսային օդոյն սառնամանեաց, անընդել զինքն այնոցիկ վարկանելով: - 186. զի լայնագոյնս ևս վասն այսորիկ պատմէ մեծ քերթողն Մովսէս – 42. խորհուրդ յղութիւն է մտաց, և բան ծնունդ է իմացմանց. – 258. զի կատարեալ էր սիրտ նորա ընդ տեառն Աստուծոյ ամենակալի: - 316. զի կարասցէ անսայթաք հաւատով յաղթել հնարից բանսարկուին, որ ի ծածուկ և յայտնի պատերազմին – 206. զի կարասցէ խոտորել ի գաղտնիս զոգի սրբոյն, զզրահեալն Հոգւովն սրբոյ վերեկութեամբ – 204. զի կարծէր դիւրաւ արկանել զնոսա ի հաղբս պատրանաց զկնի դարձելոցն ի ճշմարտութենէն. – 250. զի կարծէր ևս համախորհ և միագործ զնիզակակիցսն իւր, զզօրսն և զզօրագլուխս զգունդ ազատացն, որ մտեալ էին ընդ նմա յանձաւն Նկանի: - 210. զի հարցեալ լինէր, թէ ո՞վ ոք, և յորո՞ց, և յումմէ՞, և ե՞րբ, և առ որո՞վք: - 72. զի հոգևոր էր պատերազմն և ոչ մարմնաւոր - 232. Զի հրամայեաց Դերանիկն ազատագունդ զօրացն իւրոցն դառնալ զկնի արքային տիրել բոլոր աշխարհին հանդերձ ամրոցօքն: - 342. զի մեռաւ նա ի ճանապարհի, ի կողմանս Ասորոց, յելանել նորա ի վերայ աշխարհիս Հայոց՝ չարչարեալ զսոսա որպէս խորհեցանն. – 184. զի մեր լիցի ժառանգութիւն նոցա. – 184. զի մի /68/ վատութիւն քան զքաջութիւն ճոխասցի, որ կանանցաբարոյիցն քաջ յարմարի, թէպէտ և յարիւն և յապաժոյժ զզօրսն կենացն առնուցուն,,: - 70. զի մի ամենևին ոք կայցէ յակաստանի, մանաւանդ զի ոչ ոք տևեաց ընդդիմանալ ձեռին նորա. – 296. զի մի ամենևին ոք կայցէ յակաստանի, մանաւանդ զի ոչ

ոք տեսաց ընդդիմանալ ձեռին նորա. – 296. զի մի հօտն առանց հովուի յանապատս և ի վիհս կորստեան թափառական յածիցին գայլոցն գահավիժութեամբ: - 104. զի մի յերկարաձգեալ զդեր հատուցական բանիս՝ յետնեալ գտցուք յառաջիկայ մեզ գրաւորութենէն, որ սակս պատմութեանցն են հանդէսք: - 260. զի մի սպառ սպուռ տապալիցի զօրութիւն շինուածոյ աշխարհի, ի բաց ընկենլով զծառայական պաշտօնատրութիւն կողմնակալաց, և քաղաքային անհաւատարիմ կամարարողաց, և հարկաց բեկման և զօրաց – 186. զի մի քաջասրտագոյն կարծիցի Մարն քան զՀայկազնեայն: - 62. Զի մինչ այսպէս կայր աշխարհս ի տարակուսի, և ակն ունէին գթութեանցն Աստուծոյ առատանալ, որպէս սովոր է Աստուած ի բարկութեան զողորմութիւն յիշել. - 374. զի մինչ ընդխոնեցաւ պատերազմն և դէմ առ դէմ ճակատէին՝ յանկարծակի այր մի ի նմանութիւն լուսոյ եկն եկաց ի մէջ ռազմի ճակատուն – 232. զի Յամանիկն թուղթս և դեսպանս մի զմիոյ կնի առնելով առ իշխանս աշխարհիս՝ զինքն յառաջանալ ի վերակացութիւն Հայոց – 340. զի յայն վայր ոմանք ի զարմիցն Աշդահակայ Մարի բնակէին անդ, արք քաջք, կորովազէնք և դիպաղեղունք – 90. զի յանմիետէ կալցի խաղաղութիւն ինքն և աշխարհ իւր – 226. զի յինքեանս գրաւեալ ընդ հարկաւ ծառայեցուցանէին զպաշտօնեայս սրբոյ Խաչին, մանաւանդ զի և զգլխաւոր վանացն զհայրն, որում Գրիգոր անուանէր՝ զնա կալեալ եդեալ ի խորափոր խաւարային բանտի: - 334. յինքեանս գրաւեալ ընդ հարկաւ ծառայեցուցանէին զպաշտօնեայս սրբոյ Խաչին, մանաւանդ զի և զգլխաւոր վանացն զհայրն, որում Գրիգոր անուանէր՝ զնա կալեալ եդեալ ի խորափոր խաւարային բանտի: - 334. զի յորմէ սակաւ մի կասկածս ունէր՝ անտի ևս աներկիւղ հաստատեցան: - 238. զի Նեստորականացն /գրքում՝ Նստորականացն/ և Քաղկեդոնականին է այս իմացմունք այլովքն ևս երկաբնակօք, որք բանին՝ տուն և տաղաւար զառ ի կուսէն առեալ մարմին դանդաջեալ ասացին, և ոչ միութեամբ բնութեամբ բանին մարմին լինելով. – 394. Զի նոքա վասն ի կանայսն մոլելոյ ընդ դստերսն Կայէնի խառնակելով՝ ջրով կործանեցան. – 336. զի Շամիրամն ամրանայր ի բնիկ իւրեանց քաղաքին Նինուէ - 16. զի ո՞վ ոք այլ ճոխ քան զՍենեքերիմայսն, /94/ զոր համարձակախօսն Եսայիաս հրապարակէ առ Իսրայէլեան զարմն զսորայս մեծափառութիւն. – 96. զի ոչ գոնեայ մի ոք գոյ, որ զճշմարտութիւնն վկայէ ուսուցանելով նորա, թող թէ զբազումս: - 246. զի ոչ գտանիցին ամենևին տալ պատասխանի: - 54. զի ոչ դուք նուազիցիք ի սովոյ, և ոչ հարկք արքունի կորնչիցին: - 144. զի ոչ եթէ ատեաց զանօրէնն իբրև զանամօթն. զի քան զմեղանչելն առաւել չար այն է՝ չունել զինքն ընդ յանցաւորսն – 248. զի ոչ եթէ ըստ հասարակաց սահմանաւոր մահու է, այլ ի վերայ սուրբ եկեղեցւոյ և ժողովրդեան Աստուծոյ,,: - 276. զի ոչ ևս ունիմ շատ խօսիլ ընդ քեզ,,: - 290. զի ոչ է ժամ մեզ զներբողականօքն զդեգերումն առնել, զպատմողական զրուցատրութեան կարգաւն զանց առնել: - 78. ոչ էր օրէն զկանանց ազգի թիւ ազգաբանութեան շարակարգել: - 16. Զի ոչ թէ վասն աստուածպաշտութեան ձերոյ կամ բարեգործութեան և սրբութեան արար Աստուած զայս այսպէս, այլ վասն մերոյ ամբարշտութեան ի Տէր. – 144. զի ոչ կամիմ զմահ մեղաւորի, որպէս բառնալ նորա ի չար ճանապարհէն և կեալ: - 30. զի ոչ կարաց զերծանել գնալ յով և կամիցի – 84. Զի ոչ միայն առ շինութիւնն՝ այլ և յարիւն և յապաժոյժ առաքինաբար զանձինս եդեալ ի վերայ խաշանցն մեռանել իբրև զքաջ հովիւ – 392. զի ոչ ումեք զայդ յանձին կալաւ Աղէքսանդրոս՝ կարծել տիրել ումեք երկրի բաց յԱղէքսանդրէ: - 70 զի ոչ ոք զօրեաց կալ ընդդէմ նորա: - 262. Զի որդիքն Աբդռհամանի, որ Կայսիկքն անուանին՝ ապստամբեալ էին ի պետութենէ թագաւորին տալ հարկս և զինուորել որպէս օրէն էր: - 380. զի ուսմամբ և անուամբ մի ևս ասիցի ունել հաղորդութիւն ընդ Ասորեստանեայս: - 46. զի ուր և իցէ՝ ածցեն զնա առ նա, թէ՛ պատիր խաբէութեամբ և խորամանկ կեղծաւորութեամբ և խարդախութեամբ, կամ պատերազմաւ և մեծամեծ զօրութեամբ, ամենայն պատրաստութեամբ, արքունի կարողութեամբ, որպէս զիարդ և կարասցեն՝ առ նա հասուցանեն: - 224 Զի չէ և չէ իսկ հնար, թէ որ հաւատայ բերանով՝ թէ ուրասցի շրթամբք – 256. զի պայծառ սուրբ և մաքուր ոսկին յիւրումն

կտակագրի պատկեր աստուածորդւոյն: - 252. զի սակաւաջան նպաստաւորութեամբն իբրև ընծայաբեր արար լինելով, և այնր աղագաւ յես բարձրագոյնսն ձգեսցի ըստ ասացելումն – 20. զի սոքա վնասակարք առ աստուծոյն եղեն: 46. զի ստուգեալ քննեցին՝ միոյ առն երկուս յինքեանց հարեալ ընկեցեալ էր, թող զվիրաւորսն և զկողոպուտ և զձերբակալսն – 234. Զի Վռամ և Յազկերտ զկէս աշխարհիս յինքեանս յանգուցեալ՝ զբոլոր ապա աշխարհիս զտիրելն յոխորտային: - 114 զի տարցի անյայտաբար զգողաւսն առ իւր և լցցէ զսովառնութիւն իւր: - 46. զի տացէ վրէժս անցիցն անցելոց ի նմանէ և ապստամբութեամբ ի պետութենէն Տաճկաց: - 202. զի տեսանեմ զքեզ այր պոռտաբան, /138/ զի յանձն քո խրախուսես և ոչ յԱստուած, ի բազմութիւն զօրաց և ի փղաց զօրութիւն. – 140. զի տեսցէ Տէր զնախատինսն զոր նախատեաց զնա թշնամին: - 146. զի տուն իմ տուն աղօթից կոչեսցի ամենայն հեթանոսաց, ասաց Տէր,,: - 224. զոր անյապաղ փութով զզօրսն հարաւայինս և հիւսիսայինս տալ ի ձեռս Քսերքսեայ և Արշէզայ որդւոյ նորուն Քսերքսեայ զի փութով անդր հասցեն. – 64. Զոր /336/ և ես ոչ արհամարհելով այսպանեմ զզղջմանն և զապաշաւանացն, զի ,,որ կարդասցէ զանուն Տեառն կեցցէ,,: - 338. զոր չառեալ յանձն սուրբ տիկնոջն Համազասպուհեայ՝ տանին հանեն ի բարձրաւանդակ ամրական բերդաքաղաքն, մերկանան ի հանդերձիցն, զի քրիստոսեան փառօքն զգեցցի. – 102. զորս եթող Բուխայ տիրել աշխարհին իւրեանց յաղագս յառաջագոյն մտերմութեան հօրն նոցա առ թագաւորն և առ զօրավարն, զի գնաց ըստ կամաց նոցա յամենայն ուժոյ զօրութեան մտաց իւրոց: - 298. զՎաչէ կացոյց ի դրան արքունի, զի ամենայն ոք նովաւ մտցէ և ելցէ յարքունիսն – 82. զօր գումարել, այրուձի կազմել, մեծամեծաց աշխարհատերանց պարգևս տալ, ի թիկունս և յօգնութիւն զամենեսեան կոչել, զի ըստ յանձնառութեան խրատու նորա նոյնպէս և գործեսցէ: - 346. Է՞ր աղագաւ կամ վասն ո՞յր պատճառանաց. զի ի քաջէն իմմէ և ի մեծ իշխանէն, ի քաջատոհմիկ և ի բարեփառ գլխոյն իմմէ զրկեալ լինիմ: - 384. ի մտի եդեալ զի այն ինչ, իբրև թէ ի վերին երեսս հաճիցեն զմիտս թագաւորին, և ի ներքին խորհուրդս պահիցեն զխոստովանութիւնն որ ի Քրիստոս. – 248. Իբրև ստուգեցաւ որ ինչ եղեալն էր՝ փութացան խնդրել ի քաղաքին և ի կիրճս ճանապարհին, յոր կողմ և աճապարեաց ոք, մինչ անցեալ գտին զհարեալն դիւի չարի, զի կայր դեռ կիսամեռ: - 378. Իսկ որք էին արգելեալք ի քաղաքն աղօթականս և պաղատանս առ մեծ իշխանն Աշոտ յղէին, զի համոզեսցէ ի մէջ նոցա զխաղաղութիւն. – 382. Իսկ եթէ Բէլ հրամանատու Արամազդայ իցէ՝ զիա՞րդ իցէ, զի Արամազդ ի գօտոյ իւրմէ խաշիցի հրամանաւ Բէլայ. – 32. Իսկ նա անփոյթ արարեալ երկրաւոր մեծութեանս, զի անցաւոր է՝ անսպառ և անվախճան և անծերանալի և անծախ և առանց ըմբռնելի ի գողոց խնդրեաց պարգևաց առիթ լինել. – 218. Իսկ նոցա ոչ յայտնեալ զխորհուրդ չարութեանն՝ դարձուցանեն զնա անդէն, զի մի յերկբայս եղիցի գալ առ նոսա. – 226. լսէին և նոքա, զի ձայն զօրու է և սաստիկ յոյժ: - 228. Կամ դարձո՝ զխորհեալ նոցա չարիս ի գլուխ իւրեանց, կամ թող զի ելցեն գնասցեն՝ յով և կամեսցին,,: - 82. Հինգերորդ՝ զի զծնօղսն անհնարին դառնութեամբ նոր սգովն ելից: - 24. հրաման տուեալ ամենեցուն, զի իբրև մերձ լինիցի գարնանային ժամանակն՝ փութով առանց յապաղանաց առ նա հասանիցեն ամենայն պատրաստութեամբ: - 262. մանաւանդ զի աւերեալ էր երկիրն յասպատակէ Պարսից, այն ինչ հուպ մեռանելն Երուանդայ և ընդ թագաւորելն Արտաշէսի: - 90. մանաւանդ զի բարեպաշտութիւն մեծ համարիմ սատակել զթշնամիսդ Աստուծոյ, որպէս Մովսէս զԱմաղէկ, և Յեսու զՔանանացիսն, և Սամուէլ զԱգագ, և Դաւիթ զԳողիաթ, և համանգամայն իսկ որպէս սատակեցին Իսրայէլացիքն զայլազգիսն – 278. մանաւանդ զի և թագաւորին նախ ակն ունէր զդառնալն ի կռոցն ի յերկրպագութիւն Քրիստոսի ճշմարտին Աստուծոյ. - 88. մանաւանդ զի յառաջագոյն /308/քան զմեզ այլոց ոմանց բանակարգեալ գրեալ հաւաքեալ է ի մի շար: - 310. մանաւանդ զի ոչ բաւականանամ իմով աղքատիմաստ բանգիտութեամբ զսորայս բացայայտել զչափ ներբողականին՝ այլոց ուժեղագունից և մտահարուստ արանց թողի. – 300. մանաւանդ զի փեսայացուցեալ էր Շապուհ զԳագիկ ի դուստր իւր. – 364. մանաւանդ մեծ

կաթողիկոսն Հայոց Գէորգ պաղատանս առնէր առ Դերանիկն, զի ընդարձակեսցէ նմա: - 336. Մատուցեալ առ թագաւորն Արշակ ասէ. ,,ոչ բարեօք իմացեալ առաջնոց թագաւորացն, զի ոչ կալան զտեղիս զի զայս ի բնակեալ ճոխութեան թագաւորական վայելչապէս խրախճանութեանց. – 100. Մատուցեալ առ թագաւորն Արշակ ասէ. ,,ոչ բարեօք իմացեալ առաջնոց թագաւորացն, զի ոչ կալան զտեղիս զի զայս ի բնակեալ ճոխութեան թագաւորական վայելչապէս խրախճանութեանց. – 100. մեռան ընդ Քրիստոսի, զի ընդ նմին թագաւորեսցեն: - 292. միայն զի եկեսցէ ի բան արքունի և մի ելցէ արտաքոյ կամաց թագաւորին. – 288. միանգամայն սաստկացուցանէր ի վերայ նորա զահարկութիւնն, զի գոնեայ այնու կարասցէ արդեօք վրիպեցուցանել ի ճշմարիտ հաւատոցն որ ի Հայր և յՈրդի և ի Հոգին սուրբ. – 294. մինչ զդի նորա գտելոցն յետ աւուրց ինչ ետ Բուխայ ԺՌ արծաթ, զի այնչափ պատուական էր այրն նմա: - 272. Յայնժամ բարկացեալ բռնաւորն հրամայեաց նախ զլեզուն հատանել զսրբոյն, զի մի յաճախիցէ առ հասարակ զթագաւորն և զօրէնսդիրն ինքեամբ հանդերձ անարգել. – 290. Յայնժամ թագաւորն փութացոյց դեսպանս մի զմիոյ կնի առ իշխանն Աշոտ, զի անյապաղ երագութեամբ հասցէ առ նա: - 382. Յղէ առ իշխանն, զի առանց և ոչ մի ինչ յապաղանաց փութացեալ հասցես այսր: - 348. Նա թէպէտ և զչարացաւ ընդ եղեալսն՝ սակայն զանգիտեաց թողուլ զնա երթալ, ակնածելով ի չարայոյզ ազգէն Իսմայէլի, զի դեռ ևս տիրէր բռնութիւնն, և գերեալքն և հայրն իւր սպարապետն յարքունիս էին: - 316. և կենդանականն որ ի նմա՝ ոչ ի բարի ինչ, այլ զի անհրաժեշտ չարին կալով անմահականս չարչարեսցի: - 22. Նախ առաջին՝ զի յետ աւուրց ինչ, իբր անագան իմն այլ ոչ նախապատիւ և կարևոր. և զայն արատաւոր, այլ ոչ անարատ՝ երևի յասացելոցն՝ եթէ ուղիղ մատուցանես և ուղիղ ոչ բաժանես՝ մեղար: - 24. Նոյն ժամայն ել հրաման յարքունուստ, զի զսուրբն Սողոմոն ի նմին փայտի սպանցեն, նետաձիգ լինել ի նա: - 292. նոցա ի մտի եդեալ էր, զի թէ գայցէ զհետ կոչնականացն՝ կալցուք զնա և զօրքն նորա լքանիցին, և դիւրաւ յաղթեսցուք նոցա: - 228. շուրջ փակեալ զՄեհուժանեան գնդիւն, զի մի ճողոպրել ինչ աճապարիցի: - 106. Ո՞չ ապաքէն դու իսկ տեսանէիր, զի մտանէի և ելանէի ի սուրբ եկեղեցին ընդ ամենայն հաւատացեալսն – 222. Ողբացէք բնակիչք կոտորելոցդ, զի նմանեցան ամենայն ժողովուրդք Քանանացւոց, և սատակեցան ամենեքին, որ հպարտացեալ էին արծաթով,,: - 180. որ մեծաւ ախորժանօք յանգուցանէ առ ինքն զնոսա իբրև արս պատուաւորս և քաջամարտիկս զօրաւոր զօրութեամբ, և մանաւանդ զի բազում անգամ զանուն յաղթութեան ստացեալ ունէին: - 366. որպէս ասաց Ամովս մարգարէ, ,,գերծիր և կտրեա ի վերայ փափուկ որդւոց քոց, լայնեա զխզումն քո իբրև զարծուոյ, զի գերեցան ի քէն,,: - 238. ուստի յայտ է թէ և անմարմին է, զի մարմինն՝ բովանդակեալ զօրութիւն ունի, և ոչ կարէ հանապազ շարժել զերկին կարգաւորաբար. – 54. ուրացան զանձինս և առին զխաչն Քրիստոսի և գնացին զհետ կոչողին, կորուսին զանձինս, այսինքն զկեանս աշխարհիս, զի զյաւիտենիցն գտցեն զկեանս. – 292. Սոյնպէս և այրն այն Յովսէփ զօրավարն Տաճկաց մնայր անցանել ձմերանն, զի ելցէ ի վերայ աշխարհիս Հայոց սրով և գերութեամբ և մեծամեծ հարուածովք և զմեծամեծս աշխարհիս խաղացուցանէ ի գերութիւն – 188. սուրբքն ոչ եթէ զերևելի տեղիս ախորժեն, զի թէ ոչ այսպէս, ո՞չ նոքա զնեղ և զանձուկ կեանս կան մահու չափ,,: - 100. Սոքա ամենեքեան վառեալք սպառազէն պատրաստութեամբ և բազմաձեռն առատալիր պատարագօք՝ գնացին, զի առեալ տարցեն մուծցեն զնա ի Դուին քաղաքն: - 340. ՎԱՍՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ԲԱԳԱՐԱՏԱՅ ԻՇԽԱՆԻՆ ՀԱՅՈՑ ԵԻ ՄՈՒՍԷԻ ԵԻ ՅԱՂԹՈՒԹԵԱՆՆ Ի ՁԵՌՆ ԱՇՈՏՈՑ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ ԻՇԽԱՆԻՆ, ՁԻ ԵԿՆ ՁՕՐԱՎԻԳՆ ԲԱԳԱՐԱՏԱՅ: -172. Վեցերորդ՝ զի խաւարաւ չարեացն պատրուակեալ զոգին, մինչև զԱստուած ևս անգէտ կարծելով՝ լրբենի երեսօք պատասխանէր – 24. Տե՛ս, ով սիրելի, զի թշնամանելն՝ լեզուին բարբառ է, և ոչ ներէ ստեղծիչն լեզուին զուրացութիւնն բարբառել, զի ոչ եթէ այլ ոք է որ ստեղծ զլեզուն, և այլ ոք է որ արար զսիրտն. – 258. Տե՛ս, ով սիրելի, զի թշնամանելն՝ լեզուին բարբառ է, և ոչ ներէ ստեղծիչն լեզուին զուրացութիւնն բարբառել,

զի ոչ եթէ այլ ոք է որ ստեղծ զլեզուն, և այլ ոք է որ արար զսիրտն. – 258. տես քեզէն և ծանի՛ր, զի ոչ գոյ վնաս իմ յիրիդ յայդմիկ կամ կարողութիւն արձակել զքեզ,,:- 238. քանզի խորհեցան թագաւորեցուցանել զնա ի վերայ Հայոց, զի էր այր սրտեայ և ուժեղ, քաջախորհուրդ և իմաստնախորհ, խոնարհ, առատաձեռն և զուարթամիտ: - 126. Քանզի ասէ, թէ ,,էին ոմանք յելելոց անտի հեթանոսաց, որք եկեալ էին յԵրուսաղէմ ի տօնն, զի երկիրպագանիցեն. – 76. Քանզի ոչ յարմարական՝ բարւոյն և չարին ի միասին առկայանալ, և ոչ լուսոյն ընդ խաւարի, և կամ զի առողջութեանն ընդ հիւանդութեան. – 258. Քանզի տեսեալ, ասէ, որդւոցն Աստուծոյ զդստերսն մարդկան զի գեղեցիկ էին՝ առին իւրեանց կանայս յամենեցունց զոր ընտրեցին: - 28. զի ի մատեանս առաջնոցն ունէին պատուէր ի թագաւորացն զնշանաւոր իրս քաջաց գրել, և ոչ վատաց. – 42. Չորրորդ՝ զի զեղբայր և ոչ զօտար ոք, զոր ոչ երկիւղն Աստուծոյ և ոչ գութ բնութեան մեղկացոյց լքմամբ զձեռս արիւնարբու գազանին: - 24. զի՞ կացուցեր զարսդ զայդ ի գործակալութիւն աշխարհի քո - 82. ,,արիք երթայք առ զօրավարն, տեսէք հաւաստի, և ի վերայ հասեալ գիտասցուք, թէ ի՞ւ իւիք կարասցուք հաճել զմիտս նորա ի խաղաղութիւն,,: - 214. ,,զի՞ զվայր կոխես զաստուծոյ զտուն տեսանել, Աղէքսանդրէ.– 50. Բայց զի՞ մի մի զիւրաքանչիւր հանդէս պատերազմաց նոցա գրեցից յականէ յանուանէ. ասացից կարճառօտ և համառօտեցից զբանս. – 286. ընդ կրունկն դարձիր, թշուառական, քանզի զերջանիկ կամարարացն կղզիս կոխել ոչ կարես. զի՞ յերկինս ելանել բռնանաս,,: - 50.

ՋԻ ԵՒ - ,,և ո՛վ տայր ինձ վկայել ի վերայ ճշմարտութեանն և մեռանել վասն անուանն Քրիստոսի, և զարիւն իմ փոխանակ արեանն Քրիստոսի հեղուլ և զմարմին իմ փոխանակ մարմնոյ նորա ի մահ մատնել և զչարչարանս իմ ընդ նորա չարչարանսն խառնել, զի և ընդ նմա փառաւորեցայց. – 290. և տուն Հայոց անուանեալ առաջին ասէին զՏարօն: - 366. ,,Ոչ, ասէ, վատագոյն մեք քան զԾանարսն եղիցուք, զի և ամուրս հզօրագոյնս և բարձրագոյնս քան զնոսա ունիմք և դիւրափակս՝ առ ի յունել զմուտս կրճիցն. – 276. Այնքան խնամոցն արժանի՝ զի և զվրէժ արեան նոցա առնուլ ի տանէն Սաւուղայ: - 32. Երկրորդ՝ զի և ոչ հաւատայր Գուրգէնի՝ ամբողջ պահելով, զոր ինչ միջնորդեն երդմամբ, զհօրն իւր կիրսն ի նորայն հօրէն կրեալ յուշ առնելով: - 316. Եւ արդ ասացից փոքր ի շատէ զյայտնի գործեցեալսն, զի և որ ինչ ընդ սոքօք և յետ սոցա ի գլուխ ելին հանգամանք իրաց՝ և այնմ առանց երկբայութեան հաւատասցես, իբրև ճշմարիտ և անսուտ պատմողի: - 240. և ծառայն զչարիս խորհեալ սպանանել զԴերենիկն և զաշխարհս նուաճել զիշխանութիւն Գուրգինի, զի և դիպող էր ժամն: - 320. Եւ վասն այսր ամենայնի հարկ է քեզ երթալ, զի և կարծիք ապստամբութեանդ բարձցի – 216. զի և այլազգիքն տեղի ետուն և փախեան յերեսաց Ապումկդէմայ. – 304. զի և աստուածատուր ասացելովքն թևակոխեսցուք յարտաքնոցն վէպս – 18. զի և եօթամբք իսկ շարագրեալք չարիւք ժանդացաւ վիրագն այն ի վնաս, թէ և միատեսակ երևեսցի. - 24. զի և զբազումս պատերազմեալ պէսպէս մարտիւք, և ոչ ինչ կարացեալ ստնանել անմարտնչելի ամրոցացն և քաջութիւն արանցն որ ի նմա՝ ողոքական բանիւք կոչէր ի հաւանութիւն: - 278. զի և զմատեանս առաջնոցն մեծասաստ ստիպով ի մի վայր գումարեալ՝ հրամայեաց այրել. – 44. զի և զմեծութիւն ընչից, որ ի գանձս իմ՝ ամի ամի յաւար տալով՝ զուարթամիտ սրտիւ ինձ համարէի զյափշտակութիւն տան իմոյ որ ի ձէնջ և առ ձեզ - 216. զի և զնախարարս Հայոց գրաւեսցէ մեծապատիւ սիրով – 366. զի և ի հօրէ իւրմէ ուսաւ՝ որդւոյն Սէթայ որդիս Աստուծոյ կոչիլ. – 26. -զի և հետք ևս յիշատակի այլոց անուանեաց մի երևեսցի, բայց ինքեան միայնոյ: - 44. զի և որք յոյժ ատեցողքն են մեր և թշնամիքն՝ տեսցեն և յամօթ լիցին, և բարեկամքն և սիրելիքն յոյժ ուրախ եղիցին,,: - 218. զի և տեղեակ էր դիւանական մատենագրութեանցն: - 90. Նախ զի և լեզուքն շփոթեալք՝ունէին զանմիաբանութեան փոյթս, կամ թէ զի և վատութիւնք քաջաց ապիհարկեալք ոչ գրեցաւ ի մատենագրաց անտի Քաղդէացւոց – 44. Նախ զի և լեզուքն շփոթեալք՝ունէին զանմիաբանութեան փոյթս, կամ թէ զի և վատութիւնք քաջաց ապիհարկեալք ոչ գրեցաւ ի մատենագրաց անտի Քաղդէացւոց – 44.

ՁԻԱ՛ՐԴ - Դարձեալ զի երկրպագէ հրոյ, և արեգական, որ է Հեփեստոս, մասն աստուծոյ ասելով, զիա՛րդ իցէ, զի գողն և ապիկարն իբրև զաստուած երկրպագիցի: - 52. Իսկ եթէ Բէլ հրամանատու Արամազդայ իցէ՝ զիա՛րդ իցէ, զի Արամազդ ի գօտոյ իւրմէ խաշիցի հրամանաւ Բէլայ. – 32. Այլ և զհուրն զիա՛րդ մասն աստուծոյ ոչ ամաչեն ասել - 52. Արդ եթէ զկէսն Որմզդի գողացաւ կաղն, և նա ոչ գիտաց, զիա՛րդ իցէ աստուած կիսատուրն և ի կաղէն գողացեալն: - 52. Արդ զիա՛րդ յետ բազում ժամանակաց զՆինոս ասեն շինել զՆինուէ, զայրն Շամիրամայ, որ ծնաւ զՆինուաս – 14. Բայց ես յանհունս ձգեմ զզարմացմանն յեղանակս, թէ զիա՛րդ բաւել տոկայր, անձանձրանալի բերելով զաշխատութեանն աճմունսն. – 308. զի Քրիստոսն այն, որ զանձն իւր ոչ կարաց ապրեցուցանել ի Հրէիցն, այլ կալան զնա և սպանին ի վերայ փայտի՝ իսկ արդ զքեզ զիա՛րդ կարէ ապրեցուցանել ի ձեռաց իմոց: - 146. Էո՛ւր և զարմացի՛ր և աստանօր ևս առաւել, եթէ զիա՛րդ ողորմութիւն բարերարին՝ արդարադատ բարկութեանն յաղթէր – 28. Սիմոն Սամարացի մատուցեալ առ Փիլիպպոս զհոգւոյն պարգևաց լեզուացն, և սրտին կեղծաւորութեամբ զիա՛րդ պատժապարտեցաւ. – 258. Ազդ եղև Գուրգենի վասն Դերենկին, և զիա՛րդ ընբռնեցաւ. – 322. Աստանօր ոչ է ինձ յայտ թէ զի՞նչ կամ ո՞րպէս դիպեցաւ լինել տոհմին Արծրունեաց, կամ ո՞ւր, կամ զիա՛րդ. – 94. Աստանօր սակաւուք բացայայտեցից զորպիսութիւն բնակչաց լերինն. թէ զիա՛րդ կամ ո՞րպիսի ոք են – 190. Եւ ընթանային ամենեքեան յաճիւռ՝ տեսանել զնոսա և ի վերայ հասանել, թէ զիա՛րդ ի գլուխ ելանիցէ ատեանն: - 242. Եւ զի զսրբոցն իսկ ասացից բանս. եթէ զիարդ ամենեքեան սուրբքն որպէս ժառանգութիւն իմն հայրենի ընկալեալ այնպէս պատահեսցին հարք որդւոց աւանդելով զպահոցն պէտս. - 26. և թէ զիա՛րդ գունդք գունդք հրեշտակաց մի զմիոյ կնի ելևելս առնեն, և զիա՛րդ փայլեալ նշանն տէրունական ահաւոր ճառագայթիւք – 284. և թէ զիա՛րդ գունդք գունդք հրեշտակաց մի զմիոյ կնի ելևելս առնեն, և զիա՛րդ փայլեալ նշանն տէրունական ահաւոր ճառագայթիւք – 284. և հիացմամբ առ նորայն հայելով, թէ ո՛վ ոք էր, և ո՛րպիսի, և ո՛րպէս կորեաւ՝ ասեն, „զիա՛րդ դաղարեաց պահանջողն, հանգեաւ տագնապողն. եթէ ո՛րպէս իջին ի դժոխս փառք նորա„: - 376. զի ուր և իցէ՝ ածցեն զնա առ նա, թէ՛ պատիր խաբէութեամբ և խորամանկ կեղծաւորութեամբ և խարդախութեամբ, կամ պատերազմաւ և մեծամեծ զօրութեամբ, ամենայն պատրաստութեամբ, արքունի կարողութեամբ, որպէս զիարդ և կարասցեն՝ առ նա հասուցանեն: - 224. Իբրև ստուգեաց զազգն, զգաւառն, զաշխարհն, զպատճառ հատուածին, զզետեղելն, զիարդն, զորպէսն, զեղանակն, զդիպուածն, զպատահն և զայլն ամենայն՝ խնդրէ զնա Վաղարշակ յԱրշակայ և առնու աձէ զնա ընդ իւր ի Հայս – 72. Նորա դարձեալ դառնայ ի Սամառայ և ծանուցանէ արքայի զոր ինչ գործեաց, և թէ զիա՛րդ են առ միմեանս միաբանութեամբ իշխանք Հայոց: - 172.

ՁԻՂՋ - յապաշաւանս և ի զիղջ առեկեալ ի վերայ երիտասարդական դիւրահոս արագաւէժ առ չարեացն միտեալ խակութիւն: - 386.

ՁԻՆԱԿԻՐ -մինչ ինքն Հերովդէս փախստեայ անձնապուր լեալ հանդերձ Ուրեղիանոսիւ զինակրաւ՝ անկանի առ քեռին իւր որդի Հիւրկանու քահանայի ի քաղաքն Ասկաղոն: - 78.

ՁԻՆԱՒՈՐԵԼ - մի գուցէ ոչ առնելով իմ զոր խնդրեն՝ առ կայսր հատուածեալ անկանիցին նախարարքն, հարկել և զինաւորել կայսեր: - 118.

ՁԻՆԵԱԼ - և գրեթէ /գրքում՝ գրէթէ/ ոչ ամենևին ուրեք երևեցաւ այնպիսի ահաւոր տեսիլ զօրու և սպառազէն կազմութեան՝ ամենայն թագաւորաց, որ կացեալ էին ընդ ծագս տիեզերաց. զորոյ սաստիկ և ահագին որոտումնն և ճայթումնն և փայլիւն զինուցն, և որ ինչ յայնժամ զարդարեալ և զինեալ պատրաստեցան զօրքն Տաճկաց: - 284. և դիմեցին քաջասրտագոյնս ի վերայ սուսերամերկք զինեալք ի մէջ ամբոխին, Արտաւազդ և Վասակ Մամիկոնեանք - 98. և զերիվարսն և զհեծեալս նոցա զինեալ սպառազինուք – 208. և զհետ նորա աճապարեալ արկանեն զնա ի յամրափակ զինեալ վաշտն ի մէջ փղացն. – 128. Եւ ըստ տոհմս ազգաց, ըստ թուոյ տերանցն Հայոց, կազմեաց զունդս վառեալս զօրականաց, զինեալ և պատրաստեալ. – 296. և ինքն Աշխէթ զինեալ զինքն ի զէն և յասպազէն, զոր

կարծեալ ոմանց երկաթեղէն պատկեր գոգցես զերիվարն և զհեծեալն, աչացն միայն ոչ գոլով ծածկոյթ. – 272. զայն զինեալ ի վերայ անձանց՝ սաստկացուցանեն զպատերազմն, աներկիւղ մնալով ի հրոյն տոչորմանէ. – 208. Իսկ Ապումուսէ վառեալ և զինեալ զինքն ամենայն զօրութեամբ իւրով՝ խաղաց էջ ի վերայ նոցա և եհար ի հարուածս մեծամեծս – 280.

ԶԻՆԵԼ - և հրաման ետ զինել վառել ի զէն և ի զարդ և ի սուր, և զընտիրս երիվարացն յիւրեանց զէնսն պատրաստել: - 228.

ԶԻՆՈՒՈՐ - գումար արարեալ են, ամենայն զինուոր ի գանձարանս ի տունս գանձուց թագաւորին, զոր դարձեալ ուղտիւք կրէին ընդ ինքեանս: - 282. Եւ զինուորք ի մահու վտանգ տուեալ զանձինս՝ի ղոյղս անցանել ի նաւէն ի կղզին. – 50. և առեալ ի ձեռանէ նորա զսուսերն շողացուցեալ՝ հայեցաւ /266/ յայսկոյս յայնկոյս և ասէ, ,,ո՛վ անարի վատ արանց և կանացի այր, թշուառական զինուոր, շուն անպիտան տեառն իւրոյ,, - 268. և բազմութիւն զինուորաց վառելոց աստի և անտի, և վարոցաւորք և սակրաւորք այսր անդր քշել զամբոխն դառոթեալ. – 236. Եւ զայլս ազգի ազգի զինուորք ունէին վաղերք և վակուրք, սուսերք և սուինք, տապարք և վիրգահանք, մեքենայք և ռմբաքարք, վահանք և նիզակք: - 208. և խեցգետի մի ել, կորզեալ ձգեաց ի ջուրն զինուորս ՃԴ: - 50. հրամայեաց զինուց վառելոց զինուորաց պահել զնա – 220. Ընդ աւուրսն ընդ այնոսիկ … կազմեալ գունդ զինուորաց և ընտիրս այրուձիոց, վառեալ զինու բազում պատրաստութեամբ – 220. Իսկ յետ անցանելոյ աւուրց ինչ՝ ետ տանել զնա առ թագաւորն, և ընդ նմա գունդս զինուորաց վառելոց և ընտիր այրուձիոց: - 288. Կաղղիսթենէս, իմ բարեկամ, խրատ ետ ինձ մտանել հանդերձ բարեկամօք Խ, և մանկամբք Ճ, և զինուորօք ՌՄ միայնովք: - 50.

ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ - Յաւելում պատկանաբար գրել քեզ զարիական նահատակութենէն հանդիսական ժուժկալութեամբ ողջախոհաբար կրթութեամբ զզինուորական երկասիրութեամբն յօժարաբար դեգերել զմարզպանութեանն արդիւնաւորել անուանակոչութիւն: - 398. և ելեալ Աղան գնաց առ սուրբն Սահակ, և զէնընկեց եղեալ առաջի նորա՝ մերկանայր զհանդերձն զինուորական /գրքում՝զինաւորական/- 112.

ԶԻՆՈՒՈՐԵԼ - ,,զգոյշ լեր, արիաբար մարտեաց, քաջապէս վառեաց, Քրիստոսի զինուորեաց: - 318. Զի որդիքն Աբդռհամանի, որ Կայսիկքն անուանին՝ ապստամբեալ էին ի պետութենէ թագաւորին տալ հարկս և զինուորել որպէս օրէն էր: - 380.

ԶԻՆՈՒՈՐՈՒԹԻՒՆ - Այլ թերևս զայս տարակուսիցիս առ իմաստն՝ յանդիմանակացոյցս առնել զԳուրգէն ընդ աշխատութեան յօժարագոյն առ մարմնական զինուորութեամբն լինել: - 398. Իսկ իշխանն Բագարատ … ել գնաց անխիղճ համարձակութեամբ, տիրասէր խորհրդովք, կատարել զսպաս զինուորութեան, ըստ աստուածեղէն պատուիրանին և ըստ թագաւորական հրամանին, զհետ եկելոյ կոչնականացն, ոչինչ իմացեալ զպատրանս խաբէութեան նորա, որով վրիպեացն: - 186. յոյր ձեռն բազում արութիւն նահատակութեան երևեալ լինէին ի մարտս պատերազմաց և ի հանդէսս ճակատեցելոց ի միայնամարտիկ զինուորութեան: - 170.

ԶԻՆՉ, ԶԻ՞ՆՉ - Այլ զմեզ գիտես ո՛վ ոք եմք և ուստի՛ և յումմէ, և թէ զի՛նչ անուն է մեր՝ կարի քաջայայտ է քեզ - 242. այլ որպէս արմատն՝ նոյնպէս և ուռն և պտուղն. եթէ սկիզբն սուրբ է՝ ապա և արմատն, ապա զինչ ուռն՝ նոյն և տեսակ: - 258. բայց զտոհմէն Արծրունեաց ոչ ինչ այլ իմանալ կարացաք, թէ զինչ գործ գործեալ նոցա, բայց միայն զխաղաղասէր կեանս կեալ առ թագաւորն և առ նախարարսն – 96. և հեծելագունդ զօրացն Կայսկին զկնի նորա, զգացեալ զպատճառ ելիցն նորա ի բանակէն. որում ոչինչ գամագիտ կարացեալ լինել՝ դարձան ամօթալից կորակնեալք, յանգէտս համարեալ զինչ գործեցինն: - 342. Եւ դարձեալ պատասխանի ասէ, մի՛ տալ տեղի՝ լսել հրամանի թագաւորին. թէ վտանգ ինչ հասանէ՝ կրել հանգոյն զինչ կրեցինն: - 132. Եւ մօտ առ սոցա կայ լեառն Կաւկասու, յորում բնակեն ազգք յամենայն լեզուաց բաժանեալք, ըստ ազգս ՀԲ ազգացն, և կեան առանց առաջնորդի, և օրէնս անձանց ունին ամենայն ոք որ զինչ կամի, և ընդ մայրս և ընդ քոյրս ամուսնանալ: - 274. և նովաւ վճարիցեն զի՛նչ պէտ և լինիցին ումեք ի

ԶՕՐՈՒԹԻՒՆ - զի տեսանեմ զքեզ այր պոռոտաբան, /138/ զի յանձն քո խրախուսես և ոչ յԱստուած, ի բազմութիւն զօրաց և ի փղաց զօրութիւն. – 140. ,,զի աներևոյթքն աստուածայինք յարարածոց աստի, ասէ, իմացեալ տեսանին, այսինքն մշտնջենաւորութիւն և զօրութիւն և աստուածութիւն նորա – 54. ,,յորժամ զայս նիշ համբոյր մատուցեալ համբուրեցից զնա՝ դուք զազդոյ վերս ի զօրութիւն նիզակի հարջիք զնա,,: - 352. Այլ ներքին և արտաքին յարձակմունքն ոչ կարէին ի ներքս դիմել մարտնչել ընդ անյաղթ զօրութեան զօրացելոյն ի Քրիստոսէ: - 308. այր գազանաբարոյ, վայրենամիտ, առատաձեռն առ արբումն մարդկան, այր զօրաւոր զօրութեամբ ի գործս պատերազմաց, ահարկու ազանց, կարողութիւն և ուժեղութիւն Աւշնի ի սորա ձեռս բաւականացեալ: - 374. Ապա ուրեմն յայտ է ըստ կարգի ասացելոցս, եթէ որ շարժէ զերկնային մարմինն՝ մի է և անբաւ զօրութիւն ունի և անմարմին է և անեղ է անապական, և ինքն ոչ յումեքէ, և այլք ամենեքեանք նովաւ. – 54. Արդ ելէք ի վերայ աշխարհիդ զօրացեալ զօրութեամբ, և ձեր լիցի երկիրդ ի ժառանգութիւն,,: - 362. բայց

պարտեալ եղև գունդքն Տաճկաց ի քաջէն Գուրգինայ և բեկաւ զօրութիւն նոցա: - 308. գրէ թուղթ հաւատոց առ Ղևոն կայսր Յունաց, և ընկալեալ ի նմանէ պատասխանիս՝ բազում ինչ ի Կուրանէ անտի իւրեանց արտաքս ընկէց զյոյժ առասպելագոյնն, քանզի ստուգապէս ծանեաւ զզօրութիւնն. – 166. Եթէ, որպէս ասացի, ի բաց գնաս յինէն՝ խաղաղութիւն է, և թէ ոչ՝ պատերազմ և կռիւ և ճակատամարտ … դու խաղալիկ՝ և մեք մանկունք, ի ձեռն առեալ զզօրութիւն քո՝ խաղալով խաղամք ընդ քեզ և ամենայն հպարտութիւն ամբարհաւաճութեան քո. – 280. Եւ դարձան ուժեղ զօրութեամբ և մեծաւ յաղթութեամբ: - 66. Եւ հանեալ զԱշոտ և զԳուրգէն ի կապանաց՝ տիրեցին զօրութեամբ մեծաւ իւրեանց բնիկ իշխանութեանն, և կէին յանհոգս յանկասկածս այնուհետև: - 370. և յերկիւղ կասկածանաց եղեալ, թէ իցէ ընդելուզեալ Տաճկաց՝ գտեալ զպահեստ գանձին ծախիցեն զզօրութիւն նորա: - 180. Եւ նա գնաց ընդդէմ նոցա սաստիկ զօրութեամբ. – 150. և առ Տիմոթէոս գրէ, հաւատարիմ գոլ զզօրութիւն հաւատոցն, ասէ, ,,թէ ուրանամք՝ և նա ուրանայ զմեզ. թէ չհաւատամք՝ նա հաւատարիմ մնայ,,: - 258. Եւ արդ յայտնի լիցի, զի որչափ բաւէ զօրութիւն իմ և իցեմ կենդանի՝ կացից ընդդէմ զօրութեամբ և ուժով տեառն Աստուծոյ, և ոչ տեսից զքեզ սիրով խաղաղութեան. – 278. Եւ արդ յայտնի լիցի, զի որչափ բաւէ զօրութիւն իմ և իցեմ կենդանի՝ կացից ընդդէմ զօրութեամբ և ուժով տեառն Աստուծոյ, և ոչ տեսից զքեզ սիրով խաղաղութեան. – 278. և արք զօրութեան էք դուք – 244. Եւ Դերանիկն զօրացեալ զօրութեամբ Քրստոսի, և հոյակապ և անուանի եղեալ ընդ բոլոր աշխարհ Հայաստանեայց՝ և խաղաղանայր երկիրս ի շփոթմանցն ի վերայ եկելոցն: - 318. Եւ եբարձ զամենայն արս զօրութեան յերկրէս Հայոց – 298. և եբարձ զամենայն արս զօրութեանց, և ոչ ոք էր այնուհետև որ կարէր կալ ի կայի իւրում ունել զդէմ նորա – 238. Եւ ելեալ գնաց եմուտ յամուրն Կանգուար, և կատարեալ զոր ինչ ախորժեացն՝ տիրեաց Անձաւացեաց մեծաւ զօրութեամբ: - 324. և եղեն իբրև զմի այր կամ թէ իբրև զվէմ մի բլրաձև, արձանացան կարծրացան պնդութեամբ՝ անմատոյց լինել ի նոսա զօրութիւն երկաթի. – 230. Եւ երթայր զհետ և սատակէր զնոսա անչափ զօրութեամբ. և բազումք այն էին, որ մեռանն ի սրոյն Գուրգէնի քան որ մնացինն. և զօրքն զհետ մտեալ մնացելոցն հանին յերկրէն իւրեանց: - 308. Եւ զարմանք կալան զամենայն բազմութիւնն ի վերայ պնդութեան սրտին և զօրութեան ուժոյն և քաջութեան նահատակութեանն, զոր գործեաց երանելին Գէորգ. – 268. և զզօրութիւն աղօթիցն իբրև զնետ ձգեալ ի լայնալիճ աղեղանէ ի նպատակն, հարեալ զկառափն սատանայի դիաթաւալ կացուցեալ յերկիր կործանէր: - 252. Եւ զոր օրինակ զնա վիշապ առակեցաք յաղագս սաստիկ ուժոյ զօրութեան ձեռին նորա – 262. և զփքինս կապարճիցն սպնգով ծածկեալ՝ զսատակչական զօրութիւնն թռուցանէր ընդդէմ սրբոյն –204. և ընդարմացեալ արմատքն և բոյսքն զգենուլ սկսան զզօրութիւն – 268. և թագաւորեալ ի Բաբելոնի սաստիկ զօրութեամբ – 40. և թէ ի պատերազմին յայնմիկ հասանիցէ զմահուն ընդունել զվճիռ՝ իսկ ըստ յաղթութեանն զխոստովանողականն ժառանգել անուն, զօրանալ զօրութեամբ ի զօրութիւն խաչին Քրիստոսի Աստուծոյ մերոյ: - 400. և թէ ի պատերազմին յայնմիկ հասանիցէ զմահուն ընդունել զվճիռ՝ իսկ ըստ յաղթութեանն զխոստովանողականն ժառանգել անուն, զօրանալ զօրութեամբ ի զօրութիւն խաչին Քրիստոսի Աստուծոյ մերոյ: - 400. և ի դիմաց ձերոց երևի, զի զօրութիւն բազում գոյ ի ձեզ, զի այդչափ վնասս գործեալ է ձեր առ իս - 244. և իբրև զմի անձն, վառեալ ի զէն և ի սուր և ի ճակատամարտ՝ հասեալ յամուրս՝ տապալէր զզօրութիւն նոցա սրով և աղեղամբ, ի փայլիւն սուսերի և նիզակի և ի գիշերամարտ նահատակութեանց, ըստ նմանութեանն քաջ զօրավարին Իսրայէլի Յեսուայ կամ Գէդէովնի կամ թէ նոյն ինքն նահապետին Աբրահամու, ի վերայ հասեալ Քանանացւոց, զյաւէտ յաղթութեան նահատակութիւն նահատակեալ՝ և դառնայ մեծաւ յաղթութեամբ: - 312. և հասեալ ի վերայ ծառոց ի բարձրաբերձ գագաթունսն տերևաթափ առնիցէ /260/ և ընդարմացուցանէ զզօրութիւն արմատոյն – 262. և հիւսիսային օդն շնչեալ սաստկացուցանէ զզօրութիւն ցրտոյն – 260. Եւ մինչդեռ կային կենդանի և զոհանային զՔրիստոսէ զանյաղթ զօրութենէն զոր զօրացոյց զսուրբսն մեծ ասպարիսի ի հոգևորական

պատերազմին՝ ևս առաւել բարկացեալ թագաւորն՝ իբրև զինոց վառեալ բորբոքէր. – 292. և յայտնի ոչ վայելչանայր կատարել զոր կամէրն, մի՝ վասն յաղթող մեծանուն գործոյն, նախատ անձին համարելով, երկրորդ՝ վասն վաշտիցն զօրութեան: - 326. Եւ յորժամ դարձեալ պակասիցէ զօրութիւն ջերմ օդոյ հարաւային հողմոյն/260/… յայնժամ վիշապն նեղի, շտապի, տագնապի բռնութեամբ ուժոյ զօրութեանն – 262. Եւ յորժամ դարձեալ պակասիցէ զօրութիւն ջերմ օդոյ հարաւային հողմոյն/260/… յայնժամ վիշապն նեղի, շտապի, տագնապի բռնութեամբ ուժոյ զօրութեանն – 262. և Նեբրովթայ յանդուգն զօրութեամբ հետամտեալ հրոսակաւ մեռանի ի Հայկայ, հարեալ նետիւ – 42. և ողբայր ի վերայ աշխարհիս Հայոց, ընդ նուազել զօրութեան թագաւորութեանս Հայոց և ընդ բռնազբօսութիւնն Պարսից: - 112. Եւ վասն զի մշտաշարժ է երկինն՝ յայտ է եթէ որ շարժէն զնա՝ անբաւ զօրութիւն ունի. – 54. Եւ տայր նմա զօր կայսերական յօգնականութիւն, և զՅովհան պատրիկ ի Հայոց կողմանէ, և զՆերսէս ստրատեղատ յԱսիւրոց, և զՄուշեղ այր քաջամարտիկ և հզօր զօրութեամբ, և զամենայն զօրս Յունաց և Հայոց, Վրաց և Աղուանից – 138. զի եղեալն՝ ի նիւթոյ և ի տեսակէ է, որ ի նիւթոյ է՝ ոչ է անմարմին, և ոչ անբաւ զօրութիւն ունի: - 54. զի թէ բովանդակ զօրութիւն ունէր՝ ոչ հանդուրժէր անդադար շարժել զերկնային մարմինն. - 54. Զի թէպէտ և Գուրգէն մեծաւ զօրութեամբ ունէր զդէմ յարձակելոցն ի վերայ, որոց զիշխանականն ճեպէին հասանել գահ, կամ որ արտաքին տաճկական պատերազմունքն բռնաբար ի ներքս դիմէին՝ սակայն ոչ յապահովանայր դեռ երկիրն: - 316. զի մի սպառ սպուռ տապալիցի զօրութիւն շինուածոյ աշխարհի, ի բաց ընկենլով զծառայական պաշտօնատրութիւն կողմնակալաց, և քաղաքային անհաւատարիմ կամարարողաց, և հարկաց բեկման և զօրաց – 186. զի ուր և իցէ՝ ածցեն զնա առ նա, թէ՛ պատիր խաբէութեամբ և խորամանկ կեղծաւորութեամբ և խարդախութեամբ, կամ պատերազմաւ և մեծամեծ զօրութեամբ, ամենայն պատրաստութեամբ, արքունի կարողութեամբ, որպէս զիարդ և կարասցեն՝ առ նա հասուցանեն: - 224. զոր ի զօրութիւն թիկանց ուժոյ բազկաց ճնշեալ և մածուցեալ ընդ միմեանս՝ զնրբութիւն մազոյն թաղ կոչեցին – 208. զորս եթող Բուխայ տիրել աշխարհին իւրեանց յաղագս յառաջագոյն մտերմութեան հօրն նոցա առ թագաւորն և առ զօրավարն, զի գնաց ըստ կամաց նոցա յամենայն ուժոյ զօրութեան մտաց իւրոց: - 298. ընդ որս էր և քաջն մեր Աշոտ ախոյեանայարձակ զօրութեամբ և ելեալ զհետ արքունի զօրուն. – 328. ի յաղթանդամութիւն ապաստանեալք, և ապարասանք հպարտացեալք ի զօրութիւն բազկի. – 28. իբրև շունք համրացեալք, որ ոչ կարեն հաջել, որպէս ասէ Եսայի մարգարէ, ընդդէմ Տեառն փոխելով զկատաղութիւն մահածին թիւնիցն սատակչական զօրութիւնն – 210. Իսկ Ապումուսէ վառեալ և զինեալ զինքն ամենայն զօրութեամբ իւրով՝ խաղաց էջ ի վերայ նոցա և եհար ի հարուածս մեծամեծս – 280. Իսկ աջ թևն Տաճկաց շարժեցին զզօրութիւնն Հայոց – 308. Իսկ Գուրգէն օր ըստ օրէ աճէր զօրութեամբ ի բազում քան թէ ի սակաւ տեղիս, զոր ի Տարօն և զոր յԱնձաւացիս և զոր յԱրզն և զոր առ այլ ամենայն ուրեք – 324. Իսկ ի շնչել հարաւային օդոյն, եռացուցանելով երկրի ի վեր զջերմային զօրութիւնն, զուարթացուցանելով անդնդական բերմամբն զընդարմացեալ արմատս և զբոյսս ի հիւսիսային սառնամանեաց օդոյն շնչելոյ - 188. Իսկ իբրև սկսաւ սպրդել մտանել ի ներքս երկպառակութիւնն ի մէջ միաբանութեանն, հեռացաւ մեկնեցաւ զնաց շնորհ աստուածատուր զօրութեանն. – 194. Իսկ վասն ձեանն անկայուն զօրութեանն որ այն ինչ յամպոյն ի վայր զեղեալ լինին՝ հնարաւորեալ իւրեանց փայտս իբրև զանուրս չուանօք պարունակեալ շուրջ զոտամբք, դիւրաւ ընթանան ի վերայ ձեանն իբրև ընդ ցամաք երկիր: - 192. ծանուցանէր զզօրութիւն իւրաքանչիւր աշխարհաց և զամուրս նոցա և զզօրութիւն պատերազմաց նոցա ըստ ազգս ազգս: - 270. ծանուցանէր զզօրութիւն իւրաքանչիւր աշխարհաց և զամուրս նոցա և զզօրութիւն պատերազմաց նոցա ըստ ազգս ազգս: - 270. կարծէր իւրով զօրութեամբ զօրանալ ի վերայ կործանմանն Հայոց, ի մոռացօնս եղեալ հատուցումն մեղաց մերոց ի ձեռանէ Տեառն, որպէս Իսրայէլին ի հնումն առ Սեդեկեաւ զՆաբուքոդոնոսորայն: - 326. հասեալ ի վերայ ծառոց մրգաբերաց, կամ ի

դիւրաձախելի բոյսս խոտոյ, այնպէս վատնեցին ծախեցին զզօրութիւն մարդկային ազգի ստացուածովք իւրեանց,,: - 240 յորում որջացեալ բունեալ էր սատանայ զօրութեամբ իւրով: - 200. շինեալ նորոգեաց և զեկեղեցին որ ի նմա յանուանակոչութիւն սուրբ Աստուածածնին Մարիամայ և զարդարեաց զնա մեծագանձ սպասուք և եդ ի նմա զԽաչն, զոր յիշեցաք վերագոյնն, յորոյ ձեռն ծանուցաւ զօրութիւնն հրաշագործ: - 390. որ մեծաւ ախորժանօք յանգուցանէ առ ինքն զնոսա իբրև արս պատուաւորս և քաջամարտիկս զօրաւոր զօրութեամբ, և մանաւանդ զի բազում անգամ զանուն յաղթութեան ստացեալ ունէին: - 366. որ յետ ՋԸ ամի Սենեքերիմ յառաջանայ ի գահ հայրենի իւրոյ թագաւորութեանն մեծաւ զօրութեամբ - 16. որոց յիշատակ նոցա եղիցի բազմաց նպաստ յարութիւն քաջութեան և ի զօրութիւն անարեանցն և ի յորդորումն քաջ նահատակացն: - 202. Որում ոչ անհնազանդ գտեալ՝ իմաստնախորհ զօրութեամբ ելանէ յամրոցացն: - 316. Որպէս և այրս այս արար, անքակ և անմեկնելի զգեցաւ պատեանս յինքեան զզօրութիւն բանսարկուին: -248. որք և ի մերձենալն անգամ տանջեալ լինէին յաներևոյթ զօրութենէն – 50. ուստի յայտ է թէ և անմարմին է, զի մարմինն՝ բովանդակեալ զօրութիւն ունի, և ոչ կարէ հանապազ շարժել զերկին կարգաւորաբար. – 54 Վահրամ ոմն Մեհրեւանդակ … այր հզօր զօրութեամբ՝ քաջութեամբ իւրով եհար զզօրս Թետալացւոց – 136. Քանզի թէ Աստուած կամեսցի՝ տանելոց է սաստկութիւն հողմոյ զզօրութիւն քո իբրև զփոշի ,,: - 140.

Է

Է/թիվ՝յոթ/ - Այս շարժումն սաստկագոյն քան որ եղև յամս Զաքարիայի Հայոց կաթողիկոսի, յետ Է ամի գերութեանն Հայոց: - 358. Արդ նոցա այնքան, իսկ մեզ ի մասնէ զբոլորն համառօտեալ ի թիւս միակաց լրման, և զբովանդակութեան ամաց ըստ տասանց եօթներորդացն որ թուոցն է լիագոյն Է - 314. Եւ զԳագիկ որ և Ապումրուան՝ զնա ոստիկան կարգեաց ի վերայ աշխարհին, տեղապահութեամբ տիրել, զի կարի մատաղօրեայք էին որդիք Դերանկին. Աշոտ էր Թ ամաց, յորժամ մեռաւ Դերանիկն, Գագիկ էր Է ամաց, Գուրգէն Ե ամաց: - 354. զոր և Պօղոս հոգացաւ բացայայտել զ-Է աշտիճանեան մասունս ի Հոգւոյն սրբոյ աւանդեալ եկեղեցւոյ սրբոյ: - 398. Զորս առեալ քրիստոնէից զպատուական մարմինս նոցա՝ ծածկեցին փառաւորապէս թաղմամբ, ամ ըստ ամէ տօնիւք զօր կատարմանն յիշատակել, որք են արք թուով Է: - 268. Համօրէն տիեզերակալեաց ամս Է: - 70. գնաց Արշակ փախստական յԵկեղէց գաւառ և անդ վախճանի իւրով մահու, թագաւորեալ ամս Է: - 112. և տայր զօրավարին և իշխանացն ամենեցուն պարգևս մեծամեծս, և բաշխէր զօրացն ամենեցուն դահեկանս ի խոռկս, և ճաշս և ընթրիսս ուրախութեան կազմէր ամենայն զօրացն մինչև Է օր: - 144. Փութանակի և վաղվաղակի իւրաքանչիւր զօրօք անդր հասանէին …ի տոհմէն Գնունեաց Գրիգոր որդի Հազրի Զ այլ ևս հարազատօք և զօրօք իւրեանց. ի տոհմէն Ընտրունեաց Արտաւազդ Է հարազատօք և զօրօք իւրեանց. – 174. որ կացեալ իշխան ի վերայ Տարունոյ ամս Է՝ յաւելաւ առ հարս իւր, թողեալ զաւակ իւր Աշոտ անուն: - 342. որպէս սահմանեաց Աստուած ի վերայ ժողովրդեանն Իսրայէլի գերելոցն ի Բաբելոն, որպէս գրեալ է ի մարգարէութեանն Երեմիայի, ,,զ-ՀԷ-երորդն ասէ գիտասցես, և խելամուտ լիցիս յելից բանին տալ պատասխանի. մինչև յօծեալն /312/ առաջնորդ եօթներորդ Է և եօթներորդք ԿԲ,,. – 314.

ԷՇ - Եւ արտաքոյ յետ ճանապարհին իմացաք Էշ մատակ, որ ունի յաւանակ – 50. և զինքն համեմատ Փրկչին ասաց լինել և ուղեկից ճանապարհի նորա, յասելն Եսայեայ

մարգարէի, ,,հեծեալ մի իշոյ, և հեծեալ մի ուղտու,,՝ զայս ամենայն յինքն յարակցէր: - 164. Եւ մեկնակազէնքն պատեցին շուրջ զեկեղեցեաւն, և ելեալ առ նա ոմանց ընդ փորուած գմբեթին՝ և եհար մի ոմն աշտէիւն ընդ միջոց թիկանցն՝ և ընդ անթովքն հանեալ ի ներքոյ թոքացն՝ փչեաց զոգին և թաղեցաւ զթաղումն իշոյ: - 190. նաև երամակ ձիոցն և իշոցն և ուղտուցն նովին կեղով վառեալ սատակեցան: - 376.

ԷՋ - Իսկ ի հարաւակողմն կուսէ ի ջրամբար արձանագործ քարեղինէն ճանապարհ աշտիճանեալ /390/ ներքուստ ի վեր մինչ ի կատար անձաւին հեշտալիր զելս և զէջս յօրինեալ, քարագործ աւազամած կրագործութեամբ: - 392.

ԷՐԷ - ուր հոյլքն էրէոցն խայտան և վայրենեացն խոզից և առիւծուցն մորիքն և երամակք ցոռոց պատրաստական առ որսոյն հրճուանք առ ձեռն պատրաստ հոլովին – 392.

Ը

Ը /թիվ՝ ութ/ - /թագաւորեաց/ Յեզիտ ամս Զ … Շամորեհեշմ ամս ԺԹ. Մահմետ որդի Մահադեայ ամս Ը. - 168. Արդ են թագաւորք Ասորեստանեայց ի միւսմէ կողմանէն այսոքիկ … Ներեղիբոս ամս Դ: Սենեքերիմոս ամս ԺԸ: Որդին ամս Ը: - 60. Բայց տիկինն Սոփի կեցեալ յետ մահու Դերանկին զտարի մի և զամիսս Ը՝ յաւելաւ առ հարս իւր. – 356. և եհար սատակեաց Ապումկդէմ ի միում ասպատակի Ը այր, և զերիվարս նոցա, և զէնս և զզարդ մերկեաց ի նոցանէ, եհար զայլազգիսն ի հարուածս մեծամեծս և ինքն դարձեալ ասպատակեաց զկնի նոցա: - 304. ի սորա Ը ամին եղև Մովսէս առաջնորդ և օրինադիր Հրէից: - 58. ի սորա Ը ամին Հերակղեայ նահատակութիւնքն եղեն: - 58. ի սորա Ը ամին Մովսէս մարգարէ վախճանի: - 58. Իբրև լցան ամք Ը Փոկայ՝ սպանաւ և նա ի Հայրակղէ, որ դաւեալ նմա՝ էառ զթագաւորութիւն նորա: - 140. Սա կեցեալ ամիսս Ը կամ Թ յաթոռ հայրապետականին՝ փոխի յաթոռ առաքելական պատուադրութեանն ի փրկչէն մերմէ խոստաբանեալսն: - 376. Փութանակի և վաղվաղակի իւրաքանչիւր զօրօք անդր հասանէին … և ի տանէն Բագրատունեաց Թոռնկայ որդի զօրօք իւրովք. ի տոհմէն Ամատունեաց Շապուհ Ը հարազատօք և զօրօք իւրեանց. – 174.

ԸՂՁԱՆԱԼ - և ասէ, ,,եթէ աջողեսցին քեզ խորհուրդ մեր, զոր խորհեցաք ի վերայ Հայոց և իշխանաց նոցա, և ըստ ախորժակաց մերոց ի գլուխ ելանիցեն, որ ինչ կամք յօժարութեանց մերոց ընդձանայցեն- 184.

ԸՄԲՇԱՄԱՐՏԻԿ - Տեղեկանայր … և կամ քանի՛ ընդշամարտիկք, և կամ քանի՛ գունդսաղարթ իցեն – 198.

ԸՄԲՌՆԵԱԼ - այլ ստիպեսցուք զընդբռնեալսն՝ ի բաց կալ ի հաւատոց քրիստոնէութեանն. – 196. Այսպէս և զամենայն ընդբռնեալսն վտանգաւոր մահու տառապեցուցանէին ընդ մէջ կտրելով, ահարկուս տեսողացն զնոցայն վտանկսն կացուցանելով: - 372. և ի ժամուն յայնմիկ մինչ առաւ ամրոցն և զընդբռնեալսն ստիպէին, զի որք ի բաց կացցեն ի Քրիստոսէ՝ և մի մեռցին – 222. Եւ խռովեցան առ հասարակ ազգքն տաճկականք յերեսաց նորա և ահիւ մեծաւ ընդբռնեալք լինէին. – 312. և մեծաւ աշխատութեամբ և ի բազում ժամանակաց փոյթ յանձին կալեալ անդուլ զցայգ և զցերեկ ի մեծ տարակուսանս ընդբռնեալ կայր վարանեալ – 242. Եւ նորա ընդբռնեալ զնա և զամենայն ազգատոհմն նորա ի տանէ Բագրատունեաց և կապեալ երկաթեղէն կապանօք՝ խաղացոյց ի Սամառայ: - 186. Զսա ընդբռնեալ զօրաց Տաճկաց աճին առ զօրավարն. և բազում վնասս ի գործս արքունի կուտեցին ի վերայ նորա և ստութեամբ առաւել քան թէ ճշմարտութեամբ պարտաւորեցին զնա: - 288. Ընդբռնեալ լինէր յայնժամ մի ոմն ի Հայոց ազատանոյն տոհմից Վահևունեաց,

Ապուսահակ ոմն, եղբայր Սահակայ եպիսկոպոսի ոստանին Նախճաւանու և Մարդպետականի. – 204. Իսկ զօրավարն Բուխայ կայր ի կոր կործանմանն, ի տարակուսանս ընկղմեալ փղձկէր ի միտս իւր, ցնորակոծ լինէր, հնարէր ելս իրացն գտանել ի վրանայարկն փակեալ, և ոչ առնոյր դուլ և դադար: - 282. Յայնժամ իբրև լուաւ բռնաւորն զայս դարձուած պատասխանեաց լի հզօրութեամբ և ահագին մեծաւ անարգութեամբ՝ յոյժ տարակուսանօք լցաւ յանձն իւր, և կայր մեծաւ հիացմամբ ընկղմեալ. – 280.

ԸՄԲՌՆԵԼ - Ազդ եղև Գուրգենի վասն Դերենկին, և զիա՛րդ ընկղմեցաւ. – 322. Եւ լուեալ կնոջն Սահակայ, թէ ընկղմեցաւ … փութացաւ գնաց եկաց առաջի Բուխայի, թերևս կարասցէ ըստ պատշաճ գեղոյն և ըստ բազմաձեռն գանձուց ապրեցուցանել զայրն իւր, որ առաւել մահու քան թէ կենաց պատճառ եղև նմա: - 272. և մի՛ այլում ումեք փոյթ առնիջիք յառաջ քան զնա ընկղմել: - 198. Զի թէ իջանիցես յանդունդս ծովու՝ ձգեցից զցանցս իմ և ընկղմեցից զքեզ. և ապա տեսանիցես զիս այնպէս՝ որպէս դու ոչ կամիցիս,,: - 146. իսկ իբրև նա ընկղմեցաւ, և գիտաց զօրավարն եթէ ոչ ոք այնուհետև յիշխանացն Հայոց մնաց, որ ոչ համագունդ ժողովեալ են առ նա՝ մերկացաւ յայնժամ զպատրուակ կեղծաւորութեանն, զոր սերմանել էր սատանայ ի սիրտ առնն: - 296. որ ընկղմեցաւ ի յայլ զօրավարէ ի Խլաթ քաղաք – 248. սա յառաջ քան զընկղմելն նոցա ել գնաց իւրովք կամօք ի Սամառայ – 248. Քանզի իբրև լուաւ երանելին Զաքարիայ, եթէ ընկղմեցաւ Գուրգէն՝ փութացաւ և եկն հանդերձ եպիսկոպոսօք աշխարհին. – 320.

ԸՄԲՌՆԵԼԻ - Իսկ նա անփոյթ արարեալ երկրաւոր մեծութեանս, զի անցաւոր է՝ անսպառ և անվախճան և անծերանալի և անծախ և առանց ընկղմելի ի գողոց խնդրեաց պարգևաց առիթ լինել. – 218.

ԸՄՊԵԼ - այլ Մկրտչին հրամայի՝ մի ընկղմել գինի և օղի. սա ոչ միայն գինով ոչ զկծէր, այլ և ոչ ջրով զծարաւոյն պէտսն կատարէր, սակաւապետութեամբ ընդովք թրջելովք, և խստավայել բանջարովք առ քաղցն վայելելով: - 376. դու ընդէ՞ր ոչ երկիրպագանես Բէլայ, եթէ ո՞չ տեսանես ո՞րչափ ուտէ և ընկղէ: - 38. յետ ջրհեղեղին արք գինի Նոյ, վասն որոյ և անփորձ իրացն եղելոյ՝ արբեալ եղև: - 30.

ԸՄՊԵԼԻ - Եւ զերկնային պարգևացն որ ի հանդերձեալսն խոստացաւ Տէրն, զանպատում և զիրեշտակային նորոգութեան՝ նա ասաց լինել անդ կերակուրք և ընկղելիք ուժգին. զոր և կամեսցի ուտել անյագաբար՝ պատրաստ գտանիցէ, և կանանց կուսից մնացելոց հանապազ անյագաբար խառնակումն: - 164.

ԸՆԴ - Եղեն ընդ նմա և ուխտեցին ուխտ, և ետուն նմա կին յազգէն իւրեանց և պատրաստեցան լինել ընդ նմա, որպէս և կամք իւր հրամայեսցեն. զոր թէ ասիցէ ոք՝ ի հրամանէ Աստուծոյ լինել սկիզբն առաջարկութեանն այնորիկ: - 160. զոր աւերեացն Իսրայէլ յելանելն իւրում յԵգիպտոսէ և ընդ պատերազմելն ընդ Բաղակայ արքայի Մովաբայ: - 156. իսկ զկինն կալաւ ընդ իւր Բուխայ: - 272. Իսկ իբրև ծանուցաւ նմա անլոյծ միաբանութիւն ուխտի ընդ միմեանս Աշոտոյ և Բագարատայ՝ ոչ ինչ յայտնեաց զխորհուրդս չարութեանն, զոր խորհեալ էին ի վերայ նոցա. – 172. պակչէին յահէ … և որք ընդ նմա էին գունդք ազատաց և նոցին զօրաց ըստ տոհմս ազգաց, ի բնիկ նախարարացն Վասպուրական տէրութեանս: - 210. ,,եթէ կամիս կեալ ընդ իս և վայելես ի կեանս աշխարհիս, և ընդունել պարգևս և պատիւս յինէն՝ հաւանեա հրամանի կամաց իմոց և ի բաց լեր ի հաւատոց քրիստոնէութեանդ, զոր պաշտես – 294. ,,Ես այսպէս կարծէի, թէ յորժամ ես ընդ թշնամիս ձեր մարտնչիմ՝ դուք յայդմ կողմանէ օգնական ինձ լինիցիք, և միաբանութեամբ բարձցուք ի միջոյ զտիեզերական պատուհասն, զտունդ Սասանայ: - 138. ,,և ո՛վ տայր ինձ վկայել ի վերայ ճշմարտութեանն և մեռանել վասն անուանն Քրիստոսի, և զարիւն իմ փոխանակ արեանն Քրիստոսի հեղուլ և զմարմին իմ փոխանակ մարմնոյ նորա ի մահ մատնել և զչարչարանս իմ ընդ նորա չարչարանսն խառնել, զի և ընդ նմա փառաւորեցայց. – 290. ,,և ո՛վ տայր ինձ վկայել ի վերայ ճշմարտութեանն և մեռանել վասն անուանն Քրիստոսի, և զարիւն իմ փոխանակ արեանն Քրիստոսի հեղուլ և զմարմին իմ փոխանակ մարմնոյ

նորա ի մահ մատնել և զչարչարանս իմ ընդ նորա չարչարանսն խառնել, զի և ընդ նմա փառաւորեցայց. – 290. ,,զի՞նչ է այդ, զոր դուք ի ծածուկ գործէք, և ընդէ՞ր խորհուրդք գաղտնիք ընդ միմեանս խորհիք. – 214. ,,ընդէ՞ր լքանես զձեռն քո և ընդ արութիւն դոցա խառնես վատութիւն և առնես զօրացեալ ի վերայ քո ամենայն աշխարհաց – 282. ընդէ՞ր, ով աստուածասէր թագաւոր, իբրև ընդ համհարզս և ընդ ստամբակս, իբրև ընդ աննշանս կամ ընդ անընդել վայրագս խօսիս ընդ մեզ – 242. ,,Միայն ի բաց լեր, ասէ, ի հաւատոցն Քրիստոսի, հնազանդեալ ընդ ձեռամբ մեծ թագաւորին – 204. ,,ոչ են օրէնք թագաւորութեանս մերոյ ի պայքար բանից զոք արկանել, և յերկարել ի բանս, որչափ արարաք ընդ ձեզ, զոր ինչ այլ արասցուք. – 246. Ազդ լինէր յոմանց գրումն անյայտիցն, թէ ,,այս ոմանք այսորակ երիվարօք յայս նիշ նիւս կեղթում, ի մէջ բդեդի պահարանեալ նամակ տանին ընդ կողմն Ապահունեաց. արդ զգուշացիր ճանապարհիդ,,. - 340. զաչս իւրեանց և տեսին, զի զկանայս և զմանկունս իւրեանց տեսին ընդ աշխարհական գերիսն: - 220. ամենայն հնարիւք խորամանկութեամբ կապեալ անլոյծ գօտեամբ ընդ ոգւոյ երիցս թշուառականին – 248. ամենեքեան ընդ նմա անցեալ գնացին ի կողմն Ատրպատականի – 212. այլ առնու զզօրսն Պարսից և գայ թագաւորել Հայոց հրամանաւ Շապհոյ արքայի, ունելով ընդ իւր զՎահան Մամիկոնեան. – 106. Այլ ելեալ արտաքս ի ռազմէն՝ դարձաւ փախստեայ ընդ ճանապարհն Հողոցայ. – 368. Այլ և հուր և ծծումբ նաւթիւ բարձեալ ի գործ պատերազմին, և զլոյծ բնութիւնն յանօթս ապակեղէնս եդեալ, և մանր զծծումբն ընդ նմին խառնեալ, եդեալ ի պարսատիկ մեքենայից, և զհուրն առ ընթեր նմին, հնարաւորեալ արկանել զամրոցաւն: - 208. այլ և ընդ միմեանս արկանէին բանս քսութեան – 194. այլ և ոչ տարաբարձական, որպէս և /48/ արդ ևս ոմանք կարծեն, ոչ գիտելով զասացեալսն ի Տեառնէ աւազակին՝ այսօր ընդ իս իցես ի դրախտին: - 50. Այլ թերևս զայս տարակուսիցիս առ իմաստն՝ յանդիմանակացոյցս առնել զԳուրգէն ընդ աշխատութեան յօժարագոյն առ մարմնական զինուորութեամբն լինել: - 398. Այլ ներքին և արտաքին յարձակմունքն ոչ կարէին ի ներքս դիմել մարտնչել ընդ անյաղթ զօրութեան զօրացելոյն ի Քրիստոսէ: - 308. Այլ քանզի յոյժ առաւելեալ էր իմաստութեամբ Գագիկ՝ տեղի տայր բովանդակ գաւառապետաց զօրագլխաց աշխարհիս, գնայր ընդ նոսա իմաստութեամբ խորագէտ հնարաւորութեամբ, ըստ անձնիւր գահու մեծարեալ պատուադրութեամբ հաճոյանալ ախորժէր նոցա: - 354. Այնուհետև սկսաւ կորապաղատն արկանել բանս խարդախութեան ի մէջ Դերանկին և Հասանայ, որ էր որդի քեռն Դերանկին, որպէս թէ ոչ ուղիղ նայի ընդ նա Դերանիկն, այլ թէ՝ և հանել ի նմանէ զամրոցն և զաշխարհն նկրտել. – 346. Այս առաջին խնամանալ եղև ընդ միմեանս Բագրատունեաց և Արծրունեաց: - 76. Այր ոմն Ջափր խրոխտ և ամբարհաւաճ. և սկսաւ եղջիւր ածել անօրէնութեամբ և գոռալով ոգորէր ընդ չորս կողմանս երկրին և նեղեալ տագնապէր զխաղաղասէրս կենօք – 170. այրէր և խորովէր ի սիրտ իւր ի ծածուկ ընդ աւեր աշխարհին և ընդ անողորմ չարչարանս գերելոցն ի թշնամեացն: - 218. այրէր և խորովէր ի սիրտ իւր ի ծածուկ ընդ աւեր աշխարհին և ընդ անողորմ չարչարանս գերելոցն ի թշնամեացն: - 218. հասեալ քաջացն մերոց եղբարցն երեցունց ազատագունդ սակաւաձեռն գրոխիւ ի ձմեռնային ժամանակի, և ընդ լրթնատեսիլ լուսոյն վազս ի վերայ եղեալ՝ հանին ընդ սուր յոլովս քան թէ սակաւս: - 372. Ապա այնուհետև դարձեալ յղեաց զՀամդոյ զՊարսից ամիրայ, և ի զօրաց արքունի զՀէթմ ազգաւ թուրք, և ընդ նոսա հեծեալս Ժ հազարաց, կազմեալ սպառազէն պատրաստեալ բարձրագոյն քան զառաջինն – 234. Ապա բարեկամացեալ ընդ Աբգարու թագաւորի Հայոց և ընդ մեծ զօրավարին Խուրանայ Արծրունւոյ՝ յղէ նմա պատարագս և առնու յօգնականութիւն զԽուրէն Արծրունի, զայր իմաստուն և քաջամարտիկ, կորովի յաղեղն և ի զէն և յասպազէն. - 78. Ապա բարեկամացեալ ընդ Աբգարու թագաւորի Հայոց և ընդ մեծ զօրավարին Խուրանայ Արծրունւոյ՝ յղէ նմա պատարագս և առնու յօգնականութիւն զԽուրէն Արծրունի, զայր իմաստուն և քաջամարտիկ, կորովի յաղեղն և ի զէն և յասպազէն. - 78. Ապա դարձան Վաչէ և Արշաւիր ընդ Արտաշէսի, առեալ զթագաւորութիւնն Երուանդայ ի ԼԱ ամի Արտաշէսի արքայից արքայի և թագաւորին

Յունաց … ամի. – 86. Ապա ելեալ ի նաւ՝ եկն ի մէջ ծովուն խօսել ընդ զօրավարին Պարսից. – 144. Ապա յետ փոքր ինչ աւուրց վառեալ զզօրսն ի պատերազմ ընդ բերդայինսն, առնուլ զամրոցն: - 208. Առ որ հայեցեալ նախարարքն Հայոց՝ կատականօք և արհամարհանօք ընդ նա նայէին – 114. առ սակաւ սակաւ ամփոփեալ ընտանեօք իւրովք, և ընդ նմա ոմանք յազատաց իւրոց - 206. ասէ. ,,զվրէժ արեանն Մուրկայ /140/ առի ի թշնամոյ նորա արդ կա՛մ եղիցի առնել ընդ իս զխաղաղութիւն և արգելուլ զսուր քո յերկրէ իմմէ,,: - 142. ասէ. ,,թէ ոչ բառնաս կորուսանես ի միջոյ զերկուս նախարարութիւնսդ՝ ոչ բարիոքագոյն քո թագաւորութեանդ խորհին խորհուրդ. զի ձեռն նոցա է ընդ Շապհոյ արքայից արքայի,,. – 98. ասէ՝ կինս զոր ետուր /20/ ընդ իս, սա ետ ինձ ի ծառոյ անտի և կերայ. – 22. Արդ այսքանեաց վկայութեանց ի մի վայր եկելոց՝ մի ելցուք զհետ առասպելաբանիցն թէ ընդ անկոխն գնալով ճանապարհ. – 260. արդ ընդ արութիւնս իմ վատութի՞ւն խառնիցեմ և ընդ երկիւղիւ մահու անկանիցի՞մ: - 296. արդ ընդ արութիւնս իմ վատութի՞ւն խառնիցեմ և ընդ երկիւղիւ մահու անկանիցի՞մ: - 296. Արդ խօսեաց ընդ իս ի խաղաղութիւն, զպատրուակ կեղծաւորութեան ի միջոյ երկոցունց ի բաց պարուրեալ,,: - 362. Արդ վճարեալ է յիմմէ կողմանէ շատխօսութիւն ընդ քեզ. – 278. Արշակ տուեալ պատերազմ ընդ Մակեդոնացիսն՝ և անդ Կիւրոս քաջապէս արիացեալ առաւելանայր ի գործ պատերազմին. – 72. Արշակայ գնացեալ զկողմամբ Միջագետաց, լաւ համարեալ ընդ ձեռամբ քրիստոնեայ թագաւորի հնազանդել, քան Պարսկականն հնազանդել տէրութեանն. – 110. Արջամ թագաւորեալ Հայոց՝ զազգն Բագրատունեաց արկանէ ընդ բազում տառապանօք, վասն արձակմանն Հիւրկանոս քահանայի ի կապանաց բանտին – 74. Աւելորդ համարիմ մի ըստ միոջէ զանօրէնութիւն քաղաքին ընդ գրով բացայայտել, զառաւելեալն Սոդովմայ և Երիքովի, լցեալ չարագործութեամբք: - 270. բազմեալ էին ընդ Քրիստոսի իբրև զմանկունս առագաստի: - 254. Բայց աղերսեալ թագաւորն զարս պատուականս, զՎասակ և զՏաճատ և զԳոտեր, որք էին ի մեծ նախարարութենէ տանն Արծրունեաց՝ զի զժողովն ընկալցին ընդ երից սուրբ ժողովոցն: - 132. բայց ընդ Յունաց թագաւորին միայն հնազանդութեամբ նուաճեալ զինքեանս, ի բաց կալով ի հարկատուութենէ Շապհոյ արքայից արքայի.- 96. բայց ակամայ և ի հարկէ գրեցից կարգեցից ի փոքր և ի դուզնաքեայ բանից, բովանդակեցից համառօտ սուղ և սակաւ բանիւ անցանել ընդ պատմութիւն իրիս այսմիկ – 240. բայց այլ ամենայն իշխանք արևելեայք խոյս տուեալ յերեսաց նորա՝ ետուն տեղի, ելին կալան զամրական տեղիս, ի բերդս և ի քաղաքս և ի լերինս, ընդ ինքեանս գումարեալ զզօրս և զբնակիչս աշխարհաց իւրեանց ամենայն պատրաստութեամբ: - 270. Բայց Աշխէ ոմն … ոչ եմուտ ընդ նոսա ձեռնամուխ լինել ընդ նոսա ի գործ պատերազմին, այլ կայր ի բացեայ իբրև հազարօք երկուք – 232. Բայց Աշխէ ոմն … ոչ եմուտ ընդ նոսա ձեռնամուխ լինել ընդ նոսա ի գործ պատերազմին, այլ կայր ի բացեայ իբրև հազարօք երկուք – 232. Բայց Աշոտ գնացեալ տալ պատերազմ ընդ ծովեզրեցիսն որք Ութմանիկ կոչին, որք ամրանային ի յԱմիւկ անկասկածելի քարանձաւին. – 332. Բայց Աշոտ թէպէտ և նուազագոյն զօրու ընդ իւր լինելով, ոչ թիկն ածեալ վերջացաւ առ պատերազմն յառաջանալ: - 364. Բայց ապա հաճոյ թուիցի ձեզ՝ ի բաց կալ ի դոցանէ և միաբանել ընդ իս. – 138. Բայց Գուրգէն կասկած ունելով յԱշոտէ, թէ գուցէ իբրև զապստամբէ ումեմնէ զեկուցանիցէ զնմանէ առաջնորդին Տաճկաց՝ ել գնաց կեալ շրջաբերական յեղափոխմամբ, արիական քաջասրտութեամբ, սիրեցեալ ընդ բնաւ աշխարհաց: - 322. Բայց Դերանիկն խօսի ընդ Հասանայ զխաղաղութիւն, խոստանայ առնել զդարձ ամրոցին Սևանի և աշխարհին նորա. – 350. Բայց զերկրորդ մասն Անձաւացեաց հանդերձ Նորաբերդ ամրոցաւն Դերանկին նուաճեալ ընդ իւր գործակալօք. – 326. բայց զՎասակն յամենայն ժամ իբրև ընդ խաղ ի բուռն առնելով արձակէր խաղաղութեամբ: - 310. Բայց թէպէտ և ունէր զպատճառ զբարեկամանալն Արէտայ ընդ Աբգարու և ընդ Խուրէնայ՝ այլ Աբգար և Խուրան առ փափագումն որ ի Քրիստոս, և առ լուր սրբոյ Փրկչին, և որ ինչ գործեացն Հերովդէս՝ ոխացեալ ընդ Հերովդի – 78. բայց իբրև գիտացին զօրքն որ ընդ նմա եկեալ էին զնորա

քաջակարծրագոյն արիութիւնն՝ և պատճառանօք այս ինչ այն ինչ դարձեալ դարձան յանցնիւր տեղի: - 310. Բայց իբրև եղև մեծ պատերազմ սրբոյն Վարդանայ ընդ Մշկանին և ընդ զօրս Պարսից ի յԱւարայրեան դաշտին, յԱրտազական գաւառին. – 128. Բայց իբրև եղև մեծ պատերազմ սրբոյն Վարդանայ ընդ Մշկանին և ընդ զօրս Պարսից ի յԱւարայրեան դաշտին, յԱրտազական գաւառին. – 128. Բայց հասեալ Բուխայ անց ընդ գետն մեծ զոր Կուրն կոչեն, և յորձանուտ շարժման գարնանային հոսանացն տեղի տուեալ ելանել զօրուն և բնակել շուրջ զքաղաքաւն. – 270. Բայց Մեհուժան Արծրունի ոչ եղեալ ունկնդիր սրբոյն Ներսէսի, և ոչ ընդ թագաւորին հնազանդութեամբ. – 102. բայց միայն տէր Ապումկղէմ և որք ընդ նմա պահէին զպահպանութիւն գիշերոյն և դիտէին զդիտաւորութիւն զօրացն – 228. բայց միայն ի դրան արքունի մտանել և ելանել ընդ հաւատարիմս թագաւորին ի տունս դիւանաց և գանձուց: - 92. Բայց Վասակս այս … վասն ազգակից գոլ նոցա ընդ տոհմին Արծրունեաց… ել գնաց իւրովք կամօք ի Սամառայ և եղև աստուածուրաց – 248. Բայց տէր Ապուջափր և որ ընդ նմա՝ քաջապէս մարտեան ընդ այլազգիսն և առին: - 306. Բայց տէր Ապուջափր և որ ընդ նմա՝ քաջապէս մարտեան ընդ այլազգիսն և առին: - 306. Բայց քանզի ամենայնիւ ամենայն ուրեք ոչ ոք զօրեաց կալ ընդդէմ նորա յամենայն գործս զոր և կամք իւր ախորժէին՝ սկսաւ ձեռնամուխ լինել կարգաւ ընդ բոլոր աշխարհս արևելեայս – 274. Բայց քանզի ոչ ոք յայնժամ ընդ գրով զայնոսիկ ներքադրեաց, որպէս օրէն է թագաւորաց՝ և ոչ մեք երկրորդել պատկան վարկաք: - 246. Բարկացաւ յոյժ իշխանն ընդ արհամարհանսն, և յոյժ զայրացեալ մեծաւ ցասմամբ՝ առնու զբազմութիւն ազատագունդ զօրաց ըստ տոհմս ազգաց իւրաքանչիւր զօրօք. – 178. բարձեալ և զդին սպանելոյն տարան ընդ իւրեանս ի պարծանս իւրեանց: - 354. Բարձեալ ևս ընդ իւր զսուրբ կտակարանս աստուածաշունչ գրոց բազմութեամբ պաշտօնէից քահանայական դասուց: - 186. գնացին առ Ներսէհ արքայ Ասորոց, ընդ իւրեանս ունելով զգիր ուխտի խաղաղութեան Աբգարու և Ներսէհի և զԽուրենէ Արծրունւոյ. – 82. գումար արարեալ են, ամենայն զինուոր ի գանձարանս ի տունս գանձուց թագաւորին, զոր դարձեալ ուղտիւք կրէին ընդ ինքեանս: - 282. գրէ առ կողմանս Ասորեստանի զգուշացուցանելով՝ մի խառնել ընդ նեստորականսն. – 130. գրէթէ անցուցանէր զանցուցանէր զքաջութեամբքն Արշակայ Պարթևի, ընդ քաջացն Քուշանաց, Մարաց և Ելիմացւոց. – 72. դիմեալ գայր և սա ընդ աջաթև կողմն վկայելոցն, ընդդէմ սրոյն մատուցանել զինքն պատարագ կենդանի Որդւոյն Աստուծոյ: - 222. դուզնաքեայ երասանակալ փայտիւն վազս առեալ սիգաքայլ ճեմարանօք ընդ կապուտակաձև երկնագոյն լեռնային և դաշտական ասպարէզս – 396. եթէ դէպ եղև լինել պատերազմ Որմզդի ընդ Հարամանւոյն. – 46. եթէ չար ինչ թուիցիմ յաչս ձեր, և ապիրատս գործեալ եմ առ ձեզ և խարդախութեամբ բնակեալ եմ ընդ ձեզ՝ աւասիկ յանդիման երեսաց իմոց տուք պատասխանի – 214. եթէ ,,Օրէն է աշխարհակալաց արքունի խնամակալութեամբ գնալ ընդ աշխարհ իբրև առ հնազանդս, և զնեղութիւնս տառապելոց բառնալ և ի դիւր հանել իբրև զխնամարկուս, և ոչ աւազակաբար աւարել, և սրով և գերութեամբ յաւեր դարձուցանել. – 278. եթէ հաւանեալք արդարոյն և ապաւինեալք ի նա՝ յուսացան ի բան նորա, ծառայել երկիւղիւ հրամայելոցն ի նմանէ՝ զի՞նչ անհաւատ թուի և ի փրկութենէն ընդ նմին վայելել. - 32. Եթէ, որպէս ասացի, ի բաց գնաս յինէն՝ խաղաղութիւն է, և թէ ոչ՝ պատերազմ և կռիւ և ճակատամարտ … դու խաղալիկ՝ և մեք մանկունք, ի ձեռն առեալ զզօրութիւն քո՝ խաղալով խաղամք ընդ քեզ և ամենայն հպարտութիւն ամբարհաւաճութեան քո. – 280. ելին գնացին առ Ատոմ … Յիսէ Տրունեաց տէր որդի Հոնաւարայ, Վարազշապուհ Աբելինից տէր, Թադէոս Ակէացի Շերեփայ որդի, և այլք ընդ նոսա: - 364. Եկն եմուտ ի գաւառն Աղբագ, և ասպատակ սփռէր ընդ կողմանս կողմանս յերկիրն Վասպուրական, գերփէր, աւերէր, յափշտակէր, կապուտ կողոպուտ գործէր ընչից և ստացուածոց. – 176. Եղեն ընդ նմա և ուխտեցին ուխտ, և ետուն նմա կին յազգէն իւրեանց և պատրաստեցան լինել ընդ նմա, որպէս և կամք իւր հրամայեսցեն. զոր թէ ասիցէ ոք՝ ի հրամանէ Աստուծոյ լինել սկիզբն

առաջարկութեանն այնորիկ: - 160. և Ահմատայ ընդ մէջ փակեալ զղաշիկն՝ յանխնայ հարուածովք հարին, մանաւանդ զհետևակազօր գրոխսն և զգռեահսն որք ընդ նոսա. – 368. Եւ այգուն անցեալ ընդ գետն Երասխ յայնկոյս ի դաշտն Շարուր՝ բանակին զգետովն: -382 Եւ այլ ամրաբնակ ազատորերոյն պարգևս և պատիւս օր ըստ օրէ բաշխէր, և յինքն յանգուցանել ախորժելով վարէր ընդ նոսա: - 360. և անդ Խուրան բազում նահատակութիւնս և յաղթութիւնս կատարեալ զօրականօքն որ ընդ նմա երթեալ էին յաշխարհէս Հայոց. – 80. և աներկիւղ համարձակութեամբ լի ամբարտաւանութեամբ առնէր ասպատակ ընդ ամենայն կողմանս տէրութեան նոցա: - 274. և եդեալ ի ներքոյ արգոբայ տաղաւարաց և յղեաց ընդ կողմն Պարսից – 220. զարեգակն ևս ոչ տեսանէաք, այլ ընդ աղօտ օդ յաւուրս Ժ. – 50. Եւ զգեցոյց նոցա հանդերձս և կանգնեաց նշանակ իշխանական և էած սուսեր ընդ մէջ և կամար ականակապ և երիվար ընտիր մեծազարդ. – 314. և զԽուրանն Արծրունի մեծ զօրավար արկեալ ընդ ուռկանաւ խարդախութեան, հետևել զկնի իւրոյ մոլորութեանն. – 80. և զհակառակութիւն Զրադաշտին հնազանդեալ ընդ իւրով ձեռամբն նուաճեաց ի ծառայութիւն: - 44. և զօրք Պարսից որք էին ի կողմանս Պաղեստինացւոց, և զօրավար նոցա անուանեալ Ռազմայուզան որ է Խոռեամ՝ խօսէր ընդ Երուսաղէմի զխաղաղութիւն. – 142. և ի սաստիկ սովոյն ելեալ Որմզդի յածէր ընդ վայրս ի խնդիր կերակրոց. – 46. և լուան ամենեքեան զառնելն քո ընդ իս՝ մի՛ ընդունայն և դատարկ լիցի սիրելութիւն քո առ իս – 218. և լրտեսք քաղաքապետին փութացեալ ասեն, ,,ահա մեկնեալ ի զօրացն զհետ որսոց ինչ յանհոգս յանզգուշութեան գայ ընդ այս ինչ տեղի. - 352. Եւ մեկնակազէնքն պատեցին շուրջ զեկեղեցեաւն, և ելեալ առ նա ոմանց ընդ փորուած գմբեթին՝ և եհար մի ոմն աշտէիւն ընդ միջոց թիկանցն՝ և ընդ անթովքն հանեալ ի ներքոյ թոքացն՝ փչեաց զոգին և թաղեցաւ զթաղումն իշոյ: - 190. մեկնակազէնքն պատեցին շուրջ զեկեղեցեաւն, և ելեալ առ նա ոմանց ընդ փորուած գմբեթին՝ և եհար մի ոմն աշտէիւն ընդ միջոց թիկանցն՝ և ընդ անթովքն հանեալ ի ներքոյ թոքացն՝ փչեաց զոգին և թաղեցաւ զթաղումն իշոյ: - 190. Եւ սկսաւ շրջել կարգաւ ընդ բոլոր աշխարհս, յորում բնակեալ էին Տաճիկք, որ մնային ի սմա ըստ հրամանին Բուխայի: - 306. Եւ սկսաւ ոգորել ընդ իշխանս Հայոց մեծաց խրոխտանօք – 128. և Տիգրան առ երագութեան ձեռինն հարեալ նիզակաւ ընդ սրտադուրսն ի բաց կորզէր զթոքակէսն. – 64. և ագուցեալ զոտս պատրաստութեամբ Աւետարանին խաղաղութեան և սուսեր ընդ մէջ ածեալ զբանն Քրիստոսի, որ հատու է քան զամենայն սուր երկսայրի – 252. Եւ Ալի էր այր քաջ. ասէ ցնա, արի՛ ելցուք, քանզի են և ընդ մեզ արք բազումք, թերևս լիցի ելք իրացդ պիտանութեամբ: - 160. Եւ ահա դարձեալ ասեմ, չկայ ինչ քո. և զի մի կրիցես զոր ինչ խօսեցայ ընդ պատգամաւորս քո, և աւելի քան որոգել ջանար ընդ մեզ՝ զդոյն ընդունիցիս վտանգաւորս,,: - 280. Եւ ահա դարձեալ ասեմ, չկայ ինչ քո. և զի մի կրիցես զոր ինչ խօսեցայ ընդ պատգամաւորս քո, և աւելի քան որոգել ջանար ընդ մեզ՝ զդոյն ընդունիցիս վտանգաւորս,,: - 280. Եւ ամիրայն Յիսէ խաղացեալ բազմաձեռն զօրուն՝ յառաջ խաղայ ընդ Աքաղայու/ ճիշտը՝Աքաղաղու/ կատար ասացեալ բլուրն: - 334. և այլ ոմն յարտաքին իմաստնոց ասէ, ընդ աներկիւղ ի ճանապարհ մի երթալ: - 354. և այլ ոչ ևս այնուհետև համարձակ յանձն առնոյր մտանել ընդ աշխարհս Վասպուրական: - 336. Եւ այլք յաւագ նախարարացն գնացին ամենայն պնդակազմ սպառազինութեամբ ի Պարսս՝ հնազանդել ընդ ձեռամբ հեթանոսական և բարբարիկոն ազգին Սասանականին. – 110. Եւ այն ինչ ընդ մտանելն՝ երագապէս հասեալ ի վերայ ամրոցացն Ջղմար և Սրինգ կոչեցեալ՝ յինքն գրաւէ զամրոցսն. և կալեալ զՎասակ՝ յինքն գրաւեաց զզօրավարութիւնն բոլոր Վասպուրական տէրութեանս: - 306. Եւ այն ինչ ընդ ջեռնուլն արեգականն, մինչ ազևորեալքն մտանէին զառաջեաւ ամիրային, որպէս որսոյ ինչ պատճառանօք հեծեալ յընտիր երիվարս հանդերձ մերձաւոր հարազատօք իւրովք և ազատովք յընտրելոցն Վասպուրականի՝ ելեալ մեկնեցաւ իբրև վտաւանս երկուս. – 342. և այր եղբօր իւրում ոչ ողորմէր, ըստ այնմ զոր ասաց դարձեալ Եսայի, ,,անկցի, ասէ, այր ընդ այր, և այր ընդ ընկերի իւրում, ընդհարցի մանուկն /298/ ընդ ծերոյն և անարգն ընդ պատուականին,,. –

300. և անդ ընդ փոքր զառ ի վայրն իբրև զհեղեղատ յորդեալ հոսեալ հասաւ ի վերայ նոցա, ի Քրիստոս խրախուսեալ – 400. Եւ անդ Վահան Արծրունի խոյակապ և յականաւոր քաջամարտութեամբ ընդ սրբոյն Վարդանայ ճակատ առ ճակատ վառեալ զպատերազմն, իբրև հուր ընդ եղէգն ճեմելով ի մէջ քաջ ախոյեանացն Պարսից: - 128. Եւ անդ Վահան Արծրունի խոյակապ և յականաւոր քաջամարտութեամբ ընդ սրբոյն Վարդանայ ճակատ առ ճակատ վառեալ զպատերազմն, իբրև հուր ընդ եղէգն ճեմելով ի մէջ քաջ ախոյեանացն Պարսից: - 128. և անդուստ խաղացեալք ընդ անապատ ճանապարհ գնացաք ի ծովակողմն կոյս – 50. և աներկբայութեամբ փակես զամենայն ընդ լծով հնազանդութեան քո: - 196. Եւ անյապաղ գլխաւորեալ խորհրդոցն՝ առնու ընդ իւր զԴերենիկն, և էանց գնաց ի տուն իւր ի Բագարան: - 322. և անյապաղ փութով զգործ պատերազմին վճարեալ քաջք ընդ քաջս ելեալ. – 64. Եւ անտի դարձեալ դառնայր Աշոտ ընդ միւս ևս ամրականն ընդ ոստոզերծ քարանձաւի, ի յարևելից կուսէ լերինն Վարագայ, ի վերայ գեաւղջն Կոխպանից, հանդէպ եկեղեցւոյն սրբոյն Հռիփսիմեայ – 334. Եւ անտի դարձեալ դառնայր Աշոտ ընդ միւս ևս ամրականն ընդ ոստոզերծ քարանձաւի, ի յարևելից կուսէ լերինն Վարագայ, ի վերայ գեաւղջն Կոխպանից, հանդէպ եկեղեցւոյն սրբոյն Հռիփսիմեայ – 334. անտի դարձեալ ի Բաբելոն, ընդ իւր տանելով զԼիդէացին.- 66. Եւ անցանելով ընդ գաւառն Բզնունական գայ մտանէ ի Խլաթ. քանզի կամէր անսալ ժամու դիպողագունի, զի որսայցեն նենգութեամբ խաբել: - 186. և առաջնորդ կացուցանէին իւրեանց զԱպուջափր Արծրունի, և ընդ նմա Սահակ Ապումկդէմ քեռորդի Ապուջափրի, այր քաջ և պատերազմող: - 304. և առեալ զնա մտանեն ի մէջ մայրեացն, և ընդ գիրկս մտեալ Շաւասպայ Արծրունւոյ՝ զլայնալիճն լի քարշեալ հարկանէ ի թիկանց ընդ մէջ ողինն զկորովալիր մատանցն զազդոյ շարժումն թռուցեալ թափանցիկ ընդ չարախորհուրդ սրտին միջոցն դիպեցուցանէ. – 100. Եւ ասեն ցթագաւորն, ,,լաւ է մեզ մեռանել վասն անուանն Քրիստոսի, քան վայելել ընդ քեզ. – 292. արդ ասացից փոքր ի շատէ զյայտնի գործեցեալսն, զի և որ ինչ ընդ սոքօք և յետ սոցա ի գլուխ ելին հանգամանք իրաց՝ և այնմ առանց երկբայութեան հաւատասցես, իբրև ճշմարիտ և անսուտ պատմողի: - 240. արդ քանզի խօսեցայ ընդ ձեզ բանիւք ողոքանաց՝ և դուք թերևս յայդ գայթակղեալ խաբեցայք և պնդեալ կայք յամառեալ: - 246. Եւ արևելեաց զօրավարին եկեալ պատերազմել ընդ իշխանականն առնուլ զամրոցն, - 302. և արիաբար հանդիսացեալ գնդին Հայոց՝ ճակատեցան ընդ այլազգիսն հարուստ և ձիգ ժամս և հարին ի հարուածս մեծամեծս զբանակ այլազգեացն: - 306. և բազում ազգք և թագաւորք են զոր նուաճեալ ունիմք ընդ ձեռամբ մերոյ տէրութեանս. – 244. Եւ բազում անգամ ի բազում տեղիս տային ճակատ զօրքն Հայոց և Պարսից ընդ միմեանս. – 102. և բանք սրբոյ Ներսէսի ընդ կենդանի բանին Աստուծոյ խառնեալ՝ դիւրագոյնս զհատուցումն արհամարհողացն հատուցանէր յօրհնութիւնս և յանէծս, անյապաղ զգործն կատարելով. – 100. և գնացեալ ընդ եզր ծովուն Բզնունեաց, ընդ կողմն Ապահունեաց՝ և բանակեցաւ յափն գետոյն, որ իջանէ յԱղձնեաց խոխոմացն: - 366. և գնացեալ ընդ եզր ծովուն Բզնունեաց, ընդ կողմն Ապահունեաց՝ և բանակեցաւ յափն գետոյն, որ իջանէ յԱղձնեաց խոխոմացն: - 366. Գուրգէն երկրորդ հրեշտակս յղէ առ նա զայս օրինակ, եթէ ,,ընդ իս հաստատեա զանզրաւ կապակցութիւն ուխտի խաղաղութեան. և ես ապստամբեցայց յԱշոտէ, և ի միասին բաժանեալ զերկիրս կեցցուք յապահովս,,: - 316. և Գուրգէն ելեալ ընդդէմ նոցա բազում անգամ՝ոչ սակաւ օճիրս գործէր ընդ զօրս Տաճկաց: - 302. և գրեթէ /գրքում՝ գրէթէ/ ոչ ամենևին ուրեք երևեցաւ այնպիսի ահաւոր տեսիլ զօրու և սպառազէն կազմութեան՝ ամենայն թագաւորաց, որ կացեալ էին ընդ ծագս տիեզերաց. զորոյ սաստիկ և ահագին որոտումնն և ճայթումնն և փայլիւն զինուցն, և որ ինչ յայնժամ զարդարեալ և զինեալ պատրաստեցան զօրքն Տաճկաց: - 284. Եւ գրեթէ ամենայն իշխանք Հայոց, Վրաց և Աղուանից եկեալ էին ընդ զօրս Հայոց ի վերայ աշխարհին Ապահունեաց. – 380. և դաստիարակ առընթեր ունելով զբանն տէրունական … և թէ ,,զի՞նչ օգուտ իցէ մարդոյ, եթէ զաշխարհս ամենայն շահեսցի և զանձն իւր տուժեսցէ, կամ զի՞նչ տացէ մարդ

փրկանս ընդ անձին իւրոյ. զի եկն որդի մարդոյ խնդրել և կեցուցանել զկորուսեալն,, - 264. և դարձեալ դառնայ ի Հայս. ընդ իւր ածելով մարզպան զՎնդոյ Պարսից մոգպետ: - 124. և դարձուցին ընդ նոյն ճանապարհ ընդ որ եկեալ էր, ոչ թողացուցին նմա ելանել ընդ աշխարն Վասպուրական. – 336. և դեռ զիւրաքանչիւր սուսեր ածեալ ունէին ընդ մէջ իւր և վահան ի վերայ թիկանց եդեալ. – 220. Եւ Դերանիկն զօրացեալ զօրութեամբ Քրստոսի, և հոյակապ և անուանի եղեալ ընդ բոլոր աշխարհ Հայաստանեայց՝ և խաղաղանայր երկիրս ի շփոթմանցն ի վերայ եկելոցն: - 318. և դժոխք ի ներքուստ դառնացան ի պատահել նմա զանբաւութիւն չարեացն ընդ իւր տանելով: - 376. և դիմեցին ի մէջ նոցա ի չորս առաջս, ըստ նմանութեան տեառնանման խաչին, և բախեցին զճակատն և պատառեցին զոռազմն և դարձուցին ընդ զառ ի վայրն և իջուցին ի լեռնէ անտի, և հարին ի հարուածս մեծամեծս. – 286. և դուք ամենայն ուրեք ամրացեալ ի զգուշութիւն իբրև յամուր քաղաքի ընդ ձեռամբ իմով յանհոգս լեալ լինել ձեզ. – 214. Եւ ելանէին գունդք գունդք շտապով և ճեպով մի զմիոյ կնի, և ամենայն ոք որ տեսանէր՝ ընդ մեծաւ երկիւղիւ ներքադրեալ լինէր: - 284. և ելեալ ի Յադամակերտ քաղաքէ ի Թ ժամու ուրբաթու աւուրն, և անցեալ ընդ ծովակն Յըմբեայ, և ընդ Վարազի Զարեհաւանի. – 402. և ելեալ ի Յադամակերտ քաղաքէ ի Թ ժամու ուրբաթու աւուրն, և անցեալ ընդ ծովակն Յըմբեայ, և ընդ Վարազի Զարեհաւանի. – 402. Եւ ելեալ արտաքս հանգոյն մատնչին ի տնօրինականս Փրկչին, ունելով ընդ ինքեան զիրովարտակն գրեալ այսպէս. – 212. և ելեալ նստաւ ի ջորւոջն, զոր պատրաստեալն ունէին անդէն առ դրան վրանին, և հանին արտաքոյ ղաշիկ բանակին՝ դարձուցեալ դառնալ ընդ նոյն ուստի եկն: - 346. Եւ եկին տալ պատերազմ ընդ ամրոցին Վան քաղաքի - 362. և եհան զզօրսն մինչ մերձ ի գլուխ լերինն և ընդ նոսա նշանս բազումս, իբրև Ռ արանց ընտրելոց քաջ երիվարօք. – 284. Եւ եղև ընդ մեռանելն տեառնն Անձաւացեաց, նորին տիկինն Հեղինէ գրէ առ Գուրգէն – 324. Եւ եղև ընդ ժամանակսն ընդ այնոսիկ ել Հազարաւուխտ Պարսից զօրավար ծանր զօրու ի վերայ Հայոց՝ տալ պատերազմ ընդ զօրս Հայոց, աւերել գերել գերփել զաշխարհս – 134. եղև ընդ ժամանակսն ընդ այնոսիկ ել Հազարաւուխտ Պարսից զօրավար ծանր զօրու ի վերայ Հայոց՝ տալ պատերազմ ընդ զօրս Հայոց, աւերել գերել գերփել զաշխարհս – 134. Եւ եղև ընդ ժամանակսն ընդ այնոսիկ ել Հազարաւուխտ Պարսից զօրավար ծանր զօրու ի վերայ Հայոց՝ տալ պատերազմ ընդ զօրս Հայոց, աւերել գերել գերփել զաշխարհս – 134. Եւ եղև ի գնալ Դերանկին ի ձմերոցս Վասպուրական իշխանացս, ճանապարհ արարեալ ընդ ձորն Ընծայից, որոյ ելքն ընդ գաւառն Հեր քաղաքի: - 352. Եւ եղև ի գնալ Դերանկին ի ձմերոցս Վասպուրական իշխանացս, ճանապարհ արարեալ ընդ ձորն Ընծայից, որոյ ելքն ընդ գաւառն Հեր քաղաքի: - 352. Եւ եղև ի մտանելն նորա ի քաղաքն, ունելով ընդ իւր կապեալս բազումս և գերեալս, որոց ոչ գոյր թիւ. – 262. Եւ եղև իբրև երրորդ ժամ լինէր աւուրն, որ էր միաշաբաթի՝ և ահա ելանէին գունդք գունդք հեծելոցն ընդ կողմն անապատին Սմբատայ կոչեցեալ բերդին – 228. Եւ եղև իբրև կատարեաց Բուխայ զանցս անցից ընդ Վասպուրական աշխարհս և խաղաց յարևելս կոյս՝ ել գնաց Գուրգէն ի Սպեր գաւառ. – 302. և են ստացեալ զէնս աշտեայս հանապազ կրելով ընդ ինքեանս, ի պատրաստութիւն գազանացն որք ի լերինն բնակեն: - 192. Եւ ես աւասիկ արձակեցից թագաւորին ձերում պատարագս և հրեշտակս հրովարտակօք, խնդրել ի նմանէ զխաղաղութիւն աշխարհի և ընդ իս հաշտութիւն,,: - 144. և ետ բերել նմա ըստ օրինի գլխապետութեան սուսեր իշխանական ընդ մէջ արկեալ և գօտի արիական շրջապատեալ զմիջաւ, քուքք խիզախողք և երիվար բարձրավիզ, ոտնատորոփ, խրոխտալիր, յարմարական առ ընթացս պատերազմականս: - 308. և ետու ի ձեռս քո զզօրս իմ հանդերձ զօրագլխովք մեծամեծօք իմովք, յամենայն ազգաց որ ընդ ձեռամբ իմով նուաճեալ են թագաւորազունք – 236. և երիվարին ընդ վազս փռնգալիր խրոխտանացն փրծուցեալ զնա ի ցաւոցն, քանզի այն ինչ կազդուրեալ էր Գուրգէն ի հիւանդութենէ և ի կրից աշխատութեանցն և ի տառապանաց բանտին: - 320. և զազգատոհմ մեր ընդ մեծ նեղութեամբ պաշարէիք և աշխարհի մերոյ աւերիչք գտանէիք և հարկացն եղելոց

խափանիչք լինէիք: - 244. և զայլ բազմութիւն զօրացն առեալ ընդ իւր՝ երթայ ընդ սահմանս Ապահունեաց – 202. և զայն երիս ամս կերակրեալ լինէին սուրբքն ձեռնարուեստիւք իւրեանց, որպէս զնոյն ինքն զաստուածազարդն Պօղոս, թէ ,,զպէտս իմ և որ ընդ իսն էին՝ պաշտէին ձեռքս այս,,: - 252. Եւ զբուն բանակն առնէին ի Ղոկորուատ աւանին, ունելով ընդ ինքեանս զբազմութիւն գերւոյն կուտեալ իբրև զիող: - 208. և զզօրս լեռնակողմանն ընդ իւրեանս ածելով, ոչինչ աւելի քան զհազար և երկերիւր այր – 126. և զի մի՛ ճրագն եօթնաստեղն ընդ գրուանաւ զփայլումն լուսոյն ծածկիցէ – 204. և զկէս գերւոյն ընդ իւրեանց ունելով ի քաղաքին, լինել իւրեանց ջրկիրս և փայտակոտորս. – 188. Եւ զկէսն գերի առեալ ածեն ընդ իւրեանս, և զշէնս և զաւանս և զագարակս հրձիգ արարեալ՝ անապատ կացուցանեն ի մարդոյ և յանասնոյ: - 202. Եւ զչարեալ ընդ խափանումն խորհրդոցն իւրոց՝ ամբաստան յոյժ լինէր զԱշոտոյ հանդերձ թղթովք Տաճկաց, որք էին ի կողմանս Հայոց, բազում այն ինչ զոր ստութեամբ քան թէ ճշմարտութեամբ զեկուցանեն զնմանէ զգործս, և թէ հակառակս ևս թագաւորութեան քոյ բանընդդէմ լինի հանապազ: - 172. և զսակաւուց քան թէ յոլովից գրեաց անուանս ի յիշատակարանի անդ զՇահդոսդ, որ թարգմանի արքայասէր, և զԳոհշթասդ, որ թարգմանի ներկագործ ծիրանեաց արքայական զգեստու, և զՇմաւոն եպիսկոպոս, վէմ եկեղեցւոյ Քրիստոսի ընդ նմին և այլ եպիսկոպոսք և քահանայք արք Ճ - 106. Եւ զօրագլուխք զօրացն էին այսոքիկ, Մուքադմ, Յուսփ ի Թփղիս քաղաքէ, Յուսփ որդի Ռահմայ և Ապուհեշմ՝ Ելոյ տէր և ընդ նոսա զօրք Համդոյի Պարսից ամիրայի: - 226. Եւ զօրաժողով եղեալ Մուսէի պատճառաւ հարկաց արքունի՝ եկն եմուտ յերկիրն Տարաւնոյ, տալ պատերազմ ընդ Բագարատայ: - 172. Եւ զօրք Տաճկաց ի զօրացն Բուխայի եկեալ էին ընդ զօրս Յունաց պատերազմել ընդ ամուրսն. – 302. և զօրքն ցրուեցան քայքայեցան ընդ ամենայն երեսս երկրին: - 238. և էր ընդ նմա Աշոտ իշխանաց իշխան – 320. և էր մտեալ սա ընդ արգելականսն ի բերդն – 222. Եւ էր նեղութիւն մեծ ընդ ամենայն երկիրս, որպիսի ոչ եղև ի սկզբանէ աշխարհի, և մի այլ լիցի. – 238. և ընդ առաջին իշխանացն լինել առաջի թագաւորին – 204. և ընդ հարթն գնասցուք ճանապարհ, և մի խոտորեսցուք մի յաջ և մի յահեակ. – 256 և ընդ մեծ պարսաւանօք ներքադրեալ զբռնաւորն և զմոլար օրէնսդիրն իւրեանց զՄահումաթ: - 206. Եւ ընդ մտանելն նոցա աշխարհս՝ վրդովեցին զուխտ քրիստոնէութեանն, և փոյթ ընդ փոյթ ձեռնամուխ եղեն աւերել քանդել զեկեղեցիս, զտունս աղօթից կործանել. – 124. և ընդ նմա Գրիգոր որդի Վասակայ, և սա նմանապէս ոգեզուարճ իմաստութեամբ առ լցեալ հոյակապ և անուանի ի մէջ Հայկականացս և ցանկալի լսողացս և ուրախարար տեսողաց. – 344. և ընդ նմա Շապուհ յԱմատունի տոհմէ, այն որ գործակիցն եղև Գագկայ առ սպանումն Ապումրուանայ, զոր վերագոյնն յիշեցաք – 372. և ընդ նմա Տաճիկք Հայաստանեայց, որ բնակեալ էին ի կողմանս կողմանս աշխարհիս՝ առաջնորդէին Բուհայի ի մուտ և ելս աշխարհիս: - 206. և ընդ նմա քաղաքացիքն Բերկրոյ որ Ութմանիկքն կոչին, և յազատացն Վասպուրականի որ միաբանեալ էին ընդ զօրսն արքունի, արք իբրև Ս – 306. Եւ ըստ կարգի օրինաց իւրեանց երդուեալ, և աղ ծրարեալ ընդ հրովարտակին ետ տանել. և նոցա առեալ և ընթերցեալ՝ ոչ արարին բանիցն պատասխանի: - 138. և թագաւորէ ընդ նորա Յազկերտ: - 128. Եւ թագաւորէ ընդ նորա որդի իւր Փոքր Թէոդոս. – 114. Եւ թագաւորէ ընդ նորա որդի հօրեղբօր նորա Մուհթիս, և կացեալ ամիսս Գ մեռանի: - 320. և ժողովեալ իբրև հաւ զձագ ընդ թևովք ի պատճառս պահպանութեան – 214. Եւ ի հասանելն նորա առ թագաւորն՝ ունէր ևս ընդ ինքեան թուղթս լի ամբաստանութեամբ զնախարարացն, որ բնակեալ էին ի Հայս – 180. Եւ ի վաղիւ անդր մինչ դեռ արևն ընդ ծայրս հարկանէր՝ կարգեցաւ պատերազմ սաստիկ – 140. և ի վերայ նոցա զօրաժողով եղեալ Աշոտ և որդի իւր Դերանիկն, առնել մարտ պատերազմի ընդ ամրոցին: - 332. և իբրև հուր ընդ եղէգն ընթացեալ՝ այնպէս հասեալ ի վերայ մեր իբրև զմարախ, իբրև զջորեակ և իբրև զթրթուր խառնիճաւն /238/ հանդերձ – 240. Եւ իբրև գիշերն տարածեցաւ և խաւարն թանձրացաւ և սկսան ամենեքին մտանել ի քուն յանձնիւր օթանոցն՝ յանկարծակի փայլիւն սուսերաց և

մոմեղինաց վառելոց և գունդք խորհրդականացն և Հասան ընդ նոսա. – 348 Եւ իբրև ետուն զթուղթն կարծեցեալ իբրև յերեսաց արքայի՝ ,,ընթերցիր զայդ, ասէ, մի՛ ինչ ընդ մեղադրութեամբ արկաներ զիս, և կարծել նենգութեամբ գնալ առ քեզ և դրժել ինչ քեզ և ստել երդմանց /236/ մերոց. – և իբրև մօտ եղև յափն գետոյն՝ քարշեալ ոմն զլայնալիճն, նստելով ընդ դարիւն, և հարեալ նետիւ ընդ բացատն, և երեսանակալ ձեռնն թուլացեալ. կրկնեալ այլ ոմն ճօճ նիզակաւն ընդ նոյն ակն՝ գետավէժ արարին զԱշխէթն. – 272. և իմ թողեալ ձեզ զչարիս ապստամբութեանն ձեր, վայելեսջիք ընդ իս և տիրեցէք աշխարհին ձեր,,: - 246. և ինքն անցանելով խաղաղութեամբ ընդ աշխարհն Վասպուրական սակաւատոյժ վնասիւք՝ զպատանդսն ընդ իւր առեալ տանի: - 186. և ինքն ել գնաց երթալ մտանել ի քաղաքն Դուին, ձմերոց ինքեան պատրաստեալ զնա, մինչ ի ժամ գարնանայինս, ունելով ընդ իւր կապեալս բազումս. – 240. Եւ ինքն եկն /186/ ձմերել ի Մուշ քաղաքին Տարօնոյ, ունելով ընդ իւր պատանդսն, և Վասպուրականի ի նախարարութենէն Արծրունեաց և յազատաց նորա: - 188. և ինքն թագաւոր, փափկասցի, և բռնաւորք խաղալիք նորա, և ինք ընդ ամենայն ամուրս խաղալով խաղասցէ,,: - 200. և ինքն թագաւորեաց փոխանակ /318/ ընդ հօր իւրոյ, և յետ Զ ամսոց մեռանի: - 320. Եւ ինքն իսկ գլխովին զօրավարն Բուհայ, հեծեալ յերիվարն, պնդեալ զինքն զինու ի պատերազմ ընդդէմ իշխանին, և զկորովին աղեղնաւորացն Ելիմացւոցն և զընտիրս հեծելոց նոցա ընդ ինքեան վառեալ ի ճակատի: - 208. և ինքն հանդերձեալ կազմել գնալ ընդ արևելս նաւել ի Քաղկեդոն: - 148. և ինքն Ովայ զերծեալ սակաւ ոմամբք գնաց փախստական ընդ կողմն Բերկրոյ: - 178. և իջեալ ի դաշտավայրն, խումբ արարեալ, ճակատ կազմեալ ընդխառնեցան ի պատերազմ. և զբազումս դիաթաւալ կացուցեալ, ընդ որս էր Շապուհ նահապետն Ամատունեաց յանկելոց վիրաւորացն: - 310. և իսկոյն հարեալ զնա այսոյն պղծոյ և ընդ զառիվայր լերինն թաւագլոր խաղաղացուցեալ հարուստ ձգմամբ մինչ ի դաշտավայր տեղին ուր այգեստանքն: - 378. և խոստանայ զբոլոր Հայս նուաճել ընդ կայսերական իշխանութեամբ. – 112. Եւ խօսէր ընդ նոսա սաստիկ և ահագին դատաստանօք և սպառնալեօք, թէ ընդէ՞ր և դուք ոչ մեռարուք ի պատերազմին, քան թէ ելեալ փախստական գնացէք գալ առ իս և տալ համարձակութիւն ծառայի իմում ի յայսքան վնաս. մի՞թէ արդեօք զԽոսրով մեռեալ կարծէիք,,: - 150. և կալեալ զԱնիանոս նահապետ Բագրատունեաց և սպարապետ Հայոց հանդերձ ընտանեօք և ամենայն ազգաբանութեամբ՝ արկանէ ընդ բազում չարչարանօք – 74. Եւ կատարեալ Աշոտ զկեանս իւր՝ մեռաւ ի Վանտոսպ գաւառի, ՅԻԳ թուականութեանն Հայոց, յամսեանն հոռի, որ օր Զ էր ամսոյն, յաւուր հինգշաբաթոջ. և տարեալ հանգուցանեն ընդ եղբարս իւր ի վանս սուրբ Խաչին յԱղբագ գաւառի: - 338. Եւ Կաւատ արքայ հաստատեցաւ յաթոռ թագաւորութեան և արար խաղաղութիւն մեծ ընդ կայսեր և ընդ ամենայն երկիր իշխանութեան իւրոյ: - 152. Եւ Կաւատ արքայ հաստատեցաւ յաթոռ թագաւորութեան և արար խաղաղութիւն մեծ ընդ կայսեր և ընդ ամենայն երկիր իշխանութեան իւրոյ: - 152. և կէին յապահովս խաղաղացեալք և հնազանդեալք ընդ պետութեամբ իշխանաց իշխանի: - 322. և կոչին սոքա մեկնակազէնք սուրհանդակք, բնակեալք ի լերինն որ բաժանեն ընդ Աղձնիս և ընդ Տարօն: - 192. և հաճեցաւ ընդ նոսա Աստուած. – 278. հանդերձեալ աշխարհին պսակելոց է ի Քրիստոսէ, հանդերձ տիկնաւն Հեղինեայ ընդ ամենայն սուրբս Քրիստոսի Աստուծոյ մերոյ. ամէն: - 80. Եւ հրաման տուեալ ընդ ամենայն երկիրն՝ զի այր իւրաքանչիւր դարձցի յերկիր իւր և կալցի զիւր ժառանգութիւն – 234. Եւ ճանապարհ արարեալ ընդ կողմն հիւսիսոյ՝ ել դէպուղի ի Կարնոյ քաղաք – 148. Եւ մեկնեալ զզօրսն ի նմանէ ընդ կողմն Ապահունեաց, մերկ ի զինէ և յասպազինէ թողեալ, ոչ առնել այլ կողոպուտ, գնացին աղխիւ և երիվարօք իւրեանց: - 346. և մեռանի անձամբ ընդ այլ շղոմարարսն յաշխարհին Մարաց ի Բակուրակերտ աւանի: - 92. Եւ մեր ընկալեալ և հաւատացեալ ճշմարտութեանն՝ և ոչ կարեմք փոխանակել զճշմարտութիւն ընդ սնոտի, առասպելաբան և կարկատուն, ստայօդ և պաճուճազարդ մոլար ուսմանդ ձերոյ: - 246. և մերկ կապուտ կողոպուտ առնէր զնոսա, մինչև զարմանալ զօրավարին ընդ սորայս

ԹՈՒԱԿԱՆՈՒԹԻՒՆ - Այս Զ ամ էր գերութեանն Հայոց, և ՅԶ նորուն թուականութեան: - 326. Գործեցաւ այս ՅՒԷ թուականութեանս Հայոց, յորում ամի և տէր Գէորգ Հայոց կաթողիկոս փոխեցաւ: - 376. Գործեցաւ այս ՅՕԱ թուականութեանս Հայոց և ի Դ ամի հայրապետութեանն Յօհաննու Հայոց կաթողիկոսի: - 382. Եւ արարին նաւակատիս մեծ հարսանեաց փեսայութեան Դերանկին, ի թուականութեան Հայոց ՅԺԱ-երորդ ամին: - 322. Եւ ծնան նորա երիս որդիս, Սարգիս որ և Աշոտ՝ ՅԻԶ թուականութեանն Հայոց, Խաչիկ որ և Գագիկ ՅԻԸ, և Գուրգէն. մանկունք կայտառք և գեղապանծք և բարենշանք և ամենեցուն ցանկալիք. ծնաւ և երկուս դստերս: - 338. Եւ կատարեալ Աշոտ զկեանս իւր՝ մեռաւ ի Վանտոսպ գաւառի, ՅԻԳ թուականութեանն Հայոց, յամսեանն հոռի, որ օր Զ էր ամսոյն, յաւուր հինգշաբաթոջ. և տարեալ հանգուցանեն ընդ եղբարս իւր ի վանս սուրբ Խաչին յԱղբագ գաւառի: - 338. և մեռաւ ՅԼԹ թուականութեանն Հայոց, և ի ԺԵ ամի հայրապետութեանն Գէորգեայ Հայոց կաթողիկոսի: - 356. Ի ՅԷ ամի Հայոց թուականութեանս եկն Աշոտ Վասպուրական իշխան ի գերութենէն: - 326. Իսկ զԳողթն գաւառ ի ժամանակի կատարման սրբոյն Վահանայ, յամի ՃՋԶ թուականութեանց, յորում ամի կատարեցաւ սուրբն Վահան, որ էր որդի Խոսրովայ Գողթան տեառն: - 390. որ է ըստ հայերէն թուականութեանն ամք Ց – 184.

ԹՈՒԱՑ ԳԻՒՂ - և բանակեալ կային ի լերինն որ ի վերայ գեղջն Թուայ, /224/ ի հովիտս նորա, որ կոչի Արեան լիճ. – 226.

ԹՈՒԵԱԼ - և հաճոյ թուեալ յաչս նորա՝ շինէ զբարաբլուրն ապարանս արքայանիստ, աշնանայինս, պայծառայարդարս, գեղեցկայարմարս պարսպաւորս – 86. Ի սոյն աւուրս որք մնացեալ էին ի տանէն Արծրունեաց իբրև լուան զպարտումն զօրացն արքունի ի Ծանարացն՝ ի մի վայր եկեալ գունդ կազմեալ հետևազօրքն մարտակցօք հանդերձ խառնաղանջ ամբոխիւ՝ լինին թուեալ արք Տ – 304. վասն զի ըստ Պտղոմեայ և Աղէքսանդրի սահմանադրութեանն, կամ թէ մեր Արտաշէսի որդւոյ Սանատրկոյ՝ ի Վասպուրական գաւառացն համար թուեալ է գաւառն այն – 332.

ԹՈՒԵԼ, ԹՈՒԻԼ, ԹՈՒԻ- Եւ են ի թուել մինչ ցայս վայր այսոքիկ. Ադամ, Սէթ, Ենովս, Կայիանան, Մաղաղայէլ, Յարէդ, Ենովք, Մաթուսաղայ, Ղամէք, Նոյ, Քամ, Քուշ, Նեբրովթ որս և Բէլ: - 36. և զի մի մի թուիցէ յանուանէ զյաճախութիւն զինուցն և զսպառազէն կազմութեանցն զձիոցն և զհեծելոց նոցա. – 280. և թուէ մի ըստ միոջէ, սկսեալ յԱբրահամէ և գայ անցանէ մինչ ի Յովսէփ – 16. Եւ հաճոյ թուեցաւ Հայրակղի և ամենայն սինկղիտոսիցն՝ նստուցանել զորդին Հայրակղի յաթոռ թագաւորութեան, որ էր մանուկ /146/ փոքր. – 148. ,,արջք գիսակագեղք սպիտակայեղջք որջացեալ ի պրակս անտառախիտ մայրեացդ. արդ թէ հաճոյ թուիցի՝ երթիցուք որսալ զնոսա,,. – 100. ,,եթէ հաճոյ թուիցիմ քեզ կնութեան, և դու կամիցիս քեզ զտիրելն Անձաւացեաց՝ մի վեհերեալ յապաղելով դանդաղկոտ լինիր և վերջանար զփութալն,,. – 324. ,,և այս ևս քաջահաճոյ թուիցի քեզ, վեհդ և ամենեցուն գիտելիդ. և զի եղիցի ի մէջ քո և Դերենկիդ անկասկած միաւորութիւն՝ զդուստր քո տացես կնութեան Դերենկիդ, տիկնութեան Վասպուրականի,,: - 322. Անդէն փութով և անյապաղ երագութեամբ հրաման ետ, զի որ ոք և հաճոյ թուիցի Սմբատայ՝ մի ոք իշխեսցէ արգել լինել: - 218. Առ սա ինձ թուեցաւ ասացեալն ի մարգարէէն – 224. Առ սա ինձ թուի ասացեալն մարգարէին Ամբակումայ. – 200. ասէ, զի կացուցի թագաւոր ձեզ յազգէ և ի դենէ ձերմէ, մի՛ ծանր թուիցի ձեզ դառնալ անդրէն և ունել զիւրաքանչիւր ժառանգութիւն.

– 110. Աստանօր ոչ հեշտալիր թուին ինձ պատմութիւն ճառիս շարագրութեան: - 350. արդ հաճոյ թուիցի քեզ զոր խորհիմս. –100. արդ հաճոյ թուիցի քեզ, քաջ զօրավար, զսորայս գործեցեալ քաջութիւն ի վերայ զօրացն Յունաց,,: - 304. Բայց ապա հաճոյ թուիցի ձեզ՝ ի բաց կալ ի դոցանէ և միաբանել ընդ իս. – 138. Բայց Աստուած ըստ յօժարութեան քո սիրոյդ կատարեսցէ զկամս քո որպէս և հաճոյ թուիցի առաջի Տեառն,,: - 114. եթէ չար ինչ թուիցիմ յաչս ձեր, և ապիրատս գործեալ եմ առ ձեզ և խարդախութեամբ բնակեալ եմ ընդ ձեզ՝ աւասիկ յանդիման երեսաց իմոց տուք պատասխանի – 214. Եւ յոյժ հաճոյ թուեցաւ խորհուրդս այս առաջի թագաւորին, և մեծապէս ուրախ լինէր: -196. Եւ զայս Եղկղեսիանոսք. բայց ինձ այսպէս թուէր, թէ աղանդն Եղկղեսիանոսաց վաղուց շիջեալ խափանեալ լինէր ի քաջաց վարդապետացն սրբոց, զոր եղեն Աստուած յեկեղեցւոջ. – 254 և զայսոսիկ թէ բարիոք ումեք թուեսցի տեսցուք. – 24. և նոցա թուէր ծաղր առնել: - 136. և թէ ոչ այպանել ախորժէք զբանիւք իմովք՝ ոչ ընդհատ կամ պախարակելի թուիցի կոչել զնա նովիմբ անուամբ. – 376. և թոյլ ետուն զով և հաճոյ թուիցի արքայի. – 118. և հաճոյ թուեցաւ Գուրգինայ խորհուրդք տիկնոջն Հեղինէի: - 324. և հաճոյ թուեցաւ յաչս զօրավարին: - 204. Եւ հրաման ետ այնուհետև, զի զբազմութիւն գերելոցն վաճառակուր արասցեն յազգս ազգս ում և հաճոյ թուիցի. – 240. և ոչ քաղցր թուէր նմա քուն գիշերոյն, և փափկութիւն տունջեան յոչինչ համարեալ լինէր – 242. և քեզ եթէ հաճոյ թուիցի ապրեցուցանել զքեզ և զզօրս քո՝ արի ել աստի և գնա ի սահմանաց իմոց: - 278. թուի ինձ թէ և զարդարն Հաբէլ ի սոյն շարի կարգեալ համարեցաւ. – 26. Իսկ սպառնալիք քո և չարչարանք, զոր ասես ի վերայ իմ հասուցանել՝ խաղ մանկտոյ կամ զառանցելոց թուի յաչս իմ, և բանք քո նոյնպէս, որպէս առն անմտի և խելագար և ցնորեալ ծերոյ,,: - 290. Իսկ ոմանք ի պատմագրաց ասեն, թէ և դուստր Նոյի և ճարտարապետ նաւին կնաւ և որդւովք և կարևոր բարեկամօք. (տապանի մեջ են մտել) որ և ինձ հաւանականք այսոքիկ թուին. – 30. Նախ յառաջ ախորժական թուէր Գագկայ անուանել զեկեղեցին փրկչական անուանակոչութեամբն մակաձայնել ոչ ուղղակի առ հաւատն մատուցեալ – 394. ամուրքն պատրաստական առ ի յամրութիւն, որպէս թուէր մեզ – 216. Ոչ վարկպարազի, որպէս ինձ թուի, ի ճախ է զանց առնել զխնդրոյս այսորիկ զպատճառն - 14. որպէս Պօղոսի հաճոյ թուի ասել, թէ ,,զորս յառաջն ճանաչէր՝ յառաջագոյն հրաւիրեաց կերպարանակից լինել պատկերի որդւոյ իւրոյ,,: - 300. որպէս Պօղոսի հաճոյ թուի գրել յառ Եբրայեցիս թղթին, թէ ,,չէ բաւական ժամանակս պատմելոյ,, վասն դատաւորացն Իսրայէլի և սրբոց մարգարէիցն – 302. որպէս ցուցանեն յիշատակարանքն որք յառաջ քան զմեզ հոգացան, զոր ինձ աւելորդ թուի երկրորդել: - 324. Քանզի հարցեալ և բռնազբօսեալ զերկոսին գլխաւորին Տաճկաց, անունկնդիր լինելով ասացելոցն, և ի տեսչութենէ Աստուծոյ թողացուցեալ նոցա առանց վտանգից՝ որպէս հաճոյ թուիցի կեալ ի հաւատսն Քրիստոսի համարձակաբար. – 324. եթէ հաւանեալք արդարոյն և ապաւինեալք ի նա՝ յուսացան ի բան նորա, ծառայել երկիւղիւ հրամայելոցն ի նմանէ՝ զի՞նչ անհաւատ թուի և ի փրկութենէն ընդ նմին վայելել. - 32. ձկան իմն թուելով ի վերայ մկանաց ալեացն խաղալով – 86. այնպէս թուէր ի խխնջել երիվարացն և յերագ ի վերայ դիմելոցն: - 228. Եւ ուժեղացեալ դաշիկն քաղաքային ի վերայ Մուսէի զօրուն, մինչ ածին արկին զբուն բանակաւն ուր և Աշոտն մեր թուէր գոլ խօթացեալ. – 328. նա և զիւրեաւ տախտակափակ լանջապահս, թիկնապահս, զանգապանս, առնապանս, գլխապանս, որ գրեթէ բովանդակ պղնձեղէնս զնա իմանալ թուէր, և զետեղեալ բլրաձև զօրու անմատչելի կարծելով. – 64.

ԹՈՒԵԼՈՑ - Քանզի առաջնոցն ուրուականք և ստուերականք ոմանք՝ ըստ իւրաքանչիւր կարծեաց թուելոց վրիպեցան յաստուածածանօթն գիտութենէ հոգեշահ նահապետացն: - 40.

ԹՈՒԵՑԵԱԼ - Այսպիսիք իմն ինձ թուեցեալ համարեցան այնոքիկ վայրք. այլոց որպէս կամք իցեն: - 52.

ԹՈՒԵՑՈՒՑԱՆԵԼ - զոր բարբառն եբրայական իբր ծեքելով իմն զբանն՝ թուեցուցանէ իմն ասելով Աւաւրիշըլիմ, այսինքն Երուսաղէմ – 34.

ԹՈՒՋ - և այլ թէ. ,,մի՞թէ /գրքում՝ մի՞թե/ քաղիցեն ի փշոց խաղող կամ ի տատասկէ թուզ,, - 256.

ԹՈՒՀ/դիմազ./ Տե՛ս ԹՈՒԵԼ

ԹՈՒԻԼ Տե՛ս ԹՈՒԵԼ

ԹՈՒԼԱԳՈՅՆ - Արդ փութա՛, պնդեա՛, ե՛լ զհետ նոցա, և մի ինչ յայդոսիկ յերկուանայցես, թուլագոյն կալով մնալով յիրիդ յայդմիկ,,: - 184.

ԹՈՒԼԱՄՈՐԹՈՒԹԻՒՆ - Եւ վասն իւրեանց թուլամորթութեանն և անհաստատ և յողդողդ մտաց սիրեցին զփառս մարդկան առաւել քան զփառս Աստուծոյ. – 246.

ԹՈՒԼԱՑԵԱԼ - և իբրև մօտ եղև յափն գետոյն՝ քարշեալ ոմն զլայնալիճն, նստելով ընդ դարիւն, և հարեալ նետիւ ընդ բացատն, և երեսանակալ ձեռնն թուլացեալ. կրկնեալ այլ ոմն ճօճ նիզակաւն ընդ նոյն ակն՝ գետավէժ արարին զԱշխէթն. – 272. Ի սորա յերրորդ ամի թագաւորութեանն ի վերայ Հայոց աստուածատուր բարկութեամբ անդնդաշարժ վրդովմամբք ներքնագոյն խորոցն պատահեալ միմեանց սահանախաղաց դղրդմամբ, հիմնաշարժ տապալմամբ, /356/ ներքսագոյն երկրի թուլացեալ պնդափակ աղխեալ սանդարամետական սահմանին, բարկութեան հողմոց շնչեալ ընդ ջրոցն խաւարայնոց, ի կոհակս անդնդաքակս զթանձրայատակ երկրի զկարծր և զծանրալիր անկշիռ անբաւութիւնն տատանեալ, մինչ յերեսս երկրի ի վեր մղեալ հանդէպ քաղաքին Արտաշատու/ գրքում՝ Արտաշասու/, որ Բլուրն նորուն ասի – 358.

ԹՈՒԼԱՑՈՒՑԱՆԵԼ - ,,Թագաւորաց աշխարհակալաց օրէնք են՝ մեծաւ հոգաբարձութեամբ խնամ տանել վասն շինութեան աշխարհի և թեթևացուցանել զլուծ բռնութեան /184/ ծանրակի բեռանց, թուլացուցանելով զասստկութիւն հարկապահանջ խոշտանգանաց – 186. և ոչ զոք թուլացուցանէր թագաւորել Զրուանայ, դաշնաւորել երդմամբ՝ մինչև որ ի կնոջէն Ըռեա որ ի Զրուանայ զարմից էր ծնեալ արու՝ անդէն ի ծննդեանն սատակէր. – 14.

ԹՈՒԽ ԳԵՏ - ԵՒ ՊԱՐՏՈՒԹԻՒՆ ՍՄԲԱՏԱՅ ՅԱՀՄԱՏԱՅ Ի ՍԱՀՄԱՆՍ ԱՂՁՆԵԱՑ Ի ՎԵՐԱՅ ԳԵՏՈՅՆ ԹՈՒԽ ԿՈՉԵՑԵԱԼ, ՈՐ ԻՋԱՆԷ Ի ԾՈՎՆ ԲԶՆՈՒՆԵԱՑ: - 336.

ԹՈՒՂԹ - Բազում անգամ թղթովք աղաչեալ զնա ո՛չ առնոյր յանձն. – 346. Առաքեցին առ Մուրիկ թագաւորն արս ճոխս մեծամեծ ընծայիւք և պատարագօք և թուղթ գրեալ ի բերանոյ Խոսրովայ զայս ինչ. – 136. Բազում և այլ բանս ախորժականս և դիւրընկալս ըստ այսոցիկ կարգէր ի թղթի իւրում: - 186. Գրեալ ի թղթի անդ՝ ի ձեռն նորա հաւատալ աշխարհիս Հայաստանեայց – 186. գրելով և զպատասխանի թղթոյն ի ձեռն Թովմայի առաքելոյ, և զխոստաբանութիւն՝ զթադէոս առաքեալ լնուլ զփափագումն խնդրոյն. - 76. Գրէ դարձեալ թուղթս երկրորդս և ասէ. – 138. գրէ թուղթ հաւատոց առ Ղևոն կայսր Յունաց, և ընկալեալ ի նմանէ պատասխանիս՝ բազում ինչ ի Կուրանէ անտի իւրեանց արտաքս ընկէց զյոյժ առասպելագոյնն, քանզի ստուգապէս ծանեաւ զզօրութիւնն. – 166. ԵՐԿՐՈՐԴ ՆՈՐԻՆ ԵԻ ԵՐԹԱԼՆ ԳՈՒՐԳԷՆԻ ԶՀԵՏ ԿՈՉՈՂԱՑՆ ԲՈՒԽԱՅԻ ԵԻ ՈՐ ԻՆՉ ԳՈՐԾԵՑԱԻՆ, ԵԻ ԹՈՒՂԹՆ ԻԲՐԵԻ Ի ԴԻՄԱՑ ԱՐՔԱՅԻ: - 234. Եւ գրեաց թուղթ զկնի նախարարացն Շապուհ, լուծանելով զպատճառ հատուածի նոցա. – 110. Եւ գրեն թուղթ առ Յամանիկն, եթէ ,,ի մտանելն իմ ի Դուին քաղաք և զհարկս արքունի յիս գրաւել՝ և յանկասկած առեալ զիշխանս Հայոց՝ և եկեսցեն առ իս. – 340. Եւ եղև զկնի երից աւուրց անցանելոյ ետուն թուղթ մի տանել առ Գուրգէն, գրեալ Բուխայի լի դառնութեամբ, կնքեալ մատանեաւ արքայի, իբրև այն թէ ի դիմաց արքային և յարքունուստ եկեալ. – 236. Եւ զչարեալ ընդ խափանումն խորհրդոցն իւրոց՝ ամբաստան յոյժ լինէր զԱշոտոյ հանդերձ թղթովք Տաճկաց, որք էին ի կողմանս Հայոց, բազում այն ինչ զոր ստութեամբ քան թէ ճշմարտութեամբ զեկուցանեն զնմանէ զգործս, և թէ հակառակս ևս թագաւորութեան քոյ բանընդդէմ լինի հանապազ: - 172. Եւ էր գրեալ ի միում թղթի անդ, յիշեցուցանելով զոր ինչ գործեաց Աշոտ ի զօրսն Ապահունեաց զյաղթանակ պատերազմին և զհոյակապ անուն ստանալոյն՝ ասէ – 382. և թուղթ մի գրեալ և կնքեալ լի խորամանկութեամբ և կեղծաւոր խարդախութեամբ ըստ հնարագիտութեան որդւոցն Իսմայէլի. – 234. Եւ թուղթս և դեսպանս առ թագաւորն յղէին ծածուկ ի միմեանց. – 194. Եւ

ի ժամու մինչ ագևորեալքն կամէին մտանել զառաջեաւ … յայնժամ շուրջ կացեալ զվրանաւն մեծ սպարապետին զկազմեալ գնդաւ վահանաւոր և նիզակաւոր ամրափակ պնդութեամբ, և մտեալ մատոյց զթուղթն, զոր էր գրեալ առ Յամանիկն ի քաղաքն Պարտաւ Ահմաթայ նենգութեամբ: - 344. Եւ ի հասանելն նորա առ թագաւորն՝ ունէր ևս ընդ ինքեան թուղթս լի ամբաստանութեամբ զնախարարացն, որ բնակեալ էին ի Հայս – 180. Եւ իբրև ետուն զթուղթն կարծեցեալ իբրև յերեսաց արքայի՝ „ընթերցիր զայդ, ասէ, մի՛ ինչ ընդ մեղադրութեամբ արկաներ զիս, և կարծել նենգութեամբ գնալ առ քեզ և դրժել ինչ քեզ և ստել երդմանց /236/ մերոց. – 238. Եւ կալեալ զդեսպանսն հանին զթուղթսն, և զարսն պահեցին ի զգուշութեան, ոչինչ ումեք զգուշացուցանելով որ ինչ եղևն: - 340. Եւ մինչ նոքա կային մնային հրաման ինչ ընդունել յարքունուստ՝ /286/ դարձան հրեշտակքն և եկին փութանակի, և բերին թուղթ յարքայէ առ Ապումուսէ՝ գալ ի հնազանդութիւն նոցա և երթալ առ Բուխայ. – 288. և մուտ եղեալ ի տեղին … ետուն տանել զթուղթն, լի թիւնիւք սատանայական իմացմանց, իբրև զկապարճս լի նետիւք դեղեալ ի գաղտնիս ի գրկաց թռուցանել ի նպատակն: - 234. Եւ յարգելուլ զնա ազատագունդ վաշտիցն՝ չանսայր, քանզի լուեալ էր նոցա, եթէ շրջաբերական թղթով դարան գործեալ էր նմա Աշոտոյ իշխանաց իշխանի: - 352. և նա ձեռնամուխ եղև զընդ նովաւ հնազանդեալս ի բաց կորզել քեցել ի նմանէ շրջաբերական թղթովք, զիշխան Վասպուրական զԴերանիկն, զԱպլբառ Կայսիկ զբռնաւորն Ապահունեաց, նմանապէս և զայլսն զոր և կարաց հրապուրել. – 350. զի Յամանիկն թուղթս և դեսպանս մի զմիոյ կնի առնելով առ իշխանս աշխարհիս՝ զինքն յառաջանալ ի վերակացութիւն Հայոց – 340. զհարստահարութիւնն բացաձգեալ, և զթուղթս առ մի մի յիշխանացն յղել յաճախէր, յղովագոյն առ իշխանն Աշոտ և առ եղբարս իւր. – 360. Զոր զթուղթսն խաբող պատրանօք ի բուռն առեալ Բարձումայ՝ ետ տանել առ արքայ Պերոզ – 130. զոր ընկալեալ սուրբ հայրապետին և բարեպաշտ թագաւորին Թէոդոսի հինգ թղթովք և հինգ պատասխանեօք՝ կարգէ զսուրբ վարդապետն ընդ վարդապետութեան աթոռակալութեան սրբոյն Յոհաննու Ոսկեբերանի և այլոց քաջաց և գլխաւոր վարդապետացն – 116. Զոր տարեալ զթուղթն մատուցին առաջի թագաւորին: - 132. զորս յանդիման Փրկչին կացուցին զառաքեալսն հանդերձ թղթովն Աբգարու, և զխորհրդական պատասխանիսն լուեալ վասն փրկական խաչելութեանն որ վասն աշխարհի - 76. թէպէտ և ոչ համարձակեաց զամենայն բառնալ, այլ յոյժ պատկառանօք ամաչեցեալ՝ լքաւ ի ստութենէ անտի, որ յանդիմանեցաւ ի թղթոյ կայսերն, և ի ձեռն այսորիկ ցուցանէր բարեմտութիւն մեծ առ ազգս /166/ քրիստոնէից. – 168. Իսկ իբրև ընթերցաւ զօրավարն Աղուանից զթուղթ թագաւորին՝ փութացաւ էջ ի լեռնէ անտի և եկն եկաց առաջի Բուխայի. – 288. մանաւանդ յառաջագոյն պատրաստեալ պատսպարեաց թղթովք և պատարագօք առ թագաւորն և առ զօրավարն գնալ ըստ հրամանաց նոցա, և ոչ ինչ արտաքոյ կամաց նոցա խորհել կամ գործել ինչ: - 270. նա և հաւատարմութիւն իւրեանց առեալ զթուղթսն սրբոյն Սահակայ առ կայսրն և առ հայրապետն – 118. որպէս Պօղոսի հաճոյ թուի գրել յառ Եբրայեցիս թղթին, թէ „չէ բաւական ժամանակս պատմելոյ„ վասն դատաւորացն Իսրայէլի և սրբոց մարգարէիցն – 302. Քանզի Վարդան անցեալ գնացեալ էր սուրբ վարդապետաւն Մաշտոցիւ առ կայսր Թէոդոս և առ Ատտիկոս արքեպիսկոպոս հանդերձ թղթովք սրբոյն Սահակայ, տանելով ընդ իւրեանց և զգիր և զբառ հայերէն դպրութեան. – 116. և էր պատճէն թղթոյն զոր կեղծաւորեալ ետուն զնա՝ այս ինչ. – 236.

ԹՈՒՆԱՒՈՐ - Իսկ տէր Գրիգոր ի մէջ մարդակերպ գազանաց ի ժողովս խուժադուժ բարբարոսաց բնակէր, որ ևս չար քան զթունաւոր գազանս են առ մեզ – 252.

ԹՈՒՐՔ - Ապա այնուհետև դարձեալ յղեաց զՀամդոյ զՊարսից ամիրայ, և ի զօրաց արքունի զՀէթմ ազգաւ թուրք, և ընդ նոսա հեծեալս Ժ հազարաց, կազմեալ սպառազէն պատրաստեալ բարձրագոյն քան զառաջինն – 234. Եւ զօրագլուխ կացուցանէ նոցա զայր մի Բուղայ անուն, ազգաւ թուրք. – 200.

ԹՈՒՐՔԱՍՏԱՆ - Յայնժամ հրովարտակս արարեալ, պնդաղեսպանս արձակեալ ընդ ամենայն սահմանս իւրոյ տէրութեանն … Թուրքաստանի և Խուժաստանի, Մարաց և Իլամացւոց – 198. սագունակ հասեալ ի վերայ Վասպուրական աշխարհիս պարսկական խուժանն ըստ ազգս ազգս և ըստ քաղաքս քաղաքս ի Մարաց և ի Պարսից, յԵլամացւոց և ի Խուժաստանէ, ի Կրմանայ և ի Մուկանաց, ի Թուրքաստանէ և ի Խորասանայ, և յեղակարծում հասին ի Ճուաշն գաւառ – 398.

ԹՈՒՓ - և երթեալ ի թաւ պուրակս բուրաստանացն, մտեալ ի ներքոյ թաւ թփոյ ծաղկոցն որ էր մուրտ բազում ղուղեալ դաղարեաց: - 152. Եւ մինչ երթայր և խորհէր՝ խոցեալ նորա երիվարն, և յանկարծակի այն ինչ ոտն երիվարին շաղեալ ընդ փոքր թուփ մի, որպէս ասեն, զուլումբեալ ի վերայ գլխոյն ջարդեալ զողն ու լարն՝ ի բաց ընկէց զհեծեալն զքաջ զօրավարն Ապումկդէմ: - 304.

ԹՈՔ - Եւ մեկնակազէնքն պատեցին շուրջ զեկեղեցեաւն, և ելեալ առ նա ոմանց ընդ փորուած գմբեթին՝ և եհար մի ոմն աշտէիւն ընդ միջոց թիկանցն՝ և ընդ անթովքն հանեալ ի ներքոյ թոքացն՝ փչեաց զոգին և թաղեցաւ զթաղումն իշոյ: - 190.

ԹՈՔԱԿԷՍ - և Տիգրան առ երագութեան ձեռինն հարեալ նիզակաւ ընդ սրտադուրսն ի բաց կորզէր զթոքակէսն. – 64.

ԹՈՔԼ - ԹԱԳԱՒՈՐԷ ՏԱՃԿԱՑ ԹՈՔԼ ՈՄՆ ՋԱՓՐ ԱՆՈՒՆ: - 170.

ԹՌՈՒՑԱՆԵԼ - և զփքինս կապարճիցն սպնգով ծածկեալ՝ զսատակչական զօրութիւնն թռուցանէր ընդդէմ սրբոյն – 204. և մուտ եղեալ ի տեղին … ետուն տանել զթուղթն, լի թիւնիւք սատանայական իմացմանց, իբրև զկապարճս լի նետիւք դեղեալ ի գաղտնիս ի գրկաց թռուցանել ի նպատակն: - 234.

ԹՌՈՒՑԵԱԼ - և առեալ զնա մտանեն ի մէջ մայրեացն, և ընդ գիրկս մտեալ Շաւասպայ Արծրունւոյ՝ զլայնալիճն լի քարշեալ հարկանէ ի թիկանց ընդ մէջ ողինն զկորովալիր մատանցն զազդոյ շարժումն թռուցեալ թափանցիկ ընդ չարախորհուրդ սրտին միջոցն դիպեցուցանէ. – 100. զոր կազմեաց իւր սատանայ գործի աջողակ յամենայն արուեստ գիտութիւն խարդախութեան, իբրև զպատշաճ դարան դեղեալ նետիւք ընդ խաւար թռուցելոյ յոգիս խաւարամածս: - 248.

ԹՌՉԻԼ - Եթէ երկոքումբք թևովք ոչ թռչիցի թռչուն՝ ոչ վերասցի ի բարձունս: - 256.

ԹՌՉՈՒՆ - Ապա թէ փութաս ելանել ի կենաց աստի առ զայրուցս կատաղութեան քո և զոսկերս ցրուես յանապատս և լինել կերակուր գազանաց երկրի և թռչնոց երկնից՝ քո կամք լիցին, և ես քաւեալ եմ յարենէ քումմէ – 278. Եթէ երկոքումբք թևովք ոչ թռչիցի թռչուն՝ ոչ վերասցի ի բարձունս: - 256. Եթէ, որպէս ասացի, ի բաց գնաս յինէն՝ խաղաղութիւն է, և թէ ոչ՝ պատերազմ և կռիւ և ճակատամարտ … դու երէ վայրի՝ և մեք որսորդք, դու թռչուն՝ և մեք ի բարձանց ի վայր իջուցանեմք և վարմ ձգեալ. – 280. և բայացեալքն եթէ գազանք և եթէ թռչունք, յորժամ զգան զջերմութիւն օդոյն ի հասարակել տունջեան և գիշերոյ՝ ի գարնանային եղանակի ելեալք յիւրաքանչիւր կայենից. – 188. և զտարի մի կացեալ մարմինք սպանելոցն անյօշելիք ի գազանաց և ի թռչնոց: - 368. և թռչունք և գազանք ծանեան զժամանակս գալստեանն իւրեանց – 268. Յայնժամ հրամայեաց զօրավարն քարշել զմարմինս սրբոցն արտաքոյ քաղաքին, լինել կերակուր շանց և թռչնոց երկնից. – 268. Նոյնպէս բանայ, որպէս և այլ թռչունք և գազանք՝ բնաւորեալ բաժանեն զժամանակս տարւոյն յերկուս կամ յերիս ամարանոցս և ձմերանոցս ինքեանց կենաց պաճարին – 262.

ԹՐԱԲ ԳԱԻԱՌ - Իսկ այլազգեացն անցեալ գնացեալ մտին ի Թրաբ գաւառ և ի Շնաւհ: - 402.

ԹՐԱԿԱՑԻՔ - Եւ եղև յամի չորեքտասաներորդի Խոսրովայ արքայի, ի քսաներորդ ամի Մուրկայ թագաւորութեանն՝ ապստամբեցան ի կայսերէ զօրքն Յունաց, որք ի Թրակացւոց կողմանէն – 140.

ԹՐԹՈՒՐ - և իբրև հուր ընդ եղէգն ընթացեալ՝ այնպէս հասեալ ի վերայ մեր իբրև զմարախ, իբրև զջորեակ և իբրև զթրթուր խառնիճաւն /238/ հանդերձ – 240.

ԹՐՋԵԼ - այլ Մկրտչին հրամայի՝ մի ըմպել գինի և օղի. սա ոչ միայն գինով ոչ զկծէր, այլ և ոչ ջրով զծարաւոյն պէտսն կատարէր, սակաւապետութեամբ ընդովք թրջելովք, և խստավայել բանջարովք առ քաղցն վայելելով: - 376.

ԹՓՂԻՍ - Եւ զօրագլուխք զօրացն էին այսոքիկ, Մուքադմ, Յուսփ ի Թփղիս քաղաքէ, Յուսփ որդի Ռահմայ և Ապուհեշմ՝ Ելոյ տէր և ընդ նոսա զօրք Համդոյի Պարսից ամիրայի: - 226.

Ժ

Ժ/թիվ՝տասն/ - /թագաւորեաց/ Վիղդ որդի Աբդլմէլքի ամս Ժ…Սուլիման որդի Աբդլմէլքի ամս Գ … Ումառ որդի Աբդլազիզա ամս Գ: - 166. /թագաւորեաց/ Յեզիտ ամս Ջ … Մահադի ամս Ժ. - 168. Եւ զարեգակն ևս ոչ տեսանէաք, այլ ընդ աղօտ օդ յաւուրս Ժ. – 50. Եւ հատաւ քուն յաչաց նորա, և ոչ ոք մտանէր և ելանէր առ նա զաւուրս Ժ, զի եմուտ ի սենեակ ամօթալի երեսօք. – 282. զկնի Ժ աւուր անցանելոյ զատկին՝ առին զքաղաքն. – 142. Եւ զի Ժ ազգացն շարք առանց ստութեան կան գրեալ յամենայն մատենադարս - 12. և զքեզ կորակնեալ ամօթալից ի պարտութիւն մատնիցին, որպէս զյառաջագոյն եկեալ հազարապետն արքունուստ, զի ոչ կարաց կալ ընդդէմ նոցա, և ոչ Ճ այր առ Ժ զօրացն Հայոց,,: - 214. Եւ ժողովեալ աշխարհին Վասպուրական՝ զամիսս Ժ արարին կոծ մեծ ի վերայ նորա: - 354. ի սորա Ժ ամին գնացեալ Մովսէս յԵգիպտոսէ առաքինանայր յանապատին: - 58.

Ժ ՀԱՋԱՐ - Ապա այնուհետև դարձեալ յղեաց զՀամդոյ զՊարսից ամիրայ, և ի զօրաց արքունի զՀէթմ ազգաւ թուրք, և ընդ նոսա հեծեալս Ժ հազարաց, կազմեալ սպառազէն պատրաստեալ բարձրագոյն քան զառաջինն – 234.

ԺԱԽ - և կացեալ զաւուրս բազումս անթաղ՝ և ոչ ինչ ամենևին արատեցան մարմինք սրբոցն, և ոչ գոյր հոտ ժախտու ի վերայ նոցա: - 268. զի թերևս կարասցէ արկանել զերանելին ի ներքոյ պղտոր հրապուրեցուցիչս ժախտուն մահածին հնազանդութեանն - 204.

ԺԱԽԱՀՈՏ - և ոչ եղեն ունկնդիր մաղձահամ և ժախահոտ բանիցն, իբրև ի փեռեկեալ գերեզմանէ զնեխահոտութիւնն արտաքս արկանելոյ. – 292. Եւ սկսաւ ի վերայ մղել զժախահոտ և զյիմարեցուցիչ մաղձախառն թոյնսն – 204.

ԺԱՀԱՀՈՏ - Եւ կայր զօնսն պռզտեալ, կոկոզաբանէր լի յոխորտանօք, խրոխտայր, եռացուցանէր ի վեր մղէր զդառնութիւն ժահահոտ մաղձոյն չարաթոյն վատախառնութեանն – 242.

ԺԱՄ - ,,լուռ լե՛ր առ այժմ, և յայլում ժամու հոգացայց վասն որոյ խորհիս. – 114. ,,հրամայեա արձակել արս հաւատարիմս, և ես յորժամ հասից ի դուռն արքունի՝ ի նմին ժամու խնդիր արարից Խաչին, և գտեալ զնա տայց բերել առ քեզ,,: - 154. Բայց Աշոտ, իբրև եհաս ժամ ելից իւր յաշխարհէս՝ յանհունս բերեալ զզեղջ և զապաշաւանս յորդահոսան արտասուօք զխոստովանողականն ի դիմի հարեալ միջնորդութիւնն – 336. բայց զՎասակն յամենայն ժամ իբրև ընդ խաղ ի բուռն առնելով արձակէր խաղաղութեամբ: - 310. բայց քանզի պատմագրութեան է ժամս և ոչ գովասանականութեան՝ արտաքոյ եղէց յոլովից բանբասանաց. – 300. գուցէ ներհակդ առ ընթեր կալով՝ ի միում ժամու բարկացեալ, և զքեզ ևս վարատիցէ: - 46. և ահա ինչէր առ հասարակ երկիրն ամենայն իբրև զծով ալեաց կուտակելոյ, և սաստկացաւ պատերազմն, յառլուսանալ աւուրն մինչև ի սպառել անցից տունջեանն իշխեցողին երկոտասան ժամու աւուրն. – 276. Եւ անցանելով ընդ գաւառն

Բզնունական գայ մտանէ ի Խլաթ. քանզի կամէր անսալ ժամու դիպողագունի, զի որսայցեն նենգութեամբ խաբել: - 186. և արիաբար հանդիսացեալ գնդին Հայոց՝ ճակատեցան ընդ այլազգիսն հարուստ և ձիգ ժամս և հարին ի հարուածս մեծամեծս զբանակ այլազգեացն: - 306. և ելեալ ի Յաղամակերտ քաղաքէ ի Թ ժամու ուրբաթու աւուրն, և անցեալ ընդ ծովակն Յըմբեայ, և ընդ Վարազի Զարեհաւանի. – 402. Եւ եղև իբրև երրորդ ժամ լինէր աւուրն, որ էր միաշաբաթի՝ և ահա ելանէին գունդք գունդք հեծելոցն ընդ կողմն անապատին Սմբատայ կոչեցեալ բերդին – 228. և զի էր վարժեալ ուսմամբ Աստուածաշունչ գրոց և ընդել և ծանոթ էր ճարտասանական հրահանգիցն՝ եդ առ յայն ժամու իմացական տեսութիւնն զերգս – 284. Եւ ի ժամու մինչ ազնորեալքն կամէին մտանել զառաջեաւ … յայնժամ շուրջ կացեալ զվրանաւն մեծ սպարապետին զկազմեալ գնդաւ վահանաւոր և նիզակաւոր ամրափակ պնդութեամբ, և մտեալ մատոյց զթուղթն, զոր էր գրեալ առ Յամանիկն ի քաղաքն Պարտաւ Ահմաթայ նենգութեամբ: - 344. և ի ժամուն յայնմիկ մինչ առաւ ամրոցն և զըմբռնեալսն ստիպէին, զի որք ի բաց կացցեն ի Քրիստոսէ՝ և մի մեռցին – 222. Եւ ի միւսում առաւօտին հասին ի վերայ բանակին խոնջեալ երիվարօք, անզգուշութեամբ առ մուտն պատրաստեալ, և անկան ի նմին ժամու Բ ոմանք, Վլիթ և Մարաճայ. – 402. և ինքն ել գնաց երթալ մտանել ի քաղաքն Դուին, ձմերոց ինքեան պատրաստեալ զնա, մինչ ի ժամ գարնանայինս, ունելով ընդ իւր կապեալս բազումս. – 240. և ծառայն զչարիս խորհեալ սպանանել զԴերենիկն և զաշխարհս նուաճել զիշխանութիւն Գուրգինի, զի և դիպող էր ժամն: - 320. և կարգել նմա ռոճիկս առատապէս, մինչ ինքն պարապագոյն ժամու անդր հասանիցէ: - 70. և յերկարեալ գործ պատերազմին հարուստ մի ժամ - 64. Եւ յերկարեցան գործ պատերազմին մինչ ի տասներորդ ժամ աւուրն – 232. Եւ ոչ անվկայ բանս, որպէս վերագոյնն գրեալ է մեր զդերահատուցականս սորա, վկայութեամբ մարգարէական տառիցն, որպէս և ի պատահմանէ իրացն ճարտար գիտեն՝ որք են ի ժամանակս յայսոսիկ մնացեալ յայն ժամու անդ հանդիպելոցն: - 262. զի ոչ է ժամ մեզ զներբողականօքն զդեգերումն առնել, զպատմողական զրուցատրութեան կարգաւն զանց առնել: - 78. ընդ առաւօտանալն սկսեալ՝ ի ժամս բովանդակ՝ յաղթութիւն սատարեաց և ի փախուստ դարձոյց զբազմութիւն զօրացն Ովայի – 178. ժամ տուեալ՝ փութով յանդիման լինել նմա ի թագաւորաբնակ քաղաքն իւրեանց: - 198. Ի նմին ժամու զգացեալ վասն նորա մեծ իշխանին Արծրունեաց Մերշապհոյ, որ յայնժամ ի Տմորեացն ամրանայր բերդի՝ յղէ առ նա ելանել գնալ ի սահմանացն յայնոցիկ. – 130. Իսկ Ասուդ զհետ Դարէհի ելեալ ի պատերազմ ընդդէմ զօրագլխացն Աղէքսանդրի՝ Հերակղեայ նահատակութեամբն դիւցազնաբար ի դիմի հարեալ՝ ի բաց նահանջէ զուժեղագոյնս զօրագլխացն Աղէքսանդրի հարուստ ժամ մի, մինչ հիացումն զօրօքն արկեալ՝ տային տեղի փախստէի. – 68. լեալ ամաց ԻԹ՝ փոխի յաշխարհէս յամսեանն արեգ, որ օր Դ էր ամսոյն յաւուր երկշաբաթւոջ ի յիններորդ ժամու աւուրն. – 384. Նստան երկոքին կողմանքն պահել զպահպանութիւն իւրեանց մեծաւ զգուշութեամբ, և ետուն ժամ անսալ միմեանց՝ ոչ ելանել ի պատերազմ, մինչև եկեսցեն հրեշտակքն յարքայէ, զոր առաքեցինն: - 286. որոյ դիպող ժամ գտեալ ի միասին կալով նոցա՝ կալեալ զնոսա տայ յամուրս աշխարհին, կապեալս կապանօք երկաթեօք. – 364 որով ժամ ի դէպ իսկ է, առ յայնժամ զարժանապէս նոցա ասել փոխարէն և անմեղադրելի բազմաց, եթէ այնչափ մթերեալ համբարք կերակրոց կուտեցին ի հալոցսն Բէլայ – 38. Որոց դիպող ժամ գտեալ՝ արտաքս ելեալ ի բանակէն, զերծեալք իբրև զայծեամն ի հնարից որսորդաց՝ գնացին խաղաղութեամբ յիւրեանց տեղիս և զնա թողին լքեալ ամօթալից: - 344. որք ի միում ժամու սպանան արք Խ, ամենեքեան ի չափ հասակի եկեալ: -152. Քանզի և ի ժամու անդ յորում զմեծն Գրիգոր առեալ տանէին ի քաղաքն Կեսարացւոց ձեռնադրել զնա ի քահանայութիւն, ի լուսաւոր վարդապետութիւն աշխարհիս Հայոց – 94. էր և նորա աշակերտ մի, որում անուն էր Սաղման. որ ի ժամ մահու միայնակեցին՝ պատուիրէր նմա և ասէր – 162.

ԺԱՄԱԳԻՒՏ - ունելով զտեղիս տեղիս, տալով ձեռս յովպէտ և ժամագիւտ դիպուածք ումեք հանդիպանայր – 68.

ԺԱՄԱԴՐԵԱԼ - Եւ ամենեցուն ըստ հրամանի թագաւորին յիւրաքանչիւր կողմանց այրուձի գումարեալ՝ հանդերձ այլովք սպառազէն յօրինուածովք անյապաղ երագութեամբ գային ի ժամադրեալ կոչումն: - 198. Իսկ իշխանն Վասպուրական, այն ինչ հուպ ընդ հուպ եկն ի ժամադրեալ տեղին. ընդ որ յոյժ ուրախացեալ թագաւորն, իբրև զերծեալ ի կասկածանացն, զոր ունէր յիշխանէն Սիւնեաց: - 382.

ԺԱՄԱՆԱԿ - ,,լաւ է մեռանել վասն Քրիստոսի, քան աւր ժամանակ մի վայելել ի մեղս,,: - 250. Այլ անժամանակն Բէլ ծախի ժամանակաւ, նշկահեալ ի Հայկայ որդւոյ Թորգոմայ, որ ի տանէ Յաբէթի – 40. Այլ և ի ժամանակս հասելոց թշնամեաց յերկիրն իւրեանց՝ գան միաբան լեռնայինքն յօգնութիւն իշխանացն, զի են տիրասէրք: - 192. Այսոքիկ գաւառք անուանիք, զոր յառաջին ժամանակս իւրոյ իշխանութեանն սեփհականս իւր արարեալ ունէր հայրն նենգութեան Մարդպետն կոչեցեալ … և մանաւանդ քաղաքն Շամիրամայ հռչակելին և յոյժ փառաւորագոյնն յամենայն կողմանց Վասպուրականի: - 388. անդ հասեալ քաջացն մերոց եղբարցն երեցունց ազատագունդ սակաւաձեռն գրոխիւ ի ձմեռնային ժամանակի, և ընդ լրթնատեսիլ լուսոյն վազս ի վերայ եղեալ՝ հանին ընդ սուր յոլովս քան թէ սակաւս: - 372. անցցուք ի վեր Եղկղեսիանոսաց, ի ժամանակի հալածանաց որք անկան ի կռապաշտութեանն մոլորութիւն. – 256. առ այսու ժամանակաւ Դաւիթ թագաւորեաց յԵրուսաղէմ. – 58. Արդ են ժամանակք թագաւորութեանն Պարսից, սկսեալ ի Կիւրոսէ ցԴարեհիոն … և ամք անիշխանութեանն զոր ոմանք ի պատմագրաց գրեն Կ, և այլք Հ – 166. Արդ զիա՞րդ յետ բազում ժամանակաց զՆինոս ասեն շինել զՆինուէ, զայրն Շամիրամայ, որ ծնաւ զՆինուաս – 14. Բայց մեզ կայ առաջի ասել վասն Ջափրայ և չար գործոց նորա, անգիրս մնացեալ յայլոց, զոր կատարեաց ի վերայ աշխարհիս Հայոց երկայնագոյն ժամանակաւ և անըմբերելի նեղութեամբ ի մերս հանդիպեալ աւուրս, որ էր Հայոց Յ թուական: - 168. բայց միայն մանուկ մի Դիոս անուն, զոր գաղտաբար ապրեցոյց մայրն, որպէս յետ բազում ժամանակաց զՄովսէս ի յԵգիպտոս – 14. բայց մնայ ի հարստութեան Պտղոմէականն միայն, մինչ տիրել Կղէոպատրեայ կնոջ միոյ եգիպտացւոյ որ յետ բազում ժամանակաց, մինչն յՕգոստոս կայսր: - 72. Բայց քանզի ոչ բաւէ աղքատիմաստ իմոց /384/ խոհարանաց շարժումն պատկանաբար առ ողբոցն վարել բանակարգութիւն՝ թողի այժմ այլում զօրաւորի կամ այլում ժամանակի: - 386. գլխաւորագոյն և բարձրագոյն յիշատակ արձանացուցեալ անջինջ կտակ առ բազմախաղաց ժամանակս տրամադրեաց: -392. Գուրգէն որդի Ապուպելճի Վասպուրական իշխանի, ի շփոթի ժամանակին Բուխայի և ի հայրապետութեանն Յովհաննու Հայոց կաթողիկոսի, իմաստութեամբ գործեալ՝ ոչ եկաց հակառակ չարին. – 302. Եւ այլք յայլ ինչ բազում յածմունս անկեալ ցնդին ժամանակաւ և իրօք. – 36. Եւ այսպէս խաղաղեցուցեալ զաշխարհս կէին հեշտալիր խաղաղականօք ըստ կամի ախորժակաց զամենայն ժամանակս կենաց Խոսրովու, որ թագաւորեաց ամս ԽԸ: - 92. և առ ծովեզերբն զամառնային ժամանակն պարենաւորեալ առկայանան. – 260. Եւ արդ ՆԺԱ են մարգարէք, որ զվկայութիւն աստուածութեանն Քրիստոսի ստուգաբանեն ճշմարտութեամբ յանցնիւր ժամանակս, իբրև ի միոջէ բերանոյ, թող զԱւետարանն և զառաքեալս նորա: - 246. և բնակեցուցանէ զնոսա ի գաւառն Աղբագ, յետ բնակեցուցանելոյն զնոսա ի Ջողախել, ի Վրնջունիս և ի Հախրամի, տեսեալ մինչև ի ժամանակս ինչ – 64. Եւ Գուրգէն և Աշոտ առանձին միմեանց պատահեալ ետուն ողջոյն միմեանց և ուխտեցին ուխտ խաղաղութեան մինչև ցայսօր ժամանակի: - 332. և գոռթ/ճիշտը՝դռոթ/ տուեալ յանձնիւր որջարանաց զօրէն մեղուացն ի մեղուանոցացն արտաքս դիմեալ ի ժամանակս խաղացման ծննդոցն, առաջնորդութեամբ իւրեանց որդնածին առաջնորդին – 398. Եւ եղև ընդ ժամանակսն ընդ այնոսիկ ել Հազարաւուխտ Պարսից զօրավար ծանր զօրու ի վերայ Հայոց՝ տալ պատերազմ ընդ զօրս Հայոց, աւերել գերել գերփել զաշխարհս – 134. Եւ եղև իբրև ձմեռն փոքրացաւ և ժամանակ գարնանային

եղանակին մերձեցաւ և օդն մառախլաձև միգախառն յստակեցաւ - 268. Եւ են ժամանակք թագաւորութեանն Ասորեստանեայց ի Բէլայ և Նինեայ ամք ՈՅ. – 58. և զպէտս կերակրոցն վճարեն ի սերմանց ինչ, առաւել ի կորեակ կոչեցեալ սերմանէն, զոր ոմանք ի սով ժամանակի /190/ հաց անուանեն. – 192. Եւ զրոյցք ժամանակաց սոցա յայլոց գրեալ յառաջագոյն, աւելորդ համարեցաք երկրորդել: - 168. Եւ էր ի մէջ Շապհոյ և Արշակայ պատերազմ մեծ զժամանակս կենաց Արշակայ: - 102. և թոչունք և գազանք ծանեան զժամանակս գալստեանն իւրեանց – 268. Եւ ժամանակ բռնակալութեան նորա են ամք ԿԲ – 42. Եւ ի ժամանակին /96/ յայնմիկ ունէր զհազարապետութիւնն Հայոց այր ժանդ չարաբարոյ, որում հայր Մարդպետ անուն էր. – 98. և ինքն մանկագոյն տիովք, ի ժամանակի անձնիշխանութեան լեալ ամաց ԺԵ, զի ,,մանկութիւն և անմտութիւն ընդունայնութիւն է,, , որպէս գրէ Սողոմոն – 346. Եւ իւր հազարապետին գրեալ և ծանուցեալ էր արքայի, զոր ինչ գործեաց ցայն վայր ժամանակի: - 220. Եւ խնդրէին ի բազումողորմէն Աստուծոյ՝ հանել ի գլուխ զառօրեայ ժամանակս անսայթաք և հաստատուն հաւատովք – 252. Եւ կացեալ անդ մինչ ի ժամանակս առաջինն Ղևոնի կայսեր՝ մեռանի անդ Վասակ և Տաճատ և փոխին ի հանգիստ փառաւորապէս ի գերեզմանս մեծամեծացն Յունաց: - 132. և կիսոցն անունկնդիր եղեալ՝ գնացին ի նոյն կործանման մինչև ցայսօր ժամանակի – 274. և հնախօսս շարագրական մատեանս և ի բազում վէպս պատմութեանց անցեալ գրեցի, որ ինչ բաւականանալ ձեռնհաս եղէ, սկսեալ յԱդամայ մինչ առ մեզ հասեալ ժամանակացս գիւտ: - 12. և մեծաւ աշխատութեամբ և ի բազում ժամանակաց փոյթ յանձին կալեալ անդուլ զցայգ և զցերեկ ի մեծ տարակուսանս ըմբռնեալ կայր վարանեալ – 242. Եւ յայնմ ժամանակի երթեալ ժողովէին ի քաղաքն Եդեսացւոց արք ԺԲՌ յամենայն ցեղիցն Իսրայէլի զի տեսին եթէ մեկնեցաւ անտի զօրն Պարսից, և թողին ի բաց զքաղաքն. – 156. և յայնչափ սաստիկ և անհուն ամբոխին սուտ վկայութեանն զբոլոր բարկութիւն բռնաւորին զարթուցին ի վերայ առնն, որպիսի ոչ ի միոյ ուրուք վերայ այնքան ժամանակս եհեղ զբարկութիւն իւր զօրավարն Բուխայ: - 290. և յետ այնորիկ պահղաւիկ թագաւորաց ժամանակք, որ կոչին Պարթևք, մինչև յԱրտևան որդի Վաղարշու – 166. Եւ յղէ պատգամ առ Թէոդորոս եղբայր Հայրակղի, ըստ այնմ որում Հրէայքն եղեն ձեռնտու, եթէ ,,զերկիրդ զայդ Աբրահամու խոստացաւ Աստուած և զաւակի նորա, և ի ձեռս նոցա էր բազում ժամանակս. – 160. Եւ ոչ անվկայ բանս, որպէս վերագոյնն գրեալ է մեր զդերահատուցականս սորա, վկայութեամբ մարգարէական տառիցն, որպէս և ի պատահմանէ իրացն ճարտար գիտեն՝ որք են ի ժամանակս յայսոսիկ մնացեալ յայն ժամու անդ հանդիպելոցն: - 262. և որ ի նմա են կենդանիքն՝ զնոյն առ ի վերայ հասուցանէ և նոքօք զպէտս քաղցոյն վճարէ մինչ ի ժամանակս գարնանայինս: - 262. և ունի յորելեանք Զ և ոլոմպիադր և ընդիքտիոնք, և Գ ամ հայրապետութեան Հայոց կաթողիկոսի տեառն Զաքարիայի, և մուտ եօթներորդ ամի, յորում կային յարքունիսն իշխանքն, ըստ եօթնեկի չափոյ շարժման ժամանակաց. – 312. Եւ սրբոյ վարդապետին մեր Եղիշէի, որ յայնմ ժամանակի ի Մոկաց բնակէր աշխարհին՝ եկեալ առ նա Բարծումայ, խնդրեալ զպատմողական գիրսն Հայոց, զոր գրեալ էր հրամանաւ սրբոյն Վարդանայ. – 130. և տուեալ պատերազմ զաւուրս ոչ սակաւս, որպէս թէ ամսօրեայ մի ժամանակ – 66. Զայսու ժամանակաւ թագաւորեալ Աղէքսանդր Մակեդովնացի տիեզերակալութեամբ երագահաս հասեալ ի վերայ Դարէհի սպանանել զնա. և բառնայ զթագաւորութիւնն Պարսից Արշաւրեան:-68. զառհաւատչեայսն առաջաբերելով ի փոքր ժամանակի զմեծամեծսն կշռեալ, զպոռնիկն, զմաքսաւորն, զաւազակն և որք այսպիսիք – 386 Զընդ նոյն ժամանակս և Նաւատիոս երէց ի Հռովմ առաքէր ընդդիմակս Եղկղեսիանոսացն – 256. զի թէպէտ նեղեալք և չարչարեալք լինէաք պէսպէս կտտանօք ի զօրացն իսմայէլական ազգացն տաճկական տէրութենէն՝ այլ սակաւագոյնք և առ փոքր ինչ ժամանակս – 194. զի ինքն երթիցէ յարքունիս կեղծոտելով զսաստկութիւն ձմեռնային ժամանակին ի վերայ եղելոյ և զխստութիւն հիւսիսային օդոյն սառնամանեաց, անընդել զինքն այնոցիկ վարկանելով: -

186. զոր առաջնոցն մատենագրեալ դրոշմեալ կայ ի գիրս ընդ ժամանակս ժամանակս սոցա քաջարութիւնք և արժանաւորք յոլովագունի և մեծամեծաց գովութեանց: - 96. զոր եցոյց նմա Հոգին սուրբ՝որ ինչ առ յապա ժամանակս գործելոց էր – 120. զորոց զանուանս և զժամանակս գլխաւորելով նշանակեցից փոքր ինչ որ և առ նոքիմբք եղեն: - 56. Ընդ այն ժամանակս ապստամբեալ ի պետութենէն Տաճկաց քաղաքացիքն, որում Կզուինն ասեն: - 328. Ընդ այն ժամանակս զօրաժողով եղև թագաւորն Հայոց Սմբատ ի վերայ Ապահունեաց աշխարհին: - 380. Ընդ այն ժամանակս տէր Զաքարիայ հանգեաւ ի Քրիստոս, կեցեալ ի հայրապետութեանն Հայոց ամս ԺԸ, և հաջորդէ փոխանակ նորա տէր Գէորգ: - 338. Ընդ ժամանակս ընդ այնոսիկ էր կացեալ յաթոռ հայրապետութեան տէր Յոհաննէս կաթողիկոս Հայոց: - 180. Ընդ ժամանակս Հայրակղի կայսեր Հռոմոց էր հասեալ ի վախճան թագաւորութեանն Պարսից: - 156. Ընդ ժամանակս Պերոզի արքայից արքայի, ոմն յաղանդոյն Նեստորի Բարծումայ անուն, որ ունէր զանուն եպիսկոպոսութեան, զօրեղագոյնս զնեստորական հերձուածոյն բուռն հարեալ, և քսութեամբ զնախարարացն Հայոց առ Պերոզ վարելով՝ բազում օճիրս արիւնհեղութեան գործեաց: - 130. Ընդ ժամանակսն ընդ այնոսիկ Աշոտ թագաւորն Հայոց փոխի յաշխարհէս ի բարիոք ծերութեան, փափկացեալ և յղփացեալ խրախութեամբ, ձեռն նորա յամենեսին և ամենեցուն ձեռք ի նա – 356. Ընդ ժամանակսն ընդ այնոսիկ թագաւորէ Յունաց Վաղէս կայսր, և Պարսից՝ Շապուհ արքայից արքայ: - 100. Ընդ ժամանակսն ընդ այնոսիկ խաղաց գնաց Արշակ ի մուտս կոյս – 98. Ընդ ժամանակսն ընդ այնոսիկ մինչ ճոխացեալ մեծամեծս փքայր Ջափրմոթոքլ ի վերայ քրիստոնէից, որպէս Սենեքէրիմ նախնին մեր ի վերայ Երուսաղէմի և ժողովրդեանն Իսրայէլի՝ յեղակարծում հասեալ ի վերայ նորա որդին իւր Մոթէին սպան զնա – 318. Ընդ նոյն ժամանակս եկն Վահան Աշոտի որդի, հօրեղբօրորդի Սահակայ ի գերութենէն՝ նուաճել զաշխարհս, և գունդ կազմեալ ընդդէմ Գուրգինայ՝ և ինքն զպարտութիւն քան զյաղթութիւն յինքն կրէր: - 310. Ընդ նոյն ժամանակս ընդարձակեալ բարերարին Աստուծոյ իշխանացն Հայոց՝ դարձան յիւրաքանչիւր բնիկ տէրութիւնս. – 322. Ընդ նոյն ժամանակս խորհուրդ ի մէջ առեալ Շաւասպ Արծրունի եղբայր Վասակայ հօր Աղանայ Արծրունոյ, և խորհեցաւ զտիրելն Հայոց – 124. Ընդ նոյն ժամանակս յղէ թագաւորն զոմն ի յաւագ նախարարացն վերակացու Հայոց և հաւատարիմ ի վերայ հարկաց արքունի Ապուսէթ անուամբ, ըստ տաճկական լեզուին, յարելութեամբ եբրայական դպրութեանն: - 170. ի բազում ժամանակաց լեալ թագաւոր նախնեաց մերոց և մինչ առ մեզ հասեալ – 244. Ի ժամանակին յայնմիկ էր խռովութիւն մեծ ի մէջ Բագարատայ և Մուսէի: - 172. Ի ժամանակին յայնմիկ էր ճոխացեալ պանծալի աթոռակալութեամբ սրբոյն Գրիգորի տէր Քրիստափոր Հայոց կաթողիկոս. - 130. ի հօրէ զՍենեքերիմայն և ի մօրէ զՄամգոնեացն, ըստ ծննդաբանութեան գալ հասանել՝ մինչ յորում եմքս հասեալ ժամանակ – 300. Ի սոյն ժամանակս էր այլ ոմն ի կողմանս Պարսից միայնացեալ կրօնաւորութեամբ – 162. Ի սորա ժամանակս տիրէր Վասպուրական աշխարհիս Աշոտ ի տանէն Արծրունեաց, այր քաջայայտ և ճոխ ի բարձրագոյնս. – 170. Իսկ զԳողթն գաւառ ի ժամանակի կատարման սրբոյն Վահանայ, յամի ՃՋԶ թուականութեանց, յորում ամի կատարեցաւ սուրբն Վահան, որ էր որդի Խոսրովայ Գողթան տեառն: - 390. Իսկ այլք զԿռոնոսդ ոմն անուն՝ լինել հայր Արամազդայ, ևս մօտաւոր ժամանակով – 36. իսկ զՆախճաւան քաղաք և զԳողթն գաւառ հանեալ էր ի Վասպուրականէ բազում ժամանակօք յառաջ, ՄԺԱ ամօք, յամի այրման եկեղեցւոյն Գրիգորի և վտանգաւոր մահու զօրացն Հայոց: - 390. Իսկ նա փոքր ինչ ժամանակ ներեաց նոցա դիմօք սիրոյ խաղաղութեան, մինչն ի գլուխ ելին որ ինչ յաղագս Ապումուսէին էին հանդէսք. – 296. Իսկ վարդապետն Եղիշէ էր ի ժամանակին յայնմիկ բնակեալ ի գաւառին Ռշտունեաց ի ծովեզերին, յորում տեղւոջ և հանգեաւ իսկ ի Քրիստոս սուրբն Աստուծոյ Եղիշայ: - 130. կամ թէ յամպոց ինչ ճայթիւն արձակելոյ և ի վայր հրաձգութիւնն արկանէ ի կարկտաբեր և յանձրևաբեր ժամանակի - 228. հրաման տուեալ ամենեցուն, զի իբրև մերձ լինիցի գարնանային ժամանակն՝ փութով առանց

յապաղանաց առ նա հասանիցեն ամենայն պատրաստութեամբ: - 262. մի՞թէ ոչ կարէին Հոռոմք սպանանել զնա, և բառնալ զթագաւորութիւնն Պարսից ի ժամանակի, իբրև ետ Աստուած զսա ի ձեռս մեր. այլ արարին ի վերայ նորա ողորմութիւն: - 144. Յայն ժամանակս գայ ոմն Բուտել անուն ի զօրացն արքունի հրամանաւ Բուխայի, հասանել ի վերայ Գուրգինի – 306. Յայնմ ժամանակի Բուհայ եկն եմուտ ի Խլաթ քաղաք, ճանապարհ արարեալ ընդ կողմն Ապահունեաց. – 200. Յայնմ ժամանակի էին եղբարք բռնակալք ոմանք ի կողմանս ապառաժ Արաբիոյ ի տեղւոջն Փառան որ այժմ կոչի Մաքայ, արք պատերազմողք /156/ զօրագլուխք, պաշտօնատարք մեհենին Ամովնացւոց պատկերին, որ կոչի Սամամ և Քաբար: -158. Յանգ հանեալ Պտղոմեանց զժամանակ թագաւորութեանցն, և հասեալ /72/ մինչ ի Կղէոպատրեայ, դուստր Պտղոմէի Դիոնիսի. – 74. յեղակարծում ժամանակի հասանէ համբաւ մահուն Արտաւանայ, և տիրել Պարսից Ստահրացւոյն Արտաշրի Սասանականի. – 92. Յերկարեալ վտանգ նեղութեան Հայոց, որպէս ցուցանեն բազումք ի պատմագրաց, մինչ ի ժամանակս Ջամասպայ և Կաւատայ, մինչ ի Խոսրով արքայ: - 134. յորում ժամանակի տէր Զաքարիայ ունէր զաթոռ հայրապետութեան Հայոց կաթողիկոսութեան – 310. Նա և զանուանս նոցա և զթիւ ժամանակացն այլափոխս ետուն մեզ, թերևս վասն շփոթեալ և հակառակասէր ազգին – 168. Նոյնպէս բանայ, որպէս և այլ թռչունք և գազանք՝ բնաւորեալ բաժանեն զժամանակս տարւոյն յերկուս կամ յերիս ամարանոցս և ձմերանոցս ինքեանց կենաց պաճարին – 262. Նոյնպէս և զպայման ժամանակացն յանբաւ բիւրս ամաց ձգեն որ ոչ և ըստ միոյ յեղանակի հաւաստանայ առ ի ցուցումն, ոչ արեգական բերմամբ ի նոյն կէտ ամսոց և աւուրց և ոչ ըստ չորից փոխմանց առ ի յեղումն ժամանակի տարւոյն, այլ և ոչ ըստ լուսնական լրութեանն և սուզականութեան: - 18. Նոյնպէս և զպայման ժամանակացն յանբաւ բիւրս ամաց ձգեն որ ոչ և ըստ միոյ յեղանակի հաւաստանայ առ ի ցուցումն, ոչ արեգական բերմամբ ի նոյն կէտ ամսոց և աւուրց և ոչ ըստ չորից փոխմանց առ ի յեղումն ժամանակի տարւոյն, այլ և ոչ ըստ լուսնական լրութեանն և սուզականութեան: - 18. Ո՞վ յիմարութեան առաջնոցն. ո՞րպիսի կատաղութիւն և գիւտք դիւացն նախկին ժամանակաւ սպրդեալ մուծաւ յաշխարհ, ապստամբութիւն առ Աստուած և տրտմութիւն սրբոց հրեշտակաց, և պատճառ վտանգաւոր մահու ծառայիցն Աստուծոյ յաւուրս ապագայիցն. – 38. Ո՞չ ածեր զմտաւ, թէ յիսկզբանացն մինչ ցայսօր ժամանակի ամենայն ուրեք ուր և գումարէր զօրն և լինէր պատերազմ և սուր և ճակատամարտ՝ երբեմն յաղթեն և երբեմն ի պարտութիւն մատնին. – 282. Որ յետ բազում ժամանակի ծախք պիտոյից ասացաւ պատրաստել թագաւորին ըստ անյաղթ բռնութեան և մեծութեան որովայնի կերակուր Բէլայ: - 38. որ առ ժամեայ սպառնացեալ պատուհասիւն ի հարիւրամեայ ձգէր ժամանակս ներողութեամբ: - 28. որ առեալ զթագաւորութիւնն Պարթևաց՝ տևեաց մինչև ի ժամանակս Յազկերտի, որ վերջին կացեալ թագաւոր Պարսից՝ սպանաւ ի Տաճկաց: - 166. Որ և այլոց կարող տուիչ լինել ժամանակաց, որպէս և արանցն որ յառաջ քան զջրհեղեղն քառասուն ևս աւելի բիւրս ամաց և դարս փոխադրական այլաձևս և խժականս, շարս և ներս և սոսս - 38. Որ և հուպ ժամանակաւ վախճանի և կայսր Թէոդոս, և առնուն զթագաւորութիւնն Ոնորէոս և Արկադ որդիքն Թէոդոսի: - 110 որ էր ի ժամանակին սպարապետ Հայոց. – որ ըստ աճման և սերելոյ նախարարութեանց՝ եկեալ հասեալ ցայս վայր ժամանակի ի թագաւորել Աբգարու և հաւատալ ի Քրիստոս: - 78. որ ի ժամանակին կալեալ էր զմարզպանութիւն և զզօրավարութիւն Հայոց ի խնդրոյ սրբոյն Սահակայ յերկուց թագաւորացն Յունաց և Պարսից – 116 որ ի կողմանս Դամասկոսի կացեալ՝ ոմանք թագաւոր ասէին զինքեանս, և այլք յԱսորեստանի կացեալ՝ զինքեանս ասէին թագաւոր, մինչև ի ժամանակս Աբդլայի – 168. որ ձգեցաւ մինչև յամս ՄԾԹ և ըստ ոմանց այլ նախկին թագաւորս ասելով՝ յաւելուն ժամանակս ամաց ՄՂԸ ասել: - 60. որ տիրեաց Ասորեստանի, այլ և ի ժամանակս ինչ Հայոց – 44. որոյ ժամանակ կենացն տևեալ ձգեալ ամս ՃԻ լի և պարարտ ծերութեամբ – որոյ սերմանք յիմարութեանն պատուեալ առ Բաբելացիսն պահեցաւ մինչև ի ժամանակս Աղէքսանդրի

Մակեդոնացւոյ. – 38. որպէս Պօղոսի հաճոյ թուի գրել յառ Եբրայեցիս թղթին, թէ ,,չէ բաւական ժամանակս պատմելոյ,, վասն դատաւորացն Իսրայէլի և սրբոց մարգարէիցն – 302. սմա ծանօթացեալ և սիրողացեալ ժամանակաւ ուսուցանէր բազում ինչ նմա և յոլովագոյնս զինոց կտակարանաց, և եթէ ոչ գոյ բնութեամբ որդի Աստուծոյ: - 158. ՎԱՍՆ ԹԱԳԱՒՈՐԻՆ ՋԱՓՐԱՅ, ԶՈՐ ԻՆՉ ԽՈՐՀԵՑԱՒ Ի ՎԵՐԱՅ ԱՇԽԱՐՀԻՍ ՀԱՅՈՑ, ԵՒ Ի ԳԼՈՒԽ ԵՀԱՆ ԶԿԱՄՍ ՉԱՐՈՒԹԵԱՆՆ, ԵՒ ՈՐ ԻՆՉ ԸՆԴ ՍՈՎԱՒ ՆԱԽ ՔԱՆ ԶԼՆՈՒԼ ՎԵՑԵՐՈՐԴ ՅՈԲԵԼԻՆԻ, ԵՒ ԵՕԹԱՆԱՍՈՒՆԵՐՈՐԴ ՈԼՈՄՊԻԱԴԻՆ, ՅԵՏ ԻՆՆԵԻՏԱՍՆ ԸՆԴԻՔՏԻՈՆԻՆ, ՅՈՐՈՒՄ ԲՈՎԱՆԴԱԿԻՆ ԺԱՄԱՆԱԿՔ ԲՌՆԱԿԱԼՈՒԹԵԱՆՆ ՏԱՃԿԱՑ ԱՄՔ ՄԻԲ ԸՍՏ ԹՈՒՈՑ ՀԱՅԵՐԷՆ ՏՈՒՄԱՐԻ. – 170. Ցոյցք ժամանակացս այսոցիկ, ըստ որում յառաջագոյն ասացաք, որ յաւուրց անտի Բէլայ մինչև ի Նինոս՝ երևելիք ինչ և նշանաւորք ի /42/ մատենիցն առաջնոցն ոչ երևի, թերևս ի բազում խափանմանց: - 44. Քանզի բազում աշխատութեամբ է գտանել զշար ազգաբանութեան տանն Արծրունեաց, վասն հեռաւոր ժամանակաց կացեալ և դիւանացն անյայտութեանց ի մէջ Հայաստանեայցս – 12. Քանզի թէպէտ և տարաժամ լրմամբ ժամանակի չափաբերեալ կենացն Աշոտի՝ հաստատնագոյն և անվրէպ լուծման կենացս առ հոգևորսն և յաւիտենականսն և անվախճան կենացն առաւելութիւնն անցեալ գնացեալ ժամանեաց – 386. քաջավայելչագոյնս զթագաւորութեանն կատարելագործեալ զժամանակն, Ե ամ յիշխանական ճոխութեան, ԻԵ ամ յիշխանաց իշխանական պետութեանն, Դ ամ ի թագակապ շքեղութեանն. – 356. Եւ համարին ամք ժամանակացս այսոցիկ, ի Կիւրոսէ մինչև ցթագաւորութիւնն Տաճկաց՝ ամք ՌՃԿ: - 166.

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ - քանզի ոչ էր օրէն թագաւորացն և օրինադրացն զկանանց ազգի թիւ ազգաբանութեան շարել, բայց միայն ըստ ժամանակագրութեանն կանոնի, որպէս և յԻսրայէլի զԳոթողիայ, և յԵգիպտոս զԿղէոպատրեայ դուստր Պտղոմեայ Դիոնիսեայ: - 16.

ԺԱՄԱՆԱԿԱԿԱՐԳԵԼ - ժամանակակարգեաց համառօտեաց ի վերայ նոր Իսրայէլի, այսինքն հեթանոսաց: - 314.

ԺԱՄԱՆԱԿՍ ԺԱՄԱՆԱԿՍ - զոր առաջնոցն մատենագրեալ դրոշմեալ կայ ի գիրս ընդ ժամանակս ժամանակս սոցա քաջարութիւնք և արժանաւորք յոլովագունի և մեծամեծաց գովութեանց: - 96.

ԺԱՄԱՆԵԱԼ - Բայց ոչ ժամանեալ կատարման պատերազմին, զաշտարակն, զոր շինէր որդին Աբգարու փլուզեալ ի վերայ սպան զնա, վրէժխնդիր եղեալ մահուն Աղդէի սրբոյ: - 80.

ԺԱՄԱՆԵԼ - Քանզի թէպէտ և տարաժամ լրմամբ ժամանակի չափաբերեալ կենացն Աշոտի՝ հաստատնագոյն և անվրէպ լուծման կենացս առ հոգևորսն և յաւիտենականսն և անվախճան կենացն առաւելութիւնն անցեալ գնացեալ ժամանեաց – 386.

ԺԱՄ Է - զոր ոչ է ժամ մեզ պատմել - 274.

ԺԱՄ ՏՈՒԵԱԼ - ժամ տուեալ ի գլուխ հանել, յոր չոգանն զգործ պատերազմին: - 328. ժամ տուեալ նմա դառնալ առ նա ի ձմերոց նորա ի քաղաքն Դուին: - 218.

ԺԱՆԳԱՆ - գլխաւորն ի նոցանէ Համիս, և միւսն որ ի կողմանց Ժանգանայ՝ ոչ իրաւացի ըստ պատգամաւորին իւրեանց ասացին առնել զայս: - 404. Եւ յայնմհետէ համարձակութիւն առեալ անօրինացն՝ սկսան գունդս ռամկականս ժողովել ըստ օրինակի մարախոյ անչափ բազմութեամբ, այնոքիկ որ Շեխետիքն կոչէին. և այլ որ ուստեք ուստեք ի հեռաւոր աշխարհաց /402/ Պարսից, ի Ժանգանայ և ի Ջուրջանայ և որք ի Վարառատ գաւառէ – 404.

ԺԱՆԴ - Եւ ի ժամանակին /96/ յայնմիկ ունէր զհազարապետութիւնն Հայոց այր ժանդ չարաբարոյ, որում հայր Մարդպետ անուն էր. – 98.

ԺԱՆԴԱԳՈՐԾ - Այլ սոքա թէպէտ և յանձն առնուին և մտադիւրութեամբ լսէին նմա սակայն ոչ մեկնեալ լինէին ի ժանդագործ պղծութենէն զազրալից սոդոմական ախտիցն – 182.

ԺԱՆԴԱՆԱԼ - զի և եօթամբք իսկ շարագրեալք չարիւք ժանդացաւ վիրագն այն ի վնաս, թէ և միատեսակ երևեսցի. - 24.

ԺԱՆԻՔ - և մի եղիցի յիշատակ սորա ընդ սոցա, որք թէպէտ և վրիպեցին և կործանեցան՝ սակայն և ապաշաւեցին և կանգնեցան յետ դարձին իւրեանց ի մեծ կարաւանէ գերութեանն ի միջոյ ժանեաց բռնաւորին. – 248. Մանաւանդ /370/ թէ նախախնամող և պահպանական աջն Քրիստոսի հովանաւորեալ առ ապրուստ հրածին կարկտաբեր հասեալ կորստական դիպուածին, օգնութիւն հասեալ յԱստուծոյ՝ քաջասրտագոյնս զնա գործեաց և շութափեալ զնա ի ժանեաց գազանին – 372. յոր դիմեալ երթայր՝ /228/ անկանել ի ժանիս արիւնարբու գազանացն: - 230.

ԺԱՆՏ - Այլ ձայն իմն գայր՝ մի՛ ժողովել և մի՛ հատանել, թե ոչ՝ եղիցի անձն այն մեռեալ, և ժանտ ախտիւ սատակեսցի գումարտակդ: - 50. սա էր այր ժանտ, և մոլեկան հոգւով շարժեցեալ՝ բազում չարիք մարտնչէր ընդ ազգն քրիստոնէիցն. – 168.

ԺԱՌԱՆԳ - և զժառանգս Աստուծոյ արար բաժին սատանայի – 264.

ԺԱՌԱՆԳԱԿԻՑ - և զժառանգակիցսն Քրիստոսի արար ժառանգակից դիւաց – 264. և զժառանգակիցսն Քրիստոսի արար ժառանգակից դիւաց – 264.

ԺԱՌԱՆԳԱԻՈՐՈՒԹԻՒՆ - Պտղոմեայ հասեալ ի տէրութիւն ժառանգաւորութեանն՝ փոխանակ իւր կացուցանէ զԱսուդ, տալով ի ձեռս նորա զբոլոր իշխանութիւն Եգիպտոսի և Հնդկաց - 70.

ԺԱՌԱՆԳԵԱԼ - և զվկայիցն անուն ժառանգեալ կատարեցան ի Քրիստոս սուրբ գունդն Հայոց, ՈՂՋ ոգիք: - 128.

ԺԱՌԱՆԳԵԼ - աստէն իսկ դարձաւ յետս երես իւր ի /248/ թիկունս կոյս, ըստ ձախողակի խոտորմանն յետս ընդդէմ զխոտորմանն ժառանգեաց: - 250. և եթէ ոք խախտել ջանայ՝ ի հրամանէն Աստուծոյ ոչ ժառանգէ նա զաթոռ իւր և զթագաւորութիւն: - 356. և թէ ի պատերազմին յայնմիկ հասանիցէ զմահուն ընդունել զվճիռ՝ իսկ ըստ յաղթութեանն զխոստովանողականն ժառանգել անուն, զօրանալ զօրութեամբ ի զօրութիւն խաչին Քրիստոսի Աստուծոյ մերոյ: - 400. Եւ սոցա այսպէս նահատակեալ կատարեցան վկայութեամբ ի փառս Աստուծոյ, և զմարտիրոսական անուն ժառանգեցին ի Քրիստոս ի պատիւ ամենասուրբ Երրորդութեանն: - 266. Եւ փոխանակ նորա ժառանգէ զաթոռ հայրապետական երանելին տէր Յօհաննէս, որ և սնեալ և ուսեալ առ ոտս սրբոյն Մաշտոցի. – 376. Զի ահա ես զարթուցանեմ ի վերայ ձեր զազգ դառն և զերագ, որ գնայ ընդ լայնութիւն երկրի, ժառանգել զխորանս որ ոչ իւր են, ահեղ և երևելի: - 200.

ԺԱՌԱՆԳԵՑՈՒՑԱՆԵԼ - ,,ի հայրենեացն արտաքս հանեալ էք ի ժառանգութենէ և մերժեալ ի բաժնէ եղբայրական հասէ. զա՞յս ևս բռնազբօսել ջանայք, զոր Աստուած ժառանգեցոյց ինձ: -330. Եւ ձեռագրեալ Մուշեղայ զամրոցաւն Նորաբերդ և շուրջ զսահմանսն՝ Դերանկին հաւատալ, և զայլ ևսն՝ որդւոյ իւրում ժառանգեցուցանել: - 324. զորոյ նախնեացն ջան և վաստակ յուշ արարեալ թագաւորին՝ Համամայ յառաջ մատուցեալ, ի գահ և ի բարձ հայրենեացն ձգել զնա՝ ժառանգեցուցանէ զերկիրն Աղբագ, որպէս Սահակայ նոյնպէս և Համամայ: - 90. Սահակայ առեալ ի պարգևի զաշխարհն՝ թողու զորդին զԱշոտ զլեառնակողմամբքն առաջին իւրեանց տէրութեանն՝ շինել, բնակել, ժառանգեցուցանել զերկիրն ի ժառանգութիւն իւրեանց ազգի ի զաւակ տանն Արծրունեաց: - 90.

ԺԱՌԱՆԳՈՐԴ - Եթէ, որպէս ասացի, ի բաց գնաս յինէն՝ խաղաղութիւն է, և թէ ոչ՝ պատերազմ և կռիւ և ճակատամարտ ... քո ստացուածք՝ և մեք ժառանգորդք, քո աւար՝ և մեք աւարառուք. դու աւազակ՝ և մեք կողոպտիչք - 278. մեք ոչ ի բաց կամք ի սիրոյն Քրիստոսի և ոչ մեկնիմք ի կենացն յաւիտենից և ոչ լինիմք ժառանգորդ յաւիտենական տանջանացն,,: - 292. - որ ոչ եղև ժառանգորդ հայրենեաց հաւատոցն որ ի Քրիստոս. –80.

ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆ - ,,բնութեամբ ճշմարտութեամբ աշխարհիդ Վասպուրական ձեր լեալ էր ժառանգութիւն, և զձեզ արտաքս հանեալ թողեալ են նախնեացն Աշոտի: - 362. ,,ի հայրենեացն արտաքս հանեալ էք ի ժառանգութենէ և մերժեալ ի բաժնէ եղբայրական հասէ. զա՞յս ևս բռնազբօսել ջանայք, զոր Աստուած ժառանգեցոյց ինձ: -330. առնու զնա Սահակ կնութեան հրամանաւ Արտաշէսի, և կնքեալ աշխարհն հաստատէ Սահակայ ի

սեպհական ժառանգութիւն. – 90. ասէ, զի կացուցի թագաւոր ձեզ յազգէ և ի դենէ ձերմէ, մի՛ ծանր թուիցի ձեզ դառնալ անդրէն և ունել զիւրաքանչիւր ժառանգութիւն. – 110. Արդ ելէք ի վերայ աշխարհիդ զօրացեալ զօրութեամբ, և ձեր լիցի երկիրդ ի ժառանգութիւն,,: - 362. գերփեն առնուն զշէնս և զաւանս և զագարակս, կապուտ կողոպուտ թողուն ի ստացուածոց և յամենայն ժառանգութեանց, մաշեն ի սուր սուսերի զորս ի բուռն առնուին. – 102. և դարձոյց ի նոսա զաշխարհն զոր տուեալ էր ի ժառանգութիւն Տիգրանայ Հայկազնոյ – 86. Եւ եղև յետ աւուրցն այնոցիկ, յորժամ ուրախ արար թագաւորն զնախարարսն Հայոց ի տաճարի խրախից, և խոստացաւ տալ իւրաքանչիւր ումեք զերկիր ի ժառանգութիւն – 314. Եւ զի զսրբոցն իսկ ասացից բանս. եթէ զիարդ ամենեքեան սուրբքն որպէս ժառանգութիւն իմն հայրենի ընկալեալ այնպէս պատահեսցին հարք որդւոց աւանդելով զպահոցն պէտս. - 26. և կարիցես զիշխանս Հայոց կապանօք առ մեզ հասուցանել, մանաւանդ զիշխանն Վասպուրական զԱշոտ՝ քեզ և զաւակի քում տաց զերկիրն զայն ի ժառանգութիւն: - 184. Եւ հրաման տուեալ ընդ ամենայն երկիրն՝ զի այր իւրաքանչիւր դարձցի յերկիր իւր և կալցի զիւր ժառանգութիւն – 234. և ձեր լիցի երկիրն այն ի ժառանգութիւն և որդւոց ձերոց: - 198. Եւ յետ սակաւու միոյ ասէ. ,,ձեզ տաց զերկիրն Քանանու զվիճակ ժառանգութեան ձերոյ,,. – 34. և ոչ ոք կարէր կալ յակաստանի, ունել զժառանգութիւն հայրենի – 94. և ունէր զիւրաքանչիւր կալուածս զաւանդեալ ժառանգութիւն նոցա ի թագաւորացն առաջնոցն Մուշեղ, Վահան: - 96. զի մեր լիցի ժառանգութիւն նոցա. – 184 զոսկերսն Ադամայ բարձեալ Սէմայ գրաստու՝ տարաւ յերկիր ժառանգութեան իւրոյ - 34. զոր իւրեանց սեփհական համարէին ժառանգութիւն - 340. զորս վաճառակուր արարեալ յօտար ազգս, վարել ի ծառայութիւն, գնալ հեռանալ մերժել ի տանց, հայրենի ժառանգութենէ իւրեանց: - 262. ինքեան և որոց յետ իւր թողլով ժառանգութիւնն որդւոց կեանս վշտագինս հանդերձ մահուամբ, և ծննդականութիւնս տրտմութեամբ: - 22. Իսկ Վասակ Արծրունւոյ եկեալ առ Խոսրով և կալեալ զժառանգութիւն և զգահ – 112. մինչև զանբարկանալին Աստուած ի բարկութիւն ածել, ի սատակումն անձանց և ի կործանումն աշխարհի և յաւեր ժառանգութեան տանց հայրենի բնակութեանց. – 182. յափշտակէին զայր և զկին և զժառանգութիւն նոցա: - 176. Յղէին պատգամս առ որդիսն Իսմայէլի և ցուցանէին զմտերիմ հարազատութիւն, թէ ,,որդիք Աբրահամու եմք մեք և դուք, եղբարք. պարտ է ձեզ գալ յօգնականութիւն մեզ, և առցուք զերկիր ժառանգութեան մերոյ,,: - 156. որ կոչի Մեծրայիմ, այսինքն Եգիպտոս, վասն ժառանգութեան սահմանաց Եգիպտոսի. – 42. Սահակայ առեալ ի պարգևի զաշխարհն՝ թողու զորդին զԱշոտ զլեառնակողմամբքն առաջին իւրեանց տէրութեանն՝ շինել, բնակել, ժառանգեցուցանել զերկիրն ի ժառանգութիւն իւրեանց ազգի ի զաւակ տանն Արծրունեաց: - 90.

ԺԲ - Արդ են թագաւորք Ասորեստանեայց ի միւսմէ կողմանէն այսոքիկ … Փուա ամս ԺԲ: Թագղաթփաղասար ամս ԻԷ: - 62. Եւ կացեալ ԺԲ ամ Աղէքսանդրի մեռանի ի Բաբելոն, կեցեալ ամս ԼԳ, թագաւորեալ ամս ԺԲ: - 70. Իսկ Պտղոմէոս նենգութեամբ և հարկանօք կալաւ զԵրուսաղէմ և զՀրէաստան, մինչև ամս ԺԲ: - 70.

ԺԲՌ - Եւ յայնմ ժամանակի երթեալ ժողովէին ի քաղաքն Եդեսացւոց արք ԺԲՌ յամենայն ցեղիցն Իսրայէլի զի տեսին եթէ մեկնեցաւ անտի զօրն Պարսից, և թողին ի բաց զքաղաքն. – 156.

ԺԴ - ի ԺԴ ամի սորա վախճանի Յովսէփ: - 56.

ԺԵ - մեռաւ ՅԼԹ թուականութեանն Հայոց, և ի ԺԵ ամի հայրապետութեանն Գէորգեայ Հայոց կաթողիկոսի: - 356. Արդ են թագաւորք Ասորեստանեայց ի միւսմէ կողմանէն այսոքիկ … Փուա ամս ԺԲ: Թագղաթփաղասար ամս ԻԷ: Սաղմանասար ամս ԺԵ …Նաբունիդոց ամս ԺԵ: - 62. են մի ըստ միոջէ թագաւորք Ասորեստանեայց այսոքիկ … Սովսարմոս ամս ԺԵ…Միթրէոս ամս ԻԷ: –58. և ինքն մանկագոյն տիովք, ի ժամանակի անձնիշխանութեան լեալ ամաց ԺԵ, զի ,,մանկութիւն և անմտութիւն ընդունայնութիւն է,, , որպէս գրէ Սողոմոն – 346. Իսկ զկնի վերանալոյն Քրիստոսի, յետ ԺԵ աւուր, ապա հասանէր Գրիգոր ի քրիստոսակոչ կատարումն. – 254.

ԺԵ ՀԱՋԱՐ - Այլ իբրև այն ինչ մերձ լինէր ամրոցն ի պաշարումն՝ Ամդայինն Յիսէ, որ Շեհի որդին, որ զզօրապետութիւնն Հայոց ունէր, ճանաչէր՝ ի հրապոյրս Մանազաւեան պետոյն և Ութմանացն ելեալ՝ երագապէս եկն եհաս ի վերայ Աշոտի ԺԵ հազարաւ հեծելօք վառելովք. – 334. Զկնի այսորիկ մեկնեաց Բուխայ յինքենէ արս զօրաւորս յամենայն ազգաց և յամենայն մեծամեծաց և ամենայն աշխարհակալաց, և ի Պարսից և յԵլիմացւոց և ի Բաբելացւոց և յԱրաբացւոց … արս աւելի քան ԺԵ հազարաց և եհան զնոսա զհետ Գուրգինայ – 224. յայտնի և յանդիման կացուցանել զթիւ սպանելոցն ոչ առնուին յանձն, թէ Ջ այր միայն հզօր ձեռամբ յաղթեցին ԺԵ հազարացն. – 234.

ԺԶ - անդր հասանէին … սոքա ամենեքին արք ԺԶ ի տանէն Արծրունեաց զօրօքն իւրեանց. – 174. Արդ Աշոտի կեցեալ ամս ԺԹ, տևեալ իշխանական ճոխութեանն ԺԶ ամ յառաջ քան զգերութիւնն Հայոց, և Ե ամ ի գերութեանն արարեալ - 336. որ թագաւորեաց ամս ԺԶ: - 98.

ԺԷ - /թագաւորեաց/ Յեզիտ ամս Զ … Զափր որդի Մահմետի ամս ԺԷ: - 168.

ԺԸ - Արդ են թագաւորք Ասորեստանեայց ի միւսմէ կողմանէն այսոքիկ … Սենեքերիմոս ամս ԺԸ: Որդին ամս Ը: - 62. և նենգ գործեալ նմա, վասն նախանձու թագաւորեցելոյ Ասորդանի/ճիշտը՝Ասորդանիս/, երկու ևս որդիք նորա Ադրամելէք և Սանասար՝ սպանին զնա սրով, որ թագաւորեաց ամս ԺԸ – 60. Ընդ այն ժամանակս տէր Զաքարիայ հանգեաւ ի Քրիստոս, կեցեալ ի հայրապետութեանն Հայոց ամս ԺԸ, և հաջորդէ փոխանակ նորա տէր Գէորգ: - 338. ի սորա ԺԸ /56/ ամին ծնանի Մովսէս մարգարէ: - 58.

ԺԸՌ - վարեն ի գերութիւն զբնակիչս քաղաքին ԵՌ զՀրէայսն, և ԺԸՌ զքրիստոնեայսն և զորս ածեալ գերի Բարգափրանայ զՀրէայսն հրամանաւ Տիգրանայ – 104.

ԺԹ - /թագաւորեաց/ Յեզիտ ամս Զ … Շամորեհեշմ ամս ԺԹ. Վլիթ ամս Բ. - 168. Արդ Աշոտի կեցեալ ամս ԺԹ, տևեալ իշխանական ճոխութեանն ԺԶ ամ յառաջ քան զգերութիւնն Հայոց, և Ե ամ ի գերութեանն արարեալ - 336. Բայց ըստ կարգաց քրիստոնէութեան վարէր ըստ արժանի պատուիրանաց Տեառն, և ըստ խրատու մեծին Վրթանեայ յապահովանայր ամենայնիւ, թագաւորեալ ամս ԺԹ: - 96. Յայնժամ ժողովեալ Խոռեմ Ռազմայուզան /գրքում՝ Եռազմայուզան/ զզօրս իւր բանակեցաւ շուրջ զԵրուսաղէմաւ և պաշարեաց զնա, և պատերազմեցաւ ընդ Երուսաղէմի աւուրս ԺԹ – 142.

ԺԺԱԿ - Արդ յայսմ հետէ ըստ նեպակի գեղջն /գրքում՝գեաղջն/ կապճահամար ժժակք յամենայն ի դուռն արքունի ի սատակումն եկեսցեն. – 46.

ԺԻՐԱՔ - Բայց քանզի ընդարձակ էր պահն Հողցայ՝ փութանակի եկն եհաս Ժիրաք ի գաւառն Ռշտունեաց և զզօրսն առխթեալ ի ձորն Առուանից, ի սահմանս Մոկաց. – 202. և գնացեալ Ժիրաքն առնու զնա ածէ կացուցանէ առաջի Բուխայի: - 272. Եւ եղև զկնի այսորիկ գնաց անտի Ժիրաք և եկն եմուտ ի Վանտոսպ – 206. Զսա ածեալ լինէր առաջի զօրավարին Ժիրաքայ – 204. յղեաց առ զօրավարն Ժիրաք, ասէ, ,,փութա՛ ի հանդիպումն իմ,,. – 272. Տուեալ լինէր այնուհետև զմասն ինչ զօրուն ի ձեռս զօրապետի ումեմն Ժիրաք կոչեցելոյ – 202.

զՏաճատ և զԳոտեր զեղբայր իւր՝ գնաց առ կայսր. մեկուսի եղեալ ի շփոթմանց պարսկական վրդովմանցն և աւերման աշխարհիս. – 132. Իսկ Վասակ Արծրունւոյ եկեալ առ Խոսրով և կալեալ զժառանգութիւն և զգահ – 112. Իսկ վասն ձեանն անկայուն զօրութեանն որ այն ինչ յամպոյն ի վայր զեղեալ լինին՝ հնարաւորեալ իւրեանց փայտս իբրև զանուրս չուանօք պարունակեալ շուրջ զոտամբք, դիւրաւ ընթանան ի վերայ ձեանն իբրև ընդ ցամաք երկիր: - 192. Իսկ Վարդան Մամիկոնեան, որդի Համազասպայ Մամիկոնէի, թոռն սրբոյն Սահակայ, խոյս տուեալ գնաց զկողմամբքն Մոկաց, ի խոխոմս Տաւրոսական լերինն, ի լեսուրս Ջերմաձորոյ – 122. Իսկ վարդապետն Եղիշէ էր ի ժամանակին յայնմիկ բնակեալ ի գաւառին Ռշտունեաց ի ծովեզերին, յորում տեղւոջ և հանգեաւ իսկ ի Քրիստոս սուրբն Աստուծոյ Եղիշայ: - 130. Իսկ վարդապետն Եղիշէ էր ի ժամանակին յայնմիկ բնակեալ ի գաւառին Ռշտունեաց ի ծովեզերին, յորում տեղւոջ և հանգեաւ իսկ ի Քրիստոս սուրբն Աստուծոյ Եղիշայ: - 130. Իսկ Վռամ յերկմիտս եղեալ, ոչ կարէր կատարել զխնդիրն – 118. Իսկ տեղի շիրմին յորում նախահօրն եդան ոսկերք՝ կատարման և կառափման, որ նոյն ինքն է գագաթն և Գողգոթայ ըստ եբրայականին, երկակի անուամբ. - 34. Իսկ տէր Գրիգոր ի մէջ մարդակերպ գազանաց ի ժողովս խուժադուժ բարբարոսաց բնակէր, որ ևս չար քան զթունաւոր գազանս են առ մեզ – 252. Իսկ Փիլոն ասէ՝ զոսկերսն Ադամայ, ի պատիւ խնամոց, իբրև հօր հասարակաց՝ առեալ Սէմայ եդ ի տապանի անդ. – 32. Իսկ քաղաքապետն Սահակ ելեալ ընդ դուռնն, որ ելանէ ի բերդն Շամշղտայ, սամոյր զինքեամբ արկեալ և գաւազան ի ձեռն առեալ, յիմարեալ մտօք կորոյս զփախուստն իւր, որ կարող էր գնալ յով և կամիցի. – 272. մանաւանդ զի բարեպաշտութիւն մեծ համարիմ սատակել զթշնամիսդ Աստուծոյ, որպէս Մովսէս զԱմաղէկ, և Յեսու զՔանանացիսն, և Սամուէլ զԱգագ, և Դաւիթ զԳողիաթ, և համանգամայն իսկ որպէս սատակեցին Իսրայէլացիքն զայլազգիսն – 278. Յայնժամ իսկ և իսկ արագապէս թլփատեալք եղեն մսլիմանակ, հետևեալք զկնի Բագարատայ Բագրատունեաց – 248. Յայնժամ իսկ և իսկ փութացեալ /գրքում՝փութեցեալ/ եհաս գուժկանն առ հոյակապն Աշոտ իշխանաց իշխան, զեկուցանելով նմա որ ինչ գործեցաւն: - 348. Ո՞չ ապաքէն դու իսկ տեսանէիր, զի մտանէի և ելանէի ի սուրբ եկեղեցին ընդ ամենայն հաւատացեալսն – 222. Ոչ կարծողականս ինչ ըստ առաջնոցն Բէլայ ասացելում, կամ այլոց ստուերականացն երևեցելոց երազականաց և խաբեբայ դիւաց, այլ ձեռագործ մեռելականս իսկ եցոյց ի պաշտօն – 40. որ եղև իսկ պատճառ կորստեան Բուխայի – 272. որով որսացանն իսկ և վրիպեցուցին: - 234. Ուստի պարտ իսկ էր նախ զանձանց և եթ գիտել, և ապա յերևելեացս աստի զճարտարապետն սոցա իմանալ. – 54. Վայել էր իսկ եպիսկոպոսին Յոհաննու՝ առնուլ զլուծ համանուանն իւրոյ զՅոհաննու Մկրտչի, որ կապեալն էր ի Հերովդեայ և տուեալ ի բանտ: - 250. Վասն զի այլոց գործք մի կամ երկու կամ այլս ևս գործք գործեալ է. իսկ սորայս՝ գերազանցեալ յաճախեաց քան զբազմացն իրողութիւնս. – 302. քանզի նուազագոյնքն և տկարք՝ թափառեալք աղքատութեամբ վտանգէին, իսկ կարողագոյնքն և բռնաւորք ըստ բնութեան գազանաց վայրենամիտք լեալ, անամօթ և անարգել յափշտակութեամբ վրդովէին զբոլոր երկիրս: - 300. Իսկ Գուրգէն ընթացեալ զհետ հանդիսի պատերազմող նահատակութեանցն, /310/ անդուլ լինելով զցայգ և զցերեկ հանդերձ որ ընդ նմա միաբանեալ ազատագունդ զօրացն – 312. Եւ իբրև ընթերցաւ մեծ զօրավարն զծածուկս ազատանոյն՝ ետ պատասխանի, զոր և գրով իսկ աւանդեաց. – 214.Իսկ թագաւորն Հայոց Սմբատ անպատկան վարկանելով զերթալն Աշոտի առ Աւշին, մի՛ գուցէ արդեօք և այլք դրդուիցին յիշխանացն զնորայն հետեւել ուղևորութիւն, և արգելուլն զԱշոտ՝ չանսաց ումեք: - 362. Բայց քանզի հաւատացեալ էր վերակացութիւն աշխարհիս Հայոց Աշոտի, որ իշխանաց իշխան՝ ձեռն ի գործ արկեալ նուաճել զիշխանս Հայոց, զՎրաց և զԱղուանից, որ եղև իսկ: - 322. Զոր և այժմ իսկ դեռ ունին զսոյն ասել որդիք հրապաշտիցն: - 48. ընտանեգոյնս ևս ձայնի կոչելով՝ ո՞ւր ես Ադամ, աւաղականս նմա գորովալիր զանկումնն, թերևս ինքեամբ իսկ զօգտակարօքն տածիցի:- 20. ինքն իսկ փոյթ յանձին կալեալ՝ ել գնաց մեծաւ հոգաբարձութեամբ,

լուծանել զնա ի տառապանաց արգելանին. սակայն և այնպէս ոչ կարաց գտանել զելս իրացն վտանգի առնն: - 346. որք մատուցեալ առ սուրբն Սահակ զեկուցանել նմա զոր ինչ խորհինն, և թևակոխէին առ Պարսից արքայն, զոր և արարին /116/ իսկ. – 118. քանզի Եթովպացի իսկ ասի Քուշ որդի Քամայ. – 42. Եւ ինքն իսկ գլխովին զօրավարն Բուհայ, հեծեալ յերիվարն, պնդեալ զինքն զինու ի պատերազմ ընդդէմ իշխանին, և զկորովին աղեղնաւորացն Ելիմացւոցն և զընտիրս հեծելոց նոցա ընդ ինքեան վառեալ ի ճակատի: - 208. ի կոր կործանման կացեալ Խոսրով մեր թագաւոր, և ջանայր առնուլ զվրէժ մահու հարազատին իւրոյ, թագաւորին Արտաւանայ, զոր և առնէր իսկ – 92. Իսկ թագաւորն աղաչեալ /100/ զսուրբն Ներսէս զհաշտութիւն խօսել Վաղէսի ընդ Արշակայ, զոր և արար իսկ զհաշտութիւնն: - 102. վասն նորին իրաց ասեն կալաւ, զնա հաճոյանայր կացուցանել իշխան Տարունոյ որ ասի Հայոց իշխան, որ և եղև իսկ: - 342. Իսկ առաջնորդին Տաճկաց զօր գումարեալ, այրուձի կազմեալ յընտրելոց զօրաց Ասորեստանի և Արաբացւոց – 328. Իսկ Գուրգէն օր ըստ օրէ աճէր զօրութեամբ ի բազում քան թէ ի սակաւ տեղիս, զոր ի Տարօն և զոր յԱնձաւացիս և զոր յԱրզն և զոր առ այլ ամենայն ուրեք – 324.

ԻՍԿԱՊԷՍ - և է Նինուէ իսկապէս վիճակ Սեմայ - 14.

ԻՍԿ ԵԹԷ - Իսկ եթէ՝ մշակն մեղաց և անդրանիկն ամենայն չարեաց, որ ի յօձն բունեալ ոչ անիծաւ, որպիսիս ուսուցանէ վնասապարտութիւն օձին առ ի պատժականութեանն գտանել պարտաւորութիւն, որ ոչ յընկենէ միայն, այլ մանաւանդ ի գտողէն չարեաց: - 22. Իսկ եթէ Բէլ հրամանատու Արամազդայ իցէ՝ զիա՞րդ իցէ, զի Արամազդ ի գօտոյ իւրմէ խաշիցի հրամանաւ Բէլայ. – 32. իսկ եթէ ընդէ՞ր ոչ ի ծննդաբանութեան՝ վասն զի ոչ իսկ ունէր զաւակ Հաբէլ: - 26. իսկ եթէ մի յանդամոցն կորիցէ՝ զպատահումն խեղութեան ընդունիցի, այլ ոչ ի բաց դարձցի կենդանի: - 194. Իսկ եթէ սովորութիւնն այլանդակեալ ի չարէն ի սոյն, կանգնել պատկերս սկայից և քաջաց և բարբարոսական թագաւորաց ի պատիւ – 40.

Ի ՍԿԶԲԱՆԷ - Եւ էր նեղութիւն մեծ ընդ ամենայն երկիրս, որպիսի ոչ եղև ի սկզբանէ աշխարհի, և մի այլ լիցի. – 238.

ԻՍԿ ԵՒ ԻՍԿ - Եւ անդէն իսկ և իսկ փութացաւ, եհաս գուժկան առ թագաւորն, եթէ սպանաւ զօրավարն քո և ապստամբեաց ի պետութենէ քումմէ աշխարհն Հայոց: - 190. և իսկ և իսկ հրամայեալքն զկատարումն առնուին: - 328. Եւ մինչդեռ զայս օրինակ խոկային և խորհէին ի միասին՝ միանգամայն արգելականք բերդին անդէն իսկ և իսկ քակեալ ի միաբանութենէ ուխտին – 210. իսկ և իսկ եհաս գուժկան անկելոցն ի պատերազմին ի պարսկական քաղաքն և յԱտրպատական սահմանսն. – 398. Յայնժամ իսկ և իսկ արագապէս թլփատեալք եղեն մսլիմանակ, հետևեալք զկնի Բագարատայ Բագրատունեաց – 248. Յայնժամ իսկ և իսկ փութացեալ /գրքում՝ փութեցեալ/ եհաս գուժկանն առ հոյակապն Աշոտ իշխանաց իշխան, զեկուցանելով նմա որ ինչ գործեցաւն: - 348.

ԻՍԿԻՋԲՆ - Ո՞չ աձեր զմտաւ, թէ յիսկզբանացն մինչ ցայսօր ժամանակի ամենայն ուրեք ուր և գումարէր զօրն և լինէր պատերազմ և սուր և ճակատամարտ՝ երբեմն յաղթեն և երբեմն ի պարտութիւն մատնին. – 282.

ԻՍԿՈՅՆ - Եւ իսկոյն անյապաղ յական քթթել սպառազինեալ այրուձի պնդակազմ /366/ պատրաստութեամբ, ռազմ բոլորեալ ղաշիկ դիմացուածով զմարտն գրգռեալ - 368. և իսկոյն հարեալ զնա այսոյն պղծոյ և ընդ զառիվայր լերինն թաւագլոր խաղաղացուցեալ հարուստ ձգմամբ մինչ ի դաշտավայր տեղին ուր այգեստանքն: -378. Քանզի ի գնալ նորա զօրացուցանել զքեռին իւր զթագաւորն Հայոց, իսկոյն յելանելն նորա ի տանէ իւրմէ ի Վան քաղաքէ՝ տիրէ ի վերայ նորա ցաւք հիւանդագինք կարապետք մահու, անմերձենալիք ճարտարաց բժշկական ձեռնարկութեանն: - 384.

ԻՍՄԱՅԷԼ - և արդ մեք զաւակ Աբրահամու եմք, և գիտէք դուք զխոստումնն /160/ որ առ Իսմայէլ հայրն մեր. – 162. և բանակն Իսմայէլի հզօրագոյնս ստիպէր ի պատերազմ: - 162. Եւ եկաց սուրբ Խաչն տէրունական յաստուածակերտ քաղաքին մինչն ցմիւսանգամ առածն

Երուսաղէմի որ յորդւոցն Իսմայէլի: - 154. և թուղթ մի գրեալ և կնքեալ լի խորամանկութեամբ և կեղծաւոր խարդախութեամբ ըստ հնարագիտութեան որդւոցն Իսմայէլի. – 234. և Իսմայէլ տիրեաց ամենայն Հրէաստանի: - 162. և նոցա կալեալ զճանապարհն անապատի՝ գնացին ի Տաճկաստան առ որդիսն Իսմայէլի, ի քաղաքն որ կոչի Մադիամ – 156. և փախուցեալ նա անկաւ ի զօրն Թետաղաց, որ էին եկեալ նմա յօգնականութիւն, որ և սպանին զնա հրամանաւ Իսմայէլի, կալեալ զթագաւորութիւնն ամս Ի: - 166. Կինն Սահակայ որդւոյ Իսմայէլի, զորոյ զհանգամանսն ցուցաք, զմեռանելն Սահակայ և զկնոջն հրապարակագոյժ լինել, վասն որոյ պատճառանաց սպանանի այրն նորա. – 326. Մի՛ խոտորիցիս ի մոլար օրէնս վրիպելոցն ի ճշմարտութենէն, ազգին Իսմայէլի, որպէս որք վրիպեցանն գերեալքն Հայոց,,: - 318. Յղէին պատգամս առ որդիսն Իսմայէլի և ցուցանէին զմտերիմ հարազատութիւն, թէ ,,որդիք Աբրահամու եմք մեք և դուք, եղբարք. պարտ է ձեզ գալ յօգնականութիւն մեզ, և առցուք զերկիր ժառանգութեան մերոյ,,: - 156. Նա թէպէտ և զչարացաւ ընդ եղեալսն՝ սակայն զանգիտեաց թողուլ զնա երթալ, ակնածելով ի չարայոյզ ազգէն Իսմայէլի, զի դեռ ևս տիրէր բռնութիւնն, և գերեալքն և հայրն իւր սպարապետն յարքունիս էին: - 316. Նմանապէս, կամ թէ ևս հրաշափառագոյն զյաղթութեան մարտսն յօրինեալ յարդարեաց զպարտութիւն ի վերայ ազգին Իսմայէլի մեծ զօրավարն Գուրգէն, և իսպառ կանգնեաց զնշանակ յաղթութեան ամենևին ամենայն ուրեք ընդ ամենայն տեղիս. – 312. ՈՐ ԻՆՉ ԳՈՐԾԵՑԱԻ ՅԵՐԿՐՈՐԴՈՒՄ ԱՄԻՆ ԳԱԼՍՏԵԱՆՆ ԲՈՒԽԱՅԻ, ՈՐՔ ԵՆ ՈԼՈՄԲԻԱԹՔ ՎԱՍՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ԸՆԴ ՍԱՀԱԿԱՅ ԻՍՄԱՅԷԼԱՑՈՑ,ՈՐ Իսմայէլի ՈՐԴԻ ՃԱՆԱՉԷՐ, ԵԻ ՎԱՍՆ ՊԱՇԱՐՄԱՆ ՔԱՂԱՔԻՆ: - 268.

ԻՍՄԱՅԷԼԱԿԱՆ - զի թէպէտ նեղեալք և չարչարեալք լինէաք պէսպէս կտտանօք ի զօրացն իսմայէլական ազգացն տաճկական տէրութենէն՝ այլ սակաւագոյնք և առ փոքր ինչ ժամանակս – 194. ԹԷ ՈՐՊԷՍ ԵՂԵԻ ԲԱՐՁՈՒՄՆ ՉԱՐ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆՆ ՊԱՐՍԻՑ, ԵԻ ՓՈԽԱՆՈՐԴԵԱՑ ՄԻՒՍ ԵԻՍ ՉԱՐ Իսմայէլական: - 156. Կարգեաց հրամանատարս և զօրագլուխս ինքեան յիսմայէլականաց անտի՝ զԱլի և զԱպուբաքր և զԱմր և զՈւթման: - 160.

ԻՍՄԱՅԷԼԱՑԻ - Զսա տեսեալ Մահմէտի՝ /162/ կոչեաց և յարեցոյց առ ինքն, հրամայեալ նմա գրել գիրս օրինաց ազգին իւրոյ, ձեռամբ Աբութուռաբայ իսմայէլացւոյ. քանզի ինքն ոչ գիտէր գիր և ոչ դպրութիւն: - 164. ՈՐ ԻՆՉ ԳՈՐԾԵՑԱԻ ՅԵՐԿՐՈՐԴՈՒՄ ԱՄԻՆ ԳԱԼՍՏԵԱՆՆ ԲՈՒԽԱՅԻ, ՈՐՔ ԵՆ ՈԼՈՄԲԻԱԹՔ ՎԱՍՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ԸՆԴ ՍԱՀԱԿԱՅ ԻՍՄԱՅԷԼԱՑՈՑ,ՈՐ ԻՍՄԱՅԷԼԻ ՈՐԴԻ ՃԱՆԱՉԷՐ, ԵԻ ՎԱՍՆ ՊԱՇԱՐՄԱՆ ՔԱՂԱՔԻՆ: - 268.

ԻՍՄԱՅԷԼԱՑԻՔ - Գումարեցան ի միասին Հրէայքն հանդերձ Իսմայէլացովք և եղեն բանակ մեծ – 160. Յուշ առնէր նմա զխոստումնն Աստուծոյ առ Աբրահամ և զկարգս թլփատութեանցն և զզոհիցն և զայլոցն ամենեցուն, զոր ոչ է այժմ ասել մի ըստ միոջէ. և յայս լինէր խոկումն Իսմայէլացւոցն մինչև իսպառ: - 158.

Ի ՍՈՒՐ ՍՈՒՍԵՐԻ - և լնուն զծովակն որ յանդիման հրատին՝ դիակամբք. զխօսուն և զանասուն, զայր և զկին և զմանուկ առ հասարակ մաշեցին ի սուր սուսերի: - 148. գերփեն առնուն զշէնս և զաւանս և զագարակս, կապուտ կողոպուտ թողուն ի ստացուածոց և յամենայն ժառանգութեանց, մաշեն ի սուր սուսերի զորս ի բուռն առնուին. – 102. և զոր ասէն այսպիսի ինչ է. ,,վա՛յ քեզ, եղո՛ւկ դու երկիրդ Պարսից, յորժամ բազմախուռն գունդք զօրացն Յունաց ի քեզ արշաւանս եդեալ՝ հասանիցեն և հարկանիցեն զքեզ ի սուր սուսերաց, և յառաթուր սմբակաց: - 148. և լնուն զծովակն որ յանդիման հրատին՝ դիակամբք. զխօսուն և զանասուն, զայր և զկին և զմանուկ առ հասարակ մաշեցին ի սուր սուսերի: - 148. և հատեալ զզօրսն յերկուս առաջս, և հրաման տուեալ ելանել յերկիրն Վասպուրական, ողողել գերել գերփել /200/ զաշխարհն, աւերել և բնաջինջ առնել և մաշել ի սուր սուսերի. – 202.

ԻՍՊԱՌ - Այլ և իշխանն Գուրգէն հանապազ գրէր աղաչանս առ ծերսն և առ աւագագոյնսն նոցա, իբրև փորձութիւն և դիպուած համարէր զեղեալսն, և ոչ իսպառ քինահարութեամբ վարիլ առ հարկատուսն և առ հնազանդս իւրեանց: - 404. Այլ սա ի վեց ամին լքեալ ի Կիւրոսէ, և աստ անկեալ կենօք շրջէր մինչև իսպառ բարձաւ թագաւորութիւնն Ասորեստանեայց և Մարաց ի Կիւրոսէ որ թագաւոր …<այստեղ նախադասությունը չի ավարտված>: - 62. Իսպառ ստորև ամրականին ի գոգաձև տեղւոջն … շինեաց եկեղեցի հրաշագործ հրաշազան յօրինուածով եկեղեցի ի տաշեալ քարանց ի Մանազաւեան քաղաքին ի Վանտոսպ, և հիմնեցուցեալ յանուն սրբոյն Սիօնի, որ ի սուրբ քաղաքն Երուսաղէմ. – 390. Յուշ առնէր նմա զխոստումնն Աստուծոյ առ Աբրահամ և զկարգս թլփատութեանցն և զզոհիցն և զայլոցն ամենեցուն, զոր ոչ է այժմ ասել մի ըստ միոջէ. և յայս լինէր խոկումն Իսմայէլացւոցն մինչև իսպառ: - 158. Նմանապէս, կամ թէ ևս հրաշափառագոյն զյաղթութեան մարտսն յօրինեալ յարդարեաց զպարտութիւն ի վերայ ազգին Իսմայէլի մեծ զօրավարն Գուրգէն, և իսպառ կանգնեաց զնշանակ յաղթութեան ամենևին ամենայն ուրեք ընդ ամենայն տեղիս. – 312. սա իսպառ գերեաց զտասն…<հազար մարդու> <խաղա>ցուցանելով ի լերինս Մարաց և եբարձ զթագաւորութիւնն … որ և տևեաց ամս ՄԾ: - 60.

Ի ՍՊԱՌ - այլ ի մարդկապէս բարբառոյ աստի ցուցանէ ի հրաժարականն ի սպառ վախճան: - 28. և ինքեանք դարձան անդրէն. կարծէին ի սպառ հարկանել զգունդն Հայոց. – 308.

ԻՍՐԱՅԷԼ - որպէս Րոբովամ որդին Նաբատայ, որ մեղաւ և յանցոյցն զԻսրայէլ, որպէս գրեալ է ի գիրս թագաւորացն Իսրայէլի – 248. Եւ զորդիսն Իսրայէլի առեալ գնացին յաշխարհն իւրեանց – 66. և իբրև զմի անձն, վառեալ ի զէն և ի սուր և ի ճակատամարտ՝ հասեալ յամուրս՝ տապալէր զզօրութիւն նոցա սրով և աղեղամբ, ի փայլիւն սուսերի և նիզակի և ի գիշերամարտ նահատակութեանց, ըստ նմանութեանն քաջ զօրավարին Իսրայէլի Յեսուայ կամ Գէդէովնի կամ թէ նոյն ինքն նահապետին Աբրահամու, ի վերայ հասեալ Քանանացւոց, զյաւէտ յաղթութեան նահատակութիւն նահատակեալ՝ և դառնայ մեծաւ յաղթութեամբ: - 312. Եւ յայնմ ժամանակի երթեալ ժողովէին ի քաղաքն Եղեսացւոց արք ԺԲՌ յամենայն ցեղիցն Իսրայէլի զի տեսին եթէ մեկնեցաւ անտի զօրն Պարսից, և թողին ի բաց զքաղաքն. – 156. Եւ սրբեալ զերկիրս ի պղծութենէ և ի նենգութենէ նեղութեանցն, իբրև զՅուդայ Մակաբայեցի զԱնտիոքայն սրբելով զանաստուածութիւնն յԻսրայէլէ՝ արար խաղաղութիւն նոցա որոց տիրէրն: - 312. զոր աւերեացն Իսրայէլ յելանելն իւրում յԵգիպտոսէ և ընդ պատերազմելն ընդ Բաղակայ արքայի Մովաբայ: - 156. Ընդ ժամանակսն ընդ այնոսիկ մինչ ճոխացեալ մեծամեծս փքայր Ջափրմոթոքլ ի վերայ քրիստոնէից, որպէս Սենեքէրիմ նախնին մեր ի վերայ Երուսաղէմի և ժողովրդեանն Իսրայէլի՝ յեղակարծում հասեալ ի վերայ նորա որդին իւր Մոթէին սպան զնա – 318. ժամանակակարգեաց համառօտեաց ի վերայ նոր Իսրայէլի, այսինքն հեթանոսաց: - 314. կարծէր իւրով զօրութեամբ զօրանալ ի վերայ կործանմանն Հայոց, ի մոռացօնս եղեալ հատուցումն մեղաց մերոց ի ձեռանէ Տեառն, որպէս Իսրայէլին ի հնումն առ Մեդեկեաւ զՆաբուքոդոնոսորայն: - 326. որպէս Պօղոսի հաճոյ թուի գրել յառ Եբրայեցիս թղթին, թէ ,,չէ բաւական ժամանակս պատմելոյ,, վասն դատաւորացն Իսրայէլի և սրբոց մարգարէիցն – 302. որպէս սահմանեաց Աստուած ի վերայ ժողովրդեանն Իսրայէլի գերելոցն ի Բաբելոն, որպէս գրեալ է ի մարգարէութեանն Երեմիայի, ,,զ-ՀԷ-երորդն ասէ գիտասցես, և խելամուտ լիցիս յելից բանին տալ պատասխանի. մինչև յօծեալն /312/ առաջնորդ եօթներորդ է և եօթներորդք կԲ,,. – 314. որպէս Րոբովամ որդին Նաբատայ, որ մեղաւ և յանցոյցն զԻսրայէլ, որպէս գրեալ է ի գիրս թագաւորացն Իսրայէլի – 248. որք ոչ վրիպէին ի մազոյ, որպէս և յայնժամ յԻսրայէլի էին արք զօրաւորք, գունդք տանն Եփրեմի և Բենիամինի: - 200. քանզի ոչ էր օրէն թագաւորացն և օրինադրացն զկանանց ազգի թիւ ազգաբանութեան շարել, բայց միայն ըստ ժամանակագրութեանն կանոնի, որպէս և յԻսրայէլի զԳոթողիայ, և յԵգիպտոս զԿղէոպատրեայ դուստր Պտղոմեայ Դիոնիսեայ: - 16. Եւ յայնմհետէ վտանգի Իսրայէլ յԱսորեստանեայց: - 60.

ԻՍՐԱՅԷԼԱԿԱՆ - Եւ միջնորդէր նմա հետևել հաւատոյ առաջնոյ Իսրայէլականացն, ,,զի թէ յայս եկեսցես՝ իմով հրամանաւ եղիցիս զօրագլուխ մեծ և առաջնորդ ամենայն տոհմի քո,,: - 158. քանզի ըստ օրինակի իսրայէլականումն, որ յաւուրս անիշխանութեանն էին անկարգութիւնք, և այր իւրաքանչիւր զհաճոյս աչաց իւրոց առնէր՝ սոյնպիսիք և այժմուս եհաս լինել. – 300.

ԻՍՐԱՅԷԼԱՑԻՔ - մանաւանդ զի բարեպաշտութիւն մեծ համարիմ սատակել զթշնամիսդ Աստուծոյ, որպէս Մովսէս զԱմաղէկ, և Յեսու զՔանանացիսն, և Սամուէլ զԱգագ, և Դաւիթ զԳողիաթ, և համանգամայն իսկ որպէս սատակեցին Իսրայէլացիքն զայլազգիսն – 278.

ԻՍՐԱՅԷԼԵԱՆ - զի ո՞վ ոք այլ ճոխ քան զՍենեքերիմայսն, /94/ զոր համարձակախօսն Եսայիաս հրապարակէ առ Իսրայէլեան զարմն զսորայս մեծափառութիւն. – 96.

Ի ՎԱՅՐ - բլուր մի պարսպեալ տաճարախիտ շինուածովք, որոյ հայեցածն առ դաշտակողմն ի վայր կոյս բերի, ի խաղս գետոյն Երասխայ – 392. Եթէ, որպէս ասացի, ի բաց գնաս յինէն՝ խաղաղութիւն է, և թէ ոչ՝ պատերազմ և կռիւ և ճակատամարտ … դու երէ վայրի՝ և մեք որսորդք, դու թռչուն՝ և մեք ի բարձանց ի վայր իջուցանեմք և վարմ ձգեալ. – 280. Եւ աղբերքն որ ի տեղւոջն և այլ ջրոցն քամուածքն ի ծործորացն ի վայր՝ յարիւն դարձան: - 306. և արեգակն ի վայր կոյս զընթացսն առնիցէ – 260. և քամուածք ջրոյն որ ի ծործորացն ի վայր զեղուին՝ յարիւն դառնային ի բազմութենէ սպանելոցն. – 178. Զայս ասելով, և յերեսն ի վայր ի վերայ մահճացն զգետնեալ՝ ի վայն և յեղուկն զողբոցն խառնուածսն յաճախագոյնս մանուածէր: - 388. Իսկ վասն ձեանն անկայուն զօրութեանն որ այն ինչ յամպոյն ի վայր զեղեալ լինին՝ հնարաւորեալ իւրեանց փայտս իբրև զանուրս չուանօք պարունակեալ շուրջ զոտամբք, դիւրաւ ընթանան ի վերայ ձեանն իբրև ընդ ցամաք երկիր: - 192. կամ թէ յամպոց ինչ ճայթիւն արձակելոյ և ի վայր հրաձգութիւնն արկանէ ի կարկտաբեր և յանձրևաբեր ժամանակի - 228. Նոյն ժամայն առեալ Սմբատայ զԱրտաշէս գայ անցանէ ի վայր ի լեռնէն. – 84. Վէմս զերեսօք արկեալ արտօսր յորդառատս ի խտղտելի աչաց ի վայր հեղեղատելով, զնորափթիթ ծաղկազարդ ոսկեճաճանչն մորուացն ճիրանամբքն զխզումնն, և որ առաւելեալն քան զսոյն զապաշաւանացն զանյագութիւնն: - 386. փոքր ինչ ի վայր խաղացեալ ի տեղին որում Զորք ասեն: - 392.

Ի ՎԱՅՐ ԱՐԿԵԱԼ - և շտապով փութանակի յասպազինէ երիվարէն ի վայր արկեալ զինքն առաջի Աղէքսանդրի, առ ոչինչ համարեալ յահռնաբար /գրքում՝յահուռնաբար/ գործսն զոր գործեաց՝ փութացաւ ետ ողջոյն արքայի և ասէ. – 68. մինչ հանդէպ երեսանալ Աղէքսանդրու ի յանդուգն դիմացուածին, և հայեցեալ ի դէմս Աղէքսանդրու իբր յաստուածոց դիւցազանց՝ զերեսս ի վայր արկեալ զերկիր նշմարէր – 68.

Ի ՎԵՐ - անցցուք ի վեր Եղկղեսիանոսաց, ի ժամանակի հալածանաց որք անկան ի կռապաշտութեանն մոլորութիւն. – 256. առատապէս հեղեալ զգութ … և ի ձեռն հովուապետին սրբոյն Յովհաննիսի եպիսկոպոսի և ճգնաւոր քահանայի Գրիգորի , որք միշտ զողորմութեանց խնդրուածս վասն ժողովրդեանն տեառն ի վեր առաքէին , զոր օրինակ և հրեշտակն տեառն աղերսէր Աստուծոյ, ասէ – 314 դա աւադիկ արմատ դառնութեան ի վեր երևեալ, և բազումք պղծին նովաւ: - 254. Եթէ, որպէս ասացի, ի բաց գնաս յինէն՝ խաղաղութիւն է, և թէ ոչ՝ պատերազմ և կռիւ և ճակատամարտ … դու վիշապ ծովական՝ և մեք կարթ, ի քիմս քո ի վեր ձգելով զքեզ ի խորոց անդնդոց. – 280. և ինքեանք գնացին յարևելս հիւսիսոյ որպէս ասացաւ ի վեր անդ: - 60. Եւ կայր զյօնսն պոզտեալ, կոկոզաբանէր լի յոխորտանօք, խրոխտայր, եռացուցանէր ի վեր մղէր զդառնութիւն ժահահոտ մաղձոյն չարաթոյն վատախառնութեանն – 242. և ճախր առեալ ի ներքուստ ի վեր ի լեառն Վարագ և երկրպագեալ աստուածազարդ քրիստոսապսակեալ փայտի խաչին Քրիստոսի, պատուանդանի ոտիցն Աստուծոյ - 392. Եւ յանդուգն դիմեցուածովն ի վեր քան զզարմանս՝ այն ինչ ի քթթել ական դարձուցին /328/ զխրոսակսն, և զռազմն ղաշիկ քակեցին և զյառաջագահ ախոյեանսն փայլակնահար արարեալ դիաթաւալ կացուցին – 330. և յորժամ զգան ջերմութեանն՝ զուարթանան զուարճանան, հրճուին կայտռելով ի վեր փքալով հասանել ի ջերմագոյն վայրսն, ի

ջրշիղջսն ծովափնեայս ջանան հասանել – 260. և նա առաւել յորդորագոյն հնչէր և արտօսր ի վեր բերեալ հեղոյր, ասէ – 222. և փակեցին ի ներքս զոտն լերինն իբրև զծով շուրջանակի, ի վեր ձգելով զկուտակումն ալեացն ի բռնութենէ հողմոցն վարելոյ. – 276. և քահանայքն բարձեալ ի վեր զսուրբ Աւետարանն և նշանակ իւրեանց կանգնեալ զնշան Խաչին – 23 Զաչս ի վեր ամբարձեալ իշխանն Աշոտ՝ ետես զմի ոմն հարեալ ի զօրաց իւրոց. – 174. Ըստ նմին օրինակի և զօրավարն Բուխայ, ի հասանել ամառնային ջերմութեանն իբրև ի խորոց անդնդոց ի վեր մղեալ զինքն, ելեալ յերեսաց արքայի բազում և ծանր զօրու՝ եհաս ի վերայ երկրիս ի կողմն հիւսիսոյ ի մուտս Հայաստան աշխարհիս. – 262. Ի սորա յերրորդ ամի թագաւորութեանն ի վերայ Հայոց աստուածատուր բարկութեամբ անդնդաշարժ վրդովմամբք ներքնագոյն խորոցն պատահեալ միմեանց սահանախաղաց դղրդմամբ, հիմնաշարժ տապալմամբ, /356/ ներքսագոյն երկրի թուլացեալ պնդափակ աղխեալ սանդարամետական սահմանին, բարկութեան հողմոց շնչեալ ընդ ջրոցն խաւարայնոց, ի կոհակս անդնդաքակս զթանձրայատակ երկրի զկարծր և զծանրալիր անկշիռ անբաւութիւնն տատանեալ, մինչ յերեսս երկրի ի վեր մղեալ հանդէպ քաղաքին Արտաշատու/ գրքում՝ Արտաշասու/, որ Բլուրն նորուն ասի – 358. Ի վեր կառուցեալ զաչս սրբոյն Վարդանայ՝ տեսանէ զանօրէնն Վասակ Սիւնեաց տէր – 128. Իսկ ի հարաւակողմն կուսէ ի ջրամբար արձանագործ քարեղինէն ճանապարհ աշտիճանեալ /390/ ներքուստ ի վեր մինչ ի կատար անձաւին հեշտալիր զելս և զէջս յօրինեալ, քարագործ աւազամած կրագործութեամբ: - 392. Իսկ ի շնչել հարաւային օդոյն, եռացուցանելով երկրի ի վեր զջերմային զօրութիւնն, զուարթացուցանելով անդնդական բերմամբն զընդարմացեալ արմատս և զբոյսս ի հիւսիսային սառնամանեաց օդոյն շնչելոյ - 188. յայնժամ մերկացեալ և ի բաց եղեալ զաշխարհական պատրանաց զբաղումն՝ և էանց գնաց ի վեր քան զերևելիսս – 284. Նորա զերկիր նկատեալ՝ ոչ ունէր նայել ի վեր, կայր կորակնեալ, ոչ ունել ոյժ պնդութեանն, զօրհասն ի վերայ իւր գուշակէր եկեալ հասեալ: - 344. Մերթ տապալէր իբրև զօձ, մերթ գոչէր իբրև զառիւծ, և իբրև զխոզ վայրենի կնչէր կոնչէր, փրփուր ի վեր բերելով, զատամունս կրճտելով. - 270. Պղպջաձիգ արտօսր իբրև յեռանդնոտ կատսայէ ի վեր յորձանախաղաց սահին. տարակուսանք անյուսալի շուրջ զինև պարագրին ի վերայ եղելոցն: - 350.

Ի ՎԵՐԱՅ - Եթէ, որպէս ասացի, ի բաց գնաս յինէն՝ խաղաղութիւն է, և թէ ոչ՝ պատերազմ և կռիւ և ճակատամարտ … և դու իբրև զեղջերու առանց եղջեր՝ և մեք արծուիք ի վերայ քո, կուրացուցիչք աչաց քոց, և գէշ զքեզ արկանել ձագաց իմոց և աղուեսուց ի ծակս բնակեցելոյ: - 280. և բազում վնասս ի գործս արքունի կուտէին ի վերայ իշխանին Աշոտի. և քմազարդ բանիւք գրգռեն զթագաւորն ի վերայ իշխանին ի չարիս: - 180. Իսկ ի վերայ բազում հինից եկելոց ի վերայ Գուրգինի և սաստիկ պատերազմացն զոր պատերազմեցաւ յաղթող նահատակութեամբ. ոչ միայն յարտաքին թշնամեացն որ շուրջանակի պաշարէին, բազում այն էր որ ի ներքին ընտանեաց հարազատաց, ազգականաց դրժողաց, ուխտազանցաց, ստոց և ստերդմանց յուզէին աղմուկք: - 308. Իսկ ի վերայ բղխեալ աղբիւրն – 86. ,,արիք երթայք առ զօրավարն, տեսէք հաւաստի, և ի վերայ հասեալ գիտասցուք, թէ ի՞ւ իւիք կարասցուք հաճել զմիտս նորա ի խաղաղութիւն,,: - 214. ,,Բուխայ գլուխ զօրավարաց ընդհանուր Թագաւորութեան Տաճկաց, Ջափր իշխեցող ծովու և ցամաքի, հաւասար և օրէնսդրին մերոյ Մահումաթի, և հաւատարիմ միջնորդ Աստուծոյ և մարդկան, և թագաւոր ընդհանուր ազգաց հարաւային աթոռակալութեան … Յղեցի զքեզ ելանել ի վերայ երկրիդ Հայոց ամենայն կենդանեաց – 236. ,,և զտանջողացն, ասէ, զճողփիւնն լսէաք, և զհարուածսն եկեալս ի վերայ թիկանցն տեսանէաք – 50. ,,և ո՛վ տայր ինձ վկայել ի վերայ ճշմարտութեանն և մեռանել վասն անուանն Քրիստոսի, և զարիւն իմ փոխանակ արեանն Քրիստոսի հեղուլ և զմարմին իմ փոխանակ մարմնոյ նորա ի մահ մատնել և զչարչարանս իմ ընդ նորա չարչարանսն խառնել, զի և ընդ նմա փառաւորեցայց. – 290. ,,ընդէ՞ր լքանես զձեռն քո և ընդ արութիւն դոցա խառնես վատութիւն և առնես զօրացեալ ի վերայ քո ամենայն աշխարհաց – 282. ,,ընդէ՞ր որպէս

մանուկ տղայ համարիս, արկանել առաջի իմ զպատրանս, սնոտի, առասպելաբան, խաբեբայ և պատիր յոյս խոստանալով ինձ՝ հանել զիս ի ճշմարիտ յուսոյն, զոր ի մանկութենէ ի վերայ հասեալ ճշմարտութեանն,,: - 294. ,,ձայն իմն ահաւոր հրեշտակի անկեալ ի վերայ իմ՝ հրամայեաց երթալ պատգամաւոր յազգն իմ, ցուցանել զԱստուած արարիչ երկնի և երկրի. առնուլ ինձ անուն գլխաւորութեան, և զստութիւն հաւատոց որ ի կուռս՝ յանդիմանել և քակտել,,: - 158. Ազդ եղև քաջին Վահանայ, եթէ զօր բազում առեալ Հազարաւուխտ յընտրելոցն Պարսից և ահաւադիկ հասեալ գայ ի վերայ: - 134. Այլ իբրև այն ինչ մերձ լինէր ամրոցն ի պաշարումն՝ Ամդայինն Յիսէ, որ Շեհի որդին, որ զզօրապետութիւնն Հայոց ունէր, ճանաչէր՝ ի հրապոյրս Մանազաւեան պետոյն և Ութմանացն ելեալ՝ երագապէս եկն եհաս ի վերայ Աշոտի ԺԵ հազարաւ հեծելօք վառելովք. – 334. այլ ես ասեմ քեզ, եթէ Տէր կամեսցի՝ վաղիւ պատելոց է զքեզ պատերազմ քաջաց. և ճեթեսցեն ի վերայ քո իբրև զամպս երկնից ի բռնալիր նիզակօք անցանիցեն ընդ մէջ բազմութեան քո իբրև զփայլատակունս հրոյ շանթից: - 140. այլ ես ոչ երկեայց ի ժողովելոց երիցանցդ Հռոմայեցւոց, որ գումարեալ գան ի վերայ իմ: - 138. այլ է արդարև նշոյլք արեգական, /32/ սեռն օդով ծածկեալ ի վերայ խիտ և հոծ ամպոց խոնաւագունից – 34. այլ ի վերայ դնիցի բարձրաբերձ աշտանակի առաքելական եկեղեցւոյ, որպէս զի տեսցեն և փառաւորեսցեն զՀայրն երկնաւոր: - 204. այլ կուտեաց եդ ի վերայ Բուխայի զապստամբութեան վնասն և զհարուածս զօրացն – 286. այլ նա ըստ կամս իւր կատարեաց ի վերայ իւր զարենապարտն լինել, որ տալոց է հատուցումն վրիժուց յաւուր դատապարտութեան իւրոյ: - 320. այն ինչ սուր ի վերայ բերեալ դահճին՝ ձայնէ բարձր և ասէ. – 222. այնպէս թուէր ի խխնջել երիվարացն և յերագ ի վերայ դիմելոցն: - 228. Այսպէս և Շամիրամ կին, ի յազգէն Սեմայ, թագաւորէ Նինոսիւ արամբ իւրով ի վերայ Ասորեստանի պայազատաբար – 16. անդ հասեալ քաջացն մերոց եղբարցն երեցունց ազատագունդ սակաւաձեռն գրոխիւ ի ձմեռնային ժամանակի, և ընդ լրթնատեսիլ լուսոյն վազս ի վերայ եդեալ՝ հանին ընդ սուր յոլովս քան թէ սակաւս: - 372. անդ և տապանն շինեալ եղև և անհնարին չարեացն զեղեալ ի վերայ երկրի. – 30. ապա անարգեաց զնա և Կաւատ արքայ, եհատ ի վերայ նորա դատաստան մահու, և հրամայէ արանց մտանել և սպանանել զնա. – 152. ապա թէ ոչ ի կամս կամաց զայդ առնես՝ ակամայութիւն ի վերայ հասեալ՝ և զոր ունիսդ հարկաւորաբար առնէ քեզ զայդ ևս թողուլ,,: - 330. առ սովաւ Դիոնեսեայ զօրաժողովն ի վերայ Հնդկաց: 58. Աստանօր և ի դէպ ելանէ մարգարէութիւնն Դանիէլի, տեսութիւն անհեդեղ պատկերին բազմախառն նիւթոքն ի վերայ խեցեղէն և երկաթեղէն ոտիցն: -156. Արդ ելէք ի վերայ աշխարհիդ զօրացեալ զօրութեամբ, և ձեր լիցի երկիրդ ի ժառանգութիւն,,: - 362. արդ հաճոյ թուիցի քեզ, քաջ զօրավար, զսորայս գործեցեալ քաջութիւն ի վերայ զօրացն Յունաց,,: - 304. արեգակնային ի վերայ խաղալով ճառագայթաձիգ ճեմականացն, յելս և ի մուտս. – 86. Բայց Ապումրուան երկնէր գայր զիշխանասիրականն ծնանել գահակալութիւն ի վերայ աշխարհիս: - 364. Բայց դոյզն մի զամբարշտին Մեհուժանայ զյանդգնութիւնսն ի վերայ Հայոց բացայայտեցից ի շարի աստ: - 102. Բայց զաշխարհն Յիսէ որդին Շեհայ բռնազբօսեալ յինքն գրաւեաց և կացոյց ի վերայ նոցա զիւր գործավարս: - 344. Բայց իբրև ետես բռնաւորն զանդառնալի միտսն և զաներկբայութիւն հաւատոցն և զաներկիւղ և զյանդուգն պատասխանիսն և զմեծ անարգութիւնն զոր հասոյց ի վերայ նորա և նոցին օրէնադրին…բարկացեալ յոյժ հրաման ետ փութով զրաւ առնել կենաց նորա: - 206. Բայց մեզ կայ առաջի ասել վասն Ջափրայ և չար գործոց նորա, անգիրս մնացեալ յայլոց, զոր կատարեաց ի վերայ աշխարհիս Հայոց երկայնագոյն ժամանակաւ և անըմբերելի նեղութեամբ ի մերս հանդիպեալ աւուրս, որ էր Հայոց Յ թուական: - 168. Բայց Յամանիկն իբրև լուաւ ի դարձուցանելն Աշոտի զԱհմաթ լի անարգանօք, և զխորհուրդն զոր խորհեալ էին ի վերայ Հայոց ցրել՝ զօրհասն ի վերայ իւր համարեցաւ տեսանել. – 350 Բայց Յամանիկն իբրև լուաւ ի դարձուցանելն Աշոտի զԱհմաթ լի անարգանօք, և զխորհուրդն զոր խորհեալ էին ի վերայ Հայոց ցրել՝ զօրհասն ի վերայ իւր համարեցաւ տեսանել. – 350.

Բայց ոչ ժամանեալ կատարման պատերազմին, զաշտարակն, զոր շինէր որդին Աբգարու փլուզեալ ի վերայ սպան զնա, վրէժխնդիր եղեալ մահուն Ադդէի սրբոյ: - 80. Բայց չարեացն այսորիկ հաւատարմութիւն յայտ եղեալ հաստատեցաւ ի վերայ Կայսկին Ապլբառայ: - 342. Բայց քանզի աւերեալ էր զՆինուէ Նաբրովթայ ի բռնանալն ի վերայ Սեմեացն, և զԲաբելոն /16/ փոխանակ նորա շինեալ – 18. բայց քանզի տէր մատնեաց զնա ի ձեռս նոցա, որպէս ասաց Դաւիթ՝ և եղև ահ տեառն ի վերայ ամենեցուն. – 354. բարիատեացն և չարասէրն Աւշին նիւթէր գայր ի վերայ Գուրգինի հասուցանել չարիս մեծամեծս – 370. գոչեաց առիւծաբար, յարձակեցաւ ի վերայ ընտիր այրուձիոյն, և զաջ թևն բեկեալ՝ զձախոյ կողմամբն արկանէր -174. գուցե կատարիցեն չարիս ի վերայ քո, և կորզեն յընքեանս զթագաւորութիւն Նինուէի: - 82. գուցէ յորժամ կատարիցեն զչարիսն զոր խորհեալ են ի վերայ քո, որպէս լուաք ի հաւատարմաց իւրեանց՝ օժանդակութեամբ Արտաշէսի մերժիցեն և զզարմ և զզաւակ քո ի թագաւորութենէ Ասորոց: - 82. Դուք աւադիկ ժողովեալ գայք ի վերայ իմ պատերազմաւ. – 138 ԵԹԷ Ո՛ՐՊԷՍ ԿԵՂԾԱՒՈՐԱԿԱՆ ՍԻՐՈՎ ՆԻԻԹԷՐ ՉԱՐԻՍ ԱՒՇԻՆ Ի ՎԵՐԱՅ ՀԱՅՈՑ Եւ ԻՇԽԱՆԱՑ ՆՈՑԱ: - 370. ելանէ մարզպանն ի վերայ նոցա և յինքն հանէ զՏամբեր և զԸռնայ գաւառ և որ ասի Ապուջափրի բերդ, ի Վհրի քաղաքին Կորճէից զիւր կացուցանէ ոստիկանս ի պահպանութիւն ամրոցին: - 400. ես վաղ անարգեցի զքեզ, և ոչ փոքր ինչ երկիւղ կալայ ի սրտի իմում վասն քո, զի քամահելով ի վերայ քո՝ զզօրավարն քո հանդերձ զօրօքն ի սուր մատնեցի, և զաւար նորա բաշխեցի, /294/ և յերկրորդումն ոչ փոքր նախճիրս համարեցի զօրացն քոց. – 296. ետ բերել փայտս, և եդեալ ի վերայ փայտին զերանելին Սողոմոն՝ և մօտ առ փայտն կացուցին զսուրբն Կահայ, զի գոնեայ մինն ի միւսոյ տանջանացն երկուցեալ հնազանդիցի հրամանի թագաւորին: - 292. երկունք իբրև ծննդկանի ի վերայ իմ հասեալ լինին՝ մատենաւորել զայսր աղետաբեր համբաւուց ցոյցս. – 350. Եւ ազատորերոյն Վասպուրականի աղերսեալ՝ մի երթալ զայն ճանապարհ, առաջի դնելով զախտակրելն՝ նորա ընտրեալ զմահ ի վերայ քեռոյն իւր, քան զկեանս կեղակարծ ինչ խորհել զնմանէ: - 384. և անդ ոչ սակաւ վտանգ հասանէր Աշդահակայ վասն հասանելոյ ի վերայ նորա Տիգրանայ զօրու ծանու: - 62 և բանակեալ կային ի լերինն որ ի վերայ գեղջն Թուայ, /224/ ի հովիտս նորա, որ կոչի Արեան լիճ. – 226. և ելեալ ի վերայ աշխարհիս՝ յերկուս բաժինս հատին զաշխարհս: - 362. Եւ զԳագիկ որ և Ապումբրուան՝ զնա ոստիկան կարգեաց ի վերայ աշխարհին, տեղապահութեամբ տիրել, զի կարի մատաղօրեայք էին որդիք Դերանկին. Աշոտ էր Թ ամաց, յորժամ մեռաւ Դերանիկն, Գագիկ էր Է ամաց, Գուրգէն Ե ամաց: - 354. Եւ ընթանային ամենեքեան յաճիւռ՝ տեսանել զնոսա և ի վերայ հասանել, թէ զիա՛րդ ի գլուխ ելանիցէ ատեանն: - 242. Եւ լցաւ ասացեալն ի Սոփոնիայ մարգարէէն, թէ ,,եղիցի յաւուր յայնմիկ ձայն ի դրանէ օցոտելոցն և գոյժ յերկրորդ դրանէն և բեկումն ի վերայ բլրոց: - 180. և յանկարծակի ի թիկանց կողմանէ յարձակեալ ի վերայ նորա արանց՝ հարեալ սատակեցին զնա: - 154. Եւ ահա դիմեալ գնաց հասանել ի վերայ կողմանց հիւսիսոյ, յերկիրն յորում Ծանակ կոչի. – 274. Եւ ահա լոյս սաստիկ իջեալ յերկնից և ցոլացեալ ի վերայ սուրբ մարմնոյն, և շուրջ փակեալ զտեղեաւն, թէ ուրեք յարենէ նորա ցայտեալ կայր: - 224. Եւ ամենայն խորհուրդք Մուսէի առին զկատարումն ի վերայ թշնամեացն: - 330. և այլ ոչ ևս յաւելին ելանել ի վերայ աշխարհիս ասպատակաւորք հինիցն պարսկայնոցն: - 400. Եւ այն ինչ ընդ մտանելն՝ երագապէս հասեալ ի վերայ ամրոցացն Ջղմար և Սրինգ կոչեցեալ՝ յինքն գրաւէ զամրոցսն. և կալեալ զՎասակ՝ յինքն գրաւեաց զզօրավարութիւնն բոլոր Վասպուրական տէրութեանս: - 306. Եւ այն ինչ ընդ առաւօտն յեղակարծում հասին ի վերայ զօրք Տաճկաց – 306. Եւ այնպէս զօրացոյց Տէր զողորմութիւն իւր ի վերայ Հայրակղի յաւուր յայնմիկ՝ տալ ի ձեռս նորա ամենեսեան. – 150. Եւ այս եղև, զի լցցի որ ասէ, ,,զարթի՛ր սուր ի վերայ հովուի և ի վերայ առն ընկերի նորա. – 238. Եւ այս եղև, զի լցցի որ ասէ, ,,զարթի՛ր սուր ի վերայ հովուի և ի վերայ առն ընկերի նորա. – 238. և անդ զբարիոք պատերազմն պատերազմեալ՝ որպէս քաջ հովիւ զանձն իւր եդ ի վերայ հօտին – 104. և անդ ընդ փոքր

զառ ի վայրն իբրև զհեղեղատ յորդեալ հոսեալ հասաւ ի վերայ նոցա, ի Քրիստոս խրախուսեալ – 400. և անդ կեցեալ և մեռեալ անձամբ զիւրովի երթեալ, ըստ սահմանելոյ ի վերայ նորա բանի առնն Աստուծոյ սրբոյն Ներսէսի: - 102. Եւ անտի դարձեալ դառնայր Աշոտ ընդ միւս ևս ամրականն ընդ ոստոզերծ քարանձաւի, ի յարևելից կուսէ լերինն Վարագայ, ի վերայ գեաւղջն Կոխպանից, հանդէպ եկեղեցւոյն սրբոյն Հռիփսիմեայ – 334. և ապա մտին ի տունն Աստուծոյ, և տարածեալ զիրովարտակն առաջի սրբոյ սեղանոյն՝ անկան ի վերայ երեսաց իւրեանց յերկիր առաջի Տեառն և լացին դառնապէս – 146. և ապաշաւանք ոչ սակաւք դիմեցին հոլովեալ ի վերայ իմ. – 378. Եւ առ յոյժ յիմարութեանն հարեալ ցանկութեամբ, խլրդենի դիմօք, իբրև զգազան մի կատաղեալ՝ սկսաւ յարձակել ի վերայ աշխարհիս Հայոց. – 170. Եւ առ չժուժեալ այնպիսի վտանգաւոր նեղութեանն, արիաբար հասեալ ի կիրճս ձորոյն և մերկացեալ զսուսերն՝ յարձակեցան ի վերայ երիվարացն – 220. Եւ առ չհանդուրժել այնքան եկեալ հասեալ վտանգաւոր նեղութեանցն, և գազանեղէն զայրացմամբ մրմռեալ յոգի իւր ի վերայ կորստեան սուրբ հաւատոյս և կործանման աշխարհիս Հայոց – 126. Եւ առեալ զմանրեալ և զխորտակեալ ի մասունս զԽաչն՝ բերին առ զօրավարն, լուացեալ զարիւն պղծոյն, որ ի վերայ խաչին շաղախեալ կայր ի գլորմանէ այսահարին: - 378. Եւ առեալ զմարմին նորա տիկնոջն Սեդայի կնոջն Աշոտի և եդ ի գերեզմանի, ի տեղւոջն որում Զորոյ վանքն ասեն, ի վերայ գեաղջն Ահաւականից: - 370. և առեալ զնա եկն եհաս ի վերայ որդւոյն Աբգարու բառնալ ի նմանէ զթագաւորութիւնն զոր ունէր: - 80. և առեալ սուրբն Ներսէս զՊապ որդի Արշակայ՝ հանդերձ յունական զօրուն թագաւորեցուցանեն զՊապ ի վերայ Հայոց ի տեղի բուն թագաւորութեանն Արշակունեաց: - 108. և ասէ, ,,եթէ աջողեսցին քեզ խորհուրդ մեր, զոր խորհեցաք ի վերայ Հայոց և իշխանաց նոցա, և ըստ ախորժակաց մերոց ի գլուխ ելանիցեն, որ ինչ կամք յօժարութեանց մերոց ըղձանայցեն - 184. Եւ արդ քաջալերեցարուք, լերո՛ւք արք. ելէք ի վերայ աշխարհին Հայոց սովով և սրով և գերութեամբ. – 198. և արևն ի վերայ հասեալ սպառազէն զարդուն՝ և մերկ սուսերացն փայլեալ՝ ճառագայթս արեգակնայինս յինքեանց ձգէին շուրջ զլերամբն. – 208. և արկանէին վիճակս և լարս ձգէին ի վերայ սահմանաց և բնակէին յամուրս աշխարհիս աներկիւղս. – 238. և բազում վնասս ի գործս արքունի կուտէին ի վերայ իշխանին Աշոտի. և քմազարդ բանիւք գրգռեն զթագաւորն ի վերայ իշխանին ի չարիս: - 180. Եւ բարձեալ աշտեայս հանապազակիրս ի պատրաստութիւն գազանացն որ ի մայրիսն որջանան, կամ թշնամեաց ի վերայ հասելոց – 190. Եւ զումարեալ այնուհետև զանհուն բազմութիւն զօրացն բարձրագոյն քան զառաջինն՝ և ել խաղաց հասանել ի վերայ արևելից աշխարհին – 270. և գունդ անհաւատից դառնացեալ ոգւով ի վերայ կանանց և որդւոց իւրեանց ազգականաց՝ յարձակեցան ի վերայ նոցա ուժգին սաստկութեամբ և սուր ի գործ արարեալ յանխնայ կոտորեցին. – 402. և գունդ անհաւատից դառնացեալ ոգւով ի վերայ կանանց և որդւոց իւրեանց ազգականաց՝ յարձակեցան ի վերայ նոցա ուժգին սաստկութեամբ և սուր ի գործ արարեալ յանխնայ կոտորեցին. – 402. Եւ գրեթէ ամենայն իշխանք Հայոց, Վրաց և Աղուանից եկեալ էին ընդ զօրս Հայոց ի վերայ աշխարհին Ապահունեաց. – 380. Եւ դադարումն լինէր յաւուրս սորա հինից և ասպատակաց ի վերայ երկրին, և քաջավայելչապէս բարեձևանայր կարգ սրբոյ եկեղեցւոյ Քրիստոսի, և երկիւղ և կասկած և ոչ ուստեք: - 338. և դահճացն հանեալ զսուսերն՝ դիմեցին ի վերայ նոցա իբրև զգազանս արիւնարբուս, և ծեծէին սրովն, իբրև ոք զի հատանիցէ փայտ ի մայրս անտառախիտս հարեալ կացնաւ, և յանխնայ անողորմ յօշէին անդամ անդամ: - 266. և դարձաւ սիրտ նորա ի վերայ նորա սիրով խաղաղութեան. – 308. և դարձեալ եդին ի վերայ ի տեղւոջ վկայութեանն նորա. ի Գոռոզու մերձ ի լեառն Քշիթ, ուր էր բանակ այլազգեացն: - 290. և դեռ զիւրաքանչիւր սուսեր ածեալ ունէին ընդ մէջ իւր և վահան ի վերայ թիկանց եդեալ. – 220. Եւ Դերանիկն զօրացեալ զօրութեամբ Քրստոսի, և հոյակապ և անուանի եղեալ ընդ բոլոր աշխարհ Հայաստանեայց՝ և խաղաղանայր երկիրս ի շփոթմանցն ի վերայ եկելոցն: - 318. Եւ դիմեսցեն երիվարք նոցա, դիմեսցեն որպէս

զարծուիս ի վերայ կերոյ. – 200. և դիմեցին քաջասրտագոյնս ի վերայ սուսերամերկք զինեալք ի մէջ ամբոխին, Արտաւազդ և Վասակ Մամիկոնեանք - 98. և եդեալ ի վերայ ուղտուց խաղացուցին ի Սամառայ – 238. և եթէ յերկարիցի գործոյս այսորիկ հանդէս և մարտիցն հանգամանք ոչ փութանակի վարիցին՝ գուցէ օգնականութեամբ գիշերոյ եկեսցէ ի վերայ քո և մեծամեծ աւճիրս ի վերայ քո և զօրացդ արքունի հասուցանիցէ: - 212. և եթէ յերկարիցի գործոյս այսորիկ հանդէս և մարտիցն հանգամանք ոչ փութանակի վարիցին՝ գուցէ օգնականութեամբ գիշերոյ եկեսցէ ի վերայ քո և մեծամեծ աւճիրս ի վերայ քո և զօրացդ արքունի հասուցանիցէ: - 212. և ելեալ արտաքոյ բանակին յորդառատ հեղոյր արտասուս ի վերայ բեկման իշխանին և այլոց նախարարացն. – 218. և ելեալ ի վերայ Պարսկահայոց գոեհացն և անդ բազում քաջութիւն նահատակութեան ցուցեալ՝ յոլովից գերելոցն ընդարձակեաց, հանելով /400/ և զաւարն ի ձեռաց նոցա – 402. և ելեալք ի վերայ Փառանու՝ արարին մեծ խորտակումն դիմադարձացն, սպանին և զԱպղջէհրն և զբազումս ի զօրէն Ամովնացւոց և Մովաբացւոց – 160. և եհաս ի վերայ նորա վառեալ զինու սպառազէն երիվարաց ընտիր հեծելովք այրուձիոյ: - 178. և եղև բալ և մութ թանձրամած խաւարին ի վերայ երեսաց ամենայն երկրի. – 150. Եւ եղև ընդ ժամանակսն ընդ այնոսիկ ել Հազարաւուխտ Պարսից զօրավար ծանր զօրու ի վերայ Հայոց՝ տալ պատերազմ ընդ զօրս Հայոց, աւերել գերել գերփել զաշխարհս – 134. Եւ եղև ի միում աւուրց, ի գալ նորա ի նմանէն՝ ձայն օտարոտի, և ազդումն ահագին և դիւական անկեալ ի վերայ /գրքում՝ վերա/ նորա՝ ուշաթափ անկեալ դնէր – 158. Եւ եղև իբրև արար և կատարեաց Բուխայ զոր ինչ խորհեալն էր ի վերայ աշխարհիս Հայոց, բարձումն յաշխարհէս մեծամեծացն Հայոց՝ յաւել և զայս ևս – 296. և Զ ամ կեցեալ յետ գերադարձն լինելոյ, և մտեալ յաշխարհս՝ համարձակ զքրիստոնէութեանն ունելով զկրօնաւորութիւն, և ի զղջել յապաշաւ ի վերայ ուրացութեանն զՔրիստոս լինելով: - 336. և զամենայն վնասս և զգործս ապստամբութեանն ի վերայ Աշոտի կուտէին: - 194. Եւ զարմանք կալան զամենայն բազմութիւնն ի վերայ պնդութեան սրտին և զօրութեան ուժոյն և քաջութեան նահատակութեանն, զոր գործեաց երանելին Գէորգ. – 268. և զբովանդակ թոյնս անբժշկականս իժից և քարբից եհեղ ի վերայ քրիստոնէից. – 104. և զիշխանն Աշոտ և զորդի նորա Գրիգոր և զՎահան Արծրունի և զորդի նորա Գագիկ … և զՄուշեղ եղբայր Վահանայ և զտիկնայս նոցա և զտիկինն Հրանուշ և զայլս յազատատանէ կապեալ և բարձեալ ի վերայ ուղտուց՝ վտարեաց ի Սամառայ – 220. Եւ զլեզուդ պղծութեամբ զոր սրէիր ի վերայ մեծազաւր թագաւորին՝ արդ նոր և զարմանալի վիրաւք դատեսցէ զքեզ քան զամենայն տիեզերս: - 164. և զկէսն մահու դատապարտեալ, զգլուխս նոցա հատեալ ի փայտի բարձրացուցանէին ի վերայ դրանդեաց պարսպին: - 372. և զնշան փրկական Խաչին ի վերայ գլխոցն դրօշմէին – 266. և զՇիրոյ կախեն զփայտէ ի վերայ կրակարանին. – 126. Եւ զօրքն Տաճկաց պնդեցան և փակեցին շուրջանակի ի ներքս զգունդն Աղուանից և դիմեցին յանդուգն ի վերայ նոցա. – 284. Եւ ընդ առաւօտն հրամայեաց Հայրակղոս ասպատակս սփռել ի վերայ ամենայն երկրին, և հարկանել զամենայն երկիրն սրով սուսերի: - 150. Եւ ըստ արժանի վրիժապարտութեանն լցեալ սուր տեառն բարկութեամբ խաղաց /374/ ի վերայ Աւշնի և բանակի նորա առ հասարակ – 376. և թշնամիքն հանգստեամբ ելեալ ի վերայ նոցա ի լիճս աղեղանց և նիզակաց ձերբակալ արարեալ զոմանս – 372. Եւ ժողովեալ աշխարհին Վասպուրական՝ զամիսս Ժ արարին կոծ մեծ ի վերայ նորա: - 354. Եւ ի միւսում առաւօտին հասին ի վերայ բանակին խոնջեալ երիվարօք, անզգուշութեամբ առ մուտն պատրաստեալ, և անկան ի նմին ժամու Բ ոմանք, Վլիթ և Մարաճայ. – 402. և ի վերայ նորա կանգնէ զԱստղկեան պատկերն, և մօտ նորա զտուն գանձու պաշտպանութեան կոռոցն. – 88. և ի վերայ նորա շինեաց եկեղեցի զհամբարձմանն ի յերկինս ի Հօրն գահակցել աթոռ, և զերկրորդ գալստեանն գյիշատակ ունելով, որ գալոցն է հայրենի փառօք, ըստ հրեշտակացն առաքեալսն զմխիթարականն և զքաջալերականն աւետիս նոցա առբերելով: - 390. և ի վերայ նորա շինեաց եկեղեցի զվերնատանն խորհրդական խորհրդածութեանն աւանդութեան նորա ուխտի: - 390. և ի

վերայ նոցա զօրաժողով եղեալ Աշոտ և որդի իւր Դերանիկն, առնել մարտ պատերազմի ընդ ամրոցին: - 332. և ի վերայ սուրբ եկեղեցեաց և ժողովրդեան Աստուծոյ պատերազմէին: - 232. և իբրև հուր ընդ եղէգն ընթացեալ՝ այնպէս հասեալ ի վերայ մեր իբրև զմարախ, իբրև զջորեակ և իբրև զթրթուր խառնիճաւն /238/ հանդերձ – 240. և իբրև զմի անձն, վառեալ ի զէն և ի սուր և ի ճակատամարտ՝ հասեալ յամուրս՝ տապալէր զզօրութիւն նոցա սրով և աղեղամբ, ի փայլիւն սուսերի և նիզակի և ի գիշերամարտ նահատակութեանց, ըստ նմանութեանն քաջ զօրավարին Իսրայէլի Յեսուայ կամ Գէդէովնի կամ թէ նոյն ինքն նահապետին Աբրահամու, ի վերայ հասեալ Քանանացւոց, զյաւէտ յաղթութեան նահատակութիւն նահատակեալ՝ և դառնայ մեծաւ յաղթութեամբ: - 312. և իբրև զպարիսպ անդամանդեայ՝ այնպէս եդին զանձինս ի վերայ բազմութեան գաղթականին աշխարհակոյտ ամբոխիցն, իբրև քաջ հովիւ ի վերայ խաշանց մեռանել յանձն առին: - 230. և իբրև զպարիսպ անդամանդեայ՝ այնպէս եդին զանձինս ի վերայ բազմութեան գաղթականին աշխարհակոյտ ամբոխիցն, իբրև քաջ հովիւ ի վերայ խաշանց մեռանել յանձն առին: - 230. և իբրև զքաջ հովիւն դրուատեալ ի փրկչէն՝ զանձն իւր եդ ի վերայ խաշանց ընդդէմ ապականարար գայլոցն, յարձակեալ յանխնայ դիմեցուածովք, յարիւն և յապաժոյժ, ի սատակումն և ի ծախումն սրոյ մատնեաց բոլորովիմբ զյարձակեալս նեղիչս աշխարհիս. – 312. Եւ ինձ ի վերայ տրտմականացն դէմ եդեալ առ կատարելագոյն և առ անզուգական անհամեմատ խնդութիւնն դեգերել, առ հոգևորական ուրախութիւնսն ընթանալ յետ մարմնական տրտմականացն յաճախութեանցն: - 386. և ինքեանք զզօրսն ամենայն մեկնեցին երթալ ի վերայ գնդին Հայոց – 226. և ինքն /232/ կայր հեծեալ ի վերայ սպիտակ ձիոյ, և ցանէր զծուխն ընդդէմ թշնամեացն, և օդ քաղցր, որ արկանէր զծուխն զերեսօք նոցա. – 234. և ինքն Հազարաւուխտ առնու զընտիրս այրուձիոց, զկորովի պատերազմողս ի վառելոցն պարսկային հարստութենէն, և խաղայ գնայ զկողմամբքն Հաշտենից և Ծոփայ, ի վերայ Վահանայ յանկարծօրէն: - 134. և ինքն վիրաւորեալ սրով մեռանի ի գեօղն Գիւղիկ ի Ճուաշ գաւառի, մարտիրոսական հասեալ նահատակութեան, ի վերայ խաշանցն Քրիստոսի տուեալ զանձն ի մահ: - 402. և խնդրէին տեսանել թէ ո՛րպէս կարասցեն գտանել զելս իրաց վտանգին ի վերայ հասելոյ: - 206. և խորհէր յեղակարծում ի գիշերամարտս հասանել ի վերայ Աշոտի: - 322. Եւ խուռն յարձակմամբ դիմեցին ի վերայ իւրեանց. – 282. և կալեալ զնա եդ ի բանտի ի Նկան բերդի և զամրոց նորա եհան ի նմանէ, և կացոյց զհաւատարիմս իւր պահել զնա, և զտուն և զստացուածս հանեալ ի նմանէ՝ և կացոյց ի վերայ աշխարհին զիւր գործակալս: - 348. և կայր դեռ ևս մեծաւ ուժով, և գոհութեամբ ընդունէր զեկեալ ի վերայ նորա չարչարանս վասն սիրոյն Քրիստոսի: - 290. Եւ կատարեցաւ ի վերայ Սմբատայ ասացեալն յԵսայեայ մարգարէէ – 218. և կարգեցին երիցապետ զոմն ի վերայ քաղաքին որում անուն էր Մոդեստոս: - 142. և կացեալ զաւուրս բազումս անթաղ՝ և ոչ ինչ ամենևին արատեցան մարմինք սրբոցն, և ոչ գոյր հոտ ժախու ի վերայ նոցա: - 268. և կացուսցէ ի վերայ աշխարհիս գործավարս, որ ըստ իւրեանց հրամանի զկարգս աշխարհիս յօրինեսցեն – 188. և կողմնեալք ի սիրոյ աստուածութեանն անկաւ ի վերայ նոցա զարհուրումն մահու, մանաւանդ ոչ կամելով ելանել / 246 / ի սնոտի կենացս դիւրափոփոխ աշխարհիս՝ ասեն. - 248. և Հայրակղի ժողովեալ զամենայն արևելեայս իբրև ՃԻՌ՝ դիմէ ի վերայ Խոսրովայ: - 148. Եւ հասեալ ի գեօղն Արճուճս՝ մնայր անդէն, և դիտակս թողոյր ի վերայ բլրոցն բարձրաւանդակաց: - 178. և հասեալ ի վերայ ծառոց ի բարձրաբերձ գագաթունսն տերևաթափ առնիցէ /260/ և ընդարմացուցանէ զզօրութիւն արմատոյն – 262. Եւ հասեալ ի վերայ Հայոց՝ նախ զԱշոտ վտարանդեալ այսր խաղացուսցես – 196 Եւ հասեալ ի վերայ նորա թշնամիքն՝ հարին սրով: - 304. և հրաման ետ հասանել ի վերայ քաղաքին Տփղիք կոչեցեալ. որում յառաջագոյն Փայտակարան անուանէին. – 270. և ղաշիկ արարեալ յայնկոյս քան զՎանտոսպ, ի տեղւոջն արձանաշար քարակարկառ գոգաձև միջոցի երկուց բլրակաց, որ հայի յԵրիվարաց արկման դաշտն, ի վերայ Լեզւոյ գեաւղջն, որ զաւրացն գեղեցիկ առասպելաբանեն սպիանած վերայն սպանելոցն ի մանկանցն Շամիրամայ: -

334. և մեկնեաց յինքենէ զԱբրահիմ ոմն և յղեաց զնա հազարապետ Հայոց, և վերակացու ի վերայ հարկաց արքունի, և տիրել փոխանակ իշխանաց սորա: - 298. և մի ի վերայ մեծ յանցանացն զոր յանցեար, որպէս լսեմդ զոր ինչ ամբաստանեն զքէն՝ յայդ ևս յաւելուր - 290. և միախուռն յանդուգն յարձակմամբ դիմեցին ի վերայ այլազգեացն, և ի դիմի հարեալ միմեանց՝ այր զախոյեան իւր յերկիր կործանէր: - 174. Եւ մինչ երթայր և խորհէր՝ խոցեալ նորա երիվարն, և յանկարծակի այն ինչ ոտն երիվարին շաղեալ ընդ փոքր թուփ մի, որպէս ասեն, զուլումբեալ ի վերայ գլխոյն ջարդեալ զողն ու լարն՝ ի բաց ընկէց զհեծեալն զքաջ զօրավարն Ապումկդէմ: - 304. Եւ մինչ կարի և ահագին սաստիկս կուտեցաւ ի վերայ նորա ամբոխն, և ամբաստանքն միաբարբառ զաղաղակ /288/ բարձեալ առաջի բռնաւորին զօձիս պատառեալ ասէին, ,,մահապարտ է, չէ պարտ դմա կեալ, և ոչ առնուլ տեղի պատասխանւոյ,, - 290. Եւ մինչդեռ այս գործ խորհրդածէր՝ հասին ի վերայ նորա քաղաքապետք երկու, անուն միոյն Բշիր և երկրորդին Զքրի, և կալան զնա տանել առ Աշոտ որդի սպարապետին: - 316. և յայնչափ սաստիկ և անհուն ամբոխին սուտ վկայութեանն զբոլոր բարկութիւն բռնաւորին զարթուցին ի վերայ առնն, որպիսի ոչ ի միոյ ուրուք վերայ այնքան ժամանակս եհեղ զբարկութիւն իւր զօրավարն Բուխայ: - 290. և յայնչափ սաստիկ և անհուն ամբոխին սուտ վկայութեանն զբոլոր բարկութիւն բռնաւորին զարթուցին ի վերայ առնն, որպիսի ոչ ի միոյ ուրուք վերայ այնքան ժամանակս եհեղ զբարկութիւն իւր զօրավարն Բուխայ: - 290. Եւ յայտ յանդիման ի վերայ հասանել ոչ կարէր. գունդ կազմել և ճակատ պատրաստել ընդդէմ՝ անվայելուչ էր. – 346. և յանկարծակի ի մէջ գիշերին Գրիգոր ախոյեանայարձակ դիմեալ շուրջանակի փակեցին ի ներքս զբանակն, սրով և աղեղամբ / 330/ վէրս մահաբերս ի վերայ եղեալ՝ յոլովք անկան ի զօրուէն. - 332. և յանկարծօրէն յեղակարծ երագութեամբ հասին ի վերայ Շաւասպայ և մարզպանին Վնդոյի: - 126. և յարձակեալ բազում անգամ ի վերայ յունական զօրուն որք ընդդէմ զօրաց քոց պատերազմէին՝ և անդ ոչ սակաւ հեղմունս արեանց արարեալ փոխանակ զօրաց քոց ի զօրացն Յունաց. – 304. Եւ յարձակեալ քաջութեամբ և արիական ձայնարկութեամբ՝ դիմէր ի վերայ թշնամեացն. – 178. և յաւեր դարձան գեւղք և ագարակք և աւանք, ի բաց մերկացեալ զզարդ և զբարեձևութիւն, և ընդ ազգականութեամբ փակեալ զանազան բոյսք և տունկք, որ ի վերայ երեսաց երկրի. – 238. Եւ յետ այսորիկ ել ի վերայ երկրին Պաղեստինացւոց և Երուսաղէմի՝ պաշարել զնա. – 60 և յերրորդ ամի թագաւորութեան նորա, Սենեքերիմոս զօր գումարէր ի վերայ նորա, և ձերբակալ արարեալ զնա հանդերձ իւրով բարեկամօքն՝ Բաբելոնի կացուցանէր թագաւոր զորդի իւր զԱսորդանիս – 60. և յոյժ հաւաստի և ընդունակ գոլ զառ ի բազմաց /244/ վկայութիւն ի վերայ մեծի և կամ փոքու ինչ իրաց կամ ի վերայ կենաց և մահու. – 246. և յոյժ հաւաստի և ընդունակ գոլ զառ ի բազմաց /244/ վկայութիւն ի վերայ մեծի և կամ փոքու ինչ իրաց կամ ի վերայ կենաց և մահու. – 246. և նա դիմեալ եկն ի վերայ նորա: - 150. և նախ քան ընդ պատժական տանջանաւոր խոշտանգանօք արկանելն զմեզ՝ բանիւք քո իբրև քարամբք հարեալ զմեզ՝ շտապ տագնապի ի վերայ արկանես թափել զոգիս մեր: - 242. և նմին հատուցումն ի կարգի որ ասէ, ,,կացո ի վերայ նոցա մեղաւոր, սատանայ կացցէ ընդ աջմէ նորա,, , և որ ինչ ի կարգ սաղմոսիդ է: - 214. Եւ նոյնժամայն սուսերամերկք խուռն նիզակօքն ի վերայ յարձակեալ իբրև զգազանս արիւնարբուս մարդախանձս՝ սրախողխող արարեալ սպանին զնա – 352. Եւ նոցա ձայն բարձեալ ողորմագին պաղատանօք առ Հայրակղոս, եթէ ,,աստուածասէր և բարերար տէր, արա/գրքում՝ ապա/ ի վերայ մեր ողորմութիւն, թէպէտ և չեմք արժանի ողորմութեան,,: - 150. Եւ նստէր անդ ի բացեայ ի վերայ բլրի միջոց տէր Մուշեղ որդի սպարապետին և կայր հիացեալ ահեղ և մեծ զարմացմամբ: - 284. և ողբայր ի վերայ աշխարհիս Հայոց, ընդ նուազել զօրութեան թագաւորութեանս Հայոց և ընդ բռնազբօսութիւնն Պարսից: - 112. Եւ ոմն ընթացեալ ետ գոյժ վաղվաղակի /150/ Խոսրովու, թէ ,,ապստամբեցաւ ամենայն Արեաց երկիր ի քէն, և զորդի քո Կաւատ նստուցին թագաւոր, և ահաւադիկ դիմեալ գա ի վերայ քո,,: - 152. և ոչ գիտացին զօրն Պարսից զդարձն Հայրակղի ի վերայ նոցա՝ մինչև երթեալ խառնեցան և

բախեցին զմիմեանս պատերազմօք: - 150. և ոչ առ փոքր մի ինչ ներեաց կամ անսաց /264/ տալ տեղի պատասխանոյ, այլ հրամայեաց դահճացն տալ ի վերայ նորա զվճիռ մահու, փութով զրաւ առնել նոցա ի սատակումն սրոյ: - 266 Եւ ոչ ևս այնուհետև համարձակ ելանէին և մտանէին յաշխարհս Վասպուրական զօրքն Տաճկաց. զի անկաւ ահ սաստիկ ի վերայ նոցա: - 308. Եւ ոչ ոք այսքան աղէտս տարակուսանս հասոյց ի վերայ մեր և ի վերայ ազգի և զօրաց և զօրավարաց մերոց, որչափ գործեաց Աշոտ իշխան Վասպուրական: - 198. Եւ ոչ ոք այսքան աղէտս տարակուսանս հասոյց ի վերայ մեր և ի վերայ ազգի և զօրաց և զօրավարաց մերոց, որչափ գործեաց Աշոտ իշխան Վասպուրական: - 198. և որ ի նմա են կենդանիքն՝ զնոյն առ ի վերայ հասուցանէ և նոքօք զպէտս քաղցոյն վճարէ մինչ ի ժամանակս գարնանայինս: - 262. Եւ ուժեղացեալ դաշիկն քաղաքային ի վերայ Մուսէի զօրուն, մինչ ածին արկին զբուն բանակաւն ուր և Աշոտն մեր թուէր գոլ խօթացեալ. – 328. ԵՒ ՊԱՐՏՈՒԹԻՒՆ ՍՄԲԱՏԱՅ ՅԱՀՄԱՏԱՅ Ի ՍԱՀՄԱՆՍ ԱՂՁՆԵԱՑ Ի ՎԵՐԱՅ ԳԵՏՈՅՆ ԹՈՒԽ ԿՈՉԵՑԵԱԼ, ՈՐ ԻՋԱՆԷ Ի ԾՈՎՆ ԲԶՆՈՒՆԵԱՑ: - 336. և սլացեալ իբրև զարծիւ ի վերայ որսոյ՝ պատահէին անհուն բազմութեանն ի Փայտակշտան գետոյ – 400. և սկսան այնուհետև աներկիւղ տարածանել ի վերայ երկրին. քանզի ոչ կասկածէին ի պատերազմէ իմեքէ: - 162. Եւ սկսան յաւելուլ ի վերայ չարեացն այլ չարիս, զի ընդ միմեանս մարտ և կռիւս դնէին յաղագս իշխանութեանն ցանկութեան, և ճեղքեցան ի միմեանց և զօրս գումարեցին ի զերծելոցն ի սրոյն և ի գերութենէն Բուխայի. – 298. և սկսաւ ոգորել եղջիւր ածել ի վերայ Աշոտի յայտնի և ոչ ի ծածուկ. – 350. Եւ սկսաւ գոռալ, և խորհէր զթոյնս չարութեանն թափել ի վերայ իշխանին Աղուանից, /276/ և յղէր առ նա կոչելով ի հնազանդութիւն. – 276. Եւ սկսաւ ի վերայ մղել զժախահոտ և գյիմարեցուցիչ մաղձախառն թոյնսն – 204. և սպանեալ զոստիկանն Պարսից, որ էր ի վերայ նոցա, և ինքեանք պատրաստեալ ի պատերազմ ընդդէմ Պարսից: - 142. և Վահան հասեալ յանկարծուստ ի վերայ նորա, այն ինչ ընդ միտ ածելով ստնանել ինչ Գուրգինայ. – 310. Եւ վասն մնացելոցն որք ի քաղաքին և ի սահմանս նորա՝ ել հրաման յարքունուստ առնել ի վերայ նոցա ողորմութիւն, շինել զքաղաքն և հաստատել զամենեսին յիւրաքանչիւր կարգ: - 142. և տեսանելով մեր զխնամարկութիւն բարի կամաց քոց ի վերայ աշխարհի, և զսէր երախտեաց որ առ մեզ՝ յօժարագոյնս եղիցուք և մեք մտերմութեամբ ծառայել և փութով մեծաւ կատարել զհրամայեալսն ի քէն,,: - 186. և փոխանակ ծաղկեալ պատմուճանի գունագոյն երանգ երանգ անկուածոցն՝ զսուրբ և զվարդագոյն կարմրատեսիլ արիւնն իւրեանց ի վերայ սուրբ մարմնոյն, և փոխանակ ոսկեհուռ թագակապ զարդու պսակացն՝ զերկրպագութիւնն Քրիստոսի. – 266. Եւ քանզի որպէս ասացաւ՝ ի յերկարագնացս աշխատութեանց երիվարացն և հեծելոցն ծանրութիւն ի տքնութենէն ի վերայ հասելոյ, և տօթն արեգակնակէզ տապախառն ջերմութեանն, և թանձր ծարաւոյն պասքեցելոց երիվարացն հանդերձ հեծելովքն – 402. և քաջալերեցան դարձեալ ի վերայ գնդին Հայոց, և հարեալ ի հարուածս մեծամեծս: -304. և օգնութիւն հասեալ նոցա յԱստուծոյ՝ ի պարտութիւն մատնեն զայլազգիսն, բազում վէրս ի վերայ եդեալ – 202. զայն զինեալ ի վերայ անձանց՝ սաստկացուցանեն զպատերազմն, աներկիւղ մնալով ի հրոյն տոչորմանէ. – 208. Զայս ասելով, և յերեսն ի վայր ի վերայ մահճացն զգետնեալ՝ ի վայն և յեղուկն զողբոցն խառնուածսն յաճախագոյնս մանուածէր: - 388. Զայսու ժամանակաւ թագաւորեալ Աղէքսանդր Մակեդովնացի տիեզերակալութեամբ երագահաս հասեալ ի վերայ Դարէհի սպանանել զնա. և բառնայ զթագաւորութիւնն Պարսից Արշաւրեան: - 68. զանգապանս ի վերայ բարձիցն պնդեալ – 208. զգարնանայինսն ի բարձրագոյն գագաթունսն լերանց և ի փապարս վիմաց և ի վերայ բարձրաբերձ ծառոց կենցաղավարին – 262. զի ապականեաց ամենայն մարմին զճանապարհս իւր ի վերայ երկրի. – 28. զի Քրիստոսն այն, որ զանձն իւր ոչ կարաց ապրեցուցանել ի Հրէիցն, այլ կալան զնա և սպանին ի վերայ փայտի՝ իսկ արդ զքեզ զիա՞րդ կարէ ապրեցուցանել ի ձեռաց իմոց: - 146. Զի ահա ես զարթուցանեմ ի վերայ ձեր զազգ դառն և զերագ, որ գնայ ընդ լայնութիւն երկրի, ժառանգել զխորանս որ ոչ իւր

ԼՈՒՍՆԱՁԵՒ - շռնջապահս ձիոցն և տաշտս գաւակացն և զանգապանս ի չորս կողմանս, ձգեալ և լանջացն զէն, և բարձրավիզ խրոխտանացն զրահս, և ոտնատորոփ փռնկալոյն մանեակս զանգակեալս, և մահիկս լուսնաձևս ի մէջ ճակատուն կապեալ – 208.

ԼՈՒՐ - Այս լուր դառնութեան եհաս առ մեծն Վարդան Մամիկոնեան, որ էր ամրացեալ ի Տաւրոսականն Ջռայլ: - 126. Այս լուր քաջութեան և քաջախորհուրդ զպատերազմացն մղելոյ զյարձակմունս եհաս առ զօրագլուխն Բուխայ. – 308. Բայց թէպէտ և ունէր զպատճառ զբարեկամանալն Արէտայ ընդ Աբգարու և ընդ Խուրէնայ՝ այլ Աբգար և Խուրան առ փափագումն որ ի Քրիստոս, և առ լուր սրբոյ Փրկչին, և որ ինչ գործեացն Հերովդէս՝ ոխացեալ ընդ Հերովդի – 78. և աղաղակեալ զկնի նորա՝ զի թերևս ի լուր ձայնին և ի փայլումն զինուցն և ի շողալ սուսերին և ի խխնջիւն քաջ երիվարին և ի վազս երագութեանն ուժոյ ազդ լինիցի և դարձցի ի ձայն նոցա և ծանիցէ, և դարձցի ի կորստական ճանապարհէն – 228. Եւ ի հասանելն նորա ի Թէոդոսի քաղաքն ի Կարին գաւառ՝ եհաս լուր նորա առ կայսր Միքայէլ թագաւոր Յունաց. – 316. Եւ մինչ այսպէս կայր աշխարհս յանկարգ խաղաղութեան՝ եհաս լուր գործոյն առ Աւշին և առ իշխանն

Աշոտ, եթէ ,,վրդովեալ է երկիրն, և կան ի տարակուսի՝ որք զամուրսն քո ունին. – 362. Եւ մինչդեռ զայս խորհէին՝ եհաս լուրն առ կայսր ի ձեռն Տիրենտեայ զօրավարին. – 110 Իբրև լուաւ Խոսրով արքայ զլուր համբաւոյն այնորիկ՝ շարժեցաւ ի բարկութիւն մեծ, լինել վրէժխնդիր արեանն Մուրկայ: - 140. Նոքա առ լուրն խնդացեալ՝ լքին զամրացեալ գունդն՝ աճապարել զհետ Կիւրոսի, ել և ելս արարեալ զմիմեամբք – 66.

ԼՈՒՐ ԼԻՆԻԼ - Լուր եղև այս առ քաջն Գուրգէն պարտումն Վասպուրականի ի Տաճկաց և իշխանանալն Վասակայ: - 306.

ԼՌԵԼ - և լռէ վասն Մարեմայ զազգաբանելն: - 16.

ԼՌՈՒԹԻՒՆ - Բանն զմեօք զանց առնէ. և ոչ վայելուչ է լռութեամբ և մոռացկոտ մտօք անփոյթ առնել զայնքան մեծիւ յաղթութեամբ, որ գործեցաւ ի ձեռն զօրացն Վասպուրական ազատանոյն: - 176. զի ոչ իսկ է կարողութիւն լռութեամբ ծածկել թաքուցանել անյայտ առնել զանհուն և զանբաւ վիշտս աղէտս եկեալ հասեալ մեզ:- 240. լռութեամբ և պատճառանօք ոչ կարէին հաճել զմիտս զօրավարին – 234.

ԼՍԱՐԱՆ – Բայց նոքա ոչ վերակնեալք յօրէնս Տեառն, այլ ստացան իւրեանց անունկնդիր լսարանս, զչարագոյնն իժի և զանբժշկականն քարբի, արբեցան գինով յիմարութեանն. ստացան աչս, որովք ոչ տեսանիցեն, և ականջս, որովք ոչ լուիցեն. – 182.

ԼՍԵԼ - ,,Գրեցի ձեզ, ի բաց կալ յայդմանէ, ուրեմն ոչ կամեցարուք լսել, ես զձեզ ապաշաւեմ, ասէ: - 138. ,,են ոչխարք իմ, որ ոչ են յայսմ գաւթէ, և զայն ևս պարտ է ինձ ածել այսր, և ձայնի իմում լուիցեն և եղիցին մի հօտ և մի հովիւ. – 224. ,,և զտանջողացն, ասէ, զճողփիւնն լսէաք, և զհարուածսն եկեալս ի վերայ թիկանցն տեսանէաք – 50. ,,յարուցեալ երթիցես դու ինքնին և քեզէն լուիցես ի նմանէ զոր ինչ ախորժիցէ, և բարձցի ի քէն ապստամբութիւնն, զորմէ կարծեն ապստամբ լինել ի թագաւորէն,,: - 214. Այլ թէպէտ զայս ախորժելով լսէր Պտղոմէոս առ լաւութեան քաջութեան առնն՝ սակայն յայտնել ոչ զօրէր Աղէքսանդրի – 70. Այլ սոքա թէպէտ և յանձն առնուին և մտադիւրութեամբ լսէին նմա սակայն ոչ մեկնեալ լինէին ի ժանդագործ պղծութենէն զազրալից սողոմական ախտիցն – 182. Բայց նոքա ոչ վերակնեալք յօրէնս Տեառն, այլ ստացան իւրեանց անունկնդիր լսարանս, զչարագոյնն իժի և զանբժշկականն քարբի, արբեցան գինով յիմարութեանն. ստացան աչս, որովք ոչ տեսանիցեն, և ականջս, որովք ոչ լուիցեն. – 182. Բայց Յամանիկն իբրև լուաւ ի դարձուցանելն Աշոտի զԱհմաթ լի անարգանօք, և զխորհուրդն զոր խորհեալ էին ի վերայ Հայոց ցրել՝ զօրհասն ի վերայ իւր համարեցաւ տեսանել. – 350. գուցէ յորժամ կատարիցեն զչարիսն զոր խորհեալ են ի վերայ քո, որպէս լուաք ի հաւատարմաց իւրեանց՝ օժանդակութեամբ Արտաշէսի մերժիցեն և զզարմ և զզաւակ քո ի թագաւորութենէ Ասորոց: - 82. Ես իսկ լուայ յորժամ կարդային զԱւետարանն, թէ ասաց Քրիստոս, ,,որ խոստովանեսցի զիս առաջի մարդկան՝ խոստովանեցայց և ես զնա առաջի Հօր իմոյ որ յերկինս է,,. – 222. և լուան ամենեքեան զառնելն քո ընդ իս՝ մի՛ ընդունայն և դատարկ լիցի սիրելութիւն քո առ իս – 218. և հրաման պատուիրանի տայր յանդիման բազմութեանն, զի խրատու նորա լուիցեն, և հրամանի նորա անսայցեն: - 200 Եւ դարձեալ պատասխանի ասէ, մի՛ տալ տեղի՝ լսել հրամանի թագաւորին. թէ վտանգ ինչ հասանէ՝ կրել հանգոյն զինչ կրեցինն: - 132. Եւ եթէ քաղաքս խնդրիցէ՝ ահաւադիկ է քաղաքք մեծամեծք և պարսպաւորք. այլ զանձս խնդրիցէ՝ ասացի թէ տաց որչափ և ձեռն հասանիցէ. և ոչ կամեցաւ լսել, այլ տակաւին ծարաւի է արիւնարբութեան: - 144. Եւ եհարց եթէ դո՞ւ իցես Աշոտ. ասէ այո ես եմ. երկրորդեալ և երրորդեալ և զսոյն լուաւ. – 216. և ի ձէնջ խնդրեցից երիս ինչս, և լուարուք ինձ – ի բաց արարէք յաշխարհէ զսուր և զհուր և զգերութիւն, և յերիցդ օգուտ գտանէք. – 144. Եւ լուաւ տէր աղօթից նոցա, և դարձաւ ի բարկութենէ սրտմտութեան իւրոյ գթութեամբ և ողորմութեամբ, որպէս գրեցին երանելի մարգարէքն: - 314. և հրամայեաց ածել առաջի զկապեալսն, հարցանել և լսել ի նոցանէ: - 242. և մի ի վերայ մեծ յանցանացն զոր յանցեար, որպէս լսեմդ զոր ինչ ամբաստանեն զքէն՝ յայդ ևս յաւելուր - 290. և ոչ ոք կարէր երգել զօրհնութիւն սաղմոսացն և կամ լսել ի գթալից արտասուաց ժողովրդեանն միանգամայն և յայնչափ խնդութենէն: -

154. Եւ որք ոչ այսոցիկ նման՝ լուան ի Տեառնէ՝ մի մնասցէ ոգի իմ ի մարդկանդ յայդմիկ յաւիտեան, վասն լինելոյ դոցա մարմին. այսինքն մարմնասէրք և ոչ հոգիասէրք: - 30. և սաստիկ կսկծեցուցանէր զնոսա բանիւք, ունելով իւր վկայ զԵսայի մարգարէ՝ յասելն, ,,լուարուք, իշխանք Սոդոմայեցւոց, ունկն դիք օրիացն Աստուծոյ ժողովուրդ Գոմորացւոց,,. – 182. Զոր ոչ առ յանձն լսել նոցա. – 120. ի հարկէ լուայ աստուածայնոյ սքանչելի ձայնին որ ի հաւուցն ասացեալ եղև,,: - 52. Ի սոյն աւուրս որք մնացեալ էին ի տանէն Արծրունեաց իբրև լուան զպարտումն զօրացն արքունի ի Ծանարացն՝ ի մի վայր եկեալ գունդ կազմեալ հետևազօրքն մարտակցօք հանդերձ խառնաղանջ ամբոխիւ՝ լինին թուեալ արք Տ – 304. Իբրև լուաւ զայսքան և առաւել քան զսոյնս յանդուգն և առանց երկիւղի զընդդէմ պատասխանատրութիւնն մեծաւ համարձակութեամբ՝ապա հրաման ետ փութով ի կենաց բառնալ զգլուխ նորա սուսերաւ: - 296. իբրև լուայ զայս դողդոջումն և սարսափումն զիս կալեալ յահէ յերկիւղէն եղելոյ. – 52. Իբրև լուաւ Խոսրով արքայ զլուր համբաւոյն այնորիկ՝ շարժեցաւ ի բարկութիւն մեծ, լինել վրէժխնդիր արեանն Մուրկայ: - 140. Իսկ իբրև լուաւ թագաւորն զայս գոյժ աղաղակի հասեալ ի դուռն արքայի՝ մրմռեալ իբրև զառիւծ և իբրև զարջ տարակուսեալ – 180. Իսկ իբրև լուաւ, թէ ահա առեալ Բուխայ զզօրս իւր գալ հասանել ի վերայ նորա՝ հրաման ետ բոլոր աշխարհին իւրոյ ելանել ունել զլեռնակողմն – 276. Լո՛ւր և զարմացի՛ր և աստանօր ևս առաւել, եթէ զիա՞րդ ողորմութիւն բարերարին՝ արդարադատ բարկութեանն յաղթէր – 28. լսէին և նոքա, զի ձայն զօրու է և սաստիկ յոյժ: - 228. Խօսեցաւ ընդ նոսա բանիւք ողոքանօք, և ոչ լուան նմա. – 222. մինչև եկեսցէ նմա պատասխանի ի բուն զօրավարէն, և ոչ լուան աղաչելութեան նորա. – 230. մինչև կատարեցաւ ասացեալն ի ձեռն Եսայեայ մարգարէի, ,,լսելով լուիջիք և մի՛ իմասջիք, տեսանելով տեսջիք և մի՛ գիտաջիք. /ճիշտը՝գիտասջիք/ – 182. մինչև կատարեցաւ ասացեալն ի ձեռն Եսայեայ մարգարէի, ,,լսելով լուիջիք և մի՛ իմասջիք, տեսանելով տեսջիք և մի՛ գիտաջիք. /ճիշտը՝գիտասջիք/ – 182. յայնժամ ահագինս որոտալով ճայթիցէ ի վերայ քո երկինք, և լսիցէ հնչիւն և բոմբիւն և դղրդիւն յանդնդոց, ձայն որոտալոյ սմբակաց բազում ամբոխից երիվարաց և աղաղակ բազում սպառազինաց յարձակեսցին ի վերայ քո. - 148. Յայնժամ իբրև լուաւ բռնաւորն զայս դարձուած պատասխանեաց լի հզօրութեամբ և ահագին մեծաւ անարգութեամբ՝ յոյժ տարակուսանօք լցաւ յանձն իւր, և կայր մեծաւ հիացմամբ ըմբռնեալ. – 280. յորմէ լսէաք խօսս մարդկան հելլենական, և որք խօսէինն ոչ տեսանէաք: - 50. որ կարի սիրելի է ինձ, մանաւանդ թէ յոլովից, կամ թէ ամենայն հաւատացելոց ի Քրիստոս՝ յերկարագոյնս առնել ի ճառիս զդեգերումն շահատակութեան, ձեզ լսել և ինձ գրել: - 76. որ ոչ առին ի միտ լսել զպատուէր սրբոց նախահարցն: - 26. Որում ոչ կամեցեալ լսել Խոսրովայ՝ ասէ. իմ է թագաւորութիւնն այն և ես զորդին Մուրկայ նստուցի թագաւոր - 142. Վասն մարմնաւորացն այնչափ նահատակեցայ, որպէս գիտացերն և որպէս այժմ լսես յինէն, վասն Քրիստոսի և վասն յաւիտենական կենացն ո՞չ մեռանիցիմ, կամ արդեօք ի քէ՞ն երկնչիցիմ. քա՛ւ լիցի. – 296. Քանզի իբրև լուաւ երանելին Զաքարիայ, եթէ ըմբռնեցաւ Գուրգէն՝ փութացաւ և եկն հանդերձ եպիսկոպոսօք աշխարհին. – 320.

ԼՍԵԼԻՔ - և ցուցէք յականէ յանուանէ մի ըստ միոջէ իւրաքանչիւր զվնասս զոր գործեալ եմ, դի՛ք ի լսելիս համագունդ զօրականացս, և մի՛ պատկառէք խօսել զճշմարտութիւնն: - 214. զոր և սուրբքն ասեն, եթէ ձայն դակուացն և բախումն խմբիցն առ ի հեղուսել զփայտսն՝ /28/ այնպէս իբրև յորոտման ամպոյ յամենեցունց հնչէր լսելիս, ի մօտաւորս և ի հեռաւորս, առ ի յերկիւղ և ի զգուշութիւն անզգամ ազգին, թերևս դարձցին և կեցցեն. – 30.

ԼՍՈՂ - և ընդ նմա Գրիգոր որդի Վասակայ, և սա նմանապէս ոգեզուարճ իմաստութեամբ առ լցեալ հոյակապ և անուանի ի մէջ Հայկականացս և ցանկալի լսողացս և ուրախարար տեսողաց. – 344.

ԼՐԲԵԱԼ - բայց սա յերթալ և ի դառնալ իւրում նովին մտօք և նովին մոլորութեամբ վարեցաւ, լրբեալ լի թշուառութեամբ. – 248.

ԼՐԲԵՆԻ - և կանայք կոտորելոցն հանդերձ խառնիճաղանճ ամբոխիւն լրբենի դիմօք, հոլանեալք և ի բաց ընկեցեալ զձև կանացի բնութեան, որպէս օրէն է նոցա, մանաւանդ տաճկական ազանց, և ի հետիոտս դիմեալք ի դուռն արքունի հասանէին: - 180. Վեցերորդ՝ զի խաւարաւ չարեացն պատրուակեալ զոգին, մինչև զԱստուած ևս անգէտ կարծելով՝ լրբենի երեսօք պատասխանէր – 24.

ԼՐԲՈՒԹԻՒՆ - լի թունիւք սատանայական խորհրդոցն, ծածկեալ յաչս իշխանին գառնենի զգեստիւք ի հանդերձս ոչխարաց, և ներքոյքն զապականիչ գայլոցն բերելով զլրբութիւն – 210. որ անցուցանէ զանցանէ զանասնական խառնակութեամբքն երիքովեան և սոդոմական լրբութեամբ, անամօթաբար այր զարամբք բորբոքեալ, դեզադէզ զհրացանն բերելով յերկնուստ զանզրաւ կիզումնն, անցուցեալ զանցուցեալ զսատակչական կործանմանն ջրհեղեղին: - 336.

ԼՐԹՆԱՏԵՍԻԼ -անդ հասեալ քաջացն մերոց եղբարցն երեցունց ազատագունդ սակաւաձեռն գրոհիւ ի ձմեռնային ժամանակի, և ընդ լրթնատեսիլ լուսոյն վազս ի վերայ եղեալ՝ հանին ընդ սուր յոլովս քան թէ սակաւս: - 372.

ԼՐՈՒԹԻՒՆ - եթէ ոչ այլ ինչ յակն ունելեաց բարւոյ ունիցիս ասել, զի՞նչ ինչ բարգաւաճանք քեզ լրութիւն անյագ որովայնին Բէլայ իցէ: - 38. Եւ փոխանակ նորա թագաւորէ Սմբատ որդի Աշոտի, այր քաջայայտ և հանճարեղագոյն, լի և առոյգ յամենայն իրողութիւնս՝ որ ինչ ընդ երկրաւս համառօտաբար լրութիւն պատկանաբար պիտանան, հաճոյ Աստուծոյ և ընտիր մարդկան: - 356. Նոյնպէս և զպայման ժամանակացն յանբաւ բիւրս ամաց ձգեն որ ոչ և ըստ միոյ յեղանակի հաւաստանայ առ ի ցուցումն, ոչ արեգական բերմամբ ի նոյն կէտ ամսոց և աւուրց և ոչ ըստ չորից փոխմանց առ ի յեղումն ժամանակի տարւոյն, այլ և ոչ ըստ լուսնական լրութեանն և սուզականութեան: - 18. ոչ պիտոյացեալ եկամուտ լուսոյ, որով նսեմասցի առ ի հասանել երեկոյին, ոչ ապաժամանութիւն արեգական առ ի մերժել զմութ գիշերի լուսազգեստ ստեղծուածոյն, որ յետ առաջնոցն կարգի և դասու՝ զերկրորդն փոխանորդեցաւ վիճակ, ոչ կերակուր հոսանուտ առ ի լրութիւն տարաբարձ ունակութեանց անապականին, որ դոյզն ինչ փոքրագոյն քան զհրեշտակս գոլ. – 20.

ԼՐՈՒՄՆ - Արդ նոցա այնքան, իսկ մեզ ի մասնէ զբոլորն համառօտեալ ի թիւս միակաց լրման, և զբովանդակութեան ամաց ըստ տասանց եօթներորդացն որ թուոցն է լիագոյն է - 314. Քանզի թէպէտ և տարաժամ լրմամբ ժամանակի չափաբերեալ կենացն Աշոտի՝ հաստատնագոյն և անվրէպ լուծման կենացս առ հոգևորսն և յաւիտենականսն և անվախճան կենացն առաւելութիւնն անցեալ գնացեալ ժամանեաց – 386.

ԼՐՋՄՏՈՒԹԻՒՆ - Եւ սկիզբն արարեալ շինութեան և խաղաղութեան աշխարհիս իրաւադատութեամբ, վերակացութեամբ որբոց և այրեաց, աղքատսիրութեանն լրջմտութեամբ եկեղեցւոյ զարդարմամբ. – 390.

ԼՐՏԵՍ - և լրտեսք քաղաքապետին փութացեալ ասեն, ,,ահա մեկնեալ ի զօրացն զհետ որսոց ինչ յանհոգս յանզգուշութեան գայ ընդ այս ինչ տեղի. - 352.

ԼՑԵԱԼ - Աւելորդ համարիմ մի ըստ միոջէ զանօրէնութիւն քաղաքին ընդ գրով բացայայտել, զառաւելեալն Սոդովմայ և Երիքովի, լցեալ չարագործութեամբք: - 270. Եւ ամենեցուն բերան լցեալ խնդութեամբ ետուն փառս Աստուծոյ: - 136. Եւ այլք մերձ կացեալ առ Դերանիկն՝ ամբաստան լեալ Աշոտոյ կորապաղատէ, որպէս թէ նախանձու լցեալ, և քսութեամբ վարէր ի մէջ հազարապետին, և թէ արկանել ևս ջանայր զնա յիշխանութենէ անտի նորա: - 342. և լցեալ էր լեառնն բազմութեամբ զօրացն – 228. Եւ խնդութեամբ մեծաւ լցեալ զաշխարհս, որպէս զոք ի մեռելոց եկեալ տեսանիցեն: - 372. և կայր երկիրն ի մեծ տարակուսի, լցեալ կասկածանօք չարեացն: - 398. և կայր յօրացեալ բարձրամտեալ լցեալ խարդախութեամբ: - 264. և նոքա ըստ ձախողակի սովորութեանն իւրեանց օրինադրութեանն, արիւնարբու առանց բարւոյ բարեգործութեանցն մանաւանդ թէ լցեալք սատանայական չարութեամբք՝ ձայն արկեալ յամենայն քաղաքսն, խռովեալ ըստ գազանեղէն իւրեանց մոլեգնութեանցն – 398. Յայնժամ մեկնեալ ի նմանէ զօրավարն, լցեալ խորհրդովք չարին հնարագիտութեամբ՝ եկն եմուտ ընդ կողմն Ատրպատական

յԱղբագ գաւառ յերկիրն Վասպուրական – 184. Յորոյ տեղի մատուցին զՅոհան ոմն, այր հեզ և բարեպաշտօն, լցեալ երկիւղիւ Տեառն, պատշաճ առ վերակացութիւն եկեղեցւոյն Քրիստոսի: - 324. Եւ ըստ արժանի վրիժապարտութեանն լցեալ սուր տեառն բարկութեամբ խաղաց /374/ ի վերայ Աւշնի և բանակի նորա առ հասարակ – 376.

ԼՑՈՒՑԱՆԵԼ - և ինքեանք դարձան մեծաւ յաղթութեամբ, մատուցին պատարագս Աստուծոյ և լցուցին զպէտս տնանկաց և աղքատաց այրեաց և որբոց: - 136.

ԼՔԱՆԵԼ - և քակեցին զոռազմն և աւերեցին զճակատն և լքին զմիմեանս, և թողին զպատերազմն և գնացին փախստական ամենայն այր յո՛վ և կարաց զերծանել. - 306. ,,և այս ևս գործ կամ խաղաղութեան կամ պատերազմօք և ելցեն ի գլուխ, միայն զյապաղանացն ի բաց լքցես զդեգերանս,,. – 382. ,,ընդէ՞ր լքանես զձեռն քո և ընդ արութիւն դոցա խառնես վատութիւն և առնես զօրացեալ ի վերայ քո ամենայն աշխարհաց – 282. Եւ այս առ այժմ բաւականացի մտառու ուսումնական անձանց, զանմտացն ի բաց լքանելով զիմացմունս: - 396. Եւ գրէ առ իշխանաց իշխան՝ ի բաց լքանել եթէ ունիցի ինչ անօգուտս խորհել, ապա թէ ոչ՝ տեսից զքեզ, ասէ, ի զէն և յասպազէն և ի ճակատամարտ. – 322. թողուլ լքանել զաշխարհս բազմագաւառս, զամուրս անկասկածելիս – 386. միջնորդեալ հայրապետին երդմամբ ուխտի խաղաղութեան՝ ի բաց լքանել անյիշելի մոռացմամբ զչարեացն գործելոց զվնասս. – 348. Նոքա առ լուրն խնդացեալ՝ լքին զամրացեալ գունդն՝ աճապարել զհետ Կիւրոսի, ել և ելս արարեալ զմիմեամբք – 66. որք յակամայ կամս լքին զմարտն և ցածուցին զպատերազմն և ետուն զամուրն ի Գագիկ: - 362. ստիպեն լքանել թողուլ կրօնս քրիստոնէութեան, հնազանդել պաշտել զօրէնս մազդեզական մոխրապաշտութեանն – 102. Նոքա պատասխանեալ ասեն. ,,վասն զի մեք ի պարսկական հինիցն անդուլ և անպարապ գոլով ի բաց լքաք զկրթութիւնն գրոց սրբոց՝ առ ընտրել զհաւատոց խոստովանութեան կանոնադրութիւն. – 132. Իսկ իբրև տեսին զբազմութիւն պարսկային զօրուն՝ վհատեալ գնդին Հայոց լքին զմիմեանս և գնացին յետս կոյս – 134. նիզակակիցք միմեանց եղեալք երեք տասնեակք թուովն, զսուրբ Երրորդութիւնն յօգնականութիւն /134/ իւրեանց վերաձայնեալ՝ լքին զօգնականութիւն մարդկան. – 136.

ԼՔԱՆԵԼԻ - ոչ յառաջանայր ի բարձր նախագահս ճոխանալ երևելեօքս և /*նստէր* / լքանելեօքս – 94.

ԼՔԱՆԻԼ - - թէպէտ և ոչ համարձակեաց զամենայն բառնալ, այլ յոյժ պատկառանօք ամաչեցեալ՝ լքաւ ի ստութենէ անտի, որ յանդիմանեցաւ ի թղթոյ կայսերն, և ի ձեռն այսորիկ ցուցանէր բարեմտութիւն մեծ առ ազգս /166/ քրիստոնէից. – 168. նոցա ի մտի եդեալ էր, զի թէ գայցէ զհետ կոչնականացն՝ կալցուք զնա և զօրքն նորա լքանիցին, և դիւրաւ յաղթեսցուք նոցա: - 228.

ԼՔԵԱԼ - Այլ սա ի վեց ամին լքեալ ի Կիւրոսէ, և աստ անկեալ կենօք շրջէր մինչև իսպառ բարձաւ թագաւորութիւնն Ասորեստանեայց և Մարաց ի Կիւրոսէ որ թագաւոր …<այստեղ նախադասությունը չի ավարտված>: - 62. Եւ իշխանքն Հայոց կային ի տագնապի և խնդրէին զելս իրացն գտանել ի Քրիստոսէ, յորմէ լքեալն էին: - 320. Եւ քանզի իշխանութիւնն Պարսից յոյժ լքեալ էր՝ և աներկիւղ շինեցին զքաղաքն Մադիամ և բնակեցան ի նմա: - 156. մնաց միայն զօրքն հետևակազօրքն լքեալ առանց առաջնորդի: - 306. Յապուշ կրթին միտք իմ զմտաւ ածել զաղետիցն, խորհրդածել գրել յիշատակարանս. լքեալ լինին ընթացք ձեռացս առ կորովութիւն գրաւորականիս. – 350. նորոգեն և զառաջին արքունիսն լքեալս ի Բէլայ – 60. որով զաստուածերանն լքեալ զերկիր՝ զախտականս զայս և տաժանելիս փոխանորդեաց վիճակ, անբժշկական և ողորմելի յեղափոխմամբ. – 22. Որոց դիպօղ ժամ գտեալ՝ արտաքս ելեալ ի բանակէն, զերծեալք իբրև զայծեամն ի հնարից որսորդաց՝ գնացին խաղաղութեամբ յիւրեանց տեղիս և զնա թողին լքեալ ամօթալից: - 344. Սա հալածեաց զՅոյնս, և գումարեալ զօր բազում գնաց ի վերայ լքեալ թագաւորութեանն Պարսից յերկիրն Պարթևաց, ի վերայ Յազկերտի անուանեալ արքային Պարսից: - 164.

ԼՔՈՒՄՆ - Չորրորդ՝ զի զեղբայր և ոչ զօտար ոք, զոր ոչ երկիւղն Աստուծոյ և ոչ գութ բնութեան մեղկացոյց լքմամբ զձեռս արիւնարբու գազանին: - 24.

Խ

Խ /թիվ՝քառասուն/ – Եւ արդ են մի ըստ միոջէ թագաւորք Ասորեստանեայց այսոքիկ … Սպարեթոս ամս Խ… Ասկատադէս ամս Խ. . . Տետեսայ ամս Խ … Ափրատէս ամս Խ… Թովնոս Կոնկողեռոս, որ կոչի յունարէն Սարդանապաղոս՝ ամս Խ. – 58. և արարին խաւար Վասպուրական աշխարհիս, որ /352/ կեցեալ իշխանին. և էր ամաց Խ յորժամ մեռաւ: - 354. և Խ արամբք ի դիմի հարեալ հազարի միոյ՝ սպան զբազումս ի նոցանէ զընտրելոցն Յունաց – 302. և տևեալ զաւուրս Խ՝ փոխի յաշխարհէս ամենեցուն պատկառելին, մանաւանդ թէ ընդհանուր ցանկալին և սիրելին ճոխից և անազգեաց, աղքատաց և փարթամաց, մեծամեծաց և փոքունց: - 384. և փախստական եղեալ Մահմէտ և Ալի և ընդ նոսա իբրև արք Խ՝ եկին ի քաղաքն Մադիամ – 160. Կաղղիսթենէս, իմ բարեկամ, խրատ ետ ինձ մտանել հանդերձ բարեկամօք Խ, և մանկամբք ճ, և զինուորօք ՌՄ միայնովք: - 50. որք ի միում ժամու սպանան արք Խ, ամենեքեան ի չափ հասակի եկեալ: -152.

ԽԱԲԵԲԱՅ - ,,ընդէ՞ր որպէս մանուկ տղայ համարիս, արկանել առաջի իմ զպատրանս, սնոտի, առասպելաբան, խաբեբայ և պատիր յոյս խոստանալով ինձ՝ հանել զիս ի ճշմարիտ յուսոյն, զոր ի մանկութենէ ի վերայ հասեալ ճշմարտութեանն,,: - 294. ,,ընդէ՞ր որպէս մանուկ տղայ համարիս, արկանել առաջի իմ զպատրանս, սնոտի, առասպելաբան, խաբեբայ և պատիր յոյս խոստանալով ինձ՝ հանել զիս ի ճշմարիտ յուսոյն, զոր ի մանկութենէ ի վերայ հասեալ ճշմարտութեանն,,: - 294. այլ նա ոչ տայր տեղի բանից նորա, քանզի քաջագոյնս գիտէր զբարս նորա խաբեբայս: - 278. Ոչ կարծողականս ինչ ըստ առաջնոցն Բէլայ ասացելում, կամ այլոց ստուերականացն երևեցելոց երազականաց և խաբեբայ դիւաց, այլ ձեռագործ մեռելականս իսկ եցոյց ի պաշտօն – 40.

ԽԱԲԵԼ - Ապա թէ ոչ՝ մի խաբեսցէ զքեզ յոյսն քո սնոտի – 146. Եւ անցանելով ընդ գաւառն Բզնունական գայ մտանէ ի Խլաթ. քանզի կամէր անսալ ժամու դիպողագունի, զի որսայցեն նենգութեամբ խաբել: - 186. և արդ քանզի խօսեցայ ընդ ձեզ բանիւք ողոքանաց՝ և դուք թերևս յայդ գայթակղեալ խաբեցայք և պնդեալ կայք յամառեալ: - 246.

ԽԱԲԷՈՒԹԻՒՆ - ապա հնարաւորեալ պատիր խաբէութեամբ ի կատարումն հասուցանել զխորհիրդոյն /346/ զանհաստատ իմացմունսն, և գնաց եմուտ յամրոցն, և զհիւանդութեան կեղծաւորութիւն մերձ առ մահ եդ առաջի: - 348. Բայց յետ բազում պատերազմացն խորամանկ խաբէութեամբ կոչէ առ ինքն Շապուհ զԱրշակ ի դէմս սիրոյ խաղաղութեան, ոչ ինչ յիշատակ զչարեացն գործելոց ի մէջ առնելով. – 102. Բայց նոքա ի մտի եդեալ էին, թերևս պատիր խաբէութեամբ /170/ կարասցեն բառնալ զնոսա յիւրաքանչիւր տէրութենէ: - 172. զի ուր և իցէ՝ ածցեն զնա առ նա, թէ՛ պատիր խաբէութեամբ և խորամանկ կեղծաւորութեամբ և խարդախութեամբ, կամ պատերազմաւ և մեծամեծ զօրութեամբ, ամենայն պատրաստութեամբ, արքունի կարողութեամբ, որպէս զիարդ և կարասցեն՝ առ նա հասուցանեն: - 224. Իսկ իշխանն Բագարատ … ել գնաց անխիղճ համարձակութեամբ, տիրասէր խորհրդովք, կատարել զսպաս զինուորութեան, ըստ աստուածեղէն պատուիրանին և ըստ թագաւորական հրամանին, զհետ եկելոյ կոչնականացն, ոչինչ

իմացեալ զպատրանս խաբէութեան նորա, որով վրիպեացն: - 186. Իսկ նորա յղեալ առ նոսա դեսպան զԱբդլայ ոմն … տեսանել թէ իցէ՞ հաւատարիմ զոր ինչ խօսին ի ձեռն դեսպանաց, թէ պատիր խաբէութեամբ ջանան կորուսանեն զնա: - 226. մինչ հազիւ թէ ուրեք կարաց նշկահել զսոսա ի պատրանս խաբէութեան և ի նենգութիւն կեղծաւոր խարդախութեան զօրականաց իւրոյ տէրութեանն: - 242. սա ևս աւելի խորհեցաւ չար և պատրանօք խաբէութեան որսացեալ զնախարարս աշխարհիս Հայոց՝ արար հրկէզ զամենեսեան ի քաղաքին Նախճաւան և յաւանին Խրամի, որ է ի ներքոյ Աստապատոյ վանացն, յեզր Երասխայ. – 166. Զայս հրաման պատուիրանի տային յօժնդակութիւնն պատիր խաբէութեանն իւրեանց – 234.

ԽԱԲԿԱՆՔ - քանզի նա խաբկանօք առն մոգի և կախարդի ասաց լինել որդի Ամովնայ և Արամազդայ, այլ ոչ ուրացաւ մահկանացու գոլ: - 36.

ԽԱԲՈՂ - Զոր զթուղթսն խաբող պատրանօք ի բուռն առեալ Բարծումայ՝ ետ տանել առ արքայ Պերոզ – 130.

ԽԱԺՈՒԹԻՒՆ - Իսկ Ապումրուանայ ի պատճառ ոստիկանութեան զմանկականն նոցա պատճառելով խաժութիւն հասակի՝ առ սակաւ սակաւ սկսաւ զամուրսն յինքն գրաւել, զհետ իշխանական ցանկութեանն զերասանակ մտացն ձգեալ - 360.

ԽԱԽՏԵԼ - և եթէ ոք խախտել ջանայ՝ ի հրամանէն Աստուծոյ ոչ ժառանգէ նա զաթոռ իւր և զթագաւորութիւն: - 356.

ԽԱԿՈՒԹԻՒՆ - յապաշաւանս և ի զիղջ առեկեալ ի վերայ երիտասարդական դիւրահոս արագաւէժ առ չարեացն միտեալ խակութիւն: - 386.

ԽԱՂ - բայց զՎասակն յամենայն ժամ իբրև ընդ խաղ ի բուռն առնելով արձակէր խաղաղութեամբ: - 310. բլուր մի պարսպեալ տաճարախիտ շինուածովք, որոյ հայեցածն առ դաշտակողմն ի վայր կոյս բերի, ի խաղս գետոյն Երասխայ – 392. Եւս քաջասրտագոյն Շաւասպ Արծրունի, խաղս ձիընթացիկ արշաւանաց գնդակացն՝ զհետ մտրակեալ հանէ ի նմանէ զգնդակն բազում անգամ ասելով – 114. միայն որսոց և խաղուց պարապ զինքն հաճոյանայր կացուցանել:- 114. շահատակելով գունակ ի խաղս գնդակաց, զսակաւաւորութիւնն իւր հազարաւորս համարելով, քանզի ոչ ունէր աւելի քան զերկու հազարս հեծելոց: - 334. Իսկ սպառնալիք քո և չարչարանք, զոր ասես ի վերայ իմ հասուցանել՝ խաղ մանկտոյ կամ զառանցելոց թուի յաչս իմ, և բանք քո նոյնպէս, որպէս առն անմտի և խելագար և ցնորեալ ծերոյ,,: - 290. Իսկ սպառնալիք քո և չարչարանք, զոր ասես ի վերայ իմ հասուցանել՝ խաղ մանկտոյ կամ զառանցելոց թուի յաչս իմ, և բանք քո նոյնպէս, որպէս առն անմտի և խելագար և ցնորեալ ծերոյ,,: - 290.

ԽԱՂԱԼ - ,,զօր գումարեա, գունդ կազմեա, խաղացո երթալ մտանել յերկիրն Հայոց: - 196. արեգակնային ի վերայ խաղալով ճառագայթաձիգ ճեմականացն, յելս և ի մուտս. – 86. Եթէ, որպէս ասացի, ի բաց գնաս յինէն՝ խաղաղութիւն է, և թէ ոչ՝ պատերազմ և կռիւ և ճակատամարտ … դու խաղալիկ՝ և մեք մանկունք, ի ձեռն առեալ զզօրութիւն քո՝ խաղալով խաղամք ընդ քեզ և ամենայն հպարտութիւն ամբարհաւաճութեան քո. – 280. Եթէ, որպէս ասացի, ի բաց գնաս յինէն՝ խաղաղութիւն է, և թէ ոչ՝ պատերազմ և կռիւ և ճակատամարտ … դու խաղալիկ՝ և մեք մանկունք, ի ձեռն առեալ զզօրութիւն քո՝ խաղալով խաղամք ընդ քեզ և ամենայն հպարտութիւն ամբարհաւաճութեան քո. – 280. Եւ ամիրայն Յիսէ խաղացեալ բազմաձեռն զօրուն՝ յառաջ խաղայ ընդ Աքաղայու կատար ասացեալ բլուրն: - 334. Եւ գումարեալ այնուհետև զանհուն բազմութիւն զօրացն բարձրագոյն քան զառաջինն՝ և ել խաղաց հասանել ի վերայ արևելից աշխարհին – 270. Եւ գունդն Հայոց խաղացին ընդդէմ նոցա, վիմաձև անքակ ի միմեանց ըստ տոհմս ազգաց, ի տանէն Արծրունեաց՝ Գուրգէն և Վասակ և Պելճ և Մուշեղ և Սահակ և Ապումկդէմ և Աշոտ – 230. Եւ եղև իբրև կատարեաց Բուխայ զանցս անցից ընդ Վասպուրական աշխարհս և խաղաց յարևելս կոյս՝ ել գնաց Գուրգէն ի Սպեր գաւառ. – 302. Եւ եղև իբրև կատարեաց Բուխայ զանցս անցից ընդ Վասպուրական աշխարհս և խաղաց յարևելս կոյս՝ ել գնաց Գուրգէն ի Սպեր գաւառ. – 302. Եւ ըստ արժանի վրիժապարտութեանն

լցեալ սուր տեառն բարկութեամբ խաղաց /374/ ի վերայ Աւշնի և բանակի նորա առ հասարակ – 376. և ինքն թագաւոր, փափկասցի, և բռնաւորք խաղալիք նորա, և ինք ընդ ամենայն ամուրս խաղալով խաղասցէ,,: - 200. և ինքն թագաւոր, փափկասցի, և բռնաւորք խաղալիք նորա, և ինք ընդ ամենայն ամուրս խաղալով խաղասցէ,,: - 200. և ինքն Հազարաւուխտ առնու զընտիրս այրուձիոց, զկորովի պատերազմողս ի վառելոցն պարսկային հարստութենէն, և խաղայ գնայ զկողմամբքն Հաշտենից և Ծոփայ, ի վերայ Վահանայ յանկարծօրէն: - 134. և ձմեռնայինն խաղան գնան ի խորագոյն երկիր – 262. Ընդ ժամանակսն ընդ այնոսիկ խաղաց գնաց Արշակ ի մուտս կոյս – 98. Իսկ Ապումուսէ վառեալ և զինեալ զինքն ամենայն զօրութեամբ իւրով՝ խաղաց էջ ի վերայ նոցա և եհար ի հարուածս մեծամեծս – 280. ի գալ միւսոյ ամին … առեալ զօրականս այրուձի կազմութեամբ իբրև Չ խաղաց գնաց երկայնագոյն հեռաւորութեամբ հասանել ի վերայ բանակին պարսկական աղխին – 402. խաղայ իջանէ ի խորագոյն և ի ջերմային վայրս անդնդական խորոցն, ձմեռնանայ անդ – 262. յերկրորդն հարկ է մեզ զոճն կանոնել, որ յետ Նոյի և անդր ազգացն բաժանմունք յառաջ խաղան, ըստ ցեղից ցեղից ի կարգ անկեալ աշխարհաբաժին ցեղակարգութեամբ. – 12. Նա և բազմախոհեմն Կիւրոս Պարսիկ խաղայ գայ իւրովք հեծելազօր մարտակցովքն՝ գալ օգնել Տիգրանայ. – 62. ձկան իմն թուելով ի վերայ մկանաց ալեացն խաղալով – 86.

ԽԱՂԱԼԻԿ - Եթէ, որպէս ասացի, ի բաց գնաս յինէն՝ խաղաղութիւն է, և թէ ոչ՝ պատերազմ և կռիւ և ճակատամարտ … դու խաղալիկ՝ և մեք մանկունք, ի ձեռն առեալ զզօրութիւն քո՝ խաղալով խաղամք ընդ քեզ և ամենայն հպարտութիւն ամբարհաւաճութեան քո. – 280.

ԽԱՂԱԼԻՔ - և ինքն թագաւոր, փափկասցի, և բռնաւորք խաղալիք նորա, և ինք ընդ ամենայն ամուրս խաղալով խաղասցէ,,: - 200.

ԽԱՂԱՂ - գալ իջանել յելից ի ստորոտէ լերինն Վարագայ առջեղեալ ի հարաւոյ ի հիւսիսի ի խաղաղ ընդլայնանիստ գոգաձև դաշտականացսն – 392.

ԽԱՂԱՂԱԿԱՆ - Եւ այսպէս խաղաղեցուցեալ զաշխարհս կէին հեշտալիր խաղաղականօք ըստ կամի ախորժակաց զամենայն ժամանակս կենաց Խոսրովու, որ թագաւորեաց ամս ԽԸ: - 92.

ԽԱՂԱՂԱՆԱԼ - բայց թէպէտ և ետ օգնականութիւն Հայոց կայսրն Վաղէտիանոս Փռիւգացի զօրօքն՝ սակայն ոչ խաղաղանայր երկիրս – 94. Եւ Դերանիկն զօրացեալ զօրութեամբ Քրստոսի, և հոյակապ և անուանի եղեալ ընդ բոլոր աշխարհ Հայաստանեայց՝ և խաղաղանայր երկիրս ի շփոթմանցն ի վերայ եկելոցն: - 318. Եւ ի թագաւորել Արտաշրի խաղաղանայր երկիրս առ վայր մի ի շփոթմանց պարսկական գնդի. – 116. ՎԱՍՆ ԱՆՁԱԻԱՑԵԱՑ ՅՈԻԶՄԱՆՑՆ ԱՇՈՏԻ ԵԻ ԴԱՐՁԵԱԼ ԽԱՂԱՂԱՆԱԼՈՅ – 330.

ԽԱՂԱՂԱՍԷՐ - Այր ոմն Ջափր խրոխտ և ամբարհաւաճ. և սկսաւ եղջիւր ածել անօրէնութեամբ և գոռալով ոգորէր ընդ չորս կողմանս երկրին և նեղեալ տագնապէր զխաղաղասէրս կենօք – 170. բայց զտոհմէն Արծրունեաց ոչ ինչ այլ իմանալ կարացաք, թէ զինչ գործ գործեալ նոցա, բայց միայն զխաղաղասէր կեանս կեալ առ թագաւորն և առ նախարարսն – 96. և ըստ հնարագէտ ազգի իւրեանց խորամանկ կեղծաւորութեամբ, խաղաղասէր դիմօք առ սակաւ սակաւ ջանայր կատարել զկամս չարութեան իւրոյ: - 170. և ի բաց բառնալ յաշխարհէ զշփոթ և զխռովութիւն ի միջոյ խաղաղութեան որպէս օրէն է խաղաղասէր թագաւորաց և թագաւորազանց, իբրև Աստուծոյ կամարարողաց և հաւատարիմ ծառայից տիրասիրաց: - 212. և խաղաղասէր բարեկարգութեամբ հաստատեալ յօրինէ զկարգս աշխարհիս նախարարօքն հանդերձ – 96. զի անպատերազմասէր և խաղաղասէր բարք նոցա յամուր զգուշութեան պահէր զնոսա. – 56. լինել տիրակորոյսք և աշխարհաւերք, բանսարկուք և քսսիչք, խռովասէրք մանաւանդ քան թէ խաղաղասէրք – 210. Որ և յետ մահուանն Զրադաշտին դարձեալ միապետեաց ամենայն արևելեաց Պարսից ի հարկի հնազանդութեան ունելով, խաղաղասէր կենօք ամս ԼԸ. – 56.

ԽԱՂԱՂԱՑԵԱԼ - և կէին յապահովս խաղաղացեալք և հնազանդեալք ընդ պետութեամբ իշխանաց իշխանի: - 322. սոքա բնակին յամուրս լեռնականս, յանհոգս խաղաղացեալք յարտաքին թշնամեաց, և հարկք և հասք արքունի ի յինքեանս մնալով – 274.

ԽԱՂԱՂԱՑՈՒՑԱՆԵԼ - ի մէջ անցեալ սուրբն Ներսէս համոզէ զնոսա և խաղաղացուցանէ զաղմուկն: - 100.

ԽԱՂԱՂԱՑՈՒՑԵԱԼ - և իսկոյն հարեալ զնա այսոյն պղծոյ և ընդ զառիվայր լերինն թաւագլոր խաղաղացուցեալ հարուստ ձգմամբ մինչ ի դաշտավայր տեղին ուր այգեստանքն: - 378.

ԽԱՂԱՂԵՑՈՒՑԱՆԵԼ - և միապետէ զտէրութիւնն Անձաւացեաց և խաղաղեցուցանէ զերկիրն և բնակէ յանհոգս զապահովացեալ ի հինից. շինէ եկեղեցիս և կատարէ տօն նաւակատեաց խաղաղութեան: - 326. և շինեն նախարարքն Հայոց իւրաքանչիւր պալատս արքունականս և դաստակերտս յականաւորս, և զքաղաքն որմափակօք պարսպեն, և խաղաղեցուցանեն զերկիրս: - 126.

ԽԱՂԱՂԵՑՈՒՑԵԱԼ - Եւ այսպէս խաղաղեցուցեալ զաշխարհս կէին հեշտալիր խաղաղականօք ըստ կամի ախորժակաց զամենայն ժամանակս կենաց Խոսրովու, որ թագաւորեաց ամս ԽԸ: - 92.

ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ - զշփոթեալ և զվրդովեալ կարգս աշխարհիս յօրինել առ հանդարտութիւն և խաղաղութիւն յառաջանալ – 388. Յայնժամ իբրև գիտացին երկոքին կողմանքն, եթէ ոչ գոյ հնար գտանել զելս իրացն և տալ խաղաղութիւն՝ ապա հաճեցան և հաւանեցան գրել առ թագաւորն. – 286. Նա և մայր իշխանին Աշոտի, քոյր Սահակայ և Բագարատայ իշխանին Տարաւնոյ… երթեա՛լ ընծայիւք բազմօք յանդիման լինէր Յովսէփայն և խնդրէր զհաշտութիւն և զխաղաղութիւն հաստատել առ որդիսն իւր և առ բոլոր աշխարհին Վասպուրական: - 186. ,,արիք երթայք առ զօրավարն, տեսէք հաւաստի, և ի վերայ հասեալ գիտացուք, թէ ի՞ւ իւիք կարասցուք հաճել զմիտս նորա ի խաղաղութիւն,,: - 214. ,,ես եկի խաղաղութեամբ յարքունուստ հրամանէ, և ոչ նման քեզ զապստամբութիւն ի գործ արկեալ. – 330. ,,և այս ևս գործ կամ խաղաղութեան կամ պատերազմօք և ելցեն ի գլուխ, միայն զյապաղանացն ի բաց լքցես զդեգերանս,,. – 382. այլ ընկալաւ զնա սիրով խաղաղութեան և մեծաշուք պատուով և պարգևօք ըստ հրամանի թագաւորին: - 288. այլ ընկալաւ զնա սիրով խաղաղութեան և մեծաշուք պատուով և պարգևօք ըստ հրամանի թագաւորին: - 288. ասէ. ,,զվրէժ արեանն Մուրկայ /140/ առի ի թշնամոյ նորա արդ կա՛մ եղիցի առնել ընդ իս զխաղաղութիւն և արգելուլ զսուր քո յերկրէ իմմէ,,: - 142. Արդ խօսեաց ընդ իս ի խաղաղութիւն Բայց Աշոտ վերջոտնեալ հանդերձ Վահանաւ՝ եկն եհաս խաղաղութեամբ և բերկրեալ սրտիւ բազմադէմ յերկիր իւր: - 330. Բայց Աւշին որդի Ապուսեճի, քանզի էր այր խոռվասէր, ատեցող զխաղաղութիւն, անյագ առ արբումն արեան մարդկան, և զայն բարգաւաճանս անձին քաջ լաւ համարէր. – 370. Բայց Դերանիկն խօսի ընդ Հասանայ զխաղաղութիւն, խոստանայ առնել զդարձ ամրոցին Սևանի և աշխարհին նորա. – 350. Բայց զի՞նչ իսկ խնդրիցէ թագաւորն ձեր յինէն, որ ոչ առնէ զխաղաղութիւն, բառնա՞լ կամի զթագաւորութիւնս զայս: - 144. բայց զՎասակն յամենայն ժամ իբրև ընդ խաղ ի բուռն առնելով արձակէր խաղաղութեամբ: - 310. Բայց ինքն Դերանիկն ստեաց երդման ուխտի խաղաղութեանն, զոր եդ ի մէջ իւր և ի մէջ Հասանայ – 348. Բայց խռովիչքն ատեցողքն խաղաղութեան ոչ դադարէին նիւթել զհակառակս բարւոյն և զաճմունս չարին. մանաւանդ Վասակ որ զկարծեալ իշխանական անունն յինքեան բերէր:- 310. Բայց յետ բազում պատերազմացն խորամանկ խաբէութեամբ կոչէ առ ինքն Շապուհ զԱրշակ ի դէմս սիրոյ խաղաղութեան, ոչ ինչ յիշատակ զչարեացն գործելոց ի մէջ առնելով. – 102. գնացին առ Ներսէհ արքայ Ասորոց, ընդ իւրեանս ունելով զգիր ուխտի խաղաղութեան Աբգարու և Ներսէհի և զԽուրենէ Արծրունւոյ. – 82. Գրէ Կայսիկն առ թագաւորն՝ խնդրել զխաղաղութիւն, և զոր միանգամ կամիցի՝ եղիցի. յայտնիքն այսպէս, իսկ ծածուկքն՝ որպէս յայտնեցաննն: - 380. Եթէ, որպէս ասացի, ի բաց գնաս յինէն՝ խաղաղութիւն է, և թէ ոչ՝ պատերազմ և կռիւ և ճակատամարտ – 278 Եւ պատասխանի նմա զօրավարն ի խաղաղութիւն, և ասէ – 226.

և զօրք Պարսից որք էին ի կողմանս Պաղեստինացւոց, և զօրավար նոցա անուանեալ Ռազմայուզան որ է Խոռեամ՝ խօսէր ընդ Երուսաղէմի զխաղաղութիւն. – 142. և ագուցեալ զոտս պատրաստութեամբ Աւետարանին խաղաղութեան և սուսեր ընդ մէջ ածեալ զբանն Քրիստոսի, որ հատու է քան զամենայն սուր երկսայրի – 252. և այնպէս անկարօտս առ պիտանացուս հոգ տարեալ՝ գլխաւորեաց որ ինչ շինութեան և խաղաղութեան աշխարհիս նպաստաւոր առ օգտակարագոյնսն պահանջէր գործառնութեան եղանակք – 392. Եւ առաքեաց հրեշտակս մեծապէս զանձիւք և հրովարտակօք առ արքայ Խոսրով, խնդրել ի նմանէ զխաղաղութիւն մեծաւ թախանձանօք – 140. Եւ արդ յայտնի լիցի, զի որչափ բաւէ զօրութիւն իմ և իցեմ կենդանի՝ կացից ընդդէմ զօրութեամբ և ուժով տեառն Աստուծոյ, և ոչ տեսից զքեզ սիրով խաղաղութեան. – 278. և բնակեսցէ խաղաղութեամբ և կացցէ ըստ կամաց իւրոց - 234. Եւ Գուրգէն երկրորդ հրեշտակս յղէ առ նա զայս օրինակ, եթէ ,,ընդ իս հաստատեա զանզրաւ կապակցութիւն ուխտի խաղաղութեան. և ես ապստամբեցայց յԱշոտէ, և ի միասին բաժանեալ զերկիրս կեցցուք յապահովս,,: - 316. Եւ Գուրգէն և Աշոտ առանձին միմեանց պատահեալ ետուն ողջոյն միմեանց և ուխտեցին ուխտ խաղաղութեան մինչև ցայսօր ժամանակի: - 332. և դարձաւ սիրտ նորա ի վերայ նորա սիրով խաղաղութեան. – 308. և դու թէ ոստիկան խաղաղութեան էիր եկեալ յարքունուստ՝ զշինութիւն պարգևաբաշխէիր սոցա, և ոչ զաւերս և զխռովութիւն: - 278. Եւ ես աւասիկ արձակեցից թագաւորին ձերում պատարագս և հրեշտակս հրովարտակօք, խնդրել ի նմանէ զխաղաղութիւն աշխարհի և ընդ իս հաշտութիւն,,: - 144. և երդումն արարեալ ուխտ դիցուք ի մէջ մեր երկոցունց՝ խաղաղութեամբ ունել զթագաւորութիւնն,,: - 152. Եւ զի էր պաշարել նորա յայնժամ զքաղաքն Մանազկերտ Ապահունեաց աշխարհին, որ ի ձեռս Ապլբառայն էր, և ածեալ հասուցեալ մերձ ի պաշարումն. և ի հասանել գուժկանացն եթող զնոսա, տալով նոցա հրովարտակս ի խաղաղութիւն: - 348. և զոր ինչ խնդրիցէ՝ առնիցէ ըստ կամաց նորա, կնքել և տալ նմա գեօղս և ագարակս, և տալ հարկս արքունիս և պատանդս խաղաղութեան: - 210. Եւ թագաւորն յանձն առնոյր զխաղաղութիւնն: - 380. և ի բաց բառնալ յաշխարհէ զշփոթ և զխռովութիւն ի միջոյ խաղաղութեան որպէս օրէն է խաղաղասէր թագաւորաց և թագաւորազանց, իբրև Աստուծոյ կամարարողաց և հաւատարիմ ծառայից տիրասիրաց:- 212. և ինքն անցանելով խաղաղութեամբ ընդ աշխարհն Վասպուրական սակաւատոյժ վնասիւք՝ զպատանդսն ընդ իւր առեալ տանի: - 186. և կալցուք ուխտ խաղաղութեան /136/ ի մէջ մեր երկոցունց, և անշուշտ լիցի այս երդումն և պայման ի մէջ մեր և որդւոց մերոց յետ մեր թագաւորելոյ,,: - 138. Եւ Կաւատ արքայ հաստատեցաւ յաթոռ թագաւորութեան և արար խաղաղութիւն մեծ ընդ կայսեր և ընդ ամենայն երկիր իշխանութեան իւրոյ: - 152. Եւ կոչնականքն ընդ այգն ընդ առաւօտն փութացուցեալ ասեն, ,,եկ, տեսցուք զմիմեանս սիրով խաղաղութեան,,.–352. և միապետէ զտէրութիւնն Անձաւացեաց և խաղաղեցուցանէ զերկիրն և բնակէ յանհոգս զապահովացեալ ի հինից. շինէ եկեղեցիս և կատարէ տօն նաւակատեաց խաղաղութեան: - 326. Եւ մինչ այսպէս կայր աշխարհս յանկարգ խաղաղութեան՝ եհաս լուր գործոյն առ Աւշին և առ իշխանն Աշոտ, եթէ ,,վրդովեալ է երկիրն, և կան ի տարակուսի՝ որք զամուրսն քո ունին. – 362. Եւ մինչ նոքա դեռ չև հասեալ էին մերձ առ գունդն Հայոց՝ փութացաւ զօրավարն Գուրգէն յղեաց դեսպանս առ Ապուհեշմ և որ ընդ նմա զօրագլուխքն՝ աղաչել ի խաղաղութիւն – 230. և մինչդեռ խորհէր արքայ Կաւատ վասն շինութեան աշխարհի և խաղաղութեան՝ եհաս նմա վախճան կենաց և մեռաւ, կեցեալ ամիսս Ջ: - 152. և ոչ առ զխաղաղութիւն մինչև ի Պռոբոս կայսր, որ արար խաղաղութիւն ընդ Արտաշրի: - 94. և ոչ առ զխաղաղութիւն մինչև ի Պռոբոս կայսր, որ արար խաղաղութիւն ընդ Արտաշրի: - 94. Եւ սկիզբն արարեալ շինութեան և խաղաղութեան աշխարհիս իրաւադատութեամբ, վերակացութեամբ որբոց և այրեաց, աղքատսիրութեանն լրջմտութեամբ եկեղեցւոյ զարդարմամբ. – 390. Եւ սրբեալ զերկիրս ի պղծութենէ և ի նենգութենէ նեղութեանցն, իբրև զՅուդայ Մակաբայեցի զԱնտիոքայն սրբելով զանաստուածութիւնն յԻսրայէլէ՝ արար խաղաղութիւն նոցա որոց տիրէրն: -

312. զի երկիր ի շինութեան լինելով և ի խաղաղութեան՝ և հարկք արքունի կանգուն երթիցեն: - 186. զի յանմիետէ կալցի խաղաղութիւն ինքն և աշխարհ իւր – 226. զշինութեան և զխաղաղութեան հայրենի աշխարհի երկասիրաբար հոգ յանձին տանել. – 388. զոր ոչ անփոյթ արարեալ լի բարեմտութեամբ յղփացեալն Աշոտ՝ խօսի ընդ թագաւորին զխաղաղութիւն. – 382. ի քո ձեռս է խաղաղութիւն և խռովութիւն: - 278. Իսկ որք էին արգելեալք ի քաղաքն աղօթականս և պաղատանս առ մեծ իշխանն Աշոտ յղէին, զի համոզեսցէ ի մէջ նոցա զխաղաղութիւն. – 382. Իսկ աշխարհս ոգի առեալ բնակեցան խաղաղութեամբ իւրաքանչիւր ըստ չափոյ հասակի ի մեծամեծաց մինչ ի փոքունս, և գոհացեալ գթութեանցն Աստուծոյ. – 376. Իսկ Գրիգորի ոչ բերելով զընդդիմակացսն նորա կատարել՝ խօսի ընդ նմա սիրով խաղաղութեան, և բաժանել զաշխահս յերկուս՝ տեղի ետուն միմեանց ի խաղաղութիւն: - 310. Իսկ Գրիգորի ոչ բերելով զընդդիմակացսն նորա կատարել՝ խօսի ընդ նմա սիրով խաղաղութեան, և բաժանել զաշխահս յերկուս՝ տեղի ետուն միմեանց ի խաղաղութիւն: - 310. Իսկ Դերանիկն առաւելոյր և առատանայր օր ըստ օրէ առ շինութիւն և խաղաղութիւն աշխարհիս, շինել և տածել և խնամել զաշխարհս: - 338. իսկ թագաւորն Մարկիանոս ընկալաւ զնոսա սիրով ի խաղաղութեան, մեծաշուք պատուով ի բարձ և ի պատիւ յառաջ ածեալ, իբրև զքաջամարտիկ ախոյեանս - 132. Իսկ ի հասանել սրբոյն Սահակայ ի դուռն հանդերձ նախարարօքն՝ զիջանէ ցածնու Վռամ ի բարկութենէ վրէժխնդրութեան Հայոց քինահարութեան անարգանաց Շապհոյ, և ընդ Յունաց զսերտ խաղաղութիւն ունելով.- 116. Իսկ իբրև եհաս Բուխայ զօրօք բազմօք մերձ ի սահմանս նոցա, և գրեաց հրովարտակս դիմօք խաղաղութեան՝ դառնալ սիրով միաբանութեան ի հնազանդութիւն արքային – 274. Իսկ նա փոքր ինչ ժամանակ ներեաց նոցա դիմօք սիրոյ խաղաղութեան, մինչև ի գլուխ ելին որ ինչ յաղագս Ապումուսէին էին հանդէսք. – 296. Իսկ նա փոքր ինչ ժամանակ ներեաց նոցա դիմօք սիրոյ խաղաղութեան, մինչև ի գլուխ ելին որ ինչ յաղագս Ապումուսէին էին հանդէսք. – 296. խորհուրդ չար ի մէջ առեալ և զբարեկամութիւն կեղծաւորեալ, որպէս յերէկն և յեռանդն՝ և յանձն առնուն երթալ առ զօրավարն, խնդրել խաղաղութիւն. – 210. համոզեաց ի մէջ երկոցունց և գլխաւորեաց զխաղաղութիւն /382/ առ նոսա, մինչ գալ Սահակայ եղբօր իշխանին Սիւնեաց, ընդ իւր բերելով զհարկսն: - 384. միայն զի պատահեսցեն միմեանց սիրով խաղաղութեան, և պարգեւօք /գրքում՝պարգևօք/ պատուեալ ի նոցանէ ըստ հրամանի զօրավարին – 226. միայն թէ ընդարձակեսցես մեզ և տոհմի մերոյ, բնակաց երկրի մերոյ՝ մնալ յիւրաքանչիւր տունս բնակութեանց կալ խաղաղութեամբ – 212. միջնորդեալ հայրապետին երդմամբ ուխտի խաղաղութեան՝ ի բաց լքանել անյիշելի մոռացմամբ զչարեացն գործելոց զվնասս. – 348. յորում և ոմն հաւատարիմ Յիսէի Սէմ անուն յառաջ խաղացեալ՝ պատահէ իշխանին, ընդ Վահանայ խորհրդակցեալ խորհել զխաղաղութիւն և զմարտն գրգռեալ ցածուցանել և զվառեալ պատերազմն շիջուցանել. – 334. Նոյնժամայն գնացին Դերանիկն և Գագիկ մտին առաջի Յիսէի, խօսեցան բանս խաղաղութեան, ետուն պատանդս յանձնառութեամբ հարկացն արքունի - 334. ոչ ինչ փոյթ զբազմացուցանելով՝ հեշտասէր և անպատերազմասէր մտօք վարելով կեայր ի խաղաղութեան: - 44. Որոց դիպօղ ժամ գտեալ՝ արտաքս ելեալ ի բանակէն, զերծեալք իբրև զայծեամն ի հնարից որսորդաց՝ գնացին խաղաղութեամբ յիւրեանց տեղիս և զնա թողին լքեալ ամօթալից: - 344. որք քակէին գոլ նոցա ամենայն ուրեք /210/ ուր և դիպէին զմիաբանութիւն ուխտի խաղաղութեան եղբարց և ազգականաց և բարեկամաց: - 212. տուք ի մեզ զերկիրդ մեր խաղաղութեամբ, ապա թէ ոչ առցուք պատերազմաւ, ոչ միայն զայդ, այլ և զայլ ևս բազումս,,: - 162. Կոչէր առ ինքն զիշխանն դիմօք սիրոյ խաղաղութեան, պատճառաւ հարկաց արքունի. – 184. և ի հասանելն նորա անդր թողեալ զհակառակաբար մարտն՝ խօսին ի խաղաղութիւն, առաջի եղեալ զհրամանն արքունի, զգլխաւորին Տաճկաց, և Աշոտի հաւատալ զբոլոր տէրութիւնս Վասպուրականի: - 316.

ԽԱՂԱՑԵԱԼ - Բայց ինքն Բուհայ խաղացեալ զհետ իշխանին – 206. Դարձեալ վերակնեալ յառաւօտինս կոյս խաղացեալ ի Ճուաշոռտ ի Գետս աւան՝ շինէ անդ զվայելչական տեղի

խրախից – 392. ամիրայն Յիսէ խաղացեալ բազմաձեռն զօրուն՝ յառաջ խաղայ ընդ Աքաղայու /ճիշտը՝Աքաղաղու/ կատար ասացեալ բլուրն: - 334. և այնչափ սաստիկ լինէր կոտորածն՝ մինչ զի սաստկութիւն վտակաց արեանն խաղացեալ ոռոգանէր զերկիրն ամենայն: - 140. և անդուստ խաղացեալք ընդ անապատ ճանապարհ գնացաք ի ծովակողմն կոյս – 50. Զկնի այսորիկ յառաջ խաղացեալ Ահմաթ և որ ընդ նմա կայսկազենիցն գունդք, երթեալ մտանել ի քաղաքն Դուին, թերևս կարասցէ ի կատարումն՝ զոր ինչ խորհեցան՝ հասուցանել զչարիսն: - 344. Իսկ վայր խաղացեալ ի Մառականն աւան, առ Կարմիրն կոչեցեալ գետով, որ իջանէ ի գետն Երասխ – 392. իւրաքանչիւր զօրօք գումարեալ, ի մի վայր խաղացեալ՝ գնացին հասին յայն վայր – 174. յորում և ոմն հաւատարիմ Յիսէի Սէմ անուն յառաջ խաղացեալ՝ պատահէ իշխանին, ընդ Վահանայ խորհրդակցեալ խորհել զխաղաղութիւն և զմարտն գրգռեալ ցածուցանել և զվառեալ պատերազմն շիջուցանել. – 334. փոքր ինչ ի վայր խաղացեալ ի տեղին որում Զորք ասեն: - 392.

ԽԱՂԱՅՈՒՄՆ - և անհակառակող հաւանութեամբ հեզահայեաց առ միմեանս սիրոյ յորդորմամբ արտաքոյ վատթարին խոհականաբար մնալով, քաջախորհուրդ առատաբուղխ խաղացմամբ իմաստութեանն զմիմեանս բռնահարելով, զօտարոտին ի բաց վարատելով զբղջախոհութեան անհանճարութիւն՝ զլաւն և զյոյժ օգտակարագոյն ընտրութեամբն գիրկս արկին. – 388. և գոռթ/ճիշտը՝դռոթ/ տուեալ յանձնիւր որջարանաց զօրէն մեղուացն ի մեղուանոցացն արտաքս դիմեալ ի ժամանակս խաղացման ծննդոցն, առաջնորդութեամբ իւրեանց որդնածին առաջնորդին – 398. Յորժամ անդնդական խորքն ազդ առնիցեն ներքին բնական կենդանեացն զհասանել ջերմութեանն, յորում ջեռացեալ ի հիւսիսային սառնամանեաց օդոյն շնչելոյ, ի խորսն զխաղացումն արարեալ լինին - 260.

ԽԱՂԱՅՈՒՅԱՆԵԼ - Բայց ինքն Պապ նշկահեալ զկայսր Թէոդոս, զոր ի բուռն առեալ Տերինտեայ զօրավարին Յունաց՝ խաղացուցանէ կապանօք առ կայսր – 108. ապա ցուցին զտեղին ուր ծածկեալն էր. զոր առեալ վարեցին ի գերութեան, և ոսկի և արծաթ անբաւ խաղացուցին ի դուռն թագաւորին: - 142. եդին զոտս նոցա ի կապանս երկաթիս և բարձին ուղտուց և խաղացուցին ի Սամառայ. – 296. եդին զոտս նոցա ի կապանս երկաթիս և բարձին ուղտուց և խաղացուցին ի Սամառայ. – 296. և խաչանշան լուսով խաղացուցանեն բազմութեամբ նախարարացն Հայոց ի ձեռն Վահանայ Ամատունոյ – 120. և եղեալ ի վերայ ուղտուց խաղացուցին ի Սամառայ – 238. և խաղացուցանեն յԱսպահան, առնուն և զՎաղարշապատ և զԱրտաշատ. – 104 Եւ հասեալ ի վերայ Հայոց՝ նախ զԱշոտ վտարանդեալ այսր խաղացուսցես – 196. Եւ նորա ըմբռնեալ զնա և զամենայն ազգատոհմն նորա ի տանէ Բագրատունեաց և կապեալ երկաթեղէն կապանօք՝ խաղացոյց ի Սամառայ: - 186. զոր յառաջ խաղացուցանելով զբանն՝ ցուցից յիւրում կարգի – 182. զսուրբ եկեղեցիս, զտունս աղօթից քրիստոնէից այրել աւերել հիմն ի վեր տապալել, զքահանայսն նորոյ ուխտի ի սուրս իւրեանց մաշել, զծերս և զպառաւունս մահու սրոյ սպանանել, զերիտասարդս և զկուսանս խաղացուցանել ի գերութիւն, զստացուածս և զինչս վատնել աւարառութեամբ. – 398. յառաջ խաղացուցից զբանսն, արագաքայլ արշաւանօք անցեալ գնացից ընդ շարագրածս անցնիւր պատմագրաց, զազգաբանութիւնն միայն ոճով դրոշմեցից ի շարի աստ – 74. սա իսպառ գերեաց զտասն … <հազար մարդու> <խաղա>ցուցանելով /գրքում՝ցուցանելով/ ի լերինս Մարաց և եբարձ զթագաւորութիւնն … որ և տևեաց ամս ՄԾ: - 60. և այրն այն Յովսէփ զօրավարն Տաճկաց մնայր անցանել ձմերանն, զի ելցէ ի վերայ աշխարհիս Հայոց սրով և գերութեամբ և մեծամեծ հարուածովք և զմեծամեծս աշխարհիս խաղացուցանէ ի գերութիւն – 188.

ԽԱՂՈՂ - և այլ թէ. ,,մի՞թէ /գրքում՝ մի՞թե/ քաղիցեն ի փշոց խաղող կամ ի տատասկէ թուզ,, - 256.

ԽԱՂՏԵԱՑ ՁՈՐ - Դարձեալ գրէ և ի կողմն Դերջանոյ, և Խաղտաց /ճիշտը՝Խաղտեաց/ ձորոյ բնակիչսն և աշխարհակալ տեարս և առ եպիսկոպոսունսն: - 130.

ԽԱՂՏԻՔ - և ինքն գնաց փախստական ի Պարսից ի կողմանս Խաղտեաց: - 106.

ԽԱՅՏԱԼ - ուր հոյլքն էրէոցն խայտան և վայրենեացն խոզից և առիւծուցն մորիքն և երամակք ցռոց պատրաստական առ որսոյն հրճուանք առ ձեռն պատրաստ հոլովին – 392.

ԽԱՅՏԱՌԱԿԵԱԼ - և դարձան կորակնեալք ամօթալից խայտառակեալք, լի ծանականօք և մեծ բեկմամբ: - 276.

ԽԱՅՏԱՌԱԿՈՒԹԻՒՆ - իսկ որք արուք ընդ արուս զխայտառակութիւն գործէին՝ ծծմբախառն հրով բորբոքեցան, զյաւիտենական հրոյն զառհաւատչեայս յինքեանս կրելով – 336.

ԽԱՆԴԱՂԱՏԱՆՔ - Եւ ապա անտի ոչ սակաւ ինչ լինէր յաւուր յայնմիկ ձայն լալոյ, հեղումն արտասուաց յահագին բորբոքմանէ սրտից նոցա և գութ խանդաղատանաց թագաւորին և իշխանացն և զօրացն ամենեցուն և բնակչաց քաղաքին. – 154 և զորդիս ձեր և զմանկունս տեսանելով ի գութ խանդաղատանաց ի գիրկս իմ ընդունէի ընծայիւք մեծաւ զգուանաց, իբրև զառ ի յինէն ծնեալս: - 216. և հարքն ի գութ խանդաղատանաց զպատկերս որդւոց նկարեցին – 40.

ԽԱՆՉԵԼ - Եւ բնակեն առանձին ըստ տունս ազգաց, և այնչափ ի բացեայ են ի միմեանց՝ մինչ թէ ոք յարանց զօրաւորաց ի բարձրաբերձ տեղեաց ուժգին խանչիցէ՝ հազիւ թէ ուրեք կարիցէ առնուլ զբոմբիւն ձայնին, իբրև ի վիմաց ինչ արձագանգ/ք /գրքում՝ արձագան/ լինելոյ կարծիս բերելով – 190.

ԽԱՇԻԼ - Իսկ եթէ Բէլ հրամանատու Արամազդայ իցէ՝ զիա՞րդ իցէ, զի Արամազդ ի գօտոյ իւրմէ խաշիցի հրամանաւ Բէլայ. – 32.

ԽԱՇՆ - և իբրև զպարիսպ անդամանդեայ՝ այնպէս եդին զանձինս ի վերայ բազմութեան գաղթականին աշխարհակոյտ ամբոխիցն, իբրև քաջ հովիւ ի վերայ խաշանց մեռանել յանձն առին: - 230. և իբրև զքաջ հովիւն դրուատեալ ի փրկչէն՝ զանձն իւր եդ ի վերայ խաշանց ընդդէմ ապականարար գայլոցն, յարձակեալ յանխնայ դիմեցուածովք, յարիւն և յապաժոյժ, ի սատակումն և ի ծախումն սրոյ մատնեաց բոլորովիմբ զյարձակեալս նեղիչս աշխարհիս. – 312. և ինքն վիրաւորեալ սրով մեռանի ի գեօղն Գիւղիկ ի Ճուաշ գաւառի, մարտիրոսական հասեալ նահատակութեան, ի վերայ խաշանցն Քրիստոսի տուեալ զանձն ի մահ: - 402. ի ոչ միայն առ շինութիւնն՝ այլ և յարիւն և յապաժոյժ առաքինաբար զանձինս եդեալ ի վերայ խաշանցն մեռանել իբրև զքաջ հովիւ – 392. իբրև զքաջ հովիվ եդեալ զանձն ի վերայ խաշանց մեռանել, նմանակերպեալ պատկերակից լինել որդւոյն Աստուծոյ – 300. իբրև զքաջ հովիվ եդեալ զանձն ի վերայ խաշանց մեռանել, նմանակերպեալ պատկերակից լինել որդւոյն Աստուծոյ – 300.

ԽԱՉ - ,,հրամայեա արձակել արս հաւատարիմս, և ես յորժամ հասից ի դուռն արքունի՝ ի նմին ժամու խնդիր արարից Խաչին, և գտեալ զնա տայց բերել առ քեզ,,: - 154. Այս այն խաչ է զոր վերագոյնն գրեցաք վասն սորա – 394. Եւ առեալ զմանրեալ և զխորտակեալ ի մասունս զԽաչն՝ բերին առ զօրավարն, լուացեալ զարիւն պղծոյն, որ ի վերայ խաչին շաղախեալ կայր ի գլորմանէ այսահարին: - 378. Եւ առեալ զմանրեալ և զխորտակեալ ի մասունս զԽաչն՝ բերին առ զօրավարն, լուացեալ զարիւն պղծոյն, որ ի վերայ խաչին շաղախեալ կայր ի գլորմանէ այսահարին: - 378. և դիմեցին ի մէջ նոցա ի չորս առաջս, ըստ նմանութեան տեառնանման խաչին, և բախեցին զճակատն և պատառեցին զոտազմն և դարձուցին ընդ զառ ի վայրն և իջուցին ի լեռնէ անտի, և հարին ի հարուածս մեծամեծս. – 286. Եւ եկաց սուրբ Խաչն տէրունական յաստուածակերտ քաղաքին մինչև ցմիւսանգամ առածն Երուսաղէմի որ յորդւոցն Իսմայէլի: - 154. և զնշան փրկական Խաչին ի վերայ գլխոցն դրօշմէին – 266. և թէ ի պատերազմին յայնմիկ հասանիցէ զմահուն ընդունել զվճիռ՝ իսկ ըստ յաղթութեանն զխոստովանողականն ժառանգել անուն, զօրանալ զօրութեամբ ի զօրութիւն խաչին Քրիստոսի Աստուծոյ մերոյ: - 400. Եւ կատարեալ Աշոտ զկեանս իւր՝ մեռաւ ի Վանտոսպ գաւառի, ՅԻԳ թուականութեանն Հայոց, յամսեանն հոռի, որ օր Զ էր ամսոյն, յաւուր հինգշաբաթոջ. և տարեալ հանգուցանեն ընդ եղբարս իւր ի վանս սուրբ Խաչին յԱղբագ գաւառի: - 338. Եւ հրամայեաց ածել ոսկերիչ և նորոգեալ նորացոյց զանյաղթ փայտ խաչին Քրիստոսի, մատուցեալ զբեկորսն առ իւրաքանչիւր յօդս, պատեալ մաքուր արծաթով վայելչագոյն քան զառաջինն, ի պարծանս քրիստոնէից

և յամօթ և ի նախատինս թշնամեաց խաչին Քրիստոսի: - 378. Եւ հրամայեաց աձել ոսկերիչ և նորոգեալ նորացոյց զանյաղթ փայտ խաչին Քրիստոսի, մատուցեալ զբեկորսն առ իւրաքանչիւր յօդս, պատեալ մաքուր արծաթով վայելչագոյն քան զառաջինն, ի պարծանս քրիստոնէից և յամօթ և ի նախատինս թշնամեաց խաչին Քրիստոսի: - 378. և ճախր առեալ ի ներքուստ ի վեր ի լեառն Վարագ և երկրպագեալ աստուածազարդ քրիստոսապսակեալ փայտի խաչին Քրիստոսի, պատուանդանի ոտիցն Աստուծոյ - 392. Եւ յետ այսորիկ որդիք նորա Գագիկ և Աշոտ և Գուրգէն կանոնեցին զյիշատակութիւն նոցա ի տօնի սրբոյ Խաչին – 356. Եւ յետ անցանելոյ աւուր, գնացեալ Աշոտ որդի Դերանկին, առեալ զդի նորա՝ տարեալ հանգոյց առ հարս իւր յԱղբակ գաւառի ի վանս սուրբ Խաչին: - 354. և նոյնգունակ զարդու զարդարեաց զնա բուրուառօք արծաթեղինօք և ընտիր և փորձ արծաթագործ դրոշածօք նշանի խաչին Քրիստոսի: - 390. Եւ ոսկեգործ ականակապ կազմեալ՝ պատեաց ոսկով զփրկագործ սուրբ խաչն, և ընդելուզեալ մարգարտով զարդարեաց զսխրագործ փայտն, հիւսնեալ ի մէջ անուշահոտ փայտից, թողեալ մասն ինչ արտաքս ոսկեպատ պահարանին, յառաջնում իւրոյ քառածրագիծ խաչակերտ փայտեղէն զզրոցկանն: - 394. Եւ տարեալ հանգուցանեն զնա ի վանս սուրբ Խաչին յԱղբագ գաւառի: - 310. և տարեալ հանգուցանեն ի նոյն վանս սուրբ Խաչին: - 356. Եւ տարեալ հանգուցանեն ի տեղւոջ հանգստարանացն իւրեանց ի սուրբ Խաչի վանս: - 318. և տիկինն Սեդայ առեալ զդի նորա տարեալ հանգուցանէ ի յԱղբագ ի գեօղն Օսի, ի վանս սուրբ Խաչին: - 384. և քահանայքն բարձեալ ի վեր զսուրբ Աւետարանն և նշանակ իւրեանց կանգնեալ զնշան Խաչին – 232. զի յինքեանս գրաւեալ ընդ հարկաւ ծառայեցուցանէին զպաշտօնեայս սրբոյ Խաչին, մանաւանդ զի և զգլխաւոր վանացն զհայրն, որում Գրիգոր անուանէր՝ զնա կալեալ եդեալ ի խորափոր խաւարային բանտի: - 334. զոր աւանդեցին որդիք թագաւորին յետ մահուան հօր և մօր իւրեանց ի պէտս սուրբ Խաչին Աղթամարայ. – 356. Խորտակէր և զնշան տէրունական Խաչին, զոր ուրեք ուրեք կանգնեալ լինէին. քանզի յոյժ ստիպէր զնա հոգին մոլեկան: - 168. մինչ քաղցրատենչ քունն ի վերայ հասանէր որ զպահպանութիւն գիշերոյն պահէին՝ նորա ամբարձեալ զպղծալից ձեռն ի սրբութիւն սրբոցն և առեալ զսուրբ նշան խաչին Քրիստոսի և ընդ պատուհանն արտաքս ելեալ – 378. Յայնժամ արձակեաց Հայրակղոս արս հաւատարիմս առ Խոռեմ վասն աստուածընկալ սուրբ Խաչին. – 154. շինեալ նորոգեաց և զեկեղեցին որ ի նմա յանուանակոչութիւն սուրբ Աստուածածնին Մարիամայ և զարդարեաց զնա մեծագանձ սպասուք և եդ ի նմա զխաչն, զոր յիշեցաք վերագոյնն, յորոյ ձեռն ծանուցաւ զօրութիւնն հրաշագործ: - 390. ուրացան զանձինս և առին զխաչն Քրիստոսի և գնացին զհետ կոչողին, կորուսին զանձինս, այսինքն զկեանս աշխարհիս, զի զյաւիտենիցն գտցեն զկեանս. – 292. ուրացան զանձինս և առին զխաչն Քրիստոսի և գնացին զհետ կոչողին, կորուսին զանձինս, այսինքն զկեանս աշխարհիս, զի զյաւիտենիցն գտցեն զկեանս. – 292.

ԽԱՉԱԴՐՕՇ - և զԳագիկ ձգեալ ի պատիւ զօրավարութեան Հայոց մեծաց, ըստ օրինի թագաւորացն Յունաց՝ տալ առաջի նորա նշանակս խաչադրօշս: - 370.

ԽԱՉԱԴՐՕՇԵԱԼ - Զոր հրաշազարդեալ մեծագանձ սպասիւք, ոսկեկերտ խաչադրօշեալ ընդելուզեալ մարգարտով և ականբք պատուականօք հրաշագործեալ: - 396.

ԽԱՉԱԿԵՐՏ - Եւ ոսկեգործ ականակապ կազմեալ՝ պատեաց ոսկով զփրկագործ սուրբ խաչն, և ընդելուզեալ մարգարտով զարդարեաց զսխրագործ փայտն, հիւսնեալ ի մէջ անուշահոտ փայտից, թողեալ մասն ինչ արտաքս ոսկեպատ պահարանին, յառաջնում իւրոյ քառածրագիծ խաչակերտ փայտեղէն զզրոցկանն: - 394.

ԽԱՉԱԿԻՑ - զորոյ զպաղատանս ոչ անտես արարեալ Քրիստոսի՝ ներէ նմա հանել ի գլուխ զսուրբ քառասնորդսն, խաչակից լինելով Քրիստոսի, մինչև ի պարտ զատկին – 254. Իսկ նոքա առաւել քան զառաջինն դիմեցին ընդդէմ չարչարանացն խաչակից լինել Քրիստոսի. – 292. Իսկ նոքա առաւել քան զառաջինն դիմեցին ընդդէմ չարչարանացն խաչակից լինել Քրիստոսի. – 292.

ԽԱՉԱՀԱՆ - Իսկ թշուառականն զսատակմանն ընկալաւ զվճիռ, և ի հանդերձելումն զխաչահանուացն հատուցանել զպարտիս: - 378.

ԽԱՉԱՅԱՐԴԱՐ - Եւ յետ խաչայարդար պայծառութեանն իջեալ ի լեռնէն Գագիկ ի ստորոտ լերինն, ուր աբեղայիցն բնակէին սքեմաձևքն: - 394.

ԽԱՉԱՆՇԱՆ - և խաչանշան լուսով խաղացուցանեն բազմութեամբ նախարարացն Հայոց ի ձեռն Վահանայ Ամատունոյ – 120. և փութացոյց վասն նորա զի անյապաղ առ նա հասցէ, և ի մեծ պատիւս հիւպատութեան հասուսցէ զնա, և խաչանշան դրօշիւք ճոխասցի: - 316.

ԽԱՉԵԼՈՒԹԻՒՆ - և յաջմէ սեղանոյն շինեալ ընդ նովիմբ հիմամբ ի տեղի յիշատակարանի խաչելութիւն տեառն Գողգոթայ տեղւոջ – 390. զորս յանդիման Փրկչին կացուցին զառաքեալսն հանդերձ թղթովն Աբգարու, և զխորհրդական պատասխանիսն լուեալ վասն փրկական խաչելութեանն որ վասն աշխարհի - 76.

ԽԱՉԻԿ - Եւ ծնան նորա երիս որդիս, Սարգիս որ և Աշոտ՝ ՅԻԶ թուականութեանն Հայոց, Խաչիկ որ և Գագիկ ՅԻԸ, և Գուրգէն. մանկունք կայտառք և գեղապանծք և բարենշանք և ամենեցուն ցանկալիք. ծնաւ և երկուս դստերս: - 338.

ԽԱՌԱՆ - Բայց ի գնալն Խուրէնայ առ Տիբէր կայսր՝ եթող զորդին իւր զՎաչէ և զեղբայր իւր զԱրշաւիր ի Խառան առ տիկնոջն Հեղինէի. – 80 Եւ զի հուպ առ հուպ են խառն աշխարհք երկոցունցն, և քաղաքն ի հովտաձև դաշտին՝ նպաստաւորէր խոշոշ վիրագին քաջասրտագոյնս լինել: - 352. որք ծանուցեալ զբռնանալն նորա ի վերայ պարսկական պետացն և զինչ կրեցին, զմտաւ ածեալ և զխառն ընդ աշխարհիս զդրակցութիւնն, և թէ գուցէ զպարսկայինն հասանիցէ մեզ կրել և աշխարհիս մեր՝ ձեռն ետուն հաւանութեան ի նորայն կալ մնալ հպատակութեան: - 360. սակայն կանոնական սահմանադրութեանն արտաքոյ մնացեալ, գայթ ի գայթս զքրիստոնէութեանն վարս բերելով անառակութեամբք և արբեցութեամբ, խառն անկողնօք և պղծութեամբք աղտապիղծ սարսափելի և գարշելի խառնակութեամբ արուապղծութեամբք – 336. Քանզի խառն դրակցութեամբ սահմանին առ միմեանս Փոքր Աղբագ և աշխարհն Կորճէից և Պարսկահայոց՝ և հանապազ առ միմեանս զգժտութիւն կեղծաբերէին, մարզպանն և որ զԿորճէիցն ունէին զգործավարութիւն. – 400.

ԽԱՌՆԱԿ - ,,որչափ սաստիկ պատժոց արժանի համարիցիք զայն, որ զՈրդին Աստուծոյ առ ոտն եհար և զարիւն նորոյ ուխտին խառնակ համարեցաւ և զՀոգին շնորհաց թշնամանեաց,,: - 258.

ԽԱՌՆԱԿԵԼ - Զի նոքա վասն ի կանայսն մոլելոյ ընդ դստերսն Կայէնի խառնակելով՝ ջրով կործանեցան. – 336. որում պատուէր տուաւ չխառնակել յանիծեալ զաւակն Կայէնի. -26.

ԽԱՌՆԱԿՈՒԹԻՒՆ - որ անցուցանէ զանցանէ զանասնական խառնակութեամբքն երիքովեան և սոդոմական լրբութեամբ, անամօթաբար այր զարամբք բորբոքեալ, դեզադէզ զհրացանն բերելով յերկնուստ զանզրաւ կիզումնն, անցուցեալ զանցուցեալ զսատակչական կործանմանն ջրհեղեղին: - 336. սակայն կանոնական սահմանադրութեանն արտաքոյ մնացեալ, գայթ ի գայթս զքրիստոնէութեանն վարս բերելով անառակութեամբք և արբեցութեամբ, խառն անկողնօք և պղծութեամբք աղտապիղծ սարսափելի և գարշելի խառնակութեամբ արուապղծութեամբք – 336.

ԽԱՌՆԱԿՈՒՄՆ - Եւ զերկնային պարգևացն որ ի հանդերձելոն խոստացաւ Տէրն, զանպատում և զհրեշտակային նորոգութեան՝ նա ասաց լինել անդ կերակուրք և ըմպելիք ուժգին. զոր և կամեսցի ուտել անյագաբար՝ պատրաստ գտանիցէ, և կանանց կուսից մնացելոց հանապազ անյագաբար խառնակումն: - 164.

ԽԱՌՆԱՂԱՆՃ - Եւ ամենայն մեծամեծքն հանդերձ խառնաղանճ /240/ ամբոխիւն դռոթ տուեալ, ոչ միայն ըստ հրամանի թագաւորին ելանել զհետ աղաղակի փողոյն և արքունի կոչնականացն՝ այլ փութացան տեսանել, թէ ո՛վ ոք և ո՛րպիսիք են սոքա – 242.

ԽԱՌՆԱՂԱՆՋ - զի առ զօրաւորսն զօրաւոր դատաստան առաքէ Աստուած, իսկ խառնաղանջն ներելի ողորմութեան է: - 182. Ի սոյն աւուրս որք մնացեալ էին ի տանէն Արծրունեաց

իբրև լուան զպարտումն զօրացն արքունի ի Ծանարացն՝ ի մի վայր եկեալ գունդ կազմեալ հետևազօրքն մարտակցօք հանդերձ խառնաղանջ ամբոխիւ՝ լինին թուեալ արք S – 304.

ԽԱՌՆԵԱԼ - Այլ և հուր և ծծումբ նաւթիւ բարձեալ ի գործ պատերազմին, և զլոյծ բնութիւնն յանօթս ապակեղէնս եդեալ, և մանր զծծումբն ընդ նմին խառնեալ, եդեալ ի պարսատիկ մեքենայից, և զհուրն առ ընթեր նմին, հնարաւորեալ արկանել զամրոցաւն: - 208. և բանք սրբոյ Ներսէսի ընդ կենդանի բանին Աստուծոյ խառնեալ՝ դիւրագոյնս զհատուցումն արհամարհողացն հատուցանէր յօրհնութիւնս և յանէծս, անյապաղ զգործն կատարելով. – 100.

ԿԱԶՄԵԼ - ,,զօր գումարեա, գունդ կազմեա, խաղացո երթալ մտանել յերկիրն Հայոց: - 196. այլ հրաման տայր զօրացն՝ նաւս կազմել և անցանել ի Կոստանդնուպօլիս: - 146. Եւ Բուխայի իմացեալ որպիսի պատրաստութեամբ կազմի իշխանն Աղուանից՝ տարակուսեր ի միտս իւր. – 278. Եւ եղև իբրև գումարեցան ի մի վայր ամենայն բազմութիւն զօրացն աւելի քան զՄՌ-աց, և կազմեցին ռազմ և կարգեցին ճակատ – 284. Եւ ըստ տոհմս ազգաց, ըստ թուոյ տերանցն Հայոց, կազմեաց գունդս վառեալս զօրականաց, զինեալ և պատրաստեալ. – 296. Եւ ինքն շտապ տագնապէր փութացուցանէր ռազմ բոլորել, կարգել կազմել զճակատն, պատրաստել ի պատերազմ – 228. և ինքն հանդերձեալ կազմել գնալ ընդ արևելս նաւել ի Քաղկեդոն: - 148. և հրաման ետ Գուրգէն իւրում գնդին պատրաստել ի պատերազմ, կազմել ռազմ և տալ ճակատ ընդդէմ այլազգեացն: - 230. Եւ յայտ յանդիման ի վերայ հասանել ոչ կարէր. գունդ կազմել և ճակատ պատրաստել ընդդէմ՝ անվայելուչ էր. – 346. և տայր զօրավարին և իշխանացն ամենեցուն պարգևս մեծամեծս, և բաշխէր զօրացն ամենեցուն դահեկանս ի խոռոկս, և ճաշս և ընթրիսս ուրախութեան կազմէր ամենայն զօրացն մինչև է օր: - 144. զոր կազմեաց իւր սատանայ գործի աջողակ յամենայն արուեստ գիտութիւն խարդախութեան, իբրև զպատշաճ դարան դեղեալ նետիւք ընդ խաւար թռուցելոյ յոգիս խաւարամածս: - 248. զօր գումարել, այրուձի կազմել, մեծամեծաց աշխարհատերանց պարգևս տալ, ի թիկունս և յօգնութիւն զամենեսեան կոչել, զի ըստ յանձնառութեան խրատու նորա նոյնպէս և գործեսցէ: - 346. զօրս գումարէիք, այրուձի կազմէիք, մարտ և պատերազմունս գրգռէիք, ճակատ դնէիք և զզօրս մեր ի սատակումն սրոյ մատնէիք – 244. ի մօտ առ նոսա հասեալ՝ կարգեցին /274/ կազմեցին զճակատն և ետուն պատերազմ ընդ զօրացն Ծանարաց. – 276. հեշտալիր առ զգուշութիւնն յօրինեալ՝ ի խորագոյնս ծովուն զպարիսպն յօրինեալ կազմէ: - 88. մինչ նոքա գունդ առ գունդ ընդդէմ միմեանց ճակատեալ կազմէին զռազմն, և փողքն գոչէին և դրօշքն տարածանէին և նշանքն փողփողէին, վահանաւորքն և նիզակաւորքն գոչէին, այրուձին այսր անդր վազս առնէին և ախոյեանքն յարձակէին, կապարճակիրքն աղեղանցն յուրային: - 174. Նոյ էր ամաց Շ, յորժամ առ հրաման որդւովքն կազմել զտապանն: - 28. Որով ետ հրաման արդարոյն կազմել զտապանն ի գուշակումն անօրինաց կորստեանն: - 28.

ԿԱԶՄՈՒԹԻՒՆ - Եւ այնչափ և առաւել քան զսոյն կազմութեան սպառազէն պատրաստութեանն՝ սաստիկ տարակուսանօք և մեծ երկիւղիւ պակչէին յահէ հայկասիրտ իշխանին և յաղթող նահատակին մեր Աշոտոյ – 210. և գրեթէ /գրքում՝ գրէթէ/

ոչ ամենևին ուրեք երևեցաւ այնպիսի ահաւոր տեսիլ զօրու և սպառազէն կազմութեան՝ ամենայն թագաւորաց, որ կացեալ էին ընդ ծագս տիեզերաց. զորոյ սաստիկ և ահագին որոտումնն և ճայթումնն և փայլիւն զինուցն, և որ ինչ յայնժամ զարդարեալ և զինեալ պատրաստեցան զօրքն Տաճկաց: - 284. և զի մի մի թուիցէ յանուանէ զյաճախութիւն զինուցն և զսպառազէն կազմութեանցն զձիոցն և զհեծելոց նոցա. – 280. Զոր առեալ Ջաջուռ ահիւ և ամենայն պատրաստ կազմութեամբ բնակեցուցանէ ի կողմն Արագածոյ, ի գիւղն Թալին կոչեցեալ. – 76. Իբրև ետես իշխանն Հայոց զզօրսն Տաճկաց եկեալ բազում կազմութեամբ, հայեցեալ և յիւրեանց սակաւութիւնն՝ գիր պաղատանաց փութանակի տայր առ քաջ նահատակն Աշոտ իշխան - 172. Իսկ ի գալ միւսոյ ամին … առեալ զօրականս այրուձի կազմութեամբ իբրև Չ խաղաց գնաց երկայնագոյն հեռաւորութեամբ հասանել ի վերայ բանակին պարսկական աղխին – 402. մեք տացուք զԱշոտ ի ձեռս քո առանց զինու և մարտից և ճակատուց կազմութեան, և մի ինչ յայնոսիկ աշխատ լինիցիս. – 212. ոչ միայն ի տեսիլ խտղտման աչաց և զուարճումն հոտոտելեաց՝ այլ և ի կազմութիւն դեղոյ բժշկական հնարագիւտ իմաստասիրութեանց կազմեալ Ասկղեպեայ վարժմամբն: - 86.

ԿԱԹՈՂԻԿԷ - և ոչ եմ բաւական պատմել զանցս անցիցն կորստականութեանն նոցա մոլորութեան, վրիպել յուղիղ և յամբիծ առաքելաքարոզ դաւանութեան հաւատոց կաթողիկէ եկեղեցւոյ ի Հայր և յՈրդի և ի Հոգին սուրբ. – 240.

ԿԱԹՈՂԻԿՈՍ - Այս շարժումն սաստկագոյն քան որ եղև յամս Զաքարիայի Հայոց կաթողիկոսի, յետ Է ամի գերութեանն Հայոց: - 358. Գործեցաւ այս ՅԽԷ թուականութեանս Հայոց, յորում ամի և տէր Գէորգ Հայոց կաթողիկոս փոխեցաւ: - 376 Գործեցաւ այս ՅԾԱ թուականութեանս Հայոց և ի Դ ամի հայրապետութեանն Յօհաննու Հայոց կաթողիկոսի: - 382. Գուրգէն որդի Ապուպելճի Վասպուրական իշխանի, ի շփոթի ժամանակին Բուխայի և ի հայրապետութեանն Յովհաննու Հայոց կաթողիկոսի, իմաստութեամբ գործեալ՝ ոչ եկաց հակառակ չարին. – 302. և ասէր, թէ ,,զայս ամենայն զոր գրէ կաթողիկոսն Հայոց և առ ապստամբութիւն խորհել առ ի քէն, և զնախարարսն Հայոց զՅունաց թագաւորին խորհել հնազանդութիւն. արդ տեսանել պարտ է վասն այդր,,: - 130. Գուրգէն Արծրունի և Մուշեղ Բագրատունի, և ինքն փութացաւ հանդերձ կաթողիկոսիւն, եկն բանակեցաւ յամուրն մերձ, ուր էր արգելեալ Դերանիկն: - 348. Եւ թագաւորեալ Վռամ որդի Յազկերտի՝ կոչէ ի դուռն զսուրբն Սահակ Հայոց կաթողիկոս: - 116. և թողեալ զընակելն ի Դուինն՝ ելեալ բնակեցաւ ի Նոր քաղաքին ի մեծ եկեղեցւոջն որ յանուն սրբոյն Գրիգորի շինեալ էր երանելւոյ տեառն Ներսիսի երկրորդի Հայոց կաթողիկոսի: - 358. և մեռաւ ՅԼԹ թուականութեանն Հայոց, և ի ԺԵ ամի հայրապետութեանն Գէորգեայ Հայոց կաթողիկոսի: - 356. և ունի յորելեանք Զ և ոլոմպիադր և ընդիքտիոնք, և Գ ամ հայրապետութեան Հայոց կաթողիկոսի տեառն Զաքարիայի, և մուտ եօթներորդ ամի, յորում կային յարքունիսն իշխանքն, ըստ եօթնեկի չափոյ շարժման ժամանակաց. – 312. և փոխեն անդ զկաթողիկոսն Հայոց զԳիւտ – 126. Զայս և առաւել քան զսոյն խրատէր և ուսուցանէր սուրբ հայրապետն և քաջ հովիւն տէր Յոհաննէս կաթողիկոս Հայոց մեծաց: - 182. էր երթեալ ընդ նմա և մեծն Ներսէս կաթողիկոսն /98/ Հայոց. – 100. Ընդ ժամանակս ընդ այնոսիկ էր կացեալ յաթոռ հայրապետութեան տէր Յոհաննէս կաթողիկոս Հայոց: - 180. Ի ժամանակին յայնմիկ էր ճոխացեալ պանծալի աթոռակալութեամբ սրբոյն Գրիգորի տէր Քրիստափոր Հայոց կաթողիկոս. - 130. խնդրեցին իւրեանց կաթողիկոս զսուրբն Սահակ: - 118. մանաւանդ մեծ կաթողիկոսն Հայոց Գէորգ պաղատանս առնէր առ Դերանիկն, զի ընդարձակեսցէ նմա: - 336. ՄԾԹ ամօք յառաջ զսորայս բացայայտեալ զցոյցս յայտնութեանն, յամս Ներսեսի երրորդի Հայոց կաթողիկոսի և Վարդանայ Ռշտունեաց պատրկի և յամի ունելութեանն Տաճկաց զհայկական աշխարհս: - 394.

ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆ - յորում ժամանակի տէր Զաքարիայ ունէր զաթոռ հայրապետութեան Հայոց կաթողիկոսութեան – 310.

ԿԱԼ,ԿԱ/Յ/ - զի թերևս կարասցեն հաճել զմիտս զօրավարին՝ ի քաց կալ ի խորհրդոցն զոր ինչ խորհեալ էր – 210. դիպօղ ժամ գտեալ ի միասին կալով նոցա՝ կալեալ զնոսա տայ յամուրս աշխարհին, կապեալս կապանօք երկաթեօք. – 364. տարան ետուն ի բանտ արքունի, ուր կայր Աշոտ իշխան և այլ նախարարք ի տանէն Արծրունեաց: - 238. ,,Գրեցի ձեզ, ի քաց կալ յայդմանէ, ուրեմն ոչ կամեցարուք լսել, ես զձեզ ապաշաւեմ, ասէ: - 138. ի սկզբան թագաւորութեան նախնեաց մերոց, յորժամ ետ Աստուած զաթոռ բազում թագաւորաց ի ձեռս նոցա, և մինչ առ մեզ հասեալ՝ ոչ ոք զօրեաց կալ ընդդէմ մեր, ոչ ի հեռաւոր աշխարհաց և ոչ ի մերձաւորաց: - 198. ,,որդեակ, ի վախճանելս իմում մի կայցես յայսմ աշխարհի, զի մի կորուսցես զկարգ քո ի մէջ անհաւատից, այլ երթիցես ի կողմանս Եգիպտոսի՝ բնակել ի մէջ բազմութեան եղբարց, զի շահեսցիս զոգիդ քո,,: - 162. ,,քաջք քաջաց պատահեալ՝ անմեղադրելիք կան մնան զյաւակնութեամբքն – 68. ահաւասիկ կամ, մի դանդաղիր կատարել՝ զոր ինչ կամիս առնել,,: - 296. Այլ և Վահան Ամատունեաց գաւառին փախստեայ եկեալ ի ձորն, որ մերձ է յամրոցն, ուր տէրն իւրեանց կայր: - 208. Այլ կորապաղատն Տարունոյ կայր ամրոցին Սևան, որ ի ձեռին Հասանայ որդւոյ Վասակայ ամբարշտի – 346. այլ նա ի նոյն միտս չարախորհրդութեան յամառեալ պնդեալ կայր: - 344. այլ ստիպեսցուք զըմբռնեալսն՝ ի քաց կալ ի հաւատոց քրիստոնէութեանն. – 196. Ապա այնուհետև ոչ կարաց կալ համարձակութեամբ ի բացեայ առնել զբանակն իւր, այլ ետ զկէս զօրուն յոմն գլխաւոր և նստոյց զնա ի կողմանէ հիւսիսի կողմն. – 280. առ սովաւ այլ բազում թագաւորք կացին ի տեղիս տեղիս: - 58. առ սովաւ թագաւորք բազումք կացին ի տեղիս տեղիս: - 58. ասէ ,,երէցդ այդ եկեալ է զհետ գերելոց քրիստոնէիցն՝ հակառակ կալ հրամանաց արքայիդ և օրինաց Մազդեզանց և Արեաց – 104. ասէ՝ զի դայեկաբար զորդիսն Սանատրկոյ սնուցանէաք, և դու ի թագաւորելդ քոյ որոյ երդմունս արարեալ յԱրտեմի և յԱրամազդ անկասկած կալ մնալ վասն որոյ երկիւղն ունէր: - 82. արդ աւասիկ հասեալ կայ և մնայ քո հրամանի. – 304. արդ ահաւասիկ հասեալ /242/ կամք առաջի քո, ինքնակալ թագաւոր իշխեցող կենաց և մահու. – 244. Արդ փութա՛, պնդեա՛, ե՛լ զհետ նոցա, և մի ինչ յայդոսիկ յերկուանայցես, թուլագոյն կալով մնալով յիրիդ յայդմիկ,,: - 184. բայց ընդ Յունաց թագաւորին միայն հնազանդութեամբ նուաճեալ զինքեանս, ի քաց կալով ի հարկատուութենէ Շապհոյ արքայից արքայի. - 96. Բայց Աշխէ ոմն … ոչ եմուտ ընդ նոսա ձեռնամուխ լինել ընդ նոսա ի գործ պատերազմին, այլ կայր ի բացեայ իբրև հազարօք երկուք – 232. Բայց ապա հաճոյ թուիցի ձեզ՝ ի քաց կալ ի դոցանէ և միաբանել ընդ իս. – 138. Բայց երանելիս այս Գէորգ, մինչ կայր ընդդէմ սրոյն և դահիճն ծեծէր իբրև զանզգայ ինչ, և ոչ փոքր մի գիծ կարացեալ հարկանել ի մարմին սրբոյն զխոցումն սրոյն – 266. Բայց մեզ կալ ապաջի ասել վասն Ջափրայ և չար գործոց նորա, անգիրս մնացեալ յայլոց, զոր կատարեաց ի վերայ աշխարհիս Հայոց երկայնագոյն ժամանակաւ և անըմբերելի նեղութեամբ ի մերս հանդիպեալ աւուրս, որ էր Հայոց Յ թուական: - 168. Բայց քանզի ամենայնիւ ամենայն ուրեք ոչ ոք զօրեաց կալ ընդդէմ նորա յամենայն գործս զոր և կամք իւր ախորժէին՝ սկսաւ ձեռնամուխ լինել կարգաւ ընդ բոլոր աշխարհս արևելեայս – 274. Բայց քանզի յերկնուստ էր հասեալ վտանգն, և աստուածառաք էր բարկութիւնն՝ և ոչ ոք զօրեաց և եկաց ընդդէմ նորա ելանել ի պատերազմ, այլ որ եհարն՝ նոյն և բժշկեաց: - 374. Գուրգէն որդի Ապուպելճի Վասպուրական իշխանի, ի շփոթի ժամանակին Բուխայի և ի հայրապետութեանն Յովհաննու Հայոց կաթողիկոսի, իմաստութեամբ գործեալ՝ ոչ եկաց հակառակ չարին. – 302 գուցէ ներհակդ առ ընթեր կալով՝ ի միում ժամու բարկացեալ, և զքեզ ևս վարատիցէ: - 46. դառնալ անդրէն ոչ կամէին, զի կարի սաստիկ ամօթս համարէր զգործեցեալսն, կալ տնել ժուժկալել ընդդէմ նոցա ոչ կամէին, զի բազում անկան ի զօրաց իւրեանց: - 276. Դարձեալ պիտոյ է մեզ դառնալ առ ի վերագոյնսն, որ նախ քան զպատերազմն Աղձնեաց եղեալ են հանգամանք գործոց ի զօրացն Տաճկաց, և թէ ո՛րպէս եկաց ընդդէմ նոցա իշխանն Աշոտ և վանեաց զնոսա սրով սուսերի: - 176. եթէ կացցես ի նմին յամառութեան ի հաւատսդ Յիսուսի որդւոյն Մարիամայ կնոջ հրէի,,: - 294. երկեաւ Վարդան ի

մարզպանէն բնակել յանդորրու, այլ այնր աղագաւ էանց գնաց յամուրսն Մոկաց, և կայր մնայր ի նախախնամութենէ Աստուծոյ այցելել աշխարհիս Հայոց: - 122. Եւ ահաբեկ երկիւղիւ ի բաց կացաք յայնմանէ,,: - 50. և բանակեալ կային ի լերինն որ ի վերայ գեղջն Թուայ, /224/ ի հովիտս նորա, որ կոչի Արեան լիճ. – 226. և յիշատակարան նորա մոլորութեանն որով վրիպեացն և վրիպեալ կործանեաց զազգս բազումս՝ կայ և մնայ ազգաց յազգս մինչև յաւիտեան: - 248. Եւ ահա դարձեալ ասեմ, չկայ ինչ քո. և զի մի կրիցես զոր ինչ խօսեցայ ընդ պատգամաւորս քո, և աւելի քան որոգել ջանար ընդ մեզ՝ զդոյն ընդունիցիս վտանգաւորս,,: - 280. Եւ ահա լոյս սաստիկ իջեալ յերկնից և ցոլացեալ ի վերայ սուրբ մարմնոյն, և շուրջ փակեալ զտեղեաւն, թէ ուրեք յարենէ նորա ցայտեալ կայր: - 224. և ահա հասեալ կայր յատենի առաջի իմ անտրտում և անխռով երեսօք, որպէս անմեղս և զբարեգործակս, և լի ամենայն կամարարութեամբ մեր, անխիղճ համարձակութեամբ – 244. և ամենեքեան որ պահիցեն զշաբաթս իմ և ոչ պղծիցեն, և պահիցեն զպատուիրանս իմ և կացցեն յուխտին իմում՝ տարայց զնոսա ի լեառն սրբութեան իմոյ – 224. Եւ այլքն մի ըստ միոջէ կացին ի կարգի ճակատուն – 232. Եւ ապա փոքր մի կազդուրեալ գնդին Տաճկաց՝ կացին յոտն: - 306. Եւ առ սոսա ասացեալն ի Փրկչէն, ,,ամենայն թագաւորութիւն բաժանեալ յանձն աւերի, և ամենայն քաղաք և տուն բաժանեալ յանձն ոչ /194/ կացցէ,,: - 196. Եւ առեալ զմանրեալ և զխորտակեալ ի մասունս զԽաչն՝ բերին առ զօրավարն, լուացեալ զարիւն պղծոյն, որ ի վերայ խաչին շաղախեալ կայր ի գլորմանէ այսահարին: - 378. Եւ արդ յայտնի լիցի, զի որչափ բաւէ զօրութիւն իմ և իցեմ կենդանի՝ կացից ընդդէմ զօրութեամբ և ուժով տեառն Աստուծոյ, և ոչ տեսից զքեզ սիրով խաղաղութեան. – 278. և արդ քանզի խօսեցայ ընդ ձեզ բանիւք ողոքանաց՝ և դուք թերևս յայդ գայթակղեալ խաբեցայք և պնդեալ կայք յամառեալ: - 246. և բազում և ազգի ազգի հոգաբարձութեամբ տուեալ օգնականութիւնս Հայոց աշխարհիս, շինելով քաղաք Թէոդուպօլիս ի Կարին գաւառի, և զօրս կողմնակալս ի պահեստ՝ ընդդէմ կալ պարսկական յարձակմանցն: - 114. և բնակեսցէ խաղաղութեամբ և կացցէ ըստ կամաց իւրոց - 234. Եւ Բուխայ հրամայեաց սպարապետին, զի աներկիւղ կացցէ մնասցէ Գուրգէն առ սպարապետին մեծաւ շնորհակալիւք: - 304. և գունդք ճակատելոցն ելին կացին մօտ առ քաջն մեր Աշոտ և ընտիր զօրավարն Հայոց առ մեծն իշխանաց: - 210. և դեռ ևս հեծեալ կայր ի նիւս երիվարին, փութացան ի բանակն. – 228. Եւ ելեալ յիւրաքանչիւր տեղեաց մի քան զմի յառաջանալ ի կոչումն Բուխայի, և ժողովեցան ի մի վայրի և եկին կացին առաջի զօրավարին Տաճկաց: - 296. Եւ եկաց սուրբ Խաչն տէրունական յաստուածակերտ քաղաքին մինչև ցմիւսանգամ առածն Երուսաղէմի որ յորդւոցն Իսմայէլի: - 154. և եկեալ եկաց առաջի ոսոխ վիրագին, և տուեալ ողջոյն ըստ սովորութեան նոցա: - 216. և եկեալ կացին մօտ առ Կանգուար բերդ, և պատերազմեալ զամիսս Բ՝ ոչ ինչ գործ ի գլուխ ելեալ ըստ ախորժման. – 332. Եւ եղև ի գալ միւսոյ տարոյն՝ Սմբատ իշխանն Սիւնեաց ի բաց եկաց ի հնազանդութենէ թագաւորին Հայոց, արգել առնելով հարկացն տալ թագաւորին, թևակոխելով Պարսից բռնաւորին հատուցանել զհարկս և զհասս. 382. Եւ եղև ի վախճանելն Խոսրովու Հայոց թագաւորի, որ եկաց ի տերութեանն ամս Դ – 114. Եւ եղև իբրև հասին ի տեղի կատարմանն ասպարիսի նահատակութեանն՝ ծունր եդեալ կային յաղօթս – 266. Եւ եղև մինչ կային իշխանքն ի միաբանութեան առանց կարծեաց կասկածանաց ի հպատակութեան ելեալ յարքունուստ հազարապետին /340/ որդւոյն Հալթի, և զմիաբանական սիրոյն շաղկապ ի միասին յօդեալ պնդեալ անքակ պահէին – 342. և զանուն քաջութեան քո քեզէն կորուսանես, որով ամենայն աշխարհ զարհուրեալ դողաց և ոչ ոք եկաց ընդդէմ քո – 282. և զաչս առ Աստուած համբարձեալ եկաց յաղօթս – 216. Եւ զի Ժ ազգացն շարք առանց ստութեան կան գրեալ յամենայն մատենադարս - 12. և զի հաւասարութիւն երից ազգացն, այսինքն որդւոցն Նոյի, կարգաւ կանոնեալ դրոշմեալ կան յոլովից գիրս ոչ է մեզ հարկաւոր զնոյն երկայնաբանութեամբ երկրորդել: - 12. և զի չզօրեաց կալ ընդդէմ նորա, ահ արկանէր, սպառնայր չար ևս կտտանօք լլկել զնոսա, ոտնատորփ լինելով փոնգայր իբրև զձի

խստերախ: - 270. և զքեզ կորակնեալ ամօթալից ի պարտութիւն մատնիցին, որպէս զյառաջագոյն եկեալ հազարապետն արքունուստ, զի ոչ կարաց կալ ընդդէմ նոցա, և ոչ ճ այր առ Ժ զօրացն Հայոց,,: - 214. Եւ զօրացն քաջալերեալ ընթացան յիւրաքանչիւր զէնսն և հեծեալ յընտիրս երիվարացն՝ կացին ի հանդիպոջ և հանդիսացան գումարեցան ի մի վայր և պնդեցան կարգեցան մածեան հոլովեցան յինքեանս – 230. Եւ զօրքն Հայոց կային դեռ յանհոգս – 228. Եւ զօրքն, որ ելեալ էին զհետ Գուրգինայ՝ եկին հասին ի սահմանս երկրին, ուր կայր Գուրգէն զօրօքն իւրովք – 226. Եւ է զի ի նուրբ և ի հուն տեղիս ջուրցն անկեալ՝ ի նմին խրեալ կան անշարժ, և դիւրաւ անկանիցի ի ձեռս որսորդաց. – 260. և ընկալեալք ի թագաւորէն Արշակայ ըստ գրելոյն ի ձեռն Վահանայ՝ կացին անկասկած: - 98. և թագաւորութիւնն Ասորեստանեայց նուաղեալ՝ բռնակալք ոմանք կացին ի նոցանէ ի կողմանս Դամասկոսի: - 58. Եւ թէ հաստատել ոք կամեսցի՝ անսասանելի կացցէ նա յայսմ աշխարհիս. ամէն: - 356. Եւ թէպէտ տածէր և խնամէր Գագիկ աշխարհս՝ այլ ոչ ուրախ լինէին ի նա ազատատերանցն գրոխք, և կացին ի տարակուսի: - 354. և ի ժամուն յայնմիկ մինչ առաւ ամրոցն և զըմբռնեալսն ստիպէին, զի որք ի բաց կացցեն ի Քրիստոսէ՝ և մի մեռցին – 222. Եւ իբրև կացին նոքա առաջի թագաւորին՝ եհարց հեգնական բանիւք եպերելով լի ամբարհաւաճութեամբ – 242. և ինքն /232/ կայր հեծեալ ի վերայ սպիտակ ձիոյ, և ցանէր զծուխն ընդդէմ թշնամեացն, և օդ քաղցր, որ արկանէր զծուխն զերեսօք նոցա. – 234. և ինքն ամբարձ զձեռս իւր յերկինս, յորդառատ արտասուօք եկաց յաղօթս, ասելով զերեսուն և չորրորդ սաղմոսն և զութսուն երկու – 230. Եւ ինքն զօրավարն Գուրգէն եկաց ի ձախու կողման ճակատուն՝ ի թիկունս լինել գնդին հետևակազօր մարտակցացն – 230. Եւ իշխանքն Հայոց կային ի տագնապի և խնդրէին զելս իրացն գտանել ի Քրիստոսէ, յորմէ լքեալն էին: - 320. Եւ լուեալ կնոջն Սահակայ, թէ ըմբռնեցաւ … փութացաւ գնաց եկաց առաջի Բուխայի, թերևս կարասցէ ըստ պատշաճ գեղոյն և ըստ բազմաձեռն գանձուց ապրեցուցանել զայրն իւր, որ առաւել մահու քան թէ կենաց պատճառ եղև նմա: - 272. և խուռն բոլորեալ գունդն կային մածեալ իբրև զմի այր: - 284. և կալցին զիւրաքանչիւր իշխանութիւն և վայելեսցեն ի պարգևս և ի պատիւս արքունի և կացցեն ի հնազանդութեան թագաւորին: - 296. և կային ի մեծ տարակուսի. – 276. և կայր աշխարհս ի մեծ վտանգաւոր աղէտս: - 126. և կայր դեռ ևս մեծաւ ուժով, և գոհութեամբ ընդունէր զեկեալ ի վերայ նորա չարչարանս վասն սիրոյն Քրիստոսի: - 290. և կայր երկիրն ի մեծ տարակուսի, լցեալ կասկածանօք չարեացն: - 398. Եւ կայր զյօնսն պռզտեալ, կոկոզաբանէր լի յոխորտանօք, խրոխտայր, եռացուցանէր ի վեր մղէր զդառնութիւն ժահահոտ մաղձոյն չարաթոյն վատախառնութեանն – 242. և կայր յօրացեալ բարձրամտեալ լցեալ խարդախութեամբ: - 264. և կարգեցին ճակատս և ռազմ բոլորեցին, և վահանաւորքն փակեցին զառաջակողմն ճակատուն և կացին ի թիկանց հետևակազօր նահատակացն. – 306. Եւ կացին եպիսկոպոսապետք Հայոց յետ մահու սրբոյն Ներսէսի ոմանք ի զաւակէ Աղբիանոսի եպիսկոպոսի Բզնունեաց, առն պատուականի, Շահակ և Զաւէն և Ասպուրակէս – 108. և կացին մնացեալ անդր մինչև ի դարձն Արտաշէսի որդւոյ Սանատրկոյ, որ եկեալ այսր թագաւորեաց, սպանեալ զԵրուանդ: - 82. և կացցէ ինքն և իւրքն ամենեքեան ի հնազանդութեան արքունի, ի հարկս և ի հասս չափոյ սակի արքունական աւանդութեանց: - 226. և հարցեալ ցնա յաղագս մահուանն Յովսէփու ի վրէժխնդրութեանն աղագս երկրորդ նահատակութեան նորա, որ եկաց ընդդէմ զօրավարին, յուշ առնելով նմա զապստամբութենէ և ընդխառնելոյ նորա ի վնասս արքունի – 294. Եւ հրամայեաց աճել զնա յատեանն, ուր կային միաբան ժողով զօրագլխացն: - 290. և ձմեռնային եղանակն առ դուրս հասեալ կայցէ – 260. և մեծաւ աշխատութեամբ և ի բազում ժամանակաց փոյթ յանձին կալեալ անդուլ զցայգ և զցերեկ ի մեծ տարակուսանս ըմբռնեալ կայր վարանեալ – 242. Եւ մինչ այսպէս կայր աշխարհս յանկարգ խաղաղութեան՝ եհաս լուր գործոյն առ Աւշին և առ իշխանն Աշոտ, եթէ ,,վրդովեալ է երկիրն, և կան ի տարակուսի՝ որք զամուրսն քո ունին. – 362. Եւ մինչ այսպէս կայր աշխարհս յանկարգ խաղաղութեան՝ եհաս լուր գործոյն առ Աւշին և առ

իշխանն Աշոտ, եթէ ,,վրդովեալ է երկիրն, և կան ի տարակուսի՝ որք զամուրսն քո ունին. – 362. Եւ մինչ նոքա կային մնային հրաման ինչ ընդունել յարքունուստ՝ /286/ դարձան հրեշտակքն և եկին փութանակի, և բերին թուղթ յարքայէ առ Ապումուսէ՝ գալ ի հնազանդութիւն նոցա և երթալ առ Բուխայ. – 288. և մինչ նոքա կարծեցին, թէ ի ձեռն նոցա մատնեցան՝ և նոքա կային յաղօթս և զԱստուած կարդային օգնել նոցա. – 286. Եւ մինչդեռ կային կենդանի և գոհանային զՔրիստոսէ զանյաղթ զօրութենէն զոր զօրացոյց զսուրբսն մեծ ասպարիսի ի հոգևորական պատերազմին՝ ևս առաւել բարկացեալ թագաւորն՝ իբրև զինոց վառեալ բորբոքէր. – 292. Եւ մօտ առ սոցա կայ լեառն Կաւկասու, յորում բնակեն ազգք յամենայն լեզուաց բաժանեալք, ըստ ազգս ՀԲ ազգացն, և կեան առանց առաջնորդի, և օրէնս անձանց ունին ամենայն ոք որ զինչ կամի, և ընդ մայրս և ընդ քոյրս ամուսնանալ: - 274. և յաւիտենական և անսպառ և անվախճան են կեանքն և պարգևքն, զոր պատրաստեաց Աստուած սիրելեաց իւրոց և որք կան համբերութեամբ ի հաւատս ճշմարտութեանն. – 264. Եւ յորդորականիւ հրաժարեցուցանէր զնոսա ի բաց կալ յապիրատ և ի վնասակար գործոցն զոր գործէին – 182. Եւ նա ևս քան զևս պնդեալ հաստատեալ կայր ի հաւատս, ի սէր և ի յոյսն Քրիստոսի. – 318. Եւ նահապետացն արդարոցն անդէն և ի նոյն կալով՝ անդ և վախճանեցան – 30. և նմին հատուցումն ի կարգի որ ասէ, ,,կացո ի վերայ նոցա մեղաւոր, սատանայ կացցէ ընդ աջմէ նորա,, , և որ ինչ ի կարգ սաղմոսիդ է: - 214. և նմին հատուցումն ի կարգի որ ասէ, ,,կացո ի վերայ նոցա մեղաւոր, սատանայ կացցէ ընդ աջմէ նորա,, , և որ ինչ ի կարգ սաղմոսիդ է: - 214. Եւ նոյնժամայն եհաս հրաման յարքունուստ՝մի տաղտկալ և վհատել և մի ի բաց կալ պատերազմել ընդ նմա. մինչև եկեսցէ ակամայ կամօք ի հնազանդութիւն արքայի: - 284. և նորա համբարձեալ զձեռս իւր յերկինս յաղօթս կալ, զի կարասցէ յաղթել նահատակութեամբ – 296. Եւ նուազեալ ազգին Արծրունեաց ոչ ոք մնաց, բայց միայն մանուկ մի Համամ անուն, որդի Արշաւիրի ծերոյ եղբօր Խուրէնայ, որ կայր ի դրան արքունի – 90. և նոքա կային անշարժ, և ոչ ել /284/ այր քան զընկեր յառաջ. – 286. և նոքա կային մեծաւ ուժով և գոհանային զանբաւ և զառատաշնորհ պարգևացն Քրիստոսի, որ արժանի արար զնոսա մեռանել վասն անուանն Քրիստոսի և առնուլ զմարտիրոսական պսակն: - 292. Եւ նստէր անդ ի բացեայ ի վերայ բլրի միոջ տէր Մուշեղ որդի սպարապետին և կայր հիացեալ ահեղ և մեծ զարմացմամբ: - 284. Եւ ոչ ոք գտանէր ամենևին ի կողմանէ /174/ թշնամեացն որ կարէր կալ ընդդէմ նոցա, և ոչ մի ոք. – 176. և ոչ ոք կարէր կալ յակաստանի, ունել զժառանգութիւն հայրենի – 94. և որ ինչ ի նմանէ կան պահին պարգևք կացելոյն ի ճշմարտութեան հաւատս, և տանջանք ուրացելոցն և յետս կացելոցն - 206. և ունի յոբելեանք Զ և ոլոմպիադր և ընդիքտիոնք, և Գ ամ հայրապետութեան Հայոց կաթողիկոսի տեառն Զաքարիայի, և մուտ եօթներորդ ամի, յորում կային յարքունիսն իշխանքն, ըստ եօթնեկի չափոյ շարժման ժամանակաց. – 312. և Սահակայ յղեալ առ Սմբատ՝ մի կալ մնալ ի լերինն, այլ փութալ ելանել դառնալ անդրէն ի հետևի զօրս անդ զի ոչ ելանէ, ասէ, Երուանդ զօրու ի սահմանս Մարաց. – 84. զի այնու դիւրաւ կարասցեն հերքել մերժել ի բաց կալ ի սուրբ հաւատոյ պարկեշտ կրօնից քրիստոնէութեան: - 124. զի անտի և անտի ի բաց կացցեն /12/ տարակուսական մտածութեանց ծուփս խորհրդոց ի քումմէ հանճարեղ խոհականալիր բանգիտութենէ: - 14. զի ասեն, թէ նոքա ի միջոյ բառնայցեն՝ ոչ ոք կարասցէ կալ ի կայի իւրում ունել զդէմ մեր: - 184. զի Գագիկ անցեալ ամրանայր ի Ճախուկ բերդի, ի կասկածի կալով ի Դերանկէն, ըստ զեկուցմանն զոր ինչ գործեաց Հասան առ Դերանիկն: - 350. զի ես տաց ձեզ բերան և իմաստութիւն, որում ոչ կարիցեն կալ հակառակ կամ տալ պատասպանի ամենայն հակառակորդքն ձեր,,: - 204. զի մի ամենևին ոք կայցէ յակաստանի, մանաւանդ զի ոչ ոք տևեաց ընդդիմանալ ձեռին նորա. – 296. Զի մինչ այսպէս կայր աշխարհս ի տարակուսի, և ակն ունէին գթութեանցն Աստուծոյ առատանալ, որպէս սովոր է Աստուած ի բարկութեան զողորմութիւն յիշել. - 374. զի մինչ ընդխոնեցաւ պատերազմն և դէմ առ դէմ ճակատէին՝ յանկարծակի այր մի ի նմանութիւն լուսոյ եկն եկաց ի մէջ

ռազմի ճակատուն – 232. զի ոչ ոք զօրեաց կալ ընդդէմ նորա: - 262. զոր առաջնոցն մատենագրեալ դրոշմեալ կայ ի գիրս ընդ ժամանակս ժամանակս սոցա քաջարութիւնք և արժանաւորք յոլովագունի և մեծամեծաց գովութեանց: - 96. Զոր առեալ զարսն ստիպեաց ի բաց կալ յերկրպագութենէն Քրիստոսի, և պատուի և պարգևաց արժանի լինել ի նմանէ, և մի չարաչար տանջանօք մեռանել: - 222. թերևս արտաքոյ տանջանացն կայցեն մնայցեն, թէպէտ և ոչ ընդ փեսային վայելեն ի հարսանիսն: - 338. Ի դառնալն Բուխայի յարքունիսն, և կայր զյօնսն պոզտեալ, փքացեալ լի ամբարտաւանութեամբ՝ կոկոզաբանէր ի վերայ մեծամեծ գործոցն գործելոց – 326. Իբրև ստուգեցաւ որ ինչ եղեալն էր՝ փութացան խնդրել ի քաղաքին և ի կիրճս ճանապարհին, յոր կողմ և աճապարեաց ոք, մինչ անցեալ գտին զհարեալն դիւի չարի, զի կայր դեռ կիսամեռ: - 378. Իսկ սուրբն ելեալ հանդերձ դահճօքն ի տեղի ասպարիսի կատարմանն երկնաւոր նահատակութեանն՝ ի ծունր իջեալ կայր յաղօթս – 206. Իսկ առաւելեալն իմաստութեամբ Աշոտ ոչ յանհոգս և յաներկիւղս կայր մնայր, այլ զգուշանալ հրամայէր ի խելս կամրջաց և յանապատս և ի կիրճս ձորոց: - 340. Իսկ երանելի եպիսկոպոսին Յոհաննու ընտրեալ իւր առանձնակ միայնաստան տեղեակ, աղօթից միայն պարապեալ, ի բաց կալով յեպիսկոպոսական հովուապետութենէ: - 324. Իսկ զօրավարն Բուխայ կայր ի կոր կործանմանն, ի տարակուսանս ըմբռնեալ փղձկէր ի միտս իւր, ցնորակոծ լինէր, հնարէր ելս իրացն գտանել ի վրանայարկն փակեալ, և ոչ առնոյր դուլ և դադար: - 282. Իսկ իբրև եմուտ տիկինն ի բանակն և եկաց առաջի զօրավարին՝ խօսեցաւ ընդ նմա ըստ պատշաճի իրացն յոր պէտս չոգան: - 226. Իսկ իբրև ընթերցաւ զօրավարն Աղուանից զթուղթ թագաւորին՝ փութացաւ էջ ի լեռնէ անտի և եկն եկաց առաջի Բուխայի. – 288. Իսկ իշխանն Աշոտ և իշխանն Մոկաց և զօրքն Անձաւացեաց քաջագոյնս արիացան կացին յոտնկայի. – 380. Իսկ իշխանն ելեալ կայր ի վերայ պարսպին – 210. Իսկ Խուրան լուեալ վասն տիկնոջն Հայոց Հեղինէի կնոջ Աբգարու, թէ ոչ ախորժեաց կալ ի Միջագետս վասն ամբարշտին Սանատրկոյ – 80. իսկ որպէս գրեալ հաստատեալ կայ հաւատարմապէս վարդապետացս քաջաբան և լի իմաստութեամբ շարագրածք հրաշափառագոյնք: - 122. Իսկ սերունդք Ասուդայ Սանասարեանց կային յոր պէտս և դիպուածն պատահէր, երբեմն այսպէս և երբեմն այնպէս. Շաւարշ. Գօգեան. Շաւասպ. Պերոզ. Շահակ. Կիւրոս: - 72. Կեցեալ անդ ամս բազումս մեռանի յԵգիպտոս և կայ անդէն: - 70. Հասեալ կային յանդիման մեծազաւրին Աստուծոյ: - 164. հրախառն տոչորմամբ եռացեալ շուրջ զսրտիւն արիւնն՝ մաղձախառն բերմամբ յապուշ զմիտսն կրթեալ՝ կայր ի մէջ տարակուսի – 180. Ձեռնամուխ եղեն ի գործ պատերազմին և քահանայքն, որ կային ի բազմութեան գաղթականին – 232. մեք ոչ ի բաց կամք ի սիրոյն Քրիստոսի և ոչ մեկնիմք ի կենացն յաւիտենից և ոչ լինիմք ժառանգորդ յաւիտենական տանջանացն,,: - 292. միայն զմի ոմն կացուցանեն տիրել ի վերայ իւրեանց ըստ կամս անձանց իւրեանց, և միաբան և միախորհ կան և կեան առ միմեանս, և բնակեն ըստ ազգս ազգս, բացագոյն ի միմեանց: - 274. միայն թէ ընդարձակեսցես մեզ և տոհմի մերոյ, բնակաց երկրի մերոյ՝ մնալ յիւրաքանչիւր տունս բնակութեանց կալ խաղաղութեամբ – 212. միայն միաբանութեամբ սրտիւ կացցուք ապաւինեալ յօգնականութիւնն Աստուծոյ. – 276. մինչ այնքան շքեղութիւն մեծարանօք յղփացեալ յօրացեալ կայր հազարապետն – 344. մինչ կալ մնալ միայն երեսուն արանց ընդ քաջին Վահանայ, Մերշապուհ և Յաշկուր Արծրունիք, և Կամսարն Ներսէհ, և ի տանէն Ամատունեաց՝ զորոց զանուանսն անգիտանամ – 134. մինչ կային ի բանտի իշխանն և որք ընդ նմա ազգատոհմիք և այլովք օտարազգօք – 240. մինչ կային ի կապանսն իշխանն և նախարարքն իւրաքանչիւր ընտանեօք – 220. Մինչդեռ կայր ևս կենդանի՝ ետ կանգնել փայտ մի մեծ և բարձր յոյժ, և դնել զնա ի ծայր փայտին, ունել ի բարձրաւանդակ տեղւոջ. – 290. մտեալ Վահան աղերսէր համոզէր՝ մի կալ մնալ, մինչ զքաջանունութիւնն ընդ վատասրտութիւն կարծել յոմանց խառնել, թէպէտ և անկարծ վարկանէր զկեղակարծն: - 328. Յայնժամ իբրև լուաւ բռնաւորն զայս դարձուած պատասխանեաց լի հզօրութեամբ և ահագին մեծաւ անարգութեամբ՝ յոյժ

տարակուսանօք լցաւ յանձն իւր, և կայր մեծաւ հիացմամբ ըմբռնեալ. – 280. Յայնժամ համարձակեալ եմուտ յատեան բռնաւորին և եկաց առաջի զօրավարին աներկիւղ համարձակութեամբ առանց պատկառանաց, և ասէ – 218. յեղակարծում հանգստեամբ դիմեալ ի վերայ նոցա, քանզի նոքա կային յանհոգս – 402. Յետ այսորիկ կաց ի գլխաւորութիւն տաճկաց Ամր, որդի Հատապայ ամս Ի և ամիսս Ջ: - 164. յերկուս կողմանս բաժանեալ զնայեցուած խորհրդոցն, և կայր կեղծաւորութեամբ անհաստատագոյն և անօգուտ հնարիմացութեամբ, ընդ քրիստոնեայսն քրիստոնեայ և ընդ պարսկականսն զնոցայսն կեղծաւորէր: - 112. յորոց ձեռս հաստատեալ կաց մահ և կեանք: - 236. նա և կենդանականն որ ի նմա՝ ոչ ի բարի ինչ, այլ զի անհրաժեշտ չարին կալով անմահականս չարչարեսցի: - 22. Նահատակք ոմանք կային յայնժամ ելեալ յարգելանէն ընդ կալանաւորսն – 220. Նորա զերկիր նկատեալ՝ ոչ ունէր նայել ի վեր, կայր կորակնեալ, ոչ ունել ոյժ պնդութեանն, զօրհասն ի վերայ իւր գուշակէր եկեալ հասեալ: - 344 նորին հրահանգեալ կրթարանի ուսումնասիրութեանն վարժիւք ոռոգացեալ, այր քաղցրաբարոյ և հեզահայեաց, հասարակաբար առ հասարակ զինքն վարկանելով, արտաքոյ ամբարտաւանական բարձրայօնութեանն՝ կալով յաշտիճան հեզոցն, դրուատեալ ի փրկչէն մերմէ Յիսուսէ Քրիստոսէ: - 376. ոչ ստեղծեալ յումեքէ, այլ որպէս երևիդ՝ նոյնպէս էր. և կաց մնայ, և զմարդ ինքնածին: - 48. որ արտաքոյ պարսպեալ բուրաստանին արքունի կացցէ: - 52. որոյ ոսկերքն ընդ այլ սուրբսն հանգուցեալ կան ի վանսն Յադամակերտոյ: - 134. Որպէս կաց և այս ի գիրս տեսութեանն Յովելեայ մարգարէի: - 240. որք ծանուցեալ զբռնանալն նորա ի վերայ պարսկական պետացն և զինչ կրեցին, զմտաւ ածեալ և զխառն ընդ աշխարհիս զդրակցութիւնն, և թէ գուցէ զպարսկայինն հասանիցէ մեզ կրել և աշխարհիս մեր՝ ձեռն ետուն հաւանութեան ի նորայն կալ մնալ հպատակութեան: - 360. սա այն է, որ մինչ յելանելն Բուխայի ի սկզբանն մտանելոյ նորա ի Հայս՝ եկաց ընդդէմ նորա բնակչօք լերինն և հարուածս մեծամեծս հասոյց ի վերայ զօրացն արքունի. – 294. սա առաջին ի տանէն Բագրատունեաց եկեալ կաց նա զայսու կողմամբ Այրարատեան նահանգի: - 76. սուրբքն ոչ եթէ զերևելի տեղիս ախորժեն, զի թէ ոչ այսպէս, ո՞չ նոքա զնեղ և զանձուկ կեանս կան մահու չափ,,: - 100. Քանզի յոյժ պատկառ կայր ի պաշտօնատարութիւն հայրապետին իշխանն Տարունոյ, և նա սաստիկս հոգայր վասն նորա, թէպէտ ոչ օգտէր յիրին յայնմիկ: - 346. և կանգնեցին պատնէշ և կուտեցին քարինս և կանգնեցին մեքենայս և կացին ի պատրաստութեան: - 280 իսկ իբրև ընդդէմ կացին լեռնայնոցն գունդքն Տաճկաց և հարին զլեռնայինսն՝ ձերբակալ արարեալ զերանելին Յովնան տարան ետուն կապանօք ի բանդ արքունի: - 294.

ԿԱԼԱՆԱՒՈՐ - Նահատակք ոմանք կային յայնժամ ելեալ յարգելանէն ընդ կալանաւորսն – 220.

ԿԱԼԵԱԼ - դիպող ժամ գտեալ ի միասին կալով նոցա՝ կալեալ զնոսա տայ յամուրս աշխարհին, կապեալս կապանօք երկաթեօք. – 364. Եւ կալեալ Արշակայ զթագաւորութիւնն ամս ԼՋ՝ վախճանի ըստ օրինակի ասացելոց: - 104. Բայց Դերենիկն կալեալ զնա պահէ ի զգուշութեան, ոչ ինչ ստնանել նմա, բաց ի կապանացն յորս արկեալ էր զնա, ըստ հատուցմանն բարւոյ. առ ձեռն պատրաստ կշռեաց նմա և օրհնեցաւ ի սրբոյն Զաքարիայէ: - 320. և բռնութեամբ կալեալ զԲախլ և զամենայն երկիրն Քուշանաց, մինչև յայնկոյս գետոյն մեծի որ կոչի Վահոօտ. – 136. Եւ այն ինչ ընդ մտանելն՝ երագապէս հասեալ ի վերայ ամրոցացն Ջղմար և Սրինգ կոչեցեալ՝ յինքն գրաւէ զամրոցսն. և կալեալ զՎասակ՝ յինքն գրաւեաց զզօրավարութիւնն բոլոր Վասպուրական տէրութեանս: - 306. և բախեցին արտաքոյ զդուռնն ուր մտեալ էր իշխանն, և կալեալ զնա հանին ի բարձրագոյն տեղիս ամրոցին, և եդին ի բանտի ի ներքսագոյն սենեկացն. – 348. և ինքն գնաց ի Միջագետս Ասորոց, զի կալեալ հաստատեսցէ ինքեան զքաղաքսն և զսահմանսն ամենայն, որ առ Խոսրովաւ և առ Մուրկաւ հաստատեալ էր: - 154. և կալեալ զԱնիանոս նահապետ Բագրատունեաց և սպարապետ Հայոց հանդերձ ընտանեօք և ամենայն ազգաբանութեամբ՝ արկանէ ընդ բազում չարչարանօք – 74. Եւ կալեալ զդեսպանսն հանին զթուղթսն, և զարսն պահեցին ի զգուշութեան, ոչինչ ումեք զգուշացուցանելով որ

ինչ եղևն: - 340. և կալեալ զնա եդ ի բանտի ի Նկան բերդի և զամրոց նորա եհան ի նմանէ, և կացոյց զհաւատարիմս իւր պահել զնա, և զտուն և զստացուածս հանեալ ի նմանէ՝ և կացոյց ի վերայ աշխարհին զիւր գործակալս: - 348. և մեծաւ աշխատութեամբ և ի բազում ժամանակաց փոյթ յանձին կալեալ անդուլ զցայգ և զցերեկ ի մեծ տարակուսանս ըմբռնեալ կայր վարանեալ – 242. և նորա կալեալ զնա և ի կապանս մատնեալ որպէս զանհնազանդ ոմն՝ և եկն անց յՈստանն Ռշտունեաց: - 322. և նոցա կալեալ զճանապարհն անապատի՝ գնացին ի Տաճկաստան առ որդիսն Իսմայէլի, ի քաղաքն որ կոչի Մադիամ – 156. Եւ ոչ յանձին կալեալ Արջամայ վստահաբար առ իւր ունել զԱնիանոս՝ յղէ զնա ի Հայս: - 76. և ոչ ուրեք գտանէր հնար ելիցն ի վտանգաւոր արգելանէն, թէպէտ և բազմաց հոգ յանձին կալեալ վասն առն պատուականի – 346. և փախուցեալ նա անկաւ ի զօրն Թետաղաց, որ էին եկեալ նմա յօգնականութիւն, որ և սպանին զնա հրամանաւ Իսմայէլի, կալեալ զթագաւորութիւնն ամս Ի: - 166. զի յինքեանս գրաւեալ ընդ հարկաւ ծառայեցուցանէին զպաշտօնեայս սրբոյ Խաչին, մանաւանդ զի և զգլխաւոր վանացն զհայրն, որում Գրիգոր անուանէր՝ զնա կալեալ եդեալ ի խորափոր խաւարային բանտի: - 334. զոր կալեալ էր Սանատրկոյ յարքունիս, զլեառնն Սիմ և զԱղձնիս մինչ ի սահմանս Ասորեստանի: - 86. իբրև լուայ զայս դողդոջումն և սարսափումն զիս կալեալ յահէ յերկիւղէն եղելոյ. – 52. ինքն իսկ փոյթ յանձին կալեալ՝ ել գնաց մեծաւ հոգաբարձութեամբ, լուծանել զնա ի տառապանաց արգելանին. սակայն և այնպէս ոչ կարաց գտանել զելս իրացն վտանգի առնն: - 346. Իսկ զկնի աւուրցն տասանց ի գլուխ ելանելոյ՝ խնդրեաց սպարապետն մտանել առ նա, և կալեալ զձեռանէ նորա՝ սկսաւ խօսել ընդ նմա և ասէ. – 282. Իսկ Վասակ Արծրունւոյ եկեալ առ Խոսրով և կալեալ զժառանգութիւն և զգահ – 112. Յետ բառնալոյ թագաւորութեանն Հայոց ի տանէն Արշակունեաց՝ ապա մարզպանք Պարսից կալեալ տիրէին աշխարհիս. – 124. Յետ մահուանն Աղէքսանդրի զօրավարաց կալեալ զՄակեդոնացւոց /70/ տէրութիւնն – 72. յորոյ վերայ կալեալ և կանչեալ քաջն Վարդան իբրև զառիւծ, իբրև զկորիւն առիւծու, և առ ուժոյ և երագութեան ձեռինն ի վերայ ձգեալ զմիողնին՝ յերկուս կտրէ զՇաւասպն: - 126. նոցա կալեալ զտիկինն Ռշտունեաց զկին Գարեգնի զքոյր Վարդանայ Մամիկոնէի ածեալ ի Վանտոսպ ի քաղաքն Շամիրամայ, մատնեն ի խոշտանգանս և ի տանջանս դառնագոյնս. – 102. որ ի ժամանակին կալեալ էր զմարզպանութիւն և զզօրավարութիւն Հայոց ի խնդրոյ սրբոյն Սահակայ յերկուց թագաւորացն Յունաց և Պարսից – 116. Սոքա հրամանաւ Վահանայ Արծրունւոյ փոյթ յանձին կալեալ՝ խուզել քննել կարգել ի համառօտ բանս զաճմունս ազգացն անցելոց ոչ կարի ինչ ընդ երկայնագոյնս աշխատասիրաբար անցանել պատմութիւնս: - 74.

ԿԱԼ Ի ԿԱՅԻ - և եբարձ զամենայն արս զօրութեանց, և ոչ ոք էր այնուհետև որ կարէր կալ ի կայի իւրում ունել զդէմ նորա – 238.

ԿԱԼՈՒԱԾ - և ունէր զիւրաքանչիւր կալուածս զաւանդեալ ժառանգութիւն նոցա ի թագաւորացն առաջնոցն Մուշեղ, Վահան: - 96. Իսկ Սմբատ որ և Ապլաբաս սպարապետն Հայոց, իբրև գիտաց թէ ոչինչ օգուտ բերէ արտաքոյ հրամանացն նորա լինել՝ փութացաւ եկն առ նա, և ընկալեալ ի նմանէ՝ բնակեաց ինքն և իւրքն հանդերձ իւրաքանչիւր կալուածովք առանց կասկածանաց. – 270. Քանզի և զոստանն Նախճաւան տուեալ էր ի կալուած զյաղթութեանն մանազաւենին Կայսկի: - 382.

ԿԱԽԱՂԱՆ - Դահեկին/ճիշտը՝դայեկին/ նորա մնալով ի ներքոյ կախաղանին՝ ամփոփէ /102/ զսուրբ գանձն ի ծոց իւր, տարեալ փոխէ ի վկայարան հանգստի ի ձեռն սրբոյն Ներսէսի – 104.

ԿԱԽԱՅ - Նմանապէս կամ թէ ևս հրաշափառագոյն երիցս երանելիք Սողովմոն, որ Սևորդին ճանաչի, և Կախայ վերին աշխարհեցին՝ ոչ խոտորեցան ի բանս թագաւորին – 292.

ԿԱԽԱՐԴ - քանզի նա խարկանօք առն մոգի և կախարդի ասաց լինել որդի Ամովնայ և Արամազդայ, այլ ոչ ուրացաւ մահկանացու գոլ: - 36.

ԿԱԽԱՐԴՈՒԹԻՒՆ - առնէր և նշանս կախարդութեամբ և առ աչօք մինչև ի զարմացումն ամենեցուն: - 40.

ԿԱԽԵԱԼ - զի էր կախեալ զփայտէ – 76.

ԿԱԽԵԼ - արկանեն տոռունս ի սրունսն, կախեն զհիւսիսայինն աշտարակէն. – 102. և զՇիրոյ կախեն զփայտէ ի վերայ կրակարանին. – 126.

ԿԱԿԱՆ - Դարձեալ բողոք հարեալ, ձեռն զօձիւք արկեալ և զհերս խզեալ, զդէմս կեղեքեալ և ձայնս առեալ կական ողբօք արտասուալից հառաչանօք, վայ ի բերան առեալ և խիղբ – 180.

ԿԱԿՈՒՂ - Եւ իմաստուն և հանճարեղ խորհրդովք, քաղցր և կակուղ բանիւք ողոքեալ զմանկագոյն Հասան, առաջի արկանելով նմա զարժանի ալեացն պատուականութիւն և զիշխանական ճոխութեան զբարձրագահութիւն և որ ինչ այդմ հետևէր. – 348.

ԿԱՀ - և կերիցեն քարինք և փայտք և այլ կահք երկաթեղէնք, որպէս և զայն որ ի նմայն պատարագի մարմին և արիւն որդւոյն Աստուծոյ, մանաւանդ թէ ինքն իսկ ճշմարտապէս որդին Աստուծոյ. – 396. որգունակ քաւութիւնն և այլ կահ սպասու խորանին ի Մովսիսէ օրինադրեալ ի ձեռն ճարտարապետացն Եղիաբ և Բեսելիէլ խորանայարդարք: - 378.

ԿԱՀԱՅ - ետ բերել փայտս, և եդեալ ի վերայ փայտին զերանելին Սողոմոն՝ և մօտ առ փայտն կացուցին զսուրբն Կահայ, զի գոնեայ մինն ի միւսոյ տանջանացն երկուցեալ հնազանդիցի հրամանի թագաւորին: - 292. Իսկ զսուրբն Կահայ /292/ հրամայեաց սրով սպանանել. – 294.

ԿԱՂ - Արդ եթէ զկէսն Որմզդի գողացաւ կաղն, և նա ոչ գիտաց, զիա՞րդ իցէ աստուած կիսատուրն և ի կաղէն գողացեալն: - 52. և զՀեփեստես ասեն կաղ յերկոցունց ոտիցն, և կայծակնավարս ունի ի ձեռնն աքցանս և կռանս, և նստեալ դարբնէ մարդկան: - 52.

ԿԱՂԱՆԱԼ - Եւ առ չանսալն յետուստ կողմանէ Վահան հարեալ ի գաղտնիս զգարշապար երիվարին՝ արար կաղանալ նժոյգ ասպարակողին. – 334.

ԿԱՂՂԻՍԹԵՆԷՍ - Կաղղիսթենէս, իմ բարեկամ, խրատ ետ ինձ մտանել հանդերձ բարեկամօք Խ, և մանկամբք Ճ, և զինուորօք ՌՄ միայնովք: - 50.

ԿԱՄ - ,,և այս ևս գործ կամ խաղաղութեան կամ պատերազմօք և ելցեն ի գլուխ, միայն զյապաղանացն ի բաց լքցես զդեգերանս,,. – 382. ,,ընդէ՞ր, ով աստուածասէր թագաւոր, իբրև ընդ համհարզս և ընդ ստամբակս, իբրև ընդ աննշանս կամ ընդ անընդել վայրագս խօսիս ընդ մեզ – 242. ,,իսկ եթէ եկեսցէ առ իս գիր յարքունուստ, կնքեալ մատանեաւ արքայի. և իցէ գրեալ ի նմա հրաման՝ զալ ինձ առ քեզ կամ երթալ յարքունիսն՝ ոչ ելից արտաքոյ հրամանաց նորա: - 286. այլ աստուածայինն Պօղոս ճշմարտագոյնս զայսոսիկ յայտնէ ասելով՝,,ծանեան զԱստուած, և ոչ իբր զԱստուած փառաւորեցին կամ գոհացան. – 52. Աստանօր ոչ է ինձ յայտ թէ զի՞նչ կամ ո՞րպէս դիպեցաւ լինել տոհմին Արծրունեաց, կամ ո՞ւր, կամ զիա՞րդ. – 94. Աստանօր սակաւուք բացայայտեցից զորպիսութիւն բնակչաց լերինն. թէ զիա՞րդ կամ ո՞րպիսի ոք են – 190. Բայց ինձ ոչ դանդաղելի կամ պատկառելի կամ մեղանչելի է զուգակշիռ նահատակելոցն նահատակակից վարկանել զսա և մարտիրոսականաւն զսորայս դրուատել ճգնողական մրցմունս – 300. Բայց ինձ ոչ դանդաղելի կամ պատկառելի կամ մեղանչելի է զուգակշիռ նահատակելոցն նահատակակից վարկանել զսա և մարտիրոսականաւն զսորայս դրուատել ճգնողական մրցմունս – 300. Բայց յո՛վ ոք կամ ո՞ր աշխարհ, զոր ոչ կործանեաց Աւշին պէսպէս լլկանօք հինի ասպատակաւ, աւարառու յափշտակութեամբ, սպանմամբ սրոյ և սովոյ: - 374. Բայց նոքա քանզի ապաստան լեալ յանկասկածելի յամուրս և ի բազմութիւն զօրացն և ի քաջութիւն արանց պատերազմողաց՝ և ո՛չ առ փոքր մի խոնարհեցան ի բանս նորա կամ ետուն տեղի պատասխանւոյ. – 274. Բայց քանզի ոչ բաւէ աղքատիմաստ իմոց /384/ խոհարանաց շարժումն պատկանաբար առ ողբոցն վարել բանակարգութիւն՝ թողի այժմ այլում զօրաւորի կամ այլում ժամանակի: - 386. և գրեալ էր առ Բուխայ, զի մի՛ ինչ չարիս խորհիցի կամ գործիցէ առնն այնմիկ, այլ տացէ տանել զնա առ թագաւորն մեծաւ պատուով և զգուշութեամբ: - 288. և հանապազ յանձն իւր տարակուսանօք տարուբերէր,

թէ յո՞վ և կամ յո՞յր կողմանս թափիցէ զդառնութիւն մահաբեր թունից իւրոց – 170. և այլ թէ. ,,մի՞թէ /գրքում՝ մի՞թե/ քաղիցեն ի փշոց խաղող կամ ի տատասկէ թուզ,, - 256. Եւ բարձեալ աշտեայս հանապազակիրս ի պատրաստութիւն գազանացն որ ի մայրիսն որջանան, կամ թշնամեաց ի վերայ հասելոց – 190. և դաստիարակ առընթեր ունելով զբանն տէրունական … և թէ ,,զի՞նչ օգուտ իցէ մարդոյ, եթէ զաշխարհս ամենայն շահեսցի և զանձն իւր տուժեսցէ, կամ զի՞նչ տացէ մարդ փրկանս ընդ անձին իւրոյ. զի եկն որդի մարդոյ խնդրել և կեցուցանել զկորուսեալն,, - 264. և եղև իբրև զբլուր մի մեծ երկաթի, կամ զվէմ անդամանդեայ. – 284. և զի ասէ՝ գործել և պահել՝ ոչ իբր ի լիութիւն ամենակատար դրախտին կամ պահպանութիւն ի վնասակարաց – 20. և զնոյն ոռոգեալ ոտիւք ի միջոցս պրակացն, կամ երկմատնի փայտատովք սերմանեալ. – 192. և թէ նոքա յերիս կամ ի չորս կամ ևս աւելիս բաժանեալ օգնական առնիցեն իւրեանց զամուրսն՝ մեծ աշխատութիւն քեզ հասուցանիցեն, և ամենայն խորհրդոց քոց խափանիչք /212/ գտանիցին – 214. և թէ ոչ այպանել ախորժէք զբանիւք իմովք՝ ոչ ընդհատ կամ պախարակելի թուիցի կոչել զնա նովիմբ անուամբ. – 376. և իբրև զմի անձն, վառեալ ի զէն և ի սուր և ի ճակատամարտ՝ հասեալ յամուրս՝ տապալէր զզօրութիւն նոցա սրով և աղեղամբ, ի փայլիւն սուսերի և նիզակի և ի գիշերամարտ նահատակութեանց, ըստ նմանութեանն քաջ զօրավարին Իսրայէլի Յեսուայ կամ Գէդէովնի կամ թէ նոյն ինքն նահապետին Աբրահամու, ի վերայ հասեալ Քանանացւոց, զյաւէտ յաղթութեան նահատակութիւն նահատակեալ՝ և դառնայ մեծաւ յաղթութեամբ: - 312. և լի ծաղու և կատականօք այպն արարեալ՝ արհամարհանօք անարգեցին զբռնաւորն, իբրև զմանուկ մի անպիտան կամ զծեր զառանցեալ և խելագարեալ, որ ոչ ըստ իւրոց կամաց զոր ինչ ախորժիցէ խօսիցի: - 264. Եւ մի հարկաց ինչ կամ զօրաց կամ այլ ծառայութեան խափանիչ լինելոյ կամ ի վնասս արքայի խառնելոյ փոյթ արասցուք պահանջել վրէժս. – 196. և յոյժ հաւաստի և ընդունակ գոլ զառ ի բազմաց /244/ վկայութիւն ի վերայ մեծի և կամ փոքու ինչ իրաց կամ ի վերայ կենաց և մահու. – 246. և ոչ առ փոքր մի ինչ ներեաց կամ անսաց /264/ տալ տեղի պատասխանոյ, այլ հրամայեաց դահճացն տալ ի վերայ նորա զվճիռ մահու, փութով զրաւ առնել նոցա ի սատակումն սրոյ: - 266. և սուսեր ընդ մէջ ածեալ զբանն տերունական, զոր ասացն, թէ ,,յորժամ մատնիցեն զձեզ, մի՛ հոգայցէք թէ ո՛րպէս, կամ զի՛նչ խօսիցիք – 204. Զայս ոչ եթէ սակս ուրացութեան ինչ ամբաստան լինի զինքենէ, կամ վասն ժողովոցն, այլ զի ոչ յանդիմանեցին զթագաւորն, որ արտաքոյ օրինացն ամբարշտէր. – 258. Զի յառաջնումն ոչ ինչ գոյր հոգ ինչ զբաղմանց, և ոչ մի ինչ ըստ աշխարհաշէն /90/ խնամակալութեանց, կամ պատերազմասէր աշխատութեանց – 92. զի ես տաց ձեզ բերան և իմաստութիւն, որում ոչ կարիցեն կալ հակառակ կամ տալ պատասպանի ամենայն հակառակորդքն ձեր,,: - 204. Զի թէպէտ և Գուրգէն մեծաւ զօրութեամբ ունէր զդէմ յարձակելոցն ի վերայ, որոց զիշխանականն ճեպէին հասանել գահ, կամ որ արտաքին տաճկական պատերազմունքն բռնաբար ի ներքս դիմէին՝ սակայն ոչ յապահովանայր դեռ երկիրն: - 316. Զի ոչ թէ վասն աստուածպաշտութեան ձերոյ կամ բարեգործութեան և սրբութեան արար Աստուած զայս այսպէս, այլ վասն մերոյ ամբարշտութեան ի Տէր. – 144. զի ուր և իցէ՝ ածցեն զնա առ նա, թէ՛ պատիր խաբէութեամբ և խորամանկ կեղծաւորութեամբ և խարդախութեամբ, կամ պատերազմաւ և մեծամեծ զօրութեամբ, ամենայն պատրաստութեամբ, արքունի կարողութեամբ, որպէս զիարդ և կարասցեն՝ առ նա հասուցանեն: - 224. զկամս Աստուծոյ և զօրէնս բնութեան ցուցանել ազգաց եկելոց որ յետ իւր: - 34. Է՞ր աղագաւ կամ վասն ո՞յր պատճառանաց. զի ի քաջէն իմմէ և ի մեծ իշխանէն, ի քաջատոհմիկ և ի բարեփառ գլխոյն իմմէ զրկեալ լինիմ: - 384. ընդ ակամբ հայելով, թէ գուցէ ճողոպրեալ ելանիցէ ի ձեռաց մերոց, կամ ի գիշերամարտս յանկարծ հասանիցէ ի վերայ մեր մեծամեծ ոճիրս գործիցէ: - 202. ըստ այնմ զոր մարգարէն Եսայի ասաց, ,,յաւուր յայնմիկ բուռն հարկանիցէ այր զեղբօրէ կամ ազգակցէ իւրմէ և ասասցեն՝ լեր մեր իշխան, և կերակուր մեր ընդ քեզ լիցի,,. – 298. ըստ սովորութեան ծանօթացուցանել զիւրաքանչիւրոց առանձնաւորութիւն և զպատուոյն

գերակայութիւն, կամ ի ծնողաց կամ ի տեղւոյ կամ ի գաւառէ կամ յազգէ կամ յարիութենէ կամ ի պատահմանէ սկիզբն առ: - 288. իբրև զորսորդս ինչ առիւծուց կամ այլոց ինչ նոյնպիսեաց, շուրջ ձգեալ զգառագիղն՝ ի մէջ փակել զկորովին և զքաջ արանցն զիշխանն Աշոտ – 202. Իսկ սպառնալիք քո և չարչարանք, զոր ասես ի վերայ իմ հասուցանել՝ խաղ մանկտոյ կամ զառանցելոց թուի յաչս իմ, և բանք քո նոյնպէս, որպէս առն անմտի և խելագար և ցնորեալ ծերոյ,,: - 290. Իսկ զՎահագն Հայկազնեայ … կացուցանեն ի դրան արքունի, յառաջանալ ի գործ պատերազմին մեծաւ աշխատութեամբ՝ կամ մեռանել ի սրոյ թշնամեաց դիպելոց, կամ յաղթել քաջասրտութեամբ: - 70. Խնդրէ և տեղեկութիւն թէ քանի՛ դրօշք /198/ են, կամ քանի՛ նշանք, և կամ քանի՛ առաջս զօրքն բաժանիցին, և կամ քանի՛ փողք գոչիցեն, և կամ քանի՛ թմբուկք դափիցեն: - 200. Կամ դարձո՝ զխորհեալ նոցա չարիս ի գլուխ իւրեանց, կամ թող զի ելցեն գնասցեն՝ յով և կամեսցին,,: - 82. հասեալ ի վերայ ծառոց մրգաբերաց, կամ ի դիւրածախելի բոյս խոտոյ, այնպէս վատնեցին ծախեցին զզօրութիւն մարդկային ազգի ստացուածովք իւրեանց,,: - 240. մանաւանդ յառաջագոյն պատրաստեալ պատսպարեաց թղթովք և պատարագօք առ թագաւորն և առ զօրավարն գնալ ըստ հրամանաց նոցա, և ոչ ինչ արտաքոյ կամաց նոցա խորհել կամ գործել ինչ: - 270. միթէ դո՞ւ միայն առաջին յաղթեցար և հարար ի թշնամեաց, կամ քո՞ միայն զօրքդ անկան, կամ քո՞ և եթ աւար բաժանեցաւ: - 282. Նոյնպէս բանայ, որպէս և այլ թռչունք և գազանք՝ բնաւորեալ բաժանեն զժամանակս տարւոյն յերկուս կամ յերիս ամարանոցս և ձմերանոցս ինքեանց կենաց պաճարին – 262. Նոր ոմն Նաբուզարդան կամ Ջամրի յայտնեալ ի յաղանդոյն Նեստորի, երեքթշուառեան վատաշուէր, վատմիրհ, զագահութեանն չարիս ախտացեալ՝ սպրդեալ եմուտ ընդ մութ գիշերին յամրական պարսպեալ բլուր, և անցեալ ի սուրբ կոչարանին օթագացեալ. – 378. Ոչ կարծողականս ինչ ըստ առաջնոցն Բէլայ ասացելում, կամ այլոց ստուերականացն երևեցելոց երազականաց և խաբեբայ դիւաց, այլ ձեռագործ մեռելականս իսկ եցոյց ի պաշտօն – 40. որով իցէ ասել արևմտական զդրախտն կամ /18/ ի միջոցի ուրեք. – 20. որպէս ասաց Քրիստոս,եթէ ,,ուր երկու կամ երեք ժողովեալ են յանուն իմ՝ անդ եմ և ես ի մէջ նոցա,,: - 250. որպէս յարդ ի հողմոյ վարեալ, կամ ծուխ վատնեալ ի մրրկէ՝ այնպէս կորեան գնացին յերեսաց զօրացն Աղուանից: - 286. Որպէս Պօղոս ուսուցանէ. ,,արհամարհեալ ասէ, ուրուք զօրէնս Մովսէսի՝ մեռանէր, ի բերանոյ Բ կամ Գ վկայիւք. քանի սաստկագոյն համարիմք զայն, որ զորդին Աստուծոյ առ ոտն եհար,, , և որ ի կարգին է: - 380. Սա կեցեալ ամիսս Ը կամ Թ յաթոռ հայրապետականին՝ փոխի յաթոռ առաքելական պատուաղրութեանն ի փրկչէն մերմէ խոստաբանեալսն: - 376. Սովորութիւն է գրոց, որպէս զիրն նոյնպէս և զտեղին վերաբերեալ, կամ ըստ ծանօթութեան, կամ ըստ պատուոյ: - 288. Վասն զի այլոց գործք մի կամ երկու կամ այլս ևս գործք գործեալ է. իսկ սորայս՝ գերազանցեալ յաճախեաց քան զբազմացն իրողութիւնս. – 302. Վասն մարմնաւորացն այնչափ նահատակեցայ, որպէս գիտացերն և որպէս այժմ լսես յինէն, վասն Քրիստոսի և վասն յաւիտենական կենացս ո՞չ մեռանիցիմ, կամ արդեօք ի քէ՞ն երկնչիցիմ. քա՛ւ լիցի. – 296. տես քեզէն և ծանի՛ր, զի ոչ գոյ վնաս իմ յիրիդ յայդմիկ կամ կարողութիւն արձակել զքեզ,,: - 238. քանզի բանականն յերիս յայսոսիկ տեսանի, ի հրեշտակս, ի մարդիկ և ի դևս. այլ ոչ ի հաւս կամ ի յայլ կենդանիս: - 52. քանզի արդարև զգալի և շօշափելի էր դրախտն, և ոչ իմանալի կամ ի մէջ երկուց աշխարհաց – 48. քանզի ոչինչ վնաս գիտէին զանձանց և ոչ մի ինչ իրս մեծ կամ փոքր. – 98.

ԿԱՄԱԿՑՈՒԹԻՒՆ - Ելեալ փութանակի եկն եհաս յաշխարհս Վասպուրական սպարապետին կամակցութեամբ: - 306.

ԿԱՄԱՐ - Եւ զգեցոյց նոցա հանդերձս և կանգնեաց նշանակ իշխանական և էած սուսեր ընդ մէջ և կամար ականակապ և երիվար ընտիր մեծազարդ. – 314. կապարճս և աղեղունս պատրաստականս զառաջեաւ ի նիւսն ունելով, և զարդս ոսկեզարդս և արծաթագործս և կամարս ընդ մէջ ածեալ – 208.

ԿԱՄԱՐԱՐ - ընդ կրունկն դարձիր, թշուառական, քանզի զերջանիկ կամաբարացն կղզիս կոխել ոչ կարես. զի՞ յերկինս ելանել բռնանաս,,: - 50.

ԿԱՄԱՐԱՐՈՂ - և ի բաց բառնալ յաշխարհէ զշփոթ և զխռովութիւն ի միջոյ խաղաղութեան որպէս օրէն է խաղաղասէր թագաւորաց և թագաւորազանց, իբրև Աստուծոյ կամաբարողաց և հաւատարիմ ծառայից տիրասիրաց: - 212. զի մի սպառ սպուռ տապալիցի զօրութիւն շինուածոյ աշխարհի, ի բաց ընկենլով զծառայական պաշտօնատրութիւն կողմնակալաց, և քաղաքային անհաւատարիմ կամաբարողաց, և հարկաց բեկման և զօրաց – 186.

ԿԱՄԱՐԱՐՈՒԹԻՒՆ - և ահա հասեալ կայք յատենի առաջի իմ անտրտում և անտխուր երեսօք, որպէս անմեղս և զբարեգործակս, և լի ամենայն կամաբարութեամբ մեր, անխիղճ համարձակութեամբ – 244.

ԿԱՄԱՒ - - Եւ եթէ քոյին կամաւ երթիցես՝ թերևս օգուտ բազմաց և անձին քում եղիցի. – 216.

ԿԱՄԱՒՈՐ - և մի զմիոյ հետ ստիպէր՝ փութալ միոյ միոյ ի նոցանէ յանդիման նմա հատուցանել ծառայական սպասաւորութիւնս, զոր և արարին իսկ Աշոտ և Գագիկ և Գուրգէն, կամաւոր և ակամայ զնորայն կատարելով հրամայեալս – 370.

ԿԱՄԲԻՒՍԷՍ - ՅԵՏ ԿԻՒՐՈՍԻ /թագավորում են/ ԿԱՄԲԻՒՍԷՍ, ՇՄԵՐԳԻՍ ՄՈԳ, ԴԱՐԵՀ ՎՇՏԱՍՊԱ. - 68.

ԿԱՄԵԼ/ԻԼ/ - Իսկ Յամանիկն ի վերայ Հայոց խորհէր ելանել, կամելով և տիրել Հայոց. – 338. դառնալ անդրէն ոչ կամէին, զի կարի սաստիկ ամօթս համարէր զգործեցեալսն, կալ տևել ժուժկալել ընդդէմ նոցա ոչ կամէին, զի բազում անկան ի զօրաց իւրեանց: - 276. դառնալ անդրէն ոչ կամէին, զի կարի սաստիկ ամօթս համարէր զգործեցեալսն, կալ տևել ժուժկալել ընդդէմ նոցա ոչ կամէին, զի բազում անկան ի զօրաց իւրեանց: - 276. և կողմնեալք ի սիրոյ աստուածութեանն անկաւ ի վերայ նոցա զարհուրումն մահու, մանաւանդ ոչ կամելով ելանել /246/ ի սնոտի կենացս դիւրափոփոխ աշխարհիս՝ ասեն. - 248. Զոր և մեք ակն ունիմք և քեզ զսոյն զայս կամել – 186. Կամ դարձո՝ զխորհեալ նոցա չարիս ի գլուխ իւրեանց, կամ թող զի ելցեն գնասցեն՝ յով և կամեսցին,,: - 82. ,,բազում անգամ աղաչեցին զիս բարեկամքն դառնալ, և ես ոչ կամեցայ – 50. ,,եթէ կամիս կեալ ընդ իս և վայելես ի կեանս աշխարհիս, և ընդունել պարգևս և պատիւս յինէն՝ հաւանեա հրամանի կամաց իմոց և ի բաց լեր ի հաւատոց քրիստոնէութեանդ, զոր պաշտես – 294. ,,եթէ հաճոյ թուիցիմ քեզ կնութեան, և դու կամիցիս քեզ զտիրելն Անձաւացեաց՝ մի վեհերեալ յապաղելով դանդաղկոտ լինիր և վերջանար զփութալն,,. – 324. ,,Զբանս քո լուեալ՝ ասեմ, եթէ յԱստուծոյ է թագաւորութիւն և ում կամի տացէ. – 138. ,,զի՞նչ կամիք, ասէ, առնել, և վասն է՞ր եկիք ի տեղիս յայս. – 144. ահաւասիկ կամ, մի դանդաղիր կատարել՝ զոր ինչ կամիս առնել,,: - 296. այլ ես ասեմ քեզ, եթէ Տէր կամեսցի՝ վաղիւ պատելոց է զքեզ պատերազմ քաջաց. և ճեթեսցեն ի վերայ քո իբրև զամպս երկնից ի բռնալիր նիզակօք անցանիցեն ընդ մէջ բազմութեան քո իբրև զփայլատակունս հրոյ շանթից: - 140. Բայց զի՞նչ իսկ խնդրիցէ թագաւորն ձեր յինէն, որ ոչ առնէ զխաղաղութիւն, բառնա՞լ կամի զթագաւորութիւնս զայս: - 144. Գրէ Կայսիկն առ թագաւորն՝ խնդրել զխաղաղութիւն, և զոր միանգամ կամիցի՝ եղիցի. յայտնիքն այսպէս, իսկ ծածուկքն՝ որպէս յայտնեցանն: - 380. Ետ և կայսեր զամենայն զոր և կամեցաւ առնուլ. – 152. և զմնացեալ սակաւսն ի մէջ արարեալ շրջափակ տուեալ՝ կամէին զամենեսեան սատակել: - 150. Եւ վախճանեալ միայնակեցին՝ կամեցաւ կատարել զպատուէր նորա Սաղման: - 162. Եւ անցանելով ընդ գաւառն Բզնունական գայ մտանէ ի Խլաթ. քանզի կամէր անսալ ժամու դիպողագունի, զի որսայցեն նենգութեամբ խաբել: - 186. և դաստիարակ առընթեր ունելով զբանն տէրունական … և թէ ,,որ կամիցի կեցուցանել զանձն իւր՝ կորուսցէ զնա, և որ կորոյս զանձն իւր վասն իմ՝ գտցնէ զնա,, - 264. Եւ եթէ ասիցէ, եթէ այլ թագաւոր նստուցից՝ արասցէ զո և կամեսցի և արձակեսցէ և մեք ընդունիմք, ահաւասիկ է տեղի թագաւորութեանս: - 144. և եթէ զաւր պիտոյ իցէ յօգնականութիւն՝ արձակեցից որչափ և կամիս. 152. Եւ եթէ քաղաքս խնդրիցէ՝ ահաւադիկ է քաղաքք մեծամեծք և պարսպաւորք.

այլ գանձս խնդրիցէ՝ ասացի թէ տաց որչափ և ձեռն հասանիցէ. և ոչ կամեցաւ լսել, այլ տակաւին ծարաւի է արիւնարբութեան: - 144. Եւ զերկնային պարգևացն որ ի հանդերձեալսն խոստացաւ Տէրն, զանպատում և զիրեշտակային նորոգութեան՝ նա ասաց լինել անդ կերակուրք և ըմպելիք ուժգին. զոր և կամեսցի ուտել անյագաբար՝ պատրաստ գտանիցէ, և կանանց կուսից մնացելոց հանապազ անյագաբար խառնակումն: - 164. և զոմանս ընդ սուր հանեալ կամէր միախաղոյն զրաւ առնել ազգին Բագրատունեաց: - 74. և զոր կամիջիք՝ արասջիք ձեզ թագաւոր – 138. Եւ թէ հաստատել ոք կամեսցի՝ անսասանելի կացցէ նա յայսմ աշխարհիս. ամէն: - 356. Եւ ի ժամու մինչ ազնորեալքն կամէին մտանել զառաջեաւ … յայնժամ շուրջ կացեալ զվրանաւն մեծ սպարապետին զկազմեալ գնդաւ վահանաւոր և նիզակաւոր ամրափակ պնդութեամբ, և մտեալ մատոյց զթուղթն, զոր էր գրեալ առ Յամանիկն ի քաղաքն Պարտաւ Ահմաթայ նենգութեամբ: - 344. և հասեալ ի Բագրաւանդ գաւառ ի Ձիրաւ գեօղ՝ կամէր անցանել ի թագաւորաբնակ տեղիսն Հայոց: - 106. Եւ հաւանեալ Խոռեմայ՝ եկն առ Հայրակղոս արքայ Յունաց, թողեալ ի նա զԵրուսաղէմ և զԿեսարիայ Պաղեստինացւոց և զամենայն կողմանս Անտիոքացոց և զամենայն քաղաքս գաւառացն այնոցիկ, և զՏարսոն Կիւլիկեցւոց և զմեծ մասն Հայոց և զամենայն զոր միանգամ կամեցաւ Հայրակղոս. – 152. Եւ մօտ առ սոցա կայ լեառն Կաւկասու, յորում բնակեն ազգք յամենայն լեզուաց բաժանեալք, ըստ ազգս ՀԲ ազգացն, և կեան առանց առաջնորդի, և օրէնս անձանց ունին ամենայն ոք որ զինչ կամի, և ընդ մայրս և ընդ քոյրս ամուսնանալ: - 274. և յայտնի ոչ վայելչանայր կատարել զոր կամէրն, մի՝ վասն յաղթող մեծանուն գործոյն, նախատ անձին համարելով, երկրորդ՝ վասն վաշտիցն զօրութեան: - 326. Եւ յոր կոյս կամի հայեցուցանէ զնոսա: - 314. Զի թէ իջանիցես յանդունդս ծովու՝ ձգեցից զցանցս իմ և ըմբռնեցից զքեզ. և ապա տեսանիցես զիս այնպէս՝ որպէս դու ոչ կամիցիս„: - 146. զի ոչ կամիմ զմահ մեղաւորի, որպէս բառնալ նորա ի չար ճանապարհէն և կեալ: - 30. զի ոչ կարաց զերծանել գնալ յով և կամիցի – 84. զոր Թէոդորոս եղբայր թագաւորին և բազմութիւն զօրացն կամեցան սատակել զնոսա. – 156. Իսկ թագաւորն իբրև գիտաց զընդխառնել ընդ միմեանս զօրացն, կամեցաւ մի՞թէ արդեօք կարասցէ դադարեցուցանել զմաքառումն. – 368. Իսկ քաղաքապետն Սահակ ելեալ ընդ դուռնն, որ ելանէ ի բերդն Շամշղտայ, սամոյր զինքեամբ արկեալ և գաւազան ի ձեռն առեալ, յիմարեալ մտօք կորոյս զփախուստն իւր, որ կարող էր գնալ յով և կամիցի. – 272. ուած, եթէ կամեսցի՝ ցամաքեցուցանել զծովս առաջի ձեր: - 144. Մինչև յե՞րբ ոչ կամիցի յագենալ արեամբ. – 144. Ոչ կամեցար կամօք տալ զանձն ի ծառայութիւն մեզ, այլ տէր և թագաւոր կոչես զքեզ. զգանձն արքունի որ իմ առ քեզ է՝ ծախես, և զայդ ոչ գիտես, եթէ վաղիւ համարս տալոց ես: - 146. Որ կամէին դառնաբեր քինահարութեամբ ելանել ի վերայ աշխարհիս առ հասարակ յապականութիւն դարձուցանել: - որ կարծիւք յիմարութեան աստուածանալ կամեցաւ: - 26. որով մահուամբ և կամիս՝ պատրաստ եմք յամենայն հնարս չարչարանաց մտանել, զոր ուսոյց քեզ վարդապետն չարեաց հայրն քո սատանայ. – 292. որպէս թէ ոչ կամի զթագաւորելն Պարսից և հարկել Հայոց և զօրավարել, այլ զթագաւորելն Յունաց ցանկայ գտանել. – 118. որք և մատուցեալ առ Փիլիպպոս որ ի Բէթսայիդայն, ասեն Կամիմք զՅիսուս տեսանել„. – 76. Քանզի թէ Աստուած կամեսցի՝ տանելոց է սաստկութիւն հողմոյ զզօրութիւն քո իբրև զփոշի „: - 140. քանզի կամէի տեսանել զկատարած երկրի. – 50.

ԿԱՄԵՆԱԼ - „Գրեցի ձեզ, ի բաց կալ յայդմանէ, ուրեմն ոչ կամեցարուք լսել, ես զձեզ ապաշաւեմ, ասէ: - 138. Այլ նոքա թէպէտ առ փոքր մի ոչ կամեցան դառնալ յերկրպագութենէ Աստուածորդւոյն – 246.

ԿԱՄԵՑԵԱԼ - և կամեցեալ իմ պատմել և ձեռնարկել տեսանել ի ձեռն ծառայից, ուր էր երջանկացն վայր - 50. Եւ նորա կամեցեալ ցուցանել թագաւորին՝ ի սոյն աւուրս վախճանեցաւ Հայրակղէս. իսկ որդի նորա Կոստանդին ոչ ունէր յանձին ըստ կամաց նորա պատասխանի. – 162. Եւ նոքա կամեցեալ անձնապահ լինել աշխարհին՝ գնացին ընդդէմ նոցա. – 162. Իբրև ետես կայսր Հայրակղէս զչարիսն ամենայն, որ եկին հասին ի

վերայ նորա՝ ակամայ կամեցեալ ցուցանել բարեկամութիւն՝ եւ ընդ առաջ նոցա, մեծարել իբրև զվաստակեալս և զիւրս, ընկալաւ զնոսա մեծամեծ /142/ ընծայիւք. – 144. Որում ոչ կամեցեալ լսել Խոսրովայ՝ ասէ. իմ է թագաւորութիւնն այն և ես զորդին Մուրկայ նստուցի թագաւոր - 142.

ԿԱՄ ԹԷ - բովանդակաբար բացայայտել զհաւատարիմն գրել, թէ արդեօք Ասուր, որ զՆինուէ շինեաց, հաւ Նինոսի՞ իցէ ի ծննդոց Սեմայ, ուստի Նեբրովթ, կամ թէ արդեօք ազգն Արծրունեաց Սեմա՞յ սերունդք իցեն, թէ Քամայ ի Նեբրովթայ: - 14. Եհարց սաստիւ կամ թէ հրամանաւ տէրութեան իւրոյ, ,,ի բաց լեր, ասէ, ի հաւատոցն Քրիստոսի, և իմ թողեալ քեզ զբազում վնասսն զոր գործեցեր – 290. և դու նոյնպէս սակաւուք եկ, կամ թէ ևս աւելի արամբք, և տեսցուք /226/ զմիմեանս,,: - 228. և եղեն իբրև զմի այր կամ թէ իբրև զվէմ մի բլրաձև, արձանացան կարծրացան պնդութեամբ՝ անմատոյց լինել ի նոսա զօրութիւն երկաթի. – 230. և իբրև զմի անձն, վառեալ ի զէն և ի սուր և ի ճակատամարտ՝ հասեալ յամուրս՝ տապալէր զզօրութիւն նոցա սրով և աղեղամբ, ի փայլիւն սուսերի և նիզակի և ի գիշերամարտ նահատակութեանց, ըստ նմանութեանն քաջ զօրավարին Իսրայէլի Յեսուայ կամ Գէդէովնի կամ թէ նոյն ինքն նահապետին Աբրահամու, ի վերայ հասեալ Քանանացւոց, գլաւէտ յաղթութեան նահատակութիւն նահատակեալ՝ և դառնայ մեծաւ յաղթութեամբ: - 312. Զի թէ առագաստ նաւին յերկոսին կոյս ոչ պարզիցի՝ ոչ ուղղակի նաւարկութիւնն ճանապարհորդիցի, կամ թէ նաւաբեկեսցի իսկ ի բռնութենէ մրրկալից հողմոյն զալիսն կուտակելով: - 256. Իսկ զանուն քաղաքին կոչեցին Արտամատ, որ թարգմանեալ ստուգաբանի Արտաշէսի ձեռակարտ, կամ թէ՝ Արտաշէսի եկք – 88. կամ թէ յամպոց ինչ ճայթիւն արձակելոյ և ի վայր հրաձգութիւնն արկանէ ի կարկտաբեր և յանձրևաբեր ժամանակի - 228. Յոքունց կամ թէ բնաւից կարօտանամ իմաստասիրաց գումարից ի մի վայր հասելոց՝ զողբերգականացն ճոխաբանել ճարտասանութիւնս. – 352. Նախ զի և լեզուքն շփոթեալք՝ունէին զանմիաբանութեան փոյթս, կամ թէ զի և վատութիւնք քաջաց ապիհարկեալք ոչ գրեցաւ ի մատենագրաց անտի Քաղդէացւոց – 44. Նմանապէս կամ թէ ևս հրաշափառագոյն երիցս երանելիք Սողովմոն, որ Սևորդին ճանաչի, և Գախայ վերին աշխարհեցին՝ ոչ խոտորեցան ի բանս թագաւորին – 292. Նմանապէս, կամ թէ ևս հրաշափառագոյն գյաղթութեան մարտսն յօրինեալ յարդարեաց զպարտութիւն ի վերայ ազգին Իսմայէլի մեծ զօրավարն Գուրգէն, և իսպառ կանգնեաց զնշանակ յաղթութեան ամենևին ամենայն ուրեք ընդ ամենայն տեղիս. – 312. որ կարի սիրելի է ինձ, մանաւանդ թէ յոլովից, կամ թէ ամենայն հաւատացելոց ի Քրիստոս՝ յերկարագոյնս առնել ի ճառիս զդեգերումն շահատակութեան, ձեզ լսել և ինձ գրել: - 76. վասն զի ըստ Պտղոմեայ և Աղէքսանդրի սահմանադրութեանն, կամ թէ մեր Արտաշէսի որդւոյ Սանատրկոյ՝ ի Վասպուրական գաւառացն համար թուեալ է գաւառն այն – 332.

ԿԱՄ ԼԻՆԻ - ասէ. ,,զվրէժ արեանն Մուրկայ /140/ առի ի թշնամոյ նորա արդ կա՛մ եղիցի առնել ընդ իս զխաղաղութիւն և արգելուլ զսուր քո յերկրէ իմմէ,,: - 142.

ԿԱՄՈՒՐՋ - Եւ Խոսրով արքայ փախստական գնաց, և անցեալ զԴեկղաթաւ ի Վեհկաւատ՝ հրամայեաց զլար կամուրջացն կտրել. – 150. ՎԻսկ առաւելեալն իմաստութեամբ Աշոտ ոչ յանհոգս և յաներկիւղս կայր մնայր, այլ զգուշանալ հրամայէր ի խելս կամրջաց և յանապատս և ի կիրճս ձորոց: - 340.

ԿԱՄՍԱՐ - մինչ կալ մնալ միայն երեսուն արանց ընդ քաջին Վահանայ, Մերշապուհ և Յաշկուր Արծրունիք, և Կամսարն Ներսէհ, և ի տանէն Ամատունեաց՝ զորոց զանուանսն անգիտանամ – 134.

ԿԱՄՔ - ,,եթէ կամիս կեալ ընդ իս և վայելես ի կեանս աշխարհիս, և ընդունել պարգևս և պատիւս յինէն՝ հաւանեա հրամանի կամաց իմոց և ի բաց լեր ի հաւատոց քրիստոնէութեանդ, զոր պաշտես – 294. ,,զոր ինչ միանգամ կամք յօժարութեան ձերոյ ախորժեսցեն՝ եղիցի ձեզ ստուգապէս առանց երկբայութեան. – 214. ,,նիստ դու աստ, մինչև արձակեցից զքեզ և արարից զկամս հայցուածոց քոց վասն որոյ եկեալ ես,,: - 226. ,,տո՛ւր ինձ, ասէ, ի գերելոց այտի՝ որչափ և կամք քո հրամայեսցեն,,: - 218. այլ նա ըստ կամս իւր կատարեաց ի

վերայ իւր զարենապարտն լինել, որ տալոց է հատուցումն վրիժուց յաւուր դատապարտութեան իւրոյ: - 320. Այսպիսիք իմն ինձ թուեցեալ համարեցան այնոքիկ վայրք. այլոց որպէս կամք իցեն: - 52. Ապա թէ փութաս ելանել ի կենաց աստի առ զայրուցս կատաղութեան քո և զոսկերս ցրուես յանապատս և լինել կերակուր գազանաց երկրի և թռչնոց երկնից՝ քո կամք լիցին, և ես քաւեալ եմ յարենէ քումմէ – 278. ապա թէ ոչ ի կամս կամաց զայդ առնես՝ ակամայութիւն ի վերայ հասեալ՝ և զոր ունիսդ հարկաւորաբար առնէ քեզ զայդ ևս թողուլ„: - 330. ապա թէ ոչ ի կամս կամաց զայդ առնես՝ ակամայութիւն ի վերայ հասեալ՝ և զոր ունիսդ հարկաւորաբար առնէ քեզ զայդ ևս թողուլ„: - 330. Բայց Աստուած ըստ յօժարութեան քո սիրոյդ կատարեսցէ զկամս քո որպէս և հաճոյ թուիցի առաջի Տեառն„: - 114 Բայց Վասակս այս … վասն ազգակից զոլ նոցա ընդ տոհմին Արծրունեաց… ել գնաց իւրովք կամօք ի Սամառայ և եղև աստուածուրաց – 248. Բայց քանզի ամենայնիւ ամենայն ուրեք ոչ ոք զօրեաց կալ ընդդէմ նորա յամենայն գործս զոր և կամք իւր ախորժէին՝ սկսաւ ձեռնամուխ լինել կարգաւ ընդ բոլոր աշխարհս արևելեայս – 274 Եղեն ընդ նմա և ուխտեցին ուխտ, և ետուն նմա կին յազգէն իւրեանց և պատրաստեցան լինել ընդ նմա, որպէս և կամք իւր հրամայեսցեն. զոր թէ ասիցէ ոք՝ ի հրամանէ Աստուծոյ լինել սկիզբն առաջարկութեանն այնորիկ: - 160. Եւ այսոսիկ Ահմաթայ յինքն առեալ արկանէր ի կամս ևս յառաջանալ – 366. և ասէ, „եթէ աջողեսցին քեզ խորհուրդ մեր, զոր խորհեցաք ի վերայ Հայոց և իշխանաց նոցա, և ըստ ախորժակաց մերոց ի գլուխ ելանիցեն, որ ինչ կամք յօժարութեանց մերոց ղղձանայցեն- 184. և բնակեսցէ խաղաղութեամբ և կացցէ ըստ կամաց իւրոց - 234. Եւ Գուրգէն ելեալ գնաց փութանակի անյայտ առնել զինքն, մինչև յաջողեսցի ըստ կամաց Քրիստոսի յո՛վ և երթիցէ: - 320. և զի ըստ կամաց նորա հանցէ ի բանակէ անտի զգերիս Վասպուրականի: - 218. և զոր ինչ խնդրիցէ՝ առնիցէ ըստ կամաց նորա, կնքել և տալ նմա գեօղս և ագարակս, և տալ հարկս արքունիս և պատանդս խաղաղութեան: - 210. և ըստ հնարագէտ ազգի իւրեանց խորամանկ կեղծաւորութեամբ, խաղաղասէր դիմօք առ սակաւ սակաւ ջանայր կատարել զկամս չարութեան իւրոյ: - 170. և լի ծաղու և կատականօք այպն արարեալ՝ արհամարհանօք անարգեցին զբռնաւորն, իբրև զմանուկ մի անպիտան կամ զծեր զառանցեալ և խելագարեալ, որ ոչ ըստ իւրոց կամաց զոր ինչ ախորժիցէ խօսիցի: - 264. և խոշտանգեսցես զնոսա գանիւ և բանտիւ և պէսպէս տանջանօք սպառնալեօք և ողոքանօք և ընչից պատրանօք արկցուք զնոսա ի ներքոյ կամաց թագաւորութեան մերոյ. – 196. Եւ նոյնժամայն եհաս հրաման յարքունուստ՝մի տաղտկալ և վհատել և մի ի բաց կալ պատերազմել ընդ նմա. մինչև եկեսցէ ակամայ կամօք ի հնազանդութիւն արքայի: - 284. Եւ նորա կամեցեալ ցուցանել թագաւորին՝ ի սոյն աւուրս վախճանեցաւ Հայրակղէս. իսկ որդի նորա Կոստանդին ոչ ունէր յանձին ըստ կամաց նորա պատասխանի. – 162. Եւ նոցա ընկալեալ զխնդիրսն՝ հաւանեցան առնել ըստ կամաց նորա, մինչև տեսցեն եթէ զի՞նչ պատասխանի եկեսցէ նոցա յարքայէն իւրեանց, և կամ զօրուն զի՛նչ հրամայեսցէ առնել: - 144. և ոչ են կամք իմ փութալ պատմել ընդ գրով փակել զկործանումն տերանց իշխանաց մերոց - 240. և ոչ ոք ամենևին իշխէր ելանել արտաքոյ կամաց ձեռին նորա ի մեծամեծաց մինչև ի փոքունս. – 200. և տեսանելով մեր զխնամարկութիւն բարի կամաց քոց ի վերայ աշխարհի, և զսէր երախտեաց որ առ մեզ՝ յօժարագոյնս եղիցուք և մեք մտերմութեամբ ծառայել և փութով մեծաւ կատարել զհրամայեալսն ի քէն„: - 186. զորս եթող Բուխայ տիրել աշխարհին իւրեանց յաղագս յառաջագոյն մտերմութեան հօրն նոցա առ թագաւորն և առ զօրավարն, զի գնաց ըստ կամաց նոցա յամենայն ուժոյ զօրութեան մտաց իւրոց: - 298. ի կամս անձնիշխան կամաց մոլորեցաւ – 250. ի կամս անձնիշխան կամաց մոլորեցաւ – 250. Ի սոյն աւուրս մեծ նեղութիւն եղև աշխարհիս Հայոց ի չարասէր կամաց նորա: - 166. իբրև արար և կատարեաց զամենայն կամս չարութեանն ի վերայ աշխարհիս Վասպուրական կոչեցեալ. – 262. Իսկ Աւշին դատարկացեալ ի խորհրդոցն զոր խորհեցան՝ յաւել զայս օրինակ կատարել զկամս չարագոյնս: - 372. Իսկ թագաւորն գիտացեալ զհաստատուն և զանդրդուելի միտս նոցա՝ ոչ ինչ փոյթ արարեալ թողու ի

կամս կամաց իւրեանց, կեալ որպէս հաճոյ թուի: - 132. Իսկ թագաւորն գիտացեալ զհաստատուն և զանդրդուելի միտս նոցա՝ ոչ ինչ փոյթ արարեալ թողու ի կամս կամաց իւրեանց, կեալ որպէս հաճոյ թուի: - 132. Իսկ նոքա թէպէտ և հաւանէին՝ այլ էր և հակառակութիւն մեծ ի մէջ նոցա. քանզի որոշեալ էին պաշտամամբ կռոց ըստ իւրաքանչիւր կամաց: - 156. մանաւանդ յառաջագոյն պատրաստեալ պատսպարեաց թղթովք և պատարագօք առ թագաւորն և առ զօրավարն գնալ ըստ հրամանաց նոցա, և ոչ ինչ արտաքոյ կամաց նոցա խորհել կամ գործել ինչ: - 270. Մի ջանասցի քանզի յԱստուծոյ հաստատեալ է, և բառնալ զսա անհնար է, բայց թէ Աստուծոյ այնպէս հաճոյ իցէ՝ կամք Աստուծոյ կատարեսցին: - 144. միայն զի եկեսցէ ի բան արքունի և մի ելցէ արտաքոյ կամաց թագաւորին. – 288. միայն զմի ոմն կացուցանեն տիրել ի վերայ իւրեանց ըստ կամս անձանց իւրեանց, և միաբան և միախորհ կան և կեան առ միմեանս, և բնակեն ըստ ազգս ազգս, բացագոյն ի միմեանց: - 274. Յայնժամ իբրև գիտաց զօրավարն, եթէ յաջողեցաւ նմա ամենայն ինչ ըստ կամաց իւրոց և ըստ հրամանի ամբարիշտ թագաւորին, ի գլուխ ելին խորհուրդ չարութեան նոցա - 238. Յետ այսր՝ յերկրորդ ամի պաշարեն զԿարնային քաղաքն զօրքն Յունաց. և դարձեալ անդրէն ի կամս իւրեանց թողեալ գնացին: - 358. Նոյնժամայն իբրև կատարեաց զամենայն կամս չարութեան իւրոյ ի վերայ սրբոյ եկեղեցւոյ և /262/ կործանեաց կորոյս զբազումս ի գնդէն քրիստոնէից – 264. Ոչ կամեցար կամօք տալ զանձն ի ծառայութիւն մեզ, այլ տէր և թագաւոր կոչես զքեզ. զգանձն արքունի որ իմ առ քեզ է՝ ծախես, և զայդ ոչ գիտես, եթէ վաղիւ համարս տալոց ես: - 146. Որոյ յօժարութիւն կամաց ախորժակաց իւրոց էր մարմին և արիւն անմեղ մարդկան, առ ի յագումն անհնարին գազանաբարոյ կատաղութեանն: - 200. Որով օրինակաւ կամք քո հրամայեն՝ եկեսցէ ի վերայ մեր պատիժ պատուհասի. – 246. որք յակամայ կամս լքին զմարտն և ցածուցին զպատերազմն և ետուն զամուրն ի Գագիկ: - 362. Եւ նոյնժամայն եհաս հրաման յարքունուստ՝մի տաղտկալ և վհատել և մի ի բաց կալ պատերազմել ընդ նմա. մինչև եկեսցէ ակամայ կամօք ի հնազանդութիւն արքայի: - 284. ՎԱՍՆ ԹԱԳԱՒՈՐԻՆ ՋԱՓՐԱՅ, ԶՈՐ ԻՆՉ ԽՈՐՀԵՑԱՒ Ի ՎԵՐԱՅ ԱՇԽԱՐՀԻՍ ՀԱՅՈՑ, ԵՒ Ի ԳԼՈՒԽ ԵՀԱՆ ԶԿԱՄՍ ՉԱՐՈՒԹԵԱՆՆ, ԵՒ ՈՐ ԻՆՉ ԸՆԴ ՍՈՎԱՒ ՆԱԽ ՔԱՆ ԶԼՆՈՒԼ ՎԵՑԵՐՈՐԴ ՅՈԲԵԼԻՆԻ, ԵՒ ԵՕԹԱՆԱՍՈՒՆԵՐՈՐԴ ՈԼՈՄՊԻԱԴԻՆ, ՅԵՏ ԻՆՆԵԻՏԱՍՆ ԸՆԴԻՔՏԻՈՆԻՆ, ՅՈՐՈՒՄ ԲՈՎԱՆԴԱԿԻՆ ԺԱՄԱՆԱԿՔ ԲՌՆԱԿԱԼՈՒԹԵԱՆՆ ՏԱՃԿԱՅ ԱՄՔ ՄԻԲ ԸՍՏ ԹՈՒՈՑ ՀԱՅԵՐԷՆ ՏՈՒՄԱՐԻ. – 170. Իսկ Վաչէ Արծրունեաց տէր և Հմայեակ Աշոցաց տէր և այլք յանգուցեալ ի նոսա՝ հաճեցին զկամս Վռամայ – 118. և որպէս վերագոյն ասացաք՝ վասն հեզ և ցած բարուցն կամօք յանձն կրէր – 94.

ԿԱՅ - և նոցա պարտասեալք ի ծանրութենէ զինուցն և ի ջերմութենէ տապոյ արեգականն և ի սաստկութենէ աւազոյն, որ ոչ ունէր զկայ ոտից, և ի հետևակագնացութենէն և ամենեքումբք թշուառացեալք՝ անկան ի ձեռս թշնամեացն – 162.

ԿԱՅԵԱՆ - և բայացեալքն եթէ գազանք և եթէ թռչունք, յորժամ զգան զջերմութիւն օդոյն ի հասարակել տունջեան և գիշերոյ՝ ի գարնանային եղանակի ելեալք յիւրաքանչիւր կայենից. – 188.

ԿԱՅԷՆ - Եւ դարձեալ՝ եթէ յարոյց ինձ Աստուած զաւակ այլ՝ փոխանակ Հաբէլի զոր սպան Կայէն: - 24. և զինքն կերպագրեալ յորդին իւր սպանեալ ի Կայենէ: - 22. և յղացաւ և ծնաւ զԿայէն – 22. Զի նոքա վասն ի կանայսն մոլելոյ ընդ դստերսն Կայէնի խառնակելով՝ ջրով կործանեցան. – 336. Իսկ ասելն՝ ամենայն որ սպանանէ զԿայէն՝ եօթն վրէժս լուծցէ – 22. որում պատուէր տուաւ չխառնակել յանիծեալ զաւակն Կայէնի. -26.

ԿԱՅԻԱՆԱՆ - Ենովս լեալ ամաց ՃՂ ծնաւ զԿայիանան: - 26. Եւ են ի թուել մինչ ցայս վայր այսոքիկ. Ադամ, Սէթ, Ենովս, Կայիանան, Մաղաղայէլ, Յարէդ, Ենովք, Մաթուսաղայ, Ղամէք, Նոյ, Քամ, Քուշ, Նեբրովթ որս և Բէլ: - 36. Կայիանան լեալ ամաց ՃՀ ծնաւ զՄաղաղայէլ: - 26.

ԿԱՅԾԱԿՆ - որ ի բախմանէ քարի և երկաթոյ կայծակունք արտաթափին, այլ և ի փայտից ընդ միմեանս յիրար շփելոյ, որպէս և անուոյ բնաւորեցաւ լինել, որ ի սաստիկ շրջագայութենէ սայլիցն բազում անգամ և առեղք փայտիցն վառմամբ հրոյ հրդեհին: - 52. զի ի փռնգալոյ նորա կայծակունք հատանին և ընդ ռնգունս նորա ելանէ ծուխ հնոցի կայծականց, որպէս գրեալ է ի Յովբ: - 246. զի ի փռնգալոյ նորա կայծակունք հատանին և ընդ ռնգունս նորա ելանէ ծուխ հնոցի կայծականց, որպէս գրեալ է ի Յովբ: - 246.

ԿԱՅԾԱԿՆԱՎԱՐ - և զՀեփեստես ասեն կաղ յերկոցունց ոտիցն, և կայծակնավարս ունի ի ձեռնն աքցանս և կռանս, և նստեալ դարբնէ մարդկան: - 52.

ԿԱՅՍԵՐԱԼՈՒՐ - ունելով ընդ իւր զզօրսն Յունաց բազմամբոխ վահանաւորաց և դրօշուց սաւառնացելոց, և փողք կայսերալուրք և գունդք գունդք վառելոցն վաշտիցն – 106.

ԿԱՅՍԵՐԱԿԱՆ - և որդի Որմզդի Խոսրով գնաց փախստական առ Մուրիկ թագաւորն Յունաց՝ զոր առեալ քեռիք նորա Վնդոյ և Վստամ գնացին փախստական ի դուռն կայսերական: - 136. Արդ ոչ կարեմք փոյթ ընդ փոյթ շղումարար /ճիշտը՝ շղոմարար/ հաճութեամբ թագաւորիդ յանձն առնուլ՝ զոր հրամայէ կայսերական ճոխութիւնդ. – 132. և խոստանայ զբոլոր Հայս նուաճել ընդ կայսերական իշխանութեամբ. – 112. Եւ տայր նմա զօր կայսերական յօգնականութիւն, և զՅովհան պատրիկ ի Հայոց կողմանէ, և զՆերսէս ստրատեղատ յԱսիւրոց, և զՄուշեղ այր քաջամարտիկ և հզօր զօրութեամբ, և զամենայն զօրս Յունաց և Հայոց, Վրաց և Աղուանից – 138.

ԿԱՅՍԻԿ - Բայց չարեացն այսորիկ հաւատարմութիւն յայտ եղեալ հաստատեցաւ ի վերայ Կայսկին Ապլքառայ: - 342. Գրէ Կայսիկն առ թագաւորն՝ խնդրել զխաղաղութիւն, և զոր միանգամ կամիցի՝ եղիցի. յայտնիքն այսպէս, իսկ ծածուկքն՝ որպէս յայտնեցանն: - 380. և հեծելագունդ զօրացն Կայսկին զկնի նորա, զգացեալ զպատճառ ելիցն նորա ի բանակէն. որում ոչինչ գամագիտ կարացեալ լինել՝ դարձան ամօթալից կորակնեալք, յանգէտս համարեալ զինչ գործեցինն: - 342. և նա ձեռնամուխ եղև զընդ նովաւ հնազանդեալս ի բաց կորզել քեցել ի նմանէ շրջաբերական թղթովք, զիշխան Վասպուրական զԴերանիկն, զԱպլքառ Կայսիկ զբռնաւորն Ապահունեաց, նմանապէս և զայլսն զոր և կարաց հրապուրել. – 350. Իսկ որ տիրէր աշխարհին Ապահունեաց Կայսիկն՝ զիւր զօրսն առ ինքն գումարեալ և որ շուրջ զնովաւ քաղաքայինք և ասպատակքն Պարսից, որք ի Յունացն վերայ առնէին արշաւանս: - 380. Քանզի և զոստանն Նախճաւան տուեալ էր ի կալուած զյաղթութեանն մանազաւենին Կայսկի: - 382. ելեալ իշխանքն Հայոց յանձնիւր տեղեաց գնացին յանդիման լինել նմա, Դերանիկն, տէր Գագիկ և տէր Գրիգոր և միւս այլ տէր Գրիգոր Վասպուրական իշխան, Աշոտ կորապաղատ Հայոց իշխան, Մուշէղ իշխանն Մոկաց, Շապուհ եղբայր իշխանաց իշխանի և Ապլքառ Կայսիկ Ապահունեաց բռնաւորն և այլք ոմանք: - 340.

ԿԱՅՍԻԿՔ - Զի որդիքն Աբդռհամանի, որ Կայսիկքն անուանին՝ ապստամբեալ էին ի պետութենէ թագաւորին տալ հարկս և զինուորել որպէս օրէն էր: - 380. Իսկ Կայսիկքն և որք ընդ նոսա և զօրքն Պարսից զմարտն ի գաղտնիս գրգռէին – 380. ՎԱՍՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԵԱՆ ՏԱՃԿԱՑՆ ՈՐ ԿԱՅՍԻԿՔՆ ԿՈՉԻՆ ԵԻ ԻՇԽԱՆԻՆ ՍԻՒՆԵԱՑ Ի ԹԱԳԱՒՈՐԵՆ /ՃԻՇՏԸ՝ԹԱԳԱՒՈՐԷՆ/ ՍՄԲԱՏԱՑ, ԵԻ ԴԱՐՁԵԱԼ ԵՐԿՈՑՈՒՆՑ ՀՆԱԶԱՆԴՈՒԹԻՒՆ: - 380.

ԿԱՅՍԿԱԶԵՆԻՑ ԳՈՒՆԴ - Զկնի այսորիկ յառաջ խաղացեալ Ահմաթ և որ ընդ նմա կայսկազենիցն գունդք, երթեալ մտանել ի քաղաքն Դուին, թերևս կարասցէ ի կատարումն՝ զոր ինչ խորհեցաւն՝ հասուցանել զչարիսն: - 344.

ԿԱՅՍՐ - առ որ զչարեալ Արէտ՝ խորհէր վրէժ առնուլ զանարգանաց դստերն, և ոչ իշխէր համարձակ յինքնակալէն Օգոստեայ Տիբէրի կայսեր:-78. Արկադեայ կայսեր թագաւորեալ ամս ԻԳ մեռանի սաստկակոծ պատուհասիւ յաղագս մեղանացն առ Յոհան Ոսկեբերան: - 114. Բայց դեսպան արձակեալ Արտաշէսի զՀամամ առ կայսր Աղրիանոս վասն Բարքոբայ աւազակի և նորուն պատերազմին յԱսորիս.– 92. բայց թէպէտ և ետ օգնականութիւն Հայոց կայսրն Վաղէտիանոս Փռիւգացի զօրօքն՝ սակայն ոչ

խաղաղանայր երկիրս – 94. Բայց ի գնալն Խուրէնայ առ Տիբէր կայսր՝ եթող զորդին իւր զՎաչէ և զեղբայր իւր զԱրշաւիր ի Խառան առ տիկնոջն Հեղինէի. - 80. ալ Տերինտեայ զօրավարին Յունաց՝ խաղացուցանէ կապանօք առ կայսր – 108. Բայց ինքն Պապ նշկահեալ զկայսր Թէոդոս, զոր ի բուռն առեալ Տերինտեայ զօրավարին Յունաց՝ խաղացուցանէ կապանօք առ կայսր – 108. բայց մնայ ի հարստութեան Պտղոմէականն միայն, մինչ տիրել Կղէոպատրեայ կնոջ միոյ եգիպտացւոյ որ յետ բազում ժամանակաց, մինչև յՕգոստոս կայսր: - 72. գրէ թուղթ հաւատոց առ Ղևոն կայսր Յունաց, և ընկալեալ ի նմանէ պատասխանիս՝ բազում ինչ ի Կուրանէ անտի իւրեանց արտաքս ընկէց զյոյժ առասպելագոյնն, քանզի ստուգապէս ծանեաւ զզօրութիւնն. – 166. գրէ հրովարտակ նախատանաց առ կայսր, որ ունէր օրինակ այս. – 146. դիմեցին առ կայսրն Վաղէտիանոս, թէ հնար ինչ իցէ առնուլ զվրէժ արեան Խոսրովու և ի/92/ վերջ նահանջել զբռնակալութիւն Ստահրացոյն. – 94. Ետ և կայսեր զամենայն զոր և կամեցաւ առնուլ. – 152. և անդ սպանին հրամանաւ կայսեր, թագաւորեալ ամս Ջ: - 108. Եւ եղև յամի չորեքտասաներորդի Խոսրովայ արքայի, ի քսաներորդ ամի Մուրկայ թագաւորութեանն՝ ապստամբեցան ի կայսերէ զօրքն Յունաց, որք ի Թրակացւոց կողմանէն – 140. և զի չև էր դարձեալ պատասխանի յարքայէն՝ հրաման եհաս ի կայսերէ առ Վարազդատ անյապաղ առ նա հասանել: - 110. և էր ամ վեշտասաներորդ Տիբերի կայսէր: - 78. Եւ թագաւորեաց կայսր Թէոդոս փոխանակ Պապայ զՎարազդատ ոմն յԱրշակունի տոհմէ, այր քաջ և պատերազմող, ահարկու մեծամեծաց և փոքունց. – 108. Եւ ի հասանելն նորա ի Թէոդոսի քաղաքն ի Կարին գաւառ՝ եհաս լուր նորա առ կայսր Միքայէլ թագաւոր Յունաց. – 316. Եւ կայսր Մուրիկ հաւանեալ նմա՝ յղէր առ նա զՓիլիպիկոս փեսայ իւր. և տայր տանել նմա գիր ընդունելութեան, և առնոյր ի նմանէ երդումն: - 138. Եւ կացեալ անդ մինչ ի ժամանակս առաջինն Ղևոնի կայսեր՝ մեռանի անդ Վասակ և Տաճատ և փոխին ի հանգիստ փառաւորապէս ի գերեզմանս մեծամեծացն Յունաց: - 132. Եւ կացեալ Շաւասպ առ կայսեր ամս Դ: - 116. Եւ Կաւատ արքայ հաստատեցաւ յաթոռ թագաւորութեան և արար խաղաղութիւն մեծ ընդ կայսեր և ընդ ամենայն երկիր իշխանութեան իւրոյ: - 152. Եւ հաստատեցաւ Խոսրով յաթոռ թագաւորութեան, և զխոստացեալսն կայսեր՝ կատարեաց. – 140. Եւ հրամանաւ ինքնակալին Թէոդոսի կայսեր հաւատայ նմա զհազարապետութիւն բաժնին Հայոց, զՄիջագետս մինչև ի յանցս Եփրատ գետոյ: - 116. Եւ մինչդեռ զայս խորհէին՝ եհաս լուրն առ կայսր ի ձեռն Տիրենտեայ զօրավարին. – 110. և ոչ առ զխաղաղութիւն մինչև ի Պռոբոս կայսր, որ արար խաղաղութիւն ընդ Արտաշրի: - 94. և սա նշկահեալ զկայսերքն՝ յղէ առ Շապուհ արքայից արքայ նուաճել ընդ նմա – 108. Եւ քանզի յետ մահուանն մեծին Սահակայ Բագրատունոյ սպարապետի ասպետի և զօրավարի Հայոց, հաւատացեալ էր Թէոդոսի կայսեր զսպարապետութիւնն Հայոց Համազասպ Մամիկոնէի և որդւոյ իւրում Վարդանայ – 122. Ընդ ժամանակս Հայրակղի կայսեր Հռոմոց էր հասեալ ի վախճան թագաւորութեանն Պարսից: - 156. Ընդ ժամանակսն ընդ այնոսիկ թագաւորէ Յունաց Վաղէս կայսր, և Պարսից՝ Շապուհ արքայից արքայ: - 100. թէպէտ և ոչ համարձակեաց զամենայն բառնալ, այլ յոյժ պատկառանօք ամաչեցեալ՝ լքաւ ի ստութենէ անտի, որ յանդիմանեցաւ ի թղթոյ կայսերէն, և ի ձեռն այսորիկ ցուցանէր բարեմտութիւն մեծ առ ազգս /166/ քրիստոնէից. – 168. Իբրև ետես կայսր Հայրակղէս զչարիսն ամենայն, որ եկին հասին ի վերայ նորա՝ ակամայ կամեցեալ ցուցանել բարեկամութիւն՝ ել ընդ առաջ նոցա, մեծարել իբրև զվաստակեալս և զիւրս, ընկալաւ զնոսա մեծամեծ /142/ ընծայիւք. – 144. Իսկ զհարկացն տուրս յարքունիսն Կեսարու՝ ի ձեռն դպրապետին վճարէ առ կայսր. – 96. Իսկ թագաւորն գրէ առ զօրավարն թերևս կարասցէ հաւանեցուցանել զԳուրգէն՝ երթալ ի թագաւորական քաղաքն առ կայսր, և մեծաց պարգևաց և պատուի և գահու յառաջագութեամբ ընկալցի պարգև ի թագաւորէն: - 302. Իսկ թագաւորն Պարսից ընդունէր զպատարագսն բերեալս ի կայսերէն, /144/և զիրեշտակսն անդրէն ոչ արձակեաց, և ոչ հրովարտակացն պատասխանի առնէր. -146. Իսկ Մեհուժան ծանեաւ զինչ պատահելոց էր նմա ի կայսերէ

և ի նախարարացն Հայոց, ոչ յաւել դառնալ ի Հայս. – 110. Իսկ Վասակ Արծրունի, հայր Աղանայ սրբոյ, առեալ զՏաճատ և զԳոտեր զեղբայր իւր՝ գնաց առ կայսր. մեկուսի եղեալ ի շփոթմանց պարսկական վրդովմանցն և աւերման աշխարհիս. – 132. ճողոպրեալ Գարեգինն անձնապուրծ գնաց փախստեայ առ կայսրն Յունաց. – 102. Մարկիանոս կայսր թագաւորեալ Յունաց յերկրորդն Թէոդոսի, որ արար զժողովն ի Քաղկեդոն ՈԼԳ եպիսկոպոսաց. առ որով վկայեաց սուրբն Վարդան և Վահան Արծրունի: - 132. մի գուցէ ոչ առնելով իմ զոր խնդրեն՝ առ կայսր հատուածեալ անկանիցին նախարարքն, հարկել և զինաւորել կայսեր: - 118. մի գուցէ ոչ առնելով իմ զոր խնդրեն՝ առ կայսր հատուածեալ անկանիցին նախարարքն, հարկել և զինաւորել կայսեր: - 118. նա և հաւատարմութիւն իւրեանց առեալ զթուղթսն սրբոյն Սահակայ առ կայսրն և առ հայրապետն – 118. Որ և հուպ ժամանակաւ վախճանի և կայսր Թէոդոս, և առնուն զթագաւորութիւնն Ոնորէոս և Արկադ որդիքն Թէոդոսի: - 110. Սահակս այս այն Սահակ է, որոյ հրամանաւ գրեաց մեծ վարդապետն Մովսէս տիեզերահռչակեալ քերթողն զգիրս Պատմութեան Հայոց մեծաց, հրաշազան յօրինուածով, սկսեալ յԱդամայ մինչ ի կայսր Զենոն. – 122. Վախճանեալ կայսր Վաղէս, և թագաւորէ Յունաց մեծն Թէոդոս. – 108. Քանզի Վարդան անցեալ գնացեալ էր սուրբ վարդապետաւն Մաշտոցիւ առ կայսր Թէոդոս և առ Ատտիկոս արքեպիսկոպոս հանդերձ թղթովք սրբոյն Սահակայ, տանելով ընդ իւրեանց և զգիր և զբառ հայերէն դպրութեան. – 116.

ԿԱՅՏԱՌ - Եւ ծնան նորա երիս որդիս, Սարգիս որ և Աշոտ՝ ՅԻԶ թուականութեանն Հայոց, Խաչիկ որ և Գագիկ ՅԻԸ, և Գուրգէն. մանկունք կայտառք և գեղապանծք և բարենշանք և ամենեցուն ցանկալիք. ծնաւ և երկուս դստերս: - 338.

ԿԱՅՏՌԵԼ - և յորժամ զգան ջերմութեանն՝ զուարթանան զուարճանան, հրճուին կայտռելով ի վեր փքալով հասանել ի ջերմագոյն վայրսն, ի ջրշիղջսն ծովափնեայս ջանան հասանել – 260. և ցնծային հրճուէին կայտռելով, բերկրեալ և ուրախացեալ սրտիւ – 266.

ԿԱՆԱՆՑԱԲԱՐՈՑ - զի մի /68/ վատութիւն քան զքաջութիւն ճոխասցի, որ կանանցաբարոյիցն քաջ յարմարի, թէպէտ և յարիւն և յապաժոյժ զզօրսն կենացն առնուցուն,,: - 70.

ԿԱՆԱՑԻ - ,,ա՛ղջկամարդ, ի բաց լեր յասպատակէ ասպարիսիս, ա՛յր կանացի, և ծանի՛ր զքեզ,,: - 114. և առեալ ի ձեռանէ նորա զսուսերն շողացուցեալ՝ հայեցաւ /266/ յայսկոյս յայնկոյս և ասէ, ,,ո՛վ անարի վատ արանց և կանացի այր, թշուառական զինուոր, շուն անպիտան տեառն իւրոյ,, - 268. և կանայք կոտորելոցն հանդերձ խառնիճաղանճ ամբոխիւն լրբենի դիմօք, հոլանեալք և ի բաց ընկեցեալ զձև կանացի բնութեան, որպէս օրէն է նոցա, մանաւանդ տաճկական ազանց, և ի հետիոտս դիմեալք ի դուռն արքունի հասանէին: - 180. Իսկ զվատացն և զնուազագունիցն՝ լոյծս և կանացիս, և միայն վերնագրութեամբ և եթ նշանակեալս: - 42. քանզի ի ներքս նստելոյ յարքունիս՝ ոչ ոք տեսանէր զնոսա, բայց թէ հարճք և ապրք կանացիք: - 56.

ԿԱՆԳՆԵԱԼ - և քահանայքն բարձեալ ի վեր զսուրբ Աւետարանն և նշանակ իւրեանց կանգնեալ զնշան Խաչին – 232. զոր և անդրի ոսկեղէն կանգնեալ թագաւորին Բաբելացւոց՝ արձան քաջութեան առ ի յիշատակ: - 38. Իսկ նոցա անմեկնելի զոյսս իւրեանց ի Քրիստոս ունելով, բնաւից գերագոյն և հոյակապ անուն ստացեալ, զյաղթութեան նշանակ կանգնեալ. - 308. Խորտակէր և զնշան տէրունական Խաչին, զոր ուրեք ուրեք կանգնեալ լինէին. քանզի յոյժ ստիպէր զնա հոգին մոլեկան: - 168. նշանս կանգնեալ և փողք և քնարք հնչէին և թմբուկքն դափէին – 208.

ԿԱՆԳՆԵԼ - Այլ ճշմարտագոյնք են Սողոմօնեանքն, զի ասէ, ,,վա՛յ միումն. յորժամ գլորիցէ, ո՞ յարուցանիցէ զնա,,. և եթէ ,,լաւ են երկուք քան զմի, զի եթէ միովն գլորիցի ոք՝ կանգնեսցի,,: - 354. Եւ զգեցոյց նոցա հանդերձս և կանգնեաց նշանակ իշխանական և էած սուսեր ընդ մէջ և կամար ականակապ և երիվար ընտիր մեծազարդ. – 314. և ետ հրաման ահիւ մեծաւ՝ ամենայն ուրեք կանգնել զպատկեր իւր և երկիրպագանել իբրև աստուծոյ և զոհս մատուցանել. – 40. և ի վերայ նորա կանգնէ զԱստղկեան պատկերն, և մօտ նորա զտուն գանձու պաշտպանութեան կոտցն. – 88. և կանգնեցին պատնեշս և շինեցին

ապարանս և արարին տուն բնակութեան – 276. և կանգնեցին պատնէշ և կուտեցին քարինս և կանգնեցին մեքենայս և կացին ի պատրաստութեան: - 280. և կանգնեցին պատնէշ և կուտեցին քարինս և կանգնեցին մեքենայս և կացին ի պատրաստութեան: - 280. և կարգեցին ճակատս, և բոլորեցին ռազմ, և գունդս գունդս յընտրելոց զօրացն ըստ ազգս ազգս, շուրջանակի ի ներքս փակեցին զլեառնն և դրօշս և նշանս բարձրագոյնս լայնատարածս կանգնեցին. – 280. զի թէ կարացից հարկանել զթշնամին իմ և կանգնել զթագաւորութիւնն իմ՝ ես եղէց քեզ որդի հնազանդութեան - 136. Իսկ եթէ սովորութիւնն այլանդակեալ ի չարէն ի սոյն, կանգնել պատկերս սկայից և քաջաց և բարբարոսական թագաւորաց ի պատիւ – 40. Մինչդեռ կայր ևս կենդանի՝ ետ կանգնել փայտ մի մեծ և բարձր յոյժ, և դնել զնա ի ծայր փայտին, ունել ի բարձրաւանդակ տեղւոջ. – 290. Նմանապէս, կամ թէ ևս հրաշափառագոյն զյաղթութեան մարտսն յօրինեալ յարդարեաց զպարտութիւն ի վերայ ազգին Իսմայէլի մեծ զօրավարն Գուրգէն, և իսպառ կանգնեաց զնշանակ յաղթութեան ամենևին ամենայն ուրեք ընդ ամենայն տեղիս. – 312. որ և ամբարտաւանեալ մոլեգնականս տալ հրաման զանխորհուրդ միաբանութեան զրաջան վաստակոց, կանգնել բուրգն յերկրէ, որոյ գլուխն հասցէ յերկինս. – 40. սա վերստին կանգնեաց զթագաւորութիւնն Նէբրոդայ, որ ասաց զինքն Բէլ: - 56. քանզի գրեալ է, ,,թագաւոր արդար կանգնէ զաշխարհ, կործանումն է աշխարհի թագաւոր անօրէն,,: - 182.

ԿԱՆԳՆԻԼ - և հարկացն արքունի կանգնեցան դիւանքն, զի այն Ե ամ բեկեալ հարկք և զաւրք ի յարքունէ Պարսից: - 116. և մի եղիցի յիշատակ սորա ընդ սոցա, որք թէպէտ և վրիպեցին և կործանեցան՝ սակայն և ապաշաւեցին և կանգնեցան յետ դարձին իւրեանց ի մեծ կարաւանէ գերութեանն ի միջոյ ժանեաց բռնաւորին. – 248.

ԿԱՆԳՆՈՒՄՆ - գլորումն, քան թէ կանգնումն յառաջատեն – 384.

ԿԱՆԳՈՒԱՐ - և Գուրգէն դարձեալ գնաց յաշխարն իւր յամուրն Կանգուար: - 364. Եւ ելեալ գնաց եմուտ յամուրն Կանգուար, և կատարեալ զոր ինչ ախորժեացն՝ տիրեաց Անձաւացեաց մեծաւ զօրութեամբ: - 324. և եկեալ կացին մօտ առ Կանգուար բերդ, և պատերազմեալ զամիսս Բ՝ ոչ ինչ գործ ի գլուխ ելեալ ըստ ախորժման. – 332. Զնոյն տեսեալ ազատացն Վասպուրականի, անտանելի մնալով առ դիպուածն զոր ինչ գործեաց Ապումրուան՝ ելին գնացին առ Ատոմ որդի մեծին Գուրգինայ յամուրն Կանգուար, գտանել զելս իրացն – 364.

ԿԱՆԳՈՒՆ - զի երկիր ի շինութեան լինելով և ի խաղաղութեան՝ և հարկք արքունի կանգուն երթիցեն: - 186. քանզի ասեն զբարձրութիւն նորա լինել վաթսուն կանգուն. – 38.

ԿԱՆԽԱԾԱՆ - և կանխածան իմն ոգւովն Աստուծոյ ասէ զնա գոլ որդիս – 22.

ԿԱՆԽԱՎԱՂ - և կանխավաղ ցրմամբն ի վերուստ՝ զմիաբարբառ լեզու մարդկութեան շփոթեաց յայլաբան խլրտիւնս. – 40.

ԿԱՆՈՆ - Արդ որպէս յառաջագոյն ասացաք՝ սակս կարևոր յուզմանցն միապետեալ ի շարս կանոնաց, միայն յայտարարութիւնս առնել զազգացն Արծրունեաց – 96. և պաշտօնեայքն կատարէին զտէրունական կանոնն – 232. ի կանոնի անդ գտցես զՆինոս և զՇամիրամ և զԱբրահամ և զվեշտասաներորդ հարստութիւն Եգիպտացւոց, և ի չորրորդ դպրութեանն Յուլիանու Աղիկառնացւոյ, որպէս և ի չորրորդ դպրութեանն Մովսէսի: - 18. քանզի ոչ էր օրէն թագաւորացն և օրինադրացն զկանանց ազգի թիւ ազգաբանութեան շարել, բայց միայն ըստ ժամանակագրութեանն կանոնի, որպէս և յԻսրայէլի զԳոթողիայ, և յԵգիպտոս զԿղէոպատրեայ դուստր Պտղոմեայ Դիոնիսեայ: - 16.

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ - Նոքա պատասխանեալ ասեն. ,,վասն զի մեք ի պարսկական հինիցն անդուլ և անպարապ գոլով ի բաց լքաք զկրթութիւնն գրոց սրբոց՝ առ ընտրել զհաւատոց խոստովանութեան կանոնադրութիւն. – 132.

ԿԱՆՈՆԱԿԱՆ - զի թէպէտ դառնալով դարձան յայտնապէս յերկրպագութիւնն Քրիստոսի Աստուծոյ մերոյ՝ այլ զկանոնական սահմանադրութիւնսն ոչ բերելով ուղղակի, ոչ միայն Աշոտ, այլ և ամենայն իշխանքն Հայոց, որք գերադարձքն եղեն. – 336. սակայն կանոնական սահմանադրութեանն արտաքոյ մնացեալ, գայթ ի գայթս

զքրիստոնէութեանն վարս բերելով անառակութեամբք և արբեցութեամբ, խառն անկողնօք և պղծութեամբք աղտապիղծ սարսափելի և գարշելի խառնակութեամբ արուապղծութեամբք – 336.

ԿԱՆՈՆԵԱԼ - և զի հաւասարութիւն երից ազգացն, այսինքն որդւոցն Նոյի, կարգաւ կանոնեալ դրոշմեալ կան յոլովից գիրս ոչ է մեզ հարկաւոր զնոյն երկայնաբանութեամբ երկրորդել: - 12. Իսկ ի դառնալ գրոցն ի յաշխարհն Մոկաց՝ ոչ ինչ ումեք փոյթ վասն այն լինելով, կարծել՝ վարդապետին զայս այսպէս կանոնեալ. – 130. Հաւաստիս այս մեզ Եւսեբիոս Կեսարացի, Յուլիանոս Աղիկառնացի՝ ստուգաբանեն զթագաւորս Ասորոց ի զաւակէ Սեմայ զաճմունս առնել, որպէս ի կանոնեալ սահմանէն իմանալ: - 14.

ԿԱՆՈՆԵԼ - բայց զանուանս միայն ըստ կարգի կանոնել բաւական հանարեցաք, որպէս և այլոց առաջնոցն մատենագրացն յայս եկեալ ձև պատմագրութեան. – 68. բայց կանոնեցի զանուանս ի մատենիս: Տիգրան. Ադրամելէք. Ներս. Ներսէխ. Մարոդ. Արշամ. Արշաւիր. Ասուդ: Պարսից թագաւորք. Քսերքսէս. Արտաշէս երկայնաձեռն. Դարեհ. Արտաշէս. Ողոքոս. Զարսէս. Դարեհ: Ապա Աղէքսանդրոս Փիլիպպեայ Մակեդոնացի տիեզերակալ թագաւոր: - 68. և հրաման հարկեցուցանող ճոխութեան քո ստիպէ զմեզ, ճեպել փութալ առ գիւտն հանդիսանալ և կարգել ոճով զփափագելին յայտարարական գրով, դրոշմել կանոնել ի գիրս աստ – 12. Եւ յետ այսորիկ որդիք նորա Գագիկ և Աշոտ և Գուրգէն կանոնեցին զյիշատակութիւն նոցա ի տօնի սրբոյ Խաչին – 356. յերկրորդն հարկ է մեզ զոճն կանոնել, որ յետ Նոյի և անդր ազգացն բաժանմունք յառաջ խաղան, ըստ ցեղից ցեղից ի կարգ անկեալ աշխարհաբաժին ցեղակարգութեամբ. – 12.

ԿԱՆՉԵԱԼ - յորոյ վերայ կալեալ և կանչեալ քաջն Վարդան իբրև զառիւծ, իբրև զկորիւն առիւծու, և առ ուժոյ և երագութեան ձեռինն ի վերայ ձգեալ զմիողնին՝ յերկուս կտրէ զՇաւասպն: - 126.

ԿԱՆՉԵԼ - Եւ վազէր ընդ բանակն, կանչէր, հնչէր, շարժէր զձեռնն և ասէր, ,,ես քրիստոնեայ եմ, քրիստոնեայ եմ,, - 224. իբրև զարծուիս կանչելով, իբրև զկորիւն առիւծուց ի վերայ որսոյ հասեալ բեկանէին: - 174. քաջքն խիզախէին, /208/ սաղարքն կանչէին, նահատակքն գոչէին – 210.

ԿԱՇԱՌ - ,,իշխանք ձեր ապստամբք, ասէ, գողակիցք են գողոց, սիրեն զկաշառս, վրիժապարտք են: - 182. և դարձեալ՝ թէ ,,զգերութիւն ժողովրդեան իւրոյ դարձուսցէ, ոչ կաշառօք և ոչ պատարագօք, ասէ Տէր,,: - 218.

ԿԱՇԿԱՆԴԵԱԼ - և ի բաց լերուք ի սնոտի և ի մոլար պաշտամանէ ձերմէ, որ վասն Քրիստոսի էք կաշկանդեալ ի մեծ յամառութեանդ: - 244.

ԿԱՊԱԿՑՈՒԹԻՒՆ - Եւ Գուրգէն երկրորդ հրեշտակս յղէ առ նա զայս օրինակ, եթէ ,,ընդ իս հաստատեա զանզրաւ կապակցութիւն ուխտի խաղաղութեան. և ես ապստամբեցայց յԱշոտէ, և ի միասին բաժանեալ զերկիրս կեցցուք յապահովս,,: - 316. Եւ քանզի էին երեքին սոքա անքակ անխզելի առ միմեանս, զմիաբանական կապակցութիւն շաղկապեալ, Աշոտի և Գագկայ և Գուրգինայ, որդիք Դերանկին – 364. Իբրև յանդիման եղեն դեսպանքն մեծ /172/ իշխանին Աշոտոյ, և ընթերցաւ զգիր պաղատանացն և զյիշատակարան նախնեացն, և զմերձաւորութիւն հարազատութեանն և զկապակցութիւն ուխտին … համագունդ ժողով առնէր ամենայն աշխարհին և ամենայն նախարարօք Վասպուրական տէրութեանն: -174.

ԿԱՊԱՆՔ - Յայնժամ ետուն զոտս նորա ի կապանս երկաթիս, և ընդ նմա զտէր Գրիգոր Արծրունի – 238. անդ կեցեալ և մեռեալ ի նմին ի կապանս: - 84. արկանել զնա ի կապանս և ի տանջանս մահաբերս, զամուրսն յինքն գրաւել, զաշխարհն տալ ի ձեռս իւրոյ գործավարացն, ըստ պարսկայնոցն հատուցմանց հատուցանել նոցա: - 370. Արջամ թագաւորեալ Հայոց՝ զազգն Բագրատունեաց արկանէ ընդ բազում տառապանօք, վասն արձակմանն Հիւրկանոս քահանայի ի կապանաց բանտին – 74. Բայց Ապումրուան զԳագիկ որդի Դերանկին պահէր ընդարձակի, հանեալ ի կապանաց բանտին: - 368. Բայց Դերենիկն կալեալ զնա պահէ ի զգուշութեան, ոչ ինչ ստնանել նմա, բաց ի կապանացն

յորս արկեալ էր զնա, ըստ հատուցմանն բարւոյ. առ ձեռն պատրաստ կշռեաց նմա և օրհնեցաւ ի սրբոյն Զաքարիայէ: - 320. ինքն Պապ նշկահեալ զկայսր Թէոդոս, զոր ի բուռն առեալ Տերինտեայ զօրավարին Յունաց՝ խաղացուցանէ կապանօք առ կայսր – 108. Գեղեցիկ էր և տեառն Գրիգորի Արծրունւոյ՝ ոչ անփոյթ առնել և զիւրոյ համանուանն զսրբոյն Գրիգորի առնուլ յանձն զխաւարամուտն լինել ի խորին խաւարային վիրապն կապանօք հանդերձ. – 250. եդին զոտս նոցա ի կապանս երկաթիս և բարձին ուղտուց և խաղացուցին ի Սամառայ. – 296. Եւ հանեալ զԱշոտ և զԳուրգէն ի կապանաց՝ տիրեցին զօրութեամբ մեծաւ իւրեանց բնիկ իշխանութեանն, և կէին յանհոգս յանկասկածս այնուհետև: - 370. և աղերսեալ զիշխան Դերենիկ, զի լուծցէ զնա /320/ ի կապանացն: - 322. Եւ եղև իբրև ննջէր Գագիկ յանհոգս յանկասկածս՝ հասեալ Հասան ի գիշերի սուսերամերկ վառեալ փոքր գնդաւ, մոմեղինօք վառելովք՝ և կապեաց զնա կապանօք երկաթի: - 350. և զիշխանն Աշոտ տալ տանել կապանօք առ թագաւորն – 202. Եւ ծառայ մի Դերենկին որ բանտապանն էր՝ լուծեալ զնա ի կապանացն՝ և տարեալ մուծանէ ի սենեակն ուր ննջէր Դերենիկն. – 320. և կարիցես զիշխանս Հայոց կապանօք առ մեզ հասուցանել, մանաւանդ զիշխանն Վասպուրական զԱշոտ՝ քեզ և զաւակի քում տաց զերկիրն զայն ի ժառանգութիւն: - 184. Եւ կացեալ սուրբքն ի կապանս զերիս ամս ի ներքին բանտին: - 252. Եւ նորա ըմբռնեալ զնա և զամենայն ազգատոհմն նորա ի տանէ Բագրատունեաց և կապեալ երկաթեղէն կապանօք՝ խաղացոյց ի Սամառայ: - 186. և նորա կալեալ զնա և ի կապանս մատնեալ որպէս զանհնազանդ ոմն՝ և եկն անց յՈստանն Ռշտունեաց: - 322. Զայս զգացեալ Երուանդայ՝ ետ տանել զՍահակ կապանօք յԱրմաւիր. – 84. զիշխանս և զտեարս կողմնակալս և զկուսակալս աշխարհին, զազատս և զազատորդիս փութով առ մեզ հասուսջիք կապանօք – 198. Իսկ զձերբակալսն յղեցին առ Աւշին ի Պարտաւ, որք տուեալ ի կապանս բանտի և դատապարտեցան ի մահ, սրախողխող միջակտուր արարեալ: - 372. իսկ իբրև ընդդէմ կացին լեռնայնոցն գունդքն Տաճկաց և հարին զլեռնայինսն՝ ձերբակալ արարեալ զերանելին Յովնան տարան ետուն կապանօք ի բանդ արքունի: - 294. Կապէ երկաթի կապանօք և տայ տանել յԱնուշ կոչեցեալ բերդն ի սահմանս Տիսպոնի. – 102. մինչ կային ի կապանսն իշխանն և նախարարքն իւրաքանչիւր ընտանեօք – 220. Յայնժամ հրամայեաց բռնաւորն կապել զնոսա երկաթի կապանօք և դնել ի բանտի: - 250. Նորա ծաղր արարեալ զնովաւ՝ ընտրեաց զկապանս և զբանդ, նաև զմահ քաջութեամբ վասն անուանն Քրիստոսի, քան զկեանս խղճիւ: - 318. որոյ դիպող ժամ գտեալ ի միասին կալով նոցա՝ կալեալ զնոսա տայ յամուրս աշխարհին, կապեալս կապանօք երկաթեօք. – 364. որով առնիցեն ելանել ի կապանաց իշխանին Աշոտի և Գուրգինի, և դարձուցանել զիշխանութիւնն անդրէն առ իւրեանս – 368. Որոց կապեալ զԳուրգէն երեքկին կապանօք և դարձեալ ի պարանոցն եդեալ շղթայս՝ յղեն ընդ Ատրպատական Պարսից և տան ի բանդ ընդ կապեալսն. – 318. պատրաստ եմք ի կապանս, ի բանտս, ի գանս, ի հուր, ի սուր, ի ջուր, ի տանջանս հարուածոց և յամենայն հնարս չարչարանաց,,: - 246.

ԿԱՊԱՐ - որ զջրհեղեղին իրս գուշակեաց Քսիւսիւթրեայ, և զառաջինս իւր գործոց բնաբանապէս գրել և դնել յաման պղնձի մածեալ կապարով ի պահեստի ի Սիպարացւոց քաղաքին: - 36.

ԿԱՊԱՐՃ - Ելեմացիք, ասէ, առեալ զկապարճս, հեծեալ յերիվարս. – 210. և զփքինս կապարճիցն սպնգով ծածկեալ՝ զսատակչական զօրութիւնն թռուցանէր ընդդէմ սրբոյն – 204. և կամ ո՞ւր վատնիցէ թափիցէ զբազմութիւն նետից ի կապարճից խորհրդանոցին, չարին հնարիմացութեան: - 170 և մուտ եղեալ ի տեղին … ետուն տանել զթուղթն, լի թիւնիւք սատանայական իմացմանց, իբրև զկապարճս լի նետիւք դեղեալ ի գաղտնիս ի գրկաց թռուցանել ի նպատակն: - 234. կապարճս և աղեղունս պատրաստականս զառաջեաւ ի նիւսն ունելով, և զարդս ոսկեզարդս և արծաթագործս և կամարս ընդ մէջ ածեալ – 208. վահան ի թիկունս եդեալ, նիզակ ի ձեռին ունելով, ի կապարճս աղեղանց ի դիմի հարեալ զօրացն – 202.

ԿԱՊԱՐՃԱԿԻՐ - մինչ նոքա գունդ առ գունդ ընդդէմ միմեանց ճակատեալ կազմէին զռազմն, և փողքն գոչէին և դրօշքն տարածանէին և նշանքն փողփողէին, վահանաւորքն և նիզակաւորքն գոչէին, այրուձին այսր անդր վազս առնէին և ախոյեանքն յարձակէին, կապարճակիրքն աղեղանցն յուրային: - 174.

ԿԱՊԱՐՃԱԻՈՐ - Եւ իբրև ստուգեաց և տեղեկացաւ զամենայն՝ եգիտ բազմագոյն քան զամենեսեան զկապարճաւորս և զկորովիս աղեղնաւորացն Ելեմացւոց և Արաբացւոց, աջողակք յերկոցունց ձեռաց – 200.

ԿԱՊԵԱԼ - ամենայն հնարիւք խորամանկութեամբ կապեալ անլոյծ զօտեամբ ընդ ոգւոյ երիցս թշուառականին – 248. Արդ ի հասանել նամակիդ՝ փութով զԳուրգէն և զազգատոհմդ իւր հանդերձ ազատօքդ Վասպուրականի կապեալս առ մեզ հասուսցես: - 236. Եւ եղև ի մտանելն նորա ի քաղաքն, ունելով ընդ իւր կապեալս բազումս և գերեալս, որոց ոչ գոյր թիւ. – 262. և զիշխանն Աշոտ և զորդի նորա Գրիգոր և զՎահան Արծրունի և զորդի նորա Գագիկ … և զՄուշեղ եղբայր Վահանայ և զտիկնայս նոցա և զտիկինն Հրանուշ և զայլս յազատատանէ կապեալ և բարձեալ ի վերայ ուղտուց՝ վտարեաց ի Սամառայ – 220. և ինքն ել գնաց երթալ մտանել ի քաղաքն Դուին, ձմերոց ինքեան պատրաստեալ գնա, մինչ ի ժամ գարնանայինս, ունելով ընդ իւր կապեալս բազումս. – 240. և հրամայեաց ածել առաջի զկապեալսն, հարցանել և լսել ի նոցանէ: - 242. Եւ նորա ըմբռնեալ գնա և զամենայն ազգատոհմն նորա ի տանէ Բագրատունեաց և կապեալ երկաթեղէն կապանօք՝ խաղացոյց ի Սամառայ: - 186. զի զկապեալսն յառաջ մատուսցեն ի հանդէս հարցափորձի քննութեան: - 240. լաւ համարեցան զկեանս պանդխտութեան յօտարութեան առնել, քան տեսանել կապեալս արգելեալս ի բանդի զորդիս իշխանին իւրեանց, զիշխան աշխարհիս. – 364. Յայնժամ բարկացեալ բռնաւորն իբրև գազան մի կատաղեալ, յարձակեալ ի վերայ գառանց գէշ արկանել զնոսա՝ հրամայեաց պնդել զնոսա ի ցիցս կապեալ ոտիւք և ձեռօք. – 292. շռնջապահս ձիոցն և տաշտս գաւակացն և զանգապանս ի չորս կողմանս, ձգեալ և լանջացն զէն, և բարձրավիզ խրոխտանացն զրահս, և ոտնատորոփ փռնկալոյն մանեակս զանգակեալս, և մահիկս լուսնաձևս ի մէջ ճակատուն կապեալ – 208. որոյ դիպող ժամ գտեալ ի միասին կալով նոցա՝ կալեալ զնոսա տայ յամուրս աշխարհին, կապեալս կապանօք երկաթեօք. – 364. Որոց կապեալ զԳուրգէն երեքկին կապանօք և դարձեալ ի պարանոցն եղեալ շղթայս՝ յղեն ընդ Ատրպատական Պարսից և տան ի բանդ ընդ կապեալսն. – 318. Որոց կապեալ զԳուրգէն երեքկին կապանօք և դարձեալ ի պարանոցն եղեալ շղթայս՝ յղեն ընդ Ատրպատական Պարսից և տան ի բանդ ընդ կապեալսն. – 318. որպէս ժողովուրդն Աստուծոյ առ գետսն նստէին և լային ի յիշելն իւրեանց զՍիօն, և կամ իբրև զնոյն ինքն զերիս մանկունսն, կապեալք և արկեալք ի հնոց նեղութեան – 252. սրտմտեալ անժուժկալ ի բարկութեաննն ջերմագոյն արեանն մրրկալից շարժմանն, և սկսաւ թափել զմահաճին թոյնս իւր ի վերայ կապելոցն, իբրև զթոյնս իժի – 242. Վայել էր իսկ եպիսկոպոսին Յոհաննու՝ առնուլ զլուծ համանուանն իւրոյ զՅոհաննու Մկրտչի, որ կապեալն էր ի Հերովդեայ և տուեալ ի բանտ: - 250.

ԿԱՊԵԼ - ապա յամառեալ զարբանեալքն իւր հրամայեաց կապել կրկին շղթայիւք և արկանել ի ներքին բանտ: - 250. Եւ եղև իբրև եհաս իշխանն յարքունիսն՝ ետ կապել զոտս նոցա կրկին շղթայիւք և դնել ի բանտի. – 220. Եւ եղև իբրև ննջէր Գագիկ յանհոգս յանկասկածս՝ հասեալ Հասան ի գիշերի սուսերամերկ վառեալ փոքր գնդաւ, մոմեղինօք վառելովք՝ և կապեաց զնա կապանօք երկաթի: - 350 զորոյ կապեցաք անդէն զյաւանակն ի բանակին. – 50. Կապէ երկաթի կապանօք և տայ տանել յԱնուշ կոչեցեալ բերդն ի սահմանս Տիսպոնի. – 102. Յայնժամ հրամայեաց բռնաւորն կապել զնոսա երկաթի կապանօք և դնել ի բանտի: - 250.

ԿԱՊՃԱՀԱՄԱՐ - Արդ յայսմ հետէ ըստ նեպակի գեղջն/գրքում՝գեաղջն/ կապճահամաք ժժակք յամենայն ի դուռն արքունի ի սատակումն եկեսցեն. – 46.

ԿԱՊՈՒԴԿԱՑԻՔ - և ժողովեալ ազգք ազգք յընտրելոց զօրաւորաց արանց քաջամարտկաց, զզօրս Կապուդկացւոց, զՎրաց և զԱղուանից և զԱյրարատեան գազանամարտիկ

զանճռռնի զօրսն և զբոլոր բովանդակեալ գունդս զօրացն և զորդիսն Սենեքերիմայ, ամենայարդար պատրաստութեամբ անհուն բազմութեամբ, աճապարել երագել անյապաղ լինել նախ քան զԱշդահակայ դիմեցումն – 62.

ԿԱՊՈՒՄՆ - ԿԱՊՈՒՄՆ ԵՒ ՎՏԱՐՈՒՄՆ ՅԱՇԽԱՐՀԷՍ ԻՇԽԱՆԻՆ ԵՒ ՆԱԽԱՐԱՐԱՑՆ ԵՒ ՆՈՑԻՆ ԸՆՏԱՆԵԱՑ: - 220.

ԿԱՊՈՒՏ - և բանակեցաւ ի յԱդամակերտ ոստանին Արծրունեաց, և անդէն սկսաւ ասպատակս սփռել, աւար առնել, կուտել առ ինքն զկապուտ աշխարհին յոյժ սաստկութեամբ: - 184. և եկեալ ի վերայ քաղաքին պաշարեն զնա, և զզօրսն մատնեն ի սատակումն սրոյ, և զպատանդսն Վասպուրականի հանեն յարգելարանէն. և գերեացն ընդարձակեն, զկապուտ նոցա բաժանեն յինքեանս: - 190.

ԿԱՊՈՒՏԱԿ - առաջի տեսանելով զկապուտակ ծիրանափայլ դաշտաձև ծովն. դաստակերտս մեծամեծս շուրջ զեզերբն անտառախիտ ծառովք և գինեբեր որթովք և զանազան պտղովք. – 86.

ԿԱՊՈՒՏԱԿԱՋԵՒ - դուզնաքեայ երասանակալ փայտիւն վազս առեալ սիգաքայլ ճեմարանօք ընդ կապուտակաձև երկնագոյն լեռնային և դաշտական ասպարէզս – 396.

ԿԱՊՈՒՏ ԿՈՂՈՊՈՒՏ - գերփեն առնուն զշէնս և զաւանս և զագարակս, կապուտ կողոպուտ թողուն ի ստացուածոց և յամենայն ժառանգութեանց, մաշեն ի սուր սուսերի զորս ի բուռն առնուին. – 102. Եկն եմուտ ի գաւառն Աղբագ, և ասպատակ սփռէր ընդ կողմանս կողմանս յերկիրն Վասպուրական, գերփէր, աւերէր, յափշտակէր, կապուտ կողոպուտ գործէր ընչից և ստացուածոց. – 176. և մերկ կապուտ կողոպուտ առնէր զնոսա, մինչև զարմանալ զօրավարին ընդ սորայս քաջութիւն՝ գրէ առ Միքայէլ թագաւորն Յունաց զեկուցանելով վասն նորա: - 302.

ԿԱՌԱՓԵԱԼ - Կալան և զհայրապետն Զաքարիայ, և ի խնդիր անկեալ աստուածային սուրբ նշանին՝ սկսան զնոսա տանջել, մինչև զբազումս ի պաշտօնէիցն կառապետեալ սատակեցին. – 142.

ԿԱՌԱՓՆ - և զզօրութիւն աղօթիցն իբրև զնետ ձգեալ ի լայնալիճ աղեղանէ ի նպատակն, հարեալ զկառափն սատանայի դիաթաւալ կացուցեալ յերկիր կործանէր: - 252.

ԿԱՌԱՓՈՒՄՆ - Իսկ տեղի շիրմին յորում նախահօրն եդան ոսկերք՝ կատարման և կառափման, որ նոյն ինքն է գագաթն և Գողգոթայ ըստ եբրայականին, երկակի անուամբ. – 34.

ԿԱՌՈՒՑԵԱԼ - Ի վեր կառուցեալ զաչս սրբոյն Վարդանայ՝ տեսանէ զանօրէնն Վասակ Սիւնեաց տէր – 128.

ԿԱՍԿԱԾ - Բայց Գուրգէն կասկած ունելով յԱշոտէ, թէ գուցէ իբրև զապստամբէ ումեմնէ զեկուցանիցէ զնմանէ առաջնորդին Տաճկաց՝ ել գնաց կեալ շրջաբերական յեղափոխմամբ, արիական քաջասրտութեամբ, սիրեցեալ ընդ բնաւ աշխարհաց: - 322. Եւ դադարումն լինէր յաւուրս սորա հինից և ասպատակաց ի վերայ երկրիս, և քաջավայելչապէս բարեձևանայր կարգ սրբոյ եկեղեցւոյ Քրիստոսի, և երկիւղ և կասկած և ոչ ուստեք: - 338. Եւ էին ի կասկածի ի մէջ բանակին ի հազարապետէն, զի յայտնի երևեալ լինէր զոր խորհէրն վասն նոցա Ահմատն: - 344. զի Գագիկ անցեալ ամրանայր ի Ճախուկ բերդի, ի կասկածի կալով ի Դերանկէն, ըստ զեկուցմանն զոր ինչ գործեաց Հասան առ Դերանիկն: - 350. զի յորմէ սակաւ մի կասկածս ունէր՝ անտի ևս աներկիւղ հաստատեցան: - 238. կասկած ունելով որ ինչ գործեացն ընդ Աշոտ: - 316.

ԿԱՍԿԱԾԱՆՔ - ապա նոքա մերկացեալ զկեալն կասկածանօք առ Ապումրուան՝ գան առ նա առանց ակնածութեան. – 364. գրէ յականէ յանուանէ առ որ մնացեալն էին յաշխարհս յամուրս իւրեանց, զի փութով յիւրաքանչիւր տեղեաց առանց կասկածանաց և երկիւղի առ նա հասանիցեն – 296. և կասկածանօք տարուբերէր ի միտս – 118. և յերկիւղ կասկածանաց եղեալ, թէ իցէ ընդելուզեալ Տաճկաց՝ գտեալ զպահեստ գանձին ծախիցեն զզօրութիւն նորա: - 180. և անդէն կացեալ զաւուրս բազումս յապահովացեալ ի կասկածանաց երկիւղէ Երուանդայ: - 84. Եւ դաշնաւորեալ ի մէջ երկոցունց՝ մնալ առանց կասկածանաց. – 322. Եւ եղև մինչ կային իշխանքն ի միաբանութեան առանց կարծեաց

կասկածանաց ի հպատակութեան ելեալ յարքունուստ հազարապետին / 340 / որդւոյն Հալթի, և զմիաբանական սիրոյն շաղկապ ի միասին յօդեալ պնդեալ անքակ պահէին – 342. և կայր երկիրն ի մեծ տարակուսի, լցեալ կասկածանօք չարեացն: - 398. և պարզապէս յայտնի առանց կասկածանաց ասի աստուած՝ եկեղեցին և մարմին բանին և ևս յաւելցի /394/ ծիծաղելն. – 396. զի եկեսցէ առ նոսա առանց պատկառանաց և երկիւղի և առանց միոյ իւիք կասկածանաց – 226. Իսկ իշխանն Վասպուրական, այն ինչ հուպ ընդ հուպ եկն ի ժամադրեալ տեղին. ընդ որ յոյժ ուրախացեալ թագաւորն, իբրև զերծեալ ի կասկածանացն, զոր ունէր յիշխանէն Սիւնեաց: - 382. Իսկ Սմբատ որ և Ապլաբաս սպարապետն Հայոց, իբրև գիտաց թէ ոչինչ օգուտ բերէ արտաքոյ հրամանացն նորա լինել՝ փութացաւ եկն առ նա, և ընկալեալ ի նմանէ՝ բնակեաց ինքն և իւրքն հանդերձ իւրաքանչիւր կալուածովք առանց կասկածանաց. – 270. ոչ ինչ ձեռնամուխ լինելով ի նա, վասն կասկածանաց Պարսից արքային, միայն սպառնական խոստաբանութեամբ յղէ առ նա պատգամս: - 130. քանզի կասկածանս ունելով ի թագաւորէն և յորդւոցն – 88.

ԿԱՍԿԱԾԱԻՈՐ - ի ձեռն այնր հաստատագոյնս լինել ի կասկածաւոր պատգամացն – 366.

ԿԱՍԿԱԾԵԼ - և սկսան այնուհետև աներկիւղ տարածանել ի վերայ երկրին. քանզի ոչ կասկածէին ի պատերազմէ իմեքէ: - 162. ճանապարհ արարեալ ընդ Ատրպատական, կասկածելով թէ գուցէ Գուրգէն և կամ մի ոք ի տոհմէն Արծրունեաց և նոցին ազատաց ի կորովացն Վասպուրական հեծելոցն հասանիցէ ի վերայ և թափիցէ զնա ի զօրացն և հանցէ ի ձեռաց իմոց: - 220.

ԿԱՏԱԿԱՆՔ - Առ որ հայեցեալ նախարարքն Հայոց՝ կատականօք և արհամարհանօք ընդ նա նայէին – 114. և լի ծաղու և կատականօք այսպ արարեալ՝ արհամարհանօք անարգեցին զբռնաւորն, իբրև զմանուկ մի անպիտան կամ զծեր զառանցեալ և խելագարեալ, որ ոչ ըստ իւրոց կամաց զոր ինչ ախորժիցէ խօսիցի: - 264.

ԿԱՏԱՂԵԱԼ - Եւ առ յոյժ յիմարութեանն հարեալ ցանկութեամբ, խլրդենի դիմօք, իբրև զգազան մի կատաղեալ՝ սկսաւ յարձակել ի վերայ աշխարհիս Հայոց. – 170. Յայնժամ բարկացեալ բռնաւորն իբրև գազան մի կատաղեալ, յարձակեալ ի վերայ գառանց գէշ արկանել զնոսա՝ հրամայեաց պնդել զնոսա ի ցիցս կապեալ ոտիւք և ձեռօք. – 292.

ԿԱՏԱՂՈՒԹԻՒՆ - Ապա թէ փութաս ելանել ի կենաց աստի առ զայրուցս կատաղութեան քո և զոսկերս ցրուես յանապատս և լինել կերակուր գազանաց երկրի և թռչնոց երկնից՝ քո կամք լիցին, և ես քաւեալ եմ յարենէ քումմէ – 278. իբրև շունք համրացեալք, որ ոչ կարեն հաջել, որպէս ասէ Եսայի մարգարէ, ընդդէմ Տեառն փոխելով զկատաղութիւն մահածին թիւնիցն սատակչական զօրութիւնն – 210. նոյնժամայն առ յոյժ ամբարտաւանութեանն և սաստիկ բարկութեանն և անհուն սրտմտութեանն և առանց բուժելի կատաղութեաննն, յապուշ միտքն կրթեալ իբրև զարբեալ զանզգայ արբեցութեամբ - 264. Ո՞վ յիմարութեան առաջնոցն. ո՞րպիսի կատաղութիւն և գիւտք դիւացն նախկին ժամանակաւ սպրդեալ մուծաւ յաշխարհ, ապստամբութիւն առ Աստուած և տրտմութիւն սրբոց հրեշտակաց, և պատճառ վտանգաւոր մահու ծառայիցն Աստուծոյ յաւուրս ապագայիցն. – 38. Որոյ յօժարութիւն կամաց ախորժակաց իւրոց էր մարմին և արիւն անմեղ մարդկան, առ ի յագումն անհնարին գազանաբարոյ կատաղութեաննն: - 200.

ԿԱՏԱՐ - Եւ ամիրայն Յիսէ խաղացեալ բազմաձեռն զօրուն՝ յառաջ խաղայ ընդ Աքաղաղոյ կատաք /գրքում՝ Աքաղայու կատար/ ասացեալ բլուրն: - 334. Իսկ ի հարաւակողմն կուսէ ի ջրամբար արձանագործ քարեղինէն ճանապարհ աշտիճանեալ /390/ ներքուստ ի վեր մինչ ի կատաք անձաւին հեշտալիր զելս և զէջս յօրինեալ, քարագործ աւազամած կրագործութեամբ: - 392. հազիւ ուրեք ակնակառոյց աչօք նկատել զկատաք լերինն – 48. Շինեաց և եկեղեցի մի յԱմրական քարանձաւի, ի կատաք քարանձաւին, յանուն քաջամարտիկ զօրավարին սրբոյն Գէորգեայ - 390.

ԿԱՏԱՐԱԾ - և ինքն գնաց անտի և եմուտ ի Պարտաւ՝ ձմերել անդ, և տեսանել վասն յետին կատարածին աշխարհիս Հայոց, թէ որպէս ի գլուխ ելանիցէ. – 298. զոր շինեալ էր սրբոյն Գրիգորի ի վերայ գեաւղջն Ահևականից ի կատարածի լուսաւորութեանն Հայոց: - 334.

կատարած ամբարշտաց հասցէ դարձելոց ընդդէմ նոցա. – 200. Յայնժամ դարձեալ ի խորհուրդ եմուտ թագաւորն հանդերձ մեծամեծօքն իւրոյ տէրութեանն, տեսանել զանվրէպ և զանսխալ իմացումն կատարածի ի վերայ աշխարհիս Հայոց: - 196. Որգունակ և յաղագս փրկչական տնտեսութեանն գրէ Յոհաննէս ի կատարածի աւետարանական շարագրածին: - 302. քանզի կամէի տեսանել զկատարած երկրի. – 50.

ԿԱՏԱՐԵԱԼ - Այլ Քրիստոս իւր ոչ տուն ոչ տաղաւար ասի, այլ մի տէր Յիսուս Քրիստոս, յԱստուածոյ և ի մարդկանէ կատարեալ. – 394. և անդ Խուրան բազում նահատակութիւնս և յաղթութիւնս կատարեալ զօրականօքն որ ընդ նմա երթեալ էին յաշխարհէս Հայոց. – 80. Եւ ելեալ գնաց եմուտ յամուրն Կանգուար, և կատարեալ զոր ինչ ախորժեացն՝ տիրեաց Անձաւացեաց մեծաւ զօրութեամբ: - 324. Եւ ելեալ ի տեղին սրբութեան և կատարեալ զաղօթսն՝ ելին շրջել զբօսնուլ յայլ ևս տեղիսն: - 100. և խնդրէր առնուլ զտէրունական կնիքն, զի կատարեալ լիցի ի գործս պատուիրանաց Տեառն – 222. Եւ կատարեալ Աշոտ զկեանս իւր՝ մեռաւ ի Վանտոսպ գաւառի, ՅԻԳ թուականութեանն Հայոց, յամսեանն հոռի, որ օր Զ էր ամսոյն, յաւուր հինգշաբաթոջ. և տարեալ հանգուցանեն ընդ եղբարս իւր ի վանս սուրբ Խաչին յԱղբագ գաւառի: - 338. և կատարեալ զաղօթսն և գոհացեալ՝ ետուն զփառս Աստուծոյ և հատուցին զամէնն և նստան ուտել հաց. – 228. և կատարեալ զխնդիրն իջուցանէ զԱնիանոս ի փայտէն – 76. և հարցեալ և պատասխանեալ սուրբն լի կատարեալ իմաստութեամբ Հոգւովն սրբով՝ զոր անմեկնելի ունէր յինքեան սուրբն. – 104. և հաւատալն նորա ի մի Աստուած Հայր և մի Որդի նորա ի Բանն Աստուած Յիսուս Քրիստոս և ի մի Հոգի սուրբ, զուգակից և բնութենակից և փառակից Հօր և Որդւոյ, ի մի Աստուածութիւն կատարեալ. – 94. Եւ նորա զայս ամենայն չարիս կատարեալ՝ ևս բազմագոյնս քան զայս հաստատեալ եդ ազգի իւրում օրէնս բազում և այլ չարագործութեամբք. – 164. Եւ նորա ըստ ցանկութեան սնոտի փառամոլութեանն կատարեալ զխնդիրն. – 124. և նորա կատարեալ զխնդրելին: - 130. զի կատարեալ էր սիրտ նորա ընդ տեառն Աստուծոյ ամենակալի: - 316.

ԿԱՏԱՐԵԼ - ահաւասիկ կամ, մի դանդաղիր կատարել՝ զոր ինչ կամիս առնել,,: - 296 այլ Մկրտչին հրամայի՝ մի ըմպել գինի և օղի. սա ոչ միայն գինով ոչ զկծէր, այլ և ոչ ջրով զծարաւոյն պէտսն կատարէր, սակաւապետութեամբ ընդովք թրջելովք, և խստավայել բանջարովք առ քաղցն վայելելով: - 376. այլ նա ըստ կամս իւր կատարեաց ի վերայ իւր զարենապարտն լինել, որ տալոց է հատուցումն վրիժուց յաւուր դատապարտութեան իւրոյ: - 320. Բայց Աստուած ըստ յօժարութեան քո սիրոյդ կատարեսցէ զկամս քո որպէս և հաճոյ թուիցի առաջի Տեառն,,: - 114. Բայց մեզ կայ առաջի ասել վասն Ջափրայ և չար գործոց նորա, անգիրս մնացեալ յայլոց, զոր կատարեաց ի վերայ աշխարհիս Հայոց երկայնագոյն ժամանակաւ և անըմբերելի նեղութեամբ ի մերս հանդիպեալ աւուրս, որ էր Հայոց Յ թուական: - 168. Բայց Մեհուժան ոչ բաւականացաւ կատարել զչարիսն – 106 գուցե կատարիցեն չարիս ի վերայ քո, և կորզեն յընքեանս զթագաւորութիւն Նինուէի: - 82. գուցէ յորժամ կատարիցեն զչարիսն զոր խորհեալ են ի վերայ քո, որպէս լուաք ի հաւատարմաց իւրեանց՝ օժանդակութեամբ Արտաշէսի մերժիցեն և զզարմ և զզաւակ քո ի թագաւորութենէ Ասորոց: - 82. գրգռէ զարքայ կատարել զասացեալսն Վարազդատայ թագաւորի Հայոց: - 110. Եւ ամենայն խորհուրդք մեր դիւրաւ կատարեսցին. – 196. Եւ վախճանեալ միայնակեցին՝ կամեցաւ կատարել զպատուէր նորա Սաղման: - 162. Եւ անդէն վաղվաղակի կատարէին զիրաման արքունի. – 142. և բանք սրբոյ Ներսէսի ընդ կենդանի բանին Աստուծոյ խառնեալ՝ դիւրագոյնս զհատուցումն արհամարհողացն հատուցանէր յօրհնութիւնս և յանէծս, անյապաղ զգործն կատարելով. – 100. Եւ եղև իբրև արար և կատարեաց Բուխայ զոր ինչ խորհեալն էր ի վերայ աշխարհիս Հայոց, բարձումն յաշխարհէս մեծամեծացն Հայոց՝ յաւել և զայս ևս – 296. Եւ եղև իբրև կատարեաց Բուխայ զանցս անցից ընդ Վասպուրական աշխարհս և խաղաց յարևելս կոյս՝ ել գնաց Գուրգէն ի Սպեր գաւառ. – 302. և ըստ հնարագէտ ազգի իւրեանց խորամանկ կեղծաւորութեամբ, խաղաղասէր դիմօք առ սակաւ սակաւ ջանայր կատարել զկամս չարութեան իւրոյ: - 170.

Եւ իբրև կատարեաց զյօրինուած շինութեան քաղաքին և անմատչելի անկասկածելի զամրոցն պատրաստեաց – 88. և կարգէ զդասս պաշտօնէից կատարել զպաշտօն Տեառն ի տուէ և ի գիշերի անձանձրոյթ աշխատութեամբ և առատաձեռն տեսչութեամբ աղքատաց, զի գտցեն զողորմութիւն ի Քրիստոսէ: - 122. Եւ հաստատեցաւ Խոսրով յաթոռ թագաւորութեան, և զխոստացեալսն կայսեր՝ կատարեաց. – 140. և մի զմիոյ հետ ստիպէր՝ փութալ միոյ միոյ ի նոցանէ յանդիման նմա հատուցանել ծառայական սպասաւորութիւնս, զոր և արարին իսկ Աշոտ և Գագիկ և Գուրգէն, կամաւոր և ակամայ զնորայն կատարելով հրամայեալս – 370. և միապետէ զտէրութիւնն Անձաւացեաց և խաղաղեցուցանէ զերկիրն և բնակէ յանհոգս զապահովացեալ ի հինից. շինէ եկեղեցիս և կատարէ տօն նաւակատեաց խաղաղութեան: - 326. վասն յաղթող մեծանուն գործոյն, նախատ անձին համարելով, երկրորդ՝ վասն վաշտիցն զօրութեան: - 326. Եւ նորա ընկալեալ զպարգևն՝ կատարէր զխնդիրն:-186 և պաշտօնեայքն կատարէին զտէրունական կանոնն – 232. և տեսանելով մեր զխնամարկութիւն բարի կամաց քոց ի վերայ աշխարհի, և զսէր երախտեաց որ առ մեզ՝ յօժարագոյնս եղիցուք և մեք մտերմութեամբ ծառայել և փութով մեծաւ կատարել զհրամայեալսն ի քէն,,: - 186. զայս խորհեալ Մարդպետին ասէ, թէ զայս ձախողակի իմացմունս կատարել կարացից՝ թերևս և զտուն Մամիկոնեան նախարարութեանց կարացից որսալ ի կորուստ: - 98. իբրև արար և կատարեաց զամենայն կամս չարութեանն ի վերայ աշխարհիս Վասպուրական կոչեցեալ. – 262. Իսկ Արտաշիր յանդգնագոյնս և առանց պատկառանաց զհետ ամօթալից ախտին գիջութեան իգամոլ ցանկութեանցն ընթացեալ՝ ոչ միայն ի գիշերի այլ և ի տունջեան յանդիման արեգական, անխտիր կատարէր զցանկականն, զանասնական գիջութեամբքն զանցուցեալ: - 116. Իսկ Աւշին դատարկացեալ ի խորհրդոցն զոր խորհեցաւն՝ յաւել զայս օրինակ կատարել զկամս չարագոյնս: - 372. Իսկ Գրիգորի ոչ բերելով զընդդիմակացսն նորա կատարել՝ խօսի ընդ նմա սիրով խաղաղութեան, և բաժանել զաշխահս յերկուս՝ տեղի ետուն միմեանց ի խաղաղութիւն: - 310. Իսկ իշխանն Բագարատ … ել գնաց անխիղճ համարձակութեամբ, տիրասէր խորհրդովք, կատարել զսպաս զինուորութեան, ըստ աստուածեղէն պատուիրանին և ըստ թագաւորական հրամանին, զհետ եկելոյ կոչնականացն, ոչինչ իմացեալ զպատրանս խաբէութեան նորա, որով վրիպեացն: - 186. Իսկ Վռամ յերկմիտս եղեալ, ոչ կարէր կատարել զխնդիրն – 118. Մի ջանասցի քանզի յԱստուծոյ հաստատեալ է, և բառնալ զսա անհնար է, բայց թէ Աստուծոյ այնպէս հաճոյ իցէ՝ կամք Աստուծոյ կատարեսցին: - 144. Յետ մահուանն Աշոտի և կատարելոյ զաւուրս սգոյ նորա առնու զիշխանութիւնն Վասպուրական տէրութեանս Գագիկ եղբայր նորին. – 388. Նոյնժամայն իբրև կատարեաց զամենայն կամս չարութեան իւրոյ ի վերայ սրբոյ եկեղեցւոյ և /262/ կործանեաց կորոյս զբազումս ի գնդէն քրիստոնէից – 264. որ նոյն ինքն թարգմանի՝ մսուրս կատարեցաւ: - 34. Որում ունկնդիր եղեալ իշխանն՝ կատարէ զասացեալսն: - 322. Եւ այսպէս կատարեցաւ երանելին Ապուսահակ: - 206. Եւ այսպէս կատարեցաւ սուրբն ամենայաղթ նահատակն Քրիստոսի Մուկաթլ փառաւորապէս ի Հայր և յՈրդի և ի Հոգին սուրբ, որում փառք յաւիտեանս ամէն: - 290. և անդ յԱստուած խրախուսեալ սուրբ աստուածաբանակ զօրացն Հայոց կատարեցան ի Քրիստոս: - 128. և զվկայիցն անուն ժառանգեալ կատարեցան ի Քրիստոս սուրբ գունդն Հայոց, ՈՂՋ ոգիք: - 128. և ընկալան զվճիռ մարտիրոսական և կատարեցան վկայութեամբ ի փառս սուրբ Երրորդութեանն – 222. և ընկալեալ զվճիռ մարտիրոսութեան կատարի ի փառս սուրբ Երրորդութեանն – 104. Եւ կատարեցան սուրբ վկայքն ՅԲ թուականին: - 268. Եւ կատարեցաւ ի վերայ Սմբատայ ասացեալն յԵսայեայ մարգարէէ – 218. Եւ կատարեցաւ սուրբ վկայն փառաւորապէս ի Հայր և յՈրդի և ի Հոգին սուրբ -224. և կատարեցաւ սրով: - 202. Եւ սոցա այսպէս նահատակեալ կատարեցան վկայութեամբ ի փառս Աստուծոյ, և զմարտիրոսական անուն ժառանգեցին ի Քրիստոս ի պատիւ ամենասուրբ Երրորդութեանն: - 266. Իսկ զԳողթն գաւառ ի ժամանակի կատարման սրբոյն Վահանայ, յամի ՃՋՋ թուականութեանց, յորում ամի կատարեցաւ

սուրբն Վահան, որ էր որդի Խոսրովայ Գողթան տեառն: - 390. Կատարեցաւ Դպրութիւն Առաջին Պատմութեան Հայոց ըստ ազգաբանութեան Արծրունեաց սեռի: - 122. մինչն կատարեցաւ ասացեալն ի ձեռն Եսայեայ մարգարէի, ,,լսելով լուիջիք և մի՛ իմասջիք, տեսանելով տեսջիք և մի՛ գիտաջիք. /ճիշտը՝գիտասջիք/ – 182. որ կատարեցան միանգամայն սրով ի միում աւուր ի մեծի ուրբաթի զատկին: - 106.

ԿԱՏԱՐԵԼԱԲԱՆՈՒԹԻՒՆ - կոչեաց զերիցունսն նորոյ կտակիս, զեպիսկոպոսս և զքահանայս, առաջի արկեալ զհաւատոցն կատարելաբանութիւն, զմկրտութեանն լուսաւորութիւն. զառեկելոցն յապաշխարութիւն, զյոյսն յետ վախճանին, զմարդասիրելն Քրիստոսի - 386.

ԿԱՏԱՐԵԼԱԳՈՅՆ - Եւ ինձ ի վերայ տրտմականացն դէմ եդեալ առ կատարելագոյն և առ անզուգական անհամեմատ խնդութիւնն դեգերել, առ հոգևորական ուրախութիւնսն ընթանալ յետ մարմնական տրտմականացն յաճախութեանցն: - 386. Իսկ կատարելագոյնքն և ծերքն ի նոցանէ սպուժէին առ այս, և մանաւանդ որք հաւատարիմքն կոչէին ըստ հաւատոյն նոցա որք Կուռայքն անուանէին – 404.

ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾԵԱԼ - Սապէս և Գուրգէն կատարելագործեալ ի բարձրաւանդակ ի սարաւանդակ տեղւոջն բարեձևագունի վայելչացուցեալ զհրաշակերտ յաջմէ և յահեկէ սեղանոյն երկուս ևս եկեղեցեօք: - 396. քաջավայելչագոյնս զթագաւորութեանն կատարելագործեալ զժամանակն, Ե ամ յիշխանական ճոխութեան, ԻԵ ամ յիշխանաց իշխանական պետութեանն, Դ ամ ի թագակապ շքեղութեանն. – 356.

ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾԵԼ - նա և զմտացն ոչ սակաւ հարստանալ յայտարարական բերմամբ առ հանճարեղութիւնն զուգընթաց բողբոջմամբ կատարելագործէին. – 360.

ԿԱՏԱՐԵԼԱՆԱԼ - Բայց անյայտք են եթէ կատարելանան, զի հազիւ սպիքն գան, ըստ որումն սրբազանի տրամաբանութեան: - 338. և ոգորել ընդ բնաւ աշխարհս անդուլ շրջաբերութեամբ, անհանգիստ մնալով, և կեղծաւորական սիրով ընդ Վասպուրական աշխարհիս և ընդ նոցուն պետացս, համարէր լինել կատարելանալ առ սէր. – 370. ոչ կատարելանայր առ աւարտումն հասանել խորհրդոյն. – 364.

ԿԱՏԱՐԵԼԱՊԷՍ - Դէպ եղև նմա ճանապարհաւ գալ ի քաղաքն Մադիամ, էր և ծանօթ գիտութեան գրոց, թէպէտ և ոչ կատարելապէս: - 162.

ԿԱՏԱՐՈՒՄՆ - ապա հնարաւորեալ պատիր խաբէութեամբ ի կատարումն հասուցանել զխորհրդոյն /346/ զանհաստատ իմացմունսն, և զնաց եմուտ յամրոցն, և զհիւանդութեան կեղծաւորութիւն մերձ առ մահ եդ առաջի: - 348. արդ զրաւ եղիցի կենաց դորա, և հրաման արքայիդ դիւրաւ զկատարումն առնուցու,,: - 104. Բայց առոգացեալ իմաստութեամբ իշխանաց իշխան՝ փութացաւ առ կատարումն գրելեացն Գուրգինի: - 322. Բայց բազմաց այլ իմացմունքն յայսոսիկ առ վայր մի առին զկատարումն: - 360. բայց թէ որպէս եղև կատարումն իրացն մեզ չէ յայտ: - 88. Բայց խնդրոյն Հայոց զկատարումն առեալ յառաջնորդէն Տաճկաց՝ յղէ ի Հայս զառաջասացեալ զԱհմաթ որդի Հալթի: - 340. Բայց ոչ ժամանեալ կատարման պատերազմին, զաշտարակն, զոր շինէր որդին Աբգարու փլուզեալ ի վերայ սպան զնա, վրէժխնդիր եղեալ մահուն Ադդէի սրբոյ: - 80. բարձրաճիչ աղաղակաւ քարոզեալ. իբրև բանիւ զբարբառ հնչեցուցեալ ազդեցուցանօղ իմացունակութեամբ, զգայական ազդարարութեամբ՝ զեկուցանել զպատրաստութիւն նիւթոյն առ կատարումն սրբոյ եկեղեցւոյն աւարտագործեալ: - 396. Եւ ամենայն խորհուրդք Մուսէի առին զկատարումն ի վերայ թշնամեացն: - 330. և ասացեալքն ի սրբոյն հանդերձ գործով զկատարումն առնու: - 100. Եւ եղև իբրև հասին ի տեղի կատարմանն ասպարիսի նահատակութեանն՝ ծունր եդեալ կային յաղօթս – 266. Եւ եղև մօտ ի կատարումն հասանել ամին երկրորդի գալստեան նորա՝ ել գնաց ի կողմանս Աղուանից. – 276. և ըստ խնդրելոյ աղերսանաց իշխանին և մեծ հայրապետին՝ զկատարումն առին ասացեալքն. – 348. Եւ ի կատարումն ամենայն չարեաց հասեալ՝ ինքն խեղդեալ ի դիւէ սատակեցաւ: - 168 և իսկ և իսկ հրամայեալքն զկատարումն առնուին: - 328. և յետ կատարման աստուածային հրամանին՝ ի ծփական ջուրցն բերեալ տապանն յարևելեայն ի միջոց աշխարհի՝ հանգեաւ ի լերինս Կորդուաց – 32. Զկնի այսորիկ յառաջ

խաղացեալ Ահմաթ և որ ընդ նմա կայսկազենիցն գունդք, երթեալ մտանել ի քաղաքն Դուին, թերևս կարասցէ ի կատարումն՝ զոր ինչ խորհեցան՝ հասուցանել զչարիսն: - 344. Զորս առեալ քրիստոնէից զպատուական մարմինս նոցա՝ ծածկեցին փառաւորապէս թաղմամբ, ամ ըստ ամէ տօնիւք զօր կատարմանն յիշատակել, որք են արք թուով է: - 268. ԹԷ ՈՐՊԻՍԻ ՊԱՏՃԱՌԱԻ ՀԱՍԻՆ ՈՄԱՆՔ Ի ՆՈՑԱՆԷ ՍՈՒՐԲ ԿԱՏԱՐՄԱՆՆ: - 220. Իսկ զԳողթն գաւառ ի ժամանակի կատարման սրբոյն Վահանայ, յամի ՃՋՋ թուականութեանց, յորում ամի կատարեցաւ սուրբն Վահան, որ էր որդի Խոսրովայ Գողթան տեառն: - 390. Իսկ սուրբն ելեալ հանդերձ դահճօքն ի տեղի ասպարիսի կատարմանն երկնաւոր նահատակութեանն՝ ի ծունր իջեալ կայր յաղօթս – 206. Իսկ զկնի վերանալոյն Քրիստոսի, յետ ԺԵ աւուր, ապա հասանէր Գրիգոր ի քրիստոսակոչ կատարումն. – 254. իսկ իբրև եկն Ապումբռաան զհետ փախստէից ի Վանտոսպ զկնի թագաւորին՝ և խորհուրդն Գագկայ հաստատնագոյնք զկատարումն առին: - 368. Իսկ տեղի շիրմին յորում նախահօրն եղան ոսկերք՝ կատարման և կառափման, որ նոյն ինքն է գագաթն և Գողգոթայ ըստ եբրայականին, երկակի անուամբ. – 34. Յիշեցեալ լինին աստանօր սողոմօնեան բանագործութիւնքն զկատարումն առեալ – 354. յորոց և զկատարումն մարտիրոսական ի նոցունց բարբարոսաց ընկալաւ սուրբն Գրիգորիս ի Վատնիանեայն դաշտին: - 274. նորա լուեալ էր ի պարսկէ ումեմնէ, ի ձորոյն Շատուանոյ, որ էր ընդ դահիճսն, և ի սկզբան վկայութեան մինչ ի կատարումն սրբոյն՝ ի տեղւոջ անդ հանդիպեալ լինէր – 206. որ և ըստ ազդեցութեան զկատարումն առնոյր գործն: - 340. Որոյ հրամանն փութով զկատարումն առնոյր ըստ ցանկութեան իշխանասիրութեան նոցա. – 362. քարինս տաշահոս հոլովեալ ի նիւթ եկեղեցւոյն ի Մանազաւեանն նահանգէ ընդ Բզնունական ծովն բերեալ մատուցանէ առ կատարումն հրաշագեղ դիտանոցին սրբոյն Սիոնի, այլովքն սրբական անուանակոչութեամբ տեղեաց տնտեսականին բանին Աստուծոյ մարդ եղելոյ: - 396.

ԿԱՏՍԱՅ - Պղպջաձիգ արտօսր իբրև յեռանդնոտ կատսայէ ի վեր յորձանախաղաց սահին. տարակուսանք անյուսալի շուրջ զինև պարագրին ի վերայ եղելոցն: - 350.

ԿԱՐ - և ի մեր կաղ տաժանմամբ ի խոյզ և ի խնդիր ելեալ զհաւաստին գտանել – 12. - Ուստի և մեք ըստ կարի մերում անցեալ գտաք զհամառօտութիւն զրուցատրութեանս – 122.

ԿԱՐԱՊԵՏ - Եւ յաջորդեալ փոխանակ նորա կացեալ յաթոռ սրբոյն Գրիգորի երանելին Մաշտոց, ելեալ ի կղզոյն Գեղարքունի լճէն, զՅօհաննու Կարապետին զվարուցն բերեալ զօրինակ. – 376. Քանզի ի գնալ նորա զօրացուցանել զքեռին իւր զթագաւորն Հայոց, իսկոյն յելանելն նորա ի տանէ իւրմէ ի Վան քաղաքէ՝ տիրէ ի վերայ նորա ցաւք հիւանդագինք կարապետք մահու, անմերձենալիք ճարտարաց բժշկական ձեռնարկութեանն: - 384.

ԿԱՐԱՍ - զի էր նորա /178/ գանձ բազում ի կարաս թաքուցեալ ի գետնափոր տան, ի ներքոյ դրացն ապարանից տան - 180.

ԿԱՐԱՑԵԱԼ - Բայց երանելիս այս Գէորգ, մինչ կայր ընդդէմ սրոյն և դահիճն ծեծէր իբրև զանզգայ ինչ, և ոչ փոքր մի գիծ կարացեալ հարկանել ի մարմին սրբոյն զխոցումն սրոյն – 266. և հեծելագունդ զօրացն Կայսկին զկնի նորա, զգացեալ զպատճառ ելիցն նորա ի բանակէն. որում ոչինչ գամագիտ կարացեալ լինել՝ դարձան ամօթալից կորակնեալք, յանգէտս համարեալ զինչ գործեցինն: - 342. Եւ անդէն ոչ կարացեալ շինել զերկիրն այն հուպ ընդ հուպ մինչ յութերորդ ամն Արտաշէսի – 90. և բռնութեամբ Մարապարսացւոցն ոչ կարացեալ ընդդիմանալ՝ ի կողմանս Պաղեստինացւոց եկեալ պատերազմաւ պաշարեն զՍամարիա – 60. Եւ ոչ կարացեալ ունել զդէմ զօրն Վահրամայ՝ փախստական լինէր առաջի զօրացն Յունաց. – 140. զի և զբազումս պատերազմեալ պէսպէս մարտիւք, և ոչ ինչ կարացեալ ստնանել անմարտնչելի ամրոցացն և քաջութիւն արանցն որ ի նմա՝ ողոքական բանիւք կոչէր ի հաւանութիւն: - 278. Քանզի ոչ կարացեալ իմանալ զդէմ փախստէի Արտաշէսի, և այն ի տեսչութենէ Աստուծոյ այնպէս պահեալ լինէր – 84.

ԿԱՐԱՒԱՆ - և կարաւան գաղթականին տեսանէր զփայլիւն զինուցն և զշողոլ սուսերացն, և այսր և անդր խուճապական լեալ հալածեալս, իբրև զոչխարս ի գայլոց: - 228. Եւ տեսին

առ հասարակ ամենայն բազմութիւն կարաւանին: - 224. և մի եղիցի յիշատակ սորա ընդ սոցա, որք թէպէտ և վրիպեցին և կործանեցան՝ սակայն և ապաշաւեցին և կանգնեցան յետ դարձին իւրեանց ի մեծ կարաւանէ գերութեանն ի միջոյ ժանեաց բռնաւորին. – 248. Նոյնպէս և ամենայն զօրք և զօրագլուխք հանդերձ բազմակոյտ կարաւանին զկորստեան ընկալան զվճիռ. – 376.

ԿԱՐԳ - Եւ այլքն մի ըստ միոջէ կացին ի կարգի ճակատուն – 232. Եւ ըստ կարգի օրինաց իւրեանց երդուեալ, և աղ ծրարեալ ընդ հրովարտակին ետ տանել. և նոցա առեալ և ընթերցեալ՝ ոչ արարին բանիցն պատասխանի: - 138. ,,որդեակ, ի վախճանելս իմում մի կայցես յայսմ աշխարհի, զի մի կորուսցես զկարգ քո ի մէջ անհաւատից, այլ երթիցես ի կողմանս Եգիպտոսի՝ բնակել ի մէջ բազմութեան եղբարց, զի շահեսցիս զոգիդ քո,,: - 162. ,,վա՛յ քեզ, եղուկ դու, ազգ Տաճկաց, արանց և կանանց ամենայն ծովեզերեայ քաղաքաց. փոխանակ անաւրէնութեան լեզուիդ և պղծութեան կարգաց, որով բացեալ զբերանդ պղծութեան զանաւրէնս բարբառէիր: - 164. Այլ այժմիկ ի կարգ բանին երթիցուք: - 26. այսր անդր կորզեալ զկարգ բնութեան առ ի յընդդէմս հրամանին Աստուծոյ դիմագրաւեալք – 28. Բայց ըստ կարգաց քրիստոնէութեան վարէր ըստ արժանի պատուիրանաց Տեառն, և ըստ խրատու մեծին Վրթանեայ յապահովանայր ամենայնիւ, թագաւորեալ ամս ԺԹ: - 96. Բնաբանաբար/ճիշտը՝բնականաբար/ իսկ հետևեալ մեր կարգի ազգաբանութեանս որ վասն առաջի կացելոցս մեզ փութոյ Ասորեստանեայց թագաւորութեանն – 56. ԵԹԷ ՈՐՊԷՍ ԿԱՐԳ ԸՍՏ ԿԱՐԳԻ ԵԿԱՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹԻՒՆ /ՃԻՇՏԸ՝ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ/ ԱՍՈՐԵՍՏԱՆԵԱՅՑ ՄԻՆՉԵԻ Ի ԿԻՒՐՈՍ ՊԱՐՍԻԿ: - 54. և խորհուրդք խորհրդականացս յոչինչ համարեալ լինէին ի գործս մարտից և յայլ կարգս հոգաբարձութեան աշխարհիս. – 194. Եւ յաւէտ հրաշիւք յօրինէր զկարգս սրբոյ եկեղեցւոյ ուղղափառ առաքելական հաւատոց ի տէր Յիսուս Քրիստոս. – 180. Եւ այս ամենայն այսպէս եղեալ, կեցեալ սուրբն Սահակ ամս ՃԻ՝ փոխի յաշխարհէս ի կարգս հրեշտակաց – 120. Եւ արդ քանզի կարգ բանիցս էած զմեզ առ այս խնդիր՝ պարտ է նախ գիտել թէ որով օրինակաւ Քաղդէացւոցն մատենագրութիւնք զթիւ նահապետացն տասամբք համարին թուով ըստ աստուածահրաման գրոցս - 18. Եւ դադարումն լինէր յաւուրս սորա հինից և ասպատակաց ի վերայ երկրիս, և քաջավայելչապէս բարեձևանայր կարգ սրբոյ եկեղեցւոյ Քրիստոսի, և երկիւղ և կասկած և ոչ ուստեք: - 338. և խաղաղասէր բարեկարգութեամբ հաստատեալ յօրինէ զկարգս աշխարհիս նախարարօքն հանդերձ – 96. և կացուսցէ ի վերայ աշխարհիս գործավարս, որ ըստ իւրեանց հրամանի զկարգս աշխարհիս յօրինեսցեն – 188. և կացուցեալ զնոսա ի կարգի ստրկութեան, որոյ զփոյթ հպատակութեան ցուցեալ՝ կարգէ զնոսա ի գործ ծառայութեան, կրել արծուիս և բազէս. – 64. Եւ մեք այժմ զկարգն յառաջ վարեսցուք. Կիւրոս. Վարգէն. Վահան. Շամբիթ. Ջաջ. Ջաջուռ: - 74. Եւ մեք զկարգ պատմութեանցս մասնաւորաբար և համառօտապէս յառաջ վարեսցուք – 78. և նմին հատուցումն ի կարգի որ ասէ, ,,կացո ի վերայ նոցա մեղաւոր, սատանայ կացցէ ընդ աջմէ նորա,, , և որ ինչ ի կարգ սաղմոսիդ է: - 214. և նմին հատուցումն ի կարգի որ ասէ, ,,կացո ի վերայ նոցա մեղաւոր, սատանայ կացցէ ընդ աջմէ նորա,, , և որ ինչ ի կարգ սաղմոսիդ է: - 214. Եւ վասն մնացելոցն որք ի քաղաքին և ի սահմանս նորա՝ ել հրաման յարքունուստ առնել ի վերայ նոցա ողորմութիւն, շինել զքաղաքն և հաստատել զամենեսին յիւրաքանչիւր կարգ: - 142. զկարգին յառաջ վարել զպահանջումն, թերևս արդեօք գործակցօք յանդգնեցայց վարել առ ողբերգակս: - 352. զշփոթեալ և զվրդովեալ կարգս աշխարհիս յօրինել առ հանդարտութիւն և խաղաղութիւն յառաջանալ – 388. Զոր յառաջ մատուցեալ ասացից ըստ կարգի, թէպէտ և ոչ խնդամիտ յօժարութեամբ՝ սակայն ակամայ և ի հարկէ ճառագրեցից զբացումն դրան աստուածասաստ բարկութեան ի վերայ մեր – 196. զոր ի կարգի իւրում հարկեցայց ցուցանել: - 248. զոր յառաջ խաղացուցանելով զբանն՝ ցուցից յիւրում կարգի – 182. զոր ցուցանեմ յիւրում կարգի ի բանս համառօտս: - 272. Իսկ ըստ պատմագրաց՝ կարգ ծննդաբանութեանդ ունի զայս օրինակ. – 42. յերկրորդն հարկ է մեզ

զոճն կանոնել, որ յետ Նոյի և անդր ազգացն բաժանմունք յառաջ խաղան, ըստ ցեղից ցեղից ի կարգ անկեալ աշխարհաբաժին ցեղակարգութեամբ. – 12. յորոց աճմամբ յառաջանայ կարգն և գայ հասանէ ի Սենեքերիմ արքայ, առ Եզեկիայիւ Եբրայեցւոցն առաջնորդաւ և առ մերովն Հարամայիւ: - 14. Յութերորդ ամի գերութեանն դառնայ Գուրգէն եղբայր Աշոտի միապետել զիշխանութիւն տէրութեանն և յարդարել կարգել յօրինել զկարգս /314/ շփոթեալ աւերեալ երկրիս: - 314. Յուշ առնէր նմա զխոստումնն Աստուծոյ առ Աբրահամ և զկարգս թլփատութեանցն և զզոհիցն և զայլոցն ամենեցուն, զոր ոչ է այժմ ասել մի ըստ միոջէ. և յայս լինէր խոկումն Իսմայէլացւոցն մինչև իսպառ: - 158. որ եկեալ ոչ կարգաւորաբար աշխարհախնամ հոգածութեամբ յարդարէր զկարգս աշխարհիս. – 114. որ զծայրագոյն շնորհացն Աստուծոյ առեալ պարգևս՝ կենդանւոյն ի կարգս անմահիցն փոխանորդեաց վերագրիլ, որ և յառաջ քան զփոխիլն ծանոյց զհամաջինջ բարկութիւն Աստուծոյ խոտորեալ ազգին և որդւոցն անհնազանդից – 26. Ուստի և ըստ կարգի մեղանացն՝ և դժուարինք անիծիցն հետևին, նախ օձին և ապա կնոջն: - 22. ոչ պիտոյացեալ եկամուտ լուսոյ, որով նսեմասցի առ ի հասանել երեկոյին, ոչ ապաժամանութիւն արեգական առ ի մերժել զմութ գիշերի լուսազգեստ ստեղծուածոյն, որ յետ առաջնոցն կարգի և դասու՝ զերկրորդն փոխանորդեցաւ վիճակ, ոչ կերակուր հոսանուտ առ ի լրութիւն տարաբարձ ունակութեանց անապականին, որ դոյզն ինչ փոքրագոյն քան զհրեշտակս գոլ. – 20. վկայեցին վասն Քրիստոսի …բազումք յեպիսկոպոսաց, ի քահանայից և յայլ կարգէ յեկեղեցական զնդէ – 106.

ԿԱՐԳԱԲԱՆՈՒԹԻՒՆ - զոր յիւրում տեղւոջն կարգաբանութեան գրեցից որ ինչ վասն սորա: - 74.

ԿԱՐԳԱԴՐԵԱԼ - Զոր հոյակապն Տրդատ կարգադրեալ վայելչապէս հոգաբարձութեամբ զպատերազմականն հարկանել հարկս ընդդէմ հինից արշաւանաց. զոր կարգապետութիւն և առ սուրբ հրեշտակն գտանեմք /գրքում՝ զտանեմք/ յարարչական նախախնամութենէն, զաշխարհի զօգուտն բերելով: - 398.

ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆ - և յօրինեաց պատրաստեաց ապարանս պատուաւորս գեղազարդ խրախճանական կարգադրութեանց դրուագս – 392.

ԿԱՐԳԱՊԵՏԵԼ - պատմեաց նոցա զհանգամանս տեսլեանն … զբառնալ եպիսկոպոսապետութեանն և թագաւորութեանն ի տանէն Արշակունեաց, և զկարգապետել անարժանիցն, և զընտրութիւնն սրբոց – 120.

ԿԱՐԳԱՊԵՏՈՒԹԻՒՆ - Զոր հոյակապն Տրդատ կարգադրեալ վայելչապէս հոգաբարձութեամբ զպատերազմականն հարկանել հարկս ընդդէմ հինից արշաւանաց. զոր կարգապետութիւն և առ սուրբ հրեշտակն գտանեմք /գրքում՝ զտանեմք/ յարարչական նախախնամութենէն, զաշխարհի զօգուտն բերելով: - 398.

ԿԱՐԳԱՒ - Բայց քանզի ամենայնիւ ամենայն ուրեք ոչ ոք զօրեաց կալ ընդդէմ նորա յամենայն գործս զոր և կամք իւր ախորժէին՝ սկսաւ ձեռնամուխ լինել կարգաւ ընդ բոլոր աշխարհս արևելեայս – 274. Եւ սկսաւ շրջել կարգաւ ընդ բոլոր աշխարհս, յորում բնակեալ էին Տաճիկք, որ մնային ի սմա ըստ հրամանին Բուխայի: - 306. և զի հաւասարութիւն երից ազգացն, այսինքն որդւոցն Նոյի, կարգաւ կանոնեալ դրոշմեալ կան յոլովից գիրս ոչ է մեզ հարկաւոր զնոյն երկայնաբանութեամբ երկրորդել: - 12. զի ոչ է ժամ մեզ զներբողականօքն զդեգերումն առնել, զպատմողական զրուցատրութեան կարգաւն զանց առնել: - 78.

ԿԱՐԳԱԻՈՐԱԲԱՐ - արդ տեսանեմք զերկնային մարմինն, զի կարգաւորաբար անդադար շարժութիւն ունի, այսինքն արեգակն և լուսինն և աստեղք և այլք նոյնպիսիք. – 54. զի թէ ի բազմաց էր՝ այլայլակ և շփոթեալ լինէր ի բազմաց շարժումնն և ոչ կարգաւորաբար: - 54. որ եկեալ ոչ կարգաւորաբար աշխարհախնամ հոգածութեամբ յարդարէր զկարգս աշխարհիս. – 114. ուստի յայտ է թէ և անմարմին է, զի մարմինն՝ բովանդակեալ զօրութիւն ունի, և ոչ կարէ հանապազ շարժել զերկինն կարգաւորաբար. – 54.

ԿԱՐԳԱԻՈՐՈՒԹԻՒՆ - ուստի և մեզ կարգաւորութիւն փոփոխմանց պահեցաւ ստացուածս այս: - 26.

ԿԱՐԳԵԱԼ - Ապա իբրև վախճան առնոյր կարգեալ եպիսկոպոսացն որ ի Պարսից … միաբան ապա նախարարքն Հայոց եկին առ սուրբն Սահակ – 120. Եւ կարգեալ հաստատեաց Հայրակղոս զսուրբ նշանն անդէն ի տեղւոջ իւրում ի սուրբ Գողգոթայ: - 154. թուի ինձ թէ և զարդարն Հաբէլ ի սոյն շարի կարգեալ համարեցաւ. – 26. ի տէրութիւն կարգեալն՝ բազմադիմի չարիւք վարատեալ, և ծառայ ախտից եղև - 22. վասն որոյ և աստուածայնոցն առ Մովսէսիւ հրամայեալ՝ առնուլ վրէժխնդրութեամբ ազգացն Քանանացւոց զառ ի նահապետէն կարգեալ սահման. – 34.

ԿԱՐԳԵԼ - ի մօտ առ նոսա հասեալ՝ կարգեցին / 274/ կազմեցին զճակատն և ետուն պատերազմ ընդ զօրացն Ծանարաց. – 276. աներկիւղ համարձակութեամբ, բանիբուն համառօտութեամբ կարգեցին եդին առաջի բռնաւորին բանս գեղեցկայարմարս յԱստուածաշունչ գրոց վասն ի Քրիստոս հաւատոցն – 250. Բազում և այլ բանս ախորժականս և դիւրընկալս ըստ այսոցիկ կարգէր ի թղթի իւրում: - 186. բայց ակամայ և ի հարկէ գրեցից կարգեցից ի փոքր և ի դուզնաքեայ բանից, բովանդակեցից համառօտ սուղ և սակաւ բանիւ անցանել ընդ պատմութիւն իրիս այսմիկ – 240. Բայց արդ որպէս յառաջագոյն հատուցի զարտաքոյ պարսաւանաց զիս ներքոյ գրել, վասն ոչ ոճով զսորայս կարգել դնել ի շարի աստ զշարագրածս, վասն ոչ բաւելոյ զանչափութիւնն ի մի վայր գումարել յանմասնաւորաբար նշանակութեամբ – 308. Եւ զԳագիկ որ և Ապումրուան՝ զնա ոստիկան կարգեաց ի վերայ աշխարհին, տեղապահութեամբ տիրել, զի կարի մատաղօրեայք էին որդիք Դերանկին. Աշոտ էր Թ ամաց, յորժամ մեռաւ Դերանիկն, Գագիկ էր Է ամաց, Գուրգէն Ե ամաց: - 354. և անդ գեղեցիկս և համառօտս անպաճոյճս կարգէր մի ըստ միոջէ զվկայութիւն /204/ հաւատոցն որ ի Քրիստոս – 206. Եւ եղև իբրև գումարեցան ի մի վայր ամենայն բազմութիւն զօրացն աւելի քան զՄՌ-աց, և կազմեցին ռազմ և կարգեցին ճակատ – 284. և զԱրշաւիր ի գործ պատերազմի զօրագլուխ կարգեաց: - 82. Եւ զօրացն քաջալերեալ ընթացան յիւրաքանչիւր զէնսն և հեծեալ յընտիրս երիվարացն՝ կացին ի հանդիպոջ և հանդիսացան գումարեցան ի մի վայր և պնդեցան կարգեցան մածեան հոլովեցան յինքեանս – 230. Եւ ի վաղիւ անդր մինչ դեռ արևն ընդ ծայրս հարկանէր՝ կարգեցաւ պատերազմ սաստիկ – 140. Եւ ինքն շտապ տագնապէր փութացուցանէր ռազմ բոլորել, կարգել կազմել զճակատն, պատրաստել ի պատերազմ – 228. և կարգեաց նմա ոճիկս օր ըստ օրէ ըստ արժանի մեծ տիկնոջն Հռիփսիմեայ: - 226. և կարգել նմա ոճիկս առատապէս, մինչ ինքն պարապազոյն ժամու անդր հասանիցէ: - 70. և կարգեցին երիցապետ զոմն ի վերայ քաղաքին որում անուն էր Մոդեստոս: - 142. և կարգեցին հրամանատար ի դրանն զԽոռոխ Որմզդ, որ և սպանաւ ի բամբշանէն որ կոչէին Բոր: - 154. և կարգեցին ճակատս և ռազմ բոլորեցին, և վահանաւորքն փակեցին զառաջակողմն ճակատուն և կացին ի թիկանց հետևակազօր նահատակացն. – 306. և կարգեցին ճակատս, և բոլորեցին ռազմ, և գունդս գունդս յընտրելոց զօրացն ըստ ազգս ազգս, շուրջանակի ի ներքս փակեցին զլեառնն և դրօշս և նշանս բարձրագոյնս լայնատարածս կանգնեցին. – 280. և կարգէ զդասս պաշտօնէից կատարել զպաշտօն Տեառն ի տուէ և ի գիշերի անձանձրոյթ աշխատութեամբ և առատաձեռն տեսչութեամբ աղքատաց, զի գտցեն զողորմութիւն ի Քրիստոսէ: - 122. և կացուցեալ զնոսա ի կարգի ստրկութեան, որոյ զփոյթ հպատակութեան ցուցեալ՝ կարգէ զնոսա ի գործ ծառայութեան, կրել արծուիս և բազէս. – 64. և հրաման հարկեցուցանող ճոխութեան քո ստիպէ զմեզ, ճեպել փութալ առ գիւտն հանդիսանալ և կարգել ոճով զփափագելին յայտարարական գրով, դրոշմել կանոնել ի գիրս աստ – 12. Զայս ևս առաւել քան զսոյնս և բազմապատիկ կարգեցին եդին բանս գեղեցկայարմարս ի Քրիստոս հաւատոցն: - 246. զոր ընկալեալ սուրբ հայրապետին և բարեպաշտ թագաւորին Թէոդոսի հինգ թղթովք և հինգ պատասխանեօք՝ կարգէ զսուրբ վարդապետն ընդ վարդապետութեան աթոռակալութեան սրբոյն Յոհաննու Ոսկեբերանի և այլոց քաջաց և գլխաւոր վարդապետացն – 116. զոր կարգէ զնոսա Ներսէի ի վերակացութիւն գործակալութեան – 82. զռազմ ճակատուն կարգեցին պատրաստեցին. – 210. իսկ զՎարդան կարգէ

ստրատելատ Հայոց: - 116. Կարգեաց հրամանատարս և զօրագլուխս ինքեան յիսմայէլականաց անտի՝ զԱլի և զԱպուբաքր և զԱմր և զՈւթման: - 160. կարգեցին ըստ գունդս գունդս առ Շ այր նշանակ մի. – 280. կարգեցին յօրինեցին զռազմն: - 230. կարգէ և յօրինէ ի նմա փողոցս վաճառոց ամենալիցս և բաւականս. – 88. հարկ եղև ակամայ կարգել դնել առաջի զդէմս անցիցն ըստ իւրաքանչիւր պատահմանց: - 234. մինչև եկից հասից ի լայնանիստ ընդարձակ ասպարէզս մատենից պատմութեանցս՝ ոճով մի ըստ միոջէ շարեցից, կարգեցից, գրեցից զախորժելին քեզ: - 74. մտօք սրտի գիտել զերկիւղն Աստուծոյ, կարգել և օրէնս բնութեան ի մարդիկ. – 26. Յորում տեղւոջ բանակ կրօնաւորաց կարգեաց, և հաւատաց զառաջնորդութիւնն նախասացեալ քահանային – 394. Յութերորդ ամի գերութեանն դառնայ Գուրգէն եղբայր Աշոտի միապետել զիշխանութիւն տէրութեանն և յարդարել կարգել յօրինել զկարգս /314/ շփոթեալ աւերեալ երկրիս: - 314. Սոքա հրամանաւ Վահանայ Արծրունւոյ փոյթ յանձին կալեալ՝ խուզել քննել կարգել ի համառօտ բանս զաճմունս ազգացն անցելոց ոչ կարի ինչ ընդ երկայնագոյնս աշխատասիրաբար անցանել պատմութիւնս: - 74.

ԿԱՐԴԱԼ - Ես իսկ լուայ յորժամ կարդային զԱւետարանն, թէ ասաց Քրիստոս, ,,որ խոստովանեսցի զիս առաջի մարդկան՝ խոստովանեցայց և ես զնա առաջի Հօր իմոյ որ յերկինս է,,. – 222. և մինչ նոքա կարծեցին, թէ ի ձեռն նոցա մատնեցան՝ և նոքա կային յաղօթս և զԱստուած կարդային օգնել նոցա. – 286. Զոր /336/ և ես ոչ արհամարհելով այպանեմ զզղջմանն և զապաշաւանացն, զի ,,որ կարդասցէ զանուն Տեառն կեցցէ,,: - 338. որ ի վերայ եկեղեցեաց Քրիստոսի և սուրբ ուղղափառ հաւատոյ արեամբ չափ ճգնեալ նահատակեցան, և զխոստովանողական անուն ձայն ի վերայ եդեալ կարդային: - 132.

ԿԱՐԵԼ - և քակեցին զռազմն և աւերեցին զճակատն և լքին զմիմեանս, և թողին զպատերազմն և գնացին փախստական ամենայն այր յո՛վ և կարաց զերծանել. - 306. ,,արիք երթայք առ զօրավարն, տեսէք հաւաստի, և ի վերայ հասեալ գիտասցուք, թէ ի՞ւ իւիք կարասցուք հաճել զմիտս նորա ի խաղաղութիւն,,: - 214. Այլ ներքին և արտաքին յարձակմունքն ոչ կարէին ի ներքս դիմել մարտնչել ընդ անյաղթ զօրութեան զօրացելոյն ի Քրիստոսէ: - 308. Անդ հանդիպեալ լինէր և երանելի եպիսկոպոսն Գրիգոր Ռշտունեաց վսամ. ոչ կարաց իւրայնովքն զերծանել, իբրև յայնժամ առղոթաւ/հավանաբար ,,աղօթել,, բայն է / ի լեառն: - 358. Ապա այնուհետև ոչ կարաց կալ համարձակութեամբ ի բացեայ առնել զբանակն իւր, այլ ետ զկէս զօրուն յոմն գլխաւոր և նստոյց զնա ի կողմանէ հիւսիսի կողմն. – 280. Արդ ոչ կարեմք փոյթ ընդ փոյթ շղումարար /ճիշտը՝ շղոմարար/ հաճութեամբ թագաւորիդ յանձն առնուլ՝ զոր հրամայէ կայսերական ճոխութիւնդ. – 132. բայց զտոհմէն Արծրունեաց ոչ ինչ այլ իմանալ կարացաք, թէ զինչ գործ գործեալ նոցա, բայց միայն զխաղաղասէր կեանս կեալ առ թագաւորն և առ նախարարսն – 96. Բայց նոքա ի մտի եդեալ էին, թերևս պատիր խաբէութեամբ /170/ կարասցեն բառնալ զնոսա յիւրաքանչիւր տէրութենէ: - 172. և ետուն պատերազմ անդ զաւուրս Լ, և ոչ ինչ կարացին ստնանել. – 362. և կորապաղատին ընդարձակեաց ելանել, զի երթիցէ ուր և կարասցէ հասանել ըստ յաջողելոյ իրին: -348. և այնու աղագաւ կարաց չէն պահել զերկիրն շատամարդկութեամբ: - 90. Եւ բնակեն առանձին ըստ տունս ազգաց, և այնչափ ի բացեայ են ի միմեանց՝ մինչ թէ ոք յարանց զօրաւորաց ի բարձրաբերձ տեղեաց ուժգին խանչիցէ՝ հազիւ թէ ուրեք կարիցէ առնուլ զբոմբիւն ձայնին, իբրև ի վիմաց ինչ արձագանգ/ք/գրքում՝ արձագան/ լինելոյ կարծիս բերելով – 190. և եբարձ զամենայն արս զօրութեանց, և ոչ ոք էր այնուհետև որ կարէր կալ ի կայի իւրում ունել զդէմ նորա – 238. և եկեալ մտեալ յաշխարհս Հայոց աներկիւղ համարձակութեամբ, խորհեալ խորհուրդ զոր ոչ կարաց հաստատել: - 106. և զքեզ կորակնեալ ամօթալից ի պարտութիւն մատնիցին, որպէս զյառաջագոյն եկեալ հազարապետն արքունուստ, զի ոչ կարաց կալ ընդդէմ նոցա, և ոչ Ճ այր առ Ժ զօրացն Հայոց,,: - 214. Եւ լուեալ կնոջն Սահակայ, թէ ըմբռնեցաւ … փութացաւ գնաց եկաց առաջի Բուխայի, թերևս կարասցէ ըստ պատշաճ գեղոյն և ըստ բազմաձեռն գանձուց ապրեցուցանել զայրն իւր, որ առաւել մահու քան թէ կենաց պատճառ եղև նմա: - 272. և

խնդրէին տեսանել թէ ո՛րպէս կարասցեն գտանել զելս իրաց վտանգին ի վերայ հասելոյ: - 206. Եւ մեր ընկալեալ և հաւատացեալ ճշմարտութեանն՝ և ոչ կարեմք փոխանակել զճշմարտութիւն ընդ սնոտի, առասպելաբան և կարկատուն, ստայօդ և պաճուճազարդ մոլար ուսմանդ ձերոյ: - 246. և մնացեալքն կէսքն փախեան երեսաց յո՛վ և կարաց ոք զերծանել – 400. Եւ յայտ յանդիման ի վերայ հասանել ոչ կարէր. գունդ կազմել և ճակատ պատրաստել ընդդէմ՝ անվայելուչ էր. – 346. և նա ձեռնամուխ եղև զընդ նովաւ հնազանդեալս ի բաց կորզել քեցել ի նմանէ շրջաբերական թղթովք, զիշխան Վասպուրական զԴերանիկն, զԱպլբառ Կայսիկ զբռնաւորն Ապահունեաց, նմանապէս և զայլսն զոր և կարաց հրապուրել. – 350. և նորա խնդիր արարեալ մեծաւ ստիպով, մինչև կարացին գտանել նովիմբ կազմածաւ, և ետ յարսն որք եկեալ էին. – 154. և նորա համբարձեալ զձեռս իւր յերկինս յաղօթս կալ, զի կարասցէ յաղթել նահատակութեամբ – 296. Եւ ոչ ոք գտանէր ամենևին ի կողմանէ /174/ թշնամեացն որ կարէր կալ ընդդէմ նոցա, և ոչ մի ոք. – 176. և ոչ ոք կարէր կալ յակաստանի, ունել զժառանգութիւն հայրենի – 94. և ոչ ոք կարէր երգել զօրհնութիւն սաղմոսացն և կամ լսել ի գթալից արտասուաց ժողովրդեանն միանգամայն և յայնչափ խնդութենէն: - 154. և տարածեալ սփռեալ գործավարս յամենայն երկիրս, բայց միայն յամուրսն ոչ կարացին լինել գամագիտ: - 372. Եւ փախեաւ Յազկերտ յերեսաց /164/ նոցա և ոչ կարաց ճողոպրել. քանզի հասին զհետ նորա մերձ ի սահմանս Քուշանաց, և կոտորեցին զամենայն զօրս նորա. – 166. զայս խորհեալ Մարդպետին ասէ, թէ զայս ձախողակի իմացմունս կատարել կարացից՝ թերևս և զտուն Մամիկոնեան նախարարութեանց կարացից որսալ ի կորուստ: - 98. զայս խորհեալ Մարդպետին ասէ, թէ զայս ձախողակի իմացմունս կատարել կարացից՝ թերևս և զտուն Մամիկոնեան նախարարութեանց կարացից որսալ ի կորուստ: - 98. զի Քրիստոսն այն, որ զանձն իւր ոչ կարաց ապրեցուցանել ի Հրէիցն, այլ կալան զնա և սպանին ի վերայ փայտի՝ իսկ արդ զքեզ զիա՞րդ կարէ ապրեցուցանել ի ձեռաց իմոց: - 146. զի Քրիստոսն այն, որ զանձն իւր ոչ կարաց ապրեցուցանել ի Հրէիցն, այլ կալան զնա և սպանին ի վերայ փայտի՝ իսկ արդ զքեզ զիա՞րդ կարէ ապրեցուցանել ի ձեռաց իմոց: - 146. զի ,,ոչ կարէ ծառ պտուղ չար առնել, և ոչ ծառ չար՝ պտուղ բարի առնել,, , որպէս ասաց Փրկիչն – 256. զի այնու դիւրաւ կարասցեն հերքել մերժել ի բաց կալ ի սուրբ հաւատոյ պարկեշտ կրօնից քրիստոնէութեան: - 124. զի այնու թերևս քաջ կարասցէ գլել զինքեամբ զզօրս Հայոց նախարարօքն հանդերձ. – 114. զի ասեն, թէ նոքա ի միջոյ բառնայցեն՝ ոչ ոք կարասցէ կալ ի կայի իւրում ունել զդէմ մեր: - 184. զի թերևս կարասցեն հաճել զմիտս զօրավարին՝ ի բաց կալ ի խորհրդոցն զոր ինչ խորհեալ էր – 210. զի թերևս կարասցէ արկանել զերանելին ի ներքոյ պղտոր հրապուրեցուցիչս ժախուն մահածին հնազանդութեանն - 204. զի թէ կարացից հարկանել զթշնամին իմ և կանգնել զթագաւորութիւնն իմ՝ ես եղէց քեզ որդի հնազանդութեան - 136. զի կարասցէ անսայթաք հաւատով յաղթել հնարից բանսարկուին, որ ի ծածուկ և յայտնի պատերազմին – 206. զի կարասցէ խոտորել ի գաղտնիս զոգի սրբոյն, զզրահեալն Հոգւովն սրբոյ վերեկութեամբ – 204. զի ոչ կարաց զերծանել գնալ յով և կամիցի – 84. զի ուր և իցէ՝ ածցեն զնա առ նա, թէ՛ պատիր խաբէութեամբ և խորամանկ կեղծաւորութեամբ և խարդախութեամբ, կամ պատերազմաւ և մեծամեծ զօրութեամբ, ամենայն պատրաստութեամբ, արքունի կարողութեամբ, որպէս զիարդ և կարասցեն՝ առ նա հասուցանեն: - 224 Զկնի այսորիկ յառաջ խաղացեալ Ահմաթ և որ ընդ նմա կայսկազենիցն գունդք, երթեալ մտանել ի քաղաքն Դուին, թերևս կարասցէ ի կատարումն՝ զոր ինչ խորհեցաւն՝ հասուցանել զչարիսն: - 344. ընդ կրունկն դարձիր, թշուառական, քանզի զերջանիկ կամարարացն կղզիս կոխել ոչ կարես. զի՞ յերկինս ելանել բռնանաս,,: - 50. ի սաստ մատուցեալ զնդին իւրոյ պատերազմողացն՝ և ոչ կարաց զբորբոքեալ հնոց դէզադէզ կոխակացն սրախողխող սատակմանն ցածուցանել: - 368. իբրև շունք համրացեալք, որ ոչ կարեն հաջել, որպէս ասէ Եսայի մարգարէ, ընդդէմ Տեառն փոխելով զկատաղութիւն մահածին թիւնիցն սատակչական զօրութիւնն – 210. ինքն իսկ փոյթ յանձին կալեալ՝ ել գնաց մեծաւ

հոգաբարձութեամբ, լուծանել զնա ի տառապանաց արգելանին. սակայն և այնպէս ոչ կարաց գտանել զելս իրացն վտանգի առնն: - 346. Իսկ Դերանիկն գործ առնէր ի գիւտս հնարիմացութեան, և տարուբերէր յանձն իւր՝ գտանել զելս իրացն, որով կարիցէ հանել զամուրսն ի Գուրգինայ և տիրել աշխարհին: - 326. Իսկ թագաւորն գրէ առ զօրավարն թերևս կարասցէ հաւանեցուցանել զԳուրգէն՝ երթալ ի թագաւորական քաղաքն առ կայսր, և մեծաց պարգևաց և պատուի և գահու յառաջագութեամբ ընկալցի պարգև ի թագաւորէն: - 302. Իսկ թագաւորն իբրև գիտաց զընդխառնել ընդ միմեանս զօրացն, կամեցաւ մի՞թէ արդեօք կարասցէ դադարեցուցանել զմաքառումն. – 368. Իսկ Ներսէհ ունկնդիր եղեալ Դարէհի, բայց ոչ կարաց հաւատարմացուցանել զասացեալսն. – 82. Իսկ սուրբն վառեալ Հոգւովն սրբով՝ յիշէ զասացեալն ի Փրկչէն, թէ ,,մի երկնչիք յայնցանէ, որ սպանանեն զմարմինն, և զոգին ոչ կարեն ապականել,, - 204. Իսկ Վռամ յերկմիտս եղեալ, ոչ կարէր կատարել զխնդիրն – 118. լռութեամբ և պատճառանօք ոչ կարէին հաճել զմիտս զօրավարին – 234. Մի՞թէ և այժմ ոչ գիտիցես, թէ զամենայն երկիր զծով և զցամաք ինձ հնազանդեցուցի. արդ զԿոստանդնուպօլի՞ս միայն ոչ կարիցեմ բերել: - 146. մի՞թէ ոչ կարէին Հոռոմք սպանանել զնա, և բառնալ զթագաւորութիւնն Պարսից ի ժամանակի, իբրև ետ Աստուած զսա ի ձեռս մեր. այլ արարին ի վերայ նորա ողորմութիւն: - 144. միանգամայն սաստկացուցանէր ի վերայ նորա զահարկութիւնն, զի գոնեայ այնու կարասցէ արդեօք վրիպեցուցանել ի ճշմարիտ հաւատոցն որ ի Հայր և յՈրդի և ի Հոգին սուրբ. – 294. մինչ հազիւ թէ ուրեք կարաց նշկահել զսոսա ի պատրանս խաբէութեան և ի նենգութիւն կեղծաւոր խարդախութեան զօրականաց իւրոյ տէրութեանն: - 242. Նոյնպէս եթէ ոչ հաւատք սրտի և խոստովանութիւն շրթանց ամբողջ պահիցին՝ ոչ կարասցէ հետևել ճշմարիտ դաւանութեանն ի Հայր և յՈրդի և ի Հոգին սուրբ – 256. որում անհնար է երկոցունց ի միասին բնակել, և ոչ ոք կարէ երկուց տերանց ծառայել, որպէս ասաց Փրկիչն – 248. ուստի յայտ է թէ և անմարմին է, զի մարմինն՝ բովանդակեալ զօրութիւն ունի, և ոչ կարէ հանապազ շարժել զերկին կարգաւորաբար. – 54. ,,ոչ կարեմք զդէմ ունել անհնարին ուժոյ բռնութեանն արքունի – 216. և կարիցես զիշխանս Հայոց կապանօք առ մեզ հասուցանել, մանաւանդ զիշխանն Վասպուրական զԱշոտ՝ քեզ և զաւակի քում տաց զերկիրն զայն ի ժառանգութիւն: - 184. Յայնժամ իբրև գիտաց զօրավարն Հայոց և ոչ միով իւիք կարաց հաճել զմիտս նոցա, այլ միաբան ետուն հրաման ելանել ի պատերազմ – 230. յորոց վերայ հասեալ եկուլ վիշապաբար զորս և կարաց ի դիմի հարկանել: - 262. Եւ բնաւ աշխարհս քայքայեալ ցրուեցան՝ յով և կարաց աճապարել փախչել այր իւրաքանչիւր. – 92. զի ես տաց ձեզ բերան և իմաստութիւն, որում ոչ կարիցեն կալ հակառակ կամ տալ պատասպանի ամենայն հակառակորդքն ձեր,,: - 204.

ԿԱՐԵԻՈՐ - Արդ որպէս յառաջագոյն ասացաք՝ սակս կարևոր յուզմանցն միապետեալ ի շարս կանոնաց, միայն յայտարարութիւնս առնել զազգացն Արծրունեաց – 96. Եւ զոր ոչ հաւատարմանայ մեզ՝ և ոչ գրել կարևոր համարեցայ: - 100. և ո՞րպէս՝ հնարաւորեալ յապրուստ անձանց վճարեն զկարևոր պէտս իւրեանց լի աշխատութեամբ և սաստիկ տառապանօք. – 190. զաւերումն աշխարհի քան զշինութիւն կարևոր համարէր – 370. Իսկ ոմանք ի պատմագրաց ասեն, թէ և դուստր Նոյի և ճարտարապետ նաւին կնաւ և որդւովք և կարևոր բարեկամօք. (տապանի մեջ են մտել) որ և ինձ հաւանականք այսոքիկ թուին. – 30. յաճախագոյնս վասն Գուրգինայ վայելէ զդրուատեացն, կարևոր է բազմաձեռն աճմամբ զդրուատեացն յերկարագոյնս հատուցանել զճարտասանութիւնս. - 300. Նախ առաջին՝ զի յետ աւուրց ինչ, իբր անագան իմն այլ ոչ նախապատիւ և կարևոր. և զայն արատաւոր, այլ ոչ անարատ՝ երևի յասացելոցն՝ եթէ ուղիղ մատուցանես և ուղիղ ոչ բաժանես՝ մեղար: - 24.

ԿԱՐԳ ԸՍՏ ԿԱՐԳԻ - ԵԹԷ ՈՐՊԷՍ ԿԱՐԳ ԸՍՏ ԿԱՐԳԻ ԵԿԱՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹԻՒՆՆ /ՃԻՇՏԸ՝ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆՆ/ ԱՍՈՐԵՍՏԱՆԵԱՅՑ ՄԻՆՉԵԻ Ի ԿԻՒՐՈՍ ՊԱՐՍԻԿ: - 56.

ԿԱՐԹ - Եթէ, որպէս ասացի, ի բաց գնաս յինէն՝ խաղաղութիւն է, և թէ ոչ՝ պատերազմ և կռիւ և ճակատամարտ … դու վիշապ ծովական՝ և մեք կարթ, ի քիմս քո ի վեր ձգելով զքեզ ի խորոց անդնդոց. – 280.

ԿԱՐԹԱԿՈՏՈՐ - Եւ /106/ նոյնժամայն հուպ ընդ հուպ ի դիմի հարեալ Մեհուժանայ և կարթակոտոր զասպազինեալ երիվարն արարեալ քաջին Սմբատայ՝ տոռն արկեալ ի պարանոցն Մեհուժանայ ասէ. – 108.

ԿԱՐԻ - Այլ զմեզ գիտես ո՛վ ոք եմք և ուստի՛ և յումմէ, և թէ զի՛նչ անուն է մեր՝ կարի քաջայայտ է քեզ - 242. դառնալ անդրէն ոչ կամէին, զի կարի սաստիկ ամօթս համարէր զգործեցեալսն, կալ տևել ժուժկալել ընդդէմ նոցա ոչ կամէին, զի բազում անկան ի զօրաց իւրեանց: - 276. Եւ զԳագիկ որ և Ապումրուան՝ զնա ոստիկան կարգեաց ի վերայ աշխարհին, տեղապահութեամբ տիրել, զի կարի մատաղօրեայք էին որդիք Դերանկին. Աշոտ էր Թ ամաց, յորժամ մեռաւ Դերանիկն, Գագիկ էր Է ամաց, Գուրգէն Ե ամաց: - 354. Եւ մինչ կարի և ահագին սաստիկս կուտեցաւ ի վերայ նորա ամբոխն, և ամբաստանքն միաբարբառ զաղաղակ /288/ բարձեալ առաջի բռնաւորին զօձիս պատառեալ ասէին, ,,մահապարտ է, չէ պարտ դմա կեալ, և ոչ առնուլ տեղի պատասխանւոյ,, - 290. Եւ յետ մահու նորա նստուցին թագաւոր զորդի նորին զԱրտաշիր, կարի տղայ մանուկ: - 152. և նախ յառաջ Սափին կարի յոյժ սիրեցեալն իւր, զսատակչական դեղն արբեալ, անբուժելի կեղով վառեալ յոսկր և ի մարմին՝ և առաջի Աւշնի զրաւ առնոյր ի կենացն: - 376. իբրև զկարի իմն հնագունից և զանյայտից զինքեանս ասաց նոր առասպելութիւն. – 46. Իբրև կարի թախանձեաց՝ ետ նմա իշխանութիւն հազար ամ: - 46. որ կարի սիրելի է ինձ, մանաւանդ թէ յոլովից, կամ թէ ամենայն հաւատացելոց ի Քրիստոս՝ յերկարագոյնս առնել ի ճառիս զդեգերումն շահատակութեան, ձեզ լսել և ինձ գրել: - 76. Սոքա հրամանաւ Վահանայ Արծրունւոյ փոյթ յանձին կալեալ՝ խուզել քննել կարգել ի համառօտ բանս զաճմունս ազգացն անցելոց ոչ կարի ինչ ընդ երկայնագոյնս աշխատասիրաբար անցանել պատմութիւնս: - 74. քանզի կարի ախորժելով ունկն դնէր և յօժարէր բառնալ զթագաւորութիւնն Հայոց - 118. քանզի կարի սիրելի էր նմա խոռվութիւն և արիւնհեղութիւն. – 170.

ԿԱՐԻ ՅՈՅԺ - Եւ վասն այսր իրաց նենգութեամբ և չարակնութեամբ առլցեալ, մանաւանդ յերկիւղէ՝ կարի յոյժ գրգռեցաւ պատերազմ սաստիկ ի ձեռն Վասակայ Արծրունւոյ. – 178.

ԿԱՐԻՆ ԳԱԻԱՌ - և բազում և ազգի ազգի հոգաբարձութեամբ տուեալ օգնականութիւնս Հայոց աշխարհիս, շինելով քաղաք Թէոդուպոլիս ի Կարին գաւառի, և զօրս կողմնակալս ի պահեստ՝ ընդդէմ կալ պարսկական յարձակմանցն: - 114. և զերթալն Մեսրովպայ և Վարդանայ ի Յոյնս առաջի արկանէին, և զգալն Անատողեայ և զշինել քաղաքին ի Կարին գաւառ: - 118. Եւ ի հասանելն նորա ի Թէոդոսի քաղաքն ի Կարին գաւառ՝ եհաս լուր նորա առ կայսր Միքայէլ թագաւոր Յունաց. – 316.

ԿԱՐՃԵԱԼ - Բայց խռովիչքն ատեցողքն խաղաղութեան ոչ դադարէին նիւթել զհակառակս բարւոյն և զաճմունս չարին. մանաւանդ Վասակ որ զկարճեալ իշխանական անունն յինքեան բերէր: - 310. և ինքն Աշխէթ զինեալ զինքն ի զէն և յասպազէն, զոր կարճեալ ոմանց երկաթեղէն պատկեր գոգցես զերիվարն և զհեծեալն, աչացն միայն ոչ գոլով ծածկոյթ. – 272. Եւ մինչդեռ յայնմ մահիճսն կարճեալ հիւանդութեաննն կեղծաւորէր՝ և ախոյեանարձակքն /ճիշտը՝ախոյեանայարձակ/ զմիմեամբք շուրթափէին – 328. Իսկ Խոսրովու կարճեալ արծարծեալ զզօրս իւր և որք ի դրանէն արքունի որ կոչին համահարզք և փուշտիպանք, և ամենայն արք ընտիրք /148/ տան թագաւորին ոյժ առեալ դարձեալ պատերազմել ընդ Հայրակղի: - 150.

ԿԱՐՃԵԼ - ,,Ես այսպէս կարճէի, թէ յորժամ ես ընդ թշնամիս ձեր մարտնչիմ՝ դուք յայդմ կողմանէ օգնական ինձ լինիցիք, և միաբանութեամբ բարձցուք ի միջոյ զտիեզերական պատուհասն, զտունդ Սասանայ: - 138. ,,յարուցեալ երթիցես դու ինքնին և քեզէն լուիցես ի նմանէ զոր ինչ ախորժիցէ, և բարձցի ի քէն ապստամբութիւնն, զորմէ կարճեն ապստամբ լինել ի թագաւորէն,,: - 214. այլ և ոչ զծիծաղականս նոցա համբաւեալ

քաջութիւն, որպէս կարծեն՝ առանց եպերանաց անցից զխելագարութեամբքն: - 36. այլ և ոչ զմեզ ապստամբս կարծիցես գոլ յինքնակալ թագաւորէն և ի քումմէ ճոխութենէդ, եթէ հաւաստեաւ քննիցես: - 212. այլ և ոչ տարաբարձական, որպէս և /48/ արդ ևս ոմանք կարծեն, ոչ գիտելով զասացեալսն ի Տեառնէ աւազակին՝ այսօր ընդ իս իցես ի դրախտին: - 50. և առ զայրուցն առ մարդկայինն դիմեալ ազգ՝ կարծել նոցա ստնանէր, յինքեանք ձգել կորզել զսատակչական դարձուածէ. – 398. և ետ բերել քուքս և տանջել զնոսա քքովքն յերկար, մինչ կարծել ի նմին վախճանել – 292. և իբրև եդ առաջի զվնասուցն որով կարծէր արկանել զնա ի հաղբս կորստեան՝ ասէ ցերանելին – 294. Եւ իբրև ետուն զթուղթն կարծեցեալ իբրև յերեսաց արքայի՝ ,,ընթերցիր զայդ, ասէ, մի՛ ինչ ընդ մեղադրութեամբ արկաներ զիս, և կարծել նենգութեամբ գնալ առ քեզ և դրժել ինչ քեզ և ստել երդմանց /236/ մերոց. – 238. և ինքեանք դարձան անդրէն. կարծէին ի սպառ հարկանել զգունդն Հայոց. – 308. Եւ խօսէր ընդ նոսա սաստիկ և ահագին դատաստանօք և սպառնալեօք, թէ ընդէ՞ր և դուք ոչ մեռարուք ի պատերազմին, քան թէ ելեալ փախստական գնացէք գալ առ իս և տալ համարձակութիւն ծառայի իմում ի յայսքան վնաս. մի՞թէ արդեօք զխոսրով մեռեալ կարծէիք,,: - 150. և կարծէր յայնժամ ի ձեռն խոշտանգանաց դիւրաւ արկանել զնոսա ի հաղբս կորուսելոցն և մոլորելոցն ի հաւատէն Քրիստոսի: - 264. և մինչ նոքա կարծեցին, թէ ի ձեռն նոցա մատնեցան՝ և նոքա կային յաղօթս և զԱստուած կարդային օգնել նոցա. – 286. զի ասաց զօրավարն Աղուանից, եթէ ,,մի՛ կարծիցէ ոք զիս ապստամբ գոլ ի թագաւորէն և վասն այնր հարկանել զզօրսդ Ասորեստանի,,. – 286. զի կարծէր դիւրաւ արկանել զնոսա ի հաղբս պատրանաց զկնի դարձելոցն ի ճշմարտութենէն. – 250. զի կարծէր ևս համախորհ և միագործ զնիզակակիցսն իւր, զզօրսն և զզօրագլուխս զգունդ ազատացն, որ մտեալ էին ընդ նմա յանձաւն Նկանի: - 210. զի մի քաջասրտագոյն կարծիցի Մարն քան զՀայկազնեայն: - 62. զի ոչ ունէք զայդ յանձին կալաւ Աղէքսանդրոս՝ կարծել տիրել ունէք երկրի բաց յԱղէքսանդրէ: - 70. Իսկ ի դառնալ գրոցն ի յաշխարհն Մոկաց՝ ոչ ինչ ունէք փոյթ վասն այն լինելով, կարծել՝ վարդապետին զայս այսպէս կանոնեալ. – 130. կարծեաց համանգամայն զբոլոր պաշտօնեայս Քրիստոսի ի բաց վճարել ի հաւատարիմ երկրպագութենէ ճշմարտին Աստուծոյ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. – 264. Կարծելով Վահանայ խոնարհել զորդին իւր յանկանգնելի կործանումն, զոր մեկուսեալ Սամուէլի զհայր իւր Վահան, իբր այն թէ խորհիցին ինչ վասն որոյ եկեալն էին – 106. կարծէր իւրով զօրութեամբ զօրանալ ի վերայ կործանմանն Հայոց, ի մոռացօնս եղեալ հատուցումն մեղաց մերոց ի ձեռանէ Տեառն, որպէս Իսրայէլին ի հնումն առ Սեդեկեաւ զՆաբուքոդոնոսորայն: - 326. մտեալ Վահան աղերսէր համոզէր՝ մի կալ մնալ, մինչ զքաջանունութիւնն ընդ վատասրտութիւն կարծել յոմանց խառնել, թէպէտ և անկարծ վարկանէր զկեղակարծն: - 328. նա և զիւրեաւ տախտակափակ լանջապահս, թիկնապահս, զանգապանս, սռնապանս, գլխապանս, որ գրեթէ բովանդակ պղնձեղէնս զնա իմանալ թուէր, և զետեղեալ բլրաձև զօրու անմատչելի կարծելով. – 64. Նոյն գունակ և զՂուկա ազգաբանութիւնն գտցես շարածեալ ի վերջէ յառաջ, և ասէր որպէս կարծէր զՅիսուսէ՝ ի Յովսէփայ ի Յակովբայ ի Հեղեայ, և ապա մի ըստ միոջէքն: -16. Վեցերորդ՝ զի խաւարաւ չարեացն պատրուակեալ զոգին, մինչն զԱստուած ևս անգէտ կարծելով՝ լրբենի երեսօք պատասխանէր – 24.

ԿԱՐԾԵՑԵԱԼ - - և նա ևս քան զևս զկարծեցեալ հիւանդութեանն աճեցուցանէր զխստութիւն ցաւոցն ծանրանալն նմա: - 328. Բայց ինքն կարծեցեալ մարզպանն փախստեայ անկանի ի բարձրաբերձ եկեղեցին – 190. Եւ իբրև ետուն զթուղթն կարծեցեալ իբրև յերեսաց արքայի՝ ,,ընթերցիր զայդ, ասէ, մի՛ ինչ ընդ մեղադրութեամբ արկաներ զիս, և կարծել նենգութեամբ գնալ առ քեզ և դրժել ինչ քեզ և ստել երդմանց /236/ մերոց. – 238.

ԿԱՐԾԻՔ - Եւ բնակեն առանձին ըստ տունս ազգաց, և այնչափ ի բացեայ են ի միմեանց՝ մինչ թէ ոք յարանց զօրաւորաց ի բարձրաբերձ տեղեաց ուժգին խանչիցէ՝ հազիւ թէ ուրեք կարիցէ առնուլ զբոմբիւն ձայնին, իբրև ի վիմաց ինչ արձագանգ/ք/գրքում՝ արձագան/ լինելոյ կարծիս բերելով – 190. Եւ ելեալ գնաց զհետ կոչնականացն ի գութ հարազատութեան, և ի

կարծիս սաստիկ հիւանդութեան, թէ մերձ ի մահ անկեալ դնիցի, ըստ ստուգելոյ կոչնականացն: - 348. Եւ եղև մինչ կային իշխանքն ի միաբանութեան առանց կարծեաց կասկածանաց ի հպատակութեան ելեալ յարքունուստ հազարապետին / 340 / որդւոյն Հալթի, և զմիաբանական սիրոյն շաղկապ ի միասին յօդեալ պնդեալ անքակ պահէին – 342. Եւ ես զայլովք հայեցեալ բանիւք քամահեալ՝ ուժգնակի կարծիք ի միտս իմ ընթացան առ ի հաւատ ասացելոցս վերջնոյ – 48. և ի սաստիկ փայլմանէ զինուցն և սուսերացն շողալոյ, և ի փայլիւնն սպառազէն երիվարացն վառելոցն՝ զկարծիս բերէր զիրոյ վառեալ լերինն – 228. և հայր քո Վասակ խորհիցի ինչ առ արքայի, և աղմուկ և շփոթ ինչ յուզիցէ հայր քո, որպէս թէ զապստամբութեան ինչ խորհել կարծիս զմէնջ առնուցուն: - 114. և մինչ ոչ ելին ի գլուխ կարծիքն, այլ իբրև զմեքենայ ինչ յամուր անդամանդեայ պարսպէ ի բաց դառնայր – 250. և յանդիմանեալ ի սրբոյն Ներսիսէ՝ արբուցանեն նմա դեղ մահու, զանխուլ կարծիս բերելով. – 108. Եւ վասն այսր ամենայնի հարկ է քեզ երթալ, զի և կարծիք ապստամբութեանդ բարձցի – 216. Եւ տային կարծիս պարսկականին՝ որպէս թէ հաւանեալ օրինաց նոցա: - 110. Իսկ իբրև գիտաց բռնաւորն, եթէ չելին ի գլուխ կարծիքն զոր ի վերայ սրբոցն խորհեցաւ, որպէս գրեալ է, ,,կարծողն և արհամարհողն այր ամբարտաւան է և ոչ ինչ վճարեսցէ,,- 264. ո՞չ ապաքէն ըստ այնմ և ելքն ի նմանէ լինիցին շահ ի փառս Բաբելացւոցն ըստ կարծեաց նոցա: - 38. որ կարծիւք յիմարութեան աստուածանալ կամեցաւ: - 26. Քանզի առաջնոցն ուրուականք և ստուերականք ոմանք՝ ըստ իւրաքանչիւր կարծեաց թուելոց վրիպեցան յաստուածածանօթն գիտութենէ հոգեշահ նահապետացն: - 40. քանզի ոչինչ ունէր զկարծիս դրժանաց առ թագաւորն և առ զօրս նորա – 186.

ԿԱՐԾՈՂ - Իսկ իբրև գիտաց բռնաւորն, եթէ չելին ի գլուխ կարծիքն զոր ի վերայ սրբոցն խորհեցաւ, որպէս գրեալ է, ,,կարծողն և արհամարհողն այր ամբարտաւան է և ոչ ինչ վճարեսցէ,,- 264.

ԿԱՐԾՈՂԱԿԱՆ - Իսկ Սաղման յանձն առ գրել նմա. և գրէր գիրս յօդուածոյս, էր ինչ որ ի ստոյգ յիշողութենէ, և էր ինչ որ կարծողական բանք. – 164. Ոչ կարծողականս ինչ ըստ առաջնոցն Բէլայ ասացելում, կամ այլոց ստուերականացն երևեցելոց երազականաց և խաբեբայ դիւաց, այլ ձեռագործ մեռելականս իսկ եցոյց ի պաշտօն – 40.

ԿԱՐԾՐ - Ի սորա յերրորդ ամի թագաւորութեանն ի վերայ Հայոց աստուածատուր բարկութեամբ անդնդաշարժ վրդովմամբք ներքնագոյն խորոցն պատահեալ միմեանց սահանախաղաց դղրդմամբ, հիմնաշարժ տապալմամբ, /356/ ներքսագոյն երկրի թուլացեալ պնդափակ աղխեալ սանդարամետական սահմանին, բարկութեան հողմոց շնչեալ ընդ ջրոցն խաւարայնոց, ի կոհակս անդնդաքակս զթանձրայատակ երկրի զկարծր և զծանրալիր անկշիռ անբաւութիւնն տատանեալ, մինչ յերեսս երկրի ի վեր մղեալ հանդէպ քաղաքին Արտաշատու/ գրքում՝ Արտաշասու/, որ Բլուրն նորուն ասի – 358.

ԿԱՐԾՐԱՆԱԼ - և եղեն իբրև զմի այր կամ թէ իբրև զվէմ մի բլրաձև, արձանացան կարծրացան պնդութեամբ՝ անմատոյց լինել ի նոսա զօրութիւն երկաթի. – 230.

ԿԱՐԿԱՌ - և թափառական զվէմս ապաստան արարեալ յանկասկածագոյն տեղիս դարանի ի փոքր վիմամէջս ի կարկառս հովտաձևս հանդէպ հարաւոյ քաղաքաբերդին Վանի, մօտ այն տեղի, յորում բղխէ աղբիւրաբար առ ստորոտով բլրակի միոյ, մօտ յեզր ծովուն – 84.

ԿԱՐԿԱՌԵԱԼ - և տեսեալ զուարակ մի՝ գողացաւ և տարեալ մեկուսի յազեաց զնա և կարկառեալ քարամբք՝ մնայր երեկոյինն – 46.

ԿԱՐԿԱՌԵԼ - Վա՛յ քեզ, եղո՛ւկ դու, այր քաջ, արքայդ մեծանուն, յորժամ կարկառիցէ բարձրեալն զձեռն իւր ի կործանել զքեզ և ի խորտակել զգաւազան ամբարտաւանութեան քո: - 148.

ԿԱՐԿԱՏՈՒՆ - և կէսքն վրիպեալք ի բնական հայրենի լեզուէն, յաղագս հեռաբնակ լինելոյ և անհամբոյրք միմեանց հանդիպեալք, և խօսս միմեանց եղեալ կարկատուն մուրացածի բանիւք: - 190. Եւ մեր ընկալեալ և հաւատացեալ ճշմարտութեանն՝ և ոչ կարեմք փոխանակել զճշմարտութիւն ընդ սնոտի, առասպելաբան և կարկատուն, ստայօդ և պաճուճազարդ մոլար ուսմանդ ձերոյ: - 246.

ԿԱՐԿԻՆԵԱՆՔ ՏԵՂԻ - Եւ հասեալ ի մի վայր գան հովիտն Կուղան, ուր Գուրգէն բանակ արարեալ /362/ էր ի Կարկինեանս տեղւոջ բազմաձեռն զօրու. – 364.

ԿԱՐԿՈՒՏ - Եթէ, որպէս ասացի, ի բաց գնաս յինէն՝ խաղաղութիւն է, և թէ ոչ՝ պատերազմ և կռիւ և ճակատամարտ … դու ծաղիկ՝ և մեք խորշակ թառամեցուցիչք, դու անդ պտղալից՝ և մեք կարկուտ ապականարար – 280.

ԿԱՐԿՏԱԲԵՐ - և ահեղ որոտումն և ահեղ թնդիւնք և բախմունք խուռն յարձակելոյ իբրև յամպոյ ճայթիւնք կարկտաբերք հրձգութեանց կերպաձգէին: - 328. կամ թէ յամպոց ինչ ճայթիւն արձակելոյ և ի վայր հրաձգութիւնն արկանէ ի կարկտաբեր և յանձրևաբեր ժամանակի - 228. Մանաւանդ /370/ թէ նախախնամող և պահպանական աջն Քրիստոսի հովանաւորեալ առ ապրուստ հրածին կարկտաբեր հասեալ կորստական դիպուածին, օգնութիւն հասեալ յԱստուծոյ՝ քաջասրտագոյնս զնա գործեաց և շութափեալ զնա ի ժանեաց գազանին – 372.

ԿԱՐԿՏԱՀՈՍ - վառեալ լինէր իբրև զբոց հնոցի, իբրև զալիս ծովու դիզեալ կուտմամբ փրփրեալ ծիրանագոյն արիւնանման, ուժգին գոչելով անդնդաքակ յուզմամբ, իբրև զհեղեղատ յորդահոս ի ճայթմանէ կարկտահոս ամպոց – 180.

ԿԱՐՃԱՌՕՏ - Բայց զի՞ մի մի զիւրաքանչիւր հանդէս պատերազմաց նոցա գրեցից յականէ յանուանէ. ասացից կարճառօտ և համառօտեցից զբանս. – 286.

ԿԱՐՄԻՐ ԳԵՏ - Իսկ վայր խաղացեալ ի Մառականն աւան, առ Կարմիրն կոչեցեալ գետով, որ իջանէ ի գետն Երասխ – 392.

ԿԱՐՄՐԱՏԵՍԻԼ - և փոխանակ ծաղկեալ պատմուճանի գունագոյն երանգ երանգ անկուածոցն՝ զսուրբ և զվարդագոյն կարմրատեսիլ արիւնն իւրեանց ի վերայ սուրբ մարմնոյն, և փոխանակ ոսկեհուռ թագակապ զարդու պսակացն՝ զերկրպագութիւնն Քրիստոսի. – 266.

ԿԱՐՆԱՅԻՆ ՔԱՂԱՔ - Յետ այսր՝ յերկրորդ ամի պաշարեն զԿարնային քաղաքն զօրքն Յունաց. և դարձեալ անդրէն ի կամս իւրեանց թողեալ գնացին: - 358.

ԿԱՐՆՈՅ ՔԱՂԱՔ - Եւ ճանապարհ արարեալ ընդ կողմն հիւսիսոյ՝ ել դէպ ուղի ի Կարնոյ քաղաք – 148.

ԿԱՐՈՂ/ՕՂ/ - բայց միայն Աստուծոյ կարողի և յամենայնի խնամողի կարողութիւնս այս է դիւրայարմար – 198. Իսկ քաղաքապետն Սահակ ելեալ ընդ դուռնն, որ ելանէ ի բերդն Շամշղտայ, սամոյր զինքեամբ արկեալ և գաւազան ի ձեռն առեալ, յիմարեալ մտօք կորոյս զփախուստն իւր, որ կարող էր գնալ յով և կամիցի. – 272. կարող է Ատուած, եթէ կամեսցի՝ ցամաքեցուցանել զծովս առաջի ձեր: - 144. Ուր և այլոց կարող տուիչ լինել ժամանակաց, որպէս և արանցն որ յառաջ քան զջրհեղեղն քառասուն ևս աւելի բիւրս ամաց և դարս փոխադրական այլաձևս և խժականս, շարս և ներս և սոսս - 38. բայց նուազեալ ազգին՝ ոչ զոք ունէին, որ կարօղ լինէին զգործ պատերազմին վճարել և զպաշտօն թագաւորին. – 90.

ԿԱՐՈՂԱԲԱՐ - որ յետուստ՝ մոլի բռնաւոր, որ և զՏրովական դժուարամարտիկ իրս քաջապէս և կարողաբար վանեալ՝ աստուած ի նոցանէ ասացաւ, նա և ոչ աշխարհակալին Աղէքսանդրի Մակեդոնացւոյ - 36.

ԿԱՐՈՂԱԳՈՅՆ - քանզի նուազագոյնքն և տկարք՝ թափառեալք աղքատութեամբ վտանգէին, իսկ կարողագոյնքն և բռնաւորք ըստ բնութեան գազանաց վայրենամիտք լեալ, անամօթ և անարգել յափշտակութեամբ վրդովէին զբոլոր երկիրս: - 300.

ԿԱՐՈՂՈՒԹԻՒՆ - ,, վնասս և զբեկումն հարկաց արքունի և զկոտորումն զօրաց քոց Աշոտ գործեաց, և նա է պատճառ ամենայն ապստամբութեան Հայոց ի քումմէ թագաւորութենէդ, ասեն, ո՛վ քաջդ և հաւասար աստուածայնոց կարողութեան ինքնակալ, և ընդհանուր իշխեցօղ կենաց և մահու,,: - 180. այր գազանաբարոյ, վայրենամիտ, առատաձեռն առ արբումն մարդկան, այր զօրաւոր զօրութեամբ ի գործս պատերազմաց, ահարկու ազանց, կարողութիւն և ուժեղութիւն Աւշնի ի սորա ձեռս բաւականացեալ: - 374. բայց միայն Աստուծոյ կարողի և յամենայնի խնամողի

կարողութիւնս այս է դիւրայարմար – 198. զի ոչ իսկ է կարողութիւն լռութեամբ ծածկել թաքուցանել անյայտ առնել զանհուն և զանբաւ վիշտս աղէտս եկեալ հասեալ մեզ: - 240. զի ուր և իցէ՝ ածցեն զնա առ նա, թէ՛ պատիր խաբէութեամբ և խորամանկ կեղծաւորութեամբ և խարդախութեամբ, կամ պատերազմաւ և մեծամեծ զօրութեամբ, ամենայն պատրաստութեամբ, արքունի կարողութեամբ, որպէս զիարդ և կարասցեն՝ առ նա հասուցանեն: - 224. Զոր մարդկային կարողութեան անհնար է /196/ փակել զբացումն դրանն ի կորուստ. – 198. մինչև հարկեցաւ թագաւորն յամենայն ուժով կարողութեան իւրոյ զօրս գումարել յամենայն ազգաց, որ ընդ ձեռամբ իւրոյ տէրութեանն էին հնազանդեալ թագաւորք և թագաւորազունք – 242. տես քեզէն և ծանի՛ր, զի ոչ գոյ վնաս իմ յիրիդ յայդմիկ կամ կարողութիւն արձակել զքեզ,,: - 238.

ԿԱՐՕՂ - Տե՛ս ԿԱՐՈՂ

ԿԱՐՕՏԱՆԱԼ - Եւ այնքան խրթնի անծանօթք պատահեն առ միմեանս, մինչև թարգմանաց անգամ կարօտանան. – 190. Յոքունց կամ թէ բնաւից կարօտանամ իմաստասիրաց գումարից ի մի վայր հասելոց՝ զողբերգականացն ճոխաբանել ճարտասանութիւնս. – 352.

ԿԱՐՕՏԱՅԵԱԼ - Այսր աղագաւ արտաքս վազեցի զմեծս զայս բանգտութեան ընթանալ ասպարէզ, զօրաւորաց մտահարուստ արանց կարօտացեալ բաւականանալ իմով անհեդեդ պատմողական հանդիսիւ – 352.

ԿԱՐՕՏՈՒԹԻՒՆ - և զանձկալից տեսութիւնն հրաշափառապէս և անճառաբար ի վարշամակի տպաւորեալ ելից զկարօտութիւնն Աբգարու աղբիւրն կենաց Քրիստոս: - 76.

ԿԱՑԵԱԼ - այլ յետս կացեալ յուխտէ սրբութեանն դառնալ զհետ պաշտաման կոռոցն – 80. Բնաբանաբար/ճիշտը՝բնականաբար/ իսկ հետևեալ մեր կարգի ազգաբանութեանս որ վասն առաջի կացելոցս մեզ փութոյ Ասորեստանեայց թագաւորութեանն – 56. Եւ յաջորդեալ փոխանակ նորա կացեալ յաթոռ սրբոյն Գրիգորի երանելին Մաշտոց, ելեալ ի կղզոյն Գեղարքունի լճէն, զՅօհաննու Կարապետին զվարուցն բերեալ զօրինակ. – 376. Եւ այլք մերձ կացեալ առ Դերանիկն՝ ամբաստան լեալ Աշոտոյ կորապաղատէ, որպէս թէ նախանձու լցեալ, և քսութեամբ վարէր ի մէջ հազարապետին, և թէ արկանել ևս ջանայր զնա յիշխանութենէ անտի նորա: - 342. և անդէն կացեալ զաւուրս բազումս յապահովացեալ ի կասկածանաց երկիւղէ Երուանդայ: - 84. և գրեթէ /գրքում՝ գրէթէ/ ոչ ամենևին ուրեք երևեցաւ այնպիսի ահաւոր տեսիլ զօրու և սպառազէն կազմութեան՝ ամենայն թագաւորաց, որ կացեալ էին ընդ ծագս տիեզերաց. զորոյ սաստիկ և ահագին որոտումնն և ճայթումնն և փայլիւն զինուցն, և որ ինչ յայնժամ զարդարեալ և զինեալ պատրաստեցան զօրքն Տաճկաց: - 284. Եւ ելեալ իշխանաց իշխանն, որ բարձրագոյն և հանճարեղագոյնն էր քան զբնաւ Հայաստանեայցս և զընդհանուր կացեալսս ի ներքոյ երկնից՝ եկն առ նա մեծաշուք պատուաղրութեամբ, և պարգևս և պատիւս ոչ սակաւս նմա յառաջաբերեաց. – 344. և զտարի մի կացեալ մարմինք սպանելոցն անյօշելիք ի գազանաց և ի թռչնոց: - 368. և զօրագլուխ կացեալ էր Մուսէ որդի Բուխայի: - 328. Եւ էր կացեալ եպիսկոպոսապետ Հայոց Զաւէն, զոր յառաջագոյն ասացաք, յետ չորրորդ ամի Շահակայ: - 110. Եւ թագաւորէ ընդ նորա որդի հօրեղբօր նորա Մուհթիս, և կացեալ ամիսս Գ մեռանի: - 320. Եւ ի ժամու մինչ ագևորեալքն կամէին մտանել զառաջեաւ … յայնժամ շուրջ կացեալ զվրանաւն մեծ սպարապետին զկազմեալ գնդաւ վահանաւոր և նիզակաւոր ամրափակ պնդութեամբ, և մտեալ մատոյց զթուղթն, զոր էր գրեալ առ Յամանիկն ի քաղաքն Պարտաւ Ահմաթայ նենգութեամբ: - 344. Եւ խոյակապ և անուանի եղեալ քան որ յառաջագոյն քան զնա էին կացեալ իշխանք ընդհանուր Հայաստանեայցս, որ յարևելս և ի կողմանս հիւսիսոյ, մանաւանդ որք ի Վասպուրական աշխարհիս էին կացեալ նախարարք յիշխանական պետութիւնս: - 170. Եւ խոյակապ և անուանի եղեալ քան որ յառաջագոյն քան զնա էին կացեալ իշխանք ընդհանուր Հայաստանեայցս, որ յարևելս և ի կողմանս հիւսիսոյ, մանաւանդ որք ի Վասպուրական աշխարհիս էին կացեալ նախարարք յիշխանական պետութիւնս: - 170. Եւ կացեալ անդ մինչ ի ժամանակս առաջինն Ղևոնի կայսեր՝ մեռանի անդ Վասակ և Տաճատ և փոխին ի հանգիստ

փառաւորապէս ի գերեզմանս մեծամեծացն Յունաց: - 132. և կացեալ զաւուրս բազումս անթաղ՝ և ոչ ինչ ամենևին արատեցան մարմինք սրբոցն, և ոչ գոյր հոտ ժախտու ի վերայ նոցա: - 268. Եւ կացեալ ԺԲ ամ Աղէքսանդրի մեռանի ի Բաբելոն, կեցեալ ամս ԼԳ, թագաւորեալ ամս ԺԲ: - 70. կացեալ Շաւասպ առ կայսեր ամս Դ: - 116. Եւ կացեալ սուրբքն ի կապանս զերիս ամս ի ներքին բանտին: - 252. և որ ինչ ի նմանէ կան պահին պարգևք կացելոյն ի ճշմարտութեան հաւատս, և տանջանք ուրացելոցն և յետս կացելոցն - 206. և որ ինչ ի նմանէ կան պահին պարգևք կացելոյն ի ճշմարտութեան հաւատս, և տանջանք ուրացելոցն և յետս կացելոցն - 206. Ընդ ժամանակս ընդ այնոսիկ էր կացեալ յաթոռ հայրապետութեան տէր Յոհաննէս կաթողիկոս Հայոց: - 180. ի կոր կործանման կացեալ Խոսրով մեր թագաւոր, և ջանայր առնուլ զվրէժ մահու հարազատին իւրոյ, թագաւորին Արտաւանայ, զոր և առնէր իսկ – 92. Իսկ երիցս երանելի սուրբքն տէր Յոհաննէս Արծրունեաց եպիսկոպոս և երանելի քահանայն Գրիգոր և տէր Գրիգոր Արծրունի խրախուսեալք յԱստուած, կացեալ յատենի ի մեծ ասպարիսի հոգևորական պատերազմին – 250. Իսկ Խուրան ոչ կացեալ առ Սանատրկոյ զնաց յերկիրն Յունաց, առ Կեսար Տիբերիոս – 80. մերժել հեռանալ ի ճոխ և ի նազելի եղբարցն պատուաւորաց, ի պարոյ կացեալ ազատագունդ ազգի ազգի պերճութենէ – 386. Յորոց միջի կացեալ Ապումբուան համոզեալ նոցա ցածոյց զճակատ առ ճակատ վառեալ պատերազմն – 364. Նորա ի բաց կացեալ ի հնազանդութենէ իւրոյ պետականին հանդերձ քաղաքային գլխաւորօքն. – 338. որ առեալ զթագաւորութիւնն Պարթևաց՝ տևեաց մինչև ի ժամանակս Յազկերտի, որ վերջին կացեալ թագաւոր Պարսից՝ սպանաւ ի Տաճկաց: - 166. որ ի կողմանս Դամասկոսի կացեալ՝ ոմանք թագաւոր ասէին զինքեանս, և այլք յԱսորեստանի կացեալ՝ զինքեանս ասէին թագաւոր, մինչև ի ժամանակս Աբդլայի – 168. որ ի կողմանս Դամասկոսի կացեալ՝ ոմանք թագաւոր ասէին զինքեանս, և այլք յԱսորեստանի կացեալ՝ զինքեանս ասէին թագաւոր, մինչև ի ժամանակս Աբդլայի – 168. որ կացեալ իշխան ի վերայ Տարունոյ ամս Է՝ յաւելաւ առ հարս իւր, թողեալ զաւակ իւր Աշոտ անուն: - 342. որ չորրորդ կացեալ թագաւոր ի Վաղարշակէ Պարթևէ: - 74. Սահակ որդի Վաչէի կացեալ ի դրան Արտաշէսի շքեղ և երևելի ճոխութեամբ – 90. ՎԱՍՆ ԱՍՈՐԵՍՏԱՆԵԱՑՑ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆՆ. ԵՒ ԹԷ ՈՐՊԷՍ ԶՐԱԴԱՇՏ ԵՒ ՄԱՆԻԹՈՊ ԿԱՑԵԱԼ ԳԼԽԱՒՈՐՔ ԱՐԵՒԵԼԻՑ ԿՈՂՄԱՆ, ԵՒ ՄՈԼԱՐ ՈՒՍՄԱՆՑ ՆՈՑԱ - 42. Քանզի բազում աշխատութեամբ է գտանել զշար ազգաբանութեան տանն Արծրունեաց, վասն հեռաւոր ժամանակաց կացեալ և դիւանացն անյայտութեանց ի մէջ Հայաստանեայցս – 12.

ԿԱՑԻՆ - և դահճացն հանեալ զսուսերն՝ դիմեցին ի վերայ նոցա իբրև զգազանս արիւնարբուս, և ծեծէին սրովն, իբրև ոք զի հատանիցէ փայտ ի մայրս անտառախիտս հարեալ կացնաւ, և յանխնայ անողորմ յօշէին անդամ անդամ: - 266.

ԿԱՑՈՒՑԱՆԵԼ - Այսպէս և զամենայն ըմբռնեալսն վտանգաւոր մահու տառապեցուցանէին ընդ մէջ կտրելով, ահարկուս տեսողացն զնոցայն վտանգսն կացուցանելով: - 372. այր հեզ, խոհական, խորհրդական, համեստ ի բանս, համեստ ի նայեցուածս, որ ոչ բազմաց քան եթէ միոյն, այսինքն Քրիստոսի՝ զինքն ծանօթ ջանայր կացուցանել: - 94. Անդանօր եկեալ Շապուհ եղբայր թագաւորին, և կացուցանէ զԳագիկ՝ իշխան Վասպուրական տէրութեանն. – 364. ասէ, զի կացուցի թագաւոր ձեզ յազգէ և ի դենէ ձերմէ, մի՛ ծանր թուիցի ձեզ դառնալ անդրէն և ունել զիւրաքանչիւր ժառանգութիւն. – 110. Բայց զաշխարհն Յիսէ որդին Շեհայ բռնազբօսեալ յինքն գրաւեաց և կացոյց ի վերայ նոցա զիւր գործավարս: - 344. ելանէ մարզպանն ի վերայ նոցա և յինքն հանէ զՏամբեր և զԸռնայ գաւառ և որ ասի Ապուջափրի բերդ, ի Վհրի քաղաքին Կորճէից զիւր կացուցանէ ոստիկանս ի պահպանութիւն ամրոցին: - 400. ետ բերել փայտս, և եդեալ ի վերայ փայտին զերանելին Սողոմոն՝ և մօտ առ փայտն կացուցին զսուրբն Կահայ, զի գոնեայ մինն ի միւսոյ տանջանացն երկուցեալ հնազանդիցի հրամանի թագաւորին: - 292. ետուն գոյժ զմահուանէ թագաւորին և կացուցին փոխանակ Վաղարշու թագաւոր զորդի իւր զԽոսրով

ՀԱՆԱՊԱԶԱԿԻՐ - Եւ բարձեալ աշտեայս հանապազակիրս ի պատրաստութիւն գազանացն որ ի մայրիսն որջանան, կամ թշնամեաց ի վերայ հասելոց – 190.

ՀԱՆԱՊԱԶԱԿՈՒԻ - Իբրև գիտացին սուրբքն զանհուն պատերազմ չարին՝ վառեալ և նոքա զինքեանս հանապազակռիւ լինել ի ճակատուն, անխափան սաղմոսերգութեամբ զանուշահոտ աղօթս իւրեանց միշտ ի բարձունս առաքելով – 250.

ՀԱՆԱՊԱԶՈՐԴ - ուր զսեղանն սուրբ և զգաւազան հովուական և զմատանին պատկերեալ և զգօտին աշխատասէր միջոյն թողեալ ի հանապազորդ յիշատակ լուսաւորութեանն մերոյ հօրն: - 104.

ՀԱՆԳԱՄԱՆՔ - այլ եկ պատմեաց նոցա զհանգամանս տեսլեանն – 120. Դարձեալ պիտոյ է մեզ դառնալ առ ի վերագոյնսն, որ նախ քան զպատերազմն Աղձնեաց եղեալ են հանգամանք գործոց ի զօրացն Տաճկաց, և թէ ո՛րպէս եկաց ընդդէմ նոցա իշխանն Աշոտ և վանեաց զնոսա սրով սուսերի: - 176. Եւ արդ ասացից փոքր ի շատէ զյայտնի գործեցեալսն, զի և որ ինչ ընդ սոքօք և յետ սոցա ի գլուխ ելին հանգամանք իրաց՝ և այնմ առանց երկբայութեան հաւատասցես , իբրև ճշմարիտ և անսուտ պատմողի: - 240. և եթէ յերկարիցի գործոյս այսորիկ հանդէս և մարտիցն հանգամանք ոչ փութանակի վարիցին՝ գուցէ օգնականութեամբ գիշերոյ եկեսցէ ի վերայ քո և մեծամեծ աւճիրս ի վերայ քո և զօրացդ արքունի հասուցանիցէ: - 212. Զորոյ իմացմանց հանգամանս իմացեալ ազատացն Վասպուրականի՝ ոչ հաճոյանայր նոցա թևակոխելն Գագկայ, և զելս իրացն ջանային գտանել, առանց խռովասէր հանդարտութեան. – 360. Կինն Սահակայ որդւոյ Իսմայէլի, զորոյ զհանգամանսն ցուցաք, զմեռանելն Սահակայ և զկնոջն հրապարակագոյժ լինել, վասն որոյ պատճառանաց սպանանի այրն նորա. – 326. Նորա զչարեալ ընդ հասանել պատգամին՝ առ զայրուցս բարկութեան քինահանութիւն վրէժխնդրութեան արարեալ՝ ի բաց եհան ի գրոցն պատմութենէ՝ որ ինչ վասն տանն Արծրունեաց էր գործոց հանգամանք, և որ ինչ օրինակ մարտիրոսութեան Վահանայ Արծրունւոյ: - 130. որպէս գրեալ ցուցանին հանգամանք իրացն գործելոց – 94. Որպէս ընթեռնուս ի գիրս մարգարէականս զհանգամանս այսոցիկ. որպէս և ի վեցերորդ տեսլեանն Դանիէլի և Զաքարիայի բանագործութեանն – 398.

ՀԱՆԳԻՍՏ - Դահեկին/ճիշտը՝դայեկին/ նորա մնալով ի ներքոյ կախաղանին՝ ամփոփէ /102/ զսուրբ զանձն ի ծոց իւր, տարեալ փոխէ ի վկայարան հանգստի ի ձեռն սրբոյն Ներսէսի – 104. Եւ կացեալ անդ մինչ ի ժամանակս առաջինն Ղևոնի կայսեր՝ մեռանի անդ Վասակ և Տաճատ և փոխին ի հանգիստ փառաւորապէս ի գերեզմանս մեծամեծացն Յունաց: - 132. Իսկ նոքա քանզի ի հանգստեանն էին՝ դիմեցին ի վերայ նոցա – 162. յեղակարծում հանգստեամբ դիմեալ ի վերայ նոցա, քանզի նոքա կային յանհոգս – 402. որ նստէր ի հանգստի սրբոյն Թադէոսի առաքելոյ յԱրդոզական գաւառի – 400. սրբոյ թագաւորին և քաջ նահատակին Տրդատայ զբարիոք պատերազմեալ ընդդէմ անմարմին և մարմնաւոր պատերազմողաց, փոխի յերկրաւոր աշխատութեանցս ի հանգիստ, մեծաւ պատուով թագաւորական շքեղ և երևելի դիազարդութեամբ – 96. և թշնամիքն հանգստեամբ ելեալ ի վերայ նոցա ի լիճս աղեղանց և նիզակաց ձերբակալ արարեալ զոմանս – 372. Եւ առհասարակ ամենայն տիեզերք ծխեալ տեսանիցեն, և ի քէն ամենինին հուրն ոչ պակասեսցէ յաւիտեան, իբրև զհնոց խեցագործաց այրեսցիս, և քեզ ոչ եղիցի հանգիստ: - 164.

ՀԱՆԳՈՅՆ - Եւ դարձեալ պատասխանի ասէ, մի՛ տալ տեղի՝ լսել հրամանի թագաւորին. թէ վտանգ ինչ հասանէ՝ կրել հանգոյն զինչ կրեցինն: - 132. Եւ ելեալ արտաքս հանգոյն մատնչին ի տնօրինականս Փրկչին, ունելով ընդ ինքեան զհրովարտակն գրեալ այսպէս. – 212.

ՀԱՆԳՈՒՑԱՆԵԼ - առաջապահեստ ճանապարհորդութեանն արարեալ զՄերշապուհ Արծրունի զօրավար Հայոց և զՎահան Ամատունի և եղբայր Մեհուժանայ՝ տարեալ հանգուցանեն ի տեղւոջ հայրենեացն վկայարանի ի Թորդան: - 108. եթէ ,,եկայք առ իս ամենայն աշխատեալք և բեռնաւորք, և ես հանգուցից զձեզ,, , և թէ ,,որ ուրասցի զանձն իւր վասն

իմ՝ գտցէ զնա,,. - 252. Եւ կատարեալ Աշոտ զկեանս իւր՝ մեռաւ ի Վանտոսպ գաւառի, ՅԻԳ թուականութեանն Հայոց, յամսեանն հոռի, որ օր Զ էր ամսոյն, յաւուր հինգշաբաթոջ. և տարեալ հանգուցանեն ընդ եղբարս իւր ի վանս սուրբ Խաչին յԱղբագ գաւառի: - 338. Եւ յետ անցանելոյ աւուր, գնացեալ Աշոտ որդի Դերանկին, առեալ զդի նորա՝ տարեալ հանգոյց առ հարս իւր յԱղբակ գաւառի ի վանս սուրբ Խաչին: - 354. և տարեալ հանգուցանեն զնա ի Յօշական գեօղ, ի գաւառին որ կոչի Ոտն Արագածոյ: - 120. Եւ տարեալ հանգուցանեն զնա ի վանս սուրբ Խաչին յԱղբագ գաւառի: - 310. և տարեալ հանգուցանեն զնշխարս սրբոյն յԱշտիշատ Տարօնոյ ի տեղւոջ վկայարանի սրբոյն Յոհաննու Մկրտչին և Աթանագինի վկային: - 120. և տարեալ հանգուցանեն ի նոյն վանս սուրբ Խաչին: - 356. Եւ տարեալ հանգուցանեն ի տեղւոջ հանգստարանացն իւրեանց ի սուրբ Խաչի վանս: - 318. և տիկինն Սեդայ առեալ զդի նորա տարեալ հանգուցանէ ի յԱղբագ ի գեօղն Օսի, ի վանս սուրբ Խաչին: - 384. զոր տարեալ հանգուցանեն ի տեղւոջն, զոր այժմ Զորոյ վանս անուանեն, ի վկայարան սրբոց Հռիփսիմեանց. – 104.

ՀԱՆԳՈՒՅԵԱԼ - որոյ ոսկերքն ընդ այլ սուրբսն հանգուցեալ կան ի վանսն Յադամակերտոյ: - 134.

ՀԱՆԳՉԵԼ/ԻԼ/ - Զծառայս իմ պատրես, և զզօրս աւազակաց ժողովեալ՝ ոչ տաս ինձ հանգչել, այլ հանապազ պատրաստիս ինձ ի պատերազմ, և ասես վստահանալ յԱստուածն իմ: - 146. և զինքն յանձն արար երանելի եպիսկոպոսին և ճգնաւոր քահանային, հանգեաւ բարի խոստովանութեամբ ի հոռի ամսեան, որ օր Ե էր ամսոյն յաւուր ուրբաթու՝ ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր – 254. և հիացմամբ առ նորայն հայելով, թէ ո՛վ ոք էր, և ո՛րպիսի, և ո՛րպէս կորեաւ՝ ասեն, ,,զիա՛րդ դադարեաց պահանջողն, հանգեաւ տագնապօղն. եթէ ո՛րպէս իջին ի դժոխս փառք նորա,,: - 376. և յետ կատարման աստուածային հրամանին՝ ի ծփական ջուրցն բերեալ տապանն յարևելեայն ի միջոց աշխարհի՝ հանգեաւ ի լերինս Կորդուաց – 32. Ընդ այն ժամանակս տէր Զաքարիայ հանգեաւ ի Քրիստոս, կեցեալ ի հայրապետութեանն Հայոց ամս ԺԸ, և հաջորդէ փոխանակ նորա տէր Գէորգ: - 338. Իսկ վարդապետն Եղիշէ էր ի ժամանակին յայնմիկ բնակեալ ի գաւառին Ռշտունեաց ի ծովեզերին, յորում տեղւոջ և հանգեաւ իսկ ի Քրիստոս սուրբն Աստուծոյ Եղիշայ: - 130.

ՀԱՆԳՍՏԱՐԱՆ - Եւ տարեալ հանգուցանեն ի տեղւոջ հանգստարանացն իւրեանց ի սուրբ Խաչի վանս: - 318.

ՀԱՆԳՍՏՈՒԹԻՒՆ - քանզի ասեն զկնոջէն, յորմէ նեռնն է ծնանելոց՝ ճանապարհորդել յԵգիպտոսէ յաշխարհն Պաղեստինացւոց, և ցանկացեալ տեսանել զարձան կնոջն Ղաւտայ երթեալ դադարէ անդ հանգստութեամբ. – 158.

ՀԱՆԴԱՐՏՈՒԹԻՒՆ - Եւ մեծի փորձութեանցն հասելոց լինէր ի վերին հրամանէն հանդարտութիւն. - 404. Զորոյ իմացմանց հանգամանս իմացեալ ազատացն Վասպուրականի՝ ոչ հաճոյանայր նոցա թևակոխելն Գագկայ, և զելս իրացն ջանային գտանել, առանց խռովասէր հանդարտութեան. – 360. զշփոթեալ և զվրդովեալ կարգս աշխարհիս յօրինել առ հանդարտութիւն և խաղաղութիւն յառաջանալ – 388.

ՀԱՆԴԵՐՁ[1] - Դարձեալ ի նոյն յարեալ՝ և այլ հոգաբարձութեան աշխարհի խնամ տանէր, ի մեղադրանս մատուցեալ մարգարէիւն հանդերձ սպառնալեօք – 182. Արդ ի հասանել նամակիդ՝ փութով զԳուրգէն և զազգատոհմ իւր հանդերձ ազատօքդ Վասպուրականի կապեալս առ մեզ հասուսցես: - 236. Արդ ի գալ միւսոյ ամին որ յորելեանք Զ և ոլըմպիատք ՀԲ, ընդիքտիոնք Ի … աներկբայ խորհուրդ ի մէջ առեալ թագաւորն սինկղիտոսօքն հանդերձ և ամենայն մեծամեծօքն Բաբելացւոց , զի զիշխանս աշխարհին Հայոց ի բաց բարձցէ յիւրաքանչիւր տէրութենէ – 184. Արձակէ առ Բագարատ, կոչողս պատճենիւք հանդերձ, զի եկեսցէ առ նա առանց պատճառանաց և երկիւղի: - 186. Բայց Աշոտ վերջոտնեալ հանդերձ Վահանաւ՝ եկն եհաս խաղաղութեամբ և բերկրեալ սրտիւ բազմադէմ յերկիր իւր: - 330. Բայց երանելի հայրապետն Տէր Գէորգ սաստկագոյն քան զտիեզերական կործանմանն առ Նոյիւ բերելով զտրտմութեանն թախիծս, հանդերձ եպիսկոպոսիւն Գրիգորիւ՝ զաբբահամեանն վաղնջուց աղաչանսն ի կործանմանն

Սոդովմայ յառաջաբերեալ մարդասիրին Աստուծոյ. – 358. Բայց զերկրորդ մասն Անձաւացեաց հանդերձ Նորաբերդ ամրոցաւն Դերանկին նուաճեալ ընդ իւր գործակալօք. – 326. Գեղեցիկ էր և տեառն Գրիգորի Արծրունւոյ՝ ոչ անփոյթ առնել և զիւրոյ համանուանն զսրբոյն Գրիգորի առնուլ յանձն զխաւարամուտն լինել ի խորին խաւարային վիրապն կապանօք հանդերձ. – 250. Գումարեցան ի միասին Հրէայքն հանդերձ Իսմայէլացովք և եղեն բանակ մեծ – 160. ես վաղ անարգեցի զքեզ, և ոչ փոքր ինչ երկիւղ կալայ ի սրտի իմում վասն քո, զի քամահելով ի վերայ քո՝ զզօրավարն քո հանդերձ զօրօքն ի սուր մատնեցի, և զաւար նորա բաշխեցի, /294/ և յերկրորդումն ոչ փոքր նախճիրս համարեցի զօրացն քոց. – 296. Ետ պատասխանի սուրբ հայրապետն Յոհաննէս հանդերձ մեծ նախարարօքն Հայոց և ասեն. – 244. Եւ ամենայն մեծամեծքն հանդերձ խառնաղանճ /240/ ամբոխիւն դռոթ տուեալ, ոչ միայն ըստ հրամանի թագաւորին ելանել զհետ աղաղակի փողոյն և արքունի կոչնականացն՝ այլ փութացան տեսանել, թէ ո՛վ ոք և ո՛րպիսիք են սոքա – 242. Եւ ամենեցուն ըստ հրամանի թագաւորին յիւրաքանչիւր կողմանց այրուձի գումարեալ՝ հանդերձ այլովք սպառազէն յօրինուածովք անյապաղ երագութեամբ գային ի ժամադրեալ կոչումն: - 198. Եւ այն ինչ ընդ ջեռնուլն արեգականն, մինչ ագևորեալքն մտանէին զառաջեաւ ամիրային, որպէս որսոյ ինչ պատճառանօք հեծեալ յընտիր երիվարս հանդերձ մերձաւոր հարազատօք իւրովք և ազատովք յընտրելոցն Վասպուրականի՝ ելեալ մեկնեցաւ իբրև վտաւանս երկուս. – 342. և առեալ սուրբն Ներսէս զՊապ որդի Արշակայ՝ հանդերձ յունական զօրուն թագաւորեցուցանեն զՊապ ի վերայ Հայոց ի տեղի բուն թագաւորութեանն Արշակունեաց: - 108. և ասացեալքն ի սրբոյն հանդերձ գործով զկատարումն առնու: - 100. և բազմութիւն քրիստոնէիցն … գոհացեալ միաբան ետուն փառս Աստուծոյ, որ զօրացոյց զսուրբսն և արար յամօթ զսատանայ հանդերձ գործակցովքն իւրեանց: - 268. Եւ Գուրգէն Արծրունի և Մուշեղ Բագրատունի, և ինքն փութացաւ հանդերձ կաթողիկոսիւն, եկն բանակեցաւ յամուրն մերձ, ուր էր արգելեալ Դերանիկն: - 348. և ետ տանել զդիւանն մագաղաթեայ յունարէն գրով հանդերձ պատարագօք՝ Տիգրանայ թագաւորի Հայոց – 74. և ետու ի ձեռս քո զզօրս իմ հանդերձ զօրագլխովք մեծամեծօք իմովք, յամենայն ազգաց որ ընդ ձեռամբ իմով նուաճեալ են թագաւորազունք – 236. և ընդ այգն ընդ առաւօտն առին յաւարի զբանակն հանդերձ ախիւն և զտունս գանձուցն զորս առ ինքեանց: - 332. և իբրև հուր ընդ եղէգն ընթացեալ՝ այնպէս հասեալ ի վերայ մեր իբրև զմարախ, իբրև զջորեակ և իբրև զթրթուր խառնիճաւն /238/ հանդերձ – 240. Եւ ինքն զԳրիգոր եղբօրորդի իւր հանդերձ ընտրելովք ոմաբք զօրաւորօք վառեալ ի զէն և յասպազէն արք Մ, զոր զգացուցին Աշոտի. – 330. և իւրեանք հանդերձ ընտանեօք իւրեանց նստցին յամուրս Հայոց: - 188. և խաղաղասէր բարեկարգութեամբ հաստատեալ յօրինէ զկարգս աշխարհիս նախարարօքն հանդերձ – 96. և կալեալ զԱնիանոս նահապետ Բագրատունեաց և սպարապետ Հայոց հանդերձ ընտանեօք և ամենայն ազգաբանութեամբ՝ արկանէ ընդ բազում չարչարանօք – 74. և կանայք կոտորելոցն հանդերձ խառնիճաղանճ ամբոխիւն լրբենի դիմօք, հոլանեալք և ի բաց ընկեցեալ զձև կանացի բնութեան, որպէս օրէն է նոցա, մանաւանդ տաճկական ազանց, և ի հետիոտս դիմեալք ի դուռն արքունի հասանէին: - 180. Եւ կորեան ի զօրացն Պարսից յաւուր յայնմիկ սպառազէնք հեծելոց ԴՌ հանդերձ նաւօք իւրեանց: - 146. և հանդերձեալ աշխարհին պսակելոց է ի Քրիստոսէ, հանդերձ տիկնաւն Հեղինեայ ընդ ամենայն սուրբս Քրիստոսի Աստուծոյ մերոյ. ամէն: - 80. Եւ հասեալ Շաւասպայ Արծրունւոյ ամբարշտի յԱրտաշատ հանդերձ մարզպանաւն՝ շինեն ի դուռն քաղաքին զորմզդական մեհեանն, /124/ և զկրակապաշտութեան մոլութիւն բորբոքեն ի նմա. – 126. և մկրտեալ սուրբ և անբիծ խոստովանութեամբ ի Հայր և յՈրդի և ի սուրբ Հոգին, ի ձեռն մեծին Գրիգորի հանդերձ ամենայն նախարարօքն Հայոց մեծաց: - 94. և յերրորդ ամի թագաւորութեան նորա, Սենեքերիմոս զօր գումարէր ի վերայ նորա, և ձերբակալ արարեալ զնա հանդերձ իւրով բարեկամօքն՝ Բաբելոնի կացուցանէր թագաւոր զորդի իւր զԱսորդանիս – 60. և Յիսէ տուեալ պատերազմ ընդ քաղաքին, զտարի մի հանդերձ

ամենայն նախարարօքն Հայոց, անգամագիտ լինելով՝ դառնայ յԱսորիս. և այս եղև երկիցս անգամ: - 338. Եւ նոքա թափառնակի անյապաղ հանդերձ իւրաքանչիւր զօրու եկին հասին առ մեծն Վարդան – 126. Եւ քանզի որպէս ասացաւ՝ ի յերկարագնացս աշխատութեանց երիվարացն և հեծելոցն ծանրութիւն ի տքնութենէն ի վերայ հասելոյ, և տօթն արեգականակէզ տապախառն ջերմութեանն, և թանձր ծարաւոյն պասքեցելոց երիվարացն հանդերձ հեծելովքն – 402. զբազմամարդի գեօղս և աւանս առնել անմարդիս, և զմնացեալսն վարել ի գերութիւն, զկանայս հանդերձ մանկտով. – 202. զի այնու թերևս քաջ կարասցէ գլել զինքեամբ զզօրս Հայոց նախարարօքն հանդերձ. – 114. Զի հրամայեաց Դերանիկն ազատագունդ զօրացն իւրոցն դառնալ զկնի արքային տիրել բոլոր աշխարհին հանդերձ ամրոցօքն: - 342. զորս յանդիման Փրկչին կացուցին զառաքեալսն հանդերձ թղթովն Աբգարու, և զխորհրդական պատասխանիսն լուեալ վասն փրկական խաչելութեանն որ վասն աշխարհի - 76. սոյն աւուրս որք մնացեալ էին ի տանէն Արծրունեաց իբրև լուան զպարտումն զօրացն արքունի ի Ծանարացն՝ ի մի վայր եկեալ գունդ կազմեալ հետևազօրքն մարտակցօք հանդերձ խառնաղանջ ամբոխիւ՝ լինին թուեալ արք Տ – 304. ինքեան և որոց յետ իւր թողլով ժառանգութիւնն որդւոց կեանս վշտագինս հանդերձ մահուամբ, և ծննդականութիւնս տրտմութեամբ: - 22. Իսկ սուրբն ելեալ հանդերձ դահճօքն ի տեղի ասպարիսի կատարմանն երկնաւոր նահատակութեանն՝ ի ծունր իջեալ կայր յաղօթս – 206. Իսկ Գուրգէն ընթացեալ զհետ հանդիսի պատերազմող նահատակութեանցն, /310/ անդուլ լինելով զցայգ և զցերեկ հանդերձ որ ընդ նմա միաբանեալ ազատագունդ զօրացն – 312. Իսկ ի հասանել սրբոյն Սահակայ ի դուռն հանդերձ նախարարօքն՝ զիջանէ ցածնու Վռամ ի բարկութենէ վրէժխնդրութեան Հայոց քինահարութեան անարգանաց Շապհոյ, և ընդ Յունաց զսերտ խաղաղութիւն ունելով.- 116. Իսկ Սմբատ որ և Ապլաբաս սպարապետն Հայոց, իբրև գիտաց թէ ոչինչ օգուտ բերէ արտաքոյ հրամանացն նորա լինել՝ փութացաւ եկն առ նա, և ընկալեալ ի նմանէ՝ բնակեաց ինքն և իւրքն հանդերձ իւրաքանչիւր կալուածովք առանց կասկածանաց. –270. Կաղղիսթենէս, իմ բարեկամ, խրատ ետ ինձ մտանել հանդերձ բարեկամօք Խ, և մանկամբք Ճ, և զինուորօք ՌՄ միայնովք: - 50. մատուցեալ առ Վռամ հանդերձ Սորմակաւ ումեմն Արծկեցւոյ մոլեգնոտ փառամոլ աբեղայի՝ սկսան ազգի ազգի լեզուագարութեամբ չարախօսել զսրբոյն Սահակայ – 118. մերժել հեռանալ … և որ այլ քաղցրագոյն վայելք ընդ երկնաւս ի վերայ երկրի, պայծառ գեղ արեգական և լուսնի, հանդերձ աստեղացն ճոխագործութեամբքն ընդ տարերք երկնի յեղյեղլով, ծովու և այլոց ցամաքայնոց, և ջրայնոցն բարեփառ հոլովմանցն հրճուանաց, և որ ինչ ընդ այլք ընդ դոքօք պատկանին յարմարաբար տնտեսութիւնք առ սկզբնատիպն պատկերակերպութիւն: - 386. միայն ոչ ելցէ ի ձեռաց իմոց Աշոտ հանդերձ ազգականօք իւրովք,,: - 214. մինչ ինքն Հերովդէս փախստեայ անձնապուր լեալ հանդերձ Ուրեղիանոսիւ զինակրաւ՝ անկանի առ քեռին իւր որդի Հիւրկանու քահանայի ի քաղաքն Ասկաղոն: - 78. Յայնժամ բարկացեալ բռնաւորն հրամայեաց նախ զլեզուն հատանել զսրբոյն, զի մի յաճախիցէ առ հասարակ զթագաւորն և զօրէնսդիրն ինքեամբ հանդերձ անարգել. – 290. Յայնժամ դարձեալ ի խորհուրդ եմուտ թագաւորն հանդերձ մեծամեծօքն իւրոյ տէրութեանն, տեսանել զանվրէպ և զանսխալ իմացումն կատարածի ի վերայ աշխարհիս Հայոց: - 196. Յայնժամ տեսեալ Երուսաղէմացւոցն զանհնարին դիպուածսն անօգնականութեանն՝ առին զաստուածային սուրբ նշանն տէրունական հանդերձ այլ սպասիւք եկեղեցեացն, փախուցին ի քաղաքն թագաւորական ի Կոստանդին. – 162. յորոց վերայ սուր եղեալ զբազումս սպանին և զևս բազումս վիրաւորեցին և զյոլովագոյնսն ի գերելոցն հանդերձ ընտանիւք իւրեանց զերծին ի նոցանէ և անցուցին ընդ պահակ ձորոյն յամրական կողմանս լերին: - 220. յորում ոչ սակաւ քաջութիւն նահատակութեան զօրացն Հայոց, որ ի զարմանս կրթեաց զբովանդակ զօրս Պարսից բարբարոսօքն հանդերձ: - 66. Նոյնպէս և ամենայն զօրք և զօրագլուխք հանդերձ բազմակոյտ կարաւանին զկորստեան ընկալան զվճիռ. – 376. Նորա ի բաց կացեալ ի հնազանդութենէ իւրոյ պետականին

հանդերձ քաղաքային գլխաւորօքն. – 338. Քանզի իբրև լուաւ երանելին Զաքարիայ, եթէ ըմբռնեցաւ Գուրգէն՝ փութացաւ և եկն հանդերձ եպիսկոպոսօք աշխարհին. – 320 Քանզի Վարդան անցեալ գնացեալ էր սուրբ վարդապետաւն Մաշտոցիւ առ կայսր Թէոդոս և առ Ատտիկոս արքեպիսկոպոս հանդերձ թղթովք սրբոյն Սահակայ, տանելով ընդ իւրեանց և զգիր և զբառ հայերէն դպրութեան. – 116. Եւ զչարեալ ընդ խափանումն խորհրդոցն իւրոց՝ ամբաստան յոյժ լինէր զԱշոտոյ հանդերձ թղթովք Տաճկաց, որք էին ի կողմանս Հայոց, բազում այն ինչ զոր ստութեամբ քան թէ ճշմարտութեամբ զեկուցանեն զնմանէ զգործս, և թէ հակառակս ևս թագաւորութեան քոյ բանըննդէմ լինի հանապազ: - 172.

ՀԱՆԴԵՐՁ[2] - և միով կերակրով և միով հանդերձիւ բաւականանան զամառն և զձմեռն. – 192. Եւ Խոռեմայ առեալ զթագաւորութիւնն՝ յաւուր միում զգեցեալ էր հանդերձ թագաւորական և հեծեալ յերիվար արքունի, և շրջէր ի մէջ ամենայն զօրացն իւրոց, ցուցանել զինքն և քաջալերել զզօրսն. – 154. Եւ զգեցոյց նոցա հանդերձս և կանգնեաց նշանակ իշխանական և էած սուսեր ընդ մէջ և կամար ականակապ և երիվար ընտիր մեծազարդ. – 314. և ելեալ Աղան գնաց առ սուրբն Սահակ, և զէնընկեց եղեալ առաջի նորա՝ մերկանայր զհանդերձն զինաւորական - 112. և էր գրեալ ի նմա թողութիւն վնասուցն և հարուածոցն զօրացն և բազում աւարացն, և երդումն ի հաստատութիւն ասացելոցն, և պարգևս ի պատուական և մեծագնի հանդերձից, և սաղաւարտ ծաղկեայ և սուսեր. – 288. և մերկացեալք ի մէջ ամբոխին … ի բաց ընկեցին զհանդերձս ծածկոյթս ապականագործ հնութեան մեղացն – 266. զոր չառեալ յանձն սուրբ տիկնոջն Համազասպուհեայ՝ տանին հանեն ի բարձրաւանդակ ամրական բերդաքաղաքն, մերկանան ի հանդերձից, զի քրիստոսեան փառօքն զգեցցի. – 102. լի թունիւք սատանայական խորհրդոցն, ծածկեալ յաչս իշխանին գառնենի զգեստիւք ի հանդերձս ոչխարաց, և ներքոյքն զապականիչ գայլոցն բերելով զլրբութիւն – 210. Եւ յելանելն նորա և մօտ լինել ի սահմանս Հայոց զօրօք բազմօք, մերձ ի սահմանս Տարունոյ, Առաջին կոչեցեալ Հայոց՝ իշխան Տարունոյ Բագարատ … առաքէ զոմանս ի մեծամեծաց իւրոց ընդ առաջ նորա պատարագօք ոսկոյ և արծաթոյ և պատուական հանդերձից, համոզեալ մի ելանել յերկիրս Հայոց: - 170. և քանդեալ աւերեաց զամենայն ապարանս թագաւորին և այրեաց զնոսա հրով, և բազում գանձս մթերեալս յափշտակեաց անչափ աւարաւ գանձս ոսկոյ և արծաթոյ և հանդերձից, և անասուն բազում յոյժ, և բազմութիւն գերեաց իբրև զաւազ ծովու անթիւ: - 150.

ՀԱՆԴԵՐՁԵԱԼ - և յերկրորդումն հանդերձեալ են վերստին մտանել ի տանջանս յաւիտենականս, ուր որդն ոչ վախճանի և հուրն ոչ շիջանի: - 336. Եւ ամբարձ զմիտս իւր ի հանդերձեալ գալուստն Քրիստոսի, և որ յայնժամ լինէին ահեղ որոտմունք և թնդիւնք և հրձգութիւնք և արհաւիրք մեծամեծք յերկնից և յերկրէ – 284. Եւ զերկնային պարգևացն որ ի հանդերձեալսն խոստացաւ Տէրն, զանպատում և զիրեշտակային նորոգութեան՝ նա ասաց լինել անդ կերակուրք և ըմպելիք ուժգին. զոր և կամեսցի ուտել անյագաբար՝ պատրաստ գտանիցէ, և կանանց կուսից մնացելոց հանապազ անյագաբար խառնակումն: - 164. և ինքն հանդերձեալ կազմել գնալ ընդ արևելս նաւել ի Քաղկեդոն: - 148. և հանդերձեալ աշխարհին պսակելոց է ի Քրիստոսէ, հանդերձ տիկնաւն Հեղինեայ ընդ ամենայն սուրբս Քրիստոսի Աստուծոյ մերոյ. ամէն: - 80. և որ ինչ այդմ հետևին ի հանդերձեալ գալստեանն Քրիստոսի ի վերջնումն աւուրն. – 284. Իբրև հասին ուր հանդերձեալն էին՝ և երկոցունց զօրքն անհուն բազմութեամբ յանդիման եղեն միմեանց, և ճակատ առ ճակատ զգործս պատերազմին յարդարէին – 328. պատմեաց նոցա զհանգամանս տեսլեանն … և դարձեալ զնորոգումն հայրապետութեան և թագաւորութեան ի նոյն զարմէ Արշակունեաց, և զգալուստ նեռինն, և զգալուստն Քրիստոսի, և զհանդերձեալ դատաստանացն, և զհատուցումն իւրաքանչիւր ըստ գործս իւր – 120. վասն հանդերձելոցն հոգացեալ, առ կղերս եկեղեցւոյ սրբոյ խոնարհեալ – 386. Իսկ թշուառականն զսատակմանն ընկալաւ զվճիռ, և ի հանդերձելումն զխաչահանուացն հատուցանել զպարտիս: - 378.

ՀԱՆԴԵՐՁԵԼ - և կեցեալ առ նովաւ ամս ՇԿԵ, մինչև ի հանդերձել տապանին: - 28.

ՀԱՆԴԵՐՁԻԼ - մինչև նոքա խոնարհեալ առ նորայն խորհրդական առ յապա պատահմունսն, որ հանդերձեցաւ աշխարհիս Հայոց, իբր մարգարէական իմն գոգցես տեսաւորութիւն – 114.

ՀԱՆԴԷՊ - և ահա Ապումուսէ, որ ճանաչէր երիցու որդի՝ հանդէպ նոցա ել պատերազմ և հանդիսացաւ ընդդէմ նոցա. – 284. Եւ անտի դարձեալ դառնայր Աշոտ ընդ միւս ևս ամրականն ընդ ոստոզերծ քարանձաւի, ի յարևելից կուսէ լերինն Վարագայ, ի վերայ գեաւղջն Կոխպանից, հանդէպ եկեղեցւոյն սրբոյն Հռիփսիմեայ – 334. և Դերանիկն ճեմս առեալ սիգաքայլ երիվարաւն եհաս հանդէպ ճակատու գնդին վառեալ, միայն և առանձինն ի յառուամէջ տեղւոջ. – 352. և ետուն ի սուրբ եկեղեցին Դ ագարակս. զվանքն Փշոց և զագարակն Ահավանք, յանդիման եկեղեցւոյն որ ի կղզին, և զքարն Մանակերտ, որ է հանդէպ հարաւոյ կուսէ, և զԲերկրի և այլ բազում տեղիս – 356. և երագապէս աճապարեալ հասին հանդէպ զօրուն Հայոց. – 380. և թափառական զվէմս ապաստան արարեալ յանկասկածագոյն տեղիս դարանի ի փոքր վիմամէջս ի կարկառս հովտաձևս հանդէպ հարաւոյ քաղաքաբերդին Վանի, մօտ այն տեղի, յորում բղխէ աղբիւրաբար առ ստորոտով բլրակի միոյ, մօտ յեզր ծովուն – 84. Եւ մի ոմն մերկանայր զկօշիկս ոտիցն նորա. և հարեալ աքացի զվատ այրն հանդէպ սրտին՝ և սպան զնա: - 304. Ի սորա յերրորդ ամի թագաւորութեանն ի վերայ Հայոց աստուածատուր բարկութեամբ անդնդաշարժ վրդովմամբք ներքնագոյն խորոցն պատահեալ միմեանց սահանախաղաց դղրդմամբ, հիմնաշարժ տապալմամբ, /356/ ներքսագոյն երկրի թուլացեալ պնդափակ աղխեալ սանդարամետական սահմանին, բարկութեան հողմոց շնչեալ ընդ ջրոցն խաւարայնոց, ի կոհակս անդնդաքակս զթանձրայատակ երկրի զկարծր և զծանրալիր անկշիռ անբաւութիւնն տատանեալ, մինչ յերեսս երկրի ի վեր մղեալ հանդէպ քաղաքին Արտաշատու /գրքում՝ Արտաշասու/, որ Բլուրն նորուն ասի – 358. մինչ հանդէպ երեսանալ Աղէքսանդրու ի յանդուգն դիմացուածին, և հայեցեալ ի դէմս Աղէքսանդրու իբր յաստուածոց դիւցազանց՝ զերեսս ի վայր արկեալ զերկիր նշմարէր – 68.

ՀԱՆԴԷՍ - Այսր աղագաւ արտաքս վազեցի զմեծս զայս բանգտութեան ընթանալ ասպարէզ, զօրաւորաց մտահարուստ արանց կարօտացեալ բաւականանալ իմով անհեդեդ պատմողական հանդիսիւ – 352. Բայց զի՞ մի մի զիւրաքանչիւր հանդէս պատերազմաց նոցա գրեցից յականէ յանուանէ. ասացից կարճառօտ և համառօտեցից զբանս. – 286. և եթէ յերկարիցի գործոյս այսորիկ հանդէս և մարտիցն հանգամանք ոչ փութանակի վարիցին՝ գուցէ օգնականութեամբ գիշերոյ եկեսցէ ի վերայ քո և մեծամեծ աւճիրս ի վերայ քո և զօրացդ արքունի հասուցանիցէ: - 212. և խոտեալ ի բաց ընկենուք զմիոյ անընկեր և անվերոյ իրաց հանդէս, որպէս և իսկ կոչեցեալ մարգարէն ձեր Մահումաթ – 246. և նախ քան զմտացն յօժարագոյն առ հանդէսսն յառաջանալ՝ զմարմնոյն պնդութիւն անհանգիստ առ ճակատամարտսն յարատևել: - 308. և ոչ ըստ տեղիս տեղիս ցուցանէին զհանդէս մարտիցն և զյաղթութեանն քաջութիւն, այլ բոլորովիմբ ամենայն ուրեք ախոյեանայարձակ սլացմամբ ընթանայր. – 312. և որպէս պատմի՝ եղև թիւ պատերազմաց նոցա ԻՀ անգամ, և հարան զօրքն արքունի յայսքան հանդէսս և ի կռիւ: - 286. զի զկապեալսն յառաջ մատուսցեն ի հանդէս հարցափորձի քննութեան: - 240. զի մի յերկարաձգեալ զդեր հատուցական բանիս՝ յետնեալ գտցուք յառաջիկայ մեզ գրաւորութենէն, որ սակս պատմութեանցն են հանդէսք: - 260. իբրև բազումք առաքինացան մեծաւ ուժով և քաջ նահատակութեամբ ի հանդէս մարտին. – 202. Իսկ Գուրգէն ընթացեալ զհետ հանդիսի պատերազմող նահատակութեանցն, /310/ անդուլ լինելով զցայգ և զցերեկ հանդերձ որ ընդ նմա միաբանեալ ազատագունդ զօրացն – 312. Իսկ նա փոքր ինչ ժամանակ ներեաց նոցա դիմօք սիրոյ խաղաղութեան, մինչև ի գլուխ ելին որ ինչ յաղագս Ապումուսէին էին հանդէսք. – 296. մարտիրոսական հանդիսիւ ամբողջ զխոստովանողականն բերելով զանուն – 324 յոյր ձեռն բազում արութիւն նահատակութեան երևեալ լինէին ի մարտս պատերազմաց և ի հանդէսս ճակատեցելոց ի միայնամարտիկ զինուորութեան: - 170.

ՀԱՆԴԻՊԱՆԱԼ - ունելով զտեղիս տեղիս, տալով ձեռս յովպէտ և ժամագիւտ դիպուածք ումեք հանդիպանայր – 68.

ՀԱՆԴԻՊԵԱԼ - Անդ հանդիպեալ լինէր և երանելի եպիսկոպոսն Գրիգոր Ռշտունեաց վսամ. ոչ կարաց իւրայնովքն զերծանել, իբրև յայնժամ առղոթաւ /հավանաբար ,,աղօթել,, բայն է / ի լեառն: - 358. Բայց մեզ կայ առաջի ասել վասն Ջափրայ և չար գործոց նորա, անգիրս մնացեալ յայլոց, զոր կատարեաց ի վերայ աշխարհիս Հայոց երկայնագոյն ժամանակաւ և անըմբերելի նեղութեամբ ի մերս հանդիպեալ աւուրս, որ էր Հայոց Յ թուական: - 168. և կէսքն վրիպեալք ի բնական հայրենի լեզուէն, յաղագս հեռաբնակ լինելոյ և անհամբոյրք միմեանց հանդիպեալք, և խօսս միմեանց եղեալ կարկատուն մուրացածի բանիւք: - 190. Եւ ոչ անվկայ բանս, որպէս վերագոյնն գրեալ է մեր զդերահատուցականս սորա, վկայութեամբ մարգարէական տառիցն, որպէս և ի պատահմանէ իրացն ճարտար գիտեն՝ որք են ի ժամանակս յայսոսիկ մնացեալ յայն ժամու անդ հանդիպելոցն: - 262. նորա լուեալ էր ի պարսկէ ումեմնէ, ի ձորոյն Շատուանոյ, որ էր ընդ դահիճսն, և ի սկզբան վկայութեան մինչ ի կատարումն սրբոյն՝ ի տեղւոջ անդ հանդիպեալ լինէր – 206.

ՀԱՆԴԻՊԵԼ/ԻԼ/ - Բայց քանզի մեր ոչ ոք յայնժամ հանդիպէր ի պատասխանատրութիւնս երանելոյն՝ և ոչ գրել արժանի համարեցաք: - 206. և ամենայն ուրեք ուր և հանդիպէր զօրուն Պարսից՝ առ հասարակ սատակէր զամենեսեան, մինչ ոչ մնալոյ ապրեալ: - 148. և մինչ այսմ գործոյ պարապէր՝ դէպ եղև նմա ի կողմանս Եգիպտացւոց հանդիպել առն միոյ մոնազնի, որում կոչէին Սարգիս Բհիրայ, որ էր եղեալ աշակերտ մոլեգնութեանն արիանոսաց. – 158. որոց դէպ եղև ինձ հանդիպել եկելոց ոմանց ի յԱպղաստան աշխարհէ – 48. Եւ ընդոստուցեալ Խոսրով ի յահէն և զարհուրեալ մեծաւ դողութեամբ՝ խնդրեաց իւր տեղի փախստեան, աղաղակեաց և ասէ՝ ձի, ձի, և մտեալ յասպաստանն՝ ոչ հանդիպեցան ձիոյ: - 152. և հանդիպեցան միմեանց յՈրդոք գետոյ, ի գլուխս ձորոյն Հայոց, որ հանէ յԱրեւանթունի գաւառն: - 306. Գուրգէն՝ հանդիպի նմա ի քաղաքին Պարտաւ - 370.

ՀԱՆԴԻՊՈՒՄՆ - յղեաց առ զօրավարն Ժիրաք, ասէ, ,,փութա՛ ի հանդիպումն իմ,,. – 272.

ՀԱՆԴԻՍԱԿԱՆ - Յաւելում պատկանաբար գրել քեզ զարիական նահատակութենէն հանդիսական ժուժկալութեամբ ողջախոհաբար կրթութեամբ զզինուորական երկասիրութեամբն յօժարաբար դեգերել զմարզպանութեանն արդիւնաւորել անուանակոչութիւն: - 398.

ՀԱՆԴԻՍԱՆԱԼ - և ահա Ապումուսէ, որ ճանաչէր երիցու որդի՝ հանդէպ նոցա ել պատերազմ և հանդիսացաւ ընդդէմ նոցա. – 284. Եւ զօրացն քաջալերեալ ընթացան յիւրաքանչիւր զէնսն և հեծեալ յընտիրս երիվարացն՝ կացին ի հանդիպոջ և հանդիսացան գումարեցան ի մի վայր և պնդեցան կարգեցան մաճեան հոլովեցան յինքեանս – 230. և հրաման հարկեցուցանող ճոխութեան քո ստիպէ զմեզ, ճեպել փութալ առ գիւտն հանդիսանալ և կարգել ոճով զփափագելին յայտարարական գրով, դրոշմել կանոնել ի գիրս աստ – 12.

ՀԱՆԴԻՍԱՑԵԱԼ - և արիաբար հանդիսացեալ գնդին Հայոց՝ ճակատեցան ընդ այլազգիսն հարուստ և ձիգ ժամս և հարին ի հարուածս մեծամեծս զբանակ այլազգեացն: - 306.

ՀԱՆԴՈՒՐԺԵԼ - Եւ առ չհանդուրժել այնքան եկեալ հասեալ վտանգաւոր նեղութեանցն, և գազանեղէն զայրացմամբ մրմռեալ յոգի իւր ի վերայ կորստեան սուրբ հաւատոյս և կործանման աշխարհիս Հայոց – 126. զի թէ բովանդակ զօրութիւն ունէր՝ ոչ հանդուրժէր անդադար շարժել զերկնային մարմինն. - 54.

ՀԱՆԵԱԼ - ,,բնութեամբ ճշմարտութեամբ աշխարհիդ Վասպուրական ձեր լեալ էր ժառանգութիւն, և զձեզ պրտաքս հանեալ թողեալ են նախնեացն Աշոտի: - 362. ,,ի հայրենեացն պրտաքս հանեալ էք ի ժառանգութենէ և մերժեալ ի բաժնէ եղբայրական հասէ. զա՞յս ևս բռնազբօսել ջանայք, զոր Աստուած ժառանգեցոյց ինձ: -330. Բայց զՏամբէր և զԸռնայն և զՋարեհաւան գաւառ հանեալ էր ի Պարսկահայոց – 390. Բուռն հարեալ սպարապետն զձեռանէ նորա և հանեալ արտաքս, քաջալերելով լինել առանց /344/ երկիւղի. – 346. Եւ հանեալ զԱշոտ և զԳուրգէն ի կապանաց՝ տիրեցին զօրութեամբ մեծաւ իւրեանց բնիկ իշխանութեանն, և կէին յանհոգս յանկասկածս այնուհետև: - 370. Եւ մեկնակազէնքն

պատեցին շուրջ զեկեղեցեաւն, և ելեալ առ նա ոմանց ընդ փորուած գմբեթին՝ և եհար մի ոմն աշտէիւն ընդ միջոց թիկանցն՝ և ընդ անթովքն հանեալ ի ներքոյ թոքացն՝ փչեաց զոգին և թաղեցաւ զթաղումն իշոյ: - 190. և դահճացն հանեալ զսուսերն՝ դիմեցին ի վերայ նոցա իբրև զգազանս արիւնարբուս, և ծեծէին սրովն, իբրև ոք զի հատանիցէ փայտ ի մայրս անտառախիտս հարեալ կացնաւ, և յանխնայ անողորմ յօշէին անդամ անդամ: - 266. և զոմանս ընդ սուր հանեալ կամէր միախաղոյն զրաւ առնել ազգին Բագրատունեաց: - 74. և կալեալ զնա եդ ի բանտի ի Նկան բերդի և զամրոց նորա եհան ի նմանէ, և կացոյց զհաւատարիմս իւր պահել զնա, և զտուն և զստացուածս հանեալ ի նմանէ՝ և կացոյց ի վերայ աշխարհին զիւր գործակալս: - 348. Եւ նոցա ի գլուխ հանեալ զգործ պատերազմին՝ դառնան զօրքն Հայոց մեծաւ յաղթութեամբ – 176. զոր ճ ամոյ յառաջ հանեալ էր բռնակալութիւնն Տաճկաց ի Վասպուրական պետութենէ: - 332. զոր ոչ անուննկնդիր լեալ ընդունի զհայցելին, առնելով հարկս և պատանդս, և զբերդն Երիկաւ Հաղացովտի, զոր հանեալ էր մանազաւեցոյն ի բերկրացոյն. – 382. իսկ զՆախճաւան քաղաք և զԳողթն գաւառ հանեալ էր ի Վասպուրականէ բազում ժամանակօք յառաջ, ՄԺԱ ամօք, յամի այրման եկեղեցւոյն Գրիգորի և վտանգաւոր մահու զօրացն Հայոց: - 390. Յանգ հանեալ Պտղոմեանց զժամանակ թագաւորութեանցն, և հասեալ/72/ մինչ ի Կղէոպատրեայ, դուստր Պտղոմէի Դիոնիսի. – 74. նոցա հանեալ էր ի Գինունի ազգէն, ի զարմէ Մեժեժի Գնունոյ, ի Վասպուրական բաժնէ, նաև Բերկրի բաժին եղեալ էր Վասպուրականի. և դարձուցանէ անդէն առ բերկրացիսն – 382. Որպէս վերագոյնն յիշեցաք սակաւուք վասն Ահմատայ՝ յինքն գրաւել զաշխարհն Տարունոյ, հանեալ ի Հայոց պետութենէ: - 366. Սորա որդիք հինգ ծնանի, յորոց մինն Հերովդէս և միւսն Փիլիպպոս, զորոյ կինն հանեալ Հերովդէի՝ թող զկինն իւր զառաջին, զդուստր Արէտայ արքայի Պատրէացւոց. – 78. Քանզի այնչափ թանձրացաւ յաճախութիւն սովոյն՝ որ ոչ միայն անսուրբ կենդանիս ուտէին ըստ սրբութեան կարգի, այլ և զսարսափելի և զդժնդակ, որ զգազանային անցուցանէ զվայրենամտութիւնն, զմարմինս մեռելոց՝ առանց խղճելոյ ուտէին, ի գերեզմանացն հանեալ զհետ միոյ և երկուց ամաց թաղելոյ: - 374. Բայց Ապումրուան զԳագիկ որդի Դերանկին պահէր ընդարձակի, հանեալ ի կապանաց բանտին: - 368. պատշաճագոյն զպատերազմին խրոխտական բարձրավզութեամբ վանել զախոյեանսն, և առեալ զբանակն յաւարի, և ընդ սուր հանեալ յոլովս քան թէ սակաւս, հասին ի գոգ տեղի մի ի Մղունիս գեօղ: - 402.

ՀԱՆԵԼ - ,,ընդէ՞ր որպէս մանուկ տղայ համարիս, արկանել առաջի իմ զպատրանս, սնոտի, առասպելաբան, խաբեբայ և պատիր յոյս խոստանալով ինձ՝ հանել զիս ի ճշմարիտ յուսոյն, զոր ի մանկութենէ ի վերայ հասեալ ճշմարտութեանն,,: - 294. ,,յաւուր յայնմիկ խնդրեցից զվրէժս ի Բէլայ ի Բաբելոն, և հանից /38/ զոր եկուլն՝ ի բերանոյ նորա,,: - 40. ած եհան զժողովուրդն յերկիր իւր: - 218. Այնուհետև սկսաւ կորապաղատն արկանել բանս խարդախութեան ի մէջ Դերանկին և Հասանայ, որ էր որդի քեռն Դերանկին, որպէս թէ ոչ ուղիղ նայի ընդ նա Դերանիկն, այլ թէ՝ և հանել ի նմանէ զամրոցն և զաշխարհն նկրտել. – 346. եթէ ,,Օրէն է աշխարհակալաց արքունի խնամակալութեամբ գնալ ընդ աշխարհ իբրև առ հնազանդս, և զնեղութիւնս տառապելոց բառնալ և ի դիւր հանել իբրև զինամարկուս, և ոչ աւազակաբար աւարել, և սրով և գերութեամբ յաւեր դարձուցանել. – 278. եթէ եբաց Տէր զգանձս իւր և եհան անտի զանօթս բարկութեան – 196. ելանէ մարզպանն ի վերայ նոցա և յինքն հանէ զՏամբեր և զԸռնայ գաւառ և որ ասի Ապուջափրի բերդ, ի Վհրի քաղաքին Կորճէից զիւր կացուցանէ ոստիկանս ի պահպանութիւն ամրոցին: - 400. Եւ արգելին փակեցին զպահակս ամրականացն և զկիրճս ձորոց, որ հանէին յերկիր նոցա մտանել յամուրսն: - 274. և բախեցին արտաքոյ զդուռնն ուր մտեալ էր իշխանն, և կալեալ զնա հանին ի բարձրագոյն տեղիս ամրոցին, և եդին ի բանտի ի ներքսագոյն սենեկացն. – 348. Եւ եթէ զքէն արեանն Մուրկայ խնդրէ՝ զքէն արեանն Մուրկայ խնդրեաց Աստուած ի Փոկասայ ի ձեռն հօր իմոյ Հայրակղի. և եթէ երկիր խնդրիցէ՝ եհան Աստուած ի մէնջ և ետ ի ձեռս ձեր: - 144. և ելեալ ի վերայ Պարսկահայոց

գոեհացն և անդ բազում քաջութիւն նահատակութեան ցուցեալ՝ յոլովից գերելոցն ընդարձակեաց, հանելով /400/ և զաւարն ի ձեռաց նոցա – 402. և ելեալ նստաւ ի ջրուռջն, զոր պատրաստեալն ունէին անդէն առ դրան վրանին, և հանին արտաքոյ դաշիկ բանակին՝ դարձուցեալ դառնալ ընդ նոյն ուստի եկն: - 346. և եկեալ ի վերայ քաղաքին պաշարեն զնա, և զզօրսն մատնեն ի սատակումն սրոյ, և զպատանդսն Վասպուրականի հանեն յարգելարանէն. և գերեացն ընդարձակեն, զկապուտ նոցա բաժանեն յինքեանս: - 190. Եւ եհան արձակեաց զնա Տէր Աստուած ի դրախտէն փափկութեան՝ գործել զերկիր ուստի առաւ: - 22. և եհան զզօրսն մինչ մերձ ի գլուխ լերինն և ընդ նոսա նշանս բազումս, իբրև Ռ արանց ընտրելոց քաջ երիվարօք. – 284. և եհան զնոսա յատենէն հոյակապ և շքեղ և երևելի պատուով ի ձայնս երգոց և ի հնչիւնս փողոց. – 314. Եւ եղև ի մերձենալն նորա ի բանակն՝ եհան ընդ առաջ նորա գունդք գունդք զօրաց. – 236. Եւ երթայր զհետ և սատակէր զնոսա անչափ զօրութեամբ. և բազումք այն էին, որ մեռանն ի սրոյն Գուրգէնի քան որ մնացինն. և զօրքն զհետ մտեալ մնացելոցն հանին յերկրէն իւրեանց: - 308. Եւ զի ստեալ Դերանկին Գուրգենայ եհան անտի զգործակալսն՝ նոյն գունակ Գուրգէն հնարաւորեալ առնու զամրոցն և հանէ զնորա գործակալսն – 326. Եւ զի ստեալ Դերանկին Գուրգենայ եհան անտի զգործակալսն՝ նոյն գունակ Գուրգէն հնարաւորեալ առնու զամրոցն և հանէ զնորա գործակալսն – 326. և զի ըստ կամաց նորա հանցէ ի բանակէ անտի զգերիս Վասպուրականի: - 218. և զմնացեալսն փախստականս արարեալ հետամուտ լինելով հանին ի սահմանացն Հայոց. – 136. և կալան անդ զտիկնայսն ամենայն և զհարճսն և զորդիսն արքայի, և զերիվարսն արքունական, որով եկեալ էր Խոսրով արքայ ի Տիսպոն՝ հանին գաղտաբար ի գիշերի, և արքայ Խոսրով ոչ միոյ իւիք չէր տեղեակ. – 150. Եւ կալեալ զդեսպանսն հանին զթուղթսն, և զարսն պահեցին ի զգուշութեան, ոչինչ ումեք զգուշացուցանելով որ ինչ եղևն: - 340. և կալեալ զնա եդ ի բանտի ի Նկան բերդի և զամրոց նորա եհան ի նմանէ, և կացոյց զհաւատարիմս իւր պահել զնա, և զտուն և զստացուածս հանեալ ի նմանէ՝ և կացոյց ի վերայ աշխարհին զիւր գործակալս: - 348. և կէսքն զհետ մտեալ փախստէիցն, մինչ թանձրացաւ մութ գիշերին՝ հանին ի սահմանացն Հայոց, էր որ ի կողմն Ելոյ և էր որ ի կողմն Ատրպատականի և Պարսից: - 232. և հանդիպեցան միմեանց յՈրդոք գեօղ, ի գլուխս ձորոյն Հայոց, որ հանէ յԱրուանթունի գաւառն: - 306. և հանին զնա յարգելանէ բանտին, պատանդ թողեալ նմա զԳագիկ որդի Դերանկին և որդի Գրիգորի Արծրունոյ: - 348. և մինչ չև հասեալ առ զօրավարն՝ եհան ընդ առաջ նորա գունդս գունդս վառեալ զինու և ընտրեալ երիվարօք – 288. Եւս քաջասրտագոյն Շաւասպ Արծրունի, խաղս ձիընթացիկ արշաւանաց գնդակացն՝ զհետ մտրակեալ հանէ ի նմանէ զգնդակն բազում անգամ ասելով – 114. Զկնի այսորիկ մեկնեաց Բուխայ յինքենէ արս զօրաւորս յամենայն ազգաց և յամենայն մեծամեծաց և ամենայն աշխարհակալաց, և ի Պարսից և յԵլիմացւոց և ի Բաբելացւոց և յԱրաբացւոց … արս աւելի քան ԺԵ հազարաց և եհան զնոսա զհետ Գուրգինայ – 224. զոր չառեալ յանձն սուրբ տիկնոջն Համազասպուհեայ՝ տանին հանեն ի բարձրաւանդակ ամրական բերդաքաղաքն, մերկանան ի հանդերձից, զի քրիստոսեան փառօքն զգեցցի. – 102. զորոյ զպաղատանս ոչ անտես արարեալ Քրիստոսի՝ ներէ նմա հանել ի գլուխ զսուրբ քառասնորդսն, խաչակից լինելով Քրիստոսի, մինչև ի պարտ զատկին – 254. ժամ տուեալ ի գլուխ հանել, յոր չոգանն զգործ պատերազմին: - 328. Իսկ Դերանիկն գործ առնէր ի գիւտս հնարիմացութեան, և տարուբերէր յանձն իւր՝ գտանել զելս իրացն, որով կարիցէ հանել զամուրսն ի Գուրգինայ և տիրել աշխարհին: - 326. հանեն ընդ սուր, վարեն ի գերութիւն և առնուն աւար, և ի յանցին դառնան ի Ճուաշ և ի Թոռնաւան գաւառ, անցեալ ընդ Կրճունեաց գաւառն: - 400. ճանապարհ արարեալ ընդ Ատրպատական, կասկածելով թէ գուցէ Գուրգէն և կամ մի ոք ի տոհմէն Արծրունեաց և նոցին ազատաց ի կորովացն Վասպուրական հեծելոցն հասանիցէ ի վերայ և թափիցէ զնա ի զօրացն և հանցէ ի ձեռաց իմոց: - 220. Նորա զչարեալ ընդ հասանել պատգամին՝ առ զայրուցս բարկութեան քինահանութիւն վրէժխնդրութեան արարեալ՝ ի բաց եհան ի գրոցն պատմութենէ՝ որ ինչ

վասն տանն Արծրունեաց էր գործոց հանգամանք, և որ ինչ օրինակ մարտիրոսութեան Վահանայ Արծրունոյ: - 130. նստէր փորող պողոտային նրբափողոց ճանապարհին, որ հանէր ի վերին մայրաքաղաքն Սիոն, ի բանակետղն երկնաւոր զօրացն յարքայանիստ քրիստոսական թագաւորութեան: - 204. Որդին Ապուսեճի Աւշին, որ զպարսկային հարստութիւնն հզօրապէս յաղթութեամբ ի գլուխ եհան՝ ձեռնամուխ ախորժեաց լինել ի վերայ Հայոց – 360 Որոյ ունկնդիր եղեալ Տիրան՝ տայ հրաման յանգ հանել զխորհուրդ անօրէն աստուածատեաց առն: - 98. ՎԱՍՆ ԹԱԳԱՒՈՐԻՆ ՋԱՓՐԱՅ, ԶՈՐ ԻՆՉ ԽՈՐՀԵՑԱՒ Ի ՎԵՐԱՅ ԱՇԽԱՐՀԻՍ ՀԱՅՈՑ, ԵԻ Ի ԳԼՈՒԽ ԵՀԱՆ ԶԿԱՄՍ ՉԱՐՈՒԹԵԱՆՆ, ԵԻ ՈՐ ԻՆՉ ԸՆԴ ՍՈՎԱՒ ՆԱԽ ՔԱՆ ԶԼՆՈՒԼ ՎԵՑԵՐՈՐԴ ՅՈՐԵԼԻՆԻ, ԵԻ ԵՕԹԱՆԱՍՈՒՆԵՐՈՐԴ ՈԼՈՄՊԻԱԴԻՆ, ՅԵՏ ԻՆՆԵԻՏԱՍՆ ԸՆԴԻՔՏԻՈՆԻՆ, ՅՈՐՈՒՄ ԲՈՎԱՆԴԱԿԻՆ ԺԱՄԱՆԱԿՔ ԲՌՆԱԿԱԼՈՒԹԵԱՆՆ ՏԱՃԿԱՑ ԱՄՔ ՄԻԲ ԸՍՏ ԹՈՒՈՑ ՀԱՅԵՐԷՆ ՏՈՒՄԱՐԻ. – 170. Տեսցէ տէր և դատ արասցէ և հանցէ իրաւունս ինձ, որպէս սովոր է արդար դատաւորն,,: - 330.

ՀԱՆԵԼ ԸՆԴ ՍՈՒՐ - Այլ և զռամիկ Նորագեղջ աւանին Ռշտունեաց առեալ ածեն ի տեղի վաճառուն Ոստանին Ռշտունեաց, արկեալ տոռունս ի պարանոցն հանեն ընդ սուր. – 202. անդ հասեալ քաջացն մերոց եղբարցն երեցունց ազատագունդ սակաւաձեռն գրոխիւ ի ձմեռնային ժամանակի, և ընդ լրթնատեսիլ լուսոյն վազս ի վերայ եղեալ՝ հանին ընդ սուր յոլովս քան թէ սակաւս: - 372.

ՀԱՆԵԼ Ի ԳԼՈՒԽ - Եւ խնդրէին ի բազումողորմէն Աստուծոյ՝ հանել ի գլուխ զառօրեայ ժամանակս անսայթաք և հաստատուն հաւատովք – 252.

ՀԱՆՃԱՐ - զի Աղէքսանդր թէպէտ և լի իմաստութեամբ և հանճարով առաւելանայր՝ սակայն գազանանայր ընդդիմակացաց հրոսաւղացն. – 70.

ՀԱՆՃԱՐԵՂ - Եւ իմաստուն և հանճարեղ խորհրդովք, քաղցր և կակուղ բանիւք ողոքեալ զմանկագոյն Հասան, առաջի արկանելով նմա զարժանի ալեացն պատուականութիւն և զիշխանական ճոխութեան զբարձրագահութիւն և որ ինչ այդմ հետևէր. – 348. զի անտի և անտի ի բաց կացցեն /12/ տարակուսական մտածութեանց ծուփս խորհրդոց ի քումմէ հանճարեղ խոհականալիր բանգիտութենէ: - 14.

ՀԱՆՃԱՐԵՂԱԳՈՅՆ - Եւ ելեալ իշխանաց իշխանն, որ բարձրագոյն և հանճարեղագոյնն էր քան զբնաւ Հայաստանեայցս և զընդհանուր կացեալս ի ներքոյ երկնից՝ եկն առ նա մեծաշուք պատուադրութեամբ, և պարգևս և պատիւս ոչ սակաւս նմա յառաջաբերեաց. – 344. Եւ փոխանակ նորա թագաւորէ Սմբատ որդի Աշոտի, այր քաջայայտ և հանճարեղագոյն, լի և առոյգ յամենայն իրողութիւնս՝ որ ինչ ընդ երկրաւս համառօտաբար լրութիւն պատկանաբար պիտանան, հաճոյ Աստուծոյ և ընտիր մարդկան: - 356.

ՀԱՆՃԱՐԵՂՈՒԹԻՒՆ - և առեալ զյաղթութեանն քաջանունութիւն, առաւել զհանճարեղութեանն խոհեմութիւն՝ յառաջանայր ի գահ, ի բարձ և ի պարգև - 72. նա և զմտացն ոչ սակաւ հարստանալ յայտարարական բերմամբ առ հանճարեղութիւնն զուգընթաց բողբոջմամբ կատարելագործէին. – 360.

ՀԱՇՏԵԱՆՔ - և ինքն հազարաւուխտ առնու զընտիրս այրուձիոց, զկորովի պատերազմողս ի վառելոցն պարսկային հարստութենէն, և խաղայ գնայ զկողմամբքն Հաշտենից և Ծոփայ, ի վերայ Վահանայ յանկարծօրէն: - 134. և յելուզակք ոմանք ի կողմանց Հաշտենից ամրանային ի լերինն. – 90.

ՀԱՇՏՈՒԹԻՒՆ - Բայց արդ ես զնոյն բարիս խօսեցայց և խնդրեցից ի նմանէ հաշտութիւն և սէր – 144. Եւ ես աւասիկ արձակեցից թագաւորին ձերում պատարագս և հրեշտակս հրովարտակօք, խնդրել ի նմանէ զխաղաղութիւն աշխարհի և ընդ իս հաշտութիւն,,: - 144. Իսկ թագաւորն աղաչեալ /100/ զսուրբն Ներսէս զհաշտութիւն խօսել Վաղէսի ընդ Արշակայ, զոր և արար իսկ զհաշտութիւնն: - 102. Իսկ թագաւորն աղաչեալ /100/ զսուրբն Ներսէս զհաշտութիւն խօսել Վաղէսի ընդ Արշակայ, զոր և արար իսկ զհաշտութիւնն: - 102. Նա և մայր իշխանին Աշոտի, քոյր Սահակայ և Բագարատայ իշխանին Տարաւնոյ… երթեա՛լ ընծայիւք բազմօք յանդիման լինէր Յովսէփայն և խնդրէր

զհաշտութիւն և զխաղաղութիւն հաստատել առ որդիսն իւր և առ բոլոր աշխարհն Վասպուրական: - 186.

ՀԱՇՏՈՒՄՆ - քանզի որդիքն Սենեքերիմայ մեծաւ ցասմամբ և անզրաւ հաշտմամբ ընդ Աշդահակայն լինէին – 62.

ՀԱՉԵԼ - և մեծաւ տրտմութեամբ հաչէր և հառաչէր յոգի իւր. – 218.

ՀԱՊԱ - ,,հա՛պա, քաջք Հայոց, և յայսմ ծանիցեն զմեզ և զարիանալն մեր,,: - 328. ,,հապա, քաջք, վառեալ ի զէն և յասպազէն, արիաբար մարտիցուք. – 134.

ՀԱՋԵԼ - իբրև շունք համրացեալք, որ ոչ կարեն հաջել, որպէս ասէ Եսայի մարգարէ, ընդդէմ Տեառն փոխելով զկատաղութիւն մահածին թիւնիցն սատակչական զօրութիւնն – 210.

ՀԱՋՈՐԴԵԼ - Ընդ այն ժամանակս տէր Զաքարիայ հանգեաւ ի Քրիստոս, կեցեալ ի հայրապետութեանն Հայոց ամս ԺԸ, և հաջորդէ փոխանակ նորա տէր Գէորգ: - 338.

ՀԱՌԱՋԱՆՔ - անկեալ առ ոտս նորա մեծաւ հառաչանօք՝ մի՛ յիշել զանցս զանցիցն անցելոց, զոր արարինն առ սուրբն, այլ դարձեալ կալցի զաթոռ հայրապետութեանն. – 120. Դարձեալ բողոք հարեալ, ձեռն զօձիւք արկեալ և զհերս խզեալ, զդէմս կեղեքեալ և ձայնս առեալ կական ողբօք արտասուալից հառաչանօք, վայ ի բերան առեալ և խիղբ – 180. Եւ ապա զի՞նչ առ այսոսիկ առցուք ի մէջ զողբերգութեան բերումն ի հառաչանս – 22. և առաջի արկեալ զհառաչանսն, զարտասուսն, զխոստովանութիւնն, զողորմագին պաղատանսն, մինչ ի մահ զտրտմելն, զկենաց դեղն հայցել, զմարմին և զարիւն որդւոյն Աստուծոյ ի թողութիւն մեղաց – 386. մինչ ելեալ արտաքս տիկինն ի հետիոտս լի հառաչանօք՝ բաւական համարել զգործ նահատակութեանն, զոր ետ Աստուած ի ձեռս Աշոտոյ. – 176.

ՀԱՌԱՉԵԼ - և մեծաւ տրտմութեամբ հաչէր և հառաչէր յոգի իւր. – 218.

ՀԱՌԱՉՈՒՄՆ - զվայն և զեղուկն անյարմար հառաչմամբ, մեծակական ողբովք առ Քրիստոս ամբառնալով: - 386.

ՀԱՍ - ,,ի հայրենեացն արտաքս հանեալ էք ի ժառանգութենէ և մերժեալ ի բաժնէ եղբայրական հասէ. զա՞յս ևս բռնազբօսել ջանայք, զոր Աստուած ժառանգեցոյց ինձ: -330. Եւ եղև ի գալ միւսոյ տարւոյն՝ Սմբատ իշխանն Սիւնեաց ի բաց եկաց ի հնազանդութենէ թագաւորին Հայոց, արգել առնելով հարկացն տալ թագաւորին, թևակոխելով Պարսից բռնաւորին հատուցանել զհարկս և զհասս. - 382. և կացցէ ինքն և իւրքն ամենեքեան ի հնազանդութեան արքունի, ի հարկս և ի հասս չափոյ սակի արքունական աւանդութեանց: - 226. և մեք տացուք քեզ զհասս հարկացն և հաճեսցուք զմիտս քո – 178. և նոքա տան տանել նմա զհարկս և հասս արքունի և դարձուցանեն զնա ընդ նոյն ուստի եկն: - 172. Զնա յղէ Ապուսէթ ելանել յերկիրն Վասպուրական և անդէն մնալ զօրօք բազմօք, մինչև զբովանդակ զհարկս և զհասս արքունի յամենայն կողմանցն Հայոց առ նա բերցեն յիւրաքանչիւր սահմանաց: - 176. սոքա բնակին յամուրս լեռնականս, յանհոգս խաղաղացեալք յարտաքին թշնամեաց, և հարկք և հասք արքունի ի յինքեանս մնալով – 274.

ՀԱՍԱԿ - Բայց երիցս երանելի ոմն երիտասարդ հասակաւ, ինքն տաճիկ և ազգաւ պարսիկ՝ ելեալ զհետ սիրոյն Քրիստոսի հաւատոցն եկն յարեցաւ ի Պատրիկն Անձևացի – 222. և որդի նորա մնացեալ մատաղ հասակաւ, որում Մահմէտ կոչէին. – 158. զի ըստ իւրաքանչիւր հասակաց՝ զմի մի ոք ի ձէնջ /214/ գթալիր սիրով մեծարէի այնչափ – 214. զոր առեալ սնուցանէր հօրեղբայր իւր Ապուտալպ մինչև ցարբունս հասակի. – 158. Իսկ աշխարհս ոգի առեալ բնակեցան խաղաղութեամբ իւրաքանչիւր ըստ չափոյ հասակի ի մեծամեծաց մինչ ի փոքունս, և գոհացեալ գթութեանցն Աստուծոյ. – 376. Իսկ Ապումրուանայ ի պատճառ ոստիկանութեան զմանկականն նոցա պատճառելով խաժութիւն հասակի՝ առ սակաւ սակաւ սկսաւ զամուրսն յինքն գրաւել, զհետ իշխանական ցանկութեանն զերասանակ մտացն ձգեալ - 360. յօրացեալ և ապաստանեալ ի յոյժ բազկի և ի յաղթանդամութիւն հասակի – 38. որոյ տեսեալ զբարձրաբերձ վայելչութիւն հասակին և զպատշաճ գեղ երեսացն, զփաղփեալ գոյնն ի տեսիլ արուսեկի ի

մէջ սպիտակափայլ ալեացն պատուաբերի – 204. որք ի միում ժամու սպանան արք Խ, ամենեքեան ի չափ հասակի եկեալ: -152.

ՀԱՍԱՆ - Այնուհետև սկսաւ կորապաղատն արկանել բանս խարդախութեան ի մէջ Դերանկին և Հասանայ, որ էր որդի քեռն Դերանկին, որպէս թէ ոչ ուղիղ նայի ընդ նա Դերանիկն, այլ թէ՝ և հանել ի նմանէ զամրոցն և զաշխարհն նկրտել. – 346. Այլ կորապաղատն Տարունոյ կայր ամրոցին Սևան, որ ի ձեռին Հասանայ որդւոյ Վասակայ ամբարշտի – 346. Բայց Դերանիկն խօսի ընդ Հասանայ զխաղաղութիւն, խոստանայ առնել զդարձ ամրոցին Սևանի և աշխարհին նորա. – 350. Բայց ինքն Դերանիկն ստեաց երդման ուխտի խաղաղութեանն, զոր եդ ի մէջ իւր և ի մէջ Հասանայ – 348. Եւ գունդն Հայոց խաղացին ընդդէմ նոցա … ի տանէն Արծրունեաց՝ Գուրգէն … և Անձևացիքն՝ Պատրիկն և Գէորգ, Դաւիթ և Հասան և Դաւիթ գունդսաղար – 230. Եւ դարձեալ զՍևան բերդ տայ ի ձեռս Հասանայ որդւոյ Վասակայ ամբարշտի: - 364. Եւ եղև իբրև ննջէր Գագիկ յանհոգս յանկասկածս՝ հասեալ Հասան ի գիշերի սուսերամերկ վառեալ փոքր գնդաւ, մոմեղինօք վառելովք՝ և կապեաց զնա կապանօք երկաթի: - 350. Եւ իբրև գիշերն տարածեցաւ և խաւարն թանձրացաւ և սկսան ամենեքին մտանել ի քուն յանձնիւր օթանոցն՝ յանկարծակի փայլիւն սուսերաց և մոմեղինաց վառելոց և գունդք խորհրդականացն և Հասան ընդ նոսա. – 348. Եւ իմաստուն և հանճարեղ խորհրդովք, քաղցր և կակուղ բանիւք ողոքեալ զմանկագոյն Հասան, առաջի արկանելով նմա զարժանի ալեացն պատուականութիւն և զիշխանական ճոխութեան զբարձրագահութիւն և որ ինչ այդմ հետևէր. – 348. զի Գագիկ անցեալ ամրանայր ի Ճախուկ բերդի, ի կասկածի կալով ի Դերանկէն, ըստ զեկուցմանն զոր ինչ գործեաց Հասան առ Դերանիկն: - 350. Իսկ իշխանն Աշոտ … Մուշեղ Վահևունի … և Վահրամ սեպուհ թիկնապահ իշխանին, և Վահրամ Տրունի և Հասան և այլք ի սեպուհ պաշտօնէից … եկին մտին ի բերդն Դղեակ, յամրոցն Նկան, որ ի Թոռնավան գաւառի. – 206. Իսկ Հասան ըստ յանձնառութեանն գնաց մեկնեցաւ ի Դերանկէն, եմուտ առ Գագիկ յամուրն և զտրտունջն զԴերանկէն հաւատարմացոյց առաջի Գագկայ, որ դիւրաւ առ հաւատալն հաստատնագոյն երևէր. – 350. Նոյն ժամայն մատուցեալ ոմանց առ Դերանիկն՝ ստուգագոյնս քսէին վասն Գագկայ Ապումրուանայ. խորհել ընդ կորապաղատին, զոր ինչ գործեաց Հասան զանօգուտսն. – 348.

ՀԱՍԱՆԵԼ - և Դերանիկն ճեմս առեալ սիգաքայլ երիվարաւն եհաս հանդէպ ճակատու գնդին վառեալ, միայն և առանձինն ի յառուամէջ տեղւոջ. – 352. Իբրև եհաս ամիրայն ի Խլաթ՝ եմուտ բանակեցաւ յամրոցին որ ի քաղաքին: - 186. ոչ կատարելանայր առ աւարտումն հասանել խորհրդոյն. – 364. Որոց ոչ զպատաղումն բերելով՝ գայ զօրու Աւշնի հասանէ ի վերայ նոցա: - 362. ,,հրամայեա արձակել արս հաւատարիմս, և ես յորժամ հասից ի դուռն արքունի՝ ի նմին ժամու խնդիր արարից Խաչին, և գտեալ զնա տայց բերել առ քեզ,,: - 154. Այլ իբրև այն ինչ մերձ լինէր ամրոցն ի պաշարումն՝ Ամդայինն Յիսէ, որ Շեհի որդին, որ զզօրապետութիւնն Հայոց ունէր, ճանաչէր՝ ի հրապոյրս Մանազաւեան պետոյն և Ութմանացն ելեալ՝ երագապէս եկն եհաս ի վերայ Աշոտի ԺԵ հազարաւ հեծելօք վառելովք. – 334. Այս լուր դառնութեան եհաս առ մեծն Վարդան Մամիկոնեան, որ էր ամրացեալ ի Տաւրոսականն Ջռայլ: - 126. Այս լուր քաջութեան և քաջախորհուրդ զպատերազմացն մղելոյ գյարձակմունս եհաս առ զօրագլուխն Բուխայ. – 308. այր իւրաքանչիւր մազապուր զերծեալ փախստեայ գնացեալ հասին յաշխարհն իւրեանց: - 354. Արդ ի հասանել նամակիդ՝ փութով զԳուրգէն և զազգատոհմդ իւր հանդերձ ազատօքդ Վասպուրականի կապեալս առ մեզ հասուցես: - 236. Բայց յետ բազում յուզիցն և պատերազմացն եհաս տիրել նմա Անձաւացեաց տէրութեանն զայս օրինակ: - 324. Բայց քանզի ընդարձակ էր պահն Հողցայ՝ փութանակի եկն եհաս Ժիրաք ի գաւառն Ռշտունեաց և զզօրսն առխթեալ ի ձորն Առուանից, ի սահմանս Մոկաց. – 202. Բայց Աշոտ վերջոտնեալ հանդերձ Վահանաւ՝ եկն եհաս խաղաղութեամբ և բերկրեալ սրտիւ բազմադէմ յերկիր իւր: - 330. Բայց Աշոտ, իբրև եհաս ժամ ելիցն իւր յաշխարհէս՝

յանհունս բերեալ զզեղջ և զապաշաւանս յորդահոսան արտասուօք զխոստովանողականն ի դիմի հարեալ միջնորդութիւնն – 336. գուցէ ակամայ երթալովն, և նեղիչն աշխատելով ի պահելն՝ յաճախեսցէ ի վնաս և ի քէն, և օճան բարւոյ յայնմ հետէ ոչ ևս ումեք հասցէ գտանել,,: - 216. գրէ յականէ յանուանէ առ որ մնացեալն էին յաշխարհս յամուրս իւրեանց, զի փութով յիւրաքանչիւր տեղեաց առանց կասկածանաց և երկիւղի առ նա հասանիցեն – 296. Ելեալ փութանակի եկն եհաս յաշխարհս Վասպուրական սպարապետին կամակցութեամբ: - 306 և անդ ոչ սակաւ վտանգ հասանէր Աշդահակայ վասն հասանելոյ ի վերայ նորա Տիգրանայ զօրու ծանու: - 62. և անդ ոչ սակաւ վտանգ հասանէր Աշդահակայ վասն հասանելոյ ի վերայ նորա Տիգրանայ զօրու ծանու: - 62. Եւ ընթանային ամենեքեան յաճիւռ՝ տեսանել զնոսա և ի վերայ հասանել, թէ զիա՛րդ ի գլուխ ելանիցէ ատեանն: - 242. և կորապաղատին ընդարձակեաց ելանել, զի երթիցէ ուր և կարասցէ հասանել ըստ յաջողելոյ իրին: - 348. և ահա այլազգիքն հասին ի դիմի գրգռել զմարտն և զօրագլուխք փութացան զհետ զօրուն: - 230. Եւ ահա դիմեալ գնաց հասանել ի վերայ կողմանց հիւսիսոյ, յերկիրն յորում Ծանակ կոչի. – 274. Եւ այն ինչ ընդ առաւօտն յեղակարծում հասին ի վերայ զօրք Տաճկաց – 306. Եւ անդէն իսկ և իսկ փութացաւ, եհաս գուժական առ թագաւորն, եթէ սպանաւ զօրավարն քո և ապստամբեաց ի պետութենէ քումմէ աշխարհին Հայոց: - 190. և առեալ զնա եկն եհաս ի վերայ որդւոյն Աբգարու բառնալ ի նմանէ զթագաւորութիւնն զոր ունէր: - 80. Եւ գոյժն աւետաբեր եհաս զկնի թագաւորին – 382. Եւ գումարեալ այնուհետև զանհուն բազմութիւն զօրացն բարձրագոյն քան զառաջինն՝ և ել խաղաց հասանել ի վերայ արևելից աշխարհին – 270. և դարձեալ գնաց եհաս ի Պարտաւ յաշխարհն Գագարացւոց: - 336. Եւ դարձեալ պատասխանի ասէ, մի՛ տալ տեղի՝ լսել հրամանի թագաւորին. թէ վտանգ ինչ հասանէ՝ կրել հանգոյն զինչ կրեցինն: - 132. և դարձոյց զերեսանակ երիվարին ընդդէմ նորա, և հասեալ ընդդէմ միմեանց՝ դարձան հասին ի բանակն իւրեանց: - 230. Եւ եթէ քաղաքս խնդրիցէ՝ ահաւադիկ է քաղաքք մեծամեծք և պարսպաւորք. այլ գանձս խնդրիցէ՝ ասացի թէ տաց որչափ և ձեռն հասանիցէ. և ոչ կամեցաւ լսել, այլ տակաւին ծարաւի է արիւնարբութեան: - 144. Եւ եկն եհաս առ նա Ատրներսէհ իշխանն Վրաց: - 366. և եհաս ի վերայ նորա վառեալ զինու սպառազէն երիվարաց ընտիր հեծելովք այրուձիոյ: - 178. Եւ եղև իբրև եհաս իշխանն յարքունիսն՝ ետ կապել զոտս նոցա կրկին շղթայիւք և դնել ի բանտի. – 220. Եւ եղև իբրև հասին ի տեղի կատարմանն ասպարիսի նահատակութեանն՝ ծունր եդեալ կային յաղօթս – 266. Եւ եղև մօտ ի կատարումն հասանել ամին երկրորդի գալստեան նորա՝ ել գնաց ի կողմանս Աղուանից. – 276. և երագապէս աճապարեալ հասին հանդէպ զօրուն Հայոց. – 380. Եւ երթեալ հասանէ ի գիւղակ մի Երանգանի անուն առ մոնազն մի, որ էր երէց վանիցն:- 320. Եւ զայսոսիկ ոչ վայրապար ինչ եհաս մեզ գրել – 46. Եւ զի էր պաշարել նորա յայնժամ զքաղաքն Մանազկերտ Ապահունեաց աշխարհին, որ ի ձեռս Ապլբառայն էր, և ածեալ հասուցեալ մերձ ի պաշարումն. և ի հասանել գուժկանացն եթող զնոսա, տալով նոցա հրովարտակս ի խաղաղութիւն: - 348. և զի չև էր դարձեալ պատասխանի յարքայէն՝ հրաման եհաս ի կայսերէ առ Վարազդատ անյապաղ առ նա հասանել: - 110. և զի չև էր դարձեալ պատասխանի յարքայէն՝ հրաման եհաս ի կայսերէ առ Վարազդատ անյապաղ առ նա հասանել: - 110. և զոր ասէն այսպիսի ինչ է. ,,վա՛յ քեզ, եղո՛ւկ դու երկիրդ Պարսից, յորժամ բազմախուռն գունդք զօրացն Յունաց ի քեզ արշաւանս եդեալ՝ հասանիցեն և հարկանիցեն զքեզ ի սուր սուսերաց, և յառաթուր սմբակաց: - 148. Եւ զօրքն, որ ելեալ էին զհետ Գուրգինայ՝ եկին հասին ի սահմանս երկրին, ուր կայր Գուրգէն զօրօքն իւրովք – 226. և թէ ի պատերազմին յայնմիկ հասանիցէ զմահուն ընդունել զվճիռ՝ իսկ ըստ յաղթութեանն զխոստովանողականն ժառանգել անուն, զօրանալ զօրութեամբ ի զօրութիւն խաչին Քրիստոսի Աստուծոյ մերոյ: - 400. և ի հասանելն նորա անդր թողեալ զհակառակաբար մարտն՝ խօսին ի խաղաղութիւն, առաջի եդեալ զհրամանն արքունի, զգլխաւորին Տաճկաց, և Աշոտի հաւատալ զբոլոր տէրութիւնս Վասպուրականի: - 316. Եւ ի հասանելն նորա առ թագաւորն՝ ունէր ևս ընդ

ինքեան թուղթս լի ամբաստանութեամբ զնախարարացն, որ բնակեալ էին ի Հայս – 180. Եւ ի հասանելն նորա ի Թէոդոսի քաղաքն ի Կարին գաւառ՝ եհաս լուր նորա առ կայսր Միքայէլ թագաւոր Յունաց. – 316. Եւ ի հասանելն նորա ի Թէոդոսի քաղաքն ի Կարին գաւառ՝ եհաս լուր նորա առ կայսր Միքայէլ թագաւոր Յունաց. – 316. Եւ ի միւսում առաւօտին հասին ի վերայ բանակին խոնջեալ երիվարօք, անզգուշութեամբ առ մուտն պատրաստեալ, և անկան ի նմին ժամու Բ ոմանք, Վլիթ և Մարաճայ. – 402. Եւ իբրև եհաս առ թագաւորն որ ինչ գործեցաւն՝ ոչինչ գոյր տեղի այլ պատասխանւոյ. բայց ասէ, ,,արժանապէս այն գործ նոյն գործեցաւ,,: - 370. և ինքն Աշոտ ճողոպրեալ միահի ելեալ եհաս փախստեայ մինչ յՈստանն Ռշտունեաց, թողլով զբուն բանակն ի նմին տեղւոջ. – 332. և խորհէր յեղակարծում ի գիշերամարտս հասանել ի վերայ Աշոտի: - 322. և կանայք կոտորելոցն հանդերձ խառնիճաղանճ ամբոխիւն լրբենի դիմօք, հոլանեալք և ի բաց ընկեցեալ զձև կանացի բնութեան, որպէս օրէն է նոցա, մանաւանդ տաճկական ազանց, և ի հետիոտս դիմեալք ի դուռն արքունի հասանէին: - 180. և կարգել նմա ռոճիկս առատապէս, մինչ ինքն պարապագոյն ժամու անդր հասանիցէ: - 70. Եւ կէսքն հասանէին մինչ ի շահաստանն Բաղէշ, թողեալ անդէն զբուն բանակն: - 176. և հրաման ետ հասանել ի վերայ քաղաքին Տփղիք կոչեցեալ. որում յառաջագոյն Փայտակարան անուանէին. – 270. Եւ մինչ այսպէս կայր աշխարհս յանկարգ խաղաղութեան՝ եհաս լուր գործոյն առ Աւշին և առ իշխանն Աշոտ, եթէ ,,վրդովեալ է երկիրն, և կան ի տարակուսի՝ որք զամուրսն քո ունին. – 362. Եւ մինչդեռ այս գործ խորհրդածէր՝ հասին ի վերայ նորա քաղաքապետք երկու, անուն միոյն Բշիր և երկրորդին Զքրի, և կալան զնա տանել առ Աշոտ որդի սպարապետին: - 316. Եւ մինչդեռ զայս խորհէին՝ եհաս լուրն առ կայսր ի ձեռն Տիրենտեայ զօրավարին. – 110. Եւ մինչդեռ զայսքան և զայսօրինակ մարտն գրգռէր՝ ահա յանկարծակի հասանէր քաջն մեր Աշոտ. – 174. և մինչդեռ խորհէր արքայ Կաւատ վասն շինութեան աշխարհի և խաղաղութեան՝ եհաս նմա վախճան կենաց և մեռաւ, կեցեալ ամիսս Զ: - 152. Եւ յայտ յանդիման ի վերայ հասանել ոչ կարէր. գունդ կազմել և ճակատ պատրաստել ընդդէմ՝ անվայելուչ էր. - 346. և յանկարծօրէն յեղակարծ երագութեամբ հասին ի վերայ Շաւասպայ և մարզպանին Վնդոյի: - 126. և յորժամ զգան ջերմութեանն՝ զուարթանան զուարճանան, հրճուին կայտռելով ի վեր փքալով հասանել ի ջերմագոյն վայրսն, ի ջրշիղջսն ծովափնեայս ջանան հասանել – 260. և յորժամ զգան ջերմութեանն՝ զուարթանան զուարճանան, հրճուին կայտռելով ի վեր փքալով հասանել ի ջերմագոյն վայրսն, ի ջրշիղջսն ծովափնեայս ջանան հասանել – 260. Եւ նոյնժամայն եհաս հրաման յարքունուստ՝ մի տաղտկալ և վհատել և մի ի բաց կալ պատերազմել ընդ նմա. մինչև եկեսցէ ակամայ կամօք ի հնազանդութիւն արքայի: - 284. Եւ նոքա թափառնակի անյապաղ հանդերձ իւրաքանչիւր զօրու եկին հասին առ մեծն Վարդան – 126. և շփոթեալ լի աղաղակաւ երկիրս, և ուր հասանէին՝ աւերէին ասպատակաւ և աւարաւ և յափշտակութեամբ. – 298. Եւ փախեաւ Յազկերտ յերեսաց /164/ նոցա և ոչ կարաց ճողոպրել. քանզի հասին զհետ նորա մերձ ի սահմանս Քուշանաց, և կոտորեցին զամենայն զօրս նորա. – 166. և փութացաւ գրեաց առ Սափի որ ի Վանտոսպ նստեալ և ճոխանայր Վասպուրական տէրութեամբն. որ առանց յապաղանաց զփոյթն յառաջաբերեալ՝ գնաց եհաս առ Աւշին ի Մարակայ քաղաք: - 374. և փութացոյց վասն նորա զի անյապաղ առ նա հասցէ, և ի մեծ պատիւս հիւպատութեան հասուսցէ զնա, և խաչանշան դրօշիւք ճոխասցի: - 316. զերծեալ ի բանտէն յոր տուանն՝ և գան հասանեն յերկիրս այս մեր, բերելով զաւետիս արձակման գերելոցն – 324. զի թէ հնար իցէ՝ անյապաղ երագութեամբ անձամբ իւրով և զօրու և զինու ձեռնտու լիցի հասանել յօգնականութիւն նմա: - 172. Զի թէպէտ և Գուրգէն մեծաւ զօրութեամբ ունէր զդէմ յարձակելոցն ի վերայ, որոց զիշխանականն ճեպէին հասանել գահ, կամ որ արտաքին տաճկական պատերազմունքն բռնաբար ի ներքս դիմէին՝ սակայն ոչ յապահովանայր դեռ երկիրն: - 316. Զի ի հասանել ի վերայ նորա ցաւոցն մահաբերաց՝ ոչ հոգացաւ զմանկականն իւր տարաժամ ելսն յաշխարհէս – 386. զոր անյապաղ փութով զզօրսն

հարաւայինս և հիւսիսայինս տալ ի ձեռս Քսերքսեայ և Արշէզայ որդւոյ նորուն Քսերքսեայ զի փութով անդր հասցեն. – 64. Զոր և Աղէքսանդրի Մակեդոնացւոյ ի դէպ ելանէ առ Ողըմպիադայ վիպագրութիւնք. թերևս ի մասն ինչ արտաքոյ սահմանաց դրախտին հասանել. – 50. Զորոյ իրազեկ եղեալ գալուստ նորա առ Ահմատ, և նորա գումարեալ առ ինքն զզօրս իւրոյ նահանգին և Միջագետաց և զԳեթացիսն՝ և եկն եհաս յանդիման նմա: - 366. ընդ ակամբ հայելով, թէ գուցէ ճողոպրեալ ելանիցէ ի ձեռաց մերոց, կամ ի գիշերամարտս յանկարծ հասանիցէ ի վերայ մեր մեծամեծ ոճիրս գործիցէ: - 202. Ըստ նմին օրինակի և զօրավարն Բուխայ, ի հասանել ամառնային ջերմութեանն իբրև ի խորոց անդնդոց ի վեր մղեալ զինքն, ելեալ յերեսաց արքայի բազում և ծանր զօրու՝ եհաս ի վերայ երկրիս ի կողմն հիւսիսոյ ի մուտս Հայաստան աշխարհիս. – 262. Ըստ նմին օրինակի և զօրավարն Բուխայ, ի հասանել ամառնային ջերմութեանն իբրև ի խորոց անդնդոց ի վեր մղեալ զինքն, ելեալ յերեսաց արքայի բազում և ծանր զօրու՝ եհաս ի վերայ երկրիս ի կողմն հիւսիսոյ ի մուտս Հայաստան աշխարհիս. – 262. ԹԷ ՈՐՊԻՍԻ ՊԱՏՃԱՌԱԻ ՀԱՍԻՆ ՈՄԱՆՔ Ի ՆՈՅԱՆԷ ՍՈՒՐԲ ԿԱՏԱՐՄԱՆՆ: - 220. ի հօրէ զՍենեքերիմայն և ի մօրէ զՄամզոնեացն, ըստ ծննդաբանութեան գալ հասանել՝ մինչ յորում եմքս հասեալ ժամանակ – 300. ի սակաւուն հաւատարիմ լինելով՝ ոչ այնմ և եթ տիրեսցէ տնկոյն, այլ և բազմերջանիկ երկնայնոցն հասցէ կենաց: - 20. Իբրև եհաս թագաւորն յաշխարհին իւր՝ ետ բերել պարգևս և պատիւս Աշոտի ըստ իշխանական յօրինուածի – 370. Իբրև եհաս գուժկան առ մարզպանն Հայոց Գուրգէն՝ ելեալ զհետ նոցա Ռ արամբք, վառեալ ի զէն և յասպազէն, և գնացեալ եհաս յԱյլի գաւառ. – 402. Իբրև եհաս գուժկան առ մարզպանն Հայոց Գուրգէն՝ ելեալ զհետ նոցա Ռ արամբք, վառեալ ի զէն և յասպազէն, և գնացեալ եհաս յԱյլի գաւառ. – 402. Իբրև ետես կայսր Հայրակղէս զչարիսն ամենայն, որ եկին հասին ի վերայ նորա՝ ակամայ կամեցեալ ցուցանել բարեկամութիւն՝ ել ընդ առաջ նոցա, մեծարել իբրև զվաստակեալս և զհիւրս, ընկալաւ զնոսա մեծամեծ /142/ ընծայիւք. – 144. Իբրև հասին ուր հանդերձեալն էին՝ և երկոցունց զօրքն անհուն բազմութեամբ յանդիման եղեն միմեանց, և ճակատ առ ճակատ զգործս պատերազմին յարդարէին – 328. Իսկ աբեղայն արիոսեան, զոր յառաջագոյն ասացաք վարդապետ Մահմէտի, տեսեալ զյաջողութիւն իրացն՝ յարուցեալ եկն առ Մահմէտ, ցուցանել նմա զգութ երախտեաց, իբրև յիւրմէ վարդապետէ ուսեալ եհաս այնպիսի իրաց. – 162. Իսկ առ մեզ հասին զրոյցքս այս ըստ մնացորդաց պատմագրացն առաջնոց, ի Մամբրէէ Վերծանողէ և ի նորուն եղբօրէ Մովսէս կոչեցելոյ, և միւսումն Թէոդորոս Քերթող – 74. իսկ և իսկ եհաս գուժկան անկելոցն ի պատերազմին ի պարսկական քաղաքն և յԱտրպատական սահմանսն. – 398. Իսկ զկնի վերանալոյն Քրիստոսի, յետ ԺԵ աւուր, ապա հասանէր Գրիգոր ի քրիստոսակոչ կատարումն. – 254. Իսկ ի գալ միւսոյ ամին … առեալ զօրականս այրուձի կազմութեամբ իբրև Չ խաղաց գնաց երկայնագոյն հեռաւորութեամբ հասանել ի վերայ բանակին պարսկական աղխին – 402. Իսկ ի հասանել սրբոյն Սահակայ ի դուռն հանդերձ նախարարօքն՝ զիջանէ ցածնու Վռամ ի բարկութենէ վրէժխնդրութեան Հայոց քինահարութեան անարգանաց Շապհոյ, և ընդ Յունաց զսերտ խաղաղութիւն ունելով.- 116. Իսկ իբրև եկն Գուրգէն երկրորդ՝ փութացաւ գնաց հասանել ի վերայ առաջնոյն Գուրգինի. – 316. Իսկ իբրև եհաս Բուխայ զօրօք բազմօք մերձ ի սահմանս նոցա, և գրեաց հրովարտակս դիմօք խաղաղութեան՝ դառնալ սիրով միաբանութեան ի հնազանդութիւն արքային – 274. Իսկ իբրև լուաւ, թէ ահա առեալ Բուխայ զզօրս իւր գալ հասանել ի վերայ նորա՝ հրաման ետ բոլոր աշխարհին իւրոյ ելանել ունել զլեռնակողմն – 276. իսկ կինն ճիչ բարձեալ ասէ. ,,առ թագաւորն հասցէ գոյժ իմ,, , շրջելով ընդ բանակն հոլանի, զոր չէր օրէն տաճկական ազգի կանանց, բայց ոչինչ օգնեաց. – 272. Իսկ Պարսկահայոց գոեահն խուժան ածեալ, գաղտագնաց եղեալ ընդ անկոխ ճանապարհս՝ գան հասանեն ի Մարդաստան գաւառ յաւանն Վիտահոտ – 400. իւրաքանչիւր զօրօք գումարեալ, ի մի վայր խաղացեալ՝ գնացին հասին յայն վայր – 174. կատարած ամբարշտաց հասցէ դարձելոց ընդդէմ նոցա. – 200. հասանէ արքայն

Կիւրոս և Քսերքսէս. – 64. հրաման տուեալ ամենեցուն, զի իբրև մերձ լինիցի գարնանային ժամանակն՝ փութով առանց յապաղանաց առ նա հասանիցեն ամենայն պատրաստութեամբ: - 262. ճանապարհ արարեալ ընդ Ատրպատական, կասկածելով թէ գուցէ Գուրգէն և կամ մի ոք ի տոհմէն Արծրունեաց և նոցին ազատաց ի կորովացն Վասպուրական հեծելոցն հասանիցէ ի վերայ և թափիցէ զնա ի զօրացն և հանցէ ի ձեռաց իմոց: - 220. մինչ քաղցրատենչ քունն ի վերայ հասանէր որ զպահպանութիւն գիշերոյն պահէին՝ նորա ամբարձեալ զպղծալից ձեռն ի սրբութիւն սրբոցն և առեալ զսուրբ նշան խաչին Քրիստոսի և ընդ պատուհանն արտաքս ելեալ – 378. մինչև եկին հասին ի վերայ մեր մեծամեծ չարիքս այսոքիկ և անկանգնելի գլորումնս – 182. մինչև եկից հասից ի լայնանիստ ընդարձակ ասպարէզս մատենից պատմութեանցս՝ ոճով մի ըստ միոջէ շարեցից, կարգեցից, գրեցից զախորժելին քեզ: - 74. Յայն ժամանակս գայ ոմն Բուտել անուն ի զօրացն արքունի հրամանաւ Բուխայի, հասանել ի վերայ Գուրգինի – 306. Յայնժամ բնակիչք լերինն իբրև տեսին, թէ վարեցաւ իշխանն ի գերութիւն … հասին միաբան բազմութիւնն մեկնակազէնքն Խութայ ի հնարս արուեստգիտութեանն իւրեանց, զոր ի պէտս օժանդակութեան ձմերայնոյ հնարաւորեալ էին: - 190. Յայնժամ թագաւորն փութացոյց դեսպանս մի զմիոյ կնի առ իշխանն Աշոտ, զի անյապաղ երագութեամբ հասցէ առ նա: - 382. Յայնժամ իսկ և իսկ փութացեալ /գրքում՝փութեցեալ/ եհաս գուժկանն առ հոյակապն Աշոտ իշխանաց իշխան, զեկուցանելով նմա որ ինչ գործեցաւն: - 348. Յայնժամ ողորմագին զաչսն շրջշրջեալ առ քաջ նիզակակիցսն իւր, թէ ո՛վ ոք արդեօք թերևս յօգնութիւն ինչ նմա հասանիցեն. – 354. յեղակարծում ժամանակի հասանէ համբաւ մահուն Արտաւանայ, և տիրել Պարսից Ստահրացւոյն Արտաշրի Սասանականի. – 92. Յղէ առ իշխանն, զի առանց և ոչ մի ինչ յապաղանաց փութացեալ հասցես այսր: - 348. Յորժամ անդնդական խորքն ազդ առնիցեն ներքին բնական կենդանեացն զհասանել ջերմութեանն, յորում ջեռացեալ ի հիւսիսային սառնամանեաց օդոյն շնչելոյ, ի խորսն զխաղացումն արարեալ լինին - 260. յորոց աճմամբ յառաջանայ կարգն և գայ հասանէ ի Սենեքերիմ արքայ, առ Եզեկիայիւ Եբրայեցւոցն առաջնորդաւ և առ մերովն Հարամայիւ: - 14. Նորա զչարեալ ընդ հասանել պատգամին՝ առ զայրուցս բարկութեան քինահանութիւն վրէժխնդրութեան արարեալ՝ ի բաց եհան ի գրոցն պատմութենէ՝ որ ինչ վասն տանն Արծրունեաց էր գործոց հանգամանք, և որ ինչ օրինակ մարտիրոսութեան Վահանայ Արծրունոյ: - 130. որ և ամբարտաւանեալ մոլեգնականս տալ հրաման զանխորհուրդ միաբանութեան զրաջան վաստակոց, կանգնել բուրգն յերկրէ, որոյ գլուխն հասցէ յերկինս. – 40. որք ծանուցեալ զբռնանալն նորա ի վերայ պարսկական պետացն և զինչ կրեցին, զմտաւ ածեալ և զխառն ընդ աշխարհիս զդրակցութիւնն, և թէ գուցէ զպարսկայինն հասանիցէ մեզ կրել և աշխարհիս մեր՝ ձեռն ետուն հաւանութեան ի նորայն կալ մնալ հպատակութեան: - 360. պատշաճագոյն զպատերազմին խրոխտական բարձրավզութեամբ վանել զախոյեանսն, և առեալ զբանակն յաւարի, և ընդ սուր հանեալ յոլովս քան թէ սակաւս, հասին ի գոգ տեղի մի ի Մղունիս գեօղ: - 402. ոչ պիտոյացեալ եկամուտ լուսոյ, որով նսեմասցի առ ի հասանել երեկոյին, ոչ ապաժամանութիւն արեգական առ ի մերժել զմութ գիշերի լուսազգեստ ստեղծուածոյն, որ յետ առաջնոցն կարգի և դասու՝ զերկրորդն փոխանորդեցաւ վիճակ, ոչ կերակուր հոսանուտ առ ի լրութիւն տարաբարձ ունակութեանց անապականին, որ դոյզն ինչ փոքրագոյն քան զհրեշտակս գոլ. – 20. Սա առաջին գտաւ պտուղ մարտիրոսական ի մեծ վտանգի նեղութեանն, որ եհաս ի վերայ բոլոր Հայաստանեայցս: - 206. սագունակ հասեալ ի վերայ Վասպուրական աշխարհիս պարսկական խուժանն ըստ ազգս ազգս և ըստ քաղաքս քաղաքս ի Մարաց և ի Պարսից, յԵլամացւոց և ի Խուժաստանէ, ի Կրմանայ և ի Մուկանաց, ի Թուրքաստանէ և ի Խորասանայ, և յեղակարծում հասին ի ճուաշն գաւառ – 398. Փութաճեմ ընթացող արշաւանս ի վերայ ձգեալ՝ հասանել ի լեառն տեառն և ի տուն Աստուծոյ մերոյ, ըստ յորդորման մարգարէիցն – 392. Փութանակի և վաղվաղակի իւրաքանչիւր զօրօք անդր հասանէին՝ իշխան Աշոտ և

եղբարք իւր Գուրգէն և Գրիգոր զօրօք իւրեանց – 174. քանզի ըստ օրինակի իսրայէլականումն, որ յաւուրս անիշխանութեանն էին անկարգութիւնք, և այր իւրաքանչիւր զհաճոյս աչաց իւրոց առնէր՝ սոյնպիսիք և այժմուս եհաս լինել. – 300. և թէ մեռանիլ ևս ումեք հասցէ՝ ի պարծանս անձին և ազգին իւրոյ համարեալ է, և պսակ մարտիրոսական ընկալցի ի Քրիստոսէ. – 276. և անդ ընդ փոքր զառ ի վայրն իբրև զհեղեղատ յորդեալ հոսեալ հասաւ ի վերայ նոցա, ի Քրիստոս խրախուսեալ – 400.

ՀԱՍԱՆԻԿ - Բայց հրաման ետ Դերանիկն Գրիգոր հարազատի իւրոյ ի նոյն տանէ Արծրունոյ, և կալաւ զնա և եդ ի յամուրսն Սևան. և հրամայեաց Հասանկան քեռորդւոյն իւրոյ՝ պահել զնա յընդարձակի: - 342.

ՀԱՍԱՐԱԿ - և առ եղբայրականն զհնազանդութեանն չափ ցուցանելով, անկշիռ վայելչութեամբ զմիմեանս լաւ համարելով քան զանձինս, հասարակ զճոխութիւն իշխանական գահընկալութեանն վարկանելով – 360.

ՀԱՍԱՐԱԿԱԲԱՐ - նորին հրահանգեալ կրթարանի ուսումնասիրութեանն վարժիւք ոռոգացեալ, այր քաղցրաբարոյ և հեզահայեաց, հասարակաբար առ հասարակ զինքն վարկանելով, արտաքոյ ամբարտաւանական բարձրայօնութեանն՝ կալով յաշտիճան հեզոցն, դրուատեալ ի փրկչէն մերմէ Յիսուսէ Քրիստոսէ: - 376.

ՀԱՍԱՐԱԿԱՅ - զի ոչ եթէ ըստ հասարակաց սահմանաւոր մահու է, այլ ի վերայ սուրբ եկեղեցւոյ և ժողովրդեան Աստուծոյ,,: - 276. Իսկ Փիլոն ասէ՝ զոսկերսն Ադամայ, ի պատիւ խնամոց, իբրև հօր հասարակաց՝ առեալ Սէմայ եդ ի տապանի անդ. – 32.

ՀԱՍԱՐԱԿԵԼ - և բայացեալքն եթէ գազանք և եթէ թռչունք, յորժամ զգան զջերմութիւն օդոյն ի հասարակել տունջեան և գիշերոյ՝ ի գարնանային եղանակի ելեալք յիւրաքանչիւր կայենից. – 188.

ՀԱՍԵԱԼ - Եւ հասեալ Շաւասպայ Արծրունւոյ ամբարշտի յԱրտաշատ հանդերձ մարզպանաւն՝ շինեն ի դուռն քաղաքին զորմզդական մեհեանն, /124/ և զկրակապաշտութեան մոլութիւն բորբոքեն ի նմա. – 126. ,,արիք երթայք առ զօրավարն, տեսէք հաւաստի, և ի վերայ հասեալ գիտասցուք, թէ ի՞ւ իւիք կարասցուք հաճել զմիտս նորա ի խաղաղութիւն,,: - 214. ,,ընդէ՞ր որպէս մանուկ տղայ համարիս, արկանել առաջի իմ զպատրանս, սնոտի, առասպելաբան, խաբեբայ և պատիր յոյս խոստանալով ինձ՝ հանել զիս ի ճշմարիտ յուսոյն, զոր ի մանկութենէ ի վերայ հասեալ ճշմարտութեանն,,: - 294. ,,ի սկզբան թագաւորութեան նախնեաց մերոց, յորժամ ետ Աստուած զաթոռ բազում թագաւորաց ի ձեռս նոցա, և մինչ առ մեզ հասեալ՝ ոչ ոք զօրեաց կալ ընդդէմ մեր, ոչ ի հեռաւոր աշխարհաց և ոչ ի մերձաւորաց: - 198. ,,Կաւատ թագաւորն ձեր վախճանեցաւ, և որդի նորա մանուկ տղայ է. բայց արդ ի քեզ հասեալ թագաւորութիւնդ, և ես քեզ տայց զնա – 152. Ազդ եղև քաջին Վահանայ, եթէ զօր բազում առեալ Հազարաւուխտ յընտրելոցն Պարսից և ահաւադիկ հասեալ գայ ի վերայ: - 134. Այլ և ի ժամանակս հասելոց թշնամեաց յերկիրն իւրեանց՝ գան միաբան լեռնայինքն յօգնութիւն իշխանացն, զի են տիրասէրք: - 192. անդ հասեալ քաջացն մերոց եղբարցն երեցունց ազատագունդ սակաւաձեռն գրոխիւ ի ձմեռնային ժամանակի, և ընդ լրթնատեսիլ լուսոյն վազս ի վերայ եդեալ՝ հանին ընդ սուր յոլովս քան թէ սակաւս: - 372. ապա թէ ոչ ի կամս կամաց զայդ առնես՝ ակամայութիւն ի վերայ հասեալ՝ և զոր ունիսդ հարկաւորաբար առնէ քեզ զայդ ևս թողուլ,,: - 330. արդ աւասիկ հասեալ կայ և մնայ քո հրամանի. – 304. արդ ահաւասիկ հասեալ /242/ կամք առաջի քո, ինքնակալ թագաւոր իշխեցող կենաց և մահու. – 244. Բայց երկու ոմանք ի սաղարաց սուրհանդակաց, եղբարք միմեանց, հասեալ ի կիրճս ձորոյն – 202. Բայց հասեալ Բուխայ անց ընդ գետն մեծ զոր Կուրն կոչեն, և յորձանուտ շարժման գարնանային հոսանացն տեղի տուեալ ելանել զօրուն և բնակել շուրջ զքաղաքաւն. – 270. Բայց քանզի յերկնուստ էր հասեալ վտանգն, և աստուածառաք էր բարկութիւնն՝ և ոչ ոք զօրեաց և եկաց ընդդէմ նորա ելանել ի պատերազմ, այլ որ եհարն՝ նոյն և բժշկեաց: - 374. գրէ առ սուրբ եպիսկոպոսն Գրիգոր Ամատունեաց տանն … գտանել զելս իրացն եկեալ հասեալ հինին. – 400. եկեալ հասեալ վրէժխնդրութեան պատիժք, վասն անօրէնութեանց

մերոց զոր գործէաք առ հասարակ ի փոքրկանց մինչև ցմեծամեծս. – 196. եկեալ հասեալ աւուր կորստեան մերձ առ դուրս մեր – 196. երկունք իբրև ծննդկանի ի վերայ իմ հասեալ լինին՝ մատենաւորել զայսր աղետաբեր համբաւուց ցոյցս. – 350. Եւ ասէին այնոքիկ զորոց և բանս է, եթէ ,,ի մասն ինչ լերինն յայնմիկ հասեալք բազումք ի մերոց – 48. և ահա հասեալ կայք յատենի առաջի իմ անտրտում և անտխուր երեսօք, որպէս անմեղս և զբարեգործակս, և լի ամենայն կամարարութեամբ մեր, անխիղճ համարձակութեամբ – 244. Եւ այն ինչ ընդ մտանելն՝ երագապէս հասեալ ի վերայ ամրոցացն Ջղմար և Սրինգ կոչեցեալ՝ յինքն գրաւէ զամրոցսն. և կալեալ զՎասակ՝ յինքն գրաւեաց զզօրավարութիւնն բոլոր Վասպուրական տէրութեանս: - 306. և անտի գնացեալ ի ձորն Ածանայ ի խնդիր փախստէիցն և հասեալ ի յետոյ կողմանցն՝ ի սուր և ի գերութիւն զբազումս ի նոցանէ արկանեն: - 202. և անցանէ ի Շիրակ, և հասեալ ի Դուին՝ աւերէ զնա և զՆախճաւան և զՈրմի – 148. և աշխարհ զրաւ առցէ յասպատակէ թշնամեաց, որ եկեալ հասեալ է յաւեր և յեղծումն: - 216. Եւ առ չժուժեալ այնպիսի վտանգաւոր նեղութեանն, արիաբար հասեալ ի կիրճս ձորոյն և մերկացեալ զսուսերն՝ յարձակեցան ի վերայ երիվարացն – 220. Եւ առ չհանդուրժել այնքան եկեալ հասեալ վտանգաւոր նեղութեանցն, և գազանեղէն զայրացմամբ մրմռեալ յոգի իւր ի վերայ կորստեան սուրբ հաւատոյս և կործանման աշխարհիս Հայոց – 126. և արևն ի վերայ հասեալ սպառազէն զարդուն՝ և մերկ սուսերացն փայլեալ՝ ճառագայթս արեգակնայինս յինքեանց ձգէին շուրջ զլերամբն. – 208. Եւ բարձեալ աշտեայս հանապազակիրս ի պատրաստութիւն գազանացն որ ի մայրիսն որջանան, կամ թշնամեաց ի վերայ հասելոց – 190. և դարձոյց զերեսանակ երիվարին ընդդէմ նորա, և հասեալ ընդդէմ միմեանց՝ դարձան հասին ի բանակն իւրեանց: - 230. Եւ եղև իբրև ննջէր Գագիկ յանհոգս յանկասկածս՝ հասեալ Հասան ի գիշերի սուսերամերկ վառեալ փոքր գնդաւ, մոմեղինօք վառելովք՝ և կապեաց զնա կապանօք երկաթի: - 350. Եւ զկնի այսորիկ, որ է երկրորդ հարուածք այլազգեացն՝ դարձեալ հրաման ետ ելանել ի պատերազմ, և հետամուտ հասեալ առ նոսա. – 282. և ընդ այգն ընդ առաւօտն՝ յՌենայ Յամաց գեօղ և գիշերագնաց հասեալ մինչ ի Տարօնայ կոչեցեալ գետ: - 402. Եւ ի կատարումն ամենայն չարեաց հասեալ՝ ինքն խեղդեալ ի դիւէ սատակեցաւ: - 168. և ի չափ ինչ հասեալ բնակեցաւ առ ումեմն մեծատան ի նոցունց ազգականից. – 158. և ի չափ հասեալ ի տիոց տղայականաց՝ ետուն զդստերս իւրեանց կնութեան մանկանցն: - 98. և իբրև հուր ընդ եղէգն ընթացեալ՝ այնպէս հասեալ ի վերայ մեր իբրև զմարախ, իբրև զջորեակ և իբրև զթրթուր խառնիճաւն /238/ հանդերձ – 240. և իբրև զմի անձն, վառեալ ի զէն և ի սուր և ի ճակատամարտ՝ հասեալ յամուրս՝ տապալէր զզօրութիւն նոցա սրով և աղեղամբ, ի փայլիւն սուսերի և նիզակի և ի գիշերամարտ նահատակութեանց, ըստ նմանութեանն քաջ զօրավարին Իսրայէլի Յեսուայ կամ Գէդէովնի կամ թէ նոյն ինքն նահապետին Աբրահամու, ի վերայ հասեալ Քանանացւոց, զյաւէտ յաղթութեան նահատակութիւն նահատակեալ՝ և դառնայ մեծաւ յաղթութեամբ: - 312. և ինքն վիրաւորեալ սրով մեռանի ի գեօղն Գիւղիկ ի Ճուաշ գաւառի, մարտիրոսական հասեալ նահատակութեան, ի վերայ խաշանցն Քրիստոսի տուեալ զանձն ի մահ: - 402. և խնդրէին տեսանել թէ ո՛րպէս կարասցեն գտանել զելս իրաց վտանգին ի վերայ հասելոյ: - 206. և Հայրակղի հասեալ բանակեցաւ առ դուրս Տիսպոն քաղաքի. – 150. և հասեալ դաւող մահ նորա ի յԱնակայ իւրոյ մերձաւորէ: - 92. և հասեալ առ զօրավարն իւրեանց մեծաւ յաղթութեամբ և բազում աւարաւ: - 282. և հասեալ ի Բագրաւանդ գաւառ ի Զիրաւ գեօղ՝ կամէր անցանել ի թագաւորաբնակ տեղիսն Հայոց: - 106. Եւ հասեալ ի գեօղն Արճուճս՝ մնայր անդէն, և դիտակս թողոյր ի վերայ բլրոցն բարձրաւանդակաց: - 178. Եւ հասեալ ի մի վայր գան հովիտն Կուղան, ուր Գուրգէն բանակ արարեալ /362/ էր ի Կարկինեանս տեղւոջ բազմաձեռն զօրու. – 364. և հասեալ ի վերայ ծառոց ի բարձրաբերձ գագաթունսն տերևաթափ առնիցէ /260/ և ընդարմացուցանէ զզօրութիւն արմատոյն – 262. Եւ հասեալ ի վերայ Հայոց՝ նախ զԱշոտ վտարանդեալ այսր խաղացուսցես – 196. Եւ հասեալ ի վերայ նորա թշնամիքն՝ հարին սրով: - 304. և հասեալ

ի տեղի ապառաժ քուաւոր՝ անդէն զետեղէր և զգրաստն: - 34. Եւ հասեալ կալան զնա և տարան ետուն ի բանտ երկաթից ի քաղաքն Հադամակերտ: - 320. և հասեալ յԱշտիշատ Տարունւոյ ի վկայարանս սրբոյն Յովհաննու և Մկրտչի, և Աթանագինէի վկային – 100. և հնախօսս շարագրական մատեանս և ի բազում վէպս պատմութեանց անցեալ գրեցի, որ ինչ բաւականանալ ձեռնհաս եղէ, սկսեալ յԱդամայ մինչ առ մեզ հասեալ ժամանակացս գիւտ: - 12. և ձմեռնային եղանակն առ դուրս հասեալ կայցէ – 260. Եւ մինչ նոքա դեռ չև հասեալ էին մերձ առ գունդն Հայոց՝ փութացաւ զօրավարն Գուրգէն յղեաց դեսպանս առ Ապուհեշմ և որ ընդ նմա զօրագլուխքն՝ աղաչել ի խաղաղութիւն – 230. և մինչ չև հասեալ առ զօրավարն՝ եհան ընդ առաջ նորա գունդս գունդս վառեալ զինու և ընտրեալ երիվարօք – 288. և մինչև հասեալ առ զօրագլուխսն, այլ ի բացեայ երթայր հեռագոյն ի նոցանէ իբրև յերկու մղոնս – 228. Եւ յարբունս հասելոյ Արտաշէսի՝ երթայ գնայ առ Արտաշէս Պարսից արքայն – 84. Եւ նոյնժամայն հրաման հասեալ յափշտուսփս յոմանս ի գաղտնիս՝ զրաւ առնել կենացն նորա. – 328. և Վահան հասեալ յանկարծուստ ի վերայ նորա, այն ինչ ընդ միտ ածելով ստնանել ինչ Գուրգինայ. –310. Եւ քանզի որպէս ասացաւ՝ ի յերկարագնացս աշխատութեանց երիվարացն և հեծելոցն ծանրութիւն ի տքնութենէն ի վերայ հասելոյ, և տօթն արեգականակէզ տապախառն ջերմութեանն, և թանձր ծարաւոյն պասքեցելոց երիվարացն հանդերձ հեծելովքն – 402. և օգնութիւն հասեալ նոցա յԱստուծոյ՝ ի պարտութիւն մատնեն զայլազգիսն, բազում վէրս ի վերայ եդեալ – 202. Զայսու ժամանակաւ թագաւորեալ Աղէքսանդր Մակեդովնացի տիեզերակալութեամբ երագահաս հասեալ ի վերայ Դարէհի սպանանել զնա. և բառնայ զթագաւորութիւնն Պարսից Արշաւրեան: - 68. զի ահա հասեալ է պատրաստութեամբ Տէր ի վերայ մեր, որպէս գրեաց Մովսէս: - 196. զի ոչ իսկ է կարողութիւն լռութեամբ ծածկել թաքուցանել անյայտ առնել զանհուն և զանբաւ վիշտս աղէտս եկեալ հասեալ մեզ: - 240. Ընդ ժամանակս Հայրակղի կայսեր Հոռոմոց էր հասեալ ի վախճան թագաւորութեանն Պարսից: - 156. Ընդ ժամանակսն ընդ այնոսիկ մինչ ճոխացեալ մեծամեծս փքայր Ջափրմոթոքլ ի վերայ քրիստոնէից, որպէս Սենեքէրիմ նախնին մեր ի վերայ Երուսաղէմի և ժողովրդեանն Իսրայէլի՝ յեղակարծում հասեալ ի վերայ նորա որդին իւր Մոթէին սպան զնա – 318. ի բազում ժամանակաց լեալ թագաւոր նախնեաց մերոց և մինչ առ մեզ հասեալ – 244. ի հօրէ զՍենեքերիմայն և ի մօրէ զՄամգոնեացն, ըստ ծննդաբանութեան գալ հասանել՝ մինչ յորում եմքս հասեալ ժամանակ – 300. ի մօտ առ նոսա հասեալ՝ կարգեցին / 274/ կազմեցին զճակատն և ետուն պատերազմ ընդ զօրացն Ծանարաց. – 276. իբրև զարծուիս կանչելով, իբրև զկորիւն առիւծուց ի վերայ որսոյ հասեալ բեկանէին: - 174. Իբրև զեկուցաւ նմա յոմանց զոր ինչ խորհի վասն նորա Աւշին / 370/ … ելեալ գնաց մեկնեցաւ օգնութեամբ ի վերայ հասեալ գիշերոյն – 372. Իսկ իբրև լուաւ թագաւորն զայս գոյժ աղաղակի հասեալ ի դուռն արքայի՝ մրմռեալ իբրև զառիւծ և իբրև զարջ տարակուսեալ – 180. հասեալ ի վերայ ծառոց մրգաբերաց, կամ ի դիւրաճախելի բոյսս խոտոյ, այնպէս վատնեցին ծախեցին զզօրութիւն մարդկային ազգի ստացուածովք իւրեանց,,: - 240. Հասեալ ի տեղիս յայս ի պատմութիւն Աբգարու թագաւորի Հայոց – 76. Հասեալ կայիք յանդիման մեծազարհին Աստուծոյ: -164. Մանաւանդ /370/ թէ նախախնամող և պահպանական աջն Քրիստոսի հովանաւորեալ առ ապրուստ հրածին կարկտաբեր հասեալ կորստական դիպուածին, օգնութիւն հասեալ յԱստուծոյ՝ քաջասրտագոյնս զնա գործեաց և շութափեալ զնա ի ժանեաց գազանին – 372. մանաւանդ/370/ թէ նախախնամող և պահպանական աջն Քրիստոսի հովանաւորեալ առ ապրուստ հրածին կարկտաբեր հասեալ կորստական դիպուածին, օգնութիւն հասեալ յԱստուծոյ՝ քաջասրտագոյնս զնա գործեաց և շութափեալ զնա ի ժանեաց գազանին – 372. Յանգ հանեալ Պտղոմեանց զժամանակ թագաւորութեանցն, և հասեալ/72/ մինչ ի Կղէոպատրեայ, դուստր Պտղոմէի Դիոնիսի. – 74. Յովսէփ անուն ի Յունաց ազգականութենէ ի ծառայութիւն հասեալ Աւշնի, ներքինի, թողեալ զքրիստոսական պաշտօնն, մոլորութեանն Մահումաթայ հաւատացեալ. – 374. յորոց

վերայ հասեալ եկուլ վիշապաբար զորս և կարաց ի դիմի հարկանել: - 262. Յոքունց կամ թէ բնաւից կարօտանամ իմաստասիրաց գումարից ի մի վայր հասելոց՝ զողբերգականացն ճոխաբանել ճարտասանութիւնս. – 352. նազելով և սիգալով, իբրև զկորիւն առիւծու ճեմէր, անկասկածելի մնալով, առ ոչինչ համարելով զհէնն եկեալ հասեալ, փակեալ շուրջ զնովաւ. – 210. Նորա զերկիր նկատեալ՝ ոչ ունէր նայել ի վեր, կայր կորակնեալ, ոչ ունել ոյժ պնդութեանն, զօրհասն ի վերայ իւր գուշակէր եկեալ հասեալ: - 344. նորա փութանակի հասեալ ի քաղաքն Բերկրի, և միաբանութեամբ քաղաքացուացն ելեալ պատահեն զօրացն ի զօրագլխացն Վասապուրականի ի գեօղն որում Խոզաղբերքն ասեն. – 304. Ոչինչ զանգիտեալ մեր մինչ ցայս վայր, պատմել զվտանգս և զնենգութիւնս եկեալ հասեալ ի վերայ մեր ի թշնամեացն ճշմարտութեանն. – 194. Որ և ի սա հասեալ՝ վախճան եղև թագաւորութեանն Պարսից. զոր յետ սակաւու միոյ ասացուք: - 156. որպէս մարգարէն Յովէլ ողբայ ի վերայ եկեալ հասեալ թշուառութեանն, ասէ – 238. Պտղոմեայ հասեալ ի տէրութիւն ժառանգաւորութեանն՝ փոխանակ իւր կացուցանէ զԱսուդ, տալով ի ձեռս նորա զբոլոր իշխանութիւն Եգիպտոսի և Հնդկաց - 70. սագունակ հասեալ ի վերայ Վասպուրական աշխարհիս պարսկական խուժանն ըստ ազգս ազգս և ըստ քաղաքս քաղաքս ի Մարաց և ի Պարսից, յԵլամացւոց և ի Խուժաստանէ, ի Կրմանայ և ի Մուկանաց, ի Թուրքաստանէ և ի Խորասանայ, և յեղակարծում հասին ի ճուաշն գաւառ – 398. սոցա ի թիկունս հասեալ և հովիւ մի՝ պարսատկաւ քարինս ի վերայ արկանէին. – 202. վասն զի իմ ոչ բերեալ ոյժ առ այսքան եկեալ հասեալ աղետիցս զդամբանականն երգել երգս: - 352. տեղեկացեալ և վասն տոհմին Արծրունեաց և Ռշտունեաց և որք ի նախարարութենէն Մամիկոնէից հասեալ գնացեալ ամրանային ի յամուրսն Տայոց – 98. Բայց մինչդեռ չև առ միմեանս հասեալ Տիգրան և Կիւրոս՝ յղէ Աշդահակ պատարագս Կիւրոսի - 62. և իբրև զմի անձն, վառեալ ի զէն և ի սուր և ի ճակատամարտ՝ հասեալ յամուրս՝ տապալէր զզօրութիւն նոցա սրով և աղեղամբ, ի փայլիւն սուսերի և նիզակի և ի գիշերամարտ նահատակութեանց, ըստ նմանութեանն քաջ զօրավարին Իսրայէլի Յեսուայ կամ Գէդէովնի կամ թէ նոյն ինքն նահապետին Աբրահամու, ի վերայ հասեալ Քանանացւոց, զյաւէտ յաղթութեան նահատակութիւն նահատակեալ՝ և դառնայ մեծաւ յաղթութեամբ: - 312. որ ըստ աճման և սերելոյ նախարարութեանց՝ եկեալ հասեալ ցայս վայր ժամանակի ի թագաւորել Աբգարու և հաւատալ ի Քրիստոս: - 78.

ՀԱՍԵԼՈՑ - Եւ մեծի փորձութեանցն հասելոց լինէր ի վերին հրամանէն հանդարտութիւն. - 404.

ՀԱՍԿ - Եւ իշխանն վառեալ զինքն բազում պատրաստութեամբ զինու և զօրօք ազատակոյտ գնդաւ իւրով, և ամենայն բնակ տերամբք իւրոյ իշխանութեանն, և խոյս առեալ շրջէր զկողմամբքն Մարդոստանի և Ջորոյն հասկոյ -184.

ՀԱՍՈՒ ԼԻՆԵԼ - Եւ զի առ այսոսիկ փոյթ եղև մեզ քննասիրութեամբ լինել հասու և ոչ զանց առնել – 18.

ՀԱՍՈՒՄՆ - բաժանեն զաշխարհս յերիս մասունս. տալով Աշոտի … Իսկ Գագիկ զկողմանս Ռշտունեաց այլովք մօտակացիւք գաւառօք, և որքան իցէ հասումն ուժոյ՝ անդր ևս յաշխարհն Մոկաց: - 360.

ՀԱՍՈՒՑԱՆԵԼ - և փութացոյց վասն նորա զի անյապաղ առ նա հասցէ, և ի մեծ պատիւս հիւպատութեան հասուսցէ զնա, և խաչանշան դրօշիւք ճոխասցի: - 316. ապա հնարաւորեալ պատիր խաբէութեամբ ի կատարումն հասուցանել զխորհրդոյն /346/ զանհաստատ իմացմունսն, և գնաց եմուտ յամրոցն, և զհիւանդութեան կեղծաւորութիւն մերձ առ մահ եղ առաջի: - 348. Արդ ի հասանել նամակիդ՝ փութով զԳուրգէն և զազգատոհմ իւր հանդերձ ազատօքդ Վասպուրականի կապեալս առ մեզ հասուսցես: - 236. Բայց իբրև ետես բռնաւորն զանդառնալի միտսն և զաներկբայութիւն հաւատոցն և զաներկիւղ և զյանդուգն պատասխանիսն և զմեծ անարգութիւնն զոր հասոյց ի վերայ նորա և նոցին օրէնսդրին…բարկացեալ յոյժ հրաման ետ փութով զրաւ առնել կենաց

նորա: - 206. բայց ինքեանք այլոց հասուցանէին տագնապս որպէս ընթեռնուքն – 92. բարիատեացն և չարասէրն Աւշին նիւթէր գայր ի վերայ Գուրգինի հասուցանել չարիս մեծամեծս – 370. և բազում այն են որ ի նմին իսկ սատակին. և կէսքն դիւրըմբռնելի որսորդաց լինին. և ապրեալքն սաստիկս հասուցանեն վտանգս ուր և դիպիցին, եթէ մարդկան և եթէ այլոց ինչ կենդանեաց: - 188. և եթէ յերկարիցի գործոյս այսորիկ հանդէս և մարտիցն հանգամանք ոչ փութանակի վարիցին՝ գուցէ օգնականութեամբ գիշերոյ եկեսցէ ի վերայ քո և մեծամեծ աւճիրս ի վերայ քո և զօրացդ արքունի հասուցանիցէ: - 212. և զՀրէայսն որ յաւուրց սրբոյն Գրիգորի հաւատացեալ էին ի Քրիստոս՝ վարեն ի գերութիւն, աւելի վտանգ նոցա քան այլոց Հրէիցն հասուցանելով վասն ի Քրիստոս հաւատոցն: - 104. և թէ նոքա յերիս կամ ի չորս կամ ևս աւելիս բաժանեալ օգնական առնիցեն իւրեանց զամուրսն՝ մեծ աշխատութիւն քեզ հասուցանիցեն, և ամենայն խորհրդոց քոց խափանիչք /212/ գտանիցին – 214. և կարիցես զիշխանս Հայոց կապանօք առ մեզ հասուցանել, մանաւանդ զիշխանն Վասպուրական զԱշոտ՝ քեզ և զաւակի քում տաց զերկիրն զայն ի ժառանգութիւն: - 184. ոչ ոք այսքան աղէտս տարակուսանս հասոյց ի վերայ մեր և ի վերայ ազգի և զօրաց և զօրավարաց մերոց, որչափ գործեաց Աշոտ իշխան Վասպուրական: - 198. և որ ի նմա են կենդան իքն՝ զնոյն առ ի վերայ հասուցանէ և նոքօք զպէտս քաղցոյն վճարէ մինչ ի ժամանակս գարնանայինս: - 262. և տարեալ հասուցանէր ի սուրբ քաղաքն Երուսաղէմ: - 154. զի զԱշոտ և զեղբարսն իւր փութով առ մեզ հասուսցես: - 236. զի ուր և իցէ՝ ածցեն զնա առ նա, թէ՛ պատիր խաբէութեամբ և խորամանկ կեղծաւորութեամբ և խարդախութեամբ, կամ պատերազմաւ և մեծամեծ զօրութեամբ, ամենայն պատրաստութեամբ, արքունի կարողութեամբ, որպէս զիարդ և կարասցեն՝ առ նա հասուցանեն: - 224. զիշխանս և զտեարս կողմնակալս և զկուսակալս աշխարհին, զազատս և զազատորդիս փութով առ մեզ հասուսջիք կապանօք – 198. Զկնի այսորիկ յառաջ խաղացեալ Ահմաթ և որ ընդ նմա կայսկազենիցն գունդք, երթեալ մտանել ի քաղաքն Դուին, թերևս կարասցէ ի կատարումն՝ զոր ինչ խորհեցան՝ հասուցանել զչարիսն: - 344. զոր ատել արժան էր և չար ի չարի վերայ, թէ հնար էր՝ հասուցանել. – 112. Իսկ սպառնալիք քո և չարչարանք, զոր ասես ի վերայ իմ հասուցանել՝ խաղ մանկտոյ կամ զառանցելոց թուի յաչս իմ, և բանք քո նոյնպէս, որպէս առն անմտի և խելագար և ցնորեալ ծերոյ,,: - 290. Իսկ զԱհմատ ընդ Վասպուրական աշխարհին անցանել գնալ՝ ելեալ զհետ նորա Շապուհ որդի Աշոտի, մինչ տանել հասուցանել զնա ի մուտս Ասորեստանեայց ճանապարհին: - 346. Շապուհ արքայ թագաւորեալ՝ բազում և անչափ չարիս հասուցանէր ի վերայ Հայոց աշխարհիս և Ասորեստանեայց և Պաղեստինացւոց – 104. որոյ ջրմուղ կազմեալ ածեալ հասուցանէ ի մէջ հովտին: - 88. սա այն է, որ մինչ յելանելն Բուխայի ի սկզբանն մտանելոյ նորա ի Հայս՝ եկաց ընդդէմ նորա բնակչօք լերինն և հարուածս մեծամեծս հասոյց ի վերայ զօրացն արքունի. – 294.

ՀԱՍՈՒՑԵԱԼ - Եւ զի էր պաշարել նորա յայնժամ զքաղաքն Մանազկերտ Ապահունեաց աշխարհին, որ ի ձեռս Ապլբառայն էր, և ածեալ հասուցեալ մերձ ի պաշարումն. և ի հասանել գուժկանացն եթող զնոսա, տալով նոցա հրովարտակս ի խաղաղութիւն: - 348. որ յետ հաւատոցն որ ի Քրիստոս բազում ուղղութեամբ և երկիւղածութեամբ կրօնս ըստ արժանի հաւատոյն ցուցեալ, գրէթէ ի ծայրս առաքինութեան զաճումն հաւատոցն տարեալ հասուցեալ, որ ինչ յորդորումն աւետարանական վարժիցն ունին դաստիարակութեան ցոյցք: - 78.

ՀԱՍՏ - և վահան ի թիկունս եդեալ ի բոլոր սրտէ զհաւատս անբիծս, և համբարձեալք զձեռս իւրեանց յերկինս իբրև զաղեղն հաստ – 252.

ՀԱՍՏԱՁԻԳ - որ տեղասցեն ի վերայ ձեր նետս երկաթեղէնս և շուառունս մուխս պաղաւատիկք սլաքովք և հաստաձիգք աղեղանց և կռուիք բազմադիմիք՝ որչափ Խոսրովայ և ձեզ պիտոյ իցէ,,: - 138.

ՀԱՍՏԱՏԱԳՈՅՆ - Եւ ի մեռանելն իւրում Աղէքսանդրու հաստատագոյն աներկիւղութեամբ զթագաւորութիւնն իւր միապետեալ՝ կացուցանէ չորս զօրավարս չորեքծագեան

կողմանց աշխարհի, զՊտղոմէոս Եգիպտոսի և Հնդկաց, զՍելևկոս Ասիացւոց և ամենայն հիւսիսականաց, զԱնդիպատրոս Պարսից և ամենայն արևելից: - 70. ի ձեռն այնր հաստատագոյնս լինել ի կասկածաւոր պատգամացն – 366. որպէս ընթեռնուք ի բանիբուն գրակարգութեանն Մովսէսի տիեզերահռչակեալ վարդապետի և քերթողի և մերոյ լուսաւորութեանցս հաստատագոյն յօրինողի – 96.

ՀԱՍՏԱՏԵԱԼ - ապա համոզեալ Սահակայ և Սմբատայ այլովքն ևս՝ բարձին ի միջոյ զաղմուկն, և սէր բարեկամութեան ի մէջ երկոցունց հաստատեալ՝ գնացին յիւրաքանչիւր տեղիս: - 332. երդմամբ հաստատեալ ասէ – 214. Եւ զայս ամենայն հաստատեալ եդ օրէնս ազգի իւրում, կոչելով Կուրանս: - 164. և ինքն գնաց ի Միջագետս Ասորոց, զի կալեալ հաստատեսցէ ինքեան զքաղաքսն և զսահմանսն ամենայն, որ առ Խոսրովաւ և առ Մուրկաւ հաստատեալ էր: - 154. և խաղաղասէր բարեկարգութեամբ հաստատեալ յօրինէ զկարգս աշխարհիս նախարարօքն հանդերձ – 96. և խոստացեալ պատարագընկալին՝ ոչ ևս զնոյն հատուցանել երկրի ուխտ յաւիտենական հաստատեալ՝ զաղեղն իմ եդից յամպս, որ է ծիածանդ – 32. Եւ նա ևս քան զևս պնդեալ հաստատեալ կայր ի հաւատս, ի սէր և ի յոյսն Քրիստոսի. – 318. Եւ նորա զայս ամենայն չարիս կատարեալ՝ ևս բազմազոյնս քան զայս հաստատեալ եդ ազգի իւրում օրէնս բազում և այլ չարագործութեամբք. – 164. զի զօրհասն ի վերայ ինքեանց առանց երկբայութեան հաստատեալ տեսանէին: - 312. իսկ որպէս գրեալ հաստատեալ կայ հաւատարմապէս վարդապետացս քաջաբան և լի իմաստութեամբ շարագրածք հրաշափառագոյնք: - 122. Մի ջանասցի քանզի յԱստուծոյ հաստատեալ է, և բառնալ զսա անհնար է, բայց թէ Աստուծոյ այնպէս հաճոյ իցէ՝ կամք Աստուծոյ կատարեսցին: - 144. յորոց ձեռս հաստատեալ կայ մահ և կեանք: - 236. որ ընդ միմեանս երդմամբք հաստատեալ սուրբ Աւետարանաւն և տէրունական նշանաւն – 174.

ՀԱՍՏԱՏԵԼ/ԻԼ/ - զի յորմէ սակաւ մի կասկածս ունէր՝ անտի ևս աներկիւղ հաստատեցան: - 238. ,,Թագաւոր մեծ, իշխան ծովու և ցամաքի, տո՛ւր ինձ զօր յօգնականութիւն և հաստատեա՛ զիս ի տեղի թագաւորութեան հարց իմոց – 136. առնու զնա Սահակ կնութեան հրամանաւ Արտաշէսի, և կնքեալ աշխարհն հաստատէ Սահակայ ի սեպհական ժառանգութիւն. – 90. Եւ Գուրգէն երկրորդ հրեշտակս յղէ առ նա զայս օրինակ, եթէ ,,ընդ իս հաստատեա զանզրաւ կապակցութիւն ուխտի խաղաղութեան. և ես ապստամբեցայց յԱշոտէ, և ի միասին բաժանեալ զերկիրս կեցցուք յապահովս,,: - 316. Եւ գրել Դերանիկն առ որդին Հալթի հաստատել զնա իշխան իւրով հրամանաւ. – 342. և դարձեալ հաստատէ զթագաւորութիւն Հայոց – 58. և եկեալ մտեալ յաշխարհս Հայոց աներկիւղ համարձակութեամբ, խորհեալ խորհուրդ զոր ոչ կարաց հաստատել: - 106. և եղբայր Մեհուժան Արծրունի յղէ դեսպան առ Շապուհ զնոյն խորհուրդ հաստատել: - 108. և երկից և երից և բազում անգամ զնոյն հաստատեցին երդմամբ, զի անվեհեր համարձակութեամբ եկեսցէ առ նոսա. – 226. Եւ թէ հաստատել ոք կամեսցի՝ անսասանելի կացցէ նա յայսմ աշխարհիս. ամէն: - 356. և ինքն գնաց ի Միջագետս Ասորոց, զի կալեալ հաստատեսցէ ինքեան զքաղաքսն և զսահմանսն ամենայն, որ առ Խոսրովաւ և առ Մուրկաւ հաստատեալ էր: - 154. Եւ կարգեալ հաստատեաց Հայրակղոս զսուրբ նշանն անդէն ի տեղւոջ իւրում ի սուրբ Գողգոթայ: - 154. ԵՒ ՀԱՍՏԱՏԵԼ ՅԱԹՈՌ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆՆ ՀԱՅՈՑ ՄԵԾԱՑ ՕԳՆԱԿԱՆՈՒԹԵԱՄԲ ԹԱԳԱՒՈՐԻՆ ՅՈՒՆԱՑ - 94. Եւ վասն մնացելոցն որք ի քաղաքին և ի սահմանս նորա՝ ել հրաման յարքունուստ առնել ի վերայ նոցա ողորմութիւն, շինել զքաղաքն և հաստատել զամենեսին յիւրաքանչիւր կարգ: - 142. Եւ քանզի էր Բաբելոն վիճակեալ Սեմա՝ և բռնազբօսութեամբ Նեբրովթ յինքն գրաւէ և հաստատէ անդ զթագաւորութիւնն Եթովպացւոց: - 14. Իսկ Մանիթոպ արքայ Խեփտաղաց ևս յաւելուածով զայսոսիկ հաստատէ. – 48. իսկ մեք աստուածեղէն գրոց հետևեալք՝ ոչ յօտարաց աստի հաստատեմք զճշմարտութիւն, օ՛ն անդր. – 54. Իսկ նախարարացն ընդդիմաբանեալ սրբոյն Սահակայ՝ իբր ոչ զնոցայն հաստատել ախորժակս – 118. Նա և մայր իշխանին Աշոտի, քոյր Սահակայ և Բագարատայ իշխանին Տարաւնոյ… երթեա՛լ ընծայիւք բազմօք յանդիման լինէր

Յովսէփայն և խնդրէր զհաշտութիւն և զխաղաղութիւն հաստատել առ որդիսն իւր և առ բոլոր աշխարհին Վասպուրական: - 186. Եւ հաստատեցաւ Խոսրով յաթոռ թագաւորութեան, և զխոստացեալսն կայսեր՝ կատարեաց. – 140. Եւ Կաւատ արքայ հաստատեցաւ յաթոռ թագաւորութեան և արար խաղաղութիւն մեծ ընդ կայսեր և ընդ ամենայն երկիր իշխանութեան իւրոյ: - 152. Բայց չարեացն այսորիկ հաւատարմութիւն յայտ եղեալ հաստատեցաւ ի վերայ Կայսկին Ապլբառայ: - 342. Եւ զգանձդ Արեաց թագաւորութեան այնչափ արձակեցից՝ մինչև շատ լիցի ասել ձեզ, և բազմութիւն զօրաց՝ որքան և պիտոյ իցէ ձեզ, մինչև ձեր թագաւորութիւնն հաստատեսցի,,: - 138.

ՀԱՍՏԱՏՆԱԳՈՅՆ - Բայց Մուսէ ոչ հաստատնագոյնս վասն Աշոտի զխոստմանն բերելով յանձնառութիւն արձակել զնա յիւր իշխանութիւնն – 330. Իսկ Հասան ըստ յանձնառութեանն գնաց մեկնեցաւ ի Դերանկէն, եմուտ առ Գագիկ յամուրն և զտրտունջն զԴերանկէն հաւատարմացոյց առաջի Գագկայ, որ դիւրաւ առ հաւատալն հաստատնագոյն երևէր. – 350. Ես իսկ առ ընթեր գոլով անվրիպագոյն իրազեկ եղէ բովանդակ նորա հաստատնագոյն առ յոյսն կազմեալ փրկութիւն. – 388. իսկ իբրև եկն Ապումրուան զհետ փախստէիցն ի Վանտոսպ զկնի թագաւորին՝ և խորհուրդն Գագկայ հաստատնագոյնք զկատարումն առին: - 368. Նորա խորհեալ հաստատնագոյնս վասն Ապումրուանայ՝ քաջասրտագոյնս լինել ի սպանումն. – 368. Քանզի թէպէտ և տարաժամ լրմամբ ժամանակի չափաբերեալ կենացն Աշոտի՝ հաստատնագոյն և անվրէպ լուծման կենացս առ հոգևորսն և յաւիտենականսն և անվախճան կենացն առաւելութիւնն անցեալ գնացեալ ժամանեաց – 386.

ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ - ո՞վ ահեղական ձայնիցն և սասանման հաստատութեան երկնի և երկրի: - 32. և էր գրեալ ի նմա թողութիւն վնասուցն և հարուածոցն զօրացն և բազում աւարացն, և երդումն ի հաստատութիւն ասացելոցն, և պարգևս ի պատուական և մեծագնի հանդերձից, և սաղաւարտ ծաղկեայ և սուսեր. – 288. Զկնի այսորիկ եկն Աշոտ թագաւորն Հայոց մխիթարել զդուստր իւր և զթոռունս, և ևս առատանայր զհաստատութիւն իշխանութեանն Աշոտի և զոստիկանութիւնն Ապումրուանայ: - 356.

ՀԱՍՏԱՏՈՒՆ - Այլ նոքա քանզի հաստատուն մտօք ունէին զմիաբանութիւն դաւաճան խորհրդոյն որ առ բռնաւորն Տաճկաց՝ ետուն պատասխանի և ասեն – 216. և են հրամանք սոցա իբրև զվէմ հաստատուն. – 356. Եւ զայս լուեալ գիտաց զառ ի նոցանէ հաստատուն նենգագործութիւնն – 216. Եւ ի բազում և քաջ խորհրդոց զայս և եթ հաստատուն խորհուրդ ընտրեցին սինկղիտոսքն, և ասեն ցթագաւորն. – 196. Եւ խնդրէին ի բազումողորմէն Աստուծոյ՝ հանել ի գլուխ զառօրեայ ժամանակս անսայթաք և հաստատուն հաւատովք – 252. զի անսայթաք և աներկբայ հաստատուն հաւատով ընկալցին զվճիռ մարտիրոսական, համբերութեամբ բազմաւ և գոհացողական օրհնութեամբ – 266. թէ գուցէ դրդուիցի ինչ ի միջոցէ ապաստանին վիմին հաստատնոյ – 204. Իսկ թագաւորն գիտացեալ զհաստատուն և զանդրդուելի միտս նոցա՝ ոչ ինչ փոյթ արարեալ թողու ի կամս կամաց իւրեանց, կեալ որպէս հաճոյ թուի: - 132.

ՀԱՏԱՆԵԼ/ԻԼ/ - Այլ ձայն իմն գայր՝ մի՛ ժողովել և մի՛ հատանել, թե ոչ՝ եղիցի անձն այն մեռեալ, և ժանտ ախտիւ սատակեսցի գումարտակդ: - 50. ապա անարգեաց զնա և Կաւատ արքայ, եհատ ի վերայ նորա դատաստան մահու, և հրամայէ արանց մտանել և սպանանել զնա. – 152. ապա հրամայեաց զերկոսին զձեռսն և զերկոսին զոտսն հատանել. - 290. Բայց երանելիս այս Գէորգ … դարձաւ ի դահիճն կոյս պատճառաւ աղաչելութեան՝ տեսանել, թէ ընդէ՞ր ոչ հատանիցէ սուսերն – 266. և ելեալ ի վերայ աշխարհիս՝ յերկուս բաժինս հատին զաշխարհս: - 362. և առեալ դահճին զսուրն՝ եհար զերանելին և եհատ զգլուխ նորա, և նոյնժամայն /գրքում՝ նույնժամայն/ աւանդեաց զոգին ի ձեռս Աստուծոյ: - 294. և առեալ մի ոմն զսուրն՝ եհար զերանելին և եհատ զգլուխ նորա: - 206. և դահճացն հանեալ զսուսերն՝ դիմեցին ի վերայ նոցա իբրև զգազանս արիւնարբուս, և ծեծէին սրովն, իբրև ոք զի հատանիցէ փայտ ի մայրս անտառախիտս հարեալ կացնաւ, և յանխնայ անողորմ յօշէին անդամ անդամ: - 266. Եւ դէտն ազդ արարեալ զօրացն այլազգեաց՝

վառեն և նոքա ընդդէմ նոցա ի պատերազմ, և ի դիմի հարեալ միմեանց և հատանէին յերիս առաջս: - 178. և իջուցեալ ի փայտէն հատին սուսերաւ զգլուխ նորա. – 290. և մատուցեալ զպարանոցն առ դահիճն՝ եհատ զգլուխ նորա – 296. իբրև հարուստ մի մեկնեցան ի գնդէն Պարսից՝ ամբարձեալ Սամուէլ զմիողնին՝ ազդոյ վէրս ի վերայ եդեալ առ ժամայն եհատ զնա ի կենաց. – 106. Յայնժամ բարկացեալ բռնաւորն հրամայեաց նախ զլեզուն հատանել զսրբոյն, զի մի յաճախիցէ առ հասարակ զթագաւորն և զօրէնսդիրն ինքեամբ հանդերձ անարգել. – 290. Եւ հատաւ քուն յաչաց նորա, և ոչ ոք մտանէր և ելանէր առ նա զաւուրս Ժ, զի եմուտ ի սենեակ ամօթալի երեսօք. – 282. զի ի փոնգալոյ նորա կայծակունք հատանին և ընդ ոնգունս նորա ելանէ ծուխ հնոցի կայծականց, որպէս գրեալ է ի Յովբ: - 246.

ՀԱՏԱՊ - Յետ այսորիկ կայ ի գլխաւորութիւն տաճկաց Ամր, որդի Հատապայ ամս Ի և ամիսս Ջ: - 164.

ՀԱՏԵԱԼ - այլ հատեալ զգլուխն ետ տանել յարքունիս և զկինն ա՛ռ իւր Բուխայ կնութեան: - 272. և ազատացն յետուստ կողմանէ սուր ի գործ արկեալ սպանին զնա, և զգլուխ նորա հատեալ առ /368/ բերդայինսն յղէին: - 370. և ինքն Ատոմ հատեալ գնայ ի կողմն Մարաց: - 114. և հատեալ զզօրսն յերկուս առաջս, և հրաման տուեալ ելանել յերկիրն Վասպուրական, ողողել գերել գերփել /200/ զաշխարհն, աւերել և բնաջինջ առնել և մաշել ի սուր սուսերի. – 202. և զկէսն մահու դատապարտեալ, զգլուխս նոցա հատեալ ի փայտի բարձրացուցանէին ի վերայ դրանդեաց պարսպին: - 372.

ՀԱՏՈՒ - և ազուցեալ զոտս պատրաստութեամբ Աւետարանին խաղաղութեան և սուսեր ընդ մէջ ածեալ զբանն Քրիստոսի, որ հատու է քան զամենայն սուր երկսայրի – 252.

ՀԱՏՈՒԱԾ - Եւ գրեաց թուղթ զկնի նախարարացն Շապուհ, լուծանելով զպատճառ հատուածի նոցա. – 110. Իբրև ստուգեաց զազգն, զգաւառն, զաշխարհն, զպատճառ հատուածին, զզետեղելն, զիարդն, զորպէսն, զեղանակն, զդիպուածն, զպատահն և զայլն ամենայն՝ խնդրէ զնա Վաղարշակ յԱրշակայ և առնու ածէ զնա ընդ իւր ի Հայս – 72. որպէս գրեալ աւանդեցաւ մեզ այս ի չորրորդ դրուագի խոստաբանեալ պատմութեանն Մովսէսի Խորենացւոյ, վերադարձութեան ի վերայ երեցունց դրուագեալ հատուածին – 122.

ՀԱՏՈՒԱԾԵԱԼ - մի գուցէ ոչ առնելով իմ զոր խնդրեն՝ առ կայսր հատուածեալ աննկանիցին նախարարքն, հարկել և զինաւորել կայսեր: - 118. որ յառաջագոյն՝ հատուածեալք ի կողմանս Դամասկոսի և Նինուէի – 60. Քանզի Ասիականք արևելից Սեմայ լեալ վիճակ՝ խոյս տուեալ Հայկայ գայ հատուածեալ ի Բէլայ ի Բաբելոնէ յարևելս Ասիական. – 42.

ՀԱՏՈՒԱԾԻԼ - Որով ընթադրեալ զսիրողական երախտիս Արարչին, միանգամայն և զպատուէրն՝ առ սպանողն հատուածեցաւ - 20.

ՀԱՏՈՒՑԱԿԱՆ - զի մի յերկարաձգեալ զդեր հատուցական բանիս՝ յետնեալ գտցուք յառաջիկայ մեզ գրաւորութենէն, որ սակս պատմութեանցն են հանդէպք: - 260.

ՀԱՏՈՒՑԱՆԵԼ - ,,հատուցից չար փոխանակ բարւոյ, ատելութիւն փոխանակ սիրոյ իմոյ,, - 214. Արդ եթէ Սոդոմայեցիքն, որ հրով զվրիժուցն հատուցին փոխարէնս, և դարձեալ տանջելոց են՝ որ բովանդակ չարիւք անդր երթալոց են ո՞րպիսի ակնկալութիւն տանջանաց զանց արասցէ զնոքօք. – 336. արկանել զնա ի կապանս և ի տանջանս մահաբերս, զամուրսն յինքն գրաւել, զաշխարհն տալ ի ձեռս իւրոյ գործավարացն, ըստ պարսկայնոցն հատուցմանց հատուցանել նոցա: - 370. Բայց արդ որպէս յառաջագոյն հատուցի զարտաքոյ պարսաւանաց զիս ներքոյ գրել, վասն ոչ ոճով զսորայս կարգել դնել ի շարի աստ զշարագրածս, վասն ոչ բաւելոյ զանչափութիւնն ի մի վայր գումարել յանմասնաւորաբար նշանակութեամբ – 308. Բայց Գուրգէն թէպէտ և գտանէր զնենգիչսն իւր՝ ոչ ումեք զվոխարէն չարին հատուցանէր. – 310. և բանք սրբոյ Ներսէսի ընդ կենդանի բանին Աստուծոյ խառնեալ՝ դիւրագոյնս զհատուցումն արհամարհողացն հատուցանէր յօրհնութիւնս և յանէծս, անյապաղ զգործն կատարելով. – 100. և դուք զայսքան հատուցումն հատուցանէք ինձ, չիմացեալ ձեր զոր ասաց Դաւիթ – 214. Եւ եղև ի գալ միւսոյ տարւոյն՝ Սմբատ իշխանն Սիւնեաց ի բաց եկաց ի հնազանդութենէ թագաւորին

Հայոց, արգել առնելով հարկացն տալ թագաւորին, թևակոխելով Պարսից բռնաւորին հատուցանել զհարկս և զհասս. 382. և խոստացեալ պատարագընկալին՝ ոչ ևս զնոյն հատուցանել երկրի ուխտ յաւիտենական հաստատեալ՝ զաղեղն իմ եդից յամպս, որ է ծիածանդ – 32. և կատարեալ զաղօթսն և գոհացեալ՝ ետուն զփառս Աստուծոյ և հատուցին զամէնն և նստան ուտել հաց. – 228. և մի զմիոյ հետ ստիպէր՝ փութալ միոյ միոյ ի նոցանէ յանդիման նմա հատուցանել ծառայական սպասաւորութիւնս, զոր և արարին իսկ Աշոտ և Գագիկ և Գուրգէն, կամաւոր և ակամայ զնորայն կատարելով հրամայեալս – 370. զոր ժողովեալ պահեալ և կնքեալ ունէր յօր հատուցման վրիժուց՝ հատուցանել մեզ ըստ գործս մեր, ի հարկանել զքարի զոտս մեր. – 196. զոր արդ այժմ համառօտաբար հատուցից զհարկ պարտեաց շարագրութեանս: - 378. ըստ այնմ և հատուցաւ նմա – 98. Իսկ թշուառականն զատակմանն ընկալաւ զվճիռ, և ի հանդերձելումն զխաչահանուացն հատուցանել զպարտիս: - 378. Խոստացայ վերագոյնն գրել վասն Բուխայի մասնաւորաբար զվրիժուցն հատուցանել զպարտիս, այլ ոչ զբովանդակն: - 326. յաճախագոյնս վասն Գուրգինայ վայելէ զդրուատեացն, կարևոր է բազմաձեռն աճմամբ զդրուատեացն յերկարագոյնս հատուցանել զճարտասանութիւնս. - 300. Չիցէ՞ լուեալ ձեր զոր ասաց Սողոմոն, թէ ,,որ հատուցանէ չար փոխանակ բարւոյ՝ չար ի տանէ նորա մի պակասեսցէ,,: - 214.

ՀԱՏՈՒՑԵԱԼ - որոց սրտի մտօք ի մանկութենէ զհարկ ծառայութեան հատուցեալ էին ըստ օրինի վայելչութեան հնազանդողաց և հնազանդելոց, ըստ յորդորման հեթանոսաց վարդապետին: - 364.

ՀԱՏՈՒՑՈՒՄՆ - այլ նա ըստ կամս իւր կատարեաց ի վերայ իւր զարենապարտն լինել, որ տալոց է հատուցումն վրիժուց յաւուր դատապարտութեան իւրոյ: - 320. արկանել զնա ի կապանս և ի տանջանս մահաբերս, զամուրսն յինքն գրաւել, զաշխարհն տալ ի ձեռս իւրոյ գործավարացն, ըստ պարսկայնոցն հատուցմանց հատուցանել նոցա: - 370. Բայց Դերենիկն կալեալ զնա պահէ ի զգուշութեան, ոչ ինչ ստնանել նմա, բաց ի կապանացն յորս արկեալ էր զնա, ըստ հատուցմանն բարւոյ. առ ձեռն պատրաստ կշռեաց նմա և օրհնեցաւ ի սրբոյն Զաքարիայէ: - 320. և բանք սրբոյ Ներսէսի ընդ կենդանի բանին Աստուծոյ խառնեալ՝ դիւրագոյնս զհատուցումն արհամարհողացն հատուցանէր յօրհնութիւնս և յանէծս, անյապաղ զգործն կատարելով. – 100. և դուք զայսքան հատուցումն հատուցանէք ինձ, չիմացեալ ձեր զոր ասաց Դաւիթ – 214. և նմին հատուցումն ի կարգի որ ասէ, ,,կացո ի վերայ նոցա մեղաւոր, սատանայ կացցէ ընդ աջմէ նորա,, , և որ ինչ ի կարգ սաղմոսիդ է: - 214. զոր ժողովեալ պահեալ և կնքեալ ունէր յօր հատուցման վրիժուց՝ հատուցանել մեզ ըստ գործս մեր, ի հարկանել զքարի զոտս մեր. – 196. իբր ոչ անգիտանալով Աստուծոյ զառ ի նոսայսն լինելոյ, այլ բնաւորեալն բարի անփոփոխ բնութեամբ մնալով ամենայնիւ՝ առ ի չարասէրն զուղիղ հատուցմանն յապաղէր. – 30. կարծէր իւրով զօրութեամբ զօրանալ ի վերայ կործանմանն Հայոց, ի մոռացօնս եղեալ հատուցումն մեղաց մերոց ի ձեռանէ Տեառն, որպէս Իսրայէլին ի հնումն առ Սեդեկեաւ զՆաբուքոդոնոսորայն: - 326. պատմեաց նոցա զհանգամանս տեսլեանն … և դարձեալ զնորոգումն հայրապետութեան և թագաւորութեան ի նոյն զարմէ Արշակունեաց, և զգալուստ նեռինն, և զգալուստն Քրիստոսի, և զհանդերձեալ դատաստանացն, և զհատուցումն իւրաքանչիւր ըստ գործս իւր – 120.

ՀԱՐԱՋԱՏ - Բայց հրաման ետ Դերանիկն Գրիգոր հաբազատի իւրոյ ի նոյն տանէ Արծրունոյ, և կալաւ զնա և եդ ի յամուրսն Սևան. և հրամայեաց Հասանկան քեռորդւոյն իւրոյ՝ պահել զնա յընդարձակի: - 342. Եւ այն ինչ ընդ ջեռնուլն արեգականն, մինչ ագևորեալքն մտանէին զառաջեաւ ամիրային, որպէս որսոյ ինչ պատճառանօք հեծեալ յընտիր երիվարս հանդերձ մերձաւոր հաբազատօք իւրովք և ազատովք յընտրելոցն Վասպուրականի՝ ելեալ մեկնեցաւ իբրև վտաւանս երկուս. – 342. Եւ են գազանաբարոյք, արիւնարբուք, առ ոչինչ համարելով զսպանումն եղբարց հաբազատաց, նա և զանձանց ևս. – 192. ի կոր կործանման կացեալ Խոսրով մեր թագաւոր, և ջանայր առնուլ զվրէժ

մահու հարազատին իւրոյ, թագաւորին Արտաւանայ, զոր և առնէր իսկ – 92. Իսկ ի վերայ բազում հինից եկելոց ի վերայ Գուրգինի և սաստիկ պատերազմացն զոր պատերազմեցաւ յաղթող նահատակութեամբ. ոչ միայն յարտաքին թշնամեացն որ շուրջանակի պաշարէին, բազում այն էր որ ի ներքին ընտանեաց հարազատաց, ազգականաց դրժողաց, ուխտազանցաց, ստոց և ստերդմանց յուզէին աղմուկք: - 308. Որոյ երթեալ առ Շապուհ յիշեցուցանէ նմա զհարազատէն իւրմէ Մեհուժանայ՝ միամիտ և հպատակ /108/ լինիլ արքայի, և զպատերազմացն գործ և զբազում աւարառութիւնս և զգերփանս Հայոց աշխարհիս ի Մեհուժանայ, և զմահն նորա ի ձեռանէ քաջին Սմբատայ Մամիկոնէի- 110. Փութանակի և վաղվաղակի իւրաքանչիւր զօրօք անդր հասանէին … և ի տանէն Բագրատունեաց Թոռնկայ որդի զօրօք իւրովք. ի տոհմէն Ամատունեաց Շապուհ Ը հարազատօք և զօրօք իւրեանց. – 174. Փութանակի և վաղվաղակի իւրաքանչիւր զօրօք անդր հասանէին … ի տոհմէն Գնունեաց Գրիգոր որդի Հազրի Զ այլ ևս հարազատօք և զօրօք իւրեանց. ի տոհմէն Ընտրունեաց Արտաւազդ Է հարազատօք և զօրօք իւրեանց. – 174. Փութանակի և վաղվաղակի իւրաքանչիւր զօրօք անդր հասանէին … ի տոհմէն Գնունեաց Գրիգոր որդի Հազրի Զ այլ ևս հարազատօք և զօրօք իւրեանց. ի տոհմէն Ընտրունեաց Արտաւազդ Է հարազատօք և զօրօք իւրեանց. – 174.

ՀԱՐԱԶԱՏՈՒԹԻՒՆ - Եւ ելեալ գնաց զհետ կոչնականացն ի գութ հարազատութեան, և ի կարծիս սաստիկ հիւանդութեան, թէ մերձ ի մահ անկեալ դնիցի, ըստ ստուգելոյ կոչնականացն: - 348. Իբրև յանդիման եղեն դեսպանքն մեծ /172/ իշխանին Աշոտոյ, և ընթերցաւ զգիր պաղատանացն և զյիշատակարան նախնեացն, և զմերձաւորութիւն հարազատութեանն և զկապակցութիւն ուխտին … համագունդ ժողով առնէր ամենայն աշխարհին և ամենայն նախարարօք Վասպուրական տէրութեանն: -174. Յղէին պատգամս առ որդիսն Իսմայէլի և ցուցանէին զմտերիմ հարազատութիւն, թէ ,,որդիք Աբրահամու եմք մեք և դուք, եղբարք. պարտ է ձեզ գալ յօգնականութիւն մեզ, և առցուք զերկիր ժառանգութեան մերոյ,,: - 156.

ՀԱՐԱՄԱՅ - յորոց աճմամբ յառաջանայ կարգն և գայ հասանէ ի Սենեքերիմ արքայ, առ Եզեկիայիւ Եբրայեցւոցն առաջնորդաւ և առ մերովն Հարամայիւ: - 14.

ՀԱՐԱՄԱՆԻ - այլ համանգամայն ամենայն բարիքս Որմզդի է և լաւք, և չարք և դնք՝ Հարամանւոյն: - 46. եթէ դէպ եղև լինել պատերազմ Որմզդի ընդ Հարամանւոյն. – 46.

ՀԱՐԱԻ - Բայց իշխանն Դերենիկ անգիտացեալ զեղեալսն՝ ի նմին աւուր եկն բազմաձեռն զօրու բանակեցաւ ի հարաւ կողմն բերդին – 332. գալ իջանել յելից ի ստորոտէ լերինն Վարագայ առշեղեալ ի հարաւոյ ի հիւսիսի ի խաղաղ ընդլայնանիստ գոգաձև դաշտականացսն – 392. գտանէ և ի վերագոյն լերինն անդր ի հարաւոյ կողմանէ աղբիւր սակաւաբուղխ – 88. և ետուն ի սուրբ եկեղեցին Դ ագարակս. զվանքն Փշոց և զագարակն Աիավանք, յանդիման եկեղեցւոյն որ ի կղզին, և զքարն Մանակերտ, որ է հանդէպ հարաւոյ կուսէ, և զԲերկրի և այլ բազում տեղիս – 356. և թափառական զվէմս ապաստան արարեալ յանկասկածագոյն տեղիս դարանի ի փոքր վիմամէջս ի կարկառս հովտաձևս հանդէպ հարաւոյ քաղաքաբերդին Վանի, մօտ այն տեղի, յորում բղխէ աղբիւրաբար առ ստորոտով բլրակի միոյ, մօտ յեզր ծովուն – 84. քանզի Քամայ տուաւ ի հօրէն Եգիպտոս և Լիբէաստան և մինչև յարևմուտս հարաւոյ: - 34.

ՀԱՐԱՒԱԿՈՂՄՆ - Իսկ Գուրգինի մարզպանի Հայոց առեալ էր ի բաժնի յելս կոյս և /388/ որ ելանէ ի հարաւակողմն, զԱնձահից ձոր, զԿրճունիս, զԿուղան ովիտ, և զբուն զՄարդաստան գաւառ, զԱրճիշակովիտ. զոտն Առնոյ, զԱղբագ Մեծ և զՓոքր, Ակե, Տամբէր, Տագրեան. Ըռնայ, Զարեհաւան: - 390. Իսկ ի հարաւակողմն կուսէ ի ջրամբար արձանագործ քարեղինէն ճանապարհ աշտիճանեալ /390/ ներքուստ ի վեր մինչ ի կատար անձաւին հեշտալիր զելս և զէջս յօրինեալ, քարագործ աւազամած կրագործութեամբ: - 392.

ՀԱՐԱՒԱՅԻՆ - ,,Բուխայ գլուխ զօրավարաց ընդհանուր Թագաւորութեան Տաճկաց, Ջափր իշխեցող ծովու և ցամաքի, հաւասար և օրէնսդրին մերոյ Մահումաթի, և հաւատարիմ միջնորդ Աստուծոյ և մարդկան, և թագաւոր ընդհանուր ազգաց հարաւային

աթոռակալութեան … Յղեցի զքեզ ելանել ի վերայ երկրիդ Հայոց ամենայն կենդանեաց – 236. և հարաւային ջերմագոյն օդն շնչեաց ի խորագոյն դաշտն քաղաքին Դվնայ – 268. Եւ յորժամ դարձեալ պակասիցէ զօրութիւն ջերմ օդոյ հարաւային հողմոյն /260/… յայնժամ վիշապն նեղի, շտապի, տագնապի բռնութեամբ ուժոյ զօրութեանն – 262. զոր անյապաղ փութով զզօրսն հարաւայինս և հիւսիսայինս տալ ի ձեռս Քսերքսեայ և Արշէզայ որդւոյ նորուն Քսերքսեայ զի փութով անդր հասցեն. – 64. Իսկ ի շնչել հարաւային օդոյն, եռացուցանելով երկրի ի վեր զջերմային զօրութիւնն, զուարթացուցանելով անդնդական բերմամբն զընդարմացեալ արմատս և զբոյսս ի հիւսիսային սառնամանեաց օդոյն շնչելոյ - 188.

ՀԱՐԴԱՐԵԼ - Եւ յառաջեալ առաջոյ զօրուն Կիւրոսի՝ հարդարեն զգործ պատերազմին: - 64.

ՀԱՐԵԱԼ - Բայց Աշոտ, իբրև եհաս ժամ ելիցն իւր յաշխարհէս՝ յանհունս բերեալ զզեղջ և զապաշաւանս յորդահոսան արտասուօք զխոստովանողականն ի դիմի հարեալ միջնորդութիւնն – 336. Բռնն հարեալ սպարապետն զձեռանէ նորա և հանեալ արտաքս, քաջալերելով լինել առանց /344/ երկիւղի. – 346. Դարձեալ բողոք հարեալ, ձեռն զօձիւք արկեալ և զհերս խզեալ, զդէմս կեղեքեալ և ձայնս առեալ կական ողբօք արտասուալից հառաչանօք, վայ ի բերան առեալ և խիղբ – 180. Ես ինքնին աչօք իմովք տեսի զայրն զայն, որ հարեալն էր զնա, և ի նմանէ ստուգեցի վասն նորա: - 190. Եւ /106/ նոյնժամայն հուպ ընդ հուպ ի դիմի հարեալ Մեհուժանայ և կարթակոտոր զասպազինեալ երիվարն արարեալ քաջին Սմբատայ՝ տոռն արկեալ ի պարանոցն Մեհուժանայ ասէ. – 108. և յանկարծակի ի թիկանց կողմանէ յարձակեալ ի վերայ նորա արանց՝ հարեալ սատակեցին զնա: - 154. և նոքա հարեալ սատակեցին զնոսա սրով սուսերի յանխնայ, սպանին և զզօրավարն ի պատերազմին – 150. և Տիգրան առ երագութեան ձեռինն հարեալ նիզակաւ ընդ սրտադուրսն ի բաց կորզէր զթոքակէսն. – 64. Եւ այն ինչ պատահեալ Գուրգէն հարուստ զնդի Վահանայ ի յառուամէջս մուրին՝ ի բազում քան թէ սակաւ սուսերս ծեծեցին զնա, մինչև ոմն Ջուանշէր անուն յետուստ յանկարծ հարեալ վիրաւորեաց զԳուրգէն – 310. և անյապաղ մինչ այս մինչ այն՝ նոցա հարեալ ընկեցեալ ի զօրացն Պարսից գունդ մի հարուստ արք իբրև ՃԽ: - 128. Եւ առ յոյժ յիմարութեանն հարեալ ցանկութեամբ, խլրդենի դիմօք, իբրև զգազան մի կատաղեալ՝ սկսաւ յարձակել ի վերայ աշխարհիս Հայոց. – 170. Եւ առ չանսալն յետուստ կողմանէ Վահան հարեալ ի գաղտնիս զգարշապար երիվարին՝ արար կաղանալ նժոյգ ասպարակողին. – 334. և բազում այն էր որ ի մէնջ հարեալ լինէին, քան թէ մեք հարկանէաք – 194. և դահճացն հանեալ զսուսերն՝ դիմեցին ի վերայ նոցա իբրև զգազանս արիւնարբուս, և ծեծէին սրովն, իբրև ոք զի հատանիցէ փայտ ի մայրս անտառախիտս հարեալ կացնաւ, և յանխնայ անողորմ յօշէին անդամ անդամ: - 266. Եւ դէտն ազդ արարեալ զօրացն այլազգեաց՝ վառեն և նոքա ընդդէմ նոցա ի պատերազմ, և ի դիմի հարեալ միմեանց և հատանէին յերիս առաջս: - 178. և զզօրութիւն աղօթիցն իբրև զնետ ձգեալ ի լայնալիճ աղեղանէ ի նպատակն, հարեալ զկառափն սատանայի դիաթաւալ կացուցեալ յերկիր կործանէր: - 252. և ըստ միոջէքն՝ և հարեալ ի դիմի դաշիկ զօրուն Պարսից. և նոցա թուէր ծաղր առնել: - 136. և իբրև մօտ եղև յափն գետոյն՝ քարշեալ ոմն զլայնալիճն, նստելով ընդ դարիւն, և հարեալ նետիւ ընդ բացատն, և երեսանակալ ձեռնն թուլացեալ. կրկնեալ այլ ոմն ճօճ նիզակաւն ընդ նոյն ակն՝ գետավէժ արարին զԱշխէթն. – 272. և իսկոյն հարեալ զնա այսոյն պղծոյ և ընդ զառիվայր լերինն թաւագլոր խաղաղացուցեալ հարուստ ձգմամբ մինչ ի դաշտավայր տեղին ուր այգեստանքն: - 378. և իւրաքանչիւր այր զախոյեան իւր յերկիր հարեալ՝ և ինքն զկնի միւսոյն ճեպէր: - 232. և Խ արամբք ի դիմի հարեալ հազարի միոյ՝ սպան զբազումս ի նոցանէ զընտրելոցն Յունաց – 302. և հարեալ զպարանոց դահճին՝ ի բաց առ զգլուխ նորա: - 268. և հարեալ ի դիմի Խուրէն՝ հարկանին զօրքն Հերովդի – 78. Եւ մի ոմն մերկանայր զկօշիկս ոտիցն նորա. և հարեալ աքացի զվատ այրն հանդէպ սրտին՝ և սպան զնա: - 304. և միաբան յարտասուս հեղեալ լային, և դառնապէս ողբս յողբս հարեալ անմխիթար սգոյ – 114. և միախուռն յանդուգն յարձակմամբ դիմեցին

ի վերայ այլազգեացն, և ի դիւմի հարեալ միմեանց՝ այր զախոյեան իւր յերկիր կործանէր: - 174. և նախ քան ընդ պատժական տանջանաւոր խոշտանգանօք արկանելն զմեզ՝ բանիւք քո իբրև քարամբք հարեալ զմեզ՝ շտապ տագնապի ի վերայ արկանես թափել զոգիս մեր: - 242. և Նեբրովթայ յանդուգն զօրութեամբ հետամտեալ հրոսակաւ մեռանի ի Հայկայ, հարեալ նետիւ – 42. և վառեալ ի զէն և յասպազէն՝ արձանացան իբրև զմի այր՝ և յանդուգն դիմացուածով խուռն յարձակմամբ հարեալ ի դիւմի, ուր քաջքն այլազգեացն ճակատէին ընդ աջաթև /380/ կողմն. և պատառեցին զգունդն, և պարտեցին զախոյեանսն. – 382. և քաջալերեցան դարձեալ ի վերայ գնդին Հայոց, և հարեալ ի հարուածս մեծամեծս: -304. զի ստուգեալ քննեցին՝ միոյ առն երկուս յինքեանց հարեալ ընկեցեալ էր, թող զվիրաւորսն և զկողոպուտ և զձերբակալսն – 234. Ընդ ժամանակս Պերոզի արքայից արքայի, ոմն յաղանդոյն Նեստորի Բարծումայ անուն, որ ունէր զանուն եպիսկոպոսութեան, զօրեղագոյնս զնեստորական հերձուածոյն բռնի հարեալ, և քսութեամբ զնախարարացն Հայոց առ Պերոզ վարելով՝ բազում օճիրս արիւնհեղութեան գործեաց: - 130. Իբրև խռնեցան ի զօրագլուխ գունդ Լիդէացւոց նետաձգութեամբ ընդ միմեանս հարեալ – 64. Իբրև ստուգեցաւ որ ինչ եղեալն էր՝ փութացան խնդրել ի քաղաքին և ի կիրճս ճանապարհին, յոր կողմ և աճապարեաց ոք, մինչ անցեալ գտին զհարեալն դիւի չարի, զի կայր դեռ կիսամեռ: - 378. Իսկ Ասուդ զհետ Դարէհի ելեալ ի պատերազմ ընդդէմ զօրագլխացն Աղէքսանդրի՝ Հերակղեայ նահատակութեամբն դիւցազնաբար ի դիւմի հարեալ՝ ի բաց նահանջէ զուժեղագոյնս զօրագլխացն Աղէքսանդրի հարուստ ժամ մի, մինչ հիացումն զօրոքն արկեալ՝ տային տեղի փախստէի. – 68. հրեշտակի Աստուծոյ հարեալ ի հարուածս անբժշկականս ըստ օրինի Հերովդիայ ախտակրութեան, տորմեալ խղխղայթմամբ, չարալլուկ ուռուցմամբ զտրորումն առնոյր արիւնալից արիւնապարտ մարմինն գազանեղինին. – 376. յետուստ կողմանէ աճապարեալ Քսերքսէս բռնի հարեալ զդիակաց պղնձակուռ վարապանին Աշդահակայ ի վերայ թիկանցն զգաւակս երիվարին արկեալ – 64. Որ զապիրատ և զլի հնարիւք սատանայական իմաստից, չարահնար խորհրդոց բռնի հարեալ՝ մեծամեծս փքայր փոնքտալով – 200. վահան ի թիկունս եդեալ, նիզակ ի ձեռին ունելով, ի կապարճս աղեղանց ի դիւմի հարեալ զօրացն – 202. Ձաչս ի վեր ամբարձեալ իշխանն Աշոտ՝ ետես զմի ոմն հարեալ ի զօրաց իւրոց. – 174.

ՀԱՐԹ - և ընդ հարթն գնասցուք ճանապարհ, և մի խոտորեսցուք մի յաջ և մի յահեակ. – 256.

ՀԱՐԹԱՅԱՏԱԿ - և թանձրութիւն ձեանն հարթայատակ դիզաւ շուրջ զստորոտով լերինն – 188. տեսանեն զկողմանս արևելից, դաշտ յոյժ մեծանիստ, լայնատարած, հարթայատակ, անվայրապիակ առ ի սահման, անբաւական ի տեսութիւն աչաց, սաստիկ լուսով զարդարեալ ի գիշերի, բազմակերպ երևմամբ – 48.

ՀԱՐԻԻՐ ԵԻ ԵՐԵՍՈՒՆ ԵԻ ՀԻՆԳԵՐՈՐԴ - Եւ ի սորա հարիւր և երեսուն և հինգերորդ ամին վախճանեցաւ նախահայրն Ադամ, կեցեալ ամս ՋԼ. – 26.

ՀԱՐԻՒՐԱՄԵԱՅ - որ առ ժամեայ սպառնացեալ պատուհասիւն ի հարիւրամեայ ձգէր ժամանակս ներողութեամբ: - 28.

ՀԱՐԿ[1] - ,, վնասս և զբեկումն հարկաց արքունի և զկոտորումն զօրաց քոց Աշոտ գործեաց, և նա է պատճառ ամենայն ապստամբութեան Հայոց ի քումմէ թագաւորութենէդ, ասեն, ո՛վ քաջդ և հաւասար աստուածայնոց կարողութեան ինքնակալ, և ընդհանուր իշխեցօղ կենաց և մահու,,: - 180. ,,Ելեր դու յաշխարհս Հայոց հրամանաւ արքունի՝ առնուլ զհարկս արքունի. մի՞թէ /176/ և հրաման ունիս յարքունուստ, գերել գերփել յաւեր դարձուցանել զաշխարհս մեր: -178. Բայց ի գնալ մեծ հազարապետին յարքունիս՝ հաւատաց զվերակացութիւնն աշխարհիս Հայոց և հարկս արքունի ի ձեռս Մուսէի ումեմն որդւոյ Զօրահայի հազարացւոյ – 172. Բայց մեք քանզի ոչ երբէք ստունգանեցաք հրամանի թագաւորին և ոչ խափանիչ գտաք հարկաց արքունի, իբրև զապստամբս և զանհնազանդս և զստահակս ի ծառայութենէ տէրանց – 178. բայց միայն զհարկաց և զայլ հոգաբարձութենէ ծանուցանէ զպատճառ գալստեանն. – 172. Եւ գրեն թուղթ առ

Յամանիկն, եթէ ,,ի մտանելն իմ ի Դուին քաղաք և զհարկս արքունի յիս գրաւել՝ և յանկասկած առեալ զիշխանս Հայոց՝ և եկեսցեն առ իս. – 340. Եւ եղև ի գալ միւսոյ տարոյն՝ Սմբատ իշխանն Սիւնեաց ի բաց եկաց ի հնազանդութենէ թագաւորին Հայոց, արգել առնելով հարկացն տալ թագաւորին, թևակոխելով Պարսից բռնաւորին հատուցանել զհարկս և զհասս. 382. Եւ եղև ի գալ միւսոյ տարոյն՝ Սմբատ իշխանն Սիւնեաց ի բաց եկաց ի հնազանդութենէ թագաւորին Հայոց, արգել առնելով հարկացն տալ թագաւորին, թևակոխելով Պարսից բռնաւորին հատուցանել զհարկս և զհասս. 382. և զազգատոհմ մեր ընդ մեծ նեղութեամբ պաշարէիք և աշխարհի մերոյ աւերիչք գտանէիք և հարկացն եղելոց խափանիչք լինէիք: - 244. և զի թագաւորութիւնն Եբրայեցւոց յերկուս հակառակս բաժանեալ էր՝ հնազանդ իւր արարեալ Փուայ Ասորեստանւոյ առնու հարկս ի Մանասէէ արքայէ հազար տաղանդ արծաթոյ: - 60. և զոր ինչ խնդրիցէ՝ առնիցէ ըստ կամաց նորա, կնքել և տալ նմա գեօղս և ագարակս, և տալ հարկս արքունիս և պատանդս խաղաղութեան: - 210. Եւ զօրաժողով եղեալ Մուսէի պատճառաւ հարկաց արքունի՝ եկն եմուտ յերկիրն Տարաւնոյ, տալ պատերազմ ընդ Բագարատայ: - 172. և կացցէ ինքն և իւրքն ամենեքեան ի հնազանդութեան արքունի, ի հարկս և ի հասս չափոյ սակի արքունական աւանդութեանց: - 226. և հարկացն արքունի կանգնեցան դիւանքն, զի այն Ե ամ բեկեալ հարկք և զաւրք ի յարքունէ Պարսից: - 116. և հարկացն արքունի կանգնեցան դիւանքն, զի այն Ե ամ բեկեալ հարկք և զաւրք ի յարքունէ Պարսից: - 116. և մանաւանդ զի հարկ փութոյ եղև մեզ գիտել զպայազատութիւնս երանաց տիրեցելոց մեր աշխարհի և որ յառաջ քան զնոսա թագաւորք Ասորեստանեայց, որդի /34/ ի հօրէ առեալ մինչև ի Սենեքարիմ արքայ, որ առ Եզեկիայիւ Երուսաղէմի արքայիւ եղեալ ազգապետ տանս Արծրունի: - 36. և մեկնեաց յինքենէ զԱբրահիմ ոմն և յղեաց զնա հազարապետ Հայոց, և վերակացու ի վերայ հարկաց արքունի, և տիրել փոխանակ իշխանաց սորա: - 298. և մեք տացուք քեզ զհասս հարկացն և հաճեսցուք զմիտս քո – 178. Եւ մի հարկաց ինչ կամ զօրաց կամ այլ ծառայութեան խափանիչ լինելոյ կամ ի վնասս արքայի խառնելոյ փոյթ արասցուք պահանջել վրէժս. – 196. և նոքա տան տանել նմա զհարկս և հասս արքունի և դարձուցանեն զնա ընդ նոյն ուստի եկն: - 172. զի երկիր ի շինութեան լինելով և ի խաղաղութեան՝ և հարկք արքունի կանգուն երթիցեն: - 186. զի մի սպառ սպուռ տապալիցի զօրութիւն շինուածոյ աշխարհի, ի բաց ընկենլով զծառայական պաշտօնատրութիւն կողմնակալաց, և քաղաքային անհաւատարիմ կամարարողաց, և հարկաց բեկման և զօրաց – 186. զի ոչ դուք նուազիցիք ի սովոյ, և ոչ հարկք արքունի կորնչիցին: - 144. Զի որդիքն Աբդռհամանի, որ Կայսիկքն անուանին՝ ապստամբեալ էին ի պետութենէ թագաւորին տալ հարկս և զինուորել որպէս օրէն էր: - 380. Զնա յղէ Ապուսէթ ելանել յերկիրն Վասպուրական և անդէն մնալ զօրօք բազմօք, մինչև զբովանդակ զհարկս և զհասս արքունի յամենայն կողմանցն Հայոց առ նա բերցեն յիւրաքանչիւր սահմանաց: - 176. զոր ոչ անունկնդիր լեալ ընդունի զհայցելին, առնելով հարկս և պատանդս, և զբերդն Երիկաւ Հաղացովտի, զոր հանեալ էր մանազաւեցոյն ի բերկրացոյն. – 382. Ընդ նոյն ժամանակս յղէ թագաւորն զոմն ի յաւագ նախարարացն վերակացու Հայոց և հաւատարիմ ի վերայ հարկաց արքունի Ապուսէթ անուամբ, ըստ տաճկական լեզուին, յարելութեամբ եբրայական դպրութեանն: - 170. Ի դառնալն Ապուսէթի յԱսորիս և Մուսէի հաւատալ զվերակացութիւն հարկաց արքունի, և ընդդէմ եկեալ յարքունուստ հազարապետ ոմն հարկաց, Ծովափի կոչեցեալ ամիրայ Ալայ անուն: - 176. Իսկ զհարկացն տուրս յարքունիսն Կեսարու՝ ի ձեռն դպրապետին վճարէ առ կայսր. – 96. Կոչէր առ ինքն զիշխանն դիմօք սիրոյ խաղաղութեան, պատճառաւ հարկաց արքունի. – 184. համոզեաց ի մէջ երկոցունց և գլխաւորեաց զխաղաղութիւն /382/ առ նոսա, մինչ գալ Սահակայ եղբօր իշխանին Սիւնեաց, ընդ իւր բերելով զհարկսն:- 384. Նոյնժամայն գնացին Դերանիկն և Գագիկ մտին առաջի Յիսէի, խօսեցան բանս խաղաղութեան, ետուն պատանդս յանձնառութեամբ հարկացն արքունի - 334. սոքա

բնակին յամուրս լեռնականս, յանհոգս խաղաղացեալք յարտաքին թշնամեաց, և հարկք և հասք արքունի ի յինքեանս մնալով – 274.

ՀԱՐԿ[2] - զոր արդ այժմ համառօտաբար հատուցից զհարկ պարտեաց շարագրութեանս: - 378. Զոր հոյակապն Տրդատ կարգադրեալ վայելչապէս հոգաբարձութեամբ զպատերազմականն հարկանել հարկս ընդդէմ հինից արշաւանաց. զոր կարգապետութիւն և առ սուրբ հրեշտակն գտանեմք /գրքում՝ գտանեմք/ յարարչական նախախնամութենէն, զաշխարհի զօգուտն բերելով: - 398. որոց սրտի մտօք ի մանկութենէ զհարկ ծառայութեան հատուցեալ էին ըստ օրինի վայելչութեան հնազանդողաց և հնազանդելոց, ըստ յորդորման հեթանոսաց վարդապետին: - 364.

ՀԱՐԿ[3] - Իսկ Պտղոմէոս նենգութեամբ և հարկանօք կալաւ զԵրուսաղէմ և զՀրէաստան, մինչև ամս ԺԲ: - 70.

ՀԱՐԿԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ - զՊարոյր Հայկազնեայ ապահարկէ ի հարկաբարձութենէ – 58.

ՀԱՐԿԱՆԵԼ - ,,յորժամ զայս նիշ համբոյր մատուցեալ համբուրեցից զնա՝ դուք զազդոյ վէրս ի զօրութիւն նիզակի հարջիք զնա,,: - 352. ,,որչափ սաստիկ պատժոց արժանի համարիցիք զայն, որ զՈրդին Աստուծոյ աղ ոտն եհար և զարիւն նորոյ ուխտին խառնակ համարեցաւ և զՀոգին շնորհաց թշնամանեաց,,: - 258. այլ բազմացան չարիք մեր, զի մեղաք առաջի տեառն Աստուծոյ մերոյ և յետս հարաք զիրաւունս պատուիրանաց նորա – 242. այլ փոխանակ սոցա մատեայ ի տեղիս յայս, ձեռն արկեալ անիմաստաբար լի անհմտութեամբ և անհանճարութեամբ բուռն հարկանելով զմեծ զայս քերթուածութենէն: - 122. Աղ ոտն հարկանելով զխոստացեալ նոցա պարգևսն՝ ասեն. – 250. Բայց երանելիս այս Գէորգ, մինչ կայր ընդդէմ սրոյն և դահիճն ծեծէր իբրև զանզգայ ինչ, և ոչ փոքր մի գիծ կարացեալ հարկանել ի մարմին սրբոյն զխոցումն սրոյն – 266. Բայց քանզի յերկնուստ էր հասեալ վտանգն, և աստուածառաք էր բարկութիւնն՝ և ոչ ոք զօրեաց և եկաց ընդդէմ նորա ելանել ի պատերազմ, այլ որ եհարն՝ նոյն և բժշկեաց: - 374. և Ահմատայ ընդ մէջ փակեալ զղաշիկն՝ յանխնայ հարուածովք հարին, մանաւանդ զհետևակազօր գրոխսն և զգռեահսն որք ընդ նոսա. – 368. Եւ մեկնակազէնքն պատեցին շուրջ զեկեղեցեաւն, և ելեալ առ նա ոմանց ընդ փորուած գմբեթին՝ և եհար մի ոմն աշտէիւն ընդ միջոց թիկանցն՝ և ընդ անթովքն հանեալ ի ներքոյ թոքացն՝ փչեաց զոգին և թաղեցաւ զթաղումն իշոյ: - 190. և առեալ դահճին զսուրն՝ եհար զերանելին և եհատ զգլուխ նորա, և նոյնժամայն /գրքում՝ նույնժամայն/ աւանդեաց զոգին ի ձեռս Աստուծոյ: - 294. և առեալ զնա մտանեն ի մէջ մայրեացն, և ընդ գիրկս մտեալ Շաւասպայ Արծրունւոյ՝ զլայնալիճն լի քարշեալ հարկանէ ի թիկանց ընդ մէջ ողինն զկորովալիր մատանցն զազդոյ շարժումն թռուցեալ թափանցիկ ընդ չարախորհուրդ սրտին միջոցն դիպեցուցանէ. – 100. և առեալ մի ոմն զսուրն՝ եհար զերանելին և եհատ զգլուխ նորա: - 206. և արիաբար հանդիսացեալ զնդին Հայոց՝ ճակատեցան ընդ այլազգիսն հարուստ և ձիգ ժամս և հարին ի հարուածս մեծամեծս զբանակ այլազգեացն: - 306. և գոչէին վիշապաձայն և բեկանէին առիւծաբար և հարկանէին վարազաբար, և մատնեցին ի սատակումն և ի պարտութիւն – 232. և դիմեցին ի մէջ նոցա ի չորս առաջս, ըստ նմանութեան տեառնանման խաչին, և բախեցին զճակատն և պատառեցին զռազմն և դարձուցին ընդ զառ ի վայրն և իջուցին ի լեռնէ անտի, և հարին ի հարուածս մեծամեծս. – 286. և եհար սատակեաց Ապումկդէմ ի միում ասպատակի Ը այր, և զերիվարս նոցա, և զէնս և զզարդ մերկեաց ի նոցանէ, եհար զայլազգիսն ի հարուածս մեծամեծս և ինքն դարձեալ ասպատակեաց զկնի նոցա: - 304. և եհար սատակեաց Ապումկդէմ ի միում ասպատակի Ը այր, և զերիվարս նոցա, և զէնս և զզարդ մերկեաց ի նոցանէ, եհար զայլազգիսն ի հարուածս մեծամեծս և ինքն դարձեալ ասպատակեաց զկնի նոցա: - 304. Եւ եղև այր թանգար արուեստիւ և հմուտ վաճառականութեան. հարկանէր ճանապարհս հեռաւորս ի գործ վաճառականութեանն, յԵգիպտոս և ի կողմանս Պաղեստինացւոց. – 158. և զոր ասէն այսպիսի ինչ է. ,,վա՛յ քեզ, եղո՛ւկ դու երկիրդ Պարսից, յորժամ բազմախուռն գունդք զօրացն Յունաց ի քեզ արշաւանս եդեալ՝ հասանիցեն և հարկանիցեն զքեզ ի սուր սուսերաց, և յառաթուր

սմբակաց: - 148. Եւ ընդ առաւօտն հրամայեաց Հայրակղոս ասպատակս սփռել ի վերայ ամենայն երկրին, և հպարկպանել զամենայն երկիրն սրով սուսերի: - 150. Եւ ի վաղիւ անդր մինչ դեռ արևն ընդ ծայրս հարկանէր՝ կարգեցաւ պատերազմ սաստիկ – 140. և ինքեանք դարձան անդրէն. կարծէին ի սպառ հարկանել զգունդն Հայոց. – 308. Եւ հասեալ ի վերայ նորա թշնամիքն՝ հարին սրով: - 304. և հարին ի հարուածս մեծամեծս զայլազգիսն. – 232. զի ասաց զօրավարն Աղուանից, եթէ ,,մի՛ կարծիցէ ոք զիս ապստամբ գոլ ի թագաւորէն և վասն այնր հարկանել զզօրսդ Ասորեստանի,,. – 286. Զոր հոյակապն Տրդատ կարգադրեալ վայելչապէս հոգաբարձութեամբ զպատերազմականն հարկանել հպարկս ընդդէմ հինից արշաւանաց. զոր կարգապետութիւն և առ սուրբ հրեշտակն գտանեմք /գրքում՝ գտանեմք/ յարարչական նախախնամութենէն, զաշխարհի զօգուտն բերելով: - 398. ըստ այնմ զոր մարգարէն Եսայի ասաց, ,,յաւուր յայնմիկ քրտնն հարկանիցէ այր զեղբօրէ կամ ազգակցէ իւրմէ և ասասցեն՝ լեր մեր իշխան, և կերակուր մեր ընդ քեզ լիցի,,. – 298. Իսկ Ապումուսէ վառեալ և զինեալ զինքն ամենայն զօրութեամբ իւրով՝ խաղաց էջ ի վերայ նոցա և եհար ի հարուածս մեծամեծս – 280. իսկ իբրև ընդդէմ կացին լեռնայնոցն գունդքն Տաճկաց և հարին զլեռնայինսն՝ ձերբակալ արարեալ զերանելին Յովնան տարան ետուն կապանօք ի բանդ արքունի: - 294. իսկ նա առ երագութեան ձեռին ձգեալ զսուսերն՝ եհար զերեսս Ջուանշիրայն, և խլեաց զաչս նորա, և ինքն դարձաւ մեծաւ յաղթութեամբ, եմուտ յամրական տեղիսն: Եւ նոքա յո՛վ և աճապարեցին: - 310. Հարին հալածեցին և ի փախուստ դարձուցին զզօրսն. – 232. հարից զհովիւն և ցրուեցին ոչխարքն. – 238. մինչև զայրանալ դահճացն, և խուռն ի վերայ դիմեալ ի մեծ հրապարակին՝ հարին սրով զերանելին և ի բաց առին զգլուխ նորա – 224. հարկանէր նմա սպասաւորութիւնս միամիտս, արածէր ուղտս և լինէր հրամանատար տանն նորա: -158. Յայնժամ թագաւորն դեսպանս արարեալ յամենայն սահմանս տէրութեան Հայոց, Վրաց և Աղուանից, և առ քաղաքացիսն և հազարապետս և գաւառակալս, և որք սիրողաբար առ նա զինազանդութեանն հպարկ հարկանէին: /ճիշտը՝հարկս հարկանէին/ - 366. Յայնժամ տէր Գուրգէն առ /306/ չժուժել սրտին, մտրակեալ զքաջ երիվարն յորում նստեալն էր՝ և եհար զգունդն զձախակողմն Տաճկաց և պատառեաց զոազմն և դարձոյց զերեսս նոցա- 308. Յաւէտ խրախճանութեամբ քրտնն հարկանել ախորժելի է ինձ զպատմութենէ քաջատոհմիկ և բարեփառ բարեյաղթ նահատակէն , զԳուրգինայ ասեմ – 300. յորոց վերայ հասեալ եկուլ վիշապաբար զորս և կարաց ի դիմի հարկանել: - 262. որոց անուանք քաջութեան իւրեանց հռչակ հարկանէր ընդ ծագս տիեզերաց – 242. որոց անուանք ճանաչի սոցա … և Ներսեհ իշխան Գարիթայանից և ապա Եսայի Ապումուսէ, որ զշատ պատերազմունսն եհար: - 298. Որպէս Պօղոս ուսուցանէ. ,,արհամարհեալ ասէ, ուրուք զօրէնս Մովսէսի՝ մեռանէր, ի բերանոյ Բ կամ Գ վկայիւք. քանի սաստկագոյն համարիմք զայն, որ զորդին Աստուծոյ առ ոտն եհար,, , և որ ի կարգին է: - 380. Վահրամ ոմն Մեհրեւանդակ … այր հզօր զօրութեամբ՝ քաջութեամբ իւրով եհար զզօրս Թետալացւոց – 136. և ահա իբրև արք Ռ ի յընտրելոցն Աղուանից պատահեալ նոցա հարին զնոսա և ածին փախստեայ ի բանակն և ինքեանք դարձան ողջանդամ, և ոչ մի ոք վիրաւորեցաւ. – 282 զի թէ կարացից հարկանել զթշնամին իմ և կանգնել զթագաւորութիւնն իմ՝ ես եղէց քեզ որդի հնազանդութեան - 136.

ՀԱՐԿԱՆԵԼ ԶՔԱՐԻ - զոր ժողովեալ պահեալ և կնքեալ ունէր յօր հատուցման վրիժուց՝ հատուցանել մեզ ըստ գործս մեր, ի հարկանել զքարի զոտս մեր. – 196.

ՀԱՐԿԱՆԻԼ - միթէ դո՞ւ միայն առաջին յաղթեցար և հարար ի թշնամեաց, կամ քո՞ միայն զօրքդ անկան, կամ քո՞ և եթ աւար բաժանեցաւ: - 282. Յայնժամ ձայն բարձեալ Քսերքսէս և Արշէզ լի իմաստութեամբ, որպէս թէ ի զօրացն Լիդէացւոց իցեն, ասեն՝ հարան /64/ զօրքն Կիւրոսի, և փախեաւ արքայն: - 66. դարձեալ յետ փոքր ինչ աւուրց անցանելոյ՝ և խռնեցաւ միւս անգամ պատերազմն, և և՛ս սաստիկ հարան զօրքն արքունի. – 276. և բազում այն էր որ ի մէնջ հարեալ լինէին, քան թէ մեք հարկանէաք – 194. և գրեցին և ծանուցին արքայի՝ զոր ինչ գործեցին և որպէս հարան զօրքն արքունի: - 286. և իբրև

հաբան զօրքն՝ մտրակ ի կուշտ արարեալ երիվարացն՝ նախ նոքա փախեան: - 232. և հաբան զօրքն արքունի և դարձան ի բանակն իւրեանց – 276. և հաբան զօրքն արքունի ի հարուածս մեծամեծս և դարձան փախստական ի բանակն իւրեանց և մտին յապարանսն զոր շինեալ էին. – 282. Եւ հաբան զօրքն Գաղատացւոց, ի մեծամեծաց մինչև ի փոքունս նոցա, և ոչ մնաց ի նոցանէ և ոչ մի: - 66. և հաբան ի հարուածս մեծամեծս զօրք նորա -176. և հաբան սատակեցան պակասեցան զօրքն արքունի ի զօրացն Ծանարաց – 276. և հարեալ ի դիմի Խուրէն՝ հարկանին զօրքն Հերովդի – 78. Եւ յետ աւուր միոյ ընդ մէջ լինելոյ՝ դարձեալ խմբեցաւ պատերազմն, և հաբան զօրքն արքունի. – 276. և որպէս պատմի՝ եղև թիւ պատերազմաց նոցա ԻԸ անգամ, և հաբան զօրքն արքունի յայսքան հանդէսս և ի կռիւ: - 286.

ՀԱՐԿԱՊԱՀԱՆՋ - Իսկ Նինոս և Շամիրամ տիրեն Ասիացւոց և Եգիպտացւոց հարկապահանջ հնազանդութեամբ, այլ ոչ զազգին ի բաց բառնալով զպայազատութիւն աշխարհին: - 18. ,,Թագաւորաց աշխարհակալաց օրէնք են՝ մեծաւ հոգաբարձութեամբ խնամ տանել վասն շինութեան աշխարհի և թեթևացուցանել զլուծ բռնութեան /184/ ծանրակի բեռանց, թուլացուցանելով զաստկութիւն հարկապահանջ խոշտանգանաց – 186. Եւ այնպէս յանհոգս աներկիւղս հարկապահանջ գործակալօք վարէին: - 372. և հարկապահանջք գունդքն ել և ելս առնէին սաստիկ խոշտանգանօք: - 124. Եւ այնպէս յանհոգս աներկիւղս հարկապահանջ գործակալօք վարէին: - 372.

ՀԱՐԿԱՊԱՀԱՆՋՈՒԹԻՒՆ - դառնապէս չարալլուկ չարչարել զքահանայս զպաշտօնեայս նորոց Կտակարանացն, զարս և զկանայս մատնել ի բանդս խոշտանգանս ծանրաբեռն հարկապահանջութեամբ. – 124.

ՀԱՐԿԱՏՈՒ - Այլ և իշխանն Գուրգէն հանապազ գրէր աղաչանս առ ծերսն և առ աւագագոյնսն նոցա, իբրև փորձութիւն և դիպուած համարէր զեղեալսն, և ոչ իսպառ քինահարութեամբ վարիլ առ հարկատուսն և առ հնազանդս իւրեանց: - 404.

ՀԱՐԿԱՏՈՒՈՒԹԻՒՆ - բայց ընդ Յունաց թագաւորին միայն հնազանդութեամբ նուաճեալ զինքեանս, ի բաց կալով ի հարկատուութենէ Շապհոյ արքայից արքայի. - 96.

ՀԱՐԿԱՒՈՐ - Այլ և զայս ևս եղին առաջի թագաւորին աղերսական մեղադրանս, եթէ ընդէ՞ր իբրև ժողովն գումարէր՝ ոչ զոք ի Հայոց հարկաւոր համարեցայք կոչել ի միաբանութիւն հաւատոց: - 132. և զի հաւասարութիւն երից ազգացն, այսինքն որդւոցն Նոյի, կարգաւ կանոնեալ դրոշմեալ կան յոլովից գիրս ոչ է մեզ հարկաւոր զնոյն երկայնաբանութեամբ երկրորդել: - 12. Յերկարագոյնս վասն սորա աճեցուցանել հարկաւոր է զողբերգականացն ճարտասանութիւնս: - 384.

ՀԱՐԿԱՒՈՐԱԲԱՐ - ապա թէ ոչ ի կամս կամաց զայդ առնես՝ ակամայութիւն ի վերայ հասեալ՝ և զոր ունիսդ հարկաւորաբար առնէ քեզ զայդ ևս թողուլ,,: - 330. Եւս առաւել քան զանդնդականն յուզմանցն բռնալիր հողմոցն զծիրանեգոյն ալիսն, զլեռնաձև կուտակսն և զվիշապաձայն գոչմունսն՝ ևս յաւէտ ահագնակի վրդովմամբ զմրրիկ անձանց ի մէջ եռաշարժ ընթացմանցն, ի հոլովմանց խոհարանի իշխանական սրտին ի ներքս հարկաւորաբար բռնազբօսեալ /350/ ձգեն: - 352.

ՀԱՐԿԱՒՈՐՈՒԹԻՒՆ - և մեք զպատմողականն համառօտաբար յառաջ վարեսցուք հարկաւորութիւն: - 302.

ՀԱՐԿԵԼ/ԻԼ/ - զոր ի կարգի իւրում հարկեցայց ցուցանել: - 248. Իսկ զկողմանս արևելից Պարս այնքան ունելով Զրադաշտին՝ յայնմ հետէ ոչ երբէք հարկէր Ասորեստանեայց. – 44. մի գուցէ ոչ առնելով իմ զոր խնդրեն՝ առ կայսր հատուածեալ անկանիցին նախարարքն, հարկել և զինաւորել կայսեր: - 118. որպէս թէ ոչ կամի զթագաւորելն Պարսից և հարկել Հայոց և զօրավարել, այլ զթագաւորելն Յունաց ցանկայ գտանել. – 118. մինչև հարկեցաւ թագաւորն յամենայն ուժով կարողութեան իւրոյ զօրս գումարել յամենայն ազգաց, որ ընդ ձեռամբ իւրոյ տէրութեանն էին հնազանդեալ թագաւորք և թագաւորազունք – 242.

ՀԱՐԿԵՑՈՒՑԱՆՈՂ - և հրաման հարկեցուցանող ճոխութեան քո ստիպէ զմեզ, ճեպել փութալ առ գիւտն հանդիսանալ և կարգել ոճով զփափագելին յայտարարական գրով, դրոշմել կանոնել ի գիրս աստ – 12.

ՀԱՐԿ Է - այլ և ոչ հուր մեկնեալ յամպոյ, ապա թէ ոչ՝ հարկ էր և ի գիշերի երևել. – 32. Եւ վասն այսր ամենայնի հարկ է քեզ երթալ, զի և կարծիք ապստամբութեանդ բարձցի – 216. յերկրորդն հարկ է մեզ զոճն կանոնել, որ յետ Նոյի և անդր ազգացն բաժանմունք յառաջ խաղան, ըստ ցեղից ցեղից ի կարգ անկեալ աշխարհաբաժին ցեղակարգութեամբ. – 12.

ՀԱՐԿ ԼԻՆԻԼ - հարկ եղև ակամայ կարգել դնել առաջի զդէմս անցիցն ըստ իւրաքանչիւր պատահմանց: - 234.

ՀԱՐԿՍ ՀԱՐԿԱՆԵԼ - Յայնժամ թագաւորն դեսպանս արարեալ յամենայն սահմանս տէրութեան Հայոց, Վրաց և Աղուանից, և առ քաղաքացիսն և հազարապետս և գաւառակալս, և որք սիրողաբար առ նա զինազանդութեանն հարկ հարկանէին: /ճիշտը՝ հարկս հարկանէին/ - 366. Զոր հոյակապն Տրդատ կարգադրեալ վայելչապէս հոգաբարձութեամբ զպատերազմականն հարկանել հարկս ընդդէմ հինից արշաւանաց. զոր կարգապետութիւն և առ սուրբ հրեշտակն գտանեմք /գրքում՝ գտանեմք/ յարարչական նախախնամութենէն, զաշխարհի զօգուտն բերելով: - 398.

ՀԱՐՃ - Բայց տիկնայքն և հարճքն և ամենայն որդիքն արքայի և արքունի երիվարացն՝ էին անդէն ի Վեհկաւատ. – 150. և կալան անդ զտիկնայսն ամենայն և զհարճսն և զորդիսն արքայի, և զերիվարսն արքունական, որով եկեալ էր Խոսրով արքայ ի Տիսպոն՝ հանին գաղտաբար ի գիշերի, և արքայ Խոսրով ոչ միոյ իւիք չէր տեղեակ. – 150. քանզի ի ներքս նստելոյ յարքունիս՝ ոչ ոք տեսանէր զնոսա, բայց թէ հարճք և արք կանացիք: - 56.

ՀԱՐՄԱՑԻ - Փութանակի և վաղվաղակի իւրաքանչիւր զօրօք անդր հասանէին … և այլք ի նախարարացն Վասպուրական իշխանին, Սմբատ Ապահունի, Գրիգոր Քաջբերունի, Վահան Հաւնունի, սեպուհն Դաւիթ, Գազրիկն Ապուհարազ, Թոդորոս Վարազն, Խոսրով Վահևունի, Խոսրով Ակէացի, Վարդան Գաբայեղէն, Սմբատ Մարացեան, սեպուհ մի Սահակ, Պատրիկն Անձևացի, Գոդգ Հարմացի, Դաւիթ Գունդսաղար. – 174.

ՀԱՐՈՒԱԾ - ,,և զտանջողացն, ասէ, զճողփիւնն լսէաք, և զհարուածսն եկեալս ի վերայ թիկանցն տեսանէաք – 50. Այլ և սաստիկ հարուածովք սատակեսցէ զքեզ: - 164. այլ կուտեաց եդ ի վերայ Բուխայի զապստամբութեան վնասն և զհարուածս զօրացն – 286. առանց ի տանջանս և ի չարչարանս լի դառն հարուածոց մտանելոյ հաւանեալ մեզ և օրէնսդրին մերոյ Մահումաթայ – 244. Եմուտ այնուհետև տարակուսական խորհուրդ ի մէջ զօրագլխացն վասն հարուածոց զօրացն ի գնդէն Հայոց. – 234. և Ահմատայ ընդ մէջ փակեալ զղաշիկն՝ յանխնայ հարուածովք հարին, մանաւանդ զհետևակազօր գրոխսն և զգռեահսն որք ընդ նոսա. – 368. Եւ առնէր հարուածս մեծամեծս այլազգեացն. և սատակէր զնոսա սրով և աղեղամբ, և եբարձ զամենայն ազգս Տաճկաց, որ բնակեալ էին Վասպուրական տէրութեանն: - 306. և արիաբար հանդիսացեալ գնդին Հայոց՝ ճակատեցան ընդ այլազգիսն հարուստ և ձիգ ժամս և հարին ի հարուածս մեծամեծս զբանակ այլազգեացն: - 306. և դիմեցին ի մէջ նոցա ի չորս առաջս, ըստ նմանութեան տեառնանման խաչին, և բախեցին զճակատն և պատառեցին զռազմն և դարձուցին ընդ զառ ի վայրն և իջուցին ի լեռնէ անտի, և հարին ի հարուածս մեծամեծս. – 286. և եհար սատակեաց Ապումկդէմ ի միում ասպատակի Ը այր, և զերիվարս նոցա, և զէնս և զզարդ մերկեաց ի նոցանէ, եհար զայլազգիսն ի հարուածս մեծամեծս և ինքն դարձեալ ասպատակեաց զկնի նոցա: - 304. Եւ զկնի այսորիկ, որ է երկրորդ հարուածք այլազգեացն՝ դարձեալ հրաման ետ ելանել ի պատերազմ, և հետամուտ հասեալ առ նոսա. – 282. և էր գրեալ ի նմա թողութիւն վնասուցն և հարուածոցն զօրացն և բազում աւարացն, և երդումն ի հաստատութիւն ասացելոցն, և պարգևս ի պատուական և մեծագնի հանդերձից, և սաղաւարտ ծաղկեայ և սուսեր. – 288. և ի մտանելն առաջի զօրավարին՝ ոչինչ փոյթ արարեալ զվնասուցն և զհարուածոց զօրացն, իբրև զապստամբէ ինչ ամբաստանել. – 236. և հարան զօրքն արքունի ի հարուածս մեծամեծս և դարձան

փախստական ի բանակն իւրեանց և մտին յապարանսն զոր շինեալ էին. – 282. և հարան ի հարուածս մեծամեծս զօրք նորա -176. և հարին ի հարուածս մեծամեծս զայլազգիսն. – 232. և քաջալերեցան դարձեալ ի վերայ գնդին Հայոց, և հարեալ ի հարուածս մեծամեծս: - 304. զորոյ լուեալ էր զբազմաց այլ պատերազմացն արիութիւն, և զհարուածս զօրացն Տաճկաց – 316. Իսկ Ապումուսէ վառեալ և զինեալ զինքն ամենայն զօրութեամբ իւրով՝ խաղաց էջ ի վերայ նոցա և եհար ի հարուածս մեծամեծս – 280. հրեշտակի Աստուծոյ հարեալ ի հարուածս անբժշկականս ըստ օրինի Հերովդիայ ախտակրութեան, տորմեալ խղխայթմամբ, չարալլուկ ուռուցմամբ զտրորումն առնոյր արիւնալից արիւնապարտ մարմինն գազանեղինին. – 376. պատրաստ եմք ի կապանս, ի բանտս, ի գանս, ի հուր, ի սուր, ի ջուր, ի տանջանս հարուածոց և յամենայն հնարս չարչարանաց,,: - 246. սա այն է, որ մինչ յելանելն Բուխայի ի սկզբանն մտանելոյ նորա ի Հայս՝ եկաց ընդդէմ նորա բնակչօք լերինն և հարուածս մեծամեծս հասոյց ի վերայ զօրացն արքունի. – 294. Սոյնպէս և այրն այն Յովսէփ զօրավարն Տաճկաց մնայր անցանել ձմերանն, զի ելցէ ի վերայ աշխարհիս Հայոց սրով և գերութեամբ և մեծամեծ հարուածովք և զմեծամեծս աշխարհիս խաղացուցանէ ի գերութիւն – 188.

ՀԱՐՈՒՍ - Գունդ մի հարուստ անցեալ մնացին ի Համբոյրազան աւանի Մարդաստան գաւառի, ուր եպիսկոպոսական աթոռ մարդպետականին յայնժամ փոխեալ դնէր ի Նախճաւան քաղաքէ. – 372. Եւ այն ինչ պատահեալ Գուրգէն հարուստ գնդի Վահանայ ի յառուամէջս մուրին՝ ի բազում քան թէ սակաւ սուսերս ծեծեցին զնա, մինչև ոմն Ջուանշէր անուն յետուստ յանկարծ հարեալ վիրաւորեաց զԳուրգէն – 310. և անյապաղ մինչ այս մինչ այն՝ նոցա հարեալ ընկեցեալ ի զօրացն Պարսից գունդ մի հարուստ արք իբրև ճՀ: - 128. և արիաբար հանդիսացեալ գնդին Հայոց՝ ճակատեցան ընդ այլազգիսն հարուստ և ձիգ ժամս և հարին ի հարուածս մեծամեծս զբանակ այլազգեացն: - 306. և թագաւորն յանկասկածս լինելով՝ փութացան ելին ի բանակէն փախստեայ հարուստ ասպարիսօք: - 380. Եւ ինքն թագաւորն ժողովեալ զօր հարուստ աւելի քան զհազարաց հնգից և քսանից, և եկն անց յայնկոյս գետոյն Երասխայ, և բանակեցան ի տեղւոջն: - 382. և իսկոյն հարեալ զնա այսոյն պղծոյ և ընդ զառիվայր լերինն թաւագլոր խաղաղացուցեալ հարուստ ձգմամբ մինչ ի դաշտավայր տեղին ուր այգեստանքն: -378. և յերկարեալ գործ պատերազմին հարուստ մի ժամ - 64. և ոչ միոյ ումեք կորնչել, բայց ի միջոցէ ումեմնէ, որում /գրքում՝ որուն/ անուն Աշխէթ ճանաչէր, այր պերճ և անուանի ի զօրուն քաջամարտիկ, ունելով ընդ ինքեան գունդ հարուստ /270/ իբրև ծով առելոյ զօրավարաց. – 272. իբրև հարուստ մի մեկնեցան ի գնդէն Պարսից՝ ամբարձեալ Սամուէլ զմիողնին՝ ազդոյ վէրս ի վերայ եդեալ առ ժամայն եհատ զնա ի կենաց. – 106. Իսկ Ասուդ զհետ Դարէհի ելեալ ի պատերազմ ընդդէմ զօրագլխացն Աղէքսանդրի՝ Հերակղեայ նահատակութեամբն դիւցազնաբար ի դիմի հարեալ՝ ի բաց նահանջէ զուժեղագոյնս զօրագլխացն Աղէքսանդրի հարուստ ժամ մի, մինչ հիացումն զօրօքն արկեալ՝ տային տեղի փախստէի. – 68. հարուստ մի հեռի զքարանցն տաշելոյ զհոլովումն բերելով առ տրամադրութիւն կոչարանին իբրև ասպարիսօք երիւք, զբացագոյնն մօտագոյնս գործելով սայլիցն հոլովմամբ. – 396.

ՀԱՐՍԱՆԻՔ - անտրտում խնդութեամբ դիմեցին ի տեղի սպանմանն, իբրև ի հարսանիս երիտասարդական ամուսնութեանն, ուրախ լինել որպէս փեսայ առ հարսին. – 266. Եւ արարին նաւակատիս մեծ հարսանեաց փեսայութեան Դերանկին, ի թուականութեան Հայոց ՅԺԱ-երորդ ամին: - 322. և փոխանակ զգեստու հարսանեաց զգեստ մկրտութեանն ծանուցեալ ցուցին, զոր ջրով և Հոգւովն սրբով զգեցեալ էին – 266. թերևս արտաքոյ տանջանացն կայցեն մնայցեն, թէպէտ և ոչ ընդ փեսային վայելեն ի հարսանիսն: - 338

ՀԱՐՍՆ - անտրտում խնդութեամբ դիմեցին ի տեղի սպանմանն, իբրև ի հարսանիս երիտասարդական ամուսնութեանն, ուրախ լինել որպէս փեսայ առ հարսին. – 266.

ՀԱՐՍՏԱՀԱՐՈՒԹԻՒՆ - զհարստահարութիւնն բացաձգեալ, և զթուղթս առ մի մի յիշխանացն յղել յաճախէր, յոլովագոյն առ իշխանն Աշոտ և առ եղբարս իւր. – 360.

ՀԱՐՍՏԱՅԵՂՑ - անտի և անդ ոչ ոք զօրէր Զրուանայ թագաւորել. բայց միայն կին մի անուանի Դիոնիսեայ, հարստայեղց վավաշոտ հրամանի բարուք. – 16.

ՀԱՐՍՏԱՆԱԼ - Դարձեալ քանզի Մեստրիմ ի Քամայ ըստ բաժանման ազգին և աշխարհին շինէ զԵգիպտոս և անդ հարստանան ազգապետաբար – 18. նա և զմտացն ոչ սակաւ հարստանալ յայտարարական բերմամբ առ հանճարեղութիւնն զուգընթաց բողբոջմամբ կատարելագործէին. – 360.

ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆ - բայց մնայ ի հարստութեան Պտղոմէականն միայն, մինչ տիրել Կղէոպատրեայ կնոջ միոյ եգիպտացւոյ որ յետ բազում ժամանակաց, մինչև յՕգոստոս կայսր: - 72. և ինքն Հազարաւուխտ առնու զընտիրս այրուձիոց, զկորովի պատերազմողս ի վառելոցն պարսկային հարստութենէն, և խաղայ գնայ զկողմամբքն Հաշտենից և Ծոփայ, ի վերայ Վահանայ յանկարծօրէն:- 134. ի կանոնի անդ գտցես զՆինոս և զՇամիրամ և զԱբրահամ և զվեշտասաներորդ հարստութիւն Եգիպտացւոց, և ի չորրորդ դպրութեանն Յուլիանու Աղիկառնացւոյ, որպէս և ի չորրորդ դպրութեանն Մովսէսի: - 18. Իսկ Ասուդ թէպէտ և այնպէս շքեղութեամբ ճոխանայր եգիպտական և հնդկային հարստութեամբն՝ այլ յիշելով զբուն իւր սեփհական թագաւորութիւն Ասորեստանի՝ ոչ հաճոյանայր կեալ եգիպտացի գահակալութեամբն. – 70. Որդին Ապուսեճի Աւշին, որ զպարսկային հարստութիւնն հզօրապէս յաղթութեամբ ի գլուխ եհան՝ ձեռնամուխ ախորժեաց լինել ի վերայ Հայոց – 360.

ՀԱՐՑ - Նաև սրբոց հրեշտակացն ի տեսաւորութիւն ձևացեալ, որոց սարսափմամբ առ նորա զնայեցած յապուշ միտքն կրթեալ, շուրջ փակեալ զնայեցածն՝ ի հարց մատուցեալ ասէ – 386.

ՀԱՐՑԱՆԵԼ - այլ հրամայեսցէ մեզ գրել ի Հայս և հարցանել առաջնորդացն Հայոց, և ընդունել պատասխանիս,,: - 132. Եհարց սաստիւ կամ թէ հրամանաւ տէրութեան իւրոյ, ,,ի բաց լեր, ասէ, ի հաւատոցն Քրիստոսի, և իմ թողեալ քեզ զբազում վնասսն զոր գործեցեր – 290. Եւ եհարց եթէ դո՞ւ իցես Աշոտ. ասէ այո ես եմ. երկրորդեալ և երրորդեալ և զսոյն լուաւ. – 216. Եւ իբրև կացին նոքա առաջի թագաւորին՝ եհարց հեգնական բանիւք եպերելով լի ամբարհաւաճութեամբ – 242. Եւ իմ զհետ երթեալ բանից նորա հարցանէի՝ ո՞ւր ուրեք ասէք լինել զերկիրն զայն անծանօթ. – 48. և հրամայեաց ածել առաջի զկապեալսն, հարցանել և լսել ի նոցանէ: - 242.

ՀԱՐՑԱՓՈՐՁ - զի զկապեալսն յառաջ մատուսցեն ի հանդէս հարցափորձի քննութեան: - 240. մինչ ինքն նստցի յատենի և մուծցէ զնոսա ի դատաստան հարցափորձի և քննութեան վարուցն – 220.

ՀԱՐՑԵԱԼ - Եւ հարցեալ Զրուանն – 46. և հարցեալ և պատասխանեալ սուրբն լի կատարեալ իմաստութեամբ Հոգւովն սրբով՝ զոր անմեկնելի ունէր յինքեան սուրբն. – 104. և հարցեալ վասն որոյ ամբաստանն եղեն զԱրտաշրէ. – 118 և հարցեալ ցնա յաղագս մահուանն Յովսէփու ի վրէժխնդրութեանն աղագս երկրորդ նահատակութեան նորա, որ եկաց ընդդէմ զօրավարին, յուշ առնելով նմա զապստամբութենէ և ընդխառնելոյ նորա ի վնասս արքունի – 294. զի հարցեալ լինէր, թէ ո՞վ ոք, և յորո՞ց, և յումմէ՞, և ե՞րբ, և առ որո՞վք: - 72. հարցեալ ցնա - 24. Քանզի հարցեալ և բռնազբօսեալ զերկոսին գլխաւորին Տաճկաց, անունկնդիր լինելով ասացելոցն, և ի տեսչութենէ Աստուծոյ թողացուցեալ նոցա առանց վտանգից՝ որպէս հաճոյ թուիցի կեալ ի հաւատսն Քրիստոսի համարձակաբար. – 324. քանզի հարցեալ ցնա որք նորին ուղեկից՝ թէ ո՞րպիսի պատճառաւ անկեալ եղեր ի մտաց՝ ասէ – 158.

ՀԱՐՔ - և զօրինակ մահու նորա, և որպէս զմռեալ դի նորա բարձաւ ի գաւառն Հարքայ ի տեսիլ բազմաց: - 42.

ՀԱՑ - և բազում եղեն դիակունք նոցա վասն սովոյ հացի և ծարաւոյ ջրոյս,,: - 184. և զպէտս կերակրոցն վճարեն ի սերմանց ինչ, առաւել ի կորեակ կոչեցեալ սերմանէն, զոր ոմանք ի սով ժամանակի /190/ հաց անուանեն. – 192. և կատարեալ զաղօթսն և զոհացեալ՝ ետուն զփառս Աստուծոյ և հատուցին զամէնն և նստան ուտել հաց. – 228. ճաշակեալ ճաշակս

զհացն կենդանի, և զաղբիւր արեանն կենդանի և կենդանարար որդւոյն Աստուծոյ՝ աւանդեաց զհոգին ի ձեռս սրբոց հրեշտակաց – 388. ճաշակեալ սակաւ ինչ հաց և գինի գոհացաւ, և առ ընտանիս իւր դարձեալ թախանձագին՝ յարուցեալ էջ ի յամրոցացն – 216.

ՀԱՑԻՒՆ - ետ նմա զԱրևաստան զամենայն մինչև ցՄծուին և զերկիրն Հայոց մինչև ցգետն Հուրասդան, և զգաւառն Կոտայից մինչև յաւանն Գառնի յեզր ծովուն Բզնունեաց և մինչև յԱռեստն աւան և զԿոգովիտ գաւառ մինչև զՀացիւն և ցՄակու: - 140.

ՀԱՒ - բովանդակաբար բացայայտել զհաւատարիմն գրել, թէ արդեօք Ասուր, որ զՆինուէ շինեաց, հաւ Նինոսի՞ իցէ ի ծննդոց Սեմայ, ուստի Նեբրովթ, կամ թէ արդեօք ազգն Արծրունեաց Սեմա՞յ սերունդք իցեն, թէ Քամայ ի Նեբրովթայ: - 14. և ժողովեալ իբրև հաւ զձագ ընդ թևովք ի պատճառս պահպանութեան – 214. և ի մատնելն մերում լարօք հնգետասան՝ հաւք երկու պատահեցին մեզ – 50. և ոչ ևս այնուհետև ինչ ոչ տեսանէաք, ոչ հաւ և ոչ գազան, բայց զերկին և զերկիր: - 50. ի հարկէ լուայ աստուածայնոյ սքանչելի ձայնին որ ի հաւուցն ասացեալ եղև„: - 52. միանգամայն խորհէր վրէժխնդիր լինել ազգին Մամիկոնէից վասն սպանման Մեհուժանայ հաւոյն իւրոյ: - 112. յաղագս գոլ զնա սերունդ Վարբակայ Մարի, որ եբարձ զթագաւորութիւնն ի Սարդանապաղեայ, հաւուցն Սենեքերիմանց: - 62. որ ունէին մարդկեղէն երեսս, և մեծ էին քան զհաւսն որ առ մեզ լինին - 50. որ յանուն հաւոյն իւրոյ Սեման անուանեալ էր լեառն: - 16. սա անուանէ զանուն իւր ըստ անուան հաւոյն իւրոյ Սեմայ՝ Սեմիրամ – 16. սա առաւելեաց յամենայն հոգածութիւնս ի գիւտս իմաստութեան ուսումնասիրութեան և այլն ամենայնի՝ քան զհարս և զհաւս իւր: - 334. քանզի բանականն յերիս յայսոսիկ տեսանի, ի հրեշտակս, ի մարդիկ և ի դևս. այլ ոչ ի հաւս կամ ի յայլ կենդանիս: - 52.

ՀԱՒԱՆԱԿԱՆ - Իսկ ոմանք ի պատմագրաց ասեն, թէ և դուստր Նոյի և ճարտարապետ նաւին կնաւ և որդւովք և կարևոր բարեկամօք. (տապանի մեջ են մտել) որ և ինձ հաւանականք այսոքիկ թուին. – 30.

ՀԱՒԱՆԵԱԼ - առանց ի տանջանս և ի չարչարանս լի դառն հարուածոց մտանելոյ հաւանեալ մեզ և օրէնսդրին մերոյ Մահումաթայ – 244. եթէ հաւանեալք արդարոյն և ապաւինեալք ի նա՝ յուսացան ի բան նորա, ծառայել երկիւղիւ հրամայելոցն ի նմանէ՝ զի՞նչ անհաւատ թուի և ի փրկութենէն ընդ նմին վայելել. - 32. Եւ կայսր Մուրիկ հաւանեալ նմա՝ յղէր առ նա զՓիլիպիկոս փեսայ իւր. և տայր տանել նմա գիր ընդունելութեան, և առնոյր ի նմանէ երդումն: - 138. Եւ տային կարծիս պարսկականին՝ որպէս թէ հաւանեալ օրինաց նոցա: - 110. զոր աւանդեցին խաւարայած արևելականքն, Զրադաշտ և Մանիթոպ իւրեանց հաւանելոցն – 52. Եւ հաւանեալ Խոռեմայ՝ եկն առ Հայրակղոս արքայ Յունաց, թողեալ ի նա զԵրուսաղէմ և զԿեսարիայ Պաղեստինացւոց և զամենայն կողմանս Անտիոքացոց և զամենայն քաղաքս գաւառացն այնոցիկ, և զՏարսոն Կիւլիկեցւոց և զմեծ մասն Հայոց և զամենայն զոր միանգամ կամեցաւ Հայրակղոս. – 152.

ՀԱՒԱՆԵՑՈՒՑԱՆԵԼ - Իսկ թագաւորն գրէ առ զօրավարն թերևս կարասցէ հաւանեցուցանել զԳուրգէն՝ երթալ ի թագաւորական քաղաքն առ կայսր, և մեծաց պարգևաց և պատուի և գահու յառաջագութեամբ ընկալցի պարգև ի թագաւորէն: - 302.

ՀԱՒԱՆԵՑՈՒՑԵԱԼ - Ընդ որ ոչ հաճոյացեալ Գուրգէնայ երթալ ի Յոյնս. բայց հաւանեցուցեալ զԳրիգորն տալ զբերդն ցզօրավարն, և հաճեսցի զմիտս թագաւորին: - 302.

ՀԱՒԱՆԻԼ - Եւ բազումք ի նոցանէ հաւանեցան նմա՝ պատգամաւոր Աստուծոյ ասել: - 160. Եւ նոցա ընկալեալ զխնդիրսն՝ հաւանեցան առնել ըստ կամաց նորա, մինչև տեսցեն եթէ զի՞նչ պատասխանի եկեսցէ նոցա յարքայէն իւրեանց, և կամ զօրուն զի՛նչ հրամայեսցէ առնել: - 144. զոր ես ոչ հաւանիմ ասել ի դիւաց. – 50. Յայնժամ իբրև գիտացին երկոքին կողմանքն, եթէ ոչ գոյ հնար գտանել զելս իրացն և տալ խաղաղութիւն՝ ապա հաճեցան և հաւանեցան գրել առ թագաւորն. – 286. որ ոչ հաւանեցաւ մտանել յանմիտ խորհուրդ շինութեան աշտարակին. – 40. „եթէ կամիս կեալ ընդ իս և վայելես ի կեանս աշխարհիս, և ընդունել պարգևս և պատիւս յինէն՝ հաւանեա հրամանի հմոց և ի բաց լեր ի հաւատոց քրիստոնէութեանդ, զոր պաշտես – 294. Իսկ նոքա թէպէտ և հաւանէին՝ այլ էր

և հակառակութիւն մեծ ի մէջ նոցա. քանզի որոշեալ էին պաշտամամբ կռոց ըստ իւրաքանչիւր կամաց: - 156.

ՀԱՒԱՆՈՒԹԻՒՆ - առ որ յղեալ բազում անգամ պէսպէս սպառնալեօք և ողոքական բանիւք հաւանութեամբ թողուլ օրէնս քրիստոնէութեան և հաւասարակցել այլոց ուրացողացն զՔրիստոս. – 318. և անհակառակող հաւանութեամբ հեզահայեաց առ միմեանս սիրոյ յորդորմամբ արտաքոյ վատթարին խոհականաբար մնալով, քաջախորհուրդ առատաբուղխ խաղացմամբ իմաստութեանն զմիմեանս բռնահարելով, զօտարոտին ի բաց վարատելով զբղջախոհութեան անհանճարութիւն՝ զլաւն և զյոյժ օգտակարագոյն ընտրութեամբն գիրկս արկին. – 388. զի և զբազումս պատերազմեալ պէսպէս մարտիւք, և ոչ ինչ կարացեալ ստնանել անմարտնչելի ամրոցացն և քաջութիւն արանցն որ ի նմա՝ ողոքական բանիւք կոչէր ի հաւանութիւն: - 278. զորոյ ձախողակի իմացմունս ծանուցեալ իշխանացն Հայոց՝ միով հաւանութեամբ գրեն յարքունիս և խնդրեն զԱհմաթ /338/ որդի Հալթի. – 340. որք ծանուցեալ զբռնանալն նորա ի վերայ պարսկական պետացն և զինչ կրեցին, զմտաւ ածեալ և զխառն ընդ աշխարհիս զդրակցութիւնն, և թէ գուցէ զպարսկայինն հասանիցէ մեզ կրել և աշխարհիս մեր՝ ձեռն ետուն հաւանութեան ի նորայն կալ մնալ հպատակութեան: - 360.

ՀԱՒԱՍԱՐ - ,, վնասս և զբեկումն հարկաց արքունի և զկոտորումն զօրաց քոց Աշոտ գործեաց, և նա է պատճառ ամենայն ապստամբութեան Հայոց ի քումմէ թագաւորութենէդ, ասեն, ո՛վ քաջդ և հաւասար աստուածայնոց կարողութեան ինքնակալ, և ընդհանուր իշխեցօղ կենաց և մահու,,:- 180. ,,Բուխայ գլուխ զօրավարաց ընդհանուր Թագաւորութեան Տաճկաց, Ջափր իշխեցող ծովու և ցամաքի, հաւասար և օրէնսդրին մերոյ Մահումաթի, և հաւատարիմ միջնորդ Աստուծոյ և մարդկան, և թագաւոր ընդհանուր ազգաց հարաւային աթոռակալութեան … Յղեցի զքեզ ելանել ի վերայ երկրիդ Հայոց ամենայն կենդանեաց – 236. Իսկ զօրավարն խոստացաւ երդմամբ տալ նմա զի՛նչ և խնդրիցէ, մինչև հաւասար իւրոյ տէրութեանն բարձակից և պատուակից կացուսցէ: - 218. քանզի դեռ միաբանք և միախորհուրդք և հաւասարք առ միմեանս բնակէին իշխանք Հայոց ազատագունդք բազմութեամբ և զօրաց նոցա – 194.

ՀԱՒԱՍԱՐԱԿՑԵԼ - առ որ յղեալ բազում անգամ պէսպէս սպառնալեօք և ողոքական բանիւք հաւանութեամբ թողուլ զօրէնս քրիստոնէութեան և հաւասարակցել այլոց ուրացողացն զՔրիստոս. – 318.

ՀԱՒԱՍԱՐԻԼ - ,,մարդ ի պատուի էր և ոչ իմացաւ, հաւասարեաց անասնոց անբանից և նմանեաց նոցա,,: - 22.

ՀԱՒԱՍԱՐՈՒԹԻՒՆ - և զի հաւասարութիւն երից ազգացն, այսինքն որդւոցն Նոյի, կարգաւ կանոնեալ դրոշմեալ կան յոլովից գիրս ոչ է մեզ հարկաւոր զնոյն երկայնաբանութեամբ երկրորդել: - 12. Զուգակշիռ հաւասարութեամբ մարզպանն Հայոց Գուրգէն հրաշազան յօրինուածով շինէ զեկեղեցին ի քաղաքին Հադամակերտ ի Մեծն Աղբակ, ի բուն իշխանական սեփհականութեանն իշխանութեան զարմին Արծրունեաց – 396.

ՀԱՒԱՍՏԱՆԱԼ - Նոյնպէս և զպայման ժամանակացն յանբաւ բիւրս ամաց ձգեն որ ոչ և ըստ միոյ յեղանակի հաւաստանայ առ ի ցուցումն, ոչ արեգական բերմամբ ի նոյն կէտ ամսոց և աւուրց և ոչ ըստ չորից փոխմանց առ ի յեղումն ժամանակի տարւոյն, այլ և ոչ ըստ լուսնական լրութեանն և սուզականութեան: - 18.

ՀԱՒԱՍՏԵԱՒ - այլ և ոչ զմեզ ապստամբս կարծիցես գոլ յինքնակալ թագաւորէն և ի քումմէ ճոխութենէդ, եթէ հաւաստեաւ քննիցես: - 212.

ՀԱՒԱՍՏԻ - ,,արիք երթայք առ զօրավարն, տեսէք հաւաստի, և ի վերայ հասեալ գիտասցուք, թէ ի՞ւ իւիք կարասցուք հաճել զմիտս նորա ի խաղաղութիւն,,: - 214. և ի մեր կար տաժանմամբ ի խոյզ և ի խնդիր ելեալ զհաւաստին գտանել – 12. և յոյժ հաւաստի և ընդունակ գոլ զառ ի բազմաց /244/ վկայութիւն ի վերայ մեծի և կամ փոքու ինչ իրաց կամ ի վերայ կենաց և մահու. – 246.

ՀԱՒԱՍՏԻՔ - Հաւաստիս այս մեզ Եւսեբիոս Կեսարացի, Յուլիանոս Աղիկառնացի՝ ստուգաբանեն զթագաւորս Ասորոց ի զաւակէ Սեմայ զաճմունս առնել, որպէս ի կանոնեալ սահմանէն իմանալ: - 14.

ՀԱՒԱՏ - ,,եթէ կամիս կեալ ընդ իս և վայելես ի կեանս աշխարհիս, և ընդունել պարգևս և պատիւս յինէն՝ հաւանեա հրամանի կամաց իմոց և ի բաց լեր ի հաւատոց քրիստոնէութեանդ, զոր պաշտես – 294. ,,ձայն իմն ահաւոր հրեշտակի անկեալ ի վերայ իմ՝ հրամայեաց երթալ պատգամաւոր յազգն իմ, ցուցանել զԱստուած արարիչ երկնի և երկրի. առնուլ ինձ անուն գլխաւորութեան, և զտութիւն հաւատոց որ ի կուռս՝ յանդիմանել և քակտել,,: - 158. ,,Միայն ի բաց լեր, ասէ, ի հաւատոցն Քրիստոսի, հնազանդեալ ընդ ձեռամբ մեծ թագաւորին – 204. Այլ և զայս ևս եդին առաջի թագաւորին աղերսական մեղադրանս, եթէ ընդէ՞ր իբրև ժողովն գումարէր՝ ոչ զոք ի Հայոց հարկաւոր համարեցայք կոչել ի միաբանութիւն հաւատոց: - 132. այլ ստիպեսցուք զըմբռնեալսն՝ ի բաց կալ ի հաւատոց քրիստոնէութեանն. – 196. աներկիւղ համարձակութեամբ, բանիբուն համառօտութեամբ կարգեցին եդին առաջի բռնաւորին բանս գեղեցկայարմարս յԱստուածաշունչ գրոց վասն ի Քրիստոս հաւատոցն – 250. Ասաց Բագարատ յուրացութեանն իւրում, թէ առ վտանգի նեղութեանցն՝ ուրացութիւնն ոչ ինչ վնասէ, եթէ ի սրտին գաղտնի պահէ զխոստովանութիւնն հաւատոց: - 254. Ասէ, ,,զի՞նչ է նոր հաւատդ, որ այժմ ի քէն երևի. եթէ այլ ևս յաւելցիս ասել՝ անձին քում դու եղիջիր պարտական,,. – 160. Բայց երիցս երանելի ոմն երիտասարդ հասակաւ, ինքն տաճիկ և ազգաւ պարսիկ՝ ելեալ զհետ սիրոյն Քրիստոսի հաւատոցն եկն յարեցաւ ի Պատրիկն Անձևացի – 222. Բայց իբրև ետես բռնաւորն զանդառնալի միտսն և զաներկբայութիւն հաւատոցն և զաներկիւղ և զյանդուգն պատասխանիսն և զմեծ անարգութիւնն զոր հասոյց ի վերայ նորա և նոցին օրէնսդրին…բարկացեալ յոյժ հրաման ետ փութով զրաւ առնել կենաց նորա: - 206. գրէ թուղթ հաւատոց առ Ղևոն կայսր Յունաց, և ընկալեալ ի նմանէ պատասխանիս՝ բազում ինչ ի Կուրանէ անտի իւրեանց արտաքս ընկէց զյոյժ առասպելագոյնն, քանզի ստուգապէս ծանեաւ զզօրութիւնն. – 166. դնէր ուխտս ընդ իշխանս աշխարհիս Հայոց՝ գնալ ըստ արժանի /180/ հաւատոցն Քրիստոսի, զի վկայեսցեն ըստ անուան քրիստոնէութեանն և գործքն: - 182. եթէ կացցես ի նմին յամառութեան ի հաւատդ Յիսուսի որդւոյն Մարիամայ կնոջ հրէի,,: - 294. Եհարց սաստիւ կամ թէ հրամանաւ տէրութեան իւրոյ, ,,ի բաց լեր, ասէ, ի հաւատոցն Քրիստոսի, և իմ թողեալ քեզ զբազում վնասսն զոր գործեցեր – 290. Ետ պատասպանի երանելի Մուկաթլ լի հաւատովք և ճշմարիտ խոստովանութեամբ ի Հայր և յՈրդի և ի Հոգին սուրբ, ասէ. – 290. և խորհեցաւ սա զմիտս զայս, եթէ որ առ վտանգի նեղութեան դարձցի ոք առ ի պաշտօն կռոցն՝ ոչինչ է, եթէ սիրտ իւր ուղիղ պահեսցէ զհաւատսն Քրիստոսի: - 256. և անդ գեղեցիկս և համառօտս անպաճոյճս կարգէր մի ըստ միոջէ զվկայութիւն /204/ հաւատոցն որ ի Քրիստոս – 206. Եւ առ չհանդուրժել այնքան եկեալ հասեալ վտանգաւոր նեղութեանցն, և գազանեղէն զայրացմամբ մրմռեալ յոգի իւր ի վերայ կորստեան սուրբ հաւատոյս և կործանման աշխարհիս Հայոց – 126. Եւ Աւշնի հաւատացեալ զաշխարս ծառայի ումեմն Սափի անուն ի գերելոցն Յունաց ներքինի, թողեալ զհաւատսն որ ի Քրիստոս, մսլիմանակ դեն ստացեալ, արիւնարբու ուսմամբ բնաւորեալ. – 372. և դու ջանաս մոլորեցուցանել զիս ի հաւատէն Քրիստոսի: - 222. Եւ ես զայլովք հայեցեալ բանիւք քամահեալ՝ ուժգնակի կարծիք ի միտս իմ ընթացան առ ի հաւատ ասացելոցս վերջնոյ – 48. և զՀրէայսն որ յաւուրց սրբոյն Գրիգորի հաւատացեալ էին ի Քրիստոս՝ վարեն ի գերութիւն, աւելի վտանգ նոցա քան այլոց Հրէիցն հասուցանելով վասն ի Քրիստոս հաւատոցն: - 104. և ընկա՛լ օրէնս և հաւատս արժանի կենաց և գովութեան ի մեծ արքայէն և ի մեր իշխեցող հրամանակատար թագաւորին հնազանդութենէ: - 204. Եւ խնդրէին ի բազումողորմէն Աստուծոյ՝ հանել ի գլուխ զառօրեայ ժամանակս անսայթաք և հաստատուն հաւատովք – 252. և ծառայեա ճշմարտութեան օրինաց և հաւատոց, զոր ուսաք ի մարգարէէն Մահումաթայ. ապա թէ ոչ՝ զնորին հակառակն ընկալցիս, տանջանս

և մահ, և ելցես ի կենաց աստի չարաչար մահուամբ,,: - 294. և կարծէր յայնժամ ի ձեռն խոշտանգանաց դիւրաւ արկանել զնոսա ի հաղբս կորուսելոցն և մոլորելոցն ի հաւատէն Քրիստոսի: - 264. Եւ մեք հետևեալ Աստուածաչունչ գրոց՝ պահեսցուք անբիծ զհաւատս սրտից, և մաքուր զխոստովանութիւն շրթանց, ըստ սրբոյն Պօղոսի վերաբերեալ զօրինականն – 258. Եւ միջնորդէր նմա հետևել հաւատոյ առաջնոյ Իսրայէլականացն, ,,զի թէ յայս եկեսցես՝ իմով հրամանաւ եղիցիս զօրագլուխ մեծ և առաջնորդ ամենայն տոհմի քո,,: - 158. Եւ յաւէտ հրաշիւք յօրինէր զկարգս սրբոյ եկեղեցւոյ ուղղափառ առաքելական հաւատոց ի տէր Յիսուս Քրիստոս. – 180. և յաւիտենական և անսպառ և անվախճան են կեանքն և պարգևքն, զոր պատրաստեաց Աստուած սիրելեաց իւրոց և որք կան համբերութեամբ ի հաւատս ճշմարտութեանն.– 264. Եւ նա ևս քան զնս պնդեալ հաստատեալ կայր ի հաւատս, ի սէր և ի յոյսն Քրիստոսի. – 318. և ոչ եմ բաւական պատմել զանցս անցիցն կորստականութեանն նոցա մոլորութեան, վրիպել յուղիղ և յամբիծ առաքելաքարոզ դաւանութեան հաւատոց կաթողիկէ եկեղեցւոյ ի Հայր և յՈրդի և ի Հոգին սուրբ. – 240. և որ ինչ ի նմանէ կան պահին պարգևք կացելոյն ի ճշմարտութեան հաւատս, և տանջանք ուրացելոցն և յետս կացելոցն - 206. և վահան ի թիկունս եդեալ ի բոլոր սրտէ զհաւատս անբիծս, և համբարձեալք զձեռս իւրեանց յերկինս իբրև զաղեղն հաստ – 252. ԵԻ ՎԱՍՆ ՀԱՒԱՏՈՑՆ ՈՐ Ի ՔՐԻՍՏՈՍ: - 94. Զայս ևս առաւել քան զսոյնս և բազմապատիկ կարգեցին եղին բանս գեղեցկայարմարս ի Քրիստոս հաւատոցն: - 246. զի այնու դիւրաւ կարասցեն հերքել մերժել ի բաց կալ ի սուրբ հաւատոյ պարկեշտ կրօնից քրիստոնէութեան: - 124. զի աննկեալ էր ի սիրտս նոցա հաւատ սուրբ առաքելոցն – 246. զի անսայթաք և աներկբայ հաստատուն հաւատով ընկալցին զվճիռ մարտիրոսական, համբերութեամբ բազմաւ և գոհացողական օրհնութեամբ – 266. զի կարասցէ անսայթաք հաւատով յաղթել հնարից բանսարկուին, որ ի ծածուկ և յայտնի պատերազմին – 206. զշրթունս մեր մաքրեսցուք ի մաքուր խոստովանութիւն հպելով և զմիտս մեր սուրբ պահելով ի հաւատս ճշմարիտս. – 256. ընկալջիք հաւատս և օրէնս աստուածատուրս հեռի ի ստութենէ և լի որ ինչ ընդդէմ ստութեան է – 244. թէ ,,մերձ է բան ի բերան քո և ի սրտի քում, այսինքն է բան հաւատոյ զոր քարոզեմք,, - 258. Իսկ կատարելագոյնքն և ծերքն ի նոցանէ սպուժէին առ այս, և մանաւանդ որք հաւատարիմքն կոչէին ըստ հաւատոյն նոցա որք Կուռայքն անուանէին – 404. կոչեաց զերիցունսն նորոյ կտակիս, զեպիսկոպոսս և զքահանայս, առաջի արկեալ զհաւատոցն կատարելաբանութիւն, զմկրտութեանն լուսաւորութիւն. զառեկելոցն յապաշխարութիւն, զյոյսն յետ վախճանին, զմարդասիրելն Քրիստոսի - 386. համառել պնդել ի հաւատսն Քրիստոսի զոր պաշտեաղ, և ի ձեռն չարաչար տանջանաց ելանել ի կենաց աստի – 290. միայն յայս բան բովանդակեալ ասէ, ,,որք հաւատով պարտեցին զթագաւորութիւնն,,: - 302. միանգամայն սաստկացուցանէր ի վերայ նորա զահարկութիւնն, զի գոնեայ այնու կարասցէ արդեօք վրիպեցուցանել ի ճշմարիտ հաւատոցն որ ի Հայր և յՈրդի և ի Հոգին սուրբ. – 294. յուսացեալ ի մարդասիրութիւնն Քրիստոսի, զմաքսաւորին և զաւազակին զետնորդսն բարբառեալ, և զփրկական մարմին և արիւն որդւոյն Աստուծոյ հայցեալ հաւատով ի թողութիւն մեղաց, յուսացեալ ի քաղցրութիւնն Աստուծոյ: - 336. Նախ յառաջ ախորժական թուէր Գագկայ անուանել զեկեղեցին փրկչական անուանակոչութեամբն մակաձայնել ոչ ուղղակի առ հաւատն մատուցեալ – 394. նոյնպէս և տանջանքն նմին նման յաւիտենականք և մշտնջենաւորք յանսպառ յաւիտեանս և յանմահ խոշտանգանս՝ պղծոցն և ուրացողացն ի սուրբ և յանբիծ հաւատոց քրիստոնէութեանն. – 264. Նոքա պատասխանեալ ասեն. ,,վասն զի մեք ի պարսկական հինից անդուլ և անպարապ գոլով ի բաց լքաք զկրթութիւնն գրոց սրբոց՝ առ ընտրել զհաւատոց խոստովանութեան կանոնադրութիւն. – 132. որ ի վերայ եկեղեցեաց Քրիստոսի և սուրբ ուղղափառ հաւատոյ արեամբ չափ ճգնեալ նահատակեցան, և զխոստովանողական անուն ձայն ի վերայ եղեալ կարդային: - 132. որ յետ հաւատոցն որ ի Քրիստոս բազում ուղղութեամբ և երկիւղածութեամբ կրօնս ըստ արժանի հաւատոյն ցուցեալ, գրէթէ ի ծայրս

առաքինութեան զաճումն հաւատոցն տարեալ հասուցեալ, որ ինչ յորդորումն աւետարանական վարժիցն ունին դաստիարակութեան ցոյցք: - 78. որ յետ հաւատոցն որ ի Քրիստոս բազում ուղղութեամբ և երկիւղածութեամբ կրօնս ըստ արժանի հաւատոյն ցուցեալ, գրէթէ ի ծայրս առաքինութեան զաճումն հաւատոցն տարեալ հասուցեալ, որ ինչ յորդորումն աւետարանական վարժիցն ունին դաստիարակութեան ցոյցք: - 78. որ յետ հաւատոցն որ ի Քրիստոս բազում ուղղութեամբ և երկիւղածութեամբ կրօնս ըստ արժանի հաւատոյն ցուցեալ, գրէթէ ի ծայրս առաքինութեան զաճումն հաւատոցն տարեալ հասուցեալ, որ ինչ յորդորումն աւետարանական վարժիցն ունին դաստիարակութեան ցոյցք: - 78. որ ոչ եղև ժառանգորդ հայրենեաց հաւատոցն որ ի Քրիստոս. – 80. Որկեն և եղեցանն առ նորա բերեալ բացայայտ ի խորհուրդ տապանին, ի Փռիւգացւոց ապարասանութենէ ի մեզ ճախրեալ ապրուստն. ի տանն Աստուծոյ զընթացսն քաջայարմարագոյն հաւատով բերեալ: - 396. որք անուանէին զինքեանն համակդէնս, այսինքն ամենագետք ի հաւատ կրակի – 48. վրիպել յանբիծ և յուղիղ յառաքելաքարոզ հաւատոցն ի Հայր և յՈրդի՝ և ի Հոգին Սուրբ: - 196. տանջեաց զնոսա գանիւ, և նոքա ևս առաւել պնդեցան ի հաւատսն և ի յոյս բարեաց և ի սէրն Քրիստոսի: - 222. Քանզի հարցեալ և բռնազբօսեալ զերկոսին գլխաւորին Տաճկաց, անունկնդիր լինելով ասացելոցն, և ի տեսչութենէ Աստուծոյ թողացուցեալ նոցա առանց վտանգից՝ որպէս հաճոյ թուիցի կեալ ի հաւատսն Քրիստոսի համարձակաբար. – 324. Քանզի սա առաջին ի հեթանոսական թագաւորաց սկիզբն արար ի Քրիստոս հաւատոց: - 76. Որ անսայթաք հաւատով յառաջացաւ առ աւարտումն պատերազմին փութացեալ, և ելեալ յամրական տեղւոյն սակաւաձեռն զօրականաւն, որ պահէին զպահպանութիւն Շամիրամ բերդին – 400.

ՀԱՒԱՏԱԼ - ,,զի սրտիւ հաւատամք յարդարութիւն, և բերանով խոստովանիմք ի փրկութիւն,, , որպէս ասաց առաքեալն – 256. Ապա յղէ զնա ի Խորասան, և նմա հաւատաց զվերակացութիւն աշխարհին. – 326. Բայց ի գնալ մեծ հազարապետին յարքունիս՝ հաւատաց զվերակացութիւնն աշխարհիս Հայոց և հարկս արքունի ի ձեռս Մուսէի ումեմն որդւոյ Զօրահայի հազարացւոյ – 172. Գրեալ ի թղթի անդ՝ ի ձեռն նորա հաւատալ աշխարհիս Հայաստանեայց – 186. Երկրորդ՝ զի և ոչ հաւատայր Գուրգէնի՝ ամբողջ պահելով, զոր ինչ միջնորդեն երդմամբ, զհօրն իւր կիրսն ի նորայն հօրէն կրեալ յուշ առնելով: - 316. և առ Տիմոթէոս գրէ, հաւատարիմ գոլ զզօրութիւն հաւատոցն, ասէ, ,,թէ ուրանամք՝ և նա ուրանայ զմեզ. թէ չհաւատամք՝ նա հաւատարիմ մնայ,,: - 258. Եւ արդ ասացից փոքր ի շատէ զյայտնի գործեցեալսն, զի և որ ինչ ընդ սոքօք և յետ սոցա ի գլուխ ելին հանգամանք իրաց՝ և այնմ առանց երկբայութեան հաւատասցես, իբրև ճշմարիտ և անսուտ պատմողի: - 240. և Դաւիթ ասէ, ,,յոր հաւատացի զնոյն և խօսեցայ,,. և Պօղոս՝ ,,մեք հաւատամք զոր խօսիմքն,,. և դարձեալ Պօղոս՝ ,,եթէ խոստովանեսցիս բերանով քով զտէր Յիսուս, և հաւատասցես ի սրտի քում թէ Աստուած յարոյց … - 258. և ի հասանելն նորա անդր թողեալ զհակառակաբար մարտն՝ խօսին ի խաղաղութիւն, առաջի եդեալ զհրամանն արքունի, զգլխաւորին Տաճկաց, և Աշոտի հաւատալ զբոլոր տէրութիւնս Վասպուրականի: - 316. և հաւատալն նորա ի մի Աստուած Հայր և մի Որդի նորա ի Բանն Աստուած Յիսուս Քրիստոս և ի մի Հոգի սուրբ, զուգակից և բնութենակից և փառակից Հօր և Որդւոյ, ի մի Աստուածութիւն կատարեալ.– 94. և հաւատան զառաջնորդութիւնն Հրէից՝ Զօրաբաբէլի որդւոյ Սաղաթիէլի յազգէ Յուդայ: - 66. Եւ հրամանաւ ինքնակալին Թէոդոսի կայսեր հաւատայ նմա զհազարապետութիւն բաժնին Հայոց, զՄիջագետս մինչև ի յանցս Եփրատ գետոյ: - 116. Եւ ձեռագրեալ Մուշեղայ զամրոցաւն Նորաբերդ և շուրջ զսահմանսն՝ Դերանկին հաւատալ, և զայլ ևսն՝ որդւոյ իւրում ժառանգեցուցանել: - 324. և նորա ոչ հաւատայր երթելոց կոչնականացն, մինչև կրկնեաց և երեքկնեաց. – 272. զի /258/ սրտիւ հաւատամք յարդարութիւն և բերանով խոստովանիմք ի փրկութիւն,,: - 260. զի գործ մի գործեմ ես յաւուրս ձեր, գործ որում ոչ հաւատայցէք, թէ ոք պատմեսցէ ձեզ: - 200. Զի չէ և չէ իսկ հնար, թէ որ հաւատայ

բերանով՝ թէ ուրասցի շրթամբք – 256. Ի դառնալն Ապուսէթի յԱսորիս և Մուսէի հաւատալ զվերակացութիւն հարկաց արքունի, և ընդդէմ եկեալ յարքունուստ հազարապետ ոմն հարկաց, Ծովափի կոչեցեալ ամիրայ Ալայ անուն: - 176. Իսկ Հասան ըստ յանձնառութեանն գնաց մեկնեցաւ ի Դերանկէն, եմուտ առ Գագիկ յամուրն և զտրտունջն զԴերանկէն հաւատարմացոյց առաջի Գագկայ, որ դիւրաւ առ հաւատալն հաստատնագոյն երևէր. – 350. միայն ըստ ամացն ծննդաբանութեան հաւատացին Աշոտի զիշխանականն տալ պատուադրութիւն – 360. յոր ձեռն հաւատաց Արտաշէս զգաւառն Աղբագ.– 90. Յորում տեղւոջ բանակ կրօնաւորաց կարգեաց, և հաւատաց զառաջնորդութիւնն նախասացեալ քահանային – 394. յորս բազումք անկեալ ի նա հաւատացին ի Քրիստոս, որպէս Ծանարքն և Աւրհազքն. – 274. որ ըստ աճման և սերելոյ նախարարութեանց՝ եկեալ հասեալ ցայս վայր ժամանակի ի թագաւորել Աբգարու և հաւատալ ի Քրիստոս: - 78.

ՀԱԻԱՏԱԼՈՑ - որ ի նայն հաւատալոց էին: - 76.

ՀԱԻԱՏԱՐԻՄ - ,,բազում անգամ, ասէ, և իմ ստուգեալ զայդ ի հաւատարմաց խորհրդականացն նորա. – 346. ,,Բուխայ գլուխ զօրավարաց ընդհանուր Թագաւորութեան Տաճկաց, Ջափր իշխեցող ծովու և ցամաքի, հաւասար և օրէնսդրին մերոյ Մահումաթի, և հաւատարիմ միջնորդ Աստուծոյ և մարդկան, և թագաւոր ընդհանուր ազգաց հարաւային աթոռակալութեան … Յղեցի զքեզ ելանել ի վերայ երկրիդ Հայոց ամենայն կենդանեաց – 236. կարծեաց համանգամայն զբոլոր պաշտօնեայս Քրիստոսի ի բաց վճարել ի հաւատարիմ երկրպագութենէ ճշմարտին Աստուծոյ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. – 264. ,,ի քո իսկ ինքնակալ թագաւորութեանդ և ի յօրէնս առաջնորդին ձերոյ գրեալ է՝ ոչ գոլ ճշմարիտ վկայութիւն միոյ ուրուք և հաւատարիմ – 244. ,,հրամայեա արձակել արս հաւատարիմս, և ես յորժամ հասից ի դուռն արքունի՝ ի նմին ժամու խնդիր արարից Խաչին, և գտեալ զնա տայց բերել առ քեզ,,: - 154. Ապա երկոքին նոքա դեսպանս արձակեցին առ թագաւորն ի հաւատարիմ արանց ըստ Եսայեայ զոր ասէ – 286. բայց միայն ի դրան արքունի մտանել և ելանել ընդ հաւատարիմս թագաւորին ի տունս դիւանաց և գանձուց: - 92. Բայց որդին Շեհայ ի մտանելն ի Պարտաւ՝ եթող անդ քաղաքապետ զմի ի հաւատարմաց իւրոց Յամանիկ ոմն: - 338. բովանդակաբար բացայայտել զհաւատարիմն գրել, թէ արդեօք Ասուր, որ զՆինուէ շինեաց, հաւ Նինոսի՞ իցէ ի ծննդոց Սեմայ, ուստի Նեբրովթ, կամ թէ արդեօք ազգն Արծրունեաց Սեմա՞յ սերունդք իցեն, թէ Քամայ ի Նեբրովթայ: - 14. գուցէ յորժամ կատարիցեն զչարիսն զոր խորհեալ են ի վերայ քո, որպէս լուաք ի հաւատարմաց իւրեանց՝ օժանդակութեամբ Արտաշէսի մերժիցեն և զզարմ և զզաւակ քո ի թագաւորութենէ Ասորոց: - 82. և առ Տիմոթէոս գրէ, հաւատարիմ գոլ զզօրութիւն հաւատոցն, ասէ, ,,թէ ուրանամք՝ և նա ուրանայ զմեզ. թէ չհաւատամք՝ նա հաւատարիմ մնայ,,: - 258. և առ Տիմոթէոս գրէ, հաւատարիմ գոլ զզօրութիւն հաւատոցն, ասէ, ,,թէ ուրանամք՝ և նա ուրանայ զմեզ. թէ չհաւատամք՝ նա հաւատարիմ մնայ,,: - 258. և ի բաց բառնալ յաշխարհէ զշփոթ և զխռովութիւն ի միջոյ խաղաղութեան որպէս օրէն է խաղաղասէր թագաւորաց և թագաւորազանց, իբրև Աստուծոյ կամարարողաց և հաւատարիմ ծառայից տիրասիրաց: - 212. և կալեալ զնա եդ ի բանտի ի Նկան բերդի և զամրոց նորա եհան ի նմանէ, և կացոյց զհաւատարիմս իւր պահել զնա, և զտուն և զստացուածս հանեալ ի նմանէ՝ և կացոյց ի վերայ աշխարհին զիւր գործակալս: - 348. Եւ կացոյց զնա իշխան յիւրում հաւատարիմ տեղւոջ, և այնպէս բարեձևագոյն ճոխացոյց զայրն երևելի: - 308. Ընդ նոյն ժամանակս յղէ թագաւորն զոմն ի յաւագ նախարարացն վերակացու Հայոց և հաւատարիմ ի վերայ հարկաց արքունի Ապուսէթ անուամբ, ըստ տաճկական լեզուին, յարելութեամբ եբրայական դպրութեանն: - 170. ի սակաւուն հաւատարիմ լինելով՝ ոչ այնմ և եթ տիրեսցէ տնկոյն, այլ և բազմերջանիկ երկնայնոցն հասցէ կենաց: - 20. Իսկ կատարելագոյնքն և ծերքն ի նոցանէ սպուժէին առ այս, և մանաւանդ որք հաւատարիմքն կոչէին ըստ հաւատոյն նոցա որք Կուռայքն անուանէին – 404. Իսկ նորա յղեալ առ նոսա

դեսպան զԱբդլայ ոմն … տեսանել թէ իցէ՞ հաւատարիմ զոր ինչ խօսին ի ձեռն դեսպանաց, թէ պատիր խաբէութեամբ ջանան կորուսանեն զնա: - 226. Իսկ սրբոցն որ ի Սուկաւէտ լերինն, քանզի էին համաշխարհիկք և հաւատարիմք Սաթինիկայ եկեալ զկնի նորա – 88. Յամի ութերորդի Մուրկայ թագաւորի, թագաւորն Պարսից Որմզդ որ ի տանէ Սասանայ՝ սպանաւ յիւրոց հաւատարմաց – 136. Յայնժամ արձակեաց Հայրակղոս արս հաւատարիմս առ Խոռեմ վասն աստուածընկալ սուրբ Խաչին. – 154. յորում և ոմն հաւատարիմ Յիսէի Սէմ անուն յառաջ խաղացեալ՝ պատահէ իշխանին, ընդ Վահանայ խորհրդակցեալ խորհել զխաղաղութիւն և զմարտն գրգռեալ ցածուցանել և զվառեալ պատերազմն շիջուցանել. – 334. Որգունակ հնչումն տաշելոյ փայտիցն առ Նոյիւ ազդեցութեամբ հիւսնական գործեացն՝ զհեղեղածուփ անդնդաձիգ սահանացն երկնահոս զուգաճանապարհորդութեանն յապրուստ հաւատարիմ առնն յԱստուած յուսացեալ համամիտ ընտանեացն գործակցութեամբ: - 396. Որպէս ցուցանեն յիշատակարանք հաւատարիմ պատմագրացն. մանաւանդ թէ աւետարանիչն և առաքեալն Յոհաննէս, որդին որոտման, տիեզերաց հնչեցոյց զորոտումն աւետեաց Աւետարանին Քրիստոսի – 76. Տեսեալ կնոջն զՄահմէտ այր հաւատարիմ և ուշմագոյն յամենայն իրս աշխարհականս՝ եղև նմա կին և ետ ի ձեռն նորա զամենայն հոգս տան և ընչից: - 158.

ՀԱԻԱՏԱՐՄԱԲԱՆՈՒԹԻԻՆ - Եւ արդ ըստ Եւսեբեա բազմայեղ յեղանակաց խուզմանցն և ըստ Ափրիկանոսի հաւատարմաբանութեաննն և ըստ Մովսէսի Քերթողի՝ նախ ի մէջ առից զորպիսութիւն ազգացն բաժանմանցն գրել: - 12.

ՀԱԻԱՏԱՐՄԱՆԱԼ - Եւ զոր ոչ հաւատարմանայ մեզ՝ և ոչ գրել կարևոր համարեցայ: - 100.

ՀԱԻԱՏԱՐՄԱՊԷՍ - իսկ որպէս գրեալ հաստատեալ կայ հաւատարմապէս վարդապետացս քաջաբան և լի իմաստութեամբ շարագրածք հրաշափառագոյնք: - 122.

ՀԱԻԱՏԱՐՄԱՑՈՒՑԱՆԵԼ - զոր և երանելին Կորիւն, ուսումնակից Մովսէսի և աշակերտ սրբոյն Մեսրովպայ՝ յիւրումն ստուգաբանեալ պատմութեան զայսոսիկ մեզ հաւատարմացուցանէ: - 122. Իսկ Հասան ըստ յանձնառութեանն գնաց մեկնեցաւ ի Դերանկէն, եմուտ առ Գագիկ յամուրն և զտրտունջն զԴերանկէն հաւատարմացոյց առաջի Գագկայ, որ դիւրաւ առ հաւատալն հաստատնագոյն երևէր. – 350. Իսկ Ներսէհ ունկնդիր եղեալ Դարէհի, բայց ոչ կարաց հաւատարմացուցանել զասացեալսն. – 82.

ՀԱԻԱՏԱՐՄՈՒԹԻՒՆ - Բայց թէպէտ և երկոքին պատճառք անուանակոչութեանցն պատկանաբար վարկանելի է՝որպէս իմաստասիրացն հաճոյ թուի, այլ ինձ զառաջինն ախորժելի զհաւատարմութիւնն ի մէջ առնուլ: - 72. Բայց չարեացն այսորիկ հաւատարմութիւն յայտ եղեալ հաստատեցաւ ի վերայ Կայսկին Ապլբառայ: - 342. Եւ արար նմա հաւատարմութիւն յոյժ գրով, և կնքեալ աղիւ ըստ սովորութեանն իւրեանց երդումն, և խնդրեաց ի նմանէ զօր ինչ սակաւ յերևելի մարդկանէ, յորս ինքն վստահն էր: - 154. նա և հաւատարմութիւն իւրեանց առեալ զթուղթսն սրբոյն Սահակայ առ կայսրն և առ հայրապետն – 118.

ՀԱԻԱՏԱՑԵԱԼ - Բայց քանզի հաւատացեալ էր վերակացութիւն աշխարհիս Հայոց Աշոտի, որ իշխանաց իշխան՝ ձեռն ի գործ արկեալ նուաճել զիշխանս Հայոց, զՎրաց և զԱղուանից, որ եղև իսկ: - 322. բաշխել զայն որբոց և այրեաց միանգամ յամենայն հաւատացեալ ի Քրիստոս տնանկացն – 80. Գնայ զկնի նոցա և երջանիկն Զուիթայ երէց յԱրտաշատէ զկնի հաւատացեալ Հրէիցն – 104. Եւ Աւշնի հաւատացեալ զաշխարս ծառայի ումեմն Սափի անուն ի գերելոցն Յունաց ներքինի, թողեալ զհաւատսն որ ի Քրիստոս, մսլիմանակ դեն ստացեալ, արիւնարբու ուսմամբ բնաւորեալ. – 372. Եւ Գուրգինի նորին եղբօրն զպատիւ մարզպանութեան գահակալութեան հաւատացեալ, ըստ կարգի բարձաբերձութեան թագաւորացն Հայոց, մանաւանդ մեծին Տրդատայ թագաւորի: - 370. և զՀրէայսն որ յաւուրց սրբոյն Գրիգորի հաւատացեալ էին ի Քրիստոս՝ վարեն ի գերութիւն, աւելի վտանգ նոցա քան այլոց Հրէիցն հասուցանելով վասն ի Քրիստոս հաւատոցն: - 104. և զպատրաստութիւն պատերազմողական մարտի ամրոցին հաւատացեալ էր Յիսէի եղբօր Թադէոսի – 362. Եւ մեր ընկալեալ և հաւատացեալ ճշմարտութեանն՝ և ոչ կարեմք

ապստամբութիւն խորհել առ ի քէն, և զնախարարսն Հայոց զՅունաց թագաւորին խորհել հնազանդութիւն. արդ տեսանել պարտ է վասն այդր„: - 130. Եւ եղև ի գալ միւսոյ տարւոյն՝ Սմբատ իշխանն Սիւնեաց ի բաց եկաց ի հնազանդութենէ թագաւորին Հայոց, արգել առնելով հարկացն տալ թագաւորին, թևակոխելով Պարսից բռնաւորին հատուցանել զհարկս և զհասս. - 382. և ընկա՛լ օրէնս և հաւատս արժանի կենաց և գովութեան ի մեծ արքայէն և ի մեր իշխեցող հրամանակատար թագաւորին հնազանդութենէ: - 204. և ըստ հրամանի ինքնակալ թագաւորին նուաճեալ ունիս ի հնազանդութիւն պետութեան ձեր զիշխանս և զտեարս, զկողմնակալս և զկուսակալս, զքաղաքապետս և զմարզպետս բոլոր Հայաստանեայցս – 212. և խոստանայր նմա զհազարապետութիւնն Հայոց յարքունուստ հրամանէ հնազանդութեամբ Հայոց: - 366. և կալցին զիւրաքանչիւր իշխանութիւն և վայելեսցեն ի պարգևս և ի պատիւս արքունի և կացցեն ի հնազանդութեան թագաւորին: - 296. և կացցէ ինքն և իւրքն ամենեքեան ի հնազանդութեան արքունի, ի հարկս և ի հասս չափոյ սակի արքունական աւանդութեանց: - 226. Եւ մինչ նոքա կային մնային հրաման ինչ ընդունել յարքունուստ՝ /286/ դարձան հրեշտակքն և եկին փութանակի, և բերին թուղթ յարքայէ առ Ապումուսէ՝ գալ ի հնազանդութիւն նոցա և երթալ առ Բուխայ. – 288. Եւ նոյնժամայն եհաս հրաման յարքունուստ՝մի տաղտկալ և վհատել և մի ի բաց կալ պատերազմել ընդ նմա. մինչև եկեսցէ ակամայ կամօք ի հնազանդութիւն արքայի: - 284. Եւ սկսաւ գոռալ, և խորհէր զթոյնս չարութեանն թափել ի վերայ իշխանին Աղուանից, /276/ և յղէր առ նա կոչելով ի հնազանդութիւն. – 278. զի թերևս կարասցէ արկանել զերանելին ի ներքոյ պղտոր հրապուրեցուցիչս ժախուն մահածին հնազանդութեանն - 204. զի թէ կարացից հարկանել զթշնամին իմ և կանգնել զթագաւորութիւնն իմ՝ ես եղէց քեզ որդի հնազանդութեան - 136. Իսկ իբրև եհաս Բուխայ զօրօք բազմօք մերձ ի սահմանս նոցա, և գրեաց հրովարտակս դիմօք խաղաղութեան՝ դառնալ սիրով միաբանութեան ի հնազանդութիւն արքային – 274. Իսկ Նինոս և Շամիրամ տիրեն Ասիացւոց և Եգիպտացւոց հարկապահանջ հնազանդութեամբ, այլ ոչ զազգին ի բաց բառնալով զպայազատութիւն աշխարհին: - 18.. Յայնժամ թագաւորն դեսպանս արարեալ յամենայն սահմանս տէրութեան Հայոց, Վրաց և Աղուանից, և առ քաղաքացիսն և հազարապետս և գաւառակալս, և որք սիրողաբար առ նա զհնազանդութեանն հարկ հարկանէին: - 366. Նորա ի բաց կացեալ ի հնազանդութենէ իւրոյ պետականին հանդերձ քաղաքային գլխաւորօքն. – 338. Որ և յետ մահուանն Զրադաշտին դարձեալ միապետեաց ամենայն արևելեաց Պարսից ի հարկի հնազանդութեան ունելով, խաղաղասէր կենօք ամս ԼԸ. – 56. որ սպան զհայր իւր Վահան և զմայր իւր Տաճատուհի վասն պարսկականին հնազանդութեան մոգութեան օրինացն – 110. որոց հնազանդութիւնն կորստեան պատճառք գտաւ աշխարհիս Հայոց: - 110. ՎԱՍՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԵԱՆ ՏԱՃԿԱՑՆ ՈՐ ԿԱՅՍԻԿՔՆ ԿՈՉԻՆ ԵԻ ԻՇԽԱՆԻՆ ՍԻՒՆԵԱՑ Ի ԹԱԳԱՒՈՐԵՆ /ՃԻՇՏԸ՝ ԹԱԳԱՒՈՐԷՆ/ ՍՄԲԱՏԱՅ, ԵԻ ԴԱՐՁԵԱԼ ԵՐԿՈՑՈՒՆՑ ՀՆԱԶԱՆԴՈՒԹԻՒՆ: - 380. և աներկբայութեամբ փակես զամենայն ընդ լծով հնազանդութեան քո: - 196.

ՀՆԱԽՕՍ - և հնախօսս շարագրական մատեանս և ի բազում վէպս պատմութեանց անցեալ գրեցի, որ ինչ բաւականանալ ձեռնհաս եղէ, սկսեալ յԱդամայ մինչ առ մեզ հասեալ ժամանակացս գիւտ: - 12.

ՀՆԱՐ - ամենայն հնարիւք խորամանկութեամբ կապեալ անլոյծ զօտեամբ ընդ ոգւոյ երիցս թշուառականին – 248. այլ այսոքիկ փոյթք յօժարութեան առ ի յայլոց ասացելոց նախագունից տեղեկութիւն, և ոչ ինքեամբ և կամ նովաւ գտանել զհնարս գիւտի գրոց, թէպէտ և յառաջ քան զնա, այլ ոչ թէ և քան զԲաբելացւոցն իրս – 18. դիմեցին առ կայսրն Վաղէտիանոս, թէ հնար ինչ իցէ առնուլ զվրէժ արեան Խոսրովու և ի /92/ վերջ նահանջել զբռնակալութիւն Ստահրացոյն. – 94. և ամենայն ոք ըստ ազգս ազգս փութայր ի հնարս ինքեանց վաստակոցն մի զմիով ելանել. – 268. և գրէ առ Սահակ դառնալ առ Երուանդ. թերևս հնար լիցի խորհել ինչ վասն Երուանդայ: - 82. և ոչ ուրեք գտանէր հնար

ելիցն ի վտանգաւոր արգելանէն, թէպէտ և բազմաց հոգ յանձին կալեալ վասն առն պատուականի – 346. զի կարասցէ անսայթաք հաւատով յաղթել հնարից բանսարկուին, որ ի ծածուկ և յայտնի պատերազմին – 206. Յայնժամ իբրև գիտացին երկոքին կողմանքն, եթէ ոչ գոյ հնար գտանել զելս իրացն և տալ խաղաղութիւն՝ ապա հաճեցան և հաւանեցան գրել առ թագաւորն. – 286. որով մահուամբ և կամիս՝ պատրաստ եմք յամենայն հնարս չարչարանաց մտանել, զոր ուսոյց քեզ վարդապետն չարեաց հայրն քո սատանայ. – 292. Որոց դիպօղ ժամ գտեալ՝ արտաքս ելեալ ի բանակէն, զերծեալք իբրև զայծեամն ի հնարից որսորդաց՝ գնացին խաղաղութեամբ յիւրեանց տեղիս և զնա թողին լքեալ ամօթալից: - 344. պատրաստ եմք ի կապանս, ի բանտս, ի գանս, ի հուր, ի սուր, ի ջուր, ի տանջանս հարուածոց և յամենայն հնարս չարչարանաց,,: - 246.

ՀՆԱՐԱԳԷՏ - և ըստ հնարագէտ ազգի իւրեանց խորամանկ կեղծաւորութեամբ, խաղաղասէր դիմօք առ սակաւ սակաւ ջանայր կատարել զկամս չարութեան իւրոյ: - 170.

ՀՆԱՐԱԳԻՏՈՒԹԻՒՆ - և թուղթ մի գրեալ և կնքեալ լի խորամանկութեամբ և կեղծաւոր խարդախութեամբ ըստ հնարագիտութեան որդւոցն Իսմայէլի. – 234. Յայնժամ մեկնեալ ի նմանէ զօրավարն, լցեալ խորհրդովք չարին հնարագիտութեամբ՝ եկն եմուտ ընդ կողմն Ատրպատական յԱղբագ գաւառ յերկիրն Վասպուրական – 184.

ՀՆԱՐԱԳԻՏ - ոչ միայն ի տեսիլ խտղտման աչաց և զուարճումն հոտոտելեաց՝ այլ և ի կազմութիւն դեղոյ բժշկական հնարագիւտ իմաստասիրութեանց կազմեալ Ասկղեպեայ վարժմամբն: - 86.

ՀՆԱՐԱՒՈՐԵԱԼ - ,,միայն, ասէ, զԳագիկ Ապումրուան առ իս ածցես հնարաւորեալ վասն նորա,,. – 350. Այլ և հուր և ծծումբ նաւթիւ բարձեալ ի գործ պատերազմին, և զլոյծ բնութիւնն յանօթս ապակեղէնս եդեալ, և մանր զծծումբն ընդ նմին խառնեալ, եդեալ ի պարսատիկ մեքենայից, և զհուրն առ ընթեր նմին, հնարաւորեալ արկանել զամրոցաւն: - 208. ապա հնարաւորեալ պատիր խաբէութեամբ ի կատարումն հասուցանել զխորհրդոյն /346/ զանհաստատ իմացմունսն, և զնաց եմուտ յամրոցն, և զհիւանդութեան կեղծաւորութիւն մերձ առ մահ եղ առաջի: - 348. Եւ զի ստեալ Դերանկին Գուրգենայ եհան անտի զգործակալսն՝ նոյն գունակ Գուրգէն հնարաւորեալ առնու զամրոցն և հանէ զնորա գործակալսն – 326. և ո՞րպէս՝ հնարաւորեալ յապրուստ անձանց վճարեն զկարևոր պէտս իւրեանց լի աշխատութեամբ և սաստիկ տառապանօք. – 190. Իսկ վասն ձեանն անկայուն զօրութեանն որ այն ինչ յամպոյն ի վայր զեղեալ լինին՝ հնարաւորեալ իւրեանց փայտս իբրև զանուրս չուանօք պարունակեալ շուրջ զոտամբք, դիւրաւ ընթանան ի վերայ ձեանն իբրև ընդ ցամաք երկիր: - 192. Յայնժամ բնակիչք լերինն իբրև տեսին, թէ վարեցաւ իշխանն ի գերութիւն … հասին միաբան բազմութիւնն մեկնակազէնքն Խութայ ի հնարս արուեստգիտութեանն իւրեանց, զոր ի պէտս օժանդակութեան ձմերայնոյ հնարաւորեալ էին: - 190.

ՀՆԱՐԱՒՈՐԵԼ/ԻԼ/ - և է զգեստ նոցա ասուիս ի ծածկոյթ մերկութեանն, և օդ ոտիցն հնարաւորեն զձև կաւշկաց, ի մորթոց այծից կազմեալ – 192. և ըստ օրինակի կեղծաւորական հիւանդութեանն, զոր առ Դերենիկն հնարաւորեցաւ՝ զնոյն և առ Գագիկ գլխաւորեաց: - 350.

ՀՆԱՐԱՒՈՐՈՒԹԻՒՆ - Այլ քանզի յոյժ առաւելեալ էր իմաստութեամբ Գագիկ՝ տեղի տայր բովանդակ գաւառապետաց զօրագլխաց աշխարհիս, գնայր ընդ նոսա իմաստութեամբ խորագէտ հնարաւորութեամբ, ըստ անձնիւր գահու մեծարեալ պատուադրութեամբ հաճոյանալ ախորժէր նոցա: - 354. յաւուր միում … ետ հրաման իշխանն առնն կորովի եղբօր իւրոյ Աբասայ Հայոց սպարապետի՝ վառել պնդակազմ պատրաստութեամբ, զօրու և զինու և զարդու ամենայարդար հնարաւորութեամբ, որպէս օրէն է նահատակաց քաջ արանց – 344.

ՀՆԱՐԵԼ - Իսկ զօրավարն Բուխայ կայր ի կոր կործանմանն, ի տարակուսանս ըմբռնեալ փղձկէր ի միտս իւր, ցնորակոծ լինէր, հնարէր ելս իրացն գտանել ի վրանայարկն փակեալ, և ոչ առնոյր դուլ և դադար: - 282.

ՀՆԱՐ Է - բաժանեն զաշխարհս յերիս մասունս. տալով Աշոտի … Եւ Գուրգէն զկողմանս արևելից, յելից Աղբագոյ և որ շուրջ զնովաւ ամենայն Պարսկահայք մինչև ի մուտս Կորդաց, և ուր և ըստ այնմ հցէ հնար ածել զձեռամբ: - 360. զի թէ հնար հցէ՝ անյապաղ երագութեամբ անձամբ իւրով և զօրու և զինու ձեռնտու լիցի հասանել յօգնականութիւն նմա: - 172. Զի չէ և չէ իսկ հնար, թէ որ հաւատայ բերանով՝ թէ ուրասցի շրթամբք – 256. զոր ատել արժան էր և չար ի չարի վերայ, թէ հնար էր՝ հասուցանել. – 112. նոյնպէս և ոչ է հնար սրտի հաւատացելոյն պղծել շրթամբք: - 258.

ՀՆԱՐԻԼ - արդ դու մի անփոյթ յանհոգս յաղագս այդր մնայցես, անյապաղ հնարիցիս գտանել զխորհրդոցն նորա դատարկութիւն,,: - 346.

ՀՆԱՐԻՄԱՑՈՒԹԻՒՆ - և կամ ո՞ւր վատնիցէ թափիցէ զբազմութիւն նետից ի կապարճից խորհրդանոցին, չարին հնարիմացութեան: - 170. Իսկ Դերանիկն գործ առնէր ի գիւտս հնարիմացութեան, և տարուբերէր յանձն իւր՝ գտանել զելս իրացն, որով կարիցէ հանել զամուրսն ի Գուրգինայ և տիրել աշխարհին: - 326. յերկուս կողմանս բաժանեալ զնայեցուած խորհրդոցն, և կայր կեղծաւորութեամբ անհաստատագոյն և անօգուտ հնարիմացութեամբք, ընդ քրիստոնեայսն քրիստոնեայ և ընդ պարսկականսն զնոցայսն կեղծաւորէր: - 112.

ՀՆԱՐՔ - Յայնժամ բնակիչք լերինն իբրև տեսին, թէ վարեցաւ իշխանն ի գերութիւն … հասին միաբան բազմութիւնն մեկնակազէնքն Խութայ ի հնարս արուեստգիտութեաննն իւրեանց, զոր ի պէտս օժանդակութեան ձմերայնոյ հնարաւորեալ էին: - 190. Որ զապիրատ և զլի հնարիւք սատանայական իմաստից, չարահնար խորհրդոց բուռն հարեալ՝ մեծամեծս փքայր փոնքտալով – 200.

ՀՆԱՑԵԱԼ - և էր ալևոր ըստ մարմնոյ և հնացեալ արտաքին մարմինն, բայց ներքինն նորոգեալ և գեղեցկատեսիլ ըստ պատկերի արարչին. – 204.

ՀՆԳԵՏԱՍԱՆ - և ի մատնելն մերում լարօք հնգետասան՝ հաւք երկու պատահեցին մեզ – 50.

ՀՆԴԻԿՔ - առ սովաւ Դիոնեսեայ զօրաժողովն ի վերայ Հնդկաց: 58. Եւ ի մեռանելն իւրում Աղէքսանդրու հաստատագոյն աներկիւղութեամբ զթագաւորութիւնն իւր միապետեալ՝ կացուցանէ չորս զօրավարս չորեքծագեան կողմանց աշխարհի, զՊտղոմէոս Եգիպտոսի և Հնդկաց, զՍելևկոս Ասիացւոց և ամենայն հիւսիսականաց, զԱնդիպատրոս Պարսից և ամենայն արևելից: - 70. Պտղոմեայ հասեալ ի տէրութիւն ժառանգաւորութեանն՝ փոխանակ իւր կացուցանէ զԱսուդ, տալով ի ձեռս նորա զբոլոր իշխանութիւն Եգիպտոսի և Հնդկաց - 70. Քանզի և սա ասի թագաւորեալ ամենայն Ասիաստանի և Լիբէաստանի, բայց միայն ի Հնդկաց – 44.

ՀՆԴԿԱՅԻՆ - Իսկ Ասուդ թէպէտ և այնպէս շքեղութեամբ ճոխանայր եգիպտական և հնդկային հարստութեամբն՝ այլ յիշելով զբուն իւր սեփհական թագաւորութիւն Ասորեստանի՝ ոչ հաճոյանայր կեալ եգիպտացի գահակալութեամբն. – 70.

ՀՆԴԿԱՑ ԱՇԽԱՐՀ - Զոր Եւսեբէս Կեսարացի ասէ՝ ի սովորութենէ մինչև ցայսօր կին մարդ թագաւորէ ի վերայ աշխարհին Հնդկաց: - 30. իսկ աշխարհն վերին Հնդկաց ասի լինել դստեր նորա: - 30.

ՀՆԴԿԱՑ ԾՈՎ - Եւ զԶրադաշտ մոգ արքայ Բակտրիացւոց և Մեդաց ընկճեալ հալածեաց մինչև ի սահմանս Խեփտաղաց, հզօրապէս տիրեալ բովանդակ Խուժաստանի և կողմանց արևելից և Պարսից, անդր ևս քան զԲահխ և զԴեպուհան , ի Գովմայիդ և ի Գուզբան, ի Շերիբամական /գրքում՝ Շերիբամամական/ և ի Խոճիհրաստան, և միանգամայն ասել մինչև ի ծովն Հնդկաց՝ յոյժ արութեամբ – 44.

ՀՆՁԵԼ - և տաց քեզ ագարակս, այգիս և ձիթենիս և սերմանս, զի վարեսցես և հնձեսցես, և մեք սիրով նայեսցուք ի քեզ: - 146.

ՀՆՈՑ - Եւ առհասարակ ամենայն տիեզերք ծխեալ տեսանիցեն, և ի քէն ամենևին հուրն ոչ պակասեսցէ յաւիտեան, իբրև զհնոց խեցագործաց այրեսցիս, և քեզ ոչ եղիցի հանգիստ: - 164. Եւ այլք զցաւոցածին օրհնութիւն հնոցին երգէին, ի վերուստ կոչել զօրավիգն զհրեշտակ Աստուծոյ – 232. Եւ մինչդեռ կային կենդանի և գոհանային զՔրիստոսէ

զանյաղթ զօրութենէն զոր զօրացոյց զսուրբսն մեծ ասպարիսի ի հոգևորական պատերազմին՝ ևս առաւել բարկացեալ թագաւորն՝ իբրև զհնոց վառեալ բորբոքէր. – 292. զի ի փոնգալոյ նորա կայծակունք հատանին և ընդ ռնգունս նորա ելանէ ծուխ հնոցի կայծականց, որպէս գրեալ է ի Յովբ: - 246. ի սաստ մատուցեալ գնդին իւրոյ պատերազմողացն՝ և ոչ կարաց զբորբոքեալ հնոց դէզադէզ կոխակացն սրախողխող սատակմանն ցածուցանել: - 368. որպէս ժողովուրդն Աստուծոյ առ գետսն նստէին և լային ի յիշելն իւրեանց զՍիօն, և կամ իբրև զնոյն ինքն զերիս մանկունսն, կապեալք և արկեալք ի հնոց նեղութեան – 252. վառեալ լինէր իբրև զբոց հնոցի, իբրև զալիս ծովու դիզեալ կուտմամբ փրփրեալ ծիրանագոյն արիւնանման, ուժգին գոչելով անդնդաքակ յուզմամբ, իբրև զհեղեղատ յորդահոս ի ճայթմանէ կարկտահոս ամպոց – 180.

ՀՆՈՒԹԻՒՆ - և մերկացեալք ի մէջ ամբոխին … ի բաց ընկեցին զհանդերձս ծածկոյթս ապականագործ հնութեան մեղացն – 266.

ՀՆՉԵԼ - և ահա հնչէր առ հասարակ երկիրն ամենայն իբրև զծով ալեաց կուտակելոյ, և սաստկացաւ պատերազմն, յառլուսանալ աւուրն մինչև ի սպառել անցից տունջեանն իշխեցողին երկոտասան ժամու աւուրն. – 276. Եւ հնչեաց երկիրն, և զաղաղակ բարձին ամենայն բազմութիւնն, իբրև այն թէ ի հիմանց լեառնն տապալիցի: - 228. և նա առաւել յորդորագոյն հնչէր և արտօսր ի վեր բերեալ հեղոյր, ասէ – 222. Եւ վազէր ընդ բանակն, կանչէր, հնչէր, շարժէր զձեռնն և ասէր, ,,ես քրիստոնեայ եմ, քրիստոնեայ եմ,, - 224. զոր և սուրբքն ասեն, եթէ ձայն դակուացն և բախումն խմբիցն առ ի հեղուսել զփայտսն՝ /28/ այնպէս իբրև յորոտման ամպոյ յամենեցունց հնչէր լսելիս, ի մօտաւորս և ի հեռաւորս, առ ի յերկիւղ և ի զգուշութիւն անզգամ ազգին, թերևս դարձցին և կեցցեն. – 30. Իբրև օր մի լինէր պարապոյ … և ահա հնչեցին փողք ուժգին գոչմամբ ազդ առնել քաղաքին՝ եթէ ել նստաւ թագաւորն յատենի – 240. նշանս կանգնեալ և փողք և քնարք հնչէին և թմբուկքն դափէին – 208.

ՀՆՉԵՑՈՒՑԱՆԵԼ - և սուսեր ընդ մէջ ածեալ, և հեծուցեալ ի մեծազարդ ջորւոջ, և նժոյգս առաջի և զկնի ի զարդ և ի զէն սպառազինեալ և ձայնք փողոց և դոփիւնք թմբկաց և այլ երաժշտական գործոց հնչեցուցանէին շուրջանակի. – 236. Որպէս ցուցանեն յիշատակարանք հաւատարիմ պատմագրացն. մանաւանդ թէ աւետարանիչն և առաքեալն Յոհաննէս, որդին որոտման, տիեզերաց հնչեցոյց զորոտումն աւետեաց Աւետարանին Քրիստոսի – 76.

ՀՆՉԵՑՈՒՑԵԱԼ - բարձրաճիչ աղաղակաւ քարոզեալ. իբրև բանիւ զբարբառ հնչեցուցեալ ազդեցուցանօղ իմացունակութեամբ, զգայական ազդարարութեամբ՝ զեկուցանել զպատրաստութիւն նիւթոյն առ կատարումն սրբոյ եկեղեցւոյն աւարտագործեալ: - 396.

ՀՆՉԻՒՆ - և եհան զնոսա յատենէն հոյակապ և շքեղ և երևելի պատուով ի ձայնս երգոց և ի հնչիւնս փողոց. – 314. յայնժամ ահագինս որոտալով ճայթիցէ ի վերայ քո երկինք, և լսիցէ հնչիւն և բոմբիւն և դղրդիւն յանդնդոց, ձայն որոտալոյ սմբակաց բազում ամբոխից երիվարաց և աղաղակ բազում սպառազինաց յարձակեսցին ի վերայ քո. - 148.

ՀՆՉՈՒՄՆ - դրօշ և վերջաւորս փողփողեալս՝ սաւառնաձայն հնչմամբ զլեառնն դնդեցուցանէին – 208. Որգունակ հնչումն տաշելոյ փայտիցն առ Նոյիւ ազդեցութեամբ հիւսնական գործեացն՝ զհեղեղածուփ անդնդաձիգ սահանացն երկնահոս զուգաճանապարհորդութեանն յապրուստ հաւատարիմ առնն յԱստուած յուսացեալ համամիտ ընտանեացն գործակցութեամբ: - 396.

ՀՈԳ - Այնուհետև ել գնաց դէմ եղեալ զյունականօքն շրջել զկողմամբքն, յանձն արարեալ զհոգս իւր շնորհացն Աստուծոյ. – 316. և ոչ ուրեք գտանէր հնար ելիցն ի վտանգաւոր արգելանէն, թէպէտ և բազմաց հոգ յանձին կալեալ վասն առն պատուականի – 346. Զի յառաջնումն ոչ ինչ գոյր հոգ ինչ զբաղմանց, և ոչ մի ինչ ըստ աշխարհաշէն /90/ խնամակալութեանց, կամ պատերազմասէր աշխատութեանց – 92. Տեսեալ կնոջն զՄահմէտ այր հաւատարիմ և ուշմագոյն յամենայն իրս աշխարհականս՝ եղև նմա կին և ետ ի ձեռն նորա զամենայն հոգս տան և ընչից: - 158.

ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ - բայց միայն զհարկաց և զայլ հոգաբարձութենէ ծանուցանէ զպատճառ գալստեանն. – 172. Դարձեալ ի նոյն յարեալ՝ և այլ հոգաբարձութեան աշխարհի խնամ տանէր, ի մեղադրանս մատուցեալ մարգարէիւն հանդերձ սպառնալեօք – 182. և խորհուրդք խորհրդականացս յոչինչ համարեալ լինէին ի գործս մարտից և յայլ կարգս հոգաբարձութեան աշխարհիս. – 194. և անընդունակք լինէիք՝ որ ի մէնջ առաքեցեալքն հազարապետք և վերակացուք աշխարհիս մերոյ և խնամատարք արքունի հոգաբարձութեան գային առ ձեզ. – 244. և բազում և ազգի ազգի հոգաբարձութեամբ տուեալ օգնականութիւնս Հայոց աշխարհիս, շինելով քաղաք Թէոդուպօլիս ի Կարին գաւառի, և զօրս կողմնակալս ի պահեստ՝ ընդդէմ կալ պարսկական յարձակմանցն: - 114. և զուարճ և զուարթ խրախութեամբ յուսակցէին առ տիրական նախախնամօղ հոգաբարձութիւն շինութեան աշխարհիս – 360. և ոչ առ մի ոք այդչափ խնամ և հոգաբարձութիւն առնէաք, որչափ ընդ ձեզ և ընդ աշխարհ ձեր. – 244. Զոր հոյակապն Տրդատ կարգադրեալ վայելչապէս հոգաբարձութեամբ զպատերազմականն հարկանել հարկս ընդդէմ հինից արշաւանաց. զոր կարգապետութիւն և առ սուրբ հրեշտակն գտանեմք /գրքում՝ զտանեմք/ յարարչական նախախնամութենէն, զաշխարհի զօգուտն բերելով: - 398. ի ձեռս մեր է հոգաբարձութիւն աշխարհիս – 212. Իբրև յաջողեցաւ Արտաշէսի ամենայարդար պատրաստութեամբ և աշխարհաշէն հոգաբարձութեամբ, որպէս բացայայտեն գիրք պատմագրաց – 86. ինքն իսկ փոյթ յանձին կալեալ՝ ել գնաց մեծաւ հոգաբարձութեամբ, լուծանել զնա ի տառապանաց արգելանին. սակայն և այնպէս ոչ կարաց գտանել զելս իրացն վտանգի առնն: - 346. ,,Թագաւորաց աշխարհակալաց օրէնք են՝ մեծաւ հոգաբարձութեամբ խնամ տանել վասն շինութեան աշխարհի և թեթևացուցանել զլուծ բռնութեան /184/ ծանրակի բեռանց, թուլացուցանելով զաստկութիւն հարկապահանջ խոշտանգանաց – 186.

ՀՈԳԱԼ - ,,լուռ լե՛ր առ այժմ, և յայլում ժամու հոգացայց վասն որոյ խորհիս. – 114. և զզօրն տուեալ ի ձեռս Վահանայ Ամատունոյ, հոգալ զգործ պատերազմաց, թէ արդեօք դէպ լինիցի ուստեք: - 96. և ոչ ինչ փոյթ եղև ումեք հոգալ զուստեք արշաւանս և զգերփանս - 96. և սուսեր ընդ մէջ ածեալ զբանն տերունական, զոր ասացն, թէ ,,յորժամ մատնիցեն զձեզ, մի՛ հոգայցէք թէ ո՛րպէս, կամ զի՛նչ խօսիցիք – 204. Զի ի հասանել ի վերայ նորա ցաւոցն մահաբերաց՝ ոչ հոգացաւ զմանկականն իւր տարաժամ ելսն յաշխարհէս – 386. զոր և Պօղոս հոգացաւ բացայայտել զ-Է աշտիճանեան մասունս ի Հոգւոյն սրբոյ աւանդեալ եկեղեցւոյ սրբոյ: - 398. որպէս ցուցանեն յիշատակարանքն որք յառաջ քան զմեզ հոգացան, զոր ինձ աւելորդ թուի երկրորդել:- 324. որք ոչ ըստ օրինի եկեղեցականաց կրօնից զվարսն յարմարէին, այլ ընդ մարզպանին Մշկանայ լծակցեալ հոգալ զաշխարհիս: - 118. Քանզի յոյժ պատկառ կայր ի պաշտօնատարութիւն հայրապետին իշխանն Տարունոյ, և նա սաստիկս հոգայր վասն նորա, թէպէտ ոչ օգտէր յիրին յայնմիկ: - 346.

ՀՈԳԱԾՈՒԹԻՒՆ - որ եկեալ ոչ կարգաւորաբար աշխարհախնամ հոգածութեամբ յարդարէր զկարգս աշխարհիս. – 114. սա առաւելեաց յամենայն հոգածութիւնս ի գիւտս իմաստութեան ուսումնասիրութեան և այլն ամենայնի՝ քան զհարս և զհաւս իւր: - 334.

ՀՈԳԱՑԵԱԼ - վասն հանդերձելոցն հոգացեալ, առ կղերս եկեղեցւոյ սրբոյ խոնարհեալ – 386.

ՀՈԳԵԱՑ ՎԱՆՔ - յղէ առ Գուրգէն զՎահան Արծրունի և զվանաց երէցն Թէոդորոս զգլխաւորն Հոգեաց վանից, ասէ. – 330.

ՀՈԳԵՇԱՀ - Քանզի առաջնոցն ուրուականք և ստուերականք ոմանք՝ ըստ իւրաքանչիւր կարծեաց թուելոց վրիպեցան յաստուածածանօթն գիտութենէ հոգեշահ նահապետացն: - 40.

ՀՈԳԵՒՈՐ - զի հոգևոր էր պատերազմն և ոչ մարմնաւոր - 232. Քանզի թէպէտ և տարաժամ լրմամբ ժամանակի չափաբերեալ կենացն Աշոտի՝ հաստատնագոյն և անվրէպ լուծման կենացս առ հոգևորսն և յաւիտենականսն և անվախճան կենացն առաւելութիւնն անցեալ գնացեալ ժամանեաց – 386.

ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆ - Եւ ինձ ի վերայ տրտմականացն դէմ եդեալ առ կատարելագոյն և առ անզուգական անհամեմատ խնդութիւնն դեգերել, առ հոգևորական ուրախութիւնսն ընթանալ յետ մարմնական տրտմականացն յաճախութեանցն: - 386. Եւ մինչդեռ կային կենդանի և գոհանային զՔրիստոսէ զանյաղթ զօրութենէն զոր զօրացոյց զսուրբսն մեծ ասպարիսի ի հոգևորական պատերազմին՝ ևս առաւել բարկացեալ թագաւորն՝ իբրև զինոց վառեալ բորբոքէր. – 292. Իսկ երիցս երանելի սուրբքն տէր Յոհաննէս Արծրունեաց եպիսկոպոս և երանելի քահանայն Գրիգոր և տէր Գրիգոր Արծրունի խրախուսեալք յԱստուած, կացեալ յատենի ի մեծ ասպարիսի հոգևորական պատերազմին – 250.

ՀՈԳԻ - ,,որչափ սաստիկ պատժոց արժանի համարիցիք զայն, որ զՈրդին Աստուծոյ առ ոտն եհար և զարիւն նորոյ ուխտին խառնակ համարեցաւ և զՀոգին շնորհաց թշնամանեաց,,: - 258. ,,Քրիստոնեայ եմ և մեռանիմ վասն Քրիստոսի, և մկրտիմ ի Հայր և ի յՈրդի և ի Հոգին սուրբ, ոչ ջրով, այլ իմով արեամբ: - 222. այլ և ինքն Մահմէտ, մոլեկան հոգւով շարժեցեալ՝ տայ գրել զանուղղայս, զոր մեք ի բազմաց զսակաւս յիշեսցուք: - 164. Բայց բացումն դրան քան զամենայն այս չար է որ յաներևոյթս է բացեալ, դուռն կորստեան հոգոց՝ առաւել քան թէ մարմնոց – 196. Ետ պատասպանի երանելի Մուկաթլ լի հաւատովք և ճշմարիտ խոստովանութեամբ ի Հայր և յՈրդի և ի Հոգին սուրբ, ասէ. – 290. Եւ այսպէս կատարեցաւ սուրբն ամենայաղթ նահատակն Քրիստոսի Մուկաթլ փառաւորապէս ի Հայր և յՈրդի և ի Հոգին սուրբ, որում փառք յաւիտեանս ամէն: - 290 և աւանդեաց զոգին երանելին Յովնան ճշմարիտ խոստովանութեամբ ի Հայր և յՈրդի և սուրբ Հոգին, որում փառք յաւիտեանս: - 296. և ի նիրհելն իւրում՝ ձայնէ հոգին աւտար ի բերանոյ կնոջն քարացելոյ եթէ՝ ծնցիս որդի աշխարհակալ. որ և ի պոռնկութենէ յղացեալ իսկ էր դուստր ցեղի Դանայ: - 158. Եւ կատարեցաւ սուրբ վկայն փառաւորապէս ի Հայր և յՈրդի և ի Հոգին սուրբ -224. և հարցեալ և պատասխանեալ սուրբն լի կատարեալ իմաստութեամբ Հոգւովն սրբով՝ զոր անմեկնելի ունէր յինքեան սուրբն. – 104. և հաւատալն նորա ի մի Աստուած Հայր և մի Որդի նորա ի Բանն Աստուած Յիսուս Քրիստոս և ի մի Հոգի սուրբ, զուգակից և բնութենակից և փառակից Հօր և Որդւոյ, ի մի Աստուածութիւն կատարեալ. – 94. և մկրտեալ սուրբ և անբիծ խոստովանութեամբ ի Հայր և յՈրդի և ի սուրբ Հոգին, ի ձեռն մեծին Գրիգորի հանդերձ ամենայն նախարարօքն Հայոց մեծաց: - 94. և ոչ եմ բաւական պատմել զանցս անցիցն կորստականութեանն նոցա մոլորութեան, վրիպել յուղիղ և յամբիծ առաքելաքարոզ դաւանութեան հաւատոց կաթողիկէ եկեղեցւոյ ի Հայր և յՈրդի և ի Հոգին սուրբ. – 240. և փոխանակ զգեստու հարսանեաց զգեստ մկրտութեանն ծանուցեալ ցուցին, զոր ջրով և Հոգւովն սրբով զգեցեալ էին – 266. զի կարասցէ խոտորել ի գաղտնիս զոգի սրբոյն, զզրահեալն Հոգւովն սրբոյ վերեկութեամբ – 204. զոր եցոյց նմա Հոգին սուրբ՝որ ինչ առ յապա ժամանակս գործելոց էր – 120. զոր և Պօղոս հոգացաւ բացայայտել զ-Է աշտիճանեան մասունս ի Հոգւոյն սրբոյ աւանդեալ եկեղեցւոյ սրբոյ: - 398. զսեղանս խորհրդականս փրկագործութեանն յատակել, հիմն ի վեր /գրքում՝ վերայ/ տապալել զաւազանն մաքրափայլ լուսաւորութեանն Հոգւոյն սրբոյ - 124. ընդդէմ արաբացի ասպատակողացն յարիւն և յապաժոյժ ի վերայ հայրենի աշխարհի մարտուցեալ և զհոգի և զմարմին փոխանակ սրբոց եկեղեցեաց Քրիստոսի և ի նոյն հաւատացելոց ի Հայր և յՈրդի և ի Հոգին սուրբ, առ զնոսա ամբողջ և անբիծ պահելոյ – 300. ընդդէմ արաբացի ասպատակողացն յարիւն և յապաժոյժ ի վերայ հայրենի աշխարհի մարտուցեալ և զհոգի և զմարմին փոխանակ սրբոց եկեղեցեաց Քրիստոսի և ի նոյն հաւատացելոց ի Հայր և յՈրդի և ի Հոգին սուրբ, առ զնոսա ամբողջ և անբիծ պահելոյ – 300. Իսկ սուրբն վառեալ Հոգւովն սրբով՝ յիշէ զասացեալն ի Փրկչէն, թէ ,,մի երկնչիք յայնցանէ, որ սպանանեն զմարմինն, և զոգին ոչ կարեն ապականել,, - 204. Խորտակէր և զնշան տէրունական Խաչին, զոր ուրեք ուրեք կանգնեալ լինէին. քանզի յոյժ ստիպէր զնա հոգին մոլեկան: - 168. ճաշակեալ ճաշակս զհացն կենդանի, և զաղբիւր արեանն կենդանի և կենդանարար որդւոյն Աստուծոյ՝ աւանդեաց զհոգին ի ձեռս սրբոց հրեշտակաց – 388. միանգամայն սաստկացուցանէր ի վերայ նորա զահարկութիւնն, զի գոնեայ այնու

կարասցէ արդեօք վրիպեցուցանել ի ճշմարիտ հաւատոցն որ ի Հայր և յՈրդի և ի Հոգին սուրբ. – 294. Նոյնպէս եթէ ոչ հաւատք սրտի և խոստովանութիւն շրթանց ամբողջ պահիցին՝ ոչ կարասցէ հետևել ճշմարիտ դաւանութեանն ի Հայր և յՈրդի և ի Հոգին սուրբ. – 256. սա էր այր ժանտ, և մոլեկան հոգւով շարժեցեալ՝ բազում չարիք մարտնչէր ընդ ազգն քրիստոնէիցն. – 168. Սիմոն Սամարացի մատուցեալ առ Փիլիպպոս զհոգւոյն պարգևաց լեզուացն, և սրտին կեղծաւորութեամբ զիա՞րդ պատժապարտեցաւ. – 258. վրիպել յանբիծ և յուղիղ յառաքելաքարոզ հաւատոցն ի Հայր և յՈրդի՝ և ի Հոգին Սուրբ: - 196. քանզի ոչ եթէ մարմին ինքնաշարժ է, այլ հոգին է ինքնաշարժ. – 54.

ՀՈԳԻԱԶԱՐԴ - Այլ ի հրամանէ Աստուծոյ յանդիման դրախտին բնակելով պահոք ապաշխարութեան սգացեալ եղեն, ողբալով զվրիպումն առաջին կենացն, ամենայնիւ հրաժարեալ ի մարմնականաց, հոգիազարդ մարգարէութեամբ ժուժկալեալք ի մսոյ և ի գինւոյ: - 30.

ՀՈԳԻԱՍԷՐ - Եւ որք ոչ այսոցիկ նման՝ լուան ի Տեառնէ՝ մի մնասցէ ոգի իմ ի մարդկանդ յայդմիկ յաւիտեան, վասն լինելոյ դոցա մարմին. այսինքն մարմնասէրք և ոչ հոգիասէրք: - 30.

ՀՈԳ ՏԱՆԵԼ - զշինութեան և զխաղաղութեան հայրենի աշխարհի երկասիրաբար հոգ յանձին տանել. – 388.

ՀՈԳ ՏԱՐԵԱԼ - և այնպէս անկարօտս առ պիտանացուս հոգ տարեալ՝ գլխաւորեաց որ ինչ շինութեան և խաղաղութեան աշխարհիս նպաստաւոր առ օգտակարագոյնսն պահանջէր գործառնութեան եղանակք – 392.

ՀՈԼԱՆԵԱԼ - և կանայք կոտորելոցն հանդերձ խառնիճաղանճ ամբոխիւն լրբենի դիմօք, հոլանեալք և ի բաց ընկեցեալ զձև կանացի բնութեան, որպէս օրէն է նոցա, մանաւանդ տաճկական ազանց, և ի հետիոտս դիմեալք ի դուռն արքունի հասանէին: - 180.

ՀՈԼԱՆԻ - Այլ հինիցն ասպատակքն, սովոյն բռնութիւն, գերիվարացն տառապանք, գազանաց յարձակմունքն, ներքին և արտաքին վրդովմունքն հոլանի առնէին զաշխարհս: - 316. իսկ կինն ճիչ բարձեալ ասէ. ,,առ թագաւորն հասցէ գոյժ իմ,, , շրջելով ընդ բանակն հոլանի, զոր չէր օրէն տաճկական ազգի կանանց, բայց ոչինչ օգնեաց. – 272.

ՀՈԼՈՎԵԱԼ - և ապաշաւանք ոչ սակաւք դիմեցին հոլովեալ ի վերայ իմ. – 378. քարինս տաշահոս հոլովեալ ի նիւթ եկեղեցւոյն ի Մանազաւեանն նահանգէ ընդ Բզնունական ծովն բերեալ մատուցանէ առ կատարումն հրաշագեղ դիտանոցին սրբոյն Սիօնի, այլովքն սրբական անուանակոչութեամբ տեղեաց տնտեսականին բանին Աստուծոյ մարդ եղելոյ: - 396.

ՀՈԼՈՎԵԼ - Եւ զօրացն քաջալերեալ ընթացան յիւրաքանչիւր զէնսն և հեծեալ յընտիրս երիվարացն՝ կացին ի հանդիպոջ և հանդիսացան գումարեցան ի մի վայր և պնդեցան կարգեցան մածեան հոլովեցան յինքեանս – 230. ուր հոյլքն էրէոցն խայտան և վայրենեացն խոզից և առիւծուցն մորիքն և երամակք ցոռոց պատրաստական առ որսոյն հրճուանք առ ձեռն պատրաստ հոլովին – 392.

ՀՈԼՈՎՈՒՄՆ - Եւս առաւել քան զանդնդականն յուզմանցն բռնալիր հողմոցն զծիրանեգոյն ալիսն, զլեռնաձև կուտակսն և զվիշապաձայն գոչմունսն՝ ևս յաւէտ ահագնակի վրդովմամբ զմրրիկ անձանց ի մէջ եռաշարժ ընթացմանցն, ի հոլովմանց խոհարանի իշխանական սրտին ի ներքս հարկաւորաբար բռնազբօսեալ /350/ ձգեն: - 352. հարուստ մի հեռի զքարանցն տաշելոյ զհոլովումն բերելով առ տրամադրութիւն կոչարանին իբրև ասպարիսօք երիւք, զբացագոյնն մօտագոյնս գործելով սայլիցն հոլովմամբ. – 396. հարուստ մի հեռի զքարանցն տաշելոյ զհոլովումն բերելով առ տրամադրութիւն կոչարանին իբրև ասպարիսօք երիւք, զբացագոյնն մօտագոյնս գործելով սայլիցն հոլովմամբ. – 396. մերժել հեռանալ … և որ այլ քաղցրագոյն վայելք ընդ երկնաւս ի վերայ երկրի, պայծառ գեղ արեգական և լուսնի, հանդերձ աստեղացն ճոխագործութեամբքն ընդ տարերբ երկնի յեղյեղով, ծովու և այլոց ցամաքայնոց, և ջրայնոցն բարեփառ հոլովմանցն հրճուանաց, և որ ինչ ընդ այլք ընդ դոքօք պատկանին յարմարաբար տնտեսութիւնք առ սկզբնատիպն պատկերակերպութիւն: - 386.

ՀՈԼՈՎՔ - Բայց սպարապետն Սմբատ և տիկինն Վասպուրական Հռիփսիմէ անդէն մնաց, և յաւելան ի մարտիրոսական հոլովսն: - 324.

ՀՈԾ - այլ է արդարև նշոյլք արեգական, /32/ սեռն օդով ծածկեալ ի վերայ խիտ և հոծ ամպոց խոնաւագունից – 34.

ՀՈՂ - Եւ զբուն բանակն առնէին ի Ղոկորուատ աւանին, ունելով ընդ ինքեանս զբազմութիւն գերւոյն կուտեալ իբրև զհող: - 208.

ՀՈՂԱԲԼՈՒՐ - Իսկ ի տիրական զօրավարութեանն Գագկայ սկզբնաւորեալ ձեռակերտ իւր՝ շինեաց զհողաքլուր բարձրաւանդակն ի Մահռաշտ գեօղ յափն գետոյն յելս կոյս, որ հայի յՈստանն Ռշտունեաց – 394.

ՀՈՂԱՆԱԼ - անմահից կենաց հաղորդն՝ ի ձեռն անիծիցն հողացաւ -.22.

ՀՈՂԱՆԻԹԵԱՅ - որով անգիտացեալ զհողանիւթեայ իւր զանգուած՝ յահաւորէն Աստուծոյ և յարարչէն խորհեցաւ թիկունս դարձուցանել – 20.

ՀՈՂՄ - Դարձեալ շինէ զօրավարն Գագիկ ի գլուխս Օձ ձորոյ, որ վասն խստութեանն սաստկաշունչ դառնալիր մահածին հողմոյն շնչելոյ այսպէս անուանեն – 396. Եթէ, որպէս ասացի, ի բաց գնաս յինէն՝ խաղաղութիւն է, և թէ ոչ՝ պատերազմ և կռիւ և ճակատամարտ ... դու եղէգն՝ և մեք հուր դիւրաճախ, դու յարդ՝ և մեք հողմք դիւրափուչ – 280. և առանց հողմոյ նաւաբեկեցաւ – 250. և իբրև հողմ զպրակս եղեգան տատանեալ՝ սասանեալ խռովեցուցին զբազմութիւն զօրացն: - 368. և իբրև հողմ հոսեալ զփոշի ամարայնոյ՝ այնպէս արագապէս զպատերազմին գլխաւորեցին նահատակութիւն: - 330. Եւ յորժամ դարձեալ պակասիցէ զօրութիւն ջերմ օդոյ հարաւային հողմոյն/260/… յայնժամ վիշապն նեղի, շտապի, տագնապի բռնութեամբ ուժոյ զօրութեանն – 262. Եւս առաւել քան զանդնդականն յուզմանցն բռնալիր հողմոցն զծիրանեգոյն ալիսն, զլեռնաձև կուտակսն և զվիշապաձայն գոչմունսն՝ ևս յաւէտ ահագնակի վրդովմամբ զմրրիկ անձանց ի մէջ եռաշարժ ընթացմանցն, ի հոլովմանց խոհարանի իշխանական սրտին ի ներքս հարկաւորաբար բռնազբօսեալ /350/ ձգեն: - 352. Զի թէ առագաստ նաւին յերկոսին կոյս ոչ պարզիցի՝ ոչ ուղղակի նաւարկութիւնն ճանապարհորդիցի, կամ թէ նաւաբեկեսցի իսկ ի բռնութենէ մրրկալից հողմոյն զալիսն կուտակելով: - 256. Ի սորա յերրորդ ամի թագաւորութեանն ի վերայ Հայոց աստուածատուր բարկութեամբ անդնդաշարժ վրդովմամբք ներքնագոյն խորոցն պատահեալ միմեանց սահանախաղաց դղրդմամբ, հիմնաշարժ տապալմամբ, /356/ ներքսագոյն երկրի թուլացեալ պնդափակ աղխեալ սանդարամետական սահմանին, բարկութեան հողմոց շնչեալ ընդ ջրոցն խաւարայնոց, ի կոհակս անդնդաքակս զթանձրայատակ երկրի զկարծր և զծանրալիր անկշիռ անբաւութիւնն տատանեալ, մինչ յերեսս երկրի ի վեր մղեալ հանդէպ քաղաքին Արտաշատու /գրքում՝ Արտաշասու/, որ Բլուրն նորուն ասի – 358. որպէս յարդ ի հողմոյ վարեալ, կամ ծուխ վատնեալ ի մրրկէ՝ այնպէս կորեան գնացին յերեսաց զօրացն Աղուանից: - 286. Քանզի թէ Աստուած կամեսցի՝ տանելոց է սաստկութիւն հողմոյ զզօրութիւն քո իբրև զփոշի,,: - 140. և փակեցին ի ներքս զոտն լերինն իբրև զծով շուրջանակի, ի վեր ձգելով զկուտակումն ալեացն ի բռնութենէ հողմոցն վարելոյ. – 276.

ՀՈՂՑ - Այլ ելեալ արտաքս ի ռազմէն՝ դարձաւ փախստեայ ընդ ճանապարհն Հողցայ. – 368.

ՀՈՂՑԱՅ ՊԱՀ - Բայց քանզի ընդարձակ էր պահն Հողցայ՝ փութանակի եկն եհաս Ժիրաք ի գաւառն Ռշտունեաց և զզօրսն առխթեալ ի ձորն Առուանից, ի սահմանս Մոկաց. – 202.

ՀՈՄԱՆԻ - ամենածախ գանձիւք առատաձեռն պատուով հոմանեաց և եթ ունելով ուշ – 44.

ՀՈՅԱԿԱՊ - Եւ Դերանիկն զօրացեալ զօրութեամբ Քրստոսի, և հոյակապ և անուանի եղեալ ընդ բոլոր աշխարհ Հայաստանեայց՝ և խաղաղանայր երկիրս ի շփոթմանցն ի վերայ եկելոցն: - 318. և եհան զնոսա յատենէն հոյակապ և շքեղ և երևելի պատուով ի ձայնս երգոց և ի հնչիւնս փողոց. – 314. Եւ էր գրեալ ի միում թղթի անդ, յիշեցուցանելով զոր ինչ գործեաց Աշոտ ի զօրսն Ապահունեաց զյաղթանակ պատերազմին և զհոյակապ անուն ստանալոյն՝ ասէ – 382. և ընդ նմա Գրիգոր որդի Վասակայ, և սա նմանապէս ոգեզուարճ իմաստութեամբ առ լցեալ հոյակապ և անուանի ի մէջ Հայկականացս և ցանկալի

լսողացս և ուրախարար տեսողաց. – 344. Եւ իշխանքն մեր ստացան ճոխագոյն հոյակապ անուն ի մէջ Հայաստանեայց – 336. և քաջքն և հոյակապքն ելևելս զմիմեամբք առնէին ախոյեանայարձակ խրոխտանօք: - 328. Զոր հոյակապն Տրդատ կարգադրեալ վայելչապէս հոգաբարձութեամբ զպատերազմականն հարկանել հարկս ընդդէմ հինից արշաւանաց. զոր կարգապետութիւն և առ սուրբ հրեշտակն գտանեմք /գրքում՝ զտանեմք/ յարարչական նախախնամութենէն, զաշխարհի զօգուտն բերելով: - 398. Իսկ նոցա անմեկնելի գոյոյս իւրեանց ի Քրիստոս ունելով, բնաւից գերագոյն և հոյակապ անուն ստացեալ, գյաղթութեան նշանակ կանգնեալ. - 308. Յայնժամ իսկ և իսկ փութացեալ /գրքում՝փութեցեալ/ եհաս գուժկանն առ հոյակապն Աշոտ իշխանաց իշխան, զեկուցանելով նմա որ ինչ գործեցաւն: - 348.

ՀՈՅԼՔ - ուր հոյլքն էրէոցն խայտան և վայրենեացն խոզից և առիւծուցն մորիքն և երամակք ցոռոց պատրաստական առ որսոյն հրճուանք առ ձեռն պատրաստ հոլովին – 392.

ՀՈՅՆՔ - և Խ արամբք ի դիմի հարեալ հազարի միոյ՝ սպան զբազումս ի նոցանէ զընտրելոցն Յունաց – 302.

ՀՈՆԱԻԱՐ - ելին գնացին առ Ատոմ … Յիսէ Տրունեաց տէր որդի Հոնաւաբայ, Վարազշապուհ Աբելինից տէր, Թադէոս Ակէացի Շերեփայ որդի, և այլք ընդ նոսա: - 364.

ՀՈՌԻ - և զինքն յանձն արար երանելի եպիսկոպոսին և ճգնաւոր քահանային, հանգեաւ բարի խոստովանութեամբ ի հոռի ամսեան, որ օր Ե էր ամսոյն յաւուր ուրբաթու՝ ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր – 254. Եւ կատարեալ Աշոտ զկեանս իւր՝ մեռաւ ի Վանտոսպ գաւառի, ՅԻԳ թուականութեանն Հայոց, յամսեանն հոռի, որ օր Զ էր ամսոյն, յաւուր հինզշաբաթոջ. և տարեալ հանգուցանեն ընդ եղբարս իւր ի վանս սուրբ Խաչին յԱղբագ գաւառի: - 338.

ՀՈՌՈՄՔ - Ընդ ժամանակս Հայրակղի կայսեր Հոռոմոց էր հասեալ ի վախճան թագաւորութեանն Պարսից: - 156. մի՞թէ ոչ կարէին Հոռոմք սպանանել զնա, և բառնալ զթագաւորութիւնն Պարսից ի ժամանակի, իբրև ետ Աստուած զսա ի ձեռս մեր. այլ արարին ի վերայ նորա ողորմութիւն: - 144.

ՀՈՍԱՆՈՒՏ - ոչ պիտոյացեալ եկամուտ լուսոյ, որով նսեմասցի առ ի հասանել երեկոյին, ոչ ապաժամանութիւն արեգական առ ի մերժել զմութ գիշերի լուսազգեստ ստեղծուածոյն, որ յետ առաջնոցն կարգի և դասու՝ զերկրորդն փոխանորդեցաւ վիճակ, ոչ կերակուր հոսանուտ առ ի լրութիւն տարաբարձ ունակութեանց անապականին, որ դոյզն ինչ փոքրագոյն քան զհրեշտակս գոլ. – 20.

ՀՈՍԱՆՔ - Բայց հասեալ Բուխայ անց ընդ գետն մեծ զոր Կուրն կոչեն, և յորձանուտ շարժման գարնանային հոսանացն տեղի տուեալ ելանել զօրուն և բնակել շուրջ զքաղաքաւն. – 270.

ՀՈՍԵԱԼ - և անդ ընդ փոքր զառ ի վայրն իբրև զհեղեղատ յորդեալ հոսեալ հասաւ ի վերայ նոցա, ի Քրիստոս խրախուսեալ – 400. և իբրև հողմ հոսեալ զփոշի ամարայնոյ՝ այնպէս արագապէս զպատերազմին գլխաւորեցին նահատակութիւն: - 330. և նորա ելեալ սակաւ արամբք՝ իբրև ջուր ընդ զառ ի վայրն հոսեալ՝ արար հալածական զՎահան և զզօրս նորա. – 310.

ՀՈՍԵԼՈՑ - Զի թէ միոյ փայլատակման ընթացք և ճայթումն ամպոց բաւական է պակուցանել քաղել զուշեղութիւն ոգւոց, զի՞նչ ինչ յայնժամ կրէին ոգիք մնացելոցն յերկրի, ի սահանաբաց և յանդնդաքակ վրդովմանցն հոսելոց, նախ քան զջրհեղեղ ջուրց սատակումնն: - 32.

ՀՈՎԱՆԱԻՈՐԵԱԼ – մանաւանդ /370/ թէ նախախնամող և պահպանական աջն Քրիստոսի հովանաւորեալ առ ապրուստ հրածին կարկտաբեր հասեալ կորստական դիպուածին, օգնութիւն հասեալ յԱստուծոյ՝ քաջասրտագոյնս զնա գործեաց և շութափեալ զնա ի ժանեաց գազանին – 372.

ՀՈՎԻՏ - գունդ կազմեալ ռազմ արարեալ զբոլոր դաշտաձև հովիտն ի ներքս փակէր, վառեալք զինու և ամենայն պատրաստութեամբ ընդդէմ գնդին Հայոց: - 172. և բանակեալ կային ի լերինն որ ի վերայ գեղջն Թուայ, /224/ ի հովիտս նորա, որ կոչի Արեան լիճ. – 226. Եւ

հասեալ ի մի վայր գան հովիտն Կուղպան, ուր Գուրգէն բանակ արարեալ /362/ էր ի Կարկինեանս տեղւոջ բազմաձեռն զօրու. – 364. Յորոց վերայ սուր եդեալ կոտորեցին, և լցին դիակամբք սպանելոցն զդաշտաձև հովիտն: - 306. և հովիւքն տաւաղելով զգառինսն քշէին ի դալարաբեր հովիտն – 268. Իսկ ի մէջ երեքբարմատեան զոգաձև հովտին փոքու, որ յերից բլրոցն խոնարհի՝ շինէ աշտարակ բարձրաբերձ փորուածոյ միջոցաւ – 88. Իսկ շուրջ զբերդանման ապարանօքն՝ պարսպէ զբլուրն շուրջանակի յապառաժուտ տաշելոց քարանց, քաղաք ամենալից զհովիտն ամրացուցանելով: - 86. որոյ ջրմուղ կազմեալ ածեալ հասուցանէ ի մէջ հովտին: - 88.

ՀՈՎԻՒ - ,,են ոչխարք իմ, որ ոչ են յայսմ գաւթէ, և զայն ևս պարտ է ինձ ածել այսր, և ձայնի իմում լուիցեն և եղիցին մի հօտ և մի հովիւ. – 224. Եւ այս եղև, զի լցցի որ ասէ, ,,զարթի՛ր սուր ի վերայ հովուի և ի վերայ առն ընկերի նորա. – 238. իբրև զքաջ հովիվ/ճիշտը՝ հովիւ/ եդեալ զանձն ի վերայ խաշանց մեռանել, նմանակերպեալ պատկերակից լինել որդւոյն Աստուծոյ – 300. և անդ զբարիոք պատերազմն պատերազմեալ՝ որպէս քաջ հովիւ զանձն իւր եդ ի վերայ հօտին – 104. և զրկեալ լինին Հայք ի լուսաւոր վարդապետէն և ի քաջ հովուէն սրբոյն Ներսիսէ. – 108. և իբրև զպարիսպ անդամանդեայ՝ այնպէս եդին զանձինս ի վերայ բազմութեան զաղթականին աշխարհակոյտ ամբոխիցն, իբրև քաջ հովիւ ի վերայ խաշանց մեռանել յանձն առին: - 230. և իբրև զքաջ հովիւն դրուատեալ ի փրկչէն՝ զանձն իւր եդ ի վերայ խաշանց ընդդէմ ապականարար գայլոցն, յարձակեալ յանխնայ դիմեցուածովք, յարիւն և յապաժոյժ, ի սատակումն և ի ծախումն սրոյ մատնեաց բոլորովիմբ զյարձակեալս նեղիչս աշխարհիս. – 312. և հովիւքն տաւաղելով զգառինսն քշէին ի դալարաբեր հովիտն – 268. Եւ ջանայր զպարիսպն պղնձի կործանել. զգաւազանն երկաթի խորտակել, զհովիւն մատնել ի կորուստ և զհօտն յապականութիւն: - 344. Զայս և առաւել քան զսոյն խրատէր և ուսուցանէր սուրբ հայրապետն և քաջ հովիւն տէր Յոհաննէս կաթողիկոս Հայոց մեծաց: - 182. զի մի հօտն առանց հովուի յանապատս և ի վիհս կորստեան թափառական յածիցին գայլոցն գահավիժութեամբ: - 104. Զի ոչ միայն առ շինութիւնն՝ այլ և յարիւն և յապաժոյժ առաքինաբար զանձինս եդեալ ի վերայ խաշանցն մեռանել իբրև զքաջ հովիւ – 392. ի վերջին ամի սորա տիրեն Եգիպտացւոց հովիւքն… - 56. հարից զհովիւն և ցրուեցին ոչխարքն. – 238. սոցա ի թիկունս հասեալ և հովիւ մի՝ պարսատկաւ քարինս ի վերայ արկանէին. – 202.

ՀՈՎՈՒԱԿԱՆ - ուր զսեղանն սուրբ և զգաւազան հովուական և զմատանին պատկերեալ և զգօտին աշխատասէր միջոյն թողեալ ի հանապազորդ յիշատակ լուսաւորութեանն մերոյ հօրն: - 104.

ՀՈՎՈՒԱՊԵՏ - առատապէս հեղեալ զգութ … և ի ձեռն հովուապետին սրբոյն Յովհաննիսի եպիսկոպոսի և ճգնաւոր քահանայի Գրիգորի , որք միշտ զողորմութեանց խնդրուածս վասն ժողովրդեանն տեառն ի վեր առաքէին , զոր օրինակ և հրեշտակն տեառն աղերսէր Աստուծոյ, ասէ – 314.

ՀՈՎՈՒԱՊԵՏՈՒԹԻՒՆ - Իսկ երանելի եպիսկոպոսին Յոհաննու ընտրեալ իւր առանձնակ միայնաստան տեղեակ, աղօթից միայն պարապեալ, ի բաց կալով յեպիսկոպոսական հովուապետութենէ: - 324.

ՀՈՎՏԱՁԵՒ - Եւ զի հուպ առ հուպ են խառն աշխարհք երկոցունցն, և քաղաքն ի հովտաձև դաշտին՝ նպաստաւորէր խոշոշ վիրագին քաջասրտագոյնս լինել: - 352. և թափառական զվէմս ապաստան արարեալ յանկասկածագոյն տեղիս դարանի ի փոքր վիմամէջս ի կարկառս հովտաձևս հանդէպ հարաւոյ քաղաքաբերդին Վանի, մօտ այն տեղի, յորում բղխէ աղբիւրաբար առ ստորոտով բլրակի միոյ, մօտ յեզր ծովուն – 84.

ՀՈՏ - և կացեալ զաւուրս բազումս անթաղ՝ և ոչ ինչ ամենևին արատեցան մարմինք սրբոցն, և ոչ գոյր հոտ ժախտ ի վերայ նոցա: - 268.

ՀՈՏՈՏԵԼԻՔ - ոչ միայն ի տեսիլ խտղտման աչաց և զուարճումն հոտոտելեաց՝ այլ և ի կազմութիւն դեղոյ բժշկական հնարագիւտ իմաստասիրութեանց կազմեալ Ասկղեպեայ վարժմամբն: - 86.

ՀՈՐԴԵԼ - և հորդեաց երանելին Զուիթայ ճանապարհ բարի բազմաց վկայից ի մէջ Հայաստան աշխարհիս, որ յարևելս և յարևմուտս: - 104.

ՀՈՒՆ - Եւ է զի ի նուրբ և ի հուն տեղիս ջուրցն անկեալ՝ ի նմին խրեալ կան անշարժ, և դիւրաւ անկանիցի ի ձեռս որսորդաց. – 260.

ՀՈՒՊ - Եւ /106/ նոյնժամայն հուպ ընդ հուպ ի դիմի հարեալ Մեհուժանայ և կարթակոտոր զասպազինեալ երիվարն արարեալ քաջին Սմբատայ՝ տոռն արկեալ ի պարանոցն Մեհուժանայ ասէ. – 108. Եւ անդէն ոչ կարացեալ շինել զերկիրն այն հուպ ընդ հուպ մինչ յութերորդ ամն Արտաշէսի – 90. Եւ զի հուպ առ հուպ են խառն աշխարհք երկոցունցն, և քաղաքն ի հովտաձև դաշտին՝ նպաստաւորէր խոշոշ վիրագին քաջասրտագոյնս լինել: - 352. Իսկ իշխանն Վասպուրական, այն ինչ հուպ ընդ հուպ եկն ի ժամադրեալ տեղին. ընդ որ յոյժ ուրախացեալ թագաւորն, իբրև զերծեալ ի կասկածանացն, զոր ունէր յիշխանէն Սիւնեաց: - 382. մանաւանդ զի աւերեալ էր երկիրն յասպատակէ Պարսից, այն ինչ հուպ մեռանելն Երուանդայ և ընդ թագաւորելն Արտաշէսի:- 90. Որ և հուպ ժամանակաւ վախճանի և կայսր Թէոդոս, և առնուն զթագաւորութիւնն Ոնորէոս և Արկադ որդիքն Թէոդոսի: - 110.

ՀՈՒՊ ԱՌ ՀՈՒՊ - Եւ զի հուպ առ հուպ են խառն աշխարհք երկոցունցն, և քաղաքն ի հովտաձև դաշտին՝ նպաստաւորէր խոշոշ վիրագին քաջասրտագոյնս լինել: - 352.

ՀՈՒՊ ԸՆԴ ՀՈՒՊ – Եւ /106/ նոյնժամայն հուպ ընդ հուպ ի դիմի հարեալ Մեհուժանայ և կարթակոտոր զասպազինեալ երիվարն արարեալ քաջին Սմբատայ՝ տոռն արկեալ ի պարանոցն Մեհուժանայ ասէ. – 108. Եւ անդէն ոչ կարացեալ շինել զերկիրն այն հուպ ընդ հուպ մինչ յութերորդ ամն Արտաշէսի – 90. Իսկ իշխանն Վասպուրական, այն ինչ հուպ ընդ հուպ եկն ի ժամադրեալ տեղին. ընդ որ յոյժ ուրախացեալ թագաւորն, իբրև զերծեալ ի կասկածանացն, զոր ունէր յիշխանէն Սիւնեաց: - 382.

ՀՈՒՍԿ - քանզի Յունաց հուսկ երբեմն յետոյ գտաւ զիր ի Կաղմեա յումեմնէ Փիւնիկեցւոյ: - 18.

ՀՈՒՐ - այլ ես ասեմ քեզ, եթէ Տէր կամեսցի՝ վաղիւ պատելոց է զքեզ պատերազմ քաջաց. և ճեթեսցեն ի վերայ քո իբրև զամպս երկնից ի բռնալիր նիզակօք անցանիցեն ընդ մէջ բազմութեան քո իբրև զփայլատակունս հրոյ շանթից: - 140. Այլ և զհուրն զիա՞րդ մասն աստուծոյ ոչ ամաչեն ասել - 52. Այլ և հուր և ծծումբ նաւթիւ բարձեալ ի գործ պատերազմին, և զլոյծ բնութիւնն յանօթս ապակեղէնս եդեալ, և մանր զծծումբն ընդ նմին խառնեալ, եդեալ ի պարսատիկ մեքենայից, և զհուրն առ ընթեր նմին, հնարաւորեալ արկանել զամրոցաւն: - 208. Այլ և հուր և ծծումբ նաւթիւ բարձեալ ի գործ պատերազմին, և զլոյծ բնութիւնն յանօթս ապակեղէնս եդեալ, և մանր զծծումբն ընդ նմին խառնեալ, եդեալ ի պարսատիկ մեքենայից, և զհուրն առ ընթեր նմին, հնարաւորեալ արկանել զամրոցաւն: - 208. այլ և ոչ հուր մեկնեալ յամպոյ, ապա թէ ոչ՝ հարկ էր և ի գիշերի երևել. – 32. Արդ եթէ Սոդոմայեցիքն, որ հրով զվրիժուցն հատուցին փոխարէնս, և դարձեալ տանջելոց են՝ որ բովանդակ չարիւք անդր երթալոց են ո՞րպիսի ակնկալութիւն տանջանաց զանց արասցէ զնոքօք. – 336. Դարձեալ զի երկրպագէ հրոյ, և արեգական, որ է Հեփեստոս, մասն աստուծոյ ասելով, զիա՞րդ իցէ, զի գողն և ապիկարն իբրև զաստուած երկրպագիցի: - 52. Եթէ, որպէս ասացի, ի բաց գնաս յինէն՝ խաղաղութիւն է, և թէ ոչ՝ պատերազմ և կռիւ և ճակատամարտ ... դու եղէգն՝ և մեք հուր դիւրածախ, դու յարդ՝ և մեք հողմք դիւրափուչ – 280. Եւ առհասարակ ամենայն տիեզերք ծխեալ տեսանիցեն, և ի քէն ամենեսին հուրն ոչ պակասեսցէ յաւիտեան, իբրև զինոց խեցագործաց այրեսցիս, և քեզ ոչ եղիցի հանգիստ: - 164. և յերկրորդումն հանդերձեալ են վերստին մտանել ի տանջանս յաւիտենականս, ուր որդն ոչ վախճանի և հուրն ոչ շիջանի: - 336. Եւ անդ Վահան Արծրունի խոյակապ և յականաւոր քաջամարտութեամբ ընդ սրբոյն Վարդանայ ճակատ առ ճակատ վառեալ զպատերազմն, իբրև հուր ընդ եղէգն ճեմելով ի մէջ քաջ ախոյեանացն Պարսից: - 128. և զբնակիչս արքայութեան արար բնակիչս յաւիտենական հրոյն - 264. և ի ձէնջ խնդրեցից երիս ինչս, և լուարուք ինձ – ի բաց արարէք յաշխարհէ զսուր և զհուրք և զգերութիւն, և յերիցդ օգուտ գտանէք. – 144. և ի սաստիկ փայլմանէ

զինուցն և սուսերացն շողալոյ, և ի փայլիւնն սպառազէն երիվարացն վառելոցն՝ զկարծիս բերէր զհրոյ վառեալ լերինն – 228. և իբրև հուր ընդ եղէգն ընթացեալ՝ այնպէս հասեալ ի վերայ մեր իբրև զմարախ, իբրև զջրոհեակ և իբրև զթրթուր խառնիճաւն /238/ հանդերձ – 240. և լեառնն իբրև ի հրոյ վառեալ երևէր: - 232. և Հեփեստոս և Պռոմիթոս, որ է արեգական և լուսին՝ գողացան զհուրն յՈրմզդայ և մասն ինչ ետուն ի մարդիկ.– 48. և հուր կրակարանին բորբոքեալ՝ աստուածակէզ արարին զնա յորմզդական մեհենին. – 126. Եւ նոյն ժամայն շուրջ փակեալ զքաղաքաւն հրձգութեամբ, և դիզեալ բորբոքէր հուրն ի դիւրածախ փայտէն մայրից և գիոց: - 272. և նստան ի ներքս ի քաղաքին ԻԱ օր. ապա ելեալ բանակեցան արտաքոյ քաղաքին, և զքաղաքն այրեցին հրով: - 142. և քանդեալ աւերեաց զամենայն ապարանս թագաւորին և այրեաց զնոսա հրով, և բազում գանձս մթերեալս յափշտակեաց անչափ աւարաւ գանձս ոսկոյ և արծաթոյ և հանդերձից, և անասուն բազում յոյժ, և բազմութիւն գերեաց իբրև զաւազ ծովու անթիւ: - 150. զայն զինեալ ի վերայ անձանց՝ սաստկացուցանեն զպատերազմն, աներկիւղ մնալով ի հրոյն տոչորմանէ. – 208. զի այնու փքացեալ առ հուրն յաւակնեալ զինքն տացէ. – 114. զի թէ ես յաղթեցից՝ երդուեալ ի մեծ աստուածն Որմազդ և յարեգական և ի լուսին և ի հուր և ի ջուր և ի Միհր և յամենայն աստուածս՝ զի ձեզ տուեալ լիցի թագաւորութիւն Հայոց. – 138. զոր ոմանք հուր մեկնեալ յամպոյ ասացին, և որդիք տարրապաշտիցն՝ գօտի Արամազդայ: - 32. Իսկ նոքա պատահեալ Պարսից ի գեօղն Երիզ կոչեցեալ, իբրև մրրիկ զփոշի պտուտեալ, իբրև հուր ընդ եղէգն ընթացեալ՝ սուր ի վերայ եղեալ վանեցին զբազումն քան եթէ զսակաւս – 136. իսկ որք արուք ընդ արուս զխայտառակութիւն գործէին՝ ծծմբախառն հրով բորբոքեցան, զյաւիտենական հրոյն զառհաւատչեայս յինքեանս կրելով – 336. իսկ որք արուք ընդ արուս զխայտառակութիւն գործէին՝ ծծմբախառն հրով բորբոքեցան, զյաւիտենական հրոյն զառհաւատչեայս յինքեանս կրելով – 336. մինչև անձամբ անձին արարեալ ի հուր սատակի: - 58. յայնժամ ելցէ հուր ի քէն ծնեալ, և կերիցէ զքեզ և զբազմութիւն ուստերաց և դստերաց քոց, ի քէն ակն ունելով զբորբոքումն: - 148. նա արար զհուր – 46. Նա և ջուր մաքուր յապակի զուտ և վճիտ արկեալ, ի տապ արեգականն դնելով, և զնիւթ հրոյն առ ընթեր՝ ի շողոյ անտի արևակէզ եղեալ տոչորի նիւթն: - 52. ոչ ասել զհուր արարած Որմզդի, այլ բնութիւն Որմզդի – 48. որ ի բախմանէ քարի և երկաթոյ կայծակունք արտաթափին, այլ և ի փայտից ընդ միմեանս յիրար շփելոյ, որպէս և անուոյ բնաւորեցաւ լինել, որ ի սաստիկ շրջագայութենէ սայլիցն բազում անգամ և առեղք փայտիցն վառմամբ հրոյ հրդեհին: - 52. որք ասեն զՀեփեստեայ գողանալ զհուրն յաստուածոյն, մասն ինչ մարդկան շնորհել և զոլովն ինքեան ունել – 52. պատրաստ եմք ի կապանս, ի բանտս, ի գանս, ի հուր, ի սուր, ի ջուր, ի տանջանս հարուածոց և յամենայն հնարս չարչարանաց,,: - 246.

ՀՈՒՐԱՍԴԱՆ ԳԵՏ - ետ նմա զԱրևաստան զամենայն մինչև ցՄծուին և զերկիրն Հայոց մինչև ցգետն Հուրասդան, և զգաւառն Կոտայից մինչև յաւանն Գառնի յեզր ծովուն Բզնունեաց և մինչև յԱռեստն աւան և զԿոգովիտ գաւառ մինչև զՀացիւն և ցՄակու: - 140.

ՀՊԱՏԱԿ - Որոյ երթեալ առ Շապուհ յիշեցուցանէ նմա զհարազատէն իւրմէ Մեհուժանայ՝ միամիտ և հպատակ /108/ լինիլ արքայի, և զպատերազմացն գործ և զբազում աւարառութիւնս և զգերփանս Հայոց աշխարհիս ի Մեհուժանայ, և զմահն նորա ի ձեռանէ քաջին Սմբատայ Մամիկոնէի- 110.

ՀՊԱՏԱԿՈՒԹԻՒՆ - անկեղծաւոր և աննենգ տիրասիրութեամբ ցուցանել հնազանդութիւն հպատակութեամբ, մինչ յարիւն և յապաժոյժ նահատակութեամբ առնուլ վրէժս ի Պարսկացն հինիցն՝ զաւեր եկեղեցեացն Հայաստանի և զնեղութեանցն և զգերփանացն և զաստիկ արիւնահեղութեանցն զքրիստոնէից և զուխտի մանկանց եկեղեցւոյ սրբոյ: - 134. Բայց էր Համամ սեգ և ամբարհաւաճ, յոյլ և թոյլ առ պատերազմի գործ, միայն և շղոմարար հպատակութեամբ վարէր առ թագաւորն – 90. Եւ եղև մինչ կային իշխանքն ի միաբանութեան առանց կարծեաց կասկածանաց ի հպատակութեան ելեալ յարքունուստ հազարապետին /340/ որդւոյն Հալթի, և զմիաբանական սիրոյն շաղկապ ի միասին յօդեալ

պնդեալ անքակ պահէին – 342. և կացուցեալ զնոսա ի կարգի ստրկութեան, որոյ զփոյթ հպատակութեան ցուցեալ՝ կարգէ զնոսա ի գործ ծառայութեան, կրել արծուիս և բազէս. – 64. զի այնու հպատակութեամբ լցցէ զպաշտպանակս թագաւորին – 90. որք ծանուցեալ զբռնանալն նորա ի վերայ պարսկական պետացն և զինչ կրեցին, զմտաւ ածեալ և զխառն ընդ աշխարհիս զդրակցութիւնն, և թէ գուցէ զպարսկայինն հասանիցէ մեզ կրել և աշխարհիս մեր՝ ձեռն ետուն հաւանութեան ի նորայն կալ մնալ հպատակութեան: - 360. Սոքա ամենքին աղխիւ և ընտանեօք իւրեանց թողին զտունս բնակութեան իւրեանց և զհայրենիս իւրեանց, ի վերայ մտերմութեամբ հպատակութեան որդւոցն Դերանկին. – 364.

ՀՊԱՐՏԱՅԵԱԼ - ի յաղթանդամութիւն ապաստանեալք, և ապարասանք հպարտացեալք ի զօրութիւն բազկի.–28. Ողբացէք բնակիչք կոտորելոցդ, զի նմանեցան ամենայն ժողովուրդք Քանանացւոց, և սատակեցան ամենեքին, որ հպարտացեալ էին արծաթով,,: - 180.

ՀՊԱՐՏՈՒԹԻՒՆ - Եթէ, որպէս ասացի, ի բաց գնաս յինէն՝ խաղաղութիւն է, և թէ ոչ՝ պատերազմ և կռիւ և ճակատամարտ … դու խաղալիկ՝ և մեք մանկունք, ի ձեռն առեալ զզօրութիւն քո՝ խաղալով խաղամք ընդ քեզ և ամենայն հպարտութիւն ամբարհաւաճութեան քո. – 280.

ՀՊԵԼ - զշրթունս մեր մաքրեսցուք ի մաքուր խոստովանութիւն հպելով և զմիտս մեր սուրբ պահելով ի հաւատս ճշմարիտս. – 256.

ՀՌ - Եւ ասի լինել թիւ մարդկանն ապականելոց ի շարժմանէ՝ ոգի առաւել քան ՀՌ: - 358.

ՀՌԻՓՍԻՄԵԱՆՔ - զոր տարեալ հանգուցանեն ի տեղւոջն, զոր այժմ Զորոյ վանս անուանեն, ի վկայարան սրբոց Հռիփսիմեանց. – 104.

ՀՌԻՓՍԻՄԷ - Բայց սպարապետն Սմբատ և տիկինն Վասպուրական Հռիփսիմէ անդէն մնաց, և յաւելան ի մարտիրոսական հոլովսն: - 324. Եւ անտի դարձեալ դառնայր Աշոտ ընդ միւս ևս ամրականն ընդ ոստոզերծ քարանձաւի, ի յարևելից կուսէ լերինն Վարագայ, ի վերայ գեաւղջն Կոխպանից, հանդէպ եկեղեցւոյն սրբոյն Հռիփսիմեայ – 334. և կարգեաց նմա ռոճիկս օր ըստ օրէ ըստ արժանի մեծ տիկնոջն Հռիփսիմեայ: - 226.

ՀՌՈՄԱՅԵՑԻՔ - այլ ես ոչ երկեայց ի ժողովելոց երիցանցդ Հռոմայեցւոց, որ գումարեալ գան ի վերայ իմ: - 138.

ՀՌՈՎՄ - Զընդ նոյն ժամանակս և Նաւատիոս երէց ի Հռովմ առաքէր ընդդիմակս Եղկղեսիանոսացն – 256.

ՀՌՈՎՄԱՅԵՑԻՔ - նոքա երթեալ մտին անդ, փակեցին զդրունսն և ամրացան ի նմա և սկսան ապստամբել ի Հռովմայեցւոց տէրութենէն: - 156.

ՀՌՉԱԿ - որոց անուանք քաջութեան իւրեանց հռչակ հարկանէր ընդ ծագս տիեզերաց – 242.

ՀՌՉԱԿԵԱԼ - Բայց մեք զյոյժ հռչակեալսն միայն նշանակեցաք. – 96.

ՀՌՉԱԿԵԼԻ - Այսոքիկ գաւառք անուանիք, զոր յառաջին ժամանակս իւրոյ իշխանութեանն սեփհականս իւր արարեալ ունէր հայրն նենգութեան Մարդպետն կոչեցեալ … և մանաւանդ քաղաքն Շամիրամայ հռչակելին և յոյժ փառաւորագոյնն յամենայն կողմանց Վասպուրականի: - 388.

ՀՐԱԲՈՐԲՈՔ - և արծաթագործ եօթնփորձեան հրաբորբոք ճարտարապետն ի բովս հալոցացն զուտ և վճիտ արծաթ ընտրելով, արծաթեղինեան զփայտեղէնն պատեալ արտաքուստ – 378.

ՀՐԱԺԱՐԱԿԱՆ - այլ ի մարդկապէս բարբառոյ աստի ցուցանէ ի հրաժարականն ի սպառ վախճան: - 28.

ՀՐԱԺԱՐԵԱԼ - Այլ ի հրամանէ Աստուծոյ յանդիման դրախտին բնակելով պահոք ապաշխարութեան սգացեալ եղեն, ողբալով զվրիպումն առաջին կենացն, ամենայնիւ հրաժարեալ ի մարմնականաց, հոգիազարդ մարգարէութեամբ ժուժկալեալք ի մսոյ և ի գինւոյ: - 30.

ՀՐԱԺԱՐԵԼ - զի զոր անձանց՝ զնոյն և այլոց գիտասցեն հրաժարել ի զօշոտութենէն, որ առաջնոյ անկմանն եղև պատճառ – 26. ոչ շատացաւ ինքեան ծնելութեամբն առ ի զմայլումն հրաժարել ի կերակրոյ – 20.

ՀՐԱԺԱՐԵՑՈՒՑԱՆԵԼ - Եւ յորդորականիւ հրաժարեցուցանէր զնոսա ի բաց կալ յապիրատ և ի վնասակար գործոցն զոր գործէին – 182.

ՀՐԱԽԱՌՆ - հրախառն տոչորմամբ եռացեալ շուրջ զսրտիւն արիւնն՝ մաղձախառն բերմամբ յապուշ զմիտսն կրթեալ՝ կայր ի մէջ տարակուսի – 180.

ՀՐԱԾԻՆ - մանաւանդ/370/ թէ նախախնամող և պահպանական աջն Քրիստոսի հովանաւորեալ առ ապրուստ հրածին կարկտաբեր հասեալ կորստական դիպուածին, օգնութիւն հասեալ յԱստուծոյ՝ քաջասրտագոյնս զնա գործեաց և շութափեալ զնա ի ժանեաց գազանին – 372.

ՀՐԱՀԱՆԳ - և զի էր վարժեալ ուսմամբ Աստուածաշունչ գրոց և ընդել և ծանոթ էր ճարտասանական հրահանգիցն՝ եդ առ յայն ժամու իմացական տեսութիւնն զերգս – 284.

ՀՐԱՀԱՆԳԵԱԼ - նորին հրահանգեալ կրթարանի ուսումնասիրութեանն վարժիւք ոռոգացեալ, այր քաղցրաբարոյ և հեզահայեաց, հասարակաբար առ հասարակ զինքն վարկանելով, արտաքոյ ամբարտաւանական բարձրայօնութեանն՝ կալով յաշտիճան հեզոցն, դրուատեալ ի փրկչէն մերմէ Յիսուսէ Քրիստոսէ: - 376.

ՀՐԱՋԳՈՒԹԻՒՆ - Եւ ի սաստիկ բախմանէ խուռն նիզակացն և ի զինուց փայլելոյ և շողալոյ սուսերացն և սրնգելոյ աղեղանցն լարելոյ՝ հրաձգութիւն իմն արտաքս ելանէր իբրև յամպոց ճայթմանէ – 232. Եւ նոյն ժամայն շուրջ փակեալ զքաղաքաւն հրձգութեամբ, և դիզեալ բորբոքէր հուրն ի դիւրածախ փայտէն մայրից և գիոց: - 272. կամ թէ յամպոց ինչ ճայթիւն արձակելոյ և ի վայր հրաձգութիւննն արկանէ ի կարկտաբեր և յանձրևաբեր ժամանակի - 228.

ՀՐԱՄԱՅԵԱԼ - և իսկ և իսկ հրամայեալքն զկատարումն առնուին: - 328. և մի զմիոյ հետ ստիպէր՝ փութալ միոյ միոյ ի նոցանէ յանդիման նմա հատուցանել ծառայական սպասաւորութիւնս, զոր և արարին իսկ Աշոտ և Գագիկ և Գուրգէն, կամաւոր և ակամայ զնորայն կատարելով հրամայեալս – 370. և տեսանելով մեր զխնամարկութիւն բարի կամաց քոց ի վերայ աշխարհի, և զսէր երախտեաց որ առ մեզ՝ յօժարագոյնս եղիցուք և մեք մտերմութեամբ ծառայել և փութով մեծաւ կատարել զհրամայեալսն ի քէն„: - 186. Զսա տեսեալ Մահմէտի՝ /162/ կոչեաց և յարեցոյց առ ինքն, հրամայեալ նմա գրել գիրս օրինաց ազգին իւրոյ, ձեռամբ Աբութուռաբայ իսմայէլացւոյ. քանզի ինքն ոչ գիտէր գիր և ոչ դպրութիւն: - 164. Յետ ջրհեղեղին հրամայեալ՝ կերիջիք միս իբրև զբանջար խոտոյ. – 30. վասն որոյ և աստուածայնոցն առ Մովսէսիւ հրամայեալ՝ առնուլ վրէժխնդրութեամբ ազգացն Քանանացւոց զառ ի նահապետէն կարգեալ սահման. – 34. եթէ հաւանեալք արդարոյն և ապաւինեալք ի նա՝ յուսացան ի բան նորա, ծառայել երկիւղիւ հրամայելոցն ի նմանէ՝ զի՞նչ անհաւատ թուի և ի փրկութենէն ընդ նմին վայելել. - 32.

ՀՐԱՄԱՅԵԼ - զի և զմատեանս առաջնոցն մեծասաստ ստիպով ի մի վայր գումարեալ՝ հրամայեաց այրել. – 44. ,,հրամայեա արձակել արս հաւատարիմս, և ես յորժամ հասից ի դուռն արքունի՝ ի նմին ժամու խնդիր արարից Խաչին, և գտեալ զնա տայց բերել առ քեզ„: - 154. „ձայն իմն ահաւոր հրեշտակի անկեալ ի վերայ իմ՝ հրամայեաց երթալ պատգամաւոր յազգն իմ, ցուցանել զԱստուած արարիչ երկնի և երկրի. առնուլ ինձ անուն գլխաւորութեան, և զստութիւն հաւատոց որ ի կուռս՝ յանդիմանել և քակտել„: - 158. „տո՛ւր ինձ, ասէ, ի գերելոց այտի՝ որչափ և կամք քո հրամայեսցեն„: - 218. այլ հրամայեսցէ մեզ գրել ի Հայս և հարցանել առաջնորդացն Հայոց, և ընդունել պատասխանիս„: - 132. այլ հրամայէր միայն զգուշանալ և ոչ ելանել պատերազմաւ ընդդէմ նոցա, մինչև տեսցէ զելս իրացն. – 162. այլ Մկրտչին հրամայի՝ մի ըմպել գինի և օղի. սա ոչ միայն գինով ոչ զկծէր, այլ և ոչ ջրով զծարաւոյն պէտսն կատարէր, սակաւապետութեամբ ընդոմիք թրջելովք, և խստավայել բանջարովք առ քաղցն վայելելով: - 376. ապա անարգեաց զնա և Կաւատ արքայ, եհատ ի վերայ նորա դատաստան մահու, և հրամայէ արանց մտանել և սպանանել զնա. – 152. ապա հրամայեաց զերկոսին զձեռն

ՃԱՆԱՊԱՐՀ - Ազդ լինէր յոմանց գրումն անյայտիցն, թէ ,,այս ոմանք այսորակ երիվարօք յայս նիշ նիւս կեղթում, ի մէջ բղեղի պահարանեալ նամակ տանին ընդ կողմն Ապահունեաց. արդ զգուշացիր ճանապարհիդ,,. - 340. այլ գնաց զխոտորնակ և զձախողակի ճանապարհ աղտեղասէր բազմադիմակ պղծութեամբք – 108. Այլ ելեալ արտաքս ի ռազմէն՝ դարձաւ փախստեայ ընդ ճանապարհին Հողցայ. – 368. Արդ այսքանեաց վկայութեանց ի մի վայր եկելոց՝ մի ելցուք գհետ առասպելաբանիցն թէ ընդ անկոխն գնալով ճանապարհ. – 260. Դէպ եղև նմա ճանապարհաւ գալ ի քաղաքն Մադիամ, էր և ծանօթ գիտութեան գրոց, թէպէտ և ոչ կատարելապէս: - 162. Եւ ազատորերոյն Վասպուրականի աղերսեալ՝ մի երթալ զայն ճանապարհ, առաջի դնելով զախտակրելն՝ նորա ընտրեալ զմահ ի վերայ քեռոյն իւր, քան զկեանս կեղակարծ ինչ խորհել զնմանէ: - 384. և աղաղակեալ զկնի նորա՝ զի թերևս ի լուր ձայնին և ի փայլումն զինուցն և ի շողալ սուսերին և ի խխնջիւն քաջ երիվարին և ի վազս երագութեանն ուժոյ ազդ լինիցի և դարձցի ի ձայն նոցա և ծանիցէ, և դարձցի ի կորստական ճանապարհէն – 228. և այլ ոմն յարտաքին իմաստնոց ասէ, ընդ աներկիւղ ի ճանապարհ մի երթալ: - 354. և անդուստ խաղացեալք ընդ անապատ ճանապարհ գնացաք ի ծովակողմն կոյս – 50. Եւ արտաքոյ յետ ճանապարհին իմացաք էշ մատակ, որ ունի յաւանակ – 50. և դարձուցին ընդ նոյն ճանապարհ ընդ որ եկեալ էր, ոչ թողացուցին նմա ելանել ընդ աշխարն Վասպուրական. – 336. Եւ եղև այր թանգար արուեստիւ և հմուտ վաճառականութեան. հարկանէր ճանապարհս հեռաւորս ի գործ վաճառականութեանն, յԵգիպտոս և ի կողմանս Պաղեստինացւոց. – 158. Եւ երկայնագոյնս զպատաղմունսն ի ճանապարհին արարեալ՝ ձգին մինչ յԱրզն Աղձնեաց – 66. և զինքն համեմատ Փրկչին ասաց լինել և ուղեկից ճանապարհի նորա, յասելն Եսայեայ մարգարէի, ,,հեծեալ մի իշոյ, և հեծեալ մի ուղտու,,՝ զայս ամենայն յինքն յարակցէր: - 164. և ընդ հարթն գնասցուք ճանապարհ, և մի խոտորեսցուք մի յաջ և մի յահեակ. – 256. և իբրև զեկուցաւ նմա եղեալքն՝ դարձաւ անդրէն գնաց յիւր ճանապարհ: - 332. Եւ ինքն Աւշին զտանջանացն փորձական կիրս կրեալ, դառնագոյն քան զլեղի իժի ճաշակս ճաշակեալ՝ գնաց զկորստական ճանապարհին. – 376. և հորդեաց երանելին Զուիթայ ճանապարհ բարի բազմաց վկայից ի մէջ Հայաստան աշխարհիս, որ յարևելս և յարևմուտս: - 104. և նոցա կալեալ զճանապարհն անապատի՝ գնացին ի Տաճկաստան առ որդիսն Իսմայէլի, ի քաղաքն որ կոչի Մադիամ – 156. և վաճառականքն զհեռաւոր

ճանապարհացն խոկային պատրաստութիւնն – 268. զի ապականեաց ամենայն մարմին զճանապարհս իւր ի վերայ երկրի. – 28. զի մեռաւ նա ի ճանապարհի, ի կողմանս Ասորոց, յելանել նորա ի վերայ աշխարհիս Հայոց՝ չարչարեալ զսուսա որպէս խորհեցանն. – 184. զի ոչ կամիմ զմահ մեղաւորի, որպէս բառնալ նորա ի չար ճանապարհէն և կեալ: - 30. Իբրև հեռացաւ թագաւորն զերկուց աւուրց ճանապարհ՝ Ապումբուան ելեալ ի ձիընթացիկ ասպարէզն զգնայր. – 368. Իբրև ստուգեցաւ որ ինչ եղեալն էր՝ փութացան խնդրել ի քաղաքին և ի կիրճս ճանապարհին, յոր կողմ և աճապարեաց ոք, մինչ անցեալ գտին զհարեալն դիւի չարի, զի կայր դեռ կիսամեռ: - 378. Իսկ զԱհմատ ընդ Վասպուրական աշխարհն անցանել գնալ՝ ելեալ զհետ նորա Շապուհ որդի Աշոտի, մինչ տանել հասուցանել զնա ի մուտս Ասորեստանեայց ճանապարհին: - 346. Իսկ ի հարաւակողմն կուսէ ի ջրամբար արձանագործ քարեղինէն ճանապարհ աշտիճանեալ /390/ ներքուստ ի վեր մինչ ի կատար անձաւին հեշտալիր զելս և զէջս յօրինեալ, քարագործ աւազամած կրագործութեամբ: - 392. Իսկ Պարսկահայոց գոեահն խուժան ածեալ, գաղտագնաց եղեալ ընդ անկոխ ճանապարհս՝ գան հասանեն ի Մարդաստան գաւառ յաւանն Վիտահոտ – 400. նստէր փորող պողոտային նրբավողոց ճանապարհին, որ հանէր ի վերին մայրաքաղաքն Սիոն, ի բանակետղն երկնաւոր զօրացն յարքայանիստ քրիստոսական թագաւորութեան: - 204.

ՃԱՆԱՊԱՐՀ ԱՐԱՐԵԱԼ - Եւ եղև ի գնալ Դերանկին ի ձմերոցս Վասպուրական իշխանացս, ճանապարհ արարեալ ընդ ձորն Ընծայից, որոյ ելքն ընդ գաւառն Հեր քաղաքի: - 352. Եւ ճանապարհ արարեալ ընդ կողմն հիւսիսոյ՝ ել դէպուղի ի Կարնոյ քաղաք – 148. ճանապարհ արարեալ ընդ Ատրպատական, կասկածելով թէ գուցէ Գուրգէն և կամ մի ոք ի տոհմէն Արծրունեաց և նոցին ազատաց ի կորովացն Վասպուրական հեծելոցն հասանիցէ ի վերայ և թափիցէ զնա ի զօրացն և հանցէ ի ձեռաց իմոց: - 220. Յայնմ ժամանակի Բուհայ եկն եմուտ ի Խլաթ քաղաք, ճանապարհ արարեալ ընդ կողմն Ապահունեաց. – 200.

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԵԼ - քանզի ասեն զկնոջէն, յորմէ նեռնն է ծնանելոց՝ ճանապարհորդել յԵգիպտոսէ յաշխարհն Պաղեստինացւոց, և ցանկացեալ տեսանել զարձան կնոջն Ղաւտայ երթեալ դադարէ անդ հանգստութեամբ. – 158.

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԻԼ - Զի թէ առագաստ նաւին յերկոսին կոյս ոչ պարզիցի՝ ոչ ուղղակի նաւարկութիւնն ճանապարհորդիցի, կամ թէ նաւաբեկեսցի իսկ ի բռնութենէ մրրկալից հողմոյն զալիսն կուտակելով: - 256.

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ - առաջապահեստ ճանապարհորդութեանն արարեալ զՄերշապուհ Արծրունի զօրավար Հայոց և զՎահան Ամատունի և եղբայր Մեհուժանայ՝ տարեալ հանգուցանեն ի տեղւոջ հայրենեացն վկայարանի ի Թորդան: - 108.

ՃԱՇ - և տայր զօրավարին և իշխանացն ամենեցուն պարգևս մեծամեծս, և բաշխէր զօրացն ամենեցուն դահեկանս ի խոռկս, և ճաշս և ընթրիս ուրախութեան կազմէր ամենայն զօրացն մինչև Է օր: - 144.

ՃԱՇԱԿ - ճաշակեալ ճաշակս զհացն կենդանի, և զաղբիւր արեանն կենդանի և կենդանարար որդւոյն Աստուծոյ՝ աւանդեաց զհոգին ի ձեռս սրբոց հրեշտակաց – 388. Եւ ինքն Աւշին զտանջանացն փորձական կիրս կրեալ, դառնագոյն քան զլեղի իժի ճաշակս ճաշակեալ՝ գնաց զկորստական ճանապարհն. – 376.

ՃԱՇԱԿԵԱԼ - Եւ ինքն Աւշին զտանջանացն փորձական կիրս կրեալ, դառնագոյն քան զլեղի իժի ճաշակս ճաշակեալ՝ գնաց զկորստական ճանապարհն. – 376. ճաշակեալ ճաշակս զհացն կենդանի, և զաղբիւր արեանն կենդանի և կենդանարար որդւոյն Աստուծոյ՝ աւանդեաց զհոգին ի ձեռս սրբոց հրեշտակաց – 388. ճաշակեալ սակաւ ինչ հաց և գինի գոհացաւ, և առ ընտանիս իւր դարձեալ թախանձագին՝ յարուցեալ էջ ի յամրոցացն – 216.

ՃԱՇԱԿՈՒՄՆ - Այլ և նախապատիւ եւս քան զայրն յաստուածականին լինել կնոջն նախայարձակ ճաշակմամբն: - 20.

ՃԱՌ - Աստանօր ոչ հեշտալիր թուին ինձ պատմութիւն ճառիս շարագրութեան: - 350. Բայց մի ինձ մեղադիր լինիր, ո՛վ ուսումնասէր դու, սակս ոչ զբովանդակ սորա գործս շարել ի ճառս մանրապատումս: - 302. Յայսմ վայրի ոչ մտադիւր ախորժակօք գրեմ զճառս պատմութեանս, որ տրտմականքն, քան թէ ուրախականքն յառաջանան տիրել ինձ: - 384. որ կարի սիրելի է ինձ, մանաւանդ թէ յոլովից, կամ թէ ամենայն հաւատացելոց ի Քրիստոս՝ յերկարագոյնս առնել ի ճառիս զդեգերումն շահատակութեան, ձեզ լսել և ինձ գրել: - 76. Սաստիկ և վտանգաւորք և լի դառնութեամբ որ ինչ ի ճառի աստ են յիշատակարանք, սակս յանձնառութեան մեծ նախարարացն և իշխանացն մերոց. – 240.

ՃԱՌԱԳԱՅԹ - և արևն ի վերայ հասեալ սպառազէն զարդուն՝ և մերկ սուսերացն փայլեալ՝ ճառագայթս արեգականայինս յինքեանց ձգէին շուրջ զլերամբն. – 208. և թէ զիա՛րդ գունդք գունդք հրեշտակաց մի զմիոյ կնի ելևելս առնեն, և զիա՛րդ փայլեալ նշանն տէրունական ահաւոր ճառագայթիւք – 284.

ՃԱՌԱԳԱՅԹԱՁԻԳ - արեգականային ի վերայ խաղալով ճառագայթաձիգ ճեմականացն, յելս և ի մուտս. – 86.

ՃԱՌԱԳՐԵԼ - Զոր յառաջ մատուցեալ ասացից ըստ կարգի, թէպէտ և ոչ խնդամիտ յօժարութեամբ՝ սակայն ակամայ և ի հարկէ ճառագրեցից զբացումն դրան աստուածասաստ բարկութեան ի վերայ մեր – 196.

ՃԱՐԱԿ - և սրոյ ճարակ զամենեսեան տային, խիզախելով իբրև զքաջ նահատակս. – 174.

ՃԱՐՊ - այլ ըստ օրինակի ասացելումն ի Տեառնէ Մովսէսիւ՝ առ ի յանդիմանութիւն արտաքնոցն, զճարպ մեռելոտւոյ տանել ի գործ ինչ արտաքին, այլ ոչ թէ ի կերակուր: - 54.

ՃԱՐՏԱՍԱՆԱԳԱՆ - և զի էր վարժեալ ուսմամբ Աստուածաշունչ գրոց և ընդել և ծանոթ էր ճարտասանական հրահանգիցն՝ եդ առ յայն ժամու իմացական տեսութիւնն զերգս – 284.

ՃԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ - յաճախագոյնս վասն Գուրգինայ վայելէ զդրուատեացն, կարևոր է բազմաձեռն աճմամբ զդրուատեացն յերկարագոյնս հատուցանել զճարտասանութիւնս. - 300. Յերկարագոյնս վասն սորա աճեցուցանել հարկաւոր է զողբերգականացն ճարտասանութիւնս: - 384. Յոքունց կամ թէ բնաւից կարօտանամ իմաստասիրաց գումարից ի մի վայր հասելոց՝ զողբերգականացն ճոխաբանել ճարտասանութիւնս. – 352.

ՃԱՐՏԱՐ - Եւ ոչ անվկայ բանս, որպէս վերագոյնն գրեալ է մեր զդերահատուցականս սորա, վկայութեամբ մարգարէական տառիցն, որպէս և ի պատահմանէ իրացն ճարտար գիտեն՝ որք են ի ժամանակս յայսոսիկ մնացեալ յայն ժամու անդ հանդիպելոցն: - 262. Քանզի ի գնալ նորա զօրացուցանել զքեռին իւր զթագաւորն Հայոց, իսկոյն յելանելն նորա ի տանէ իւրմէ ի Վան քաղաքէ՝ տիրէ ի վերայ նորա ցաւք հիւանդագինք կարապետք մահու, անմերձենալիք ճարտարաց բժշկական ձեռնարկութեանն: - 384.

ՃԱՐՏԱՐԱՊԵՏ - և արծաթագործ եօթնփորձեան հրաբորբոք ճարտարապետն ի բովս հալոցացն զուտ և վճիտ արծաթ ընտրելով, արծաթեղինաւն զփայտեղէնն պատեալ արտաքուստ – 378. Իսկ ոմանք ի պատմագրաց ասեն, թէ և դուստր Նոյի և ճարտարապետ նաւին կնաւ և որդւովք և կարևոր բարեկամօք. (տապանի մեջ են մտել) որ և ինձ հաւանականք այսոքիկ թուին. – 30. Նշանն քրիստոսեան քառածրագիծ փայտիւ արուեստագործեալ ճարտարապետի ումեմն հիւսնեալ – 378. որգունակ քաւութիւնն և այլ կաի սպասու խորանին ի Մովսիսէ օրինադրեալ ի ձեռն ճարտարապետացն Եղիաբ և Բեսելիէլ խորանայարդարք: - 378. Ուստի պարտ իսկ էր նախ զանձանց և եթ գիտել, և ապա յերևելեացս աստի զճարտարապետն սոցա իմանալ. – 54.

ՃԳՆԱՍԷՐ - և երթեալ բնակէ առանձնապէս ի Գողթն գաւառի ի տեղւոջ վարդապետութեան սրբոյն Մեսրովպայ, ճգնասէր հրեշտակակրօն վարուք, երանելի մարդկան և ահարկու դիւաց: - 120.

ՃԳՆԱՒՈՐ - առատապէս հեղեալ զգութ … և ի ձեռն հովուապետին սրբոյն Յովհաննիսի եպիսկոպոսի և ճգնաւոր քահանայի Գրիգորի, որք միշտ զողորմութեանց խնդրուածս վասն ժողովրդեանն տեառն ի վեր առաքէին , զոր օրինակ և հրեշտակն տեառն աղերսէր Աստուծոյ, ասէ – 314. և զինքն յանձն արար երանելի եպիսկոպոսին և ճգնաւոր

քահանային, հանգեաւ բարի խոստովանութեամբ ի հոռի ամսեան, որ օր Ե էր ամսոյն յաւուր ուրբաթու՝ ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր – 254. և զուարճացեալ լինէին սուրբ ճգնաւորքն յաւուրս պենտեկոստէից. – 254. Եւ յայսմ պատերազմի ոչ միայն երանելի եպիսկոպոսն և ճգնաւոր քահանայն մարտակից էին տեառն Գրիգորի, այլ և զօրք հրեղինաց – 252. Ընդ նոսին և երանելի եպիսկոպոսն Յոհաննէս և ճգնաւոր քահանայ Գրիգոր – 324. ղեն զոմն ի ճգնաւորացն առ տիկինն, զկռոցն յանդիմանելով զսնոտի և զանօգուտ պաշտօնն, որպէս և սուրբն Քոհւսի առ Արտաշէս: - 88.

ՃԳՆԵԱԼ - որ ի վերայ եկեղեցեաց Քրիստոսի և սուրբ ուղղափառ հաւատոյ արեամբ չափ ճգնեալ նահատակեցան, և զխոստովանողական անուն ձայն ի վերայ եդեալ կարդային: - 132.

ՃԳՆՈՂԱԿԱՆ - Բայց ինձ ոչ դանդաղելի կամ պատկառելի կամ մեղանչելի է զուգակշիռ նահատակելոցն նահատակակից վարկանել զսա և մարտիրոսականաւն զսորայս դրուատել ճգնողական մրցմունս – 300.

ՃԳՆՈՒԹԻՒՆ - Եւ բազում այն էր որ մարտիրոսական ճգնութեամբ վկայեցին, քան որք դրդուեցան, առ ոչինչ համարելով զյափշտակութիւն ընչից և ստացուածոց և զմահս դառնագոյնս: - 124. և կէսք ընկալան զճգնութիւն մարտիրոսական մահու - 222. որք հեղին զարիւնս իւրեանց … և վասն ճգնութեան երանելոյն Գրիգորի Արծրունոյ քաջ նահատկին, յաղթող վկային, խոստովանողին Քրիստոսի – 314.

ՃԵՂՔԵԱԼ - և ճեղքեալ՝ զօրու թշնամեացն յայսկոյս և յայնկոյս՝ արարին մտանել նմա ընդ մէջ զօրուն: - 352.

ՃԵՂՔԵԼ - Այլ որ փոփոխէ զսիրտս իշխանաց նախախնամօղն Աստուած՝ քակեալ բաժանեաց ճեղքեաց զՅովսէփ ի յԱւշնէ. – 374. Եւ արար՝ մինչ ճեղքեաց խզեաց զմիաբանութիւնն Հայոց: - 350. Եւ սկսան յաւելուլ ի վերայ չարեացն այլ չարիս, զի ընդ միմեանս մարտ և կռիւս դնէին յաղագս իշխանութեանն ցանկութեան, և ճեղքեցան ի միմեանց և զօրս գումարեցին ի զերծելոցն ի սրոյն և ի գերութենէն Բուխայի. – 298.

ՃԵՄ - զոր արհամարհեալ Շաւասպ /114/ արձակերեսան զերիվարն ի սիգաքայլ արշաւանս արարեալ՝ աներկիւղ համարձակութեամբ էանց գնաց ճեմ զճեմի առ զօրավարն Անատողի: - 116. զոր արհամարհեալ Շաւասպ /114/ արձակերեսան զերիվարն ի սիգաքայլ արշաւանս արարեալ՝ աներկիւղ համարձակութեամբ էանց գնաց ճեմ զճեմի առ զօրավարն Անատողի: - 116.

ՃԵՄԱԿԱՆ - արեգակնային ի վերայ խաղալով ճառագայթաձիգ ճեմականացն, յելս և ի մուտս. – 86.

ՃԵՄ ԱՌԵԱԼ- և թագաւորն Լիդէացւոց ճեմս առեալ երթայր զկնի զօրուն: - 66. և Դերանիկն ճեմս առեալ սիգաքայլ երիվարաւն եհաս հանդէպ ճակատու գնդին վառեալ, միայն և առանձինն ի յառուամէջ տեղւոջ. – 352.

ՃԵՄԱՐԱՆՔ - դուզնաքեայ երասանակալ փայտիւն վազս առեալ սիգաքայլ ճեմարանօք ընդ կապուտակաձև երկնագոյն լեռնային և դաշտական ասպարէզս – 396.

ՃԵՄԵԼ - Եւ անդ Վահան Արծրունի խոյակապ և յականաւոր քաջամարտութեամբ ընդ սրբոյն Վարդանայ ճակատ առ ճակատ վառեալ զպատերազմն, իբրև հուր ընդ եղէգն ճեմելով ի մէջ քաջ ախոյեանացն Պարսից: - 128.

ՃԵՄԻԼ - նազելով և սիգալով, իբրև զկորիւն առիւծու ճեմէր, անկասկածելի մնալով, առ ոչինչ համարելով զհէնն եկեալ հասեալ, փակեալ շուրջ զնովաւ. – 210.

ՃԵՆԱԶՆԵԱՅ/ՃԵՆԱԶՆ/ - յերկուց թագաւորազանց զաճմանն սեռի բերելով զբողբոջս զՍենեքերիմայն և զՄամգունեաց ճենազնւոյ, ի միասին զզուգամասն պայազատեալ գահընկալ թագաւորական զարմ - 300.

ՃԵՊ - Եւ ելանէին գունդք գունդք շտապով և ճեպով մի զմիոյ կնի, և ամենայն ոք որ տեսանէր՝ ընդ մեծաւ երկիւղիւ ներքաղրեալ լինէր: - 284. Նոքա վազս առեալ ճեպով խուռն յարձակմամբ սպառազինեալ այրուձիոց. – 352. փութացաւ ի կողմանցն Տարունոյ երագագոյն ճեպ զճեպի. – 322.

ՃԵՊ ՋՃԵՊԻ - փութացաւ ի կողմանցն Տարունոյ երագագոյն ճեպ զճեպի. – 322.

ՃԵՊԵԼ - Աստանօր զվկայեալ բանիս՝ և մեք ի ճեպելն փութասցուք – 260. Եւ ինքն զօրավարն Մուսէ ճեպէր շտապէր՝ փութալ առ պատերազմն վառել – 328. և իւրաքանչիւր այր զախոյեան իւր յերկիր հարեալ՝ և ինքն զկնի միւսոյն ճեպէր: - 232. և հրաման հարկեցուցանող ճոխութեան քո ստիպէ զմեզ, ճեպել փութալ առ գիւտն հանդիսանալ և կարգել ոճով զփափագելին յայտարարական գրով, դրոշմել կանոնել ի գիրս աստ – 12. Զի թէպէտ և Գուրգէն մեծաւ զօրութեամբ ունէր զդէմ յարձակելոցն ի վերայ, որոց զիշխանականն ճեպէին հասանել գահ, կամ որ արտաքին տաճկական պատերազմունքն բռնաբար ի ներքս դիմէին՝ սակայն ոչ յապահովանայր դեռ երկիրն: - 316.

ՃԻ - Եւ այս ամենայն այսպէս եղեալ, կեցեալ սուրբն Սահակ ամս ՃԻ՝ փոխի յաշխարհէս ի կարգս հրեշտակաց – 120. որոյ ժամանակ կենացն տևեալ ձգեալ ամս ՃԻ լի և պարարտ ծերութեամբ – 122.

ՃԻՉ ԲԱՐՁԵԱԼ - իսկ կինն ճիչ բարձեալ ասէ. ,,առ թագաւորն հասցէ գոյժ իմ,, , շրջելով ընդ բանակն հոլանի, զոր չէր օրէն տաճկական ազգի կանանց, բայց ոչինչ օգնեաց. – 272. և նորա ճիչ բարձեալ ասէ, քրիստոնեայ եմ. և նա ևս պնդէր և ասէր, ,,մի՛ մեռանիր, մսլիմանակ ես,,. – 222. Կինն դարձեալ ճիչ բարձեալ ասէ. ,,վասն իմ սպաներ զտէրն իմ. ես ոչ վայել եմ քեզ կին, այլ մեծի թագաւորին,,. – 272.

ՃԻՌ - և Հայրակղի ժողովեալ զամենայն արևելեայս իբրև ՃԻՌ՝ դիմէ ի վերայ Խոսրովայ: - 148.

ՃԻՐԱՆ - Վէմս զերեսօք արկեալ արտօսր յորդառատս ի խտղտելի աչաց ի վայր հեղեղատելով, զնորափթիթ ծաղկազարդ ոսկեճաճանչն մորուացն ճիրանամբքն զխզումնն, և որ առաւելեալն քան զսոյն զապաշաւանացն զանյագութիւնն: - 386.

ՃԽ - և անյապաղ մինչ այս մինչ այն՝ նոցա հարեալ ընկեցեալ ի զօրացն Պարսից գունդ մի հարուստ արք իբրև ՃԽ: - 128.

ՃԿԲ - Յարէդ լեալ ամաց ՃԿԲ ծնանի զՅենովք – 26.

ՃԿԵ - Արդ Ենովք լեալ ամաց ՃԿԵ ծնանի զՄաթուսաղայ – 28. Մաթուսաղայ լեալ ամաց ՃԿԵ ծնանի զՂամէք: - 28. Մաղաղիէլ լեալ ամաց ՃԿԵ-ից, ծնանի զՅարէդ: - 26.

ՃՀ - Կայինան լեալ ամաց ՃՀ ծնաւ զՄաղաղայէլ: - 26.

ՃՁԶ - Իսկ զԳողթն գաւառ ի ժամանակի կատարման սրբոյն Վահանայ, յամի ՃՁԶ թուականութեանց, յորում ամի կատարեցաւ սուրբն Վահան, որ էր որդի Խոսրովայ Գողթան տեառն: - 390.

ՃՁԸ - Ղամէք լեալ ամաց ՃՁԸ ծնանի զՆոյ - 28.

ՃՂ - Ենովս լեալ ամաց ՃՂ ծնաւ զԿայինան: - 26.

ՃՆՇԵԱԼ - զոր ի զօրութիւն թիկանց ուժոյ բազկաց ճնշեալ և մածուցեալ ընդ միմեանս՝ զնրբութիւն մազոյն թաղ կոչեցին – 208.

ՃՇՄԱՐԻՏ - մանաւանդ զի և թագաւորին նախ ակն ունէր զդառնալն ի կռոցն ի յերկրպագութիւն Քրիստոսի ճշմարտին Աստուծոյ. - 88. ,,ընդէ՞ր որպէս մանուկ տղայ համարիս, արկանել առաջի իմ զպատրանս, սնոտի, առասպելաբան, խաբեբայ և պատիր յոյս խոստանալով ինձ՝ հանել զիս ի ճշմարիտ յուսոյն, զոր ի մանկութենէ ի վերայ հասեալ ճշմարտութեանն,,: - 294. ,,ի քո իսկ ինքնակալ թագաւորութեանդ և ի յօրէնս առաջնորդին ձերոյ գրեալ է՝ ոչ գոլ ճշմարիտ վկայութիւն միոյ ուրուք և հաւատարիմ – 244. Ետ պատասպանի երանելի Մուկաթլ լի հաւատովք և ճշմարիտ խոստովանութեամբ ի Հայր և յՈրդի և ի Հոգին սուրբ, ասէ. – 290. Եւ արդ ասացից փոքր ի շատէ զյայտնի գործեցեալսն, զի և որ ինչ ընդ սոքօք և յետ սոցա ի գլուխ ելին հանգամանք իրաց՝ և այնմ առանց երկբայութեան հաւատասցես, իբրև ճշմարիտ և անսուտ պատմողի: - 240. և աւանդեաց զոգին երանելին Յովնան ճշմարիտ խոստովանութեամբ ի Հայր և յՈրդի և սուրբ Հոգին, որում փառք յաւիտեանս: - 296. Եւ թէպէտ յայնմանէ վրիպեցոյց ճշմարիտն Աստուծոյ պատուհաս՝ այլ չարն սովորական բնաւորեալ պահեցաւ անվրէպ: - 38. և որպէս պատմեն զնմանէ՝ զի դարձաւ յետս յԱստուծոյ և դարձոյց զերեսս իւր ի ճշմարիտ դաւանութենէ յերկրպագութենէ Աստուածորդւոյն, որպէս ասաց՝ դարձուցին յիս զթիկունս և ոչ զերեսս իւրեանց. – 248. Եւ ուսեալ Հրէիցն զպատճառս փախստեանն՝

խրախուսեցին ի միաբանութիւն, ճշմարիտ ասել զասացեալսն, իբրև նախանձախնդիրք Աստուծոյ և որդիք Աբրահամու և եղբարք միմեանց: - 160. զշրթունս մեր մաքրեսցուք ի մաքուր խոստովանութիւն հպելով և զմիտս մեր սուրբ պահելով ի հաւատս ճշմարիտս. – 256.կարծեաց համանգամայն զբոլոր պաշտօնեայս Քրիստոսի ի բաց վճարել ի հաւատարիմ երկրպագութենէ ճշմարտին Աստուծոյ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. – 264. միանգամայն սաստկացուցանէր ի վերայ նորա զահարկութիւնն, զի գոնեայ այնու կարասցէ արդեօք վրիպեցուցանել ի ճշմարիտ հաւատոցն որ ի Հայր և յՈրդի և ի Հոգին սուրբ. – 294. Նոյնպէս եթէ ոչ հաւատք սրտի և խոստովանութիւն շրթանց ամբողջ պահիցին՝ ոչ կարասցէ հետևել ճշմարիտ դաւանութեանն ի Հայր և յՈրդի և ի Հոգին սուրբ – 256. տայր հրաման փշրել և խորտակել զկենդանագրեալ պատկերս ճշմարիտ մարդեղութեան Փրկչին և նորին աշակերտաց: - 168. Քանզի թէպէտ և անվաւեր ի նոցանէ գրեցեալքն ասացան՝ այլ բազում ինչ և առ ճշմարիտն ստուերաբանեն – 18.

ՃՇՄԱՐՏԱԳՈՅՆ - այլ աստուածայինն Պօղոս ճշմարտագոյնս զայսոսիկ յայտնէ ասելով՝,,ծանեան զԱստուած, և ոչ իբր զԱստուած փառաւորեցին կամ գոհացան. – 52. Այլ ճշմարտագոյնք են Սողոմօնեանքն, զի ասէ, ,,վա՛յ միումն. յորժամ գլորիցէ, ո՞ յարուցանիցէ զնա,,. և եթէ ,,լաւ են երկուք քան զմի, զի եթէ միովն գլորիցի ոք՝ կանգնեսցի,,: - 354.

ՃՇՄԱՐՏԱՊԷՍ - և կերիցեն քարինք և փայտք և այլ կաիք երկաթեղէնք, որպէս և զայն որ ի նմայն պատարագի մարմին և արիւն որդւոյն Աստուծոյ, մանաւանդ թէ ինքն իսկ ճշմարտապէս որդին Աստուծոյ. – 396.

ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆ - և ծառայեա ճշմարտութեան օրինաց և հաւատոց, զոր ուսաք ի մարգարէէն Մահումաթայ. ապա թէ ոչ՝ զնորին հակառակն ընկալցիս, տանջանս և մահ, և ելցես ի կենաց աստի չարաչար մահուամբ,,: - 294. ,,բնութեամբ ճշմարտութեամբ աշխարհիդ Վասպուրական ձեր լեալ էր ժառանգութիւն, և զձեզ արտաքս հանեալ թողեալ են նախնեացն Աշոտի: - 362. ,,և ո՛վ տայր ինձ վկայել ի վերայ ճշմարտութեանն և մեռանել վասն անուանն Քրիստոսի, և զարիւն իմ փոխանակ արեանն Քրիստոսի հեղուլ և զմարմին իմ փոխանակ մարմնոյ նորա ի մահ մատնել և զչարչարանս իմ ընդ նորա չարչարանսն խառնել, զի և ընդ նմա փառաւորեցայց. – 290. ,,ընդէ՞ր որպէս մանուկ տղայ համարիս, արկանել առաջի իմ զպատրանս, սնոտի, առասպելաբան, խաբեբայ և պատիր յոյս խոստանալով ինձ՝ հանել զիս ի ճշմարիտ յուսոյն, զոր ի մանկութենէ ի վերայ հասեալ ճշմարտութեանն,,: - 294. բայց եթէ ստութեամբ և թէ ճշմարտութեամբ՝ մեզ չէ յայտ, և զոչն ստուգեալ՝ և ոչ գրել լաւ համարեցայ: - 348. Բայց մի՛ ինձ բասրանս դիցես՝ զօրինականին առ աւետարանականս /378/ դնել համեմատութիւն, զոր և ոչ ես անգիտանամ զմեծն և զփոքրն, զօրինակն և զճշմարտութիւնն: - 380. Եւ արդ ՆԺԱ են մարգարէք, որ զվկայութիւն աստուածութեանն Քրիստոսի ստուգաբանեն ճշմարտութեամբ յանցնիւր ժամանակս, իբրև ի միջէ բերանոյ, թող զԱւետարանն և զառաքեալս նորա: - 246. և զմտաւ ածեալ զքսութիւնն զոր զեկուցին զԱշոտոյ կորապաղատէ առ Դերանիկն, եթէ ստութեամբ և եթէ ճշմարտութեամբ՝ մեզ չէ յայտ: - 342. Եւ զչարեալ ընդ խափանումն խորհրդոցն իւրոց՝ ամբաստան յոյժ լինէր զԱշոտոյ հանդերձ թղթովք Տաճկաց, որք էին ի կողմանս Հայոց, բազում այն ինչ զոր ստութեամբ քան թէ ճշմարտութեամբ զեկուցանեն զնմանէ զգործս, և թէ հակառակս նս թագաւորութեան քոյ բանընդդէմ լինի հանապազ: - 172. Եւ մեր ընկալեալ և հաւատացեալ ճշմարտութեանն՝ և ոչ կարեմք փոխանակել զճշմարտութիւն ընդ սնոտի, առասպելաբան և կարկատուն, ստայօդ և պաճուճազարդ մոլար ուսմանդ ձերոյ: - 246. Եւ մեր ընկալեալ և հաւատացեալ ճշմարտութեանն՝ և ոչ կարեմք փոխանակել զճշմարտութիւն ընդ սնոտի, առասպելաբան և կարկատուն, ստայօդ և պաճուճազարդ մոլար ուսմանդ ձերոյ: - 246. և յաւիտենական և անսպառ և անվախճան են կեանքն և պարգևքն, զոր պատրաստեաց Աստուած սիրելեաց իւրոց և որք կան համբերութեամբ ի հաւատս ճշմարտութեանն. – 264. և որ ինչ ի նմանէ կան պահին պարգևք կացելոյն ի

ճշմարտութեան հաւատս, և տանջանք ուրացելոցն և յետս կացելոցն - 206. և վառեալ զինքեանս յընթացս պատերազմին, զգեցեալ զզրահս արդարութեան և պնդեալ զմէջս ճշմարտութեամբ – 252. և ցուցէք յականէ յանուանէ մի ըստ միոջէ իւրաքանչիւր զվնասս զոր գործեալ եմ, դի՛ք ի լսելիս համագունդ զօրականացս, և մի՛ պատկառէք խօսել զճշմարտութիւնն: - 214. Զի եթէ ոչ ստուգութիւն սրտին և ճշմարտութիւն բերանոյն համամիտ առ հաւատոցն խոստովանութիւն ուղղակի մատչիցին՝ խոտան և ի բաց ընկենուլի է և օտար ի սրբոյ առաքելական եկեղեցւոյ: - 258. զի կարծէր դիւրաւ արկանել զնոսա ի հաղբս պատրանաց զկնի դարձելոցն ի ճշմարտութենէն. – 250. զի ոչ գոնեայ մի ոք գոյ, որ զճշմարտութիւնն վկայէ ուսուցանելով նորա, թող թէ զբազումս: - 246. Զսա ըմբռնեալ զօրաց Տաճկաց ածին առ զօրավարն. և բազում վնասս ի գործս արքունի կուտեցին ի վերայ նորա և ստութեամբ առաւել քան թէ ճշմարտութեամբ պարտաւորեցին զնա: - 288. իսկ մեք աստուածեղէն գրոց հետևեալք՝ ոչ յօտարաց աստի հաստատեմք զճշմարտութիւն, օ՛ն անդր. – 54. Մի՛ խոտորիցիս ի մոլար օրէնս վրիպելոցն ի ճշմարտութենէն, ազգին Իսմայէլի, որպէս որք վրիպեցանն գերեալքն Հայոց,,: - 318. Ոչինչ զանգիտեալ մեր մինչ ցայս վայր, պատմել զվտանգս և զնենգութիւնս եկեալ հասեալ ի վերայ մեր ի թշնամեացն ճշմարտութեանն. – 194.

ՃՈՒ - Առաքեցին առ Մուրիկ թագաւորն արս ճոխս մեծամեծ ընծայիւք և պատարագօք և թուղթ գրեալ ի բերանոյ Խոսրովայ զայս ինչ. – 136. և տևեալ զաւուրս Խ՝ փոխի յաշխարհէս ամենեցուն պատկառելին, մանաւանդ թէ ընդհանուր ցանկալին և սիրելին ճոխից և անազգեաց, աղքատաց և փարթամաց, մեծամեծաց և փոքունց: - 384. զի էին ազգք ճոխք և երևելիք, քաջք և անուանիք, և ամենեցուն պատկառելիք – 98. զի ո՞վ ոք այլ ճոխ քան զՄենեքերիմայսն, /94/ զոր համարձակախօսն Եսայիաս հրապարակէ առ Իսրայէլեան զարմն զսորայս մեծափառութիւն. – 96. զյոյժ փառացի և ճոխ և նազելի զնախագահ նստեալ զարմէ – 300. Ի սորա ժամանակս տիրէր Վասպուրական աշխարիս Աշոտ ի տանէն Արծրունեաց, այր քաջայայտ և ճոխ ի բարձրագոյնս. – 170. իբր զթագաւոր մեծավայելուչ պատուական ալեօք զուարճացեալ ի մէջ ճոխ նախարարութեանց – 86. մերժել հեռանալ ի ճոխ և ի նազելի եղբարցն պատուաւորաց, ի պարոյ կացեալ ազատագունդ ազգի ազգի պերճութենէ – 386.

ՃՈԽԱԲԱՆԵԼ - Յոքունց կամ թէ բնաւից կարօտանամ իմաստասիրաց գումարից ի մի վայր հասելոց՝ զողբերգականացն ճոխաբանել ճարտասանութիւնս. – 352.

ՃՈԽԱԳՈՅՆ - Եւ իշխանքն մեր ստացան ճոխագոյն հոյակապ անուն ի մէջ Հայաստանեայց – 336.

ՃՈԽԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ - մերժել հեռանալ … և որ այլ քաղցրագոյն վայելք ընդ երկնաւս ի վերայ երկրի, պայծառ գեղ արեգական և լուսնի, հանդերձ աստեղացն ճոխագործութեամբքն ընդ տարերբ երկնի յեղյեղլով, ծովու և այլոց ցամաքայնոց, և ջրայնոցն բարեփառ հոլովմանցն հրճուանաց, և որ ինչ ընդ այլք ընդ դոքօք պատկանին յարմարաբար տնտեսութիւնք առ սկզբնատիպն պատկերակերպութիւն: - 386.

ՃՈԽԱՋԳԻ - Դարձեալ վերստին հրճուանօք ոռոգեալ լինի պատմութեան աստ սակս բարձրագահ, համաթոռ, ճոխազգի ազգապետութեանն Արծրունեացս, /76/ մեծ զարմի Սենեքերիմայ ծննդոց. – 78.

ՃՈԽԱՆԱԼ - - և փութացոյց վասն նորա զի անյապաղ առ նա հասցէ, և ի մեծ պատիւս հիւպատութեան հասուսցէ զնա, և խաչանշան դրօշիւք ճոխասցի: - 316. և փութացաւ գրեաց առ Սափի որ ի Վանտոսպ նստեալ և ճոխանայր Վասպուրական տէրութեամբն. որ առանց յապաղանաց զփոյթն յառաջաբերեալ՝ գնաց եհաս առ Աւշին ի Մարակայ քաղաք: - 374. զի մի /68/ վատութիւն քան զքաջութիւն ճոխասցի, որ կանանցաբարոյիցն քաջ յարմարի, թէպէտ և յարիւն և յապաժոյժ զզօրսն կենացն առնուցուն,,: - 70. Իսկ Ասուդ թէպէտ և այնպէս շքեղութեամբ ճոխանայր եգիպտական և հնդկային հարստութեամբն՝ այլ յիշելով զբուն իւր սեփհական թագաւորութիւն Ասորեստանի՝ ոչ հաճոյանայր կեալ

եգիպտացի գահակալութեամբն. – 70. ոչ յառաջանայր ի բարձր նախագահս ճոխանալ երևելեօքս և /*նստէր* / լքանելեօքս – 94.

ՃՈԽԱՑԵԱԼ - ՋԱշոտէ ասեմ զնազելի և զբարձրագահ ճոխացելոյ վսեմապետէ, յընդհանուր նախագահանստեալ ի մէջ բոլոր Հայաստանեայցս: - 384. Ընդ ժամանակսն ընդ այնոսիկ մինչ ճոխացեալ մեծամեծս փքայր Ջափրմոթոքլ ի վերայ քրիստոնէից, որպէս Սենեքէրիմ նախնին մեր ի վերայ Երուսաղէմի և ժողովրդեանն Իսրայէլի՝ յեղակարծում հասեալ ի վերայ նորա որդին իւր Մոթէին սպան զնա – 318. Ի ժամանակին յայնմիկ էր ճոխացեալ պանծալի աթոռակալութեամբ սրբոյն Գրիգորի տէր Քրիստափոր Հայոց կաթողիկոս. - 130.

ՃՈԽԱՑՈՒՑԱՆԵԼ - Եւ կացոյց զնա իշխան յիւրում հաւատարիմ տեղւոջ, և այնպէս բարեձևագոյն ճոխացոյց զայրն երևելի: - 308.

ՃՈԽՈՒԹԻՒՆ - այլ և ոչ զմեզ ապստամբս կարծիցես գոլ յինքնակալ թագաւորէն և ի քումմէ ճոխութենէդ, եթէ հաւաստեաւ քննիցես: - 212. անհասական իմն շնորհիւ փառօք և պատուով պսակեալ զմարդն իշխանական ճոխութեամբ՝ վայելեցուցանէ դրախտին, տալով նմա բազմամեայ կենաց սահման իբրև զմի օր - 20. Արդ ոչ կարեմք փոյթ ընդ փոյթ շղումարար /ճիշտը՝ շղոմարար/ հաճութեամբ թագաւորիդ յանձն առնուլ՝ զոր հրամայէ կայսերական ճոխութիւնդ. – 132. Արդ Աշոտի կեցեալ ամս ԺԹ, տևեալ իշխանական ճոխութեանն ԺՋ ամ յառաջ քան զգերութիւնն Հայոց, և Ե ամ ի գերութեանն արարեալ - 336. Բայց հրաման քո ճոխութեանդ ձգեաց զիս յայս մեծ ձեռնարկութիւնս, սակս որոյ բացաձգեցայց արտաքոյ շաղակրատոյ լեզուաց փառամոլ ոգոց: - 122. բայց ի գնալն աստի ի Մարս և ի Պարսս, դարձեալ դառնայ ուժով մեծաւ և թագաւորական ճոխութեամբ, տիրէ Հայոց մեծաց - 88. և առ եղբայրականն զհնազանդութեանն չափ ցուցանելով, անկշիռ վայելչութեամբ զմիմեանս լաւ համարելով քան զանձինս, հասարակ զճոխութիւն իշխանական գահընկալութեանն վարկանելով – 360. և ընդունել պատիւս և ի ձեռն նորա ընդունել զանուն իշխանութեան ճոխութեան: - 274. Եւ իմաստուն և հանճարեղ խորհրդովք, քաղցր և կակուղ բանիւք ողոքեալ զմանկագոյն Հասան, առաջի արկանելով նմա զարժանի ալեացն պատուականութիւն և զիշխանական ճոխութեան զբարձրագահութիւն և որ ինչ այդմ հետևէր. – 348. և հրաման հարկեցուցանող ճոխութեան քո ստիպէ զմեզ, ճեպել փութալ առ գիւտն հանդիսանալ և կարգել ոճով զփափագելին յայտարարական գրով, դրոշմել կանոնել ի գիրս աստ – 12. Եւ տիրեաց երկրի իւրոյ իշխանական ճոխութեամբ: - 314. Մատուցեալ առ թագաւորն Արշակ ասէ. ,,ոչ բարեօք իմացեալ առաջնոց թագաւորացն, զի ոչ կալան զտեղիս զի զայս ի բնակեալ ճոխութեան թագաւորական վայելչապէս խրախճանութեանց. – 100. Սահակ որդի Վաչէի կացեալ ի դրան Արտաշէսի շքեղ և երևելի ճոխութեամբ – 90. քաջավայելչագոյնս զթագաւորութեանն կատարելագործեալ զժամանակն, Ե ամ յիշխանական ճոխութեան, ԻԵ ամ յիշխանաց իշխանական պետութեանն, Դ ամ ի թագակապ շքեղութեանն. – 356.

ՃՈՂՈՊՐԵԱԼ - և ինքն Աշոտ ճողոպրեալ միաձի ելեալ եհաս փախստեայ մինչ յՈստանն Ռշտունեաց, թողլով զբուն բանակն ի նմին տեղւոջ. – 332. ընդ ակամբ հայելով, թէ գուցէ ճողոպրեալ ելանիցէ ի ձեռաց մերոց, կամ ի գիշերամարտս յանկարծ հասանիցէ ի վերայ մեր մեծամեծ ոճիրս գործիցէ: - 202. ճողոպրեալ Գարեգինն անձնապուրծ գնաց փախստեայ առ կայսրն Յունաց. – 102.

ՃՈՂՈՊՐԵԼ - Եւ փախեաւ Յազկերտ յերեսաց /164/ նոցա և ոչ կարաց ճողոպրել. քանզի հասին զհետ նորա մերձ ի սահմանս Քուշանաց, և կոտորեցին զամենայն զօրս նորա.– 166. շուրջ փակեալ զՄեհուժանեան գնդիւն, զի մի ճողոպրել ինչ աճապարիցի: - 106.

ՃՈՂՓԻԻՆ - ,,և զտանջողացն, ասէ, զճողփիւնն լսէաք, և զհարուածսն եկեալս ի վերայ թիկանցն տեսանէաք – 50.

ՃՈՐԱՅ ԴՈՒՌՆ - Բայց արքայն Պարսից հեռացեալ պատերազմաւ ի Քուշանն ի դուռն Ճորայ. – 128.

ՃՈՒԱՇ - առեալ էր ի բաժնէ /ճիշտը՝ ի բաժնի/ Գագիկ իշխանի … զՃուաշ գաւառն և զԹոռնաւան, Արտազ,Մարդաստան, Գառնի, Առբերանի, Աղանդռոտ, Բառիլովիտ, Պալունիք և Մեծնունիք, Տոսպոշտունիք, Բոգունիք, Գուգան գաւառ, Արտաշէսեան: - 388. Եւ ասպատակեալ ի Ճուաշ և ի Թոռնաւան գաւառ՝ յաւարի առնուն. – 304. և ինքն վիրաւորեալ սրով մեռանի ի գեօղն Գիւղիկ ի Ճուաշ գաւառի, մարտիրոսական հասեալ նահատակութեան, ի վերայ խաշանցն Քրիստոսի տուեալ զանձն ի մահ: - 402. Եւ յետ սակաւ աւուրց ել գնաց Դերանիկն ի Ճուաշ գաւառ՝ ձմերել յաւանին Մառական: - 350. հանեն ընդ սուր, վարեն ի գերութիւն և առնուն աւար, և ի յանցին դառնան ի Ճուաշ և ի Թոռնաւան գաւառ, անցեալ ընդ Կրճունեաց գաւառն: - 400. սագունակ հասեալ ի վերայ Վասպուրական աշխարհիս պարսկական խուժանն ըստ ազգս ազգս և ըստ քաղաքս քաղաքս ի Մարաց և ի Պարսից, յԵլամացւոց և ի Խուժաստանէ, ի Կրմանայ և ի Մուկանաց, ի Թուրքաստանէ և ի Խորասանայ, և յեղակարծում հասին ի Ճուաշն գաւառ – 398.

ՃՈՒԱՇՌՈՏ - Դարձեալ վերակնեալ յառաւօտինս կոյս խաղացեալ ի Ճուաշռոտ ի Գետս աւան՝ շինէ անդ զվայելչական տեղի խրախից – 392.

ՃՌ - Եւ որպէս ասեն՝ եղև թիւ զօրուն գումարելոյ իբրև ՃՌ-աց. – 366.

ՃՐԱԳ - և զի մի՛ ճրագն եօթնաստեղն ընդ գրուանաւ զփայլումն լուսոյն ծածկիցէ – 204.

ՃՕՃ - և իբրև մօտ եղև յափն գետոյն՝ քարշեալ ոմն զլայնալիճն, նստելով ընդ դարիւն, և հարեալ նետիւ ընդ բացատն, և երեսանակալ ձեռնն թուլացեալ. կրկնեալ այլ ոմն ճօճ նիզակաւն ընդ նոյն ակն՝ գետավէժ արարին զԱշխէթն. – 272.

Մ

Մ /թիվ՝երկու հարիւր/ - Եւ ինքն զԳրիգոր եղբօրորդի իւր հանդերձ ընտրելովք ոմանք զօրաւորօք վառեալ ի զէն և յասպազէն արք Մ, զոր զգացուցին Աշոտի. – 330. և կեցեալ առ նովաւ ամս Մ՝ փոխեցաւ յանմահութիւն յամին ԼԳ Ղամէքայ: - 28.

ՄԱԳԱՂԱԹԵԱՅ - և ետ տանել զդիւանն մագաղաթեայ յունարէն գրով հանդերձ պատարագօք՝ Տիգրանայ թագաւորի Հայոց – 74.

ՄԱԳՈՎԳ - Այս այն Գովգ և Մագովգ զոր յիշեն գիր մարգարէիցն, Ամովս և Եզակիէլ: - 66.

ՄԱԴԻԱՄ - Դէպ եղև նմա ճանապարհաւ գալ ի քաղաքն Մադիամ, էր և ծանօթ գիտութեան գրոց, թէպէտ և ոչ կատարելապէս: - 162. և նոցա կալեալ զճանապարհն անապատի՝ գնացին ի Տաճկաստան առ որդիսն Իսմայէլի, ի քաղաքն որ կոչի Մադիամ – 156. և փախստական եղեալ Մահմէտ և Ալի և ընդ նոսա իբրև արք Խ՝ եկին ի քաղաքն Մադիամ – 160. Եւ քանզի իշխանութիւնն Պարսից յոյժ լքեալ էր՝ և աներկիւղ շինեցին զքաղաքն Մադիամ և բնակեցան ի նմա: - 156.

ՄԱԶ - զոր ի զօրութիւն թիկանց ուժոյ բազկաց ճնշեալ և մածուցեալ ընդ միմեանս՝ զնրբութիւն մազոյն թաղ կոչեցին – 208. որք ոչ վրիպէին ի մազոյ, որպէս և յայնժամ յԻսրայէլի էին արք զօրաւորք, գունդք տանն Եփրեմի և Բենիամինի: - 200.

ՄԱԶԱՊՈՒՐ - այր իւրաքանչիւր մազապուր զերծեալ փախստեայ գնացեալ հասին յաշխարհն իւրեանց: - 354. և անհնարին բեկմամբ խորտակեցաւ գունդն Հայոց, մինչև ի բազմացն սակաւուց հազիւ ուրեմն մազապուր զերծեալ՝ անկան յաւուր յայնմիկ ի տարապարտ պատերազմին արք անուանիք իբրև Շ - 402.

ՄԱԶԴԵԶԱԿԱՆ - ստիպեն լքանել թողուլ կրօնս քրիստոնէութեան, հնազանդել պաշտել զօրէնս մազդեզական մոխրապաշտութեանն – 102.

ՄԱԶԴԵԶԱՆՔ - ասէ ,,երէցդ այդ եկեալ է զհետ գերելոց քրիստոնէիցն՝ հակառակ կալ հրամանաց արքայիդ և օրինաց Մազդեզանց և Արեաց – 104.

ՄԱԶԴԵԶՆ - և յանձն առեալ ինքնակամ մոլորութեամբ զօրէնս մազդեզանց մոխրապաշտ յամառութեանց – 124.

ՄԱԹՈՒՍԱՂԱՅ - Մաթուսաղայ լեալ ամաց ՃԿԵ ծնանի զՂամէք: - 28. Արդ Ենովք լեալ ամաց ՃԿԵ ծնանի զՄաթուսաղայ – 28. Եւ են ի թուել մինչ ցայս վայր այսոքիկ. Ադամ, Սէթ, Ենովս, Կայիանան, Մաղաղայէլ, Յարէդ, Ենովք, Մաթուսաղայ, Ղամէք, Նոյ, Քամ, Քուշ, Նեբրովթ որս և Բէլ: - 36.

ՄԱԾԵԱԼ - և մածեալ պնդեալ իբրև զբլուր պղնձի, իբրև զմի այր, և ասելով միաբան իբրև ի մի բերանոյ. – 136. Եւ էին անհուն բազմութիւնն մածեալ շուրջ զլերամբն իբրև զմարախ և իբրև զաւազ ծովու առանց թուոյ. – 226. և խուռն բոլորեալ գունդն կային մածեալ իբրև զմի այր: - 284. որ զջրհեղեղին իրս գուշակեաց Քսիւսիւթրեայ, և զառաջինս իւր գործոց բնաբանապէս գրել և դնել յաման պղնձի մածեալ կապարով ի պահեստի ի Սիպարացւոց քաղաքին: - 36.

ՄԱԾՆՈՒԼ - Եւ զօրացն քաջալերեալ ընթացան յիւրաքանչիւր զէնսն և հեծեալ յընտիրս երիվարացն՝ կացին ի հանդիպոջ և հանդիսացան գումարեցան ի մի վայր և պնդեցան կարգեցան մածեան հոլովեցան յինքեանս – 230.

ՄԱԾՈՒՑԵԱԼ - և աստի և անտի երիվարի փորոյն տախտակագործ գրգեալ ըստ փորոյն չափու մածուցեալ ի ձև վահանի զգործ արուեստի զինուն ցուցանեն: - 208. զոր ի զօրութիւն թիկանց ուժոյ բազկաց ճնշեալ և մածուցեալ ընդ միմեանս՝ զնրբութիւն մազոյն թաղ կոչեցին – 208.

ՄԱԿԱԲԱՅԵՑԻ - Եւ սրբեալ զերկիրս ի պղծութենէ և ի նենգութենէ նեղութեանցն, իբրև զՅուդայ Մակաբայեցի զԱնտիոքայն սրբելով զանաստուածութիւնն յԻսրայէլէ՝ արար խաղաղութիւն նոցա որոց տիրէրն: - 312.

ՄԱԿԱՁԱՅՆԵԼ - Նախ յառաջ ախորժական թուէր Գագկայ անուանել զեկեղեցին փրկչական անուանակոչութեամբն մակաձայնել ոչ ուղղակի առ հաւատն մատուցեալ – 394.

ՄԱԿԱՆ/հատ.անուն/ - Եւ վազս առեալ փութացան մտին ընդ կողմն Մականայ, բանակեցան ի դաշտավայրին Մեղիացւոց – 62.

ՄԱԿԱՆ/հաս.անուն/ - Իսկ Շապհոյ զմական զնդին ի դիպուածս Շաւասպայ շարժեալ. – 114.

ՄԱԿԵԴՈՆԱՑԻ - այլ և Մակեդոնացին Աղէքսանդրոս ոչ սակաւ դրուատեօք արձանս գրէր ի մատեանս դիւանապահ աւանդութիւնս զսորայս մեծափառ գլխաւորութիւն: - 96. բայց կանոնեցի զանուանս ի մատենիս: Տիգրան. Աղրամելէք. Ներս. Ներսէխ. Մարոդ. Արշամ. Արշաւիր. Ասուդ: Պարսից թագաւորք. Քսերքսէս. Արտաշէս երկայնաձեռն. Դարեհ. Արտաշէս. Ողոքոս. Զարսէս. Դարեհ: Ապա Աղէքսանդրոս Փիլիպպեայ Մակեդոնացի տիեզերակալ թագաւոր: - 68. Զոր և Աղէքսանդրի Մակեդոնացւոյ ի դէպ ելանէ առ Ողըմպիադայ վիպագրութիւնք. թերևս ի մասն ինչ արտաքոյ սահմանաց դրախտին հասանել. – 50. որ յետուստ՝ մոլի բռնաւոր, որ և զՏրովական դժուարամարտիկ իրս քաջապէս և կարողաբար վանեալ՝ աստուած ի նոցանէ ասացաւ, նա և ոչ աշխարհակալին Աղէքսանդրի Մակեդոնացւոյ - 36. որոյ սերմանք յիմարութեանն պատուեալ առ Բաբելացիսն պահեցաւ մինչև ի ժամանակս Աղէքսանդրի Մակեդոնացւոյ. – 38. Ցայս վայր զայս գրեալ Աղէքսանդրի՝ Մակեդոնացւոյ, ի Մենեքերիմայ յառաջ մինչև ի Պտղոմէոս եգիպտացի, զոր և նոքա Պտղոմեանքն կոչէին. – 74.

ՄԱԿԵԴՈՆԱՑԻՔ - Արշակ տուեալ պատերազմ ընդ Մակեդոնացիսն՝ և անդ Կիւրոս քաջապէս արիացեալ առաւելանայր ի գործ պատերազմին. – 72. Յետ մահուանն Աղէքսանդրի զօրավարաց կալեալ զՄակեդոնացւոց /70/ տէրութիւնն – 72.

ՄԱԿԵԴՈՎՆԱՑԻ - Զայսու ժամանակաւ թագաւորեալ Աղէքսանդր Մակեդովնացի տիեզերակալութեամբ երագահաս հասեալ ի վերայ Դարէհի սպանանել զնա. և բառնայ զթագաւորութիւնն Պարսից Արշաւրեան: - 68. զոր սպան Աղէքսանդրոս Մակեդովնացի - 166.

ՄԱԿՈՒ - ետ նմա զԱրևաստան զամենայն մինչև ցՄծուին և զերկիրն Հայոց մինչև ցգետն Հուրասդան, և զգաւառն Կոտայից մինչև յաւանն Գառնի յեզր ծովուն Բզնունեաց և մինչև յԱռեստն աւան և զԿոգովիտ գաւառ մինչև զՀացիւն և ցՄակու: - 140.

ՄԱՀ - Եւ քանզի յետ մահուանն մեծին Սահակայ Բագրատունոյ սպարապետի ասպետի և զօրավարի Հայոց, հաւատացեալ էր Թէոդոսի կայսեր զսպարապետութիւնն Հայոց Համազասպ Մամիկոնէի և որդւոյ իւրում Վարդանայ – 122. ընդ արութիւնս իմ վատութի՞ւն խառնիցեմ և ընդ երկիւղիւ մահու անկանիցի՞մ: - 296. ,, վնասս և զբեկումն հարկաց արքունի և զկոտորումն զօրաց քոց Աշոտ գործեաց, և նա է պատճառ ամենայն ապստամբութեան Հայոց ի քումմէ թագաւորութենէդ, ասեն, ո՛վ քաջդ և հաւասար աստուածայնոց կարողութեան ինքնակալ, և ընդհանուր իշխեցօղ կենաց և մահու,,: - 180. ,,և ո՛վ տայր ինձ վկայել ի վերայ ճշմարտութեանն և մեռանել վասն անուանն Քրիստոսի, և զարիւն իմ փոխանակ արեանն Քրիստոսի հեղուլ և զմարմին իմ փոխանակ մարմնոյ նորա ի մահ մատնել և զչարչարանս իմ ընդ նորա չարչարանսն խառնել, զի և ընդ նմա փառաւորեցայց. – 290. Այսպէս և զամենայն ըմբռնեալսն վտանգաւոր մահու տառապեցուցանէին ընդ մէջ կտրելով, ահարկուս տեսողացն զնոցայն վտանկսն կացուցանելով: - 372. ապա անարգեաց զնա և Կաւատ արքայ, եհատ ի վերայ նորա դատաստան մահու, և հրամայէ արանց մտանել և սպանանել զնա. – 152. ապա հնարաւորեալ պատիր խաբէութեամբ ի կատարումն հասուցանել զխորհրդոյն /346/ զանհաստատ իմացմունսն, և գնաց եմուտ յամրոցն, և զհիւանդութեան կեղծաւորութիւն մերձ առ մահ եդ առաջի: - 348. արդ ահաւասիկ հասեալ /242/ կամք առաջի քո, ինքնակալ թագաւոր իշխեցող կենաց և մահու. – 244. Բայց Գրիգոր կեցեալ յետ դարձին իւրոյ զմի ամ՝ մեռանի իւրով մահուամբ: - 310. Բայց ոչ ժամանեալ կատարման պատերազմին, զաշտարակն, զոր շինէր որդին Աբգարու փլուզեալ ի վերայ սպան զնա, վրէժխնդիր եղեալ մահուն Ադդէի սրբոյ: - 80. Բայց տիկինն Սոփի կեցեալ յետ մահու Դերանկին զտարի մի և զամիսս Ը՝ յաւելաւ առ հարս իւր. – 356. գնաց Արշակ փախստական յԵկեղէց գաւառ և անդ վախճանի իւրով մահու, թագաւորեալ ամս Է: - 112. գուցէ, ասէ, ի գնալն ի բուռն առեալ ի մահ դատապարտեսցի: - 84. ետուն գոյժ զմահուանէ թագաւորին և կացուցին փոխանակ Վաղարշու թագաւոր զորդի իւր զԽոսրով ձեռնտուութեամբ Արտաւանու Պարսից արքայի: - 92. Եւ ազատորերոյն Վասպուրականի աղերսեալ՝ մի երթալ զայն ճանապարհ, առաջի դնելով զախտակրելն՝ նորա ընտրեալ զմահ ի վերայ քեռոյն իւր, քան զկեանս կեղակարծ ինչ խորհել զնմանէ: - 384. Եւ զինուորք ի մահու վտանգ տուեալ զանձինս՝ի ղոյղս անցանել ի նաւէն ի կղզին. – 50. և զօրինակ մահու նորա, և որպէս զմռեալ դի նորա բարձաւ ի գաւառն Հարքայ ի տեսիլ բազմաց: - 42. և առաջի արկեալ զհառաչանսն, զարտասուսն, զխոստովանութիւնն, զողորմագին պաղատանսն, մինչ ի մահ զտրտմելն, զկենաց դեղն հայցել, զմարմին և զարիւն որդւոյն Աստուծոյ ի թողութիւն մեղաց – 386. Եւ բազում այն էր որ մարտիրոսական ճգնութեամբ վկայեցին, քան որք դրդուեցան, առ ոչինչ համարելով զյափշտակութիւն ընչից և ստացուածոց և զմահս դառնագոյնս: - 124. Եւ ելեալ գնաց զհետ կոչնականացն ի գութ հարազատութեան, և ի կարծիս սաստիկ հիւանդութեան, թէ մերձ ի մահ անկեալ դնիցի, ըստ ստուգելոյ կոչնականացն: - 348. և զկէսն մահու դատապարտեալ, զգլուխս նոցա հատեալ ի փայտի բարձրացուցանէին ի վերայ դրանդեաց պարսպին: - 372. և զսուգ և զտրտմութիւն, զոր կրէին աշխարհս յաղագս մահուանն Դերանկին՝ յուրախութիւն և ի խնդութիւն տրամադրէին. – 360. և զօր մահուան սրբոյն ամենայն Ասորեստան տօնախմբեալ մեծաւ ուրախութեամբ ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր - 254. Եւ թէ որպիսի օրինակաւ գալուստ նորա և պատերազմ վասն սորին իրաց, և արիական ձեռակերտացն շինուածք, որ և յոյժ արժանաւորք զարմանալեաց, և դարձեալ ապստամբութիւն Զրադաշտին և մահին Շամիրամայ և բան յուռթիցն որ զնմանէ – 44. և թէ ի պատերազմին յայնմիկ հասանիցէ զմահուն ընդունել զվճիռ՝ իսկ ըստ յաղթութեանն զխոստովանողականն ժառանգել անուն, զօրանալ զօրութեամբ ի զօրութիւն խաչին Քրիստոսի Աստուծոյ մերոյ: - 400. և ինքն վիրաւորեալ սրով մեռանի ի գեօղն Գիւղիկ ի ճուաշ գաւառի, մարտիրոսական հասեալ նահատակութեան, ի վերայ խաշանցն Քրիստոսի տուեալ զանձն ի մահ: - 402. և լինիցիս իբրև զմի ի մահապարտաց, որ անձամբ

զանձինս հերքեցին ի կենաց վտանգաւոր մահուամբ, որպէս և քեզ պատրաստեալ է – 294. Եւ լուեալ կնոջն Սահակայ, թէ ըմբռնեցաւ … փութացաւ գնաց եկաց առաջի Բուխայի, թերևս կարասցէ ըստ պատշաճ գեղոյն և ըստ բազմաձեռն գանձուց ապրեցուցանել զայրն իւր, որ առաւել մահու քան թէ կենաց պատճառ եղև նմա:- 272. և ծառայեա ճշմարտութեան օրինաց և հաւատոց, զոր ուսաք ի մարգարէէն Մահումաթայ. ապա թէ ոչ՝ զնորին հակառակն ընկալցիս, տանջանս և մահ, և ելցես ի կենաց աստի չարաչար մահուամբ,,: - 294. Եւ կացին եպիսկոպոսապետք Հայոց յետ մահու սրբոյն Ներսէսի ոմանք ի զաւակէ Աղբիանոսի եպիսկոպոսի Բզնունեաց, առն պատուականի, Շահակ և Զաւէն և Ասպուրակէս – 108. և կէսք ընկալան զճգնութիւն մարտիրոսական մահու – 222 և կողմնեալք ի սիրոյ աստուածութեանն անկաւ ի վերայ նոցա զարհուրումն մահու, մանաւանդ ոչ կամելով ելանել /246/ ի սնոտի կենացս դիւրափոփոխ աշխարհիս՝ ասեն. - 248. և հասեալ դաւող մահ նորա ի յԱնակայ իւրոյ մերձաւորէ: - 92. և հարցեալ ցնա յաղագս մահուանն Յովսէփու ի վրէժխնդրութեանն աղագս երկրորդ նահատակութեան նորա, որ եկաց ընդդէմ զօրավարին, յուշ առնելով նմա զապստամբութենէ և ընդխառնելոյ նորա ի վնասս արքունի – 294. և մի ի ձեռն տանջանաւոր մահու ելանիցէք ի բնակութենէ ձերմէ և բնակիցէք ի դժոխս: - 244. և յանդիմանեալ ի սրբոյն Ներսիսէ՝ արբուցանեն նմա դեղ մահու, զանխուլ կարծիս բերելով. – 108. Եւ յետ մահու նորա նստուցին թագաւոր զորդի նորին զԱրտաշիր, կարի տղայ մանուկ: - 152. և յոյժ հաւաստի և ընդունակ գոլ զառ ի բազմաց /244/ վկայութիւն ի վերայ մեծի և կամ փոքու ինչ իրաց կամ ի վերայ կենաց և մահու. – 246. և նորա արկեալ զնա ի փոքրագոյն տեղի մի նեղ, և ինքն փութացաւ գոյժ ետ վասն նորա՝ մահու պատահել, լի անմտութեամբ մոլի աբեղայն, որում ոչ հրամայեցաւ. – 320. և ոչ առ փոքր մի ինչ ներեաց կամ անսաց /264/ տալ տեղի պատասխանոյ, այլ հրամայեաց դահճացն տալ ի վերայ նորա զվճիռ մահու, փութով զրաւ առնել նոցա ի սատակումն սրոյ: - 266. Զի այր քաջ է և պատերազմող, և միաբանք են որք ընդ նմա են զօրքն, և զանձինս ի մահ դնիցեն ի վերայ տանց և աշխարհաց և ազանց և տոհմից իւրեանց: - 212. զի զմահուն սպառնացեալ հօրն պատուհաս՝ աչօք իւրովք տեսցէ – 22. զի ոչ եթէ ըստ հասարակաց սահմանաւոր մահու է, այլ ի վերայ սուրբ եկեղեցւոյ և ժողովրդեան Աստուծոյ,,: - 276. զի ոչ կամիմ զմահ մեղաւորի, որպէս բառնալ նորա ի չար ճանապարհէն և կեալ: - 30. զոր աւանդեցին որդիք թագաւորին յետ մահուան հօր և մօր իւրեանց ի պէտս սուրբ Խաչին Աղթամարայ. – 356. զսուրբ եկեղեցիս, զտունս աղօթից քրիստոնէից այրել աւերել հիմն ի վեր տապալել, զքահանայսն նորոյ ուխտի ի սուրս իւրեանց մաշել, զծերս և զպառաւունս մահու սրոյ սպանանել, զերիտասարդս և զկուսանս խաղացուցանել ի գերութիւն, զստացուածս և զինչս վատնել աւարառութեամբ. – 398. էր և նորա աշակերտ մի, որում անուն էր Սաղման. որ ի ժամ մահու միայնակեցին՝ պատուիրէր նմա և ասէր – 162. ի կոր կործանման կացեալ Խոսրով մեր թագաւոր, և ջանայր առնուլ զվրէժ մահու հարազատին իւրոյ, թագաւորին Արտաւանայ, զոր և առնէր իսկ – 92. ինքեան և որոց յետ իւր թողլով ժառանգութիւնն որդւոց կեանս վշտագինս հանդերձ մահուամբ, և ծննդականութիւնս տրտմութեամբ: - 22. Իսկ զձերբակալսն յղեցին առ Աւշին ի Պարտաւ, որք տուեալ ի կապանս բանտի և դատապարտեցան ի մահ, սրախողխող միջակտուր արարեալ: - 372. իսկ զՆախճաւան քաղաք և զԳողթն գաւառ հանեալ էր ի Վասպուրականէ բազում ժամանակօք յառաջ, ՄԺԱ ամօք, յամի այրման եկեղեցւոյն Գրիգորի և վտանգաւոր մահու զօրացն Հայոց: - 390. կեանք ցաւագինք քան թէ առողջութիւն ընդդիմակ մահու յաջորդին: - 384. յեղակարծում ժամանակի հասանէ համբաւ մահուն Արտաւանայ, և տիրել Պարսից Ստահրացւոյն Արտաշրի Սասանականի. – 92. Յետ մահուանն Աղէքսանդրի զօրավարաց կալեալ զՄակեդոնացւոց /70/ տէրութիւնն – 72. Յետ մահուանն Աշոտի և կատարելոյ զաւուրս սգոյ նորա առնու զիշխանութիւնն Վասպուրական տէրութեանս Գագիկ եղբայր նորին. – 388. յորոց ձեռս հաստատեալ կայ մահ և կեանք: - 236. յորում տեղւոջ քաղաքն Տարունոյ շինեալ էր, ուր բնակեալ բայանայր զօրավարն Տաճկաց, զօրհասական արջոյն բերելով նմանութիւն, որ

յաւուրս ձմերայնոյ արմատովք պարենաւորեալ՝ ի մէջ կենաց և մահու անցեալ որջանան ի բոյնս իւրեանց: - 188. նա է տէր տերանց և թագաւոր թագաւորաց և իշխան կենաց և մահու, Աստուած յաւիտենական Յիսուս Քրիստոս: - 290. Նորա ծաղր արարեալ զնովաւ՝ ընտրեաց զկապանս և զբանդ, նաև զմահ քաջութեամբ վասն անուանն Քրիստոսի, քան զկեանս խղճիւ:- 318. Նոցա գեղեցիկ խորհուրդ ի մէջ առեալ՝ ընտրեցին զմահ քաջութեամբ քան զկեանս խղճիւ: - 222. Ո՞վ յիմարութեան առաջնոցն. ո՞րպիսի կատաղութիւն և գիւտք դիւացն նախկին ժամանակաւ սպրդեալ մուծաւ յաշխարհ, ապստամբութիւն առ Աստուած և տրտմութիւն սրբոց հրեշտակաց, և պատճառ վտանգաւոր մահու ծառայիցն Աստուծոյ յաւուրս ապագայիցն. – 38. Որ և յետ մահուանն Զրադաշտին դարձեալ միապետեաց ամենայն արևելեաց Պարսից ի հարկի հնազանդութեան ունելով, խաղաղասէր կենօք ամս ԼԸ. – 56. Որոյ երթեալ առ Շապուհ յիշեցուցանէ նմա զհարազատէն իւրմէ Մեհուժանայ՝ միամիտ և հպատակ /108/ լինիլ արքային, և զպատերազմացն գործ և զբազում աւարառութիւնս և զգերփանս Հայոց աշխարհիս ի Մեհուժանայ, և զմահին նորա ի ձեռանէ քաջին Սմբատայ Մամիկոնէի- 110. որով մահուամբ և կամիս՝ պատրաստ եմք յամենայն հնարս չարչարանաց մտանել, զոր ուսոյց քեզ վարդապետն չարեաց հայրն քո սատանայ. – 292. որպէս յայնժամ ի մահուն Ոզիայ արքային, յաւուրս Եսայեայ մարգարէի՝ ի ձայնէ սրովբէից շարժեալ տաճարին տեառն, մինչ բարձրանալ դրանդեացն: - 358. սա արար զմահ. – 46. ՎԱՍՆ ՄԱՀՈՒԱՆՆ ԱՊՈՒՄՐՈՒԱՆԱՅ – 368. ՎԱՍՆ ՄԱՀՈՒԱՆՆ ՅՈՎՍԵՓՈՒ Ի ԼԵՌՆԱՅՆՈՑՆ ԽՈՒԹԱՅ ԵՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՆՈՑԱ: - 188. ՎԱՍՆ ՄԱՀՈՒՆ ԱՇՈՏԻ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ ԻՇԽԱՆԻՆ Ի ՆԱԽՃԱՒԱՆ ՔԱՂԱՔԻ: - 384. Քանզի ի գնալ նորա զօրացուցանել զքեռին իւր զթագաւորն Հայոց, իսկոյն յելանելն նորա ի տանէ իւրմէ ի Վան քաղաքէ՝ տիրէ ի վերայ նորա ցաւք հիւանդագինք կարապետք մահու, անմերձենալիք ճարտարաց բժշկական ձեռնարկութեանն: - 384. Եւ զոր ծնար և զգուեցերն՝ քեզէն կոչեսցես ի մահ,,: - 148. և ծառայեա ճշմարտութեան օրինաց և հաւատոց, զոր ուսաք ի մարգարէէն Մահումաթայ. ապա թէ ոչ՝ զնորին հակառակն ընկալցիս, տանջանս և մահ, և ելցես ի կենաց աստի չարաչար մահուամբ,,: - 294.

ՄԱՀԱԲԵՐ - արկանել զնա ի կապանս և ի տանջանս մահաբերս, զամուրսն յինքն գրաւել, զաշխարհին տալ ի ձեռս իւրոյ գործավարացն, ըստ պարսկայնոցն հատուցմանց հատուցանել նոցա: - 370. և հանապազ յանձն իւր տարակուսանօք տարուբերէր, թէ յո՞վ և կամ յո՞յր կողմանս թափիցէ զդառնութիւն մահաբեր թունից իւրոց – 170. և յանկարծակի ի մէջ գիշերին Գրիգոր ախոյեանայարձակ դիմեալ շուրջանակի փակեցին ի ներքս զբանակն, սրով և աղեղամբ /330/ վերս մահաբերս ի վերայ եդեալ՝ յոլովք անկան ի զօրուէն. - 332. Եւ նոյնժամայն շուրջ փակեալ բազմութեան՝ արգելին զնա իբրև յամուրս անձաւաց, զվարս մահաբեր, շուրջ ձգեալ ի կործանումն քաջ նահատակին: - 352. Զի ի հասանել ի վերայ նորա ցաւոցն մահաբերաց՝ ոչ հոգացաւ զմանկականն իւր տարաժամ ելսն յաշխարհէս – 386.

ՄԱՀԱԴԻ - /թագաւորեաց/ Յեզիտ ամս Զ … Մահադի ամս Ժ. Մահմետ որդի Մահադեայ ամս Ը. - 168.

ՄԱՀԱԾԻՆ - Դարձեալ շինէ զօրավարն Գագիկ ի գլուխս Օձ ձորոյ, որ վասն խստութեանն սաստկաշունչ դառնալիր մահածին հողմոյն շնչելոյ այսպէս անուանեն – 396. զի թերևս կարասցէ արկանել զերանելին ի ներքոյ պղտոր հրապուրեցուցիչս ժախուն մահածին հնազանդութեանն - 204. իբրև շունք համրացեալք, որ ոչ կարեն հաջել, որպէս ասէ Եսայի մարգարէ, ընդդէմ Տեառն փոխելով զկատաղութիւն մահածին թիւնիցն սատակչական զօրութիւնն – 210. Իսկ նա ըստ սովորականի ցանկասէր պղծալից անյագութեանն՝ խրոխտացեալ մռմռեալ յանձն գազանեղէն թունիւք առաւելեալ, բորբոքեալ տապախառն բոցով հեղուլ զմահածին թոյնսն ի վերայ Բուխայի. – 326. սրտմտեալ անժուժկալ ի բարկութեանն ջերմագոյն արեանն մրրկալից շարժմանն, և սկսաւ թափել զմահածին թոյնս իւր ի վերայ կապելոցն, իբրև զթոյնս իժի – 242.

ՄԱՀԱՊԱՐՏ - և լինիցիս իբրև զմի ի մահապարտաց, որ անձամբ զանձինս հերքեցին ի կենաց վտանգաւոր մահուամբ, որպէս և քեզ պատրաստեալ է – 294. Եւ մինչ կարի և ահագին սաստիկս կուտեցաւ ի վերայ նորա ամբոխն, և ամբաստանքն միաբարբառ զաղաղակ /288/ բարձեալ առաջի բռնաւորին զօձիս պատառեալ ասէին, ,,մահապարտ է, չէ պարտ դմա կեալ, և ոչ առնուլ տեղի պատասխանւոյ,, - 290.

ՄԱՀԻԿ - շռնջապահս ձիոցն և տաշտս գաւակացն և զանգապանս ի չորս կողմանս, ձգեալ և լանջացն զէն, և բարձրավիզ խրոխտանացն զրահս, և ոտնատորոփ փռնկալոյն մանեակս զանգակեալս, և մահիկս լուսնաձևս ի մէջ ճակատուն կապեալ – 208.

ՄԱՀԻՃՔ - Եւ մինչդեռ յայնմ մահիճսն կարծեալ հիւանդութեանն կեղծաւորէր՝ և ախոյեանարձակքն /ճիշտը՝ախոյեանայարձակ/ զմիմեամբք շութափէին – 328. Զայս ասելով, և յերեսն ի վայր ի վերայ մահճացն զգետնեալ՝ ի վայն և յեղուկն զողբոցն խառնուածսն յաճախագոյնս մանուածէր: - 388.

ՄԱՀԿԱՆԱՑՈՒ - քանզի նա խարկանօք առն մոգի և կախարդի ասաց լինել որդի Ամովնայ և Արամազդայ, այլ ոչ ուրացաւ մահկանացու գոլ: - 36.

ՄԱՀՄԵՏ,ՄԱՀՄԷՏ - /թագաւորեաց/ Յեզիտ ամս Զ … Շամորեհեշմ ամս ԺԹ. Վլիթ ամս Բ. Մրուան ամս Զ. Աբդլայ ամս Գ. միւս Աբդլայ ամս ԻԲ. Մահադի ամս Ժ. Մահմետ որդի Մահադեայ ամս Ը. Մուսէ ամս /գրքում՝ ամ/ Ա. Ահարոն ամս Ե. Մահմետ որդի Ահարոնի և կնոջ Զուպետայ ամս Դ. Մայմաւն եղբայր նորա ամս ԻԱ. Սահակ Մահմետի որդի ամս Թ. Ահարոն որդի Մահմետի ամս Ե և ամիսս Զ. Ջաֆր որդի Մահմետի ամս ԺԷ: - 168. այլ և ինքն Մահմէտ, մոլեկան հոգւով շարժեցեալ՝ տայ գրել զանուղղայս, զոր մեք ի բազմաց զսակաւս յիշեսցուք: - 164. Եւ ելեալ նոցա արտաքս՝ սկսաւ խօսել Մահմէտ հրապարակաւ զնոյն բանս. – 160. և որդի նորա մնացեալ մատաղ հասակաւ, որում Մահմէտ կոչէին. – 158. Եւ պարտեցաւ կողմն Մահմէտի – 160. և փախստական եղեալ Մահմէտ և Ալի և ընդ նոսա իբրև արք Խ՝ եկին ի քաղաքն Մադիամ – 160. Զսա տեսեալ Մահմէտի՝ /162/ կոչեաց և յարեցոյց առ ինքն, հրամայեալ նմա գրել գիրս օրինաց ազգին իւրոյ, ձեռամբ Աբութուռաբայ իսմայէլացւոյ. քանզի ինքն ոչ գիտէր գիր և ոչ դպրութիւն: - 164. Իսկ աբեղայն արիոսեան, զոր յառաջագոյն ասացաք վարդապետ Մահմէտի, տեսեալ զյաջողութիւն իրացն՝ յարուցեալ եկն առ Մահմէտ, ցուցանել նմա զգութ երախտեաց, իբրև յիւրմէ վարդապետէ ուսեալ եհաս այնպիսի իրաց. – 162. Իսկ աբեղայն արիոսեան, զոր յառաջագոյն ասացաք վարդապետ Մահմէտի, տեսեալ զյաջողութիւն իրացն՝ յարուցեալ եկն առ Մահմէտ, ցուցանել նմա զգութ երախտեաց, իբրև յիւրմէ վարդապետէ ուսեալ եհաս այնպիսի իրաց. – 162. Տեսեալ կնոջն զՄահմէտ այր հաւատարիմ և ուշմագոյն յամենայն իրս աշխարհականս՝ եղև նմա կին և ետ ի ձեռն նորա զամենայն հոգս տան և ընչից: - 158. Տեսեալ Մահմէտի զյաջողութիւն իրացն և զմիաբանութիւն Հրէիցն՝ ասաց զինքն գլուխ և առաջնորդ ամենեցուն: - 160.

ՄԱՀՈՒՄԱԹ - ,,Բուխայ գլուխ զօրավարաց ընդհանուր Թագաւորութեան Տաճկաց, Ջափր իշխեցող ծովու և ցամաքի, հաւասար և օրէնսդրին մերոյ Մահումաթի, և հաւատարիմ միջնորդ Աստուծոյ և մարդկան, և թագաւոր ընդհանուր ազգաց հարաւային աթոռակալութեան … Յղեցի զքեզ ելանել ի վերայ երկրիդ Հայոց ամենայն կենդանեաց – 236. առանց ի տանջանս և ի չարչարանս լի դառն հարուածոց մտանելոյ հաւանեալ մեզ և օրէնսդրին մերոյ Մահումաթայ – 244. և ընդ մեծ պարսաւանօք ներքաղրեալ զբռնաւորն և զմոլար օրէնսդիրն իւրեանց զՄահումաթ: - 206. և խոտեալ ի բաց ընկենուք զմիոյ անընկեր և անվերոյ իրաց հանդէս, որպէս և իսկ կոչեցեալ մարգարէն ձեր Մահումաթ – 246. և ծառայեա ճշմարտութեան օրինաց և հաւատոց, զոր ուսաք ի մարգարէէն Մահումաթայ. ապա թէ ոչ՝ զնորին հակառակն ընկալցիս, տանջանս և մահ, և ելցես ի կենաց աստի չարաչար մահուամբ,,: - 294. և պախարակելով զմոլար օրէնսդիրն նոցա Մահումաթ: - 250. Իսկ իբրև ընթերցաւ զնամակն, գրեալ երդմունս ի ծանականս կանանցն իւրեանց և ի մոլար օրէնսդիրն իւրեանց Մահումաթ. – 236. Յովսէփ անուն ի

Յունաց ազգականութենէ ի ծառայութիւն հասեալ Աւշնի, ներքինի, թողեալ զքրիստոսական պաշտօնն, մոլորութեանն Մահումաթայ հաւատացեալ. – 374.

ՄԱՀՈՒ ՉԱՓ - սուրբքն ոչ եթէ զերևելի տեղիս ախորժեն, զի թէ ոչ այսպէս, ո՞չ նոքա զնեղ և զանձուկ կեանս կան մահու չափ,,: - 100.

ՄԱՀՌԱՇՏ - Իսկ ի տիրական զօրավարութեանն Գագկայ սկզբնաւորեալ ձեռակերտ իւր՝ շինեաց զհողաբլուր բարձրաւանդակն ի Մահռաշտ գեօղ յափն գետոյն յելս կոյս, որ հայի յՈստանն Ռշտունեաց – 394.

ՄԱՂԱՂԱՅԵԼ - Եւ են ի թուել մինչ ցայս վայր այսոքիկ. Ադամ, Սէթ, Ենովս, Կայիանան, Մաղաղայէլ, Յարէդ, Ենովք, Մաթուսաղայ, Ղամէք, Նոյ, Քամ, Քուշ, Նեբրովթ որս և Բէլ: - 36. Կայիանան լեալ ամաց ՃՀ ծնաւ զՄաղաղայէլ: - 26.

ՄԱՂԱՂԻԷԼ - Մաղաղիէլ լեալ ամաց ՃԿԵ-ից, ծնանի զՅարէդ: - 26.

ՄԱՂՋ - Եւ կայր գյօնսն պռզտեալ, կոկոզաբանէր լի յոխորտանօք, խրոխտայր, եռացուցանէր ի վեր մղէր զդառնութիւն ժահահոտ մաղձոյն չարաթոյն վատախառնութեանն – 242.

ՄԱՂՁԱԽԱՌՆ - Եւ սկսաւ ի վերայ մղել զժախահոտ և զյիմարեցուցիչ մաղձախառն թոյնսն – 204. հրախառն տոչորմամբ եռացեալ շուրջ զսրտիւն արիւնն՝ մաղձախառն բերմամբ յապուշ զմիտսն կրթեալ՝ կայր ի մէջ տարակուսի – 180.

ՄԱՂՁԱՀԱՄ - և ոչ եղեն ունկնդիր մաղձահամ և ժախահոտ բանիցն, իբրև ի փեռեկեալ գերեզմանէ զնեխահոտութիւնն արտաքս արկանելոյ. – 292.

ՄԱՄԲՐԷ - Իսկ առ մեզ հասին զրոյցքս այս ըստ մնացորդաց պատմագրացն առաջնոց, ի Մամբրէէ Վերծանողէ և ի նորուն եղբօրէ Մովսէս կոչեցելոյ, և միւսումն Թէոդորոս Քերթող – 74.

ՄԱՄԲՐԷ ՎԵՐԾԱՆՈՂ - Իսկ առ մեզ հասին զրոյցքս այս ըստ մնացորդաց պատմագրացն առաջնոց, ի Մամբրէէ Վերծանողէ և ի նորուն եղբօրէ Մովսէս կոչեցելոյ, և միւսումն Թէոդորոս Քերթող – 74.

ՄԱՄԳՈՒՆԻՔ - ի հօրէ զՍենեքերիմայն և ի մօրէ զՄամգոնեացն, /ճիշտը՝ Մամգունեացն/ ըստ ծննդաբանութեան գալ հասանել՝ մինչ յորում եմքս հասեալ ժամանակ – 300. յերկուց թագաւորազանց զաճմանն սեռի բերելով զբողբոջս զՍենեքերիմայն և զՄամգունեաց ճենազնւոյ, ի միասին զզուգամասն պայազատեալ գահընկալ թագաւորական զարմ - 300.

ՄԱՄԻՋՈՍ - Եւ արդ են մի ըստ միոջէ թագաւորք Ասորեստանեայց այսոքիկ … Բաղէոս ամս ՕԲ… Մամիգոս ամս Լ … Մամիգոս միւս՝ ամս Լ - 56.

ՄԱՄԻԿՈՆԵԱՆ - Ազդ եղև Մամիկոնեան սպարապետութեանն անոպայ գործն – 98. այլ առնու զզօրսն Պարսից և գայ թագաւորել Հայոց հրամանաւ Շապհոյ արքայի, ունելով ընդ իւր զՎահան Մամիկոնեան. – 106. Այս լուր դառնութեան եհաս առ մեծն Վարդան Մամիկոնեան, որ էր ամրացեալ ի Տաւրոսականն Զռայլ: - 126. գնացին առ Արկադ … Սամուէլ Մամիկոնեան … և Վասակ Արծրունի: - 110. և դիմեցին քաջասրտագոյնս ի վերայ սուսերամերկք զինեալք ի մէջ ամբոխին, Արտաւազդ և Վասակ Մամիկոնեանք - 98. Եւ քանզի յետ մահուանն մեծին Սահակայ Բագրատունոյ սպարապետի ասպետի և զօրավարի Հայոց, հաւատացեալ էր Թէոդոսի կայսեր զսպարապետութիւնն Հայոց Համազասպ Մամիկոնէի և որդւոյ իւրում Վարդանայ – 122. Եւ քանզի վախճանեալ էր Համազասպ Մամիկոնեան … ոչ ոք այնուհետև առաջնորդէր Հայոց աշխարհիս. – 116. զայս խորհեալ Մարդպետին ասէ, թէ զայս ձախողակի իմացմունս կատարել կարացից՝ թերևս և զտուն Մամիկոնեան նախարարութեանց կարացից որսալ ի կորուստ: - 98. Իսկ յաւուրս Վաղարշու մանուկն Վահան Մամիկոնեան ուժեղանայր ընդդէմ Պարսից. – 134. Իսկ Վարդան Մամիկոնեան, որդի Համազասպայ Մամիկոնէի, թոռն սրբոյն Սահակայ, խոյս տուեալ գնաց զկողմամբքն Մոկաց, ի խոխոմս Տաւրոսական լերինն, ի լեսուրս Ջերմաձորոյ – 122. Իսկ Վարդան Մամիկոնեան, որդի Համազասպայ Մամիկոնէի, թոռն սրբոյն Սահակայ, խոյս տուեալ գնաց զկողմամբքն Մոկաց, ի խոխոմս Տաւրոսական լերինն, ի լեսուրս Ջերմաձորոյ – 122. նոցա կալեալ զտիկինն Ռշտունեաց զկին Գարեգնի զքոյր Վարդանայ Մամիկոնէի ածեալ ի Վանտոսպ ի քաղաքն Շամիրամայ, մատնեն ի

խոշտանգանս և ի տանջանս դառնագոյնս. – 102. նուաճեաց զանձն, հրապոյրս պղտորս արբուցանէ Վահանայ Մամիկոնէի, որ էր աներ Մեհուժանայ, և անցեալ գնացին առ Շապուհ. – 102. Որոյ երթեալ առ Շապուհ յիշեցուցանէ նմա զհարազատէն իւրմէ Մեհուժանայ՝ միամիտ և հպատակ /108/ լինիլ արքայի, և զպատերազմացն գործ և զբազում աւարառութիւնս և զգերփանս Հայոց աշխարհիս ի Մեհուժանայ, և զմահն նորա ի ձեռանէ քաջին Սմբատայ Մամիկոնէի- 110.

ՄԱՄԻԿՈՆԵԱՆՔ - տեղեկացեալ և վասն տոհմին Արծրունեաց և Ռշտունեաց և որք ի նախարարութենէն Մամիկոնէից հասեալ գնացեալ ամրանային ի յամուրսն Տայոց – 98. այլ իբրև եմուտ Բուխայ յաշխարհս Վասպուրական՝ ել գնաց Գուրգէն առ Քուրդիկ Մամիկոնէից տէր ի Բագրևանդ գաւառ, և անդ լինէր, զի էր Քուրդիկ քեռի Գուրգինայ: - 302. Ապա առեալ հրաման մեծամեծացն մեր Արծրունեացն՝ գրեն առ Աբրահամ Մամիկոնէից եպիսկոպոս … և ծանուցանեն նմա զոր խնդրէ արքայ: - 132. միանգամայն խորհէր վրէժխնդիր լինել ազգին Մամիկոնէից վասն սպանման Մեհուժանայ հաւոյն իւրոյ: - 112. որոց անուանք ճանաչի սոցա՝ տէր Սմբատ սպարապետ Հայոց, և Գրիգոր Քուրդկայ որդի Մամիկոնէից տէր, և Ատրներսեհ /296/ Աղուանից իշխան, և Գրիգոր Սիւնեաց տէր – 298.

ՄԱՅ - և դիմեալ ի Գանձակն Ատրպատականի՝ բրէ զնա, աւերէ զԱհմատան և զՄայ կործանէ և զբագինն հրատին մեծի, որում Վշնապն կոչեն – 148.

ՄԱՅՄԱԻՆ/հավանաբար՝ՄԱՅՄՈՒՆ/ /թագաւորեաց/ Յեզիտ ամս Ջ … Մահմետ որդի Ահարոնի և կնոջ Զուպետայ ամս Դ. Մայմուն /գրքում՝Մայմաւն/ եղբայր նորա ամս ԻԱ. - 168.

ՄԱՅՐ[1] - բայց միայն մանուկ մի Դիոս անուն, զոր գաղտաբար ապրեցոյց մայրն, որպէս յետ բազում ժամանակաց զՄովսէս ի յԵգիպտոս – 14. և առաքեալ էր զմայր իւր զբամբիշն Վասպուրականի առ զօրավարն Բուխայ – 226. և եկեալ ի մի վայր Գագիկ և Գուրգէն եղբարք համահարք և միոյ մօր ծնունդք, յերկուց քաջատոհմիկ գահակալութենէ Սենէքարիմայ և Դաւթի – 388. Եւ առնու պատանդս արս անուանիս և պատուականս, և զմայրն Աշոտի դարձուցանէ մեծաւ պատուով. – 186. և դարձեալ անտի սպան և զմայր իւր զՏաճատուհի – 106. Եւ մօտ առ սոցա կայ լեառն Կաւկասու, յորում բնակեն ազգք յամենայն լեզուաց բաժանեալք, ըստ ազգս ՀԲ ազգացն, և կեան առանց առաջնորդի, և օրէնս անձանց ունին ամենայն ոք որ զինչ կամի, և ընդ մայրս և ընդ քոյրս ամուսնանալ: - 274. զոր աւանդեցին որդիք թագաւորին յետ մահուան հօր և մօր իւրեանց ի պէտս սուրբ Խաչին Աղթամարայ. – 356. ի հօրէ զՍենեքերիմայն և ի մօրէ զՄամգոնեացն, ըստ ծննդաբանութեան գալ հասանել՝ մինչ յորում եմքս հասեալ ժամանակ – 300. Հերովդէս այլազգի որդի Անդիպատրեայ Ասկաղոնացոյ և մօր Եւպատրեայ Արաբացոյ, թագաւոր Հրէից, յաւուրս ծննդեան տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: - 78. Նա և մայր իշխանին Աշոտի, քոյր Սահակայ և Բագարատայ իշխանին Տարաւնոյ… երթեա՛լ ընծայիւք բազմօք յանդիման լինէր Յովսէփայն և խնդրէր զհաշտութիւն և զխաղաղութիւն հաստատել առ որդիսն իւր և առ բոլոր աշխարհն Վասպուրական: - 186. որ սպան զհայր իւր Վահան և զմայր իւր Տաճատուհի վասն պարսկականին հնազանդութեան մոգութեան օրինացն – 110. Որպէս և Եզեկիէլ մարգարէ ասէ, ,,հայր քո քանանացի էր և մայր քո քետացի,,: - 182.

ՄԱՅՐ[2] - ելցեն ի քեզ փայտահարք բազումք և կոտորեսցեն զմայրս քո մեծամեծս և զմատաղատունկս բարձունս. – 148. և դահճացն հանեալ զսուսերն՝ դիմեցին ի վերայ նոցա իբրև զգազանս արիւնարբուս, և ծեծէին սրովն, իբրև ոք զի հատանիցէ փայտ ի մայրս անտառախիտս հարեալ կացնաւ, և յանխնայ անողորմ յօշէին անդամ անդամ: - 266.

ՄԱՅՐԱՔԱՂԱՔ - լի արտասուօք և հեծեծանօք յիշեցեալք զվերին Սիօն մայրաքաղաքն սուրբ – 252. նստէր փորող պողոտային նրբափողոց ճանապարհին, որ հանէր ի վերին մայրաքաղաքն Սիոն, ի բանակետղն երկնաւոր զօրացն յարքայանիստ քրիստոսական թագաւորութեան: - 204.

ՄԱՅՐԻ - ,,արջք գիսակազեղք սպիտակայեղցք որջացեալ ի պրակս անտառախիտ մայրեացդ. արդ թէ հաճոյ թուիցի՝ երթիցուք որսալ զնոսա,,. – 100. այլ մնացեալքն ի սրոյն փախստական անկանէին յամուրս մայրեացն: - 176. և առեալ զնա մտանեն ի մէջ մայրեացն, և ընդ գիրկս մտեալ Շաւասպայ Արծրունւոյ՝ զլայնալիճն լի քարշեալ հարկանէ ի թիկանց ընդ մէջ ողինն զկորովալիր մատանցն զազդոյ շարժումն թռուցեալ թափանցիկ ընդ չարախորհուրդ սրտին միջոցն դիպեցուցանէ. – 100. Եւ բարձեալ աշտեայս հանապազակիրս ի պատրաստութիւն գազանացն որ ի մայրիսն որջանան, կամ թշնամեաց ի վերայ հասելոց – 190. և բնակութիւն նոցա ի խորաձորս և ի փապարս լերանց և ի պրակս մայրեաց, ի գագաթունս լերանց: - 190. և ի փայտից մայրեաց շինեալ էր քաղաքն նոցա, պարիսպք և պատուարք և ապարանք նոցա և ամենայն տուն բնակաց քաղաքին և ամենայն կազմած պատրաստութեան նոցա: - 270. Եւ նոյն ժամայն շուրջ փակեալ զքաղաքաւն հրձգութեամբ, և դիզեալ բորբոքէր հուրն ի դիւրածախ փայտէն մայրից և գիոց: - 272.

ՄԱՆԱՋԱԻԵԱՆ - Այլ իբրև այն ինչ մերձ լինէր ամրոցն ի պաշարումն՝ Ամդայինն Յիսէ, որ Շեհի որդին, որ զզօրապետութիւնն Հայոց ունէր, ճանաչէր՝ ի հրապոյրս Մանազաւեան պետոյն և Ութմանացն ելեալ՝ երագապէս եկն եհաս ի վերայ Աշոտի ԺԵ հազարաւ հեծելօք վառելովք. – 334. և մնացեալքն փախստեամբ ի Մանազաւեանն անկանէին քաղաք: - 382. Իսպառ ստորև ամրականին ի գոգաձև տեղւոջն … շինեաց եկեղեցի հրաշագործ հրաշազան յօրինուածով եկեղեցի ի տաշեալ քարանց ի Մանազաւեան քաղաքին ի Վանտոսպ, և հիմնեցուցեալ յանուն սրբոյն Սիօնի, որ ի սուրբ քաղաքն Երուսաղէմ. – 390. Քանզի և զոստանն Նախճաւան տուեալ էր ի կալուած զյաղթութեանն մանազաւենին Կայսկի: - 382.

ՄԱՆԱՋԱԻԵԱՆ ՆԱՀԱՆԳ - Եւ եղև յետ մեծ պատերազմին, որ յառաջ քան զզրուցացդ գրելոյ ելին, ի գլուխս Մանազաւեան նահանգին և Յուշոյ դաշտին, և զխռովարարս քաղաքացն ի մի վայր գումարելոցն, որք և յունայն ասպատակէին աշխարհ – 398. Եւ անցեալ բնակեալ էին զօրքն Հայոց ի դաշտին Օշական ի Մանազաւեան նահանգին: - 380. քարինս տաշահոս հոլովեալ ի նիւթ եկեղեցւոյն ի Մանազաւեանն նահանգէ ընդ Բզնունական ծովն բերեալ մատուցանէ առ կատարումն հրաշագեղ դիտանոցին սրբոյն Սիօնի, այլովքն սրբական անուանակոչութեամբ տեղեաց տնտեսականին բանին Աստուծոյ մարդ եղելոյ: - 396.

ՄԱՆԱՋԱԻԵՅԻ - զոր ոչ անուննկնդիր լեալ ընդունի զհայցելին, առնելով հարկս և պատանդս, և զբերդն Երիկաւ Հաղացովտի, զոր հանեալ էր մանազաւեցոյն ի բերկրացոյն. – 382.

ՄԱՆԱՋԿԵՐՏ - Եւ զի էր պաշարել նորա յայնժամ զքաղաքն Մանազկերտ Ապահունեաց աշխարհին, որ ի ձեռս Ապլբառայն էր, և ածեալ հասուցեալ մերձ ի պաշարումն. և ի հասանել գուժկանացն եթող զնոսա, տալով նոցա հրովարտակս ի խաղաղութիւն: - 348. և ետուն ի սուրբ եկեղեցին Դ ագարակս. զվանքն Փշոց և զագարակն Ահավանք, յանդիման եկեղեցւոյն որ ի կղզին, և զքարն Մանակերտ, որ է հանդէպ հարաւոյ կուսէ, և զԲերկրի և այլ բազում տեղիս – 356.

ՄԱՆԱՍԷ - և զի թագաւորութիւնն Եբրայեցւոց յերկուս հակառակս բաժանեալ էր՝ հնազանդ իւր արարեալ Փուայ Ասորեստանւոյ առնու հարկս ի Մանասէէ արքայէ հազար տաղանդ արծաթոյ: - 60.

ՄԱՆԱԻԱՆԴ - այլ զպարտութիւն քան զյաղթութիւն յինքեանս ձգէին ի ձեռանէ Յիսէի, մինչ պակասել պատրաստութեանն բերդին, մանաւանդ ջրոյն սակաւաւորութիւն. – 362. Այսոքիկ գաւառք անուանիք, զոր յառաջին ժամանակս իւրոյ իշխանութեանն սեփհականս իւր արարեալ ունէր հայրն նենգութեան Մարդպետն կոչեցեալ … և մանաւանդ քաղաքն Շամիրամայ հռչակելին և յոյժ փառաւորագոյնն յամենայն կողմանց Վասպուրականի: - 388. Բայց Գուրգէն խոկայր զմասն աշխարհին յինքն գրաւել, մանաւանդ զՈստանն Ռշտունեաց, որ էր տեղի սպանման հօր իւրոյ, գինս արեան զնա համարելով: - 362. Բայց խռովիչքն ատեցողքն խաղաղութեան ոչ դադարէին նիւթել

զհակառակս բարւոյն և զաճմունս չարին. մանաւանդ Վասակ որ զկարծեալ իշխանական անունն յինքեան բերէր: - 310. և Ահմատայ ընդ մէջ փակեալ զղաշիկն՝ յանխնայ հարուածովք հարին, մանաւանդ զհետևակազօր գրոխսն և զգռեահսն որք ընդ նոսա. – 368. Եւ Գուրգինի նորին եղբօրն զպատիւ մարզպանութեան զահակալութեան հաւատացեալ, ըստ կարգի բարձաբերձութեան թագաւորացն Հայոց, մանաւանդ մեծին Տրդատայ թագաւորի: - 370. Եւ խոյակապ և անուանի եղեալ քան որ յառաջագոյն քան զնա էին կացեալ իշխանք ընդհանուր Հայաստանեայցս, որ յարևելս և ի կողմանս հիւսիսոյ, մանաւանդ որք ի Վասպուրական աշխարհիս էին կացեալ նախարարք յիշխանական պետութիւնս: - 170. և կանայք կոտորելոցն հանդերձ խառնիճաղանճ ամբոխիւն լրբենի դիմօք, հոլանեալք և ի բաց ընկեցեալ զձև կանացի բնութեան, որպէս օրէն է նոցա, մանաւանդ տաճկական ազանց, և ի հետիոտս դիմեալք ի դուռն արքունի հասանէին: - 180. և կարիցես զիշխանս Հայոց կապանօք առ մեզ հասուցանել, մանաւանդ զիշխանն Վասպուրական զԱշոտ՝ քեզ և զաւակի քում տաց զերկիրն զայն ի ժառանգութիւն: - 184. և կողմնեալք ի սիրոյ աստուածութեանն անկաւ ի վերայ նոցա զարհուրումն մահու, մանաւանդ ոչ կամելով ելանել /246/ ի սնոտի կենացս դիւրափոփոխ աշխարհիս՝ ասեն. - 248. Եւ վասն այսր իրաց նենգութեամբ և չարակնութեամբ առլցեալ, մանաւանդ յերկիւղէ՝ կարի յոյժ գրգռեցաւ պատերազմ սաստիկ ի ձեռն Վասակայ Արծրունոյ. – 178. Իբրև գիտաց բռնաւորն, եթէ յաղթեցաւ ի սրբոց արանցն, մանաւանդ ի քաջէն Գրիգորէ – 250. Իսկ կատարելագոյնքն և ծերքն ի նոցանէ սպուժէին առ այս, և մանաւանդ որք հաւատարիմքն կոչէին ըստ հաւատոյն նոցա որք Կուռայքն անուանէին – 404. Իսկ եթէ՝ մշակն մեղաց և անդրանիկն ամենայն չարեաց, որ ի յօձն բունեալ ոչ անիծաւ, որպիսիս ուսուցանէ վնասապարտութիւն օձին առ ի պատժականութեանն գտանել պարտաւորութիւն, որ ոչ յընքենէ միայն, այլ մանաւանդ ի գտողէն չարեաց: - 22. լինել տիրակորոյսք և աշխարհաւերք, բանսարկուք և քսսիչք, խռովասէրք մանաւանդ քան թէ խաղաղասէրք – 210. մանաւանդ յառաջագոյն պատրաստեալ պատսպարեաց թղթովք և պատարագօք առ թագաւորն և առ զօրավարն գնալ ըստ հրամանաց նոցա, և ոչ ինչ արտաքոյ կամաց նոցա խորհել կամ գործել ինչ: - 270. մանաւանդ մեծ կաթողիկոսն Հայոց Գէորգ պաղատանս առնէր առ Դերանիկն, զի ընդարձակեսցէ նմա: - 336. ուշ եղեալ ուժեղութեամբ և քաջութեամբ սրտիւ ընդդիմանալ, մանաւանդ ի Ծանարացն զնա տեսեալ ի պարտութիւն մատնեալ և յաղթահարեալ: - 276. քող արկեալ զդաւաճանող կեղծաւորութիւնն, զբարձումն բոլոր իշխանացն Հայոց, մանաւանդ զնախագահանստեալն զԱշոտ իշխանաց իշխան: - 340.

ՄԱՆԱՒԱՆԴ ՁԻ - և մանաւանդ զի հարկ փութոյ եղև մեզ գիտել զպայազատութիւնս երանաց տիրեցելոց մեր աշխարհի և որ յառաջ քան զնոսա թագաւորք Ասորեստանեայց, որդի /34/ ի հօրէ առեալ մինչև ի Սենեքարիմ արքայ, որ առ Եզեկիայիւ Երուսաղէմի արքայիւ եղեալ ազգապետ տանս Արծրունի: - 36. զի մի ամենևին ոք կայցէ յակաստանի, մանաւանդ զի ոչ ոք տևեաց ընդդիմանալ ձեռին նորա. – 296. զի յինքեանս գրաւեալ ընդ հարկաւ ծառայեցուցանէին զպաշտօնեայս սրբոյ Խաչին, մանաւանդ զի և զգլխաւոր վանացն զհայրն, որում Գրիգոր անուանէր՝ զնա կալեալ եղեալ ի խորափոր խաւարային բանտի: - 334. մանաւանդ զի աւերեալ էր երկիրն յասպատակէ Պարսից, այն ինչ հուպ մեռանելն Երուանդայ և ընդ թագաւորելն Արտաշէսի: - 90. մանաւանդ զի բարեպաշտութիւն մեծ համարիմ սատակել զթշնամիսդ Աստուծոյ, որպէս Մովսէս զԱմաղէկ, և Յեսու զՔանանացիսն, և Սամուէլ զԱգագ, և Դաւիթ զԳողիաթ, և համանգամայն իսկ որպէս սատակեցին Իսրայէլացիքն զայլազգիսն – 278. մանաւանդ զի և թագաւորին նախ ակն ունէր զդառնալն ի կռոցն ի յերկրպագութիւն Քրիստոսի ճշմարտին Աստուծոյ. - 88. մանաւանդ զի յառաջագոյն /308/քան զմեզ այլոց ոմանց բանակարգեալ գրեալ հաւաքեալ է ի մի շար: -310. մանաւանդ զի ոչ բաւականանամ իմով աղքատիմաստ բանգիտութեամբ զսորայս բացայայտել զչափ ներբողականին՝ այլոց ուժեղագունից և մտահարուստ արանց թողի. – 300. մանաւանդ զի փեսայացուցեալ էր Շապուհ զԳագիկ ի դուստր իւր. –

364. որ մեծաւ ախորժանօք յանգուցանէ առ ինքն զնոսա իբրև արս պատուաւորս և քաջամարտիկս զօրաւոր զօրութեամբ, և մանաւանդ զի բազում անգամ զանուն յաղթութեան ստացեալ ունէին: - 366.

ՄԱՆԱՒԱՆԴ ԹԷ - և կերիցեն քարինք և փայտք և այլ կահք երկաթեղէնք, որպէս և զայն որ ի նմայն պատարագի մարմին և արիւն որդւոյն Աստուծոյ, մանաւանդ թէ ինքն իսկ ճշմարտապէս որդին Աստուծոյ. – 396. և նոքա ըստ ձախողակի սովորութեանն իւրեանց օրինադրութեանն, արիւնարբու առանց բարւոյ բարեգործութեանցն մանաւանդ թէ լցեալք սատանայական չարութեամբք՝ ձայն արկեալ յամենայն քաղաքսն, խռովեալ ըստ գազանեղէն իւրեանց մոլեգնութեանցն – 398. տևեալ զաւուրս Խ՝ փոխի յաշխարհէս ամենեցուն պատկառելին, մանաւանդ թէ ընդհանուր ցանկալին և սիրելին ճոխից և անազգեաց, աղքատաց և փարթամաց, մեծամեծաց և փոքունց: - 384. մանաւանդ /370/ թէ նախախնամող և պահպանական աջն Քրիստոսի հովանաւորեալ առ ապրուստ հրածին կարկտաբեր հասեալ կորստական դիպուածին, օգնութիւն հասեալ յԱստուծոյ՝ քաջասրտագոյնս զնա գործեաց և շութափեալ զնա ի ժանեաց գազանին – 372. որ կարի սիրելի է ինձ, մանաւանդ թէ յոլովից, կամ թէ ամենայն հաւատացելոց ի Քրիստոս՝ յերկարագոյնս առնել ի ճառիս զդեզերումն շահատակութեան, ձեզ լսել և ինձ գրել: - 76. Որպէս ցուցանեն յիշատակարանք հաւատարիմ պատմագրացն. մանաւանդ թէ աւետարանիչն և առաքեալն Յօհաննէս, որդին որոտման, տիեզերաց հնչեցոյց զորոտումն աւետեաց Աւետարանին Քրիստոսի – 76.

ՄԱՆԵԱԿ - և փոխանակ մանեկաց՝ զսուրն փայլեալ ի պարանոցսն ընդունէին: - 266. շռնջապահս ձիոցն և տաշտս գաւակացն և զանգապանս ի չորս կողմանս, ձգեալ և լանջացն զէն, և բարձրավիզ խրոխտանացն զրահս, և ոտնատորոփ փռնկալոյն մանեակս զանգակեալս, և մահիկս լուսնաձևս ի մէջ ճակատուն կապեալ – 208.

ՄԱՆԻԹՈՊ - զոր աւանդեցին խաւարայած արևելականքն, Զրադաշտ և Մանիթոպ իւրեանց հաւանելոցն – 52. Մանիթոպ արքայ Խեփտաղաց ևս յաւելուածով զայսոսիկ հաստատէ. – 48. ՎԱՍՆ ԱՍՈՐԵՍՏԱՆԵԱՑՑ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆՆ. ԵԻ ԹԷ ՈՐՊԷՍ ԶՐԱԴԱՇՏ ԵԻ ՄԱՆԻԹՈՊ ԿԱՑԵԱԼ ԳԼԽԱՒՈՐՔ ԱՐԵԻԵԼԻՑ ԿՈՂՄԱՆ, ԵԻ ՄՈԼԱՐ ՈՒՍՄԱՆՑ ՆՈՑԱ - 42.

ՄԱՆԿԱԳՈՑՆ - Եւ իմաստուն և հանճարեղ խորհրդովք, քաղցր և կակուղ բանիւք ողոքեալ զմանկագոյն Հասան, առաջի արկանելով նմա զարժանի ալեացն պատուականութիւն և զիշխանական ճոխութեան զբարձրագահութիւն և որ ինչ այդմ հետևէր. – 348. և ինքն մանկագոյն տիովք, ի ժամանակի անձնիշխանութեան լեալ ամաց ԺԵ, զի ,,մանկութիւն և անմտութիւն ընդունայնութիւն է,, , որպէս գրէ Սողոմոն – 346. և որդի նորա Խոսրով մանկագոյն տիովք մնացեալ՝ առնու զթագաւորութիւն: - 136. Իսկ Աշոտ եղբայր Վաչէի քանզի էր մանկագոյն տիովք՝ առեալ դայեկին իւրոյ մատուցանէ առաջի Երուանդայ – 84. քանզի էին մանկագոյնք տիովք. առին գնացին յամուրսն Տայոց. – 98. քանզի էին որդիք նորա յոյժ մանկագոյնք – 44.

ՄԱՆԿԱԿԱՆ - Զի ի հասանել ի վերայ նորա ցաւոցն մահաբերաց՝ ոչ հոգացաւ զմանկականն իւր տարաժամ ելսն յաշխարհէս – 386. Իսկ Ապումրուանայ ի պատճառ ոստիկանութեան զմանկականն նոցա պատճառելով խաժութիւն հասակի՝ առ սակաւ սակաւ սկսաւ զամուրսն յինքն գրաւել, զհետ իշխանական ցանկութեանն զերասանակ մտացն ձգեալ - 360.

ՄԱՆԿՈՒԹԻՒՆ - ,,ընդէ՞ր որպէս մանուկ տղայ համարիս, արկանել առաջի իմ զպատրանս, սնոտի, առասպելաբան, խաբեբայ և պատիր յոյս խոստանալով ինձ՝ հանել զիս ի ճշմարիտ յուսոյն, զոր ի մանկութենէ ի վերայ հասեալ ճշմարտութեանն,,: - 294. և ինքն մանկագոյն տիովք, ի ժամանակի անձնիշխանութեան լեալ ամաց ԺԵ, զի ,,մանկութիւն և անմտութիւն ընդունայնութիւն է,, , որպէս գրէ Սողոմոն – 346. որոց սրտի մտօք ի մանկութենէ զհարկ ծառայութեան հատուցեալ էին ըստ օրինի վայելչութեան հնազանդողաց և հնազանդելոց, ըստ յորդորման հեթանոսաց վարդապետին: - 364.

ՄԱՆԿՏԻ - զբազմամարդի գեօղս և աւանս առնել անմարդիս, և զմնացեալսն վարել ի գերութիւն, զկանայս հանդերձ մանկտով. – 202. Իսկ սպառնալիք քո և չարչարանք, զոր ասես ի վերայ իմ հասուցանել՝ խաղ մանկտոյ կամ զառանցելոց թուի յաչս իմ, և բանք քո նոյնպէս, որպէս առն անմտի և խելագար և ցնորեալ ծերոյ,,: - 290.

ՄԱՆՈՒԱԾԵԼ - Զայս ասելով, և յերեսն ի վայր ի վերայ մահճացն զգետնեալ՝ ի վայն և յեղուկն զողբոցն խառնուածսն յաճախագոյնս մանուածէր: - 388.

ՄԱՆՈՒԱԾՈՅ - և շամփուր շողացուցեալ մանուածոյս փակէ ի ներքս զզազաթն ամբարշտին. – 108.

ՄԱՆՈՒԿ/գ.ա./ - ,,դու, մոլի մանուկ/ծն.մոլիմանուկ/, ընդէ՞ր մեռանիս զուր և տարապարտուց,,. – 222. ,,ընդէ՞ր որպէս մանուկ տղայ համարիս, արկանել առաջի իմ զպատրանս, սնոտի, առասպելաբան, խաբեբայ և պատիր յոյս խոստանալով ինձ՝ հանել զիս ի ճշմարիտ յուսոյն, զոր ի մանկութենէ ի վերայ հասեալ ճշմարտութեանն,,: - 294. ամբարձին զաչս իւրեանց և տեսին, զի զկանայս և զմանկունս իւրեանց տեսին ընդ աշխարհական գերիսն: -220. անկեղծաւոր և աննենգ տիրասիրութեամբ ցուցանել հնազանդութիւն հպատակութեամբ, մինչ յարիւն և յապաժոյժ նահատակութեամբ առնուլ վրէժս ի Պարսկացն հինից՝ զաւեր եկեղեցեացն Հայաստանի և զնեղութեանցն և զգերփանացն և զաստիկ արիւնահեղութեանցն զքրիստոնէից և զուխտի մանկանց եկեղեցւոյ սրբոյ: - 134. բազմեալ էին ընդ Քրիստոսի իբրև զմանկունս առագաստի: - 254. բայց միայն մանուկ մի Դիոս անուն, զոր գաղտաբար ապրեցոյց մայրն, որպէս յետ բազում ժամանակաց զՄովսէս ի յԵգիպտոս – 14 Եթէ, որպէս ասացի, ի բաց գնաս յինէն՝ խաղաղութիւն է, և թէ ոչ՝ պատերազմ և կռիւ և ճակատամարտ ... դու ախոյեան՝ և մանկունք իմ յաղթանակ, դու ոսոխ՝ և զօրք իմ դատապարտիչք. – 278. Եթէ, որպէս ասացի, ի բաց գնաս յինէն՝ խաղաղութիւն է, և թէ ոչ՝ պատերազմ և կռիւ և ճակատամարտ … դու խաղալիկ՝ և մեք մանկունք, ի ձեռն առեալ զզօրութիւն քո՝ խաղալով խաղամք ընդ քեզ և ամենայն հպարտութիւն ամբարհաւաճութեան քո. – 280. և մխիթար բարի ունէր ի բարբառոյ մարգարէին որ ասէր. թէ /գրքում՝ թե/ ,,մանուկ մատաղ ի ծակ իժից արկցէ զձեռս իւր՝ և ոչ մեղիցեն նմա,,: - 252. և այր եղբօր իւրում ոչ ողորմէր, ըստ այնմ զոր ասաց դարձեալ Եսայի, ,,անկցի, ասէ, այր ընդ այր, և այր ընդ ընկերի իւրում, ընդհարցի մանուկն /298/ ընդ ծերոյն և անարգն ընդ պատուականին,,. – 300. և գրէ առ Սմբատ, թերևս տացէ ի ձեռն նորա զմանուկն Արտաշէս: - 84. և զորդիս ձեր և զմանկունս տեսանելով ի գութ խանդաղատանաց ի գիրկս իմ ընդունէի ընծայիւք մեծաւ գգուանաց, իբրև զառ ի յինէն ծնեալս: - 216. և ի չափ հասեալ ի տիոց տղայականաց՝ ետուն զդստերս իւրեանց կնութեան մանկանցն: - 98. և լի ծաղու և կատականօք այպն արարեալ՝ արհամարհանօք անարգեցին զբռնաւորն, իբրև զմանուկ մի անպիտան կամ զծեր զառանցեալ և խելագարեալ, որ ոչ ըստ իւրոց կամաց զոր ինչ ախորժիցէ խօսիցի: - 264. և լնուն զծովակն որ յանդիման հրատին՝ դիակամբք. զխօսուն և զանասուն, զայր և զկին և զմանուկ առ հասարակ մաշեցին ի սուր սուսերի: - 148. Եւ ծնան նորա երիս որդիս, Սարգիս որ և Աշոտ՝ ՅԻՋ թուականութեանն Հայոց, Խաչիկ որ և Գագիկ ՅԻԸ, և Գուրգէն. մանկունք կայտառք և գեղապանծք և բարենշանք և ամենեցուն ցանկալիք. ծնաւ և երկուս դստերս: - 338. Եւ հաճոյ թուեցաւ Հայրակղի և ամենայն սինկղիտոսիցն՝ նստուցանել զորդին Հայրակղի յաթոռ թագաւորութեան, որ էր մանուկ /146/ փոքր. – 148. և ղաշիկ արարեալ յայնկոյս քան զՎանտոպ, ի տեղւոջն արձանաշար քարակարկառ գոգաձև միջոցի երկուց բլրակաց, որ հայի յԵրիվարաց արկման դաշտն, ի վերայ Լեզւոյ գեաւղջն, որ զաւրացն գեղեցիկ առասպելաբանեն սպիանած վերայն սպանելոցն ի մանկանցն Շամիրամայ: - 334. Եւ յետ մահու նորա նստուցին թագաւոր զորդի նորին զԱրտաշիր, կարի տղայ մանուկ[2]: - 152. Եւ յետ նորա ածին զԽոսրոյ ոմն /154/ տղայ մանուկ և նստուցին իւրեանց թագաւոր. և նա փութանակի վախճանեցաւ: - 156. Եւ նուազեալ ազգին Արծրունեաց ոչ ոք մնաց, բայց միայն մանուկ մի Համամ անուն, որդի Արշաւիրի ծերոյ եղբօր Խուրէնայ, որ կայր ի դրան արքունի – 90. և տայր տանել Սահակ զպէտս

մանկանն օր ըստ օրէ: - 84 Կաղղիսթենէս, իմ բարեկամ, խրատ ետ ինձ մտանել հանդերձ բարեկամօք Խ, և մանկամբք ճ, և զինուորօք ՌՄ միայնովք: - 50. որպէս ժողովուրդն Աստուծոյ առ գետսն նստէին և լային ի յիշելն իւրեանց զՍիօն, և կամ իբրև զնոյն ինքն զերիս մանկունսն, կապեալք և արկեալք ի հնոց նեղութեան – 252. Որպէս Յովսեպոս մեզ զրուցաբանէ և զինչ գործեաց ընդ մանկունսն:- 78. ,,Կաւատ թագաւորն ձեր վախճանեցաւ, և որդի նորա մանուկ տղայ է. բայց արդ ի քեզ հասեալ թագաւորութիւնդ, և ես քեզ տայց զնա – 152. Իսկ յաւուրս Վաղարշու մանուկն Վահան Մամիկոնեան ուժեղանայր ընդդէմ Պարսից. – 134.

ՄԱՆՐ - Այլ և հուր և ծծումբ նաւթիւ բարձեալ ի գործ պատերազմին, և զլոյծ բնութիւնն յանօթս ապակեղէնս եդեալ, և մանր զծծումբն ընդ նմին խառնեալ, եդեալ ի պարսատիկ մեքենայից, և զհուրն առ ընթեր նմին, հնարաւորեալ արկանել զամրոցաւն: - 208. նոյնպէս և զայլս յիշխանական պետութենէ փոքրագոյն կէտս և լողակ մանունս իմանալի է. – 262.

ՄԱՆՐԱՊԱՏՈՒՄ - Բայց մի ինձ մեղադիր լինիր, ո՛վ ուսումնասէր դու, սակս ոչ զբովանդակ սորա գործս շարել ի ճառս մանրապատումս: - 302.

ՄԱՆՐԵԱԼ - Եւ առեալ զմանրեալ և զխորտակեալ ի մասունս զԽաչն՝ բերին առ զօրավարն, լուացեալ զարիւն պղծոյն, որ ի վերայ խաչին շաղախեալ կայր ի գլորմանէ այսահարին: - 378. որջացեալ ի մուտս կոյս յափն ծովուն ի փապար յարձանախիտ քարին և մանրեալ զարծաթեղէնն ընդ փայտեղինին. – 378.

ՄԱՇԵԼ - և լնուն զծովակն որ յանդիման հրատին՝ դիակամբք. զխօսուն և զանասուն, զայր և զկին և զմանուկ առ հասարակ մաշեցին ի սուր սուսերի: - 148. գերփեն առնուն զշէնս և զաւանս և զագարակս, կապուտ կողոպուտ թողուն ի ստացուածոց և յամենայն ժառանգութեանց, մաշեն ի սուր սուսերի զորս ի բուռն առնուին. – 102. և հատեալ զզօրսն յերկուս առաջս, և հրաման տուեալ ելանել յերկիրն Վասպուրական, ողողել գերել գերփել /200/ զաշխարհն, աւերել և բնաջինջ առնել և մաշել ի սուր սուսերի. – 202. զսուրբ եկեղեցիս, զտունս աղօթից քրիստոնէից այրել աւերել հիմն ի վեր տապալել, զքահանայսն նորոյ ուխտի ի սուրս իւրեանց մաշել, զծերս և զպառաւունս մահու սրոյ սպանանել, զերիտասարդս և զկուսանս խաղացուցանել ի գերութիւն, զստացուածս և զինչս վատնել աւարառութեամբ. – 398.

ՄԱՇՏՈՑ - Եւ յաջորդեալ փոխանակ նորա կացեալ յաթոռ սրբոյն Գրիգորի երանելին Մաշտոց, ելեալ ի կղզոյն Գեղարքունի լճէն, զՅոհաննու Կարապետին զվարուցն բերեալ զօրինակ. – 376. Եւ փոխանակ նորա ժառանգէ զաթոռ հայրապետական երանելին տէր Յոհաննէս, որ և սնեալ և ուսեալ առ ոտս սրբոյն Մաշտոցի. – 376. Ի նմին ամի յետ վեց ամսոյ անցանելոյ փոխի և սուրբ վարդապետն Մաշտոց. – 120. Յետ բառնալոյ թագաւորութեանն ի տանէն Արշակունեաց, և հայրապետութեանն ի տանէն սրբոյն Գրիգորի՝ Ղևոնդ ոմն աշակերտ սրբոյն Մաշտոցի տեղապահ լինէր սրբոյն Սահակայ, և Յովսէփ եպիսկոպոս և Մովսէս և Մեղէս: - 120. Քանզի Վարդան անցեալ գնացեալ էր սուրբ վարդապետաւն Մաշտոցիւ առ կայսր Թէոդոս և առ Ատտիկոս արքեպիսկոպոս հանդերձ թղթովք սրբոյն Սահակայ, տանելով ընդ իւրեանց և զգիր և զբառ հայերէն դպրութեան. – 116.

ՄԱՌԱԽԼԱՁԵՒ - Եւ եղև իբրև ձմեռն փոքրացաւ և ժամանակ գարնանային եղանակին մերձեցաւ և օդն մառախլաձև միգախառն յստակեցաւ - 268.

ՄԱՌԱԽՈՒՂ - Յայնժամ թանձրացեալ մթասցի, բալ և մառախուղ խաւար ի վերայ լերանց և դաշտաց քոց. – 148.

ՄԱՌԱԿԱՆ - Եւ յետ սակաւ աւուրց ել գնաց Դերանիկն ի Ճուաշ գաւառ՝ ձմերել յաւանին Մառական: - 350. Իսկ վայր խաղացեալ ի Մառականն աւան, առ Կարմիրն կոչեցեալ գետով, որ իջանէ ի գետն Երասխ – 392.

ՄԱՍԻՔ - ընդդէմ նայելով լերանցն Այրարատեան ազատն Մասեաց, ուր Արտաւազդն Արտաշէսեան քարավիժեալ խոհամանայր ի կոշտն կոհակին: - 392. ընդդէմ նայեցածն ունելով զմեծ լեառնն Մասիք կոչելով բարձրագագաթն ձիւնալիր սպիտակափառ – 86.

ՄԱՍՆ - Զոր և Աղէքսանդրի Մակեդոնացւոյ ի դէպ ելանէ առ Ողըմպիադայ վիպագրութիւնք. թերևս ի մասն ինչ արտաքոյ սահմանաց դրախտին հասանել. – 50. Այլ և զիուրն զիա՛րդ մասն աստուծոյ ոչ ամաչեն ասել - 52. Առ որս ասեմք՝ եթէ ըստ ամենայն յեղանակի անբոյժն ի բարւոյ, ո՞չ մի ինչ ո՞չ ունի մասն ազնիւ՝ թէ ասիցէ ոք անիծիւք ի բաց բառնալ. – 22. արդ թողոցո զերկրորդ մասն Անձաւացեաց որդւոյ իմոյ Դերանկիդ, և այլ մի յաւելուր ընդ հակառակս ինչ ձեռն ի գործ արկանել - 330. Արդ նոցա այնքան, իսկ մեզ ի մասնէ զբոլորն համառօտեալ ի թիւս միակաց լրման, և զբովանդակութեան ամաց ըստ տասանց եօթներորդացն որ թուոցն է լիագոյն Է - 314. Բայց Գուրգէն խոկայր զմասն աշխարհին յինքն գրաւել, մանաւանդ զՈստանն Ռշտունեաց, որ էր տեղի սպանման հօր իւրոյ, գինս արեան զնա համարելով: - 362. Բայց զերկրորդ մասն Անձաւացեաց հանդերձ Նորաբերդ ամրոցաւն Դերանկին նուաճեալ ընդ իւր գործակալօք. – 326. Դարձեալ զի երկրպագէ հրոյ, և արեգական, որ է Հեփեստոս, մասն աստուծոյ ասելով, զիա՛րդ իցէ, զի գողն և ապիկարն իբրև զաստուած երկրպագիցի: - 52. ելանել ի գագաթն Ամրական անձաւին զբօսնուլ նովաւ առ վճարումն բաւականութեան, ըստ մասանց պիտոյից օժնդակութեան քաղաքայարդար ապարանից թագաւորական պաղատի իւրոյ ձեռակերտին – 392. և անհակառակող գտեալ բարուք՝ բաժանեն զաշխարհս յերիս մասունս. – 360. ասէին այնոքիկ զորոց և բանս է, եթէ ,,ի մասն ինչ լերինն յայնմիկ հասեալք բազումք ի մերոց – 48. Եւ առեալ զմանրեալ և զխորտակեալ ի մասունս զԽաչն՝ բերին առ զօրավարն, լուացեալ զարիւն պղծոյն, որ ի վերայ խաչին շաղախեալ կայր ի գլորմանէ այսահարին: - 378. և Եթովպիայ է մասն Եգիպտոսի և ամենայն Լիբէաստանեայց: - 42. Եւ զբոլոր երկիրս իւրեանց տէրութեանն բաժանեցին յերկուս մասունս: - 388. և զոր օրինակ ոք զբոլոր անդամս մարմնոյ յօշիցէ ի մասունս, և ոչ երևի տեսակ կենդանի մարդոյն, որպէս է գոյացութիւն խառնուածոյն. – 194. Եւ ինքն Խուրան առեալ զմեծ մասն զօրուն գնաց ի Շաւարշան ի Սանատրուկ. - 80. և խոստանայ տալ նմա զտէրութիւնն զչորրորդ մասն Սենեքերիմանցն զկողմամբքն Նինուէի և զՏմորիս ամրոցաւն որ ի նմա – 62. Եւ հաւանեալ Խոռեմայ՝ եկն առ Հայրակղոս արքայ Յունաց, թողեալ ի նա զԵրուսաղէմ և զԿեսարիայ Պաղեստինացւոց և զամենայն կողմանս Անտիոքացոց և զամենայն քաղաքս գաւառացն այնոցիկ, և զՏարսոն Կիւլիկեցւոց և զմեծ մասն Հայոց և զամենայն զոր միանգամ կամեցաւ Հայրակղոս. – 152. և Հեփեստոս և Պռոմիթոս, որ է արեգակն և լուսին՝ գողացան զհուրն յՈրմզդայ և մասն ինչ ետուն ի մարդիկ. – 48. Եւ յետ այնորիկ ի բազմանալ որդւոց մարդկան՝ յերիս մասունս և զերկիր բաժանեալ, ըստ ասացելումն Հերոդոտեայն – 34. Եւ ոսկեգործ ականակապ կազմեալ՝ պատեաց ոսկով զփրկագործ սուրբ խաչն, և ընդելուզեալ մարգարտով զարդարեաց զսխրագործ փայտն, հիւսնեալ ի մէջ անուշահոտ փայտից, թողեալ մասն ինչ արտաքս ոսկեպատ պահարանին, յառաջնում իւրոյ քառածրագիծ խաչակերտ փայտեղէն զգրոցկանն: - 394. և տաց քեզ զկողմանս Ասորոց և զամենայն Արեւաստան մինչև զՄծուին քաղաք, և ի յերկրէ Հայոց՝ զաշխարհս տանուտերական իշխանութեանն մինչև յԱյրարատ և ընդ Դուին քաղաք և յեզր ծովուն Բզնունեաց և ցԱռեստն աւան, և զմեծ մասն աշխարհին Վրաց մինչև ցՏփղիս քաղաք. – 136 Զայս սակաւուք ի մասնէ գրեցի ճանաչել միայն զազգս: - 18 Իսկ Անատողի զօրավարն Յունաց զՀաւուկ ոմն Կուկոճացի կացոյց /118/ մասինն Յունաց եպիսկոպոսապետ. – 120. Իսկ ոմանք ասեն ի Ղաւոդիկեայ Փռիւգացւոց շինեալ տապանին, որ յերից մասանց երկրի՝ Ասիական կոչի կողմ. և յոյժ անհաւաստի են ասացեալքն.- 30. որք ասեն զՀեփեստեայ գողանալ զհուրն յաստուծոյն, մասն ինչ մարդկան շնորհել և զյոլովն ինքեան ունել – 52. սա ել ի վերայ Հրէաստանի և մեծ մասն ժողովրդեանն գերեաց յԱսորեստան…/Յետ նորա թագաւորեաց/ Սաղմանասար. – 60. Տուեալ լինէր այնուհետև զմասն ինչ զօրուն ի ձեռս զօրապետի ումեմն Ժիրաք կոչեցելոյ – 202.

ՄԱՍՆԱԻՈՐ - մասնաւոր ինչ մարգարէական ոգւով եղելում ի մարդն օժնդակ խորհրդածութեան արծարծել անդրէն ի ձեռն ապաշաւանացն զվրիպանացն կորուստ.

ըստ այսմիկ և այլոց կենդանեացն զգայականօքն և թէ ունայնացելովք առ ի դոյզն ինչ զգուշաւորականս: - 22.

ՄԱՍՆԱՒՈՐԱԲԱՐ - և առնու զԲաբելոն, և շինէ զՏարսոն ի ձև Բաբելոնի, գետոյ ընդ մէջ անցանելոյ որպէս խոնարհագոյն մասնաւորաբար գրեմ: - 16. Եւ մեք զկարգ պատմութեանցս մասնաւորաբար և համառօտապէս յառաջ վարեսցուք – 78. Խոստացայ վերագոյնն գրել վասն Բուխայի մասնաւորաբար զվրիժուցն հատուցանել զպարտիս, այլ ոչ զբովանդակն: - 326.

ՄԱՍՈՒՆՔ - զոր և Պօղոս հոգացաւ բացայայտել զ-Է աշտիճանեան մասունս ի Հոգւոյն սրբոյ աւանդեալ եկեղեցւոյ սրբոյ: - 398.

ՄԱՏ - զի ըստ Պարսիկ ձայնի Մատ՝ Եկք թարգմանի. – 88.

ՄԱՏԱԿ - Եւ արտաքոյ յետ ճանապարհին իմացաք էշ մատակ, որ ունի յաւանակ – 50.

ՄԱՏԱՂ - և մխիթար բարի ունէր ի բարբառոյ մարգարէին որ ասէր. թէ /գրքում՝ թե/ ,,մանուկ մատաղ ի ծակ իժից արկցէ զձեռս իւր՝ և ոչ մեղիցեն նմա,,: - 252. և որդի նորա մնացեալ մատաղ հասակաւ, որում Մահմէտ կոչէին. – 158.

ՄԱՏԱՂԱՏՈՒՆԿ - ելցեն ի քեզ փայտահարք բազումք և կոտորեսցեն զմայրս քո մեծամեծս և զմատաղատունկս բարձունս. – 148.

ՄԱՏԱՂՕՐԵԱՅ - Եւ զԳագիկ որ և Ապումրուան՝ զնա ոստիկան կարգեաց ի վերայ աշխարհին, տեղապահութեամբ տիրել, զի կարի մատաղօրեայք էին որդիք Դերանկին. Աշոտ էր Թ ամաց, յորժամ մեռաւ Դերանիկն, Գագիկ էր Է ամաց, Գուրգէն Ե ամաց: - 354.

ՄԱՏԱՆԻ - ,,իսկ եթէ եկեսցէ առ իս գիր յարքունուստ, կնքեալ մատանեաւ արքայի. և իցէ գրեալ ի նմա հրաման՝ գալ ինձ առ քեզ կամ երթալ յարքունիսն՝ ոչ ելից արտաքոյ հրամանաց նորա: - 286. Եւ եղև զկնի երից աւուրց անցանելոյ ետուն թուղթ մի տանել առ Գուրգէն, գրեալ Բուխայի լի դառնութեամբ, կնքեալ մատանեաւ արքայի, իբրև այն թէ ի դիմաց արքային և յարքունուստ եկեալ. – 236. ուր զսեղանն սուրբ և զզաւազան հովուական և զմատանին պատկերեալ և զգօտին աշխատասէր միջոյն թողեալ ի հանապազորդ յիշատակ լուսաւորութեանն մերոյ հօրն: - 104.

ՄԱՏԵԱՆ - այլ և Մակեդոնացին Աղէքսանդրոս ոչ սակաւ դրուատեօք արձանս գրէր ի մատեանս դիւանապահ աւանդութիւնս զսորայս մեծափառ գլխաւորութիւն: - 96. բայց կանոնեցի զանուանս ի մատենիս: Տիգրան. Ադրամելէք. Ներս. Ներսէխ. Մարոդ. Արշամ. Արշաւիր. Ասուդ: Պարսից թագաւորք. Քսերքսէս. Արտաշէս երկայնաձեռն. Դարեհ. Արտաշէս. Ողոքոս. Զարսէս. Դարեհ: Ապա Աղէքսանդրոս Փիլիպպեայ Մակեդոնացի տիեզերակալ թագաւոր: - 68. և բացեալ զտուն դիւանապահ մատենիցն և գտեալ զսերունդս Սենեքերիմայ, և զգործս նոցա զմիոյ միոյ ուրուք յանուանէ զառն իւրաքանչիւր զանուն և զքաջութիւն իւր, նոյնպէս և զայլն ամենայն ըստ տոհմից տեղեաց - 74. և հնախօսս շարագրական մատեանս և ի բազում վէպս պատմութեանց անցեալ գրեցի, որ ինչ բաւականանալ ձեռնհաս եղէ, սկսեալ յԱդամայ մինչ առ մեզ հասեալ ժամանակացս գիւտ: - 12. զի և զմատեանս առաջնոցն մեծասաստ ստիպով ի մի վայր գումարեալ՝ հրամայեաց այրել. – 44. զի ի մատեանս առաջնոցն ունէին պատուէր ի թագաւորացն զնշանաւոր իրս քաջաց գրել, և ոչ վատաց. – 42. մինչև եկից հասից ի լայնանիստ ընդարձակ ասպարէզս մատենից պատմութեանցս՝ ոճով մի ըստ միոջէ շարեցից, կարգեցից, գրեցից զախորժելին քեզ: - 74. Ցոյցք ժամանակացս այսոցիկ, ըստ որում յառաջագոյն ասացաք, որ յաւուրց անտի Բէլայ մինչև ի Նինոս՝ երևելիք ինչ և նշանաւորք ի /42/ մատենիցն առաջնոցն ոչ երևի, թերևս ի բազում խափանմանց: - 44.

ՄԱՏԵՆԱԳԻՐ - բայց զանուանս միայն ըստ կարգի կանոնել բաւական հանարեցաք, որպէս և այլոց առաջնոցն մատենագրացն յայս եկեալ ձև պատմագրութեան. – 68. Եւ արդ եկ ասացից քեզ, ո՛րպիսի ողբովք ողբայ զնոսա հին մատենագիրն ասելով. – 164. Նախ զի և լեզուքն շփոթեալք՝ունէին զանմիաբանութեան փոյթս, կամ թէ զի և վատութիւնք քաջաց ապիհարկեալք ոչ գրեցաւ ի մատենագրաց անտի Քաղդէացւոց – 44.

ՄԱՏԵՆԱԳՐԵԱԼ - զոր առաջնոցն մատենագրեալ դրոշմեալ կայ ի գիրս ընդ ժամանակս ժամանակս սոցա քաջարութիւնք և արժանաւորք յոլովագունի և մեծամեծաց գովութեանց: - 96.

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻԻՆ - Եւ արդ քանզի կարգ բանիցս էած զմեզ առ այս խնդիր՝ պարտ է նախ գիտել թէ որով օրինակաւ Քաղդէացւոցն մատենագրութիւնք զթիւ նահապետացն տասամբք համարին թուով ըստ աստուածահրաման գրոցս - 18. զի և տեղեակ էր դիւանական մատենագրութեանցն: - 90.

ՄԱՏԵՆԱԴԱՐ - Եւ զի Ժ ազգացն շարք առանց ստութեան կան գրեալ յամենայն մատենադարս - 12.

ՄԱՏԵՆԱԿԱՆ - ըստ այսմիկ և այլ առասպելականք, և գիր մատենական ի նմանէ գրեալ և պահեալ ի Բաբելոնի բազում զգուշութեամբ. -36.

ՄԱՏԵՆԱՀՈՐԵԼ - երկունք իբրև ծննդկանի ի վերայ իմ հասեալ լինին՝ մատենաւորել զայսր աղետաբեր համբաւուց ցոյցս. – 350.

ՄԱՏԹԷՈՍ - զՓրկչին մերոյ Տեառն Յիսուսի Քրիստոսի զըստ մարմնոյ ազգաբանութիւնն գրելով աւետարանիչն Մատթէոս - 16.

ՄԱՏՆ - ,,օրհնեալ է տէր Աստուած մեր, որ ուսոյց զձեռս մեր ի պատերազմ, և զմատունս մեր ի ճակատամարտ,, , և որ ի կարգին է: - 252. և առեալ զնա մտանեն ի մէջ մայրեացն, և ընդ գիրկս մտեալ Շաւասպայ Արծրունւոյ՝ զլայնալիճն լի քարշեալ հարկանէ ի թիկանց ընդ մէջ ողինն զկորովալիր մատանցն զազդոյ շարժումն թռուցեալ թափանցիկ ընդ չարախորհուրդ սրտին միջոցն դիպեցուցանէ. – 100.

ՄԱՏՆԵԱԼ - և նորա կալեալ զնա և ի կապանս մատնեալ որպէս զանհնազանդ ոմն՝ և եկն անց յՈստանն Ռշտունեաց: - 322. ուշ եղեալ ուժեղութեամբ և քաջութեամբ սրտիւ ընդդիմանալ, մանաւանդ ի Ծանարացն զնա տեսեալ ի պարտութիւն մատնեալ և յաղթահարեալ: - 276.

ՄԱՏՆԵԼ - ,,և ո՛վ տայր ինձ վկայել ի վերայ ճշմարտութեանն և մեռանել վասն անուանն Քրիստոսի, և զարիւն իմ փոխանակ արեանն Քրիստոսի հեղուլ և զմարմին իմ փոխանակ մարմնոյ նորա ի մահ մատնել և զչարչարանս իմ ընդ նորա չարչարանսն խառնել, զի և ընդ նմա փառաւորեցայց. – 290. արդ փութա պատահեաց նմա, զի մատնեաց զնա Աստուած ի ձեռս քո,,: - 352. բայց Տիրան պղծութեան աղտեղութեամբն զգառեալ մատնի ի ձեռս Շապհոյ – 98. բայց քանզի տէր մատնեաց զնա ի ձեռս նոցա, որպէս ասաց Դաւիթ՝ և եղև ահ տեառն ի վերայ ամենեցուն. – 354. դառնապէս չարալլուկ չարչարել զքահանայս զպաշտօնեայս նորոց Կտակարանացն, զարս և զկանայս մատնել ի բանդս խոշտանգանս ծանրաբեռն հարկապահանջութեամբ. – 124. ես վաղ անարգեցի զքեզ, և ոչ փոքր ինչ երկիւղ կալայ ի սրտի իմում վասն քո, զի քամահելով ի վերայ քո՝ զզօրավարն քո հանդերձ զօրօքն ի սուր մատնեցի, և զաւար նորա բաշխեցի, /294/ և յերկրորդումն ոչ փոքր նախճիրս համարեցի զօրացն քոց. – 296. և գոչէին վիշապաձայն և բեկանէին առիւծաբար և հարկանէին վարազաբար, և մատնեցին ի սատակումն և ի պարտութիւն – 232. և դարձեալ թէ՝ ի գերութիւն մատնեսցի ժողովուրդ իմ, վասն ոչ ճանաչելոյ նոցա զՏէր. – 182. և ի մատնելն մերում լարօք հնգետասան՝ հաւք երկու պատահեցին մեզ – 50. և իբրև զքաջ հովիւն դրուատեալ ի փրկչէն՝ զանձն իւր եդ ի վերայ խաշանց ընդդէմ ապականարար գայլոցն, յարձակեալ յանխնայ դիմեցուածովք, յարիւն և յապաժոյժ, ի սատակումն և ի ծախումն սրոյ մատնեաց բոլորովիմբ զյարձակեալս նեղիչս աշխարհիս. – 312. և մատնեաց զմեզ Աստուած ի ձեռս քո. – 242. Եւ պատճառ այսոցիկ զի՞նչ, եթէ ոչ այն զոր Պօղոսն ասաց, եթէ ,,վասն զի ոչ ընտրեցին զԱստուած ունել ի գիտութեան՝ մատնեաց զնոսա ի միտս անարգութեան գործել զանարժանս,,: - 374. Եւ ջանայր զպարիսպն պղնձի կործանել. զգաւազանն երկաթի խորտակել, զհովիւն մատնել ի կորուստ և զհօտն յապականութիւն: - 344. և սուսեր ընդ մէջ ածեալ զբանն տերունական, զոր ասացն, թէ ,,յորժամ մատնիցեն զձեզ, մի՛ հոգայցէք թէ ո՛րպէս, կամ զի՛նչ խօսիցիք – 204. և Տէր մատնեաց զնոսա ի ձեռս նոցա - 220. և օգնութիւն հասեալ նոցա յԱստուծոյ՝ ի

պարտութիւն մատնեն զայլազգիսն, բազում վէրս ի վերայ եդեալ – 202. զօրս գումարէիք, այրուձի կազմէիք, մարտ և պատերազմունս գրգռէիք, ճակատ դնէիք և զզօրս մեր ի սատակումն սրոյ մատնէիք – 244. նոցա կալեալ զտիկինն Ռշտունեաց զկին Գարեգնի զքոյր Վարդանայ Մամիկոնէի ածեալ ի Վանտոսպ ի քաղաքն Շամիրամայ, մատնեն ի խոշտանգանս և ի տանջանս դառնագոյնս. – 102. և զքեզ կորակնեալ ամօթալից ի պարտութիւն մատնիցին, որպէս զյառաջագոյն եկեալ հազարապետն արքունուստ, զի ոչ կարաց կալ ընդդէմ նոցա, և ոչ Ճ այր առ Ժ զօրացն Հայոց,,: - 214. և եկեալ ի վերայ քաղաքին պաշարեն զնա, և զզօրսն մատնեն ի սատակումն սրոյ, և զպատանդսն Վասպուրականի հանեն յարգելարանէն. և գերեացն ընդարձակեն, զկապուտ նոցա բաժանեն յինքեանս: - 190. և մինչ նոքա կարծեցին, թէ ի ձեռն նոցա մատնեցան՝ և նոքա կային յաղօթս և զԱստուած կարդային օգնել նոցա. – 286. Ո՞չ ածեր զմտաւ, թէ յիսկզբանացն մինչ ցայսօր ժամանակի ամենայն ուրեք ուր և գումարէր զօրն և լինէր պատերազմ և սուր և ճակատամարտ՝ երբեմն յաղթեն և երբեմն ի պարտութիւն մատնին. – 282. ո՞վ ոք յաշխարհակալաց ոչ մատնեցաւ ի սուր. և են իշխանք ազգաց, է ուրեք որ զօրանան, և է ուրեք որ տկարանան,,: - 282.

ՄԱՏՆԻՉ - Եւ ելեալ արտաքս հանգոյն մատնչին ի տնօրինականս Փրկչին, ունելով ընդ ինքեան զհրովարտակն գրեալ այսպէս. – 212.

ՄԱՏՈՒՑԱՆԵԼ - ապա ետ հրաման և փորեցին զաչս երանելւոյն, անդամ անդամ յօշեցին զնա, որ մատոյց զինքն պատարագ կենդանի որդւոյն Աստուծոյ. – 290. գրէ Կիւրոս առ Տիգրան վասն օգնականութեան մատուցանել նմա: - 66. դիմեալ գայր և սա ընդ աջաթև կողմն վկայելոցն, ընդդէմ սրոյն մատուցանել զինքն պատարագ կենդանի Որդւոյն Աստուծոյ: - 222. և ետ հրաման ահիւ մեծաւ՝ ամենայն ուրեք կանգնել զպատկեր իւր և երկիրպագանել իբրև աստուծոյ և զոհս մատուցանել. – 40. Եւ ի ժամու մինչ ագևորեալքն կամէին մտանել զառաջեաւ … յայնժամ շուրջ կացեալ զվրանաւն մեծ սպարապետին զկազմեալ գնդաւ վահանաւոր և նիզակաւոր ամրափակ պնդութեամբ, և մտեալ մատոյց զթուղթն, զոր էր գրեալ առ Յամանիկն ի քաղաքն Պարտաւ Ահմաթայ նենգութեամբ: - 344. և ինքեանք դարձան մեծաւ յաղթութեամբ, մատուցին պատարագս Աստուծոյ և լցուցին զպէտս տնանկաց և աղքատաց այրեաց և որբոց: - 136. Եւ իւրաքանչիւր զօրագլխացն եկելոց առ նա պարգևս և պսակս մատուցանէր, գեօղս և աւանս կնքէր և տայր. – 198. և նա երթեալ առանց մեր հրամանի թագաւորեաց, և զմեր գանձս մեզ ընծայ մատուցանէ, ոչ գիտելով եթէ համարս խնդրեցից գանձիս այսմիկ, և ոչ դադարեցից մինչև առից զնա ի բուռն իմ,,: - 142. և նահապետն ողջակէզ գոհութեան Աստուծոյ մատուցանէր. – 32. և նժոյգաձիգն իւր մատոյց նմա զընտիր երիվարն: - 228. զի զկապեալսն յառաջ մատուսցեն ի հանդէս հարցափորձի քննութեան: - 240. Զոր տարեալ զթուղթն մատուցին առաջի թագաւորին: - 132. Իսկ Աշոտ եղբայր Վաչէի քանզի էր մանկագոյն տիովք՝ առեալ դայեկին իւրոյ մատուցանէ առաջի Երուանդայ – 84. Իսկ հաւատացելեցն տեսեալ, եթէ բարի խոստովանութեամբ ննջեաց տէր սուրբ Գրիգոր՝ գոհութիւն մատուցանէին ամենազօրին Քրիստոսի – 254. Յորոյ տեղի մատուցին զՅոհան ոմն, այր հեզ և բարեպաշտօն, լցեալ երկիւղիւ Տեառն, պատշաճ առ վերակացութիւն եկեղեցւոյն Քրիստոսի: - 324. Նախ առաջին՝ զի յետ աւուրց ինչ, իբր անագան իմն այլ ոչ նախապատիւ և կարևոր. և զայն արատաւոր, այլ ոչ անարատ՝ երևի յասացելոցն՝ եթէ ուղիղ մատուցանես և ուղիղ ոչ բաժանես՝ մեղար: - 24. որգունակ Խորէն /գրքում՝ խորէն/ և Աբրահամ խոստովանողքն Քրիստոսի ի պարսկայինն զերծեալ լլկանաց դառնագոյն կրիցն՝ զընդարձակութենէ նախարարացն Հայոց մատուցին ողջոյնս աւետաբերս՝ դարձուցանել տեառն զգերութիւն ժողովրդեան իւրոյ: - 324. քարինս տաշահոս հոլովեալ ի նիւթ եկեղեցւոյն ի Մանազաւեանն նահանգէ ընդ Բզնունական ծովն բերեալ մատուցանէ առ կատարումն հրաշագեղ դիտանոցին սրբոյն Սիօնի, այլովքն սրբական անուանակոչութեամբ տեղեաց տնտեսականին բանին Աստուծոյ մարդ եղելոյ: - 396.

ՄԱՏՈՒՑԵԱԼ - ,,յորժամ զայս նիշ համբոյր մատուցեալ համբուրեցից զնա՝ դուք զազդոյ վէրս ի զօրութիւն նիզակի հարջիք զնա,,: - 352. Անդէն վաղվաղակի մատուցեալ Շաւասպ Արծրունի առ Մարդպետն՝ ասէ – 100. Դարձեալ ի նոյն յարեալ՝ և այլ հոգաբարձութեան աշխարհի խնամ տանէր, ի մեղադրանս մատուցեալ մարգարէիւն հանդերձ սպառնալեօք – 182. Եւ հրամայեաց ածել ոսկերիչ և նորոգեալ նորացոյց զանյաղթ փայտ խաչին Քրիստոսի, մատուցեալ զբեկորսն առ իւրաքանչիւր յօդս, պատեալ մաքուր արծաթով վայելչագոյն քան զառաջինն, ի պարծանս քրիստոնէից և յամօթ և ի նախատինս թշնամեաց խաչին Քրիստոսի: - 378. և մատուցեալ զպարանոցն առ դահիճն՝ եհատ զգլուխ նորա – 296. Եւ նախարարութիւնս յօրինէ, յանուն և ի բարձ և ի գահ յառաջ մատուցեալ: - 72. Եւ վասն յաղթութեանն գոհութիւն մատուցեալ Քրիստոսի՝ ասէին. – 252. Զոր յառաջ մատուցեալ ասացից ըստ կարգի, թէպէտ և ոչ խնդամիտ յօժարութեամբ՝ սակայն ակամայ և ի հարկէ ճառագրեցից զբացումն դրան աստուածասաստ բարկութեան ի վերայ մեր – 196. զորոյ նախնեացն ջան և վաստակ յուշ արարեալ թագաւորին՝ Համամայ յառաջ մատուցեալ, ի գահ և ի բարձ հայրենեացն ձգել զնա՝ ժառանգեցուցանէ զերկիրն Աղբագ, որպէս Սահակայ նոյնպէս և Համամայ: - 90. ի սաստ մատուցեալ գնդին իւրոյ պատերազմողացն՝ և ոչ կարաց զբորբոքեալ հնոց դէզադէզ կոխակացն սրախողխող սատակմանն ցածուցանել: - 368. Իսկ Ջաջուռ Արծրունի ձեռն ի գործ արարեալ՝մատուցեալ առ թագաւորն խնդրէ զԱնիանոս – 76. Մատուցեալ առ թագաւորն Արշակ ասէ. ,,ոչ բարեօք իմացեալ առաջնոց թագաւորացն, զի ոչ կալան զտեղիս զի զայս ի բնակեալ ճոխութեան թագաւորական վայելչապէս խրախճանութեանց. – 100. մատուցեալ առ Վռամ հանդերձ Սորմակաւ ումեմն Արծկեցւոյ մոլեգնոտ փառամոլ աբեղայի՝ սկսան ազգի ազգի լեզուագարութեամբ չարախօսել զսրբոյն Սահակայ – 118. մի գուցէ մատուցեալ առ Արտաշիր ոմանց սուտակասպաս չարախորհից կեղծաւորութիւն իմն զմէնջ առնուցուն – 114. Նաև սրբոց հրեշտակացն ի տեսաւորութիւն ձևացեալ, որոց սարսափմամբ առ նորա զնայեցած յապուշ միտքն կրթեալ, շուրջ փակեալ զնայեցածն՝ ի հարց մատուցեալ ասէ – 386. Նախ յառաջ ախորժական թուէր Գագկայ անուանել զեկեղեցին փրկչական անուանակոչութեամբն մակաձայնել ոչ ուղղակի առ հաւատն մատուցեալ – 394. Նոյն ժամայն մատուցեալ ոմանց առ Դերանիկն՝ ստուգագոյնս քսէին վասն Գագկայ Ապումրուանայ. խորհել ընդ կորապաղատին, զոր ինչ գործեաց Հասան զանօգուտսն. – 348. որ մատուցեալ առ Ներսէհ ասէ – 82. որք և մատուցեալ առ Փիլիպպոս որ ի Բէթսայիդայն, ասեն Կամիմք զՅիսուս տեսանել,,. – 76. որք մատուցեալ առ սուրբն Սահակ զեկուցանել նմա զոր ինչ խորհինն, և թևակոխէին առ Պարսից արքայն, զոր և արարին /116/ իսկ. – 118. սա մատուցեալ առ թագաւորն Տիրան՝ սկսաւ քսութեամբ խօսել ի գաղտնի զտանէն Արծրունեաց և զՌշտունեաց - 98. Սիմոն Սամարացի մատուցեալ առ Փիլիպպոս զհոգւոյն պարգևաց լեզուացն, և սրտին կեղծաւորութեամբ զիա՞րդ պատժապարտեցաւ. – 258.

ՄԱՏՉԻԼ - այլ փոխանակ սոցա մատեայ ի տեղիս յայս, ձեռն արկեալ անիմաստաբար լի անհմտութեամբ և անհանճարութեամբ բուռն հարկանելով զմեծ զայս քերթուածութենէ: - 122. Զի եթէ ոչ ստուգութիւն սրտին և ճշմարտութիւն բերանոյն համամիտ առ հաւատոցն խոստովանութիւն ուղղակի մատչիցին՝ խոտան և ի բաց ընկենլի է և օտար ի սրբոյ առաքելական եկեղեցւոյ: - 258.

ՄԱՏՌՈՒԱԿՈՒԹԻՒՆ - և ի գինարբուսն ի տեղի մատռուակութեան յառաջացուցեալ՝ ի գահ նախարարութեան ձգեալ կացուցանէ – 64.

ՄԱՐ - և Վաղբակայ Մարի բարձեալ զիշխանութիւնն Ասորեստանեայց – 58. զի մի քաջասրտագոյն կարծիցի Մարն քան զՀայկազնեայն: - 62. զի յայն վայր ոմանք ի զարմից Աշդահակայ Մարի բնակէին անդ, արք քաջք, կորովազէնք և դիպաղեղունք – 90. յաղագս գոլ զնա սերունդ Վաղբակայ Մարի, որ եբարձ զթագաւորութիւնն ի Սարդանապաղեայ, հաւուցն Սենեքերիմանց: - 62.

ՄԱՐԱԽ - Եւ էին անհուն բազմութիւնն մաճեալ շուրջ զլերամբն իբրև զմարախ և իբրև զաւազ ծովու առանց թուոյ. – 226. և իբրև հուր ընդ եղէգն ընթացեալ՝ այնպէս հասեալ ի վերայ մեր իբրև զմարախ, իբրև զջորեակ և իբրև զթրթուր խառնիճաւն /238/ հանդերձ – 240. Եւ յայնմհետէ համարձակութիւն առեալ անօրինացն՝ սկսան գունդս ռամկականս ժողովեալ ըստ օրինակի մարախոյ անչափ բազմութեամբ, այնոքիկ որ Շեխետիքն կոչէին. և այլ որ ուստեք ուստեք ի հեռաւոր աշխարհաց /402/ Պարսից, ի Ժանգանայ և ի Ջուրջանայ և որք ի Վարառատ գաւառէ – 404.

ՄԱՐԱԿԱՅ /քաղաք/ - և փութացաւ գրեաց առ Սափի որ ի Վանտոսպ նստեալ և ճոխանայր Վասպուրական տէրութեամբն. որ առանց յապաղանաց զփոյթն յառաջաբերեալ՝ գնաց եհաս առ Աւշին ի Մարակայ քաղաք: - 374.

ՄԱՐԱՃԱՅ - Եւ ի միւսում առաւօտին հասին ի վերայ բանակին խոնջեալ երիվարօք, անզգուշութեամբ առ մուտն պատրաստեալ, և անկան ի նմին ժամու Բ ոմանք, Վլիթ և Մարաճայ. – 402.

ՄԱՐԱՊԱՐՍԱՅԻՔ - և բռնութեամբ Մարապարսացւոցն ոչ կարացեալ ընդդիմանալ՝ ի կողմանս Պաղեստինացւոց եկեալ պատերազմաւ պաշարեն զՍամարիա – 60.

ՄԱՐԱՅԵԱՆ - Փութանակի և վաղվաղակի իւրաքանչիւր զօրօք անդր հասանէին … և այլք ի նախարարացն Վասպուրական իշխանին, Սմբատ Ապահունի, Գրիգոր Քաջբերունի, Վահան Հաւնունի… Սմբատ Մարացեան – 174.

ՄԱՐԲԱԿԱՏԻՆԱ - և անդ մարգարէն Եզր և թագաւորն Սաղաթիէլ վախճանեալ թաղի ի Մարբակատինա ի բլրակի մի տեղւոջ. – 66.

ՄԱՐԳԱՐԷ - Այս այն Գովգ և Մագովգ զոր յիշեն գիր մարգարէիցն, Ամովս և Եզակիէլ: - 66. Առ սա ինձ թուեցաւ ասացեալն ի մարգարէէն – 224. Առ սա ինձ թուի ասացեալն մարգարէին Ամբակումայ. – 200. Բայց տուաւ յաղթութիւնն այն մեծ ի ձեռն զօրավարին Ապումուսէի, զի լցցի զոր ասաց Տէր ի բերանոյ Ամովսայ Մարգարէի, ,,խորտակեցից զնիզակս Դամասկոսի,, , որում այժմ Դմիշկն կոչեն, ուր ելին գետ Բուխայի: - 286. Դարձեալ ի նոյն յարեալ՝ և այլ հոգաբարձութեան աշխարհի խնամ տանէր, ի մեղադրանս մատուցեալ մարգարէիւն հանդերձ սպառնալեօք – 182. Եւ լցաւ ասացեալն ի Սոփոնիայ մարգարէէն, թէ ,,եղիցի յաւուր յայնմիկ ձայն ի դրանէ օցոտելոցն և գոյժ յերկրորդ դրանէն և բեկումն ի վերայ բլրոց: - 180. և մխիթար բարի ունէր ի բարբառոյ մարգարէին որ ասէր. թէ /գրքում՝ թե/ ,,մանուկ մատաղ ի ծակ իժից արկցէ զձեռս իւր՝ և ոչ մեղիցեն նմա,,: - 252. և անդ մարգարէն Եզր և թագաւորն Սաղաթիէլ վախճանեալ թաղի ի Մարբակատինա ի բլրակի մի տեղւոջ. – 66. Եւ արդ ՆԺԱ են մարգարէք, որ զվկայութիւն աստուածութեանն Քրիստոսի ստուգաբանեն ճշմարտութեամբ յանցնիւր ժամանակս, իբրև ի միջէ բերանոյ, թող զԱւետարանն և զառաքեալս նորա: - 246. և դարձեալ վերագոյնն ասէ, զոր ասաց տէր ի բերանոյ մարգարէին: - 238 և զինքն համեմատ Փրկչին ասաց լինել և ուղեկից ճանապարհի նորա, յասելն Ելսայեայ մարգարէի, ,,հեծեալ մի իշոյ, և հեծեալ մի ուղտու,,՝ զայս ամենայն յինքն յարակցէր: - 164. Եւ լուաւ տէր աղօթից նոցա, և դարձաւ ի բարկութենէ սրտմտութեան իւրոյ գթութեամբ և ողորմութեամբ, որպէս գրեցին երանելի մարգարէքն: - 314. և խոտեալ ի բաց ընկենուք զմիոյ անընկեր և անվերոյ իրաց հանդէս, որպէս և իսկ կոչեցեալ մարգարէն ձեր Մահումաթ – 246. և ծառայեա ճշմարտութեան օրինաց և հաւատոց, զոր ուսաք ի մարգարէէն Մահումաթայ. ապա թէ ոչ՝ զնորին հակառակն ընկալցիս, տանջանս և մահ, և ելցես ի կենաց աստի չարաչար մահուամբ,,: - 294. Եւ կատարեցաւ ի վերայ Սմբատայ ասացեալն յԵղսայեայ մարգարէէ – 218. և սաստիկ կսկծեցուցանէր զնոսա բանիւք, ունելով իւր վկայ զԵղսայի մարգարէ՝ յասելն, ,,լուարուք, իշխանք Սողոմայեցւոց, ունկն դիք օրիացն Աստուծոյ ժողովուրդ Գոմորացւոց,,. – 182. Զոր և մարգարէն առ գերութեամբն Բաբելացւոց ասէ, ,,կերիցեն հարք զորդիս, և որդիք զհարս,, , որպէս և առ Վեսպասիանոսիւն եղև: - 374. ըստ այնմ զոր մարգարէն Ելսայի ասաց, ,,յաւուր յայնմիկ բուռն հարկանիցէ այր զեղբօրէ կամ ազգակցէ իւրմէ և ասասցեն՝ լեր մեր իշխան, և կերակուր մեր ընդ քեզ լիցի,,. – 298. ի սորա Ը ամին Մովսէս մարգարէ

վախճանի: - 58. ի սորա ԺԸ /56/ ամին ծնանի Մովսէս մարգարէ: - 58. իբրև շունք համրացեալք, որ ոչ կարեն հաջել, որպէս ասէ Ես. մարգարէ, ընդդէմ Տեառն փոխելով զկատաղութիւն մահածին թիւնիցն սատակչական զօրութիւնն – 210. իսկ եթէ առ փոքրն այնչափ ամբաստանէր զանձն մարգարէին՝ քանի՞ ևս ողբոց և արտասուաց արժանի են՝ որ յՈրդին Աստուծոյ ամբարշտեն շրթամբք իւրեանց: - 258. մինչև կատարեցաւ ասացեալն ի ձեռն Ես. մարգարէի, ,,լսելով լուիջիք և մի՛ իմասջիք, տեսանելով տեսջիք և մի՛ գիտաջիք. /ճիշտը՝գիտասջիք/ – 182. որպէս մարգարէն Յովէլ ողբայ ի վերայ եկեալ հասեալ թշուառութեանն, ասէ – 238. որպէս ասաց Ամովս մարգարէ, ,,գերծիր և կտրեա ի վերայ փափուկ որդւոց քոց, լայնեա զխզումն քո իբրև զարծուոյ, զի գերեցան ի քէն,,: - 238. որպէս ասաց Պաւղոս, եթէ ,,դուք տաճար էք Աստուծոյ կենդանւոյ,, , և դարձեալ ասէ թէ ,,տուն Աստուծոյ եմք մեք,,. և դարձեալ մարգարէին ասէ, բնակեցայց ի նոսա և գնացից ի նոսա,,: - 394. Որպէս և առ Զաքարիայի մարգարէիս շարժեալ մինչ ի լեառն Զիթենեաց: - 358. Որպէս և Եզեկիէլ մարգարէ ասէ, ,,հայր քո քանանացի էր և մայր քո քետացի,,: - 182. Որպէս կայ և այս ի գիրս տեսութեանն Յովէլեայ մարգարէի: - 240. որպէս յայնժամ ի մահուն Ոզիայ արքայի, յաւուրս Ես. մարգարէի՝ ի ձայնէ սրովբէից շարժեալ տաճարին տեառն, մինչ բարձրանալ դրանդեացն: - 358. որպէս Պօղոսի հաճոյ թուի գրել յառ Եբրայեցիս թղթին, թէ ,,չէ բաւական ժամանակս պատմելոյ,, վասն դատաւորացն Իսրայէլի և սրբոց մարգարէիցն – 302. ՄԻԱՅՆ միայն յայս բան բովանդակեալ ասէ, ,,որք հաւատով պարտեցին զթագաւորութիւնն,,: - 302. Փութաճեմ ընթացող արշաւանս ի վերայ ձգեալ՝ հասանել ի լեառն տեառն և ի տուն Աստուծոյ մերոյ, ըստ յորդորման մարգարէիցն – 392.

ՄԱՐԳԱՐԷԱԽԱՌՆ - Աստանօր ի դէպ ելանէ և մարգարէախառն օրինութիւնք մեծի նահապետին /40/ և աշխարհահռչակ Նոյի յասելն՝ ընդարձակեսցէ Աստուած Յաբէթի, և բնակեսցէ ի տան Սեմայ: - 42.

ՄԱՐԳԱՐԷԱԿԱՆ - Եւ ոչ անվկայ բանս, որպէս վերագոյնն գրեալ է մեր զղերահատուցականս սորա, վկայութեամբ մարգարէական տառիցն, որպէս և ի պատահմանէ իրացն ճարտար գիտեն՝ որք են ի ժամանակս յայսոսիկ մնացեալ յայն ժամու անդ հանդիպելոցն: - 262. Զոր պարտ էր աստանօր յոլովագունիւք ոմամբք աւաղականօք ընդ ողբակիցս՝ և զմարգարէականն առնուլ ի ձայնարկութիւն – 22. մասնաւոր ինչ մարգարէական ոգւով եղելում ի մարդն օժնդակ խորհրդածութեան արծարծել անդրէն ի ձեռն ապաշաւանացն զվրիպանացն կորուստ. ըստ այսմիկ և այլոց կենդանեացն զգայականօքն և թէ ունայնացելովք առ ի դոյզն ինչ զգուշաւորականս: - 22. մինչև նոքա խոնարհեալ առ նորայն խորհրդական առ յապա պատահմունսն, որ հանդերձեցաւ աշխարհիս Հայոց, իբր մարգարէական իմն զոգցես տեսաւորութիւն – 114. Որպէս ընթեռնուս ի գիրս մարգարէականս զհանգամանս այսոցիկ. որպէս և ի վեցերորդ տեսլեանն Դանիէլի և Զաքարիայի բանագործութեանն – 398.

ՄԱՐԳԱՐԷԱՆԱԼ - Զոր վկայէ ոմն ի սրբոցն, թէ Մարգարէացաւ ութերորդն յԱդամայ Ենովք – 26. ի սորա ԽԳ ամին վախճանեալ Յակոբ մարգարէանայ վասն հեթանոսաց կոչմանն: - 56.

ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ - Այլ ի հրամանէ Աստուծոյ յանդիման դրախտին բնակելով պահոք ապաշխարութեան սգացեալ եղեն, ողբալով զվրիպումն առաջին կենացն, ամենայնիւ հրաժարեալ ի մարմնականաց, հոգիազարդ մարգարէութեամբ ժուժկալեալք ի մսոյ և ի գինւոյ: - 30. Աստանօր և ի դէպ ելանէ մարգարէութիւնն Դանիէլի, տեսութիւն անհեդեդ պատկերին բազմախառն նիւթոքն ի վերայ խեցեղէն և երկաթեղէն ոտիցն: -156. որպէս և գրեալ է ի մարգարէութեանն Երեմիայի – 196. որպէս սահմանեաց Աստուած ի վերայ ժողովրդեանն Իսրայէլի գերելոցն ի Բաբելոն, որպէս գրեալ է ի մարգարէութեանն Երեմիայի, ,,զ-ՀԷ-երորդն ասէ գիտասցես, և խելամուտ լիցիս յելից բանին տալ պատասխանի. մինչև յօծեալն /312/ առաջնորդ եօթներորդ Է և եօթներորդք ԿԲ,,. – 314.

ՄԱՐԳԱՐԻՏ - և շէն մարգարիտ զքարաբլուրն յօրինէ պարսպաւոր անկասկածելիս անմատչելիս ձեռաց պատերազմողաց – 88. Եւ ոսկեգործ ականակապ կազմեալ՝ պատեաց ոսկով զփրկագործ սուրբ խաչն, և ընդելուզեալ մարգարտով զարդարեաց զսխրագործ փայտն, հիւսնեալ ի մէջ անուշահոտ փայտից, թողեալ մասն ինչ արտաքս ոսկեպատ պահարանին, յառաջնում իւրոյ քառածրագիծ խաչակերտ փայտեղէն զզրոցկանն: - 394. Զոր հրաշազարդեալ մեծագանձ սպասիւք, ոսկեկերտ խաչադրօշեալ ընդելուզեալ մարգարտով և ակամբք պատուականօք հրաշագործեալ: - 396.

ՄԱՐԳԱՑ - Եւ եղև յաւուրն ինն և տասներորդի, յամսեանն մարգաց, որ օր ԻԸ էր ամսոյն, յամի քսան և հինգերորդի թագաւորութեանն Խոսրովու, որ կոչէր Ապրուէզ, զկնի Ժ աւուր անցանելոյ զատկին՝ առին զքաղաքն. – 142.

ՄԱՐԴ - ,,մարդ եմ և պիղծ շրթունս ունիմ, և ի մէջ պղծաշուրթն ժողովրդեան բնակեալ եմ ես,,: - 258. ,,մարդ ի պատուի էր և ոչ իմացաւ, հաւասարեաց անասնոց անբանից և նմանեաց նոցա,,: - 22. այլ և մարդոյն ևս յստակագոյնս տեսանել զիւրաքանչիւրոցն ի նոցանէ մտածութիւն. – 22. անհասական իմն շնորհիւ փառօք և պատուով պսակեալ զմարդն իշխանական ճոխութեամբ՝ վայելեցուցանէ դրախտին, տալով նմա բազմամեայ կենաց սահման իբրև զմի օր - 20. և դաստիարակ առընթեր ունելով զբանն տէրունական … և թէ ,,զի՞նչ օգուտ իցէ մարդոյ, եթէ զաշխարհս ամենայն շահեսցի և զանձն իւր տուժեսցէ, կամ զի՞նչ տացէ մարդ փրկանս ընդ անձին իւրոյ. զի եկն որդի մարդոյ խնդրել և կեցուցանել զկորուսեալն,, - 264. և դաստիարակ առընթեր ունելով զբանն տէրունական … և թէ ,,զի՞նչ օգուտ իցէ մարդոյ, եթէ զաշխարհս ամենայն շահեսցի և զանձն իւր տուժեսցէ, կամ զի՞նչ տացէ մարդ փրկանս ընդ անձին իւրոյ. զի եկն որդի մարդոյ խնդրել և կեցուցանել զկորուսեալն,, - 264. և դաստիարակ առընթեր ունելով զբանն տէրունական … և թէ ,,զի՞նչ օգուտ իցէ մարդոյ, եթէ զաշխարհս ամենայն շահեսցի և զանձն իւր տուժեսցէ, կամ զի՞նչ տացէ մարդ փրկանս ընդ անձին իւրոյ. զի եկն որդի մարդոյ խնդրել և կեցուցանել զկորուսեալն,, - 264 Եւ զկէսն գերի առեալ ածեն ընդ իւրեանս, և զշէնս և զաւանս և զագարակս հրձիգ արարեալ՝ անապատ կացուցանեն ի մարդոյ և յանասնոյ: - 202. Եւ զնախնին մեր Ադամ ոչ ասել առաջին մարդ, այլ այլոյ ումեմն որդի Շուռելայ, արըռտաբոյծ ուղտուց, զզուեալ յանծանօթ /գրքում՝յանծանոթ/ աշխարհի և անհաւատարիմ յայնմ գտեալ՝ հալածեալ եղև կնաւ իւրով ի միջոց երկրի – 48. և զոր օրինակ ոք զբոլոր անդամս մարմնոյ յօշիցէ ի մասունս, և ոչ երևի տեսակ կենդանի մարդոյն, որպէս է գոյացութիւն խառնուածոյն. – 194. և լուսաւոր առնել զամենայն մարդ, որ յաշխարհ գալոց է. – 76. Եւ հրամայեցին համար առնել անկելոց դիակացն, գտաւ թիւ սպանելոցն ԾԷՌ մարդ: - 142. և սուր ի գործ արարեալ զերիս աւուրս՝ սպառեցին զամենայն մարդ ի քաղաքին. – 142. Եւ ստրջացաւ Աստուած քանզի արար զմարդն: - 28 Զոր Եւսեբէս Կեսարացի ասէ՝ ի սովորութենէ մինչև ցայսօր կին մարդ թագաւորէ ի վերայ աշխարհին Հնդկաց: -30. զոր և ես գիտեմ յաշխարհագրութեանց անտի Պտղոմեայ՝ զԵմաւոն լեառն յարևելս, որ արդարև բարձր է քան զամենայն երկիր, անկոխելի ոտից մարդոց – 48. թերևս և այն իցէ երկիր բնակութեան առաջին մարդոյն. – 48. իսկ նա քանզի ի հրեշտակէ ասէր ունել պատգամ և ոչ ի մարդոյ՝ յոյժ դժուարեալ ընդ իրսն՝ սպան զնա ի գաղտնիս: - 162. մասնաւոր ինչ մարգարէական ոգւով եղելում ի մարդն օժնդակ խորհրդածութեան արծարծել անդրէն ի ձեռն ապաշաւանացն զվրիպանացն կորուստ. ըստ այսմիկ և այլոց կենդանեացն զգայականօքն և թէ ունայնացելովք առ ի դոյզն ինչ զգուշաւորականս: - 22. ոչ ստեղծեալ յումեքէ, այլ որպէս երևիդ՝ նոյնպէս էր. և կայ մնայ, և զմարդ ինքնածին: - 48. քարինս տաշահոս հոլովեալ ի նիւթ եկեղեցւոյն ի Մանազաւեանն նահանգէ ընդ Բզնունական ծովն բերեալ մատուցանէ առ կատարումն հրաշագեղ դիտանոցին սրբոյն Սիօնի, այլովքն սրբական անուանակոչութեամբ տեղեաց տնտեսականին բանին Աստուծոյ մարդ եղելոյ: - 396.

ՄԱՐԴԱԽԱՆՁ - Եւ նոյնժամայն սուսերամերկք խուռն նիզակօքն ի վերայ յարձակեալ իբրև զգազանս արիւնարբուս մարդախանձս՝ սրախողխող արարեալ սպանին զնա – 352.

ՄԱՐԴԱԽԻՏ - յորում շահաստանն Դուին, մարդախիտ պարսպաւոր պատնիշօք պատուարեալ և տուրևառիկ վաճառականութեամբ և ազգի ազգի պղծութեամբ յափրացեալ յղփացեալ: - 358.

ՄԱՐԴԱԽՈՇՈՇ - և անդ գտեալ զբնակիչսն Ռշտունեաց, թափառականս անկեալ յանողորմ և ի մարդախոշոշ շանցն գիշակերաց – 202.

ՄԱՐԴԱԿԵՐՊ - Իսկ տէր Գրիգոր ի մէջ մարդակերպ գազանաց ի ժողովս խուժադուժ բարբարոսաց բնակէր, որ ևս չար քան զթունաւոր գազանս են առ մեզ – 252.

ՄԱՐԴԱՍԷՐ - Բայց երանելի հայրապետն Տէր Գէորգ սաստկագոյն քան զտիեզերական կործանմանն առ Նոյիւ բերելով զտրտմութեանն թախիծս, հանդերձ եպիսկոպոսիւն Գրիգորիւ՝ զաբրահամեանն վաղնջուց աղաչանսն ի կործանմանն Սոդովմայ յառաջաբերեալ մարդասիրին Աստուծոյ. – 358.

ՄԱՐԴԱՍԻՐԱՊԷՍ - Եւ զայս առատապէս հեղեալ զգութ արարչական խնամոցն առ արարածս իւր, ողորմեալ մարդասիրապէս բարեխօսութեամբ սրբոցն – 314.

ՄԱՐԴԱՍԻՐԵԼ - կոչեաց զերիցունսն նորոյ կտակիս, զեպիսկոպոսս և զքահանայս, առաջի արկեալ զհաւատոցն կատարելաբանութիւն, զմկրտութեանն լուսաւորութիւն. զառեկելոցն յապաշխարութիւն, զյոյսն յետ վախճանին, զմարդասիրելն Քրիստոսի - 386.

ՄԱՐԴԱՍԻՐՈՒԹԻՒՆ - յուսացեալ ի մարդասիրութիւնն Քրիստոսի, զմաքսաւորին և զաւազակին զյետնորդսն բարբառեալ, և զփրկական մարմին և արիւն որդւոյն Աստուծոյ հայցեալ հաւատով ի թողութիւն մեղաց, յուսացեալ ի քաղցրութիւնն Աստուծոյ: - 336. Ո՞վ անծախելի բարերարութեանն Աստուծոյ. ո՞վ անհատական մարդասիրութեանն, որ և դեռ ևս խնայել ասէ յանզգացեալսն: - 30.

ՄԱՐԴԱՍՏԱՆ - Իսկ Պարսկահայոց գոեահին խուժան ածեալ, գաղտագնաց եղեալ ընդ անկոխ ճանապարհս՝ գան հասանեն ի Մարդաստան գաւառ յաւանն Վիտահոտ – 400. առեալ էր ի բաժնէ /ճիշտը՝ ի բաժնի/ Գագիկ իշխանի … զճուաշ գաւառն և զԹոռնաւան, Արտագ,Մարդաստան, Գառնի, Առբերանի, Աղանդռոտ, Բառիլովիտ, Պալունիք և Մեծնունիք, Տոսպոշտունիք, Բոգունիք, Գուգան գաւառ, Արտաշէսեան: - 388. Գունդ մի հարուստ անցեալ մնացին ի Համբոյրազան աւանի Մարդաստան գաւառի, ուր եպիսկոպոսական աթոռ մարդպետականին յայնժամ փոխեալ դնէր ի Նախճաւան քաղաքէ. – 372. և զՄարդաստան գաւառ զբուն բաժին տուեալ ցԳուրգէն, և նորա զիւր գործակալս թողեալ անդր: - 326. և զՄարդաստան գաւառն զբուն բաժին Գուրգենայ դարձոյց առ նա Դերենիկն: - 322. Իսկ Գուրգինի մարզպանի Հայոց առեալ էր ի բաժնի յելս կոյս և /388/ որ ելանէ ի հարաւակողմն, զԱնձահից ձոր, զԿրճունիս, զԿուղան ովիտ, և զբուն զՄարդաստան գաւառ, զԱրճիշակովիտ. զոտն Առնոյ, զԱղբագ Մեծ և զՓոքր, Ակե, Տամբէր, Տագրեան. Ըռնայ, Զարեհաւան: - 390.

ՄԱՐԴԵՂՈՒԹԻՒՆ - տայր հրաման փշրել և խորտակել զկենդանագրեալ պատկերս ճշմարիտ մարդեղութեան Փրկչին և նորին աշակերտաց: - 168.

ՄԱՐԴԻԿ - և բազում այն են որ ի նմին իսկ սատակին. և կէսքն դիւրըմբռնելի որսորդաց լինին. և ապրեալքն սաստիկս հասուցանեն վտանգս ուր և դիպիցին, եթէ մարդկան և եթէ այլոց ինչ կենդանեաց: - 188. ,,Բուխայ գլուխ զօրավարաց ընդհանուր Թագաւորութեան Տաճկաց, Ջափր իշխեցող ծովու և ցամաքի, հաւասար և օրէնսդրին մերոյ Մահումաթի, և հաւատարիմ միջնորդ Աստուծոյ և մարդկան, և թագաւոր ընդհանուր ազգաց հարաւային աթոռակալութեան … Յղեցի զքեզ ելանել ի վերայ երկրիդ Հայոց ամենայն կենդանեաց – 236. ,,լեառն մի է յոյժ անհնարին բարձր, որոյ անդր քան զնա չի՛ք բնակութիւն մարդկան,,. – 48. այլ թէ ,,որ ուրացի զիս առաջի մարդկան՝ ուրացայց և ես զնա առաջի Հօր իմոյ որ յերկինս է. – 256. Այլ Քրիստոս իւր ոչ տուն ոչ տաղաւար ասի, այլ մի տէր Յիսուս Քրիստոս, յԱստուծոյ և ի մարդկանէ կատարեալ. – 394. այր գազանաբարոյ, վայրենամիտ, առատաձեռն առ արբումն մարդկան, այր զօրաւոր զօրութեամբ ի գործս պատերազմաց, ահարկու ազանց, կարողութիւն և ուժեղութիւն Աւշնի ի սորա ձեռս բաւականացեալ: - 374. ասա ի բուն մինչև աւերեսցին՝ քաղաքք ի բնակչաց, և տուն առ ի չգոյէ մարդկան. –

182. բազում ունելով ինչս ի կոխակս բարձրաւանդակս և ի կիրճս նրբականս, ի զերծս և ի խոխոմս ձորոյն ի թոխ և ի բոխ երկրին անբնակ մարդկան յասպատակէ հինիցն Երուանդայ – 84. Բայց Աւշին որդի Ապուսեճի, քանզի էր այր խռովասէր, ատեցող զխաղաղութիւն, անյագ առ արբումն արեան մարդկան, և զայն բարգաւաճանս անձին քաջ լաւ համարէր. – 370 Ես իսկ լուայ յորժամ կարդային զԱւետարանն, թէ ասաց Քրիստոս, ,,որ խոստովանեսցի զիս առաջի մարդկան՝ խոստովանեցայց և ես զնա առաջի Հօր իմոյ որ յերկինս է,,. – 222. Եւ ասի լինել թիւ մարդկանն ապականելոց ի շարժմանէ՝ ոգի առաւել քան ՀՌ: - 358. Եւ արար նմա հաւատարմութիւն յոյժ զրով, և կնքեալ աղիւ ըստ սովորութեանն իւրեանց երդումն, և խնդրեաց ի նմանէ զօր ինչ սակաւ յերևելի մարդկանէ, յորս ինքն վստահն էր: - 154. և դաստիարակ առընթեր ունելով զբանն տէրունական, թէ ,,որ ուրասցի զիս առաջի մարդկան՝ ուրացայց և ես զնա առաջի Հօր իմոյ,, - 264. և երթեալ բնակէ առանձնապէս ի Գողթն գաւառի ի տեղւոջ վարդապետութեան սրբոյն Մեսրովպայ, ճգնասէր հրեշտակակրօն վարուք, երանելի մարդկան և ահարկու դիւաց: - 120. և զՀեփեստես ասեն կաղ յերկոցունց ոտիցն, և կայծակնավարս ունի ի ձեռնն աքցանս և կռանս, և նստեալ դարբնէ մարդկան: - 52. և Հեփեստոս և Պռոմիթոս, որ է արեգակն և լուսին՝ գողացան զհուրն յՈրմզդայ և մասն ինչ ետուն ի մարդիկ. – 48. Եւ յետ այնորիկ ի բազմանալ որդւոց մարդկան՝ յերիս մասունս և զերկիր բաժանեալ, ըստ ասացելումն Հերոդոտեայն – 34. և որ խոստովանեսցի զիս առաջի մարդկան՝ խոստովանեցայց և ես զնա առաջի Հօր իմոյ որ յերկինսն է,,: - 256. Եւ որք ոչ այսոցիկ նման՝ լուան ի Տեառնէ՝ մի մնասցէ ոգի իմ ի մարդկանդ յայդմիկ յաւիտեան, վասն լինելոյ դոցա մարմին. այսինքն մարմնասէրք և ոչ հոգիասէրք: - 30. Եւ վասն իւրեանց թուլամորթութեանն և անհաստատ և յողդողդ մտաց սիրեցին զփառս մարդկան առաւել քան զփառս Աստուծոյ. – 246. փոխանակ նորա թագաւորէ Սմբատ որդի Աշոտի, այր քաջայայտ և հանճարեղագոյն, լի և առոյգ յամենայն իրողութիւնս՝ որ ինչ ընդ երկրաւս համառօտաբար լրութիւն պատկանաբար պիտանան, հաճոյ Աստուծոյ և ընտիր մարդկան: - 356. զորոյ չունի բան ասել անդր ևս քան զնա յարևելս ունել բնակութիւն մարդկան. – 18. մտօք սրտի գիտել զերկիւղն Աստուծոյ, կարգել և օրէնս բնութեան ի մարդիկ. – 26. յորմէ լսէաք խօսս մարդկան հելլենական, և որք խօսէինն ոչ տեսանէաք: - 50. նիզակակիցք միմեանց եղեալք երեք տասնեակք թուովն, զսուրբ Երրորդութիւնն յօգնականութիւն /134/ իւրեանց վերաձայնեալ՝ լքին զօգնականութիւն մարդկան. – 136. Որոյ յօժարութիւն կամաց ախորժակաց իւրոց էր մարմին և արիւն անմեղ մարդկան, առ ի յագումն անհնարին գազանաբարոյ կատաղութեանն: - 200. որք ասեն զՀեփեստեայ գողանալ զհուրն յաստուծոյն, մասն ինչ մարդկան շնորհել և զյոլովն ինքեան ունել – 52. Չարախորհուրդն հայր Մարդպետ որդին սատանայի ոչ բաւականացաւ չարեօք մարդկան – 100. քանզի բանականն յերիս յայսոսիկ տեսանի, ի հրեշտակս, ի մարդիկ և ի դևս. այլ ոչ ի հաւս կամ ի յայլ կենդանիս: - 52. Քանզի ասէ՝ բազմացան չարիք մարդկան ի վերայ երկրի – 28. Քանզի տեսեալ, ասէ, որդւոցն Աստուծոյ զդստերսն մարդկան զի գեղեցիկ էին՝ առին իւրեանց կանայս յամենեցունց զոր ընտրեցին: - 28.

ՄԱՐԴԿԱՅԻՆ - և առ զայրուցն առ մարդկայինն դիմեալ ազգ՝ կարծել նոցա ստնանէր, յինքեանք ձգել կորզել զսատակչական դարձուածէ. – 398. Զոր մարդկային կարողութեան անհնար է /196/ փակել զբացումն դրանն ի կորուստ. – 198. Իսկ զգերազանցութիւն գեղեցկութեանն որ բերան բաւեսցէ ասել բան մարդկային, միանգամայն և զաստուածազործ տնկոցն հեշտալի տեսութիւն. – 20. հասեալ ի վերայ ծառոց մրգաբերաց, կամ ի դիւրածախելի բոյսս խոտոյ, այնպէս վատնեցին ծախեցին զզօրութիւն մարդկային ազգի ստացուածովք իւրեանց,,: - 240.

ՄԱՐԴԿԱՊԷՍ - այլ ի մարդկապէս բարբառոյ աստի ցուցանէ ի հրաժարականն ի սպառ վախճան: - 28.

ՄԱՐԴԿԵՂԷՆ - որ ունէին մարդկեղէն երեսս, և մեծ էին քան զհաւսն որ առ մեզ լինին - 50.

ՄԱՐԴԿՈՒԹԻՒՆ - և կանխավաղ ցրմամբն ի վերուստ՝ զմիաբարբառ լեզու մարդկութեան շփոթեաց յայլաբան խլրտիւնս. – 40. և ոչ նոցա միայն՝այլ և ընդհանուր մարդկութեան լինել օրինակ արդարութեան և ժուժկալութեան. – 26. Զոր մեք սակաւուք այժմ յիշատակեալ զազգաբանութիւն բնաւին մարդկութեան ի նահապետացն առաջնոցն. – 34.

ՄԱՐԴՈՍՏԱՆ - Եւ իշխանն վառեալ զինքն բազում պատրաստութեամբ զինու և զօրօք ազատակոյտ գնդաւ իւրով, և ամենայն բնակ տերամբք իւրոյ իշխանութեանն, և խոյս առեալ շրջէր զկողմամբքն Մարդոստանի և Զորոյն հասկոյ -184.

ՄԱՐԴՊԵՏ - Այլ չարիմացն հայր կոչեցեալ Մարդպետ և բնաւորեալ խորհրդոցն չարին ոչ երբէք դադարէր: - 98. Այսոքիկ գաւառք անուանիք, զոր յառաջին ժամանակս իւրոյ իշխանութեանն սեփհականս իւր արարեալ ունէր հայրն նենգութեան Մարդպետն կոչեցեալ … և մանաւանդ քաղաքն Շամիրամայ հռչակելին և յոյժ փառաւորագոյնն յամենայն կողմանց Վասպուրականի: - 388. Անդէն վաղվաղակի մատուցեալ Շաւասպ Արծրունի առ Մարդպետն՝ ասէ – 100. Եւ ի ժամանակին /96/ յայնմիկ ունէր զհազարապետութիւնն Հայոց այր ժանդ չարաբարոյ, որում հայր Մարդպետ անուն էր. – 98. զայս խորհեալ Մարդպետին ասէ, թէ զայս ձախողակի իմացմունս կատարել կարացից՝ թերևս և զտուն Մամիկոնեան նախարարութեանց կարացից որսալ ի կորուստ: - 98. Իսկ սրբոյն Ներսէսի իրազէկ եղեալ չարին չարաբարոյ չարախորհրդութեանն՝ անէծս մեծամեծս և ազդոյս և զօրաւորս դնէ ի վերայ Մարդպետին – 100. Չարախորհուրդն հայր Մարդպետ որդին սատանայի ոչ բաւականացաւ չարեօք մարդկան – 100.

ՄԱՐԴՊԵՏԱԿԱՆ - Գունդ մի հարուստ անցեալ մնացին ի Համբոյրազան աւանի Մարդաստան գաւառի, ուր եպիսկոպոսական աթոռ մարդպետականին յայնժամ փոխեալ դնէր ի Նախճաւան քաղաքէ. – 372. Ըմբռնեալ լինէր յայնժամ մի ոմն ի Հայոց ազատանոյն տոհմից Վահևունեաց, Ապուսահակ ոմն, եղբայր Սահակայ եպիսկոպոսի ոստանին Նախճաւանու և Մարդպետականի. – 204.

ՄԱՐԶՊԱՆ - - ելանէ մարզպանն ի վերայ նոցա և յինքն հանէ զՏամբեր և զԸռնայ գաւառ և որ ասի Ապուջափրի բերդ, ի Վիրի քաղաքին Կորճէից զիւր կացուցանէ ոստիկանս ի պահպանութիւն ամրոցին: - 400. Բայց ինքն կարծեցեալ մարզպանն փախստեայ անկանի ի բարձրաբերձ եկեղեցին – 190. երկեաւ Վարդան ի մարզպանէն բնակել յանդորրու, այլ այնր աղագաւ էանց գնաց յամուրսն Մոկաց, և կայր մնայր ի նախախնամութենէ Աստուծոյ այցելել աշխարհիս Հայոց: - 122. և երիվար մարզպանին պակասեաց առ վազսն – 402. և դարձեալ դառնայ ի Հայս. ընդ իւր ածելով մարզպան զՎնդոյ Պարսից մոգպետ: - 124. Եւ հասեալ Շաւասպայ Արծրունւոյ ամբարշտի յԱրտաշատ հանդերձ մարզպանաւն՝ շինեն ի դուռն քաղաքին զորմզդական մեհեանն, /124/ և զկրակապաշտութեան մոլութիւն բորբոքեն ի նմա. – 126. և յանկարծօրէն յեղակարծ երագութեամբ հասին ի վերայ Շաւասպայ և մարզպանին Վնդոյի: - 126. Իբրև եհաս գուժկան առ մարզպանն Հայոց Գուրգէն՝ ելեալ զհետ նոցա Ռ արամբք, վառեալ ի զէն և յասպազէն, և գնացեալ եհաս յԱյլի գաւառ. – 402. Իսկ Գուրգինի մարզպանի Հայոց առեալ էր ի բաժնի յելս կոյս և /388/ որ ելանէ ի հարաւակողմն, զԱնձահից ձոր, զԿրճունիս, զԿուղան ովիտ, և զբուն զՄարդաստան գաւառ, զԱրճիշակովիտ. զոտն Առնոյ, զԱղբագ Մեծ և զՓոքր, Ակե, Տամբէր, Տագրեան. Ըռնայ, Զարեհաւան: - 390. մինչ նոքա յանհոգս յապահովս մնացին յերկիւղէ մարզպանին – 402. Յետ բառնալոյ թագաւորութեանն Հայոց ի տանէն Արշակունեաց՝ ապա մարզպանք Պարսից կալեալ տիրէին աշխարհիս. – 124. որք ոչ ըստ օրինի եկեղեցականաց կրօնից զվարսն յարմարէին, այլ ընդ մարզպանին Մշկանայ լծակցեալ հոգալ զաշխարհիս: - 118. Քանզի խառն դրակցութեամբ սահմանին առ միմեանս Փոքր Աղբագ և աշխարհն Կորճէից և Պարսկահայոց՝ և հանապազ առ միմեանս զգժտութիւն կեղծաբերէին, մարզպանն և որ զԿորճէիցն ունէին զգործավարութիւն. – 400. Զուգակշիռ հաւասարութեամբ մարզպանն Հայոց Գուրգէն հրաշազան յօրինուածով շինէ

զեկեղեցին ի քաղաքին Հադամակերտ ի Մեծն Աղբակ, ի բուն իշխանական սեփհականութեանն իշխանութեան զարմին Արծրունեաց – 396.

ՄԱՐԶՊԱՆՈՒԹԻՒՆ - Եւ Գուրգինի նորին եղբօրն զպատիւ մարզպանութեան գահակալութեան հաւատացեալ, ըստ կարգի բարձաբերձութեան թագաւորացն Հայոց, մանաւանդ մեծին Տրդատայ թագաւորի: - 370. Յաւելում պատկանաբար գրել քեզ զարիական նահատակութենէն հանդիսական ժուժկալութեամբ ողջախոհաբար կրթութեամբ զզինուորական երկասիրութեամբն յօժարաբար դեգերել զմարզպանութեանն արդիւնաւորել անուանակոչութիւն: - 398. որ ի ժամանակին կալեալ էր զմարզպանութիւն և զզօրավարութիւն Հայոց ի խնդրոյ սրբոյն Սահակայ յերկուց թագաւորացն Յունաց և Պարսից – 116.

ՄԱՐԶՊԵՏ - և ըստ հրամանի ինքնակալ թագաւորին նուաճեալ ունիս ի հնազանդութիւն պետութեան ձեր զիշխանս և զտեարս, զկողմնակալս և զկուսակալս, զքաղաքապետս և զմարզպետս բոլոր Հայաստանեայցս – 212.

ՄԱՐԹԵԼ - ծածկել և թաքուցանել ոչ մարթէին – 234.

ՄԱՐԻԱՄ - Բայց յաւելեալ լինի պատճառ ունելոյն զնա զայս օրինակ, եթէ էր փեսայացուցեալ զԴաւիթ զեղբայր կորապաղատին ի քոյր իւր Մարիամ. – 342. եթէ կացցես ի նմին յամառութեան ի հաւատսդ Յիսուսի որդւոյն Մարիամայ կնոջ հրէի,,: - 294. և լռէ վասն Մարեմայ զազգաբանելն: -16. Եւ քանզի ոչինչ հաղորդութիւն ունէր Յովսէփ առ ծնունդն Քրիստոսի՝ մտանէ յազգահամարն փոխանակ Մարիամու կնոջ իւրոյ -16. շինեալ նորոգեաց և զեկեղեցին որ ի նմա յանուանակոչութիւն սուրբ Աստուածածնին Մարիամայ և զարդարեաց զնա մեծագանձ սպասուք և եդ ի նմա զԽաչն, զոր յիշեցաք վերագոյնն, յորոյ ձեռն ծանուցաւ զօրութիւնն հրաշագործ: - 390.

ՄԱՐԻՆԴ - և յերթալն նորա և ի դառնալն՝ գայ գտանէ վախճանեալ զթագաւորն Արտաշէս ի Մարինդ – 92.

ՄԱՐԿԻԱՆՈՍ - իսկ թագաւորն Մարկիանոս ընկալաւ զնոսա սիրով ի խաղաղութեան, մեծաշուք պատուով ի բարձ և ի պատիւ յառաջ ածեալ, իբրև զքաջամարտիկ ախոյեանս - 132. Մարկիանոս կայսր թագաւորեալ Յունաց յերկրորդն Թէոդոսի, որ արար զժողովն ի Քաղկեդոն ՈԼԳ եպիսկոպոսաց. առ որով վկայեաց սուրբն Վարդան և Վահան Արծրունի: - 132. Պատասխանի ետ Մարկիանոս և ասէ. ,,վասն զի առաջնորդքն Հայոց զպարսկական շփոթմանցն զվտանգ կրէին,,: - 132.

ՄԱՐՄԻՆ - ,,և ո՛վ տայր ինձ վկայել ի վերայ ճշմարտութեանն և մեռանել վասն անուանն Քրիստոսի, և զարիւն իմ փոխանակ արեանն Քրիստոսի հեղուլ և զմարմին իմ փոխանակ մարմնոյ նորա ի մահ մատնել և զչարչարանս իմ ընդ նորա չարչարանսն խառնել, զի և ընդ նմա փառաւորեցայց. – 290. ,,և ո՛վ տայր ինձ վկայել ի վերայ ճշմարտութեանն և մեռանել վասն անուանն Քրիստոսի, և զարիւն իմ փոխանակ արեանն Քրիստոսի հեղուլ և զմարմին իմ փոխանակ մարմնոյ նորա ի մահ մատնել և զչարչարանս իմ ընդ նորա չարչարանսն խառնել, զի և ընդ նմա փառաւորեցայց. – 290. Ապա ուրեմն յայտ է ըստ կարգի ասացելոցս, եթէ որ շարժէ զերկնային մարմինն՝ մի է և անբաւ զօրութիւն ունի և անմարմին է և անեղ է անապական, և ինքն ոչ յումեքէ, և այլք ամենեքեանք նովաւ. – 54. արդ տեսանեմք զերկնային մարմինն, զի կարգաւորաբար անդադար շարժութիւն ունի, այսինքն արեգակն և լուսինն և աստեղք և այլք նոյնպիսիք. – 54. Բայց բացումն դրան քան զամենայն այս չար է որ յաներևոյթս է բացեալ, դուռն կորստեան հոգոց՝ առաւել քան թէ մարմնոց – 196. Բայց երանելիս այս Գէորգ, մինչ կայր ընդդէմ սրոյն և դահիճն ծեծէր իբրև զանզգայ ինչ, և ոչ փոքր մի գիծ կարացեալ հարկանել ի մարմին սրբոյն զխոցումն սրոյն – 266. Բայց որդիքն Դերանկին, Աշոտ և Գագիկ և Գուրգէն, զըստ մարմնոյ /358/ աճմանն չափ առոգ և բարձրաբերձ ձգմամբ յառաջ տանէին. – 360. Եթէ, որպէս ասացի, ի բաց գնաս յինէն՝ խաղաղութիւն է, և թէ ոչ՝ պատերազմ և կռիւ և ճակատամարտ ... քո պատերազմ՝ և մեր յաղթութիւն, քո մարմին՝ և իմ նիզակ, քո պարանոց՝ և իմ սուսեր. – 278. և կերիցեն քարինք և փայտք և այլ կահք երկաթեղէնք, որպէս և զայն որ ի նմայն

պատարագի մարմին և արիւն որդւոյն Աստուծոյ, մանաւանդ թէ ինքն իսկ ճշմարտապէս որդին Աստուծոյ. – 396. Եւ ահա լոյս սաստիկ իջեալ յերկնից և ցոլացեալ ի վերայ սուրբ մարմնոյն, և շուրջ փակեալ զտեղեաւն, թէ ուրեք յարենէ նորա ցայտեալ կայր: - 224. և առաջի արկեալ զհառաչանսն, զարտասուսն, զխոստովանութիւնն, զողորմագին պաղատանսն, մինչ ի մահ զտրտմելն, զկենաց դեղն հայցել, զմարմին և զարիւն որդւոյն Աստուծոյ ի թողութիւն մեղաց – 386. Եւ առեալ զմարմին նորա տիկնոջն Սեդայի կնոջն Աշոտի և եդ ի գերեզմանի, ի տեղւոջն որում Զորոյ վանքն ասեն, ի վերայ գեաղջն Ահաւականից: -370. և արտաքնոցն ուշիմագոյնքն ասեն, եթէ, ամենայն մարմին շարժուն՝ յայլմէ բնաւորեցաւ շարժիլ. – 54. և բարձեալ զմարմին սրբոյն բազմամբոխ զօրօքն Հայոց – 108. և զոր օրինակ ոք զբոլոր անդամս մարմնոյ յօշիցէ ի մասունս, և ոչ երևի տեսակ կենդանի մարդոյն, որպէս է գոյացութիւն խառնուածոյն. – 194. և զտարի մի կացեալ մարմինք սպանելոցն անյօշելիք ի գազանաց և ի թռչնոց: - 368. և էր ալևոր ըստ մարմնոյ և հնացեալ արտաքին մարմինն, բայց ներքինն նորոգեալ և գեղեցկատեսիլ ըստ պատկերի արարչին. – 204. և էր ալևոր ըստ մարմնոյ և հնացեալ արտաքին մարմինն, բայց ներքինն նորոգեալ և գեղեցկատեսիլ ըստ պատկերի արարչին. – 204. Եւ խնդրէր /252/ ի Քրիստոսէ ելանել ի մարմնոյ աստի և մտանել առ Աստուած. – 254. և կացեալ զաւուրս բազումս անթաղ՝ և ոչ ինչ ամենևին արատեցան մարմինք սրբոցն, և ոչ գոյր հոտ ժախտու ի վերայ նոցա: - 268. և յաղագս անճոռնի և թանձր բլրաձև ծանրակիր մարմնոյ՝ և դժուարաշարժ զի վեր բերումն առնեն: - 26 և յայտ է թէ յայլմէ շարժի. և եթէ յայլմէ՝ ապա ուրեմն է՛ ոմն, որ շարժէ զերկնային մարմինն: - 54. և նախ յառաջ Սափին կարի յոյժ սիրեցեալն իւր, զսատակչական դեղն արբեալ, անբուժելի կեղով վառեալ յոսկր և ի մարմին՝ և առաջի Աւշնի զրաւ առնոյր ի կենացն: - 376. և նախ քան զմտացն յօժարագոյն առ հանդէսսն յառաջանալ՝ զմարմնոյն պնդութիւն անհանգիստ առ ճակատամարտսն յարատևել: - 308. և որ ինչ կրեցին թշուառութիւն զոգւոց առաւել քան եթէ մարմնոց. – 240. Եւ որք ոչ այսոցիկ նման՝ լուան ի Տեառնէ՝ մի մնասցէ ոգի իմ ի մարդկանդ յայդմիկ յաւիտեան, վասն լինելոյ դոցա մարմին. այսինքն մարմնասէրք և ոչ հոգիասէրք: - 30. Եւ պատուական արանցն քրիստոսասիրաց մտեալ առաջի թագաւորին՝ խնդրեցին զմարմին սրբոյն, և առեալ պատեցին և եդին ի գերեզմանին. – 254. կասկածանաց ասի աստուած՝ եկեղեցին և մարմին բանին և ևս յաւելցի /394/ ծիծաղելն. – 396. և փոխանակ ծաղկեալ պատմուճանի գունագոյն երանգ երանգ անկուածոցն՝ զսուրբ և զվարդագոյն կարմրատեսիլ արիւնն իւրեանց ի վերայ սուրբ մարմնոյն, և փոխանակ ոսկեհուռ թագակապ զարդու պսակացն՝ զերկրպագութիւնն Քրիստոսի. – 266. զի ապականեաց ամենայն մարմին զճանապարհս իւր ի վերայ երկրի. – 28. զի թէ բովանդակ զօրութիւն ունէր՝ ոչ հանդուրժէր անդադար շարժել զերկնային մարմինն. - 54. զի Նեստորականացն /գրքում՝ Նստորականացն/ և Քաղկեդոնականին է այս իմացմունք այլովքն ևս երկաբնակօք, որք բանին՝ տուն և տաղաւար զառ ի կուսէն առեալ մարմին դանդաջեալ ասացին, և ոչ միութեամբ բնութեամբ բանին մարմին լինելով. – 394. զի Նեստորականացն /գրքում՝ Նստորականացն/ և Քաղկեդոնականին է այս իմացմունք այլովքն ևս երկաբնակօք, որք բանին՝ տուն և տաղաւար զառ ի կուսէն առեալ մարմին դանդաջեալ ասացին, և ոչ միութեամբ բնութեամբ բանին մարմին լինելով. – 394. Զորս առեալ քրիստոնէից զպատուական մարմինս նոցա՝ ծածկեցին փառաւորապէս թաղմամբ, ամ ըստ ամէ տօնիւք զօր կատարմանն յիշատակել, որք են արք թուով է: - 268. զՓրկչին մերոյ Տեառն Յիսուսի Քրիստոսի զըստ մարմնոյ ազգաբանութիւնն գրելով աւետարանիչն Մատթէոս - 16. ընդդէմ արաբացի ասպատակողացն յարիւն և յապաժոյժ ի վերայ հայրենի աշխարհի մարտուցեալ և զհոգի և զմարմին փոխանակ սրբոց եկեղեցեաց Քրիստոսի և ի նոյն հաւատացելոց ի Հայր և յՈրդի և ի Հոգին սուրբ, առ զնոսա ամբողջ և անբիծ պահելոյ – 300. Իսկ սուրբն վառեալ Հոգւովն սրբով՝ յիշէ զասացեալն ի Փրկչէն, թէ ,,մի երկնչիք յայնցանէ, որ սպանանեն զմարմինն, և զոգին ոչ կարեն ապականել,, - 204. հրեշտակի Աստուծոյ հարեալ ի հարուածս անբժշկականս ըստ օրինի Հերովդիայ

ախտակրութեան, տորոմեալ խղխայթմամբ, չարալլուկ ուռուցմամբ զտրորումն առնոյր արիւնալից արիւնապարտ մարմինն գազանեղինին. – 376. Յայնժամ հրամայեաց զօրավարն քարշել զմարմինս սրբոցն արտաքոյ քաղաքին, լինել կերակուր շանց և թռչնոց երկնից. – 268. յորոյ աւուրս Փրկչին մերոյ տեառն Յիսուսի Քրիստոսի Աստուծոյ մերոյ մարմնով յաշխարհի երևումն եղև - 76. յուսացեալ ի մարդասիրութիւնն Քրիստոսի, զմաքսաւորին և զաւազակին զյետնորդսն բարբառեալ, և զփրկական մարմին և արիւն որդւոյն Աստուծոյ հայցեալ հաւատով ի թողութիւն մեղաց, յուսացեալ ի քաղցրութիւնն Աստուծոյ: - 336. Նոցա ելեալ արտաքս յատենէն մեծաւ խնդութեամբ, և յոյժ զուարճացեալք փութային ելանել ի մարմնոյ աստի և մտանել առ Աստուած – 266. Որոյ յօժարութիւն կամաց ախորժակաց իւրոց էր մարմին և արիւն անմեղ մարդկան, առ ի յագումն անհնարին գազանաբարոյ կատաղութեանն: - 200. ուստի յայտ է թէ և անմարմին է, զի մարմինն՝ բովանդակեալ զօրութիւն ունի, և ոչ կարէ հանապազ շարժել զերկին կարգաւորաբար. – 54. քանզի ոչ եթէ մարմին ինքնաշարժ է, այլ հոգին է ինքնաշարժ. – 54. Քանզի այնչափ թանձրացաւ յաճախութիւն սովոյն՝ որ ոչ միայն անսուրբ կենդանիս ուտէին ըստ սրբութեան կարգի, այլ և զսարսափելի և զդժնդակ, որ զգազանայինն անցուցանէ զվայրենամտութիւնն, զմարմինս մեռելոց՝ առանց խղճելոյ ուտէին, ի գերեզմանացն հանեալ զհետ միոյ և երկուց ամաց թաղելոյ: - 374.

ՄԱՐՄՆԱԿԱՆ - Այլ թերևս զայս տարակուսիցիս առ իմաստն՝ յանդիմանակացոյցս առնել զԳուրգէն ընդ աշխատութեան յօժարագոյն առ մարմնական զինուորութեամբն լինել: - 398. Այլ ի հրամանէ Աստուծոյ յանդիման դրախտին բնակելով պահոք ապաշխարութեան սգացեալ եղեն, ողբալով զվրիպումն առաջին կենացն, ամենայնիւ հրաժարեալ ի մարմնականաց, հոգիազարդ մարգարէութեամբ ժուժկալեալք ի մսոյ և ի գինւոյ: - 30. Եւ ինձ ի վերայ տրտմականացն դէմ եդեալ առ կատարելագոյն և առ անզուգական անհամեմատ խնդութիւնն դեգերել, առ հոգևորական ուրախութիւնսն ընթանալ յետ մարմնական տրտմականացն յաճախութեանցն: - 386.

ՄԱՐՄՆԱՍԷՐ - Եւ որք ոչ այսոցիկ նման՝ լուան ի Տեառնէ՝ մի մնասցէ ոգի իմ ի մարդկանդ յայդմիկ յաւիտեան, վասն լինելոյ դոցա մարմին. այսինքն մարմնասէրք և ոչ հոգիասէրք: - 30.

ՄԱՐՄՆԱՒՈՐ - սրբոյ թագաւորին և քաջ նահատակին Տրդատայ զբարիոք պատերազմեալ ընդդէմ անմարմին և մարմնաւոր պատերազմողաց, փոխի յերկրաւոր աշխատութեանցս ի հանգիստ, մեծաւ պատուով թագաւորական շքեղ և երևելի դիւազարդութեամբ – 96. Վասն մարմնաւորացն այնչափ նահատակեցայ, որպէս գիտացերն և որպէս այժմ լսես յինէն, վասն Քրիստոսի և վասն յաւիտենական կենացն ո՞չ մեռանիցիմ, կամ արդեօք ի քէ՞ն երկնչիցիմ. քա՛ւ լիցի. – 296. զի հոգևոր էր պատերազմն և ոչ մարմնաւոր - 232.

ՄԱՐՈՂ - բայց կանոնեցի զանուանս ի մատենիս: Տիգրան. Աղրամելէք. Ներս. Ներսէխ. Մարող. Արշամ. Արշաւիր. Ասուդ: Պարսից թագաւորք. Քսերքսէս. Արտաշէս երկայնաձեռն. Դարեհ. Արտաշէս. Ողոքոս. Զարսէս. Դարեհ: Ապա Աղէքսանդրոս Փիլիպպեայ Մակեդոնացի տիեզերակալ թագաւոր: - 68.

ՄԱՐՈՒԹԱՔԲԱՂԴԱՆ - Յետ նորա թագաւորէ եղբայր Սենեքերիմայ…<փութ>ապէս մեռանի ի Մարութաքբաղդան, իբրև … ունէր զվեց ամիս, սպանաւ և նա ի միոջէ ումեմնէ որում անունն էր Ներեղիբդ և թագաւոր էր. – 60.

ՄԱՐՏ - Բայց նոքա ևս քան զևս սաստկացուցանէին զմարտն: - 210. դու դիմօք մարտի առ իս զօր գումարեա և ել ընդդէմ իմ ի պատերազմ, և ի միասին մխեցից զձեռս ի սուսա և բարձից զսուսա ի պետութենէ Հայոց,,: - 340. Երրորդ վասն արիութեան քաջութեանն, արծուաբար քաջասրտապէս խիզախութեանցն ի մարտս պատերազմացն՝ յարծուիս առակեցին զնոսա: - 72. և խորհուրդք խորհրդականացս յոչինչ համարեալ լինէին ի գործս մարտից և յայլ կարգս հոգաբարձութեան աշխարհիս. – 194. և ահա այլազգիքն հասին ի դիմի գրգռել զմարտն և զօրագլուխք փութացան զհետ զօրուն: - 230. և առ չանսալ իշխանին՝ անդէն նոյն ժամայն ի մարտ պատրաստին: - 364. եթէ յերկարիցի գործոյս այսորիկ հանդէս և

մարտիցն հանգամանք ոչ փութանակի վարիցին՝ գուցէ օգնականութեամբ գիշերոյ եկեսցէ ի վերայ քո և մեծամեծ աւճիրս ի վերայ քո և զօրացդ արքունի հասուցանիցէ: - 212. և զպատրաստութիւն պատերազմողական մարտի ամրոցին հաւատացեալ էր Յիսէի եղբօր Թաղէոսի – 362. և ի հասանելն նորա անդր թողեալ զհակառակաբար մարտն՝ խօսին ի խաղաղութիւն, առաջի եդեալ զիրամանն արքունի, զգլխաւորին Տաճկաց, և Աշոտի հաւատալ զբոլոր տէրութիւնս Վասպուրականի: - 316. և ի վերայ նոցա զօրաժողով եղեալ Աշոտ և որդի իւր Դերանիկն, առնել մարտ պատերազմի ընդ ամրոցին: - 332. Եւ իսկոյն անյապաղ յական քթթել սպառազինեալ այրուձի պնդակազմ /366/ պատրաստութեամբ, ռազմ բոլորեալ դաշիկ դիմացուածով զմարտն գրգռեալ - 368. Եւ մինչդեռ զայսքան և զայսօրինակ մարտն գրգռէր՝ ահա յանկարծակի հասանէր քաջն մեր Աշոտ. – 174. և ոչ ըստ տեղիս տեղիս ցուցանէին զհանդէս մարտիցն և զյաղթութեանն քաջութիւն, այլ բոլորովիմբ ամենայն ուրեք ախոյեանայարձակ սլացմամբ ընթանայր. – 312. Եւ որք մերձ առ պարսպօքն զճակատն վառէին և զմարտն գրգռէին՝ զգեստն ինքեանց յասուէից կազմեալ – 208. Եւ սկսան յաւելուլ ի վերայ չարեացն այլ չարիս, զի ընդ միմեանս մարտ և կռիւս դնէին յաղագս իշխանութեանն ցանկութեան, և ճեղքեցան ի միմեանց և զօրս գումարեցին ի զերծելոցն ի սրոյն և ի գերութենէն Բուխայի. – 298. զի և զբազումս պատերազմեալ պէսպէս մարտիւք, և ոչ ինչ կարացեալ ստնանել անմարտնչելի ամրոցացն և քաջութիւն արանցն որ ի նմա՝ ողոքական բանիւք կոչէր ի հաւանութիւն: - 278. զօրս գումարէիք, այրուձի կազմէիք, մարտ և պատերազմունս գրգռէիք, ճակատ դնէիք և զզօրս մեր ի սատակումն սրոյ մատնէիք – 244. իբրև բազումք առաքինացան մեծաւ ուժով և քաջ նահատակութեամբ ի հանդէս մարտին. – 202. Իսկ Կայսիկքն և որք ընդ նոսա և զօրքն Պարսից զմարտն ի գաղտնիս գրգռէին – 380. Իսկ նախարարքն Հայոց ի սադրելոյ Վաղէսի գրգռեալ ի մարտ ընդ Արշակայ ի պատերազմ յառաջանան – 100. մեք տացուք զԱշոտ ի ձեռս քո առանց զինու և մարտից և ճակատուց կազմութեան, և մի ինչ յայնոսիկ աշխատ լինիցիս. – 212. յոյր ձեռն բազում արութիւն նահատակութեան երևեալ լինէին ի մարտս պատերազմաց և ի հանդէսս ճակատեցելոց ի միայնամարտիկ զինուորութեան: - 170. յորում և ոմն հաւատարիմ Յիսէի Սէմ անուն յառաջ խաղացեալ՝ պատահէ իշխանին, ընդ Վահանայ խորհրդակցեալ խորհել զխաղաղութիւն և զմարտն գրգռեալ ցածուցանել և զվառեալ պատերազմն շիջուցանել. – 334. Նմանապէս, կամ թէ ևս հրաշափառագոյն զյաղթութեան մարտսն յօրինեալ յարդարեաց զպարտութիւն ի վերայ ազգին Իսմայէլի մեծ զօրավարն Գուրգէն, և իսպառ կանգնեաց զնշանակ յաղթութեան ամենևին ամենայն ուրեք ընդ ամենայն տեղիս. – 312. որք յակամայ կամս լքին զմարտն և ցածուցին զպատերազմն և ետուն զամուրն ի Գագիկ: - 362. մտրակեալ զիւր ասպայզինեալ երիվարն սպառազէն կազմեալ ի մարտ պատրաստել – 334. և զմարտն ցածուցանել և զաղմուկն ամբոխեալ ի բաց վճարել – 210.

ՄԱՐՏԱԿԻՑ - Բայց ոչ միայն քաջքն Հայոց նահատակեցան ի մեծ պատերազմին այլ և անմարմին զօրք երկնաւորք մարտակից եղեն զնդին Հայոց. – 232. Եւ ինքն զօրավարն Գուրգէն եկաց ի ձախու կողման ճակատուն՝ ի թիկունս լինել գնդին հետևակազօր մարտակցացն – 230. Եւ յայսմ պատերազմի ոչ միայն երանելի եպիսկոպոսն և ճգնաւոր քահանայն մարտակից էին տեառն Գրիգորի, այլ և զօրք հրեղինաց – 252. Ի սոյն աւուրս որք մնացեալ էին ի տանէն Արծրունեաց իբրև լուան զպարտումն զօրացն արքունի ի Ծանարացն՝ ի մի վայր եկեալ գունդ կազմեալ հետևազօրքն մարտակցօք հանդերձ խառնաղանջ ամբոխիւ՝ լինին թուեալ արք Տ – 304. Նա և բազմախոհեմն Կիւրոս Պարսիկ խաղայ գայ իւրովք հեծելազօր մարտակցովքն՝ գալ օգնել Տիգրանայ. – 62.

ՄԱՐՏԻՐՈՍԱԿԱՆ - Բայց ինձ ոչ դանդաղելի կամ պատկառելի կամ մեղանչելի է զուգակշիռ նահատակելոցն նահատակակից վարկանել զսա և մարտիրոսականաւն զսորայս դրուատել ճգնողական մրցմունս – 300. Բայց սպարապետն Սմբատ և տիկինն Վասպուրական Հռիփսիմէ անդէն մնաց, և յաւելան ի մարտիրոսական հոլովսն: - 324. գոհացող համբերութեամբ ընդունի զվճիռ մարտիրոսական: - 102. Եւ բազում այն էր որ

մարտիրոսական ճգնութեամբ վկայեցին, քան որք դրդուեցան, առ ոչինչ համարելով զյափշտակութիւն ընչից և ստացուածոց և զմահս դառնագոյնս: - 124. և ընկալան զվճիռ մարտիրոսական և կատարեցան վկայութեամբ ի փառս սուրբ Երրորդութեանն – 222. և թէ մեռանիլ ևս ունիք հասցէ՝ ի պարծանս անձին և ազգին իւրոյ համարեալ է, և պսակ մարտիրոսական ընկալցի ի Քրիստոսէ. – 276. և ինքն վիրաւորեալ սրով մեռանի ի գեօղն Գիւղիկ ի ճուաշ գաւառի, մարտիրոսական հասեալ նահատակութեան, ի վերայ խաշանցն Քրիստոսի տուեալ զանձն ի մահ: - 402. և կէսք ընկալան զճգնութիւն մարտիրոսական մահու - 222. և նոքա կային մեծաւ ուժով և գոհանային զանբաւ և զառատաշնորհ պարգևացն Քրիստոսի, որ արժանի արար զնոսա մեռանել վասն անուանն Քրիստոսի և առնուլ զմարտիրոսական պսակն: - 292. Եւ սոցա այսպէս նահատակեալ կատարեցան վկայութեամբ ի փառս Աստուծոյ, և զմարտիրոսական անուն ժառանգեցին ի Քրիստոս ի պատիւ ամենասուրբ Երրորդութեանն: - 266. զի անսայթաք և աներկբայ հաստատուն հաւատով ընկալցին զվճիռ մարտիրոսական, համբերութեամբ բազմաւ և գոհացողական օրհնութեամբ – 266. մարտիրոսական հանդիսիւ ամբողջ զխոստովանողականն բերելով զանուն – 324. յորոց և զկատարումն մարտիրոսական ի նոցունց բարբարոսաց ընկալաւ սուրբն Գրիգորիս ի Վատնիանեայն դաշտին: - 274. որոյ զպատասխանիսն դարձուցեալ լի քաջալերական խրատու յորդորմամբ մարտիրոսական ակնկալութեան պսակաց – 400. Սա առաջին գտաւ պտուղ մարտիրոսական ի մեծ վտանգի նեղութեանն, որ եհաս ի վերայ բոլոր Հայաստանեայցս: - 206.

ՄԱՐՏԻՐՈՍԱՆԱԼ - որք լեալ էին յաշակերտութենէ Ղևոնդ քահանայի, որ ի Պարսսն մարտիրոսացաւ ընդ այլ սուրբ եպիսկոպոսսն և քահանայսն: - 74.

ՄԱՐՏԻՐՈՍՈՒԹԻՆ - և ընկալեալ զվճիռ մարտիրոսութեան կատարի ի փառս սուրբ Երրորդութեանն – 104. Նորա զչարեալ ընդ հասանել պատգամին՝ առ զայրուցս բարկութեան քինահանութիւն վրէժխնդրութեան արարեալ՝ ի բաց եհան ի գրոցն պատմութենէ՝ որ ինչ վասն տանն Արծրունեաց էր գործոց հանգամանք, և որ ինչ օրինակ մարտիրոսութեան Վահանայ Արծրունոյ: - 130.

ՄԱՐՏՆՉԵԼ/ԻԼ/ - Այլ ներքին և արտաքին յարձակմունքն ոչ կարէին ի ներքս դիմել մարտնչել ընդ անյաղթ զօրութեան զօրացելոյն ի Քրիստոսէ: - 308. միթէ զծով իբրև զցամաք համարիցիք, մարտնչել ի սմա ընդ մեզ. – 144. ,,Ես այսպէս կարծէի, թէ յորժամ ես ընդ թշնամիս ձեր մարտնչիմ՝ դուք յայդմ կողմանէ օգնական ինձ լինիցիք, և միաբանութեամբ բարձցուք ի միջոյ զտիեզերական պատուհասն, զտունդ Սասանայ: - 138. ,,զգոյշ լեր, արիաբար մարտեաց, քաջապէս վառեաց, Քրիստոսի զինուորեաց: - 318. Բայց տէր Ապուջափր և որ ընդ նմա՝ քաջապէս մարտեան ընդ այլազգիսն և առին: - 306. սա էր այր ժանտ, և մոլեկան հոգւով շարժեցեալ՝ բազում չարիք մարտնչէր ընդ ազգն քրիստոնէիցն. – 168. ,,հապա, քաջք, վառեալ ի զէն և յասպազէն, արիաբար մարտիցուք. – 134.

ՄԱՐՏՈՒՑԵԱԼ - ընդդէմ արաբացի ասպատակողացն յարիւն և յապաժոյժ ի վերայ հայրենի աշխարհի մարտուցեալ և զհոգի և զմարմին փոխանակ սրբոց եկեղեցեաց Քրիստոսի և ի նոյն հաւատացելոց ի Հայր և յՈրդի և ի Հոգին սուրբ, առ զնոսա ամբողջ և անբիծ պահելոյ – 300. ճակատ առ ճակատու ձգին խումբ և անհնարին խառնուրդ. և մարտուցեալ ընդ միմեանս յայգուէ մինչև ընդ երեկս քաջապէս - 140. Քաջապէս մարտուցեալ Գուրգէն եղբայր իշխանին և Վահան Հաւնունի՝ առին անուն յաղթութեան, անցուցանելով ընդ սուր զկողմն թշնամեացն. – 178.

ՄԱՐՔ - Այլ սա ի վեց ամին լքեալ ի Կիւրոսէ, և աստ անկեալ կենօք շրջէր մինչև իսպառ բարձաւ թագաւորութիւնն Ասորեստանեայց և Մարաց ի Կիւրոսէ որ թագաւոր …<այստեղ նախադասությունը չի ավարտված>: - 62. բայց ի գնալն աստի ի Մարս և ի Պարսս, դարձեալ դառնայ ուժով մեծաւ և թագաւորական ճոխութեամբ, տիրէ Հայոց մեծաց - 88. գրէթէ անցուցանէր զանցուցանէր զքաջութեամբքն Արշակայ Պարթևի, ընդ քաջացն Քուշանաց, Մարաց և Ելիմացւոց. – 72. երթեալ տուայտի ի դրան Մարաց Դարէհի, մինչ

զգալ վասն նորա Երուանդայ. – 84. և զԲէղէսիոս՝ իշխան /58/ Բաբելոնի կացուցեալ, ինքն զարքունիսն յայնմ հետէ ի Մարս փոփոխէ - 60. և ինքն Ատոմ հատեալ գնայ ի կողմն Մարաց: - 114. և մեռանի անձամբ ընդ այլ շղոմարարսն յաշխարհին Մարաց ի Բակուրակերտ աւանի: - 92. և Սահակայ յղեալ առ Սմբատ՝ մի կալ մնալ ի լերինն, այլ փութալ ելանել դառնալ անդրէն ի հետևի զօրս անդ զի ոչ ելանէ, ասէ, Երուանդ զօրու ի սահմանս Մարաց. – 84. Իսկ յետ Կ ամի անցանելոյ Աղէքսանդրի և անիշխանութեանն Հայոց և Պարսից՝ թագաւորէ Արշակ Քաջ Մարաց և Պարսից և Եգիպտացւոց և Ելիմացւոց ի Բախլ քաղաքի. – 72. Իսկ Սահակ որդի Վաչէի խոյս տուեալ գնայ զկողմամբքն Մարաց, ընդ կողմն Ատրպատականի – 82. միանգամայն և միահաղոյն որոշել զՊարս և Մարս ի Բաբելացւոց – 46. մինչև միահաղոյն զօրսն Աշդահակայ վատնեալ սուսերաւ՝ տիրէ Մարաց և Պարսից: - 64. Յայնժամ հրովարտակս արարեալ, պնդադեսպանս արձակեալ ընդ ամենայն սահմանս իւրոյ տէրութեանն … Թուրքաստանի և Խուժաստանի, Մարաց և Իլամացւոց – 198. որով տաղտկացեալ ի նմանէ բազմութիւն զօրացն՝ արարին լինել նմա պատերազմակուր ի Վարբակայ և ի Բէզոսէ Մարաց զօրագլխէ – 58. Պատերազմ յուզեալ Աշդահակայ Մարաց թագաւորի ընդ մեծին Տիգրանայ Հայկազնոյ – 62. սա իսպառ գերեաց զտասն…<հազար մարդու> <խաղա>ցուցանելով ի լերինս Մարաց և եբարձ զթագաւորութիւնն … որ և տևեաց ամս ՄԾ: - 60. սագունակ հասեալ ի վերայ Վասպուրական աշխարհիս պարսկական խուժանն ըստ ազգս ազգս և ըստ քաղաքս քաղաքս ի Մարաց և ի Պարսից, յԵլամացւոց և ի Խուժաստանէ, ի Կրմանայ և ի Մուկանաց, ի Թուրքաստանէ և ի Խորասանայ, և յեղակարծում հասին ի Ճուաշն գաւառ – 398.

ՄԱԻԻ - /թագաւորեաց/ Մալի ամս Ի և ամիս Գ և աւուրս ինչ … Յեզիտ որդի Մաւեայ ամս Գ և ամիս Գ … - 166. Եւ էր պատերազմ սաստիկ ի մէջ Ալեայ Որդւոյ Ապուտալպի և Մաւեայ ամս Ե և ամիս Գ: - 166.

ՄԱԻՏԱՆԷՍ – Եւ արդ են մի ըստ միոջէ թագաւորք Ասորեստանեայց այսոքիկ … Միթրէոս ամս ԻԷ: Մաւտանէս ամս ԼԱ… Տևտեսայ ամս Խ: – 58.

ՄԱԻՐԻՆ - Եւ այն ինչ պատահեալ Գուրգէն հարուստ գնդի Վահանայ ի յառուամէջս մուրին՝ /հավանաբար պետք է լինի մաւրին/ ի բազում քան թէ սակաւ սուսերս ծեծեցին զնա, մինչև ոմն Ջուանշէր անուն յետուստ յանկարծ հարեալ վիրաւորեաց զԳուրգէն – 310. Տե՛ս ՄՕՐԻՆ

ՄԱԻՐ ՄԵԾ /ՄԵԾԱՄՕՐ/ - Եւ քանզի էին բանակեալ ի խառնուրդս Երասխայ և Մաւրին մեծի՝ պատահի յառաջ Շաւասպ Արծրունի – 126.

ՄԱՔԱԶԻՍ - Եւ արդ են մի ըստ միոջէ թագաւորք Ասորեստանեայց այսոքիկ … Մամիզոս ամս Լ … Մաքազիս ամս Լ … Զփերոս, ամս Ի… - 56.

ՄԱՔԱՅ - Յայնմ ժամանակի էին եղբարք բռնակալք ոմանք ի կողմանս ապառաժ Արաբիոյ ի տեղւոջն Փառան որ այժմ կոչի Մաքայ, արք պատերազմողք /156/ զօրագլուխք, պաշտօնատարք մեհենին Ամովնացւոց պատկերին, որ կոչի Սամամ և Քաբար: - 158.

ՄԱՔԱՌՈՒՄՆ - Եւ ի բազում յուզիցն և ի խնդրոցն և զօրաժողովն լինելոյ և պատերազմ ընդդէմ վառելոյ և զձև ամրական մաքառմանցն յարդարելոյ և բռնալիր ուժեղագոյն մեքենային բախմանց քարձգութեանցն, զոր և ընդունայն աշխատութեամբ վարանեալ, անըստնանելի /հավանաբար՝ անստանալի/ մնալով ամրոցին՝ դառնայ յիւր իշխանութիւնն: - 326. Իսկ թագաւորն իբրև գիտաց զընդխառնել ընդ միմեանս զօրացն, կամեցաւ մի՞թէ արդեօք կարասցէ դադարեցուցանել զմաքառումն. – 368. ՎԱՍՆ ՄԱՔԱՌՄԱՆ ԱՇՈՏ ԻՇԽԱՆԻ ԸՆԴ ՈՒԹՄԱՆԻԿՍՆ ԵՒ ՏԵՂԱԹԱՓՍ ԱՌՆԵԼՈՅ ՋՅԱՓՇՏԱԿԵԱԼՍՆ Ի ՆՈՅԱՆԷ: - 332.

ՄԱՔՈՒՐ - Եւ հրամայեաց աճել ոսկերիչ և նորոգեալ նորացոյց զանյաղթ փայտ խաչին Քրիստոսի, մատուցեալ զբեկորսն առ իւրաքանչիւր յօդս, պատեալ մաքուր արծաթով վայելչագոյն քան զառաջինն, ի պարծանս քրիստոնէից և յամօթ և ի նախատինս թշնամեաց խաչին Քրիստոսի: - 378. Եւ մեք հետևեալ Աստուածաչունչ գրոց՝ պահեսցուք

անբիծ զհաւատս սրտից, և մաքուր զխոստովանութիւն շրթանց, ըստ սրբոյն Պօղոսի վերաբերեալ զօրինականն – 258. զի պայծառ սուրբ և մաքուր ոսկին յիւրումն կտակագրի պատկեր աստուածորդւոյն: - 252. զշրթունս մեր մաքրեսցուք ի մաքուր խոստովանութիւն հպելով և զմիտս մեր սուրբ պահելով ի հաւատս ճշմարիտս. – 256. Նա և ջուր մաքուր յապակի զուտ և վճիտ արկեալ, ի տապ արեգականն դնելով, և զնիւթ հրոյն առ ընթեր՝ ի շողոյ անտի արևակէզ եղեալ տոչորի նիւթն: - 52.

ՄԱՔՍԱԻՈՐ - զառհաւատչեայսն առաջաբերելով ի փոքր ժամանակի զմեծամեծսն կշռեալ, զպոռնիկն, զմաքսաւորն, զաւազակն և որք այսպիսիք – 386. յուսացեալ ի մարդասիրութիւնն Քրիստոսի, զմաքսաւորին և զաւազակին զյետնորդսն բարբառեալ, և զփրկական մարմին և արիւն որդւոյն Աստուծոյ հայցեալ հաւատով ի թողութիւն մեղաց, յուսացեալ ի քաղցրութիւնն Աստուծոյ: - 336.

ՄԱՔՐԱՓԱՅԼ - զսեղանս խորհրդականս փրկագործութեանն յատակել, հիմն ի վեր /գրքում՝ վերայ/ տապալել զաւազանն մաքրափայլ լուսաւորութեանն Հոգւոյն սրբոյ - 124.

ՄԱՔՐԵԼ - զշրթունս մեր մաքրեսցուք ի մաքուր խոստովանութիւն հպելով և զմիտս մեր սուրբ պահելով ի հաւատս ճշմարիտս. – 256.

ՄԵ - Եւ Սէթ լեալ ամաց ՄԵ ծնանի զԵնովս. – 26.

ՄԵԴԱՑԻՔ, ՄԵԴԻԱՑԻՔ - Եւ զԶրադաշտ մոգ արքայ Բակտրիացւոց և Մեդաց ընկճեալ հալածեաց մինչև ի սահմանս Խեփտաղաց, հզօրապէս տիրեալ բովանդակ Խուժաստանի և կողմանց արևելից և Պարսից, անդր ևս քան զԲահիխ և զԴեպուհան , ի Գովմայիդ և ի Գուզբան, ի Շերիբամական /գրքում՝ Շերիբամամական/ և ի Խոճիհրաստան, և միանգամայն ասել մինչև ի ծովն Հնդկաց՝ յոյժ արութեամբ – 44. Եւ վազս առեալ փութացան մտին ընդ կողմն Մականայ, բանակեցան ի դաշտավայրին Մեդիացւոց – 62.

ՄԵԺԵԺ - նոցա հանեալ էր ի Գինունի ազգէն, ի զարմէ Մեժեժի Գնունոյ, ի Վասպուրական բաժնէ, նաև Բերկրի բաժին եղեալ էր Վասպուրականի. և դարձուցանէ անդէն առ բերկրացիսն – 382.

ՄԵԺԵԺ ԳՆՈՒՆԻ - նոցա հանեալ էր ի Գինունի ազգէն, ի զարմէ Մեժեժի Գնունոյ, ի Վասպուրական բաժնէ, նաև Բերկրի բաժին եղեալ էր Վասպուրականի. և դարձուցանէ անդէն առ բերկրացիսն – 382.

ՄԵՕ - և անդ զբարիոք պատերազմն պատերազմեալ ի մեծ անապատին յԱպար աշխարհին, և որ ինչ այլն ամենայն. – 128. ,,Աստուծոց պատուական և ամենայն թագաւորաց, տէր երկրի և ծովու, ծնունդ մեծին Արամազդայ Խոսրով թագաւոր. առ Հայրակղոս անմիտ և առ անպիտան ծառայ մեր: - 146. ,,Թագաւոր մեծ, իշխան ծովու և ցամաքի, տո՛ւր ինձ զօր յօգնականութիւն և հաստատեա՛ զիս ի տեղի թագաւորութեան հարց իմոց – 136. ,,Միայն ի բաց լեր, ասէ, ի հաւատոցն Քրիստոսի, հնազանդեալ ընդ ձեռամբ մեծ թագաւորին – 204. այլ փոխանակ սոցա մատեայ ի տեղիս յայս, ձեռն արկեալ անիմաստաբար լի անհմտութեամբ և անհանճարութեամբ բուռն հարկանելով զմեծ զայս քերթուածութենէ: - 122. այն ինչ արծարծեալ առ նորոգումն շինութեան եկեղեցւոյ Քրիստոսի ի կործանմանէ հինի յետ մեծ պատերազմին սրբոյն Վարդանայ. – 134. Այսր աղագաւ արտաքս վազեցի զմեծս զայս բանգտութեան ընթանալ ասպարէզ, զօրաւորաց մտահարուստ արանց կարօտացեալ բաւականանալ իմով անհեդեդ պատմողական հանդիսիւ – 352. Անդ Բաբգեան և ասպետն մեծ Աշոտ նիզակակիցք միմեանց զերծեալ ի մեծ պատերազմէն՝ փութանակի մտին յաշխարհս Հայոց – 92. Անդ Բաբգեան և ասպետն մեծ Աշոտ նիզակակիցք միմեանց զերծեալ ի մեծ պատերազմէն՝ փութանակի մտին յաշխարհս Հայոց – 92. Ապա բարեկամացեալ ընդ Աբգարու թագաւորի Հայոց և ընդ մեծ զօրավարին Խուրանայ Արծրունւոյ՝ յղէ նմա պատարագս և առնու յօգնականութիւն զԽուրէն Արծրունի, զայր իմաստուն և քաջամարտիկ, կորովի յաղեղն և ի զէն և յասպազէն. - 78. Բայց աղերսեալ թագաւորն զարս պատուականս, զՎասակ և զՏաճատ և զԳոտեր, որք էին ի մեծ նախարարութենէ տանն Արծրունեաց՝ զի զժողովն ընկալցին ընդ երից սուրբ ժողովոցն: - 132. Բայց հրաման քո ճոխութեանդ ձգեաց զիս յայս մեծ ձեռնարկութիւնս,

սակս որոյ բացաձգեցայց արտաքոյ շաղակրատոյ լեզուաց փառամոլ ոգոց: - 122. Բայց ի գնալ մեծ հազարապետին յարքունիս՝ հաւատաց զվերակացութիւնն աշխարհիս Հայոց և հարկս արքունի ի ձեռս Մուսէի ումեմն որդւոյ Զօրահայի հազարացւոյ – 172. Բայց իբրև ետես բռնաւորն զանդառնալի միտսն և զաներկբայութիւն հաւատոցն և զաներկիւղ և զյանդուգն պատասխանիսն և զմեծ անարգութիւնն զոր հասոյց ի վերայ նորա և նոցին օրէնսդրին…բարկացեալ յոյժ հրաման ետ փութով զրաւ առնել կենաց նորա: - 206. Բայց իբրև եղև մեծ պատերազմ սրբոյն Վարդանայ ընդ Մշկանին և ընդ զօրս Պարսից ի յԱւարայրեան դաշտին, յԱրտազական գաւառին. – 128. Բայց հասեալ Բուխայ անց ընդ գետն մեծ զոր Կուրն կոչեն, և յորձանուտ շարժման գարնանային հոսանացն տեղի տուեալ ելանել զօրուն և բնակել շուրջ զքաղաքաւն. – 270. Բայց մի՛ ինձ բասրանս դիցես՝ զօրինականին առ աւետարանականս /378/ դնել համեմատութիւն, զոր և ոչ ես անգիտանամ զմեծն և զփոքրն, զօրինակն և զճշմարտութիւնն: - 380. Բայց ոչ միայն քաջքն Հայոց նահատակեցան ի մեծ պատերազմին այլ և անմարմին զօրք երկնաւորք մարտակից եղեն գնդին Հայոց. – 232. Բայց տուաւ յաղթութիւնն այն մեծ ի ձեռն զօրավարին Ապումուսէի, զի լցցի զոր ասաց Տէր ի բերանոյ Ամովսայ Մարգարէի, ,,խորտակեցից զնիզակս Դամասկոսի,, , որում այժմ Դմիշկն կոչեն, ուր ելին զհետ Բուխայի: - 286. Բանն զմեօք զանց առնէ. և ոչ վայելուչ է լռութեամբ և մոռացկոտ մտօք անփոյթ առնել զայնքան մեծիւ յաղթութեամբ, որ գործեցաւ ի ձեռն զօրացն Վասպուրական ազատանոյն: - 176. Գումարեցան ի միասին Հրէայքն հանդերձ Իսմայէլացովք և եղեն բանակ մեծ – 160. Դարձեալ վերստին հրճուանօք ոռոգեալ լինի պատմութեան աստ սակս բարձրագահ, համաթոռ, ճոխազգի ազգապետութեանն Արծրունեացս, /76/ մեծ զարմի Սենեքերիմայ ծննդոց. – 78. Ետ պատասխանի սուրբ հայրապետն Յոհաննէս հանդերձ մեծ նախարարօքն Հայոց և ասեն. – 244. Եւ արդ մեք, նահապետք ազատաց Վասպուրական իշխանիս՝ Մուշեղ ի ցեղէ Վահևունեաց, Վահրամ յազգէ Տրունեաց, Վահրամ միւս, որ ի թիկնապահ իշխանիս … գրեցաք առ քեզ Բուխայ գլուխ զօրավարաց Տաճկաց և բարձակից մեծ թագաւորին. – 212. և բռնութեամբ կալեալ զԲախլ և զամենայն երկիրն Քուշանաց, մինչև յայնկոյս գետոյն մեծի որ կոչի Վահոօտ. – 136. և զԽուրանն Արծրունի մեծ զօրավար արկեալ ընդ ուռկանաւ խարդախութեան, հետևել զկնի իւրոյ մոլորութեանն. – 80 Եւ մեծի փորձութեանցն հասելոց լինէր ի վերին հրամանէն հանդարտութիւն. - 404. Եւ սկսաւ ոգորել ընդ իշխանս Հայոց մեծաց խրոխտանօք – 128. և քարոզքն բարձրացուցանէին զերգսն մեծ և սաստիկ գոչմամբ, եթէ տուաւ իշխանութիւն Վասպուրական աշխարհին Աշոտոյ և որդւոյ իւրոյ Գրիգորի. – 314. Եւ այնչափ և առաւել քան զսոյն կազմութեան սպառազէն պատրաստութեանն՝ սաստիկ տարակուսանօք և մեծ երկիւղիւ պակչէին յահէ հայկասիրտ իշխանին և յաղթող նահատակին մեր Աշոտոյ –210. Եւ արարին նաւակատիս մեծ հարսանեաց փեսայութեան Դերանկին, ի թուականութեան Հայոց ՅԺԱ-երորդ ամին: - 322. և Արշէզայ շուրջ փակեալ վահանաւորօք զԼիդէացւոց թագաւորաւն, տագնապ մեծ լինէր. – 64. և գլխաւորք Հայոց մեծաց ամրանային ի քարանձաւս ամրաշէն բերդիցս, ըստ տեղիս տեղիս և ըստ աշխարհս աշխարհս. – 124. և գունդք ճակատելոցն ելին կացին մօտ առ քաջն մեր Աշոտ և ընտիր զօրավարն Հայոց առ մեծն իշխանաց: - 210. և դարձան կորակնեալք ամօթալից խայտառակեալք, լի ծանականօք և մեծ բեկմամբ: - 276. և դիմեալ ի Գանձակն Ատրպատականի՝ բրէ զնա, աւերէ զԱհմատան և զՄայ կործանէ և զբագինն հրատին մեծի, որում Վշնապն կոչեն – 148. և ելեալք ի վերայ Փառանու՝ արարին մեծ խորտակումն դիմադարձացն, սպանին և զԱպղջէհրն և զբազումս ի զօրէն Ամովնացւոց և Մովաբացւոց – 160. Եւ եղեալ պատերազմ մեծ Արշակայ և Խոսրովու յեզր ծովուն Գեղամայ ի մօրին տեղւոջ – 112. և եղեն բանակք մեծ ի գաւառին Զարևան: - 404. և եղև աղաղակ մեծ ի միջի նոցա և կռիւ այնքան, մինչև բազումք ի նոցանէ ի սուրս դիմեցին: - 160. և եղև իբրև զբլուր մի մեծ երկաթի, կամ զվէմ անդամանդեայ. – 284. Եւ եղև յետ մեծ պատերազմին, որ յառաջ քան զզրուցացդ գրելոյ ելին, ի գլուխս Մանազաւեան նահանգին և Յուշոյ դաշտին, և

զխոռվարարս քաղաքացն ի մի վայր գումարելոցն, որք և յունայն ասպատակէին աշխարհ – 398. և զազգատոհմ մեր ընդ մեծ նեղութեամբ պաշարէիք և աշխարհի մերոյ աւերիչք գտանէիք և հարկացն եդելոց խափանիչք լինէիք: - 244. Եւ էր ի մէջ Շապհոյ և Արշակայ պատերազմ մեծ զժամանակս կենաց Արշակայ: - 102. Եւ էր հակառակութիւն մեծ և պատերազմ Աբղլայի որդւոյ Զուբայրի ամս Բ և ամիսս Գ: - 166. Եւ էր նեղութիւն մեծ ընդ ամենայն երկիրս, որպիսի ոչ եղև ի սկզբանէ աշխարհի, և մի այլ լիցի. – 238. Եւ էր սէր դաշնաւորութեան մեծի ի մէջ երկոցունց թագաւորացն Պարսից և Յունաց: - 140. և ընդ մեծ պարսաւանօք ներքաղրեալ զբռնաւորն և զմոլար օրէնսդիրն իւրեանց զՄահումաթ: - 206. և ընկա՛լ օրէնս և հաւատս արժանի կենաց և գովութեան ի մեծ արքայէն և ի մեր իշխեցող հրամանակատար թագաւորին հնազանդութենէ: - 204. և ըստ խնդրելոյ աղերսանաց իշխանին և մեծ հայրապետին՝ զկատարումն առին ասացեալքն. – 348. և թէ նոքա յերիս կամ ի չորս կամ ևս աւելիս բաժանեալ օգնական առնիցեն իւրեանց զամուրսն՝ մեծ աշխատութիւն քեզ հասուցանիցեն, և ամենայն խորհրդոց քոց խափանիչք /212/ գտանիցին – 214. և թողեալ զբնակելն ի Դուինն՝ ելեալ բնակեցաւ ի Նոր քաղաքին ի մեծ եկեղեցւոջն որ յանուն սրբոյն Գրիգորի շինեալ էր երանելւոյ տեառն Ներսիսի երկրորդի Հայոց կաթողիկոսի: - 358 Եւ ժողովեալ աշխարհն Վասպուրական՝ զամիսս Ժ արարին կոծ մեծ ի վերայ նորա: - 354. և ի բաց լերուք ի սնոտի և ի մոլար պաշտամանէ ձերմէ, որ վասն Քրիստոսի էք կաշկանդեալ ի մեծ յամառութենանդ: - 244. Եւ ի ժամու մինչ ագևորեալքն կամէին մտանել զառաջեաւ … յայնժամ շուրջ կացեալ զվրանսն մեծ սպարապետին զկազմեալ գնդաւ վահանաւոր և նիզակաւոր ամրափակ պնդութեամբ, և մտեալ մատոյց զթուղթն, զոր էր գրեալ առ Յամանիկն ի քաղաքն Պարտաւ Ահմաթայ նենգութեամբ: - 344. և ի յանցին հրձիգ արար զմեծ եկեղեցին յաւանին Արտամետոյ: - 206. Եւ իբրև ընթերցաւ մեծ զօրավարն զծածուկս ազատանոյն՝ ետ պատասխանի, զոր և գրով իսկ աւանդեաց. – 214. Եւ ինքն Խուրան առեալ զմեծ մասն զօրուն գնաց ի Շաւարշան ի Սանատրուկ. – 80. և կային ի մեծ տարակուսի. – 276. և կայր աշխարհս ի մեծ վտանգաւոր աղէտս: - 126. և կայր երկիրն ի մեծ տարակուսի, լցեալ կասկածանօք չարեացն: - 398. և կարգեաց նմա ռոճիկս օր ըստ օրէ ըստ արժանի մեծ տիկնոջն Հռիփսիմեայ: - 226. Կաւատ արքայ հաստատեցաւ յաթոռ թագաւորութեան և արար խաղաղութիւն մեծ ընդ կայսեր և ընդ ամենայն երկիր իշխանութեան իւրոյ: - 152. և հայցէին յամենայաղթն Քրիստոսէ յաղթել մեծի պատերազմին - 250. Եւ հաւանեալ Խոռեմայ՝ եկն առ Հայրակղոս արքայ Յունաց, թողեալ ի նա զԵրուսաղէմ և զԿեսարիայ Պաղեստինացւոց և զամենայն կողմանս Անտիոքացոց և զամենայն քաղաքս գաւառացն այնոցիկ, և զՏարսոն Կիւլիկեցւոց և զմեծ մասն Հայոց և զամենայն զոր միանգամ կամեցաւ Հայրակղոս. – 152. և մեծաւ աշխատութեամբ և ի բազում ժամանակաց փոյթ յանձին կալեալ անդուլ զցայգ և զցերեկ ի մեծ տարակուսանս ըմբռնեալ կայր վարանեալ – 242. և մի եղիցի յիշատակ սորա ընդ սոցա, որք թէպէտ և վրիպեցին և կործանեցան՝ սակայն և ապաշաւեցին և կանգնեցան յետ դարձին իւրեանց ի մեծ կարաւանէ գերութեանն ի միջոյ ժանեաց բռնաւորին. – 248. և մի ի վերայ մեծ յանցանացն զոր յանցեար, որպէս լսեմդ զոր ինչ ամբաստանեն զքէն՝ յայդ ևս յաւելուր - 290 Եւ մինչդեռ կային կենդանի և գոհանային զՔրիստոսէ զանյաղթ զօրութենէն զոր զօրացոյց զսուրբսն մեծ ասպարիսի ի հոգևորական պատերազմին՝ևս առաւել բարկացեալ թագաւորն՝ իբրև զինոց վառեալ բորբոքէր. – 292. Եւ միջնորդէր նմա հետևել հաւատոյ առաջնոյ Իսրայէլականացն, „զի թէ յայս եկեսցես՝ իմով հրամանաւ եղիցիս զօրագլուխ մեծ և առաջնորդ ամենայն տոհմի քո„: - 158. Եւ յետ սակաւ աւուրց վախճան առեալ կենաց նորա, ձիոյ խրոխտացելոյ զանձն ամբերթեալ ելոյծ ի կենաց զքաջարանցն զմեծն տերանց զքաջ զօրավարն և զզօրագլուխն Հայոց մեծաց: - 364. Եւ յերկարեալ Աղան զողբսն, ջերմեռանդն յորդահոս արտասուաց բղխմունս առաջի սրբոյն Սահակայ և մեծ սպարապետին Սահակայ և այլոց նախարարացն. – 112. և յոգնեցան երկոքեան կողմանքն ի մեծ պատերազմին. – 140. և յոյժ հաւաստի և ընդունակ գոլ զառ ի բազմաց /244/ վկայութիւն ի վերայ մեծի և կամ փոքու

ինչ իրաց կամ ի վերայ կենաց և մահու. – 246. և նա ակն ունէր մեծ իշխանին մտանել առ նա – 344. Եւ նստէր անդ ի բացեայ ի վերայ բլրի միջոց տէր Մուշեղ որդի սպարապետին և կայր հիացեալ ահեղ և մեծ զարմացմամբ: - 284. և տաց քեզ զկողմանս Ասորոց և զամենայն Արեւաստան մինչև զՄծուին քաղաք, և ի յերկրէ Հայոց՝ զաշխարհս տանուտերական իշխանութեանն մինչև յԱյրարատ և ընդ Դուին քաղաք և յեզր ծովուն Բզնունեաց և ցԱռեստն աւան, և զմեծ մասն աշխարհին Վրաց մինչև ցՏփղիս քաղաք. – 136. և տիրէր յայնժամ մեծի կողմանն Աղուանից Ապումուսէ ոմն, որում վերծանութեանն յայտնութիւն՝ երիցու որդի ճանաչէր: - 276. և փութացոյց վասն նորա զի անյապաղ առ նա հասցէ, և ի մեծ պատիւս հիւպատութեան հասուսցէ զնա, և խաչանշան դրօշիւք ճոխասցի: - 316. Եւ քանդեն աւերեն զմեհեանն և յատակեալ զտեղին՝ շինեն նորին քարամբք զմեծ եկեղեցին զսուրբ Գրիգորն ի Բլուր տեղւոջն – 126. և քաջն Վահան Արծրունի ընդ նմա նիզակակցեալ՝ մեռանին ի միասին քաջքն և ընտիրքն, մեծ նահատակք Վարդան և Վահան – 128. Զայս և առաւել քան զսոյն խրատէր և ուսուցանէր սուրբ հայրապետն և քաջ հովիւն տէր Յոհաննէս կաթողիկոս Հայոց մեծաց: - 182. զի է անդ լիճ մի մեծ մօտ ի տեղին, որ էր տեղի ասպարիսի ճակատամարտ զօրու նահատակութեան քաջացն մերոց իշխանացն Վասպուրականի – 226. զի թէ ես յաղթեցից՝ երդուեալ ի մեծ աստուածն Որմազդ և յարեգակն և ի լուսին և ի հուր և ի ջուր և ի Միհր և յամենայն աստուածս՝ զի ձեզ տուեալ լիցի թագաւորութիւն Հայոց. – 138. զի լայնագոյնս ևս վասն այսորիկ պատմէ մեծ քերթողն Մովսէս – 42. զոր գործեաց ընդ սուրբսն Վրթանէս և Յուսիկ և ընդ քահանայն մեծ Դանիէլ – 98. զոր ետես ի մեծի հինգշաբաթոջն: - 120. զոր յիշեցաք վերագոյնն ընդ մեծ նախարարսն - 248. զոր շարագրեալ յայտարարութեամբ յանդիման կացուցաք քեզ, քա՛ջդ բանասիրաց, Գագիկ Վասպուրական և մեծ զօրավար Հայոց – 122. զոր վերագոյնն յիշեցաք յայլում վայրի ի մեծ պատերազմին ի սահմանս Աղձնեաց: - 400. Է՞ր աղագաւ կամ վասն ո՞յր պատճառանաց. զի ի քաջէն իմմէ և ի մեծ իշխանէն, ի քաջատոհմիկ և ի բարեփառ գլխոյն իմմէ զրկեալ լինիմ: - 384. էր ընդ իշխանսն և մեծ իշխանն Վասպուրական Աշոտ, որդի Դերանկին, և ընդ նմա Գրիգոր իշխանն Մոկաց և զօրքն Անձաւացեաց: - 380. էր ընդ մեծ նախարարսն երթեալ և Տիրոց - 94. Ընդ որում և մեծ իշխանն Արծրունեաց Խուրան և գլխապետ զօրավար զօրու, և միահեծան թագաւորութեան Հայոց մեծաց, որ առաջին ի Քրիստոս հաւատացեալ եղև իշխանս Խուրան և մկրտեալ ի ձեռաց Թադէոսի առաքելոյ. – 78. Ընդ որում և մեծ իշխանն Արծրունեաց Խուրան և գլխապետ զօրավար զօրու, և միահեծան թագաւորութեան Հայոց մեծաց, որ առաջին ի Քրիստոս հաւատացեալ եղև իշխանս Խուրան և մկրտեալ ի ձեռաց Թադէոսի առաքելոյ. – 78. ընդդէմ նայեցածն ունելով զմեծ լեառնն Մասիք կոչելով բարձրագագաթն ձիւնալիր սպիտակափառ – 86. թէպէտ և ոչ համարձակեաց զամենայն բառնալ, այլ յոյժ պատկառանօք ամաչեցեալ՝ լքաւ ի ստութենէ անտի, որ յանդիմանեցաւ ի թղթոյ կայսերն, և ի ձեռն այսորիկ ցուցանէր բարեմտութիւն մեծ առ ազգս /166/ քրիստոնէից. – 168. Ի ժամանակին յայնմիկ էր խռովութիւն մեծ ի մէջ Բագարատայ և Մուսէի: - 172. Ի նմին ժամու զգացեալ վասն նորա մեծ իշխանին Արծրունեաց Մերշապհոյ, որ յայնժամ ի Տմորեացն ամրանայր բերդի՝ յղէ առ նա ելանել գնալ ի սահմանացն յայնոցիկ. – 130. Ի սոյն աւուրս մեծ նեղութիւն եղև աշխարհիս Հայոց ի չարասէր կամաց նորա: - 166. իբրև ի մեծ և յանկասկածելի ամուր ապաւինեալ լինէին ի քաջ զօրավարն Գուրգէն և որք ընդ նմա զօրք Հայոց. – 226. Իբրև լուաւ Խոսրով արքայ զլուր համբաւոյն այնորիկ՝ շարժեցաւ ի բարկութիւն մեծ, լինել վրէժխնդիր արեանն Մուրկայ: - 140. Իբրև յանդիման եղեն դեսպանքն մեծ /172/ իշխանին Աշոտոյ, և ընթերցաւ զգիր պաղատանացն և զյիշատակարան նախնեացն, և զմերձաւորութիւն հարազատութեանն և զկապակցութիւն ուխտին … համագունդ ժողով առնէր ամենայն աշխարհին և ամենայն նախարարօք Վասպուրական տէրութեանն: -174. Իսկ որք էին արգելեալք ի քաղաքն աղօթականս և պաղատանս առ մեծ իշխանն Աշոտ յղէին, զի համոզեսցէ ի մէջ նոցա զխաղաղութիւն. – 382. Իսկ Բուխայի առեալ զբազմութիւն զօրացն

իւրոց՝ իջանէ ի դաշտն Գարգարացւոց, և երթեալ մտանէ ի քաղաքն մեծ Պարտաւ: - 276. Իսկ Գուրգինի մարզպանի Հայոց առեալ էր ի բաժնի յելս կոյս և /388/ որ ելանէ ի հարաւակողմն, զԱնձահից ձոր, զԿրճունիս, զԿուղան ովիտ, և զբուն զՄարդաստան գաւառ, զԱրճիշակովիտ, զոտն Առնոյ, զԱղբակ Մեծ և զՓոքր, Ակե, Տամբէր, Տագրեան. Ըռնայ, Զարեհաւան: - 390. Իսկ երիցս երանելի սուրբքն տէր Յոհաննէս Արծրունեաց եպիսկոպոս և երանելի քահանայն Գրիգոր և տէր Գրիգոր Արծրունի խրախուսեալք յԱստուած, կացեալ յատենի ի մեծ ասպարիսի հոգևորական պատերազմին – 250. Իսկ թագաւորն գրէ առ զօրավարն թերևս կարասցէ հաւանեցուցանել զԳուրգէն՝ երթալ ի թագաւորական քաղաքն առ կայսր, և մեծաց պարգևաց և պատուի և գահու յառաջագութեամբ ընկալցի պարգև ի թագաւորէն: - 302. Իսկ ի տանէն Արծրունեաց ընդ մեծ նախարարսն Հայոց մկրտեալ լինի Տիրոց որդի Բաբգէնի երկրորդի - 94. Իսկ նոքա թէպէտ և հաւանէին՝ այլ էր և հակառակութիւն մեծ ի մէջ նոցա. քանզի որոշեալ էին պաշտամամբ կռոց ըստ իւրաքանչիւր կամաց: - 156. Կինն դարձեալ ճիչ բարձեալ ասէ. ,,վասն իմ սպաներ զտէրն իմ. ես ոչ վայել եմ քեզ կին, այլ մեծի թագաւորին,,. – 272. մանաւանդ զի բարեպաշտութիւն մեծ համարիմ սատակել զթշնամիսդ Աստուծոյ, որպէս Մովսէս զԱմաղէկ, և Յեսու զՔանանացիսն, և Սամուէլ զԱգագ, և Դաւիթ զԳողիաթ, և համանգամայն իսկ որպէս սատակեցին Իսրայէլացիքն զայլազգիսն – 278. մանաւանդ մեծ կաթողիկոսն Հայոց Գէորգ պաղատանս առնէր առ Դերանիկն, զի ընդարձակեսցէ նմա: - 336. Մինչդեռ կայր ևս կենդանի՝ ետ կանգնել փայտ մի մեծ և բարձր յոյժ, և դնել զնա ի ծայր փայտին, ունել ի բարձրաւանդակ տեղւոջ. – 290. մինչև զայրանալ դահճացն, և խուռն ի վերայ դիմեալ ի մեծ հրապարակին՝ հարին սրով զերանելին և ի բաց առին զգլուխ նորա – 224. Նմանապէս, կամ թէ ևս հրաշափառագոյն զյաղթութեան մարտսն յօրինեալ յարդարեաց զպարտութիւն ի վերայ ազգին Իսմայէլի մեծ զօրավարն Գուրգէն, և իսպառ կանգնեաց զնշանակ յաղթութեան ամենևին ամենայն ուրեք ընդ ամենայն տեղիս. – 312. որ ունէին մարդկեղէն երեսս, և մեծ էին քան զհաւասն որ առ մեզ լինին - 50. որ էին ընդ նմա եկեալ ի գործ պատերազմաց ըստ հրամանի թագաւորին և մեծ զօրավարին – 224. որ կատարեցան միանգամայն սրով ի միում աւուր ի մեծի ուրբաթի զատկին: - 106. Պատմեաց զայս մեզ մեծ քահանայն Սամուէլ յաւանին Արտամետ. – 206. Սա առաջին գտաւ պտուղ մարտիրոսական ի մեծ վտանգի նեղութեանն, որ եհաս ի վերայ բոլոր Հայաստանեայցս: - 206. սա ել ի վերայ Հրէաստանի և մեծ մասն ժողովրդեանն գերեաց յԱսորեստան…/Յետ նորա թագաւորեաց/ Սաղմանասար. – 60. Սահակս այս այն Սահակ է, որոյ հրամանաւ գրեաց մեծ վարդապետն Մովսէս տիեզերահռչակեալ քերթողն զգիրս Պատմութեան Հայոց մեծաց, հրաշազան յօրինուածով, սկսեալ յԱդամայ մինչ ի կայսր Զենոն. – 122. Սահակս այս այն Սահակ է, որոյ հրամանաւ գրեաց մեծ վարդապետն Մովսէս տիեզերահռչակեալ քերթողն զգիրս Պատմութեան Հայոց մեծաց, հրաշազան յօրինուածով, սկսեալ յԱդամայ մինչ ի կայսր Զենոն. – 122. Սաստիկ և վտանգաւորք և լի դառնութեամբ որ ինչ ի ճառի աստ են յիշատակարանք, սակս յանձնառութեան մեծ նախարարացն և իշխանացն մերոց. – 240. սրբոյ Աւետարանին հետազօտեալ կրթականին՝ մի բազմել յառաջին բարձին, ոչ եթէ ոչ ունէր նազելի և բարձրագահ պատիւս ի մէջ մեծ նախարարութեանցն Հայոց – 94. քանզի ոչինչ վնաս գիտէին զանձանց և ոչ մի ինչ իրս մեծ կամ փոքր. – 98.

ՄԵԾ ԱՂԲԱԿ - Զուգակշիռ հաւասարութեամբ մարզպանն Հայոց Գուրգէն հրաշազան յօրինուածով շինէ զեկեղեցին ի քաղաքին Հադամակերտ ի Մեծն Աղբակ, ի բուն իշխանական սեփհականութեանն իշխանութեան զարմին Արծրունեաց – 396.

ՄԵԾ ՀԱՅՔ - բայց ի գնալն աստի ի Մարս և ի Պարսս, դարձեալ դառնայ ուժով մեծաւ և թագաւորական ճոխութեամբ, տիրէ Հայոց մեծաց - 88. - և զԳագիկ ձգեալ ի պատիւ զօրավարութեան Հայոց մեծաց, ըստ օրինի թագաւորացն Յունաց՝ տալ առաջի նորա նշանակս խաչադրօշս: - 370. և մկրտեալ սուրբ և անբիծ խոստովանութեամբ ի Հայր և յՈրդի և ի սուրբ Հոգին, ի ձեռն մեծին Գրիգորի հանդերձ ամենայն նախարարօքն Հայոց

մեծաց: - 94. ԵԻ ՀԱՍՏԱՏԵԼ ՅԱԹՈՌ ԹԱԳԱԻՈՐՈԻԹԵԱՆՆ ՀԱՅՈՑ ՄԵԾԱՑ ՕԳՆԱԿԱՆՈԻԹԵԱՄԲ ԹԱԳԱԻՈՐԻՆ ՅՈԻՆԱՑ - 94. Եւ յետ սակաւ աւուրց վախճան առեալ կենաց նորա, ձիոյ խրոխտացելոյ զանձն ամբերթեալ ելոյծ ի կենաց զքաջարանցն զմեծն տերանց զքաջ զօրավարն և զզօրագլուխն Հայոց մեծաց: - 364.

ՄԵԾԱԳԱՆՁ - Ձոր հրաշազարդեալ մեծագանձ սպասիւք, ոսկեկերտ խաչադրօշեալ ընդելուզեալ մարգարտով և ակամբք պատուականօք հրաշագործեալ: - 396. շինեալ նորոգեաց և զեկեղեցին որ ի նմա յանուանակոչութիւն սուրբ Աստուածածնին Մարիամայ և զարդարեաց զնա մեծագանձ սպասուք և եդ ի նմա զԽաչն, զոր յիշեցաք վերագոյնն, յորոյ ձեռն ծանուցաւ զօրութիւնն հրաշագործ: - 390.

ՄԵԾԱԳՆԻ - և էր գրեալ ի նմա թողութիւն վնասուցն և հարուածոցն զօրացն և բազում աւարացն, և երդումն ի հաստատութիւն ասացելոցն, և պարգևս ի պատուական և մեծագնի հանդերձից, և սաղաւարտ ծաղկեայ և սուսեր. – 288.

ՄԵԾԱՁԱՐԴ - Եւ զգեցոյց նոցա հանդերձս և կանգնեաց նշանակ իշխանական և էած սուսեր ընդ մէջ և կամար ականակապ և երիվար ընտիր մեծազարդ. – 314. և ետ տանել ընդ առաջ նորա նժոյգս մեծազարդս և երևելիս, և երգեցիկս և գովասացս և բազում գործիս երաժշտականս առաջի և զկնի՝ մինչև եմուտ ի բանակ նոցա: - 288. և սուսեր ընդ մէջ ածեալ, և հեծուցեալ ի մեծազարդ ջորւոջ, և նժոյգս առաջի և զկնի ի զարդ և ի զէն սպառազինեալ և ձայնք փողոց և դոփիւնք թմբկաց և այլ երաժշտական գործոց հնչեցուցանէին շուրջանակի. – 236.

ՄԵԾԱՁԱԻՐ - Եւ զլեզուդ պղծութեամբ զոր սրէիր ի վերայ մեծազաւր թագաւորին՝ արդ նոր և զարմանալի վիրաւք դատեսցէ զքեզ քան զամենայն տիեզերս: - 164. Հասեալ կայիք յանդիման մեծազաւրին Աստուծոյ: - 164.

ՄԵԾԱԿԱԿԱՆ - զվայն և զեղուկն անյարմար հառաչմամբ, մեծակական ողբովք առ Քրիստոս ամբառնալով: - 386.

ՄԵԾԱՄԵԾ/գ.ա./ - Ապա առեալ հրաման մեծամեծացն մեր Արծրունեացն՝ գրեն առ Աբրահամ Մամիկոնէից եպիսկոպոս … և ծանուցանեն նմա զոր խնդրէ արքայ: - 132. առաջի տեսանելով զկապուտակ ծիրանափայլ դաշտաձև ծովն. դաստակերտս մեծամեծս շուրջ զեզերբն անտառախիտ ծառովք և գիւներբեր որթովք և զանազան պտղովք. – 86. Առաքեցին առ Մուրիկ թագաւորն արս ճոխս մեծամեծ ընծայիւք և պատարագօք և թուղթ գրեալ ի բերանոյ Խոսրովայ զայս ինչ. – 136. Արդ ի գալ միւսոյ ամին որ յորելեանք Ջ և ոլըմպիատք ՀԲ, ընդիքտիոնք Ի … աներկբայ խորհուրդ ի մէջ առեալ թագաւորն սինկղիտոսօքն հանդերձ և ամենայն մեծամեծօքն Բաբելացւոց , զի զիշխանս աշխարհին Հայոց ի բաց բարձցէ յիւրաքանչիւր տէրութենէ – 184. ելցեն ի քեզ փայտահարք բազումք և կոտորեսցեն զմայրս քո մեծամեծս և զմատաղատունկս բարձունս. – 148. Եւ ամբարձ զմիտս իւր ի հանդերձեալ գալուստն Քրիստոսի, և որ յայնժամ լինէին ահեղ որոտմունք և թնդիւնք և հրձգութիւնք և արհաւիրք մեծամեծք յերկնից և յերկրէ – 284. Եւ առեալ Հայրակղի զհրովարտակն՝ հրամայեաց ընթեռնուլ առաջի հայրապետին և ամենայն մեծամեծացն. – 146. Եւ եթէ քաղաքս խնդրիցէ՝ ահաւադիկ է քաղաքք մեծամեծք և պարսպաւորք. այլ զանձս խնդրիցէ՝ ասացի թէ տաց որչափ և ձեռն հասանիցէ. և ոչ կամեցաւ լսել, այլ տակաւին ծարաւի է արիւնարբութեան: - 144. Եւ թագաւորեաց կայսր Թէոդոս փոխանակ Պապայ զՎարազդատ ոմն յԱրշակունի տոհմէ, այր քաջ և պատերազմող, ահարկու մեծամեծաց և փոքունց. – 108. Եւ ժողովեալ զբազմութիւն զօրաց իւրոց՝ առնէր վնասս մեծամեծս և սաստիկս ի բաժնին Յունաց: - 140. Եւ կացեալ անդ մինչ ի ժամանակս առաջինն Ղևոնի կայսեր՝ մեռանի անդ Վասակ և Տաճատ և փոխին ի հանգիստ փառաւորապէս ի գերեզմանս մեծամեծացն Յունաց: - 132. և հարան զօրքն արքունի ի հարուածս մեծամեծս և դարձան փախստական ի բանակն իւրեանց և մտին յապարանսն զոր շինեալ էին. – 282. հարան զօրքն Գաղատացւոց, ի մեծամեծաց մինչև ի փոքունս նոցա, և ոչ մնաց ի նոցանէ և ոչ մի: - 66. և հարան ի հարուածս մեծամեծս զօրք նորա -176. Եւ յելանելն նորա և մօտ լինել ի սահմանս Հայոց զօրօք

բազմօք, մերձ ի սահմանս Տարունոյ, Առաջին կոչեցեալ Հայոց՝ իշխան Տարունոյ Բագարատ … առաքէ զոմանս ի մեծամեծաց իւրոց ընդ առաջ նորա պատարագօք ոսկոյ և արծաթոյ և պատուական հանդերձից, համոզեալ մի ելանել յերկիրս Հայոց: - 170. և նովաւ վճարիցեն զի՛նչ պէտ և լինիցին ումեք ի մեծամեծաց մինչ ի փոքունս նոցա. – 82. և ոչ ոք ամենևին իշխէր ելանել արտաքոյ կամաց ձեռին նորա ի մեծամեծաց մինչև ի փոքունս. – 200. և պարգևս և պատիւս մեծամեծս հրամայէ բերել առաջի – 204. և տայր զօրավարին և իշխանացն ամենեցուն պարգևս մեծամեծս, և բաշխէր զօրացն ամենեցուն դահեկանս ի խոռկս, և ճաշս և ընթրիսս ուրախութեան կազմէր ամենայն զօրացն մինչև Է օր: - 144. զոր առաջնոցն մատենագրեալ դրոշմեալ կայ ի գիրս ընդ ժամանակս ժամանակս սոցա քաջարութիւնք և արժանաւորք յոլովագունի և մեծամեծաց գովութեանց: - 96. Ի դառնալն Բուխայի յարքունիսն, և կայր զյօնսն պռզտեալ, փքացեալ լի ամբարտաւանութեամբ՝ կոկոզաբանէր ի վերայ մեծամեծ գործոցն գործելոց – 326. Իբրև ետես կայսր Հայրակղէս զչարիսն ամենայն, որ եկին հասին ի վերայ նորա՝ ակամայ կամեցեալ ցուցանել բարեկամութիւն՝ ել ընդ առաջ նոցա, մեծարել իբրև զվաստակեալս և զհիւրս, ընկալաւ զնոսա մեծամեծ /142/ ընծայիւք. – 144. Իսկ Ապումուսէ վառեալ և զինեալ զինքն ամենայն զօրութեամբ իւրով՝ խաղաց էջ ի վերայ նոցա և եհար ի հարուածս մեծամեծս – 280. Իսկ սրբոյն Ներսէսի իրազէկ եղեալ չարին չարաբարոյ չարախորհրդութեանն՝ անէծս մեծամեծս և ազդոյս և զօրաւորս դնէ ի վերայ Մարդպետին – 100. մինչև եկին հասին ի վերայ մեր մեծամեծ չարիքս այսոքիկ և անկանգնելի գլորումնս – 182. Յայնժամ դարձեալ ի խորհուրդ եմուտ թագաւորն հանդերձ մեծամեծօքն իւրոյ տէրութեանն, տեսանել զանվրէպ և զանսխալ իմացումն կատարածի ի վերայ աշխարհիս Հայոց: - 196. Սոյնպէս և այրն այն Յովսէփ զօրավարն Տաճկաց մնայր անցանել ձմերանն, զի ելցէ ի վերայ աշխարհիս Հայոց սրով և գերութեամբ և մեծամեծ հարուածովք և զմեծամեծս աշխարհիս խաղացուցանէ ի գերութիւն – 188. ,,որովհետև գտի շնորհս առաջի քո, և արարեր մեծարանս երեսաց իմոց, և առաւել քան զամենայն իշխանս Հայաստանեայց և մեծամեծս արքունի զիս նախամեծար և մեծարգի ցուցեր – 218. Եւ ամենայն մեծամեծքն հանդերձ խառնաղանճ /240/ ամբոխիւն դռոթ տուեալ, ոչ միայն ըստ հրամանի թագաւորին ելանել զհետ աղաղակի փողոյն և արքունի կոչնականացն՝ այլ փութացան տեսանել, թէ ո՛վ ոք և ո՛րպիսիք են սոքա – 242. և բարձակից լինել մեծամեծացն արքայի ի գլխաւոր բազմականի անդ, յորժամ ատեանն արքունական յարդարիցի: - 204. Եւ եղև իբրև արար և կատարեաց Բուխայ զոր ինչ խորհեալն էր ի վերայ աշխարհիս Հայոց, բարձումն յաշխարհէս մեծամեծացն Հայոց՝ յաւել և զայս ևս – 296. զի ամենայն մեծամեծք քաղաքին և գլխաւորք և իշխանք յարքունի նախարարութենէն անդ գումարեսցին – 240. Զկնի այսորիկ մեկնեաց Բուխայ յինքենէ արս զօրաւորս յամենայն ազգաց և յամենայն մեծամեծաց և ամենայն աշխարհակալաց, և ի Պարսից և յԵլիմացւոց և ի Բաբելացւոց և յԱրաբացւոց … արս աւելի քան ԺԵ հազարաց և եհան զնոսա զհետ Գուրգինայ – 224. զօր գումարել, այրուձի կազմել, մեծամեծաց աշխարհատերանց պարգևս տալ, ի թիկունս և յօգնութիւն զամենեսեան կոչել, զի ըստ յանձնառութեան խրատու նորա նոյնպէս և գործեսցէ: - 346. Իսկ նա անցեալ ի գաւառն Որսիրանից, և ընդ նմա բազմութիւն ազատաց և մեծամեծացն Արծրունեաց նախարարութեանց և ամենայն զօրաց նոցա – 224. Յայնժամ հրովարտակս արարեալ, պնդադեսպանս արձակեալ ընդ ամենայն սահմանս իւրոյ տէրութեանն … և մերձ ի սահմանս Սակաստանի՝ առ զօրս և զօրագլուխս, աշխարհակալս, գաւառապետս քաղաքայինս, հազարապետս կողմնակալս մեծամեծս աշխարհաց. – 198. քանզի յոյժ սիրեցեալ եղև ի զօրավարէն, և առաւել քան զամենայն մեծամեծսն ընդունէր պարգևս և պատիւս – 216. որ յանուն Փրկչին մերոյ շինեալ էր յիշխանէն Բագարատայ, ի ծախս մեծամեծ գանձուց իբրև Յ հազարաց: - 190. Սոյնպէս և այրն այն Յովսէփ զօրավարն Տաճկաց մնայր անցանել ձմերանն, զի ելցէ ի վերայ աշխարհիս Հայոց սրով և գերութեամբ և մեծամեծ հարուածովք և զմեծամեծս աշխարհիս խաղացուցանէ ի գերութիւն – 188.

բարիատեացն և չարասէրն Աւշին նիւթէր գայր ի վերայ Գուրգինի հասուցանել չարիս մեծամեծս – 370. եկեալ հասեալ վրէժխնդրութեան պատիժք, վասն անօրէնութեանց մերոց զոր գործէաք առ հասարակ ի փոքրկանց մինչև ցմեծամեծս. – 196 և յարգելուլ զնա մեծամեծաց նախարարացն՝ չանսաց բնաւ ումեք – 228. Եւ առնէր հարուածս մեծամեծս այլազգեացն. և սատակէր զնոսա սրով և աղեղամբ, և եբարձ զամենայն ազգս Տաճկաց, որ բնակեալ էին Վասպուրական տէրութեանն: - 306. և արիաբար հանդիսացեալ գնդին Հայոց՝ ճակատեցան ընդ այլազգիսն հարուստ և ձիգ ժամս և հարին ի հարուածս մեծամեծս զբանակ այլազգեացն: - 306. և եթէ յերկարիցի գործոյս այսորիկ հանդէս և մարտիցն հանգամանք ոչ փութանակի վարիցին՝ գուցէ օգնականութեամբ գիշերոյ եկեսցէ ի վերայ քո և մեծամեծ աւճիրս ի վերայ քո և զօրացդ արքունի հասուցանիցէ: - 212. և եհար սատակեաց Ապումկդէմ ի միում ասպատակի Ը այր, և զերիվարս նոցա, և զէնս և զզարդ մերկեաց ի նոցանէ, եհար զայլազգիսն ի հարուածս մեծամեծս և ինքն դարձեալ ասպատակեաց զկնի նոցա: - 304. և ետու ի ձեռս քո զզօրս իմ հանդերձ զօրագլխովք մեծամեծօք իմովք, յամենայն ազգաց որ ընդ ձեռամբ իմով նուաճեալ են թագաւորազունք – 236. և հարին ի հարուածս մեծամեծս զայլազգիսն. – 232. և տևեալ զաւուրս Խ՝ փոխի յաշխարհէս ամենեցուն պատկառելին, մանաւանդ թէ ընդհանուր ցանկալին և սիրելին ճոխից և անազգեաց, աղքատաց և փարթամաց, մեծամեծաց և փոքունց: - 384. և քաջալերեցան դարձեալ ի վերայ գնդին Հայոց, և հարեալ ի հարուածս մեծամեծս: -304. զի ուր և իցէ՝ ածցեն զնա առ նա, թէ՛ պատիր խաբէութեամբ և խորամանկ կեղծաւորութեամբ և խարդախութեամբ, կամ պատերազմաւ և մեծամեծ զօրութեամբ, ամենայն պատրաստութեամբ, արքունի կարողութեամբ, որպէս զիարդ և կարասցեն՝ առ նա հասուցանեն: - 224. ընդ ակամբ հայելով, թէ գուցէ ճողոպրեալ ելանիցէ ի ձեռաց մերոց, կամ ի գիշերամարտս յանկարծ հասանիցէ ի վերայ մեր մեծամեծ ոճիրս գործիցէ: - 202. Ընդ ժամանակսն ընդ այնոսիկ մինչ ճոխացեալ մեծամեծս փքայր Ջափրմոթոքլ ի վերայ քրիստոնէից, որպէս Սենեքէրիմ նախնին մեր ի վերայ Երուսաղէմի և ժողովրդեանն Իսրայէլի՝ յեղակարծում հասեալ ի վերայ նորա որդին իւր Մոթէին սպան զնա – 318. Իսկ աշխարհս ոգի առեալ բնակեցան խաղաղութեամբ իւրաքանչիւր ըստ չափոյ հասակի ի մեծամեծաց մինչ ի փոքունս, և գոհացեալ գթութեանցն Աստուծոյ. – 376. Որ զապիրատ և զլի հնարիւք սատանայական իմաստից, չարահնար խորհրդոց բուռն հարեալ՝ մեծամեծս փքայր փոնքտալով – 200. սա այն է, որ մինչ յելանելն Բուխայի ի սկզբանն մտանելոյ նորա ի Հայս՝ եկաց ընդդէմ նորա բնակչօք լերինն և հարուածս մեծամեծս հասոյց ի վերայ զօրացն արքունի. – 294. և դիմեցին ի մէջ նոցա ի չորս առաջս, ըստ նմանութեան տեառնանման խաչին, և բախեցին զճակատն և պատառեցին զռազմն և դարձուցին ընդ զառ ի վայրն և իջուցին ի լեռնէ անտի, և հարին ի հարուածս մեծամեծս. – 286. զառհաւատչեայսն առաջաբերելով ի փոքր ժամանակի զմեծամեծսն կշռեալ, զպռոնիկն, զմաքսաւորն, զաւազակն և որք այսպիսիք – 386.

ՄԵԾԱՆԻՍ - տեսանեն զկողմանս արևելից, դաշտ յոյժ մեծանիստ, լայնատարած, հարթայատակ, անվայրափակ առ ի սահման, անբաւական ի տեսութիւն աչաց, սաստիկ լուսով զարդարեալ ի գիշերի, բազմակերպ երևմամբ – 48.

ՄԵԾԱՆՈՒՆ - և յայտնի ոչ վայելչանայր կատարել զոր կամէրն, մի՝ վասն յաղթող մեծանուն գործոյն, նախատ անձին համարելով, երկրորդ՝ վասն վաշտիցն զօրութեան: - 326. Վա՛յ քեզ, եղո՛ւկ դու, այր քաջ, արքայդ մեծանուն, յորժամ կարկառիցէ բարձրեալն զձեռն Իեղուկ - ւր ի կործանել զքեզ և ի խորտակել զգաւազան ամբարտաւանութեան քո: - 148.

ՄԵԾԱՇՈՒՔ - այլ ընկալաւ զնա սիրով խաղաղութեան և մեծաշուք պատուով և պարգևօք ըստ հրամանի թագաւորին: - 288. Եւ ելեալ իշխանաց իշխանն, որ բարձրագոյն և հանճարեղագոյնն էր քան զբնաւ Հայաստանեայցս և զընդհանուր կացեալս ի ներքոյ երկնից՝ եկն առ նա մեծաշուք պատուադրութեամբ, և պարգևս և պատիւս ոչ սակաւս նմա յառաջաբերեաց. – 344. և ընկալեալ ի նմանէ մեծաշուք պատուով: - 302. իսկ

թագաւորն Մարկիանոս ընկալաւ զնոսա սիրով ի խաղաղութեան, մեծաշուք պատուով ի բարձ և ի պատիւ յառաջ ածեալ, իբրև զքաջամարտիկ ախոյեանս - 132.

ՄԵԾԱՊԱՏԻԻ - զի և զնախարարս Հայոց գրաւեսցէ մեծապատիւ սիրով – 366.

ՄԵԾԱՊԷՍ - Եւ յոյժ հաճոյ թուեցաւ խորհուրդս այս առաջի թագաւորին, և մեծապէս ուրախ լինէր: - 196. Եւ առաքեաց հրեշտակս մեծապէս զանձիւք և հրովարտակօք առ արքայ Խոսրով, խնդրել ի նմանէ զխաղաղութիւն մեծաւ թախանձանօք – 140. և ուրախ եղև մեծապէս խնդութեամբ. – 152.

ՄԵԾԱՍԱՍՏ - զի և զմատեանս առաջնոցն մեծասաստ ստիպով ի մի վայր գումարեալ՝ հրամայեաց այրել. – 44.

ՄԵԾԱՎԱՅԵԼՈՒՉ - իբր զթագաւոր մեծավայելուչ պատուական ալեօք զուարճացեալ ի մէջ ճոխ նախարարութեանց – 86.

ՄԵԾԱՏՈՒՆ - և ի չափ ինչ հասեալ բնակեցաւ առ ումեմն մեծատան ի նոցունց ազգականից. – 158.

ՄԵԾԱՐԱՆՔ - ,,որովհետև գտի շնորհս առաջի քո, և արարեր մեծարանս երեսաց իմոց, և առաւել քան զամենայն իշխանս Հայաստանեայց և մեծամեծս արքունի զիս նախամեծար և մեծարգի ցուցեր – 218. մինչ այնքան շքեղութիւն մեծարանօք յղփացեալ յօրացեալ կայր հազարապետն – 344.

ՄԵԾԱՐԳԻ - ,,որովհետև գտի շնորհս առաջի քո, և արարեր մեծարանս երեսաց իմոց, և առաւել քան զամենայն իշխանս Հայաստանեայց և մեծամեծս արքունի զիս նախամեծար և մեծարգի ցուցեր – 218.

ՄԵԾԱՐԵԱԼ - Այլ քանզի յոյժ առաւելեալ էր իմաստութեամբ Գագիկ՝ տեղի տայր բովանդակ գաւառապետաց զօրագլխաց աշխարհիս, գնայր ընդ նոսա իմաստութեամբ խորագէտ հնարաւորութեամբ, ըստ անձնիւր գահու մեծարեալ պատուադրութեամբ հաճոյանալ ախորժէր նոցա: - 354. և ետ բերողացն Հայրակղոս ինչս բազումս և մեծարեալ արձակեաց պատուով: - 154. և թագապատիւ իշխանութեամբ մեծարեալ՝ տայ զօր բազում յօգնականութիւն – 58.

ՄԵԾԱՐԵԼ - և մեծարի յԱրտաշէսէ Պարսից արքայէ, մինչ ձեռնտու լինի նմա /84/ զօրու օգնականութեամբ – 86. զի ըստ իւրաքանչիւր հասակաց՝ զմի մի ոք ի ձէնջ /214/ գթալիր սիրով մեծարէի այնչափ – 216. Իբրև ետես կայսր Հայրակղէս զչարիսն ամենայն, որ եկին հասին ի վերայ նորա՝ ակամայ կամեցեալ ցուցանել բարեկամութիւն՝ ել ընդ առաջ նոցա, մեծարել իբրև զվաստակեալս և զհիւրս, ընկալաւ զնոսա մեծամեծ /142/ ընծայիւք. – 144.

ՄԵԾԱՒ - որ յետ ՋԸ ամի Սենեքերիմ յառաջանայ ի գահ հայրենի իւրոյ թագաւորութեանն մեծաւ զօրութեամբ - 16. ,,Թագաւորաց աշխարհակալաց օրէնք են՝ մեծաւ հոգաբարձութեամբ խնամ տանել վասն շինութեան աշխարհի և թեթևացուցանել զլուծ բռնութեան /184/ ծանրակի բեռանց, թուլացուցանելով զասստկութիւն հարկապահանջ խոշտանգանաց – 186. Այլ նահատակեցան արիաբար և ետուն պատասխանի թագաւորին մեծաւ համարձակութեամբ, յուսացեալ ի մին միայն ի թագաւորն թագաւորաց և տէրն տերանց, ի Քրիստոս յորդին Աստուծոյ: - 292. անկեալ առ ոտս նորա մեծաւ հառաչանօք՝ մի՛ յիշել զանցս զանցիցն անցելոց, զոր արարինն առ սուրբն, այլ դարձեալ կալցի զաթոռ հայրապետութեանն. – 120. բայց ի գնալն աստի ի Մարս և ի Պարսս, դարձեալ դառնայ ուժով մեծաւ և թագաւորական ճոխութեամբ, տիրէ Հայոց մեծաց - 88. Բարկացաւ յոյժ իշխանն ընդ արհամարհանսն, և յոյժ զայրացեալ մեծաւ ցասմամբ՝ առնու զբազմութիւն ազատագունդ զօրաց ըստ տոհմս ազգաց իւրաքանչիւր զօրօք. – 178. և գրեալ էր առ Բուխայ, զի մի՛ ինչ չարիս խորհիցի կամ գործիցէ առնն այնմիկ, այլ տացէ տանել զնա առ թագաւորն մեծաւ պատուով և զգուշութեամբ: - 288. Եւ դարձան ուժեղ զօրութեամբ և մեծաւ յաղթութեամբ: - 66. Եւ հանեալ զԱշոտ և զԳուրգէն ի կապանաց՝ տիրեցին զօրութեամբ մեծաւ իւրեանց բնիկ իշխանութեանն, և կէին յանհոգս յանկասկածս այնուհետև: - 370. Եւ առաքեաց հրեշտակս մեծապէս գանձիւք և հրովարտակօք առ արքայ Խոսրով, խնդրել ի նմանէ զխաղաղութիւն մեծաւ

թախանձանօք – 140. Եւ առնու պատանդս արս անուանիս և պատուականս, և զմայրն Աշոտի դարձուցանէ մեծաւ պատուով. – 186. Եւ արձակեաց զնա ի տուն իւր մեծաւ ուրախութեամբ և անտրտում խնդութեամբ – 218. Եւ բարձեալ զօրքն Հայոց դիակապուտ արարեալ զզարդ և զզէնս զարի արանց և զքաջ երիվարաց, առեալ աւար բազում՝ գնան յիւրաքանչիւր տեղիս մեծաւ յաղթութեամբ: - 178. կացցէ մնասցէ Գուրգէն առ սպարապետին մեծաւ շնորհակալիւք: - 304. Եւ դառնայ մեծաւ պարգևօք և անհամեմատ խնդութեամբ: - 384. և դառնային մեծաւ ուրախութեամբ և անտրտում խնդութեամբ յիւրաքանչիւր տեղիս: - 176. Եւ ելանէին գունդք գունդք շտապով և ճեպով մի զմիոյ կնի, և ամենայն ոք որ տեսանէր՝ ընդ մեծաւ երկիւղիւ ներքաղրեալ լինէր: - 284. Եւ ելեալ գնաց եմուտ յամուրն Կանգուար, և կատարեալ զոր ինչ ախորժեացն՝ տիրեաց Անձաւացեաց մեծաւ զօրութեամբ: - 324. և ետ հրաման ահիւ մեծաւ՝ ամենայն ուրեք կանգնել զպատկեր իւր և երկիրպագանել իբրև աստուծոյ և զոհս մատուցանել. – 40. անդաղատանաց ի գիրկս իմ ընդունէի ընծայիւք մեծաւ զգուանաց, իբրև զառ ի յինէն ծնեալս: - 216. և զօր մահուան սրբոյն ամենայն Ասորեստան տօնախմբեալ մեծաւ ուրախութեամբ ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր - 254. Եւ ընդոստուցեալ Խոսրով ի յահէն և զարհուրեալ մեծաւ դողութեամբ՝ խնդրեաց իւր տեղի փախստեան, աղաղակեաց և ասէ՝ ձի, ձի, և մտեալ յասպաստանն՝ ոչ հանդիպեցան ձիոյ: - 152. և իբրև զմի անձն, վառեալ ի զէն և ի սուր և ի ճակատամարտ՝ հասեալ յամուրս՝ տապալէր զզօրութիւն նոցա սրով և աղեղամբ, ի փայլիւն սուսերի և նիզակի և ի գիշերամարտ նահատակութեանց, ըստ նմանութեանն քաջ զօրավարին Իսրայէլի Յեսուայ կամ Գէդէովնի կամ թէ նոյն ինքն նահապետին Աբրահամու, ի վերայ հասեալ Քանանացւոց, զյաւէտ յաղթութեան նահատակութիւն նահատակեալ՝ և դառնայ մեծաւ յաղթութեամբ: - 312. և ինքեանք դառնային մեծաւ յաղթութեամբ անպայման խնդութեամբ: - 382. և ինքեանք դառնան մեծաւ յաղթութեամբ: - 126. և ինքեանք դարձան մեծաւ յաղթութեամբ, մատուցին պատարագս Աստուծոյ և լցուցին զպէտս տնանկաց և աղքատաց այրեաց և որբոց: - 136. Եւ խնդութեամբ մեծաւ լցեալ զաշխարհս, որպէս զոք ի մեռելոց եկեալ տեսանիցեն: - 372. Եւ խնդրէ ի նմանէ խնդիրս, ,,առաջին, ասէ, զաստուածընկալ սուրբ նշանն, զոր գերեցեր յԵրուսաղէմէ՝ /152/ խնդիր արարեալ մեծաւ փութով այսրէն դարձուսցես,,: - 154. Եւ խռովեցան առ հասարակ ազգքն տաճկականք յերեսաց նորա և ահիւ մեծաւ ըմբռնեալք լինէին. – 312. և կայր դեռ ևս մեծաւ ուժով, և գոհութեամբ ընդունէր զեկեալ ի վերայ նորա չարչարանս վասն սիրոյն Քրիստոսի: - 290. և հասեալ առ զօրավարն իւրեանց մեծաւ յաղթութեամբ և բազում աւարաւ: - 282. և մեծաւ աշխատութեամբ և ի բազում ժամանակաց փոյթ յանձին կալեալ անդուլ զցայգ և զցերեկ ի մեծ տարակուսանս ըմբռնեալ կայր վարանեալ – 242. և մեծաւ տրտմութեամբ հաչէր և հառաչէր յոգի իւր. – 218. և մտեալ ի խորագոյն բանտ, տարեալ յամենայնի գոհութեամբ վասն անուանն Քրիստոսի, սովով և ծարաւով ժուժկալութեամբ մեծաւ: - 318. և նորա խնդիր արարեալ մեծաւ ստիպով, մինչև կարացին գտանել նովիմբ կազմածաւ, և ետ յարսն որք եկեալ էին. – 154. Եւ նոցա ի գլուխ հանեալ զգործ պատերազմին՝ դառնան զօրքն Հայոց մեծաւ յաղթութեամբ – 176. և նոքա կային մեծաւ ուժով և գոհանային զանբաւ և զառատաշնորհ պարգևացն Քրիստոսի, որ արժանի արար զնոսա մեռանել վասն անուանն Քրիստոսի և առնուլ զմարտիրոսական պսակն: - 292. և շինեցին ապարանս ամուրս և պարսպեցին մեծաւ զգուշութեամբ. – 280. և չոգան ի բանակետղ իւրեանց մեծաւ յաղթութեամբ, ուրախացեալ անտրտում խնդութեամբ – 282. և տեսանելով մեր զխնամարկութիւն բարի կամաց քոց ի վերայ աշխարհի, և զսէր երախտեաց որ առ մեզ՝ յօժարագոյնս եղիցուք և մեք մտերմութեամբ ծառայել և փութով մեծաւ կատարել զհրամայեալսն ի քէն,,: - 186. Զի թէպէտ և Գուրգէն մեծաւ զօրութեամբ ունէր զդէմ յարձակելոցն ի վերայ, որոց զիշխանականն ճեպէին հասանել գահ, կամ որ արտաքին տաճկական պատերազմունքն բռնաբար ի ներքս դիմէին՝ սակայն ոչ յապահովանայր դեռ երկիրն: - 316. զոր սարսափեմ և հիացմամբ մեծաւ յապուշ կրթին միտք իմ ընդ ժուժկալութիւն այնքանեաց բազմահնար

մեքենաւոր չարչարանաց. – 106. Իբրև լուաւ զայսքան և առաւել քան զսոյնս յանդուգն և առանց երկիւղի զընդդէմ պատասխանատրութիւնն մեծաւ համարձակութեամբ՝ապա հրաման ետ փութով ի կենաց բառնալ զգլուխ նորա սուսերաւ: - 296. իբրև բազումք առաքինացան մեծաւ ուժով և քաջ նահատակութեամբ ի հանդէս մարտին. – 202. ինքն իսկ փոյթ յանձին կալեալ՝ եւ գնաց մեծաւ հոգաբարձութեամբ, լուծանել զնա ի տառապանաց արգելանին. սակայն և այնպէս ոչ կարաց գտանել զելս իրացն վտանգի առնն: - 346. Իսկ զՎահագն Հայկազնեայ … կացուցանեն ի դրան արքունի, յառաջանալ ի գործ պատերազմին մեծաւ աշխատութեամբ՝ կամ մեռանել ի սրոյ թշնամեաց դիպելոց, կամ յաղթել քաջասրտութեամբ: - 70. իսկ նա առ երազութեան ձեռին ձգեալ զսուսերն՝ եհար զերեսս Ջուանշիրայն, և խլեաց զաչս նորա, և ինքն դարձաւ մեծաւ յաղթութեամբ, եմուտ յամրական տեղիսն: Եւ նոքա յո՛վ և աճապարեցին: - 310. Յայնժամ ելեալ իշխանն Գրիգոր յերեսաց արքայի մեծաւ ուրախութեամբ և անպատում խնդութեամբ՝ և եկն եմուտ յերկիր իւր յիշխանութիւն Վասպուրական կոչեցեալ: - 314. Յայնժամ իբրև լուաւ բռնաւորն զայս դարձուած պատասխանեաց լի հզօրութեամբ և ահագին մեծաւ անարգութեամբ՝ յոյժ տարակուսանօք լցաւ յանձն իւր, և կայր մեծաւ հիացմամբ ըմբռնեալ. – 280. Յայնժամ իբրև լուաւ բռնաւորն զայս դարձուած պատասխանեաց լի հզօրութեամբ և ահագին մեծաւ անարգութեամբ՝ յոյժ տարակուսանօք լցաւ յանձն իւր, և կայր մեծաւ հիացմամբ ըմբռնեալ. – 280. Նոյնժամայն ի բարկութիւն ցասմամբ մեծաւ շարժեալ թագաւորն Սմբատ՝ գրէ առ Գուրգէն Անձաւացեաց տէր և առ Գագիկ Ապումրուան, ասէ. – 362. Նոցա ելեալ արտաքս յատենէն մեծաւ խնդութեամբ, և յոյժ զուարճացեալք փութային ելանել ի մարմնոյ աստի և մտանել առ Աստուած – 266. Նստան երկոքին կողմանքն պահել զպահպանութիւն իւրեանց մեծաւ զգուշութեամբ, և ետուն ժամ անսալ միմեանց՝ ոչ ելանել ի պատերազմ, մինչև եկեսցեն հրեշտակքն յարքայէ, զոր առաքեցինն: - 286. որ մեծաւ ախորժանօք յանգուցանէ առ ինքն զնոսա իբրև արս պատուաւորս և քաջամարտիկս զօրաւոր զօրութեամբ, և մանաւանդ զի բազում անգամ զանուն յաղթութեան ստացեալ ունէին: - 366. սրբոյ թագաւորին և քաջ նահատակին Տրդատայ զբարիոք պատերազմեալ ընդդէմ անմարմին և մարմնաւոր պատերազմողաց, փոխի յերկրաւոր աշխատութեանցս ի հանգիստ, մեծաւ պատուով թագաւորական շքեղ և երևելի դիազարդութեամբ – 96. քանզի որդիքն Սենեքերիմայ մեծաւ ցասմամբ և անզրաւ հաշտմամբ ընդ Աշդահակայն լինէին – 62.

ՄԵԾԱՓԱՌ - այլ և Մակեդոնացին Աղէքսանդրոս ոչ սակաւ դրուատեօք արձանս գրէր ի մատեանս դիւանապահ աւանդութիւնս զսորայս մեծափառ գլխաւորութիւն: - 96.

ՄԵԾԱՓԱՌՈՒԹԻՒՆ - զի ո՞վ ոք այլ ճոխ քան զՍենեքերիմայսն, /94/ զոր համարձակախօսն Եսայիաս հրապարակէ առ Իսրայէլեան զարմն զսորայս մեծափառութիւն. – 96.

ՄԵԾՆ ԵՊԻՓԱՆՈՍ - զոր ասէ մի ըստ միոջէ մեծն Եպիփանոս: - 34.

ՄԵԾՆ ԳՈՒՐԳԷՆ - Զնոյն տեսեալ ազատացն Վասպուրականի, անտանելի մնալով առ դիպուածն զոր ինչ գործեաց Ապումրուան՝ ելին գնացին առ Ատոմ որդի մեծին Գուրգինայ յամուրն Կանգուար, գտանել զելս իրացն – 364.

ՄԵԾՆ ԳՐԻԳՈՐ - և մկրտեալ սուրբ և անբիծ խոստովանութեամբ ի Հայր և յՈրդի և ի սուրբ Հոգին, ի ձեռն մեծին Գրիգորի հանդերձ ամենայն նախարարօքն Հայոց մեծաց: - 94. Քանզի և ի ժամու անդ յորում զմեծն Գրիգոր առեալ տանէին ի քաղաքն Կեսարացւոց ձեռնադրել զնա ի քահանայութիւն, ի լուսաւոր վարդապետութիւն աշխարհիս Հայոց – 94.

ՄԵԾՆ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ - և սկիզբն լինել լուսաւորութեան Հայոց աշխարհիս ի ձեռն մեծին Գրիգորի Լուսաւորչին: - 94.

ՄԵԾՆ ԹԷՈԴՈՍ - Մեծն Թէոդոս յետ Վարազդատայ թագաւորեցոյց ի վերայ Հայոց զԱրշակ և զՎաղարշակ զորդիսն Պապայ թագաւորի Հայոց. – 110. Վախճանեալ կայսր Վաղէս, և թագաւորէ Յունաց մեծն Թէոդոս. – 108.

ՄԵԾՆ ՆԵՐՍԷՍ - էր երթեալ ընդ նմա և մեծն Ներսէս կաթողիկոսն /98/ Հայոց. – 100.

ՄԵԾՆՈՒՆԻՔ - առեալ էր ի բաժնէ/ճիշտը՝ ի բաժնի/ Գագիկ իշխանի … զճուաշ գաւառն և զթոռնաւան, Արտազ,Մարդաստան, Գառնի, Առբերանի, Աղանդռոտ, Բառիլովիտ, Պալունիք և Մեծնունիք, Տոսպոշտունիք, Բոգունիք, Գուգան գաւառ, Արտաշէսեան: - 388.

ՄԵԾՆ ՍԱՀԱԿ - խորհելով վասն սպարապետին մեծին Սահակայ, որպէս ի նմանէ Խոսրով զանձնիշխանականն օրինադրեաց հրաման. – 112.

ՄԵԾՆ ՍԱՀԱԿ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ - Եւ քանզի յետ մահուանն մեծին Սահակայ Բագրատունոյ սպարապետի ասպետի և զօրավարի Հայոց, հաւատացեալ էր Թէոդոսի կայսեր զսպարապետութիւնն Հայոց Համազասպ Մամիկոնէի և որդւոյ իւրում Վարդանայ – 122.

ՄԵԾՆ ՎԱՐԴԱՆ - Բայց յետոյ անմիաբան գտեալք նախարարքն Հայոց՝ թողին զոր խորհեցանն վասն թագաւորելոյ Վահանայ, և անցին /126/ գնացին առ մեծն Վարդան. – 128. Եւ նոքա թափառնակի անյապաղ հանդերձ իւրաքանչիւր զօրու եկին հասին առ մեծն Վարդան – 126.

ՄԵԾՆ ՎԱՐԴԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ - Այս լուր դառնութեան եհաս առ մեծն Վարդան Մամիկոնեան, որ էր ամրացեալ ի Տաւրոսականն Ջռայլ: - 126.

ՄԵԾՆ ՎՐԹԱՆԷՍ - Բայց ըստ կարգաց քրիստոնէութեան վարէր ըստ արժանի պատուիրանաց Տեառն, և ըստ խրատու մեծին Վրթանեայ յապահովանայր ամենայնիւ, թագաւորեալ ամս ԺԹ: - 96.

ՄԵԾՆ ՏԻԳՐԱՆ - Ազդ եղև մեծին Տիգրանայ պատրաստ պնդութիւն Աշդահակայ. – 62.

ՄԵԾՆ ՏԻԳՐԱՆ ՀԱՅԿԱԶՆ - Պատերազմ յուզեալ Աշդահակայ Մարաց թագաւորի ընդ մեծին Տիգրանայ Հայկազնոյ – 62.

ՄԵԾՆ ՏՐԴԱՏ - Թագաւորեալ մեծին Տրդատայ ի վերայ հայրենեաց աշխարհին – 94. Իսկ զթագաւորաբնակ տեղին մեծին Տրդատայ տան ի ձեռս Վահանայ Արծրունւոյ՝ շինել նմա տուն թագաւորաց, արարս պատրաստութեամբ. – 126. Եւ Գուրգինի նորին եղբօրն զպատիւ մարզպանութեան գահակալութեան հաւատացեալ, ըստ կարգի բարձաբերձութեան թագաւորացն Հայոց, մանաւանդ մեծին Տրդատայ թագաւորի: - 370.

ՄԵԾՈՒԹԻՒՆ - և զանբաւութիւն մեծութեանն յայտ առնել սաստկութիւն յորդահոս աղբերն – 20. Իսկ նա անփոյթ արարեալ երկրաւոր մեծութեանս, զի անցաւոր է՝ անսպառ և անվախճան և անծերանալի և անծախ և առանց ըմբռնելի ի գողոց խնդրեաց պարգևաց առիթ լինել. – 218. Ոչ ամենևին /գրքում՝ամենեւին/ գոնէ փոքր մի խոտորեցան ի բանս նորա և ոչ առին յանձն ի պատրել մեծութիւն ընչից և ոչ անսացին հնազանդել փառաց աշխարհական ցանկութեանց – 264. Որ յետ բազում ժամանակի ծախք պիտոյից ասացաւ պատրաստել թագաւորին ըստ անյաղթ բռնութեան և մեծութեան որովայնի կերակուր Բէլայ: - 38. զի և զմեծութիւն ընչից, որ ի գանձս իմ՝ ամի ամի յաւար տալով՝ զուարթամիտ սրտիւ ինձ համարէի զյափշտակութիւն տան իմոյ որ ի ձէնջ և առ ձեզ - 216.

ՄԵԾՐԱՅԻՄ - որ կոչի Մեծրայիմ, այսինքն Եգիպտոս, վասն ժառանգութեան սահմանաց Եգիպտոսի. – 42.

ՄԵԿՆԱԿԱԶԷՆ - Եւ մեկնակազէնքն պատեցին շուրջ զեկեղեցեաւն, և ելեալ առ նա ոմանց ընդ փորուած գմբեթին՝ և եհար մի ոմն աշտէիւն ընդ միջոց թիկանցն՝ և ընդ անթովքն հանեալ ի ներքոյ թոքացն՝ փչեաց զոգին և թաղեցաւ զթաղումն իշոյ: - 190. Եւ ետ նմա սուրհանդակս և մեկնակազէնս և սակրաւորս և կափաւորս - 218. և կոչին սոքա մեկնակազէնք սուրհանդակք, բնակեալք ի լերինն որ բաժանեն ընդ Աղձնիս և ընդ Տարօն: - 192. Յայնժամ բնակիչք լերինն իբրև տեսին, թէ վարեցաւ իշխանն ի գերութիւն … հասին միաբան բազմութիւնն մեկնակազէնքն Խութայ ի հնարս արուեստգիտութեանն իւրեանց, զոր ի պէտս օժանդակութեան ձմերայնոյ հնարաւորեալ էին: - 190.

ՄԵԿՆԵԱԼ - այլ և ոչ հուր մեկնեալ յամպոյ, ապա թէ ոչ՝ հարկ էր և ի գիշերի երևել. – 32. Այլ սոքա թէպէտ և յանձն առնուին և մտադիւրութեամբ լսէին նմա սակայն ոչ մեկնեալ լինէին ի ժանդագործ պղծութենէն զազրալից սոդոմական ախտիցն – 182. և լրտեսք քաղաքապետին փութացեալ ասեն, ,,ահա մեկնեալ ի զօրացն զհետ որսոց ինչ յանհոգս

յանզգուշութեան գայ ընդ այս ինչ տեղի. - 352. Եւ մեկնեալ զզօրսն ի նմանէ ընդ կողմն Ապահունեաց, մերկ ի զինէ և յասպազինէ թողեալ, ոչ առնել այլ կողոպուտ, գնացին աղխիւ և երիվարօք իւրեանց: - 346. և մեկնեալ յինքեանց զՎահրամ անուն՝ և տան տանել հրովարտակ առ զօրավարն – 210. զոր ոմանք հուր մեկնեալ յամպոյ ասացին, և որդիք տարրապաշտիցն՝ գօտի Արամազդայ: - 32 Յայնժամ մեկնեալ ի նմանէ զօրավարն, լցեալ խորհրդովք չարին հնարագիտութեամբ՝ եկն եմուտ ընդ կողմն Ատրպատական յԱղբագ գաւառ յերկիրն Վասպուրական – 184. Նոյնժամայն ելեալ զհետ Դերանկին կորապաղատն ի նոյն աղագս ի բաց մեկնել ի դիմաց հազարապետին, գիտելով զոր ինչ խորհեալն էր յաղագս նախարարացն Հայոց եկելոյն առ նա, և մեկնեալ լինէին ի զօրացն անտի ասպարէզս Ե – 342.

ՄԵԿՆԵԼ - և ինքեանք զզօրսն ամենայն մեկնեցին երթալ ի վերայ գնդին Հայոց – 226. և ինքն Ջափր գործ առնէր առ սակաւ սակաւ մեկնել ի նմանէ զզօրսն՝ դիմօք յաշխարհս աշխարհս /326/ ասպատակ սփռելոյ: - 328. և մեկնեաց յինքենէ զԱբրահիմ ոմն և յղեաց զնա հազարապետ Հայոց, և վերակացու ի վերայ հարկաց արքունի, և տիրել փոխանակ իշխանաց սորա: - 298. Զկնի այսորիկ մեկնեաց Բուխայ յինքենէ արս զօրաւորս յամենայն ազգաց և յամենայն մեծամեծաց և ամենայն աշխարհակալաց, և ի Պարսից և յԵլիմացւոց և ի Բաբելացւոց և յԱրաբացւոց … արս աւելի քան ԺԵ հազարաց և եհան զնոսա զհետ Գուրգինայ –224. Յայնժամ սկսան ամենայն նախարարքն Հայոց ցրուել մեկնել ի միմեանց. – 238. Նոյնժամայն ելեալ զհետ Դերանկին կորապաղատն ի նոյն աղագս ի բաց մեկնել ի դիմաց հազարապետին, գիտելով զոր ինչ խորհեալն էր յաղագս նախարարացն Հայոց եկելոյն առ նա, և մեկնեալ լինէին ի զօրացն անտի ասպարէզս Ե – 342.

ՄԵԿՆԻԼ - Եւ այն ինչ ընդ ջեռնուլն արեգականն, մինչ ազևորեալքն մտանէին զառաջեաւ ամիրային, որպէս որսոյ ինչ պատճառանօք հեծեալ յընտիր երիվարս հանդերձ մերձաւոր հարազատօք իւրովք և ազատովք յընտրելոցն Վասպուրականի՝ ելեալ մեկնեցաւ իբրև վտաւանս երկուս. – 342. և ասեն. ,,ահա մեկնեցաք ի մէնջ զզօրսն, և սակաւք են առ մեզ – 226. Եւ յայնմ ժամանակի երթեալ ժողովէին ի քաղաքն Եդեսացւոց արք ԺԲՌ յամենայն ցեղիցն Իսրայէլի զի տեսին եթէ մեկնեցաւ անտի զօրն Պարսից, և թողին ի բաց զքաղաքն. – 156. Իբրև զեկուցաւ նմա յոմանց զոր ինչ խորհի վասն նորա Աւշին / 370/ … ելեալ գնաց մեկնեցաւ օգնութեամբ ի վերայ հասեալ գիշերոյն – 372. իբրև հարուստ մի մեկնեցան ի գնդէն Պարսից՝ ամբարձեալ Սամուէլ զմիողնին՝ ազդոյ վէրս ի վերայ եդեալ առ ժամայն եհատ զնա ի կենաց. – 106. Իսկ իբրև սկսաւ սպրդել մտանել ի ներքս երկպառակութիւնն ի մէջ միաբանութեանն, հեռացաւ մեկնեցաւ գնաց շնորհ աստուածատուր զօրութեանն. – 194. Իսկ Հասան ըստ յանձնառութեանն գնաց մեկնեցաւ ի Դերանկէն, եմուտ առ Գագիկ յամուրն և զտրտունջն զԴերանկէն հաւատարմացոյց առաջի Գագկայ, որ դիւրաւ առ հաւատալն հաստատնագոյն երևէր. – 350. մեք ոչ ի բաց կամք ի սիրոյն Քրիստոսի և ոչ մեկնիմք ի կենացն յաւիտենից և ոչ լինիմք ժառանգորդ յաւիտենական տանջանացն,,: - 292. Նոյնժամայն ելեալ մեկնեցաւ յերեսաց արքայի այրն այն Բուղայ – 200.

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ - Զոր ի մեկնութեան Եբրայականացն անուանց ասէ Փիլոն – 34.

ՄԵԿՈՒՍԵԱԼ - Կարծելով Վահանայ խոնարհել զորդին իւր յանկանգնելի կործանումն, զոր մեկուսեալ Սամուէլի զհայր իւր Վահան, իբր այն թէ խորհիցին ինչ վասն որոյ եկեալն էին – 106.

ՄԵԿՈՒՍԻ - Երրորդ՝ խժաբար նենգութիւնն, զոր անփրկանակ ի ծնօղացն մեկուսի տարեալ սպան տարապարտ: - 24. և տեսեալ զուարակ մի՝ գողացաւ և տարեալ մեկուսի յազեաց զնա և կարկառեալ քարամբք՝ մնայր երեկոյինն – 46. զի ,,ժողովուրդս այս շրթամբք պաշտեն զիս, և սիրտք իւրեանց հեռացեալ մեկուսի են յինէն,,. – 246. զի ,,ժողովուրդս այս, ասէ, շրթամբք իւրեանց պատուեն, և սիրտք իւրեանց հեռացեալ մեկուսի են յինէն,,: - 256. Իսկ Վասակ Արծրունի, հայր Աղանայ սրբոյ, առեալ զՏաճատ և զԳոտեր զեղբայր իւր՝ գնաց առ կայսր. մեկուսի եղեալ ի շփոթմանց պարսկական վրդովմանցն և աւերման աշխարհիս. – 132.

ՄԵՀԵԱՆ - Եւ հասեալ Շաւասպայ Արծրունւոյ ամբարշտի յԱրտաշատ հանդերձ մարզպանաւն՝ շինեն ի դուռն քաղաքին զորմզդական մեհեանն, /124/ և զկրակապաշտութեան մոլութիւն բորբոքեն ի նմա. – 126. և հուր կրակարանին բորբոքեալ՝ աստուածակէզ արարին զնա յորմզդական մեհենին. – 126. Եւ քանդեն աւերեն զմեհեանն և յատակեալ զտեղին՝ շինեն նորին քարամբք զմեծ եկեղեցին զսուրբ Գրիգորն ի Բլուր տեղւոջն – 126. զոր թագաւորին յանձն առեալ զաշխարհն՝ հրամայէ շինել անդ մեհեան զՀերակղեայ և զԴիոնիսեայ. – 90. Յայնմ ժամանակի էին եղբարք բռնակալք ոմանք ի կողմանս ապառաժ Արաբիոյ ի տեղւոջն Փառան որ այժմ կոչի Մաքայ, արք պատերազմողք /156/ զօրագլուխք, պաշտօնատարք մեհենին Ամովնացւոց պատկերին, որ կոչի Սամամ և Քաբար: - 158. յանդգնեցան ասել և զմեհեան՝ տուն Աբրահամու – 160. Քանզի էր և տեղին այն յառաջագոյն տեղի մեհենից Վահեւավահյնի: - 334.

ՄԵՀԷԴԱԿ - յափշտակեցին զՇաւասպ որդի Վաչէի Արծրունւոյ, և զՄեհէդակ Ռշտունի – 98.

ՄԵՀԷԴԱԿ ՌՇՏՈՒՆԻ - յափշտակեցին զՇաւասպ որդի Վաչէի Արծրունւոյ, և զՄեհէդակ Ռշտունի – 98.

ՄԵՀՈՒԺԱՆ - առաջապահեստ ճանապարհորդութեանն արարեալ զՄերշապուհ Արծրունի զօրավար Հայոց և զՎահան Ամատունի և եղբայր Մեհուժանայ՝ տարեալ հանգուցանեն ի տեղւոջ հայրենեացն վկայարանի ի Թորդան: - 108. Առնուն Մեհուժան և Վահան զզօրս Պարսից, գան մտանեն յերկիրս Հայոց – 102. դոյզն մի զամբարշտին Մեհուժանայ զյանդգնութիւնսն ի վերայ Հայոց բացայայտեցից ի շարի աստ: - 102. Բայց Մեհուժան Արծրունի ոչ եղեալ ունկնդիր սրբոյն Ներսէսի, և ոչ ընդ թագաւորին հնազանդութեամբ. – 102. Բայց Մեհուժան ոչ բաւականացաւ կատարել զչարիսն – 106. Գան դարձեալ Մեհուժան և Վահան և առնուն զՎանտոսպ – 104. Եւ /106/ նոյնժամայն հուպ ընդ հուպ ի դիմի հարեալ Մեհուժանայ և կարթակոտոր զասպազինեալ երիվարն արարեալ քաջին Սմբատայ՝ տոռն արկեալ ի պարանոցն Մեհուժանայ ասէ. – 108. և եղբայր Մեհուժան Արծրունի յղէ դեսպան առ Շապուհ զնոյն խորհուրդ հաստատել: - 108. Ընդ որ յոյժ զչարեալ սքանչելին Աղան Արծրունի որդի Վասակայ ընդ հօրն անիմաստասէր բարուցն անխորհրդածութիւն և ընդ այնպիսւոյ աստուածամարտին Մեհուժանայ գթասիրաբար վարել ազգականութեամբ – 112. Ընդ որ յոյժ ուրախացեալ Շապուհ՝ խոստացաւ փեսայացուցանել զՄեհուժան ի քոյր իւր Որմզդուհի: - 102. Իսկ Մեհուժան ծանեաւ զինչ պատահելոց էր նմա ի կայսերէ և ի նախարարացն Հայոց, ոչ յաւել դառնալ ի Հայս. – 110. Իսկ Մեհուժան մտեալ առաջի Շապհոյ սկսաւ չարախօսել զՁուիթայ քահանայէ – 104. Իսկ Մեհուժան ոչ թողանայր զթագաւորելն Հայոց, կուտեալ առ ինքն անհուն բազմութիւն վաշտից և դրօշուց և նշանաց որոց ոչ գոյր թիւ. – 106. միանգամայն խորհէր վրէժխնդիր լինել ազգին Մամիկոնէից վասն սպանման Մեհուժանայ հաւոյն իւրոյ: - 112. նուաճեաց զանձն, հրապոյրս պղտորս արբուցանէ Վահանայ Մամիկոնէի, որ էր աներ Մեհուժանայ, և անցեալ գնացին առ Շապուհ. – 102. Որոյ երթեալ առ Շապուհ յիշեցուցանէ նմա զհարազատէն իւրմէ Մեհուժանայ՝ միամիտ և հպատակ /108/ լինիլ արքայի, և զպատերազմացն գործ և զբազում աւարառութիւնս և զգերփանս Հայոց աշխարհիս ի Մեհուժանայ, և զմահն նորա ի ձեռանէ քաջին Սմբատայ Մամիկոնէի - 110. Փութանակի և վաղվաղակի իւրաքանչիւր զօրօք անդր հասանէին … և ի տոհմէն Արծրունեաց՝ Վահան և Վասակ և Մուշեղ և Ապուպէլճ և Գուրգէն և Վասակ և Ապուջափր և Մուշեղ և Ապումայեայ և Վասակ և Վահան և Համազասպ և Վասակ որդի Գրիգորի և Ապումկդէմ և Մեհուժան և Գրիգոր – 174.

ՄԵՀՈՒԺԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ - Բայց Մեհուժան Արծրունի ոչ եղեալ ունկնդիր սրբոյն Ներսէսի, և ոչ ընդ թագաւորին հնազանդութեամբ. – 102. և եղբայր Մեհուժան Արծրունի յղէ դեսպան առ Շապուհ զնոյն խորհուրդ հաստատել: - 108.

ՄԵՀՈՒԺԱՆԵԱՆ - շուրջ փակեալ զՄեհուժանեան գնդիւն, զի մի ճողոպրել ինչ աճապարիցի: - 106.

ՄԵՀՐԵՒԱՆԴԱԿ - Վահրամ ոմն Մեհրեւանդակ … այր հզօր զօրութեամբ՝ քաջութեամբ իւրով եհար զզօրս Թետալացւոց – 136.

ՄԵՂԱԴԻՐ ԼԻՆԻԼ - Բայց մի ինձ մեղադիր լինիք, ո՛վ ուսումնասէր դու, սակս ոչ զբովանդակ սորա գործս շարել ի ճառս մանրապատումս: - 302.

ՄԵՂԱԴՐԱԿԱՆ - ապա բանս մեղադրականս բազումս յաճախեաց եդ առաջի նորա. – 216.

ՄԵՂԱԴՐԱՆՔ - Այլ և զայս ևս եդին առաջի թագաւորին աղերսական մեղադրանս, եթէ ընդէ՞ր իբրև ժողովն գումարէր՝ ոչ զոք ի Հայոց հարկաւոր համարեցայք կոչել ի միաբանութիւն հաւատոց: - 132. Դարձեալ ի նոյն յարեալ՝ և այլ հոգաբարձութեան աշխարհի խնամ տանէր, ի մեղադրանս մատուցեալ մարգարէիւն հանդերձ սպառնալեօք – 182.

ՄԵՂԱԴՐՈՒԹԻՒՆ - Եւ իբրև ետուն զթուղթն կարծեցեալ իբրև յերեսաց արքայի՝ ,,ընթերցիր զայդ, ասէ, մի՛ ինչ ընդ մեղադրութեամբ արկաներ զիս, և կարծել նենգութեամբ գնալ առ քեզ և դրժել ինչ քեզ և ստել երդմանց /236/ մերոց. – 238.

ՄԵՂԱՆՉԵԼ - այլ բազմացան չարիք մեր, զի մեղաք առաջի տեառն Աստուծոյ մերոյ և յետս հարաք զիրաւունս պատուիրանաց նորա – 242. և մխիթար բարի ունէր ի բարբառոյ մարգարէին որ ասէր. թէ /գրքում՝ թե/ ,,մանուկ մատաղ ի ծակ իժից արկցէ զձեռս իւր՝ և ոչ մեղիցեն նմա,,: - 252. Եւ մեր անտես արարեալ զգործս վնասուց ձերոց, զոր մեղայք մեզ, և լիցին անձինք ձեր ի գիւտս, և կեցջիք և տիրեցէք աշխարհի և տանց ձերոց, դուք և որդիք ձեր – 244. զի ոչ եթէ ատեաց զանօրէնն իբրև զանամօթն. զի քան զմեղանչելն առաւել չար այն է՝ չունել զինքն ընդ յանցաւորսն – 248. Նախ առաջին՝ զի յետ աւուրց ինչ, իբր անագան իմն այլ ոչ նախապատիւ և կարևոր. և զայն արատաւոր, այլ ոչ անարատ՝ երևի յասացելոցն՝ եթէ ուղիղ մատուցանես և ուղիղ ոչ բաժանես՝ մեղաք: - 24. որպէս Րոբովամ որդին Նաբատայ, որ մեղաւ և յանցոյցն զԻսրայէլ, որպէս գրեալ է ի գիրս թագաւորացն Իսրայէլի – 248.

ՄԵՂԱՆՉԵԼԻ - Բայց ինձ ոչ դանդաղելի կամ պատկառելի կամ մեղանչելի է զուգակշիռ նահատակելոցն նահատակակից վարկանել զսա և մարտիրոսականաւն զսորայս դրուատել ճգնողական մրցմունս – 300.

ՄԵՂԱՆՔ - եօ՞թն արդեօք իցեն մեղանացն պարտիք, եթէ ըստ յաւելուածոյ սաստից իմասցին ասացեալքն Աստուծոյ – 24. Արկադեայ կայսեր թագաւորեալ ամս ԻԳ մեռանի սաստկակոծ պատուհասիւ յաղագս մեղանացն առ Յոհան Ոսկեբերան: - 114. Իսկ նա անդէն և անդ հերքեալ ապաժամանակ առ ուղղակի տեսութիւն մեղանաց՝ առ Աստուած վերաբերէ զպատճառն – 20. Ուստի և ըստ կարգի մեղանացն՝ և դժուարինք անիծիցն հետևին, նախ օձին և ապա կնոջն: - 22.

ՄԵՂԱՒՈՐ - Աստանօր և զհայհոյական բարսն նշանակէ, և վասն ամենայն խիստ բանից զոր խօսեցան զնմանէ մեղաւորք և ամբարիշտք: - 26. և նմին հատուցումն ի կարգի որ ասէ, ,,կացո ի վերայ նոցա մեղաւոր, սատանայ կացցէ ընդ աջմէ նորա,, , և որ ինչ ի կարգ սաղմոսիդ է: - 214. զի ոչ կամիմ զմահ մեղաւորի, որպէս բառնալ նորա ի չար ճանապարհէն և կեալ: - 30.

ՄԵՂԷՍ - Յետ բառնալոյ թագաւորութեանն ի տանէն Արշակունեաց, և հայրապետութեանն ի տանէն սրբոյն Գրիգորի՝ Ղևոնդ ոմն աշակերտ սրբոյն Մաշտոցի տեղապահ լինէր սրբոյն Սահակայ, և Յովսէփ եպիսկոպոս և Մովսէս և Մեղէս: - 120.

ՄԵՂԿ - զորոյ լոյծ և մեղկ բարս ուսեալ թագաւորին՝ կացուցանէ զնա ի վերակացութիւն գործակալաց դրան արքունի – 90.

ՄԵՂԿԱՑՈՒՑԱՆԵԼ - Չորրորդ՝ զի զեղբայր և ոչ զօտար ոք, զոր ոչ երկիւղն Աստուծոյ և ոչ գութ բնութեան մեղկացոյց լքմամբ զձեռս արիւնարբու գազանին: - 24.

ՄԵՂՈՒ - և գոռթ/ճիշտը՝դոռթ/ տուեալ յանձնիւր որջարանաց զօրէն մեղուացն ի մեղուանոցացն արտաքս դիմեալ ի ժամանակս խաղացման ծննդոցն, առաջնորդութեամբ իւրեանց որդնածին առաջնորդին – 398.

ՄԵՂՈՒԱՆՈՑ - և գոռթ/ճիշտը՝դոռթ/ տուեալ յանձնիւր որջարանաց զօրէն մեղուացն ի մեղուանոցացն արտաքս դիմեալ ի ժամանակս խաղացման ծննդոցն, առաջնորդութեամբ իւրեանց որդնածին առաջնորդին – 398.

ՄԵՂՔ - ,,լաւ է մեռանել վասն Քրիստոսի, քան առ ժամանակ մի վայելել ի մեղս,,: - 250. արդ տես, մեղք քան զմեղս և տանջանք քան զտանջանս: - 336. արդ տես, մեղք քան զմեղս և տանջանք քան զտանջանս: - 336. և ըստ մեղաց տանն Արշակունեաց առաջին թագաւորացն մերոց հետազօտեալ լինէին, գնային ոտնխեթի,/ճիշտը՝ոտնխթի/ գայթ ի գայթս և աղտեղասէրս – 182. և առաջի արկեալ զհառաչանսն, զարտասուսն, զխոստովանութիւնն, զողորմագին պաղատանսն, մինչ ի մահ զտրտմելն, զկենաց դեղն հայցել, զմարմին և զարիւն որդւոյն Աստուծոյ ի թողութիւն մեղաց – 386. և մերկացեալք ի մէջ ամբոխին … ի բաց ընկեցին զհանդերձս ծածկոյթս ապականագործ հնութեան մեղացն – 266. Եօթներորդ՝ զի զվարկ փոխարինին լուեալ ի Տեառնէ՝ ոչ զարհուրեցաւ վերադարձիլ արտասուօք ի ջնջումն մեղացն. – 24. ասէր, ոչ զի սոդոմայեցիք էին, այլ զի ընդ նոյն մեղս սոդոմական պղծութեանն զառածեալ լինէին՝ սոդոմայեցիս կոչէ: - 182. Իսկ եթէ՝ մշակն մեղաց և անդրանիկն ամենայն չարեաց, որ ի յօձն բունեալ ոչ անիծաւ, որպիսիս ուսուցանէ վնասապարտութիւն օձին առ ի պատժականութեանն գտանել պարտաւորութիւն, որ ոչ յընքենէ միայն, այլ մանաւանդ ի գտողէն չարեաց: - 22. կարծէր իւրով զօրութեամբ զօրանալ ի վերայ կործանմանն Հայոց, ի մոռացօնս եղեալ հատուցումն մեղաց մերոց ի ձեռանէ Տեառն, որպէս Իսրայէլին ի հնումն առ Սեդեկեաւ զՆաբուքոդոնոսորայն: - 326. մեղք մեր արարին և ոչ քաջութիւն ձեր: - 144. յուսացեալ ի մարդասիրութիւնն Քրիստոսի, զմաքսաւորին և զաւազակին զետնորդսն բարբառեալ, և զփրկական մարմին և արիւն որդւոյն Աստուծոյ հայցեալ հաւատով ի թողութիւն մեղաց, յուսացեալ ի քաղցրութիւնն Աստուծոյ: - 336.

ՄԵՌԱՆԵԼ/ԻԼ/ - ,,և ո՛վ տայր ինձ վկայել ի վերայ ճշմարտութեանն և մեռանել վասն անուանն Քրիստոսի, և զարիւն իմ փոխանակ արեանն Քրիստոսի հեղուլ և զմարմին իմ փոխանակ մարմնոյ նորա ի մահ մատնել և զչարչարանս իմ ընդ նորա չարչարանսն խառնել, զի և ընդ նմա փառաւորեցայց. – 290. ,,լաւ է մեռանել վասն Քրիստոսի, քան առ ժամանակ մի վայելել ի մեղս,,: - 250. Դէպ եղև միում ի նոցանէ մեռանել, որում կոչէին Աբդլայ. – 158. եղև սմա կեալ անհաւատութեամբ և մեռանել անյոյս: - 250. Եւ ասեն ցթագաւորն, ,,լաւ է մեզ մեռանել վասն անուանն Քրիստոսի, քան վայելել ընդ քեզ. – 292. Եւ եղև ընդ մեռանելն տեառնն Անձաւացեաց, նորին տիկինն Հեղինէ գրէ առ Գուրգէն – 324. Եւ ի մեռանելն իւրում Աղէքսանդրու հաստատագոյն աներկիւղութեամբ զթագաւորութիւնն իւր միապետեալ՝ կացուցանէ չորս զօրավարս չորեքծագեան կողմանց աշխարհի, զՊտղոմէոս Եգիպտոսի և Հնդկաց, զՍելևկոս Ասիացւոց և ամենայն հիւսիսականաց, զԱնդիպատրոս Պարսից և ամենայն արևելից: - 70. և նոքա կային մեծաւ ուժով և գոհանային զանբաւ և զառատաշնորհ պարգևացն Քրիստոսի, որ արժանի արար զնոսա մեռանել վասն անուանն Քրիստոսի և առնուլ զմարտիրոսական պսակն: - 292. և նոքա յոյժ ուրախ եղեն, զի վասն անուանն Տեառն արժանի եղեն մեռանել. – 222. Զի ոչ միայն առ շինութիւնն՝ այլ և յարիւն և յապաժոյժ առաքինաբար զանձինս եդեալ ի վերայ խաշանցն մեռանել իբրև զքաջ հովիւ – 392. Զոր առեալ զարսն ստիպեաց ի բաց կալ յերկրպագութենէն Քրիստոսի, և պատուի և պարգևաց արժանի լինել ի նմանէ, և մի չարաչար տանջանօք մեռանել: - 222. իբրև զքաջ հովիվ եդեալ զանձն ի վերայ խաշանց մեռանել, նմանակերպեալ պատկերակից լինել որդւոյն Աստուծոյ – 300. Իսկ երանելիքն գոհացեալ զանպատում պարգևաց Քրիստոսի, որ արժանի արար զնոսա մեռանել վասն անուան նորա - 266. Իսկ զՎահագն Հայկազնեայ … կացուցանեն ի դրան արքունի, յառաջանալ ի գործ պատերազմին մեծաւ աշխատութեամբ՝ կամ մեռանել ի սրոյ թշնամեաց դիպելոց, կամ յաղթել քաջասրտութեամբ: - 70. Կինն Սահակայ որդւոյ Իսմայէլի, զորոյ զհանգամանսն ցուցաք, զմեռանելն Սահակայ և զկնոջն հրապարակագոյժ լինել, վասն որոյ պատճառանաց սպանանի այրն նորա. – 326.

մանաւանդ զի աւերեալ էր երկիրն յասպատակէ Պարսից, այն ինչ հուպ մեռանելն Երուանդայ և ընդ թագաւորելն Արտաշէսի: - 90. Եւ թագաւորէ ընդ նորա որդի հօրեղբօր նորա Մուհթիս, և կացեալ ամիսս Գ մեռանի: - 320. ,,Քրիստոնեայ եմ և մեռանիմ վասն Քրիստոսի, և մկրտիմ ի Հայր և ի յՈրդի և ի Հոգին սուրբ, ոչ ջրով, այլ իմով արեամբ: - 222. արդ ի բաց գնա, այր դու, /222/ ես մեռանիմ վասն Քրիստոսի,,: - 224. Արկաղեայ կայսեր թագաւորեալ ամս ԻԳ մեռանի սաստկակոծ պատուհասիւ յաղագս մեղանացն առ Յոհան Ոսկեբերան: - 114. Բայց Գրիգոր կեցեալ յետ դարձին իւրոյ զմի ամ՝ մեռանի իւրով մահուամբ: - 310. Եւ զԳագիկ որ և Ապումրուան՝ զնա ոստիկան կարգեաց ի վերայ աշխարհին, տեղապահութեամբ տիրել, զի կարի մատաղօրեայք էին որդիք Դերանկին. Աշոտ էր Թ ամաց, յորժամ մեռաւ Դերանիկն, Գագիկ էր Է ամաց, Գուրգէն Ե ամաց: - 354. և արարին խաւար Վասպուրական աշխարհիս, որ /352/ կեցեալ իշխանին. և էր ամաց Խ յորժամ մեռաւ: - 354. Եւ երթայր զհետ և սատակէր զնոսա անչափ զօրութեամբ. և բազումք այն էին, որ մեռանն ի սրոյն Գուրգէնի քան որ մնացինն. և զօրքն զհետ մտեալ մնացելոցն հանին յերկրէն իւրեանց: - 308. և թէ մեռանիլ ևս ումեք հասցէ՝ ի պարծանս անձին և ազգին իւրոյ համարեալ է, և պսակ մարտիրոսական ընկալցի ի Քրիստոսէ. – 276. և ի ժամուն յայնմիկ մինչ առաւ ամրոցն և զըմբռնեալսն ստիպէին, զի որք ի բաց կացցեն ի Քրիստոսէ՝ և մի մեռցին – 222. Եւ ի նմին ամի մեռաւ արքայն իշխան Տարունոյ – 358. և իբրև զպարիսպ անդամանդեայ՝ այնպէս եդին զանձինս ի վերայ բազմութեան գաղթականին աշխարհակոյտ ամբոխիցն, իբրև քաջ հովիւ ի վերայ խաշանց մեռանել յանձն առին: - 230. և ինքն թագաւորեաց փոխանակ /318/ ընդ հօր իւրոյ, և յետ Զ ամսոց մեռանի: - 320. և ինքն կացուցանէ ի գլխաւորութիւն Տաճկաց զԱպուբաքր, և սա կեցեալ ամս Բ մեռանի: - 164. և ինքն մեռանի ի հրամանէ Կիւրոսի, բարձեալ զտէրութիւնն Լիդէացւոց: - 66. և ինքն վիրաւորեալ սրով մեռանի ի գեօղն Գիւղիկ ի ճուաշ գաւառի, մարտիրոսական հասեալ նահատակութեան, ի վերայ խաշանցն Քրիստոսի տուեալ զանձն ի մահ: - 402. Եւ խօսէր ընդ նոսա սաստիկ և ահագին դատաստանօք և սպառնալեօք, թէ ընդէ՞ր և դուք ոչ մեռարուք ի պատերազմին, քան թէ ելեալ փախստական գնացէք գալ առ իս և տալ համարձակութիւն ծառայի իմում ի յայսքան վնաս. մի՞թէ արդեօք զԽոսրով մեռեալ կարծէիք,,:- 150. Եւ կալաւ Բորն զթագաւորութիւնն ամս Բ և մեռաւ: - 154. Եւ կատարեալ Աշոտ զկեանս իւր՝ մեռաւ ի Վանտոսպ գաւառի, ՅԻԳ թուականութեանն Հայոց, յամսեանն հոռի, որ օր Զ էր ամսոյն, յաւուր հինգշաբաթոջ. և տարեալ հանգուցանեն ընդ եղբարս իւր ի վանս սուրբ Խաչին յԱղբագ գաւառի: - 338. Եւ կացեալ անդ մինչ ի ժամանակս առաջինն Ղևոնի կայսեր՝ մեռանի անդ Վասակ և Տաճատ և փոխին ի հանգիստ փառաւորապէս ի գերեզմանս մեծամեծացն Յունաց: - 132. Եւ կացեալ ԺԲ ամ Աղէքսանդրի մեռանի ի Բաբելոն, կեցեալ ամս ԼԳ, թագաւորեալ ամս ԺԲ: - 70. և կեցեալ ամս Ի ի սմին՝ մեռաւ. – 164. և մեռանի անձամբ ընդ այլ շղոմարարսն յաշխարհին Մարաց ի Բակուրակերտ աւանի: - 92. և մեռաւ ՅԼԹ թուականութեանն Հայոց, և ի ԺԵ ամի հայրապետութեանն Գէորգեայ Հայոց կաթողիկոսի: - 356. և միաբան զաղաղակ բարձեալ ասէին, ,,Աստուած, յօգնել մեզ նայեաց, և Տէր, յընկերել մեզ փութայ,, և որ ի կարգին, ,,զի վասն քո մեռանիմք զօրհանապազ, համարեցաք որպէս զոչխար ի սպանումն,,: - 266. և մինչդեռ խորհէր արքայ Կաւատ վասն շինութեան աշխարհի և խաղաղութեան՝ եհաս նմա վախճան կենաց և մեռաւ, կեցեալ ամիսս Զ: - 152. և Նեբրովթայ յանդուգն զօրութեամբ հետամտեալ հրոսակաւ մեռանի ի Հայկայ, հարեալ նետիւ – 42. և նորա ճիչ բարձեալ ասէ, քրիստոնեայ եմ. և նա ևս պնդէր և ասէր, ,,մի՛ մեռանիր, մսլիմանակ ես,,. – 222. Եւ սաղմոսէին միաբան՝ ,,վասն քո մեռանիմք զօրհանապազ. համարեցաք որպէս զոչխար ի սպանումն,,: - 250. և վախճանեալ զհայրն նորա՝ ի նմին աւուր մեռանի և ինքն սրով յիւրայոցն: /ճիշտը՝ յիւրայնոցն/ - 116. և քաջն Վահան Արծրունի ընդ նմա նիզակակցեալ՝ մեռանին ի միասին քաջքն և ընտիրքն, մեծ նահատակք Վարդան և Վահան – 128. զի մեռաւ նա ի ճանապարհի, ի կողմանս Ասորոց, յելանել նորա ի վերայ աշխարհիս Հայոց՝ չարչարեալ զսոսա որպէս խորհեցանն. – 184. Ի

ՔՍԱՆԵՐՈՐԴԻ ԱՄԻ ԴԱՐԵՀԻ ՄԵՌԱԻ ՏԻԳՐԱՆ ՀԱՅԿԱԶՆԵԱՅ: - 68. Կեցեալ անդ ամս բազումս մեռանի յԵգիպտոս և կայ անդէն: - 70. մեռան ընդ Քրիստոսի, զի ընդ նմին թագաւորեսցեն: - 292. մեռան նոքա անդ և թաղեցան փառաւորապէս ըստ օրինի քրիստոնէից յուխտէ Յակոբկաց, որ անդ են հաւատացեալ ժողովուրդք, և զխոստովանողական անուն ստացեալ փառաւորեցան յերկրի և պսակելոց են ի Քրիստոսէ ընդ ամենայն սուրբս. ամէն: - 324. Յետ նորա թագաւորէ եղբայր Սենեքերիմայ…<փութ>ապէս մեռանի ի Մարութաքբաղդան, իբրև … ունէր զվեց ամիս, սպանաւ և նա ի միջէ ումեմնէ որում անունն էր Ներեղիբդ և թագաւոր էր. – 60. Որպէս Պօղոս ուսուցանէ. ,,արհամարհեալ ասէ, ուրուք զօրէնս Մովսէսի՝ մեռանէր, ի բերանոյ Բ կամ Գ վկայիւք. քանի սաստկագոյն համարիմք զայն, որ զորդին Աստուծոյ առ ոտն եհար,, , և որ ի կարգին է: - 380. պատահեն միմեանց և մեռանի անդ անզգուշաբար ի յաւակնայեղոց դիմացուածոյն: - 90. Վաղարշակ թագաւորեալ փոխանակ հօր իւրոյ Տիգրանայ, և տուեալ պատերազմ ընդ հիւսիսայինն Հազրաց՝ մեռանի ի կորովաձիգ աղեղնաւորացն: - 92. Վասն մարմնաւորացն այնչափ նահատակեցայ, որպէս գիտացերն և որպէս այժմ լսես յինէն, վասն Քրիստոսի և վասն յաւիտենական կենացն ո՞չ մեռանիցիմ, կամ արդեօք ի քէ՞ն երկնչիցիմ. քա՛ւ լիցի. –296. ,,դու, մոլի մանուկ,/ծն.մոլիմանուկ/ ընդէ՞ր մեռանիս զուր և տարապարտուց,,. – 222.

ՄԵՌԵԱԼ - Այլ ձայն իմն գայր՝ մի՛ ժողովել և մի՛ հատանել, թե ոչ՝ եղիցի անձն այն մեռեալ, և ժանտ ախտիւ սատակեսցի գումարտակդ: - 50. անդ կեցեալ և մեռեալ ի նմին ի կապանս: - 84. և անդ կեցեալ և մեռեալ անձամբ զիւրովի երթեալ, ըստ սահմանելոյ ի վերայ նորա բանի առնն Աստուծոյ սրբոյն Ներսէսի: - 102. Եւ խնդութեամբ մեծաւ լցեալ զաշխարհս, որպէս զոք ի մեռելոց եկեալ տեսանիցեն: - 372. Եւ խօսէր ընդ նոսա սաստիկ և ահագին դատաստանօք և սպառնալեօք, թէ ընդէ՞ր և դուք ոչ մեռարուք ի պատերազմին, քան թէ ելեալ փախստական գնացէք գալ առ իս և տալ համարձակութիւն ծառայի իմում ի յայսքան վնաս. մի՞թէ արդեօք զԽոսրով մեռեալ կարծէիք,,: - 150. և կուրացեալ աչօք կեցեալ և մեռեալ ըստ արժանի իւր վաստակոցն – 98. Քանզի այնչափ թանձրացաւ յաճախութիւն սովոյն՝ որ ոչ միայն անսուրբ կենդանիս ուտէին ըստ սրբութեան կարգի, այլ և զսարսափելի և զդժնդակ, որ զգազանայինն անցուցանէ զվայրենամտութիւնն, զմարմինս մեռելոց՝ առանց խղճելոյ ուտէին, ի գերեզմանացն հանեալ զհետ միոյ և երկուց ամաց թաղելոյ: - 374.

ՄԵՌԵԼԱԳՈՅՆ - Այլ և ուսումնական բանգիտութեանն քաջահմտագոյն, անընչասիրութեամբն մեռելագոյն. առատաձեռնութեամբն կենդանագոյն: - 376.

ՄԵՌԵԼԱԿԱՆ - Ոչ կարծողականս ինչ ըստ առաջնոցն Բէլայ ասացելում, կամ այլոց ստուերականացն երևեցելոց երազականաց և խաբեբայ դիւաց, այլ ձեռագործ մեռելականս իսկ եցոյց ի պաշտօն – 40.

ՄԵՌԵԼՈՏԻ - այլ ըստ օրինակի ասացելումն ի Տեառնէ Մովսէսիւ՝ առ ի յանդիմանութիւն արտաքնոցն, զճարպ մեռելոտոյ տանել ի գործ ինչ արտաքին, այլ ոչ թէ ի կերակուր: - 54.

ՄԵՍՏՐԻՄ - այլ ըստ պատմագրացն՝ Մեստրիմ ծնանի զՆեբրովթ – 42. Դարձեալ քանզի Մեստրիմ ի Քամայ ըստ բաժանման ազգին և աշխարհին շինէ զԵգիպտոս և անդ հարստանան ազգապետաբար – 18. զոր ոմանք ի պատմագրաց ասեն հայր սորա զՄեստրիմ – 42. Քուշ ծնանի զՄեստրիմ: - 42.

ՄԵՍՐՈՎՊ - և երթեալ բնակէ առանձնապէս ի Գողթն գաւառի ի տեղւոջ վարդապետութեան սրբոյն Մեսրովպայ, ճգնասէր հրեշտակակրօն վարուք, երանելի մարդկան և ահարկու դիւաց: - 120. և զերթալն Մեսրովպայ և Վարդանայ ի Յոյնս առաջի արկանէին, և զգալն Անաստողեայ և զշինել քաղաքին ի Կարին գաւառ: - 118. զոր և երանելին Կորիւն, ուսումնակից Մովսէսի և աշակերտ սրբոյն Մեսրովպայ՝ յիւրումն ստուգաբանեալ պատմութեան զայսոսիկ մեզ հաւատարմացուցանէ: - 122.

ՄԵՐ - ,,Բուխայ գլուխ զօրավարաց ընդհանուր Թագաւորութեան Տաճկաց, Ջափր իշխեցող ծովու և ցամաքի, հաւասար և օրէնսդրին մերոյ Մահումաթի, և հաւատարիմ միջնորդ

Աստուծոյ և մարդկան, և թագաւոր ընդհանուր ազգաց հարաւային աթոռակալութեան … Յղեցի զքեզ ելանել ի վերայ երկրիդ Հայոց ամենայն կենդանեաց – 236. ,,ի սկզբան թագաւորութեան նախնեաց մերոց, յորժամ ետ Աստուած զաթոռ բազում թագաւորաց ի ձեռս նոցա, և մինչ առ մեզ հասեալ՝ ոչ ոք զօրեաց կալ ընդդէմ մեր, ոչ ի հեռաւոր աշխարհաց և ոչ ի մերձաւորաց: - 198. ,,ոչ են օրէնք թագաւորութեանս մերոյ ի պայքար բանից զոք արկանել, և յերկարել ի բանս, որչափ արարաք ընդ ձեզ, զոր ինչ այլ արասցուք. – 246. այլ բազմացան չարիք մեր, զի մեղաք առաջի տեառն Աստուծոյ մերոյ և յետս հարաք զիրաւունս պատուիրանաց նորա – 242. Այսու զպտուղ շրթանց մերոց խոստովանելով յանուն նորա պահանջէ սպառնալեօքն և խոստմամբքն: - 256. անդ հասեալ քաջացն մերոց եղբարցն երեցունց ազատագունդ սակաւաձեռն գրոխիւ ի ձմեռնային ժամանակի, և ընդ լրթնատեսիլ լուսոյն վազս ի վերայ եղեալ՝ հանին ընդ սուր յոլովս քան թէ սակաւս: - 372. առանց ի տանջանս և ի չարչարանս լի դառն հարուածոց մտանելոյ հաւանեալ մեզ և օրէնսդրին մերոյ Մահումաթայ – 244. Բայց մեզ կայ առաջի ասել վասն Ջափրայ և չար գործոց նորա, անգիրս մնացեալ յայլոց, զոր կատարեաց ի վերայ աշխարհիս Հայոց երկայնագոյն ժամանակաւ և անըմբերելի նեղութեամբ ի մերս հանդիպեալ աւուրս, որ էր Հայոց Ց թուական: - 168. եկեալ հասեալ վրէժխնդրութեան պատիժք, վասն անօրէնութեանց մերոց զոր գործէաք առ հասարակ ի փոքրկանց մինչև ցմեծամեծս. – 196. Եւ ասէին այնոքիկ զորոց և բանս է, եթէ ,,ի մասն ինչ լերինն յայնմիկ հասեալք բազումք ի մերոց – 48. և ըստ մեղաց տանն Արշակունեաց առաջին թագաւորացն մերոց հետազօտեալ լինէին, գնային ոտնխեթի,/ճիշտը՝ոտնխթի/ գայթ ի գայթս և աղտեղասէրս – 182. և անընդունակք լինէիք՝ որ ի մէնջ առաքեցեալքն հազարապետք և վերակացուք աշխարհիս մերոյ և խնամատարք արքունի հոգաբարձութեան գային առ ձեզ. – 244. և ասէ, ,,եթէ աջողեսցին քեզ խորհուրդ մեր, զոր խորհեցաք ի վերայ Հայոց և իշխանաց նոցա, և ըստ ախորժակաց մերոց ի գլուխ ելանիցեն, որ ինչ կամք յօժարութեանց մերոց ըղձանայցեն- 184. և ասէ, ,,եթէ աջողեսցին քեզ խորհուրդ մեր, զոր խորհեցաք ի վերայ Հայոց և իշխանաց նոցա, և ըստ ախորժակաց մերոց ի գլուխ ելանիցեն, որ ինչ կամք յօժարութեանց մերոց ըղձանայցեն- 184. և բազում ազգք և թագաւորք են զոր նուաճեալ ունիմք ընդ ձեռամբ մերոյ տէրութեանս. – 244. և զազգատոհմ մեր ընդ մեծ նեղութեամբ պաշարէիք և աշխարհի մերոյ աւերիչք գտանէիք և հարկացն եղելոց խափանիչք լինէիք: - 244. և թէ ի պատերազմին յայնմիկ հասանիցէ զմահուն ընդունել զվճիռ՝ իսկ ըստ յաղթութեանն զխոստովանողականն ժառանգել անուն, զօրանալ զօրութեամբ ի զօրութիւն խաչին Քրիստոսի Աստուծոյ մերոյ: - 400. և ի մատնելն մերում լարօք հնգետասան՝ հաւք երկու պատահեցին մեզ – 50. Եւ իբրև ետուն զթուղթն կարծեցեալ իբրև յերեսաց արքայի՝ ,,ընթերցիր զայդ, ասէ, մի՛ ինչ ընդ մեղադրութեամբ արկաներ զիս, և կարծել նենգութեամբ գնալ առ քեզ և դրժել ինչ քեզ և ստել երդմանց /236/ մերոց. – 238. և խոշտանգեսցես զնոսա գանիւ և բանտիւ և պէսպէս տանջանօք սպառնալեօք և ողոքանօք և ընչից պատրանօք արկցուք զնոսա ի ներքոյ կամաց թագաւորութեան մերոյ. – 196. և կալցուք ուխտ խաղաղութեան /136/ ի մէջ մեր երկոցունց, և անշուշտ լիցի այս երդումն և պայման ի մէջ մեր և որդւոց մերոց յետ մեր թագաւորելոյ,,: - 138. և հանդերձեալ աշխարհին պսակելոց է ի Քրիստոսէ, հանդերձ տիկնաւն Հեղինեայ ընդ ամենայն սուրբս Քրիստոսի Աստուծոյ մերոյ. ամէն: - 80. և ոչ են կամք իմ փութալ պատմել ընդ գրով փակել զկործանումն տերանց իշխանաց մերոց - 240. Եւ ոչ ոք այսքան աղէտս տարակուսանս հասոյց ի վերայ մեր և ի վերայ ազգի և զօրաց և զօրավարաց մերոց, որչափ գործեաց Աշոտ իշխան Վասպուրական: - 198. և պաշտեսցեն զօրէնս մերոյ պատգամաւորին և օրէնսդրին: - 196. զի է անդ լիճ մի մեծ մօտ ի տեղին, որ էր տեղի ասպարիսի ճակատամարտ զօրու նահատակութեան քաջացն մերոց իշխանացն Վասպուրականի – 226. զի թէպէտ դառնալով դարձան յայտնապէս յերկրպագութիւնն Քրիստոսի Աստուծոյ մերոյ՝ այլ զկանոնական սահմանադրութիւնսն ոչ բերելով ուղղակի, ոչ միայն Աշոտ, այլ և ամենայն իշխանքն Հայոց, որք գերադարձքն եղեն. – 336. Զի ոչ թէ

վասն աստուածպաշտութեան ձերոյ կամ բարեգործութեան և սրբութեան արար Աստուած զայս այսպէս, այլ վասն մերոյ ամբարշտութեան ի Տէր. – 144. զոր շինեալ էր սրբոյ Լուսաւորչին մերոյ Գրիգորի ի դառնալն նորա ի ձեռնադրութենէ քահանայապետութեանն: - 100. զՓրկչին մերոյ Տեառն Յիսուսի Քրիստոսի զըստ մարմնոյ ազգաբանութիւնն գրելով աւետարանիչն Մատթէոս - 16. ընդ ակամբ հայելով, թէ գուցէ ճողոպրեալ ելանիցէ ի ձեռաց մերոց, կամ ի գիշերամարտս յանկարծ հասանիցէ ի վերայ մեր մեծամեծ ոճիրս գործիցէ: - 202. ի բազում ժամանակաց լեալ թագաւոր նախնեաց մերոց և մինչ առ մեզ հասեալ – 244. կարծեաց համանգամայն զբոլոր պաշտօնեայս Քրիստոսի ի բաց վճարել ի հաւատարիմ երկրպագութենէ ճշմարտին Աստուծոյ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. – 264. կարծէր իւրով զօրութեամբ զօրանալ ի վերայ կործանմանն Հայոց, ի մոռացօնս եղեալ հատուցումն մեղաց մերոց ի ձեռանէ Տեառն, որպէս Իսրայէլին ի հնումն առ Սեդեկեաւ զՆաբուքոդոնոսորայն: - 326. Հերովդէս այլազգի որդի Անդիպատրեայ Ասկաղոնացոյ և մօր Եւպատրեայ Արաբացոյ, թագաւոր Հրէից, յաւուրս ծննդեան տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: - 78. միայն թէ ընդարձակեսցես մեզ և տոհմի մերոյ, բնակաց երկրի մերոյ՝ մնալ յիւրաքանչիւր տունս բնակութեանց կալ խաղաղութեամբ – 212. միայն թէ ընդարձակեսցես մեզ և տոհմի մերոյ, բնակաց երկրի մերոյ՝ մնալ յիւրաքանչիւր տունս բնակութեանց կալ խաղաղութեամբ – 212. Յետ համբառնալոյ Փրկչին մերոյ և վախճանի բարեպաշտ թագաւորին /78/ Աբգարու, թագաւորեաց Անանուն որդի Աբգարու – 80. Յղէին պատգամս առ որդիսն Իսմայէլի և ցուցանէին զմտերիմ հարազատութիւն, թէ ,,որդիք Աբրահամու եմք մեք և դուք, եղբարք. պարտ է ձեզ գալ յօգնականութիւն մեզ, և առցուք զերկիր ժառանգութեան մերոյ,,: - 156. յորոյ աւուրս Փրկչին մերոյ տեառն Յիսուսի Քրիստոսի Աստուծոյ մերոյ մարմնով յաշխարհի երևումն եղև - 76. յորոյ աւուրս Փրկչին մերոյ տեառն Յիսուսի Քրիստոսի Աստուծոյ մերոյ մարմնով յաշխարհի երևումն եղև - 76. յորոց աճմամբ յառաջանայ կարգն և գայ հասանէ ի Սենեքերիմ արքայ, առ Եզեկիայիւ Եբրայեցւոցն առաջնորդաւ և առ մերովն Հարամայիւ: - 14. նորին հրահանգեալ կրթարանի ուսումնասիրութեանն վարժիւք ոռոգացեալ, այր քաղցրաբարոյ և հեզահայեաց, հասարակաբար առ հասարակ զինքն վարկանելով, արտաքոյ ամբարտաւանական բարձրայօնութեանն՝ կալով յաշտիճան հեզոցն, դրուատեալ ի փրկչէն մերմէ Յիսուսէ Քրիստոսէ: - 376. որ յանուն Փրկչին մերոյ շինեալ էր յիշխանէն Բագարատայ, ի ծախս մեծամեծ զանձուց իբրև Յ հազարաց: - 190. որպէս ասէ Պօղոս առ Տիմոթէոս, ,,մի ամօթ համարիցիս զվկայութիւն Տեառն մերոյ,, - 260. որպէս ընթեռնուք ի բանիբուն գրակարգութեանն Մովսէսի տիեզերահռչակեալ վարդապետի և քերթողի և մերոյ լուսաւորութեանցս հաստատագոյն յօրինողի – 96 Ուստի և մեք ըստ կարի մերում անցեալ գտաք զհամառօտութիւն զրուցատրութեանս – 122. ուր զսեղանն սուրբ և զգաւազան հովուական և զմատանին պատկերեալ և զգօտին աշխատասէր միջոյն թողեալ ի հանապազորդ յիշատակ լուսաւորութեանն մերոյ հօրն: - 104. Սա կեցեալ ամիսս Ը կամ Թ յաթոռ հայրապետականին՝ փոխի յաթոռ առաքելական պատուադրութեանն ի փրկչէն մերմէ խոստաբանեալսն: - 376. Սաստիկ և վտանգաւորք և լի դառնութեամբ որ ինչ ի ճառի աստ են յիշատակարանք, սակս յանձնառութեան մեծ նախարարացն և իշխանացն մերոց. – 240. Փութաճեմ ընթացող արշաւանս ի վերայ ձգեալ՝ հասանել ի լեառն տեառն և ի տուն Աստուծոյ մերոյ, ըստ յորդորման մարգարէիցն – 392.

ՄԵՐԹ - Մերթ տապալէր իբրև զօձ, մերթ գոչէր իբրև զառիւծ, և իբրև զխոզ վայրենի կնչէր կոնչէր, փրփուր ի վեր բերելով, զատամունս կրճտելով. -270. Մերթ տապալէր իբրև զօձ, մերթ գոչէր իբրև զառիւծ, և իբրև զխոզ վայրենի կնչէր կոնչէր, փրփուր ի վեր բերելով, զատամունս կրճտելով. - 270.

ՄԵՐԺԵԱԼ - ,,ի հայրենեացն արտաքս հանեալ էք ի ժառանգութենէ և մերժեալ ի բաժնէ եղբայրական հասէ. զա՞յս ևս բռնազբօսել ջանայք, զոր Աստուած ժառանգեցոյց ինձ: -330. մի՛ յամառիք զհետ Արշակայ և բնաւ սպառ սպուռ մերժեալ լինիք ի հայրենեաց

բնակութենէ – 110. Սոքա մերժեալք ի տէրութենէն իւրեանց, զոր տուեալ էր Տիգրանայ և Կիւրոսի՝ կէին անկարգաբար զինչ պիտկէն մինչ ի Կիւրոս Շահակեան: - 72. ստացան բարեկարգաբար զարդարել զմերկացեալն ի բարեզարդութենէ, զմերժեալն և զհեռացեալն ի հայրենեաց և ի տանց՝ յանձնիւրս առնել դարձումն. – 388.

ՄԵՐԺԵԼ - գուցէ յորժամ կատարիցեն զչարիսն զոր խորհեալ են ի վերայ քո, որպէս լուաք ի հաւատարմաց իւրեանց՝ օժանդակութեամբ Արտաշէսի մերժիցեն և զզարմ և զզաւակ քո ի թագաւորութենէ Ասորոց: - 82. զի այնու դիւրաւ կարասցեն հերքել մերժել ի բաց կալ ի սուրբ հաւատոյ պարկեշտ կրօնից քրիստոնէութեան: - 124. զոր արհամարհեաց մերժեաց Աբգար - 80. զորս վաճառակուր արարեալ յօտար ազգս, վարել ի ծառայութիւն, գնալ հեռանալ մերժել ի տանց, հայրենի ժառանգութենէ իւրեանց: - 262. մերժել հեռանալ ի ճոխ և ի նազելի եղբարցն պատուաւորաց, ի պարոյ կացեալ ազատագունդ ազգի ազգի պերճութենէ – 386. մի՛ ասիցէ այլազգին, որ եկեալ յեցեալ իցէ ի Տէր՝ եթէ մերժելով մերժէ զիս Տէր ի ժողովրդենէ իւրմէ,,. – 224. մի՛ ասիցէ այլազգին, որ եկեալ յեցեալ իցէ ի Տէր՝ եթէ մերժելով մերժէ զիս Տէր ի ժողովրդենէ իւրմէ,,. – 224. ոչ պիտոյացեալ եկամուտ լուսոյ, որով նսեմասցի առ ի հասանել երեկոյին, ոչ ապաժամանութիւն արեգական առ ի մերժել զմութ գիշերի լուսազգեստ ստեղծուածոյն, որ յետ առաջնոցն կարգի և դասու՝ զերկրորդն փոխանորդեցաւ վիճակ, ոչ կերակուր հոսանուտ առ ի լրութիւն տարաբարձ ունակութեանց անապականին, որ դոյզն ինչ փոքրագոյն քան զիրեշտակս գոլ. – 20.

ՄԵՐԺԻԼ - Իսկ Սաթինիկ ունկնդիր եղեալ խրատու սրբոցն՝ ոչ ի բաց մերժեցաւ ի կռոցն Աստղկայ անուանեալ պատկերին – 88.

ՄԵՐԿ - և մերկ կապուտ կողոպուտ առնէր զնոսա, մինչև զարմանալ զօրավարին ընդ սորայս քաջութիւն՝ գրէ առ Միքայէլ թագաւորն Յունաց զեկուցանելով վասն նորա: - 302. Եւ թողին զնոսա արք իբրև ԴՌ, վիրաւորք, բոկք և մերկք և հետևակք: - 150. և արևն ի վերայ հասեալ սպառազէն զարդուն՝ և մերկ սուսերացն փայլեալ՝ ճառագայթս արեգակնայինս յինքեանց ձգէին շուրջ զլերամբն. – 208. Եւ մեկնեալ զզօրսն ի նմանէ ընդ կողմն Ապահունեաց, մերկ ի զինէ և յասպազինէ թողեալ, ոչ առնել այլ կողոպուտ, գնացին աղխիւ և երիվարօք իւրեանց: - 346. զի սուսեր մերկ ի ձեռին ունի, և միայն առանձին գայ զհետ մեր – 230. ձայն բարձեալ արտասուալից առ Դերենիկն, և զսուսեր մերկ ի ձեռին ունելով, և վաղր և սակր մի՝ ասէ. ,,որդեա՛կ իմ Դերենիկ, ողջոյն քեզ, ողջոյն քեզ, ողջոյն քեզ. ես ելի գնացի ի յաշխարհն Յունաց,,: - 320.

ՄԵՐԿԱՆԱԼ - և ձերբակալ արարեալ մերկանան ի զինէ և յասպազինէ և տանին կացուցանեն առաջի Կիւրոսի. – 66. և ելեալ Աղան գնաց առ սուրբն Սահակ, և զէնընկեց եղեալ առաջի նորա՝ մերկանայր գհանդերձն զինաւորական - 112. Եւ մի ոմն մերկանայր զկօշիկս ոտիցն նորա. և հարեալ աքացի զվատ այրն հանդէպ սրտին՝ և սպան զնա: - 304. զոր չառեալ յանձն սուրբ տիկնոջն Համազասպուհեայ՝ տանին հանեն ի բարձրաւանդակ ամրական բերդաքաղաքն, մերկանան ի հանդերձից, զի քրիստոսեան փառօքն զգեցցի. – 102. իսկ իբրև նա ըմբռնեցաւ, և գիտաց զօրավարն եթէ ոչ ոք այնուհետև յիշխանացն Հայոց մնաց, որ ոչ համագունդ ժողովեալ են առ նա՝ մերկացաւ յայնժամ զպատրուակ կեղծաւորութեանն, զոր սերմանել էր սատանայ ի սիրտ առնն: - 296. Յայնժամ մերկասցի արեգակն զլոյս իւր ի քէն և զգեցուսցէ քեզ խաւար. – 148.

ՄԵՐԿԱՑԵԱԼ - ապա նոքա մերկացեալ զկեալն կասկածանօք առ Ապումրուան՝ գան առ նա առանց ակնածութեան. – 364. Եւ առ չժուժեալ այնպիսի վտանգաւոր նեղութեանն, արիաբար հասեալ ի կիրճս ձորոյն և մերկացեալ զսուսերն՝ յարձակեցան ի վերայ երիվարացն – 220. և մերկացեալք ի մէջ ամբոխին … ի բաց ընկեցին զհանդերձս ծածկոյթս ապականագործ հնութեան մեղացն – 266 և յաւեր դարձան գեղք և ագարակք և աւանք, ի բաց մերկացեալ զզարդ և զբարեձևութիւն, և ընդ ազգականութեամբ փակեալ զանազան բոյսք և տունկք, որ ի վերայ երեսաց երկրի. – 238. յայնժամ մերկացեալ և ի բաց եդեալ զաշխարհական պատրանաց զբաղումն՝ և էանց գնաց ի վեր քան զերևելիսս – 284.

ստացան բարեկարգաբար զարդարել զմեր<u>կ</u>ացեալն ի բարեզարդութենէ, զմերժեալն և զհեռացեալն ի հայրենեաց և ի տանց՝ յանձնիւրս առնել դարձումն. – 388.

ՄԵՐԿԵԼ - և մօտ եղեալ <u>մերկեաց</u> զսուսերն և զսաղավարտն և զզրահսն, զոր արկեալ էր զանձամբ – 228. և եհար սատակեաց Ապումկդէմ ի միում ասպատակի Ը այր, և զերիվարս նոցա, և զէնս և զզարդ <u>մերկեաց</u> ի նոցանէ, եհար զայլազգիսն ի հարուածս մեծամեծս և ինքն դարձեալ ասպատակեաց զկնի նոցա: - 304. Եւ յերկարեալ սպարապետին /282/ խօսել ընդ զօրավարին՝ ի բաց <u>մերկեաց</u> զպատրուակ սրտմտութեան ի սրտէ նորա: - 284.

ՄԵՐԿՈՒԹԻՒՆ - և է զգեստ նոցա ասուիս ի ծածկոյթ <u>մերկութեանն</u>, և օդ ոտիցն հնարաւորեն զձև կաւշկաց, ի մորթոց այծից կազմեալ – 192.

ՄԵՐՁ - Այլ իբրև այն ինչ <u>մերձ</u> լինէր ամրոցն ի պաշարումն՝ Ամդայինն Յիսէ, որ Շեհի որդին, որ զզօրապետութիւնն Հայոց ունէր, ճանաչէր՝ ի հրապոյրս Մանազաւեան պետոյն և Ութմանացն ելեալ՝ երագապէս եկն եհաս ի վերայ Աշոտի ԺԵ հազարաւ հեծելօք վառելովք. – 334. Այլ և Վահան Ամատունեաց գաւառին փախստեայ եկեալ ի ձորն, որ <u>մերձ</u> է յամրոցն, ուր տէրն իւրեանց կայր:- 208. ապա հնարաւորեալ պատիր խաբէութեամբ ի կատարումն հասուցանել զխորհրդոյն /346/ զանհաստատ իմացմունսն, և գնաց եմուտ յամրոցն, և զհիւանդութեան կեղծաւորութիւն <u>մերձ</u> առ մահ եդ առաջի: - 348. Դարձեալ նմին նման ասէ Պօղոս, զօրինացն ստորոգելով գրաւորութիւն, այսպէս ասելով, ,,<u>մերձ</u> է բան ի բերան քո և ի սրտի քում, այսինքն է /256/ բան հաւատոց զոր քարոզեմք,,. – 258. եկեալ հասեալ աւուր կորստեան <u>մերձ</u> առ դուրս մեր – 196. Եւ այլք <u>մերձ</u> կացեալ առ Դերանիկն՝ ամբաստան լեալ Աշոտոյ կորապաղատէ, որպէս թէ նախանձու լցեալ, և քսութեամբ վարէր ի մէջ հազարապետին, և թէ արկանել ևս ջանայր զնա յիշխանութենէ անտի նորա: - 342. Եւ Գուրգէն Արծրունի և Մուշեղ Բագրատունի, և ինքն փութացաւ հանդերձ կաթողիկոսիւն, եկն բանակեցաւ յամուրն <u>մերձ</u>, ուր էր արգելեալ Դերանիկն: - 348 և դարձեալ եդին ի վերայ ի տեղւոջ վկայութեանն նորա. ի Գոռոզու <u>մերձ</u> ի լեառն Քշիթ, ուր էր բանակ այլազգեացն: - 290. Եւ ելեալ գնաց զհետ կոչնականացն ի գութ հարազատութեան, և ի կարծիս սաստիկ հիւանդութեան, թէ <u>մերձ</u> ի մահ անկեալ դնիցի, ըստ ստուգելոյ կոչնականացն: - 348. և եհան զզօրսն մինչ <u>մերձ</u> ի գլուխ լերինն և ընդ նոսա նշանս բազումս, իբրև Ռ արանց ընտրելոց քաջ երիվարօք. – 284. Եւ զի էր պաշարել նորա յայնժամ զքաղաքն Մանազկերտ Ապահունեաց աշխարհին, որ ի ձեռս Ապլբառայն էր, և ածեալ հասուցեալ <u>մերձ</u> ի պաշարումն. և ի հասանել գուժկանացն եթող զնոսա, տալով նոցա հրովարտակս ի խաղաղութիւն: -348. Եւ կուտեալ զբազմութիւն զօրացն <u>մերձ</u> ի քաղաքն որ էր ձմերոց իշխանին Հայոց՝ անցանէր բանակէր ամենայն զօրօք իւրովք. – 172. Եւ մինչ նոքա դեռ չև հասեալ էին <u>մերձ</u> առ գունդն Հայոց՝ փութացաւ զօրավարն Գուրգէն յղեաց դեսպանս առ Ապուհեշմ և որ ընդ նմա զօրագլուխքն՝ աղաչել ի խաղաղութիւն – 230. Եւ յելանելն նորա և մօտ լինել ի սահմանս Հայոց զօրօք բազմօք, <u>մերձ</u> ի սահմանս Տարունոյ, Առաջին կոչեցեալ Հայոց՝ իշխան Տարունոյ Բագարատ … առաքէ զոմանս ի մեծամեծաց իւրոց ընդ առաջ նորա պատարագօք ոսկոյ և արծաթոյ և պատուական հանդերձից, համոզեալ մի ելանել յերկիրս Հայոց: - 170. Եւ որք <u>մերձ</u> առ պարսպօքն զճակատն վառէին և զմարտն գրգռէին՝ զգեստն ինքեանց յասուէից կազմեալ – 208. Եւ փախեաւ Յազկերտ յերեսաց /164/ նոցա և ոչ կարաց ճողոպրել. քանզի հասին զհետ նորա <u>մերձ</u> ի սահմանս Քուշանաց, և կոտորեցին զամենայն զօրս նորա. – 166. թէ ,,<u>մերձ</u> է բան ի բերան քո և ի սրտի քում, այսինքն է բան հաւատոյ զոր քարոզեմք,, - 258. իբր թէ <u>մերձ</u> առ երկնիւքն իցէ. – 48. Իսկ իբրև եհաս Բուխայ զօրօք բազմօք <u>մերձ</u> ի սահմանս նոցա, և գրեաց հրովարտակս դիմօք խաղաղութեան՝ դառնալ սիրով միաբանութեան ի հնազանդութիւն արքային – 274. Իսկ իշխանն Աշոտ և եղբարք իւր խոյս տուեալ զկողմամբքն Փոքր Աղբագոյ, <u>մերձ</u> առ յամուրսն Ջղմար և Սրինգ: - 372. Իսկ իշխանքն զհետ մտեալ փախստէիցն անկելոցն յամուրսն՝ ածեն <u>մերձ</u> ի պաշարումն զքաղաքն և զամրոցն 176. Իսկ Վահրամ տեսանէր

զնա մերձ առ սպանդանոցն. – 222. հրաման տուեալ ամենեցուն, զի իբրև մերձ լինիցի գարնանային ժամանակն՝ փութով առանց յապաղանաց առ նա հասանիցեն ամենայն պատրաստութեամբ: - 262. Յայնժամ հրովարտակս արարեալ, պնդադեսպանս արձակեալ ընդ ամենայն սահմանս իւրոյ տէրութեանն … և մերձ ի սահմանս Սակաստանի՝ առ զօրս և զօրագլուխս, աշխարհակալս, գաւառապետս քաղաքայինս, հազարապետս կողմնակալս մեծամեծս աշխարհաց. – 198. որ տիրէր յայնժամ Արզնայ և ներքոյ կողմանն Աղձնեաց մերձ ի սահմանս Տարունոյ: - 172.

ՄԵՐՁԱԿԱՅՔ - հնազանդեցուցին և զամենայն բնակիչս սահմանացն մերձակայից, և զապստամբսն միահաղոյն բարձին սրով: - 160.

ՄԵՐՁԱԻՈՐ - „ի սկզբան թագաւորութեան նախնեաց մերոց, յորժամ ետ Աստուած զաթոռ բազում թագաւորաց ի ձեռս նոցա, և մինչ առ մեզ հասեալ՝ ոչ ոք զօրեաց կալ ընդդէմ մեր, ոչ ի հեռաւոր աշխարհաց և ոչ ի մերձաւորաց: - 198. մերձաւորսն կեղծաւորէր զբարեկամութիւն, և առ հեռաւորսն բարձրացուցանէր զչարութեան սպառնալիս: - 270. և վիշապաձայն որոտալով աի արկանել հեռաւորաց և մերձաւորաց: - 200. Եւ այն ինչ ընդ ջեռնուլն արեգականն, մինչ ագևորեալքն մտանէին զառաջեաւ ամիրային, որպէս որսոյ ինչ պատճառանօք հեծեալ յընտիր երիվարս հանդերձ մերձաւոր հարազատօք իւրովք և ազատովք յընտրելոցն Վասպուրականի՝ ելեալ մեկնեցաւ իբրև վտաւանս երկուս. – 342. և հասեալ դաւող մահ նորա ի յԱնակայ իւրոյ մերձաւորէ: - 92. և օրհնեաց զամենեսեան զհեռաւորս և զմերձաւորս յանձն արար շնորհացն Աստուծոյ – 254. օրհնեցաւ և դրուատեցաւ ի հեռաւորաց և ի մերձաւորաց, բնակաց և եկաց աշխարհիս: - 312. Ընդ որս զչարեալ նախարարացն Ներսէհի՝ գրգռեն զոմն ի մերձաւորաց Ներսէհի, Դարէի անուն. – 82.

ՄԵՐՁԱԻՈՐՈՒԹԻՒՆ - Իբրև յանդիման եղեն դեսպանքն մեծ /172/ իշխանին Աշոտոյ, և ընթերցաւ զգիր պաղատանացն և զյիշատակարան նախնեացն, և զմերձաւորութիւն հարազատութեանն և զկապակցութիւն ուխտին … համագունդ ժողով առնէր ամենայն աշխարհին և ամենայն նախարարօք Վասպուրական տէրութեանն: -174.

ՄԵՐՁԵՆԱԼ - Եւ եղև ի մերձենալն նորա ի բանակն՝ եհան ընդ առաջ նորա գունդ գունդ զօրաց. – 236. Եւ եղև իբրև ձմեռն փոքրացաւ և ժամանակ գարնանային եղանակին մերձեցաւ և օդն մառախլաձև միգախառն յստակեցաւ - 268. որք և ի մերձենալն անգամ տանջեալ լինէին յաներևոյթ զօրութենէն – 50.

ՄԵՐՇԱՊՈՒՀ - առաջապահեստ ճանապարհորդութեանն արարեալ զՄերշապուհ Արծրունի զօրավար Հայոց և զՎահան Ամատունի և եղբայր Մեհուժանայ՝ տարեալ հանգուցանեն ի տեղւոջ հայրենեացն վկայարանի ի Թորդան: - 108. Ի նմին ժամու զգացեալ վասն նորա մեծ իշխանին Արծրունեաց Մերշապհոյ, որ յայնժամ ի Տմորեացն ամրանայր բերդի՝ յղէ առ նա ելանել գնալ ի սահմանացն յայնոցիկ. – 130. մինչ կալ մնալ միայն երեսուն արանց ընդ քաջին Վահանայ, Մերշապուհ և Յաշկուր Արծրունիք, և Կամսարն Ներսէհ, և ի տանէն Ամատունեաց՝ զորոց զանուանսն անգիտանամ – 134.

ՄԵՐՇԱՊՈՒՀ ԱՐԾՐՈՒՆԻ - առաջապահեստ ճանապարհորդութեանն արարեալ զՄերշապուհ Արծրունի զօրավար Հայոց և զՎահան Ամատունի և եղբայր Մեհուժանայ՝ տարեալ հանգուցանեն ի տեղւոջ հայրենեացն վկայարանի ի Թորդան: - 108. մինչ կալ մնալ միայն երեսուն արանց ընդ քաջին Վահանայ, Մերշապուհ և Յաշկուր Արծրունիք, և Կամսարն Ներսէհ, և ի տանէն Ամատունեաց՝ զորոց զանուանսն անգիտանամ – 134.

ՄԵՔԵՆԱՅ - Եւ զայլս ազգի ազգի զինուորք ունէին վաղերք և վակուրք, սուսերք և սուինք, տապարք և վիրգահանք, մեքենայք և ռմբաքարք, վահանք և նիզակք: - 208. Եւ ի բազում յուզիցն և ի խնդրոցն և զօրաժողովն լինելոյ և պատերազմ ընդդէմ վառելոյ և զձև ամրական մաքառմանցն յարդարելոյ և բռնալիր ուժեղագոյն մեքենային բախմանց քարձգութեանցն, զոր և ընդունայն աշխատութեամբ վարանեալ, անըստնանելի /հավանաբար՝ անստանալի/ մնալով ամրոցին՝դառնայ յիւր իշխանութիւնն: - 326. և կանգնեցին պատնէշ և կուտեցին քարինս և կանգնեցին մեքենայս և կացին ի

պատրաստութեան: - 280. և մինչ ոչ ելին ի գլուխ կարծիքն, այլ իբրև զմեքենայ ինչ յամուր անդամանդեայ պարսպէ ի բաց դառնայր – 250. Իսկ ի չորրորդ ամին դարձեալ ի բարձրագոյն քան զառաջինն կազմեալ զմեքենայս չարին արկանել զԳրիգոր ի քուրայս նեղութեան. – 252. Այլ և հուր և ծծումբ նաւթիւ բարձեալ ի գործ պատերազմին, և զլոյծ բնութիւնն յանօթս ապակեղէնս եդեալ, և մանր զծծումբն ընդ նմին խառնեալ, եդեալ ի պարսատիկ մեքենայից, և զհուրն առ ընթեր նմին, հնարաւորեալ արկանել զամրոցաւն: - 208.

ՄԵՔԵՆԱՒՈՐ - զոր սարսափեմ և հիացմամբ մեծաւ յապուշ կրթին միտք իմ ընդ ժուժկալութիւն այնքանեաց բազմահնար մեքենաւորդ չարչարանաց. – 106.

ՄԷՋ - և ագուցեալ զոտս պատրաստութեամբ Աւետարանին խաղաղութեան և սուսեր ընդ մէջ ածեալ զբանն Քրիստոսի, որ հատու է քան զամենայն սուր երկսայրի – 252. և դեռ զիւրաքանչիւր սուսեր ածեալ ունէին ընդ մէջ իւր և վահան ի վերայ թիկանց եդեալ. – 220. և սուսեր ընդ մէջ ածեալ, և հեծուցեալ ի մեծազարդ ջորւոջ, և նժոյգս առաջի և զկնի ի զարդ և ի զէն սպառազինեալ և ձայնք փողոց և դոփիւնք թմբկաց և այլ երաժշտական գործոց հնչեցուցանէին շուրջանակի. – 236. կապարճս և աղեղունս պատրաստականս զառաջեաւ ի նիւսն ունելով, և զարդս ոսկեզարդս և արծաթագործս և կամարս ընդ մէջ ածեալ – 208. վահան ի թիկունս եդեալ, սուսեր ընդ մէջ ածեալ, նիզակ ի ձեռին ունելով - 208. և սուսեր ընդ մէջ ածեալ զբանն տերունական, զոր ասացն, թէ ,,յորժամ մատնիցեն զձեզ, մի՛ հոգայցէք թէ ո՛րպէս, կամ զի՛նչ խօսիցիք – 204. ուր զսեղանն սուրբ և զգաւազան հովուական և զմատանին պատկերեալ և զգօտին աշխատասէր միջոյն թողեալ ի հանապազորդ յիշատակ լուսաւորութեանն մերոյ հօրն: - 104. և ետ բերել նմա ըստ օրինի գլխապետութեան սուսեր իշխանական ընդ մէջ արկեալ և գօտի արիական շրջապատեալ զմիջաւ, քուրք խիզախողք և երիվար բարձրավիզ, ոտնատորոփ, խրոխտալիր, յարմարական առ ընթացս պատերազմականս: - 308. Եւ զգեցոյց նոցա հանդերձս և կանգնեաց նշանակ իշխանական և էած սուսեր ընդ մէջ և կամար ականակապ և երիվար ընտիր մեծազարդ. – 314. և վառեալ զինքեանս յընթացս պատերազմին, զգեցեալ զզրահս արդարութեան և պնդեալ զմէջս ճշմարտութեամբ – 252.

ՄԷՋԵՐԿՐԱՅՍ - քանզի սուրբ նահապետացն տասանց բնաւ ոչ երբէք ումեք երևի ասել ի Մէջերկրայս ունել բնակութիւն: - 30.

ՄԹԱՆԱԼ - Յայնժամ թանձրացեալ մթասցի, բալ և մառախուղ խաւար ի վերայ լերանց և դաշտաց քոց. – 148.

ՄԹԵՐ - Եւ բացեալ զմթերս գանձուցն բաշխէր առատապէս ամենեցուն իւրոց սպայիցն: - 168.

ՄԹԵՐԵԱԼ - և քանդեալ աւերեաց զամենայն ապարանս թագաւորին և այրեաց զնոսա հրով, և բազում գանձս մթերեալս յափշտակեաց անչափ աւարաւ գանձս ոսկոյ և արծաթոյ և հանդերձից, և անասուն բազում յոյժ, և բազմութիւն գերեաց իբրև զաւազ ծովու անթիւ: - 150. Եւ քանզի յոյժ անկասկածելի էր ամրոցն, և գանձս ոչ սակաւս մթերեալ ի նմա ի բազում ամաց – 346. որով ժամ ի դէպ իսկ է, առ յայնժամ զարժանապէս նոցա ասել փոխարէն և անմեղադրելի բազմաց, եթէ այնչափ մթերեալ համբարք կերակրոց կուտեցին ի հալոցսն Բէլայ – 38.

ՄԺԱ - իսկ զՆախճաւան քաղաք և զԳողթն գաւառ հանեալ էր ի Վասպուրականէ բազում ժամանակօք յառաջ, ՄԺԱ ամօք, յամի այրման եկեղեցւոյն Գրիգորի և վտանգաւոր մահու զօրացն Հայոց: - 390.

ՄԺԵ - Քանզի ասեն սկիզբն աստուածոց՝ զհին ոմն Բելոս, հայր Դիայ, որ կոչի հայերէն Արամազդ՝ ՄԺԵ բիւր ամաց աւուրս ունել և ևս յառաջ. – 36.

ՄԻ[1]/թվ./ - Երէց մի Շապուհ անուն, և մի ոմն յոռամկաց ձորոյն՝ լնուլ զթիւ գնդիցն - 202. և ըստ Եսայեայ՝ թէ ,,բարբառոյ միոյ հազարք կորիցեն, և ի բարբառոյ հնգից բազումք փախիցեն,,: - 202. զի գործ մի գործեմ ես յաւուրս ձեր, գործ որում ոչ հաւատայցէք, թէ ոք պատմեսցէ ձեզ: - 200. իսկ եթէ մի յանդամոցն կորիցէ՝ զպատահումն խեղութեան ընդունիցի, այլ ոչ ի բաց դարձցի կենդանի: - 194. սոցա ի թիկունս հասեալ և հովիւ մի՝

պարսատկաւ քարինս ի վերայ արկանէին. – 202. Բայց որդին Շեհայ ի մտանելն ի Պարտաւ՝ եթող անդ քաղաքապետ զմի ի հաւատարմաց իւրոց Յամանիկ ոմն: - 338. բանսարկուք ոմանք հրապոյրս պղտորս քսութեան ածէին տանէին ի միոջէն առ միւսն, որպէս թէ զչարիսն իրերաց առ հազարապետն խորհել նիւթել յայտ ածէին և զպատճառն զմիմեամբք արկանէին ի գաղտնիս քրթմնջելով: - 342. յաւուր միում … ետ հրաման իշխանն առնն կորովի եղբօր իւրոյ Աբասայ Հայոց սպարապետի՝ վառել պնդակազմ պատրաստութեամբ, զօրու և զինու և զարդու ամենայարդար հնարաւորութեամբ, որպէս օրէն է նահատակաց քաջ արանց – 344. և զի մի՛ մի ըստ միոջէ ասացից – 46. Եւ դարձեալ պատասխանի ասէ, մի՛ տալ տեղի՝ լսել հրամանի թագաւորին. թէ վտանգ ինչ հասանէ՝ կրել հանգոյն զինչ կրեցինն: - 132. ,,են ոչխարք իմ, որ ոչ են յայսմ գաւթէ, և զայն ևս պարտ է ինձ ածել այսր, և ձայնի իմում լուիցեն և եղիցին մի հօտ և մի հովիւ. – 224. ,,լեառն մի է յոյժ անհնարին բարձր, որոյ անդր քան զնա չի՛ք բնակութիւն մարդկան,,. – 48. Այլ ճշմարտագոյնք են Սողոմօնեանքն, զի ասէ, ,,վա՛յ միումն. յորժամ գլորիցէ, ո՞ յարուցանիցէ զնա,,. և եթէ ,,լաւ են երկուք քան զմի, զի եթէ միովն գլորիցի ոք՝ կանգնեսցի,,: - 354. ՄԻ՛[1] /թվ./ - Երէց մի Շապուհ անուն, և մի ոմն յռամկաց ձորոյն՝ լնուլ զթիւ գնդիցն - 202. և ըստ Եսայեայ՝ թէ ,, բարբառոյ միոյ հազարք կորիցեն, և ի բարբառոյ հնգից բազումք փախիցեն,,: - 202. զի գործ մի գործեմ ես յաւուրս ձեր, գործ որում ոչ հաւատայցէք, թէ ոք պատմեսցէ ձեզ: - 200. իսկ եթէ մի յանդամոցն կորիցէ՝ զպատահումն խեղութեան ընդունիցի, այլ ոչ ի բաց դարձցի կենդանի: - 194. սոցա ի թիկունս հասեալ և հովիւ մի՝ պարսատկաւ քարինս ի վերայ արկանէին. – 202. Բայց որդին Շեհայ ի մտանելն ի Պարտաւ՝ եթող անդ քաղաքապետ զմի ի հաւատարմաց իւրոց Յամանիկ ոմն: - 338. բանսարկուք ոմանք հրապոյրս պղտորս քսութեան ածէին տանէին ի միոջէն առ միւսն, որպէս թէ զչարիսն իրերաց առ հազարապետն խորհել նիւթել յայտ ածէին և զպատճառն զմիմեամբք արկանէին ի գաղտնիս քրթմնջելով: - 342. յաւուր միում … ետ հրաման իշխանն առնն կորովի եղբօր իւրոյ Աբասայ Հայոց սպարապետի՝ վառել պնդակազմ պատրաստութեամբ, զօրու և զինու և զարդու ամենայարդար հնարաւորութեամբ, որպէս օրէն է նահատակաց քաջ արանց – 344. և զի մի՛ մի ըստ միոջէ ասացից – 46. Եւ դարձեալ պատասխանի ասէ, մի՛ տալ տեղի՝ լսել հրամանի թագաւորին. թէ վտանգ ինչ հասանէ՝ կրել հանգոյն զինչ կրեցինն: - 132. Այլ Քրիստոս իւր ոչ տուն ոչ տաղաւար ասի, այլ մի տէր Յիսուս Քրիստոս, յԱստուծոյ և ի մարդկանէ կատարեալ. – 394. այսր աղագաւ խնամ տարեալ թագաւորին կնոջն՝ զի ոչ ել առ Երուանդ և ոչ միով իւիք պաշտպանութեամբ: - 90. այր հեզ, խոհական, խորհրդական, համեստ ի բանս, համեստ ի նայեցուածս, որ ոչ բազմաց քան եթէ միոյն, այսինքն Քրիստոսի՝ զինքն ծանօթ ջանայր կացուցանել: - 94. անհասական իմն շնորհիւ փառօք և պատուով պսակեալ զմարդն իշխանական ճոխութեամբ՝ վայելեցուցանէ դրախտին, տալով նմա բազմամեայ կենաց սահման իբրև զմի օր - 20. անտի և անդ ոչ ոք զօրէր Զրուանայ թագաւորել. բայց միայն կին մի անուանի Դիոնիսեայ, հարստայեղց վավաշոտ հրամանի բարուք. – 16. Ապա ուրեմն յայտ է ըստ կարգի ասացելոցս, եթէ որ շարժէ զերկնային մարմինն՝ մի է և անբաւ զօրութիւն ունի և անմարմին է և անեղ է անապական, և ինքն ոչ յումեքէ, և այլք ամենեքեանք նովաւ. – 54. Ասէ երանելին. ,,տեսանեմ զքեզ որպէս զմի ի զառանցելոց խելագարեալ որպէս խօսիսդ. – 294. Արդ այսքանեաց վկայութեանց ի մի վայր եկելոց՝ մի ելցուք զհետ առասպելաբանիցն թէ ընդ անկոխն գնալով ճանապարհ. – 260. արդ դու յարուցեալ գնասցես ի մի քաղաքացդ Հայոց, որպէս օրէն է աշխարհակալաց. – 178. Բայց արդ որպէս յառաջագոյն հատուցի զարտաքոյ պարսաւանաց զիս ներքոյ գրել, վասն ոչ ոճով զսրայս կարգել դնել ի շարի աստ զշարագրածս, վասն ոչ բաւելոյ զանչափութիւնն ի մի վայր գումարել յանմասնաւորաբար նշանակութեամբ – 308. Բայց Գրիգոր կեցեալ յետ դարձին իւրոյ զմի ամ՝ մեռանի իւրով մահուամբ: - 310. Բայց դոյզն մի զամբարշտին Մեհուժանայ զյանդգնութիւնսն ի վերայ Հայոց բացայայտեցից ի շարի աստ: - 102. բայց մնայ ի հարստութեան Պտղոմէականն միայն, մինչ տիրել Կղէոպատրեայ կնոջ միոյ եգիպտացւոյ

որ յետ բազում ժամանակաց, մինչև յՕգոստոս կայսր: - 72. Բայց տիկինն Սոփի կեցեալ յետ մահու Դերանկին զտարի մի և զամիսս Ը՝ յաւելաւ առ հարս իւր. – 356. բլուր մի պարսպեալ տաճարախիտ շինուածովք, որոյ հայեցածն առ դաշտակողմն ի վայր կոյս բերի, ի խաղս գետոյն Երասխայ – 392. Գունդ մի հարուստ անցեալ մնացին ի Համբոյրազան աւանի Մարդաստան գաւառի, ուր եպիսկոպոսական աթոռ մարդպետականին յայնժամ փոխեալ դնէր ի Նախճաւան քաղաքէ. – 372. գուցէ ներհակդ առ ընթեր կալով՝ ի միում ժամու բարկացեալ, և զքեզ ևս վարատիցէ: - 46. Գրէ հրովարտակ մի զայս օրինակ: -184. Դէպ եղև միում ի նոցանէ մեռանել, որում կոչէին Աբդլայ. – 158. երկոտասան արդու ալեր և քառասուն ոչխար ի միում գիշերի ուտել Բէլայ. –38. և անծանօթ զարմանալի ծառոյն դէպք՝ ի միում աւուր ունել աճմունս փոյթ ընդ փոյթ. և դարձեալ սուզականութիւնս յանկարծօրէնս լինել – 50. և եկեալ ի մի վայր Գագիկ և Գուրգէն եղբարք համահարք և միով մօր ծնունդք, յերկուց քաջատոհմիկ գահակալութենէ Սենէքարիմայ և Դաւթի – 388. Եւ զօրագլուխ կացուցանէ նոցա զայր մի Բուղայ անուն, ազգաւ թուրք. – 200. և մածեալ պնդեալ իբրև զբլուր պղնձի, իբրև զմի այր, և ասելով միաբան իբրև ի մի բերանոյ. – 136. և մածեալ պնդեալ իբրև զբլուր պղնձի, իբրև զմի այր, և ասելով միաբան իբրև ի մի բերանոյ. – 136. և ամենայն ոք ըստ ազգս ազգս փութայր ի հնարս ինքեանց վաստակոցն մի զմիով ելանել. – 268. և անդ լինէին ժողովեալ ամենայն բազմութիւն աշխարհակոյտ ամբոխից գաղթականաց գաւառացն կողմանցն Աղբակոյ, Զարէիվանի և Ակէոյ և ի լեռնակողմանցն Աղզոյ և Ոտնն Առնոյ, մի կողմն ի Ջողայ լեռնէն և անդր: - 226. և անդ մարգարէն Եզր և թագաւորն Սաղաթիէլ վախճանեալ թաղի ի Մարբակատինա ի բլրակի մի տեղւոջ. – 66. և անյապաղ մինչ այս մինչ այն՝ նոցա հարեալ ընկեցեալ ի զօրացն Պարսից գունդ մի հարուստ արք իբրև ՃԽ: - 128. և արարեալ անդ յոլովագոյն աւուրս իբրև տարոյ միով. – 370. Եւ արդ ՆԺԱ են մարգարէք, որ զվկայութիւն աստուածութեանն Քրիստոսի ստուգաբանեն ճշմարտութեամբ յանցնիւր ժամանակս, իբրև ի միոջէ բերանոյ, թող զԱւետարանն և զառաքեալս նորա: - 246. Եւ ելեալ թագաւորն նստաւ յատենի ի բարձրաբերձ բեմի միոջ, ի մէջ աշխարհակոյտ ամբոխի անհուն բազմութեանն – 242. Եւ ելեալ յիւրաքանչիւր տեղեաց մի քան զմի յառաջանալ ի կոչումն Բուխայի, և ժողովեցան ի մի վայրի և եկին կացին առաջի զօրավարին Տաճկաց: - 296. և եկեալ ի տեղի մի ծովային և զվրանսն և զբանակն զամենայն ի ներքս եդեալ մտանէաք ի նաւսն – 50. և եհար սատակեաց Ապումկդէմ ի միում ասպատակի Ը այր, և զերիվարս նոցա, և զէնս և զզարդ մերկեաց ի նոցանէ, եհար զայլազգիսն ի հարուածս մեծամեծս և ինքն դարձեալ ասպատակեաց զկնի նոցա: - 304. և եղեն իբրև զմի այր կամ թէ իբրև զվէմ մի բլրաձև, արձանացան կարծրացան պնդութեամբ՝ անմատոյց լինել ի նոսա զօրութիւն երկաթի. – 230. Եւ եղև զկնի երից աւուրց անցանելոյ ետուն թուղթ մի տանել առ Գուրգէն, գրեալ Բուխայի լի դառնութեամբ, կնքեալ մատանեաւ արքայի, իբրև այն թէ ի դիմաց արքային և յարքունուստ եկեալ. – 236. Եւ եղև ի միում աւուրց, ի գալ նորա ի նմանէն՝ ձայն օտարոտի, և ազդումն ահագին և դիւական անկեալ ի վերայ /գրքում՝ վերա/ նորա՝ ուշաթափ անկեալ դնէր – 158. Եւ եղև իբրև գումարեցան ի մի վայր ամենայն բազմութիւն զօրացն աւելի քան զՄՌ-աց, և կազմեցին ռազմ և կարգեցին ճակատ – 284. և եղև իբրև զբլուր մի մեծ երկաթի, կամ զվէմ անդամանդեայ. – 284. Եւ եղև յետ մեծ պատերազմին, որ յառաջ քան զզրուցացդ գրելոյ ելին, ի գլուխս Մանազաւեան նահանգին և Յուշոյ դաշտին, և զխռովարարս քաղաքացն ի մի վայր գումարելոցն, որք և յունայն ասպատակէին աշխարհ – 398. և զինքն համեմատ Փրկչին ասաց լինել և ուղեկից ճանապարհի նորա, յասելն Եսայեայ մարգարէի, ,,հեծեալ մի իշոյ, և հեծեալ մի ուղտու,,՝ զայս ամենայն յինքն յարակցեր: - 164. և զտարի մի կացեալ մարմինք սպանելոցն անյօշելիք ի գազանաց և ի թռչնոց: - 368. Եւ զօրացն քաջալերեալ ընթացան յիւրաքանչիւր զէնսն և հեծեալ յընտիրս երիվարացն՝ կացին ի հանդիպոջ և հանդիսացան գումարեցան ի մի վայր և պնդեցան կարգեցան մածեան հոլովեցան յինքեանս – 230. Եւ էր գրեալ ի միում թղթի անդ, յիշեցուցանելով զոր ինչ գործեաց Աշոտ ի զօրսն Ապահունեաց զյաղթանակ

պատերազմին և զհոյակապ անուն ստանալոյն՝ ասէ – 382. և ընդ հարթն գնասցուք ճանապարհ, և մի խոտորեսցուք մի յաջ և մի յահեակ. – 256. և թափառական զվէմս ապաստան արարեալ յանկասկածագոյն տեղիս դարանի ի փոքր վիմամէջս ի կարկառս հովտաձևս հանդէպ հարաւոյ քաղաքաբերդին Վանի, մօտ այն տեղի, յորում բղխէ աղբիւրաբար առ ստորոտով բլրակի միով, մօտ յեզր ծովուն – 84. և թուղթ մի գրեալ և կնքեալ լի խորամանկութեամբ և կեղծաւոր խարդախութեամբ ըստ հնարագիտութեան որդւոցն Իսմայէլի. – 234. և իբրև զմի անձն, վառեալ ի զէն և ի սուր և ի ճակատամարտ՝ հասեալ յամուրս՝ տապալէր զզօրութիւն նոցա սրով և աղեղամբ, ի փայլիւն սուսերի և նիզակի և ի գիշերամարտ նահատակութեանց, ըստ նմանութեանն քաջ զօրավարին Իսրայէլի Յեսուայ կամ Գէդէովնի կամ թէ նոյն ինքն նահապետին Աբրահամու, ի վերայ հասեալ Քանանացւոց, զյաւէտ յաղթութեան նահատակութիւն նահատակեալ՝ և դառնայ մեծաւ յաղթութեամբ: - 312. և լի ծաղու և կատականօք այպն արարեալ՝ արհամարհանօք անարգեցին զբռնաւորն, իբրև զմանուկ մի անպիտան կամ զծեր զառանցեալ և խելագարեալ, որ ոչ ըստ իւրոց կամաց զոր ինչ ախորժիցէ խօսիցի: - 264. և լինիցիս իբրև զմի ի մահապարտաց, որ անձամբ զանձինս հերքեցին ի կենաց վտանգաւոր մահուամբ, որպէս և քեզ պատրաստեալ է – 294. և Խ արամբք ի դիմի հարեալ հազարի միով՝ սպան զբազումս ի նոցանէ զընտրելոցն Յունաց – 302. և խեցգետի մի ել, կորզեալ ձգեաց ի ջուրն զինուորս ՃԴ: - 50. Եւ Խոռեմայ առեալ զթագաւորութիւնն՝ յաւուր միում զգեցեալ էր հանդերձ թագաւորական և հեծեալ յերիվար արքունի, և շրջէր ի մէջ ամենայն զօրացն իւրոց, ցուցանել զինքն և քաջալերել զզօրսն. – 154. և խոտեալ ի բաց ընկենուք զմիով անընկեր և անվերոյ իրաց հանդէս, որպէս և իսկ կոչեցեալ մարգարէն ձեր Մահումաթ – 246. և խուռն բոլորեալ գունդն կային մածեալ իբրև զմի այր: - 284. և կալան անդ զտիկնայսն ամենայն և զհարճսն և զորդիսն արքայի, և զերիվարսն արքունական, որով եկեալ էր Խոսրով արքայ ի Տիսպոն՝ հանին գաղտաբար ի գիշերի, և արքայ Խոսրով ոչ միով իւիք չէր տեղեակ. – 150. Եւ հասեալ ի մի վայր գան հովիտն Կուղան, ուր Գուրգէն բանակ արարեալ /362/ էր ի Կարկինեանս տեղւոջ բազմաձեռն զօրու. – 364. Եւ հարան զօրքն Գաղատացւոց, ի մեծամեծաց մինչև ի փոքունս նոցա, և ոչ մնաց ի նոցանէ և ոչ մի: - 66. և հաւատալն նորա ի մի Աստուած Հայր և մի Որդի նորա ի Բանն Աստուած Յիսուս Քրիստոս և ի մի Հոգի սուրբ, զուգակից և բնութենակից և փառակից Հօր և Որդւոյ, ի մի Աստուածութիւն կատարեալ. – 94. և հաւատալն նորա ի մի Աստուած Հայր և մի Որդի նորա ի Բանն Աստուած Յիսուս Քրիստոս և ի մի Հոգի սուրբ, զուգակից և բնութենակից և փառակից Հօր և Որդւոյ, ի մի Աստուածութիւն կատարեալ. – 94. և մի զմիով հետ ստիպէր՝ փութալ միոյ միոյ ի նոցանէ յանդիման նմա հատուցանել ծառայական սպասաւորութիւնս, զոր և արարին իսկ Աշոտ և Գագիկ և Գուրգէն, կամաւոր և ակամայ զնորայն կատարելով հրամայեալս – 370. և մինչ այսմ գործոյ պարապէր՝ դէպ եղև նմա ի կողմանս Եգիպտացւոց հանդիպել առն միոյ մոնազնի, որում կոչէին Սարգիս Բհիրայ, որ էր եղեալ աշակերտ մոլեգնութեանն արիանոսաց. – 158. Եւ մինչ երթայր և խորհէր՝ խոցեալ նորա երիվարն, և յանկարծակի այն ինչ ոտն երիվարին շաղեալ ընդ փոքր թուփ մի, որպէս ասեն, զուլումբեալ ի վերայ գլխոյն ջարդեալ զողն ու լարն՝ ի բաց ընկէց զհեծեալն զքաջ զօրավարն Ապումկդէմ: - 304. և միով կերակրով և միով հանդերձիւ բաւականանան զամառն և զձմեռն. – 192. և միով կերակրով և միով հանդերձիւ բաւականանան զամառն և զձմեռն. – 192. Եւ յաւուր միոջ հրաման ետ թագաւորն ածել զառաջեաւ. – 294. Եւ յաւուր միում լեալ նորա ի տխրութեան ի սպառնալեաց հօրեղբօրն իւրոյ՝ եկն եմուտ առ նա Ալի որդի Ապուտալպի և ասէ, զի՞նչ են պատճառքդ զի նստիս տխրեալ. – 160. Եւ յետ աւուր միոյ ընդ մէջ լինելոյ՝ դարձեալ խմբեցաւ պատերազմն, և հարան զօրքն արքունի. – 276. և յերկարեալ գործ պատերազմին հարուստ մի ժամ - 64. և Յիսէ տուեալ պատերազմ ընդ քաղաքին, զտարի մի հանդերձ ամենայն նախարարօքն Հայոց, անգամագիտ լինելով՝ դառնայ յԱսորիս. և այս եղև երկիցս անգամ: - 338. և նաւէաք ի կղզի մի ծովուն, որ ոչ էր հեռի յերկրէ – 50. Եւ նուազեալ ազգին Արծրունեաց ոչ

ոք մնաց, բայց միայն մանուկ մի Համամ անուն, որդի Արշաւիրի ծերոյ եղբօր Խուրէնայ, որ կայր ի դրան արքունի – 90. Եւ նստէր անդ ի բացեայ ի վերայ բլրի միջոջ տէր Մուշեղ որդի սպարապետին և կայր հիացեալ ահեղ և մեծ զարմացմամբ: - 284. և ոչ ի միում ճակատու դարձոյց Ապումուսէ զերեսս իւր յերեսաց Բուխայի. – 286. և ոչ միոյ ումեք կորնչել, բայց ի միջոջ ումեմնէ, որում /գրքում՝ որուն/ անուն Աշխէթ ճանաչէր, այր պերճ և անուանի ի զօրուն քաջամարտիկ, ունելով ընդ ինքեան գունդ հարուստ /270/ իբրև ծով առելոյ զօրավարաց. – 272. և ոչ միոյ ումեք կորնչել, բայց ի միջոջէ ումեմնէ, որում /գրքում՝ որուն/ անուն Աշխէթ ճանաչէր, այր պերճ և անուանի ի զօրուն քաջամարտիկ, ունելով ընդ ինքեան գունդ հարուստ /270/ իբրև ծով առելոյ զօրավարաց. – 272. ունէր կինն զանձ բազում, և նորա դուստր մի Անուշ անուն. – 90. և վառեալ ի զէն և յասպազէն՝ արձանացան իբրև զմի այր՝ և յանդուգն դիմացուածով խուռն յարձակմամբ հարեալ ի դիմի, ուր քաջքն այլազգեացն ճակատէին ընդ աջաթև /380/ կողմն. և պատառեցին զգունդն, և պարտեցին զախոյեանսն. – 382. Եւ վասն զի մի և նոյն շարժումն է երկնի՝ յայտ է եթէ ի միջոջէ ումեմնէ է և ոչ ի բազմաց. - 54. և տեսեալ զուարակ մի՝ գողացաւ և տարեալ մեկուսի յազեաց զնա և կարկառեալ քարամբք՝ մնայր երեկոյինն – 46. և տուեալ պատերազմ զաւուրս ոչ սակաւս, որպէս թէ ամսօրեայ մի ժամանակ – 66. և փախեան այլազգիքն յերեսաց Գուրգէնի մի կողմն: - 308. զայս ասաց Եսայի միով բանիւ. – 210. զի եթէ երկոքեան միով բարեպաշտութեամբ ոչ վառեսցին՝ ոչ ինչ օգուտ ի միջոէն բերցի: - 256. զի եթէ երկոքեան միով բարեպաշտութեամբ ոչ վառեսցին՝ ոչ ինչ օգուտ ի միջոէն բերցի: - 256. զի եկեսցէ առ նոսա առանց պատկառանաց և երկիւղի և առանց միոյ իւիք կասկածանաց – 226. զի և զմատեանս առաջնոցն մեծասաստ ստիպով ի մի վայր գումարեալ՝ հրամայեաց այրել. – 44. զի է անդ լիճ մի մեծ մօտ ի տեղին, որ էր տեղի ասպարիսի ճակատամարտ զօրու նահատակութեան քաջացն մերոց իշխանացն Վասպուրականի – 226. Զի թէ միոյ փայլատակման ընթացք և ճայթումն ամպոց բաւական է պակուցանել քաղել զուշեղութիւն ոգւոց, զի՞նչ ինչ յայնժամ կրէին ոգիք մնացելոցն յերկրի, ի սահանաբաց և յանդնդաքակ վրդովմանցն հոսելոց, նախ քան զջրհեղեղ ջուրց սատակումնն: - 32. զի մինչ ընդխոնեցաւ պատերազմն և դէմ առ դէմ ճակատէին՝ յանկարծակի այր մի ի նմանութիւն լուսոյ եկն եկաց ի մէջ ռազմի ճակատուն – 232. զի Յամանիկն թուղթս և դեսպանս մի զմիոյ կնի առնելով առ իշխանս աշխարհիս՝ զինքն յառաջանալ ի վերակացութիւն Հայոց – 340. զի ստուգեալ քննեցին՝ միոյ առն երկուս յինքեանց հարեալ ընկեցեալ էր, թող զվիրաւորսն և զկողոպուտ և զձերբակալսն – 234. զորոյ ձախողակի իմացմունս ծանուցեալ իշխանացն Հայոց՝ միով հաւանութեամբ գրեն յարքունիս և խնդրեն զԱհմաթ /338/ որդի Հալթի. – 340. զտարի մի ողջոյն մնալ յապականութեան երկրի. – 32. էր և նորա աշակերտ մի, որում անուն էր Սաղման. որ ի ժամ մահու միայնակեցին՝ պատուիրէր նմա և ասէր – 162. թէ առաքեսցէ նոցա այր մի, որ փրկեսցէ զնոսա - 218. Ի սոյն աւուրս որք մնացեալ էին ի տանէն Արծրունեաց իբրև լուան զպարտումն զօրացն արքունի ի Ծանարացն՝ ի մի վայր եկեալ գունդ կազմեալ հետևազօրքն մարտակցօք հանդերձ խառնաղանջ ամբոխիւ՝ լինին թուեալ արք S – 304. իբրև հարուստ մի մեկնեցան ի գնդէն Պարսից՝ ամբարձեալ Սամուէլ զմիողնին՝ ազդոյ վէրս ի վերայ եդեալ առ ժամայն եհատ զնա ի կենաց. – 106. Իբրև օր մի լինէր պարապոյ … և ահա հնչեցին փողք ուժգին գոչմամբ ազդ առնել քաղաքին՝ եթէ ել նստաւ թագաւորն յատենի – 240. իսկ այսոքիկ ոչ այլ ումեք արարածոցս պատշաճին, բայց միայն միոյ Աստուծոյ, և նա է Արարիչ: - 54. Իսկ Ասուդ գհետ Դարէհի ելեալ ի պատերազմ ընդդէմ զօրագլխացն Աղէքսանդրի՝ Հերակղեայ նահատակութեամբն դիւցազնաբար ի դիմի հարեալ՝ ի բաց նահանջէ զուժեղագոյնս զօրագլխացն Աղէքսանդրի հարուստ ժամ մի, մինչ հիացումն զօրօքն արկեալ՝ տային տեղի փախստէի. – 68. Իսկ ի միում յաւուրս անցեալ գնացեալ Գուրգէն՝ հանդիպի նմա ի քաղաքին Պարտաւ - 370. իւրաքանչիւր զօրօք գումարեալ, ի մի վայր խաղացեալ՝ գնացին հասին յայն վայր – 174. կարգեցին ըստ գունդս գունդս առ Շ այր նշանակ մի. – 280. հարուստ մի հեռի զքարանցն տաշելոյ

զհոլովումն բերելով առ տրամադրութիւն կոչարանին իբրև ասպարիսօք երիւք, զբացագոյնն մօտագոյնս գործելով սայլիցն հոլովմամբ. – 396. Հրաման ետ արքայ Կաւատ արկանել զնա ի տուն մի արքունական սենեկացն. – 152. մանաւանդ զի յառաջագոյն /308/քան զմեզ այլոց ոմանց բանակարգեալ գրեալ հաւաքեալ է ի մի շար: - 310. Մարութաքբաղդան, իբրև … ունէր զվեց ամիս, սպանաւ և նա ի միջոջէ ումեմնէ որում անունն էր Ներեղիբդ և թագաւոր էր. – 60. Մինչդեռ կայր ևս կենդանի՝ ետ կանգնել փայտ մի մեծ և բարձր յոյժ, և դնել զնա ի ծայր փայտին, ունել ի բարձրաւանդակ տեղւոջ. – 290. Յայնժամ բարկացեալ բռնաւորն իբրև գազան մի կատաղեալ, յարձակեալ ի վերայ գառանց գէշ արկանել զնոսա՝ հրամայեաց պնդել զնոսա ի ցիցս կապեալ ոտիւք և ձեռօք. – 292. Յայնժամ իբրև գիտաց զօրավարն Հայոց և ոչ միով իւիք կարաց հաճել զմիտս նոցա, այլ միաբան ետուն հրաման ելանել ի պատերազմ – 230. Յայսմ վայրի ոչ ի վերայ միոյ ազգի և ի վերայ միոյ աշխարհի է լալումն ողբումն և կոծումն, այլ ի վերայ բոլոր ազգաց և աշխարհաց Հայաստանեայց: - 196. Յետ այսր առեալ Սմբատայ զԱրտաշէս ըստ ձևոյ տառապելոյ միոյ, որ շրջիցի խնդրիցէ օր ըստ օրէ զբաւականութիւն աւուրն – 84. յերկարեցաւ գործ պատերազմաց սոցա իբրև մօտ ի լնուլ ամի միոյ.- 286. Յոքունց կամ թէ բնաւից կարօտանամ իմաստասիրաց գումարից ի մի վայր հասելոց՝ զողբերգականացն ճոխաբանել ճարտասանութիւնս. – 352. Նոյնպէս և զպայման ժամանակացն յանբաւ բիւրս ամաց ձգեն որ ոչ և ըստ միոյ յեղանակի հաւաստանայ առ ի ցուցումն, ոչ արեգական բերմամբ ի նոյն կէտ ամսոց և աւուրց և ոչ ըստ չորից փոխմանց առ ի յեղումն ժամանակի տարւոյն, այլ և ոչ ըստ լուսնական լրութեանն և սուզականութեան: - 18. Շինեաց և եկեղեցի մի յԱմրական քարանձաւի, ի կատար քարանձաւին, յանուն քաջամարտիկ զօրավարին սրբոյն Գէորգեայ - 390. որ կատարեցան միանգամայն սրով ի միում աւուր ի մեծի ուրբաթի զատկին: - 106. որոց անուանք ճանաչին, միոյն Գէորգ յԱկեցի տոհմէ, և միւսոյն Խոսրով ի Գաբաելեան տոհմէ: - 222. Որպես և Յոյնք երբեմն համբաւեցին՝ Հերակղէս աստուած յիսուն կոյս ի միում գիշերի ապականէր. – 38. որք ի միում ժամու սպանան արք Խ, ամենեքեան ի չափ հասակի եկեալ: -152. Վասն զի այլոց գործք մի կամ երկու կամ այլս ևս գործք գործեալ է. իսկ սորայս՝ գերազանցեալ յաճախեաց քան զբազմացն իրողութիւնս. – 302. Փութանակի և վաղվաղակի իւրաքանչիւր զօրօք անդր հասանէին … և այլք ի նախարարացն Վասպուրական իշխանին, Սմբատ Ապահունի, Գրիգոր Քաջբերունի, Վահան Հաւնունի, սեպուհն Դաւիթ, Գազրիկն Ապուհարազ, Թոդորոս Վարազն, Խոսրով Վահևունի, Խոսրով Ակէացի, Վարդան Գաբայեղէն, Սմբատ Մարացեան, սեպուհ մի Սահակ, Պատրիկն Անձևացի, Գորգ Հարմացի, Դաւիթ Գունդսաղար. – 174. Քանզի այնչափ թանձրացաւ յաճախութիւն սովոյն՝ որ ոչ միայն անսուրբ կենդանիս ուտէին ըստ սրբութեան կարգի, այլ և զսարսափելի և զդժնդակ, որ զգազանայինն անցուցանէ զվայրենամտութիւնն, զմարմինս մեռելոց՝ առանց խղճելոյ ուտէին, ի գերեզմանացն հանեալ զհետ միոյ և երկուց ամաց թաղելոյ: - 374. Սոքա անուանք ճանաչին միոյն – 202. ձայն բարձեալ արտասուալից առ Դերենիկն, և զսուսեր մերկ ի ձեռին ունելով, և վաղր և սակր մի՝ ասէ. ,,որդեա՛կ իմ Դերենիկ, ողջոյն քեզ, ողջոյն քեզ, ողջոյն քեզ. ես ելի գնացի ի յաշխարհին Յունաց,,: - 320. Բայց Գուրգէն զմի ամ կեցեալ փոխի յաշխարհէս, դարձեալ յուրացողական ամբարշտութենէն: - 318. բայց միայն մանուկ մի Դիոս անուն, զոր գաղտաբար ապրեցոյց մայրն, որպէս յետ բազում ժամանակաց զՄովսէս ի յԵգիպտոս – 14. Բայց ոչ ետ տեղի Գուրգէն այսմ՝ յերկուց պատճառաց, մի՝ զի մի՛ ապստամբ երևեցայց Տաճկաց բռնաւորին – 316. Երևեալ նմա յայնժամ ի բանտին այր մի գեղեցկատեսիլ ի կերպարանս ալևորի, լուսակիզն փայլմամբ՝ ասէ ցԳուրգէն – 318. Եւ երթեալ հասանէ ի գիւղակ մի Երանգանի անուն առ մոնազն մի, որ էր երէց վանիցն:- 320. Եւ երթեալ հասանէ ի գիւղակ մի Երանգանի անուն առ մոնազն մի, որ էր երէց վանիցն:- 320. Եւ ծառայ մի Դերենկին որ բանտապանն էր՝ լուծեալ զնա ի կապանացն՝ և տարեալ մուծանէ ի սենեակն ուր ննջէր Դերենիկն. – 320. Եւ մինչդեռ այս գործ խորհրդածէր՝ հասին ի վերայ նորա քաղաքապետք

երկու, անուն միոյն Բշիր և երկրորդին Զքրի, և կալան զնա տանել առ Աշոտ որդի սպարապետին: - 316. և նորա արկեալ զնա ի փոքրագոյն տեղի մի նեղ, և ինքն փութացաւ գոյժ ետ վասն նորա՝ մահու պատահել, լի անմտութեամբ մոլի աբեղայն, որում ոչ հրամայեցաւ. – 320. Եւ առ յոյժ յիմարութեանն հարեալ ցանկութեամբ, խլրդենի դիմօք, իբրև զգազան մի կատաղեալ՝ սկսաւ յարձակել ի վերայ աշխարհիս Հայոց. – 170. և յայտնի ոչ վայելչանայր կատարել զոր կամէրն, մի՝ վասն յաղթող մեծանուն գործոյն, նախատ անձին համարելով, երկրորդ՝ վասն վաշտիցն զօրութեան: - 326. Եւ յետ սակաւու միոյ ասէ. ,,ձեզ տաց զերկիրն Քանանու զվիճակ ժառանգութեան ձերոյ,,. – 34. և յետ սակաւու միոյ ասէր – 50. զոր յետ սակաւու միոյ երկրորդեցից զառ ի նմանէսն: - 32. Որ և ի սա հասեալ՝ վախճան եղև թագաւորութեանն Պարսից. զոր յետ սակաւու միոյ ասացուք: - 156.

ՄԻ²/արգ.մասնիկ/ - արդ դու մի անփոյթ յանհոգս յաղագս այդր մնայցես, անյապաղ հնարիցիս գտանել զխորհրդոցն նորա դատարկութիւն,,: - 346. մտեալ Վահան աղերսէր համոզէր՝ մի կալ մնալ, մինչ զքաջանունութիւնն ընդ վատասրտութիւն կարծել յոմանց խառնել, թէպէտ և անկարծ վարկանէր զկեղակարծն: - 328. և սուսեր ընդ մէջ ածեալ զբանն տերունական, զոր ասացն, թէ ,,յորժամ մատնիցեն զձեզ, մի՛ հոգայցէք թէ ո՛րպէս, կամ զի՛նչ խօսիցիք – 204. Ապա թէ ոչ՝ մի խաբեսցէ զքեզ յոյսն քո սնոտի – 146. Եւ նոյնժամայն եհաս հրաման յարքունուստ՝մի տաղտկալ և վհատել և մի ի բաց կալ պատերազմել ընդ նմա. մինչև եկեսցէ ակամայ կամօք ի հնազանդութիւն արքայի: - 284. զի ուսմամբ և անուամբ մի ևս ասիցի ունել հաղորդութիւն ընդ Ասորեստանեայս: - 46. Մի ջանասցի քանզի յԱստուծոյ հաստատեալ է, և բառնալ զսա անհնար է, բայց թէ Աստուծոյ այնպէս հաճոյ իցէ՝ կամք Աստուծոյ կատարեսցին: - 144. և մի ի վերայ մեծ յանցանացն զոր յանցեար, որպէս լսեմդ զոր ինչ ամբաստանեն զքէն՝ յայդ ևս յաւելուր - 290. Եւ յելանելն նորա և մօտ լինել ի սահմանս Հայոց զօրօք բազմօք, մերձ ի սահմանս Տարունոյ, Առաջին կոչեցեալ Հայոց՝ իշխան Տարունոյ Բագարատ … առաքէ զոմանս ի մեծամեծաց իւրոց ընդ առաջ նորա պատարագօք ոսկոյ և արծաթոյ և պատուական հանդերձից, համոզեալ մի ելանել յերկիրս Հայոց: - 170. ,,եթէ հաճոյ թուիցիմ քեզ կնութեան, և դու կամիցիս քեզ զտիրելն Անձաւացեաց՝ մի վեհերեալ յապաղելով դանդաղկոտ լինիր և վերջանար զփութալն,,. – 324. ,,որդեակ, ի վախճանելս իմում մի կայցես յայսմ աշխարհի, զի մի կորուսցես զկարգ քո ի մէջ անհաւատից, այլ երթիցես ի կողմանս Եգիպտոսի՝ բնակել ի մէջ բազմութեան եղբարց, զի շահեսցիս զոգիդ քո,,: - 162. ,,որդեակ, ի վախճանելս իմում մի կայցես յայսմ աշխարհի, զի մի կորուսցես զկարգ քո ի մէջ անհաւատից, այլ երթիցես ի կողմանս Եգիպտոսի՝ բնակել ի մէջ բազմութեան եղբարց, զի շահեսցիս զոգիդ քո,,: - 162. ,,վասն այնր ելի յաշխարհս, զի մի Գուրգէն բռնաբար յինքն կորզեալ ձգիցէ զամուրս աշխարհիս, և յինքն բռնաբար զզօրս քո յանգուցանիցէ: - 362. ահաւասիկ կամ, մի դանդաղիր կատարել՝ զոր ինչ կամիս առնել,,: - 296. այլ Մկրտչին հրամայի՝ մի ըմպել գինի և օղի. սա ոչ միայն գինով ոչ զկծէր, այլ և ոչ ջրով զծարաւոյն պէտսն կատարէր, սակաւապետութեամբ ընդովք թրջելովք, և խստավայել բանջարովք առ քաղցն վայելելով: - 376. ասէ, զի կացուցի թագաւոր ձեզ յազգէ և ի դենէ ձերմէ, մի՛ ծանր թուիցի ձեզ դառնալ անդրէն և ունել զիւրաքանչիւր ժառանգութիւն. – 110. Արդ այսքանեաց վկայութեանց ի մի վայր եկելոց՝ մի ելցուք զհետ առասպելաբանիցն թէ ընդ անկոխն գնալով ճանապարհ. – 260. արդ թողոցո զերկրորդ մասն Անձաւացեաց որդւոյ իմոյ Դերանկիդ, և այլ մի յաւելուր ընդ հակառակս ինչ ձեռն ի գործ արկանել - 330. բայց ազդ լինէր իշխանին ի նոյն գնդէն Տաճկաց՝ մի տեսանել զերեսս նորա, ծանուցանելով նմա՝ զոր ինչ խորհեալ էր վասն նորա և վասն աշխարհին նորա: - 184. Բայց զի մի և մեք անկեալք լիցուք ի նոյն՝ ուսցուք ի յԱստուածաշունչ գրոց - 256. Բայց մի և այսմ անտեղեակ լինիցիս – 212. Բայց մի ինձ մեղադիր լինիր, ո՛վ ուսումնասէր դու, սակս ոչ զբովանդակ սորա գործս շարել ի ճառս մանրապատումս: - 302. Բայց քանզի անպատերազմելի էր ամրոցն, միայն բաւականաւն ռոճկաց մի վատնիցի՝ առեալ զՎարագ ի ձեռանէ Տաճկացն - 332. գրէ առ կողմանս

Ասորեստանի զգուշացուցանելով՝ մի խառնել ընդ նեստորականսն.– 130. Եւ ազատորերոյն Վասպուրականի աղերսեալ՝ մի երթալ զայն ճանապարհ, առաջի դնելով զախտակրելն՝ նորա ընտրեալ զմահ ի վերայ քեռոյն իւր, քան զկեանս կեղակարծ ինչ խորհել զնմանէ: - 384. Եւ ահա դարձեալ ասեմ, չկայ ինչ քո. և զի մի կրիցես զոր ինչ խօսեցայ ընդ պատգամաւորս քո, և աւելի քան որոգել ջանար ընդ մեզ՝ զդոյն ընդունիցիս վտանգաւորս,,: - 280. և այլ ոմն յարտաքին իմաստնոց ասէ, ընդ աներկիւղ ի ճանապարհ մի երթալ: - 354. Եւ զի մի երկայնեալ որ ինչ վասն նորա ապիրատ և ինքնակամ և անզիջող և անխիղճ առանց պատկառանաց մոլորութիւն սորա լի անամօթութեամբ՝ի բաց դիցուք զսա ի միջոյ յիշատակի նախարարացն – 248. Եւ էր նեղութիւն մեծ ընդ ամենայն երկիրս, որպիսի ոչ եղև ի սկզբանէ աշխարհի, և մի այլ լիցի. – 238. և ընդ հարթն գնասցուք ճանապարհ, և մի խոտորեսցուք մի յաջ և մի յահեակ. – 256. և ի ժամուն յայնմիկ մինչ առաւ ամրոցն և զըմբռնեալսն ստիպէին, զի որք ի բաց կացցեն ի Քրիստոսէ՝ և մի մեռցին – 222. և մի եղիցի յիշատակ սորա ընդ սոցա, որք թէպէտ և վրիպեցին և կործանեցան՝ սակայն և ապաշաւեցին և կանգնեցան յետ դարձին իւրեանց ի մեծ կարաւանէ գերութեանն ի միջոյ ժանեաց բռնաւորին. – 248. և մի ի ձեռն տանջանաւոր մահու ելանիցէք ի բնակութենէ ձերմէ և բնակիցէք ի դժոխս: - 244. և մի հալածեսցի ոք ի բնակութենէ իւրմէ յօտար երկիր պանդխտութեամբ բնակել: - 234. Եւ մի հարկաց ինչ կամ զօրաց կամ այլ ծառայութեան խափանիչ լինելոյ կամ ի վնասս արքայի խառնելոյ փոյթ արասցուք պահանջել վրէժս. – 196. և մի յանխնայ ասպատակելով յաւեր դարձուցանես զերկիր իմ,,: - 178. և մի՛ այլում ումեք փոյթ առնիջիք յառաջ քան զնա ըմբռնել: - 198. Եւ նոյնժամայն եհաս հրաման յարքունուստ՝մի տաղտկալ և վհատել և մի ի բաց կալ պատերազմել ընդ նմա. մինչև եկեսցէ ակամայ կամօք ի հնազանդութիւն արքայի: - 284. Եւ որք ոչ այսոցիկ նման՝ լուան ի Տեառնէ՝ մի մնասցէ ոգի իմ ի մարդկանդ յայդմիկ յաւիտեան, վասն լինելոյ դոցա մարմին. այսինքն մարմնասէրք և ոչ հոգիասէրք: - 30. և Սահակայ յղեալ առ Սմբատ՝ մի կալ մնալ ի լերինն, այլ փութալ ելանել դառնալ անդրէն ի հետևի զօրս անդ զի ոչ ելանէ, ասէ, Երուանդ զօրու ի սահմանս Մարաց. – 84. և ցուցէք յականէ յանուանէ մի ըստ միոջէ իւրաքանչիւր զվնասս զոր գործեալ եմ, դի՛ք ի լսելիս համագունդ զօրականացս, և մի՛ պատկառէք խօսել զճշմարտութիւնն: - 214. զի ասաց զօրավարն Աղուանից, եթէ ,,մի՛ կարծիցէ ոք զիս ապստամբ գոլ ի թագաւորէն և վասն այնր հարկանել զզօրսդ Ասորեստանի,,. – 286. զի մի /68/ վատութիւն քան զքաջութիւն ճոխասցի, որ կանանցաբարոյիցն քաջ յարմարի, թէպէտ և յարիւն և յապաժոյժ զզօրսն կենացն առնուցուն,,: - 70. զի մի հօտն առանց հովուի յանապատս և ի վիհս կորստեան թափառական յածիցին գայլոցն գահավիժութեամբ: - 104. զի մի յերկարաձգեալ զդեր հատուցական բանիս՝ յետնեալ գտցուք յառաջիկայ մեզ գրաւորութենէն, որ սակս պատմութեանցն են հանդէսք: - 260. զի մի սպառ սպուռ տապալիցի զօրութիւն շինուածոյ աշխարհի, ի բաց ընկենլով զծառայական պաշտօնատրութիւն կողմնակալաց, և քաղաքային անհաւատարիմ կամարարողաց, և հարկաց բեկման և զօրաց – 186. զի մի քաջասրտագոյն կարծիցի Մարն քան զՀայկազնեայն: - 62. Զոր առեալ զարսն ստիպեաց ի բաց կալ յերկրպագութենէն Քրիստոսի, և պատուի և պարգևաց արժանի լինել ի նմանէ, և մի չարաչար տանջանօք մեռանել: - 222. Իսկ նոցա ոչ յայտնեալ զխորհուրդ չարութեանն՝ դարձուցանեն զնա անդէն, զի մի յերկբայս եղիցի գալ առ նոսա. – 226. Իսկ սուրբն վառեալ Հոգւովն սրբով՝ յիշէ զասացեալն ի Փրկչէն, թէ ,,մի երկնչիք յայնցանէ, որ սպանանեն զմարմինն, և զոգին ոչ կարեն ապականել,, - 204. մի՛ յամառիք գհետ Արշակայ և բնաւ սպառ սպուռ մերժեալ լինիք ի հայրենեաց բնակութենէ – 110. միայն զի եկեսցէ ի բան արքունի և մի ելցէ արտաքոյ կամաց թագաւորին. – 288. Յայնժամ բարկացեալ բռնաւորն հրամայեաց նախ զլեզուն հատանել զսրբոյն, զի մի յաճախիցէ առ հասարակ զթագաւորն և զօրէնսդիրն ինքեամբ հանդերձ անարգել. – 290. շուրջ փակեալ զՄեհուժանեան գնդիւն, զի մի ճողոպրել ինչ աճապարիցի: - 106. որպէս ասէ Պօղոս առ Տիմոթէոս, ,,մի ամօթ համարիցիս զվկայութիւն Տեառն մերոյ,, - 260. Չիցէ՞ լուեալ ձեր զոր

ասաց Սողոմոն, թէ ,,որ հատուցանէ չար փոխանակ բարւոյ՝ չար ի տանէ նորա մի պակասեսցէ,,: - 214. սակայն և յայնմ ոչ ետուն հրաման զօրուն մի ելանել ի պատերազմ: - 230. սրբոյ Աւետարանին հետազօտեալ կրթականին՝ մի բազմել յառաջին բարձին, ոչ եթէ ոչ ունէր նազելի և բարձրագահ պատիւս ի մէջ մեծ նախարարութեանցն Հայոց – 94. Ասէ թագաւորն. ,,մի արհամարհեր զթագաւորական բանքս իմ և կորուսաներ /գրքում՝ կորուստաներ/ զկեանս քո – 294. զի և հետք ևս յիշատակի այլոց անուանեաց մի երևեսցի, բայց ինքեան միայնոյ: - 44. Այլ ձայն իմն գայր՝ մի՛ ժողովել և մի՛ հատանել, թե ոչ՝ եղիցի անձն այն մեռեալ, և ժանտ ախտիւ սատակեսցի գումարտակդ: - 50. Բայց մի՛ ինձ բասրանս դիցես՝ զօրինականին առ աւետարանականս / 378/ դնել համեմատութիւն, զոր և ոչ ես անգիտանամ զմեծն և զփոքրն, զօրինակն և զճշմարտութիւնն: - 380. և ես մի՛ իշխեցից քան զԱրասխ անցանել յայդկոյս: - 138. մի՛ երկիցուք ի բազմութենէ զօրաց նոցա. – 134. Մի՛ խոտորիցիս ի մոլար օրէնս վրիպելոցն ի ճշմարտութենէն, ազգին Իսմայէլի, որպէս որք վրիպեցանն գերեալքն Հայոց,,: - 318. Այլ ձայն իմն գայր՝ մի՛ ժողովել և մի՛ հատանել, թե ոչ՝ եղիցի անձն այն մեռեալ, և ժանտ ախտիւ սատակեսցի գումարտակդ: - 50. անկեալ առ ոտս նորա մեծաւ հառաչանօք՝ մի՛ յիշել զանցս զանցիցն անցելոց, զոր արարինն առ սուրբն, այլ դարձեալ կալցի զաթոռ հայրապետութեանն. – 120. Բայց ոչ ետ տեղի Գուրգէն այսմ՝ յերկուց պատճառաց, մի՝ զի մի՛ ապստամբ երևեցայց Տաճկաց բռնաւորին – 316. և լուան ամենեքեան զառնելն քո ընդ իս՝ մի՛ ընդունայն և դատարկ լիցի սիրելութիւն քո առ իս – 218. և զի մի՛ ճրագն եօթնաստեղն ընդ գրուանաւ զփայլումն լուսոյն ծածկիցէ – 204. և նորա ճիչ բարձեալ ասէ, քրիստոնեայ եմ. և նա ևս պնդէր և ասէր, ,,մի՛ մեռանիր, մսլիմանակ ես,,. – 222. մի՛ ասիցէ այլազգին, որ եկեալ յեցեալ իցէ ի Տէր՝ եթէ մերժելով մերժէ զիս Տէր ի ժողովրդենէ իւրմէ,,. – 224. մինչև կատարեցաւ ասացեալն ի ձեռն Եսայեայ մարգարէի, ,,լսելով լուիջիք և մի՛ իմասջիք, տեսանելով տեսջիք և մի՛ գիտաջիք. /ճիշտը՝ գիտասջիք/ – 182.

ՄԻ/կապ. մեջ/ - ,,լաւ է մեռանել վասն Քրիստոսի, քան առ ժամանակ մի վայելել ի մեղս,,: - 250. Բայց բազմաց այլ իմացմունքն յայսոսիկ առ վայր մի առին զկատարումն: - 360. Եւ ի թագաւորել Արտաշրի խաղաղանայր երկիրս առ վայր մի ի շփոթմանց պարսկական գնդի. – 116. Զոր առ վայր մի ոչ առեալ յանձն սրբոյն Սահակայ՝ ասէ - 114. և զայս ոչ միանգամ, այլ յոլովակի՝մի զմիով կնի ընթացուցանէր դեսպանս հրովարտակօք և պատարագօք: - 62. և թէ զիա՛րդ գունդք գունդք հրեշտակաց մի զմիով կնի ելևելս առնեն, և զիա՛րդ փայլեալ նշանն տէրունական ահաւոր ճառագայթիւք – 284. Յայնժամ թագաւորն փութացոյց դեսպանս մի զմիով կնի առ իշխանն Աշոտ, զի անյապաղ երագութեամբ հասցէ առ նա: - 382. զի Յամանիկն թուղթս և դեսպանս մի զմիով կնի առնելով առ իշխանս աշխարհիս՝ զինքն յառաջանալ ի վերակացութիւն Հայոց – 340. Աւելորդ համարիմ մի ըստ միոջէ զանօրէնութիւն քաղաքին ընդ գրով բացայայտել, զառաւելեալն Սողովմայ և Երիքովի, լցեալ չարագործութեամբք: - 270. Բայց որպէս բացայայտեցաւ՝ Շամիրամ սեպհականեալ թագաւորէ յազգէ Ասուրա ի Սեմայ Ասորեստանի բնիկ իւրեանց տէրութեանն, և պայազատեալ մի ըստ միոջէ մինչ ի Թոնոս Կոնկողեռոս – 16. Եւ այլքն մի ըստ միոջէ կացին ի կարգի ճակատուն – 232. և անդ գեղեցիկս և համառօտս անպաճոյճս կարգէր մի ըստ միոջէ զվկայութիւն /204/ հաւատոցն որ ի Քրիստոս – 206. Եւ արդ են մի ըստ միոջէ թագաւորք Ասորեստանեայց այսոքիկ – 56. և զի մի՛ մի ըստ միոջէ ասացից – 46. Յուշ առնէր նմա զխոստումնն Աստուծոյ առ Աբրահամ և զկարգս թլփատութեանցն և զզոհիցն և զայլոցն ամենեցուն, զոր ոչ է այժմ ասել մի ըստ միոջէ. և յայս լինէր խոկումն Իսմայէլացւոցն մինչև իսպառ: - 158. Նոյն գունակ և զՂուկա ազգաբանութիւնն գտցես շարածեալ ի վերջէ յառաջ, և ասէր որպէս կարծէր զՅիսուսէ՝ ի Յովսէփայ ի Յակովբայ ի Հեղեայ, և ապա մի ըստ միոջէքն: - 16. և ցուցէք յականէ յանուանէ մի ըստ միոջէ իւրաքանչիւր զվնասս զոր գործեալ եմ, դի՛ք ի լսելիս համագունդ զօրականացս, և մի՛ պատկառէք խօսել զճշմարտութիւնն: - 214. զոր ասէ մի ըստ միոջէ մեծն Եպիփանոս: - 34. մինչև եկից հասից ի լայնանիստ ընդարձակ ասպարէզս մատենից պատմութեանցս՝

ոճով մի ըստ միոջէ շարեցից, կարգեցից, գրեցից զախորժելին քեզ: - 74. և զի մի մի թուիցէ յանուանէ զյաճախութիւն զինուցն և զսպառազէն կազմութեանցն զձիոցն և զհեծելոց նոցա. – 280. Բայց զի՞ մի մի զիւրաքանչիւր հանդէս պատերազմաց նոցա գրեցից յականէ յանուանէ. ասացից կարճառօտ և համառօտեցից զբանս. – 286. և բացեալ զտուն դիւանապահ մատենիցն և գտեալ զսերունդս Սենեքերիմայ, և զգործս նոցա զմիոյ միոյ ուրուք յանուանէ զառն իւրաքանչիւր զանուն և զքաջութիւն իւր, նոյնպէս և զայլն ամենայն ըստ տոհմից տեղեաց - 74. Եւ դրօշք փողփողեալ ըստ միոյ միոյ գնդի – 228. և երթային մի մի նոյնպէս և դառնային: - 370. և մի զմիոյ հետ ստիպէր՝ փութալ միոյ միոյ ի նոցանէ յանդիման նմա հատուցանել ծառայական սպասաւորութիւնս, զոր և արարին իսկ Աշոտ և Գագիկ և Գուրգէն, կամաւոր և ակամայ զնորայն կատարելով հրամայեալս – 370. Եւ ելեալ յիւրաքանչիւր տեղեաց մի քանի զմի յառաջանալ ի կոչումն Բուխայի, և ժողովեցան ի մի վայրի և եկին կացին առաջի զօրավարին Տաճկաց: - 296. զոր յետ սակաւու միոյ երկրորդեցից զառ ի նմանէսն: - 32. զի յորմէ սակաւ մի կասկածս ունէր՝ անտի ևս աներկիւղ հաստատեցան: - 238. աստանօր պարտ է սակաւիկ մի յապաղումն տալ պատմութեանս. – 18. Որ և ի սա հասեալ՝ վախճան եղև թագաւորութեանն Պարսից. զոր յետ սակաւու միոյ ասասցուք: - 156. Եւ յետ սակաւու միոյ ասէ. ,,ձեզ տաց զերկիրն Քանանու զվիճակ ժառանգութեան ձերոյ,,. – 34. և յետ սակաւու միոյ ասէր – 50. Այլ նոքա թէպէտ առ փոքր մի ոչ կամեցան դառնալ յերկրպագութենէ Աստուածորդւոյն – 246. Բայց երանելիս այս Գէորգ, մինչ կայր ընդդէմ սրոյն և դահիճն ծեծէր իբրև զանզգայ ինչ, և ոչ փոքր մի գիծ կարացեալ հարկանել ի մարմին սրբոյն զխոցումն սրոյն – 266. Բայց նոքա քանզի ապաստան լեալ յանկասկածելի յամուրս և ի բազմութիւն զօրացն և ի քաջութիւն արանց պատերազմողաց՝ և ո՛չ առ փոքր մի խոնարհեցան ի բանս նորա կամ ետուն տեղի պատասխանւոյ. – 274. Ոչ ամենևին /գրքում՝ամենեւին/ գոնէ փոքր մի խոտորեցան ի բանս նորա և ոչ առին յանձն ի պատրել մեծութիւն ընչից և ոչ անսացին հնազանդել փառաց աշխարհական ցանկութեանց – 264. և ոչ առ փոքր մի ինչ ներեաց կամ անսաց /264/ տալ տեղի պատասխանոյ, այլ հրամայեաց դահճացն տալ ի վերայ նորա զվճիռ մահու, փութով զրաւ առնել նոցա ի սատակումն սրոյ: - 266. որով փոքր մի ցածուցին զլեռնացեալ ալիսն, և զկոհակսն մրրկալիցս դադարեցուցին և զգազանութիւն բռնաւորին յընտանութիւն ածին: - 234. որ ոչ և փոքր մի խոտորեցաւ ի բանս բռնաւորին, վասն սիրոյն Քրիստոսի: - 318. և ի սաստկանալ ծխոյն զօրանային գունդքն Հայոց, և ի նուազելն փոքր մի ոգի առնուին ի թշնամեացն: - 234. Զոր օրինակ փոքր մի վերագոյնն պատմեցաք զծովային վիշապէն ըստ բարոյականի՝ նոյնպէս և այժմ դարձեալ արարից զյիշատակ սորա աղագաւ պատմութեանս խորհրդոյ: - 260.

ՄԻԱԲԱՆ - Այլ և ի ժամանակս հասելոց թշնամեաց յերկիրն իւրեանց՝ գան միաբան լեռնայինքն յօգնութիւն իշխանացն, զի են տիրասէրք: - 192. Ապա իբրև վախճան առնոյր կարգեալ եպիսկոպոսացն որ ի Պարսից … միաբան ապա նախարարքն Հայոց եկին առ սուրբն Սահակ – 120. և մածեալ պնդեալ իբրև զբլուր պղնձի, իբրև զմի այր, և ասելով միաբան իբրև ի մի բերանոյ. – 136. և ամենեքեան միաբան յարտասուս եղեալ լային. – 228. և բազմութիւն քրիստոնէիցն … գոհացեալ միաբան ետուն փառս Աստուծոյ, որ զօրացոյց զսուրբսն և արար յամօթ զսատանայ հանդերձ գործակցովքն իւրեանց: - 268. Եւ հրամայեաց աճել զնա յատեանն, ուր կային միաբան ժողով զօրագլխացն: - 290. և միաբան զաղաղակ բարձեալ ասէին, ,,Աստուած, յօգնել մեզ նայեաց, և Տէր, յընկերել մեզ փութայ,, և որ ի կարգին, ,,զի վասն քո մեռանիմք զօրհանապազ, համարեցաք որպէս զոչխար ի սպանումն,,: - 266. և միաբան յարտասուս հեղեալ լային, և դառնապէս ողբս յողբս հարեալ անմխիթար սգոյ – 114. Եւ սաղմոսէին միաբան՝ ,,վասն քո մեռանիմք զօրհանապազ. համարեցաք որպէս զոչխար ի սպանումն,,: - 250. Զի այր քաջ է և պատերազմող, և միաբանք են որք ընդ նմա են զօրքն, և զանձինս ի մահ դնիցեն ի վերայ տանց և աշխարհաց և ազանց և տոհմից իւրեանց: - 212. միայն զմի ոմն կացուցանեն տիրել ի վերայ իւրեանց ըստ կամս անձանց իւրեանց, և միաբան և միախորհ կան և կեան

առ միմեանս, և բնակեն ըստ ազգս ազգս, բացագոյն ի միմեանց: - 274. Յայնժամ բնակիչք լերինն իբրև տեսին, թէ վարեցաւ իշխանն ի գերութիւն … հասին միաբան բազմութիւնն մեկնակազէնքն Խութայ ի հնարս արուեստգիտութեանն իւրեանց, զոր ի պէտս օժանդակութեան ձմերայնոյ հնարաւորեալ էին: - 190. Յայնժամ իբրև գիտաց զօրավարն Հայոց և ոչ միով իւիք կարաց հաճել զմիտս նոցա, այլ միաբան ետուն հրաման ելանել ի պատերազմ – 230. քանզի դեռ միաբանք և միախորհուրդք և հաւասարք առ միմեանս բնակէին իշխանք Հայոց ազատագունդք բազմութեամբ և զօրաց նոցա – 194.

ՄԻԱԲԱՆԱԿԱՆ - Եւ եղև մինչ կային իշխանքն ի միաբանութեան առանց կարծեաց կասկածանաց ի հպատակութեան ելեալ յարքունուստ հազարապետին /340/ որդւոյն Հալթի, և զմիաբանական սիրոյն շաղկապ ի միասին յօդեալ պնդեալ անքակ պահէին – 342. և որք ի տանէն Ամատունեաց՝ Շապուհ և Վահան և Սարայ եղբարք միմեանց, Ապուսակր Վահունի և այլք ընդ նոսա, միաբանական խորհրդակցութեամբ խորհրդածեալ ընդ Գագկայ առ ի սպանումն Ապումրուանայ – 368. Եւ քանզի էին երեքին սոքա անքակ անխզելի առ միմեանս, զմիաբանական կապակցութիւն շաղկապեալ, Աշոտի և Գագկայ և Գուրգինայ, որդիք Դերանկին – 364.

ՄԻԱԲԱՆԵԱԼ - և ընդ նմա քաղաքացիքն Բերկրոյ որ Ութմանիկքն կոչին, և յազատացն Վասպուրականի որ միաբանեալ էին ընդ զօրսն արքունի, արք իբրև Ս – 306. Իսկ Գուրգէն ընթացեալ զհետ հանդիսի պատերազմող նահատակութեանցն, /310/ անդուլ լինելով զցայգ և զցերեկ հանդերձ որ ընդ նմա միաբանեալ ազատագունդ զօրացն – 312.

ՄԻԱԲԱՆԵԼ - Բայց ապա հաճոյ թուիցի ձեզ՝ ի բաց կալ ի դոցանէ և միաբանել ընդ իս. – 138. Դու աւադիկ ելեր մտար յերկիր Հայոց, ելեր ի կողմն թշնամեաց իմոց և ապստամբացդ զքեզ միաբանեցեք, զի յապաղեցեր հրամանաց իմոց: - 236. յոյժ վայելուչ էր և երանելի քահանային Գրիգորի՝ միաբանել ընդ նոսա և լնուլ զերրեակ թիւն – 250. որք ոչ առին յանձն միաբանել ընդ գունդս ուրացողացն. – 264.

ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆ - ,,Ես այսպէս կարծէի, թէ յորժամ ես ընդ թշնամիս ձեր մարտնչիմ՝ դուք յայդմ կողմանէ օգնական ինձ լինիցիք, և միաբանութեամբ բարձցուք ի միջոյ զտիեզերական պատուհասն, զտունդ Սասանայ: - 138. Այլ և զայս ևս եդին առաջի թագաւորին աղերսական մեղադրանս, եթէ ընդէ՞ր իբրև ժողովն գումարէր՝ ոչ զոք ի Հայոց հարկաւոր համարեցայք կոչել ի միաբանութիւն հաւատոց: - 132. Այլ նոքա քանզի հաստատուն մտօք ունէին զմիաբանութիւն դաւաճան խորհրդոյն որ առ բռնաւորն Տաճկաց՝ ետուն պատասխանի և ասեն – 216. Այսպէս տակաւին ի բազումս քայքայեալ լինէր միաբանութիւն աշխարհիս -194. արդ փութա անյապաղ վճարել զբռնահարեալ գործ միաբանութեան նոցա քակտել,,: - 362. և գնացեալ միաբանութեամբ ի Կոստանդնուպօլիս՝ սպանին զՄուրիկ թագաւոր և նստուցին զՓոկաս յաթոռ թագաւորութեան: - 140. Եւ արար՝ մինչ ճեղքեաց խզեաց զմիաբանութիւնն Հայոց: - 350. Եւ եղև մինչ կային իշխանքն ի միաբանութեան առանց կարծեաց կասկածանաց ի հպատակութեան ելեալ յարքունուստ հազարապետին /340/ որդւոյն Հալթի, և զմիաբանական սիրոյն շաղկապ ի միասին յօդեալ պնդեալ անքակ պահէին – 342. Եւ մինչդեռ զայս օրինակ խոկային և խորհէին ի միասին՝ միանգամայն արգելականք բերդին անդէն իսկ և իսկ քակեալ ի միաբանութենէ ուխտին – 210. և յոյժ ուրախ առնէին զթշնամիսն ի քակել միաբանութեան իրերաց: - 194. Եւ ուսեալ Հրէիցն զպատճառս փախստեանն՝ խրախուսեցին ի միաբանութիւն, ճշմարիտ ասել զասացեալսն, իբրև նախանձախնդիրք Աստուծոյ և որդիք Աբրահամու և եղբարք միմեանց: - 160. Իսկ իբրև եհաս Բուխայ զօրօք բազմօք մերձ ի սահմանս նոցա, և գրեաց հրովարտակս դիմօք խաղաղութեան՝ դառնալ սիրով միաբանութեան ի հնազանդութիւն արքային – 274. Իսկ իբրև ծանուցաւ նմա անլոյծ միաբանութիւն ուխտի ընդ միմեանս Աշոտոյ և Բագարատայ՝ ոչ ինչ յայտնեաց զխորհուրդս չարութեանն, զոր խորհեալ էին ի վերայ նոցա. – 172. Իսկ իբրև սկսաւ սպրդել մտանել ի ներքս երկպառակութիւնն ի մէջ միաբանութեանն, հեռացաւ մեկնեցաւ գնաց շնորհ աստուածատուր զօրութեանն. – 194. Յայնժամ երդուեալ

զԴեպուհան , ի Գովմայիդ և ի Գուզբան, ի Շերիբամական /գրքում՝ Շերիբամամական/ և ի Խոճիհրաստան, և միանգամայն ասել մինչև ի ծովն Հնդկաց՝ յոյժ արութեամբ – 44. և կացին մնացեալ անդր մինչև ի դարձն Արտաշէսի որդւոյ Սանատրկոյ, որ եկեալ այսր թագաւորեաց, սպանեալ զԵրուանդ:- 82. և կեցեալ առ նովաւ ամս ՇԿԵ, մինչև ի հանդերձել տապանին: - 28. և կիսոցն անունկնդիր եղեալ՝ գնացին ի նոյն կործանման մինչև ցայսօր ժամանակի – 274. Եւ համարին ամք ժամանակացս այսոցիկ, ի Կիւրոսէ մինչև ցթագաւորութիւնն Տաճկաց՝ ամք ՌՃԿ: - 166. Եւ հարան զօրքն Գաղատացւոց, ի մեծամեծաց մինչև ի փոքունս նոցա, և ոչ մնաց ի նոցանէ և ոչ մի: - 66. Եւ հրամանաւ ինքնակալին Թէոդոսի կայսեր հաւատայ նմա զհազարապետութիւն բաժնին Հայոց, զՄիջագետս մինչև ի յանցս Եփրատ գետոյ: - 116. և մանաւանդ զի հարկ փութոյ եղև մեզ գիտել զպայազատութիւնս երանաց տիրեցելոց մեր աշխարհի և որ յառաջ քան զնոսա թագաւորք Ասորեստանեայց, որդի /34/ ի հօրէ առեալ մինչև ի Սենեքարիմ արքայ, որ առ Եզեկիայիւ Երուսաղէմի արքայիւ եղեալ ազգապետ տանս Արծրունի: - 36. և մերկ կապուտ կողոպուտ առնէր զնոսա, մինչև զարմանալ զօրավարին ընդ սորայս քաջութիւն՝ գրէ առ Միքայէլ թագաւորն Յունաց զեկուցանելով վասն նորա: - 302. և մինչև հասեալ առ զօրագլուխսն, այլ ի բացեայ երթայր հեռագոյն ի նոցանէ իբրև յերկու մղոնս – 228. Եւ Յաբէթի Եւրոպն ամենայն յԱմման լեռնէ մինչև ի մուտս հիւսիսոյ: - 34. և յետ այնորիկ պահպանիկ թագաւորաց ժամանակք, որ կոչին Պարթևք, մինչև յԱրտևան որդի Վաղարշու – 166. և նա երթեալ առանց մեր հրամանի թագաւորեաց, և զմեր գանձս մեզ ընծայ մատուցանէ, ոչ գիտելով եթէ համարս խնդրեցից գանձիս այսմիկ, և ոչ դադարեցից մինչև առից զնա ի բուռն իմ,,: - 142. Եւ նոյնժամայն եհաս հրաման յարքունուստ՝ի տաղտկալ և վհատել և մի ի բաց կալ պատերազմել ընդ նմա. մինչև եկեսցէ ակամայ կամօք ի հնազանդութիւն արքայի: - 284. և նորա ոչ հաւատայր երթելոց կոչնականացն, մինչև կրկնեաց և երեքկնեաց. – 272. և նորա խնդիր արարեալ մեծաւ ստիպով, մինչև կարացին գտանել նովիմբ կազմածաւ, և ետ յարսն որք եկեալ էին. – 154. Եւ նոցա ընկալեալ զխնդիրսն՝ հաւանեցան առնել ըստ կամաց նորա, մինչև տեսցեն եթէ զի՞նչ պատասխանի եկեսցէ նոցա յարքայէն իւրեանց, և կամ զօրուն զի՛նչ հրամայեսցէ առնել: - 144. և ոչ գիտացին զօրն Պարսից զդարձն Հայրակղի ի վերայ նոցա՝ մինչև երթեալ խառնեցան և բախեցին զմիմեանս պատերազմօք: - 150. և ոչ առ զխաղաղութիւն մինչև ի Պոռբոս կայսր, որ արար խաղաղութիւն ընդ Արտաշրի: - 94 և ոչ զոք թուլացուցանէր թագաւորել Զրուանայ, դաշնաւորել երդմամբ՝ մինչև որ ի կնոջէն Ըռեա որ ի Զրուանայ զարմից էր ծնեալ արու՝ անդէն ի ծննդեանն սատակէր. – 14. և ոչ ոք ամենևին իշխէր ելանել արտաքոյ կամաց ձեռին նորա ի մեծամեծաց մինչև ի փոքունս. – 200. և տայր զօրավարին և իշխանացն ամենեցուն պարգևս մեծամեծս, և բաշխէր զօրացն ամենեցուն դահեկանս ի խոռկս, և ճաշս և ընթրիսս ուրախութեան կազմէր ամենայն զօրացն մինչև Է օր: - 144. և տաց քեզ զկողմանս Ասորոց և զամենայն Արեւաստան մինչև զՄծուին քաղաք, և ի յերկրէ Հայոց՝ զաշխարհս տանուտերական իշխանութեանն մինչև յԱյրարատ և ընդ Դուին քաղաք և յեզր ծովուն Բզնունեաց և ցԱռեստն աւան, և զմեծ մասն աշխարհին Վրաց մինչև ցՏփղիս քաղաք. – 136. և տաց քեզ զկողմանս Ասորոց և զամենայն Արեւաստան մինչև զՄծուին քաղաք, և ի յերկրէ Հայոց՝ զաշխարհս տանուտերական իշխանութեանն մինչև յԱյրարատ և ընդ Դուին քաղաք և յեզր ծովուն Բզնունեաց և ցԱռեստն աւան, և զմեծ մասն աշխարհին Վրաց մինչև ցՏփղիս քաղաք. – 136. և տաց քեզ զկողմանս Ասորոց և զամենայն Արեւաստան մինչև զՄծուին քաղաք, և ի յերկրէ Հայոց՝ զաշխարհս տանուտերական իշխանութեանն մինչև յԱյրարատ և ընդ Դուին քաղաք և յեզր ծովուն Բզնունեաց և ցԱռեստն աւան, և զմեծ մասն աշխարհին Վրաց մինչև ցՏփղիս քաղաք. – 136. Զնա յղէ Ապուսէթ ելանել յերկիրն Վասպուրական և անդէն մնալ զօրօք բազմօք, մինչև զբովանդակ զհարկս և զհասս արքունի յամենայն կողմանցն Հայոց առ նա բերցեն յիւրաքանչիւր սահմանաց: - 176. Զոր Եւսեբէս Կեսարացի ասէ՝ ի սովորութենէ մինչև ցայսօր կին մարդ թագաւորէ ի վերայ աշխարհին Հնդկաց: - 30. զոր առեալ սնուցանէր

հօրեղբայր իւր Ապուտալպ մինչև ցարբունս հասակի. – 158. զորոյ զպաղատանս ոչ անտես արարեալ Քրիստոսի՝ ներէ նմա հանել ի գլուխ զսուրբ քառասնորդսն, խաչակից լինելով Քրիստոսի, մինչև ի պարտ զատկին – 254. Իսկ զօրավարն խոստացաւ երդմամբ տալ նմա զի՛նչ և խնդրիցէ, մինչև հաւասար իւրոյ տէրութեանն բարձակից և պատուակից կացուսցէ: - 218. Իսկ նա փոքր ինչ ժամանակ ներեաց նոցա դիմօք սիրոյ խաղաղութեան, մինչև ի գլուխ ելին որ ինչ յաղագս Ապումուսէին էին հանդէսք. – 296 Իսկ Պտղոմէոս նենգութեամբ և հարկանօք կալաւ զԵրուսաղէմ և զՀրէաստան, մինչև ամս ԺԲ: - 70. Իսկ Սէմայ՝ Ասորեստանեայքն համօրէն լայնութեամբ մինչև ի կողմանս արևելից: - 34. Լինի յԱդամայ մինչև յամս այս ՎՃԼ, ըստ Եւթանասնիցն թարգմանութեանն: - 58. Կալան և զհայրապետն Զաքարիայ, և ի խնդիր անկեալ աստուածային սուրբ նշանին՝ սկսան զնոսա տանջել, մինչև զբազումս ի պաշտօնէիցն կառափեալ սատակեցին. – 142. ձեզ տուեալ լիցի թագաւորութիւն Հայոց … և յԱսիւրոց կողմանէ զԱսորեստան և զՄծուին և զՆուշիրական մինչև ցսահմանս Տաճկաց – 13 ճակատ առ ճակատու ձգին խումբ և անհնարին խառնուրդ. և մարտուցեալ ընդ միմեանս յայգուէ մինչև ընդ երեկս քաջապէս - 140. մինչև անձամբ անձին արարեալ ի հուր սատակի: - 58. մինչև եկին հասին ի վերայ մեր մեծամեծ չարիքս այսոքիկ և աննկանգնելի գլորումնս – 182. մինչև եկից հասից ի լայնանիստ ընդարձակ ասպարէզս մատենից պատմութեանցս՝ ոճով մի ըստ միոջէ շարեցից, կարգեցից, գրեցից զախորժելին քեզ: - 74. մինչև զայրանալ դահճացն, և խուռն ի վերայ դիմեալ ի մեծ հրապարակին՝ հարին սրով զերանելին և ի բաց առին զգլուխ նորա – 224. մինչև զանբարկանալին Աստուած ի բարկութիւն ածել, ի սատակումն անձանց և ի կործանումն աշխարհի և յաւեր ժառանգութեան տանց հայրենի բնակութեանց. – 182. մինչև կատարեցաւ ասացեալն ի ձեռն Եսայեայ մարգարէի, ,,լսելով լուիջիք և մի՛ իմասջիք, տեսանելով տեսջիք և մի՛ գիտաջիք./ճիշտը՝գիտասջիք/ – 182. մինչև հարկեցաւ թագաւորն յամենայն ուժով կարողութեան իւրոյ զօրս գումարել յամենայն ազգաց, որ ընդ ձեռամբ իւրոյ տէրութեանն էին հնազանդեալ թագաւորք և թագաւորազունք – 242. մինչև միահաղոյն զօրսն Աշդահակայ վատնեալ սուսերաւ՝ տիրէ Մարաց և Պարսից: - 64. Մինչև յե՞րբ ոչ կամիցի յագենալ արեամբ. – 144. մինչև նոքա խոնարհեալ առ նորայն խորհրդական առ յապա պատահմունսն, որ հանդերձեցաւ աշխարհիս Հայոց, իբր մարգարէական իմն գոգցես տեսաւորութիւն – 114. Յայնժամ հրովարտակս արարեալ, պնդադեսպանս արձակեալ ընդ ամենայն սահմանս իւրոյ տէրութեանն … Եգիպտացւոց և մինչև ի ներքին կողմն Տաճկաստանի – 198. յիշեաց յաւիտենից զուխտ իւր և զբանն զոր պատուիրեաց՝ մինչև ի հազար ամ: - 34. Յուշ առնէր նմա զխոստումնն Աստուծոյ առ Աբրահամ և զկարգս թլփատութեանցն և զզոհիցն և զայլոցն ամենեցուն, զոր ոչ է այժմ ասել մի ըստ միոջէ. և յայս լինէր խոկումն Իսմայէլացւոցն մինչև իսպառ: - 158. Նստան երկոքին կողմանքն պահել զպահպանութիւն իւրեանց մեծաւ զգուշութեամբ, և ետուն ժամ անսալ միմեանց՝ ոչ ելանել ի պատերազմ, մինչև եկեսցեն հրեշտակքն յարքայէ, զոր առաքեցինն: - 286. որ առեալ զթագաւորութիւնն Պարթևաց՝ տևեաց մինչև ի ժամանակս Յազկերտի, որ վերջին կացեալ թագաւոր Պարսից՝ սպանաւ ի Տաճկաց: - 166. որ և ոչ տեղի գերեզմանի անգամ երևեցաւ նոցա մինչև ցայսօր: - 402. որ ի կողմանս Դամասկոսի կացեալ՝ ոմանք թագաւոր ասէին զինքեանս, և այլք յԱսորեստանի կացեալ՝ զինքեանս ասէին թագաւոր, մինչև ի ժամանակս Աբդլայի – 168. որ ձգեցաւ մինչև յամս ՈՃԹ և ըստ ոմանց այլ նախկին թագաւորս ասելով՝ յաւելուն ժամանակս ամաց ՄՂԸ ասել: - 60. որոյ սերմանք յիմարութեանն պատուեալ առ Բաբելացիսն պահեցաւ մինչև ի ժամանակս Աղէքսանդրի Մակեդոնացւոյ. – 38. որպէս սահմանեաց Աստուած ի վերայ ժողովրդեանն Իսրայէլի գերելոցն ի Բաբելոն, որպէս գրեալ է ի մարգարէութեանն Երեմիայի, ,,զ-ՀԷ-երորդն ասէ գիտասցես, և խելամուտ լիցիս յելից բանին տալ պատասխանի. մինչև յօծեալն /312/ առաջնորդ եօթներորդ Է և եօթներորդք ԿԲ,,. – 314. Վեցերորդ՝ զի խաւարաւ չարեացն պատրուակեալ զոգին, մինչև զԱստուած ևս անգէտ կարծելով՝ լրբենի երեսօք պատասխանէր – 24. տալով Աշոտի … զգահն նախնական իշխանութեան

այլովք յոլովագոյն միջոցօք աշխարհիս, մինչև յամուրն Նախճաւանու: - 360. Ցայս վայր զայս գրեալ Աղէքսանդրի՝ Մակեդոնացւոյ, ի Սենեքերիմայ յառաջ մինչև ի Պտղոմէոս եգիպտացի, զոր և նոքա Պտղոմեանքն կոչէին. – 74. Ցոյցք ժամանակացս այսոցիկ, ըստ որում յառաջագոյն ասացաք, որ յաւուրց անտի Բէլայ մինչև ի Նինոս՝ երևելիք ինչ և նշանաւորք ի /42/ մատենիցն առաջնոցն ոչ երևի, թերևս ի բազում խափանմանց: - 44. քանզի Քամայ տուաւ ի հօրէն Եգիպտոս և Լիբէաստան և մինչև յարևմուտս հարաւոյ: - 34.

ՄԻՆՉ ՁԻ - և այնչափ սաստիկ լինէր կոտորածն՝ մինչ զի սաստկութիւն վտակաց արեանն խաղացեալ ոռոգանէր զերկիրն ամենայն: - 140.

ՄԻՆՉ ՉԵԻ - և մինչ չև հասեալ առ զօրավարն՝ եհան ընդ առաջ նորա գունդս գունդս վառեալ զինու և ընտրեալ երիվարօք – 288.

ՄԻՇՏ - առատապէս հեղեալ զգութ … և ի ձեռն հովուապետին սրբոյն Յովհաննիսի եպիսկոպոսի և ճգնաւոր քահանայի Գրիգորի, որք միշտ զողորմութեանց խնդրուածս վասն ժողովրդեանն տեառն ի վեր առաքէին, զոր օրինակ և հրեշտակն տեառն աղերսէր Աստուծոյ, ասէ – 314. գիտակ են այդմ արք քաջք. և որ միշտ ի պատերազմունս /280/ զդեգերումն առնեն – 282. դուք աւադիկ զընդդէմսն ինձ խոկայիք միշտ – 244. Իբրև գիտացին սուրբքն զանհուն պատերազմ չարին՝ վառեալ և նոքա զինքեանս հանապազակռիւ լինել ի ճակատուն, անխափան սաղմոսերգութեամբ զանուշահոտ աղօթս իւրեանց միշտ ի բարձունս առաքելով – 250.

ՄԻՈՂՆԻ - իբրև հարուստ մի մեկնեցան ի գնդէն Պարսից՝ ամբարձեալ Սամուէլ զմիոջնին՝ ազդոյ վէրս ի վերայ եդեալ առ ժամայն եհատ զնա ի կենաց. – 106. յորոյ վերայ կալեալ և կանչեալ քաջն Վարդան իբրև զառիւծ, իբրև զկորիւն առիւծու, և առ ուժոյ և երագութեան ձեռինն ի վերայ ձգեալ զմիոջնին՝ յերկուս կտրէ զՇաւասպն: - 126.

ՄԻ ՈՄՆ - Երէց մի Շապուհ անուն, և մի ոմն յոամկաց ձորոյն՝ լնուլ զթիւ գնդիցն - 202. Եւ մեկնակազէնքն պատեցին շուրջ զեկեղեցեաւն, և ելեալ առ նա ոմանց ընդ փորուած գմբեթին՝ և եհար մի ոմն աշտէիւն ընդ միջոց թիկանցն՝ և ընդ անթովքն հանեալ ի ներքոյ թոքացն՝ փչեաց զոգին և թաղեցաւ զթաղումն իշոյ: - 190. և առեալ մի ոմն զսուրն՝ եհար զերանելին և եհատ զգլուխ նորա: - 206. Եւ մի ոմն մերկանայր զկօշիկս ոտիցն նորա. և հարեալ աքացի զվատ այրն հանդէպ սրտին՝ և սպան զնա: - 304. Զաչս ի վեր ամբարձեալ իշխանն Աշոտ՝ ետես զմի ոմն հարեալ ի զօրաց իւրոց. – 174. Ըմբռնեալ լինէր յայնժամ մի ոմն ի Հայոց ազատանոյն տոհմից Վահևունեաց, Ապուսահակ ոմն, եղբայր Սահակայ եպիսկոպոսի ոստանին Նախճաւանու և Մարդպետականի. – 204. միայն զմի ոմն կացուցանեն տիրել ի վերայ իւրեանց ըստ կամս անձանց իւրեանց, և միաբան և միախորհ կան և կեան առ միմեանս, և բնակեն ըստ ազգս ազգս, բացագոյն ի միմեանց: - 274.

ՄԻՈՅ ՄԻՈՅ - Եւ դրօշք փողփողեալ ըստ միոյ միոյ գնդի – 228. և բացեալ զտուն դիւանապահ մատենիցն և գտեալ զսերունդս Սենեքերիմայ, և զգործս նոցա զմիոյ միոյ ուրուք յանուանէ զառն իւրաքանչիւր զանուն և զքաջութիւն իւր, նոյնպէս և զայլն ամենայն ըստ տոհմից տեղեաց - 74. և մի զմիոյ հետ ստիպէր՝ փութալ միոյ միոյ ի նոցանէ յանդիման նմա հատուցանել ծառայական սպասաւորութիւնս, զոր և արարին իսկ Աշոտ և Գագիկ և Գուրգէն, կամաւոր և ակամայ զնորայն կատարելով հրամայեալս – 370.

ՄԻՈՒԹԻՒՆ - զի Նեստորականացն /գրքում՝ Նստորականացն/ և Քաղկեդոնականին է այս իմացմունք այլովքն ևս երկաբնակօք, որք բանին՝ տուն և տաղաւար զառ ի կուսէն առեալ մարմին դանդաջեալ ասացին, և ոչ միութեամբ բնութեամբ բանին մարմին լինելով. – 394.

ՄԻ ՈՔ - ,,ի քո իսկ ինքնակալ թագաւորութեանդ և ի յօրէնս առաջնորդին ձերոյ գրեալ է՝ ոչ զոլ ճշմարիտ վկայութիւն միոյ ուրուք և հաւատարիմ – 244. Անդէն փութով և անյապաղ երագութեամբ հրաման ետ, զի որ ոք և հաճոյ թուիցի Սմբատայ՝ մի ոք իշխեսցէ արգել լինել: - 218. և ահա իբրև արք Ռ ի յընտրելոցն Աղուանից պատահեալ նոցա հարին զնոսա և ածին փախստեայ ի բանակն և ինքեանք դարձան ողջանդամ, և ոչ մի ոք վիրաւորեցաւ. – 282. և յայնչափ սաստիկ և անհուն ամբոխին սուտ վկայութեանն զբոլոր

բարկութիւն բռնաւորին զարթուցին ի վերայ առնն, որպիսի ոչ ի միոյ ուրուք վերայ այնքան ժամանակս եհեղ զբարկութիւն իւր զօրավարն Բուխայ: - 290. և ոչ առ մի ոք այդչափ խնամ և հոգաբարձութիւն առնէաք, որչափ ընդ ձեզ և ընդ աշխարհ ձեր. – 244. և ոչ միոյ ումեք կորնչել, բայց ի միոջէ ումեմնէ, որում /գրքում՝ որուն/ անուն Աշխէթ ճանաչէր, այր պերճ և անուանի ի զօրուն քաջամարտիկ, ունելով ընդ ինքեան գունդ հարուստ /270/ իբրև ծով առելոյ զօրավարաց. – 272. Եւ ոչ ոք գտանէր ամենևին ի կողմանէ /174/ թշնամեացն որ կարէր կալ ընդդէմ նոցա, և ոչ մի ոք. – 176. զի մի ամենևին ոք կայցէ յակաստանի, մանաւանդ զի ոչ ոք տևեաց ընդդիմանալ ձեռին նորա. – 296. զի ոչ գոնեայ մի ոք գոյ, որ զճշմարտութիւնն վկայէ ուսուցանելով նորա, թող թէ զբազումս: - 246. զոր ոչ և զմի ոք յիշխանաց ոմանց առաջնոց լուեալ ուրուք եթէ իցէ այսպիսի ինչ արարեալ. – 216. ճանապարհ արարեալ ընդ Ատրպատական, կասկածելով թէ գուցէ Գուրգէն և կամ մի ոք ի տոհմէն Արծրունեաց և նոցին ազատաց ի կորովացն Վասպուրական հեծելոցն հասանիցէ ի վերայ և թափիցէ զնա ի զօրացն և հանցէ ի ձեռաց իմոց: - 220

ՄԻՋԱԳԵՏՔ - Արշակայ գնացեալ զկողմամբ Միջագետաց, լաւ համարեալ ընդ ձեռամբ քրիստոնեայ թագաւորի հնազանդել, քան Պարսկականն հնազանդել տէրութեանն. – 110. և ինքն գնաց ի Միջագետս Ասորոց, զի կալեալ հաստատեսցէ ինքեան զքաղաքսն և զահմանսն ամենայն, որ առ Խոսրովաւ և առ Մուրկաւ հաստատեալ էր: - 154. և ինքն գնացեալ ի Միջագետս՝ հնազանդեցուցանէր ինքեան քաջութեամբ զԵմաթ և զԱրբաթ և զամենայն կողմանս Դամասկոսի և Կիւլիկեայ և զայլ բազումս: - 60. Եւ հրամանաւ ինքնակալին Թէոդոսի կայսեր հաւատայ նմա զհազարապետութիւն բաժնին Հայոց, զՄիջագետս մինչև ի յանցս Եփրատ գետոյ: - 116. Զորոյ իրազեկ եղեալ գալուստ նորա առ Ահմատ, և նորա գումարեալ առ ինքն զզօրս իւրոյ նահանգին և Միջագետաց և զԳեթացիսն՝ և եկն եհաս յանդիման նմա: - 366. Իսկ Խուրան լուեալ վասն տիկնոջն Հայոց Հեղինէի կնոջ Աբգարու, թէ ոչ ախորժեաց կալ ի Միջագետս վասն ամբարշտին Սանատրկոյ – 80.

ՄԻՋԱԿՏՈՒՐ ԱՐԱՐԵԱԼ - Իսկ զձերբակալսն յղեցին առ Աւշին ի Պարտաւ, որք տուեալ ի կապանս բանտի և դատապարտեցան ի մահ, սրախողխող միջակտուր արարեալ: - 372.

ՄԻՋՆՈՐԴ - ,,Բուխայ գլուխ զօրավարաց ընդհանուր Թագաւորութեան Տաճկաց, Ջափր իշխեցող ծովու և ցամաքի, հաւասար և օրէնսդրին մերոյ Մահումաթի, և հաւատարիմ միջնորդ Աստուծոյ և մարդկան, և թագաւոր ընդհանուր ազգաց հարաւային աթոռակալութեան … Յղեցի զքեզ ելանել ի վերայ երկրիդ Հայոց ամենայն կենդանեաց – 236.

ՄԻՋՆՈՐԴԵԱԼ - միջնորդեալ հայրապետին երդմամբ ուխտի խաղաղութեան՝ ի բաց լքանել անյիշելի մոռացմամբ զչարեացն գործելոց զվնասս. – 348.

ՄԻՋՆՈՐԴԵԼ - Երկրորդ՝ զի և ոչ հաւատայր Գուրգէնի՝ ամբողջ պահելով, զոր ինչ միջնորդեն երդմամբ, զհօրն իւր կիրսն ի նորայն հօրէն կրեալ յուշ առնելով: - 316. Եւ միջնորդէր նմա հետևել հաւատոյ առաջնոյ Իսրայէլականացն, ,,զի թէ յայս եկեսցես՝ իմով հրամանաւ եղիցիս զօրագլուխ մեծ և առաջնորդ ամենայն տոհմի քո,,: - 158.

ՄԻՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ - Բայց Աշոտ, իբրև եհաս ժամ ելիցն իւր յաշխարհէս՝ յանհունս բերեալ զզեղջ և զապաշաւանս յորդահոսան արտասուօք զխոստովանողականն ի դիմի հարեալ միջնորդութիւնն – 336. և առ ինքն ժողովեալ նախարարքն Հայոց՝ դնեն ուխտ և դաշինս աստուածայինս, միջնորդութեամբ սուրբ Աւետարանին – 134.

ՄԻՋՈՑ - և ղաշիկ արարեալ յայնկոյս քան զՎանտոսպ, ի տեղւոջն արձանաշար քարակարկառ գոգաձև միջոցի երկուց բլրակաց, որ հայի յԵրիվարաց արկման դաշտն, ի վերայ Լեզւոյ գեաւղջն, որ զաւրացն գեղեցիկ առասպելաբանեն սպիանած վերայն սպանելոցն ի մանկանցն Շամիրամայ: - 334. Եւ մեկնակազէնքն պատեցին շուրջ զեկեղեցեաւն, և ելեալ առ նա ոմանց ընդ փորուած գմբեթին՝ և եհար մի ոմն աշտէիւն ընդ միջոց թիկանցն՝ և ընդ անթովքն հանեալ ի ներքոյ թոքացն՝ փչեաց զոգին և թաղեցաւ զթաղումն իշոյ: - 190. Եւ անդ ի միջոց գմբեթիւն ղօղեալ սալարեալ սարսռալից դողմամբ զետեղեալ լինէր: - 190.

և առեալ զնա մտանեն ի մէջ մայրեացն, և ընդ գիրկս մտեալ Շաւասպայ Արծրունւոյ՝ զլայնալիճն լի քարշեալ հարկանէ ի թիկանց ընդ մէջ ողինն զկորովալիր մատանցն զազդոյ շարժումն թռուցեալ թափանցիկ ընդ չարախորհուրդ սրտին միջոցն դիպեցուցանէ. – 100. Եւ զնախնին մեր Ադամ ոչ ասել առաջին մարդ, այլ այլոյ ումեմն որդի Շուռելայ, արբռտաբոյծ ուղտուց, զզուեալ յանծանօթ /գրքում՝ յանծանոթ/ աշխարհի և անհաւատարիմ յայնմ գտեալ՝ հալածեալ եղև կնաւ իւրով ի միջոց երկրի – 48. և զնոյն ոռոգեալ ոտիւք ի միջոցս պրակացն, կամ երկմատնի փայտատովք սերմանեալ. – 192. և յետ կատարման աստուածային հրամանին՝ ի ծփական ջուրցն բերեալ տապանն յարևելեայն միջոց աշխարհի՝ հանգեաւ ի լերինս Կորդուաց – 32. թէ գուցէ դրդուիցի ինչ ի միջոցէ ապաստանին վիմին հաստատնոյ – 204. Իսկ ի մէջ երեքարմատեան գոգաձև հովտին փոքու, որ յերից բլրոցն խոնարհի՝ շինէ աշտարակ բարձրաբերձ փորուածոյ միջոցաւ – 88. որով իցէ ասել արևմտական զդրախտն կամ /18/ ի միջոցի ուրեք. –20. տալով Աշոտի … զգահին նախնական իշխանութեան այլովք յոլովագոյն միջոցօք աշխարհիս, մինչև յամուրն Նախճաւանու: - 360.

ՄԻՍ - Այլ ի հրամանէ Աստուծոյ յանդիման դրախտին բնակելով պահոք ապաշխարութեան սգացեալ եղեն, ողբալով զվրիպումն առաջին կենացն, ամենայնիւ հրաժարեալ ի մարմնականաց, հոգիազարդ մարգարէութեամբ ժուժկալեալք ի մսոյ և ի գինւոյ: - 30. - Յետ ջրհեղեղին հրամայեալ՝ կերիջիք միս իբրև զբանջար խոտոյ. – 30.

ՄԻՏ/Ք/ - Բայց նոքա ի մտի եդեալ էին, թերևս պատիր խաբէութեամբ /170/ կարասցեն բառնալ զնոսա յիւրաքանչիւր տէրութենէ: - 172. Բանն զմեօք զանց առնէ. և ոչ վայելուչ է լռութեամբ և մոռացկոտ մտօք անփոյթ առնել զայնքան մեծիւ յաղթութեամբ, որ գործեցաւ ի ձեռն զօրացն Վասպուրական ազատանոյն: -176. ,,արիք երթայք առ զօրավարն, տեսէք հաւաստի, և ի վերայ հասեալ գիտասցուք, թէ ի՞ւ իւիք կարասցուք հաճել զմիտս նորա ի խաղաղութիւն,,: - 214. այլ նա ի նոյն միտս չարախորհրդութեան յամառեալ պնդեալ կայր: - 344. Այլ նոքա քանզի հաստատուն մտօք ունէին զմիաբանութիւն դաւաճան խորհրդոյն որ առ բռնաւորն Տաճկաց՝ ետուն պատասխանի և ասեն – 216. բայց սա յերթալ և ի դառնալ իւրում նովին մտօք և նովին մոլորութեամբ վարեցաւ, լրբեալ լի թշուառութեամբ. – 248. և խորհեցաւ սա զմիտս զայս, եթէ որ առ վտանգի նեղութեան դարձցի ոք առ ի պաշտօն կռոցն՝ ոչինչ է, եթէ սիրտ իւր ուղիղ պահեսցէ զհաւատսն Քրիստոսի: - 256. Եւ ամբարձ զմիտս իւր ի հանդերձեալ գալուստն Քրիստոսի, և որ յայնժամ լինէին ահեղ որոտմունք և թնդիւնք և հրձգութիւնք և արհաւիրք մեծամեծք յերկնից և յերկրէ – 284. Եւ Բուխայի իմացեալ որպիսի պատրաստութեամբ կազմի իշխանն Աղուանից՝ տարակուսէր ի միտս իւր. – 278. Եւ երթայր աներկիւղ համարձակութեամբ, քաջալերեալ ի միտս և խորհուրդս իւր ըստ պնդութեան արութեան իւրոյ քաջ նահատակն Ապումուսէ: - 288. և զմտաւ ածեալ զքսութիւնն զոր զեկուցին զԱշոտոյ կորապաղատէ առ Դերանիկն, եթէ ստութեամբ և եթէ ճշմարտութեամբ՝ մեզ չէ յայտ: - 342. և ի միտ առեալ էր զսաղմոսն, զոր ասացեալ էր երանելին: - 206. և մեք տացուք քեզ զհաւս հարկացն և հաճեսցուք զմիտս քո – 178. և նա տրտմեալ գնաց ի տուն իւր, քանզի հանապազ ստիպէր ի դիւէ անտի, թերևս թոյլ տալովն Աստուծոյ, զոր համարէր ի հրեշտակէ զանկանելն ի մտաց: - 160. և նախ քան զմտացն յօժարագոյն առ հանդէսսն յառաջանալ՝ զմարմնոյն պնդութիւն անհանգիստ առ ճակատամարտսն յարատևել: - 308. և ոչ մեք գրել զմտաւ ածել ջանասցուք. – 68. և որ այլ այսպիսիք զմտաւ ածեալ, որ գրեալ է ի սուրբ Աւետարանն – 264. Եւ պատճառ այսոցիկ զի՞նչ, եթէ ոչ այն զոր Պօղոսն ասաց, եթէ ,,վասն զի ոչ ընտրեցին զԱստուած ունել ի գիտութեան՝ մատնեաց զնոսա ի միտս անարգութեան գործել զանարժանս,,:- 374. և Վահան հասեալ յանկարծուստ ի վերայ նորա, այն ինչ ընդ միտ ածելով ստնանել ինչ Գուրգինայ. – 310. Եւ վասն իւրեանց թուլամորթութեանն և անհաստատ և յողդողդ մտաց սիրեցին զփառս մարդկան առաւել քան զփառս Աստուծոյ. – 246. զի թերևս կարասցեն հաճել զմիտս զօրավարին՝ ի բաց կալ ի խորհրդոցն զոր ինչ խորհեալ էր – 210. զի խորհուրդ յղութիւն է

մտաց, և բան ծնունդ է իմացմանց. – 258. զի՞նչ Անանիա և Սափիրայ վասն ագարակին և նորին ստութեանն, իմա և ի միտ առ: - 258. զշրթունս մեր մաքրեսցուք ի մաքուր խոստովանութիւն հպելով և զմիտս մեր սուրբ պահելով ի հաւատս ճշմարիտս. – 256. զորս եթող Բուխայ տիրել աշխարհին իւրեանց յաղագս յառաջագոյն մտերմութեան հօրն նոցա առ թագաւորն և առ զօրավարն, զի գնաց ըստ կամաց նոցա յամենայն ուժոյ զօրութեան մտաց իւրոց: - 298. Ընդ որ ոչ հաճոյացեալ Գուրգէնայ երթալ ի Յոյնս. բայց հաւանեցուցեալ զԳրիգորն տալ զբերդն ցզօրավարն, և հաճեսցի զմիտս թագաւորին: - 302. ի մտի եդեալ զի այն ինչ, իբրև թէ ի վերին երեսս հաճիցեն զմիտս թագաւորին, և ի ներքին խորհուրդս պահիցեն զխոստովանութիւնն որ ի Քրիստոս. – 248. ի մտի եդեալ զի այն ինչ, իբրև թէ ի վերին երեսս հաճիցեն զմիտս թագաւորին, և ի ներքին խորհուրդս պահիցեն զխոստովանութիւնն որ ի Քրիստոս. – 248. Իսկ Ապումրուանայ ի պատճառ ոստիկանութեան զմանկականն նոցա պատճառելով խաժութիւն հասակի՝ առ սակաւ սակաւ սկսաւ զամուրսն յինքն գրաւել, զհետ իշխանական ցանկութեանն զերասանակ մտացն ձգեալ - 360. Իսկ զօրավարն Բուխայ կայր ի կոր կործանմանն, ի տարակուսանս ըմբռնեալ փղձկէր ի միտս իւր, ցնորակոծ լինէր, հնարէր ելս իրացն գտանել ի վրանայարկն փակեալ, և ոչ առնոյր դուլ և դադար: - 282. Իսկ թագաւորն գիտացեալ զհաստատուն և զանդրդուելի միտս նոցա՝ ոչ ինչ փոյթ արարեալ թողու ի կամս կամաց իւրեանց, կեալ որպէս հաճոյ թուի: - 132. Իսկ քաղաքապետն Սահակ ելեալ ընդ դուռնն, որ ելանէ ի բերդն Շամշղտայ, սամոյր զինքեամբ արկեալ և գաւազան ի ձեռն առեալ, յիմարեալ մտօք կորոյս զփախուստն իւր, որ կարող էր գնալ յով և կամիցի. – 272. լռութեամբ և պատճառանօք ոչ կարէին հաճել զմիտս զօրավարին – 234. հրախառն տոչորմամբ եռացեալ շուրջ զսրտիւն արիւնն՝ մաղձախառն բերմամբ յապուշ զմիտսն կրթեալ՝ կայր ի մէջ տարակուսի – 180. Յայնժամ իբրև գիտաց զօրավարն Հայոց և ոչ միով իւիք կարաց հաճել զմիտս նոցա, այլ միաբան ետուն հրաման ելանել ի պատերազմ – 230. Յապուշ կրթին միտք իմ զմտաւ ածել զաղետիցն, խորհրդածել գրել յիշատակարանս. լքեալ լինին ընթացք ձեռացս առ կորովութիւն գրաւորականիս. – 350. Յապուշ կրթին միտք իմ զմտաւ ածել զաղետիցն, խորհրդածել գրել յիշատակարանս. լքեալ լինին ընթացք ձեռացս առ կորովութիւն գրաւորականիս. – 350. նա և զմտացն ոչ սակաւ հարստանալ յայտարարական բերմամբ առ հանճարեղութիւնն զուգընթաց բողբոջմամբ կատարելագործէին. – 360. Նաև սրբոց հրեշտակացն ի տեսաւորութիւն ձևացեալ, որոց սարսափմամբ առ նորա զնայեցած յապուշ միտքն կրթեալ, շուրջ փակեալ զնայեցածն՝ ի հարց մատուցեալ ասէ – 386. նոյնժամայն առ յոյժ ամբարտաւանութեանն և սաստիկ բարկութեանն և անհուն սրտմտութեանն և առանց բուժելի կատաղութեանն, յապուշ միտքն կրթեալ իբրև զարբեալ զանզգայ արբեցութեամբ - 264. նոցա ի մտի եդեալ էր, զի թէ գայցէ զհետ կոչնականացն՝ կալցուք զնա և զօրքն նորա լքանիցին, և դիւրաւ յաղթեսցուք նոցա: - 228. Ո՞չ ածէր զմտաւ, թէ յիսկզբանացն մինչ ցայսօր ժամանակի ամենայն ուրեք ուր և գումարէր զօրն և լինէր պատերազմ և սուր և ճակատամարտ՝ երբեմն յաղթեն և երբեմն ի պարտութիւն մատնին. – 282. Ո՞չ ածէք զմտաւ և ոչ զմի ինչ ի բարեացն, զոր ձեր յինէն գտեալ. – 214. որ ոչ առին ի միտ լսել զպատուէր սրբոց նախահարցն: - 26. որոց սրտի մտօք ի մանկութենէ զհարկ ծառայութեան հատուցեալ էին ըստ օրինի վայելչութեան հնազանդողաց և հնազանդելոց, ըստ յորդորման հեթանոսաց վարդապետին: - 364. որք ծանուցեալ զբռնանալն նորա ի վերայ պարսկական պետացն և զինչ կրեցին, զմտաւ ածեալ և զխառն ընդ աշխարհիս զդրակցութիւնն, և թէ գուցէ զպարսկայինն հասանիցէ մեզ կրել և աշխարհիս մեր՝ ձեռն ետուն հաւանութեան ի նորայն կալ մնալ հպատակութեան: - 360. քանզի հարցեալ ցնա որք նորին ուղեկից՝ թէ ո՞րպիսի պատճառաւ անկեալ եղեր ի մտաց՝ ասէ – 158. զոր սարսափեմ և հիացմամբ մեծաւ յապուշ կրթին միտք իմ ընդ ժուժկալութիւն այնքանեաց բազմահնար մեքենաւոր չարչարանաց. – 106. և կասկածանօք տարուբերէր ի միտս – 118. Բայց իբրև ետես բռնաւորն զանդառնալի միտսն և զաներկբայութիւն հաւատոցն և զաներկիւղ և

զյանդուգն պատասխանիսն և զմեծ անարգութիւնն զոր հասոյց ի վերայ նորա և նոցին օրէնսդրին…բարկացեալ յոյժ հրաման ետ փութով զրաւ առնել կենաց նորա: - 206. Եւ ես զայլովք հայեցեալ բանիւք քամահեալ՝ ուժգնակի կարծիք ի միտս իմ ընթացան առ ի հաւատ ասացելոցս վերջնոյ – 48. մտօք սրտի գիտել զերկիւղն Աստուծոյ, կարգել և օրէնս բնութեան ի մարդիկ.– 26. ոչ ինչ փոյթ զրազմացուցանելով՝ հեշտասէր և անպատերազմասէր մտօք վարելով կեայր ի խաղաղութեան: - 44.

ՄԻՏԵԱԼ - յապաշաւանս և ի զիջջ առեկեալ ի վերայ երիտասարդական դիւրահոս արագաւէժ առ չարեացն միտեալ խակութիւն: - 386.

ՄԻԻՍ - /թագաւորեաց/ Յեզիտ ամս Ջ … Աբդլայ ամս Գ. միւս Աբդլայ ամս ԻԲ. Մահաղի ամս Ժ. - 168. Արդ են թագաւորք Ասորեստանեայց ի միւսմէ կողմանէն այսոքիկ. անիշխանութեան ամք ԻԸ: - 60. Արդ ի գալ միւսոյ ամին որ յոբելեանք Ջ և ոլըմպիատք ՀԲ, ընդիքտիոնք Ի … աներկբայ խորհուրդ ի մէջ առեալ թագաւորն սինկղիտոսօքն հանդերձ և ամենայն մեծամեծօքն Բաբելացւոց , զի զիշխանս աշխարհին Հայոց ի բաց բարձցէ յիւրաքանչիւր տէրութենէ – 184. բանսարկուք ոմանք հրապոյրս պղտորս քսութեան ածէին տանէին ի միջօէն առ միւսն, որպէս թէ զչարիսն իրերաց առ հազարապետն խորհել նիւթել յայտ ածէին և զպատճառն զմիմեամբք արկանէին ի գաղտնիս քրթմնջելով: - 342. գլխաւորն ի նոցանէ Համիս, և միւսն որ ի կողմանց Ժանգանայ՝ ոչ իրաւացի ըստ պատգամաւորին իւրեանց ասացին առնել զայս: - 404. դարձեալ յետ փոքր ինչ աւուրց անցանելոյ՝ և խռնեցաւ միւս անգամ պատերազմն, և և՛ս սաստիկ հարան զօրքն արքունի. – 276. ելեալ իշխանքն Հայոց յանձնիւր տեղեաց գնացին յանդիման լինել նմա, Դերանիկն, տէր Գագիկ և տէր Գրիգոր և միւս այլ տէր Գրիգոր Վասպուրական իշխան, Աշոտ կորապաղատ Հայոց իշխան, Մուշէղ իշխանն Մոկաց, Շապուհ եղբայր իշխանաց իշխանի և Ապլբառ Կայսրիկ Ապահունեաց բռնաւորն և այլք ոմանք: - 340. Եւ արդ են մի ըստ միջօէ թագաւորք Ասորեստանեայց այսոքիկ … Մամիզոս միւս՝ ամս Լ… Սպարեթոս ամս Խ… – 58. ետ բերել փայտս, և եդեալ ի վերայ փայտին զերանելին Սողոմոն՝ և մօտ առ փայտն կացուցին զսուրբն Կահայ, զի գոնեայ մինն ի միւսոյ տանջանացն երկուցեալ հնազանդիցի հրամանի թագաւորին: - 292. Եւ արդ մեք, նահապետք ազատաց Վասպուրական իշխանիս՝ Մուշեղ ի ցեղէ Վահևունեաց, Վահրամ յազգէ Տրունեաց, Վահրամ միւս, որ ի թիկնապահ իշխանիս … գրեցաք առ քեզ Բուխայ գլուխ զօրավարաց Տաճկաց և բարձակից մեծ թագաւորին. – 212. Եւ այս են ծնունդք Արծրունեաց. ի Բաբգենայ Մուշեղ. Վահան. Ներսէհ. միւս Բաբգէն. Տիրոց: - 94. Եւ անտի դարձեալ դառնայր Աշոտ ընդ միւս ևս ամրականն ընդ ոստոզերծ քարանձաւի, ի յարևելից կուսէ լերինն Վարագայ, ի վերայ գեաւղջն Կոխպանից, հանդէպ եկեղեցւոյն սրբոյն Հռիփսիմեայ – 334. Եւ եղև ի գալ միւսոյ տարւոյն՝ Սմբատ իշխանն Սիւնեաց ի բաց եկաց ի հնազանդութենէ թագաւորին Հայոց, արգել առնելով հարկացն տալ թագաւորին, թևակոխելով Պարսից բռնաւորին հատուցանել զհարկս և զհասս. - 382. Եւ ի միւսում առաւօտին հասին ի վերայ բանակին խոնջեալ երիվարօք, անզգուշութեամբ առ մուտն պատրաստեալ, և անկան ի նմին ժամու Բ ոմանք, Վլիթ և Մարաճայ. – 402. և իւրաքանչիւր այր զախոյեան իւր յերկիր հարեալ՝ և ինքն զկնի միւսոյն ճեպէր: - 232. ԹԷ ՈՐՊԷՍ ԵՂԵՒ ԲԱՐՁՈՒՄՆ ՉԱՐ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆՆ ՊԱՐՍԻՑ, ԵՒ ՓՈԽԱՆՈՐԴԵԱՑ ՄԻԻՍ ԵՒՍ ՉԱՐ ԻՍՄԱՅԷԼԱԿԱՆ: - 156. Իսկ առ մեզ հասին զրոյցքս այս ըստ մնացորդաց պատմագրացն առաջնոց, ի Մամբրէէ Վերծանողէ և ի նորուն եղբօրէ Մովսէս կոչեցելոյ, և միւսումն Թէոդորոս Քերթող – 74. Իսկ ի գալ միւսոյ ամին … առեալ զօրականս այրուձի կազմութեամբ իբրև Չ խաղաց գնաց երկայնագոյն հեռաւորութեամբ հասանել ի վերայ բանակին պարսկական աղխին – 402. Յետ բառնալոյ իշխանութեանն ի Վասպուրական երկրէն մնացին տոհմք Արծրունեաց ըստ ազգս ազգս … և Ապուջափր և Ապումքդէմ և Վասակ և միւս Վասակ և դարձեալ այլ Վասակ և Մուշեղ և Աշոտ և Սահակ , և այլք ի տանէն Արծրունեաց. և ազատք նոցա: - 298. որոց անուանք ճանաչին, միոյն Գէորգ յԱկեցի տոհմէ, և միւսոյն Խոսրով ի Գաբաելեան տոհմէ: - 222. Սորա որդիք հինգ

ծնանի, յորոց մինն Հերովդէս և միւսն Փիլիպպոս, զորոյ կինն հանեալ Հերովդէի՝ թող զկինն իւր զառաջին, զդուստր Արէտայ արքայի Պատրէացւոց. – 78. Տես և զմիւս ևս նման սմին ի գրոց Գործոց առաքելոց: - 258. Քայաղ ծնանի զմիւս Արբէլ – 42.

ՄԻԻՍԱՆԳԱՄ - Եւ եկաց սուրբ Խաչն տէրունական յաստուածակերտ քաղաքին մինչև ցմիւսանգամ առածն Երուսաղէմի որ յորդւոցն Իսմայէլի: - 154. որոյ սկիզբն է ,,Անզբաղել ական սրտի նայեցող անձն իմ ի միւսանգամ գալուստն,, , Ե տուն ի յութերորդ վանգէ: - 284.

ՄԻՔԱՅԷԼ - Եւ ի հասանելն նորա ի Թէոդոսի քաղաքն ի Կարին գաւառ՝ եհաս լուր նորա առ կայսր Միքայէլ թագաւոր Յունաց. – 316. և մերկ կապուտ կողոպուտ առնէր զնոսա, մինչև զարմանալ զօրավարին ընդ սորայս քաջութիւն՝ գրէ առ Միքայէլ թագաւորն Յունաց զեկուցանելով վասն նորա: - 302.

ՄԻ ՔԱՆ ՁՄԻ - Եւ ելեալ յիւրաքանչիւր տեղեաց մի քան զմի յառաջանալ ի կոչումն Բուխայի, և ժողովեցան ի մի վայրի և եկին կացին առաջի զօրավարին Տաճկաց: - 296.

ՄԼ - Եւ լեալ Ադամ ամաց ՄԼ ծնաւ զՍէթ – 24.

ՄԼԵԱՀ - Եւ գունդն Հայոց խաղացին ընդդէմ նոցա … ի տանէն Արծրունեաց՝ Գուրգէն … և Վարաժնունիք՝ Մլեահ և Ռստոմ և Վարազշապուհ. – 230. Սոցա անուանք ճանաչին՝ Ատոմ Անձևացի և Մլեահ Վարաժնունի և Գէորգ Բողկացի և Վասակ, և այլք բազումք, որոց անուանք գրեալ են յերկինս: - 266.

ՄԼԵԱՀ ՎԱՐԱԺՆՈՒՆԻ - Սոցա անուանք ճանաչին՝ Ատոմ Անձևացի և Մլեահ Վարաժնունի և Գէորգ Բողկացի և Վասակ, և այլք բազումք, որոց անուանք գրեալ են յերկինս: - 266.

ՄԽԵԼ - դու դիմօք մարտի առ իս զօր գումարեա և ել ընդդէմ իմ ի պատերազմ, և ի միասին մխեցից զձեռս ի սոսա և բարձից զսոսա ի պետութենէ Հայոց,,: - 340. և ռամիկքն ամբոխին ոմանք ի կողմանէ մխեցին զձեռս ի գործ պատերազմին քարամբք: - 232.

ՄԽԻԹԱՐ - և մխիթար բարի ունէր ի բարբառոյ մարգարէին որ ասէր. թէ /գրքում՝ թե/ ,,մանուկ մատաղ ի ծակ իժից արկցէ զձեռս իւր՝ և ոչ մեղիցեն նմա,,: - 252.

ՄԽԻԹԱՐԱԿԱՆ - և ի վերայ նորա շինեաց եկեղեցի զհամբարձմանն ի յերկինս ի Հօրն գահակցել աթոռ, և զերկրորդ գալստեանն զյիշատակ ունելով, որ գալոցն է հայրենի փառօք, ըստ հրեշտակացն առաքեալսն զմխիթարականն և զքաջալերականն աւետիս նոցա առբերելով: - 390.

ՄԽԻԹԱՐԵԼ - Զկնի այսորիկ եկն Աշոտ թագաւորն Հայոց մխիթարել զդուստր իւր և զթոռունս, և ևս առատանայր զհաստատութիւն իշխանութեանն Աշոտի և զոստիկանութիւնն Ապումրուանայ: - 356.

ՄԽԻԹԱՐԻՉ - Քանզի ասէր զինքն՝ մխիթարիչն, զոր խոստացաւ տէր Քրիստոս առաքել աշակերտացն իւրոց – 164.

ՄՕ - սա իսպառ գերեաց զտասն…<հազար մարդու> <խաղա>ցուցանելով ի լերինս Մարաց և եբարձ զթագաւորութիւնն … որ և տևեաց ամս ՄՕ: - 60.

ՄՕԹ - ՄՕԹ ամօք յառաջ զսորայս բացայայտեալ զցոյցս յայտնութեանն, յամս Ներսեսի երրորդի Հայոց կաթողիկոսի և Վարդանայ Ռշտունեաց պատրկի և յամի ունելութեանն Տաճկաց զհայկական աշխարհս: - 394. որ ձգեցաւ մինչև յամս ՄՕԹ և ըստ ոմանց այլ նախկին թագաւորս ասելով՝ յաւելուն ժամանակս ամաց ՄՂԸ ասել: - 60.

ՄՕՈՒԻՆ - Ապա ոմանք թագաւորեցուցին զԱզարմիկ դուստր Խոսրովու, և զօրն Խոռեմայ թագաւորեցուցին զՈրմզդ ոմն ի Մծուին քաղաքի. – 156. ետ նմա զԱրևաստան զամենայն մինչև ցՄծուին և զերկիրն Հայոց մինչև ցգետն Հուրասդան, և զգաւառն Կոտայից մինչև յաւանն Գառնի յեզր ծովուն Բզնունեաց և մինչև յԱռեստն աւան և զԿոգովիտ գաւառ մինչև զՀացիւն և ցՄակու: - 140. և տաց քեզ զկողմանս Ասորոց և զամենայն Արեւաստան մինչև զՄծուին քաղաք, և ի յերկրէ Հայոց՝ զաշխարհս տանուտերական իշխանութեանն մինչև յԱյրարատ և ընդ Դուին քաղաք և յեզր ծովուն Բզնունեաց և ցԱռեստն աւան, և զմեծ մասն աշխարհին Վրաց մինչև ցՏփղիս քաղաք. – 136. ձեզ տուեալ լիցի թագաւորութիւն

Հայոց … և յԱսիւրոց կողմանէ զԱսորեստան և զՄծուին և զՆուշիրական մինչև ցսահմանս Տաճկաց – 138.

ՄԿԱՆՔ - Իսկ Գագիկ իշխան ի վերայ մկանաց կոհակալիր ձորաբաժին անդնդապտոյտ կուտակմանցն նաւամարտիկ ընթացս կազմեալ – 396. ձկան իմն թուելով ի վերայ մկանաց ալեացն խաղալով – 86.

ՄԿՐՏԵԱԼ - և մկրտեալ սուրբ և անբիծ խոստովանութեամբ ի Հայր և յՈրդի և ի սուրբ Հոգին, ի ձեռն մեծին Գրիգորի հանդերձ ամենայն նախարարօքն Հայոց մեծաց: - 94. Ընդ որում և մեծ իշխանն Արծրունեաց Խուրան և գլխապետ զօրավար զօրու, և միահեծան թագաւորութեան Հայոց մեծաց, որ առաջին ի Քրիստոս հաւատացեալ եղև իշխանս Խուրան և մկրտեալ ի ձեռաց Թադէոսի առաքելոյ. – 78. Իսկ ի տանէն Արծրունեաց ընդ մեծ նախարարսն Հայոց մկրտեալ լինի Տիրոց որդի Բաբգէնի երկրորդի - 94.

ՄԿՐՏԻԼ - ,,Քրիստոնեայ եմ և մեռանիմ վասն Քրիստոսի, և մկրտիմ ի Հայր և ի յՈրդի և ի Հոգին սուրբ, ոչ ջրով, այլ իմով արեամբ: - 222.

ՄԿՐՏԻՉ - այլ Մկրտչին հրամայի՝ մի ըմպել գինի և օղի. սա ոչ միայն գինով ոչ զկծէր, այլ և ոչ ջրով զծարաւոյն պէտսն կատարէր, սակաւապետութեամբ ընդովք թրջելովք, և խստավայել բանջարովք առ քաղցն վայելելով: - 376. և հասեալ յԱշտիշատ Տարունւոյ ի վկայարանս սրբոյն Յովհաննու և /և-ը ավելորդ է/ Մկրտչի, և Աթանագինէի վկային – 100. և տարեալ հանգուցանեն զնշխարս սրբոյն յԱշտիշատ Տարօնոյ ի տեղւոջ վկայարանի սրբոյն Յոհաննու Մկրտչին և Աթանագինի վկային: - 120. որպէս և յետոյ ընդ Պիղատոսի խնդրեցին զվրէժ սպանման Մկրտչին և հալածանացն Քրիստոսի. – 78. Վայել էր իսկ եպիսկոպոսին Յոհաննու՝ առնուլ զլուծ համանուանն իւրոյ զՅոհաննու Մկրտչի, որ կապեալն էր ի Հերովդեայ և տուեալ ի բանտ: - 250.

ՄԿՐՏՈՒԹԻՒՆ - և փոխանակ զգեստու հարսանեաց զգեստ մկրտութեանն ծանուցեալ ցուցին, զոր ջրով և Հոգւովն սրբով զգեցեալ էին – 266. Եւ փոխանակ սուրբ մկրտութեանն՝ հանապազ ողողանիլ ջրով, և զայն բաւական համարել ի սրբութիւն: - 164. կոչեաց զերիցունսն նորոյ կտակիս, զեպիսկոպոսս և զքահանայս, առաջի արկեալ զհաւատոցն կատարելաբանութիւն, զմկրտութեանն լուսաւորութիւն. զառեկելոցն յապաշխարութիւն, զյոյսն յետ վախճանին, զմարդասիրելն Քրիստոսի - 386.

ՄՂԵԱԼ - Ըստ նմին օրինակի և զօրավարն Բուխայ, ի հասանել ամառնային ջերմութեանն իբրև ի խորոց անդնդոց ի վեր մղեալ զինքն, ելեալ յերեսաց արքայի բազում և ծանր զօրու՝ եհաս ի վերայ երկրիս ի կողմն հիւսիսոյ ի մուտս Հայաստան աշխարհիս. – 262. Ի սորա յերրորդ ամի թագաւորութեանն ի վերայ Հայոց աստուածատուր բարկութեամբ անդնդաշարժ վրդովմամբք ներքնագոյն խորոցն պատահեալ միմեանց սահանախաղաց դղրդմամբ, հիմնաշարժ տապալմամբ, /356/ ներքսագոյն երկրի թուլացեալ պնդափակ աղխեալ սանդարամետական սահմանին, բարկութեան հողմոց շնչեալ ընդ ջրոցն խաւարայնոց, ի կոհակս անդնդաքակս զթանձրայատակ երկրի զկարծր և զծանրալիր անկշիռ անբաւութիւնն տատանեալ, մինչ յերեսս երկրի ի վեր մղեալ հանդէպ քաղաքին Արտաշատու/ գրքում՝ Արտաշասու/, որ Բլուրն նորուն ասի – 358.

ՄՂԵԼ - Եւ կայր զյօնսն պռզտեալ, կոկոզաբանէր լի յոխորտանօք, խրոխտայր, եռացուցանէր ի վեր մղէր զդառնութիւն ժահահոտ մաղձոյն չարաթոյն վատախառնութեանն – 242. Այս լուր քաջութեան և քաջախորհուրդ զպատերազմացն մղելոյ զյարձակմունս եհաս առ զօրագլուխն Բուխայ. – 308. Եւ սկսաւ ի վերայ մղել զժահահոտ և զյիմարեցուցիչ մաղձախառն թոյնսն – 204.

ՄՂԸ - որ ձգեցաւ մինչև յամս ՄՃԹ և ըստ ոմանց այլ նախկին թագաւորս ասելով՝ յաւելուն ժամանակս ամաց ՄՂԸ ասել: - 60.

ՄՂՈՆ - և մինչև հասեալ առ զօրագլուխսն, այլ ի բացեայ երթայր հեռագոյն ի նոցանէ իբրև յերկու մղոնս – 228.

ՄՂՈՒՆԻՔ - պատշաճագոյն զպատերազմին խրոխտական բարձրավզութեամբ վանել զախոյեանսն, և առեալ զբանակն յաւարի, և ընդ սուր հանեալ յոլովս քան թէ սակաւս, հասին ի գոգ տեղի մի ի Մղունիս գեօղ: - 402.

ՄՆԱԼ - ասէ՝ զի դայեկաբար զորդիսն Սանատրկոյ սնուցանէաք, և դու ի թագաւորելդ քոյ որոյ երդմունս արարեալ յԱրտեմի և յԱրամազդ աննկասկած կալ մնալ վասն որոյ երկիւղն ունէր: - 82. արդ դու մի անփոյթ յանհոգս յաղագս այդր մնայցես, անյապաղ հնարիցիս գտանել զխորհրդոցն նորա դատարկութիւն,,: - 346. Արդ փութա՛, պնդեա՛, ե՛լ զհետ նոցա, և մի ինչ յայդոսիկ յերկուանայցես, թուլագոյն կալով մնալով յիրիդ յայդմիկ,,: - 184. Բայց իշխանաց իշխանն Աշոտ անհանդուրժելի մնալով խորհրդոց չարին ի գլուխ ելանել - 344. բայց մնալ ի հարստութեան Պտղոմէականն միայն, մինչ տիրել Կղէոպատրեայ կնոջ միոյ եգիպտացւոյ որ յետ բազում ժամանակաց, մինչն յՕգոստոս կայսր: - 72. Բայց սպարապետն Սմբատ և տիկինն Վասպուրական Հռիփսիմէ անդէն մնաց, և յաւելան ի մարտիրոսական հոլովսն: - 324. Գունդ մի հարուստ անցեալ մնացին ի Համբոյրազան աւանի Մարդաստան գաւառի, ուր եպիսկոպոսական աթոռ մարդպետականին յայնժամ փոխեալ դնէր ի Նախճաւան քաղաքէ. – 372. Դահեկին/ճիշտը՝դայեկին/ նորա մնալով ի ներքոյ կախաղանին՝ ամփոփէ/102/ զսուրբ գանձն ի ծոց իւր, տարեալ փոխէ ի վկայարան հանգստի ի ձեռն սրբոյն Ներսէսի – 104. երկեաւ Վարդան ի մարզպանէն բնակել յանդորրու, այլ այնր աղագաւ էանց գնաց յամուրսն Մոկաց, և կայր մնայր ի նախախնամութենէ Աստուծոյ այցելել աշխարհիս Հայոց: - 122. և անհակառակող հաւանութեամբ հեզահայեաց առ միմեանս սիրոյ յորդորմամբ արտաքոյ վատթարին խոհականաբար մնալով, քաջախորհուրդ առատաբուղխ խաղացմամբ իմաստութեանն զմիմեանս բռնահարելով, զօտարոտին ի բաց վարատելով զբղջախոհութեան անհանճարութիւն՝ զլաւն և զյոյժ օգտակարագոյն ընտրութեամբն գիրկս արկին. – 388. և յիշատակարան նորա մոլորութեանն որով վրիպեացն և վրիպեալ կործանեաց զազգս բազումս՝ կայ և մնալ ազգաց յազգս մինչև յաւիտեան: - 248. և ոչ ոք մնայր գէթ երկու ի միասին. – 194. Եւ սկսաւ շրջել կարգաւ ընդ բոլոր աշխարհս, յորում բնակեալ էին Տաճիկք, որ մնային ի սմա ըստ հրամանին Բուխայի: - 306. և ամենայն ուրեք ուր և հանդիպէր զօրուն Պարսից՝ առ հասարակ սատակէր զամենեսեան, մինչ ոչ մնալոյ ապրեալ: - 148. և առ Տիմոթէոս գրէ, հաւատարիմ գոլ զզօրութիւն հաւատոցն, ասէ, ,,թէ ուրանամք՝ և նա ուրանայ զմեզ. թէ չհաւատամք՝ նա հաւատարիմ մնայ,,: - 258. Եւ Բուխայ հրամայեաց սպարապետին, զի աներկիւղ կացցէ մնասցէ Գուրգէն առ սպարապետին մեծաւ շնորհակալիւք: - 304. Եւ դաշնաւորեալ ի մէջ երկոցունց՝ մնալ առանց կասկածանաց. – 322. Եւ եղև յելանել նախարարացն Հայոց յերեսաց ամիրային՝ մնալ առ նմա միայն Մուշէղ Մոկաց իշխեցողն, այր քաջայայտ և բարձրագահ – 344. Եւ երթայր զհետ և սատակէր զնոսա անչափ զօրութեամբ. և բազումք այն էին, որ մեռանն ի սրոյն Գուրգէնի քան որ մնացինն. և զօրքն զհետ մտեալ մնացելոցն հանին յերկրէն իւրեանց: - 308. և զերծեալքն փախստեայ անկանէին ի կողմանս կողմանս աշխարհաց, յաւեր դարձուցեալ զբնաւ աշխարհն, բայց ի լեռնայնոցն՝ որ յամուրս իւրեանց մնային ի լերինն Խոյթ անուանեալ: - 188. Եւ ի բազում յուզիցն և ի խնդրոցն և զօրաժողովն լինելոյ և պատերազմ ընդդէմ վառելոյ և զձև ամրական մաքառմանցն յարդարելոյ և բռնալիր ուժեղագոյն մեքենային բախմանց քարձգութեանցն, զոր և ընդունայն աշխատութեամբ վարանեալ, անըստնանելի /հավանաբար՝ անստանալի/ մնալով ամրոցին՝դառնայ յիւր իշխանութիւնն: - 326. Եւ հասեալ ի գեօղն Արճուճս՝ մնայր անդէն, և դիտակս թողոյր ի վերայ բլրոցն բարձրաւանդակաց: - 178. Եւ հարան զօրքն Գաղատացւոց, ի մեծամեծաց մինչև ի փոքունս նոցա, և ոչ մնաց ի նոցանէ և ոչ մի: - 66. Եւ մինչ նոքա կային մնային հրաման ինչ ընդունել յարքունուստ՝ /286/ դարձան հրեշտակքն և եկին փութանակի, և բերին թուղթ յարքայէ առ Ապումուսէ՝ գալ ի հնազանդութիւն նոցա և երթալ առ Բուխայ. – 288. Եւ նուազեալ ազգին Արծրունեաց ոչ ոք մնաց, բայց միայն մանուկ մի Համամ անուն, որդի Արշաւիրի ծերոյ եղբօր Խուրէնայ, որ կայր ի դրան արքունի – 90. և ոգորել

ընդ բնաւ աշխարհս անդուլ շրջաբերութեամբ, անհանգիստ մնալով, և կեղծաւորական սիրով ընդ Վասպուրական աշխարհիս և ընդ նոցուն պետացս, համարէր լինել կատարելանալ առ սէր. – 370. Եւ որք ոչ այսոցիկ նման՝ լուան ի Տեառնէ՝ մի մնասցէ ոգի իմ ի մարդկանդ յայդմիկ յաւիտեան, վասն լինելոյ դոցա մարմին. այսինքն մարմնասէրք և ոչ հոգիասէրք: - 30. և Սահակայ յղեալ առ Սմբատ՝ մի կալ մնալ ի լերինն, այլ փութալ ելանել դառնալ անդրէն ի հետևի զօրս անդ զի ոչ ելանէ, ասէ, Երուանդ զօրու ի սահմանս Մարաց. – 84. և տեսեալ զուարակ մի՝ գողացաւ և տարեալ մեկուսի յազեաց զնա և կարկառեալ քարամբք՝ մնայր երեկոյինն – 46. զայն զինեալ ի վերայ անձանց՝ սաստկացուցանեն զպատերազմն, աներկիւղ մնալով ի հրոյն տոչորմանէ. – 208. Ջնա յղէ Ապուսէթ ելանել յերկիրն Վասպուրական և անդէն մնալ զօրօք բազմօք, մինչև զբովանդակ զհարկս և զհասս արքունի յամենայն կողմանցն Հայոց առ նա բերցեն յիւրաքանչիւր սահմանաց: - 176. Զնոյն տեսեալ ազատացն Վասպուրականի, անտանելի մնալով առ դիպուածն զոր ինչ գործեաց Ապումրուան՝ ելին գնացին առ Ատոմ որդի մեծին Գուրգինայ յամուրն Կանգուար, գտանել զելս իրացն – 364. զտարի մի ողջոյն մնալ յապականութեան երկրի. – 32. թերևս արտաքոյ տանջանացն կայցեն մնայցեն, թէպէտ և ոչ ընդ փեսային վայելեն ի հարսանիսն: - 338. իբր ոչ անգիտանալով Աստուծոյ զառ ի նոսայսն լինելոյ, այլ բնաւորեալն բարի անփոփոխ բնութեամբ մնալով ամենայնիւ՝ առ ի չարասէրն զուղիղ հատուցումն յապաղէր. – 30. Իսկ առաւելեալն իմաստութեամբ Աշոտ ոչ յանհոգս և յաներկիւղս կայր մնայր, այլ զգուշանալ հրամայէր ի խելս կամրջաց և յանապատս և ի կիրճս ձորոց: - 340. Իսկ ի Վասպուրական տէրութեանն ի տեղւոջ զօր արութեան մնաց Գուրգէն, և այլ տոհմք Արծրունիք: - 298. իսկ իբրև նա ըմբռնեցաւ, և գիտաց զօրավարն եթէ ոչ ոք այնուհետև յիշխանացն Հայոց մնաց, որ ոչ համագունդ ժողովեալ են առ նա՝ մերկացաւ յայնժամ զպատրուակ կեղծաւորութեանն, զոր սերմանել էր սատանայ ի սիրտ առնն: - 296. միայն թէ ընդարձակեսցես մեզ և տոհմի մերոյ, բնակաց երկրի մերոյ՝ մնալ յիւրաքանչիւր տունս բնակութեանց կալ խաղաղութեամբ – 212. մինչ կալ մնալ միայն երեսուն արանց ընդ քաջին Վահանայ, Մերշապուհ և Յաշկուր Արծրունիք, և Կամսարն Ներսէհ, և ի տանէն Ամատունեաց՝ զորոց զանուանսն անգիտանամ – 134. մինչ նոքա յանհոգս յապահովս մնացին յերկիւղէ մարզպանին – 402. Մնաց միայն Աշոտ որդի սպարապետին և Մուշեղ և Սմբատ եղբայր Աշոտոյ – 298. մնաց միայն զօրքն հետևակազօրքն լքեալ առանց առաջնորդի: - 306. մտեալ Վահան աղերսէր համոզէր՝ մի կալ մնալ, մինչ զքաջանունութիւնն ընդ վատասրտութիւն կարծել յոմանց խառնել, թէպէտ և անկարծ վարկանէր զկեղակարծն: - 328. ՅԱՂԱԳՍ ԳՈՒՐԳԻՆԱՅ ՄԻԱՅՆ ՄՆԱԼՈՅ, ԵԻ ՇԱՏ ՊԱՏԵՐԱԶՄԱՅՆ ՅԱՇԽԱՐՀԻՍ – 300. Յետ բառնալոյ իշխանութեանն ի Վասպուրական երկրէն մնացին տոհմք Արծրունեաց ըստ ազգս ազգս՝ քաջն Գուրգէն և Մուշեղ եղբայր իւր – 298. նազելով և սիգալով, իբրև զկորիւն առիւծու ճեմէր, անկասկածելի մնալով, առ ոչինչ համարելով զհէնն եկեալ հասեալ, փակեալ շուրջ զնովաւ. – 210. ոչ ստեղծեալ յումեքէ, այլ որպէս երևիդ՝ նոյնպէս էր. և կայ մնայ, և զմարդ ինքնածին: - 48. որք ծանուցեալ զբռնանալն նորա ի վերայ պարսկական պետացն և զինչ կրեցին, զմտաւ ածեալ և զխառն ընդ աշխարհիս զդրակցութիւնն, և թէ գուցէ զպարսկայինն հասանիցէ մեզ կրել և աշխարհիս մեր՝ ձեռն ետուն հաւանութեան ի նորայն կալ մնալ հպատակութեան: - 360. Սոյնպէս և այրն այն Յովսէփ զօրավարն Տաճկաց մնայր անցանել ձմերանն, զի ելցէ ի վերայ աշխարհիս Հայոց սրով և գերութեամբ և մեծամեծ հարուածովք և զմեծամեծս աշխարհիս խաղացուցանէ ի գերութիւն – 188. սոքա բնակին յամուրս լեռնականս, յանհոգս խաղաղացեալք յարտաքին թշնամեաց, և հարկք և հասք արքունի ի յինքեանս մնալով – 274. ,,քաջք քաջաց պատահեալ՝ անմեղադրելիք կան մնան զյաւականութեամբքն – 68. արդ աւասիկ հասեալ կայ և մնայ քո հրամանի. – 304.

ՄՆԱՑԵԱԼ - և մնացեալքն կէսքն փախեան երեսաց յո՛վ և կարաց ոք զերծանել – 400. այլ մնացեալքն ի սրոյն փախստական անկանէին յամուրս մայրեացն: - 176. Բայց մեզ կայ

առաջի ասել վասն Ջափրայ և չար գործոց նորա, անգիրս մնացեալ յայլոց, զոր կատարեաց ի վերայ աշխարհիս Հայոց երկայնագոյն ժամանակաւ և անըմբերելի նեղութեամբ ի մերս հանդիպեալ աւուրս, որ էր Հայոց Յ թուական: - 168. գրէ յականէ յանուանէ առ որ մնացեալն էին յաշխարհիս յամուրս իւրեանց, զի փութով յիւրաքանչիւր տեղեաց առանց կասկածանաց և երկիւղի առ նա հասանիցեն – 296. և զմնացեալ սակաւսն ի մէջ արարեալ շրջափակ տուեալ՝ կամէին զամենեսեան սատակել: - 150. և սկսաւ Խոսրով արքայ ժողովել զմնացեալ նախարարս զօրացն և զզօրն, որ զերծեալ էին ի պատերազմէն: - 150. Եւ երթայր զհետ և սատակէր զնոսա անչափ զօրութեամբ. և բազումք այն էին, որ մեռանն ի սրոյն Գուրգէնի քան որ մնացինն. և զօրքն զհետ մտեալ մնացելոցն հանին յերկրէն իւրեանց: - 308. Եւ զերկնային պարգևացն որ ի հանդերձեալսն խոստացաւ Տէրն, զանպատում և զիրեշտակային նորոգութեան՝ նա ասաց լինել անդ կերակուրք և ըմպելիք ուժգին. զոր և կամեսցի ուտել անյագաբար՝ պատրաստ գտանիցէ, և կանանց կուսից մնացելոց հանապազ անյագաբար խառնակումն: - 164. և զմնացեալսն փախստականս արարեալ հետամուտ լինելով հանին ի սահմանացն Հայոց. – 136. և կացին մնացեալ անդր մինչև ի դարձն Արտաշէսի որդւոյ Սանատրկոյ, որ եկեալ այսր թագաւորեաց, սպանեալ զԵրուանդ: - 82. և մնացեալքն փախստեամբ ի Մանազաւեանն անկանէին քաղաք: - 382. Եւ ոչ անվկայ բանս, որպէս վերագոյնն գրեալ է մեր զդերահատուցականս սորա, վկայութեամբ մարգարէական տառիցն, որպէս և ի պատահմանէ իրացն ճարտար գիտեն՝ որք են ի ժամանակս յայսոսիկ մնացեալ յայն ժամու անդ հանդիպելոցն: - 262. և որդի նորա Խոսրով մանկագոյն տիովք մնացեալ՝ առնու զթագաւորութիւն: - 136. և որդի նորա մնացեալ մատաղ հասակաւ, որում Մահմէտ կոչէին. – 158. Եւ վասն մնացելոցն որք ի քաղաքին և ի սահմանս նորա՝ ել հրաման յարքունուստ առնել ի վերայ նոցա ողորմութիւն, շինել զքաղաքն և հաստատել զամենեսին յիւրաքանչիւր կարգ: - 142. զբազմամարդի գեօղս և աւանս առնել անմարդիս, և զմնացեալսն վարել ի գերութիւն, զկանայս հանդերձ մանկտով. – 202. Զի թէ միոյ փայլատակման ընթացք և ճայթումն ամպոց բաւական է պակուցանել քաղել զուշեղութիւն ոգւոց, զի՞նչ ինչ յայնժամ կրէին ոգիք մնացելոցն յերկրի, ի սահանաբաց և յանդնդաքակ վրդովմանցն հոսելոց, նախ քան զջրհեղեղ ջուրց սատակումնն: - 32. Ի սոյն աւուրս որք մնացեալ էին ի տանէն Արծրունեաց իբրև լուան զպարտումն զօրացն արքունի ի Ծանարացն՝ ի մի վայր եկեալ գունդ կազմեալ հետևազօրքն մարտակցօք հանդերձ խառնաղանջ ամբոխիւ՝ լինին թուեալ արք Տ – 304. Իսկ նա չանսաւորութիւն անխոնարհելի մնացեալ, և անցեալ օթագայեցեալ ի գեօղն Փեռոտակ յանդիման քաղաքին: - 352. մի միայն մնացեալ զիւրականն պահելով լեզու. որ Եբրայեցւոցն ասի նահապետ Եբեր որդի Սաղայի - 40. սակայն կանոնական սահմանադրութեանն արտաքոյ մնացեալ, գայթ ի գայթս զքրիստոնէութեանն վարս բերելով անառակութեամբք և արբեցութեամբ, խառն անկողնօք և պղծութեամբք աղտապիղծ սարսափելի և գարշելի խառնակութեամբ արուապղծութեամբք – 336.

ՄՆԱՑՈՐԴ - Իսկ առ մեզ հասին զրոյցքս այս ըստ մնացորդաց պատմագրացն առաջնոց, ի Մամբրէէ Վերծանողէ և ի նորուն եղբօրէ Մովսէս կոչեցելոյ, և միւսումն Թէոդորոս Քերթող – 74.

ՄՇԱԿ – և աշխատասէր մշակքն պատրաստեցան ի գործ երկրասէր վաստակոցն – 268. Իսկ եթէ՝ մշակն մեղաց և անդրանիկն ամենայն չարեաց, որ ի յօձն բունեալ ոչ անիծաւ, որպիսիս ուսուցանէ վնասապարտութիւն օձին առ ի պատժականութեանն գտանել պարտաւորութիւն, որ ոչ յընքենէ միայն, այլ մանաւանդ ի գտողէն չարեաց: - 22.

ՄՇԿԱՆ - Բայց իբրև եղև մեծ պատերազմ սրբոյն Վարդանայ ընդ Մշկանին և ընդ զօրս Պարսից ի յԱւարայրեան դաշտին, յԱրտազական գաւառին. – 128. Իսկ զտեղի թագաւորութեանն Հայոց հրամանաւ Յազկերտի ունի Մշկան զօրավար Պարսից: - 120. Մշկանս այս փոխանակ Արտաշրի մեր թագաւորի մտեալ ունի զաշխարս հրամանաւ Վռամայ

Պարսից արքայի: - 118. որք ոչ ըստ օրինի եկեղեցականաց կրօնից զվարսն յարմարէին, այլ ընդ մարզպանին Մշկանայ լծակցեալ հոգալ զաշխարհիս: - 118.

ՄՇՏԱՇԱՐԺ - Եւ վասն զի մշտաշարժ է երկինն՝ յայտ է եթէ որ շարժէն զնա՝ անբաւ զօրութիւն ունի. – 54.

ՄՇՏՆՋԵՆԱԻՈՐ - իսկ մշտնջենաւորն՝ է անսկիզբն և անվախճան: - 54. Իսկ նա անեղ է և անբաւ, և ոչ յումեքէ եղեալ. և որ անեղ՝ նոյն և անապական և որ անապական՝ նոյն և մշտնջենաւոր. – 54. նոյնպէս և տանջանքն նմին նման յաւիտենականք և մշտնջենաւորք յանսպառ յաւիտեանս և յանմահ խոշտանգանս՝ պղծոցն և ուրացողացն ի սուրբ և յանբիծ հաւատոց քրիստոնէութեանն. – 264.

ՄՇՏՆՋԵՆԱԻՈՐՈՒԹԻՒՆ - ,,զի աներևոյթքն աստուածայինք յարարածոց աստի, ասէ, իմացեալ տեսանին, այսինքն մշտնջենաւորութիւն և զօրութիւն և աստուածութիւն նորա – 54.

ՄՈԳ - և բնակէ առ զօրավարի ումեմն և մոգի Պերոզ Վրամ /ճիշտը՝ Վռամ/ կոչեալ: - 82. Եւ զՋրադաշտ մոգ արքայ Բակտրիացւոց և Մեդաց ընկճեալ հալածեաց մինչև ի սահմանս Խեփտաղաց, հզօրապէս տիրեալ բովանդակ Խուժաստանի և կողմանց արևելից և Պարսից, անդր ևս քան զԲահխ և զԴեպուհան , ի Գովմայիդ և ի Գուզբան, ի Շերիբամական /գրքում՝ Շերիբամամական/ և ի Խոճիհրաստան, և միանգամայն ասել մինչև ի ծովն Հնդկաց՝ յոյժ արութեամբ – 44. ՅԵՏ ԿԻԻՐՈՍԻ /թագավորում են/ ԿԱՄԲԻՍԷՍ, ՇՄԵՐԳԻՍ ՄՈԳ, ԴԱՐԵՀ ՎՇՏԱՍՊԱ. - 68. քանզի նա խաբկանօք առն մոգի և կախարդի ասաց լինել որդի Ամովնայ և Արամազդայ, այլ ոչ ուրացաւ մահկանացու գոլ: - 36.

ՄՈԳՈՒԹԻՒՆ - որ դիւրամոռաց զերախտիսն Քրիստոսի համարէին, միայն զկնի փառաց աշխարհիս ընթանային և մոգութեան մոխրապաշտութեանն հետևէին: - 112. որ սպան զհայր իւր Վահան և զմայր իւր Տաճատուհի վասն պարսկականին հնազանդութեան մոգութեան օրինացն – 110.

ՄՈԳՊԵՏ - և դարձեալ դառնայ ի Հայս. ընդ իւր ածելով մարզպան զՎնդոյ Պարսից մոգպետ: - 124.

ՄՈԴԵՍՏՈՍ - և կարգեցին երիցապետ զոմն ի վերայ քաղաքին որում անուն էր Մոդեստոս: - 142.

ՄՈԹԷԻՆ - Ընդ ժամանակսն ընդ այնոսիկ մինչ ճոխացեալ մեծամեծս փքայր Ջափրմոթոքլ ի վերայ քրիստոնէից, որպէս Սենեքէրիմ նախնին մեր ի վերայ Երուսաղէմի և ժողովրդեանն Իսրայէլի՝ յեղակարծում հասեալ ի վերայ նորա որդին իւր Մոթէին սպան զնա – 318.

ՄՈԼԱՐ - և ընդ մեծ պարսաւանօք ներքադրեալ զբռնաւորն և զմոլար օրէնսդիրն իւրեանց զՄահումաթ: - 206. Եւ մեր ընկալեալ և հաւատացեալ ճշմարտութեանն՝ և ոչ կարեմք փոխանակել զճշմարտութիւն ընդ սնոտի, առասպելաբան և կարկատուն, ստայօդ և պաճուճազարդ մոլար ուսմանդ ձերոյ: - 246. և պախարակելով զմոլար օրէնսդիրն նոցա Մահումաթ: - 250. զի տեղեակ էր մոլար վարդապետութեանն նոցա – 206. Իսկ իբրև ընթերցաւ զնամակն, գրեալ երդմունս ի ծանականս կանանցն իւրեանց և ի մոլար օրէնսդիրն իւրեանց Մահումաթ. – 236. Մի՛ խոտորիցիս ի մոլար օրէնս վրիպելոցն ի ճշմարտութենէն, ազգին Իսմայէլի, որպէս որք վրիպեցանն գերեալքն Հայոց,,: - 318. ՎԱՍՆ ԱՍՈՐԵՍՏԱՆԵԱՑՑ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆՆ. ԵՒ ԹԷ ՈՐՊԷՍ ՋՐԱԴԱՇՏ ԵՒ ՄԱՆԻԹՈՊ ԿԱՑԵԱԼ ԳԼԽԱՒՈՐՔ ԱՐԵՒԵԼԻՑ ԿՈՂՄԱՆ, ԵՒ ՄՈԼԱՐ ՈՒՍՄԱՆՑ ՆՈՑԱ - 42. և ի բաց լերուք ի սնոտի և ի մոլար պաշտամանէ ձերմէ, որ վասն Քրիստոսի էք կաշկանդեալ ի մեծ յամառութեանդ: - 244.

ՄՈԼԵԳՆԱԿԱՆ - որ և ամբարտաւանեալ մոլեգնականս տալ հրաման զանխորհուրդ միաբանութեան զրաջան վաստակոց, կանգնել բուրգն յերկրէ, որոյ գլուխն հասցէ յերկինս. – 40.

ՄՈԼԵԳՆՈՏ - մատուցեալ առ Վռամ հանդերձ Սորմակաւ ումեմն Արծկեցւոյ մոլեգնոտ փառամոլ աբեղայի՝ սկսան ազգի ազգի լեզուագարութեամբ չարախօսել զսրբոյն Սահակայ – 118.

ՄՈԼԵԳՆՈՒԹԻՒՆ - և մինչ այսմ գործոյ պարապէր՝ դէպ եղև նմա ի կողմանս Եգիպտացւոց հանդիպել առն միոյ մոնազնի, որում կոչէին Սարգիս Բհիրայ, որ էր եղեալ աշակերտ մոլեգնութեանն արիանոսաց. – 158. և նոքա ըստ ձախողակի սովորութեանն իւրեանց օրինադրութեանն, արիւնարբու առանց բարւոյ բարեգործութեանցն մանաւանդ թէ լցեալք սատանայական չարութեամբք՝ ձայն արկեալ յամենայն քաղաքսն, խռովեալ ըստ գազանեղէն իւրեանց մոլեգնութեանցն – 398.

ՄՈԼԵԼ - Զի նոքա վասն ի կանայսն մոլելոյ ընդ դստերսն Կայէնի խառնակելով՝ ջրով կործանեցան. – 336.

ՄՈԼԵԿԱՆ - այլ և ինքն Մահմէտ, մոլեկան հոգւով շարժեցեալ՝ տայ գրել զանուղղայս, զոր մեք ի բազմաց զսակաւս յիշեսցուք: - 164. Խորտակէր և զնշան տէրունական Խաչին, զոր ուրեք ուրեք կանգնեալ լինէին. քանզի յոյժ ստիպէր զնա հոգին մոլեկան: - 168. սա էր այր ժանտ, և մոլեկան հոգւով շարժեցեալ՝ բազում չարիք մարտնչէր ընդ ազգն քրիստոնէիցն. – 168.

ՄՈԼԻ - ,,դու, մոլի մանուկ,/ծն.մոլիմանուկ/ ընդէ՞ր մեռանիս զուր և տարապարտուց,,. – 222. և կացուցին հակառակաթոռ սրբոյն Սահակայ զՍորմակ մոլի, և ապա զԲքրիշոյ Ասորի, և ապա զՍամուէլ – 118. և նորա արկեալ զնա ի փոքրագոյն տեղի մի նեղ, և ինքն փութացաւ գոյժ ետ վասն նորա՝ մահու պատահել, լի անմտութեամբ մոլի աբեղայն, որում ոչ հրամայեցաւ. – 320. որ յետուստ՝ մոլի բռնաւոր, որ և զՏրովական դժուարամարտիկ իրս քաջապէս և կարողաբար վանեալ՝ աստուած ի նոցանէ ասացաւ, նա և ոչ աշխարհակալին Աղէքսանդրի Մակեդոնացւոյ - 36.

ՄՈԼՈՐԵԱԼ - և կարծէր յայնժամ ի ձեռն խոշտանգանաց դիւրաւ արկանել զնոսա ի հաղբս կորուսելոցն և մոլորելոցն ի հաւատէն Քրիստոսի: - 264.

ՄՈԼՈՐԵՑՈՒՑԱՆԵԼ - և դու ջանաս մոլորեցուցանել զիս ի հաւատէն Քրիստոսի: - 222. Եւ սա բազումս արգել ի կռապաշտութենէ, թէպէտ և մոլորեցոյց անյուսութեամբ զդարձեալսն յապաշխարութիւն – 256.

ՄՈԼՈՐԻԼ - Բայց երկոքեան կողմանք դնին ի ներքոյ պարսաւանաց, թէպէտ և ի բարեպաշտութեան յաղագս մոլորեցան: - 256. ի կամս անձնիշխան կամաց մոլորեցաւ – 250.

ՄՈԼՈՐՈՒԹԻՒՆ - անցցուք ի վեր Եղկղեսիանոսաց, ի ժամանակի հալածանաց որք անկան ի կռապաշտութեանն մոլորութիւն. – 256. բայց սա յերթալ և ի դառնալ իւրում նովին մտօք և նովին մոլորութեամբ վարեցաւ, լրբեալ լի թշուառութեամբ. – 248. Բաւականասցի իմ դուզնաքեայ բանքս առ հերձուածող մոլորութեանց: - 258. և զԽուրանն Արծրունի մեծ զօրավար արկեալ ընդ ուռկանաւ խարդախութեան, հետևել զկնի իւրոյ մոլորութեանն. – 80. և յիշատակարան նորա մոլորութեանն որով վրիպեացն և վրիպեալ կործանեաց զազգս բազումս՝ կայ և մնայ ազգաց յազգս մինչև յաւիտեան: - 248. Եւ զի մի երկայնեալ որ ինչ վասն նորա ապիրատ և ինքնակամ և անզիղջ և անխիղճ առանց պատկառանաց մոլորութիւն սորա լի անամօթութեամբ՝ի բաց դիցուք զսա ի միջոյ յիշատակի նախարարացն – 248. Եւ հասեալ Շաւասպայ Արծրունւոյ ամբարշտի յԱրտաշատ հանդերձ մարզպանաւն՝ շինեն ի դուռն քաղաքին զորմզդական մեհեանն, /124/ և զկրակապաշտութեան մոլութիւն բորբոքեն ի նմա. – 126. և յանձն առեալ ինքնակամ մոլորութեամբ զօրէնս մազդեզանց մոխրապաշտ յամառութեանց – 124. և ոչ եմ բաւական պատմել զանցս անցիցն կորստականութեանն նոցա մոլորութեան, վրիպել յուղիղ և յամբիծ առաքելաքարոզ դաւանութեան հաւատոց կաթողիկէ եկեղեցւոյ ի Հայր և յՈրդի և ի Հոգին սուրբ. – 240. Եւ քանզի վավաշոտ մոլորութեամբ վարելով ոչինչ փոյթ զորդւոց իւրոց առնէր – 44. թողեալ զօրէնս քրիստոնէութեանն՝ հնազանդեցան որմզդական մոլորութեանն մոխրապաշտ վարդապետութեանն: - 102. Յովսէփ անուն ի Յունաց

ազգականութենէ ի ծառայութիւն հասեալ Աւշնի, ներքինի, թողեալ զքրիստոսական պաշտօնն, մոլորութեանն Մահումաթայ հաւատացեալ. – 374.

ՄՈԽՐԱՊԱՇՏ - Եւ արդ զի այսոքիկ այսպէս իցեն՝ ո՛րպիսի ինչ առ մոխրապաշտսն առ այնս իմանալի է – 52. և յանձն առեալ ինքնակամ մոլորութեամբ զօրէնս մազդեզանց մոխրապաշտ յամառութեանց – 124. թողեալ զօրէնս քրիստոնէութեանն՝ հնազանդեցան որմզդական մոլորութեանն մոխրապաշտ վարդապետութեանն: - 102.

ՄՈԽՐԱՊԱՇՏՈՒԹԻՒՆ - որ դիւրամոռաց զերախտիսն Քրիստոսի համարէին, միայն զկնի փառաց աշխարհիս ընթանային և մոգութեան մոխրապաշտութեանն հետևէին: - 112. ստիպեն լքանել թողուլ կրօնս քրիստոնէութեան, հնազանդել պաշտել զօրէնս մազդեզական մոխրապաշտութեանն – 102.

ՄՈԿԱՑ ԱՇԽԱՐՀ- Եւ ինքն Բարծումայ ի չքմեղս լինելով՝ եկն ի Հայս յԱրզնարզիւն և յաշխարհն Մոկաց, զի անդ զնեստորական աղանդոցն սերմանիցէ սերմանս: - 130. Եւ սրբոյ վարդապետին մեր Եղիշէի, որ յայնմ ժամանակի ի Մոկաց բնակէր աշխարհին՝ եկեալ առ նա Բարծումայ, խնդրեալ զպատմողական գիրսն Հայոց, զոր գրեալ էր հրամանաւ սրբոյն Վարդանայ. – 130. Իսկ ի դառնալ գրոցն ի յաշխարհն Մոկաց՝ ոչ ինչ ումեք փոյթ վասն այն լինելով, կարծել՝ վարդապետին զայս այսպէս կանոնեալ. – 130. բաժանեն զաշխարհս յերիս մասունս. տալով Աշոտի … Իսկ Գագիկ զկողմանս Ռշտունեաց այլովք մօտակացիւք գաւառօք, և որքան իցէ հասումն ուժոյ՝ անդր ևս յաշխարհն Մոկաց: - 360.

ՅԱՂԹԵԼ - և նորա համբարձեալ զձեռս իւր յերկինս յաղօթս կալ, զի կարասցէ յաղթել նահատակութեամբ – 296. զի թէ ես յաղթեցից՝ երդուեալ ի մեծ աստուածն Որմազդ և յարեգակն և ի լուսին և ի հուր և ի ջուր և ի Միհր և յամենայն աստուածս՝ զի ձեզ տուեալ լիցի թագաւորութիւն Հայոց. – 138. զի կարասցէ անսայթաք հաւատով յաղթել հնարից բանսարկուին, որ ի ծածուկ և յայտնի պատերազմին – 206. Իբրև գիտաց բռնաւորն, եթէ յաղթեցաւ ի սրբոց արանցն, մանաւանդ ի քաջէն Գրիգորէ – 250. Իսկ զՎահագն Հայկազնեայ … կացուցանեն ի դրան արքունի, յառաջանալ ի գործ պատերազմին մեծաւ աշխատութեամբ՝ կամ մեռանել ի սրոյ թշնամեաց դիպելոց, կամ յաղթել քաջասրտութեամբ: - 70. Լո՛ւր և զարմացի՛ր և աստանօր ևս առաւել, եթէ զիա՞րդ ողորմութիւն բարերարին՝ արդարադատ բարկութեանն յաղթէր – 28 միթէ դո՞ւ միայն առաջին յաղթեցար և հարար ի թշնամեաց, կամ քո՞ միայն զօրքդ անկան, կամ քո՞ և եթ աւար բաժանեցաւ: - 282. յայտնի և յանդիման կացուցանել զթիւ սպանելոցն ոչ առնուին յանձն, թէ Ջ այր միայն հզօր ձեռամբ յաղթեցին ԺԵ հազարացն. – 234. նոցա ի մտի եդեալ էր, զի թէ գայցէ զհետ կոչնականացն՝ կալցուք զնա և զօրքն նորա լքանիցին, և դիւրաւ յաղթեսցուք նոցա: - 228. Ո՞չ աճեր զմտաւ, թէ յիսկզբանացն մինչ ցայսօր ժամանակի ամենայն ուրեք ուր և գումարէր զօրն և լինէր պատերազմ և սուր և ճակատամարտ՝ երբեմն յաղթեն և երբեմն ի պարտութիւն մատնին. – 282. և հայցէին յամենայաղթն Քրիստոսէ յաղթել մեծի պատերազմին - 250.

ՅԱՂԹՈՂ - Եւ այնչափ և առաւել քան զսոյն կազմութեան սպառազէն պատրաստութեանն՝ սաստիկ տարակուսանօք և մեծ երկիւղիւ պակչէին յահէ հայկասիրտ իշխանին և յաղթող նահատակին մեր Աշոտոյ – 210. Եւ ապա առնու զթագաւորութիւնն Ասորոց և Բաբելոնի և վերնոց կողմանցն Սելևկոս Նիկանոր, որ կոչի յաղթող: - 70. և յայտնի ոչ վայելչանայր կատարել զոր կամէրն, մի՝ վասն յաղթող մեծանուն գործոյն, նախատ անձին համարելով, երկրորդ՝ վասն վաշտիցն զօրութեան: - 326. Իսկ ի վերայ բազում հինից եկելոց ի վերայ Գուրգինի և սաստիկ պատերազմացն զոր պատերազմեցաւ յաղթող նահատակութեամբ. ոչ միայն յարտաքին թշնամեացն որ շուրջանակի պաշարէին, բազում այն էր որ ի ներքին ընտանեաց հարազատաց, ազգականաց դրժողաց, ուխտազանցաց, ստոց և ստերդմանց յուզէին աղմուկք: - 308. որք հեղին զարիւնս իւրեանց … և վասն ճգնութեան երանելոյն Գրիգորի Արծրունոյ քաջ նահատկին, յաղթող վկային, խոստովանողին Քրիստոսի – 314.

ՅԱՂԹՈՒԹԻՒՆ - այլ զպարտութիւն քան զյաղթութիւն յինքեանս ձգէին ի ձեռանէ Յիսէի, մինչ պակասել պատրաստութեանն բերդին, մանաւանդ ջրոյն սակաւաւորութիւն. – 362. Բայց տուաւ յաղթութիւննն այն մեծ ի ձեռն զօրավարին Ապումուսէի, զի լցցի զոր ասաց Տէր ի բերանոյ Ամովսայ Մարգարէի, ,,խորտակեցից զնիզակս Դամասկոսի,, , որում այժմ Դմիշկն կոչեն, ուր ելին զհետ Բուխայի: - 286. Բանն զմեօք զանց առնէ. և ոչ վայելուչ է լռութեամբ և մոռացկոտ մտօք անփոյթ առնել զայնքան մեծիւ յաղթութեամբ, որ գործեցաւ ի ձեռն զօրացն Վասպուրական ազատանոյն: - 176. Եթէ, որպէս ասացի, ի բաց գնաս յինէն՝ խաղաղութիւն է, և թէ ոչ՝ պատերազմ և կռիւ և ճակատամարտ ... քո պատերազմ՝ և մեր յաղթութիւն, քո մարմին՝ և իմ նիզակ, քո պարանոց՝ և իմ սուսեր. – 278. և անդ Խուրան բազում նահատակութիւնս և յաղթութիւննս կատարեալ զօրականօքն որ ընդ նմա երթեալ էին յաշխարհէս Հայոց. – 80. Եւ դարձան ուժեղ զօրութեամբ և մեծաւ յաղթութեամբ: - 66. և երաժշտականքն երգս առեալ զյաղթութեանն Փարաւոնի՝ գոչէին ,,Տէր խորտակէ զպատերազմունս, Տէր է անուն նորա,,: - 232. և առեալ զյաղթութեանն քաջանունութիւն, առաւել զհանճարեղութեանն խոհեմութիւն՝ յառաջանայր ի գահ, ի բարձ և ի պարգև - 72. Եւ արքայ Խոսրով զարհուրեալ պատրաստի ի փախուստ, քանզի

զօրացաւ յաղթութիւնն Հայրակղի. – 148. Եւ բարձեալ զօրքն Հայոց դիակապուտ արարեալ զզարդ և զզէնս զարի արանց և զքաջ երիվարաց, առեալ աւար բազում՝ գնան յիւրաքանչիւր տեղիս մեծաւ յաղթութեամբ: - 178. և զօրացաւ յաւուր յայնմիկ յաղթութիւն Խոսրովայ: - 140. և թէ ի պատերազմին յայնմիկ հասանիցէ զմահուն ընդունել զվճիռ՝ իսկ ըստ յաղթութեանն զխոստովանողականն ժառանգել անուն, զօրանալ զօրութեամբ ի զօրութիւն խաչին Քրիստոսի Աստուծոյ մերոյ: - 400. և իբրև զմի անձն, վառեալ ի զէն և ի սուր և ի ճակատամարտ՝ հասեալ յամուրս՝ տապալէր զզօրութիւն նոցա սրով և աղեղամբ, ի փայլիւն սուսերի և նիզակի և ի գիշերամարտ նահատակութեանց, ըստ նմանութեանն քաջ զօրավարին Իսրայէլի Յեսուայ կամ Գէդէովնի կամ թէ նոյն ինքն նահապետին Աբրահամու, ի վերայ հասեալ Քանանացւոց, զյաւէտ յաղթութեան նահատակութիւն նահատակեալ՝ և դառնայ մեծաւ յաղթութեամբ: - 312. և իբրև զմի անձն, վառեալ ի զէն և ի սուր և ի ճակատամարտ՝ հասեալ յամուրս՝ տապալէր զզօրութիւն նոցա սրով և աղեղամբ, ի փայլիւն սուսերի և նիզակի և ի գիշերամարտ նահատակութեանց, ըստ նմանութեանն քաջ զօրավարին Իսրայէլի Յեսուայ կամ Գէդէովնի կամ թէ նոյն ինքն նահապետին Աբրահամու, ի վերայ հասեալ Քանանացւոց, զյաւէտ յաղթութեան նահատակութիւն նահատակեալ՝ և դառնայ մեծաւ յաղթութեամբ: - 312. և ինքեանք դառնային մեծաւ յաղթութեամբ անպայման խնդութեամբ: - 382. և ինքեանք դառնան մեծաւ յաղթութեամբ: - և ինքեանք դարձան մեծաւ յաղթութեամբ, մատուցին պատարագս Աստուծոյ և լցուցին զպէտս տնանկաց և աղքատաց այրեաց և որբոց: - 136 և հասեալ առ զօրավարն իւրեանց մեծաւ յաղթութեամբ և բազում աւարաւ: - 282. Եւ նոցա ի գլուխ հանեալ զգործ պատերազմին՝ դառնան զօրքն Հայոց մեծաւ յաղթութեամբ – 176. և ոչ ըստ տեղիս տեղիս ցուցանէին զհանդէս մարտիցն և զյաղթութեանն քաջութիւն, այլ բոլորովիմբ ամենայն ուրեք ախոյեանայարձակ սլացմամբ ընթանայր. – 312. և չոգան ի բանակետղ իւրեանց մեծաւ յաղթութեամբ, ուրախացեալ անտրտում խնդութեամբ – 282. Եւ վասն յաղթութեանն գոհութիւն մատուցեալ Քրիստոսի՝ ասէին. – 252. ընդ առաւօտանալն սկսեալ՝ ի ժամս բովանդակ՝ յաղթութիւն սատարեաց և ի փախուստ դարձոյց զբազմութիւն զօրացն Ովայի – 178. Ընդ նոյն ժամանակս եկն Վահան Աշոտի որդի, հօրեղբօրորդի Սահակայ ի գերութենէն՝ նուաճել զաշխարհս, և գունդ կազմեալ ընդդէմ Գուրգինայ՝ և ինքն զպարտութիւն քան զյաղթութիւն յինքն կրէր: - 310. իսկ նա առ երագութեան ձեռին ձգեալ զսուսերն՝ եհար զերեսս Ջուանշիրայն, և խլեաց զաչս նորա, և ինքն դարձաւ մեծաւ յաղթութեամբ, եմուտ յամրական տեղիսն: Եւ նոքա յո՛վ և աճապարեցին: - 310. Իսկ նոցա անմեկնելի զոյսս իւրեանց ի Քրիստոս ունելով, բնաւից գերագոյն և հոյակապ անուն ստացեալ, զյաղթութեան նշանակ կանգնեալ. - 308. Նմանապէս, կամ թէ ևս հրաշափառագոյն զյաղթութեան մարտսն յօրինեալ յարդարեաց զպարտութիւն ի վերայ ազգին Իսմայէլի մեծ զօրավարն Գուրգէն, և իսպառ կանգնեաց զնշանակ յաղթութեան ամենեին ամենայն ուրեք ընդ ամենայն տեղիս. – 312. Նմանապէս, կամ թէ ևս հրաշափառագոյն զյաղթութեան մարտսն յօրինեալ յարդարեաց զպարտութիւն ի վերայ ազգին Իսմայէլի մեծ զօրավարն Գուրգէն, և իսպառ կանգնեաց զնշանակ յաղթութեան ամենեին ամենայն ուրեք ընդ ամենայն տեղիս. – 312. որ մեծաւ ախորժանօք յանգուցանէ առ ինքն զնոսա իբրև արս պատուաւորս և քաջամարտիկս զօրաւոր զօրութեամբ, և մանաւանդ զի բազում անգամ զանուն յաղթութեան ստացեալ ունէին: - 366. Որդին Ապուսեճի Աւշին, որ զպարսկային հարստութիւնն հզօրապէս յաղթութեամբ ի գլուխ եհան՝ ձեռնամուխ ախորժեաց լինել ի վերայ Հայոց – 360. ՎԱՍՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ԲԱԳԱՐԱՏԱՅ ԻՇԽԱՆԻՆ ՀԱՅՈՑ ԵԻ ՄՈՒՍԵԻ ԵԻ ՅԱՂԹՈՒԹԵԱՆՆ Ի ՁԵՌՆ ԱՇՈՏՈՅ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ ԻՇԽԱՆԻՆ, ՋԻ ԵԿՆ ՋՕՐԱՎԻԳՆ ԲԱԳԱՐԱՏԱՅ: - 172. Քանզի և զոստանն Նախճաւան տուեալ էր ի կալուած զյաղթութեանն մանազաւենին Կայսկի: - 382. Քաջապէս մարտուցեալ Գուրգէն եղբայր իշխանին և Վահան Հաւնունի՝ առին անուն յաղթութեան, անցուցանելով ընդ սուր զկողմն թշնամեացն. – 178.

ՅԱՂՕԹՍ ԿԱԼ - և մինչ նոքա կարծեցին, թէ ի ձեռն նոցա մատնեցան՝ և նոքա կային յաղօթս և զԱստուած կարդային օգնել նոցա. – 286. Եւ եղև իբրև հասին ի տեղի կատարմանն ասպարիսի նահատակութեանն՝ ծունր եդեալ կային յաղօթս – 266. և զաչս առ Աստուած համբարձեալ եկաց յաղօթս – 216. և ինքն ամբարձ զձեռս իւր յերկինս, յորդառատ արտասուօք եկաց յաղօթս, ասելով զերեսուն և չորրորդ սաղմոսն և զութսուն երկու – 230. և նորա համբարձեալ զձեռս իւր յերկինս յաղօթս կալ, զի կարասցէ յաղթել նահատակութեամբ – 296. Իսկ սուրբն ելեալ հանդերձ դահճօքն ի տեղի ասպարիսի կատարմանն երկնաւոր նահատակութեանն՝ ի ծունր իջեալ կայր յաղօթս – 206.

ՅԱՃԱԽ - ուր յաճախ շնչէ օդն հիւսիսային – 262.

ՅԱՃԱԽԱԳՈՅՆ - Զայս ասելով, և յերեսն ի վայր ի վերայ մահճացն զգետնեալ՝ ի վայն և յեղուկն զողբոցն խառնուածսն յաճախագոյնս մանուածէր: - 388. յաճախագոյնս վասն Գուրգինայ վայելէ զդրուատեացն, կարևոր է բազմաձեռն աճմամբ զդրուատեացն յերկարագոյնս հատուցանել զճարտասանութիւնս. - 300.

ՅԱՃԱԽԵԼ - Եւ յաճախեցին բազմապատիկս վասն նորա գոհութիւնս Աստուծոյ: - 330. ապա բանս մեղադրականս բազումս յաճախեաց եդ առաջի նորա. – 216. գուցէ ակամայ երթալովն, և նեղիչն աշխատելով ի պահելն՝ յաճախեսցէ ի վնաս և ի քէն, և օճան բարւոյ յայնմ հետէ ոչ ևս ումեք հասցէ գտանել,,: - 216. զհարստահարութիւնն բացագնեալ, և զթուղթս առ մի մի յիշխանացն յղել յաճախէր, յոլովագոյն առ իշխանն Աշոտ և առ եղբարս իւր. – 360. Յայնժամ բարկացեալ բռնաւորն հրամայեաց նախ զլեզուն հատանել զսրբոյն, զի մի յաճախիցէ առ հասարակ զթագաւորն և զօրէնսդիրն ինքեամբ հանդերձ անարգել. – 290. որպէս ցուցանեն յիշատակարանքն առաջնոց պատմագրաց, զաւերումն Հայոց և զյաճախել նեղութեանցն և զանթիւ բազմութիւն վկայից, որք վասն Քրիստոսի նահատակեցան,և զքաջապէս արիանալ սրբոց քահանայիցն – 128.

ՅԱՃԱԽՈՒԹԻՒՆ - ,,գո՞յ թողութիւն իմոց չարեացն /386/ գործելոց, թողո՞ւ Աստուած զիմ պարտեացն յաճախութիւն. ասացէք ինձ, տուք ինձ պատասխանի,,: - 388. Աստանօր լաւագոյնս իմն աստուածայինն Մովսէս գրէ ի բերանոյ Աստուծոյ զյաճախութիւն ամբաստանութեան ամբարշտելոցն, ըստ իւրաքանչիւրոցն և զվնասն նշանակելով: - 28. Եւ զյաճախութիւն ամբաստանութեանն ունի բողոք, թէ նախ զբնութեան օրէնս անարգեալ, և յերեսացն Աստուծոյ անկեալք եղեն: - 54 և զի մի մի թուիցէ յանուանէ զյաճախութիւն զինուցն և զսպառազէն կազմութեանցն զձիոցն և զհեծելոց նոցա. – 280. Եւ ինձ ի վերայ տրտմականացն դէմ եդեալ առ կատարելագոյն և առ անզուգական անհամեմատ խնդութիւնն դեգերել, առ հոգևորական ուրախութիւնսն ընթանալ յետ մարմնական տրտմականացն յաճախութեանցն: - 386. Քանզի այնչափ թանձրացաւ յաճախութիւն սովոյն՝ որ ոչ միայն անսուրբ կենդանիս ուտէին ըստ սրբութեան կարգի, այլ և զսարսափելի և զդժնդակ, որ զգազանայինն անցուցանէ զվայրենամտութիւնն, զմարմինս մեռելոց՝ առանց խղճելոյ ուտէին, ի գերեզմանացն հանեալ զհետ միոյ և երկուց ամաց թաղելոյ: - 374.

ՅԱՄԱՆԻԿ - Բայց Յամանիկն և Ահմատն և Ապլբառն և այլ ևս Տաճկաց միաւորութեամբ զնոյն չարիս երկնէին գային: - 340. Բայց Յամանիկն իբրև լուաւ ի դարձուցանելն Աշոտի զԱհմաթ լի անարգանօք, և զխորհուրդն զոր խորհեալ էին ի վերայ Հայոց ցրել՝ զօրհասն ի վերայ իւր համարեցաւ տեսանել. – 350. Բայց որդին Շեհայ ի մտանելն ի Պարտաւ՝ եթող անդ քաղաքապետ զմի ի հաւատարմաց իւրոց Յամանիկ ոմն: - 338. Եւ գրեն թուղթ առ Յամանիկն, եթէ ,,ի մտանելն իմ ի Դուին քաղաք և զհարկս արքունի յիս գրաւել՝ և յանկասկած առեալ զիշխանս Հայոց՝ և եկեսցեն առ իս. – 340. Եւ ի ժամու մինչ ազևորեալքն կամէին մտանել զառաջեաւ … յայնժամ շուրջ կացեալ զվրանսն մեծ սպարապետին զկազմեալ գնդաւ վահանաւոր և նիզակաւոր ամրափակ պնդութեամբ, և մտեալ մատոյց զթուղթն, զոր էր գրեալ առ Յամանիկն ի քաղաքն Պարտաւ Ահմաթայ նենգութեամբ: - 344. և ինքն Յամանիկն գրէր առ Աշոտ զԴերանկէն՝ լի ապիրատութեամբ խորհել վասն Աշոտի: - 350. զի Յամանիկն թուղթս և դեսպանս մի զմիոյ կնի առնելով առ

իշխանս աշխարհիս՝ զինքն յառաջանալ ի վերակացութիւն Հայոց – 340. Իսկ Յամանիկն ի վերայ Հայոց խորհէր ելանել, կամելով և տիրել Հայոց. – 338.

ՅԱՄԱՌԵԱԼ - այլ նա ի նոյն միտս չարախորհրդութեան յամառեալ պնդեալ կայր: - 344. ապա յամառեալ զարբանեալքն իւր հրամայեաց կապել կրկին շղթայիւք և արկանել ի ներքին բանտ: - 250. և արդ քանզի խօսեցայ ընդ ձեզ բանիւք ողոքանաց՝ և դուք թերևս յայդ գայթակղեալ խաբեցայք և պնդեալ կայք յամառեալ: - 246.

ՅԱՄԱՌԻԼ - մի՛ յամառիք զհետ Արշակայ և բնաւ սպառ սպուռ մերժեալ լինիք ի հայրենեաց բնակութենէ – 110.

ՅԱՄԱՌՈՒԹԻՒՆ - եթէ կացցես ի նմին յամառութեան ի հաւատսդ Յիսուսի որդւոյն Մարիամայ կնոջ հրէի,,: - 294. և ի բաց լերուք ի սնոտի և ի մոլար պաշտամանէ ձերմէ, որ վասն Քրիստոսի էք կաշկանդեալ ի մեծ յամառութեանդ: - 244. և յանձն առեալ ինքնակամ մոլորութեամբ զօրէնս մազդեզանց մոխրապաշտ յամառութեանց – 124.

ՅԱՄԱՅ ԳԵՕՂ - և ընդ այգն ընդ առաւօտն՝ յՌեննայ Յամաց գեօղ և գիշերագնաց հասեալ մինչ ի Տարօնայ կոչեցեալ գետ: - 402.

ՅԱՄԵԼ - զոր մեք ոչ յաւելցուք այժմ յառասպելս նոցա յամել – 32.

ՅԱՄԵՆԱՅՆԻ - բայց միայն Աստուծոյ կարողի և յամենայնի խնամողի կարողութիւնս այս է դիւրայարմար – 198. և մտեալ ի խորագոյն բանտ, տարեալ յամենայնի գոհութեամբ վասն անուանն Քրիստոսի, սովով և ծարաւով ժուժկալութեամբ մեծաւ: - 318. քանզի էին բարեկամացեալ ընդ միմեանս Կիւրոս և Տիգրան և յամենայնի համանմանքն, համակամքն, միասիրտքն, քաջախոհեմքն և բազմադրուատքն: - 62.

ՅԱՄՐ - բայց Ատոմ յամր առ փոյթն /364/ լինելով վասն թագաւորին ակնածութեան: - 366.

ՅԱՄՕԹ ԱՌՆԵԼ - և բազմութիւն քրիստոնէիցն … գոհացեալ միաբան ետուն փառս Աստուծոյ, որ զօրացոյց զսուրբսն և արար յամօթ զսատանայ հանդերձ գործակցովքն իւրեանց: - 268. որ զօրացոյց զսուրբ վկայն և արար յամօթ զսատանայի: - 254.

ՅԱՄՕԹ ԼԻՆԻԼ - զի և որք յոյժ ատեցողքն են մեր և թշնամիքն՝ տեսցեն և յամօթ լիցին, և բարեկամքն և սիրելիքն յոյժ ուրախ եղիցին,,: - 218.

ՅԱՅԴԿՈՅՍ - և ես մի՛ իշխեցից քան զԱրասխ անցանել յայդկոյս: - 138.

ՅԱՅԼԱԿԵՐՊՍ ԵՂԵԱԼ - Յայնժամ արքայ Խոսրով յայլակերպս եղեալ գնաց եմուտ ի բուրաստանն արքունի – 152.

ՅԱՅՆԺԱՄ - Յայնժամ Հայրակղէս գրէ առ Խոռեամ և ասէ. – 152. Անդ հանդիպեալ լինէր և երանելի եպիսկոպոսն Գրիգոր Ռշտունեաց վսամ. ոչ կարաց իւրայնովքն զերծանել, իբրև յայնժամ առղոթաւ/հավանաբար ,,աղօթել,, բայն է / ի լեառն: - 358. Անկեալ էր յայնժամ ի պատերազմին Աշոտ Հայկազնեայ Գեղարքունեաց իշխան, որ Սուփանայ որդին ճանաչէր. – 368. Բայց միայն զԱրշակ ոմն ի տոհմէն Վարաժնունեաց */փրկվեց/* խնդրեալ դստերն Շապհոյ Բագրատունոյ, զոր առեալ յայնժամ Աւշնի կնութեան յանօրէն ամուսնութիւն. - 372. Բայց քանզի մեր ոչ ոք յայնժամ հանդիպէր ի պատասխանատրութիւնս երանելոյն՝ և ոչ գրել արժանի համարեցաք: - 206. Բայց քանզի ոչ ոք յայնժամ ընդ գրով զայնոսիկ ներքաղրեաց, որպէս օրէն է թագաւորաց՝ և ոչ մեք երկրորդել պատկան վարկաք: - 246. Գունդ մի հարուստ անցեալ մնացին ի Համբոյրազան աւանի Մարդաստան գաւառի, ուր եպիսկոպոսական աթոռ մարդպետականին յայնժամ փոխեալ դնէր ի Նախճաւան քաղաքէ. – 372. Երևեալ նմա յայնժամ ի բանտին այր մի գեղեցկատեսիլ ի կերպարանս ալևորի, լուսակիզն փայլմամբ՝ ասէ ցԳուրգէն – 318. Եւ ամբարձ զմիտս իւր ի հանդերձեալ գալուստն Քրիստոսի, և որ յայնժամ լինէին ահեղ որոտմունք և թնդիւնք և հրձգութիւնք և արհաւիրք մեծամեծք յերկնից և յերկրէ – 284. և գրեթէ /գրքում՝ գրէթէ/ ոչ ամենևին ուրեք երևեցաւ այնպիսի ահաւոր տեսիլ զօրու և սպառազէն կազմութեան՝ ամենայն թագաւորաց, որ կացեալ էին ընդ ծագս տիեզերաց. զորոյ սաստիկ և ահագին որոտումնն և ճայթումնն և փայլիւն զինուցն, և որ ինչ յայնժամ զարդարեալ և զինեալ պատրաստեցան զօրքն Տաճկաց: - 284. Եւ զի էր պաշարել նորա յայնժամ զքաղաքն Մանազկերտ Ապահունեաց աշխարհին, որ

ի ձեռս Ապլբառայն էր, և ածեալ հասուցեալ մերձ ի պաշարումն. և ի հասանել գուժկանացն եթող զնոսա, տալով նոցա հրովարտակս ի խաղաղութիւն: - 348. և էր յայնժամ առեալ Յունաց գաղաբար /հավանաբար պետք է ընդունել որպես հատուկ անուն՝ Գաղաբար/ իշխանիկ կոչեցեալ ի տոհմէ Բագրատունի՝ զբերդն Արամանեակ կոչեցեալ. – 302. Եւ ի ժամու մինչ ազևորեալքն կամէին մտանել զառաջեաւ … յայնժամ շուրջ կացեալ զվրանաւն մեծ սպարապետին զկազմեալ գնդաւ վահանաւոր և նիզակաւոր ամրափակ պնդութեամբ, և մտեալ մատոյց զթուղթն, զոր էր գրեալ առ Յամանիկն ի քաղաքն Պարտաւ Ահմաթայ նենգութեամբ: - 344. և կարծէր յայնժամ ի ձեռն խոշտանգանաց դիւրաւ արկանել զնոսա ի հաղբս կորուսելոցն և մոլորելոցն ի հաւատէն Քրիստոսի: - 264. Եւ յորժամ դարձեալ պակասիցէ զօրութիւն ջերմ օդոյ հարաւային հողմոյն/260/… յայնժամ վիշապն նեղի, շտապի, տագնապի բռնութեամբ ուժոյ զօրութեանն – 262. և տիրէր յայնժամ մեծի կողմանն Աղուանից Ապումուսէ ոմն, որում վերծանութեանն յայտնութիւն՝ երիցու որդի ճանաչէր: - 276. Զի թէ միոյ փայլատակման ընթացք և ճայթումն ամպոց բաւական է պակուցանել քաղել զուշեղութիւն ոգւոց, զի՞նչ ինչ յայնժամ կրէին ոգիք մնացելոցն յերկրի, ի սահանաբաց և յանդնդաքակ վրդովմանցն հոսելոց, նախ քան զջրհեղեղ ջուրց սատակումնն: - 32. Ըմբռնեալ լինէր յայնժամ մի ոմն ի Հայոց ազատանոյն տոհմից Վահևունեաց, Ապուսահակ ոմն, եղբայր Սահակայ եպիսկոպոսի ոստանին Նախճաւանու և Մարդպետականի. – 204. Ի նմին ժամու զգացեալ վասն նորա մեծ իշխանին Արծրունեաց Մերշապհոյ, որ յայնժամ ի Տմորեացն ամրանայր բերդի՝ յղէ առ նա ելանել գնալ ի սահմանացն յայնոցիկ. – 130. Իմացեալ յայնժամ իշխանն զնենգութիւն նոցա և զխորամանկ կեղծաւորութիւնն… ասէ ցնոսա. – 214. Իսկ ընդ աւուրսն ընդ այնոսիկ սպանեալ էր Ութմանկացն, որ յամուրսն նստէին՝ զՌստոմ Վարաժնունի, որ զտանուտերական պատիւն յայնժամ ունէր զՎասպուրական աշխարհիս. – 332. իսկ իբրև նա ըմբռնեցաւ, և գիտաց զօրավարն եթէ ոչ ոք այնուհետև յիշխանացն Հայոց մնաց, որ ոչ համագունդ ժողովեալ են առ նա՝ մերկացաւ յայնժամ զպատրուակ կեղծաւորութեանն, զոր սերմանել էր սատանայ ի սիրտ առնն: - 296. յայնժամ ամօթալից աչօք տեսցես զբազմափառ և զպայծառացեալ նշանս դրոշմացն բարձրացելոց: - 148. Յայնժամ թանձրացեալ մթասցի, բալ և մառախուղ խաւար ի վերայ լերանց և դաշտաց քոց. – 148. Յայնժամ առեալ հրովարտակ Սանասարեանց ի Տիգրանայ պատարագօք գնացին առ Կիւրոս. – 64. Յայնժամ բարկացեալ բռնաւորն իբրև գազան մի կատաղեալ, յարձակեալ ի վերայ գառանց գէշ արկանել զնոսա՝ հրամայեաց պնդել զնոսա ի ցիցս կապեալ ոտիւք և ձեռօք. – 292. Յայնժամ բացեալ լինէր պատրուակ կեղծաւորութեանն ի խլրդենի դիմացն: - 214. Յայնժամ բնակիչք լերինն իբրև տեսին, թէ վարեցաւ իշխանն ի գերութիւն … հասին միաբան բազմութիւնն մեկնակազէնքն Խութայ ի հնարս արուեստգիտութեանն իւրեանց, զոր ի պէտս օժանդակութեան ձմերայնոյ հնարաւորեալ էին: - 190. յայնժամ ելցէ հուր ի քէն ծնեալ, և կերիցէ զքեզ և զբազմութիւն ուստերաց և դստերաց քոց, ի քէն ակն ունելով զբորբոքումն: - 148. Յայնժամ ժողովեալ Խոռեմ Ռազմայուզան /գրքում՝ Եռազմայուզան/ զզօրս իւր բանակեցաւ շուրջ զԵրուսաղէմաւ և պաշարեաց զնա, և պատերազմեցաւ ընդ Երուսաղէմի աւուրս ԺԹ – 142. յայնժամ հրամայեաց ածել առաջի իւր զԱշոտ և զորդի նորա Գրիգոր: - 314. յայնժամ ահագինս որոտալով ճայթիցէ ի վերայ քո երկինք, և լսիցէ հնչիւն և բոմբիւն և դղրդիւն յանդնդոց, ձայն որոտալոյ սմբակաց բազում ամբոխից երիվարաց և աղաղակ բազում սպառազինաց յարձակեսցին ի վերայ քո. - 148. Յայնժամ ամրացեալ նստէր ի Շամիրամ բերդին Թադէոս անուն ի յԱկէացի տոհմէ, Շերեփայ որդի ծանօթացեալ – 400. Յայնժամ արձակեաց Հայրակղոս արս հաւատարիմս առ Խոռեմ վասն աստուածընկալ սուրբ Խաչին. – 154. Յայնժամ արքայ Խոսրով յայլակերպս եղեալ գնաց եմուտ ի բուրաստանն արքունի – 152. Յայնժամ բարկացեալ բռնաւորն հրամայեաց նախ զլեզուն հատանել զսրբոյն, զի մի յաճախիցէ առ հասարակ զթագաւորն և զօրէնսդիրն ինքեամբ հանդերձ անարգել. – 290. Յայնժամ դարձեալ ի խորհուրդ եմուտ

թագաւորն հանդերձ մեծամեծօքն իւրոյ տէրութեանն, տեսանել զանվրէպ և զանսխալ իմացումն կատարածի ի վերայ աշխարհիս Հայոց: - 196. Յայնժամ դիմեցին ի վերայ նորա և ի բաց առին զզլուխ նորա և տարան ետուն առ զօրավարն իւրեանց Աբրահիմ. – 304. Յայնժամ ելեալ իշխանն Գրիգոր յերեսաց արքայի մեծաւ ուրախութեամբ և անպատում խնդութեամբ՝ և եկն եմուտ յերկիր իւր յիշխանութիւն Վասպուրական կոչեցեալ: - 314. Յայնժամ ետ զզօրսն ի ձեռն Մուշեղի Ապուպելճի եղբօր Գուրգինայ, և ինք ել գնաց զհետ եկելոց կոչնականացն. – 228. Յայնժամ ետուն զոտս նորա ի կապանս երկաթիս, և ընդ նմա զտէր Գրիգոր Արծրունի – 238. Յայնժամ երդուաւ նմա Խոռեամ և ասէ. – 154. Յայնժամ երդուեալ միաբանութեամբ գնացին ի գիշերի և անցին ընդ զոմ ի Վեհկաւատ – 150. Յայնժամ թագաւորն դեսպանս արարեալ յամենայն սահմանս տէրութեան Հայոց, Վրաց և Աղուանից, և առ քաղաքացիսն և հազարապետս և գաւառակալս, և որք սիրողաբար առ նա զինազանդութեանն հարկ հարկանէին: - 366. Յայնժամ թագաւորն լի եղև սրտմտութեամբ – 246. Յայնժամ թագաւորն փութացոյց դեսպանս մի զմիոյ կնի առ իշխանն Աշոտ, զի անյապաղ երագութեամբ հասցէ առ նա: - 382. Յայնժամ ի խորհուրդ եմուտ իշխանն և տոհմակիցք իւր, Վահան և Մուշեղ Արծրունիք, և գունդքն ազատանոյն որ ընդ նմա - 210. Յայնժամ իբրև գիտաց զօրավարն Հայոց և ոչ միով իւիք կարաց հաճել զմիտս նոցա, այլ միաբան ետուն հրաման ելանել ի պատերազմ – 230. Յայնժամ իբրև գիտացին երկոքին կողմանքն, եթէ ոչ գոյ հնար գտանել զելս իրացն և տալ խաղաղութիւն՝ ապա հաճեցան և հաւանեցան գրել առ թագաւորն. – 286. Յայնժամ իբրև ետես անօրէն զօրավարն Մուսէ, թէ ոչ ելին ի գլուխ խորհուրդ չարին յօժարութեանն … փութացաւ արձակել գուժկան յարքունիս, ծանուցանելով արքայի զոր ինչ գործեաց Աշոտ իշխանն Վասպուրական: - 176. Յայնժամ իբրև լուաւ բռնաւորն զայս դարձուած պատասխանեաց լի հզօրութեամբ և ահագին մեծաւ անարգութեամբ՝ յոյժ տարակուսանօք լցաւ յանձն իւր, և կայր մեծաւ հիացմամբ ըմբռնեալ. – 280. Յայնժամ իսկ և իսկ արագապէս թլփատեալք եղեն մսլիմանակ, հետևեալք զկնի Բագարատայ Բագրատունեաց – 248. Յայնժամ իսկ և իսկ փութացեալ /գրքում՝փութեցեալ/ եհաս գուժկանն առ հոյակապն Աշոտ իշխանաց իշխան, զեկուցանելով նմա որ ինչ գործեցաւն: - 348. Յայնժամ խորհուրդ միաբանութեան ի մէջ առեալ ամենեցուն նոցա ասեն. ,,թէպէտ և ի թշնամեացն ապրեցաք՝ սակայն ի ձեռաց դորա մեզ չիք ապրել. արդ եկայք իմասցուք ինչ,,: - 150. Յայնժամ կերիցէ սուր զպատերազմողս քո. – 148. Յայնժամ համարձակեալ եմուտ յատեան բռնաւորին և եկաց առաջի զօրավարին աներկիւղ համարձակութեամբ առանց պատկառանաց, և ասէ – 218. Յայնժամ Հայրակղոս հրամայեաց առնել ի վերայ նոցա ողորմութիւն: - 150. Յայնժամ հրամայեաց բռնաւորն կապել զնոսա երկաթի կապանօք և դնել ի բանտի: - 250. Յայնժամ հրամայեաց զօրավարն քարշել զմարմինս սրբոցն արտաքոյ քաղաքին, լինել կերակուր շանց և թռչնոց երկնից. – 268. Յայնժամ հրաման ետ զօրավարն Բուխայ զօրաց իւրոց՝ ելանել ընդ առաջ նոցա ի պատերազմ. – 274. Յայնժամ հրաման ետուն ամենայն զօրացն ելանել ի պատերազմ. – 284. Յայնժամ հրովարտակս արարեալ, պնդադեսպանս արձակեալ ընդ ամենայն սահմանս իւրոյ տէրութեանն – 198. Յայնժամ ձայն բարձեալ Քսերքսէս և Արշէզ լի իմաստութեամբ, որպէս թէ ի զօրացն Լիդէացւոց իցեն, ասեն՝ հարան /64/ զօրքն Կիւրոսի, և փախեաւ արքայն: - 66. Յայնժամ մեկնեալ ի նմանէ զօրավարն, լցեալ խորհրդովք չարին հնարագիտութեամբ՝ եկն եմուտ ընդ կողմն Ատրպատական յԱղբագ գաւառ յերկիրն Վասպուրական – 184. Յայնժամ մերկասցի արեգակն զլոյս իւր ի քէն և զգեցուսցէ քեզ խաւար. – 148. Յայնժամ մերկացեալ և ի բաց եղեալ զաշխարհական պատրանաց զբաղումն՝ և էանց գնաց ի վեր քան զերևելիսս – 284. Յայնժամ ողորմագին զաչսն շրջշրջեալ առ քաջ նիզակակիցսն իւր, թէ ո՛վ ոք արդեօք թերևս յօգնութիւն ինչ նմա հասանիցեն. – 354. Յայնժամ սկսան ամենայն նախարարքն Հայոց ցրուել մեկնել ի միմեանց. – 238. Յայնժամ Սմբատ Բագրատունի … Մոկաց իշխեցող…անհանդուրժելի լեալ /216/ անցիցն անցելոց – 218. Յայնժամ Վահան հայր Գագկայ Ապումրուանայ և ինքն Գագիկ առնէին համոզել ի մէջ նոցա: - 334. Յայնժամ

տեսեալ Երուսաղէմացւոցն զանհնարին դիպուածսն անօգնականութեանն՝ առին զաստուածային սուրբ նշանն տէրունական հանդերձ այլ սպասիւք եկեղեցեացն, փախուցին ի քաղաքն թագաւորական ի Կոստանդին. – 162. Յայնժամ տէր Գուրգէն առ /306/ չժուժել սրտին, մտրակեալ զքաջ երիվարն յորում նստեալն էր՝ և եհար զգունդն զձախակողմն Տաճկաց և պատառեաց զռազմն և դարձոյց զերեսս նոցա- 308. Նահատակք ոմանք կային յայնժամ ելեալ յարգելանէն ընդ կալանաւորսն – 220. որ տիրէր յայնժամ Արզնայ և ներքոյ կողմանն Աղձնեաց մերձ ի սահմանս Տարունոյ: - 172. որով ժամ ի դէպ իսկ է, առ յայնժամ զարժանապէս նոցա ասել փոխարէն և անմեղադրելի բազմաց, եթէ այնչափ մթերեալ համբարք կերակրոց կուտեցին ի հալոցսն Բէլայ – 38. որք ոչ վրիպէին ի մազոյ, որպէս և յայնժամ յԻսրայէլի էին արք զօրաւորք, գունդք տանն Եփրեմի և Բենիամինի: - 200. վասն զի ունէր յայնժամ զգլխաւորութիւն բարձակցութիւն իշխանաց Հայոց - 170.

ՅԱՅՆԿՈՅՍ - Եւ այգուն անցեալ ընդ գետն Երասխ յայնկոյս ի դաշտն Շարուր՝ բանակին զգետովն: - 382. և բռնութեամբ կալեալ զԲախլ և զամենայն երկիրն Քուշանաց, մինչև յայնկոյս գետոյն մեծի որ կոչի Վահոտ. – 136. և առեալ ի ձեռանէ նորա զսուսերն շողացուցեալ՝ հայեցաւ /266/ յայսկոյս յայնկոյս և ասէ, ,,ո՛վ անարի վատ արանց և կանացի այր, թշուառական զինուոր, շուն անպիտան տեառն իւրոյ,, - 268. և զփախստեայսն տանին անցուցանեն յայնկոյս քան զքաղաքն Նախճաւան – 126. Եւ ինքն Աբրահիմ եկն անց յայնկոյս յոստանն Ռշտունեաց և անդ լինէր: - 306. Եւ ինքն թագաւորն ժողովեալ զօր հարուստ աւելի քան զհազարաց հնգից և քսանից, և եկն անց յայնկոյս գետոյն Երասխայ, և բանակեցան ի տեղւոջն: - 382. և դաշիկ արարեալ յայնկոյս քան զՎանտոսպ, ի տեղւոջն արձանաշար քարակարկառ գոգաձև միջոցի երկուց բլրակաց, որ հայի յԵրիվարաց արկման դաշտն, ի վերայ Լեզւոյ գեաւղջն, որ զաւրացն գեղեցիկ առասպելաբանեն սպիանած վերայն սպանելոցն ի մանկանցն Շամիրամայ: - 334. և ճեղքեալ՝ զօրու թշնամեացն յայսկոյս և յայնկոյս՝ արարին մտանել նմա ընդ մէջ զօրուն: - 352. Եւ յամենայն ազգաց որ ընդ ձեռամբ քո են՝ հաւաքեա առ քեզ զընտիրն այրուձիոց, և անց յայնկոյս գետոյն: - 196.

ՅԱՅՆՄ ՀԵՏԷ - գուցէ ակամայ երթալովն, և նեղիչն աշխատելով ի պահելն՝ յաճախեսցէ ի վնաս և ի քէն, և օճան բարւոյ յայնմ հետէ ոչ ևս ունէք հասցէ գտանել,,: - 216. և զԲէղէսիոս՝ իշխան /58/ Բաբելոնի կացուցեալ, ինքն զարքունիսն յայնմ հետէ ի Մարս փոփոխէ - 60. Իսկ զկողմանս արևելից Պարս այնքան ունելով Զրադաշտին՝ յայնմ հետէ ոչ երբէք հարկէր Ասորեստանեայց. – 44. Յայնմ հետէ ի տարակոյս անկեալ Երուանդ՝ ոչ քաղցրանայր նմա քուն գիշերոյ, և ոչ համեղանայր կերակուր ի քիմս նորա: - 84. Եւ յայնմհետէ բարձաւ տէրութիւնն Պարսից և ազգին Սասանայ, որ տևեաց ամս ՇԽԲ: - 166. Եւ յայնմհետէ համարձակութիւն առեալ անօրինացն՝ սկսան գունդս ռամկականս ժողովեալ ըստ օրինակի մարախոյ անչափ բազմութեամբ, այնոքիկ որ Շեխետիքն կոչէին. և այլ որ ուստեք ուստեք ի հեռաւոր աշխարհաց /402/ Պարսից, ի Ժանգանայ և ի Ջուրջանայ և որք ի Վարառատ գաւառէ – 404. և յայնմհետէ նուազեալ պատառեցաւ թագաւորութիւնն Պարսից: - 156. Եւ յայնմհետէ վտանգի Իսրայէլ յԱսորեստանեայց: - 60.

ՅԱՅՆՄՀԵՏԷ - զի յանմհետէ կալցի խաղաղութիւն ինքն և աշխարհ իւր – 226.

ՅԱՅՍԿՈՅՍ - և առեալ ի ձեռանէ նորա զսուսերն շողացուցեալ՝ հայեցաւ /266/ յայսկոյս յայնկոյս և ասէ, ,,ո՛վ անարի վատ արանց և կանացի այր, թշուառական զինուոր, շուն անպիտան տեառն իւրոյ,, - 268. և ճեղքեալ՝ զօրու թշնամեացն յայսկոյս և յայնկոյս՝ արարին մտանել նմա ընդ մէջ զօրուն: - 352.

ՅԱՅՍԿՈՅՍ ԵՒ ՅԱՅՆԿՈՅՍ - և ճեղքեալ՝ զօրու թշնամեացն յայսկոյս և յայնկոյս՝ արարին մտանել նմա ընդ մէջ զօրուն: - 352.

ՅԱՅՍՄ ՀԵՏԷ - Արդ յայսմ հետէ ըստ նեպակի գեղջն/գրքում՝գեաղջն/ կապճահամար ժժակք յամենայն ի դուռն արքունի ի սատակումն եկեսցեն. – 46.

ՅԱՅՏ ԱԾԵԼ - բանսարկուք ոմանք հրապոյրս պղտորս քսութեան ածէին տանէին ի միջէն առ միւսն, որպէս թէ զչարիսն իրերաց առ հազարապետն խորհել նիւթել յայտ ածէին և զպատճառն զմիմեամբք արկանէին ի գաղտնիս քրթմնջելով: - 342.

ՅԱՅՏ ԱՌՆԵԼ - և զանբաւութիւն մեծութեանն յայտ առնել սաստկութիւն յորդահոս աղբերն – 20. Զայս յառաջագոյն իմացեալ հին պատմագրին՝ յառաջատես զկործանումն նոցա յայտ առնէ. – 148. զոր դիպողագոյն է այժմ ըստ առաջիկայ օրինակիս յայտ առնել. – 158. յայտ առնելով ի թիւ եօթանցն այլ ևս ներողութիւն: - 30. որով զեղծագործ ապականութիւն նոցա յայտ առնէ, յուսակորոյս յայնմանէ, որ զպատիւ սիրոյ եցոյց ի նոսա՝ որդիս իւր ասելով – 28.

ՅԱՅՏ ԵՂԵԱԼ - Բայց չարեացն այսորիկ հաւատարմութիւն յայտ եղեալ հաստատեցաւ ի վերայ Կայսկին Ապլբառայ: - 342.

ՅԱՅՏ Է - և յայտ է թէ յայլմէ շարժի. և եթէ յայլմէ՝ ապա ուրեմն է՛ ոմն, որ շարժէ զերկնային մարմինն: - 54. Ապա ուրեմն յայտ է ըստ կարգի ասացելոցս, եթէ որ շարժէ զերկնային մարմինն՝ մի է և անբաւ զօրութիւն ունի և անմարմին է և անեղ է անապական, և ինքն ոչ յումեքէ, և այլք ամենեքեանք նովաւ. – 54. Աստանօր ոչ է ինձ յայտ թէ զի՞նչ կամ ո՞րպէս դիպեցաւ լինել տոհմին Արծրունեաց, կամ ո՞ւր, կամ զիա՞րդ. – 94. բայց եթէ ստութեամբ և թէ ճշմարտութեամբ՝ մեզ չէ յայտ, և զոչն ստուգեալ՝ և ոչ գրել լաւ համարեցայ: - 348. բայց թէ որպէս եղև կատարումն իրացն մեզ չէ յայտ: - 88. և զմտաւ ածեալ զքսութիւնն զոր զեկուցին զԱշոտոյ կորապաղատէ առ Դերանիկն, եթէ ստութեամբ և եթէ ճշմարտութեամբ՝ մեզ չէ յայտ: - 342. և յայսմանէ յայտ է թէ անեղ է. – 54. Եւ վասն զի մշտաշարժ է երկինն՝ յայտ է եթէ որ շարժէն զնա՝ անբաւ զօրութիւն ունի. – 54. Եւ վասն զի մի և նոյն շարժումն է երկնի՝ յայտ է եթէ ի միջէ ումեմնէ է և ոչ ի բազմաց. - 54. ուստի յայտ է թէ և անմարմին է, զի մարմինն՝ բովանդակեալ զօրութիւն ունի, և ոչ կարէ հանապազ շարժել զերկին կարգաւորաբար. – 54.

ՅԱՅՏ ՅԱՆԴԻՄԱՆ - Եւ յայտ յանդիման ի վերայ հասանել ոչ կարէր. գունդ կազմել և ճակատ պատրաստել ընդդէմ՝ անվայելուչ էր. – 346. և որոց ոչ գործք ինչ և ոչ քաջութիւն ուրուք յայտ յանդիման ցուցանիւր. – 68.

ՅԱՅՏԱՐԱՐԱԿԱՆ - և հրաման հարկեցուցանող ճոխութեան քո ստիպէ զմեզ, ճեպել փութալ առ գիւտն հանդիսանալ և կարգել ոճով զփափագելին յայտարարական գրով, դրոշմել կանոնել ի գիրս աստ – 12. նա և զմտացն ոչ սակաւ հարստանալ յայտարարական բերմամբ առ հանճարեղութիւնն զուգընթաց բողբոջմամբ կատարելագործէին. – 360.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ - Արդ որպէս յառաջագոյն ասացաք՝ սակս կարևոր յուզմանցն միապետեալ ի շարս կանոնաց, միայն յայտարարութիւնս առնել զազգացն Արծրունեաց – 96. զոր շարագրեալ յայտարարութեամբ յանդիման կացուցաք քեզ, քա՛ջդ բանասիրաց, Գագիկ Վասպուրական և մեծ զօրավար Հայոց – 122.

ՅԱՅՏՆԱՊԷՍ - զի թէպէտ դառնալով դարձան յայտնապէս յերկրպագութիւնն Քրիստոսի Աստուծոյ մերոյ՝ այլ զկանոնական սահմանադրութիւնսն ոչ բերելով ուղղակի, ոչ միայն Աշոտ, այլ և ամենայն իշխանքն Հայոց, որք գերադարձքն եղեն. – 336. խօսի Գուրգէն ընդ Աշոտի յայտնապէս զոր խորհէրն. – 364.

ՅԱՅՏՆԵԱԼ - Իսկ նոցա ոչ յայտնեալ զխորհուրդ չարութեանն՝ դարձուցանեն զնա անդէն, զի մի յերկբայս եղիցի գալ առ նոսա. – 226. Նոր ոմն Նաբուզարդան կամ Զամրի յայտնեալ ի յաղանդոյն Նեստորի, երեքթշուառեան վատաշուէր, վատմիրհ, զագահութեանն չարիս ախտացեալ՝ սպրդեալ եմուտ ընդ մութ գիշերին յամրական պարսպեալ բլուր, և անցեալ ի սուրբ կոչարանին օթագացեալ. – 378.

ՅԱՅՏՆԵԼ - Այլ թէպէտ զայս ախորժելով լսէր Պտղոմէոս առ լաւութեան քաջութեան առնն՝ սակայն յայտնել ոչ զօրէր Աղէքսանդրի – 70. այլ աստուածայինն Պօղոս ճշմարտագոյնս զայսոսիկ յայտնէ ասելով՝ „ծանեան զԱստուած, և ոչ իբր զԱստուած փառաւորեցին կամ գոհացան. – 52. Գրէ Կայսիկն առ թագաւորն՝ խնդրել զխաղաղութիւն, և զոր միանգամ կամիցի՝ եղիցի. յայտնիքն այսպէս, իսկ ծածուկքն՝ որպէս յայտնեցանն: - 380. Իսկ իբրև

ծանուցաւ նմա անլոյծ միաբանութիւն ուխտի ընդ միմեանս Աշոտոյ և Բագարատայ՝ ոչ ինչ յայտնեաց զխորհուրդս չարութեանն, զոր խորհեալ էին ի վերայ նոցա. – 172.

ՅԱՅՏՆԻ - Գրէ Կայսիկն առ թագաւորն՝ խնդրել զխաղաղութիւն, և զոր միանգամ կամիցի՝ եղիցի. յայտնիքն այսպէս, իսկ ծածուկքն՝ որպէս յայտնեցանն: - 380. Եւ արդ ասացից փոքր ի շատէ զյայտնի գործեցեալսն, զի և որ ինչ ընդ սոքօք և յետ սոցա ի գլուխ ելին հանգամանք իրաց՝ և այնմ առանց երկբայութեան հաւատասցես, իբրև ճշմարիտ և անսուտ պատմողի: - 240. Եւ արդ յայտնի լիցի, զի որչափ բաւէ զօրութիւն իմ և իցեմ կենդանի՝ կացից ընդդէմ զօրութեամբ և ուժով տեառն Աստուծոյ, և ոչ տեսից զքեզ սիրով խաղաղութեան. – 278. Եւ էին ի կասկածի ի մէջ բանակին ի հազարապետէն, զի յայտնի երևեալ լինէր զոր խորհէրն վասն նոցա Ահմատն: - 344. Եւ մեք ահա անփոյթ այդմ ամենայնի արարաք, զի յայտնի լիցի սէրն և գութ խնամոյն, զոր ասեմք ունել ընդ ձեզ: - 244. և յայտնի ոչ վայելչանայր կատարել զոր կամէրն, մի՝ վասն յաղթող մեծանուն գործոյն, նախատ անձին համարելով, երկրորդ՝ վասն վաշտիցն զօրութեան: - 326. և պարզապէս յայտնի առանց կասկածանաց ասի աստուած՝ եկեղեցին և մարմին բանին և ևս յաւելցի /394/ ծիծաղելն. – 396. և սկսաւ ոգորել եղջիւր ածել ի վերայ Աշոտի յայտնի և ոչ ի ծածուկ. – 350. զի կարասցէ անսայթաք հաւատով յաղթել հնարից բանսարկուին, որ ի ծածուկ և յայտնի պատերազմին – 206. յայտնի և յանդիման կացուցանել զթիւ սպանելոցն ոչ առնուին յանձն, թէ Ջ այր միայն հզօր ձեռամբ յաղթեցին ԺԵ հազարացն. – 234.

ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ - և տիրէր յայնժամ մեծի կողմանն Աղուանից Ապումուսէ ոմն, որում վերծանութեանն յայտնութիւն՝ երիցու որդի ճանաչէր: - 276. ՄԾԹ ամօք յառաջ զսորայս բացայայտեալ զցոյցս յայտնութեանն, յամս Ներսեսի երրորդի Հայոց կաթողիկոսի և Վարդանայ Ռշտունեաց պատրկի և յամի ունելութեանն Տաճկաց զհայկական աշխարհս: - 394. Յանձն առի պատմել ստուգապէս զսքանչելագործ յայտնութեանն հրաշիցն, որ ցուցաւ ի զօրավարութեանն Գագկայ. – 378.

ՅԱՆԳ ՀԱՆԵԱԼ - Յանգ հանեալ Պտղոմեանց զժամանակ թագաւորութեանցն, և հասեալ/72/ մինչ ի Կղէոպատրեայ, դուստր Պտղոմէի Դիոնիսի. – 74.

ՅԱՆԳ ՀԱՆԵԼ - Որոյ ունկնդիր եղեալ Տիրան՝ տայ հրաման յանգ հանել զխորհուրդ անօրէն աստուածատեաց առն: - 98.

ՅԱՆԳԷՏՍ - և հեծելագունդ զօրացն Կայսկին զկնի նորա, զգացեալ զպատճառ ելիցն նորա ի բանակէն. որում ոչինչ գամագիտ կարացեալ լինել՝ դարձան ամօթալից կորակնեալք, յանգէտս համարեալ զինչ գործեցինն: - 342.

ՅԱՆԳՈՒՅԱՆԵԼ - ,,վասն այնր ելի յաշխարհս, զի մի Գուրգէն բռնաբար յինքն կորզեալ ձգիցէ զամուրս աշխարհիս, և յինքն բռնաբար զզօրս քո յանգուցանիցէ: - 362. Եւ այլ ամրաբնակ ազատորերոյն պարգևս և պատիւս օր ըստ օրէ բաշխէր, և յինքն յանգուցանել ախորժելով վարէր ընդ նոսա: - 360. որ մեծաւ ախորժանօք յանգուցանէ առ ինքն զնոսա իբրև արս պատուաւորս և քաջամարտիկս զօրաւոր զօրութեամբ, և մանաւանդ զի բազում անգամ զանուն յաղթութեան ստացեալ ունէին: - 366.

ՅԱՆԳՈՒՑԵԱԼ - Առ սա յանգուցեալ Բելեանն Նինոս առնու իւր կնութեան – 16. Ջի Վռամ և Յազկերտ զկէս աշխարհիս յինքեանս յանգուցեալ՝ զբոլոր ապա աշխարհիս զտիրելն յոխորտային: - 114. Իսկ Վաչէ Արծրունեաց տէր և Հմայեակ Աշոցաց տէր և այլք յանգուցեալ ի նոսա՝ հաճեցին զկամս Վռամայ – 118.

ՅԱՆԴԳՆԱԳՈՅՆ - Իսկ Արտաշիր յանդգնագոյնս և առանց պատկառանաց զհետ ամօթալից ախտին գիջութեան իգամոլ ցանկութեանցն ընթացեալ՝ ոչ միայն ի գիշերի այլ և ի տունջեան յանդիման արեգական, անխտիր կատարէր զցանկականն, զանասնական գիջութեամբքն զանցուցեալ: - 116.

ՅԱՆԴԳՆԻԼ - զկարգին յառաջ վարել զպահանջումն, թերևս արդեօք գործակցօք յանդգնեցայց վարել առ ողբերգակս: - 352. յանդգնեցան ասել և զմեհեան՝ տուն Աբրահամու – 160.

ՅԱՆԴԳՆՈՒԹԻՒՆ - Բայց դոյզն մի զամբարշտին Մեհուժանայ զյանդգնութիւնսն ի վերայ Հայոց բացայայտեցից ի շարի աստ: - 102.

ՅԱՆԴԻՄԱՆ - Այլ ի հրամանէ Աստուծոյ յանդիման դրախտին բնակելով պահոք ապաշխարութեան սգացեալ եղեն, ողբալով զվրիպումն առաջին կենացն, ամենայնիւ հրաժարեալ ի մարմնականաց, հոգիազարդ մարգարէութեամբ ժուժկալեալք ի մսոյ և ի գինւոյ: - 30. եթէ չար ինչ թուիցիմ յաչս ձեր, և ապիրատս գործեալ եմ առ ձեզ և խարդախութեամբ բնակեալ եմ ընդ ձեզ՝ աւասիկ յանդիման երեսաց իմոց տուք պատասխանի – 214. և հրաման պատուիրանի տայր յանդիման բազմութեանն, զի խրատու նորա լուիցեն, և հրամանի նորա անսայցեն: - 200. և լնուն զծովակն որ յանդիման հրատին՝ դիակամբք. զիսօսուն և զանասուն, զայր և զկին և զմանուկ առ հասարակ մաշեցին ի սուր սուսերի: - 148. և մի զմիոյ հետ ստիպէր՝ փութալ միոյ միոյ ի նոցանէ յանդիման նմա հատուցանել ծառայական սպասաւորութիւնս, զոր և արարին իսկ Աշոտ և Գագիկ և Գուրգէն, կամաւոր և ակամայ զնորայն կատարելով հրամայեալս – 370. Եւ յայտ յանդիման ի վերայ հասանել ոչ կարէր. գունդ կազմել և ճակատ պատրաստել ընդդէմ՝ անվայելուչ էր. – 346. Եւ յետ այսորիկ գումարեցոյց զօրս բազունս Խոռեմ, և ել ի Քաղկեդոն և նստաւ յանդիման Բիւզանդայ, և խնդրէր անցանել և կործանել զքաղաքն թագաւորանիստ: - 142. և որոց ոչ գործք ինչ և ոչ քաջութիւն ուրուք յայտ յանդիման ցուցանիւր. – 68. զոր շարագրեալ յայտարարութեամբ յանդիման կացուցաք քեզ, քա՛ջդ բանասիրաց, Գագիկ Վասպուրական և մեծ զօրավար Հայոց – 122. Զորոյ իրազեկ եղեալ գալուստ նորա առ Ահմատ, և նորա գումարեալ առ ինքն զզօրս իւրոյ նահանգին և Միջագետաց և զԳեթացիսն՝ և եկն եհաս յանդիման նմա: - 366. զորս յանդիման Փրկչին կացուցին զառաքեալսն հանդերձ թղթովն Աբգարու, և զխորհրդական պատասխանիսն լուեալ վասն փրկական խաչելութեանն որ վասն աշխարհի - 76. Իսկ Արտաշիր յանդգնագոյնս և առանց պատկառանաց զհետ ամօթալից ախտին գիջութեան իգամոլ ցանկութեանցն ընթացեալ՝ ոչ միայն ի գիշերի այլ և ի տունջեան յանդիման արեգական, անխտիր կատարէր զցանկականն, զանասնական գիջութեամբքն զանցուցեալ: - 116. Իսկ նա չանսաւորութիւն անխոնարհելի մնացեալ, և անցեալ օթագայեցեալ ի գեօղն Փեռոտակ յանդիման քաղաքին: - 352. Հասեալ կայիք յանդիման մեծազաւրին Աստուծոյ: - 164. յայտնի և յանդիման կացուցանել զթիւ սպանելոցն ոչ առնուին յանձն, թէ Ջ այր միայն հզօր ձեռամբ յաղթեցին ԺԵ հազարացն. – 234. վասն որոյ զերկայնութիւն կենաց տալով նահապետացն Աստուծոյ՝ յանդիման դրախտին բնակեցուցանէր, ուսուցանելով՝ ի ձեռն ապաշաւանաց ի նոյն վերադարձիլ կեանս. – 26. և ետուն ի սուրբ եկեղեցին Դ ագարակս. զվանքն Փշոց և զագարակն Ահավանք, յանդիման եկեղեցւոյն որ ի կղզին, և զքարն Մանակերտ, որ է հանդէպ հարաւոյ կուսէ, և զԲերկրի և այլ բազում տեղիս – 356.

ՅԱՆԴԻՄԱՆԱԿԱՑ - զայր յանդիմանակաց Պտղոմէի: - 70.

ՅԱՆԴԻՄԱՆԱԿԱՑՈՑՑ ԱՌՆԵԼ - Այլ թերևս զայս տարակուսիցիս առ իմաստն՝ յանդիմանակացոյցս առնել զԳուրգէն ընդ աշխատութեան յօժարագոյն առ մարմնական զինուորութեամբն լինել: - 398.

ՅԱՆԴԻՄԱՆԵԱԼ - և յանդիմանեալ ի սրբոյն Ներսիսէ՝ արբուցանեն նմա դեղ մահու, զանխուլ կարծիս բերելով. – 108.

ՅԱՆԴԻՄԱՆԵԼ - ,,ձայն իմն ահաւոր հրեշտակի անկեալ ի վերայ իմ՝ հրամայեաց երթալ պատգամաւոր յազգն իմ, ցուցանել զԱստուած արարիչ երկնի և երկրի. առնուլ ինձ անուն գլխաւորութեան, և զստութիւն հաւատոց որ ի կուռս՝ յանդիմանել և քակտել,,: - 158. և յանդիմանել զամենայն ամբարիշտս վասն գործոց իւրեանց զոր ամբարշտեցան,,: - 26. թէպէտ և ոչ համարձակեաց զամենայն բառնալ, այլ յոյժ պատկառանօք ամաչեցեալ՝ լքաւ ի ստութենէ անտի, որ յանդիմանեցաւ ի թղթոյ կայսերն, և ի ձեռն այսորիկ ցուցանէր բարեմտութիւն մեծ առ ազգս /166/ քրիստոնէից. – 168. յղեն զոմն ի ճգնաւորացն առ տիկինն, զկռոցն յանդիմանելով զսնոտի և զանօգուտ պաշտօնն, որպէս և սուրբն Քռիւսի առ Արտաշէս: - 88. Զայս ոչ եթէ սակս ուրացութեան ինչ ամբաստան լինի զինքենէ, կամ

վասն ժողովոցն, այլ զի ոչ յանդիմանեցին զթագաւորն, որ արտաքոյ օրինացն ամբարշտէր. – 258.

ՅԱՆԴԻՄԱՆ ԼԻՆԵԼ/ԼԻՆԻԼ/ - ժամ տուեալ՝ փութով յանդիման լինել նմա ի թագաւորաբնակ քաղաքն իւրեանց: - 198. Եւ եղև ի մտանելն նորա ի Դատուան աւանն … ելեալ իշխանքն Հայոց յանձնիւր տեղեաց գնացին յանդիման լինել նմա – 340. Եւ զօր գումարեալ եկն եմուտ ի Վանտոսպ, և Դերենիկն յանդիման եղև նմա. – 322. Իբրև հասին ուր հանդերձեալն էին՝ և երկոցունց զօրքն անհուն բազմութեամբ յանդիման եղեն միմեանց, և ճակատ առ ճակատ զգործս պատերազմին յարդարէին – 328. Իբրև յանդիման եղեն դեսպանքն մեծ /172/ իշխանին Աշոտոյ, և ընթերցաւ զգիր պաղատանացն և զյիշատակարան նախնեացն, և զմերձաւորութիւն հարազատութեանն և զկապակցութիւն ուխտին … համագունդ ժողով առնէր ամենայն աշխարհին և ամենայն նախարարօք Վասպուրական տէրութեանն: -174. Նա և մայր իշխանին Աշոտի, քոյր Սահակայ և Բագարատայ իշխանին Տարաւնոյ… երթեա՛լ ընծայիւք բազմօք յանդիման լինէր Յովսէփայն և խնդրէր զհաշտութիւն և զխաղաղութիւն հաստատել առ որդիսն իւր և առ բոլոր աշխարհին Վասպուրական: - 186.

ՅԱՆԴԻՄԱՆՈՒԹԻԻՆ - այլ ըստ օրինակի ասացելումն ի Տեառնէ Մովսէսիւ՝ առ ի յանդիմանութիւն արտաքնոցն, զճարպ մեռելոտւոյ տանել ի գործ ինչ արտաքին, այլ ոչ թէ ի կերակուր: - 54. Արդ եկայք դիցուք զյանդիմանութիւն սոցա առ փոքր ինչ և դուզնաքեայ ի գրոց սրբոց – 254.

ՅԱՆԴՈՒԳՆ - Բայց իբրև ետես բռնաւորն զանդառնալի միտսն և զաներկբայութիւն հաւատոցն և զաներկիւղ և զյանդուգն պատասխանիսն և զմեծ անարգութիւնն զոր հասոյց ի վերայ նորա և նոցին օրէնսդրին…բարկացեալ յոյժ հրաման ետ փութով զրաւ առնել կենաց նորա: - 206. Եւ առ յոյժ յանդուգն յարձակմանն բազում այն լինէր, զոր ձիովքն ընթադրեալ դիաթաւալ կացուցանէին, քան զոր սրովն սատակէին: - 174. Եւ դիմեցին խուռն յանդուգն յարձակմամբ և բախեցին զգունդն և պատառեցին զռազմն և դարձուցին զայլազգիսն. - 232. Եւ զօրքն Տաճկաց պնդեցան և փակեցին շուրջանակի ի ներքս զգունդն Աղուանից և դիմեցին յանդուգն ի վերայ նոցա. – 284. և միախուռն յանդուգն յարձակմամբ դիմեցին ի վերայ այլազգեացն, և ի դիմի հարեալ միմեանց՝ այր զախոյեան իւր յերկիր կործանէր: - 174. Եւ յանդուգն դիմեցուածովն ի վեր քան զզարմանս՝ այն ինչ ի քթթել ական դարձուցին / 328/ զխրոսակսն, և զռազմն դաշիկ քակեցին և զյառաջագահ ախոյեանսն փայլակնահար արարեալ դիաթաւալ կացուցին – 330. և Նեբրովթայ յանդուգն զօրութեամբ հետամտեալ հրոսակաւ մեռանի ի Հայկայ, հարեալ նետիւ – 42. և վառեալ ի զէն և յասպազէն՝ արձանացան իբրև զմի այր՝ և յանդուգն դիմացուածով խուռն յարձակմամբ հարեալ ի դիմի, ուր քաջքն այլազգեացն ճակատէին ընդ աջաթև /380/ կողմն. և պատառեցին զգունդն, և պարտեցին զախոյեանսն. – 382. Իբրև լուաւ զայսքան և առաւել քան զսոյնս յանդուգն և առանց երկիւղի զընդդէմ պատասխանատրութիւնն մեծաւ համարձակութեամբ՝ապա հրաման ետ փութով ի կենաց բառնալ զգլուխ նորա սուսերաւ: - 296. մինչ հանդէպ երեսանալ Աղէքսանդրու ի յանդուգն դիմացուածին, և հայեցեալ ի դէմս Աղէքսանդրու իբր յաստուածոց դիւցազանց՝ զերեսս ի վայր արկեալ զերկիր նշմարէր – 68.

ՅԱՆԺԱՄ - Յայնժամ իբրև գիտաց զօրավարն, եթէ յաջողեցաւ նմա ամենայն ինչ ըստ կամաց իւրոց և ըստ հրամանի ամբարիշտ թագաւորին, ի գլուխ ելին խորհուրդ չարութեան նոցա - 238. որպէս յայնժամ ի մահուն Ոզիայ արքայի, յաւուրս Եսայեայ մարգարէի՝ ի ձայնէ սրովբէից շարժեալ տաճարին տեառն, մինչ բարձրանալ դրանդեացն: - 358.

ՅԱՆԽՆԱՅ - և Ահմատայ ընդ մէջ փակեալ զղաշիկն՝ յանխնայ հարուածովք հարին, մանաւանդ զհետևակազօր գրոխսն և զգռեահսն որք ընդ նոսա. – 368. և նոքա հարեալ սատակեցին զնոսա սրով սուսերի յանխնայ, սպանին և զզօրավարն ի պատերազմին – 150. և գունդ անհաւատից դառնացեալ ոգւով ի վերայ կանանց և որդւոց իւրեանց ազգականաց՝ յարձակեցան ի վերայ նոցա ուժգին սաստկութեամբ և սուր ի գործ արարեալ յանխնայ

կոտորեցին. – 402. և դահճացն հանեալ զսուսերն՝ դիմեցին ի վերայ նոցա իբրև զգազանս արիւնարբուս, և ծեծէին սրովն, իբրև ոք զի հատանիցէ փայտ ի մայրս անտառախիտս հարեալ կացնաւ, և յանխնայ անողորմ յօշէին անդամ անդամ: - 266. և իբրև զքաջ հովիւն դրուատեալ ի փրկչէն՝ զանձն իւր եդ ի վերայ խաշանց ընդդէմ ապականարար գայլոցն, յարձակեալ յանխնայ դիմեցուածովք, յարիւն և յապաժոյժ, ի սատակումն և ի ծախումն սրոյ մատնեաց բոլորովիմբ զյարձակեալս նեղիչս աշխարհիս. – 312. և մի յանխնայ ասպատակելով յաւեր դարձուցանես զերկիր իմ,,: - 178.

ՅԱՆԿԱՍԿԱԾՍ - Եւ հանեալ զԱշոտ և զԳուրգէն ի կապանաց՝ տիրեցին զօրութեամբ մեծաւ իւրեանց բնիկ իշխանութեանն, և կէին յանհոգս յանկասկածս այնուհետև: - 370. Եւ եղև իբրև ննջէր Գագիկ յանհոգս յանկասկածս՝ հասեալ Հասան ի գիշերի սուսերամերկ վառեալ փոքր գնդաւ, մոմեղինօք վառելովք՝ և կապեաց զնա կապանօք երկաթի: - 350. և թագաւորն յանկասկածս լինելով՝ փութացան ելին ի բանակէն փախստեայ հարուստ ասպարիսօք: - 380.

ՅԱՆԿԱՐԾ - Եւ այն ինչ պատահեալ Գուրգէն հարուստ գնդի Վահանայ ի յառուամէջս մուրին՝ ի բազում քան թէ սակաւ սուսերս ծեծեցին զնա, մինչև ոմն Ջուանշէր անուն յետուստ յանկարծ հարեալ վիրաւորեաց զԳուրգէն – 310. ընդ ակամբ հայելով, թէ գուցէ ճողոպրեալ ելանիցէ ի ձեռաց մերոց, կամ ի գիշերամարտս յանկարծ հասանիցէ ի վերայ մեր մեծամեծ ոճիրս գործիցէ: - 202.

ՅԱՆԿԱՐԾԱԿԻ - և յանկարծակի ի թիկանց կողմանէ յարձակեալ ի վերայ նորա արանց՝ հարեալ սատակեցին զնա: - 154. Եւ իբրև գիշերն տարածեցաւ և խաւարն թանձրացաւ և սկսան ամենեքեան մտանել ի քուն յանձնիւր օթանոցն՝ յանկարծակի փայլիւն սուսերաց և մոմեղինաց վառելոց և գունդք խորհրդականացն և Հասան ընդ նոսա. – 348. Եւ մինչ երթայր և խորհէր՝ խոցեալ նորա երիվարն, և յանկարծակի այն ինչ ոտն երիվարին շաղեալ ընդ փոքր թուփ մի, որպէս ասեն, զուլումբեալ ի վերայ գլխոյն ջարդեալ զողն ու լարն՝ ի բաց ընկէց զհեծեալն զքաջ զօրավարն Ապումկդէմ: - 304. Եւ մինչդեռ զայսքան և զայսօրինակ մարտն գրգռէր՝ ահա յանկարծակի հասանէր քաջն մեր Աշոտ. – 174. և յանկարծակի ի մէջ գիշերին Գրիգոր ախոյեանայարձակ դիմեալ շուրջանակի փակեցին ի ներքս զբանակն, սրով և աղեղամբ / 330/ վերս մահաբերս ի վերայ եդեալ՝ յոլովք անկան ի զօրուէն. - 332. զի մինչ ընդխռնեցաւ պատերազմն և դէմ առ դէմ ճակատէին՝ յանկարծակի այր մի ի նմանութիւն լուսոյ եկն եկաց ի մէջ ռազմի ճակատուն – 232.

ՅԱՆԿԱՐԾՈՒՍ - և Վահան հասեալ յանկարծուստ ի վերայ նորա, այն ինչ ընդ միտ ածելով ստնանել ինչ Գուրգինայ. – 310.

ՅԱՆԿԱՐԾՕՐԷՆ - և յանկարծօրէն յեղակարծ երագութեամբ հասին ի վերայ Շաւասպայ և մարզպանին Վնդոյի: - 126. և անճանօթ զարմանալի ծառոյն դէպք՝ ի միում աւուր ունել աճմունս փոյթ ընդ փոյթ. և դարձեալ սուզականութիւնս յանկարծօրէնս լինել – 50. և ինքն Հազարաւուխտ առնու զընտիրս այրուձիոց, զկորովի պատերազմողս ի վառելոցն պարսկային հարստութենէն, և խաղայ գնայ զկողմամբքն Հաշտենից և Ծոփայ, ի վերայ Վահանայ յանկարծօրէն: - 134.

ՅԱՆՀՈԳՍ - արդ դու մի անփոյթ յանհոգս յաղագս այդր մնայցես, անյապաղ հնարիցիս գտանել զխորհրդոցն նորա դատարկութիւն,,: - 346. և լրտեսք քաղաքապետին փութացեալ ասեն, ,,ահա մեկնեալ ի զօրացն զհետ որսոց ինչ յանհոգս յանզգուշութեան գայ ընդ այս ինչ տեղի. - 352. Եւ հանեալ զԱշոտ և զԳուրգէն ի կապանաց՝ տիրեցին զօրութեամբ մեծաւ իւրեանց բնիկ իշխանութեանն, և կէին յանհոգս յանկասկածս այնուհետև: - 370. և ամենայն ուրեք ամենեցուն բնակաց աշխարհիս անդորրեալ յանհոգս և յապահովս լինել ի ներքին և յարտաքին հազմարարաց: - 388. Եւ այնպէս յանհոգս աներկիւղս հարկապահանջ գործակալօք վարէին: - 372. Եւ Գուրգէն յանհոգս անկասկած բնակէր անդ Ն արամբք: - 306. Եւ եղև իբրև ննջէր Գագիկ յանհոգս յանկասկածս՝ հասեալ Հասան ի գիշերի սուսերամերկ վառեալ փոքր գնդաւ, մոմեղինօք վառելովք՝ և կապեաց զնա կապանօք երկաթի: - 350. Եւ զօրքն Հայոց կային դեռ յանհոգս – 228. և միապետէ

զտէրութիւնն Անձաւացեաց և խաղաղեցուցանէ զերկիրն և բնակէ յանհոգս զապահովացեալ ի հինից. շինէ եկեղեցիս և կատարէ տօն նաւակատեաց խաղաղութեան: - 326. Եւ յանդորր ելեալ աշխարհս Վասպուրական կեցին յապահովս յանհոգս. – 400. Իսկ առաւելեալն իմաստութեամբ Աշոտ ոչ յանհոգս և յաներկիւղս կայր մնայր, այլ զգուշանալ հրամայէր ի խելս կամրջաց և յանապատս և ի կիրճս ձորոց: - 340. մինչ նոքա յանհոգս յապահովս բնակէին՝ նոքա զռազմն կազմեալ վառեցին զճակատն. – 380. մինչ նոքա յանհոգս յապահովս մնացին յերկիւղէ մարզպանին – 402. յեղակարծում հանգստեամբ դիմեալ ի վերայ նոցա, քանզի նոքա կային յանհոգս – 402. սոքա բնակին յամուրս լեռնականս, յանհոգս խաղաղացեալք յարտաքին թշնամեաց, և հարկք և հասք արքունի ի յինքեանս մնալով – 274. և դուք ամենայն ուրեք ամրացեալ ի զգուշութիւն իբրև յամուր քաղաքի ընդ ձեռամբ իմով յանհոգս լեալ լինել ձեզ. – 214.

ՅԱՆՁԱՆՁԵԼ - որպէս օրէն է թագաւորաց և թագաւորազանց աշխարհաշէն խնամողաց յանձանձել ըստ վերակացութեանն յԱստուծոյ նոցա հաւատացելոց: - 392.

ՅԱՆՁԻՆ ԿԱԼԵԱԼ - Եւ ոչ յանձին կալեալ Արջամայ վստահաբար առ իւր ունել զԱնիանոս՝ յղէ զնա ի Հայս: - 76. Սոքա հրամանաւ Վահանայ Արծրունւոյ փոյթ յանձին կալեալ՝ խուզել քննել կարգել ի համառօտ բանս զաճմունս ազգացն անցելոց ոչ կարի ինչ ընդ երկայնագոյնս աշխատասիրաբար անցանել պատմութիւնս: - 74. և մեծաւ աշխատութեամբ և ի բազում ժամանակաց փոյթ յանձին կալեալ անդուլ զցայգ և զցերեկ ի մեծ տարակուսանս ըմբռնեալ կայր վարանեալ – 242. և ոչ ուրեք գտանէր հնար ելիցն ի վտանգաւոր արգելանէն, թէպէտ և բազմաց հոգ յանձին կալեալ վասն առն պատուականի – 346. ինքն իսկ փոյթ յանձին կալեալ՝ ել գնաց մեծաւ հոգաբարձութեամբ, լուծանել զնա ի տառապանաց արգելանին. սակայն և այնպէս ոչ կարաց գտանել զելս իրացն վտանգի առնն: - 346.

ՅԱՆՁԻՆ ՈՒՆԻԼ -Եւ նորա կամեցեալ ցուցանել թագաւորին՝ ի սոյն աւուրս վախճանեցաւ Հայրակղէս. իսկ որդի նորա Կոստանդին ոչ ունէր յանձին ըստ կամաց նորա պատասխանի. – 162. զի ոչ ումեք զայդ յանձին կալաւ Աղէքսանդրոս՝ կարծել տիրել ումեք երկրի բաց յԱղէքսանդրէ: - 70.

ՅԱՆՁՆ ԱՌԵԱԼ - և յանձն առեալ ինքնակամ մոլորութեամբ զօրէնս մազդեզանց մոխրապաշտ յամառութեանց – 124. Զոր առ վայր մի ոչ առեալ յանձն սրբոյն Սահակայ՝ ասէ - 114. զոր թագաւորին յանձն առեալ զաշխարհն՝ հրամայէ շինել անդ մեհեան զՀերակղեայ և զԴիոնիսեայ. – 90. յանձն առեալ տալ նմա զիշխանութիւնն բնիկ տէրութեանն իւրեանց: - 236.

ՅԱՆՁՆ ԱՌՆԵԼ - և զինքն յանձն արար երանելի եպիսկոպոսին և ճգնաւոր քահանային, հանգեաւ բարի խոստովանութեամբ ի հոռի ամսեան, որ օր Ե էր ամսոյն յաւուր ուրբաթու՝ ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր – 254. և նմա յանձն առնէ զաշխարհս, փոխանակ հօր իւրոյ Ապուսէթի. – 184. և օրհնեաց զամենեսեան զհեռաւորս և զմերձաւորս յանձն արար շնորհացն Աստուծոյ – 254.

ՅԱՆՁՆ ԱՌՆՈՒԻԼ - ,,յանձն առնումք զհրամանս արքունականս,, - 248. Այլ սոքա թէպէտ և յանձն առնուին և մտադիւրութեամբ լսէին նմա սակայն ոչ մեկնեալ լինէին ի ժանդագործ պղծութենէն զազրալից սոդոմական ախտիցն – 182. Արդ ոչ կարեմք փոյթ ընդ փոյթ շղումարար/ճիշտը՝ շղոմարար/ հաճութեամբ թագաւորիդ յանձն առնուլ՝ զոր հրամայէ կայսերական ճոխութիւնդ. – 132. Բազում անգամ թղթովք աղաչեալ զնա ո՛չ առնոյր յանձն. – 346. Գեղեցիկ էր և տեառն Գրիգորի Արծրունւոյ՝ ոչ անփոյթ առնել և զիւրոյ համանուանն զսրբոյն Գրիգորի առնուլ յանձն զխաւարամուտն լինել ի խորին խաւարային վիրապն կապանօք հանդերձ. – 250. ետ բերել պարգևս, և այնպէս ոչ առին յանձն. – 222. Եւ թագաւորն յանձն առնոյր զխաղաղութիւնն: - 380. և իբրև զպարիսպ անդամանդեայ՝ այնպէս եդին զանձինս ի վերայ բազմութեան գաղթականին աշխարհակոյտ ամբոխիցն, իբրև քաջ հովիւ ի վերայ խաշանց մեռանել յանձն առին: - 230. Զոր ոչ առ յանձն լսել նոցա. – 120. զոր ոչ առ յանձն սուրբն Սահակ գրել ինչ վասն որոյ

չարաբանեն զԱրտաշրէ: - 118. զոր չառեալ յանձն սուրբ տիկնոջն Համազասպուհեայ՝ տանին հանեն ի բարձրաւանդակ ամրական բերդաքաղաքն, մերկանան ի հանդերձիցն, զի քրիստոսեան փառօքն զգեցցի. – 102. Իսկ Սաղման յանձն առ գրել նմա. և գրէր գիրս յօդուածոյս, էր ինչ որ ի ստոյգ յիշողութենէ, և էր ինչ որ կարծողական բանք. – 164. խորհուրդ չար ի մէջ առեալ և զբարեկամութիւն կեղծաւորեալ, որպէս յերէկն և յեռանդն՝ և յանձն առնուն երթալ առ զօրավարն, խնդրել խաղաղութիւն. – 210. յայտնի և յանդիման կացուցանել զթիւ սպանելոցն ոչ առնուին յանձն, թէ Ջ այր միայն հզօր ձեռամբ յաղթեցին ԺԵ հազարացն. – 234. Յանձն առի պատմել ստուգապէս զսքանչելագործ յայտնութեանն հրաշիցն, որ ցուցաւ ի զօրավարութեանն Գագկայ. – 378. Ոչ ամենևին /գրքում՝ամենեւին/ գոնէ փոքր մի խոտորեցան ի բանս նորա և ոչ առին յանձն ի պատրել մեծութիւն ընչից և ոչ անսացին հնազանդել փառաց աշխարհական ցանկութեանց – 264. ոչ առ յանձն Յազկերտ նստուցանել զոք ի տոհմէ Արշակունեաց թագաւորել Հայոց – 114. որք ոչ առին յանձն միաբանել ընդ գունդս ուրացողացն. – 264. բազում անգամ աղուեսք թագաւորել խորհեցան, բայց շունք ոչ առին յանձն: - 108. և այլ ոչ ևս այնուհետև համարձակ յանձն առնոյր մտանել ընդ աշխարհս Վասպուրական: - 336.

ՅԱՆՁՆԱՌՈՒԹԻՒՆ - Բայց Մուսէ ոչ հաստատնագոյնս վասն Աշոտի զխոստմանն բերելով յանձնառութիւն արձակել զնա յիւր իշխանութիւնն – 330. զօր գումարել, այրուձի կազմել, մեծամեծաց աշխարհատերանց պարգևս տալ, ի թիկունս և յօգնութիւն զամենեսեան կոչել, զի ըստ յանձնառութեան խրատու նորա նոյնպէս և գործեսցէ: - 346. Իսկ Հասան ըստ յանձնառութեանն գնաց մեկնեցաւ ի Դերանկէն, եմուտ առ Գագիկ յամուրն և զտրտունջն զԴերանկէն հաւատարմացոյց առաջի Գագկայ, որ դիւրաւ առ հաւատալն հաստատնագոյն երևէր. – 350. Նոյնժամայն գնացին Դերանիկն և Գագիկ մտին առաջի Ցիսէի, խօսեցան բանս խաղաղութեան, ետուն պատանդս յանձնառութեամբ հարկացն արքունի - 334. Սաստիկ և վտանգաւորք և լի դառնութեամբ որ ինչ ի ճառի աստ են յիշատակարանք, սակս յանձնառութեան մեծ նախարարացն և իշխանացն մերոց. – 240. ՎԱՍՆ ՉԱՐ ՅԱՆՁՆԱՌՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐԱՑՆ ԱՐԾՐՈՒՆԵԱՑ – 240.

ՅԱՆՁՆ ԱՐԱՐԵԱԼ - Այնուհետև ել գնաց դէմ եդեալ զյունականօքն շրջել զկողմամբքն, յանձն արարեալ զհոգս իւր շնորհացն Աստուծոյ. – 316. Թողեալ այնուհետև ի խնամս արարչին, յանձն արարեալ շնորհացն Աստուծոյ: - 346 .

ՅԱՆՈՒԱՆԷ - և զի մի մի թուիցէ յանուանէ զյաճախութիւն զինուցն և զսպառազէն կազմութեանցն զձիոցն և զհեծելոց նոցա. – 280.

ՅԱՆՑԱՆԵԼ - և իմ խնայել ի ձեզ ոչ արարից զրաւ կենաց ձերոց ըստ արժանի ապիրատ գործոց և վնասուցն, զոր յանցեալքն առ իս դուք. -244. և մի ի վերայ մեծ յանցանացն զոր յանցեաք, որպէս լսեմդ զոր ինչ ամբաստանեն զքէն՝ յայդ ևս յաւելուր - 290.

ՅԱՆՑԱՆՔ - Բայց արդ զամենայն յանցանս քո և զվնաս զոր արարեր թողում քեզ. արի առ զկին քո և զորդիս և եկ այսր. – 146. գերեաց գերեդարձ արար, և ամենեցուն շնորհէր զյանցանս, և ձրի թողութիւն առնէր. – 168. և մի ի վերայ մեծ յանցանացն զոր յանցեար, որպէս լսեմդ զոր ինչ ամբաստանեն զքէն՝ յայդ ևս յաւելուր - 290.

ՅԱՆՑԱԻՈՐ - զի ոչ եթէ ատեաց զանօրէնն իբրև զանամօթն. զի քան զմեղանչելն առաւել չար այն է՝ չունել զինքն ընդ յանցաւորսն – 248.

ՅԱՆՑԻ - և ի յանցին հրձիգ արար զմեծ եկեղեցին յաւանին Արտամետոյ: - 206.

ՅԱՆՑՈՒՑԱՆԵԼ - որպէս Րոբովամ որդին Նաբատայ, որ մեղաւ և յանցոյցն զԻսրայէլ, որպէս գրեալ է ի գիրս թագաւորացն Իսրայէլի – 248.

ՅԱՇԿՈՒԻՐ - մինչ կալ մնալ միայն երեսուն արանց ընդ քաջին Վահանայ, Մերշապուհ և Յաշկուր Արծրունիք, և Կամսարն Ներսէհ, և ի տանէն Ամատունեաց՝ զորոց զանուանսն անգիտանամ – 134.

ՅԱՇԿՈՒԻՐ ԱՐԾՐՈՒՆԻ - մինչ կալ մնալ միայն երեսուն արանց ընդ քաջին Վահանայ, Մերշապուհ և Յաշկուր Արծրունիք, և Կամսարն Ներսէհ, և ի տանէն Ամատունեաց՝ զորոց զանուանսն անգիտանամ – 134.

ՅԱՊԱ - մինչև նոքա խոնարհեալ առ նորայն խորհրդական առ յապա պատահմունսն, որ հանդերձեցաւ աշխարհիս Հայոց, իբր մարգարէական իմն գոգցես տեսաւորութիւն – 114.

ՅԱՊԱՀՈՎ - Եւ Գուրգէն երկրորդ հրեշտակս յղէ առ նա զայս օրինակ, եթէ ,,ընդ իս հաստատեա զանզրաւ կապակցութիւն ուխտի խաղաղութեան. և ես ապստամբեցայց յԱշոտէ, և ի միասին բաժանեալ զերկիրս կեցցուք յապահովս,,: - 316. և կէին յապահովս խաղաղացեալք և հնազանդեալք ընդ պետութեամբ իշխանաց իշխանի: - 322. և ամենայն ուրեք ամենեցուն բնակաց աշխարհիս անդորրեալ յանհոգս և յապահովս լինել ի ներքին և յարտաքին հազմարարաց: - 388. Եւ յանդորր ելեալ աշխարհս Վասպուրական կեցին յապահովս յանհոգս. – 400. մինչ նոքա յանհոգս յապահովս բնակէին՝ նոքա զոռազմն կազմեալ վառեցին զճակատն. – 380. մինչ նոքա յանհոգս յապահովս մնացին յերկիւղէ մարզպանին – 402.

ՅԱՊԱՀՈՎԱՆԱԼ - Բայց ըստ կարգաց քրիստոնէութեան վարէր ըստ արժանի պատուիրանաց Տեառն, և ըստ խրատու մեծին Վրթանեայ յապահովանայր ամենայնիւ, թագաւորեալ ամս ԺԹ: - 96. Զի թէպէտ և Գուրգէն մեծաւ զօրութեամբ ունէր զդէմ յարձակելոցն ի վերայ, որոց զիշխանականն ճեպէին հասանել գահ, կամ որ արտաքին տաճկական պատերազմունքն բռնաբար ի ներքս դիմէին՝ սակայն ոչ յապահովանայր դեռ երկիրն: - 316. Մինչդեռ այսպէս յանդորրութեան կեանս յապահովանայր երկիս Հայոց, և ոչ ուստեք գոյր վտանգ կրել – 92.

ՅԱՊԱՂԱՆՔ - ,,և այս ևս գործ կամ խաղաղութեան կամ պատերազմօք և ելցեն ի գլուխ, միայն զյապաղանացն ի բաց լքցես զդեգերանս,,. – 382. Եւ արդ խնայեալ իմ ի ձեզ, և դուք առանց յապաղանաց և զիս աշխատ առնելոյ ի բաց լերուք յերկրպագութենէն Քրիստոսի, և եղիցեն անձինք ձեր ի գիւտս և կեցջիք. – 246. և փութացաւ գրեաց առ Սափի որ ի Վանտոսպ նստեալ և ճոխանայր Վասպուրական տէրութեամբն. որ առանց յապաղանաց զփոյթն յառաջաբերեալ՝ գնաց եհաս առ Աւշին ի Մարակայ քաղաք: - 374. հրաման տուեալ ամենեցուն, զի իբրև մերձ լինիցի գարնանային ժամանակն՝ փութով առանց յապաղանաց առ նա հասանիցեն ամենայն պատրաստութեամբ: - 262. Ցղէ առ իշխանն, զի առանց և ոչ մի ինչ յապաղանաց փութացեալ հասցես այսր: - 348. Նորա ունկնդիր եղեալ գայ առանց յապաղանաց – 82.

ՅԱՊԱՂԵԱԼ- և յապաղեալ խափան լինէր նմա յօժարութիւն ցանկութեան բարեպաշտութեանն. – 222.

ՅԱՊԱՂԵԼ - ,,եթէ հաճոյ թուիցիմ քեզ կնութեան, և դու կամիցիս քեզ զտիրելն Անձաւացեաց՝ մի վեհերեալ յապաղելով դանդաղկոտ լինիր և վերջանար զփութալն,,. – 324. Դու աւադիկ ելեր մտար յերկիր Հայոց, ելեր ի կողմն թշնամեաց իմոց և ապստամբացդ զքեզ միաբանեցեր, զի յապաղեցեր հրամանաց իմոց: - 236. իբր ոչ անգիտանալով Աստուծոյ զառ ի նոսայսն լինելոյ, այլ բնաւորեալն բարի անփոփոխ բնութեամբ մնալով ամենայնիւ՝ առ ի չարասէրն զուղիղ հատուցումնն յապաղէր. – 30.

ՅԱՊԱՂՈՒՄՆ - աստանօր պարտ է սակաւիկ մի յապաղումն տալ պատմութեանս. – 18.

ՅԱՊԻՏՈՍԹԷ - Նոյ ծնանի երիս որդիս, զՋրուան և զՏիտան և զՅապիտոսթէ, որ են Սեմ, Քամ և Յաբէթ: - 14.

ՅԱՊՈՒԾ ԿՐԹԵԱԼ - հրախառն տոչորմամբ եռացեալ շուրջ զսրտիւն արիւնն՝ մաղձախառն բերմամբ յապուշ զմիտսն կրթեալ՝ կայր ի մէջ տարակուսի – 180. Նաև սրբոց հրեշտակացն ի տեսաւորութիւն ձևացեալ, որոց սարսափմամբ առ նորա զնայեցած յապուշ միտքն կրթեալ, շուրջ փակեալ զնայեցածն՝ ի հարց մատուցեալ ասէ – 386. նոյնժամայն առ յոյժ ամբարտաւանութեանն և սաստիկ բարկութեանն և անհուն սրտմտութեանն և առանց բուժելի կատաղութեանն, յապուշ միտքն կրթեալ իբրև զարբեալ զանզգայ արբեցութեամբ - 264.

ՅԱՊՈՒԾ ԿՐԹԻԼ - Յապուշ կրթին միտք իմ զմտաւ ածել զաղետիցն, խորհրդածել գրել յիշատակարանս. լքեալ լինին ընթացք ձեռացս առ կորովութիւն գրաւորականիս. – 350.

զոր սարսափեմ և հիացմամբ մեծաւ յապուշ կրթին միտք իմ ընդ ժուժկալութիւն այնքանեաց բազմահնար մեքենաւոր չարչարանաց. – 106.

ՅԱՋՈՂԵԼ - և կորապաղատին ընդարձակեաց ելանել, զի երթիցէ ուր և կարասցէ հասանել ըստ յաջողելոյ իրին: - 348.

ՅԱՋՈՂԻԼ - Եւ Գուրգէն ելեալ գնաց փութանակի անյայտ առնել զինքն, մինչև յաջողեսցի ըստ կամաց Քրիստոսի յո՛վ և երթիցէ: - 320. Իբրև յաջողեցաւ Արտաշէսի ամենայարդար պատրաստութեամբ և աշխարհաշէն հոգաբարձութեամբ, որպէս բացայայտեն գիրք պատմագրաց – 86. Յայնժամ իբրև գիտաց զօրավարն, եթէ յաջողեցաւ նմա ամենայն ինչ ըստ կամաց իւրոց և ըստ հրամանի ամբարիշտ թագաւորին, ի գլուխ ելին խորհուրդ չարութեան նոցա - 238.

ՅԱՋՈՂՈՒԹԻՒՆ - Իսկ աբեղայն արիոսեան, զոր յառաջագոյն ասացաք վարդապետ Մահմէտի, տեսեալ զյաջողութիւն իրացն՝ յարուցեալ եկն առ Մահմէտ, ցուցանել նմա զգութ երախտեաց, իբրև յիւրմէ վարդապետէ ուսեալ եհաս այնպիսի իրաց. – 162. Տեսեալ Մահմէտի զյաջողութիւն իրացն և զմիաբանութիւն Հրէիցն՝ ասաց զինքն գլուխ և առաջնորդ ամենեցուն: - 160.

ՅԱՋՈՐԴԵԱԼ - Եւ յաջորդեալ փոխանակ նորա կացեալ յաթոռ սրբոյն Գրիգորի երանելին Մաշտոց, ելեալ ի կղզոյն Գեղարքունի լճէն, զՅօհաննու Կարապետին զվարուցն բերեալ զօրինակ. – 376.

ՅԱՋՈՐԴԵԼ – կեանք ցաւագինք քան թէ առողջութիւն ընդդիմակ մահու յաջորդին: - 384.

ՅԱՌԱՋ - բայց միայն զազգին շարս ըստ գիւտի աշխատութեանն բաւական համարեցաք յառաջ վարել մինչ ի թագաւորել Տրդատայ – 94. Բայց որդիքն Դերանկին, Աշոտ և Գագիկ և Գուրգէն, զըստ մարմնոյ /358/ աճմանն չափ առոգ և բարձրաբերձ ձգմամբ յառաջ տանէին. – 360. Եւ մեք այժմ զկարգն յառաջ վարեսցուք. Կիւրոս. Վարգէն. Վահան. Շամբիթ. Ջաջ. Ջաջուռ: - 74. Եւ մեք զկարգ պատմութեանցս մասնաւորաբար և համառօտապէս յառաջ վարեսցուք – 78. և մեք զպատմողականն համառօտաբար յառաջ վարեսցուք հարկաւորութիւն: - 302. և նախ յառաջ Սափին կարի յոյժ սիրեցեալն իւր, զատակչական դեղն արբեալ, անբուժելի կեղով վառեալ յոսկր և ի մարմին՝ և առաջի Աւշնի զրաւ առնոյր ի կենացն: - 376. Եւ նախարարութիւնս յօրինէ, յանուն և ի բարձ և ի գահ յառաջ մատուցեալ: - 72. և նոքա կային անշարժ, և ոչ ել /284/ այր քան զընկեր յառաջ. – 286. Եւ քանզի էին բանակեալ ի խառնուրդս Երասխայ և Մաւրին մեծի՝ պատահի յառաջ Շաւասպ Արծրունի – 126. զի զկապեալսն յառաջ մատուսցեն ի հանդէս հարցափորձի քննութեան: - 240. զկարգին յառաջ վարել զպահանջումն, թերևս արդեօք գործակցօք յանդգնեցայց վարել առ ողբերգակս: - 352. Զկնի այսորիկ յառաջ խաղացեալ Ահմաթ և որ ընդ նմա կայսկազենիցն գունդք, երթեալ մտանել ի քաղաքն Դուին, թերևս կարասցէ ի կատարումն՝ զոր ինչ խորհեցան՝ հասուցանել զչարիսն: - 344. Զոր յառաջ մատուցեալ ասացից ըստ կարգի, թէպէտ և ոչ խնդամիտ յօժարութեամբ՝ սակայն ակամայ և ի հարկէ ճառագրեցից զբացումն դրան աստուածասաստ բարկութեան ի վերայ մեր – 196. զոր ճ ամոյ յառաջ հանեալ էր բռնակալութիւնն Տաճկաց ի Վասպուրական պետութենէ: - 332. զոր յառաջ խաղացուցանելով զբանն՝ ցուցից յիւրում կարգի – 182. զորոյ նախնեացն ջան և վաստակ յուշ արարեալ թագաւորին՝ Համամայ յառաջ մատուցեալ, ի գահ և ի բարձ հայրենեացն ձգել զնա՝ ժառանգեցուցանէ զերկիրն Աղբագ, որպէս Սահակայ նոյնպէս և Համամայ: - 90. իսկ զՆախճաւան քաղաք և զԳողթն գաւառ հանեալ էր ի Վասպուրականէ բազում ժամանակօք յառաջ, ՄԺԱ ամօք, յամի այրման եկեղեցւոյն Գրիգորի և վտանգաւոր մահու զօրացն Հայոց: - 390. իսկ թագաւորն Մարկիանոս ընկալաւ զնոսա սիրով ի խաղաղութեան, մեծաշուք պատուով ի բարձ և ի պատիւ յառաջ աճեալ, իբրև զքաջամարտիկ ախոյեանս - 132. իսկ խարդախն ի նոցանէ ստիպեալ նախաժաման եկն յառաջ: - 46. ՄԾԹ ամօք յառաջ զսորայս բացայայտեալ զցոյցս յայտնութեանն, յամս Ներսեսի երրորդի Հայոց կաթողիկոսի և Վարդանայ Ռշտունեաց պատրկի և յամի ունելութեանն Տաճկաց զհայկական աշխարհս: - 394. յառաջ խաղացուցից զբանսն,

արագաքայլ արշաւանօք անցեալ գնացից ընդ շարագրածս անցնիւր պատմագրաց, զազգաբանութիւնն միայն ոճով դրոշմեցից ի շարի աստ – 74. յերկրորդն հարկ է մեզ զոճն կանոնել, որ յետ Նոյի և անդր ազգացն բաժանմունք յառաջ խաղան, ըստ ցեղից ցեղից ի կարգ անկեալ աշխարհաբաժին ցեղակարգութեամբ. – 12. Նոյն գունակ և զՂուկա ազգաբանութիւնն գտցես շարածեալ ի վերջէ յառաջ, և ասէր որպէս կարծէր զՅիսուսէ՝ ի Յովսէփայ ի Յակովբայ ի Հեղեայ, և ապա մի ըստ միոջէքն: -16. որպէս Պօղոսի հաճոյ թուի ասել, թէ ,,զորս յառաջն ճանաչէր՝ յառաջագոյն հրաւիրեաց կերպարանակից լինել պատկերի որդւոյ իւրոյ,,: - 300. Ցայս վայր զայս գրեալ Աղէքսանդրի՝ Մակեդոնացւոյ, ի Սենեքերիմայ յառաջ մինչն ի Պտղոմէոս եգիպտացի, զոր և նոքա Պտղոմեանքն կոչէին. – 74. Քանզի ասեն սկիզբն աստուածոց՝ զհին ոմն Բելոս, հայր Դիայ, որ կոչի հայերէն Արամազդ՝ ՄԺԵ բիւր ամաց աւուրս ունել և ևս յառաջ. – 36. Նախ յառաջ ախորժական թուէր Գագկայ անուանել զեկեղեցին փրկչական անուանակոչութեամբն մակաձայնել ոչ ուղղակի առ հաւատն մատուցեալ – 394.

ՅԱՌԱՋԱԲԵՐԵԱԼ - Բայց երանելի հայրապետն Տէր Գէորգ սաստկագոյն քան զտիեզերական կործանմանն առ Նոյիւ բերելով զտրտմութեանն թախիծս, հանդերձ եպիսկոպոսիւն Գրիգորիւ՝ զաբրահամեանն վաղնջուց աղաչանսն ի կործանմանն Սոդովմայ յառաջաբերեալ մարդասիրին Աստուծոյ. – 358. և փութացաւ գրեաց առ Սափի որ ի Վանտոսպ նստեալ և ճոխանայր Վասպուրական տէրութեամբն. որ առանց յապաղանաց զփոյթն յառաջաբերեալ՝ գնաց եհաս առ Աւշին ի Մարակայ քաղաք: - 374.

ՅԱՌԱՋԱԲԵՐԵԼ - Եւ ելեալ իշխանաց իշխանն, որ բարձրագոյն և հանճարեղագոյնն էր քան զբնաւ Հայաստանեայցս և զընդհանուր կացեալս ի ներքոյ երկնից՝ եկն առ նա մեծաշուք պատուաւորութեամբ, և պարգևս և պատիւս ոչ սակաւս նմա յառաջաբերեաց. – 344.

ՅԱՌԱՋԱԳԱՀ - Եւ յանդուգն դիմեցուածովն ի վեր քան զզարմանս՝ այն ինչ ի քթթել ական դարձուցին / 328/ զխրոսական, և զռազմն ղաշիկ քակեցին և զյառաջագահ ախոյեանսն փայլակնահար արարեալ դիաթաւալ կացուցին – 330.

ՅԱՌԱՋԱԳՈՅՆ - Արդ որպէս յառաջագոյն ասացաք՝ սակս կարևոր յուզմանցն միապետեալ ի շարս կանոնաց, միայն յայտարարութիւնս առնել զազգացն Արծրունեաց – 96. Բայց արդ որպէս յառաջագոյն հատուցի զարտաքոյ պարսաւանաց զիս ներքոյ գրել, վասն ոչ ոճով զսորայս կարգել դնել ի շարի աստ զշարագրածս, վասն ոչ բաւելոյ զանչափութիւնն ի մի վայր գումարել յանմասնաւորաբար նշանակութեամբ – 308. գնաց և Վահան զհետ նախարարացն առ Վարդան յառաջագոյն, տալ նմա զվերակացութիւն Հայոց. – 128. Եւ զրոյցք ժամանակաց սոցա յայլոց գրեալ յառաջագոյն, աւելորդ համարեցաք երկրորդել: - 168. և զքեզ կորակնեալ ամօթալից ի պարտութիւն մատնիցին, որպէս զյառաջագոյն եկեալ հազարապետն արքունուստ, զի ոչ կարաց կալ ընդդէմ նոցա, և ոչ Ճ այր առ Ժ զօրացն Հայոց,,: - 214. Եւ էր կացեալ եպիսկոպոսապետ Հայոց Զաւէն, զոր յառաջագոյն ասացաք, յետ չորրորդ ամի Շահակայ: - 110. Եւ էր յղեալ յառաջագոյն զԱշոտ որդի իւր ընդ առաջ նորա, անդստին յելանելն նորա յերեսաց արքայի – 270. Եւ խոյակապ և անուանի եղեալ քան որ յառաջագոյն քան զնա էին կացեալ իշխանք ընդհանուր Հայաստանեայցս, որ յարևելս և ի կողմանս հիւսիսոյ, մանաւանդ որք ի Վասպուրական աշխարհիս էին կացեալ նախարարք յիշխանական պետութիւնս: - 170. և հրաման ետ հասանել ի վերայ քաղաքին Տփղիք կոչեցեալ. որում յառաջագոյն Փայտակարան անուանէին. – 270. Զայս յառաջագոյն իմացեալ հին պատմագրին՝ յառաջատես զկործանումն նոցա յայտ առնէ. – 148. զոր աւելորդ համարիմ երկրորդել զյառաջագոյն պատմագրաց նշանագրութիւնս: - 102. զոր և ասացաք յառաջագոյն: - 160. զորս եթող Բուխայ տիրել աշխարհին իւրեանց յաղագս յառաջագոյն մտերմութեան հօրն նոցա առ թագաւորն և առ զօրավարն, զի գնաց ըստ կամաց նոցա յամենայն ուժոյ զօրութեան մտաց իւրոց: - 298. ժողովէր և զորս յառաջագոյնն ունէին յինքեանս զազգս զօրօք իւրեանց – 270. Իսկ աբեղայն արիոսեան, զոր յառաջագոյն ասացաք վարդապետ Մահմէտի, տեսեալ զյաջողութիւն իրացն՝ յարուցեալ եկն առ Մահմէտ, ցուցանել նմա զգութ

երախտեաց, իբրն յիւրմէ վարդապետէ ուսեալ եհաս այնպիսի իրաց. – 162. Իսկ յառաջագոյն և նա գիտէր ի համբաւուց, և յօժարագոյնս եղև ընդունել զնոսա. 366. մանաւանդ յառաջագոյն պատրաստեալ պատսպարեաց թղթովք և պատարագօք առ թագաւորն և առ զօրավարն գնալ ըստ հրամանաց նոցա, և ոչ ինչ արտաքոյ կամաց նոցա խորհել կամ գործել ինչ: - 270. մանաւանդ զի յառաջագոյն /308/քան զմեզ այլոց ոմանց բանակարգեալ գրեալ հաւաքեալ է ի մի շար: - 310. յորում տեղւոջ յառաջագոյն ապարանք պարսպաւորք եղեալ էր Վարդ պատրկի Ռշտունւոյ հայկազնոյ – 394. Շինեաց և ի վերայ Ամրական քարանձաւին յելս և ի մուտս կոյս տունս խրախիցս ոսկեզօծս պատեշգամեալ, յաւելլով ի յառաջագոյն ի հօրէ նորա Դերանկէն շինեալ: - 390. որ յառաջագոյն՝ հատուածեալք ի կողմանս Դամասկոսի և Նինուէի – 60. որպէս Պօղոսի հաճոյ թուի ասել, թէ ,,զորս յառաջն ճանաչէր՝ յառաջագոյն հրաւիրեաց կերպարանակից լինել պատկերի որդւոյ իւրոյ,,: - 300. Ցոյցք ժամանակացս այսոցիկ, ըստ որում յառաջագոյն ասացաք, որ յաւուրց անտի Բէլայ մինչև ի Նինոս՝ երևելիք ինչ և նշանաւորք ի /42/ մատենիցն առաջնոցն ոչ երևի, թերևս ի բազում խափանմանց: - 44. քանզի էին հնազանդեալք յառաջագոյն ընդ թագաւորութեամբն Յունաց – 142. Քանզի էր և տեղին այն յառաջագոյն տեղի մեհենից Վահեւվահանի: - 334. քանզի յառաջագոյն տուեալ էր զնոսա ի ծառայութիւն քեռ իւրոյ Տիգրանուհեայ կնոջ Աշղահակայ, յասացեալ տեղիս բնակեցուցանելով: - 64. որպէս ասացաք յառաջագոյն – 360.

ՅԱՌԱՋ ԱԾԵԼ - կէսքն զԳուրգէն յառաջ աձեն ի պատիւ իշխանութեանն և այլք զԱպուջափր, ոմանք զՎասակ. – 298.

ՅԱՌԱՋԱԶԳՈՒԹԻՒՆ - Իսկ թագաւորն գրէ առ զօրավարն թերևս կարասցէ հաւանեցուցանել զԳուրգէն՝ երթալ ի թագաւորական քաղաքն առ կայսր, և մեծաց պարգևաց և պատուի և գահու յառաջաձգութեամբ ընկալցի պարգև ի թագաւորէն: - 302.

ՅԱՌԱՋԱՆԱԼ - Անդանօր քաջն մեր Աշոտ զիւանդութիւնն կեղծաւորեալ ի տեղւոջ օթոցին անկեալ դնէր, մինչ ակն ունէին յառաջանալ ի գործ պատերազմին: - 328. Բայց Աշոտ թէպէտ և նուազագոյն զօրու ընդ իւր լինելով, ոչ թիկն ածեալ վերջացաւ առ պատերազմն յառաջանալ: - 364. Եւ այսոսիկ Ահմաթայ յինքն առեալ արկանէր ի կամս նս յառաջանալ – 366. և առեալ զյաղթութեանն քաջանունութիւն, առաւել զհանճարեղութեանն խոհեմութիւն՝ յառաջանայր ի գահ, ի բարձ և ի պարգև - 72. Եւ ելեալ յիւրաքանչիւր տեղեաց մի քան զմի յառաջանալ ի կոչումն Բուխայի, և ժողովեցան ի մի վայրի և եկին կացին առաջի զօրավարին Տաճկաց: - 296. և զպատճառսն ստուգեալ, գրէ ի ձեռն Վահանայ ումեմն ի տոհմէն Ամատունեաց՝ դառնալ գալ բնակել անկասկած կենօք, ի բարձ և ի պատիւ իւրաքանչիւր յառաջանալ: - 98. և նախ քան զմտացն յօժարագոյն առ հանդէսսն յառաջանալ՝ զմարմնոյն պնդութիւն անհանգիստ առ ճակատամարտսն յարատևել: - 308. զի Յամանիկն թուղթս և դեսպանս մի զմիոյ կնի առնելով առ իշխանս աշխարհիս՝ զինքն յառաջանալ ի վերակացութիւն Հայոց – 340. զշփոթեալ և զվրդովեալ կարգս աշխարհիս յօրինել առ հանդարտութիւն և խաղաղութիւն յառաջանալ – 388. Իսկ զՎահագն Հայկազնեայ … կացուցանեն ի դրան արքունի, յառաջանալ ի գործ պատերազմին մեծաւ աշխատութեամբ՝ կամ մեռանել ի սրոյ թշնամեաց դիպելոց, կամ յաղթել քաջասրտութեամբ: - 70. Իսկ նախարարքն Հայոց ի սադրելոյ Վաղէսի գրգռեալ ի մարտ ընդ Արշակայ ի պատերազմ յառաջանան – 100. Յայսմ վայրի ոչ մտադիւր ախորժակօք գրեմ զճառս պատմութեանս, որ տրտմականքն, քան թէ ուրախականքն յառաջանան տիրել ինձ: - 384. յորոց աճմամբ յառաջանալ կարգն և գայ հասանէ ի Սենեքերիմ արքայ, առ Եզեկիայիւ Երբայեցւոցն առաջնորդաւ և առ մերովն Հարամայիւ: - 14. Նոյնժամայն դարձուցեալ զերասանակ երիվարին ի պատերազմ յառաջանալ, և անդ բազում արիութիւն նահատակութեան ցուցեալ, սակայն ոչինչ օգուտ բերեալ: - 368 ոչ յառաջանայր ի բարձր նախագահս ճոխանալ երևելեօքս և /*նստէր* / լքանելեօքս – 94. Որ անսայթաք հաւատով յառաջացաւ առ աւարտումն պատերազմին փութացեալ, և ելեալ

յամրական տեղւոյն սակաւաձեռն զօրականաւն, որ պահէին զպահպանութիւն Շամիրամ բերդին – 400. որ յետ ՋԸ ամի Սենեքերիմ յառաջանայ ի գահ հայրենի իւրոյ թագաւորութեանն մեծաւ զօրութեամբ - 16.

ՅԱՌԱՋԱՏԵԼ - գլորումն, քան թէ կանգնումն յառաջատեն – 384.

ՅԱՌԱՋԱՏԵՍ - Զայս յառաջագոյն իմացեալ հին պատմագրին՝ յառաջատես զկործանումն նոցա յայտ առնէ. – 148.

ՅԱՌԱՋԱՏԵՍԵԼ - Զոր Փիլոն Աղէքսանդրացի փիլիսոփոս և վարդապետ հնոյն՝ Զրարբի ասէ, թերևս զսննդականութեան և զաճողական բազմամարդութեանն պատճառ նշանակեալ յառաջատեսէ հայրն. – 24.

ՅԱՌԱՋԱՁՈՒՑԵԱԼ - և ի գինարբուսն ի տեղի մատռուակութեան յառաջացուցեալ՝ ի գահ նախարարութեան ձգեալ կացուցանէ – 64.

ՅԱՌԱՋԵԱԼ - Եւ յառաջեալ առաջոյ զօրուն Կիւրոսի՝ հարդարեն զգործ պատերազմին: - 64.

ՅԱՌԱՋ ԽԱՂԱԼ - Եւ ամիրայն Յիսէ խաղացեալ բազմաձեռն զօրուն՝ յառաջ խաղայ ընդ Աքաղայու/ ճիշտը՝Աքաղաղու/ կատար ասացեալ բլուրն: - 334.

ՅԱՌԱՋ ԽԱՂԱՑԵԱԼ - յորում և ոմն հաւատարիմ Յիսէի Սէմ անուն յառաջ խաղացեալ՝ պատահէ իշխանին, ընդ Վահանայ խորհրդակցեալ խորհել զխաղաղութիւն և զմարտն գրգռեալ ցածուցանել և զվառեալ պատերազմն շիջուցանել. – 334.

ՅԱՌԱՋՆՈՒՄՆ - Զի յառաջնումն ոչ ինչ գոյր հոգ ինչ զբաղմանց, և ոչ մի ինչ ըստ աշխարհաշէն /90/ խնամակալութեանց, կամ պատերազմասէր աշխատութեանց – 92.

ՅԱՌԱՋ ՔԱՆ - այլ այսոքիկ փոյթք յօժարութեան առ ի յայլոց ասացելոց նախագունից տեղեկութիւն, և ոչ ինքեամբ և կամ նովաւ գտանել զինարս գիւտի գրոց, թէպէտ և յառաջ քան զնա, այլ ոչ թէ և քան զԲաբելացւոցն իրս – 18. որ զծայրագոյն շնորհացն Աստուծոյ առեալ պարգևս՝ կենդանւոյն ի կարգս անմահիցն փոխանորդեաց վերագրիլ, որ և յառաջ քան զփոխիլն ծանոյց զհամաջինջ բարկութիւն Աստուծոյ խոտորեալ ազգին և որդւոցն անհնազանդից – 26. այն որ յստակագոյնս գիտէ և տեսանէ զամենայն, յառաջ քան զլինել իւրեանց. – 28. Արդ Աշոտի կեցեալ ամս ԺԹ, տևեալ իշխանական ճոխութեանն ԺԶ ամ յառաջ քան զգերութիւնն Հայոց, և Ե ամ ի գերութեանն արարեալ - 336. Եւ եղև յետ մեծ պատերազմին, որ յառաջ քան զզրուցացդ գրելոյ ելին, ի գլուխս Մանազաւեան նահանգին և Յուշոյ դաշտին, և զխռովարարս քաղաքացն ի մի վայր գումարելոցն, որք և յունայն ասպատակէին աշխարհ – 398. և մանաւանդ զի հարկ փութոյ եղև մեզ գիտել զպայազատութիւնս երանաց տիրեցելոց մեր աշխարհի և որ յառաջ քան զնոսա թագաւորք Ասորեստանեայց, որդի /34/ ի հօրէ առեալ մինչև ի Սենեքարիմ արքայ, որ առ Եզեկիայիւ Երուսաղէմի արքայիւ եղեալ ազգապետ տանս Արծրունի: - 36. և մի՛ այլում ումեք փոյթ առնիջիք յառաջ քան զնա ըմբռնել: - 198. Զոր բան և վասն օձին սքանչելապէս ուսուցանէ Փիլոն Աղէքսանդրացի՝ յառաջ քան զդրժանացն դիպուածս՝ յոլովութիւն իմաստից ունել ամենայն շնչականաց. – 22. Որ և այլոց կարող տուիչ լինել ժամանակաց, որպէս և արանցն որ յառաջ քան զջրհեղեղն քառասուն ևս աւելի բիւրս ամաց և դարս փոխադրական այլաձևս և խժականս, շարս և ներս և սոսս - 38. որպէս ցուցանեն յիշատակարանքն որք յառաջ քան զմեզ հոգացան, զոր ինձ աւելորդ թուի երկրորդել: - 324. սա յառաջ քան զըմբռնելն նոցա ել գնաց իւրովք կամօք ի Սամառայ – 248. Քանզի սոքա յառաջ քան զհարս իւրեանց ասին վախճանեալ. – 40.

ՅԱՌԱԻՕՏԻՆՍ - Դարձեալ վերակնեալ յառաւօտինս կոյս խաղացեալ ի Ճուաշռոտ ի Գետս աւան՝ շինէ անդ զվայելչական տեղի խրախից – 392.

ՅԱՌՆԵԼ - ,,արիք երթայք առ զօրավարն, տեսէք հաւաստի, և ի վերայ հասեալ գիտասցուք, թէ ի՞ւ իւիք կարասցուք հաճել զմիտս նորա ի խաղաղութիւն,,: - 214. Եւ Ալի էր այր քաջ. ասէ ցնա, արի՛ ելցուք, քանզի են և ընդ մեզ արք բազումք, թերևս լիցի ելք իրացդ պիտանութեամբ: - 160. և քեզ եթէ հաճոյ թուիցի ապրեցուցանել զքեզ և զզօրս քո՝ արի ել աստի և գնա ի սահմանաց իմոց: - 278. Բայց արդ զամենայն յանցանս քո և զվնաս զոր արարեր թողում քեզ. արի առ զկին քո և զորդիս և եկ այսր. – 146.

ՅԱՏԱԿԵԱԼ - Եւ քանդեն աւերեն զմեհեանն և յատակեալ զտեղին՝ շինեն նորին քարամբք զմեծ եկեղեցին զսուրբ Գրիգորն ի Բլուր տեղւոջն – 126.

ՅԱՏԱԿԵԼ - զսեղանս խորհրդականս փրկագործութեանն յատակել, հիմն ի վեր /գրքում՝ վերայ/ տապալել զաւազանն մաքրափայլ լուսաւորութեանն Հոգւոյն սրբոյ - 124.

ՅԱՐԱԿՑԵԼ - և զինքն համեմատ Փրկչին ասաց լինել և ուղեկից ճանապարհի նորա, յասելն Եսայեայ մարգարէի, ,,հեծեալ մի իշոյ, և հեծեալ մի ուղտու,,՝ զայս ամենայն յինքն յարակցեր: - 164.

ՅԱՐԱՏԵԻԵԼ - և նախ քան զմտացն յօժարագոյն առ հանդէսսն յառաջանալ՝ զմարմնոյն պնդութիւն անհանգիստ առ ճակատամարտսն յարատևել: - 308.

ՅԱՐԴ - Եթէ, որպէս ասացի, ի բաց գնաս յինէն՝ խաղաղութիւն է, և թէ ոչ՝ պատերազմ և կռիւ և ճակատամարտ ... դու եղէգն՝ և մեք հուր դիւրաճախ, դու յարդ՝ և մեք հողմք դիւրափուչ – 280. որպէս յարդ ի հողմոյ վարեալ, կամ ծուխ վատնեալ ի մրրկէ՝ այնպէս կորեան գնացին յերեսաց զօրացն Աղուանից: - 286.

ՅԱՐԴԱՐԵԱԼ - զոր ընթերցասէրն Պտղոմէոս գրեալ և յարդարեալ ստուգաբանութեամբ, դնեն զգուշութեամբ ի դիւանապահ տունս գանձուց մինչև ի Կղէոպատրա կին, որպէս վերագոյնն գրեցաք: - 74.

ՅԱՐԴԱՐԵԼ - և բարձակից լինել մեծամեծացն արքայի ի գլխաւոր բազմականի անդ, յորժամ ատեանն արքունական յարդարիցի: - 204. Եւ ի բազում յուզիցն և ի խնդրոցն և զօրաժողովն լինելոյ և պատերազմ ընդդէմ վառելոյ և զձև ամրական մաքառմանցն յարդարելոյ և բռնալիր ուժեղագոյն մեքենային բախմանց քարձգութեանցն, զոր և ընդունայն աշխատութեամբ վարանեալ, անըստնանելի /հավանաբար՝ անստանալի/ մնալով ամրոցին՝դառնայ յիւր իշխանութիւնն: - 326. Իբրև հասին ուր հանդերձեալն էին՝ և երկոցունց զօրքն անհուն բազմութեամբ յանդիման եղեն միմեանց, և ճակատ առ ճակատ զգործս պատերազմին յարդարէին – 328. Յութերորդ ամի գերութեանն դառնայ Գուրգէն եղբայր Աշոտի միապետել զիշխանութիւն տէրութեանն և յարդարել կարգել յօրինել զկարգս /314/ շփոթեալ աւերեալ երկրիս: - 314. Նմանապէս, կամ թէ ևս հրաշափառագոյն զյաղթութեան մարտսն յօրինեալ յարդարեաց զպարտութիւն ի վերայ ազգին Իսմայէլի մեծ զօրավարն Գուրգէն, և իսպառ կանգնեաց զնշանակ յաղթութեան ամենևին ամենայն ուրեք ընդ ամենայն տեղիս. – 312. որ եկեալ ոչ կարգաւորաբար աշխարհախնամ հոգածութեամբ յարդարէր զկարգս աշխարհիս. – 114.

ՅԱՐԴԱՐԻՉ - Եւ գունդն երրորդ ի ձեռս իշխանին, որ և յարդարիչ պատերազմին: - 178.

ՅԱՐԴԱՐՈՒՄՆ - որոց Շերեփայ որդիք անուանէին, ի յԱկէացի տոհմէ, քաջամարտիկք և հմուտք պատերազմողական յարդարմանց – 362.

ՅԱՐԵԱԼ - Դարձեալ ի նոյն յարեալ՝ և այլ հոգաբարձութեան աշխարհի խնամ տանէր, ի մեղադրանս մատուցեալ մարգարէիւն հանդերձ սպառնալեօք – 182.

ՅԱՐԵԼՈՒԹԻՒՆ - Ընդ նոյն ժամանակս յղէ թագաւորն զոմն ի յաւագ նախարարացն վերակացու Հայոց և հաւատարիմ ի վերայ հարկաց արքունի Ապուսէթ անուամբ, ըստ տաճկական լեզուին, յարելութեամբ եբրայական դպրութեանն: - 170.

ՅԱՐԵՑՈՒՑԱՆԵԼ -Զսա տեսեալ Մահմէտի՝ /162/ կոչեաց և յարեցոյց առ ինքն, հրամայեալ նմա գրել գիրս օրինաց ազգին իւրոյ, ձեռամբ Աբութուռաբայ իսմայէլացւոյ. քանզի ինքն ոչ գիտէր գիր և ոչ դպրութիւն: - 164.

ՅԱՐԷԴ - Եւ են ի թուել մինչ ցայս վայր այսոքիկ. Ադամ, Սէթ, Ենովս, Կայիանան, Մաղաղայէլ, Յարէդ, Ենովք, Մաթուսաղայ, Ղամէք, Նոյ, Քամ, Քուշ, Նեբրովթ որս և Բէլ: - 36. Մաղաղիէլ լեալ ամաց ՃԿԵ-ից, ծնանի զՅարէդ: - 26. Յարէդ լեալ ամաց ՃԿԲ ծնանի զՅենովք – 26.

ՅԱՐԻԼ - առ այսուիկ և ի պաշտօնս դից յարեցան – 40. Բայց երիցս երանելի ոմն երիտասարդ հասակաւ, ինքն տաճիկ և ազգաւ պարսիկ՝ ելեալ զհետ սիրոյն Քրիստոսի հաւատոցն եկն յարեցաւ ի Պատրիկն Անձևացի – 222.

ՅԱՐՁԱԿԵԱԼ - Ելեալ խրոխտ և դառնաշունչ փոնկալով մոմռեալ յանձնիւր գազանեղեն զայրացմամբ յարձակեալ յեղակարծում եկն եմուտ ի քաղաքն Շամիրամայ ի Վանտոսպ: - 372. և յանկարծակի ի թիկանց կողմանէ յարձակեալ ի վերայ նորա արանց՝ հարեալ սատակեցին զնա: - 154. և իբրև զքաջ հովիւն դրուատեալ ի փրկչէն՝ զանձն իւր եդ ի վերայ խաշանց ընդդէմ ապականարար գայլոցն, յարձակեալ յանխնայ դիմեցուածովք, յարիւն և յապաժոյժ, ի սատակումն և ի ծախումն սրոյ մատնեաց բոլորովիմբ զյարձակեալս նեղիչս աշխարհիս. – 312. և իբրև զքաջ հովիւն դրուատեալ ի փրկչէն՝ զանձն իւր եդ ի վերայ խաշանց ընդդէմ ապականարար գայլոցն, յարձակեալ յանխնայ դիմեցուածովք, յարիւն և յապաժոյժ, ի սատակումն և ի ծախումն սրոյ մատնեաց բոլորովիմբ զյարձակեալս նեղիչս աշխարհիս. – 312. և յարձակեալ բազում անգամ ի վերայ յունական զօրուն որք ընդդէմ զօրաց քոց պատերազմէին՝ և անդ ոչ սակաւ հեղմունս արեանց արարեալ փոխանակ զօրաց քոց ի զօրացն Յունաց. – 304. Եւ յարձակեալ քաջութեամբ և արիական ձայնարկութեամբ՝ դիմէր ի վերայ Եւ յարձակեալ քաջութեամբ և արիական ձայնարկութեամբ՝ դիմէր ի վերայ թշնամեացն. – 178. Եւ նոյնժամայն սուսերամերկք խուռն նիզակօքն ի վերայ յարձակեալ իբրև զգազանս արիւնարբուս մարդախանձս՝ սրախողխող արարեալ սպանին զնա – 352. Զի թէպէտ և Գուրգէն մեծաւ զօրութեամբ ունէր զդէմ յարձակելոցն ի վերայ, որոց զիշխանականն ճեպէին հասանել գահ, կամ որ արտաքին տաճկական պատերազմունքն բռնաբար ի ներքս դիմէին՝ սակայն ոչ յապահովանայր դեռ երկիրն: - 316. Յայնժամ բարկացեալ բռնաւորն իբրև գազան մի կատաղեալ, յարձակեալ ի վերայ գառանց գէշ արկանել զնոսա՝ հրամայեաց պնդել զնոսա ի ցիցս կապեալ ոտիւք և ձեռօք. – 292.

ՅԱՐՁԱԿԵԼ - և ահեղ որոտումն և ահեղ թնդիւնք և բախմունք խուռն յարձակելոյ իբրև յամպոյ ճայթիւնք կարկտաբերք հրձգութեանց կերպաձգէին: - 328. Եւ առ յոյժ յիմարութեանն հարեալ ցանկութեամբ, խլրդենի դիմօք, իբրև զգազան մի կատաղեալ՝ սկսաւ յարձակել ի վերայ աշխարհիս Հայոց. – 170.

ՅԱՐՁԱԿԻԼ - գոչեաց առիւծաբար, յարձակեցաւ ի վերայ ընտիր այրուձիոյն, և զաջ թևն բեկեալ՝ զձախոյ կողմամբն արկանէր -174. Եւ առ չժուժեալ այնպիսի վտանգաւոր նեղութեանն, արիաբար հասեալ ի կիրճս ձորոյն և մերկացեալ զսուսերն՝ յարձակեցան ի վերայ երիվարացն – 220. և գունդ անհաւատից դառնացեալ ոգւով ի վերայ կանանց և որդւոց իւրեանց ազգականաց՝ յարձակեցան ի վերայ նոցա ուժգին սաստկութեամբ և սուր ի գործ արարեալ յանխնայ կոտորեցին. – 402. մինչ նոքա գունդ առ գունդ ընդդէմ միմեանց ճակատեալ կազմէին զռազմն, և փողքն գոչէին և դրօշքն տարածանէին և նշանքն փողփողէին, վահանաւորքն և նիզակաւորքն գոչէին, այրուձին այսր անդր վազս առնէին և ախոյեանքն յարձակէին, կապարճակիրքն աղեղանցն յուրային: - 174. յայնժամ ահագինս որոտալով ճայթիցէ ի վերայ քո երկինք, և լսիցէ հնչիւն և բոմբիւն և դղրդիւն յանդնդոց, ձայն որոտալոյ սմբակաց բազում ամբոխից երիվարաց և աղաղակ բազում սպառազինաց յարձակեսցին ի վերայ քո. - 148.

ՅԱՐՁԱԿՈՒՄՆ - Այլ հինիցն ասպատակքն, սովոյն բռնութիւն, գերիվարացն տառապանք, գազանաց յարձակմունքն, ներքին և արտաքին վրդովմունքն հոլանի առնէին զաշխարհս: - 316. Այլ ներքին և արտաքին յարձակմունքն ոչ կարէին ի ներքս դիմել մարտնչել ընդ անյաղթ զօրութեան զօրացելոյն ի Քրիստոսէ: - 308. Այս լուր քաջութեան և քաջախորհուրդ զպատերազմացն մղելոյ զյարձակմունս եհաս առ զօրագլուխն Բուխայ. – 308. և բազում և ազգի ազգի հոգաբարձութեամբ տուեալ օգնականութիւնս Հայոց աշխարհիս, շինելով քաղաք Թէոդուպօլիս ի Կարին գաւառի, և զօրս կողմնակալս ի պահեստ՝ ընդդէմ կալ պարսկական յարձակմանցն: - 114. Եւ դիմեցին խուռն յանդուգն յարձակմամբ և բախեցին զգունդն և պատառեցին զռազմն և դարձուցին զայլազգիսն. - 232. Եւ խուռն յարձակմամբ դիմեցին ի վերայ իւրեանց. – 282. և միախուռն յանդուգն յարձակմամբ դիմեցին ի վերայ այլազգեացն, և ի դիմի հարեալ միմեանց՝ այր զախոյեան իւր յերկիր կործանէր: - 174. և վառեալ ի զէն և յասպազէն՝ արձանացան իբրև զմի այր՝ և

յանդուգն դիմացուածով խուռն յարձակմամբ հարեալ ի դիմի, ուր քաջքն այլազգեացն ճակատէին ընդ աջաթև /380/ կողմն. և պատառեցին զգունդն, և պարտեցին զախոյեանսն. – 382. Նոքա վազս առեալ ճեպով խուռն յարձակմամբ սպառազինեալ այրուձիոց. – 352. Եւ առ յոյժ յանդուգն յարձակմանն բազում այն լինէր, զոր ձիովքն ընթադրեալ դիաթաւալ կացուցանէին, քան զոր սրովն սատակէին: - 174.

ՅԱՐՄԱՐԱԲԱՐ - մերժել հեռանալ … և որ այլ քաղցրագոյն վայելք ընդ երկնաւս ի վերայ երկրի, պայծառ գեղ արեգական և լուսնի, հանդերձ աստեղացն ճոխագործութեամբքն ընդ տարերբ երկնի յեղյեղլով, ծովու և այլոց ցամաքայնոց, և ջրայնոցն բարեփառ հոլովմանցն հրճուանաց, և որ ինչ ընդ այլք ընդ դոքօք պատկանին յարմաբաբար տնտեսութիւնք առ սկզբնատիպն պատկերակերպութիւն: - 386.

ՅԱՐՄԱՐԱԿԱՆ - և ետ բերել նմա ըստ օրինի գլխապետութեան սուսեր իշխանական ընդ մէջ արկեալ և գօտի արիական շրջապատեալ զմիջաւ, քուքք խիզախողք և երիվար բարձրավիզ, ոտնատորոփ, խրոխտալիր, յարմարական առ ընթացս պատերազմականս: - 308. Քանզի ոչ յարմարական՝ բարւոյն և չարին ի միասին առկայանալ, և ոչ լուսոյն ընդ խաւարի, և կամ զի առողջութեանն ընդ հիւանդութեան. – 258.

ՅԱՐՄԱՐԵԼ/ԻԼ/ - որք ոչ ըստ օրինի եկեղեցականաց կրօնից զվարսն յարմարէին, այլ ընդ մարզպանին Մշկանայ լծակցեալ հոգալ զաշխարհիս: - 118. զի մի /68/ վատութիւն քան զքաջութիւն ճոխասցի, որ կանանցաբարոյիցն քաջ յարմարի, թէպէտ և յարիւն և յապաժոյժ զզօրսն կենացն առնուցուն,,: - 70.

ՅԱՐՈՒԹԻՒՆ - Իսկ ի յահեակ կոյս սեղանոյն շինեաց եկեղեցի ի յիշատակ յարութեանն Քրիստոսի յեռօրեայ թաղմանէն վերելեկեալ աւարառութեամբ դժոխոցն – 390.

ՅԱՐՈՒՑԱՆԵԼ - Այլ ճշմարտագոյնք են Սողոմօնեանքն, զի ասէ, ,,վա՛յ միումն. յորժամ գլորիցէ, ո՞ յարուցանիցէ զնա,,. և եթէ ,,լաւ են երկուք քան զմի, զի եթէ միովն գլորիցի ոք՝ կանգնեսցի,,: - 354. Եւ դարձեալ՝ եթէ յարոյց ինձ Աստուած զաւակ այլ՝ փոխանակ Հաբէլի զոր սպան Կայէն: - 24. և Դաւիթ ասէ, ,,յոր հաւատացի զնոյն և խօսեցայ,,. և Պօղոս՝ ,,մեք հաւատամք զոր խօսիմքն,,. և դարձեալ Պօղոս՝ ,,եթէ խոստովանեսցիս բերանով քով զտէր Յիսուս, և հաւատասցես ի սրտի քում թէ Աստուած յարոյց … - 258.

ՅԱՐՈՒՑԵԱԼ - ,,յարուցեալ երթիցես դու ինքնին և քեզէն լուիցես ի նմանէ զոր ինչ ախորժիցէ, և բարձցի ի քէն ապստամբութիւնն, զորմէ կարծեն ապստամբ լինել ի թագաւորէն,,: - 214. արդ դու յարուցեալ գնասցես ի մի քաղաքացդ Հայոց, որպէս օրէն է աշխարհակալաց. – 178. Իսկ աբեղայն արիոսեան, զոր յառաջագոյն ասացաք վարդապետ Մահմէտի, տեսեալ զյաջողութիւն իրացն՝ յարուցեալ եկն առ Մահմէտ, ցուցանել նմա զգութ երախտեաց, իբրև յիւրմէ վարդապետէ ուսեալ եհաս այնպիսի իրաց. – 162. ճաշակեալ սակաւ ինչ հաց և գինի գոհացաւ, և առ ընտանիս իւր դարձեալ թախանձագին՝ յարուցեալ էջ ի յամրոցացն – 216.

ՅԱՐՏԱՍՈՒՍ ԵՂԵԱԼ - և ամենեքեան միաբան յարտասուս եղեալ լային. – 228.

ՅԱՐՔՈՒՆՈՒՍՏ - ,,Ելեր դու յաշխարհս Հայոց հրամանաւ արքունի՝ առնուլ զհարկս արքունի. մի՞թէ /176/ և հրաման ունիս յարքունուստ, գերել գերփել յաւեր դարձուցանել զաշխարհս մեր: - 178. ,,ես եկի խաղաղութեամբ յարքունուստ հրամանէ, և ոչ նման քեզ զապստամբութիւն ի գործ արկեալ. – 330. ,,Ի յարքունուստ ընկալեալ քո զվերակացութիւն աշխարհիս Հայոց – 212. ,,իսկ եթէ եկեսցէ առ իս գիր յարքունուստ, կնքեալ մատանեաւ արքայի. և իցէ գրեալ ի նմա հրաման՝ գալ ինձ առ քեզ կամ երթալ յարքունիսն՝ ոչ ելից արտաքոյ հրամանաց նորա: - 286. և առաքեցին դեսպանս առ արքայ և ինքեանք նստան շուրջ զլերամբն, մինչև փութով եկեսցէ նոցա հրաման ինչ յարքունուստ: - 280. և դու թէ ոստիկան խաղաղութեան էիր եկեալ յարքունուստ՝ զշինութիւն պարգևաբաշխէիր սոցա, և ոչ զաւերս և զխռովութիւն: - 278. Եւ եղև զկնի երից աւուրց անցանելոյ ետուն թուղթ մի տանել առ Գուրգէն, գրեալ Բուխայի լի դառնութեամբ, կնքեալ մատանեաւ արքայի, իբրև այն թէ ի դիմաց արքային և յարքունուստ եկեալ. – 236. Եւ եղև մինչ կային իշխանքն ի միաբանութեան առանց

կարծեաց կասկածանաց ի հպատակութեան ելեալ յարքունուստ հազարապետին / 340 / որդւոյն Հալթի, և զմիաբանական սիրոյն շաղկապ ի միասին յօդեալ պնդեալ անքակ պահէին – 342. և խոստանայր նմա զհազարապետութիւնն Հայոց յարքունուստ հրամանէ հնազանդութեամբ Հայոց: - 366. Եւ մինչ նոքա կային մնային հրաման ինչ ընդունել յարքունուստ՝ /286/ դարձան հրեշտակքն և եկին փութանակի, և բերին թուղթ յարքայէ առ Ապումուսէ՝ գալ ի հնազանդութիւն նոցա և երթալ առ Բուխայ. – 288. Եւ նոյնժամայն եհաս հրաման յարքունուստ՝ մի տաղտկալ և վհատել և մի ի բաց կալ պատերազմել ընդ նմա. մինչև եկեսցէ ակամայ կամօք ի հնազանդութիւն արքայի: - 284. Եւ վասն մնացելոցն որք ի քաղաքին և ի սահմանս նորա՝ էլ հրաման յարքունուստ առնել ի վերայ նոցա ողորմութիւն, շինել զքաղաքն և հաստատել զամենեսին յիւրաքանչիւր կարգ: - 142. Ի դառնալն Ապուսէթի յԱսորիս և Մուսէի հաւատալ զվերակացութիւն հարկաց արքունի, և ընդդէմ եկեալ յարքունուստ հազարապետ ոմն հարկաց, Ծովափի կոչեցեալ ամիրայ Ալայ անուն: - 176. Նոյն ժամայն էլ հրաման յարքունուստ, զի զսուրբն Սողոմոն ի նմին փայտի սպանցեն, նետաձիգ լինել ի նա: - 292.

ՅԱԻԱԿՆԱՅԵՂՅ - պատահեն միմեանց և մեռանի անդ անզգուշաբար ի յաւակնայեղց դիմացուածոյն: - 90.

ՅԱԻԱԿՆԵԱԼ - այլ և առ Աստուած ևս և առ սուրբս նորա յաւակնեալ՝ յերկինս բացեալ զգայռալիր բերանն և որպէս շուն լիրբ պատուհաթափ եղեալ ածէր զլեզուն զերկրաւ: - 100. զի այնու փքացեալ առ հուրն յաւակնեալ զինքն տացէ. – 114.

ՅԱԻԱԿՆՈՒԹԻՒՆ - ,,քաջք քաջաց պատահեալ՝ անմեղադրելիք կան մնան զյաւակնութեամբքն – 68.

ՅԱԻԱՆԱԿ - - Եւ արտաքոյ յետ ճանապարհին իմացաք էշ մատակ, որ ունի յաւանակ – 50. զորոյ կապեցաք անդէն զյաւանակն ի բանակին. – 50.

ՅԱԻԱՐ - զի և զմեծութիւն ընչից, որ ի գանձս իմ՝ ամի ամի յաւար տալով՝ զուարթամիտ սրտիւ ինձ համարէի զյափշտակութիւն տան իմոյ որ ի ձէնջ և առ ձեզ - 216.

ՅԱԻԱՐԻ ԱՌԵԱԼ - պատշաճագոյն զպատերազմին խրոխտական բարձրավզութեամբ վանել զախոյեանսն, և առեալ զբանակն յաւարի, և ընդ սուր հանեալ յոլովս քան թէ սակաւս, հասին ի գոգ տեղի մի ի Մղունիս գեօղ: - 402.

ՅԱԻԱՐԻ ԱՌՆՈՒԼ - գնացին մտին ի գաւառն Ռշտունեաց, և առին յաւարի զտունն Գարեգնի Ռշտունեաց տեառն. – 102. Եւ ասպատակեալ ի Ճուաշ և ի Թոռնաւան գաւառ՝ յաւարի առնուն. – 304. և ընդ այգն ընդ առաւօտն առին յաւարի զբանակն հանդերձ ախիւն և զտունս գանձուցն զորս առ ինքեանց: - 332. և յաւարի առնուին զբանակետղն, դիակապուտ առնէին, ժողովէին աւար բազում, և կուտէին արծաթ և ոսկի յոյժ և զզէնս պատենազարդս, զզարդս և զզէնս արի արանց և զընտիրս երիվարաց և զզարդս նոցա. – 176.

ՅԱԻԵԼԱԴՐԵԼ - առ հօրն յաւելադրելով շինուածս իւր: - 392.

ՅԱԻԵԼԵԱԼ - Բայց յաւելեալ լինի պատճառ ունելոյն զնա զայս օրինակ, եթէ էր փեսայացուցեալ զԴաւիթ զեղբայր կորապաղատին ի քոյր իւր Մարիամ. – 342.

ՅԱԻԵԼՈՒԱԾ - Եւ զի զթիւ եօթներորդիս յաւելուածով ասաց ութս լինել - 26. եօ՞թն արդեօք իցեն մեղանացն պարտիք, եթէ ըստ յաւելուածոյ սաստից իմասցին ասացեալքն Աստուծոյ – 24. Իսկ Մանիթոպ արքայ Խեփտաղաց ևս յաւելուածով զայսոսիկ հաստատէ. – 48.

ՅԱԻԵԼՈՒԻ - զոր մեք ոչ յաւելցուք այժմ յառասպելս նոցա յամել – 32. Ասէ, ,,զի՞նչ է նոր հաւատդ, որ այժմ ի քէն երևի. եթէ այլ ևս յաւելցիս ասել՝ անձին քում դու եղիջիր պարտական,,. – 160. արդ թողոցո զերկրորդ մասն Անձաւացեաց որդւոյ իմոյ Դերանկիդ, և այլ մի յաւելուր ընդ հակառակս ինչ ձեռն ի գործ արկանել - 330. Բայց սպարապետն Սմբատ և տիկինն Վասպուրական Հռիփսիմէ անդէն մնաց, և յաւելան ի մարտիրոսական հոլովսն: - 324. Բայց տիկինն Սոփի կեցեալ յետ մահու Դերանկին զտարի մի և զամիս Ը՝ յաւելաւ առ հարս իւր. – 356. այլ ոչ ևս յաւելին ելանել ի վերայ աշխարհիս ասպատակաւորք հինիցն պարսկայնոցն: - 400. Եւ եղև իբրև արար և կատարեաց

Բուխայ զոր ինչ խորհեալն էր ի վերայ աշխարհիս Հայոց, բարձումն յաշխարհէս մեծամեծացն Հայոց՝ յաւել և զայս ևս – 296. և մի ի վերայ մեծ յանցանացն զոր յանցեար, որպէս լսեմդ զոր ինչ ամբաստանեն զքէն՝ յայդ ևս յաւելուր - 290. և յաւել ծնանել զեղբայրն նորա զՀաբէլ. - 22. և պարզապէս յայտնի առանց կասկածանաց ասի աստուած՝ եկեղեցին և մարմին բանին և ևս յաւելցի /394/ ծիծաղելն. – 396. Եւ սկսան յաւելուլ ի վերայ չարեացն այլ չարիս, զի ընդ միմեանս մարտ և կռիւս դնէին յաղագս իշխանութեանն ցանկութեան, և ճեղքեցան ի միմեանց և զօրս գումարեցին ի զերծելոցն ի սրոյն և ի գերութենէն Բուխայի. – 298. զի սմա և եթ յաւելու ասել, եթէ ծնաւ ըստ կերպարանաց իւրոց, և ըստ պատկերի իւրոյ: - 24. զի ի գնալ Արտաշէսի յայսմ տեղւոջէ՝ ոչ ևս յաւել ձեռն Երուանդայ տագնապել զնա – 88. Իսկ Աւշին դատարկացեալ ի խորհրդոցն զոր խորհեցաւն՝ յաւել զայս օրինակ կատարել զկամս չարագոյնս: - 372. Իսկ Մեհուժան ծանեաւ զինչ պատահելոց էր նմա ի կայսերէ և ի նախարարացն Հայոց, ոչ յաւել դառնալ ի Հայս. – 110. Յաւել և զինչ գրեալն է զվավաշոտ ցանկասիրութեամբ թեւակոխել: -16. Յաւելում պատկանաբար գրել քեզ զարիական նահատակութենէն հանդիսական ժուժկալութեամբ ողջախոհաբար կրթութեամբ զզինուորական երկասիրութեամբն յօժարաբար դեգերել զմարզպանութեանն արդիւնաւորել անուանակոչութիւն: - 398. Եւ յաւել գրգռել ի սիրտս իւր արքայ Խոսրով. զի Տէր խստացուցանէր զսիրտ նորա, զի կործանելոց էր զթագաւորութիւն նորա. – 146. Շինեաց և ի վերայ Ամրական քարանձաւին յելս և ի մուտս կոյս տունս խրախիցս ոսկեզօծս պատեշգամեալ, յաւելով ի յառաջագոյն ի հօրէ նորա Դերանկէն շինեալ: - 390. ՈՐ Ի ՎԵՐԱՅ ՈՒՐԱՑՈՒԹԵԱՆՆ ՋՔՐԻՍՏՈՍ ՅԱՒԵԼ ԵՒ ԶԱՅՍ Ի ԿՈՐՃԱՆՈՒՄՆ ԲԱԶՄԱՑ: ԸՆԴՒՄԱԴՐՈՒԹԻՒՆ ՍԱԿԱՒՈՒՔ: - 254. որ կացեալ իշխան ի վերայ Տարունոյ ամս Է՝ յաւելաւ առ հարս իւր, թողեալ զաւակ իւ.ր Աշոտ անուն: - 342. որ ձգեցաւ մինչև յամս ՄՃԹ և ըստ ոմանց այլ նախկին թագաւորս ասելով՝ յաւելուն ժամանակս ամաց ՄՂԸ ասել: - 60.

ՅԱՒԵՐ ԴԱՐՁՈՒՑԱՆԵԼ - ,,Ելեր դու յաշխարհս Հայոց հրամանաւ արքունի՝ առնուլ զհարկս արքունի. մի՞թէ /176/ և հրաման ունիս յարքունուստ, գերել գերփել յաւեր դարձուցանել զաշխարհս մեր: - 178. եթէ ,,Օրէն է աշխարհակալաց արքունի խնամակալութեամբ գնալ ընդ աշխարհ իբրև առ հնազանդս, և զնեղութիւնս տառապելոց բառնալ և ի դիւր հանել իբրև զխնամարկուս, և ոչ աւազակաբար աւարել, և սրով և գերութեամբ յաւեր դարձուցանել. – 278. և մի յանխնայ ասպատակելով յաւեր դարձուցանես զերկիր իմ,,: - 178. և զերծեալքն փախստեայ անկանէին ի կողմանս կողմանս աշխարհաց, յաւեր դարձուցեալ զբնաւ աշխարհն, բայց ի լեռնայնոցն՝ որ յամուրս իւրեանց մնային ի լերինն Խոյթ անուանեալ: - 188. և վարեալ ի գերութիւն զՀրէայսն Ն բիւր, յաւեր դարձուցեալ զՀրէաստան և զսուրբ քաղաքն Երուսաղէմ. – 104.

ՅԱՒԷՏ - և իբրև զմի անձն, վառեալ ի զէն և ի սուր և ի ճակատամարտ՝ հասեալ յամուրս՝ տապալէր զզօրութիւն նոցա սրով և աղեղամբ, ի փայլիւն սուսերի և նիզակի և ի գիշերամարտ նահատակութեանց, ըստ նմանութեանն քաջ զօրավարին Իսրայէլի Յեսուայ կամ Գէդէովնի կամ թէ նոյն ինքն նահապետին Աբրահամու, ի վերայ հասեալ Քանանացւոց, զյաւէտ յաղթութեան նահատակութիւն նահատակեալ՝ և դառնայ մեծաւ յաղթութեամբ: - 312. Եւ յաւէտ հրաշիւք յօրինէր զկարգս սրբոյ եկեղեցւոյ ուղղափառ առաքելական հաւատոց ի տէր Յիսուս Քրիստոս. – 180. առաւել քան զանդնդականն յուզմանցն բռնալիր հողմոցն զծիրանեգոյն ալիսն, զլեռնաձև կուտակսն և զվիշապաձայն գոչմունսն՝ ևս յաւէտ ահագնակի վրդովմամբ զմրրիկ անձանց ի մէջ եռաշարժ ընթացմանցն, ի հոլովմանց խոհարանի իշխանական սրտին ի ներքս հարկաւորաբար բռնազբօսեալ /350/ ձգեն: - 352. Յաւէտ խրախճանութեամբ բուռն հարկանել ախորժելի է ինձ զպատմութենէ քաջատոհմիկ և բարեփառ բարեյաղթ նահատակէն , զԳուրգինայ ասեմ – 300.

ՅԱՒԻՏԵԱՆ - Եւ առհասարակ ամենայն տիեզերք ծխեալ տեսանիցեն, և ի քէն ամենևին հուրն ոչ պակասեսցէ յաւիտեան, իբրև զինոց խեցագործաց այրեսցիս, և քեզ ոչ եղիցի հանգիստ: - 164. և յիշատակարան նորա մոլորութեանն որով վրիպեացն և վրիպեալ կործանեաց զազգս բազումս՝ կայ և մնայ ազգաց յազգս մինչև յաւիտեան: - 248. Եւ որք ոչ այսոցիկ նման՝ լուան ի Տեառնէ՝ մի մնասցէ ոգի իմ ի մարդկանդ յայդմիկ յաւիտեան, վասն լինելոյ դոցա մարմին. այսինքն մարմնասէրք և ոչ հոգիասէրք: - 30.

ՅԱՒԻՏԵԱՆՍ - Եւ այսպէս կատարեցաւ սուրբն ամենայաղթ նահատակն Քրիստոսի Մուկաթլ փառաւորապէս ի Հայր և յՈրդի և ի Հոգին սուրբ, որում փառք յաւիտեանս ամէն: - 290. և աւանդեաց զոգին երանելին Յովնան ճշմարիտ խոստովանութեամբ ի Հայր և յՈրդի և սուրբ Հոգին, որում փառք յաւիտեանս: - 296. նոյնպէս և տանջանքն նմին նման յաւիտենականք և մշտնջենաւորք յանսպառ յաւիտեանս և յանմահ խոշտանգանս՝ պղծոցն և ուրացողացն ի սուրբ և յանբիծ հաւատոց քրիստոնէութեանն. – 264. որում փառք յաւիտեանս. ամէն: - 254. որում փառք յաւիտեանս. ամէն: - 254.

ՅԱՒԻՏԵԱՆՍ ՅԱՒԻՏԵՆԻՑ - Այսպէս վկայեցին երանելիքն ի փառս սուրբ Երրորդութեանն յաւիտեանս յաւիտենից: - 294.

ՅԱՒԻՏԵՆԱԿԱՆ - և յերկրորդումն հանդերձեալ են վերստին մտանել ի տանջանս յաւիտենականս, ուր որդն ոչ վախճանի և հուրն ոչ շիջանի: - 336. և զբնակիչս արքայութեան արար բնակիչս յաւիտենական հրոյն - 264. և խոստացեալ պատարագընկալին՝ ոչ ևս զնոյն հատուցանել երկրի ուխտ յաւիտենական հաստատեալ՝ զաղեղն իմ եդից յամպս, որ է ծիածանդ – 32. և յաւիտենական և անսպառ և անվախճան են կեանքն և պարգևքն, զոր պատրաստեաց Աստուած սիրելեաց իւրոց և որք կան համբերութեամբ ի հաւատս ճշմարտութեանն. – 264. իսկ որք արուք ընդ արուս զխայտառակութիւն գործէին՝ ծծմբախառն հրով բորբոքեցան, զյաւիտենական հրոյն զառհաւատչեայս յինքեանս կրելով – 336. մեք ոչ ի բաց կամք ի սիրոյն Քրիստոսի և ոչ մեկնիմք ի կենացն յաւիտենից և ոչ լինիմք ժառանգորդ յաւիտենական տանջանացն,,: - 292. նա է տէր տերանց և թագաւոր թագաւորաց և իշխան կենաց և մահու, Աստուած յաւիտենական Յիսուս Քրիստոս: - 290. նոյնպէս և տանջանքն նմին նման յաւիտենականք և մշտնջենաւորք յանսպառ յաւիտեանս և յանմահ խոշտանգանս՝ պղծոցն և ուրացողացն ի սուրբ և յանբիծ հաւատոց քրիստոնէութեանն. – 264. Վասն մարմնաւորացն այնչափ նահատակեցայ, որպէս գիտացերն և որպէս այժմ լսես յինէն, վասն Քրիստոսի և վասն յաւիտենական կենացն ո՞չ մեռանիցիմ, կամ արդեօք ի քէ՞ն երկնչիցիմ. քա՛ւ լիցի. – 296. Քանզի թէպէտ և տարաժամ լրմամբ ժամանակի չափաբերեալ կենացն Աշոտի՝ հաստատնագոյն և անվրէպ լուծման կենացս առ հոգևորսն և յաւիտենականսն և անվախճան կենացն առաւելութիւնն անցեալ գնացեալ ժամանեաց – 386.

ՅԱՒԻՏԵՆԻՑ - Այսպէս վկայեցին երանելիքն ի փառս սուրբ Երրորդութեանն յաւիտեանս յաւիտենից: - 294. և ես տամ նոցա զկեանսն յաւիտենից,,: - 224. զի ասէ, ,,որ աներկիւղն է՝ անկանի յորոգայթս և ի վիհս, և ի տեղիս Ջուր ոչ եղիցի այցելութիւն յաւիտենից,,: - 354. մեք ոչ ի բաց կամք ի սիրոյն Քրիստոսի և ոչ մեկնիմք ի կենացն յաւիտենից և ոչ լինիմք ժառանգորդ յաւիտենական տանջանացն,,: - 292. յիշեաց յաւիտենից զուխտ իւր և զբանն զոր պատուիրեաց՝ մինչև ի հազար ամ: - 34. ուրացան զանձինս և առին զխաչն Քրիստոսի և գնացին զհետ կոչողին, կորուսին զանձինս, այսինքն զկեանս աշխարհիս, զի զյաւիտենից գտցեն զկեանս. – 292.

ՅԱՓՇՏԱԿԵԱԼ - զոր յափշտակեալ ի Սէմայ որդւոցն Քամայ՝ շինեցաւ քաղաք նովիմբ անուամբ. – 34. ՎԱՍՆ ՄԱՔԱՌՄԱՆ ԱՇՈՏ ԻՇԽԱՆԻ ԸՆԴ ՈՒԹՄԱՆԻԿՍՆ ԵՒ ՏԵՂԱԹԱՓՍ ԱՌՆԵԼՈՅ ՋՅԱՓՇՏԱԿԵԱԼՍՆ Ի ՆՈՑԱՆԷ: - 332.

ՅԱՓՇՏԱԿԵԼ - Եկն եմուտ ի գաւառն Աղբագ, և ասպատակ սփռէր ընդ կողմանս կողմանս յերկիրն Վասպուրական, գերփէր, աւերէր, յափշտակէր, կապուտ կողոպուտ գործէր ընչից և ստացուածոց. – 176. և քանդեալ աւերեաց զամենայն ապարանս թագաւորին և

այրեաց զնոսա հրով, և բազում գանձս մթերեալս յափշտակեաց անչափ աւարաւ գանձս ոսկոյ և արծաթոյ և հանդերձից, և անասուն բազում յոյժ, և բազմութիւն գերեաց իբրև զաւազ ծովու անթիւ: - 150. յափշտակեցին զՇաւասպ որդի Վաչէի Արծրունւոյ, և զՄեհէդակ Ռշտունի – 98. յափշտակէին զայր և զկին և զժառանգութիւն նոցա: - 176.

ՅԱՓՇՏԱԿՈՒԹԻՒՆ - Բայց յո՛վ ոք կամ ո՞ր աշխարհ, զոր ոչ կործանեաց Աւշին պէսպէս լկանօք հինի ասպատակաւ, աւարառու յափշտակութեամբ, սպանմամբ սրոյ և սովոյ: - 374. Եւ բազում այն էր որ մարտիրոսական ճգնութեամբ վկայեցին, քան որք դրդուեցան, առ ոչինչ համարելով զյափշտակութիւն ընչից և ստացուածոց և զմահս դառնագոյնս: - 124. և շփոթեալ լի աղաղակաւ երկիրս, և ուր հասանէին՝ աւերէին ասպատակաւ և աւարաւ և յափշտակութեամբ. – 298. զի և զմեծութիւն ընչից, որ ի գանձս իմ՝ ամի ամի յաւար տալով՝ զուարթամիտ սրտիւ ինձ համարէի զյափշտակութիւն տան իմոյ որ ի ձէնջ և առ ձեզ - 216. քանզի նուազագոյնքն և տկարք՝ թափառեալք աղքատութեամբ վտանգէին, իսկ կարողագոյնքն և բռնաւորք ըստ բնութեան գազանաց վայրենամիտք լեալ, անամօթ և անարգել յափշտակութեամբ վրդովէին զբոլոր երկիրս: - 300.

ՅԱՓՐԱՑԵԱԼ - յորում շահաստանն Դուին, մարդախիտ պարսպաւոր պատնիշօք պատուարեալ և տուրևառիկ վաճառականութեամբ և ազգի ազգի պղծութեամբ յափրացեալ յոփացեալ: - 358.

ՅԲ - Եւ կատարեցան սուրբ վկայքն ՅԲ թուականին: - 268.

ՅԵԶԻՏ - /թագաւորեաց/ Յեզիտ ամս Զ … Վլիթ ամս Բ. - 168. /թագաւորեաց/ Յեզիտ որդի Մաւեայ ամս Գ և ամիսս Գ … Աբդլմէլք որդի Մրուանայ ամս ԻԱ: - 166.

ՅԵԼՈՒԶԱԿ - և յելուզակք ոմանք ի կողմանց Հաշտենից ամրանային ի լերինն. – 90.

ՅԵՂԱԿԱՐԾ - և յանկարծօրէն յեղակարծ երագութեամբ հասին ի վերայ Շաւասպայ և մարզպանին Վնդոյի: - 126.

ՅԵՂԱԿԱՐԾՈՒՄ - Ելեալ խրոխտ և դառնաշունչ փռնկալով մռմռեալ յանձնիւր գազանեղեն զայրացմամբ յարձակեալ յեղակարծում եկն եմուտ ի քաղաքն Շամիրամայ ի Վանտոսպ: - 372. Եւ այն ինչ ընդ առաւօտն յեղակարծում հասին ի վերայ զօրք Տաճկաց – 306. և խորհէր յեղակարծում ի գիշերամարտս հասանել ի վերայ Աշոտի: - 322. Ընդ ժամանակս ընդ այնոսիկ մինչ ճոխացեալ մեծամեծս փքայր Ջափրմոթոքլ ի վերայ քրիստոնէից, որպէս Սենեքէրիմ նախնին մեր ի վերայ Երուսաղէմի և ժողովրդեանն Իսրայէլի՝ յեղակարծում հասեալ ի վերայ նորա որդին իւր Մոթէին սպան զնա – 318. յեղակարծում ժամանակի հասանէ համբաւ մահուն Արտաւանայ, և տիրել Պարսից Ստահրացւոյն Արտաշրի Սասանականի. – 92. յեղակարծում հանգստեամբ դիմեալ ի վերայ նոցա, քանզի նոքա կային յանհոգս – 402. սագունակ հասեալ ի վերայ Վասպուրական աշխարհիս պարսկական խուժանն ըստ ազգս ազգս և ըստ քաղաքս քաղաքս ի Մարաց և ի Պարսից, յԵլամացւոց և ի Խուժաստանէ, ի Կրմանայ և ի Մուկանաց, ի Թուրքաստանէ և ի Խորասանայ, և յեղակարծում հասին ի Ճուաշն գաւառ – 398.

ՅԵՂԱՆԱԿ - Առ որս ասեմք՝ եթէ ըստ ամենայն յեղանակի անբոյժն ի բարւոյ, ո՞չ մի ինչ ո՞չ ունի մասն ազնիւ՝ թէ ասիցէ ոք անիծիւք ի բաց բառնալ. – 22. Բայց ես յանհունս ձգեմ զզարմացմանն յեղանակս, թէ զիա՞րդ բաւել տոկայր, անձանձրանալի բերելով զաշխատութեանն աճմունսն. – 308. Եւ ածեալ զտիկինն Սաթինիկ զբօսնուլ յաշնանային յեղանակս յամարաստուն գեղեցկաշէն յապարանս զարդարեալ բերդին: - 88. Եւ արդ ըստ Եւսեբեա բազմայեղ յեղանակաց խուզմանցն և ըստ Ափրիկանոսի հաւատարմաբանութեանն և ըստ Մովսէսի Քերթողի՝ նախ ի մէջ առից զորպիսութիւն ազգացն բաժանմանցն գրել: - 12. Նոյնպէս և զպայման ժամանակացն յանբաւ բիւրս ամաց ձգեն որ ոչ և ըստ միոյ յեղանակի հաւաստանայ առ ի ցուցումն, ոչ արեգական բերմամբ ի նոյն կէտ ամսոց և աւուրց և ոչ ըստ չորից փոխմանց առ ի յեղումն ժամանակի տարւոյն, այլ և ոչ ըստ լուսնական լրութեանն և սուզականութեան: - 18.

ՅԵՂԱՓՈԽՈՒՄՆ - Բայց Գուրգէն կասկած ունելով յԱշոտէ, թէ գուցէ իբրև զապստամբէ ումեմնէ զեկուցանիցէ զնմանէ առաջնորդին Տաճկաց՝ եւ գնաց կեալ շրջաբերական յեղափոխմամբ, արիական քաջասրտութեամբ, սիրեցեալ ընդ բնաւ աշխարհաց: - 322. որով զաստուածերանն լքեալ զերկիր՝ զախտականս զայս և տաժանելիս փոխանորդեաց վիճակ, անբժշկական և ողորմելի յեղափոխմամբ. – 22.

ՅԵՂՅԵՂԵԼ - մերժել հեռանալ … և որ այլ քաղցրագոյն վայելք ընդ երկնաւս ի վերայ երկրի, պայծառ գեղ արեգական և լուսնի, հանդերձ աստեղացն ճոխագործութեամբքն ընդ տարերբ երկնի յեղյեղլով, ծովու և այլոց ցամաքայնոց, և ջրայնոցն բարեփառ հոլովմանցն հրճուանաց, և որ ինչ ընդ այլք ընդ դոքօք պատկանին յարմարաբար տնտեսութիւնք առ սկզբնատիպն պատկերակերպութիւն: - 386.

ՅԵՂՈՒԼ - թէ և Յոյնք համարին Պտղոմէիւ պարծիլ՝ երբեմն ի հաւաքումն միահամուռն ազգաց ազգաց, և յեղուլ ի լեզու յոյն. – 18.

ՅԵՂՈՒՄՆ - Նոյնպէս և զպայման ժամանակացն յանբաւ բիւրս ամաց ձգեն որ ոչ և ըստ միոյ յեղանակի հաւաստանայ առ ի ցուցումն, ոչ արեգական բերմամբ ի նոյն կէտ ամսոց և աւուրց և ոչ ըստ չորից փոխմանց առ ի յեղումն ժամանակի տարւոյն, այլ և ոչ ըստ լուսնական լրութեանն և սուզականութեան: - 18.

ՅԵՆՈՎՔ - Յարէդ լեալ ամաց ՃԿԲ ծնանի զՅենովք – 26.

ՅԵՌԱՆՂ - խորհուրդ չար ի մէջ առեալ և զբարեկամութիւն կեղծաւորեալ, որպէս յերէկն և յեռանդն՝ և յանձն առնուն երթալ առ զօրավարն, խնդրել խաղաղութիւն. – 210.

ՅԵՍՈՒ - և իբրև զմի անձն, վառեալ ի զէն և ի սուր և ի ճակատամարտ՝ հասեալ յամուրս՝ տապալէր զզօրութիւն նոցա սրով և աղեղամբ, ի փայլիւն սուսերի և նիզակի և ի գիշերամարտ նահատակութեանց, ըստ նմանութեանն քաջ զօրավարին Իսրայէլի Յեսուայ կամ Գէդէովնի կամ թէ նոյն ինքն նահապետին Աբրահամու, ի վերայ հասեալ Քանանացւոց, զյաւէտ յաղթութեան նահատակութիւն նահատակեալ՝ և դառնայ մեծաւ յաղթութեամբ: - 312. մանաւանդ զի բարեպաշտութիւն մեծ համարիմ սատակել զթշնամիսդ Աստուծոյ, որպէս Մովսէս զԱմաղէկ, և Յեսու զՔանանացիսն, և Սամուէլ զԱգագ, և Դաւիթ զԳողիաթ, և համանգամայն իսկ որպէս սատակեցին Իսրայէլացիքն զայլազգիսն – 278.

ՅԵՏ - այն ինչ արծարծեալ առ նորոգումն շինութեան եկեղեցւոյ Քրիստոսի ի կործանմանէ հինի յետ մեծ պատերազմին սրբոյն Վարդանայ. – 134. Այս շարժումն սաստկագոյն քան որ եղև յամս Զաքարիայի Հայոց կաթողիկոսի, յետ Է ամի գերութեանն Հայոց: - 358. Ապա յետ այսր զեկուցաւ նմա վասն Գուրգինի տիրելն Անձաւացեաց. – 330. Ապա յետ փոքր ինչ աւուրց վառեալ զզօրսն ի պատերազմ ընդ բերդայինսն, առնուլ զամրոցն: - 208. Արդ զիա՞րդ յետ բազում ժամանակաց զՆինոս ասեն շինել զՆինուէ, զայրն Շամիրամայ, որ ծնաւ զՆինուաս – 14. Բայց յետ աւուրց բազմաց անցանելոյ շփոթմանցն՝ Գուրգէնի ընդարձակեալ նախախնամութեամբն Քրիստոսի և ելեալ փրծեալ ի բանտէն՝ եկն եմուտ յաշխարհ իւր: - 320. Բայց յետ բազում յուզիցն և պատերազմացն եհաս տիրել նմա Անձաւացեաց տէրութեանն զայս օրինակ: - 324 Բայց Գրիգոր կեցեալ յետ դարձին իւրոյ զմի ամ՝ մեռանի իւրով մահուամբ: - 310. բայց միայն մանուկ մի Դիոս անուն, զոր գաղտաբար ապրեցոյց մայրն, որպէս յետ բազում ժամանակաց զՄովսէս ի յԵգիպտոս – 14. բայց մնայ ի հարստութեան Պտղոմէականն միայն, մինչ տիրել Կղէոպատրեայ կնոջ միոյ եգիպտացւոյ որ յետ բազում ժամանակաց, մինչև յՕգոստոս կայսր: - 72. Բայց յետ բազում պատերազմացն խորամանկ խաբէութեամբ կոչէ առ ինքն Շապուհ զԱրշակ ի դէմս սիրոյ խաղաղութեան, ոչ ինչ յիշատակ զչարեացն գործելոց ի մէջ առնելով. – 102. Բայց տիկինն Սոփի կեցեալ յետ մահու Դերանկին զտարի մի և զամիսս Ը՝ յաւելաւ առ հարս իւր. – 356. դարձեալ յետ փոքր ինչ աւուրց անցանելոյ՝ և խռնեցաւ միւս անգամ պատերազմն, և և՛ս սաստիկ հարան զօրքն արքունի. – 276. Եւ առ այսոքիւք պատեհագոյնս իմն գտեալ իբրև յանիշխանութեան՝ ոմանք Ասորեստանեայք և Քաղդէացիք, յազգէ թագաւորացն … զօր բազում գումարեալ՝ յետ ԻԸ ամի

անիշխանութեան Ասորեստանեայց ի ձեռն Փուայ թագաւորեցելոյ դարձեալ տիրեն Բաբելոնի և ստորին Ասորւոց – 60. Եւ արդ ասացից փոքր ի շատէ զյայտնի գործեցեալսն, զի և որ ինչ ընդ սոքօք և յետ սոցա ի գլուխ ելին հանգամանք իրաց՝ և այնմ առանց երկբայութեան հաւատասցես, իբրև ճշմարիտ և անսուտ պատմողի: - 240. Եւ արտաքոյ յետ ճանապարհին իմացաք էշ մատակ, որ ունի յաւանակ – 50. և բնակեցուցանէ զնոսա ի գաւառն Աղբագ, յետ բնակեցուցանելոյն զնոսա ի Ջողախել, ի Վրնջունիս և ի Հախրամի, տեսեալ մինչև ի ժամանակս ինչ – 64. Եւ եկաց Նոյ յետ ջրհեղեղին առ որդւովքն ամս ԼԾ մինչև ի ՀԳ ամն Եբերայ – 34. Եւ եղև յետ աւուրցն այնոցիկ, յորժամ ուրախ արար թագաւորն զնախարարսն Հայոց ի տաճարի խրախից, և խոստացաւ տալ իւրաքանչիւր ումեք զերկիր ի ժառանգութիւն – 314. Եւ եղև յետ մեծ պատերազմին, որ յառաջ քան զզրուցացդ գրելոյ ելին, ի գլուխս Մանազաւեան նահանգին և Յուշոյ դաշտին, և զխռովարարս քաղաքացն ի մի վայր գումարելոցն, որք և յունայն ասպատակէին աշխարհ – 398. և Ջ ամ կեցեալ յետ գերադարձն լինելոյ, և մտեալ յաշխարհս՝ համարձակ զքրիստոնէութեանն ունելով զկրօնաւորութիւն, և ի զղջել յապաշաւ ի վերայ ուրացութեանն զՔրիստոս լինելով: - 336. Եւ զի ասեն զՆինոս թագաւորեալ յետ Բէլայ՝ անփոյթ զայսքանեօք արարեալ. – 42. Եւ էր կացեալ եպիսկոպոսապետ Հայոց Զաւէն, զոր յառաջագոյն ասացաք, յետ չորրորդ ամի Շահակայ: - 110. և ի բողոքել արդարոյն յետ Ճ ամի՝ ապա հրաման միայնոյ և ահաւորին Աստուծոյ ասէ. – 30. և ի մէջ առից, թէ ըստ բազմաշուրթն լեզուացն յետ աշտարակաշինութեանն, յորմէ ցեղէ սկիզբն առ աճել սերունդք Արծրունեաց տոհմին – 12. Եւ ինձ ի վերայ տրտմականացն դէմ եդեալ առ կատարելագոյն և առ անզուգական անհամեմատ խնդութիւնն դեգերել, առ հոգևորական ուրախութիւնսն ընթանալ յետ մարմնական տրտմականացն յաճախութեանցն: - 386. և ինքն թագաւորեաց փոխանակ /318/ ընդ հօր իւրոյ, և յետ Ջ ամսոց մեռանի: - 320. և կալցուք ուխտ խաղաղութեան /136/ ի մէջ մեր երկոցունց, և անշուշտ լիցի այս երդումն և պայման ի մէջ մեր և որդւոց մերոց յետ մեր թագաւորելոյ,,: - 138. Եւ կացին եպիսկոպոսապետք Հայոց յետ մահու սրբոյն Ներսէսի ոմանք ի զաւակէ Աղբիանոսի եպիսկոպոսի Բզնունեաց, առն պատուականի, Շահակ և Զաւէն և Ասպուրակէս – 108. և մի եղիցի յիշատակ սորա ընդ սոցա, որք թէպէտ և վրիպեցին և կործանեցան՝ սակայն և ապաշաւեցին և կանգնեցան յետ դարձին իւրեանց ի մեծ կարաւանէ գերութեանն ի միջոյ ժանեաց բռնաւորին. – 248. և յետ Բ ամաց վախճանի Վաղարշակ, թագաւորեալ ընդ եղբօրն բոլոր Հայոց: - 110. Եւ յետ խաչայարդար պայծառութեանն իջեալ ի լեռնէն Գագիկ ի ստորոտ լերինն, ուր աբեղայիցն բնակէին սքեմաձևքն: - 394. Եւ յետ այնորիկ ի բազմանալ որդւոց մարդկան՝ յերիս մասունս և զերկիր բաժանեալ, ըստ ասացելումն Հերոդոտեայն – 34. և յետ այնորիկ պահղաւիկ թագաւորաց ժամանակք, որ կոչին Պարթևք, մինչև յԱրտևան որդի Վաղարշու – 166. Եւ յետ այսորիկ գումարեցոյց զօրս բազունս Խոռեմ, և ել ի Քաղկեդոն և նստաւ յանդիման Բիւզանդայ, և խնդրէր անցանել և կործանել զքաղաքն թագաւորանիստ: - 142. Եւ յետ այսորիկ ել ի վերայ երկրին Պաղեստինացւոց և Երուսաղէմի՝ պաշարել զնա. – 60. Եւ յետ այսորիկ որդիք նորա Գագիկ և Աշոտ և Գուրգէն կանոնեցին զյիշատակութիւն նոցա ի տօնի սրբոյ Խաչին – 356. Եւ յետ անցանելոյ աւուր, գնացեալ Աշոտ որդի Դերանկին, առեալ զդի նորա՝ տարեալ հանգոյց առ հարս իւր յԱղբակ գաւառի ի վանս սուրբ Խաչին: - 354. Եւ յետ աւուր միոյ ընդ մէջ լինելոյ՝ դարձեալ խմբեցաւ պատերազմն, և հարան զօրքն արքունի. – 276. Եւ յետ աւուրց ինչ դարձեալ դառնայ Վահան ի Սամառայ, զեկուցանել Աշոտի որ ինչ գործեցաւն: - 310. և յետ կատարման աստուածային հրամանին՝ ի ծփական ջուրցն բերեալ տապանն յարևելեայն ի միջոց աշխարհի՝ հանգեաւ ի լերինս Կորդուաց – 32. Եւ յետ մահու նորա նստուցին թագաւոր զորդի նորին զԱրտաշիր, կարի տղայ մանուկ: - 152. Եւ յետ նորա ածին զԽոսրոյ ոմն /154/ տղայ մանուկ և նստուցին իւրեանց թագաւոր. և նա փութանակի վախճանեցաւ: - 156. և յետ նորա Արիաս որդի իւր որ և չորրորդ ի Նինեայ՝ ամս Լ. – 56. Եւ յետ նորա թագաւորէ Ասորեստանեայց Թագղաթփաղասար. –

60. Եւ յետ սակաւ աւուրց ել գնաց Դերանիկն ի Ճուաշ գաւառ՝ ձմերել յաւանին Մառական: - 350. Եւ յետ սակաւ աւուրց վախճան առեալ կենաց նորա, ձիոյ խրոխտացելոյ զանձն ամբերթեալ ելոյծ ի կենաց զքաջարանցն զմեծն տերանց զքաջ զօրավարն և զզօրագլուխն Հայոց մեծաց: - 364. Եւ յետ սակաւու միոյ ասէ. ,,ձեզ տաց զերկիրն Քանանու զվիճակ ժառանգութեան ձերոյ,,. – 34. և յետ սակաւու միոյ ասէր – 50. Եւ յետ փոքր ինչ աւուրց հրաման ետ Բուխայ ելանել ի պատերազմ. – 280. Եւ քանզի յետ մահուանն մեծին Սահակայ Բագրատունոյ սպարապետի ասպետի և զօրավարի Հայոց, հաւատացեալ էր Թէոդոսի կայսեր զսպարապետութիւնն Հայոց Համազասպ Մամիկոնէի և որդւոյ իւրում Վարդանայ – 122. զկամս Աստուծոյ և զօրէնս բնութեան ցուցանել ազգաց եկելոց որ յետ իւր: - 34. զոր աւանդեցին որդիք թագաւորին յետ մահուան հօր և մօր իւրեանց ի պէտս սուրբ Խաչին Աղթամարայ. – 356. զոր մեք գիտեմք յետ ջրհեղեղին եղեալ գիր: - 36. զոր յետ սակաւու միոյ երկրորդեցից զառ ի նմանէսն: - 32. Ի նմին ամի յետ վեց ամսոյ անցանելոյ փոխի և սուրբ վարդապետն Մաշտոց. – 120. ինքեան և որոց յետ իւր թողլով ժառանգութիւնն որդւոց կեանս վշտագինս հանդերձ մահուամբ, և ծննդականութիւնս տրտմութեամբ: - 22. Իսկ յետ Կ ամի անցանելոյ Աղէքսանդրի և անիշխանութեանն Հայոց և Պարսից՝ թագաւորէ Արշակ Քաջ Մարաց և Պարսից և Եգիպտացւոց և Ելիմացւոց ի Բախլ քաղաքի. – 72. Իսկ զկնի վերանալոյն Քրիստոսի, յետ ԺԵ աւուր, ապա հասանէր Գրիգոր ի քրիստոսակոչ կատարումն. – 254 Իսկ յետ այսց գործոց եղելոց ի բառնալ թագաւորութեանն Հայկազնեայցն, ոմն այսպէս ոմն այնպէս շփոթաբար կեցեալ անիշխանութեամբ - 68. Իսկ յետ անցանելոյ աւուրց ինչ՝ ետ տանել զնա առ թագաւորն, և ընդ նմա գունդս զինուորաց վառելոց և ընտիր այրուձիոց: - 288. կոչեաց զերիցունսն նորոյ կտակիս, զեպիսկոպոսս և զքահանայս, առաջի արկեալ զհաւատոցն կատարելաբանութիւն, զմկրտութեանն լուսաւորութիւն. զառեկելոցն յապաշխարութիւն, զյոյսն յետ վախճանին, զմարդասիրելն Քրիստոսի - 386. Մեծն Թէոդոս յետ Վարազդատայ թագաւորեցոյց ի վերայ Հայոց զԱրշակ և զՎաղարշակ զորդիսն Պապայ թագաւորի Հայոց. – 110. մինչ զդի նորա գտելոցն յետ աւուրց ինչ ետ Բուխայ ԺՌ արծաթ, զի այնչափ պատուական էր այրն նմա: - 272. ՅԵՏ ԿԻԻՐՈՍԻ/թագավորում են/ ԿԱՄԲԻՒՍԷՍ, ՇՄԵՐԳԻՍ ՄՈԳ, ԴԱՐԵՀ ՎՇՏԱՍՊԱ. - 68. Յետ այսորիկ եմուտ Ադամ առ Եւա կին իւր – 22. Յետ այսորիկ կայ ի գլխաւորութիւն տաճկաց Ամր, որդի Հատապայ ամս Ի և ամիսս Ջ: - 164. Յետ այսր ամենայնի Յազկերտ թագաւորեաց ի Տիսպովն, և ունէր զթագաւորութիւնն երկիւղիւ, և ոչ հրամանատու այլ անձնապահ: - 156. Յետ այսր առեալ Սմբատայ զԱրտաշէս ըստ ձևոյ տառապելոյ միոյ, որ շրջիցի խնդրիցէ օր ըստ օրէ զբաւականութիւն աւուրն – 84. Յետ այսր՝ յերկրորդ ամի պաշարեն զԿարնային քաղաքն զօրքն Յունաց. և դարձեալ անդրէն ի կամս իւրեանց թողեալ գնացին: - 358. Յետ անցանելոյ չորից ամաց … դարձեալ Գրիգոր եղբայր Աշոտի Վասպուրական իշխանի յԱփհազաց աշխարհէն՝ նոցուն օգնականութեամբ և Վրաց զօրու ընտիր գոլով՝ եկն եմուտ յաշխարհս Վասպուրական՝ տալ պատերազմ ընդ Գուրգինայ. – 310. Յետ Արտաշէսի թագաւորէ Արտաւազդ, ապա Տիրան որդի Արտաշէսի, ապա Տիրան, ապա Տիգրան Վերջին, ապա Վաղարշակ: - 92. Յետ բառնալոյ թագաւորութեանն ի տանէն Արշակունեաց, և հայրապետութեանն ի տանէն սրբոյն Գրիգորի՝ Ղևոնդ ոմն աշակերտ սրբոյն Մաշտոցի տեղապահ լինէր սրբոյն Սահակայ, և Յովսէփ եպիսկոպոս և Մովսէս և Մեղէս: - 120. Յետ բառնալոյ թագաւորութեանն Հայոց ի տանէն Արշակունեաց՝ ապա մարզպանք Պարսից կալեալ տիրէին աշխարհիս. – 124. Յետ բառնալոյ իշխանութեանն ի Վասպուրական երկրէն մնացին տոհմք Արծրունեաց ըստ ազգս ազգս՝ քաջն Գուրգէն և Մուշեղ եղբայր իւր – 298. Յետ հազար ամի ապա ծնաւ Որմզդ – 46. Յետ համբառնալոյ Փրկչին մերոյ և վախճանի բարեպաշտ թագաւորին /78/ Աբգարու, թագաւորեաց Անանուն որդի Աբգարու – 80. Յետ մահուանն Աղէքսանդրի զօրավարաց կալեալ զՄակեդոնացւոց /70/ տէրութիւնն – 72. Յետ մահուանն Աշոտի և կատարելոյ զաւուրս սգոյ նորա առնու զիշխանութիւնն Վասպուրական տէրութեանս

Գագիկ եղբայր նորին. – 388. Յետ նորա թագաւորէ եղբայր Սենեքերիմայ…<փութ>ապէս մեռանի ի Մարութաքբաղդան, իբրև … ունէր զվեց ամիս, սպանաւ և նա ի միոջէ ումեմնէ որում անունն էր Ներեղիբդ և թագաւոր էր. – 60. յետ ջրհեղեղին արբ գինի Նոյ, վասն որոյ և անփորձ իրացն եղելոյ՝ արբեալ եղև: - 30. Յետ ջրհեղեղին հրամայեալ՝ կերիջիք միս իբրև զբանջար խոտոյ. – 30. յերկրորդն հարկ է մեզ զոճն կանոնել, որ յետ Նոյի և անդր ազգացն բաժանմունք յառաջ խաղան, ըստ ցեղից ցեղից ի կարգ անկեալ աշխարհաբաժին ցեղակարգութեամբ. – 12. Նախ առաջին՝ զի յետ աւուրց ինչ, իբր անագան իմն այլ ոչ նախապատիւ և կարևոր. և զայն արատաւոր, այլ ոչ անարատ՝ երևի յասացելոցն՝ եթէ ուղիղ մատուցանես և ուղիղ ոչ բաժանես՝ մեղար: - 24. Որ յետ բազում ժամանակի ծախք պիտոյից ասացաւ պատրաստել թագաւորին ըստ անյաղթ բռնութեան և մեծութեան որովայնի կերակուր Բէլայ: - 38. Որ ապա յետ սպանմանն Սենեքերիմայ յորդւոց իւրոց՝ բուռն գնդաւ Ադրամելէք և Սանասար գան մտանեն ի լեառն Սիմ - 16. Որ և ի սա հասեալ՝ վախճան եղև թագաւորութեանն Պարսից. զոր յետ սակաւու միոյ ասասցուք: - 156. Որ և յետ մահուանն Զրադաշտին դարձեալ միապետեաց ամենայն արևելեաց Պարսից ի հարկի հնազանդութեան ունելով, խաղաղասէր կենօք ամս ԼԸ. – 56. որ յետ Ե ամաց վախճանի, կեցեալ կեանս արտաքոյ իրաւանց: - 118. որ յետ հաւատոցն որ ի Քրիստոս բազում ուղղութեամբ և երկիւղածութեամբ կրօնս ըստ արժանի հաւատոյն ցուցեալ, գրէթէ ի ծայրս առաքինութեան զաճումն հաւատոցն տարեալ հասուցեալ, որ ինչ յորդորումն աւետարանական վարժիցն ունին դաստիարակութեան ցոյցք: - 78. որ յետ ՁԸ ամի Սենեքերիմ յառաջանայ ի գահ հայրենի իւրոյ թագաւորութեանն մեծաւ զօրութեամբ - 16. ոչ պիտոյացեալ եկամուտ լուսոյ, որով նսեմասցի առ ի հասանել երեկոյին, ոչ ապաժամանութիւն արեգական առ ի մերժել զմութ գիշերի լուսազգեստ ստեղծուածոյն, որ յետ առաջնոցն կարգի և դասու՝ զերկրորդն փոխանորդեցաւ վիճակ, ոչ կերակուր հոսանուտ առ ի լրութիւն տարաբարձ ունակութեանց անապականին, որ դոյզն ինչ փոքրագոյն քան զիրեշտակս գոլ. – 20. ՎԱՍՆ ԹԱԳԱՒՈՐԻՆ ՋԱՓՐԱՅ, ԶՈՐ ԻՆՉ ԽՈՐՀԵՑԱՒ Ի ՎԵՐԱՅ ԱՇԽԱՐՀԻՍ ՀԱՅՈՑ, ԵՒ Ի ԳԼՈՒԽ ԵՀԱՆ ԶԿԱՄՍ ՉԱՐՈՒԹԵԱՆՆ, ԵՒ ՈՐ ԻՆՉ ԸՆԴ ՍՈՎԱՒ ՆԱԽ ՔԱՆ ԶԼՆՈՒԼ ՎԵՑԵՐՈՐԴ ՅՈՐԵԼԻՆԻ, ԵՒ ԵՕԹԱՆԱՍՈՒՆԵՐՈՐԴ ՈԼՈՄՊԻԱԴԻՆ, ՅԵՏ ԻՆՆԵԻՏԱՍՆ ԸՆԴԻՔՏԻՈՆԻՆ, ՅՈՐՈՒՄ ԲՈՎԱՆԴԱԿԻՆ ԺԱՄԱՆԱԿՔ ԲՌՆԱԿԱԼՈՒԹԵԱՆՆ ՏԱՃԿԱՑ ԱՄՔ ՄԻԲ ԸՍՏ ԹՈՒՈՑ ՀԱՅԵՐԷՆ ՏՈՒՄԱՐԻ. – 170. քանզի յետ ջրհեղեղին ոչ երևի լինել դարձեալ որդիս նահապետին. – 30. քանզի յետ վախճանի Ասպուրակայ նստուցեալ էր Խոսրովու յաթոռ հայրապետութեան Հայոց զսուրբն Սահակ որդի սրբոյն Ներսէսի. – 112.

ՅԵՏԱՐԿԵԼՆ - Եւ գիտացեալ Արիմին զյետարկելն իւր՝ խեռեալ ստամբակեաց Որմզդի, հակառակ աստուած լինելով: - 46.

ՅԵՏԻՆ - Ապա փոյթ ինձ Թովմայի, որ ոչ վերջոտնեալ կալայ ամօթով զյետին տեղին – 122. և ինքն գնաց անտի և եմուտ ի Պարտաւ՝ ձմերել անդ, և տեսանել վասն յետին կատարածին աշխարհիս Հայոց, թէ որպէս ի գլուխ ելանիցէ. – 298. Մուշեղ Անձաւացեաց տէր հիւանդացեալ զյետին կեալն, ունելով որդի ստնդեայ. – 324.

ՅԵՏՆԵԱԼ - զի մի յերկարաձգեալ զդեր հատուցական բանիս՝ յետնեալ գտցուք յառաջիկայ մեզ գրաւորութենէն, որ սակս պատմութեանցն են հանդէպք: - 260.

ՅԵՏՆՈՐԴ - յուսացեալ ի մարդասիրութիւնն Քրիստոսի, զմաքսաւորին և զաւազակին զյետնորդսն բարբառեալ, և զփրկական մարմին և արիւն որդւոյն Աստուծոյ հայցեալ հաւատով ի թողութիւն մեղաց, յուսացեալ ի քաղցրութիւնն Աստուծոյ: - 336.

ՅԵՏՈՅ - Բայց յետոյ անմիաբան գտեալք նախարարքն Հայոց՝ թողին զոր խորհեցանն վասն թագաւորելոյ Վահանայ, և անցին /126/ գնացին առ մեծն Վարդան. – 128. և նա զբոլոր իսկ զաշխարհն կործանեաց, պաշտօնարար լինել սնոտեացն, թէպէտ յետոյ ընդունէր զապաշխարողսն: - 256. Եւ Վահրամ գնաց փախստական և անկաւ ի Բախղ Շախստան. որ և յետոյ իսկ սպանաւ ի հրամանէ Խոսրովայ: - 140. որ յետոյ և հետևող սուրբ առաքելոցն եղեալ բազում ուսմունս ի հնոց հրէականաց նպաստաւորեաց եկեղեցւոյ

գեղեցիկ օրինակօք – 34. որպէս և յետոյ ընդ Պիղատոսի խնդրեցին զվրէժ սպանման Մկրտչին և հալածանացն Քրիստոսի. – 78. քանզի Յունաց հուսկ երբեմն յետոյ գտաւ գիր ի Կադմեա յումեմնէ Փիւնիկեցւոյ: - 18 .

ՅԵՏՈՅ ԿՈՂՄՆ - և անտի գնացեալ ի ձորն Ածանայ ի խնդիր փախստէիցն և հասեալ ի յետոյ կողմանցն՝ ի սուր և ի գերութիւն զբազումս ի նոցանէ արկանեն: - 202.

ՅԵՏՈՒՍՏ - Եւ այն ինչ պատահեալ Գուրգէն հարուստ գնդի Վահանայ ի յառուամէջս մուրին՝ ի բազում քան թէ սակաւ սուսերս ծեծեցին զնա, մինչև ոմն Ջուանշէր անուն յետուստ յանկարծ հարեալ վիրաւորեաց զԳուրգէն – 310. Եւ առ չանսալն յետուստ կողմանէ Վահան հարեալ ի գաղտնիս զգարշապար երիվարին՝ արար կաղանալ նժոյգ ասպարակողին. – 334. յետուստ երբեմն գտանէր ի ձեռն անիծիցն իմացեալք երկոքին. – 22. յետուստ կողմանէ աճապարեալ Քսերքսէս բուռն հարեալ զդիակաց պղնձակուռ վարապանին Աշդահակայ ի վերայ թիկանցն զգաւակս երիվարին արկեալ – 64. որ յետուստ՝ մոլի բռնաւոր, որ և զՏրովական դժուարամարտիկ իրս քաջապէս և կարողաբար վանեալ՝ աստուած ի նոցանէ ասացաւ, նա և ոչ աշխարհակալին Աղէքսանդրի Մակեդոնացւոյ - 36.

ՅԵՏՈՒՍՏ ԿՈՂՄԱՆԷ - և ազատացն յետուստ կողմանէ սուր ի գործ արկեալ սպանին զնա, և զգլուխ նորա հատեալ առ /368/ բերդայինսն յղէին: - 370.

ՅԵՏՍ - այլ յետս կացեալ յուխտէ սրբութեանն դառնալ զհետ պաշտաման կռոցն – 80. այլ բազմացան չարիք մեր, զի մեղաք առաջի տեառն Աստուծոյ մերոյ և յետս հարաք զիրաւունս պատուիրանաց նորա – 242. աստէն իսկ դարձաւ յետս երես իւր ի /248/ թիկունս կոյս, ըստ ձախողակի խոտորմանն յետս ընդդէմ զխոտորմանն ժառանգեաց: - 250. և որ ինչ ի նմանէ կան պահին պարգևք կացելոյն ի ճշմարտութեան հաւատս, և տանջանք ուրացելոցն և յետս կացելոցն - 206. և որպէս պատմեն զնմանէ՝ զի դարձաւ յետս յԱստուծոյ և դարձոյց զերեսս իւր ի ճշմարիտ դաւանութենէ յերկրպագութենէ Աստուածորդւոյն, որպէս ասաց՝ դարձուցին յիս զթիկունս և ոչ զերեսս իւրեանց. – 248. Իսկ իբրև տեսին զբազմութիւն պարսկային զօրուն՝ վհատեալ գնդին Հայոց լքին զմիմեանս և գնացին յետս կոյս – 134.

ՅԵՏ ՍԱԿԱՒՈՒ ՄԻՈՅ - Եւ յետ սակաւու միոյ ասէ. ,,ձեզ տաց զերկիրն Քանանու զվիճակ ժառանգութեան ձերոյ,,. – 34. և յետ սակաւու միոյ ասէր – 50. զոր յետ սակաւու միոյ երկրորդեցից զառ ի նմանէսն: - 32. Որ և ի սա հասեալ՝ վախճան եղև թագաւորութեանն Պարսից. զոր յետ սակաւու միոյ ասացուք: - 156.

ՅԵՏՍ ԸՆԴԴԷՄ - աստէն իսկ դարձաւ յետս երես իւր ի /248/ թիկունս կոյս, ըստ ձախողակի խոտորմանն յետս ընդդէմ զխոտորմանն ժառանգեաց: - 250. և յետս ընդդէմ կործանեալ փչեաց զոգին ի ձեռս խորհրդածուին իւրոյ սատանայի. – 100.

ՅԵՐԲ - Մինչև յե՞րբ ոչ կամիցի յագենալ արեամբ. – 144. ,,մինչեւ յե՞րբ ոչ ողորմեսցիս Երուսաղէմի և քաղաքացն Յուդայ. այս Հ երորդ ամ է,,: - 314.

ՅԵՐԷԿՆ - խորհուրդ չար ի մէջ առեալ և զբարեկամութիւն կեղծաւորեալ, որպէս յերէկն և յեռանդն՝ և յանձն առնուն երթալ առ զօրավարն, խնդրել խաղաղութիւն. – 210.

ՅԵՐԿԱՅՆԱԳՈՅՆ - Բայց քանզի խոնջեալ երիվարացն ի յերկայնագոյն ընթացիցն և վասն թանձրամած ձեանն կուտակմանց պակասեալ ուժոյն երիվարացն – 372.

ՅԵՐԿԱՐ - և ետ բերել քուքս և տանջել զնոսա քքովքն յերկար, մինչ կարծել ի նմին վախճանել – 292.

ՅԵՐԿԱՐԱԳՆԱՅ - Եւ քանզի որպէս ասացաւ՝ ի յերկարագնացս աշխատութեանց երիվարացն և հեծելոցն ծանրութիւն ի տքնութենէն ի վերայ հասելոյ, և տօթն արեգականակէզ տապախառն ջերմութեանն, և թանձր ծարաւոյն պասքեցելոց երիվարացն հանդերձ հեծելովքն – 402.

ՅԵՐԿԱՐԱԳՈՅՆ - յաճախագոյնս վասն Գուրգինայ վայելէ զդրուատեացն, կարևոր է բազմաձեռն աճմամբ զդրուատեացն յերկարագոյնս հատուցանել զճարտասանութիւնս. - 300. Յերկարագոյնս վասն սորա աճեցուցանել հարկաւոր է զողբերգականացն

ճարտասանութիւնս: - 384. որ կարի սիրելի է ինձ, մանաւանդ թէ յոլովից, կամ թէ ամենայն հաւատացելոց ի Քրիստոս՝ յերկարագոյնս առնել ի ճառիս զդեգերումն շահատակութեան, ձեզ լսել և ինձ գրել: - 76.

ՅԵՐԿԱՐԱՁԳԵԱԼ - զի մի յերկարաձգեալ զդեր հատուցական բանիս՝ յետնեալ գտցուք յառաջիկայ մեզ գրաւորութենէն, որ սակս պատմութեանցն են հանդէսք: - 260.

ՅԵՐԿԱՐԵԱԼ - Եւ յերկարեալ Աղան զողբսն, ջերմեռանդն յորդահոս արտասուաց բղխմունս առաջի սրբոյն Սահակայ և մեծ սպարապետին Սահակայ և այլոց նախարարացն. – 112. և յերկարեալ գործ պատերազմին հարուստ մի ժամ - 64. Եւ յերկարեալ սպարապետին /282/ խօսել ընդ զօրավարին՝ ի բաց մերկեաց զպատրուակ սրտմտութեան ի սրտէ նորա: - 284. Յերկարեալ վտանգ նեղութեան Հայոց, որպէս ցուցանեն բազումք ի պատմագրաց, մինչ ի ժամանակս Ջամասպայ և Կաւատայ, մինչ ի Խոսրով արքայ: -134.

ՅԵՐԿԱՐԵԼ/ԻԼ/ - ,,ոչ են օրէնք թագաւորութեանս մերոյ ի պայքար բանից զոք արկանել, և յերկարել ի բանս, որչափ արարաք ընդ ձեզ, զոր ինչ այլ արասցուք. – 246. և եթէ յերկարիցի գործոյս այսորիկ հանդէս և մարտիցն հանգամանք ոչ փութանակի վարիցին՝ գուցէ օգնականութեամբ գիշերոյ եկեսցէ ի վերայ քո և մեծամեծ աւճիրս ի վերայ քո և զօրացդ արքունի հասուցանիցէ: - 212. Եւ յերկարեցան գործ պատերազմին մինչ ի տասներորդ ժամ աւուրն – 232. յերկարեցաւ գործ պատերազմաց սոցա իբրև մօտ ի լնուլ ամի միոյ.- 286.

ՅԵՐԿԲԱՅՍ ԼԻՆԻԼ - Իսկ նոցա ոչ յայտնեալ զխորհուրդ չարութեանն՝ դարձուցանեն զնա անդէն, զի մի յերկբայս եղիցի գալ առ նոսա. – 226.

ՅԵՐԿՄԻՏՍ ԵՂԵԱԼ - Իսկ Վռամ յերկմիտս եղեալ, ոչ կարէր կատարել զխնդիրն – 118.

ՅԵՐԿՆՈՒՍՏ - Բայց քանզի յերկնուստ էր հասեալ վտանգն, և աստուածառաք էր բարկութիւնն՝ և ոչ ոք զօրեաց և եկաց ընդդէմ նորա ելանել ի պատերազմ, այլ որ եհարն՝ նոյն և բժշկեաց: - 374. որ անցուցանէ զանցանէ զանասնական խառնակութեամբքն երիքովեան և սողոմական լրբութեամբ, անամօթաբար այր զարամբք բորբոքեալ, դեզաղէզ զիրացանն բերելով յերկնուստ զանզրաւ կիզումնն, անցուցեալ զանցուցեալ զսատակչական կործանմանն ջրհեղեղին: - 336.

ՅԵՐԿՈՒԱՆԱԼ - Արդ փութա՛, պնդեա՛, ե՛լ զհետ նոցա, և մի ինչ յայդոսիկ յերկուանայցես, թուլագոյն կալով մնալով յիրիդ յայդմիկ,,: - 184. Բայց թէ է՞ր աղագաւ պատմութիւն վկայութեան Վահանայ ոչ է գրեալ ի գիրս պատմագրի՝ ստուգապէս առանց յերկուանալոյ ցուցանեմ քում ուսումնասէր քաջահմտութեանդ: - 128.

ՅԵՅԵԱԼ - և տառապելոցդ որ եկեալ յեցեալ են ընդունայն գաղթականութեամբ՝ եղիցի արձակուրդ ի տեղիս իւրաքանչիւր – 216. և զկնի ինչ փոքու ասէ, ,,զայլազգիսն որ եկեալ յեցեալ իցեն ի Տէր՝ սիրել զանուն նորա, լինել նմա ի ծառայս և յաղախնայս – 224. մի՛ ասիցէ այլազգին, որ եկեալ յեցեալ իցէ ի Տէր՝ եթէ մերժելով մերժէ զիս Տէր ի ժողովրդենէ իւրմէ,,. – 224. յեցեալ յուսացեալ առ միմեանս, իբրև զքաղաք ամուր իբրև պարիսպ պղնձի – 364.

ՅՋ - Այս Ջ ամ էր գերութեանն Հայոց, և ՅՋ նորուն թուականութեան: - 326. Եւ եղև ի լնուլ վեցերորդ ամի գերութեանն Հայոց որ է ՅՋ ամ ըստ թուոյ հայերէն տումարին - 312.

ՅԷ - Ի ՅԷ ամի Հայոց թուականութեանս եկն Աշոտ Վասպուրական իշխան ի գերութենէն: - 326.

ՅԸՄԲԵԱՅ ԾՈՎԱԿ - և ելեալ ի Յադամակերտ քաղաքէ ի Թ ժամու ուրբաթու աւուրն, և անցեալ ընդ ծովակն Յըմբեայ, և ընդ Վարազի Զարեհաւանի. – 402.

ՅԸՆԴԱՐՁԱԿԻ - Բայց Ապումրուան զԳագիկ որդի Դերանկին պահէր ընդարձակի, /ճիշտը՝ յընդարձակի/ հանեալ ի կապանաց բանտին: - 368. Բայց հրաման ետ Դերանիկն Գրիգոր հարազատի իւրոյ ի նոյն տանէ Արծրունոյ, և կալաւ զնա և եդ ի յամուրսն Սևան. և հրամայեաց Հասանկան քեռորդւոյն իւրոյ՝ պահել զնա յընդարձակի: - 342. Եւ հրամայեաց պահել զնա յընդարձակի – 226.

ՅԺԱ-ԵՐՈՐԴ - Եւ արարին նաւակատիս մեծ հարսանեաց փեսայութեան Դերանկին, ի թուականութեան Հայոց Յ<u>ԺԱ-երորդ</u> ամին: - 322.

ՅԻԳ - Եւ կատարեալ Աշոտ զկեանս իւր՝ մեռաւ ի Վանտոսպ գաւառի, ՅԻԳ թուականութեանն Հայոց, յամսեանն հոռի, որ օր Զ էր ամսոյն, յաւուր հինգշաբաթոջ. և տարեալ հանգուցանեն ընդ եղբարս իւր ի վանս սուրբ Խաչին յԱղբագ գաւառի: - 338.

ՅԻԵ - Սորա ամք ձգեալ լինի յՅԻԵ թուականէն Հայոց. – 384.

ՅԻԶ - Եւ ծնան նորա երիս որդիս, Սարգիս որ և Աշոտ՝ ՅԻԶ թուականութեանն Հայոց, Խաչիկ որ և Գագիկ ՅԻԸ, և Գուրգէն. մանկունք կայտառք և գեղապանծք և բարենշանք և ամենեցուն ցանկալիք. ծնաւ և երկուս դստերս: - 338.

ՅԻԸ - Եւ ծնան նորա երիս որդիս, Սարգիս որ և Աշոտ՝ ՅԻԶ թուականութեանն Հայոց, Խաչիկ որ և Գագիկ ՅԻԸ, և Գուրգէն. մանկունք կայտառք և գեղապանծք և բարենշանք և ամենեցուն ցանկալիք. ծնաւ և երկուս դստերս: - 338.

ՅԻՄԱՐ - Դարձեալ ասէ նոյն յիմար Զրադաշտ – 46. ո՞վ ասասցէ յիմար արքային Զրադաշտի՝ ասա՛ ձրավաստակ աստուածոյդ քո Որմզդի՝ չաշխատել տարապարտ. – 46.

ՅԻՄԱՐԱԿԱՄ - Աւա՜ղ խարդախագունին այնորիկ խորհրդոյ/ճիշտը՝ խորհրդոյ/ և յիմարակամ մտաբերութեանն -20.

ՅԻՄԱՐԵԱԼ - Իսկ քաղաքապետն Սահակ ելեալ ընդ դուռնն, որ ելանէ ի բերդն Շամշղտայ, սամոյր զինքեամբ արկեալ և գաւազան ի ձեռն առեալ, յիմարեալ մտօք կորոյս զփախուստն իւր, որ կարող էր գնալ յով և կամիցի. – 272.

ՅԻՄԱՐԵՑՈՒՑԻՉ - Եւ սկսաւ ի վերայ մղել զժախահոտ և զյիմարեցուցիչ մաղձախառն թոյնսն – 204.

ՅԻՄԱՐԻԼ - և խաւարեցան անմտութեամբ սիրտք նոցա. զանձինս առ իմաստունս ունէին յիմարեցան. – 52.

ՅԻՄԱՐՈՒԹԻՒՆ - Բայց նոքա ոչ վերակնեալք յօրէնս Տեառն, այլ ստացան իւրեանց անունկնդիր լսարանս, զչարագոյնն իժի և զանբժշկականն քարբի, արբեցան գինով յիմարութեանն. ստացան աչս, որովք ոչ տեսանիցեն, և ականջս, որովք ոչ լուիցեն. – 182. Եւ առ յոյժ յիմարութեանն հարեալ ցանկութեամբ, խլրդենի դիմօք, իբրև զգազան մի կատաղեալ՝ սկսաւ յարձակել ի վերայ աշխարհիս Հայոց. – 170. Ո՞վ յիմարութեան առաջնոցն. ո՞րպիսի կատաղութիւն և գիւտք դիւացն նախկին ժամանակաւ սպրդեալ մուծաւ յաշխարհ, ապստամբութիւն առ Աստուած և տրտմութիւն սրբոց հրեշտակաց, և պատճառ վտանգաւոր մահու ծառայիցն Աստուծոյ յաւուրս ապագայիցն. – 38. որ կարծիք յիմարութեան աստուածանալ կամեցաւ: - 26. որոյ սերմանք յիմարութեանն պատուեալ առ Բաբելացիսն պահեցաւ մինչև ի ժամանակս Աղէքսանդրի Մակեդոնացւոյ. – 38.

ՅԻՇԱՏԱԿ - այլ անդ կեցեալ և անդէն վախճանեալ, ոչ արժանի ինչ գործ յիշատակաց ցուցեալ: - 110. այլ և ամենայն թագաւորք Ասորեստանեայց որդի ի հօրէ առեալ զիշխանութիւն ունէին, ոչինչ արժանի յիշատակի ուրուք գործեալ – 56. Բայց յետ բազում պատերազմացն խորամանկ խաբէութեամբ կոչէ առ ինքն Շապուհ զԱրշակ ի դէմս սիրոյ խաղաղութեան, ոչ ինչ յիշատակ զչարեացն գործելոց ի մէջ առնելով. – 102. գլխաւորագոյն և բարձրագոյն յիշատակ արձանացուցեալ անջինջ կտակ առ բազմախաղաց ժամանակս տրամադրեաց: - 392. Եւ զի մի երկայնեալ որ ինչ վասն նորա ապիրատ և ինքնակամ և անզիղջ և անխիղճ առանց պատկառանաց մոլորութիւն սորա լի անամօթութեամբ՝ի բաց դիցուք զսա ի միջոյ յիշատակի նախարարացն – 248. և ի վերայ նորա շինեաց եկեղեցի զհամբարձմանն ի յերկինս ի Հօրն գահակցել աթոռ, և զերկրորդ գալստեանն զյիշատակ ունելով, որ գալոցն է հայրենի փառօք, ըստ հրեշտակացն առաքեալսն զմխիթարականն և զքաջալերականն աւետիս նոցա առբերելով: - 390. և մի եղիցի յիշատակ սորա ընդ սոցա, որք թէպէտ և վրիպեցին և կործանեցան՝ սակայն և ապաշաւեցին և կանգնեցան յետ դարձին իւրեանց ի մեծ կարաւանէ գերութեանն ի միջոյ ժանեաց բռնաւորին. – 248. զի և հետք ևս յիշատակի այլոց անուանեաց մի երևեսցի, բայց ինքեան միայնոյ: - 44. զոր և անդրի ոսկեղէն կանգնեալ թագաւորին Բաբելացւոց՝ արձան քաջութեան առ ի յիշատակ: - 38. Զոր

օրինակ փոքր մի վերագոյնն պատմեցաք զծովային վիշապէն ըստ բարոյականի՝ նոյնպէս և այժմ դարձեալ արարից զյիշատակ սորա աղագաւ պատմութեանս խորհրդոյ: - 260. Իսկ ի յահեակ կոյս սեղանոյն շինեաց եկեղեցի ի յիշատակ յարութեանն Քրիստոսի յեռօրեայ թաղմանէն վերելեկեալ աւարառութեամբ դժոխոցն – 390. որոց յիշատակ նոցա եղիցի բազմաց նպաստ յարութիւն քաջութեան և ի զօրութիւն անարեանցն և ի յորդորումն քաջ նահատակացն: - 202. որք ոչ արժանաւորք ինչ բարի յիշատակաց: - 108. ուր զսեղանն սուրբ և զգաւազան հովուական և զմատանին պատկերեալ և զգօտին աշխատասէր միջոյն թողեալ ի հանապազորդ յիշատակ լուսաւորութեանն մերոյ հօրն: - 104.

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ - և յիշատակարան նորա մոլորութեանն որով վրիպեացն և վրիպեալ կործանեաց զազգս բազումս՝ կայ և մնայ ազգաց յազգս մինչև յաւիտեան: - 248. և զսակաւուց քան թէ յոլովից գրեաց անուանս ի յիշատակարանի անդ զՇահդոսդ, որ թարգմանի արքայասէր, և զԳոհշթասդ, որ թարգմանի ներկագործ ծիրանեաց արքայական զգեստու, և զՇմաւոն եպիսկոպոս, վէմ եկեղեցւոյ Քրիստոսի ընդ նմին և այլ եպիսկոպոսք և քահանայք արք Ճ - 106. և յաջմէ սեղանոյն շինեալ ընդ նովիմբ հիմամբ ի տեղի յիշատակարանի խաչելութիւն տեառն Գողգոթայ տեղւոջ – 390. Իբրև յանդիման եղեն դեսպանքն մեծ /172/ իշխանին Աշոտոյ, և ընթերցաւ զգիր պաղատանացն և զյիշատակարան նախնեացն, և զմերձաւորութիւն հարազատութեանն և զկապակցութիւն ուխտին … համագունդ ժողով առնէր ամենայն աշխարհին և ամենայն նախարարօք Վասպուրական տէրութեանն: -174. Իսկ առ մեզ ծանուցեալ զոր ինքն ասաց, թէ Քրիստոնեայ եմ, ըստ այնմ թէ ,,ծառայի իմոյ կոչեսցի անուն նոր, որ օրհնեսցի վերայ /ճիշտը՝ի վերայ/ երկրի,,՝ գրեցաւ յիշատակարանս սրբոյն: - 224. Յապուշ կրթին միտք իմ զմտաւ ածել զաղետիցն, խորհրդածել գրել յիշատակարանս. լքեալ լինին ընթացք ձեռացս առ կորովութիւն գրաւորականիս. – 350. ՈՐ ԻՆՉ ԶԿՆԻ ԱՅՍՈՐԻԿ ԳՈՐԾԵԱՑ ԲՈՒՀԱՑ Ի ԴՈՒԻՆ ՔԱՂԱՔԻ, ԵԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՎԿԱՅԻՑՆ: - 260. որպէս ցուցանեն յիշատակարանքն որք յառաջ քան զմեզ հոգացան, զոր ինձ աւելորդ թուի երկրորդել: - 324. Որպէս ցուցանեն յիշատակարանք հաւատարիմ պատմագրացն. մանաւանդ թէ աւետարանիչն և առաքեալն Յոհաննէս, որդին որոտման, տիեզերաց հնչեցոյց զորոտումն աւետեաց Աւետարանին Քրիստոսի – 76. որպէս ցուցանեն յիշատակարանքն առաջնոց պատմագրաց, զաւերումն Հայոց և զյաճախել նեղութեանցն և զանթիւ բազմութիւն վկայից, որք վասն Քրիստոսի նահատակեցան,և զքաջապէս արիանալ սրբոց քահանայիցն – 128. Սաստիկ և վտանգաւորք և լի դառնութեամբ որ ինչ ի ճառի աստ են յիշատակարանք, սակս յանձնառութեան մեծ նախարարացն և իշխանացն մերոց. – 240.

ՅԻՇԱՏԱԿԵԱԼ - զոր և վեր անդ յիշատակեալ ցուցաք զորպիսութիւն – 388. Զոր մեք սակաւուք այժմ յիշատակեալ զազգաբանութիւն բնաւին մարդկութեան ի նահապետացն առաջնոցն. – 34.

ՅԻՇԱՏԱԿԵԼ - Զորս առեալ քրիստոնէից զպատուական մարմինս նոցա՝ ծածկեցին փառաւորապէս թաղմամբ, ամ ըստ ամէ տօնիւք զօր կատարմանն յիշատակել, որք են արք թուով է: - 268.

ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆ - Եւ յետ այսորիկ որդիք նորա Գագիկ և Աշոտ և Գուրգէն կանոնեցին զյիշատակութիւն նոցա ի տօնի սրբոյ Խաչին – 356.

ՅԻՇԵԼ - այլ և ինքն Մահմէտ, մոլեկան հոգւով շարժեցեալ՝ տայ գրել զանուղղայս, զոր մեք ի բազմաց զսակաւս յիշեսցուք: - 164. Այս այն Գովգ և Մագովգ զոր յիշեն գիր մարգարէիցն, Ամովս և Եզակիէլ: - 66. Այս Վահանս զոր յիշեցաք՝ այն Վահան է, զոր թագաւորեցուցին նախարարք Հայոց յաւուրս սրբոյն Վարդանայ – 74. անկեալ առ ոտս նորա մեծաւ հառաչանօք՝ մի՛ յիշել զանցս զանցիցն անցելոց, զոր արարինն առ սուրբն, այլ դարձեալ կալցի զաթոռ հայրապետութեանն. – 120. Ապա համբարձեալ զձեռս իւր յերկինս՝ ասէ, ,,յիշեա՛ զիս, Տէր, յորժամ գաս արքայութեամբ քո,,. – 254. և յառնուլ զՍաթինիկ տիկին կնութեան Հայոց՝ յիշէ զնժդեհանալն իւր ի վիմամէջսն զոր վերագոյն գրեցաք – 86. և ընդ նմա Շապուհ յԱմատունի տոհմէ, այն որ գործակիցն եղև Գագկայ առ սպանումն

Ապումրուանայ, զոր վերագոյնն յիշեցաք – 372. Եւ ոչինչ ամենևին զչարացաւ ընդ նմա Բուխայ և ոչ յիշեաց զգործսն զոր գործեաց, և ոչ տրտմեցոյց զերեսս իւր. – 288. Զի մինչ այսպէս կայր աշխարհս ի տարակուսի, և ակն ունէին գթութեանցն Աստուծոյ առատանալ, որպէս սովոր է Աստուած ի բարկութեան զողորմութիւն յիշել. - 374. զոր յիշեցաք վերագոյնն ընդ մեծ նախարարսն - 248. զոր վերագոյնն յիշեցաք յայլում վայրի ի մեծ պատերազմին ի սահմանս Աղձնեաց: - 400. զորոց անուանքն վերագոյն անդ յիշեցաք – 368. Իսկ Ասուդ թէպէտ և այնպէս շքեղութեամբ ճոխանայր եգիպտական և հնդկային հարստութեամբն՝ այլ յիշելով զբուն իւր սեփհական թագաւորութիւն Ասորեստանի՝ ոչ հաճոյանայր կեալ եգիպտացի գահակալութեամբն. – 70. Իսկ սուրբն վառեալ Հոգւովն սրբով՝ յիշէ զասացեալն ի Փրկչէն, թէ ,,մի երկնչիք յայնցանէ, որ սպանանեն զմարմինն, և զոգին ոչ կարեն ապականել,, - 204. յիշեաց յաւիտենից զուխտ իւր և զբանն զոր պատուիրեաց՝ մինչև ի հազար ամ: - 34. Շահակս այս անուանէ զանուն որդւոյ իւրոյ՝ Կիւրոս, յիշելով զլաւութիւն առնն և զբարեկամանալն նախնոյն նորա Քսերքսեայ: - 72. շինեալ նորոգեաց և զեկեղեցին որ ի նմա յանուանակոչութիւն սուրբ Աստուածածնին Մարիամայ և զարդարեաց զնա մեծագանձ սպասուք և եդ ի նմա զԽաչն, զոր յիշեցաք վերագոյնն, յորոյ ձեռն ծանուցաւ զօրութիւնն հրաշագործ: - 390. որ վերագոյնն յիշեցաք – 216. որպէս ժողովուրդն Աստուծոյ առ գետսն նստէին և լային ի յիշելն իւրեանց զՍիօն, և կամ իբրև զնոյն ինքն զերիս մանկունսն, կապեալք և արկեալք ի հնոց նեղութեան – 252. Որպէս վերագոյնն յիշեցաք սակաւուք վասն Ահմատայ՝ յինքն գրաւել զաշխարհն Տարունոյ, հանեալ ի Հայոց պետութենէ: - 366.

ՅԻՇԵՑԵԱԼ - Յիշեցեալ լինին աստանօր սողոմօնեան բանագործութիւնքն զկատարումն առեալ – 354. լի արտասուօք և հեծեծանօք յիշեցեալք զվերին Սիօն մայրաքաղաքն սուրբ – 252.

ՅԻՇԵՑՈՒՑԱՆԵԼ - Եւ էր գրեալ ի միում թղթի անդ, յիշեցուցանելով զոր ինչ գործեաց Աշոտ ի զօրսն Ապահունեաց զյաղթանակ պատերազմին և զհոյակապ անուն ստանալոյն՝ ասէ – 382. յիշեցուցանէր զոր ինչ գործեաց ընդ Աշոտ և ընդ աշխարհ նորա, յուշ առնէր և զքաջութիւն արիութեան նորա – 268. Որոյ երթեալ առ Շապուհ յիշեցուցանէ նմա զհարազատէն իւրմէ Մեհուժանայ՝ միամիտ և հպատակ /108/ լինիլ արքայի, և զպատերազմացն գործ և զբազում աւարառութիւնս և զգերփանս Հայոց աշխարհիս ի Մեհուժանայ, և զմահն նորա ի ձեռանէ քաջին Սմբատայ Մամիկոնէի- 110.

ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆ - Իսկ Սաղման յանձն առ գրել նմա. և գրէր գիրս յօդուածոյս, էր ինչ որ ի ստոյգ յիշողութենէ, և էր ինչ որ կարծողական բանք. – 164.

ՅԻՍԷ - Եւ գունդն Հայոց խաղացին ընդդէմ նոցա … ի տանէն Արծրունեաց՝ Գուրգէն … և Վարաժնունիք՝ Մլեահ և Ռստոմ և Վարազշապուհ. … և Ընտրունիքն /ծն.Ընտունիք/՝ Գէորգ և Յիսէ և Սահակաւն/ ծն. Սահկաւն/, … և Ակէացիք և Վասակ, և Վահևունիք՝ Քաբարակն/ծնՔաբարակաւն/ և Խրախատ – 230. այլ զպարտութիւն քան զյաղթութիւն յինքեանս ձգէին ի ձեռանէ Յիսէի, մինչ պակասել պատրաստութեանն բերդին, մանաւանդ ջրոյն սակաւաւորութիւն. – 362. Բայց զաշխարհն Յիսէ որդին Շեհայ բռնազբօսեալ յինքն գրաւեաց և կացոյց ի վերայ նոցա զիւր գործավարս: - 344. ելին գնացին առ Ատոմ … Յիսէ Տրունեաց տէր որդի Հոնաւարայ, Վարազշապուհ Աբելինից տէր, Թադէոս Ակէացի Շերեփայ որդի, և այլք ընդ նոսա: - 364. և բռնազբօսեալ զաշխարհն Ահմաթ որդի Յիսէի Շեհայ յինքն նուաճել – 358. Եւ ամիրայն Յիսէ խաղացեալ բազմաձեռն զօրուն՝ յառաջ խաղայ ընդ Աքաղայու/ ճիշտը՝Աքաղաղու/ կատար ասացեալ բլուրն: - 334. Եւ ելեալ ազատացն Վասպուրականի դէմ եդեալ տարադէմ գնացին յԱմդացւոց քաղաքն առ Ահմաթ որդի Յիսէի Շեհայ – 366. և զպատրաստութիւն պատերազմողական մարտի ամրոցին հաւատացեալ էր Յիսէի եղբօր Թադէոսի – 362. և Յիսէ տուեալ պատերազմ ընդ քաղաքին, զտարի մի հանդերձ ամենայն նախարարօքն Հայոց, անգամագիտ լինելով՝ դառնայ յԱսորիս. և այս եղև երկիցս անգամ: - 338. զոր ոչ անունկնդիր լեալ Աշոտ՝ վերջոտնեալ եկն բանակեցաւ յԱրտաշէսեան աւանին, և Յիսէ ի Վան քաղաքի: - 334. յորում և ոմն հաւատարիմ Յիսէի Սէմ անուն յառաջ խաղացեալ՝

պատահէ իշխանին, ընդ Վահանայ խորհրդակցեալ խորհել զխաղաղութիւն և զմարտն գրգռեալ ցածուցանել և զվառեալ պատերազմն շիջուցանել. – 334. Նոյնժամայն գնացին Դերանիկն և Գագիկ մտին առաջի Յիսէի, խօսեցան բանս խաղաղութեան, ետուն պատանդս յանձնառութեամբ հարկացն արքունի - 334.

ՅԻՍԷ ԱՄԴԱՅԻՆ - Այլ իբրև այն ինչ մերձ լինէր ամրոցն ի պաշարումն՝ Ամդայինն Յիսէ, որ Շեհի որդին, որ զզօրապետութիւնն Հայոց ունէր, ճանաչէր՝ ի հրապոյրս Մանազաւեան պետոյն և Ութմանացն ելեալ՝ երագապէս եկն եհաս ի վերայ Աշոտի ԺԵ հազարաւ հեծելօք վառելովք. – 334.

ՅԻՍՈՒՆ - Որպես և Յոյնք երբեմն համբաւեցին՝ Հերակղէս աստուած յիսուն կոյս ի միում գիշերի ապականէր. – 38.

ՅԻՍՈՒՍ - Այլ Քրիստոս իւր ոչ տուն ոչ տաղաւար ասի, այլ մի տէր Յիսուս Քրիստոս, յԱստուծոյ և ի մարդկանէ կատարեալ. – 394. եթէ կացցես ի նմին յամառութեան ի հաւատսդ Յիսուսի որդւոյն Մարիամայ կնոջ հրէի,,: - 294. և Դաւիթ ասէ, ,,յոր հաւատացի զնոյն և խօսեցայ,,. և Պօղոս՝ ,,մեք հաւատամք զոր խօսիմքն,,. և դարձեալ Պօղոս՝ ,,եթէ խոստովանեսցիս բերանով քով զտէր Յիսուս, և հաւատասցես ի սրտի քում թէ Աստուած յարոյց … - 258 և զինքն յանձն արար երանելի եպիսկոպոսին և ճգնաւոր քահանային, հանգեաւ բարի խոստովանութեամբ ի հոռի ամսեան, որ օր Ե էր ամսոյն յաւուր ուրբաթու՝ ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր – 254. և զօր մահուան սրբոյն ամենայն Ասորեստան տօնախմբեալ մեծաւ ուրախութեամբ ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր - 254. և հաւատալն նորա ի մի Աստուած Հայր և մի Որդի նորա ի Բանն Աստուած Յիսուս Քրիստոս և ի մի Հոգի սուրբ, զուգակից և բնութենակից և փառակից Հօր և Որդւոյ, ի մի Աստուածութիւն կատարեալ. – 94. Եւ յաւէտ հրաշիւք յօրինէր զկարգս սրբոյ եկեղեցւոյ ուղղափառ առաքելական հաւատոց ի տէր Յիսուս Քրիստոս. – 180. զՓրկչին մերոյ Տեառն Յիսուսի Քրիստոսի զըստ մարմնոյ ազգաբանութիւնն գրելով աւետարանիչն Մատթէոս - 16. կարծեաց համանգամայն զբոլոր պաշտօնեայս Քրիստոսի ի բաց վճարել ի հաւատարիմ երկրպագութենէ ճշմարտին Աստուծոյ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. – 264. յորոյ աւուրս Փրկչին մերոյ տեառն Յիսուսի Քրիստոսի Աստուծոյ մերոյ մարմնով յաշխարհի երևումն եղև - 76. նա է տէր տերանց և թագաւոր թագաւորաց և իշխան կենաց և մահու, Աստուած յաւիտենական Յիսուս Քրիստոս: - 290. Նոյն գունակ և զՂուկա ազգաբանութիւնն գտցես շարաձեալ ի վերջէ յառաջ, և ասէր որպէս կարծէր զՅիսուսէ՝ ի Յովսէփայ ի Յակովբայ ի Հեղեայ, և ապա մի ըստ միոջէքն: -16. նորին հրահանգեալ կրթարանի ուսումնասիրութեանն վարժիւք ոռոգացեալ, այր քաղցրաբարոյ և հեզահայեաց, հասարակաբար առ հասարակ զինքն վարկանելով, արտաքոյ ամբարտաւանական բարձրայօնութեանն՝ կալով յաշտիճան հեզոցն, դրուատեալ ի փրկչէն մերմէ Յիսուսէ Քրիստոսէ: - 376. որք և մատուցեալ առ Փիլիպպոս որ ի Բէթսայիդայն, ասեն Կամիմք զՅիսուս տեսանել,,. – 76. Հերովդէս այլազգի որդի Անդիպատրեայ Ասկաղոնացոյ և մօր Եւպատրեայ Արաբացոյ, թագաւոր Հրէից, յաւուրս ծննդեան տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: - 78.

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ - և զինքն յանձն արար երանելի եպիսկոպոսին և ճգնաւոր քահանային, հանգեաւ բարի խոստովանութեամբ ի հոռի ամսեան, որ օր Ե էր ամսոյն յաւուր ուրբաթու՝ ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր – 254. և զօր մահուան սրբոյն ամենայն Ասորեստան տօնախմբեալ մեծաւ ուրախութեամբ ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր - 254. և հաւատալն նորա ի մի Աստուած Հայր և մի Որդի նորա ի Բանն Աստուած Յիսուս Քրիստոս և ի մի Հոգի սուրբ, զուգակից և բնութենակից և փառակից Հօր և Որդւոյ, ի մի Աստուածութիւն կատարեալ. – 94. Եւ յաւէտ հրաշիւք յօրինէր զկարգս սրբոյ եկեղեցւոյ ուղղափառ առաքելական հաւատոց ի տէր Յիսուս Քրիստոս. – 180. զՓրկչին մերոյ Տեառն Յիսուսի Քրիստոսի զըստ մարմնոյ ազգաբանութիւնն գրելով աւետարանիչն Մատթէոս՝ - 16. կարծեաց համանգամայն զբոլոր պաշտօնեայս Քրիստոսի ի բաց վճարել

ի հաւատարիմ երկրպագութենէ ճշմարտին Աստուծոյ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. – 264. Հերովդէս այլազգի որդի Անդիպատրեայ Ասկաղոնացոյ և մօր Եւպատրեայ Արաբացոյ, թագաւոր Հրէից, յաւուրս ծննդեան տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: - 78. յորոյ աւուրս Փրկչին մերոյ տեառն Յիսուսի Քրիստոսի Աստուծոյ մերոյ մարմնով յաշխարհի երևումն եղև - 76. նա է տէր տերանց և թագաւոր թագաւորաց և իշխան կենաց և մահու, Աստուած յաւիտենական Յիսուս Քրիստոս: - 290. նորին հրահանգեալ կրթարանի ուսումնասիրութեանն վարժիւք ոռոգացեալ, այր քաղցրաբարոյ և հեզահայեաց, հասարակաբար առ հասարակ զինքն վարկանելով, արտաքոյ ամբարտաւանական բարձրայօնութեանն՝ կալով յաշտիճան հեզոցն, դրուատեալ ի փրկչէն մերմէ Յիսուսէ Քրիստոսէ: - 376.

ՅԼԹ - և մեռաւ ՅԼԹ թուականութեանն Հայոց, և ի ԺԵ ամի հայրապետութեանն Գէորգեայ Հայոց կաթողիկոսի: - 356.

ՅԽԷ - Գործեցաւ այս ՅԽԷ թուականութեանս Հայոց, յորում ամի և տէր Գէորգ Հայոց կաթողիկոս փոխեցաւ: - 376.

ՅԾԱ - Գործեցաւ այս ՅԾԱ թուականութեանս Հայոց և ի Դ ամի հայրապետութեանն Յօհաննու Հայոց կաթողիկոսի: - 382.

Յ ՀԱԶԱՐ - որ յանուն Փրկչին մերոյ շինեալ էր յիշխանէն Բագարատայ, ի ծախս մեծամեծ գանձուց իբրև Յ հազարաց: - 190.

ՅՂԱՆԱԼ - և յղացաւ և ծնաւ զԿայէն – 22. և յղացաւ Զրուանն երկուորիս. – 46.

ՅՂԱՅԵԱԼ - և ի նիրհելն իւրում՝ ձայնէ հոգին աւտար ի բերանոյ կնոջն քարացելոյ եթէ՝ ծնցիս որդի աշխարհակալ. որ և ի պոռնկութենէ յղացեալ իսկ էր դուստր ցեղի Դանայ: - 158.

ՅՂԵԱԼ - առ որ յղեալ բազում անգամ պէսպէս սպառնալեօք և ողոքական բանիւք հաւանութեամբ թողուլ զօրէնս քրիստոնէութեան և հաւասարակցել այլոց ուրացողացն զՔրիստոս. – 318. Եւ էր յղեալ յառաջագոյն զԱշոտ որդի իւր ընդ առաջ նորա, անդստին յելանելն նորա յերեսաց արքայի – 270. և Սահակայ յղեալ առ Սմբատ՝ մի կալ մնալ ի լերինն, այլ փութալ ելանել դառնալ անդրէն ի հետևի զօրս անդ զի ոչ ելանէ, ասէ, Երուանդ զօրու ի սահմանս Մարաց. – 84. Իսկ նորա յղեալ առ նոսա դեսպան զԱբդլայ ոմն … տեսանել թէ իցէ՞ հաւատարիմ զոր ինչ խօսին ի ձեռն դեսպանաց, թէ պատիր խաբէութեամբ ջանան կորուսանեն զնա: - 226.

ՅՂԵԼ - ,,Բուխայ գլուխ զօրավարաց ընդհանուր Թագաւորութեան Տաճկաց, Ջափր իշխեցող ծովու և ցամաքի, հաւասար և օրէնսդրին մերոյ Մահումաթի, և հաւատարիմ միջնորդ Աստուծոյ և մարդկան, և թագաւոր ընդհանուր ազգաց հարաւային աթոռակալութեան … Յղեցի զքեզ ելանել ի վերայ երկրիդ Հայոց ամենայն կենդանեաց – 236. Ապա յղէ առ թագաւորն լինել նմա կին. – 272. Ապա այնուհետև դարձեալ յղեաց զՀամդոյ զՊարսից ամիրայ, և ի զօրաց արքունի զՀէթմ ազգաւ թուրք, և ընդ նոսա հեծեալս Ժ հազարաց, կազմեալ սպառազէն պատրաստեալ բարձրագոյն քան զառաջինն – 234. Ապա բարեկամացեալ ընդ Աբգարու թագաւորի Հայոց և ընդ մեծ զօրավարին Խուրանայ Արծրունւոյ՝ յղէ նմա պատարագս և առնու յօգնականութիւն զԽուրէն Արծրունի, զայր իմաստուն և քաջամարտիկ, կորովի յաղեղն և ի զէն և յասպազէն. - 78. Ապա յղէ զնա ի Խորասան, և նմա հաւատաց զվերակացութիւն աշխարհին. – 326. Առ որ զբարեկամութիւնն ողջ պահելով յղէ զնոյն Քսերքսէս և զԱրշէզ որդի նորուն քառասուն հազարաւ. – 66. Բայց խնդրոյն Հայոց զկատարումն առեալ յառաջնորդէն Տաճկաց՝ յղէ ի Հայս զառաջասացեալ զԱհմաթ որդի Հալթի: - 340. Բայց մինչդեռ չև առ միմեանս հասեալ Տիգրան և Կիւրոս՝ յղէ Աշդահակ պատարագս Կիւրոսի - 62. Դարձեալ զՍողոմոն Բագրատունի վառեալ ի զէն սատանայական՝ յղէ առ նա բազում անգամ զնոյն խորհելով. – 318 և ազատացն յետուստ կողմանէ սուր ի գործ արկեալ սպանին զնա, և զգլուխ նորա հատեալ առ /368/ բերդայինսն յղէին: - 370. և եդեալ ի ներքոյ արգոբայ տաղաւարաց և յղեաց ընդ կողմն Պարսից – 220. Եւ Գուրգէն երկրորդ հրեշտակս յղէ առ նա զայս օրինակ, եթէ ,,ընդ իս հաստատեա զանգրաւ կապակցութիւն ուխտի խաղաղութեան. և ես

ապստամբեցայց յԱշոտէ, և ի միասին բաժանեալ զերկիրս կեցցուք յապահովս,,: - 316. և եղբայր Մեհուժան Արծրունի յղէ դեսպան առ Շապուհ զնոյն խորհուրդ հաստատել: - 108. Եւ թուղթս և դեսպանս առ թագաւորն յղէին ծածուկ ի միմեանց. – 194. Եւ կայսր Մուրիկ հաւանեալ նմա՝ յղէր առ նա զՓիլիպիկոս փեսայ իւր. և տայր տանել նմա գիր ընդունելութեան, և առնոյր ի նմանէ երդումն: - 138. և հրովարտակ արքայի ի ձեռս քարոզչացն, թէ յղեաց արքայ զԳրիգոր որդի Աշոտոյ յերկիր իւր՝ տիրել աշխարհի իւրոյ փոխանակ հօր իւրոյ: - 314. և մեկնեաց յինքենէ զԱբրահիմ ոմն և յղեաց զնա հազարապետ Հայոց, և վերակացու ի վերայ հարկաց արքունի, և տիրել փոխանակ իշխանաց սորա: - 298. Եւ մինչ նոքա դեռ չև հասեալ էին մերձ առ գունդն Հայոց՝ փութացաւ զօրավարն Գուրգէն յղեաց դեսպանս առ Ապուհեշմ և որ ընդ նմա զօրագլուխքն՝ աղաչել ի խաղաղութիւն – 230. և յղէ զնա ընդ կողմն Ռշտունեաց. – 202. Եւ յղէ պատգամ առ Թէոդորոս եղբայր Հայրակղի, ըստ այնմ որում Հրէայքն եղեն ձեռնտու, եթէ ,,զերկիրդ զայդ Աբրահամու խոստացաւ Աստուած և զաւակի նորա, և ի ձեռս նոցա էր բազում ժամանակս. – 160. Եւ ոչ յանձին կալեալ Արջամայ վստահաբար առ իւր ունել զԱնիանոս՝ յղէ զնա ի Հայս: - 76. և սա նշկահեալ զկայսերբ՝ յղէ առ Շապուհ արքայից արքայ նուաճել ընդ նմա – 108. Եւ սկսաւ գոռալ, և խորհէր զթոյնս չարութեանն թափել ի վերայ իշխանին Աղուանից, /276/ և յղէր առ նա կոչելով ի հնազանդութիւն. – 278. զհարստահարութիւնն բացաձգեալ, և զթուղթս առ մի մի յիշխանացն յղել յաճախէր, յոլովագոյն առ իշխանն Աշոտ և առ եղբարս իւր. – 360. Զնա յղէ Ապուսէթ ելանել յերկիրն Վասպուրական և անդէն մնալ զօրօք բազմօք, մինչև զբովանդակ զհարկս և զհասս արքունի յամենայն կողմանցն Հայոց առ նա բերցեն յիւրաքանչիւր սահմանաց: - 176. զոր հանապազ յղէր առ նա Սմբատ թագաւորն Հայոց: - 366. Ընդ նոյն ժամանակս յղէ թագաւորն զոմն ի յաւագ նախարարացն վերակացու Հայոց և հաւատարիմ ի վերայ հարկաց արքունի Ապուսէթ անուամբ, ըստ տաճկական լեզուին, յարելութեամբ եբրայական դպրութեանն: - 170. Ի նմին ժամու զգացեալ վասն նորա մեծ իշխանին Արծրունեաց Մերշապհոյ, որ յայնժամ ի Տմորեացն ամրանայր բերդի՝ յղէ առ նա ելանել գնալ ի սահմանացն յայնոցիկ. – 130. Իսկ զձերբակալսն յղեցին առ Աւշին ի Պարտաւ, որք տուեալ ի կապանս բանտի և դատապարտեցան ի մահ, սրախողխող միջակտուր արարեալ: - 372. Իսկ որք էին արգելեալք ի քաղաքն աղօթականս և պաղատանս առ մեծ իշխանն Աշոտ յղէին, զի համոզեսցէ ի մէջ նոցա զխաղաղութիւն. – 382. յղեաց առ զօրավարն Ժիրաք, ասէ, ,,փութա՛ ի հանդիպումն իմ,,. – 272. Յղեաց զկոչնականսն զպատահմանն տանելով առ նա զպատասխանիսն. – 352. յղեաց պատգամս և ասէ – 246. Յղեն առ Գուրգէն դեսպանս. – 226. անելով զսնոտի և զանօգուտ պաշտօնն, որպէս և սուրբն Քռիւսի առ Արտաշէս: - 88. յղէ առ Գուրգէն զՎահան Արծրունի և զվանաց երէցն Թէոդորոս զգլխաւորն Հոգեաց վանից, ասէ. – 330. Յղէ առ իշխանն, զի առանց և ոչ մի ինչ յապաղանաց փութացեալ հասցես այսր: - 348. Յղէ առ նա իշխանն ի ձեռն հրովարտակի զայս ինչ. – 176. յղէ ի Հայս զԱրտաշիր որդի իւր - 112. Յղէին պատգամս առ որդիսն Իսմայէլի և ցուցանէին զմտերիմ հարազատութիւն, թէ ,,որդիք Աբրահամու եմք մեք և դուք, եղբարք. պարտ է ձեզ գալ յօգնականութիւն մեզ, և առցուք զերկիր ժառանգութեան մերոյ,,: - 156. ոչ ինչ ձեռնամուխ լինելով ի նա, վասն կասկածանաց Պարսից արքային, միայն սպառնական խոստաբանութեամբ յղէ առ նա պատգամս: - 130. որոյ գնացեալ առնու յինքն զԳագիկ և յղէ սպառազէն պատրաստութեամբ ի Վանտոսպ առ տիկինն Վասպուրական, և պահել ի զգուշութիւն: - 350. Որոց կապեալ զԳուրգէն երեքկին կապանօք և դարձեալ ի պարանոցն եդեալ շղթայս՝ յղեն ընդ Ատրպատական Պարսից և տան ի բանդ ընդ կապեալսն. – 318.

ՅՂՈՒԹԻՒՆ - զի խորհուրդ յղութիւն է մտաց, և բան ծնունդ է իմացմանց. – 258.

ՅՂՓԱՅԵԱԼ - Բայց քաղցրաբարոյ իշխանն Աշոտ, հեզն և ամենայն բարեօք յղփացեալն, տեղի ետ ասացելոյն: - 362. զոր ոչ անփոյթ արարեալ լի բարեմտութեամբ յղփացեալն Աշոտ՝ խօսի ընդ թագաւորին զխաղաղութիւն. – 382. Ընդ ժամանակսն ընդ այնոսիկ Աշոտ

թագաւորն Հայոց փոխի յաշխարհէս ի բարիոք ծերութեան, փափկացեալ և յղփացեալ խրախութեամբ, ձեռն նորա յամենեսին և ամենեցուն ձեռք ի նա – 356. մինչ այնքան շքեղութիւն մեծարանօք յղփացեալ յօրացեալ կայր հազարապետն – 344. յորում շահաստանն Դուին, մարդախիտ պարսպաւոր պատնիշօք պատուարեալ և տուրևառիկ վաճառականութեամբ և ազգի ազգի պղծութեամբ յափրացեալ յղփացեալ: - 358.

ՅՈԲԵԼԵԱՆ - Արդ ի գալ միւսոյ ամին որ յոբելեանք Զ և ոլըմպիատք ՀԲ, ընդիքտիոնք Ի … աներկբայ խորհուրդ ի մէջ առեալ թագաւորն սինկղիտոսօքն հանդերձ և ամենայն մեծամեծօքն Բաբելացւոց , զի զիշխանս աշխարհին Հայոց ի բաց բարձցէ յիւրաքանչիւր տէրութենէ – 184. և ունի յոբելեանք Զ և ոլոմպիադր և ընդիքտիոնք, և Գ ամ հայրապետութեան Հայոց կաթողիկոսի տեառն Զաքարիայի, և մուտ եօթներորդ ամի, յորում կային յարքունիսն իշխանքն, ըստ եօթնեկի չափոյ շարժման ժամանակաց. – 312. ՎԱՍՆ ԹԱԳԱՒՈՐԻՆ ՋԱՓՐԱՅ, ԶՈՐ ԻՆՉ ԽՈՐՀԵՑԱԻ Ի ՎԵՐԱՅ ԱՇԽԱՐՀԻՍ ՀԱՅՈՑ, ԵԻ Ի ԳԼՈՒԽ ԵՀԱՆ ԶԿԱՄՍ ՉԱՐՈՒԹԵԱՆՆ, ԵԻ ՈՐ ԻՆՉ ԸՆԴ ՍՈՎԱՒ ՆԱԽ ՔԱՆ ԶԼՆՈՒԼ ՎԵՑԵՐՈՐԴ ՅՈԲԵԼԻՆԻ, ԵԻ ԵՕԹԱՆԱՍՈՒՆԵՐՈՐԴ ՈԼՈՄՊԻԱԴԻՆ, ՅԵՏ ԻՆՆԵԻՏԱՍՆ ԸՆԴԻՔՏԻՈՆԻՆ, ՅՈՐՈՒՄ ԲՈՎԱՆԴԱԿԻՆ ԺԱՄԱՆԱԿՔ ԲՌՆԱԿԱԼՈՒԹԵԱՆՆ ՏԱՃԿԱՑ ԱՄՔ ՄԻԲ ԸՍՏ ԹՈՒՈՑ ՀԱՅԵՐԷՆ ՏՈՒՄԱՐԻ. – 170.

ՅՈԳՆ - բերանաբաց դժոխաբար լայնեալ զբերան իւր՝ յոգունց քան թէ սակաւուց արար վիժել յանդունդս, որոց ոմանք և տունք նոցա գերեզման նոցին եղեն – 358.

ՅՈԳՆԻԼ - և յոգնեցան երկոքեան կողմանքն ի մեծ պատերազմին. – 140.

ՅՈԼՈՎ/Ք/ - անդ հասեալ քաջացն մերոց եղբարցն երեցունց ազատագունդ սակաւաձեռն գրոխիւ ի ձմեռնային ժամանակի, և ընդ լրթնատեսիլ լուսոյն վազս ի վերայ եղեալ՝ հանին ընդ սուր յոլովս քան թէ սակաւս: - 372. Եւ յոլով այն լինէր զոր ինչ գրէինն՝ զոր ոչ էր գործեալ Հայոց - 194. և ելեալ ի վերայ Պարսկահայոց գոեհացն և անդ բազում քաջութիւն նահատակութեան ցուցեալ՝ յոլովից գերելոցն ընդարձակեաց, հանելով /400/ և զաւարն ի ձեռաց նոցա – 402. և զի հաւասարութիւն երից ազգացն, այսինքն որդւոցն Նոյի, կարգաւ կանոնեալ դրոշմեալ կան յոլովից գիրս ոչ է մեզ հարկաւոր զնոյն երկայնաբանութեամբ երկրորդել: - 12. և զսակաւուց քան թէ յոլովից գրեաց անուանս ի յիշատակարանի անդ զՇահդոսդ, որ թարգմանի արքայասէր, և զԳոհշթասդ, որ թարգմանի ներկագործ ծիրանեաց արքայական զգեստու, և զՇմաւոն եպիսկոպոս, վէմ եկեղեցւոյ Քրիստոսի ընդ նմին և այլ եպիսկոպոսք և քահանայք արք Ճ - 106. որ կարի սիրելի է ինձ, մանաւանդ թէ յոլովից, կամ թէ ամենայն հաւատացելոց ի Քրիստոս՝ յերկարագոյնս առնել ի ճառիս զդեգերումն շահատակութեան, ձեզ լսել և ինձ գրել: - 76. որք ասեն զՀեփեստեայ գողանալ զհուրն յաստուծոյն, մասն ինչ մարդկան շնորհել և զյոլովն ինքեան ունել – 52. պատշաճագոյն զպատերազմին խրոխտական բարձրավզութեամբ վանել զախոյեանսն, և առեալ զբանակն յաւարի, և ընդ սուր հանեալ յոլովս քան թէ սակաւս, հասին ի գոգ տեղի մի ի Մղունիս գեօղ: - 402. բայց քանզի պատմագրութեան է ժամս և ոչ գովասանականութեան՝ արտաքոյ եղէց յոլովից բանբասանաց. – 300. Եւ այլովք ևս յոլովիւք բազումս է ասել վասն աշխարհալից նահապետացն: - 26. և յանկարծակի ի մէջ գիշերին Գրիգոր ախոյեանայարձակ դիմեալ շուրջանակի փակեցին ի ներքս զբանակն, սրով և աղեղամբ / 330/ վէրս մահաբերս ի վերայ եղեալ՝ յոլովք անկան ի զօրուէն. - 332.

ՅՈԼՈՎԱԳՈՅՆ - և արարեալ անդ յոլովագոյն աւուրս իբրև տարոյ միոյ. – 370. զհարստահարութիւնն բացաձգեալ, և զթուղթս առ մի մի յիշխանացն յղել յաճախէր, յոլովագոյն առ իշխանն Աշոտ և առ եղբարս իւր. – 360. զոր առաջնոցն մատենագրեալ դրոշմեալ կայ ի գիրս ընդ ժամանակս ժամանակս սոցա քաջարութիւնք և արժանաւորք յոլովագունի և մեծամեծաց գովութեանց: - 96. Զոր պարտ էր աստանօր յոլովագունիւք ոմամբք աւաղականօք ընդ ողբակիցս՝ և զմարգարէականն առնուլ ի ձայնարկութիւն – 22. յորոց վերայ սուր եղեալ զբազումս սպանին և զևս բազումս վիրաւորեցին և զյոլովագոյնսն ի գերելոցն հանդերձ ընտանիւք իւրեանց զերծին ի նոցանէ և անցուցին ընդ պահակ ձորոյն յամրական կողմանս լերինն: - 220. սմա ծանօթացեալ և սիրողացեալ

ժամանակաւ ուսուցանէր բազում ինչ նմա և յոլովագոյնս զինոց կտակարանաց, և եթէ ոչ գոյ բնութեամբ որդի Աստուծոյ: - 158. տալով Աշոտի … զգահին նախնական իշխանութեան այլովք յոլովագոյն միջոցօք աշխարհիս, մինչև յամուրն Նախճաւանու: - 360.

ՅՈԼՈՎԱԿԻ - և զայս ոչ միանգամ, այլ յոլովակի՝մի զմիոյ կնի ընթացուցանէր դեսպանս հրովարտակօք և պատարագօք: - 62.

ՅՈԼՈՎՈՒԹԻՒՆ - Զոր բան և վասն օձին սքանչելապէս ուսուցանէ Փիլոն Աղէքսանդրացի՝ յառաջ քան զդրժանացն դիպուածս՝ յոլովութիւն իմաստից ունել ամենայն շնչականաց. – 22.

ՅՈՒՐՏԱԼ - Զի Վռամ և Յազկերտ զկէս աշխարհիս յինքեանս յանգուցեալ՝ զբոլոր ապա աշխարհիս զտիրելն յոխորտային: - 114.

ՅՈՒՐՏԱՆՔ - Եւ կայր զյօնսն պռզտեալ, կոկոզաբանէր լի յոխորտանօք, խրոխտայր, եռացուցանէր ի վեր մղէր զդառնութիւն ժահահոտ մաղձոյն չարաթոյն վատախառնութեանն – 242.

ՅՈՀԱՆ - Արկադեայ կայսեր թագաւորեալ ամս ԻԳ մեռանի սաստկակոծ պատուհասիւ յաղագս մեղանացն առ Յոհան Ոսկեբերայն: - 114. և տարեալ հանգուցանեն զնշխարս սրբոյն յԱշտիշատ Տարօնոյ ի տեղւոջ վկայարանի սրբոյն Յոհաննու Մկրտչին և Աթանագինի վկային: - 120. զոր ընկալեալ սուրբ հայրապետին և բարեպաշտ թագաւորին Թէոդոսի հինգ թղթովք և հինգ պատասխանեօք՝ կարգէ զսուրբ վարդապետն ընդ վարդապետութեան աթոռակալութեան սրբոյն Յոհաննու Ոսկեբերանի և այլոց քաջաց և գլխաւոր վարդապետացն – 116. Իսկ երանելի եպիսկոպոսին Յոհաննու ընտրեալ իւր առանձնակ միայնաստան տեղեակ, աղօթից միայն պարապեալ, ի բաց կալով յեպիսկոպոսական հովուապետութենէ: - 324. Յորոյ տեղի մատուցին զՅոհան ոմն, այր հեզ և բարեպաշտօն, լցեալ երկիւղիւ Տեառն, պատշաճ առ վերակացութիւն եկեղեցւոյն Քրիստոսի: - 324. Վայել էր իսկ եպիսկոպոսին Յոհաննու՝ առնուլ զլուծ համանուանն իւրոյ զՅոհաննու Մկրտչի, որ կապեալն էր ի Հերովդեայ և տուեալ ի բանտ: - 250.

ՅՈՀԱՆ ՄԿՐՏԻՉ - - և տարեալ հանգուցանեն զնշխարս սրբոյն յԱշտիշատ Տարօնոյ ի տեղւոջ վկայարանի սրբոյն Յոհաննու Մկրտչին և Աթանագինի վկային: - 120.

ՅՈՀԱՆՆԷՍ - Ետ պատասխանի սուրբ հայրապետն Յոհաննէս հանդերձ մեծ նախարարօքն Հայոց և ասեն. – 244. Զայս և առաւել քան զսոյն խրատէր և ուսուցանէր սուրբ հայրապետն և քաջ հովիւն տէր Յոհաննէս կաթողիկոս Հայոց մեծաց: - 182. Ընդ ժամանակս ընդ այնոսիկ էր կացեալ յաթոռ հայրապետութեան տէր Յոհաննէս կաթողիկոս Հայոց: - 180. Ընդ նոսին և երանելի եպիսկոպոսն Յոհաննէս և ճգնաւոր քահանայ Գրիգոր – 324. Իսկ երիցս երանելի սուրբքն տէր Յոհաննէս Արծրունեաց եպիսկոպոս և երանելի քահանայն Գրիգոր և տէր Գրիգոր Արծրունի խրախուսեալք յԱստուած, կացեալ յատենի ի մեծ ասպարիսի հոգևորական պատերազմին – 250. Որգունակ և յաղագս փրկչական տնտեսութեանն գրէ Յոհաննէս ի կատարածի աւետարանական շարագրածին: - 302. էր իսկ եպիսկոպոսին Յոհաննու՝ առնուլ զլուծ համանուանն իւրոյ զՅոհաննու Մկրտչի, որ կապեալն էր ի Հերովդեայ և տուեալ ի բանտ: - 250.

ՅՈՀԱՆՆԷՍ ՄԿՐՏԻՉ - Վայել էր իսկ եպիսկոպոսին Յոհաննու՝ առնուլ զլուծ համանուանն իւրոյ զՅոհաննու Մկրտչի, որ կապեալն էր ի Հերովդեայ և տուեալ ի բանտ: - 250.

ՅՈՀԱՆ ՈՍԿԵԲԵՐԱՆ - Արկադեայ կայսեր թագաւորեալ ամս ԻԳ մեռանի սաստկակոծ պատուհասիւ յաղագս մեղանացն առ Յոհան Ոսկեբերան: - 114. զոր ընկալեալ սուրբ հայրապետին և բարեպաշտ թագաւորին Թէոդոսի հինգ թղթովք և հինգ պատասխանեօք՝ կարգէ զսուրբ վարդապետն ընդ վարդապետութեան աթոռակալութեան սրբոյն Յոհաննու Ոսկեբերանի և այլոց քաջաց և գլխաւոր վարդապետացն – 116.

ՅՈՂԴՈՂԴ - Եւ վասն իւրեանց թուլամորթութեանն և անհաստատ և յողդողդ մտաց սիրեցին զփառս մարդկան առաւել քան զփառս Աստուծոյ. – 246.

ՅՈՅԶ - Բայց յետ բազում յուզիցն և պատերազմացն եհաս տիրել նմա Անձաւացեաց տէրութեանն զայս օրինակ: - 324. Եւ ի բազում յուզիցն և ի խնդրոցն և զօրաժողովն լինելոյ և պատերազմ ընդդէմ վառելոյ և զձև ամրական մաքառմանցն յարդարելոյ և բռնալիր ուժեղագոյն մեքենային բախմանց քարձգութեանցն, զոր և ընդունայն աշխատութեամբ վարանեալ, անըստնանելի /հավանաբար՝ անստանալի/ մնալով ամրոցին՝դառնայ յիւր իշխանութիւնն: - 326.

ՅՈՅՃ - զյոյժ փառացի և ճոխ և նազելի զնախագահ նստեալ զարմէ – 300. ,,լեառն մի է յոյժ անհնարին բարձր, որոյ անդր քան զնա չի՛ք բնակութիւն մարդկան,,. – 48. Այլ և զՓիլոնեայսն ասացաք երկրորդել զառն քաջի և զյոյժ հմտագունի իմաստասիրութեան - 34. Այլ քանզի յոյժ առաւելեալ էր իմաստութեամբ Գագիկ՝ տեղի տայր բովանդակ գաւառապետաց զօրագլխաց աշխարհիս, գնայր ընդ նոսա իմաստութեամբ խորագէտ հնարաւորութեամբ, ըստ անձնիւր գահու մեծարեալ պատուադրութեամբ հաճոյանալ ախորժէր նոցա: - 354. Այսոքիկ գաւառք անուանիք, զոր յառաջին ժամանակս իւրոյ իշխանութեանն սեփհականս իւր արարեալ ունէր հայրն նենգութեան Մարդպետն կոչեցեալ … և մանաւանդ քաղաքն Շամիրամայ հռչակելին և յոյժ փառաւորագոյնն յամենայն կողմանց Վասպուրականի: - 388. ապա եթէ ոչ՝ պաշտելիք եղիցին եկեղեցիքն, որ փրկիչն անուանին և երկրպագելիքն աստուածային երկրպագութեամբքն. որ է յոյժ ծիծաղելի. – 394. Արդ ո՞վ ոք արժանի յոյժ ծաղու զբանք ուսմանս այսորիկ համարեսցի. – 46. Բայց մեք զյոյժ հռչակեալսն միայն նշանակեցաք. – 96. Բարկացաւ յոյժ իշխանն ընդ արհամարհանսն, և յոյժ զայրացեալ մեծաւ ցասմամբ՝ առնու զբազմութիւն ազատագունդ զօրաց ըստ տոհմս ազգաց իւրաքանչիւր զօրօք. – 178. Բարկացաւ յոյժ իշխանն ընդ արհամարհանսն, և յոյժ զայրացեալ մեծաւ ցասմամբ՝ առնու զբազմութիւն ազատագունդ զօրաց ըստ տոհմս ազգաց իւրաքանչիւր զօրօք. – 178. գրէ թուղթ հաւատոց առ Ղևոն կայսր Յունաց, և ընկալեալ ի նմանէ պատասխանիս՝ բազում ինչ ի Կուրանէ անտի իւրեանց արտաքս ընկէց զյոյժ առասպելագոյնն, քանզի ստուգապէս ծանեաւ զզօրութիւնն. – 166. և անհակառակող հաւանութեամբ հեզահայեաց առ միմեանս սիրոյ յորդորմամբ արտաքոյ վատթարին խոհականաբար մնալով, քաջախորհուրդ առատաբուղխ խաղացմամբ իմաստութեանն զմիմեանս բռնահարելով, զօտարոտին ի բաց վարատելով զբղջախոհութեան անհանճարութիւն՝ զլաւն և զյոյժ օգտակարագոյն ընտրութեամբն գիրկս արկին. – 388. Եւ յոյժ հաճոյ թուեցաւ խորհուրդս այս առաջի թագաւորին, և մեծապէս ուրախ լինէր: - 196. Եւ ամուրք յոյժ և անկասկածելիք ի ձեռս նոցա են, ամուրն Ջլմար և Սրինգ, և Ճախուկ բերդն. – 212. Եւ առ յոյժ յանդուգն յարձակմանն բազում այն լինէր, զոր ձիովքն ընթադրեալ դիաթաւալ կացուցանէին, քան զոր սրովն սատակէին: - 174. Եւ առ յոյժ յիմարութեանն հարեալ ցանկութեամբ, խլրդենի դիմօք, իբրև զգազան մի կատաղեալ՝ սկսաւ յարձակել ի վերայ աշխարհիս Հայոց. – 170. Եւ արար նմա հաւատարմութիւն յոյժ գրով, և կնքեալ աղիւ ըստ սովորութեանն իւրեանց երդումն, և խնդրեաց ի նմանէ զօր ինչ սակաւ յերևելի մարդկանէ, յորս ինքն վստահն էր: - 154. և բանակեցաւ ի յԱդամակերտ ոստանին Արծրունեաց, և անդէն սկսաւ ասպատակս սփռել, աւար առնել, կուտել առ ինքն զկապուտ աշխարհին յոյժ սաստկութեամբ: - 184. և բարկացեալ յոյժ հրաման ետ փութով զրաւ առնել կենաց նորա: - 206. և դարձեալ յոյժ ծիծաղելի է: - 396. Եւ երկայնագոյնս է զամենայն բանս պղծութեան նորա շարագրել, զի յոյժ բազում է և ընդդիմակ Աստուծոյ: - 164. Եւ զԶրադաշտ մոգ արքայ Բակտրիացւոց և Մեդաց ընկճեալ հալածեաց մինչև ի սահմանս Խեփտաղաց, հզօրապէս տիրեալ բովանդակ Խուժաստանի և կողմանց արևելից և Պարսից, անդր ևս քան զԲահխ և զԴեպուհան , ի Գովմայիդ և ի Գուզբան, ի Շերիբամական /գրքում՝ Շերիբամամական/ և ի Խոճիհրաստան, և միանգամայն ասել մինչև ի ծովն Հնդկաց՝ յոյժ արութեամբ – 44. Եւ զչարեալ ընդ խափանումն խորհրդոցն իւրոց՝ ամբաստան յոյժ լինէր զԱշոտոյ հանդերձ թղթովք Տաճկաց, որք էին ի կողմանս Հայոց, բազում այն ինչ զոր ստութեամբ քան թէ ճշմարտութեամբ զեկուցանեն զնմանէ զգործս, և թէ հակառակս ևս թագաւորութեան քոյ

բանընդդէմ լինի հանապազ: - 172. Եւ թէ որպիսի օրինակաւ գալուստ նորա և պատերազմ վասն սորին իրաց, և արիական ձեռակերտացն շինուածք, որ և յոյժ արժանաւորք զարմանալեաց, և դարձեալ ապստամբութիւն Զրադաշտին և մահն Շամիրամայ և բան յուռթիցն որ զնմանէ – 44. և ի տունջեան ամպ թանձրախոծ իբրև զթաղ լմեալ բալաձև սպիտակափայլ յոյժ. զայնմանէ ասէին՝ երկիր օտար անծանօթ: - 48. և յաւարի առնուին զբանակետղն, դիակապուտ առնէին, ժողովէին աւար բազում, և կուտէին արծաթ և ոսկի յոյժ և զզէնս պատենազարդս, զզարդս և զզէնս արի արանց և զընտիրս երիվարաց և զզարդս նոցա. – 176. Եւ յոյժ զուարճացեալ քաղցր բարբառովն Քրիստոսի, որ է անեղծանելի վճիռ քրիստոսասիրաց անձանց - 252. և յոյժ հաւաստի և ընդունակ գոլ զառ ի բազմաց /244/ վկայութիւն ի վերայ մեծի և կամ փոքու ինչ իրաց կամ ի վերայ կենաց և մահու. – 246. և յոյժ ուրախ առնէին զթշնամիսն ի քակել միաբանութեան իրերաց: - 194. և նախ յառաջ Սափին կարի յոյժ սիրեցեալն իւր, զսատակչական դեղն արբեալ, անբուժելի կեղով վառեալ յոսկր և ի մարմին՝ և առաջի Աւշնի զրաւ առնոյր ի կենացն: - 376. և նոքա յոյժ ուրախ եղեն, զի վասն անուանն Տեառն արժանի եղեն մեռանել. – 222. Եւ քան ընդ ապստամբելն ի նմանէ՝ ընդ յոյժ անմտութեամբ գալն առ նա զարմացաւ: - 272. և քանդեալ աւերեաց զամենայն ապարանս թագաւորին և այրեաց զնոսա հրով, և բազում գանձս մթերեալս յափշտակեաց անչափ աւարաւ գանձս ոսկոյ և արծաթոյ և հանդերձից, և անասուն բազում յոյժ, և բազմութիւն գերեաց իբրև զաւազ ծովու անթիւ: - 150. Եւ քանզի իշխանութիւնն Պարսից յոյժ լքեալ էր՝ և աներկիւղ շինեցին զքաղաքն Մադիամ և բնակեցան ի նմա: - 156. Եւ քանզի յոյժ անկասկածելի էր ամրոցն, և գանձս ոչ սակաւս մթերեալ ի նմա ի բազում ամաց – 346. զի և որք յոյժ ատեցողքն են մեր և թշնամիքն՝ տեսցեն և յամօթ լիցին, և բարեկամքն և սիրելիքն յոյժ ուրախ եղիցին,,: - 218. զի և որք յոյժ ատեցողքն են մեր և թշնամիքն՝ տեսցեն և յամօթ լիցին, և բարեկամքն և սիրելիքն յոյժ ուրախ եղիցին,,: - 218. ընդ որ յոյժ ուրախացեալ Տիբերի պատուէ ծիրանեօք և բրաբիոնաւ ի Ստադին տեղւոջն. – 80. Ընդ որ յոյժ զչարեալ սքանչելին Աղան Արծրունի որդի Վասակայ ընդ հօրն անիմաստասէր բարուցն անխորհրդածութիւն և ընդ այնպիսւոյ աստուածամարտին Մեհուժանայ գթասիրաբար վարել ազգականութեամբ – 112. Ընդ որ յոյժ ուրախացեալ Շապուհ՝ խոստացաւ փեսայացուցանել զՄեհուժան ի քոյր իւր Որմզդուհի: - 102. թէպէտ և ոչ համարձակեաց զամենայն բառնալ, այլ յոյժ պատկառանօք ամաչեցեալ՝ լքաւ ի ստութենէ անտի, որ յանդիմանեցաւ ի թղթոյ կայսերն, և ի ձեռն այսորիկ ցուցանէր բարեմտութիւն մեծ առ ազգս /166/ քրիստոնէից. – 168. Իսկ Նեբրովթ որդի Քուշայ որ ի Քամայ՝ յոյժ ուժգնագոյն ոչ միայն քան զառաջինսն ուրուականաց լինել, այլ և ոչ Հերակլի – 36. Իսկ իշխանն Վասպուրական, այն ինչ հուպ ընդ հուպ եկն ի ժամադրեալ տեղին. ընդ որ յոյժ ուրախացեալ թագաւորն, իբրև զերծեալ ի կասկածանացն, զոր ունէր յիշխանէն Սիւնեաց: - 382. իսկ նա քանզի ի հրեշտակէ ասէր ունել պատգամ և ոչ ի մարդոյ՝ յոյժ դժուարեալ ընդ իրսն՝ սպան զնա ի գաղտնիս: - 162. Իսկ ոմանք ասեն ի Ղաւոդիկեայ Փռիւգացւոց շինեալ տապանին, որ յերից մասանց երկրի՝ Ասիական կոչի կողմ. և յոյժ անհաւաստի են ասացեալքն.- 30. լսէին և նոքա, զի ձայն զօրու է և սաստիկ յոյժ: - 228. Խորտակէր և զնշան տէրունական Խաչին, զոր ուրեք ուրեք կանգնեալ լինէին. քանզի յոյժ ստիպէր զնա հոգին մոլեկան: - 168. Մինչդեռ կայր ևս կենդանի՝ ետ կանգնել փայտ մի մեծ և բարձր յոյժ, և դնել զնա ի ծայր փայտին, ունել ի բարձրաւանդակ տեղւոջ. – 290. Յայնժամ իբրև լուաւ բռնաւորն զայս դարձուած պատասխանեաց լի հզօրութեամբ և ահագին մեծաւ անարգութեամբ՝ յոյժ տարակուսանօք լցաւ յանձն իւր, և կայր մեծաւ հիացմամբ ըմբռնեալ. – 280. յոյժ վայելուչ էր և երանելի քահանային Գրիգորի՝ միաբանել ընդ նոսա և լնուլ զերրեակ թիւն – 250. յօրացեալ և ապաստանեալ ի յոյժ բազկի և ի յաղթանդամութիւն հասակի – 38. նոյնժամայն առ յոյժ ամբարտաւանութեանն և սաստիկ բարկութեանն և անհուն սրտմտութեանն և առանց բուժելի կատաղութեանն, յապուշ միտքն կրթեալ իբրև զարբեալ զանզգայ արբեցութեամբ - 264. Նոցա ելեալ արտաքս յատենէն մեծաւ

խնդութեամբ, և յոյժ զուարճացեալք փութային ելանել ի մարմնոյ աստի և մտանել առ Աստուած – 266. որ էր կին իմաստուն ի բանս և յիրս և յոյժ խոհեմագոյն միանգամայն և աստուածասէր – 186. տեսանեն զկողմանս արևելից, դաշտ յոյժ մեծանիստ, լայնատարած, հարթայատակ, անվայրափակ առ ի սահման, անբաւական ի տեսութիւն աչաց, սաստիկ լուսով զարդարեալ ի գիշերի, բազմակերպ երևմամբ – 48. քանզի էին որդիք նորա յոյժ մանկագոյնք - 44. Քանզի յոյժ պատկառ կայր ի պաշտօնատարութիւն հայրապետին իշխանն Տարունոյ, և նա սաստիկս հոգայր վասն նորա, թէպէտ ոչ օգտէր յիրին յայնմիկ: - 346. քանզի յոյժ սիրեցեալ եղև ի զօրավարէն, և առաւել քան զամենայն մեծամեծսն ընդունէր պարգևս և պատիւս – 216.

ՅՈՅԼ - Բայց էր Համամ սէգ և ամբարհաւաճ, յոյլ և թոյլ առ պատերազմի գործ, միայն և շղոմարար հպատակութեամբ վարէր առ թագաւորն – 90.

ՅՈՅՆ - թէ և Յոյնք համարին Պտղոմէիւ պարծիլ՝ երբեմն ի հաւաքումն միահամուռն ազգաց ազգաց, և յեղուլ ի լեզու յոյն. – 18.

մի մի զիւրաքանչիւր հանդէս պատերազմաց նոցա գրեցից յականէ յանուանէ. ասացից կարճառօտ և համառօտեցից զբանս. – 286. բայց զտոհմէն Արծրունեաց ոչ ինչ այլ իմանալ կարացաք, թէ զինչ գործ գործեալ նոցա, բայց միայն զխաղաղասէր կեանս կեալ առ թագաւորն և առ նախարարսն – 96. բայց իբրև գիտացին զօրքն որ ընդ նմա եկեալ էին զնորա քաջակարծրագոյն արիութիւնն՝ և պատճառանօք այս ինչ այն ինչ դարձեալ դարձան յանցնիւր տեղի: - 310. Բայց իբրև ետես բռնաւորն զանդառնալի միտսն և զաներկբայութիւն հաւատոցն և զաներկիւղ և զյանդուգն պատասխանիսն և զմեծ անարգութիւնն զոր հասոյց ի վերայ նորա և նոցին օրէնսդրին…բարկացեալ յոյժ հրաման ետ փութով զրաւ առնել կենաց նորա: - 206. Բայց հրաման ետ Դերանիկն Գրիգոր հարազատի իւրոյ ի նոյն տանէ Արծրունոյ, և կալաւ զնա և եդ ի յամուրսն Սևան. և հրամայեաց Հասանկան քեռորդւոյն իւրոյ՝ պահել զնա յընդարձակի: - 342. Բայց մեզ կայ առաջի ասել վասն Ջափրայ և չար գործոց նորա, անգիրս մնացեալ յայլոց, զոր կատարեաց ի վերայ աշխարհիս Հայոց երկայնագոյն ժամանակաւ և անըմբերելի նեղութեամբ ի մերս հանդիպեալ աւուրս, որ էր Հայոց Ց թուական: - 168. բայց միայն տէր Ապումկդէմ և որք ընդ նմա պահէին զպահպանութիւն գիշերոյն և դիտէին զդիտաւորութիւն զօրացն – 228. Բայց Մուսէ ոչ հաստատնագոյնս վասն Աշոտի զխոստմանն բերելով յանձնառութիւն արձակել զնա յիւր իշխանութիւնն – 330. Բայց յաւելեալ լինի պատճառ ունելոյն զնա զայս օրինակ, եթէ էր փեսայացուցեալ զԴաւիթ զեղբայր կորապաղատին ի քոյր իւր Մարիամ. – 342. Բայց նախ զԱշոտ և զտուն նորա ածջիք այսր – 198. Բայց նոքա ևս քան զևս սաստկացուցանէին զմարտն: - 210. Բայց նոքա ի մտի եդեալ էին, թերևս պատիր խաբէութեամբ /170/ կարասցեն բառնալ զնոսա յիւրաքանչիւր տէրութենէ: - 172. Բայց նոքա քանզի ապաստան լեալ յանկասկածելի յամուրս և ի բազմութիւն զօրացն և ի քաջութիւն արանց պատերազմողաց՝ և ո՛չ առ փոքր մի խոնարհեցան ի բանս նորա կամ ետուն տեղի պատասխանւոյ. – 274. Բայց ոչ գիտեմ, թէ յանուն աշխարհի՞ն թէ ըստ կերպարանին անուանեաց զնոսա Արծրունիս: - 72. զաշտարակն, զոր շինէր որդին Աբգարու փլուզեալ ի վերայ սպան զնա, վրէժխնդիր եղեալ մահուն Ադդէի սրբոյ: - 80. բայց ոչինչ ձեռնհաս լինէր օգնել նոցա վասն դառն հրամանի ամբարիշտ թագաւորին. – 218. բայց պարտեալ եղև գունդքն Տաճկաց ի քաջէն Գուրգինայ և բեկաւ զօրութիւն նոցա: - 308. Բայց Վասակս այս … վասն ազգակից գոլ նոցա ընդ տոհմին Արծրունեաց… ել գնաց իւրովք կամօք ի Սամառայ և եղև աստուածուրաց – 248. Բայց տէր Ապուջափր և որ ընդ նմա՝ քաջապէս մարտեան ընդ այլազգիսն և առին: - 306. Բայց քանզի ամենայնիւ ամենայն ուրեք ոչ ոք զօրեաց կալ ընդդէմ նորա յամենայն գործս զոր և կամք իւր ախորժէին՝ սկսաւ ձեռնամուխ լինել կարգաւ ընդ բոլոր աշխարհս արևելեայս – 274. Բայց քանզի աւերեալ էր զՆինուէ Նաբրովթայ ի բռնանալն ի վերայ Սեմեացն, և զԲաբելոն /16/ փոխանակ նորա շինեալ – 18. Բայց քանզի յերկնուստ էր հասեալ վտանգն, և աստուածառաք էր բարկութիւնն՝ և ոչ ոք զօրեաց և եկաց ընդդէմ նորա ելանել ի պատերազմ, այլ որ եհարն՝ նոյն և բժշկեաց: - 374. բայց քանզի տէր մատնեաց զնա ի ձեռս նոցա, որպէս ասաց Դաւիթ՝ և եղև ահ տեառն ի վերայ ամենեցուն. – 354. բերանաբաց դժոխաբար լայնեալ զբերան իւր՝ յոգունց քան թէ սակաւուց արար վիժել յանդունդս, որոց ոմանք և տունք նոցա գերեզման նոցին եղեն – 358. Բուռն հարեալ սպարապետն զձեռանէ նորա և հանեալ արտաքս, քաջալերելով լինել առանց /344/ երկիւղի. – 346. գայ դարձեալ ի տեղին զբօսնուլ ի նմա. – 86. գլխաւորն ի նոցանէ Համիս, և միսն որ ի կողմանց Ժանգանայ՝ ոչ իրաւացի ըստ պատգամաւորին իւրեանց ասացին առնել զայս: - 404. Գնայ զկնի նոցա և երջանիկն Զուիթայ երէց յԱրտաշատէ զկնի հաւատացեալ Հրէիցն – 104. գնաց և Վահան զհետ նախարարացն առ Վարդան յառաջագոյն, տալ նմա զվերակացութիւն Հայոց. – 128. գնացեալ պատահին նմա ի սպառուածս Տաւրոսական լերինն: - 66. Գրեալ ի թղթի անդ՝ ի ձեռն նորա հաւատալ աշխարհիս Հայաստանեայց – 186. գրէ թուղթ հաւատոց առ Ղևոն կայսր Յունաց, և ընկալեալ ի նմանէ պատասխանիս՝ բազում ինչ ի Կուրանէ անտի

իւրեանց արտաքս ընկէց զյոյժ առասպելագոյնն, քանզի ստուգապէս ծանեաւ զզօրութիւնն. – 166. գրէ Կիւրոս առ Տիգրան վասն օգնականութեան մատուցանել նմա: - 66. գրէ յականէ յանուանէ առ որ մնացեալն էին յաշխարհս յամուրս իւրեանց, զի փութով յիւրաքանչիւր տեղեաց առանց կասկածանաց և երկիւղի առ նա հասանիցեն – 296. Գրէ պատասխանի Մուշեղ նմա այսպէս. – 138. դա աւադիկ արմատ դառնութեան ի վեր երևեալ, և բազումք պղծին նովաւ: - 254. Դահեկին/ճիշտը՝ դայեկին/ նորա մնալով ի ներքոյ կախաղանին՝ ամփոփէ /102/ զսուրբ գանձն ի ծոց իւր, տարեալ փոխէ ի վկայարան հանգստի ի ձեռն սրբոյն Ներսէսի – 104. դառնալ անդրէն ոչ կամէին, զի կարի սաստիկ ամօթս համարէր զգործեցեալսն, կալ տևել ժուժկալել ընդդէմ նոցա ոչ կամէին, զի բազում անկան ի զօրաց իւրեանց: - 276. Դարձեալ զՍողոմոն Բագրատունի վառեալ ի զէն սատանայական՝ յղէ առ նա բազում անգամ զնոյն խորհելով. – 318. դարձեալ կնամարդ զնա կոչելով ընդդէմ միմեանց անուանաձայնէ. – 114. Դարձեալ պիտոյ է մեզ դառնալ առ ի վերագոյնսն, որ նախ քան զպատերազմն Աղձնեաց եղեալ են հանգամանք գործոց ի զօրացն Տաճկաց, և թէ ո՛րպէս եկաց ընդդէմ նոցա իշխանն Աշոտ և վանեաց զնոսա սրով սուսերի: - 176. Դէպ եղև միում ի նոցանէ մեռանել, որում կոչէին Աբդլայ. – 158. Դէպ եղև նմա ճանապարհաւ գալ ի քաղաքն Մադիամ, էր և ծանօթ գիտութեան գրոց, թէպէտ և ոչ կատարելապէս: - 162. ԵԹԷ Ո՛ՐՊԷՍ ԿԵՂԾԱՒՈՐԱԿԱՆ ՍԻՐՈՎ ՆԻՒԹԷՐ ՉԱՐԻՍ ԱՒԾԻՆ Ի ՎԵՐԱՅ ՀԱՅՈՅ Եւ ԻՇԽԱՆԱՅ ՆՈՅԱ: - 370. եթէ ,,եկայք առ իս ամենայն աշխատեալք և բեռնաւորք, և ես հանգուցից զձեզ,, , և թէ ,,որ ուրասցի զանձն իւր վասն իմ՝ գտցէ զնա,,. - 252. եթէ հաւանեալք արդարոյն և ապաւինեալք ի նա՝ յուսացան ի բան նորա, ծառայել երկիւղիւ հրամայելոցն ի նմանէ՝ զի՞նչ անհաւատ թուի և ի փրկութենէն ընդ նմին վայելել. - 32. ելանել ի գագաթն Ամրական անձաւին զբօսնուլ նովաւ առ վճարումն բաւականութեան, ըստ մասանց պիտոյից օժնդակութեան քաղաքայարդար ապարանից թագաւորական պաղատի իւրոյ ձեռակերտին – 392. ելանէ մարզպանն ի վերայ նոցա և յինքն հանէ զՏամբեր և զԸռնայ գաւառ և որ ասի Ապուջափրի բերդ, ի Վհրի քաղաքին Կորճէից զիւր կացուցանէ ոստիկանս ի պահպանութիւն ամրոցին: - 400. ելին գնացին առ Ատոմ … Յիսէ Տրունեաց տէր որդի Հոնաւարայ, Վարազշապուհ Աբելինից տէր, Թադէոս Ակէացի Շերեփայ որդի, և այլք ընդ նոսա: - 364. եկն և նա առ նա յԵրուսաղէմ – 80. Եղեն ընդ նմա և ուխտեցին ուխտ, և ետուն նմա կին յազգէն իւրեանց և պատրաստեցան լինել ընդ նմա, որպէս և կամք իւր հրամայեսցեն. զոր թէ ասիցէ ոք՝ ի հրամանէ Աստուծոյ լինել սկիզբն առաջարկութեանն այնորիկ: - 160. Ես ինքնին աչօք իմովք տեսի զայրն զայն, որ հարեալն էր զնա, և ի նմանէ ստուգեցի վասն նորա: - 190. Ես իսկ առ ընթեր գոլով անվրիպագոյն իրազեկ եղէ բովանդակ նորա հաստատնագոյն առ յոյսն կազմեալ փրկութիւն. – 388. Ես իսկ լուայ յորժամ կարդային զԱւետարանն, թէ ասաց Քրիստոս, ,,որ խոստովանեսցի զիս առաջի մարդկան՝ խոստովանեցայց և ես զնա առաջի Հօր իմոյ որ յերկինս է,,. – 222. ես վաղ անարգեցի զքեզ, և ոչ փոքր ինչ երկիւղ կալայ ի սրտի իմում վասն քո, զի քամահելով ի վերայ քո՝ զզօրավարն քո հանդերձ զօրօքն ի սուր մատնեցի, և զաւար նորա բաշխեցի, /294/ և յերկրորդումն ոչ փոքր նախճիրս համարեցի զօրացն քոց. – 296. Ետ պատասխանի նմա զօրավարն ի խաղաղութիւն, և ասէ – 226. ետ նմա զԱրևաստան զամենայն մինչև ցՄծուին և զերկիրն Հայոց մինչև ցգետն Հուրասդան, և զգաւառն Կոտայից մինչև յաւանն Գառնի յեզր ծովուն Բզնունեաց և մինչև յԱռեստն աւան և զԿոգովիտ գաւառ մինչև զՀացիւն և ցՄակու: - 140. Երևեալ նմա յայնժամ ի բանտին այր մի գեղեցկատեսիլ ի կերպարանս ալևորի, լուսակիզն փայլմամբ՝ ասէ ցԳուրգէն – 318. երթեալ տուայտի ի դրան Մարաց Դարէհի, մինչ զգալ վասն նորա Երուանդայ. – 84. Երկրորդ վասն բնակութեան նախնեացն նորա Ադրամելեայ և Սանասարայ Արզն՝ կոչեցին Արզրունիք: - 72. Երրորդ վասն արիութեան քաջութեանն, արծուաբար քաջասրտապէս խիզախութեանցն ի մարտս պատերազմացն՝ յարծուիս առակեցին զնոսա: - 72. և ազատացն յետուստ կողմանէ սուր ի գործ արկեալ սպանին զնա, և զգլուխ նորա հատեալ առ /368/ բերդայինսն յղէին: -

370. Եւ ազատորերոյն Վասպուրականի աղերսեալ՝ մի երթալ զայն ճանապարհ, առաջի դնելով զախտակրելն՝ նորա ընտրեալ զմահ ի վերայ քեռոյն իւր, քան զկեանս կեղակարծ ինչ խորհել զնմանէ: - 384. և Ահմատայ ընդ մէջ փակեալ զղաշիկն՝ յանխնայ հարուածովք հարին, մանաւանդ զհետևակազօր գրոխսն և զգռեահսն որք ընդ նոսա. – 368. Եւ այլ ամրաբնակ ազատորերոյն պարգևս և պատիւս օր ըստ օրէ բաշխէր, և յինքն յանգուցանել ախորժելով վարէր ընդ նոսա: - 360. և անդ Խուրան բազում նահատակութիւնս և յաղթութիւնս կատարեալ զօրականօքն որ ընդ նմա երթեալ էին յաշխարհէս Հայոց. – 80. և աներկիւղ համարձակութեամբ լի ամբարտաւանութեամբ առնէր ասպատակ ընդ ամենայն կողմանս տէրութեան նոցա: - 274. և առաջնորդէր նորա սպարապետն ի գործս պատերազմացն և յելս և ի մուտս աշխարհացն. – 270. և առաքեցին դեսպանս առ արքայ և ինքեանք նստան շուրջ զլերամբն, մինչև փութով եկեսցէ նոցա հրաման ինչ յարքունուստ: - 280. և բանակեալ կային ի լերինն որ ի վերայ գեղջն Թուայ, /224/ ի հովիտս նորա, որ կոչի Արեան լիճ. – 226. և գրեալ էր առ Բուխայ, զի մի՛ ինչ չարիս խորհիցի կամ գործիցէ առնն այնմիկ, այլ տացէ տանել զնա առ թագաւորն մեծաւ պատուով և զգուշութեամբ: - 288. և դատաստանաւ փրկեսցէ զնոսա – 218. և երաժշտականքն երգս առեալ զյաղթութեանն Փարաւոնի՝ գոչէին ,,Տէր խորտակէ զպատերազմունս, Տէր է անուն նորա,,: - 232. և զազգն նորա փրկեալ ապրեցուցանէ ի սրոյն խողխողմանէ. – 76. Եւ զԳագիկ որ և Ապումբուան՝ զնա ոստիկան կարգեաց ի վերայ աշխարհին, տեղապահութեամբ տիրել, զի կարի մատաղօրեայք էին որդիք Դերանկին. Աշոտ էր Թ ամաց, յորժամ մեռաւ Դերանիկն, Գագիկ էր Է ամաց, Գուրգէն Ե ամաց: - 354. Եւ զգեցոյց նոցա հանդերձս և կանգնեաց նշանակ իշխանական և էած սուսեր ընդ մէջ և կամար ականակապ և երիվար ընտիր մեծազարդ. – 314. և զՄարդաստան գաւառ զբուն բաժին տուեալ ցԳուրգէն, և նորա զիւր գործակալս թողեալ անդր: - 326. և զվատացն և զաննշանիցն նշանաւորեալ ըստ վատութեանցն և զգործս նոցա – 74. Եւ զօրագլուխ կացուցանէ նոցա զայր մի Բուղայ անուն, ազգաւ թուրք. – 200. և զօրինակ մահու նորա, և որպէս զմռեալ դի նորա բարձաւ ի գաւառն Հարքայ ի տեսիլ բազմաց: - 42. և զօրք Պարսից որք էին ի կողմանս Պաղեստինացւոց, և զօրավար նոցա անուանեալ Ռազմայուզան որ է Խոռեամ՝ խօսէր ընդ Երուսաղէմի զխաղաղութիւն. – 142. և ընդ այգն ընդ առաւօտն, մինչ նոքա ննջէին յիւրաքանչիւր վրանաց օթոցի՝ և զօրքն շուրջ փակեցին սուսերօք և վահանօք և նիզակօք և վառեալ մոմեղինօք, և մտեալ ի ներքս ըստ հրամանի զօրավարին իւրեանց – 296. Եւ ընթանային ամենեքեան յաճիւռ՝ տեսանել զնոսա և ի վերայ հասանել, թէ զիա՛րդ ի գլուխ ելանիցէ ատեանն: - 242. Եւ թողին զնոսա արք իբրև ԴՌ, վիրաւորք, բոկք և մերկք և հետևակք: - 150. Եւ իբրև ազդ եղև Դերենկին՝ գնաց ընդդէմ նորա պատերազմաւ, և դառնայր փախստեայ: - 320. և լուեալ ի նմանէ պատասպանիս դիպողագոյնս և իմաստունս՝ հրամայեաց նստել: - 216. Եւ հատաւ քուն յաչաց նորա, և ոչ ոք մտանէր և ելանէր առ նա զաւուրս Ժ, զի եմուտ ի սենեակ ամօթալի երեսօք. – 282. և հեծելագունդ զօրացն Կայսկին զկնի նորա, զգացեալ զպատճառ ելիցն նորա ի բանակէն. որում ոչինչ գամագիտ կարացեալ լինել՝ դարձան ամօթալից կորակնեալք, յանգէտս համարեալ զինչ գործեցինն: - 342. Եւ հրամայեաց Բուխայ դահճացն՝ բառնալ զգլուխ նորա. – 272. և հրաման պատուիրանի տայր յանդիման բազմութեանն, զի խրատու նորա լուիցեն, և հրամանի նորա անսայցեն: - 200. Եւ մեկնակազէնքն պատեցին շուրջ զեկեղեցեաւն, և ելեալ առ նա ոմանց ընդ փորուած գմբեթին՝ և եհար մի ոմն աշտէիւն ընդ միջոց թիկանցն՝ և ընդ անթովքն հանեալ ի ներքոյ թոքացն՝ փչեաց զոգին և թաղեցաւ զթաղումն իշոյ: - 190. և յանկարծակի ի թիկանց կողմանէ յարձակեալ ի վերայ նորա արանց՝ հարեալ սատակեցին զնա: - 154. Եւ յաջորդեալ փոխանակ նորա կացեալ յաթոռ սրբոյն Գրիգորի երանելին Մաշտոց, ելեալ ի կղզոյն Գեղարքունի լճէն, զՅօհաննու Կարապետին զվարուցն բերեալ զօրինակ. – 376. և յարգելուլ զնա մեծամեծաց նախարարացն՝ չանսաց բնաւ ումեք – 228. և յերկիւղ կասկածանաց եղեալ, թէ իցէ ընդելուզեալ Տաճկաց՝ գտեալ զպահեստ գանձին ծախիցեն

զզօրութիւն նորա: - 180. և յիշատակարան նորա մոլորութեանն որով վրիպեացն և վրիպեալ կործանեաց զազգս բազումս՝ կայ և մնայ ազգաց յազգս մինչն յաւիտեան: - 248. և նա արհամարհեալ յոչինչ համարեալ զզեկուցմանն, զամբարտաւանս բարբառեալ. – 330. Եւ նա գնաց ընդդէմ նոցա սաստիկ զօրութեամբ. – 150. և նոքա հարեալ սատակեցին զնոսա սրով սուսերի յանխնայ, սպանին և զզօրավարն ի պատերազմին – 150. Եւ վախճանեալ միայնակեցին՝ կամեցաւ կատարել զպատուէր նորա Սաղման: - 162. Եւ Ալի էր այր քաջ. ասէ ցնա, արի՛ ելցուք, քանզի են և ընդ մեզ արք բազումք, թերևս լիցի ելք իրացդ պիտանութեամբ: - 160. և ահա Ապումուսէ, որ ճանաչէր երիցու որդի՝ հանդէպ նոցա ել պատերազմ և հանդիսացաւ ընդդէմ նոցա. – 284. և ահա իբրև արք Ռ ի յընտրելոցն Աղուանից պատահեալ նոցա հարին զնոսա և ածին փախստեայ ի բանակն և ինքեանք դարձան ողջանդամ, և ոչ մի ոք վիրաւորեցաւ. – 282. Եւ ահա լոյս սաստիկ իջեալ յերկնից և ցոլացեալ ի վերայ սուրբ մարմնոյն, և շուրջ փակեալ զտեղեաւն, թէ ուրեք յարենէ նորա ցայտեալ կայր: - 224. և աղաղակեալ զննի նորա՝ զի թերևս ի լուր ձայնին և ի փայլումն զինուցն և ի շողալ սուսերին և ի խխնջիւն քաջ երիվարին և ի վազս երագութեանն ուժոյ ազդ լինիցի և դարձցի ի ձայն նոցա և ծանիցէ, և դարձցի ի կորստական ճանապարհէն – 228. և աղերսեալ զիշխան Դերենիկ, զի լուծցէ զնա /320/ ի կապանացն: - 322. և ամենեքեան որ պահիցեն զշաբաթս իմ և ոչ պղծիցեն, և պահիցեն զպատուիրանս իմ և կացցեն յուխտին իմում՝ տարայց զնոսա ի լեառն սրբութեան իմոյ – 224. Եւ ամուրք յոյժ և անկասկածելիք ի ձեռս նոցա են, ամուրն Զլմար և Սրինգ, և Ճախուկ բերդն. – 212. Եւ այլք մերձ կացեալ առ Դերանիկն՝ ամբաստան լեալ Աշոտոյ կորապաղատէ, որպէս թէ նախանձու լցեալ, և քաւութեամբ վարէր ի մէջ հազարապետին, և թէ արկանել ևս ջանայր զնա յիշխանութենէ անտի նորա: - 342. Եւ այն ինչ պատահեալ Գուրգէն հարուստ գնդի Վահանայ ի յառուամէջս մուրին՝ ի բազում քան թէ սակաւ սուսերս ծեծեցին զնա, մինչև ոմն Զուանշէր անուն յետուստ յանկարծ հարեալ վիրաւորեաց զԳուրգէն – 310. Եւ այնպէս զօրացոյց Տէր զողորմութիւն իւր ի վերայ Հայրակղի յաւուր յայնմիկ՝ տալ ի ձեռս նորա ամենեսեան. – 150. Եւ այս եղև, զի լցցի որ ասէ, ,,զարթի՛ր սուր ի վերայ հովուի և ի վերայ առն ընկերի նորա. – 238 Եւ անդ գտեալ ամրագոյն անձաւ տեղի անկասկածելի ի պատերազմական գործոց և զնա պարսպեալ պատուարօք շուրջանակի – 392. և անդ ընդ փոքր զառ ի վայրն իբրև զհեղեղատ յորդեալ հոսեալ հասաւ ի վերայ նոցա, ի Քրիստոս խրախուսեալ – 400. և անդ կեցեալ և մեռեալ անձամբ զիւրովի երթեալ, ըստ սահմանելոյ ի վերայ նորա բանի առնն Աստուծոյ սրբոյն Ներսէսի: - 102. և անդ նորա զդատավճիռն ընկալան ի սրոյ քաջացն Վասպուրականի, որպէս գրեցաքն – 398. և անյապաղ մինչ այս մինչ այն՝ նոցա հարեալ ընկեցեալ ի զօրացն Պարսից գունդ մի հարուստ արք իբրև ՃԽ: - 128. և անուանէ զնա Արծրունի, առաջին լինելով նորա ի դաշտավայրին Արծուիք կոչելոյ. դարձեալ ըստ պատահման և տարբերութեան՝ արծռունգն կերպարանօք: - 72. և անտի գնացեալ ի ձորն Աճանայ ի խնդիր փախստէիցն և հասեալ ի յետոյ կողմանցն՝ ի սուր և ի գերութիւն զբազումս ի նոցանէ արկանեն: - 202. և անցանէ ի Շիրակ, և հասեալ ի Դուին՝ աւերէ զնա և զՆախճաւան և զՈրմի – 148 Եւ ապա անտի ոչ սակաւ ինչ լինէր յաւուր յայնմիկ ձայն լալոյ, հեղումն արտասուաց յահագին բորբոքմանէ սրտից նոցա և գութ խանդաղատանաց թագաւորին և իշխանացն և զօրացն ամենեցուն և բնակչաց քաղաքին. – 154. և առ զայրուցն առ մարդկայինն դիմեալ ազգ՝ կարծել նոցա ստնանէր, յինքեանք ձգել կորզել զաատակչական դարձուածէ. – 398. և առ Տիմոթէոս գրէ, հաւատարիմ գոլ զզօրութիւն հաւատոցն, ասէ, ,,թէ ուրանամք՝ և նա ուրանայ զմեզ. թէ չհաւատամք՝ նա հաւատարիմ մնայ,,: - 258. և առաջնորդ կացուցանէին իւրեանց զԱպուջափր Արծրունի, և ընդ նմա Սահակ Ապումկդէմ քեռորդի Ապուջափրի, այր քաջ և պատերազմող: - 304. և առաջնորդեաց նոցա Քսերքսէս և Արշէզ մինչ ի սուրբ քաղաքն յԵրուսաղէմ. – 66. Եւ առաքեաց հրեշտակս մեծապէս զանձիւք և հրովարտակօք առ արքայ Խոսրով, խնդրել ի նմանէ զխաղաղութիւն մեծաւ թախանձանօք – 140. և առեալ դահճին զսուրն՝ եհար

զերանելին և եհատ զգլուխ նորա, և նոյնժամայն /գրքում՝ նույնժամայն/ աւանդեաց զոգին ի ձեռս Աստուծոյ: - 294. Եւ առեալ զիշխանութիւն նորա Ձամեայ որդի նորա – 44. Եւ առեալ զմարմին նորա տիկնոջն Սեդայի կնոջն Աշոտի և եդ ի գերեզմանի, ի տեղւոջն որում Ձորոյ վանքն ասեն, ի վերայ գեաղջն Ահաւականից: - 370. և առեալ զնա եկն եհաս ի վերայ որդւոյն Աբգարու բառնալ ի նմանէ զթագաւորութիւնն զոր ունէր: - 80. և առեալ զնա մտանեն ի մէջ մայրեացն, և ընդ գիրկս մտեալ Շաւասպայ Արծրունւոյ՝ զլայնալիճն լի քարշեալ հարկանէ ի թիկանց ընդ մէջ ողինն զկորովալիր մատանցն զազդոյ շարժումն թոռւցեալ թափանցիկ ընդ չարախորհուրդ սրտին միջոցն դիպեցուցանէ. – 100. Եւ առեալ զնոսա անցուցանէ յիւրաքանչիւր սահմանս բնակութեան, ինքնին զհետ նոցա ելանելով, որպէս Կիւրոս արքայ Պարսից զհետ դարձելոցն ի գերութենէն Բաբելոնի. – 218. և առեալ ի ձեռանէ նորա զսուսերն շողացուցեալ՝ հայեցաւ /266/ յայսկոյս յայնկոյս և ասէ, ,,ո՛վ անարի վատ արանց և կանացի այր, թշուառական զինուոր, շուն անպիտան տեառն իւրոյ,, - 268. և առեալ մի ոմն զսուրն՝ եհար զերանելին և եհատ զգլուխ նորա: - 206. և առեալ Պտղոմեայ զԱսուդ՝ տայ տանել յԵգիպտոս, ի պարգևեալ աշխարհին նմա յԱղէքսանդրէ – 70. Եւ առնէր հարուածս մեծամեծս այլազգեացն. և սատակէր զնոսա սրով և աղեղամբ, և եբարձ զամենայն ազգս Տաճկաց, որ բնակեալ էին Վասպուրական տէրութեանն: - 306. և ասէ զնա Ստացուած, թէ և Աստուծով՝ այլ ոչ արժանաժառանգ. – 22. և ասէ, ,,եթէ աջողեսցին քեզ խորհուրդ մեր, զոր խորհեցաք ի վերայ Հայոց և իշխանաց նոցա, և ըստ ախորժակաց մերոց ի գլուխ ելանիցեն, որ ինչ կամք յօժարութեանց մերոց ըղձանայցեն- 184. Եւ արար նմա հաւատարմութիւն յոյժ գրով, և կնքեալ աղիւ ըստ սովորութեանն իւրեանց երդումն, և խնդրեաց ի նմանէ զօր ինչ սակաւ յերևելի մարդկանէ, յորս ինքն վստահն էր: - 154. Եւ արգելին փակեցին զպահակս ամրականացն և զկիրճս ձորոց, որ հանէին յերկիր նոցա մտանել յամուրսն: - 274. Եւ արդ եկ ասացից քեզ, ո՛րպիսի ողբովք ողբայ զնոսա հին մատենագիրն ասելով. – 164. Եւ արդ ՆԺԱ են մարգարէք, որ զվկայութիւն աստուածութեանն Քրիստոսի ստուգաբանեն ճշմարտութեամբ յանցնիւր ժամանակս, իբրև ի միոջէ բերանոյ, թող զԱւետարանն և զառաքեալս նորա: - 246. և արձակեաց զզօրս իւրաքանչիւր զօրագլխօք եկելոց առ նա յամենայն ազգաց յաշխարհէս /գրքում յաշխարէս/ Հայոց՝ երթալ ձմերել յիւրաքանչիւր տեղիս բնակութեանց – 262. Եւ արձակեաց զնա ի տուն իւր մեծաւ ուրախութեամբ և անտրտում խնդութեամբ – 218. և բազում եղեն դիակունք նոցա վասն սովոյ հացի և ծարաւոյ ջրոյս,,: - 184. Եւ բազումք ի նոցանէ հաւանեցան նմա՝ պատգամաւոր Աստուծոյ ասել: - 160. և բախեցին արտաքոյ զդուռնն ուր մտեալ էր իշխանն, և կալեալ զնա հանին ի բարձրագոյն տեղիս ամրոցին, և եդին ի բանտի ի ներքսագոյն սենեկացն. – 348. և բարկացեալ յոյժ հրաման ետ փութով զրաւ առնել կենաց նորա: - 206. և բացեալ զտուն դիւանապահ մատենիցն և գտեալ զսերունդս Սենեքերիմայ, և զգործս նոցա զմիոյ միոյ ուրուք յանուանէ զառն իւրաքանչիւր զանուն և զքաջութիւն իւր, նոյնպէս և զայլն ամենայն ըստ տոհմից տեղեաց - 74. և բնակեցուցանէ զնոսա ի գաւառն Աղբագ, յետ բնակեցուցանելոյն զնոսա ի Ջողախել, ի Վրնջունիս և ի Հախրամի, տեսեալ մինչև ի ժամանակս ինչ – 64. և բնակութիւն նոցա ի խորաձորս և ի փապարս լերանց և ի պրակս մայրեաց, ի գագաթունս լերանց: - 190. և բունեալ ուրջացեալ բնակեալ էր ի նմա սատանայ զօրօք իւրովք – 248. և գնացեալ Ժիրաքն առնու զնա աձէ կացուցանէ առաջի Բուխայի: - 272. և գունդ անհաւատից դառնացեալ ոգւով ի վերայ կանանց և որդւոց իւրեանց ազգականաց՝ յարձակեցան ի վերայ նոցա ուժգին սաստկութեամբ և սուր ի գործ արարեալ յանխնայ կոտորեցին. – 402. Եւ գունդն Հայոց խաղացին ընդդէմ նոցա, վիմաձև անքակ ի միմեանց ըստ տոհմս ազգաց, ի տանէն Արծրունեաց՝ Գուրգէն և Վասակ և Պելճ և Մուշեղ և Սահակ և Ապումկդէմ և Աշոտ – 230. Եւ Գուրգէն երկրորդ հրեշտակս յղէ առ նա զայս օրինակ, եթէ ,,ընդ իս հաստատեա զանզրաւ կապակցութիւն ուխտի խաղաղութեան. և ես ապստամբեցայց յԱշոտէ, և ի միասին բաժանեալ զերկիրս կեցցուք յապահովս,,: - 316. և Գուրգէն ելեալ ընդդէմ նոցա բազում անգամ՝ոչ սակաւ օճիրս գործէր

ընդ զօրս Տաճկաց: - 302. Եւ Գուրգէն հեզաբար, արտաքոյ ամբարտաւանութիւն առնէ նմա պատասխանիս, ասէ. – 330. Եւ գրեաց թուղթ զկնի նախարարացն Շապուհ, լուծանելով զպատճառ հատուածի նոցա. – 110. Եւ գրել Դերանիկն առ որդին Հալթի հաստատել զնա իշխան իւրով հրամանաւ. – 342. և գրէ առ Սմբատ, թերևս տացէ ի ձեռն նորա զմանուկն Արտաշէս: - 84. և դահճացն հանեալ զսուսերն՝ դիմեցին ի վերայ նոցա իբրև զգազանս արիւնարբուս, և ծեծէին սրովն, իբրև ոք զի հատանիցէ փայտ ի մայրս անտառախիտս հարեալ կացնաւ, և յանխնայ անողորմ յօշէին անդամ անդամ: - 266. և դաստիարակ առընթեր ունելով զբանն տէրունական … և թէ ,,որ կամիցի կեցուցանել զանձն իւր՝ կորուսցէ զնա, և որ կորոյս զանձն իւր վասն իմ՝ գտցնէ զնա,, - 264. և դաստիարակ առընթեր ունելով զբանն տէրունական, թէ ,,որ ուրասցի զիս առաջի մարդկան՝ ուրացայց և ես զնա առաջի Հօր իմոյ,, - 264. և դարձաւ սիրտ նորա ի վերայ նորա սիրով խաղաղութեան. – 308. և դարձեալ թէ՝ ի գերութիւն մատնեսցի ժողովուրդ իմ, վասն ոչ ճանաչելոյ նոցա զՏէր. – 182. և դարձոյց զերեսանակ երիվարին ընդդէմ նորա, և հասեալ ընդդէմ միմեանց՝ դարձան հասին ի բանակն իւրեանց: - 230. և դարձոյց ի նոսա զաշխարհն զոր տուեալ էր ի ժառանգութիւն Տիգրանայ Հայկազնոյ – 86. և դարձուցին ընդ նոյն ճանապարհ ընդ որ եկեալ էր, ոչ թողացուցին նմա ելանել ընդ աշխարն Վասպուրական. – 336. Եւ դէտն ազդ արարեալ զօրացն այլազգեաց՝ վառեն և նոքա ընդդէմ նոցա ի պատերազմ, և ի դիմի հարեալ միմեանց և հատանէին յերիս առաջս: - 178. և դժոխք ի ներքուստ դառնացան ի պատահել նմա զանբաւութիւն չարեացն ընդ իւր տանելով: - 376. և դիմեալ ի Գանձակն Ատրպատականի՝ բրէ զնա, աւերէ զԱհմատան և զՄայ կործանէ և զբագինն հրատին մեծի, որում Վշնապն կոչեն – 148. Եւ դիմեսցեն երիվարք նոցա, դիմեսցեն որպէս զարծուիս ի վերայ կերոյ. – 200. և դիմեցին ի մէջ նոցա ի չորս առաջս, ըստ նմանութեան տեառնանման խաչին, և բախեցին զճակատն և պատառեցին զռազմն և դարձուցին ընդ զառ ի վայրն և իջուցին ի լեռնէ անտի, և հարին ի հարուածս մեծամեծս. – 286. և եբարձ զամենայն արս զօրութեանց, և ոչ ոք էր այնուհետև որ կարէր կալ ի կայի իւրում ունել զդէմ նորա – 238. և եթէ ոք խախտել ջանայ՝ ի հրամանէն Աստուծոյ ոչ ժառանգէ նա զաթոռ իւր և զթագաւորութիւն: - 356. և եթէ վասն չարութեան գործոց նոցա տաղտկացաւ Աստուած և ետ ի ձեռս ձեր՝ բաւական լիցի ձեզ այդչափ որչափ կալէքդ. – 160. և ելեալ Աղան գնաց առ սուրբն Սահակ, և զէնընկեց եղեալ առաջի նորա՝ մերկանայր զհանդերձն զինաւորական - 112. և ելեալ ի վերայ Պարսկահայոց գոեհացն և անդ բազում քաջութիւն նահատակութեան ցուցեալ՝ յոլովից գերելոցն ընդարձակեաց, հանելով /400/ և զաւարն ի ձեռաց նոցա – 402. Եւ ելեալ իշխանաց իշխանն, որ բարձրագոյն և հանճարեղագոյնն էր քան զբնաւ Հայաստանեայցս և զընդհանուր կացեալս ի ներքոյ երկնից՝ եկն առ նա մեծաշուք պատուաղրութեամբ, և պարգևս և պատիւս ոչ սակաւս նմա յառաջաբերեաց. – 344. և եկեալ եկաց առաջի ոսոխ վիրագին, և տուեալ ողջոյն ըստ սովորութեան նոցա: - 216. և եկեալ ի վերայ քաղաքին պաշարեն զնա, և զզօրսն մատնեն ի սատակումն սրոյ, և զպատանդսն Վասպուրականի հանեն յարգելարանէն. և գերեացն ընդարձակեն, զկապուտ նոցա բաժանեն յինքեանս: - 190. Եւ եկն եհաս առ նա Ատրներսէհ իշխանն Վրաց: - 366. Եւ եհան արձակեաց զնա Տէր Աստուած ի դրախտէն փափկութեան՝ գործել զերկիր ուստի առաւ: - 22. և եհան զզօրսն մինչ մերձ ի գլուխ լերինն և ընդ նոսա նշանս բազումս, իբրև Ռ արանց ընտրելոց քաջ երիվարօք. – 284. և եհան զնոսա յատենէն հոյակապ և շքեղ և երևելի պատուով ի ձայնս երգոց և ի հնչիւնս փողոց. – 314. և եհաս ի վերայ նորա վառեալ զինու սպառազէն երիվարաց ընտիր հեծելովք այրուձիոյ: - 178. և եհար սատակեաց Ապումկդէմ ի միում ասպատակի Ը այր, և զերիվարս նոցա, և զէնս և զզարդ մերկեաց ի նոցանէ, եհար զայլազգիսն ի հարուածս մեծամեծս և ինքն դարձեալ ասպատակեաց զկնի նոցա: - 304. Եւ եղեալ նոցա ի Սիմ լերին մինչ ի Տիգրանն Հայկազնեաց: - 16. և եղեն իբրև զմի այր կամ թէ իբրև զվէմ մի բլրաձև, արձանացան կարծրացան պնդութեամբ՝ անմատոյց լինել ի նոսա զօրութիւն երկաթի. – 230. և եղեն հնազանդեալ նմա զամենայն աւուրս Վարդանայ:

- 128. և եղև աղաղակ մեծ ի միջի նոցա և կռիւ այնքան, մինչև բազումք ի նոցանէ ի սուրս դիմեցին: - 160 Եւ եղև զի ամբարձ զաչս իւր և ետես, զի պնդեալ գայր հեծեալն զկնի նորա – 230. Եւ եղև ի դառնալն սրբոյն Սահակայ ի Պարսից՝ եկն առ նա դարձեալ Աղան Արծրունի, և ընկալաւ ի նմանէ սքեմ կրօնաւորութեան. – 120. Եւ եղև ի մերձենալն նորա ի բանակն՝ եհան ընդ առաջ նորա գունդք գունդք զօրաց. – 236. Եւ եղև ի միում աւուրց, ի գալ նորա ի նմանէն՝ ձայն օտարոտի, և ազդումն ահագին և դիւական անկեալ ի վերայ /գրքում՝ վերա/ նորա՝ ուշաթափ անկեալ դնէր – 158. Եւ եղև ի մտանելն նորա ի Դատուան աւանն … ելեալ իշխանքն Հայոց յանձնիւր տեղեաց գնացին յանդիման լինել նմա – 340. Եւ եղև ի մտանելն նորա ի քաղաքն, ունելով ընդ իւր կապեալս բազումս և գերեալս, որոց ոչ գոյր թիւ. – 262. Եւ եղև իբրև եհաս իշխանն յարքունիսն՝ ետ կապել զոտս նոցա կրկին շղթայիւք և դնել ի բանտի. – 220. Եւ եղև իբրև ննջէր Գագիկ յանհոգս յանկասկածս՝ հասեալ Հասան ի գիշերի սուսերամերկ վառեալ փոքր գնդաւ, մոմեղինօք վառելովք՝ և կապեաց զնա կապանօք երկաթի: - 350. Եւ եղև մօտ ի կատարումն հասանել ամին երկրորդի գալստեան նորա՝ ել գնաց ի կողմանս Աղուանից. – 276. Եւ եղև յելանել նախարարացն Հայոց յերեսաց ամիրային՝ մնայ առ նմա միայն Մուշէղ Մոկաց իշխեցողն, այր քաջայայտ և բարձրագահ – 344. Եւ ես աւասիկ արձակեցից թագաւորին ձերում պատարագս և հրեշտակս հրովարտակօք, խնդրել ի նմանէ զխաղաղութիւն աշխարհի և ընդ իս հաշտութիւն„: - 144. և ես տամ նոցա զկեանսն յաւիտենից„: - 224. և ետ բերել քուրս և տանջել զնոսա քքովքն յերկար, մինչ կարծել ի նմին վախճանել – 292. և ետ բերել նմա ըստ օրինի գլխապետութեան սուսեր իշխանական ընդ մէջ արկեալ և գօտի արիական շրջապատեալ զմիջաւ, քուրք խիզախողք և երիվար բարձրավիզ, ոտնատորովք, խրոխտալիր, յարմարական առ ընթացս պատերազմականս: - 308. Եւ ետ նմա սուրհանդակս և մեկնակազէնս և սակրաւորս և կափաւորս - 218. և ետ տանել ընդ առաջ նորա նժոյգս մեծազարդս և երևելիս, և երգեցիկս և գովասացս և բազում գործիս երաժշտականս առաջի և զկնի՝ մինչև եմուտ ի բանակ նոցա: - 288. Եւ երթայր զհետ և սատակէր զնոսա անչափ զօրութեամբ. և բազումք այն էին, որ մեռանն ի սրոյն Գուրգէնի քան որ մնացինն. և զօրքն զհետ մտեալ մնացելոցն հանին յերկրէն իւրեանց: - 308. և երթեալ ի բուրաստանն՝ գտին զնա ի թաւի անդ դուղեալ, կալան զնա և եկին ածին զնա ի դախուիճ անդր: - 152. և երիվարին ընդ վազս փռնգալիր խրոխտանացն փրծուցեալ զնա ի ցաւոցն, քանզի այն ինչ կազդուրեալ էր Գուրգէն ի հիւանդութենէ և ի կրից աշխատութեանցն և ի տառապանաց բանտին: - 320. Եւ երկայնագոյնս է զամենայն բանս պղծութեան նորա շարագրել, զի յոյժ բազում է և ընդդիմակ Աստուծոյ: - 164. և երկից և երից և բազում անգամ զնոյն հաստատեցին երդմամբ, զի անվեհեր համարձակութեամբ եկեսցէ առ նոսա. – 226. Եւ զայս լուեալ գիտաց զառ ի նոցանէ հաստատուն նենգագործութիւնն – 216. Եւ զբազումս ի նոցանէ իջուցեալ յԵգիպտոս բնակեցուցանէր: - 70. և զԳագիկ ձգեալ ի պատիւ զօրավարութեան Հայոց մեծաց, ըստ օրինի թագաւորացն Յունաց՝ տալ առաջի նորա նշանակս խաչադրօշս: - 370. Եւ զգունդն երկրորդ ի ձեռս Գուրգինայ Ապուպելճի, և նիզակակից էր նորա Վահան Արծրունի: - 178. և զերիվարսն և զհեծեալս նոցա զինեալ սպառազինուք – 208. Եւ զերկնային պարգևացն որ ի հանդերձեալսն խոստացաւ Տէրն, զանպատում և զհրեշտակային նորոգութեան՝ նա ասաց լինել անդ կերակուրք և ըմպելիք ուժգին. զոր և կամեսցի ուտել անյագաբար՝ պատրաստ գտանիցէ, և կանանց կուսից մնացելոց հանապազ անյագաբար խառնակումն: - 164. Եւ զի ստեալ Դերանկին Գուրգենայ եհան անտի զգործակալսն՝ նոյն գունակ Գուրգէն հնարաւորեալ առնու զամրոցն և հանէ զնորա գործակալսն – 326. Եւ զի ասէ գիր՝ ոգիք իբրև ութ՝ երկբայականս իմն և զայն. առ որս ասեմք, եթէ նոցա տուաւ հրամանն այն. այլ թէ ի ձեռն նոցա և այլք եղեն փրկեալք: - 32. Եւ զի էր պաշարել նորա յայնժամ զքաղաքն Մանազկերտ Ապահունեաց աշխարհին, որ ի ձեռս Ապլբառայն էր, և ածեալ հասուցեալ մերձ ի պաշարումն. և ի հասանել գուժկանացն եթող զնոսա, տալով նոցա հրովարտակս ի խաղաղութիւն: - 348. և զի ըստ կամաց նորա հանցէ ի բանակէ

անտի զգերիս Վասպուրականի: - 218. Եւ զի մի երկայնեալ որ ինչ վասն նորա ապիրատ և ինքնակամ և անզիղջ և անխիղճ առանց պատկառանաց մոլորութիւն սորա լի անամօթութեամբ՝ի բաց դիցուք զսա ի միջոյ յիշատակի նախարարացն – 248. և զի մի մի թուիցէ յանուանէ զյաճախութիւն զինուցն և զսպառազէն կազմութեանցն զձիոցն և զհեծելոց նոցա. – 280. և զի ոչ ըստ հրամանի նորա յօրինէին զպէսպէս պատրաստութեան ամրոցին - 214. և զի չն էր դարձեալ պատասխանի յարքայէն՝ հրաման եհաս ի կայսերէ առ Վարազդատ անյապաղ առ նա հասանել: - 110. և զի չզօրեաց կալ ընդդէմ նորա, ահ արկանէր, սպառնայր չար ևս կտտանօք լլկել զնոսա, ոտնատորփ լինելով փոնգայր իբրև զձի խստերախ: - 270. և զինքն համեմատ Փրկչին ասաց լինել և ուղեկից ճանապարհի նորա, յասելն Եսայեայ մարգարէի, ,,հեծեալ մի իշոյ, և հեծեալ մի ուղտու,,՝ զայս ամենայն յինքն յարակցէր: - 164. և զիշխանն Աշոտ և զորդի նորա Գրիգոր և զՎահան Արծրունի և զորդի նորա Գագիկ … և զՄուշեղ եղբայր Վահանայ և զտիկնայս նոցա և զտիկինն Հրանուշ և զայլս յազատատանէ կապեալ և բարձեալ ի վերայ ուղտուց՝ վտարեաց ի Սամառայ – 220. և զկէսն մահու դատապարտեալ, զգլուխս նոցա հատեալ ի փայտի բարձրացուցանէին ի վերայ դրանդեաց պարսպին: - 372. Եւ զկնի այսորիկ, որ է երկրորդ հարուածք այլազգեացն՝ դարձեալ հրաման ետ ելանել ի պատերազմ, և հետամուտ հասեալ առ նոսա. – 282. և զկնի ինչ փոքու ասէ, ,,զայլազգիսն որ եկեալ յեցեալ իցեն ի Տէր՝ սիրել զանուն նորա, լինել նմա ի ծառայս և յաղախնայս – 224. և զհետ նորա աճապարեալ արկանեն զնա ի յամրափակ զինեալ վաշտն ի մէջ փղացն. – 128. և զՀրէայսն որ յաւուրց սրբոյն Գրիգորի հաւատացեալ էին ի Քրիստոս՝ վարեն ի գերութիւն, աւելի վտանգ նոցա քան այլոց Հրէիցն հասուցանելով վասն ի Քրիստոս հաւատոցն: - 104. և զՄարդաստան գաւառն զբուն բաժին Գուրգենայ դարձոյց առ նա Դերենիկն: - 322. և զոր ինչ խնդրիցէ՝ առնիցէ ըստ կամաց նորա, կնքել և տալ նմա գեօղս և ագարակս, և տալ հարկս արքունիս և պատանդս խաղաղութեան: - 210. Եւ զոր օրինակ զնա վիշապ առակեցաք յաղագս սաստիկ ուժոյ զօրութեան ձեռին նորա – 262. և զորդի նորա Կաւատ նստուցին թագաւոր. – 150. Եւ զչարեալ ընդ խափանումն խորհրդոցն իւրոց՝ ամբաստան յոյժ լինէր զԱշոտոյ հանդերձ թղթովք Տաճկաց, որք էին ի կողմանս Հայոց, բազում այն ինչ զոր ստութեամբ քան թէ ճշմարտութեամբ զեկուցանեն զնմանէ զգործս, և թէ հակառակս ևս թագաւորութեան քոյ բանըննդդէմ լինի հանապազ: - 17. և զտունս գանձի նորա հրամայեաց աձել յաւարի. – 66. և զօր գումարեալ ել ընդ առաջ նորա: - 352. Եւ զօր գումարեալ եկն եմուտ ի Վանտոսպ, և Դերենիկն յանդիման եղև նմա. – 322. Եւ զօրագլուխք զօրացն էին այսոքիկ, Մուքադմ, Յուսփ ի Թփղիս քաղաքէ, Յուսփ որդի Ռահմայ և Ապուհեշմ՝ Ելոյ տէր և ընդ նոսա զօրք Համդոյի Պարսից ամիրայի: - 226. Եւ զօրքն Տաճկաց պնդեցան և փակեցին շուրջանակի ի ներքս զգունդն Աղուանից և դիմեցին յանդուգն ի վերայ նոցա. – 284. և է զգեստ նոցա ասուիս ի ծածկոյթ մերկութեանն, և օդ ոտիցն հնարաւորեն զձև կաւշկաց, ի մորթոց այծից կազմեալ – 192. Եւ էին ի կասկածի ի մէջ բանակին ի հազարապետէն, զի յայտնի երևեալ լինէր զոր խորհէրն վասն նոցա Ահմատն: - 344. և էր գրեալ ի նմա թողութիւն վնասուցն և հարուածոցն զօրացն և բազում աւարացն, և երդումն ի հաստատութիւն ասացելոցն, և պարգևս ի պատուական և մեծագնի հանդերձից, և սաղաւարտ ծաղկեայ և սուսեր. – 288. և էր ընդ նմա Աշոտ իշխանաց իշխան – 320. Եւ էր յղեալ յառաջագոյն զԱշոտ որդի իւր ընդ առաջ նորա, անդստին յելանելն նորա յերեսաց արքայի – 270. և էր նա իշխան Տարաւնոյ, բարձեալ եղև ի Սամառայ և եղև աստուածուրաց – 248. և էր պատճէն թղթոյն զոր կեղծաւորեալ ետուն զնա՝ այս ինչ. – 236. Եւ ընդ մտանելն նոցա աշխարհս՝ վրդովեցին զուխտ քրիստոնէութեանն, և փոյթ ընդ փոյթ ձեռնամուխ եղեն աւերել քանդել զեկեղեցիս, զտունս աղօթից կործանել. – 124. և ընդ նմա Գրիգոր որդի Վասակայ, և սա նմանապէս ոգեզուարճ իմաստութեամբ առ լցեալ հոյակապ և անուանի ի մէջ Հայկականացս և ցանկալի լսողացս և ուրախարար տեսողաց. – 344. և ընդ նմա Շապուհ յԱմատունի

տոհմէ, այն որ գործակիցն եղև Գագկայ առ սպանումն Ապումրուանայ, զոր վերագոյնն յիշեցաք – 372. և ընդ նմա Տաճիկք Հայաստանեայց, որ բնակեալ էին ի կողմանս կողմանս աշխարհիս՝ առաջնորդէին Բուհայի ի մուտ և ելս աշխարհիս: - 206. և ընդ նմա քաղաքացիքն Բերկրոյ որ Ութմանիկքն կոչին, և յազատացն Վասպուրականի որ միաբանեալ էին ընդ զօրսն արքունի, արք իբրև Ս – 306. և ընդունել պատիւս և ի ձեռն նորա ընդունել զանուն իշխանութեան ճոխութեան: - 274. Եւ ընկալեալ զխրատ նորա երանելոյն Աղանայ անսայր դիպող աւուր: - 114. և ընկալեալ ի նմանէ մեծաշուք պատուով: - 302. և ընտիր երիվարաց պատրաստել, ի նորա չար խորհրդոցն ի բաց վազել: - 344. և ըստ միոջէքն՝ և հարեալ ի դիմի ղաշիկ զօրուն Պարսից. և նոցա թուէր ծաղր առնել: - 136. Եւ ըստ արժանի վրիժապարտութեանն լցեալ սուր տեառն բարկութեամբ խաղաց /374/ ի վերայ Աւշնի և բանակի նորա առ հասարակ – 376. և ըստ բարբարոսական հմայիցն պատուէ զտեղիս այս, որպէս ի նմանէ սկսեալով զփոփոխումն առնու ի խոնարհագունիցն ի բարձրագոյնսն: - 88. Եւ ըստ կարգի օրինաց իւրեանց երդուեալ, և աղ ծրարեալ ընդ հրովարտակին ետ տանել. և նոցա առեալ և ընթերցեալ՝ ոչ արարին բանիցն պատասխանի: - 138. Եւ ըստ հրամանի բռնաւորին դահճացն ձգեալ ի նա նետս շուրջանակի՝ աւանդեաց զոգին ի փառս Աստուծոյ երանելի նահատակն Քրիստոսի: - 292. և թագաւորեցուցանէ զնա ի վերայ Հայոց փոխանակ հօր իւրոյ Սանատրկոյ, ի տեղի թագաւորութեան քաջացն Արշակունեաց: - 86. և թագաւորէ ընդ նորա Յազկերտ: - 128. Եւ թագաւորէ ընդ նորա որդի իւր Փոքր Թէոդոս. – 114. Եւ թագաւորէ ընդ նորա որդի հօրեղբօր նորա Մուհթիս, և կացեալ ամիսս Գ մեռանի: - 320. Եւ թէ որպիսի օրինակաւ գալուստ նորա և պատերազմ վասն սորին իրաց, և արիական ձեռակերտացն շինուածք, որ և յոյժ արժանաւորք զարմանալեաց, և դարձեալ ապստամբութիւն Զրադաշտին և մահն Շամիրամայ և բան յուդթիցն որ զնմանէ – 44. Եւ թէ հաստատել ոք կամեսցի՝ անսասանելի կացցէ նա յայսմ աշխարհիս. ամէն: - 356. և թէ նորա յերիս կամ ի չորս կամ ևս աւելիս բաժանեալ օգնական առնիցեն իւրեանց զամուրսն՝ մեծ աշխատութիւն քեզ հասուցանիցեն, և ամենայն խորհրդոց քոց խափանիչք /212/ գտանիցին – 214. և թէ ոչ այպանել ախորժէք զբանիւք իմովք՝ ոչ ընդհատ կամ պախարակելի թուիցի կոչել զնա նովիմբ անուամբ. – 376. Եւ թէպէտ տածէր և խնամէր Գագիկ աշխարհս՝ այլ ոչ ուրախ լինէին ի նա ազատատերանցն գրոխք, և կացին ի տարակուսի: - 354. և թշնամիքն հանգստեամբ ելեալ ի վերայ նոցա ի լիճս աղեղանց և նիզակաց ձերբակալ արարեալ զոմանս – 372. Եւ ժամանակ բռնակալութեան նորա են ամք ԿԲ – 42. Եւ ժողովեալ աշխարհն Վասպուրական՝ զամիսս Ժ արարին կոծ մեծ ի վերայ նորա: - 354. և ի բաց բարձ զանուն քրիստոնէութեան՝ ի միջոյ նոցա,,: - 196. և ի հասանելն նորա անդր թողեալ զհակառակաբար մարտն՝ խօսին ի խաղաղութիւն, առաջի եդեալ զհրամանն արքունի, զգլխաւորին Տաճկաց, և Աշոտի հաւատալ զբոլոր տէրութիւնս Վասպուրականի: - 316. Եւ ի հասանելն նորա առ թագաւորն՝ ունէր ևս ընդ ինքեան թուղթս լի ամբաստանութեամբ զնախարարացն, որ բնակեալ էին ի Հայս – 180. Եւ ի հասանելն նորա ի Թէոդոսի քաղաքն ի Կարին գաւառ՝ եհաս լուր նորա առ կայսր Միքայէլ թագաւոր Յունաց. – 316. և ի շարժելն նորա ահ կալաւ զբոլոր աշխարհս և աշխարհակալս. – 262. և ի վերայ նորա կանգնէ զԱստղկեան պատկերն, և մօտ նորա զտուն գանձու պաշտպանութեան կռոցն. – 88. և ի վերայ նորա շինեաց եկեղեցի զհամբարձմանն ի յերկինս ի Հօրն գահակցել աթոռ, և զերկրորդ գալստեանն զյիշատակ ունելով, որ գալոցն է հայրենի փառօք, ըստ հրեշտակացն առաքեալսն զմխիթարականն և զքաջալերականն աւետիս նոցա առբերելով: - 390. և ի վերայ նորա շինեաց եկեղեցի զվերնատանն խորհրդական խորհրդածութեանն աւանդութեան նորա ուխտի: - 390. և ի վերայ նոցա զօրաժողով եղեալ Աշոտ և որդի իւր Դերանիկն, առնել մարտ պատերազմի ընդ ամրոցին: - 332. և ի փայտից մայրեաց շինեալ էր քաղաքն նոցա, պարիսպք և պատուարք և ապարանք նոցա և ամենայն տուն բնակաց քաղաքին և ամենայն կազմած պատրաստութեան նոցա: - 270. և իբրև եդ առաջի զվնասուցն որով կարծէր արկանել

զնա ի հաղբս կորստեան՝ ասէ ցերանելին – 294. Եւ իբրև կացին նոքա առաջի թագաւորին՝ եհարց հեգնական բանիւք եպերելով լի ամբարհաւաճութեամբ – 242. Եւ իբրև գիշերն տարածեցաւ և խաւարն թանձրացաւ և սկսան ամենեքին մտանել ի քուն յանձնիւր օթանոցն՝ յանկարծակի փայլիւն սուսերաց և մոմեղինաց վառելոց և գունդք խորհրդականացն և Հասան ընդ նոսա. – 348. և իբրև զեկուցաւ նմա եղեալքն՝ դարձաւ անդրէն գնաց յիւր ճանապարհ: - 332. և իբրև զմի անձն, վառեալ ի զէն և ի սուր և ի ճակատամարտ՝ հասեալ յամուրս՝ տապալէր զզօրութիւն նոցա սրով և աղեղամբ, ի փայլիւն սուսերի և նիզակի և ի գիշերամարտ նահատակութեանց, ըստ նմանութեանն քաջ զօրավարին Իսրայէլի Յեսուայ կամ Գէդէովնի կամ թէ նոյն ինքն նահապետին Աբրահամու, ի վերայ հասեալ Քանանացւոց, զյաւէտ յաղթութեան նահատակութիւն նահատակեալ՝ և դառնայ մեծաւ յաղթութեամբ: - 312. և իբրև հարան զօրքն՝ մտրակ ի կուշտ արարեալ երիվարացն՝ նախ նոքա փախեան: - 232. Եւ իմաստուն և հանճարեղ խորհրդովք, քաղցր և կակուղ բանիւք ողոքեալ զմանկագոյն Հասան, առաջի արկանելով նմա զարժանի ալեացն պատուականութիւն և զիշխանական ճոխութեան զբարձրագահութիւն և որ ինչ այդմ հետևէր. – 348. և ինքն /232/ կայր հեծեալ ի վերայ սպիտակ ձիոյ, և ցանէր զծուխն ընդդէմ թշնամեացն, և օդ քաղցր, որ արկանէր զծուխն զերեսօք նոցա. – 234. և ինքն ել գնաց երթալ մտանել ի քաղաքն Դուին, ձմերոց ինքեան պատրաստեալ զնա, մինչ ի ժամ գարնանայինս, ունելով ընդ իւր կապեալս բազումս. – 240. Եւ ինքն եկն /186/ ձմերել ի Մուշ քաղաքին Տարօնոյ, ունելով ընդ իւր պատանդս, և Վասպուրականի ի նախարարութենէն Արծրունեաց և յազատաց նորա: - 188. և ինքն թագաւոր, փափկասցի, և բռնաւորք խաղալիք նորա, և ինք ընդ ամենայն ամուրս խաղալով խաղասցէ,,: - 200. Եւ ինքն իսկ գլխովին զօրավարն Բուհայ, հեծեալ յերիվարն, պնդեալ զինքն զինու ի պատերազմ ընդդէմ իշխանին, և զկորովին աղեղնաւորացն Ելիմացւոցն և զընտիրս հեծելոց նոցա ընդ ինքեան վառեալ ի ճակատի: - 208. և ինքն Ջափր գործ առնէր առ սակաւ սակաւ մեկնել ի նմանէ զզօրսն՝ դիմօք յաշխարհս աշխարհս /326/ ասպատակ սփռելոյ: - 328. և իջուցեալ ի փայտէն հատին սուսերաւ զգլուխ նորա. – 290. և իսկոյն հարեալ զնա այսոյն պղծոյ և ընդ զառիվայր լերինն թաւագլոր խաղաղացուցեալ հարուստ ձգմամբ մինչ ի դաշտավայր տեղին ուր այգեստանքն: -378. Եւ իւրաքանչիւր զօրագլխացն եկելոց առ նա պարգևս և պսակս մատուցանէր, գեօղս և աւանս կնքէր և տայր. – 198. Եւ լուաւ տէր աղօթից նոցա, և դարձաւ ի բարկութենէ սրտմտութեան իւրոյ գթութեամբ և ողորմութեամբ, որպէս գրեցին երանելի մարգարէքն: - 314. Եւ լուեալ կնոջն Սահակայ, թէ ըմբռնեցաւ … փութացաւ գնաց եկաց առաջի Բուխայի, թերևս կարասցէ ըստ պատշաճ գեղոյն և ըստ բազմաձեռն գանձուց ապրեցուցանել զայրն իւր, որ առաւել մահու քան թէ կենաց պատճառ եղև նմա: - 272. և Խ արամբք ի դիմի հարեալ հազարի միոյ՝ սպան զբազումս ի նոցանէ զընտրելոցն Յունաց – 302. Եւ խնդրեալ զդի նորա վաճառականաց՝ պատեցին զնա ի ձեռս եպիսկոպոսին Դաւթի նորուն գաւառի և եդին ի տապանի յեկեղեցւոջն որ ի նմա: - 354. Եւ խնդրէ ի նմանէ խնդիրս, ,,առաջին, ասէ, զաստուածընկալ սուրբ նշանն, զոր գերեցեր յԵրուսաղէմէ՝ /152/ խնդիր արարեալ մեծաւ փութով այսրէն դարձուսցես,,: - 154. Եւ խոյակապ և անուանի եղեալ քան որ յառաջագոյն քան զնա էին կացեալ իշխանք ընդհանուր Հայաստանեայցս, որ յարևելս և ի կողմանս հիւսիսոյ, մանաւանդ որք ի Վասպուրական աշխարհիս էին կացեալ նախարարք յիշխանական պետութիւնս: - 170. և խոշտանգեսցես զնոսա գանիւ և բանտիւ և պէսպէս տանջանօք սպառնալեօք և ողոքանօք և ընչից պատրանօք արկցուք զնոսա ի ներքոյ կամաց թագաւորութեան մերոյ. – 196. և խոստանային գնալ ըստ հրամանի նորա: - 120. և խոստանայր նմա զհազարապետութիւնն Հայոց յարքունուստ հրամանէ հնազանդութեամբ Հայոց: - 366. և խոստանայր տալ նմա քաղաքս, գաւառս, գեօղս և ագարակս: - 382. ԵՒ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆՆ Ի ՔՐԻՍՏՈՍ ՏԵԱՌՆ ԳՐԻԳՈՐԻ ԱՐԾՐՈՒՆԻՈՅ ԵՒ ՏԵԱՌՆ ՅՈՎՀԱՆՆԻՍԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԱՐԾՐՈՒՆԵԱՑ ԵՒ ԳՐԻԳՈՐ ՔԱՀԱՆԱՅԻ, ԵՒ

ՊԱՏՄՈՒԹԻԻՆ ՆՈՅԱ: - 240. Եւ խռովեցան առ հասարակ ազգքն տաճկականք յերեսաց նորա և ահիւ մեծաւ ըմբռնեալք լինէին. – 312. Եւ խօսէր ընդ նոսա սաստիկ և ահագին դատաստանօք և սպառնալեօք, թէ ընդէ՞ր և դուք ոչ մեռարուք ի պատերազմին, քան թէ ելեալ փախստական գնացէք գալ առ իս և տալ համարձակութիւն ծառայի իմում ի յայսքան վնաս. մի՞թէ արդեօք զԽոսրով մեռեալ կարծէիք,,: - 150. Եւ ծառայ մի Դերենկին որ բանտապանն էր՝ լուծեալ զնա ի կապանացն՝ և տարեալ մուծանէ ի սենեակն ուր ննջէր Դերենիկն. – 320. Եւ ծնան նորա երիս որդիս, Սարգիս որ և Աշոտ՝ ՅԻՋ թուականութեանն Հայոց, Խաչիկ որ և Գագիկ ՅԻԸ, և Գուրգէն. մանկունք կայտառք և գեղապանծք և բարենշանք և ամենեցուն ցանկալիք. ծնաւ և երկուս դստերս: - 338. և կալեալ զնա եդ ի բանտի ի Նկան բերդի և զամրոց նորա եհան ի նմանէ, և կացոյց զհաւատարիմս իւր պահել զնա, և զտուն և զստացուածս հանեալ ի նմանէ՝ և կացոյց ի վերայ աշխարհին զիւր գործակալս: - 348. Եւ կայսր Մուրիկ հաւանեալ նմա՝ յղէր առ նա զՓիլիպիկոս փեսայ իւր. և տայր տանել նմա գիր ընդունելութեան, և առնոյր ի նմանէ երդումն: - 138. և կայր դեռ ևս մեծաւ ուժով, և զոհութեամբ ընդունէր զեկեալ ի վերայ նորա չարչարանս վասն սիրոյն Քրիստոսի: - 290. և կանայք կոտորելոցն հանդերձ խառնիճաղանճ ամբոխիւն լրբենի դիմօք, հոլանեալք և ի բաց ընկեցեալ զձև կանացի բնութեան, որպէս օրէն է նոցա, մանաւանդ տաճկական ազանց, և ի հետիոտս դիմեալք ի դուռն արքունի հասանէին: - 180. և կանխածան իմն ոգւովն Աստուծոյ ասէ զնա գոլ որդիս – 22. և կարգեաց նմա ռոճիկս օր ըստ օրէ ըստ արժանի մեծ տիկնոջն Հռիփսիմեայ: - 226. և կարգել նմա ռոճիկս առատապէս, մինչ ինքն պարապագոյն ժամու անդր հասանիցէ: - 70. և կարծէր յայնժամ ի ձեռն խոշտանգանաց դիւրաւ արկանել զնոսա ի հաղբս կորուսելոցն և մոլորելոցն ի հաւատէն Քրիստոսի: - 264. և կացեալ զաւուրս բազումս անթաղ՝ և ոչ ինչ ամենևին արատեցան մարմինք սրբոցն, և ոչ գոյր հոտ ժախու ի վերայ նոցա: - 268. Եւ կացոյց զնա իշխան յիւրում հաւատարիմ տեղւոջ, և այնպէս բարեձևագոյն ճոխացոյց զայրն երևելի: - 308. և կացուցեալ զնոսա ի կարգի ստրկութեան, որոյ զփոյթ հպատակութեան ցուցեալ՝ կարգէ զնոսա ի գործ ծառայութեան, կրել արծուիս և բազէս. – 64. և կեցեալ առ նովաւ ամս Մ՝ փոխեցաւ յանմահութիւն յամին ԼԳ Ղամէքայ: - 28. և կեցեալ առ նովաւ ամս ՇԿԵ, մինչև ի հանդերձել տապանին: - 28. և կողմնեալք ի սիրոյ աստուածութեանն անկաւ ի վերայ նոցա զարհուրումն մահու, մանաւանդ ոչ կամելով ելանել / 246 / ի սնոտի կենացս դիւրափոփոխ աշխարհիս՝ ասեն. - 248. և հաճեցաւ ընդ նոսա Աստուած. – 278. և հաճոյ թուեալ յաչս նորա՝ շինէ զքարաբլուրն ապարանս արքայանիստ, աշնանայինս, պայծառայարդարս, գեղեցկայարմարս պարսպաւորս – 86. և համոզեալ ի միջի նոցա յուղարկել զնոսա, զի էր քոյր Բագարատայ: - 176. և Հայրակղոս տայ նմա զթագաւորութիւնն և խոստանայ զօր որչափ և պիտոյ իցէ: - 152. և հանին զնա յարգելանէ բանտին, պատանդ թողեալ նմա զԳագիկ որդի Դերանկին և որդի Գրիգորի Արծրունոյ: - 348. և հասեալ դաւող մահ նորա ի յԱնակայ իւրոյ մերձաւորէ: - 92. Եւ հասեալ ի վերայ նորա թշնամիքն՝ հարին սրով: - 304. Եւ հասեալ կալան զնա և տարան ետուն ի բանտ երկաթից ի քաղաքն Հադամակերտ: - 320. Եւ հասեալ Շաւասպայ Արծրունւոյ ամբարշտի յԱրտաշատ հանդերձ մարզպանաւն՝ շինեն ի դուռն քաղաքին զորմզդական մեհեանն, /124/ և զկրակապաշտութեան մոլութիւն բորբոքեն ի նմա. – 126. Եւ հարան զօրքն Գաղատացւոց, ի մեծամեծաց մինչև ի փոքունս նոցա, և ոչ մնաց ի նոցանէ և ոչ մի: - 66. և հարան ի հարուածս մեծամեծս զօրք նորա -176. և հարեալ զպարանոց դահճին՝ ի բաց առ զգլուխ նորա: - 268. և հարցեալ ցնա յաղագս մահուանն Յովսէփու ի վրէժխնդրութեանն աղագս երկրորդ նահատակութեան նորա, որ եկաց ընդդէմ զօրավարին, յուշ առնելով նմա զապստամբութենէ և ընդխառնելոյ նորա ի վնասս արքունի – 294. Եւ հաւանեալ Խոռեմայ՝ եկն առ Հայրակղոս արքայ Յունաց, թողեալ ի նա զԵրուսաղէմ և զԿեսարիայ Պաղեստինացւոց և զամենայն կողմանս Անտիոքացոց և զամենայն քաղաքս գաւառացն այնոցիկ, և զՏարսոն Կիւլիկեցւոց և զմեծ մասն Հայոց և զամենայն զոր միանգամ կամեցաւ Հայրակղոս. – 152. և հաւատալն նորա ի մի Աստուած

Հայր և մի Որդի նորա ի Բանն Աստուած Յիսուս Քրիստոս և ի մի Հոգի սուրբ, զուգակից և բնութենակից և փառակից Հօր և Որդւոյ, ի մի Աստուածութիւն կատարեալ. – 94. և հիացմամբ առ նորայն հայելով, թէ ո՛վ ոք էր, և ո՛րպիսի, և ո՛րպէս կորեաւ՝ ասեն, ,,զիա՛րդ դադարեաց պահանջողն, հանգեաւ տագնապօղն. եթէ ո՛րպէս իջին ի դժոխս փառք նորա,,: - 376. և հուր կրակարանին բորբոքեալ՝ աստուածակէզ արարին զնա յորմզդական մեհենին. – 126. և հրամայեաց ածել առաջի զկապեալսն, հարցանել և լսել ի նոցանէ: - 242. Եւ հրամայեաց ածել զնա յատեանն, ուր կային միաբան ժողով զօրագլխացն: - 290. և հրամայեաց զինուց վառելոց զինուորաց պահել զնա – 220. Եւ հրամայեաց պահել զնա յընդարձակի – 226. Եւ հրամանաւ ինքնակալին Թէոդոսի կայսեր հաւատայ նմա զհազարապետութիւն բաժնին Հայոց, զՄիջագետս մինչև ի յանցս Եփրատ գետոյ: - 116. և ճեղքեալ՝ զօրու թշնամեացն յայսկոյս և յայնկոյս՝ արարին մտանել նմա ընդ մէջ զօրուն: - 352. և մանաւանդ զի հարկ փութոյ եղև մեզ գիտել զպայազատութիւնս երանաց տիրեցելոց մեր աշխարհի և որ յառաջ քան զնոսա թագաւորք Ասորեստանեայց, որդի /34/ ի հօրէ առեալ մինչև ի Սենեքարիմ արքայ, որ առ Եզեկիայիւ Երուսաղէմի արքայիւ եղեալ ազգապետ տանս Արծրունի: - 36. և մատուցեալ զպարանոցն առ դահիճն՝ եհատ զգլուխ նորա – 296. և մեծարի յԱրտաշէսէ Պարսից արքայէ, մինչ ձեռնտու լինի նմա /84/ զօրու օգնականութեամբ – 86. Եւ մեկնեալ զզօրսն ի նմանէ ընդ կողմն Ապահունեաց, մերկ ի զինէ և յասպազինէ թողեալ, ոչ առնել այլ կողոպուտ, գնացին աղխիւ և երիվարօք իւրեանց: - 346. և մեկնեաց յինքենէ զԱբրահիմ ոմն և յղեաց զնա հազարապետ Հայոց, և վերակացու ի վերայ հարկաց արքունի, և տիրել փոխանակ իշխանաց սորա: - 298. և մերկ կապուտ կողոպուտ առնէր զնոսա, մինչև զարմանալ զօրավարին ընդ սորայս քաջութիւն՝ գրէ առ Միքայէլ թագաւորն Յունաց զեկուցանելով վասն նորա: - 302. և մի զմիոյ հետ ստիպէր՝ փութալ միոյ միոյ ի նոցանէ յանդիման նմա հատուցանել ծառայական սպասաւորութիւնս, զոր և արարին իսկ Աշոտ և Գագիկ և Գուրգէն, կամաւոր և ակամայ զնորայն կատարելով հրամայեալս – 370. Եւ մի ոմն մերկանայր զկօշիկս ոտիցն նորա. և հարեալ աքացի զվատ այրն հանդէպ սրտին՝ և սպան զնա: - 304. և մի՛ այլում ումեք փոյթ առնիջիք յառաջ քան զնա ըմբռնել: - 198. և մինչ այսմ գործոյ պարապէր՝ դէպ եղև նմա ի կողմանս Եգիպտացւոց հանդիպել առն միոյ մոնազնի, որում կոչէին Սարգիս Բհիրայ, որ էր եղեալ աշակերտ մոլեգնութեանն արիանոսաց. – 158. Եւ մինչ երթայր և խորհէր՝ խոցեալ նորա երիվարն, և յանկարծակի այն ինչ ոտն երիվարին շաղեալ ընդ փոքր թուփ մի, որպէս ասեն, զուլումբեալ ի վերայ գլխոյն ջարդեալ զողն ու լարն՝ ի բաց ընկէց զհեծեալն զքաջ զօրավարն Ապումկդէմ: - 304. Եւ մինչ կարի և ահագին սաստիկս կուտեցաւ ի վերայ նորա ամբոխն, և ամբաստանքն միաբարբառ զաղաղակ /288/ բարձեալ առաջի բռնաւորին զօձիս պատառեալ ասէին, ,,մահապարտ է, չէ պարտ դմա կեալ, և ոչ առնուլ տեղի պատասխանւոյ,, - 290. Եւ մինչ նոքա դեռ չև հասեալ էին մերձ առ գունդն Հայոց՝ փութացաւ զօրավարն Գուրգէն յղեաց դեսպանս առ Ապուհեշմ և որ ընդ նմա զօրագլուխքն՝ աղաչել ի խաղաղութիւն – 230. Եւ մինչ նոքա կային մնային հրաման ինչ ընդունել յարքունուստ՝ /286/ դարձան հրեշտակքն և եկին փութանակի, և բերին թուղթ յարքայէ առ Ապումուսէ՝ գալ ի հնազանդութիւն նոցա և երթալ առ Բուխայ. – 288. և մինչ նոքա կարծեցին, թէ ի ձեռն նոցա մատնեցան՝ և նոքա կային յաղօթս և զԱստուած կարդային օգնել նոցա. – 286. և մինչ չև հասեալ առ զօրավարն՝ եհան ընդ առաջ նորա գունդս գունդս վառեալ զինու և ընտրեալ երիվարօք – 288. Եւ մինչդեռ այս գործ խորհրդածէր՝ հասին ի վերայ նորա քաղաքապետք երկու, անուն միոյն Բշիր և երկրորդին Զքրի, և կալան զնա տանել առ Աշոտ որդի սպարապետին: - 316. և մինչդեռ խորհէր արքայ Կաւատ վասն շինութեան աշխարհի և խաղաղութեան՝ եհաս նմա վախճան կենաց և մեռաւ, կեցեալ ամիս Ջ: - 152. և մինչև հասեալ առ զօրագլուխսն, այլ ի բացեայ երթայր հեռագոյն ի նոցանէ իբրև յերկու մղոնս – 228. Եւ միջնորդէր նմա հետևել հաւատոյ առաջնոյ Իսրայէլականացն, ,,զի թէ յայս եկեսցես՝ իմով հրամանաւ եղիցիս զօրագլուխ մեծ և առաջնորդ ամենայն տոհմի քո,,: -

158. և մտանէին առ նա արք ի նախարարացն, խօսէին դատաստանօք և նախատէին զնա, անարգէին և գնային: - 152. և մտանէին առ նա արք ի նախարարացն, խօսէին դատաստանօք և նախատէին զնա, անարգէին և գնային: - 152. Եւ յաճախեցին բազմապատիկս վասն նորա գոհութիւնս Աստուծոյ: - 330. և յանդիմանեալ ի սրբոյն Ներսիսէ՝ արբուցանեն նմա դեղ մահու, զանխուլ կարծիս բերելով. – 108. և յապաղեալ խափան լինէր նմա յօժարութիւն ցանկութեան բարեպաշտութեանն. – 222. Եւ յարգելուլ զնա ազատագունդ վաշտիցն՝ չանսայր, քանզի լուեալ էր նոցա, եթէ շրջաբերական թղթով դարան գործեալ էր նմա Աշոտոյ իշխանաց իշխանի: - 352. և յարգելուլ զնա ազատանւոյն՝ չանսայ բնաւ ումեք: - 352. և յաւարի առնուին զբանակետղն, դիակապուտ առնէին, ժողովէին աւար բազում, և կուտէին արծաթ և ոսկի յոյժ և զզէնս պատենազարդս, զզարդս և զզէնս արի արանց և զընտիրս երիվարաց և զզարդս նոցա. – 176. Եւ յաւել գրգռել ի սիրտս իւր արքայ Խոսրով. զի Տէր խստացուցանէր զսիրտ նորա, զի կործանելոց էր զթագաւորութիւն նորա. – 146. և յաւել ծնանել զեղբայրն նորա զՀաբէլ. - 22. Եւ յաւուր միում լեալ նորա ի տխրութեան ի սպառնալեաց հօրեղբօրն իւրոյ՝ եկն եմուտ առ նա Ալի որդի Ապուտալպի և ասէ, զի՞նչ են պատճառքդ զի նստիս տխրեալ. – 160. Եւ յաւուր յայնմիկ եմուտ ի տապանն Նոյ և որդիք իւր, կին Նոյի և կանայք որդւոց նորա ընդ նմա: - 30. Եւ յելանելն նորա և մօտ լինել ի սահմանս Հայոց զօրօք բազմօք, մերձ ի սահմանս Տարունոյ, Առաջին կոչեցեալ Հայոց՝ իշխան Տարունոյ Բագարատ … առաքէ զոմանս ի մեծամեծաց իւրոց ընդ առաջ նորա պատարագօք ոսկոյ և արծաթոյ և պատուական հանդերձից, համոզեալ մի ելանել յերկիրս Հայոց: - 170. Եւ յետ այսորիկ որդիք նորա Գագիկ և Աշոտ և Գուրգէն կանոնեցին զյիշատակութիւն նոցա ի տօնի սրբոյ Խաչին – 356. Եւ յետ անցանելոյ աւուր, գնացեալ Աշոտ որդի Դերանկին, առեալ զդի նորա՝ տարեալ հանգոյց առ հարս իւր յԱղբակ գաւառի ի վանս սուրբ Խաչին: - 354. Եւ յետ մահու նորա նստուցին թագաւոր զորդի նորին զԱրտաշիր, կարի տղայ մանուկ: - 152. Եւ յետ նորա ածին զԽոսրոյ ոմն /154/ տղայ մանուկ և նստուցին իւրեանց թագաւոր. և նա փութանակի վախճանեցաւ: - 156. Եւ յետ սակաւ աւուրց վախճան առեալ կենաց նորա, ձիոյ խրոխտացելոյ զանձն ամբերթեալ ելոյծ ի կենաց զքաջարանցն զմեծն տերանց զքաջ զօրավարն և զզօրագլուխն Հայոց մեծաց: - 364. և յերթալն նորա և ի դառնալն՝ գայ գտանէ վախճանեալ զթագաւորն Արտաշէս ի Մարինդ – 92. Եւ յերկարեալ սպարապետին /282/ խօսել ընդ զօրավարին՝ ի բաց մերկեաց զպատրուակ սրտմտութեան ի սրտէ նորա: - 284. և յղէ զնա ընդ կողմն Ռշտունեաց. – 202. Եւ յղէ պատգամ առ Թէոդորոս եղբայր Հայրակղի, ըստ այնմ որում Հրէայքն եղեն ձեռնտու, եթէ ,,զերկիրդ զայդ Աբրահամու խոստացաւ Աստուած և զաւակի նորա, և ի ձեռս նոցա էր բազում ժամանակս. – 160. Եւ յոր կոյս կամի հայեցուցանէ զնոսա: - 314. Եւ յորդորականիւ հրաժարեցուցանէր զնոսա ի բաց կալ յապիրատ և ի վնասակար գործոցն զոր գործէին – 182. և նա զբոլոր իսկ զաշխարհն կործանեաց, պաշտօնարար լինել սնոտեացն, թէպէտ յետոյ ընդունէր զապաշխարողսն: - 256. և նա ձեռնամուխ եղև զընդ նովաւ հնազանդեալս ի բաց կորզել քեցել ի նմանէ շրջաբերական թղթովք, զիշխան Վասպուրական զԴերանիկն, զԱպլբառ Կայսիկ զբռնաւորն Ապահունեաց, նմանապէս և զայլսն զոր և կարաց հրապուրել. – 350. և նա ակն ունէր մեծ իշխանին մտանել առ նա – 344. և նա առաւել յորդորագոյն հնչէր և արտօսր ի վեր բերեալ հեղոյր, ասէ – 222. և նա ասէ. - 46. և նա ասէ՝ զԱստուած արարիչ երկնի և երկրի պատմեմ, և անարգեն զիս սպառնալեօք: - 160. Եւ նա դարձուցանէր այսպիսի իմն պատասխանի – 278. և նա դարձուցանէր զնա կսկծեցուցանող բանիւք իբր զարբանեակ սատանայի: - 318. և նա դիմեալ եկն ի վերայ նորա: - 150. և նա երթեալ առանց մեր հրամանի թագաւորեաց, և զմեր գանձս մեզ ընծայ մատուցանէ, ոչ գիտելով եթէ համարս խնդրեցից գանձիս այսմիկ, և ոչ դադարեցից մինչև առից զնա ի բուռն իմ,,: - 142. և նա ևս քան զևս զկարծեցեալ հիւանդութեանն աճեցուցանէր զխստութիւն ցաւոցն ծանրանալն նմա: - 328. Եւ նա ևս քան զևս պնդեալ հաստատեալ կայր ի հաւատս, ի սէր և ի յոյսն Քրիստոսի. – 318. և նա տրտմեալ գնաց ի տուն իւր, քանզի հանապազ ստիպէր ի

դիւէ անտի, թերևս թոյլ տալովն Աստուծոյ, զոր համարէր ի հրեշտակէ զանկանելն ի մտաց: - 160. և նախ ձեռս արկցէ յԱշոտ և տուն նորա և ի Բագարատ և տուն նորա – 184. և նախ նորա եղեն գտակք գրոց – 18. և նժոյգաձիգն իւր մատոյց նմա զընտիր երիվարն: - 228. և նմա յանձն առնէ զաշխարհս, փոխանակ հօր իւրոյ Ապուսէթի. – 184. և նմին հատուցումն ի կարգի որ ասէ, ,,կացո ի վերայ նոցա մեղաւոր, սատանայ կացցէ ընդ աջմէ նորա,, , և որ ինչ ի կարգ սաղմոսիդ է: - 214. և նոյնգունակ զարդու զարդարեաց զնա բուրուառօք արծաթեղինօք և ընտիր և փորձ արծաթագործ դրոշածօք նշանի խաչին Քրիստոսի: - 390. Եւ նոյնժամայն եհաս հրաման յարքունուստ՝մի տաղտկալ և վհատել և մի ի բաց կալ պատերազմել ընդ նմա. մինչև եկեսցէ ակամայ կամօք ի հնազանդութիւն արքայի: - 284. Եւ նոյնժամայն հրաման հասեալ յափփուսփս յոմանս ի գաղտնիս՝ զրաւ առնել կենացն նորա. – 328. Եւ նոյնժամայն շուրջ փակեալ բազմութեան՝ արգելին զնա իբրև յամուրս անձաւաց, զվարմ մահաբեր, շուրջ ձգեալ ի կործանումն քաջ նահատակին: - 352. Եւ նոյնժամայն սուսերամերկք խուռն նիզակօքն ի վերայ յարձակեալ իբրև զգազանս արիւնարբուս մարդախանձս՝ սրախողխող արարեալ սպանին զնա – 352. Եւ նոյնժամայն վառեցան պատրաստեցան, հեծեալ յիւրաքանչիւր յերիվարս ելին ընդդէմ նոցա: - 134. և նովաւ վճարիցեն զի՛նչ պէտ և լինիցին ումեք ի մեծամեծաց մինչ ի փոքունս նոցա. – 82. Եւ նորա ըմբռնեալ զնա և զամենայն ազգատոհմն նորա ի տանէ Բագրատունեաց և կապեալ երկաթեղէն կապանօք՝ խաղացոյց ի Սամառայ: - 186. և նորա ոչ հաւատայր երթելոց կոչնականացն, մինչև կրկնեաց և երեքկնեաց. – 272. - Եւ նորա առ ահն պակուցեալ, ասէ. հայր իմ, խնայեա յիս. և այլ ոչ զօրեաց բարբառել ինչ: - 320. և նորա առեալ տանի զնա ի լեառնն Սիմ, ի տեղի հայրենեաց բնակութեան յաշխարհին Տարունոյ: - 84. և նորա արկեալ զնա ի փոքրագոյն տեղի մի նեղ, և ինքն փութացաւ գոյժ ետ վասն նորա՝ մահու պատահել, լի անմտութեամբ մոլի աբեղայն, որում ոչ հրամայեցաւ. – 320. և նորա զնացեալ զհետ կոչնականացն լի անմտութեամբ: - 102. և նորա ելեալ սակաւ արամբք՝ իբրև ջուր ընդ զառ ի վայրն հոսեալ՝ արար հալածական զՎահան և զզօրս նորա. – 310. Եւ նորա զայս ամենայն չարիս կատարեալ՝ ևս բազմագոյնս քան զայս հաստատեալ եդ ազգի իւրում օրէնս բազում և այլ չարագործութեամբք. – 164. Եւ նորա զեկուցեալ վասն նորա Բուխայի՝ ասէ. ,,այրս այս Գուրգէն ի տոհմէն Արծրունեաց, այր քաջ և պատերազմող, ի յահէ քումմէ անցեալ գնացեալ զկողմամբքն Յունաց – 304. Եւ նորա ընկալեալ զպարգևն՝ կատարէր զխնդիրն: - 186. Եւ նորա ըստ ցանկութեան սնոտի փառամոլութեանն կատարեալ զխնդիրն. – 124. և նորա խնդիր արարեալ մեծաւ ստիպով, մինչև կարացին գտանել նովիմբ կազմածաւ, և ետ յարսն որք եկեալ էին. – 154. և նորա կալեալ զնա և ի կապանս մատնեալ որպէս զանհնազանդ ումն՝ և եկն անց յՈստանն Ռշտունեաց: - 322. Եւ նորա կամեցեալ ցուցանել թագաւորին՝ ի սոյն աւուրս վախճանեցաւ Հայրակղէս. իսկ որդի նորա Կոստանդին ոչ ունէր յանձին ըստ կամաց նորա պատասխանի. – 162. և նորա կատարեալ զխնդրելին: - 130. և նորա համբարձեալ զձեռս իւր յերկինս յաղօթս կալ, զի կարասցէ յաղթել նահատակութեամբ – 296. և նորա ճիչ բարձեալ ասէ, քրիստոնեայ եմ. և նա ևս պնդէր և ասէր, ,,մի՛ մեռանիր, մսլիմանակ ես,,. – 222. Եւ նոցա ընկալեալ զխնդիրսն՝ հաւանեցան առնել ըստ կամաց նորա, մինչև տեսցեն եթէ զի՞նչ պատասխանի եկեսցէ նոցա յարքայէն իւրեանց, և կամ զօրուն զի՛նչ հրամայեսցէ առնել: - 144. Եւ նոցա ի գլուխ հանեալ զգործ պատերազմին՝ դառնան զօրքն Հայոց մեծաւ յաղթութեամբ – 176. և նոցա կալեալ զճանապարհն անապատի՝ գնացին ի Տաճկաստան առ որդիսն Իսմայէլի, ի քաղաքն որ կոչի Մադիամ – 156. և նոցա հետամուտ եղեալ մինչև ի մութ երեկոյին, լցին դիակամբք զերկիրն. – 140. Եւ նոցա ձայն բարձեալ ողորմագին պաղատանօք առ Հայրակղոս, եթէ ,,աստուածասէր և բարերար տէր, արա/գրքում՝ ապա/ ի վերայ մեր ողորմութիւն, թէպէտ և չեմք արժանի ողորմութեան,,: - 150. և նոցա պարտասեալք ի ծանրութենէ զինուցն և ի ջերմութենէ տապոյ արեգականն և ի սաստկութենէ աւազոյն, որ ոչ ունէր զկայ ոտից, և ի հետևակագնացութենէն և ամենեքումբք թշուառացեալք՝ անկան ի ձեռս թշնամեացն –

162. Եւ նոքա կամեցեալ անձնապահ լինել աշխարհին՝ գնացին ընդդէմ նոցա. – 162 և նոքա ասեն. – 48. Եւ նոքա էին արք փառաւորագոյնք ի տանէ Արծրունեաց և յայլոց նախարարաց, որոց Տէր եղիցի այցելու: - 402. և նոքա ըստ ձախողակի սովորութեանն իւրեանց օրինադրութեանն, արիւնարբու առանց բարւոյ բարեգործութեանցն մանաւանդ թէ լցեալք սատանայական չարութեամբք՝ ձայն արկեալ յամենայն քաղաքսն, խռովեալ ըստ գազանեղէն իւրեանց մոլեգնութեանցն – 398. Եւ նոքա թափառնակի անյապաղ հանդերձ իւրաքանչիւր զօրու եկին հասին առ մեծն Վարդան – 126. և նոքա կային անշարժ, և ոչ ել /284/ այր քան զընկեր յառաջ. – 286. և նոքա կային մեծաւ ուժով և զոհանային զանբաւ և զառատաշնորհ պարգևացն Քրիստոսի, որ արժանի արար զնոսա մեռանել վասն անուանն Քրիստոսի և առնուլ զմարտիրոսական պսակն: - 292. և նոքա յոյժ ուրախ եղեն, զի վասն անուանն Տեառն արժանի եղեն մեռանել. – 222. և նոքա տան տանել նմա զհարկս և հասս արքունի և դարձուցանեն զնա ընդ նոյն ուստի եկն: - 172. և նստան անդէն զաւուրս Թ և պատերազմեցան ընդ նոսա աւելի քան ՋԺԹ անգամ. – 276. և ոչ գիտացին զօրն Պարսից զդարձն Հայրակղի ի վերայ նոցա՝ մինչև երթեալ խառնեցան և բախեցին զմիմեանս պատերազմօք: - 150. և ոչ առ փոքր մի ինչ ներեաց կամ անսաց /264/ տալ տեղի պատասխանոյ, այլ հրամայեաց դահճացն տալ ի վերայ նորա զվճիռ մահու, փութով զրաւ առնել նոցա ի սատակումն սրոյ: - 266. և ոչ եմ բաւական պատմել զանցս անցիցն կորստականութեանն նոցա մոլորութեան, վրիպել յուղիղ և յամբիծ առաքելաքարոզ դաւանութեան հաւատոց կաթողիկէ եկեղեցւոյ ի Հայր և յՈրդի և ի Հոգին սուրբ. – 240. Եւ ոչ ևս այնուհետև համարձակ ելանէին և մտանէին յաշխարհս Վասպուրական զօրքն Տաճկաց. զի անկաւ ահ սաստիկ ի վերայ նոցա: - 308. Եւ ոչ յանձին կալեալ Արջամայ վստահաբար առ իւր ունել զԱնիանոս՝ յղէ զնա ի Հայս: - 76. և ոչ նոցա միայն՝ այլ և ընդհանուր մարդկութեան լինել օրինակ արդարութեան և ժուժկալութեան. – 26. Եւ ոչ ոք գտանէր ամենևին ի կողմանէ /174/ թշնամեացն որ կարէր կալ ընդդէմ նոցա, և ոչ մի ոք. – 176. և ոչ ոք ամենևին իշխէր ելանել արտաքոյ կամաց ձեռին նորա ի մեծամեծաց մինչև ի փոքունս. – 200. և ոչ քաղցր թուէր նմա քուն գիշերոյն, և փափկութիւն տունջեան յոչինչ համարեալ լինէր – 242. Եւ ոչինչ ամենևին զչարացաւ ընդ նմա Բուխայ և ոչ յիշեաց զգործսն զոր գործեաց, և ոչ տրտմեցոյց զերեսս իւր. – 288. և որ խոստովանեսցի զիս առաջի մարդկան՝ խոստովանեցայց և ես զնա առաջի Հօր իմոյ որ յերկինսն է,,: - 256. և որ ի նմա են կենդանիքն՝ զնոյն առ ի վերայ հասուցանէ և նորօք զպէտս քաղցոյն վճարէ մինչ ի ժամանակս գարնանայինս: - 262. և որ ինչ ի նմանէ կան պահին պարգևք կացելոյն ի ճշմարտութեան հաւատս, և տանջանք ուրացելոցն և յետս կացելոցն - 206. և որդի նորա Խոսրով մանկագոյն տիովք մնացեալ՝ առնու զթագաւորութիւն: - 136. և որդի նորա մնացեալ մատաղ հասակաւ, որում Մահմէտ կոչէին. – 158. և որդի Որմզդի Խոսրով գնաց փախստական առ Մուրիկ թագաւորն Յունաց՝ զոր առեալ քեռիք նորա Վնդոյ և Վստամ գնացին փախստական ի դուռն կայսերական: - 136. և որպէս պատմեն զնմանէ՝ զի դարձաւ յետս յԱստուծոյ և դարձոյց զերեսս իւր ի ճշմարիտ դաւանութենէ յերկրպագութենէ Աստուածորդւոյն, որպէս ասաց՝ դարձուցին յիս զթիկունս և ոչ զերեսս իւրեանց. – 248. և որպէս պատմի՝ եղև թիւ պատերազմաց նոցա ԻԸ անգամ, և հարան զօրքն արքունի յայսքան հանդէսս և ի կռիւ: - 286. և ունէր զիւրաքանչիւր կալուածս զաւանդեալ ժառանգութիւն նոցա ի թագաւորացն առաջնոցն Մուշեղ, Վահան: - 96. և ունէր կինն գանձ բազում, և նորա դուստր մի Անուշ անուն. – 90. և ուրախ արարից զնոսա ի տան աղօթից իմոց. – 224. և չարչարէին զնոսա ի գործս խիստ սաստկասառոյց ձմերանն դառնութեան. – 188. և պախարակելով զմոլար օրէնսդիրն նոցա Մահումաթ: - 250. Եւ պատճառ այսոցիկ զի՞նչ, եթէ ոչ այն զոր Պօղոսն ասաց, եթէ ,,վասն զի ոչ ընտրեցին զԱստուած ունել ի գիտութեան՝ մատնեաց զնոսա ի միտս անարգութեան գործել զանարժանս,,: - 374. և պատմեցին նմա՝ զոր ինչ գործեցին զիրս քաջութեանն: - 222. և սա նշկահեալ զկայսերբ՝ յղէ առ Շապուհ արքայից արքայ նուաճել ընդ նմա – 108. և սաստիկ կսկծեցուցանէր զնոսա բանիւք, ունելով իւր վկայ

զԵսայի մարգարէ՝ յասելն, ,,լուարուք, իշխանք Սոդոմայեցւոց, ունկն դիք օրիացն Աստուծոյ ժողովուրդ Գոմորացւոց,,. – 182. Եւ սկսաւ գոռալ, և խորհէր զթոյնս չարութեանն թափել ի վերայ իշխանին Աղուանից, /276/ և յղէր առ նա կոչելով ի հնազանդութիւն. – 278. սպանեալ զոստիկանն Պարսից, որ էր ի վերայ նոցա, և ինքեանք պատրաստեալ ի պատերազմ ընդդէմ Պարսից: - 142. Եւ սրբեալ զերկիրս ի պղծութենէ և ի նենգութենէ նեղութեանցն, իբրև զՅուդայ Մակաբայեցի զԱնտիոքայն սրբելով զանաստուածութիւնն յԻսրայէլէ՝ արար խաղաղութիւն նոցա որոց տիրէրն: - 312. Եւ սրբոյ վարդապետին մեր Եղիշէի, որ յայնմ ժամանակի ի Մոկաց բնակէր աշխարհին՝ եկեալ առ նա Բարձումայ, խնդրեալ զպատմողական գիրսն Հայոց, զոր գրեալ էր հրամանաւ սրբոյն Վարդանայ. – 130. վազեսցեն առաւել քան զինծ երիվարք նոցա, և երագունք քան զգայլս Արաբացւոց: - 200. և վախճանեալ զհայրն նորա՝ ի նմին աւուր մեռանի և ինքն սրով յիւրայոցն: /ճիշտը՝յիւրայնոցն/ - 116. և Վահան հասեալ յանկարծուստ ի վերայ նորա, այն ինչ ընդ միտ ածելով ստնանել ինչ Գուրգինայ. – 310. և Վաղարշակ եղբայր նորա եկեալ ի Հայս՝ լնու բարեկարգութեամբ զաղմկեալ և զշփոթեալ երկիրս Հայոց: - 72. Եւ վասն մնացելոցն որք ի քաղաքին և ի սահմանս նորա՝ ել հրաման յարքունուստ առնել ի վերայ նոցա ողորմութիւն, շինել զքաղաքն և հաստատել զամենեսին յիւրաքանչիւր կարգ: - 142. և վերակացու նմա թողոյր զՅովհաննէս ոմն քահանայ ի Բոգունի գաւառէ ի յԱնստան գեղջէ: - 394. Եւ տային կարծիս պարսկականին՝ որպէս թէ հաւանեալ օրինաց նոցա: - 110. Եւ տայր նմա զօր կայսերական յօգնականութիւն, և զՅովհան պատրիկ ի Հայոց կողմանէ, և զՆերսէս ստրատեղատ յԱսիւրոց, և զՄուշեղ այր քաջամարտիկ և հզօր զօրութեամբ, և զամենայն զօրս Յունաց և Հայոց, Վրաց և Աղուանից – 138. և տանջեալ զնա ջղօք՝ տայ նմա և զգանձս աներևոյթս – 66. և տարեալ հանգուցանեն զնա ի Յօշական գեօղ, ի գաւառին որ կոչի Ոտն Արագածոյ: - 120. Եւ տարեալ հանգուցանեն զնա ի վանս սուրբ Խաչին յԱղբագ գաւառի: - 310. - և տացէ ի ձեռս նորա զիշխանութիւնն Վասպուրականի փոխանակ եղբօր իւրոյ – 226. և տեսեալ զուարակ մի՝ գողացաւ և տարեալ մեկուսի յազեաց զնա և կարկառեալ քարամբք՝ մնայր երեկոյինն – 46. և Տէր ամենակալ էր ընդ նմա ամենայն ուրեք ուր և ախորժէր: - 308. և Տէր մատնեաց զնոսա ի ձեռս նոցա - 220. և տիկինն Սեդայ առեալ զդի նորա տարեալ հանգուցանէ ի յԱղբագ ի գեօղն Օսի, ի վանս սուրբ Խաչին: - 384. և տիկինն սպարապետական ի Տարունոյ եկեալ և նշանացի զդի նորա գտեալ՝ տարաւ ի Պորպ յիւր աւան և եդ ի գերեզմանի: - 368. Եւ փախեաւ Յազկերտ յերեսաց /164/ նոցա և ոչ կարաց ճողոպրել. քանզի հասին զհետ նորա մերձ ի սահմանս Քուշանաց, և կոտորեցին զամենայն զօրս նորա. – 166. և փախուցեալ նա անկաւ ի զօրն Թետաղաց, որ էին եկեալ նմա յօգնականութիւն, որ և սպանին զնա հրամանաւ Իսմայէլի, կալեալ զթագաւորութիւնն ամս Ի: - 166. և փախստական եղեալ Մահմէտ և Ալի և ընդ նոսա իբրև արք Խ՝ եկին ի քաղաքն Մադիամ – 160. Եւ փակեաց Տէր Աստուած արտաքոյ նորա, ասէ, զտապանն: - 32. Եւ փոխանակ նորա թագաւորէ Սմբատ որդի Աշոտի, այր քաջայայտ և հանճարեղագոյն, լի և առոյգ յամենայն իրողութիւնս՝ որ ինչ ընդ երկրաւս համառօտաբար լրութիւն պատկանաբար պիտանան, հաճոյ Աստուծոյ և ընտիր մարդկան: - 356. Եւ փոխանակ նորա ժառանգէ զաթոռ հայրապետական երանելին տէր Յօհաննէս, որ և սնեալ և ուսեալ առ ոտս սրբոյն Մաշտոցի. – 376. Եւ փութացաւ գալ առ նա Դերանիկն. – 350. և փութացոյց վասն նորա զի անյապաղ առ նա հասցէ, և ի մեծ պատիւս հիւպատութեան հասուսցէ զնա, և խաչանշան դրօշիւք ճոխասցի: - 316. Եւ քան ընդ ապստամբելն ի նմանէ՝ ընդ յոյժ անմտութեամբ գալն առ նա զարմացաւ: - 272. և քանդեալ աւերեաց զամենայն ապարանս թագաւորին և այրեաց զնոսա հրով, և բազում գանձս մթերեալս յափշտակեաց անչափ աւարաւ գանձս ոսկոյ և արծաթոյ և հանդերձից, և անասուն բազում յոյժ, և բազմութիւն գերեաց իբրև զաւազ ծովու անթիւ: - 150. քանզի իշխանութիւնն Պարսից յոյժ լքեալ էր՝ և աներկիւղ շինեցին զքաղաքն Մադիամ և բնակեցան ի նմա: - 156. Եւ քանզի հաւատացեալ էր զգաւառսն Բուխայի ի ձեռն

սպարապետին Սմբատայ՝ գրէ առ ամիրայն Նախճաւանու Աբրահամ անուն, զեկուցանելով նմա զզօրացն Վասպուրականի. – 304. Եւ քանզի յոյժ անկասկածելի էր ամրոցն, և գանձս ոչ սակաւս մթերեալ ի նմա ի բազում ամաց – 346. և քաջն Վահան Արծրունի ընդ նմա նիզակակցեալ՝ մեռանին ի միասին քաջքն և ընտիրքն, մեծ նահատակք Վարդան և Վահան – 128. և քարոզն աղաղակէր, թէ ,,առաւ իշխանութիւնն Վասպուրականի աշխարհին ի ձեռս Գուրգէնի փոխանակ եղբօր իւրոյ Աշոտոյ տիրել ընդ նոսա,,: - 236. և օգնութիւն հասեալ նոցա յԱստուծոյ՝ ի պարտութիւն մատնեն զայլազգիսն, բազում վէրս ի վերայ եդեալ – 202. Եւս քաջասրտագոյն Շաւասպ Արծրունի, խաղս ձիընթացիկ արշաւանաց գնդակացն՝ զհետ մտրակեալ հանէ ի նմանէ զգնդակն բազում անգամ ասելով – 114. Զայս յառաջագոյն իմացեալ հին պատմագրին՝ յառաջատես զկործանումն նոցա յայտ առնէ. – 148. Զայսու ժամանակաւ թագաւորեալ Աղէքսանդր Մակեդովնացի տիեզերակալութեամբ երագահաս հասեալ ի վերայ Դարէհի սպանանել զնա. և բառնայ զթագաւորութիւնն Պարսից Արշաւրեան: - 68. Զգունդն առաջին տուեալ լինէր ի ձեռս Գուրգինայ և Վահանայ Հաւնունոյ, որ և նիզակակից նմա էր: - 178. զի դեռ ևս կենդանիք են բազումք ի նոցանէ: - 206. զի մողեսք և կովիդայք, քարաթաթօշք և բնդռունք ի վերայ եկեալ կերան զորս նորա: - 46. զի տեղեակ էր մոլար վարդապետութեանն նոցա – 206. զի Քրիստոսն այն, որ զանձն իւր ոչ կարաց ապրեցուցանել ի Հրէիցն, այլ կալան զնա և սպանին ի վերայ փայտի՝ իսկ արդ զքեզ զիա՞րդ կարէ ապրեցուցանել ի ձեռաց իմոց: - 146. Զի այր քաջ է և պատերազմող, և միաբանք են որք ընդ նմա են զօրքն, և զանձինս ի մահ դնիցեն ի վերայ տանց և աշխարհաց և ազանց և տոհմից իւրեանց: - 212. զի անկեալ էր ի սիրտս նոցա հաւատ սուրբ առաքելոցն – 246. զի անմեկնելի եղիցի Քրիստոս ի նոցանէ – 250. զի ասեն, թէ նորա ի միջոյ բառնայցեն՝ ոչ ոք կարասցէ կալ ի կայի իւրում ունել զդէմ մեր: - 184. զի եկեսցէ առ նոսա առանց պատկառանաց և երկիւղի և առանց միոյ իւիք կասկածանաց – 226. զի էր նորա /178/ գանձ բազում ի կարաս թաքուցեալ ի գետնափոր տան, ի ներքոյ դրացն ապարանից տան - 180. զի թէ հնար իցէ՝ անյապաղ երագութեամբ անձամբ իւրով և զօրու և զինու ձեռնտու լիցի հասանել յօգնականութիւն նմա: - 172. Զի ի հասանել ի վերայ նորա ցաւոցն մահաբերաց՝ ոչ հոգացաւ զմանկականն իւր տարաժամ ելսն յաշխարհէս – 386. զի ի գնալ Արտաշէսի յայսմ տեղւոջէ՝ ոչ ևս յաւել ձեռն Երուանդայ տագնապել զնա – 88. զի ի փոնգալոյ նորա կայծակունք հատանին և ընդ ոնգունս նորա ելանէ ծուխ հնոցի կայծականց, որպէս գրեալ է ի Յովբ: - 246. զի կատարեալ էր սիրտ նորա ընդ տեառն Աստուծոյ ամենակալի: - 316. զի կարծէր դիւրաւ արկանել զնոսա ի հաղբս պատրանաց զկնի դարձելոցն ի ճշմարտութենէն. – 250. զի կարծէր ևս համախորհ և միագործ զնիզակակիցսն իւր, զզօրսն և զզօրագլուխս զգունդ ազատացն, որ մտեալ էին ընդ նմա յանձաւն Նկանի: - 210. զի մեռաւ նա ի ճանապարհի, ի կողմանս Ասորոց, յելանել նորա ի վերայ աշխարհիս Հայոց՝ չարչարեալ զսոսա որպէս խորհեցանն. – 184. զի մեր լիցի ժառանգութիւն նոցա. – 184. զի մի ամենևին ոք կայցէ յակաստանի, մանաւանդ զի ոչ ոք տեսաց ընդդիմանալ ձեռին նորա. – 296. զի յինքեանս գրաւեալ ընդ հարկաւ ծառայեցուցանէին զպաշտօնեայս սրբոյ Խաչին, մանաւանդ զի և զգլխաւոր վանացն զհայրն, որում Գրիգոր անուանէր՝ զնա կալեալ եդեալ ի խորափոր խաւարային բանտի: - 334. Զի նորա վասն ի կանայսն մոլելոյ ընդ դստերսն Կայէնի խառնակելով՝ ջրով կործանեցան. – 336. զի ոչ գոնեայ մի ոք գոյ, որ զճշմարտութիւնն վկայէ ուսուցանելով նորա, թող թէ զբազումս: - 246. զի ոչ կամիմ զմահ մեղաւորի, որպէս բառնալ նորա ի չար ճանապարհէն և կեալ: - 30. զի ոչ ոք զօրեաց կալ ընդդէմ նորա: - 262. զի ուր և իցէ՝ ածցեն զնա առ նա, թէ՛ պատիր խաբէութեամբ և խորամանկ կեղծաւորութեամբ և խարդախութեամբ, կամ պատերազմաւ և մեծամեծ զօրութեամբ, ամենայն պատրաստութեամբ, արքունի կարողութեամբ, որպէս զիարդ և կարասցեն՝ առ նա հասուցանեն: - 224. զի տացէ վրէժս անցիցն անցելոց ի նմանէ և ապստամբութեամբ ի պետութենէն Տաճկաց: - 202. զի տեսցէ Տէր զնախատինսն զոր նախատեաց զնա

թշնամին: - 146. Զկնի այսորիկ մեկնեաց Բուխայ յինքենէ արս զօրաւորս յամենայն ազգաց և յամենայն մեծամեծաց և ամենայն աշխարհակալաց, և ի Պարսից և յԵլիմացւոց և ի Բաբելացւոց և յԱրաբացւոց … արս աւելի քան ԺԵ հազարաց և եհան զնոսա զհետ Գուրգինայ – 224. Զկնի այսորիկ յառաջ խաղացեալ Ահմաթ և որ ընդ նմա կայսկազենիցն գունդք, երթեալ մտանել ի քաղաքն Դուին, թերևս կարասցէ ի կատարումն՝ զոր ինչ խորհեցան՝ հասուցանել զչարիսն: - 344. Զկնի Խոսրովու Փոքու թագաւորէ Տիրան որդի նորա: - 96. Զնա ի հիմանց տապալեալ. – 358. Զնա յղէ Ապուսէթ ելանել յերկիրն Վասպուրական և անդէն մնալ զօրօք բազմօք, մինչև զբովանդակ զհարկս և զհասս արքունի յամենայն կողմանցն Հայոց առ նա բերցեն յիւրաքանչիւր սահմանաց: - 176. Զնա որպէս զերկիւղած Աստուծոյ ապաստան յինքեան արարեալ՝ խնդրէր պահպանել նմա. – 320. զոր Թէոդորոս եղբայր թագաւորին և բազմութիւն զօրացն կամեցան սատակել զնոսա. – 156. զոր այսն արարեալ արհամարհեաց զնովաւ: - 80. Զոր առեալ զարսն ստիպեաց ի բաց կալ յերկրպագութենէն Քրիստոսի, և պատուի և պարգևաց արժանի լինել ի նմանէ, և մի չարաչար տանջանօք մեռանել: - 222. զոր եցոյց նմա Հոգին սուրբ՝ որ ինչ առ յապա ժամանակս գործելոց էր – 120. զոր կարգէ զնոսա Ներսէհ ի վերակացութիւն գործակալութեան – 82. զոր հանապազ յղէր առ նա Սմբատ թագաւորն Հայոց: - 366. զոր մեք ոչ յաւելցուք այժմ յառասպելս նոցա յամել – 32. զոր շինեալ էր սրբոյ Լուսաւորչին մերոյ Գրիգորի ի դառնալն նորա ի ձեռնադրութենէ քահանայապետութեանն: - 100. Զոր ոչ առ յանձն լսել նոցա. – 120. Զորոյ իմացմանց հանգամանս իմացեալ ազատացն Վասպուրականի՝ ոչ հաճոյանայր նոցա թևակոխելն Գագկայ, և զելս իրացն ջանային գտանել, առանց խռովասէր հանդարտութեան. – 360. զորոյ զպաղատանս ոչ անտես արարեալ Քրիստոսի՝ ներէ նմա հանել ի գլուխ զսուրբ քառասնորդսն, խաչակից լինելով Քրիստոսի, մինչև ի պարտ զատկին – 254. զորոյ զօրաժողով լինելն իմացեալ Կիւրոսի՝ գրէ առ Տիգրան՝ զօրս յօգնականութիւն առաքել նմա. – 64. Զորոյ իրազեկ եղեալ գալուստ նորա առ Ահմատ, և նորա գումարեալ առ ինքն զզօրս իւրոյ նահանգին և Միջագետաց և զԳեթացիսն՝ և եկն եհաս յանդիման նմա: - 366. զորոյ նախնեացն ջան և վաստակ յուշ արարեալ թագաւորին՝ Համամայ յառաջ մատուցեալ, ի գահ և ի բարձ հայրենեացն ձգել զնա՝ ժառանգեցուցանէ զերկիրն Աղբագ, որպէս Սահակայ նոյնպէս և Համամայ: - 90. զորոյ չունի բան ասել անդր ևս քան զնա յարևելս ունել բնակութիւն մարդկան. – 18. Զորս առեալ քրիստոնէից զպատուական մարմինս նոցա՝ ծածկեցին փառաւորապէս թաղմամբ, ամ ըստ ամէ տօնիւք զօր կատարմանն յիշատակել, որք են արք թուով է: - 268. զորս եթող Բուխայ տիրել աշխարհին իւրեանց յաղագս յառաջագոյն մտերմութեան հօրն նոցա առ թագաւորն և առ զօրավարն, զի զնաց ըստ կամաց նոցա յամենայն ուժոյ զօրութեան մտաց իւրոց: - 298. զսա աղերսեալ տիկինն Վասպուրական Սեդայ, կին Աշոտի և դուստր Ապումրուանայ՝ զերծին զնա ի սրոյն Աւշնի: - 374. Զսա ըմբռնեալ զօրաց Տաճկաց ածին առ զօրավարն. և բազում վնասս ի գործս արքունի կուտեցին ի վերայ նորա և ստութեամբ առաւել քան թէ ճշմարտութեամբ պարտաւորեցին զնա: - 288. Զսա տեսեալ Մահմէտի՝ /162/ կոչեաց և յարեցոյց առ ինքն, հրամայեալ նմա գրել գիրս օրինաց ազգին իւրոյ, ձեռամբ Աբութուռաբայ իսմայէլացւոյ. քանզի ինքն ոչ գիտէր գիր և ոչ դպրութիւն: - 164. զՎաչէ կացոյց ի դրան արքունի, զի ամենայն ոք նովաւ մտցէ և ելցէ յարքունիսն – 82. զօր գումարել, այրուձի կազմել, մեծամեծաց աշխարհատերանց պարգևս տալ, ի թիկունս և յօգնութիւն զամենեսեան կոչել, զի ըստ յանձնառութեան խրատու նորա նոյնպէս և գործեսցէ: - 346. էր երթեալ ընդ նմա և մեծն Ներսէս կաթողիկոսն /98/ Հայոց. – 100. էր և նորա աշակերտ մի, որում անուն էր Սաղման. որ ի ժամ մահու միայնակեցին՝ պատուիրէր նմա և ասէր – 162. Էր ընդ իշխանսն և մեծ իշխանն Վասպուրական Աշոտ, որդի Դերանկին, և ընդ նմա Գրիգոր իշխանն Մոկաց և զօրքն Անձաւացեաց: - 380. Ընդ այն ժամանակս տէր Զաքարիայ հանգեաւ ի Քրիստոս, կեցեալ ի հայրապետութեանն Հայոց ամս ԺՀ, և հաջորդէ փոխանակ նորա տէր Գէորգ: - 338. Ընդ ժամանակսն ընդ

այնոսիկ Աշոտ թագաւորն Հայոց փոխի յաշխարհէս ի բարիոք ծերութեան, փափկացեալ և յղփացեալ խրախութեամբ, ձեռն նորա յամենեսին և ամենեցուն ձեռք ի նա – 356. Ընդ ժամանակսն ընդ այնոսիկ մինչ ճոխացեալ մեծամեծս փքայր Ջափրմոթոքլ ի վերայ քրիստոնէից, որպէս Սենեքէրիմ նախնին մեր ի վերայ Երուսաղէմի և ժողովրդեանն Իսրայէլի՝ յեղակարծում հասեալ ի վերայ նորա որդին իւր Մոթէին սպան զնա – 318. Ընդ նոսին և երանելի եպիսկոպոսն Յոհաննէս և ճգնաւոր քահանայ Գրիգոր – 324. ընդդէմ արաբացի ասպատակողացն յարիւն և յապաժոյժ ի վերայ հայրենի աշխարհի մարտուցեալ և զհոգի և զմարմին փոխանակ սրբոց եկեղեցեաց Քրիստոսի և ի նոյն հաւատացելոց ի Հայր և յՈրդի և ի Հոգին սուրբ, առ զնոսա ամբողջ և անբիծ պահելոյ – 300. Ընդդէմ նորա զօրաժողով եղեալ տունն Գագայ ազգն Գաղատացւոց, երկոտասան բիւրու – 66. ընտանեգոյնս ևս ձայնի կոչելով՝ ո՞ւր ես Ադամ, աւաղականս նմա գորովալիր զանկումնն, թերևս ինքեամբ իսկ զօգտակարօքն տածիցի: - 20. ըստ այսմիկ և այլ առասպելականք, և գիր մատենական ի նմանէ գրեալ և պահեալ ի Բաբելոնի բազում զգուշութեամբ. - 36. ըստ այնմ և հատուցաւ նմա – 98. թէ առաքեսցէ նոցա այր մի, որ փրկեսցէ զնոսա - 218. ԹԷ ՈՐՊԻՍԻ ՊԱՏՃԱՌԱԻ ՀԱՍԻՆ ՈՄԱՆՔ Ի ՆՈՅԱՆԷ ՍՈՒՐԲ ԿԱՏԱՐՄԱՆՆ: - 220. թողեալ զերիվարս իւրեանց, ի հետիոտս ելին ընդդէմ նոցա: - 162. ժամ տուեալ նմա դառնալ առ նա ի ձմերոց նորա ի քաղաքն Դուին: - 218. ժամ տուեալ՝ փութով յանդիման լինել նմա ի թագաւորաբնակ քաղաքն իւրեանց: - 198. ի մէջ անցեալ սուրբն Ներսէս համոզէ զնոսա և խաղաղացուցանէ զաղմուկն: - 100. ի մօտ առ նոսա հասեալ՝ կարգեցին / 274/ կազմեցին զճակատն և ետուն պատերազմ ընդ զօրացն Ծանարաց. – 276. Ի նմին ժամու զգացեալ վասն նորա մեծ իշխանին Արծրունեաց Մերշապհոյ, որ յայնժամ ի Տմորեացն ամրանայր բերդի՝ յղէ առ նա ելանել գնալ ի սահմանացն յայնոցիկ. – 130. Ի նոցանէ աճեալ ազգք երկոցունց Արծրունեացն և Ռշտունեաց – 98. Ի սոյն աւուրս մեծ նեղութիւն եղև աշխարհիս Հայոց ի չարասէր կամաց նորա: - 166. իբր ոչ անգիտանալով Աստուծոյ զառ ի նոսայսն լինելոյ, այլ բնաւորեալն բարի անփոփոխ բնութեամբ մնալով ամենայնիւ՝ առ ի չարասէրն զուղիղ հատուցումնն յապաղէր. – 30. Իբրև լուաւ զայսքան և առաւել քան զսոյնս յանդուգն և առանց երկիւղի զընդդէմ պատասխանատրութիւնն մեծաւ համարձակութեամբ՝ապա հրաման ետ փութով ի կենաց բառնալ զզլուխ նորա սուսերաւ: - 296. Իբրև գիտաց իշխանն, եթէ վճարեալ է չարութիւնն յաչս նոցա, և այլ ընդ այլոյ խօսին, և ի գաղտնիս քրթմնջեն, և անտեղի և անընդունակ հրամանաց նորա լինէին՝ ետ պատասխանի և ասէ – 214. Իբրև գիտացին սուրբքն զանհուն պատերազմ չարին՝ վառեալ և նոքա զինքեանս հանապազակոիւ լինել ի ճակատուն, անխափան սաղմոսերգութեամբ զանուշահոտ աղօթս իւրեանց միշտ ի բարձունս առաքելով – 250. Իբրև եհաս գուժկան առ մարզպանն Հայոց Գուրգէն՝ ելեալ զհետ նոցա Ռ արամբք, վառեալ ի զէն և յասպազէն, և գնացեալ եհաս յԱյլի գաւառ. – 402. Իբրև ետես կայսր Հայրակղէս զչարիսն ամենայն, որ եկին հասին ի վերայ նորա՝ ակամայ կամեցեալ ցուցանել բարեկամութիւն՝ ել ընդ առաջ նոցա, մեծարել իբրև զվաստակեալս և զհիւրս, ընկալաւ զնոսա մեծամեծ /142/ ընծայիւք. – 144. Իբրև ետես կայսր Հայրակղէս զչարիսն ամենայն, որ եկին հասին ի վերայ նորա՝ ակամայ կամեցեալ ցուցանել բարեկամութիւն՝ ել ընդ առաջ նոցա, մեծարել իբրև զվաստակեալս և զհիւրս, ընկալաւ զնոսա մեծամեծ /142/ ընծայիւք. – 144. Իբրև զեկուցաւ նմա յոմանց զոր ինչ խորհի վասն նորա Աւշին / 370/ … ելեալ գնաց մեկնեցաւ օգնութեամբ ի վերայ հասեալ գիշերոյն – 372. իբրև ի մեծ և յանկասկածելի ամուր ապաւինեալ լինէին ի քաջ զօրավարն Գուրգէն և որք ընդ նմա զօրք Հայոց. – 226. Իբրև լցան ամք Ը Փոկայ՝ սպանաւ և նա ի Հայրակղէ, որ դաւեալ նմա՝ էառ զթագաւորութիւն նորա: - 140. Իբրև կարի թախանձեաց՝ ետ նմա իշխանութիւն հազար ամ: - 46. իբրև հարուստ մի մեկնեցան ի գնդէն Պարսից՝ ամբարձեալ Սամուէլ զմիողնին՝ ազդոյ վէրս ի վերայ եդեալ առ ժամայն եհատ զնա ի կենաց. – 106. Իբրև ստուգեաց զազգն, զգաւառն, զաշխարհն, զպատճառ հատուածին, զզետեղելն, զիարդն, զորպէսն, զեղանակն, զդիպուածն, զպատահն և զայլն

ամենայն՝ խնդրէ զնա Վաղարշակ յԱրշակայ և առնու աձէ զնա ընդ իւր ի Հայս – 72. Իմացեալ յայնժամ իշխանն զնենգութիւն նոցա և զխորամանկ կեղծաւորութիւնն… ասէ ցնոսա. – 214. ինքն իսկ փոյթ յանձին կալեալ՝ ել գնաց մեծաւ հոգաբարձութեամբ, լուծանել զնա ի տառապանաց արգելանին. սակայն և այնպէս ոչ կարաց գտանել զելս իրացն վտանգի առնն: - 346. Իսկ զթագաւորաբնակ տեղին մեծին Տրդատայ տան ի ձեռս Վահանայ Արծրունւոյ՝ շինել նմա տուն թագաւորաց, արարս պատրաստութեամբ. – 126. Իսկ կատարելագոյնքն և ծերքն ի նոցանէ սպուժէին առ այս, և մանաւանդ որք հաւատարիմքն կոչէին ըստ հաւատոյն նոցա որք Կուռայքն անուանէին – 404. Իսկ որք էին արգելեալք ի քաղաքն աղօթականս և պաղատանս առ մեծ իշխանն Աշոտ յղէին, զի համոզեսցէ ի մէջ նոցա զխաղաղութիւն. – 382. Իսկ քաղաքապետն որում Ապլբերս կոչէին, ձեռնտուութեամբ պարսկային զօրու սպասէր նմա ի չարիս ի բազում աւուրց. – 352. Իսկ աբեղայն արիոսեան, զոր յառաջագոյն ասացաք վարդապետ Մահմէտի, տեսեալ զյաջողութիւն իրացն՝ յարուցեալ եկն առ Մահմէտ, ցուցանել նմա զգութ երախտեաց, իբրև յիւրմէ վարդապետէ ուսեալ եհաս այնպիսի իրաց. – 162. իսկ աշխարհին վերին Հնդկաց ասի լինել դստեր նորա: - 30. Իսկ Ապումուսէ վառեալ և զինեալ զինքն ամենայն զօրութեամբ իւրով՝ խաղաց էջ ի վերայ նոցա և եհար ի հարուածս մեծամեծս – 280. Իսկ Ապումրուանայ ի պատճառ ոստիկանութեան զմանկականն նոցա պատճառելով խաժութիւն հասակի՝ առ սակաւ սակաւ սկսաւ զամուրսն յինքն գրաւել, զհետ իշխանական ցանկութեանն զերասանակ մտացն ձգեալ - 360. Իսկ Ապուջափր անցեալ ի կողմն Աղբագոյ՝ և ժողովեցան առ նա գունդք գունդ յամենայն կողմանց: - 306. Իսկ Գուրգէն ընթացեալ զհետ հանդիսի պատերազմող նահատակութեանցն, /310/ անդուլ լինելով զցայգ և զցերեկ հանդերձ որ ընդ նմա միաբանեալ ազատագունդ զօրացն – 312. Իսկ Գրիգորի ոչ բերելով զընդդիմակացսն նորա կատարել՝ խօսի ընդ նմա սիրով խաղաղութեան, և բաժանել զաշխահս յերկուս՝ տեղի ետուն միմեանց ի խաղաղութիւն: - 310. Իսկ երանելիքն գոհացեալ զանպատում պարգևաց Քրիստոսի, որ արժանի արար զնոսա մեռանել վասն անուան նորա - 266. Իսկ Երուանդ պահեալ զերդումն հօրն նորա՝ թողացուցանէ երթալ բնակել և կեալ ուր և հաճոյ թուիցի. – 84. Իսկ զԱհմատ ընդ Վասպուրական աշխարհին անցանել գնալ՝ ելեալ զհետ նորա Շապուհ որդի Աշոտի, մինչ տանել հասուցանել զնա ի մուտս Ասորեստանեայց ճանապարհին: - 346. իսկ զանուանս նոցա այլափոխ ասելով զատանին: - 18. Իսկ զկնի աւուրցն տասանց ի գլուխ ելանելոյ՝ խնդրեաց սպարապետն մտանել առ նա, և կալեալ զձեռանէ նորա՝ սկսաւ խօսել ընդ նմա և ասէ. – 282. Իսկ զկնի աւուրցն տասանց ի գլուխ ելանելոյ՝ խնդրեաց սպարապետն մտանել առ նա, և կալեալ զձեռանէ նորա՝ սկսաւ խօսել ընդ նմա և ասէ. – 282. Իսկ զօրավարն խոստացաւ երդմամբ տալ նմա զի՛նչ և խնդրիցէ, մինչև հաւասար իւրոյ տէրութեանն բարձակից և պատուակից կացուսցէ: - 218. Իսկ զօրքն Տաճկաց գումարեալ ի վերայ նոցա. շուրջ փակեալ, ձերբակալ արարեալ /220/ ածին առ զօրավարն - 222. Իսկ թագաւորն գիտացեալ զհաստատուն և զանդրդուելի միտս նոցա՝ ոչ ինչ փոյթ արարեալ թողու ի կամս կամաց իւրեանց, կեալ որպէս հաճոյ թուի: - 132. Իսկ թագաւորն Հայրակղէս հրաման ետ պաշարել զնոսա. – 156. իսկ թագաւորն Մարկիանոս ընկալաւ զնոսա սիրով ի խաղաղութեան, մեծաշուք պատուով ի բարձ և ի պատիւ յառաջ ածեալ, իբրև զքաջամարտիկ ախոյեանս - 132. Իսկ ի միում յաւուրս անցեալ գնացեալ Գուրգէն՝ հանդիպի նմա ի քաղաքին Պարտաւ - 370. Իսկ իբրև եհաս Բուխայ զօրօք բազմօք մերձ ի սահմանս նոցա, և գրեաց հրովարտակս դիմօք խաղաղութեան՝ դառնալ սիրով միաբանութեան ի հնազանդութիւն արքային – 274. Իսկ իբրև եմուտ տիկինն ի բանակն և եկաց առաջի զօրավարին՝ խօսեցաւ ընդ նմա ըստ պատշաճի իրացն յոր պէտս չոգան: - 226. Իսկ իբրև լուաւ, թէ ահա առեալ Բուխայ զզօրս իւր գալ հասանել ի վերայ նորա՝ հրաման ետ բոլոր աշխարհին իւրոյ ելանել ունել զլեռնակողմն – 276. Իսկ իբրև ծանուցաւ նմա անլոյծ միաբանութիւն ուխտի ընդ միմեանս Աշոտոյ և Բագարատայ՝ ոչ ինչ յայտնեաց զխորհուրդս չարութեանն, զոր խորհեալ էին ի վերայ նոցա. – 172. իսկ իբրև

նա ըմբռնեցաւ, և գիտաց զօրավարն եթէ ոչ ոք այնուհետև յիշխանացն Հայոց մնաց, որ ոչ համագունդ ժողովեալ են առ նա՝ մերկացաւ յայնժամ զպատրուակ կեղծաւորութեանն, զոր սերմանել էր սատանայ ի սիրտ առնն: - 296. Իսկ իշխանն Բագարատ … ել գնաց անխիղճ համարձակութեամբ, տիրասէր խորհրդովք, կատարել զպաս զինուորութեան, ըստ աստուածեղէն պատուիրանին և ըստ թագաւորական հրամանին, զհետ եկելոյ կոչնականացն, ոչինչ իմացեալ զպատրանս .խաբէութեան նորա, որով վրիպեացն: - 186. իսկ խարդախն ի նոցանէ ստիպեալ նախաժաման եկն յառաջ: - 46. Իսկ Կայսիկքն և որք ընդ նոսա և զօրքն Պարսից զմարտն ի գաղտնիս գրգռէին – 380. Իսկ Մեհուժան ծանեաւ զինչ պատահելոց էր նմա ի կայսերէ և ի նախարարացն Հայոց, ոչ յաւել դառնալ ի Հայս. – 110. Իսկ յառաջագոյն և նա գիտէր ի համբաւուց, և յօժարագոյնս եղև ընդունել զնոսա. 366. Իսկ յետ անցանելոյ աւուրց ինչ՝ ետ տանել զնա առ թագաւորն, և ընդ նմա գունդս զինուորաց վառելոց և ընտիր այրուձիոց: - 288. Իսկ նա անդէն և անդ հերքեալ ապաժամանակ առ ուղղակի տեսութիւն մեղանաց՝ առ Աստուած վերաբերէ զպատճառն – 20. Իսկ նա անցեալ ի գաւառն Որսիրանից, և ընդ նմա բազմութիւն ազատաց և մեծամեծացն Արծրունեաց նախարարութեանց և ամենայն զօրաց նոցա – 224. Իսկ նա անփոյթ արարեալ երկրաւոր մեծութեանս, զի անցաւոր է՝ անսպառ և անվախճան և անծերանալի և անծախ և առանց ըմբռնելի ի գողոց խնդրեաց պարգևաց առիթ լինել. – 218. իսկ նա առ երագութեան ձեռին ձգեալ զսուսերն՝ եհար զերեսս Ջուանշիրայն, և խլեաց զաչս նորա, և ինքն դարձաւ մեծաւ յաղթութեամբ, եմուտ յամրական տեղիսն: Եւ նոքա յո՛վ և աճապարեցին: - 310. Իսկ նա ըստ սովորականի ցանկասէր պղծալից անյագութեանն՝ խրոխտացեալ մռմռեալ յանձն գազանեղէն թունիւք առաւելեալ, բորբոքեալ տապախառն բոցով հեղուլ զմահածին թոյնսն ի վերայ Բուխայի. – 326. Իսկ նա ի հրապոյրս ապստամբ վիշապին ելեալ, որ բազմախարդախ չարութեամբն եհեղ առատութեամբ զդառնութիւն խրատոյն յունկն կնոջն անզգամի: - 20. Իսկ նա չանսաւորութիւն անխոնարհելի մնացեալ, և անցեալ օթագայեցեալ ի գեօղն Փեռոտակ յանդիման քաղաքին: - 352. Իսկ նա փոքր ինչ ժամանակ ներեաց նոցա դիմօք սիրոյ խաղաղութեան, մինչև ի գլուխ ելին որ ինչ յաղագս Ապումուսէին էին հանդէսք. – 296. իսկ նա քանզի ի հրեշտակէ ասէր ունել պատգամ և ոչ ի մարդոյ՝ յոյժ դժուարեալ ընդ իրսն՝ սպան զնա ի գաղտնիս: - 162. Իսկ նորա յղեալ առ նոսա դեսպան զԱբղլայ ոմն … տեսանել թէ իցէ՞ հաւատարիմ զոր ինչ խօսին ի ձեռն դեսպանաց, թէ պատիր խաբէութեամբ ջանան կորուսանեն զնա: - 226. Իսկ նորա տուեալ զնա ի կղզիս Ովկիանու վախճանի անդ, թագաւորեալ ամս Դ: - 110. Իսկ նոցա անմեկնելի զոյսս իւրեանց ի Քրիստոս ունելով, բնաւից գերագոյն և հոյակապ անուն ստացեալ, զյաղթութեան նշանակ կանգնեալ. - 308. Իսկ նոցա ոչ յայտնեալ զխորհուրդ չարութեանն՝ դարձուցանեն զնա անդէն, զի մի յերկբայս եղիցի գալ առ նոսա. – 226. Իսկ նոքա քանզի ի հանգստեանն էին՝ դիմեցին ի վերայ նոցա – 162. Իսկ նոքա առաւել քան զառաջինն դիմեցին ընդդէմ չարչարանացն խաչակից լինել Քրիստոսի. – 292. Իսկ նոքա թէպէտ և հաւանէին՝ այլ էր և հակառակութիւն մեծ ի մէջ նոցա. քանզի որոշեալ էին պաշտամամբ կռոց ըստ իւրաքանչիւր կամաց: - 156. Իսկ նոքա պատահեալ Պարսից ի գեօղն Երիզ կոչեցեալ, իբրև մրրիկ զփոշի պտուտեալ, իբրև հուր ընդ եղէգն ընթացեալ՝ սուր ի վերայ եղեալ վանեցին զբազումն քան եթէ զսակաւս – 136. Իսկ որ տիրէր աշխարհին Ապահունեաց Կայսիկն՝ զիւր զօրսն առ ինքն գումարեալ և որ շուրջ զնովաւ քաղաքայինք և ասպատակքն Պարսից, որք ի Յունացն վերայ առնէին արշաւանս: - 380. Իսկ Սաղման յանձն առ գրել նմա. և գրէր գիրս յօդուածոյս, էր ինչ որ ի ստոյգ յիշողութենէ, և էր ինչ որ կարծողական բանք. – 164. Իսկ Սմբատ որ և Ապլաբաս սպարապետն Հայոց, իբրև գիտաց թէ ոչինչ օգուտ բերէ արտաքոյ հրամանացն նորա լինել՝ փութացաւ եկն առ նա, և ընկալեալ ի նմանէ՝ բնակեաց ինքն և իւրքն հանդերձ իւրաքանչիւր կալուածովք առանց կասկածանաց. – 270. Իսկ սրբոցն որ ի Սուկաւէտ լերինն, քանզի էին համաշխարհիկք և հաւատարիմք Սաթինիկայ եկեալ զկնի նորա – 88. Իսկ Վահրամ տեսանէր զնա մերձ առ

սպանդանոցն. – 222. Իսկ Վաչէ Արծրունեաց տէր և Հմայեակ Աշոցաց տէր և այլք յանգուցեալ ի նոսա՝ հաճեցին զկամս Վռամայ – 118. լսէին և նոքա, զի ձայն զօրու է և սաստիկ յոյժ: - 228. խնդրէր գտանել զելն իրացն եկելոցն առ նա գուժկանացն – 180. խոստացաւ տալ նոցա գանձս, գեօղս և ագարակս, գրել կնքել և կացուցանել նոցա վկայս - 230. խորհելով վասն սպարապետին մեծին Սահակայ, որպէս ի նմանէ Խոսրով զանձնիշխանականն օրինադրեաց հրաման. – 112. Խորտակէր և զնշան տէրունական Խաչին, զոր ուրեք ուրեք կանգնեալ լինէին. քանզի յոյժ ստիպէր զնա հոգին մոլեկան: - 168. Խօսեցաւ ընդ նոսա բանիւք ողոքանօք, և ոչ լուան նմա. – 222. խօսեցաւ ընդ նոսա խստութեամբ, սակայն և յայնմանէ ոչ երկեան. – 222. ծանուցանէր զզօրութիւն իւրաքանչիւր աշխարհաց և զամուրս նոցա և զզօրութիւն պատերազմաց նոցա ըստ ազգս ազգս: - 270. Կալան և զհայրապետն Զաքարիայ, և ի խնդիր անկեալ աստուածային սուրբ նշանին՝ սկսան զնոսա տանջել, մինչև զբազումս ի պաշտօնէիցն կառափեալ սատակեցին. – 142. Կամ դարձո՝ զխորհեալ նոցա չարիս ի գլուխ իւրեանց, կամ թող զի ելցեն գնասցեն՝ յով և կամեսցին,,: - 82. հարցեալ ցնա - 24. միանգամայն և զերկիր զազրացեալ ի բազմադէմ չարեացն գործելոցն ի նմա: - 28. նա յուսացաւ կոչել զանուն Աստուծոյ: - 26. նա արար զբարի – 46. նա արար զկեանս – 46. նա արար զհուր – 46. նա և զիւրեաւ տախտակափակ լանջապահս, թիկնապահս, զանգապանս, սռնապանս, գլխապանս, որ գրեթէ բովանդակ պղնձեղէնս զնա իմանալ թուէր, և զետեղեալ բլրաձև զօրու անմատչելի կարծելով. – 64. նա և կենդանականն որ ի նմա՝ ոչ ի բարի ինչ, այլ զի անհրաժեշտ չարին կալով անմահականս չարչարեսցի: - 22. Նա ևս ծանօթագոյն քեզ գրեմ – 16. Նոքա առ լուրն խնդացեալ՝ լքին զամրացեալ գունդն՝ աճապարել զհետ Կիւրոսի, ել և ելս արարեալ զմիմեամբք – 66. Շահակս այս անուանէ զանուն որդւոյ իւրոյ՝ Կիւրոս, յիշելով զլաւութիւն առնն և զբարեկամանալն նախնոյն նորա Քսերքսեայ: - 72. ո՞չ ապաքէն ըստ այնմ և ելքն ի նմանէ լինիցին շահ ի փառս Բաբելացւոցն ըստ կարծեաց նոցա: - 38. ո՞չ ապաքէն ըստ այնմ և ելքն ի նմանէ լինիցին շահ ի փառս Բաբելացւոցն ըստ կարծեաց նոցա: - 38. որ ամենատես ակնարկութեամբ ստորիջեալ ի խնդիր կորուսելոյն հեզագնաց գարշապարօք՝ ընդելականս նմա գուշակէր /գրքում՝ զուշակեր/ գալուստ – 20. որ և նա քաջագոյն ևս տիրեաց ամենայնի, որոց և Նինոս – 44. որ ի նայն հաւատալոց էին: - 76. որ յետուստ՝ մոլի բռնաւոր, որ և զՏրովական դժուարամարտիկ իրս քաջապէս և կարողաբար վանեալ՝ աստուած ի նոցանէ ասացաւ, նա և ոչ աշխարհակալին Աղէքսանդրի Մակեդոնացւոյ - 36. որով զեղծագործ ապականութիւն նոցա յայտ առնէ, յուսակորոյս յայնմանէ, որ զպատիւ սիրոյ եցոյց ի նոսա՝ որդիս իւր ասելով – 28. որով զեղծագործ ապականութիւն նոցա յայտ առնէ, յուսակորոյս յայնմանէ, որ զպատիւ սիրոյ եցոյց ի նոսա՝ որդիս իւր ասելով – 28. որով ժամ ի դէպ իսկ է, առ յայնժամ զարժանապէս նոցա ասել փոխարէն և անմեղադրելի բազմաց, եթէ այնչափ մթերեալ համբարք կերակրոց կուտեցին ի հալոցսն Բէլայ – 38. որով փորձիւ և հրապուրիչն նորա բանսարկուն ախտացաւ: - 20. որոց գնացեալ պատահեն նմա ի Դնբուինդ Պարսից: - 64. Պտղոմեայ հասեալ ի տէրութիւն ժառանգաւորութեանն՝ փոխանակ իւր կացուցանէ զԱսուդ, տալով ի ձեռս նորա զբոլոր իշխանութիւն Եգիպտոսի և Հնդկաց - 70. սա առաջին ի տանէն Բագրատունեաց եկեալ կայ նա զայսու կողմամբ Այրարատեան նահանգի: - 76. ՎԱՍՆ ԱՍՈՐԵՍՏԱՆԵԱՅՑ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆՆ. ԵՒ ԹԷ ՈՐՊԷՍ ԶՐԱԴԱՇՏ ԵՒ ՄԱՆԻԹՈՊ ԿԱՑԵԱԼ ԳԼԽԱՒՈՐՔ ԱՐԵՒԵԼԻՑ ԿՈՂՄԱՆ, ԵՒ ՄՈԼԱՐ ՈՒՍՄԱՆՑ ՆՈՑԱ - 42. կատարած ամբարշտաց հասցէ դարձելոց ընդդէմ նոցա. – 200. կարգէ և յօրինէ ի նմա փողոցս վաճառոց ամենալիցս և բաւականս. – 88. Կինն Սահակայ որդւոյ Իսմայէլի, զորոյ զհանգամանսն ցուցաք, զմեռանելն Սահակայ և զկնոջն հրապարակագոյժ լինել, վասն որոյ պատճառանաց սպանանի այրն նորա. – 326. համոզեաց ի մէջ երկոցունց և գլխաւորեաց զխաղաղութիւն /382/ առ նոսա, մինչ գալ Սահակայ եղբօր իշխանին Սիւնեաց, ընդ իւր բերելով զհարկսն: - 384. հարկանէր նմա սպասաւորութիւնս միամիտս,

արածէր ուղտս և լինէր հրամանատար տանն նորա: - 158. Հրաման ետ արքայ Կաւատ արկանել զնա ի տուն մի արքունական սենեկացն. – 152. հրաման տուեալ ամենեցուն, զի իբրև մերձ լինիցի գարնանային ժամանակն՝ փութով առանց յապաղանաց առ նա հասանիցեն ամենայն պատրաստութեամբ: - 262. ճանապարհ արարեալ ընդ Ատրպատական, կասկածելով թէ գուցէ Գուրգէն և կամ մի ոք ի տոհմէն Արծրունեաց և նոցին ազատաց ի կորովացն Վասպուրական հեծելոցն հասանիցէ ի վերայ և թափիցէ զնա ի զօրացն և հանցէ ի ձեռաց իմոց: - 220. մանաւանդ յառաջագոյն պատրաստեալ պատսպարեաց թղթովք և պատարագօք առ թագաւորն և առ զօրավարն գնալ ըստ հրամանաց նոցա, և ոչ ինչ արտաքոյ կամաց նոցա խորհել կամ գործել ինչ: - 270. մանաւանդ մեծ կաթողիկոսն Հայոց Գէորգ պաղատանս առնէր առ Դերանիկն, զի ընդարձակեսցէ նմա: - 336. մանաւանդ/370/ թէ նախախնամող և պահպանական աջն Քրիստոսի հովանաւորեալ առ ապրուստ հրածին կարկտաբեր հասեալ կորստական դիպուածին, օգնութիւն հասեալ յԱստուծոյ՝ քաջասրտագոյնս զնա գործեաց և շութափեալ զնա ի ժանեաց գազանին – 372. մեռան նոքա անդ և թաղեցան փառաւորապէս ըստ օրինի քրիստոնէից յուխտէ Յակոբկաց, որ անդ են հաւատացեալ ժողովուրդք, և զխոստովանողական անուն ստացեալ փառաւորեցան յերկրի և պսակելոց են ի Քրիստոսէ ընդ ամենայն սուրբս. ամէն: - 324. մի՛ երկիցուք ի բազմութենէ զօրաց նոցա. – 134. ՞թէ ոչ կարէին Հռոմք սպանանել զնա, և բառնալ զթագաւորութիւնն Պարսից ի ժամանակի, իբրև ետ Աստուած զսա ի ձեռս մեր. այլ արարին ի վերայ նորա ողորմութիւն: - 144. միայն զի պատահեսցեն միմեանց սիրով խաղաղութեան, և պարգեւօք/գրքում՝պարգևօք/ պատուեալ ի նոցանէ ըստ հրամանի զօրավարին – 226. միանգամայն սաստկացուցանէր ի վերայ նորա զահարկութիւնն, զի գոնեայ այնու կարասցէ արդեօք վրիպեցուցանել ի ճշմարիտ հաւատոցն որ ի Հայր և յՈրդի և ի Հոգին սուրբ. – 294. մինչ զդի նորա գտելոցն յետ աւուրց ինչ ետ Բուխայ ԺՌ արծաթ, զի այնչափ պատուական էր այրն նմա: - 272. մինչ ինքն նստցի յատենի և մուծցէ զնոսա ի դատաստան հարցափորձի և քննութեան վարուցն – 220. մինչ կային ի բանտի իշխանն և որք ընդ նմա ազգատոհմիւք և այլովք օտարազգօք – 240. մինչ նոքա գունդ առ գունդ ընդդէմ միմեանց ճակատեալ կազմէին զռազմն, և փողքն գոչէին և դրօշքն տարածանէին և նշանքն փողփողէին, վահանաւորքն և նիզակաւորքն գոչէին, այրուձին այսր անդր վազս առնէին և ախոյեանքն յարձակէին, կապարճակիրքն աղեղանցն յուրային: - 174. մինչ նոքա յանիոգս յապահովս բնակէին՝ նոքա զռազմն կազմեալ վառեցին զճակատն. – 380. մինչ նոքա յանիոգս յապահովս մնացին յերկիւղէ մարզպանին – 402. մինչ քաղցրատենչ քունն ի վերայ հասանէր որ զպահպանութիւն գիշերոյն պահէին՝ նորա ամբարձեալ զպղծալից ձեռն ի սրբութիւն սրբոցն և առեալ զսուրբ նշան խաչին Քրիստոսի և ընդ պատուհանն արտաքս ելեալ – 378. Մինչդեռ կայր ևս կենդանի՝ ետ կանգնել փայտ մի մեծ և բարձր յոյժ, և դնել զնա ի ծայր փայտին, ունել ի բարձրաւանդակ տեղւոջ. – 290. մինչև եկեսցէ նմա պատասխանի ի բուն զօրավարէն, և ոչ լուան աղաչելութեան նորա. – 230. մինչև զայրանալ դահճացն, և խուռն ի վերայ դիմեալ ի մեծ հրապարակին՝ հարին սրով զերանելին և ի բաց առին զգլուխ նորա – 224. մինչև նոքա խոնարհեալ առ նորայն խորհրդական առ յապա պատահմունսն, որ հանդերձեցաւ աշխարհիս Հայոց, իբր մարգարէական իմն գոգցես տեսաւորութիւն – 114. Յայնժամ բարկացեալ բռնաւորն իբրև գազան մի կատաղեալ, յարձակեալ ի վերայ գառանց գէշ արկանել զնոսա՝ հրամայեաց պնդել զնոսա ի ցիցս կապեալ ոտիւք և ձեռօք. – 292. Յայնժամ ժողովեալ Խոռեմ Ռազմայուզան /գրքում՝ Եռազմայուզան/ զզօրս իւր բանակեցաւ շուրջ զԵրուսաղէմաւ և պաշարեաց զնա, և պատերազմեցաւ ընդ Երուսաղէմի աւուրս ԺԹ – 142. յայնժամ հրամայեաց ածել առաջի իւր զԱշոտ և զորդի նորա Գրիգոր: - 314. Յայնժամ դիմեցին ի վերայ նորա և ի բաց առին զգլուխ նորա և տարան ետուն առ զօրավարն իւրեանց Աբրահիմ. – 304. Յայնժամ ետուն զոտս նորա ի կապանս երկաթիս, և ընդ նմա զտէր Գրիգոր Արծրունի – 238. Յայնժամ երդուաւ նմա Խոռեամ և ասէ. – 154. Յայնժամ

թագաւորն դեսպանս արարեալ յամենայն սահմանս տէրութեան Հայոց, Վրաց և Աղուանից, և առ քաղաքացիսն և հազարապետս և գաւառակալս, և որք սիրողաբար առ նա զինազանդութեանն հարկ հարկանէին: - 366. Յայնժամ թագաւորն փութացոյց դեսպանս մի զմիոյ կնի առ իշխանն Աշոտ, զի անյապաղ երագութեամբ հասցէ առ նա: - 382. ի խորհուրդ եմուտ իշխանն և տոհմակիցք իւր, Վահան և Մուշեղ Արծրունիք, և գունդքն ազատանոյն որ ընդ նմա - 210. Յայնժամ իբրև գիտաց զօրավարն Հայոց և ոչ միով իւիք կարաց հաճել զմիտս նոցա, այլ միաբան ետուն հրաման ելանել ի պատերազմ – 230. Յայնժամ իբրև գիտաց զօրավարն, եթէ յաջողեցաւ նմա ամենայն ինչ ըստ կամաց իւրոց և ըստ հրամանի ամբարիշտ թագաւորին, ի գլուխ ելին խորհուրդ չարութեան նոցա - 238. Յայնժամ իսկ և իսկ փութացեալ /գրքում՝փութեցեալ/ եհաս գուժկանն առ հոյակապն Աշոտ իշխանաց իշխան, զեկուցանելով նմա որ ինչ գործեցաւն: - 348. Յայնժամ խորհուրդ միաբանութեան ի մէջ առեալ ամենեցուն նոցա ասեն. ,,թէպէտ և ի թշնամեացն ապրեցաք՝ սակայն ի ձեռաց դորա մեզ չիք ապրել. արդ եկայք իմասցուք ինչ,,: - 150. Յայնժամ Հայրակղոս հրամայեաց առնել ի վերայ նոցա ողորմութիւն: - 150. Յայնժամ հրամայեաց բռնաւորն կապել զնոսա երկաթի կապանօք և դնել ի բանտի: - 250. Յայնժամ հրաման ետ զօրավարն Բուխայ զօրաց իւրոց՝ ելանել ընդ առաջ նոցա ի պատերազմ. – 274. Յայնժամ մեկնեալ ի նմանէ զօրավարն, լցեալ խորհրդովք չարին հնարագիտութեամբ՝ եկն եմուտ ընդ կողմն Ատրպատական յԱղբագ գաւառ յերկիրն Վասպուրական – 184. Յայնժամ ողորմագին զաչսն շրջշրջեալ առ քաջ նիզակակիցսն իւր, թէ ո՛վ ոք արդեօք թերևս յօգնութիւն ինչ նմա հասանիցեն. – 354. Յայնժամ Վահան հայր Գագկայ Ապումրուանայ և ինքն Գագիկ առնէին համոզել ի մէջ նոցա: - 334. Յայնժամ տէր Գուրգէն առ /306/ չժուժել սրտին, մտրակեալ զքաջ երիվարն յորում նստեալն էր՝ և եհար զգունդն զձախակողմն Տաճկաց և պատառեաց զոռազմն և դարձոյց զերեսս նոցա- 308. Յայնմ հետէ ի տարակոյս անկեալ Երուանդ՝ ոչ քաղցրանայր նմա քուն գիշերոյ, և ոչ համեղանայր կերակուր ի քիմս նորա: - 84. յանձն առեալ տալ նմա զիշխանութիւնն բնիկ տէրութեանն իւրեանց: - 236. յափշտակէին զայր և զկին և զժառանգութիւն նոցա: - 176. յեղակարծում հանգստեամբ դիմեալ ի վերայ նոցա, քանզի նորա կային յանհոգս – 402. Յետ բառնալոյ իշխանութեանն ի Վասպուրական երկրէն մնացին տոհմք Արծրունեաց ըստ ազգս ազգս … և Ապուջափր և Ապումքդէմ և Վասակ և միւս Վասակ և դարձեալ այլ Վասակ և Մուշեղ և Աշոտ և Սահակ , և այլք ի տանէն Արծրունեաց. և ազատք նոցա: - 298. Յետ մահուանն Աշոտի և կատարելոյ զաւուրս սգոյ նորա առնու զիշխանութիւնն Վասպուրական տէրութեանս Գագիկ եղբայր նորին. – 388. յիշեցուցանէր զոր ինչ գործեաց ընդ Աշոտ և ընդ աշխարհ նորա, յուշ առնէր և զքաջութիւն արիութեան նորա – 268. Յղեաց զկոչնականսն զպատահմանն տանելով առ նա զպատասխանիսն. – 352. Յղէ առ նա իշխանն ի ձեռն հրովարտակի զայս ինչ. – 176. յոյժ վայելուչ էր և երանելի քահանային Գրիգորի՝ միաբանել ընդ նոսա և լնուլ զերրեակ թիւն – 250. Յորոց միջի կացեալ Ապումրուան համոզեալ նոցա ցածոյց զճակատ առ ճակատ վառեալ պատերազմն – 364. յորոց վերայ սուր եղեալ զբազումս սպանին և զնս բազումս վիրաւորեցին և զյոլովագոյնսն ի գերելոցն հանդերձ ընտանիւք իւրեանց զերծին ի նոցանէ և անցուցին ընդ պահակ ձորոյն յամրական կողմանս լերին: - 220. յորս բազումք անկեալ ի նա հաւատացին ի Քրիստոս, որպէս Ծանարքն և Աւրհազքն. – 274. Յուշ առնէր նմա զխոստումնն Աստուծոյ առ Աբրահամ և զկարգս թլփատութեանցն և զզոհիցն և զայլոցն ամենեցուն, զոր ոչ է այժմ ասել մի ըստ միոջէ. և յայս լինէր խոկումն Իսմայէլացւոցն մինչև իսպառ: - 158. թէպէտ և զչարացաւ ընդ եղեալսն՝ սակայն զանգիտեաց թողուլ զնա երթալ, ակնածելով ի չարայոյզ ազգէն Իսմայէլի, զի դեռ ևս տիրէր բռնութիւնն, և գերեալքն և հայրն իւր սպարապետն յարքունիս էին: - 316. Նա և զանուանս նոցա և զթիւ ժամանակացն այլափոխս ետուն մեզ, թերևս վասն շփոթեալ և հակառակասէր ազգին – 168. նա է տէր տերանց և թագաւոր թագաւորաց և իշխան կենաց և մահու, Աստուած յաւիտենական Յիսուս Քրիստոս: - 290. Նաև սրբոց հրեշտակացն ի

տեսաւորութիւն ձևացեալ, որոց սարսափմամբ առ նորա զնայեցած յապուշ միտքն կրթեալ, շուրջ փակեալ զնայեցածն՝ ի հարց մատուցեալ ասէ – 386. նազելով և սիգալով, իբրև զկորիւն առիւծու ճեմէր, անկասկածելի մնալով, առ ոչինչ համարելով զհէնն եկեալ հասեալ, փակեալ շուրջ զնովաւ. – 210. Նոյն ժամայն ել հրաման յարքունուստ, զի զսուրբն Սողոմոն ի նմին փայտի սպանցեն, նետաձիգ լինել ի նա: - 292. Նոյնժամայն իբրև ետես տիկինն, եթէ վարեցան որդիք նորա ի գերութիւն՝ գնաց և ինքն զհետ նոցա, զհերս խզեալ և զօձիս պատառեալ, կոծելով և աշխարելով – 238. Նոյնժամայն ելեալ զհետ Դերանկին կորապաղատն ի նոյն աղագս ի բաց մեկնել ի դիմաց հազարապետին, գիտելով զոր ինչ խորհեալն էր յաղագս նախարարացն Հայոց եկելոյն առ նա, և մեկնեալ լինէին ի զօրացն անտի ասպարէզս Ե – 342. Նորա դարձեալ դառնայ ի Սամառայ և ծանուցանէ արքայի զոր ինչ գործեաց, և թէ զիա՛րդ են առ միմեանս միաբանութեամբ իշխանք Հայոց: - 172. Նորա խոստացեալ էր առնել դառնալ Աշոտի յիւր բնիկ տէրութիւնն. – 328. Նորա արհամարհեալ զառաքեցելովք, չվարկանելով արժանի պատասխանոյ, և նովին օրինակաւ սկսաւ շրջել ընդ բոլոր աշխարհս Վասպուրական: - 178. Նորա զերկիր նկատեալ՝ ոչ ունէր նայել ի վեր, կայր կորակնեալ, ոչ ունել ոյժ պնդութեանն, զօրհասն ի վերայ իւր գուշակէր եկեալ հասեալ: - 344. Նորա զչարեալ ընդ հասանել պատգամին՝ առ զայրուցս բարկութեան քինահանութիւն վրէժխնդրութեան արարեալ՝ ի բաց եհան ի գրոցն պատմութենէ՝ որ ինչ վասն տանն Արծրունեաց էր գործոց հանգամանք, և որ ինչ օրինակ մարտիրոսութեան Վահանայ Արծրունոյ: - 130. նորա զՍամուէլն զայն կացուցանէ ի տեղի եպիսկոպոսապետութեանն Հայոց – 118. Նորա ի բաց կացեալ ի հնազանդութենէ իւրոյ պետականին հանդերձ քաղաքային գլխաւորօքն. – 338. նորա լուեալ էր ի պարսկէ ումեմնէ, ի ձորոյն Շատուանոյ, որ էր ընդ դահիճսն, և ի սկզբան վկայութեան մինչ ի կատարումն սրբոյն՝ ի տեղւոջ անդ հանդիպեալ լինէր – 206. Նորա խորհեալ հաստատնագոյնս վասն Ապումրուանայ՝ քաջասրտագոյնս լինել ի սպանումն. – 368. Նորա ծաղր արարեալ զնովաւ՝ ընտրեաց զկապանս և զբանդ, նաև զմահ քաջութեամբ վասն անուանն Քրիստոսի, քան զկեանս խղճիւ: - 318. Նորա ունկնդիր եղեալ գայ առանց յապաղանաց – 82. նորա փութանակի հասեալ ի քաղաքն Բերկրի, և միաբանութեամբ քաղաքացուացն ելեալ պատահեն զօրացն ի զօրագլխացն Վասապուրականի ի գեօղն որում Խոզաղբերքն ասեն. – 304. Նոցա գեղեցիկ խորհուրդ ի մէջ առեալ՝ ընտրեցին զմահ քաջութեամբ քան զկեանս խղճիւ: - 222. Նոցա ելեալ արտաքս յատենէն մեծաւ խնդութեամբ, և յոյժ զուարճացեալք փութային ելանել ի մարմնոյ աստի և մտանել առ Աստուած – 266. նոցա ի մտի եդեալ էր, զի թէ գայցէ զհետ կոչնականացն՝ կալցուք զնա և զօրքն նորա լքանիցին, և դիւրաւ յաղթեսցուք նոցա: - 228. նոցա կալեալ զտիկինն Ռշտունեաց զկին Գարեգնի զքոյր Վարդանայ Մամիկոնէի ածեալ ի Վանտոսպ ի քաղաքն Շամիրամայ, մատնեն ի խոշտանգանս և ի տանջանս դառնագոյնս. – 102. նոցա հանեալ էր ի Գինունի ազգէն, ի զարմէ Մեժեժի Գնունոյ, ի Վասպուրական բաժնէ, նաև Բերկրի բաժին եղեալ էր Վասպուրականի. և դարձուցանէ անդէն առ բերկրացիսն – 382. նոքա երթեալ մտին անդ, փակեցին զդրունսն և ամրացան ի նմա և սկսան ապստամբել ի Հռովմայեցւոց տէրութենէն: - 156. նոքա առեալ գնացին փութանակի. – 154. Նոքա պատասխանեալ ասեն. „վասն զի մեք ի պարսկական հինից անդուլ և անպարապ գոլով ի բաց լքաք զկրթութիւնն գրոց սրբոց՝ առ ընտրել զհաւատոց խոստովանութեան կանոնադրութիւն. – 132. Նոքա վազս առեալ ճեպով խուռն յարձակմամբ սպառազինեալ այրուձիոց. – 352. շինեալ նորոգեաց և զեկեղեցին որ ի նմա յանուանակոչութիւն սուրբ Աստուածածնին Մարիամայ և զարդարեաց զնա մեծագանձ սպասուք և եդ ի նմա զԽաչն, զոր յիշեցաք վերագոյնն, յորոյ ձեռն ծանուցաւ զօրութիւնն հրաշագործ: - 390. Շինեաց և ի վերայ Ամրական քարանձաւին յելս և ի մուտս կոյս տունս խրախճից ոսկեզօծս պատեշգամեալ, յաւելլով ի յառաջագոյն ի հօրէ նորա Դերանկէն շինեալ: - 390. Շինէ անդ եկեղեցի վայելչապէս պայծառութեամբ և անուանէ զնա յանուն սուրբ Պետրոսի առաքելոյն անպարտելի դժոխական առաջնորդի: - 394. շինէ և անդ

ամրական տեղի, դժուարամատչելի ասպատակող հինից, դնելով ի նմա նմանապէս ապարանս փողոցայարդարս, տաճարակերտս սենեկագործս, բաւական ի պէտսն պատրաստեալ – 392. ողջակէզք նոցա և պատարագ նոցա ընդունելի լիցին ի վերայ սեղանոյ իմոյ – 224. Ոչ ամենևին /գրքում՝ամենեւին/ գոնէ փոքր մի խոտորեցան ի բանս նորա և ոչ առին յանձն ի պատրել մեծութիւն ընչից և ոչ անսացին հնազանդել փառաց աշխարհական ցանկութեանց – 264. ոչ ինչ ձեռնամուխ լինելով ի նա, վասն կասկածանաց Պարսից արքային, միայն սպառնական խոստաբանութեամբ յղէ առ նա պատգամս: - 130. որ եկեալ էին զհետ նորա ընտանեօք իւրեանց – 238. որ և ոչ տեղի գերեզմանի անգամ երևեցաւ նոցա մինչև ցայսօր: - 402. որ էին ընդ նմա եկեալ ի գործ պատերազմաց ըստ հրամանի թագաւորին և մեծ զօրավարին – 224. որ մեծաւ ախորժանօք յանգուցանէ առ ինքն զնոսա իբրև արս պատուաւորս և քաջամարտիկս զօրաւոր զօրութեամբ, և մանաւանդ զի բազում անգամ զանուն յաղթութեան ստացեալ ունէին: - 366. Որկեն և եղեցանն առ նորա բերեալ բացայայտ ի խորհուրդ տապանին, ի Փռիւգացւոց ապարասանութենէ ի մեզ ճախրեալ ապրուստն. ի տանն Աստուծոյ զընթացսն քաջայարմարագոյն հաւատով բերեալ: - 396. որոյ դիպող ժամ գտեալ ի միասին կալով նոցա՝ կալեալ զնոսա տայ յամուրս աշխարհին, կապեալս կապանօք երկաթեօք. – 364. Որոյ երթեալ առ Շապուհ յիշեցուցանէ նմա զհարազատէն իւրմէ Մեհուժանայ՝ միամիտ և հպատակ /108/ լինիլ արքայի, և զպատերազմացն գործ և զբազում աւարառութիւնս և զգերփանս Հայոց աշխարհիս ի Մեհուժանայ, և զմահն նորա ի ձեռանէ քաջին Սմբատայ Մամիկոնէի- 110. Որոյ հրամանն փութով զկատարումն առնոյր ըստ ցանկութեան իշխանասիրութեան նոցա. – 362. Որոց դիպող ժամ գտեալ՝ արտաքս ելեալ ի բանակէն, զերծեալք իբրև զայծեամն ի հնարից որսորդաց՝ գնացին խաղաղութեամբ յիւրեանց տեղիս և զնա թողին լքեալ ամօթալից: - 344. որոց թողեալ զգործ պատերազմի ամրոցին՝ դարձաւ գնաց աներկիւղ քաջասրտութեամբ ընդդէմ նորա օժնդակ զօրու Գուրգէնի – 334. որոց յիշատակ նոցա եղիցի բազմաց նպաստ յարութիւն քաջութեան և ի զօրութիւն անարեանցն և ի յորդորումն քաջ նահատակացն: - 202. Որոց ոչ զպատաղումն բերելով՝ գայ զօրու Աւշնի հասանէ ի վերայ նոցա: - 362. Որում ունկնդիր եղեալ երեքեան նախարարութիւնքն առն իմաստնոյ Վահանայ Ամատունւոյ՝ գան զկնի նորա անկասկած համարձակութեամբ – 98. որպէս ասաց Պաւղոս, եթէ ,,դուք տաճար էք Աստուծոյ կենդանւոյ,, , և դարձեալ ասէ թէ ,,տուն Աստուծոյ եմք մեք,,. և դարձեալ մարգարէին ասէ, բնակեցայց ի նոսա և գնացից ի նոսա,,: - 394. որպէս ասաց Քրիստոս,եթէ ,,ուր երկու կամ երեք ժողովեալ են յանուն իմ՝ անդ եմ և ես ի մէջ նոցա,,: - 250. որպէս Ատոմ Մոկաց իշխան՝ յորսն Աստուածորդի զնա ձայնէր – 114. որպէս օրէն է թագաւորաց և թագաւորազանց աշխարհաշէն խնամողաց յանձանձել ըստ վերակացութեանն յԱստուծոյ նոցա հաւատացելոց: - 392. դատեցին ի սուրս իւրեանց, և եկեալ ի տեղի բանակի նոցա՝ առին աւար բազում - 162. որք ծանուցեալ զբռնանալն նորա ի վերայ պարսկական պետացն և զինչ կրեցին, զմտաւ ածեալ և զխառն ընդ աշխարհիս զդրակցութիւնն, և թէ գուցէ զպարսկայինն հասանիցէ մեզ կրել և աշխարհիս մեր՝ ձեռն ետուն հաւանութեան ի նորայն կալ մնալ հպատակութեան: - 360. որք մատուցեալ առ սուրբն Սահակ զեկուցանել նմա զոր ինչ խորհինն, և թևակոխէին առ Պարսից արքայն, զոր և արարին /116/ իսկ. – 118. որք մտեալ քարտակատեցին զնա տապարօք ի սենեկի անդ և սպանին: - 152. որք քակէին գոլ նոցա ամենայն ուրեք /210/ ուր և դիպէին զմիաբանութիւն ուխտի խաղաղութեան եղբարց և ազգականաց և բարեկամաց: - 212. ուշ եդեալ ուժեղութեամբ և քաջութեամբ սրտիւ ընդդիմանալ, մանաւանդ ի Ծանարացն զնա տեսեալ ի պարտութիւն մատնեալ և յաղթահարեալ: - 276. Չիցէ՞ լուեալ ձեր զոր ասաց Սողոմոն, թէ ,,որ հատուցանէ չար փոխանակ բարւոյ՝ չար ի տանէ նորա մի պակասեսցէ,,: - 214. պակչէին յահէ … և որք ընդ նմա էին գունդք ազատաց և նոցին զօրաց ըստ տոհմս ազգաց, ի բնիկ նախարարացն Վասպուրական տէրութեանս: - 210. սա այն է, որ մինչ յելանելն Բուխայի ի սկզբանն մտանելոյ նորա ի

ՆՈՅՆ ԳՈՒՆԱԿ - Նոյն գունակ և զՂուկա ազգաբանութիւնն գտցես շարաձեալ ի վերջէ յառաջ, և ասէր որպէս կարծէր զՅիսուսէ՝ ի Յովսէփայ ի Յակովբայ ի Հեղեայ, և ապա մի ըստ միոջէքն: -16. Եւ զի ստեալ Դերանկին Գուրգենայ եհան անտի զգործակալսն՝ նոյն գունակ Գուրգէն հնարաւորեալ առնու զամրոցն և հանէ զնորա գործակալսն – 326.

ՆՈՅՆԳՈՒՆԱԿ - և նոյնգունակ զարդու զարդարեաց զնա բուրուառօք արծաթեղինօք և ընտիր և փորձ արծաթագործ դրոշածօք նշանի խաչին Քրիստոսի: - 390.

ՆՈՅՆԺԱՄԱՅՆ - Եւ /106/ նոյնժամայն հուպ ընդ հուպ ի դիմի հարեալ Մեհուժանայ և կարթակոտոր զասպազինեալ երիվարն արարեալ քաջին Սմբատայ՝ տոռն արկեալ ի պարանոցն Մեհուժանայ ասէ. – 108. և առեալ դահճին զսուրն՝ եհար զերանելին և եհատ զգլուխ նորա, և նոյնժամայն /գրքում՝ նույնժամայն/ աւանդեաց զոգին ի ձեռս Աստուծոյ: - 294. Եւ նոյնժամայն եհաս հրաման յարքունուստ՝ի տաղտկալ և վհատել և մի ի բաց կալ

պատերազմել ընդ նմա. մինչև եկեսցէ ակամայ կամօք ի հնազանդութիւն արքայի: - 284. Եւ նոյնժամայն հրաման հասեալ յափիւսափս յոմանս ի գաղտնիս՝ զրաւ առնել կենացն նորա. – 328. Եւ նոյնժամայն շուրջ փակեալ բազմութեան՝ արգելին զնա իբրև յամուրս անձաւաց, զվարմ մահաբեր, շուրջ ձգեալ ի կործանումն քաջ նահատակին: - 352. Եւ նոյնժամայն սուսերամերկք խուռն նիզակօքն ի վերայ յարձակեալ իբրև զգազանս արիւնարբուս մարդախանձս՝ սրախողխող արարեալ սպանին զնա – 352. Եւ նոյնժամայն վառեցան պատրաստեցան, հեծեալ յիւրաքանչիւր յերիվարս ելին ընդդէմ նոցա: - 134. Նոյնժամայն գնացին Դերանիկն և Գագիկ մտին առաջի Յիսէի, խօսեցան բանս խաղաղութեան, ետուն պատանդս յանձնառութեամբ հարկացն արքունի - 334. Նոյնժամայն դարձուցեալ զերասանակ երիվարին ի պատերազմ յառաջանալ, և անդ բազում արիութիւն նահատակութեան ցուցեալ, սակայն ոչինչ օգուտ բերեալ: - 368. Նոյնժամայն իբրև ետես տիկինն, եթէ վարեցան որդիք նորա ի գերութիւն՝ գնաց և ինքն զհետ նոցա, զհերս խզեալ և զօձիս պատառեալ, կոծելով և աշխարելով – 238. Նոյնժամայն աճապարեալ աշտանակեալ ի նիւս նժոյգ երիվարին, զէն զանձամբ արկեալ, նիզակ ի ձեռն առեալ, խրախոյս ի ձայն բարձր բարձեալ առ իւր ազատագունդ վաշտն՝ ասէ՝ - 328. նոյնժամայն առ յոյժ ամբարտաւանութեանն և սաստիկ բարկութեանն և անհուն սրտմտութեանն և առանց բուժելի կատաղութեանն, յապուշ միտքն կրթեալ իբրև զարբեալ զանզգայ արբեցութեամբ - 264. Նոյնժամայն ելեալ զհետ Դերանկին կորապաղատն ի նոյն աղագս ի բաց մեկնել ի դիմաց հազարապետին, գիտելով զոր ինչ խորհեալն էր յաղագս նախարարացն Հայոց եկելոյն առ նա, և մեկնեալ լինէին ի զօրացն անտի ասպարէզս Ե – 342. Նոյնժամայն ելեալ մեկնեցաւ յերեսաց արքայի այրն այն Բուղայ – 200. Նոյնժամայն զօր գումարեալ, գունդ կազմեալ յընտիր ընտիր հեծելոց արանց զօրաւորաց, զօրօք և զօրագլխօք, և տայ ի ձեռս Յովսեփու ումեմն որդւոյ Ապուսէթի – 184. Նոյնժամայն իբրև կատարեաց զամենայն կամս չարութեան իւրոյ ի վերայ սրբոյ եկեղեցւոյ և /262/ կործանեաց կորոյս զբազումս ի գնդէն քրիստոնէից – 264. Նոյնժամայն ի բարկութիւն ցասմամբ մեծաւ շարժեալ թագաւորն Սմբատ՝ գրէ առ Գուրգէն Անձաւացեաց տէր և առ Գագիկ Ապումրուան, ասէ. – 362.

ՆՈՅՆ ԺԱՄԱՅՆ - Նոյն ժամայն աճեալ լինի սուրբն առաջի Շապհոյ – 104. և առ չանսալ իշխանին՝ անդէն նոյն ժամայն ի մարտ պատրաստին: - 364. Եւ նոյն ժամայն շուրջ փակեալ զքաղաքաւն հրձգութեամբ, և դիզեալ բորբոքեր հուրն ի դիւրածախ փայտէն մայրից և գիոց: - 272. Նոյն ժամայն աճապարեալ Վահանայ խրախուսեալ յԱստուած, ձայն քաջալերութեան առ նախարարսն Հայոց ասէ. – 134. Նոյն ժամայն առեալ Սմբատայ զԱրտաշէս գայ անցանէ ի վայր ի լեռնէն. – 84. Նոյն ժամայն ել հրաման յարքունուստ, զի զսուրբն Սողոմոն ի նմին փայտի սպանցեն, նետաձիգ լինել ի նա: - 292. Նոյն ժամայն մատուցեալ ոմանց առ Դերանիկն՝ ստուգագոյնս քսէին վասն Գագկայ Ապումրուանայ. խորհել ընդ կորապաղատին, զոր ինչ գործեաց Հասան զանօգուտսն. – 348. Նոյն ժամայն Քսերքսէս և Արշէզ վազս առեալ պատահեն Լիդէացւոյն. – 66.

ՆՈՅՆՊԷՍ - այլ որպէս արմատն՝ նոյնպէս և ուռն և պտուղն. եթէ սկիզբն սուրբ է՝ ապա և արմատն, ապա զինչ ուռն՝ նոյն և տեսակ: - 258. և բացեալ զտուն դիւանապահ մատենիցն և գտեալ զսերունդս Սենեքերիմայ, և զգործս նոցա զմիոյ միոյ ուրուք յանուանէ զառն իւրաքանչիւր զանուն և զքաջութիւն իւր, նոյնպէս և զայլն ամենայն ըստ տոհմից տեղեաց - 74. Եւ դարձեալ նոյնպէս ինքն Փրկիչն ասաց – 224. և դու նոյնպէս սակաւուք եկ, կամ թէ ևս աւելի արամբք, և տեսցուք /226/ զմիմեանս,,: - 228. և երթային մի մի նոյնպէս և դառնային: - 370. Զոր օրինակ փոքր մի վերագոյնն պատմեցաք զծովային վիշապէն ըստ բարոյականի՝ նոյնպէս և այժմ դարձեալ արարից զյիշատակ սորա աղագաւ պատմութեանս խորհրդոյ: - 260. զորոյ նախնեացն ջան և վաստակ յուշ արարեալ թագաւորին՝ Համամայ յառաջ մատուցեալ, ի գահ և ի բարձ հայրենեացն ձգել զնա՝ ժառանգեցուցանէ զերկիրն Աղբագ, որպէս Սահակայ նոյնպէս և Համամայ: - 90. զօր գումարել, այրուձի կազմել, մեծամեծաց աշխարհատերանց պարգևս տալ, ի թիկունս և

յօգնութիւն զամենեսեան կոչել, զի ըստ յանձնառութեան խրատու նորա նոյնպէս և գործեսցէ: - 346. Իսկ սպառնալիք քո և չարչարանք, զոր ասես ի վերայ իմ հասուցանել՝ խաղ մանկտոյ կամ զառանցելոց թուի յաչս իմ, և բանք քո նոյնպէս, որպէս առն անմտի և խելագար և ցնորեալ ծերոյ,,: - 290. նոյնպէս արարից ընդ քեզ և ընդ զօրս քո: - 278. Նոյնպէս բանայ, որպէս և այլ թռչունք և գազանք՝ բնաւորեալ բաժանեն զժամանակս տարւոյն յերկուս կամ յերիս ամարանոցս և ձմերանոցս ինքեանց կենաց պաճարին – 262. Նոյնպէս եթէ ոչ հաւատք սրտի և խոստովանութիւն շրթանց ամբողջ պահիցին՝ ոչ կարասցէ հետևել ճշմարիտ դաւանութեանն ի Հայր և յՈրդի և ի Հոգին սուրբ – 256. Նոյնպէս և բնակիչք Աղձնեաց անհանդուրժելիք լեալք անցիցն անցելոց և առ զայսոսիկ յամբաստանելն – 180. Նոյնպէս և ամենայն զօրք և զօրագլուխք հանդերձ բազմակոյտ կարաւանին զկորստեան ընկալան զվճիռ. – 376. նոյնպէս և զայլս յիշխանական պետութենէ փոքրագոյն կէտս և լողակ մանուսն իմանալի է. – 262. նոյնպէս և զանուանս նահապետացն կեղակարծութեամբք այլաբանել. – 38. Նոյնպէս և զպայման ժամանակացն յանբաւ բիւրս ամաց ձգեն որ ոչ և ըստ միոյ յեղանակի հաւաստանայ առ ի ցուցումն, ոչ արեգական բերմամբ ի նոյն կէտ ամսոց և աւուրց և ոչ ըստ չորից փոխմանց առ ի յեղումն ժամանակի տարւոյն, այլ և ոչ ըստ լուսնական լրութեանն և սուզականութեան: - 18. նոյնպէս և ոչ է հնար սրտի հաւատացելոյն պղծել շրթամբք: - 258. նոյնպէս և տանջանքն նմին նման յաւիտենականք և մշտնջենաւորք յանսպառ յաւիտեանս և յանմահ խոշտանգանս՝ պղծոցն և ուրացողացն ի սուրբ և յանբիծ հաւատոց քրիստոնէութեանն. – 264. ոչ ստեղծեալ յումեքէ, այլ որպէս երևիդ՝ նոյնպէս էր. և կայ մնայ, և զմարդ ինքնածին: - 48. Սովորութիւն է գրոց, որպէս զիրն նոյնպէս և զտեղին վերաբերեալ, կամ ըստ ծանօթութեան, կամ ըստ պատուոյ: - 288.

ՆՈՅՆՊԻՍԻ - իբրև զորսորդս ինչ առիւծուց կամ այլոց ինչ նոյնպիսեաց, շուրջ ձգեալ զգառագիղն՝ ի մէջ փակել զկորովին և զքաջ արանցն զիշխանն Աշոտ – 202.

ՆՈՐ - Ասէ, ,,զի՞նչ է նոր հաւատդ, որ այժմ ի քէն երևի. եթէ այլ ևս յաւելցիս ասել՝ անձին քում դու եղիջիր պարտական,,. – 160. Եւ այսպէս զառածանէր, զՍեմ որդի Նոյի ասել նոր Զրուան, որ և սկիզբն աստուածոց: - 46. Եւ զլեզուդ պղծութեամբ զոր սրէիր ի վերայ մեծազաւր թագաւորին՝ արդ նոր և զարմանալի վիրաւք դատեսցէ զքեզ քան զամենայն տիեզերս: - 164. զսուրբ եկեղեցիս, զտունս աղօթից քրիստոնէից այրել աւերել հիմն ի վեր տապալել, զքահանայսն նորոյ ուխտի ի սուրս իւրեանց մաշել, զծերս և զպառաւունս մահու սրոյ սպանանել, զերիտասարդս և զկուսանս խաղացուցանել ի գերութիւն, զստացուածս և զինչս վատնել աւարառութեամբ. – 398. ժամանակակարգեաց համառօտեաց ի վերայ նոր Իսրայէլի, այսինքն հեթանոսաց: - 314. իբրև զկարի իմն հնագունից և զանյայտից զինքեանս ասաց նոր առասպելութիւն. – 46. Իսկ առ մեզ ծանուցեալ զոր ինքն ասաց, թէ Քրիստոնեայ եմ, ըստ այնմ թէ ,,ծառայի իմոյ կոչեսցի անուն նոր, որ օրհնեսցի վերայ /ճիշտը՝ի վերայ/ երկրի,,՝ գրեցաւ յիշատակարանս սրբոյն: - 224. կոչեաց զերիցունսն նորոյ կտակիս, զեպիսկոպոսս և զքահանայս, առաջի արկեալ զհաւատոցն կատարելաբանութիւն, զմկրտութեանն լուսաւորութիւն. զառեկելոցն յապաշխարութիւն, զյոյսն յետ վախճանին, զմարդասիրելն Քրիստոսի - 386. Հինգերորդ՝ զի զծնօղսն անհնարին դառնութեամբ նոր սգովն ելից: - 24. Նոր ոմն Նաբուզարդան կամ Զամրի յայտնեալ ի յաղանդոյն Նեստորի, երեքթշուառեան վատաշուէր, վատմիրհ, զագահութեանն չարիս ախտացեալ՝ սպրդեալ եմուտ ընդ մութ գիշերին յամրական պարսպեալ բլուր, և անցեալ ի սուրբ կոչարանին օթագացեալ. – 378.

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ - դառնապէս չարալլուկ չարչարել զքահանայս զպաշտօնեայս նորոց Կտակարանացն, զարս և զկանայս մատնել ի բանդս խոշտանգանս ծանրաբեռն հարկապահանջութեամբ. – 124.

ՆՈՐԱԲԵՐԴ - Բայց զերկրորդ մասն Անձաւացեաց հանդերձ Նորաբերդ ամրոցաւն Դերանկին նուաճեալ ընդ իւր գործակալօք. – 326. Եւ ձեռագրեալ Մուշեղայ զամրոցաւն Նորաբերդ և

շուրջ զսահմանսն՝ Դերանկին հաւատալ, և զայլ սսն՝ որդւոյ իւրում ժառանգեցուցանել: - 324.

ՆՈՐԱԳԵՕՂ - և բանակեցաւ Ն արամբք, վառեալ ի զէն և յասպազէն, ի Նորագեօղ Ռշտունեաց: - 322.

ՆՈՐԱԳԻՒՂ - Այլ և զռամիկ Նորագեղջ աւանին Ռշտունեաց առեալ ածեն ի տեղի վաճառուն Ոստանին Ռշտունեաց, արկեալ տոռունս ի պարանոցն հանեն ընդ սուր. – 202.

ՆՈՐԱՅ - Եւ նորայքն ոմանք ի նմին շարժմանէ գերեզմանացան ի նմին: - 358.

ՆՈՐԱՅՆ - և բազմածուփ ալեացն ներքսագոյն շտեմարանեալ ցանկասիրութեանն՝ անդուլ առնէր զնորայն իմացմունս. – 364. Երկրորդ՝ չարասէր և աներկիւղ նախանձուցն բարք, եթէ ընդէ՞ր ոչ և նորայն ըստ նմին օրինակի եղև արատաձգեալ յԱստուծոյ: - 24. Երկրորդ՝ զի և ոչ հաւատայր Գուրգէնի՝ ամբողջ պահելով, զոր ինչ միջնորդեն երդմամբ, զհօրն իւր կիրսն ի նորայն հօրէն կրեալ յուշ առնելով: - 316. և հիացմամբ առ նորայն հայելով, թէ ո՛վ ոք էր, և ո՛րպիսի, և ո՛րպէս կորեաւ՝ ասեն, ,,զիա՛րդ դադարեաց պահանջողն, հանգեաւ տագնապօղն. եթէ ո՛րպէս իջին ի դժոխս փառք նորա,,: - 376. և մի զմիոյ հետ ստիպէր՝ փութալ միոյ միոյ ի նոցանէ յանդիման նմա հատուցանել ծառայական սպասաւորութիւնս, զոր և արարին իսկ Աշոտ և Գագիկ և Գուրգէն, կամաւոր և ակամայ զնորայն կատարելով հրամայեալս – 370. Իսկ թագաւորն Հայոց Սմբատ անպատկան վարկանելով զերթալն Աշոտի առ Աւշին, մի՛ գուցէ արդեօք և այլք դրդուիցին յիշխանացն զնորայն հետեւել ուղևորութիւն, և արգելուլն զԱշոտ՝ չանսաց ումեք: - 362. նոքա խոնարհեալ առ նորայն խորհրդական առ յապա պատահմունսն, որ հանդերձեցաւ աշխարհիս Հայոց, իբր մարգարէական իմն գոգցես տեսաւորութիւն – 114. որք ծանուցեալ զբռնանալն նորա ի վերայ պարսկական պետացն և զինչ կրեցին, զմտաւ ածեալ և զխառն ընդ աշխարհիս զդրակցութիւնն, և թէ գուցէ զպարսկայինն հասանիցէ մեզ կրել և աշխարհիս մեր՝ ձեռն ետուն հաւանութեան ի նորայն կալ մնալ հպատակութեան: - 360.

ՆՈՐԱՆՇԱՆ - Այլ և տեսութիւնք ևս յայնս սաստկագինք և նորանշանք. – 28.

ՆՈՐԱՅՈՒՅԱՆԵԼ - Եւ հրամայեաց ածել ոսկերիչ և նորոգեալ նորացոյց զանյաղթ փայտ խաչին Քրիստոսի, մատուցեալ զբեկորսն առ իւրաքանչիւր յօդս, պատեալ մաքուր արծաթով վայելչագոյն քան զառաջինն, ի պարծանս քրիստոնէից և յամօթ և ի նախատինս թշնամեաց խաչին Քրիստոսի: - 378.

ՆՈՐԱՓԹԻԹ - Վէմս զերեսօք արկեալ արտօսր յորդառատս ի խտղտելի աչաց ի վայր հեղեղատելով, զնորափթիթ ծաղկազարդ ոսկեճաճանչն մորուացն ճիրանամբքն զխզումն, և որ առաւելեալն քան զսոյն զապաշաւանացն զանյագութիւնն: - 386.

ՆՈՐՈԳԵԱԼ - և էր ալևոր ըստ մարմնոյ և հնացեալ արտաքին մարմինն, բայց ներքինն նորոգեալ և գեղեցկատեսիլ ըստ պատկերի արարչին. – 204. Եւ հրամայեաց ածել ոսկերիչ և նորոգեալ նորացոյց զանյաղթ փայտ խաչին Քրիստոսի, մատուցեալ զբեկորսն առ իւրաքանչիւր յօդս, պատեալ մաքուր արծաթով վայելչագոյն քան զառաջինն, ի պարծանս քրիստոնէից և յամօթ և ի նախատինս թշնամեաց խաչին Քրիստոսի: - 378.

ՆՈՐՈԳԵԼ - շինեալ նորոգեաց և զեկեղեցին որ ի նմա յանուանակոչութիւն սուրբ Աստուածածնին Մարիամայ և զարդարեաց զնա մեծագանձ սպասուք և եդ ի նմա զԽաչն, զոր յիշեցաք վերագոյնն, յորոյ ձեռն ծանուցաւ զօրութիւնն հրաշագործ: - 390.

ՆՈՐՈԳՈՒԹԻՒՆ - Եւ զերկնային պարգևացն որ ի հանդերձեալսն խոստացաւ Տէրն, զանպատում և զիրեշտակային նորոգութեան՝ նա ասաց լինել անդ կերակուրք և ըմպելիք ուժգին. զոր և կամեսցի ուտել անյագաբար՝ պատրաստ գտանիցէ, և կանանց կուսից մնացելոց հանապազ անյագաբար խառնակումն: - 164.

ՆՈՐՈԳՈՒՄՆ - այն ինչ արծարծեալ առ նորոգումն շինութեան եկեղեցւոյ Քրիստոսի ի կործանմանէ հինի յետ մեծ պատերազմին սրբոյն Վարդանայ. – 134. և սկիզբն լինել նորոգման արարածոց – 76. Եւ սկսաւ երկիրս առնուլ զնորոգումն, և եկեղեցիքն պայծառանալ ի զարդ և ի պաշտօնս շքեղութեան, և ցրուեալքն դռոթ տուեալ դարձան յիւրաքանչիւր տեղիս՝ շինել, տնկել, մոռանալ զցաւսն և զտրտմութիւնսն զոր կրեցին: -

318. պատմեաց նոցա զհանգամանս տեսլեանն … և դարձեալ զնորոգումն հայրապետութեան և թագաւորութեան ի նոյն զարմէ Արշակունեաց, և զգալուստ նեռինն, և զգալուստն Քրիստոսի, և զհանդերձեալ դատաստանացն, և զհատուցումն իւրաքանչիւր ըստ գործս իւր – 120.

ՆՈՐ ՔԱՂԱՔ - և թողեալ զբնակելն ի Դուինն՝ ելեալ բնակեցաւ ի Նոր քաղաքին ի մեծ եկեղեցւոջն որ յանուն սրբոյն Գրիգորի շինեալ էր երանելւոյ տեառն Ներսիսի երկրորդի Հայոց կաթողիկոսի: - 358.

ՆՈՅԱՅ - յերկուս կողմանս բաժանեալ զնայեցուած խորհրդոցն, և կայր կեղծաւորութեամբ անհաստատագոյն և անօգուտ հնարիմացութեամբ, ընդ քրիստոնեայսն քրիստոնեայ և ընդ պարսկականսն զնոցայսն կեղծաւորէր: - 112.

ՆՈՅԱՅՆ - Այսպէս և զամենայն ըմբռնեալսն վտանգաւոր մահու տառապեցուցանէին ընդ մէջ կտրելով, ահարկուս տեսողացն զնոցայն վտանկսն կացուցանելով: - 372. Իսկ նախարարացն ընդդիմաբանեալ սրբոյն Սահակայ՝ իբր ոչ զնոցայն հաստատել ախորժակս – 118.

ՆՈՒԱՋ - այլ ի ձեռն արդարոյն և նուազունքն ապրեցան: - 32.

ՆՈՒԱՋԱԳՈՅՆ - Բայց Աշոտ թէպէտ և նուազագոյն զօրու ընդ իւր լինելով, ոչ թիկն ածեալ վերջացաւ առ պատերազմն յառաջանալ: - 364. Իսկ զվատացն և զնուազագունիցն՝ լոյծս և կանացիս, և միայն վերնագրութեամբ և եթ նշանակեալս: - 42. քանզի նուազագոյնքն և տկարք՝ թափառեալք աղքատութեամբ վտանգէին, իսկ կարողագոյնքն և բռնաւորք ըստ բնութեան գազանաց վայրենամիտք լեալ, անամօթ և անարգել յափշտակութեամբ վրդովէին զբոլոր երկիրս: - 300.

ՆՈՒԱՋԵԱԼ - բայց նուազեալ ազգին՝ ոչ զոք ունէին, որ կարօղ լինէին զգործ պատերազմին վճարել և զպաշտօն թագաւորին. – 90. և յայնմհետէ նուազեալ պատառեցաւ թագաւորութիւնն Պարսից: - 156. Եւ նուազեալ ազգին Արծրունեաց ոչ ոք մնաց, բայց միայն մանուկ մի Համամ անուն, որդի Արշաւիրի ծերոյ եղբօր Խուրէնայ, որ կայր ի դրան արքունի – 90. և ի սաստկանալ ծխոյն զօրանային գունդքն Հայոց, և ի նուազելն փոքր մի ոգի առնուին ի թշնամեացն: - 234.

ՆՈՒԱՋԵԼ - և ողբայր ի վերայ աշխարհիս Հայոց, ընդ նուազել զօրութեան թագաւորութեանս Հայոց և ընդ բռնազբօսութիւնն Պարսից: - 112.

ՆՈՒԱՋԻԼ - զի ոչ դուք նուազիցիք ի սովոյ, և ոչ հարկք արքունի կորնչիցին: - 144.

ՆՈՒԱՃԵԱԼ - բայց ընդ Յունաց թագաւորին միայն հնազանդութեամբ նուաճեալ զինքեանս, ի բաց կալով ի հարկատուութենէ Շապհոյ արքայից արքայի. - 96. Բայց զերկրորդ մասն Անձաւացեաց հանդերձ Նորաբերդ ամրոցաւն Դերանկին նուաճեալ ընդ իւր գործակալօք. – 326. և բազում ազգք և թագաւորք են զոր նուաճեալ ունիմք ընդ ձեռամբ մերոյ տէրութեանս. – 244. և ետու ի ձեռս քո զզօրս իմ հանդերձ զօրագլխովք մեծամեծօք իմովք, յամենայն ազգաց որ ընդ ձեռամբ իմով նուաճեալ են թագաւորազունք – 236. և ըստ հրամանի ինքնակալ թագաւորին նուաճեալ ունիս ի հնազանդութիւն պետութեան ձեր զիշխանս և զտեարս, զկողմնակալս և զկուսակալս, զքաղաքապետս և զմարզպետս բոլոր Հայաստանեայցս – 212. Վասն զի իշխանն Մոկաց և իշխանն Անձաւացեաց նուաճեալ էին ընդ ձեռամբ Վասպուրական իշխանութեանն: - 380.

ՆՈՒԱՃԵԼ - Բայց քանզի հաւատացեալ էր վերակացութիւն աշխարհիս Հայոց Աշոտի, որ իշխանաց իշխան՝ ձեռն ի գործ արկեալ նուաճել զիշխանս Հայոց, զՎրաց և զԱղուանից, որ եղև իսկ: - 322. և բռնազբօսեալ զաշխարհն Ահմաթ որդի Ցիսէի Շեհայ յինքն նուաճել – 358. և զհակառակութիւն Զրադաշտին հնազանդեալ ընդ իւրով ձեռամբն նուաճեաց ի ծառայութիւն: 44. և խոստանայ զբոլոր Հայս նուաճել ընդ կայսերական իշխանութեամբ. – 112. և ծառայն զչարիս խորհեալ սպանանել զԴերենիկն և զաշխարհս նուաճել զիշխանութիւն Գուրգինի, զի և դիպող էր ժամն: - 320. և սա նշկահեալ զկայսերբ՝ յղէ առ Շապուհ արքայից արքայ նուաճել ընդ նմա – 108. Ընդ նոյն ժամանակս եկն Վահան Աշոտի որդի, հօրեղբօրորդի Սահակայ ի գերութենէն՝ նուաճել զաշխարհս, և գունդ

կազմեալ ընդդէմ Գուրգինայ՝ և ինքն զպարտութիւն քան զյաղթութիւն յինքն կրէր: - 310. նուաճեաց զանձն, հրապոյրս պղտորս արբուցանէ Վահանայ Մամիկոնէի, որ էր աներ Մեհուժանայ, և անցեալ գնացին առ Շապուհ. – 102.

ՆՈՒԱՍՏԱՆԱԼ - ըստ պատկերին Աստուծոյ ստուերացեալ բարձրացեալն՝ նուաստացաւ – 22.

ՆՈՒՇԻՐԱԿԱՆ - ձեզ տուեալ լիցի թագաւորութիւն Հայոց … և յԱսիւրոց կողմանէ զԱսորեստան և զՄծուին և զՆուշիրական մինչև ցսահմանս Տաճկաց – 138.

ՆՈՒՐԲ - Եւ է զի ի նուրբ և ի հուն տեղիս ջուրցն անկեալ՝ ի նմին խրեալ կան անշարժ, և դիւրաւ անկանիցի ի ձեռս որսորդաց. – 260.

ՆՊԱՍՏ - որոց յիշատակ նոցա եղիցի բազմաց նպաստ յարութիւն քաջութեան և ի զօրութիւն անարեանցն և ի յորդորումն քաջ նահատակացն: - 202.

ՆՊԱՍՏԱՒՈՐ - և այնպէս անկարօտս առ պիտանացուս հոգ տարեալ՝ գլխաւորեաց որ ինչ շինութեան և խաղաղութեան աշխարհիս նպաստաւորս առ օգտակարագոյնսն պահանջէր գործառնութեան եղանակք – 392.

ՆՊԱՍՏԱՒՈՐԵԼ - Եւ զի հուպ առ հուպ են խառն աշխարհք երկոցունցն, և քաղաքն ի հովտաձև դաշտին՝ նպաստաւորէր խոշոշ վիրագին քաջասրտագոյնս լինել: - 352. որ յետոյ և հետևող սուրբ առաքելոցն եղեալ բազում ուսմունս ի հնոց հրէականաց նպաստաւորեաց եկեղեցւոյ գեղեցիկ օրինակօք – 34.

ՆՊԱՍՏԱՒՈՐՈՒԹԻՒՆ - զի սակաւաջան նպաստաւորութեամբն իբրև ընծայաբեր արար լինելով, և այնր աղագաւ յես բարձրագոյնսն ձգեսցի ըստ ասացելումն – 20. Թէպէտ և ոչ ինչ նպաստաւորութիւն առաջիկայ տեսութեանս ունին հետագայից ցոյցք որ վասն Բէլայ և նոցուն իսկ Քաղդէացւոց դիւցազնական զառանցութեանցն – 36.

ՆՊԱՏԱԿ - Եթէ, որպէս ասացի, ի բաց գնաս յինէն՝ խաղաղութիւն է, և թէ ոչ՝ պատերազմ և կռիւ և ճակատամարտ ... և դու նպատակ՝ և աղեղն իմ խոցոտիչ – 278. և զզօրութիւն աղօթիցն իբրև զնետ ձգեալ ի լայնալիճ աղեղանէ ի նպատակն, հարեալ զկառափն սատանայի դիաթաւալ կացուցեալ յերկիր կործանէր: - 252. և մուտ եղեալ ի տեղին … ետուն տանել զթուղթն, լի թիւնիւք սատանայական իմացմանց, իբրև զկապարճս լի նետիւք դեղեալ ի գաղտնիս ի գրկաց թռուցանել ի նպատակն: - 234.

ՆՍԵՄԱՆԱԼ - ոչ պիտոյացեալ եկամուտ լուսոյ, որով նսեմասցի առ ի հասանել երեկոյին, ոչ ապաժամանութիւն արեգական առ ի մերժել զմութ գիշերի լուսազգեստ ստեղծուածոյն, որ յետ առաջնոցն կարգի և դասու՝ զերկրորդն փոխանորդեցաւ վիճակ, ոչ կերակուր հոսանուտ առ ի լրութիւն տարաբարձ ունակութեանց անապականին, որ դոյզն ինչ փոքրագոյն քան զհրեշտակս գոլ. – 20.

ՆՍՏԵԱԼ - և փութացաւ գրեաց առ Սափի որ ի Վանտոսպ նստեալ և ճոխանայր Վասպուրական տէրութեամբն. որ առանց յապաղանաց զփոյթն յառաջաբերեալ՝ գնաց եհաս առ Աւշին ի Մարակայ քաղաք: - 374. զյոյժ փառացի և ճոխ և նազելի զնախագահ նստեալ զարմէ – 300. Յայնժամ տէր Գուրգէն առ /306/ չժուժել սրտին, մտրակեալ զքաջ երիվարն յորում նստեալն էր՝ և եհար զգունդն զձախակողմն Տաճկաց և պատառեաց զռազմն և դարձոյց զերեսս նոցա- 308.

ՆՍՏԵԼ - և լուեալ ի նմանէ պատասպանիս դիպողագոյնս և իմաստունս՝ հրամայեաց նստել: - 216. և իբրև մօտ եղև յափն գետոյն՝ քարշեալ ոմն զլայնալիճն, նստելով ընդ դարիւն, և հարեալ նետիւ ընդ բացատն, և երեսանակալ ձեռնն թուլացեալ. կրկնեալ այլ ոմն ճօճ նիզակաւն ընդ նոյն ակն՝ գետավէժ արարին զԱշխէթն. – 272.

ՆՍՏԻԼ - ,,նիստ դու աստ, մինչև արձակեցից զքեզ և արարից զկամս հայցուածոց քոց վասն որոյ եկեալ ես,,: - 226. և առաքեցին դեսպանս առ արքայ և ինքեանք նստան շուրջ զլերամբն, մինչև փութով եկեսցէ նոցա հրաման ինչ յարքունուստ: - 280. Եւ ելեալ արտաքս ի սենեկէն՝ և նստան ուրախ լինել: - 284. Եւ Գուրգէն նստէր յՈստանին Ռշտունեաց յամրաձև բերդին. – 310. Եւ ելեալ թագաւորն նստաւ յատենի ի բարձրաբերձ բեմի միջոց, ի մէջ աշխարհակոյտ ամբոխի անհուն բազմութեանն – 242. և ելեալ նստաւ ի ջորւոջն, զոր պատրաստեալն ունէին անդէն առ դրան վրանին, և հանին արտաքոյ դաշիկ բանակին՝

դարձուցեալ դառնալ ընդ նոյն ուստի եկն: - 346. Եւ էր ամաց իբրև տասանց յորժամ նստաւ իշխան յաթոռ հօր իւրոյ: - 314. և ինքն բազմութեամբ զօրաց նստաւ յարևելից կուսէ – 280. և կատարեալ զաղօթսն և գոհացեալ՝ ետուն զփառս Աստուծոյ և հատուցին զամէնն և նստան ուտել հաց. – 228. Եւ յաւուր միում լեալ նորա ի տխրութեան ի սպառնալեաց հօրեղբօրն իւրոյ՝ եկն եմուտ առ նա Ալի որդի Ապուտալպի և ասէ, զի՞նչ են պատճառքդ զի նստիս տխրեալ. – 160. Եւ յետ այսորիկ գումարեցոյց զօրս բազունս Խոռեմ, և ել ի Քաղկեդոն և նստաւ յանդիման Բիւզանդայ, և խնդրէր անցանել և կործանել զքաղաքն թագաւորանիստ: - 142. և նստան անդէն զաւուրս Թ և պատերազմեցան ընդ նոսա աւելի քան ՋԺԹ անգամ. – 276. և նստան ի ներքս ի քաղաքին ԻԱ օր. ապա ելեալ բանակեցան արտաքոյ քաղաքին, և զքաղաքն այրեցին հրով: - 142. և նստան պահել զպահպանութիւն իւրեանց և աշխարհակոյտ ամբոխին բնակաց իւրոյ տէրութեանն: - 282. Եւ նստէր անդ ի բացեայ ի վերայ բլրի միջոց տէր Մուշեղ որդի սպարապետին և կայր հիացեալ ահեղ և մեծ զարմացմամբ: - 284. Իբրև օր մի լինէր պարապոյ … և ահա հնչեցին փողք ուժգին գոչմամբ ազդ առնել քաղաքին՝ եթէ ել նստաւ թագաւորն յատենի – 240. Իսկ ընդ աւուրսն ընդ այնոսիկ սպանեալ էր Ութմանկացն, որ յամուրսն նստէին՝ զՌստոմ Վարաժնունի, որ զտանուտերական պատիւն յայնժամ ունէր զՎասպուրական աշխարհիս. – 332. մինչ ինքն նստցի յատենի և մուծցէ զնոսա ի դատաստան հարցափորձի և քննութեան վարուցն – 220. Յայնժամ ամրացեալ նստէր ի Շամիրամ բերդին Թադէոս անուն ի յԱկէացի տոհմէ, Շերեփայ որդի ծանօթացեալ – 400. Նստան երկոքին կողմանքն պահել զպահպանութիւն իւրեանց մեծաւ զգուշութեամբ, և ետուն ժամ անսալ միմեանց՝ ոչ ելանել ի պատերազմ, մինչև եկեսցեն հրեշտակքն յարքայէ, զոր առաքեցինն: - 286. նստէր փորող պողոտային նրբափողոց ճանապարհին, որ հանէր ի վերին մայրաքաղաքն Սիոն, ի բանակետղն երկնաւոր զօրացն յարքայանիստ քրիստոսական թագաւորութեան: - 204. որ նստէր ի հանգստի սրբոյն Թադէոսի առաքելոյ յԱրդոզական գաւառի – 400. որպէս ժողովուրդն Աստուծոյ առ գետսն նստէին և լային ի յիշելն իւրեանց զՍիօն, և կամ իբրև զնոյն ինքն զերիս մանկունսն, կապեալք և արկեալք ի հնոց նեղութեան – 252. ուր բանակն Հայոց նստէր – 234. Սա իբրև զկորիւն առիւծու ի մորւոջ իւրում նստէր վարանեալ. – 400. և իւրեանք հանդերձ ընտանեօք իւրեանց նստցին յամուրս Հայոց: - 188.

ՆՍՏՈՒՑԱՆԵԼ - Եւ եթէ ասիցէ, եթէ այլ թագաւոր նստուցից՝ արասցէ զո և կամեսցի և արձակեսցէ և մեք ընդունիմք, ահաւասիկ է տեղի թագաւորութեանս: - 144. Ապա այնուհետև ոչ կարաց կալ համարձակութեամբ ի բացեայ առնել զբանակն իւր, այլ ետ զկէս զօրուն յոմն գլխաւոր և նստոյց զնա ի կողմանէ հիւսիսի կողմն. – 280. և գնացեալ միաբանութեամբ ի Կոստանդնուպօլիս՝ սպանին զՄուրիկ թագաւոր և նստուցին զՓոկաս յաթոռ թագաւորութեան: - 140. և զորդի նորա Կաւատ նստուցին թագաւոր. – 150. Եւ հաճոյ թուեցաւ Հայրակղի և ամենայն սինկղիտոսիցն՝ նստուցանել զորդին Հայրակղի յաթոռ թագաւորութեան, որ էր մանուկ /146/ փոքր. – 148. Եւ յետ մահու նորա նստուցին թագաւոր զորդի նորին զԱրտաշիր, կարի տղայ մանուկ: - 152. Եւ յետ նորա ածին զԽոսրոյ ոմն /154/ տղայ մանուկ և նստուցին իւրեանց թագաւոր. և նա փութանակի վախճանեցաւ: - 156. և նստուցին իւրեանց թագաւոր այր զոմն անուն Փոկաս կոչեցեալ. – 140. Եւ ոմն ընթացեալ ետ զոյժ վաղվաղակի /150/ Խոսրովու, թէ ,,ապստամբեցաւ ամենայն Արեաց երկիր ի քէն, և զորդի քո Կաւատ նստուցին թագաւոր, և ահաւադիկ դիմեալ գա ի վերայ քո,,: - 152. ոչ առ յանձն Յազկերտ նստուցանել զոք ի տոհմէ Արշակունեաց թագաւորել Հայոց – 114. Որում ոչ կամեցեալ լսել Խոսրովայ՝ ասէ. իմ է թագաւորութիւնն այն և ես զորդին Մուրկայ նստուցի թագաւոր - 142.

ՆՍՏՈՒՑԵԱԼ - քանզի յետ վախճանի Ասպուրակայ նստուցեալ էր Խոսրովու յաթոռ հայրապետութեան Հայոց զսուրբն Սահակ որդի սրբոյն Ներսէսի. – 112.

ՆՐԲԱԿԱՆ - բազում ունելով ինչս ի կոխակս բարձրաւանդակս և ի կիրճս նրբականս, ի զերծս և ի խոխոմս ձորոյն ի թոխ և ի բոխ երկրին անբնակ մարդկան յասպատակէ հինիցն Երուանդայ – 84.

ՆՐԲԱՓՈՂՈՑ - նստէր փորող պողոտային նրբափողոց ճանապարհին, որ հանէր ի վերին մայրաքաղաքն Սիոն, ի բանակետղն երկնաւոր զօրացն յարքայանիստ քրիստոսական թագաւորութեան: - 204.

ՆՐԲՈՒԹԻՒՆ - զոր ի զօրութիւն թիկանց ուժոյ բազկաց ճնշեալ և մաճուցեալ ընդ միմեանս՝ զնրբութիւն մազոյն թաղ կոչեցին – 208.

Շ

Շ/թիվ՝ հինգ հարիւր/ - և անհնարին բեկմամբ խորտակեցաւ գունդն Հայոց, մինչև ի բազմացն սակաւուց հազիւ ուրեմն մազապուր զերծեալ՝ անկան յաւուր յայնմիկ ի տարապարտ պատերազմին արք անուանիք իբրև Շ - 402. կարգեցին ըստ գունդս գունդս առ Շ այր նշանակ մի. – 280. Նոյ էր ամաց Շ, յորժամ առ հրաման որդւովքն կազմել զտապանն: - 28.

ՇԱԲԱԹ - և ամենեքեան որ պահիցեն զշաբաթս իմ և ոչ պղծիցեն, և պահիցեն զպատուիրանս իմ և կացցեն յուխտին իմում՝ տարայց զնոսա ի լեառն սրբութեան իմոյ – 224.

ՇԱԽՍՏԱՆ - Եւ Վահրամ գնաց փախստական և անկաւ ի Բաղխղ Շախստան. որ և յետոյ իսկ սպանաւ ի հրամանէ Խոսրովայ: - 140.

ՇԱԽՐԻՔ - Զայս և ես իսկ տեղեկացեալ գիտացի ի բազմաց, յայնցանէ որ Շախրիքն կոչին. – 48.

ՇԱՀ - ո՞չ ապաքէն ըստ այնմ և ելքն ի նմանէ լինիցին շահ ի փառս Բաբելացւոցն ըստ կարծեաց նոցա: - 38.

ՇԱՀԱԿ - Եւ էր կացեալ եպիսկոպոսապետ Հայոց Զաւէն, զոր յառաջագոյն ասացաք, յետ չորրորդ ամի Շահակայ: - 110. Եւ կացին եպիսկոպոսապետք Հայոց յետ մահու սրբոյն Ներսէսի ոմանք ի զաւակէ Աղբիանոսի եպիսկոպոսի Բզնունեաց, առն պատուականի, Շահակ և Զաւէն և Ասպուրակէս – 108. Իսկ սերունդք Ասուդայ Սանասարեանց կային յոր պէտս և դիպուածն պատահէր, երբեմն այսպէս և երբեմն այնպէս. Շաւարշ. Գօգեան. Շաւասպ. Պերոզ. Շահակ. Կիւրոս: - 72. Շահակս այս անուանէ զանուն որդւոյ իւրոյ՝ Կիւրոս, յիշելով զլաւութիւն առնն և զբարեկամանալն նախնոյն նորա Քսերքսեայ: - 72.

ՇԱՀԱԿԵԱՆ - Սոքա մերժեալք ի տէրութենէն իւրեանց, զոր տուեալ էր Տիգրանայ և Կիւրոսի՝ կէին անկարգաբար զինչ պիտկէն մինչ ի Կիւրոս Շահակեան: - 72.

ՇԱՀԱՍՏԱՆ - Եւ կէսքն հասանէին մինչ ի շահաստանն Բաղէշ, թողեալ անդէն զբուն բանակն: - 176. յորում շահաստանն Դուին, մարդախիտ պարսպաւոր պատնիշօք պատուարեալ և տուրևառիկ վաճառականութեամբ և ազգի ազգի պղծութեամբ յափրացեալ յղփացեալ: - 358.

ՇԱՀԱՏԱԿԵԼ - շահատակելով գունակ ի խաղս գնդակաց, զսակաւաւորութիւնն իւր հազարաւորս համարելով, քանզի ոչ ունէր աւելի քան զերկու հազարս հեծելոց: - 334.

ՇԱՀԱՏԱԿՈՒԹԻՒՆ - որ կարի սիրելի է ինձ, մանաւանդ թէ յոլովից, կամ թէ ամենայն հաւատացելոց ի Քրիստոս՝ յերկարագոյնս առնել ի ճառիս զդեգերումն շահատակութեան, ձեզ լսել և ինձ գրել: - 76.

ՇԱՀԴՈՍԴ - և զսակաւուց քան թէ յոլովից գրեաց անուանս ի յիշատակարանի անդ զՇահդոսդ, որ թարգմանի արքայասէր, և զԳոհշթասդ, որ թարգմանի ներկագործ ծիրանեաց արքայական զգեստու, և զՇմաւոն եպիսկոպոս, վէմ եկեղեցւոյ Քրիստոսի ընդ նմին և այլ եպիսկոպոսաք և քահանայք արք Ճ - 106.

ՇԱՀԻԼ - ,,որդեակ, ի վախճանելս իմում մի կայցես յայսմ աշխարհի, զի մի կորուսցես զկարգ քո ի մէջ անհաւատից, այլ երթիցես ի կողմանս Եգիպտոսի՝ բնակել ի մէջ բազմութեան եղբարց, զի շահեսցիս զոգիդ քո,,: - 162. և դաստիարակ առընթեր ունելով զբանն տէրունական … և թէ ,,զի՞նչ օգուտ իցէ մարդոյ, եթէ զաշխարհս ամենայն շահեսցի և զանձն իւր տուժեսցէ, կամ զի՞նչ տացէ մարդ փրկանս ընդ անձին իւրոյ. զի եկն որդի մարդոյ խնդրել և կեցուցանել զկորուսեալն,, - 264.

ՇԱՂԱԽԵԱԼ - Եւ առեալ զմանրեալ և զխորտակեալ ի մասունս զԽաչն՝ բերին առ զօրավարն, լուացեալ զարիւն պղծոյն, որ ի վերայ խաչին շաղախեալ կայր ի գլորմանէ այսահարին: - 378.

ՇԱՂԱԿՐԱՏ - Բայց հրաման քո ճոխութեանդ ձգեաց զիս յայս մեծ ձեռնարկութիւնս, սակս որոյ բացաձգեցայց արտաքոյ շաղակրատող լեզուաց փառամոլ ոգոց: - 122.

ՇԱՂԵԱԼ - Եւ մինչ երթայր և խորհէր՝ խոցեալ նորա երիվարն, և յանկարծակի այն ինչ ոտն երիվարին շաղեալ ընդ փոքր թուփ մի, որպէս ասեն, զուլումբեալ ի վերայ գլխոյն ջարդեալ զողն ու լարն՝ ի բաց ընկէց զհեծեալն զքաջ զօրավարն Ապումկդէմ: - 304.

ՇԱՂԿԱՊ - Եւ եղև մինչ կային իշխանքն ի միաբանութեան առանց կարծեաց կասկածանաց ի հպատակութեան ելեալ յարքունուստ հազարապետին /340/ որդւոյն Հալթի, և զմիաբանական սիրոյն շաղկապ ի միասին յօդեալ պնդեալ անքակ պահէին – 342.

ՇԱՂԿԱՊԵԱԼ - Եւ քանզի էին երեքին սոքա անքակ անխզելի առ միմեանս, զմիաբանական կապակցութիւն շաղկապեալ, Աշոտի և Գագկայ և Գուրգինայ, որդիք Դերանկին – 364.

ՇԱՄԲԻԹ - Եւ մեք այժմ զկարգն յառաջ վարեսցուք. Կիւրոս. Վարգէն. Վահան. Շամբիթ. Ջաջ. Ջաջուռ: - 74.

ՇԱՄԻՐԱՄ - Այսոքիկ գաւառք անուանիք, զոր յառաջին ժամանակս իւրոյ իշխանութեանն սեփհականս իւր արարեալ ունէր հայրն նենգութեան Մարդպետն կոչեցեալ … և մանաւանդ քաղաքն Շամիրամայ հռչակելին և յոյժ փառաւորագոյնն յամենայն կողմանց Վասպուրականի: - 388. Այսպէս և Շամիրամ կին, ի յազգէն Սեմայ, թագաւորէ Նինոսիւ արամբ իւրով ի վերայ Ասորեստանի պայազատաբար – 16. Արբէլ ծնանի զՆինոս զայրն Շամիրամայ: - 42. Արդ զիա՞րդ յետ բազում ժամանակաց զՆինոս ասեն շինել զՆինուէ, զայրն Շամիրամայ, որ ծնաւ զՆինուաս – 14. Բայց որպէս բացայայտեցաւ՝ Շամիրամ սեպհականեալ թագաւորէ յազգէ Ասուրա ի Սեմայ Ասորեստանի բնիկ իւրեանց տէրութեանն, և պայազատեալ մի ըստ միոջէ մինչ ի Թոնոս Կոնկողեռոս – 16. Ելեալ խրոխտ և դառնաշունչ փռնկալով մռմռեալ յանձնիւր գազանեղեն զայրացմամբ յարձակեալ յեղակարծում եկն եմուտ ի քաղաքն Շամիրամայ ի Վանտոսպ: - 372. են մի ըստ միոջէ թագաւորք Ասորեստանեայց այսոքիկ … Շամիրամ կին նորա ամս ԽԲ – 56. Եւ թէ որպիսի օրինակաւ գալուստ նորա և պատերազմ վասն սորին իրաց, և արիական ձեռակերտացն շինուածք, որ և յոյժ արժանաւորք զարմանալեաց, և դարձեալ ապստամբութիւն Զրադաշտին և մահն Շամիրամայ և բան յուռթիցն որ զնմանէ – 44. և ի վախճանելն իւրում … ետ զիշխանութիւնն կնոջն իւրում Շամիրամայ – 44. և ղաշիկ արարեալ յայնկոյս քան զՎանտոսպ, ի տեղւոջն արձանաշար քարակարկառ գոգաձև միջոցի երկուց բլրակաց, որ հայի յԵրիվարաց արկման դաշտն, ի վերայ Լեզւոյ գեաւղջն, որ զաւրացն գեղեցիկ առասպելաբանեն սպիանած վերայն սպանելոցն ի մանկանցն Շամիրամայ: - 334. և մտանէ Նինոս ի համար Ասորեստանեայց թագաւորաց ընդ կնոջ իւրոյ Շամիրամայ.- 16. զի Շամիրամն ամրանայր ի բնիկ իւրեանց քաղաքին Նինուէ - 16. զոր պայազատեաց առաջին Զամեսոս, որ և Նինուաս, որդի Նինեայ և Շամիրամայ, ի ՃԳ ամի կենաց Աբրահամու նահապետի – 56. ընդ վզեալ ի վերայ Նինոսի, որպէս թէ եկեալ պանդխտաբար մտանել ի թագաւորութիւն Շամիրամայ ի Սեմայ: - 16. ի կանոնի անդ

գտցես զՆինոս և զՇամիրամ և զԱբրահամ և զվեշտասաներորդ հարստութիւն Եգիպտացւոց, և ի չորրորդ դպրութեանն Յուլիանու Աղիկառնացւոյ, որպէս և ի չորրորդ դպրութեանն Մովսէսի: - 18. Իսկ Նինոս և Շամիրամ տիրեն Ասիացւոց և Եգիպտացւոց հարկապահանջ հնազանդութեամբ, այլ ոչ զազգին ի բաց բառնալով զպայազատութիւն աշխարհին: - 18. նոցա կալեալ զտիկինն Ռշտունեաց զկին Գարեգնի զքոյր Վարդանայ Մամիկոնէի ածեալ ի Վանտոսպ ի քաղաքն Շամիրամայ, մատնեն ի խոշտանգանս և ի տանջանս դառնագոյնս. – 102. որ ըստ սիւղոբայիցն ի հայկական լեզուէ Շամիրամ ձայնաւորի: - 16.

ՇԱՄԻՐԱՄ ԲԵՐԴ - Յայնժամ ամրացեալ նստէր ի Շամիրամ բերդին Թաղէոս անուն ի յԱկէացի տոհմէ, Շերեփայ որդի ծանօթացեալ – 400. Որ անսայթաք հաւատով յառաջացաւ առ աւարտումն պատերազմին փութացեալ, և ելեալ յամրական տեղւոյն սակաւաձեռն զօրականաւն, որ պահէին զպահպանութիւն Շամիրամ բերդին – 400.

ՇԱՄՇՂՏԱՅ ԲԵՐԴ - Իսկ քաղաքապետն Սահակ ելեալ ընդ դուռնն, որ ելանէ ի բերդն Շամշղտայ, սամոյր զինքեամբ արկեալ և գաւազան ի ձեռն առեալ, յիմարեալ մտօք կորոյս զփախուստն իւր, որ կարող էր գնալ յով և կամիցի. – 272.

ՇԱՄՈՐԵՀԵՇՄ - /թագաւորեաց/ Յեզիտ ամս Ջ … Շամորեհեշմ ամս ԺԹ. Վլիթ ամս Բ. - 168.

ՇԱՄՓՈՒՐ - և շամփուր շողացուցեալ մանուածոյս փակէ ի ներքս զզագաթն ամբարշտին. – 108.

ՇԱՆԹ - այլ ես ասեմ քեզ, եթէ Տէր կամեսցի՝ վաղիւ պատելոց է զքեզ պատերազմ քաջաց. և ճեթեսցեն ի վերայ քո իբրև զամպս երկնից ի բռնալիր նիզակօք անցանիցեն ընդ մէջ բազմութեան քո իբրև զփայլատակունս հրոյ շանթից: - 140.

ՇԱՊՈՒՀ - Ազդ եղեալ Շապհոյ եղբօր Թաղէոսի Շերեփեանց. – 400. այլ առնու զզօրսն Պարսից և գայ թագաւորել Հայոց հրամանաւ Շապհոյ արքայի, ունելով ընդ իւր զՎահան Մամիկոնեան. – 106. այլ թագաւորեցոյց նոցա զորդի իւր Շապուհ – 114. Անդանօր եկեալ Շապուհ եղբայր թագաւորին, և կացուցանէ զԳագիկ՝ իշխան Վասպուրական տէրութեանն. – 364. ասէ. ,,թէ ոչ բառնաս կորուսանես ի միջոյ զերկուս նախարարութիւնդ՝ ոչ բարիոքագոյն քո թագաւորութեանդ խորհին խորհուրդ. զի ձեռն նոցա է ընդ Շապհոյ արքայից արքայի,,. – 98. բայց ընդ Յունաց թագաւորին միայն հնազանդութեամբ նուաճեալ զինքեանս, ի բաց կալով ի հարկատուութենէ Շապհոյ արքայից արքայի. - 96. Բայց միայն զԱրշակ ոմն ի տոհմէն Վարաժնունեաց */փրկվեց/* խնդրեալ դստերն Շապհոյ Բագրատունոյ, զոր առեալ յայնժամ Աւշնի կնութեան յանօրէն ամուսնութիւն. - 372. Բայց յետ բազում պատերազմացն խորամանկ խաբէութեամբ կոչէ առ ինքն Շապուհ զԱրշակ ի դէմս սիրոյ խաղաղութեան, ոչ ինչ յիշատակ զչարեացն գործելոց ի մէջ առնելով. – 102. բայց Տիրան պղծութեան աղտեղութեամբն զգառեալ մատնի ի ձեռս Շապհոյ – 98. ելեալ իշխանքն Հայոց յանձնիւր տեղեաց գնացին յանդիման լինել նմա, Դերանիկն, տէր Գագիկ և տէր Գրիգոր և միւս այլ տէր Գրիգոր Վասպուրական իշխան, Աշոտ կորապաղատ Հայոց իշխան, Մուշէղ իշխանն Մոկաց, Շապուհ եղբայր իշխանաց իշխանի և Ապլբառ Կայսիկ Ապահունեաց բռնաւորն և այլք ոմանք: - 340. Եկն այնուհետև Շապուհ որդի թագաւորին Աշոտի և ետ զիշխանութիւնն ի ձեռս Աշոտի որդւոյ Դերանկին, փոխանակ հօր իւրոյ: - 354. Երէց մի Շապուհ անուն, և մի ոմն յռամկաց ձորոյն՝ լնուլ զթիւ գնդիցն - 202. Եւ գունդն Հայոց խաղացին ընդդէմ նոցա … ի տանէն Արծրունեաց՝ Գուրգէն … և Գնունիք՝ Վահան և Շապուհ և Ապուսէթ և Պատրիկ և Ապուսելմ և Վարդան. – 230. Եւ գրեաց թուղթ զկնի նախարարացն Շապուհ, լուծանելով զպատճառ հատուածի նոցա. – 110. Եւ դարձեալ գումարեալ հեծեալս Ռ, զՍահակ Բագրատունի, զորդիս իշխանաց իշխանի զՄմբատ և զՇապուհ և զՄուշեղ Մոկաց իշխեցողք, և զԱրզնոյ զօրսն – 332. Եւ էր ի մէջ Շապհոյ և Արշակայ պատերազմ մեծ զժամանակս կենաց Արշակայ: - 102. և ընդ նմա Շապուհ յԱմատունի տոհմէ, այն որ գործակիցն եղև Գագկայ առ սպանումն Ապումրուանայ, զոր վերագոյնն յիշեցաք – 372. և իջեալ ի դաշտավայրն, խումբ արարեալ, ճակատ կազմեալ ընդխառնեցան ի պատերազմ. և զբազումս դիաթաւալ կացուցեալ, ընդ որս էր Շապուհ նահապետն Ամատունեաց

յանկելոց վիրաւորացն: - 310. և որք ի տանէն Ամատունեաց՝ Շապուհ և Վահան և Սարայ եղբարք միմեանց, Ապուսակր Վահունի և այլք ընդ նոսա, միաբանական խորհրդակցութեամբ խորհրդածեալ ընդ Գազկայ առ ի սպանումն Ապումրուանայ – 368. և սա նշկահեալ զկայսերբ՝ յղէ առ Շապուհ արքայից արքայ նուաճել ընդ նմա – 108. Զայն ի փոքր ինչ աւուրց զապստամբութիւն ի մէջ առեալ Խոսրովայ ի Շապհոյ՝ ի Յոյնս ապաւինի – 112. Ընդ ժամանակսն ընդ այնոսիկ թագաւորէ Յունաց Վաղէս կայսր, և Պարսից՝ Շապուհ արքայից արքայ: - 100. ընդ որ զչարացեալ Շապուհ, թէ ընդէ՞ր առանց իւր հրամանի զայն գործեաց – 112. Ընդ որ յոյժ ուրախացեալ Շապուհ՝ խոստացաւ փեսայացուցանել զՄեհուժան ի քոյր իւր Որմզդուհի: - 102. Իբրև գիտաց Շապուհ արքայ զոր գործեաց Արշակ՝ թագաւորեցոյց ի վերայ Հայոց զԽոսրով ոմն յազգէն Արշակունեաց: - 110. Իսկ զԱհմատ ընդ Վասպուրական աշխարհին անցանել գնալ՝ ելեալ զհետ նորա Շապուհ որդի Աշոտի, մինչ տանել հասուցանել զնա ի մուտս Ասորեստանեայց ճանապարհին: - 346. Իսկ ի հասանել սրբոյն Սահակայ ի դուռն հանդերձ նախարարօքն՝ զիջանէ ցածնու Վռամ ի բարկութենէ վրէժխնդրութեան Հայոց քինահարութեան անարգանաց Շապհոյ, և ընդ Յունաց զսերտ խաղաղութիւն ունելով.- 116. Իսկ Մեհուժան մտեալ առաջի Շապհոյ սկսաւ չարախօսել զՋուիթայ քահանայէ – 104. Իսկ Շապհոյ զմական գնդին ի դիպուածս Շաւասպայ շարժեալ. – 114. Իսկ Շապհոյ լուեալ զհիւանդանալ հօր իւրոյ՝ փութացաւ գնաց ի Պարսս. – 116. հրամանաւ Շապհոյ արքայից արքայի՝ ժողովէ զնախարարութիւնս Հայոց առ ինքն - 98. մանաւանդ զի փեսայացուցեալ էր Շապուհ զԳագիկ ի դուստր իւր. – 364. Նոյն ժամայն ածեալ լինի սուրբն առաջի Շապհոյ – 104. նուաճեաց զանձն, հրապոյրս պղտորս արբուցանէ Վահանայ Մամիկոնէի, որ էր աներ Մեհուժանայ, և անցեալ գնացին առ Շապուհ. – 102. Շապուհ արքայ թագաւորեալ՝ բազում և անչափ չարիս հասուցանէր ի վերայ Հայոց աշխարհիս և Ասորեստանեայց և Պաղեստինացւոց – 104. Որոյ երթեալ առ Շապուհ յիշեցուցանէ նմա զհարազատէն իւրմէ Մեհուժանայ՝ միամիտ և հպատակ /108/ լինիլ արքայի, և զպատերազմացն գործ և զբազում աւարառութիւնս և զգերփանս Հայոց աշխարհիս ի Մեհուժանայ, և զմանն նորա ի ձեռանէ քաջին Սմբատայ Մամիկոնէի- 110. Փութանակի և վաղվաղակի իւրաքանչիւր զօրօք անդր հասանէին … և ի տանէն Բագրատունեաց Թոռնկայ որդի զօրօք իւրովք. ի տոհմէն Ամատունեաց Շապուհ Ը հարազատօք և զօրօք իւրեանց. – 174. և եղբայր Մեհուժան Արծրունի յղէ դեսպան առ Շապուհ զնոյն խորհուրդ հաստատել: - 108.

ՇԱՊՈՒՀ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ - Բայց միայն զԱրշակ ոմն ի տոհմէն Վարաժնունեաց */փրկվեց/* խնդրեալ դստերն Շապհոյ Բագրատունոյ, զոր առեալ յայնժամ Աւշնի կնութեան յանօրէն ամուսնութիւն. - 372.

ՇԱՏ - Եւ արդ ասացից փոքր ի շատէ զյայտնի գործեցեալսն, զի և որ ինչ ընդ սոքօք և յետ սոցա ի գլուխ ելին հանգամանք իրաց՝ և այնմ առանց երկբայութեան հաւատասցես, իբրև ճշմարիտ և անսուտ պատմողի: - 240. Եւ զգանձդ Արեաց թագաւորութեան այնչափ արձակեցից՝ մինչև շատ լիցի ասել ձեզ, և բազմութիւն զօրաց՝ որքան և պիտոյ իցէ ձեզ, մինչև ձեր թագաւորութիւնն հաստատեսցի„: - 138. զի ոչ ևս ունիմ շատ խօսիլ ընդ քեզ„: - 290. ՅԱՂԱԳՍ ԳՈՒՐԳԻՆԱՅ ՄԻԱՅՆ ՄՆԱԼՈՅ, ԵՒ ՇԱՏ ՊԱՏԵՐԱԶՄԱՅՆ ՅԱՇԽԱՐՀԻՍ – 300. որոց անուանք ճանաչի սոցա … և Ներսեհ իշխան Գարիթայանից և ապա Եսայի Ապումուսէ, որ զշատ պատերազմունսն եհար: - 298.

ՇԱՏԱՄԱՐԴՈՒԹԻՒՆ - և այնու աղագաւ կարաց շէն պահել զերկիրն շատամարդկութեամբ: /ճիշտը՝ շատամարդութեամբ/ - 90.

ՇԱՏԱՆԱԼ - ոչ շատացաւ ինքեան ծնելութեամբն առ ի զմայլումն հրաժարել ի կերակրոյ – 20.

ՇԱՏԽՕՍՈՒԹԻՒՆ - Արդ վճարեալ է յիմմէ կողմանէ շատխօսութիւն ընդ քեզ. – 278.

ՇԱՏՈՒԱՆ - նորա լուեալ էր ի պարսկէ ումեմնէ, ի ձորոյն Շատուանոյ, որ էր ընդ դահիճսն, և ի սկզբան վկայութեան մինչ ի կատարումն սրբոյն՝ ի տեղւոջ անդ հանդիպեալ լինէր – 206.

ՇԱՐ - Արդ որպէս յառաջագոյն ասացաք՝ սակս կարևոր յուզմանցն միապետեալ ի շարս կանոնաց, միայն յայտարարութիւնս առնել զազգացն Արծրունեաց – 96. Բայց արդ որպէս յառաջագոյն հատուցի զարտաքոյ պարսաւանաց զիս ներքոյ գրել, վասն ոչ ոճով զսորայս կարգել դնել ի շարի աստ զշարագրածս, վասն ոչ բաւելոյ զանչափութիւնն ի մի վայր գումարել յանմասնաւորաբար նշանակութեամբ – 308. Բայց դոյզն մի զամբարշտին Մեհուժանայ զյանդգնութիւնսն ի վերայ Հայոց բացայայտեցից ի շարի աստ: - 102. բայց միայն զազգին շարս ըստ գիւտի աշխատութեանն բաւական համարեցաք յառաջ վարել մինչ ի թագաւորել Տրդատայ – 94. Եւ զի Ժ ազգացն շարք առանց ստութեան կան գրեալ յամենայն մատենադարս - 12. թուի ինձ թէ և զարդարն Հաբէլ ի սոյն շարի կարգեալ համարեցաւ. – 26. մանաւանդ զի յառաջագոյն /308/ քան զմեզ այլոց ոմանց բանակարգեալ գրեալ հաւաքեալ է ի մի շար: - 310. յառաջ խաղացուցից զբանսն, արագաքայլ արշաւանօք անցեալ գնացից ընդ շարագրածս անցնիւր պատմագրաց, զազգաբանութիւնն միայն ոճով դրոշմեցից ի շարի աստ – 74. Որ և այլոց կարող տուիչ լինել ժամանակաց, որպէս և արանցն որ յառաջ քան զջրհեղեղն քառասուն ևս աւելի բիւրս ամաց և դարս փոխադրական այլաձևս և խժականս, շարս և ներս և սոսս - 38. Քանզի բազում աշխատութեամբ է գտանել զշար ազգաբանութեան տանն Արծրունեաց, վասն հեռաւոր ժամանակաց կացեալ և դիւանացն անյայտութեանց ի մէջ Հայաստանեայցս – 12.

ՇԱՐԱԳՐԱԾ - Բայց արդ որպէս յառաջագոյն հատուցի զարտաքոյ պարսաւանաց զիս ներքոյ գրել, վասն ոչ ոճով զսորայս կարգել դնել ի շարի աստ զշարագրածս, վասն ոչ բաւելոյ զանչափութիւնն ի մի վայր գումարել յանմասնաւորաբար նշանակութեամբ – 308. իսկ որպէս գրեալ հաստատեալ կայ հաւատարմապէս վարդապետացս քաջաբան և լի իմաստութեամբ շարագրածք հրաշափառագոյնք: - 122. յառաջ խաղացուցից զբանսն, արագաքայլ արշաւանօք անցեալ գնացից ընդ շարագրածս անցնիւր պատմագրաց, զազգաբանութիւնն միայն ոճով դրոշմեցից ի շարի աստ – 74. Որգունակ և յաղագս փրկչական տնտեսութեանն գրէ Յոհաննէս ի կատարածի աւետարանական շարագրածին: - 302.

ՇԱՐԱԳՐԱԿԱՆ - և հնախօսս շարագրական մատեանս և ի բազում վէպս պատմութեանց անցեալ գրեցի, որ ինչ բաւականանալ ձեռնհաս եղէ, սկսեալ յԱդամայ մինչ առ մեզ հասեալ ժամանակացս գիւտ: - 12.

ՇԱՐԱԳՐԵԱԼ - զի և եօթամբք իսկ շարագրեալք չարիւք ժանդացաւ վիրագն այն ի վնաս, թէ և միատեսակ երևեսցի. - 24. զոր շարագրեալ յայտարարութեամբ յանդիման կացուցաք քեզ, քա՛ջդ բանասիրաց, Գագիկ Վասպուրական և մեծ զօրավար Հայոց – 122.

ՇԱՐԱԳՐԵԼ - Եւ երկայնագոյնս է զամենայն բանս պղծութեան նորա շարագրել, զի յոյժ բազում է և ընդդիմակ Աստուծոյ: - 164. զոր շարագրեաց երանելի խոստովանողն Քրիստոսի Աբրահամի ի գեղջէն Արածոյ. – 106.

ՇԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ - Աստանօր ոչ հեշտալիր թուին ինձ պատմութիւն ճառիս շարագրութեան: - 350. զոր արդ այժմ համառօտաբար հատուցից զհարկ պարտեաց շարագրութեանս: - 378.

ՇԱՐԱԾԵԱԼ - Նոյն գունակ և զՂուկա ազգաբանութիւնն գտցես շարաձեալ ի վերջէ յառաջ, և ասէր որպէս կարծէր զՅիսուսէ՝ ի Յովսէփայ ի Յակովբայ ի Հեղեայ, և ապա մի ըստ միոջէքն: -16.

ՇԱՐԱԿԱՐԳԵԼ - զի ոչ էր օրէն զկանանց ազգի թիւ ազգաբանութեան շարակարգել: - 16.

ՇԱՐԵԼ - Բայց մի ինձ մեղադիր լինիր, ո՛վ ուսումնասէր դու, սակս ոչ զբովանդակ սորա գործս շարել ի ճառս մանրապատումս: - 302. մինչև եկից հասից ի լայնանիստ ընդարձակ ասպարէզս մատենից պատմութեանցս՝ ոճով մի ըստ միոջէ շարեցից, կարգեցից, գրեցից զախորժելին քեզ: - 74. քանզի ոչ էր օրէն թագաւորացն և օրինադրացն զկանանց ազգի թիւ ազգաբանութեան շարել, բայց միայն ըստ ժամանակագրութեանն կանոնի, որպէս և յԻսրայէլի զԳոթողիայ, և յԵգիպտոս զԿղէոպատրեայ դուստր Պտղոմեայ Դիոնիսեայ: - 16.

ՇԱՐԺԵԱԼ - Որպէս և առ Զաքարիայիւ մարգարէիւ շարժեալ մինչ ի լեառն Զիթենեաց: - 358. Իսկ Շապհոյ զմական գնդին ի դիպուածս Շաւասպայ շարժեալ. – 114. Նոյնժամայն ի բարկութիւն ցասմամբ մեծաւ շարժեալ թագաւորն Սմբատ՝ գրէ առ Գուրգէն Անձաւացեաց տէր և առ Գագիկ Ապումբռւան, ասէ. – 362. որպէս յայնժամ ի մահուն Ոզիայ արքայի, յաւուրս Եսայեայ մարգարէի՝ ի ձայնէ սրովբէից շարժեալ տաճարին տեառն, մինչ բարձրանալ դրանդեացն: - 358.

ՇԱՐԺԵԼ/ԻԼ/ - այլ ի շարժելն իւրում՝ ահ առնուն ամենայն լողակք և գազանք ծովայինք, որոյ և կերակուր նոյն լողակք և զեռունք այլովք կենդանեօք: - 260. Ապա ուրեմն յայտ է ըստ կարգի ասացելոցս, եթէ որ շարժէ զերկնային մարմինն՝ մի է և անբաւ զօրութիւն ունի և անմարմին է և անեղ է անապական, և ինքն ոչ յումեքէ, և այլք ամենեքեանք նովաւ. – 54. և ի շարժելն նորա ահ կալաւ զբոլոր աշխարհս և աշխարհակալս. – 262. և յայտ է թէ յայլմէ շարժի. և եթէ յայլմէ՝ ապա ուրեմն է՛ ոմն, որ շարժէ զերկնային մարմինն: - 54. և յայտ է թէ յայլմէ շարժի. և եթէ յայլմէ՝ ապա ուրեմն է՛ ոմն, որ շարժէ զերկնային մարմինն: - 54. Եւ վազէր ընդ բանակն, կանչէր, հնչէր, շարժէր զձեռնն և ասէր, ,,ես քրիստոնեայ եմ, քրիստոնեայ եմ,, - 224. Եւ վասն զի մշտաշարժ է երկինն՝ յայտ է եթէ որ շարժէն/ճիշտը՝շարժեն/ զնա՝ անբաւ զօրութիւն ունի. – 54. զի թէ բովանդակ զօրութիւն ունէր՝ ոչ հանդուրժէր անդադար շարժել զերկնային մարմինն. - 54. Իբրև լուաւ Խոսրով արքայ զլուր համբաւոյն այնորիկ՝ շարժեցաւ ի բարկութիւն մեծ, լինել վրէժխնդիր արեանն Մուրկայ: - 140. Իսկ աջ թևն Տաճկաց շարժեցին զզօրութիւնն Հայոց – 308. ուստի յայտ է թէ և անմարմին է, զի մարմինն՝ բովանդակեալ զօրութիւն ունի, և ոչ կարէ հանապազ շարժել զերկին կարգաւորաբար. – 54. և արտաքնոցն ուշիմագոյնքն ասեն, եթէ, ամենայն մարմին շարժուն՝ յայլմէ բնաւորեցաւ շարժիլ. – 54.

ՇԱՐԺԵՑԵԱԼ - այլ և ինքն Մահմէտ, մոլեկան հոգւով շարժեցեալ՝ տապ գրել զանուղղայս, զոր մեք ի բազմաց զսակաւս յիշեսցուք: - 164. սա էր այր ժանտ, և մոլեկան հոգւով շարժեցեալ՝ բազում չարիք մարտնչէր ընդ ազգն քրիստոնէիցն. – 168.

ՇԱՐԺԻԼ Տե՛ս ՇԱՐԺԵԼ

ՇԱՐԺՈՒԹԻՒՆ - արդ տեսանեմք զերկնային մարմինն, զի կարգաւորաբար անդադար շարժութիւն ունի, այսինքն արեգակն և լուսինն և աստեղք և այլք նոյնպիսիք. – 54.

ՇԱՐԺՈՒՄՆ - Այս շարժումն սաստկագոյն քան որ եղև յամս Զաքարիայի Հայոց կաթողիկոսի, յետ Է ամի գերութեանն Հայոց: - 358. Բայց հասեալ Բուխայ անց ընդ գետն մեծ զոր Կուրն կոչեն, և յորձանուտ շարժման գարնանային հոսանացն տեղի տուեալ ելանել զօրուն և բնակել շուրջ զքաղաքաւն. – 270. Բայց քանզի ոչ բաւէ աղքատիմաստ իմոց /384/ խոհարանաց շարժումն պատկանաբար առ ողբոցն վարել բանակարգութիւն՝ թողի այժմ այլում զօրաւորի կամ այլում ժամանակի: - 386. և առեալ զնա մտանեն ի մէջ մայրեացն, և ընդ գիրկս մտեալ Շաւասպայ Արծրունւոյ՝ զլայնալիճն լի քարշեալ հարկանէ ի թիկանց ընդ մէջ ողինն զկորովալիր մատանցն զազդոյ շարժումն թռուցեալ թափանցիկ ընդ չարախորհուրդ սրտին միջոցն դիպեցուցանէ. – 100. Եւ ասի լինել թիւ մարդկանն ապականելոց ի շարժմանէ՝ ոգի առաւել քան ՀՌ: - 358. Եւ նորայքն ոմանք ի նմին շարժմանէ գերեզմանացան ի նմին: - 358. և ունի յորելեանք Զ և ոլոմպիադր և ընդիքտիոնք, և Գ ամ հայրապետութեան Հայոց կաթողիկոսի տեառն Զաքարիայի, և մուտ եօթներորդ ամի, յորում կային յարքունիսն իշխանքն, ըստ եօթնեկի չափոյ շարժման ժամանակաց. – 312. Եւ վասն զի մի և նոյն շարժումն է երկնի՝ յայտ է եթէ ի միջէ ումեմնէ է և ոչ ի բազմաց. - 54. զի թէ ի բազմաց էր՝ այլայլակ և շփոթեալ լինէր ի բազմաց շարժումնն և ոչ կարգաւորաբար: - 54. Նա և տեղիք սրբութեանց տունք աղօթիցն զշարժմանն կիրս կրեալ, պատառմամբ որմաշարժ լինելով – 358. սրտմտեալ անժուժկալ ի բարկութեանն ջերմագոյն արեանն մրրկալից շարժմանն, և սկսաւ թափել զմահածին թոյնս իւր ի վերայ կապելոցն, իբրև զթոյնս իժի – 242. ԿՈՐԾԱՆՈՒՄՆ ՔԱՂԱՔԻՆ ԴՈՒՆԻ Ի ՍԱՍՏԻԿ ՇԱՐԺՄԱՆԷՆ: - 356.

ՇԱՐԺՈՒՆ - և արտաքնոցն ուշիմագոյնքն ասեն, եթէ, ամենայն մարմին շարժուն՝ յայլմէ բնաւորեցաւ շարժիլ. – 54.

ՇԱՐՈՒԻՐ ԴԱՇՏ - Եւ այգուն անցեալ ընդ գետն Երասխ յայնկոյս ի դաշտն Շարուր՝ բանակին զգետովն: - 382.

ՇԱՒԱՍՊ - Անդէն վաղվաղակի մատուցեալ Շաւասպ Արծրունի առ Մարդպետն՝ ասէ – 100. և առեալ զնա մտանեն ի մէջ մայրեացն, և ընդ գիրկս մտեալ Շաւասպայ Արծրունւոյ՝ զլայնալիճն լի քարշեալ հարկանէ ի թիկանց ընդ մէջ ողինն զկորովալիր մատանցն զազդոյ շարժումն թռուցեալ թափանցիկ ընդ չարախորհուրդ սրտին միջոցն դիպեցուցանէ. – 100. Եւ կացեալ Շաւասպ առ կայսեր ամս Դ: - 116. Եւ հասեալ Շաւասպայ Արծրունւոյ ամբարշտի յԱրտաշատ հանդերձ մարզպանաւն՝ շինեն ի դուռն քաղաքին զորմզդական մեհեանն, /124/ և զկրակապաշտութեան մոլութիւն բորբոքեն ի նմա. – 126. և յանկարծօրէն յեղակարծ երագութեամբ հասին ի վերայ Շաւասպայ և մարզպանին Վնդոյի: - 126. Եւ քանզի էին բանակեալ ի խառնուրդս Երասխայ և Մաւրին մեծի՝ պատահի յառաջ Շաւասպ Արծրունի – 126. Եւս քաջասրտագոյն Շաւասպ Արծրունի, խաղս ձիընթացիկ արշաւանաց գնդակացն՝ զհետ մտրակեալ հանէ ի նմանէ զգնդակն բազում անգամ ասելով – 114. զոր արհամարհեալ Շաւասպ /114/ արձակերեսան զերիվարն ի սիգաքայլ արշաւանս արարեալ՝ աներկիւղ համարձակութեամբ էանց գնաց ճեմ զճեմի առ զօրավարն Անատողի: - 116. Ընդ նոյն ժամանակս խորհուրդ ի մէջ առեալ Շաւասպ Արծրունի եղբայր Վասակայ հօր Աղանայ Արծրունւոյ, և խորհեցաւ զտիրելն Հայոց – 124. Իսկ Շապհոյ զմական գնդին ի դիպուածս Շաւասպայ շարժեալ. – 114 Իսկ սերունդք Ասուդայ Սանասարեանց կային յոր պէտս և դիպուածն պատահէր, երբեմն այսպէս և երբեմն այնպէս. Շաւարշ. Գօգեան. Շաւասպ. Պերոզ. Շահակ. Կիւրոս: - 72 յափշտակեցին զՇաւասպ որդի Վաչէի Արծրունւոյ, և զՄեհէդակ Ռշտունի – 98. յորոյ վերայ կալեալ և կանչեալ քաջն Վարդան իբրև զառիւծ, իբրև զկորիւն առիւծու, և առ ուժոյ և երագութեան ձեռինն ի վերայ ձգեալ զմիողնին՝ յերկուս կտրէ զՇաւասպն: - 126.

ՇԱՒԱՍՊ ԱՐԾՐՈՒՆԻ - Անդէն վաղվաղակի մատուցեալ Շաւասպ Արծրունի առ Մարդպետն՝ ասէ – 100. և առեալ զնա մտանեն ի մէջ մայրեացն, և ընդ գիրկս մտեալ Շաւասպայ Արծրունւոյ՝ զլայնալիճն լի քարշեալ հարկանէ ի թիկանց ընդ մէջ ողինն զկորովալիր մատանցն զազդոյ շարժումն թռուցեալ թափանցիկ ընդ չարախորհուրդ սրտին միջոցն դիպեցուցանէ. – 100. Եւ հասեալ Շաւասպայ Արծրունւոյ ամբարշտի յԱրտաշատ հանդերձ մարզպանաւն՝ շինեն ի դուռն քաղաքին զորմզդական մեհեանն, /124/ և զկրակապաշտութեան մոլութիւն բորբոքեն ի նմա. – 126. Եւ քանզի էին բանակեալ ի խառնուրդս Երասխայ և Մաւրին մեծի՝ պատահի յառաջ Շաւասպ Արծրունի – 126. Եւս քաջասրտագոյն Շաւասպ Արծրունի, խաղս ձիընթացիկ արշաւանաց գնդակացն՝ զհետ մտրակեալ հանէ ի նմանէ զգնդակն բազում անգամ ասելով – 114. Ընդ նոյն ժամանակս խորհուրդ ի մէջ առեալ Շաւասպ Արծրունի եղբայր Վասակայ հօր Աղանայ Արծրունւոյ, և խորհեցաւ զտիրելն Հայոց – 124.

ՇԱՒԱՐՇ - Առ սոքօք էին ազգք Արծրունեաց ծննդաբանութեամբ՝ Համազասպ. Շաւարշ. Ասուդ. Բարգեան: - 92. Իսկ սերունդք Ասուդայ Սանասարեանց կային յոր պէտս և դիպուածն պատահէր, երբեմն այսպէս և երբեմն այնպէս. Շաւարշ. Գօգեան. Շաւասպ. Պերոզ. Շահակ. Կիւրոս: - 72.

ՇԱՒԱՐՇԱՆ - Եւ ինքն Խուրան առեալ զմեծ մասն զօրուն գնաց ի Շաւարշան ի Սանատրուկ. – 80.

ՇԱՒԻՂ - և եբաց զպողոտայն լայն և ընդարձակ, զշաւիղն կորստեան, որ տանի յանգիւտ կորուստն. – 248.

ՇԱՔԷ - որոց անուանք ճանաչի սոցա … Սահլ Սմբատայ որդի, Շաքեայ տէր , որ զԲաբանն կալաւ, և իշխանական Վասակ Վայոց ձորոյ տէրն, և Փիլիպպէ իշխանն Սիւնեաց – 298.

ՇԵԽԵՏԻՔ - Եւ յայնմհետէ համարձակութիւն առեալ անօրինացն՝ սկսան գունդս ռամկականս ժողովեալ ըստ օրինակի մարախոյ անչափ բազմութեամբ, այնոքիկ որ Շեխետիքն

կոչէին. և այլ որ ուստեք ուստեք ի հեռաւոր աշխարհաց /402/ Պարսից, ի Ժանգանայ և ի Ջուրջանայ և որք ի Վարառատ գաւառէ – 404.

ՇԵՀ - Այլ իբրև այն ինչ մերձ լինէր ամրոցն ի պաշարումն՝ Ամդայինն Յիսէ, որ Շեհի որդին, որ զզօրապետութիւնն Հայոց ունէր, ճանաչէր՝ ի հրապոյրս Մանազաւեան պետոյն և Ութմանացն ելեալ՝ երագապէս եկն եհաս ի վերայ Աշոտի ԺԵ հազարաւ հեծելօք վառելովք. – 334. Բայց զաշխարհին Յիսէ որդին Շեհայ բռնազբօսեալ յինքն գրաւեաց և կացոյց ի վերայ նոցա զիւր գործավարս: - 344. Բայց որդին Շեհայ ի մտանելն ի Պարտաւ՝ եթող անդ քաղաքապետ զմի ի հաւատարմաց իւրոց Յամանիկ ոմն: - 338. և բռնազբօսեալ զաշխարհին Ահմաթ որդի Յիսէի Շեհայ յինքն նուաճել – 358. Եւ ելեալ ազատացն Վասպուրականի դէմ եղեալ տարադէմ գնացին յԱմդացւոց քաղաքն առ Ահմաթ որդի Յիսէի Շեհայ – 366.

ՇԵՂ - որ առ հիւսիսի առ ի շեղ տեսանի – 390.

ՇԵՐԵՓ - ելին գնացին առ Ատոմ … Յիսէ Տրունեաց տէր որդի Հոնաւարայ, Վարազշապուհ Աբելինից տէր, Թադէոս Ակէացի Շերեփայ որդի, և այլք ընդ նոսա: - 364 Յայնժամ ամրացեալ նստէր ի Շամիրամ բերդին Թադէոս անուն ի յԱկէացի տոհմէ, Շերեփայ որդի ծանօթացեալ – 400. որոց Շերեփայ որդիք անուանէին, ի յԱկէացի տոհմէ, քաջամարտիկք և հմուտք պատերազմողական յարդարմանց – 362.

ՇԵՐԵՓԵԱՆ/Ք/ - Ազդ եղեալ Շապհոյ եղբօր Թադէոսի Շերեփեանց. – 400. և այլքն զաղաղակ բարձեալ ի ձայնարկու աշխարանս՝ խնդրեցին զապրուստ ի սրոյ քաջամարտիկ ախոյանէն Շերեփեանն Թադէոսի: - 400.

ՇԵՐԻԲԱՄԱԿԱՆ - Եւ զԶրադաշտ մոգ արքայ Բակտրիացւոց և Մեդաց ընկճեալ հալածեաց մինչև ի սահմանս Խեփտաղաց, հզօրապէս տիրեալ բովանդակ Խուժաստանի և կողմանց արևելից և Պարսից, անդր ևս քան զԲահխ և զԴեպուհան , ի Գովմայիդ և ի Գուզբան, ի Շերիբամական /գրքում՝ Շերիբամամական/ և ի Խոճիհրաստան, և միանգամայն ասել մինչև ի ծովն Հնդկաց՝ յոյժ արութեամբ – 44.

ՇԷՆ/գ.ա./ - գերփեն առնուն զշէնս և զաւանս և զագարակս, կապուտ կողոպուտ թողուն ի ստացուածոց և յամենայն ժառանգութեանց, մաշեն ի սուր սուսերի զորս ի բուռն առնուին. – 102. և այնու աղագաւ կարաց շէն պահել զերկիրն շատամարդկութեամբ: - 90. Եւ զկէսն գերի առեալ ածեն ընդ իւրեանս, և զշէնս և զաւանս և զագարակս հրձիգ արարեալ՝ անապատ կացուցանեն ի մարդոյ և յանասնոյ: - 202. և շէն մարգարիտ զքարաբլուրն յօրինէ պարսպաւոր անկասկածելիս անմատչելիս ձեռաց պատերազմողաց – 88. զշէնս պատրաստեալ, և շուրջ զամրոցաւն տնկախիտս բուրաստանս ծաղկաւէտս և անուշահոտս ի զանազան ծաղկանց. – 86.

ՇԻԹ - որոց և շիթք ցօղոյն ունէր զանհամեմատ անուշահոտութիւն: - 50.

ՇԻՆԱԿԱՆ - Եւ ժողովել զբնակիչս աշխարհին համօրէն զարս և զկանայս և զայլս յերկրէն Աղուանից բազմութիւն ռամիկ շինականաց, և լեգէոնս զօրականաց զսակաւս ի լեառնն ամուր անուանեալն Քթիշ, ըստ այնմ և համբարս ռոճկաց: - 278.

ՇԻՆԵԱԼ - անդ և տապանն շինեալ եղև և անհնարին չարեացն զեղեալ ի վերայ երկրի. – 30. Բայց քանզի աւերեալ էր զՆինուէ Նաբրովթայ ի բռնանալն ի վերայ Սեմեացն, և զԲաբելոն /16/ փոխանակ նորա շինեալ – 18. և թողեալ զբնակելն ի Դուինն՝ ելեալ բնակեցաւ ի Նոր քաղաքին ի մեծ եկեղեցւոջն որ յանուն սրբոյն Գրիգորի շինեալ էր երանելւոյ տեառն Ներսիսի երկրորդի Հայոց կաթողիկոսի: - 358. և ի փայտից մայրեաց շինեալ էր քաղաքն նոցա, պարիսպք և պատուարք և ապարանք նոցա և ամենայն տուն բնակաց քաղաքին և ամենայն կազմած պատրաստութեան նոցա: - 270. և հարան զօրքն արքունի ի հարուածս մեծամեծս և դարձան փախստական ի բանակն իւրեանց և մտին յապարանսն զոր շինեալ էին. – 282. և յաջմէ սեղանոյն շինեալ ընդ նովիմբ հիմամբ ի տեղի յիշատակարանի խաչելութիւն տեառն Գողգոթայ տեղւոջ – 390. զոր շինեալ էր սրբոյն Գրիգորի ի վերայ գեաւղջն Ահևականից ի կատարածի լուսաւորութեանն Հայոց: - 334. զոր շինեալ էր սրբոյ Լուսաւորչին մերոյ Գրիգորի ի դառնալն նորա ի ձեռնադրութենէ

քահանայապետութեանն: - 100. զոր շինեալ էր սրբոյն Գրիգորի – 104. Իսկ ոմանք ասեն ի Ղաւոդիկեայ Փոխւգացւոց շինեալ տապանին, որ յերից մասանց երկրի՝ Ասիական կոչի կողմ. և յոյժ անհաւաստի են ասացեալքն.- 30. յորում տեղւոջ քաղաքն Տարունոյ շինեալ էր, ուր բնակեալ բայանայր զօրավարն Տաճկաց, զօրհասական արջոյն բերելով նմանութիւն, որ յաւուրս ձմերայնոյ արմատովք պարենաւորեալ՝ ի մէջ կենաց և մահու անցեալ որջանան ի բոյնս իւրեանց: - 188. շինեալ նորոգեաց և զեկեղեցին որ ի նմա յանուանակոչութիւն սուրբ Աստուածածնին Մարիամայ և զարդարեաց զնա մեծագանձ սպասուք և եդ ի նմա զԽաչն, զոր յիշեցաք վերագոյնն, յորոյ ձեռն ծանուցաւ զօրութիւնն հրաշագործ: - 390. Շինեաց և ի վերայ Ամրական քարանձաւին յելս և ի մուտս կոյս տունս խրախիցս ոսկեզօծս պատեշգամեալ, յաւելլով ի յառաջագոյն ի հօրէ նորա Դերանկէն շինեալ: - 390. որ և զՆինուէ քաղաք առաջին արքունեաց շինեալ յԱսուրայ, զոր աւերեացն Նեբրովթ՝ սա վերստին շինեաց ի պատիւ անուան իւրոյ: - 44. որ միապետեալ զամենայն, շինեալ քաղաք և տուն արքունի, վասն ամուր զգուշութեան արքունեաց, զԲաղդադ: - 168. որ յանուն Փրկչին մերոյ շինեալ էր յիշխանէն Բագարատայ, ի ծախս մեծամեծ գանձուց իբրև Յ հազարաց: - 190.

ՇԻՆԵԼ - առ սովաւ Տիւրոս քաղաք շինեցաւ: - 58. Ասուր շինէ զՆինոս քաղաք, որ է Նինուէ, որ կոչի առաջին Ասորիք: - 14. Արդ զիա՞րդ յետ բազում ժամանակաց զՆինոս ասեն շինել զՆինուէ, զայրն Շամիրամայ, որ ծնաւ զՆինուաս – 14. Բայց ոչ ժամանեալ կատարման պատերազմին, զաշտարակն, զոր շինէր որդին Աբգարու փլուզեալ ի վերայ սպան զնա, վրէժխնդիր եղեալ մահուն Ադդէի սրբոյ:- 80. բովանդակաբար բացայայտել զհաւատարիմն գրել, թէ արդեօք Ասուր, որ զՆինուէ շինեաց, հաւ Նինոսի՞ իցէ ի ծննդոց Սեմայ, ուստի Նեբրովթ, կամ թէ արդեօք ազգն Արծրունեաց Սեմա՞յ սերունդք իցեն, թէ Քամայ ի Նեբրովթայ: - 14. Դարձեալ շինէ զօրավարն Գագիկ ի գլուխս Օձ ձորոյ, որ վասն խստութեանն սաստկաշունչ դառնալիր մահածին հողմոյն շնչելոյ այսպէս անուանեն – 396. Դարձեալ վերակնեալ յառաւօտինս կոյս խաղացեալ ի ճուաշոռոտ ի Գետս աւան՝ շինէ անդ զվայելչական տեղի խրախից – 392. Դարձեալ քանզի Մեստրիմ ի Քամայ ըստ բաժանման ազգին և աշխարհին շինէ զԵգիպտոս և անդ հարստանան ազգապետաբար – 18. և շինէ քաղաք թագաւորութեան իւրոյ անդ -14. Եւ անդէն ոչ կարացեալ շինել զերկիրն այն հուպ ընդ հուպ մինչ յութերորդ ամն Արտաշէսի – 90. և առնու զԲաբելոն, և շինէ զՏարսոն ի ձև Բաբելոնի, գետոյ ընդ մէջ անցանելոյ որպէս խոնարհագոյն մասնաւորաբար գրեմ: - 16. և բազում և ազգի ազգի հոգաբարձութեամբ տուեալ օգնականութիւնս Հայոց աշխարհիս, շինելով քաղաք Թէոդուպօլիս ի Կարին գաւառի, և զօրս կողմնակալս ի պահեստ՝ ընդդէմ կալ պարսկական յարձակմանցն: - 114. և ելեալ յերեսացն Տեառն՝ սնոտի տաժանմամբ շինէր քաղաք, չհամարեալն յազգս զղջալից և արդարաքարոզ նահապետացն: -24. և զերթալն Մեսրովպայ և Վարդանայ ի Յոյնս առաջի արկանէին, և զգալն Անատողեայ և զշինել քաղաքին ի Կարին գաւառ: - 118. և ի վերայ նորա շինեաց եկեղեցի զհամբարձմանն ի յերկինս ի Հօրն գահակցել աթոռ, և զերկրորդ գալստեանն զյիշատակ ունելով, որ գալոցն է հայրենի փառօք, ըստ հրեշտակացն առաքեալսն զմխիթարականն և զքաջալերականն աւետիս նոցա առբերելով: - 390. և ի վերայ նորա շինեաց եկեղեցի զվերնատանն խորհրդական խորհրդածութեանն աւանդութեան նորա ուխտի: - 390. և կանգնեցին պատնէշս և շինեցին ապարանս և արարին տուն բնակութեան – 276. և հաճոյ թուեալ յաչս նորա՝ շինէ զքարաբլուրն ապարանս արքայանիստ, աշնանայինս, պայծառայարդարս, գեղեցկայարմարս պարսպաւորս – 86. Եւ հասեալ Շաւասպայ Արծրունւոյ ամբարշտի յԱրտաշատ հանդերձ մարզպանաւն՝ շինեն ի դուռն քաղաքին զորմզդական մեհեանն, /124/ և զկրակապաշտութեան մոլութիւն բորբոքեն ի նմա. – 126. և միապետէ զտէրութիւնն Անձաւացեաց և խաղաղեցուցանէ զերկիրն և բնակէ յանհոգս զապահովացեալ ի հինից. շինէ եկեղեցիս և կատարէ տօն նաւակատեաց խաղաղութեան: - 326. և շինեն նախարարքն Հայոց իւրաքանչիւր պալատս արքունականս և դաստակերտս

յականաւորս, և զքաղաքն որմափակօք պարսպեն, և խաղաղեցուցանեն զերկիրս: - 126. և շինեցին ապարանս ամուրս և պարսպեցին մեծաւ զգուշութեամբ. – 280. Եւ սկսաւ երկիրս առնուլ զնորոգումն, և եկեղեցիքն պայծառանալ ի զարդ և ի պաշտօնս շքեղութեան, և ցրուեալքն դառթ տուեալ դարձան յիւրաքանչիւր տեղիս՝ շինել, տնկել, մոռանալ զցաւսն և զտրտմութիւնսն զոր կրեցին: - 318. Եւ վասն մնացելոցն որք ի քաղաքին և ի սահմանս նորա՝ ել հրաման յարքունուստ առնել ի վերայ նոցա ողորմութիւն, շինել զքաղաքն և հաստատել զամենեսին յիւրաքանչիւր կարգ: - 142. Եւ քանդեն աւերեն զմեհեանն և յատակեալ զտեղին՝ շինեն նորին քարամբք զմեծ եկեղեցին զսուրբ Գրիգորն ի Բլուր տեղւոջն – 126. Եւ քանզի իշխանութիւնն Պարսից յոյժ լքեալ էր՝ և աներկիւղ շինեցին զքաղաքն Մադիամ և բնակեցան ի նմա: - 156. զոր յափշտակեալ ի Սէմայ որդւոցն Քամայ՝ շինեցաւ քաղաք նովիմբ անուամբ. – 34. զոր թագաւորին յանձն առեալ զաշխարհն՝ հրամայէ շինել անդ մեհեան զՀերակղեայ և զԴիոնիսեայ. – 90. Զուգակշիռ հաւասարութեամբ մարզպանն Հայոց Գուրգէն հրաշազան յօրինուածով շինէ զեկեղեցին ի քաղաքին Հադամակերտ ի Մեծն Աղբակ, ի բուն իշխանական սեփհականութեանն իշխանութեան զարմին Արծրունեաց – 396. ի թագաւորելն Նինոսի առնու զԲաբիլոն/ճիշտը՝Բաբելոն/ և շինէ զՆինուէ, և փոխէ անդ զթագաւորութիւնն Ասորեստանի: - 18. Իսկ Ասուր որդի Սեմա զՆինուէ շինէ առաջին քաղաք Ասորւոց թագաւորութեանն: - 14. Իսկ զթագաւորաբնակ տեղին մեծին Տրդատայ տան ի ձեռս Վահանայ Արծրունւոյ՝ շինել նմա տուն թագաւորաց, արարս պատրաստութեամբ. – 126. Իսկ Ասուր երրորդ ի Սեմայ՝ առաջին շինէ զՆինուէ. – 14. Դերանիկն առաւելոյր և առատանայր օր ըստ օրէ առ շինութիւն և խաղաղութիւն աշխարհիս, շինել և տածել և խնամել զաշխարհս: - 338. Իսկ ի մէջ երեքարմատեան գոգաձև հովտին փոքու, որ յերից բլրոցն խոնարհի՝ շինէ աշտարակ բարձրաբերձ փորուածոյ միջոցաւ – 88. Իսկ ի յահեակ կոյս սեղանոյն շինեաց եկեղեցի ի յիշատակ յարութեանն Քրիստոսի յեռօրեայ թաղմանէն վերելեկեալ աւարառութեամբ դժոխոցն – 390. Իսկ ի տիրական զօրավարութեանն Գագկայ սկզբնաւորեալ ձեռակերտ իւր՝ շինեաց զհողաբլուր բարձրաւանդակն ի Մահռաշտ գեօղ յափն գետոյն յելս կոյս, որ հայի յՈստանն Ռշտունեաց – 394. Իսկ Նեբրովթ ի Քամա շինէ զԲաբելոն առաջին քաղաք, և առաջին թագաւորէ ի վերայ երկրի: - 14. Իսպառ ստորև ամրականին ի գոգաձև տեղւոջն … շինեաց եկեղեցի հրաշագործ հրաշազան յօրինուածով եկեղեցի ի տաշեալ քարանց ի Մանազաւեան քաղաքին ի Վանտոսպ, և հիմնեցուցեալ յանուն սրբոյն Սիոնի, որ ի սուրբ քաղաքն Երուսաղէմ. – 390. շինեաց Գագիկ պարսպաւոր ամրափակութեամբ զբլուրն յՈստանին Ռշտունեաց զաւերեալն ի բազում ամաց – 390. Շինեաց և եկեղեցի մի յԱմրական քարանձաւի, ի կատար քարանձաւին, յանուն քաջամարտիկ զօրավարին սրբոյն Գէորգեայ - 390. Շինեաց և ի վերայ Ամրական քարանձաւին յելս և ի մուտս կոյս տունս խրախիցս ոսկեզօծս պատեշգամեալ, յաւելլով ի յառաջագոյն ի հօրէ նորա Դերանկէն շինեալ: - 390. Շինէ անդ եկեղեցի վայելչապէս պայծառութեամբ և անուանէ զնա յանուն սուրբ Պետրոսի առաքելոյն անպարտելի դժոխական առաջնորդի: - 394. շինէ և անդ ամրական տեղի, դժուարամատչելի ասպատակող հինից, դնելով ի նմա նմանապէս ապարանս փողոցայարդարս, տաճարակերտս սենեկագործս, բաւական ի պէտսն պատրաստեալ – 392. - որ և զՆինուէ քաղաք առաջին արքունեաց շինեալ յԱսուրայ, զոր աւերեացն Նեբրովթ՝ սա վերստին շինեաց ի պատիւ անուան իւրոյ: - 44. Սահակայ առեալ ի պարգևի զաշխարհն՝ թողու զորդին զԱշոտ զլեառնակողմամբքն առաջին իւրեանց տէրութեանն՝ շինել, բնակել, ժառանգեցուցանել զերկիրն ի ժառանգութիւն իւրեանց ազգի ի զաւակ տանն Արծրունեաց: - 90. փոխէ անդ գեօղս և շինէ զբլուրն, որ տեղի բանակի ղաշիկ առնելոյ էր տանն Արծրունեաց, և անուանեաց յանուն իւր զձեռակերտն Գագկակերտ: - 396. Քանզի որպէս գրեցաւն՝ Ասուր ի Սեմայ շինէ զՆինուէ – 14.

ՇԻՆՈՒԱԾ - առ հօրն յաւելադրելով շինուածս իւր: - 392. բլուր մի պարսպեալ տաճարախիտ շինուածովք, որոյ հայեցածն առ դաշտակողմն ի վայր կոյս բերի, ի խաղս գետոյն

Երասխայ – 392. դարձեալ պարսպէ զքարաբլուրն ի պահպանութիւն ջրոյն ամրագունիւք շինուածովք – 88. Եթէ, որպէս ասացի, ի բաց գնաս յինէն՝ խաղաղութիւն է, և թէ ոչ՝ պատերազմ և կռիւ և ճակատամարտ … դու շինուած առանց հիման՝ և ես հեղեղ հիմն ի վեր տապալիչ – 280. Եւ թէ որպիսի օրինակաւ գալուստ նորա և պատերազմ վասն սորին իրաց, և արիական ձեռակերտացն շինուածք, որ և յոյժ արժանաւորք զարմանալեաց, և դարձեալ ապստամբութիւն Զրադաշտին և մահն Շամիրամայ և բան յուռթիցն որ զնմանէ – 44. զի մի սպառ սպուռ տապալիցի զօրութիւն շինուածոյ աշխարհի, ի բաց ընկենլով զծառայական պաշտօնատրութիւն կողմնակալաց, և քաղաքային անհաւատարիմ կամարարողաց, և հարկաց բեկման և զօրաց – 186. կոչեաց զանուն ամրոցին Զարդ, այսինքն պայծառութիւն ի վերայ պայծառայարդար շինուածոյն: - 88.

ՇԻՆՈՒԹԻՒՆ - ,,Թագաւորաց աշխարհակալաց օրէնք են՝ մեծաւ հոգաբարձութեամբ խնամ տանել վասն շինութեան աշխարհի և թեթևացուցանել զլուծ բռնութեան /184/ ծանրակի բեռանց, թուլացուցանելով զասստկութիւն հարկապահանջ խոշտանգանաց – 186. այն ինչ արծարծեալ առ նորոգումն շինութեան եկեղեցւոյ Քրիստոսի ի կործանմանէ հինի յետ մեծ պատերազմին սրբոյն Վարդանայ. – 134. և այնպէս անկարօտս առ պիտանացուս հոգ տարեալ՝ գլխաւորեաց որ ինչ շինութեան և խաղաղութեան աշխարհիս նպաստաւոր առ օգտակարագոյնսն պահանջէր գործառնութեան եղանակք – 392. և դու թէ ոստիկան խաղաղութեան էիր եկեալ յարքունուստ՝ զշինութիւն պարգևաբաշխէիր սոցա, և ոչ զաւերս և զխռովութիւն: - 278. և զուարճ և զուարթ խրախութեամբ յուսակցէին առ տիրական նախախնամօղ հոգաբարձութիւն շինութեան աշխարհիս – 360. Եւ իբրև կատարեաց զյօրինուած շինութեան քաղաքին և անմատչելի անկասկածելի զամրոցն պատրաստեաց – 88. և մինչդեռ խորհէր արքայ Կաւատ վասն շինութեան աշխարհի և խաղաղութեան՝ եհաս նմա վախճան կենաց և մեռաւ, կեցեալ ամիսս Ջ: - 152. Եւ սկիզբն արարեալ շինութեան և խաղաղութեան աշխարհիս իրաւադատութեամբ, վերակացութեամբ որբոց և այրեաց, աղքատսիրութեանն լրջմտութեամբ եկեղեցւոյ զարդարմամբ. – 390. զաւերումն աշխարհի քան զշինութիւն կարևոր համարէր – 370. զի երկիր ի շինութեան լինելով և ի խաղաղութեան՝ և հարկք արքունի կանգուն երթիցեն: - 186. Զի ոչ միայն առ շինութիւնն՝ այլ և յարիւն և յապաժոյժ առաքինաբար զանձինս եդեալ ի վերայ խաշանցն մեռանել իբրև զքաջ հովիւ – 392. զշինութեան և զխաղաղութեան հայրենի աշխարհի երկասիրաբար հոգ յանձին տանել. – 388. Իսկ Դերանիկն առաւելոյր և առատանայր օր ըստ օրէ առ շինութիւն և խաղաղութիւն աշխարհիս, շինել և տածել և խնամել զաշխարհս: - 338. որ ոչ հաւանեցաւ մտանել յանմիտ խորհուրդ շինութեան աշտարակին. – 40.

ՇԻՋԱՆԻԼ - և յերկրորդումն հանդերձեալ են վերստին մտանել ի տանջանս յաւիտենականս, ուր որդն ոչ վախճանի և հուրն ոչ շիջանի: - 336.

ՇԻՋԵԱԼ - Եւ զայս Եղկղեսիանոսք. բայց ինձ այսպէս թուէր, թէ աղանդն Եղկղեսիանոսաց վաղուց շիջեալ խափանեալ լինէր ի քաջաց վարդապետացն սրբոց, զոր եդն Աստուած յեկեղեցւոջ. – 254.

ՇԻՋՈՒՑԱՆԵԼ - յորում և ոմն հաւատարիմ Ցիսէի Սէմ անուն յառաջ խաղացեալ՝ պատահէ իշխանին, ընդ Վահանայ խորհրդակցեալ խորհել զխաղաղութիւն և զմարտն գրգռեալ ցածուցանել և զվառեալ պատերազմն շիջուցանել. – 334.

ՇԻՐԱԿ - և անցանէ ի Շիրակ, և հասեալ ի Դուին՝ աւերէ զնա և զՆախճաւան և զՈրմի – 148.

ՇԻՐԻՄ - Իսկ տեղի շիրմին յորում նախահօրն եդան ոսկերք՝ կատարման և կառափման, որ նոյն ինքն է գագաթն և Գողգոթայ ըստ եբրայականին, երկակի անուամբ. – 34.

ՇԻՐՈՅ - և զՇիրոյ կախեն զփայտէ ի վերայ կրակարանին. – 126.

ՇԽԲ - Եւ յայնմհետէ բարձաւ տէրութիւնն Պարսից և ազգին Սասանայ, որ տևեաց ամս ՇԽԲ: - 166.

ՇԿԵ - և կեցեալ առ նովաւ ամս ՇԿԵ, մինչն ի հանդերձել տապանին: - 28.

ՇՂԹԱՅ - ապա յամառեալ զարբանեալքն իւր հրամայեաց կապել կրկին շղթայիւք և արկանել ի ներքին բանտ: - 250. Եւ եղև իբրև եհաս իշխանն յարքունիսն՝ ետ կապել զոտս նոցա կրկին շղթայիւք և դնել ի բանտի. – 220. Որոց կապեալ զԳուրգէն երեքկին կապանօք և դարձեալ ի պարանոցն եդեալ շղթայս՝ յղեն ընդ Ատրպատական Պարսից և տան ի բանդ ընդ կապեալսն. – 318.

ՇՂՈՄԱՐԱՐ - Արդ ոչ կարեմք փոյթ ընդ փոյթ շղումարար/ճիշտը՝ շղոմարար/ հաճութեամբ թագաւորիդ յանձն առնուլ՝ զոր հրամայէ կայսերական ճոխութիւնդ. – 132. Բայց էր Համամ սէգ և ամբարհաւաճ, յոյլ և թոյլ առ պատերազմի գործ, միայն և շղոմարար հպատակութեամբ վարէր առ թագաւորն – 90. և մեռանի անձամբ ընդ այլ շղոմարարսն յաշխարհին Մարաց ի Բակուրակերտ աւանի: - 92.

ՇՄԱՒՈՆ - Եւ կոչեալ առ ինքն զեպիսկոպոսն Մոկաց զՅօհան և զեպիսկոպոսն Ռշտունեաց Սահակ և զեպիսկոպոսն Անձաւացեաց Շմաւոն – 122. և զսակաւուց քան թէ յոլովից գրեաց անուանս ի յիշատակարանի անդ զՇահդոսդ, որ թարգմանի արքայասէր, և զԳոհշթասդ, որ թարգմանի ներկագործ ծիրանեաց արքայական զգեստու, և զՇմաւոն եպիսկոպոս, վէմ եկեղեցւոյ Քրիստոսի ընդ նմին և այլ եպիսկոպոսք և քահանայք արք Ճ - 106.

ՇՄԵՐԳԻՍ ՄՈԳ - ՅԵՏ ԿԻՒՐՈՍԻ/թագավորում են/ ԿԱՄԲԻՒՍԷՍ, ՇՄԵՐԳԻՍ ՄՈԳ, ԴԱՐԵՀ ՎՇՏԱՍՊԱ. - 68.

ՇՆԱՒՀ - Իսկ այլազգեացն անցեալ գնացեալ մտին ի Թրաբ գաւառ և ի Շնաւի: - 402.

ՇՆՈՐՀ - ,,որովհետև գտի շնորհս առաջի քո, և արարեր մեծարանս երեսաց իմոց, և առաւել քան զամենայն իշխանս Հայաստանեայց և մեծամեծս արքունի զիս նախամեծար և մեծարգի ցուցեր – 218. ,,որչափ սաստիկ պատժոց արժանի համարիցիք զայն, որ զՈրդին Աստուծոյ առ ոտն եհար և զարիւն նորոյ ուխտին խառնակ համարեցաւ և զՀոգին շնորհաց թշնամանեաց,,: - 258. Այնուհետև ել գնաց դէմ եղեալ զյունականօքն շրջել զկողմամբքն, յանձն արարեալ զհոգս իւր շնորհացն Աստուծոյ. – 316. անհասական իմն շնորհիւ փառօք և պատուով պսակեալ զմարդն իշխանական ճոխութեամբ՝ վայելեցուցանէ դրախտին, տալով նմա բազմամեայ կենաց սահման իբրև զմի օր - 20. և օրհնեաց զամենեսեան զհեռաւորս և զմերձաւորս յանձն արար շնորհացն Աստուծոյ – 254. Թողեալ այնուհետև ի խնամս արարչին, յանձն արարեալ շնորհացն Աստուծոյ: - 346. Իսկ իբրև սկսաւ սպրդել մտանել ի ներքս երկպառակութիւնն ի մէջ միաբանութեանն, հեռացաւ մեկնեցաւ գնաց շնորհ աստուածատուր զօրութեանն. – 194. որ զծայրագոյն շնորհացն Աստուծոյ առեալ պարգևս՝ կենդանւոյն ի կարգս անմահիցն փոխանորդեաց վերագրիլ, որ և յառաջ քան զփոխիլն ծանոյց զհամաջինջ բարկութիւն Աստուծոյ խոտորեալ ազգին և որդւոցն անհնազանդից – 26.

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ - Եւ Բուխայ հրամայեաց սպարապետին, զի աներկիւղ կացցէ մնասցէ Գուրգէն առ սպարապետին մեծաւ շնորհակալիւք: - 304.

ՇՆՈՐՀԵԼ - գերեաց գերեդարձ արար, և ամենեցուն շնորհէր զյանցանս, և ձրի թողութիւն առնէր. – 168. որք ասեն զՀեփեստեայ գողանալ զհուրն յաստուծոյն, մասն ինչ մարդկան շնորհել և զյոլովն ինքեան ունել – 52.

ՇՆՉԱԿԱՆ - Ջոր բան և վասն օձին սքանչելապէս ուսուցանէ Փիլոն Աղէքսանդրացի՝ յառաջ քան զդրժանացն դիպուածս՝ յոլովութիւն իմաստից ունել ամենայն շնչականաց. – 22.

ՇՆՉԱՒՈՐ - Որով պատառեցան ամենայն աղբերք անդնդոց, և սահանք երկնից բացան անընդմիջաբար երկրի և երկնային ծովուն լինել, և համատարած ջրովն զրաւ առնել համօրէն ամենայն շնչաւոր կենդանեաց – 32.

ՇՆՉԵԱԼ - և հիւսիսային օդն շնչեալ սաստկացուցանէ զզօրութիւն ցրտոյն – 260. Ի սորա յերրորդ ամի թագաւորութեանն ի վերայ Հայոց աստուածատուր բարկութեամբ անդնդաշարժ վրդովմամբք ներքնագոյն խորոցն պատահեալ միմեանց սահանախաղաց դղրդմամբ, հիմնաշարժ տապալմամբ, /356/ ներքսագոյն երկրի թուլացեալ պնդափակ աղխեալ սանդարամետական սահմանին, բարկութեան հողմոց շնչեալ ընդ ջրոցն խաւարայնոց, ի

կոհակս անդնդաքակս զթանձրայատակ երկրի զկարծր և զծանրալիր անկշիռ անբաւութիւնն տատանեալ, մինչ յերեսս երկրի ի վեր մղեալ հանդէպ քաղաքին Արտաշատու/ գրքում՝ Արտաշասու/, որ Բլուրն նորուն ասի – 358.

ՇՆՉԵԼ - Դարձեալ շինէ զօրավարն Գագիկ ի գլուխս Օձ ձորոյ, որ վասն խստութեանն սաստկաշունչ դառնալիր մահածին հողմոյն շնչելոյ այսպէս անուանեն – 396. և հարաւային ջերմագոյն օդն շնչեաց ի խորագոյն դաշտն քաղաքին Դվնայ – 268. Իսկ ի շնչել հարաւային օդոյն, եռացուցանելով երկրի ի վեր զջերմային զօրութիւնն, զուարթացուցանելով անդնդական բերմամբն զընդարմացեալ արմատս և զբոյսս ի հիւսիսային սառնամանեաց օդոյն շնչելոյ - 188. Իսկ ի շնչել հարաւային օդոյն, եռացուցանելով երկրի ի վեր զջերմային զօրութիւնն, զուարթացուցանելով անդնդական բերմամբն զընդարմացեալ արմատս և զբոյսս ի հիւսիսային սառնամանեաց օդոյն շնչելոյ -188. Յորժամ անդնդական խորքն ազդ առնիցեն ներքին բնական կենդանեացն զհասանել ջերմութեանն, յորում ջեռացեալ ի հիւսիսային սառնամանեաց օդոյն շնչելոյ, ի խորսն զխաղացումն արարեալ լինին - 260. յորմէ շնչէ օդք բարեխառն, զովացուցանէ զտապ խորշակի ամարայնոյ՝ յարեգակնակէզն լինելոյ. – 84. ուր յաճախ շնչէ օդն հիւսիսային – 262.

ՇՈՂ - Նա և ջուր մաքուր յապակի զուտ և վճիտ արկեալ, ի տապ արեգականն դնելով, և զնիւթ հրոյն առ ընթեր՝ ի շողոյ անտի արևակէզ եղեալ տոչորի նիւթն: - 52.

ՇՈՂԱԼ - և կարաւան գաղթականին տեսանէր զփայլիւն զինուցն և զշողալ սուսերացն, և այսր և անդր խուճապական լեալ հալածեալս, իբրև զոչխարս ի գայլոց: - 228. և աղաղակեալ զկնի նորա՝ զի թերևս ի լուր ձայնին և ի փայլումն զինուցն և ի շողալ սուսերին և ի խխնջիւն քաջ երիվարին և ի վազս երագութեանն ուժոյ ազդ լինիցի և դարձցի ի ձայն նոցա և ծանիցէ, և դարձցի ի կորստական ճանապարհէն – 228. Եւ ի սաստիկ բախմանէ խուռն նիզակացն և ի զինուց փայլելոյ և շողալոյ սուսերացն և սրնգելոյ աղեղանցն լարելոյ՝ հրաձգութիւն իմն արտաքս ելանէր իբրև յամպոց ճայթմանէ – 232. և ի սաստիկ փայլմանէ զինուցն և սուսերացն շողալոյ, և ի փայլիւնն սպառազէն երիվարացն վառելոցն՝ զկարծիս բերէր զհրոյ վառեալ լերինն – 228.

ՇՈՂԱՑՈՒՑԵԱԼ - և առեալ ի ձեռանէ նորա զսուսերն շողացուցեալ՝ հայեցաւ /266/ յայսկոյս յայնկոյս և ասէ, ,,ո՛վ անարի վատ արանց և կանացի այր, թշուառական զինուոր, շուն անպիտան տեառն իւրոյ,, - 268. և շամփուր շողացուցեալ մանուածոյս փակէ ի ներքս զգագաթն ամբարշտին. – 108.

ՇՈՒԱՌՆ - որ տեղասցեն ի վերայ ձեր նետս երկաթեղէնս և շուառունս մուխս պաղաւատիկք սլաքովք և հաստաձիգք աղեղանց և կռուիք բազմադիմիք՝ որչափ Խոսրովայ և ձեզ պիտոյ իցէ,,: - 138.

ՇՈՒԹԱՓԵԱԼ – մանաւանդ /370/ թէ նախախնամող և պահպանական աջն Քրիստոսի հովանաւորեալ առ ապրուստ հրածին կարկտաբեր հասեալ կորստական դիպուածին, օգնութիւն հասեալ յԱստուծոյ՝ քաջասրտագոյնս զնա գործեաց և շութափեալ զնա ի ժանեաց գազանին – 372.

ՇՈՒԹԱՓԵԼ - Եւ մինչդեռ յայնմ մահիճսն կարծեալ հիւանդութեանն կեղծաւորէր՝ և ախոյեանարձակքն /ճիշտը՝ ախոյեանայարձակ/ զմիմեամբք շութափէին – 328.

ՇՈՒՆ - ,,ոչ միայն զի չես աստուած՝ այլ շուն ես դու, և երամակ շանց՝ որ զկնի քո տողեալ սահին,,: - 40. այլ և առ Աստուած ևս և առ սուրբս նորա յաւակնեալ՝ յերկինս բացեալ զգայռալիր բերանն և որպէս շուն լիրբ պատուհաթափ եղեալ ածէր զլեզուն զերկրաւս: - 100. բազում անգամ աղուեսք թագաւորել խորհեցան, բայց շունք ոչ առին յանձն: - 108. և անդ գտեալ զբնակիչսն Ռշտունեաց, թափառականս անկեալ յանողորմ և ի մարդախոշոշ շանցն գիշակերաց – 202. և առեալ ի ձեռանէ նորա զսուսերն շողացուցեալ՝ հայեցաւ /266/ յայսկոյս յայնկոյս և ասէ, ,,ո՛վ անարի վատ արանց և կանացի այր, թշուառական զինուոր, շուն անպիտան տեառն իւրոյ,, - 268. իբրև շունք համրացեալք, որ ոչ կարեն հաջել, որպէս ասէ Եսայի մարգարէ, ընդդէմ Տեառն փոխելով զկատաղութիւն մահածին թիւնիցն

սատակչական զօրութիւնն – 210. Յայնժամ հրամայեաց զօրավարն քարշել զմարմինս սրբոցն արտաքոյ քաղաքին, լինել կերակուր շանց և թռչնոց երկնից. – 268.

ՇՈՒՆՉ - զի ահա ևս եօթն օր՝ և ածից ջրհեղեղ ջուրց ի վերայ երկրի՝ սատակել զամենայն, յորում է շունչ կենդանի,, . – 30.

ՇՈՒՌԵԼ - Եւ զնախնին մեր Ադամ ոչ ասել առաջին մարդ, այլ այլոյ ումեմն որդի Շուռելայ, արըռտաբոյծ ուղտուց, զզուեալ յանծանօթ /գրքում՝ յանծանոթ/ աշխարհի և անհաւատարիմ յայնմ գտեալ՝ հալածեալ եղև կնաւ իւրով ի միջոց երկրի – 48.

ՇՈՒՐԹՆ - ,,մարդ եմ և պիղծ շրթունս ունիմ, և ի մէջ պղծաշուրթն ժողովրդեան բնակեալ եմ ես,,: - 258. Այսու զպտուղ շրթանց մերոց խոստովանելով յանուն նորա պահանջէ սպառնալեօքն և խոստմամբքն: - 256. Եւ մեք հետևեալ Աստուածաչունչ գրոց՝ պահեսցուք անբիծ զհաւատս սրտից, և մաքուր զխոստովանութիւն շրթանց, ըստ սրբոյն Պօղոսի վերաբերեալ զօրինականն – 258. զի ,,ժողովուրդս այս շրթամբք պաշտեն զիս, և սիրտք իւրեանց հեռացեալ մեկուսի են յինէն,,. – 246. զի ,,ժողովուրդս այս, ասէ, շրթամբք իւրեանց պատուեն, և սիրտք իւրեանց հեռացեալ մեկուսի են յինէն,,: - 256. Զի չէ և չէ իսկ հնար, թէ որ հաւատայ բերանով՝ թէ ուրասցի շրթամբք – 256. զշրթունս մեր մաքրեսցուք ի մաքուր խոստովանութիւն հպելով և զմիտս մեր սուրբ պահելով ի հաւատս ճշմարիտս. – 256. իսկ եթէ առ փոքրն այնչափ ամբաստանէր զանձն մարգարէին՝ քանի՞ ևս ողբոց և արտասուաց արժանի են՝ որ յՈրդին Աստուծոյ ամբարշտեն շրթամբք իւրեանց: - 258. Նոյնպէս եթէ ոչ հաւատք սրտի և խոստովանութիւն շրթանց ամբողջ պահիցին՝ ոչ կարասցէ հետևել ճշմարիտ դաւանութեանն ի Հայր և յՈրդի և ի Հոգին սուրբ – 256. նոյնպէս և ոչ է հնար սրտի հաւատացելոյն պղծել շրթամբք: - 258. որպէս որ շրթամբքն պատուեն և ի սիրտս իւրեանց անպատուեն. – 256.

ՇՈՒՐՋ - Եւ նոյնժամայն շուրջ փակեալ բազմութեան՝ արգելին զնա իբրև յամուրս անձաւաց, զվարմ մահաբեր, շուրջ ձգեալ ի կործանումն քաջ նահատակին: - 352. առաջի տեսանելով զկապուտակ ծիրանափայլ դաշտաձև ծովն. դաստակերտս մեծամեծս շուրջ զեզերբն անտառախիտ ծառովք և գիներեր որթովք և զանազան պտղովք. – 86. բաժանեն զաշխարհս յերիս մասունս. տալով Աշոտի … Եւ Գուրգէն զկողմանս արևելից, յելից Աղբազոյ և որ շուրջ զնովաւ ամենայն Պարսկահայք մինչև ի մուտս Կորդաց, և ուր և ըստ այնմ իցէ հնար ածել զձեռամբ: - 360. Բայց հասեալ Բուխայ անց ընդ գետն մեծ զոր Կուրն կոչեն, և յորձանուտ շարժման գարնանային հոսանացն տեղի տուեալ ելանել զօրուն և բնակել շուրջ զքաղաքաւն. – 270. և առաքեցին դեսպանս առ արքայ և ինքեանք նստան շուրջ զլերամբն, մինչև փութով եկեսցէ նոցա հրաման ինչ յարքունուստ: - 280. և ընդ այգն ընդ առաւօտն, մինչ նոքա ննջէին յիւրաքանչիւր վրանաց օթոցի՝ և զօրքն շուրջ փակեցին սուսերօք և վահանօք և նիզակօք և վառեալ մոմեղինօք, և մտեալ ի ներքս ըստ հրամանի զօրավարին իւրեանց – 296. և թանձրութիւն ձեանն հարթայատակ դիզաւ շուրջ զստորոտով լերինն – 188. Եւ մեկնակազէնքն պատեցին շուրջ զեկեղեցեաւն, և ելեալ առ նա ոմանց ընդ փորուած գմբեթին՝ և եհար մի ոմն աշտէիւն ընդ միջոց թիկանցն՝ և ընդ անթովքն հանեալ ի ներքոյ թոքացն՝ փչեաց զոգին և թաղեցաւ զթաղումն իշոյ: - 190. Եւ ահա լոյս սաստիկ իջեալ յերկնից և ցոլացեալ ի վերայ սուրբ մարմնոյն, և շուրջ փակեալ զտեղեաւն, թէ ուրեք յարենէ նորա ցայտեալ կայր: - 224. և արևն ի վերայ հասեալ սպառազէն զարդուն՝ և մերկ սուսերացն փայլեալ՝ ճառագայթս արեգակնայինս յինքեանց ձգէին շուրջ զլերամբն. – 208. և Արշէզայ շուրջ փակեալ վահանաւորօք զԼիդէացւոց թագաւորաւն, տագնապ մեծ լինէր. – 64. Եւ էին անհուն բազմութիւնն մածեալ շուրջ զլերամբն իբրև զմարախ և իբրև զաւազ ծովու առանց թուոյ. – 226. Եւ ի ժամու մինչ ագևորեալքն կամէին մտանել զառաջեաւ … յայնժամ շուրջ կացեալ զվրանաւն մեծ սպարապետին զկազմեալ գնդաւ վահանաւոր և նիզակաւոր ամրափակ պնդութեամբ, և մտեալ մատոյց զթուղթն, զոր էր գրեալ առ Յամանիկն ի քաղաքն Պարտաւ Ահմաթայ նենգութեամբ: - 344. Եւ ձեռագրեալ Մուշեղայ զամրոցաւն Նորաբերդ և շուրջ զսահմանսն՝ Դերանկին հաւատալ, և զայլ ևսն՝ որդւոյ իւրում ժառանգեցուցանել:

- 324. Եւ նոյն ժամայն շուրջ փակեալ զքաղաքաւն հրձգութեամբ, և դիզեալ բորբոքէր հուրն ի դիւրածախ փայտէն մայրից և գիոց: - 272. Եւ նոյնժամայն շուրջ փակեալ բազմութեան՝ արգելին զնա իբրև յամուրս անձաւաց, զվարմ մահաբեր, շուրջ ձգեալ ի կործանումն քաջ նահատակին: - 352. զշէնս պատրաստեալ, և շուրջ զամրոցաւն տնկախիտս բուրաստանս ծաղկաւէտս և անուշահոտս ի զանազան ծաղկանց. – 86. Իբրև իմացան զօրքն Տաճկաց, թէ եմուտ իշխանն յամրոցն՝ զհետ մտեալ բազմութեանն այնուհետև, և շուրջ փակեալ անդէն զամուրն զանել գառագիղն: - 208. Իսկ զօրքն Տաճկաց գումարեալ ի վերայ նոցա. շուրջ փակեալ, ձերբակալ արարեալ /220/ ածին առ զօրավարն -222. Իսկ շուրջ զբերդանման ապարանօքն՝ պարսպէ զբլուրն շուրջանակի յապառաժուտ տաշելոց քարանց, քաղաք ամենալից զհովիտն ամրացուցանելով: - 86. Իսկ որ տիրէր աշխարհին Ապահունեաց Կայսիկն՝ զիւր զօրսն առ ինքն գումարեալ և որ շուրջ զնովաւ քաղաքայինք և ասպատակքն Պարսից, որք ի Յունացն վերայ առնէին արշաւանս: - 380. Իսկ վասն ձեանն անկայուն զօրութեանն որ այն ինչ յամպոյն ի վայր զեղեալ լինին՝ հնարաւորեալ իւրեանց փայտս իբրև զանուրս չուանօք պարունակեալ շուրջ զոտամբք, դիւրաւ ընթանան ի վերայ ձեանն իբրև ընդ ցամաք երկիր: - 192. հրախառն տոչորմամբ եռացեալ շուրջ զսրտիւն արիւնն՝ մաղձախառն բերմամբ յապուշ զմիտսն կրթեալ՝ կայր ի մէջ տարակուսի – 180. Յայնժամ ժողովեալ Խոռեմ Ռազմայուզան /գրքում՝ Եռազմայուզան/ զզօրս իւր բանակեցաւ շուրջ զԵրուսաղէմաւ և պաշարեաց զնա, և պատերազմեցաւ ընդ Երուսաղէմի աւուրս ԺԹ – 142. Նաև սրբոց հրեշտակացն ի տեսաւորութիւն ձևացեալ, որոց սարսափմամբ առ նորա զնայեցած յապուշ միտքն կրթեալ, շուրջ փակեալ զնայեցածն՝ ի հարց մատուցեալ ասէ – 386. նազելով և սիգալով, իբրև զկորիւն առիւծու ճեմէր, անկասկածելի մնալով, առ ոչինչ համարելով զհէնն եկեալ հասեալ, փակեալ շուրջ զնովաւ. – 210. շուրջ փակեալ զՄեհուժանեան գնդիւն, զի մի ճողոպրել ինչ աճապարիցի: - 106. Պղպջաձիգ արտօսր իբրև յեռանդնոտ կատսայէ ի վեր յորձանախաղաց սահին. տարակուսանք անյուսալի շուրջ զինն պարագրին ի վերայ եղելոցն: - 350. քանզի ,,բանակք հրեշտակաց Տեառն շուրջ են զերկիւղածովք իւրովք և պահեն զնոսա,,: - 252. իբրև զորսորդս ինչ առիւծուց կամ այլոց ինչ նոյնպիսեաց, շուրջ ձգեալ զգառագիղն՝ ի մէջ փակել զկորովին և զքաջ արանցն զիշխանն Աշոտ – 202.

ՇՈՒՐՋԱՆԱԿԻ - այլ և երկիւղ ոչ սակաւ ունէր զնա, զի բազում գունդք սուսերամերկաց շուրջանակի պահէին զնա: - 282. Եւ անդ գտեալ ամրագոյն անձաւ տեղի անկասկածելի ի պատերազմական գործոց և զնա պարսպեալ պատուարօք շուրջանակի – 392. Եւ զօրքն Տաճկաց պնդեցան և փակեցին շուրջանակի ի ներքս զգունդն Աղուանից և դիմեցին յանդուգն ի վերայ նոցա. – 284. Եւ ըստ հրամանի բռնաւորին դահճացն ձգեալ ի նա նետս շուրջանակի՝ աւանդեաց զոգին ի փառս Աստուծոյ երանելի նահատակն Քրիստոսի: - 292. և կարգեցին ճակատս, և բոլորեցին ռազմ, և գունդս գունդս յընտրելոց զօրացն ըստ ազգս ազգս, շուրջանակի ի ներքս փակեցին զլեառնն և դրօշս և նշանս բարձրագոյնս լայնատարածս կանգնեցին. – 280. և յանկարծակի ի մէջ գիշերին Գրիգոր ախոյեանայարձակ դիմեալ շուրջանակի փակեցին ի ներքս զբանակն, սրով և աղեղամբ / 330/ վէրս մահաբերս ի վերայ եղեալ՝ յոլովք անկան ի զօրուէն. - 332. և սուսեր ընդ մէջ ածեալ, և հեծուցեալ ի մեծազարդ ջորւոջ, և նժոյգս առաջի և զկնի ի զարդ և ի զէն սպառազինեալ և ձայնք փողոց և դոփիւնք թմբկաց և այլ երաժշտական գործոց հնչեցուցանէին շուրջանակի. – 236. և փակեցին ի ներքս զոտն լերինն իբրև զծով շուրջանակի, ի վեր ձգելով զկուտակումն ալեացն ի բռնութենէ հողմոցն վարելոյ. – 276. զի թագաւորն Լիդէացւոց ասպազինեալ զերիվարն շուրջանակի պղնձի արկանելեօք յոտից մինչ ի գլուխ բովանդակ չթողեալ տեղի՝ անկոռնելի լինել զինուի – 64. Իսկ ի վերայ բազում հինից եկելոց ի վերայ Գուրգինի և սաստիկ պատերազմացն զոր պատերազմեցաւ յաղթող նահատակութեամբ. ոչ միայն յարտաքին թշնամեացն որ շուրջանակի պաշարէին, բազում այն էր որ ի ներքին ընտանեաց հարազատաց, ազգականաց դրժողաց, ուխտազանցաց, ստոց և ստերդմանց յուզէին աղմուկք: - 308.

Իսկ շուրջ զբերդանման ապարանօքն՝ պարսպէ զբլուրն շուրջանակի յապառաժուտ տաշելոց քարանց, քաղաք ամենալից զհովիտն ամրացուցանելով: - 86.

ՇՌՆՋԱՊԱՀ - շռնջապահս ձիոցն և տաշտս գաւակացն և զանգապանս ի չորս կողմանս, ձգեալ և լանջացն զէն, և բարձրավիզ խրոխտանացն զրահս, և ոտնատորոփ փռնկալոյն մանեակս զանգակեալս, և մահիկս լուսնաձևս ի մէջ ճակատուն կապեալ – 208.

ՇՏԱՊ - Եւ ելանէին գունդք գունդք շտապով և ճեպով մի զմիոյ կնի, և ամենայն ոք որ տեսանէր՝ ընդ մեծաւ երկիւղիւ ներքադրեալ լինէր: - 284. Եւ ինքն շտապ տագնապէր փութացուցանէր ռազմ բոլորել, կարգել կազմել զճակատն, պատրաստել ի պատերազմ – 228. և նախ քան ընդ պատժական տանջանաւոր խոշտանգանօք արկանելն զմեզ՝ բանիւք քո իբրև քարամբք հարեալ զմեզ՝ շտապ տագնապի ի վերայ արկանես թափել զոգիս մեր: - 242. և շտապով փութանակի յասպազինէ երիվարէն ի վայր արկեալ զինքն առաջի Աղէքսանդրի, առ ոչինչ համարեալ յահռնաբար/գրքում՝յահուռնաբար/ գործսն զոր գործեաց՝ փութացաւ ետ ողջոյն արքայի և ասէ. – 68.

ՇՏԱՊԵԼ - Եւ ինքն զօրավարն Մուսէ ճեպէր շտապէր՝ փութալ առ պատերազմն վառել – 328.

ՇՏԱՊԻԼ - Եւ յորժամ դարձեալ պակասիցէ զօրութիւն ջերմ օդոյ հարաւային հողմոյն/260/… յայնժամ վիշապն նեղի, շտապի, տագնապի բռնութեամբ ուժոյ զօրութեանն – 262.

ՇՏԵՄԱՐԱՆԵԱԼ - և բազմածուփ ալեացն ներքսագոյն շտեմարանեալ ցանկասիրութեանն՝ անդուլ առնէր զնորայն իմացմունս. – 364.

ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ - Բայց Գուրգէն կասկած ունելով յԱշոտէ, թէ գուցէ իբրև զապստամբէ ումեմնէ զեկուցանիցէ զնմանէ առաջնորդին Տաճկաց՝ ել գնաց կեալ շրջաբերական յեղափոխմամբ, արիական քաջասրտութեամբ, սիրեցեալ ընդ բնաւ աշխարհաց: - 322. Եւ յարգելուլ զնա ազատագունդ վաշտիցն՝չանսայր, քանզի լուեալ էր նոցա, եթէ շրջաբերական թղթով դարան գործեալ էր նմա Աշոտոյ իշխանաց իշխանի: - 352. և նա ձեռնամուխ եղև զընդ նովաւ հնազանդեալս ի բաց կորզել քեցել ի նմանէ շրջաբերական թղթովք, զիշխան Վասպուրական զԴերանիկն, զԱպլբառ Կայսիկ զբռնաւորն Ապահունեաց, նմանապէս և զայլսն զոր և կարաց հրապուրել. – 350.

ՇՐՋԱԲԵՐՈՒԹԻՒՆ - և ոգորել ընդ բնաւ աշխարհս անդուլ շրջաբերութեամբ, անհանգիստ մնալով, և կեղծաւորական սիրով ընդ Վասպուրական աշխարհիս և ընդ նոցուն պետացս, համարէր լինել կատարելանալ առ սէր. – 370.

ՇՐՋԱԳԱՅՈՒԹԻՒՆ - որ ի բախմանէ քարի և երկաթոյ կայծակունք արտաթափին, այլ և ի փայտից ընդ միմեանս յիրար շփելոյ, որպէս և անուոյ բնաւորեցաւ լինել, որ ի սաստիկ շրջագայութենէ սայլիցն բազում անգամ և առեղք փայտիցն վառմամբ հրոյ հրդեհին: - 52.

ՇՐՋԱՊԱՏԵԱԼ - և ետ բերել նմա ըստ օրինի գլխապետութեան սուսեր իշխանական ընդ մէջ արկեալ և գօտի արիական շրջապատեալ զմիջաւ, քուքք խիզախողք և երիվար բարձրավիզ, ոտնատորոփ, խրոխտալիր, յարմարական առ ընթացս պատերազմականս: - 308.

ՇՐՋԱՓԱԿ - և զմնացեալ սակաւսն ի մէջ արարեալ շրջափակ տուեալ՝ կամէին զամենեսեան սատակել: - 150.

ՇՐՋԵԼ/ԻԼ/ - Այնուհետև ել գնաց դէմ եդեալ զյունականօքն շրջել զկողմամբքն, յանձն արարեալ զհոգս իւր շնորհացն Աստուծոյ. – 316. Եւ սկսաւ շրջել կարգաւ ընդ բոլոր աշխարհս, յորում բնակեալ էին Տաճիկք, որ մնային ի սմա ըստ հրամանին Բուխայի: - 306. Եւ ելեալ ի տեղին սրբութեան և կատարեալ զաղօթսն՝ ելին շրջել զբօսնուլ յայլ ևս տեղիսն: - 100. իսկ կինն ճիչ բարձեալ ասէ. ,,առ թագաւորն հասցէ գոյժ իմ,, , շրջելով ընդ բանակն հոլանի, զոր չէր օրէն տաճկական ազգի կանանց, բայց ոչինչ օգնեաց. – 272. Նորա արհամարհեալ զառաքեցելովք, չվարկանելով արժանի պատասխանոյ, և նովին օրինակաւ սկսաւ շրջել ընդ բոլոր աշխարհս Վասպուրական: - 178. ,,ամենայն ազգք շրջեցան զինև, և անուամբ Տեառն վանեցի զնոսա,, - 136. Այլ սա ի վեց ամին լքեալ ի Կիւրոսէ, և աստ անկեալ կենօք շրջէր մինչև իսպառ բարձաւ թագաւորութիւնն Ասորեստանեայց և Մարաց ի Կիւրոսէ որ թագաւոր …<այստեղ նախադասությունը չի

ավարտված›: - 62. Եւ իշխանն վառեալ զինքն բազում պատրաստութեամբ զինու և զօրօք ազատակոյտ գնդաւ իւրով, և ամենայն բնակ տերամբք իւրոյ իշխանութեանն, և խոյս առեալ շրջէր զկողմամբքն Մարդոստանի և Ձորոյն հասկոյ -184. Եւ Խոռեմայ առեալ զթագաւորութիւնն՝ յաւուր միում զգեցեալ էր հանդերձ թագաւորական և հեծեալ յերիվար արքունի, և շրջէր ի մէջ ամենայն զօրացն իւրոց, ցուցանել զինքն և քաջալերել զզօրսն. – 154. Յետ այսր առեալ Սմբատայ զԱրտաշէս ըստ ձևոյ տառապելոյ միոյ, որ շրջիցի խնդրիցէ օր ըստ օրէ զբաւականութիւն աւուրն – 84.

ՇՐՋՇՐՋԵԱԼ - Յայնժամ ողորմագին զաչսն շրջշրջեալ առ քաջ նիզակակիցսն իւր, թէ ո՛վ ոք արդեօք թերևս յօգնութիւն ինչ նմա հասանիցեն. – 354.

ՇՓԵԼ - որ ի բախմանէ քարի և երկաթոյ կայծակունք արտաթափին, այլ և ի փայտից ընդ միմեանս յիրար շփելոյ, որպէս և անուոյ բնաւորեցաւ լինել, որ ի սաստիկ շրջագայութենէ սայլիցն բազում անգամ և առեղք փայտիցն վառմամբ հրոյ հրդեհին: - 52.

ՇՓՈԹ - Գուրգէն որդի Ապուպելճի Վասպուրական իշխանի, ի շփոթի ժամանակին Բուխայի և ի հայրապետութեանն Յովհաննու Հայոց կաթողիկոսի, իմաստութեամբ գործեալ՝ ոչ եկաց հակառակ չարին. – 302. և ի բաց բառնալ յաշխարհէ զշփոթ և զխռովութիւն ի միջոյ խաղաղութեան որպէս օրէն է խաղաղասէր թագաւորաց և թագաւորազանց, իբրև Աստուծոյ կամարարողաց և հաւատարիմ ծառայից տիրասիրաց: - 212. և հայր քո Վասակ խորհիցի ինչ առ արքայի, և աղմուկ և շփոթ ինչ յուզիցէ հայր քո, որպէս թէ զապստամբութեան ինչ խորհել կարծիս զմէնջ առնուցուն: - 114.

ՇՓՈԹԱԲԱՐ - Իսկ յետ այսց գործոց եղելոց ի բառնալ թագաւորութեանն Հայկազնեայցն, ոմն այսպէս ոմն այնպէս շփոթաբար կեցեալ անիշխանութեամբ - 68.

ՇՓՈԹԵԱԼ - և այսպէս աղմկեալ և շփոթեալ երկիրս Հայոց՝կեայր անմիաբանութեամբ, լի անկարգութեամբ, ըստ յօժարութեան Վաչէի Արծրունոյ: - 120. և Վաղարշակ եղբայր նորա եկեալ ի Հայս՝ լնու բարեկարգութեամբ զաղմկեալ և զշփոթեալ երկիրս Հայոց: - 72. զի թէ ի բազմաց էր՝ այլայլակ և շփոթեալ լինէր ի բազմաց շարժումն և ոչ կարգաւորաբար: - 54. զշփոթեալ և զվրդովեալ կարգս աշխարհիս յօրինել առ հանդարտութիւն և խաղաղութիւն յառաջանալ – 388. Յութերորդ ամի գերութեանն դառնայ Գուրգէն եղբայր Աշոտի միապետել զիշխանութիւն տէրութեանն և յարդարել կարգել յօրինել զկարգս /314/ շփոթեալ աւերեալ երկրիս: - 316. Նա և զանուանս նոցա և զթիւ ժամանակացն այլափոխս ետուն մեզ, թերևս վասն շփոթեալ և հակառակասէր ազգին – 168. Նախ զի և լեզուքն շփոթեալք՝ունէին զանմիաբանութեան փոյթս, կամ թէ զի և վատութիւնք քաջաց ապիհարկեալք ոչ գրեցաւ ի մատենագրաց անտի Քաղդէացւոց – 44. և շփոթեալ լի աղաղակաւ երկիրս, և ուր հասանէին՝ աւերէին ասպատակաւ և աւարաւ և յափշտակութեամբ. – 298. միապետել զիշխանութիւն տէրութեանն և յարդարել կարգել յօրինել զկարգս /314/ շփոթեալ աւերեալ երկրիս: - 316.

ՇՓՈԹԵԼ - և կանխավաղ ցրմամբն ի վերուստ՝ զմիաբարբառ լեզու մարդկութեան շփոթեաց յայլաբան խլրտինս. – 40.

ՇՓՈԹՈՒՄՆ - Բայց յետ աւուրց բազմաց անցանելոյ շփոթմանցն՝ Գուրգէնի ընդարձակեալ նախախնամութեամբն Քրիստոսի և ելեալ փրծեալ ի բանտէն՝ եկն եմուտ յաշխարհ իւր: - 320. Եւ Դերանիկն զօրացեալ զօրութեամբ Քրստոսի, և հոյակապ և անուանի եղեալ ընդ բոլոր աշխարհ Հայաստանեայց՝ և խաղաղանայր երկիրս ի շփոթմանցն ի վերայ եկելոցն: - 318. Եւ ի թագաւորել Արտաշրի խաղաղանայր երկիրս առ վայր մի ի շփոթմանց պարսկական գնդի. – 116. Իսկ Վասակ Արծրունի, հայր Աղանայ սրբոյ, առեալ զՏաճատ և զԳոտեր զեղբայր իւր՝ գնաց առ կայսր. մեկուսի եղեալ ի շփոթմանց պարսկական վրդովմանցն և աւերման աշխարհիս. – 132. Պատասխանի ետ Մարկիանոս և ասէ. ,,վասն զի առաջնորդքն Հայոց զպարսկական շփոթմանցն զվտանգ կրէին,,: - 132.

ՇՔԵՂ - և եհան զնոսա յատենէն հոյակապ և շքեղ և երևելի պատուով ի ձայնս երգոց և ի հնչիւնս փողոց. – 314. և խոստանայր շքեղ և երևելի կացուցանել ի մէջ աշխարհակոյտ ամբոխից ի դրան արքունի – 204. Սահակ որդի Վաչէի կացեալ ի դրան Արտաշէսի շքեղ և երևելի

ճոխութեամբ – 90. սրբոյ թագաւորին և քաջ նահատակին Տրդատայ զբարիոք պատերազմեալ ընդդէմ անմարմին և մարմնաւոր պատերազմողաց, փոխի յերկրաւոր աշխատութեանցս ի հանգիստ, մեծաւ պատուով թագաւորական շքեղ և երևելի դիւազարդութեամբ – 96.

ՇՔԵՂԱԻՈՐ - այլ և նկարագիրս ոմանս պատկերաց զպատկեր քաջաց արականս և շքեղաւորս կենդանագրել: - 42.

ՇՔԵՂՈՒԹԻՒՆ - Եւ սկսաւ երկիրս առնուլ զնորոգումն, և եկեղեցիքն պայծառանալ ի զարդ և ի պաշտօնս շքեղութեան, և ցրուեալքն դառն տուեալ դարձան յիւրաքանչիւր տեղիս՝ շինել, տնկել, մոռանալ զցաւսն և զտրտմութիւնսն զոր կրեցին: - 318. Իսկ Ասուդ թէպէտ և այնպէս շքեղութեամբ ճոխանայր եգիպտական և հնդկային հարստութեամբն՝ այլ յիշելով զբուն իւր սեփհական թագաւորութիւն Ասորեստանի՝ ոչ հաճոյանայր կեալ եգիպտացի գահակալութեամբն. – 70. մինչ այնքան շքեղութիւն մեծարանօք յղփացեալ յօրացեալ կայր հազարապետն – 344. քաջավայելչագոյնս զթագաւորութեանն կատարելագործեալ զժամանակն, Ե ամ յիշխանական ճոխութեան, ԻԵ ամ յիշխանաց իշխանական պետութեանն, Դ ամ ի թագակապ շքեղութեանն. – 356.

ՇՕՇԱՓԵԼԻ - քանզի արդարև զգալի և շօշափելի էր դրախտն, և ոչ իմանալի կամ ի մէջ երկուց աշխարհաց – 48.

Ո

Ո - Եւ եթէ ասիցէ, եթէ այլ թագաւոր նստուցից՝ արասցէ զո և կամեսցի և արձակեսցէ և մեք ընդունիմք, ահաւասիկ է տեղի թագաւորութեանս: - 144. Այլ ճշմարտագոյնք են Սողոմօնեանքն, զի ասէ, ,,վա՛յ միումն. յորժամ գլորիցէ, ո՞ յարուցանիցէ զնա,,. և եթէ ,,լաւ են երկուք քան զմի, զի եթէ միովն գլորիցի ոք՝ կանգնեսցի,,: - 354. Եւ հրաման ետ այնուհետև, զի զբազմութիւն գերելոցն վաճառակուր արասցեն յազգս ազգս ում և հաճոյ թուիցի. – 240. Է՞ր աղագաւ կամ վասն ո՞յր պատճառանաց. զի ի քաջէն իմմէ և ի մեծ իշխանէն, ի քաջատոհմիկ և ի բարեփառ գլխոյն իմմէ զրկեալ լինիմ: - 384.

ՈԳԵԶՈՒԱՐՃ - և ընդ նմա Գրիգոր որդի Վասակայ, և սա նմանապէս ոգեզուարճ իմաստութեամբ առ լցեալ հոյակապ և անուանի ի մէջ Հայկականացս և ցանկալի լսողացս և ուրախարար տեսողաց. – 344.

ՈԳԻ - ,,որդեակ, ի վախճանելս իմում մի կայցես յայսմ աշխարհի, զի մի կորուսցես զկարգ քո ի մէջ անհաւատից, այլ երթիցես ի կողմանս Եգիպտոսի՝ բնակել ի մէջ բազմութեան եղբարց, զի շահեսցիս զոգիդ քո,,: - 162. ամենայն հնարիւք խորամանկութեամբ կապեալ անլոյծ գօտեամբ ընդ ոգւոյ երիցս թշուառականին – 248. Բայց հրաման քո ճոխութեանդ ձգեաց զիս յայս մեծ ձեռնարկութիւնս, սակս որոյ բացաձգեցայց արտաքոյ շաղակրատոյ լեզուաց փառամոլ ոգոց: - 122. Եւ մեկնակազէնքն պատեցին շուրջ զեկեղեցեաւն, և ելեալ առ նա ոմանց ընդ փորուած գմբեթին՝ և եհար մի ոմն աշտէիւն ընդ միջոց թիկանցն՝ և ընդ անթովքն հանեալ ի ներքոյ թոքացն՝ փչեաց զոգին և թաղեցաւ զթաղումն իշոյ: - 190. Եւ առ չհանդուրժել այնքան եկեալ հասեալ վտանգաւոր նեղութեանցն, և գազանեղէն զայրացմամբ մրմռեալ յոգի իւր ի վերայ կորստեան սուրբ հաւատոյս և կործանման աշխարհիս Հայոց – 126. և առեալ դահճին զսուրն՝ եհար զերանելին և եհատ զգլուխ նորա, և նոյնժամայն /գրքում՝ նույնժամայն/ այսպիսիցս զոգին ի ձեռս Աստուծոյ: - 294. Եւ ասի լինել թիւ մարդկանն ապականելոց ի շարժմանէ՝ ոգի առաւել քան ՀՌ: - 358. և աւանդեաց

զոգին երանելին Յովնան ճշմարիտ խոստովանութեամբ ի Հայր և յՈրդի և սուրբ Հոգին, որում փառք յաւիտեանս: - 296. և գունդ անհաւատից դառնացեալ ոգւով ի վերայ կանանց և որդւոց իւրեանց ազգականաց՝ յարձակեցան ի վերայ նոցա ուժգին սաստկութեամբ և սուր ի գործ արարեալ յանխնայ կոտորեցին. – 402. Եւ զի ասէ գիր՝ ոգիք իբրև ութ՝ երկբայականս իմն և զայն. առ որս ասեմք, եթէ նոցա տուաւ հրամանն այն. այլ թէ ի ձեռն նոցա և այլք եղեն փրկեալք: - 32. և զվկայիցն անուն ժառանգեալ կատարեցան ի Քրիստոս սուրբ գունդն Հայոց, ՈՂՋ ոգիք: - 128. Եւ ըստ հրամանի բռնաւորին դահճացն ձգեալ ի նա նետս շուրջանակի՝ այսպնդեաց զոգին ի փառս Աստուծոյ երանելի նահատակն Քրիստոսի: - 292. և ի սաստկանալ ծխոյն զօրանային գունդքն Հայոց, և ի նուազելն փոքր մի ոգի առնուին ի թշնամեացն: - 234. և կանխաձան իմն ոգւովն Աստուծոյ ասէ զնա զոլ որդիս – 22. և մեծաւ տրտմութեամբ հաչէր և հառաչէր յոգի իւր. – 218. և յետս ընդդէմ կործանեալ փչեաց զոգին ի ձեռս խորհրդածուին իւրոյ սատանայի. – 100. և նախ քան ընդ պատժական տանջանաւոր խոշտանգանօք արկանելն զմեզ՝ բանիւք քո իբրև քարամբք հարեալ զմեզ՝ շտապ տագնապի ի վերայ արկանես թափել զոգիս մեր: - 242. և որ ինչ կրեցին թշուառութիւն զոգւոց առաւել քան եթէ մարմնոց. – 240. Եւ որք ոչ այսոցիկ նման՝ լուան ի Տեառնէ՝ մի մնասցէ ոգի իմ ի մարդկանդ յայդմիկ յաւիտեան, վասն լինելոյ դոցա մարմին. այսինքն մարմնասէրք և ոչ հոգիասէրք: - 30. Զի թէ միոյ փայլատակման ընթացք և ճայթումն ամպոց բաւական է պակուցանել քաղել զուշեղութիւն ոգւոց, զի՞նչ ինչ յայնժամ կրէին ոգիք մնացելոցն յերկրի, ի սահանաբաց և յանդնդաքակ վրդովմանցն հոսելոց, նախ քան զջրհեղեղ ջուրց սատակումնն: - 32. Զի թէ միոյ փայլատակման ընթացք և ճայթումն ամպոց բաւական է պակուցանել քաղել զուշեղութիւն ոգւոց, զի՞նչ ինչ յայնժամ կրէին ոգիք մնացելոցն յերկրի, ի սահանաբաց և յանդնդաքակ վրդովմանցն հոսելոց, նախ քան զջրհեղեղ ջուրց սատակումնն: - 32. զի կարասցէ խոտորել ի գաղտնիս զոգի սրբոյն, զզրահեալն Հոգւովն սրբոյ վերեկութեամբ – 204. զոր կազմեաց իւր սատանայ գործի աջողակ յամենայն արուեստ գիտութիւն խարդախութեան, իբրև զպատշաճ դարան դեղեալ նետիւք ընդ խաւար թռուցելոյ յոգիս խաւարամածս: - 248. Իսկ սուրբն վառեալ Հոգւովն սրբով՝ յիշէ զասացեալն ի Փրկչէն, թէ „մի երկնչիք յայնցանէ, որ սպանանեն զմարմինն, և զոգին ոչ կարեն ապականել„ - 204. համարձակապէս անցանել գնալ ընդ իշխանութիւնս և ընդ պետութիւնս, ընդ աշխարհակալս խաւարիս այսորիկ, որ անհաւատից քան եթէ հաւատացելոց ոգւոց և ապաշաւելոց զտիրելն բռնաձգեալ կորզեն յինքեանցն կորուստ: - 388. մասնաւոր ինչ մարգարէական ոգւով եղելում ի մարդն օժնդակ խորհրդածութեան արծարծել անդրէն ի ձեռն ապաշաւանացն զվրիպանացն կորուստ. ըստ այսմիկ և այլոց կենդանեացն զգայականօքն և թէ ունայնացելովք առ ի դոյզն ինչ զգուշաւորականս: - 22. Վեցերորդ՝ զի խաւարաւ չարեացն պատրուակեալ զոգին, մինչն զԱստուած ևս անգէտ կարծելով՝ լրբենի երեսօք պատասխանէր – 24.

ՈԳԻ ԱՌԵԱԼ - Իսկ աշխարհս ոգի առեալ բնակեցան խաղաղութեամբ իւրաքանչիւր ըստ չափոյ հասակի ի մեծամեծաց մինչ ի փոքունս, և գոհացեալ գթութեանցն Աստուծոյ. – 376.

ՈԳՈՐԵԼ - Այր ոմն Ջափր խրոխտ և ամբարհաւաճ. և սկսաւ եղջիւր ածել անօրէնութեամբ և գոռալով ոգորէր ընդ չորս կողմանս երկրին և նեղեալ տագնապէր զխաղաղասէրս կենօք – 170. Եւ սկսաւ ոգորել ընդ իշխանս Հայոց մեծաց խրոխտանօք – 128. և ոգորել ընդ բնաւ աշխարհս անդուլ շրջաբերութեամբ, անհանգիստ մնալով, և կեղծաւորական սիրով ընդ Վասպուրական աշխարհիս և ընդ նոցուն պետացս, համարէր լինել կատարելանալ առ սէր. – 370. և սկսաւ ոգորել եղջիւր ածել ի վերայ Աշոտի յայտնի և ոչ ի ծածուկ. – 350.

ՈՋԻԱՅ - որպէս յայնժամ ի մահուն Ոզիայ արքայի, յաւուրս Եսայեայ մարգարէի՝ ի ձայնէ սրովբէից շարժեալ տաճարին տեառն, մինչ բարձրանալ դրանդեացն: - 358.

ՈԹԻՆԵԻՍ – Եւ արդ են մի ըստ միոջէ թագաւորք Ասորեստանեայց այսոքիկ … Տևտեսայ ամս Խ: Ոթիննես ամս Լ: – 58.

ՈԼԳ - Մարկիանոս կայսր թագաւորեալ Յունաց յերկրորդն Թէոդոսի, որ արար զժողովն ի Քաղկեդոն ՈԼԳ եպիսկոպոսաց. առ որով վկայեաց սուրբն Վարդան և Վահան Արծրունի: - 132.

ՈԼԸՄՊԻԱՏ /ՈՂՈՄՊԻԱԴ/ - Արդ ի գալ միւսոյ ամին որ յոբելեանք Զ և ոլըմպիատք/ըստ բառարանի՝ ողոմպիադ/ ՀԲ, ընդիքտիոնք Ի … աներկբայ խորհուրդ ի մէջ առեալ թագաւորն սինկղիտոսօքն հանդերձ և ամենայն մեծամեծօքն Բաբելացւոց , զի զիշխանս աշխարհին Հայոց ի բաց բարձցէ յիւրաքանչիւր տէրութենէ – 184.

ՈԼՈՄԲԻԱԹ - ՈՐ ԻՆՉ ԳՈՐԾԵՑԱԻ ՅԵՐԿՐՈՐԴՈՒՄ ԱՄԻՆ ԳԱԼՍՏԵԱՆՆ ԲՈՒԽԱՅԻ, ՈՐՔ ԵՆ ՈԼՈՄԲԻԱԹՔ ՎԱՍՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ԸՆԴ ՍԱՀԱԿԱՅ ԻՍՄԱՅԷԼԱՑՈՅ,ՈՐ ԻՍՄԱՅԷԼԻ ՈՐԴԻ ՃԱՆԱՉԷՐ, ԵԻ ՎԱՍՆ ՊԱՇԱՐՄԱՆ ՔԱՂԱՔԻՆ: - 268.

ՈԼՈՄՊԻԱԴ - ՎԱՍՆ ԹԱԳԱՒՈՐԻՆ ՋԱՓՐԱՅ, ԶՈՐ ԻՆՉ ԽՈՐՀԵՑԱՒ Ի ՎԵՐԱՅ ԱՇԽԱՐՀԻՍ ՀԱՅՈՑ, ԵԻ Ի ԳԼՈՒԽ ԵՀԱՆ ԶԿԱՍՍ ՉԱՐՈՒԹԵԱՆՆ, ԵԻ ՈՐ ԻՆՉ ԸՆԴ ՍՈՎԱՒ ՆԱԽ ՔԱՆ ԶԼՆՈՒԼ ՎԵՑԵՐՈՐԴ ՅՈԲԵԼԻՆԻ, ԵԻ ԵՕԹԱՆԱՍՈՒՆԵՐՈՐԴ ՈԼՈՄՊԻԱԴԻՆ, ՅԵՏ ԻՆՆԵԻՏԱՍՆ ԸՆԴԻՔՏԻՈՆԻՆ, ՅՈՐՈՒՄ ԲՈՎԱՆԴԱԿԻՆ ԺԱՄԱՆԱԿՔ ԲՌՆԱԿԱԼՈՒԹԵԱՆՆ ՏԱՃԿԱՑ ԱՄՔ ՄԻԲ ԸՍ ԹՈՒՈՑ ՀԱՅԵՐԷՆ ՏՈՒՄԱՐԻ. – 170. և ունի յոբելեանք Զ և ոլոմպիադք /ճիշտը՝ոլոմպիադ/ և ընդիքտիոնք, և Գ ամ հայրապետութեան Հայոց կաթողիկոսի տեառն Զաքարիայի, և մուտ եօթներորդ ամի, յորում կային յարքունիսն իշխանքն, ըստ եօթնեկի չափոյ շարժման ժամանակաց. – 312.

ՈԼՊԻԱՆՈՍ ՓԻԼԻՍՈՓԱՅ - դէպ ելանէ և հին առասպելն Ոլպիանու փիլիսոփայի, որ վասն առիւծուն և զուարակացն են բարառնութիւնք. – 196.

ՈՒՆԱՅԵԱԼ - Բայց թէպէտ և ունէր զպատճառ զբարեկամանալն Արէտայ ընդ Աբգարու և ընդ Խուրէնայ՝ այլ Աբգար և Խուրան առ փափագումն որ ի Քրիստոս, և առ լուր սրբոյ Փրկչին, և որ ինչ գործեացն Հերովդէս՝ ոխացեալ ընդ Հերովդի – 78.

ՈՂԲ - Առաւել ի սուգ մտեալ և յողբս անմխիթարս վասն ազգին իւրոյ Արծրունեաց – 112. Բայց քանզի ոչ բաւէ աղքատիմաստ իմոց /384/ խոհարանաց շարժումն պատկանաբար առ ողբոցն վարել բանակարգութիւն՝ թողի այժմ այլում զօրաւորի կամ այլում ժամանակի: - 386. Դարձեալ բողոք հարեալ, ձեռն զօձիւք արկեալ և զհերս խզեալ, զդէմս կեղեքեալ և ձայնս առեալ կական ողբօք արտասուալից հառաչանօք, վայ ի բերան առեալ և խիղր – 180. Եւ արդ եկ ասացից քեզ, ո՛րպիսի ողբովք ողբայ զնոսա հին մատենագիրն ասելով. – 164. և միաբան յարտասուս հեղեալ լային, և դառնապէս ողբս յողբս հարեալ անմխիթար սգոյ – 114. Եւ յերկարեալ Աղան զողբսն, ջերմեռանդն յորդահոս արտասուաց բղխմունս առաջի սրբոյն Սահակայ և մեծ սպարապետին Սահակայ և այլոց նախարարացն. – 112. Զայս ասելով, և յերեսն ի վայր ի վերայ մահճացն զգետնեալ՝ ի վայն և յեղուկն զողբոցն խառնուածսն յաճախագոյնս մանուածէր: - 388. զվայն և զեղուկն անյարմար հառաչմամբ, մեծակական ողբովք առ Քրիստոս ամբառնալով: - 386. իսկ եթէ առ փոքրն այնչափ ամբաստանէր զանձն մարգարէին՝ քանի՞ ևս ողբոց և արտասուաց արժանի են՝ որ յՈրդին Աստուծոյ ամբարշտեն շրթամբք իւրեանց: - 258.

ՈՂԲԱԼ - որպէս մարգարէն Յովէլ ողբայ ի վերայ եկեալ հասեալ թշուառութեանն, ասէ – 238. Այլ ի հրամանէ Աստուծոյ յանդիման դրախտին բնակելով պահոք ապաշխարութեան սգացեալ եղեն, ողբալով զվրիպումն առաջին կենացն, ամենայնիւ հրաժարեալ ի մարմնականաց, հոգիազարդ մարգարէութեամբ ժուժկալեալք ի մսոյ և ի գինւոյ: - 30. Եւ արդ եկ ասացից քեզ, ո՛րպիսի ողբովք ողբայ զնոսա հին մատենագիրն ասելով. – 164. և ողբայր ի վերայ աշխարհիս Հայոց, ընդ նուազել զօրութեան թագաւորութեանս Հայոց և ընդ բռնազբօսութիւնն Պարսից: - 112. Ողբացէք բնակիչք կոտորելոցդ, զի նմանեցան ամենայն ժողովուրդք Քանանացւոց, և սատակեցան ամենեքին, որ հպարտացեալ էին արծաթով,,: - 180. Որպէս և Պօղոս ողբալով և սպառնալեօք ասէ. – 258.

ՈՂԲԱԿԻՑ - Զոր պարտ էր աստանօր յոլովագունիւք ոմամբք աւաղականօք ընդ ողբակիցս՝ և զմարգարէականն առնուլ ի ձայնարկութիւն – 22.

ՈՂԲԵՐԳԱԿ - զկարգին յառաջ վարել զպահանջումն, թերևս արդեօք գործակցօք յանդգնեցայց վարել առ ողբերգակս: - 352.

ՈՂԲԵՐԳԱԿԱՆ - Յերկարագոյնս վասն սորա աճեցուցանել հարկաւոր է զողբերգականացն ճարտասանութիւնս: - 384. Յոքունց կամ թէ բնաւից կարօտանամ իմաստասիրաց գումարից ի մի վայր հասելոց՝ զողբերգականացն ճոխաբանել ճարտասանութիւնս. – 352.

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ - Եւ ապա զի՞նչ առ այսոսիկ առցուք ի մէջ զողբերգութեան բերումն ի հառաչանս – 22.

ՈՂԲՈՒՄՆ - Յայսմ վայրի ոչ ի վերայ միոյ ազգի և ի վերայ միոյ աշխարհի է լալումն ողբումն և կոծումն, այլ ի վերայ բոլոր ազգաց և աշխարհաց Հայաստանեայց: - 196.

ՈՂԲՍ ՅՈՂԲՍ ՀԱՐԵԱԼ - և միաբան յարտասուս հեղեալ լային, և դառնապէս ողբս յողբս հարեալ անմխիթար սգոյ – 114.

ՈՂՋ - և զվկայիցն անուն ժառանգեալ կատարեցան ի Քրիստոս սուրբ գունդն Հայոց, ՈՂՋ ոգիք: - 128.

ՈՂԸՄՊԻԱԴԱՅ - Զոր և Աղէքսանդրի Մակեդոնացւոյ ի դէպ ելանէ առ Ողբմպիադայ վիպագրութիւնք. թերևս ի մասն ինչ արտաքոյ սահմանաց դրախտին հասանել. – 50.

ՈՂՆ - և առեալ զնա մտանեն ի մէջ մայրեացն, և ընդ գիրկս մտեալ Շաւասպայ Արծրունւոյ՝ զլայնալիճն լի քարշեալ հարկանէ ի թիկանց ընդ մէջ ողինն զկորովալիր մատանցն զազդոյ շարժումն թռուցեալ թափանցիկ ընդ չարախորհուրդ սրտին միջոցն դիպեցուցանէ. – 100. Եւ մինչ երթայր և խորհէր՝ խոցեալ նորա երիվարն, և յանկարծակի այն ինչ ոտն երիվարին շաղեալ ընդ փոքր թուփ մի, որպէս ասեն, զուլումբեալ ի վերայ գլխոյն ջարդեալ զողն ու լարն՝ ի բաց ընկէց զհեծեալն զքաջ զօրավարն Ապումկդէմ: - 304.

ՈՂՈՂԱՆԻԼ - Եւ փոխանակ սուրբ մկրտութեանն՝ հանապազ ողողանիլ ջրով, և զայն բաւական համարել ի սրբութիւն: - 164.

ՈՂՈՂԵԼ - և հատեալ զզօրսն յերկուս առաջս, և հրաման տուեալ ելանել յերկիրն Վասպուրական, ողողել գերել գերփել /200/ զաշխարհն, աւերել և բնաջինջ առնել և մաշել ի սուր սուսերի. – 202.

ՈՂՈՐՄԱԳԻՆ - և առաջի արկեալ զհառաչանսն, զարտասուսն, զխոստովանութիւնն, զողորմագին պաղատանսն, մինչ ի մահ զտրտմելն, զկենաց դեղն հայցել, զմարմին և զարիւն որդւոյն Աստուծոյ ի թողութիւն մեղաց – 386. Եւ նոցա ձայն բարձեալ ողորմագին պաղատանօք առ Հայրակղոս, եթէ ,,աստուածասէր և բարերար տէր, արա/գրքում՝ ապա/ ի վերայ մեր ողորմութիւն, թէպէտ և չեմք արժանի ողորմութեան,,: - 150. Յայնժամ ողորմագին զաչսն շրջշրջեալ առ քաջ նիզակակիցսն իւր, թէ ո՛վ ոք արդեօք թերևս յօգնութիւն ինչ նմա հասանիցեն. – 354.

ՈՂՈՐՄԵԱԼ - Եւ զայս առատապէս հեղեալ զգութ արարչական խնամոցն առ արարածս իւր, ողորմեալ մարդասիրապէս բարեխօսութեամբ սրբոցն – 314.

ՈՂՈՐՄԵԼԻ - որով զաստուածերանն լքեալ զերկիր՝ զախտականս զայս և տաժանելիս փոխանորդեաց վիճակ, անբժշկական և ողորմելի յեղափոխմամբ. – 22.

ՈՂՈՐՄԻԼ - ,,մինչեւ յե՞րբ ոչ ողորմեսցիս Երուսաղէմի և քաղաքացն Յուդայ. այս Հ երորդ ամ է,,: - 314. և այր եղբօր իւրում ոչ ողորմէր, ըստ այնմ զոր ասաց դարձեալ Եսայի, ,,անկցի, ասէ, այր ընդ այր, և այր ընդ ընկերի իւրում, ընդհարցի մանուկն /298/ ընդ ծերոյն և անարգն ընդ պատուականին,,. – 300.

ՈՂՈՐՄՈՒԹԻՒՆ - Եւ այնպէս զօրացոյց Տէր զողորմութիւն իւր ի վերայ Հայրակղի յաւուր յայնմիկ՝ տալ ի ձեռս նորա ամենեսեան. – 150. առատապէս հեղեալ զգութ … և ի ձեռն հովուապետին սրբոյն Յովհաննիսի եպիսկոպոսի և ճգնաւոր քահանայի Գրիգորի, որք միշտ զողորմութեանց խնդրուածս վասն ժողովրդեանն տեառն ի վեր առաքէին, զոր օրինակ և հրեշտակն տեառն աղերսէր Աստուծոյ, ասէ – 314. և դարձեալ՝ թէ ,,դատաստանս արդա՛ր դատեցարուք, և ողորմութիւն և իրաւունս արարէք, քանզի առ ձեզ են բանք իմ, ո՛վ բռնաւորք,, , ասէ Սողոմոն. – 182. Եւ լուաւ տէր աղօթից նոցա, և դարձաւ ի բարկութենէ սրտմտութեան իւրոյ գթութեամբ և ողորմութեամբ, որպէս գրեցին

երանելի մարգարէքն: - 314. և կարգէ զդասս պաշտօնէից կատարել զպաշտօն Տեառն ի տուէ և ի գիշերի անձանձրոյթ աշխատութեամբ և առատաձեռն տեսչութեամբ աղքատաց, զի գտցեն զողորմութիւն ի Քրիստոսէ: - 122. Եւ նոցա ձայն բարձեալ ողորմագին պաղատանօք առ Հայրակղոս, եթէ ,,աստուածասէր և բարերար տէր, արա/գրքում՝ ապա/ ի վերայ մեր ողորմութիւն, թէպէտ և չեմք արժանի ողորմութեան,,: - 150. Եւ նոցա ձայն բարձեալ ողորմագին պաղատանօք առ Հայրակղոս, եթէ ,,աստուածասէր և բարերար տէր, արա/գրքում՝ ապա/ ի վերայ մեր ողորմութիւն, թէպէտ և չեմք արժանի ողորմութեան,,: - 150. Եւ վասն մնացելոցն որք ի քաղաքին և ի սահմանս նորա՝ ել հրաման յարքունուստ առնել ի վերայ նոցա ողորմութիւն, շինել զքաղաքն և հաստատել զամենեսին յիւրաքանչիւր կարգ: - 142. զի առ զօրաւորսն զօրաւոր դատաստան առաքէ Աստուած, իսկ խառնաղանջն ներելի ողորմութեան է: - 182. Զի մինչ այսպէս կայր աշխարհս ի տարակուսի, և ակն ունէին գթութեանցն Աստուծոյ առատանալ, որպէս սովոր է Աստուած ի բարկութեան զողորմութիւն յիշել. - 374. Լո՛ւր և զարմացի՛ր և աստանօր ևս առաւել, եթէ զիա՞րդ ողորմութիւն բարերարին՝ արդարադատ բարկութեանն յաղթէր – 28. մի՞թէ ոչ կարէին Հոռոմք սպանանել զնա, և բառնալ զթագաւորութիւնն Պարսից ի ժամանակի, իբրև ետ Աստուած զսա ի ձեռս մեր. այլ արարին ի վերայ նորա ողորմութիւն: - 144. Յայնժամ Հայրակղոս հրամայեաց առնել ի վերայ նոցա ողորմութիւն: - 150. որ ի բնաւին արդարադատութիւն բնաւորեալ՝ ողորմութեանն ընդ նմին լինիցի լծակից. – 24.

ՈՂՈՔԱԿԱՆ - առ որ յղեալ բազում անգամ պէսպէս սպառնալեօք և ողոքական բանիւք հաւանութեամբ թողուլ զօրէնս քրիստոնէութեան և հաւասարակցել այլոց ուրացողացն զՔրիստոս. – 318. զի և զբազումս պատերազմեալ պէսպէս մարտիւք, և ոչ ինչ կարացեալ ստնանել անմարտնչելի ամրոցացն և քաջութիւն արանցն որ ի նմա՝ ողոքական բանիւք կոչէր ի հաւանութիւն: - 278.

ՈՂՈՔԱՆՔ - և խոշտանգեսցես զնոսա գանիւ և բանտիւ և պէսպէս տանջանօք սպառնալեօք և ողոքանօք և ընչից պատրանօք արկցուք զնոսա ի ներքոյ կամաց թագաւորութեան մերոյ. – 196. և արդ քանզի խօսեցայ ընդ ձեզ բանիւք ողոքանաց՝ և դուք թերևս յայդ գայթակղեալ խաբեցայք և պնդեալ կայք յամառեալ: - 246. Խօսեցաւ ընդ նոսա բանիւք ողոքանօք, և ոչ լուան նմա. – 222. Սկսաւ խօսել բռնաւորն բանիւք ողոքանօք – 204.

ՈՂՈՔԵԱԼ - Եւ իմաստուն և հանճարեղ խորհրդովք, քաղցր և կակուղ բանիւք ողոքեալ զմանկագոյն Հասան, առաջի արկանելով նմա զարժանի ալեացն պատուականութիւն և զիշխանական ճոխութեան զբարձրագահութիւն և որ ինչ այդմ հետևէր. – 348.

ՈՂՈՔՈՍ - բայց կանոնեցի զանուանս ի մատենիս: Տիգրան. Աղրամելէք. Ներս. Ներսէհ. Մարոդ. Արշամ. Արշաւիր. Ասուդ: Պարսից թագաւորք. Քսերքսէս. Արտաշէս երկայնաձեռն. Դարեհ. Արտաշէս. Ողոքոս. Զարսէս. Դարեհ: Ապա Աղէքսանդրոս Փիլիպպեայ Մակեդոնացի տիեզերակալ թագաւոր: - 68.

ՈՂՋ - Առ որ զբարեկամութիւնն ողջ պահելով յղէ զնոյն Քսերքսէս և զԱրշէզ որդի նորուն քառասուն հազարաւ. – 66.

ՈՂՋԱԽՈՀ - զի ողջախոհացն քան զամենայն չար տանջանս ամօթն է. – 248.

ՈՂՋԱԽՈՀԱԲԱՐ - Յաւելում պատկանաբար գրել քեզ զարիական նահատակութենէն հանդիսական ժուժկալութեամբ ողջախոհաբար կրթութեամբ զզինուորական երկասիրութեամբն յօժարաբար դեգերել զմարզպանութեանն արդիւնաւորել անուանակոչութիւն: - 398.

ՈՂՋԱԿԷՋ - և նահապետն ողջակէզ գոհութեան Աստուծոյ մատուցանէր. – 32. ողջակէզք նոցա և պատարագ նոցա ընդունելի լիցին ի վերայ սեղանոյ իմոյ – 224.

ՈՂՋԱՆԴԱՄ - և ահա իբրև արք Ռ ի յընտրելոցն Աղուանից պատահեալ նոցա հարին զնոսա և ածին փախստեայ ի բանակն և ինքեանք դարձան ողջանդամ, և ոչ մի ոք վիրաւորեցաւ. – 282.

ՈՂՋՈՅՆ - զտարի մի ողջոյն մնալ յապականութեան երկրի. – 32. ձայն բարձեալ արտասուալից առ Դերենիկն, և զսուսեր մերկ ի ձեռին ունելով, և վաղր և սակր մի՝ ասէ. ,,որդեա՛կ իմ Դերենիկ, ողջոյն քեզ, ողջոյն քեզ, ողջոյն քեզ. ես ելի գնացի ի յաշխարհին Յունաց,,: - 320. ձայն բարձեալ արտասուալից առ Դերենիկն, և զսուսեր մերկ ի ձեռին ունելով, և վաղր և սակր մի՝ ասէ. ,,որդեա՛կ իմ Դերենիկ, ողջոյն քեզ, ողջոյն քեզ, ողջոյն քեզ. ես ելի գնացի ի յաշխարհին Յունաց,,: - 320. ձայն բարձեալ արտասուալից առ Դերենիկն, և զսուսեր մերկ ի ձեռին ունելով, և վաղր և սակր մի՝ ասէ. ,,որդեա՛կ իմ Դերենիկ, ողջոյն քեզ, ողջոյն քեզ, ողջոյն քեզ. ես ելի գնացի ի յաշխարհին Յունաց,,: - 320. որգունակ Խորէն /գրքում՝ խորէն/ և Աբրահամ խոստովանողքն Քրիստոսի ի պարսկայինն զերծեալ լլկանաց դառնագոյն կրիցն՝ զընդարձակութենէ նախարարացն Հայոց մատուցին ողջոյնս աւետաբերս՝ դարձուցանել տեառն զգերութիւն ժողովրդեան իւրոյ: - 324.

ՈՂՋՈՅՆ ՏԱԼ - և եկեալ եկաց առաջի ոսոխ վիրագին, և տուեալ ողջոյն ըստ սովորութեան նոցա: - 216. և շտապով փութանակի յասպազինէ երիվարէն ի վայր արկեալ զինքն առաջի Աղէքսանդրի, առ ոչինչ համարեալ յահռնաբար/գրքում՝յահուռնաբար/ գործսն զոր գործեաց՝ փութացաւ ետ ողջոյն արքայի և ասէ. – 68. Եւ Գուրգէն և Աշոտ առանձին միմեանց պատահեալ ետուն ողջոյն միմեանց և ուխտեցին ուխտ խաղաղութեան մինչև ցայսօր ժամանակի: - 332.

ՈՃ - Բայց արդ որպէս յառաջագոյն հատուցի զարտաքոյ պարսաւանաց զիս ներքոյ գրել, վասն ոչ ոճով զսորայս կարգել դնել ի շարի աստ զշարագրածս, վասն ոչ բաւելոյ զանչափութիւնն ի մի վայր գումարել յանմասնաւորաբար նշանակութեամբ – 308. և հրաման հարկեցուցանող ճոխութեան քո ստիպէ զմեզ, ճեպել փութալ առ գիւտն հանդիսանալ և կարգել ոճով զփափագելին յայտարարական գրով, դրոշմել կանոնել ի գիրս աստ – 12. մինչև եկից հասից ի լայնանիստ ընդարձակ ասպարէզս մատենից պատմութեանցս՝ ոճով մի ըստ միոջէ շարեցից, կարգեցից, գրեցից զախորժելին քեզ: - 74. յառաջ խաղացուցից զբանսն, արագաքայլ արշաւանօք անցեալ գնացից ընդ շարագրածս անցնիւր պատմագրաց, զազգաբանութիւնն միայն ոճով դրոշմեցից ի շարի աստ – 74. յերկրորդն հարկ է մեզ զոճն կանոնել, որ յետ Նոյի և անդր ազգացն բաժանմունք յառաջ խաղան, ըստ ցեղից ցեղից ի կարգ անկեալ աշխարհաբաժին ցեղակարգութեամբ. – 12.

ՈՃԻՐ - ընդ ակամբ հայելով, թէ գուցէ ճողոպրեալ ելանիցէ ի ձեռաց մերոց, կամ ի գիշերամարտս յանկարծ հասանիցէ ի վերայ մեր մեծամեծ ոճիրս գործիցէ: - 202.

ՈՄՆ - և այլ ոմն յարտաքին իմաստնոց ասէ, ընդ աներկիւղ ի ճանապարհ մի երթալ: - 354. նորա լուեալ էր ի պարսկէ ումեմնէ, ի ձորոյն Շատուանոյ, որ էր ընդ դահիճսն, և ի սկզբան վկայութեան մինչ ի կատարումն սրբոյն՝ ի տեղւոջ անդ հանդիպեալ լինէր – 206. ոմանք զայս ինչ, ոմանք զայն ինչ տանէին ածէին խորհրդածութիւն: - 360. Ազդ լինէր յոմանց գրումն անյայտիցն, թէ ,,այս ոմանք այսորակ երիվարօք յայս նիշ նիւս կեղթում, ի մէջ բդեղի պահարանեալ նամակ տանին ընդ կողմն Ապահունեաց. արդ զգուշացիր ճանապարհիդ,,. - 340. Ազդ լինէր յոմանց գրումն անյայտիցն, թէ ,,այս ոմանք այսորակ երիվարօք յայս նիշ նիւս կեղթում, ի մէջ բդեղի պահարանեալ նամակ տանին ընդ կողմն Ապահունեաց. արդ զգուշացիր ճանապարհիդ,,. - 340. այլ և նկարագիրս ոմանս պատկերաց զպատկեր քաջաց արականս և շքեղաւորս կենդանագրել: - 42. այլ և ոչ պահապանաց ոմանց ռամկաց որ պահիցեն զամուրքս: - 216. այլ և ոչ տարաբարձական, որպէս և /48/ արդ ևս ոմանք կարծեն, ոչ գիտելով զասացեալսն ի Տեառնէ աւազակին՝ այսօր ընդ իս իցես ի դրախտին: - 50. Այր ոմն Ջափր խրոխտ և ամբարհաւաճ. և սկսաւ եղջիւր ածել անօրէնութեամբ և գոռալով ոգորէր ընդ չորս կողմանս երկրին և նեղեալ տագնապէր զխաղաղասէրս կենօք –170. Ապա այնուհետև ոչ կարաց կալ համարձակութեամբ ի բացեայ առնել զբանակն իւր, այլ ետ զկէս զօրուն յոմն գլխաւոր և նստոյց զնա ի կողմանէ հիւսիսի կողմն. – 280. Ապա ոմանք թագաւորեցուցին զԱզարմիկ դուստր Խոսրովու, և զօրն Խոռեմայ թագաւորեցուցին զՈրմզդ ոմն ի Մծուին քաղաքի. – 156. Ապա ոմանք թագաւորեցուցին զԱզարմիկ դուստր Խոսրովու, և զօրն Խոռեմայ

պատասխանի: - 54. զի ոչ դուք նուազիցիք ի սովոյ, և ոչ հարկք արքունի կորնչիցին: - 144. զի ոչ է ժամ մեզ զներբողականօքն զդեգերումն առնել, զպատմողական զրուցատրութեան կարգաւն զանց առնել: - 78. զի ոչ էր օրէն զկանանց ազգի թիւ ազգաբանութեան շարակարգել: - 16. զի ոչ իսկ է կարողութիւն լռութեամբ ծածկել թաքուցանել անյայտ առնել զանհուն և զանբաւ վիշտս աղէտս եկեալ հասեալ մեզ: - 240. զի ոչ կամիմ զմահ մեղաւորի, որպէս բառնալ նորա ի չար ճանապարհէն և կեալ: - 30. զի ոչ կարաց զերծանել գնալ յով և կամիցի – 84. զի տեսանեմ զքեզ այր պոռտաբան, /138/ զի յանձն քո խրախուսես և ոչ յԱստուած, ի բազմութիւն զօրաց և ի փղաց զօրութիւն. – 140. Զծառայս իմ պատրես, և զզօրս աւազակաց ժողովեալ՝ ոչ տաս ինձ հանգչել, այլ հանապազ պատրաստիս ինձ ի պատերազմ, և ասես վստահանալ յԱստուածն իմ: - 146. Զոր յառաջ մատուցեալ ասացից ըստ կարգի, թէպէտ և ոչ խնդամիտ յօժարութեամբ՝ սակայն ակամայ և ի հարկէ ճառագրեցից զբացումն դրան աստուածասաստ բարկութեան ի վերայ մեր – 196. Զոր /336/ և ես ոչ արհամարհելով այպանեմ զզղջմանն և զապաշաւանացն, զի ,,որ կարդասցէ զանուն Տեառն կեցցէ,,: - 338. Զոր առ վայր մի ոչ առեալ յանձն սրբոյն Սահակայ՝ ասէ - 114. զոր ես ոչ հաւանիմ ասել ի դիւաց. – 50. զոր ի սկզբանց ոչ եղեալ՝ Նոյիւ/գրքում՝Նոցիւ/ ասի լինել: - 34. զոր մեք ոչ յաւելցուք այժմ յառասպելս նոցա յամել – 32. զոր ոչ անունկնդիր լեալ Աշոտ՝ վերջոտնեալ եկն բանակեցաւ յԱրտաշէսեան աւանին, և Յիսէ ի Վան քաղաքի: - 334. զոր ոչ անունկնդիր լեալ ընդունի զհայցելին, առնելով հարկս և պատանդս, և զբերդն Երիկաւ Հաղացովտի, զոր հանեալ էր մանազաւեցոյն ի բերկրացոյն. – 382. զոր ոչ անփոյթ արարեալ լի բարեմտութեամբ յղփացեալն Աշոտ՝ խօսի ընդ թագաւորին զխաղաղութիւն. – 382. Զոր ոչ առ յանձն լսել նոցա. – 120. զոր ոչ առ յանձն սուրբն Սահակ գրել ինչ վասն որոյ չարաբանեն զԱրտաշրէ: - 118. զոր ոչ և զմի ոք յիշխանաց ոմանց առաջնոց լուեալ ուրուք եթէ իցէ այսպիսի ինչ արարեալ. – 216. զոր ոչ է ժամ մեզ պատմել - 274. զոր ոչ է հաճոյ երկրորդել ի գիրս աստ. – 108. զոր ոչ միայն Յոյնք՝ այլ և այլազգք ոչ երևին այսուիկ նախկինք – 18. Զորոյ իմացմանց հանգամանս իմացեալ ազատացն Վասպուրականի՝ ոչ հաճոյանայր նոցա թևակոխելն Գագկայ, և զելս իրացն ջանային գտանել, առանց խռովասէր հանդարտութեան. – 360. զորոյ զպաղատանս ոչ անտես արարեալ Քրիստոսի՝ ներէ նմա հանել ի գլուխ զսուրբ քառասնորդսն, խաչակից լինելով Քրիստոսի, մինչև ի պարտ զատկին – 254. Զսա տեսեալ Մահմէտի՝ /162/ կոչեաց և յարեցոյց առ ինքն, հրամայեալ նմա գրել գիրս օրինաց ազգին իւրոյ, ձեռամբ Աբութուռաբայ իսմայէլացւոյ. քանզի ինքն ոչ գիտէր գիր և ոչ դպրութիւն: - 164. Զսա տեսեալ Մահմէտի՝ /162/ կոչեաց և յարեցոյց առ ինքն, հրամայեալ նմա գրել գիրս օրինաց ազգին իւրոյ, ձեռամբ Աբութուռաբայ իսմայէլացւոյ. քանզի ինքն ոչ գիտէր գիր և ոչ դպրութիւն: - 164. կրունկն դարձիր, թշուառական, քանզի զերջանիկ կամարարացն կղզիս կոխել ոչ կարես. զի՞ յերկինս ելանել բռնանաս,,: - 50. Ընդ որ զչարեալ նախարարքն Հայոց՝ տաղտկացան ընդ գիջանալն, և խորհեցան զոչ թագաւորելն Արտաշրի ի վերայ Հայոց. – 116. Ընդ որ ոչ հաճոյացեալ Գուրգէնայ երթալ ի Յոյնս. բայց հաւանեցուցեալ զԳրիգորն տալ զբերդն ցզօրավարն, և հաճեսցի զմիտս թագաւորին: - 302. թերևս արտաքոյ տանջանացն կայցեն մնայցեն, թէպէտ և ոչ ընդ փեսային վայելեն ի հարսանիսն: - 338. թէպէտ և ոչ համարձակեաց զամենայն բառնալ, այլ յոյժ պատկառանօք ամաչեցեալ՝ լքաւ ի ստութենէ անտի, որ յանդիմանեցաւ ի թղթոյ կայսերն, և ի ձեռն այսորիկ ցուցանէր բարեմտութիւն մեծ առ ազգս /166/ քրիստոնէից. – 168. ի սակաւուն հաւատարիմ լինելով՝ ոչ այնմ և եթ տիրեսցէ տնկոյն, այլ և բազմերջանիկ երկնայնոցն հասցէ կենաց: - 20. ի սաստ մատուցեալ զնդին իւրոյ պատերազմողացն՝ և ոչ կարաց զբորբոքեալ հնոց դէզադէզ կոխակացն սրախողխող սատակմանն ցածուցանել:- 368. իբր ոչ անգիտանալով Աստուծոյ զառ ի նոսայսն լինելոյ, այլ բնաւորեալն բարի անփոփոխ բնութեամբ մնալով ամենայնիւ՝ առ ի չարասէրն զուղիղ հատուցումնն յապաղէր. – 30. իբրև շունք համրացեալք, որ ոչ կարեն հաջել, որպէս ասէ Եսայի մարգարէ, ընդդէմ Տեառն փոխելով

զկատաղութիւն մահածին թիւնիցն սատակչական զօրութիւնն – 210. ինքն իսկ փոյթ յանձին կալեալ՝ եւ գնաց մեծաւ հոգաբարձութեամբ, լուծանել զնա ի տառապանաց արգելանին. սակայն և այնպէս ոչ կարաց գտանել զելս իրացն վտանգի առնն: - 346. Իսկ Նեբրովթ որդի Քուշայ որ ի Քամայ՝ յոյժ ուժգնագոյն ոչ միայն քան զառաջինսն ուրուականաց լինել, այլ և ոչ Հերակլի – 36. իսկ այսոքիկ ոչ այլ ումեք արարածոցս պատշաճին, բայց միայն միոյ Աստուծոյ, և նա է Արարիչ: - 54. Իսկ առաւելեալն իմաստութեամբ Աշոտ ոչ յանհոգս և յաներկիւղս կայր մնայր, այլ զգուշանալ հրամայէր ի խելս կամրջաց և յանապատս և ի կիրճս ձորոց: - 340. Իսկ Ասուդ թէպէտ և այնպէս շքեղութեամբ ճոխանայր եգիպտական և հնդկային հարստութեամբն՝ այլ յիշելով զբուն իւր սեփհական թագաւորութիւն Ասորեստանի՝ ոչ հաճոյանայր կեալ եգիպտացի գահակալութեամբն. – 70. Իսկ Գրիգորի ոչ բերելով զընդդիմակացսն նորա կատարել՝ խօսի ընդ նմա սիրով խաղաղութեան, և բաժանել զաշխաս յերկուս՝ տեղի ետուն միմեանց ի խաղաղութիւն: - 310. իսկ եթէ ընդէ՞ր ոչ ի ծննդաբանութեան՝ վասն զի ոչ իսկ ունէր զաւակ Հաբէլ: - 26. իսկ եթէ ընդէ՞ր ոչ ի ծննդաբանութեան՝ վասն զի ոչ իսկ ունէր զաւակ Հաբէլ: - 26. իսկ եթէ մի յանդամոցն կորիցէ՝ զպատահումն խեղութեան ընդունիցի, այլ ոչ ի բաց դարձցի կենդանի: - 194. Իսկ եթէ՝ մշակն մեղաց և անդրանիկն ամենայն չարեաց, որ ի յօձն բունեալ ոչ անիծաւ, որպիսիս ուսուցանէ վնասապարտութիւն օձին առ ի պատժականութեանն գտանել պարտաւորութիւն, որ ոչ յընքենէ միայն, այլ մանաւանդ ի գտողէն չարեաց: - 22. Իսկ զօրավարն Բուխայ կայր ի կոր կործանմանն, ի տարակուսանս ըմբռնեալ փղձկէր ի միտս իւր, ցնորակոծ լինէր, հնարէր ելս իրացն գտանել ի վրանայարկն փակեալ, և ոչ առնոյր դուլ և դադար: - 282. Իսկ թագաւորն Պարսից ընդունէր զպատարագսն բերեալս ի կայսերէն, /144/ և զհրեշտակսն անդրէն ոչ արձակեաց, և ոչ հրովարտակացն պատասխանի առնէր. -146. իսկ իբրև նա ըմբռնեցաւ, և գիտաց զօրավարն եթէ ոչ ոք այնուհետև յիշխանացն Հայոց մնաց, որ ոչ համագունդ ժողովեալ են առ նա՝ մերկացաւ յայնժամ զպատրուակ կեղծաւորութեանն, զոր սերմանել էր սատանայ ի սիրտ առնն: - 296. Իսկ Խուրան լուեալ վասն տիկնոջն Հայոց Հեղինէի կնոջ Աբգարու, թէ ոչ ախորժեաց կալ ի Միջագետս վասն ամբարշտին Սանատրկոյ – 80. Իսկ Խուրան ոչ կացեալ առ Սանատրկոյ գնաց յերկիրն Յունաց, առ Կեսար Տիբերիոս – 80. Իսկ Մեհուժան ծանեաւ զինչ պատահելոց էր նմա ի կայսերէ և ի նախարարացն Հայոց, ոչ յաւել դառնալ ի Հայս. – 110. Իսկ Մեհուժան ոչ թողանայր զթագաւորելն Հայոց, կուտեալ առ ինքն անհուն բազմութիւն վաշտից և դրօշուց և նշանաց որոց ոչ գոյր թիւ. – 106. իսկ մեք աստուածեղէն գրոց հետևեալք՝ ոչ յօտարաց աստի հաստատեմք զճշմարտութիւն, օ՛ն անդր. – 54. Իսկ նա անեղ է և անբաւ, և ոչ յումեքէ եղեալ. և որ անեղ՝ նոյն և անապական և որ անապական՝ նոյն և մշտնջենաւոր. – 54. իսկ նա քանզի ի հրեշտակէ ասէր ունել պատգամ և ոչ ի մարդոյ՝ յոյժ դժուարեալ ընդ իրսն՝ սպան զնա ի գաղտնիս: - 162. Իսկ նախարարացն ընդդիմաբանեալ սրբոյն Սահակայ՝ իբր ոչ զնոցայն հաստատել ախորժակս – 118. Իսկ Ներսէհ ունկնդիր եղեալ Դարէհի, բայց ոչ կարաց հաւատարմացուցանել զասացեալսն. – 82. Իսկ Նինոս և Շամիրամ տիրեն Ասիացւոց և Եգիպտացւոց հարկապահանջ հնազանդութեամբ, այլ ոչ զազգին ի բաց բառնալով զպայազատութիւն աշխարհին: - 18. Իսկ նոցա ոչ յայտնեալ զխորհուրդ չարութեանն՝ դարձուցանեն զնա անդէն, զի մի յերկբայս եղիցի գալ առ նոսա. – 226. Իսկ սա ասաց զինքն հնագունիցն լինել անժամանակ Բէլ՝/36/ ոչ հայր աստուածոց, այլ և հրամանատու Արամազդայ: - 38. սրբոցն՝ ոչ ի բաց մերժեցաւ ի կռոցն Աստղկայ անուանեալ պատկերին – 88. Իսկ սուրբն վառեալ Հոգւովն սրբով՝ յիշէ զասացեալն ի Փրկչէն, թէ ,,մի երկնչիք յայնցանէ, որ սպանանեն զմարմինն, և զոգին ոչ կարեն ապականել,, - 204. Իսկ Վռամ յերկմիտս եղեալ, ոչ կարէր կատարել զխնդիրն – 118. լռութեամբ և պատճառանօք ոչ կարէին հաճել զմիտս զօրավարին – 234. Խոստացայ վերագոյնն գրել վասն Բուխայի մասնաւորաբար զվրիժուցն հատուցանել զպարտիս, այլ ոչ զբովանդակն: - 326. Խօսեցաւ ընդ նոսա բանիւք ողոքանօք, և ոչ լուան նմա. – 222. խօսեցաւ ընդ նոսա խստութեամբ,

սակայն և յայնմանէ ոչ երկեան. – 222. ծածկել և թաքուցանել ոչ մարթէին – 234. ծփայր ի խորհուրդս իւր իբրև զծով, որ ոչ դադարէ զալիսն յուզելոյ. – 268. Կինն դարձեալ ճիչ բարձեալ ասէ. ,,վասն իմ սպաներ զտէրն իմ. ես ոչ վայել եմ քեզ կին, այլ մեծի թագաւորին,,. – 272. մանաւանդ զի ոչ բաւականանամ իմով աղքատիմաստ բանգիտութեամբ զսորայս բացայայտել զչափ ներբողականին՝ այլոց ուժեղագունից և մտահարուստ արանց թողի. – 300. Մատուցեալ առ թագաւորն Արշակ ասէ. ,,ոչ բարեօք իմացեալ առաջնոց թագաւորացն, զի ոչ կալան զտեղիս զի զայս ի բնակեալ ճոխութեան թագաւորական վայելչապէս խրախճանութեանց. – 100. Մատուցեալ առ թագաւորն Արշակ ասէ. ,,ոչ բարեօք իմացեալ առաջնոց թագաւորացն, զի ոչ կալան զտեղիս զի զայս ի բնակեալ ճոխութեան թագաւորական վայելչապէս խրախճանութեանց. – 100. մեղք մեր արարին և ոչ քաջութիւն ձեր: - 144. մեք ոչ ի բաց կամք ի սիրոյն Քրիստոսի և ոչ մեկնիմք ի կենացն յաւիտենից և ոչ լինիմք ժառանգորդ յաւիտենական տանջանացն,,: - 292. մեք ոչ ի բաց կամք ի սիրոյն Քրիստոսի և ոչ մեկնիմք ի կենացն յաւիտենից և ոչ լինիմք ժառանգորդ յաւիտենական տանջանացն,,: - 292. մի գուցէ ոչ առնելով իմ զոր խնդրեն՝ առ կայսր հատուածեալ անկանիցին նախարարքն, հարկել և զինաւորել կայսեր: - 118. Մի՞թէ և այժմ ոչ գիտիցես, թէ զամենայն երկիր զծով և զցամաք ինձ հնազանդեցուցի. արդ զԿոստանդնուպօլի՞ս միայն ոչ կարիցեմ բերել: - 146. մի՞թէ ոչ կարէին Հոռոմք սպանանել զնա, և բառնալ զթագաւորութիւնն Պարսից ի ժամանակի, իբրև ետ Աստուած զսա ի ձեռս մեր. այլ արարին ի վերայ նորա ողորմութիւն: - 144. միայն ոչ ելցէ ի ձեռաց իմոց Աշոտ հանդերձ ազգականօք իւրովք,,: - 214. մինչև եկեսցէ նմա պատասխանի ի բուն զօրավարէն, և ոչ լուան աղաչելութեան նորա. – 230. Մինչև յե՞րբ ոչ կամիցի յագենալ արեամբ. – 144. Յայնժամ իբրև գիտաց զօրավարն Հայոց և ոչ միով իւիք կարաց հաճել զմիտս նոցա, այլ միաբան ետուն հրաման ելանել ի պատերազմ – 230. Յայնժամ իբրև գիտացին երկոքին կողմանքն, եթէ ոչ գոյ հնար գտանել զելս իրացն և տալ խաղաղութիւն՝ ապա հաճեցան և հաւանեցան գրել առ թագաւորն. – 286. Յայնժամ իբրև ետես անօրէն զօրավարն Մուսէ, թէ ոչ ելին ի գլուխ խորհուրդ չարին յօժարութեանն … փութացաւ արձակել գուժկան յարքունիս, ծանուցանելով արքայի զոր ինչ գործեաց Աշոտ իշխանն Վասպուրական: - 176. Յայնմ հետէ ի տարակոյս անկեալ Երուանդ՝ ոչ քաղցրանայր նմա քուն գիշերոյ, և ոչ համեղանայր կերակուր ի քիմս նորա: - 84. Յայսմ վայրի ոչ ի վերայ միոյ ազգի և ի վերայ միոյ աշխարհի է լալումն ողբումն և կոծումն, այլ ի վերայ բոլոր ազգաց և աշխարհաց Հայաստանեայց: - 196. Յայսմ վայրի ոչ մտադիւր ախորժակօք գրեմ զճառս պատմութեանս, որ տրտմականքն, քան թէ ուրախականքն յառաջանան տիրել ինձ: - 384. յայտնի և յանդիման կացուցանել զթիւ սպանելոցն ոչ առնուին յանձն, թէ Ջ այր միայն հզօր ձեռամբ յաղթեցին ԺԵ հազարացն. – 234. Յետ այսր ամենայնի Յազկերտ թագաւորեաց ի Տիսպովն, և ունէր զթագաւորութիւնն երկիւղիւ, և ոչ հրամանատու այլ անձնապահ: - 156. Յղէ առ իշխանն, զի առանց և ոչ մի ինչ յապաղանաց փութացեալ հասցես այսր: - 348. յորմէ լսէաք խօսս մարդկան հելլենական, և որք խօսէինն ոչ տեսանէաք: - 50. յորում ոչ սակաւ քաջութիւն նահատակութեան զօրացն Հայոց, որ ի զարմանս կրթեաց զբովանդակ զօրս Պարսից բարբարոսօքն հանդերձ: - 66. Յուշ առնէր նմա զխոստումնն Աստուծոյ առ Աբրահամ և զկարգս թլփատութեանցն և զզոհիցն և զայլոցն ամենեցուն, զոր ոչ է այժմ ասել մի ըստ միոջէ. և յայս լինէր խոկումն Իսմայէլացւոցն մինչև իսպառ: - 158. նա և զմտացն ոչ սակաւ հարստանալ յայտարարական բերմամբ առ հանճարեղութիւնն զուգընթաց բողբոջմամբ կատարելագործէին. – 360. նա և կենդանականն որ ի նմա՝ ոչ ի բարի ինչ, այլ զի անհրաժեշտ չարին կալով անմահականս չարչարեսցի: - 22. Նաև յութիցն մտելոց ի տապանն ոչ ամենէքին ընտիրք երևեցան -32. Նախ առաջին՝ զի յետ աւուրց ինչ, իբր անագան իմն այլ ոչ նախապատիւ և կարևոր. և զայն արատաւոր, այլ ոչ անարատ՝ երևի յասացելոցն՝ եթէ ուղիղ մատուցանես և ուղիղ ոչ բաժանես՝ մեղար: - 24. Նախ առաջին՝ զի յետ աւուրց ինչ, իբր անագան իմն այլ ոչ նախապատիւ և կարևոր. և զայն արատաւոր,

այլ ոչ անարատ՝ երևի յասացելոցն՝ եթէ ուղիղ մատուցանես և ուղիղ ոչ բաժանես՝ մեղար: - 24. Նախ առաջին՝ զի յետ աւուրց ինչ, իբր անագան իմն այլ ոչ նախապատիւ և կարևոր. և զայն արատաւոր, այլ ոչ անարատ՝ երևի յասացելոցն՝ եթէ ուղիղ մատուցանես և ուղիղ ոչ բաժանես՝ մեղար: - 24. Նախ զի և լեզուքն շփոթեալք՝ունէին զանմիաբանութեան փոյթս, կամ թէ զի և վատութիւնք քաջաց ապիհարկեալք ոչ գրեցաւ ի մատենագրաց անտի Քաղդէացւոց – 44. Նախ յառաջ ախորժական թուէր Գագկայ անուանել զեկեղեցին փրկչական անուանակոչութեամբն մակաձայնել ոչ ուղղակի առ հաւատն մատուցեալ – 394. Նմանապէս կամ թէ ևս հրաշափառագոյն երիցս երանելիք Սողովմոն, որ Սևորդին ճանաչի, և Կախայ վերին աշխարհեցին՝ ոչ խոտորեցան ի բանս թագաւորին – 292. Նոյնպէս եթէ ոչ հաւատք սրտի և խոստովանութիւն շրթանց ամբողջ պահիցին՝ ոչ կարասցէ հետևել ճշմարիտ դաւանութեանն ի Հայր և յՈրդի և ի Հոգին սուրբ – 256. Նոյնպէս եթէ ոչ հաւատք սրտի և խոստովանութիւն շրթանց ամբողջ պահիցին՝ ոչ կարասցէ հետևել ճշմարիտ դաւանութեանն ի Հայր և յՈրդի և ի Հոգին սուրբ – 256. Նոյնպէս և զպայման ժամանակացն յանբաւ բիւրս ամաց ձգեն որ ոչ և ըստ միոյ յեղանակի հաւաստանայ առ ի ցուցումն, ոչ արեգական բերմամբ ի նոյն կէտ ամսոց և աւուրց և ոչ ըստ չորից փոխմանց առ ի յեղումն ժամանակի տարւոյն, այլ և ոչ ըստ լուսնական լրութեանն և սուզականութեան: - 18. նոյնպէս և ոչ է հնար սրտի հաւատացելոյն պղծել շրթամբք: - 258. Նորա զերկիր նկատեալ՝ ոչ ունէր նայել ի վեր, կայր կորակնեալ, ոչ ունել ոյժ պնդութեանն, զօրհասն ի վերայ իւր գուշակէր եկեալ հասեալ: - 344. Նստան երկոքին կողմանքն պահել զպահպանութիւն իւրեանց մեծաւ զգուշութեամբ, և ետուն ժամ անսալ միմեանց՝ ոչ ելանել ի պատերազմ, մինչև եկեսցեն հրեշտակքն յարքայէ, զոր առաքեցինն: - 286. շահատակելով գունակ ի խաղս գնդակաց, զսակաւաւորութիւնն իւր հազարաւորս համարելով, քանզի ոչ ունէր աւելի քան զերկու հազարս հեծելոց: - 334. Ո՞չ ածեր զմտաւ, թէ յիսկզբանացն մինչ ցայսօր ժամանակի ամենայն ուրեք ուր և գումարէր զօրն և լինէր պատերազմ և սուր և ճակատամարտ՝ երբեմն յաղթեն և երբեմն ի պարտութիւն մատնին. – 282. Ո՞չ աձէք զմտաւ և ոչ զմի ինչ ի բարեացն, զոր ձեր յինէն գտեալ. – 214. ո՞վ ոք յաշխարհակալաց ոչ մատնեցաւ ի սուր. և են իշխանք ազգաց, է ուրեք որ զօրանան, և է ուրեք որ տկարանան,,: - 282. Ոչ ամենևին /գրքում՝ամենեւին/ գոնէ փոքր մի խոտորեցան ի բանս նորա և ոչ առին յանձն ի պատրել մեծութիւն ընչից և ոչ անսացին հնազանդել փառաց աշխարհական ցանկութեանց – 264. ոչ ամուրքն պատրաստական առ ի յամրութիւն, որպէս թուէր մեզ – 216. ոչ առ յանձն Յազկերտ նստուցանել զոք ի տոհմէ Արշակունեաց թագաւորել Հայոց – 114. ոչ ասել զհուր արարած Որմզդի, այլ բնութիւն Որմզդի – 48. ոչ ևս զբանականաց բերելով խորհուրդս, այլ իբրև երամակք վայրենիք վայրաձեալք անկարգութեամբ և պէս պէս անառակութեամբք – 28. Ոչ կամեցար կամօք տալ զանձն ի ծառայութիւն մեզ, այլ տէր և թագաւոր կոչես զքեզ. զգանձն արքունի որ իմ առ քեզ է՝ ծախես, և զայդ ոչ գիտես, եթէ վաղիւ համարս տալոց ես: - 146. Ոչ կամեցար կամօք տալ զանձն ի ծառայութիւն մեզ, այլ տէր և թագաւոր կոչես զքեզ. զգանձն արքունի որ իմ առ քեզ է՝ ծախես, և զայդ ոչ գիտես, եթէ վաղիւ համարս տալոց ես: - 146. ոչ կատարելանայր առ աւարտումն հասանել խորհրդոյն. – 364. Ոչ կարծողականս ինչ ըստ առաջնոցն Բէլայ ասացելում, կամ այլոց ստուերականացն երևեցելոց երազականաց և խաբեբայ դիւաց, այլ ձեռագործ մեռելականս իսկ եցոյց ի պաշտօն – 40. ոչ յառաջանայր ի բարձր նախագահս ճոխանալ երևելեօքս և /*նստէր*/ լքանելեօքս – 94. ոչ շատացաւ ինքեան ծնելութեամբն առ ի զմայլումն հրաժարել ի կերակրոյ – 20. ոչ ստեղծեալ յումեքէ, այլ որպէս երևիդ՝ նոյնպէս էր. և կայ մնայ, և զմարդ ինքնածին: - 48. Ոչ վարկպարազի, որպէս ինձ թուի, ի ճախ է զանց առնել զխնդրոյս այսորիկ զպատճառն - 14. որ եկեալ ոչ կարգաւորաբար աշխարհախնամ հոգածութեամբ յարդարէր զկարգս աշխարհիս. – 114. որ և ոչ տեղի գերեզմանի անգամ երևեցաւ նոցա մինչև ցայսօր: - 402. որ յետուստ՝ մոլի բռնաւոր, որ և զՏրովական դժուարամարտիկ իրս քաջապէս և կարողաբար վանեալ՝ աստուած ի

նոցանէ ասացաւ, նա և ոչ աշխարհակալին Աղէքսանդրի Մակեդոնացւոյ - 36. որ ոչ առին ի միտ լսել զպատուէր սրբոց նախահարցն: - 26. որ ոչ եղև ժառանգորդ հայրենեաց հաւատոցն որ ի Քրիստոս. – 80. որ ոչ և փոքր մի խոտորեցաւ ի բանս բռնաւորին, վասն սիրոյն Քրիստոսի: - 318. որ ոչ հաւանեցաւ մտանել յանմիտ խորհուրդ շինութեան աշտարակին. – 40. Որբոց իրաւունս ոչ առնեն, և դատաստանի այրեաց ունկն ոչ դնեն,,: - 182. որոց դատաստանն ի բնէ ոչ դատարկանայ ըստ գրեցելումն – 52. Որոց ոչ զպատաղումն բերելով՝ գայ զօրու Աւշնի հասանէ ի վերայ նոցա: - 362. Որում ոչ անհնազանդ գտեալ՝ իմաստնախորհ զօրութեամբ ելանէ յամրոցացն: - 316. Որում ոչ կամեցեալ լսել Խոսրովայ՝ ասէ. իմ է թագաւորութիւնն այն և ես զորդին Մուրկայ նստուցի թագաւոր - 142. Որպէս և Դաւիթ ասէ, ,,պատրաստեցայ և ոչ խռովեցայ,,. – 354. որպէս թէ ոչ կամի զթագաւորելն Պարսից և հարկել Հայոց և զօրավարել, այլ զթագաւորելն Յունաց ցանկայ գտանել. – 118. որք գնացին առ Վռամ, և ոչ առ Թէոդոս բարեպաշտ և զուգափառ քրիստոնեայ թագաւոր, զեղխեցան ամբարշտաբար առանց խորհրդոց: - 118. որք ի դադարել հալածանացն՝ զամենայն ի զոհելոյ կռոցն ոչ ընդունէր զապաշխարողսն: - 256. որք ոչ առին յանձն միաբանել ընդ գունդս ուրացողացն. – 264. որք ոչ արժանաւորք ինչ բարի յիշատակաց: - 108. որք ոչ ըստ օրինի եկեղեցականաց կրօնից զվարսն յարմարէին, այլ ընդ մարզպանին Մշկանայ լծակցեալ հոգալ զաշխարհիս: - 118. ոչ վրիպէին ի մազոյ, որպէս և յայնժամ յԻսրայէլի էին արք զօրաւորք, գունդք տանն Եփրեմի և Բենիամինի: - 200. ուստի յայտ է թէ և անմարմին է, զի մարմինն՝ բովանդակեալ զօրութիւն ունի, և ոչ կարէ հանապազ շարժել զերկին կարգաւորաբար. – 54. Չարախորհուրդն հայր Մարդպետ որդին սատանայի ոչ բաւականացաւ չարեօք մարդկան – 100. Չորրորդ՝ զի զեղբայր և ոչ զօտար ոք, զոր ոչ երկիւղն Աստուծոյ և ոչ գութ բնութեան մեղկացոյց լքմամբ զձեռս արիւնարբու գազանին: - 24. ոչ պիտոյացեալ եկամուտ լուսոյ, որով նսեմասցի առ ի հասանել երեկոյին, ոչ ապաժամանութիւն արեգական առ ի մերժել զմութ գիշերի լուսազգեստ ստեղծուածոյն, որ յետ առաջնոցն կարգի և դասու՝ զերկրորդն փոխանորդեցաւ վիճակ, ոչ կերակուր հոսանուտ առ ի լրութիւն տարաբարձ ունակութեանց անապականին, որ դոյզն ինչ փոքրագոյն քան զիրեշտակս գոլ. – 20. սակայն և յայնմ ոչ ետուն հրաման զօրուն մի ելանել ի պատերազմ: - 230. սմա ծանօթացեալ և սիրողացեալ ժամանակաւ ուսուցանէր բազում ինչ նմա և յոլովագոյնս զինոց կտակարանաց, և եթէ ոչ գոյ բնութեամբ որդի Աստուծոյ: - 158. սուրբքն ոչ եթէ զերևելի տեղիս ախորժեն, զի թէ ոչ այսպէս, ո՞չ նոքա զնեղ և զանձուկ կեանս կան մահու չափ,,: - 100. Սոքա հրամանաւ Վահանայ Արծրունւոյ փոյթ յանձին կալեալ՝ խուզել քննել կարգել ի համառօտ բանս զաճմունս ազգացն անցելոց ոչ կարի ինչ ընդ երկայնագոյնս աշխատասիրաբար անցանել պատմութիւնս: - 74. սրբոյ Աւետարանին հետազօտեալ կրթականին՝ մի բազմել յառաջին բարձին, ոչ եթէ ոչ ունէր նազելի և բարձրագահ պատիւս ի մէջ մեծ նախարարութեանցն Հայոց – 94. վասն զի իմ ոչ բերեալ ոյժ առ այսքան եկեալ հասեալ աղետիցս զդամբանականն երգել երգս: - 352. Վասն մարմնաւորացն այնչափ նահատակեցայ, որպէս գիտացերն և որպէս այժմ լսես յինէն, վասն Քրիստոսի և վասն յաւիտենական կենացն ո՞չ մեռանիցիմ, կամ արդեօք ի քէ՞ն երկնչիցիմ. քա՛ւ լիցի. – 296. Տե՛ս, ով սիրելի, զի թշնամանելն՝ լեզուին բարբառ է, և ոչ ներէ ստեղծիչն լեզուին զուրացութիւնն բարբառել, զի ոչ եթէ այլ ոք է որ ստեղծ զլեզուն, և այլ ոք է որ արար զսիրտն. – 258. տես քեզէն և ծանի՛ր, զի ոչ գոյ վնաս իմ յիրիդ յայդմիկ կամ կարողութիւն արձակել զքեզ,,: - 238. տուք ի մեզ զերկիրդ մեր խաղաղութեամբ, այլապ թէ ոչ առցուք պատերազմաւ, ոչ միայն զայդ, այլ և զայլ ևս բազումս,,: - 162. քանզի բանականն յերիս յայսոսիկ տեսանի, ի հրեշտակս, ի մարդիկ և ի դևս. այլ ոչ ի հաւս կամ ի յայլ կենդանիս: - 52. քանզի արդարև զգալի և շօշափելի էր դրախտն, և ոչ իմանալի կամ ի մէջ երկուց աշխարհաց – 48. քանզի էին Ադամայ և այլ ուստերք և դստերք բազումք, այլ ոչ արժանաժառանգք պայազատութեան աշխարհահայր լինելոյ. – 24. քանզի յետ ջրհեղեղին ոչ երևի լինել դարձեալ որդիս նահապետին. – 30. Քանզի յոյժ պատկառ կայր

ի պաշտօնատարութիւն հայրապետին իշխանն Տարունոյ, և նա սաստիկս հոգայր վասն նորա, թէպէտ ոչ օգտէր յիրին յայնմիկ: - 346. քանզի նա խաբկանօք առն մոգի և կախարդի ասաց լինել որդի Ամովնայ և Արամազդայ, այլ ոչ ուրացաւ մահկանացու զոլ: - 36. քանզի ոչ էր օրէն թագաւորացն և օրինադրացն զկանանց ազգի թիւ ազգաբանութեան շարել, բայց միայն ըստ ժամանակագրութեանն կանոնի, որպէս և յԻսրայէլի զԳոթողիայ, և յԵգիպտոս զԿղէոպատրեայ դուստր Պտղոմեայ Դիոնիսեայ: - 16. Քանզի ոչ կարացեալ իմանալ զդէմ փախստէի Արտաշէսի, և այն ի տեսչութենէ Աստուծոյ այնպէս պահեալ լինէր – 84. Քանզի ոչ յարմարական՝ բարւոյն և չարին ի միասին առկայանալ, և ոչ լուսոյն ընդ խաւարի, և կամ զի առողջութեանն ընդ հիւանդութեան. – 258. Քանզի ոչ յարմարական՝ բարւոյն և չարին ի միասին առկայանալ, և ոչ լուսոյն ընդ խաւարի, և կամ զի առողջութեանն ընդ հիւանդութեան. – 258. քանզի ոչինչ վնաս գիտէին զանձանց և ոչ մի ինչ իրս մեծ կամ փոքր. – 98. Քրիստոնեայ եմ և մեռանիմ վասն Քրիստոսի, և մկրտիմ ի Հայր և ի յՈրդի և ի Հոգին սուրբ, ոչ ջրով, այլ իմով արեամբ: - 222. այլ և ոչ հուր մեկնեալ յամպոյ, ապա թէ ոչ՝ հարկ էր և ի գիշերի երևել. – 32.

ՈՉ ԱՊԱՔԷՆ – ո՞չ ապաքէն ըստ այնմ և ելքն ի նմանէ լինիցին շահ ի փառս Բաբելացւոցն ըստ կարծեաց նոցա: - 38. Ո՞չ ապաքէն դու իսկ տեսանէիր, զի մտանէի և ելանէի ի սուրբ եկեղեցին ընդ ամենայն հաւատացեալսն – 222. ո՞չ ապաքէն տունդ Սասանայ եբարձ զերկիր ձեր և զտէրութիւնդ, և դուք դիմեալ գայք ի վերայ իմ: - 138.

ՈՉ ԵԹԷ - Զայս ոչ եթէ սակս ուրացութեան ինչ ամբաստան լինի զինքենէ, կամ վասն ժողովոցն, այլ զի ոչ յանդիմանեցին զթագաւորն, որ արտաքոյ օրինացն ամբարշտէր. – 258. զի ոչ եթէ ատեաց զանօրէնն իբրև զանամօթն. զի քան զմեղանչելն առաւել չար այն է՝ չունել զինքն ընդ յանցաւորսն – 248. զի ոչ եթէ ըստ հասարակաց սահմանաւոր մահու է, այլ ի վերայ սուրբ եկեղեցւոյ և ժողովրդեան Աստուծոյ,,: - 276. սուրբքն ոչ եթէ զերևելի տեղիս ախորժեն, զի թէ ոչ այսպէս, ո՞չ նոքա զնեղ և զանձուկ կեանս կան մահու չափ,,: - 100. սրբոյ Աւետարանին հետազօտեալ կրթականին՝ մի բազմել յառաջին բարձին, ոչ եթէ ոչ ունէր նազելի և բարձրագահ պատիւս ի մէջ մեծ նախարարութեանցն Հայոց – 94. Տե՛ս, ով սիրելի, զի թշնամանելն՝ լեզուին բարբառ է, և ոչ ներէ ստեղծիչն լեզուին զուրացութիւնն բարբառել, զի ոչ եթէ այլ ոք է որ ստեղծ զլեզուն, և այլ ոք է որ արար զսիրտն. – 258. քանզի ոչ եթէ մարմին ինքնաշարժ է, այլ հոգին է ինքնաշարժ. – 54.

ՈՉ ԵՐԲԷՔ - Այլ չարիմացն հայր կոչեցեալ Մարդպետ և բնաւորեալ խորհրդոցն չարին ոչ երբէք դադարէր: - 98. Բայց մեք քանզի ոչ երբէք ստունգանեցաք հրամանի թագաւորին և ոչ խափանիչ գտաք հարկաց արքունի, իբրև զապստամբս և զանհնազանդս և զստահակս ի ծառայութենէ տէրանց – 178. Իսկ զկողմանս արևելից Պարս այնքան ունելով Զրադաշտին՝ յայնմ հետէ ոչ երբէք հարկէր Ասորեստանեայց. – 44. քանզի սուրբ նահապետացն տասանց բնաւ ոչ երբէք ումեք երևի ասել ի Մէջերկրայս ունել բնակութիւն: - 30.

ՈՉ ԵՒՍ - գուցէ ակամայ երթալովն, և նեղիչն աշխատելով ի պահելն՝ յաճախեսցէ ի վնաս և ի քէն, և օճան բարւոյ յայնմ հետէ ոչ ևս ումեք հասցէ գտանել,,: - 216. և այլ ոչ ևս այնուհետև համարձակ յանձն առնոյր մտանել ընդ աշխարհս Վասպուրական: - 336. և այլ ոչ ևս յաւելին ելանել ի վերայ աշխարհիս ասպատակաւորք հինիցն պարսկայնոցն: - 400. և ոչ ևս այնուհետև ինչ ոչ տեսանէաք, ոչ հաւ և ոչ գազան, բայց զերկին և զերկիր: - 50. Եւ ոչ ևս այնուհետև համարձակ ելանէին և մտանէին յաշխարհս Վասպուրական զօրքն Տաճկաց. զի անկաւ ահ սաստիկ ի վերայ նոցա: - 308. Եւ տեսեալ զայնպիսի կորուստ՝ ոչ ևս համարձակեցան ի նոյն գործ, այլ տարածեալ կալան զերկիրն ամենայն: - 146. զի ի գնալ Արտաշէսի յայսմ տեղւոջէ՝ ոչ ևս յաւել ձեռն Երուանդայ տագնապել զնա – 88. զի ոչ ևս ունիմ շատ խօսիլ ընդ քեզ,,: - 290. և խոստացեալ պատարագընկալին՝ ոչ ևս զնոյն հատուցանել երկրի ուխտ յաւիտենական հաստատեալ՝ զաղեղն իմ եդից յամպս, որ է ծիածանդ – 32.

ՈՉ ԹԷ - այլ ըստ օրինակի ասացելումն ի Տեառնէ Մովսէսիւ՝ առ ի յանդիմանութիւն արտաքնոցն, զճարպ մեռելոտւոյ տանել ի գործ ինչ արտաքին, այլ ոչ թէ ի կերակուր: - 54. Զի ոչ թէ վասն աստուածպաշտութեան ձերոյ կամ բարեգործութեան և սրբութեան արար Աստուած զայս այսպէս, այլ վասն մերոյ ամբարշտութեան ի Տէր. – 144. այլ այսքիկ փոյթք յօժարութեան առ ի յայլոց ասացելոց նախագունից տեղեկութիւն, և ոչ ինքեամբ և կամ նովաւ գտանել զինարս գիւտի գրոց, թէպէտ և յառաջ քան զնա, այլ ոչ թէ և քան զԲաբելացւոցն իրս – 18.

ՈՉԻՆՉ - այլ և ամենայն թագաւորք Ասորեստանեայց որդի ի հօրէ առեալ զիշխանութիւն ունէին, ոչինչ արժանի յիշատակի ուրուք գործեալ – 56. բայց ոչինչ ձեռնհաս լինէր օգնել նոցա վասն դառն հրամանի ամբարիշտ թագաւորին. – 218. և խորհեցաւ սա զմիտս զայս, եթէ որ առ վտանգի նեղութեան դարձցի ոք առ ի պաշտօն կոռոցն՝ ոչինչ է, եթէ սիրտ իւր ուղիղ պահեսցէ զհաւատսն Քրիստոսի: - 256. և խորհուրդք խորհրդականացս յոչինչ համարեալ լինէին ի գործս մարտից և յայլ կարգս հոգաբարձութեան աշխարհիս. – 194. և հեծելագունդ զօրացն Կայսկին զկնի նորա, զգացեալ զպատճառ ելիցն նորա ի բանակէն. որում ոչինչ գամագիտ կարացեալ լինել՝ դարձան ամօթալից կորակնեալք, յանգէտս համարեալ զինչ գործեցինն: - 342. և նա արհամարհեալ յոչինչ համարեալ զզեկուցմանն, զամբարտաւանս բարբառեալ. – 330. և անարգէ զկրակ և առ ոչինչ համարել զարեգակն. – 104. Եւ բազում այն էր որ մարտիրոսական ճգնութեամբ վկայեցին, քան որք դրդուեցան, առ ոչինչ համարելով զյափշտակութիւն ընչից և ստացուածոց և զմահս դառնագոյնս: - 124. Եւ են գազանաբարոյք, արիւնարբուք, առ ոչինչ համարելով զսպանումն եղբարց հարազատաց, նա և զանձանց նս. – 192. և զզօրս լեռնակողմանն ընդ իւրեանս ածելով, ոչինչ աւելի քան զհազար և երկերիւր այր – 126. և ի մտանելն առաջի զօրավարին՝ ոչինչ փոյթ արարեալ զվնասուցն և զհարուածոց զօրացն, իբրև զապստամբէ ինչ ամբաստանել. – 236. Եւ իբրև եհաս առ թագաւորն որ ինչ գործեցաւն՝ ոչինչ գոյր տեղի այլ պատասխանւոյ. բայց ասէ, ,,արժանապէս այն գործ նոյն գործեցաւ,,: - 370. Եւ կալեալ զդեսպանսն հանին զթուղթսն, և զարսն պահեցին ի զգուշութեան, ոչինչ ումեք զգուշացուցանելով որ ինչ եղևն: - 340. և շտապով փութանակի յասպազինէ երիվարէն ի վայր արկեալ զինքն առաջի Աղէքսանդրի, առ ոչինչ համարեալ յահռնաբար /գրքում՝ յահռւռնաբար/ գործսն զոր գործեաց՝ փութացաւ ետ ողջոյն արքայի և ասէ. – 68. և ոչ քաղցր թուէր նմա քուն զիշերոյն, և փափկութիւն տունջեան յոչինչ համարեալ լինէր – 242 Եւ ոչինչ ամենևին զչարացաւ ընդ նմա Բուխայ և ոչ յիշեաց զգործսն զոր գործեաց, և ոչ տրտմեցոյց զերեսս իւր. – 288. Եւ քանզի ոչինչ հաղորդութիւն ունէր Յովսէփ առ ծնունդն Քրիստոսի՝ մտանէ յազգահամարն փոխանակ Մարիամու կնոջ իւրոյ -16. Եւ քանզի վավաշոտ մոլորութեամբ վարելով ոչինչ փոյթ զորդւոց իւրոց առնէր – 44. Իսկ իշխանն Բագարատ … ել գնաց անխիղճ համարձակութեամբ, տիրասէր խորհրդովք, կատարել զսպաս զինուորութեան, ըստ աստուածեղէն պատուիրանին և ըստ թագաւորական հրամանին, զհետ եկելոյ կոչնականացն, ոչինչ իմացեալ զպատրանս խաբէութեան նորա, որով վրիպեացն: - 186. իսկ կինն ճիչ բարձեալ ասէ. ,,առ թագաւորն հասցէ գոյժ իմ,, , շրջելով ընդ բանակն հոլանի, զոր չէր օրէն տաճկական ազգի կանանց, բայց ոչինչ օգնեաց. – 272. Իսկ Սմբատ որ և Ապլաբաս սպարապետն Հայոց, իբրև գիտաց թէ ոչինչ օգուտ բերէ արտաքոյ հրամանացն նորա լինել՝ փութացաւ եկն առ նա, և ընկալեալ ի նմանէ՝ բնակեաց ինքն և իւրքն հանդերձ իւրաքանչիւր կալուածովք առանց կասկածանաց. – 270. նազելով և սիգալով, իբրև զկորիւն առիւծու ճեմէր, անկասկածելի մնալով, առ ոչինչ համարելով զհէնն եկեալ հասեալ, փակեալ շուրջ զնովաւ. – 210. Նոյնժամայն դարձուցեալ զերասանակ երիվարին ի պատերազմ յառաջանալ, և անդ բազում արիութիւն նահատակութեան ցուցեալ, սակայն ոչինչ օգուտ բերեալ: - 368. Ոչինչ զանգիտեալ մեր մինչ ցայս վայր, պատմել զվտանգս և զնենգութիւնս եկեալ հասեալ ի վերայ մեր ի թշնամեացն ճշմարտութեանն. – 194. քանզի ոչինչ ունէր զկարծիս դրժանաց

առ թագաւորն և առ զօրս նորա – 186. քանզի ոչինչ վնաս գիտէին զանձանց և ոչ մի ինչ իրս մեծ կամ փոքր. – 98.

ՈՉ ԻՆՉ - Ասաց Բագարատ յուրացութեանն իւրում, թէ առ վտանգի նեղութեանցն՝ ուրացութիւնն ոչ ինչ վնասէ, եթէ ի սրտին գաղտնի պահէ զխոստովանութիւնն հաւատոց: - 254. և ոչ ինչ փոյթ եղև ումեք հոգալ զուստեք արշաւանս և զգերփանս - 96. Բայց Դերենիկն կալեալ զնա պահէ ի զգուշութեան, ոչ ինչ ստնանել նմա, բաց ի կապանացն յորս արկեալ էր զնա, ըստ հատուցմանն բարւոյ. առ ձեռն պատրաստ կշռեաց նմա և օրհնեցաւ ի սրբոյն Զաքարիայէ: - 320. բայց զտոհմէն Արծրունեաց ոչ ինչ այլ իմանալ կարացաք, թէ զինչ գործ գործեալ նոցա, բայց միայն զխաղաղասէր կեանս կեալ առ թագաւորն և առ նախարարսն – 96. Բայց յետ բազում պատերազմացն խորամանկ խաբէութեամբ կոչէ առ ինքն Շապուհ զԱրշակ ի դէմս սիրոյ խաղաղութեան, ոչ ինչ յիշատակ զչարեացն գործելոց ի մէջ առնելով. – 102. և ետուն պատերազմ անդ զաւուրս Լ, և ոչ ինչ կարացին ստնանել. – 362. և եկեալ կացին մօտ առ Կանգուար բերդ, և պատերազմեալ զամիսս Բ՝ ոչ ինչ գործ ի գլուխ ելեալ ըստ ախորժման. – 332. և ես ամայացեալ ոչ ինչ փոյթ առնէի, միայն ձեզ զլիանալն սիրելով առ այսոքիւք. – 216. և կացեալ զաւուրս բազումս անթաղ՝ և ոչ ինչ ամենևին արատեցան մարմինք սրբոցն, և ոչ գոյր հոտ ժախու ի վերայ նոցա: - 268. Զի յառաջնումն ոչ ինչ գոյր հոգ ինչ զբաղմանց, և ոչ մի ինչ ըստ աշխարհաշէն /90/ խնամակալութեանց, կամ պատերազմասէր աշխատութեանց – 92. զի եթէ երկոքեան միով բարեպաշտութեամբ ոչ վառեսցին՝ ոչ ինչ օգուտ ի միոջէն բերցի: - 256. զի և զբազումս պատերազմեալ պէսպէս մարտիւք, և ոչ ինչ կարացեալ ստնանել անմարտնչելի ամրոցացն և քաջութիւն արանցն որ ի նմա՝ ողոքական բանիւք կոչէր ի հաւանութիւն: - 278. Թէպէտ և ոչ ինչ նպաստաւորութիւն առաջիկայ տեսութեանս ունին հետագային ցոյցք որ վասն Բէլայ և նոցուն իսկ Քաղդէացւոց դիւցազնական զառանցութեանցն – 36. Իսկ թագաւորն գիտացեալ զհաստատուն և զանդրդուելի միտս նոցա՝ ոչ ինչ փոյթ արարեալ թողու ի կամս կամաց իւրեանց, կեալ որպէս հաճոյ թուի: - 132. ի դառնալ գրոցն ի յաշխարհն Մոկաց՝ ոչ ինչ ումեք փոյթ վասն այն լինելով, կարծել՝ վարդապետին զայս այսպէս կանոնեալ. – 130 Իսկ իբրև գիտաց բռնաւորն, եթէ չելին ի գլուխ կարծիքն զոր ի վերայ սրբոցն խորհեցաւ, որպէս գրեալ է, ,,կարծողն և արհամարհողն այր ամբարտաւան է և ոչ ինչ վճարեսցէ,,- 264. Իսկ իբրև ծանուցաւ նմա անլոյծ միաբանութիւն ուխտի ընդ միմեանս Աշոտոյ և Բագարատայ՝ ոչ ինչ յայտնեաց զխորհուրդս չարութեանն, զոր խորհեալ էին ի վերայ նոցա.– 172. մանաւանդ յառաջագոյն պատրաստեալ պատսպարեաց թղթովք և պատարագօք առ թագաւորն և առ զօրավարն գնալ ըստ հրամանաց նոցա, և ոչ ինչ արտաքոյ կամաց նոցա խորհել կամ գործել ինչ: - 270. ոչ ինչ ձեռնամուխ լինելով ի նա, վասն կասկածանաց Պարսից արքային, միայն սպառնական խոստաբանութեամբ յղէ առ նա պատգամս: - 130. ոչ ինչ փոյթ զբազմացուցանելով՝ հեշտասէր և անպատերազմասէր մտօք վարելով կեայր ի խաղաղութեան: - 44.

ՈՉ ՄԻԱՅՆ - ,,ոչ միայն զի չես աստուած՝ այլ շուն ես դու, և երամակ շանց՝ որ զկնի քո տողեալ սահին,,: - 40 . այլ Մկրտչին հրամայի՝ մի ըմպել գինի և օղի. սա ոչ միայն գինով ոչ զկծէր, այլ և ոչ ջրով զծարաւոյն պէտսն կատարէր, սակաւապետութեամբ ընդովք թրջելովք, և խստավայել բանջարովք առ քաղցն վայելելով: - 376. Բայց ոչ միայն քաջքն Հայոց նահատակեցան ի մեծ պատերազմին այլ և անմարմին զօրք երկնաւորք մարտակից եղեն զնդին Հայոց. – 232. Եւ ամենայն մեծամեծքն հանդերձ խառնաղանճ /240/ ամբոխիւն դռոթ տուեալ, ոչ միայն ըստ հրամանի թագաւորին ելանել զհետ աղաղակի փողոյն և արքունի կոչնականացն՝ այլ փութացան տեսանել, թէ ո՛վ ոք և ո՛րպիսիք են սոքա – 242. զի թէպէտ դառնալով դարձան յայտնապէս յերկրպագութիւնն Քրիստոսի Աստուծոյ մերոյ՝ այլ զկանոնական սահմանադրութիւնսն ոչ բերելով ուղղակի, ոչ միայն Աշոտ, այլ և ամենայն իշխանքն Հայոց, որք գերադարձքն եղեն. – 336. Զի ոչ միայն առ շինութիւնն՝ այլ և յարիւն և յապաժոյժ առաքինաբար զանձինս եդեալ ի վերայ խաշանցն մեռանել

իբրև զքաջ հովիւ – 392. զոր ոչ միայն Յոյնք՝ այլ և այլազգք ոչ երևին այսուիկ նախկինք – 18. Իսկ Նեբրովթ որդի Քուշայ որ ի Քամայ՝ յոյժ ուժգնագոյն ոչ միայն քան զառաջինսն ուրուականաց լինել, այլ և ոչ Հերակլի – 36. Իսկ Արտաշիր յանդգնագոյնս և առանց պատկառանաց զհետ ամօթալից ախտին գիջութեան իգամոլ ցանկութեանցն ընթացեալ՝ ոչ միայն ի գիշերի այլ և ի տունջեան յանդիման արեգական, անխտիր կատարէր զցանկականն, զանասնական գիջութեամբքն զանցուցեալ: - 116 Իսկ ի վերայ բազում հինից եկելոց ի վերայ Գուրգինի և սաստիկ պատերազմացն զոր պատերազմեցաւ յաղթող նահատակութեամբ. ոչ միայն յարտաքին թշնամեացն որ շուրջանակի պաշարէին, բազում այն էր որ ի ներքին ընտանեաց հարազատաց, ազգականաց դրժողաց, ուխտազանցաց, ստոց և ստերդմանց յուզէին աղմուկք: - 308. ոչ միայն ի տեսիլ խաղտման աչաց և զուարճումն հոտոտելեաց՝ այլ և ի կազմութիւն դեղոյ բժշկական հնարագիւտ իմաստասիրութեանց կազմեալ Ասկղեպեայ վարժմամբն: - 86. տուք ի մեզ զերկիրդ մեր խաղաղութեամբ, ապա թէ ոչ առցուք պատերազմաւ, ոչ միայն զայդ, այլ և զայլ ևս բազումս,,: - 162. Եւ յայսմ պատերազմի ոչ միայն երանելի եպիսկոպոսն և ճգնաւոր քահանայն մարտակից էին տեառն Գրիգորի, այլ և զօրք հրեղինաց – 252. Քանզի այնչափ թանձրացաւ յաճախութիւն սովոյն՝ որ ոչ միայն անսուրբ կենդանիս ուտէին ըստ սրբութեան կարգի, այլ և զսարսափելի և զդժնդակ, որ զգազանայինն անցուցանէ զվայրենամտութիւնն, զմարմինս մեռելոց՝ առանց խղճելոյ ուտէին, ի գերեզմանացն հանեալ զհետ միոյ և երկուց ամաց թաղելոյ: - 374.

ՈՉ ՈՒՍՏԵՔ - Եւ դադարումն լինէր յաւուրս սորա հինից և ասպատակաց ի վերայ երկրիս, և քաջավայելչապէս բարեձևանայր կարգ սրբոյ եկեղեցւոյ Քրիստոսի, և երկիւղ և կասկած և ոչ ուստեք: - 338. Մինչդեռ այսպէս յանդորրութեան կեանս յապահովանայր երկիս Հայոց, և ոչ ուստեք գոյր վտանգ կրել – 92.

ՈՉ ՈՒՐԵՔ - և ոչ ուրեք գտանէր հնար ելիցն ի վտանգաւոր արգելանէն, թէպէտ և բազմաց հոգ յանձին կալեալ վասն առն պատուականի – 346.

ՈՉ ՈՔ - Այլ և զայս ևս եդին առաջի թագաւորին աղերսական մեղադրանս, եթէ ընդէ՞ր իբրև ժողովն գումարէր՝ ոչ զոք ի Հայոց հարկաւոր համարեցայք կոչել ի միաբանութիւն հաւատոց: - 132. ,,ի սկզբան թագաւորութեան նախնեաց մերոց, յորժամ ետ Աստուած զաթոռ բազում թագաւորաց ի ձեռս նոցա, և մինչ առ մեզ հասեալ՝ ոչ ոք զօրեաց կալ ընդդէմ մեր, ոչ ի հեռաւոր աշխարհաց և ոչ ի մերձաւորաց: - 198. անտի և անդ ոչ ոք զօրէր Զրուանայ թագաւորել. բայց միայն կին մի անուանի Դիոնիսեայ, հարստայեղց վավաշոտ հրամանի բարուք. – 16. Բայց Գուրգէն թէպէտ և գտանէր զնենգիչսն իւր՝ ոչ ումեք զվոխարէն չարին հատուցանէր. – 310. Բայց քանզի ամենայնիւ ամենայն ուրեք ոչ ոք զօրեաց կալ ընդդէմ նորա յամենայն գործս զոր և կամք իւր ախորժէին՝ սկսաւ ձեռնամուխ լինել կարգաւ ընդ բոլոր աշխարհս արևելեայս – 274. Բայց քանզի մեր ոչ ոք յայնժամ հանդիպէր ի պատասխանատրութիւնս երանելոյն՝ և ոչ գրել արժանի համարեցաք: - 206. Բայց քանզի յերկնուստ էր հասեալ վտանգն, և աստուածառաք էր բարկութիւնն՝ և ոչ ոք զօրեաց և եկաց ընդդէմ նորա ելանել ի պատերազմ, այլ որ եհարն՝ նոյն և բժշկեաց: - 374. Բայց քանզի ոչ ոք յայնժամ ընդ գրով զայնոսիկ ներքադրեաց, որպէս օրէն է թագաւորաց՝ և ոչ մեք երկրորդել պատկան վարկաք: - 246. Եւ հատաւ քուն յաչաց նորա, և ոչ ոք մտանէր և ելանէր առ նա զաւուրս Ժ, զի եմուտ ի սենեակ ամօթալի երեսօք. – 282. և ոչ ոք մնայր գէթ երկու ի միասին. – 194. և եբարձ զամենայն արս զօրութեանց, և ոչ ոք էր այնուհետև որ կարէր կալ ի կայի իւրում ունել զդէմ նորա – 238. և զանուն քաջութեան քո քեզէն կորուսանես, որով ամենայն աշխարհ զարհուրեալ դողաց և ոչ ոք եկաց ընդդէմ քո – 282. Եւ նուազեալ ազգին Արծրունեաց ոչ ոք մնաց, բայց միայն մանուկ մի Համամ անուն, որդի Արշաւիրի ծերոյ եղբօր Խուրէնայ, որ կայր ի դրան արքունի – 90. Եւ ոչ ոք գտանէր ամենևին ի կողմանէ /174/ թշնամեացն որ կարէր կալ ընդդէմ նոցա, և ոչ մի ոք. – 176. և ոչ ոք կարէր կալ յակաստանի, ունել զժառանգութիւն հայրենի – 94. և ոչ ոք ամենևին իշխէր ելանել արտաքոյ կամաց ձեռին նորա ի մեծամեծաց մինչև ի փոքունս. –

200. Եւ ոչ ոք այսքան աղէտս տարակուսանս հասոյց ի վերայ մեր և ի վերայ ազգի և զօրաց և զօրավարաց մերոց, որչափ գործեաց Աշոտ իշխան Վասպուրական: - 198. և ոչ ոք ի նոցանէ նուազագոյն քան Զ-ի ամ կալաւ զիշխանութիւն. – 56. և ոչ ոք կարէր երգել զօրհնութիւն սաղմոսացն և կամ լսել ի գթալից արտասուաց ժողովրդեանն միանգամայն և յայնչափ խնդութենէն: - 154. Եւ քանզի վախճանեալ էր Համազասպ Մամիկոնեան … ոչ ոք այնուհետև առաջնորդէր Հայոց աշխարհիս. – 116. զի ասեն, թէ նոքա ի միջոյ բառնայցեն՝ ոչ ոք կարասցէ կալ ի կայի իւրում ունել զդէմ մեր: - 184. զի մի ամենևին ոք կայցէ յակաստանի, մանաւանդ զի ոչ ոք տևեաց ընդդիմանալ ձեռին նորա. – 296. զի ոչ ումեք զայդ յանձին կալաւ Աղէքսանդրոս՝ կարծել տիրել ումեք երկրի բաց յԱղէքսանդրէ: - 70. զի ոչ ոք զօրեաց կալ ընդդէմ նորա: - 262. իսկ իբրև նա ըմբռնեցաւ, և գիտաց զօրավարն եթէ ոչ ոք այնուհետև յիշխանացն Հայոց մնաց, որ ոչ համագունդ ժողովեալ են առ նա՝ մերկացաւ յայնժամ զպատրուակ կեղծաւորութեանն, զոր սերմանել էր սատանայ ի սիրտ առնն: - 296. որում անհնար է երկոցունց ի միասին բնակել, և ոչ ոք կարէ երկուց տերանց ծառայել, որպէս ասաց Փրկիչն – 248. որպէս և գրեալ է, թէ ,,փակիցէ, և ոչ ոք իցէ որ բանայցէ, և բանայցէ, և ոչ ոք իցէ որ փակիցէ,,: -198. որպէս և գրեալ է, թէ ,,փակիցէ, և ոչ ոք իցէ որ բանայցէ, և բանայցէ, և ոչ ոք իցէ որ փակիցէ,,: -198. քանզի ի ներքս նստելոյ յարքունիս՝ ոչ ոք տեսանէր զնոսա, բայց թէ հարճք և արք կանացիք: - 56. բայց նուազեալ ազգին՝ ոչ զոք ունէին, որ կարօղ լինէին զգործ պատերազմին վճարել և զպաշտօն թագաւորին. – 90. Իսկ Յունաց առեալ կացուցին ի բաժնին Արշակայ հիւպատս և զօրավարս և կոմսունս, ոչ զոք թագաւորեցուցեալ այնուհետև: - 112.

ՈՉԽԱՐ - ,,են ոչխարք իմ, որ ոչ են յայսմ գաւթէ, և զայն ևս պարտ է ինձ ածել այսր, և ձայնի իմում լուիցեն և եղիցին մի հօտ և մի հովիւ. – 224. երկոտասան արդու ալեր և քառասուն ոչխար ի միում գիշերի ուտել Բէլայ. – 38. և կարաւան գաղթականին տեսանէր զփայլիւն զինուցն և զշողալ սուսերացն, և այսր և անդր խուճապական լեալ հալածեալս, իբրև զոչխարս ի գայլոց: - 228. և միաբան զաղաղակ բարձեալ ասէին, ,,Աստուած, յօգնել մեզ նայեաց, և Տէր, յընկերել մեզ փութայ,, և որ ի կարգին, ,,զի վասն քո մեռանիմք զօրհանապազ, համարեցաք որպէս զոչխար ի սպանումն,,: - 266. Եւ սաղմոսէին միաբան՝ ,,վասն քո մեռանիմք զօրհանապազ. համարեցաք որպէս զոչխար ի սպանումն,,: - 250. լի թունիւք սատանայական խորհրդոցն, ծածկեալ յաչս իշխանին գառնենի զգեստիւք ի հանդերձս ոչխարաց, և ներքոյքն զապականիչ գայլոցն բերելով զլրբութիւն – 210. հարից զհովիւն և ցրուեցին ոչխարքն. – 238.

ՈՌՈԳԱՆԵԼ - և այնչափ սաստիկ լինէր կոտորածն՝ մինչ զի սաստկութիւն վտակաց արեանն խաղացեալ ոռոգանէր զերկիրն ամենայն: - 140.

ՈՌՈԳԱՑԵԱԼ - նորին հրահանգեալ կրթարանի ուսումնասիրութեանն վարժիւք ոռոգացեալ, այր քաղցրաբարոյ և հեզահայեաց, հասարակաբար առ հասարակ զինքն վարկանելով, արտաքոյ ամբարտաւանական բարձրայօնութեանն՝ կալով յաշտիճան հեզոցն, դրուատեալ ի փրկչէն մերմէ Յիսուսէ Քրիստոսէ: - 376.

ՈՌՈԳԵԱԼ - Դարձեալ վերստին հրճուանօք ոռոգեալ լինի պատմութեան աստ սակս բարձրագահ, համաթոռ, ճոխազգի ազգապետութեանն Արծրունեացս, /76/ մեծ զարմի Սենեքերիմայ ծննդոց. – 78. և զնոյն ոռոգեալ ոտիւք ի միջոցս պրակացն, կամ երկմատնի փայտատովք սերմանեալ. – 192.

ՈՍԿԵԲԵՐԱՆ - Արկաղեայ կայսեր թագաւորեալ ամս ԻԳ մեռանի սաստկակոծ պատուհասիւ յաղագս մեղանացն առ Յոհաննէս Ոսկեբերան: - 114. զոր ընկալեալ սուրբ հայրապետին և բարեպաշտ թագաւորին Թէոդոսի հինգ թղթովք և հինգ պատասխանեօք՝ կարգէ զսուրբ վարդապետն ընդ վարդապետութեան աթոռակալութեան սրբոյն Յոհաննէսի. Ոսկեբերանի և այլոց քաջաց և գլխաւոր վարդապետացն – 116.

ՈՍԿԵԳՈՐԾ - Եւ ոսկեգործ ականակապ կազմեալ՝ պատեաց ոսկով զփրկագործ սուրբ խաչն, և ընդելուզեալ մարգարտով զարդարեաց զսխրագործ փայտն, հիւսնեալ ի մէջ անուշահոտ

փայտից, թողեալ մասն ինչ արտաքս ոսկեպատ պահարանին, յառաջնում իւրոյ քառածրագիծ խաչակերտ փայտեղէն զզրոցկանն: - 394.

ՈՍԿԵՋԱՐԴ - կապարճս և աղեղունս պատրաստականս զառաջեաւ ի նիւսն ունելով, և զարդս ոսկեզարդս և արծաթագործս և կամարս ընդ մէջ ածեալ – 208.

ՈՍԿԵՋՕԾ - Շինեաց և ի վերայ Ամրական քարանձաւին յելս և ի մուտս կոյս տունս խրախիցս ոսկեզօծս պատեշգամեալ, յաւելլով ի յառաջագոյն ի հօրէ նորա Դերանկէն շինեալ: - 390.

ՈՍԿԵԿԵՐՏ - Զոր հրաշազարդեալ մեծագանձ սպասիւք, ոսկեկերտս խաչադրօշեալ ընդելուզեալ մարգարտով և ակամբք պատուականօք հրաշագործեալ: - 396.

ՈՍԿԵՀԱՆ - մինչ տայր պատերազմ ընդ Սպանիացիսն վասն ոսկեհան տեղեացն. – 80.

ՈՍԿԵՀՈՒՌ - և փոխանակ ծաղկեալ պատմուճանի գունագոյն երանգ երանգ անկուածոցն՝ զսուրբ և զվարդագոյն կարմրատեսիլ արիւնն իւրեանց ի վերայ սուրբ մարմնոյն, և փոխանակ ոսկեհուռ թագակապ զարդու պսակացն՝ զերկրպագութիւնն Քրիստոսի. – 266.

ՈՍԿԵՂԷՆ - զոր և անդրի ոսկեղէն կանգնեալ թագաւորին Բաբելացւոց՝ արձան քաջութեան առ ի յիշատակ: - 38.

ՈՍԿԵՃԱՃԱՆՉ - Վէմս զերեսօք արկեալ արտօսր յորդառատս ի խտղտելի աչաց ի վայր հեղեղատելով, զնորափթիթ ծաղկազարդ ոսկեճաճանչն մորուացն ճիրանամբքն զխզումնն, և որ առաւելեալն քան զսոյն զապաշաւանացն զանյագութիւնն: - 386.

ՈՍԿԵՊԱՏ - Եւ ոսկեգործ ականակապ կազմեալ՝ պատեաց ոսկով զփրկագործ սուրբ խաչն, և ընդելուզեալ մարգարտով զարդարեաց զսխրագործ փայտն, հիւսնեալ ի մէջ անուշահոտ փայտից, թողեալ մասն ինչ արտաքս ոսկեպատ պահարանին, յառաջնում իւրոյ քառածրագիծ խաչակերտ փայտեղէն զզրոցկանն: - 394.

ՈՍԿԵՐԻՉ - Եւ հրամայեաց ածել ոսկերիչս և նորոգեալ նորացոյց զանյաղթ փայտ խաչին Քրիստոսի, մատուցեալ զբեկորսն առ իւրաքանչիւր յօդս, պատեալ մաքուր արծաթով վայելչագոյն քան զառաջինն, ի պարծանս քրիստոնէից և յամօթ և ի նախատինս թշնամեաց խաչին Քրիստոսի: - 378.

ՈՍԿԻ - ապա ցուցին զտեղին ուր ծածկեալն էր. զոր առեալ վարեցին ի գերութեան, և ոսկի և արծաթ անբաւ խաղացուցին ի դուռն թագաւորին: - 142. և առեալ ոսկի զտիկնոջն և զիւր՝ գնաց յԵգիպտոս գնել ցորեան յաւուրս սովոյն որ եղև առ Կղաւդեաւ. – 80. և յաւարի առնուին զբանակետղն, դիակապուտ առնէին, ժողովէին աւար բազում, և կուտէին արծաթ և ոսկի յոյժ և զզէնս պատենազարդս, զզարդս և զզէնս արի արանց և զընտիրս երիվարաց և զզարդս նոցա. – 176. Եւ յելանելն նորա և մօտ լինել ի սահմանս Հայոց զօրօք բազմօք, մերձ ի սահմանս Տարունոյ, Առաջին կոչեցեալ Հայոց՝ իշխան Տարունոյ Բագարատ … առաքէ զոմանս ի մեծամեծաց իւրոց ընդ առաջ նորա պատարագօք ոսկոյ և արծաթոյ և պատուական հանդերձից, համոզեալ մի ելանել յերկիրս Հայոց: - 170. Եւ ոսկեգործ ականակապ կազմեալ՝ պատեաց ոսկով զփրկագործ սուրբ խաչն, և ընդելուզեալ մարգարտով զարդարեաց զսխրագործ փայտն, հիւսնեալ ի մէջ անուշահոտ փայտից, թողեալ մասն ինչ արտաքս ոսկեպատ պահարանին, յառաջնում իւրոյ քառածրագիծ խաչակերտ փայտեղէն զզրոցկանն: - 394. և քանդեալ աւերեաց զամենայն ապարանս թագաւորին և այրեաց զնոսա հրով, և բազում գանձս մթերեալս յափշտակեաց անչափ աւարաւ գանձս ոսկոյ և արծաթոյ և հանդերձից, և անասուն բազում յոյժ, և բազմութիւն գերեաց իբրև զաւազ ծովու անթիւ: - 150. զի պայծառ սուրբ և մաքուր ոսկին յիւրումն կտակագրի պատկեր աստուածորդւոյն: - 252.

ՈՍԿՐ - Ապա թէ փութաս ելանել ի կենաց աստի առ զայրուցս կատաղութեան քո և զոսկերս ցրուես յանապատս և լինել կերակուր գազանաց երկրի և թռչնոց երկնից՝ քո կամք լիցին, և ես քաւեալ եմ յարենէ քումմէ – 278. և նախ յառաջ Սափին կարի յոյժ սիրեցեալն իւր, զսատակչական դեղն արբեալ, անբուժելի կեղով վառեալ յոսկր և ի մարմին՝ և առաջի Աւշնի զրաւ առնոյր ի կենացն:-376. զոսկերսն Ադամայ բարձեալ Սէմայ գրաստու՝ տարաւ յերկիր ժառանգութեան իւրոյ - 34. Իսկ տեղի շիրմին յորում նախահօրն եդան ոսկերք՝

կատարման և կառափման, որ նոյն ինքն է գագաթն և Գողգոթայ ըստ եբրայականին, երկակի անուամբ. – 34. Իսկ Փիլոն ասէ՝ զոսկերսն Ադամայ, ի պատիւ խնամոց, իբրև հօր հասարակաց՝ առեալ Սէմայ եդ ի տապանի անդ. – 32. որոյ ոսկերքն ընդ այլ սուրբսն հանգուցեալ կան ի վանսն Յադամակերտոյ: - 134.

ՈՍՈԽ - Եթէ, որպէս ասացի, ի բաց գնաս յինէն՝ խաղաղութիւն է, և թէ ոչ՝ պատերազմ և կռիւ և ճակատամարտ ... դու ախոյեան՝ և մանկունք իմ յաղթանակ, դու ոսոխ՝ և զօրք իմ դատապարտիչք. – 278. և եկեալ եկաց առաջի ոսոխ վիրագին, և տուեալ ողջոյն ըստ սովորութեան նոցա: - 216.

ՈՍՏԱՆ - Այլ և զռամիկ Նորագեղջ աւանին Ռշտունեաց առեալ ածեն ի տեղի վաճառուն Ոստանին Ռշտունեաց, արկեալ տոռունս ի պարանոցն հանեն ընդ սուր. – 202. Բայց Գուրգէն խոկայր զմասն աշխարհին յինքն գրաւել, մանաւանդ զՈստանն Ռշտունեաց, որ էր տեղի սպանման հօր իւրոյ, գինս արեան զնա համարելով: - 362. և բանակեցաւ ի յԱդամակերտ ոստանին Արծրունեաց, և անդէն սկսաւ ասպատակս սփռել, աւար առնել, կուտել առ ինքն զկապուտ աշխարհին յոյժ սաստկութեամբ: - 184. Եւ Գուրգէն նստէր յՈստանին Ռշտունեաց յամրաձն բերդին. – 310. Եւ դարձան մտին յՈստանն Ռշտունեաց և կացուցին յանձանց իւրեանց իշխան զՎասակ Կովակեր, եղբայր Վահանայ: - 306. և երթայ զետեղի ի Նախճաւանն աւանի յոստանին Վասպուրական աշխարհին: - 84. Եւ ինքն Աբրահիմ եկն անց յայնկոյս յոստանն Ռշտունեաց և անդ լինէր: - 306. և նորա կալեալ զնա և ի կապանս մատնեալ որպէս զանհնազանդ ոմն՝ և եկն անց յՈստանն Ռշտունեաց: - 322. Ըմբռնեալ լինէր յայնժամ մի ոմն ի Հայոց ազատանոյն տոհմից Վահևունեաց, Ապուսահակ ոմն, եղբայր Սահակայ եպիսկոպոսի ոստանին Նախճաւանու և Մարդպետականի. – 204. ինքն Աշոտ ճողոպրեալ միաձի ելեալ եհաս փախստեայ մինչ յՈստանն Ռշտունեաց, թողլով զբուն բանակն ի նմին տեղւոջ. – 332. Իսկ ի տիրական զօրավարութեանն Գագկայ սկզբնաւորեալ ձեռակերտ իւր՝ շինեաց զհողաբլուր բարձրաւանդակն ի Մահռաշտ գեօղ յափն գետոյն յելս կոյս, որ հայի յՈստանն Ռշտունեաց – 394. շինեաց Գագիկ պարսպաւոր ամրափակութեամբ զբլուրն յՈստանին Ռշտունեաց զաւերեալն ի բազում ամաց – 390. ՎԱՄՆ ՍՔԱՆՉԵԼԵԱՅՆ ՈՐ ՅՈՒՅԱՒ ՅՈՍՏԱՆՆ ՌՇՏՈՒՆԵԱՅ ՅԱՄՍ ՋՕՐԱՎԱՐՈՒԹԵԱՆՆ ԳԱԳԿԱՅ: - 378. Քանզի և զոստանն Նախճաւան տուեալ էր ի կալուած զյաղթութեանն մանազաւենին Կայսկի: - 382.

ՈՍՏԻԿԱՆ - ելանէ մարզպանն ի վերայ նոցա և յինքն հանէ զՏամբեր և զԸռնայ գաւառ և որ ասի Ապուջափրի բերդ, ի Վիրի քաղաքին Կորճէից զիւր կացուցանէ ոստիկանս ի պահպանութիւն ամրոցին: - 400. Եւ զԳագիկ որ և Ապումրուան՝ զնա ոստիկան կարգեաց ի վերայ աշխարհին, տեղապահութեամբ տիրել, զի կարի մատաղօրեայք էին որդիք Դերանկին. Աշոտ էր Թ ամաց, յորժամ մեռաւ Դերանիկն, Գագիկ էր Է ամաց, Գուրգէն Ե ամաց: - 354. և դու թէ ոստիկան խաղաղութեան էիր եկեալ յարքունուստ՝ զշինութիւն պարգևաբաշխէիր սոցա, և ոչ զաւերս և զխռովութիւն: - 278. և սպանեալ զոստիկանն Պարսից, որ էր ի վերայ նոցա, և ինքեանք պատրաստեալ ի պատերազմ ընդդէմ Պարսից: - 142.

ՈՍՏԻԿԱՆՈՒԹԻՒՆ - Զկնի այսորիկ եկն Աշոտ թագաւորն Հայոց մխիթարել զդուստր իւր և զթոռունս, և ևս առատանայր զհաստատութիւն իշխանութեանն Աշոտի և զոստիկանութիւնն Ապումրուանայ: - 356. Իսկ Ապումրուանայ ի պատճառ ոստիկանութեան զմանկականն նոցա պատճառելով խաժութիւն հասակի՝ առ սակաւ սակաւ սկսաւ զամուրսն յինքն գրաւել, զհետ իշխանական ցանկութեանն զերասանակ մտացն ձգեալ - 360.

ՈՍՏՈՋԵՐԾ - Եւ անտի դարձեալ դառնայր Աշոտ ընդ միւս ևս ամրականն ընդ ոստոզերծ քարանձաւի, ի յարևելից կուսէ լերինն Վարագայ, ի վերայ գեաւղջն Կոխպանից, հանդէպ եկեղեցւոյն սրբոյն Հռիփսիմեայ – 334.

ՈՎ/դեր. մջ./ - ,, վնասս և զբեկումն հարկաց արքունի և զկոտորումն զօրաց քոց Աշոտ գործեաց, և նա է պատճառ ամենայն ապստամբութեան Հայոց ի քումմէ թագաւորութենէդ, ասեն, ո՛վ քաջդ և հաւասար աստուածայնոց կարողութեան ինքնակալ, և ընդհանուր իշխեցօղ կենաց և մահու,,: - 180. և դարձեալ՝ թէ ,,դատաստանս արդա՛ր դատեցարուք, և ողորմութիւն և իրաւունս արարէք, քանզի առ ձեզ են բանք իմ, ո՛վ բռնաւորք,, , ասէ Սողոմոն. – 182. զի հարցեալ լինէր, թէ ո՞վ ոք, և յորո՞ց, և յումմէ՞, և ե՞րբ, և առ որո՞վք: - 72. ո՞վ ասացէ յիմար արքային Զրադաշտի՝ ասա՛ ձրավաստակ աստուածոյդ քո Որմզդի՝չաշխատել տարապարտ. – 46. ո՞վ ես դու՝ ասէ. ես եմ որդին քո Որմզդ. – 46. և թոյլ ետուն զով և հաճոյ թուիցի արքային. – 118. ,,և ո՛վ տայր ինձ վկայել ի վերայ ճշմարտութեանն և մեռանել վասն անուանն Քրիստոսի, և զարիւն իմ փոխանակ արեանն Քրիստոսի հեղուլ և զմարմին իմ փոխանակ մարմնոյ նորա ի մահ մատնել և զչարչարանս իմ ընդ նորա չարչարանսն խառնել, զի և ընդ նմա փառաւորեցայց. – 290. ,,Զբանս քո լուեալ՝ ասեմ, եթէ յԱստուծոյ է թագաւորութիւն և ում կամի տացէ. – 138. ,,ընդէ՞ր, ով աստուածասէր թագաւոր, իբրև ընդ համհարզս և ընդ ստամբակս, իբրև ընդ աննշանս կամ ընդ անընդել վայրագս խօսիս ընդ մեզ – 242. Այլ զմեզ գիտես ո՛վ ոք եմք և ուստի՛ և յումմէ, և թէ զի՛նչ անուն է մեր՝ կարի քաջայայտ է քեզ - 242. Բայց մի ինձ մեղադիր լինիր, ո՛վ ուսումնասէր դու, սակս ոչ զբովանդակ սորա գործս շարել ի ճառս մանրապատումս: - 302. և առեալ ի ձեռանէ նորա զսուսերն շողացուցեալ՝ հայեցաւ /266/ յայսկոյս յայնկոյս և ասէ, ,,ո՛վ անարի վատ արանց և կանացի այր, թշուառական զինուոր, շուն անպիտան տեառն իւրոյ,, - 268. յոյր ձեռն բազում արութիւն նահատակութեան երևեալ լինէին ի մարտս պատերազմաց և ի հանդէսս ճակատեցելոց ի միայնամարտիկ զինուորութեան: - 170. Ո՞վ Բաբելացի կոյր՝ ունելով խելապատակ ցնդեալ ի մկանց և ի խլրդից. – 38. Ո՞վ յիմարութեան առաջնոցն. ո՞րպիսի կատաղութիւն և գիւտք դիւացն նախկին ժամանակաւ սպրդեալ մուծաւ յաշխարհ, ապստամբութիւն առ Աստուած և տրտմութիւն սրբոց հրեշտակաց, և պատճառ վտանգաւոր մահու ծառայիցն Աստուծոյ յաւուրս ապագայիցն. – 38. Ո՞վ ահագնասաստ բարկութեան հրաման նորին օրհասին. – 32. ո՞վ ահեղական ձայնիցն և սասանման հաստատութեան երկնի և երկրի: - 32. Ո՞վ անծախելի բարերարութեանն Աստուծոյ. ո՞վ անհատական մարդասիրութեանն, որ և դեռ ևս խնայել ասէ յանզգացեալսն: - 30. Ո՞վ անծախելի բարերարութեանն Աստուծոյ. ո՞վ անհատական մարդասիրութեանն, որ և դեռ ևս խնայել ասէ յանզգացեալսն: - 30. Տե՛ս, ով սիրելի, զի թշնամանելն՝ լեզուին բարբառ է, և ոչ ներէ ստեղծիչն լեզուին զուրացութիւնն բարբառել, զի ոչ եթէ այլ ոք է որ ստեղծ զլեզուն, և այլ ոք է որ արար զսիրտն. – 258.

ՈՎԱՅ - և ինքն Ովայ զերծեալ սակաւ ոմամբք գնաց փախստական ընդ կողմն Բերկրոյ: - 178 ընդ առաւօտանալն սկսեալ՝ ի ժամս բովանդակ՝ յաղթութիւն սատարեաց և ի փախուստ դարձոյց զբազմութիւն զօրացն Ովայի–178. սպանաւ ի խռան անդ և եղբայր Ովային – 178.

ՈՎԴԷԳ - ի սորա ԼԳ համբաւեալ ջրհեղեղն Ովդէգայ: - 56.

ՈՎԴԷԳԱՅ ՋՐՀԵՂԵՂ - ի սորա ԼԳ համբաւեալ ջրհեղեղն Ովդէգայ: - 56.

ՈՎԻՏ - և զբոլոր ովիտն լնուն դիակամբք կոտորելոցն. – 178.

ՈՎԿԻԱՆՈՍ - Իսկ նորա տուեալ զնա ի կղզիս Ովկիանու վախճանի անդ, թագաւորեալ ամս Դ: - 110.

ՈՎ ՈՔ - Այլ զմեզ գիտես ո՛վ ոք եմք և ուստի՛ և յումմէ, և թէ զի՛նչ անուն է մեր՝ կարի քաջայայտ է քեզ - 242. Եւ ամենայն մեծամեծքն հանդերձ խառնաղանճ / 240/ ամբոխիւն դռոթ տուեալ, ոչ միայն ըստ հրամանի թագաւորին ելանել զհետ աղաղակի փողոյն և արքունի կոչնականացն՝ այլ փութացան տեսանել, թէ ո՛վ ոք և ո՛րպիսիք են սոքա – 242. և գնացին կալան զամրական տեղիս ով ոք և փութացաւ մտանել յամուրս ի բերդսն որ ի Վասպուրականի. – 238. և հիացմամբ առ նորայն հայելով, թէ ո՛վ ոք էր, և ո՛րպիսի, և ո՛րպէս կորեաւ՝ ասեն, ,,զիա՛րդ դադարեաց պահանջողն, հանգեաւ տագնապօղն. եթէ ո՛րպէս իջին ի դժոխս փառք նորա,,: - 376. Յայնժամ ողորմագին զաչսն շրջշրջեալ առ քաջ նիզակակիցսն իւր, թէ ո՛վ ոք արդեօք թերևս յօգնութիւն ինչ նմա հասանիցեն. – 354. Արդ

ո՞վ ոք արժանի յոյժ ծաղու զբանք ուսմանս այսորիկ համարեսցի. – 46. ,,ո՞վ ոք էք դուք և յորմէ՞ աշխարհէ, և զի՞նչ անուն է ձեր. թերևս արդեօք դո՞ւք էք ապստամբեալքն յինէն,,: - 242. զի ո՞վ ոք այլ ճոխ քան զՍենեքերիմայսն, /94/ զոր համարձակախօսն Եսայիաս հրապարակէ առ Իսրայէլեան զարմն զսորայս մեծափառութիւն. – 96. ո՞վ ոք յաշխարհակալաց ոչ մատնեցաւ ի սուր. և են իշխանք ազգաց, է ուրեք որ զօրանան, և է ուրեք որ տկարանան,,: - 282. զի հարցեալ լինէր, թէ ո՞վ ոք, և յորո՞ց, և յումմէ՞, և ե՞րբ, և առ որո՞վք: - 72.

պատուաւորս և քաջամարտիկս զօրաւոր զօրութեամբ, և մանաւանդ զի բազում անգամ զանուն յաղթութեան ստացեալ ունէին: - 366. որ յետ հաւատոցն որ ի Քրիստոս բազում ուղղութեամբ և երկիւղածութեամբ կրօնս ըստ արժանի հաւատոյն ցուցեալ, գրէթէ ի ծայրս առաքինութեան զաճումն հաւատոցն տարեալ հասուցեալ, որ ինչ յորդորումն աւետարանական վարժիցն ունին դաստիարակութեան ցոյցք: - 78. որ ունիցի արմատս ինչ ինքնաբոյս և սակաւախնամս – 52. որոյ գալուստն ազդ եղեալ զնդի այլազգեացն՝ փախեան գնացին բացագոյն, կալան զամրական տեղիս, ցրուեալ ընդ լեռնայինսն անյայտ թաքստեամբ: - 402. որոց անուանք ճանաչի սոցա … Սահլ Սմբատայ որդի, Շաքեոյ տէր , որ զԲաբանն կալաւ, և իշխանական Վասակ Վայոց ձորոյ տէրն, և Փիլիպպէ իշխանն Սիւնեաց – 298. որոց և շիթք ցօղոյն ունէր զանհամեմատ անուշահոտութիւն: - 50. ուստի յայտ է թէ և անմարմին է, զի մարմինն՝ բովանդակեալ զօրութիւն ունի, և ոչ կարէ հանապազ շարժել զերկին կարգաւորաբար. – 54. սրբոյ Աւետարանին հետազօտեալ կրթականին՝ մի բազմել յառաջին բարձին, ոչ եթէ ոչ ունէր նազելի և բարձրագահ պատիւս ի մէջ մեծ նախարարութեանցն Հայոց – 94. վասն զի ունէր յայնժամ զգլխաւորութիւն բարձակցութիւն իշխանաց Հայոց - 170. վասն նորին իրաց ասեն կալաւ, զնա հաճոյանայր կացուցանել իշխան Տարունոյ որ ասի Հայոց իշխան, որ և եղև իսկ: - 342. քանզի հէնք բազումք կալան զերկիրս: - 116. Քանզի խառն դրակցութեամբ սահմանին առ միմեանս Փոքր Աղբագ և աշխարհին Կորճէից և Պարսկահայոց՝ և հանապազ առ միմեանս զգժտութիւն կեղծաբերէին, մարզպանն և որ զԿորճէիցն ունէին զգործավարութիւն. – 400. քանզի ոչինչ ունէր զկարծիս դրժանաց առ թագաւորն և առ զօրս նորա – 186.

ՈՒՆԵԼԻ - եթէ ոչ այլ ինչ յակն ունելեաց բարւոյ ունիցիս ասել, զի՞նչ ինչ բարգաւաճանք քեզ լրութիւն անյագ որովայնին Բէլայ իցէ: - 38.

ՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ - ՄԾԹ ամօք յառաջ զսորայս բացայայտեալ զցոյցս յայտնութեանն, յամս Ներսեսի երրորդի Հայոց կաթողիկոսի և Վարդանայ Ռշտունեաց պատրկի և յամի ունելութեանն Տաճկաց զհայկական աշխարհս: - 394.

ՈՒՆԿՆ - Իսկ նա ի հրապոյրս ապստամբ վիշապին ելեալ, որ բազմախարդախ չարութեամբն եհեղ առատութեամբ զդառնութիւն խրատոյն յունկն կնոջն անզգամի: - 20.

ՈՒՆԿՆԴԻՐ ԼԻՆԻԼ - և ոչ եղեն ունկնդիր մաղձահամ և ժախահոտ բանիցն, իբրև ի փեռեկեալ գերեզմանէ զնեխահոտութիւնն արտաքս արկանելոյ. – 292.

ՈՒՆԿՆ ԴՆԵԼ - Բայց Ահմատ ոչ խոնարհեալ ունկն դնել ասացելոցն, արհամարհեալ զառաքեցելովքն: - 366. և սաստիկ կսկծեցուցանէր զնոսա բանիւք, ունելով իւր վկայ զԵսայի մարգարէ՝ յասելն, ,,լուարուք, իշխանք Սոդոմայեցւոց, ունկն դիք օրիացն Աստուծոյ ժողովուրդ Գոմորացւոց,,. – 182. Որբոց իրաւունս ոչ առնեն, և դատաստանի այրեաց ունկն ոչ դնեն,,: - 182. քանզի կարի ախորժելով ունկն դնէր և յօժարէր բառնալ զթագաւորութիւնն Հայոց - 118. Նորա ունկնդիր եղեալ գայ առանց յապաղանաց – 82. Բայց Մեհուժան Արծրունի ոչ եղեալ ունկնդիր սրբոյն Ներսէսի, և ոչ ընդ թագաւորին հնազանդութեամբ. – 102. Իսկ Ներսէհ ունկնդիր եղեալ Դարէհի, բայց ոչ կարաց հաւատարմացուցանել զասացեալսն. – 82. Իսկ Սաթինիկ ունկնդիր եղեալ խրատու սրբոցն՝ ոչ ի բաց մերժեցաւ ի կռոցն Աստղկայ անուանեալ պատկերին – 88. Որոյ ունկնդիր եղեալ Տիրան՝ տայ հրաման յանգ հանել զխորհուրդ անօրէն աստուածատեաց առն: - 98. Որում /110/ ունկնդիր եղեալ՝ դարձան այր իւրաքանչիւր ի բնակութիւն իւր - 112. Որում ունկնդիր եղեալ երեքեան նախարարութիւնքն առն իմաստնոյ Վահանայ Ամատունւոյ՝ գան զկնի նորա անկասկած համարձակութեամբ – 98. Որում ունկնդիր եղեալ իշխանն՝ կատարէ զասացեալսն: - 322.

ՈՒՇ - և հարցեալ ցնա յաղագս մահուանն Յովսէփու ի վրէժխնդրութեանն աղագս երկրորդ նահատակութեան նորա, որ եկաց ընդդէմ զօրավարին, յուշ առնելով նմա զապստամբութենէ և ընդխառնելոյ նորա ի վնասս արքունի – 294. զորոյ նախնեացն ջան և վաստակ յուշ պարարեալ թագաւորին՝ Համամայ յառաջ մատուցեալ, ի գահ և ի բարձ

հայրենեացն ձգել զնա՝ ժառանգեցուցանէ զերկիրն Աղբազ, որպէս Սահակայ նոյնպէս և Համամայ: - 90. յիշեցուցանէր զոր ինչ գործեաց ընդ Աշոտ և ընդ աշխարհ նորա, յուշ առնէր և զքաջութիւն արիութեան նորա – 268. Յուշ առնէր նմա զխոստումնն Աստուծոյ առ Աբրահամ և զկարգս թլփատութեանցն և զզոհիցն և զայլոցն ամենեցուն, զոր ոչ է այժմ ասել մի ըստ միոջէ. և յայս լինէր խոկումն Իսմայէլացւոցն մինչև իսպառ: - 158.

ՈՒՇԱԹԱՓ - Եւ եղև ի միում աւուրց, ի գալ նորա ի նմանէն՝ ձայն օտարոտի, և ազդումն ահագին և դիւական անկեալ ի վերայ /զրքում՝ վերա/ նորա՝ ուշաթափ անկեալ դնէր – 158.

ՈՒՇ ԵԴԵԱԼ - ուշ եդեալ ուժեղութեամբ և քաջութեամբ սրտիւ ընդդիմանալ, մանաւանդ ի Ծանարացն զնա տեսեալ ի պարտութիւն մատնեալ և յաղթահարեալ: - 276.

ՈՒՇԵՂՈՒԹԻՒՆ - Զի թէ միոյ փայլատակման ընթացք և ճայթումն ամպոց բաւական է պակուցանել քաղել զուշեղութիւն ոգւոց, զի՞նչ ինչ յայնժամ կրէին ոգիք մնացելոցն յերկրի, ի սահանաբաց և յանդնդաքակ վրդովմանցն հոսելոց, նախ քան զջրհեղեղ ջուրց սատակումնն: - 32.

ՈՒՇԻՄԱԳՈՅՆ Տե՛ս ՈՒՇՄԱԳՈՅՆ

ՈՒՇՄԱԳՈՅՆ - Տեսեալ կնոջն զՄահմէտ այր հաւատարիմ և ուշմագոյն յամենայն իրս աշխարհականս՝ եղև նմա կին և ետ ի ձեռն նորա զամենայն հոգս տան և ընչից: - 158. և արտաքնոցն ուշիմագոյնքն ասեն, եթէ, ամենայն մարմին շարժուն՝ յայլմէ բնաւորեցաւ շարժիլ. – 54.

ՈՒՇ ՈՒՆԵԼ- ամենածախ գանձիւք առատաձեռն պատուով հոմանեաց և եթ ունելով ուշ – 44.

ՈՒՌ - այլ որպէս արմատն՝ նոյնպէս և ուռն և պտուղն. եթէ սկիզբն սուրբ է՝ ապա և արմատն, ապա զինչ ուռն՝ նոյն և տեսակ: - 258. այլ որպէս արմատն՝ նոյնպէս և ուռն և պտուղն. եթէ սկիզբն սուրբ է՝ ապա և արմատն, ապա զինչ ուռն՝ նոյն և տեսակ: - 258.

ՈՒՌԿԱՆ - և զԽուրանն Արծրունի մեծ զօրավար արկեալ ընդ ուռկանաւ խարդախութեան, հետևել զկնի իւրոյ մոլորութեանն. – 80.

ՈՒՌՈՒՑՈՒՄՆ - հրեշտակի Աստուծոյ հարեալ ի հարուածս անբժշկականս ըստ օրինի Հերովդիայ ախտակրութեան, տորոմեալ խղխայթմամբ, չարալլուկ ուռուցմամբ զտրորումն առնոյր արիւնալից արիւնապարտ մարմինն գազանեղինին. – 376.

ՈՒՍԱՆԻԼ - Նա և զայլ հիացականսն որ ըստ այսոցիկ ուսցիս ի նորին գրոց. – 50. և ծառայեա ճշմարտութեան օրինաց և հաւատոց, զոր ուսաք ի մարգարէէն Մահումաթայ. ապա թէ ոչ՝ զնորին հակառակն ընկալցիս, տանջանս և մահ, և ելցես ի կենաց աստի չարաչար մահուամբ,,: - 294. զի և ի հօրէ իւրմէ ուսաւ՝ որդւոյն Սէթայ որդիս Աստուծոյ կոչիլ. – 26.

ՈՒՍԵԱԼ - Եւ ուսեալ Հրէիցն զպատճառս փախստեանն՝ խրախուսեցին ի միաբանութիւն, ճշմարիտ ասել զասացեալսն, իբրև նախանձախնդիրք Աստուծոյ և որդիք Աբրահամու և եղբարք միմեանց: - 160. Եւ փոխանակ նորա ժառանգէ զաթոռ հայրապետական երանելին տէր Յօհաննէս, որ և սնեալ և ուսեալ առ ոտս սրբոյն Մաշտոցի. – 376. զորոյ լոյծ և մեղկ բարս ուսեալ թագաւորին՝ կացուցանէ զնա ի վերակացութիւն գործակալաց դրան արքունի – 90. Իսկ աբեղայն արիոսեան, զոր յառաջագոյն ասացաք վարդապետ Մահմէտի, տեսեալ զյաջողութիւն իրացն՝ յարուցեալ եկն առ Մահմէտ, ցուցանել նմա զգութ երախտեաց, իբրև յիւրմէ վարդապետէ ուսեալ եհաս այնպիսի իրաց. – 162.

ՈՒՍՄՈՒՆՔ - որ յետոյ և հետևող սուրբ առաքելոցն եղեալ բազում ուսմունս ի հնոց հրէականաց նպաստաւորեաց եկեղեցւոյ գեղեցիկ օրինակօք – 34.

ՈՒՍՈՒՄՆ - այլ զի բազում նեղութիւն և սուր, ի ձեռն այսր /46/ սատանայական ուսման՝ սպառեալ կործանեաց զերկիրս Հայոց – 48. Արդ ո՞վ ոք արժանի յոյժ ծաղու զբանք ուսմանս այսորիկ համարեսցի. – 46. Եւ Աւշնի հաւատացեալ զաշխարս ծառայի ումեմն Սափի անուն ի գերելոցն Յունաց ներքինի, թողեալ զհաւատսն որ ի Քրիստոս, մսլիմանակ դեն ստացեալ, արիւնարբու ուսմամբ բնաւորեալ. – 372. և զի էր վարժեալ ուսմամբ Աստուածաշունչ գրոց և ընդել և ծանոթ էր ճարտասանական հրահանգիցն՝ եդ առ յայն ժամու իմացական տեսութիւնն զերգս – 284. Եւ մեր ընկալեալ և հաւատացեալ ճշմարտութեանն՝ և ոչ կարեմք փոխանակել զճշմարտութիւն ընդ սնոտի,

առասպելաբան և կարկատուն, ստայօդ և պաճուճազարդ մոլար ուսմանդ ձերոյ: - 246. զի ուսմամբ և անուամբ մի ևս ասիցի ունել հաղորդութիւն ընդ Ասորեստանեայս: - 46. ՎԱՍՆ ԱՍՈՐԵՍՏԱՆԵԱՅՑ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆՆ. ԵՒ ԹԷ ՈՐՊԷՍ ԶՐԱԴԱՇՏ ԵՒ ՄԱՆԻԹՈՊ ԿԱՑԵԱԼ ԳԼԽԱՒՈՐՔ ԱՐԵՒԵԼԻՑ ԿՈՂՄԱՆ, ԵՒ ՄՈԼԱՐ ՈՒՍՄԱՆՑ ՆՈՑԱ - 42.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ - Այլ և ուսումնական բանգիտութեանն քաջահմտագոյն, անընչասիրութեամբն մեռելագոյն. առատաձեռնութեամբն կենդանագոյն: - 376. Եւ այս առ այժմ բաւականասցի մտառու ուսումնական անձանց, զանմտացն ի բաց լքանելով զիմացմունս: - 396.

ՈՒՍՈՒՄՆԱԿԻՑ - զոր և երանելին Կորիւն, ուսումնակից Մովսէսի և աշակերտ սրբոյն Մեսրովպայ՝ յիւրումն ստուգաբանեալ պատմութեան զայսոսիկ մեզ հաւատարմացուցանէ: - 122.

ՈՒՍՈՒՄՆԱՍԷՐ - Բայց թէ է՞ր աղագաւ պատմութիւն վկայութեան Վահանայ ոչ է գրեալ ի գիրս պատմագրի՝ ստուգապէս առանց յերկուանալոյ ցուցանեմ քում ուսումնասէր քաջահմտութեանդ: - 128. Բայց մի ինձ մեղադիր լինիր, ո՛վ ուսումնասէր դու, սակս ոչ զբովանդակ սորա գործս շարել ի ճառս մանրապատումս: - 302. տեղեակ են այսմ ուսումնասէր անձինք: - 196.

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ - նորին հրահանգեալ կրթարանի ուսումնասիրութեանն վարժիւք ոռոգացեալ, այր քաղցրաբարոյ և հեզահայեաց, հասարակաբար առ հասարակ զինքն վարկանելով, արտաքոյ ամբարտաւանական բարձրայօնութեանն՝ կալով յաշտիճան հեզոցն, դրուատեալ ի փրկչէն մերմէ Յիսուսէ Քրիստոսէ: - 376. սա առաւելեաց յամենայն հոգածութիւնս ի գիւտս իմաստութեան ուսումնասիրութեան և այլն ամենայնի՝ քան զհարս և զհաւս իւր: - 334.

ՈՒՍՈՒՑԱՆԵԼ - ,,օրհնեալ է տէր Աստուած մեր, որ ուսոյց զձեռս մեր ի պատերազմ, և զմատունս մեր ի ճակատամարտ,, , և որ ի կարգին է: - 252. Բայց զի մի և մեք անկեալք լիցուք ի նոյն՝ ուսցուք ի յԱստուածաշունչ գրոց - 256. Զայս և առաւել քան զսոյն խրատէր և ուսուցանէր սուրբ հայրապետն և քաջ հովիւն տէր Յոհաննէս կաթողիկոս Հայոց մեծաց: - 182. զի ոչ գոնեայ մի ոք գոյ, որ զճշմարտութիւնն վկայէ ուսուցանելով նորա, թող թէ զբազումս: - 246. Զոր բան և վասն օձին սքանչելապէս ուսուցանէ Փիլոն Աղէքսանդրացի՝ յառաջ քան զդրժանացն դիպուածս՝ յոլովութիւն իմաստից ունել ամենայն շնչականաց. – 22. Իսկ եթէ՝ մշակն մեղաց և անդրանիկն ամենայն չարեաց, որ ի յօձն բունեալ ոչ անիծաւ, որպիսիս ուսուցանէ վնասապարտութիւն օձին առ ի պատժականութեանն գտանել պարտաւորութիւն, որ ոչ յընքենէ միայն, այլ մանաւանդ ի գտողէն չարեաց: - 22. որպէս ուսուցանէ գիրք Եւսեբի Կեսարացւոյ:- 34. վասն որոյ զերկայնութիւն կենաց տալով նահապետացն Աստուծոյ՝ յանդիման դրախտին բնակեցուցանէր, ուսուցանելով՝ ի ձեռն ապաշաւանաց ի նոյն վերադարձիլ կեանս. – 26. որով մահուամբ և կամիս՝ պատրաստ եմք յամենայն հնարս չարչարանաց մտանել, զոր ուսոյց քեզ վարդապետն չարեաց հայրն քո սատանայ. – 292. Որպէս Պօղոս ուսուցանէ. ,,արհամարհեալ ասէ, ուրուք զօրէնս Մովսէսի՝ մեռանէր, ի բերանոյ Բ կամ Գ վկայիւք. քանի սաստկագոյն համարիմք զայն, որ զորդին Աստուծոյ առ ոտն եհար,, , և որ ի կարգին է: - 380. սմա ծանօթացեալ և սիրողացեալ ժամանակաւ ուսուցանէր բազում ինչ նմա և յոլովագոյնս զինոց կտակարանաց, և եթէ ոչ գոյ բնութեամբ որդի Աստուծոյ: - 158.

ՈՒՍՏԵՔ - և զզօրն տուեալ ի ձեռս Վահանայ Ամատունոյ, հոգալ զգործ պատերազմաց, թէ արդեօք դէպ լինիցի ուստեք: - 96. Եւ յայնմհետէ համարձակութիւն առեալ անօրինացն՝ սկսան գունդս ռամկականս ժողովեալ ըստ օրինակի մարախոյ անչափ բազմութեամբ, այնոքիկ որ Շեխետիքն կոչէին. և այլ որ ոչ ուստեք ուստեք ի հեռաւոր աշխարհաց /402/ Պարսից, ի Ժանգանայ և ի Ջուրջանայ և որք ի Վարառատ գաւառէ – 404. և ոչ ինչ փոյթ եղև ումեք հոգալ զուստեք արշաւանս և զգերփանս - 96.

ՈՒՍՏԵՔ ՈՒՍՏԵՔ - Եւ յայնմհետէ համարձակութիւն առեալ անօրինացն՝ սկսան գունդս ռամկականս ժողովեալ ըստ օրինակի մարախոյ անչափ բազմութեամբ, այնոքիկ որ Շեխետիքն կոչէին. և այլ որ ուստեք ուստեք ի հեռաւոր աշխարհաց /402/ Պարսից, ի Ժանգանայ և ի Ջուրջանայ և որք ի Վարառատ գաւառէ – 404.

ՈՒՍՏԻ - Այլ զմեզ գիտես ո՛վ ոք եմք և ուստի՛ և յումմէ, և թէ զի՛նչ անուն է մեր՝ կարի քաջայայտ է քեզ - 242. բովանդակաբար բացայայտել զհաւատարիմն գրել, թէ արդեօք Ասուր, որ զՆինուէ շինեաց, հաւ Նինոսի՞ իցէ ի ծննդոց Սեմայ, ուստի Նեբրովթ, կամ թէ արդեօք ազգն Արծրունեաց Սեմա՞յ սերունդք իցեն, թէ Քամայ ի Նեբրովթայ: - 14. Եւ եհան արձակեաց զնա Տէր Աստուած ի դրախտէն փափկութեան՝ գործել զերկիր ուստի առաւ: - 22. և ելեալ նստաւ ի ջորւոջն, զոր պատրաստեալն ունէին անդէն առ դրան վրանին, և հանին արտաքոյ ղաշիկ բանակին՝ դարձուցեալ դառնալ ընդ նոյն ուստի եկն: - 346. և նոքա տան տանել նմա զհարկս և հասս արքունի և դարձուցանեն զնա ընդ նոյն ուստի եկն: - 172. ուստի յայտ է թէ և անմարմին է, զի մարմինն՝ բովանդակեալ զօրութիւն ունի, և ոչ կարէ հանապազ շարժել զերկին կարգաւորաբար. – 54. Ուստի պարտ իսկ էր նախ զանձանց և եթ գիտել, և ապա յերևելեացս աստի զճարտարապետն սոցա իմանալ. – 54.

ՈՒՍՏԻ ԵՒ - ուստի և մեզ կարգաւորութիւն փոփոխմանց պահեցաւ ստացուածս այս: - 26. Ուստի և ըստ կարգի մեղանացն՝ և դժուարինք անիծիցն հետևին, նախ օձին և ապա կնոջն: - 22. Ուստի և մեք ըստ կարի մերում անցեալ գտաք զհամառօտութիւն զրուցատրութեանս – 122.

ՈՒՍՏ - յայնժամ ելցէ հուր ի քէն ծնեալ, և կերիցէ զքեզ և զբազմութիւն ուստերաց և դստերաց քոց, ի քէն ակն ունելով զբորբոքումն: - 148. քանզի էին Ադամայ և այլ ուստերք և դստերք բազումք, այլ ոչ արժանաժառանգք պայազատութեան աշխարհահայր լինելոյ. – 24.

ՈՒՏԵԼ - ասէ՝ կինս զոր ետուր /20/ ընդ իս, սա ետ ինձ ի ծառոյ անտի և կերայ. – 22. Յետ ջրհեղեղին հրամայեալ՝ կերիջիք միս իբրև զբանջար խոտոյ. – 30. դու ընդէ՞ր ոչ երկիրպագանես Բէլայ, եթէ ո՞չ տեսանես ո՞րչափ ուտէ և ըմպէ: - 38. երկոտասան արդու ալեր և քառասուն ոչխար ի միում գիշերի ուտել Բէլայ. – 38. և կերիցեն քարինք և փայտք և այլ կաիք երկաթեղէնք, որպէս և զայն որ ի նմայն պատարագի մարմին և արիւն որդւոյն Աստուծոյ, մանաւանդ թէ ինքն իսկ ճշմարտապէս որդին Աստուծոյ. – 396. Եւ զերկնային պարգևացն որ ի հանդերձեալսն խոստացաւ Տէրն, զանպատում և զիրեշտակային նորոգութեան՝ նա ասաց լինել անդ կերակուրք և ըմպելիք ուժգին. զոր և կամեսցի ուտել անյագաբար՝ պատրաստ գտանիցէ, և կանանց կուսից մնացելոց հանապազ անյագաբար խառնակումն: - 164. և կատարեալ զաղօթսն և գոհացեալ՝ ետուն զփառս Աստուծոյ և հատուցին զամէնն և նստան ուտել հաց. – 228. զի մողեսք և կովիդայք, քարաթաթօշք և բնդռունք ի վերայ եկեալ կերան զորս նորա: - 46. Զոր և մարգարէն առ գերութեամբն Բաբելացւոց ասէ, ,,կերիցեն հարք զորդիս, և որդիք զհարս,, , որպէս և առ Վեսպասիանոսիւն եղև: - 374. յայնժամ ելցէ հուր ի քէն ծնեալ, և կերիցէ զքեզ և զբազմութիւն ուստերաց և դստերաց քոց, ի քէն ակն ունելով զբորբոքումն: - 148. յայնժամ կերիցէ սուր զպատերազմողս քո. – 148. Քանզի այնչափ թանձրացաւ յաճախութիւն սովոյն՝ որ ոչ միայն անսուրբ կենդանիս ուտէին ըստ սրբութեան կարգի, այլ և զսարսափելի և զդժնդակ, որ զգազանային անցուցանէ զվայրենամտութիւնն, զմարմինս մեռելոց՝ առանց խղճելոյ ուտէին, ի գերեզմանացն հանեալ զհետ միոյ և երկուց ամաց թաղելոյ: - 374. Քանզի այնչափ թանձրացաւ յաճախութիւն սովոյն՝ որ ոչ միայն անսուրբ կենդանիս ուտէին ըստ սրբութեան կարգի, այլ և զսարսափելի և զդժնդակ, որ զգազանայինն անցուցանէ զվայրենամտութիւնն, զմարմինս մեռելոց՝ առանց խղճելոյ ուտէին, ի գերեզմանացն հանեալ զհետ միոյ և երկուց ամաց թաղելոյ: - 374.

ՈՒՐ - ,,ո՞ւր է Աբէլ եղբայր քո,, - 24. Այլ և Վահան Ամատունեաց գաւառին փախստեայ եկեալ ի ձորն, որ մերձ է յամրոցն, ուր տէրն իւրեանց կայր: - 208. ապա ցուցին զտեղին ուր ծածկեալն էր. զոր առեալ վարեցին ի գերութեան, և ոսկի և արծաթ անբաւ խաղացուցին ի դուռն թագաւորին: - 142. Աստանօր ոչ է ինձ յայտ թէ զի՞նչ կամ ո՞րպէս դիպեցաւ լինել

տոհմին Արծրունեաց, կամ ո՞ւր, կամ զիա՞րդ. – 94. Բայց տուաւ յաղթութիւնն այն մեծ ի ձեռն զօրավարին Ապումուսէի, զի լցցի զոր ասաց Տէր ի բերանոյ Ամովսայ Մարգարէի, ,,խորտակեցից զնիզակս Դամասկոսի,, , որում այժմ Դմիշկն կոչեն, ուր ելին զհետ Բուխայի: - 286. Գունդ մի հարուստ անցեալ մնացին ի Համբոյրազան աւանի Մարդաստան գաւառի, ուր եպիսկոպոսական աթոռ մարդպետականին յայնժամ փոխեալ դնէր ի Նախճաւան քաղաքէ. – 372. և եկաք յերկուս աւուրս ի տեղիսն, ուր արեգակն ոչ ծագէ. – 50. և յերկրորդումն հանդերձեալ են վերստին մտանել ի տանջանս յաւիտենականս, ուր որդն ոչ վախճանի և հուրն ոչ շիջանի: - 336. և բախեցին արտաքոյ զդուռնն ուր մտեալ էր իշխանն, և կալեալ զնա հանին ի բարձրագոյն տեղիս ամրոցին, և եդին ի բանտի ի ներքսագոյն սենեկացն. – 348. Եւ Գուրգէն Արծրունի և Մուշեղ Բագրատունի, և ինքն փութացաւ հանդերձ կաթողիկոսիւն, եկն բանակեցաւ յամուրն մերձ, ուր էր արգելեալ Դերանիկն: - 348. և դարձեալ եդին ի վերայ ի տեղւոջ վկայութեանն նորա. ի Գոռոզու մերձ ի լեառն Քշիթ, ուր էր բանակ այլազգեացն: - 290. Եւ զօրքն, որ ելեալ էին զհետ Գուրգինայ՝ եկին հասին ի սահմանս երկրին, ուր կայր Գուրգէն զօրօքն իւրովք – 226. և իսկոյն հարեալ զնա այսոյն պղծոյ և ընդ զառիվայր լերինն թաւագլոր խաղաղացուցեալ հարուստ ձգմամբ մինչ ի դաշտավայր տեղին ուր այգեստանքն: -378. Եւ ծառայ մի Դերենկին որ բանտապանն էր՝ լուծեալ զնա ի կապանացն՝ և տարեալ մուծանէ ի սենեակն ուր ննջէր Դերենիկն. – 320. և կամ ո՞ւր վատնիցէ թափիցէ զբազմութիւն նետից ի կապարճից խորհրդանոցին, չարին հնարիմացութեան: - 170. և կամեցեալ իմ պատմել և ձեռնարկել տեսանել ի ձեռն ծառայից, ուր էր երջանկացն վայր - 50. Եւ հասեալ ի մի վայր գան հովիտն Կուղան, ուր Գուրգէն բանակ արարեալ /362/ էր ի Կարկինեանս տեղւոջ բազմաձեռն զօրու. – 364. Եւ հրամայեաց ածել զնա յատեանն, ուր կային միաբան ժողով զօրագլխացն: - 290. Եւ յետ խաչայարդար պայծառութեանն իջեալ ի լեռնէն Գագիկ ի ստորոտ լերինն, ուր աբեղայիցն բնակէին սքեմաձևքն: - 394. և շփոթեալ լի աղաղակաւ երկիրս, և ուր հասանէին՝ աւերէին ասպատակաւ և աւարաւ և յափշտակութեամբ. – 298. և վառեալ ի զէն և յասպազէն՝ արձանացան իբրև զմի այր՝ և յանդուգն դիմացուածով խուռն յարձակմամբ հարեալ ի դիմի, ուր քաջքն այլազգեացն ճակատէին ընդ աջաթև /380/ կողմն. և պատառեցին զգունդն, և պարտեցին զախոյեանսն. – 382. զի ասէ, ,,որ աներկիւղն է՝ անկանի յորոգայթս և ի վիհս, և ի տեղիս ուր ոչ եղիցի այցելութիւն յաւիտենից,,: - 354. ընդդէմ նայելով լերանցն Այրարատեան ազատն Մասեաց, ուր Արտաւազդն Արտաշէսեան քարավիժեալ խոհամանայր ի կոշտն կոհակին: - 392. ընտանեգոյնս ևս ձայնի կոչելով՝ ո՞ւր ես Ադամ, աւաղականս նմա գորովալիր զանկումնն, թերևս ինքեամբ իսկ զօգտակարօքն տածիցի: - 20. արդ ո՞ւր է Աստուածն այն, զոր դուդ ասես, վասն է՞ր ոչ փրկեաց զԿեսարիայ և զԱնտիօք և զՏարսոն և զԱմասիայ և զԵրուսաղէմ և զԱղէքսանդրիս և զԹեբայիտ և զայլ աշխարս: - 146. Իբրև հասին ուր հանդերձեալն էին՝ և երկոցունց զօրքն անհուն բազմութեամբ յանդիման եղեն միմեանց, և ճակատ առ ճակատ զգործս պատերազմին յարդարէին – 328. յորում տեղւոջ քաղաքն Տարունոյ շինեալ էր, ուր բնակեալ բայանայր զօրավարն Տաճկաց, զօրհասական արջոյն բերելով նմանութիւն, որ յաւուրս ձմերայնոյ արմատովք պարենաւորեալ՝ ի մէջ կենաց և մահու անցեալ որջանան ի բոյնս իւրեանց: - 188. որպէս ասաց Քրիստոս,եթէ ,,ուր երկու կամ երեք ժողովեալ են յանուն իմ՝ անդ եմ և ես ի մէջ նոցա,,: - 250. ուր բանակն Հայոց նստէր – 234. ուր զեղանն սուրբ և զգաւազան հովուական և զմատանին պատկերեալ և զգօտին աշխատասէր միջոյն թողեալ ի հանապազորդ յիշատակ լուսաւորութեանն մերոյ հօրն: - 104. ուր հոյլքն էրէոցն խայտան և վայրենեացն խոզից և առիւծուցն մորիքն և երամակք ցոռոց պատրաստական առ որսոյն հրճուանք առ ձեռն պատրաստ հոլովին – 392. ուր յաճախ շնչէ օդն հիւսիսային – 262. տարան ետուն ի բանտ արքունի, ուր կայր Աշոտ իշխան և այլ նախարարք ի տանէն Արծրունեաց: - 238.

ՈՒՐԱԽԱԿԱՆ - Ցայսմ վայրի ոչ մտադիւր ախորժակօք գրեմ զճառս պատմութեանս, որ տրտմականքն, քան թէ ուրախականքն յառաջանան տիրել ինձ: - 384.

ՈՒՐԱԽ ԱՌՆԵԼ - Եւ եղև յետ աւուրցն այնոցիկ, յորժամ ուրախ արար թագաւորն զնախարարսն Հայոց ի տաճարի խրախից, և խոստացաւ տալ իւրաքանչիւր ումեք զերկիր ի ժառանգութիւն – 314. և ուրախ արարից զնոսա ի տան աղօթից իմոց. - 224.

ՈՒՐԱԽԱՐԱՐ - և ընդ նմա Գրիգոր որդի Վասակայ, և սա նմանապէս ոգեզուարճ իմաստութեամբ առ լցեալ հոյակապ և անուանի ի մէջ Հայկականացս և ցանկալի լսողացս և ուրախարար տեսողաց. - 344.

ՈՒՐԱԽԱՑԵԱԼ - և չոգան ի բանակետղ իւրեանց մեծաւ յաղթութեամբ, ուրախացեալ անտրտում խնդութեամբ – 282. ցնծային հրճուէին կայտռելով, բերկրեալ և ուրախացեալ սրտիւ – 266. ընդ որ յոյժ ուրախացեալ Տիբերի պատուէ ծիրանեօք և բրաբիոնաւ ի Ստադին տեղւոջն. – 80. Ընդ որ յոյժ ուրախացեալ Շապուհ՝ խոստացաւ փեսայացուցանել զՄեհուժան ի քոյր իւր Որմզդուհի: - 102. Իսկ իշխանն Վասպուրական, այն ինչ հուպ ընդ հուպ եկն ի ժամադրեալ տեղին. ընդ որ յոյժ ուրախացեալ թագաւորն, իբրև զերծեալ ի կասկածանացն, զոր ունէր յիշխանէն Սիւնեաց: - 382.

ՈՒՐԱԽ ԼԻՆԵԼ/ԻԼ/ - անտրտում խնդութեամբ դիմեցին ի տեղի սպանմանն, իբրև ի հարսանիս երիտասարդական ամուսնութեանն, ուրախ լինել որպէս փեսայ առ հարսին. – 266. Եւ ելեալ արտաքս ի սենեկէն՝ և նստան ուրախ լինել: - 284. Եւ յոյժ հաճոյ թուեցաւ խորհուրդս այս առաջի թագաւորին, և մեծապէս ուրախ լինէր: - 196. Եւ թէպէտ տածէր և խնամէր Գագիկ աշխարհս՝ այլ ոչ ուրախ լինէին ի նա ազատատերանցն գրոխք, և կացին ի տարակուսի: - 354. և նոքա յոյժ ուրախ եղեն, զի վասն անուանն Տեառն արժանի եղեն մեռանել. – 222. և ուրախ եղև մեծապէս խնդութեամբ. – 152. զի և որք յոյժ ատեցողքն են մեր և թշնամիքն՝ տեսցեն և յամօթ լիցին, և բարեկամքն և սիրելիքն յոյժ ուրախ եղիցին,,: - 218.

ՈՒՐԱԽՈՒԹԻՒՆ - Եւ արձակեաց զնա ի տուն իւր մեծաւ ուրախութեամբ և անտրտում խնդութեամբ – 218. և դառնային մեծաւ ուրախութեամբ և անտրտում խնդութեամբ յիւրաքանչիւր տեղիս: - 176. և զսուգ և զտրտմութիւն, զոր կրէին աշխարհս յաղագս մահուանն Դերանկին՝ յուրախութիւն և ի խնդութիւն տրամադրէին. – 360. և զօր մահուան սրբոյն ամենայն Ասորեստան տօնախմբեալ մեծաւ ուրախութեամբ ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր - 254. Եւ ինձ ի վերայ տրտմականացն դէմ եդեալ առ կատարելագոյն և առ անզուգական անհամեմատ խնդութիւնն դեգերել, առ հոգևորական ուրախութիւնսն ընթանալ յետ մարմնական տրտմականացն յաճախութեանցն: - 386. և տայր զօրավարին և իշխանացն ամենեցուն պարգևս մեծամեծս, և բաշխէր զօրացն ամենեցուն դահեկանս ի խռոկս, և ճաշս և ընթրիսս ուրախութեան կազմէր ամենայն զօրացն մինչև Է օր: - 144. Յայնժամ ելեալ իշխանն Գրիգոր յերեսաց արքայի մեծաւ ուրախութեամբ և անպատում խնդութեամբ՝ և եկն եմուտ յերկիր իւր յիշխանութիւն Վասպուրական կոչեցեալ: - 314.

ՈՒՐԱՆԱԼ - այլ թէ ,,որ ուրասցի զիս առաջի մարդկան՝ ուրացայց և ես զնա առաջի Հօր իմոյ որ յերկինս է. – 256. եթէ ,,եկայք առ իս ամենայն աշխատեալք և բեռնաւորք, և ես հանգուցից զձեզ,, , և թէ ,,որ ուրասցի զանձն իւր վասն իմ՝ գտցէ զնա,,. - 252._ և առ Տիմոթէոս գրէ, հաւատարիմ գոլ զզօրութիւն հաւատոցն, ասէ, ,,թէ ուրանամք՝ և նա ուրանայ զմեզ. թէ չհաւատամք՝ նա հաւատարիմ մնայ,,: - 258. և առ Տիմոթէոս գրէ, հաւատարիմ գոլ զզօրութիւն հաւատոցն, ասէ, ,,թէ ուրանամք՝ և նա ուրանայ զմեզ. թէ չհաւատամք՝ նա հաւատարիմ մնայ,,: - 258. և դաստիարակ առընթեր ունելով զբանն տէրունական, թէ ,,որ ուրասցի զիս առաջի մարդկան՝ ուրացայց և ես զնա առաջի Հօր իմոյ,, - 264. և դաստիարակ առընթեր ունելով զբանն տէրունական, թէ ,,որ ուրասցի զիս առաջի մարդկան՝ ուրացայց և ես զնա առաջի Հօր իմոյ,, - 264. Զի չէ և չէ իսկ հնար, թէ որ հաւատայ բերանով՝ թէ ուրասցի շրթամբք – 256. ուրացան զանձինս և առին զխաչն Քրիստոսի և գնացին զհետ կոչողին, կորուսին զանձինս, այսինքն զկեանս աշխարհիս, զի զյաւիտենից գտցեն զկեանս. – 292. քանզի նա խաբկանօք առն մոգի և կախարդի ասաց լինել որդի Ամովնայ և Արամազդայ, այլ ոչ ուրացաւ մահկանացու գոլ: - 36. այլ թէ ,,որ ուրասցի զիս առաջի մարդկան՝ ուրացայց և ես զնա առաջի Հօր իմոյ որ յերկինս է. – 256.

ՈՒՐԱՑԵԱԼ - և որ ինչ ի նմանէ կան պահին պարգևք կացելոյն ի ճշմարտութեան հաւատս, և տանջանք ուրացելոցն և յետս կացելոցն - 206. զի երկոքինն ուրացեալ էին ի Քրիստոսէ. – 106.

ՈՒՐԱՑՈՂ - առ որ յղեալ բազում անգամ պէսպէս սպառնալեօք և ողոքական բանիւք հաւանութեամբ թողուլ զօրէնս քրիստոնէութեան և հաւասարակցել այլոց ուրացողացն զՔրիստոս. – 318. նոյնպէս և տանջանքն նմին նման յաւիտենականք և մշտնջենաւորք յանսպառ յաւիտեանս և յանմահ խոշտանգանս՝ պղծոցն և ուրացողացն ի սուրբ և յանբիծ հաւատոց քրիստոնէութեանն. – 264. որք ոչ առին յանձն միաբանել ընդ գունդս ուրացողացն. – 264.

ՈՒՐԱՑՈՂԱԿԱՆ - Բայց Գուրգէն զմի ամ կեցեալ փոխի յաշխարհէս, դարձեալ յուրացողական ամբարշտութենէն: - 318.

ՈՒՐԱՑՈՒԹԻԻՆ - Ասաց Բագարատ յուրացութեանն իւրում, թէ առ վտանգի նեղութեանցն՝ ուրացութիւնն ոչ ինչ վնասէ, եթէ ի սրտին գաղտնի պահէ զխոստովանութիւնն հաւատոց: - 254. Ասաց Բագարատ յուրացութեանն իւրում, թէ առ վտանգի նեղութեանցն՝ ուրացութիւնն ոչ ինչ վնասէ, եթէ ի սրտին գաղտնի պահէ զխոստովանութիւնն հաւատոց: - 254. և Զ ամ կեցեալ յետ գերադարձն լինելոյ, և մտեալ յաշխարհս՝ համարձակ զքրիստոնէութեանն ունելով զկրօնաւորութիւն, և ի զղջել յապաշաւ ի վերայ ուրացութեանն զՔրիստոս լինելով: - 336. Զայս ոչ եթէ սակս ուրացութեան ինչ ամբաստան լինի զինքեանէ, կամ վասն ժողովոցն, այլ զի ոչ յանդիմանեցին զթագաւորն, որ արտաքոյ օրինացն ամբարշտէր. – 258. զուրացութեանն ի բաց դնելով զվատթարութիւն – 336. ՈՐ Ի ՎԵՐԱՅ ՈՒՐԱՑՈՒԹԵԱՆՆ ԶՔՐԻՍՏՈՍ ՅԱՒԵԼ ԵՒ ԶԱՅՍ Ի ԿՈՐԾԱՆՈՒՄՆ ԲԱԶՄԱՑ: ԸՆԴԻՄԱԴՐՈՒԹԻՒՆ ՍԱԿԱՒՈՒՔ: - 254. Տե՛ս, ով սիրելի, զի թշնամանելն՝ լեզուին բարբառ է, և ոչ ներէ ստեղծիչն լեզուին զուրացութիւնն բարբառել, զի ոչ եթէ այլ ոք է որ ստեղծ զլեզուն, և այլ ոք է որ արար զսիրտն. – 258.

ՈՒՐԲԱԹ - և ելեալ ի Յադամակերտ քաղաքէ ի Թ ժամու ուրբաթու աւուրն, և անցեալ ընդ ծովակն Յըմբեայ, և ընդ Վարազի Զարեհաւանի. – 402. և զինքն յանձն արար երանելի եպիսկոպոսին և ճգնաւոր քահանային, հանգեաւ բարի խոստովանութեամբ ի հոռի ամսեան, որ օր Ե էր ամսոյն յաւուր ուրբաթու՝ ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր – 254. որ կատարեցան միանգամայն սրով ի միում աւուր ի մեծի ուրբաթի զատկին: - 106.

ՈՒՐԵՂԻԱՆՈՍ - մինչ ինքն Հերովդէս փախստեայ անձնապուր լեալ հանդերձ Ուրեղիանոսիւ զինակրաւ՝ անկանի առ քեռին իւր որդի Հիւրկանու քահանայի ի քաղաքն Ասկաղոն: - 78.

ՈՒՐԵՄՆ - ,,Գրեցի ձեզ, ի բաց կալ յայդմանէ, ուրեմն ոչ կամեցարուք լսել, ես զձեզ ապաշաւեմ, ասէ: - 138. Ապա ուրեմն յայտ է ըստ կարգի ասացելոցս, եթէ որ շարժէ զերկնային մարմինն՝ մի է և անբաւ զօրութիւն ունի և անմարմին է և անեղ է անապական, և ինքն ոչ յումեքէ, և այլք ամենեքեանք նովաւ. – 54. Եև անհնարին բեկմամբ խորտակեցաւ գունդն Հայոց, մինչև ի բազմացն սակաւուց հազիւ ուրեմն մազապուր զերծեալ՝ անկան յաւուր յայնմիկ ի տարապարտ պատերազմին արք անուանիք իբրև Շ - 402. և յայտ է թէ յայլմէ շարժի. և եթէ յայլմէ՝ ապա ուրեմն է՛ ոմն, որ շարժէ զերկնային մարմինն: - 54.

ՈՒՐ ԵՒ - բաժանեն զաշխարհս յերիս մասունս. տալով Աշոտի … Եւ Գուրգէն զկողմանս արևելից, յելից Աղբագոյ և որ շուրջ զնովաւ ամենայն Պարսկահայք մինչև ի մուտս Կորդաց, և ուր և ըստ այնմ իցէ հնար ածել զձեռամբ: - 360. և կորապաղատին ընդարձակեաց ելանել, զի երթիցէ ուր և կարասցէ եւ - հասանել ըստ յաջողելոյ իրին: - 348. և ամենայն ուրեք ուր և հանդիպէր զօրուն Պարսից՝ առ հասարակ սատակէր զամենեսեան, մինչ ոչ մնալոյ ապրեալ: - 148. և բազում այն են որ ի նմին իսկ սատակին. և կէսքն դիւրըմբռնելի որսորդաց լինին. և ապրեալքն սաստիկս հասուցանեն վտանգս ուր և դիպիցին, եթէ մարդկան և եթէ այլոց ինչ կենդանեաց: - 188. Եւ ուժեղացեալ դաշիկն քաղաքային ի վերայ Մուսէի զօրուն, մինչ ածին արկին զբուն բանակաւն ուր և Աշոտն մեր թուէր գոլ խօթացեալ. – 328. և Տէր ամենակալ էր ընդ նմա ամենայն ուրեք ուր և ախորժէր: - 308. զի ուր և իցէ՝ ածցեն զնա առ նա, թէ՛ պատիր խաբէութեամբ և

խորամանկ կեղծաւորութեամբ և խարդախութեամբ, կամ պատերազմաւ և մեծամեծ զօրութեամբ, ամենայն պատրաստութեամբ, արքունի կարողութեամբ, որպէս զիարդ և կարասցեն՝ առ նա հասուցանեն: - 224. Իսկ Երուանդ պահեալ զերդումն հօրն նորա՝ թողացուցանէ երթալ բնակել և կեալ ուր և հաճոյ թուիցի. – 84. Ո՞չ ածեր զմտաւ, թէ յիսկզբանացն մինչ ցայսօր ժամանակի ամենայն ուրեք ուր և գումարէր զօրն և լինէր պատերազմ և սուր և ճակատամարտ՝ երբեմն յաղթեն և երբեմն ի պարտութիւն մատնին. – 282. որք քակէին զոլ նոցա ամենայն ուրեք /210/ ուր և դիպէին զմիաբանութիւն ուխտի խաղաղութեան եղբարց և ազգականաց և բարեկամաց: - 212.

ՈՒՐԵՔ - մինչ հազիւ թէ ուրեք կարաց նշկահել զսոսա ի պատրանս խաբէութեան և ի նենգութիւն կեղծաւոր խարդախութեան զօրականաց իւրոյ տէրութեանն: - 242. Բայց քանզի ամենայնիւ ամենայն ուրեք ոչ ոք զօրեաց կալ ընդդէմ նորա յամենայն գործս զոր և կամք իւր ախորժէին՝ սկսաւ ձեռնամուխ լինել կարգաւ ընդ բոլոր աշխարհս արևելեայս – 274. Եւ ահա լոյս սաստիկ իջեալ յերկնից և ցոլացեալ ի վերայ սուրբ մարմնոյն, և շուրջ փակեալ զտեղեաւն, թէ ուրեք յարենէ նորա ցայտեալ կայր: - 224. և ամենայն ուրեք ամենեցուն բնակաց աշխարհիս անդորրեալ յանհոգս և յապահովս լինել ի ներքին և յարտաքին հազմարարաց: - 388. և ամենայն ուրեք բարեացապարտ զինքն ցուցանէր. – 168. և ամենայն ուրեք դա է պատճառ ապստամբութեան Հայոց յարքայից արքայէ. – 104. և ամենայն ուրեք ուր և հանդիպէր զօրուն Պարսից՝ առ հասարակ սատակէր զամենեսեան, մինչ ոչ մնալոյ ապրեալ: - 148. Եւ բնակեն առանձին ըստ տունս ազգաց, և այնչափ ի բացեայ են ի միմեանց՝ մինչ թէ ոք յարանց զօրաւորաց ի բարձրաբերձ տեղեաց ուժգին խանչիցէ՝ հազիւ թէ ուրեք կարիցէ առնուլ զբոմբիւն ձայնին, իբրև ի վիմաց ինչ արձագանգ/ք /գրքում՝ արձագան/ լինելոյ կարծիս բերելով – 190. և գրեթէ /գրքում՝ գրէթէ/ ոչ ամենևին ուրեք երևեցաւ այնպիսի ահաւոր տեսիլ զօրու և սպառազէն կազմութեան՝ ամենայն թագաւորաց, որ կացեալ էին ընդ ծագս տիեզերաց. զորոյ սաստիկ և ահագին որոտումնն և ճայթումնն և փայլիւն զինուցն, և որ ինչ յայնժամ զարդարեալ և զինեալ պատրաստեցան զօրքն Տաճկաց: - 284. և դուք ամենայն ուրեք ամրացեալ ի զգուշութիւն իբրև յամուր քաղաքի ընդ ձեռամբ իմով յանհոգս լեալ լինել ձեզ. – 214. և ետ հրաման ահիւ մեծաւ՝ ամենայն ուրեք կանգնել զպատկեր իւր և երկիրպագանել իբրև աստուծոյ և զոհս մատուցանել. – 40. Եւ իմ զհետ երթեալ բանից նորա հարցանէի՝ ո՞ւր ուրեք ասէք լինել զերկիրն զայն անճանօթ. – 48. և ոչ ըստ տեղիս տեղիս ցուցանէին զհանդէս մարտիցն և զյաղթութեանն քաջութիւն, այլ բոլորովիմբ ամենայն ուրեք ախոյեանայարձակ սլացմամբ ընթանայր. – 312. և Տէր ամենակալ էր ընդ նմա ամենայն ուրեք ուր և ախորժէր: - 308. Իսկ Գուրգէն օր ըստ օրէ աճէր զօրութեամբ ի բազում քան թէ ի սակաւ տեղիս, զոր ի Տարօն և զոր յԱնձաւացիս և զոր յԱրզն և զոր առ այլ ամենայն ուրեք – 324. Խորտակէր և զնշան տէրունական Խաչին, զոր ուրեք ուրեք կանգնեալ լինէին. քանզի յոյժ ստիպէր զնա հոգին մոլեկան: - 168. Նմանապէս, կամ թէ ևս հրաշափառագոյն զյաղթութեան մարտսն յօրինեալ յարդարեաց զպարտութիւն ի վերայ ազգին Իսմայէլի մեծ զօրավարն Գուրգէն, և իսպառ կանգնեաց զնշանակ յաղթութեան ամենևին ամենայն ուրեք ընդ ամենայն տեղիս. – 312. Ո՞չ ածեր զմտաւ, թէ յիսկզբանացն մինչ ցայսօր ժամանակի ամենայն ուրեք ուր և գումարէր զօրն և լինէր պատերազմ և սուր և ճակատամարտ՝ երբեմն յաղթեն և երբեմն ի պարտութիւն մատնին. – 282. ո՞վ ոք յաշխարհակալաց ոչ մատնեցաւ ի սուր. և են իշխանք ազգաց, է ուրեք որ զօրանան, և է ուրեք որ տկարանան,,: - 282. ո՞վ ոք յաշխարհակալաց ոչ մատնեցաւ ի սուր. և են իշխանք ազգաց, է ուրեք որ զօրանան, և է ուրեք որ տկարանան,,: - 282. որով իցէ ասել արևմտական զդրախտն կամ /18/ ի միջոցի ուրեք. –20. որք քակէին զոլ նոցա ամենայն ուրեք /210/ ուր և դիպէին զմիաբանութիւն ուխտի խաղաղութեան եղբարց և ազգականաց և բարեկամաց: - 212. Քակտեսցի և աւերեսցի պերճութիւն տաճարաց քոց, և ամենայն ուրեք անարգեսցի: - 148. հազիւ ուրեք ակնակառոյց աչօք նկատել զկատար լերինն – 48.

ՈՒՐԵՔ ՈՒՐԵՔ - Խորտակէր և զնշան տէրունական Խաչին, զոր ուրեք ուրեք կանգնեալ լինէին. քանզի յոյժ ստիպէր զնա հոգին մոլեկան: - 168.

ՈՒՐՈՒԱԿԱՆ - Իսկ Նեբրովթ որդի Քուշայ որ ի Քամայ՝ յոյժ ուժգնագոյն ոչ միայն քան զառաջինսն ուրուականաց լինել, այլ և ոչ Հերակլի – 36. Քանզի առաջնոցն ուրուականք և ստուերականք ոմանք՝ ըստ իւրաքանչիւր կարծեաց թուելոց վրիպեցան յաստուածածանօթն գիտութենէ հոգեշահ նահապետացն: - 40.

ՈՒՐ ՈՒՐԵՔ - Եւ իմ զհետ երթեալ բանից նորա հարցանէի՝ ո՞ւր ուրեք ասէք լինել զերկիրն զայն անծանօթ. – 48.

ՈՒՐՋԱՑԵԱԼ - և բունեալ ուրջացեալ բնակեալ էր ի նմա սատանայ զօրօք իւրովք – 248.

ՈՔ - և ոչ համբարք ի սմա բաւական, թողումք այլ ումեք ասել - 216. ,,ի քո իսկ ինքնակալ թագաւորութեանդ և ի յօրէնս առաջնորդին ձերոյ գրեալ է՝ ոչ գոլ ճշմարիտ վկայութիւն մինոյ ուրուք և հաւատարիմ – 244. ,,ոչ են օրէնք թագաւորութեանս մերոյ ի պայքար բանից զոք արկանել, և յերկարել ի բանս, որչափ արարաք ընդ ձեզ, զոր ինչ այլ արասցուք. – 246. այլ քայքայեալ ցրուեցան յոր կողմ և աճապարել ախորժեաց ոք - 116. այլ և ամենայն թագաւորք Ասորեստանեայց որդի ի հօրէ առեալ զիշխանութիւն ունէին, ոչինչ արժանի յիշատակի ուրուք գործեալ – 56. Այլ զմեզ գիտես ո՛վ ոք եմք և ուստի՛ և յումմէ, և թէ զի՛նչ անուն է մեր՝ կարի քաջայայտ է քեզ - 242. Այլ ճշմարտագոյնք են Սողոմօնեանքն, զի ասէ, ,,վա՛յ միումն. յորժամ գլորիցէ, ո՞ յարուցանիցէ զնա,,. և եթէ ,,լաւ են երկուք քան զմի, զի եթէ միովն գլորիցի ոք՝ կանգնեսցի,,: - 354. Անդէն փութով և անյապաղ երագութեամբ հրաման ետ, զի որ ոք և հաճոյ թուիցի Սմբատայ՝ մի ոք իշխեսցէ արգել լինել: - 218. Անդէն փութով և անյապաղ երագութեամբ հրաման ետ, զի որ ոք և հաճոյ թուիցի Սմբատայ՝ մի ոք իշխեսցէ արգել լինել: - 218. անտի և անդ ոչ ոք զօրէր Զրուանայ թագաւորել. բայց միայն կին մի անուանի Դիոնիսեայ, հարստայեղց վավաշոտ հրամանի բարուք. – 16. Ապա ուրեմն յայտ է ըստ կարգի ասացելոցս, եթէ որ շարժէ զերկնային մարմինն՝ մի է և անբաւ զօրութիւն ունի և անմարմին է և անեղ է անապական, և ինքն ոչ յումեքէ, և այլք ամենեքեանք նովաւ. – 54. Առ որս ասեմք՝ եթէ ըստ ամենայն յեղանակի անբոյժն ի բարւոյ, ո՞չ մի ինչ ո՞չ ունի մասն ազնիւ՝ թէ ասիցէ ոք անիծիւք ի բաց բառնալ. – 22. Աստանօր սակաւուք բացայայտեցից զորպիսութիւն բնակչաց լերինն. թէ զիա՞րդ կամ ո՞րպիսի ոք են – 190. Արդ ո՞վ ոք արժանի յոյժ ծաղու զբանք ուսմանս այսորիկ համարեսցի. – 46. Բայց յո՛վ ոք կամ ո՞ր աշխարհ, զոր ոչ կործանեաց Աւշին պէսպէս լլկանօք հինի ասպատակաւ, աւարառու յափշտակութեամբ, սպանմամբ սրոյ և սովոյ: - 374. գուցէ ակամայ երթալովն, և նեղիչն աշխատելով ի պահելն՝ յաճախեսցէ ի վնաս և ի քէն, և օճան բարւոյ յայնմ հետէ ոչ ևս ումեք հասցէ գտանել,,: - 216. Եղեն ընդ նմա և ուխտեցին ուխտ, և ետուն նմա կին յազգէն իւրեանց և պատրաստեցան լինել ընդ նմա, որպէս և կամք իւր հրամայեսցեն. զոր թէ ասիցէ ոք՝ ի հրամանէ Աստուծոյ լինել սկիզբն առաջարկութեանն այնորիկ: - 160. և իւրաքանչիւր ոք այր զընկերէ և զեղբօրէ իւրմէ ի չարիս խոկային: - 194. և խորհեցաւ սա զմիտս զայս, եթէ որ առ վտանգի նեղութեան դարձցի ոք առ ի պաշտօն կռոցն՝ ոչինչ է, եթէ սիրտ իւր ուղիղ պահեսցէ զհաւատսն Քրիստոսի: - 256. և յարգելուլ զնա մեծամեծաց նախարարացն՝ չանսաց բնաւ ումեք – 228. և ահա իբրև արք Ռ ի յընտրելոցն Աղուանից պատահեալ նոցա հարին զնոսա և ածին փախստեայ ի բանակն և ինքեանք դարձան ողջանդամ, և ոչ մի ոք վիրաւորեցաւ. – 282. Եւ ամենայն մեծամեծքն հանդերձ խառնաղանճ /240/ ամբոխիւն դռոթ տուեալ, ոչ միայն ըստ հրամանի թագաւորին ելանել զհետ աղաղակի փողոյն և արքունի կոչնականացն՝ այլ փութացան տեսանել, թէ ո՛վ ոք և ո՛րպիսիք են սոքա – 242. և ամենայն ոք ըստ ազգս ազգս փութայր ի հնարս ինքեանց վաստակոցն մի զմիով ելանել. – 268. և ամենայն ոք խորհէր ի սրտի իւրում խնամով ի չարիս: - 28. և այլքն ցրուեցան յո՛վ և աճապարեաց ոք. – 332. և բացեալ զտուն դիւանապահ մատենիցն և գտեալ զսերունդս Սենեքերիմայ, և զգործս նոցա զմիոյ միոյ ուրուք յանուանէ զառն իւրաքանչիւր զանուն և զքաջութիւն իւր, նոյնպէս և զայլն ամենայն ըստ տոհմից տեղեաց - 74. Եւ բնակեն առանձին ըստ տունս

ազգաց, և այնչափ ի բացեայ են ի միմեանց՝ մինչ թէ ոք յարանց զօրաւորաց ի բարձրաբերձ տեղեաց ուժգին խանչիցէ՝ հազիւ թէ ուրեք կարիցէ առնուլ զբոմբիւն ձայնին, իբրև ի վիմաց ինչ արձագանգ/ք/ գրքում՝ արձագան/ լինելոյ կարծիս բերելով – 190. և գնացին կալան զամրական տեղիս ոմն ոք և փութացաւ մտանել յամուրս ի բերդսն որ ի Վասպուրականի. – 238. և դահճացն հանեալ զսուսերն՝ դիմեցին ի վերայ նոցա իբրև զգազանս արիւնարբուս, և ծեծէին սրովն, իբրև ոք զի հատանիցէ փայտ ի մայրս անտառախիտս հարեալ կացնաւ, և յանխնայ անողորմ յօշէին անդամ անդամ: - 266. և եթէ ոք խախտել ջանայ՝ ի հրամանէն Աստուծոյ ոչ ժառանգէ նա զաթոռ իւր և զթագաւորութիւն: - 356. Եւ ելանէին գունդք գունդք շտապով և ճեպով մի զմիոյ կնի, և ամենայն ոք որ տեսանէր՝ ընդ մեծաւ երկիւղիւ ներքաղրեալ լինէր: - 284. Եւ եղև յետ աւուրցն այնոցիկ, յորժամ ուրախ արար թագաւորն զնախարարսն Հայոց ի տաճարի խրախից, և խոստացաւ տալ իւրաքանչիւր ումեք զերկիր ի ժառանգութիւն – 314. և զայսոսիկ թէ բարիոք ումեք թուեսցի տեսցուք. – 24. և զոր օրինակ ոք զբոլոր անդամս մարմնոյ յօշիցէ ի մասունս, և ոչ երևի տեսակ կենդանի մարդոյն, որպէս է գոյացութիւն խառնուածոյն. – 194. Եւ թերևս զանգիտութեան ոք ունիցի ասել զպատճառ. – 52. և թէ մեռանիլ ևս ումեք հասցէ՝ ի պարծանս անձին և ազգին իւրոյ համարեալ է, և պսակ մարտիրոսական ընկալցի ի Քրիստոսէ. – 276. Եւ թէ հաստատել ոք կամեսցի՝ անսասանելի կացցէ նա յայսմ աշխարհիս. ամէն: - 356. և ինքն Աշխէթ զինեալ զինքն ի զէն և յասպազէն, զոր կարծեալ ոմանց երկաթեղէն պատկեր գոգցես զերիվարն և զհեծեալն, աչացն միայն ոչ գոլով ծածկոյթ. – 272. Եւ խնդութեամբ մեծաւ լցեալ զաշխարհս, որպէս զոք ի մեռելոց եկեալ տեսանիցեն: - 372. և ծանեաւ թէ գուժկան ոք է - 230. Եւ կալեալ զդեսպանսն հանին զթուղթսն, և զարսն պահեցին ի զգուշութեան, ոչինչ ումեք զգուշացուցանելով որ ինչ եղևն: - 340. և հիացմամբ առ նորայն հայելով, թէ ո՛վ ոք էր, և ո՛րպիսի, և ո՛րպէս կորեաւ՝ ասեն, ,,զիա՛րդ դադարեաց պահանջողն, հանգեաւ տագնապօղն. եթէ ո՛րպէս իջին ի դժոխս փառք նորա,,: - 376. և մի հալածեսցի ոք ի բնակութենէ իւրմէ յօտար երկիր պանդխտութեամբ բնակել: - 234. և մի՛ այլում ումեք փոյթ առնիջիք յառաջ քան զնա ըմբռնել: - 198. և մնացեալքն կէսքն փախեան երեսաց յո՛վ և կարաց ոք զերծանել – 400. Եւ մօտ առ սոցա կայ լեառն Կաւկասու, յորում բնակեն ազգք յամենայն լեզուաց բաժանեալք, ըստ ազգս ՀԲ ազգացն, և կեան առանց առաջնորդի, և օրէնս անձանց ունին ամենայն ոք որ զինչ կամի, և ընդ մայրս և ընդ քոյրս ամուսնանալ: - 274. և յայնչափ սաստիկ և անհուն ամբոխին սուտ վկայութեանն զբոլոր բարկութիւն բռնաւորին զարթուցին ի վերայ առնն, որպիսի ոչ ի մի՛ ոմն ուրուք վերայ այնքան ժամանակս եհեղ զբարկութիւն իւր զօրավարն Բուխայ:- 290. և յարգելուլ զնա ազատանւոյն՝ չանսայ բնաւ ումեք: - 352. և նովաւ վճարիցեն զի՛նչ պէտ և լինիցին ումեք ի մեծամեծաց մինչ ի փոքունս նոցա. – 82. և ոչ առ մի՛ ոք այդչափ խնամ և հոգաբարձութիւն առնէաք, որչափ ընդ ձեզ և ընդ աշխարհ ձեր. – 244. և ոչ զոք թուլացուցանէր թագաւորել Զրուանայ, դաշնաւորել երդմամբ՝ մինչև որ ի կնոջէն Ըռեա որ ի Զրուանայ զարմիցն էր ծնեալ արու՝ անդէն ի ծննդեանն սատակէր. – 14. և ոչ ինչ փոյթ եղև ումեք հոգալ զուստեք արշաւանս և զգերփանս - 96. և ոչ միոյ ումեք կորնչել, բայց ի միջոցէ ումեմնէ, որում /գրքում՝ որուն/ անուն Աշխէթ ճանաչէր, այր պերճ և անուանի ի զօրուն քաջամարտիկ, ունելով ընդ ինքեան գունդ հարուստ /270/ իբրև ծով առելոյ զօրավարաց. – 272. Եւ ոչ ոք գտանէր ամենինի ի կողմանէ /174/ թշնամեացն որ կարէր կալ ընդդէմ նոցա, և ոչ մի՛ ոք. – 176. և որոց ոչ գործք ինչ և ոչ քաջութիւն ուրուք յայտ յանդիման ցուցանիւր. – 68. և Փրկիչն՝ ,,եթէ ոք ամօթ համարեսցի զբանս իմ,,: - 260. զի ասաց զօրավարն Աղուանից, եթէ ,,մի՛ կարծիցէ ոք զիս ապստամբ գոլ ի թագաւորէն և վասն այնր հարկանել զզօրսդ Ասորեստանի,,. – 286. զի գործ մի գործեմ ես յաւուրս ձեր, գործ որում ոչ հաւատայցէք, թէ ոք պատմեսցէ ձեզ: - 200. զի ըստ իւրաքանչիւր հասակաց՝ զմի մի ոք ի ձէնջ /214/ գթալիր սիրով մեծարէի այնչափ – 214. զի հարցեալ լինէր, թէ ո՞վ ոք, և յորո՞ց, և յումմէ՞, և ե՞րբ, և առ որո՞վք: - 72. զի մի՛ ամենինի ոք կայցէ յակաստանի, մանաւանդ զի ոչ ոք տեսեաց

ընդդիմանալ ձեռին նորա. – 296. զի ո՞վ ոք այլ ճոխ քան զՄենեքերիմայսն, /94/ զոր համարձակախօսն Եսայիաս հրապարակէ առ Իսրայէլեան զարմն զսորայս մեծափառութիւն. – 96. զի ոչ գոնեայ մի՛ ոք գոյ, որ զճշմարտութիւնն վկայէ ուսուցանելով նորա, թող թէ զբազումս: - 246. զի ոչ ումեք զայդ յանձին կալաւ Աղէքսանդրոս՝ կարծել տիրել ումեք երկրի բաց յԱղէքսանդրէ: - 70. զոր ոչ և զմի՛ ոք յիշխանաց ոմանց առաջնոց լուեալ ուրուք եթէ իցէ այսպիսի ինչ արարեալ. – 216. զոր ոչ և զմի ոք յիշխանաց ոմանց առաջնոց լուեալ ուրուք եթէ իցէ այսպիսի ինչ արարեալ. – 216. զոր սովորութիւն թէ առցէ ոք արդեօք ասել ի վերայ Փաղեգայ որդւոյ Եբերայ և կամ Առանայ որդւոյ Թարայի: - 40. զՎաչէ կացոյց ի դրան արքունի, զի ամենայն ոք նովաւ մտցէ և ելցէ յարքունիսն – 82. Իբրև ստուգեցաւ որ ինչ եղեալն էր՝ փութացան խնդրել ի քաղաքին և ի կիրճս ճանապարհին, յոր կողմ և աճապարեաց ոք, մինչ անցեալ գտին զհարեալն դիւի չարի, զի կայր դեռ կիսամեռ: - 378 իսկ այսոքիկ ոչ այլ ումեք արարածոցս պատշաճին, բայց միայն միոյ Աստուծոյ, և նա է Արարիչ: - 54. Իսկ թագաւորն Հայոց Սմբատ անպատկան վարկանելով զերթալն Աշոտի առ Աւշին, մի՛ գուցէ արդեօք և այլք դրդուիցին յիշխանացն զնորայն հետեւել ուղևորութիւն, և արգելուլն զԱշոտ՝ չանսաց ումեք: - 362. Իսկ ի դառնալ գրոցն ի յաշխարհն Մոկաց՝ ոչ ինչ ումեք փոյթ վասն այն լինելով, կարծել՝ վարդապետին զայս այսպէս կանոնեալ. – 130. Իսկ նա անեղ է և անբաւ, և ոչ յումեքէ եղեալ. և որ անեղ՝ նոյն և անապական և որ անապական՝ նոյն և մշտնջենաւոր. – 54. ճանապարհ արարեալ ընդ Ատրպատական, կասկածելով թէ գուցէ Գուրգէն և կամ մի՛ ոք ի տոհմէն Արծրունեաց և նոցին ազատաց ի կորովացն Վասպուրական հեծելոցն հասանիցէ ի վերայ և թափիցէ զնա ի զօրացն և հանցէ ի ձեռաց իմոց: - 220. Յայնժամ ողորմագին զաչսն շրջշրջեալ առ քաջ նիզակակիցսն իւր, թէ ո՛վ ոք արդեօք թերևս յօգնութիւն ինչ նմա հասանիցեն. – 354. ո՞վ ոք յաշխարհակալաց ոչ մատնեցաւ ի սուր. և են իշխանք ազգաց, է ուրեք որ զօրանան, և է ուրեք որ տկարանան,,: - 282. ոչ առ յանձն Յազկերտ նստուցանել զոք ի տոհմէ Արշակունեաց թագաւորել Հայոց – 114. ոչ ստեղծեալ յումեքէ, այլ որպէս երևիդ՝ նոյնպէս էր. և կայ մնայ, և զմարդ ինքնածին: - 48. Որպէս Պօղոս ուսուցանէ. ,,արհամարհեալ ասէ, ուրուք զօրէնս Մովսէսի՝ մեռանէր, ի բերանոյ Բ կամ Գ վկայիւք. քանի սաստկագոյն համարիմք զայն, որ զորդին Աստուծոյ առ ոտն եհար,, , և որ ի կարգին է: - 380. ունելով զտեղիս տեղիս, տալով ձեռս յովպէտ և ժամագիւտ դիպուածք ումեք հանդիպանայր – 68. Չորրորդ՝ զի զեղբայր և ոչ զօտար ոք, զոր ոչ երկիւղն Աստուծոյ և ոչ գութ բնութեան մեղկացոյց լքմամբ զձեռս արիւնարբու գազանին: - 24. Տե՛ս, ով սիրելի, զի թշնամանելն՝ լեզուին բարբառ է, և ոչ ներէ ստեղծիչն լեզուին զուրացութիւնն բարբառել, զի ոչ եթէ այլ ոք է որ ստեղծ զլեզուն, և այլ ոք է որ արար զսիրտն.– 258. Տե՛ս, ով սիրելի, զի թշնամանելն՝ լեզուին բարբառ է, և ոչ ներէ ստեղծիչն լեզուին զուրացութիւնն բարբառել, զի ոչ եթէ այլ ոք է որ ստեղծ զլեզուն, և այլ ոք է որ արար զսիրտն. – 258. քանզի սուրբ նահապետացն տասանց բնաւ ոչ երբէք ումեք երևի՞ ասել ի Մէջերկրայս ունել բնակութիւն: - 30. ,,ո՞վ ոք էք դուք և յորմէ՞ աշխարհէ, և զի՞նչ անուն է ձեր. թերևս արդեօք դո՞ւք էք ապստամբեալքն յինէն,,: - 242.

Չ

Չ/թիվ՝յոթ հարյուր/ - Իսկ ի գալ միւսոյ ամին … առեալ զօրականս այրուձի կազմութեամբ իբրև Չ խաղաց գնաց երկայնագոյն հեռաւորութեամբ հասանել ի վերայ բանակին պարսկական աղխին – 402.

Չ/ժխտ.մասնիկ/ - և զմտաւ ածեալ զքսութիւնն զոր զեկուցին զԱշոտոյ կորապաղատէ առ Դերանիկն, եթէ ստութեամբ և եթէ ճշմարտութեամբ՝ մեզ չէ յայտ: - 342. ,,ոչ միայն զի չես աստուած՝ այլ շուն ես դու, և երամակ շանց՝ որ զկնի քո տողեալ սահին,,: - 40. ասէ ,,չգիտեմ, միթէ պահապա՞ն իցեմ եղբօրն իմոյ,,: - 24. բայց եթէ ստութեամբ և թէ ճշմարտութեամբ՝ մեզ չէ յայտ, և զոչն ստուգեալ՝ և ոչ գրել լաւ համարեցայ: - 348. բայց թէ որպէս եղև կատարումն իրացն մեզ չէ յայտ: - 88. և յարգելուլ զնա մեծամեծաց նախարարացն՝ չանսաց բնաւ ումեք – 228. Եւ ահա դարձեալ ասեմ, չկայ ինչ քո. և զի մի կրիցես զոր ինչ խօսեցայ ընդ պատգամաւորս քո, և աւելի քան որոգել ջանար ընդ մեզ՝ զդոյն ընդունիցիս վտանգաւորս,,: - 280. և առ չանսալ իշխանին՝ անդէն նոյն ժամայն ի մարտ պատրաստին: - 364. Եւ առ չանսալն յետուստ կողմանէ Վահան հարեալ ի գաղտնիս զգարշապար երիվարին՝ արար կաղանալ նժոյգ ասպարակողին. – 334. Եւ առ չժուժեալ այնպիսի վտանգաւոր նեղութեանն, արիաբար հասեալ ի կիրճս ձորոյն և մերկացեալ զսուսերն՝ յարձակեցան ի վերայ երիվարացն – 220. Եւ առ չհանդուրժել այնքան եկեալ հասեալ վտանգաւոր նեղութեանցն, և գազանեղէն զայրացմամբ մրմռեալ յոգի իւր ի վերայ կորստեան սուրբ հաւատոյս և կործանման աշխարհիս Հայոց – 126. և առ Տիմոթէոս գրէ, հաւատարիմ զոլ զզօրութիւն հաւատոցն, ասէ, ,,թէ ուրանամք՝ և նա ուրանայ զմեզ. թէ չհաւատամք՝ նա հաւատարիմ մնայ,,: - 258. և դուք զայսքան հատուցումն հատուցանէք ինձ, չիմացեալ ձեր զոր ասաց Դաւիթ – 214. և ելեալ յերեսացն Տեառն՝ սնոտի տաժանմամբ շինէր քաղաք, չհամարեալն յազգս զղջալից և արդարաքարոզ նահապետացն: -24. և զի չզօրեաց կալ ընդդէմ նորա, ահ արկանէր, սպառնայր չար ևս կտտանօք լլկել զնոսա, ոտնատորփ լինելով փոնգայր իբրև զձի խստերախ: - 270. և կալան անդ զտիկնայսն ամենայն և զհարճսն և զորդիսն արքայի, և զերիվարսն արքունական, որով եկեալ էր Խոսրով արքայ ի Տիսպոն՝ հանին գաղտաբար ի գիշերի, և արքայ Խոսրով ոչ միոյ իւիք չէր տեղեակ. – 150. Եւ մինչ կարի և ահագին սաստիկս կուտեցաւ ի վերայ նորա ամբոխն, և ամբաստանքն միաբարբառ զաղաղակ /288/ բարձեալ առաջի բռնաւորին զօձիս պատառեալ ասէին, ,,մահապարտ է, չէ պարտ դմա կեալ, և ոչ առնուլ տեղի պատասխանւոյ,, - 290. Եւ յարգելուլ զնա ազատագունդ վաշտիցն՝չանսայր, քանզի լուեալ էր նոցա, եթէ շրջաբերական թղթով դարան գործեալ էր նմա Աշոտոյ իշխանաց իշխանի: - 352. և յարգելուլ զնա ազատանւոյն՝ չանսայ բնաւ ումեք: - 352. Եւ նոցա ձայն բարձեալ ողորմագին պաղատանօք առ Հայրակղոս, եթէ ,,աստուածասէր և բարերար տէր, արա/գրքում՝ ապա/ ի վերայ մեր ողորմութիւն, թէպէտ և չեմք արժանի ողորմութեան,,: - 150. զի թագաւորն Լիդէացւոց ասպազինեալ զերիվարն շուրջանակի պղնձի արկանելեօք յոտից մինչ ի գլուխ բովանդակ չթողեալ տեղի՝ անկոռւելի լինել զինուի – 64. զի ոչ եթէ ատեաց զանօրէնն իբրև զանամօթն. զի քան զմեղանչելն առաւել չար այն է՝ չունել զինքն ընդ յանցաւորսն – 248. Զի չէ և չէ իսկ հնար, թէ որ հաւատայ բերանով՝ թէ ուրասցի շրթամբք – 256. զոր չառեալ յանձն սուրբ տիկնոջն Համազասպուհեայ՝ տանին հանեն ի բարձրաւանդակ ամրական բերդաքաղաքն, մերկանան ի հանդերձիցն, զի քրիստոսեան փառօքն զգեցցի. – 102. զորոյ չունի բան ասել անդր ևս քան զնա յարևելս ունել բնակութիւն մարդկան. – 18 Իսկ թագաւորն Հայոց Սմբատ անպատկան վարկանելով զերթալն Աշոտի առ Աւշին, մի՛ գուցէ արդեօք և այլք դրդուիցին յիշխանացն զնորայն հետեւել ուղևորութիւն, և արգելուլն զԱշոտ՝ չանսաց ումեք: - 362. Իսկ իբրև գիտաց բռնաւորն, եթէ չելին ի գլուխ կարծիքն զոր ի վերայ սրբոցն խորհեցաւ, որպէս գրեալ է, ,,կարծողն և արհամարհողն այր ամբարտաւան է և ոչ ինչ վճարեսցէ,,- 264. իսկ կինն ճիչ բարձեալ ասէ. ,,առ թագաւորն հասցէ գոյժ իմ,, , շրջելով ընդ բանակն հոլանի, զոր չէր օրէն տաճկական ազգի կանանց, բայց ոչինչ օգնեաց. – 272. խոկայր և մտախորհ լինէր և վասն այլոց աշխարհաց և աշխարհակալաց չառնուլ դուլ և դադար – 268. Յայնժամ տէր Գուրգէն առ /306/ չժուժել սրտին, մտրակեալ զքաջ երիվարն յորում նստեալն էր՝ և եհար զգունդն զձախակողմն Տաճկաց և պատառեաց զոազմն և դարձոյց զերեսս նոցա- 308. Նորա արհամարհեալ զառաքեցելովք, չվարկանելով արժանի

պատասխանոյ, և նովին օրինակաւ սկսաւ շրջել ընդ բոլոր աշխարհս Վասպուրական: - 178. որում պատուէր տուաւ չխառնակել յանիծեալ զաւակն Կայէնի. - 26. որպէս Պօղոսի հաճոյ թուի գրել յառ Եբրայեցիս թղթին, թէ ,,չէ բաւական ժամանակս պատմելոյ,, վասն դատաւորացն Իսրայէլի և սրբոց մարգարէիցն – 302. Չիցէ՞ լուեալ ձեր զոր ասաց Սողոմոն, թէ ,,որ հատուցանէ չար փոխանակ բարւոյ՝ չար ի տանէ նորա մի պակասեսցէ,,: - 214. ո՞վ ասասցէ յիմար արքային Զրադաշտի՝ ասա՛ ձրավաստակ աստուածոյդ քո Որմզդի՝ չաշխատել տարապարտ. – 46. Բայց մինչդեռ չև առ միմեանս հասեալ Տիգրան և Կիւրոս՝ յղէ Աշդահակ պատարագս Կիւրոսի - 62. և զի չև էր դարձեալ պատասխանի յարքայէն՝ հրաման եհաս ի կայսերէ առ Վարազդատ անյապաղ առ նա հասանել: - 110. Եւ մինչ նոքա դեռ չև հասեալ էին մերձ առ գունդն Հայոց՝ փութացաւ զօրավարն Գուրգէն յղեաց դեսպանս առ Ապուհեշմ և որ ընդ նմա զօրագլուխքն՝ աղաչել ի խաղաղութիւն – 230.

ՉԱՆՍԱՒՈՐՈՒԹԻՒՆ - Իսկ նա չանսաւորութիւն անխոնարհելի մնացեալ, և անցեալ օթագայեցեալ ի գեօղն Փեռոտակ յանդիման քաղաքին: - 352.

ՉԱՐ - ,,հատուցից չար փոխանակ բարւոյ, ատելութիւն փոխանակ սիրոյ իմոյ,, - 214. այլ համանգամայն ամենայն բարիքս Որմզդի է և լաւք, և չարք և դնք՝ Հարամանուոյն: - 46. Այլ չարիմացն հայր կոչեցեալ Մարդպետ և բնաւորեալ խորհրդոցն չարին ոչ երբէք դադարէր: - 98. բացումն դրան քան զամենայն այս չար է որ յաներևոյթս է բացեալ, դուռն կորստեան հոգոց՝ առաւել քան թէ մարմնոց – 196. Բայց Գուրգէն թէպէտ և գտանէր զնենգիչսն իւր՝ ոչ ումեք զփոխարէն չարին հատուցանէր.– 310. Բայց իշխանաց իշխանն Աշոտ անհանդուրժելի մնալով խորհրդոց չարին ի գլուխ ելանել-344. Բայց խռովիչքն ատեցողքն խաղաղութեան ոչ դադարէին նիւթել զհակառակս բարւոյն և զաճմունս չարին. մանաւանդ Վասակ որ զկարծեալ իշխանական անունն յինքեան բերէր: - 310. Բայց մեզ կայ առաջի ասել վասն Ջափրայ և չար գործոց նորա, անգիրս մնացեալ յայլոց, զոր կատարեաց ի վերայ աշխարհիս Հայոց երկայնագոյն ժամանակաւ և անըմբերելի նեղութեամբ ի մերս հանդիպեալ աւուրս, որ էր Հայոց Յ թուական: - 168. Գուրգէն որդի Ապուպելճի Վասպուրական իշխանի, ի շփոթի ժամանակին Բուխայի և ի հայրապետութեանն Յովհաննու Հայոց կաթողիկոսի, իմաստութեամբ գործեալ՝ ոչ եկաց հակառակ չարին. – 302. եթէ չար ինչ թուիցիմ յաչս ձեր, և ապիրատս գործեալ եմ առ ձեզ և խարդախութեամբ բնակեալ եմ ընդ ձեզ՝ աւասիկ յանդիման երեսաց իմոց տուք պատասխանի – 214. ԵԹԷ Ո՞ՐՊԷՍ ԵՂԵՒ ԲԱՐՁՈՒՄՆ ՉԱՐ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆՆ ՊԱՐՍԻՑ ՏԱՆՆ ՍԱՍԱՆԱԿԱՆ: - 136. և զի չզօրեաց կալ ընդդէմ նորա, ահ արկանէր, սպառնայր չար ևս կտտանօք լլկել զնոսա, ոտնատորփ լինելով փոնգայր իբրև զձի խստերախ: - 270. և ընտիր երիվարաց պատրաստել, ի նորա չար խորհրդոցն ի բաց վազել: - 344. Եւ թէպէտ յայնմանէ վրիպեցոյց ճշմարիտն Աստուծոյ պատուհաս՝ այլ չարն սովորական բնաւորեալ պահեցաւ անվրէպ: - 38. և կամ ո՞ւր վատնիցէ թափիցէ զբազմութիւն նետից ի կապարճից խորհրդանոցին, չարին հնարիմացութեան: - 170. զի ողջախոհացն քան զամենայն չար տանջանս ամօթն է. – 248 զի ,,ոչ կարէ ծառ պտուղ չար առնել, և ոչ ծառ չար՝ պտուղ բարի առնել,, , որպէս ասաց Փրկիչն – 256. զի ոչ եթէ ատեաց զանօրէնն իբրև զանամօթն. զի քան զմեղանչելն առաւել չար այն է՝ չունել զինքն ընդ յանցաւորսն – 248. զի ոչ կամիմ զմահ մեղաւորի, որպէս բառնալ նորա ի չար ճանապարհէն և կեալ: - 30. զոր ատել արժան էր և չար ի չարի վերայ, թէ հնար էր՝ հասուցանել. – 112. ԹԷ ՈՐՊԷՍ ԵՂԵՒ ԲԱՐՁՈՒՄՆ ՉԱՐ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆՆ ՊԱՐՍԻՑ, ԵՒ ՓՈԽԱՆՈՐԴԵԱՑ ՄԻՒՍ ԵՒՍ ՉԱՐ ԻՍՄԱՅԷԼԱԿԱՆ: - 156. ԹԷ ՈՐՊԷՍ ԵՂԵՒ ԲԱՐՁՈՒՄՆ ՉԱՐ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆՆ ՊԱՐՍԻՑ, ԵՒ ՓՈԽԱՆՈՐԴԵԱՑ ՄԻՒՍ ԵՒՍ ՉԱՐ ԻՍՄԱՅԷԼԱԿԱՆ: - 156. Իբրև գիտացին սուրբքն զանհուն պատերազմ չարին՝ վառեալ և նոքա զինքեանս հանապազակռիւ լինել ի ճակատուն, անխափան սաղմոսերգութեամբ զանուշահոտ աղօթս իւրեանց միշտ ի բարձունս առաքելով – 250. Իբրև ստուգեցաւ որ ինչ եղեալն էր՝ փութացան խնդրել ի քաղաքին և ի կիրճս

ճանապարհին, յոր կողմ և աճապարեաց ոք, մինչ անցեալ գտին զհարեալն դիւի չարի, զի կայր դեռ կիսամեռ: - 378. Իսկ եթէ սովորութիւնն այլանդակեալ ի չարէն ի սոյն, կանգնել պատկերս սկայից և քաջաց և բարբարոսական թագաւորաց ի պատիւ – 40. Իսկ ի չորրորդ ամին դարձեալ ի բարձրագոյն քան զառաջինն կազմեալ զմեքենայս չարին արկանել զԳրիգոր ի քուրայս նեղութեան. – 252. Իսկ սրբոյն Ներսէսի իրազէկ եղեալ չարին չարաբարոյ չարախորհրդութեանն՝ անէծս մեծամեծս և ազդոյս և զօրաւորս դնէ ի վերայ Մարդպետին – 100. Իսկ տէր Գրիգոր ի մէջ մարդակերպ գազանաց ի ժողովս խուժադուժ բարբարոսաց բնակէր, որ ևս չար քան զթունաւոր գազանս են առ մեզ – 252. խորհուրդ չար ի մէջ առեալ և զբարեկամութիւն կեղծաւորեալ, որպէս յերէկն և յեռանդն՝ և յանձն առնուն երթալ առ զօրավարն, խնդրել խաղաղութիւն. – 210. Յայնժամ իբրև ետես անօրէն զօրավարն Մուսէ, թէ ոչ ելին ի գլուխ խորհուրդ չարին յօժարութեանն … փութացաւ արձակել գուժկան յարքունիս, ծանուցանելով արքայի զոր ինչ գործեաց Աշոտ իշխանն Վասպուրական: - 176. Յայնժամ մեկնեալ ի նմանէ զօրավարն, լցեալ խորհրդովք չարին հնարագիտութեամբ՝ եկն եմուտ ընդ կողմն Ատրպատական յԱղբագ գաւառ յերկիրն Վասպուրական – 184. նա և կենդանականն որ ի նմա՝ ոչ ի բարի ինչ, այլ զի անհրաժեշտ չարին կալով անմահականս չարչարեսցի: - 22. Չիցէ՞ լուեալ ձեր զոր ասաց Սողոմոն, թէ ,,որ հատուցանէ չար փոխանակ բարւոյ՝ չար ի տանէ նորա մի պակասեսցէ,,: - 214. Չիցէ՞ լուեալ ձեր զոր ասաց Սողոմոն, թէ ,,որ հատուցանէ չար փոխանակ բարւոյ՝ չար ի տանէ նորա մի պակասեսցէ,,: - 214. սա արար զչար – 46 սա ևս աւելի խորհեցաւ չար և պատրանօք խաբէութեան որսացեալ զնախարարս աշխարհիս Հայոց՝ արար հրկէզ զամենեսեան ի քաղաքին Նախճաւան և յաւանին Խրամի, որ է ի ներքոյ Աստապատոյ վանացն, յեզր Երասխայ. – 166. ՎԱՍՆ ՉԱՐ ՅԱՆՁՆԱՌՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐԱՑՆ ԱՐԾՐՈՒՆԵԱՑ – 240. Քանզի ոչ յարմարական՝ բարւոյն և չարին ի միասին առկայանալ, և ոչ լուսոյն ընդ խաւարի, և կամ զի առողջութեանն ընդ հիւանդութեան. – 258.

ՉԱՐԱԲԱՆԵԼ - զոր ոչ առ յանձն սուրբն Սահակ գրել ինչ վասն որոյ չարաբանեն զԱրտաշրէ: - 118.

ՉԱՐԱԲԱՐՈՅ - Եւ ի ժամանակին /96/ յայնմիկ ունէր զհազարապետութիւնն Հայոց այր ժանդ չարաբարոյ, որում հայր Մարդպետ անուն էր. – 98. Իսկ սրբոյն Ներսէսի իրազէկ եղեալ չարին չարաբարոյ չարախորհրդութեանն՝ անէծս մեծամեծս և ազդոյս և զօրաւորս դնէ ի վերայ Մարդպետին – 100.

ՉԱՐԱԳՈՅՆ - Բայց նոքա ոչ վերակնեալք յօրէնս Տեառն, այլ ստացան իւրեանց անունկնդիր լսարանս, զչարագոյնն իժի և զանբժշկականն քարբի, արբեցան գինով յիմարութեանն. ստացան աչս, որովք ոչ տեսանիցեն, և ականջս, որովք ոչ լուիցեն. – 182. Իսկ Աւշին դատարկացեալ ի խորհրդոցն զոր խորհեցաւն՝ յաւել զայս օրինակ կատարել զկամս չարագոյնս: - 372.

ՉԱՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ - Աւելորդ համարիմ մի ըստ միոջէ զանօրէնութիւն քաղաքին ընդ գրով բացայայտել, զառաւելեալն Սողովմայ և Երիքովի, լցեալ չարագործութեամբք: - 270. Եւ նորա զայս ամենայն չարիս կատարեալ՝ ևս բազմագոյնս քան զայս հաստատեալ եդ ազգի իւրում օրէնս բազում և այլ չարագործութեամբք. – 164.

ՉԱՐԱԹՈՅՆ - Եւ կայր զյօնսն պոզտեալ, կոկոզաբանէր լի յոխորտանօք, խրոխտայր, եռացուցանէր ի վեր մղէր զդառնութիւն ժահահոտ մաղձոյն չարաթոյն վատախառնութեանն – 242.

ՉԱՐԱԼԼՈՒԿ - դառնապէս չարալլուկ չարչարել զքահանայս զպաշտօնեայս նորոց Կտակարանացն, զարս և զկանայս մատնել ի բանդս խոշտանգանս ծանրաբեռն հարկապահանջութեամբ.–124. հրեշտակի Աստուծոյ հարեալ ի հարուածս անբժշկականս ըստ օրինի Հերովդիայ ախտակրութեան, տորոմեալ խղխայթմամբ, չարալլուկ ուռուցմամբ զտրորումն առնոյր արիւնալից արիւնապարտ մարմինն գազանեղինին. – 376.

ՉԱՐԱԽՈՐՀ - մի գուցէ մատուցեալ առ Արտաշիր ոմանց սուտակասպաս չարախորհաց կեղծաւորութիւն իմն զմէնջ առնուցուն – 114.

ՉԱՐԱԽՈՐՀՈՒՐԴ - և առեալ զնա մտանեն ի մէջ մայրեացն, և ընդ գիրկս մտեալ Շաւասպայ Արծրունւոյ՝ զլայնալիճն լի քարշեալ հարկանէ ի թիկանց ընդ մէջ ողինն զկորովալիր մատանցն զազդոյ շարժումն թռուցեալ թափանցիկ ընդ չարախորհուրդ սրտին միջոցն դիպեցուցանէ. – 100. Չարախորհուրդն հայր Մարդպետ որդին սատանայի ոչ բաւականացաւ չարեօք մարդկան – 100.

ՉԱՐԱԽՈՐՀՐԴՈՒԹԻՒՆ - այլ նա ի նոյն միտս չարախորհրդութեան յամառեալ պնդեալ կայր: - 344. Իսկ սրբոյն Ներսէսի իրազէկ եղեալ չարին չարաբարոյ չարախորհրդութեանն՝ անէծս մեծամեծս և ազդոյս և զօրաւորս դնէ ի վերայ Մարդպետին – 100.

ՉԱՐԱԽՕՍԵԼ - Իսկ Մեհուժան մտեալ առաջի Շապհոյ սկսաւ չարախօսել զՋուիթայ քահանայէ – 104. մատուցեալ առ Վռամ հանդերձ Սորմակաւ ումեմն Արծկեցւոյ մոլեգնոտ փառամոլ աբեղայի՝ սկսան ազգի ազգի լեզուագարութեամբ չարախօսել զսրբոյն Սահակայ – 118.

ՉԱՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ - ՉԱՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ ՆԱԽԱՐԱՐԱՑՆ ՆԵՐՍԵՀԻ ԶՎԱՉԷԷ ԵԻ ԶԱՐՇԱԻՐԵԱՆ: - 80.

ՉԱՐԱԿՆՈՒԹԻՒՆ - Եւ վասն այսր իրաց նենգութեամբ և չարակնութեամբ առլցեալ, մանաւանդ յերկիւղէ՝ կարի յոյժ գրգռեցաւ պատերազմ սաստիկ ի ձեռն Վասակայ Արծրունոյ. – 178.

ՉԱՐԱՀՆԱՐ - Որ զապիրատ և զլի հնարիւք սատանայական իմաստից, չարահնար խորհրդոց բուռն հարեալ՝ մեծամեծս փքայր փոնքտալով – 200.

ՉԱՐԱՅՈՅՁ - Նա թէպէտ և զչարացաւ ընդ եղեալսն՝ սակայն զանգիտեաց թողուլ զնա երթալ, ակնածելով ի չարայոյզ ազգէն Իսմայէլի, զի դեռ ևս տիրէր բռնութիւնն, և գերեալքն և հայրն իւր սպարապետն յարքունիս էին: - 316.

ՉԱՐԱՉԱՐ - և ծառայեա ճշմարտութեան օրինաց և հաւատոց, զոր ուսաք ի մարգարէէն Մահումաթայ. ապա թէ ոչ՝ զնորին հակառակն ընկալցիս, տանջանս և մահ, և ելցես ի կենաց աստի չարաչար մահուամբ,,: - 294. Զոր առեալ զարսն ստիպեաց ի բաց կալ յերկրպագութենէն Քրիստոսի, և պատուի և պարգևաց արժանի լինել ի նմանէ, և մի չարաչար տանջանօք մեռանել: - 222. համառել պնդել ի հաւատսն Քրիստոսի զոր պաշտեաղ, և ի ձեռն չարաչար տանջանաց ելանել ի կենաց աստի – 290.

ՉԱՐԱՍԷՐ - բարիատեացն և չարասէրն Աւշին նիւթէր գայր ի վերայ Գուրգինի հասուցանել չարիս մեծամեծս – 370. դու խաւարային ես և չարասէր: - 46. Երկրորդ՝ չարասէր և աներկիւղ նախանձուցն բարք, եթէ ընդէ՞ր ոչ և նորայն ըստ նմին օրինակի եղև արատաձգեալ յԱստուծոյ: - 24. Ի սոյն աւուրս մեծ նեղութիւն եղև աշխարհիս Հայոց ի չարասէր կամաց նորա: - 166. իբր ոչ անգիտանալով Աստուծոյ զառ ի նոսայսն լինելոյ, այլ բնաւորեալն բարի անփոփոխ բնութեամբ մնալով ամենայնիւ՝ առ ի չարասէրսն զուղիղ հատուցումնն յապաղէր. – 30.

ՉԱՐԻՄԱՑ - Այլ չարիմացն հայր կոչեցեալ Մարդպետ և բնաւորեալ խորհրդոցն չարին ոչ երբէք դադարէր: - 98.

ՉԱՐԻՔ - այլ բազմացան չարիք մեր, զի մեղաք առաջի տեառն Աստուծոյ մերոյ և յետս հարաք զիրաւունս պատուիրանաց նորա – 242. զի և եօթամբք իսկ շարագրեալք չարիւք ժանդացաւ վիրագն այն ի վնաս, թէ և միատեսակ երևեսցի. - 24. ,,զո՞յ թողութիւն իմոց չարեացն /386/ գործելոց, թողո՞ւ Աստուած զիմ պարտեացն յաճախութիւն. ասացէք ինձ, տուք ինձ պատասխանի,,: - 388. Արդ եթէ Սոդոմայեցիքն, որ հրով զվրիժուցն հատուցին փոխարէնս, և դարձեալ տանջելոց են՝ որ բովանդակ չարիւք անդր երթալոց են ո՞րպիսի ակնկալութիւն տանջանաց զանց արասցէ զնոքօք. – 336. Բայց Մեհուժան ոչ բաւականացաւ կատարել զչարիսն – 106. Բայց Յամանիկն և Ահմատն և Ապլբառն և այլ ևս Տաճկաց միաւորութեամբ զնոյն չարիս երկնէին գային: - 340. Բայց յետ բազում պատերազմացն խորամանկ խաբէութեամբ կոչէ առ ինքն Շապուհ զԱրշակ ի դէմս սիրոյ խաղաղութեան, ոչ ինչ յիշատակ զչարեացն գործելոց ի մէջ առնելով. – 102. Բայց չարեացն այսորիկ հաւատարմութիւն յայտ եղեալ հաստատեցաւ ի վերայ Կայսկին

Ապլբառայ: - 342. բանսարկուք ոմանք հրապոյրս պղտորս քսութեան ածէին տանէին ի միոջէն առ միւսն, որպէս թէ զչարիսն իրերաց առ հազարապետն խորհել նիւթել յայտ ածէին և զպատճառն զմիմեամբք արկանէին ի գաղտնիս քրթմնջելով: - 342. բարիատեացն և չարասէրն Աւշին նիւթէր գայր ի վերայ Գուրգինի հասուցանել չարիս մեծամեծս – 370. գուցե կատարիցեն չարիս ի վերայ քո, և կորզեն յընքեանս զթագաւորութիւն Նինուէի: - 82. գուցէ յորժամ կատարիցեն զչարիսն զոր խորհեալ են ի վերայ քո, որպէս լուաք ի հաւատարմաց իւրեանց՝ օժանդակութեամբ Արտաշէսի մերժիցեն և զզարմ և զզաւակ քո ի թագաւորութենէ Ասորոց: - 82. ԵԹԷ Ո՛ՐՊԷՍ ԿԵՂԾԱԻՈՐԱԿԱՆ ՍԻՐՈՎ ՆԻԻԹԷՐ ՉԱՐԻՍ ԱԻՇԻՆ Ի ՎԵՐԱՅ ՀԱՅՈՑ Եւ ԻՇԽԱՆԱՑ ՆՈՑԱ: - 370. և գրեալ էր առ Բուխայ, զի մի՛ ինչ չարիս խորհիցի կամ գործիցէ առնն այնմիկ, այլ տացէ տանել զնա առ թագաւորն մեծաւ պատուով և զգուշութեամբ: - 288. և զսոյն իսկ ասէին զայսոսիկ այլովք զազիր չարեօք: - 48. և իւրաքանչիւր ոք այր զընկերէ և զեղբօրէ իւրմէ ի չարիս խոկային: - 194. և ամենայն ոք խորհէր ի սրտի իւրում խնամով ի չարիս: - 28 և այրուձի կազմեալ՝ գալ մտանել յաշխարհս Հայոց, առնել որպէս նիւթեաց զչարիսն: - 62. և բազում վնասս ի գործս արքունի կուտէին ի վերայ իշխանին Աշոտի. և քմազարդ բանիւք գրգռեն զթագաւորն ի վերայ իշխանին ի չարիս: - 180. և դժոխք ի ներքուստ դառնացան ի պատահել նմա զանբաւութիւն չարեացն ընդ իւր տանելով: - 376. Եւ ի կատարումն ամենայն չարեաց հասեալ՝ ինքն խեղդեալ ի դիւէ սատակեցաւ: - 168. և իմ թողեալ ձեզ զչարիս ապստամբութեանն ձեր, վայելեսջիք ընդ իս և տիրեցէք աշխարհին ձեր,,: - 246. և ծառայն զչարիս խորհեալ սպանանել զԴերենիկն և զաշխարհս նուաճել զիշխանութիւն Գուրգինի, զի և դիպող էր ժամն: - 320. և կայր երկիրն ի մեծ տարակուսի, լցեալ կասկածանօք չարեացն: -398. Եւ նորա զայս ամենայն չարիս կատարեալ՝ ևս բազմագոյնս քան զայս հաստատեալ եդ ազգի իւրում օրէնս բազում և այլ չարագործութեամբք. – 164. Եւ սկսան յաւելուլ ի վերայ չարեացն այլ չարիս, զի ընդ միմեանս մարտ և կռիւս դնէին յաղագս իշխանութեանն ցանկութեան, և ճեղքեցան ի միմեանց և զօրս գումարեցին ի զերծելոցն ի սրոյն և ի գերութենէն Բուխայի. – 298. Եւ սկսան յաւելուլ ի վերայ չարեացն այլ չարիս, զի ընդ միմեանս մարտ և կռիւս դնէին յաղագս իշխանութեանն ցանկութեան, և ճեղքեցան ի միմեանց և զօրս գումարեցին ի զերծելոցն ի սրոյն և ի գերութենէն Բուխայի. – 298. Զկնի այսորիկ յառաջ խաղացեալ Աիմաթ և որ ընդ նմա կայսկազենիցն գունդք, երթեալ մտանել ի քաղաքն Դուին, թերևս կարասցէ ի կատարումն՝ զոր ինչ խորհեցան՝ հասուցանել զչարիսն: - 344. ի տէրութիւն կարգելն՝ բազմադիմի չարիւք վարատեալ, և ծառայ ախտից եղև - 22. Իբրև ետես կայսր Հայրակղէս զչարիսն ամենայն, որ եկին հասին ի վերայ նորա՝ ակամայ կամեցեալ ցուցանել բարեկամութիւն՝ ել ընդ առաջ նոցա, մեծարել իբրև զվաստակեալս և զհիւրս, ընկալաւ զնոսա մեծամեծ /142/ ընծայիւք. – 144. Իսկ քաղաքապետն որում Ապլբերս կոչէին, ձեռնտուութեամբ պարսկային զօրու սպասէր նմա ի չարիս ի բազում աւուրց. – 352. Իսկ եթէ՝ մշակն մեղաց և անդրանիկն ամենայն չարեաց, որ ի յօձն բունեալ ոչ անիծաւ, որպիսիս ուսուցանէ վնասապարտութիւն օձին առ ի պատժականութեանն գտանել պարտաւորութիւն, որ ոչ յընքենէ միայն, այլ մանաւանդ ի գտողէն չարեաց: - 22. Իսկ եթէ՝ մշակն մեղաց և անդրանիկն ամենայն չարեաց, որ ի յօձն բունեալ ոչ անիծաւ, որպիսիս ուսուցանէ վնասապարտութիւն օձին առ ի պատժականութեանն գտանել պարտաւորութիւն, որ ոչ յընքենէ միայն, այլ մանաւանդ ի գտողէն չարեաց: - 22. Կամ դարձո՝ զխորհեալ նոցա չարիս ի գլուխ իւրեանց, կամ թող զի ելցեն գնասցեն՝ յով և կամեսցին,,: -82. մինչև եկին հասին ի վերայ մեր մեծամեծ չարիքս այսոքիկ և անկանգնելի գլորումնս – 182. միջնորդեալ հայրապետին երդմամբ ուխտի խաղաղութեան՝ ի բաց լքանել անյիշելի մոռացմամբ զչարեացն գործելոց զվնասս. – 348. յապաշաւանս և ի զիղջ առեկեալ ի վերայ երիտասարդական դիւրահոս արագաւէժ առ չարեացն միտեալ խակութիւն: - 386. Նոր ոմն Նաբուզարդան կամ Զամրի յայտնեալ ի յաղանդոյն Նեստորի, երեքթշուառեան վատաշուէր, վատմիրհ, զազահութեանն չարիս ախտացեալ՝ սպրդեալ

եմուտ ընդ մութ գիշերին յամրական պարսպեալ բլուր, և անցեալ ի սուրբ կոչարանին օթագացեալ. – 378. Շապուհ արքայ թագաւորեալ՝ բազում և անչափ չարիս հասուցանէր ի վերայ Հայոց աշխարհիս և Ասորեստանեայց և Պաղեստինացւոց – 104. որով մահուամբ և կամիս՝ պատրաստ եմք յամենայն հնարս չարչարանաց մտանել, զոր ուսոյց քեզ վարդապետն չարեաց հայրն քո սատանայ. – 292. Չարախորհուրդն հայր Մարդպետ որդին սատանայի ոչ բաւականացաւ չարեօք մարդկան – 100. սա էր այր ժանտ, և մոլեկան հոգւով շարժեցեալ՝ բազում չարիք մարտնչէր ընդ ազգն քրիստոնէիցն. – 168. Վեցերորդ՝ զի խաւարաւ չարեացն պատրուակեալ զոգին, մինչև զԱստուած ևս անգէտ կարծելով՝ լրբենի երեսօք պատասխանէր – 24. Քանզի ասէ՝ բազմացան չարիք մարդկան ի վերայ երկրի – 28. անդ և տապանն շինեալ եղև և անհնարին չարեացն զեղեալ ի վերայ երկրի. – 30. միանգամայն և զերկիր զազրացեալ ի բազմադէմ չարեացն գործելոցն ի նմա: - 28.

ՉԱՐՈՒԹԻՒՆ - առ մերձաւորսն կեղծաւորէր զբարեկամութիւն, և առ հեռաւորսն բարձրացուցանէր զչարութեան սպառնալիս: - 270. և եթէ վասն չարութեան գործոց նոցա տաղտկացաւ Աստուած և ետ ի ձեռս ձեր՝ բաւական լիցի ձեզ այդչափ որչափ կալէքդ. – 160 և ըստ հնարագէտ ազգի իւրեանց խորամանկ կեղծաւորութեամբ, խաղաղասէր դիմօք առ սակաւ սակաւ ջանայր կատարել զկամս չարութեան իւրոյ: - 170. և նոքա ըստ ձախողակի սովորութեանն իւրեանց օրինադրութեանն, արիւնարբու առանց բարւոյ բարեգործութեանցն մանաւանդ թէ լցեալք սատանայական չարութեամբք՝ ձայն արկեալ յամենայն քաղաքսն, խռովեալ ըստ գազանեղէն իւրեանց մոլեգնութեանցն – 398. Եւ սկսաւ գոռալ, և խորհէր զթոյնս չարութեանն թափել ի վերայ իշխանին Աղուանից, /276/ և յղէր առ նա կոչելով ի հնազանդութիւն. – 276. իբրև արար և կատարեաց զամենայն կամս չարութեանն ի վերայ աշխարհիս Վասպուրական կոչեցեալ. – 262. Իբրև գիտաց իշխանն, եթէ վճարեալ է չարութիւնն յաչս նոցա, և այլ ընդ այլոյ խօսին, և ի գաղտնիս քրթմնջեն, և անտեղի և անընդունակ հրամանաց նորա լինէին՝ ետ պատասխանի և ասէ – 214. Իսկ իբրև ծանուցաւ նմա անլոյծ միաբանութիւն ուխտի ընդ միմեանս Աշոտոյ և Բագարատայ՝ ոչ ինչ յայտնեաց զխորհուրդս չարութեանն, զոր խորհեալ էին ի վերայ նոցա. – 172. Իսկ նա ի հրապոյրս ապստամբ վիշապին ելեալ, որ բազմախարդախ չարութեամբն եհեղ առատութեամբ զդառնութիւն խրատոյն յունկն կնոջն անզգամի: - 20. Իսկ նոցա ոչ յայտնեալ զխորհուրդ չարութեանն՝ դարձուցանեն զնա անդէն, զի մի յերկբայս եղիցի գալ առ նոսա. – 226. Յայնժամ իբրև գիտաց զօրավարն, եթէ յաջողեցաւ նմա ամենայն ինչ ըստ կամաց իւրոց և ըստ հրամանի ամբարիշտ թագաւորին, ի գլուխ ելին խորհուրդ չարութեան նոցա - 238. Նոյնժամայն իբրև կատարեաց զամենայն կամս չարութեան իւրոյ ի վերայ սրբոյ եկեղեցւոյ և /262/ կործանեաց կորոյս զբազումս ի գնդէն քրիստոնէից – 264. ՎԱՍՆ ԹԱԳԱՒՈՐԻՆ ՋԱՓՐԱՅ, ԶՈՐ ԻՆՉ ԽՈՐՀԵՑԱՒ Ի ՎԵՐԱՅ ԱՇԽԱՐՀԻՍ ՀԱՅՈՑ, ԵՒ Ի ԳԼՈՒԽ ԵՀԱՆ ԶԿԱՄՍ ՉԱՐՈՒԹԵԱՆՆ, ԵՒ ՈՐ ԻՆՉ ԸՆԴ ՍՈՎԱՒ ՆԱԽ ՔԱՆ ԶԼՆՈՒԼ ՎԵՑԵՐՈՐԴ ՅՈԲԵԼԻՆԻ, ԵՒ ԵՕԹԱՆԱՍՈՒՆԵՐՈՐԴ ՈԼՈՄՊԻԱԴԻՆ, ՅԵՏ ԻՆՆԵԻՏԱՍՆ ԸՆԴԻՔՏԻՈՆԻՆ, ՅՈՐՈՒՄ ԲՈՎԱՆԴԱԿԻՆ ԺԱՄԱՆԱԿՔ ԲՌՆԱԿԱԼՈՒԹԵԱՆՆ ՏԱՃԿԱՑ ԱՄՔ ՄԻԲ ԸՍՏ ԹՈՒՈՑ ՀԱՅԵՐԷՆ ՏՈՒՄԱՐԻ. – 170.

ՉԱՐՉԱՐԱՆՔ - ,,և ո՛վ տայր ինձ վկայել ի վերայ ճշմարտութեանն և մեռանել վասն անուանն Քրիստոսի, և զարիւն իմ փոխանակ արեանն Քրիստոսի հեղուլ և զմարմին իմ փոխանակ մարմնոյ նորա ի մահ մատնել և զչարչարանս իմ ընդ նորա չարչարանսն խառնել, զի և ընդ նմա փառաւորեցայց. – 290. ,,և ո՛վ տայր ինձ վկայել ի վերայ ճշմարտութեանն և մեռանել վասն անուանն Քրիստոսի, և զարիւն իմ փոխանակ արեանն Քրիստոսի հեղուլ և զմարմին իմ փոխանակ մարմնոյ նորա ի մահ մատնել և զչարչարանս իմ ընդ նորա չարչարանսն խառնել, զի և ընդ նմա փառաւորեցայց. – 290. այրէր և խորովէր ի սիրտ իւր ի ծածուկ ընդ աւեր աշխարհին և ընդ անողորմ չարչարանս գերելոցն ի թշնամեացն: - 218. առանց ի տանջանս և ի չարչարանս լի դառն հարուածոց մտանելոյ հաւանեալ մեզ և օրէնսդրին մերոյ Մահումաթայ – 244. և կալեալ զԱնիանոս նահապետ Բագրատունեաց և

սպարապետ Հայոց հանդերձ ընտանեօք և ամենայն ազգաբանութեամբ՝ արկանէ ընդ բազում չարչարանօք – 74. և կայր դեռ ևս մեծաւ ուժով, և գոհութեամբ ընդունէր զեկեալ ի վերայ նորա չարչարանս վասն սիրոյն Քրիստոսի: - 290. զոր սարսափեմ և հիացմամբ մեծաւ յապուշ կրթին միտք իմ ընդ ժուժկալութիւն այնքանեաց բազմահնար մեքենաւոր չարչարանաց. – 106. Իսկ սպառնալիք քո և չարչարանք, զոր ասես ի վերայ իմ հասուցանել՝ խաղ մանկտոյ կամ զառանցելոց թուի յաչս իմ, և բանք քո նոյնպէս, որպէս առն անմտի և խելագար և ցնորեալ ծերոյ,,: - 290. Իսկ նոքա առաւել քան զառաջինն դիմեցին ընդդէմ չարչարանացն խաչակից լինել Քրիստոսի. – 292. որով մահուամբ և կամիս՝ պատրաստ եմք յամենայն հնարս չարչարանաց մտանել, զոր ուսոյց քեզ վարդապետն չարեաց հայրն քո սատանայ. – 292. պատրաստ եմք ի կապանս, ի բանտս, ի գանս, ի հուր, ի սուր, ի ջուր, ի տանջանս հարուածոց և յամենայն հնարս չարչարանաց,,: - 246.

ՉԱՐՉԱՐԵԱԼ - զի թէպէտ նեղեալք և չարչարեալք լինէաք պէսպէս կտտանօք ի զօրացն իսմայէլական ազգացն տաճկական տէրութենէն՝ այլ սակաւագոյնք և առ փոքր ինչ ժամանակս – 194. զի մեռաւ նա ի ճանապարհի, ի կողմանս Ասորոց, յելանել նորա ի վերայ աշխարհիս Հայոց՝ չարչարեալ զսուսա որպէս խորհեցանն. – 184.

ՉԱՐՉԱՐԵԼ - դառնապէս չարալլուկ չարչարել զքահանայս զպաշտօնեայս նորոց Կտակարանացն, զարս և զկանայս մատնել ի բանդս խոշտանգանս ծանրաբեռն հարկապահանջութեամբ. – 124. և չարչարէին զնոսա ի գործս խիստ սաստկասառոյց ձմերանն դառնութեան. – 188. նա և կենդանականն որ ի նմա՝ ոչ ի բարի ինչ, այլ զի անհրաժեշտ չարին կալով անմահականս չարչարեսցի: - 22.

ՉԱՓ - Բայց որդիքն Դերանկին, Աշոտ և Գագիկ և Գուրգէն, զըստ մարմնոյ /358/ աճմանն չափ առոգ և բարձրաբերձ ձգմամբ յառաջ տանէին. – 360. և առ եղբայրականն զինազանդութեանն չափ ցուցանելով, անկշիռ վայելչութեամբ զմիմեանս լաւ համարելով քան զանձինս, հասարակ զճոխութիւն իշխանական գահընկալութեանն վարկանելով – 360. և աստի և անտի երիվարի փորոյն տախտակագործ զրգեալ ըստ փորոյն չափու մածուցեալ ի ձև վահանի զգործ արուեստի զինուն ցուցանեն: - 208. և ի չափ ինչ հասեալ բնակեցաւ առ ումեմն մեծատան ի նոցունց ազգականից. – 158. և ի չափ հպսլեալ ի տիոց տղայականաց՝ ետուն զդստերս իւրեանց կնութեան մանկանցն: - 98. և կացցէ ինքն և իւրքն ամենեքեան ի հնազանդութեան արքունի, ի հարկս և ի հասս չափոյ սակի արքունական աւանդութեանց: - 226. և ունի յորելեանք Զ և ոլոմպիադր և ընդիքտիոնք, և Գ ամ հայրապետութեան Հայոց կաթողիկոսի տեառն Զաքարիայի, և մուտ եօթներորդ ամի, յորում կային յարքունիսն իշխանքն, ըստ եօթնեկի չափոյ շարժման ժամանակաց. – 312. Իսկ աշխարհս ոգի առեալ բնակեցան խաղաղութեամբ իւրաքանչիւր ըստ չափոյ հասակի ի մեծամեծաց մինչ ի փոքունս, և գոհացեալ գթութեանցն Աստուծոյ. – 376. մանաւանդ զի ոչ բաւականանամ իմով աղքատիմաստ բանգիտութեամբ զսորայս բացայայտել զչափ ներբողականին՝ այլոց ուժեղագունից և մտահարուստ արանց թողի. – 300. որ ի վերայ եկեղեցեաց Քրիստոսի և սուրբ ուղղափառ հաւատոյ արեամբ չափ ճգնեալ նահատակեցան, և զխոստովանողական անուն ձայն ի վերայ եդեալ կարդային: - 132. որք ի միում ժամու սպանան արք Խ, ամենեքեան ի չափ հասակի եկեալ: -152.

ՉԱՓԱԲԵՐԵԱԼ - Քանզի թէպէտ և տարաժամ լրմամբ ժամանակի չափաբերեալ կենացն Աշոտի՝ հաստատնագոյն և անվրէպ լուծման կենացս առ հոգևորսն և յաւիտենականսն և անվախճան կենացն առաւելութիւնն անցեալ գնացեալ ժամանեաց – 386.

ՉԳՈՅ - ասա ի բուն մինչև աւերեսցին՝ քաղաքք ի բնակչաց, և տուն ոչ ի չգոյէ մարդկան. – 182.

ՉԻՔ - ,,լեառն մի է յոյժ անհնարին բարձր, որոյ անդր քան զնա չի՛ք բնակութիւն մարդկան,,. – 48. Յայնժամ խորհուրդ միաբանութեան ի մէջ առեալ ամենեցուն նոցա ասեն. ,,թէպէտ և ի թշնամեացն ապրեցաք՝ սակայն ի ձեռաց դորա մեզ չիք ապրել. արդ եկայք իմասցուք ինչ,,: - 150.

ՉՈՐԱՆԱԼ - բայց վասն զի ոչ ունէր արմատս՝ վաղվաղակի չորացաւ ի տապոյ բանսարկուին – 246.

ՉՈՐԵՔԹԱԳԵԱՆ - Եւ ի մեռանելն իւրում Աղէքսանդրու հաստատագոյն աներկիւղութեամբ զթագաւորութիւնն իւր միապետեալ՝ կացուցանէ չորս զօրավարս չորեքծագեան կողմանց աշխարհի, զՊտղոմէոս Եգիպտոսի և Հնդկաց, զՍելևկոս Ասիացւոց և ամենայն հիւսիսականաց, զԱնդիպատրոս Պարսից և ամենայն արևելից: - 70.

ՉՈՐԵՔՎՏԱԿԵԱՆ - և չորեքվտակեան անյաղթ և զօրաւոր գետովք ելանէ յաներևելոյն յերևելի աշխարհս: - 20.

ՉՈՐԵՔՏԱՍԱՆԵՐՈՐԴ - Եւ եղև յամի չորեքտասաներորդի Խոսրովայ արքայի, ի քսաներորդ ամի Մուրկայ թագաւորութեանն՝ ապստամբեցան ի կայսերէ զօրքն Յունաց, որք ի Թրակացւոց կողմանէն – 140.

ՉՈՐՐՈՐԴ - Եւ էր կացեալ եպիսկոպոսապետ Հայոց Զաւէն, զոր յառաջագոյն ասացաք, յետ չորրորդ ամի Շահակայ: - 110. և խոստանայ տալ նմա զտէրութիւնն զչորրորդ մասն Սենեքերիմանցն զկողմամբքն Նինուէի և զՏմորիս ամրոցաւն որ ի նմա – 62. և յետ նորա Արիաս որդի իւր որ և չորրորդ ի Նինեայ՝ ամս Լ. – 56. ի կանոնի անդ գտցես զՆինոս և զՇամիրամ և զԱբրահամ և զվեշտասաներորդ հարստութիւն Եգիպտացւոց, և ի չորրորդ դպրութեանն Յուլիանու Աղիկառնացւոյ, որպէս և ի չորրորդ դպրութեանն Մովսէսի: - 18. ի կանոնի անդ գտցես զՆինոս և զՇամիրամ և զԱբրահամ և զվեշտասաներորդ հարստութիւն Եգիպտացւոց, և ի չորրորդ դպրութեանն Յուլիանու Աղիկառնացւոյ, որպէս և ի չորրորդ դպրութեանն Մովսէսի: - 18. Իսկ ի չորրորդ ամին դարձեալ ի բարձրագոյն քան զառաջինն կազմեալ զմեքենայս չարին արկանել զԳրիգոր ի քուրայս նեղութեան. – 252. որ չորրորդ կացեալ թագաւոր ի Վաղարշակէ Պարթևէ: - 74. որպէս գրեալ աւանդեցաւ մեզ այս ի չորրորդ դրուագի խոստաբանեալ պատմութեանն Մովսէսի Խորենացւոյ, վերադարձութեան ի վերայ երեցունց դրուագեալ հատուածին – 122. Չորրորդ՝ զի զեղբայր և ոչ զօտար ոք, զոր ոչ երկիւղն Աստուծոյ և ոչ գութ բնութեան մեղկացոյց լքմամբ զձեռս արիւնարբու գազանին: - 24.

ՉՈՐՔ - Այր ոմն Զափր խրոխտ և ամբարհաւաճ. և սկսաւ եղջիւր ածել անօրէնութեամբ և գոռալով ոգորէր ընդ չորս կողմանս երկրին և նեղեալ տագնապէր զխաղաղասէրս կենօք – 170. և դիմեցին ի մէջ նոցա ի չորս առաջս, ըստ նմանութեան տեառնանման խաչին, և բախեցին զճակատն և պատառեցին զոռազմն և դարձուցին ընդ զառ ի վայրն և իջուցին ի լեռնէ անտի, և հարին ի հարուածս մեծամեծս. – 286. և թէ նոքա յերիս կամ ի չորս կամ ևս աւելիս բաժանեալ օգնական առնիցեն իւրեանց զամուրսն՝ մեծ աշխատութիւն քեզ հասուցանիցեն, և ամենայն խորհրդոց քոց խափանիչք /212/ գտանիցին – 214. Եւ ի մեռանելն իւրում Աղէքսանդրու հաստատագոյն աներկիւղութեամբ զթագաւորութիւնն իւր միապետեալ՝ կացուցանէ չորս զօրավարս չորեքծագեան կողմանց աշխարհի, զՊտղոմէոս Եգիպտոսի և Հնդկաց, զՍելևկոս Ասիացւոց և ամենայն հիւսիսականաց, զԱնդիպատրոս Պարսից և ամենայն արևելից: - 70. Յետ անցանելոյ չորից ամաց … դարձեալ Գրիգոր եղբայր Աշոտի Վասպուրական իշխանի յԱփհազաց աշխարհէն՝ նոցուն օգնականութեամբ և Վրաց զօրու ընտիր գոլով՝ եկն եմուտ յաշխարհս Վասպուրական՝ տալ պատերազմ ընդ Գուրգինայ.–310. Նոյնպէս և զպայման ժամանակացն յանբաւ բիւրս ամաց ձգեն որ ոչ և ըստ միոյ յեղանակի հաւաստանայ առ ի ցուցումն, ոչ արեգական բերմամբ ի նոյն կէտ ամսոց և աւուրց և ոչ ըստ չորից փոխմանց առ ի յեղումն ժամանակի տարւոյն, այլ և ոչ ըստ լուսնական լրութեանն և սուզականութեան: - 18. շոնջապահս ձիոցն և տաշտս գաւակացն և զանգապանս ի չորս կողմանս, ձգեալ և լանջացն զէն, և բարձրավիզ խրոխտանացն զրահս, և ոտնատորոփ փռնկալոյն մանեակս զանգակեալս, և մահիկս լուսնաձևս ի մէջ ճակատուն կապեալ – 208.

ՉՈՒԱՆ - Իսկ վասն ձեանն անկայուն զօրութեանն որ այն ինչ յամպոյն ի վայր զեղեալ լինին՝ հնարաւորեալ իւրեանց փայտս իբրև զանուրս չուանօք պարունակեալ շուրջ զոտամբք, դիւրաւ ընթանան ի վերայ ձեանն իբրև ընդ ցամաք երկիր: - 192.

ՉՈՒԵԼ - Սոքա են գռեահք Ասորոց, որ չուեցին զկնի Ադրամելեքայ և Սանասարայ որդւոց Սենեքերիմ արքայի՝ թագաւորի Ասորեստանի և Նինուէի, յորոց անուն ինքեանք Սանասնայք զինքեանս անուանեն. – 192.

Պ

ՊԱԳԱՆԵԼ - և ինքն հեռացեալ գնաց զկնի Աղէքսանդրի ի Բաբելոն, և անտի եկեալ յԵրուսաղէմ պագին անդ երկիր. Աստուծոյ: - 70.

ՊԱԼԱՏ - և շինեն նախարարքն Հայոց իւրաքանչիւր պալատս արքունականս և դաստակերտս յականաւորս, և զքաղաքն որմափակօք պարսպեն, և խաղաղեցուցանեն զերկիրս: - 126.

ՊԱԼՈՒՆԻՔ - առեալ էր ի բաժնէ /ճիշտը՝ ի բաժնի/ Գագիկ իշխանի … զՃուաշ գաւառն և զԹոռնաւան, Արտազ,Մարդաստան, Գառնի Առբերանի, Աղանդռոտ, Բառիլովիտ, Պալունիք և Մեծնունիք, Տոսպոշտունիք, Բոգունիք, Գուգան գաւառ, Արտաշէսեան: - 388.

ՊԱԽԱՐԱԿԵԼ - և պախարակելով զմոլար օրէնսդիրն նոցա Մահումաթ: - 250. նա և պախարակելով զԲէլայսն /44/ և զայլոց դիւցազանց – 46.

ՊԱԽԱՐԱԿԵԼԻ - և թէ ոչ այպանել ախորժէք զբանիւք իմովք՝ ոչ ընդհատ կամ պախարակելի թուիցի կոչել զնա նովիմբ անուամբ. – 376.

ՊԱԿԱՍԵԱԼ - Բայց քանզի խոնջեալ երիվարացն ի յերկայնագոյն ընթացիցն և վասն թանձրամած ձեանն կուտակմանց պակասեալ ուժոյն երիվարացն – 372.

ՊԱԿԱՍԵԼ/ԻԼ/ - այլ զպարտութիւն քան զյաղթութիւն յինքեանս ձգէին ի ձեռանէ Յիսէի, մինչ պակասել պատրաստութեանն բերդին, մանաւանդ ջրոյն սակաւաւորութիւն. – 362. Եւ առհասարակ ամենայն տիեզերք ծխեալ տեսանիցեն, և ի քէն ամենևին հուրն ոչ պակասեսցէ յաւիտեան, իբրև զինոց խեցագործաց այրեսցիս, և քեզ ոչ եղիցի հանգիստ: - 164. և երիվար մարզպանին պակասեաց առ վազն – 402. Եւ յորժամ դարձեալ պակասիցէ զօրութիւն ջերմ օդոյ հարաւային հողմոյն /260/ … յայնժամ վիշապն նեղի, շտապի, տագնապի բռնութեամբ ուժոյ զօրութեանն – 262. Չիցէ՞ լուեալ ձեր զոր ասաց Սողոմոն, թէ ,,որ հատուցանէ չար փոխանակ բարւոյ՝ չար ի տանէ նորա մի պակասեսցէ,,: - 214. և հարան սատակեցան պակասեցան զօրքն արքունի ի զօրացն Ծանարաց – 276.

ՊԱԿՈՒՑԱՆԵԼ - Զի թէ միոյ փայլատակման ընթացք և ճայթումն ամպոց բաւական է պակուցանել քաղել զուշեղութիւն ոգւոց, զի՞նչ ինչ յայնժամ կրէին ոգիք մնացելոցն յերկրի, ի սահանաբաց և յանդնդաքակ վրդովմանցն հոսելոց, նախ քան զջրհեղեղ ջուրց սատակումնն: - 32.

ՊԱԿՈՒՑԵԱԼ - Եւ նորա առ ահն պակուցեալ, ասէ. հայր իմ, խնայեա յիս. և այլ ոչ զօրեաց բարբառել ինչ: - 320.

ՊԱԿՉԻԼ- Եւ այնչափ և առաւել քան զսոյն կազմութեան սպառազէն պատրաստութեանն՝ սաստիկ տարակուսանօք և մեծ երկիւղիւ պակչէին յահէ հայկասիրտ իշխանին և յաղթող նահատակին մեր Աշոտոյ – 210.

ՊԱՀ - Բայց քանզի ընդարձակ էր պահն ՀողցայՀ՝ փութանակի եկն եհաս Ժիրաք ի գաւառն Ռշտունեաց և զզօրսն առխթեալ ի ձորն Առուանից, ի սահմանս Մոկաց. – 202.

ՊԱՀԱԿ - Եւ արգելին փակեցին զպահակս ամրականացն և զկիրճս ձորոց, որ հանէին յերկիր նոցա մտանել յամուրսն: - 274. յորոց վերայ սուր եղեալ զբազումս սպանին և զնս բազումս վիրաւորեցին և զյոլովագոյնսն ի գերելոցն հանդերձ ընտանիւք իւրեանց զերծին ի նոցանէ և անցուցին ընդ պահակ ձորոյն յամրական կողմանս լերին: - 220.

ՊԱՀԱՆՋԵԼ - Այսու զպտուղ շրթանց մերոց խոստովանելով յանուն նորա պահանջէ սպառնալեօքն և խոստմամբքն: - 256. և այնպէս անկարօտս առ պիտանացուս հոգ տարեալ՝ գլխաւորեաց որ ինչ շինութեան և խաղաղութեան աշխարհիս նպաստաւոր առ օգտակարագոյնսն պահանջէր գործառնութեան եղանակք – 392. Եւ մի հարկաց ինչ կամ զօրաց կամ այլ ծառայութեան խափանիչ լինելոյ կամ ի վնասս արքայի խառնելոյ փոյթ արասցուք պահանջել վրէժս. – 196.

ՊԱՀԱՆՋՈՂ - և հիացմամբ առ նորայն հայելով, թէ ո՛վ ոք էր, և ո՛րպիսի, և ո՛րպէս կորեաւ՝ ասեն, ,,զիա՛րդ դադարեաց պահանջողն, հանգեաւ տագնապօղն. եթէ ո՛րպէս իջին ի դժոխս փառք նորա,,: - 376.

ՊԱՀԱՆՋՈՒՄՆ - զկարգին յառաջ վարել զպահանջումն, թերևս արդեօք գործակցօք յանդգնեցայց վարել առ ողբերգակս: - 352.

ՊԱՀԱՊԱՆ - այլ և ոչ պահապանաց ոմանց ռամկաց որ պահիցեն զամուրքս: - 216. ասէ ,,չգիտեմ, միթէ պահապա՞ն իցեմ եղբօրն իմոյ,,: - 24.

ՊԱՀԱՐԱՆ - Եւ ոսկեգործ ականակապ կազմեալ՝ պատեաց ոսկով զփրկագործ սուրբ խաչն, և ընդելուզեալ մարգարտով զարդարեաց զսխրագործ փայտն, հիւսնեալ ի մէջ անուշահոտ փայտից, թողեալ մասն ինչ արտաքս ոսկեպատ պահապանին, յառաջնում իւրոյ քառածրագիծ խաչակերտ փայտեղէն զգրոցկանն: - 394.

ՊԱՀԱՐԱՆԵԱԼ - Ազդ լինէր յոմանց գրումն անյայտիցն, թէ ,,այս ոմանք այսորակ երիվարօք յայս նիշ նիւս կեղթում, ի մէջ բդեղի պահապանեալ նամակ տանին ընդ կողմն Ապահունեաց. արդ զգուշացիր ճանապարհիդ,,. - 340.

ՊԱՀԵԱԼ - զոր ժողովեալ պահեալ և կնքեալ ունէր յօր հատուցման վրիժուց՝ հատուցանել մեզ ըստ գործս մեր, ի հարկանել զքարի զոտս մեր. – 196 ըստ այսմիկ և այլ առասպելականք, և գիր մատենական ի նմանէ գրեալ և պահեալ ի Բաբելոնի բազում զգուշութեամբ. -36. Իսկ Երուանդ պահեալ զերդումն հօրն նորա՝ թողացուցանէ երթալ բնակել և կեալ ուր և հաճոյ թուիցի. – 84. Քանզի ոչ կարացեալ իմանալ զդէմ փախստէի Արտաշէսի, և այն ի տեսչութենէ Աստուծոյ այնպէս պահեալ լինէր – 84.

ՊԱՀԵԼ - այլ ահա գործել զարդարութիւն և պահել զպատուէրն ասացեալ նմա. – 20. այլ և երկիւղ ոչ սակաւ ունէր զնա, զի բազում գունդք սուսերամերկաց շուրջանակի պահէին զնա: - 282. այլ և ոչ պահապանաց ոմանց ռամկաց որ պահիցեն զամուրքս: - 216. այլ տանելով մեր առաջի թագաւորաց և դատաւորաց վասն իմ ի վկայութիւն՝ պահեսցուք զբարիոք դաւանութիւն և վկայեսցուք որպէս Փրկիչն առաջի Պոնտացւոյ Պիղատոսի. – 260. Առ որ զբարեկամութիւնն ողջ պահելով յղէ զնոյն Քսերքսէս և զԱրշէզ որդի նորուն քառասուն հազարաւ. – 66. Ասաց Բագարատ յուրացութեանն իւրում, թէ առ վտանգի նեղութեանցն՝ ուրացութիւնն ոչ ինչ վնասէ, եթէ ի սրտին գաղտնի պահէ զխոստովանութիւնն հաւատոց: - 254. Բայց Ապումրուան զԳագիկ որդի Դերանկին պահէր ընդարձակի, հանեալ ի կապանաց բանտին: - 368. Բայց Դերենիկն կալեալ զնա պահէ ի զգուշութեան, ոչ ինչ ստնանել նմա, բաց ի կապանացն յորս արկեալ էր զնա, ըստ հատուցմանն բարւոյ. առ ձեռն պատրաստ կշռեաց նմա և օրհնեցաւ ի սրբոյն Զաքարիայէ: - 320. Բայց հրաման ետ Դերանիկն Գրիգոր հարազատի իւրոյ ի նոյն տանէ Արծրունոյ, և կալաւ զնա և եդ ի յամուրսն Սևան. և հրամայեաց Հասանկան քեռորդւոյն իւրոյ՝ պահել զնա յընդարձակի: - 342. բայց միայն տէր Ապումկդէմ և որք ընդ նմա պահէին զպահպանութիւն գիշերոյն և դիտէին զդիտաւորութիւն զօրացն – 228. գուցէ ակամայ երթալովն, և նեղիչն աշխատելով ի պահելն՝ յաճախեսցէ ի վնաս և ի քէն, և օճան բարւոյ յայնմ հետէ ոչ ևս ումեք հասցէ

գտանել,,: - 216. Երկրորդ՝ զի և ոչ հաւատայր Գուրգէնի՝ ամբողջ պահելով, զոր ինչ միջնորդեն երդմամբ, զիօրն իւր կիրսն ի նորայն հօրէն կրեալ յուշ առնելով: - 316. և խորհեցաւ սա զմիտս զայս, եթէ որ առ վտանգի նեղութեան դարձցի ոք առ ի պաշտօն կոռցն՝ ոչինչ է, եթէ սիրտ իւր ուղիղ պահեսցէ զհաւատսն Քրիստոսի: - 256. և ամենեքեան որ պահիցեն զշաբաթս իմ և ոչ պղծիցեն, և պահիցեն զպատուիրանս իմ և կացցեն յուխտին իմում՝ տարայց զնոսա ի լեառն սրբութեան իմոյ – 224. և ամենեքեան որ պահիցեն զշաբաթս իմ և ոչ պղծիցեն, և պահիցեն զպատուիրանս իմ և կացցեն յուխտին իմում՝ տարայց զնոսա ի լեառն սրբութեան իմոյ – 224. և այնու աղագաւ կարաց շէն պահել զերկիրն շատամարդկութեամբ: - 90. Եւ եղև մինչ կային իշխանքն ի միաբանութեան առանց կարծեաց կասկածանաց ի հպատակութեան ելեալ յարքունուստ հազարապետին /340/ որդւոյն Հալթի, և զմիաբանական սիրոյն շաղկապ ի միասին յօդեալ պնդեալ անքակ պահէին – 342. և զի ասէ՝ գործել և պահել՝ ոչ իբր ի լիութիւն ամենակատար դրախտին կամ պահպանութիւն ի վնասակարաց – 20. Եւ թէպէտ յայնմանէ վրիպեցոյց ճշմարիտն Աստուծոյ պատուհաս՝ այլ չարն սովորական բնաւորեալ պահեցաւ անվրէպ: - 38. Եւ կալեալ զդեսպանսն հանին զթուղթսն, և զարսն պահեցին ի զգուշութեան, ոչինչ ումեք զգուշացուցանելով որ ինչ եղևն: - 340. և կալեալ զնա եդ ի բանտի ի Նկան բերդի և զամրոց նորա եհան ի նմանէ, և կացոյց զհաւատարիմս իւր պահել զնա, և զտուն և զստացուածս հանեալ ի նմանէ՝ և կացոյց ի վերայ աշխարհին զիւր գործակալս: - 348. և հրամայեաց զինուց վառելոց զինուորաց պահել զնա – 220. Եւ հրամայեաց պահել զնա յընդարձակի – 226. Եւ մեք հետևեալ Աստուածաչունչ գրոց՝ պահեսցուք անբիծ զհաւատս սրտից, և մաքուր զխոստովանութիւն շրթանց, ըստ սրբոյն Պօղոսի վերաբերեալ զօրինականն – 258. և նստան պահել զպահպանութիւն իւրեանց և աշխարհակոյտ ամբոխին բնակաց իւրոյ տէրութեանն: - 282. և որ ինչ ի նմանէ կան պահին պարգևք կացելոյն ի ճշմարտութեան հաւատս, և տանջանք ուրացելոցն և յետս կացելոցն - 206. զի անպատերազմասէր և խաղաղասէր բարք նոցա յամուր զգուշութեան պահէր զնոսա. – 56. զշրթունս մեր մաքրեսցուք ի մաքուր խոստովանութիւն հպելով և զմիտս մեր սուրբ պահելով ի հաւատս ճշմարիտս. – 256. ընդդէմ արաբացի ասպատակողացն յարիւն և յապաժոյժ ի վերայ հայրենի աշխարհի մարտուցեալ և զհոգի և զմարմին փոխանակ սրբոց եկեղեցեաց Քրիստոսի և ի նոյն հաւատացելոց ի Հայր և յՈրդի և ի Հոգին սուրբ, առ զնոսա ամբողջ և անբիծ պահելոյ – 300. ի մտի եդեալ զի այն ինչ, իբրև թէ ի վերին երեսս հաճիցեն զմիտս թագաւորին, և ի ներքին խորհուրդս պահիցեն զխոստովանութիւնն որ ի Քրիստոս. – 248. մի միայն մնացեալ զիւրականն պահելով լեզու. որ Եբրայեցւոցն ասի նահապետ Եբեր որդի Սաղայի - 40. մինչ քաղցրատենչ քունն ի վերայ հասանէր որ զպահպանութիւն գիշերոյն պահէին՝ նորա ամբարձեալ զպղծալից ձեռն ի սրբութիւն սրբոցն և առեալ զսուրբ նշան խաչին Քրիստոսի և ընդ պատուհանն արտաքս ելեալ – 378. Նոյնպէս եթէ ոչ հաւատք սրտի և խոստովանութիւն շրթանց ամբողջ պահիցին՝ ոչ կարասցէ հետևել ճշմարիտ դաւանութեանն ի Հայր և յՈրդի և ի Հոգին սուրբ – 256. Նստան երկոքին կողմանքն պահել զպահպանութիւն իւրեանց մեծաւ զգուշութեամբ, և ետուն ժամ անսալ միմեանց՝ ոչ ելանել ի պատերազմ, մինչև եկեսցեն հրեշտակքն յարքայէ, զոր առաքեցինն: - 286. Որ անսայթաք հաւատով յառաջացաւ առ աւարտումն պատերազմին փութացեալ, և ելեալ յամրական տեղւոյն սակաւաձեռն զօրականաւն, որ պահէին զպահպանութիւն Շամիրամ բերդին – 400. որոյ գնացեալ առնու յինքն զԳագիկ և յղէ սպառազէն պատրաստութեամբ ի Վանտոսպ առ տիկինն Վասպուրական, և պահել ի զգուշութիւն: - 350. որոյ սերմանք յիմարութեանն պատուեալ առ Բաբելացիսն պահեցաւ մինչև ի ժամանակս Աղէքսանդրի Մակեդոնացւոյ. – 38. ուստի և մեզ կարգաւորութիւն փոփոխմանց պահեցաւ ստացուածս այս: - 26. քանզի ,,բանակք հրեշտակաց Տեառն շուրջ են զերկիւղածովք իւրովք և պահեն զնոսա,,: - 252.

ՊԱՀԵՍՏ - և յերկիւղ կասկածանաց եղեալ, թէ իցէ ընդելուզեալ Տաճկաց՝ գտեալ զպահեստ գանձին ծախիցեն զզօրութիւն նորա: - 180. և բազում և ազգի ազգի հոգաբարձութեամբ տուեալ օգնականութիւնս Հայոց աշխարհիս, շինելով քաղաք Թէոդուպօլիս ի Կարին գաւառի, և զօրս կողմնակալս ի պահեստ՝ ընդդէմ կալ պարսկական յարձակմանցն: - 114. որ զջրհեղեղին իրս գուշակեաց Քսիւսիւթրեայ, և զառաջինս իւր գործոց բնաբանապէս գրել և դնել յաման պղնձի մածեալ կապարով ի պահեստի ի Սիպարացւոց քաղաքին: - 36.

ՊԱՀՂԱԻԻԿ - ԲԱՐՁՈՒՄՆ ՊԱՀՂԱԻԻԿ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆՆ ԵԻ ԹԱԳԱՒՈՐԵԼ ՍՏԱՀՐԱՑՈՅՆ: - 92. և յետ այնորիկ պահղաւիկ թագաւորաց ժամանակք, որ կոչին Պարթևք, մինչև յԱրտևան որդի Վաղարշու – 166.

ՊԱՀՊԱՆԱԿԱՆ – մանաւանդ /370/ թէ նախախնամող և պահպանական աջն Քրիստոսի հովանաւորեալ առ ապրուստ հրածին կարկտաբեր հասեալ կորստական դիպուածին, օգնութիւն հասեալ յԱստուծոյ՝ քաջասրտագոյնս զնա գործեաց և շութափեալ զնա ի ժանեաց գազանին – 372.

ՊԱՀՊԱՆԵԱԼ - ի խնամոտ և ի զգուշացուցիչ աներևութականացն պահպանեալ ըստ օրինակի ցանկոյ ամրագունի – 52.

ՊԱՀՊԱՆԵԼ - Զնա որպէս զերկիւղած Աստուծոյ ապաստան յինքեան արարեալ՝ խնդրէր պահպանել նմա. – 320.

ՊԱՀՊԱՆՈՂԱԿԱՆ - Եւ ոչ արմատոցն միայն օտար և անիմանալի սարասիցն տիպք, այլ և աներևոյթ պահպանողական և անհպելի զգուշաւորութիւնն. – 50.

ՊԱՀՊԱՆՈՒԹԻՒՆ - բայց միայն տէր Ապումկդէմ և որք ընդ նմա պահէին զպահպանութիւն գիշերոյն և դիտէին զդիտաւորութիւն զօրացն – 228. դարձեալ պարսպէ զքարաբլուրն ի պահպանութիւն ջրոյն ամրագունիւք շինուածովք – 88. ելանէ մարզպանն ի վերայ նոցա և յինքն հանէ զՏամբեր և զԸռնայ գաւառ և որ ասի Ապուջափրի բերդ, ի Վհրի քաղաքին Կորճէից զիւր կացուցանէ ոստիկանս ի պահպանութիւն ամրոցին: - 400. և զի ասէ՝ գործել և պահել՝ ոչ իբր ի լիութիւն ամենակատար դրախտին կամ պահպանութիւն ի վնասակարաց – 20.և ժողովեալ իբրև հաւ զձագ ընդ թևովք ի պատճառս պահպանութեան – 214. և նստան պահել զպահպանութիւն իւրեանց և աշխարհակոյտ ամբոխին բնակաց իւրոյ տէրութեանն:- 282. մինչ քաղցրատենչ քունն ի վերայ հասանէր որ զպահպանութիւն գիշերոյն պահէին՝ նորա ամբարձեալ զպղծալից ձեռն ի սրբութիւն սրբոցն և առեալ զսուրբ նշան խաչին Քրիստոսի և ընդ պատուհանն արտաքս ելեալ – 378. Նստան երկոքին կողմանքն պահել զպահպանութիւն իւրեանց մեծաւ զգուշութեամբ, և ետուն ժամ անսալ միմեանց՝ ոչ ելանել ի պատերազմ, մինչև եկեսցեն հրեշտակքն յարքայէ, զոր առաքեցինն: - 286. Որ անսայթաք հաւատով յառաջացաւ առ աւարտումն պատերազմին փութացեալ, և ելեալ յամրական տեղւոյն սակաւաձեռն զօրականաւն, որ պահէին զպահպանութիւն Շամիրամ բերդին – 400.

ՊԱՀՔ - Այլ ի հրամանէ Աստուծոյ յանդիման դրախտին բնակելով պահոք ապաշխարութեան սգացեալ եղեն, ողբալով զվրիպումն առաջին կենացն, ամենայնիւ հրաժարեալ ի մարմնականաց, հոգիազարդ մարգարէութեամբ ժուժկալեալք ի մսոյ և ի գինւոյ: - 30. Եւ զի զսրբոցն իսկ ասացից բանս. եթէ զիարդ ամենեքեան սուրբքն որպէս ժառանգութիւն իմն հայրենի ընկալեալ այնպէս պատահեսցին հարք որդւոց աւանդելով զպահոցն պէտս. - 26.

ՊԱՂԱՏ - ելանել ի գագաթն Ամրական անձաւին զբօսնուլ նովաւ առ վճարումն բաւականութեան, ըստ մասանց պիտոյից օժնդակութեան քաղաքայարդար ապարանից թագաւորական պաղատի իւրոյ ձեռակերտին – 392.

ՊԱՂԱՏԱՆՔ - և աղօթականքն արկանէին առաջի Տեառն զպաղատանսն – 232. և առաջի արկեալ զհառաչանսն, զարտասուսն, զխոստովանութիւնն, զողորմագին պաղատանսն, մինչ ի մահ զտրտմելն, զկենաց դեղն հայցել, զմարմին և զարիւն որդւոյն Աստուծոյ ի թողութիւն մեղաց – 386. Եւ նոցա ձայն բարձեալ ողորմագին պաղատանօք առ Հայրակղոս, եթէ ,,աստուածասէր և բարերար տէր, արա/գրքում՝ ապա/ ի վերայ մեր ողորմութիւն, թէպէտ

և չեմք արժանի ողորմութեան,,: - 150. զորոյ զպաղատանս ոչ անտես արարեալ Քրիստոսի՝ ներէ նմա հանել ի գլուխ զսուրբ քառասնորդսն, խաչակից լինելով Քրիստոսի, մինչև ի պարտ զատկին – 254. Իբրև ետես իշխանն Հայոց զզօրսն Տաճկաց եկեալ բազում կազմութեամբ, հայեցեալ և յիւրեանց սակաւութիւնն՝ գիր պաղատանաց փութանակի տայր առ քաջ նահատակն Աշոտ իշխան-172. Իբրև յանդիման եղեն դեսպանքն մեծ /172/ իշխանին Աշոտոյ, և ընթերցաւ զգիր պաղատանացն և զյիշատակարան նախնեացն, և զմերձաւորութիւն հարազատութեանն և զկապակցութիւն ուխտին … համագունդ ժողով առնէր ամենայն աշխարհին և ամենայն նախարարօք Վասպուրական տէրութեանն: -174. Իսկ որք էին արգելեալք ի քաղաքն աղօթականս և պաղատանս առ մեծ իշխանն Աշոտ յղէին, զի համոզեսցէ ի մէջ նոցա զխաղաղութիւն. – 382. մանաւանդ մեծ կաթողիկոսն Հայոց Գէորգ պաղատանս առնէր առ Դերանիկն, զի ընդարձակեսցէ նմա: - 336. փութացոյց գիր պաղատանաց առ Տաճատ Ռշտունեաց տէր և առ Վախրիճ Անձաւացեաց տէր, զեկուցանել նոցա զեղեալսն: - 126.

ՊԱՂԵՍՏԻՆԱՑԻՔ - և զօրք Պարսից որք էին ի կողմանս Պաղեստինացւոց, և զօրավար նոցա անուանեալ Ռազմայուզան որ է Խոռեամ՝ խօսէր ընդ Երուսաղէմի զխաղաղութիւն. – 142. և բռնութեամբ Մարապարսացւոցն ոչ կարացեալ ընդդիմանալ՝ ի կողմանս Պաղեստինացւոց եկեալ պատերազմաւ պաշարեն զՍամարիա – 60. Եւ եղև այր թանգար արուեստիւ և հմուտ վաճառականութեան. հարկանէր ճանապարհս հեռաւորս ի գործ վաճառականութեանն, յԵգիպտոս և ի կողմանս Պաղեստինացւոց. – 158. Եւ հաւանեալ Խոռեմայ՝ եկն առ Հայրակղոս արքայ Յունաց, թողեալ ի նա զԵրուսաղէմ և զԿեսարիայ Պաղեստինացւոց և զամենայն կողմանս Անտիոքացոց և զամենայն քաղաքս գաւառացն այնոցիկ, և զՏարսոն Կիւլիկեցւոց և զմեծ մասն Հայոց և զամենայն զոր միանգամ կամեցաւ Հայրակղոս. – 152. Եւ յետ այսորիկ ել ի վերայ երկրին Պաղեստինացւոց և Երուսաղէմի՝ պաշարել զնա. – 60. Շապուհ արքայ թագաւորեալ՝ բազում և անչափ չարիս հասուցանէր ի վերայ Հայոց աշխարհիս և Ասորեստանեայց և Պաղեստինացւոց – 104. քանզի ասեն զկնոջէն, յորմէ նեռնն է ծնանելոց՝ ճանապարհորդել յԵգիպտոսէ յաշխարհն Պաղեստինացւոց, և ցանկացեալ տեսանել զարձան կնոջն Ղաւտայ երթեալ դադարէ անդ հանգստութեամբ. – 158.

ՊԱՃԱՐԻԼ - Նոյնպէս բանայ, որպէս և այլ թռչունք և գազանք՝ բնաւորեալ բաժանեն զժամանակս տարւոյն յերկուս կամ յերիս ամարանոցս և ձմերանոցս ինքեանց կենաց պաճարին – 262.

ՊԱՃՈՒՃԱՋԱՐԴ - Եւ մեր ընկալեալ և հաւատացեալ ճշմարտութեանն՝ և ոչ կարեմք փոխանակել զճշմարտութիւն ընդ սնոտի, առասպելաբան և կարկատուն, ստայօդ և պաճուճազարդ մոլար ուսմանդ ձերոյ: - 246.

ՊԱՅԱՋԱՏԱԲԱՐ - Այսպէս և Շամիրամ կին, ի յազգէն Սեմայ, թագաւորէ Նինոսիւ արամբ իւրով ի վերայ Ասորեստանի պայազատաբար – 16. և Սենեքերիմ պայազատաբար թագաւորէ ի Նինուէ, և ասի Ասորոց թագաւոր: - 14.

ՊԱՅԱՋԱՏԵԱԼ - Բայց որպէս բացայայտեցաւ՝ Շամիրամ սեպհականեալ թագաւորէ յազգէ Ասուրա ի Սեմայ Ասորեստանի բնիկ իւրեանց տէրութեանն, և պայազատեալ մի ըստ միոջէ մինչ ի Թոնոս Կոնկողեռոս – 16. յերկուց թագաւորազանց զաճմանն սեռի բերելով զբողբոջս զՍենեքերիմայն և զՄամգունեաց ճենազնւոյ, ի միասին զզուգամասն պայազատեալ գահընկալ թագաւորական զարմ - 300.

ՊԱՅԱՋԱՏԵԼ - զոր պայազատեաց առաջին Զամեսոս, որ և Նինուաս, որդի Նինեայ և Շամիրամայ, ի ԾԳ ամի կենաց Աբրահամու նահապետի – 56.

ՊԱՅԱՋԱՏՈՒԹԻՒՆ - և մանաւանդ զի հարկ փութոյ եղև մեզ գիտել զպայազատութիւնս երանաց տիրեցելոց մեր աշխարհի և որ յառաջ քան զնոսա թագաւորք Ասորեստանեայց, որդի /34/ ի հօրէ առեալ մինչև ի Սենեքարիմ արքայ, որ առ Եզեկիայիւ Երուսաղէմի արքայիւ եղեալ ազգապետ տանս Արծրունի: - 36. Իսկ Նինոս և Շամիրամ տիրեն Ասիացւոց և Եգիպտացւոց հարկապահանջ հնազանդութեամբ, այլ ոչ զազգին ի բաց բառնալով

զպայազատութիւն աշխարհին: - 18. քանզի էին Ադամայ և այլ ուստերք և դստերք բազումք, այլ ոչ արժանաժառանգք պայազատութեան աշխարհահայր լինելոյ. – 24.

ՊԱՅԾԱՌ - զի պայծառ սուրբ և մաքուր ոսկին յիւրումն կտակագրի պատկեր աստուածորդւոյն: - 252. մերժել հեռանալ … և որ այլ քաղցրագոյն վայելք ընդ երկնաւս ի վերայ երկրի, պայծառ գեղ արեգական և լուսնի, հանդերձ աստեղացն ճոխագործութեամբքն ընդ տարերբ երկնի յեղյեղլով, ծովու և այլոց ցամաքայնոց, և ջրայնոցն բարեփառ հոլովմանցն հրճուանաց, և որ ինչ ընդ այլք ընդ դոքօք պատկանին յարմարաբար տնտեսութիւնք առ սկզբնատիպն պատկերակերպութիւն: - 386.

ՊԱՅԾԱՌԱՅԱՐԴԱՐ - և հաճոյ թուեալ յաչս նորա՝ շինէ զքարաբլուրն ապարանս արքայանիստ, աշնանայինս, պայծառայարդարս, գեղեցկայարմարս պարսպաւորս – 86. կոչեաց զանուն ամրոցին Զարդ, այսինքն պայծառութիւն ի վերայ պայծառայարդար շինուածոյն: - 88.

ՊԱՅԾԱՌԱՆԱԼ - Եւ սկսաւ երկիրս առնուլ զնորոգումն, և եկեղեցիքն պայծառանալ ի զարդ և ի պաշտօնս շքեղութեան, և ցրուեալքն դառն տուեալ դարձան յիւրաքանչիւր տեղիս՝ շինել, տնկել, մոռանալ զցաւսն և զտրտմութիւնսն զոր կրեցին: - 318.

ՊԱՅԾԱՌԱՑԵԱԼ - յայնժամ ամօթալից աչօք տեսցես զբազմափառ և զպայծառացեալ նշանս դրոշմացն բարձրացելոց: - 148.

ՊԱՅԾԱՌՈՒԹԻՒՆ - Եւ յետ խաչայարդար պայծառութեանն իջեալ ի լեռնէն Գագիկ ի ստորոտ լերինն, ուր աբեղայիցն բնակէին սքեմաձևքն: - 394. կոչեաց զանուն ամրոցին Զարդ, այսինքն պայծառութիւն ի վերայ պայծառայարդար շինուածոյն: - 88. Շինէ անդ եկեղեցի վայելչապէս պայծառութեամբ և անուանէ զնա յանուն սուրբ Պետրոսի առաքելոյն անպարտելի դժոխական առաջնորդի: - 394.

ՊԱՅՄԱՆ - և կալցուք ուխտ խաղաղութեան /136/ ի մէջ մեր երկոցունց, և անշուշտ լիցի այս երդումն և պայման ի մէջ մեր և որդւոց մերոց յետ մեր թագաւորելոյ,,: - 138. Նոյնպէս և զպայման ժամանակացն յանբաւ բիւրս ամաց ձգեն որ ոչ և ըստ միոյ յեղանակի հաւաստանայ առ ի ցուցումն, ոչ արեգական բերմամբ ի նոյն կէտ ամսոց և աւուրց և ոչ ըստ չորից փոխմանց առ ի յեղումն ժամանակի տարւոյն, այլ և ոչ ըստ լուսնական լրութեանն և սուզականութեան: - 18.

ՊԱՅՔԱՐ - ,,ոչ են օրէնք թագաւորութեանս մերոյ ի պայքար բանից զոք արկանել, և յերկարել ի բանս, որչափ արարաք ընդ ձեզ, զոր ինչ այլ արասցուք. – 246.

ՊԱՆԴԽՏԱԲԱՐ - ընդ վզեալ ի վերայ Նինոսի, որպէս թէ եկեալ պանդխտաբար մտանել ի թագաւորութիւն Շամիրամայ ի Սեմայ: - 16.

ՊԱՆԴԽՏՈՒԹԻՒՆ - և կեայք պանդխտութեամբ կեանս, իւրաքանչիւր ի սուր իւր գտանել զբարձ և զգահ նախարարութեան. – 110. և մի հալածեսցի ոք ի բնակութենէ իւրմէ յօտար երկիր պանդխտութեամբ բնակել: - 234. լաւ համարեցան զկեանս պանդխտութեան յօտարութեան առնել, քան տեսանել կապեալս արգելեալս ի բանդի զորդիս իշխանին իւրեանց, զիշխան աշխարհիս. – 364.

ՊԱՆԴՈԿԻ - և երկիր պանդոկի Սպանդարամետ աստուծոյ է – 48.

ՊԱՆԾԱԼԻ - Ի ժամանակին յայնմիկ էր ճոխացեալ պանծալի աթոռակալութեամբ սրբոյն Գրիգորի տէր Քրիստափոր Հայոց կաթողիկոս. - 130.

ՊԱՆՆԻԱՍ –Արդ են են մի ըստ միոջէ թագաւորք Ասորեստանեայց այսոքիկ … Մամիզոս միւս՝ ամս Լ… Պաննիաս ամս ԽԵ… Սովսարմոս ամս ԺԵ … 58.

ՊԱՇԱՐԵԼ - և բռնութեամբ Մարապարսացւոցն ոչ կարացեալ ընդդիմանալ՝ ի կողմանս Պաղեստինացւոց եկեալ պատերազմաւ պաշարեն զՍամարիա – 60. և դարձան եկին պաշարել զքաղաքն: - 382. և եկեալ ի վերայ քաղաքին պաշարեն զնա, և զզօրսն մատնեն ի սատակումն սրոյ, և զպատանդսն Վասպուրականի հանեն յարգելարանէն. և գերեացն ընդարձակեն, զկապուտ նոցա բաժանեն յինքեանս: - 190. և զազգատոհմ մեր ընդ մեծ նեղութեամբ պաշարէիք և աշխարհի մերոյ աւերիչք գտանէիք և հարկացն եդելոց խափանիչք լինէիք: - 244. Եւ զի էր պաշարել նորա յայնժամ զքաղաքն Մանազկերտ Ապահունեաց աշխարհին, որ ի ձեռս Ապլբառայն էր, և ածեալ հասուցեալ մերձ ի

պաշարումն. և ի հասանել գուժկանացն եթող զնոսա, տալով նոցա հրովարտակս ի խաղաղութիւն: - 348. Եւ յետ այսորիկ ել ի վերայ երկրին Պաղեստինացւոց և Երուսաղէմի՝ պաշարել զնա. – 60. Իսկ թագաւորն Հայրակղէս հրաման ետ պաշարել զնոսա. – 156. Իսկ ի վերայ բազում հինից եկելոց ի վերայ Գուրգինի և սաստիկ պատերազմացն զոր պատերազմեցաւ յաղթող նահատակութեամբ. ոչ միայն յարտաքին թշնամեացն որ շուրջանակի պաշարէին, բազում այն էր որ ի ներքին ընտանեաց հարազատաց, ազգականաց դրժողաց, ուխտազանցաց, ստոց և ստերդմանց յուզէին աղմուկք: - 308. Յայնժամ ժողովեալ Խոռեմ Ռազմայուզան /գրքում՝ Եռազմայուզան/ զզօրս իւր բանակեցաւ շուրջ զԵրուսաղէմաւ և պաշարեաց զնա, և պատերազմեցաւ ընդ Երուսաղէմի աւուրս ԺԹ – 142. Յետ այսր՝ յերկրորդ ամի պաշարէն զԿարնային քաղաքն զօրքն Յունաց. և դարձեալ անդրէն ի կամս իւրեանց թողեալ գնացին: - 358.

ՊԱՇԱՐՈՒՄՆ - Այլ իբրև այն ինչ մերձ լինէր ամրոցն ի պաշարումն՝ Ամդայինն Յիսէ, որ Շեհի որդին, որ զզօրապետութիւնն Հայոց ունէր, ճանաչէր՝ ի հրապոյրս Մանազաւեան պետոյն և Ութմանացն ելեալ՝ երագապէս եկն եհաս ի վերայ Աշոտի ԺԵ հազարաւ հեծելօք վառելովք. – 334. Եւ զի էր պաշարել նորա յայնժամ զքաղաքն Մանազկերտ Ապահունեաց աշխարհին, որ ի ձեռս Ապլբառայն էր, և ածեալ հասուցեալ մերձ ի պաշարումն. և ի հասանել գուժկանացն եթող զնոսա, տալով նոցա հրովարտակս ի խաղաղութիւն: - 348. Իսկ իշխանքն զհետ մտեալ փախստէիցն անկելոցն յամուրսն՝ ածեն մերձ ի պաշարումն զքաղաքն և զամրոցն - 176. ՈՐ ԻՆՉ ԳՈՐԾԵՑԱԻ ՅԵՐԿՐՈՐԴՈՒՄ ԱՄԻՆ ԳԱԼՍՏԵԱՆՆ ԲՈՒԽԱՅԻ, ՈՐՔ ԵՆ ՈԼՈՄԲԻԱԹՔ ՎԱՍՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ԸՆԴ ՍԱՀԱԿԱՅ ԻՍՄԱՅԵԼԱՑՈՑ,ՈՐ ԻՍՄԱՅԵԼԻ ՈՐԴԻ ՃԱՆԱՉԵՐ, ԵԻ ՎԱՍՆ ՊԱՇԱՐՄԱՆ ՔԱՂԱՔԻՆ: - 268.

ՊԱՇՏԵԼ - ,,եթէ կամիս կեալ ընդ իս և վայելես ի կեանս աշխարհիս, և ընդունել պարգևս և պատիւս յինէն՝ հաւանեա հրամանի կամաց իմոց և ի բաց լեր ի հաւատոց քրիստոնէութեանդ, զոր պաշտես – 294. և զայն երիս ամս կերակրեալ լինէին սուրբքն ձեռնարուեստիւք իւրեանց, որպէս զնոյն ինքն զաստուածազարդն Պօղոս, թէ ,,զպէտս իմ և որ ընդ իսն էին՝ պաշտէին ձեռքս այս,,: - 252. և պաշտեսցեն զօրէնս մերոյ պատգամաւորին և օրէնսդրին: - 196. զի ,,ժողովուրդս այս շրթամբք պաշտեն զիս, և սիրտք իւրեանց հեռացեալ մեկուսի են յինէն,,. – 246. համառել պնդել ի հաւատսն Քրիստոսի զոր պաշտեադ, և ի ձեռն չարաչար տանջանաց ելանել ի կենաց աստի – 290. ստիպեն լքանել թողուլ կրօնս քրիստոնէութեան, հնազանդել պաշտել զօրէնս մազդեզական մոխրապաշտութեանն – 102.

ՊԱՇՏԵԼԻ - ապա եթէ ոչ՝ պաշտելիք եղիցին եկեղեցիքն, որ փրկիչն անուանին և երկրպագելիքն աստուածային երկրպագութեամբքն. որ է յոյժ ծիծաղելի. – 394.

ՊԱՇՏՊԱՆԱԿ - զի այնու հպատակութեամբ լցցէ զպաշտպանակս թագաւորին – 90.

ՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆ - այսր աղագաւ խնամ տարեալ թագաւորին կնոջն՝ զի ոչ ել առ Երուանդ և ոչ միով իւիք պաշտպանութեամբ: - 90. և ի վերայ նորա կանգնէ զԱստղկեան պատկերն, և մօտ նորա զտուն գանձու պաշտպանութեան կոռոցն. – 88.

ՊԱՇՏՕՆ - - այլ յետս կացեալ յուխտէ սրբութեանն դառնալ զհետ պաշտաման կռոցն – 80. յղեն զոմն ի ճգնաւորացն առ տիկինն, զկռոցն յանդիմանելով զսնոտի և զանօգուտ պաշտօնն, որպէս և սուրբն Քռիւսի առ Արտաշէս: - 88. առ այսուիկ և ի պաշտօնս դից յարեցան – 40. բայց նուազեալ ազգին՝ ոչ զոք ունէին, որ կարօղ լինէին զգործ պատերազմին վճարել և զպաշտօն թագաւորին. – 90. և խորհեցաւ սա զմիտս զայս, եթէ որ առ վտանգի նեղութեան դարձցի ոք առ ի պաշտօն կռոցն՝ ոչինչ է, եթէ սիրտ իւր ուղիղ պահեսցէ զհաւատսն Քրիստոսի: - 256. և ի բաց լերուք ի սնոտի և ի մոլար պաշտամանէ ձերմէ, որ վասն Քրիստոսի էք կաշկանդեալ ի մեծ յամառութեանդ:-244. և կարգէ զդասս պաշտօնէից կատարել զպաշտօն Տեառն ի տուէ և ի գիշերի անձանձրոյթ աշխատութեամբ և առատաձեռն տեսչութեամբ աղքատաց, զի գտցեն զողորմութիւն ի Քրիստոսէ: - 122. և պաշտօն աւուրն ի գլուխ ելեալ, ընթերցան քահանայքն զսուրբ Աւետարանն ի տեղիս

տեղիս ի բանակին – 228. Եւ սկսաւ երկիրս առնուլ զնորոգումն, և եկեղեցիքն պայծառանալ ի զարդ և ի պաշտօնս շքեղութեան, և ցրուեալքն դռոթ տուեալ դարձան յիւրաքանչիւր տեղիս՝ շինել, տնկել, մոռանալ զցաւսն և զտրտմութիւնսն զոր կրեցին: - 318. Իսկ նոքա թէպէտ և հաւանէին՝ այլ էր և հակառակութիւն մեծ ի մէջ նոցա. քանզի որոշեալ էին պաշտամամբ կռոց ըստ իւրաքանչիւր կամաց: - 156. Յովսէփ անուն ի Յունաց ազգականութենէ ի ծառայութիւն հասեալ Աւշնի, ներքինի, թողեալ զքրիստոսական պաշտօնն, մոլորութեանն Մահումաթայ հաւատացեալ. – 374. Ոչ կարծողականս ինչ ըստ առաջնոցն Բէլայ ասացելում, կամ այլոց ստուերականացն երևեցելոց երազականաց և խաբեբայ դիւաց, այլ ձեռագործ մեռելականս իսկ եցոյց ի պաշտօն – 40.

ՊԱՇՏՕՆԱՏԱՐ - Յայնմ ժամանակի էին եղբարք բռնակալք ոմանք ի կողմանս ապառաժ Արաբիոյ ի տեղւոջն Փառան որ այժմ կոչի Մաքայ, արք պատերազմողք /156/ զօրագլուխք, պաշտօնատարք մեհենին Ամովնացւոց պատկերին, որ կոչի Սամամ և Քաբար: - 158.

ՊԱՇՏՕՆԱՏԱՐՈՒԹԻՒՆ - Քանզի յոյժ պատկառ կայր ի պաշտօնատարութիւն հայրապետին իշխանն Տարունոյ, և նա սաստիկս հոգայր վասն նորա, թէպէտ ոչ օգտէր յիրին յայնմիկ: - 346.

ՊԱՇՏՕՆԱՏՐՈՒԹԻՒՆ - զի մի սպառ սպուռ տապալիցի զօրութիւն շինուածոյ աշխարհի, ի բաց ընկենլով զծառայական պաշտօնատրութիւն կողմնակալաց, և քաղաքային անհաւատարիմ կամարարողաց, և հարկաց բեկման և զօրաց – 186.

ՊԱՇՏՕՆԱՐԱՐ - և նա զբոլոր իսկ զաշխարհին կործանեաց, պաշտօնարար լինել սնոտեացն, թէպէտ յետոյ ընդունէր զապաշխարողսն: - 256.

ՊԱՇՏՕՆԵԱՅ - Բարձեալ ևս ընդ իւր զսուրբ կտակարանս աստուածաշունչ գրոց բազմութեամբ պաշտօնէից քահանայական դասուց: - 186. դառնապէս չարալլուկ չարչարել զքահանայս զպաշտօնեայս նորոց Կտակարանացն, զարս և զկանայս մատնել ի բանդս խոշտանգանս ծանրաբեռն հարկապահանջութեամբ. – 124. և կարգէ զդասս պաշտօնէից կատարել զպաշտօն Տեառն ի տուէ և ի գիշերի անձանձրոյթ աշխատութեամբ և առատաձեռն տեսչութեամբ աղքատաց, զի գտցեն զողորմութիւն ի Քրիստոսէ: - 122. և պաշտօնեայքն բարձրացուցանէին զօրհնութիւնսն – 232. և պաշտօնեայքն կատարէին զտէրունական կանոնն – 232. զի յինքեանս գրաւեալ ընդ հարկաւ ծառայեցուցանէին զպաշտօնեայս սրբոյ Խաչին, մանաւանդ զի և զգլխաւոր վանացն զհայրն, որում Գրիգոր անուանէր՝ զնա կալեալ եղեալ ի խորափոր խաւարային բանտի: - 334. Իսկ իշխանն Աշոտ … Մուշեղ Վահևունի … և Վահրամ սեպուհ թիկնապահ իշխանին, և Վահրամ Տրունի և Հասան և այլք ի սեպուհ պաշտօնէից … եկին մտին ի բերդն Դղեակ, յամրոցն Նկան, որ ի Թոռնավան գաւառի. – 206. Կալան և զհայրապետն Զաքարիայ, և ի խնդիր անկեալ աստուածային սուրբ նշանին՝ սկսան զնոսա տանջել, մինչև զբազումս ի պաշտօնէիցն կառափեալ սատակեցին. –142. կարծեաց համանգամայն զբոլոր պաշտօնեայս Քրիստոսի ի բաց վճարել ի հաւատարիմ երկրպագութենէ ճշմարտին Աստուծոյ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. – 264.

ՊԱՊ/հասարակ, հատուկ անուն/ - Բայց Գուրգէն ընտրեաց զսէրն Քրիստոսի, քան զսէր փոքրամեայ աշխարհիս. ոչ խնդրելով զվրէժ արեան սպանելոյ հօր նորա ի պապայն նորա – 320. Բայց ինքն Պապ նշկահեալ զկայսր Թէոդոս, զոր ի բուռն առեալ Տերինտեայ զօրավարին Յունաց՝ խաղացուցանէ կապանօք առ կայսր – 108. և առեալ սուրբն Ներսէս զՊապ որդի Արշակայ՝ հանդերձ յունական զօրուն թագաւորեցուցանեն զՊապ ի վերայ Հայոց ի տեղի բուն թագաւորութեանն Արշակունեաց: - 108. Եւ թագաւորեաց կայսր Թէոդոս փոխանակ Պապայ զՎարազդատ ոմն յԱրշակունի տոհմէ, այր քաջ և պատերազմող, ահարկու մեծամեծաց և փոքունց. – 108. Եւ ոչ գնացեալ ըստ խրատու սրբոյն Ներսէսի Պապ թագաւորն Հայոց – 108. Մեծն Թէոդոս յետ Վարազդատայ թագաւորեցոյց ի վերայ Հայոց զԱրշակ և զՎաղարշակ զորդիսն Պապայ թագաւորի Հայոց. – 110.

ՊԱՌԱԻ - զսուրբ եկեղեցիս, զտունս աղօթից քրիստոնէից այրել աւերել հիմն ի վեր տապալել, զքահանայսն նորոյ ուխտի ի սուրս իւրեանց մաշել, զծերս և զպառաւունս մահու սրոյ սպանանել, զերիտասարդս և զկուսանս խաղացուցանել ի գերութիւն, զստացուածս և զինչս վատնել աւարառութեամբ. – 398.

ՊԱՍՔԵՅԵԱԼ - Եւ քանզի որպէս ասացաւ՝ ի յերկարագնացս աշխատութեանց երիվարացն և հեծելոցն ծանրութիւն ի տքնութենէն ի վերայ հասելոյ, և տօթն արեգականակէզ տապախառն ջերմութեանն, և թանձր ծարաւոյն պասքեցելոց երիվարացն հանդերձ հեծելովքն – 402.

ՊԱՏԱՀ - Իբրև ստուգեաց զազգն, զգաւառն, զաշխարհն, զպատճառ հատուածին, զզետեղելն, զիարդն, զորպէսն, զեղանակն, զդիպուածն, զպատահն և զայլն ամենայն՝ խնդրէ զնա Վաղարշակ յԱրշակայ և առնու ածէ զնա ընդ իւր ի Հայս – 72.

ՊԱՏԱՀԵԱԼ - ,,քաջք քաջաց պատահեալ՝ անմեղադրելիք կան մնան զյաւակնութեամբքն – 68. և ահա իբրև արք Ռ ի յընտրելոցն Աղուանից պատահեալ նոցա հարին զնոսա և ածին փախստեայ ի բանակն և ինքեանք դարձան ողջանդամ, և ոչ մի ոք վիրաւորեցաւ. – 282. Եւ այն ինչ պատահեալ Գուրգէն հարուստ գնդի Վահանայ ի յառաւամէջս մուրին՝ ի բազում քան թէ սակաւ սուսերս ծեծեցին զնա, մինչև ոմն Ջուանշէր անուն յետուստ յանկարծ հարեալ վիրաւորեաց զԳուրգէն – 310. Եւ Գուրգէն և Աշոտ առանձին միմեանց պատահեալ ետուն ողջոյն միմեանց և ուխտեցին ուխտ խաղաղութեան մինչև ցայսօր ժամանակի: - 332. Ի սորա յերրորդ ամի թագաւորութեանն ի վերայ Հայոց աստուածատուր բարկութեամբ անդնդաշարժ վրդովմամբք ներքնագոյն խորոցն պատահեալ միմեանց սահանախաղաց դղրդմամբ, հիմնաշարժ տապալմամբ, /356/ ներքսագոյն երկրի թուլացեալ պնդափակ աղխեալ սանդարամետական սահմանին, բարկութեան հողմոց շնչեալ ընդ ջրոցն խաւարայնոց, ի կոհակս անդնդաքակս զթանձրայատակ երկրի զկարծր և զծանրալիր անկշիռ անբաւութիւնն տատանեալ, մինչ յերեսս երկրի ի վեր մղեալ հանդէպ քաղաքին Արտաշատու/ գրքում՝ Արտաշասու/, որ Բլուրն նորուն ասի – 358. Իսկ նոքա պատահեալ Պարսից ի գեօղն Երիզ կոչեցեալ, իբրև մրրիկ զփոշի պտուտեալ, իբրև հուր ընդ եղէգն ընթացեալ՝ սուր ի վերայ եղեալ վանեցին զբազումն քան եթէ զսակաւս – 136.

ՊԱՏԱՀԵԼ/ԻԼ/ - արդ փութա պատահեաց նմա, զի մատնեաց զնա Աստուած ի ձեռս քո,,: - 352. գնացեալ պատահին նմա ի սպառուածս Տաւրոսական լերինն: - 66. Եւ այնքան խրթնի անծանօթք պատահեն առ միմեանս, մինչև թարգմանաց անգամ կարօտանան. – 190. և դժոխք ի ներքուստ դառնացան ի պատահել նմա զանբաւութիւն չարեացն ընդ իւր տանելով: - 376. և ի մատնելն մերում լարօք հնգետասան՝ հաւք երկու պատահեցին մեզ – 50. և նորա արկեալ զնա ի փոքրագոյն տեղի մի նեղ, և ինքն փութացաւ գոյժ ետ վասն նորա՝ մահու պատահել, լի անմտութեամբ մոլի աբեղայն, որում ոչ հրամայեցաւ. – 320. և սլացեալ իբրև զարծիւ ի վերայ որսոյ՝ պատահէին անհուն բազմութեանն ի Փայտակշտան գեօղ – 400. Իսկ սերունդք Ասուդայ Սանասարեանց կային յոր պէտս և դիպուածն պատահէր, երբեմն այսպէս և երբեմն այնպէս. Շաւարշ. Գօգեան. Շաւասպ. Պերոզ. Շահակ. Կիւրոս: - 72. միայն զի պատահեսցեն միմեանց սիրով խաղաղութեան, և պարգեւօք /գրքում՝պարգևօք/ պատուեալ ի նոցանէ ըստ հրամանի զօրավարին – 226. յորում և ոմն հաւատարիմ Յիսէի Սէմ անուն յառաջ խաղացեալ՝ պատահէ իշխանին, ընդ Վահանայ խորհրդակցեալ խորհել զխաղաղութիւն և զմարտն գրգռեալ ցածուցանել և զվառեալ պատերազմն շիջուցանել. – 334. Նոյն ժամայն Քսերքսէս և Արշէզ վազս առեալ պատահեն Լիդէացւոյն. – 66. նորա փութանակի հասեալ ի քաղաքն Բերկրի, և միաբանութեամբ քաղաքացուացն ելեալ պատահեն զօրացն ի զօրագլխացն Վասապուրականի ի գեօղն որում Խոզաղբերքն ասեն. – 304. որոց գնացեալ պատահեն նմա ի Դնբունիդ Պարսից: - 64. պատահեն միմեանց և մեռանի անդ անզգուշաբար ի յաւակնայեղոց դիմացուածոյն: - 90. Եւ զի զսրբոցն իսկ ասացից բանս. եթէ զիարդ ամենեքեան սուրբքն որպէս ժառանգութիւն իմն հայրենի ընկալեալ այնպէս

պատահեսցին հարք որդւոց աւանդելով զպահոցն պէտս. - 26. Եւ քանզի էին բանակեալ ի խառնուրդս Երասխայ և Մաւրին մեծի՝ պատահի յառաջ Շաւասպ Արծրունի – 126.

ՊԱՏԱՀԵԼՈՑ - Իսկ Մեհուժան ծանեաւ զինչ պատահելոց էր նմա ի կայսերէ և ի նախարարացն Հայոց, ոչ յաւել դառնալ ի Հայս. – 110.

ՊԱՏԱՀՈՒՄՆ - և անուանէ զնա Արծրունի, առաջին լինելով նորա ի դաշտավայրին Արծուիք կոչելոյ. դարձեալ ըստ պատահման և տարբերութեան՝ արծռունգն կերպարանօք: - 72. Եւ ոչ անվկայ բանս, որպէս վերագոյնն գրեալ է մեր զդերահատուցականս սորա, վկայութեամբ մարգարէական տառիցն, որպէս և ի պատահմանէ իրացն ճարտար գիտեն՝ որք են ի ժամանակս յայսոսիկ մնացեալ յայն ժամու անդ հանդիպելոցն: - 262. ըստ սովորութեան ծանօթացուցանել զիւրաքանչիւրոց առանձնաւորութիւն և զպատուոյն գերակայութիւն, կամ ի ծնողաց կամ ի տեղւոյ կամ ի գաւառէ կամ յազգէ կամ յարիութենէ կամ ի պատահմանէ սկիզբն առ: - 288. իսկ եթէ մի յանդամոցն կորիցէ՝ զպատահումն խեղութեան ընդունիցի, այլ ոչ ի բաց դարձցի կենդանի: - 194. հարկ եղև ակամայ կարգել դնել առաջի զդէմս անցիցն ըստ իւրաքանչիւր պատահմանց: - 234. մինչև նոքա խոնարհեալ առ նորայն խորհրդական առ յապա պատահմունսն, որ հանդերձեցաւ աշխարհիս Հայոց, իբր մարգարէական իմն գոգցես տեսաւորութիւն – 114. Յղեաց զկոչնականսն զպատահմանն տանելով առ նա զպատասխանիսն. – 352.

ՊԱՏԱՂՈՒՄՆ - Եւ երկայնագոյնս զպատաղմունսն ի ճանապարհին արարեալ՝ ձգին մինչ յԱրգն Աղձնեաց – 66. Որոց ոչ զպատաղումն բերելով՝ գայ զօրու Աւշնի հասանէ ի վերայ նոցա: - 362.

ՊԱՏԱՆԴ - Եւ առնու պատանդս արս անուանիս և պատուականս, և զմայրն Աշոտի դարձուցանէ մեծաւ պատուով. – 186. և եկեալ ի վերայ քաղաքին պաշարեն զնա, և զզօրսն մատնեն ի սատակումն սրոյ, և զպատանդսն Վասպուրականի հանեն յարգելարանէն. և գերեացն ընդարձակեն, զկապուտ նոցա բաժանեն յինքեանս: - 190. և զոր ինչ խնդրիցէ՝ առնիցէ ըստ կամաց նորա, կնքել և տալ նմա գեօղս և ագարակս, և տալ հարկս արքունիս և պատանդս խաղաղութեան: - 210. և ինքն անցանելով խաղաղութեամբ ընդ աշխարհն Վասպուրական սակաւատոյժ վնասիւք՝ զպատանդսն ընդ իւր առեալ տանի: - 186. Եւ ինքն եկն /186/ ձմերել ի Մուշ քաղաքին Տարօնոյ, ունելով ընդ իւր պատանդսն, և Վասպուրականի ի նախարարութենէն Արծրունեաց և յազատաց նորա: - 188. և հանին զնա յարգելանէ բանտին, պատանդ թողեալ նմա զԳագիկ որդի Դերանկին և որդի Գրիգորի Արծրունոյ: - 348. զոր ոչ անունկնդիր լեալ ընդունի զհայցելին, առնելով հարկս և պատանդս, և զբերդն Երիկաւ Հաղացովտի, զոր հանեալ էր մանազաւեցոյն ի բերկրացոյն. – 382. Նոյնժամայն գնացին Դերանիկն և Գագիկ մտին առաջի Յիսէի, խօսեցան բանս խաղաղութեան, ետուն պատանդս յանձնառութեամբ հարկացն արքունի - 334.

ՊԱՏԱՌԵԱԼ - Եւ մինչ կարի և ահագին սաստիկս կուտեցաւ ի վերայ նորա ամբոխն, և ամբաստանքն միաբարբառ զաղաղակ /288/ բարձեալ առաջի բռնաւորին զօձիս պատառեալ ասէին, ,,մահապարտ է, չէ պարտ դմա կեալ, և ոչ առնուլ տեղի պատասխանւոյ,, - 290. Նոյնժամայն իբրև ետես տիկինն, եթէ վարեցան որդիք նորա ի գերութիւն՝ գնաց և ինքն զհետ նոցա, զհերս խզեալ և զօձիս պատառեալ, կոծելով և աշխարելով – 238.

ՊԱՏԱՌԵԼ - Եթէ, որպէս ասացի, ի բաց գնաս յինէն՝ խաղաղութիւն է, և թէ ոչ՝ պատերազմ և կռիւ և ճակատամարտ … դու գէշ՝ զօրքն իմ պատառիչ գազան, որ պատառեն զառագաստ սրտի քո. – 280. և դիմեցին ի մէջ նոցա ի չորս առաջս, ըստ նմանութեան տեառնանման խաչին, և բախեցին զճակատն և պատառեցին զռազմն և դարձուցին ընդ զառ ի վայրն և իջուցին ի լեռնէ անտի, և հարին ի հարուածս մեծամեծս. – 286. Եւ դիմեցին խուռն յանդուգն յարձակմամբ և բախեցին զգունդն և պատառեցին զռազմն և դարձուցին զայլազգիսն. - 232. և յայնմհետէ նուազեալ պատառեցաւ թագաւորութիւնն Պարսից: - 156. և վառեալ ի զէն և յասպազէն՝ արձանացան իբրև զմի այր՝ և յանդուգն

դիմացուածով խուռն յարձակմամբ հարեալ ի դիմի, ուր քաջքն այլազգեացն ճակատէին ընդ աջաթև /380/ կողմն. և պատառեցին զգունդն, և պարտեցին զախոյեանսն. – 382. Յայնժամ տէր Գուրգէն առ /306/ չժուժել սրտին, մտրակեալ զքաջ երիվարն յորում նստեալն էր՝ և եհար զգունդն զձախակողմն Տաճկաց և պատառեաց զոազմն և դարձոյց զերեսս նոցա- 308. Որով պատառեցան ամենայն աղբերք անդնդոց, և սահանք երկնից բացան անընդմիջաբար երկրի և երկնային ծովուն լինել, և համատարած ջրովն զրաւ առնել համօրէն ամենայն շնչաւոր կենդանեաց – 32.

ՊԱՏԱՌԻՉ - Եթէ, որպէս ասացի, ի բաց գնաս յինէն՝ խաղաղութիւն է, և թէ ոչ՝ պատերազմ և կռիւ և ճակատամարտ … դու գէշ՝ զօրքն իմ պատառիչ գազան, որ պատառեն զառագաստ սրտի քո. – 280.

ՊԱՏԱՌՈՒՄՆ - Նա և տեղիք սրբութեանց տունք աղօթիցն զշարժմանն կիրս կրեալ, պատառմամբ որմաշարժ լինելով – 358.

ՊԱՏԱՍԽԱՆ - և ոչ առ փոքր մի ինչ ներեաց կամ անսաց /264/ տալ տեղի պատասխանոյ, այլ հրամայեաց դահճացն տալ ի վերայ նորա զվճիռ մահու, փութով զրաւ առնել նոցա ի սատակումն սրոյ: - 266.

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՐՈՒԹԻՒՆ - Բայց քանզի մեր ոչ ոք յայնժամ հանդիպէր ի պատասխանատրութիւնս երանելոյն՝ և ոչ գրել արժանի համարեցաք: - 206. Իբրև լուաւ զայսքան և առաւել քան զսոյնս յանդուգն և առանց երկիւղի զընդդէմ պատասխանատրութիւնն մեծաւ համարձակութեամբ՝ապա հրաման ետ փութով ի կենաց բառնալ զգլուխ նորա սուսերաւ: - 296.

ՊԱՏԱՍԽԱՆԵԱԼ - և հարցեալ և պատասխանեալ սուրբն լի կատարեալ իմաստութեամբ Հոգւովն սրբով՝ զոր անմեկնելի ունէր յինքեան սուրբն. – 104. Նոքա պատասխանեալ ասեն. ,,վասն զի մեք ի պարսկական հինիցն անդուլ և անպարապ գոլով ի բաց լքաք զկրթութիւնն գրոց սրբոց՝ առ ընտրել զհաւատոց խոստովանութեան կանոնադրութիւն. – 132.

ՊԱՏԱՍԽԱՆԵԼ - Վեցերորդ՝ զի խաւարաւ չարեացն պատրուակեալ զոգին, մինչն զԱստուած ևս անգէտ կարծելով՝ լրբենի երեսօք պատասխանէր – 24. Եւ դարձեալ պատասխանի ասէ, մի՛ տալ տեղի՝ լսել հրամանի թագաւորին. թէ վտանգ ինչ հասանէ՝ կրել հանգոյն զինչ կրեցինն: - 132.

ՊԱՏԱՍԽԱՆԻ - - Եւ իբրև եհաս առ թագաւորն որ ինչ գործեցաւն՝ ոչինչ գոյր տեղի այլ պատասխանւոյ. բայց ասէ, ,,արժանապէս այն գործ նոյն գործեցաւ,,: - 370. Գրէ պատասխանի Մուշեղ նմա այսպէս. – 138. այլ հրամայեսցէ մեզ գրել ի Հայս և հարցանել առաջնորդացն Հայոց, և ընդունել պատասխանիս,,: - 132. Այլ նահատակեցան արիաբար և ետուն պատասխանի թագաւորին մեծաւ համարձակութեամբ , յուսացեալ ի մին միայն ի թագաւորն թագաւորաց և տէրն տերանց, ի Քրիստոս յորդին Աստուծոյ: - 292. Բայց իբրև ետես բռնաւորն զանդառնալի միտսն և զաներկբայութիւն հաւատոցն և զաներկիւղ և զյանդուգն պատասխանիսն և զմեծ անարգութիւնն զոր հասոյց ի վերայ նորա և նոցին օրէնսդրին…բարկացեալ յոյժ հրաման ետ փութով զրաւ առնել կենաց նորա: - 206. Բայց նոքա քանզի ապաստան լեալ յանկասկածելի յամուրս և ի բազմութիւն զօրացն և ի քաջութիւն արանց պատերազմողաց՝ և ո՛չ առ փոքր մի խոնարհեցան ի բանս նորա կամ ետուն տեղի պատասխանւոյ. – 274. գրելով և զպատասխանի թղթոյն ի ձեռն Թովմայի առաքելոյ, և զխոստաբանութիւն՝ զԹադէոս առաքեալ լնուլ զփափագումն խնդրոյն. - 76. գրէ թուղթ հաւատոց առ Ղևոն կայսր Յունաց, և ընկալեալ ի նմանէ պատասխանիս՝ բազում ինչ ի Կուրանէ անտի իւրեանց արտաքս ընկէց զյոյժ առասպելագոյնն, քանզի ստուգապէս ծանեաւ զզօրութիւնն. – 166. Ետ պատասպանի երանելի Մուկաթլ լի հաւատովք և ճշմարիտ խոստովանութեամբ ի Հայր և յՈրդի և ի Հոգին սուրբ, ասէ. – 290. և լուեալ ի նմանէ պատասպանիս դիպողագոյնս և իմաստունս՝ հրամայեաց նստել: - 216. Եւ ըստ կարգի օրինաց իւրեանց երդուեալ, և աղ ծրարեալ ընդ հրովարտակին ետ տանել. և նոցա առեալ և ընթերցեալ՝ ոչ արարին բանիցն պատասխանի: - 138. Եւ մինչ կարի և

ահագին սաստիկս կուտեցաւ ի վերայ նորա ամբոխն, և ամբաստանքն միաբարբառ զաղաղակ /288/ բարձեալ առաջի բռնաւորին զօձիս պատառեալ ասէին, ,,մահապարտ է, չէ պարտ դմա կեալ, և ոչ առնուլ տեղի պատասխանւոյ,, - 290. Եւ նորա կամեցեալ ցուցանել թագաւորին՝ ի սոյն աւուրս վախճանեցաւ Հայրակղէս. իսկ որդի նորա Կոստանդին ոչ ունէր յանձին ըստ կամաց նորա պատասխանի. – 162. Եւ նոցա ընկալեալ զխնդիրսն՝ հաւանեցան առնել ըստ կամաց նորա, մինչև տեսցեն եթէ զի՞նչ պատասխանի եկեսցէ նոցա յարքայէն իւրեանց, և կամ զօրուն զի՛նչ հրամայեսցէ առնել: - 144. զի ոչ գտանիցին ամենևին տալ պատասխանի: - 54. զոր ընկալեալ սուրբ հայրապետին և բարեպաշտ թագաւորին Թէոդոսի հինգ թղթովք և հինգ պատասխանեօք՝ կարգէ զսուրբ վարդապետն ընդ վարդապետութեան աթոռակալութեան սրբոյն Յոհաննու Ոսկեբերանի և այլոց քաջաց և գլխաւոր վարդապետացն – 116. զորս յանդիման Փրկչին կացուցին զառաքեալսն հանդերձ թղթովն Աբգարու, և զխորհրդական պատասխանիսն լուեալ վասն փրկական խաչելութեանն որ վասն աշխարհի - 76. Յայնժամ իբրև լուաւ բռնաւորն զայս դարձուած պատասխանեաց լի հզօրութեամբ և ահագին մեծաւ անարգութեամբ՝ յոյժ տարակուսանօք լցաւ յանձն իւր, և կայր մեծաւ հիացմամբ ըմբռնեալ. – 280. որոյ զպատասխանիսն դարձուցեալ լի քաջալերական խրատու յորդորմամբ մարտիրոսական ակնկալութեան պսակաց – 400. որպէս սահմանեաց Աստուած ի վերայ ժողովրդեանն Իսրայէլի գերելոցն ի Բաբելոն, որպէս գրեալ է ի մարգարէութեանն Երեմիայի, ,,զ-ՀԷ-երորդն ասէ գիտասցես, և խելամուտ լիցիս յելից բանին տալ պատասխանի. մինչև յօծեալն /312/ առաջնորդ եօթներորդ է և եօթներորդք ԿԲ,,. – 314. Յղեաց զկոչնականսն զպատահմանն տանելով առ նա զպատասխանիսն. – 352. Ետուն պատասխանի և ասեն – 214 Եւ առեալ զգանձսն՝ հրամայեաց սպանանել զընծայաբերսն, և բանիցն Հայրակղի ոչ ստրպր պատասխանի, այլ առնէր վնասս սաստիկս ի կողմանս կողմանս, աւարառութիւն և գերութիւն և սուր. – 142. Եւ Գուրգէն հեզաբար, արտաքոյ ամբարտաւանութիւն զգնէ նմա պատասխանիս, ասէ. – 330. Նորա արհամարհեալ զառաքեցելովք, չվարկանելով արժանի պատասխանոյ, և նովին օրինակաւ սկսաւ շրջել ընդ բոլոր աշխարհս Վասպուրական: - 178. ,,զո՞յ թողութիւն իմոց չարեացն /386/ գործելոց, թողո՞ւ Աստուած զիմ պարտեացն յաճախութիւն. ասացէք ինձ, տուք ինձ պատասխանի,,: - 388. Այլ նոքա քանզի հաստատուն մտօք ունէին զմիաբանութիւն դաւաճան խորհրդոյն որ առ բռնաւորն Տաճկաց՝ ետուն պատասխանի և ասեն – 216. եթէ չար ինչ թուիցիմ յաչս ձեր, և ապիրատս գործեալ եմ առ ձեզ և խարդախութեամբ բնակեալ եմ ընդ ձեզ՝ աւասիկ յանդիման երեսաց իմոց տուք պատասխանի – 214. Ետ պատասխանի նմա զօրավարն ի խաղաղութիւն, և ասէ – 226. Ետ պատասխանի սուրբ հայրապետն Յոհաննէս հանդերձ մեծ նախարարօքն Հայոց և ասեն. – 244. Եւ իբրև ընթերցաւ մեծ զօրավարն զծածուկս ազատանոյն՝ ետ պատասխանի, զոր և գրով իսկ աւանդեաց. – 214. զի ես տաց ձեզ բերան և իմաստութիւն, որում ոչ կարիցեն կալ հակառակ կամ տալ պատասպանի ամենայն հակառակորդքն ձեր,,: - 204. Իբրև գիտաց իշխանն, եթէ վճարեալ է չարութիւնն յաչս նոցա, և այլ ընդ այլոյ խօսին, և ի գաղտնիս քրթմնջեն, և անտեղի և անընդունակ հրամանաց նորա լինէին՝ ետ պատասխանի և ասէ – 214. և զի չև էր դարձեալ պատասխանի յարքայէն՝ հրաման եհաս ի կայսերէ առ Վարազդատ անյապաղ առ նա հասանել: - 110. Եւ նա դարձուցանէր այսպիսի իմն պատասխանի – 278. մինչև եկեսցէ նմա պատասխանի ի բուն զօրավարէն, և ոչ լուան աղաչելութեան նորա. – 230.

ՊԱՏԱՍԽԱՆԻ ԱՌՆԵԼ - Իսկ թագաւորն Պարսից ընդունէր զպատարագսն բերեալս ի կայսերէն, /144/ և զիրեշտակսն անդրէն ոչ արձակեաց, և ոչ հրովարտակացն պատասխանի առնէր. - 146. Տե՛ս նաև ԱՌՆԵԼՊԱՏԱՍԽԱՆԻ

ՊԱՏԱՍԽԱՆԻ ՏԱԼ - Պատասխանի ետ Մարկիանոս և ասէ. ,,վասն զի առաջնորդքն Հայոց զպարսկական շփոթմանցն զվտանգ կրէին,,: - 132. Պատասխանի ետուն և ասեն – 242. Տե՛ս նաև ՏԱԼ ՊԱՏԱՍԽԱՆԻ

ՊԱՏԱՐԱԳ - Ապա բարեկամացեալ ընդ Աբգարու թագաւորի Հայոց և ընդ մեծ զօրավարին Խուրանայ Արծրունւոյ՝ յղէ նմա պատարագս և առնու յօգնականութիւն զԽուրէն Արծրունի, զայր իմաստուն և քաջամարտիկ, կորովի յաղեղն և ի զէն և յասպազէն. - 78. ապա ետ հրաման և փորեցին զաչս երանելւոյն, անդամ անդամ յօշեցին զնա, որ մատոյց զինքն պատարագ կենդանի որդւոյն Աստուծոյ. – 290. Առաքեցին առ Մուրիկ թագաւորն արս ճոխս մեծամեծ ընծայիւք և պատարագօք և թուղթ գրեալ ի բերանոյ Խոսրովայ զայս ինչ. – 136. Բայց մինչդեռ չև առ միմեանս հասեալ Տիգրան և Կիւրոս՝ յղէ Աշղահակ պատարագս Կիւրոսի - 62. դիմեալ գայր և սա ընդ աջաթև կողմն վկայելոցն, ընդդէմ սրոյն մատուցանել զինքն պատարագ կենդանի Որդւոյն Աստուծոյ: - 222. և կերիցեն քարինք և փայտք և այլ կաիք երկաթեղէնք, որպէս և զայն որ ի նմայն պատարագի մարմին և արիւն որդւոյն Աստուծոյ, մանաւանդ թէ ինքն իսկ ճշմարտապէս որդին Աստուծոյ. – 396. և դարձեալ՝ թէ ,,զգերութիւն ժողովրդեան իւրոյ դարձուսցէ, ոչ կաշառօք և ոչ պատարագօք, ասէ Տէր,,: - 218. Եւ ես աւասիկ արձակեցից թագաւորին ձերում պատարագս և հրեշտակս հրովարտակօք, խնդրել ի նմանէ զխաղաղութիւն աշխարհի և ընդ իս հաշտութիւն,,: - 144. և ետ տանել զդիւանն մագաղաթեայ յունարէն գրով հանդերձ պատարագօք՝ Տիգրանայ թագաւորի Հայոց – 74. և զայս ոչ միանգամ, այլ յոլովակի՝ մի զմիոյ կնի ընթացուցանէր դեսպանս հրովարտակօք և պատարագօք: - 62. և ինքեանք դարձան մեծաւ յաղթութեամբ, մատուցին պատարագս Աստուծոյ և լցուցին զպէտս տնանկաց և աղքատաց այրեաց և որբոց: - 136. Եւ յելանելն նորա և մօտ լինել ի սահմանս Հայոց զօրօք բազմօք, մերձ ի սահմանս Տարունոյ, Առաջին կոչեցեալ Հայոց՝ իշխան Տարունոյ Բագարատ … առաքէ զոմանս ի մեծամեծաց իւրոց ընդ առաջ նորա պատարագօք ոսկոյ և արծաթոյ և պատուական հանդերձից, համոզեալ մի ելանել յերկիրս Հայոց: - 170. Իսկ թագաւորն Պարսից ընդունէր զպատարագսն բերեալս ի կայսերէն,/144/և զհրեշտակսն անդրէն ոչ արձակեաց, և ոչ հրովարտակացն պատասխանի առնէր. -146. մանաւանդ յառաջագոյն պատրաստեալ պատսպարեաց թղթովք և պատարագօք առ թագաւորն և առ զօրավարն գնալ ըստ հրամանաց նոցա, և ոչ ինչ արտաքոյ կամաց նոցա խորհել կամ գործել ինչ: - 270. Յայնժամ առեալ հրովարտակ Սանասարեանց ի Տիգրանայ պատարագօք գնացին առ Կիւրոս. – 64. ողջակէզք նոցա և պատարագ նոցա ընդունելի լիցին ի վերայ սեղանոյ իմոյ – 224. Սոքա ամենեքեան վառեալք սպառազէն պատրաստութեամբ և բազմաձեռն առատալիր պատարագօք՝ գնացին, զի առեալ տարցեն մուծցեն զնա ի Դուին քաղաքն: - 340.

ՊԱՏԱՐԱԳԸՆԿԱԼ - և խոստացեալ պատարագընկալին՝ ոչ ևս զնոյն հատուցանել երկրի ուխտ յաւիտենական հաստատեալ՝ զաղեղն իմ եդից յամպս, որ է ծիածանդ – 32.

ՊԱՏԳԱՄ - Եւ յղէ պատգամ առ Թէոդորոս եղբայր Հայրակղի, ըստ այնմ որում Հրէայքն եղեն ձեռնտու, եթէ ,,զերկիրդ զայդ Աբրահամու խոստացաւ Աստուած և զաւակի նորա, և ի ձեռս նոցա էր բազում ժամանակս. – 160. ի ձեռն այնր հաստատագոյնս լինել ի կասկածաւոր պատգամացն – 366. իսկ նա քանզի ի հրեշտակէ ասէր ունել պատգամ և ոչ ի մարդոյ՝ յոյժ դժուարեալ ընդ իրսն՝ սպան զնա ի գաղտնիս: - 162. յղեաց պատգամս և ասէ – 246. Յղէին պատգամս առ որդիսն Իսմայէլի և ցուցանէին զմտերիմ հարազատութիւն, թէ ,,որդիք Աբրահամու եմք մեք և դուք, եղբարք. պարտ է ձեզ գալ յօգնականութիւն մեզ, և առցուք զերկիր ժառանգութեան մերոյ,,: - 156. Նորա զչարեալ ընդ հասանել պատգամին՝ առ զայրուցս բարկութեան քինահանութիւն վրէժխնդրութեան արարեալ՝ ի բաց եհան ի գրոցն պատմութենէ՝ որ ինչ վասն տանն Արծրունեաց էր գործոց հանգամանք, և որ ինչ օրինակ մարտիրոսութեան Վահանայ Արծրունոյ: - 130. ոչ ինչ ձեռնամուխ լինելով ի նա, վասն կասկածանաց Պարսից արքային, միայն սպառնական խոստաբանութեամբ յղէ առ նա պատգամս: - 130.

ՊԱՏԳԱՄԱՒՈՐ - ,,Ձայն իմն ահաւոր հրեշտակի անկեալ ի վերայ իմ՝ հրամայեաց երթալ պատգամաւոր յազգն իմ, ցուցանել զԱստուած արարիչ երկնի և երկրի. առնուլ ինձ անուն գլխաւորութեան, և զստութիւն հաւատոց որ ի կուռս՝ յանդիմանել և քակտել,,: -

158. այլ դարձուցին անդրէն զպատգամաւորսն անարգանօք, արբուցեալ նոցա գան սաստիկ – 274. գլխաւորն ի նոցանէ Համիս, և միւսն որ ի կողմանց Ժանգանայ՝ ոչ իրաւացի ըստ պատգամաւորին իւրեանց ասացին առնել զայս: - 404. Եւ ահա դարձեալ ասեմ, չկայ ինչ քո. և զի մի կրիցես զոր ինչ խօսեցայ ընդ պատգամաւորս քո, և աւելի քան որոգել ջանար ընդ մեզ՝ զդոյն ընդունիցիս վտանգաւորս,,: - 280. Եւ բազումք ի նոցանէ հաւանեցան նմա՝ պատգամաւոր Աստուծոյ ասել: - 160. և պաշտեսցեն զօրէնս մերոյ պատգամաւորին և օրէնսդրին: - 196.

ՊԱՏԵԱԼ - և արծաթագործ եօթնփորձեան հրաբորբոք ճարտարապետն ի բովս հալոցացն զուտ և վճիտ արծաթ ընտրելով, արծաթեղինեան զփայտեղէնն պատեալ արտաքուստ – 378. Եւ հրամայեաց ածել ոսկերիչ և նորոգեալ նորացոյց զանյաղթ փայտ խաչին Քրիստոսի, մատուցեալ զբեկորսն առ իւրաքանչիւր յօդս, պատեալ մաքուր արծաթով վայելչագոյն քան զառաջինն, ի պարծանս քրիստոնէից և յամօթ և ի նախատինս թշնամեաց խաչին Քրիստոսի: - 378.

ՊԱՏԵԱՆ - Որպէս և այրս այս արար, անքակ և անմեկնելի զգեցաւ պատեանս յինքեան զզօրութիւն բանսարկուին: - 248.

ՊԱՏԵԼ - Եւ մեկնակազէնքն պատեցին շուրջ զեկեղեցեաւն, և ելեալ առ նա ոմանց ընդ փորուած գմբեթին՝ և եհար մի ոմն աշտէիւն ընդ միջոց թիկանցն՝ և ընդ անթովքն հանեալ ի ներքոյ թոքացն՝ փչեաց զոգին և թաղեցաւ զթաղումն իշոյ: - 190. Եւ խնդրեալ զդի նորա վաճառականաց՝ պատեցին զնա ի ձեռս եպիսկոպոսին Դաւթի նորուն գաւառի և եդին ի տապանի յեկեղեցւոջն որ ի նմա: - 354. Եւ ոսկեգործ ականակապ կազմեալ՝ պատեաց ոսկով զփրկագործ սուրբ խաչն, և ընդելուզեալ մարգարտով զարդարեաց զսխրագործ փայտն, հիւսնեալ ի մէջ անուշահոտ փայտից, թողեալ մասն ինչ արտաքս ոսկեպատ պահարանին, յառաջնում իւրոյ քառածրագիծ խաչակերտ փայտեղէն զզրոցկանն: - 394. Եւ պատուական արանցն քրիստոսասիրաց մտեալ առաջի թագաւորին՝ խնդրեցին զմարմին սրբոյն, և առեալ պատեցին և եդին ի գերեզմանին. – 254.

ՊԱՏԵԼՈՑ - այլ ես ասեմ քեզ, եթէ Տէր կամեսցի՝ վաղիւ պատելոց է զքեզ պատերազմ քաջաց. և ճեթեսցեն ի վերայ քո իբրև զամպս երկնից ի բռնալիր նիզակօք անցանիցեն ընդ մէջ բազմութեան քո իբրև զփայլատակունս հրոյ շանթից: - 140.

ՊԱՏԵՀԱԳՈՅՆ - Եւ առ այսքիւք պատեհագոյնս իմն գտեալ իբրև յանիշխանութեան՝ ոմանք Ասորեստանեայք և Քաղդէացիք, յազգէ թագաւորացն … զօր բազում գումարեալ՝ յետ ԻՀ ամի անիշխանութեան Ասորեստանեայց ի ձեռն Փուայ թագաւորեցելոյ դարձեալ տիրեն Բաբելոնի և ստորին Ասորւոց – 60.

ՊԱՏԵՆԱԶԱՐԴ - և յաւարի առնուին զբանակետղն, դիակապուտ առնէին, ժողովէին աւար բազում, և կուտէին արծաթ և ոսկի յոյժ և զզէնս պատենազարդս, զզարդս և զզէնս արի արանց և զընտիրս երիվարաց և զզարդս նոցա. – 176.

ՊԱՏԵՇԳԱՄԵԱԼ - Շինեաց և ի վերայ Ամրական քարանձաւին յելս և ի մուտս կոյս տունս խրախիցս ոսկեզօծս պատեշգամեալ, յաւելլով ի յառաջագոյն ի հօրէ նորա Դերանկէն շինեալ: - 390.

ՊԱՏԵՐԱԶՄ - ,,և այս ևս գործ կամ խաղաղութեան կամ պատերազմօք և ելցեն ի գլուխ, միայն զյապաղանացն ի բաց լքցես զդեգերանս,,. – 382. վասն այսր իրաց նենգութեամբ և չարակնութեամբ առլցեալ, մանաւանդ յերկիւղէ՝ կարի յոյժ գրգռեցաւ պատերազմ սաստիկ ի ձեռն Վասակայ Արծրունոյ. – 178. ,,օրհնեալ է տէր Աստուած մեր, որ ուսոյց զձեռս մեր ի պատերազմ, և զմատունս մեր ի ճակատամարտ,, , և որ ի կարգին է: - 252. այլ ես ասեմ քեզ, եթէ Տէր կամեսցի՝ վաղիւ պատելոց է զքեզ պատերազմ քաջաց. և ճեթեսցեն ի վերայ քո իբրև զամպս երկնից ի բռնալիր նիզակօք անցանիցեն ընդ մէջ բազմութեան քո իբրև զփայլատակունս հրոյ շանթից: - 140. Այլ և հուր և ծծումբ նաւթիւ բարձեալ ի գործ պատերազմին, և զլոյծ բնութիւնն յանօթս ապակեղէնս եդեալ, և մանր զծծումբն ընդ նմին խառնեալ, եդեալ ի պարսատիկ մեքենայից, և զհուրն առ ընթեր նմին, հնարաւորեալ արկանել զամրոցաւն: - 208. այլ հրամայէր միայն զգուշանալ և ոչ ելանել

պատերազմաւ ընդդէմ նոցա, մինչև տեսցէ զելս իրացն. – 162. այն ինչ արծարծեալ առ նորոգումն շինութեան եկեղեցւոյ Քրիստոսի ի կործանմանէ հինի յետ մեծ պատերազմին սրբոյն Վարդանայ. – 134. Այս լուր քաջութեան և քաջախորհուրդ զպատերազմացն մղելոյ զյարձակմունս եհաս առ զօրագլուխն Բուխայ. – 308. այր գազանաբարոյ, վայրենամիտ, առատաձեռն առ արբումն մարդկան, այր զօրաւոր զօրութեամբ ի գործս պատերազմաց, ահարկու ազանց, կարողութիւն և ուժեղութիւն Աւշնի ի սորա ձեռս բաւականացեալ: - 374. Անդ Բաբգեան և ասպետն մեծ Աշոտ նիզակակիցք միմեանց զերծեալ ի մեծ պատերազմէն՝ փութանակի մտին յաշխարհս Հայոց – 92. Անդանօր քաջն մեր Աշոտ զիւանդութիւնն կեղծաւորեալ ի տեղւոջ օթոցին անկեալ դնէր, մինչ ակն ունէին յառաջանալ ի գործ պատերազմին: - 328. Անկեալ էր յայնժամ ի պատերազմին Աշոտ Հայկազնեայ Գեղարքունեաց իշխան, որ Սուփանայ որդին ճանաչէր. – 368. Ապա մտախորհ եղեն դարձեալ վառել ի պատերազմ. – 276. Ապա յետ փոքր ինչ աւուրց վառեալ զզօրսն ի պատերազմ ընդ բերդայինսն, առնուլ զամրոցն: - 208. Արշակ տուեալ պատերազմ ընդ Մակեդոնացիսն՝ և անդ Կիւրոս քաջապէս արիացեալ առաւելանայր ի գործ պատերազմին. – 72. Արշակ տուեալ պատերազմ ընդ Մակեդոնացիսն՝ և անդ Կիւրոս քաջապէս արիացեալ առաւելանայր ի գործ պատերազմին. – 72. Բայց յետ բազում յուզիցն և պատերազմացն եհաս տիրել նմա Անձաւացեաց տէրութեանն զայս օրինակ: - 324. Բայց Աշխէ ոմն … ոչ եմուտ ընդ նոսա ձեռնամուխ լինել ընդ նոսա ի գործ պատերազմին, այլ կայր ի բացեայ իբրև հազարօք երկուք – 232. Բայց Աշոտ գնացեալ տալ պատերազմ ընդ ծովեզրեցիսն որք Ութմանիկ կոչին, որք ամրանային ի յԱմիւկ անկասկածելի քարանձաւին. – 332. Բայց Աշոտ թէպէտ և նուազագոյն զօրու ընդ իւր լինելով, ոչ թիկն ածեալ վերջացաւ առ պատերազմն յառաջանալ: - 364. Բայց արքայն Պարսից հեռացեալ պատերազմաւ ի Քուշանն ի դուռն Ճորայ. – 128. Բայց դեսպան արձակեալ Արտաշէսի զՀամամ առ կայսր Ադրիանոս վասն Բարքոբայ աւազակի և նորուն պատերազմին յԱսորիս. – 92. Բայց զի՞ մի մի զիւրաքանչիւր հանդէս պատերազմաց նոցա գրեցից յականէ յանուանէ. ասացից կարճառօտ և համառօտեցից զբանս. – 286. Բայց էր Համամ սէգ և ամբարհաւաճ, յոյլ և թոյլ առ պատերազմի գործ, միայն և շղոմարար հպատակութեամբ վարէր առ թագաւորն – 90. Բայց իբրև եղև մեծ պատերազմ սրբոյն Վարդանայ ընդ Մշկանին և ընդ զօրս Պարսից ի յԱւարայրեան դաշտին, յԱրտազական գաւառին. – 128. Բայց յետ բազում պատերազմացն խորամանկ խաբէութեամբ կոչէ առ ինքն Շապուհ զԱրշակ ի դէմս սիրոյ խաղաղութեան, ոչ ինչ յիշատակ զչարեացն գործելոց ի մէջ առնելով. – 102. բայց նուազեալ ազգին՝ ոչ զոք ունէին, որ կարօղ լինէին զգործ պատերազմին վճարել և զպաշտօն թագաւորին. – 90. Բայց ոչ ժամանեալ կատարման պատերազմին, զաշտարակն, զոր շինէր որդին Աբգարու փլուզեալ ի վերայ սպան զնա, վրէժխնդիր եղեալ մահուն Ադդէի սրբոյ: - 80. Բայց ոչ միայն քաջքն Հայոց նահատակեցան ի մեծ պատերազմին այլ և անմարմին զօրք երկնաւորք մարտակից եղեն գնդին Հայոց. – 232. Բայց քանզի յերկնուստ էր հասեալ վտանգն, և աստուածառաք էր բարկութիւնն՝ և ոչ ոք զօրեաց և եկաց ընդդէմ նորա ելանել ի պատերազմ, այլ որ եհարն՝ նոյն և բժշկեաց: - 374. Բայց եթէ այդ այդպէս ոչ եղիցի, որպէս ասացի՝ աւելի ևս տեսցես քան զոր տեսեր, սուր և պատերազմ,,: - 286. գիտակ են այդմ արք քաջք. և որ միշտ ի պատերազմունս /280/ զդեգերումն առնեն – 282. դարձեալ յետ փոքր ինչ աւուրց անցանելոյ՝ և խռնեցաւ միւս անգամ պատերազմն, և և՛ս սաստիկ հարան զօրքն արքունի. – 276. Դարձեալ պիտոյ է մեզ դառնալ առ ի վերագոյնսն, որ նախ քան զպատերազմն Աղձնեաց եղեալ են հանգամանք գործոց ի զօրացն Տաճկաց, և թէ ո՛րպէս եկաց ընդդէմ նոցա իշխանն Աշոտ և վանեաց զնոսա սրով սուսերի: - 176. դու դիմօք մարտի առ իս զօր գումարեա և ել ընդդէմ իմ ի պատերազմ, և ի միասին մխեցից զձեռս ի սոսա և բարձից զսոսա ի պետութենէ Հայոց,,: - 340. Դուք աւադիկ ժողովեալ գայք ի վերայ իմ պատերազմաւ. – 138. եթէ դէպ եղև լինել պատերազմ Որմզդի ընդ Հարամանայն. – 46. Եթէ, որպէս ասացի, ի բաց գնաս յինէն՝ խաղաղութիւն է, և թէ ոչ՝

պատերազմ և կռիւ և ճակատամարտ – 278. Եթէ, որպէս ասացի, ի բաց գնաս յինէն՝ խաղաղութիւն է, և թէ ոչ՝ պատերազմ և կռիւ և ճակատամարտ ... քո պատերազմ՝ և մեր յաղթութիւն, քո մարմին՝ և իմ նիզակ, քո պարանոց՝ և իմ սուսեր. – 278. Ելին ի պատերազմ և պատերազմեցան, ըստ որում սաստկացաւ պատերազմն: - 282. Ելին ի պատերազմ և պատերազմեցան, ըստ որում սաստկացաւ պատերազմն: - 282. Երրորդ վասն արիութեան քաջութեանն, արծուաբար քաջասրտապէս խիզախութեանցն ի մարտս պատերազմացն՝ յարծուիս առակեցին զնոսա: - 72. և առաջնորդէր նորա սպարապետն ի գործս պատերազմացն և յելս և ի մուտս աշխարհացն. – 270. և ետուն պատերազմ անդ զաւուրս Լ, և ոչ ինչ կարացին ստնանել. – 362. և երաժշտականքն երգս առեալ զյաղթութեանն Փարաւոնի՝ գոչէին „Տէր խորտակէ զպատերազմունս, Տէր է անուն նորա„: - 232. Եւ իբրև ազդ եղև Դերենկին՝ գնաց ընդդէմ նորա պատերազմաւ, և դառնայր փախստեայ: - 320. և նոքա հարեալ սատակեցին զնոսա սրով սուսերի յանխնայ, սպանին և զզօրավարն ի պատերազմին – 150. և սկսաւ Խոսրով արքայ ժողովել զմնացեալ նախարարս զօրացն և զզօրն, որ զերծեալ էին ի պատերազմէն: - 150. և ահա Ապումուսէ, որ ճանաչէր երիցու որդի՝ հանդէպ նոցա ել պատերազմ և հանդիսացաւ ընդդէմ նոցա. – 284. և ահա հնչէր առ հասարակ երկիրն ամենայն իբրև զծով ալեաց կուտակելոյ, և սաստկացաւ պատերազմն, յառլուսանալ աւուրն մինչև ի սպառել անցից տունջեանն իշխեցողին երկոտասան ժամու աւուրն. – 276. և անդ բազում իրս քաջութեան ցուցեալ յախոյանայարձակ պատերազմունսն – 84. և անդ զբարիոք պատերազմն պատերազմեալ ի մեծ անապատին յԱպար աշխարհին, և որ ինչ այլն ամենայն. – 128. և անդ զբարիոք պատերազմն պատերազմեալ՝ որպէս քաջ հովիւ զանձն իւր եդ ի վերայ հօտին – 104. Եւ անդ Վահան Արծրունի խոյակապ և յականաւոր քաջամարտութեամբ ընդ սրբոյն Վարդանայ ճակատ առ ճակատ վառեալ զպատերազմն, իբրև հուր ընդ եղէգն ճեմելով ի մէջ քաջ ախոյեանացն Պարսից: - 128. և անհնարին բեկմամբ խորտակեցաւ գունդն Հայոց, մինչև ի բազմացն սակաւուց հազիւ ուրեմն մազապուր զերծեալ՝ անկան յաւուր յայնմիկ ի տարապարտ պատերազմին արք անուանիք իբրև Շ - 402. և անյապաղ փութով զգործ պատերազմին վճարեալ քաջք ընդ քաջս ելեալ. – 64. և բանակն Իսմայէլի հզօրագոյնս ստիպէր ի պատերազմ: - 162. և բռնութեամբ Մարապարսացւոցն ոչ կարացեալ ընդդիմանալ՝ ի կողմանս Պաղեստինացւոց եկեալ պատերազմաւ պաշարեն զՍամարիա – 60. Եւ գունդն երրորդ ի ձեռս իշխանին, որ և յարդարիչ պատերազմին: - 178. Եւ դէտն ազդ արարեալ զօրացն այլազգեաց՝ վառեն և նոքա ընդդէմ նոցա ի պատերազմ, և ի դիմի հարեալ միմեանց և հատանէին յերիս առաջս: - 178. Եւ եկին տալ պատերազմ ընդ ամրոցին Վան քաղաքի - 362. Եւ եղեալ պատերազմ մեծ Արշակայ և Խոսրովու յեզր ծովուն Գեղամայ ի մօրին տեղւոջ – 112. Եւ եղև ընդ ժամանակսն ընդ այնոսիկ ել Հազարաւուխտ Պարսից զօրավար ծանր զօրու ի վերայ Հայոց՝ տալ պատերազմ ընդ զօրս Հայոց, աւերել գերել գերփել զաշխարհս – 134. Եւ եղև յետ մեծ պատերազմին, որ յառաջ քան զզրուցացդ գրելոյ ելին, ի գլուխս Մանազաւեան նահանգին և Յուշոյ դաշտին, և զխռովարարս քաղաքացն ի մի վայր գումարելոցն, որք և յունայն ասպատակէին աշխարհ – 398. Եւ եղև պատերազմ և նաւամարտութիւն սաստիկ ի մէջ ծովուն: - 146. և զԱրշաւիր ի գործ պատերազմի զօրագլուխ կարգեաց: - 82. և զզօրն տուեալ ի ձեռս Վահանայ Ամատունոյ, հոգալ զգործ պատերազմաց, թէ արդեօք դէպ լինիցի ուստեք: - 96. Եւ զկնի այսորիկ, որ է երկրորդ հարուածք այլազգեացն՝ դարձեալ հրաման ետ ելանել ի պատերազմ, և հետամուտ հասեալ առ նոսա. – 282. Եւ զօրաժողով եղեալ Մուսէի պատճառաւ հարկաց արքունի՝ եկն եմուտ յերկիրն Տարաւնոյ, տալ պատերազմ ընդ Բագարատայ: - 172. և զօրքն ախոյեանայարձակ զպատերազմն վառէին – 64. Եւ էր գրեալ ի միում թղթի անդ, յիշեցուցանելով զոր ինչ գործեաց Աշոտ ի զօրսն Ապահունեաց զյաղթանակ պատերազմին և զհոյակապ անուն ստանալոյն՝ ասէ – 382. Եւ էր ի մէջ Շապհոյ և Արշակայ պատերազմ մեծ զժամանակս կենաց Արշակայ: - 102. Եւ էր հակառակութիւն մեծ և պատերազմ Աբդլայի որդւոյ Զուբայրի ամս Բ և ամիսս Գ: - 166.

Եւ էր պատերազմ սաստիկ ի մէջ Ալեայ Որդւոյ Ապուտալպի և Մաւեայ ամս Ե և ամիսս Գ: - 166. Եւ թէ որպիսի օրինակաւ գալուստ նորա և պատերազմ վասն սորին իրաց, և արիական ձեռակերտացն շինուածք, որ և յոյժ արժանաւորք զարմանալեաց, և դարձեալ ապստամբութիւն Զրադաշտին և մահն Շամիրամայ և բան յուռթիցն որ զնմանէ – 44. և թէ ի պատերազմին յայնմիկ հասանիցէ զմահուն ընդունել զվճիռ՝ իսկ ըստ յաղթութեանն զխոստովանողականն ժառանգել անուն, զօրանալ զօրութեամբ ի զօրութիւն խաչին Քրիստոսի Աստուծոյ մերոյ: - 400. Եւ ի բազում յուզիցն և ի խնդրոցն և զօրաժողովն լինելոյ և պատերազմ ընդդէմ վառելոյ և զձև ամրական մաքառմանցն յարդարելոյ և բռնալիր ուժեղագոյն մեքենային բախմանց քարձգութեանցն, զոր և ընդունայն աշխատութեամբ վարանեալ, անընտանելի /հավանաբար՝ անստանալի/ մնալով ամրոցին՝ դառնայ յիւր իշխանութիւնն: - 326. Եւ ի վաղիւ անդր մինչ դեռ արևն ընդ ծայրս հարկանէր՝ կարգեցաւ պատերազմ սաստիկ – 140. և ի վերայ նոցա զօրաժողով եղեալ Աշոտ և որդի իւր Դերանիկն, առնել մարտ պատերազմի ընդ ամրոցին: - 332. և իբրև հողմ հոսեալ զփոշի ամարայնոյ՝ այնպէս արագապէս զպատերազմին գլխաւորեցին նահատակութիւն: - 330. և ինքեանք իջեալ ի լերանցն՝ կալան զստորոտ լերինն, պատրաստեալ ի պատերազմ: - 274. Եւ ինքն շտապ տագնապէր փութացուցանէր ռազմ բոլորել, կարգել կազմել զճակատն, պատրաստել ի պատերազմ – 228. Եւ ինքն զօրավարն Մուսէ ճեպէր շտապէր՝ փութալ առ պատերազմն վառել – 328. Եւ ինքն իսկ գլխովին զօրավարն Բուհայ, հեծեալ յերիվարն, պնդեալ զինքն զինու ի պատերազմ ընդդէմ իշխանին, և զկորովին աղեղնաւորացն Ելիմացւոցն և զընտիրս հեծելոց նոցա ընդ ինքեան վառեալ ի ճակատի: - 208. և իջեալ ի դաշտավայրն, խումբ արարեալ, ճակատ կազմեալ ընդխառնեցան ի պատերազմ. և զբազումս դիաթաւալ կացուցեալ, ընդ որս էր Շապուհ նահապետն Ամատունեաց յանկելոց վիրաւորացն: - 310. Եւ խօսէր ընդ նոսա սաստիկ և ահագին դատաստանօք և սպառնալեօք, թէ ընդէ՞ր և դուք ոչ մեռարուք ի պատերազմին, քան թէ ելեալ փախստական գնացէք գալ առ իս և տալ համարձակութիւն ծառայի իմում ի յայսքան վնաս. մի՞թէ արդեօք զԽոսրով մեռեալ կարծէիք,,: - 150. և հայցէին յամենայաղթն Քրիստոսէ յաղթել մեծի պատերազմին - 250. և հրաման ետ Գուրգէն իւրում գնդին պատրաստել ի պատերազմ, կազմել ռազմ և տալ ճակատ ընդդէմ այլազգեացն – 230. Եւ մինչդեռ կային կենդանի և գոհանային զՔրիստոսէ զանյաղթ զօրութենէն զոր զօրացոյց զսուրբսն մեծ ասպարիսի ի հոգևորական պատերազմին՝ ևս առաւել բարկացեալ թագաւորն՝ իբրև զինոց վառեալ բորբոքէր. – 292. Եւ յայսմ պատերազմի ոչ միայն երանելի եպիսկոպոսն և ճգնաւոր քահանայն մարտակից էին տեառն Գրիգորի, այլ և զօրք հրեղինաց – 252. Եւ յառաջեալ առաջոյ զօրուն Կիւրոսի՝ հարդարեն զգործ պատերազմին: - 64. Եւ յետ աւուր միոյ ընդ մէջ լինելոյ՝ դարձեալ խմբեցաւ պատերազմն, և հարան զօրքն արքունի. – 276. Եւ յետ փոքր ինչ աւուրց հրաման ետ Բուխայ ելանել ի պատերազմ. – 280. և յերկարեալ գործ պատերազմին հարուստ մի ժամ - 64. Եւ յերկարեցան գործ պատերազմին մինչ ի տասներորդ ժամ աւուրն – 232. և Յիսէ տուեալ պատերազմ ընդ քաղաքին, զտարի մի հանդերձ ամենայն նախարարօքն Հայոց, անգամագիտ լինելով՝ դառնայ յԱսորիս. և այս եղև երկիցս անգամ: - 338. և յոգնեցան երկոքեան կողմանքն ի մեծ պատերազմին. – 140. Եւ նոցա ի գլուխ հանեալ զգործ պատերազմին՝ դառնան զօրքն Հայոց մեծաւ յաղթութեամբ – 176. և ոչ գիտացին զօրն Պարսից զդարձն Հայրակղի ի վերայ նոցա՝ մինչև երթեալ խառնեցան և բախեցին զմիմեանս պատերազմօք: - 150. և որպէս պատմի՝ եղև թիւ պատերազմաց նոցա ԻԸ անգամ, և հարան զօրքն արքունի յայսքան հանդէսս և ի կռիւ: - 286. և ռամիկքն ամբոխին ոմանք ի կողմանէ մխեցին զձեռս ի գործ պատերազմին քարամբք: - 232. և սկսան այնուհետև աներկիւղ տարածանել ի վերայ երկրին. քանզի ոչ կասկածէին ի պատերազմէ իմեքէ: - 162. և սպանեալ զոստիկանն Պարսից, որ էր ի վերայ նոցա, և ինքեանք պատրաստեալ ի պատերազմ ընդդէմ Պարսից: - 142. և վառեալ զինքեանս յընթացս պատերազմին, զգեցեալ զզրահս արդարութեան և պնդեալ զմէջս ճշմարտութեամբ – 252.

և տուեալ պատերազմ զաւուրս ոչ սակաւս, որպէս թէ ամսօրեայ մի ժամանակ – 66. և քակեցին զռազմն և աւերեցին զճակատն և լքին զմիմեանս, և թողին զպատերազմն և գնացին փախստական ամենայն այր յո՛վ և կարաց զերծանել. - 306. զայն զինեալ ի վերայ անձանց՝ սաստկացուցանեն զպատերազմն, աներկիւղ մնալով ի հրոյն տոչորմանէ. – 208. Զայս գործ լուեալ Լիդէացւոց թագաւորին Կրոսիսեայ բազմաշփոթ յուզմամբ ամբոխ արարեալ, զօրս բազումս գումարեալ, ելանել տալ պատերազմ ընդ Կիւրոսի – 64. Զի ազգ բարբարոս խուժադուժ ի դիմի ելեալ գան տալ պատերազմ, կորզել յինքեան զգերին Հրէից: - 66. Զի թէպէտ և Գուրգէն մեծաւ զօրութեամբ ունէր զդէմ յարձակելոցն ի վերայ, որոց զիշխանականն ճեպէին հասանել գահ, կամ որ արտաքին տաճկական պատերազմունքն բռնաբար ի ներքս դիմէին՝ սակայն ոչ յապահովանայր դեռ երկիրն: - 316. զի կարասցէ անսայթաք հաւատով յաղթել հնարից բանսարկուին, որ ի ծածուկ և յայտնի պատերազմին – 206. զի հոգևոր էր պատերազմն և ոչ մարմնաւոր - 232. զի մինչ ընդխոնեցաւ պատերազմն և դէմ առ դէմ ճակատէին՝ յանկարծակի այր մի ի նմանութիւն լուսոյ եկն եկաց ի մէջ ռազմի ճակատուն – 232. զի ուր և իցէ՝ ածցեն զնա առ նա, թէ՛ պատիր խաբէութեամբ և խորամանկ կեղծաւորութեամբ և խարդախութեամբ, կամ պատերազմաւ և մեծամեծ զօրութեամբ, ամենայն պատրաստութեամբ, արքունի կարողութեամբ, որպէս զիարդ և կարասցեն՝ առ նա հասուցանեն: - 224. Զծառայս իմ պատրես, և զզօրս աւազակաց ժողովեալ՝ ոչ տաս ինձ հանգչել, այլ հանապազ պատրաստիս ինձ ի պատերազմ, և ասես վստահանալ յԱստուածն իմ: - 146. զոր վերագոյնն յիշեցաք յայլում վայրի ի մեծ պատերազմին ի սահմանս Աղձնեաց: - 400. զորոյ լուեալ էր զբազմաց այլ պատերազմացն արիութիւն, և զհարուածս զօրացն Տաճկաց – 316. զօրս գումարէիք, այրուձի կազմէիք, մարտ և պատերազմունս գրգռէիք, ճակատ դնէիք և զզօրս մեր ի սատակումն սրոյ մատնէիք – 244. ժամ տուեալ ի գլուխ հանել, յոր չոգանն զգործ պատերազմին: - 328. ի մօտ առ նոսա հասեալ՝ կարգեցին / 274/ կազմեցին զճակատն և ետուն պատերազմ ընդ զօրացն Ծանարաց. – 276. Իբրև գիտացին սուրբքն զանհուն պատերազմ չարին՝ վառեալ և նոքա զինքեանս հանապազակռիւ լինել ի ճակատուն, անխափան սաղմոսերգութեամբ զանուշահոտ աղօթս իւրեանց միշտ ի բարձունս առաքելով – 250. Իբրև հասին ուր հանդերձեալն էին՝ և երկոցունց զօրքն անհուն բազմութեամբ յանդիման եղեն միմեանց, և ճակատ առ ճակատ զգործս պատերազմին յարդարէին – 328. Իսկ Ասուդ զհետ Դարէհի ելեալ ի պատերազմ ընդդէմ զօրագլխացն Աղէքսանդրի՝ Հերակղեայ նահատակութեամբն դիւցազնաբար ի դիմի հարեալ՝ ի բաց նահանջէ զուժեղագոյնս զօրագլխացն Աղէքսանդրի հարուստ ժամ մի, մինչ հիացումն զօրօքն արկեալ՝ տային տեղի փախստէի. – 68. Իսկ երիցս երանելի սուրբքն տէր Յոհաննէս Արծրունեաց եպիսկոպոս և երանելի քահանայն Գրիգոր և տէր Գրիգոր Արծրունի խրախուսեալք յԱստուած, կացեալ յատենի ի մեծ ասպարիսի հոգևորական պատերազմին – 250. իսկ և իսկ եհաս գուժկան անկելոցն ի պատերազմին ի պարսկական քաղաքն և յԱտրպատական սահմանսն. – 398. Իսկ զՎահագն Հայկազնեայ … կացուցանեն ի դրան արքունի, յառաջանալ ի գործ պատերազմին մեծաւ աշխատութեամբ՝ կամ մեռանել ի սրոյ թշնամեաց դիպելոց, կամ յաղթել քաջասրտութեամբ: - 70. Իսկ ի վերայ բազում հինից եկելոց ի վերայ Գուրգինի և սաստիկ պատերազմացն զոր պատերազմեցաւ յաղթող նահատակութեամբ. ոչ միայն յարտաքին թշնամեացն որ շուրջանակի պաշարէին, բազում այն էր որ ի ներքին ընտանեաց հարազատաց, ազգականաց դրժողաց, ուխտազանցաց, ստոց և ստերդմանց յուզէին աղմուկք: - 308. Իսկ նախարարքն Հայոց ի սադրելոյ Վաղէսի գրգռեալ ի մարտ ընդ Արշակայ ի պատերազմ յառաջանան – 100. ծանուցանէր զզօրութիւն իւրաքանչիւր աշխարհաց և զամուրս նոցա և զզօրութիւն պատերազմաց նոցա ըստ ազգս ազգս: - 270. Զեռնամուխ եղեն ի գործ պատերազմին և քահանայքն, որ կային ի բազմութեան գաղթականին – 232. մինչ տայր պատերազմ ընդ Սպանիացիսն վասն ոսկեհան տեղեացն. – 80. ՅԱՂԱԳՍ ԳՈՒՐԳԻՆԱՅ ՄԻԱՅՆ ՄՆԱԼՈՅ, ԵԻ ՇԱՏ ՊԱՏԵՐԱԶՄԱՅՆ ՅԱՇԽԱՐՀԻՍ

– 300. Յայնժամ իբրև գիտաց զօրավարն Հայոց և ոչ միով իւիք կարաց հաճել զմիտս նոցա, այլ միաբան ետուն հրաման ելանել ի պատերազմ –230. Յայնժամ հրաման ետ զօրավարն Բուխայ զօրաց իւրոց՝ ելանել ընդ առաջ նոցա ի պատերազմ. – 274. Յայնժամ հրաման ետուն ամենայն զօրացն ելանել ի պատերազմ. – 284. Յետ անցանելոյ չորից ամաց … դարձեալ Գրիգոր եղբայր Աշոտի Վասպուրական իշխանի յԱփհազաց աշխարհէն՝ նոցուն օգնականութեամբ և Վրաց զօրու ընտիր գոլով՝ եկն եմուտ յաշխարհս Վասպուրական՝ տալ պատերազմ ընդ Գուրգինայ. –310. յերկարեցաւ գործ պատերազմաց սոցա իբրև մօտ ի լնուլ ամի միոյ.- 286. յոյր ձեռն բազում արութիւն նահատակութեան երևեալ լինէին ի մարտս պատերազմաց և ի հանդէսս ճակատեցելոց ի միայնամարտիկ զինուորութեան: - 170. Յորոց միջի կացեալ Ապումբուան համոզեալ նոցա ցածոյց զճակատ առ ճակատ վառեալ պատերազմն – 364. յորում և ոմն հաւատարիմ Յիսէի Սէմ անուն յառաջ խաղացեալ՝ պատահէ իշխանին, ընդ Վահանայ խորհրդակցեալ խորհել զխաղաղութիւն և զմարտն գրգռեալ ցածուցանել և զվառեալ պատերազմն շիջուցանել. – 334. Նոյնժամայն դարձուցեալ զերասանակ երիվարին ի պատերազմ յառաջանալ, և անդ բազում արիութիւն նահատակութեան ցուցեալ, սակայն ոչինչ օգուտ բերեալ: - 368. Նստան երկոքին կողմանքն պահել զպահպանութիւն իւրեանց մեծաւ զգուշութեամբ, և ետուն ժամ անսալ միմեանց՝ ոչ ելանել ի պատերազմ, մինչև եկեսցեն հրեշտակքն յարքայէ, զոր առաքեցինն: - 286. Ո՞չ ածեր զմտաւ, թէ յիսկզբանացն մինչ ցայսօր ժամանակի ամենայն ուրեք ուր և գումարէր զօրն և լինէր պատերազմ և սուր և ճակատամարտ՝ երբեմն յաղթեն և երբեմն ի պարտութիւն մատնին. – 282. Որ անսայթաք հաւատով յառաջացաւ առ աւարտումն պատերազմին փութացեալ, և ելեալ յամրական տեղւոյն սակաւաձեռն զօրականաւն, որ պահէին զպահպանութիւն Շամիրամ բերդին – 400. որ էին ընդ նմա եկեալ ի գործ պատերազմաց ըստ հրամանի թագաւորին և մեծ զօրավարին – 224. ՈՐ ԻՆՉ ԳՈՐԾԵՑԱՒ ՅԵՐԿՐՈՐԴՈՒՄ ԱՄԻՆ ԳԱԼՍՏԵԱՆՆ ԲՈՒԽԱՅԻ, ՈՐՔ ԵՆ ՈԼՈՄԲԻԱԹՔ ՎԱՍՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ԸՆԴ ՍԱՀԱԿԱՅ ԻՍՄԱՅԷԼԱՑՈՑ,ՈՐ ԻՍՄԱՅԷԼԻ ՈՐԴԻ ՃԱՆԱՉԷՐ, ԵԻ ՎԱՍՆ ՊԱՇԱՐՄԱՆ ՔԱՂԱՔԻՆ: - 268. ՈՐ ԻՆՉ ԶԿՆԻ ԱՆԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԵՑԱՒ ԵԻ ՊԱՏԵՐԱԶՄԱՅՆ: - 298. Որոյ երթեալ առ Շապուհ յիշեցուցանէ նմա զհարազատէն իւրմէ Մեհուժանայ՝ միամիտ և հպատակ /108/ լինիլ արքայի, և զպատերազմացն գործ և զբազում աւարառութիւնս և զգերփանս Հայոց աշխարհիս ի Մեհուժանայ, և զմահն նորա ի ձեռանէ քաջին Սմբատայ Մամիկոնէի- 110. որոց անուանք ճանաչի սոցա … և Ներսեհ իշխան Գարիթայանից և ապա Եսայի Ապումուսէ, որ զշատ պատերազմունսն եհար: - 298. որոց թողեալ զգործ պատերազմի ամրոցին՝ դարձաւ գնաց աներկիւղ քաջասրտութեամբ ընդդէմ նորա օժնդակ զօրու Գուրգէնի – 334. որք յակամայ կամս լքին զմարտն և ցածուցին զպատերազմն և ետուն զամուրն ի Գագիկ: - 362. Պատերազմ յուզեալ Աշդահակայ Մարաց թագաւորի ընդ մեծին Տիգրանայ Հայկազնոյ –62. պատշաճագոյն զպատերազմին խրոխտական բարձրավզութեամբ վանել զախոյեանսն, և առեալ զբանակն յաւարի, և ընդ սուր հանեալ յոլովս քան թէ սակաւս, հասին ի գոգ տեղի մի ի Մղունիս գեօղ: - 402. սա ելեալ ի Հայս պատերազմաւ արար ընդ իւրով ձեռամբ. – 56. սակայն և յայնմ ոչ ետուն հրաման զօրուն մի ելանել ի պատերազմ: - 230. Վաղարշակ թագաւորեալ փոխանակ հօր իւրոյ Տիգրանայ, և տուեալ պատերազմ ընդ հիւսիսայինն Հազրաց՝ մեռանի ի կորովաձիգ աղեղնաւորացն: - 92. ՎԱՍՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ԲԱԳԱՐԱՏԱՅ ԻՇԽԱՆԻՆ ՀԱՅՈՑ ԵԻ ՄՈՒՍԷԻ ԵԻ ՅԱՂԹՈՒԹԵԱՆՆ Ի ՁԵՌՆ ԱՇՈՏՈՅ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ ԻՇԽԱՆԻՆ, ՁԻ ԵԿՆ ԶՕՐԱՎԻԳՆ ԲԱԳԱՐԱՏԱՅ: -172. Տէր խորտակէ զպատերազմողսն, Տեառն է պատերազմ, Տէր տկար առնէ զհակառակորդսն, Տէր է յոյս մեր,,: - 134. տուք ի մեզ զերկիրդ մեր խաղաղութեամբ, ապա թէ ոչ առցուք պատերազմաւ, ոչ միայն զայդ, այլ և զայլ ևս բազումս,,: - 162.

ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ - Եւ անդ գտեալ ամրագոյն անձաւ տեղի անկասկածելի ի պատերազմական գործոց և զնա պարսպեալ պատուարօք շուրջանակի – 392. և ետ բերել նմա ըստ օրինի

գլխապետութեան սուսեր իշխանական ընդ մէջ արկեալ և գօտի արիական շրջապատեալ զմիջաւ, քուքք խիզախողք և երիվար բարձրավիզ, ոտնատորոփ, խրոխտալիր, յարմարական առ ընթացս պատերազմականս։-308. Զոր հոյակապն Տրդատ կարգադրեալ վայելչապէս հոգաբարձութեամբ զպատերազմականն հարկանել հարկս ընդդէմ հինից արշաւանաց. զոր կարգապետութիւն և առ սուրբ հրեշտակն գտանեմք /գրքում՝ գտանեմք/ յարարչական նախախնամութենէն, զաշխարհի զօգուտն բերելով: - 398.

ՊԱՏԵՐԱԶՄԱԿՈՒՐ - որով տաղտկացեալ ի նմանէ բազմութիւն զօրացն՝ արարին լինել նմա պատերազմակուռք ի Վարբակայ և ի Բէզոսէ Մարաց զօրագլխէ – 58.

ՊԱՏԵՐԱԶՄԱՍԷՐ - Զի յառաջնումն ոչ ինչ գոյր հոգ ինչ զբաղմանց, և ոչ մի ինչ ըստ աշխարհաշէն /90/ խնամակալութեանց, կամ պատերազմասէր աշխատութեանց – 92.

ՊԱՏԵՐԱԶՄԵԱԼ - և անդ զբարիոք պատերազմն պատերազմեալ ի մեծ անապատին յԱպար աշխարհին, և որ ինչ այլն ամենայն. – 128. և անդ զբարիոք պատերազմն պատերազմեալ՝ որպէս քաջ հովիւ զանձն իւր եդ ի վերայ հօտին – 104. և եկեալ կացին մօտ առ Կանգուար բերդ, և պատերազմեալ զամիսս Բ՝ ոչ ինչ գործ ի գլուխ ելեալ ըստ ախորժման. – 332. զի և զբազումս պատերազմեալ պէսպէս մարտիւք, և ոչ ինչ կարացեալ ստնանել անմարտնչելի ամրոցացն և քաջութիւն արանցն որ ի նմա՝ ողոքական բանիւք կոչէր ի հաւանութիւն: - 278. սրբոյ թագաւորին և քաջ նահատակին Տրդատայ զբարիոք պատերազմեալ ընդդէմ անմարմին և մարմնաւոր պատերազմողաց, փոխի յերկրաւոր աշխատութեանցս ի հանգիստ, մեծաւ պատուով թագաւորական շքեղ և երևելի դիւազարդութեամբ – 96.

ՊԱՏԵՐԱԶՄԵԼ/ԻԼ/ - Եւ արևելեաց զօրավարին եկեալ պատերազմել ընդ իշխանականն առնուլ զամրոցն, - 302. Եւ զօրք Տաճկաց ի զօրացն Բուխայի եկեալ էին ընդ զօրս Յունաց պատերազմել ընդ ամուրսն.– 302. Եւ նոյնժամայն եհաս հրաման յարքունուստ՝մի տաղտկալ և վհատել և մի ի բաց կալ պատերազմել ընդ նմա. մինչև եկեսցէ ակամայ կամօք ի հնազանդութիւն արքայի: - 284. զոր աւերեացն Իսրայէլ յելանելն իւրում յԵգիպտոսէ և ընդ պատերազմելն ընդ Բաղակայ արքայի Մովաբայ: - 156. Իսկ Խոսրովու կարծեալ արծարծեալ զզօրս իւր և որք ի դրանէն արքունի որ կոչին համհարզք և փուշտիպանք, և ամենայն արք ընտիրք /148/ տան թագաւորին ոյժ առեալ դարձեալ պատերազմել ընդ Հայրակղի: - 150. Ելին ի պատերազմ և պատերազմեցան, ըստ որում սաստկացաւ պատերազմն: - 282. և ի վերայ սուրբ եկեղեցեաց և ժողովրդեան Աստուծոյ պատերազմէին: - 232. և յարձակեալ բազում անգամ ի վերայ յունական զօրուն որք ընդդէմ զօրաց քոց պատերազմէին՝ և անդ ոչ սակաւ հեղմունս արեանց արարեալ փոխանակ զօրաց քոց ի զօրացն Յունաց. – 304. և նստան անդէն զաւուրս Թ և պատերազմեցան ընդ նոսա աւելի քան ԶԺԹ անգամ. – 276. Իսկ ի վերայ բազում հինից եկելոց ի վերայ Գուրգինի և սաստիկ պատերազմացն զոր պատերազմեցաւ յաղթող նահատակութեամբ. ոչ միայն յարտաքին թշնամեացն որ շուրջանակի պաշարէին, բազում այն էր որ ի ներքին ընտանեաց հարազատաց, ազգականաց դրժողաց, ուխտազանցաց, ստոց և ստերդմանց յուզէին աղմուկք: - 308. Յայնժամ ժողովեալ Խոռեմ Ռազմայուզան /գրքում՝ Եռազմայուզան/ զզօրս իւր բանակեցաւ շուրջ զԵրուսաղէմաւ և պաշարեաց զնա, և պատերազմեցաւ ընդ Երուսաղէմի աւուրս ԺԹ – 142.

ՊԱՏԵՐԱԶՄՈՂ - Բայց նոքա քանզի ապաստան լեալ յանկասկածելի յամուրս և ի բազմութիւն զօրացն և ի քաջութիւն արանց պատերազմողաց՝ և ո՛չ առ փոքր մի խոնարհեցան ի բանս նորա կամ ետուն տեղի պատասխանւոյ. – 274. և անդր գումարեալ են ամենայն զօրք և ռամիկք աշխարհիս, արք կորովիք և պատերազմողք, որք ոչ դառնան ի սրոյ. – 212. և առաջնորդ կացուցանէին իւրեանց զԱպուջափր Արծրունի, և ընդ նմա Սահակ Ապումկդէմ քեռորդի Ապուջափրի, այր քաջ և պատերազմող: - 304. Եւ թագաւորեաց կայսր Թէոդոս փոխանակ Պապայ զՎարազդատ ոմն յԱրշակունի տոհմէ, այր քաջ և պատերազմող, ահարկու մեծամեծաց և փոքունց. – 108. և ինքն Հազարաւուխտ առնու զընտիրս այրուձիոց, զկորովի պատերազմողս ի վառելոցն պարսկային հարստութենէն, և

խաղայ գնայ զկողմամբքն Հաշտենից և Ծոփայ, ի վերայ Վահանայ յանկարծօրէն: - 134. Եւ նորա զեկուցեալ վասն նորա Բուխայի՝ ասէ. ,,այրս այս Գուրգէն ի տոհմէն Արծրունեաց, այր քաջ և պատերազմող, ի յահէ քումմէ անցեալ գնացեալ զկողմամբքն Յունաց – 304. և շէն մարգարիտ զքարաբլուրն յօրինէ պարսպաւոր անկասկածելիս անմատչելիս ձեռաց պատերազմողաց – 88. զայս խորհելով թէ զայսպիսի քաջ այր և պատերազմող ոչ պատշաճ վարկանելի է ի հեռաբնակ վայրս ի դրանէ արքունի կացուցանել: - 330. ի սաստ մատուցեալ գնդին իւրոյ պատերազմողացն՝ և ոչ կարաց զբորբոքեալ հնոց դէզադէզ կոխակացն սրախողխող սատակմանն ցածուցանել: - 368. Իսկ Գուրգէն ընթացեալ զհետ հանդիսի պատերազմող նահատակութեանցն, /310/ անդուլ լինելով զցայգ և զցերեկ հանդերձ որ ընդ նմա միաբանեալ ազատագունդ զօրացն – 312. յայնժամ կերիցէ սուր զպատերազմողս քո. – 148. Յայնմ ժամանակի էին եղբարք բռնակալք ոմանք ի կողմանս ապառաժ Արաբիոյ ի տեղւոջն Փառան որ այժմ կոչի Մաքայ, արք պատերազմողք /156/ զօրագլուխք, պաշտօնատարք մեհենին Ամովնացւոց պատկերին, որ կոչի Սամամ և Քաբար: - 158. սրբոյ թագաւորին և քաջ նահատակին Տրդատայ զբարիոք պատերազմեալ ընդդէմ անմարմին և մարմնաւոր պատերազմողաց, փոխի յերկրաւոր աշխատութեանցս ի հանգիստ, մեծաւ պատուով թագաւորական շքեղ և երևելի դիազարդութեամբ – 96. Տեղեկանայր և զայն ևս ըստ իւրաքանչիւր գնդից, զքաջացն և զկորովացն պատերազմողաց ըստ իւրաքանչիւր անուանց – 198. Տէր խորտակէ զպատերազմողսն, Տեառն է պատերազմ, Տէր տկար առնէ զհակառակորդսն, Տէր է յոյս մեր,,: - 134. Զի այր քաջ է և պատերազմող, և միաբանք են որք ընդ նմա են զօրքն, և զանձինս ի մահ դնիցեն ի վերայ տանց և աշխարհաց և ազանց և տոհմից իւրեանց: - 212.

ՊԱՏԵՐԱԶՄՈՂԱԿԱՆ - և զպատրաստութիւն պատերազմողական մարտի ամրոցին հաւատացեալ էր Յիսէի եղբօր Թադէոսի – 362. որոց Շերեփայ որդիք անուանէին, ի յԱկէացի տոհմէ, քաջամարտիկք և հմուտք պատերազմողական յարդարմանց – 362.

ՊԱՏԺԱԿԱՆ - և նախ քան ընդ պատժական տանջանաւոր խոշտանգանօք արկանելն զմեզ՝ բանիւք քո իբրև քարամբք հարեալ զմեզ՝ շտապ տագնապի ի վերայ արկանես թափել զոգիս մեր: - 242.

ՊԱՏԺԱԿԱՆՈՒԹԻՒՆ - Իսկ եթէ՝ մշակն մեղաց և անդրանիկն ամենայն չարեաց, որ ի յօձն բունեալ ոչ անիծաւ, որպիսիս ուսուցանէ վնասապարտութիւն օձին առ ի պատժականութեանն գտանել պարտաւորութիւն, որ ոչ յընքենէ միայն, այլ մանաւանդ ի գտողէն չարեաց: - 22.

ՊԱՏԺԱՊԱՐՏԵԼ - Սիմոն Սամարացի մատուցեալ առ Փիլիպպոս զհոգւոյն պարգևաց լեզուացն, և սրտին կեղծաւորութեամբ զիա՞րդ պատժապարտեցաւ. – 258.

ՊԱՏԻԺ - ,,որչափ սաստիկ պատժոց արժանի համարիցիք զայն, որ զՈրդին Աստուծոյ առ ոտն եհար և զարիւն նորոյ ուխտին խառնակ համարեցաւ և զՀոգին շնորհաց թշնամանեաց,,: - 258. եկեալ հասեալ վրէժխնդրութեան պատիժք, վասն անօրէնութեանց մերոց զոր գործէաք առ հասարակ ի փոքրկանց մինչև ցմեծամեծս. – 196. Որով օրինակաւ կամք քո հրամայեն՝ եկեսցէ ի վերայ մեր պատիժ պատուհասի. – 246.

ՊԱՏԻՐ - ,,ընդէ՞ր որպէս մանուկ տղայ համարիս, արկանել առաջի իմ զպատրանս, սնոտի, առասպելաբան, խաբեբայ և պատիր յոյս խոստանալով ինձ՝ հանել զիս ի ճշմարիտ յուսոյն, զոր ի մանկութենէ ի վերայ հասեալ ճշմարտութեանն,,:-294. ապա հնարաւորեալ պատիր խաբէութեամբ ի կատարումն հասուցանել զխորհրդոյն /346/ զանհաստատ իմացմունսն, և գնաց եմուտ յամրոցն, և զհիւանդութեան կեղծաւորութիւն մերձ առ մահ եդ առաջի: - 348. Բայց նոքա ի մտի եդեալ էին, թերևս պատիր խաբէութեամբ /170/ կարասցեն բառնալ զնոսա յիւրաքանչիւր տէրութենէ: - 172. Զայս հրաման պատուիրանի տային յօժնդակութիւնն պատիր խաբէութեանն իւրեանց – 234. զի ուր և իցէ՝ ածցեն զնա առ նա, թէ՛ պատիր խաբէութեամբ և խորամանկ կեղծաւորութեամբ և խարդախութեամբ, կամ պատերազմաւ և մեծամեծ զօրութեամբ, ամենայն պատրաստութեամբ, արքունի

կարողութեամբ, որպէս զիարդ և կարասցեն՝ առ նա հասուցանեն: - 224. Իսկ նորա յղեալ առ նոսա դեսպան զԱբդլայ ոմն … տեսանել թէ իցէ՞ հաւատարիմ զոր ինչ խօսին ի ձեռն դեսպանաց, թէ պատիւր խաբէութեամբ ջանան կորուսանեն զնա: - 226.

ՊԱՏԻԻ - ,,եթէ կամիս կեալ ընդ իս և վայելես ի կեանս աշխարհիս, և ընդունել պարգևս և պատիւս յինէն՝ հաւանեա հրամանի կամաց իմոց և ի բաց լեր ի հաւատոց քրիստոնէութեանդ, զոր պաշտես – 294. ,,մարդ ի պատուի էր և ոչ իմացաւ, հաւասարեաց անասնոց անբանից և նմանեաց նոցա,,: - 22. ամենածախ զանձիւք առատաձեռն պատուով հոմանեաց և եթ ունելով ուշ – 44. այլ ընկալաւ զնա սիրով խաղաղութեան և մեծաշուք պատուով և պարգևօք ըստ հրամանի թագաւորին: - 288. այսոքիւք ծանուցեալ զպատիւ խնամոցն Աստուծոյ՝ ևս յորդորագոյնս յուսացաւ կոչել այցելու ինքեան զԱստուած: - 26. անհասական իմն շնորհիւ փառօք և պատուով պսակեալ զմարդն իշխանական ճոխութեամբ՝ վայելեցուցանէ դրախտին, տալով նմա բազմամեայ կենաց սահման իբրև զմի օր - 20. Եւ այլ ամրաբնակ ազատորերոյն պարգևս և պատիւս օր ըստ օրէ բաշխէր, և յինքն յանգուցանել ախորժելով վարէր ընդ նոսա: - 360. Եւ անմիաբանք լեալ ընկեցին զսուրբն Սահակ յաթոռոյ եպիսկոպոսապետութեանն և զԱրտաշիր ի պատուոյ թագաւորութեան. – 118. և գրեալ էր առ Բուխայ, զի մի՛ ինչ չարիս խորհիցի կամ գործիցէ առնն այնմիկ, այլ տացէ տանել զնա առ թագաւորն մեծաւ պատուով և զգուշութեամբ: - 288. Եւ առնու պատանդս արս անուանիս և պատուականս, և զմայրն Աշոտի դարձուցանէ մեծաւ պատուով. – 186. Եւ գումարեալ Հայրակղի զամենայն զօրս իւր յորդոր և խնդալից սրտիւ, բազմութեամբ զօրաց ել ընդ առաջ սուրբ նշանին, ի պատիւ հրաշալի և երկնաւոր գանձուն – 154. Եւ Գուրգինի նորին եղբօրն զպատիւ մարզպանութեան գահակալութեան հաւատացեալ, ըստ կարգի բարձաբերձութեան թագաւորացն Հայոց, մանաւանդ մեծին Տրդատայ թագաւորի: - 370. Եւ ելեալ իշխանաց իշխանն, որ բարձրագոյն և հանճարեղագոյնն էր քան զբնաւ Հայաստանեայցս և զընդհանուր կացեալս ի ներքոյ երկնից՝ եկն առ նա մեծաշուք պատուադրութեամբ, և պարգևս և պատիւս ոչ սակաւս նմա յառաջաբերեաց. – 344. և եհան զնոսա յատենէն հոյակապ և շքեղ և երևելի պատուով ի ձայնս երգոց և ի հնչիւնս փողոց. – 314. և ետ բերողացն Հայրակղոս ինչս բազումս և մեծարեալ արձակեաց պատուով: - 154. և զԳագիկ ձգեալ ի պատիւ զօրավարութեան Հայոց մեծաց, ըստ օրինի թագաւորացն Յունաց՝ տալ առաջի նորա նշանակս խաչադրօշս: - 370. և զպատճառսն ստուգեալ, գրէ ի ձեռն Վահանայ ումեմն ի տոհմէն Ամատունեաց՝ դառնալ գալ բնակել անկասկած կենօք, ի բարձ և ի պատիւ իւրաքանչիւր յառաջանալ: - 98. և ընդունել պատիւս և ի ձեռն նորա ընդունել զանուն իշխանութեան ճոխութեան: - 274. և ընկալեալ ի նմանէ մեծաշուք պատուով: - 302. և ի նոյն պատիւ թագաւորութեան կացուցանէ զԱնիանոս Բագրատունի: - 76. և կալցին զիւրաքանչիւր իշխանութիւն և վայելեսցեն ի պարգևս և ի պատիւս արքունի և կացցեն ի հնազանդութեան թագաւորին: - 296. և կեցցես և վայելեսցես ի պատիւս և ի պարգևս թագաւորին – 290. և պարգևս և պատիւս մեծամեծս հրամայէ բերել առաջի – 204. Եւ սոցա այսպէս նահատակեալ կատարեցան վկայութեամբ ի փառս Աստուծոյ, և զմարտիրոսական անուն ժառանգեցին ի Քրիստոս ի պատիւ ամենասուրբ Երրորդութեանն: - 266. և փութացոյց վասն նորա զի անյապաղ առ նա հասցէ, և ի մեծ պատիւս հիւպատութեան հասուսցէ զնա, և խաչանշան դրօշիւք ճոխասցի: - 316. Զոր առեալ զարսն ստիպեաց ի բաց կալ յերկրպագութենէն Քրիստոսի, և պատուի և պարգևաց արժանի լինել ի նմանէ, և մի չարաչար տանջանօք մեռանել: - 222. ըստ սովորութեան ծանօթացուցանել զիւրաքանչիւրոց առանձնաւորութիւն և զպատուոցն գերակայութիւն, կամ ի ծնողաց կամ ի տեղւոյ կամ ի գաւառէ կամ յազգէ կամ յարիութենէ կամ ի պատահմանէ սկիզբն առ: - 288. Իբրև եհաս թագաւորն յաշխարհն իւր՝ ետ բերել պարգևս և պատիւս Աշոտի ըստ իշխանական յօրինուածի – 370. Իսկ եթէ սովորութիւնն այլանդակեալ ի չարէն ի սոյն, կանգնել պատկերս սկայից և քաջաց և բարբարոսական թագաւորաց ի պատիւ – 40. Իսկ ընդ աւուրսն ընդ այնոսիկ սպանեալ էր Ութմանկացն, որ

յամուրսն նստէին՝ զՌստոմ Վարաժնունի, որ զտանուտերական պատիւն յայնժամ ունէր զՎասպուրական աշխարհիս. – 332. Իսկ թագաւորն գրէ առ զօրավարն թերևս կարասցէ հաւանեցուցանել զԳուրգէն՝ երթալ ի թագաւորական քաղաքն առ կայսր, և մեծաց պարգևաց և պատուի և գահու յառաջագոյութեամբ ընկալցի պարգև ի թագաւորէն: - 302. իսկ թագաւորն Մարկիանոս ընկալաւ զնոսա սիրով ի խաղաղութեան, մեծաշուք պատուով ի բարձ և ի պատիւ յառաջ ածեալ, իբրև զքաջամարտիկ ախոյեանս - 132. Իսկ Փիլոն ասէ՝ զոսկերսն Ադամայ, ի պատիւ խնամոց, իբրև հօր հասարակաց՝ առեալ Սէմայ եդ ի տապանի անդ. – 32. կէսքն զԳուրգէն յառաջ ածեն ի պատիւ իշխանութեանն և այլք զԱպուջափր, ոմանք զՎասակ. – 298. կորզել ապարասանութեամբ յինքեան և զպատիւ Արարչին – 20. որ և զՆինուէ քաղաք առաջին արքունեաց շինեալ յԱսուրայ, զոր աւերեացն Նեբրովթ՝ սա վերստին շինեաց ի պատիւ անուան իւրոյ:- 44. որ զտանուտրական պատիւն ունէր – 206. որով զեղծագործ ապականութիւն նոցա յայտ առնէ, յուսակորոյս յայնմանէ, որ զպատիւ սիրոյ եցոյց ի նոսա՝ որդիս իւր ասելով – 28. Սովորութիւն է գրոց, որպէս զիրն նոյնպէս և զտեղին վերաբերեալ, կամ ըստ ծանօթութեան, կամ ըստ պատուոյ: - 288. սրբոյ Աւետարանին հետազօտեալ կրթականին՝ մի բազմել յառաջին բարձին, ոչ եթէ ոչ ունէր նազելի և բարձրագահ պատիւս ի մէջ մեծ նախարարութեանցն Հայոց – 94. սրբոյ թագաւորին և քաջ նահատակին Տրդատայ զբարիոք պատերազմեալ ընդդէմ անմարմին և մարմնաւոր պատերազմողաց, փոխի յերկրաւոր աշխատութեանցս ի հանգիստ, մեծաւ պատուով թագաւորական շքեղ և երևելի դիւազարդութեամբ – 96. քանզի յոյժ սիրեցեալ եղև ի զօրավարէն, և առաւել քան զամենայն մեծամեծսն ընդունէր պարգևս և պատիւս – 216.

ՊԱՏԿԱՆ -Բայց քանզի ոչ ոք յայնժամ ընդ գրով զայնոսիկ ներքաղրեաց, որպէս օրէն է թագաւորաց՝ և ոչ մեք երկրորդել պատկան վարկաք: - 246.

ՊԱՏԿԱՆԱԲԱՐ - Այլ և պատկանաբար իմաստութեամբ պատրաստեաց ջրմուղ ներքսագոյն երկրի ի քարանց տաշելոյ փողոցս գնացից ջրոյն կազմեալ – 392. Բայց թէպէտ և երկոքին պատճառք անուանակոչութեանցն պատկանաբար վարկանելի է՝որպէս իմաստասիրացն հաճոյ թուի, այլ ինձ զառաջինն ախորժելի զհաւատարմութիւնն ի մէջ առնուլ: - 72. Բայց քանզի ոչ բաւէ աղքատիմաստ իմոց /384/ խոհարանաց շարժումն պատկանաբար առ ողբոցն վարել բանակարգութիւն՝ թողի այժմ այլում զօրաւորի կամ այլում ժամանակի: - 386. Եւ փոխանակ նորա թագաւորէ Սմբատ որդի Աշոտի, այր քաջայայտ և հանճարեղագոյն, լի և առոյգ յամենայն իրողութիւնս՝ որ ինչ ընդ երկրաւս համառօտաբար լրութիւն պատկանաբար պիտանան, հաճոյ Աստուծոյ և ընտիր մարդկան: - 356. Յաւելում պատկանաբար գրել քեզ զարիական նահատակութենէն հանդիսական ժուժկալութեամբ ողջախոհաբար կրթութեամբ զզինուորական երկասիրութեամբն յօժարաբար դեգերել զմարզպանութեանն արդիւնաւորել անուանակոչութիւն: - 398.

ՊԱՏԿԱՆԻԼ - մերժել հեռանալ … և որ այլ քաղցրագոյն վայելք ընդ երկնաւս ի վերայ երկրի, պայծառ գեղ արեգական և լուսնի, հանդերձ աստեղացն ճոխագործութեամբքն ընդ տարերք երկնի յեղյեղլով, ծովու և այլոց ցամաքայնոց, և ջրայնոցն բարեփառ հոլովմանցն հրճուանաց, և որ ինչ ընդ այլք ընդ դոքօք պատկանին յարմարաբար տնտեսութիւնք առ սկզբնատիպն պատկերակերպութիւն: - 386.

ՊԱՏԿԱՌ - Քանզի յոյժ պատկառ կայր ի պաշտօնատարութիւն հայրապետին իշխանն Տարունոյ, և նա սաստիկս հոգայր վասն նորա, թէպէտ ոչ օգտէր յիրին յայնմիկ: - 346.

ՊԱՏԿԱՌԱՆՔ - Եւ զի մի երկայնեալ որ ինչ վասն նորա ապիրատ և ինքնակամ և անզիջ և անխիղճ առանց պատկառանաց մոլորութիւն սորա լի անամօթութեամբ՝ի բաց դիցուք զսա ի միջոյ յիշատակի նախարարացն – 248. զի եկեսցէ առ նոսա առանց պատկառանաց և երկիւղի և առանց միոյ իւիք կասկածանաց – 226. թէպէտ և ոչ համարձակեաց զամենայն բառնալ, այլ յոյժ պատկառանօք ամաչեցեալ՝ լքաւ ի ստութենէ անտի, որ յանդիմանեցաւ ի թղթոյ կայսերն, և ի ձեռն այսորիկ ցուցանէր բարեմտութիւն մեծ առ

ազգս /166/ քրիստոնէից. – 168. Իսկ Արտաշիր յանդգնագոյնս և առանց պատկառանաց զհետ ամօթալից ախտին գիջութեան իգամոլ ցանկութեանցն ընթացեալ՝ ոչ միայն ի գիշերի այլ և ի տունջեան յանդիման արեգական, անխտիր կատարէր զցանկականն, զանասնական գիջութեամբքն զանցուցեալ: - 116. Յայնժամ համարձակեալ եմուտ յատեան բռնաւորին և եկաց առաջի զօրավարին աներկիւղ համարձակութեամբ առանց պատկառանաց, և ասէ – 218.

ՊԱՏԿԱՌԵԼ - և ցուցէք յականէ յանուանէ մի ըստ միոջէ իւրաքանչիւր զվնասս զոր գործեալ եմ, դի՛ք ի լսելիս համագունդ զօրականացս, և մի՛ պատկառէք խօսել զճշմարտութիւնն: - 214.

ՊԱՏԿԱՌԵԼԻ - Բայց ինձ ոչ դանդաղելի կամ պատկառելի կամ մեղանչելի է զուգակշիռ նահատակելոցն նահատակակից վարկանել զսա և մարտիրոսականաւն զսորայս դրուատել ճգնողական մրցմունս – 300. և տնեալ զաւուրս Խ՝ փոխի յաշխարհէս ամենեցուն պատկառելին, մանաւանդ թէ ընդհանուր ցանկալին և սիրելին ճոխից և անազգեաց, աղքատաց և փարթամաց, մեծամեծաց և փոքունց: - 384. զի էին ազգք ճոխք և երևելիք, քաջք և անուանիք, և ամենեցուն պատկառելիք – 98.

ՊԱՏԿԵՐ - ըստ պատկերին Աստուծոյ ստուերացեալ բարձրացեալն՝ նուաստացաւ – 22. այլ և նկարագիրս ոմանս պատկերաց զպատկեր քաջաց արականս և շքեղաւորս կենդանագրել: - 42. Աստանօր և ի դէպ ելանէ մարգարէութիւնն Դանիէլի, տեսութիւն անհեդեդ պատկերին բազմախառն նիւթօքն ի վերայ խեցեղէն և երկաթեղէն ոտիցն: -156. և ետ հրաման ահիւ մեծաւ՝ ամենայն ուրեք կանգնել զպատկեր իւր և երկիրպագանել իբրև աստուծոյ և զոհս մատուցանել. – 40. և էր ալևոր ըստ մարմնոյ և հնացեալ արտաքին մարմինն, բայց ներքինն նորոգեալ և գեղեցկատեսիլ ըստ պատկերի արարչին. – 204. և ի վերայ նորա կանգնէ զԱստղկեան պատկերն, և մօտ նորա զտուն գանձու պաշտպանութեան կռոցն. – 88. և ինքն Աշխէթ զինեալ զինքն ի զէն և յասպազէն, զոր կարծեալ ոմանց երկաթեղէն պատկեր գոգցես զերիվարն և զհեծեալն, աչացն միայն ոչ գոլով ծածկոյթ. – 272. և հարքն ի գութ խանդաղատանաց զպատկերս որդւոց նկարեցին – 40. զի սմա և եթ յաւելու ասել, եթէ ծնաւ ըստ կերպարանաց իւրոց, և ըստ պատկերի իւրոյ: - 24. զի պայծառ սուրբ և մաքուր ոսկին յիւրումն կտակագրի պատկեր աստուածորդւոյն: - 252. ըստ ասացելումն ի Սողոմոնէ, եթէ ,,հայր թախծեալ տարաժամ սգով՝ վասն վաղամեռիկ լինելոյ որդւոյ արար պատկեր,,: - 40. Իսկ եթէ սովորութիւնն այլանդակեալ ի չարէն ի սոյն, կանգնել պատկերս սկայից և քաջաց և բարբարոսական թագաւորաց ի պատիւ – 40. Իսկ Սաթինիկ ունկնդիր եղեալ խրատու սրբոցն՝ ոչ ի բաց մերժեցաւ ի կռոցն Աստղկայ անուանեալ պատկերին – 88. կործանեցին և զպատկերսն Սամամայ, որ ի բագնին այնորիկ. – 160. Յայնմ ժամանակի էին եղբարք բռնակալք ոմանք ի կողմանս ապառաժ Արաբիոյ ի տեղւոջն Փառան որ այժմ կոչի Մաքայ, արք պատերազմողք /156/ զօրագլուխք, պաշտօնատարք մեհենին Ամովնացւոց պատկերին, որ կոչի Սամամ և Քաբար: - 158. որպէս Պօղոսի հաճոյ թուի ասել, թէ ,,զորս յառաջն ճանաչէր՝ յառաջագոյն հրաւիրեաց կերպարանակից լինել պատկերի որդւոյ իւրոյ,,: - 300 տայր հրաման փշրել և խորտակել զկենդանագրեալ պատկերս ճշմարիտ մարդեղութեան Փրկչին և նորին աշակերտաց: - 168.

ՊԱՏԿԵՐԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ - մերժել հեռանալ … և որ այլ քաղցրագոյն վայելք ընդ երկնաւս ի վերայ երկրի, պայծառ գեղ արեգական և լուսնի, հանդերձ աստեղացն ճոխագործութեամբքն ընդ տարերք երկնի յեղյեղլով, ծովու և այլոց ցամաքայնոց, և ջրայնոցն բարեփառ հոլովմանցն հրճուանաց, և որ ինչ ընդ այլք ընդ դոքօք պատկանին յարմարաբար տնտեսութիւնք առ սկզբնատիպն պատկերակերպութիւն: - 386.

ՊԱՏԿԵՐԱԿԻՑ - իբրև զքաջ հովիվ եղեալ զանձն ի վերայ խաշանց մեռանել, նմանակերպեալ պատկերակից լինել որդւոյն Աստուծոյ – 300.

ՊԱՏԿԵՐԱՊԱՇՏՈՒԹԻՒՆ - որ և սկիզբն պատկերապաշտութեան եղև: - 40.

ՊԱՏԿԵՐԵԱԼ - ուր զսեղանն սուրբ և զգաւազան հովուական և զմատանին պատկերեալ և զգօտին աշխատասէր միջոյն թողեալ ի հանապազորդ յիշատակ լուսաւորութեանն մերոյ հօրն: - 104.

ՊԱՏՃԱՌ - ,, վնասս և զբեկումն հարկաց արքունի և զկոտորումն զօրաց քոց Աշոտ գործեաց, և նա է պատճառ ամենայն ապստամբութեան Հայոց ի քումմէ թագաւորութենէդ, ասեն, ո՛վ քաջդ և հաւասար աստուածայնոց կարողութեան ինքնակալ, և ընդհանուր իշխեցօղ կենաց և մահու,,: - 180. Բայց թէպէտ և երկոքին պատճառք անուանակոչութեանցն պատկանաբար վարկանելի է՝որպէս իմաստասիրացն հաճոյ թուի, այլ ինձ զառաջինն ախորժելի զհաւատարմութիւնն ի մէջ առնուլ: - 72. Բայց թէպէտ և ունէր զպատճառ զբարեկամանալն Արէտայ ընդ Աբգարու և ընդ Խուրէնայ՝ այլ Աբգար և Խուրան առ փափագումն որ ի Քրիստոս, և առ լուր սրբոյ Փրկչին, և որ ինչ գործեացն Հերովդէս՝ ոխացեալ ընդ Հերովդի – 78. բայց միայն զհարկաց և զայլ հոգաբարձութենէ ծանուցանէ զպատճառ գալստեանն. – 172. Բայց յաւելեալ լինի պատճառ ունելոյն զնա զայս օրինակ, եթէ էր փեսայացուցեալ զԴաւիթ զեղբայր կորապաղատին ի քոյր իւր Մարիամ. – 342. Բայց ոչ ետ տեղի Գուրգէն այսմ՝ յերկուց պատճառաց, մի՝ զի մի՛ ապստամբ երևեցայց Տաճկաց բռնաւորին – 316. բանասարկուք ոմանք հրապոյրս պղտորս քսութեան ածէին տանէին ի միջէն առ միւսն, որպէս թէ զչարիսն իրերաց առ հազարապետն խորհել նիւթել յայտ ածէին և զպատճառն զմիմեամբք արկանէին ի գաղտնիս քրթմնջելով: - 342. և հեծելագունդ զօրացն Կայսկին զկնի նորա, զգացեալ զպատճառ ելիցն նորա ի բանակէն. որում ոչինչ գամագիտ կարացեալ լինել՝ դարձան ամօթալից կորակնեալք, յանգէտս համարեալ զինչ գործեցինն: - 342. և առաջի դնէ Երուանդայ զպատճառս փախստեանն – 82. Եւ գրեաց թուղթ զկնի նախարարացն Շապուհ, լուծանելով զպատճառ հատուածի նոցա. – 110. և զպատճառսն ստուգեալ, գրէ ի ձեռն Վահանայ ումեմն ի տոհմէն Ամատունեաց՝ դառնալ գալ բնակել անկասկած կենօք, ի բարձ և ի պատիւ իւրաքանչիւր յառաջանալ: - 98. Եւ թերևս զանգիտութեան ոք ունիցի ասել զպատճառ. – 52. և լինել պատճառք սրոյ և գերութեան ամենայն աշխարհի,,: - 216. Եւ լուեալ կնոջն Սահակայ, թէ ըմբռնեցաւ … փութացաւ գնաց եկաց առաջի Բուխայի, թերևս կարասցէ ըստ պատշաճ գեղոյն և ըստ բազմաձեռն գանձուց ապրեցուցանել զայրն իւր, որ առաւել մահու քան թէ կենաց պատճառ եղև նմա: - 272. Եւ յաւուր միում լեալ նորա ի տխրութեան ի սպառնալեաց հօրեղբօրն իւրոյ՝ եկն եմուտ առ նա Ալի որդի Ապուտալպի և ասէ, զի՞նչ են պատճառքդ զի նստիս տխրեալ. – 160. Եւ ուսեալ Հրէիցն զպատճառս փախստեանն՝ խրախուսեցին ի միաբանութիւն, ճշմարիտ ասել զասացեալսն, իբրև նախանձախնդիրք Աստուծոյ և որդիք Աբրահամու և եղբարք միմեանց: - 160. Եւ պատճառ այսոցիկ զի՞նչ, եթէ ոչ այն զոր Պօղոս ասաց, եթէ ,,վասն զի ոչ ընտրեցին զԱստուած ունել ի գիտութեան՝ մատնեաց զնոսա ի միտս անարգութեան գործել զանարժանս,,: - 374. զի զոր անձանց՝ զնոյն և այլոց գիտասցեն հրաժարել ի զօշոտութենէն, որ առաջնոյ անկմանն եղև պատճառ – 26. Զոր Փիլոն Աղէքսանդրացի փիլիսոփոս և վարդապետ հնոյն՝ Զրարբի ասէ, թերևս զսննդականութեան և զաճողական բազմամարդութեանն պատճառ նշանակեալ յառաջատեսէ հայրն. – 24. Իբրև ստուգեաց զազգն, զգաւառն, զաշխարհն, զպատճառ հատուածին, զզետեղելն, զիարդն, զորպէսն, զեղանակն, զդիպուածն, զպատահն և զայլն ամենայն՝ խնդրէ զնա Վաղարշակ յԱրշակայ և առնու ածէ զնա ընդ իւր ի Հայս – 72. Իսկ նա անդէն և անդ հերքեալ ապաժամանակ առ ուղղակի տեսութիւն մեղանաց՝ առ Աստուած վերաբերէ զպատճառն – 20. Ո՞վ յիմարութեան առաջնոցն. ո՞րպիսի կատաղութիւն և գիւտք դիւացն նախկին ժամանակաւ սպրդեալ մուծաւ յաշխարհ, ապստամբութիւն առ Աստուած և տրտմութիւն սրբոց հրեշտակաց, և պատճառ վտանգաւոր մահու ծառայիցն Աստուծոյ յաւուրս ապագայիցն. – 38. Ոչ վարկպարազի, որպէս ինձ թուի, ի ճախ է զանց առնել զխնդրոյս այսորիկ զպատճառն - 14. որ եղև իսկ պատճառ կորստեան Բուխայի – 272. որոց հնազանդութիւնն կորստեան պատճառք գտաւ

աշխարհիս Հայոց: - 110. և ամենայն ուրեք դա է պատճառ ապստամբութեան Հայոց յարքայից արքայէ. – 104.

ՊԱՏՃԱՌԱՆՔ - Արձակէ առ Բագարատ, կոչողս պատճենիւք հանդերձ, զի եկեսցէ առ նա առանց պատճառանաց և երկիւղի: - 186. բայց իբրև գիտացին զօրքն որ ընդ նմա եկեալ էին զնորա քաջակարծրագոյն արիութիւնն՝ և պատճառանօք այս ինչ այն ինչ դարձեալ դարձան յանցնիւր տեղի: - 310. Եւ այն ինչ ընդ ջեռնուլն արեգականն, մինչ ագևորեալքն մտանէին զառաջեաւ ամիրային, որպէս որսոյ ինչ պատճառանօք հեծեալ յընտիր երիվարս հանդերձ մերձաւոր հարազատօք իւրովք և ազատովք յընտրելոցն Վասպուրականի՝ ելեալ մեկնեցաւ իբրև վտաւանս երկուս. – 342. Է՞ր աղագաւ կամ վասն ո՞յր պատճառանաց. զի ի քաջէն իմմէ և ի մեծ իշխանէն, ի քաջատոհմիկ և ի բարեփառ գլխոյն իմմէ զրկեալ լինիմ: - 384. լռութեամբ և պատճառանօք ոչ կարէին հաճել զմիտս զօրավարին – 234. Կինն Սահակայ որդւոյ Իսմայէլի, զորոյ զհանգամանսն ցուցաք, զմեռանելն Սահակայ և զկնոջն հրապարակագոյժ լինել, վասն որոյ պատճառանաց սպանանի այրն նորա. – 326.

ՊԱՏՃԱՌԱՒ - Բայց երանելիս այս Գէորգ … դարձաւ ի դահիճն կոյս պատճառաւ աղաչելութեան՝ տեսանել, թէ ընդէ՞ր ոչ հատանիցէ սուսերն – 266. ԹԷ ՈՐՊԻՍԻ ՊԱՏՃԱՌԱՒ ՀԱՍԻՆ ՈՄԱՆՔ Ի ՆՈՅԱՆԷ ՍՈՒՐԲ ԿԱՏԱՐՄԱՆՆ: - 220. Կոչէր առ ինքն զիշխանն դիմօք սիրոյ խաղաղութեան, պատճառաւ հարկաց արքունի. – 184. քանզի հարցեալ ցնա որք նորին ուղեկից՝ թէ ո՞րպիսի պատճառաւ անկեալ եղեր ի մտաց՝ ասէ – 158. Եւ զօրաժողով եղեալ Մուսէի պատճառաւ հարկաց արքունի՝ եկն եմուտ յերկիրն Տարաւնոյ, տալ պատերազմ ընդ Բագարատայ: - 172.

ՊԱՏՃԱՌԵԼ - Բայց Ապումրուան պատճառելով Աշոտի՝ ասէ. – 362. և թէ Ադամ առ նմանն իւր և օգնական զայսոսիկ՝ զի՞նչ ի դէպ իցէ կնոջն անմեղադրելի գոլ՝ օձին պատճառել, որ նս վատթարագոյն քան զանասունն լինիցի: - 22. Իսկ Ապումրուանայ ի պատճառ ոստիկանութեան զմանկականն նոցա պատճառելով խաժութիւն հասակի՝ առ սակաւ սակաւ սկսաւ զամուրսն յինքն գրաւել, զհետ իշխանական ցանկութեանն զերասանակ մտացն ձգեալ - 360.

ՊԱՏՃԵՆ - Արձակէ առ Բագարատ, կոչողս պատճենիւք հանդերձ, զի եկեսցէ առ նա առանց պատճառանաց և երկիւղի: - 186. և էր պատճէն թղթոյն զոր կեղծաւորեալ ետուն զնա՝ այս ինչ. – 236.

ՊԱՏՄԱԳԻՐ - այլ ըստ պատմագրացն՝ Մեստրիմ ծնանի զՆեբրովթ – 42. Արդ են ժամանակք թագաւորութեանն Պարսից, սկսեալ ի Կիւրոսէ ցԴարեհիոն … և ամք անիշխանութեանն զոր ոմանք ի պատմագրաց գրեն Կ, և այլք Հ – 166. Բայց թէ է՞ր աղագաւ պատմութիւն վկայութեան Վահանայ ոչ է գրեալ ի գիրս պատմագրի՝ ստուգապէս առանց յերկուանալոյ ցուցանեմ քում ուսումնասէր քաջահմտութեանդ: - 128. Զայս յառաջագոյն իմացեալ հին պատմագրին՝ յառաջատես զկործանումն նոցա յայտ առնէ. – 148. զոր աւելորդ համարիմ երկրորդել զյառաջագոյն պատմագրաց նշանագրութիւնս: - 102. զոր ոմանք ի պատմագրաց ասեն հայր սորա զՄեստրիմ – 42. զոր ոմանք ի պատմագրաց ասեն՝ փախստեամբ դարձեալ գնաց յԱսորեստան: - 42. Իբրև յաջողեցաւ Արտաշէսի ամենայարդար պատրաստութեամբ և աշխարհաշէն հոգաբարձութեամբ, որպէս բացայայտեն գիրք պատմագրաց – 86. Իսկ առ մեզ հասին զրոյցքս այս ըստ մնացորդաց պատմագրացն առաջնոց, ի Մամբրէէ Վերծանողէ և ի նորուն եղբօրէ Մովսէս կոչեցելոյ, և միւսումն Թէոդորոս Քերթող – 74. Իսկ ըստ պատմագրաց՝ կարգ ծննդաբանութեանդ ունի զայս օրինակ. – 42. Իսկ ոմանք ի պատմագրաց ասեն, թէ և դուստր Նոյի և ճարտարապետ նաւին կնաւ և որդւովք և կարևոր բարեկամօք. (տապանի մեջ են մտել) որ և ինձ հաւանականք այսոքիկ թուին.–30. յառաջ խաղացուցից զբանսն, արագաքայլ արշաւանօք անցեալ գնացից ընդ շարագրածս անցնիւր պատմագրաց, զազգաբանութիւնն միայն ոճով դրոշմեցից ի շարի աստ – 74. Յերկարեալ վտանգ նեղութեան Հայոց, որպէս ցուցանեն բազումք ի պատմագրաց, մինչ ի ժամանակս Ջամասպայ և Կաւատայ, մինչ ի

Խոսրով արքայ: - 134. որպէս ցուցանեն մեզ առաջինքն ի պատմագրացն. – 62. Որպէս ցուցանեն յիշատակարանք հաւատարիմ պատմագրացն. մանաւանդ թէ աւետարանիչն և առաքեալն Յօհաննէս, որդին որոտման, տիեզերաց հնչեցոյց զորոտումն աւետեաց Աւետարանին Քրիստոսի – 76. որպէս ցուցանեն յիշատակարանքն առաջնոց պատմագրաց, զաւերումն Հայոց և զյաճախել նեղութեանցն և զանթիւ բազմութիւն վկայից, որք վասն Քրիստոսի նահատակեցան,և զքաջապէս արիանալ սրբոց քահանայիցն – 128.

ՊԱՏՄԱԳՐՈՒԹԻՒՆ - բայց զանուանս միայն ըստ կարգի կանոնել բաւական հանարեցաք, որպէս և այլոց առաջնոցն մատենագրացն յայս եկեալ ձև պատմագրութեան. – 68. բայց քանզի պատմագրութեան է ժամս և ոչ գովասանականութեան՝ արտաքոյ եղէց յոլովից բանբասանաց. – 300. որպէս պատմէ ի գլուխ երկրորդի պատմագրութեանն: - 96.

ՊԱՏՄԵԱԼ - զորոյ ցուցականութիւն պատմեալ գլխաւորին Տաճկաց Ջափրի: - 326.

ՊԱՏՄԵԼ - այլ եկ պատմեաց նոցա զհանգամանս տեսլեանն – 120. և անցեալ պատմեցին զօրավարին: - 224. և կամեցեալ իմ պատմել և ձեռնարկել տեսանել ի ձեռն ծառայից, ուր էր երջանկացն վայր - 50. և կինն անցեալ պատմեաց թագաւորին որ ինչ եղևն, զբողոք բառնալն իւր և զկացուցանելն վկայս՝ թէ ոչ վայել եմ քեզ կին, այլ արքայի, և որ ինչ եղևն – 272. և նա ասէ՝ զԱստուած արարիչ երկնի և երկրի պատմեմ, և անարգեն զիս սպառնալեօք: - 160. և ոչ եմ բաւական պատմել զանցս անցիցն կորստականութեանն նոցա մոլորութեան, վրիպել յուղիղ և յամբիծ առաքելաքարոզ դաւանութեան հաւատոց կաթողիկէ եկեղեցւոյ ի Հայր և յՈրդի և ի Հոգին սուրբ. – 240. և ոչ են կամք իմ փութալ պատմել ընդ գրով փակել զկործանումն տերանց իշխանաց մերոց - 240. և որպէս պատմեն զնմանէ՝ զի դարձաւ յետս յԱստուծոյ և դարձոյց զերեսս իւր ի ճշմարիտ դաւանութենէ յերկրպագութենէ Աստուածորդւոյն, որպէս ասաց՝ դարձուցին յիս զթիկունս և ոչ զերեսս իւրեանց. – 248. և որպէս պատմի՝ եղև թիւ պատերազմաց նոցա ԻԸ անգամ, և հարան զօրքն արքունի յայսքան հանդէսս և ի կռիւ: - 286. և պատմեցին նմա՝ զոր ինչ գործեցին զիրս քաջութեանն: - 222. Եւ պատմի այս ի համառօտութեան Աբրահամու Խոստովանողի: - 128. զի գործ մի գործեմ ես յաւուրս ձեր, գործ որում ոչ հաւատայցէք, թէ ոք պատմեսցէ ձեզ: - 200. զի լայնագոյնս ևս վասն այսորիկ պատմէ մեծ քերթողն Մովսէս – 42. զոր ոչ է ժամ մեզ պատմել - 274. Զոր օրինակ փոքր մի վերագոյնն պատմեցաք զծովային վիշապէն ըստ բարոյականի՝ նոյնպէս և այժմ դարձեալ արարից զյիշատակ սորա աղագաւ պատմութեանս խորհրդոյ: - 260. Յանձն առի պատմել ստուգապէս զսքանչելագործ յայտնութեանն հրաշիցն, որ ցուցաւ ի զօրավարութեանն Գագկայ. – 378. Ոչինչ զանգիտեալ մեր մինչ ցայս վայր, պատմել զվտանգս և զնենգութիւնս եկեալ հասեալ ի վերայ մեր ի թշնամեացն ճշմարտութեանն. – 194. որպէս պատմէ ի գլուխ երկրորդի պատմագրութեանն: - 96. որպէս Պօղոսի հաճոյ թուի գրել յառ Եբրայեցիս թղթին, թէ ,,չէ բաւական ժամանակս պատմելոյ,, վասն դատաւորացն Իսրայէլի և սրբոց մարգարէիցն – 302. Պատմեաց զայս մեզ մեծ քահանայն Սամուէլ յաւանին Արտամետ. – 206.

ՊԱՏՄՈՂ - Եւ արդ ասացից փոքր ի շատէ զյայտնի գործեցեալսն, զի և որ ինչ ընդ սոքօք և յետ սոցա ի գլուխ ելին հանգամանք իրաց՝ և այնմ առանց երկբայութեան հաւատասցես, իբրև ճշմարիտ և անսուտ պատմողի: - 240.

ՊԱՏՄՈՂԱԿԱՆ - Այսր աղագաւ արտաքս վազեցի զմեծս զայս բանգտութեան ընթանալ ասպարէզ, զօրաւորաց մտահարուստ արանց կարօտացեալ բաւականանալ իմով անհեդեդ պատմողական հանդիսիւ – 352. և մեք զպատմողականն համառօտաբար յառաջ վարեսցուք հարկաւորութիւն: - 302. Եւ սրբոյ վարդապետին մեր Եղիշէի, որ յայնմ ժամանակի ի Մոկաց բնակէր աշխարհին՝ եկեալ առ նա Բարծումայ, խնդրեալ զպատմողական գիրսն Հայոց, զոր գրեալ էր հրամանաւ սրբոյն Վարդանայ. – 130. զի ոչ է ժամ մեզ զներբողականօքն զդեգերումն առնել, զպատմողական զրուցատրութեան կարգաւն զանց առնել: - 78.

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ - Աստանօր ոչ հեշտալիր թուին ինձ պատմութիւն ճառիս շարագրութեան: - 350. աստանօր պարտ է սակաւիկ մի յապաղումն տալ պատմութեանս. – 18. բայց ակամայ և ի հարկէ գրեցից կարգեցից ի փոքր և ի դուզնաքեայ բանից, բովանդակեցից համառօտ սուղ և սակաւ բանիւ անցանել ընդ պատմութիւն իրիս այսմիկ – 240. Բայց թէ է՞ր աղագաւ պատմութիւն վկայութեան Վահանայ ոչ է գրեալ ի գիրս պատմագրի՝ ստուգապէս առանց յերկուանալոյ ցուցանեմ քում ուսումնասէր քաջահմտութեանդ: - 128. Դարձեալ վերստին հրաճուանօք ոռոգեալ լինի պատմութեան աստ սակս բարձրագահ, համաթոռ, ճոխազգի ազգապետութեանն Արծրունեացս, /76/ մեծ զարմի Սենեքերիմայ ծննդոց. – 78. Եւ արդ ունի պատմութիւնն այսպէս: - 14. ԵՒ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆՆ Ի ՔՐԻՍՏՈՍ ՏԵԱՌՆ ԳՐԻԳՈՐԻ ԱՐԾՐՈՒՆԻՈՅ ԵՒ ՏԵԱՌՆ ՅՈՎՀԱՆՆԻՍԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԱՐԾՐՈՒՆԵԱՑ ԵՒ ԳՐԻԳՈՐ ՔԱՀԱՆԱՅԻ, ԵՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՆՈՑԱ: - 240. և հնախօսս շարագրական մատեանս և ի բազում վէպս պատմութեանց անցեալ գրեցի, որ ինչ բաւականանալ ձեռնհաս եղէ, սկսեալ յԱդամայ մինչ առ մեզ հասեալ ժամանակացս գիւտ: - 12. Եւ մեք զկարգ պատմութեանցս մասնաւորաբար և համառօտապէս յառաջ վարեսցուք – 78. Եւ ունի պատմութիւնն այսպէս. – 14. զի մի յերկարաձգեալ զդեր հատուցական բանիս՝ յետնեալ գտցուք յառաջիկայ մեզ գրաւորութենէն, որ սակս պատմութեանցն են հանդէպք: - 260. զոր և երանելին Կորիւն, ուսումնակից Մովսէսի և աշակերտ սրբոյն Մեսրովպայ՝ յիւրումն ստուգաբանեալ պատմութեան զայսոսիկ մեզ հաւատարմացուցանէ: - 122. Զոր օրինակ փոքր մի վերագոյնն պատմեցաք զծովային վիշապէն ըստ բարոյականի՝ նոյնպէս և այժմ դարձեալ արարից զյիշատակ սորա աղագաւ պատմութեանս խորհրդոյ: - 260. Կատարեցաւ Դպրութիւն Առաջին Պատմութեան Հայոց ըստ ազգաբանութեան Արծրունեաց սեռի: - 122. Հասեալ ի տեղիս յայս ի պատմութիւն Աբգարու թագաւորի Հայոց – 76. մինչև եկից հասից ի լայնանիստ ընդարձակ ասպարէզս մատենից պատմութեանցս՝ ոճով մի ըստ միոջէ շարեցից, կարգեցից, գրեցից զախորժելին քեզ: - 74. Յայսմ վայրի ոչ մտադիւր ախորժակօք գրեմ զճառս պատմութեանս, որ տրտմականքն, քան թէ ուրախականքն յառաջանան տիրել ինձ: - 384. Յաւէտ խրախճանութեամբ բուռն հարկանել ախորժելի է ինձ զպատմութենէ քաջատոհմիկ և բարեփառ բարեյաղթ նահատակէն , զԳուրգինայ ասեմ – 300. Նորա զչարեալ ընդ հասանել պատգամին՝ առ զայրուցս բարկութեան քինահանութիւն վրէժխնդրութեան արարեալ՝ ի բաց եհան ի գրոցն պատմութենէ՝ որ ինչ վասն տանն Արծրունեաց էր գործոց հանգամանք, և որ ինչ օրինակ մարտիրոսութեան Վահանայ Արծրունոյ: - 130. որպէս գրեալ աւանդեցաւ մեզ այս ի չորրորդ դրուագի խոստաբանեալ պատմութեանն Մովսէսի Խորենացւոյ, վերադարձութեան ի վերայ երեցունց դրուագեալ հատուածին – 122. որպէս և ցուցանէ քեզ պատմութիւնք սրբոց Վարդանանց – 48. որպէս ընթեռնուք ի գիրս պատմութեան վկայելոցն, որ Արևելեայ ասի գրոցն վերագրութիւն – 106. Սահակս այս այն Սահակ է, որոյ հրամանաւ գրեաց մեծ վարդապետն Մովսէս տիեզերահռչակեալ քերթողն զգիրս Պատմութեան Հայոց մեծաց, հրաշազան յօրինուածով, սկսեալ յԱդամայ մինչ ի կայսր Զենոն. – 122. Սոքա հրամանաւ Վահանայ Արծրունւոյ փոյթ յանձին կալեալ՝ խուզել քննել կարգել ի համառօտ բանս զաճմունս ազգացն անցելոց ոչ կարի ինչ ընդ երկայնագոյնս աշխատասիրաբար անցանել պատմութիւնս: - 74. ՎԱՍՆ ՄԱՀՈՒԱՆՆ ՅՈՎՍԵՓՈՒ Ի ԼԵՌՆԱՅՆՈՑՆ ԽՈՒԹԱՅ ԵՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՆՈՑԱ: - 188.

ՊԱՏՄՈՒՃԱՆ - արկեալ զիւրև պատմուճան լուսակիզն փայլեալ իբրև զարուսեակ, և յաջոյ ձեռինն ունէր սուսեր, և ի ձախոյն՝ բուրուառ լի խնկով – 232. և փոխանակ ծաղկեալ պատմուճանի գունագոյն երանգ երանգ անկուածոցն՝ զսուրբ և զվարդագոյն կարմրատեսիլ արիւնն իւրեանց ի վերայ սուրբ մարմնոյն, և փոխանակ ոսկեհուռ թագակապ զարդու պսակացն՝ զերկրպագութիւնն Քրիստոսի. – 266.

ՊԱՏՆԷՇ - և կանգնեցին պատնեշս/ճիշտը՝ պատնէշ/ և շինեցին ապարանս և արարին տուն բնակութեան – 276. և կանգնեցին պատնէշ և կուտեցին քարինս և կանգնեցին մեքենայս և կացին ի պատրաստութեան: - 280. յորում շահաստանն Դուին, մարդախիտ պարսպաւոր

պատնիշօք պատուարեալ և տուրևառիկ վաճառականութեամբ և ազգի ազգի պղծութեամբ յափրացեալ յղփացեալ: - 358.

ՊԱՏՇԱՃ - Եւ լուեալ կնոջն Սահակայ, թէ ըմբռնեցաւ … փութացաւ գնաց եկաց առաջի Բուխայի, թերևս կարասցէ ըստ պատշաճ գեղոյն և ըստ բազմաձեռն գանձուց ապրեցուցանել զայրն իւր, որ առաւել մահու քան թէ կենաց պատճառ եղև նմա: - 272. զայս խորհելով թէ զայսպիսի քաջ այր և պատերազմող ոչ պատշաճ վարկանելի է ի հեռաբնակ վայրս ի դրանէ արքունի կացուցանել: - 330. զոր կազմեաց իւր սատանայ գործի աջողակ յամենայն արուեստ գիտութիւն խարդախութեան, իբրև զպատշաճ դարան դեղեալ նետիւք ընդ խաւար թռուցելոյ յոգիս խաւարամածս: - 248. Իսկ իբրև եմուտ տիկինն ի բանակն և եկաց առաջի զօրավարին՝ խօսեցաւ ընդ նմա ըստ պատշաճի իրացն յոր պէտս չոգան: - 226. Յորոյ տեղի մատուցին զՅոհան ոմն, այր հեզ և բարեպաշտօն, լցեալ երկիւղիւ Տեառն, պատշաճ առ վերակացութիւն եկեղեցւոյն Քրիստոսի: - 324. որոյ տեսեալ զբարձրաբերձ վայելչութիւն հասակին և զպատշաճ գեղ երեսացն, զփաղփեալ գոյնն ի տեսիլ արուսեկի ի մէջ սպիտակափայլ ալեացն պատուաբերի – 204.

ՊԱՏՇԱՃԱԳՈՅՆ - Բայց քանզի արդ տեսանեմք զձեզ անձնեայս և գեղեցիկս, և գեղ երեսաց ձերոց պատշաճագոյնս և վայելուչս, և որդիք թագաւորացն այսր աշխարհի լեալ էք դուք, և արժանի էք արգահատելոյ – 244. որ էր այր հեզ, ցածուն և պատուական վարուք և պատշաճագոյն յոր կոչեցաւն. – 394. պատշաճագոյն զպատերազմին խրոխտական բարձրավզութեամբ վանել զախոյեանսն, և առեալ զբանակն յաւարի, և ընդ սուր հանեալ յոլովս քան թէ սակաւս, հասին ի գոգ տեղի մի ի Մղունիս գեօղ: - 402.

ՊԱՏՇԱՃԻԼ - իսկ այսոքիկ ոչ այլ ումեք արարածոցս պատշաճին, բայց միայն միոյ Աստուծոյ, և նա է Արարիչ: - 54.

ՊԱՏՈՒԱԲԵՐ - որոյ տեսեալ զբարձրաբերձ վայելչութիւն հասակին և զպատշաճ գեղ երեսացն, զփաղփեալ գոյնն ի տեսիլ արուսեկի ի մէջ սպիտակափայլ ալեացն պատուաբերի – 204.

ՊԱՏՈՒԱԴԻՐ - և են հիւրասէրք օտարընկալք, պատուադիրք: - 192.

ՊԱՏՈՒԱԴՐՈՒԹԻՒՆ - Այլ քանզի յոյժ առաւելեալ էր իմաստութեամբ Գագիկ՝ տեղի տայր բովանդակ գաւառապետաց զօրագլխաց աշխարհիս, գնայր ընդ նոսա իմաստութեամբ խորագէտ հնարաւորութեամբ, ըստ անձնիւր գահու մեծարեալ պատուադրութեամբ հաճոյանալ ախորժէր նոցա: - 354. Եւ ելեալ իշխանաց իշխանն, որ բարձրագոյն և հանճարեղագոյնն էր քան զբնաւ Հայաստանեայցս և զընդհանուր կացեալս ի ներքոյ երկնից՝ եկն առ նա մեծաշուք պատուադրութեամբ, և պարգևս և պատիւս ոչ սակաւս նմա յառաջաբերեաց. – 344. միայն ըստ ամացն ծննդաբանութեան հաւատացին Աշոտի զիշխանականն տալ պատուադրութիւն – 360. Սա կեցեալ ամիսս Ը կամ Թ յաթոռ հայրապետականին՝ փոխի յաթոռ առաքելական պատուադրութեանն ի փրկչէն մերմէ խոստաբանեալսն: - 376.

ՊԱՏՈՒԱԿԱՆ - ,,Աստուծոց պատուական և ամենայն թագաւորաց, տէր երկրի և ծովու, ծնունդ մեծին Արամազդայ Խոսրով թագաւոր. առ Հայրակղոս անմիտ և առ անպիտան ծառայ մեր: - 146. Բայց աղերսեալ թագաւորն զարս պատուականս, զՎասակ և զՏաճատ և զԳոտեր, որք էին ի մեծ նախարարութենէ տանն Արծրունեաց՝ զի զժողովն ընկալցին ընդ երից սուրբ ժողովոցն: - 132. և այր եղբօր իւրում ոչ ողորմէր, ըստ այնմ զոր ասաց դարձեալ Եսայի, ,,անկցի, ասէ, այր ընդ այր, և այր ընդ ընկերի իւրում, ընդհարցի մանուկն /298/ ընդ ծերոյն և անարգն ընդ պատուականին,,. – 300. Եւ առնու պատանդս արս անուանիս և պատուականս, և զմայրն Աշոտի դարձուցանէ մեծաւ պատուով. – 186. և էր գրեալ ի նմա թողութիւն վնասուցն և հարուածոցն զօրացն և բազում աւարացն, և երդումն ի հաստատութիւն ասացելոցն, և պարգևս ի պատուական և մեծագնի հանդերձից, և սաղաւարտ ծաղկեայ և սուսեր. – 288. Եւ կացին եպիսկոպոսապետք Հայոց յետ մահու սրբոյն Ներսէսի ոմանք ի զաւակէ Աղբիանոսի եպիսկոպոսի Բզնունեաց, առն պատուականի, Շահակ և Զաւէն և Ասպուրակէս – 108. Եւ յելանելն նորա և մօտ լինել ի սահմանս Հայոց զօրօք բազմօք, մերձ ի սահմանս Տարունոյ, Առաջին կոչեցեալ Հայոց՝

իշխան Տարունոյ Բագարատ … առաքէ զոմանս ի մեծամեծաց իւրոց ընդ առաջ նորա պատարագօք ոսկոյ և արծաթոյ և պատուական հանդերձից, համոզեալ մի ելանել յերկիրս Հայոց: - 170. և ոչ ուրեք գտանէր հնար ելիցն ի վտանգաւոր արգելանէն, թէպէտ և բազմաց հոգ յանձին կալեալ վասն առն պատուականի – 346. Եւ պատուական արանցն քրիստոսասիրաց մտեալ առաջի թագաւորին՝ խնդրեցին զմարմին սրբոյն, և առեալ պատեցին և եդին ի գերեզմանին. – 254. Զոր հրաշազարդեալ մեծագանձ սպասիւք, ոսկեկերտ խաչադրօշեալ ընդելուզեալ մարգարտով և ակամբք պատուականօք հրաշագործեալ: -396. Զորս առեալ քրիստոնէից զպատուական մարմինս նոցա՝ ծածկեցին փառաւորապէս թաղմամբ, ամ ըստ ամէ տօնիւք զօր կատարմանն յիշատակել, որք են արք թուով Է: - 268. իբր զթագաւոր մեծավայելուչ պատուական ալեօք զուարճացեալ ի մէջ ճոխ նախարարութեանց – 86. մինչ զդի նորա գտելոցն յետ աւուրց ինչ ետ Բուխայ ԺՌ արծաթ, զի այնչափ պատուական էր այրն նմա: - 272. որ էր այր հեզ, ցածուն և պատուական վարուք և պատշաճագոյն յոր կոչեցաւն. – 394.

ՊԱՏՈՒԱԿԱՆՈՒԹԻՒՆ - Եւ իմաստուն և հանճարեղ խորհրդովք, քաղցր և կակուղ բանիւք ողոքեալ զմանկագոյն Հասան, առաջի արկանելով նմա զարժանի ալեացն պատուականութիւն և զիշխանական ճոխութեան զբարձրագահութիւն և որ ինչ այդմ հետևէր. – 348.

ՊԱՏՈՒԱԿԻՑ - Իսկ զօրավարն խոստացաւ երդմամբ տալ նմա զի՛նչ և խնդրիցէ, մինչև հաւասար իւրոյ տէրութեանն բարձակից և պատուակից կացուսցէ: - 218.

ՊԱՏՈՒԱՆԴԱՆ - և ճախր առեալ ի ներքուստ ի վեր ի լեառն Վարագ և երկրպագեալ աստուածազարդ քրիստոսապսակեալ փայտի խաչին Քրիստոսի, պատուանդանի ոտիցն Աստուծոյ - 392.

ՊԱՏՈՒԱՐ - Եւ անդ գտեալ ամրագոյն անձաւ տեղի անկասկածելի ի պատերազմական գործոց և զնա պարսպեալ պատուարօք շուրջանակի – 392. և ի փայտից մայրեաց շինեալ էր քաղաքն նոցա, պարիսպք և պատուարք և ապարանք նոցա և ամենայն տուն բնակաց քաղաքին և ամենայն կազմած պատրաստութեան նոցա: - 270.

ՊԱՏՈՒԱՐԵԱԼ - յորում շահաստանն Դուին, մարդախիտ պարսպաւոր պատնիշօք պատուարեալ և տուրնառիկ վաճառականութեամբ և ազգի ազգի պղծութեամբ յափրացեալ յղփացեալ: - 358.

ՊԱՏՈՒԱՒՈՐ - և յօրինեաց պատրաստեաց ապարանս պատուաւորս գեղազարդ խրախճանական կարգադրութեանց դրուագս – 392. մերժել հեռանալ ի ճոխ և ի նազելի եղբարցն պատուաւորաց, ի պարոյ կացեալ ազատագունդ ազգի ազգի պերճութենէ – 386. որ մեծաւ ախորժանօք յանգուցանէ առ ինքն զնոսա իբրև արս պատուաւորս և քաջամարտիկս զօրաւոր զօրութեամբ, և մանաւանդ զի բազում անգամ զանուն յաղթութեան ստացեալ ունէին: - 366.

ՊԱՏՈՒԵԱԼ - միայն զի պատահեսցեն միմեանց սիրով խաղաղութեան, և պարգեւօք /գրքում՝պարգևօք/ պատուեալ ի նոցանէ ըստ հրամանի զօրավարին – 226. որոյ սերմանք յիմարութեանն պատուեալ առ Բաբելացիսն պահեցաւ մինչև ի ժամանակս Աղէքսանդրի Մակեդոնացւոյ. – 38.

ՊԱՏՈՒԵԼ - և ըստ բարբարոսական հմայիցն պատուէ զտեղիս այս, որպէս ի նմանէ սկսելով զփոփոխումն առնու ի խոնարհագունիցն ի բարձրագոյնսն: - 88. զի ,,ժողովուրդս այս, ասէ, շրթամբք իւրեանց պատուեն, և սիրտք իւրեանց հեռացեալ մեկուսի են յինէն,,: - 256. ընդ որ յոյժ ուրախացեալ Տիբերի պատուէ ծիրանեօք և բրաբիոնաւ ի Ստադին տեղւոջն. – 80. որպէս որ շրթամբքն պատուեն և ի սիրտս իւրեանց անպատուեն. – 256.

ՊԱՏՈՒԷՐ - այլ ահա գործել զարդարութիւն և պահել զպատուէրն ասացեալ նմա. – 20. Եւ վախճանեալ միայնակեցին՝ կամեցաւ կատարել զպատուէր նորա Սաղման: - 162. զի ի մատեանս առաջնոցն ունէին պատուէր ի թագաւորացն զնշանաւոր իրս քաջաց գրել, և ոչ վատաց. – 42. որ ոչ առին ի միտ լսել զպատուէր սրբոց նախահարցն: - 26. Որով

ընթադրեալ զսիրողական երախտիս Արարչին, միանգամայն և զպատուէրն՝առ սպանողն հատուածեցաւ - 20. Որոց տղայ պատուէր՝ հեռանալ յայնցանէ. - 28.

ՊԱՏՈՒԷՐ ՏԱԼ - որում պատուէր տուաւ չխառնակել յանիծեալ զաւակն Կայէնի. -26. Որոց տուաւ պատուէր՝ հեռանալ յայնցանէ. - 28.

ՊԱՏՈՒԻՐԱԿ - և պատուիրակքն զքարոզն բարձրացուցանէին – 240.

ՊԱՏՈՒԻՐԱՆ - այլ բազմացան չարիք մեր, զի մեղաք առաջի տեառն Աստուծոյ մերոյ և յետս հարաք զիրաւունս պատուիրանաց նորա – 242. Բայց ըստ կարգաց քրիստոնէութեան վարէր ըստ արժանի պատուիրանաց Տեառն, և ըստ խրատու մեծին Վրթանեայ յապահովանայր ամենայնիւ, թագաւորեալ ամս ԺԹ: - 96. և հրաման պատուիրանի տայր յանդիման բազմութեանն, զի խրատու նորա լուիցեն, և հրամանի նորա անսայցեն: - 200. և ամենեքեան որ պահիցեն զշաբաթս իմ և ոչ պղծիցեն, և պահիցեն զպատուիրանս իմ և կացցեն յուխտին իմում՝ տարայց զնոսա ի լեառն սրբութեան իմոյ – 224. և խնդրէր առնուլ զտէրունական կնիքն, զի կատարեալ լիցի ի գործս պատուիրանաց Տեառն – 222. Զայս հրաման պատուիրանի տային յօժնդակութիւնն պատիր խաբէութեանն իւրեանց – 234. Իսկ իշխանն Բագարատ … ել գնաց անխիղճ համարձակութեամբ, տիրասէր խորհրդովք, կատարել զսպաս զինուորութեան, ըստ աստուածեղէն պատուիրանին և ըստ թագաւորական հրամանին, զհետ եկելոյ կոչնականացն, ոչինչ իմացեալ զպատրանս խաբէութեան նորա, որով վրիպեացն: - 186.

ՊԱՏՈՒԻՐԵԼ - էր և նորա աշակերտ մի, որում անուն էր Սաղման. որ ի ժամ մահու միայնակեցին՝ պատուիրէր նմա և ասէր – 162. յիշեաց յաւիտենից զուխտ իւր և զբանն զոր պատուիրեաց՝ մինչև ի հազար ամ: - 34.

ՊԱՏՈՒՀԱԹԱՓ - այլ և առ Աստուած ևս և առ սուրբս նորա յաւակնեալ՝ յերկինս բացեալ զգայռալիր բերանն և որպէս շուն լիրբ պատուհաթափ եղեալ ածէր զլեզուն զերկրաւ: - 100.

ՊԱՏՈՒՀԱՆ - մինչ քաղցրատենչ քունն ի վերայ հասանէր որ զպահպանութիւն զիշերոյն պահէին՝ նորա ամբարձեալ զպղծալից ձեռն ի սրբութիւն սրբոցն և առեալ զսուրբ նշան խաչին Քրիստոսի և ընդ պատուհանն արտաքս ելեալ – 378.

ՊԱՏՈՒՀԱՍ - ,,Ես այսպէս կարծէի, թէ յորժամ ես ընդ թշնամիս ձեր մարտնչիմ՝ դուք յայդմ կողմանէ օգնական ինձ լինիցիք, և միաբանութեամբ բարձցուք ի միջոյ զտիեզերական պատուհասն, զտունդ Սասանայ: - 138. այլ և զվճիռ պատուհասին իւրովն կնքէր բերանով. – 24. Արկադեայ կայսեր թագաւորեալ ամս ԻԳ մեռանի սաստկակոծ պատուհասիւ յաղագս մեղանացն առ Յոհան Ոսկեբերան: - 114. Եւ թէպէտ յայնմանէ վրիպեցոյց ճշմարիտն Աստուծոյ պատուհաս՝ այլ չարն սովորական բնաւորեալ պահեցաւ անվրէպ: - 38. զի զմահուն սպառնացեալ հօրն պատուհաս՝ աչօք իւրովք տեսցէ – 22. որ առ ժամեայ սպառնացեալ պատուհասիւն ի հարիւրամեայ ձգէր ժամանակս ներողութեամբ: - 28. Որով օրինակաւ կամք քո հրամայեն՝ եկեսցէ ի վերայ մեր պատիժ պատուհասի. – 246.

ՊԱՏՊԱՐԵԼ - Իսկ եթէ վատացն՝ արութի՛ւն զերկիւղն համարելի է, ո՞րչափ ևս առաւել քաջացն քաջութիւն ստացեալ երկիւղիւն պատսպարել իւրեանց: - 354. մանաւանդ յառաջագոյն պատրաստեալ պատսպարեաց թղթովք և պատարագօք առ թագաւորն և առ զօրավարն գնալ ըստ հրամանաց նոցա, և ոչ ինչ արտաքոյ կամաց նոցա խորհել կամ գործել ինչ: - 270.

ՊԱՏՐԱՆՔ - ,,ընդէ՞ր որպէս մանուկ տղայ համարիս, արկանել առաջի իմ զպատրանս, սնոտի, առասպելաբան, խաբեբայ և պատիր յոյս խոստանալով ինձ՝ հանել զիս ի ճշմարիտ յուսոյն, զոր ի մանկութենէ ի վերայ հասեալ ճշմարտութեանն,,: - 294. և խոշտանգեսցես զնոսա գանիւ և բանտիւ և պէսպէս տանջանօք սպառնալեօք և ողոքանօք և ընչից պատրանօք արկցուք զնոսա ի ներքոյ կամաց թագաւորութեան մերոյ. – 196. զի կարծէր դիւրաւ արկանել զնոսա ի հաղբս պատրանաց զկնի դարձելոցն ի ճշմարտութենէն. – 250. Զոր զթուղթսն խաբող պատրանօք ի բուռն առեալ Բարծումայ՝ ետ տանել առ արքայ

Պերոզ – 130. Իսկ իշխանն Բագարատ … ել գնաց անխիղճ համարձակութեամբ, տիրասէր խորհրդովք, կատարել զսպաս զինուորութեան, ըստ աստուածեղէն պատուիրանին և ըստ թագաւորական հրամանին, զհետ եկելոյ կոչնականացն, ոչինչ իմացեալ զպատրանս խաբէութեան նորա, որով վրիպեացն: - 186. մինչ հազիւ թէ ուրեք կարաց նշկահել զսոսա ի պատրանս խաբէութեան և ի նենգութիւն կեղծաւոր խարդախութեան զօրականաց իւրոյ տէրութեանն: - 242. յայնժամ մերկացեալ և ի բաց եդեալ զաշխարհական պատրանաց զբաղումն՝ և էանց գնաց ի վեր քան զերևելիսս – 284. սա ևս աւելի խորհեցաւ չար և պատրանօք խաբէութեան որսացեալ զնախարարս աշխարհիս Հայոց՝ արար հրկէզ զամենեսեան ի քաղաքին Նախճաւան և յաւանին Խրամի, որ է ի ներքոյ Աստապատոյ վանացն, յեզր Երասխայ. – 166.

ՊԱՏՐԱՍՏ - Ազդ եղև մեծին Տիգրանայ պատրաստ պնդութիւն Աշդահակայ. – 62. Բայց Դերենիկն կալեալ զնա պահէ ի զգուշութեան, ոչ ինչ ստնանել նմա, բաց ի կապանացն յորս արկեալ էր զնա, ըստ հատուցմանն բարւոյ. առ ձեռն պատրաստ կշռեաց նմա և օրհնեցաւ ի սրբոյն Զաքարիայէ: - 320. Եւ զերկնային պարգևացն որ ի հանդերձեալսն խոստացաւ Տէրն, զանպատում և զիրեշտակային նորոգութեան՝ նա ասաց լինել անդ կերակուրք և ըմպելիք ուժգին. զոր և կամեսցի ուտել անյագաբար՝ պատրաստ գտանիցէ, և կանանց կուսից մնացելոց հանապազ անյագաբար խառնակումն: - 164. Զոր առեալ Զաջուռ ահիւ և ամենայն պատրաստ կազմութեամբ բնակեցուցանէ ի կողմն Արագածոյ, ի գիւղն Թալին կոչեցեալ. – 76. որով մահուամբ և կամիս՝ պատրաստ եմք յամենայն հնարս չարչարանաց մտանել, զոր ուսոյց քեզ վարդապետն չարեաց հայրն քո սատանայ. – 292. ուր հոյլքն էրէոցն խայտան և վայրենեացն խոզից և առիւծուցն մորիքն և երամակք ցոռց պատրաստական առ որսոյն հրճուանք առ ձեռն պատրաստ հոլովին – 392. պատրաստ եմք ի կապանս, ի բանտս, ի գանս, ի հուր, ի սուր, ի ջուր, ի տանջանս հարուածոց և յամենայն հնարս չարչարանաց,,: - 246.

ՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ - կապարճս և աղեղունս պատրաստականս զառաջեաւ ի նիւսն ունելով, և զարդս ոսկեզարդս և արծաթագործս և կամարս ընդ մէջ ածեալ – 208. Հրաման տայր փութով ամենեցուն պատրաստական գտանել ի դաշտն քաղաքին. – 270. ոչ ամուրքն պատրաստական առ ի յամրութիւն, որպէս թուէր մեզ – 216. ուր հոյլքն էրէոցն խայտան և վայրենեացն խոզից և առիւծուցն մորիքն և երամակք ցոռց պատրաստական առ որսոյն հրճուանք առ ձեռն պատրաստ հոլովին – 392.

ՊԱՏՐԱՍՏԵԱԼ - Ապա այնուհետև դարձեալ յղեաց զՀամդոյ զՊարսից ամիրայ, և ի զօրաց արքունի զՀէթմ ազգաւ թուրք, և ընդ նոսա հեծեալս Ժ հազարաց, կազմեալ սպառազէն պատրաստեալ բարձրագոյն քան զառաջինն – 234. և ելեալ նստաւ ի ջորւոջն, զոր պատրաստեալն ունէին անդէն առ դրան վրանին, և հանին արտաքոյ դաշիկ բանակին՝ դարձուցեալ դառնալ ընդ նոյն ուստի եկն: - 346. Եւ ըստ տոհմս ազգաց, ըստ թուոյ տերանցն Հայոց, կազմեաց գունդս վառեալս զօրականաց, զինեալ և պատրաստեալ. – 296. Եւ ի միւսում առաւօտին հասին ի վերայ բանակին խոնջեալ երիվարօք, անզգուշութեամբ առ մուտն պատրաստեալ, և անկան ի նմին ժամու Բ ոմանք, Վլիթ և Մարաճայ. – 402. և ինքեանք իջեալ ի լերանցն՝ կալան զստորոտ լերինն, պատրաստեալ ի պատերազմ: - 274. և ինքն ել գնաց երթալ մտանել ի քաղաքն Դուին, ձմերոց ինքեան պատրաստեալ զնա, մինչ ի ժամ գարնանայինս, ունելով ընդ իւր կապեալս բազումս. – 240. և լինիցիս իբրև զմի ի մահապարտաց, որ անձամբ զանձինս հերքեցին ի կենաց վտանգաւոր մահուամբ, որպէս և քեզ պատրաստեալ է – 294. և սպանեալ զոստիկանն Պարսից, որ էր ի վերայ նոցա, և ինքեանք պատրաստեալ ի պատերազմ ընդդէմ Պարսից: - 142. զշէնս պատրաստեալ, և շուրջ զամրոցաւն տնկախիտս բուրաստանս ծաղկաւէտս և անուշահոտս ի զանազան ծաղկանց. – 86. ինքեանք պատրաստեալ են զնոյն փարշմանն կրել զոր դաշտայինքն կրեցին – 190. մանաւանդ յառաջագոյն պատրաստեալ պատսպարեաց թղթովք և պատարագօք առ թագաւորն և առ զօրավարն գնալ ըստ հրամանաց նոցա, և ոչ ինչ արտաքոյ կամաց նոցա խորհել կամ գործել ինչ: - 270. շինէ և

անդ ամրական տեղի, դժուարամատչելի ասպատակող հինից, դնելով ի նմա նմանապէս ապարանս փողոցայարդարս, տաճարակերտս սենեկագործս, բաւական ի պէտսն պատրաստեալ – 392.

ՊԱՏՐԱՍՏԵԼ - Այլ և պատկանաբար իմաստութեամբ պատրաստեաց ջրմուղ ներքսագոյն երկրի ի քարանց տաշելոյ փողոցս գնացից ջրոյն կազմեալ – 392. Աշոտ մտրակեալ զիւր ասպայզինեալ երիվարն սպառազէն կազմեալ ի մարտ պատրաստել – 334. Եղեն ընդ նմա և ուխտեցին ուխտ, և ետուն նմա կին յազգէն իւրեանց և պատրաստեցան լինել ընդ նմա, որպէս և կամք իւր հրամայեսցեն. զոր թէ ասիցէ ոք՝ ի հրամանէ Աստուծոյ լինել սկիզբն առաջարկութեանն այնորիկ: - 160. և աշխատասէր մշակքն պատրաստեցան ի գործ երկրասէր վաստակոցն – 268. և առ չանսալ իշխանին՝ անդէն նոյն ժամայն ի մարտ պատրաստին: - 364. Եւ արքայ Խոսրով զարհուրեալ պատրաստի ի փախուստ, քանզի զօրացաւ յաղթութիւնն Հայրակղի. – 148. և գրեթէ /գրքում՝ գրէթէ/ ոչ ամենևին ուրեք երևեցաւ այնպիսի ահաւոր տեսիլ զօրու և սպառազէն կազմութեան՝ ամենայն թագաւորաց, որ կացեալ էին ընդ ծագս տիեզերաց. զորոյ սաստիկ և ահագին որոտումնն և ճայթմունն և փայլիւն զինուցն, և որ ինչ յայնժամ զարդարեալ և զինեալ պատրաստեցան զօրքն Տաճկաց: - 284. և ընտիր երիվարաց պատրաստել, ի նորա չար խորհրդոցն ի բաց վազել: - 344. Եւ իբրև կատարեաց զյօրինուած շինութեան քաղաքին և անմատչելի անկասկածելի զամրոցն պատրաստեաց – 88. Եւ ինքն շտապ տագնապէր փութացուցանէր ռազմ բոլորել, կարգել կազմել զճակատն, պատրաստել ի պատերազմ – 228. և հրաման ետ Գուրգէն իւրում զնդին պատրաստել ի պատերազմ, կազմել ռազմ և տալ ճակատ ընդդէմ այլազգեացն – 230. և հրաման ետ զինել վառել ի զէն և ի զարդ և ի սուր, և զընտիրս երիվարացն յիւրեանց զէնսն պատրաստել: - 228. Եւ յայտ յանդիման ի վերայ հասանել ոչ կարէր. գունդ կազմել և ճակատ պատրաստել ընդդէմ՝ անվայելուչ էր. – 346. և յաւիտենական և անսպառ և անվախճան են կեանքն և պարգևքն, զոր պատրաստեաց Աստուած սիրելեաց իւրոց և որք կան համբերութեամբ ի հաւատս ճշմարտութեանն. – 264. և յօրինեաց պատրաստեաց ապարանս պատուաւորս գեղազարդ խրախճանական կարգադրութեանց դրուագս – 392. Եւ նոյնժամայն վառեցան պատրաստեցան, հեծեալ յիւրաքանչիւր յերիվարս ելին ընդդէմ նոցա: - 134. Զծառայս իմ պատրես, և զզօրս աւազակաց ժողովեալ՝ ոչ տաս ինձ հանգչել, այլ հանապազ պատրաստիս ինձ ի պատերազմ, և ասես վստահանալ յԱստուածն իմ: - 146. զռազմ ճակատուն կարգեցին պատրաստեցին. – 210. Որ յետ բազում ժամանակի ծախք պիտոյից ասացաւ պատրաստել թագաւորին ըստ անյաղթ բռնութեան և մեծութեան որովայնի կերակուր Բէլայ: - 38. և որսորդքն զինքեանց գործիսն պատրաստէին – 268. Որպէս և Դաւիթ ասէ, ,,պատրաստեցայ և ոչ խռովեցայ,,. – 354.

ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ - այլ զպարտութիւն քան զյաղթութիւն յինքեանս ձգէին ի ձեռանէ Ցիսէի, մինչ պակասել պատրաստութեանն բերդին, մանաւանդ ջրոյն սակաւաւորութիւն. – 362. բայց այլ ամենայն իշխանք արևելեայք խոյս տուեալ յերեսաց նորա՝ ետուն տեղի, ելին կալան զամրական տեղիս, ի բերդս և ի քաղաքս և ի լերինս, ընդ ինքեանս գումարեալ զզօրս և զբնակիչս աշխարհաց իւրեանց ամենայն պատրաստութեամբ: - 270. բարձրաճիչ աղաղակաւ քարոզեալ. իբրև բանիւ զբարբառ հնչեցուցեալ ազդեցուցանօղ իմացունակութեամբ, զգայական ազդարարութեամբ՝ զեկուցանել զպատրաստութիւն նիւթոյն առ կատարումն սրբոյ եկեղեցւոյն աւարտագործեալ: - 396. գունդ կազմեալ ռազմ արարեալ զբոլոր դաշտաձև հովիտն ի ներքս փակէր, վառեալք զինու և ամենայն պատրաստութեամբ ընդդէմ գնդին Հայոց: - 172. և ագուցեալ զոտս պատրաստութեամբ Աւետարանին խաղաղութեան և սուսեր ընդ մէջ ածեալ զբանն Քրիստոսի, որ հաստու է քան զամենայն սուր երկսայրի – 252. և ահա աղաղակ և փողք և քնարք և ջնարք, և վառեալ զինու և սրոյ և ամենայն պատրաստութեամբ անհուն զօրացն, մինչ գրեթէ /գրքումէ՝գրէթէ/ ի հիմանց զլեառնն տապալել – 284. Եւ այնչափ և առաւել քան զսոյն կազմութեան սպառազէն պատրաստութեանն՝ սաստիկ տարակուսանօք և մեծ երկիւղիւ

պակչէին յահէ հայկասիրտ իշխանին և յաղթող նահատակին մեր Աշոտոյ – 210. Եւ բարձեալ աշտեայս հանապազակիրս ի պատրաստութիւն գազանացն որ ի մայրիսն որջանան, կամ թշնամեաց ի վերայ հասելոց – 190. Եւ Բուխայի իմացեալ որպիսի պատրաստութեամբ կազմի իշխանն Աղուանից՝ տարակուսէր ի միտս իւր. – 278. և են ստացեալ զէնս աշտեայս հանապազ կրելով ընդ ինքեանս, ի պատրաստութիւն գազանացն որք ի լերինն բնակեն: - 192. և զի ոչ ըստ հրամանի նորա յօրինէին զպէսպէս պատրաստութեան ամրոցին - 214. և զպատրաստութիւն պատերազմողական մարտի ամրոցին հաւատացեալ էր Յիսէի եղբօր Թադէոսի – 362. և ժողովեալ ազգք ազգք յընտրելոց զօրաւորաց արանց քաջամարտկաց, զզօրս Կապուտկացւոց, զՎրաց և զԱղուանից և զԱյրարատեան գազանամարտիկ զանճռոնի զօրսն և զբոլոր բովանդակեալ գունդս զօրացն և զորդիսն Սենեքերիմայ, ամենայարդար պատրաստութեամբ անհուն բազմութեամբ, աճապարել երագել անյապաղ լինել նախ քան զԱշդահակայ դիմեցումն – 62. և ի փայտից մայրեաց շինեալ էր քաղաքն նոցա, պարիսպք և պատուարք և ապարանք նոցա և ամենայն տուն բնակաց քաղաքին և ամենայն կազմած պատրաստութեան նոցա: - 270. Եւ իշխանն վառեալ զինքն բազում պատրաստութեամբ զինու և զօրօք ազատակոյտ գնդաւ իւրով, և ամենայն բնակ տերամբք իւրոյ իշխանութեանն, և խոյս առեալ շրջէր զկողմամբքն Մարդաստանի և Ջորոյն հասկոյ -184. Եւ իսկոյն անյապաղ յական քթթել սպառազինեալ այրուձի պնդակազմ /366/ պատրաստութեամբ, ռազմ բոլորեալ ղաշիկ դիմացուածով զմարտն գրգռեալ – 368. և կանգնեցին պատնէշ և կուտեցին քարինս և կանգնեցին մեքենայս և կացին ի պատրաստութեան: - 280. և վաճառականքն զհեռաւոր ճանապարհացն խոկային պատրաստութիւնն – 268. զի ահա հասեալ է պատրաստութեամբ Տէր ի վերայ մեր, որպէս գրեաց Մովսէս: - 196. զի ուր և իցէ՝ ածցեն զնա առ նա, թէ՛ պատիր խաբէութեամբ և խորամանկ կեղծաւորութեամբ և խարդախութեամբ, կամ պատերազմաւ և մեծամեծ զօրութեամբ, ամենայն պատրաստութեամբ, արքունի կարողութեամբ, որպէս զիարդ և կարասցեն՝ առ նա հասուցանեն: - 224. Ընդ աւուրսն ընդ այնոսիկ … կազմեալ գունդ զինուորաց և ընտիրս այրուձիոց, վառեալ զինու բազում պատրաստութեամբ – 220. Իբրև յաջողեցաւ Արտաշէսի ամենայարդար պատրաստութեամբ և աշխարհաշէն հոգաբարձութեամբ, որպէս բացայայտեն գիրք պատմագրաց – 86. Իսկ զթագաւորաբնակ տեղին մեծին Տրդատայ տան ի ձեռս Վահանայ Արծրունւոյ՝ շինել նմա տուն թագաւորաց, արարս պատրաստութեամբ. – 126. լնուլ այգեստան տնկախիտ պատրաստութեամբ ականախիտ վայելչութեամբ: - 88. հրաման տուեալ ամենեցուն, զի իբրև մերձ լինիցի գարնանային ժամանակն՝ փութով առանց յապաղանաց առ նա հասանիցեն ամենայն պատրաստութեամբ: - 262. յաւուր միում … ետ հրաման իշխանն առնն կորովի եղբօր իւրոյ Աբասայ Հայոց սպարապետի՝ վառել պնդակազմ պատրաստութեամբ, զօրու և զինու և զարդու ամենայարդար հնարաւորութեամբ, որպէս օրէն է նահատակաց քաջ արանց – 344. որոյ գնացեալ առնու յինքն զԳագիկ և յղէ սպառազէն պատրաստութեամբ ի Վանտոսպ առ տիկինն Վասպուրական, և պահել ի զգուշութիւն: - 350. Սոքա ամենեքեան վառեալք սպառազէն պատրաստութեամբ և բազմաձեռն առատալիր պատարագօք՝ գնացին, զի առեալ տարցեն մուծցեն զնա ի Դուին քաղաքն: - 340.

ՊԱՏՐԵԼ - Զծառայս իմ պատրես, և զզօրս աւազակաց ժողովեալ՝ ոչ տաս ինձ հանգչել, այլ հանապազ պատրաստիս ինձ ի պատերազմ, և ասես վստահանալ յԱստուածն իմ: - 146. Ոչ ամենևին /գրքում՝ամենեւին/ գոնէ փոքր մի խոտորեցան ի բանս նորա և ոչ առին յանձն ի պատրել մեծութիւն ընչից և ոչ անսացին հնազանդել փառաց աշխարհական ցանկութեանց – 264.

ՊԱՏՐԷԱՑԻՔ - Սորա որդիք հինգ ծնանի, յորոց մինն Հերովդէս և միւսն Փիլիպպոս, զորոյ կինն հանեալ Հերովդէի՝ թող զկինն իւր զառաջին, զդուստր Արէտայ արքայի Պատրէացւոց. – 78.

ՊԱՏՐԻԿ - Բայց երիցս երանելի ոմն երիտասարդ հասակաւ, ինքն տաճիկ և ազգաւ պարսիկ՝ ելեալ զհետ սիրոյն Քրիստոսի հաւատոցն եկն յարեցաւ ի Պատրիկն Անձևացի – 222. Եւ գունդն Հայոց խաղացին ընդդէմ նոցա … ի տանէն Արծրունեաց՝ Գուրգէն … և Գնունիք՝ Վահան և Շապուհ և Ապուսէթ և Պատրիկ և Ապուսելմ և Վարդան. – 230. Եւ գունդն Հայոց խաղացին ընդդէմ նոցա … ի տանէն Արծրունեաց՝ Գուրգէն … և Անձևացիքն՝ Պատրիկն և Գէորգ, Դաւիթ և Հասան և Դաւիթ գունդսաղար – 230. Եւ տայր նմա զօր կայսերական յօգնականութիւն, և զՅովհաննէս պատրիկ ի Հայոց կողմանէ, և զՆերսէս ստրատեղատ յԱսիւրոց, և զՄուշեղ այր քաջամարտիկ և հզօր զօրութեամբ, և զամենայն զօրս Յունաց և Հայոց, Վրաց և Աղուանից – 138. ՄԾԹ ամօք յառաջ զսորայս բացայայտեալ զցոյցս յայտնութեանն, յամս Ներսեսի երրորդի Հայոց կաթողիկոսի և Վարդանայ Ռշտունեաց պատրկի և յամի ունելութեանն Տաճկաց զհայկական աշխարհս: - 394. յորում տեղւոջ յառաջագոյն ապարանք պարսպաւորք եղեալ էր Վարդ պատրկի Ռշտունւոյ հայկազնոյ. – 394.

ՊԱՏՐԻԿ ԱՆՁԵՒԱՑԻ - Բայց երիցս երանելի ոմն երիտասարդ հասակաւ, ինքն տաճիկ և ազգաւ պարսիկ՝ ելեալ զհետ սիրոյն Քրիստոսի հաւատոցն եկն յարեցաւ ի Պատրիկն Անձևացի – 222. Փութանակի և վաղվաղակի իւրաքանչիւր զօրօք անդր հասանէին … և այլք ի նախարարացն Վասպուրական իշխանին, Սմբատ Ապահունի, Գրիգոր Քաջբերունի, Վահան Հաւնունի, սեպուհն Դաւիթ, Գազրիկն Ապուհարազ, Թոդորոս Վարազն, Խոսրով Վահևունի, Խոսրով Ակեացի, Վարդան Գաբայեղէն, Սմբատ Մարացեան, սեպուհ մի Սահակ, Պատրիկն Անձևացի, Գորգ Հարմացի, Դաւիթ Գունդսաղար. – 174.

ՊԱՏՐՈՒԱԿ - Արդ խօսեաց ընդ իս ի խաղաղութիւն, զպատրուակ կեղծաւորութեան ի միջոյ երկոցունց ի բաց պարուրեալ,,: - 362. Եւ յերկարեալ սպարապետին /282/ խօսել ընդ զօրավարին՝ ի բաց մերկեաց զպատրուակ սրտմտութեան ի սրտէ նորա: - 284. իսկ իբրև նա ըմբռնեցաւ, և գիտաց զօրավարն եթէ ոչ ոք այնուհետև յիշխանացն Հայոց մնաց, որ ոչ համագունդ ժողովեալ են առ նա՝ մերկացաւ յայնժամ զպատրուակ կեղծաւորութեանն, զոր սերմանել էր սատանայ ի սիրտ առնն: - 296. Յայնժամ բացեալ լինէր պատրուակ կեղծաւորութեանն ի խլրդենի դիմացն: - 214.

ՊԱՏՐՈՒԱԿԵԱԼ - Վեցերորդ՝ զի խաւարաւ չարեացն պատրուակեալ զոգին, մինչև զԱստուած ևս անգէտ կարծելով՝ լրբենի երեսօք պատասխանէր – 24.

ՊԱՐ - մերժել հեռանալ ի ճոխ և ի նազելի եղբարցն պատուաւորաց, ի պարոյ կացեալ ազատագունդ ազգի ազգի պերճութենէ – 386.

ՊԱՐԱԳԼՈՒԽ - Տեղեկանայր … և կամ քանի՛ պարագլուխք իցեն զօրուն – 198.

ՊԱՐԱԳՐԵԼ - Պղպջաձիգ արտօսր իբրև յեռանդնոտ կատսայէ ի վեր յորձանախաղաց սահին. տարակուսանք անյուսալի շուրջ զինև պարագրին ի վերայ եղել՞ոցն: - 350.

ՊԱՐԱՆՈՑ - Այլ և զոամիկ Նորագեղջ աւանին Ռշտունեաց առեալ ածեն ի տեղի վաճառուն Ոստանին Ռշտունեաց, արկեալ տոռունս ի պարանոցն հանեն ընդ սուր. – 202. Եթէ, որպէս ասացի, ի բաց գնաս յինէն՝ խաղաղութիւն է, և թէ ոչ՝ պատերազմ և կռիւ և ճակատամարտ ... քո պատերազմ՝ և մեր յաղթութիւն, քո մարմին՝ և իմ նիզակ, քո պարանոց՝ և իմ սուսեր. – 278. Եւ /106/ նոյնժամայն հուպ ընդ հուպ ի դիմի հարեալ Մեհուժանայ և կարթակոտոր զասպազինեալ երիվարն արարեալ քաջին Սմբատայ՝ տոռն արկեալ ի պարանոցն Մեհուժանայ ասէ. – 108. Եւ զձեռս յերկինս համբարձեալ, ունելով զպարանոցն առաջի դահճացն. – 206. և հարեալ զպարանոց դահճին՝ ի բաց առ զգլուխ նորա: - 268. և մատուցեալ զպարանոցն առ դահիճն՝ եհատ զգլուխ նորա – 296. փոխանակ մանեկաց՝ զսուրն փայլեալ ի պարանոցն ընդունէին: - 266. Որոց կապեալ զԳուրգէն երեքկին կապանօք և դարձեալ ի պարանոցն եղեալ շղթայս՝ յղեն ընդ Ատրպատական Պարսից և տան ի բանդ ընդ կապեալսն. – 318.

ՊԱՐԱՊ - Իբրև օր մի լինէր պարապոյ … և ահա հնչեցին փողք ուժգին գոչմամբ ազդ առնել քաղաքին՝ եթէ ել նստաւ թագաւորն յատենի – 240. միայն որսոց և խաղուց պարապ զինքն հաճոյանայր կացուցանել: - 114.

ՊԱՐԱՊԱԳՈՅՆ - և կարգել նմա ռոճիկս առատապէս, մինչ ինքն պարապագոյն ժամու անդր հասանիցէ: - 70.

ՊԱՐԱՊԵԱԼ - Իսկ երանելի եպիսկոպոսին Յոհաննու ընտրեալ իւր առանձնակ միայնաստան տեղեակ, աղօթից միայն պարապեալ, ի բաց կալով յեպիսկոպոսական հովուապետութենէ: - 324.

ՊԱՐԱՊԵԼ - և մինչ այսմ գործոյ պարապէր՝ դէպ եղև նմա ի կողմանս Եգիպտացւոց հանդիպել առն միոյ մոնազնի, որում կոչէին Սարգիս Բհիրայ, որ էր եղեալ աշակերտ մոլեգնութեանն արիանոսաց. – 158.

ՊԱՐԱՐՏ - Դարձեալ և յընդդիմակէն՝ ած և Աբէլ ի յանդրանկացն և ի պարարտիցն: - 24. որոյ ժամանակ կենացն տևեալ ձգեալ ամս ՃԻ լի և պարարտ ծերութեամբ – 122.

ՊԱՐԳԵԻ - այլ ընկալաւ զնա սիրով խաղաղութեան և մեծաշուք պատուով և պարգևօք ըստ հրամանի թագաւորին: - 288. Առ ոտն հարկանելով զխոստացեալ նոցա պարգևսն՝ ասեն. – 250. ետ բերել պարգևս, և այնպէս ոչ առին յանձն. – 222. Եւ այլ ամրաբնակ ազատորերոյն պարգևս և պատիւս օր ըստ օրէ բաշխէր, և յինքն յանգուցանել ախորժելով վարէր ընդ նոսա: - 360. և առեալ զյաղթութեանն քաջանունութիւն, առաւել զհանճարեղութեանն խոհեմութիւն՝ յառաջանայր ի գահ, ի բարձ և ի պարգև - 72. Եւ դառնայ մեծաւ պարգևօք և անհամեմատ խնդութեամբ: - 384. Եւ ելեալ իշխանաց իշխանն, որ բարձրագոյն և հանճարեղագոյնն էր քան զբնաւ Հայաստանեայցս և զընդհանուր կացեալս ի ներքոյ երկնից՝ եկն առ նա մեծաշուք պատուադրութեամբ, և պարգևս և պատիւս ոչ սակաւս նմա յառաջաբերեաց. – 344. Եւ զերկնային պարգևացն որ ի հանդերձեալսն խոստացաւ Տէրն, զանպատում և զիրեշտակային նորոգութեան՝ նա ասաց լինել անդ կերակուրք և ըմպելիք ուժգին. զոր և կամեսցի ուտել անյագաբար՝ պատրաստ գտանիցէ, և կանանց կուսից մնացելոց հանապազ անյագաբար խառնակումն: - 164. և էր գրեալ ի նմա թողութիւն վնասուցն և հարուածոցն զօրացն և բազում աւարացն, և երդումն ի հաստատութիւն ասացելոցն, և պարգևս ի պատուական և մեծագնի հանդերձից, և սաղաւարտ ծաղկեայ և սուսեր. – 288. Եւ իւրաքանչիւր զօրագլխացն եկելոց առ նա պարգևս և պսակս մատուցանէր, գեօղս և աւանս կնքէր և տայր. – 198. և կալցին զիւրաքանչիւր իշխանութիւն և վայելեսցեն ի պարգևս և ի պատիւս արքունի և կացցեն ի հնազանդութեան թագաւորին: - 296. և կեցցես և վայելեսցես ի պատիւս և ի պարգևս թագաւորին – 290. և յաւիտենական և անսպառ և անվախճան են կեանքն և պարգևքն, զոր պատրաստեաց Աստուած սիրելեաց իւրոց և որք կան համբերութեամբ ի հաւատս ճշմարտութեանն. – 264. Եւ նորա ընկալեալ զպարգևն՝ կատարէր զխնդիրն: - 186. և նոքա կային մեծաւ ուժով և գոհանային զանբաւ և զառատաշնորհ պարգևացն Քրիստոսի, որ արժանի արար զնոսա մեռանել վասն անուանն Քրիստոսի և առնուլ զմարտիրոսական պսակն: - 292. և որ ինչ ի նմանէ կան պահին պարգևք կացելոյն ի ճշմարտութեան հաւատս, և տանջանք ուրացելոցն և յետս կացելոցն - 206. և պարգևս և պատիւս մեծամեծս հրամայէ բերել առաջի – 204. և տայր զօրավարին և իշխանացն ամենեցուն պարգևս մեծամեծս, և բաշխէր զօրացն ամենեցուն դահեկանս ի խոռկս, և ճաշս և ընթրիս ուրախութեան կազմէր ամենայն զօրացն մինչև Է օր: - 144. Զոր առեալ զարսն ստիպեաց ի բաց կալ յերկրպագութենէն Քրիստոսի, և պատուի և պարգևաց արժանի լինել ի նմանէ, և մի չարաչար տանջանօք մեռանել: - 222. զօր գումարել, այրուձի կազմել, մեծամեծաց աշխարհատերանց պարգևս տալ, ի թիկունս և յօգնութիւն զամենեսեան կոչել, զի ըստ յանձնառութեան խրատու նորա նոյնպէս և գործեսցէ: - 346. Ընդ որ սքանչացեալ ընդ քաջասրտութիւնն և ընդ իմաստուն բանակարգութիւնն Պտղոմէի և Սելևկեայ զօրագլխացն Աղէքսանդրու՝ խնդրեցին պարգև ի թագաւորէն զԱսուդ. - 70. Իբրև աջողութիւն գործոյն գլխաւորեցաւ՝ եղև դառնալ Քսերքսեանց, առեալ ի պարգևի զՏմորիս ամրոցաւն և զգետափնեայսն Նինուէի: - 66. Իբրև եհաս թագաւորն յաշխարհն իւր՝ ետ բերել պարգևս և պատիւս Աշոտի ըստ իշխանական յօրինուածի – 370. Իսկ երանելիքն գոհացեալ զանպատում պարգևաց Քրիստոսի, որ արժանի արար զնոսա

մեռանել վասն անուան նորա - 266. Իսկ թագաւորն գրէ առ զօրավարն թերևս կարասցէ հաւանեցուցանել զԳուրգէն՝ երթալ ի թագաւորական քաղաքն առ կայսր, և մեծաց պարգևաց և պատուի և գահու յառաջաձգութեամբ ընկալցի պարգև ի թագաւորէն: - 302. Իսկ թագաւորն գրէ առ զօրավարն թերևս կարասցէ հաւանեցուցանել զԳուրգէն՝ երթալ ի թագաւորական քաղաքն առ կայսր, և մեծաց պարգևաց և պատուի և գահու յառաջաձգութեամբ ընկալցի պարգև ի թագաւորէն: - 302. Իսկ նա անփոյթ արարեալ երկրաւոր մեծութեանս, զի անցաւոր է՝ անսպառ և անվախճան և անծերանալի և անծախ և առանց ըմբռնելի ի գողոց խնդրեաց պարգևաց առիթ լինել. – 218. միայն զի պատահեսցեն միմեանց սիրով խաղաղութեան, և պարգեւօք /գրքում՝պարգևօք/ պատուեալ ի նոցանէ ըստ հրամանի զօրավարին – 226. որ զծայրագոյն շնորհացն Աստուծոյ առեալ պարգևս՝ կենդանւոյն ի կարգս անմահիցն փոխանորդեաց վերագրիլ, որ և յառաջ քան զփոխիլն ծանոյց զհամաջինջ բարկութիւն Աստուծոյ խոտորեալ ազգին և որդւոցն անհնազանդից – 26. Սահակայ առեալ ի պարգևի զաշխարհն՝ թողու զորդին զԱշոտ զլեառնակողմամբքն առաջին իւրեանց տէրութեանն՝ շինել, բնակել, ժառանգեցուցանել զերկիրն ի ժառանգութիւն իւրեանց ազգի ի զաւակ տանն Արծրունեաց: - 90. Սիմոն Սամարացի մատուցեալ առ Փիլիպպոս զհոգւոյն պարգևաց լեզուացն, և սրտին կեղծաւորութեամբ զիա՞րդ պատժապարտեցաւ. – 258. քանզի յոյժ սիրեցեալ եղև ի զօրավարէն, և առաւել քան զամենայն մեծամեծսն ընդունէր պարգևս և պատիւս – 216. ,,եթէ կամիս կեալ ընդ իս և վայելես ի կեանս աշխարհիս, և ընդունել պարգևս և պատիւս յինէն՝ հաւանեա հրամանի կամաց իմոց և ի բաց լեր ի հաւատոց քրիստոնէութեանդ, զոր պաշտես – 294.

ՊԱՐԳԵԻԱԲԱՇԽԵԼ - և դու թէ ոստիկան խաղաղութեան էիր եկեալ յարքունուստ՝ զշինութիւն պարգևաբաշխէիր սոցա, և ոչ զաւերս և զխռովութիւն: - 278.

ՊԱՐԳԵԻԵԱԼ - և առեալ Պտղոմեայ զԱսուդ՝ տայ տանել յԵգիպտոս, ի պարգևեալ աշխարհն նմա յԱղէքսանդրէ – 70.

ՊԱՐԵՆԱՒՈՐԵԱԼ - և առ ծովեզերբն զամառնային ժամանակն պարենաւորեալ առկայանան. – 260. յորում տեղւոջ քաղաքն Տարունոյ շինեալ էր, ուր բնակեալ բայանայր զօրավարն Տաճկաց, զօրհասական արջոյն բերելով նմանութիւն, որ յաւուրս ձմերայնոյ արմատովք պարենաւորեալ՝ ի մէջ կենաց և մահու անցեալ որջանան ի բոյնս իւրեանց: - 188.

ՊԱՐԶԱՊԷՍ - և պարզապէս յայտնի առանց կասկածանաց ասի աստուած՝ եկեղեցին և մարմին բանին և ևս յաւելցի /394/ ծիծաղելն. – 396.

ՊԱՐԶԵԼ - Զի թէ առագաստ նաւին յերկոսին կոյս ոչ պարզիցի՝ ոչ ուղղակի նաւարկութիւնն ճանապարհորդիցի, կամ թէ նաւաբեկեսցի իսկ ի բռնութենէ մրրկալից հողմոյն զալիսն կուտակելով: - 256.

ՊԱՐԹԵԻ - գրէթէ անցուցանէր զանցուցանէր զքաջութեամբքն Արշակայ Պարթևի, ընդ քաջացն Քուշանաց, Մարաց և Ելիմացւոց. – 72. որ չորրորդ կացեալ թագաւոր ի Վաղարշակէ Պարթևէ: - 74.

ՊԱՐԹԵԻՔ - և յետ այնորիկ պահղաւիկ թագաւորաց ժամանակք, որ կոչին Պարթևք, մինչև յԱրտևան որդի Վաղարշու – 166. որ առեալ զթագաւորութիւնն Պարթևաց՝ տևեաց մինչև ի ժամանակս Յազկերտի, որ վերջին կացեալ թագաւոր Պարսից՝ սպանաւ ի Տաճկաց: - 166. Սա հալածեաց զՅոյնս, և գումարեալ զօր բազում գնաց ի վերայ լքեալ թագաւորութեանն Պարսից յերկիրն Պարթևաց, ի վերայ Յազկերտի անուանեալ արքային Պարսից: - 164.

ՊԱՐԻՍՊ - և զԲաբելոն պարսպօք ամրացոյց – 44. և զկէսն մահու դատապարտեալ, զգլուխս նոցա հատեալ ի փայտի բարձրացուցանէին ի վերայ դրանդեաց պարսպին: - 372. և ի փայտից մայրեաց շինեալ էր քաղաքն նոցա, պարիսպք և պատուարք և ապարանք նոցա և ամենայն տուն բնակաց քաղաքին և ամենայն կազմած պատրաստութեան նոցա: - 270. և իբրև զպարիսպ անդամանդեայ՝ այնպէս եղին զանձինս ի վերայ բազմութեան գաղթականին աշխարհակոյտ ամբոխիցն, իբրև քաջ հովիւ ի վերայ խաշանց մեռանել յանձն առին: - 230. Եւ որք մերձ առ պարսպօքն զճակատն վառէին և զմարտն գրգռէին՝

զգեստն ինքեանց յասուէից կազմեալ – 208. Եւ ջանայր զպարիսպն պղնձի կործանել. զգաւազանն երկաթի խորտակել, զհովիւն մատնել ի կորուստ և զհօտն յապականութիւն: - 344. և փորեալ ի ներքոյ զհիմունսն՝ աւերեցին զպարիսպն: - 142. Իսկ իշխանն ելեալ կայր ի վերայ պարսպին – 210. հեշտալիր առ զգուշութիւնն յօրինեալ՝ ի խորագոյնս ծովուն զպարիսպն յօրինեալ կազմէ: - 88. յեցեալ յուսացեալ առ միմեանս, իբրև զքաղաք ամուր իբրև պարիսպ պղնձի – 364.

ՊԱՐԾԱՆՔ - բարձեալ և զդին սպանելոյն տարան ընդ իւրեանս ի պարծանս իւրեանց: - 354. և թէ մեռանիլ ևս ումեք հասցէ՝ ի պարծանս անձին և ազգին իւրոյ համարեալ է, և պսակ մարտիրոսական ընկալցի ի Քրիստոսէ. – 276. Եւ հրամայեաց ածել ոսկերիչ և նորոգեալ նորացոյց զանյաղթ փայտ խաչին Քրիստոսի, մատուցեալ զբեկորսն առ իւրաքանչիւր յօդս, պատեալ մաքուր արծաթով վայելչագոյն քան զառաջինն, ի պարծանս քրիստոնէից և յամօթ և ի նախատինս թշնամեաց խաչին Քրիստոսի: - 378. վասն որոյ պարծանօք իմն խնդալից սրտիւ ասէ թագաւորն Դանիէլի – 38.

ՊԱՐԾԻԼ - թէ և Յոյնք համարին Պտղոմէիւ պարծիլ՝ երբեմն ի հաւաքումն միահամուռն ազգաց ազգաց, և յեղուլ ի լեզու յոյն. – 18. որով պարծի և պսակի ի Քրիստոս հաւատացելոց թագաւորաց երամք: - 394.

ՊԱՐԿԵՇՏ - զի այնու դիւրաւ կարասցեն հերքել մերժել ի բաց կալ ի սուրբ հաւատոյ պարկեշտ կրօնից քրիստոնէութեան: - 124.

ՊԱՐՈՅՐ - զՊարոյր Հայկազնեայ ապահարկէ ի հարկաբարձութենէ – 58.

ՊԱՐՈՅՐ ՀԱՅԿԱԶՆԵԱՅ - զՊարոյր Հայկազնեայ ապահարկէ ի հարկաբարձութենէ – 58.

ՊԱՐՈՒՆԱԿԵԱԼ - Իսկ վասն ձեանն անկայուն զօրութեանն որ այն ինչ յամպոյն ի վայր զեղեալ լինին՝ հնարաւորեալ իւրեանց փայտս իբրև զանուրս չուանօք պարունակեալ շուրջ զոտամբք, դիւրաւ ընթանան ի վերայ ձեանն իբրև ընդ ցամաք երկիր: - 192.

ՊԱՐՈՒՐԵԱԼ - Արդ խօսեաց ընդ իս ի խաղաղութիւն, զպատրուակ կեղծաւորութեան ի միջոյ երկոցունց ի բաց պարուրեալ,,: - 362.

ՊԱՐՍԱՏԻԿ - Այլ և հուր և ծծումբ նաւթիւ բարձեալ ի գործ պատերազմին, և զլոյծ բնութիւնն յանօթս ապակեղէնս եդեալ, և մանր զծծումբն ընդ նմին խառնեալ, եդեալ ի պարսատիկ մեքենայից, և զհուրն առ ընթեր նմին, հնարաւորեալ արկանել զամրոցաւն: - 208. սոցա ի թիկունս հասեալ և հովիւ մի՝ պարսատկաւ քարինս ի վերայ արկանէին. – 202.

ՊԱՐՍԱՒԱՆՔ - Բայց արդ որպէս յառաջագոյն հատուցի զարտաքոյ պարսաւանաց զիս ներքոյ գրել, վասն ոչ ոճով զսորայս կարգել դնել ի շարի աստ զշարագրածս, վասն ոչ բաւելոյ զանչափութիւնն ի մի վայր գումարել յանմասնաւորաբար նշանակութեամբ – 308. Բայց երկոքեան կողմանք դնին ի ներքոյ պարսաւանաց, թէպէտ և ի բարեպաշտութեան յաղագս մոլորեցան: - 256. և զերծի զիս ի պարսաւանաց բարձրագունից: - 300. և ընդ մեծ պարսաւանօք ներքաղրեալ զբռնաւորն և զմոլար օրէնսդիրն իւրեանց զՄահումաթ: - 206.

ՊԱՐՍԻԿ/Ք/ - Բայց երիցս երանելի ոմն երիտասարդ հասակաւ, ինքն տաճիկ և ազգաւ պարսիկ՝ ելեալ զհետ սիրոյն Քրիստոսի հաւատոցն եկն յարեցաւ ի Պատրիկն Անձևացի – 222. զի ըստ Պարսիկ ձայնի Մատ՝ Եկք թարգմանի. – 88. Էին անդ Վնդոյ և Վստամ և զօրք պարսիկք իբրև ԸՌ հեծեալ, թող զզօրս Յունաց և Հայոց: - 140. նորա լուեալ էր ի պարսկէ ումեմնէ, ի ձորոյն Շատռւանոյ, որ էր ընդ դահիճսն, և ի սկզբան վկայութեան մինչ ի կատարումն սրբոյն՝ ի տեղւոջ անդ հանդիպեալ լինէր – 206. ԵԹԷ ՈՐՊԷՍ ԿԱՐԳ ԸՍՏ ԿԱՐԳԻ ԵԿԱՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹԻՒՆՆ /ՃԻՇՏԸ՝ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆՆ/ ԱՍՈՐԵՍՏԱՆԵԱՅՑ ՄԻՆՉԵԻ Ի ԿԻՒՐՈՍ ՊԱՐՍԻԿ: - 56. Նա և բազմախոհեմն Կիւրոս Պարսիկ խաղայ գայ իւրովք հեծելազօր մարտակցովքն՝ գալ օգնել Տիգրանայ. – 62. անկեղծաւոր և աննենգ տիրասիրութեամբ ցուցանել հնազանդութիւն հպատակութեամբ, մինչ յարիւն և յապաժոյժ նահատակութեամբ առնուլ վրէժս ի Պարսկացն հինիցն՝ զաւեր եկեղեցեացն Հայաստանի և զնեղութեանցն և զգերփանացն և զասստիկ արիւնահեղութեանցն զքրիստոնէից և զուխտի մանկանց եկեղեցւոյ սրբոյ: - 134.

ՊԱՐՍԿԱԿԱՆ - Արշակայ գնացեալ զկողմամբ Միջագետաց, լաւ համարեալ ընդ ձեռամբ քրիստոնեայ թագաւորի հնազանդել, քան Պարսկականն հնազանդել տէրութեանն. – 110. և բազում և ազգի ազգի հոգաբարձութեամբ տուեալ օգնականութիւնս Հայոց աշխարհիս, շինելով քաղաք Թէոդուպօլիս ի Կարին գաւառի, և զօրս կողմնակալս ի պահեստ՝ ընդդէմ կալ պարսկական յարձակմանցն: - 114. Եւ ի թագաւորել Արտաշրի խաղաղանայր երկիրս առ վայր մի ի շփոթմանց պարսկական գնդի. – 116. և պարսկական բռնութիւնն զօրացեալ աճէր – 124. Եւ տային կարծիս պարսկականին՝ որպէս թէ հաւանեալ օրինաց նոցա: - 110. իսկ և իսկ եհաս գուժկան անկելոցն ի պատերազմին ի պարսկական քաղաքն և յԱտրպատական սահմանսն. – 398. Իսկ ի գալ միւսոյ ամին … առեալ զօրականս այրուձի կազմութեամբ իբրև Չ խաղաց գնաց երկայնագոյն հեռաւորութեամբ հասանել ի վերայ բանակին պարսկական աղխին – 402. Իսկ Վասակ Արծրունի, հայր Աղանայ սրբոյ, առեալ զՏաճատ և զԳոտեր զեղբայր իւր՝ գնաց առ կայսր. մեկուսի եղեալ ի շփոթմանց պարսկական վրդովմանցն և աւերման աշխարհիս. – 132. յերկուս կողմանս բաժանեալ զնայեցուած խորհրդոցն, և կայր կեղծաւորութեամբ անհաստատագոյն և անօգուտ հնարիմացութեամբ, ընդ քրիստոնեայսն քրիստոնեայ և ընդ պարսկականսն զնոցայսն կեղծաւորէր: - 112. Նոքա պատասխանեալ ասեն. ,,վասն զի մեք ի պարսկական հինիցն անդուլ և անպարապ գոլով ի բաց լքաք զկրթութիւնն գրոց սրբոց՝ առ ընտրել զհաւատոց խոստովանութեան կանոնադրութիւն. – 132. որ սպան զհայր իւր Վահան և զմայր իւր Տաճատուհի վասն պարսկականին հնազանդութեան մոգութեան օրինացն – 110. որք ծանուցեալ զբռնանալն նորա ի վերայ պարսկական պետացն և զինչ կրեցին, զմտաւ ածեալ և զխառն ընդ աշխարհիս զդրակցութիւնն, և թէ գուցէ զպարսկայինն հասանիցէ մեզ կրել և աշխարհիս մեր՝ ձեռն ետուն հաւանութեան ի նորայն կալ մնալ հպատակութեան: - 360. Պատասխանի ետ Մարկիանոս և ասէ. ,,վասն զի առաջնորդքն Հայոց զպարսկական շփոթմանցն զվտանգ կրէին,,: - 132. սագունակ հասեալ ի վերայ Վասպուրական աշխարհիս պարսկական խուժանն ըստ ազգս ազգս և ըստ քաղաքս քաղաքս ի Մարաց և ի Պարսից, յԵլամացւոց և ի Խուժաստանէ, ի Կրմանայ և ի Մուկանաց, ի Թուրքաստանէ և ի Խորասանայ, և յեղակարծում հասին ի Ճուաշն գաւառ – 398.

ՊԱՐՍԿԱՀԱՅՔ - բաժանեն զաշխարհս յերիս մասունս. տալով Աշոտի … Եւ Գուրգէն զկողմանս արևելից, յելից Աղբագոյ և որ շուրջ զնովաւ ամենայն Պարսկահայք մինչև ի մուտս Կորդաց, և ուր և ըստ այնմ իցէ հնար ածել զձեռամբ: - 360. Բայց զՏամբէր և զԸռնայն և զԶարեհաւան գաւառ հանեալ էր ի Պարսկահայոց – 390. և ելեալ ի վերայ Պարսկահայոց գոեհացն և անդ բազում քաջութիւն նահատակութեան ցուցեալ՝ յոլովից գերելոցն ընդարձակեաց, հանելով /400/ և զաւարն ի ձեռաց նոցա – 402. Իսկ Պարսկահայոց գոեհին խուժան ածեալ, գաղտագնաց եղեալ ընդ անկոխ ճանապարհս՝ գան հասանեն ի Մարդաստան գաւառ յաւանն Վիտահոտ – 400. Քանզի խառն դրակցութեամբ սահմանին առ միմեանս Փոքր Աղբագ և աշխարհն Կորճէից և Պարսկահայոց՝ և հանապազ առ միմեանս զգժտութիւն կեղծաբերէին, մարզպանն և որ զԿորճէիցն ունէին զգործավարութիւն. – 400.

ՊԱՐՍԿԱՅԻՆ - արկանել զնա ի կապանս և ի տանջանս մահաբերս, զամուրսն յինքն գրաւել, զաշխարհն տալ ի ձեռս իւրոյ գործավարացն, ըստ պարսկայնոցն հատուցմանց հատուցանել նոցա:-370. և այլ ոչ ևս յաւելին ելանել ի վերայ աշխարհիս ասպատակաւորք հինիցն պարսկայնոցն: - 400. և ինքն Հազարաւուխտ առնու զընտիրս այրուձիոց, զկորովի պատերազմողս ի վառելոցն պարսկային հարստութենէն, և խաղայ գնայ զկողմամբքն Հաշտենից և Ծոփայ, ի վերայ Վահանայ յանկարծօրէն: - 134. Իսկ քաղաքապետն որում Ապլբերս կոչէին, ձեռնտուութեամբ պարսկային զօրու սպասէր նմա ի չարիս ի բազում աւուրց. – 352. Իսկ իբրև տեսին զբազմութիւն պարսկային զօրուն՝ վհատեալ գնդին Հայոց լքին զմիմեանս և գնացին յետս կոյս – 134. որգունակ Խորէն /գրքում՝ խորէն/ և Աբրահամ խոստովանողքն Քրիստոսի ի պարսկայինն զերծեալ լլկանաց դառնագոյն կրիցն՝

զընդարձակութենէ նախարարացն Հայոց մատուցին ողջոյնս աւետաբերս՝ դարձուցանել տեառն զգերութիւն ժողովրդեան իւրոյ: - 324. Որդին Ապուսեճի Աւշին, որ զպարսկային հարստութիւնն հզօրապէս յաղթութեամբ ի գլուխ եհան՝ ձեռնամուխ ախորժեաց լինել ի վերայ Հայոց – 360. Որպէս և պարսկային ձայնին ի Զրուանն անուն զՋարուանդն անուանեն: - 16. որք ծանուցեալ զբռնանալն նորա ի վերայ պարսկական պետացն և զինչ կրեցին, զմտաւ ածեալ և զխառն ընդ աշխարհիս զդրակցութիւնն, և թէ գուցէ զպարսկայինն հասանիցէ մեզ կրել և աշխարհիս մեր՝ ձեռն ետուն հաւանութեան ի նորայն կալ մնալ հպատակութեան: - 360.

ՊԱՐՍՊԱՒՈՐ - Եւ եթէ քաղաքս խնդրիցէ՝ ահաւադիկ է քաղաքք մեծամեծք և պարսպաւորք. այլ գանձս խնդրիցէ՝ ասացի թէ տաց որչափ և ձեռն հասանիցէ. և ոչ կամեցաւ լսել, այլ տակաւին ծարաւի է արիւնարբութեան: - 144. և հաճոյ թուեալ յաչս նորա՝ շինէ զքարաբլուրն ապարանս արքայանիստ, աշնանայինս, պայծառայարդարս, գեղեցկայարմարս պարսպաւորս – 86. և շէն մարգարիտ զքարաբլուրն յօրինէ պարսպաւորք անկասկածելիս անմատչելիս ձեռաց պատերազմողաց – 88. Իսկ ըստ բաւականութեան աչաց տեսութեանց դաշտավայրին ի մուտս կոյս, և առ եզերբ ծովուն պարսպաւորս յօրինէ զգոգն - 88. յորում շահաստանն Դուին, մարդախիտ պարսպաւորք պատնիշօք պատուարեալ և տուրևառիկ վաճառականութեամբ և ազգի ազգի պղծութեամբ յափրացեալ յղփացեալ: - 358. յորում տեղւոջ յառաջագոյն ապարանք պարսպաւորք եղեալ էր Վարդ պատրկի Ռշտունւոյ հայկազնոյ – 394. շինեաց Գագիկ պարսպաւորք ամրափակութեամբ զբլուրն յՈստանին Ռշտունեաց զաւերեալն ի բազում ամաց – 390.

ՊԱՐՍՊԵԱԼ - բլուր մի պարսպեալ տաճարախիտ շինուածովք, որոյ հայեցածն առ դաշտակողմն ի վայր կոյս բերի, ի խաղս գետոյն Երասխայ – 392. Եւ անդ գտեալ ամրագոյն անձաւ տեղի անկասկածելի ի պատերազմական գործոց և զնա պարսպեալ պատուարօք շուրջանակի – 392. Նոր ոմն Նաբուզարդան կամ Զամրի յայտնեալ ի յաղանդոյն Նեստորի, երեքթշուառեան վատաշուէր, վատմիրհ, զագահութեանն չարիս ախտացեալ՝ սպրդեալ եմուտ ընդ մութ գիշերին յամրական պարսպեալ բլուր, և անցեալ ի սուրբ կոչարանին օթագացեալ. – 378. որ արտաքոյ պարսպեալ բուրաստանին արքունի կացցէ: - 52.

ՊԱՐՍՊԵԼ - դարձեալ պարսպէ զքարաբլուրն ի պահպանութիւն ջրոյն ամրագունիւք շինուածովք – 88. և մինչ ոչ ելին ի գլուխ կարծիքն, այլ իբրև զմեքենայ ինչ յամուր անդամանդեայ պարսպէ ի բաց դառնայր – 250. և շինեն նախարարքն Հայոց իւրաքանչիւր պալատս արքունականս և դաստակերտս յականաւորս, և զքաղաքն որմափակօք պարսպեն, և խաղաղեցուցանեն զերկիրս: - 126. և շինեցին ապարանս ամուրս և պարսպեցին մեծաւ զգուշութեամբ. – 280. Իսկ շուրջ զբերդանման ապարանօքն՝ պարսպէ զբլուրն շուրջանակի յապառաժուտ տաշելոց քարանց, քաղաք ամենալից զհովիտն ամրացուցանելով: - 86.

ՊԱՐՍՔ - Եւ զՋրադաշտ մոգ արքայ Բակտրիացւոց և Մեդաց ընկճեալ հալածեաց մինչև ի սահմանս Խեփտաղաց, հզօրապէս տիրեալ բովանդակ Խուժաստանի և կողմանց արևելից և Պարսից, անդր ևս քան զԲահխ և զԴեպուհան , ի Գովմայիդ և ի Գուզբան, ի Շերիբամական /գրքում՝ Շերիբամամական/ և ի Խոճիհրաստան, և միանգամայն ասել մինչև ի ծովն Հնդկաց՝ յոյժ արութեամբ – 44. Ազդ եղև քաջին Վահանայ, եթէ զօր բազում առեալ Հազարաւուխտ յընտրելոցն Պարսից և ահաւադիկ հասեալ գայ ի վերայ: - 134. այլ առնու զզօրսն Պարսից և գայ թագաւորել Հայոց հրամանաւ Շապհոյ արքային, ունելով ընդ իւր զՎահան Մամիկոնեան. – 106. այլ վասն բանսարկուացն ելեալ Վաչէ և Արշաւիր գնացին առ Արտաշէս արքայ Պարսից – 82. Այս ամենայն վճարեցաւ Պարսից ի ձեռն յունական սրոյն: - 148. Այս եղև յամի յութուտասաներորդի արքայի Պարսից: - 76. անդ Վահան Արծրունի ընդմիջեալ զգունդն Պարսից դարձուցանէ ընդդէմ Վարդանայ. – 128. Ապա այնուհետև դարձեալ յղեաց զՇամդոյ զՊարսից ամիրայ, և ի զօրաց արքունի զՀէթմ

ազգաւ թուրք, և ընդ նոսա հեծեալս Ժ հազարաց, կազմեալ սպառազէն պատրաստեալ բարձրագոյն քան զառաջինն – 234. Ապա ելեալ ի նաւ՝ եկն ի մէջ ծովուն խօսել ընդ զօրավարին Պարսից. – 144. Ապա իբրև վախճան առնոյր կարգեալ եպիսկոպոսացն որ ի Պարսից … միաբան ապա նախարարքն Հայոց եկին առ սուրբն Սահակ – 120. Առնուն Մեհուժան և Վահան զզօրս Պարսից, գան մտանեն յերկիրս Հայոց – 102. Արդ են ժամանակք թագաւորութեանն Պարսից, սկսեալ ի Կիւրոսէ ցԴարեհիոն … և ամք անիշխանութեանն զոր ոմանք ի պատմագրաց գրեն Կ, և այլք Հ – 166. Բայց արքայն Պարսից հեռացեալ պատերազմաւ ի Քուշանն ի դուռն Ճորայ. – 128. բայց ի գնալն աստի ի Մարս և ի Պարսս, դարձեալ դառնայ ուժով մեծաւ և թագաւորական ճոխութեամբ, տիրէ Հայոց մեծաց - 88. Բայց իբրև եղև մեծ պատերազմ սրբոյն Վարդանայ ընդ Մշկանին և ընդ զօրս Պարսից ի յԱւարայրեան դաշտին, յԱրտազական գաւառին. – 128. բայց կանոնեցի զանուանս ի մատենիս: Տիգրան. Ադրամելէք. Ներս. Ներսէխ. Մարոդ. Արշամ. Արշաւիր. Ասուդ: Պարսից թագաւորք. Քսերքսէս. Արտաշէս երկայնաձեռն. Դարեհ. Արտաշէս. Ողոքոս. Զարսէս. Դարեհ: Ապա Աղէքսանդրոս Փիլիպպեայ Մակեդոնացի տիեզերակալ թագաւոր: - 68. ԵԹԷ Ո՞ՐՊԷՍ ԵՂԵՒ ԲԱՐՁՈՒՄՆ ՉԱՐ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆՆ ՊԱՐՍԻՑ ՏԱՆՆ ՍԱՍԱՆԱԿԱՆ: - 136. ետուն գոյժ զմահուանէ թագաւորին և կացուցին փոխանակ Վաղարշու թագաւոր զորդի իւր զԽոսրով ձեռնտուութեամբ Արտաւանու Պարսից արքայի: - 92. և եդեալ ի ներքոյ արգոբայ տաղաւարաց և յղեաց ընդ կողմն Պարսից – 220. և զօրք Պարսից որք էին ի կողմանս Պաղեստինացւոց, և զօրավար նոցա անուանեալ Ռազմայուզան որ է Խոռեամ՝ խօսէր ընդ Երուսաղէմի զխաղաղութիւն. – 142. և ամենայն ուրեք ուր և հանդիպէր զօրուն Պարսից՝ առ հասարակ սատակէր զամենեսեան, մինչ ոչ մնալոյ ապրեալ: - 148. Եւ այլք յաւագ նախարարացն գնացին ամենայն պնդակազմ սպառազինութեամբ ի Պարսս՝ հնազանդել ընդ ձեռամբ հեթանոսական և բարբարիկոն ազգին Սասանականին. – 110. Եւ անդ Վահան Արծրունի խոյակապ և յականաւոր քաջամարտութեամբ ընդ սրբոյն Վարդանայ ճակատ առ ճակատ վառեալ զպատերազմն, իբրև հուր ընդ եղէգն ճեմելով ի մէջ քաջ ախոյեանացն Պարսից: - 128. և անյապաղ մինչ այս մինչ այն՝ նոցա հարեալ ընկեցեալ ի զօրացն Պարսից գունդ մի հարուստ արք իբրև ՃԽ: - 128. Եւ առեալ զնոսա անցուցանէ յիւրաքանչիւր սահմանս բնակութեան, ինքնին զհետ նոցա ելանելով, որպէս Կիւրոս արքայ Պարսից զհետ դարձելոցն ի գերութենէն Բաբելոնի. – 218. Եւ բազում անգամ ի բազում տեղիս տային ճակատ զօրքն Հայոց և Պարսից ընդ միմեանս. – 102. Եւ բաժանեալ թագաւորութիւնն Հայոց յերկուս, ի Յոյնս և ի Պարսս. – 110. և դարձեալ դառնայ ի Հայս. ընդ իւր ածելով մարզպան զՎնդոյ Պարսից մոգպետ: - 124. և ելեալ գնաց զհետ անհանճար իմացմանց առ Պերոզ արքայ Պարսից – 124. Եւ եղև ընդ ժամանակս ընդ այնոսիկ ել Հազարաւուխտ Պարսից զօրավար ծանր զօրու ի վերայ Հայոց՝ տալ պատերազմ ընդ զօրս Հայոց, աւերել գերել գերփել զաշխարհս – 134. Եւ եղև ի գալ միւսոյ տարւոյն՝ Սմբատ իշխանն Սիւնեաց ի բաց եկաց ի հնազանդութենէ թագաւորին Հայոց, արգել առնելով հարկացն տալ թագաւորին, թևակոխելով Պարսից բռնաւորին հատուցանել զհարկս և զհասս. 382. Եւ եղև ի դառնալն սրբոյն Սահակայ ի Պարսից՝ եկն առ նա դարձեալ Աղան Արծրունի, և ընկալաւ ի նմանէ սքեմ կրօնաւորութեան. – 120. և երկիրս Հայոց յապահովանայր ի հինից Պարսից. – 128. և զոր ասէն այսպիսի ինչ է. ,,վա՛յ քեզ, եղո՛ւկ դու երկիրդ Պարսից, յորժամ բազմախառն գունդք զօրացն Յունաց ի քեզ արշաւանս եդեալ՝ հասանիցեն և հարկանիցեն զքեզ ի սուր սուսերաց, և յառաթուր սմբակաց: - 148. Եւ զօր Պարսից արքային որ յաշխարհին՝ ոչ գիտացին. – 148. Եւ զօրագլուխք զօրացն էին այսոքիկ, Մուքադմ, Յուսփ ի Թփղիս քաղաքէ, Յուսփ որդի Ռահմայ և Ապուհեշմ՝ Ելոյ տէր և ընդ նոսա զօրք Համդոյի Պարսից ամիրայի: - 226. Եւ էր սէր դաշնաւորութեան մեծի ի մէջ երկոցունց թագաւորացն Պարսից և Յունաց: - 140. և ըստ միոջէքն՝ և հարեալ ի դիմի դաշիկ զօրուն Պարսից. և նոցա թուէր ծաղր առնել: - 136. Եւ ի մեռանելն իւրում Աղէքսանդրու հաստատագոյն աներկիւղութեամբ զթագաւորութիւնն իւր միապետեալ՝ կացուցանէ չորս զօրավարս

չորեքծագեան կողմանց աշխարհի, զՊտղոմէոս Եգիպտոսի և Հնդկաց, զՍելևկոս Ասիացւոց և ամենայն հիւսիսականաց, զԱնդիպատրոս Պարսից և ամենայն արևելից: - 70. և ինքն գնաց փախստական ի Պարսից ի կողմանս Խաղտեաց: - 106. և կէսքն զհետ մտեալ փախստէիցն, մինչ թանձրացաւ մութ գիշերին՝ հանին ի սահմանացն Հայոց, էր որ ի կողմն Ելոյ և էր որ ի կողմն Ատրպատականի և Պարսից: - 232. Եւ կորեան ի զօրացն Պարսից յաւուր յայնմիկ սպառազէնք հեծելոց ԴՌ հանդերձ նաւօք իւրեանց: - 146. և հարկացն արքունի կանգնեցան դիւանքն, զի այն Ե ամ բեկեալ հարկք և զաւրք ի յարքունէ Պարսից: - 116. և մեծարի յԱրտաշէսէ Պարսից արքայէ, մինչ ձեռնտու լինի նմա /84/ զօրու օգնականութեամբ – 86. Եւ յայնմ ժամանակի երթեալ ժողովէին ի քաղաքն Եդեսացւոց արք ԺԲՌ յամենայն ցեղիցն Իսրայէլի զի տեսին եթէ մեկնեցաւ անտի զօրն Պարսից, և թողին ի բաց զքաղաքն. – 156. Եւ յայնմհետէ բարձաւ տէրութիւնն Պարսից և ազգին Սասանայ, որ տևեաց ամս ՇԽԲ: - 166. Եւ յայնմհետէ համարձակութիւն առեալ անօրինացն՝ սկսան գունդս ռամկականս ժողովեալ ըստ օրինակի մարախոյ անչափ բազմութեամբ, այնոքիկ որ Շեխետիքն կոչէին. և այլ որ ուստեք ուստեք ի հեռաւոր աշխարհաց /402/ Պարսից, ի Ժանգանայ և ի Ջուրջանայ և որք ի Վարառատ գաւառէ – 404. և յայնմհետէ նուազեալ պատառեցաւ թագաւորութիւնն Պարսից: - 156. Եւ յարբունս հասելոյ Արտաշէսի՝ երթայ գնայ առ Արտաշէս Պարսից արքայն – 84. և ողբայր ի վերայ աշխարհիս Հայոց, ընդ նուազել զօրութեան թագաւորութեանս Հայոց և ընդ բռնազբօսութիւնն Պարսից: - 112. և ոչ գիտացին զօրն Պարսից զդարձն Հայրակղի ի վերայ նոցա՝ մինչև երթեալ խառնեցան և բախեցին զմիմեանս պատերազմօք: - 150. և սպանեալ զոստիկանն Պարսից, որ էր ի վերայ նոցա, և ինքեանք պատրաստեալ ի պատերազմ ընդդէմ Պարսից: - 142. և սպանեալ զոստիկանն Պարսից, որ էր ի վերայ նոցա, և ինքեանք պատրաստեալ ի պատերազմ ընդդէմ Պարսից: - 142. և սրբոյն Վարդանայ մտրակեալ զերիվարն ի փախուստ զախոյեանսն Պարսից դարձուցեալ և զկողմն իւրոյ ձեռին գնդին զօրացուցեալ – 128. Եւ քանզի իշխանութիւնն Պարսից յոյժ լքեալ էր՝ և աներկիւղ շինեցին զքաղաքն Մադիամ և բնակեցան ի նմա: - 156. Զայսու ժամանակաւ թագաւորեալ Աղէքսանդր Մակեդովնացի տիեզերակալութեամբ երագահաս հասեալ ի վերայ Դարէհի սպանանել զնա. և բառնայ զթագաւորութիւնն Պարսից Արշաւրեան: - 68. Զի ահա բարեկամացեալ էր Խուրան Հայր Վաչէի և եղբայր Արշաւրի ընդ Արտաշէսի Պարսից արքայի յերթալն Աբգարու ի Պարս, և եդեալ են դաշինս ի միջի. – 82. Զի ահա բարեկամացեալ էր Խուրան Հայր Վաչէի և եղբայր Արշաւրի ընդ Արտաշէսի Պարսից արքայի յերթալն Աբգարու ի Պարս, և եդեալ են դաշինս ի միջի. – 82. զի էր աւերեալ առ նախնեօքն ի զօրացն Պարսից: - 228. Զկնի այսորիկ մեկնեաց Բուխայ յինքենէ արս զօրաւորս յամենայն ազգաց և յամենայն մեծամեծաց և ամենայն աշխարհակալաց, և ի Պարսից և յԵլիմացւոց և ի Բաբելացւոց և յԱրաբացւոց … արս աւելի քան ԺԵ հազարաց և եհան զնոսա զհետ Գուրգինայ – 224. Զնոյն և կողմնակալքն Պարսից գրգռէին զթագաւորն ամբաստան լեալ՝ ամբաստան լինել Աշոտի զպետութենէն Տաճկաց: - 172. զոր ցուցանեմ յայլում տեղւոջ, և զոր ինչ արար արքայն Պարսից ընդ տունն Արծրունեաց ի սադրելոյ Բարծումայի ամբարշտի: - 130. Ընդ ժամանակս Հայրակղի կայսեր Հոռոմոց էր հասեալ ի վախճան թագաւորութեանն Պարսից: - 156. Ընդ ժամանակսն ընդ այնոսիկ թագաւորէ Յունաց Վաղէս կայսր, և Պարսից՝ Շապուհ արքայից արքայ: - 100. ԹԷ ՈՐՊԷՍ ԵՂԵՒ ԲԱՐՁՈՒԻՄՆ ՉԱՐ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆՆ ՊԱՐՍԻՑ, ԵՒ ՓՈԽԱՆՈՐԴԵԱՑ ՄԻԻՍ ԵՒՍ ՉԱՐ ԻՍՄԱՅԷԼԱԿԱՆ: - 156. Ի սոյն ժամանակս էր այլ ոմն ի կողմանս Պարսից միայնացեալ կրօնաւորութեամբ – 162. իբրև հարուստ մի մեկնեցան ի գնդէն Պարսից՝ ամբարձեալ Սամուէլ զմիողնին՝ ազդոյ վէրս ի վերայ եդեալ առ ժամայն եհատ զնա ի կենաց. – 106. Իսկ զտեղի թագաւորութեանն Հայոց հրամանաւ Յազկերտի ունի Մշկան զօրավար Պարսից: - 120. Իսկ յետ Կ ամի անցանելոյ Աղէքսանդրի և անիշխանութեանն Հայոց և Պարսից՝ թագաւորէ Արշակ Քաջ Մարաց և Պարսից և Եգիպտացւոց և Ելիմացւոց ի Բախլ քաղաքի. – 72. Իսկ յետ Կ ամի անցանելոյ

Աղէքսանդրի և անիշխանութեանն Հայոց և Պարսից՝ թագաւորէ Արշակ Քաջ Մարաց և Պարսից և Եգիպտացւոց և Ելիմացւոց ի Բախլ քաղաքի. – 72. Իսկ Արշակ յերկուս թագաւորսն ձեռնտու եղեալ, երբեմն ի Պարսս երբեմն ի Յոյնս, և զապստամբութիւն ի մէջ առեալ Արշակ յերկոցունց կողմանս: - 100. Իսկ զկողմանս արևելից Պարս այնքան ունելով Զրադաշտին՝ յայնմ հետէ ոչ երբէք հարկէր Ասորեստանեայց. – 44. Իսկ թագաւորն Պարսից ընդունէր զպատարագսն բերեալս ի կայսերէն,/144/և զհրեշտակսն անդրէն ոչ արձակեաց, և ոչ հրովարտակացն պատասխանի առնէր. -146. Իսկ իբրև միապետեցաւ թագաւորութիւն Պարսից Կիւրոսի՝ առնու զԲաբելոն և արձակէ զգերին Հրէից: - 66. Իսկ Կայսիկքն և որք ընդ նոսա և զօրքն Պարսից զմարտն ի գաղտնիս գրգռէին – 380. Իսկ յաւուրս Վաղարշու մանուկն Վահան Մամիկոնեան ուժեղանայր ընդդէմ Պարսից. – 134. Իսկ նոքա պատահեալ Պարսից ի գեօղն Երիզ կոչեցեալ, իբրև մրրիկ զփոշի պտուտեալ, իբրև հուր ընդ եղէգն ընթացեալ՝ սուր ի վերայ եդեալ վանեցին զբազումն քան եթէ զսակաւս – 136 Իսկ Շապհոյ լուեալ զհիւանդանալ հօր իւրոյ՝ փութացաւ գնաց ի Պարսս. – 116. Իսկ որ տիրէր աշխարհին Ապահունեաց Կայսիկն՝ զիւր զօրսն առ ինքն գումարեալ և որ շուրջ զնովաւ քաղաքայինք և ասպատակքն Պարսից, որք ի Յունացն վերայ առնէին արշաւանս: - 380. Իսկ Վասակ Արծրունի խոյս տուեալ գնաց առ Արտաշիր Պարսից – 112. կացոյց զԶրադաշտն ի վերակացութիւն Բաբելոնի և Խուժաստանի և ամենայն արևելեաց Պարսից. – 44. մանաւանդ զի աւերեալ էր երկիրն յասպատակէ Պարսից, այն ինչ հուպ մեռանելն Երուանդայ և ընդ թագաւորելն Արտաշէսի: - 90. մի՞թէ ոչ կարէին Հոռոմք սպանանել զնա, և բառնալ զթագաւորութիւնն Պարսից ի ժամանակի, իբրև ետ Աստուած զսա ի ձեռս մեր. այլ արարին ի վերայ նորա ողորմութիւն: - 144. միանգամայն և միահաղոյն որոշել զՊարս և Մարս ի Բաբելացւոց – 46. մինչև միահաղոյն զօրսն Աշդահակայ վատնեալ սուսերաւ՝ տիրէ Մարաց և Պարսից: -64. Մշկանս այս փոխանակ Արտաշրի մեր թագաւորի մտեալ ունի զաշխարս հրամանաւ Վռամայ Պարսից արքայի: - 118. Յամի ութերորդի Մուրկայ թագաւորի, թագաւորն Պարսից Որմզդ որ ի տանէ Սասանայ՝ սպանաւ յիւրոց հաւատարմաց –136. յեղակարծում ժամանակի հասանէ համբաւ մահուն Արտաւանայ, և տիրել Պարսից Ստահրացւոյն Արտաշրի Սասանականի. – 92. Յետ բառնալոյ թագաւորութեանն Հայոց ի տանէն Արշակունեաց՝ ապա մարզպանք Պարսից կալեալ տիրէին աշխարհիս. – 124. յորում ոչ սակաւ քաջութիւն նահատակութեան զօրացն Հայոց, որ ի զարմանս կրթեաց զբովանդակ զօրս Պարսից բարբարոսօքն հանդերձ: - 66. ոչ ինչ ձեռնամուխ լինելով ի նա, վասն կասկածանաց Պարսից արքային, միայն սպառնական խոստաբանութեամբ յղէ առ նա պատգամս: - 130. որ առեալ զթագաւորութիւնն Պարթևաց՝ տևեաց մինչև ի ժամանակս Յազկերտի, որ վերջին կացեալ թագաւոր Պարսից՝ սպանաւ ի Տաճկաց: - 166. որ եկեալ էր ընդ զօրսն արքունի ի Գարդայ Պարսիցն – 232. Որ և ի սա հասեալ՝ վախճան եղև թագաւորութեանն Պարսից. զոր յետ սակաւու միոյ ասացուք: - 156. Որ և յետ մահուանն Զրադաշտին դարձեալ միապետեաց ամենայն արևելեաց Պարսից ի հարկի հնազանդութեան ունելով, խաղաղասէր կենօք ամս ԼԸ. – 56. որ ի ժամանակին կալեալ էր զմարզպանութիւն և զզօրավարութիւն Հայոց ի խնդրոյ սրբոյն Սահակայ յերկուց թագաւորացն Յունաց և Պարսից – 116. որոց գնացեալ պատահեն նմա ի Դնբունիդ Պարսից: - 64. Որոց կապեալ զԳուրգէն երեքկին կապանօք և դարձեալ ի պարանոցն եդեալ շղթայս՝ յղեն ընդ Ատրպատական Պարսից և տան ի բանդ ընդ կապեալսն. – 318. որպէս թէ ոչ կամի զթագաւորելն Պարսից և հարկել Հայոց և զօրավարել, այլ զթագաւորելն Յունաց ցանկայ գտանել. – 118. որք լեալ էին յաշակերտութենէ Ղևոնդ քահանայի, որ ի Պարսսն մարտիրոսացաւ ընդ այլ սուրբ եպիսկոպոսսն և քահանայսն: - 74. որք մատուցեալ առ սուրբն Սահակ զեկուցանել նմա զոր ինչ խորհինն, և թևակոխէին առ Պարսից արքայն, զոր և արարին /116/ իսկ. – 118. սա դարձեալ միապետեաց զՊարս. – 56. սա և զթագաւորութիւնն Պարսից յինքն կորզեաց – 136. Սա հալածեաց զՅոյնս, և գումարեալ զօր բազում գնաց ի վերայ լքեալ թագաւորութեանն Պարսից յերկիրն

Պարթևաց, ի վերայ Յազկերտի անուանեալ արքային Պարսից: - 164. Սա հալածեաց զՅոյնս, և գումարեալ զօր բազում գնաց ի վերայ լքեալ թագաւորութեանն Պարսից յերկիրն Պարթևաց, ի վերայ Յազկերտի անուանեալ արքային Պարսից: - 164. սագունակ հասեալ ի վերայ Վասպուրական աշխարհիս պարսկական խուժանն ըստ ազգս ազգս և ըստ քաղաքս քաղաքս ի Մարաց և ի Պարսից, յԵլամացւոց և ի Խուժաստանէ, ի Կրմանայ և ի Մուկանաց, ի Թուրքաստանէ և ի Խորասանայ, և յեղակարծում հասին ի Ճուաշն գաւառ – 398.

ՊԱՐՏ - զորոյ զպաղատանս ոչ անտես արարեալ Քրիստոսի՝ ներէ նմա հանել ի գլուխ զսուրբ քառասնորդսն, խաչակից լինելով Քրիստոսի, մինչև ի պարտ զատկին – 254.

ՊԱՐՏԱԿԱՆ - Ասէ, ,,զի՞նչ է նոր հաւատդ, որ այժմ ի քէն երևի. եթէ այլ ևս յաւելցիս ասել՝ անձին քում դու եղիջիր պարտական,,. – 160.

ՊԱՐՏԱՍԵԱԼ - և նոցա պարտասեալք ի ծանրութենէ զինուցն և ի ջերմութենէ տապոյ արեգականն և ի սաստկութենէ աւազոյն, որ ոչ ունէր զկայ ոտից, և ի հետևակագնացութենէն և ամենեքումբք թշուառացեալք՝ անկան ի ձեռս թշնամեացն – 162.

ՊԱՐՏԱԻ - Բայց որդին Շեհայ ի մտանելն ի Պարտաւ՝ եթող անդ քաղաքապետ զմի ի հաւատարմաց իւրոց Յամանիկ ոմն: - 338. և դարձեալ գնաց եհաս ի Պարտաւ յաշխարհն Գագարացւոց: - 336. և թողեալ զքաղաքն Պարտաւ՝ առնու զզօրս իւր երագապէս անցեալ գնացեալ ի յաշխարհն Ասորեստանի: - 374. Եւ ի ժամու մինչ ազևորեալքն կամէին մտանել զառաջեաւ … յայնժամ շուրջ կացեալ զվրանաւն մեծ սպարապետին զկազմեալ գնդաւ վահանաւոր և նիզակաւոր ամրափակ պնդութեամբ, և մտեալ մատոյց զթուղթն, զոր էր գրեալ առ Յամանիկն ի քաղաքն Պարտաւ Ահմաթայ նենգութեամբ: - 344. և ինքն գնաց անտի և եմուտ ի Պարտաւ՝ ձմերել անդ, և տեսանել վասն յետին կատարածին աշխարհիս Հայոց, թէ որպէս ի գլուխ ելանիցէ. – 298. Իսկ զձերբակալսն յղեցին առ Աւշին ի Պարտաւ, որք տուեալ ի կապանս բանտի և դատապարտեցան ի մահ, սրախողխող միջակտուր արարեալ: - 372. Իսկ Բուխայի առեալ զբազմութիւն զօրացն իւրոց՝ իջանէ ի դաշտն Գարգարացւոց, և երթեալ մտանէ ի քաղաքն մեծ Պարտաւ: - 276. Իսկ ի միում յաւուրս անցեալ գնացեալ Գուրգէն՝ հանդիպի նմա ի քաղաքին Պարտաւ - 370.

ՊԱՐՏԱԻՈՐԵԼ - Զսա ըմբռնեալ զօրաց Տաճկաց ածին առ զօրավարն. և բազում վնասս ի գործս արքունի կուտեցին ի վերայ նորա և ստութեամբ առաւել քան թէ ճշմարտութեամբ պարտաւորեցին զնա: - 288.

ՊԱՐՏԱԻՈՐՈՒԹԻՒՆ - Իսկ եթէ՝ մշակն մեղաց և անդրանիկն ամենայն չարեաց, որ ի յօձն բունեալ ոչ անիծաւ, որպիսիս ուսուցանէ վնասապարտութիւն օձին առ ի պատժականութեանն գտանել պարտաւորութիւն, որ ոչ յընքենէ միայն, այլ մանաւանդ ի գտողէն չարեաց: - 22.

ՊԱՐՏԵԱԼ - բայց պարտեալ եղև գունդքն Տաճկաց ի քաջէն Գուրգինայ և բեկաւ զօրութիւն նոցա: - 308.

ՊԱՐՏԵԼ - և ձախոյ կողման թևն Հայոց պարտել սկսաւ – 128. և վառեալ ի զէն և յասպազէն՝ արձանացան իբրև զմի այր՝ և յանդուգն դիմացուածով խուռն յարձակմամբ հարեալ ի դիմի, ուր քաջքն այլազգեացն ճակատէին ընդ աջաթև /380/ կողմն. և պատառեցին զգունդն, և պարտեցին զախոյեանսն. – 382. միայն յայս բան բովանդակեալ ասէ, ,,որք հաւատով պարտեցին զթագաւորութիւնն,,: - 302.

ՊԱՐՏ Է - և ասէր, թէ ,,զայս ամենայն զոր գրէ կաթողիկոսն Հայոց և առ ապստամբութիւն խորհել առ ի քէն, և զնախարարսն Հայոց զՅունաց թագաւորին խորհել հնազանդութիւն. արդ տեսանել պարտ է վասն այդր,,: - 130. ,,են ոչխարք իմ, որ ոչ են յայսմ գաւթէ, և զայն ևս պարտ է ինձ ածել այսր, և ձայնի իմում լուիցեն և եղիցին մի հօտ և մի հովիւ. – 224. աստանօր պարտ է սակաւիկ մի յապաղումն տալ պատմութեանս. – 18. Եւ արդ քանզի կարգ բանիցս էած զմեզ առ այս խնդիր՝ պարտ է նախ գիտել թէ որով օրինակաւ Քաղդէացւոցն մատենագրութիւնք զթիւ նահապետացն տասամբք համարին թուով ըստ

աստուածահրաման գրոցս - 18. Եւ մինչ կարի և ահագին սաստիկս կուտեցաւ ի վերայ նորա ամբոխն, և ամբաստանքն միաբարբառ զաղաղակ /288/ բարձեալ առաջի բռնաւորին զօձիս պատառեալ ասէին, ,,մահապարտ է, չէ պարտ դմա կեալ, և ոչ առնուլ տեղի պատասխանւոյ,, - 290. Զոր պարտ էր աստանօր յոլովագունիւք ոմամբք աւաղականօք ընդ ողբակիցս՝ և զմարգարէականն առնուլ ի ձայնարկութիւն – 22. Յղէին պատգամս առ որդիսն Իսմայէլի և ցուցանէին զմտերիմ հարազատութիւն, թէ ,,որդիք Աբրահամու եմք մեք և դուք, եղբարք. պարտ է ձեզ գալ յօգնականութիւն մեզ, և առցուք զերկիր ժառանգութեան մերոյ,,: - 156. Ուստի պարտ իսկ էր նախ զանձանց և եթ գիտել, և ապա յերևելեացս աստի զճարտարապետն սոցա իմանալ. – 54.

ՊԱՐՏԻԼ - Առանց ախոյեանի պարտեցաւ – 250. բայց դու պարտիս յանձն քո ապաշաւել քան թէ ի մեզ. – 138. Եւ պարտեցաւ կողմն Մահմէտի – 160.

ՊԱՐՏԻՔ - ,,գո՞յ թողութիւն իմոց չարեացն /386/ գործելոց, թողո՞ւ Աստուած զիմ պարտեացն յաճախութիւն. ասացէք ինձ, տուք ինձ պատասխանի,,: - 388. եօ՞թն արդեօք իցեն մեղանացն պարտիք, եթէ ըստ յաւելուածոյ սաստից իմասցին ասացեալքն Աստուծոյ – 24. զոր արդ այժմ համառօտաբար հատուցից զհարկ պարտեաց շարագրութեանս: - 378. Իսկ թշուառականն զատակմանն ընկալաւ զվճիռ, և ի հանդերձելումն զխաչահանուացն հատուցանել զպարտիս: -378. Խոստացայ վերագոյնն գրել վասն Բուխայի մասնաւորաբար զվրիժուցն հատուցանել զպարտիս, այլ ոչ զբովանդակն: - 326.

ՊԱՐՏՈՒԹԻՒՆ - այլ զպարտութիւն քան զյաղթութիւն յինքեանս ձգէին ի ձեռանէ Յիսէի, մինչ պակասել պատրաստութեանն բերդին, մանաւանդ ջրոյն սակաւաւորութիւն. – 362. և գոչէին վիշապաձայն և բեկանէին առիւծաբար և հարկանէին վարազաբար, և մատնեցին ի սատակումն և ի պարտութիւն – 232. և զքեզ կորակնեալ ամօթալից ի պարտութիւն մատնիցին, որպէս զյառաջագոյն եկեալ հազարապետն արքունուստ, զի ոչ կարաց կալ ընդդէմ նոցա, և ոչ ճ այր առ Ժ զօրացն Հայոց,,: - 214. ԵՒ ՊԱՐՏՈՒԹԻՒՆ ՍՄԲԱՏԱՅ ՅԱՀՄԱՏԱՅ Ի ՍԱՀՄԱՆՍ ԱՂՁՆԵԱՅ Ի ՎԵՐԱՅ ԳԵՏՈՅՆ ԹՈՒԽ ԿՈՉԵՑԵԱԼ, ՈՐ ԻՋԱՆԷ Ի ԾՈՎՆ ԲԶՆՈՒԻՆԵԱՑ: - 336. և օգնութիւն հասեալ նոցա յԱստուծոյ՝ ի պարտութիւն մատնել զայլազգիսն, բազում վէրս ի վերայ եդեալ – 202. Ընդ նոյն ժամանակս եկն Վահան Աշոտի որդի, հօրեղբօրորդի Սահակայ ի գերութենէն՝ նուաճել զաշխարհս, և գունդ կազմեալ ընդդէմ Գուրգինայ՝ և ինքն զպարտութիւն քան զյաղթութիւն յինքն կրէր: - 310. Նմանապէս, կամ թէ ևս հրաշափառագոյն զյաղթութեան մարտսն յօրինեալ յարդարեաց զպարտութիւն ի վերայ ազգին Իսմայէլի մեծ զօրավարն Գուրգէն, և իսպառ կանգնեաց զնշանակ յաղթութեան ամենևին ամենայն ուրեք ընդ ամենայն տեղիս. – 312. Ո՞չ ածեր զմտաւ, թէ յիսկզբանացն մինչ ցայսօր ժամանակի ամենայն ուրեք ուր և գումարէր զօրն և լինէր պատերազմ և սուր և ճակատամարտ՝ երբեմն յաղթեն և երբեմն ի պարտութիւն մատնին. – 282. ուշ եդեալ ուժեղութեամբ և քաջութեամբ սրտիւ ընդդիմանալ, մանաւանդ ի Ծանարացն զնա տեսեալ ի պարտութիւն մատնեալ և յաղթահարեալ: - 276.

ՊԱՐՏՈՒՄՆ - Ի սոյն աւուրս որք մնացեալ էին ի տանէն Արծրունեաց իբրև լուան զպարտումն զօրացն արքունի ի Ծանարացն՝ ի մի վայր եկեալ գունդ կազմեալ հետևազօրքն մարտակցօք հանդերձ խառնաղանջ ամբոխիւ՝ լինին թուեալ արք S – 304. Լուր եղև այս առ քաջն Գուրգէն պարտումն Վասպուրականի ի Տաճկաց և իշխանանալն Վասակայ: - 306.

ՊԱՒՂՈՍ - որպէս ասաց Պաւղոս, եթէ ,,դուք տաճար էք Աստուծոյ կենդանւոյ,, , և դարձեալ ասէ թէ ,,տուն Աստուծոյ եմք մեք,,. և դարձեալ մարգարէին ասէ, բնակեցայց ի նոսա և գնացից ի նոսա,,: - 394.

ՊԵԼՃ - Եւ գունդն Հայոց խաղացին ընդդէմ նոցա, վիմաձև անքակ ի միմեանց ըստ տոհմս ազգաց, ի տանէն Արծրունեաց՝ Գուրգէն և Վասակ և Պելճ և Մուշեղ և Սահակ և Ապումկդէմ և Աշոտ – 230.

ՊԵՆՏԵԿՈՍՏԷ - և զուարճացեալ լինէին սուրբ ճգնաւորքն յաւուրս պենտեկոստէից. – 254.

ՊԵՏ - Այլ իբրև այն ինչ մերձ լինէր ամրոցն ի պաշարումն՝ Ամդայինն Յիսէ, որ Շեհի որդին, որ զզօրապետութիւնն Հայոց ունէր, ճանաչէր՝ ի հրապոյրս Մանազաւեան պետոյն և Ութմանացն ելեալ՝ երագապէս եկն եհաս ի վերայ Աշոտի ԺԵ հազարաւ հեծելօք վառելովք. – 334. և ոգորել ընդ բնաւ աշխարհս անդուլ շրջաբերութեամբ, անհանգիստ մնալով, և կեղծաւորական սիրով ընդ Վասպուրական աշխարհիս և ընդ նոցուն պետացս, համարէր լինել կատարելանալ առ սէր. – 370. որք ծանուցեալ զբռնանալն նորա ի վերայ պարսկական պետացն և զինչ կրեցին, զմտաւ ածեալ և զխառն ընդ աշխարհիս զդրակցութիւնն, և թէ գուցէ զպարսկայինն հասանիցէ մեզ կրել և աշխարհիս մեր՝ ձեռն ետուն հաւանութեան ի նորայն կալ մնալ հպատակութեան: - 360.

ՊԵՏԱԿԱՆ - Նորա ի բաց կացեալ ի հնազանդութենէ իւրոյ պետականին հանդերձ քաղաքային գլխաւորօքն. – 338.

ՊԵՏՈՒԹԻՒՆ - դու դիմօք մարտի առ իս զօր գումարեա և ել ընդդէմ իմ ի պատերազմ, և ի միասին մխեցից զձեռս ի սոսա և բարձից զսոսա ի պետութենէ Հայոց,,: - 340. Եւ արդ մեք … և այլ գունդք ազատաց և զօրական պետութեանց … գրեցաք առ քեզ Բուխայ գլուխ զօրավարաց Տաճկաց և բարձակից մեծ թագաւորին. – 212. Եւ անդէն իսկ և իսկ փութացաւ, եհաս գուժական առ թագաւորն, եթէ սպանաւ զօրավարն քո և ապստամբեաց ի պետութենէ քումմէ աշխարհն Հայոց: - 190. և ըստ հրամանի ինքնակալ թագաւորին նուաճեալ ունիս ի հնազանդութիւն պետութեան ձեր զիշխանս և զտեարս, զկողմնակալս և զկուսակալս, զքաղաքապետս և զմարզպետս բոլոր Հայաստանեայցս–212. Եւ խոյակապ և անուանի եղեալ քան որ յառաջագոյն քան զնա էին կացեալ իշխանք ընդհանուր Հայաստանեայցս, որ յարևելս և ի կողմանս հիւսիսոյ, մանաւանդ որք ի Վասպուրական աշխարհիս էին կացեալ նախարարք յիշխանական պետութիւնս: - 170. և կէին յապահովս խաղաղացեալք և հնազանդեալք ընդ պետութեամբ իշխանաց իշխանի: - 322. Զի որդիքն Աբդռհամանի, որ Կայսիկքն անուանին՝ ապստամբեալ էին ի պետութենէ թագաւորին տալ հարկս և զինուորել որպէս օրէն էր: - 380. զի տացէ վրէժս անցիցն անցելոց ի նմանէ և ապստամբութեամբ ի պետութենէն Տաճկաց: - 202. Զնոյն և կողմնակալքն Պարսից գրգռէին զթագաւորն ամբաստան լեալ՝ ամբաստան լինել Աշոտի զպետութենէն Տաճկաց: - 172. զոր ճ ամոյ յառաջ հանեալ էր բռնակալութիւնն Տաճկաց ի Վասպուրական պետութենէ: - 332. Ընդ այն ժամանակս ապստամբեալ ի պետութենէն Տաճկաց քաղաքացիքն, որում Կզուինն ասեն: - 328. համարձակապէս անցանել գնալ ընդ իշխանութիւնս և ընդ պետութիւնս, ընդ աշխարհակալս խաւարիս այսորիկ, որ անհաւատից քան եթէ հաւատացելոց ոգւոց և ապաշաւելոց զտիրելն բռնաճգեալ կորզեն յինքեանցն կորուստ: - 388. նոյնպէս և զայլս յիշխանական պետութենէ փոքրագոյն կէտս և լողակ մանուս իմանալի է. – 262. Որպէս վերագոյնն յիշեցաք սակաւուք վասն Ահմատայ՝ յինքն գրաւել զաշխարհն Տարունոյ, հանեալ ի Հայոց պետութենէ: - 366. քաջավայելչագոյնս զթագաւորութեանն կատարելագործեալ զժամանակն, Ե ամ յիշխանական ճոխութեան, ԻԵ ամ յիշխանաց իշխանական պետութեանն, Դ ամ ի թագակապ շքեղութեանն. – 356.

ՊԵՏՐՈՍ - Շինէ անդ եկեղեցի վայելչապէս պայծառութեամբ և անուանէ զնա յանուն սուրբ Պետրոսի առաքելոյն անպարտելի դժոխական առաջնորդի: - 394.

ՊԵՐԻՏԻԱԴԷՍ – Եւ արդ են մի ըստ միոջէ թագաւորք Ասորեստանեայց այսոքիկ … Ղաւոսթենէս ամս ԽԵ: Պերիտիադէս ամս Լ: Ափրատէս ամս Խ: – 58.

ՊԵՐՃ - և ոչ միոյ ումեք կորնչել, բայց ի միոջէ ումեմնէ, որում /գրքում՝ որուն/ անուն Աշխէթ ճանաչէր, այր պերճ և անուանի ի զօրուն քաջամարտիկ, ունելով ընդ ինքեան գունդ հարուստ /270/ իբրև ծով առելոյ զօրավարաց. – 272.

ՊԵՐՃՈՒԹԻՒՆ - մերժել հեռանալ ի ճոխ և ի նազելի եղբարցն պատուաւորաց, ի պարոյ կացեալ ազատագունդ ազգի ազգի պերճութենէ – 386. Քակտեսցի և աւերեսցի պերճութիւն տաճարաց քոց, և ամենայն ուրեք անարգեսցի: - 148.

ՊԵՐՈԶ - և բնակէ առ զօրավարի ումեմն և մոգի Պերոզ Վրաւմ/ճիշտը՝Վռամ/ կոչեալ: - 82. և ելեալ գնաց զհետ անհանճար իմացմանց առ Պերոզ արքայ Պարսից – 124. Զոր զթուղթսն խաբող պատրանօք ի բուռն առեալ Բարծումայ՝ ետ տանել առ արքայ Պերոզ – 130. Ընդ ժամանակս Պերոզի արքայից արքայի, ոմն յաղանդոյն Նեստորի Բարծումայ անուն, որ ունէր զանուն եպիսկոպոսութեան, զօրեղագոյնս զնեստորական հերձուածոյն բուռն հարեալ, և քսութեամբ զնախարարացն Հայոց առ Պերոզ վարելով՝ բազում օճիրս արիւնհեղութեան գործեաց: - 130. Ընդ ժամանակս Պերոզի արքայից արքայի, ոմն յաղանդոյն Նեստորի Բարծումայ անուն, որ ունէր զանուն եպիսկոպոսութեան, զօրեղագոյնս զնեստորական հերձուածոյն բուռն հարեալ, և քսութեամբ զնախարարացն Հայոց առ Պերոզ վարելով՝ բազում օճիրս արիւնհեղութեան գործեաց: - 130. Իսկ սերունդք Ասուդայ Սանասարեանց կային յոր պէտս և դիպուածն պատահէր, երբեմն այսպէս և երբեմն այնպէս. Շաւարշ. Գօգեան. Շաւասպ. Պերոզ. Շահակ. Կիւրոս: - 72.

ՊԵՐՈԶ ՎՐԱՄ - և բնակէ առ զօրավարի ումեմն և մոգի Պերոզ Վրամ կոչեալ: - 82.

ՊԷՍ ՊԷՍ - ոչ ևս զբանականաց բերելով խորհուրդս, այլ իբրև երամակք վայրենիք վայրածեալք անկարգութեամբ և պէս պէս անառակութեամբք – 28.

ՊԷՍՊԷՍ - առ որ յղեալ բազում անգամ պէսպէս սպառնալեօք և ողոքական բանիւք հաւանութեամբ թողուլ զօրէնս քրիստոնէութեան և հաւասարակցել այլոց ուրացողացն զՔրիստոս. – 318. Բայց յո՛վ ոք կամ ո՞ր աշխարհ, զոր ոչ կործանեաց Աւշին պէսպէս լլկանօք հինի ասպատակաւ, աւարառու յափշտակութեամբ, սպանմամբ սրոյ և սովոյ: - 374. և զապստամբս և զընդդիմակայսն ըստ արժանի ապիրատութեանն իւրեանց խրատել գանիւ և բանտիւ և պէսպէս տանջանօք – 212. և զի ոչ ըստ հրամանի նորա յօրինէին զպէսպէս պատրաստութեան ամրոցին - 214. և խոշտանգեսցես զնոսա գանիւ և բանտիւ և պէսպէս տանջանօք սպառնալեօք և ողոքանօք և ընչից պատրանօք արկցուք զնոսա ի ներքոյ կամաց թագաւորութեան մերոյ. – 196. զի և զբազումս պատերազմեալ պէսպէս մարտիւք, և ոչ ինչ կարացեալ ստնանել անմարտնչելի ամրոցացն և քաջութիւն արանցն որ ի նմա՝ ողոքական բանիւք կոչէր ի հաւանութիւն: - 278. զի թէպէտ նեղեալք և չարչարեալք լինէաք պէսպէս կտտանօք ի զօրացն իսմայէլական ազգացն տաճկական տէրութենէն՝ այլ սակաւագոյնք և առ փոքր ինչ ժամանակս – 194.

ՊԷՏ - և նովաւ վճարիցեն զի՛նչ պէտ և լինիցին ումեք ի մեծամեծաց մինչ ի փոքունս նոցա. – 82.

ՊԷՏՔ - և տայր տանել Սահակ զպէտս մանկանն օր ըստ օրէ: - 84. այլ Մկրտչին հրամայի՝ մի ըմպել գինի և օղի. սա ոչ միայն գինով ոչ զկծէր, այլ և ոչ ջրով զծարաւոյն պէտսն կատարէր, սակաւապետութեամբ ընդովք թրջելովք, և խստավայել բանջարովք առ քաղցն վայելելով: - 376 և զայն երիս ամս կերակրեալ լինէին սուրբքն ձեռնարուեստիւք իւրեանց, որպէս զնոյն ինքն զաստուածազարդն Պօղոս, թէ ,,զպէտս իմ և որ ընդ իսն էին՝ պաշտէին ձեռքս այս,,: - 252. Եւ զի զսրբոցն իսկ ասացից բանս. եթէ զիարդ ամենեքեան սուրբքն որպէս ժառանգութիւն իմն հայրենի ընկալեալ այնպէս պատահեսցին հարք որդւոց աւանդելով զպահոցն պէտս. - 26. և զպէտս կերակրոցն վճարեն ի սերմանց ինչ, առաւել ի կորեակ կոչեցեալ սերմանէն, զոր ոմանք ի սով ժամանակի /190/ հաց անուանեն. – 192. և ինքեանք դարձան մեծաւ յաղթութեամբ, մատուցին պատարագս Աստուծոյ և լցուցին զպէտս տնանկաց և աղքատաց այրեաց և որբոց: - 136. և ո՞րպէս՝ հնարաւորեալ յապրուստ անձանց վճարեն զկարևոր պէտս իւրեանց լի աշխատութեամբ և սաստիկ տառապանօք. – 190. և որ ի նմա են կենդանիքն՝ զնոյն առ ի վերայ հասուցանէ և նոքօք զպէտս քաղցոյն վճարէ մինչ ի ժամանակս գարնանայինս: - 262. զոր աւանդեցին որդիք թագաւորին յետ մահուան հօր և մօր իւրեանց ի պէտս սուրբ Խաչին Աղթամարայ. – 356. Իսկ իբրև եմուտ տիկինն ի բանակն և եկաց առաջի զօրավարին՝ խօսեցաւ ընդ նմա ըստ պատշաճի իրացն յոր պէտս չոգան: - 226. Իսկ սերունդք Ասուդայ Սանասարեանց կային յոր պէտս և դիպուածն պատահէր, երբեմն այսպէս և երբեմն այնպէս. Շաւարշ. Գօգեան. Շաւասպ. Պերոզ. Շահակ. Կիւրոս: - 72. Յայնժամ բնակիչք լերինն իբրև տեսին, թէ վարեցաւ իշխանն ի գերութիւն … հասին միաբան բազմութիւնն մեկնակազէնքն Խութայ

ի հնարս արուեստգիտութեանն իւրեանց, զոր ի պէտս օժանդակութեան ձմերայնոյ հնարաւորեալ էին: - 190. շինէ և անդ ամրական տեղի, դժուարամատչելի ասպատակող հինից, դնելով ի նմա նմանապէս ապարանս փողոցայարդարս, տաճարակերտս սենեկագործս, բաւական ի պէտսն պատրաստեալ – 392.

ՊԻԳԱՍՈՍ - առ սովաւ Պիգասոսն երեւեցաւ – 58.

ՊԻՂԱՏՈՍ - որպէս և յետոյ ընդ Պիղատոսի խնդրեցին զվրէժ սպանման Մկրտչին և հալածանացն Քրիստոսի. – 78.

ՊԻՂԱՏՈՍ ՊՈՆՏԱՑԻ - այլ տանելով մեր առաջի թագաւորաց և դատաւորաց վասն իմ ի վկայութիւն՝ պահեսցուք զբարիոք դաւանութիւն և վկայեսցուք որպէս Փրկիչն առաջի Պոնտացւոյ Պիղատոսի. – 260.

ՊԻՂՕ - ,,մարդ եմ և պիղծ շրթունս ունիմ, և ի մէջ պղծաշուրթն ժողովրդեան բնակեալ եմ ես,,: - 258. Եւ առեալ զմանրեալ և զխորտակեալ ի մասունս գԽաչն՝ բերին առ զօրավարն, լուացեալ զարիւն պղծոյն, որ ի վերայ խաչին շաղախեալ կայր ի գլորմանէ այսահարին: - 378. և իսկոյն հարեալ զնա այսոյն պղծոյ և ընդ զառիվայր լերինն թաւագլոր խաղաղացուցեալ հարուստ ձգմամբ մինչ ի դաշտավայր տեղին ուր այգեստանքն: -378. նոյնպէս և տանջանքն նմին նման յաւիտենականք և մշտնջենաւորք յանսպառ յաւիտեանս և յանմահ խոշտանգանս՝ պղծոցն և ուրացողացն ի սուրբ և յանբիծ հաւատոց քրիստոնէութեանն. – 264.

ՊԻՏԱՆԱԼ - Եւ փոխանակ նորա թագաւորէ Սմբատ որդի Աշոտի, այր քաջայայտ և հանճարեղագոյն, լի և առոյգ յամենայն իրողութիւնս՝ որ ինչ ընդ երկրաւս համառօտաբար լրութիւն պատկանաբար պիտանան, հաճոյ Աստուծոյ և ընտիր մարդկան: - 356.

ՊԻՏԱՆԱՑՈՒ - և այնպէս անկարօտս առ պիտանացուս հոգ տարեալ՝ գլխաւորեաց որ ինչ շինութեան և խաղաղութեան աշխարհիս նպաստաւոր առ օգտակարագոյնսն պահանջէր գործառնութեան եղանակք – 392.

ՊԻՏԱՆՈՒԹԻՒՆ - Եւ Ալի էր այր քաջ. ասէ ցնա, արի՛ ելցուք, քանզի են և ընդ մեզ արք բազումք, թերևս լիցի ելք իրացդ պիտանութեամբ: - 160.

ՊԻՏԱՒՈՐՈՒԹԻՒՆ - Իսկ նախարարքն Հայոց իբրև տեսին յերկոցունց կողմանց զանկարգ և զանտեղի աշխարհիս պիտաւորութիւն՝ յապաշաւանս դարձեալ ի վերայ անցիցն անցելոց զոր ախորժելովն խնդրեցին՝ դարձան առ Վռամ – 118.

ՊԻՏԿԷՆ - Սոքա մերժեալք ի տէրութենէն իւրեանց, զոր տուեալ էր Տիգրանայ և Կիւրոսի՝ կէին անկարգաբար զինչ պիտկէն մինչ ի Կիւրոս Շահակեան: - 72.

ՊԻՏՈՅ Է - որ տեղասցեն ի վերայ ձեր նետս երկաթեղէնս և շուառունս մուխս պաղաւատիկք սլաքովք և հաստաձիգք աղեղանց և կռուիք բազմադիմիք՝ որչափ Խոսրովայ և ձեզ պիտոյ իցէ,,: - 138. Դարձեալ պիտոյ է մեզ դառնալ առ ի վերագոյնսն, որ նախ քան զպատերազմն Աղձնեաց եղեալ են հանգամանք գործոց ի զօրացն Տաճկաց, և թէ ո՛րպէս եկաց ընդդէմ նոցա իշխանն Աշոտ և վանեաց զնոսա սրով սուսերի: - 176. և եթէ զաւր պիտոյ իցէ յօգնականութիւն՝ արձակեցից որչափ և կամիս. 152. Եւ զգանձդ Արեաց թագաւորութեան այնչափ արձակեցից՝ մինչև շատ լիցի ասել ձեզ, և բազմութիւն զօրաց՝ որքան և պիտոյ իցէ ձեզ, մինչև ձեր թագաւորութիւնն հաստատեսցի,,: - 138. և Հայրակղոս տայ նմա զթագաւորութիւնն և խոստանայ զօր որչափ և պիտոյ իցէ: - 152.

ՊԻՏՈՅԱՑԵԱԼ - ոչ պիտոյացեալ եկամուտ լուսոյ, որով նսեմասցի առ ի հասանել երեկոյին, ոչ ապաժամանութիւն արեգական առ ի մերժել զմութ գիշերի լուսազգեստ ստեղծուածոյն, որ յետ առաջնոցն կարգի և դասու՝ զերկրորդն փոխանորդեցաւ վիճակ, ոչ կերակուր հոսանուտ առ ի լրութիւն տարաբարձ ունակութեանց անապականին, որ դոյզն ինչ փոքրագոյն քան զհրեշտակս գոլ. – 20.

ՊԻՏՈՅՔ - Առնէր ասպատակ և ի կողմն Անձաւացեաց տէրութեանն, և անտի ևս առնուին աւար ի պատճառս ռոճկաց պիտոյից այրուձիոյն: - 176. ելանել ի գագաթն Ամրական անձաւին զբօսնուլ նովաւ առ վճարումն բաւականութեան, ըստ մասանց պիտոյից օժնդակութեան

քաղաքայարդար ապարանից թագաւորական պաղատի իւրոյ ձեռակերտին – 392. Որ յետ բազում ժամանակի ծախք պիտոյից ասացաւ պատրաստել թագաւորին ըստ անյաղթ բռնութեան և մեծութեան որովայնի կերակուր Բէլայ: - 38.

ՊՂՕԱԼԻՑ - Իսկ նա ըստ սովորականի ցանկասէր պղծալից անյագութեանն՝ խրոխտացեալ մռմռեալ յանձն գազանեղէն թունիւք առաւելեալ, բորբոքեալ տապախառն բոցով հեղուլ զմահածին թոյնսն ի վերայ Բուխայի. – 326. մինչ քաղցրատենչ քունն ի վերայ հասանէր որ զպահպանութիւն գիշերոյն պահէին՝ նորա ամբարձեալ զպղծալից ձեռն ի սրբութիւն սրբոցն և առեալ զսուրբ նշան խաչին Քրիստոսի և ընդ պատուհանն արտաքս ելեալ – 378.

ՊՂՕԱՇՈՒՐԹՆ - ,,մարդ եմ և պիղծ շրթունս ունիմ, և ի մէջ պղծաշուրթն ժողովրդեան բնակեալ եմ ես,,: - 258.

ՊՂՕԵԼ - և ամենեքեան որ պահիցեն զշաբաթս իմ և ոչ պղծիցեն, և պահիցեն զպատուիրանս իմ և կացցեն յուխտին իմում՝ տարայց զնոսա ի լեառն սրբութեան իմոյ – 224. դա աւադիկ արմատ դառնութեան ի վեր երևեալ, և բազումք պղծին նովաւ: - 254. նոյնպէս և ոչ է հնար սրտի հաւատացելոյն պղծել շրթամբք: - 258.

ՊՂՕՈՒԹԻՒՆ - ,,վա՛յ քեզ, եղուկ դու, ազգ Տաճկաց, արանց և կանանց ամենայն ծովեզերեայ քաղաքաց. փոխանակ անաւրէնութեան լեզուիդ և պղծութեան կարգաց, որով բացեալ զբերանդ պղծութեան զանաւրէնս բարբառէիր: - 164. ,,վա՛յ քեզ, եղուկ դու, ազգ Տաճկաց, արանց և կանանց ամենայն ծովեզերեայ քաղաքաց. փոխանակ անաւրէնութեան լեզուիդ և պղծութեան կարգաց, որով բացեալ զբերանդ պղծութեան զանաւրէնս բարբառէիր: - 164. այլ գնաց զխոտորնակ և զձախողակի ճանապարհ աղտեղասէր բազմադիմակ պղծութեամբք – 108. Այլ սոքա թէպէտ և յանձն առնուին և մտադիւրութեամբ լսէին նմա սակայն ոչ մեկնեալ լինէին ի ժանդագործ պղծութենէն զազրալից սողոմական ախտիցն – 182. բայց Տիրան պղծութեան աղտեղութեամբն զգառեալ մատնի ի ձեռս Շապհոյ – 98. Եւ երկայնագոյնս է զամենայն բանս պղծութեան նորա շարագրել, զի յոյժ բազում է և ընդդիմակ Աստուծոյ: - 164. Եւ զլեզուդ պղծութեամբ զոր սրէիր ի վերայ մեծազաւր թագաւորին՝ արդ նոր և զարմանալի վիրաւք դատեսցէ զքեզ քան զամենայն տիեզերս: - 164. Եւ սրբեալ զերկիրս ի պղծութենէ և ի նենգութենէ նեղութեանցն, իբրև զՅուդայ Մակաբայեցի զԱնտիոքայն սրբելով զանաստուածութիւնն յԻսրայէլէ՝ արար խաղաղութիւն նոցա որոց տիրէրն: - 312. զայս ասէր, ոչ զի սողոմայեցիք էին, այլ զի ընդ նոյն մեղս սողոմական պղծութեանն զառածեալ լինէին՝ սողոմայեցիս կոչէ: - 182. յորում շահաստանն Դուին, մարդախիտ պարսպաւոր պատնիշօք պատուարեալ և տուրևառիկ վաճառականութեամբ և ազգի ազգի պղծութեամբ յափրացեալ յղփացեալ: - 358. սակայն կանոնական սահմանադրութեանն արտաքոյ մնացեալ, գայթ ի գայթս զքրիստոնէութեանն վարս բերելով անառակութեամբք և արբեցութեամբ, խառն անկողնօք և պղծութեամբք աղտապիղծ սարսափելի և գարշելի խառնակութեամբ արուապղծութեամբք – 336.

ՊՂՆՁԱԿՈՒՌ - յետուստ կողմանէ աճապարեալ Քսերքսէս բուռն հարեալ զդիակաց պղնձակուռ վարապանին Աշդահակայ ի վերայ թիկանցն զգաւակս երիվարին արկեալ – 64.

ՊՂՆՁԵՂԷՆ - նա և զիւրեաւ տախտակափակ լանջապահս, թիկնապահս, զանգապանս, սռնապանս, գլխապանս, որ գրեթէ բովանդակ պղնձեղէնս զնա իմանալ թուէր, և զետեղեալ բլրաձև զօրու անմատչելի կարծելով. – 64.

ՊՂՆՁԻ - և մածեալ պնդեալ իբրև զբլուր պղնձի, իբրև զմի այր, և ասելով միաբան իբրև ի մի բերանոյ. – 136. զի թագաւորն Լիդէացւոց ասպազինեալ զերիվարն շուրջանակի պղնձի արկանելեօք յոտից մինչ ի գլուխ բովանդակ չթողեալ տեղի՝ անկռուելի լինել զինուի – 64. որ զջրհեղեղին իրս գուշակեաց Քսիւսիւթրեայ, և զառաջինս իւր գործոց բնաբանապէս գրել և դնել յաման պղնձի մածեալ կապարով ի պահեստի ի Սիպարացւոց քաղաքին: - 36. Եւ ջանայր զպարիսպն պղնձի կործանել. զգաւազանն երկաթի խորտակել, զհովիւն մատնել ի կորուստ և զհօտն յապականութիւն: - 344. յեցեալ յուսացեալ առ միմեանս, իբրև զքաղաք ամուր իբրև պարիսպ պղնձի – 364.

ՊՂՊՋԱՋԻԳ - Պղպջաձիգ արտօսր իբրև յեռանղնոտ կատսայէ ի վեր յորձանախաղաց սահին. տարակուսանք անյուսալի շուրջ զինև պարագրին ի վերայ եղելոցն: - 350.

ՊՂՏՈՐ - բանսարկուք ոմանք հրապոյրս պղտորս քսութեան ածէին տանէին ի միջէն առ միւսն, որպէս թէ զչարիսն իրերաց առ հազարապետն խորհել նիւթել յայտ ածէին և զպատճառն զմիմեամբք արկանէին ի գաղտնիս քրթմնջելով: - 342. զի թերևս կարասցէ արկանել զերանելին ի ներքոյ պղտոր հրապուրեցուցիչս ժախուն մահածին հնազանդութեանն - 204. նուաճեաց զանձն, հրապոյրս պղտորս արբուցանէ Վահանայ Մամիկոնէի, որ էր աներ Մեհուժանայ, և անցեալ գնացին առ Շապուհ. – 102.

ՊՆԴԱԴԵՍՊԱՆ - Յայնժամ հրովարտակս արարեալ, պնդադեսպանս արձակեալ ընդ ամենայն սահմանս իւրոյ տէրութեանն – 198.

ՊՆԴԱԿԱԶՄ - Եւ այլք յաւագ նախարարացն գնացին ամենայն պնդակազմ սպառազինութեամբ ի Պարսս՝ հնազանդել ընդ ձեռամբ հեթանոսական և բարբարիկոն ազգին Սասանականին. – 110. Եւ իսկոյն անյապաղ յական քթթել սպառազինեալ այրուձի պնդակազմ /366/ պատրաստութեամբ, ռազմ բոլորեալ դաշիկ դիմացուածով զմարտն գրգռեալ - 368. յաւուր միում … ետ հրաման իշխանն առնն կորովի եղբօր իւրոյ Աբասայ Հայոց սպարապետի՝ վառել պնդակազմ պատրաստութեամբ, զօրու և զինու և զարդու ամենայարդար հնարաւորութեամբ, որպէս օրէն է նահատակաց քաջ արանց – 344.

ՊՆԴԱՓԱԿ - Ի սորա յերրորդ ամի թագաւորութեանն ի վերայ Հայոց աստուածատուր բարկութեամբ անդնդաշարժ վրդովմամբք ներքնագոյն խորոցն պատահեալ միմեանց սահանախաղաց դղրդմամբ, հիմնաշարժ տապալմամբ, /356/ ներքսագոյն երկրի թուլացեալ պնդափակ աղխեալ սանդարամետական սահմանին, բարկութեան հողմոց շնչեալ ընդ ջրոցն խաւարայնոց, ի կոհակս անդնդաքակս զթանձրայատակ երկրի զկարծր և զծանրալիր անկշիռ անբաւութիւնն տատանեալ, մինչ յերեսս երկրի ի վեր մղեալ հանդէպ քաղաքին Արտաշատու/ գրքում՝ Արտաշասու/, որ Բլուրն նորուն ասի – 358.

ՊՆԴԵԱԼ - այլ նա ի նոյն միտս չարախորհրդութեան յամառեալ պնդեալ կայր: - 344. և զնիւս երիվարացն երկաթապատ պնդեալ – 208. և մածեալ պնդեալ իբրև զբլուր պղնձի, իբրև զմի այր, և ասելով միաբան իբրև ի մի բերանոյ. – 136. և արդ քանզի խօսեցայ ընդ ձեզ բանիւք ողոքանաց՝ և դուք թերևս յայդ գայթակղեալ խաբեցայք և պնդեալ կայք յամառեալ: - 246. Եւ եղև զի ամբարձ զաչս իւր և ետես, զի պնդեալ գայր հեծեալն զկնի նորա – 230. Եւ եղև մինչ կային իշխանքն ի միաբանութեան առանց կարծեաց կասկածանաց ի հպատակութեան ելեալ յարքունուստ հազարապետին / 340 / որդւոյն Հալթի, և զմիաբանական սիրոյն շաղկապ ի միասին յօդեալ պնդեալ անքակ պահէին – 342. Եւ ինքն իսկ գլխովին զօրավարն Բուհայ, հեծեալ յերիվարն, պնդեալ զինքն զինու ի պատերազմ ընդդէմ իշխանին, և զկորովին աղեղնաւորացն Ելիմացւոցն և զընտիրս հեծելոց նոցա ընդ ինքեան վառեալ ի ճակատի: - 208. Եւ նա ևս քան զևս պնդեալ հաստատեալ կայր ի հաւատս, ի սէր և ի յոյսն Քրիստոսի. – 318. և վառեալ զինքեանս յընթացս պատերազմին, զգեցեալ զզրահս արդարութեան և պնդեալ զմէջս ճշմարտութեամբ – 252. զանգապանս ի վերայ բարձիցն պնդեալ – 208.

ՊՆԴԵԼ - և նորա ճիչ բարձեալ ասէ, քրիստոնեայ եմ. և նա ևս պնդէր և ասէր, ,,մի՛ մեռանիր, մսլիմանակ ես,,. – 222. համառել պնդել ի հաւատսն Քրիստոսի զոր պաշտեսդ, և ի ձեռն չարաչար տանջանաց ելանել ի կենաց աստի – 290. Յայնժամ բարկացեալ բռնաւորն իբրև գազան մի կատաղեալ, յարձակեալ ի վերայ գառանց գէշ արկանել զնոսա՝ հրամայեաց պնդել զնոսա ի ցիցս կապել ոտիւք և ձեռօք. – 292.

ՊՆԴԻԼ - Արդ փութա՛, պնդեա՛, ե՛լ զհետ նոցա, և մի ինչ յայդոսիկ յերկուանայցես, թուլագոյն կալով մնալով յիրիդ յայդմիկ,,: - 184. Եւ զօրացն քաջալերեալ ընթացան յիւրաքանչիւր զէնսն և հեծեալ յընտիրս երիվարացն՝ կացին ի հանդիպոջ և հանդիսացան գումարեցան ի մի վայր և պնդեցան կարգեցան մածեան հոլովեցան յինքեանս – 230. Եւ զօրքն Տաճկաց պնդեցան և փակեցին շուրջանակի ի ներքս զգունդն Աղուանից և դիմեցին յանդուգն ի վերայ նոցա. – 284. Եւ հեծեալ փութացաւ պնդեցաւ զհետ Գուրգինի – 228. տանջեաց

զնոսա գանիւ, և նոքա ևս առաւել պնդեցան ի հաւատսն և ի յոյս բարեաց և ի սէրն Քրիստոսի: - 222.

ՊՆԴՈՒԹԻՒՆ - Ազդ եղև մեծին Տիգրանայ պատրաստ պնդութիւն Աշղահակայ. – 62. բեկումն սրտի, քան թէ քաջութիւն պնդութեան ի ներքս դիմեն. – 384. և եղեն իբրև զմի այր կամ թէ իբրև զվէմ մի բլրաձև, արձանացան կարծրացան պնդութեամբ՝ անմատոյց լինել ի նոսա զօրութիւն երկաթի. – 230. Եւ երթայր աներկիւղ համարձակութեամբ, քաջալերեալ ի միտս և խորհուրդս իւր ըստ պնդութեան արութեան իւրոյ քաջ նահատակն Ապումուսէ: - 288. Եւ զարմանք կալան զամենայն բազմութիւնն ի վերայ պնդութեան սրտին և զօրութեան ուժոյն և քաջութեան նահատակութեանն, զոր գործեաց երանելին Գէորգ. – 268. Եւ ի ժամու մինչ ագևորեալքն կամէին մտանել զառաջեաւ … յայնժամ շուրջ կացեալ զվրանաւն մեծ սպարապետին զկազմեալ գնդաւ վահանաւոր և նիզակաւոր ամրափակ պնդութեամբ, և մտեալ մատոյց զթուղթն, զոր էր գրեալ առ Յամանիկն ի քաղաքն Պարտաւ Ահմաթայ նենգութեամբ: - 344. և նախ քան զմտացն յօժարագոյն առ հանդէսսն յառաջանալ՝ զմարմնոյն պնդութիւն անհանգիստ առ ճակատամարտսն յարատևել: - 308. Նորա զերկիր նկատեալ՝ ոչ ունէր նայել ի վեր, կայր կորակնեալ, ոչ ունել ոյժ պնդութեանն, զօրհասն ի վերայ իւր գուշակէր եկեալ հասեալ: - 344.

ՊՈՂՈՎԱՏԻԿ - որ տեղասցեն ի վերայ ձեր նետս երկաթեղէնս և շուառունս մուխս պաղաւատիկք /ճիշտը՝ պողովատիկք/ սլաքովք և հաստաձիգք աղեղանց և կռուփք բազմադիմիք՝ որչափ Խոսրովայ և ձեզ պիտոյ իցէ,,: - 138.

ՊՈՂՈՏԱՅ - և եբաց զպողոտայն լայն և ընդարձակ, զշաւիղն կորստեան, որ տանի յանգիւտ կորուստն. – 248. նստէր փորող պողոտային նրբափողոց ճանապարհին, որ հանէր ի վերին մայրաքաղաքն Սիոն, ի բանակետղն երկնաւոր զօրացն յարքայանիստ քրիստոսական թագաւորութեան: - 204.

ՊՈՆՏԱՑԻ - այլ տանելով մեր առաջի թագաւորաց և դատաւորաց վասն իմ ի վկայութիւն՝ պահեսցուք զբարիոք դաւանութիւն և վկայեսցուք որպէս Փրկիչն առաջի Պոնտացւոյ Պիղատոսի. – 260.

ՊՈՌՆԻԿ - զառհաւատչեայսն առաջաբերելով ի փոքր ժամանակի զմեծամեծսն կշռեալ, զպոռնիկն, զմաքսաւորն, զաւազակն և որք այսպիսիք – 386. որ և զՌահաբ պոռնիկն առ ժամեայ բարեմտութեամբն յերիքովական բարկութենէն ապրեցոյց իւրովք ազգականօքն, և զԳաբաւոնացիսն ի Քանանացւոցն սատակմանէ: - 32.

ՊՈՌՆԿՈՒԹԻՒՆ - և ի նիրհելն իւրում՝ ձայնէ հոգին աւտար ի բերանոյ կնոջն քարացելոյ եթէ՝ ծնցիս որդի աշխարհակալ. որ և ի պոռնկութենէ յղացեալ իսկ էր դուստր ցեղի Դանայ: - 158.

ՊՈՐՊ - և տիկինն սպարապետական ի Տարունոյ եկեալ և նշանացի զդի նորա գտեալ՝ տարաւ ի Պորպ յիւր աւան և եդ ի գերեզմանի: - 368.

ՊՈՒՐԱԿ - և երթեալ ի թաւ պուրակս բուրաստանացն, մտեալ ի ներքոյ թաւ թփոյ ծաղկոցն որ էր մուրտ բազում ղուղեալ դադարեաց: - 152.

ՊՌՋՏԵԱԼ - Եւ կայր զյօնսն պռզտեալ, կոկոզաբանէր լի յոխորտանօք, խրոխտայր, եռացուցանէր ի վեր մղէր զդառնութիւն ժահահոտ մաղձոյն չարաթոյն վատախառնութեանն – 242. Ի դառնալն Բուխայի յարքունիսն, և կայր զյօնսն պռզտեալ, փքացեալ լի ամբարտաւանութեամբ՝ կոկոզաբանէր ի վերայ մեծամեծ գործոցն գործելոց – 326.

ՊՌՈԲՈՍ - և ոչ առ զխաղաղութիւն մինչև ի Պռոքոս կայսր, որ արար խաղաղութիւն ընդ Արտաշրի: - 94.

ՊՌՈՄԻԹՈՍ - և Հեփեստոս և Պռոմիթոս, որ է արեգական և լուսին՝ գողացան զհուրն յՈրմզդայ և մասն ինչ ետուն ի մարդիկ. – 48.

ՊՌՈՏԱԲԱՆ - զի տեսանեմ զքեզ այր պռոտաբան, /138/ զի յանձն քո խրախուսես և ոչ յԱստուած, ի բազմութիւն զօրաց և ի փղաց զօրութիւն. – 140.

ՊՍԱԿ - և թէ մեռանիլ ևս ունէք հասցէ՝ ի պարծանս անձին և ազգին իւրոյ համարեալ է, և պսակ մարտիրոսական ընկալցի ի Քրիստոսէ. – 276. Եւ իւրաքանչիւր զօրագլխացն եկելոց առ

նա պարգևս և պսակս մատուցանէր, գեօղս և աւանս կնքէր և տայր. – 198. և նոքա կային մեծաւ ուժով և գոհանային զանբաւ և զառատաշնորհ պարգևացն Քրիստոսի, որ արժանի արար զնոսա մեռանել վասն անուանն Քրիստոսի և առնուլ զմարտիրոսական պսակն: - 292. և փոխանակ ծաղկեալ պատմուճանի գունագոյն երանգ երանգ անկուածոցն՝ զսուրբ և զվարդագոյն կարմրատեսիլ արիւնն իւրեանց ի վերայ սուրբ մարմնոյն, և փոխանակ ոսկեհուռ թագակապ զարդու պսակացն՝ զերկրպագութիւնն Քրիստոսի.–266. որոյ զպատասխանիսն դարձուցեալ լի քաջալերական խրատու յորդորմամբ մարտիրոսական ակնկալութեան պսակաց – 400.

ՊՍԱԿԵԱԼ - անհասական իմն շնորհիւ փառօք և պատուով պսակեալ զմարդն իշխանական ճոխութեամբ՝ վայելեցուցանէ դրախտին, տալով նմա բազմամեայ կենաց սահման իբրև զմի օր - 20.

ՊՍԱԿԵԼ - ,,բարի՛ է քեզ, թագաւոր Հայոց, ե՛կ այսր զի պսակեցից զքեզ ես սպարապետս,,. – 108. որով պարծի և պսակի ի Քրիստոս հաւատացելոց թագաւորաց երամք: - 394.

ՊՍԱԿԵԼՈՑ - և հանդերձեալ աշխարհին պսակելոց է ի Քրիստոսէ, հանդերձ տիկնաւն Հեղինեայ ընդ ամենայն սուրբս Քրիստոսի Աստուծոյ մերոյ. ամէն: - 80. մեռան նոքա անդ և թաղեցան փառաւորապէս ըստ օրինի քրիստոնէից յուխտէ Յակոբկաց, որ անդ են հաւատացեալ ժողովուրդք, և զխոստովանողական անուն ստացեալ փառաւորեցան յերկրի և պսակելոց են ի Քրիստոսէ ընդ ամենայն սուրբս. ամէն: - 324.

ՊՏՂԱԼԻՑ - Եթէ, որպէս ասացի, ի բաց զնաս յինէն՝ խաղաղութիւն է, և թէ ոչ՝ պատերազմ և կռիւ և ճակատամարտ … դու ծաղիկ՝ և մեք խորշակ թառամեցուցիչք, դու անդ պտղալից՝ և մեք կարկուտ ապականարար – 280.

ՊՏՂՈՄԵԱՆՔ - Յանգ հանեալ Պտղոմեանց զժամանակ թագաւորութեանցն, և հասեալ/72/ մինչ ի Կղէոպատրեայ, դուստր Պտղոմէի Դիոնիսի. – 74. Յայս վայր զայս գրեալ Աղէքսանդրի՝ Մակեդոնացւոյ, ի Սենեքերիմայ յառաջ մինչև ի Պտղոմէոս եգիպտացի, զոր և նոքա Պտղոմեանքն կոչէին. – 74.

ՊՏՂՈՄԷԱԿԱՆ - բայց մնայ ի հարստութեան Պտղոմէականն միայն, մինչ տիրել Կղէոպատրեայ կնոջ միոյ եգիպտացւոյ որ յետ բազում ժամանակաց, մինչև յՕգոստոս կայսր: - 72.

ՊՏՂՈՄԷՈՍ - Այլ թէպէտ զայս ախորժելով լսէր Պտղոմէոս առ լաւութեան քաջութեան առնն՝ սակայն յայտնել ոչ զօրէր Աղէքսանդրի – 70. և առեալ Պտղոմեայ զԱսուդ՝ տայ տանել յԵգիպտոս, ի պարգևեալ աշխարհն նմա յԱղէքսանդրէ – 70. գայր յանդիմանակաց Պտղոմէի: - 70. Եւ ի մեռանելն իւրում Աղէքսանդրու հաստատագոյն աներկիւղութեամբ զթագաւորութիւնն իւր միապետեալ՝ կացուցանէ չորս զօրավարս չորեքծագեան կողմանց աշխարհի, զՊտղոմէոս Եգիպտոսի և Հնդկաց, զՍելևկոս Ասիացւոց և ամենայն հիւսիսականաց, զԱնդիպատրոս Պարսից և ամենայն արևելից: - 70. զոր և ես գիտեմ յաշխարհագրութեանց անտի Պտղոմեայ՝ զԵմաւոն լեառն յարևելս, որ արդարև բարձր է քան զամենայն երկիր, անկոխելի ոտից մարդոց – 48 զոր ընթերցասէրն Պտղոմէոս գրեալ և յարդարեալ ստուգաբանութեամբ, դնեն զգուշութեամբ ի դիւանապահ տունս գանձուց մինչև ի Կղէոպատրա կին, որպէս վերագոյնն գրեցաք: - 74. Ընդ որ սքանչացեալ ընդ քաջասրտութիւնն և ընդ իմաստուն բանակարգութիւնն Պտղոմէի և Սելևկեայ զօրագլխացն Աղէքսանդրու՝ խնդրեցին պարգև ի թագաւորէն զԱսուդ. - 70. թէ և Յոյնք համարին Պտղոմէիւ պարծիլ՝ երբեմն ի հաւաքումն միահամուռն ազգաց ազգաց, և յեղուլ ի լեզու յոյն. – 18. Իսկ Պտղոմէոս նենգութեամբ և հարկանօք կալաւ զԵրուսաղէմ և զՀրէաստան, մինչև ամս ԺԲ: - 70. Յանգ հանեալ Պտղոմեանց զժամանակ թագաւորութեանցն, և հասեալ /72/ մինչ ի Կղէոպատրեայ, դուստր Պտղոմէի Դիոնիսի. – 74. Պտղոմեայ հասեալ ի տէրութիւն ժառանգաւորութեանն՝ փոխանակ իւր կացուցանէ զԱսուդ, տալով ի ձեռս նորա զբոլոր իշխանութիւն Եգիպտոսի և Հնդկաց - 70. վասն զի ըստ Պտղոմեայ և Աղէքսանդրի սահմանադրութեանն, կամ թէ մեր Արտաշէսի որդւոյ Սանատրկոյ՝ ի Վասպուրական գաւառացն համար թուեալ է գաւառն այն – 332. Յայս վայր զայս գրեալ Աղէքսանդրի՝ Մակեդոնացւոյ, ի Սենեքերիմայ յառաջ մինչև ի

Պտղոմէոս եգիպտացի, զոր և նոքա Պտղոմեանքն կոչէին. – 74. քանզի ոչ էր օրէն թագաւորացն և օրինադրացն զկանանց ազգի թիւ ազգաբանութեան շարել, բայց միայն ըստ ժամանակագրութեանն կանոնի, որպէս և յԻսրայէլի զԳոթողիայ, և յԵգիպտոս զԿղէոպատրեայ դուստր Պտղոմեայ Դիոնիսեայ: - 16.

ՊՏՂՈՄԷՈՍ ԴԻՈՆԻՍԻՈՍ - Յանգ հանեալ Պտղոմեանց զժամանակ թագաւորութեանցն, և հասեալ /72/ մինչ ի Կղէոպատրեայ, դուստր Պտղոմէի Դիոնիսի. – 74. քանզի ոչ էր օրէն թագաւորացն և օրինադրացն զկանանց ազգի թիւ ազգաբանութեան շարել, բայց միայն ըստ ժամանակագրութեանն կանոնի, որպէս և յԻսրայէլի զԳոթողիայ, և յԵգիպտոս զԿղէոպատրեայ դուստր Պտղոմեայ Դիոնիսեայ: - 16.

ՊՏՈՒՂ - այլ որպէս արմատն՝ նոյնպէս և ուռն և պտուղն. եթէ սկիզբն սուրբ է՝ ապա և արմատն, ապա զինչ ուռն՝ նոյն և տեսակ: - 258. Այսու զպտուղ շրթանց մերոց խոստովանելով յանուն նորա պահանջէ սպառնալեօքն և խոստմամբքն: - 256. առաջի տեսանելով զկապուտակ ծիրանափայլ դաշտաձև ծովն. դաստակերտս մեծամեծս շուրջ զեզերբն անտառախիտ ծառովք և գինեբեր որթովք և զանազան պտղովք. – 86. զի ,,ոչ կարէ ծառ պտուղ չար առնել, և ոչ ծառ չար՝ պտուղ բարի առնել,, , որպէս ասաց Փրկիչն – 256. զի ,,ոչ կարէ ծառ պտուղ չար առնել, և ոչ ծառ չար՝ պտուղ բարի առնել,, , որպէս ասաց Փրկիչն – 256. Սա առաջին գտաւ պտուղ մարտիրոսական ի մեծ վտանգի նեղութեանն, որ եհաս ի վերայ բոլոր Հայաստանեայցս: - 206.

ՊՏՈՒՏԵԱԼ - Իսկ նոքա պատահեալ Պարսից ի գեօղն Երիզ կոչեցեալ, իբրև մրրիկ զփոշի պտուտեալ, իբրև հուր ընդ եղէգն ընթացեալ՝ սուր ի վերայ եղեալ վանեցին զբազումն քան եթէ զսակաւս – 136.

ՊՐԱԿ - ,,արջք գիսակագեղք սպիտակայեղջք որջացեալ ի պրակս անտառախիտ մայրեացդ. արդ թէ հաճոյ թուիցի՝ երթիցուք որսալ զնոսա,,. – 100. և բնակութիւն նոցա ի խորաձորս և ի փապարս լերանց և ի պրակս մայրեաց, ի գագաթունս լերանց: - 190. և զնոյն ոռոգեալ ոտիւք ի միջոցս պրակացն, կամ երկմատնի փայտատովք սերմանեալ. – 192. և իբրև հողմ զպրակս եղեգան տատանեալ՝ սասանեալ խռովեցուցին զբազմութիւն զօրացն: - 368.

ՊՐՈՄԻԹԷՍ - առ սովաւ Պրոմիթէս այր իմաստուն երևեցաւ: - 56.

ՊՕՂՈՍ - այլ աստուածայինն Պօղոս ճշմարտագոյնս զայսոսիկ յայտնէ ասելով՝,,ծանեան զԱստուած, և ոչ իբր զԱստուած փառաւորեցին կամ գոհացան. – 52. Դարձեալ նմին նման ասէ Պօղոս, զօրինացն ստորոգելով գրաւորութիւն, այսպէս ասելով, ,,մերձ է բան ի բերան քո և ի սրտի քում, այսինքն է /256/ բան հաւատոց զոր քարոզեմք,,. – 258. և Դաւիթ ասէ, ,,յոր հաւատացի զնոյն և խօսեցայ,,. և Պօղոս՝ ,,մեք հաւատամք զոր խօսիմքն,,. և դարձեալ Պօղոս՝ ,,եթէ խոստովանեսցիս բերանով քով զտէր Յիսուս, և հաւատասցես ի սրտի քում թէ Աստուած յարոյց …- 258. և Դաւիթ ասէ, ,,յոր հաւատացի զնոյն և խօսեցայ,,. և Պօղոս՝ ,,մեք հաւատամք զոր խօսիմքն,,. և դարձեալ Պօղոս՝ ,,եթէ խոստովանեսցիս բերանով քով զտէր Յիսուս, և հաւատասցես ի սրտի քում թէ Աստուած յարոյց … - 258. և զայն երիս ամս կերակրեալ լինէին սուրբքն ձեռնարուեստիւք իւրեանց, որպէս զնոյն ինքն զաստուածազարդն Պօղոս, թէ ,,զպէտս իմ և որ ընդ իսն էին՝ պաշտէին ձեռքս այս,,: - 252. Եւ մեք հետևեալ Աստուածաչունչ գրոց՝ պահեսցուք անբիծ զհաւատս սրտից, և մաքուր զխոստովանութիւն շրթանց, ըստ սրբոյն Պօղոսի վերաբերեալ զօրինականն – 258. ասաց, եթէ ,,վասն զի ոչ ընտրեցին զԱստուած ունել ի գիտութեան՝ մատնեաց զնոսա ի միտս անարգութեան գործել զանարժանս,,: - 374. զոր և Պօղոս հոգացաւ բացայայտել զ-Է աշտիճանեան մասունս ի Հոգւոյն սրբոյ աւանդեալ եկեղեցւոյ սրբոյ: - 398. որպէս ասէ Պօղոս առ Տիմոթէոս, ,,մի ամօթ համարիցիս զվկայութիւն Տեառն մերոյ,, - 260. Որպէս և Պօղոս ողբալով և սպառնալեօք ասէ. – 258. Որպէս Պօղոս ուսուցանէ. ,,արհամարհեալ ասէ, ուրուք զօրէնս Մովսէսի՝ մեռանէր, ի բերանոյ Բ կամ Գ վկայիւք. քանի սաստկագոյն համարիմք զայն, որ զորդին Աստուծոյ առ ոտն եհար,, , և որ ի կարգին է: - 380. որպէս Պօղոսի հաճոյ թուի ասել, թէ ,,զորս յառաջն ճանաչէր՝ յառաջագոյն հրաւիրեաց կերպարանակից լինել պատկերի որդւոյ իւրոյ,,: - 300. որպէս Պօղոսի հաճոյ թուի գրել

յառ Եբրայեցիս թղթին, թէ ,,չէ բաւական ժամանակս պատմելոյ,, վասն դատաւորացն Իսրայէլի և սրբոց մարգարէիցն – 302.

Ջ

Ջ/թիվ՝ ինն հարյուր/ - յայտնի և յանդիման կացուցանել զթիւ սպանելոցն ոչ առնուին յանձն, թէ Ջ այր միայն հզօր ձեռամբ յաղթեցին ԺԵ հազարացն. – 234.

ՋԱՄԱՍՊ - Յերկարեալ վտանգ նեղութեան Հայոց, որպէս ցուցանեն բազումք ի պատմագրաց, մինչ ի ժամանակս Ջամասպայ և Կաւատայ, մինչ ի Խոսրով արքայ: -134.

ՍԱԿԱԻՍ - անդ հասեալ քաջացն մերոց եղբարցն երեցունց ազատագունդ սակաւաձեռն գրոխիւ ի ձմեռնային ժամանակի, և ընդ լրթնատեսիլ լուսոյն վազս ի վերայ եղեալ՝ հանին ընդ սուր յոլովս քան թէ սակաւս: - 372. և զմնացեալ սակաւսն ի մէջ արարեալ շրջափակ տուեալ՝ կամէին զամենեսեան սատակել: - 150. Իսկ նոքա պատահեալ Պարսից ի գեօղն Երիզ կոչեցեալ, իբրև մրրիկ զփոշի պտուտեալ, իբրև հուր ընդ եղէգն ընթացեալ՝ սուր ի վերայ եղեալ վանեցին զբազումն քան եթէ զսակաւս – 136. պատշաճագոյն զպատերազմին խրոխտական բարձրավզութեամբ վանել զախոյեանսն, և առեալ զբանակն յաւարի, և ընդ սուր հանեալ յոլովս քան թէ սակաւս, հասին ի գոգ տեղի մի ի Մղունիս գեօղ: - 402. այլ և ինքն Մահմէտ, մոլեկան հոգւով շարժեցեալ՝ տայ գրել զանուղղայս, զոր մեք ի բազմաց զսակաւս յիշեսցուք: - 164. Եւ ելեալ իշխանաց իշխանն, որ բարձրագոյն և հանճարեղագոյնն էր քան զբնաւ Հայաստանեայցս և զընդհանուր կացեալս ի ներքոյ երկնից՝ եկն առ նա մեծաշուք պատուաղրութեամբ, և պարգևս և պատիւս ոչ սակաւս նմա յառաջաբերեաց. – 344. Եւ ժողովել զբնակիչս աշխարհին համօրէն զարս և զկանայս և զայլս յերկրէն Աղուանից բազմութիւն ռամիկ շինականաց, և լեգէոնս զօրականաց զսակաւս ի լեառնն ամուր անուանեալն Քթիշ, ըստ այնմ և համբարս ռոճկաց: - 278. և տուեալ պատերազմ զաւուրս ոչ սակաւս, որպէս թէ ամսօրեայ մի ժամանակ – 66. Եւ քանզի յոյժ անկասկածելի էր ամրոցն, և գանձս ոչ սակաւս մթերեալ ի նմա ի բազում ամաց – 346.

ՍԱԿՍ - Արդ որպէս յառաջագոյն ասացաք՝ սակս կարևոր յուզմանցն միապետեալ ի շարս կանոնաց, միայն յայտարարութիւնս առնել զազգացն Արծրունեաց – 96. Բայց հրաման քո ճոխութեանդ ձգեաց զիս յայս մեծ ձեռնարկութիւնս, սակս որոյ բացաձգեցայց արտաքոյ շաղակրատոյ լեզուաց փառամոլ ոգոց: - 122. Բայց մի ինձ մեղադիր լինիր, ո՛վ ուսումնասէր դու, սակս ոչ զբովանդակ սորա գործս շարել ի ճառս մանրապատումս: - 302. Դարձեալ վերստին հրճուանօք ոռոգեալ լինի պատմութեան աստ սակս բարձրագահ, համաթոռ, ճոխազգի ազգապետութեանն Արծրունեացս, /76/ մեծ զարմի Սենեքերիմայ ծննդոց. – 78. Զայս ոչ եթէ սակս ուրացութեան ինչ ամբաստան լինի զինքենէ, կամ վասն ժողովոցն, այլ զի ոչ յանդիմանեցին զթագաւորն, որ արտաքոյ օրինացն ամբարշտէր. – 258. զի մի յերկարաձգեալ զդեր հատուցական բանիս՝ յետնեալ գտցուք յառաջիկայ մեզ գրաւորութենէն, որ սակս պատմութեանցն են հանդէսք: - 260. Սաստիկ և վտանգաւորք և լի դառնութեամբ որ ինչ ի ճառի աստ են յիշատակարանք, սակս յանձնառութեան մեծ նախարարացն և իշխանացն մերոց. – 240.

ՍԱԿՐ - ձայն բարձեալ արտասուալից առ Դերենիկն, և զսուսեր մերկ ի ձեռին ունելով, և վաղր և սակր մի՝ ասէ. ,,որդեա՛կ իմ Դերենիկ, ողջոյն քեզ, ողջոյն քեզ, ողջոյն քեզ. ես ելի գնացի ի յաշխարհին Յունաց,,: - 320.

ՍԱԿՐԱԻՈՐ - և բազմութիւն զինուորաց վառելոց աստի և անտի, և վարոցաւորք և սակրաւորք այսր անդր քշել զամբոխն դառոթեալ. – 236. Եւ ետ նմա սուրհանդակս և մեկնակազէնս և սակրաւորս և կափաւորս - 218.

ՍԱՀԱԿ - որք մատուցեալ առ սուրբն Սահակ զեկուցանել նմա զոր ինչ խորհինն, և թևակոխէին առ Պարսից արքայն, զոր և արարին /116/ իսկ. – 118. /թագաւորեաց/ Յեզիտ ամս Զ … Սահակ Մահմետի որդի ամս Թ. - 168. անկեալ Աղան յերեսս առաջի սրբոյն Սահակայ և առաջի սպարապետին Սահակայ՝ ընդունել զսքեմ կրօնաւորութեան մոնազնութեան անապատասէր միայնական ստանալ իւր վարս: - 114. անկեալ Աղան յերեսս առաջի սրբոյն Սահակայ և առաջի սպարապետին Սահակայ՝ ընդունել զսքեմ կրօնաւորութեան մոնազնութեան անապատասէր միայնական ստանալ իւր վարս: - 114. Ապա իբրև վախճան առնոյր կարգեալ եպիսկոպոսացն որ ի Պարսից … միաբան ապա նախարարքն Հայոց եկին առ սուրբն Սահակ – 120. ապա համոզեալ Սահակայ և Սմբատայ այլովքն ևս՝ բարձին ի միջոյ զաղմուկն, և սէր բարեկամութեան ի մէջ երկոցունց հաստատեալ՝

գնացին յիւրաքանչիւր տեղիս: - 332. առնու զնա Սահակ կնութեան հրամանաւ Արտաշէսի, և կնքեալ աշխարհին հաստատէ Սահակայ ի սեպհական ժառանգութիւն. – 90. առնու զնա Սահակ կնութեան հրամանաւ Արտաշէսի, և կնքեալ աշխարհին հաստատէ Սահակայ ի սեպհական ժառանգութիւն. – 90. Եւ անմիաբանք լեալ ընկեցին զսուրբն Սահակ յաթոռոյ եպիսկոպոսապետութեանն և զԱրտաշիր ի պատուոյ թագաւորութեան. – 118. Եւ կոչեալ առ ինքն զեպիսկոպոսն Մոկաց զՅօհան և զեպիսկոպոսն Ռշտունեաց Սահակ և զեպիսկոպոսն Անձաւացեաց Շմաւոն – 122. Եւ այս ամենայն այսպէս եղեալ, կեցեալ սուրբն Սահակ ամս ճԻ՝ փոխի յաշխարհէս ի կարգս հրեշտակաց – 120. և առաջնորդ կացուցանէին իւրեանց զԱպուջափր Արծրունի, և ընդ նմա Սահակ Ապումկդէմ քեռորդի Ապուջափրի, այր քաջ և պատերազմող: - 304. Եւ առնու Ջաջուռ զդուստր Ենիանեայ կնութեան Սահակայ որդւոյ իւրոյ, որում անուն կոչէր Սմբատուհի: - 76. Եւ գունդն Հայոց խաղացին ընդդէմ նոցա … ի տանէն Արծրունեաց՝ Գուրգէն … և Գաղրիկքն՝ Ապուսելմ և Վասակ և Վահան. … և Ամատունիքն՝ Մուշեղ և Ասիթ և Սահակ. – 230. Եւ գունդն Հայոց խաղացին ընդդէմ նոցա … ի տանէն Արծրունեաց՝ Գուրգէն … և Վարաժնունիք՝ Մլեահ և Ռստոմ և Վարազշապուհ. … և Ընտրունիքն /ծն. Ընտունիք/՝ Գէորգ և Յիս՝ և Սահակաւն/ ծն. Սահկաւն/, … և Ակէացիք և Վասակ, և Վահևունիք՝ Քաբարակն/ծնՔաբարակաւն/ և Խրախատ – 230. Եւ գունդն Հայոց խաղացին ընդդէմ նոցա, վիմաձև անքակ ի միմեանց ըստ տոհմս ազգաց, ի տանէն Արծրունեաց՝ Գուրգէն և Վասակ և Պելճ և Մուշեղ և Սահակ և Ապումկդէմ և Աշոտ – 230. և գրէ առ Սահակ դառնալ առ Երուանդ. թերևս հնար լիցի խորհել ինչ վասն Երուանդայ: - 82. Եւ դարձեալ գումարեալ հեծեալս Ռ, զՍահակ Բագրատունի, զորդիս իշխանաց իշխանի զՄմբատ և զՇապուհ և զՄուշեղ Մոկաց իշխեցողք, և զԱրզնոյ զօրսն – 332. և ելեալ Աղան գնաց առ սուրբն Սահակ, և զէնընկեց եղեալ առաջի նորա՝ մերկանայր զհանդերձն զինաւորական - 112. Եւ եղև ի դառնալն սրբոյն Սահակայ ի Պարսից՝ եկն առ նա դարձեալ Աղան Արծրունի, և ընկալաւ ի նմանէ սքեմ կրօնաւորութեան. – 120. Եւ թագաւորեալ Վռամ որդի Յազկերտի՝ կոչէ ի դուռն զսուրբն Սահակ Հայոց կաթողիկոս: - 116. և ի խնդրոց նախարարացն և սրբոյն Սահակայ թագաւորեցուցանէ Հայոց Վռամ երկրորդ զԱրտաշէս, որ և Արտաշիր: - 116. Եւ լուեալ կնոջն Սահակայ, թէ ըմբռնեցաւ … փութացաւ գնաց եկաց առաջի Բուխայի, թերևս կարասցէ ըստ պատշաճ գեղոյն և ըստ բազմաձեռն գանձուց ապրեցուցանել զայրն իւր, որ առաւել մահու քան թէ կենաց պատճառ եղև նմա: - 272. և կացուցին հակառակաթոռ սրբոյն Սահակայ զՍորմակ մոլի, և ապա զԲքրիշոյ Ասորի, և ապա զՍամուէլ – 118. Եւ յերկարեալ Աղան զողբսն, ջերմեռանդն յորդահոս արտասուաց բղխմունս առաջի սրբոյն Սահակայ և մեծ սպարապետին Սահակայ և այլոց նախարարացն. – 112. Եւ յերկարեալ Աղան զողբսն, ջերմեռանդն յորդահոս արտասուաց բղխմունս առաջի սրբոյն Սահակայ և մեծ սպարապետին Սահակայ և այլոց նախարարացն. – 112. և Սահակայ յղեալ առ Սմբատ՝ մի կալ մնալ ի լերինն, այլ փութալ ելանել դառնալ անդրէն ի հետևի զօրս անդ զի ոչ ելանէ, ասէ, Երուանդ զօրու ի սահմանս Մարաց. – 84. Եւ Վռամ … փութացաւ կոչեաց դարձեալ ի դուռն զԱրտաշիր և զսուրբն Սահակ բազմութեամբ նախարարացն Հայոց. - 118. և տայր տանել Սահակ զպէտս մանկանն օր ըստ օրէ: - 84. Եւ քանզի յետ մահուանն մեծին Սահակայ Բագրատունոյ սպարապետի ասպետի և զօրավարի Հայոց, հաւատացեալ էր Թէոդոսի կայսեր զպարապետութիւնն Հայոց Համազասպ Մամիկոնէի և որդւոյ իւրում Վարդանայ – 122. Զայս զգացեալ Երուանդայ՝ ետ տանել զՍահակ կապանօք յԱրմաւիր. – 84. Զոր առ վայր մի ոչ առեալ յանձն սրբոյն Սահակայ՝ ասէ - 114. զոր ոչ առ յանձն սուրբն Սահակ գրել ինչ վասն որոյ չարաբանեն զԱրտաշրէ: - 118. զորոյ նախնեացն ջան և վաստակ յուշ արարեալ թագաւորին՝ Համամայ յառաջ մատուցեալ, ի գահ և ի բարձ հայրենեացն ձգել զնա՝ ժառանգեցուցանէ զերկիրն Աղբազ, որպէս Սահակայ նոյնպէս և Համամայ: - 90. Ըմբռնեալ լինէր յայնժամ մի ոմն ի Հայոց ազատանոյն տոհմից Վահևունեաց, Ապուսահակ ոմն, եղբայր Սահակայ եպիսկոպոսի ոստանին Նախճաւանու և

Մարդպետականի. – 204. Ընդ նոյն ժամանակս եկն Վահան Աշոտի որդի, հօրեղբօրորդի Սահակայ ի գերութենէն՝ նուաճել զաշխարհս, և գունդ կազմեալ ընդդէմ Գուրգինայ՝ և ինքն զպարտութիւն քան զյաղթութիւն յինքն կրէր: - 310. Իսկ ի հասանել սրբոյն Սահակայ ի դուռն հանդերձ նախարարօքն՝ զիջանէ ցածնու Վռամ ի բարկութենէ վրէժխնդրութեան Հայոց քինահարութեան անարգանաց Շապհոյ, և ընդ Յունաց զսերտ խաղաղութիւն ունելով.- 116. Իսկ նախարարացն ընդդիմաբանեալ սրբոյն Սահակայ՝ իբր ոչ զնոցայն հաստատել ախորժակս – 118. Իսկ Սահակ որդի Վաչէի խոյս տուեալ գնայ զկողմամբքն Մարաց, ընդ կողմն Ատրպատականի – 82. Իսկ Վարդան Մամիկոնեան, որդի Համազասպայ Մամիկոնէի, թոռն սրբոյն Սահակայ, խոյս տուեալ գնաց զկողմամբքն Մոկաց, ի խոխոմս Տաւրոսական լերինն, ի լեսուրս Ջերմաձորոյ – 122. Իսկ քաղաքապետն Սահակ ելեալ ընդ դուռնն, որ ելանէ ի բերդն Շամշղտայ, սամոյր զինքեամբ արկեալ և գաւազան ի ձեռն առեալ, յիմարեալ մտօք կորոյս զփախուստն իւր, որ կարող էր գնալ յով և կամիցի. – 272. խնդրեցին իւրեանց կաթողիկոս զսուրբն Սահակ: - 118. խորհելով վասն սպարապետին մեծին Սահակայ, որպէս ի նմանէ Խոսրով զանձնիշխանականն օրինադրեաց հրաման. – 112. Կինն Սահակայ որդւոյ Իսմայէլի, զորոյ զհանգամանսն ցուցաք, զմեռանելն Սահակայ և զկնոջն հրապարակագոյժ լինել, վասն որոյ պատճառանաց սպանանի այրն նորա. – 326. Կինն Սահակայ որդւոյ Իսմայէլի, զորոյ զհանգամանսն ցուցաք, զմեռանելն Սահակայ և զկնոջն հրապարակագոյժ լինել, վասն որոյ պատճառանաց սպանանի այրն նորա. – 326. համոզեաց ի մէջ երկոցունց և գլխաւորեաց զխաղաղութիւն /382/ առ նոսա, մինչ գալ Սահակայ եղբօր իշխանին Սիւնեաց, ընդ իւր բերելով զհարկսն: - 384. մատուցեալ առ Վռամ հանդերձ Սորմակաւ ումեմն Արծկեցւոյ մոլեգնոտ փառամոլ աբեղայի՝ սկսան ազգի ազգի լեզուագարութեամբ չարախօսել զսրբոյն Սահակայ – 118. Յետ բառնալոյ թագաւորութեանն ի տանէն Արշակունեաց, և հայրապետութեանն ի տանէն սրբոյն Գրիգորի՝ Ղևոնդ ոմն աշակերտ սրբոյն Մաշտոցի տեղապահ լինէր սրբոյն Սահակայ, և Յովսէփ եպիսկոպոս և Մովսէս և Մեղէս: - 120. Յետ բառնալոյ իշխանութեանն ի Վասպուրական երկրէն մնացին տոհմք Արծրունեաց ըստ ազգս ազգս … և Ապուջափր և Ապումքդէմ և Վասակ և միւս Վասակ և դարձեալ այլ Վասակ և Մուշեղ և Աշոտ և Սահակ , և այլք ի տանէն Արծրունեաց. և ազատք նոցա: - 298. նա և հաւատարմութիւն իւրեանց առեալ զթուղթսն սրբոյն Սահակայ առ կայսրն և առ հայրապետն – 118. Նա և մայր իշխանին Աշոտի, քոյր Սահակայ և Բագարատայ իշխանին Տարաւնոյ… երթեա՛լ ընծայիւք բազմօք յանդիման լինէր Յովսէփայն և խնդրէր զհաշտութիւն և զխաղաղութիւն հաստատել առ որդիսն իւր և առ բոլոր աշխարհն Վասպուրական: - 186. որ էր աշակերտ սրբոյն Սահակայ – 132. որ ի ժամանակին կալեալ էր զմարզպանութիւն և զզօրավարութիւն Հայոց ի խնդրոյ սրբոյն Սահակայ յերկուց թագաւորացն Յունաց և Պարսից – 116. ՈՐ ԻՆՉ ԳՈՐԾԵՑԱՒ ՅԵՐԿՐՈՐԴՈՒՄ ԱՄԻՆ ԳԱԼՍՏԵԱՆՆ ԲՈՒԽԱՅԻ, ՈՐՔ ԵՆ ՈԼՈՄԲԻԱԹՔ ՎԱՍՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ԸՆԴ ՍԱՀԱԿԱՅ ԻՄՄԱՅԵԼԱՑՈՑ,ՈՐ ԻՍՄԱՅԵԼԻ ՈՐԴԻ ՃԱՆԱՉԵՐ, ԵԻ ՎԱՍՆ ՊԱՇԱՐՄԱՆ ՔԱՂԱՔԻՆ: - 268. Սահակ որդի Վաչէի կացեալ ի դրան Արտաշէսի շքեղ և երևելի ճոխութեամբ – 90. Սահակայ առեալ ի պարգևի զաշխարհն՝ թողու զորդին զԱշոտ զլեառնակողմամբքն առաջին իւրեանց տէրութեանն՝ շինել, բնակել, ժառանգեցուցանել զերկիրն ի ժառանգութիւն իւրեանց ազգի ի զաւակ տանն Արծրունեաց: - 90. Սահակս այս այն Սահակ է, որոյ հրամանաւ գրեաց մեծ վարդապետն Մովսէս տիեզերահռչակեալ քերթողն զգիրս Պատմութեան Հայոց մեծաց, հրաշազան յօրինուածով, սկսեալ յԱդամայ մինչ ի կայսր Զենոն. – 122. Սահակս այս այն Սահակ է, որոյ հրամանաւ գրեաց մեծ վարդապետն Մովսէս տիեզերահռչակեալ քերթողն զգիրս Պատմութեան Հայոց մեծաց, հրաշազան յօրինուածով, սկսեալ յԱդամայ մինչ ի կայսր Զենոն. – 122. Փութանակի և վաղվաղակի իւրաքանչիւր զօրօք անդր հասանէին … և այլք ի նախարարացն Վասպուրական իշխանին, Սմբատ Ապահունի, Գրիգոր Քաջբերունի, Վահան Հաւնունի, սեպուհն Դաւիթ, Գազրիկն Ապուհարազ, Թոդորոս Վարազն, Խոսրով

Վահևունի, Խոսրով Ակէացի, Վարդան Գաբայեղէն, Սմբատ Մարացեան, սեպուհ մի Սահակ, Պատրիկն Անձևացի, Գորգ Հարմացի, Դաւիթ Գունդսաղար. – 174. քանզի յետ վախճանի Ասպուրակայ նստուցեալ էր Խոսրովու յաթոռ հայրապետութեան Հայոց զսուրբն Սահակ որդի սրբոյն Ներսէսի. – 112. Քանզի Վարդան անցեալ գնացեալ էր սուրբ վարդապետաւն Մաշտոցիւ առ կայսր Թէոդոս և առ Ատտիկոս արքեպիսկոպոս հանդերձ թղթովք սրբոյն Սահակայ, տանելով ընդ իւրեանց և զգիր և զբառ հայերէն դպրութեան. – 116.

ՍԱՀԱԿ ԱՊՈՒՄԿԴԷՄ - և առաջնորդ կացուցանէին իւրեանց զԱպուջափր Արծրունի, և ընդ նմա Սահակ Ապումկդէմ քեռորդի Ապուջափրի, այր քաջ և պատերազմող: - 304.

ՍԱՀԱԿ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ - Եւ դարձեալ գումարեալ հեծեալս Ռ, զՍահակ Բագրատունի, զորդիս իշխանաց իշխանի զՄբատ և զՇապուհ և զՄուշեղ Մոկաց իշխեցողք, և զԱրզնոյ զօրսն – 332. Եւ քանզի յետ մահուանն մեծին Սահակայ Բագրատունոյ սպարապետի ասպետի և զօրավարի Հայոց, հաւատացեալ էր Թէոդոսի կայսեր զսպարապետութիւնն Հայոց Համազասպ Մամիկոնէի և որդւոյ իւրում Վարդանայ – 122.

ՍԱՀԱԿ ԻՍՄԱՅԷԼԱՅԻ - ՈՐ ԻՆՉ ԳՈՐԾԵՑԱԻ ՅԵՐԿՐՈՐԴՈՒՄ ԱՄԻՆ ԳԱԼՍՏԵԱՆՆ ԲՈՒԽԱՅԻ, ՈՐՔ ԵՆ ՈՂՈՄԲԻԱԹՔ ՎԱՍՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ԸՆԴ ՍԱՀԱԿԱՅ ԻՍՄԱՅԷԼԱՅՈՅ,ՈՐ ԻՍՄԱՅԷԼԻ ՈՐԴԻ ՃԱՆԱՉԷՐ, ԵԻ ՎԱՍՆ ՊԱՇԱՐՄԱՆ ՔԱՂԱՔԻՆ: - 268.

ՍԱՀԱՆԱԲԱՑ - Զի թէ միոյ փայլատակման ընթացք և ճայթումն ամպոց բաւական է պակուցանել քաղել զուշեղութիւն ոգւոց, զի՞նչ ինչ յայնժամ կրէին ոգիք մնացելոցն յերկրի, ի սահանապաց և յանդնդաքակ վրդովմանցն հոսելոց, նախ քան զջրհեղեղ ջուրց սատակումնն: - 32.

ՍԱՀԱՆԱԽԱՂԱՑ - Ի սորա յերրորդ ամի թագաւորութեանն ի վերայ Հայոց աստուածատուր բարկութեամբ անդնդաշարժ վրդովմամբք ներքնագոյն խորոցն պատահեալ միմեանց սահանախաղաց դղրդմամբ, հիմնաշարժ տապալմամբ, /356/ ներքսագոյն երկրի թուլացեալ պնդափակ աղխեալ սանդարամետական սահմանին, բարկութեան հողմոց շնչեալ ընդ ջրոցն խաւարայնոց, ի կոհակս անդնդաքակս զթանձրայատակ երկրի զկարծր և զծանրալիր անկշիռ անբաւութիւնն տատանեալ, մինչ յերեսս երկրի ի վեր մղեալ հանդէպ քաղաքին Արտաշատու/ գրքում՝ Արտաշասու/, որ Բլուրն նորուն ասի – 358.

ՍԱՀԱՆՔ - Որով պատառեցան ամենայն աղբերք անդնդոց, և սահանք երկնից բացան անընդմիջաբար երկրի և երկնային ծովուն լինել, և համատարած ջրովն զրաւ առնել համօրէն ամենայն շնչաւոր կենդանեաց – 32.

ՍԱՀԻԼ - ,,ոչ միայն զի չես աստուած՝ այլ շուն ես դու, և երամակ շանց՝ որ զկնի քո տողեալ սահին,,: - 40. Պղպջաձիգ արտօսր իբրև յեռանդնոտ կատսայէ ի վեր յորձանախաղաց սահին. տարակուսանք անյուսալի շուրջ զինև պարագրին ի վերայ եղելոցն: - 350.

ՍԱՀԼ - որոց անուանք ճանաչի սոցա … Սահլ Սմբատայ որդի, Շաքեոյ տէր , որ զԲաբանն կալաւ, և իշխանական Վասակ Վայոց ձորոյ տէրն, և Փիլիպպէ իշխանն Սիւնեաց – 298.

ՍԱՀՄԱՆ - և արկանէին վիճակս և լարս ձգէին ի վերայ սահմանաց և բնակէին յամուրս աշխարհիս աներկիւղս. – 238. վասն որոյ և աստուածայնոցն առ Մովսէսիւ հրամայեալ՝ առնուլ վրէժխնդրութեամբ ազգացն Քանանացւոց զառ ի նահապետէն կարգեալ սահման. – 34. անհասական իմն շնորհիւ փառօք և պատուով պսակեալ զմարդն իշխանական ճոխութեամբ՝ վայելեցուցանէ դրախտին, տալով նմա բազմամեայ կենաց սահման իբրև զմի օր - 20. Բայց քանզի ընդարձակ էր պահն Հողցայ՝ փութանակի եկն եհաս Ժիրաք ի գաւառն Ռշտունեաց և զզօրսն առխթեալ ի ձորն Առուանից, ի սահմանս Մոկաց. – 202. բայց մինչ էաք յաշխարհին մեր՝ առաջնորդքն մեր ոչ ետուն տեղի ընդունել զասացեալսն ի սահմանին խոստովանութեան: - 132. դառնայ Երուանդ առ սահմանօքն Ատրպատականի ի ձորն Անձահից: - 84. Եւ առեալ զնոսա անցուցանէ յիւրաքանչիւր սահմանս բնակութեան, ինքնին զհետ նոցա ելանելով, որպէս Կիւրոս արքայ Պարսից զհետ դարձելոցն ի գերութենէն Բաբելոնի. – 218. Եւ դարձոյց անդ զսահմանս անդր

փոխելոյ գեօղիցն: - 396. և զայլ բազմութիւն զօրացն առեալ ընդ իւր՝ երթայ ընդ սահմանս Ապահունեաց – 202. Եւ զբնակիչս աշխարհին վարեաց ի գերութիւն, վաճառակուր առնել ի կողմանս Ասորոց և յամենայն սահմանս տէրութեանն Տաճկաց. – 188. Եւ զԶրադաշտ մոգ արքայ Բակտրիացւոց և Մեդաց ընկճեալ հալածեաց մինչև ի սահմանս Խեփտաղաց, հզօրապէս տիրեալ բովանդակ Խուժաստանի և կողմանց արևելից և Պարսից, անդր ևս քան զԲահխ և զԴեպուհան, ի Գովմայիդ և ի Գուզբան, ի Շերիբամական /գրքում՝ Շերիբամամական/ և ի Խոճիհրաստան, և միանգամայն ասել մինչև ի ծովն Հնդկաց՝ յոյժ արութեամբ – 44. և զմնացեալսն փախստականս արարեալ հետամուտ լինելով հանին ի սահմանացն Հայոց. – 136. Եւ զօրքն, որ ելեալ էին զհետ Գուրգինայ՝ եկին հասին ի սահմանս երկրին, ուր կայր Գուրգէն զօրօքն իւրովք – 226. և ինքն գնաց ի Միջագետս Ասորոց, զի կալեալ հաստատեսցէ ինքեան զքաղաքսն և զսահմանսն ամենայն, որ առ Խոսրովաւ և առ Մուրկաւ հաստատեալ էր: - 154. և կէսքն զհետ մտեալ փախստէիցն, մինչ թանձրացաւ մութ գիշերին՝ հանին ի սահմանացն Հայոց, էր որ ի կողմն Ելոյ և էր որ ի կողմն Ատրպատականի և Պարսից: - 232. Եւ ձեռագրեալ Մուշեղայ զամրոցաւն Նորաբերդ և շուրջ զսահմանսն՝ Դերանկին հաւատալ, և զայլ ևսն՝ որդւոյ իւրում ժառանգեցուցանել: - 324. Եւ յելանելն նորա և մօտ լինել ի սահմանս Հայոց զօրօք բազմօք, մերձ ի սահմանս Տարունոյ, Առաջին կոչեցեալ Հայոց՝ իշխան Տարունոյ Բագարատ … առաքէ զոմանս ի մեծամեծաց իւրոց ընդ առաջ նորա պատարագօք ոսկոյ և արծաթոյ և պատուական հանդերձից, համոզեալ մի ելանել յերկիրս Հայոց: - 170. Եւ յելանելն նորա և մօտ լինել ի սահմանս Հայոց զօրօք բազմօք, մերձ ի սահմանս Տարունոյ, Առաջին կոչեցեալ Հայոց՝ իշխան Տարունոյ Բագարատ … առաքէ զոմանս ի մեծամեծաց իւրոց ընդ առաջ նորա պատարագօք ոսկոյ և արծաթոյ և պատուական հանդերձից, համոզեալ մի ելանել յերկիրս Հայոց: - 170. ԵՒ ՊԱՐՏՈՒԹԻՒՆ ՍՄԲԱՏԱՅ ՅԱՀՄԱՏԱՅ Ի ՍԱՀՄԱՆՍ ԱՂՁՆԵԱՑ Ի ՎԵՐԱՅ ԳԵՏՈՅՆ ԹՈՒԽ ԿՈՉԵՑԵԱԼ, ՈՐ ԻՋԱՆԷ Ի ԾՈՎՆ ԲՋՆՈՒՆԵԱՑ: - 336. և Սահակայ յղեալ առ Սմբատ՝ մի կալ մնալ ի լերինն, այլ փութալ ելանել դառնալ անդրէն ի հետևի զօրս անդ զի ոչ ելանէ, ասէ, Երուանդ զօրու ի սահմանս Մարաց. – 84. Եւ վասն մնացելոցն որք ի քաղաքին և ի սահմանս նորա՝ ել հրաման յարքունուստ առնել ի վերայ նոցա ողորմութիւն, շինել զքաղաքն և հաստատել զամենեսին յիւրաքանչիւր կարգ: - 142. Եւ փախեաւ Յազկերտ յերեսաց /164/ նոցա և ոչ կարաց ճողոպրել. քանզի հասին զհետ նորա մերձ ի սահմանս Քուշանաց, և կոտորեցին զամենայն զօրս նորա. – 166. և փախստեայ գնացին զհետ մինչ ի սահմանս իւրեանց. – 308. Զնա յղէ Ապուսէթ ելանել յերկիրն Վասպուրական և անդէն մնալ զօրօք բազմօք, մինչև զբովանդակ զհարկս և զհասս արքունի յամենայն կողմանցն Հայոց առ նա բերցեն յիւրաքանչիւր սահմանաց: - 176. Զոր և Աղէքսանդրի Մակեդոնացւոյ ի դէպ ելանէ առ Ողբմպիադայ վիպագրութիւնք. թերևս ի մասն ինչ արտաքոյ սահմանաց դրախտին հասանել. – 50. զոր կալեալ էր Սանատրկոյ յարքունիս, զլեառնն Սիմ և զԱղձնիս մինչ ի սահմանս Ասորեստանի: - 86. զոր վերագոյնն յիշեցաք յայլում վայրի ի մեծ պատերազմին ի սահմանս Աղձնեաց: - 400. Ի նմին ժամու զգացեալ վասն նորա մեծ իշխանին Արծրունեաց Մերշապհոյ, որ յայնժամ ի Տմորեացն ամրանայր բերդի՝ յղէ առ նա ելանել գնալ ի սահմանացն յայնոցիկ. – 130. Ի սորա յերրորդ ամի թագաւորութեանն ի վերայ Հայոց աստուածատուր բարկութեամբ անդնդաշարժ վրդովմամբք ներքնագոյն խորոցն պատահեալ միմեանց սահանախաղաց դղրդմամբ, հիմնաշարժ տապալմամբ, /356/ ներքսագոյն երկրի թուլացեալ պնդափակ աղխեալ սանդարամետական սահմանին, բարկութեան հողմոց շնչեալ ընդ ջրոցն խաւարայնոց, ի կոհակս անդնդաքակս զթանձրայատակ երկրի զկարծր և զծանրալիր անկշիռ անբաւութիւնն տատանեալ, մինչ յերեսս երկրի ի վեր մղեալ հանդէպ քաղաքին Արտաշատու /գրքում՝ Արտաշասու/, որ Բլուրն նորուն ասի – 358. իսկ և իսկ եհաս գուժկան անկելոցն ի պատերազմին ի պարսկական քաղաքն և յԱտրպատական սահմանսն. – 398. իսկ թագաւորն հրաման ետ՝ երթալ գնալ ի սահմանաց իւրոց. – 156. Իսկ իբրև եհաս Բուխայ զօրօք բազմօք մերձ ի սահմանս նոցա, և գրեաց հրովարտակս

դիմօք խաղաղութեան՝ դառնալ սիրով միաբանութեան ի հնազանդութիւն արքային – 274. Իսկ սահմանք վայրիցն ահաւորք և զգալիք միանգամայն և արտաքոյ զգալեաց. – 52. Կապէ երկաթի կապանօք և տայ տանել յԱնուշ կոչեցեալ բերդն ի սահմանս Տիսպոնի. – 102. Հաւաստիս այս մեզ Եւսեբիոս Կեսարացի, Յուլիանոս Աղիկառնացի՝ ստուգաբանեն զթագաւորս Ասորոց ի զաւակէ Սեմայ զաճմունս առնել, որպէս ի կանոնեալ սահմանէն իմանալ: - 14. հնազանդեցուցին և զամենայն բնակիչս սահմանացն մերձակայից, և զապստամբսն միահաղոյն բարձին սրով: - 160. ձեզ տուեալ լիցի թագաւորութիւն Հայոց … և յԱսիւրոց կողմանէ զԱսորեստան և զՄծուին և զՆուշիրական մինչև ցսահմանս Տաճկաց – 138. Յայնժամ թագաւորն դեսպանս արարեալ յամենայն սահմանս տէրութեան Հայոց, Վրաց և Աղուանից, և առ քաղաքացիսն և հազարապետս և գաւառակալս, և որք սիրողաբար առ նա զինազանդութեանն հարկ հարկանէին: - 366. Յայնժամ հրովարտակս արարեալ, պնդադեսպանս արձակեալ ընդ ամենայն սահմանս իւրոյ տէրութեանն – 198. Յայնժամ հրովարտակս արարեալ, պնդադեսպանս արձակեալ ընդ ամենայն սահմանս իւրոյ տէրութեանն … և մերձ ի սահմանս Սակաստանի՝ առ զօրս և զօրագլուխս, աշխարհակալս, գաւառապետս քաղաքայինս, հազարապետս կողմնակալս մեծամեծս աշխարհաց. – 198. որ տիրէր յայնժամ Արզնայ և ներքոյ կողմանն Աղձնեաց մերձ ի սահմանս Տարունոյ: - 172. որ կոչի Մեծրայիմ, այսինքն Եգիպտոս, վասն ժառանգութեան սահմանաց Եգիպտոսի. –42. Որգունակ հնչումն տաշելոյ փայտիցն առ Նոյիւ ազդեցութեամբ հիւսնական գործեացն՝ զհեղեղածուփ անդնդաձիգ սահանացն երկնահոս զուգաճանապարհորդութեանն յապրուստ հաւատարիմ առնն յԱստուած յուսացեալ համամիտ ընտանեացն գործակցութեամբ: - 396. տեսանեն զկողմանս արևելից, դաշտ յոյժ մեծանիստ, լայնատարած, հարթայատակ, անվայրափակ առ ի սահման, անբաւական ի տեսութիւն աչաց, սաստիկ լուսով զարդարեալ ի գիշերի, բազմակերպ երևմամբ – 48. Քանզի խառն դրակցութեամբ սահմանին առ միմեանս Փոքր Աղբագ և աշխարհն Կորճէից և Պարսկահայոց՝ և հանապազ առ միմեանս զգժտութիւն կեղծաբերէին, մարզպանն և որ զԿորճէիցն ունէին զգործավարութիւն. – 400. և քեզ եթէ հաճոյ թուիցի ապրեցուցանել զքեզ և զզօրս քո՝ արի ել աստի և գնա ի սահմանաց իմոց: - 278.

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ - զի թէպէտ դառնալով դարձան յայտնապէս յերկրպագութիւնն Քրիստոսի Աստուծոյ մերոյ՝ այլ զկանոնական սահմանադրութիւնսն ոչ բերելով ուղղակի, ոչ միայն Աշոտ, այլ և ամենայն իշխանքն Հայոց, որք գերադարձքն եղեն. – 336. սակայն կանոնական սահմանադրութեանն արտաքոյ մնացեալ, գայթ ի գայթս զքրիստոնէութեանն վարս բերելով անառակութեամբք և արբեցութեամբ, խառն անկողնօք և պղծութեամբք աղտապիղծ սարսափելի և գարշելի խառնակութեամբ արուապղծութեամբք – 336. վասն զի ըստ Պտղոմեայ և Աղէքսանդրի սահմանադրութեանն, կամ թէ մեր Արտաշէսի որդւոյ Սանատրկոյ՝ ի Վասպուրական գաւառացն համար թուեալ է գաւառն այն – 332.

ՍԱՀՄԱՆԱԻՈՐ - զի ոչ եթէ ըստ հասարակաց սահմանաւորք մահու է, այլ ի վերայ սուրբ եկեղեցւոյ և ժողովրդեան Աստուծոյ,,: - 276.

ՍԱՀՄԱՆԵԼ - և անդ կեցեալ և մեռեալ անձամբ զիւրովի երթեալ, ըստ սահմանելոյ ի վերայ նորա բանի առնն Աստուծոյ սրբոյն Ներսէսի: - 102. որպէս սահմանեաց Աստուած ի վերայ ժողովրդեանն Իսրայէլի գերելոցն ի Բաբելոն, որպէս գրեալ է ի մարգարէութեանն Երեմիայի, ,,զ-ՀԷ-երորդն ասէ գիտասցես, և խելամուտ լիցիս յելից բանին տալ պատասխանի. մինչև յօծեալն /312/ առաջնորդ եօթներորդ Է և եօթներորդք կԲ,,. – 314.

ՍԱՂԱԹԻԷԼ - և անդ մարգարէն Եզր և թագաւորն Սաղաթիէլ վախճանեալ թաղի ի Մարբակատինա ի բլրակի մի տեղւոջ. – 66.

ՍԱՂԱՅ - մի միայն մնացեալ զիւրականն պահելով լեզու. որ Եբրայեցւոցն ասի նահապետ Եբեր որդի Սաղայի - 40.

ՍԱՂԱՎԱՐՏ Տե՛ս ՍԱՂԱՒԱՐՏ

ՍԱՂԱՐ - Տեղեկանայր … և քանի՛ սաղարք սուրհանդակաց իցեն: - 198. Բայց երկու ոմանք ի սաղարաց սուրհանդակաց, եղբարք միմեանց, հասեալ ի կիրճս ձորոյն – 202. Տեղեկանայր … և կամ քանի՛ սաղարք միայնամարտիկք ախոյեանք իցեն – 198. քաջքն խիզախէին, /208/ սաղարքն կանչէին, նահատակքն գոչէին – 210.

ՍԱՂԱՒԱՐՏ - և մօտ եղեալ մերկեաց զսուսերն և զսաղավարտն և զզրահսն, զոր արկեալ էր զանձամբ – 228. և էր գրեալ ի նմա թողութիւն վնասուցն և հարուածոցն զօրացն և բազում աւարացն, և երդումն ի հաստատութիւն ասացելոցն, և պարգևս ի պատուական և մեծագնի հանդերձից, և սաղաւարտ ծաղկեայ և սուսեր. – 288. և սաղաւարտ ի գլուխ եդեալ – 208.

ՍԱՂՄԱՆ - Եւ վախճանեալ միայնակեցին՝ կամեցաւ կատարել զպատուէր նորա Սաղմանի: - 162. էր և նորա աշակերտ մի, որում անուն էր Սաղման. որ ի ժամ մահու միայնակեցին՝ պատուիրէր նմա և ասէր – 162. Իսկ Սաղման յանձն առ գրել նմա. և գրէր գիրս յօդուածոյս, էր ինչ որ ի ստոյգ յիշողութենէ, և էր ինչ որ կարծողական բանք. – 164.

ՍԱՂՄԱՆԱՍԱՐ - Արդ են թագաւորք Ասորեստանեայց ի միւսմէ կողմանէն այսոքիկ … Փուա ամս ԺԲ … Սաղմանասար ամս ԺԵ: - 62. Յետ նորա թագաւորեաց Սաղմանասար. – 60.

ՍԱՂՄՈՍ - Եւ գիտեն զսաղմոսսն զհին թարգմանեալսն վարդապետացն Հայոց, զոր հանապազ ի բերան ունին: - 192. և ի միտ առեալ էր զսաղմոսն, զոր ասացեալ էր երանելին: - 206. և ինքն ամբարձ զձեռս իւր յերկինս, յորդառատ արտասուօք եկաց յաղօթս, ասելով զերեսուն և չորրորդ սաղմոսն և զութսուն երկու – 230. և նմին հատուցումն ի կարգի որ ասէ, ,,կացո ի վերայ նոցա մեղաւոր, սատանայ կացցէ ընդ աջմէ նորա,, , և որ ինչ ի կարգ սաղմոսիդ է: - 214. և ոչ ոք կարէր երգել զօրհնութիւն սաղմոսացն և կամ լսել ի գթալից արտասուաց ժողովրդեանն միանգամայն և յայնչափ խնդութենէն: - 154.

ՍԱՂՄՈՍԵԼ - Եւ սաղմոսէին միաբան՝ ,,վասն քո մեռանիմք զօրհանապազ. համարեցաք որպէս զոչխար ի սպանումն,,: - 250.

ՍԱՂՄՈՍԵՐԳՈՒԹԻՒՆ - Իբրև գիտացին սուրբքն զանհուն պատերազմ չարին՝ վառեալ և նոքա զինքեանս հանապազակռիւ լինել ի ճակատուն, անխափան սաղմոսերգութեամբ զանուշահոտ աղօթս իւրեանց միշտ ի բարձունս առաքելով – 250.

ՍԱՄԱՄ - Յայնմ ժամանակի էին եղբարք բռնակալք ոմանք ի կողմանս ապառաժ Արաբիոյ ի տեղւոջն Փառան որ այժմ կոչի Մաքայ, արք պատերազմողք /156/ զօրագլուխք, պաշտօնատարք մեհենին Ամովնացւոց պատկերին, որ կոչի Սամամ և Քաբար: - 158. կործանեցին և զպատկերսն Սամամայ, որ ի բագնին այնորիկ. – 160.

ՍԱՄԱՌԱՅ - Բայց Վասակս այս … վասն ազգակից գոլ նոցա ընդ տոհմին Արծրունեաց… ել գնաց իւրովք կամօք ի Սամառայ և եղև աստուածուրաց – 248. եդին զոտս նոցա ի կապանս երկաթիս և բարձին ուղտուց և խաղացուցին ի Սամառայ. – 296. և եդեալ ի վերայ ուղտուց խաղացուցին ի Սամառայ – 238. և զիշխանն Աշոտ և զորդի նորա Գրիգոր և զՎահան Արծրունի և զորդի նորա Գագիկ … և զՄուշեղ եղբայր Վահանայ և զտիկնայս նոցա և զտիկինն Հրանուշ և զայլս յազատատանէ կապեալ և բարձեալ ի վերայ ուղտուց՝ վտարեաց ի Սամառայ – 220. և էր նա իշխան Տարաւնոյ, բարձեալ եղև ի Սամառայ և եղև աստուածուրաց – 248. Եւ յետ աւուրց ինչ դարձեալ դառնայ Վահան ի Սամառայ, զեկուցանել Աշոտի որ ինչ գործեցաւն: - 310. Եւ նորա ըմբռնեալ զնա և զամենայն ազգատոհմն նորա ի տանէ Բագրատունեաց և կապեալ երկաթեղէն կապանօք՝ խաղացոյց ի Սամառայ: - 186. Նորա դարձեալ դառնայ ի Սամառայ և ծանուցանէ արքայի զոր ինչ գործեաց, և թէ զիա՛րդ են առ միմեանս միաբանութեամբ իշխանք Հայոց: - 172.

ՍԱՄԱՐԱՅԻ - Սիմոն Սամարացի մատուցեալ առ Փիլիպպոս զհոգւոյն պարգևաց լեզուացն, և սրտին կեղծաւորութեամբ զիա՞րդ պատժապարտեցաւ. – 258.

ՍԱՄԱՐԻԱ - և բռնութեամբ Մարապարսացւոցն ոչ կարացեալ ընդդիմանալ՝ ի կողմանս Պաղեստինացւոց եկեալ պատերազմաւ պաշարեն զՍամարիա – 60.

ՍԱՄՈԳԷՍ - Արդ են թագաւորք Ասորեստանեայց ի միւսմէ կողմանէն այսոքիկ … Փուա ամս ԺԲ … Սամոգէս ամս ԻԱ: - 62.

ՍԱՄՈՅՐ - Իսկ քաղաքապետն Սահակ ելեալ ընդ դուռնն, որ ելանէ ի բերդն Շամշղտայ, սամոյր զինքեամբ արկեալ և գաւազան ի ձեռն առեալ, յիմարեալ մտօք կորոյս զփախուստն իւր, որ կարող էր գնալ յով և կամիցի. – 272.

ՍԱՄՈՒԷԼ - գնացին առ Արկադ … Սամուէլ Մամիկոնեան … և Վասակ Արծրունի: - 110. և կացուցին հակառակաթոռ սրբոյն Սահակայ զՍորմակ մոլի, և ապա զԲքրիշոյ Ասորի, և ապա զՍամուէլ – 118. իբրև հարուստ մի մեկնեցան ի գնդէն Պարսից՝ ամբարձեալ Սամուէլ զմիողնին՝ ազդոյ վէրս ի վերայ եդեալ առ ժամայն եհատ զնա ի կենաց. – 106. Կարծելով Վահանայ խոնարհել զորդին իւր յանկանգնելի կործանումն, զոր մեկուսեալ Սամուէլի զհայր իւր Վահան, իբր այն թէ խորհիցին ինչ վասն որոյ եկեալն էին – 106. մանաւանդ զի բարեպաշտութիւն մեծ համարիմ սատակել զթշնամիսդ Աստուծոյ, որպէս Մովսէս զԱմաղէկ, և Յեսու զՔանանացիսն, և Սամուէլ զԱգագ, և Դաւիթ զԳողիաթ, և համանգամայն իսկ որպէս սատակեցին Իսրայէլացիքն զայլազգիսն – 278. նորա զՍամուէլն զայն կացուցանէ ի տեղի եպիսկոպոսապետութեանն Հայոց – 118. Պատմեաց զայս մեզ մեծ քահանայն Սամուէլ յաւանին Արտամետ. – 206. Քանզի Սամուէլ որդի Վահանայ գնաց ընդ առաջ հօր իւրոյ: - 106.

ՍԱՄՈՒԷԼ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ - գնացին առ Արկադ … Սամուէլ Մամիկոնեան … և Վասակ Արծրունի: - 110.

ՍԱՄՓՍՈՆ - և Սամփսոնի եղեն իրքն առ սովաւ: - 58.

ՍԱՅԼ - հարուստ մի հեռի զքարանցն տաշելոյ զհոլովումն բերելով առ տրամադրութիւն կոչարանին իբրև ասպարիսօք երիւք, զբացագոյնն մօտագոյնս գործելով սայլիցն հոլովմամբ. – 396. որ ի բախմանէ քարի և երկաթոյ կայծակունք արտաթափին, այլ և ի փայտից ընդ միմեանս յիրար շփելոյ, որպէս և անուոյ բնաւորեցաւ լինել, որ ի սաստիկ շրջագայութենէ սայլիցն բազում անգամ և առեղք փայտիցն վառմամբ հրոյ հրդեհին: - 52.

ՍԱՆԱՍԱՐ - Երկրորդ վասն բնակութեան նախնեացն նորա Ադրամելեայ և Սանասարայ Արզն՝ կոչեցին Արզրունիք: - 72. և նենգ գործեալ նմա, վասն նախանձու թագաւորեցելոյ Ասորդանի/ճիշտը՝Ասորդանիս/, երկու ևս որդիք նորա Ադրամելէք և Սանասար՝ սպանին զնա սրով, որ թագաւորեաց ամս ԺԸ – 60. Զայս իմացեալ խորհրդականութիւն Քսերքսէս յԱդրամելեայ և Սանասարայ յորդւոցն Սենեքերիմայ՝ ապա գան առ Տիգրան Հայոց թագաւոր և զեկուցանեն նմա վասն որոյ խորհի Աշդահակ. – 62. Որ ապա յետ սպանմանն Սենեքերիմայ յորդւոց իւրոց՝ բուռն զնդաւ Ադրամելէք և Սանասար գան մտանեն ի լեառն Սիմ - 16. Սոքա են գոեահք Ասորոց, որ չուեցին զկնի Ադրամելեքայ և Սանասարայ որդւոց Սենեքերիմ արքայի՝ թագաւորի Ասորեստանի և Նինուէի, յորոց անուն ինքեանք Սանասնայք զինքեանս անուանեն. – 192.

ՍԱՆԱՍԱՐԵԱՆՔ - Իսկ սերունդք Ասուդայ Սանասարեանց կային յոր պէտս և դիպուածն պատահէր, երբեմն այսպէս և երբեմն այնպէս. Շաւարշ. Գօգեան. Շաւասպ. Պերոզ. Շահակ. Կիւրոս: - 72. Յայնժամ առեալ հրովարտակ Սանասարեանց ի Տիգրանայ պատարագօք գնացին առ Կիւրոս. – 64.

ՍԱՆԱՍՆԱՅՔ - Սոքա են գոեահք Ասորոց, որ չուեցին զկնի Ադրամելեքայ և Սանասարայ որդւոց Սենեքերիմ արքայի՝ թագաւորի Ասորեստանի և Նինուէի, յորոց անուն ինքեանք Սանասնայք զինքեանս անուանեն. – 192.

ՍԱՆԱՏՐՈՒԿ - ասէ՝ զի դայեկաբար զորդիսն Սանատրկայ սնուցանէաք, և դու ի թագաւորելդ քոյ որոյ երդմունս արարեալ յԱրտեմի և յԱրամազդ անկասկած կալ մնալ վասն որոյ երկիւղն ունէր: - 82. և թագաւորեցուցանէ զնա ի վերայ Հայոց փոխանակ հօր իւրոյ Սանատրկայ, ի տեղի թագաւորութեան քաջացն Արշակունեաց: - 86. Եւ ինքն Խուրան առեալ զմեծ մասն զօրուն գնաց ի Շաւարշան ի Սանատրուկ. – 80. և կացին մնացեալ անդր մինչև ի դարձն Արտաշէսի որդւոյ Սանատրկայ, որ եկեալ այսր թագաւորեաց, սպանեալ զԵրուանդ: - 82. զոր կալեալ էր Սանատրկայ յարքունիս, զլեառնն Սիմ և զԱղձնիս մինչ ի սահմանս Ասորեստանի: - 86. Իսկ Խուրան լուեալ վասն տիկնոջն Հայոց Հեղինէի կնոջ Աբգարու, թէ ոչ ախորժեաց կալ ի Միջագետս վասն ամբարշտին

Սանատրկոյ – 80. Իսկ Խուրան ոչ կացեալ առ Սանատրկոյ գնաց յերկիրն Յունաց, առ Կեսար Տիբերիոս – 80. որ ապա ի /80/գնալն տիկնոջն յԵռւսաղէմ՝ Վաչէ և Արշաւիր երկեան երթալ առ Սանատրուկ – 82. վասն զի ըստ Պտղոմեայ և Աղէքսանդրի սահմանադրութեանն, կամ թէ մեր Արտաշէսի որդւոյ Սանատրկոյ՝ ի Վասպուրական գաւառացն համար թուեալ է գաւառն այն – 332.

ՍԱՆԴԱՐԱՄԵՏԱԿԱՆ - Ի սորա յերրորդ ամի թագաւորութեանն ի վերայ Հայոց աստուածատուր բարկութեամբ անդնդաշարժ վրդովմամբք ներքնագոյն խորոցն պատահեալ միմեանց սահանախաղաց դղրդմամբ, հիմնաշարժ տապալմամբ, /356/ ներքսագոյն երկրի թուլացեալ պնդափակ աղխեալ սանդարամետական սահմանին, բարկութեան հողմոց շնչեալ ընդ ջրոցն խաւարայնոց, ի կոհակս անդնդաքակս զթանձրայատակ երկրի զկարծր և զծանրալիր անկշիռ անբաւութիւնն տատանեալ, մինչ յերեսս երկրի ի վեր մղեալ հանդէպ քաղաքին Արտաշատու/ գրքում՝ Արտաշասու/, որ Բլուրն նորուն ասի – 358.

ՍԱՊԷՍ - Սապէս և Գուրգէն կատարելագործեալ ի բարձրաւանդակ ի սարաւանդակ տեղւոջն բարեձևագունի վայելչացուցեալ զհրաշակերտ յաջմէ և յահեկէ սեղանոյն երկուս ևս եկեղեցեօք: - 396.

ՍԱՌՆԱՄԱՆԻՔ - զի ինքն երթիցէ յարքունիս կեղծոտելով զսաստկութիւն ձմեռնային ժամանակին ի վերայ եղելոյ և զխստութիւն հիւսիսային օդոյն սառնամանեաց, անընդել զինքն այնոցիկ վարկանելով: - 186. Իսկ ի շնչել հարաւային օդոյն, եռացուցանելով երկրի ի վեր զջերմային զօրութիւնն, զուարթացուցանելով անդնդական բերմամբն զընդարմացեալ արմատս և զբոյսս ի հիւսիսային սառնամանեաց օդոյն շնչելոյ - 188. Յորժամ անդնդական խորքն ազդ առնիցեն ներքին բնական կենդանեացն զհասանել ջերմութեանն, յորում ջեռացեալ ի հիւսիսային սառնամանեաց օդոյն շնչելոյ, ի խորսն զխաղացումն արարեալ լինին - 260.

ՍԱՍԱՆ - զոր սպան Ստախրացին Արտաշիր որդի Սասանայ – 166.

ՍԱՍԱՆԱԿԱՆ - յեղակարծում ժամանակի հասանէ համբաւ մահուն Արտաւանայ, և տիրել Պարսից Ստահրացւոյն Արտաշրդի Սասանականի. – 92.

ՍԱՍԱՆԱԿԱՆ ԱԶԳ - Եւ այլք յաւագ նախարարացն գնացին ամենայն պնդակազմ սպառազինութեամբ ի Պարսս՝ հնազանդել ընդ ձեռամբ հեթանոսական և բարբարիկոն ազգին Սասանականին. – 110.

ՍԱՍԱՆԱԿԱՆ ՏՈՒՆ - ԵԹԷ Ո՞ՐՊԷՍ ԵՂԵՒ ԲԱՐՁՈՒՄՆ ՉԱՐ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆՆ ՊԱՐՍԻՑ ՏԱՆՆ ՍԱՍԱՆԱԿԱՆ: - 136.

ՍԱՍԱՆԱՅ ԱԶԳ - Եւ յայնմհետէ բարձաւ տէրութիւնն Պարսից և ազգին Սասանայ, որ տևեաց ամս ՇԽԲ: - 166.

ՍԱՍԱՆԱՅ ՏՈՒՆ - Յամի ութերորդի Մուրկայ թագաւորի, թագաւորն Պարսից Որմզդ որ ի տգանէ Սասանայ՝ սպանաւ յիւրոց հաւատարմաց – 136. ո՞չ ապաքէն տղունդ Սասանայ երբարձ զերկիր ձեր և զտէրութիւնդ, և դուք դիմեալ գայք ի վերայ իմ: - 138. ,,Ես այսպէս կարծէի, թէ յորժամ ես ընդ թշնամիս ձեր մարտնչիմ՝ դուք յայդմ կողմանէ օգնական ինձ լինիցիք, և միաբանութեամբ բարձցուք ի միջոյ զտիեզերական պատուհասն, զտղունդ Սասանայ: - 138.

ՍԱՍԱՆԵԱԼ - և իբրև հողմ զպրակս եղեգան տատանեալ՝ սասանեալ խռովեցուցին զբազմութիւն զօրացն: - 368.

ՍԱՍԱՆՈՒՄՆ - ո՞վ ահեղական ձայնիցն և սասանման հաստատութեան երկնի և երկրի: - 32.

ՍԱՍՏ - եօ՞թն արդեօք իցեն մեղանացն պարտիք, եթէ ըստ յաւելուածոյ սաստից իմասցին ասացեալքն Աստուծոյ – 24. ի սաստ մատուցեալ գնդին իւրոյ պատերազմողացն՝ և ոչ կարաց զբորբոքեալ հնոց դէզադէզ կոխակացն սրախողխող սատակմանն ցածուցանել: - 368.

ՍԱՍՏԻԿ - ,,որչափ սաստիկ պատժոց արժանի համարիցիք զայն, որ զՈրդին Աստուծոյ առ ոտն եհար և զարիւն նորոյ ուխտին խառնակ համարեցաւ և զՀոգին շնորհաց թշնամանեաց,,: - 258. այլ դարձուցին անդրէն զպատգամաւորսն անարգանօք, արբուցեալ նոցա գան սաստիկ – 274. Այլ և սաստիկ հարուածովք սատակեսցէ զքեզ: - 164. այս այն Աբղլայն է, զոր ազգ իւր ասացին Աբղլանգէ, այսինքն ծառայ դանգի և ոչ Աստուծոյ, վասն սաստիկ զօշութեանն և անյագ ագահութեանն: - 168. անկեղծաւոր և աննենգ տիրասիրութեամբ ցուցանել հնազանդութիւն հպատակութեամբ, մինչ յարիւն և յապաժոյժ նահատակութեամբ առնուլ վրէժս ի Պարսկացն հինից՝ զաւեր եկեղեցեացն Հայաստանի և զնեղութեանցն և զգերփանացն և զսաստիկ արիւնահեղութեանցն զքրիստոնէից և զուխտի մանկանց եկեղեցւոյ սրբոյ: - 134. դառնալ անդրէն ոչ կամէին, զի կարի սաստիկ ամօթս համարէր զգործեցեալսն, կալ տնել ժուժկալել ընդդէմ նոցա ոչ կամէին, զի բազում անկան ի զօրաց իւրեանց: - 276. դարձեալ յետ փոքր ինչ աւուրց անցանելոյ՝ և խռնեցաւ միւս անգամ պատերազմն, և և՛ս սաստիկ հարան զօրքն արքունի. – 276. և ի սաստիկ սովոյն ելեալ Որմզդի յածէր ընդ վայրս ի խնդիր կերակրոց. – 46. Եւ նա գնաց ընդդէմ նոցա սաստիկ զօրութեամբ. – 150. և քարոզքն բարձրացուցանէին զերգսն մեծ և սաստիկ գոչմամբ, եթէ տուաւ իշխանութիւն Վասպուրական աշխարհին Աշոտոյ և որդւոյ իւրոյ Գրիգորի. – 314. Եւ այնչափ և առաւել քան զսոյն կազմութեան սպառազէն պատրաստութեանն՝ սաստիկ տարակուսանօք և մեծ երկիւղիւ պակչէին յահէ հայկասիրտ իշխանին և յաղթող նահատակին մեր Աշոտոյ – 210. և այնչափ սաստիկ լինէր կոտորածն՝ մինչ զի սաստկութիւն վտակաց արեանն խաղացեալ ոռոգանէր զերկիրն ամենայն: - 140. Եւ առեալ զգանձսն՝ հրամայեաց սպանանել զընձայաբերսն, և բանիցն Հայրակղի ոչ արար պատասխանի, այլ առնէր վնասս սաստիկս ի կողմանս կողմանս, աւարառութիւն և գերութիւն և սուր. – 142. և բազում այն են որ ի նմին իսկ սատակին. և կէսքն դիւրըմբռնելի որսորդաց լինին. և ապրեալքն սաստիկս հասուցանեն վտանգս ուր և դիպիցին, եթէ մարդկան և եթէ այլոց ինչ կենդանեաց: - 188. և գրեթէ /գրքում՝ գրէթէ/ ոչ ամենևին ուրեք երևեցաւ այնպիսի ահաւոր տեսիլ զօրու և սպառազէն կազմութեան՝ ամենայն թագաւորաց, որ կացեալ էին ընդ ծագս տիեզերաց. զորոյ սաստիկ և ահագին որոտումնն և ճայթումնն և փայլիւն զինուցն, և որ ինչ յայնժամ զարդարեալ և զինեալ պատրաստեցան զօրքն Տաճկաց: - 284. Եւ ելեալ գնաց զհետ կոչնականացն ի գութ հարազատութեան, և ի կարծիս սաստիկ հիւանդութեան, թէ մերձ ի մահ անկեալ դնիցի, ըստ ստուգելոյ կոչնականացն: - 348. Եւ եղև պատերազմ և նաւամարտութիւն սաստիկ ի մէջ ծովուն: - 146. Եւ զոր օրինակ զնա վիշապ առակեցաք յաղագս սաստիկ ուժոյ զօրութեան ձեռին նորա – 262. Եւ էր պատերազմ սաստիկ ի մէջ Ալեայ Որդւոյ Ապուտալպի և Մաւեայ ամս Ե և ամիսս Գ: - 166. և թագաւորեալ ի Բաբելոնի սաստիկ զօրութեամբ – 40. Եւ ժողովեալ զբազմութիւն զօրաց իւրոց՝ առնէր վնասս մեծամեծս և սաստիկս ի բաժնին Յունաց: - 140. Եւ ի սաստիկ բախմանէ խուռն նիզակացն և ի զինուց փայլելոյ և շողալոյ սուսերացն և սրնգելոյ աղեղանցն լարելոյ՝ հրաձգութիւն իմն արտաքս ելանէր իբրև յամպոց ճայթմանէ – 232. և ի սաստիկ փայլմանէ զինուցն և սուսերացն շողալոյ, և ի փայլիւնն սպառազէն երիվարացն վառելոցն՝ զկարծիս բերէր զհրոյ վառեալ լերինն – 228. Եւ ի վաղիւ անդր մինչ դեռ արևն ընդ ծայրս հարկանէր՝ կարգեցաւ պատերազմ սաստիկ – 140. Եւ խօսէր ընդ նոսա սաստիկ և ահագին դատաստանօք և սպառնալեօք, թէ ընդէ՞ր և դուք ոչ մեռարուք ի պատերազմին, քան թէ ելեալ փախստական գնացէք գալ առ իս և տալ համարձակութիւն ծառայի իմում ի յայսքան վնաս. մի՞թէ արդեօք զԽոսրով մեռեալ կարծէիք,,: - 150. և հարկապահանջք գունդքն ել և ելս առնէին սաստիկ խոշտանգանօք: - 124. Եւ մինչ կարի և ահագին սաստիկս կուտեցաւ ի վերայ նորա ամբոխն, և ամբաստանքն միաբարբառ զաղաղակ /288/ բարձեալ առաջի բռնաւորին զօձիս պատառեալ ասէին, ,,մահապարտ է, չէ պարտ դմա կեալ, և ոչ առնուլ տեղի պատասխանւոյ,, - 290. և յայնչափ սաստիկ և անհուն ամբոխին սուտ վկայութեանն զբոլոր բարկութիւն բռնաւորին զարթուցին ի վերայ առնն,

որպիսի ոչ ի միոյ ուրուք վերայ այնքան ժամանակս եհեղ զբարկութիւն իւր զօրավարն Բուխայ: - 290. և ո՞րպէս՝ հնարաւորեալ յապրուստ անձանց վճարեն զկարևոր պէտս իւրեանց լի աշխատութեամբ և սաստիկ տառապանօք. – 190. Եւ ոչ ևս այնուհետև համարձակ ելանէին և մտանէին յաշխարհս Վասպուրական զօրքն Տաճկաց. զի անկաւ ահ սաստիկ ի վերայ նոցա: - 308. և սաստիկ կսկծեցուցանէր զնոսա բանիւք, ունելով իւր վկայ զԵսայի մարգարէ՝ յասելն, ,,լուարուք, իշխանք Սոդոմայեցւոց, ունկն դիք օրիացն Աստուծոյ ժողովուրդ Գոմորացւոց,,. – 182. Եւ վասն այսր իրաց նենգութեամբ և չարակնութեամբ առլցեալ, մանաւանդ յերկիւղէ՝ կարի յոյժ գրգռեցաւ պատերազմ սաստիկ ի ձեռն Վասակայ Արծրունոյ. – 178. Իսկ ի վերայ բազում հինիցն եկելոց ի վերայ Գուրգինի և սաստիկ պատերազմացն զոր պատերազմեցաւ յաղթող նահատակութեամբ. ոչ միայն յարտաքին թշնամեացն որ շուրջանակի պաշարէին, բազում այն էր որ ի ներքին ընտանեաց հարազատաց, ազգականաց դրժողաց, ուխտազանցաց, ստոց և ստերդմանց յուզէին աղմուկք: - 308. լսէին և նոքա, զի ձայն զօրու է և սաստիկ յոյժ: - 228. ԿՈՐԾԱՆՈՒՄՆ ՔԱՂԱՔԻՆ ԴՈՒՆԻ Ի ՍԱՍՏԻԿ ՇԱՐԺՄԱՆԷՆ: - 356. նոյնժամայն առ յոյժ ամբարտաւանութեանն և սաստիկ բարկութեանն և անհուն սրտմտութեանն և առանց բուժելի կատաղութեանն, յապուշ միտքն կրթեալ իբրև զարբեալ զանզգայ արբեցութեամբ - 264. որ ի բախմանէ քարի և երկաթոյ կայծակունք արտաթափին, այլ և ի փայտից ընդ միմեանս յիրար շփելոյ, որպէս և անուոյ բնաւորեցաւ լինել, որ ի սաստիկ շրջագայութենէ սայլիցն բազում անգամ և առեղք փայտիցն վառմամբ հրոյ հրդեհին: - 52. Սաստիկ և վտանգաւորք և լի դառնութեամբ որ ինչ ի ճառի աստ են յիշատակարանք, սակս յանձնառութեան մեծ նախարարացն և իշխանացն մերոց. – 240. տեսանեն զկողմանս արևելից, դաշտ յոյժ մեծանիստ, լայնատարած, հարթայատակ, անվայրափակ առ ի սահման, անբաւական ի տեսութիւն աչաց, սաստիկ լուսով զարդարեալ ի գիշերի, բազմակերպ երևմամբ – 48. Քանզի յոյժ պատկառ կայր ի պաշտօնատարութիւն հայրապետին իշխանն Տարունոյ, և նա սաստիկս հոգայր վասն նորա, թէպէտ ոչ օգտէր յիրին յայնմիկ: - 346. Եւ ահա լոյս սաստիկ իջեալ յերկնից և ցոլացեալ ի վերայ սուրբ մարմնոյն, և շուրջ փակեալ զտեղեաւն, թէ ուրեք յարենէ նորա ցայտեալ կայր: - 224.

ՍԱՍՏԻ - Եհարց սաստիւ կամ թէ հրամանաւ տէրութեան իւրոյ, ,,ի բաց լեր, ասէ, ի հաւատոցն Քրիստոսի, և իմ թողեալ քեզ զբազում վնասսն զոր գործեցեր – 290.

ՍԱՍՏԿԱԳԻՆ - Այլ և տեսութիւնք ևս յայնս սաստկագինք և նորանշանք. – 28.

ՍԱՍՏԿԱԳՈՅՆ - Որպէս Պօղոս ուսուցանէ. ,,արհամարհեալ ասէ, ուրուք զօրէնս Մովսէսի՝ մեռանէր, ի բերանոյ Բ կամ Գ վկայիւք. քանի սաստկագոյն համարիմք զայն, որ զորդին Աստուծոյ առ ոտն եհար,, , և որ ի կարգին է: - 380. Այս շարժումն սաստկագոյն քան որ եղև յամս Զաքարիայի Հայոց կաթողիկոսի, յետ Է ամի գերութեանն Հայոց: - 358. Բայց երանելի հայրապետն Տէր Գէորգ սաստկագոյն քան զտիեզերական կործանմանն առ Նոյիւ բերելով զտրտմութեանն թախիծս, հանդերձ եպիսկոպոսիւն Գրիգորիւ՝ զաբրահամեանն վաղնջուց աղաչանսն ի կործանմանն Սոդովմայ յառաջաբերեալ մարդասիրին Աստուծոյ. – 358.

ՍԱՍՏԿԱԿՈԾ - Արկադեայ կայսեր թագաւորեալ ամս ԻԳ մեռանի սաստկակոծ պատուհասիւ յաղագս մեղանացն առ Յոհան Ոսկեբերան: - 114.

ՍԱՍՏԿԱՆԱԼ - Ելին ի պատերազմ և պատերազմեցան, ըստ որում սաստկացաւ պատերազմն: - 282. և ահա հնչէր առ հասարակ երկիրն ամենայն իբրև զծով ալեաց կուտակելոյ, և սաստկացաւ պատերազմն, յառլուսանալ աւուրն մինչև ի սպառել անցից տունջեանն իշխեցողին երկոտասան ժամու աւուրն. – 276. և ի սաստկանալ ծխոյն զօրանային գունդքն Հայոց, և ի նուազելն փոքր մի ոգի առնուին ի թշնամեացն: - 234.

ՍԱՍՏԿԱՇՈՒՆՉ - Դարձեալ շինէ զօրավարն Գագիկ ի գլուխս Օձ ձորոյ, որ վասն խստութեանն սաստկաշունչ դառնալիր մահածին հողմոյն շնչելոյ այսպէս անուանեն – 396.

ՍԱՍՏԿԱՍԱՌՈՅՑ - և չարչարէին զնոսա ի գործս խիստ սաստկասառոյց ձմերանն դառնութեան. – 188.

ՍԱՍՏԿԱՑՈՒՑԱՆԵԼ - Բայց նոքա ևս քան զևս սաստկացուցանէին զմարտն: - 210. և հիւսիսային օդն շնչեալ սաստկացուցանէ զզօրութիւն ցրտոյն – 260. զայն զինեալ ի վերայ անձանց՝ սաստկացուցանեն զպատերազմն, աներկիւղ մնալով ի հրոյն տոչորմանէ. – 208. միանգամայն սաստկացուցանէր ի վերայ նորա զահարկութիւնն, զի գոնեայ այնու կարասցէ արդեօք վրիպեցուցանել ի ճշմարիտ հաւատոցն որ ի Հայր և յՈրդի և ի Հոգին սուրբ. – 294.

ՍԱՍՏԿՈՒԹԻՒՆ - Քանզի թէ Աստուած կամեսցի՝ տանելոց է սաստկութիւն հողմոյ զզօրութիւն քո իբրև զփոշի ,,: - 140. ,,Թագաւորաց աշխարհակալաց օրէնք են՝ մեծաւ հոգաբարձութեամբ խնամ տանել վասն շինութեան աշխարհի և թեթևացուցանել զլուծ բռնութեան /184/ ծանրակի բեռանց, թուլացուցանելով զսաստկութիւն հարկապահանջ խոշտանգանաց – 186. և այնչափ սաստիկ լինէր կոտորածն՝ մինչ զի սաստկութիւն վտակաց արեանն խաղացեալ ոռոգանէր զերկիրն ամենայն: - 140. և բանակեցաւ ի յԱդամակերտ ոստանին Արծրունեաց, և անդէն սկսաւ ասպատակս սփռել, աւար առնել, կուտել առ ինքն զկապուտ աշխարհին յոյժ սաստկութեամբ: - 184. և գունդ անհաւատից դառնացեալ ոգւով ի վերայ կանանց և որդւոց իւրեանց ազգականաց՝ յարձակեցան ի վերայ նոցա ուժգին սաստկութեամբ և սուր ի գործ արարեալ յանխնայ կոտորեցին. – 402. և զանբաւութիւն մեծութեանն յայտ առնել սաստկութիւն յորդահոս աղբերն – 20. և նոցա պարտասեալք ի ծանրութենէ զինուցն և ի ջերմութենէ տապոյ արեգականն և ի սաստկութենէ աւազոյն, որ ոչ ունէր զկայ ոտից, և ի հետևակազնացութենէն և ամենեքումբք թշուառացեալք՝ անկան ի ձեռս թշնամեացն – 162. զի ինքն երթիցէ յարքունիս կեղծոտելով զսաստկութիւն ձմեռնային ժամանակին ի վերայ եղելոյ և զխստութիւն հիւսիսային օդոյն սառնամանեաց, անընդել զինքն այնոցիկ վարկանելով: - 186.

ՍԱՏԱԿԵԼ - Այլ և սաստիկ հարուածովք սատակեսցէ զքեզ: - 164. Այլ ձայն իմն գայր՝ մի՛ ժողովել և մի՛ հատանել, թե ոչ՝ եղիցի անձն այն մեռեալ, և ժանտ ախտիւ սատակեսցի գումարտակդ: - 50. և զմնացեալ սակաւսն ի մէջ արարեալ շրջափակ տուեալ՝ կամէին զամենեսեան սատակել: - 150. և յանկարծակի ի թիկանց կողմանէ յարձակեալ ի վերայ նորա արանց՝ հարեալ սատակեցին զնա: - 154. և նոքա հարեալ սատակեցին զնոսա սրով սուսերի յանխնայ, սպանին և զզօրավարն ի պատերազմին – 150. և ամենայն ուրեք ուր և հանդիպէր զօրուն Պարսից՝ առ հասարակ սատակէր զամենեսեան, մինչ ոչ մնալոյ ապրեալ: - 148. Եւ առ յոյժ յանդուգն յարձակմանն բազում այն լինէր, զոր ձիովքն ընթադրեալ դիաթաւալ կացուցանէին, քան զոր սրովն սատակէին: - 174. Եւ առնէր հարուածս մեծամեծս այլազգեացն. և սատակէր զնոսա սրով և աղեղամբ, և եբարձ զամենայն ազգս Տաճկաց, որ բնակեալ էին Վասպուրական տէրութեանն: - 306. և եհար սատակեաց Ապումկդէմ ի միում ասպատակի Ը այր, և զերիվարս նոցա, և զէնս և զզարդ մերկեաց ի նոցանէ, եհար զայլազգիսն ի հարուածս մեծամեծս և ինքն դարձեալ ասպատակեաց զկնի նոցա: - 304. Եւ երթայր զհետ և սատակէր զնոսա անչափ զօրութեամբ. և բազումք այն էին, որ մեռանն ի սրոյն Գուրգէնի քան որ մնացինն. և զօրքն զհետ մտեալ մնացելոցն հանին յերկրէն իւրեանց: - 308. Եւ ի կատարումն ամենայն չարեաց հասեալ՝ ինքն խեղդեալ ի դիւէ սատակեցաւ: - 168. և ոչ զոք թուլացուցանէր թագաւորել Զրուանայ, դաշնաւորել երդմամբ՝ մինչև որ ի կնոջէն Ըռեա որ ի Զրուանայ զարմից էր ծնեալ արու՝ անդէն ի ծննդեանն սատակէր. – 14. զի ահա ևս եօթն օր՝ և ածից ջրհեղեղ ջուրց ի վերայ երկրի՝ սատակել զամենայն, յորում է շունչ կենդանի,, . – 30. զոր Թէոդորոս եղբայր թագաւորին և բազմութիւն զօրացն կամեցան սատակել զնոսա. – 156. Կալան և զհայրապետն Զաքարիայ, և ի խնդիր անկեալ աստուածային սուրբ նշանին՝ սկսան զնոսա տանջել, մինչև զբազումս ի պաշտօնէիցն կառափեալ սատակեցին. – 142. մանաւանդ զի բարեպաշտութիւն մեծ համարիմ սատակել զթշնամիսդ Աստուծոյ, որպէս Մովսէս զԱմաղէկ, և Յեսու զՔանանացիսն, և Սամուէլ զԱգագ, և Դաւիթ զԳողիաթ, և համանգամայն իսկ որպէս սատակեցին Իսրայէլացիքն

զայլազգիսն – 278. մանաւանդ զի բարեպաշտութիւն մեծ համարիմ սատակել զթշնամիսդ Աստուծոյ, որպէս Մովսէս զԱմաղէկ, և Յեսու զՔանանացիսն, և Սամուէլ զԱգագ, և Դաւիթ զԳողիաթ, և համանգամայն իսկ որպէս սատակեցին Իսրայէլացիքն զայլազգիսն – 278. Ողբացէք բնակիչք կոտորելոցդ, զի նմանեցան ամենայն ժողովուրդք Քանանացւոց, և սատակեցան ամենեքին, որ հպարտացեալ էին արծաթով,,: - 180. բազում այն են որ ի նմին իսկ սատակին. և կէսքն դիւրըմբռնելի որսորդաց լինին. և ապրեալքն սաստիկս հասուցանեն վտանգս ուր և դիպիցին, եթէ մարդկան և եթէ այլոց ինչ կենդանեաց: - 188. ԵԹԷ Ո՛ՐՊԷՍ ԱՍՏՈՒԱԾԱՍԱՍ ԲԱՐԿՈՒԹԵԱՄԲ ՍԱՏԱԿԵՑԱԻ ԱՒՇԻՆ ԵԻ ՀԱՄՕՐԷՆ ՋՕՐՔ ԻԻՐ: - 374. և հարան սատակեցան պակասեցան զօրքն արքունի ի զօրացն Ծանարաց – 276. և հրամանէ Աստուծոյ սատակեցան զօրք նորա. – 60. մինչև անձամբ անձին արարեալ ի հուր սատակի: - 58. նաև երամակ ձիոցն և իշոցն և ուղտուցն նովին կեղով վառեալ սատակեցան: - 376.

ՍԱՏԱԿՈՒՄՆ - Արդ յայսմ հետէ ըստ նեպակի գեղջն/գրքում՝գեաղջն/ կապճահամար ժժակք յամենայն ի դուռն արքունի ի սատակումն եկեսցեն. – 46. և գոչէին վիշապաձայն և բեկանէին առիւծաբար և հարկանէին վարազաբար, և մատնեցին ի սատակումն և ի պարտութիւն – 232. և եկեալ ի վերայ քաղաքին պաշարեն զնա, և զզօրսն մատնեն ի սատակումն սրոյ, և զպատանդսն Վասպուրականի հանեն յարգելարանէն. և գերեացն ընդարձակեն, զկապուտ նոցա բաժանեն յինքեանս: - 190. և իբրև զքաջ հովիւն դրուատեալ ի փրկչէն՝ զանձն իւր եդ ի վերայ խաշանց ընդդէմ ապականարար գայլոցն, յարձակեալ յանխնայ դիմեցուածովք, յարիւն և յապաժոյժ, ի սատակումն և ի ծախումն սրոյ մատնեաց բոլորովիմբ զյարձակեալս նեղիչս աշխարհիս. – 312. և Կիւրոսի զհետ մտեալ զօրուն՝ ոչ սակաւ սատակմունս առնէր – 64. և ոչ առ փոքր մի ինչ ներեաց կամ անսաց /264/ տալ տեղի պատասխանոյ, այլ հրամայեաց դահճացն տալ ի վերայ նորա զվճիռ մահու, փութով զրաւ առնել նոցա ի սատակումն սրոյ: - 266. Զի թէ միոյ փայլատակման ընթացք և ճայթումն ամպոց բաւական է պակուցանել քաղել զուշեղութիւն ոգւոց, զի՞նչ ինչ յայնժամ կրէին ոգիք մնացելոցն յերկրի, ի սահանաբաց և յանդնդաքակ վրդովմանցն հոսելոց, նախ քան զջրհեղեղ ջուրց սատակումնն: - 32. զօրս գումարէիք, այրուձի կազմէիք, մարտ և պատերազմունս գրգռէիք, ճակատ դնէիք և զզօրս մեր ի սատակումն սրոյ մատնէիք – 244. ի սաստ մատուցեալ զնդին իւրոյ պատերազմողացն՝ և ոչ կարաց զբորբոքեալ հնոց դէզադէզ կոխակացն սրախողխող սատակմանն ցածուցանել: - 368. Իսկ թշուառականն զսատակմանն ընկալաւ զվճիռ, և ի հանդերձելումն զխաչահանուացն հատուցանել զպարտիս: - 378. մինչև զանբարկանալին Աստուած ի բարկութիւն ածել, ի սատակումն անձանց և ի կործանումն աշխարհի և յաւեր ժառանգութեան տանց հայրենի բնակութեանց. – 182. որ և զՌահաբ պոռնիկն առ ժամեայ բարեմտութեամբն յերիքովական բարկութենէն ապրեցոյց իւրովք ազգականօքն, և զԳաբաւոնացիսն ի Քանանացւոցն սատակմանէ: - 32.

ՍԱՏԱԿՉԱԿԱՆ - և առ զայրուցն առ մարդկայինն դիմեալ ազգ՝ կարծել նոցա ստնանէր, յինքեանք ձգել կորզել զսատակչական դարձուածէ. – 398. և զփքինս կապարճիցն սպնգով ծածկեալ՝ զսատակչական զօրութիւնն թոռուցանէր ընդդէմ սրբոյն – 204. և նախ յառաջ Սափին կարի յոյժ սիրեցեալն իւր, զսատակչական դեղն արբեալ, անբուժելի կեղով վառեալ յոսկր և ի մարմին՝ և առաջի Աւշնի զրաւ առնոյր ի կենացն: - 376. իբրև շունք համրացեալք, որ ոչ կարեն հաջել, որպէս ասէ Եսայի մարգարէ, ընդդէմ Տեառն փոխելով զկատաղութիւն մահածին թիւնիցն սատակչական զօրութիւնն – 210. որ անցուցանէ զանցանէ զանասնական խառնակութեամբքն երիքովեան և սոդոմական լրբութեամբ, անամօթաբար այր զարամբք բորբոքեալ, դեզադէզ զհրացանն բերելով յերկնուստ զանզրաւ կիզումնն, անցուցեալ զանցուցեալ զսատակչական կործանմանն ջրհեղեղին: - 336.

ՍԱՏԱՆԱՅ - և բազմութիւն քրիստոնէիցն … զոհացեալ միաբան ետուն փառս Աստուծոյ, որ զօրացոյց զսուրբսն և արար յամօթ զսատանայ հանդերձ գործակցովքն իւրեանց: - 268. և

բազումք դրդուեցան և ելին զկնի սատանայի – 222. և բունեալ ուրջացեալ բնակեալ էր ի նմա սատանայ զօրօք իւրովք – 248. և զզօրութիւն աղօթիցն իբրև զնետ ձգեալ ի լայնալիճ աղեղանէ ի նպատակն, հարեալ զկառափն սատանայի դիւաթաւալ կացուցեալ յերկիր կործանէր: - 252. և զժառանգս Աստուծոյ արար բաժին սատանայի – 264. և յետս ընդդէմ կործանեալ փչեաց զոգին ի ձեռս խորհրդածուին իւրոյ սատանայի. – 100. և նա դարձուցանէր զնա կսկծեցուցանող բանիւք իբր զարբանեակ սատանայի: - 318. և նմին հատուցումն ի կարգի որ ասէ, ,,կացո ի վերայ նոցա մեղաւոր, սատանայ կացցէ ընդ աջմէ նորա,, , և որ ինչ ի կարգ սաղմոսիդ է: - 214. զոր կազմեաց իւր սատանայ գործի աջողակ յամենայն արուեստ գիտութիւն խարդախութեան, իբրև զպատշաճ դարան դեղեալ նետիւք ընդ խաւար թռուցելոյ յոգիս խաւարամածս: - 248. իսկ իբրև նա ըմբռնեցաւ, և գիտաց զօրավարն եթէ ոչ ոք այնուհետև յիշխանացն Հայոց մնաց, որ ոչ համագունդ ժողովեալ են առ նա՝ մերկացաւ յայնժամ զպատրուակ կեղծաւորութեանն, զոր սերմանել էր սատանայ ի սիրտ առնն: - 296. յորում որջացեալ բունեալ էր սատանայ զօրութեամբ իւրով: - 200. որով մահուամբ և կամիս՝ պատրաստ եմք յամենայն հնարս չարչարանաց մտանել, զոր ուսոյց քեզ վարդապետն չարեաց հայրն քո սատանայ. – 292. Չարախորհուրդն հայր Մարդպետ որդին սատանայի ոչ բաւականացաւ չարեօք մարդկան – 100. որ զօրացոյց զսուրբ վկայն և արար յամօթ զսատանայի: - 254.

ՍԱՏԱՆԱՅԱԿԱՆ - այլ զի բազում նեղութիւն և սուր, ի ձեռն այսր /46/ սատանայական ուսման՝ սպառեալ կործանեաց զերկիրս Հայոց – 48. Դարձեալ զՍողոմոն Բագրատունի վառեալ ի զէն սատանայական՝ յղէ առ նա բազում անգամ զնոյն խորհելով. – 318. և մուտ եղեալ ի տեղին … ետուն տանել զթուղթն, լի թիւնիւք սատանայական իմացմանց, իբրև զկապարճս լի նետիւք դեղեալ ի գաղտնիս ի գրկաց թռուցանել ի նպատակն: - 234. և նոքա ըստ ձախողակի սովորութեանն իւրեանց օրինադրութեանն, արիւնարբու առանց բարւոյ բարեգործութեանցն մանաւանդ թէ լցեալք սատանայական չարութեամբք՝ ձայն արկեալ յամենայն քաղաքսն, խռովեալ ըստ գազանեղէն իւրեանց մոլեգնութեանցն – 398. լի թունիւք սատանայական խորհրդոցն, ծածկեալ յաչս իշխանին գառնենի զգեստիւք ի հանդերձս ոչխարաց, և ներքոյքն զապականիչ գայլոցն բերելով զլրբութիւն – 210. Որ զապիրատ և զլի հնարիւք սատանայական իմաստից, չարահնար խորհրդոց բուռն հարեալ՝ մեծամեծս փքայր փռնքտալով – 200.

ՍԱՏԱՐԵԼ - ընդ առաւօտանալն սկսեալ՝ ի ժամս բովանդակ՝ յաղթութիւն սատարեաց և ի փախուստ դարձոյց զբազմութիւն զօրացն Ովայի – 178.

ՍԱՐԱՅ - և որք ի տանէն Ամատունեաց՝ Շապուհ և Վահան և Սարայ եղբարք միմեանց, Ապուսակր Վահունի և այլք ընդ նոսա, միաբանական խորհրդակցութեամբ խորհրդածեալ ընդ Գագկայ առ ի սպանումն Ապումրուանայ – 368.

ՍԱՐԱՍ - Եւ ոչ արմատոցն միայն օտար և անիմանալի սարսափցն տիպք, այլ և աներևոյթ պահպանողական և անհպելի զգուշաւորութիւնն. – 50.

ՍԱՐԱՒԱՆԴԱԿ - Սապէս և Գուրգէն կատարելագործեալ ի բարձրաւանդակ ի սարաւանդակ տեղւոջն բարեձևագունի վայելչացուցեալ զհրաշակերտ յաջմէ և յահեկէ սեղանոյն երկուս ևս եկեղեցեօք: - 396.

ՍԱՐԳԻՍ - Եւ ծնան նորա երիս որդիս, Սարգիս որ և Աշոտ՝ ՅԻԶ թուականութեանն Հայոց, Խաչիկ որ և Գագիկ ՅԻԸ, և Գուրգէն. մանկունք կայտառք և գեղապանծք և բարենշանք և ամենեցուն ցանկալիք. ծնաւ և երկուս դստերս: - 338. և մինչ այսմ գործոյ պարապէր՝ դէպ եղև նմա ի կողմանս Եգիպտացւոց հանդիպել առն միոյ մոնազնի, որում կոչէին Սարգիս Բհիրայ, որ էր եղեալ աշակերտ մոլեգնութեանն արիանոսաց. – 158.

ՍԱՐԳԻՍ ԲՀԻՐԱՅ - և մինչ այսմ գործոյ պարապէր՝ դէպ եղև նմա ի կողմանս Եգիպտացւոց հանդիպել առն միոյ մոնազնի, որում կոչէին Սարգիս Բհիրայ, որ էր եղեալ աշակերտ մոլեգնութեանն արիանոսաց. – 158.

ՍԱՐԴԱՆԱՊԱՂԷՍ/ՈՍ/ - յաղագս գոլ զնա սերունդ Վարբակայ Մարի, որ եբարձ զթագաւորութիւնն ի Սարդանապաղեայ, հաւուցն Սենեքերիմանց: - 62. Եւ արդ են մի

ըստ միոջէ թագաւորք Ասորեստանեայց այսոքիկ … Մամիզոս միւս՝ ամս Լ… Թովնոս Կոնկողեռոս, որ կոչի յունարէն Սարդանապաղոս՝ ամս Խ. – 58.

ՍԱՐՍԱՓԵԼ - զոր սարսափեմ և հիացմամբ մեծաւ յապուշ կրթին միտք իմ ընդ ժուժկալութիւն այնքանեաց բազմահնար մեքենաւոր չարչարանաց. – 106.

ՍԱՐՍԱՓԵԼԻ - սակայն կանոնական սահմանադրութեանն արտաքոյ մնացեալ, գայթ ի գայթս զքրիստոնէութեանն վարս բերելով անառակութեամբք և արբեցութեամբ, խառն անկողնօք և պղծութեամբք աղտապիղծ սարսափելի և գարշելի խառնակութեամբ արուապղծութեամբք – 336. Քանզի այնչափ թանձրացաւ յաճախութիւն սովոյն՝ որ ոչ միայն անասուրբ կենդանիս ուտէին ըստ սրբութեան կարգի, այլ և զսարսափելի և զդժնդակ, որ զգազանայինն անցուցանէ զվայրենամտութիւնն, զմարմինս մեռելոց՝ առանց խղճելոյ ուտէին, ի գերեզմանացն հանեալ զհետ միոյ և երկուց ամաց թաղելոյ: - 374.

ՍԱՐՍԱՓՈՒՄՆ - իբրև լուայ զայս դողդոջումն և սարսափումն զիս կալեալ յահէ յերկիւղէն եղելոյ. – 52. Նաև սրբոց հրեշտակացն ի տեսաւորութիւն ձևացեալ, որոց սարսափմամբ առ նորա զնայեցած յապուշ միտքն կրթեալ, շուրջ փակեալ զնայեցածն՝ ի հարց մատուցեալ ասէ – 386.

ՍԱՐՍՌԱԼԻՑ - Եւ անդ ի միջոց գմբեթիւն ղօղեալ սալարեալ սարսռալից դողմամբ զետեղեալ լինէր: - 190.

ՍԱԻԱՌՆԱՁԱՅՆ - դրօշ և վերջաւորս փողփողեալս՝ սաւառնաձայն հնչմամբ զլեառնն դնդեցուցանէին – 208.

ՍԱԻԱՌՆԱՑԵԱԼ - ունելով ընդ իւր զզօրսն Յունաց բազմամբոխ վահանաւորաց և դրօշուց սաւառնացելոց, և փողք կայսերալուրք և գունդք գունդք վառելոցն վաշտիցն – 106.

ՍԱԻՈՒՂ - Այնքան խնամոցն արժանի՝ զի և զվրէժ արեան նոցա առնուլ ի տանէն Սաւուղայ: - 32.

ՍԱՓԻ - Եւ Աւշնի հաւատացեալ զաշխարս ծառայի ումեմն Սափի անուն ի գերելոցն Յունաց ներքինի, թողեալ զհաւատսն որ ի Քրիստոս, մսլիմանակ դէն ստացեալ, արիւնարբու ուսմամբ բնաւորեալ. – 372. և նախ յառաջ Սափին կարի յոյժ սիրեցեալն իւր, զաստակչական դեղն արբեալ, անբուժելի կեղով վառեալ յոսկր և ի մարմին՝ և առաջի Աւշնի զրաւ առնոյր ի կենացն: - 376. և փութացաւ գրեաց առ Սափի որ ի Վանտոսպ նստեալ և ճոխանայր Վասպուրական տէրութեամբն. որ առանց յապաղանաց զփոյթն յառաջաբերեալ՝ գնաց եհաս առ Աւշին ի Մարակայ քաղաք: - 374.

ՍԱՓԻՐԱՅ - զի՞նչ Անանիա և Սափիրայ վասն ագարակին և նորին ստութեանն, իմա և ի միտ առ: - 258.

ՍՈՂՈՎՄՈՆ - Նմանապէս կամ թէ ևս հրաշափառագոյն երիցս երանելիք Սողովմոն, որ Սևորդին ճանաչի, և Կախայ վերին աշխարհեցին՝ ոչ խոտորեցան ի բանս թագաւորին – 292.

ՍՈՅՆ - Զոր և այժմ իսկ դեռ ունին զսոյն ասել որդիք հրապաշտիցն: - 48. և զսոյն իսկ ասէին զայսոսիկ այլովք զազիր չարեօք: - 48. Եւ այնչափ և առաւել քան զսոյն կազմութեան սպառազէն պատրաստութեանն՝ սաստիկ տարակուսանօք և մեծ երկիւղիւ պակչէին յահէ հայկասիրտ իշխանին և յաղթող նահատակին մեր Աշոտոյ – 210. Եւ եհարց եթէ դո՞ւ իցես Աշոտ. ասէ այո ես եմ. երկրորդեալ և երրորդեալ և զսոյն լուաւ. – 216. Եւ թէ որպիսի օրինակաւ գալուստ նորա և պատերազմ վասն սորին իրաց, և արիական ձեռակերտացն շինուածք, որ և յոյժ արժանաւորք զարմանալեաց, և դարձեալ ապստամբութիւն Զրադաշտին և մահն Շամիրամայ և բան յուռթիցն որ զնմանէ – 44. և կեցեալ ամս Ի ի սմին՝ մեռաւ. – 164. մեք զայլս ի բանիցն առասպելականաց և որ անպատճառ սոյն է ասացեալ ըստ նոցայցն արժանաբանութեանց առ ի յեղծումն առցուք. – 52. Եւ նորա կամեցեալ ցուցանել թագաւորին՝ ի սոյն աւուրս վախճանեցաւ Հայրակղէս. իսկ որդի նորա Կոստանդին ոչ ունէր յանձին ըստ կամաց նորա պատասխանի. – 162. Զայս և առաւել քան զսոյն խրատէր և ուսուցանէր սուրբ հայրապետն և քաջ հովիւն տէր Յոհաննէս կաթողիկոս Հայոց մեծաց: - 182. Զայս ևս առաւել քան զսոյնս և բազմապատիկ կարգեցին եղին բանս գեղեցկայարմարս ի Քրիստոս հաւատոցն: - 246. Զայսոսիկ և առաւել քան զսոյնս ասելով՝ դնէր առաջի զօրաց իւրոց աստուածասէր իշխանն Աղուանից: - 276. Զայսոցիկ և որ առաւելն քան զսոյն իրողութեանց ցոյցք մոռացմամբ սուզեալ՝ առ երկնաւորսն և առ երկնից թագաւորն թևակոխեալ – 386. Զոր և մեք ակն ունիմք և քեզ զսոյն զայս կամել – 186. թուի ինձ թէ և զարդարն Հաբէլ ի սոյն շարի կարգեալ համարեցաւ. – 26. Ի սոյն աւուրս որք մնացեալ էին ի տանէն Արծրունեաց իբրև լուան զպարտումն զօրացն արքունի ի Ծանարացն՝ ի մի վայր եկեալ գունդ կազմեալ հետևազօրքն մարտակցօք հանդերձ խառնաղանջ ամբոխիւ՝ լինին թուեալ արք S – 304. Ի սոյն ժամանակս էր այլ ոմն ի կողմանս Պարսից միայնացեալ կրօնաւորութեամբ – 162. Իբրև լուաւ զայսքան և առաւել քան զսոյնս յանդուգն և առանց երկիւղի զընդդէմ պատասխանատրութիւնն մեծաւ համարձակութեամբ՝ապա հրաման ետ փութով ի կենաց բառնալ զգլուխ նորա սուսերաւ: - 296. Իսկ եթէ սովորութիւնն այլանդակեալ ի չարէն ի սոյն, կանգնել պատկերս սկայից և քաջաց և բարբարոսական թագաւորաց ի պատիւ – 40. Վէմս զերեսօք արկեալ արտօսր յորդառատս ի խտղտելի աչաց ի վայր հեղեղատելով, զնորափթիթ ծաղկազարդ ոսկեճաճանչն մորուացն ճիրանամբքն զխզումն, և որ առաւելեալն քան զսոյն զապաշաւանացն զանյագութիւնն: - 386. Տես և զմիւս ևս նման սմին ի գրոց Գործոց առաքելոց: - 258. Ի սոյն աւուրս մեծ նեղութիւն եղև աշխարհիս Հայոց ի չարասէր կամաց նորա: - 166.

ՍՈՅՆՊԷՍ - Սոյնպէս և այրն այն Յովսէփ զօրավարն Տաճկաց մնայր անցանել ձմերանն, զի ելցէ ի վերայ աշխարհիս Հայոց սրով և գերութեամբ և մեծամեծ հարուածովք և զմեծամեծս աշխարհիս խաղացուցանէ ի գերութիւն – 188.

ՍՈՅՆՊԻՍԻ - քանզի ըստ օրինակի իսրայէլականումն, որ յաւուրս անիշխանութեանն էին անկարգութիւնք, և այր իւրաքանչիւր զհաճոյս աչաց իւրոց առնէր՝ սոյնպիսիք և այժմուս եհաս լինել. – 300.

ՍՈՍ - Որ և այլոց կարող տուիչ լինել ժամանակաց, որպէս և արանցն որ յառաջ քան զջրհեղեղն քառասուն ևս աւելի բիւրս ամաց և դարս փոխադրական այլաձևս և խժականս, շարս և ներս և սոսս - 38.

ՍՈՎ - Այլ հինիցն ասպատակքն, սովոյն բռնութիւն, գերիվարացն տառապանք, գազանաց յարձակմունքն, ներքին և արտաքին վրդովմունքն հոլանի առնէին զաշխարհս: - 316. Բայց յո՛վ ոք կամ ո՞ր աշխարհ, զոր ոչ կործանեաց Աւշին պէսպէս լլկանօք հինի ասպատակաւ, աւարառու յափշտակութեամբ, սպանմամբ սրոյ և սովոյ: - 374. և ի սաստիկ սովոյն ելեալ Որմզդի յածէր ընդ վայրս ի խնդիր կերակրոց. – 46. և առեալ ոսկի զտիկնոջն և զիւր՝ գնաց յԵգիպտոս գնել ցորեան յաւուրս սովոյն որ եղև առ Կղաւդեաւ. – 80. Եւ արդ քաջալերեցարուք, լերո՛ւք արք. ելէք ի վերայ աշխարհին Հայոց սովով և սրով և գերութեամբ. – 198. և բազում եղեն դիակունք նոցա վասն սովոյ հացի և ծարաւոյ ջրոյս,,: - 184. և զպէտս կերակրոցն վճարեն ի սերմանց ինչ, առաւել ի կորեակ կոչեցեալ սերմանէն, զոր ոմանք ի սով ժամանակի /190/ հաց անուանեն. – 192. և մտեալ ի խորագոյն բանտ, տարեալ յամենայնի գոհութեամբ վասն անուանն Քրիստոսի, սովով և ծարաւով ժուժկալութեամբ մեծաւ: - 318. զի ոչ դուք նուազիցիք ի սովոյ, և ոչ հարկք արքունի կորնչիցին: - 144. Քանզի այնչափ թանձրացաւ յաճախութիւն սովոյն՝ որ ոչ միայն անսուրբ կենդանիս ուտէին ըստ սրբութեան կարգի, այլ և զսարսափելի և զդժնդակ, որ զգազանայինն անցուցանէ զվայրենամտութիւնն, զմարմինս մեռելոց՝ առանց խղճելոյ ուտէին, ի գերեզմանացն հանեալ զհետ միոյ և երկուց ամաց թաղելոյ: - 374.

ՍՈՎԱՌՆՈՒԹԻՒՆ - զի տարցի անյայտաբար զգողաւսն առ իւր և լցցէ զսովառնութիւն իւր: - 46.

ՍՈՎՈՐԱԿԱՆ - Եւ թէպէտ յայնմանէ վրիպեցոյց ճշմարիտն Աստուծոյ պատուհաս՝ այլ չարն սովորական բնաւորեալ պահեցաւ անվրէպ: - 38. Իսկ նա ըստ սովորականի ցանկասէր պղծալից անյագութեանն՝ խրոխտացեալ մոմռեալ յանձն գազանեղէն թունիւք առաւելեալ, բորբոքեալ տապախառն բոցով հեղուլ զմահածին թոյնսն ի վերայ Բուխայի. – 326.

ՍՈՎՈՐ Է - Զի մինչ այսպէս կայր աշխարհս ի տարակուսի, և ակն ունէին գթութեանցն Աստուծոյ առատանալ, որպէս սովոր է Աստուած ի բարկութեան զողորմութիւն յիշել. - 374. Տեսցէ տէր և դատ արասցէ և հանցէ իրաւունս ինձ, որպէս սովոր է արդար դատաւորն,,: - 330.

ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆ - Եւ արար նմա հաւատարմութիւն յոյժ գրով, և կնքեալ աղիւ ըստ սովորութեանն իւրեանց երդումն, և խնդրեաց ի նմանէ զօր ինչ սակաւ յերևելի մարդկանէ, յորս ինքն վստահն էր: - 154. և եկեալ եկաց առաջի ոսոխ վիրագին, և տուեալ ողջոյն ըստ սովորութեան նոցա: - 216. և նոքա ըստ ձախողակի սովորութեանն իւրեանց օրինադրութեանն, արիւնարբու առանց բարւոյ բարեգործութեանցն մանաւանդ թէ լցեալք սատանայական չարութեամբք՝ ձայն արկեալ յամենայն քաղաքսն, խռովեալ ըստ գազանեղէն իւրեանց մոլեգնութեանցն – 398. Զոր Եւսեբէս Կեսարացի ասէ՝ ի սովորութենէ մինչև ցայսօր կին մարդ թագաւորէ ի վերայ աշխարհին Հնդկաց: - 30. զոր սովորութիւն թէ առցէ ոք արդեօք ասել ի վերայ Փաղեգայ որդւոյ Եբերայ և կամ Առանայ որդւոյ Թարայի: - 40. ըստ սովորութեան ծանօթացուցանել զիւրաքանչիւրոց առանձնաւորութիւն և զպատուոցն գերակայութիւն, կամ ի ծնողաց կամ ի տեղւոյ կամ ի գաւառէ կամ յազգէ կամ յարիութենէ կամ ի պատահմանէ սկիզբն առ: - 288. Իսկ եթէ սովորութիւնն այլանդակեալ ի չարէն ի սոյն, կանգնել պատկերս սկայից և քաջաց և բարբարոսական թագաւորաց ի պատիւ – 40. Սովորութիւն է գրոց, որպէս զիրն նոյնպէս և զտեղին վերաբերեալ, կամ ըստ ծանօթութեան, կամ ըստ պատուոյ: - 288.

ՍՈՎՍԱՐՄՈՍ – եւ արդ են մի ըստ միոջէ թագաւորք Ասորեստանեայց այսոքիկ … Պաննիաս ամս ԽԵ… Սովսարմոս ամս ԺԵ… Միթրէոս ամս ԻԷ: – 58.

ՍՈՐԱՅ - այլ և Մակեդոնացին Աղէքսանդրոս ոչ սակաւ դրուատեօք արձանս գրէր ի մատեանս դիւանապահ աւանդութիւնս զսորայս մեծափառ գլխաւորութիւն: - 96. արդ հաճոյ թուիցի քեզ, քաջ զօրավար, զսորայս գործեցեալ քաջութիւն ի վերայ զօրացն Յունաց,,: - 304. Բայց արդ որպէս յառաջագոյն հատուցի զարտաքոյ պարսաւանաց զիս ներքոյ գրել, վասն ոչ ոճով զսորայս կարգել դնել ի շարի աստ զշարագրածս, վասն ոչ բաւելոյ զանչափութիւնն ի մի վայր գումարել յանմասնաւորաբար նշանակութեամբ – 308. Բայց ինձ ոչ դանդաղելի կամ պատկառելի կամ մեղանչելի է զուգակշիռ նահատակելոցն նահատակակից վարկանել զսա և մարտիրոսականաւն զսորայս դրուատել ճգնողական մրցմունս – 300. և մերկ կապուտ կողոպուտ առնէր զնոսա, մինչև զարմանալ զօրավարին ընդ սորայս քաջութիւն՝ գրէ առ Միքայէլ թագաւորն Յունաց զեկուցանելով վասն նորա: - 302. զի ո՞վ ոք այլ ճոխ քան զՍենեքերիմայսն, /94/ զոր համարձակախօսն Եսայիաս հրապարակէ առ Իսրայէլեան զարմն զսորայս մեծափառութիւն. – 96. մանաւանդ զի ոչ բաւականանամ իմով աղքատիմաստ բանգիտութեամբ զսորայս բացայայտել զչափ ներբողականին՝ այլոց ուժեղագունից և մտահարուստ արանց թողի. – 300. ՄԾԹ ամօք յառաջ զսորայս բացայայտեալ զցոյցս յայտնութեանն, յամս Ներսեսի երրորդի Հայոց կաթողիկոսի և Վարդանայ Ռշտունեաց պատրկի և յամի ունելութեանն Տաճկաց զհայկական աշխարհս: - 394. Վասն զի այլոց գործք մի կամ երկու կամ այլս ևս գործք գործեալ է. իսկ սորայս՝ գերազանցեալ յաճախեաց քան զբազմացն իրողութիւնս. – 302.

ՍՈՐՄԱԿ - և կացուցին հակառակաթոռ սրբոյն Սահակայ զՍորմակ մոլի, և ապա զԲքրիշոյ Ասորի, և ապա զՍամուէլ – 118. մատուցեալ առ Վռամ հանդերձ Սորմակաւս ումեմն Արծկեցւոյ մոլեգնոտ փառամոլ աբեղայի՝ սկսան ազգի ազգի լեզուագարութեամբ չարախօսել զսրբոյն Սահակայ – 118.

ՍՈՐՄԱԿ ԱՐԾԿԵՑԻ - մատուցեալ առ Վռամ հանդերձ Սորմակաւս ումեմն Արծկեցւոյ մոլեգնոտ փառամոլ աբեղայի՝ սկսան ազգի ազգի լեզուագարութեամբ չարախօսել զսրբոյն Սահակայ – 118.

ՍՈՒԳ - Առաւել ի սուգ մտեալ և յողբս անմխիթարս վասն ազգին իւրոյ Արծրունեաց – 112. և զսուգ և զտրտմութիւն, զոր կրէին աշխարհս յաղագս մահուանն Դերանկին՝ յուրախութիւն և ի խնդութիւն տրամադրէին. – 360. և միաբան յարտասուս հեղեալ լային, և դառնապէս ողբս յողբս հարեալ անմխիթար սգոյ – 114. ըստ ասացելումն ի Սողոմոնէ, եթէ ,,հայր թախծեալ տարաժամ սգով՝ վասն վաղամեռիկ լինելոյ որդւոյ արար պատկեր,,: - 40. Հինգերորդ՝ զի զծնօղսն անհնարին դառնութեամբ նոր սգովն ելից: - 24. Յետ մահուանն Աշոտի և կատարելոյ զաւուրս սգոյ նորա առնու զիշխանութիւնն Վասպուրական տէրութեանս Գագիկ եղբայր նորին. – 388.

ՍՈՒԶԱԿԱՆՈՒԹԻՒՆ - և անծանօթ զարմանալի ծառոյն դէպք՝ ի միում աւուր ունել աճմունս փոյթ ընդ փոյթ. և դարձեալ սուզականութիւնս յանկարծօրէնս լինել – 50. Նոյնպէս և զպայման ժամանակացն յանբաւ բիւրս ամաց ձգեն որ ոչ և ըստ միոյ յեղանակի հաւաստանայ առ ի ցուցումն, ոչ արեգական բերմամբ ի նոյն կէտ ամսոց և աւուրց և ոչ ըստ չորից փոխմանց առ ի յեղումն ժամանակի տարւոյն, այլ և ոչ ըստ լուսնական լրութեանն և սուզականութեան: - 18.

ՍՈՒԶԵԱԼ - Զայսոցիկ և որ առաւելն քան զսոյն իրողութեանց ցոյցք մոռացմամբ սուզեալ՝ առ երկնաւորսն և առ երկնից թագաւորն թևակոխեալ – 386.

ՍՈՒԻՆ -Եւ զայլս ազգի ազգի զինուորք ունէին վաղերք և վակուրք, աւսերք և սուինք, տապարք և վիրգահանք, մեքենայք և ռմբաքարք, վահանք և նիզակք: - 208.

ՍՈՒԼԻՄԱՆ - /թագաւորեաց/ Վիղդ որդի Աբդլմէլքի ամս Ժ…Սուլիման որդի Աբդլմէլքի ամս Գ … Ումառ որդի Աբդլազիզա ամս Գ: - 166.

ՍՈՒԿԱՒԷՏ - Իսկ սրբոցն որ ի Սուկաւէտ լերինն, քանզի էին համաշխարհիկք և հաւատարիմք Սաթինիկայ եկեալ զկնի նորա – 88.

ՍՈՒՂ - բայց ակամայ և ի հարկէ գրեցից կարգեցից ի փոքր և ի դուզնաքեայ բանից, բովանդակեցից համառօտ սուղ և սակաւ բանիւ անցանել ընդ պատմութիւն իրիս այսմիկ – 240.

ՍՈՒՂՈՅԲԱՅ -վասն այնր առ այժմ համառօտեալ ի նշանագիրս սուղոյբայից – 302.

ՍՈՒՍԵՐ - արկեալ զիւրև պատմուճան լուսակիզն փայլեալ իբրև զարուսեակ, և յաջոյ ձեռինն ունէր սուսեր, և ի ձախոյն՝ բուրուառ լի խնկով – 232. Բայց երանելիս այս Գէորգ … դարձաւ ի դահիճն կոյս պատճառաւ աղաչելութեան՝ տեսանել, թէ ընդէ՞ր ոչ հատանիցէ սուսերն – 266. գերփեն առնուն զշէնս և զաւանս և զագարակս, կապուտ կողոպուտ թողուն ի ստացուածոց և յամենայն ժառանգութեանց, մաշեն ի սուր սուսերի զորս ի բուռն առնուին. – 102. Դարձեալ պիտոյ է մեզ դառնալ առ ի վերագոյնսն, որ նախ քան զպատերազմն Աղձնեաց եղեալ են հանգամանք գործոց ի զօրացն Տաճկաց, և թէ ո՛րպէս եկաց ընդդէմ նոցա իշխանն Աշոտ և վանեաց զնոսա սրով սուսերի: - 176. Եթէ, որպէս ասացի, ի բաց գնաս յինէն՝ խաղաղութիւն է, և թէ ոչ՝ պատերազմ և կռիւ և ճակատամարտ … քո պատերազմ՝ և մեր յաղթութիւն, քո մարմին՝ և իմ նիզակ, քո պարանոց՝ և իմ սուսեր. – 278. Եւ զգեցոյց նոցա հանդերձս և կանգնեաց նշանակ իշխանական և էած սուսեր ընդ մէջ և կամար ականակապ և երիվար ընտիր մեծազարդ. – 314. և ընդ այգն ընդ առաւօտն, մինչ նոքա ննջէին յիւրաքանչիւր վրանաց օթոցի՝ և զօրքն շուրջ փակեցին սուսերօք և վահանօք և նիզակօք և վառեալ մոմեղինօք, և մտեալ ի ներքս ըստ հրամանի զօրավարին իւրեանց – 296. և կարաւան գաղթականին տեսանէր զփայլիւն զինուցն և զշողալ սուսերացն, և այսր և անդր խուճապական լեալ հալածեալս, իբրև զոչխարս ի գայլոց: - 228. և մօտ եղեալ մերկեաց զսուսերն և զսաղավարտն և զզրահսն, զոր արկեալ էր զանձամբ – 228. և նոքա հարեալ սատակեցին զնոսա սրով սուսերի յանխնայ, սպանին և զզօրավարն ի պատերազմին – 150. և ագուցեալ զոտս պատրաստութեամբ Աւետարանին խաղաղութեան և սուսեր ընդ մէջ ածեալ զբանն Քրիստոսի, որ հատու է քան զամենայն սուր երկսայրի – 252. և աղաղակեալ զկնի նորա՝ զի թերևս ի լուր ձայնին և ի փայլումն զինուցն և ի շողալ սուսերին և ի խխնջիւն քաջ երիվարին և ի վազս երագութեանն ուժոյ ազդ լինիցի և դարձցի ի ձայն նոցա և ծանիցէ, և դարձցի ի կորստական ճանապարհէն – 228. Եւ այն ինչ պատահեալ Գուրգէն հարուստ գնդի Վահանայ ի յառաւամէջս մուրին՝ ի բազում քան թէ սակաւ սուսերս ծեծեցին զնա, մինչև ոմն Ջուանշէր անուն յետուստ յանկարծ հարեալ վիրաւորեաց զԳուրգէն – 310. Եւ առ չժուժեալ այնպիսի վտանգաւոր նեղութեանն, արիաբար հասեալ ի կիրճս ձորոյն և մերկացեալ զսուսերն՝ յարձակեցան ի վերայ երիվարացն – 220. և առեալ ի ձեռանէ նորա զսուսերն շողացուցեալ՝ հայեցաւ /266/ յայսկոյս յայնկոյս և ասէ, ,,ո՛վ անարի վատ արանց և կանացի այր, թշուառական զինուոր, շուն անպիտան տեառն իւրոյ,, - 268. և արևն ի վերայ հասեալ սպառազէն զարդուն՝ և մերկ սուսերացն փայլեալ՝ ճառագայթս արեգակնայինս յինքեանց ձգէին շուրջ զլերամբն. – 208. և դահճացն հանեալ զսուսերն՝ դիմեցին ի վերայ նոցա իբրև զգազանս արիւնարբուս, և ծեծէին սրովն, իբրև ոք զի հատանիցէ փայտ ի մայրս անտառախիտս հարեալ կացնաւ, և յանխնայ անողորմ յօշէին անդամ անդամ: - 266. և դեռ զիւրաքանչիւր սուսեր ածեալ ունէին ընդ մէջ իւր և վահան ի վերայ թիկանց եդեալ. – 220. և ետ բերել նմա ըստ օրինի գլխապետութեան սուսեր իշխանական ընդ մէջ արկեալ և գօտի արիական շրջապատեալ զմիջաւ, քուքք խիզախողք և երիվար բարձրավիզ, ոտնատորոփ, խրոխտալիր, յարմարական առ ընթացս պատերազմականս: - 308. Եւ զայլս ազգի ազգի զինուորք ունէին վաղերք և վակուրք, սուսերք և սուինք, տապարք և վիրգահանք, մեքենայք և ռմբաքարք, վահանք և նիզակք: - 208. և զոր ասէն այսպիսի ինչ է. ,,վա՛յ քեզ, եղո՛ւկ դու երկիրդ Պարսից, յորժամ բազմախուռն գունդք զօրացն Յունաց ի քեզ արշաւանս եդեալ՝ հասանիցեն և հարկանիցեն զքեզ ի սուր սուսերաց, և յառաթուր սմբակաց: - 148. և էր գրեալ ի նմա թողութիւն վնասուցն և հարուածոցն զօրացն և բազում աւարացն, և երդումն ի հաստատութիւն ասացելոցն, և պարգևս ի պատուական և մեծագնի հանդերձից, և սաղաւարտ ծաղկեայ և սուսեր. – 288. Եւ ընդ առաւօտն

հրամայեաց Հայրակղոս ասպատակս սփռել ի վերայ ամենայն երկրին, և հարկանել զամենայն երկիրն սրով սուսերի: - 150. Եւ ի սաստիկ բախմանէ խուռն նիզակացն և ի զինուց փայլելոյ և շողալոյ սուսերացն և սրնգելոյ աղեղանցն լարելոյ՝ հրաձգութիւն իմն արտաքս ելանէր իբրև յամպոց ճայթմանէ – 232. և ի սաստիկ փայլմանէ զինուցն և սուսերացն շողալոյ, և ի փայլիւնն սպառազէն երիվարացն վառելոցն՝ զկարծիս բերէր զիրոյ վառեալ լերինն – 228. Եւ իբրև գիշերն տարածեցաւ և խաւարն թանձրացաւ և սկսան ամենեքին մտանել ի քուն յանձնիւր օթանոցն՝ յանկարծակի փայլիւն սուսերաց և մոմեղինաց վառելոց և գունդք խորհրդականացն և Հասան ընդ նոսա. – 348. և իբրև զմի անձն, վառեալ ի զէն և ի սուր և ի ճակատամարտ՝ հասեալ յամուրս՝ տապալէր զզօրութիւն նոցա սրով և աղեղամբ, ի փայլիւն սուսերի և նիզակի և ի գիշերամարտ նահատակութեանց, ըստ նմանութեանն քաջ զօրավարին Իսրայէլի Յեսուայ կամ Գէդէովնի կամ թէ նոյն ինքն նահապետին Աբրահամու, ի վերայ հասեալ Քանանացւոց, զյաւէտ յաղթութեան նահատակութիւն նահատակեալ՝ և դառնայ մեծաւ յաղթութեամբ: - 312. և իջուցեալ ի փայտէն հատին սուսերաւ զգլուխ նորա. – 290. և լնուն զծովակն որ յանդիման հրատին՝ դիակամբք. զխօսուն և զանասուն, զայր և զկին և զմանուկ առ հասարակ մաշեցին ի սուր սուսերի: - 148. և հատեալ զզօրսն յերկուս առաջս, և հրաման տուեալ ելանել յերկիրն Վասպուրական, ողողել գերել գերփել /200/ զաշխարհն, աւերել և բնաջինջ առնել և մաշել ի սուր սուսերի. – 202. և սուսեր ընդ մէջ ածեալ զբանն տերունական, զոր ասացն, թէ ,,յորժամ մատնիցեն զձեզ, մի՛ հոգայցէք թէ ո՛րպէս, կամ զի՛նչ խօսիցիք – 204. և սուսեր ընդ մէջ ածեալ, և հեծուցեալ ի մեծազարդ ջորւոջ, և նժոյգս առաջի և զկնի ի զարդ և ի զէն սպառազինեալ և ձայնք փողոց և դոփիւնք թմբկաց և այլ երաժշտական գործոց հնչեցուցանէին շուրջանակի. – 236. զի սուսեր մերկ ի ձեռին ունի, և միայն առանձին գայ զհետ մեր – 230. Իբրև լուաւ զայսքան և առաւել քան զսոյնս յանդուգն և առանց երկիւղի զընդդէմ պատասխանատրութիւնն մեծաւ համարձակութեամբ՝ապա հրաման ետ փութով ի կենաց բառնալ զզլուխ նորա սուսերաւ: - 296. իսկ նա առ երագութեան ձեռին ձգեալ զսուսերն՝ եհար զերեսս Ջուանշիրայն, և խլեաց զաչս նորա, և ինքն դարձաւ մեծաւ յաղթութեամբ, եմուտ յամրական տեղիսն: Եւ նոքա յո՛վ և աճապարեցին: - 310. ձայն բարձեալ արտասուալից առ Դերենիկն, և զսուսեր մերկ ի ձեռին ունելով, և վաղր և սակր մի՝ ասէ. ,,որդեա՛կ իմ Դերենիկ, ողջոյն քեզ, ողջոյն քեզ, ողջոյն քեզ. ես ելի գնացի ի յաշխարհն Յունաց,,: - 320. մինչև միահաղոյն զօրսն Աշդահակայ վատնեալ սուսերաւ՝ տիրէ Մարաց և Պարսից: - 64. վահան ի թիկունս եդեալ, սուսեր ընդ մէջ ածեալ, նիզակ ի ձեռին ունելով - 208.

ՍՈՒՍԵՐԱՄԵՐԿ - այլ և երկիւղ ոչ սակաւ ունէր զնա, զի բազում գունդք սուսերամերկաց շուրջանակի պահէին զնա: - 282. և դիմեցին քաջասրտագոյնս ի վերայ սուսերամերկք զինեալք ի մէջ ամբոխին, Արտաւազդ և Վասակ Մամիկոնեանք - 98. Եւ եղև իբրև ննջէր Գագիկ յանհոգս յանկասկածս՝ հասեալ Հասան ի գիշերի սուսերամերկ վառեալ փոքր գնդաւ, մոմեղինօք վառելովք՝ և կապեաց զնա կապանօք երկաթի: - 350. Եւ նոյնժամայն սուսերամերկք խուռն նիզակօքն ի վերայ յարձակեալ իբրև զգազանս արիւնարբուս մարդախանձս՝ սրախողխող արարեալ սպանին զնա – 352.

ՍՈՒՏ - և յայնչափ սաստիկ և անհուն ամբոխին սուտ վկայութեանն զբոլոր բարկութիւն բռնաւորին զարթուցին ի վերայ առնն, որպիսի ոչ ի միոյ ուրուք վերայ այնքան ժամանակս եհեղ զբարկութիւն իւր զօրավարն Բուխայ: - 290. Իսկ ի վերայ բազում հինիցն եկելոց ի վերայ Գուրգինի և սաստիկ պատերազմացն զոր պատերազմեցաւ յաղթող նահատակութեամբ. ոչ միայն յարտաքին թշնամեացն որ շուրջանակի պաշարէին, բազում այն էր որ ի ներքին ընտանեաց հարազատաց, ազգականաց դրժողաց, ուխտազանցաց, ստոց և ստերդմանց յուզէին աղմուկք: - 308.

ՍՈՒՏԱԿԱՍՊԱՍ - մի գուցէ մատուցեալ առ Արտաշիր ոմանց սուտակասպաս չարախորհաց կեղծաւորութիւն իմն զմէնջ առնուցուն – 114.

ՍՈՒՐ - Իսկ զսուրբն Կահայ /292/ հրամայեաց սրով սպանանել. – 294. Այլ և զռամիկ Նորագեղջ աւանին Ռշտունեաց առեալ ածեն ի տեղի վաճառուն Ոստանին Ռշտունեաց, արկեալ տոռունս ի պարանոցն հպանել ընդ սուր. – 202. այլ զի բազում նեղութիւն և սուր, ի ձեռն այսր /46/ սատանայական ուսման՝ սպառեալ կործանեաց զերկիրս Հայոց – 48. այլ մնացեալքն ի սրոյն փախստական անկանէին յամուրս մայրեացն: - 176. այլ տեսից զքեզ զինու և աղեղամբ և սրով, քաջ արամբք և ընտիր երիվարօք. – 278. այն ինչ սուր ի վերայ բերեալ դահճին՝ ձայնէ բարձր և ասէ. – 222. Այնուհետև հրաման ետ սրով բառնալ զգլուխս նոցա. – 222. Այս ամենայն վճարեցաւ Պարսից ի ձեռն յունական սրոյն: - 148. անդ հասեալ քաջացն մերոց եղբարցն երեցունց ազատագունդ սակաւաձեռն գրոխիւ ի ձմեռնային ժամանակի, և ընդ լրթնատեսիլ լուսոյն վազս ի վերայ եդեալ՝ հանդին ընդ սուր յոլովս քան թէ սակաւս: - 372. ասէ. ,,զվրէժ արեանն Մուրկայ /140/ առի ի թշնամոյ նորա արդ կա՛մ եղիցի առնել ընդ իս զխաղաղութիւն և արգելուլ զսուր քո յերկրէ իմմէ,,: - 142. Բայց երանելիս այս Գէորգ, մինչ կայր ընդդէմ սրոյն և դահիճն ծեծէր իբրև զանզգայ ինչ, և ոչ փոքր մի գիծ կարացեալ հարկանել ի մարմին սրբոյն զխոցումն սրոյն – 266. Բայց երանելիս այս Գէորգ, մինչ կայր ընդդէմ սրոյն և դահիճն ծեծէր իբրև զանզգայ ինչ, և ոչ փոքր մի գիծ կարացեալ հարկանել ի մարմին սրբոյն զխոցումն սրոյն – 266. Բայց յո՛վ ոք կամ ո՞ր աշխարհ, զոր ոչ կործանեաց Աւշին պէսպէս լլկանօք հինի ասպատակաւ, աւարառու յափշտակութեամբ, սպանմամբ սրոյ և սովոյ: - 374. Բայց եթէ այդ այդպէս ոչ եղիցի, որպէս ասացի՝ աւելի ևս տեսցես քան զոր տեսեր, սուր և պատերազմ,,: - 286. գերփեն առնուն զշէնս և զաւանս և զագարակս, կապուտ կողոպուտ թողուն ի ստացուածոց և յամենայն ժառանգութեանց, մաշեն ի սուր սուսերի զորս ի բուռն առնուին. – 102. Դարձեալ պիտոյ է մեզ դառնալ առ ի վերագոյնսն, որ նախ քան զպատերազմն Աղձնեաց եղեալ են հանգամանք գործոց ի զօրացն Տաճկաց, և թէ ո՛րպէս եկաց ընդդէմ նոցա իշխանն Աշոտ և վանեաց զնոսա սրով սուսերի: - 176. դիմեալ գայր և սա ընդ աջաթև կողմն վկայելոցն, ընդդէմ սրոյն մատուցանել զինքն պատարագ կենդանի Որդւոյն Աստուծոյ: - 222. եթէ ,,Օրէն է աշխարհակալաց արքունի խնամակալութեամբ գնալ ընդ աշխարհ իբրև առ հնազանդս, և զնեղութիւնս տառապելոց բառնալ և ի դիւր հանել իբրև զխնամարկուս, և ոչ աւազակաբար աւարել, և սրով և գերութեամբ յաւեր դարձուցանել. – 278. ես վաղ անարգեցի զքեզ, և ոչ փոքր ինչ երկիւղ կալայ ի սրտի իմում վասն քո, զի քամահելով ի վերայ քո՝ զզօրավարն քո հանդերձ զօրօքն ի սուր մատնեցի, և զաւար նորա բաշխեցի, /294/ և յերկրորդումն ոչ փոքր նախճիրս համարեցի զօրացն քոց. – 296. և ազատացն յետուստ կողմանէ սուր ի գործ արկեալ սպանին զնա, և զգլուխ նորա հատեալ առ /368/ բերդայինսն յղէին: - 370. և զազգն նորա փրկեալ ապրեցուցանէ ի սրոյն խողխողմանէ. – 76. և նոքա հարեալ սատակեցին զնոսա սրով սուսերի յանխնայ, սպանին և զզօրավարն ի պատերազմին – 150. և ագուցեալ զոտս պատրաստութեամբ Աւետարանին խաղաղութեան և սուսեր ընդ մէջ ածեալ զբանն Քրիստոսի, որ հատու է քան զամենայն սուր երկսայրի – 252. և ահա աղաղակ և փողք և քնարք և ջնարք, և վառեալ զինու և սրոյ և ամենայն պատրաստութեամբ անհուն զօրացն, մինչ գրեթէ /գրքումէ՝ գրէթէ/ ի հիմանց զլեառնն տապալել – 284. և այլքն զաղաղակ բարձեալ ի ձայնարկու աշխարանս՝ խնդրեցին զապրուստ ի սրոյ քաջամարտիկ ախոյանէն Շերեփեանն Թադէոսի: - 400. և այն ինչ ի քթթել ականն դարձուցին զղաշիկն, և զհետ մտեալ փախստէիցն սուր ի գործ արկեալ՝ դիթաւալ կուտակս կուտակս արկանէին. – 382. Եւ այս եղև, զի լցցի որ ասէ, ,,զարթի՛ր սուր ի վերայ հովուի և ի վերայ առն ընկերի նորա. – 238. և անդ նորա զդատավճիռն ընկալան ի սրոյ քաջացն Վասպուրականի, որպէս գրեցաքն – 398. և անդր գումարեալ են ամենայն զօրք և ռամիկք աշխարհիս, արք կորովիք և պատերազմողք, որք ոչ դառնան ի սրոյ. – 212. և անտի գնացեալ ի ձորն Ածանայ ի խնդիր փախստէիցն և հասեալ ի յետոյ կողմանցն՝ ի սուր և ի գերութիւն զբազումս ի նոցանէ արկանեն: - 202. Եւ առ յոյժ յանդուգն յարձակմանն բազում այն լինէր, զոր ձիովքն ընթաղրեալ դիաթաւալ կացուցանէին, քան զոր սրովն սատակէին: - 174. և առեալ

դահճին զսուրն՝ եհար զերանելին և եհատ զգլուխ նորա, և նոյնժամայն /գրքում՝ նույնժամայն/ աւանդեաց զոգին ի ձեռս Աստուծոյ: - 294. Եւ առեալ զգանձսն՝ հրամայեաց սպանանել զընծայաբերսն, և բանիցն Հայրակղի ոչ արար պատասխանի, այլ առնէր վնասս սաստիկս ի կողմանս կողմանս, աւարառութիւն և գերութիւն և սուր. – 142. և առեալ մի ոմն զսուրն՝ եհար զերանելին և եհատ զգլուխ նորա: - 206. Եւ առնէր հարուածս մեծամեծս այլազգեացն. և սատակէր զնոսա սրով և աղեղամբ, և եբարձ զամենայն ազգս Տաճկաց, որ բնակեալ էին Վասպուրական տէրութեանն: - 306. Եւ արդ քաջալերեցարուք, լերո՛ւք արք. ելէք ի վերայ աշխարհին Հայոց սովով և սրով և գերութեամբ. – 198. և գունդ անհաւատից դառնացեալ ոգւով ի վերայ կանանց և որդւոց իւրեանց ազգականաց՝ յարձակեցան ի վերայ նոցա ուժգին սաստկութեամբ և սուր ի գործ արարեալ յանխնայ կոտորեցին. – 402. և դահճացն հանեալ զսուսերն՝ դիմեցին ի վերայ նոցա իբրև զգազանս արիւնարբուս, և ծեծէին սրովն, իբրև ոք զի հատանիցէ փայտ ի մայրս անտառախիտս հարեալ կացնաւ, և յանխնայ անողորմ յօշէին անդամ անդամ: - 266. և եկեալ ի վերայ քաղաքին պաշարեն զնա, և զզօրսն մատնեն ի սատակումն սրոյ, և զպատանդսն Վասպուրականի հանեն յարգելարանէն. և գերեացն ընդարձակեն, զկապուտ նոցա բաժանեն յինքեանս: - 190. և եղև աղաղակ մեծ ի միջի նոցա և կռիւ այնքան, մինչև բազումք ի նոցանէ ի սուրս դիմեցին: - 160. Եւ երթայր զհետ և սատակէր զնոսա անչափ զօրութեամբ. և բազումք այն էին, որ մեռանն ի սրոյն Գուրգէնի քան որ մնացինն. և զօրքն զհետ մտեալ մնացելոցն հանին յերկրէն իւրեանց: - 308. և զոմանս ընդ սուր հանեալ կամէր միախաղոյն զրաւ առնել ազգին Բագրատունեաց: - 74. և զոր ասէն այսպիսի ինչ է. ,,վա՛յ քեզ, եղո՛ւկ դու երկիրդ Պարսից, յորժամ բազմախուռն գունդք զօրացն Յունաց ի քեզ արշաւանս եդեալ՝ հասանիցեն և հարկանիցեն զքեզ ի սուր սուսերաց, և յառաթուր սմբակաց: - 148. Եւ ընդ առաւօտն հրամայեաց Հայրակղոս ասպատակս սփռել ի վերայ ամենայն երկրին, և հարկանել զամենայն երկիրն սրով սուսերի: - 150. Եւ ըստ արժանի վրիժապարտութեանն լցեալ սուր տեառն բարկութեամբ խաղաց /374/ ի վերայ Աւշնի և բանակի նորա առ հասարակ – 376. և ի ձէնջ խնդրեցից երիս ինչս, և լուարուք ինձ – ի բաց արարէք յաշխարհէ զսուր և զհուր և զգերութիւն, և յերիցդ օգուտ գտանէք. – 144. և իբրև զմի անձն, վառեալ ի զէն և ի սուր և ի ճակատամարտ՝ հասեալ յամուրս՝ տապալէր զզօրութիւն նոցա սրով և աղեղամբ, ի փայլիւն սուսերի և նիզակի և ի գիշերամարտ նահատակութեանց, ըստ նմանութեանն քաջ զօրավարին Իսրայէլի Յեսուայ կամ Գէդէովնի կամ թէ նոյն ինքն նահապետին Աբրահամու, ի վերայ հասեալ Քանանացւոց, զյաւէտ յաղթութեան նահատակութիւն նահատակեալ՝ և դառնայ մեծաւ յաղթութեամբ: - 312. և իբրև զմի անձն, վառեալ ի զէն և ի սուր և ի ճակատամարտ՝ հասեալ յամուրս՝ տապալէր զզօրութիւն նոցա սրով և աղեղամբ, ի փայլիւն սուսերի և նիզակի և ի գիշերամարտ նահատակութեանց, ըստ նմանութեանն քաջ զօրավարին Իսրայէլի Յեսուայ կամ Գէդէովնի կամ թէ նոյն ինքն նահապետին Աբրահամու, ի վերայ հասեալ Քանանացւոց, զյաւէտ յաղթութեան նահատակութիւն նահատակեալ՝ և դառնայ մեծաւ յաղթութեամբ: - 312. և իբրև զքաջ հովիւն դրուատեալ ի փրկչէն՝ զանձն իւր եդ ի վերայ խաշանց ընդդէմ ապականարար գայլոցն, յարձակեալ յանխնայ դիմեցուածովք, յարիւն և յապաժոյժ, ի սատակումն և ի ծախումն սրոյ մատնեաց բոլորովիմբ զյարձակեալս նեղիչս աշխարհիս. – 312. և ինքն վիրաւորեալ սրով մեռանի ի գեօղն Գիւղիկ ի ճուաշ գաւառի, մարտիրոսական հասեալ նահատակութեան, ի վերայ խաշանցն Քրիստոսի տուեալ զանձն ի մահ: - 402. և լինել պատճառք սրոյ և գերութեան ամենայն աշխարհի,,: - 216. և լնուն զծովակն որ յանդիման հրատին՝ դիակամբք. զխօսուն և զանասուն, զայր և զկին և զմանուկ առ հասարակ մաշեցին ի սուր սուսերի: - 148. և կատարեցաւ սրով: - 202. և կեայք պանդխտութեամբ կեանս, իւրաքանչիւր ի սուր իւր գտանել զբարձ և զգահ նախարարութեան. – 110. Եւ հասեալ ի վերայ նորա թշնամիքն՝ հարին սրով: - 304. և հատեալ զզօրսն յերկուս առաջս, և հրաման տուեալ ելանել յերկիրն Վասպուրական, ողողել գերել գերփել /200/

զաշխարհին, աւերել և բնաջինջ առնել և մաշել ի սուր սուսերի. – 202. և հրաման ետ զինել վառել ի զէն և ի զարդ և ի սուր, և զընտիրս երիվարացն յիւրեանց զէնսն պատրաստել: - 228. և յանկարծակի ի մէջ գիշերին Գրիգոր ախոյեանայարձակ դիմեալ շուրջանակի փակեցին ի ներքս զբանակն, սրով և աղեղամբ /330/ վէրս մահաբերս ի վերայ եդեալ՝ յոլովք անկան ի զօրուէն. - 332. և նենգ գործեալ նմա, վասն նախանձու թագաւորեցելոյ Ասորդանի /ճիշտը՝Ասորդանիս/, երկու ևս որդիք նորա Ադրամելէք և Սանասար՝ սպանին զնա սրով, որ թագաւորեաց ամս ԺԸ – 60. և ոչ առ փոքր մի ինչ ներեաց կամ անսաց /264/ տալ տեղի պատասխանոյ, այլ հրամայեաց դահճացն տալ ի վերայ նորա զվճիռ մահու, փութով զրաւ առնել նոցա ի սատակումն սրոյ: - 266. Եւ սկսան յաւելուլ ի վերայ չարեացն այլ չարիս, զի ընդ միմեանս մարտ և կռիւս դնէին յաղագս իշխանութեանն ցանկութեան, և ճեղքեցան ի միմեանց և զօրս գումարեցին ի զերծելոցն ի սրոյն և ի գերութենէն Բուխայի. – 298. և սուր ի գործ արարեալ զերիս աւուրս՝ սպառեցին զամենայն մարդ ի քաղաքին. – 142. և սրոյ ճարակ զամենեսեան տային, խիզախելով իբրև զքաջ նահատակս. – 174. և վախճանեալ զհայրն նորա՝ ի նմին աւուր մեռանի և ինքն սրով յիւրայոցն: /ճիշտը՝ յիւրայնոցն/ - 116. և փոխանակ մանեկաց՝ զսուրն փայլեալ ի պարանոցսն ընդունէին: - 266. զբազումս տապաստ արկեալ ի սուրս իւրեանց – 98. զսա աղերսեալ տիկինն Վասպուրական Սեդայ, կին Աշոտի և դուստր Ապումրուանայ՝ զերծին զնա ի սրոյն Աւշնի: - 374. զսուրբ եկեղեցիս, զտունս աղօթից քրիստոնէից այրել աւերել հիմն ի վեր տապալել, զքահանայսն նորոյ ուխտի ի սուրս իւրեանց մաշել, զծերս և զպառաւունս մահու սրոյ սպանանել, զերիտասարդս և զկուսանս խաղացուցանել ի գերութիւն, զստացուածս և զինչս վատնել աւարառութեամբ. – 398. զսուրբ եկեղեցիս, զտունս աղօթից քրիստոնէից այրել աւերել հիմն ի վեր տապալել, զքահանայսն նորոյ ուխտի ի սուրս իւրեանց մաշել, զծերս և զպառաւունս մահու սրոյ սպանանել, զերիտասարդս և զկուսանս խաղացուցանել ի գերութիւն, զստացուածս և զինչս վատնել աւարառութեամբ. – 398. զօրս գումարէիք, այրուձի կազմէիք, մարտ և պատերազմունս գրգռէիք, ճակատ դնէիք և զզօրս մեր ի սատակումն սրոյ մատնէիք – 244. Իսկ զՎահագն Հայկազնեայ … կացուցանեն ի դրան արքունի, յառաջանալ ի գործ պատերազմին մեծաւ աշխատութեամբ՝ կամ մեռանել ի սրոյ թշնամեաց դիպելոց, կամ յաղթել քաջասրտութեամբ: - 70. Իսկ նոքա պատահեալ Պարսից ի գեօղն Երիզ կոչեցեալ, իբրև մրրիկ զփոշի պտուտեալ, իբրև հուր ընդ եղէգն ընթացեալ՝ սուր ի վերայ եդեալ վանեցին զբազումն քան եթէ զսակաւս – 136. հանեն ընդ սուր, վարեն ի գերութիւն և առնուն աւար, և ի յանցին դառնան ի Ճուաշ և ի Թոռնաւան գաւառ, անցեալ ընդ Կրճունեաց գաւառն: - 400. հնազանդեցուցին և զամենայն բնակիչս սահմանացն մերձակայից, և զապստամբսն միահաղոյն բարձին սրով: - 160. մինչև զայրանալ դահճացն, և խուռն ի վերայ դիմեալ ի մեծ հրապարակին՝ հարին սրով զերանելին և ի բաց առին զգլուխ նորա – 224. յայնժամ կերիցէ սուր զպատերազմողս քո. – 148. յորոց վերայ սուր եդեալ կոտորէին, և լնուին արեամբ զերկիրն: - 202. յորոց վերայ սուր եդեալ զբազումս սպանին և զևս բազումս վիրաւորեցին և զյոլովագոյնսն ի գերելոցն հանդերձ ընտանիւք իւրեանց զերծին ի նոցանէ և անցուցին ընդ պահակ ձորոյն յամրական կողմանս լերին: - 220. Յորոց վերայ սուր եդեալ կոտորեցին, և լցին դիակամբք սպանելոցն զդաշտաձև հովիտն: - 306. Ո՞չ ածեր զմտաւ, թէ յիսկզբանացն մինչ ցայսօր ժամանակի ամենայն ուրեք ուր և գումարէր զօրն և լինէր պատերազմ և սուր և ճակատամարտ՝ երբեմն յաղթեն և երբեմն ի պարտութիւն մատնին. – 282. ո՞վ ոք յաշխարհիակալաց ոչ մատնեցաւ ի սուր. և են իշխանք ազգաց, է ուրեք որ զօրանան, և է ուրեք որ տկարանան,,: - 282. որ կատարեցան միանգամայն սրով ի միում աւուր ի մեծի ուրբաթի զատկին: - 106. որք դատեցին ի սուրս իւրեանց, և եկեալ ի տեղի բանակի նոցա՝ առին աւար բազում - 162. պատշաճագոյն զպատերազմին խրոխտական բարձրավզութեամբ վանել զախոյեանսն, և առեալ զբանակն յաւարի, և ընդ սուր հանեալ յոլովս քան թէ սակաւս, հասին ի գոգ տեղի մի ի Մղունիս գեօղ: - 402. պատրաստ եմք ի կապանս, ի բանտս, ի գանս, ի հուր, ի սուր, ի ջուր, ի տանջանս

հարուածոց և յամենայն հնարս չարչարանաց,,: - 246. Սոյնպէս և այրն այն Յովսէփ զօրավարն Տաճկաց մնայր անցանել ձմերանն, զի ելցէ ի վերայ աշխարհիս Հայոց սրով և գերութեամբ և մեծամեծ հարուածովք և զմեծամեծս աշխարհիս խաղացուցանէ ի գերութիւն – 188. Քաջապէս մարտուցեալ Գուրգէն եղբայր իշխանին և Վահան Հաւնունի՝ առին անուն յաղթութեան, անցուցանելով ընդ սուր զկողմն թշնամեացն. – 178.

ՍՈՒՐԲ - մինչ քաղցրատենչ քունն ի վերայ հասանէր որ զպահպանութիւն գիշերոյն պահէին՝ նորա ամբարձեալ զպղծալից ձեռն ի սրբութիւն սրբոցն և առեալ զսուրբ նշան խաչին Քրիստոսի և ընդ պատուհանն արտաքս ելեալ – 378. Նոր ոմն Նաբուզարդան կամ Զամրի յայտնեալ ի յաղանդոյն Նեստորի, երեքթշուառեան վատաշուէր, վատմիրհ, զագահութեանն չարիս ախտացեալ՝ սպրդեալ եմուտ ընդ մութ գիշերին յամրական պարսպեալ բլուր, և անցեալ ի սուրբ կոչարանին օթագացեալ. – 378. Ի նմին ամի յետ վեց ամսոյ անցանելոյ փոխի և սուրբ վարդապետն Մաշտոց. – 120. զոր գործեաց ընդ սուրբսն Վրթանէս և Յուսիկ և ընդ քահանայն մեծ Դանիէլ – 98. և զուարճացեալ լինէին սուրբ ճգնաւորքն յաւուրս պենտեկոստէից. – 254. Յետ բառնալոյ թագաւորութեանն ի տանէն Արշակունեաց, և հայրապետութեանն ի տանէն սրբոյն Գրիգորի՝ Ղևոնդ ոմն աշակերտ սրբոյն Մաշտոցի տեղապահ լինէր սրբոյն Սահակայ, և Յովսէփ եպիսկոպոս և Մովսէս և Մեղէս: - 120. որ ոչ առին ի միտ լսել զպատուէր սրբոց նախահարցն: - 26. այլ ելեալ գայ ի սուրբ քաղաքն Երուսաղէմ, և անդ կեալ բարեպաշտութեամբ – 80. այլ և առ Աստուած ևս և առ սուրբսս նորա յաւակնեալ՝ յերկինս բացեալ զգայռալիր բերանն և որպէս շուն լիրբ պատուհաթափ եղեալ ածէր զլեզուն զերկրաւ: - 100. այլ որպէս արմատն՝ նոյնպէս և ուռն և պտուղն. եթէ սկիզբն սուրբ է՝ ապա և արմատն, ապա զինչ ուռն՝ նոյն և տեսակ: - 258. այլ տուն Քրիստոսի սուրբ առաքեալքն են և ասին այլոց սրբոց գրոխիւք. – 394. այլ տուն Քրիստոսի սուրբ առաքեալքն են և ասին այլոց սրբոց գրոխիւք. – 394. այն ինչ արծարծեալ առ նորոգումն շինութեան եկեղեցւոյ Քրիստոսի ի կործանմանէ հինի յետ մեծ պատերազմին սրբոյն Վարդանայ. – 134. Այս Վահանս զոր յիշեցաք՝ այն Վահան է, զոր թագաւորեցուցին նախարարք Հայոց յաւուրս սրբոյն Վարդանայ – 74. անկեալ Աղան յերեսս առաջի սրբոյն Սահակայ և առաջի սպարապետին Սահակայ՝ ընդունել զսքեմ կրօնաւորութեան մոնազնութեան անապատասէր միայնական ստանալ իւր վարս: - 114. առ ոտս նորա մեծաւ հառաչանօք՝ մի՛ յիշել զանցս զանցից անցելոց, զոր արարինն առ սուրբսն, այլ դարձեալ կալցի զաթոռ հայրապետութեանն. – 120. անկեղծաւոր և աննենգ տիրասիրութեամբ ցուցանել հնազանդութիւն հպատակութեամբ, մինչ յարիւն և յապաժոյժ նահատակութեամբ առնուլ վրէժս ի Պարսկացն հինից՝ զաւեր եկեղեցեացն Հայաստանի և զնեղութեանցն և զգերփանացն և զսաստիկ արիւնահեղութեանցն զքրիստոնէից և զուխտի մանկանց եկեղեցւոյ սրբոյ: - 134. Ապա իբրև վախճան առնոյր կարգեալ եպիսկոպոսացն որ ի Պարսից … միաբան ապա նախարարքն Հայոց եկին առ սուրբսն Սահակ – 120. առատապէս հեղեալ զգութ … և ի ձեռն հովուապետին սրբոյն Յովհաննիսի եպիսկոպոսի և ճգնաւոր քահանայի Գրիգորի, որք միշտ զողորմութեանց խնդրուածս վասն ժողովրդեանն տեառն ի վեր առաքէին, զոր օրինակ և հրեշտակն տեառն աղերսէր Աստուծոյ, ասէ – 314. Արդ եկայք դիցուք զյանդիմանութիւն սոցա առ փոքր ինչ և դուզնաքեայ ի գրոց սրբոց – 254. Բայց աղերսեալ թագաւորն զարս պատուականս, զՎասակ և զՏաճատ և զԳոտեր, որք էին ի մեծ նախարարութենէ տանն Արծրունեաց՝ զի զժողովն ընկալցին ընդ երից սուրբ ժողովոցն: - 132. Բայց Դերենիկն կալեալ զնա պահէ ի զգուշութեան, ոչ ինչ ստնանել նմա, բաց ի կապանացն յորս արկեալ էր զնա, ըստ հատուցմանն բարւոյ. առ ձեռն պատրաստ կշռեաց նմա և օրհնեցաւ ի սրբոյն Զաքարիայէ: - 320. Բայց երանելիս այս Գէորգ, մինչ կայր ընդդէմ սրոյն և դահիճն ծեծէր իբրև զանզգայ ինչ, և ոչ փոքր մի գիծ կարացեալ հարկանել ի մարմին սրբոյն զխոցումն սրոյն – 266. Բայց թէպէտ և ունէր զպատճառ զբարեկամանալն Արէտայ ընդ Աբգարու և ընդ Խուրէնայ՝ այլ Աբգար և Խուրան առ փափագումն որ ի Քրիստոս, և առ լուր սրբոյ Փրկչին, և որ ինչ գործեացն Հերովդէս՝ ոխացեալ ընդ Հերովդի – 78. Բայց իբրև եղև մեծ

պատերազմ սրբոյն Վարդանայ ընդ Մշկանին և ընդ զօրս Պարսից ի յԱւարայրեան դաշտին, յԱրտազական գաւառին. – 128. Բայց Մեհուժան Արծրունի ոչ եղեալ ունկնդիր սրբոյն Ներսէսի, և ոչ ընդ թագաւորին հնազանդութեամբ. – 102. Բայց ոչ ժամանեալ կատարման պատերազմին, զաշտարակն, զոր շինէր որդին Աբգարու փլուզեալ ի վերայ սպան զնա, վրէժխնդիր եղեալ մահուն Ադդէի սրբոյ: - 80. բարձրաճիչ աղաղակաւ քարոզեալ. իբրև բանիւ զբարբառ հնչեցուցեալ ազդեցուցանօղ իմացունակութեամբ, զգայական ազդարարութեամբ՝ զեկուցանել զպատրաստութիւն նիւթոյն առ կատարումն սրբոյ եկեղեցւոյն աւարտագործեալ: - 396. Գեղեցիկ էր և տեառն Գրիգորի Արծրունւոյ՝ ոչ անփոյթ առնել և զիւրոյ համանուանն զսրբոյն Գրիգորի առնուլ յանձն զխաւարամուտն լինել ի խորին խաւարային վիրապն կապանօք հանդերձ. – 250. գրէ առ սուրբ եպիսկոպոսն Գրիգոր Ամատունեաց տանն … գտանել զելս իրացն եկեալ հասեալ հինին. – 400. Դահեկին /ճիշտը՝դայեկին/ նորա մնալով ի ներքոյ կախաղանին՝ ամփոփէ /102/ զսուրբ գանձն ի ծոց իւր, տարեալ փոխէ ի վկայարան հանգստի ի ձեռն սրբոյն Ներսէսի – 104. Դահեկին /ճիշտը՝դայեկին/ նորա մնալով ի ներքոյ կախաղանին՝ ամփոփէ /102/ զսուրբ գանձն ի ծոց իւր, տարեալ փոխէ ի վկայարան հանգստի ի ձեռն սրբոյն Ներսէսի – 104. ետ բերել փայտս, և եդեալ ի վերայ փայտին զերանելին Սողոմոն՝ և մօտ առ փայտն կացուցին զսուրբն Կահայ, զի գոնեայ մինն ի միւսոյ տանջանացն երկուցեալ հնազանդիցի հրամանի թագաւորին: - 292. Ետ պատասխանի սուրբ հայրապետն Յոհաննէս հանդերձ մեծ նախարարօքն Հայոց և ասեն. – 244. Եւ անմիաբանք լեալ ընկեցին զսուրբն Սահակ յաթոռոյ եպիսկոպոսապետութեանն և զԱրտաշիր ի պատուոյ թագաւորութեան. – 118. Եւ յաջորդեալ փոխանակ նորա կացեալ յաթոռ սրբոյն Գրիգորի երանելին Մաշտոց, ելեալ ի կղզոյն Գեղարքունի լՃէն, զՅօհաննու Կարապետին զվարուցն բերեալ զօրինակ. – 376. Եւ ահա լոյս սաստիկ իջեալ յերկնից և ցոլացեալ ի վերայ սուրբ մարմնոյն, և շուրջ փակեալ զտեղեաւն, թէ ուրեք յարենէ նորա ցայտեալ կայր: - 224. Եւ այս ամենայն այսպէս եղեալ, կեցեալ սուրբն Սահակ ամս ՃԻ՝ փոխի յաշխարհէս ի կարգս հրեշտակաց – 120. Եւ այսպէս կատարեցաւ սուրբն ամենայաղթ նահատակն Քրիստոսի Մուկաթլ փառաւորապէս ի Հայր և յՈրդի և ի Հոգին սուրբ, որում փառք յաւիտեանս ամէն: - 290. և անդ կեցեալ և մեռեալ անձամբ զիւրովի երթեալ, ըստ սահմանելոյ ի վերայ նորա բանի առնն Աստուծոյ սրբոյն Ներսէսի: - 102. և անդ յԱստուած խրախուսեալ սուրբ աստուածաբանակ զօրացն Հայոց կատարեցան ի Քրիստոս: - 128. Եւ անդ Վահան Արծրունի խոյակապ և յականաւոր քաջամարտութեամբ ընդ սրբոյն Վարդանայ ճակատ առ ճակատ վառեալ զպատերազմն, իբրև հուր ընդ եղէգն ճեմելով ի մէջ քաջ ախոյեանացն Պարսից: - 128. և ապա մտին ի տունն Աստուծոյ, և տարածեալ զիրովարտակն առաջի սրբոյ սեղանոյն՝ անկան ի վերայ երեսաց իւրեանց յերկիր առաջի Տեառն և լացին դառնապէս – 146. Եւ առ չհանդուրժել այնքան եկեալ հասեալ վտանգաւոր նեղութեանցն, և գազանեղէն զայրացմամբ մրմռեալ յոգի իւր ի վերայ կորստեան սուրբ հաւատոյս և կործանման աշխարհիս Հայոց – 126. և առաջնորդեաց նոցա Քսերքսէս և Արշէզ մինչ ի սուրբ քաղաքն յԵրուսաղէմ. – 66. և առեալ սուրբն Ներսէս զՊապ որդի Արշակայ՝ հանդերձ յունական զօրուն թագաւորեցուցանեն զՊապ ի վերայ Հայոց ի տեղի բուն թագաւորութեանն Արշակունեաց: - 108. և ասացեալքն ի սրբոյն հանդերձ գործով զկատարումն առնու: - 100. և բազմութիւն քրիստոնէիցն … գոհացեալ միաբան ետուն փառս Աստուծոյ, որ զօրացոյց զսուրբսն և արար յամօթ զսատանայ հանդերձ գործակցովքն իւրեանց: - 268. և բանք սրբոյ Ներսէսի ընդ կենդանի բանին Աստուծոյ խառնեալ՝ դիւրագոյնս զհատուցումն արհամարհողացն հատուցանէր յօրհնութիւնս և յանէծս, անյապաղ զգործն կատարելով. – 100. և բարձեալ զմարմին սրբոյն բազմամբոխ զօրօքն Հայոց – 108. Եւ դադարումն լինէր յաւուրս սորա հինից և ասպատակաց ի վերայ երկրիս, և քաջավայելչապէս բարեձևանայր կարգ սրբոյ եկեղեցւոյ Քրիստոսի, և երկիւղ և կասկած և ոչ ուստեք: - 338. և ելեալ Աղան գնաց առ սուրբն Սահակ, և զէնընկեց եղեալ առաջի նորա՝ մերկանայր զհանդերձն զինաւորական - 112. Եւ եղև ի դառնալն սրբոյն

Սահակայ ի Պարսից՝ եկն առ նա դարձեալ Աղան Արծրունի, և ընկալաւ ի նմանէ սքեմ կրօնաւորութեան. – 120. և ետուն ի սուրբ եկեղեցին Դ ագարակս. զվանքն Փշոց և զագարակն Ահավանք, յանդիման եկեղեցւոյն որ ի կղզին, և զքարն Մանակերտ, որ է հանդէպ հարաւոյ կուսէ, և զԲերկրի և այլ բազում տեղիս – 356. և երթեալ բնակէ առանձնապէս ի Գողթն գաւառի ի տեղւոջ վարդապետութեան սրբոյն Մեսրովպայ, ճգնասէր հրեշտակակրօն վարուք, երանելի մարդկան և ահարկու դիւաց: - 120. և զայն երիս ամս կերակրեալ լինէին սուրբքն ձեռնարուեստիւք իւրեանց, որպէս զնոյն ինքն զաստուածազարդն Պօղոս, թէ ,,զպէտս իմ և որ ընդ իսն էին՝ պաշտէին ձեռքս այս,,: - 252. Եւ զայս առատապէս հեղեալ զգուլթ արարչական խնամոցն առ արարածս իւր, ողորմեալ մարդասիրապէս բարեխօսութեամբ սրբոցն – 314. Եւ զայս Եղկղեսիանոսք. բայց ինձ այսպէս թուէր, թէ աղանդն Եղկղեսիանոսաց վաղուց շիջեալ խափանեալ լինէր ի քաջաց վարդապետացն սրբոց, զոր եդն Աստուած յեկեղեցւոջ. – 254. Եւ զի զսրբոցն իսկ ասացից բանս. եթէ զիարդ ամենեքեան սուրբքն որպէս ժառանգութիւն իմն հայրենի ընկալեալ այնպէս պատահեսցին հարք որդւոց աւանդելով զպահոցն պէտս. - 26. Եւ զի զսրբոցն իսկ ասացից բանս. եթէ զիարդ ամենեքեան սուրբքն որպէս ժառանգութիւն իմն հայրենի ընկալեալ այնպէս պատահեսցին հարք որդւոց աւանդելով զպահոցն պէտս. - 26. և զՀրէայսն որ յաւուրց սրբոյն Գրիգորի հաւատացեալ էին ի Քրիստոս՝ վարեն ի գերութիւն, աւելի վտանգ նոցա քան այլոց Հրէիցն հասուցանելով վասն ի Քրիստոս հաւատոցն: - 104. և զվկայիցն անուն ժառանգեալ կատարեցան ի Քրիստոս սուրբ գունդն Հայոց, ՈՂՋ ոգիք: - 128. և զրկեալ լինին Հայք ի լուսաւոր վարդապետէն և ի քաջ հովուէն սրբոյն Ներսիսէ. – 108. և զփքինս կապարճիցն սպնգով ծածկեալ՝ զսատակչական զօրութիւնն թոռուցանէր ընդդէմ սրբոյն – 204. և զօր մահուան սրբոյն ամենայն Ասորեստան տօնախմբեալ մեծաւ ուրախութեամբ ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր - 254. Եւ թագաւորեալ Վռամ որդի Յազկերտի՝ կոչէ ի դուռն զսուրբն Սահակ Հայոց կաթողիկոս: - 116. և թողեալ զբնակելն ի Դուինն՝ ելեալ բնակեցաւ ի Նոր քաղաքին ի մեծ եկեղեցւոջն որ յանուն սրբոյն Գրիգորի շինեալ էր երանելւոյ տեառն Ներսիսի երկրորդի Հայոց կաթողիկոսի: - 358. և ի խնդրոց նախարարացն և սրբոյն Սահակայ թագաւորեցուցանէ Հայոց Վռամ երկրորդ զԱրտաշէս, որ և Արտաշիր: - 116. և ի վերայ սուրբ եկեղեցեաց և ժողովրդեան Աստուծոյ պատերազմէին: - 232. Եւ կատարեցան սուրբ վկայքն ՅԲ թուականին: - 268. Եւ կատարեցաւ սուրբ վկայն փառաւորապէս ի Հայր և յՈրդի և ի Հոգին սուրբ - 224. Եւ կարգեալ հաստատեաց Հայրակղոս զսուրբ նշանն անդէն ի տեղւոջ իւրում ի սուրբ Գողգոթայ: - 154. և կացեալ զաւուրս բազումս անթաղ՝ և ոչ ինչ ամենևին արատեցան մարմինք սրբոցն, և ոչ գոյր հոտ ժախու ի վերայ նոցա: - 268. Եւ կացեալ սուրբքն ի կապանս զերիս ամս ի ներքին բանտին: - 252. Եւ կացին եպիսկոպոսապետք Հայոց յետ մահու սրբոյն Ներսէսի ոմանք ի զաւակէ Աղբիանոսի եպիսկոպոսի Բզնունեաց, առն պատուականի, Շահակ և Զաւէն և Ասպուրակէս – 108. և կացուցին հակառակաթոռ սրբոյն Սահակայ զՍորմակ մոլի, և ապա զԲքրիշոյ Ասորի, և ապա զՍամուէլ – 118. և հանդերձեալ աշխարհին պսակելոց է ի Քրիստոսէ, հանդերձ տիկնաւն Հեղինեայ ընդ ամենայն սուրբս Քրիստոսի Աստուծոյ մերոյ. ամէն: - 80. և հասեալ յԱշտիշատ Տարունւոյ ի վկայարանս սրբոյն Յովհաննու և Մկրտչի, և Աթանագինէի վկային – 100. և հարցեալ և պատասխանեալ սուրբքն լի կատարեալ իմաստութեամբ Հոգւովն սրբով՝ զոր անմեկնելի ունէր յինքեան սուրբն. – 104. Եւ մեք հետևեալ Աստուածաչունչ գրոց՝ պահեսցուք անբիծ զհաւատս սրտից, և մաքուր զխոստովանութիւն շրթանց, ըստ սրբոյն Պօղոսի վերաբերեալ զօրինականն – 258. Եւ մինչդեռ կային կենդանի և գոհանային զՔրիստոսէ զանյաղթ զօրութենէն զոր զօրացոյց զսուրբսն մեծ ասպարիսի ի հոգևորական պատերազմին՝ ևս առաւել բարկացեալ թագաւորն՝ իբրև զինոց վառեալ բորբոքէր. – 292. և մկրտեալ սուրբ և անբիծ խոստովանութեամբ ի Հայր և յՈրդի և ի սուրբ Հոգին, ի ձեռն մեծին Գրիգորի հանդերձ ամենայն նախարարօքն Հայոց մեծաց: - 94. և յանդիմանեալ ի սրբոյն Ներսիսէ՝ արբուցանեն նմա դեղ մահու, զանխուլ կարծիս բերելով. – 108. Եւ յաւէտ

հրաշիւք յօրինէր զկարգս սրբոյ եկեղեցւոյ ուղղափառ առաքելական հաւատոց ի տէր Յիսուս Քրիստոս. – 180. Եւ յերկարեալ Աղան զողբսն, ջերմեռանդն յորդահոս արտասուաց բղխմունս առաջի սրբոյն Սահակայ և մեծ սպարապետին Սահակայ և այլոց նախարարացն. – 112. Եւ ոչ գնացեալ ըստ խրատու սրբոյն Ներսէսի Պապ թագաւորն Հայոց – 108. և որ այլ այսպիսիք զմտաւ ածեալ, որ գրեալ է ի սուրբ Աւետարանն – 264. Եւ պատուական արանցն քրիստոսասիրաց մտեալ առաջի թագաւորին՝ խնդրեցին զմարմին սրբոյն, և առեալ պատեցին և եդին ի գերեզմանին. – 254. Եւ սրբոյ վարդապետին մեր Եղիշէի, որ յայնմ ժամանակի ի Մոկաց բնակէր աշխարհին՝ եկեալ առ նա Բարծումայ, խնդրեալ զպատմողական գիրսն Հայոց, զոր գրեալ էր հրամանաւ սրբոյն Վարդանայ. – 130. և սրբոյն Վարդանայ մտրակեալ զերիվարն ի փախուստ զախոյեանսն Պարսից դարձուցեալ և զկողմն իւրոյ ձեռին գնդին զօրացուցեալ – 128. և վարեալ ի գերութիւն զՀրէայսն Ն բիւր, յաւեր դարձուցեալ զՀրէաստան և զսուրբ քաղաքն Երուսաղէմ. – 104. Եւ Վռամ … փութացաւ կոչեաց դարձեալ ի դուռն զԱրտաշիր և զսուրբն Սահակ բազմութեամբ նախարարացն Հայոց. - 118. և տարեալ հանգուցանեն զնշխարս սրբոյն յԱշտիշատ Տարօնոյ ի տեղւոջ վկայարանի սրբոյն Յոհաննու Մկրտչին և Աթանագինի վկային: - 120. և տարեալ հանգուցանեն զնշխարս սրբոյն յԱշտիշատ Տարօնոյ ի տեղւոջ վկայարանի սրբոյն Յոհաննու Մկրտչին և Աթանագինի վկային: - 120. և տարեալ հասուցանէր ի սուրբ քաղաքն Երուսաղէմ: - 154. և փոխանակ ծաղկեալ պատմուճանի գունագոյն երանգ երանգ անկուածոցն՝ զսուրբ և զվարդագոյն կարմրատեսիլ արիւնն իւրեանց ի վերայ սուրբ մարմնոյն, և փոխանակ ոսկեհուռ թագակապ զարդու պսակացն՝ զերկրպագութիւնն Քրիստոսի. – 266. և փոխանակ ծաղկեալ պատմուճանի գունագոյն երանգ երանգ անկուածոցն՝ զսուրբ և զվարդագոյն կարմրատեսիլ արիւնն իւրեանց ի վերայ սուրբ մարմնոյն, և փոխանակ ոսկեհուռ թագակապ զարդու պսակացն՝ զերկրպագութիւնն Քրիստոսի. – 266. Եւ փոխանակ նորա ժառանգէ զաթոռ հայրապետական երանելին տէր Յօհաննէս, որ և սնեալ և ուսեալ առ ոտս սրբոյն Մաշտոցի. – 376. Եւ փոխանակ սուրբ մկրտութեանն՝ հանապազ ողողանիլ ջրով, և զայն բաւական համարել ի սրբութիւն: - 164. Զայս և առաւել քան զսոյն խրատէր և ուսուցանէր սուրբ հայրապետն և քաջ հովիւն տէր Յոհաննէս կաթողիկոս Հայոց մեծաց: - 182. զի այնու դիւրաւ կարասցեն հերքել մերժել ի բաց կալ ի սուրբ հաւատոյ պարկեշտ կրօնից քրիստոնէութեան: - 124. զի անկեալ էր ի սիրտս նոցա հաւատ սուրբ առաքելոցն – 246. Զի եթէ ոչ ստուգութիւն սրտին և ճշմարտութիւն բերանոյն համամիտ առ հաւատոցն խոստովանութիւն ուղղակի մատչիցին՝ խոտան և ի բաց ընկենլի է և օտար ի սրբոյ առաքելական եկեղեցւոյ: - 258. զի կարասցէ խոտորել ի գաղտնիս զոգի սրբոյն, զզրահեալն Հոգւովն սրբոյ վերեկութեամբ – 204. զի ոչ եթէ ըստ հասարակաց սահմանաւոր մահու է, այլ ի վերայ սուրբ եկեղեցւոյ և ժողովրդեան Աստուծոյ,,: - 276. զի պայծառ սուրբ և մաքուր ոսկին յիւրումն կտակագրի պատկեր աստուածորդւոյն: - 252. զշրթունս մեր մաքրեսցուք ի մաքուր խոստովանութիւն հպելով և զմիտս մեր սուրբ պահելով ի հաւատս ճշմարիտս. – 256. զոր շինեալ էր սրբոյն Գրիգորի ի վերայ գեաւղջն Ահևականից ի կատարածի լուսաւորութեանն Հայոց: - 334. Զոր առ վայր մի ոչ առեալ յանձն սրբոյն Սահակայ՝ ասէ - 114. զոր և երանելին Կորիւն, ուսումնակից Մովսէսի և աշակերտ սրբոյն Մեսրովպայ՝ յիւրումն ստուգաբանեալ պատմութեան զայսոսիկ մեզ հաւատարմացուցանէ: - 122. զոր և Պօղոս հոգացաւ բացայայտել զ-Է աշտիճանեան մասունս ի Հոգւոյն սրբոյ աւանդեալ եկեղեցւոյ սրբոյ: - 398. զոր և սուրբքն ասեն, եթէ ձայն դակուացն և բախումն խմբիցն առ ի հեղուսել զփայտսն՝ /28/ այնպէս իբրև յորոտման ամպոյ յամենեցունց հնչէր լսելիս, ի մօտաւորս և ի հեռաւորս, առ ի յերկիւղ և ի զգուշութիւն անզգամ ազգին, թերևս դարձցին և կեցցեն. – 30. զոր ընկալեալ սուրբ հայրապետին և բարեպաշտ թագաւորին Թէոդոսի հինգ թղթովք և հինգ պատասխանեօք՝ կարգէ զսուրբ վարդապետն ընդ վարդապետութեան աթոռակալութեան սրբոյն Յոհաննու Ոսկեբերանի և այլոց քաջաց և գլխաւոր վարդապետացն – 116. Զոր հոյակապն Տրդատ

կարգադրեալ վայելչապէս հոգաբարձութեամբ զպատերազմականն հարկանել հարկս ընդդէմ հինից արշաւանաց. զոր կարգապետութիւն և առ սուրբ հրեշտակն գտանեմք /գրքում՝ զտանեմք/ յարարչական նախախնամութենէն, զաշխարհի զօգուտն բերելով: - 398. զոր շինեալ էր սրբոյն Գրիգորի – 104. զոր ոչ առ յանձն սուրբն Սահակ գրել ինչ վասն որոյ չարաբանեն զԱրտաշրէ: - 18. զոր չառեալ յանձն սուրբ տիկնոջն Համազասպուհեայ՝ տանին հանեն ի բարձրաւանդակ ամրական բերդաքաղաքն, մերկանան ի հանդերձիցն, զի քրիստոսեան փառօքն զգեցցի. – 102. Զոր վկայէ ոմն ի սրբոցն, թէ Մարգարէացաւ ութերորդն յԱդամայ Ենովք – 26. զոր տարեալ հանգուցանեն ի տեղւոջն, զոր այժմ Զորոյ վանս անուանեն, ի վկայարան սրբոց Հռիփսիմեանց. – 104. զորոյ զպաղատանս ոչ անտես արարեալ Քրիստոսի՝ ներէ նմա հանել ի գլուխ զսուրբ քառասնորդսն, խաչակից լինելով Քրիստոսի, մինչև ի պարտ զատկին – 254. զսուրբ եկեղեցիս, զտունս աղօթից քրիստոնէից այրել աւերել հիմն ի վեր տապալել, զքահանայսն նորոյ ուխտի ի սուրս իւրեանց մաշել, զծերս և զպառաւունս մահու սրոյ սպանանել, զերիտասարդս և զկուսանս խաղացուցանել ի գերութիւն, զստացուածս և զինչս վատնել աւարառութեամբ. – 398. ընդդէմ արաբացի ասպատակողացն յարիւն և յապաժոյժ ի վերայ հայրենի աշխարհի մարտուցեալ և զհոգի և զմարմին փոխանակ սրբոց եկեղեցեաց Քրիստոսի և ի նոյն հաւատացելոց ի Հայր և յՈրդի և ի Հոգին սուրբ, առ զնոսա ամբողջ և անբիծ պահելոյ – 300. ԹԷ ՈՐՊԻՍԻ ՊԱՏՃԱՌԱԻ ՀԱՍԻՆ ՈՄԱՆՔ Ի ՆՈՑԱՆԷ ՍՈՒՐԲ ԿԱՏԱՐՄԱՆՆ: - 220. Ի ժամանակին յայնմիկ էր ճոխացեալ պանծալի աթոռակալութեամբ սրբոյն Գրիգորի տէր Քրիստափոր Հայոց կաթողիկոս. - 130. ի մէջ անցեալ սուրբն Ներսէս համոզէ զնոսա և խաղաղացուցանէ զաղմուկն: - 100. Ի վեր կառուցեալ զաչս սրբոյն Վարդանայ՝ տեսանէ զանօրէնն Վասակ Սիւնեաց տէր – 128. Իբրև գիտաց բռնաւորն, եթէ յաղթեցաւ ի սրբոց արանցն, մանաւանդ ի քաջէն Գրիգորէ – 250. Իբրև գիտացին սուրբքն զանհուն պատերազմ չարին՝ վառեալ և նոքա զինքեանս հանապազակռիւ լինել ի ճակատուն, անխափան սաղմոսերգութեամբ զանուշահոտ աղօթս իւրեանց միշտ ի բարձունս առաքելով – 250. Իսկ զԳողթն գաւառ ի ժամանակի կատարման սրբոյն Վահանայ, յամի ՃՋՋ թուականութեանց, յորում ամի կատարեցաւ սուրբն Վահան, որ էր որդի Խոսրովայ Գողթան տեառն: - 390. Իսկ սուրբն ելեալ հանդերձ դահճօքն ի տեղի ասպարիսի կատարմանն երկնաւոր նահատակութեանն՝ ի ծունր իջեալ կայր յաղօթս – 206. Իսկ առ մեզ ծանուցեալ զոր ինքն ասաց, թէ Քրիստոնեայ եմ, ըստ այնմ թէ ,,ծառայի իմոյ կոչեսցի անուն նոր, որ օրհնեսցի վերայ /ճիշտը՝ի վերայ/ երկրի,,՝ գրեցաւ յիշատակարանս սրբոյն: - 224. Իսկ երանելոյն Աղանայ Արծրունւոյ որդւոյ Վասակայ դարձեալ ի Յունաց աշխարհէն՝ եկն յերկիրս Հայոց, նովին կրօնաւորական խստամբերութեամբ/132/և հրեշտակակրօն առաքինութեամբ կեցեալ՝ վերափոխի յաշխարհէս ի դասս սրբոց. – 134. Իսկ երիցս երանելի սուրբքն տէր Յոհաննէս Արծրունեաց եպիսկոպոս և երանելի քահանայն Գրիգոր և տէր Գրիգոր Արծրունի խրախուսեալք յԱստուած, կացեալ յատենի ի մեծ ասպարիսի հոգևորական պատերազմին – 250. Իսկ զսուրբն Կահայ /292/ հրամայեաց սրով սպանանել. – 294. Իսկ թագաւորն աղաչեալ /100/ զսուրբն Ներսէս զհաշտութիւն խօսել Վաղէսի ընդ Արշակայ, զոր և արար իսկ զհաշտութիւնն: - 102. Իսկ ի հասանել սրբոյն Սահակայ ի դուռն հանդերձ նախարարօքն՝ զիջանէ ցածնու Վռամ ի բարկութենէ վրէժխնդրութեան Հայոց քինահարութեան անարգանաց Շապհոյ, և ընդ Յունաց զսերտ խաղաղութիւն ունելով.- 116. Իսկ իբրև գիտաց բռնաւորն, եթէ չելին ի գլուխ կարծիքն զոր ի վերայ սրբոցն խորհեցաւ, որպէս գրեալ է, ,,կարծողն և արհամարհողն այր ամբարտաւան է և ոչ ինչ վճարեսցէ,,- 264. Իսկ հաւատացելեցն տեսեալ, եթէ բարի խոստովանութեամբ ննջեաց տէր սուրբ Գրիգոր՝ գոհութիւն մատուցանէին ամենազօրին Քրիստոսի – 254. Իսկ նախարարացն ընդդիմաբանեալ սրբոյն Սահակայ՝ իբր ոչ զնոցայն հաստատել ախորժակս – 118. Իսկ Սաթինիկ ունկնդիր եղեալ խրատու սրբոցն՝ ոչ ի բաց մերժեցաւ ի կռոցն Աստղկայ անուանեալ պատկերին – 88. Իսկ սուրբն գեղեցիկ խորհուրդ ի մէջ առեալ՝ ասէ ցբռնաւորն. – 294. Իսկ սուրբն

վառեալ Հոգւովն սրբով՝ յիշէ զասացեալն ի Փրկչէն, թէ ,,մի երկնչիք յայնցանէ, որ սպանանեն զմարմինն, և զոգին ոչ կարեն ապականել,, - 204. Իսկ սրբոյն Ներսէսի իրազէկ եղեալ չարին չարաբարոյ չարախորհրդութեանն՝ անէծս մեծամեծս և ազդոյս և զօրաւորս դնէ ի վերայ Մարդպետին – 100. Իսկ սրբոցն որ ի Սուկաւէտ լերինն, քանզի էին համաշխարհիկք և հաւատարիմք Սաթինիկայ եկեալ զկնի նորա – 88. Իսկ Վասակ Արծրունի, հայր Աղանայ սրբոյ, առեալ զՏաճատ և զԳոտեր զեղբայր իւր՝ գնաց առ կայսր. մեկուսի եղեալ ի շփոթմանց պարսկական վրդովմանցն և աւերման աշխարհիս. – 132. Իսկ Վարդան Մամիկոնեան, որդի Համազասպայ Մամիկոնէի, թոռն սրբոյն Սահակայ, խոյս տուեալ գնաց զկողմամբքն Մոկաց, ի խոխոմս Տաւրոսական լերինն, ի լեսուրս Ջերմաձորոյ – 122. Իսկ վարդապետն Եղիշէ էր ի ժամանակին յայնմիկ բնակեալ ի գաւառին Ռշտունեաց ի ծովեզերին, յորում տեղւոջ և հանգեաւ իսկ ի Քրիստոս սուրբն Աստուծոյ Եղիշայ: - 130. Իսպառ ստորն ամրականին ի գոգաձև տեղւոջն … շինեաց եկեղեցի հրաշագործ հրաշազան յօրինուածով եկեղեցի ի տաշեալ քարանց ի Մանազաւեան քաղաքին ի Վանտոսպ, և հիմնեցուցեալ յանուն սրբոյն Սիօնի, որ ի սուրբ քաղաքն Երուսաղէմ. – 390. լի արտասուօք և հեծեծանօք յիշեցեալք զվերին Սիօն մայրաքաղաքն սուրբ – 252. խնդրեցին իւրեանց կաթողիկոս զսուրբն Սահակ: - 118. Կալան և զհայրապետն Զաքարիայ, և ի խնդիր անկեալ աստուածային սուրբ նշանին՝ սկսան զնոսա տանջել, մինչև զբազումս ի պաշտօնէիցն կառափեալ սատակեցին. – 142. ճաշակեալ ճաշակս զհացն կենդանի, և զաղբիւր արեանն կենդանի և կենդանարար որդւոյն Աստուծոյ՝ աւանդեաց զհոգին ի ձեռս սրբոց հրեշտակաց – 388. մատուցեալ առ Վռամ հանդերձ Սորմակաւ ումեմն Արծկեցւոյ մոլեգնոտ փառամոլ աբեղայի՝ սկսան ազգի ազգի լեզուագարութեամբ չարախօսել զսրբոյն Սահակայ – 118. Մարկիանոս կայսր թագաւորեալ Յունաց յերկրորդն Թէոդոսի, որ արար զժողովն ի Քաղկեդոն ՈԼԳ եպիսկոպոսաց. առ որով վկայեաց սուրբն Վարդան և Վահան Արծրունի: - 132. մեռան նոքա անդ և թաղեցան փառաւորապէս ըստ օրինի քրիստոնէից յուխտէ Յակոբկաց, որ անդ են հաւատացեալ ժողովուրդք, և զխոստովանողական անուն ստացեալ փառաւորեցան յերկրի և պսակելոց են ի Քրիստոսէ ընդ ամենայն սուրբս. ամէն: - 324. Յայնժամ բարկացեալ բռնաւորն հրամայեաց նախ զլեզուն հատանել զսրբոյն, զի մի յաճախիցէ առ հասարակ զթագաւորն և զօրէնսդիրն ինքեամբ հանդերձ անարգել. – 290. Յայնժամ հրամայեաց զօրավարն քարշել զմարմինս սրբոցն արտաքոյ քաղաքին, լինել կերակուր շանց և թռչնոց երկնից.– 268. բառնալոյ թագաւորութեանն ի տանէն Արշակունեաց, և հայրապետութեանն ի տանէն սրբոյն Գրիգորի՝ Ղևոնդ ոմն աշակերտ սրբոյն Մաշտոցի տեղապահ լինէր սրբոյն Սահակայ, և Յովսէփ եպիսկոպոս և Մովսէս և Մեղէս: - 120. յղեն զոմն ի ճգնաւորացն առ տիկինն, զկռոցն յանդիմանելով զսնոտի և զանօգուտ պաշտօնն, որպէս և սուրբն Քոիւսի առ Արտաշէս: - 88. յորմէ բազում սուրբք ի Քրիստոս վկայեցան, և որպէս ասի աւելի քան ԽՌ սրբոց արանց, /104/ որք վկայեցին վասն Քրիստոսի – 106. յորոց և զկատարումն մարտիրոսական ի նոցունց բարբարոսաց ընկալաւ սուրբն Գրիգորիս ի Վատնիանեայն դաշտին: - 274. նա և հաւատարմութիւն իւրեանց առեալ զթուղթսն սրբոյն Սահակայ առ կայսրն և առ հայրապետն – 118. Նաև սրբոց հրեշտակացն ի տեսաւորութիւն ձևացեալ, որոց սարսափմամբ առ նորա զնայեցած յապուշ միտքն կրթեալ, շուրջ փակեալ զնայեցածն՝ ի հարց մատուցեալ ասէ – 386. Նոյն ժամայն ածեալ լինի սուրբն առաջի Շապհոյ – 104. Նոյն ժամայն ել հրաման յարքունուստ, զի զսուրբն Սողոմոն ի նմին փայտի սպանցեն, նետաձիգ լինել ի նա: - 292. Նոյնժամայն իբրև կատարեաց զամենայն կամս չարութեան իւրոյ ի վերայ սրբոյ եկեղեցւոյ և /262/ կործանեաց կորոյս զբազումս ի գնդէն քրիստոնէից – 264. - նոյնպէս և տանջանքն նմին նման յաւիտենականք և մշտնջենաւորք յանապատ յաւիտեանս և յանմահ խոշտանգանս՝ պղծոցն և ուրացողացն ի սուրբ և յանբիծ հաւատոց քրիստոնէութեանն. – 264. նորա լուեալ էր ի պարսկէ ումեմնէ, ի ձորոյն Շատուանոյ, որ էր ընդ դահիճսն, և ի սկզբան վկայութեան մինչ ի կատարումն սրբոյն՝ ի տեղւոջ անդ հանդիպեալ լինէր – 206. Նոքա

պատասխանեալ ասեն. ,,վասն զի մեք ի պարսկական հինիցն անդուլ և անպարապ գոլով ի բաց լքաք զկրթութիւնն գրոց սրբոց՝ առ ընտրել զհաւատոց խոստովանութեան կանոնադրութիւն. – 132. Շինեաց և եկեղեցի մի յԱմրական քարանձաւի, ի կատար քարանձաւին, յանուն քաջամարտիկ զօրավարին սրբոյն Գէորգեայ - 390. Շինէ անդ եկեղեցի վայելչապէս պայծառութեամբ և անուանէ զնա յանուն սուրբ Պետրոսի առաքելոյն անպարտելի դժոխական առաջնորդի: - 394. Ո՞վ յիմարութեան առաջնոցն. ո՞րպիսի կատաղութիւն և գիւտք դիւացն նախկին ժամանակաւ սպրդեալ մուծաւ յաշխարհ, ապստամբութիւն առ Աստուած և տրտմութիւն սրբոց հրեշտակաց, և պատճառ վտանգաւոր մահու ծառայիցն Աստուծոյ յաւուրս ապագայիցն. – 38. Ո՞չ ապաքէն դու իսկ տեսանէիր, զի մտանէի և ելանէի ի սուրբ եկեղեցին ընդ ամենայն հաւատացեալսն – 222. որ զօրացոյց զսուրբ վկայն և արար յամօթ զսատանայի: - 254. որ էր աշակարտ և հետնող սրբոց Ղևոնդեանց – 106. որ էր աշակերտ սրբոյն Սահակայ – 132. որ ընդ միմեանս երդմամբք հաստատեալ սուրբ Աւետարանաւն և տէրունական նշանաւն – 174. որ ի ժամանակին կալեալ էր զմարզպանութիւն և զզօրավարութիւն Հայոց ի խնդրոյ սրբոյն Սահակայ յերկուց թագաւորացն Յունաց և Պարսից – 116. որ ի վերայ եկեղեցեաց Քրիստոսի և սուրբ ուղղափառ հաւատոյ արեամբ չափ ճգնեալ նահատակեցան, և զխոստովանողական անուն ձայն ի վերայ եդեալ կարդային: - 132. որ յետոյ և հետնող սուրբ առաքելոցն եղեալ բազում ուսմունս ի հնոց հրէականաց նպաստաւորեաց եկեղեցւոյ գեղեցիկ օրինակօք – 34. որ նստէր ի հանգստի սրբոյն Թադէոսի առաքելոյ յԱրդոզական գաւառի – 400. որ փութացան տեսանել զնահատակութիւն սրբոցն – 266. որոյ ոսկերքն ընդ այլ սուրբսն հանգուցեալ կան ի վանսն Յադամակերտոյ: - 134. որպէս և ցուցանէ քեզ պատմութիւնք սրբոց Վարդանանց – 48. որպէս Պօղոսի հաճոյ թուի գրել յառ Եբրայեցիս թղթին, թէ ,,չէ բաւական ժամանակս պատմելոյ,, վասն դատաւորացն Իսրայէլի և սրբոց մարգարէիցն – 302. որպէս ցուցանեն յիշատակարանքն առաջնոց պատմագրաց, զաւերումն Հայոց և զյաճախել նեղութեանցն և զանթիւ բազմութիւն վկայից, որք վասն Քրիստոսի նահատակեցան,և զքաջապէս արիանալ սրբոց քահանայիցն – 128. որք լեալ էին յաշակերտութենէ Ղևոնդ քահանայի, որ ի Պարսսն մարտիրոսացաւ ընդ այլ սուրբ եպիսկոպոսսն և քահանայսն: - 74. որք մատուցեալ առ սուրբսն Սահակ զեկուցանել նմա զոր ինչ խորհինն, և թևակոխէին առ Պարսից արքայն, զոր և արարին /116/ իսկ. –118. ուր զսեղանն սուրբ և զգաւազան հովուական և զմատանին պատկերեալ և զգօտին աշխատասէր միջոյն թողեալ ի հանապազորդ յիշատակ լուսաւորութեանն մերոյ հօրն: - 104. պատմեաց նոցա զհանգամանս տեսլեանն … զբառնալ եպիսկոպոսապետութեանն և թագաւորութեանն ի տանէն Արշակունեաց, և զկարգապետել անարժանիցն, և զընտրութիւնն սրբոց – 120. սուրբքն ոչ եթէ զերևելի տեղիս ախորժեն, զի թէ ոչ այսպէս, ո՞չ նոքա զնեղ և զանձուկ կեանս կան մահու չափ,,: - 100. սրբոյ թագաւորին և քաջ նահատակին Տրդատայ զբարիոք պատերազմեալ ընդդէմ անմարմին և մարմնաւոր պատերազմողաց, փոխի յերկրաւոր աշխատութեանցս ի հանգիստ, մեծաւ պատուով թագաւորական շքեղ և երևելի դիազարդութեամբ – 96. վասն հանդերձելոցն հոգացեալ, առ կղերս եկեղեցւոյ սրբոյ խոնարհեալ – 386. քանզի յետ վախճանի Ասպուրակայ նստուցեալ էր Խոսրովու յաթոռ հայրապետութեան Հայոց զսուրբսն Սահակ որդի սրբոյն Ներսէսի. – 112. քանզի յետ վախճանի Ասպուրակայ նստուցեալ էր Խոսրովու յաթոռ հայրապետութեան Հայոց զսուրբն Սահակ որդի սրբոյն Ներսէսի. – 112. Քանզի սուրբ Գրիգոր Հայոց լուսաւորիչն ասէր, թէ ,,ի մէջ օձիցն էր բնակութիւն իմ, և կոտռային զանդամօք իմովք,,: - 252. քանզի սուրբ նահապետացն տասանց բնաւ ոչ երբէք ումեք երևի ասել ի Մէջերկրայս ունել բնակութիւն: - 30. Քանզի Վարդան անցեալ գնացեալ էր սուրբ վարդապետաւն Մաշտոցիւ առ կայսր Թէոդոս և առ Ատտիկոս արքեպիսկոպոս հանդերձ թղթովք սրբոյն Սահակայ, տանելով ընդ իւրեանց և զգիր և զբառ հայերէն դպրութեան. – 116. Քանզի Վարդան անցեալ գնացեալ էր սուրբ վարդապետաւն Մաշտոցիւ առ կայսր Թէոդոս և առ Ատտիկոս արքեպիսկոպոս հանդերձ

թղթովք սրբոյն Սահակայ, տանելով ընդ իւրեանց և զգիր և զբառ հայերէն դպրութեան. – 116. քարինս տաշահոս հոլովեալ ի նիւթ եկեղեցւոյն ի Մանազաւեանն նահանգէ ընդ Բզնունական ծովն բերեալ մատուցանէ առ կատարումն հրաշագեղ դիտանոցին սրբոյն Սիօնի, այլովքն սրբական անուանակոչութեամբ տեղեաց տնտեսականին բանին Աստուծոյ մարդ եղելոյ: - 396. Իսպառ ստորև ամրականին ի գոգաձև տեղւոջն … շինեաց եկեղեցի հրաշագործ հրաշազան յօրինուածով եկեղեցի ի տաշեալ քարանց ի Մանազաւեան քաղաքին ի Վանտոսպ, և հիմնեցուցեալ յանուն սրբոյն Սիօնի, որ ի սուրբ քաղաքն Երուսաղէմ. – 390.

ՍՈՒՐԲ ԱՒԵՏԱՐԱՆ - և առ ինքն ժողովեալ նախարարքն Հայոց՝ դնեն ուխտ և դաշինս աստուածայինս, միջնորդութեամբ սուրբ Աւետարանին – 134. և պաշտօն աւուրն ի գլուխ ելեալ, ընթերցան քահանայքն զսուրբ Աւետարանն ի տեղիս տեղիս ի բանակին – 228. և քահանայքն բարձեալ ի վեր զսուրբ Աւետարանն և նշանակ իւրեանց կանգնեալ զնշան Խաչին – 232. սրբոյ Աւետարանին հետազօտեալ կրթականին՝ մի բազմել յառաջին բարձին, ոչ եթէ ոչ ունէր նազելի և բարձրագահ պատիւս ի մէջ մեծ նախարարութեանցն Հայոց – 94.

ՍՈՒՐԲ ԳԻՐՔ - Արդ եկայք դիցուք զյանդիմանութիւն սոցա առ փոքր ինչ և դուզնաքեայ ի գրոց սրբոց – 254.

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ /եկեղեցի/ - Եւ քանդեն աւերեն զմեհեանն և յատակեալ զտեղին՝ շինեն նորին քարամբք զմեծ եկեղեցին զսուրբ Գրիգորն ի Բլուր տեղւոջն – 126.

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ - զոր շինեալ էր սրբոյ Լուսաւորչին մերոյ Գրիգորի ի դառնալն նորա ի ձեռնադրութենէ քահանայապետութեանն: - 100.

ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ - Այսպէս վկայեցին երանելիքն ի փառս սուրբ Երրորդութեանն յաւիտեանս յաւիտենից: - 294. և ընկալան զվճիռ մարտիրոսական և կատարեցան վկայութեամբ ի փառս սուրբ Երրորդութեանն – 222. և ընկալեալ զվճիռ մարտիրոսութեան կատարի ի փառս սուրբ Երրորդութեանն – 104. նիզակակիցք միմեանց եղեալք երեք տասնեակք թուովն, զսուրբ Երրորդութիւնն յօգնականութիւն /134/ իւրեանց վերաձայնեալ՝ լքին զօգնականութիւն մարդկան. – 136.

ՍՈՒՐԲ ԽԱՉ - Եւ եկաց սուրբ Խաչն տէրունական յաստուածակերտ քաղաքին մինչև ցմիւսանգամ առածն Երուսաղէմի որ յորդւոցն Իսմայէլի: - 154. Եւ կատարեալ Աշոտ զկեանս իւր՝ մեռաւ ի Վանտոսպ գաւառի, ՅԻԳ թուականութեանն Հայոց, յամսեանն հոռի, որ օր Զ էր ամսոյն, յաւուր հինգշաբաթոջ. և տարեալ հանգուցանեն ընդ եղբարս իւր ի վանս սուրբ Խաչին յԱղբագ գաւառի: - 338. Եւ յետ այսորիկ որդիք նորա Գագիկ և Աշոտ և Գուրգէն կանոնեցին զյիշատակութիւն նոցա ի տօնի սրբոյ Խաչին – 356. Եւ յետ անցանելոյ աւուր, գնացեալ Աշոտ որդի Դերանկին, առեալ զդի նորա՝ տարեալ հանգոյց առ հարս իւր յԱղբակ գաւառի ի վանս սուրբ Խաչին: - 354. Եւ ոսկեգործ ականակապ կազմեալ՝ պատեաց ոսկով զփրկագործ սուրբ խաչն, և ընդելուզեալ մարգարտով զարդարեաց զսխրագործ փայտն, հիւսնեալ ի մէջ անուշահոտ փայտից, թողեալ մասն ինչ արտաքս ոսկեպատ պահարանին, յառաջնում իւրոյ քառածրագիծ խաչակերտ փայտեղէն զգրոցկանն: - 394. Եւ տարեալ հանգուցանեն զնա ի վանս սուրբ Խաչին յԱղբագ գաւառի: - 310. և տարեալ հանգուցանեն ի նոյն վանս սուրբ Խաչին: - 356. Եւ տարեալ հանգուցանեն ի տեղւոջ հանգստարանացն իւրեանց ի սուրբ Խաչի վանս: - 318. և տիկինն Սեդայ առեալ զդի նորա տարեալ հանգուցանէ ի յԱղբագ ի գեօղն Օսի, ի վանս սուրբ Խաչին: - 384. զի յինքեանս գրաւեալ ընդ հարկաւ ծառայեցուցանէին զպաշտօնեայս սրբոյ Խաչին, մանաւանդ զի և զգլխաւոր վանացն զհայրն, որում Գրիգոր անուանէր՝ զնա կալեալ եդեալ ի խորափոր խաւարային բանտի: - 334. զոր աւանդեցին որդիք թագաւորին յետ մահուան հօր և մօր իւրեանց ի պէտս սուրբ Խաչին Աղթամարայ. – 356. Յայնժամ արձակեաց Հայրակղոս արս հաւատարիմս առ Խոռեմ վասն աստուածընկալ սուրբ Խաչին. – 154. մինչ քաղցրատենչ քունն ի վերայ հասանէր որ զպահպանութիւն գիշերոյն

պահէին՝ նորա ամբարձեալ զպղծալից ձեռն ի սրբութիւն սրբոցն և առեալ զսուրբ նշան խաչին Քրիստոսի և ընդ պատուհանն արտաքս ելեալ – 378.

ՍՈՒՐԲ ԿՏԱԿԱՐԱՆ - Բարձեալ ևս ընդ իւր զսուրբ կտակարանս աստուածաշունչ գրոց բազմութեամբ պաշտօնէից քահանայական դասուց: - 186.

ՍՈՒՐԲ ՀՈԳԻ - ,,Քրիստոնեայ եմ և մեռանիմ վասն Քրիստոսի, և մկրտիմ ի Հայր և ի յՈրդի և ի Հոգին սուրբ, ոչ ջրով, այլ իմով արեամբ: - 222. Ետ պատասպանի երանելի Մուկաթլ լի հաւատովք և ճշմարիտ խոստովանութեամբ ի Հայր և յՈրդի և ի Հոգին սուրբ, ասէ. – 290. Եւ այսպէս կատարեցաւ սուրբն ամենայաղթ նահատակն Քրիստոսի Մուկաթլ փառաւորապէս ի Հայր և յՈրդի և ի Հոգին սուրբ, որում փառք յաւիտեանս ամէն: - 290. և աւանդեաց զոգին երանելին Յովնան ճշմարիտ խոստովանութեամբ ի Հայր և յՈրդի և սուրբ Հոգին, որում փառք յաւիտեանս: - 296. Եւ կատարեցաւ սուրբ վկայն փառաւորապէս ի Հայր և յՈրդի և ի Հոգին սուրբ - 224. և հարցեալ և պատասխանեալ սուրբն լի կատարեալ իմաստութեամբ Հոգւովն սրբով՝ զոր անմեկնելի ունէր յինքեան սուրբն. – 104. և հաւատալն նորա ի մի Աստուած Հայր և մի Որդի նորա ի Բանն Աստուած Յիսուս Քրիստոս և ի մի Հոգի սուրբ, զուգակից և բնութենակից և փառակից Հօր և Որդւոյ, ի մի Աստուածութիւն կատարեալ. – 94. և մկրտեալ սուրբ և անբիծ խոստովանութեամբ ի Հայր և յՈրդի և ի սուրբ Հոգին, ի ձեռն մեծին Գրիգորի հանդերձ ամենայն նախարարօքն Հայոց մեծաց: - 94. և ոչ եմ բաւական պատմել զանցս անցիցն կորստականութեանն նոցա մոլորութեան, վրիպել յուղիղ և յամբիծ առաքելաքարոզ դաւանութեան հաւատոց կաթողիկէ եկեղեցւոյ ի Հայր և յՈրդի և ի Հոգին սուրբ. – 240. և փոխանակ զգեստու հարսանեաց զգեստ մկրտութեանն ծանուցեալ ցուցին, զոր ջրով և Հոգւովն սրբով զգեցեալ էին – 266. զի կարասցէ խոտորել ի գաղտնիս զոգի սրբոյն, զզրահեալն Հոգւովն սրբոյ վերեկութեամբ – 204. զոր եցոյց նմա Հոգին սուրբ՝որ ինչ առ յապա ժամանակս գործելոց էր – 120. զոր և Պօղոս հոգացաւ բացայայտել զ-Է աշտիճանեան մասունս ի Հոգւոյն սրբոյ աւանդեալ եկեղեցւոյ սրբոյ: - 398. զսեղանս խորհրդականս փրկագործութեանն յատակել, հիմն ի վեր /գրքում՝ վերայ/ տապալել զաւազանն մաքրափայլ լուսաւորութեանն Հոգւոյն սրբոյ - 124. ընդդէմ արաբացի ասպատակողացն յարիւն և յապաժոյժ ի վերայ հայրենի աշխարհի մարտուցեալ և զհոգի և զմարմին փոխանակ սրբոց եկեղեցեաց Քրիստոսի և ի նոյն հաւատացելոց ի Հայր և յՈրդի և ի Հոգին սուրբ, առ զնոսա ամբողջ և անբիծ պահելոյ – 300. միանգամայն սաստկացուցանէր ի վերայ նորա զահարկութիւնն, զի գոնեայ այնու կարասցէ արդեօք վրիպեցուցանել ի ճշմարիտ հաւատոցն որ ի Հայր և յՈրդի և ի Հոգին սուրբ. – 294. Նոյնպէս եթէ ոչ հաւատք սրտի և խոստովանութիւն շրթանց ամբողջ պահիցին՝ ոչ կարասցէ հետևել ճշմարիտ դաւանութեանն ի Հայր և յՈրդի և ի Հոգին սուրբ – 256. Իսկ սուրբն վառեալ Հոգւովն սրբով՝ յիշէ զասացեալն ի Փրկչէն, թէ ,,մի երկնչիք յայնցանէ, որ սպանանեն զմարմինն, և զոգին ոչ կարեն ապականել,, - 204. վրիպել յանբիծ և յուղիղ յառաքելաքարոզ հաւատոցն ի Հայր և յՈրդի՝ և ի Հոգին Սուրբ: - 196.

ՍՈՒՐԲ ՀՌԻՓՍԻՄԷ - Եւ անտի դարձեալ դառնայր Աշոտ ընդ միւս ևս ամրականն ընդ ոստոզերծ քարանձաւի, ի յարևելից կուսէ լերինն Վարագայ, ի վերայ գեաւղջն Կոխպանից, հանդէպ եկեղեցւոյն սրբոյն Հռիփսիմեայ – 334.

ՍՈՒՐԲ ՄԱՐԻԱՄ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ - շինեալ նորոգեաց և զեկեղեցին որ ի նմա յանուանակոչութիւն սուրբ Աստուածածնին Մարիամայ և զարդարեաց զնա մեծագանձ սպասուք և եդ ի նմա գԽաչն, զոր յիշեցաք վերագոյնն, յորոյ ձեռն ծանուցաւ զօրութիւնն հրաշագործ: - 390.

ՍՈՒՐԲ ՆՇԱՆ - Եւ գումարեալ Հայրակղի զամենայն զօրս իւր յորդոր և խնդալից սրտիւ, բազմութեամբ զօրաց ել ընդ առաջ սուրբ նշանին, ի պատիւ հրաշալի և երկնաւոր գանձուն – 154. Եւ խնդրէ ի նմանէ խնդիրս, ,,առաջին, ասէ, զաստուածընկալ սուրբ նշանն, զոր գերեցեր յԵրուսաղէմէ՝ /152/ խնդիր արարեալ մեծաւ փութով այսրէն դարձուսցես,,: - 154. Եւ կարգեալ հաստատեաց Հայրակղոս զսուրբ նշանն անդէն ի

տեղւոջ իւրում ի սուրբ Գողգոթայ: - 154. Յայնժամ տեսեալ Երուսաղէմացւոցն զանհնարին դիպուածսն անօգնականութեանն՝ առին զաստուածային սուրբ նշանն տէրունական հանդերձ այլ սպասիւք եկեղեցեացն, փախուցին ի քաղաքն թագաւորական ի Կոստանդին. – 162.

ՍՈՒՐԻԱ - Եւ զօրուն գնացեալ անտի ձմերեցին ի Սուրիա: - 144.

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ - Բայց երկու ոմանք ի սաղարաց սուրհանդակաց, եղբարք միմեանց, հասեալ ի կիրճս ձորոյն – 202. Եւ ետ նմա սուրհանդակս և մեկնակազէնս և սակրաւորս և կափաւորս - 218. և կոչին սոքա մեկնակազէնք սուրհանդակք, բնակեալք ի լերինն որ բաժանեն ընդ Աղձնիս և ընդ Տարօն: - 192. Տեղեկանայր … և քանի՛ սաղարք սուրհանդակաց իցեն: - 198.

ՍՈՒՓԱՆ - Անկեալ էր յայնժամ ի պատերազմին Աշոտ Հայկազնեայ Գեղարքունեաց իշխան, որ Սուփանայ որդին ճանաչէր. – 368.

ՍՈՓԻ - Բայց տիկինն Սոփի կեցեալ յետ մահու Դերանկին զտարի մի և զամիսս Ը՝ յաւելաւ առ հարս իւր. – 356.

ՍՈՓՈՆԻԱՅ ՄԱՐԳԱՐԷ - Եւ լցաւ ասացեալն ի Սոփոնիայ մարգարէէն, թէ ,,եղիցի յաւուր յայնմիկ ձայն ի դրանէ օցոտելոցն և գոյժ յերկրորդ դրանէն և բեկումն ի վերայ բլրոց: - 180.

ՍՊԱՅ - Եւ բացեալ զմթերս գանձուցն բաշխէր առատապէս ամենեցուն իւրոց սպայիցն: - 168.

ՍՊԱՆԱՆԵԼ - Կինն Սահակայ որդւոյ Իսմայէլի, զորոյ զհանգամանսն ցուցաք, զմեռանելն Սահակայ և զկնոջն հրապարակագոյժ լինել, վասն որոյ պատճառանաց սպանանի այրն նորա. – 326. ապա անարգեաց զնա և Կաւատ արքայ, եհատ ի վերայ նորա դատաստան մահու, և հրամայէ արանց մտանել և սպանանել զնա. – 152. Բայց ոչ ժամանեալ կատարման պատերազմին, զաշտարակն, զոր շինէր որդին Աբգարու փլուզեալ ի վերայ սպան զնա, վրէժխնդիր եղեալ մահուն Աղդէի սրբոյ: - 80. Երրորդ՝ խժաբար նենգութիւնն, զոր անփրկանակ ի ծնօղացն մեկուսի տարեալ սպան տարապարտ: - 24. և ազատացն յետուստ կողմանէ սուր ի գործ արկեալ սպանին զնա, և զգլուխ նորա հատեալ առ /368/ բերդայինսն յղէին: - 370. և գնացեալ միաբանութեամբ ի Կոստանդնուպօլիս՝ սպանին զՄուրիկ թագաւոր և նստուցին զՓոկաս յաթոռ թագաւորութեան: - 140. և նոքա հարեալ սատակեցին զնոսա սրով սուսերի յանխնայ, սպանին և զզօրավարն ի պատերազմին – 150. և անդ սպանանի արքայն ի Քուշանաց. – 128. և անդ սպանին հրամանաւ կայսեր, թագաւորեալ ամս Ջ: - 108. Եւ անդէն իսկ և իսկ փութացաւ, եհաս գուժկան առ թագաւորն, եթէ սպանաւ զօրավարն քո և ապստամբեաց ի պետութենէ քումմէ աշխարհն Հայոց: - 190. Եւ առեալ զգանձսն՝ հրամայեաց սպանանել զընծայաբերսն, և բանիցն Հայրակղի ոչ արար պատասխանի, այլ առնէր վնասս սաստիկս ի կողմանս կողմանս, աւարառութիւն և գերութիւն և սուր. – 142. և դարձեալ անտի սպան և զմայր իւր զՏաճատուհի – 106. Եւ դարձեալ՝ եթէ յարոյց ինձ Աստուած զաւակ այլ՝ փոխանակ Հաբէլի զոր սպան Կայէն: - 24. և ելեալք ի վերայ Փառանու՝ արարին մեծ խորտակումն դիմադարձացն, սպանին և զԱպղջէհրն և զբազումս ի զօրէն Ամովնացւոց և Մովաբացւոց – 160. և Խ արամբք ի դիմի հարեալ հազարի միոյ՝ սպան զբազումս ի նոցանէ զընտրելոցն Յունաց – 302. և ծառայն զչարիս խորհեալ սպանանել զԴերենիկն և զաշխարհս նուաճել զիշխանութիւն Գուրգինի, զի և դիպող էր ժամն: - 320. և կարգեցին հրամանատար ի դրանն զԽոռոխ Որմզդ, որ և սպանաւ ի բամբշանէն որ կոչէին Բոր: - 154. Եւ մի ոմն մերկանայր զկօշիկս ոտիցն նորա. և հարեալ աքացի զվատ այրն հանդէպ սրտին՝ և սպան զնա: - 304. և նենգ գործեալ նմա, վասն նախանձու թագաւորեցելոյ Ասորդանի /ճիշտը՝Ասորդանիս/, երկու ևս որդիք նորա Ադրամելէք և Սանասար՝ սպանին զնա սրով, որ թագաւորեաց ամս ԺԸ – 60. Եւ նոյնժամայն սուսերամերկք խուռն նիզակօքն ի վերայ յարձակեալ իբրև զգազանս արիւնարբուս մարդախանձս՝ սրախողխող արարեալ սպանին զնա – 352. և սպանանի Գուրգէն իշխան որդի կորապաղատին նենգութեամբ ի զօրագլխացն Ահմաթայ, այր քաջ և երևելի և քաջայայտ ի մէջ Հայաստանեայցս: - 358. Եւ Վահրամ գնաց փախստական և անկաւ ի Բախղ Շախստան.

որ և յետոյ իսկ սպանաւ ի հրամանէ Խոսրովայ: - 140. և փախուցեալ նա անկաւ ի զօրն Թետաղաց, որ էին եկեալ նմա յօգնականութիւն, որ և սպանին զնա հրամանաւ Իսմայէլի, կալեալ զթագաւորութիւնն ամս Ի: - 166. Զայսու ժամանակաւ թագաւորեալ Աղէքսանդր Մակեդովնացի տիեզերակալութեամբ երագահաս հասեալ ի վերայ Դարէհի սպանանել զնա. և բառնայ զթագաւորութիւնն Պարսից Արշաւրեան: - 68. զի Քրիստոսն այն, որ զանձն իւր ոչ կարաց ապրեցուցանել ի Հրէիցն, այլ կալան զնա և սպանին ի վերայ փայտի՝ իսկ արդ զքեզ զիա՞րդ կարէ ապրեցուցանել ի ձեռաց իմոց: - 146. զոր սպան Աղէքսանդրոս Մակեդովնացի - 166. զոր սպան Ստախրացին Արտաշիր որդի Սասանայ –166. զսուրբ եկեղեցիս, զտունս աղօթից քրիստոնէից այրել աւերել հիմն ի վեր տապալել, զքահանայսն նորոյ ուխտի ի սուրս իւրեանց մաշել, զծերս և զպառաւունս մահու սրոյ սպանանել, զերիտասարդս և զկուսանս խաղացուցանել ի գերութիւն, զստացուածս և զինչս վատնել աւարառութեամբ. – 398. Ընդ ժամանակսն ընդ այնոսիկ մինչ ճոխացեալ մեծամեծս փքայր Ջափրմոթոքլ ի վերայ քրիստոնէից, որպէս Սենեքէրիմ նախնին մեր ի վերայ Երուսաղէմի և ժողովրդեանն Իսրայէլի՝ յեղակարծում հասեալ ի վերայ նորա որդին իւր Մոթէին սպան զնա – 318. Իբրև լցան ամք Ը Փոկայ՝ սպանաւ և նա ի Հայրակղէ, որ դաւեալ նմա՝ էառ զթագաւորութիւն նորա: - 140. Իսկ ասելն՝ ամենայն որ սպանանէ զԿայէն՝ եօթն վրէժս լուծցէ – 22. Իսկ զսուրբն Կահայ /292/ հրամայեաց սրով սպանանել. – 294. Իսկ ի զօրացն Հայոց զսակաւս յաննշանից ոմանց սպանին, և զտէր Գուրգէն վիրաւորեցին: - 178. Իսկ իբրև գիտացին եթէ սպանաւ զօրավարն, և խորտակեցաւ բազուկ աջոյ ձեռին, եղեալ ի փախուստ դարձան – 306. Իսկ Խոռեմայ առեալ զզօրսն երթեալ ի թագաւորանիստն, հրաման տուեալ այլոց ոմանց՝ սպանին զտղայ թագաւորն զԱրտաշիր: - 154. իսկ նա քանզի ի հրեշտակէ ասէր ունել պատգամ և ոչ ի մարդոյ՝ յոյժ դժուարեալ ընդ իրսն՝ սպան զնա ի գաղտնիս: - 162. Իսկ սուրբն վառեալ Հոգւովն սրբով՝ յիշէ զասացեալն ի Փրկչէն, թէ ,,մի երկնչիք յայնցանէ, որ սպանանեն զմարմինն, և զոգին ոչ կարեն ապականել,, - 204. Կինն դարձեալ ճիչ բարձեալ ասէ. ,,վասն իմ սպաներ զտէրն իմ. ես ոչ վայել եմ քեզ կին, այլ մեծի թագաւորին,,. – 272. Հրամայեաց և զեղբարսն իւր սպանանել – 152. մի՞թէ ոչ կարէին Հոռոմք սպանանել զնա, և բառնալ զթագաւորութիւնն Պարսից ի ժամանակի, իբրև ետ Աստուած զսա ի ձեռս մեր. այլ արարին ի վերայ նորա ողորմութիւն: - 144. Յամի ութերորդի Մուրկայ թագաւորի, թագաւորն Պարսից Որմզդ որ ի տանէ Սասանայ՝ սպանաւ յիւրոց հաւատարմաց – 136. Յետ նորա թագաւորէ եղբայր Սենեքերիմայ…<փութ>ապէս մեռանի ի Մարութաքբաղդան, իբրև … ունէր զվեց ամիս, սպանաւ և նա ի միջոէ ումեմնէ որում անունն էր Ներեղիբդ և թագաւոր էր. – 60. յորոց վերայ սուր եդեալ զբազումս սպանին և զնս բազումս վիրաւորեցին և զյոլովագոյնսն ի գերելոցն հանդերձ ընտանիւք իւրեանց զերծին ի նոցանէ և անցուցին ընդ պահակ ձորոյն յամրական կողմանս լերին: - 220. Նոյն ժամայն ել հրաման յարքունուստ, զի զսուրբն Սողոմոն ի նմին փայտի սպանցեն, նետաձիգ լինել ի նա: - 292. որ առեալ զթագաւորութիւնն Պարթևաց՝ տևեաց մինչև ի ժամանակս Յազկերտի, որ վերջին կացեալ թագաւոր Պարսից՝ սպանաւ ի Տաճկաց: - 166. որ սպան զհայր իւր Վահան և զմայր իւր Տաճատուհի վասն պարսկականին հնազանդութեան մոգութեան օրինացն – 110. որք ի միում ժամու սպանան արք Խ, ամենեքեան ի չափ հասակի եկեալ: -152. որք մտեալ քարտակատեցին զնա տապարօք ի սենեկի անդ և սպանին: - 152. սպանաւ ի խոռն անդ և եղբայր Ովային – 178.

ՍՊԱՆԴԱՆՈՑ - Իսկ Վահրամ տեսանէր զնա մերձ առ սպանդանոցն. – 222.

ՍՊԱՆԴԱՐԱՄԵՏ - և երկիր պանդոկի Սպանդարամետ աստուծոյ է – 48.

ՍՊԱՆԵԱԼ - բարձեալ և զդին սպանելոյն տարան ընդ իւրեանս ի պարծանս իւրեանց: - 354. և եղև թիւ սպանելոցն ՌՊ, թող զբազում վիրաւորսն զկողոպուտն և զձերբակալսն: - 232. և զինքն կերպագրեալ յորդին իւր սպանեալ ի Կայենէ: - 22. և զտարի մի կացեալ մարմինք սպանելոցն անյօշելիք ի գազանաց և ի թռչնոց: - 368. և կացին մնացեալ անդր մինչև ի դարձն Արտաշէսի որդւոյ Սանատրկոյ, որ եկեալ այսր թագաւորեաց, սպանեալ

զԵրուանդ: - 82. Եւ հրամայեցին համար առնել անկելոց դիակացն, գտաւ թիւ սպանելոցն ՃԷՌ մարդ: - 142. և դաշիկ արարեալ յայնկոյս քան զՎանտոսպ, ի տեղւոջն արձանաշար քարակարկառ գոգաձև միջոցի երկուց բլրակաց, որ հայի յԵրիվարաց արկման դաշտն, ի վերայ Լեզւոյ գեաւղջն, որ զաւրացն գեղեցիկ առասպելաբանեն սպիանած վերայն սպանելոցն ի մանկանցն Շամիրամայ: - 334. և որպէս ասեն՝ աւելի քան զհինգ հազար լեալ թիւ սպանելոցն. – 368. և սպանեալ զոստիկանն Պարսից, որ էր ի վերայ նոցա, և ինքեանք պատրաստեալ ի պատերազմ ընդդէմ Պարսից: - 142. և քամուածք ջրոյն որ ի ծորձորացն ի վայր զեղուին՝ յարիւն դառնային ի բազմութենէ սպանելոցն. – 178. Իսկ ընդ աւուրսն ընդ այնոսիկ սպանեալ էր Ութմանկացն, որ յամուրսն նստէին՝ զՌստոմ Վարաժնունի, որ զտանուտերական պատիւն յայնժամ ունէր զՎասպուրական աշխարհիս. – 332. յական քթթել ելից դիակամբք սպանելոցն և վիրաւորացն զերեսս դաշտին. – 400. յայտնի և յանդիման կացուցանել զթիւ սպանելոցն ոչ առնուին յանձն, թէ Ջ այր միայն հզօր ձեռամբ յաղթեցին ԺԵ հազարացն. – 234. Յորոց վերայ սուր եդեալ կոտորեցին, և լցին դիակամբք սպանելոցն զդաշտաձև հովիտն: - 306. Բայց Գուրգէն ընտրեաց զսէրն Քրիստոսի, քան զսէր փոքրամեայ աշխարհիս. ոչ խնդրելով զվրէժ արեան սպանելոյ հօր նորա ի պապոյն նորա – 320.

ՍՊԱՆԻԱՑԻՔ - մինչ տայր պատերազմ ընդ Սպանիացիսն վասն ոսկեհան տեղեացն. – 80.

ՍՊԱՆՈՂ - Որով ընթադրեալ զսիրողական երախտիս Արարչին, միանգամայն և զպատուէրն՝առ սպանողն հատուածեցաւ - 20.

ՍՊԱՆՈՒՄՆ - անտրտում խնդութեամբ դիմեցին ի տեղի սպանմանն, իբրև ի հարսանիս երիտասարդական ամուսնութեանն, ուրախ լինել որպէս փեսայ առ հարսին. – 266. Բայց Գուրգէն խոկայր զմասն աշխարհին յինքն գրաւել, մանաւանդ զՈստանն Ռշտունեաց, որ էր տեղի սպանման հօր իւրոյ, գինս արեան զնա համարելով: - 362. Բայց յո՛վ ոք կամ ո՞ր աշխարհ, զոր ոչ կործանեաց Աւշին պէսպէս լլկանօք հինի ասպատակաւ, աւարառու յափշտակութեամբ, սպանմամբ սրոյ և սովոյ: - 374. Եւ առեալ դահճացն զերանելին՝ ածին ի տեղի սպանմանն. – 296. Եւ են գազանաբարոյք, արիւնարբուք, առ ոչինչ համարելով զսպանումն եղբարց հարազատաց, նա և զանձանց ևս. – 192. և ընդ նմա Շապուհ յԱմատունի տոհմէ, այն որ գործակիցն եղև Գագկայ առ սպանումն Ապումրուանայ, զոր վերագոյնն յիշեցաք – 372. և միաբան զաղաղակ բարձեալ ասէին, ,,Աստուած, յօգնել մեզ նայեաց, և Տէր, յընկերել մեզ փութայ,, և որ ի կարգին, ,,զի վասն քո մեռանիմք զօրհանապազ, համարեցաք որպէս զոչխար ի սպանումն,,: - 266. և որք ի տանէն Ամատունեաց՝ Շապուհ և Վահան և Սարայ եղբարք միմեանց, Ապուսակր Վահունի և այլք ընդ նոսա, միաբանական խորհրդակցութեամբ խորհրդածեալ ընդ Գագկայ առ ի սպանումն Ապումրուանայ – 368. Եւ սաղմոսէին միաբան՝ ,,վասն քո մեռանիմք զօրհանապազ. համարեցաք որպէս զոչխար ի սպանումն,,: - 250. միանգամայն խորհէր վրէժխնդիր լինել ազգին Մամիկոնէից վասն սպանման Մեհուժանայ հաւտյն իւրոյ: - 112. Նորա խորհեալ հաստատնագոյնս վասն Ապումրուանայ՝ քաջասրտագոյնս լինել ի սպանումն. – 368. Որ ապա յետ սպանմանն Սենեքերիմայ յորդւոց իւրոց՝ բուռն գնդաւ Ադրամելէք և Սանասար գան մտանեն ի լեառն Սիմ - 16. որպէս և յետոյ ընդ Պիղատոսի խնդրեցին զվրէժ սպանման Մկրտչին և հալածանացն Քրիստոսի. – 78.

ՍՊԱՌԱԶԷՆ - Աշոտ մտրակեալ զիւր ասպայզինեալ երիվարն սպառազէն կազմեալ ի մարտ պատրաստել – 334. Ապա այնուհետև դարձեալ յղեաց զՀամդոյ զՊարսից ամիրայ, և ի զօրաց արքունի զՀէթմ ազգաւ թուրք, և ընդ նոսա հեծեալս Ժ հազարաց, կազմեալ սպառազէն պատրաստեալ բարձրագոյն քան զառաջինն – 234. Եւ ամենեցուն ըստ հրամանի թագաւորին յիւրաքանչիւր կողմանց այրուձի գումարեալ՝ հանդերձ այլովք սպառազէն յօրինուածովք անյապաղ երագութեամբ գային ի ժամադրեալ կոչումն: - 198. Եւ այնչափ և առաւել քան զսոյն կազմութեան սպառազէն պատրաստութեանն՝ սաստիկ տարակուսանօք և մեծ երկիւղիւ պակչէին յահէ հայկասիրտ իշխանին և յաղթող նահատակին մեր Աշոտոյ – 210. և արևն ի վերայ հասեալ սպառազէն զարդուն՝և մերկ

սուսերացն փայլեալ՝ ճառագայթս արեգականայինս յինքեանց ձգէին շուրջ զլերամբն. – 208. և գրեթէ /գրքում՝ գրէթէ/ ոչ ամենևին ուրեք երևեցաւ այնպիսի ահաւոր տեսիլ զօրու և սպառազէն կազմութեան՝ ամենայն թագաւորաց, որ կացեալ էին ընդ ծագս տիեզերաց. զորոյ սաստիկ և ահագին որոտումնն և ճայթումնն և փայլիւն զինուցն, և որ ինչ յայնժամ զարդարեալ և զինեալ պատրաստեցան զօրքն Տաճկաց: - 284. և եհաս ի վերայ նորա վառեալ զինու սպառազէն երիվարաց ընտիր հեծելովք այրուձիոյ: - 178. և զերիվարսն և զհեծեալս նոցա զինեալ սպառազինուք – 208. և զի մի մի թուիցէ յանուանէ զյաճախութիւն զինուցն և զսպառազէն կազմութեանցն զձիոցն և զհեծելոց նոցա. – 280. և ի սաստիկ փայլմանէ զինուցն և սուսերացն շողալոյ, և ի փայլիւնն սպառազէն երիվարացն վառելոցն՝ զկարծիս բերէր զիրոյ վառեալ լերինն – 228. Եւ կորեան ի զօրացն Պարսից յաւուր յայնմիկ սպառազէնք հեծելոց ԴՌ հանդերձ նաւօք իւրեանց: - 146. յայնժամ ահագինս որոտալով ճայթիցէ ի վերայ քո երկինք, և լսիցէ հնչիւն և բոմբիւն և դղրդիւն յանդնդոց, ձայն որոտալոյ սմբակաց բազում ամբոխից երիվարաց և աղաղակ բազում սպառազինաց յարձակեսցին ի վերայ քո. - 148. որոյ գնացեալ առնու յինքն զԳագիկ և յղէ սպառազէն պատրաստութեամբ ի Վանտոսպ առ տիկինն Վասպուրական, և պահել ի զգուշութիւն: -350. Սոքա ամենեքեան վառեալք սպառազէն պատրաստութեամբ և բազմաձեռն առատալիր պատարագօք՝ գնացին, զի առեալ տարցեն մուծցեն զնա ի Դուին քաղաքն: - 340. Տեղեկանայր … և զայն ևս, թէ քանի՛ սպառազէնք են – 198. Քանզի վաղիւ առաւօտուն ցուցանեմ ձեզ փիղս վառեալս, և ի վերայ հզօր սպառազէնս ի քաջաց – 138.

ՍՊԱՌԱԶԻՆԵԱԼ - Եւ իսկոյն անյապաղ յական քթթել սպառազինեալ այրուձի պնդակազմ /366/ պատրաստութեամբ, ռազմ բոլորեալ ղաշիկ դիմացուածով զմարտն գրգռեալ - 368. և սուսեր ընդ մէջ ածեալ, և հեծուցեալ ի մեծազարդ ջորւոջ, և նժոյգս առաջի և զկնի ի զարդ և ի զէն սպառազինեալ և ձայնք փողոց և դոփիւնք թմբկաց և այլ երաժշտական գործոց հնչեցուցանէին շուրջանակի. – 236. Նոքա վազս առեալ ճեպով խուռն յարձակմամբ սպառազինեալ այրուձիոց. – 352.

ՍՊԱՌԱԶԻՆՈՒԹԻՒՆ - Եւ այլք յաւագ նախարարացն գնացին ամենայն պնդակազմ սպառազինութեամբք ի Պարսս՝ հնազանդել ընդ ձեռամբ հեթանոսական և բարբարիկոն ազգին Սասանականին. – 110.

ՍՊԱՌԵԱԼ - այլ զի բազում նեղութիւն և սուր, ի ձեռն այսր /46/ սատանայական ուսման՝ սպառեալ կործանեաց զերկիրս Հայոց – 48.

ՍՊԱՌԵԼ - և ահա հնչէր առ հասարակ երկիրն ամենայն իբրև զձով ալեաց կուտակելոյ, և սաստկացաւ պատերազմն, յառլուսանալ աւուրն մինչև ի սպառել անցից տունջեանն իշխեցողին երկոտասան ժամու աւուրն. – 276. և սուր ի գործ արարեալ զերիս աւուրս՝ սպառեցին զամենայն մարդ ի քաղաքին. – 142.

ՍՊԱՌՆԱԼ - և զի չզօրեաց կալ ընդդէմ նորա, ահ արկանէր, սպառնայր չար ևս կտտանօք լլկել զնոսա, ոտնատորփ լինելով փոնգայր իբրև զձի խստերախ: - 270. Սպառնայ և աստուածային դատաստանն Երեմիայիւ – 38.

ՍՊԱՌՆԱԼԻՔ - Այսու զպտուղ շրթանց մերոց խոստովանելով յանուն նորա պահանջէ սպառնալեօքն և խոստմամբքն: - 256. առ մերձաւորսն կեղծաւորէր զբարեկամութիւն, և առ հեռաւորսն բարձրացուցանէր զչարութեան սպառնալիս: - 270. առ որ յղեալ բազում անգամ պէսպէս սպառնալեօք և ողոքական բանիւք հաւանութեամբ թողուլ զօրէնս քրիստոնէութեան և հաւասարակցել այլոց ուրացողացն զՔրիստոս. – 318. Դարձեալ ի նոյն յարեալ՝ և այլ հոգաբարձութեան աշխարհի խնամ տանէր, ի մեղադրանս մատուցեալ մարգարէիւն հանդերձ սպառնալեօք – 182. և խոշտանգեսցես զնոսա գանիւ և բանտիւ և պէսպէս տանջանօք սպառնալեօք և ողոքանօք և ընչից պատրանօք արկցուք զնոսա ի ներքոյ կամաց թագաւորութեան մերոյ. – 196. Եւ խօսէր ընդ նոսա սաստիկ և ահագին դատաստանօք և սպառնալեօք, թէ ընդէ՞ր և դուք ոչ մեռարուք ի պատերազմին, քան թէ ելեալ փախստական գնացէք գալ առ իս և տալ համարձակութիւն ծառայի իմում ի յայսքան վնաս. մի՞թէ արդեօք զԽոսրով մեռեալ կարծէիք,,: - 150. Եւ յաւուր միում լեալ

նորա ի տխրութեան ի սպառնալեաց հօրեղբօրն իւրոյ՝ եկն եմուտ առ նա Ալի որդի Ապուտալպի և ասէ, զի՞նչ են պատճառքդ զի նստիս տխրեալ. – 160. և նա ասէ՝ զԱստուած արարիչ երկնի և երկրի պատմեմ, և անարգեն զիս սպառնալեօք: - 160. Իսկ սպառնալիք քո և չարչարանք, զոր ասես ի վերայ իմ հասուցանել՝ խաղ մանկտոյ կամ զառանցելոց թուի յաչս իմ, և բանք քո նոյնպէս, որպէս առն անմտի և խելագար և ցնորեալ ծերոյ,,: - 290. Որպէս և Պօղոս ողբալով և սպառնալեօք ասէ. – 258.

ՍՊԱՌՆԱԿԱՆ - ոչ ինչ ձեռնամուխ լինելով ի նա, վասն կասկածանաց Պարսից արքային, միայն սպառնական խոստաբանութեամբ յղէ առ նա պատգամս: - 130.

ՍՊԱՌՆԱՅԵԱԼ - զի զմահուն սպառնացեալ հօրն պատուհաս՝ աչօք իւրովք տեսցէ – 22. որ առ ժամեայ սպառնացեալ պատուհասիւն ի հարիւրամեայ ձգէր ժամանակս ներողութեամբ: - 28.

ՍՊԱՌՈՒԱԾ - գնացեալ պատահին նմա ի սպառուածս Տաւրոսական լերինն: - 66.

ՍՊԱՌ ՍՊՈՒՌ - զի մի սպառ սպուռ տապալիցի զօրութիւն շինուածոյ աշխարհի, ի բաց ընկենլով զծառայական պաշտօնատրութիւն կողմնակալաց, և քաղաքային անհաւատարիմ կամարարողաց, և հարկաց բեկման և զօրաց – 186. մի՛ յամառիք զհետ Արշակայ և բնաւ սպառ սպուռ մերժեալ լինիք ի հայրենեաց բնակութենէ – 110.

ՍՊԱՍ - Իսկ իշխանն Բագարատ … ել գնաց անխիղճ համարձակութեամբ, տիրասէր խորհրդովք, կատարել զսպաս զինուորութեան, ըստ աստուածեղէն պատուիրանին և ըստ թագաւորական հրամանին, զհետ եկելոյ կոչնականացն, ոչինչ իմացեալ զպատրանս խաբէութեան նորա, որով վրիպեացն: - 186. որգունակ քաւութիւնն և այլ կահ սպասու խորանին ի Մովսիսէ օրինադրեալ ի ձեռն ճարտարապետացն Եղիաբ և Բեսելիէլ խորանայարդարք: -378. Զոր հրաշազարդեալ մեծագանձ սպասիւք, ոսկեկերտ խաչադրօշեալ ընդելուզեալ մարգարտով և ակամբք պատուականօք հրաշագործեալ: - 396. Յայնժամ տեսեալ Երուսաղէմացւոցն զանհնարին դիպուածսն անօգնականութեանն՝ առին զաստուածային սուրբ նշանն տէրունական հանդերձ այլ սպասիւք եկեղեցեացն, փախուցին ի քաղաքն թագաւորական ի Կոստանդին. – 162. շինեալ նորոգեաց և զեկեղեցին որ ի նմա յանուանակոչութիւն սուրբ Աստուածածնին Մարիամայ և զարդարեաց զնա մեծագանձ սպասուք և եդ ի նմա զԽաչն, զոր յիշեցաք վերագոյնն, յորոյ ձեռն ծանուցաւ զօրութիւնն հրաշագործ: - 390.

ՍՊԱՍԱԻՈՐՈՒԹԻՒՆ - և մի զմիոյ հետ ստիպէր՝ փութալ միոյ միոյ ի նոցանէ յանդիման նմա հատուցանել ծառայական սպասաւորութիւնս, զոր և արարին իսկ Աշոտ և Գագիկ և Գուրգէն, կամաւոր և ակամայ զնորայն կատարելով հրամայեալս – 370. հարկանէր նմա սպասաւորութիւնս միամիտս, արածէր ուղտս և լինէր հրամանատար տանն նորա: - 158.

ՍՊԱՍԵԼ - Իսկ քաղաքապետն որում Ապլբերս կոչէին, ձեռնտուութեամբ պարսկային զօրու սպասէր նմա ի չարիս ի բազում աւուրց. – 352.

ՍՊԱՐԱՊԵՏ - ,,բարի՛ է քեզ, թագաւոր Հայոց, է՛կ այսր զի պսակեցից զքեզ ես սպարապետս,,, – 108. անկեալ Աղան յերեսս առաջի սրբոյն Սահակայ և առաջի սպարապետին Սահակայ՝ ընդունել զսքեմ կրօնաւորութեան մոնազնութեան անապատասէր միայնական ստանալ իւր վարս: - 114. Բայց սպարապետն Սմբատ և տիկինն Վասպուրական Հռիփսիմէ անդէն մնաց, և յաւելան ի մարտիրոսական հոլովսն: - 324. Ելեալ փութանակի եկն եհաս յաշխարհս Վասպուրական սպարապետին կամակցութեամբ: - 306. և առաջնորդէր նորա սպարապետն ի գործս պատերազմացն և յելս և ի մուտս աշխարհացն. – 270. Եւ ինքն /302/ անցեալ գնայր առ իշխանիկն ի յամուրն Աշխարհաբերդն կոչեցեալ. և անտի արիաբար քաջասրտագոյն դիմացուածով ելեալ գնաց դարձեալ առ սպարապետն Սմբատ: - 304. Եւ Բուխայ հրամայեաց սպարապետին, զի աներկիւղ կացցէ մնասցէ Գուրգէն առ սպարապետին մեծաւ շնորհակալիւք: - 304. Եւ Բուխայ հրամայեաց սպարապետին, զի աներկիւղ կացցէ մնասցէ Գուրգէն առ սպարապետին մեծաւ շնորհակալիւք: - 304. Եւ ի ժամու մինչ ագնորեալքն կամէին մտանել զառաջեաւ … յայնժամ շուրջ կացեալ զվրանաւն մեծ սպարապետին զկազմեալ գնդաւ վահանաւոր և

նիզակաւոր ամրափակ պնդութեամբ, և մտեալ մատոյց զթուղթն, զոր էր գրեալ առ Յամանիկն ի քաղաքն Պարտաւ Ահմաթայ նենգութեամբ: - 344. և կալեալ զԱնիանոս նահապետ Բագրատունեաց և սպարապետ Հայոց հանդերձ ընտանեօք և ամենայն ազգաբանութեամբ՝ արկանէ ընդ բազում չարչարանօք – 74. Եւ մինչդեռ այս գործ խորհրդածէր՝ հասին ի վերայ նորա քաղաքապետք երկու, անուն միոյն Բշիր և երկրորդին Զքրի, և կալան զնա տանել առ Աշոտ որդի սպարապետին: - 316. Եւ յերկարեալ Աղան զողբսն, ջերմեռանդն յորդահոս արտասուաց բղխմունս առաջի սրբոյն Սահակայ և մեծ սպարապետին Սահակայ և այլոց նախարարացն. – 112. Եւ յերկարեալ սպարապետին /282/ խօսել ընդ զօրավարին՝ ի բաց մերկեաց զպատրուակ սրտմտութեան ի սրտէ նորա: - 284. Եւ նստէր անդ ի բացեայ ի վերայ բլրի միջոց տէր Մուշեղ որդի սպարապետին և կայր հիացեալ ահեղ և մեծ զարմացմամբ: - 284. Եւ քանզի հաւատացեալ էր զգաւառն Բուխայի ի ձեռն սպարապետին Սմբատայ՝ գրէ առ ամիրայն Նախճաւանու Աբրահամ անուն, զեկուցանելով նմա զզօրացն Վասպուրականի. – 304. Եւ քանզի յետ մահուանն մեծին Սահակայ Բագրատունոյ սպարապետի ասպետի և զօրավարի Հայոց, հաւատացեալ էր Թէոդոսի կայսեր զսպարապետութիւնն Հայոց Համազասպ Մամիկոնէի և որդւոյ իւրում Վարդանայ – 122. Ընդդէմ զօրաժողով եղեալ Սմբատ սպարապետն Հայոց որդի Բագարատայ Բագրատունւոյ – 106. Իսկ զկնի աւուրցն տասանց ի գլուխ ելանելոյ՝ խնդրեաց սպարապետն մտանել առ նա, և կալեալ զձեռանէ նորա՝ սկսաւ խօսել ընդ նմա և ասէ. – 282. Իսկ Սմբատ որ և Ապլաբաս սպարապետն Հայոց, իբրև գիտաց թէ ոչինչ օգուտ բերէ արտաքոյ հրամանացն նորա լինել՝ փութացաւ եկն առ նա, և ընկալեալ ի նմանէ՝ բնակեաց ինքն և իւրքն հանդերձ իւրաքանչիւր կալուածովք առանց կասկածանաց. – 270. խորհելով վասն սպարապետին մեծին Սահակայ, որպէս ի նմանէ Խոսրով զանձնիշխանականն օրինադրեաց հրաման. – 112. Մնաց միայն Աշոտ որդի սպարապետին և Մուշեղ և Սմբատ եղբայր Աշոտոյ – 298. յաւուր միում … ետ հրաման իշխանն առնն կորովի եղբօր իւրոյ Աբասայ Հայոց սպարապետի՝ վառել պնդակազմ պատրաստութեամբ, զօրու և զինու և զարդու ամենայարդար հնարաւորութեամբ, որպէս օրէն է նահատակաց քաջ արանց – 344. Նա թէպէտ և զչարացաւ ընդ եղեալսն՝ սակայն զանգիտեաց թողուլ զնա երթալ, ակնածելով ի չարայոյզ ազգէն Իսմայէլի, զի դեռ ևս տիրէր բռնութիւնն, և գերեալքն և հայրն իւր սպարապետն յարքունիս էին: - 316. որ էր ի ժամանակին սպարապետ Հայոց. – 120. որոց անուանք ճանաչի սոցա՝ տէր Սմբատ սպարապետ Հայոց, և Գրիգոր Քուրդկայ որդի Մամիկոնէից տէր, և Ատրներսէհ /296/ Աղուանից իշխան, և Գրիգոր Սիւնեաց տէր – 298. Բուռն հարեալ սպարապետն զձեռանէ նորա և հանեալ արտաքս, քաջալերելով լինել առանց /344/ երկիւղի. – 346.

ՍՊԱՐԱՊԵՏԱԿԱՆ - և տիկինն սպարապետական ի Տարունոյ եկեալ և նշանացի զդի նորա գտեալ՝ տարաւ ի Պորպ յիւր աւան և եդ ի գերեզմանի: - 368.

ՍՊԱՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ - Ազդ եղև Մամիկոնեան սպարապետութեանն անոպայ գործն – 98. Եւ քանզի յետ մահուանն մեծին Սահակայ Բագրատունոյ սպարապետի ասպետի և զօրավարի Հայոց, հաւատացեալ էր Թէոդոսի կայսեր զսպարապետութիւնն Հայոց Համազասպ Մամիկոնէի և որդւոյ իւրում Վարդանայ – 122.

ՍՊԱՐԵԹՈՍ – Եւ արդ են մի ըստ միոջէ թագաւորք Ասորեստանեայց այսոքիկ … Մամիգոս միւս՝ ամս Լ… Սպարեթոս ամս Խ… Ասկատադէս ամս Խ. . . - 58.

ՍՊԵՐ - Եւ եղև իբրև կատարեաց Բուխայ զանցս անցից ընդ Վասպուրական աշխարհս և խաղաց յարևելս կոյս՝ ել գնաց Գուրգէն ի Սպեր գաւառ. – 302.

ՍՊԻ - Բայց անյայտք են եթէ կատարելանան, զի հազիւ սպիքն գան, ըստ որումն սրբազանի տրամաբանութեան: - 338.

ՍՊԻԱՆԱԾ - և ղաշիկ արարեալ յայնկոյս քան զՎանտոսպ, ի տեղւոջն արձանաշար քարակարկառ գոգաձև միջոցի երկուց բլրակաց, որ հայի յԵրիվարաց արկման դաշտն, ի

վերայ Լեզւոյ գեաւղջն, որ զաւրացն գեղեցիկ առասպելաբանեն սպիանած վերայն սպանելոցն ի մանկանցն Շամիրամայ: - 334.

ՍՊԻՏԱԿ - և ինքն /232/ կայր հեծեալ ի վերայ սպիտակ ձիոյ, և ցանէր զծուխն ընդդէմ թշնամեացն, և օդ քաղցր, որ արկանէր զծուխն զերեսօք նոցա. – 234.

ՍՊԻՏԱԿԱՅԵՂՅ - ,,արջք գիսակագեղք սպիտակայեղջք որջացեալ ի պրակս անտառախիտ մայրեացդ. արդ թէ հաճոյ թուիցի՝ երթիցուք որսալ զնոսա,,. – 100.

ՍՊԻՏԱԿԱՓԱՅԼ - և ի տունջեան ամպ թանձրախոծ իբրև զթաղ լմեալ բալաձև սպիտակափայլ յոյժ. զայնմանէ ասէին՝ երկիր օտար անծանօթ: - 48. որոյ տեսեալ զբարձրաբերձ վայելչութիւն հասակին և զպատշաճ գեղ երեսացն, զփաղփեալ գոյնն ի տեսիլ արուսեկի ի մէջ սպիտակափայլ ալեացն պատուաբերի – 204.

ՍՊԻՏԱԿԱՓԱՌ - ընդդէմ նայեցածն ունելով զմեծ լեառնն Մասիք կոչելով բարձրագագաթն ձիւնալիր սպիտակափառ – 86.

ՍՊՈՒԺԵԼ - Իսկ կատարելագոյնքն և ծերքն ի նոցանէ սպուժէին առ այս, և մանաւանդ որք հաւատարիմքն կոչէին ըստ հաւատոյն նոցա որք Կուռայքն անուանէին – 404.

ՍՊՈՒՆԳ - և զփքինս կապարճիցն սպնգով ծածկեալ՝ զատակչական զօրութիւնն թռուցանէր ընդդէմ սրբոյն – 204. զոր ի ջուր եդեալ՝ ծծէ իբրև զսպունգ – 208.

ՍՊՈՒՌ - զի մի սպառ սպուռ տապալիցի զօրութիւն շինուածոյ աշխարհի, ի բաց ընկենլով զծառայական պաշտօնատրութիւն կողմնակալաց, և քաղաքային անհաւատարիմ կամարարողաց, և հարկաց բեկման և զօրաց – 186. մի՛ յամառիք զհետ Արշակայ և բնաւ սպառ սպուռ մերժեալ լինիք ի հայրենեաց բնակութենէ – 110.

ՍՊՐԴԵԱԼ - Նոր ոմն Նաբուզարդան կամ Զամրի յայտնեալ ի յաղանդոյն Նեստորի, երեքթշուառեան վատաշուէր, վատմիրհ, զագահութեանն չարիս ախտացեալ՝ սպրդեալ եմուտ ընդ մութ գիշերին յամրական պարսպեալ բլուր, և անցեալ ի սուրբ կոչարանին օթագացեալ. – 378. Ո՞վ յիմարութեան առաջնոցն. ո՞րպիսի կատաղութիւն և գիւտք դիւացն նախկին ժամանակաւ սպրդեալ մուծաւ յաշխարհ, ապստամբութիւն առ Աստուած և տրտմութիւն սրբոց հրեշտակաց, և պատճառ վտանգաւոր մահու ծառայիցն Աստուծոյ յաւուրս ապագայիցն. – 38.

ՍՊՐԴԵԼ - Իսկ իբրև սկսաւ սպրդել մտանել ի ներքս երկպառակութիւնն ի մէջ միաբանութեանն, հեռացաւ մեկնեցաւ գնաց շնորհ աստուածատուր զօրութեանն. – 194.

ՍՌՆԱՊԱՆ - նա և զիւրեաւ տախտակափակ լանջապահս, թիկնապահս, զանգապանս, սռնապանս, գլխապանս, որ գրեթէ բովանդակ պղնձեղէնս զնա իմանալ թուէր, և զետեղեալ բլրաձև զօրու անմատչելի կարծելով. – 64.

ՍՏԱԴԻՆ - ընդ որ յոյժ ուրախացեալ Տիբերի պատուէ ծիրանեօք և բրաբիոնաւ ի Ստադին տեղւոջն. – 80.

ՍՏԱԽՐԱՑԻ - զոր սպան Ստախրացին Արտաշիր որդի Սասանայ – 166.

ՍՏԱՀԱԿ – Բայց մեք քանզի ոչ երբէք ստունգանեցաք հրամանի թագաւորին և ոչ խափանիչ գտաք հարկաց արքունի, իբրև զապստամբս և զանհնազանդս և զստահակս ի ծառայութենէ տէրանց – 178.

ՍՏԱՀՐԱՑԻ - ԲԱՐՁՈՒԻՄՆ ՊԱՀՂԱՒԻԿ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆՆ ԵԻ ԹԱԳԱՒՈՐԵԼ ՍՏԱՀՐԱՑՈՅՆ: - 92. դիմեցին առ կայսրն Վաղէտիանոս, թէ հնար ինչ իցէ առնուլ զվրէժ արեան Խոսրովու և ի /92/ վերջ նահանջել զբռնակալութիւն Ստահրացոյն. – 94. յեղակարծում ժամանակի հասանէ համբաւ մահուն Արտաւանայ, և տիրել Պարսից Ստահրացոյն Արտաշրի Սասանականի. – 92.

ՍՏԱՄԲԱԿ - ,,ընդէ՞ր, ով աստուածասէր թագաւոր, իբրև ընդ համհարզս և ընդ ստամբակս, իբրև ընդ աննշանս կամ ընդ անընդել վայրագս խօսիս ընդ մեզ – 242.

ՍՏԱՄԲԱԿԵԼ - Եւ գիտացեալ Արիմին զյետարկելն իւր՝ խեռեալ ստամբակեաց Որմզդի, հակառակ աստուած լինելով: - 46.

ՍՏԱՅՕԴ - Եւ մեր ընկալեալ և հաւատացեալ ճշմարտութեանն՝ և ոչ կարեմք փոխանակել զճշմարտութիւն ընդ սնոտի, առասպելաբան և կարկատուն, ստայօդ և պաճուճազարդ մոլար ուսմանդ ձերոյ: - 246.

ՍՏԱՆԱԼ - անկեալ Աղան յերեսս առաջի սրբոյն Սահակայ և առաջի սպարապետին Սահակայ՝ ընդունել զսքեմ կրօնաւորութեան մոնազնութեան անապատասէր միայնական ստանալ իւր վարս: - 114. Բայց նոքա ոչ վերակնեալք յօրէնս Տեառն, այլ ստացան իւրեանց անունկնդիր լսարանս, զչարագոյնն իժի և զանբժշկականն քարբի, արբեցան գինով յիմարութեանն. ստացան աչս, որովք ոչ տեսանիցեն, և ականջս, որովք ոչ լուիցեն. – 182. Բայց նոքա ոչ վերակնեալք յօրէնս Տեառն, այլ ստացան իւրեանց անունկնդիր լսարանս, զչարագոյնն իժի և զանբժշկականն քարբի, արբեցան գինով յիմարութեանն. ստացան աչս, որովք ոչ տեսանիցեն, և ականջս, որովք ոչ լուիցեն. – 182. Եւ էր գրեալ ի միում թղթի անդ, յիշեցուցանելով զոր ինչ գործեաց Աշոտ ի զօրսն Ապահունեաց զյաղթանակ պատերազմին և զհոյակապ անուն ստանալոյն՝ ասէ – 382. Եւ իշխանքն մեր ստացան ճոխագոյն հոյակապ անուն ի մէջ Հայաստանեայց – 336. ստացան բարեկարգաբար զարդարել զմերկացեալն ի բարեզարդութենէ, զմերժեալն և զհեռացեալն ի հայրենեաց և ի տանց՝ յանձնիւրս առնել դարձումն. – 388.

ՍՏԱՑԵԱԼ - և են ստացեալ զէնս աշտեայս հանապազ կրելով ընդ ինքեանս, ի պատրաստութիւն գազանացն որք ի լերինն բնակեն: - 192. Եւ Աւշնի հաւատացեալ զաշխարս ծառայի ումեմն Սափի անուն ի գերելոցն Յունաց ներքինի, թողեալ զհաւատսն որ ի Քրիստոս, մսլիմանակ դեն ստացեալ, արիւնարբու ուսմամբ բնաւորեալ. – 372. Իսկ եթէ վատացն՝ արութի՛ւն զերկիւղն համարելի է, ո՞րչափ ևս առաւել քաջացն քաջութիւն ստացեալ երկիւղիւն պատսպարել իւրեանց: - 354. Իսկ նոցա անմեկնելի զյոյսս իւրեանց ի Քրիստոս ունելով, բնաւից գերագոյն և հոյակապ անուն ստացեալ, զյաղթութեան նշանակ կանգնեալ. - 308. մեռան նոքա անդ և թաղեցան փառաւորապէս ըստ օրինի քրիստոնէից յուխտէ Յակոբկաց, որ անդ են հաւատացեալ ժողովուրդք, և զխոստովանողական անուն ստացեալ փառաւորեցան յերկրի և պսակելոց են ի Քրիստոսէ ընդ ամենայն սուրբս. ամէն: - 324. որ մեծաւ ախորժանօք յանգուցանէ առ ինքն զնոսա իբրև արս պատուաւորս և քաջամարտիկս զօրաւոր զօրութեամբ, և մանաւանդ զի բազում անգամ զանուն յաղթութեան ստացեալ ունէին: - 366.

ՍՏԱՑՈՒԱԾ - զսուրբ եկեղեցիս, զտունս աղօթից քրիստոնէից այրել աւերել հիմն ի վեր տապալել, զքահանայսն նորոյ ուխտի ի սուրս իւրեանց մաշել, զծերս և զպառաւունս մահու սրոյ սպանանել, զերիտասարդս և զկուսանս խաղացուցանել ի գերութիւն, զստացուածս և զինչս վատնել աւարառութեամբ. – 398. գերփեն առնուն զշէնս և զաւանս և զագարակս, կապուտ կողոպուտ թողուն ի ստացուածոց և յամենայն ժառանգութեանց, մաշեն ի սուր սուսերի զորս ի բուռն առնուին. – 102. Եթէ, որպէս ասացի, ի բաց գնաս յինէն՝ խաղաղութիւն է, և թէ ոչ՝ պատերազմ և կռիւ և ճակատամարտ ... քո ստացուածք՝ և մեք ժառանգորդք, քո աւար՝ և մեք աւարառուք. դու աւազակ՝ և մեք կողոպտիչք - 278. Եկն եմուտ ի գաւառն Աղբագ, և ասպատակ սփռէր ընդ կողմանս կողմանս յերկիրն Վասպուրական, գերփէր, աւերէր, յափշտակէր, կապուտ կողոպուտ գործէր ընչից և ստացուածոց. – 176. և ասէ զնա Ստացուած, թէ և Աստուածով՝ այլ ոչ արժանաժառանգ. – 22. Եւ բազում այն էր որ մարտիրոսական ճգնութեամբ վկայեցին, քան որք դրդուեցան, առ ոչինչ համարելով զյափշտակութիւն ընչից և ստացուածոց և զմահս դառնագոյնս: - 124. և կալեալ զնա եդ ի բանտի ի Նկան բերդի և զամրոց նորա եհան ի նմանէ, և կացոյց զհաւատարիմս իւր պահել զնա, և զտուն և զստացուածս հանեալ ի նմանէ՝ և կացոյց ի վերայ աշխարհին զիւր գործակալս: - 348. հասեալ ի վերայ ծառոց մրգաբերաց, կամ ի դիւրաճախելի բոյս խոտոյ, այնպէս վատնեցին ծախեցին զզօրութիւն մարդկային ազգի ստացուածովք իւրեանց,,: - 240. ուստի և մեզ կարգաւորութիւն փոփոխմանց պահեցաւ ստացուածս այս: - 26.

ՍՏԵԱԼ - Եւ զի ստեալ Դերանկին Գուրգենայ եհան անտի զգործակալսն՝ նոյն գունակ Գուրգէն հնարաւորեալ առնու զամրոցն և հանէ զնորա գործակալսն – 326.

ՍՏԵԼ - Բայց ինքն Դերանիկն ստեաց երդման ուխտի խաղաղութեանն, զոր եդ ի մէջ իւր և ի մէջ Հասանայ – 348. Եւ իբրև ետուն զթուղթն կարծեցեալ իբրև յերեսաց արքայի՝ ,,ընթերցիր զայդ, ասէ, մի՛ ինչ ընդ մեղադրութեամբ արկաներ զիս, և կարծել նենգութեամբ գնալ առ քեզ և դրժել ինչ քեզ և ստել երդմանց /236/ մերոց. – 238.

ՍՏԵՂԾԵԱԼ - ոչ ստեղծեալ յումեքէ, այլ որպէս երևիդ՝ նոյնպէս էր. և կայ մնայ, և զմարդ ինքնաճին: - 48.

ՍՏԵՂԾԵԼ - Տե՛ս, ով սիրելի, զի թշնամանելն՝ լեզուին բարբառ է, և ոչ ներէ ստեղծիչն լեզուին զուրացութիւնն բարբառել, զի ոչ եթէ այլ ոք է որ ստեղծ զլեզուն, և այլ ոք է որ արար զսիրտն. – 258.

ՍՏԵՂԾԻՉ - Տե՛ս, ով սիրելի, զի թշնամանելն՝ լեզուին բարբառ է, և ոչ ներէ ստեղծիչն լեզուին զուրացութիւնն բարբառել, զի ոչ եթէ այլ ոք է որ ստեղծ զլեզուն, և այլ ոք է որ արար զսիրտն. – 258.

ՍՏԵՂԾՈՒԱԾ - ոչ պիտոյացեալ եկամուտ լուսոյ, որով նսեմասցի առ ի հասանել երեկոյին, ոչ ապաժամանութիւն արեգական առ ի մերժել զմութ գիշերի լուսազգեստ ստեղծուածոյն, որ յետ առաջնոցն կարգի և դասու՝ զերկրորդն փոխանորդեցաւ վիճակ, ոչ կերակուր հոսանուտ առ ի լրութիւն տարաբարձ ունակութեանց անապականին, որ դոյզն ինչ փոքրագոյն քան զհրեշտակս գոլ. – 20.

ՍՏԵՐԴՈՒՄՆ - Իսկ ի վերայ բազում հինիցն եկելոց ի վերայ Գուրգինի և սաստիկ պատերազմացն զոր պատերազմեցաւ յաղթող նահատակութեամբ. ոչ միայն յարտաքին թշնամեացն որ շուրջանակի պաշարէին, բազում այն էր որ ի ներքին ընտանեաց հարազատաց, ազգականաց դրժողաց, ուխտազանցաց, ստոց և ստերդմանց յուզէին աղմուկք: - 308.

ՍՏԻՊԵԱԼ - իսկ խարդախն ի նոցանէ ստիպեալ նախաժաման եկն յառաջ: - 46.

ՍՏԻՊԵԼ - Ազդ առնէ քաղաքապետին Տփղեաց. և խնդրեալ զնա առ ինքն՝ /316/ ստիպէր տագնապէր ահս արկանելով, թողուլ զօրէնս քրիստոնէութեան և յանդորր ելանել: - 318. այլ ստիպեսցուք զըմբռնեալսն՝ ի բաց կալ ի հաւատոց քրիստոնէութեանն. – 196. և բանակն Իսմայէլի հզօրագոյնս ստիպէր ի պատերազմ: - 162. և ի ժամուն յայնմիկ մինչ առաւ ամրոցն և զըմբռնեալսն ստիպէին, զի որք ի բաց կացցեն ի Քրիստոսէ՝ և մի մեռցին – 222. և հրաման հարկեցուցանող ճոխութեան քո ստիպէ զմեզ, ճեպել փութալ առ գիւտն հանդիսանալ և կարգել ոճով զփափագելին յայտարարական գրով, դրոշմել կանոնել ի գիրս աստ – 12. և նա տրտմեալ գնաց ի տուն իւր, քանզի հանապազ ստիպէր ի դիւէ անտի, թերևս թոյլ տալովն Աստուծոյ, զոր համարէր ի հրեշտակէ զանկանելն ի մտաց: - 160. Զոր առեալ զարսն ստիպեաց ի բաց կալ յերկրպագութենէն Քրիստոսի, և պատուի և պարգևաց արժանի լինել ի նմանէ, և մի չարաչար տանջանօք մեռանել: - 222. Խորտակէր և զնշան տէրունական Խաչին, զոր ուրեք ուրեք կանգնեալ լինէին. քանզի յոյժ ստիպէր զնա հոգին մոլեկան: - 168. ստիպեն լքանել թողուլ կրօնս քրիստոնէութեան, հնազանդել պաշտել զօրէնս մազդեզական մոխրապաշտութեանն – 102. և մի զմիոյ հետ ստիպէր՝ փութալ միոյ միոյ ի նոցանէ յանդիման նմա հատուցանել ծառայական սպասաւորութիւնս, զոր և արարին իսկ Աշոտ և Գագիկ և Գուրգէն, կամաւոր և ակամայ զնորայն կատարելով հրամայեալս – 370.

ՍՏԻՊՈՎ - և նորա խնդիր արարեալ մեծաւ ստիպով, մինչև կարացին գտանել նովիմբ կազմածաւ, և ետ յարսն որք եկեալ էին. – 154. զի և զմատեանս առաջնոցն մեծասաստ ստիպով ի մի վայր գումարեալ՝ հրամայեաց այրել. – 44.

ՍՏՆԱՆԵԼ - Բայց Դերենիկն կալեալ զնա պահէ ի զգուշութեան, ոչ ինչ ստնանել նմա, բաց ի կապանացն յորս արկեալ էր զնա, ըստ հատուցմանն բարւոյ. առ ձեռն պատրաստ կշռեաց նմա և օրհնեցաւ ի սրբոյն Զաքարիայէ: - 320. և ետուն պատերազմ անդ զաւուրս Լ, և ոչ ինչ կարացին ստնանել. – 362. և առ զայրուցն առ մարդկայինն դիմեալ ազգ՝ կարծել նոցա

ստնանէր, յինքեանք ձգել կորզել զսատակչական դարձուածէ. – 398. և Վահան հասեալ յանկարծուստ ի վերայ նորա, այն ինչ ընդ միտ ածելով ստնանել ինչ Գուրգինայ. – 310. զի և զբազումս պատերազմեալ պէսպէս մարտիւք, և ոչ ինչ կարացեալ ստնանել անմարտնչելի ամրոցացն և քաջութիւն արանցն որ ի նմա՝ ողոքական բանիւք կոչէր ի հաւանութիւն: - 278.

ՍՏՆԴԵԱՅ - Մուշեղ Անձաւացեաց տէր հիւանդացեալ զյետին կեալն, ունելով որդի ստնդեայ. – 324.

ՍՏՈՅԳ - Իսկ Սաղման յանձն առ գրել նմա. և գրէր գիրս յօդուածոյս, էր ինչ որ ի ստոյգ յիշողութենէ, և էր ինչ որ կարծողական բանք. – 164.

ՍՏՈՐԵԻ - Իսպառ ստորև ամրականին ի գոգաձև տեղւոջն … շինեաց եկեղեցի հրաշագործ հրաշազան յօրինուածով եկեղեցի ի տաշեալ քարանց ի Մանազաւեան քաղաքին ի Վանտոսպ, և հիմնեցուցեալ յանուն սրբոյն Սիօնի, որ ի սուրբ քաղաքն Երուսաղէմ. – 390.

ՍՏՈՐԻՆ - Եւ առ այսոքիւք պատեհագոյնս իմն գտեալ իբրև յանիշխանութեան՝ ոմանք Ասորեստանեայք և Քաղդէացիք, յազգէ թագաւորացն … զօր բազում գումարեալ՝ յետ ԻՀ ամի անիշխանութեան Ասորեստանեայց ի ձեռն Փուայ թագաւորեցելոյ դարձեալ տիրեն Բաբելոնի և ստորին Ասորւոց – 60.

ՍՏՈՐԻՋԵԱԼ - որ ամենատես ակնարկութեամբ ստորիջեալ ի խնդիր կորուսելոյն հեզագնաց գարշապարօք՝ ընդելականս նմա գուշակէր /գրքում՝ զուշակեր/ գալուստ – 20.

ՍՏՈՐՈԳԵԼ - Դարձեալ նմին նման ասէ Պօղոս, զօրինացն ստորոգելով գրաւորութիւն, այսպէս ասելով, ,,մերձ է բան ի բերան քո և ի սրտի քում, այսինքն է /256/ բան հաւատոց զոր քարոզեմք,,. – 258.

ՍՏՈՐՈՏ - գալ իջանել յելից ի ստորոտէ լերինն Վարագայ առշեղեալ ի հարաւոյ ի հիւսիսի ի խաղաղ ընդլայնանիստ գոգաձև դաշտականացսն – 392. և թանձրութիւն ձեանն հարթայատակ դիզաւ շուրջ զստորոտով լերինն – 188. և թափառական զվէմս ապաստան արարեալ յանկասկածագոյն տեղիս դարանի ի փոքր վիմամէջս ի կարկառս հովտաձև հանդէպ հարաւոյ քաղաքաբերդին Վանի, մօտ այն տեղի, յորում բղխէ աղբիւրաբար առ ստորոտով բլրակի միոյ, մօտ յեզր ծովուն – 84. և ինքեանք իջեալ ի լերանցն՝ կալան զստորոտ լերինն, պատրաստեալ ի պատերազմ: - 274. Եւ յետ խաչայարդար պայծառութեանն իջեալ ի լեռնէն Գագիկ ի ստորոտ լերինն, ուր աբեղայիցն բնակէին սքեմաձևքն: - 394. Իսկ Երուանդայ հետազօտեալ գայ բնակի առ ստորոտով լերինն ի գլուխս Տոսպ գաւառի, և կոչէ զտեղին /82/ Երուանդականս. – 84.

ՍՏՈՒԳԱԲԱՆԵԱԼ - զոր և երանելին Կորիւն, ուսումնակից Մովսէսի և աշակերտ սրբոյն Մեսրովպայ՝ յիւրումն ստուգաբանեալ պատմութեան զայսոսիկ մեզ հաւատարմացուցանէ: - 122.

ՍՏՈՒԳԱԲԱՆԵԼ - Եւ արդ ՆԺԱ են մարգարէք, որ զվկայութիւն աստուածութեանն Քրիստոսի ստուգաբանեն ճշմարտութեամբ յանցնիւր ժամանակս, իբրև ի միջէ բերանոյ, թող զԱւետարանն և զառաքեալս նորա: - 246. և Նինոս ի զաւակէ Քամայ ըստ Արիսդոնեա Քաղդէացւոյ և ըստ Եւսեբեա Կեսարացւոյ և ըստ Մովսէսի Խորենացւոյ և ըստ Յուլիանու Աղիկառնացւոյ ստուգաբանի: - 14. Հաւաստիս այս մեզ Եւսեբիոս Կեսարացի, Յուլիանոս Աղիկառնացի՝ ստուգաբանեն զթագաւորս Ասորոց ի զաւակէ Սեմայ զաճմունս առնել, որպէս ի կանոնեալ սահմանէն իմանալ: - 14. Իսկ զանուն քաղաքին կոչեցին Արտամատ, որ թարգմանեալ ստուգաբանի Արտաշէսի ձեռակարտ, կամ թէ՝ Արտաշէսի եկք – 88.

ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹԻՒՆ - զոր ընթերցասէրն Պտղոմէոս գրեալ և յարդարեալ ստուգաբանութեամբ, դնեն զգուշութեամբ ի դիւանապահ տունս գանձուց մինչև ի Կղէոպատրա կին, որպէս վերագոյնն գրեցաք: - 74.

ՍՏՈՒԳԱԳՈՅՆ - Նոյն ժամայն մատուցեալ ոմանց առ Դերանիկն՝ ստուգագոյնս քսէին վասն Գագկայ Ապումբուանայ. խորհել ընդ կորապաղատին, զոր ինչ գործեաց Հասան զանօգուտսն. – 348.

ՍՏՈՒԳԱՊԷՍ - ,,զոր ինչ միանգամ կամք յօժարութեան ձերոյ ախորժեսցեն՝ եղիցի ձեզ ստուգապէս առանց երկբայութեան. – 214. Բայց թէ է՞ր աղագաւ պատմութիւն վկայութեան Վահանայ ոչ է գրեալ ի գիրս պատմագրի՝ ստուգապէս առանց յերկուանալոյ ցուցանեմ քում ուսումնասէր քաջահմտութեանդ: - 128. գրէ թուղթ հաւատոց առ Ղևոն կայսր Յունաց, և ընկալեալ ի նմանէ պատասխանիս՝ բազում ինչ ի Կուրանէ անտի իւրեանց արտաքս ընկէց զյոյժ առասպելագոյնն, քանզի ստուգապէս ծանեաւ զզօրութիւնն. – 166. Յանձն առի պատմել ստուգապէս զսքանչելագործ յայտնութեանն հրաշիցն, որ ցուցաւ ի զօրավարութեանն Գագկայ. – 378 .

ՍՏՈՒԳԵԱԼ - ,,բազում անգամ, ասէ, և իմ ստուգեալ զայդ ի հաւատարմաց խորհրդականացն նորա. – 346. բայց եթէ ստութեամբ և թէ ճշմարտութեամբ՝ մեզ չէ յայտ, և զոչն ստուգեալ՝ և ոչ գրել լաւ համարեցայ: - 348. և զպատճառսն ստուգեալ, գրէ ի ձեռն Վահանայ ումեմն ի տոհմէն Ամատունեաց՝ դառնալ գալ բնակել անկասկած կենօք, ի բարձ և ի պատիւ իւրաքանչիւր յառաջանալ: - 98. զի ստուգեալ քննեցին՝ միոյ առն երկուս յինքեանց հարեալ ընկեցեալ էր, թող զվիրաւորսն և զկողոպուտ և զձերբակալսն – 234.

ՍՏՈՒԳԵԼ - Ես ինքնին աչօք իմովք տեսի զայրն զայն, որ հարեալն էր զնա, և ի նմանէ ստուգեցի վասն նորա: - 190. Եւ ելեալ գնաց զհետ կոչնականացն ի գութ հարազատութեան, և ի կարծիս սաստիկ հիւանդութեան, թէ մերձ ի մահ անկեալ դնիցի, ըստ ստուգելոյ կոչնականացն: - 348. Եւ իբրև ստուգեաց և տեղեկացաւ զամենայն՝ եգիտ բազմագոյն քան զամենեսեան զկապարճաւորս և զկորովիս աղեղնաւորացն Ելեմացւոց և Արաբացւոց, աջողակք յերկոցունց ձեռաց – 200. Իբրև ստուգեաց զազգն, զգաւառն, զաշխարհն, զպատճառ հատուածին, զզետեղելն, զիարդն, զորպէսն, զեղանակն, զդիպուածն, զպատահն և զայլն ամենայն՝ խնդրէ զնա Վաղարշակ յԱրշակայ և առնու աձէ զնա ընդ իւր ի Հայս – 72. Իբրև ստուգեցաւ որ ինչ եղեալն էր՝ փութացան խնդրել ի քաղաքին և ի կիրճս ճանապարհին, յոր կողմ և աճապարեաց ոք, մինչ անցեալ գտին զհարեալն դիւի չարի, զի կայր դեռ կիսամեռ: - 378.

ՍՏՈՒԳՈՒԹԻՒՆ - Զի եթէ ոչ ստուգութիւն սրտին և ճշմարտութիւն բերանոյն համամիտ առ հաւատոցն խոստովանութիւն ուղղակի մատչիցին՝ խոտան և ի բաց ընկենլի է և օտար ի սրբոյ առաքելական եկեղեցւոյ: - 258.

ՍՏՈՒԵՐ - զի գիտացին և ծանեան, թէ ունայնութիւն և ստութիւն են կեանք աշխարհիս և երազ դիւրամոռաց և ստուեր երազահոս – 264.

ՍՏՈՒԵՐԱԲԱՆԵԼ - Քանզի թէպէտ և անվաւեր ի նոցանէ գրեցեալքն ասացան՝ այլ բազում ինչ և առ ճշմարիտն ստուերաբանեն – 18.

ՍՏՈՒԵՐԱԿԱՆ - Ոչ կարծողականս ինչ ըստ առաջնոցն Բէլայ ասացելում, կամ այլոց ստուերականացն երևեցելոց երազականաց և խաբեբայ դիւաց, այլ ձեռագործ մեռելականս իսկ եցոյց ի պաշտօն – 40. Քանզի առաջնոցն ուրուականք և ստուերականք ոմանք՝ ըստ իւրաքանչիւր կարծեաց թուելոց վրիպեցան յաստուածածանօթն գիտութենէ հոգեշահ նահապետացն: - 40.

ՍՏՈՒԵՐԱՑԵԱԼ - ըստ պատկերին Աստուծոյ ստուերացեալ բարձրացեալն՝ նուաստացաւ – 22.

ՍՏՈՒԹԻՒՆ - ,,ձայն իմն ահաւոր հրեշտակի անկեալ ի վերայ իմ՝ հրամայեաց երթալ պատգամաւոր յազգն իմ, ցուցանել զԱստուած արարիչ երկնի և երկրի. առնուլ ինձ անուն գլխաւորութեան, և զստուգութիւն հաւատոց որ ի կուռս՝ յանդիմանել և քակտել,,: - 158. Եւ զի Ժ ազգացն շարք առանց ստուգեան կան գրեալ յամենայն մատենադարս - 12. և զմտաւ ածեալ զքսութիւնն զոր զեկուցին զԱշոտոյ կորապաղատէ առ Դերանիկն, եթէ ստուգեամբ և եթէ ճշմարտութեամբ՝ մեզ չէ յայտ: - 342. Եւ զչարեալ ընդ խափանումն խորհրդոցն իւրոց՝ ամբաստան յոյժ լինէր զԱշոտոյ հանդերձ թղթովք Տաճկաց, որք էին ի կողմանս Հայոց, բազում այն ինչ զոր ստուգեամբ քան թէ ճշմարտութեամբ զեկուցանեն զնմանէ զգործս, և թէ հակառակս ևս թագաւորութեան քոյ բանըննդդէմ լինի հանապազ: - 172. զի գիտացին և ծանեան, թէ ունայնութիւն և ստութիւն են կեանք աշխարհիս և երազ դիւրամոռաց և ստուեր երազահոս – 264. զի՞նչ Անանիա և Սափիրայ վասն ագարակին և

նորին ստութեանն, իմա և ի միտ առ: - 258. Զսա ըմբռնեալ զօրաց Տաճկաց ածին առ զօրավարն. և բազում վնասս ի գործս արքունի կուտեցին ի վերայ նորա և ստութեամբ առաւել քան թէ ճշմարտութեամբ պարտաւորեցին զնա: - 288. ընկալջիք հաւատս և օրէնս աստուածատուրս հեռի ի ստութենէ և լի որ ինչ ընդդէմ ստութեան է – 244. ընկալջիք հաւատս և օրէնս աստուածատուրս հեռի ի ստութենէ և լի որ ինչ ընդդէմ ստութեան է – 244. թէպէտ և ոչ համարձակեաց զամենայն բառնալ, այլ յոյժ պատկառանօք ամաչեցեալ՝ լքաւ ի ստութենէ անտի, որ յանդիմանեցաւ ի թղթոյ կայսերն, և ի ձեռն այսորիկ ցուցանէր բարեմտութիւն մեծ առ ազգս /166/ քրիստոնէից. – 168. բայց եթէ ստութեամբ և թէ ճշմարտութեամբ՝ մեզ չէ յայտ, և զոչն ստուգեալ՝ և ոչ գրել լաւ համարեցայ: - 348.

ՍՏՈՒՆԳԱՆԵԼ - Բայց մեք քանզի ոչ երբէք ստունգանեցաք հրամանի թագաւորին և ոչ խափանիչ գտաք հարկաց արքունի, իբրև զապստամբս և զանհնազանդս և զստահակս ի ծառայութենէ տէրանց – 178.

ՍՏՐԱՏԵԼԱՏ - իսկ զՎարդան կարգէ ստրատելատ Հայոց: - 116. Եւ տայր նմա զօր կայսերական յօգնականութիւն, և զՅովհան պատրիկ ի Հայոց կողմանէ, և զՆերսէս ստրատեղատ յԱսիւրոց, և զՄուշեղ այր քաջամարտիկ և հզօր զօրութեամբ, և զամենայն զօրս Յունաց և Հայոց, Վրաց և Աղուանից – 138.

ՍՏՐԱՏԵՂԱՏ Տե՛ս ՍՏՐԱՏԵԼԱՏ

ՍՏՐԿՈՒԹԻՒՆ - և կացուցեալ զնոսա ի կարգի ստրկութեան, որոյ զփոյթ հպատակութեան ցուցեալ՝ կարգէ զնոսա ի գործ ծառայութեան, կրել արծուիս և բազէս. – 64.

ՍՏՐՋԱՆԱԼ - Եւ ստրջացաւ Աստուած քանզի արար զմարդն: - 28.

ՍՏՐՋԱՑԵԱԼ - Գունակ Կորխային բանակին յանդնդաքակ տունսն զբնակութիւնսն արարին, անխայեալ ի նինուէականն ստրջացեալ նախ անդ ո՛չ անխայեալ առ քարեղէն սիրտ քաղաքացւոցն Դունայ: - 358.

ՍՐԱԽՈՂ - և զարսն գետավէժս և սրախողս արարեալ վատնեն – 126.

ՍՐԱԽՈՂԽՈՂ - Եւ նոյնժամայն սուսերամերկք խուռն նիզակօքն ի վերայ յարձակեալ իբրև զգազանս արիւնարբուս մարդախանձս՝ սրախողխող արարեալ սպանին զնա – 352. ի սաստ մատուցեալ գնդին իւրոյ պատերազմողացն՝ և ոչ կարաց զբորբոքեալ հնոց դէզադէզ կոխակացն սրախողխող սատակմանն ցածուցանել: - 368. Իսկ զձերբակալսն յղեցին առ Աւշին ի Պարտաւ, որք տուեալ ի կապանս բանտի և դատապարտեցան ի մահ, սրախողխող միջակտուր արարեալ: - 372.

ՍՐԲԱԶԱՆ - Բայց անյայտք են եթէ կատարելանան, զի հազիւ սպիքն զան, ըստ որումն սրբազանի տրամաբանութեան: - 338.

ՍՐԲԱԿԱՆ - քարինս տաշահոս հոլովեալ ի նիւթ եկեղեցւոյն ի Մանազաւեանն նահանգէ ընդ Բզնունական ծովն բերեալ մատուցանէ առ կատարումն հրաշագեղ դիտանոցին սրբոյն Սիոնի, այլովքն սրբական անուանակոչութեամբ տեղեաց տնտեսականին բանին Աստուծոյ մարդ եղելոյ: - 396.

ՍՐԲԵԱԼ - Եւ սրբեալ զերկիրս ի պղծութենէ և ի նենգութենէ նեղութեանցն, իբրև զՅուդայ Մակաբայեցի զԱնտիոքայն սրբելով զանաստուածութիւնն յԻսրայէլէ՝ արար խաղաղութիւն նոցա որոց տիրէրն: - 312.

ՍՐԲԵԼ - Եւ սրբեալ զերկիրս ի պղծութենէ և ի նենգութենէ նեղութեանցն, իբրև զՅուդայ Մակաբայեցի զԱնտիոքայն սրբելով զանաստուածութիւնն յԻսրայէլէ՝ արար խաղաղութիւն նոցա որոց տիրէրն: - 312.

ՍՐԲՈՒԹԻՒՆ - այլ յետս կացեալ յուխտէ սրբութեանն դառնալ զհետ պաշտաման կռոցն – 80. և ամենեքեան որ պահիցեն զշաբաթս իմ և ոչ պղծիցեն, և պահիցեն զպատուիրանս իմ և կացցեն յուխտին իմում՝ տարայց զնոսա ի լեառն սրբութեան իմոյ – 224. Եւ ելեալ ի տեղին սրբութեան և կատարեալ զաղօթսն՝ ելին շրջել զբօսնուլ յայլ ևս տեղիսն: - 100. Եւ փոխանակ սուրբ մկրտութեանն՝ հանապազ ողողանիլ ջրով, և զայն բաւական համարել ի սրբութիւն: - 164. ոչ թէ վասն աստուածպաշտութեան ձերոյ կամ բարեգործութեան և սրբութեան արար Աստուած զայս այսպէս, այլ վասն մերոյ

ամբարշտութեան ի Տէր. – 144. մինչ քաղցրատենչ քունն ի վերայ հասանէր որ զպահպանութիւն գիշերոյն պահէին՝ նորա ամբարձեալ զպղծալից ձեռն ի սրբութիւն սրբոցն և առեալ զսուրբ նշան խաչին Քրիստոսի և ընդ պատուհանն արտաքս ելեալ – 378. Նա և տեղիք սրբութեանց տունք աղօթիցն զշարժմանն կիրս կրեալ, պատառմամբ որմաշարժ լինելով – 358. Քանզի այնչափ թանձրացաւ յաճախութիւն սովոյն՝ որ ոչ միայն անսուրբ կենդանիս ուտէին ըստ սրբութեան կարգի, այլ և զսարսափելի և զդժնդակ, որ զգազանայինն անցուցանէ զվայրենամտութիւնն, զմարմինս մեռելոց՝ առանց խղճելոյ ուտէին, ի գերեզմանացն հանեալ զհետ միոյ և երկուց ամաց թաղելոյ: - 374.

ՍՐԵԼ - Եւ զլեզուդ պղծութեամբ զոր սրէիր ի վերայ մեծազաւր թագաւորին՝ արդ նոր և զարմանալի վիրաւք դատեսցէ զքեզ քան զամենայն տիեզերս: - 164.

ՍՐԻՆԳ - Բայց կին ոմն յազգէն Աշդահակայ բնակէ յամուրսն Ջլմար և ի Սրինգ, ի գաւառին ի Փոքր Աղբագ – 90. Եւ ամուրք յոյժ և աննկասկածելիք ի ձեռս նոցա են, ամուրն Ջլմար և Սրինգ, և Ճախուկ բերդն. – 212. Եւ այն ինչ ընդ մտանելն՝ երագապէս հասեալ ի վերայ ամրոցացն Ջղմար և Սրինգ կոչեցեալ՝ յինքն գրաւէ զամրոցսն. և կալեալ զՎասակ՝ յինքն գրաւեաց զզօրավարութիւնն բոլոր Վասպուրական տէրութեանս: - 306. զի բռնացեալ բնակէր յամուրսն Սրինգ և Ջղմար. - 316. Իսկ իշխանն Աշոտ և եղբարք իւր խոյս տուեալ զկողմամբքն Փոքր Աղբագոյ, մերձ առ յամուրսն Ջղմար և Սրինգ: - 372.

ՍՐՆԳԵԼ - Եւ ի սաստիկ բախմանէ խուռն նիզակացն և ի զինուց փայլելոյ և շողալոյ սուսերացն և սրնգելոյ աղեղանցն լարելոյ՝ հրաձգութիւն իմն արտաքս ելանէր իբրև յամպոց ճայթմանէ – 232.

ՍՐՈՎԲԷ - որպէս յայնժամ ի մահուն Ոզիայ արքայի, յաւուրս Եսայեայ մարգարէի՝ ի ձայնէ սրովբէից շարժեալ տաճարին տեառն, մինչ բարձրանալ դրանդեացն: - 358.

ՍՐՈՒՆՔ - արկանեն տոռունս ի սրունսն, կախեն զհիւսիսայինն աշտարակէն. – 102.

ՍՐՏԱԴՈՒՐՔ - և Տիգրան առ երագութեան ձեռինն հարեալ նիզակաւ ընդ սրտադուրսն ի բաց կորզէր զթոքակէսն. – 64.

ՍՐՏԵԱՅ - քանզի խորհեցան թագաւորեցուցանել զնա ի վերայ Հայոց, զի էր այր սրտեայ և ուժեղ, քաջախորհուրդ և իմաստնախորհ, խոնարհ, առատաձեռն և զուարթամիտ: - 126.

ՍՐՏԻ ՄՏՕՔ - մտօք սրտի գիտել զերկիւղն Աստուծոյ, կարգել և օրէնս բնութեան ի մարդիկ. – 26. որոց սրտի մտօք ի մանկութենէ զհարկ ծառայութեան հատուցեալ էին ըստ օրինի վայելչութեան հնազանդողաց և հնազանդելոց, ըստ յորդորման հեթանոսաց վարդապետին: - 364.

ՍՐՏՄՏԵԱԼ - սրտմտեալ անժուժկալ ի բարկութեանն ջերմագոյն արեանն մրրկալից շարժմանն, և սկսաւ թափել զմահաբին թոյնս իւր ի վերայ կապելոցն, իբրև զթոյնս իժի – 242.

ՍՐՏՄՏՈՒԹԻՒՆ - Եւ լուաւ տէր աղօթից նոցա, և դարձաւ ի բարկութենէ սրտմտութեան իւրոյ գթութեամբ և ողորմութեամբ, որպէս գրեցին երանելի մարգարէքն: - 314. Եւ յերկարեալ սպարապետին /282/ խօսել ընդ զօրավարին՝ ի բաց մերկեաց զպատրուակ սրտմտութեան ի սրտէ նորա: - 284. Յայնժամ թագաւորն լի եղև սրտմտութեամբ – 246. նոյնժամայն առ յոյժ ամբարտաւանութեանն և սաստիկ բարկութեանն և անհուն սրտմտութեանն և առանց բուժելի կատաղութեանն, յապուշ միտքն կրթեալ իբրև զարբեալ զանզգայ արբեցութեամբ - 264.

ՍՓՌԵԱԼ - և սփռեալ ասպատակ ընդ կողմանս կողմանս – 134. և տարածեալ սփռեալ գործավարս յամենայն երկիրս, բայց միայն յամուրսն ոչ կարացին լինել գամագիտ: - 372. սփռեալ տարածանեն հէնս ասպատակաւորս ընդ բոլոր երեսս երկրիս Հայոց – 102.

ՍՓՌԵԼ - առանց վեր ի վերայ /ճիշտը՝վեր ի վերոյ/ դնելոյ սփռել տարածանել ի կորուստ և յապականութիւն բազմաց: - 242. Եկն եմուտ ի գաւառն Աղբագ, և ասպպատսպակս սփռէր ընդ կողմանս կողմանս յերկիրն Վասպուրական, գերփէր, աւերէր, յափշտակէր, կապուտ կողոպուտ գործէր ընչից և ստացուածոց. – 176. և բանակեցաւ ի յԱդամակերտ ոստանին Արծրունեաց, և անդէն սկսաւ ասպպատսպակս սփռել, աւար առնել, կուտել առ ինքն զկապուտ աշխարհին յոյժ սաստկութեամբ: - 184. Եւ ընդ առաւօտն հրամայեաց

Հայրակղոս ապպատակս սփռել ի վերայ ամենայն երկրին, և հարկանել զամենայն երկիրն սրով սուսերի: - 150. և ինքն Ջափր գործ առնէր առ սակաւ սակաւ մեկնել ի նմանէ զզօրսն՝ դիմօք յաշխարհս աշխարհս /326/ ապպատակ սփռելոյ: - 328. սկսան այնուհետև աներկիւղ համարձակութեամբ սփռել տարածանել ի վերայ երեսաց երկրիս ամենայն ազգքն Տաճկաց – 238.

ՍՔԱՆՉԱՑԵԱԼ - Ընդ որ սքանչացեալ ընդ քաջասրտութիւնն և ընդ իմաստուն բանակարգութիւնն Պտղոմէի և Սելևկեայ զօրագլխացն Աղէքսանդրու՝ խնդրեցին պարգև ի թագաւորէն զԱսուդ. - 70.

ՍՔԱՆՉԵԼԱԳՈՐԾ - Յանձն առի պատմել ստուգապէս զսքանչելագործ յայտնութեանն հրաշիցն, որ ցուցաւ ի զօրավարութեանն Գագկայ. – 378.

ՍՔԱՆՉԵԼԱՊԷՍ - Զոր բան և վասն օձին սքանչելապէս ուսուցանէ Փիլոն Աղէքսանդրացի՝ յառաջ քան զդրժանացն դիպուածս՝ յոլովութիւն իմաստից ունել ամենայն շնչականաց. – 22.

ՍՔԱՆՉԵԼԻ - Ընդ որ յոյժ զչարեալ սքանչելին Աղան Արծրունի որդի Վասակայ ընդ հօրն անիմաստասէր բարուցն անխորհրդածութիւն և ընդ այնպիսւոյ աստուածամարտին Մեհուժանայ գթասիրաբար վարել ազգականութեամբ – 112. ի հարկէ լուայ աստուածայնոյ սքանչելի ձայնին որ ի հաւուցն ասացեալ եղև,,: - 52.

ՍՔԱՆՉԵԼԻՔ - ՎԱՍՆ ՍՔԱՆՉԵԼԵԱՅՆ ՈՐ ՅՈՒՅԱԻ ՅՈՍՏԱՆՆ ՌՇՏՈՒՆԵԱՅ ՅԱՄՍ ՋՕՐԱՎԱՐՈՒԹԵԱՆՆ ԳԱԳԿԱՅ: - 378.

ՍՔԵՄ - անկեալ Աղան յերեսս առաջի սրբոյն Սահակայ և առաջի սպարապետին Սահակայ՝ ընդունել զսքեմ կրօնաւորութեան մոնազնութեան անապատասէր միայնական ստանալ իւր վարս: - 114. Եւ եղև ի դառնալն սրբոյն Սահակայ ի Պարսից՝ եկն առ նա դարձեալ Աղան Արծրունի, և ընկալաւ ի նմանէ սքեմ կրօնաւորութեան. – 120.

ՍՔԵՄԱՁԵԻ - Եւ յետ խաչայարդար պայծառութեանն իջեալ ի լեռնէն Գագիկ ի ստորոտ լերինն, ուր աբեղայիցն բնակէին սքեմաձևքն: - 394.

Վ

ՎԱՋ - անդ հասեալ քաջացն մերոց եղբարցն երեցունց ազատագունդ սակաւաձեռն գրոխիւ ի ձմեռնային ժամանակի, և ընդ լրթնատեսիլ լուսոյն վազս ի վերայ եղեալ՝ հանին ընդ սուր յոլովս քան թէ սակաւս: - 372. և երիվար մարզպանին պակասեաց առ վազսն – 402. և աղաղակեալ զկնի նորա՝ զի թերևս ի լուր ձայնին և ի փայլումն զինուցն և ի շողալ սուսերին և ի խխնջիւն քաջ երիվարին և ի վազս երագութեանն ուժոյ ազդ լինիցի և դարձցի ի ձայն նոցա և ծանիցէ, և դարձցի ի կորստական ճանապարհէն – 228. և երիվարին ընդ վազս փռնգալիր խրոխտանացն փրծուցեալ զնա ի ցաւոցն, քանզի այն ինչ կազդուրեալ էր Գուրգէն ի հիւանդութենէ և ի կրից աշխատութեանցն և ի տառապանաց բանտին: - 320. մինչ նոքա գունդ առ գունդ ընդդէմ միմեանց ճակատեալ կազմէին զռազմն, և փողքն գոչէին և դրօշքն տարածանէին և նշանքն փողփողէին, վահանաւորքն և նիզակաւորքն գոչէին, այրուձին այսր անդր վազս առնէին և ախոյեանքն յարձակէին, կապարճակիրքն աղեղանցն յուրային: - 174.

ՎԱՋՍ ԱՌԵԱԼ - դուզնաքեայ երասանակալ փայտիւն վազս առեալ սիգաքայլ ճեմարանօք ընդ կապուտակաձև երկնագոյն լեռնային և դաշտական ասպարէզս – 396. Եւ վազս առեալ

փութացան մտին ընդ կողմն Մականայ, բանակեցան ի դաշտավայրին Մեդիացւոց – 62. Նոյն ժամայն Քսերքսէս և Արշէզ վազս առեալ պատահեն Լիդէացւոյն. – 66. Նոքա վազս առեալ ճեպով խուռն յարձակմամբ սպառազինեալ այրուձիոց. – 352

ՎԱՋԵԼ - Այսր աղագաւ արտաքս վազեցի զմեծս զայս բանգտութեան ընթանալ ասպարէզ, զօրաւորաց մտահարուստ արանց կարօտացեալ բաւականանալ իմով անհեդեդ պատմողական հանդիսիւ – 352. և ընտիր երիվարաց պատրաստել, ի նորա չար խորհրդոցն ի բաց վազել: - 344. Եւ վազեսցեն առաւել քան զինծ երիվարք նոցա, և երագունք քան զգայլս Արաբացւոց: - 200. Եւ վազէր ընդ բանակն, կանչէր, հնչէր, շարժէր զձեռնն և ասէր, ,,ես քրիստոնեայ եմ, քրիստոնեայ եմ,, - 224.

ՎԱԹՍՈՒՆ - քանզի ասեն զբարձրութիւն նորա լինել վաթսուն կանգուն. – 38.

ՎԱԽՃԱՆ - այլ ի մարդկապէս բարբառոյ աստի ցուցանէ ի հրաժարականն ի սպառ վախճան: - 28. Ապա իբրև վախճան առնոյր կարգեալ եպիսկոպոսացն որ ի Պարսից … միաբան ապա նախարարքն Հայոց եկին առ սուրբն Սահակ – 120. և մինչդեռ խորհէր արքայ Կաւատ վասն շինութեան աշխարհի և խաղաղութեան՝ եհաս նմա վախճան կենաց և մեռաւ, կեցեալ ամիսս Ջ: - 152. Եւ յետ սակաւ աւուրց վախճան առեալ կենաց նորա, ձիոյ խրոխտացելոյ զանձն ամբերթեալ ելոյծ ի կենաց զքաջարանցն զմեծն տերանց զքաջ զօրավարն և զզօրագլուխն Հայոց մեծաց: - 364. Ընդ ժամանակս Հայրակղի կայսեր Հռոմոց էր հասեալ ի վախճան թագաւորութեանն Պարսից: - 156. կոչեաց զերիցունսն նորոյ կտակիս, զեպիսկոպոսս և զքահանայս, առաջի արկեալ զհաւատոցն կատարելաբանութիւն, զմկրտութեանն լուսաւորութիւն. զառեկելոցն յապաշխարութիւն, զյոյսն յետ վախճանին, զմարդասիրելն Քրիստոսի - 386. Յետ համբառնալոյ Փրկչին մերոյ և վախճանի բարեպաշտ թագաւորին /78/ Աբգարու, թագաւորեաց Անանուն որդի Աբգարու – 80. Որ և ի սա հասեալ՝ վախճան եղև թագաւորութեանն Պարսից. զոր յետ սակաւու միոյ ասացուք: - 156. քանզի յետ վախճանի Ասպուրակայ նստուցեալ էր Խոսրովու յաթոռ հայրապետութեան Հայոց զսուրբն Սահակ որդի սրբոյն Ներսէսի. – 112.

ՎԱԽՃԱՆԵԱԼ - այլ անդ կեցեալ և անդէն վախճանեալ, ոչ արժանի ինչ գործ յիշատակաց ցուցեալ: - 110. Անդ կեցեալ Խուրան և անդ վախճանեալ ի բարիոք ծերութեանն – 80. Եւ վախճանեալ միայնակեցին՝ կամեցաւ կատարել զպատուէր նորա Սաղման: - 162. և անդ մարգարէն Եզր և թագաւորն Սաղաթիէլ վախճանեալ թաղի ի Մարբակատինա ի բլրակի մի տեղւոջ. – 66. և յերթալն նորա և ի դառնալն՝ գայ գտանէ վախճանեալ զթագաւորն Արտաշէս ի Մարինդ – 92. և վախճանեալ զհայրն նորա՝ ի նմին աւուր մեռանի և ինքն սրով յիւրայոցն: /ճիշտը՝ յիւրայնոցն/ - 116. Եւ քանզի այն ինչ վախճանեալ էր կին Դերենկին՝ գրէ Գուրգէն առ Աշոտ, ասէ. – 322. Եւ քանզի վախճանեալ էր Համազասպ Մամիկոնեան … ոչ ոք այնուհետև առաջնորդէր Հայոց աշխարհիս. – 116. ի սորա ԽԳ ամին վախճանեալ Յակոբ մարգարէանայ վասն հեթանոսաց կոչմանն: - 56. - Վախճանեալ կայսր Վաղէս, և թագաւորէ Յունաց մեծն Թէոդոս. – 108. Քանզի սոքա յառաջ քան զհարս իւրեանց ասին վախճանեալ. – 40.

ՎԱԽՃԱՆԵԼ/ԻԼ/ - ,,որդեակ, ի վախճանելս իմում մի կայցես յայսմ աշխարհի, զի մի կորուսցես զկարգ քո ի մէջ անհաւատից, այլ երթիցես ի կողմանս Եգիպտոսի՝ բնակել ի մէջ բազմութեան եղբարց, զի շահեսցիս զոգիդ քո,,: - 162. Եւ եղև ի վախճանելն Խոսրովու Հայոց թագաւորի, որ եկաց ի տերութեանն ամս Դ – 114. և եղև վախճանել Տիբերի թագաւորեալ ամս ԻԳ. – 80. և ետ բերել քուքս և տանջել զնոսա քքովքն յերկար, մինչ կարծել ի նմին վախճանել – 292. և ի վախճանելն իւրում … ետ զիշխանութիւնն կնոջն իւրում Շամիրամայ – 44. ,,Կաւատ թագաւորն ձեր վախճանեցաւ, և որդի նորա մանուկ տղայ է. բայց արդ ի քեզ հասեալ թագաւորութիւնդ, և ես քեզ տայց զնա – 152. գնաց Արշակ փախստական յԵկեղէց գաւառ և անդ վախճանի իւրով մահու, թագաւորեալ ամս Է: - 112. և յերկրորդումն հանդերձեալ են վերստին մտանել ի տանջանս յաւիտենականս, ուր որդն ոչ վախճանի և հուրն ոչ շիջանի: - 336. Եւ ի սորա հարիւր և երեսուն և հինգերորդ ամին վախճանեցաւ նախահայրն Ադամ, կեցեալ ամս ՋԼ. – 26. Եւ իբրև անցին աւուրք

ինչ՝ վախճանեցաւ տանուտէր տանն: - 158. Եւ կալեալ Արշակայ զթագաւորութիւնն ամս ԼՋ՝ վախճանի ըստ օրինակի ասացելոց: - 104. Եւ կեցեալ Արջամ ամս Ի վախճանի – 76. և յետ Բ ամաց վախճանի Վաղարշակ, թագաւորեալ ընդ եղբօրն բոլոր Հայոց: - 110. Եւ յետ նորա ածին զԽոսրոյ ոմն /154/ տղայ մանուկ և նստուցին իւրեանց թագաւոր. և նա փութանակի վախճանեցաւ: - 156. Եւ նահապետացն արդարոցն անդէն և ի նոյն կալով՝ անդ և վախճանեցան – 30. Եւ նորա կամեցեալ ցուցանել թագաւորին՝ ի սոյն աւուրս վախճանեցաւ Հայրակղէս. իսկ որդի նորա Կոստանդին ոչ ունէր յանձին ըստ կամաց նորա պատասխանի. – 162. ի ԺԴ ամի սորա վախճանի Յովսէփ: - 56. ի սորա Ը ամին Մովսէս մարգարէ վախճանի: - 58. Իսկ նորա տուեալ զնա ի կղզիս Ովկիանու վախճանի անդ, թագաւորեալ ամս Դ: - 110. Որ և հուպ ժամանակաւ վախճանի և կայսր Թէոդոս, և առնուն զթագաւորութիւնն Ոնորէոս և Արկադ որդիքն Թէոդոսի: - 110. որ յետ Ե ամաց վախճանի, կեցեալ կեանս արտաքոյ իրաւանց: -118. որ տեսեաց ամս ՆԺԵ և վախճանեցաւ: - 120.

ՎԱԽՐԻՃ - փութացոյց գիր պաղատանաց առ Տաճատ Ռշտունեաց տէր և առ Վախրիճ Անձաւացեաց տէր, զեկուցանել նոցա զեղեալսն: - 126.

ՎԱԿՈՒՐ - Եւ զայլս ազգի ազգի զինուորք ունէին վաղերք և վակուրք, սուսերք և սուինք, տապարք և վիրգահանք, մեքենայք և ռմբաքարք, վահանք և նիզակք: - 208.

ՎԱՀԱԳՆ - Իսկ զՎահագն Հայկազնեայ … կացուցանեն ի դրան արքունի, յառաջանալ ի գործ պատերազմին մեծաւ աշխատութեամբ՝ կամ մեռանել ի սրոյ թշնամեաց դիպելոց, կամ յաղթել քաջասրտութեամբ: - 70.

ՎԱՀԱԳՆ ՀԱՅԿԱԶՆԵԱՅ - Իսկ զՎահագն Հայկազնեայ … կացուցանեն ի դրան արքունի, յառաջանալ ի գործ պատերազմին մեծաւ աշխատութեամբ՝ կամ մեռանել ի սրոյ թշնամեաց դիպելոց, կամ յաղթել քաջասրտութեամբ: - 70.

ՎԱՀԱՆ/հատուկ և հասարակ անուն/ - ՎԱՍՆ ԴԱՌՆԱԼՈՅ ԱՇՈՏՈՅ ԻՇԽԱՆԻՆ Ի ԳԵՐՈՒԹԵՆԵՆ ԵՒ ՎԱՍՆ ՎԱՀԱՆԱՅ ԱՐՁՐՈՒՆԻՈՅ: - 328. Ազդ եղև քաջին Վահանայ, եթէ զօր բազում առեալ Հազարաւուխտ յընտրելոցն Պարսից և ահաւադիկ հասեալ գայ ի վերայ: - 134. այլ առնու զզօրսն Պարսից և գայ թագաւորել Հայոց հրամանաւ Շապհոյ արքայի, ունելով ընդ իւր զՎահան Մամիկոնեան. – 106. Այլ և Վահան Ամատունեաց գաւառին փախստեայ եկեալ ի ձորն, որ մերձ է յամրոցն, ուր տէրն իւրեանց կայր: - 208. Այս Վահանս զոր յիշեցաք՝ այն Վահան է, զոր թագաւորեցուցին նախարարք Հայոց յաւուրս սրբոյն Վարդանայ – 74. անդ Վահան Արծրունի ընդմիջեալ զգունդն Պարսից դարձուցանէ ընդդէմ Վարդանայ. – 128. առաջապահեստ ճանապարհորդութեանն արարեալ զՄերշապուհ Արծրունի զօրավար Հայոց և զՎահան Ամատունի և եղբայր Մեհուժանայ՝ տարեալ հանգուցանեն ի տեղւոջ հայրենեացն վկայարանի ի Թորդան: - 108. Առնուն Մեհուժան և Վահան զզօրս Պարսից, գան մտանեն յերկիրս Հայոց – 102. Բայց Աշոտ վերջոտնեալ հանդերձ Վահանայ՝ եկն եհաս խաղաղութեամբ և բերկրեալ սրտիւ բազմադէմ յերկիր իւր: - 330. Բայց թէ է՞ր աղագաւ պատմութիւն վկայութեան Վահանայ ոչ է գրեալ ի գիրս պատմագրի՝ ստուգապէս առանց յերկուանալոյ ցուցանեմ քում ուսումնասէր քաջահմտութեանդ:- 128. Բայց յետոյ անմիաբան գտեալք նախարարքն Հայոց՝ թողին զոր խորհեցանն վասն թագաւորելոյ Վահանայ, և անցին /126/ գնացին առ մեծն Վարդան. – 128. Գան դարձեալ Մեհուժան և Վահան և առնուն զՎանտոսպ – 104. գնաց և Վահան զհետ նախարարացն առ Վարդան յառաջագոյն, տալ նմա զվերակացութիւն Հայոց. – 128. և խաչանշան լուսով խաղացուցանեն բազմութեամբ նախարարացն Հայոց ի ձեռն Վահանայ Ամատունոյ – 120. Եւ այն ինչ պատահեալ Գուրգէն հարուստ գնդի Վահանայ ի յառուամէջս մուրին՝ ի բազում քան թէ սակաւ սուսերս ծեծեցին զնա, մինչև ոմն Ջուանշէր անուն յետուստ յանկարծ հարեալ վիրաւորեաց զԳուրգէն – 310. Եւ այս են ծնունդք Արծրունեաց. ի Բաբգենայ Մուշեղ. Վահան. Ներսէհ. միւս Բաբգէն. Տիրոց: - 94. Եւ անդ Վահան Արծրունի խոյակապ և յականաւոր քաջամարտութեամբ ընդ սրբոյն Վարդանայ ճակատ առ ճակատ վառեալ

զպատերազմն, իբրև հուր ընդ եղէգն ճեմելով ի մէջ քաջ ախոյեանացն Պարսից: - 128. Եւ առ չանսալն յետուստ կողմանէ Վահան հարեալ ի գաղտնիս զգարշապար երիվարին՝ արար կաղանալ նժոյգ ասպարակողին. – 334. Եւ գունդն Հայոց խաղացին ընդդէմ նոցա … ի տանէն Արծրունեաց՝ Գուրգէն … և Գնունիք՝ Վահան և Շապուհ և Ապուսէթ և Պատրիկ և Ապուսելմ և Վարդան. – 230. Եւ գունդն Հայոց խաղացին ընդդէմ նոցա … ի տանէն Արծրունեաց՝ Գուրգէն … և Գաղրիկքն՝ Ապուսելմ և Վասակ և Վահան. … և Ամատունիքն՝ Մուշեղ և Ասիթ և Սահակ. – 230. Եւ դարձան մտին յՈստանն Ռշտունեաց և կացուցին յանձանց իւրեանց իշխան զՎասակ Կովակեր, եղբայր Վահանայ: - 306. Եւ զգունդն երկրորդ ի ձեռս Գուրգինայ Ապուպելճի, և նիզակակից էր նորա Վահան Արծրունի: - 178. և զզօրն տուեալ ի ձեռս Վահանայ Ամատունւոյ, հոգալ զգործ պատերազմաց, թէ արդեօք դէպ լինիցի ուստեք: - 96. և զիշխանն Աշոտ և զորդի նորա Գրիգոր և զՎահան Արծրունի և զորդի նորա Գագիկ … և զՄուշեղ եղբայր Վահանայ և զտիկնայս նոցա և զտիկինն Հրանուշ և զայլս յազատատանէ կապեալ և բարձեալ ի վերայ ուղտուց՝ վտարեաց ի Սամառայ – 220. և զիշխանն Աշոտ և զորդի նորա Գրիգոր և զՎահան Արծրունի և զորդի նորա Գագիկ … և զՄուշեղ եղբայր Վահանայ և զտիկնայս նոցա և զտիկինն Հրանուշ և զայլս յազատատանէ կապեալ և բարձեալ ի վերայ ուղտուց՝ վտարեաց ի Սամառայ – 220. և զպատճառսն ստուգեալ, գրէ ի ձեռն Վահանայ ումեմն ի տոհմէն Ամատունեաց՝ դառնալ գալ բնակել անկասկած կենօք, ի բարձ և ի պատիւ իւրաքանչիւր յառաջանալ: - 98. և ընկալեալք ի թագաւորէն Արշակայ ըստ գրելոյն ի ձեռն Վահանայ՝ կացին անկասկած: - 98. և ինքն Հազարաւուխտ առնու զընտիրս այրուձիոց, զկորովի պատերազմողս ի վառելոցն պարսկային հարստութենէն, և խաղայ գնայ զկողմամբքն Հաշտենից և Ծոփայ, ի վերայ Վահանայ յանկարծօրէն: - 134. Եւ մեք այժմ զկարգն յառաջ վարեսցուք. Կիւրոս. Վարգէն. Վահան. Շամբիթ. Ջաջ. Ջաջուռ: - 74. Եւ յետ աւուրց ինչ դարձեալ դառնայ Վահան ի Սամառայ, զեկուցանել Աշոտի որ ինչ գործեցաւն: - 310. և նորա ելեալ սակաւ արամբք՝ իբրև ջուր ընդ զառ ի վայրն հոսեալ՝ արար հալածական զՎահան և զզօրս նորա. – 310. և որք ի տանէն Ամատունեաց՝ Շապուհ և Վահան և Սարայ եղբարք միմեանց, Ապուսակր Վահունի և այլք ընդ նոսա, միաբանական խորհրդակցութեամբ խորհրդածեալ ընդ Գագկայ առ ի սպանումն Ապումրուանայ – 368. և ունէր զիւրաքանչիւր կալուածս զաւանդեալ ժառանգութիւն նոցա ի թագաւորացն առաջնոցն Մուշեղ, Վահան: - 96. և Վահան հասեալ յանկարծուստ ի վերայ նորա, այն ինչ ընդ միտ ածելով ստնանել ինչ Գուրգինայ. – 310. և քաջն Վահան Արծրունի ընդ նմա նիզակակցեալ՝ մեռանին ի միասին քաջքն և ընտիրքն, մեծ նահատակք Վարդան և Վահան – 128. և քաջն Վահան Արծրունի ընդ նմա նիզակակցեալ՝ մեռանին ի միասին քաջքն և ընտիրքն, մեծ նահատակք Վարդան և Վահան – 128. Զգունդն առաջին տուեալ լինէր ի ձեռս Գուրգինայ և Վահանայ Հաւնունւոյ, որ և նիզակակից նմա էր: - 178. Ընդ նոյն ժամանակս եկն Վահան Աշոտի որդի, հօրեղբօրորդի Սահակայ ի գերութենէն՝ նուաճել զաշխարհս, և գունդ կազմեալ ընդդէմ Գուրգինայ՝ և ինքն զպարտութիւն քան զյաղթութիւն յինքն կրէր: - 310. Իսկ զԳողթն գաւառ ի ժամանակի կատարման սրբոյն Վահանայ, յամի ՃՋՋ թուականութեանց, յորում ամի կատարեցաւ սուրբն Վահան, որ էր որդի Խոսրովայ Գողթան տեառն: - 390. Իսկ զԳողթն գաւառ ի ժամանակի կատարման սրբոյն Վահանայ, յամի ՃՋՋ թուականութեանց, յորում ամի կատարեցաւ սուրբն Վահան, որ էր որդի Խոսրովայ Գողթան տեառն: - 390. Իսկ զթագաւորաբնակ տեղին մեծին Տրդատայ տան ի ձեռս Վահանայ Արծրունւոյ՝ շինել նմա տուն թագաւորաց, արարս պատրաստութեամբ. – 126. Իսկ յաւուրս Վաղարշու մանուկն Վահան Մամիկոնեան ուժեղանայր ընդդէմ Պարսից. – 134. Կարծելով Վահանայ խոնարհել զորդին իւր յանկանգնելի կործանումն, զոր մեկուսեալ Սամուէլի զհայր իւր Վահան, իբր այն թէ խորհիցին ինչ վասն որոյ եկեալն էին – 106. Կարծելով Վահանայ խոնարհել զորդին իւր յանկանգնելի կործանումն, զոր մեկուսեալ Սամուէլի զհայր իւր Վահան, իբր այն թէ խորհիցին ինչ վասն որոյ եկեալն էին – 106. Մարկիանոս կայսր

թագաւորեալ Յունաց յերկրորդն Թէոդոսի, որ արար զժողովն ի Քաղկեդոն ՈԼԳ եպիսկոպոսաց. առ որով վկայեաց սուրբն Վարդան և Վահան Արծրունի: - 132. մինչ կալ մնալ միայն երեսուն արանց ընդ քաջին Վահանայ, Մերշապուհ և Յաշկուր Արծրունիք, և Կամսարն Ներսէհ, և ի տանէն Ամատունեաց՝ զորոց զանուանսն անգիտանամ – 134. մտեալ Վահան աղերսէր համոզէր՝ մի կալ մնալ, մինչ զքաջանունութիւնն ընդ վատասրտութիւն կարծել յոմանց խառնել, թէպէտ և անկարծ վարկանէր զկեղակարծն: - 328. Յայնժամ ի խորհուրդ եմուտ իշխանն և տոհմակիցք իւր, Վահան և Մուշեղ Արծրունիք, և գունդքն ազատանոյն որ ընդ նմա - 210. Յայնժամ Վահան հայր Գագկայ Ապումրուանայ և ինքն Գագիկ առնէին համոզել ի մէջ նոցա: - 334. յղէ առ Գուրգէն զՎահան Արծրունի և զվանաց երէցն Թէոդորոս զգլխաւորն Հոգեաց վանից, ասէ. – 330. յորում և ոմն հաւատարիմ Յիսէի Սէմ անուն յառաջ խաղացեալ՝ պատահէ իշխանին, ընդ Վահանայ խորհրդակցեալ խորհել զխաղաղութիւն և զմարտն գրգռեալ ցածուցանել և զվառեալ պատերազմն շիջուցանել. – 334. Նոյն ժամայն աճապարեալ Վահանայ խրախուսեալ յԱստուած, ձայն քաջալերութեան առ նախարարսն Հայոց ասէ. – 134. Նորա զչարեալ ընդ հասանել պատգամին՝ առ զայրուցս բարկութեան քինահանութիւն վրէժխնդրութեան արարեալ՝ ի բաց եհան ի գրոցն պատմութենէ՝ որ ինչ վասն տանն Արծրունեաց էր գործոց հանգամանք, և որ ինչ օրինակ մարտիրոսութեան Վահանայ Արծրունւոյ: - 130. նուաճեաց զանձն, հրապոյրս պղտորս արբուցանէ Վահանայ Մամիկոնէի, որ էր աներ Մեհուժանայ, և անցեալ գնացին առ Շապուհ. – 102. որ սպան զհայր իւր Վահան և զմայր իւր Տաճատուհի վասն պարսկականին հնազանդութեան մոգութեան օրինացն – 110. Որում ունկնդիր եղեալ երեքեան նախարարութիւնքն առն իմաստնոյ Վահանայ Ամատունւոյ՝ զան զկնի նորա անկասկած համարձակութեամբ – 98. Սոքա հրամանաւ Վահանայ Արծրունւոյ փոյթ յանձին կալեալ՝ խուզել քննել կարգել ի համառօտ բանս զաճմունս ազգացն անցելոց ոչ կարի ինչ ընդ երկայնագոյնս աշխատասիրաբար անցանել պատմութիւնս: - 74. Փութանակի և վաղվաղակի իւրաքանչիւր զօրօք անդր հասանէին … և ի տոհմէն Արծրունեաց՝ Վահան և Վասակ և Մուշեղ և Ապուպէլճ և Գուրգէն և Վասակ և Ապուջափր և Մուշեղ և Ապումայեայ և Վասակ և Վահան և Համազասպ և Վասակ որդի Գրիգորի և Ապումկդէմ և Մեհուժան և Գրիգոր – 174. Փութանակի և վաղվաղակի իւրաքանչիւր զօրօք անդր հասանէին … և ի տոհմէն Արծրունեաց՝ Վահան և Վասակ և Մուշեղ և Ապուպէլճ և Գուրգէն և Վասակ և Ապուջափր և Մուշեղ և Ապումայեայ և Վասակ և Վահան և Համազասպ և Վասակ որդի Գրիգորի և Ապումկդէմ և Մեհուժան և Գրիգոր – 174. Քանզի Սամուէլ որդի Վահանայ գնաց ընդ առաջ հօր իւրոյ: - 106. Քաջապէս մարտուցեալ Գուրգէն եղբայր իշխանին և Վահան Հաւնունի՝ առին անուն յաղթութեան, անցուցանելով ընդ սուր զկողմն թշնամեացն. – 178. և ընդ այգն ընդ առաւօտն, մինչ նոքա ննջէին յիւրաքանչիւր վրանաց օթոցի՝ և զօրքն շուրջ փակեցին սուսերօք և վահանօք և նիզակօք և վառեալ մոմեղինօք, և մտեալ ի ներքս ըստ հրամանի զօրավարին իւրեանց – 296. և աստի և անտի երիվարի փորոյն տախտակագործ գրգեալ ըստ փորոյն չափու մածուցեալ ի ձև վահանի զգործ արուեստի զինուն ցուցանեն: - 208. և դեռ զիւրաքանչիւր սուսեր ածեալ ունէին ընդ մէջ իւր և վահան ի վերայ թիկանց եղեալ. – 220. Եւ զայլս ազգի ազգի զինուորք ունէին վաղերք և վակուրք, սուսերք և սուինք, տապարք և վիրգահանք, մեքենայք և ռմբաքարք, վահանք և նիզակք: - 208. և վահան ի թիկունս եղեալ ի բոլոր սրտէ զհաւատս անբիծս, և համբարձեալք զձեռս իւրեանց յերկինս իբրև զաղեղն հաստ – 252. վահան ի թիկունս եղեալ, սուսեր ընդ մէջ ածեալ, նիզակ ի ձեռին ունելով - 208. վահան ի թիկունս եղեալ, նիզակ ի ձեռին ունելով, ի կապարճս աղեղանց ի դիմի հարեալ զօրացն – 202.

ՎԱՀԱՆ ԱՄԱՏՈՒՆԻ - առաջապահեստ ճանապարհորդութեանն արարեալ զՄերշապուհ Արծրունի զօրավար Հայոց և զՎահան Ամատունի և եղբայր Մեհուժանայ՝ տարեալ հանգուցանեն ի տեղւոջ հայրենեացն վկայարանի ի Թորդան: - 108. և խաչանշան լուսով խաղացուցանեն բազմութեամբ նախարարացն Հայոց ի ձեռն Վահանայ Ամատունւոյ –

120. և զզօրն տուեալ ի ձեռս Վահանայ Ամատունոյ, հոգալ զգործ պատերազմաց, թէ արդեօք դէպ լինիցի ուստեք: - 96. Որում ունկնդիր եղեալ երեքեան նախարարութիւնքն առն իմաստնոյ Վահանայ Ամատունւոյ՝ գան զկնի նորա անկասկած համարձակութեամբ – 98.

ՎԱՀԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ - անդ Վահան Արծրունի ընդմիջեալ զգունդն Պարսից դարձուցանէ ընդդէմ Վարդանայ. – 128. Եւ անդ Վահան Արծրունի խոյակապ և յականաւոր քաջամարտութեամբ ընդ սրբոյն Վարդանայ ճակատ առ ճակատ վառեալ զպատերազմն, իբրև հուր ընդ եղէգն ճեմելով ի մէջ քաջ ախոյեանացն Պարսից: - 128. Եւ զգունդն երկրորդ ի ձեռս Գուրգինայ Ապուպելճի, և նիզակակից էր նորա Վահան Արծրունի: - 178. և զիշխանն Աշոտ և զորդի նորա Գրիգոր և զՎահան Արծրունի և զորդի նորա Գագիկ … և զՄուշեղ եղբայր Վահանայ և զտիկնայս նոցա և զտիկինն Հրանուշ և զայլս յազատատանէ կապեալ և բարձեալ ի վերայ ուղտուց՝ վտարեաց ի Սամառայ – 220. և քաջն Վահան Արծրունի ընդ նմա նիզակակցեալ՝ մեռանին ի միասին քաջքն և ընտիրքն, մեծ նահատակք Վարդան և Վահան – 128. Իսկ զթագաւորաբնակ տեղին մեծին Տրդատայ տան ի ձեռս Վահանայ Արծրունւոյ՝ շինել նմա տուն թագաւորաց, արարս պատրաստութեամբ. –126. Մարկիանոս կայսր թագաւորեալ Յունաց յերկրորդն Թէոդոսի, որ արար զժողովն ի Քաղկեդոն ՈԼԳ եպիսկոպոսաց. առ որով վկայեաց սուրբն Վարդան և Վահան Արծրունի: - 132. յղէ առ Գուրգէն զՎահան Արծրունի և զվանաց երէցն Թէոդորոս զգլխաւորն Հոգեաց վանից, ասէ.– 330. Նորա զչարեալ ընդ հասանել պատգամին՝ առ զայրուցս բարկութեան քինահանութիւն վրէժխնդրութեան արարեալ՝ ի բաց եհան ի գրոցն պատմութենէ՝ որ ինչ վասն տանն Արծրունեաց էր գործոց հանգամանք, և որ ինչ օրինակ մարտիրոսութեան Վահանայ Արծրունւոյ: - 130. Սոքա հրամանաւ Վահանայ Արծրունւոյ փոյթ յանձին կալեալ՝ խուզել քննել կարգել ի համառօտ բանս զաճմունս ազգացն անցելոց ոչ կարի ինչ ընդ երկայնագոյնս աշխատասիրաբար անցանել պատմութիւնս: - 74. ՎԱՍՆ ԴԱՌՆԱԼՈՅ ԱՇՈՏՈՅ ԻՇԽԱՆԻՆ Ի ԳԵՐՈՒԹԵՆԷՆ ԵԻ ՎԱՍՆ ՎԱՀԱՆԱՅ ԱՐԾՐՈՒՆԻՈՅ: - 328.

ՎԱՀԱՆԱՒՈՐ - մինչ նոքա գունդ առ գունդ ընդդէմ միմեանց ճակատեալ կազմէին զռազմն, և փողքն գոչէին և դրօշքն տարածանէին և նշանքն փողփողէին, վահանաւորքն և նիզակաւորքն գոչէին, այրուձին այսր անդր վազս առնէին և ախոյեանքն յարձակէին, կապարճակիրքն աղեղանցն յուրային: - 174. և Արշէզայ շուրջ փակեալ վահանաւորօք զԼիդէացւոց թագաւորաւն, տագնապ մեծ լինէր. – 64. Եւ ի ժամու մինչ ագևորեալքն կամէին մտանել զառաջեաւ … յայնժամ շուրջ կացեալ զվրանաւն մեծ սպարապետին զկազմեալ գնդաւ վահանաւոր և նիզակաւոր ամրափակ պնդութեամբ, և մտեալ մատոյց զթուղթն, զոր էր գրեալ առ Յամանիկն ի քաղաքն Պարտաւ Ահմաթայ նենգութեամբ: - 344. և կարգեցին ճակատս և ռազմ բոլորեցին, և վահանաւորքն փակեցին զառաջակողմն ճակատուն և կացին ի թիկանց հետևակազօր նահատակացն. – 306. ունելով ընդ իւր զզօրսն Յունաց բազմամբոխ վահանաւորաց և դրօշուց սաւառնացելոց, և փողք կայսերալուրք և գունդք գունդք վառելոցն վաշտիցն – 106. Տեղեկանայր … և կամ քանի՛ այնոքիկ, որք վահանաւորք հետեւակաց են – 198.

ՎԱՀԱՆ ՀԱՒՆՈՒՆԻ - Զգունդն առաջին տուեալ լինէր ի ձեռս Գուրգինայ և Վահանայ Հաւնունւոյ, որ և նիզակակից նմա էր: - 178. Փութանակի և վաղվաղակի իւրաքանչիւր զօրօք անդր հասանէին … և այլք ի նախարարացն Վասպուրական իշխանին, Սմբատ Ապահունի, Գրիգոր Քաջբերունի, Վահան Հաւնունի, սեպուհն Դաւիթ, Գազրիկն Ապուհարազ, Թոդորոս Վարազն, Խոսրով Վահևունի, Խոսրով Ակէացի, Վարդան Գաբայեղէն, Սմբատ Մարացեան, սեպուհ մի Սահակ, Պատրիկն Անձևացի, Գորգ Հարմացի, Դաւիթ Գունդսաղար. – 174. Քաջապէս մարտուցեալ Գուրգէն եղբայր իշխանին և Վահան Հաւնունի՝ առին անուն յաղթութեան, անցուցանելով ընդ սուր զկողմն թշնամեացն. – 178.

ՎԱՀԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ - այլ առնու զզօրսն Պարսից և գայ թագաւորել Հայոց հրամանաւ Շապհոյ արքայի, ունելով ընդ իւր զՎահան Մամիկոնեան. – 106. Իսկ յաւուրս Վաղարշու

մանուկն Վահան Մամիկոնեան ուժեղանայր ընդդէմ Պարսից. – 134. նուաճեաց զանձն, հրապոյրս պղտորս արբուցանէ Վահանայ Մամիկոնէի, որ էր աներ Մեհուժանայ, և անցեալ գնացին առ Շապուհ. – 102.

ՎԱՀԵԱՎԱՀԱՆ ՄԵՀԵԱՆՔ - Քանզի էր և տեղին այն յառաջագոյն տեղի մեհենից Վահեավահանի: - 334.

ՎԱՀԵԻՈՒՆԻ - Իսկ իշխանն Աշոտ … Մուշեղ Վահևունի … և Վահրամ սեպուհ թիկնապահ իշխանին, և Վահրամ Տրունի և Հասան և այլք ի սեպուհ պաշտօնէից … եկին մտին ի բերդն Դղեակ, յամրոցն Նկան, որ ի Թոռնավան գաւառի. – 206. Փութանակի և վաղվաղակի իւրաքանչիւր զօրօք անդր հասանէին … և այլք ի նախարարացն Վասպուրական իշխանին, Սմբատ Ապահունի, Գրիգոր Քաջբերունի, Վահան Հաւնունի, սեպուհն Դաւիթ, Գազրիկն Ապուհարազ, Թոդորոս Վարազն, Խոսրով Վահևունի, Խոսրով Ակէացի, Վարդան Գաբայեղէն, Սմբատ Մարացեան, սեպուհ մի Սահակ, Պատրիկն Անձևացի, Գորգ Հարմացի, Դաւիթ Գունդսաղար. – 174.

ՎԱՀԵԻՈՒՆԻՔ - Եւ արդ մեք, նահապետք ազատաց Վասպուրական իշխանիս՝ Մուշեղ ի ցեղէ Վահևունեաց, Վահրամ յազգէ Տրունեաց, Վահրամ միւս, որ ի թիկնապահ իշխանիս … գրեցաք առ քեզ Բուխայ գլուխ զօրավարաց Տաճկաց և բարձակից մեծ թագաւորին. – 212. Եւ գունդն Հայոց խաղացին ընդդէմ նոցա … ի տանէն Արծրունեաց՝ Գուրգէն … և Վարաժնունիք՝ Մլեահ և Ռստոմ և Վարազշապուհ. … և Ընտրունիքն /ծն.Ընտունիք/՝ Գէորգ և Յիս՝ և Սահակաւն/ ծն. Սահկաւն/, … և Ակէացիք և Վասակ, և Վահևունիք՝ Քաբարակն/ծն.Քաբարակաւն/ և Խրախատ – 230. Ըմբռնեալ լինէր յայնժամ մի ոմն ի Հայոց ազատանոյն տոհմից Վահևունեաց, Ապուսահակ ոմն, եղբայր Սահակայ եպիսկոպոսի ոստանին Նախճաւանու և Մարդպետականի. – 204.

ՎԱՀՈՒՆԻ - և որք ի տանէն Ամատունեաց՝ Շապուհ և Վահան և Սարայ եղբարք միմեանց, Ապուսսակը Վահունի և այլք ընդ նոսա, միաբանական խորհրդակցութեամբ խորհրդածեալ ընդ Գագկայ առ ի սպանումն Ապումրուանայ – 368.

ՎԱՀՒOS - և բռնութեամբ կալեալ զԲախլ և զամենայն երկիրն Քուշանաց, մինչև յայնկոյս գետոյն մեծի որ կոչի Վահոօտ. – 136.

ՎԱՀՐԱՄ - - Եւ արդ մեք, նահապետք ազատաց Վասպուրական իշխանիս՝ Մուշեղ ի ցեղէ Վահևունեաց, Վահրամ յազգէ Տրունեաց, Վահրամ միւս, որ ի թիկնապահ իշխանիս … գրեցաք առ քեզ Բուխայ գլուխ զօրավարաց Տաճկաց և բարձակից մեծ թագաւորին. – 212. Գրէ և Վահրամ առ Մուշեղ և այլ զօրագլուխսն այսպէս. – 138. Եւ արդ մեք, նահապետք ազատաց Վասպուրական իշխանիս՝ Մուշեղ ի ցեղէ Վահևունեաց, Վահրամ յազգէ Տրունեաց, Վահրամ միւս, որ ի թիկնապահ իշխանիս … գրեցաք առ քեզ Բուխայ գլուխ զօրավարաց Տաճկաց և բարձակից մեծ թագաւորին. – 212. և մեկնեալ յինքեանց զՎահրամ անուն՝ և տան տանել հրովարտակ առ զօրավարն – 210. Եւ ոչ կարացեալ ունել զդէմ զօրն Վահրամայ՝ փախստական լինէր առաջի զօրացն Յունաց. – 140. Եւ Վահրամ գնաց փախստական և անկաւ ի Բախտ Շախստան. որ և յետոյ իսկ սպանաւ ի հրամանէ Խոսրովայ: - 140. Իսկ իշխանն Աշոտ … Մուշեղ Վահևունի … և Վահրամ սեպուհ թիկնապահ իշխանին, և Վահրամ Տրունի և Հասան և այլք ի սեպուհ պաշտօնէից … եկին մտին ի բերդն Դղեակ, յամրոցն Նկան, որ ի Թոռնավան գաւառի. – 206. Իսկ իշխանն Աշոտ … Մուշեղ Վահևունի … և Վահրամ սեպուհ թիկնապահ իշխանին, և Վահրամ Տրունի և Հասան և այլք ի սեպուհ պաշտօնէից … եկին մտին ի բերդն Դղեակ, յամրոցն Նկան, որ ի Թոռնավան գաւառի. – 206. Իսկ Վահրամ տեսանէր զնա մերձ առ սպանդանոցն. – 222. Վահրամ ոմն Մեհրեւանդակ … այր հզօր զօրութեամբ՝ քաջութեամբ իւրով եհար զզօրս Թետալացւոց – 136.

ՎԱՀՐԱՄ ՄԵՀՐԵՒԱՆԴԱԿ - Վահրամ ոմն Մեհրեւանդակ … այր հզօր զօրութեամբ՝ քաջութեամբ իւրով եհար զզօրս Թետալացւոց – 136.

ՎԱՀՐԱՄ ՏՐՈՒՆԻ - Իսկ իշխանն Աշոտ … Մուշեղ Վահունի … և Վահրամ սեպուհ թիկնապահ իշխանին, և Վահրամ Տրունի և Հասան և այլք ի սեպուհ պաշտօնէից … եկին մտին ի բերդն Դղեակ, յամրոցն Նկան, որ ի Թոռնավան գաւառի. – 206.

ՎԱՂ - ես վաղ անարգեցի զքեզ, և ոչ փոքր ինչ երկիւղ կալայ ի սրտի իմում վասն քո, զի քամահելով ի վերայ քո՝ զզօրավարն քո հանդերձ զօրօքն ի սուր մատնեցի, և զաւար նորա բաշխեցի, /294/ և յերկրորդումն ոչ փոքր նախճիրս համարեցի զօրացն քոց. – 296.

ՎԱՂԱՄԵՌԻԿ - ըստ ասացելումն ի Սողոմոնէ, եթէ ,,հայր թախծեալ տարաժամ սգով՝ վասն վաղամեռիկ լինելոյ որդւոյ արար պատկեր,,: - 40.

ՎԱՂԱՐՇ - ետուն գոյժ զմահուանէ թագաւորին և կացուցին փոխանակ Վաղարշու թագաւոր զորդի իւր զԽոսրով ձեռնտուութեամբ Արտաւանու Պարսից արքայի: - 92. և ընկեցեալ զԽոսրով յաթոռոյն՝ կացուցանէ փոխանակ զՎաղարշ զեղբայր Խոսրովու: - 112. և յետ այնորիկ պահղաւիկ թագաւորաց ժամանակք, որ կոչին Պարթևք, մինչև յԱրտևան որդի Վաղարշու – 166. Իսկ յաւուրս Վաղարշու մանուկն Վահան Մամիկոնեան ուժեղանայր ընդդէմ Պարսից. – 134.

ՎԱՂԱՐՇԱԿ - և յետ Բ ամաց վախճանի Վաղարշակ, թագաւորեալ ընդ եղբօրն բոլոր Հայոց: - 110. և Վաղարշակ եղբայր նորա եկեալ ի Հայս՝ լնու բարեկարգութեամբ զաղմկեալ և զշփոթեալ երկիրս Հայոց: - 72. Իբրև ստուգեաց զազգն, զգաւառն, զաշխարհին, զպատճառ հատուածին, զզետեղելն, զիարդն, զորպէսն, զեղանակն, զդիպուածն, զպատահն և զայլն ամենայն՝ խնդրէ զնա Վաղարշակ յԱրշակայ և առնու ածէ զնա ընդ իւր ի Հայս – 72. Մեծն Թէոդոս յետ Վարազդատայ թագաւորեցոյց ի վերայ Հայոց զԱրշակ և զՎաղարշակ զորդիսն Պապայ թագաւորի Հայոց. – 110. Յետ Արտաշէսի թագաւորէ Արտաւազդ, ապա Տիրան որդի Արտաշէսի, ապա Տիրան, ապա Տիգրան Վերջին, ապա Վաղարշակ: - 92. որ չորրորդ կացեալ թագաւոր ի Վաղարշակէ Պարթևէ: - 74. Վաղարշակ թագաւորեալ փոխանակ հօր իւրոյ Տիգրանայ, և տուեալ պատերազմ ընդ հիւսիսայինն Հազրաց՝ մեռանի ի կորովաձիգ աղեղնաւորացն: - 92.

ՎԱՂԱՐՇԱԿ ՊԱՐԹԵԻ - որ չորրորդ կացեալ թագաւոր ի Վաղարշակէ Պարթևէ: - 74.

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ -և խաղացուցանեն յԱսպահան, առնուն և զՎաղարշապատ և զԱրտաշատ. – 104.

ՎԱՂԵՐ - Եւ զայլս ազգի ազգի զինուորք ունէին վաղերք և վակուրք, սուսերք և սուինք, տապարք և վիրգահանք, մեքենայք և ռմբաքարք, վահանք և նիզակք: - 208.

ՎԱՂԷՍ - Ընդ ժամանակսն ընդ այնոսիկ թագաւորէ Յունաց Վաղէս կայսր, և Պարսից՝ Շապուհ արքայից արքայ: - 100. Իսկ թագաւորն աղաչեալ /100/ զսուրբն Ներսէս զհաշտութիւն խօսել Վաղէսի ընդ Արշակայ, զոր և արար իսկ զհաշտութիւնն: - 102. Իսկ նախարարքն Հայոց ի սադրելոյ Վաղէսի գրգռեալ ի մարտ ընդ Արշակայ ի պատերազմ յառաջանան – 100. Վախճանեալ կայսր Վաղէս, և թագաւորէ Յունաց մեծն Թէոդոս. – 108.

ՎԱՂԷՏԻԱՆՈՍ - բայց թէպէտ և ետ օգնականութիւն Հայոց կայսրն Վաղէտիանոս Փռիւգացի զօրօքն՝ սակայն ոչ խաղաղանայր երկիրս – 94. դիմեցին առ կայսրն Վաղէտիանոս, թէ հնար ինչ իցէ առնուլ զվրէժ արեան Խոսրովու և ի /92/ վերջ նահանջել զբռնակալութիւն Ստահրացոյն. – 94.

ՎԱՂԻՒ - Եւ ի վաղիւ անդր մինչ դեռ արևն ընդ ծայրս հարկանէր՝ կարգեցաւ պատերազմ սաստիկ – 140. այլ ես ասեմ քեզ, եթէ Տէր կամեսցի՝ վաղիւ պատելոց է զքեզ պատերազմ քաջաց. և ճեթեսցեն ի վերայ քո իբրև զամպս երկնից ի բռնալիր նիզակօք անցանիցեն ընդ մէջ բազմութեան քո իբրև զփայլատակունս հրոյ շանթից: - 140. Ոչ կամեցար կամօք տալ զանձն ի ծառայութիւն մեզ, այլ տէր և թագաւոր կոչես զքեզ. զգանձն արքունի որ իմ առ քեզ է՝ ծախես, և զայդ ոչ գիտես, եթէ վաղիւ համարս տալոց ես: - 146. Քանզի վաղիւ առաւօտուն ցուցանեմ ձեզ փիղս վառեալս, և ի վերայ հզօր սպառազէնս ի քաջաց – 138.

ՎԱՂՆՋՈՒՅՑ - Բայց երանելի հայրապետն Տէր Գէորգ սաստկագոյն քան զտիեզերական կործանմանն առ Նոյիւ բերելով զտրտմութեանն թախիծս, հանդերձ եպիսկոպոսիւն

Գրիգորիւ՝ զաբրահամեանն վաղնջուց աղաչանսն ի կործանմանն Սողովմայ յառաջաբերեալ մարդասիրին Աստուծոյ. – 358.

ՎԱՂՈՒՅ - Եւ զայս Եղկղեսիանոսք. բայց ինձ այսպէս թուէր, թէ աղանդն Եղկղեսիանոսաց վաղուց շիջեալ խափանեալ լինէր ի քաջաց վարդապետացն սրբոց, զոր եդն Աստուած յեկեղեցւոջ. – 254.

ՎԱՂՎԱՂԱԿԻ - Անդէն վաղվաղակի մատուցեալ Շաւասպ Արծրունի առ Մարդպետն՝ ասէ – 100. բայց վասն զի ոչ ունէր արմատս՝ վաղվաղակի չորացաւ ի տապոյ բանսարկուին – 246. Եւ անդէն վաղվաղակի կատարէին զհրաման արքունի. – 142. Եւ ոմն ընթացեալ ետ գոյժ վաղվաղակի /150/ Խոսրովու, թէ ,,ապստամբեցաւ ամենայն Արեաց երկիր ի քէն, և զորդի քո Կաւատ նստուցին թագաւոր, և ահաւադիկ դիմեալ գա ի վերայ քո,,: - 152. Փութանակի և վաղվաղակի իւրաքանչիւր զօրօք անդր հասանէին՝ իշխան Աշոտ և եղբարք իւր Գուրգէն և Գրիգոր զօրօք իւրեանց – 174.

ՎԱՂՐ - ձայն բարձեալ արտասուալից առ Դերենիկն, և զսուսեր մերկ ի ձեռին ունելով, և վաղր և սակր մի՝ ասէ. ,,որդեա՛կ իմ Դերենիկ, ողջոյն քեզ, ողջոյն քեզ, ողջոյն քեզ. ես ելի գնացի ի յաշխարհին Յունաց,,: - 320.

ՎԱՃԱՌ - Այլ և զռամիկ Նորագեղջ աւանին Ռշտունեաց առեալ ածեն ի տեղի վաճառուն Ոստանին Ռշտունեաց, արկեալ տոռունս ի պարանոցն հանեն ընդ սուր. – 202. կարգէ և յօրինէ ի նմա փողոցս վաճառոց ամենալիցս և բաւականս. – 88.

ՎԱՃԱՌԱԿԱՆ - Եւ խնդրեալ զդի նորա վաճառականաց՝ պատեցին զնա ի ձեռս եպիսկոպոսին Դաւթի նորուն գաւառի և եդին ի տապանի յեկեղեցւոջն որ ի նմա: - 354. և վաճառականքն զհեռաւոր ճանապարհացն խոկային պատրաստութիւնն – 268.

ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԻՒՆ - Եւ եղև այր թանգար արուեստիւ և հմուտ վաճառականութեան. հարկանէր ճանապարհս հեռաւորս ի գործ վաճառականութեանն, յԵգիպտոս և ի կողմանս Պաղեստինացւոց. – 158. յորում շահաստանն Դուին, մարդախիտ պարսպաւոր պատնիշօք պատուարեալ և տուրևառիկ վաճառականութեամբ և ազգի ազգի պղծութեամբ յափրացեալ յդփացեալ: - 358. Եւ եղև այր թանգար արուեստիւ և հմուտ վաճառականութեան. հարկանէր ճանապարհս հեռաւորս ի գործ վաճառականութեանն, յԵգիպտոս և ի կողմանս Պաղեստինացւոց. – 158.

ՎԱՃԱՌԱԿՈՒՐ ԱՌՆԵԼ - Եւ զբնակիչս աշխարհին վարեաց ի գերութիւն, վաճառակուր առնել ի կողմանս Ասորոց և յամենայն սահմանս տէրութեանն Տաճկաց. – 188. Եւ հրաման ետ այնուհետև, զի զբազմութիւն գերելոցն վաճառակուր արասցեն յազգս ազգս ում և հաճոյ թուիցի. – 240.

ՎԱՃԱՌԱԿՈՒՐ ԱՐԱՐԵԱԼ - զորս վաճառակուր արարեալ յօտար ազգս, վարել ի ծառայութիւն, գնալ հեռանալ մերժել ի տանց, հայրենի ժառանգութենէ իւրեանց: - 262.

ՎԱՅ - ,,վա՛յ քեզ, եղուկ դու, ազգ Տաճկաց, արանց և կանանց ամենայն ծովեզերեայ քաղաքաց. փոխանակ անաւրէնութեան լեզուիդ և պղծութեան կարգաց, որով բացեալ զբերանդ պղծութեան զանաւրէնս բարբառէիր: - 164. Այլ ճշմարտագոյնք են Սողոմօնեանքն, զի ասէ, ,,վա՛յ միումն. յորժամ գլորիցէ, ո՞ յարուցանիցէ զնա,,. և եթէ ,,լաւ են երկուք քան զմի, զի եթէ միովն գլորիցի ոք՝ կանգնեսցի,,: - 354. Դարձեալ բողոք հարեալ, ձեռն զօձիւք արկեալ և զհերս խզեալ, զդէմս կեղեքեալ և ձայնս առեալ կական ողբօք արտասուալից հառաչանօք, վայ ի բերան առեալ և խիղր – 180. և զոր ասէն այսպիսի ինչ է. ,,վա՛յ քեզ, եղո՛ւկ դու երկիրդ Պարսից, յորժամ բազմախուռն գունդք զօրացն Յունաց ի քեզ արշաւանս եդեալ՝ հասանիցեն և հարկանիցեն զքեզ ի սուր սուսերաց, և յառաթուր սմբակաց: - 148. Զայս ասելով, և յերեսն ի վայր ի վերայ մահճացն զգետնեալ՝ ի վայն և յեղուկն զողբոցն խառնուածսն յաճախագոյնս մանուածէր: -388. զվայն և զեղուկն անյարմար հառաչմամբ, մեծակական ողբովք առ Քրիստոս ամբառնալով: - 386. Վա՛յ քեզ, եղո՛ւկ դու, այր քաջ, արքայդ մեծանուն, յորժամ կարկառիցէ բարձրեալն զձեռն իւր ի կործանել զքեզ և ի խորտակել զգաւազան ամբարտաւանութեան քո: - 148.

ՎԱՅԵԼ - և կինն անցեալ պատմեաց թագաւորին որ ինչ եղևն, զբողոք բառնալն իւր և զկացուցանելն վկայս՝ թէ ոչ վայել եմ քեզ կին, այլ արքայի, և որ ինչ եղևն – 272. Կինն դարձեալ ճիչ բարձեալ ասէ. ,,վասն իմ սպաներ զտէրն իմ. ես ոչ վայել եմ քեզ կին, այլ մեծի թագաւորին,,. – 272.

ՎԱՅԵԼ Է - Վայել էր իսկ եպիսկոպոսին Յոհաննու՝ առնուլ զլուծ համանուանն իւրոյ զՅոհաննու Մկրտչի, որ կապեալն էր ի Հերովդեայ և տուեալ ի բանտ: - 250.

ՎԱՅԵԼԵԼ - ,,եթէ կամիս կեալ ընդ իս և վայելես ի կեանս աշխարհիս, և ընդունել պարգևս և պատիւս յինէն՝ հաւանեա հրամանի կամաց իմոց և ի բաց լեր ի հաւատոց քրիստոնէութեանդ, զոր պաշտես – 294. ,,լաւ է մեռանել վասն Քրիստոսի, քան առ ժամանակ մի վայելել ի մեղս,,: - 250. այլ Մկրտչին հրամայի՝ մի ըմպել գինի և օղի. սա ոչ միայն գինով ոչ զկծէր, այլ և ոչ ջրով զծարաւոյն պէտսն կատարէր, սակաւապետութեամբ ընդովք թրջելովք, և խստավայել բանջարովք առ քաղցն վայելելով: - 376. եթէ հաւանեալք արդարոյն և ապաւինեալք ի նա՝ յուսացան ի բան նորա, ծառայել երկիւղիւ հրամայելոցն ի նմանէ՝ զի՞նչ անհաւատ թուի և ի փրկութենէն ընդ նմին վայելել. - 32. Եւ ասեն ցթագաւորն, ,,լաւ է մեզ մեռանել վասն անուանն Քրիստոսի, քան վայելել ընդ քեզ. – 292. և իմ թողեալ ձեզ զչարիս ապստամբութեանն ձեր, վայելեսջիք ընդ իս և տիրեցէք աշխարհին ձեր,,: - 246. և կալցին զիւրաքանչիւր իշխանութիւն և վայելեսցեն ի պարգևս և ի պատիւս արքունի և կացցեն ի հնազանդութեան թագաւորին: - 296. և կեցցես և վայելեսցես ի պատիւս և ի պարգևս թագաւորին – 290. թերևս արտաքոյ տանջանացն կայցեն մնայցեն, թէպէտ և ոչ ընդ փեսային վայելեն ի հարսանիսն: - 338. յաճախագոյնս վասն Գուրգինայ վայելէ զդրուատեացն, կարևոր է բազմաձեռն աճմամբ զդրուատեացն յերկարագոյնս հատուցանել զճարտասանութիւնս. - 300.

ՎԱՅԵԼՈՒՉ - Բայց քանզի արդ տեսանեմք զձեզ անձնեայս և գեղեցիկս, և գեղ երեսաց ձերոց պատշաճագոյնս և վայելուչս, և որդիք թագաւորացն այսր աշխարհի լեալ էք դուք, և արժանի էք արգահատելոյ – 244. Բանն զմեօք զանց առնէ. և ոչ վայելուչ է լռութեամբ և մոռացկոտ մտօք անփոյթ առնել զայնքան մեծիւ յաղթութեամբ, որ գործեցաւ ի ձեռն զօրացն Վասպուրական ազատանոյն: - 176. յոյժ վայելուչ էր և երանելի քահանային Գրիգորի՝ միաբանել ընդ նոսա և լնուլ զերրեակ թիւն – 250.

ՎԱՅԵԼՉԱԳՈՅՆ - Եւ հրամայեաց ածել ոսկերիչ և նորոգեալ նորացոյց զանյաղթ փայտ խաչին Քրիստոսի, մատուցեալ զբեկորսն առ իւրաքանչիւր յօդս, պատեալ մաքուր արծաթով վայելչագոյն քան զառաջինն, ի պարծանս քրիստոնէից և յամօթ և ի նախատինս թշնամեաց խաչին Քրիստոսի: - 378.

ՎԱՅԵԼՉԱԿԱՆ - Դարձեալ վերակնեալ յառաւօտինս կոյս խաղացեալ ի Ճուաշոռտ ի Գետս աւան՝ շինէ անդ զվայելչական տեղի խրախից – 392.

ՎԱՅԵԼՉԱՆԱԼ - և յայտնի ոչ վայելչանայր կատարել զոր կամէրն, մի՝ վասն յաղթող մեծանուն գործոյն, նախատ անձին համարելով, երկրորդ՝ վասն վաշտիցն զօրութեան: - 326.

ՎԱՅԵԼՉԱՊԷՍ - Զոր հոյակապն Տրդատ կարգադրեալ վայելչապէս հոգաբարձութեամբ զպատերազմականն հարկանել հարկս ընդդէմ հինից արշաւանաց. զոր կարգապետութիւն և առ սուրբ հրեշտակն գտանեմք /գրքում՝ զտանեմք/ յարարչական նախախնամութենէն, զաշխարհի զօգուտն բերելով: - 398. Մատուցեալ առ թագաւորն Արշակ ասէ. ,,ոչ բարեօք իմացեալ առաջնոց թագաւորացն, զի ոչ կալան զտեղիս զի զայս ի բնակեալ ճոխութեան թագաւորական վայելչապէս խրախճանութեանց. – 100. Շինէ անդ եկեղեցի վայելչապէս պայծառութեամբ և անուանէ զնա յանուն սուրբ Պետրոսի առաքելոյն անպարտելի դժոխական առաջնորդի: - 394.

ՎԱՅԵԼՉԱՑՈՒՑԵԱԼ - Սապէս և Գուրգէն կատարելագործեալ ի բարձրաւանդակ ի սարաւանդակ տեղւոջն բարեձևագունի վայելչացուցեալ զհրաշակերտ յաջմէ և յահեկէ սեղանոյն երկուս ևս եկեղեցեօք: - 396.

ՎԱՅԵԼՉՈՒԹԻՒՆ - և առ եղբայրականն զինազանդութեանն չափ ցուցանելով, անկշիռ վայելչութեամբ զմիմեանս լաւ համարելով քան զանձինս, հասարակ զճոխութիւն

իշխանական գահընկալութեանն վարկանելով – 360. լնուլ այգեստան տնկախիտ պատրաստութեամբ ականախիտ վայելչութեամբ: - 88. որոյ տեսեալ զբարձրաբերձ վայելչութիւն հասակին և զպատշաճ գեղ երեսացն, զփաղփեալ գոյնն ի տեսիլ արուսեկի ի մէջ սպիտակափայլ ալեացն պատուաբերի – 204. որոց սրտի մտօք ի մանկութենէ զհարկ ծառայութեան հատուցեալ էին ըստ օրինի վայելչութեան հնազանդողաց և հնազանդելոց, ըստ յորդորման հեթանոսաց վարդապետին: - 364.

ՎԱՅԵԼՅՈՒՅԱՆԵԼ - անհասական իմն շնորհիւ փառօք և պատուով պսակեալ զմարդն իշխանական ճոխութեամբ՝ վայելեցուցանէ դրախտին, տալով նմա բազմամեայ կենաց սահման իբրև զմի օր - 20.

ՎԱՅԵԼՔ - մերժել հեռանալ … և որ այլ քաղցրագոյն վայելք ընդ երկնաւս ի վերայ երկրի, պայծառ գեղ արեգական և լուսնի, հանդերձ աստեղացն ճոխագործութեամբքն ընդ տարերք երկնի յեղյեղելով, ծովու և այլոց ցամաքայնոց, և ջրայնոցն բարեփառ հոլովմանցն հրճուանաց, և որ ինչ ընդ այլք ընդ դոքօք պատկանին յարմարաբար տնտեսութիւնք առ սկզբնատիպն պատկերակերպութիւն: - 386.

ՎԱՅՈՑ ՁՈՐ - և ինքն ժողովեալ զզօրս իւր ԺՌ արանց զօրաւորաց՝ եկն եմուտ յամուրսն Վայոց ձորոյ: - 382. որոց անուանք ճանաչի սոցա … Սահլ Սմբատայ որդի, Շաքեոյ տէր , որ զԲաբանն կալաւ, և իշխանական Վասակ Վայոց ձորոյ տէրն, և Փիլիպպէ իշխանն Սիւնեաց – 298.

ՎԱՅՐ - Յայսմ վայրի ոչ մտադիւր ախորժակօք գրեմ զճառս պատմութեանս, որ տրտմականքն, քան թէ ուրախականքն յառաջանան տիրել ինձ: - 384. ,,զի՞ զվայր կոխես զաստուածոյ զտուն տեսանել, Աղէքսանդրէ. – 50. Այսպիսիք իմն ինձ թուեցեալ համարեցան այնոքիկ վայրք. այլոց որպէս կամք իցեն: - 52. Արդ այսքանեաց վկայութեանց ի մի վայր եկելոց՝ մի ելցուք զհետ առասպելաբանիցն թէ ընդ անկոխն գնալով ճանապարհ. – 260. Բայց արդ որպէս յառաջագոյն հատուցի զարտաքոյ պարսաւանաց զիս ներքոյ գրել, վասն ոչ ոճով զսորայս կարգել դնել ի շարի աստ զշարագրածս, վասն ոչ բաւելոյ զանչափութիւնն ի մի վայր գումարել յանմասնաւորաբար նշանակութեամբ – 308. Բայց բազմաց այլ իմացմունքն յայսոսիկ առ վայր մի առին զկատարումն: - 360. և եկեալ ի մի վայր Գագիկ և Գուրգէն եղբարք համահարք և միոյ մօր ծնունդք, յերկուց քաջատոհմիկ գահակալութենէ Սենէքարիմայ և Դաւթի – 388. և ի սաստիկ սովոյն ելեալ Որմզդի յածէր ընդ վայրս ի խնդիր կերակրոց. – 46. Եւ ելեալ յիւրաքանչիւր տեղեաց մի քան զմի յառաջանալ ի կոչումն Բուխայի, և ժողովեցան ի մի վայրի և եկին կացին առաջի զօրավարին Տաճկաց: - 296. Եւ եղև իբրև գումարեցան ի մի վայր ամենայն բազմութիւն զօրացն աւելի քան զՄՌ-աց, և կազմեցին ռազմ և կարգեցին ճակատ – 284. Եւ եղև յետ մեծ պատերազմին, որ յառաջ քան զզրուցացդ գրելոյ ելին, ի գլուխս Մանազաւեան նահանգին և Յուշոյ դաշտին, և զխռովարարս քաղաքացն ի մի վայր գումարելոցն, որք և յունայն ասպատակէին աշխարհ – 398. Եւ են ի թուել մինչ ցայս վայր այսոքիկ. Ադամ, Սէթ, Ենովս, Կայիանան, Մաղաղայէլ, Յարէդ, Ենովք, Մաթուսաղայ, Ղամէք, Նոյ, Քամ, Քուշ, Նեբրովթ որս և Բէլ: - 36. Եւ զօրացն քաջալերեալ ընթացան յիւրաքանչիւր զէնսն և հեծեալ յընտիրս երիվարացն՝ կացին ի հանդիպոջ և հանդիսացան գումարեցան ի մի վայր և պնդեցան կարգեցան մածեան հոլովեցան յինքեանս – 230. Եւ ի թագաւորել Արտաշրի խաղաղանայր երկիրս առ վայր մի ի շփոթմանց պարսկական գնդի. – 116. Եւ իւր հազարապետին գրեալ և ծանուցեալ էր արքայի, զոր ինչ գործեաց ցայն վայր ժամանակի: - 220. և կամեցեալ իմ պատմել և ձեռնարկել տեսանել ի ձեռն ծառայից, ուր էր երջանկացն վայր - 50. Եւ հասեալ ի մի վայր գան հովիտն Կուղան, ուր Գուրգէն բանակ արարեալ /362/ էր ի Կարկինեանս տեղւոջ բազմաձեռն զօրու. – 364. և յորժամ զգան ջերմութեանն՝ զուարթանան զուարճանան, հրճուին կայտռելով ի վեր փքալով հասանել ի ջերմագոյն վայրսն, ի ջրշիղջսն ծովափնեայս ջանան հասանել – 260. և շտապով փութանակի յասպազինէ երիվարէն ի վայր արկեալ զինքն առաջի Աղէքսանդրի, առ ոչինչ համարեալ յահռնաբար/գրքում՝յահուռնաբար/ գործսն զոր գործեաց՝ փութացաւ ետ

ողջոյն արքայի և ասէ. – 68. զայս խորհելով թէ զայսպիսի քաջ այր և պատերազմող ոչ պատշաճ վարկանելի է ի հեռաբնակ վայրս ի դրանէ արքունի կացուցանել: - 330. զի և զմատեանս առաջնոցն մեծասաստ ստիպով ի մի վայր գումարեալ՝ հրամայեաց այրել. – 44. զի յայն վայր ոմանք ի զարմիցն Աշդահակայ Մարի բնակէին անդ, արք քաջք, կորովազէնք և դիպաղեղունք – 90. Զոր առ վայր մի ոչ առեալ յանձն սրբոյն Սահակայ՝ ասէ - 114. զոր վերագոյնն յիշեցաք յայլում վայրի ի մեծ պատերազմին ի սահմանս Աղձնեաց: - 400. ի ջերմագոյն վայրս ամրանան առանձնանան և միայն բնակեն ըստ ազգս իւրեանց: - 262. Իսկ սահմանք վայրիցն ահաւորք և զգալիք միանգամայն և արտաքոյ զգալեաց. – 52. Իսկ վայր խաղացեալ ի Մառականն աւան, առ Կարմիրն կոչեցեալ գետով, որ իջանէ ի գետն Երասխ – 392. իւրաքանչիւր զօրօք գումարեալ, ի մի վայր խաղացեալ՝ գնացին հասին յայն վայր – 174. իւրաքանչիւր զօրօք գումարեալ, ի մի վայր խաղացեալ՝ գնացին հասին յայն վայր – 174. խաղայ իջանէ ի խորագոյն և ի ջերմային վայրս անդնդական խորոցն, ձմեռնանայ անդ – 262. մինչ հանդէպ երեսանալ Աղէքսանդրու ի յանդուգն դիմացուածին, և հայեցեալ ի դէմս Աղէքսանդրու իբր յաստուածոց դիւցազանց՝ զերեսս ի վայր արկեալ զերկիր նշմարէր – 68. Յայնժամ հրովարտակս արարեալ, պնդադեսպանս արձակեալ ընդ ամենայն սահմանս իւրոյ տէրութեանն …. ի հեռաբնակ վայրս Ասորոց և Բաբելացւոց - 198. Յայսմ վայրի ոչ ի վերայ միոյ ազգի և ի վերայ միոյ աշխարհի է լալումն ողբումն և կոծումն, այլ ի վերայ բոլոր ազգաց և աշխարհաց Հայաստանեայց: - 196. Յոքունց կամ թէ բնաւից կարօտանամ իմաստասիրաց գումարից ի մի վայր հասելոց՝ զողբերգականացն ճոխաբանել ճարտասանութիւնս. – 352. Ոչինչ զանգիտեալ մեր մինչ ցայս վայր, պատմել զվտանգս և զնենգութիւնս եկեալ հասեալ ի վերայ մեր ի թշնամեացն ճշմարտութեանն. – 194. որ ըստ աճման և սերելոյ նախարարութեանց՝ եկեալ հասեալ ցայս վայր ժամանակի ի թագաւորել Աբգարու և հաւատալ ի Քրիստոս: - 78. Յայս վայր զայս գրեալ Աղէքսանդրի՝ Մակեդոնացւոյ, ի Սենեքերիմայ յառաջ մինչև ի Պտղոմէոս եգիպտացի, զոր և նոքա Պտղոմեանքն կոչէին. – 74. Ի սոյն աւուրս որք մնացեալ էին ի տանէն Արծրունեաց իբրև լուան զպարտումն զօրացն արքունի ի Ծանարացն՝ ի մի վայր եկեալ գունդ կազմեալ հետևազօրքն մարտակցօք հանդերձ խառնաղանջ ամբոխիւ՝ լինին թուեալ արք S – 304.

ՎԱՅՐԱԳ - ,,ընդէ՞ր, ով աստուածասէր թագաւոր, իբրև ընդ համհարզս և ընդ ստամբակս, իբրև ընդ աննշանս կամ ընդ անընդել վայրագս խօսիս ընդ մեզ – 242.

ՎԱՅՐԱԾԵԱԼ - ոչ ևս զբանականաց բերելով խորհուրդս, այլ իբրև երամակք վայրենիք վայրաձեալք անկարգութեամբ և պէս պէս անառակութեամբք – 28.

ՎԱՅՐԱՊԱՐ - Եւ այսոքիկ վայրապարք բանք. – 42. Եւ զայսոսիկ ոչ վայրապարք ինչ եհաս մեզ գրել – 46.

ՎԱՅՐԵՆԱՄԻՏ - այր գազանաբարոյ, վայրենամիտ, առատաձեռն առ արբումն մարդկան, այր զօրաւոր զօրութեամբ ի գործս պատերազմաց, ահարկու ազանց, կարողութիւն և ուժեղութիւն Աւշնի ի սորա ձեռս բաւականացեալ: - 374. քանզի նուազագոյնքն և տկարք՝ թափառեալք աղքատութեամբ վտանգէին, իսկ կարողագոյնքն և բռնաւորք ըստ բնութեան գազանաց վայրենամիտք լեալ, անամօթ և անարգել յափշտակութեամբ վրդովէին զբոլոր երկիրս: - 300.

ՎԱՅՐԵՆԱՍՏՈՒԹԻՒՆ - Քանզի այնչափ թանձրացաւ յաճախութիւն սովոյն՝ որ ոչ միայն անսուրբ կենդանիս ուտէին ըստ սրբութեան կարգի, այլ և զսարսափելի և զդժնդակ, որ զգազանայինն անցուցանէ զվայրենամտութիւնն, զմարմինս մեռելոց՝ առանց խղճելոյ ուտէին, ի գերեզմանացն հանեալ զհետ միոյ և երկուց ամաց թաղելոյ: - 374.

ՎԱՅՐԵՆԻ - Մերթ տապալէր իբրև զօձ, մերթ գոչէր իբրև զառիւծ, և իբրև զխոզ վայրենի կնչէր կռնչէր, փրփուր ի վեր բերելով, զատամունս կրճտելով. - 270. ոչ ևս զբանականաց բերելով խորհուրդս, այլ իբրև երամակք վայրենիք վայրաձեալք անկարգութեամբ և պէս պէս անառակութեամբք – 28. ուր հոյլքն էրէոցն խայտան և վայրենեացն խոզից առիւծուցն

մորիքն և երամակք ցոռց պատրաստական առ որսոյն հրճուանք առ ձեռն պատրաստ հոլովին – 392.

ՎԱՅՐԻ - Եթէ, որպէս ասացի, ի բաց գնաս յինէն՝ խաղաղութիւն է, և թէ ոչ՝ պատերազմ և կռիւ և ճակատամարտ … դու երէ վայրի՝ և մեք որսորդք, դու թռչուն՝ և մեք ի բարձանց ի վայր իջուցանեմք և վարմ ձգեալ. – 280.

ՎԱՆ - Եւ եկին տալ պատերազմ ընդ ամրոցին Վան քաղաքի - 362. և թափառական զվէմս ապաստան արարեալ յանկասկածագոյն տեղիս դարանի ի փոքր վիմամէջս ի կարկառս հովտաձևս հանդէպ հարաւոյ քաղաքաբերդին Վանի, մօտ այն տեղի, յորում բղխէ աղբիւրաբար առ ստորոտով բլրակի միոյ, մօտ յեզր ծովուն – 84. Եւ կատարեալ Աշոտ զկեանս իւր՝ մեռաւ ի Վանտոսպ գաւառի, ՅԻԳ թուականութեանն Հայոց, յամսեանն հոռի, որ օր Զ էր ամսոյն, յաւուր հինգշաբաթոջ. և տարեալ հանգուցանեն ընդ եղբարս իւր ի վանս սուրբ Խաչին յԱղբագ գաւառի: - 338. Եւ յետ անցանելոյ աւուր, գնացեալ Աշոտ որդի Դերանկին, առեալ զդի նորա՝ տարեալ հանգոյց առ հարս իւր յԱղբակ գաւառի ի վանս սուրբ Խաչին: - 354. Եւ տարեալ հանգուցանեն զնա ի վանս սուրբ Խաչին յԱղբագ գաւառի: - 310. և տիկինն Սեդայ առեալ զդի նորա տարեալ հանգուցանէ ի յԱղբագ ի գեօղն Օսի, ի վանս սուրբ Խաչին: - 384. զոր ոչ անունկնդիր լեալ Աշոտ՝ վերջոտնեալ եկն բանակեցաւ յԱրտաշէսեան աւանին, և Յիսէ ի Վան քաղաքի: - 334. որոյ ոսկերքն ընդ այլ սուրբսն հանգուցեալ կան ի վանսն Յադամակերտոյ: - 134. Քանզի ի գնալ նորա զօրացուցանել զքեռին իւր զթագաւորն Հայոց, իսկոյն յելանելն նորա ի տանէ իւրմէ ի Վան քաղաքէ՝ տիրէ ի վերայ նորա ցաւք հիւանդագինք կարապետք մահու, անմերձենալիք ճարտարաց բժշկական ձեռնարկութեանն: - 384.

ՎԱՆԱՆԴ - Եւ եղև զի անցանէր ընդ այն Մուկաթլ ոմն ի Վանանդ կոչեցեալ ազատութենէ – 288. ԹԷ ՈՐՈ՛Վ ՕՐԻՆԱԿԱՒ ՎԿԱՅԵԱՑ ՄՈՒԿԱԹԼ ի ՎԱՆԱՆԴ ԳԱՒԱՌԷ: - 288.

ՎԱՆԱՅ ԵՐԷՑ - յղէ առ Գուրգէն զՎահան Արծրունի և զվանաց երէցն Թէոդորոս զգլխաւորն Հոգեաց վանից, ասէ. – 330.

ՎԱՆԳ - որոյ սկիզբն է ,,Անզբաղել ական սրտի նայեցող անձն իմ ի միւսանգամ գալուստն,, , Ե տուն ի յութերորդ վանգէ: - 284.

ՎԱՆԵԱԼ - որ յետուստ՝ մոլի բռնաւոր, որ և զՏրովական դժուարամարտիկ իրս քաջապէս և կարողաբար վանեալ՝ աստուած ի նոցանէ ասացաւ, նա և ոչ աշխարհակալին Աղէքսանդրի Մակեդոնացւոյ - 36.

ՎԱՆԵԼ - ,,ամենայն ազգք շրջեցան զինն, և անուամբ Տեառն վանեցի զնոսա,, - 136. Դարձեալ պիտոյ է մեզ դառնալ առ ի վերագոյնսն, որ նախ քան զպատերազմն Աղձնեաց եղեալ են հանգամանք գործոց ի զօրացն Տաճկաց, և թէ ո՛րպէս եկաց ընդդէմ նոցա իշխանն Աշոտ և վանեաց զնոսա սրով սուսերի: - 176. և քաջութեամբ վանեաց ամս ԾԲ - 44. Իսկ նոքա պատահեալ Պարսից ի գեօղն Երիզ կոչեցեալ, իբրև մրրիկ զփոշի պտուտեալ, իբրև հուր ընդ եղէգն ընթացեալ՝ սուր ի վերայ եղեալ վանեցին զբազումն քան եթէ զսակաւս – 136. պատշաճագոյն զպատերազմին խրոխտական բարձրավզութեամբ վանել զախոյեանսն, և առեալ զբանակն յաւարի, և ընդ սուր հանեալ յոլովս քան թէ սակաւս, հասին ի գոգ տեղի մի ի Մղունիս գեօղ: - 402.

ՎԱՆՏՈՍՊ - Գան դարձեալ Մեհուժան և Վահան և առնուն զՎանտոսպ – 104. Ելեալ խրոխտ և դառնաշունչ փռնկալով մռմռեալ յանձնիւր գազանեղեն զայրացմամբ յարձակեալ յեղակարծում եկն եմուտ ի քաղաքն Շամիրամայ ի Վանտոսպ: - 372. Եւ եղև զկնի այսորիկ գնաց անտի Ժիրաք և եկն եմուտ ի Վանտոսպ – 206. Եւ զօր գումարեալ եկն եմուտ ի Վանտոսպ, և Դերենիկն յանդիման եղև նմա. – 322. Եւ կատարեալ Աշոտ զկեանս իւր՝ մեռաւ ի Վանտոսպ գաւառի, ՅԻԳ թուականութեանն Հայոց, յամսեանն հոռի, որ օր Զ էր ամսոյն, յաւուր հինգշաբաթոջ. և տարեալ հանգուցանեն ընդ եղբարս իւր ի վանս սուրբ Խաչին յԱղբագ գաւառի: - 338. և ղաշիկ արարեալ յայնկոյս քան զՎանտոսպ, ի տեղւոջն արձանաշար քարակարկառ գոգաձև միջոցի երկուց բլրակաց, որ հայի յԵրիվարաց արկման դաշտն, ի վերայ Լեզւոյ գեաւղջն, որ զաւրացն գեղեցիկ առասպելաբանեն

սպիանած վերայն սպանելոցն ի մանկանցն Շամիրամայ: - 334. և փութացաւ գրեաց առ Սափի որ ի Վանտոսպ նստեալ և ճոխանայր Վասպուրական տէրութեամբն. որ առանց յապաղանաց զփոյթն յառաջաբերեալ՝ գնաց եհաս առ Աւշին ի Մարակայ քաղաք: - 374. իսկ իբրև եկն Ապումբռւան զհետ փախստէիցն ի Վանտոսպ զկնի թագաւորին՝ և խորհուրդն Գագկայ հաստատնագոյնք զկատարումն առին: - 368. Իսպառ ստորև ամրականին ի գոգաձև տեղւոջն … շինեաց եկեղեցի հրաշագործ հրաշազան յօրինուածով եկեղեցի ի տաշեալ քարանց ի Մանազաւեան քաղաքին ի Վանտոսպ, և հիմնեցուցեալ յանուն սրբոյն Սիօնի, որ ի սուրբ քաղաքն Երուսաղէմ. – 390. նոցա կալեալ զտիկինն Ռշտունեաց զկին Գարեգնի զքոյր Վարդանայ Մամիկոնէի ածեալ ի Վանտոսպ ի քաղաքն Շամիրամայ, մատնեն ի խոշտանգանս և ի տանջանս դառնագոյնս. – 102. որոյ գնացեալ առնու յինքն զԳագիկ և յղէ սպառազէն պատրաստութեամբ ի Վանտոսպ առ տիկինն Վասպուրական, և պահել ի զգուշութիւն: - 350.

ՎԱՆՔ - Եւ առեալ զմարմին նորա տիկնոջն Սեդայի կնոջն Աշոտի և եդ ի գերեզմանի, ի տեղւոջն որում Ջորոյ վանքն ասեն, ի վերայ գեաղջն Ահաւականից: - 370. և ետուն ի սուրբ եկեղեցին Դ ագարակս. զվանքն Փշոց և զագարակն Ահավանք, յանդիման եկեղեցւոյն որ ի կղզին, և զքարն Մանակերտ, որ է հանդէպ հարաւոյ կուսէ, և զԲերկրի և այլ բազում տեղիս – 356. Եւ երթեալ հասանէ ի գիւղակ մի Երանգանի անուն առ մոնազն մի, որ էր երէց վանիցն:- 320. և զատուցանէ զօրավարն վանիցն գեօղս բաւական առ ընկալումն հիւրոցն և ի տեսչութիւն աղքատացն: - 394. և տարեալ հանգուցանեն ի նոյն վանս սուրբ Խաչին: - 356. Եւ տարեալ հանգուցանեն ի տեղւոջ հանգստարանացն իւրեանց ի սուրբ Խաչի վանս: - 318. զի յինքեանս գրաւեալ ընդ հարկաւ ծառայեցուցանէին զպաշտօնեայս սրբոյ Խաչին, մանաւանդ զի և զգլխաւոր վանացն զհայրն, որում Գրիգոր անուանէր՝ զնա կալեալ եդեալ ի խորափոր խաւարային բանտի: - 334. զոր տարեալ հանգուցանեն ի տեղւոջն, զոր այժմ Ջորոյ վանս անուանեն, ի վկայարան սրբոց Հռիփսիմեանց. – 104. յղէ առ Գուրգէն զՎահան Արծրունի և զվանաց երէցն Թէոդորոս զգլխաւորն Հոգեաց վանից, ասէ. – 330. սա ևս աւելի խորհեցաւ չար և պատրանօք խաբէութեան որսացեալ զնախարարս աշխարհիս Հայոց՝ արար հրկէզ զամենեսեան ի քաղաքին Նախճաւան և յաւանին Խրամի, որ է ի ներքոյ Աստապատոյ վանացն, յեզր Երասխայ. – 166.

ՎԼԻԹ - /թագաւորեաց/ Յեզիտ ամս Զ … Շամորեհեզմ ամս ԺԹ. Վլիթ ամս Բ. - 168. Եւ ի միւսում առաւօտին հասին ի վերայ բանակին խոնջեալ երիվարօք, անզգուշութեամբ առ մուտն պատրաստեալ, և անկան ի նմին ժամու Բ ոմանք, Վլիթ և Մարաճայ. – 402.

ՎԿԱՅ - և զվկայիցն անուն ժառանգեալ կատարեցան ի Քրիստոս սուրբ գունդն Հայոց, ՈՂՋ ոգիք: - 128. Եւ կատարեցան սուրբ վկայքն ՅԲ թուականին: - 268. Եւ կատարեցաւ սուրբ վկայն փառաւորապէս ի Հայր և յՈրդի և ի Հոգին սուրբ - 224. և կինն անցեալ պատմեաց թագաւորին որ ինչ եղևն, զբողոք բառնալն իւր և զկացուցանելն վկայս՝ թէ ոչ վայել եմ քեզ կին, այլ արքայի, և որ ինչ եղևն – 272. և հասեալ յԱշտիշատ Տարունւոյ ի վկայարանս

սրբոյն Յովհաննու և Մկրտչի, և Աթանագինէի վկային – 100. և հորդեաց երանելին Զուիթայ ճանապարհ բարի բազմաց վկայից ի մէջ Հայաստան աշխարհիս, որ յարևելս և յարևմուտս: - 104. և սաստիկ կսկծեցուցանէր զնոսա բանիւք, ունելով իւր վկայ զԵսայի մարգարէ՝ յասելն, ,,լուարուք, իշխանք Սոդոմայեցւոց, ունկն դիք օրիացն Աստուծոյ ժողովուրդ Գոմորացւոց,,. – 182. և տարեալ հանգուցանեն զնշխարս սրբոյն յԱշտիշատ Տարօնոյ ի տեղւոջ վկայարանի սրբոյն Յոհաննու Մկրտչին և Աթանագինի վկային: - 120. խոստացաւ տալ նոցա գանձս, գեօղս և ագարակս, գրել կնքել և կացուցանել նոցա վկայս - 230. որ զօրացոյց զսուրբ վկայն և արար յամօթ զսատանայի: - 254. ՈՐ ԻՆՉ ՁԿՆԻ ԱՅՍՈՐԻԿ ԳՈՐԾԵԱՅ ԲՈՒՀԱՅ Ի ԴՈՒԻՆ ՔԱՂԱՔԻ, ԵԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՎԿԱՅԻՑՆ: - 260. Որպէս Պօղոս ուսուցանէ. ,,արհամարհեալ ասէ, ուրուք զօրէնս Մովսէսի՝ մեռանէր, ի բերանոյ Բ կամ Գ վկայիւք. քանի սաստկագոյն համարիմք զայն, որ զորդին Աստուծոյ առ ոտն եհար,, , և որ ի կարգին է: - 380. որպէս ցուցանեն յիշատակարանքն առաջնոց պատմագրաց, զաւերումն Հայոց և զյաճախել նեղութեանցն և զանթիւ բազմութիւն վկայից, որք վասն Քրիստոսի նահատակեցան, և զքաջապէս արիանալ սրբոց քահանայիցն – 128. որք հեղին զարիւնս իւրեանց … և վասն ճգնութեան երանելոյն Գրիգորի Արծրունոյ քաջ նահատկին, յաղթող վկային, խոստովանողին Քրիստոսի – 314.

ՎԿԱՅԱՐԱՆ - առաջապահեստ ճանապարհորդութեանն արարեալ զՄերշապուհ Արծրունի զօրավար Հայոց և զՎահան Ամատունի և եղբայր Մեհուժանայ՝ տարեալ հանգուցանեն ի տեղւոջ հայրենեացն վկայարանի ի Թորդան: - 108. Դահեկին/ճիշտը՝դայեկին/ նորա մնալով ի ներքոյ կախաղանին՝ ամփոփէ /102/ զսուրբ գանձն ի ծոց իւր, տարեալ փոխէ ի վկայարան հանգստի ի ձեռն սրբոյն Ներսէսի – 104. և հասեալ յԱշտիշատ Տարունւոյ ի վկայարանս սրբոյն Յովհաննու և Մկրտչի, և Աթանագինէի վկային – 100. և տարեալ հանգուցանեն զնշխարս սրբոյն յԱշտիշատ Տարօնոյ ի տեղւոջ վկայարանի սրբոյն Յոհաննու Մկրտչին և Աթանագինի վկային: - 120. զոր տարեալ հանգուցանեն ի տեղւոջն, զոր այժմ Զորոյ վանս անուանեն, ի վկայարան սրբոց Հռիփսիմեանց. – 104.

ՎԿԱՅԵԱԼ - Աստանօր զվկայեալ բանիս՝ և մեք ի ճեպելն փութասցուք – 260. դիմեալ գայր և սա ընդ աջաթև կողմն վկայելոցն, ընդդէմ սրոյն մատուցանել զինքն պատարագ կենդանի Որդւոյն Աստուծոյ: - 222. որպէս ընթեռնուք ի գիրս պատմութեան վկայելոցն, որ Արևելեայ ասի գրոցն վերագրութիւն – 106.

ՎԿԱՅԵԼ/ԻԼ/ - ,,և ո՛վ տայր ինձ վկայել ի վերայ ճշմարտութեանն և մեռանել վասն անուանն Քրիստոսի, և զարիւն իմ փոխանակ արեանն Քրիստոսի հեղուլ և զմարմին իմ փոխանակ մարմնոյ նորա ի մահ մատնել և զչարչարանս իմ ընդ նորա չարչարանսն խառնել, զի և ընդ նմա փառաւորեցայց. – 290. այլ տանելով մեր առաջի թագաւորաց և դատաւորաց վասն իմ ի վկայութիւն՝ պահեսցուք զբարիոք դաւանութիւն և վկայեսցուք որպէս Փրկիչն առաջի Պոնտացւոյ Պիղատոսի. – 260. զի ոչ գոնեայ մի ոք գոյ, որ զճշմարտութիւնն վկայէ ուսուցանելով նորա, թող թէ զբազումս: - 246. Զոր վկայէ ոմն ի սրբոցն, թէ Մարգարէացաւ ութերորդն յԱդամայ Ենովք – 26. Այսպէս վկայեցին երանելիքն ի փառս սուրբ Երրորդութեանն յաւիտեանս յաւիտենից: - 294. Եւ բազում այն էր որ մարտիրոսական ճգնութեամբ վկայեցին, քան որք դրդուեցան, առ ոչինչ համարելով զյափշտակութիւն ընչից և ստացուածոց և զմահս դառնագոյնս: - 124. ԹԷ ՈՐՈ՛Վ ՕՐԻՆԱԿԱԻ ՎԿԱՅԵԱՅ ՄՈՒԿԱԹԼ ի ՎԱՆԱՆԴ ԳԱԻԱՌԷ: - 288. Մարկիանոս կայսր թագաւորեալ Յունաց յերկրորդն Թէոդոսի, որ արար զժողովն ի Քաղկեդոն ՈՀԳ եպիսկոպոսաց. առ որով վկայեաց սուրբն Վարդան և Վահան Արծրունի: - 132. յորմէ բազում սուրբք ի Քրիստոս վկայեցան, և որպէս ասի աւելի քան ԽՌ սրբոց արանց, /104/ որք վկայեցին վասն Քրիստոսի – 106. յորմէ բազում սուրբք ի Քրիստոս վկայեցան, և որպէս ասի աւելի քան ԽՌ սրբոց արանց, /104/ որք վկայեցին վասն Քրիստոսի – 106. որ և վկայեաց առաջի թագաւորին զբարիոք դաւանութիւն ի Քրիստոս. – 238. դնէր ուխտս ընդ իշխանս աշխարհիս Հայոց՝ գնալ ըստ արժանի /180/ հաւատոցն Քրիստոսի, զի վկայեսցեն ըստ անուան քրիստոնէութեանն և գործոքն: - 182.

ՎԿԱՅՈՒԹԻՒՆ - ,,ի քո իսկ ինքնակալ թագաւորութեանդ և ի յօրէնս առաջնորդին ձերոյ գրեալ է՝ ոչ գոլ ճշմարիտ վկայութիւն միոյ ուրուք և հաւատարիմ – 244. այլ տանելով մեր առաջի թագաւորաց և դատաւորաց վասն իմ ի վկայութիւն՝ պահեսցուք զբարիոք դաւանութիւն և վկայեսցուք որպէս Փրկիչն առաջի Պոնտացւոյ Պիղատոսի. – 260. Արդ այսքանեաց վկայութեանց ի մի վայր եկելոց՝ մի ելցուք զհետ առասպելաբանիցն թէ ընդ անկոխն գնալով ճանապարհ. – 260. Բայց թէ է՞ր աղագաւ պատմութիւն վկայութեան Վահանայ ոչ է գրեալ ի գիրս պատմագրի՝ ստուգապէս առանց յերկուանալոյ ցուցանեմ քում ուսումնասէր քաջահմտութեանդ: - 128. և անդ գեղեցիկս և համառօտս անպաճոյճս կարգէր մի ըստ միոջէ զվկայութիւն /204/ հաւատոցն որ ի Քրիստոս – 206. Եւ արդ ՆԺԱ են մարգարէք, որ զվկայութիւն աստուածութեանն Քրիստոսի ստուգաբանեն ճշմարտութեամբ յանցնիւր ժամանակս, իբրև ի միոջէ բերանոյ, թող զԱւետարանն և զառաքեալս նորա: - 246. և դարձեալ եդին ի վերայ ի տեղւոջ վկայութեանն նորա. ի Գոռոզու մերձ ի լեառն Քշիթ, ուր էր բանակ այլազգեացն: - 290. և Դաւիթ՝ ,,խօսէի զվկայութիւնս քո առաջի թագաւորաց և ոչ ամաչէի,, -260. և ընկալան զվճիռ մարտիրոսական և կատարեցան վկայութեամբ ի փառս սուրբ Երրորդութեանն – 222. և յայնչափ սաստիկ և անհուն ամբոխին սուտ վկայութեանն զբոլոր բարկութիւն բռնաւորին զարթուցին ի վերայ առնն, որպիսի ոչ ի միոյ ուրուք վերայ այնքան ժամանակս եհեղ զբարկութիւն իւր զօրավարն Բուխայ: - 290. և յոյժ հաւաստի և ընդունակ գոլ զառ ի բազմաց /244/ վկայութիւն ի վերայ մեծի և կամ փոքու ինչ իրաց կամ ի վերայ կենաց և մահու. – 246. Եւ ոչ անվկայ բանս, որպէս վերագոյնն գրեալ է մեր զդերահաստուցականս սորա, վկայութեամբ մարգարէական տառիցն, որպէս և ի պատահմանէ իրացն ճարտար գիտեն՝ որք են ի ժամանակս յայսոսիկ մնացեալ յայն ժամու անդ հանդիպելոցն: - 262. Եւ սոցա այսպէս նահատակեալ կատարեցան վկայութեամբ ի փառս Աստուծոյ, և զմարտիրոսական անուն ժառանգեցին ի Քրիստոս ի պատիւ ամենասուրբ Երրորդութեանն: - 266. նորա լուեալ էր ի պարսկէ ումեմնէ, ի ձորոյն Շատուանոյ, որ էր ընդ դահիճսն, և ի սկզբան վկայութեան մինչ ի կատարումն սրբոյն՝ ի տեղւոջ անդ հանդիպեալ լինէր – 206. որպէս ասէ Պօղոս առ Տիմոթէոս, ,,մի ամօթ համարիցիս զվկայութիւն Տեառն մերոյ,, - 260.

ՎՀԱՏԵԱԼ - Իսկ իբրև տեսին զբազմութիւն պարսկային զօրուն՝ վհատեալ գնդին Հայոց լքին զմիմեանս և գնացին յետս կոյս – 134.

ՎՀԱՏԵԼ - Եւ նոյնժամայն եհաս հրաման յարքունուստ՝մի տաղտկալ և վհատել և մի ի բաց կալ պատերազմել ընդ նմա. մինչև եկեսցէ ակամայ կամօք ի հնազանդութիւն արքայի: - 284.

ՎՀՐԻ ՔԱՂԱՔ - ելանէ մարզպանն ի վերայ նոցա և յինքն հանէ զՏամբեր և զԸռնայ գաւառ և որ ասի Ապուջափրի բերդ, ի Վհրի քաղաքին Կորճէից զիւր կացուցանէ ոստիկանս ի պահպանութիւն ամրոցին: - 400.

ՎՃԱՐԵԱԼ - Արդ վճարեալ է յիմմէ կողմանէ շատխօսութիւն ընդ քեզ. – 278. և անյապաղ փութով զգործ պատերազմին վճարեալ քաջք ընդ քաջս ելեալ. – 64. Իբրև գիտաց իշխանն, եթէ վճարեալ է չարութիւնն յաչս նոցա, և այլ ընդ այլոյ խօսին, և ի գաղտնիս քրթմնջեն, և անտեղի և անընդունակ հրամանաց նորա լինէին՝ ետ պատասխանի և ասէ – 214. արդ փութա անյապաղ վճարել զբռնահարեալ գործ միաբանութեան նոցա քակտել,,: - 362. բայց նուազեալ ազգին՝ ոչ զոք ունէին, որ կարող լինէին զգործ պատերազմին վճարել և զպաշտօն թագաւորին. – 90. և զմարտն ցածուցանել և զաղմուկն ամբոխեալ ի բաց վճարել – 210. և զպէտս կերակրոցն վճարեն ի սերմանց ինչ, առաւել ի կորեակ կոչեցեալ սերմանէն, զոր ոմանք ի սով ժամանակի /190/ հաց անուանեն. – 192. և ո՞րպէս՝ հնարաւորեալ յապրուստ անձանց վճարեն զկարևոր պէտս իւրեանց լի աշխատութեամբ և սաստիկ տառապանօք. – 190. և որ ի նմա են կենդանիքն՝ զնոյն առ ի վերայ հասուցանէ և նոքօք զպէտս քաղցոյն վճարէ մինչ ի ժամանակս գարնանայինս: - 262. Իսկ զհարկացն տուրս յարքունիսն Կեսարու՝ ի ձեռն դպրապետին վճարէ առ կայսր. – 96. Իսկ իբրև գիտաց բռնաւորն, եթէ չելին ի գլուխ կարծիքն զոր ի վերայ սրբոցն խորհեցաւ, որպէս

գրեալ է, ,,կարծողն և արհամարհողն այր ամբարտաւան է և ոչ ինչ վճարեսցէ,,- 264. կարծեաց համանգամայն զբոլոր պաշտօնեայս Քրիստոսի ի բաց վճարել ի հաւատարիմ երկրպագութենէ ճշմարտին Աստուծոյ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. – 264. և նովաւ վճարիցեն զի՛նչ պէտ և լինիցին ումեք ի մեծամեծաց մինչ ի փոքունս նոցա. – 82.

ՎՃԱՐԻԼ - Այս ամենայն վճարեցաւ Պարսից ի ձեռն յունական սրոյն: - 148.

ՎՃԱՐՈՒՄՆ - ելանել ի գագաթն Ամրական անձաւին զբօսնուլ նովաւ առ վճարումն բաւականութեան, ըստ մասանց պիտոյից օժնդակութեան քաղաքայարդար ապարանից թագաւորական պաղատի իւրոյ ձեռակերտին – 392.

ՎՃԻՌ - այլ և զվճիռ պատուհասին իւրովն կնքէր բերանով. – 24. գոհացող համբերութեամբ ընդունի զվճիռ մարտիրոսական: - 102. և ընկալան զվճիռ մարտիրոսական և կատարեցան վկայութեամբ ի փառս սուրբ Երրորդութեանն – 222. և ընկալեալ զվճիռ մարտիրոսութեան կատարի ի փառս սուրբ Երրորդութեանն – 104. և թէ ի պատերազմին յայնմիկ հասանիցէ զմահուն ընդունել զվճիռ՝ իսկ ըստ յաղթութեանն զխոստովանողականն ժառանգել անուն, զօրանալ զօրութեամբ ի զօրութիւն խաչին Քրիստոսի Աստուծոյ մերոյ: - 400. Եւ յոյժ զուարճացեալ քաղցր բարբառովն Քրիստոսի, որ է անեղծանելի վճիռ քրիստոսասիրաց անձանց - 252. և ոչ առ փոքր մի ինչ ներեաց կամ անսաց /264/ տալ տեղի պատասխանոյ, այլ հրամայեաց դահճացն տալ ի վերայ նորա զվճիռ մահու, փութով զրաւ առնել նոցա ի սատակումն սրոյ: - 266. զի անսայթաք և աներկբայ հաստատուն հաւատով ընկալցին զվճիռ մարտիրոսական, համբերութեամբ բազմաւ և գոհացողական օրհնութեամբ –266. Իսկ թշուառականն զսատակմանն ընկալաւ զվճիռ, և ի հանդերձելումն զխաչահանուացն հատուցանել զպարտիս: - 378. Նոյնպէս և ամենայն զօրք և զօրագլուխք հանդերձ բազմակոյտ կարաւանին զկորստեան ընկալան զվճիռ. – 376.

ՎՃԻՏ - և արծաթագործ եօթնփորձեան հրաբորբոք ճարտարապետն ի բովս հալոցացն զուտ և վճիտ արծաթ ընտրելով, արծաթեղինաւն զփայտեղէնն պատեալ արտաքուստ – 378. Նա և ջուր մաքուր յապակի զուտ և վճիտ արկեալ, ի տապ արեգականն դնելով, և զնիւթ հրոյն առ ընթեր՝ ի շողոյ անտի արևակէզ եղեալ տոչորի նիւթն: - 52.

ՎՆԱՍ - ,, վնասս և զբեկումն հարկաց արքունի և զկոտորումն զօրաց քոց Աշոտ գործեաց, և նա է պատճառ ամենայն ապստամբութեան Հայոց ի քումմէ թագաւորութենէդ, ասեն, ո՛վ քաջդ և հաւասար աստուածայնոց կարողութեան ինքնակալ, և ընդհանուր իշխեցօղ կենաց և մահու,,: - 180. այլ կուտեաց եդ ի վերայ Բուխայի զապստամբութեան վնասն և զհարուածս զօրացն – 286. Աստանօր լաւագոյնս իմն աստուածայինն Մովսէս գրէ ի բերանոյ Աստուծոյ զյաճախութիւն ամբաստանութեան ամբարշտելոցն, ըստ իւրաքանչիւրոցն և զվնասն նշանակելով: - 28. Բայց արդ զամենայն յանցանս քո և զվնաս զոր արարեր թողում քեզ. արի առ զկին քո և զորդիս և եկ այսր. – 146. գուցէ ակամայ երթալովն, և նեղիչն աշխատելով ի պահելն՝ յաճախեսցէ ի վնաս և ի քէն, և օձան բարւոյ յայնմ հետէ ոչ ևս ումեք հասցէ գտանել,,: - 216. Եհարց սաստիւ կամ թէ հրամանաւ տէրութեան իւրոյ, ,,ի բաց լեր, ասէ, ի հաւատոցն Քրիստոսի, և իմ թողեալ քեզ զբազում վնասսն զոր գործեցեր – 290. Եւ առեալ զգանձսն՝ հրամայեաց սպանանել զընծայաբերսն, և բանիցն Հայրակղի ոչ արար պատասխանի, այլ առնէր վնասս սաստիկս ի կողմանս կողմանս, աւարառութիւն և գերութիւն և սուր. – 142. և բազում վնասս ի գործս արքունի կուտէին ի վերայ իշխանին Աշոտի. և քմազարդ բանիւք գրգռեն զթագաւորն ի վերայ իշխանին ի չարիս: - 180. և զամենայն վնասս և զգործս ապստամբութեանն ի վերայ Աշոտի կուտէին: - 194. և էր գրեալ ի նմա թողութիւն վնասուցն և հարուածոցն զօրացն և բազում աւարացն, և երդումն ի հաստատութիւն ասացելոցն, և պարգևս ի պատուական և մեծագնի հանդերձից, և սաղաւարտ ծաղկեայ և սուսեր. – 288. Եւ ժողովեալ զբազմութիւն զօրաց իւրոց՝ առնէր վնասս մեծամեծս և սաստիկս ի բաժնին Յունաց: - 140. և ի դիմաց ձերոց երևի, զի զօրութիւն բազում գոյ ի ձեզ, զի այդչափ վնասս գործեալ է ձեր առ իս - 244. և ի մտանելն առաջի զօրավարին՝ ոչինչ փոյթ արարեալ զվնասուցն և

զհարուածոց զօրացն, իբրև զապստամբէ ինչ ամբաստանել. – 236. և իբրև եդ առաջի զվնասուցն որով կարծէր արկանել զնա ի հաղբս կորստեան՝ ասէ ցերանելին – 294. և իմ խնայել ի ձեզ ոչ արարից զրաւ կենաց ձերոց ըստ արժանի ապիրատ գործոց և վնասուցն, զոր յանցեայքն առ իս դուք. -244. և ինքն անցանելով խաղաղութեամբ ընդ աշխարհն Վասպուրական սակաւատոյժ վնասիւք՝ զպատանդսն ընդ իւր առեալ տանի: - 186. Եւ խօսէր ընդ նոսա սաստիկ և ահագին դատաստանօք և սպառնալեօք, թէ ընդէ՞ր և դուք ոչ մեռարուք ի պատերազմին, քան թէ ելեալ փախստական գնացէք գալ առ իս և տալ համարձակութիւն ծառայի իմում ի յայսքան վնաս. մի՞թէ արդեօք զԽոսրով մեռեալ կարծէիք,,: - 150. և հարցեալ ցնա յաղագս մահուանն Յովսէփու ի վրէժխնդրութեանն աղագս երկրորդ նահատակութեան նորա, որ եկաց ընդդէմ զօրավարին, յուշ առնելով նմա զապստամբութենէ և ընդխառնելոյ նորա ի վնասս արքունի – 294. Եւ մեր անտես արարեալ զգործս վնասուց ձերոց, զոր մեղայք մեզ, և լիցին անձինք ձեր ի գիւտս, և կեցջիք և տիրեցէք աշխարհի և տանց ձերոց, դուք և որդիք ձեր – 244. Եւ մի հարկաց ինչ կամ զօրաց կամ այլ ծառայութեան խափանիչ լինելոյ կամ ի վնասս արքայի խառնելոյ փոյթ արասցուք պահանջել վրէժս. – 196. և ցուցէք յականէ յանուանէ մի ըստ միոջէ իւրաքանչիւր զվնասս զոր գործեալ եմ, դի՛ք ի լսելիս համագունդ զօրականացս, և մի՛ պատկառէք խօսել զճշմարտութիւնն: - 214. զի և եօթամբք իսկ շարագրեալք չարիւք ժանդացաւ վիրագն այն ի վնաս, թէ և միատեսակ երևեսցի. - 24. Զսա ըմբռնեալ զօրաց Տաճկաց աճին առ զօրավարն. և բազում վնասս ի գործս արքունի կուտեցին ի վերայ նորա և ստութեամբ առաւել քան թէ ճշմարտութեամբ պարտաւորեցին զնա: - 288. միջնորդեալ հայրապետին երդմամբ ուխտի խաղաղութեան՝ ի բաց լքանել անյիշելի մոռացմամբ զչարեացն գործելոց զվնասս. – 348. տես քեզէն և ծանի՛ր, զի ոչ գոյ վնաս իմ յիրիդ յայդմիկ կամ կարողութիւն արձակել զքեզ,,: - 238. քանզի ոչինչ վնաս գիտէին զանձանց և ոչ մի ինչ իրս մեծ կամ փոքր. – 98.

ՎՆԱՍԱԿԱՐ - և զի ասէ՝ գործել և պահել՝ ոչ իբր ի լիութիւն ամենակատար դրախտին կամ պահպանութիւն ի վնասակարաց – 20. զի սոքա վնասակարք առ աստուծոյն եղեն: 46. Եւ յորդորականիւ հրաժարեցուցանէր զնոսա ի բաց կալ յապիրատ և ի վնասակար գործոցն զոր գործէին – 182.

ՎՆԱՍԱՊԱՐՏՈՒԹԻՒՆ - Իսկ եթէ՝ մշակն մեղաց և անդրանիկն ամենայն չարեաց, որ ի յօձն բունեալ ոչ անիծաւ, որպիսիս ուսուցանէ վնասապարտութիւն օձին առ ի պատժականութեանն գտանել պարտաւորութիւն, որ ոչ յընքենէ միայն, այլ մանաւանդ ի գտողէն չարեաց: - 22.

ՎՆԱՍԵԼ - Ասաց Բագարատ յուրացութեանն իւրում, թէ առ վտանգի նեղութեանցն՝ ուրացութիւնն ոչ ինչ վնասէ, եթէ ի սրտին գաղտնի պահէ զխոստովանութիւնն հաւատոց: - 254.

ՎՆԴՈՅ - և դարձեալ դառնայ ի Հայս. ընդ իւր ածելով մարզպան զՎնդոյ Պարսից մոգպետ: - 124. և յանկարծօրէն յեղակարծ երագութեամբ հասին ի վերայ Շաւասպայ և մարզպանին Վնդոյի: - 126. և որդի Որմզդի Խոսրով գնաց փախստական առ Մուրիկ թագաւորն Յունաց՝ զոր առեալ քեռիք նորա Վնդոյ և Վստամ գնացին փախստական ի դուռն կայսերական: - 136. էին անդ Վնդոյ և Վստամ և զօրք պարսիկք իբրև ԸՌ հեծեալ, թող զզօրս Յունաց և Հայոց: - 140.

ՎՇՆԱՊ - և դիմեալ ի Գանձակն Ատրպատականի՝ բրէ զնա, աւերէ զԱհմատան և զՄայ կործանէ և զբագինն հրատին մեծի, որում Վշնապն կոչեն – 148.

ՎՇՏԱԳԻՆ - ինքեան և որոց յետ իւր թողլով ժառանգութիւնն որդւոց կեանս վշտագինս հանդերձ մահուամբ, և ծննդականութիւնս տրտմութեամբ: - 22.

ՎՇՏԱՍՊԱ - ՅԵՏ ԿԻՒՐՈՍԻ /թագավորում են/ ԿԱՄԲԻՒՍԷՍ, ՇՄԵՐԳԻՍ ՄՈԳ, ԴԱՐԵՋ ՎՇՏԱՍՊԱ. - 68.

ՎՉԼ - Լինի յԱդամայ մինչև յամս այս ՎՉԼ, ըստ Եւթանասնիցն թարգմանութեանն: - 58.

ՎՌԱՄ - Եւ Վռամ … փութացաւ կոչեաց դարձեալ ի դուռն զԱրտաշիր և զսուրբն Սահակ բազմութեամբ նախարարացն Հայոց. - 118. և բնակէ առ զօրավարի ումեմն և մոգի Ղեր̈ղոգ Վրամ/ճիշտը՝Վռամ/ կոչեալ: - 82. Եւ թագաւորեալ Վռամ որդի Յազկերտի՝ կոչէ ի դուռն զսուրբն Սահակ Հայոց կաթողիկոս: - 116. և ի խնդրոց նախարարացն և սրբոյն Սահակայ թագաւորեցուցանէ Հայոց Վռամ երկրորդ զԱրտաշէս, որ և Արտաշիր: - 116. Զի Վռամ և Յազկերտ զկէս աշխարհիս յինքեանս յանգուցեալ՝ զբոլոր ապա աշխարհիս զտիրելն յոխորտային: - 114. Իսկ նախարարքն Հայոց իբրև տեսին յերկոցունց կողմանց զանկարգ և զանտեղի աշխարհիս պիտաւորութիւն՝ յապաշաւանս դարձեալ ի վերայ անցիցն անցելոց զոր ախորժելովն խնդրեցին՝ դարձան առ Վռամ – 118. Իսկ ի հասանել սրբոյն Սահակայ ի դուռն հանդերձ նախարարօքն՝ զիջանէ ցածնու Վռամ ի բարկութենէ վրէժխնդրութեան Հայոց քինահարութեան անարգանաց Շապհոյ, և ընդ Յունաց զսերտ խաղաղութիւն ունելով.- 116. Իսկ Վաչէ Արծրունեաց տէր և Հմայեակ Աշոցաց տէր և այլք յանգուցեալ ի նոսա՝ հաճեցին զկամս Վռամայ – 118. Իսկ Վռամ յերկմիտս եղեալ, ոչ կարէր կատարել զխնդիրն – 118. մատուցեալ առ Վռամ հանդերձ Սորմակաւ ումեմն Արծկեցւոյ մոլեգնոտ փառամոլ աբեղայի՝ սկսան ազգի ազգի լեզուագարութեամբ չարախօսել զսրբոյն Սահակայ – 118. Մշկանս այս փոխանակ Արտաշրի մեր թագաւորի մտեալ ունի զաշխարս հրամանաւ Վռամայ Պարսից արքայի: - 118. որք գնացին առ Վռամ, և ոչ առ Թէոդոս բարեպաշտ և զուգափառ քրիստոնեայ թագաւոր, զեղխեցան ամբարշտաբար առանց խորհրդոց: - 118.

ՎՌԱՄ ԵՐԿՐՈՐԴ - և ի խնդրոց նախարարացն և սրբոյն Սահակայ թագաւորեցուցանէ Հայոց Վռամ երկրորդ զԱրտաշէս, որ և Արտաշիր: - 116. Յամի երկրորդի Յազկերտի որդւոյ Վռամայ երկրորդի՝ բարձաւ թագաւորութիւնն ի տանէն Հայոց – 120.

ՎՍԱՄ - Անդ հանդիպեալ լինէր և երանելի եպիսկոպոսն Գրիգոր Ռշտունեաց վսամ. ոչ կարաց իւրայնովքն զերծանել, իբրև յայնժամ առղոթաւ/հավանաբար ,,աղօթել,, բայն է / ի լեառն: - 358.

ՎՍԵՄԱՊԵՏ - ԶԱշոտէ ասեմ զնազելի և զբարձրագահ ճոխացելոյ վսեմապետէ, յընդհանուր նախագահանստեալ ի մէջ բոլոր Հայաստանեայցս: - 384.

ՎՍՏԱՀ - Եւ արար նմա հաւատարմութիւն յոյժ գրով, և կնքեալ աղիւ ըստ սովորութեանն իւրեանց երդումն, և խնդրեաց ի նմանէ զօր ինչ սակաւ յերևելի մարդկանէ, յորս ինքն վստահն էր: - 154.

ՎՍՏԱՀԱԲԱՐ - Եւ ոչ յանձին կալեալ Արջամայ վստահաբար առ իւր ունել զԱնիհանոս՝ յղէ զնա ի Հայս: - 76.

ՎՍՏԱՀԱՆԱԼ - Զծառայս իմ պատրես, և զզօրս աւազակաց ժողովեալ՝ ոչ տաս ինձ հանգչել, այլ հանապազ պատրաստիս ինձ ի պատերազմ, և ասես վստահանալ յԱստուածն իմ: - 146.

ՎՍՏԱՄ - և որդի Որմզդի Խոսրով գնաց փախստական առ Մուրիկ թագաւորն Յունաց՝ զոր առեալ քեռիք նորա Վնդոյ և Վստամ գնացին փախստական ի դուռն կայսերական: - 136. Էին անդ Վնդոյ և Վստամ և զօրք պարսիկք իբրև ԸՌ հեծեալ, թող զզօրս Յունաց և Հայոց: - 140.

ՎՏԱԿ - արտօսր յորդառատ վտակաց ծաւալին յաչաց, քան թէ ծաղուն խողխոջեն խխնջիւնք. – 384. և այնչափ սաստիկ լինէր կոտորածն՝ մինչ զի սաստկութիւն վտակաց արեանն խաղացեալ ոռոգանէր զերկիրն ամենայն: - 140.

ՎՏԱՆԳ - Ասաց Բագարատ յուրացութեանն իւրում, թէ առ վտանգի նեղութեանցն՝ ուրացութիւնն ոչ ինչ վնասէ, եթէ ի սրտին գաղտնի պահէ զխոստովանութիւնն հաւատոց: - 254. Բայց քանզի յերկնուստ էր հասեալ վտանգն, և աստուածառաք էր բարկութիւնն՝ և ոչ ոք զօրեաց և եկաց ընդդէմ նորա ելանել ի պատերազմ, այլ որ եհարն՝ նոյն և բժշկեաց: - 374. և անդ ոչ սակաւ վտանգ հասանէր Աշդահակայ վասն հասանելոյ ի վերայ նորա Տիգրանայ զօրու ծանու: - 62. Եւ զինուորք ի մահու վտանգ տուեալ զանձինս՝ի ղոյղս անցանել ի նաւէն ի կղզին. – 50. և խորհեցաւ սա զմիտս զայս, եթէ որ առ վտանգի նեղութեան դարձցի ոք առ ի պաշտօն կռոցն՝ ոչինչ է, եթէ սիրտ իւր ուղիղ պահեսցէ

զհաւատսն Քրիստոսի: - 256. Եւ առ վտանգի երկիւղի զօրավարին՝ ածին ի մէջ զիրս տեսլեանն, որ երևեցաւ յերկնից հրեշտակ Աստուծոյ. – 234. և բազում այն են որ ի նմին իսկ սատակին. և կէսքն դիւրըմբռնելի որսորդաց լինին. և ապրեալքն սաստիկս հասուցանեն վտանգս ուր և դիպիցին, եթէ մարդկան և եթէ այլոց ինչ կենդանեաց: - 188. Եւ դարձեալ պատասխանի ասէ, մի՛ տալ տեղի՝ լսել հրամանի թագաւորին. թէ վտանգ ինչ հասանէ՝ կրել հանգոյն զինչ կրեցինն: - 132. և զՀրէայսն որ յաւուրց սրբոյն Գրիգորի հաւատացեալ էին ի Քրիստոս՝ վարեն ի գերութիւն, աւելի վտանգ նոցա քան այլոց Հրէիցն հասուցանելով վասն ի Քրիստոս հաւատոցն: - 104. և խնդրէին տեսանել թէ ո՛րպէս կարասցեն գտանել զելս իրաց վտանգին ի վերայ հասելոյ: - 206. ինքն իսկ փոյթ յանձին կալեալ՝ ել գնաց մեծաւ հոգաբարձութեամբ, լուծանել զնա ի տառապանաց արգելանին. սակայն և այնպէս ոչ կարաց գտանել զելս իրացն վտանգի առնն: - 346. Մինչդեռ այսպէս յանդորրութեան կեանս յապահովանայր երկիս Հայոց, և ոչ ուստեք գոյր վտանգ կրել – 92. Յերկարեալ վտանգ նեղութեան Հայոց, որպէս ցուցանեն բազումք ի պատմագրաց, մինչ ի ժամանակս Ջամասպայ և Կաւատայ, մինչ ի Խոսրով արքայ: -134. Ոչինչ զանգիտեալ մեր մինչ ցայս վայր, պատմել զվտանգս և զնենգութիւնս եկեալ հասեալ ի վերայ մեր ի թշնամեացն ճշմարտութեանն. – 194. Պատասխանի ետ Մարկիանոս և ասէ. ,,վասն զի առաջնորդքն Հայոց զպարսկական շփոթմանցն զվտանգ կրէին,,: - 132. Սա առաջին գտաւ պտուղ մարտիրոսական ի մեծ վտանգի նեղութեանն, որ եհաս ի վերայ բոլոր Հայաստանեայցս: - 206. Քանզի հարցեալ և բռնազբօսեալ զերկոսին գլխաւորին Տաճկաց, անունկնդիր լինելով ասացելոցն, և ի տեսչութենէ Աստուծոյ թողացուցեալ նոցա առանց վտանգից՝ որպէս հաճոյ թուիցի կեալ ի հաւատսն Քրիստոսի համարձակաբար. – 324.

ՎՏԱՆԳԱՒՈՐ - Այսպէս և զամենայն ըմբռնեալսն վտանգաւոր մահու տառապեցուցանէին ընդ մէջ կտրելով, ահարկուս տեսողացն զնոցայն վտանկսն կացուցանելով: - 372. Եւ ահա դարձեալ ասեմ, չկայ ինչ քո. և զի մի կրիցես զոր ինչ խօսեցայ ընդ պատգամաւորս քո, և աւելի քան որոգել ջանար ընդ մեզ՝ զդոյն ընդունիցիս վտանգաւորս,,: - 280. Եւ առ չժուժեալ այնպիսի վտանգաւոր նեղութեանն, արիաբար հասեալ ի կիրճս ձորոյն և մերկացեալ զսուսերն՝ յարձակեցան ի վերայ երիվարացն – 220. Եւ առ չհանդուրժել այնքան եկեալ հասեալ վտանգաւոր նեղութեանցն, և գազանեղէն զայրացմամբ մրմռեալ յոգի իւր ի վերայ կորստեան սուրբ հաւատոյս և կործանման աշխարհիս Հայոց – 126. և լինիցիս իբրև զմի ի մահապարտաց, որ անձամբ զանձինս հերքեցին ի կենաց վտանգաւոր մահուամբ, որպէս և քեզ պատրաստեալ է – 294. և կայր աշխարհս ի մեծ վտանգաւոր աղէտս: - 126. և ոչ ուրեք գտանէր հնար ելիցն ի վտանգաւոր արգելանէն, թէպէտ և բազմաց հոգ յանձին կալեալ վասն առն պատուականի – 346. իսկ զՆախճաւան քաղաք և զԳողթն գաւառ հանեալ էր ի Վասպուրականէ բազում ժամանակօք յառաջ, ՄԺԱ ամօք, յամի այրման եկեղեցւոյն Գրիգորի և վտանգաւոր մահու զօրացն Հայոց: - 390. Ո՞վ յիմարութեան առաջնոցն. ո՞րպիսի կատաղութիւն և գիւտք դիւացն նախկին ժամանակաւ սպրդեալ մուծաւ յաշխարհ, ապստամբութիւն առ Աստուած և տրտմութիւն սրբոց հրեշտակաց, և պատճառ վտանգաւոր մահու ծառայիցն Աստուծոյ յաւուրս ապազայիցն. – 38. Որում որոնել փրծանել ի վտանգաւոր բանտէ: - 334. Սաստիկ և վտանգաւորք և լի դառնութեամբ որ ինչ ի ճառի աստ են յիշատակարանք, սակս յանձնառութեան մեծ նախարարացն և իշխանացն մերոց. – 240.

ՎՏԱՆԳԵԼ - քանզի նուազագոյնքն և տկարք՝ թափառեալք աղքատութեամբ վտանգէին, իսկ կարողագոյնքն և բռնաւորք ըստ բնութեան գազանաց վայրենամիտք լեալ, անամօթ և անարգել յափշտակութեամբ վրդովէին զբոլոր երկիրս: - 300. Եւ յայնմհետէ վտանգի Իսրայէլ յԱսորեստանեայց: - 60.

ՎՏԱՆԿ - Այսպէս և զամենայն ըմբռնեալսն վտանգաւոր մահու տառապեցուցանէին ընդ մէջ կտրելով, ահարկուս տեսողացն զնոցայն վտանկսն կացուցանելով: - 372.

ՎՏԱՐԱՆԴԵԱԼ - Եւ հասեալ ի վերայ Հայոց՝ նախ զԱշոտ վտաքանդեալ այսր խաղացուսցես – 196.

ՎՏԱՐԵԼ - և զիշխանն Աշոտ և զորդի նորա Գրիգոր և զՎահան Արծրունի և զորդի նորա Գագիկ … և զՄուշեղ եղբայր Վահանայ և զտիկնայս նոցա և զտիկինն Հրանուշ և զայլս յազատատանէ կապեալ և բարձեալ ի վերայ ուղտուց՝ վտարեաց ի Սամառայ – 220.

ՎՏԱՐՈՒՄՆ - ԿԱՊՈՒՄՆ ԵԻ ՎՏԱՐՈՒՄՆ ՅԱՇԽԱՐՀԷՍ ԻՇԽԱՆԻՆ ԵԻ ՆԱԽԱՐԱՐԱՅՆ ԵԻ ՆՈՅԻՆ ԸՆՏԱՆԵԱՅ: - 220.

ՎՏԱՒԱՆ - Եւ այն ինչ ընդ ջեռնուլն արեգականն, մինչ ագևորեալքն մտանէին զառաջեաւ ամիրային, որպէս որսոյ ինչ պատճառանօք հեծեալ յընտիր երիվարս հանդերձ մերձաւոր հարազատօք իւրովք և ազատովք յընտրելոցն Վասպուրականի՝ ելեալ մեկնեցաւ իբրև վտաւանս երկուս. – 342.

ՎՐԱՆ - և ընդ այգն ընդ առաւօտն, մինչ նոքա ննջէին յիւրաքանչիւր վրանաց օթոցի՝ և զօրքն շուրջ փակեցին սուսերօք և վահանօք և նիզակօք և վառեալ մոմեղինօք, և մտեալ ի ներքս ըստ հրամանի զօրավարին իւրեանց – 296. և ելեալ նստաւ ի ջորւոջն, զոր պատրաստեալն ունէին անդէն առ դրան վրանին, և հանին արտաքոյ ղաշիկ բանակին՝ դարձուցեալ դառնալ ընդ նոյն ուստի եկն: - 346. և եկեալ ի տեղի մի ծովային և զվրանսն և զբանակն զամենայն ի ներքս եդեալ մտանէաք ի նաւսն – 50. Եւ ի ժամու մինչ ագևորեալքն կամէին մտանել զառաջեաւ … յայնժամ շուրջ կացեալ զվրանսաւն մեծ սպարապետին զկազմեալ գնդաւ վահանաւոր և նիզակաւոր ամրափակ պնդութեամբ, և մտեալ մատոյց զթուղթն, զոր էր գրեալ առ Յամանիկն ի քաղաքն Պարտաւ Ահմաթայ նենգութեամբ: - 344.

ՎՐԱՆԱՅԱՐԿ - Իսկ զօրավարն Բուխայ կայր ի կոր կործանմանն, ի տարակուսանս ըմբռնեալ փղձկէր ի միտս իւր, ցնորակոծ լինէր, հնարէր ելս իրացն գտանել ի վրանայարկն փակեալ, և ոչ առնոյր դուլ և դադար: - 282.

ՎՐԴՈՎԵԱԼ - Եւ մինչ այսպէս կայր աշխարհս յանկարգ խաղաղութեան՝ եհաս լուր գործոյն առ Աւշին և առ իշխանն Աշոտ, եթէ ,,վրդովեալ է երկիրն, և կան ի տարակուսի՝ որք զամուրսն քո ունին. – 362. զշփոթեալ և զվրդովեալ կարգս աշխարհիս յօրինել առ հանդարտութիւն և խաղաղութիւն յառաջանալ – 388.

ՎՐԴՈՎԵԼ - Եւ ընդ մտանելն նոցա աշխարհս՝ վրդովեցին զուխտ քրիստոնէութեանն, և փոյթ ընդ փոյթ ձեռնամուխ եղեն աւերել քանդել զեկեղեցիս, զտունս աղօթից կործանել. – 124. քանզի նուազագոյնքն և տկարք՝ թափառեալք աղքատութեամբ վտանգէին, իսկ կարողագոյնքն և բռնաւորք ըստ բնութեան գազանաց վայրենամիտք լեալ, անամօթ և անարգել յափշտակութեամբ վրդովէին զբոլոր երկիրս: - 300.

ՎՐԴՈՎՄՈՒՆՔ - Այլ հինիցն ասպատակքն, սովոյն բռնութիւն, գերիվարացն տառապանք, գազանաց յարձակմունքն, ներքին և արտաքին վրդովմունքն հոլանի առնէին զաշխարհս: - 316. Զի թէ միոյ փայլատակման ընթացք և ճայթումն ամպոց բաւական է պակուցանել քաղել զուշեղութիւն ոգւոց, զի՞նչ ինչ յայնժամ կրէին ոգիք մնացելոցն յերկրի, ի սահանաբաց և յանդնդաքակ վրդովմանցն հոսելոց, նախ քան զջրհեղեղ ջուրց սատակումնն: - 32.

ՎՐԴՈՎՈՒՄՆ - Եւս առաւել քան զանդնդականն յուզմանցն բռնալիր հողմոցն զծիրանեզոյն ալիսն, զլեռնաձև կուտակսն և զվիշապաձայն գոչմունսն՝ ևս յաւէտ ահագնակի վրդովմամբ զմրրիկ անձանց ի մէջ եռաշարժ ընթացմանցն, ի հուլվմանց խոհարանի իշխանական սրտին ի ներքս հարկաւորաբար բռնազբօսեալ /350/ ձգեն: - 352. Ի սորա յերրորդ ամի թագաւորութեանն ի վերայ Հայոց աստուածատուր բարկութեամբ անդնդաշարժ վրդովմամբք ներքնագոյն խորոցն պատահեալ միմեանց սահանախաղաց դղրդմամբ, հիմնաշարժ տապալմամբ, /356/ ներքսագոյն երկրի թուլացեալ պնդափակ աղխեալ սանդարամետական սահմանին, բարկութեան հողմոց շնչեալ ընդ ջրոցն խաւարայնոց, ի կոհակս անդնդաքակս զթանձրայատակ երկրի զկարծր և զծանրալիր անկշիռ անբաւութիւնն տատանեալ, մինչ յերեսս երկրի ի վեր մղեալ հանդէպ քաղաքին

Արտաշատու/ գրքում՝ Արտաշասու/, որ Բլուրն նորուն ասի – 358. Իսկ Վասակ Արծրունի, հայր Աղանայ սրբոյ, առեալ զՏաճատ և զԳոտեր զեղբայր իւր՝ գնաց առ կայսր. մեկուսի եղեալ ի շփոթմանց պարսկական վրդովմանցն և աւերման աշխարհիս. – 132.

ՎՐԷԺ - ,,յաւուր յայնմիկ խնդրեցից զվրէժս ի Բէլայ ի Բաբելոն, և հանից /38/ զոր եկուլն՝ ի բերանոյ նորա,,: - 40. այլ նա ըստ կամս իւր կատարեաց ի վերայ իւր զարենապարտն լինել, որ տալոց է հատուցումն վրիժուց յաւուր դատապարտութեան իւրոյ: - 320. Այնքան խնամոցն արժանի՝ զի և զվրէժ արեան նոցա առնուլ ի տանէն Սաւուղայ: - 32. անկեղծաւոր և աննենգ տիրասիրութեամբ ցուցանել հնազանդութիւն հպատակութեամբ, մինչ յարիւն և յապաժոյժ նահատակութեամբ առնուլ վրէժս ի Պարսկացն հինիցն՝ զաւեր եկեղեցեացն Հայաստանի և զնեղութեանցն և զգերփանացն և զսաստիկ արիւնահեղութեանցն զքրիստոնէից և զուխտի մանկանց եկեղեցւոյ սրբոյ: - 134. առ որ զչարեալ Արէտ՝ խորհէր վրէժ առնուլ զանարգանաց դստերն, և ոչ իշխէր համարձակ յինքնակալէն Օգոստեայ Տիբէրի կայսեր: - 78. ասէ. ,,զվրէժ արեանն Մուրկայ /140/ առի ի թշնամոյ նորա արդ կա՛մ եղիցի առնել ընդ իս զխաղաղութիւն և արգելուլ զսուր քո յերկրէ իմմէ,,: - 142. Արդ եթէ Սոդոմայեցիքն, որ հրով զվրիժուցն հատուցին փոխարէնս, և դարձեալ տանջելոց են՝ որ բովանդակ չարիւք անդր երթալոց են ո՞րպիսի ակնկալութիւն տանջանաց զանց արասցէ զնոքօք. – 336. Բայց Գուրգէն ընտրեաց զսէրն Քրիստոսի, քան զսէր փոքրամեայ աշխարհիս. ոչ խնդրելով զվրէժ արեան սպանելոյ հօր նորա ի պապոյն նորա – 320. Բայց զգոյշ լերուք, մի՛ գուցէ ոչ հաճեսցի Աստուած, և խնդրեսցէ ի ձէնջ զվրէժ արեան կոտորածի աշխարհի: - 144. դիմեցին առ կայսրն Վաղէտիանոս, թէ հնար ինչ իցէ առնուլ զվրէժ արեան Խոսրովու և ի /92/ վերջ նահանջել զբռնակալութիւն Ստահրացոյն. – 94. զի տացէ վրէժս անցիցն անցելոց ի նմանէ և ապստամբութեամբ ի պետութենէն Տաճկաց: - 202. զոր ժողովեալ պահեալ և կնքեալ ունէր յօր հատուցման վրիժուց՝ հատուցանել մեզ ըստ գործս մեր, ի հարկանել զբարի զոտս մեր. – 196. ի կոր կործանման կացեալ Խոսրով մեր թագաւոր, և ջանայր առնուլ վրէժ մահու հարազատին իւրոյ, թագաւորին Արտաւանայ, զոր և առնէր իսկ– 92. Խոստացայ վերագոյնն գրել վասն Բուխայի մասնաւորաբար զվրիժուցն հատուցանել զպարտիս, այլ ոչ զբովանդակն: - 326. որպէս և յետոյ ընդ Պիղատոսի խնդրեցին զվրէժ սպանման Մկրտչին և հալածանացն Քրիստոսի. – 78.

ՎՐԷԺԽՆԴԻՐ - Բայց ոչ ժամանեալ կատարման պատերազմին, զաշտարակն, զոր շինէր որդին Աբգարու փլուզեալ ի վերայ սպան զնա, վրէժխնդիր եղեալ մահուն Ադդէի սրբոյ: - 80. Իբրև լուաւ Խոսրով արքայ զլուր համբաւոյն այնորիկ՝ շարժեցաւ ի բարկութիւն մեծ, լինել վրէժխնդիր արեանն Մուրկայ: - 140. միանգամայն խորհէր վրէժխնդիր լինել ազգին Մամիկոնէից վասն սպանման Մեհուժանայ հաւոյն իւրոյ: - 112.

ՎՐԷԺԽՆԴՐՈՒԹԻՒՆ - եկեալ հասեալ վրէժխնդրութեան պատիժք, վասն անօրէնութեանց մերոց զոր գործեաք առ հասարակ ի փոքրկանց մինչև ցմեծամեծս. – 196. և հարցեալ ցնա յաղագս մահուանն Յովսէփու ի վրէժխնդրութեանն աղագս երկրորդ նահատակութեան նորա, որ եկաց ընդդէմ զօրավարին, յուշ առնելով նմա զապստամբութենէ և ընդխառնելոյ նորա ի վնասս արքունի – 294. Իսկ ի հասանել սրբոյն Սահակայ ի դուռն հանդերձ նախարարօքն՝ զիջանէ ցածնու Վռամ ի բարկութենէ վրէժխնդրութեան Հայոց քինահարութեան անարգանաց Շապհոյ, և ընդ Յունաց զսերտ խաղաղութիւն ունելով.- 116. Նորա զչարեալ ընդ հասանել պատգամին՝ առ զայրուցս բարկութեան քինահանութիւն վրէժխնդրութեան արարեալ՝ ի բաց եհան ի գրոցն պատմութենէ՝ որ ինչ վասն տանն Արծրունեաց էր գործոց հանգամանք, և որ ինչ օրինակ մարտիրոսութեան Վահանայ Արծրունոյ: - 130. վասն որոյ և աստուածայնոցն առ Մովսէսիս հրամայեալ՝ առնուլ վրէժխնդրութեամբ /գրքում՝վրեժխնդրութեամբ/ ազգացն Քանանացւոց զառ ի նահապետէն կարգեալ սահման. – 34.

ՎՐԷԺՍ ԼՈՒԾԱՆԵԼ - Իսկ ասելն՝ ամենայն որ սպանանէ զԿայէն՝ եօթն վրէժս լուծցէ – 22.

ՎՐԷԺՍ ՊԱՀԱՆՋԵԼ - Եւ մի հարկաց ինչ կամ զօրաց կամ այլ ծառայութեան խափանիչ լինելոյ կամ ի վնասս արքայի խառնելոյ փոյթ արասցուք պահանջել վրէժս. – 196.

ՎՐԹԱՆԷՍ - Առ սոսա գնացեալ Գրիգորէս երեց որդին Վրթանայ՝ քարոզեաց նոցա զբանն կենաց. – 274. Բայց ըստ կարգաց քրիստոնէութեան վարէր ըստ արժանի պատուիրանաց Տեառն, և ըստ խրատու մեծին Վրթանեայ յապահովանայր ամենայնիւ, թագաւորեալ ամս ԺԹ: - 96. զոր գործեաց ընդ սուրբսն Վրթանէս և Յուսիկ և ընդ քահանայն մեծ Դանիէլ – 98.

ՎՐԻԺԱՊԱՐՏ - ,,իշխանք ձեր ապստամբք, ասէ, գողակիցք են գողոց, սիրեն զկաշառս, վրիժապարտք են: - 182.

ՎՐԻԺԱՊԱՐՏՈՒԹԻՒՆ - Եւ ըստ արժանի վրիժապարտութեանն լցեալ սուր տեառն բարկութեամբ խաղաց /374/ ի վերայ Աւշնի և բանակի նորա առ հասարակ – 376.

ՎՐԻՊԱՆՔ - մասնաւոր ինչ մարգարէական ոգւով եղելւոմ ի մարդն օժնդակ խորհրդածութեան արծարծել անդրէն ի ձեռն ապաշաւանացն զվրիպանացն կորուստ. ըստ այսմիկ և այլոց կենդանեացն զգայականօքն և թէ ունայնացելովք առ ի դոյզն ինչ զգուշաւորականս: - 22.

ՎՐԻՊԵԱԼ - և յիշատակարան նորա մոլորութեանն որով վրիպեացն և վրիպեալ կործանեաց զազգս բազումս՝ կայ և մնայ ազգաց յազգս մինչև յաւիտեան: - 248. և կէսքն վրիպեալք ի բնական հայրենի լեզուէն, յաղագս հեռաբնակ լինելոյ և անհամբոյրք միմեանց հանդիպեալք, և խօսս միմեանց եղեալ կարկատուն մուրացածի բանիւք: - 190. Մի՛ խոտորիցիս ի մոլար օրէնս վրիպելոցն ի ճշմարտութենէն, ազգին Իսմայէլի, որպէս որք վրիպեցանն գերեալքն Հայոց,,: - 318.

ՎՐԻՊԵԼ/ԻԼ/ - և ոչ եմ բաւական պատմել զանցս անցիցն կորստականութեանն նոցա մոլորութեան, վրիպել յուղիղ և յամբիծ առաքելաքարոզ դաւանութեան հաւատոց կաթողիկէ եկեղեցւոյ ի Հայր և յՈրդի և ի Հոգին սուրբ. – 240. վրիպել յանբիծ և յուղիղ յառաքելաքարոզ հաւատոցն ի Հայր և յՈրդի՝ և ի Հոգին Սուրբ: - 196. և մի եղիցի յիշատակ սորա ընդ սոցա, որք թէպէտ և վրիպեցին և կործանեցան՝ սակայն և ապաշաւեցին և կանգնեցան յետ դարձին իւրեանց ի մեծ կարաւանէ գերութեանն ի միջոյ ժանեաց բռնաւորին. – 248. որք ոչ վրիպէին ի մազոյ, որպէս և յայնժամ յԻսրայէլի էին արք զօրաւորք, գունդք տանն Եփրեմի և Բենիամինի:- 200. Ել գնաց զկնի փառաց իշխանասիրութեանն ցանկութեան յորմէ վրիպեացն: - 236. Իսկ իշխանն Բագարատ … ել գնաց անխիղճ համարձակութեամբ, տիրասէր խորհրդովք, կատարել զսպաս զինուորութեան, ըստ աստուածեղէն պատուիրանին և ըստ թագաւորական հրամանին, զհետ եկելոյ կոչնականացն, ոչինչ իմացեալ զպատրանս խաբէութեան նորա, որով վրիպեացն: - 186. Մի՛ խոտորիցիս ի մոլար օրէնս վրիպելոցն ի ճշմարտութենէն, ազգին Իսմայէլի, որպէս որք վրիպեցանն գերեալքն Հայոց,,: - 318. Քանզի առաջնոցն ուրուականք և ստուերականք ոմանք՝ ըստ իւրաքանչիւր կարծեաց թուելոց վրիպեցան յաստուածածանօթն գիտութենէ հոգեշահ նահապետացն: - 40. և յիշատակարան նորա մոլորութեանն որով վրիպեացն և վրիպեալ կործանեաց զազգս բազումս՝ կայ և մնայ ազգաց յազգս մինչև յաւիտեան: - 248.

ՎՐԻՊԵՑՈՒՑԱՆԵԼ - Եւ թէպէտ յայնմանէ վրիպեցոյց ճշմարիտն Աստուծոյ պատուհաս՝ այլ չարն սովորական բնաւորեալ պահեցաւ անվրէպ: - 38. միանգամայն սաստկացուցանէր ի վերայ նորա զահարկութիւնն, զի գոնեայ այնու կարասցէ արդեօք վրիպեցուցանել ի ճշմարիտ հաւատոցն որ ի Հայր և յՈրդի և ի Հոգին սուրբ. – 294. որով որսացանն իսկ և վրիպեցուցին: - 234.

ՎՐԻՊՈՒՄՆ - Այլ ի հրամանէ Աստուծոյ յանդիման դրախտին բնակելով պահոք ապաշխարութեան սգացեալ եղեն, ողբալով զվրիպումն առաջին կենացն, ամենայնիւ հրաժարեալ ի մարմնականաց, հոգիազարդ մարգարէութեամբ ժուժկալեալք ի մսոյ և ի գինւոյ: - 30.

ՎՐՆՋՈՒՆՔ - և բնակեցուցանէ զնոսա ի գաւառն Աղբագ, յետ բնակեցուցանելոյն զնոսա ի Ջողախել, ի Վրնջունիս և ի Հախրամի, տեսեալ մինչև ի ժամանակս ինչ – 64.

S

Տ /թիվ՝չորս հազար/ - Ի սոյն աւուրս որք մնացեալ էին ի տանէն Արծրունեաց իբրև լուան զպարտումն զօրացն արքունի ի Ծանարացն՝ ի մի վայր եկեալ գունդ կազմեալ հետևազօրքն մարտակցօք հանդերձ խառնաղանջ ամբոխիւ՝ լինին թուեալ արք Տ – 304.

ՏԱԳՆԱՊ - բայց ինքեանք այլոց հասուցանէին տագնապս որպէս ընթեռնուքն – 92. և Արշէզայ շուրջ փակեալ վահանաւորօք զԼիդէացւոց թագաւորաւն, տագնապ մեծ լինէր. – 64. Եւ իշխանքն Հայոց կային ի տագնապի և խնդրէին զելս իրացն գտանել ի Քրիստոսէ, յորմէ լքեալն էին: - 320. և նախ քան ընդ պատժական տանջանաւոր խոշտանգանօք արկանելն զմեզ՝ բանիւք քո իբրև քարամբք հարեալ զմեզ՝ շտապ տագնապի ի վերայ արկանես թափել զոգիս մեր: - 242.

ՏԱԳՆԱՊԵԼ - Ազդ առնէ քաղաքապետին Տփղեաց. և խնդրեալ զնա առ ինքն՝ /316/ ստիպէր տագնապէր ահս արկանելով, թողուլ զօրէնս քրիստոնէութեան և յանդորր ելանել: - 318. Այր ոմն Ջափր խրոխտ և ամբարհաւաճ. և սկսաւ եղջիւր ածել անօրէնութեամբ և գոռալով ոգորէր ընդ չորս կողմանս երկրին և նեղեալ տագնապէր զխաղաղասէրս կենօք – 170. Եւ ինքն շտապ տագնապէր փութացուցանէր ռազմ բոլորել, կարգել կազմել զճակատն, պատրաստել ի պատերազմ – 228. զի ի գնալ Արտաշէսի յայսմ տեղւոջէ՝ ոչ ևս յաւել ձեռն Երուանդայ տագնապել զնա – 88.

ՏԱԳՆԱՊԻԼ - Եւ յորժամ դարձեալ պակասիցէ զօրութիւն ջերմ օդոյ հարաւային հողմոյն/260/… յայնժամ վիշապն նեղի, շտապի, տագնապի բռնութեամբ ուժոյ զօրութեանն – 262.

ՏԱԳՆԱՊՕՂ - և հիացմամբ առ նորայն հայելով, թէ ո՛վ ոք էր, և ո՛րպիսի, և ո՛րպէս կորեաւ՝ ասեն, ,,զիա՛րդ դադարեաց պահանջողն, հանգեաւ տագնապօղն. եթէ ո՛րպէս իջին ի դժոխս փառք նորա,,: - 376.

ՏԱԳՐԵԱՆ - Իսկ Գուրգինի մարզպանի Հայոց առեալ էր ի բաժնի յելս կոյս և /388/ որ ելանէ ի հարաւակողմն, զԱնձահից ձոր, զԿրճունիս, զԿուղան ովիտ, և զբուն զՄարդաստան գաւառ, զԱրճիշակովիտ, զոտն Առնոյ, զԱղբագ Մեծ և զՓոքր, Ակե, Տամբէր, Տագրեան. Ըռնայ, Զարեհաւան: - 390.

ՏԱԺԱՆԵԼԻ - որով զաստուածերանն լքեալ զերկիր՝ զախտականս զայս և տաժանելիս փոխանորդեաց վիճակ, անբժշկական և ողորմելի յեղափոխմամբ. – 22.

ՏԱԺԱՆՈՒՄՆ - և ելեալ յերեսացն Տեառն՝ սնոտի տաժանմամբ շինէր քաղաք, չհամարեալն յազգս զղջալից և արդարաքարոզ նահապետացն: -24. և ի մեր կար տաժանմամբ ի խոյզ և ի խնդիր ելեալ զհաւաստին գտանել – 12.

ՏԱԼ - Եւ այնպէս զօրացոյց Տէր զողորմութիւն իւր ի վերայ Հայրակղի յաւուր յայնմիկ՝ տալ ի ձեռս նորա ամենեսեան. – 150. Իսկ Խոսրովու կարծեալ արծարծեալ զզօրս իւր և որք ի դրանէն արքունի որ կոչին համհարզք և փուշտիպանք, և ամենայն արք ընտիրք /148/ տան թագաւորին ոյժ առեալ դարձեալ պատերազմել ընդ Հայրակղի: - 150. ,,և այս ևս քաջահաճոյ թուիցի քեզ, վեհդ և ամենեցուն գիտելիդ. և զի եղիցի ի մէջ քո և Դերենկիդ անկասկած միաւորութիւն՝ զդուստր քո տացես կնութեան Դերենկիդ, տիկնութեան Վասպուրականի,,: - 322. ,,և ո՛վ տայր ինձ վկայել ի վերայ ճշմարտութեանն և մեռանել վասն անուանն Քրիստոսի, և զարիւն իմ փոխանակ արեանն Քրիստոսի հեղուլ և զմարմին իմ փոխանակ մարմնոյ նորա ի մահ մատնել և զչարչարանս իմ ընդ նորա չարչարանսն խառնել, զի և ընդ նմա փառաւորեցայց. – 290. ,,Զբանս քո լուեալ՝ ասեմ, եթէ յԱստուծոյ է թագաւորութիւն և ում կամի տացէ. – 138. ,,Թագաւոր մեծ, իշխան ծովու և ցամաքի, տո՛ւր ինձ զօր յօգնականութիւն և հաստատե՛ զիս ի տեղի թագաւորութեան հարց իմոց – 136. ,,ի սկզբան թագաւորութեան նախնեաց մերոց, յորժամ ետ Աստուած

զաթոռ բազում թագաւորաց ի ձեռս նոցա, և մինչ առ մեզ հասեալ՝ ոչ ոք զօրեաց կալ ընդդէմ մեր, ոչ ի հեռաւոր աշխարհաց և ոչ ի մերձաւորաց: - 198. „Կաւատ թագաւորն ձեր վախճանեցաւ, և որդի նորա մանուկ տղայ է. բայց արդ ի քեզ հասեալ թագաւորութիւնդ, և ես քեզ տայց զնա – 152. „տո՛ւր ինձ, ասէ, ի գերելոց այտի՝ որչափ և կամք քո հրամայեսցեն„: - 218. այլ և ինքն Մահմէտ, մոլեկան հոգւով շարժեցեալ՝ տայ գրել զանուղղայս, զոր մեք ի բազմաց զսակաւս յիշեսցուք: - 164. այլ հրամայեն տայր զօրացն՝ նաւս կազմել և անցանել ի Կոստանդնուպօլիս: - 146. այլ նա ոչ տայր տեղի բանից նորա, քանզի քաջագոյնս գիտէր զբարս նորա խաբեբայս: - 278. Այլ քանզի յոյժ առաւելեալ էր իմաստութեամբ Գագիկ՝ տեղի տայր բովանդակ գաւառապետաց զօրագլխաց աշխարհիս, գնայր ընդ նոսա իմաստութեամբ խորագէտ հնարաւորութեամբ, ըստ անձնիւր գահու մեծարեալ պատուադրութեամբ հաճոյանալ ախորժէր նոցա: - 354. Այնուհետև հրամայեն ետ սրով բառնալ զգլուխս նոցա. – 222. Անդէն փութով և անյապաղ երագութեամբ հրամայեն ետ, զի որ ոք և հաճոյ թուիցի Սմբատայ՝ մի ոք իշխեսցէ արգել լինել: - 218. բայց այլ ամենայն իշխանք արևելեայք խոյս տուեալ յերեսաց նորա՝ ետուն տեղի, ելին կալան զամրական տեղիս, ի բերդս և ի քաղաքս և ի լերինս, ընդ ինքեանս գումարեալ զզօրս և զբնակիչս աշխարհաց իւրեանց ամենայն պատրաստութեամբ: - 270. Բայց հրամայեն ետ Դերանիկն Գրիգոր հարազատի իւրոյ ի նոյն տանէ Արծրունոյ, և կալաւ զնա և եդ ի յամուրսն Սևան. և հրամայեաց Հասանկան քեռորդւոյն իւրոյ՝ պահել զնա յընդարձակի: - 342. բայց մինչ էաք յաշխարհին մեր՝ առաջնորդքն մեր ոչ ետուն տեղի ընդունել զասացեալսն ի սահմանին խոստովանութեան: - 132. Բայց նոքա քանզի ապաստան լեալ յանկասկածելի յամուրս և ի բազմութիւն զօրացն և ի քաջութիւն արանց պատերազմողաց՝ և ո՛չ առ փոքր մի խոնարհեցան ի բանս նորա կամ ետուն տեղի պատասխանւոյ. – 274. Բայց ոչ ետ տեղի Գուրգէն այսմ՝ յերկուց պատճառաց, մի՝ զի մի՛ ապստամբ երևեցայց Տաճկաց բռնաւորին – 316. Բայց քաղցրաբարոյ իշխանն Աշոտ, հեզն և ամենայն բարեօք յղփացեալն, տեղի ետ ասացելոյն: - 362. և բարկացեալ յոյժ հրամայեն ետ փութով զրաւ առնել կենաց նորա: - 206. Եւ Գուրգէն և Աշոտ առանձին միմեանց պատահեալ ետուն ողջոյն միմեանց և ուխտեցին ուխտ խաղաղութեան մինչև ցայսօր ժամանակի: - 332. Եւ դարձեալ պատասխանի ասէ, մի՛ տալ տեղի՝ լսել հրամանի թագաւորին. թէ վտանգ ինչ հասանէ՝ կրել հանգոյն զինչ կրեցինն: - 132. և զգոյն երեսաց իւրոց բոցագոյն դարձուցեալ, խրոխտացեալ և մրմռեալ իբրև զգազան արիւնարբու՝ հրամայեն ետ տանել արտաքս յերեսաց ատենին – 246. Եւ զի ասէ գիր՝ ոգիք իբրև ութ՝ երկբայականս իմն և զայն. առ որս ասեմք, եթէ նոցա տուաւ հրամայեն այն. այլ թէ ի ձեռն նոցա և այլք եղեն փրկեալք: - 32. Եւ զկնի այսորիկ, որ է երկրորդ հարուածք այլազգեացն՝ դարձեալ հրամայեն ետ ելանել ի պատերազմ, և հետամուտ հասեալ առ նոսա. – 282. - և թոյլ ետուն զով և հաճոյ թուիցի արքայի. – 118. և հրամայեն ետ Գուրգէն իւրում գնդին պատրաստել ի պատերազմ, կազմել ռազմ և տալ ճակատ ընդդէմ այլազգեացն – 230. և հրամայեն ետ զինել վառել ի զէն և ի զարդ և ի սուր, և զընտիրս երիվարացն յիւրեանց զէնսն պատրաստել: - 228. և հրամայեն ետ հասանել ի վերայ քաղաքին Տփղիք կոչեցեալ. որում յառաջագոյն Փայտակարան անուանէին. – 270. Եւ յաւուր միոջ հրամայեն ետ թագաւորն ածել զառաջեաւ. – 294. Եւ յետ փոքր ինչ աւուրց հրամայեն ետ Բուխայ ելանել ի պատերազմ. – 280. և նա տրտմեալ գնաց ի տուն իւր, քանզի հանապազ ստիպէր ի դիւէ անտի, թերևս թոյլ տալովն Աստուծոյ, զոր համարէր ի հրեշտակէ զանկանելն ի մտաց: - 160. և նորա արկեալ զնա ի փոքրագոյն տեղի մի նեղ, և ինքն փութացաւ գոյժ ետ վասն նորա՝ մահու պատահել, լի անմտութեամբ մոլի աբեղայն, որում ոչ հրամայեցաւ. – 320. և շտապով փութանակի յասպազինէ երիվարէն ի վայր արկեալ զինքն առաջի Աղէքսանդրի, առ ոչինչ համարեալ յահռնաբար/գրքում՝յահուռնաբար/ գործսն զոր գործեաց՝ փութացաւ ետ ողջոյն արքայի և ասէ. – 68. Եւ ոմն ընթացեալ ետ գոյժ վաղվաղակի /150/ Խոսրովու, թէ „ապստամբեցաւ ամենայն Արեաց երկիր ի քէն, և զորդի քո Կաւատ նստուցին թագաւոր, և ահաւադիկ դիմեալ գա ի վերայ քո„: - 152. Եւ հրամայեն ետ

այնուհետև, զի զբազմութիւն գերելոցն վաճառակուր արասցեն յազգս ազգս ում և հաճոյ թուիցի. – 240. և ոչ առ փոքր մի ինչ ներեաց կամ անսաց /264/ տալ տեղի պատասխանոյ, այլ հրամայեաց դահճացն տալ ի վերայ նորա զվճիռ մահու, փութով զրաւ առնել նոցա ի սատակումն սրոյ: - 266. և շտապով փութանակի յասպազինէ երիվարէն ի վայր արկեալ զինքն առաջի Աղէքսանդրի, առ ոչինչ համարեալ յահռնաբար/գրքում՝յահուռնաբար/ գործսն զոր գործեաց՝ փութացաւ ետ դղջոյն արքայի և ասէ. – 68. Եւ ոմն ընթացեալ ետ գոյժ վաղվաղակի /150/ Խոսրովու, թէ ,,ապստամբեցաւ ամենայն Արեաց երկիր ի քէն, և զորդի քո Կաւատ նստուցին թագաւոր, և ահաւադիկ դիմեալ գա ի վերայ քո,,: - 152. և ոչ առ փոքր մի ինչ ներեաց կամ անսաց /264/ տալ տեղի պատասխանոյ, այլ հրամայեաց դահճացն տալ ի վերայ նորա զվճիռ մահու, փութով զրաւ առնել նոցա ի սատակումն սրոյ: - 266. զի և այլազգիքն տեղի ետուն և փախեան յերեսաց Ապումկդէմայ. – 304. Իբրև լուաւ զայսքան և առաւել քան զսոյնս յանդուգն և առանց երկիւղի զընդդէմ պատասխանատրութիւնն մեծաւ համարձակութեամբ՝ապա հրամայն ետ փութով ի կենաց բառնալ զգլուխ նորա սուսերաւ: - 296. Իսկ Ասուդ զհետ Դարէհի ելեալ ի պատերազմ ընդդէմ զօրագլխացն Աղէքսանդրի՝ Հերակղեայ նահատակութեամբն դիւցազնաբար ի դիմի հարեալ՝ ի բաց նահանջէ զուժեղագոյնս զօրագլխացն Աղէքսանդրի հարուստ ժամ մի, մինչ հիացումն զօրօքն արկեալ՝ տային տեղի փախստէի. – 68. Իսկ Գրիգորի ոչ բերելով զընդդիմակացսն նորա կատարել՝ խօսի ընդ նմա սիրով խաղաղութեան, և բաժանել զաշխահս յերկուս՝ տեղի ետուն միմեանց ի խաղաղութիւն: - 310. Իսկ թագաւորն Հայրակղէս հրամայն ետ պաշարել զնոսա. – 156. իսկ թագաւորն հրամայն ետ՝ երթալ գնալ ի սահմանաց իւրոց. – 156. Իսկ իբրև լուաւ, թէ ահա առեալ Բուխայ զզօրս իւր գալ հասանել ի վերայ նորա՝ հրամայն ետ բոլոր աշխարհին իւրոյ ելանել ունել զլեռնակողմն – 276. Հրամայն ետ արքայ Կաւատ արկանել զնա ի տուն մի արքունական սենեկացն. – 152. Հրամայն տայր փութով ամենեցուն պատրաստական գտանել ի դաշտն քաղաքին. – 270. Յայնժամ հրամայն ետ զօրավարն Բուխայ զօրաց իւրոց՝ ելանել ընդ առաջ նոցա ի պատերազմ. – 274. Յայնժամ հրամայն ետուն ամենայն զօրացն ելանել ի պատերազմ. – 284. Տայր հրամայն և խոզասպանութեան և ջնջէր յերկրէ զբազմութիւն արօտական խոզիցն: - 168. տայր հրամայն փշրել և խորտակել զկենդանագրեալ պատկերս ճշմարիտ մարդեղութեան Փրկչին և նորին աշակերտաց: - 168. որ և ամբարտաւանեալ մոլեգնականս տալ հրամայն զանխորհուրդ միաբանութեան զրաջան վաստակոց, կանգնել բուրգս յերկրէ, որոյ գլուխն հասցէ յերկինս. – 40. Որոյ ունկնդիր եղեալ Տիրան՝ տայ հրամայն յանգ հանել զխորհուրդ անօրէն աստուածատեաց առն: - 98. Որով ետ հրամայն արդարոյն կազմել զտապանն ի գուշակումն անօրինաց կորստեանն: - 28. Որոց տուաւ պատուէր՝ հեռանալ յայնցանէ. - 28. որում պատուէր տուաւ չխառնակել յանիծեալ զաւակն Կայէնի. -26. որք ծանուցեալ զբռնանալն նորա ի վերայ պարսկական պետացն և զինչ կրեցին, զմտաւ ածեալ և զխառն ընդ աշխարհիս զդրակցութիւնն, և թէ գուցէ զպարսկայինն հասանիցէ մեզ կրել և աշխարհիս մեր՝ ձեռն ետուն հաւանութեան ի նորայն կալ մնալ հպատակութեան: - 360. տայր հրամայն փշրել և խորտակել զկենդանագրեալ պատկերս ճշմարիտ մարդեղութեան Փրկչին և նորին աշակերտաց: - 168. և ետ հրամայն ահիւ մեծաւ՝ ամենայն ուրեք կանգնել զպատկեր իւր և երկիրպագանել իբրև աստուծոյ և զոհս մատուցանել. – 40. Եւ զի ասէ գիր՝ ոգիք իբրև ութ՝ երկբայականս իմն և զայն. առ որս ասեմք, եթէ նոցա տուաւ հրամայնն այն. այլ թէ ի ձեռն նոցա և այլք եղեն փրկեալք: - 32. ապա ետ հրամայն և փորեցին զաչս երանելւոյն, անդամ անդամ յօշեցին զնա, որ մատոյց զինքն պատարագ կենդանի որդւոյն Աստուծոյ. – 290. Պապտասխայնի ետ Մարկիանոս և ասէ. ,,վասն զի առաջնորդքն Հայոց զպարսկական շփոթմանցն զվտանգ կրէին,,: - 132. Պապտասխայնի ետուն և ասեն – 242. անհասական իմն շնորհիւ փառօք և պատուով պսակեալ զմարդն իշխանական ճոխութեամբ՝ վայելեցուցանէ դրախտին, տալով նմա բազմամեայ կենաց սահման իբրև զմի օր - 20. Ապա այնուհետև ոչ կարաց կալ համարձակութեամբ ի բացեայ առնել զբանակն իւր, այլ

ետ զկէս զօրուն յոմն գլխաւոր և նստոյց զնա ի կողմանէ հիւսիսի կողմն. – 280. ասէ՝ կինս զոր ետուր /20/ ընդ իս, սա ետ ինձ ի ծառոյ անտի և կերայ. – 22. ասէ՝ կինս զոր ետուր /20/ ընդ իս, սա ետ ինձ ի ծառոյ անտի և կերայ. – 22. աստանօր պարտ է սակաւիկ մի յապաղումն տալ պատմութեանս. – 18. արկանել զնա ի կապանս և ի տանջանս մահաբերս, զամուրսն յինքն գրաւել, զաշխարհին տալ ի ձեռս իւրոյ գործավարացն, ըստ պարսկայնոցն հատուցմանց հատուցանել նոցա: - 370. բայց թէպէտ և ետ օգնականութիւն Հայոց կայսրն Վաղէտիանոս Փռիւգացի զօրօքն՝ սակայն ոչ խաղաղանայր երկիրս – 94. Բայց տուաւ յաղթութիւնն այն մեծ ի ձեռն զօրավարին Ապումուսէի, զի լցցի զոր ասաց Տէր ի բերանոյ Ամովսայ Մարգարէի, ,,խորտակեցից զնիզակս Դամասկոսի,, , որում այժմ Դմիշկն կոչեն, ուր ելին զհետ Բուխայի: - 286. գնաց և Վահան զհետ նախարարացն առ Վարդան յառաջագոյն, տալ նմա զվերակացութիւն Հայոց. – 128. Գրէ բազում անգամ Սմբատ առ Ահմատ՝ թողուլ անդրէն զաշխարհին, տալ ի ձեռս Աշոտի որդւոյ իշխանին Դաւթայ. - 366. Եկն այնուհետև Շապուհ որդի թագաւորին Աշոտի և ետ զիշխանութիւնն ի ձեռս Աշոտի որդւոյ Դերանկին, փոխանակ հօր իւրոյ: - 354. Եղեն ընդ նմա և ուխտեցին ուխտ, և ետուն նմա կին յազգէն իւրեանց և պատրաստեցան լինել ընդ նմա, որպէս և կամք իւր հրամայեսցեն. զոր թէ ասիցէ ոք՝ ի հրամանէ Աստուծոյ լինել սկիզբն առաջարկութեանն այնորիկ: - 160. Ետ և կայսեր զամենայն զոր և կամեցաւ առնուլ. – 152. ետ նմա զԱրևաստան զամենայն մինչև ցՄծուին և զերկիրն Հայոց մինչև ցգետն Հուրասդան, և զգաւառն Կոտայից մինչև յաւանն Գառնի յեզր ծովուն Բզնունեաց և մինչև յԱռեստն աւան և զԿոգովիտ գաւառ մինչև զՇացիւն և ցՄակու: - 140. ետուն գոյժ զմահուանէ թագաւորին և կացուցին փոխանակ Վաղարշու թագաւոր զորդի իւր զԽոսրով ձեռնտուութեամբ Արտաւանու Պարսից արքայի: - 92. և ետուն ձայն այր առն ախոյեան ելանել. – 284. և հրաման պատուիրանի տայր յանդիման բազմութեանն, զի խրատու նորա լուիցեն, և հրամանի նորա անսայցեն: - 200. և տաց քեզ ագարակս, այգիս և ձիթենիս և սերմանս, զի վարեսցես և հնձեսցես, և մեք սիրով նայեսցուք ի քեզ: - 146. և քարոզքն բարձրացուցանէին զերգսն մեծ և սաստիկ գոչմամբ, եթէ տուաւ իշխանութիւն Վասպուրական աշխարհին Աշոտոյ և որդւոյ իւրոյ Գրիգորի. – 314. Եւ ամենեցուն բերան լցեալ խնդութեամբ ետուն փառս Աստուծոյ: - 136. Եւ արդ այսոքի՞կ են փոխարէնք, զի ետուք յօժարութիւն նենգագործ խորհրդով՝ լինել յարգելանի, և առնել դիւր որսալ ի խնդրողաց անձին իմոյ և իմոց զաւակաց – 216. և բազմութիւն քրիստոնէիցն … գոհացեալ միաբան ետուն փառս Աստուծոյ, որ զօրացոյց զսուրբսն և արար յամօթ զսատանայ հանդերձ գործակցովքն իւրեանց: - 268. Եւ բազում անգամ ի բազում տեղիս տային ճակատ զօրքն Հայոց և Պարսից ընդ միմեանս. – 102. և գրէ առ Սմբատ, թերևս տացէ ի ձեռն նորա զմանուկն Արտաշէս: - 84. և դաստիարակ առընթեր ունելով զբանն տէրունական … և թէ ,,զի՞նչ օգուտ իցէ մարդոյ, եթէ զաշխարհս ամենայն շահեսցի և զանձն իւր տուժեսցէ, կամ զի՞նչ տացէ մարդ փրկանս ընդ անձին իւրոյ. զի եկն որդի մարդոյ խնդրել և կեցուցանել զկորուսեալն,, - 264. Եւ դարձեալ զՍևան բերդ տայ ի ձեռս Հասանայ որդւոյ Վասակայ ամբարշտի: - 364. Եւ եթէ զքէն արեանն Մուրկայ խնդրէ՝ զքէն արեանն Մուրկայ խնդրեաց Աստուած ի Փոկասայ ի ձեռն հօր իմոյ Հայրակղի. և եթէ երկիր խնդրիցէ՝ եհան Աստուած ի մէնջ և ետ ի ձեռս ձեր: - 144. և եթէ վասն չարութեան գործոց նոցա տաղտկացաւ Աստուած և ետ ի ձեռս ձեր՝ բաւական լիցի ձեզ այդչափ որչափ կալէքդ. – 160. Եւ եթէ քաղաքս խնդրիցէ՝ ահաւադիկ է քաղաքք մեծամեծք և պարսպաւորք. այլ զանձս խնդրիցէ՝ ասացի թէ տաց որչափ և ձեռն հասանիցէ. և ոչ կամեցաւ լսել, այլ տակաւին ծարաւի է արիւնարբութեան: - 144. Եւ եղև ի գալ միւսոյ տարւոյն՝ Սմբատ իշխանն Սիւնեաց ի բաց եկաց ի հնազանդութենէ թագաւորին Հայոց, արգել առնելով հարկացն տալ թագաւորին, թևակոխելով Պարսից բռնաւորին հատուցանել զհարկս և զհասս. 382. Եւ եղև իբրև եհաս իշխանն յարքունիսն՝ ետ կապել զոտս նոցա կրկին շղթայիւք և դնել ի բանտի. – 220. Եւ եղև յետ աւուրցն այնոցիկ, յորժամ ուրախ արար թագաւորն զնախարարսն Հայոց ի տաճարի խրախից, և խոստացաւ տալ

իւրաքանչիւր ումեք զերկիր ի ժառանգութիւն – 314. և ես տամ նոցա զկեանսն յաւիտենից,,: - 224. և ետ բերողացն Հայրակղոս ինչս բազումս և մեծարեալ արձակեաց պատուով: - 154. Եւ ետ նմա սուրհանդակս և մեկնակազէնս և սակրաւորս և կափաւորս - 218. և ետու ի ձեռս քո զզօրս իմ հանդերձ զօրագլխովք մեծամեծօք իմովք, յամենայն ազգաց որ ընդ ձեռամբ իմով նուաճեալ են թագաւորազունք – 236. և ետուն ի սուրբ եկեղեցին Դ ագարակս. զվանքն Փշոց և զագարակն Ահավանք, յանդիման եկեղեցւոյն որ ի կղզին, և զքարն Մանակերտ, որ է հանդէպ հարաւոյ կուսէ, և զԲերկրի և այլ բազում տեղիս – 356. և զԳագիկ ձգեալ ի պատիւ զօրավարութեան Հայոց մեծաց, ըստ օրինի թագաւորացն Յունաց՝ տալ առաջի նորա նշանակս խաչադրօշս: - 370. Եւ զի էր պաշարել նորա յայնժամ զքաղաքն Մանազկերտ Ապահունեաց աշխարհին, որ ի ձեռս Ապլբառայն էր, և ածեալ հասուցեալ մերձ ի պաշարումն. և ի հասանել գուժկանացն եթող զնոսա, տալով նոցա հրովարտակս ի խաղաղութիւն: - 348. և զոր ինչ խնդրիցէ՝ առնիցէ ըստ կամաց նորա, կնքել և տալ նմա գեօղս և ագարակս, և տալ հարկս արքունիս և պատանդս խաղաղութեան: - 210. և զոր ինչ խնդրիցէ՝ առնիցէ ըստ կամաց նորա, կնքել և տալ նմա գեօղս և ագարակս, և տալ հարկս արքունիս և պատանդս խաղաղութեան: - 210. և էր պատճէն թղթոյն զոր կեղծաւորեալ ետուն զնա՝ այս ինչ. – 236. և թագապատիւ իշխանութեամբ մեծարեալ՝ տայ զօր բազում յօգնականութիւն – 58. և ի չափ հասեալ ի տիոց տղայականաց՝ ետուն զդստերս իւրեանց կնութեան մանկանցն: - 98. և ի վախճանելն իւրում … ետ զիշխանութիւնն կնոջն իւրում Շամիրամայ – 44. իբրև ետուն զթուղթն կարծեցեալ իբրև յերեսաց արքայի՝ ,,ընթերցիր զայդ, ասէ, մի՛ ինչ ընդ մեղադրութեամբ արկաներ զիս, և կարծել նենգութեամբ գնալ առ քեզ և դրժել ինչ քեզ և ստել երդմանց /236/ մերոց. – 238. Եւ իւրաքանչիւր զօրագլխացն եկելոց առ նա պարգևս և պսակս մատուցանէր, գեօղս և աւանս կնքէր և տայր. – 198. և խոստանայ տալ նմա զտէրութիւնն զչորրորդ մասն Սենեքերիմանցն զկողմամբքն Նինուէի և զՏմորիս ամրոցաւն որ ի նմա – 62. և խոստանայր տալ նմա քաղաքս, գաւառս, գեօղս և ագարակս: - 382. Եւ խօսէր ընդ նոսա սաստիկ և ահագին դատաստանօք և սպառնալեօք, թէ ընդէ՞ր և դուք ոչ մեռարուք ի պատերազմին, քան թէ ելեալ փախստական գնացէք գալ առ իս և տալ համարձակութիւն ծառայի իմում ի յայսքան վնաս. մի՞թէ արդեօք զԽոսրով մեռեալ կարծէիք,,: - 150. և կատարեալ զաղօթսն և գոհացեալ՝ ետուն զփառս Աստուծոյ և հատուցին զամէնն և նստան ուտել հաց. – 228. և կարիցես զիշխանս Հայոց կապանօք առ մեզ հասուցանել, մանաւանդ զիշխանն Վասպուրական զԱշոտ՝ քեզ և զաւակի քում տաց զերկիրն զայն ի ժառանգութիւն: - 184. և Հայրակղոս տայ նմա զթագաւորութիւնն և խոստանայ զօր որչափ և պիտոյ իցէ: - 152. և Հեփեստոս և Պռոմիթոս, որ է արեգական և լուսին՝ գողացան զհուրն յՈրմզդայ և մասն ինչ ետուն ի մարդիկ. – 48. և հրաման ետ Գուրգէն իւրում գնդին պատրաստել ի պատերազմ, կազմել ռազմ և տալ ճակատ ընդդէմ այլազգեացն – 230. և մեք տացուք քեզ զհասս հարկացն և հաճեսցուք զմիտս քո – 178. Եւ յետ սակաւու միոյ ասէ. ,,ձեզ տաց զերկիրն Քանանու զվիճակ ժառանգութեան ձերոյ,,. – 34. և նորա խնդիր արարեալ մեծաւ ստիպով, մինչև կարացին գտանել նովիմբ կազմածաւ, և ետ յարսն որք եկեալ էին. – 154. և ոչ առ փոքր մի ինչ ներեաց կամ անսաց /264/ տալ տեղի պատասխանոյ, այլ հրամայեաց դահճացն տալ ի վերայ նորա զվճիռ մահու, փութով զրաւ առնել նոցա ի սատակումն սրոյ: - 266. և սրոյ ճարակ զամենեսեան տային, խիզախելով իբրև զքաջ նահատակս. – 174. Եւ տային կարծիս պարսկականին՝ որպէս թէ հաւանեալ օրինաց նոցա: - 110. և տայր զօրավարին և իշխանացն ամենեցուն պարգևս մեծամեծս, և բաշխէր զօրացն ամենեցուն դահեկանս ի խոռկս, և ճաշս և ընթրիս ուրախութեան կազմէր ամենայն զօրացն մինչև Է օր: - 144. Եւ տայր նմա զօր կայսերական յօգնականութիւն, և զՅովհան պատրիկ ի Հայոց կողմանէ, և զՆերսէս ստրատեղատ յԱսիւրոց, և զՄուշեղ այր քաջամարտիկ և հզօր զօրութեամբ, և զամենայն զօրս Յունաց և Հայոց, Վրաց և Աղուանից – 138. և տանջեալ զնա ջղօք՝ տայ նմա և զգանձս աներևոյթս – 66. և տաց քեզ զկողմանս Ասորոց և զամենայն Արեւաստան մինչև զՄծուին

քաղաք, և ի յերկրէ Հայոց՝ զաշխարհս տանուտերական իշխանութեանն մինչև յԱյրարատ և ընդ Դուին քաղաք և յեզր ծովուն Բզնունեաց և ցԱռեստն աւան, և զմեծ մասն աշխարհին Վրաց մինչև ցՏփղիս քաղաք.– 136. և տացէ ի ձեռս նորա զիշխանութիւնն Վասպուրականի փոխանակ եղբօր իւրոյ – 226. Զայս հրաման պատուիրանի տային յօժնդակութիւնն պատիր խաբէութեանն իւրեանց – 234. զերծեալ ի բանտէն յոր տուանն՝ և գան հասանեն յերկիրս այս մեր, բերելով զաւետիս արձակման գերելոցն – 324. զի այնու փքացեալ առ հուրն յաւակնեալ զինքն տացէ. – 114. զի ես տաց ձեզ բերան և իմաստութիւն, որում ոչ կարիցեն կալ հակառակ կամ տալ պատասպանի ամենայն հակառակորդքն ձեր,,: - 204. զի և զմեծութիւն ընչից, որ ի գանձս իմ՝ ամի ամի յաւար տալով՝ զուարթամիտ սրտիւ ինձ համարէի զյափշտակութիւն տան իմոյ որ ի ձէնջ և առ ձեզ - 216. Զի որդիքն Աբդռհամանի, որ Կայսիկքն անուանին՝ ապստամբեալ էին ի պետութենէ թագաւորին տալ հարկս և զինուորել որպէս օրէն էր: - 380. զի տացէ վրէժս անցիցն անցելոց ի նմանէ և ապստամբութեամբ ի պետութենէն Տաճկաց: - 202. Զծառայս իմ պատրես, և զզօրս աւազակաց ժողովեալ՝ ոչ տաս ինձ հանգչել, այլ հանապազ պատրաստիս ինձ ի պատերազմ, և ասես վստահանալ յԱստուածն իմ: - 146. զոր անյապաղ փութով զզօրսն հարաւայինս և հիւսիսայինս տալ ի ձեռս Քսերքսեայ և Արշէզայ որդւոյ նորուն Քսերքսեայ զի փութով անդր հասցեն. – 64. զօր գումարել, այրուձի կազմել, մեծամեծաց աշխարհատերանց պարգևս տալ, ի թիկունս և յօգնութիւն զամենեսեան կոչել, զի ըստ յանձնառութեան խրատու նորա նոյնպէս և գործեսցէ: - 346. Ընդ որ ոչ հաճոյացեալ Գուրգէնայ երթալ ի Յոյնս. բայց հաւանեցուցեալ զԳրիգորն տալ զբերդն ցզօրավարն, և հաճեսցի զմիտս թագաւորին: - 302. Իբրև ետես իշխանն Հայոց զզօրսն Տաճկաց եկեալ բազում կազմութեամբ, հայեցեալ և յիւրեանց սակաւութիւնն՝ զիր պաղատանաց փութանակի տայր առ քաջ նահատակն Աշոտ իշխան - 172. Իբրև կարի թախանձեաց՝ ետ նմա իշխանութիւն հազար ամ: - 46. Իսկ զթագաւորաբնակ տեղին մեծին Տրդատայ տան ի ձեռս Վահանայ Արծրունւոյ՝ շինել նմա տուն թագաւորաց, արարս պատրաստութեամբ. – 126. Իսկ զօրավարն խոստացաւ երդմամբ տալ նմա զի՛նչ և խնդրիցէ, մինչև հաւասար իւրոյ տէրութեանն բարձակից և պատուակից կացուսցէ: - 218. խոստացաւ տալ նոցա գանձս, գեօղս և ագարակս, գրել կնքել և կացուցանել նոցա վկայս - 230. Կաղղիսթենէս, իմ բարեկամ, խրատ ետ ինձ մտանել հանդերձ բարեկամօք Խ, և մանկամբք Ճ, և զինուորօք ՌՄ միայնովք: - 50. մեք տացուք զԱշոտ ի ձեռս քո առանց զինու և մարտից և ճակատուց կազմութեան, և մի ինչ յայնոսիկ աշխատ լինիցիս. – 212. մի՞թէ ոչ կարէին Հոռոմք սպանանել զնա, և բառնալ զթագաւորութիւնն Պարսից ի ժամանակի, իբրև ետ Աստուած զսա ի ձեռս մեր. այլ արարին ի վերայ նորա ողորմութիւն: - 144. միայն ըստ ամացն ծննդաբանութեան հաւատացին Աշոտի զիշխանականն տալ պատուադրութիւն – 360. մինչ ելեալ արտաքս տիկինն ի հետիոտս լի հառաչանօք՝ բաւական համարել զգործ նահատակութեանն, զոր ետ Աստուած ի ձեռս Աշոտոյ. – 176. մինչ զդի նորա գտելոցն յետ աւուրց ինչ ետ Բուխայ ԺՌ արծաթ, զի այնչափ պատուական էր այրն նմա: - 272. Մինչդեռ կայր ևս կենդանի՝ ետ կանգնել փայտ մի մեծ և բարձր յոյժ, և դնել զնա ի ծայր փայտին, ունել ի բարձրաւանդակ տեղւոջ. – 290. Յայնժամ ետ զզօրսն ի ձեռն Մուշեղի Ապուպելճի եղբօր Գուրգինայ, և ինք ել գնաց զհետ եկելոց կոչնականացն. – 228. Յայնժամ ետուն զոտս նորա ի կապանս երկաթիս, և ընդ նմա զտէր Գրիգոր Արծրունի – 238. Յայնժամ իբրև զիտացին երկոքինն կողմանքն, եթէ ոչ գոյ հնար գտանել զելս իրացն և տալ խաղաղութիւն՝ ապա հաճեցան և հաւանեցան գրել առ թագաւորն. – 286. յանձն առեալ տալ նմա զիշխանութիւնն բնիկ տէրութեանն իւրեանց: - 236. Նա և զանուանս նոցա և զթիւ ժամանակացն այլափոխս ետուն մեզ, թերևս վասն շփոթեալ և հակառակասէր ազգին – 168. Նոյնժամայն գնացին Դերանիկն և Գագիկ մտին առաջի Յիսէի, խօսեցան բանս խաղաղութեան, ետուն պատանդս յանձնառութեամբ հարկացն արքունի - 334. Նոյնժամայն զօր գումարեալ, գունդ կազմեալ յընտիր ընտիր հեծելոց արանց զօրաւորաց, զօրօք և զօրագլխօք, և տայ ի ձեռս Յովսեփու ումեմն որդւոյ

Ապուսէթի – 184. Նստան երկոքին կողմանքն պահել զպահպանութիւն իւրեանց մեծաւ զգուշութեամբ, և ետուն ժամ անսալ միմեանց՝ ոչ ելանել ի պատերազմ, մինչև եկեսցեն հրեշտակքն յարքայէ, զոր առաքեցինն: - 286. Ոչ կամեցար կամօք տալ զանձն ի ծառայութիւն մեզ, այլ տէր և թագաւոր կոչես զքեզ. զգանձն արքունի որ իմ առ քեզ է՝ ծախես, և զայդ ոչ գիտես, եթէ վաղիւ համարս տալոց ես: - 146. որոյ դիպող ժամ գտեալ ի միասին կալով նոցա՝ կալեալ զնոսա տայ յամուրս աշխարհին, կապեալս կապանօք երկաթեօք. – 364. Որոց կապեալ զԳուրգէն երեքկին կապանօք և դարձեալ ի պարանոցն եդեալ շղթայս՝ յղեն ընդ Ատրպատական Պարսից և տան ի բանդ ընդ կապեալսն. – 318. որք յակամայ կամս լքին զմարտն և ցածուցին զպատերազմն և ետուն զամուրն ի Գագիկ: - 362. ունելով զտեղիս տեղիս, տալով ձեռս յովպէտ և ժամագիւտ դիպուածք ումեք հանդիպնայր – 68. Պտղոմեայ հասեալ ի տէրութիւն ժառանգաւորութեանն՝ փոխանակ իւր կացուցանէ զԱսուդ, տալով ի ձեռս նորա զբոլոր իշխանութիւն Եգիպտոսի և Հնդկաց - 70. վասն որոյ զերկայնութիւն կենաց տալով նահապետացն Աստուծոյ՝ յանդիման դրախտին բնակեցուցանէր, ուսուցանելով՝ ի ձեռն ապաշաւանաց ի նոյն վերադարձիլ կեանս. – 26. տալով Աշոտի … զգահին նախնական իշխանութեան այլովք յոլովագոյն միջոցօք աշխարհիս, մինչև յամուրն Նախճաւանու: - 360. Տեսեալ կնոջն զՄահմէտ այր հաւատարիմ և ուշմագոյն յամենայն իրս աշխարհականս՝ եղև նմա կին և ետ ի ձեռն նորա զամենայն հոգս տան և ընչից: - 158. տուք ի մեզ զերկիրդ մեր խաղաղութեամբ, ապա թէ ոչ առցուք պատերազմաւ, ոչ միայն զայդ, այլ և զայլ ևս բազումս,,: - 162. քանզի Քամայ տուաւ ի հօրէն Եգիպտոս և Լիբէաստան և մինչև յարևմուտս հարաւոյ: - 34.

ՏԱԼ ԲԵՐԵԼ - ,,հրամայեա արձակել արս հաւատարիմս, և ես յորժամ հասից ի դուռն արքունի՝ ի նմին ժամու խնդիր արարից Խաչին, և գտեալ զնա տայց բերել առ քեզ,,: - 154. ետ բերել պարգևս, և այնպէս ոչ առին յանձն. – 222. ետ բերել փայտս, և եղեալ ի վերայ փայտին զերանելին Սողոմոն՝ և մօտ առ փայտն կացուցին զսուրբն Կահայ, զի գոնեայ մինն ի միւսոյ տանջանացն երկուցեալ հնազանդիցի հրամանի թագաւորին: - 292. և ետ բերել քուքս և տանջել զնոսա քքովքն յերկար, մինչ կարծել ի նմին վախճանել – 292. և ետ բերել նմա ըստ օրինի գլխապետութեան սուսեր իշխանական ընդ մէջ արկեալ և գօտի արիական շրջապատեալ զմիջաւ, քուքք խիզախողք և երիվար բարձրավիզ, ոտնատորովի, խրոխտալիր, յարմարական առ ընթացս պատերազմականս: - 308. Իբրև եհաս թագաւորն յաշխարհին իւր՝ ետ բերել պարգևս և պատիւս Աշոտի ըստ իշխանական յօրինուածի – 370.

ՏԱԼ ՀՐԱՄԱՆ - և ետ հրաման ահիւ մեծաւ՝ ամենայն ուրեք կանգնել զպատկեր իւր և երկիրպագանել իբրև աստուծոյ և զոհս մատուցանել. – 40. Յայնժամ իբրև գիտաց զօրավարն Հայոց և ոչ միով իւիք կարաց հաճել զմիտս նոցա, այլ միաբան ետուն հրաման ելանել ի պատերազմ – 230. յաւուր միում … ետ հրաման իշխանն առնն կորովի եղբօր իւրոյ Աբասայ Հայոց սպարապետի՝ վառել պնդակազմ պատրաստութեամբ, զօրու և զինու և զարդու ամենայարդար հնարաւորութեամբ, որպէս օրէն է նահատակաց քաջ արանց – 344. սակայն և յայնմ ոչ ետուն հրաման զօրուն մի ելանել ի պատերազմ: - 230. Տայր հրաման և խոզասպանութեան և ջնջէր յերկրէ զբազմութիւն արօտական խոզիցն: - 168.տայր հրաման փշրել և խորտակել զկենդանագրեալ պատկերս ճշմարիտ մարդեղութեան Փրկչին և նորին աշակերտաց: - 168. որ և ամբարտաւանեալ մոլեգնականս տալ հրաման զանխորհուրդ միաբանութեան զրաջան վաստակոց, կանգնել բուրգն յերկրէ, ,որոյ գլուխն հասցէ յերկինս. – 40. Որոյ ունկնդիր եղեալ Տիրան՝ տայ հրաման յանգ հանել զխորհուրդ անօրէն աստուածատեաց առն: - 98. Որով ետ հրաման արդարոյն կազմել զտապանն ի գուշակումն անօրինաց կորստեանն: - 28. Եւ զի ասէ գիր՝ ոգիք իբրև ութ՝ երկբայականս իմն և զայն. առ որս ասեմք, եթէ նոցա տուաւ հրամանն այն. այլ թէ ի ձեռն նոցա և այլք եղեն փրկեալք: - 32.ապա ետ հրամայն և փորեցին զաչս երանելւոյն, անդամ անդամ յօշեցին զնա, որ մատոյց զինքն պատարագ կենդանի որդւոյն Աստուծոյ. – 290.

ՏԱԼ ՊԱՏԱՍԽԱՆԻ - ,,զո՞յ թողութիւն իմոց չարեացն /386/ գործելոց, թողո՞ւ Աստուած զիմ պարտեացն յաճախութիւն. ասացէք ինձ, տուք ինձ պատասխանի,,: - 388. որպէս սահմանեաց Աստուած ի վերայ ժողովրդեանն Իսրայէլի գերելոցն ի Բաբելոն, որպէս գրեալ է ի մարգարէութեանն Երեմիայի, ,,զ-ՀԷ-երորդն ասէ գիտասցես, և խելամուտ լիցիս յելից բանին տալ պատասխանի. մինչև յօծեալն /312/ առաջնորդ եօթներորդ է և եօթներորդք ԿԲ,,. – 314. Այլ նահատակեցան արիաբար և ետուն պատասխանի թագաւորին մեծաւ համարձակութեամբ, յուսացեալ ի մին միայն ի թագաւորն թագաւորաց և տէրն տերանց, ի Քրիստոս յորդին Աստուծոյ: - 292. Ետ պատասպանի երանելի Մուկաթլ լի հաւատովք և ճշմարիտ խոստովանութեամբ ի Հայր և յՈրդի և ի Հոգին սուրբ, ասէ. – 290. զի ոչ գտանիցին ամենևին տալ պատասխանի: - 54. Այլ նոքա քանզի հաստատուն մտօք ունէին զմիաբանութիւն դաւաճան խորհրդոյն որ առ բռնաւորն Տաճկաց՝ ետուն պատասխանի և ասեն – 216. եթէ չար ինչ թուիցիմ յաչս ձեր, և ապիրատս գործեալ եմ առ ձեզ և խարդախութեամբ բնակեալ եմ ընդ ձեզ՝ աւասիկ յանդիման երեսաց իմոց տուք պատասխանի – 214. Ետ պատասխանի նմա զօրավարն ի խաղաղութիւն, և ասէ – 226. Ետ պատասխանի սուրբ հայրապետն Յոհաննէս հանդերձ մեծ նախարարօքն Հայոց և ասեն. – 244. Ետուն պատասխանի և ասեն – 214. Եւ իբրև ընթերցաւ մեծ զօրավարն զծածուկս ազատանոյն՝ ետ պատասխանի, զոր և գրով իսկ աւանդեաց. – 214. զի ես տաց ձեզ բերան և իմաստութիւն, որում ոչ կարիցեն կալ հակառակ կամ տալ պատասպանի ամենայն հակառակորդքն ձեր,,: - 204. Իբրև գիտաց իշխանն, եթէ վճարեալ է չարութիւնն յաչս նոցա, և այլ ընդ այլոյ խօսին, և ի գաղտնիս քրթմնջեն, և անտեղի և անընդունակ հրամանաց նորա լինէին՝ ետ պատասխանի և ասէ – 214.

ՏԱԼ ՊԱՏԵՐԱԶՄ - Բայց Աշոտ գնացեալ տալ պատերազմ ընդ ծովեզրեցիսն որք Ութմանիկ կոչին, որք ամրանային ի յԱմիւկ անկասկածելի քարանձաւին. – 332. և ետուն պատերազմ անդ զաւուրս Լ, և ոչ ինչ կարացին ստնանել. – 362. Եւ եկին տալ պատերազմ ընդ ամրոցին Վան քաղաքի - 362. Եւ եղև ընդ ժամանակսն ընդ այնոսիկ ել Հազարաւուխտ Պարսից զօրավար ծանր զօրու ի վերայ Հայոց՝ տալ պատերազմ ընդ զօրս Հայոց, աւերել գերել գերփել զաշխարհս – 134. Եւ զօրաժողով եղեալ Մուսէի պատճառաւ հարկաց արքունի՝ եկն եմուտ յերկիրն Տարաւնոյ, տալ պատերազմ ընդ Բագարատայ: - 172. Զայս գործ լուեալ Լիդէացւոց թագաւորին Կրոսիսեայ բազմաշփոթ յուզմամբ ամբոխ արարեալ, զօրս բազումս գումարեալ, ելանել տալ պատերազմ ընդ Կիւրոսի – 64. Զի ազգ բարբարոս խուժադուժ ի դիմի ելեալ գան տալ պատերազմ, կորզել յինքեան զգերին Հրէից: - 66. ի մօտ առ նոսա հասեալ՝ կարգեցին /274/ կազմեցին զճակատն և ետուն պատերազմ ընդ զօրացն Ծանարաց. – 276. մինչ տայր պատերազմ ընդ Սպանիացիսն վասն ոսկեհան տեղեացն. – 80. Յետ անցանելոյ չորից ամաց … դարձեալ Գրիգոր եղբայր Աշոտի Վասպուրական իշխանի յԱփհազաց աշխարհէն՝ նոցուն օգնականութեամբ և Վրաց զօրու ընտիր գոլով՝ եկն եմուտ յաշխարհս Վասպուրական՝ տալ պատերազմ ընդ Գուրգինայ. – 310.

ՏԱԼ ՏԱՆԵԼ/ԻԼ/ - և զիշխանն Աշոտ տալ տանել կապանօք առ թագաւորն – 202. Իսկ յետ անցանելոյ աւուրց ինչ՝ ետ տանել զնա առ թագաւորն, և ընդ նմա գունդս զինուորաց վառելոց և ընտիր այրուձիոց: - 288. և նոքա տան տանել նմա զհարկս և հասս արքունի և դարձուցանեն զնա ընդ նոյն ուստի եկն: - 172. և տայր տանել Սահակ զպէտս մանկանն օր ըստ օրէ: - 84. այլ հատեալ զգլուխն ետ տանել յարքունիս և զկինն ա՛ռ իւր Բուխայ կնութեան: - 272. և գրեալ էր առ Բուխայ, զի մի՛ ինչ չարիս խորհիցի կամ գործիցէ առնն այնմիկ, այլ տացէ տանել զնա առ թագաւորն մեծաւ պատուով և զգուշութեամբ: - 288. և առեալ Պտղոմեայ զԱսուդ՝ տայ տանել յԵգիպտոս, ի պարգևեալ աշխարհն նմա յԱղէքսանդրէ – 70. Եւ եղև զկնի երից աւուրց անցանելոյ ետուն թուղթ մի տանել առ Գուրգէն, գրեալ Բուխայի լի դառնութեամբ, կնքեալ մատանեաւ արքայի, իբրև այն թէ ի

դիմաց արքային և յարքունուստ եկեալ. – 236. և ետ տանել զդիւանն մագաղաթեայ յունարէն գրով հանդերձ պատարագօք՝ Տիգրանայ թագաւորի Հայոց – 74. և ետ տանել ընդ առաջ նորա նժոյգս մեծազարդս և երևելիս, և երգեցիկս և գովասացս և բազում գործիս երաժշտականս առաջի և զկնի՝ մինչև եմուտ ի բանակ նոցա: - 288. Եւ ըստ կարգի օրինաց իւրեանց երդուեալ, և աղ ծրարեալ ընդ հրովարտակին ետ տանել. և նոցա առեալ և ընթերցեալ՝ ոչ արարին բանիցն պատասխանի: - 138. Եւ կայսր Մուրիկ հաւանեալ նմա՝ յղէր առ նա զՓիլիպիկոս փեսայ իւր. և տայր տանել նմա գիր ընդունելութեան, և առնոյր ի նմանէ երդումն: - 138. և մեկնեալ յինքեանց զՎահրամ անուն՝ և տան տանել հրովարտակ առ զօրավարն – 210. և մուտ եղեալ ի տեղին … ետուն տանել զթուղթն, լի թիւնիւք սատանայական իմացմանց, իբրև զկապարճս լի նետիւք դեղեալ ի գաղտնիս ի գրկաց թռուցանել ի նպատակն: - 234. Զայս զգացեալ Երուանդայ՝ ետ տանել զՍահակ կապանօք յԱրմաւիր. – 84. Զոր զթուղթսն խաբող պատրանօք ի բուռն առեալ Բարծումայ՝ ետ տանել առ արքայ Պերոզ – 130. Կապէ երկաթի կապանօք և տայ տանել յԱնուշ կոչեցեալ բերդն ի սահմանս Տիսպոնի. – 102. իսկ իբրև ընդդէմ կացին լեռնայնոցն գունդքն Տաճկաց և հարին զլեռնայինսն՝ ձերբակալ արարեալ զերանելին Յովնան տարան ետուն կապանօք ի բանդ արքունի: - 294. Եւ հասեալ կալան զնա և տարան ետուն ի բանտ երկաթից ի քաղաքն Հադամակերտ: - 320. Յայնժամ դիմեցին ի վերայ նորա և ի բաց առին զգլուխ նորա և տարան ետուն առ զօրավարն իւրեանց Աբրահիմ. – 304. տարան ետուն ի բանտ արքունի, ուր կայր Աշոտ իշխան և այլ նախարարք ի տանէն Արծրունեաց: - 238.

ՏԱԼՈՑ - այլ նա ըստ կամս իւր կատարեաց ի վերայ իւր զարենապարտն լինել, որ տալոց է հատուցումն վրիժուց յաւուր դատապարտութեան իւրոյ: - 320. Ոչ կամեցար կամօք տալ զանձն ի ծառայութիւն մեզ, այլ տէր և թագաւոր կոչես զքեզ. զզանձն արքունի որ իմ առ քեզ է՝ ծախես, և զայդ ոչ գիտես, եթէ վաղիւ համարս տալոց ես: - 146.

ՏԱԽՏԱԿԱԳՈՐԾ - և աստի և անտի երիվարի փորոյն տախտակագործ գրգեալ ըստ փորոյն չափու մածուցեալ ի ձև վահանի զգործ արուեստի զինուն ցուցանեն: - 208.

ՏԱԽՏԱԿԱՓԱԿ - նա և զիւրեաւ տախտակափակ լանջապահս, թիկնապահս, զանգապանս, սոնապանս, գլխապանս, որ գրեթէ բովանդակ պղնձեղէնս զնա իմանալ թուէր, և զետեղեալ բլրաձև զօրու անմատչելի կարծելով. – 64.

ՏԱԾԵԼ - Եւ թէպէտ տաճէր և խնամէր Գագիկ աշխարհս՝ այլ ոչ ուրախ լինէին ի նա ազատատերանցն գրոխք, և կացին ի տարակուսի: - 354. ընտանեգոյնս ևս ձայնի կոչելով՝ ո՞ւր ես Ադամ, աւաղականս նմա գորովալիր զանկումնն, թերևս ինքեամբ իսկ զօգտակարօքն տաճիցի: - 20. Իսկ Դերանիկն առաւելոյր և առատանայր օր ըստ օրէ առ շինութիւն և խաղաղութիւն աշխարհիս, շինել և տաճել և խնամել զաշխարհս: - 338.

ՏԱԿԱԻԻՆ - Այսպէս տակաւին ի բազումս քայքայեալ լինէր միաբանութիւն աշխարհիս -194. Եւ եթէ քաղաքս խնդրիցէ՝ ահաւադիկ է քաղաքք մեծամեծք և պարսպաւորք. այլ գանձս խնդրիցէ՝ ասացի թէ տաց որչափ և ձեռն հասանիցէ. և ոչ կամեցաւ լսել, այլ տակաւին ծարաւի է արիւնարբութեան: - 144.

ՏԱՂԱՆԴ - և զի թագաւորութիւնն Եբրայեցւոց յերկուս հակառակս բաժանեալ էր՝ հնազանդ իւր արարեալ Փուայ Ասորեստանւոյ առնու հարկս ի Մանասէէ արքայէ հազար տաղանդ արծաթոյ: - 60.

ՏԱՂԱՒԱՐ - Այլ Քրիստոս իւր ոչ տուն ոչ տաղաւար ասի, այլ մի տէր Յիսուս Քրիստոս, յԱստուծոյ և ի մարդկանէ կատարեալ. – 394. և եղեալ ի ներքոյ արգոբայ տաղաւարաց և յղեաց ընդ կողմն Պարսից – 220. զի Նեստորականացն /գրքում՝ Նստորականացն/ և Քաղկեդոնականին է այս իմացմունք այլովքն ևս երկաբնակօք, որք բանին՝ տուն և տաղաւար զառ ի կուսէն առեալ մարմին դանդաջեալ ասացին, և ոչ միութեամբ բնութեամբ բանին մարմին լինելով. – 394.

ՏԱՂՏԿԱԼ - Եւ նոյնժամայն եհաս հրաման յարքունուստ՝մի տաղտկալ և վհատել և մի ի բաց կալ պատերազմել ընդ նմա. մինչև եկեսցէ ակամայ կամօք ի հնազանդութիւն արքայի: - 284.

ՏԱՂՏԿԱՆԱԼ - և եթէ վասն չարութեան գործոց նոցա տաղտկացաւ Աստուած և ետ ի ձեռս ձեր՝ բաւական լիցի ձեզ այդչափ որչափ կալէքդ. – 160. Ընդ որ զչարեալ նախարարքն Հայոց՝ տաղտկացան ընդ գիջանալն, և խորհեցան զոչ թագաւորելն Արտաշրի ի վերայ Հայոց. – 116.

ՏԱՂՏԿԱՑԵԱԼ - որով տաղտկացեալ ի նմանէ բազմութիւն զօրացն՝ արարին լինել նմա պատերազմակուր ի Վարբակայ և ի Բէզոսէ Մարաց զօրագլխէ – 58.

ՏԱՃԱՏ - Բայց աղերսեալ թագաւորն զարս պատուականս, զՎասակ և զՏաճատ և զԳոտեր, որք էին ի մեծ նախարարութենէ տանն Արծրունեաց՝ զի զժողովն ընկալցին ընդ երից սուրբ ժողովոցն: - 132. Եւ կացեալ անդ մինչ ի ժամանակս առաջինն Ղևոնի կայսեր՝ մեռանի անդ Վասակ և Տաճատ և փոխին ի հանգիստ փառաւորապէս ի գերեզմանս մեծամեծացն Յունաց: - 132. Իսկ Վասակ Արծրունի, հայր Աղանայ սրբոյ, առեալ զՏաճատ և զԳոտեր զեղբայր իւր՝ գնաց առ կայսր. մեկուսի եղեալ ի շփոթմանց պարսկական վրդովմանցն և աւերման աշխարհիս. – 132. փութացոյց գիր պաղատանաց առ Տաճատ Ռշտունեաց տէր և առ Վախրիճ Անձաւացեաց տէր, զեկուցանել նոցա զեղեալսն: - 126.

ՏԱՃԱՏՈՒՀԻ - և դարձեալ անտի սպան և զմայր իւր զՏաճատուհի – 106. որ սպան զհայր իւր Վահան և զմայր իւր Տաճատուհի վասն պարսկականին հնազանդութեան մոգութեան օրինացն – 110.

ՏԱՃԱՐ - Եւ եղև յետ աւուրցն այնոցիկ, յորժամ ուրախ արար թագաւորն զնախարարսն Հայոց ի տաճարի խրախից, և խոստացաւ տալ իւրաքանչիւր ումեք զերկիր ի ժառանգութիւն – 314. որպէս ասաց Պաւղոս, եթէ ,,դուք տաճար էք Աստուծոյ կենդանւոյ,, , և դարձեալ ասէ թէ ,,տուն Աստուծոյ եմք մեք,,. և դարձեալ մարգարէին ասէ, բնակեցայց ի նոսա և գնացից ի նոսա,,: - 394. որպէս յայնժամ ի մահուն Ոզիայ արքայի, յաւուրս Եսայեայ մարգարէի՝ ի ձայնէ սրովբէից շարժեալ տաճարին տեառն, մինչ բարձրանալ դրանդեացն: - 358. Քակտեսցի և աւերեսցի պերճութիւն տաճարաց քոց, և ամենայն ուրեք անարգեսցի: - 148.

ՏԱՃԱՐԱԽԻՏ - բլուր մի պարսպեալ տաճարախիտ շինուածովք, որոյ հայեցածն առ դաշտակողմն ի վայր կոյս բերի, ի խաղս գետոյն Երասխայ – 392.

ՏԱՃԱՐԱԿԵՐՏ - շինէ և անդ ամրական տեղի, դժուարամատչելի ասպատակող հինից, դնելով ի նմա նմանապէս ապարանս փողոցայարդարս, տաճարակերտս սենեկագործս, բաւական ի պէտսն պատրաստեալ – 392.

ՏԱՃԻԿ - Բայց երիցս երանելի ոմն երիտասարդ հասակաւ, ինքն տաճիկ և ազգաւ պարսիկ՝ ելեալ զհետ սիրոյն Քրիստոսի հաւատոցն եկն յարեցաւ ի Պատրիկն Անձևացի – 222. և ընդ նմա Տաճիկք Հայաստանեայց, որ բնակեալ էին ի կողմանս կողմանս աշխարհիս՝ առաջնորդէին Բուհայի ի մուտ և ելս աշխարհիս: - 206. Եւ սկսաւ շրջել կարգաւ ընդ բոլոր աշխարհս, յորում բնակեալ էին Տաճիկք, որ մնային ի սմա ըստ հրամանին Բուխայի: - 306.

ՏԱՃԻԿՔ - Բայց ոչ ետ տեղի Գուրգէն այսմ՝ յերկուց պատճառաց, մի՝ զի մի՛ ապստամբ երևեցայց Տաճկաց բռնաւորին – 316. Եւ զօրք Տաճկաց ի զօրացն Բուխայի եկեալ էին ընդ զօրս Յունաց պատերազմել ընդ ամուրսն. – 302. ,,Բուխայ գլուխ զօրավարաց ընդհանուր Թագաւորութեան Տաճկաց, Ջափր իշխեցող ծովու և ցամաքի, հաւասար և օրէնսդրին մերոյ Մահումաթի, և հաւատարիմ միջնորդ Աստուծոյ և մարդկան, և թագաւոր ընդհանուր ազգաց հարաւային աթոռակալութեան … Յղեցի զքեզ ելանել ի վերայ երկրիդ Հայոց ամենայն կենդանեաց – 236. ,,վա՛յ քեզ, եղուկ դու, ազգ Տաճկաց, արանց և կանանց ամենայն ծովեզերեայ քաղաքաց. փոխանակ անաւրէնութեան լեզուիդ և պղծութեան կարգաց, որով բացեալ զբերանդ պղծութեան զանաւրէնս բարբառէիր: - 164. Այլ նոքա քանզի հաստատուն մտօք ունէին զմիաբանութիւն դաւաճան խորհրդոյն որ առ բռնաւորն Տաճկաց՝ ետուն պատասխանի և ասեն – 216. բայց ազդ լինէր իշխանին ի նոյն գնդէն Տաճկաց՝ մի տեսանել զերեսս նորա, ծանուցանելով նմա՝ զոր ինչ խորհեալ էր վասն նորա և վասն աշխարհին նորա: - 184. Բայց Գուրգէն կասկած ունելով յԱշոտէ, թէ գուցէ իբրև զապստամբէ ումեմնէ զեկուցանիցէ զնմանէ առաջնորդին Տաճկաց՝ ել գնաց կեալ

շրջաբերական յեղափոխմամբ, արիական քաջասրտութեամբ, սիրեցեալ ընդ բնաւ աշխարհաց: - 322. Բայց խնդրոյն Հայոց զկատարումն առեալ յառաջնորդէն Տաճկաց՝ յղէ ի Հայս զառաջասացեալ զԱհմաթ որդի Հալթի: - 340. Բայց Յամանիկն և Ահմատն և Ապլբառն և այլ ևս Տաճկաց միաւորութեամբ զնոյն չարիս երկնէին գային: - 340. բայց պարտեալ եղև գունդքն Տաճկաց ի քաջէն Գուրգինայ և բեկաւ զօրութիւն նոցա: - 308. Բայց քանզի անպատերազմելի էր ամրոցն, միայն բաւականաւն ռռճկաց մի վատնիցի՝ առեալ զՎարագ ի ձեռանէ Տաճկացն - 332. Դարձեալ պիտոյ է մեզ դառնալ առ ի վերագոյնսն, որ նախ քան զպատերազմն Աղձնեաց եղեալ են հանգամանք գործոց ի զօրացն Տաճկաց, և թէ ո՛րպէս եկաց ընդդէմ նոցա իշխանն Աշոտ և վանեաց զնոսա սրով սուսերի: - 176. Եւ արդ մեք, նահապետք ազատաց Վասպուրական իշխանիս՝ Մուշեղ ի ցեղէ Վահևունեաց, Վահրամ յազգէ Տրունեաց, Վահրամ միւս, որ ի թիկնապահ իշխանիս … գրեցաք առ քեզ Բուխայ գլուխ զօրավարաց Տաճկաց և բարձակից մեծ թագաւորին. – 212. և յերկիւղ կասկածանաց եղեալ, թէ իցէ ընդելուզեալ Տաճկաց՝ գտեալ զպահեստ գանձին ծախիցեն զզօրութիւն նորա: - 180. Եւ այն ինչ ընդ առաւօտն յեղակարծում հասին ի վերայ զօրք Տաճկաց – 306. Եւ ապա փոքր մի կազդուրեալ գնդին Տաճկաց՝ կացին յոտն: - 306. Եւ առնէր հարուածս մեծամեծս այլազգեացն. և սատակէր զնոսա սրով և աղեղամբ, և եբարձ զամենայն ազգս Տաճկաց, որ բնակեալ էին Վասպուրական տէրութեանն: - 306. և Գուրգէն ելեալ ընդդէմ նոցա բազում անգամ՝ոչ սակաւ օճիրս գործէր ընդ զօրս Տաճկաց: - 302. և գրեթէ /գրքում՝ գրէթէ/ ոչ ամենևին ուրեք երևեցաւ այնպիսի ահաւոր տեսիլ զօրու և սպառազէն կազմութեան՝ ամենայն թագաւորաց, որ կացեալ էին ընդ ծագս տիեզերաց. զորոյ սաստիկ և ահագին որոտումնն և ճայթումնն և փայլիւն զինուցն, և որ ինչ յայնժամ զարդարեալ և զինեալ պատրաստեցան զօրքն Տաճկաց: - 284. Եւ ելեալ յիւրաքանչիւր տեղեաց մի քան զմի յառաջանալ ի կոչումն Բուխայի, և ժողովեցան ի մի վայրի և եկին կացին առաջի զօրավարին Տաճկաց: - 296. Եւ զբնակիչս աշխարհին վարեաց ի գերութիւն, վաճառակուր առնել ի կողմանս Ասորոց և յամենայն սահմանս տէրութեանն Տաճկաց. – 188. Եւ զչարեալ ընդ խափանումն խորհրդոցն իւրոց՝ ամբաստան յոյժ լինէր զԱշոտոյ հանդերձ թղթովք Տաճկաց, որք էին ի կողմանս Հայոց, բազում այն ինչ զոր ստութեամբ քան թէ ճշմարտութեամբ զեկուցանեն զնմանէ զգործս, և թէ հակառակս ևս թագաւորութեան քոյ բանընդդէմ լինի հանապազ: - 172. Եւ զօրքն Տաճկաց պնդեցան և փակեցին շուրջանակի ի ներքս զգունդն Աղուանից և դիմեցին յանդուգն ի վերայ նոցա. – 284. և ի հասանելն նորա անդր թողեալ զհակառակաբար մարտն՝ խօսին ի խաղաղութիւն, առաջի եդեալ զհրամանն արքունի, զգլխաւորին Տաճկաց, և Աշոտի հաւատալ զբոլոր տէրութիւնս Վասպուրականի: - 316. և ինքն կացուցանէ ի գլխաւորութիւն Տաճկաց զԱպուբաքր, և սա կեցեալ ամս Բ մեռանի: - 164. Եւ համարին ամք ժամանակացս այսոցիկ, ի Կիւրոսէ մինչև ցթագաւորութիւնն Տաճկաց՝ ամք ՌՃԿ: - 166. Եւ ոչ ևս այնուհետև համարձակ ելանէին և մտանէին յաշխարհս Վասպուրական զօրքն Տաճկաց. զի անկաւ ահ սաստիկ ի վերայ նոցա: - 308. զի տացէ վրէժս անցիցն անցելոց ի նմանէ և ապստամբութեամբ ի պետութենէն Տաճկաց: - 202. Զնոյն և կողմնակալքն Պարսից գրգռէին զթագաւորն ամբաստան լեալ՝ ամբաստան լինել Աշոտի զպետութենէն Տաճկաց: - 172. զոր Ճ ամոյ յառաջ հանեալ էր բռնակալութիւնն Տաճկաց ի Վասպուրական պետութենէ: - 332. զորոյ լուեալ էր զբազմաց այլ պատերազմացն արիութիւն, և զհարուածս զօրացն Տաճկաց – 316. զորոյ ցուցականութիւն պատմեալ գլխաւորին Տաճկաց Ջափրի: - 326. Զսա ըմբռնեալ զօրաց Տաճկաց ածին առ զօրավարն. և բազում վնասս ի գործս արքունի կուտեցին ի վերայ նորա և ստութեամբ առաւել քան թէ ճշմարտութեամբ պարտաւորեցին զնա: - 288. Ընդ այն ժամանակս ապստամբեալ ի պետութենէն Տաճկաց քաղաքացիքն, որում Կզուինն ասեն: - 328. ԹԱԳԱՒՈՐԷ ՏԱՃԿԱՑ ԹՈՔԼ ՈՄՆ ՋԱՓՐ ԱՆՈՒՆ: - 170. Իբրև ետես իշխանն Հայոց զզօրսն Տաճկաց եկեալ բազում կազմութեամբ, հայեցեալ և յիւրեանց սակաւութիւնն՝ գիր պաղատանաց փութանակի տայր առ քաջ նահատակն Աշոտ իշխան - 172. Իբրև իմացան զօրքն Տաճկաց,

թէ եմուտ իշխանն յամրոցն՝ զհետ մտեալ բազմութեանն այնուհետև, և շուրջ փակեալ անդէն զամուրն զանել գառագիղն: - 208. Իսկ աջ թևն Տաճկաց շարժեցին զզօրութիւնն Հայոց – 308. Իսկ առաջնորդին Տաճկաց զօր գումարեալ, այրուձի կազմեալ յընտրելոց զօրաց Ասորեստանի և Արաբացւոց – 328. Իսկ զօրքն Տաճկաց գումարեալ ի վերայ նոցա. շուրջ փակեալ, ձերբակալ արարեալ /220/ ածին առ զօրավարն - 222. իսկ իբրև ընդդէմ կացին լեռնայնոցն գունդքն Տաճկաց և հարին զլեռնայինսն՝ ձերբակալ արարեալ զերանելին Յովնան տարան ետուն կապանօք ի բանդ արքունի: - 294. Լուր եղև այս առ քաջն Գուրգէն պարտումն Վասպուրականի ի Տաճկաց և իշխանանալն Վասակայ: - 306. ձեզ տուեալ լիցի թագաւորութիւն Հայոց … և յԱսիւրոց կողմանէ զԱսորեստան և զՄծուին և զՆուշիրական մինչև ցսահմանս Տաճկաց – 138. ՄԾԹ ամօք յառաջ զսորայս բացայայտեալ զցոյցս յայտնութեանն, յամս Ներսեսի երրորդի Հայոց կաթողիկոսի և Վարդանայ Ռշտունեաց պատրկի և յամի ունելութեանն Տաճկաց զհայկական աշխարհս: - 394. Յայնժամ տէր Գուրգէն առ /306/ չժուժել սրտին, մտրակեալ զքաջ երիվարն յորում նստեալն էր՝ և եհար զգունդն զձախակողմն Տաճկաց և պատառեաց զոռազմն և դարձոյց զերեսս նոցա- 308. Յետ այսորիկ կայ ի գլխաւորութիւն տաճկաց Ամր, որդի Հատապայ ամս Ի և ամիսս Ը: - 164. յորում տեղւոջ քաղաքն Տարունոյ շինեալ էր, ուր բնակեալ բայանայր զօրավարն Տաճկաց, զօրհասական արջոյն բերելով նմանութիւն, որ յաւուրս ձմերայնոյ արմատովք պարենաւորեալ՝ ի մէջ կենաց և մահու անցեալ որջանան ի բոյնս իւրեանց: - 188. որ առեալ զթագաւորութիւնն Պարթևաց՝ տևեաց մինչև ի ժամանակս Յազկերտի, որ վերջին կացեալ թագաւոր Պարսից՝ սպանաւ ի Տաճկաց: - 166. Սա էր իշխան հրամանատար ամենայն տէրութեան Տաճկաց – 200. սկսան այնուհետև աներկիւղ համարձակութեամբ սփռել տարածանել ի վերայ երեսաց երկրիս ամենայն ազգքն Տաճկաց – 238. Սոյնպէս և այրն այն Յովսէփ զօրավարն Տաճկաց մնայր անցանել ձմերանն, զի ելցէ ի վերայ աշխարհիս Հայոց սրով և գերութեամբ և մեծամեծ հարուածովք և զմեծամեծս աշխարհիս խաղացուցանէ ի գերութիւն – 188. ՎԱՍՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԵԱՆ ՏԱՃԿԱՑՆ ՈՐ ԿԱՅՍՒԿՔՆ ԿՈՉԻՆ ԵՒ ԻՇԽԱՆԻՆ ՍԻՒՆԵԱՑ Ի ԹԱԳԱՒՈՐԵՆ /ՃԻՇՏՍ՝ ԹԱԳԱՒՈՐԷՆ/ ՍՄԲԱՏԱՑ, ԵՒ ԴԱՐՁԵԱԼ ԵՐԿՈՑՈՒՆՑ ՀՆԱԶԱՆԴՈՒԹԻՒՆ: - 380. ՎԱՍՆ ԹԱԳԱՒՈՐԻՆ ՋԱՓՐԱՑ, ԶՈՐ ԻՆՉ ԽՈՐՀԵՑԱՒ Ի ՎԵՐԱՑ ԱՇԽԱՐՀԻՍ ՀԱՅՈՑ, ԵՒ Ի ԳԼՈՒԽ ԵՀԱՆ ԶԿԱՄՍ ՉԱՐՈՒԹԵԱՆՆ, ԵՒ ՈՐ ԻՆՉ ԸՆԴ ՍՈՎԱՒ ՆԱԽ ՔԱՆ ԶԼՆՈՒԼ ՎԵՑԵՐՈՐԴ ՅՈԲԵԼԻՆԻ, ԵՒ ԵՕԹԱՆԱՍՈՒՆԵՐՈՐԴ ՈԼՈՄՊԻԱԴԻՆ, ՅԵՏ ԻՆՆԵԻՏԱՍՆ ԸՆԴԻՔՏԻՈՆԻՆ, ՅՈՐՈՒՄ ԲՈՎԱՆԴԱԿԻՆ ԺԱՄԱՆԱԿՔ ԲՌՆԱԿԱԼՈՒԹԵԱՆՆ ՏԱՃԿԱՑ ԱՄՔ ՄԻԲ ԸՍՏ ԹՈՒՈՑ ՀԱՅԵՐԷՆ ՏՈՒՄԱՐԻ. – 170. Քանզի ասէր Ալի անգաւոր ինքեան զգլխաւորութիւնն Տաճկաց: - 166. Քանզի հարցեալ և բռնազբօսեալ զերկոսին գլխաւորին Տաճկաց, անունկնդիր լինելով ասացելոցն, և ի տեսչութենէ Աստուծոյ թողացուցեալ նոցա առանց վտանգից՝ որպէս հաճոյ թուիցի կեալ ի հաւատսն Քրիստոսի համարձակաբար. – 324.

ՏԱՃԿԱԿԱՆ - Եւ խռովեցան առ հասարակ ազգքն տաճկականք յերեսաց նորա և ահիւ մեծաւ ըմբռնեալք լինէին. – 312. և կանայք կոտորելոցն հանդերձ խառնիճաղանճ ամբոխիւն լրբենի դիմօք, հոլանեալք և ի բաց ընկեցեալ զձև կանացի բնութեան, որպէս օրէն է նոցա, մանաւանդ տաճկական ազանց, և ի հետիոտս դիմեալք ի դուռն արքունի հասանէին: - 180. Զի թէպէտ և Գուրգէն մեծաւ զօրութեամբ ունէր զդէմ յարձակելոցն ի վերայ, որոց զիշխանականն ճեպէին հասանել գահ, կամ որ արտաքին տաճկական պատերազմունքն բռնաբար ի ներքս դիմէին՝ սակայն ոչ յապահովանայր դեռ երկիրն: - 316. զի թէպէտ նեղեալք և չարչարեալք լինէաք պէսպէս կտտանօք ի զօրացն իսմայէլական ազգացն տաճկական տէրութենէն՝ այլ սակաւագոյնք և առ փոքր ինչ ժամանակս – 194. Ընդ նոյն ժամանակս յղէ թագաւորն զոմն ի յաւագ նախարարացն վերակացու Հայոց և հաւատարիմ ի վերայ հարկաց արքունի Ապուսէթ անուամբ, ըստ տաճկական լեզուին, յարելութեամբ եբրայական դպրութեանն: - 170. իսկ կինն ճիչ բարձեալ ասէ. „առ

թագաւորն հասցէ գոյժ իմ,, , շրջելով ընդ բանակն հոլանի, զոր չէր օրէն տաճկական ազգի կանանց, բայց ոչինչ օգնեաց. – 272.

ՏԱՃԿԱՍՏԱՆ - և նոցա կալեալ զճանապարհն անապատի՝ գնացին ի Տաճկաստան առ որդիսն Իսմայէլի, ի քաղաքն որ կոչի Մադիամ – 156. Յայնժամ հրովարտակս արարեալ, պնդադեսպանս արձակեալ ընդ ամենայն սահմանս իւրոյ տէրութեանն … Եգիպտացւոց և մինչև ի ներքին կողմն Տաճկաստանի – 198.

ՏԱՄԲԵՐ - ելանէ մարզպանն ի վերայ նոցա և յինքն հանէ զՏամբեր և զԸռնայ գաւառ և որ ասի Ապուջափրի բերդ, ի Վհրի քաղաքին Կորճէից զիւր կացուցանէ ոստիկանս ի պահպանութիւն ամրոցին: - 400. Բայց զՏամբէր և զԸռնայն և զԶարեհաւան գաւառ հանեալ էր ի Պարսկահայոց – 390. Իսկ Գուրգինի մարզպանի Հայոց առեալ էր ի բաժնի յելս կոյս և /388/ որ ելանէ ի հարաւակողմն, զԱնձահից ձոր, զԿրճունիս, զԿուղան ովիտ, և զբուն զՄարդաստան գաւառ, զԱրճիշակովիտ, զոտն Առնոյ, զԱղբագ Մեծ և զՓոքր, Ակե, Տամբէր, Տագրեան. Ըռնայ, Զարեհաւան: - 390.

ՏԱՅՔ - տեղեկացեալ և վասն տոհմին Արծրունեաց և Ռշտունեաց և որք ի նախարարութենէն Մամիկոնէից հասեալ գնացեալ ամրանային ի յամուրսն Տայոց – 98. քանզի էին մանկագոյնք տիովք. առին գնացին յամուրսն Տայոց. – 98.

ՏԱՆԵԼ/ԻԼ/ - Յղեաց զկոչնականսն զպատահմանն տանելով առ նա զպատասխանիսն. – 352. ,,Թագաւորաց աշխարհակալաց օրէնք են՝ մեծաւ հոգաբարձութեամբ խնդամ տանել վասն շինութեան աշխարհի և թեթևացուցանել զլուծ բռնութեան /184/ ծանրակի բեռանց, թուլացուցանելով զսաստկութիւն հարկապահանջ խոշտանգանաց – 186. այլ ըստ օրինակի ասացելումն ի Տեառնէ Մովսէսիւ՝ առ ի յանդիմանութիւն արտաքնոցն, զճարպ մեռելոտւոյ տանել ի գործ ինչ արտաքին, այլ ոչ թէ ի կերակուր: - 54. այլ հատեալ զգլուխն էտ տանել յարքունիս և զկինն ա՛ռ իւր Բուխայ կնութեան: - 272. այլ տանելով մեր առաջի թագաւորաց և դատաւորաց վասն իմ ի վկայութիւն՝ պահեսցուք զբարիոք դաւանութիւն և վկայեսցուք որպէս Փրկիչն առաջի Պոնտացւոյ Պիղատոսի. – 260. և գրեալ էր առ Բուխայ, զի մի՛ ինչ չարիս խորհիցի կամ գործիցէ առնն այնմիկ, այլ տացէ տանել զնա առ թագաւորն մեծաւ պատուով և զգուշութեամբ: - 288. և անտի դարձեալ ի Բաբելոն, ընդ իւր տանելով զԼիդէացին.- 66. և առեալ Պտղոմեայ զԱսուդ՝ տալ տանել յԵգիպտոս, ի պարգևեալ աշխարհն նմա յԱղէքսանդրէ – 70. և դժոխք ի ներքուստ դառնացան ի պատահել նմա զանբաւութիւն չարեացն ընդ իւր տանելով: - 376. Եւ եղև զկնի երից աւուրց անցանելոյ էտուն թուղթ մի տանել առ Գուրգէն, գրեալ Բուխայի լի դառնութեամբ, կնքեալ մատանեաւ արքայի, իբրև այն թէ ի դիմաց արքային և յարքունուստ եկեալ. – 236. և էտ տանել զդիւանն մագաղաթեայ յունարէն գրով հանդերձ պատարագօք՝ Տիգրանայ թագաւորի Հայոց – 74. և էտ տանել ընդ առաջ նորա նժոյգս մեծազարդս և երևելիս, և երգեցիկս և գովասացս և բազում գործիս երաժշտականս առաջի և զկնի՝ մինչև եմուտ ի բանակ նոցա: - 288. և զգոյն երեսաց իւրոց բոցագոյն դարձուցեալ, խրոխտացեալ և մրմռեալ իբրև զգազան արիւնարբու՝ հրաման ետ տանել արտաքս յերեսաց ատենին – 246. և զիշխանն Աշոտ տալ տանել կապանօք առ թագաւորն – 202. Եւ ըստ կարգի օրինաց իւրեանց երդուեալ, և աղ ծրարեալ ընդ հրովարտակին էտ տանել. և նոցա առեալ և ընթերցեալ՝ ոչ արարին բանիցն պատասխանի: - 138. Եւ կայսր Մուրիկ հաւանեալ նմա՝ յղէր առ նա զՓիլիպիկոս փեսայ իւր. և տպպր տանել նմա գիր ընդունելութեան, և առնոյր ի նմանէ երդումն: - 138. և մեկնեալ յինքեանց զՎահրամ անուն՝ և տպան տանել հրովարտակ առ զօրավարն – 210. Եւ մինչդեռ այս գործ խորհրդածէր՝ հասին ի վերայ նորա քաղաքապետք երկու, անուն միոյն Բշիր և երկրորդին Զքրի, և կալան զնա տանել առ Աշոտ որդի սպարապետին: - 316. և մուտ եղեալ ի տեղին … էտուն տանել զթուղթն, լի թիւնիւք սատանայական իմացմանց, իբրև զկապարճս լի նետիւք դեղեալ ի գաղտնիս ի գրկաց թռուցանել ի նպատակն: - 234. և նոքա տպան տանել նմա զհարկս և հասս արքունի և դարձուցանեն զնա ընդ նոյն ուստի եկն: - 172. և տպպր տանել Սահակ զպէտս մանկանն օր ըստ օրէ: - 84. Զայս զգացեալ Երուանդայ՝ էտ տանել զՍահակ կապանօք յԱրմաւիր. –

84. զշինութեան և զխաղաղութեան հայրենի աշխարհի երկասիրաբար հոգ յանձին տանել. – 388. Զոր զթուղթսն խաբող պատրանօք ի բուռն առեալ Բարծումայ՝ ետ տանել առ արքայ Պերոզ – 130. Իսկ զԱհմատ ընդ Վասպուրական աշխարհին անցանել գնալ՝ ելեալ զհետ նորա Շապուհ որդի Աշոտի, մինչ տանել հասուցանել զնա ի մուտս Ասորեստանեայց ճանապարհին: - 346. Իսկ յետ անցանելոյ աւուրց ինչ՝ ետ տանել զնա առ թագաւորն, և ընդ նմա գունդս զինուորաց վառելոց և ընտիր այրուձիոց: - 288. Կապէ երկաթի կապանօք և տպել տանել յԱնուշ կոչեցեալ բերդն ի սահմանս Տիսպոնի. – 102. Քանզի Վարդան անցեալ գնացեալ էր սուրբ վարդապետաւն Մաշտոցիւ առ կայսր Թէոդոս և առ Ատտիկոս արքեպիսկոպոս հանդերձ թղթովք սրբոյն Սահակայ, տանելով ընդ իւրեանց և զգիր և զբառ հայերէն դպրութեան. – 116. դիմեցին ի վերայ նորա և ի բաց առին զգլուխ նորա և տարան ետուն առ զօրավարն իւրեանց Աբրահիմ. – 304. Ազդ լինէր յոմանց գրումն անյայտիցն, թէ ,,այս ոմանք այսորակ երիվարօք յայս նիշ նիւս կեղթում, ի մէջ բդեղի պահարանեալ նամակ տանին ընդ կողմն Ապահունեաց. արդ զգուշացիր ճանապարհիդ,,. -340. Բայց որդիքն Դերանկին, Աշոտ և Գագիկ և Գուրգէն, զըստ մարմնոյ /358/ աճմանն չափ առոգ և բարձրաբերձ ձգմամբ յառաջ տանէին. – 360. բանսարկուք ոմանք հրապոյրս պղտորս քսութեան ածէին տանէին ի միոջէն առ միւսն, որպէս թէ զչարիսն իրերաց առ հազարապետն խորհել նիւթել յայտ ածէին և զպատճառն զմիմեամբք արկանէին ի գաղտնիս քրթմնջելով: - 342. բարձեալ և զդին սպանելոյն տարան ընդ իւրեանս ի պարծանս իւրեանց: - 354. Դարձեալ ի նոյն յարեալ՝ և այլ հոգաբարձութեան աշխարհի խնդամ տանէր, ի մեղադրանս մատուցեալ մարգարէիւն հանդերձ սպառնալեօք – 182. և ձերբակալ արարեալ մերկանան ի զինէ և յասպազինէ և տանին կացուցանեն առաջի Կիւրոսի. – 66. և ամենեքեան որ պահիցեն զշաբաթս իմ և ոչ պղծիցեն, և պահիցեն զպատուիրանս իմ և կացցեն յուխտին իմում՝ տարայց զնոսա ի լեառն սրբութեան իմոյ – 224. Եւ առ վատացի քաջութեան աղագս զդէմ տանին բերեալ ասէ, ,,զվատ երկիւղ ապրեցուցանէ,,: - 354. և եբաց զպողոտայն լայն և ընդարձակ, զշաւիղն կորստեան, որ տանի յանգիւտ կորուստն. – 248. և զփախստեայսն տանին անցուցանեն յայնկոյս քան զքաղաքն Նախճաւան – 126. և ինքն անցանելով խաղաղութեամբ ընդ աշխարհին Վասպուրական սակաւատոյժ վնասիւք՝ զպատանդսն ընդ իւր առեալ տանի: - 186. Եւ հասեալ կալան զնա և տարան ետուն ի բանտ երկաթից ի քաղաքն Հաղամակերտ: - 320. և նորա առեալ տանի զնա ի լեառնն Սիմ, ի տեղի հայրենեաց բնակութեան յաշխարհին Տարունոյ: - 84. և տիկինն սպարապետական ի Տարունոյ եկեալ և նշանացի զդի նորա գտեալ՝ տարաւ ի Պորպ յիւր աւան և եդ ի գերեզմանի: - 368. զի տարցի անյայտաբար զգողաւսն առ իւր և լցցէ զսովառնութիւն իւր: - 46. զոսկերսն Ադամայ բարձեալ Սէմայ գրաստու՝ տարաւ յերկիր ժառանգութեան իւրոյ - 34. զոր չառեալ յանձն սուրբ տիկնոջն Համազասպուհեայ՝ տանին հանեն ի բարձրաւանդակ ամրական բերդաքաղաքն, մերկանան ի հանդերձիցն, զի քրիստոսեան փառօքն զգեցցի. – 102. իսկ իբրև ընդդէմ կացին լեռնայնոցն գունդքն Տաճկաց և հարին զլեռնայինսն՝ ձերբակալ արարեալ զերանելին Յովնան տարան ետուն կապանօք ի բանդ արքունի: - 294. ոմանք զայս ինչ, ոմանք զայն ինչ տանէին ածէին խորհրդածութիւն: - 360. Սոքա ամենեքեան վառեալք սպառազէն պատրաստութեամբ և բազմաձեռն առատալիր պատարագօք՝ գնացին, զի առեալ տարցեն մուծցեն զնա ի Դուին քաղաքն: - 340. տարան ետուն ի բանտ արքունի, ուր կայր Աշոտ իշխան և այլ նախարարք ի տանէն Արծրունեաց: - 238. Քանզի և ի ժամու անդ յորում զմեծն Գրիգոր առեալ տանէին ի քաղաքն Կեսարացւոց ձեռնադրել զնա ի քահանայութիւն, ի լուսաւոր վարդապետութիւն աշխարհիս Հայոց – 94. օ՛ն անդր ի բաց տար: - 258.

ՏԱՆԵԼՈՑ - Քանզի թէ Աստուած կամեսցի՝ տանելոց է սաստկութիւն հողմոյ զզօրութիւն քո իբրև զփոշի ,,: - 140.

ՏԱՆՈՒՏԵՐ - Եւ իբրև անցին աւուրք ինչ՝ վախճանեցաւ տանուտէր տանն: - 158.

ՏԱՆՈՒՏԷՐԱԿԱՆ - Իսկ ընդ աւուրսն ընդ այնոսիկ սպանեալ էր Ութմանկացն, որ յամուրսն նստէին՝ զՌստոմ Վարաժնունի, որ զտանուտէրական /գրքում՝տանուտերական/ պատիւն յայնժամ ունէր զՎասպուրական աշխարհիս. – 332. և տաց քեզ զկողմանս Ասորոց և զամենայն Արեւաստան մինչև զՄծուին քաղաք, և ի յերկրէ Հայոց՝ զաշխարհս տանուտէրական/գրքում՝ տանուտերական/ իշխանութեանն մինչև յԱյրարատ և ընդ Դուին քաղաք և յեզր ծովուն Բզնունեաց և ցԱռեստն աւան, և զմեծ մասն աշխարհին Վրաց մինչև ցՏփղիս քաղաք. – 136. որ զտանուտրական/ճիշտը՝տանուտէրական/ պատիւն ունէր – 206.

ՏԱՆՈՒՏՐԱԿԱՆ Տե՛ս ՏԱՆՈՒՏԷՐԱԿԱՆ

ՏԱՆՋԱՆԱՒՈՐ - և մի ի ձեռն տանջանաւոր մահու ելանիցէք ի բնակութենէ ձերմէ և բնակիցէք ի դժոխս: - 244. և նախ քան ընդ պատժական տանջանաւոր խոշտանգանօք արկանելն զմեզ՝ բանիւք քո իբրև քարամբք հարեալ զմեզ՝ շտապ տագնապի ի վերայ արկանես թափել զոգիս մեր: - 242.

ՏԱՆՋԱՆՔ - առանց ի տանջանս և ի չարչարանս լի դառն հարուածոց մտանելոյ հաւանեալ մեզ և օրէնսդրին մերոյ Մահումաթայ – 244. Արդ եթէ Սողոմայեցիքն, որ հրով զվրիժուցն հատուցին փոխարէնս, և դարձեալ տանջելոց են՝ որ բովանդակ չարիւք անդր երթալոց են ո՞րպիսի ակնկալութիւն տանջանաց զանց արասցէ զնոքօք. – 336. արդ տես, մեղք քան զմեղս և տանջանք քան զտանջանս: - 336. արդ տես, մեղք քան զմեղս և տանջանք քան զտանջանս: - 336. արկանել զնա ի կապանս և ի տանջանս մահաբերս, զամուրսն յինքն գրաւել, զաշխարհն տալ ի ձեռս իւրոյ գործավարացն, ըստ պարսկայնոցն հատուցմանց հատուցանել նոցա: - 370. ետ բերել փայտս, և եդեալ ի վերայ փայտին զերանելին Սողոմոն՝ և մօտ առ փայտն կացուցին զսուրբն Կահայ, զի գոնեայ մինն ի միւսոյ տանջանացն երկուցեալ հնազանդիցի հրամանի թագաւորին: - 292. և յերկրորդումն հանդերձեալ են վերստին մտանել ի տանջանս յաւիտենականս, ուր որդն ոչ վախճանի և հուրն ոչ շիջանի:-336. և զապստամբս և զընդդիմակայսն ըստ արժանի ապիրատութեանն իւրեանց խրատել գանիւ և բանտիւ և պէսպէս տանջանօք – 212. Եւ ինքն Աւշին զտանջանացն փորձական կիրս կրեալ, դառնագոյն քան զլեղի իժի ճաշակս ճաշակեալ՝ գնաց զկորստական ճանապարհն. – 376. և խոշտանգեսցես զնոսա գանիւ և բանտիւ և պէսպէս տանջանօք սպառնալեօք և ողոքանօք և ընչից պատրանօք արկցուք զնոսա ի ներքոյ կամաց թագաւորութեան մերոյ. – 196. և ծառայեա ճշմարտութեան օրինաց և հաւատոց, զոր ուսաք ի մարգարէէն Մահումաթայ. ապա թէ ոչ՝ զնորին հակառակն ընկալցիս, տանջանս և մահ, և ելցես ի կենաց աստի չարաչար մահուամբ,,: - 294. և որ ինչ ի նմանէ կան պահին պարգևք կացելոյն ի ճշմարտութեան հաւատս, և տանջանք ուրացելոցն և յետս կացելոցն - 206. զի ողջախոհացն քան զամենայն չար տանջանս ամօթն է. – 248. Զոր առեալ զարսն ստիպեաց ի բաց կալ յերկրպագութենէն Քրիստոսի, և պատուի և պարգևաց արժանի լինել ի նմանէ, և մի չարաչար տանջանօք մեռանել: - 222. թերևս արտաքոյ տանջանացն կայցեն մնայցեն, թէպէտ և ոչ ընդ փեսային վայելեն ի հարսանիսն: - 338. համառել պնդել ի հաւատսն Քրիստոսի զոր պաշտեադ, և ի ձեռն չարաչար տանջանաց ելանել ի կենաց աստի – 290. մեք ոչ ի բաց կամք ի սիրոյն Քրիստոսի և ոչ մեկնիմք ի կենացն յաւիտենից և ոչ լինիմք ժառանգորդ յաւիտենական տանջանացն,,: - 292. նոյնպէս և տանջանքն նմին նման յաւիտենականք և մշտնջենաւորք յանսպառ յաւիտեանս և յանմահ խոշտանգանս՝ պղծոցն և ուրացողացն ի սուրբ և յանբիծ հաւատոց քրիստոնէութեանն. – 264. նոցա կալեալ զտիկինն Ռշտունեաց զկին Գարեգնի զքոյր Վարդանայ Մամիկոնէի ածեալ ի Վանտոսպ ի քաղաքն Շամիրամայ, մատնեն ի խոշտանգանս և ի տանջանս դառնագոյնս. – 102. պատրաստ եմք ի կապանս, ի բանտս, ի գանս, ի հուր, ի սուր, ի ջուր, ի տանջանս հարուածոց և յամենայն հնարս չարչարանաց,,: - 246. վկայեցին վասն Քրիստոսի …բազմագոյնք և յազատաց աշխարհիս և ի տիկնանց նոցա անհնարին և դառն տանջանօք – 106.

ՏԱՆՋԵԱԼ - որք և ի մերձենալն անգամ տանջեալ լինէին յաներևոյթ զօրութենէն – 50. և տանջեալ զնա ջղօք՝ տայ նմա և զգանձս աներևոյթս – 66.

ՏԱՆՋԵԼ - և ետ բերել քուքս և տանջել զնոսա քքովքն յերկար, մինչ կարծել ի նմին վախճանել – 292. Կալան և զհայրապետն Զաքարիայ, և ի խնդիր անկեալ աստուածային սուրբ նշանին՝ սկսան զնոսա տանջել, մինչև զբազումս ի պաշտօնէիցն կառափեալ սատակեցին. – 142. տանջեաց զնոսա գանիւ, և նոքա ևս առաւել պնդեցան ի հաւատսն և ի յոյս բարեաց և ի սէրն Քրիստոսի: - 222.

ՏԱՆՋԵԼՈՑ - Արդ եթէ Սողոմայեցիքն, որ հրով զվրիժուցն հատուցին փոխարէնս, և դարձեալ տանջելոց են՝ որ բովանդակ չարիւք անդր երթալոց են ո՞րպիսի ակնկալութիւն տանջանաց զանց արասցէ զնոքօք. – 336.

ՏԱՆՋՈՂ - ,,և զտանջողացն, ասէ, զճողփիւնն լսէաք, և զհարուածսն եկեալս ի վերայ թիկանցն տեսանէաք – 50. բայց զտանջողսն ոչ տեսանէաք: - 50.

ՏԱՇԱՀՈՍ - քարինս տաշահոս հոլովեալ ի նիւթ եկեղեցւոյն ի Մանազաւեանն նահանգէ ընդ Բզնունական ծովն բերեալ մատուցանէ առ կատարումն հրաշագեղ դիտանոցին սրբոյն Սիոնի, այլովքն սրբական անուանակոչութեամբ տեղեաց տնտեսականին բանին Աստուծոյ մարդ եղելոյ: - 396.

ՏԱՇԵԱԼ - Այլ և պատկանաբար իմաստութեամբ պատրաստեաց ջրմուղ ներքսագոյն երկրի ի քարանց տաշելոյ փողոցս գնացից ջրոյն կազմեալ – 392. Իսպառ ստորև ամրականին ի գոգաձև տեղւոջն … շինեաց եկեղեցի հրաշագործ հրաշազան յօրինուածով եկեղեցի ի տաշեալ քարանց ի Մանազաւեան քաղաքին ի Վանտոսպ, և հիմնեցուցեալ յանուն սրբոյն Սիոնի, որ ի սուրբ քաղաքն Երուսաղէմ. – 390. հարուստ մի հեռի զքարանցն տաշելոյ զհոլովումն բերելով առ տրամադրութիւն կոչարանին իբրև ասպարիսօք երիւք, զբացագոյնն մօտագոյնս գործելով սայլիցն հոլովմամբ. – 396. Իսկ շուրջ զբերդանման ապարանօքն՝ պարսպէ զբլուրն շուրջանակի յապառաժուտ տաշելոց քարանց, քաղաք ամենալից զհովիտն ամրացուցանելով: - 86.

ՏԱՇԵԼ - Որգունակ հնչումն տաշելոյ փայտիցն առ Նոյիւ ազդեցութեամբ հիւսնական գործեացն՝ զհեղեղածուփ անդնդաձիգ սահանացն երկնահոս զուգաճանապարհորդութեանն յապրուստ հաւատարիմ առնն յԱստուած յուսացեալ համամիտ ընտանեացն գործակցութեամբ: - 396.

ՏԱՇՏ - շոնջապահս ձիոցն և տաշտս գաւակացն և զանգապանս ի չորս կողմանս, ձգեալ և լանջացն զէն, և բարձրավիզ խրոխտանացն զրահս, և ոտնատորոփ փռնկալոյն մանեակս զանգակեալս, և մահիկս լուսնաձևս ի մէջ ճակատուն կապեալ – 208.

ՏԱՊ - բայց վասն զի ոչ ունէր արմատս՝ վաղվաղակի չորացաւ ի տապոյ բանսարկուին – 246. և նոցա պարտասեալք ի ծանրութենէ զինուցն և ի ջերմութենէ տապոյ արեգականն և ի սաստկութենէ աւազոյն, որ ոչ ունէր զկայ ոտից, և ի հետևակագնացութենէն և ամենեքումբք թշուառացեալք՝ անկան ի ձեռս թշնամեացն – 162. յորմէ շնչէ օդք բարեխառն, զովացուցանէ զտապ խորշակի ամարայնոյ՝ յարեգականակէզն լինելոյ. – 84. Նա և ջուր մաքուր յապակի զուտ և վճիտ արկեալ, ի տապ արեգականն դնելով, և զնիւթ հրոյն առ ընթեր՝ ի շողոյ անտի արևակէզ եղեալ տոչորի նիւթն: - 52.

ՏԱՊԱԼԵԱԼ - Զնա ի հիմանց տապալեալ. – 358.

ՏԱՊԱԼԵԼ - և ահա աղաղակ և փողք և քնարք և ջնարք, և վառեալ զինու և սրոյ և ամենայն պատրաստութեամբ անհուն զօրացն, մինչ գրեթէ /գրքումէ՝գրէթէ/ ի հիմանց զլեառնն տապալել – 284. և իբրև զմի անձն, վառեալ ի զէն և ի սուր և ի ճակատամարտ՝ հասեալ յամուրս՝ տապալէք զզօրութիւն նոցա սրով և աղեղամբ, ի փայլիւն սուսերի և նիզակի և ի գիշերամարտ նահատակութեանց, ըստ նմանութեանն քաջ զօրավարին Իսրայէլի Յեսուայ կամ Գէդէովնի կամ թէ նոյն ինքն նահապետին Աբրահամու, ի վերայ հասեալ Քանանացւոց, զյաւէտ յաղթութեան նահատակութիւն նահատակեալ՝ և դառնայ մեծաւ յաղթութեամբ: - 312. Եւ հնչեաց երկիրն, և զաղաղակ բարձին ամենայն բազմութիւնն, իբրև այն թէ ի հիմանց լեառնն տապալիցի: - 228. զի մի սպառ սպուռ տապալիցի

զօրութիւն շինուածոյ աշխարհի, ի բաց ընկենլով զծառայական պաշտօնատրութիւն կողմնակալաց, և քաղաքային անհաւատարիմ կամարարողաց, և հարկաց բեկման և զօրաց – 186. զեղանս խորհրդականս փրկագործութեանն յատակել, հիմն ի վեր /գրքում՝ վերայ/ տապալել զաւազանն մաքրափայլ լուսաւորութեանն Հոգւոյն սրբոյ - 124. զսուրբ եկեղեցիս, զտունս աղօթից քրիստոնէից այրել աւերել հիմն ի վեր տապալել, զքահանայսն նորոյ ուխտի ի սուրս իւրեանց մաշել, զծերս և զպառաւունս մահու սրոյ սպանանել, զերիտասարդս և զկուսանս խաղացուցանել ի գերութիւն, զստացուածս և զինչս վատնել աւարառութեամբ. – 398. Մերթ տապալէր իբրև զօձ, մերթ գոչէր իբրև զառիւծ, և իբրև զխոզ վայրենի կնչէր կռնչէր, փրփուր ի վեր բերելով, զատամունս կրճտելով. - 270.

ՏԱՊԱԼԻՉ - Եթէ, որպէս ասացի, ի բաց գնաս յինէն՝ խաղաղութիւն է, և թէ ոչ՝ պատերազմ և կռիւ և ճակատամարտ … դու շինուած առանց հիման՝ և ես հեղեղ հիմն ի վեր տապալիչ – 280.

ՏԱՊԱԼՈՒՄՆ - Ի սորա յերրորդ ամի թագաւորութեանն ի վերայ Հայոց աստուածատուր բարկութեամբ անդնդաշարժ վրդովմամբք ներքնագոյն խորոցն պատահեալ միմեանց սահանախաղաց դղրդմամբ, հիմնաշարժ տապալմամբ, /356/ ներքսագոյն երկրի թուլացեալ պնդափակ աղխեալ սանդարամետական սահմանին, բարկութեան հողմոց շնչեալ ընդ ջրոցն խաւարայնոց, ի կոհակս անդնդաքակս զթանձրայատակ երկրի զկարծր և զծանրալիր անկշիռ անբաւութիւնն տատանեալ, մինչ յերեսս երկրի ի վեր մղեալ հանդէպ քաղաքին Արտաշատու/ գրքում՝ Արտաշասու/, որ Բլուրն նորուն ասի – 358.

ՏԱՊԱԽԱՌՆ - Եւ քանզի որպէս ասացաւ՝ ի յերկարագնացս աշխատութեանց երիվարացն և հեծելոցն ծանրութիւն ի տքնութենէն ի վերայ հասելոյ, և տօթն արեգականակէզ տապախառն ջերմութեանն, և թանձր ծարաւոյն պասքեցելոց երիվարացն հանդերձ հեծելովքն – 402. Իսկ նա ըստ սովորականի ցանկասէր պղծալից անյագութեանն՝ խրոխտացեալ մոմոեալ յանձն գազանեղէն թունիւք առաւելեալ, բորբոքեալ տապախառն բոցով հեղուլ զմահածին թոյնսն ի վերայ Բուխայի. – 326.

ՏԱՊԱՆ - „Մուտ ի տապանն դու և որդիք քո և կանայք որդւոց քոց. – 30. Այլ և վասն գործակցաց տապանին /30/ դիտողագոյնս է ասել. – 32. անդ և տապանն շինեալ եղև և անհնարին չարեացն զեղեալ ի վերայ երկրի. – 30. Եւ խնդրեալ զդի նորա վաճառականաց՝ պատեցին զնա ի ձեռս եպիսկոպոսին Դաւթի նորուն գաւառի և եդին ի տապանի յեկեղեցւոջն որ ի նմա: -354. և կեցեալ առ նովաւ ամս ՇԿԵ, մինչև ի հանդերձել տապանին: - 28. Եւ յաւուր յայնմիկ եմուտ ի տապանն Նոյ և որդիք իւր, կին Նոյի և կանայք որդւոց նորա ընդ նմա: - 30. և յետ կատարման աստուածային հրամանին՝ ի ծփական ջուրցն բերեալ տապանն յարևելեայն ի միջոց աշխարհի՝ հանգեաւ ի լերինս Կորդուաց – 32. Եւ փակեաց Տէր Աստուած արտաքոյ նորա, ասէ, զտապանն: - 32. Իսկ ոմանք ասեն ի Ղաւոդիկեայ Փռիւգացւոց շինեալ տապանին, որ յերից մասանց երկրի՝ Ասիական կոչի կողմ. և յոյժ անհաւաստի են ասացեալքն.- 30. Իսկ Փիլոն ասէ՝ զոսկերսն Ադամայ, ի պատիւ խնամոց, իբրև հօր հասարակաց՝ առեալ Սէմայ եդ ի տապանի անդ. – 32. Նաև յութիցն մտելոց ի տապանն ոչ ամենէքին ընտիրք երևեցան -32. Նոյ էր ամաց Շ, յորժամ առ հրաման որդւովքն կազմել զտապանն: - 28. Որկեն և եղեցանն առ նորա բերեալ բացայայտ ի խորհուրդ տապանին, ի Փռիւգացւոց ապարասանութենէ ի մեզ ճախրեալ ապրուստն. ի տանն Աստուծոյ զընթացսն քաջայարմարագոյն հաւատով բերեալ: - 396. Որով ետ հրաման արդարոյն կազմել զտապանն ի գուշակումն անօրինաց կորստեանն: - 28.

ՏԱՊԱՍՏ ԱՐԿԵԱԼ - զբազումս տապաստ արկեալ ի սուրս իւրեանց – 98.

ՏԱՊԱՐ - Եւ զայլս ազգի ազգի զինուորք ունէին վաղերք և վակուրք, սուսերք և սուինք, տապարք և վիրգահանք, մեքենայք և ռմբաքարք, վահանք և նիզակք: - 208. որք մտեալ քարտակատեցին զնա տապարօք ի սենեկի անդ և սպանին: - 152.

ՏԱՌ - Եւ ոչ անվկայ բանս, որպէս վերագոյնն գրեալ է մեր զդերահատուցականս սորա, վկայութեամբ մարգարէական տառիցն, որպէս և ի պատահմանէ իրացն ճարտար գիտեն՝ որք են ի ժամանակս յայսոսիկ մնացեալ յայն ժամու անդ հանդիպելոցն: - 262.

ՏԱՌԱՊԱՆՔ - Այլ հինիցն ասպատակքն, սովոյն բռնութիւն, գերիվարացն տառապանք, գազանաց յարձակմունքն, ներքին և արտաքին վրդովմունքն հոլանի առնէին զաշխարհս: - 316. Արջամ թագաւորեալ Հայոց՝ զազգն Բագրատունեաց արկանէ ընդ բազում տառապանօք, վասն արձակմանն Հիւրկանոս քահանայի ի կապանաց բանտին – 74. և երիվարին ընդ վազս փռնգալիր խրոխտանացն փրծուցեալ զնա ի ցաւոցն, քանզի այն ինչ կազդուրեալ էր Գուրգէն ի հիւանդութենէ և ի կրից աշխատութեանցն և ի տառապանաց բանտին: - 320. և ո՞րպէս՝ հնարաւորեալ յապրուստ անձանց վճարեն զկարևոր պէտս իւրեանց լի աշխատութեամբ և սաստիկ տառապանօք. – 190. ինքն իսկ փոյթ յանձին կալեալ՝ ել գնաց մեծաւ հոգաբարձութեամբ, լուծանել զնա ի տառապանաց արգելանին. սակայն և այնպէս ոչ կարաց գտանել զելս իրացն վտանգի առնն: - 346.

ՏԱՌԱՊԵԱԼ - եթէ ,,Օրէն է աշխարհակալաց արքունի խնամակալութեամբ գնալ ընդ աշխարհ իբրև առ հնազանդս, և զնեղութիւնս տառապելոց բառնալ և ի դիւր հանել իբրև զխնամարկուս, և ոչ աւազակաբար աւարել, և սրով և գերութեամբ յաւեր դարձուցանել. – 278. և տառապելոցդ որ եկեալ յեցեալ են ընդունայն գաղթականութեամբ՝ եղիցի արձակուրդ ի տեղիս իւրաքանչիւր – 216. Յետ այսր առեալ Սմբատայ զԱրտաշէս ըստ ձևոյ տառապելոյ միոյ, որ շրջիցի խնդրիցէ օր ըստ օրէ զբաւականութիւն աւուրն – 84.

ՏԱՌԱՊԵՑՈՒՑԱՆԵԼ - Այսպէս և զամենայն ըմբռնեալսն վտանգաւոր մահու տառապեցուցանէին ընդ մէջ կտրելով, ահարկուս տեսողացն զնոցայն վտանկսն կացուցանելով: - 372.

ՏԱՍՆ - Արդ նոցա այնքան, իսկ մեզ ի մասնէ զբոլորն համառօտեալ ի թիւս միակաց լրման, և զբովանդակութեան ամաց ըստ տասանց եօթներորդացն որ թուոցն է լիագոյն Է - 314. Եւ արդ քանզի կարգ բանիցս էած զմեզ առ այս խնդիր՝ պարտ է նախ գիտել թէ որով օրինակաւ Քաղդէացւոցն մատենագրութիւնք զթիւ նահապետացն տասամբք համարին թուով ըստ աստուածահրաման գրոցս - 18. Եւ էր ամաց իբրև տասանց յորժամ նստաւ իշխան յաթոռ հօր իւրոյ: - 314. սա իսպառ գերեաց զտասն … <հազար մարդու> <խաղա> ցուցանելով ի լերինս Մարաց և երբարձ զթագաւորութիւնն … որ և տևեաց ամս ՄԾ: - 60. քանզի սուրբ նահապետացն տասանց բնաւ ոչ երբէք ումեք երևի ասել ի Մէջերկրայս ունել բնակութիւն: - 30. Իսկ զկնի աւուրցն տասանց ի գլուխ ելանելոյ՝ խնդրեաց սպարապետն մտանել առ նա, և կալեալ զձեռանէ նորա՝ սկսաւ խօսել ընդ նմա և ասէ. – 282.

ՏԱՍՆԵՐՈՐԴ - Եւ յերկարեցան գործ պատերազմին մինչ ի տասներորդ ժամ աւուրն – 232. և Նինոս տասներորդ ի Սեմայ և ի Քամայ. – 14.

ՏԱՏԱՆԵԱԼ - և իբրև հողմ զպրակս եղեգան տատանեալ՝ սասանեալ խռովեցուցին զբազմութիւն զօրացն: - 368. Ի սորա յերրորդ ամի թագաւորութեանն ի վերայ Հայոց աստուածատուր բարկութեամբ անդնդաշարժ վրդովմամբք ներքնագոյն խորոցն պատահեալ միմեանց սահանախաղաց դղրդմամբ, հիմնաշարժ տապալմամբ, /356/ ներքսագոյն երկրի թուլացեալ պնդափակ աղխեալ սանդարամետական սահմանին, բարկութեան հողմոց շնչեալ ընդ ջրոցն խաւարայնոց, ի կոհակս անդնդաքակս զթանձրայատակ երկրի զկարծր և զծանրալիր անկշիռ անբաւութիւնն տատանեալ, մինչ յերեսս երկրի ի վեր մղեալ հանդէպ քաղաքին Արտաշատու/ գրքում՝ Արտաշասու/, որ Բլուրն նորուն ասի – 358.

ՏԱՏԱՍԿ - և այլ թէ. ,,մի՞թէ /գրքում՝ մի՞թե/ քաղիցեն ի փշոց խաղող կամ ի տատասկէ թուզ,, - 256.

ՏԱՐԱԲԱՐՁ - ոչ պիտոյացեալ եկամուտ լուսոյ, որով նսեմասցի առ ի հասանել երեկոյին, ոչ ապաժամանութիւն արեգական առ ի մերժել զմութ գիշերի լուսազգեստ ստեղծուածոյն, որ յետ առաջնոցն կարգի և դասու՝ զերկրորդն փոխանորդեցաւ վիճակ, ոչ կերակուր հոսանուտ առ ի լրութիւն տարաբարձ ունակութեանց անապականին, որ դոյզն ինչ փոքրագոյն քան զհրեշտակս գոլ. – 20.

ՏԱՐԱԲԱՐՁԱԿԱՆ - այլ և ոչ տարաբարձական, որպէս և /48/ արդ ևս ոմանք կարծեն, ոչ գիտելով զասացեալսն ի Տեառնէ աւազակին՝ այսօր ընդ իս իցես ի դրախտին: - 50.

ՏԱՐԱԴԷՄ - Եւ ելեալ ազատացն Վասպուրականի դէմ եդեալ տաբադէմ գնացին յԱմդացւոց քաղաքն առ Ահմաթ որդի Յիսէի Շեհայ – 366.

ՏԱՐԱԺԱՄ - Քանզի թէպէտ և տաբաժամ լրմամբ ժամանակի չափաբերեալ կենացն Աշոտի՝ հաստատնագոյն և անվրէպ լուծման կենացս առ հոգևորսն և յաւիտենականսն և անվախճան կենացն առաւելութիւնն անցեալ գնացեալ ժամանեաց – 386. Բայց դուք, Հայք, տաբաժամ ցուցանէք զտիրասիրութիւն. – 138. Զի ի հասանել ի վերայ նորա ցաւոցն մահաբերաց՝ ոչ հոգացաւ զմանկականն իւր տաբաժամ ելսն յաշխարհէս – 386. ըստ ասացելումն ի Սողոմոնէ, եթէ ,,հայր թախծեալ տաբաժամ սգով՝ վասն վաղամեռիկ լինելոյ որդւոյ արար պատկեր,,: - 40.

ՏԱՐԱԾԱՆԵԼ - առանց վեր ի վերայ/ճիշտը՝վեր ի վերոյ/ դնելոյ սփռել տաբաձանել ի կորուստ և յապականութիւն բազմաց: - 242. և սկսան այնուհետև աներկիւղ տաբաձանել ի վերայ երկրին. քանզի ոչ կասկածէին ի պատերազմէ իմեքէ: - 162. մինչ նոքա գունդ առ գունդ ընդդէմ միմեանց ճակատեալ կազմէին զռազմն, և փողքն գոչէին և դրօշքն տաբաձանէին և նշանքն փողփողէին, վահանաւորքն և նիզակաւորքն գոչէին, այրուձին այսր անդր վազս առնէին և ախոյեանքն յարձակէին, կապարճակիրքն աղեղանցն յուրային: - 174. սկսան այնուհետև աներկիւղ համարձակութեամբ սփռել տաբաձանել ի վերայ երեսաց երկրիս ամենայն ազգքն Տաճկաց – 238. սփռեալ տաբաձանեն հէնս ասպատակաւորս ընդ բոլոր երեսս երկրիս Հայոց – 102.

ՏԱՐԱԾԵԱԼ - և ապա մտին ի տունն Աստուծոյ, և տաբաձեալ զիրովարտակն առաջի սրբոյ սեղանոյն՝ անկան ի վերայ երեսաց իւրեանց յերկիր առաջի Տեառն և լացին դառնապէս – 146. և տաբաձեալ սփռեալ գործավարս յամենայն երկիրս, բայց միայն յամուրսն ոչ կարացին լինել գամագիտ: - 372. Եւ տեսեալ զայնպիսի կորուստ՝ ոչ ևս համարձակեցան ի նոյն գործ, այլ տաբաձեալ կալան զերկիրն ամենայն: - 146.

ՏԱՐԱԾԵԼ – Եւ իբրև գիշերն տաբաձեցաւ և խաւարն թանձրացաւ և սկսան ամենեքին մտանել ի քուն յանձնիւր օթանոցն՝ յանկարծակի փայլիւն սուսերաց և մոմեղինաց վառելոց և գունդք խորհրդականացն և Հասան ընդ նոսա. – 348.

ՏԱՐԱԿԱՐԾԵԼԻ - Եւ անդէն զտաբակարծելի գիւտիցն յոյս երկբայութեան՝ յայլոց քննողական աշխատութեանց եղից առ ընթեր թելադրութեամբ. – 12.

ՏԱՐԱԿՈՅՍ - Եւ թէպէտ տածէր և խնամէր Գագիկ աշխարհս՝ այլ ոչ ուրախ լինէին ի նա ազատատերանցն գրոխք, և կացին ի տաբակուսի: - 354. և կային ի մեծ տաբակուսի. – 276. և կայր երկիրն ի մեծ տաբակուսի, լցեալ կասկածանօք չարեացն: - 398. Եւ մինչ այսպէս կայր աշխարհս յանկարգ խաղաղութեան՝ եհաս լուր գործոյն առ Աւշին և առ իշխանն Աշոտ, եթէ ,,վրդովեալ է երկիրն, և կան ի տաբակուսի՝ որք զամուրսն քո ունին. – 362. Զի մինչ այսպէս կայր աշխարհս ի տաբակուսի, և ակն ունէին գթութեանցն Աստուծոյ առատանալ, որպէս սովոր է Աստուած ի բարկութեան զողորմութիւն յիշել. - 374. հրախառն տոչորմամբ եռացեալ շուրջ զսրտիւն արիւնն՝ մաղձախառն բերմամբ յապուշ զմիտսն կրթեալ՝ կայր ի մէջ տաբակուսի – 180. Յայնմ հետէ ի տաբակոյս անկեալ Երուանդ՝ ոչ քաղցրանայր նմա քուն գիշերոյ, և ոչ համեղանայր կերակուր ի քիմս նորա: - 84.

ՏԱՐԱԿՈՒՍԱԿԱՆ - Եմուտ այնուհետև տաբակուսական խորհուրդ ի մէջ զօրագլխացն վասն հարուածոց զօրացն ի գնդէն Հայոց. – 234. զի անտի և անտի ի բաց կացցեն /12/ տաբակուսական մտածութեանց ծուփս խորհրդոց ի քումմէ հանճարեղ խոհականալիր բանգիտութենէ: - 14.

ՏԱՐԱԿՈՒՍԱՆՔ - և հանապազ յանձն իւր տաբակուսանօք տարուբերէր, թէ յո՞վ և կամ յո՞յր կողմանս թափիցէ զդառնութիւն մահաբեր թունից իւրոց – 170. Եւ այնչափ և առաւել քան զսոյն կազմութեան սպառազէն պատրաստութեանն՝ սաստիկ տաբակուսանօք և մեծ երկիւղիւ պակչէին յահէ հայկասիրտ իշխանին և յաղթող նահատակին մեր Աշոտոյ – 210. և մեծաւ աշխատութեամբ և ի բազում ժամանակաց փոյթ յանձին կալեալ անդուլ զցայգ և զցերեկ ի մեծ տաբակուսանս ըմբռնեալ կայր վարանեալ – 242. Եւ ոչ ոք այսքան աղէտս

տարակուսանս հասոյց ի վերայ մեր և ի վերայ ազգի և զօրաց և զօրավարաց մերոց, որչափ գործեաց Աշոտ իշխան Վասպուրական: - 198. Իսկ զօրավարն Բուխայ կայր ի կոր կործանմանն, ի տարակուսանս ըմբռնեալ փղձկէր ի միտս իւր, ցնորակոծ լինէր, հնարէր ելս իրացն գտանել ի վրանայարկն փակեալ, և ոչ առնոյր դուլ և դադար: - 282. Յայնժամ իբրև լուաւ բռնաւորն զայս դարձուած պատասխանեաց լի հզօրութեամբ և ահագին մեծաւ անարգութեամբ՝ յոյժ տարակուսանօք լցաւ յանձն իւր, և կայր մեծաւ հիացմամբ ըմբռնեալ. – 280. Պղպջաձիգ արտօսր իբրև յեռանդնոտ կատսայէ ի վեր յորձանախաղաց սահին. տարակուսանք անյուսալի շուրջ զինն պարագրին ի վերայ եղելոցն: - 350.

ՏԱՐԱԿՈՒՍԵԱԼ - Իսկ իբրև լուաւ թագաւորն զայս գոյժ աղաղակի հասեալ ի դուռն արքայի՝ մրմռեալ իբրև զառիւծ և իբրև զարջ տարակուսեալ – 180.

ՏԱՐԱԿՈՒՍԻԼ - Այլ թերևս զայս տարակուսիցիս առ իմաստն՝ յանդիմանակացոյցս առնել զԳուրգէն ընդ աշխատութեան յօժարագոյն առ մարմնական զինուորութեամբն լինել: - 398. Եւ Բուխայի իմացեալ որպիսի պատրաստութեամբ կազմի իշխանն Աղուանից՝ տարակուսէր ի միտս իւր. – 278.

ՏԱՐԱՊԱՐՏ - Երրորդ՝ խժաբար նենգութիւնն, զոր անփրկանակ ի ծնօղացն մեկուսի տարեալ սպան տարապարտ: - 24. և անհնարին բեկմամբ խորտակեցաւ գունդն Հայոց, մինչև ի բազմացն սակաւուց հազիւ ուրեմն մազապուր զերծեալ՝ անկան յաւուր յայնմիկ ի տարապարտ պատերազմին արք անուանիք իբրև Շ - 402. ո՞վ ասասցէ յիմար արքային Զրադաշտի՝ ասա՛ ձրավաստակ աստուածոյդ քո Որմզդի՝ չաշխատել տարապարտ. – 46.

ՏԱՐԱՊԱՐՏՈՒԻՑ - ,,դու, մոլի մանուկ,/ծն.մոլիմանուկ/ ընդէ՞ր մեռանիս զուր և տարապարտուց,,. – 222.

ՏԱՐԱՒՆ - Եւ զօրաժողով եղեալ Մուսէի պատճառաւ հարկաց արքունի՝ եկն եմուտ յերկիրն Տարաւնոյ, տալ պատերազմ ընդ Բագարատայ: - 172. և էր նա իշխան Տարաւնոյ, բարձեալ եղև ի Սամառայ և եղև աստուածուրաց – 248. Նա և մայր իշխանին Աշոտի, քոյր Սահակայ և Բագարատայ իշխանին Տարաւնոյ… երթեա՛լ ընծայիւք բազմօք յանդիման լինէր Յովսէփայն և խնդրէր զհաշտութիւն և զխաղաղութիւն հաստատել առ որդիսն իւր և առ բոլոր աշխարհն Վասպուրական: - 186.

ՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆ - և անուանէ զնա Արծրունի, առաջին լինելով նորա ի դաշտավայրին Արծուիք կոչելոյ. դարձեալ ըստ պատահման և տարբերութեան՝ արծռունգն կերպարանօք: - 72.

ՏԱՐԵԱԼ - - Եւ ծառայ մի Դերենկին որ բանտապանն էր՝ լուծեալ զնա ի կապանացն՝ և տարեալ մուծանէ ի սենեակն ուր ննջէր Դերենիկն. – 320. այսր աղագաւ խնամ տարեալ թագաւորին կնոջն՝ զի ոչ ել առ Երուանդ և ոչ միով իւիք պաշտպանութեամբ: - 90. առաջապահեստ ճանապարհորդութեանն արարեալ զՄերշապուհ Արծրունի զօրավար Հայոց և զՎահան Ամատունի և եղբայր Մեհուժանայ՝ տարեալ հանգուցանեն ի տեղւոջ հայրենեացն վկայարանի ի Թորդան: - 108. Դահեկին/ճիշտը՝դայեկին/ նորա մնալով ի ներքոյ կախաղանին՝ ամփոփէ /102/ զսուրբ գանձն ի ծոց իւր, տարեալ փոխէ ի վկայարան հանգստի ի ձեռն սրբոյն Ներսէսի – 104. Երրորդ՝ խժաբար նենգութիւնն, զոր անփրկանակ ի ծնօղացն մեկուսի տարեալ սպան տարապարտ: - 24. և այնպէս անկարօտս առ պիտանացուս հոգ տարեալ՝ գլխաւորեաց որ ինչ շինութեան և խաղաղութեան աշխարհիս նպաստաւոր առ օգտակարագոյնսն պահանջէր գործառնութեան եղանակք – 392. Եւ կատարեալ Աշոտ զկեանս իւր՝ մեռաւ ի Վանտոսպ գաւառի, ՅԻԳ թուականութեանն Հայոց, յամսեանն հոռի, որ օր Զ էր ամսոյն, յաւուր հինգշաբաթոջ. և տարեալ հանգուցանեն ընդ եղբարս իւր ի վանս սուրբ Խաչին յԱղբագ գաւառի: - 338. և մտեալ ի խորագոյն բանտ, տարեալ յամենայնի գոհութեամբ վասն անուանն Քրիստոսի, սովով և ծարաւով ժուժկալութեամբ մեծաւ: - 318. Եւ յետ անցանելոյ աւուր, գնացեալ Աշոտ որդի Դերանկին, առեալ զդի նորա՝ տարեալ հանգոյց առ հարս իւր յԱղբակ գաւառի ի վանս սուրբ Խաչին: - 354. և տարեալ հանգուցանեն զնա ի Յօշական գեօղ, ի գաւառին որ կոչի Ոտն Արագածոյ: - 120. Եւ տարեալ հանգուցանեն զնա ի վանս սուրբ Խաչին յԱղբագ գաւառի: - 310. և տարեալ հանգուցանեն զնշխարս սրբոյն

յԱշտիշատ Տարօնոյ ի տեղւոջ վկայարանի սրբոյն Յոհաննու Մկրտչին և Աթանագինի վկային: - 120. և տարեալ հանգուցանեն ի նոյն վանս սուրբ Խաչին: - 356. Եւ տարեալ հանգուցանեն ի տեղւոջ հանգստարանացն իւրեանց ի սուրբ Խաչի վանս: - 318. և տարեալ հասուցանէր ի սուրբ քաղաքն Երուսաղէմ: - 154. և տեսեալ զուարակ մի՝ գողացաւ և տարեալ մեկուսի յազեաց զնա և կարկառեալ քարամբք՝ մնայր երեկոյինն – 46. և տիկինն Սեդայ առեալ զդի նորա տարեալ հանգուցանէ ի յԱղբագ ի գեօղն Օսի, ի վանս սուրբ Խաչին: - 384. Զոր և մեր ըստ հրամանի քում, Գագիկ զօրավար Հայոց և Վասպուրական իշխան, ջան յանձին տարեալ ընդ համառօտութիւն զրուցատրութեանցն անցեալ – 74. Զոր տարեալ զթուղթն մատուցին առաջի թագաւորին: - 132. զոր տարեալ հանգուցանեն ի տեղւոջն, զոր այժմ Զորոյ վանս անուանեն, ի վկայարան սրբոց Հռիփսիմեանց. – 104. որ յետ հաւատոցն որ ի Քրիստոս բազում ուղղութեամբ և երկիւղածութեամբ կրօնս ըստ արժանի հաւատոյն ցուցեալ, գրէթէ ի ծայրս առաքինութեան զաճումն հաւատոցն տարեալ հասուցեալ, որ ինչ յորդորումն աւետարանական վարժիցն ունին դաստիարակութեան ցոյցք: - 78. զԱշոտ տարեալ յանկասկածելին Նկան, զԳագիկ յամուրն Սևան, զԳուրգէն ի Կոտորն բերդ: - 364.

ՏԱՐԻ - զտարի մի ողջոյն մնալ յապականութեան երկրի. – 32. Բայց տիկինն Սոփի կեցեալ յետ մահու Դերանկին զտարի մի և զամիսս Ը՝ յաւելաւ առ հարս իւր. – 356. և արարեալ անդ յոլովագոյն աւուրս իբրև տարոյ միոյ. – 370. Եւ եղև ի գալ միւսոյ տարւոյն՝ Սմբատ իշխանն Սիւնեաց ի բաց եկաց ի հնազանդութենէ թագաւորին Հայոց, արգել առնելով հարկացն տալ թագաւորին, թևակոխելով Պարսից բռնաւորին հատուցանել զհարկս և զհասս. 382. և զտարի մի կացեալ մարմինք սպանելոցն անյօշելիք ի գազանաց և ի թռչնոց: - 368. և Ցիսէ տուեալ պատերազմ ընդ քաղաքին, զտարի մի հանդերձ ամենայն նախարարօքն Հայոց, անգամագիտ լինելով՝ դառնայ յԱսորիս. և այս եղև երկիցս անգամ: - 338. Նոյնպէս բանայ, որպէս և այլ թռչունք և գազանք՝ բնաւորեալ բաժանեն զժամանակս տարւոյն յերկուս կամ յերիս ամարանոցս և ձմերանոցս ինքեանց կենաց պաճարին – 262. Նոյնպէս և զպայման ժամանակացն յանբաւ բիւրս ամաց ձգեն որ ոչ և ըստ միոյ յեղանակի հաւաստանայ առ ի ցուցումն, ոչ արեգական բերմամբ ի նոյն կէտ ամսոց և աւուրց և ոչ ըստ չորից փոխմանց առ ի յեղումն ժամանակի տարւոյն, այլ և ոչ ըստ լուսնական լրութեանն և սուզականութեան: - 18.

ՏԱՐՈՒԲԵՐԵԼ - և կասկածանօք տարուբերէր ի միտս – 118. և հանապազ յանձն իւր տարակուսանօք տարուբերէր, թէ յո՞վ և կամ յո՞յր կողմանս թափիցէ զդառնութիւն մահաբեր թունից իւրոց – 170. Իսկ Դերանիկն գործ առնէր ի գիւտս հնարիմացութեան, և տարուբերէր յանձն իւր՝ գտանել զելս իրացն, որով կարիցէ հանել զամուրսն ի Գուրգինայ և տիրել աշխարհին: - 326.

ՏԱՐՈՒՆ - Այլ կորապաղատն Տարունոյ կայր ամրոցին Սևան, որ ի ձեռին Հասանայ որդւոյ Վասակայ ամբարշտի – 346. Եւ ի նմին ամի մեռաւ արքայն իշխան Տարունոյ – 358. և հասեալ յԱշտիշատ Տարունոյ /ճիշտը՝Տարունոյ/ ի վկայարանս սրբոյն Յովհաննու և Մկրտչի, և Աթանագինէի վկային – 100. Եւ յելանելն նորա և մօտ լինել ի սահմանս Հայոց զօրօք բազմօք, մերձ ի սահմանս Տարունոյ, Առաջին կոչեցեալ Հայոց՝ իշխան Տարունոյ Բագարատ … առաքէ զոմանս ի մեծամեծաց իւրոց ընդ առաջ նորա պատարագօք ոսկոյ և արծաթոյ և պատուական հանդերձից, համոզեալ մի ելանել յերկիրս Հայոց: - 170. Եւ յելանելն նորա և մօտ լինել ի սահմանս Հայոց զօրօք բազմօք, մերձ ի սահմանս Տարունոյ, Առաջին կոչեցեալ Հայոց՝ իշխան Տարունոյ Բագարատ … առաքէ զոմանս ի մեծամեծաց իւրոց ընդ առաջ նորա պատարագօք ոսկոյ և արծաթոյ և պատուական հանդերձից, համոզեալ մի ելանել յերկիրս Հայոց: - 170. և նորա առեալ տանի զնա ի լեառնն Սիմ, ի տեղի հայրենեաց բնակութեան յաշխարհին Տարունոյ: - 84. և տիկինն սպարապետական ի Տարունոյ եկեալ և նշանացի զդի նորա գտեալ՝ տարաւ ի Պորպ յիւր աւան և եդ ի գերեզմանի: - 368. յորում տեղւոջ քաղաքն Տարունոյ շինեալ էր, ուր բնակեալ բայանայր զօրավարն Տաճկաց, զօրհասական արջոյն բերելով նմանութիւն, որ յաւուրս ձմերայնոյ

արմատովք պարենաւորեալ՝ ի մէջ կենաց և մահու անցեալ որջանան ի բոյնս իւրեանց: - 188. որ տիրէր յայնժամ Արզնայ և ներքոյ կողմանն Աղձնեաց մերձ ի սահմանս Տարունոյ: - 172. որ և զկողմանս Տարունոյ յինքն կորզեալ՝ թիկնաձեր բնաբանապէս ամիրայապետել ամենայն Հայոց: - 366. որ կացեալ իշխան ի վերայ Տարունոյ ամս է՝ յաւելաւ առ հարս իւր, թողեալ զաւակ իւր Աշոտ անուն: - 342. Որպէս վերագոյնն յիշեցաք սակաւուք վասն Ահմատայ՝ յինքն գրաւել զաշխարհին Տարունոյ, հանեալ ի Հայոց պետութենէ: - 366. վասն նորին իրաց ասեն կալաւ, զնա հաճոյանայր կացուցանել իշխան Տարունոյ որ ասի Հայոց իշխան, որ և եղև իսկ: - 342. ՎԱՍՆ ՈՒՆԵԼՈՅՆ ԴԵՐԱՆԿԻՆ ԶԿՈՐԱՊԱՂԱՏՆ ԻՇԽԱՆ ՏԱՐՈՒՆՈՅ, ԵՒ ԶԴԱՒԻԹ, ՈՐ ԱՐՔԱՅՆ ՃԱՆԱՉԷՐ՝ ԻՇԽԱՆԱՑՈՒՑԱՆԵԼՈՅ: - 340. փութացաւ ի կողմանցն Տարունոյ երագագոյն ճեպ զճեպի. – 322. Քանզի յոյժ պատկառ կայր ի պաշտօնատարութիւն հայրապետին իշխանն Տարունոյ, և նա սաստիկս հոգայր վասն նորա, թէպէտ ոչ օգտէր յիրին յայնմիկ: - 346.

ՏԱՐՍՈՆ - արդ ո՞ւր է Աստուածն այն, զոր դուդ ասես, վասն է՞ր ոչ փրկեաց զԿեսարիայ և զԱնտիոք և զՏարսոն և զԱմասիայ և զԵրուսաղէմ և զԱղէքսանդրիս և զԹեբայիտ և զայլ աշխարս: - 146. և առնու զԲաբելոն, և շինէ զՏարսոն ի ձև Բաբելոնի, գետոյ ընդ մէջ անցանելոյ որպէս խոնարհագոյն մասնաւորաբար գրեմ: - 16. Եւ հաւանեալ Խոռեմայ՝ եկն առ Հայրակղոս արքայ Յունաց, թողեալ ի նա զԵրուսաղէմ և զԿեսարիայ Պաղեստինացւոց և զամենայն կողմանս Անտիոքացոց և զամենայն քաղաքս գաւառացն այնոցիկ, և զՏարսոն Կիւլիկեցւոց և զմեծ մասն Հայոց և զամենայն զոր միանգամ կամեցաւ Հայրակղոս. – 152.

ՏԱՐՐ - մերժել հեռանալ … և որ այլ քաղցրագոյն վայելք ընդ երկնաւս ի վերայ երկրի, պայծառ գեղ արեգական և լուսնի, հանդերձ աստեղացն ճոխագործութեամբքն ընդ տարեբք երկնի յեղյեղլով, ծովու և այլոց ցամաքայնոց, և ջրայնոցն բարեփառ հոլովմանցն հրճուանաց, և որ ինչ ընդ այլք ընդ դոքօք պատկանին յարմարաբար տնտեսութիւնք առ սկզբնատիպն պատկերակերպութիւն: - 386.

ՏԱՐՐԱՊԱՇՏ - զոր ոմանք հուր մեկնեալ յամպոյ ասացին, և որդիք տարրապաշտիցն՝ զօտի Արամազդայ: - 32.

ՏԱՐՕՆ - Եւ ինքն եկն /186/ ձմերել ի Մուշ քաղաքին Տարօնոյ, ունելով ընդ իւր պատանդս, և Վասպուրականի ի նախարարութենէն Արծրունեաց և յազատաց նորա: - 188. և կոչին սոքա մեկնակազէնք սուրհանդակք, բնակեալք ի լերինն որ բաժանեն ընդ Աղձնիս և ընդ Տարօն: - 192. և տարեալ հանգուցանեն զնշխարս սրբոյն յԱշտիշատ Տարօնոյ ի տեղւոջ վկայարանի սրբոյն Յոհաննու Մկրտչին և Աթանագինի վկային: - 120. Զի և տուն Հայոց անուանեալ առաջին ասէին զՏարօն: - 366. Իսկ Գուրգէն օր ըստ օրէ աճէր զօրութեամբ ի բազում քան թէ ի սակաւ տեղիս, զոր ի Տարօն և զոր յԱնձաւացիս և զոր յԱրզն և զոր առ այլ ամենայն ուրեք – 324.

ՏԱՐՕՆԱՅ ԳԵՏ - և ընդ այգն ընդ առաւօտն՝ յԸռենայ Յամաց գեօղ և գիշերագնաց հասեալ մինչ ի Տարօնապ կոչեցեալ գետ: - 402.

ՏԱԻԱՂԵԼ - և հովիւքն տաւաղելով զգառինսն քշէին ի դալարաբեր հովիտն – 268.

ՏԱԻՐՈՍԱԿԱՆ - Այս լուր դառնութեան եհաս առ մեծն Վարդան Մամիկոնեան, որ էր ամրացեալ ի Տաւրոսականն Ձորայլ: - 126. գնացեալ պատահին նմա ի սպառուածս Տաւրոսական լերինն: - 66. Իսկ Վարդան Մամիկոնեան, որդի Համազասպայ Մամիկոնէի, թոռն սրբոյն Սահակայ, խոյս տուեալ գնաց զկողմամբքն Մոկաց, ի խոխոմս Տաւրոսական լերինն, ի լեսուրս Ջերմաձորոյ – 122.

ՏԵԱՌՆԱՆՄԱՆ - և դիմեցին ի մէջ նոցա ի չորս առաջս, ըստ նմանութեան տեառնանման խաչին, և բախեցին զճակատն և պատառեցին զռազմն և դարձուցին ընդ զառ ի վայրն և իջուցին ի լեռնէ անտի, և հարին ի հարուածս մեծամեծս. – 286.

ՏԵՂԱԹԱՓ ԱՌՆԵԼ - ՎԱՍՆ ՄԱՔԱՌՄԱՆ ԱՇՈՏ ԻՇԽԱՆԻ ԸՆԴ ՈՒԹՄԱՆԻԿՍՆ ԵՒ ՏԵՂԱԹԱՓՍ ԱՌՆԵԼՈՅ ՁՅԱՓՇՏԱԿԵԱԼՍՆ Ի ՆՈՅԱՆԷ: - 332.

ՏԵՂԱԼ - որ տեղասցեն ի վերայ ձեր նետս երկաթեղէնս և շուառունս մուխս պաղաւատիկք սլաքովք և հաստաձիգք աղեղանց և կռուփք բազմադիմիք՝ որչափ Խոսրովայ և ձեզ պիտոյ իցէ,,: - 138.

ՏԵՂԱՊԱՀ - Յետ բառնալոյ թագաւորութեանն ի տանէն Արշակունեաց, և հայրապետութեանն ի տանէն սրբոյն Գրիգորի՝ Ղևոնդ ոմն աշակերտ սրբոյն Մաշտոցի տեղապահ լինէր սրբոյն Սահակայ, և Յովսէփ եպիսկոպոս և Մովսէս և Մեղէս: - 120.

ՏԵՂԱՊԱՀՈՒԹԻԻՆ - Եւ զԳագիկ որ և Ապումրուան՝ զնա ոստիկան կարգեաց ի վերայ աշխարհին, տեղապահութեամբ տիրել, զի կարի մատաղօրեայք էին որդիք Դերանկին. Աշոտ էր Թ ամաց, յորժամ մեռաւ Դերանիկն, Գագիկ էր Է ամաց, Գուրգէն Ե ամաց: - 354.

ՏԵՂԵԱԿ - և կալան անդ զտիկնայսն ամենայն և զհարճսն և զորդիսն արքայի, և զերիվարսն արքունական, որով եկեալ էր Խոսրով արքայ ի Տիսպոն՝ հանին գաղտաբար ի գիշերի, և արքայ Խոսրով ոչ միոյ իւիք չէր տեղեակ. – 150. զի տեղեակ էր մոլար վարդապետութեանն նոցա – 206. զի և տեղեակ էր դիւանական մատենագրութեանցն: - 90. Իսկ երանելի եպիսկոպոսին Յոհաննու ընտրեալ իւր առանձնակ միայնաստան տեղեակ, աղօթից միայն պարապեալ, ի բաց կալով յեպիսկոպոսական հովուապետութենէ: - 324. տեղեակ են այսմ ուսումնասէր անձինք: - 196. տեղեակ և հմուտ Աստուածաշունչ գրոց, և ընդել և ծանօթս. – 204.

ՏԵՂԵԿԱՆԱԼ - Եւ իբրև ստուգեաց և տեղեկացաւ զամենայն՝ եգիտ բազմագոյն քան զամենեսեան զկապարճաւորս և զկորովիս աղեղնաւորացն Ելեմացւոց և Արաբացւոց, աջողակք յերկոցունց ձեռաց – 200. Տեղեկանայր և զայն ևս ըստ իւրաքանչիւր գնդից, զքաջացն և զկորովացն պատերազմողաց ըստ իւրաքանչիւր անուանց – 198.

ՏԵՂԵԿԱՑԵԱԼ - Զայս և ես իսկ տեղեկացեալ գիտացի ի բազմաց, յայնցանէ որ Շախրիքն կոչին. – 48. տեղեկացեալ և վասն տոհմին Արծրունեաց և Ռշտունեաց և որք ի նախարարութենէն Մամիկոնէից հասեալ գնացեալ ամրանային ի յամուրսն Տայոց – 98.

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ - այլ այսոքիկ փոյթք յօժարութեան առ ի յայլոց ասացելոց նախագունից տեղեկութիւն, և ոչ ինքեամբ և կամ նովաւ գտանել զհնարս գիւտի գրոց, թէպէտ և յառաջ քան զնա, այլ ոչ թէ և քան զԲաբելացւոցն իրս – 18. Խնդրէ և տեղեկութիւն թէ քանի՛ դրօշք /198/ են, կամ քանի՛ նշանք, և կամ քանի՛ առաջս զօրքն բաժանիցին, և կամ քանի՛ փողք գոչիցեն, և կամ քանի՛ թմբուկք դափիցեն: - 200.

ՏԵՂԻ - առ սովաւ այլ բազում թագաւորք կացին ի տեղիս տեղիս: - 58. ,,զի՞նչ կամիք, ասէ, առնել, և վասն է՞ր եկիք ի տեղիս յայս. – 144. Այլ և զռամիկ Նորագեղջ աւանին Ռշտունեաց առեալ ածեն ի տեղի վաճառուն Ոստանին Ռշտունեաց, արկեալ տոռունս ի պարանոցն հանեն ընդ սուր. – 202. այլ փոխանակ սոցա մատեայ ի տեղիս յայս, ձեռն արկեալ անիմաստաբար լի անհմտութեամբ և անհանճարութեամբ բուռն հարկանելով զմեծ զայս քերթուածութենէ: - 122. Անդանօր քաջն մեր Աշոտ զհիւանդութիւնն կեղծաւորեալ ի տեղւոջ օթոցին անկեալ դնէր, մինչ ակն ունէին յառաջանալ ի գործ պատերազմին: - 328. անտրտում խնդութեամբ դիմեցին ի տեղի սպանմանն, իբրև ի հարսանիս երիտասարդական ամուսնութեանն, ուրախ լինել որպէս փեսայ առ հարսին. – 266. ապա համոզեալ Սահակայ և Սմբատայ այլովքն նս՝ բարձին ի միջոյ զաղմուկն, և սէր բարեկամութեան ի մէջ երկոցունց հաստատեալ՝ գնացին յիւրաքանչիւր տեղիս: - 332. ապա ցուցին զտեղին ուր ծածկեալն էր. զոր առեալ վարեցին ի գերութեան, և ոսկի և արծաթ անբաւ խաղացուցին ի դուռն թագաւորին: - 142. Ապա փոյթ ինձ Թովմայի, որ ոչ վերջոտնեալ կալայ ամօթով զյետին տեղին – 122. առ սովաւ այլ բազում թագաւորք կացին ի տեղիս տեղիս: - 58. առ սովաւ թագաւորք բազումք կացին ի տեղիս տեղիս: - 58. առ սովաւ թագաւորք բազումք կացին ի տեղիս տեղիս: - 58. առաջապահեստ ճանապարհորդութեանն արարեալ զՄերշապուհ Արծրունի զօրավար Հայոց և զՎահան Ամատունի և եղբայր Մեհուժանայ՝ տարեալ հանգուցանեն ի տեղւոջ հայրենեացն վկայարանի ի Թորդան: - 108. Աստ դիպուածոցն եղելոց և զանուն ասացեալ՝ տեղի մսրոյ – 34. բայց այլ ամենայն իշխանք արևելեայք խոյս տուեալ յերեսաց նորա՝ ետուն

տեղի, ելին կալան զամրական տեղիս, ի բերդս և ի քաղաքս և ի լերինս, ընդ ինքեանս գումարեալ զզօրս և զբնակիչս աշխարհաց իւրեանց ամենայն պատրաստութեամբ: - 270. Բայց Գուրգէն խոկայր զմասն աշխարհին յինքն գրաւել, մանաւանդ զՈստանն Ռշտունեաց, որ էր տեղի սպանման հօր իւրոյ, գինս արեան զնա համարելով: - 362. բայց իբրև գիտացին զօրքն որ ընդ նմա եկեալ էին զնորա քաջակարծրագոյն արիութիւնն՝ և պատճառանօք այս ինչ այն ինչ դարձեալ դարձան յանցնիւր տեղի: - 310. գայ դարձեալ ի տեղին զբօսնուլ ի նմա. – 86. գրէ յականէ յանուանէ առ որ մնացեալն էին յաշխարհս յամուրս իւրեանց, զի փութով յիւրաքանչիւր տեղեաց առանց կասկածանաց և երկիւղի առ նա հասանիցեն – 296. Դարձեալ վերակնեալ յառաւօտինս կոյս խաղացեալ ի ճուաշոռտ ի Գետս աւան՝ շինէ անդ զվայելչական տեղի խրախից – 392. Եւ առեալ դահճացն զերանելին՝ ածին ի տեղի սպանմանն. – 296. և եկաք յերկուս աւուրս ի տեղիսն, ուր արեգակն ոչ ծագէ. – 50. և լրտեսք քաղաքապետին փութացեալ ասեն, ,,ահա մեկնեալ ի զօրացն զհետ որսոց ինչ յանհոգս յանզգուշութեան գայ ընդ այս ինչ տեղի. - 352. և տառապելոցդ որ եկեալ յեցեալ են ընդունայն գաղթականութեամբ՝ եղիցի արձակուրդ ի տեղիս իւրաքանչիւր – 216. Եւ ահա լոյս սաստիկ իջեալ յերկնից և ցոլացեալ ի վերայ սուրբ մարմնոյն, և շուրջ փակեալ զտեղեաւն, թէ ուրեք յարենէ նորա ցայտեալ կայր: - 224. Եւ աղբերքն որ ի տեղւոջն և այլ ջրոցն քամուածքն ի ծործորացն ի վայր՝ յարիւն դարձան: - 306. Եւ անդ գտեալ ամրագոյն անձաւ տեղի անկասկածելի ի պատերազմական գործոց և զնա պարսպեալ պատուարօք շուրջանակի – 392. և անդ մարգարէն Եզր և թագաւորն Սաղաթիէլ վախճանեալ թաղի ի Մարբակատինա ի բլրակի մի տեղւոջ. – 66. Եւ անցեալ գնացաք ի տեղեացն երկուցեալք – 50. առ աւար բազում և դարձաւ ի տեղի իւր ի բանակն իւրեանց: - 280. Եւ առեալ զմարմին նորա տիկնոջն Սեդայի կնոջն Աշոտի և եդ ի գերեզմանի, ի տեղւոջն որում Ջորոյ վանքն ասեն, ի վերայ գեաղջն Ահաւականից: - 370. և արձակեաց զզօրս իւրաքանչիւր զօրագլխօք եկելոց առ նա յամենայն ազգաց յաշխարհէս /գրքում յաշխարէս/ Հայոց՝ երթալ ձմերել յիւրաքանչիւր տեղիս բնակութեանց – 262. Եւ բազում անգամ ի բազում տեղիս տային ճակատ զօրքն Հայոց և Պարսից ընդ միմեանս. – 102. և բախեցին արտաքոյ զդուռնն ուր մտեալ էր իշխանն, և կալեալ զնա հանին ի բարձրագոյն տեղիս ամրոցին, և եդին ի բանտի ի ներքսագոյն սենեկացն. – 348. Եւ բարձեալ զօրքն Հայոց դիակապուտ արարեալ զզարդ և զզէնս զարի արանց և զքաջ երիվարաց, առեալ աւար բազում՝ գնան յիւրաքանչիւր տեղիս մեծաւ յաղթութեամբ: - 178. և բացեալ զտուն դիւանապահ մատենիցն և գտեալ զսերունդս Սենեքերիմայ, և զգործս նոցա զմիոյ միոյ ուրուք յանուանէ զառն իւրաքանչիւր զանուն և զքաջութիւն իւր, նոյնպէս և զայլն ամենայն ըստ տոհմից տեղեաց - 74. Եւ բնակեն առանձին ըստ տունս ազգաց, և այնչափ ի բացեայ են ի միմեանց՝ մինչ թէ ոք յարանց զօրաւորաց ի բարձրաբերձ տեղեաց ուժգին խանչիցէ՝ հազիւ թէ ուրեք կարիցէ առնուլ զբոմբիւն ձայնին, իբրև ի վիմաց ինչ արձագանգ/ք/գրքում՝ արձագան/ լինելոյ կարծիս բերելով – 190. և գլխաւորք Հայոց մեծաց ամրանային ի քարանձաւս ամրաշէն բերդիցս, ըստ տեղիս տեղիս և ըստ աշխարհս աշխարհս. – 124. և գնացին կալան զամրական տեղիս ով ոք և փութացաւ մտանել յամուրս ի բերդսն որ ի Վասպուրականի. – 238. և դառնային մեծաւ ուրախութեամբ և անտրտում խնդութեամբ յիւրաքանչիւր տեղիս:- 176. Եւ դարձաւ ի տեղի իւր ի Նախճաւան: - 306. և դարձեալ եդին ի վերայ ի տեղւոջ վկայութեանն նորա. ի Գոռոզու մերձ ի լեառն Քշիթ, ուր էր բանակ այլազգեացն: - 290. և Դերանիկն ճեմս առեալ սիգաքայլ երիվարաւն եհաս հանդէպ ճակատու գնդին վառեալ, միայն և առանձինն ի յառուամէջ տեղւոջ. – 352. Եւ եթէ ասիցէ, եթէ այլ թագաւոր նստուցից՝ արասցէ զո և կամեսցի և արձակեսցէ և մեք ընդունիմք, ահաւասիկ է տեղի թագաւորութեանս: - 144. Եւ ելեալ ի տեղին սրբութեան և կատարեալ զաղօթսն՝ ելին շրջել զբօսնուլ յայլ ևս տեղիսն: - 100. Եւ ելեալ յիւրաքանչիւր տեղեաց մի քան զմի յառաջանալ ի կոչումն Բուխայի, և ժողովեցան ի մի վայրի և եկին կացին առաջի զօրավարին Տաճկաց: - 296. և եկեալ ի տեղի մի ծովային և զվրանսն և զբանակն զամենայն ի ներքս եդեալ մտանէաք ի նաւսն – 50. Եւ

եղև ի մտանելն նորա ի Դատուան աւանն … ելեալ իշխանքն Հայոց յանձնիւր տեղեաց գնացին յանդիման լինել նմա – 340. և ետուն ի սուրբ եկեղեցին Դ ագարակս. զվանքն Փշոց և զագարակն Ահավանք, յանդիման եկեղեցւոյն որ ի կղզին, և զքարն Մանակերտ, որ է հանդէպ հարաւոյ կուսէ, և զԲերկրի և այլ բազում տեղիս – 356. և երթեալ բնակէ առանձնապէս ի Գողթն գաւառի ի տեղւոջ վարդապետութեան սրբոյն Մեսրովպայ, ճգնասէր հրեշտակակրօն վարուք, երանելի մարդկան և ահարկու դիւաց: - 120. Եւ է զի ի նուրբ և ի հուն տեղիս ջուրցն անկեալ՝ ի նմին խրեալ կան անշարժ, և դիւրաւ անկանիցի ի ձեռս որսորդաց. – 260. Եւ ընդոստուցեալ Խոսրով ի յահէն և զարհուրեալ մեծաւ դողութեամբ՝ խնդրեաց իւր տեղի փախստեան, աղաղակեաց և ասէ՝ ձի, ձի, և մտեալ յասպաստանն՝ ոչ հանդիպեցան ձիոյ: - 152. և ըստ բարբարոսական հմայիցն պատուէ զտեղիս այս, որպէս ի նմանէ սկսեալով զփոփոխումն առնու ի խոնարհագունիցն ի բարձրագոյնսն: - 88. և թափառական զվէմս ապաստան արարեալ յանկասկածագոյն տեղիս դարանի ի փոքր վիմամէջս ի կարկառս հովտաձևս հանդէպ հարաւոյ քաղաքաբերդին Վանի, մօտ այն տեղի, յորում բղխէ աղբիւրաբար առ ստորոտով բլրակի միոյ, մօտ յեզր ծովուն–84. և թափառական զվէմս ապաստան արարեալ յանկասկածագոյն տեղիս դարանի ի փոքր վիմամէջս ի կարկառս հովտաձևս հանդէպ հարաւոյ քաղաքաբերդին Վանի, մօտ այն տեղի, յորում բղխէ աղբիւրաբար առ ստորոտով բլրակի միոյ, մօտ յեզր ծովուն – 84. և ի գինարբուսն ի տեղի մատռուակութեան յառաջացուցեալ՝ ի գահ նախարարութեան ձգեալ կացուցանէ – 64. Եւ իբրև եհաս առ թագաւորն որ ինչ գործեցաւն՝ ոչինչ գոյր տեղի այլ պատասխանւոյ. բայց ասէ, ,,արժանապէս այն գործ նոյն գործեցաւ,,: - 370. և ինքն Աշոտ ճողոպրեալ միաձի ելեալ եհաս փախստեայ մինչ յՈստանն Ռշտունեաց, թողլով զբուն բանակն ի նմին տեղւոջ. – 332. Եւ ինքն թագաւորն ժողովեալ զօր հարուստ աւելի քան զհազարաց հնգից և քսանից, և եկն անց յայնկոյս գետոյն Երասխայ, և բանակեցան ի տեղւոջն: - 382. և իսկոյն հարեալ զնա այսոյն պղծոյ և ընդ զառիվայր լերինն թաւագլոր խաղաղացուցեալ հարուստ ձգմամբ մինչ ի դաշտավայր տեղին ուր այգեստանքն: -378. Եւ կարգեալ հաստատեաց Հայրակղոս զսուրբ նշանն անդէն ի տեղւոջ իւրում ի սուրբ Գողգոթայ: - 154. Եւ կացոյց զնա իշխան յիւրում հաւատարիմ տեղւոջ, և այնպէս բարեձևագոյն ճոխացոյց զայրն երևելի: - 308. և հասեալ ի Բագրաւանդ գաւառ ի Զիրաւ գեօղ՝ կամէր անցանել ի թագաւորաբնակ տեղիսն Հայոց: - 106. Եւ հասեալ ի մի վայր զան հովիտն Կուղան, ուր Գուրգէն բանակ արարեալ /362/ էր ի Կարկինեպանս տեղւոջ բազմաձեռն զօրու. – 364. և հասեալ ի տեղի ապառաժ քուաւոր՝ անդէն զետեղէր և զգրաստն: - 34. և ղաշիկ արարեալ յայնկոյս քան զՎանտոսպ, ի տեղւոջն արձանաշար քարակարկառ գոգաձև միջոցի երկուց բլրակաց, որ հայի յԵրիվարաց արկման դաշտն, ի վերայ Լեզւոյ գեաւղջն, որ զաւրացն գեղեցիկ առասպելաբանեն սպիանած վերայն սպանելոցն ի մանկանցն Շամիրամայ: - 334. Եւ մինչ կարի և ահագին սաստիկս կուտեցաւ ի վերայ նորա ամբոխն, և ամբաստանքն միաբարբառ զաղաղակ /288/ բարձեալ առաջի բռնաւորին զօձիս պատառեալ ասէին, ,,մահապարտ է, չէ պարտ դմա կեալ, և ոչ առնուլ տեղի պատասխանւոյ,, - 290. և յաջմէ սեղանոյն շինեալ ընդ նովիմբ հիմամբ ի տեղի յիշատակարանի խաչելութիւն տեառն Գողգոթայ տեղւոջ – 390. և յաջմէ սեղանոյն շինեալ ընդ նովիմբ հիմամբ ի տեղի յիշատակարանի խաչելութիւն տեառն Գողգոթայ տեղւոջ – 390. և նորա առեալ տանի զնա ի լեառնն Սիմ, ի տեղի հայրենեաց բնակութեան յաշխարհին Տարունոյ: - 84. և նորա արկեալ զնա ի փոքրագոյն տեղի մի նեղ, և ինքն փութացաւ գոյժ ետ վասն նորա՝ մահու պատահել, լի անմտութեամբ մոլի աբեղայն, որում ոչ հրամայեցաւ. – 320. և ոչ ըստ տեղիս տեղիս ցուցանէին զհանդէս մարտիցն և զյաղթութեանն քաջութիւն, այլ բոլորովիմբ ամենայն ուրեք ախոյեանայարձակ սլացմամբ ընթանայր. – 312. և պաշտօն աւուրն ի գլուխ ելեալ, ընթերցան քահանայքն զսուրբ Աւետարանն ի տեղիս տեղիս ի բանակին – 228. և պաշտօն աւուրն ի գլուխ ելեալ, ընթերցան քահանայքն զսուրբ Աւետարանն ի տեղիս տեղիս ի բանակին – 228. Եւ սկսաւ երկիրս առնուլ զնորոգումն, և եկեղեցիքն

պայծառանալ ի զարդ և ի պաշտօնս շքեղութեան, և ցրուեալքն դռոթ տուեալ դարձան յիւրաքանչիւր տեղիս՝ շինել, տնկել, մոռանալ զցաւսն և զտրտմութիւնսն զոր կրեցին: - 318. և տարեալ հանգուցանեն զնշխարս սրբոյն յԱշտիշատ Տարօնոյ ի տեղւոջ վկայարանի սրբոյն Յոհաննու Մկրտչին և Աթանագինի վկային: - 120. Եւ տարեալ հանգուցանեն ի տեղւոջ հանգստարանացն իւրեանց ի սուրբ Խաչի վանս: - 318. Եւ քանդեն աւերեն զմեհեանն և յատակեալ զտեղին՝ շինեն նորին քարամբք զմեծ եկեղեցին զսուրբ Գրիգորն ի Բլուր տեղւոջն – 126. Եւ քանդեն աւերեն զմեհեանն և յատակեալ զտեղին՝ շինեն նորին քարամբք զմեծ եկեղեցին զսուրբ Գրիգորն ի Բլուր տեղւոջն – 126. զի ասէ, ,,որ աներկիւղն է՝ անկանի յորոգայթս և ի վիհս, և ի տեղիս ուր ոչ եղիցի այցելութիւն յաւիտենից,,: - 354. զի է անդ լիճ մի մեծ մօտ ի տեղին, որ էր տեղի ասպարիսի ճակատամարտ զօրու նահատակութեան քաջացն մերոց իշխանացն Վասպուրականի – 226. զի է անդ լիճ մի մեծ մօտ ի տեղին, որ էր տեղի ասպարիսի ճակատամարտ զօրու նահատակութեան քաջացն մերոց իշխանացն Վասպուրականի–226. զի թագաւորն Լիդէացւոց ասպազինեալ զերիվարն շուրջանակի պղնձի արկանելեօք յոտից մինչ ի գլուխ բովանդակ չթողեալ տեղի՝ անկոռւելի լինել զինուի – 64. զի ի գնալ Արտաշէսի յայսմ տեղւոջէ՝ ոչ ևս յաւել ձեռն Երուանդայ տագնապել զնա – 88. զոր յիւրում տեղւոջն կարգաբանութեան գրեցից որ ինչ վասն սորա: - 74. զոր տարեալ հանգուցանեն ի տեղւոջն, զոր այժմ Ջորոյ վանս անուանեն, ի վկայարան սրբոց Հռիփսիմեանց. – 104. զոր ցուցանեմ յայլում տեղւոջ, և զոր ինչ արար արքայն Պարսից ընդ տունն Արծրունեաց ի սադրելոյ Բարծումայի ամբարշտի: - 130. ընդ որ յոյժ ուրախացեալ Տիբերի պատուէ ծիրանեօք և բրաբիոնաւ ի Ստադին տեղւոջն.–80. ըստ սովորութեան ծանօթացուցանել զիւրաքանչիւրոց առանձնաւորութիւն և զպատուոցն գերակայութիւն, կամ ի ծնողաց կամ ի տեղւոյ կամ ի գաւառէ կամ յազգէ կամ յարիութենէ կամ ի պատահմանէ սկիզբն առ: - 288. Իսկ անօրէն զօրավարն … գնաց եմուտ ի ջերմագոյն տեղիս ի քաղաքն Դուին ձմերել անդ. – 262. Իսկ զթագաւորաբնակ տեղին մեծին Տրդատայ տան ի ձեռս Վահանայ Արծրունւոյ՝ շինել նմա տուն թագաւորաց, արարս պատրաստութեամբ. – 126. Իսկ զտեղի թագաւորութեանն Հայոց հրամանաւ Յազկերտի ունի Մշկան զօրավար Պարսից: - 120. Իսկ սուրբն ելեալ հանդերձ դահճօքն ի տեղի ասպարիսի կատարմանն երկնաւոր նահատակութեանն՝ ի ծունր իջեալ կայր յաղօթս – 206. Իսկ Գուրգէն օր ըստ օրէ աճէր զօրութեամբ ի բազում քան թէ ի սակաւ տեղիս, զոր ի Տարօն և զոր յԱնձաւացիս և զոր յԱրզն և զոր առ այլ ամենայն ուրեք – 324. Իսկ Երուանդայ հետազօտեալ գայ բնակի առ ստորոտով լերինն ի գլուխս Տոսպ գաւառի, և կոչէ զտեղին /82/ Երուանդականս. – 84. Իսկ ի Վասպուրական տէրութեանն ի տեղւոջ զօր արութեան մնաց Գուրգէն, և այլ տոհմք Արծրունիք: - 298. Իսկ իշխանն Վասպուրական, այն ինչ հուպ ընդ հուպ եկն ի ժամադրեալ տեղին. ընդ որ յոյժ ուրախացեալ թագաւորն, իբրև զերծեալ ի կասկածանացն, զոր ունէր յիշխանէն Սիւնեաց: - 382. իսկ նա առ երագութեան ձեռին ձգեալ զսուսերն՝ եհար զերեսս Ջուանշիրայն, և խլեաց զաչս նորա, և ինքն դարձաւ մեծաւ յաղթութեամբ, եմուտ յամրական տեղիսն: Եւ նոքա յո՛վ և աճապարեցին: - 310. Իսկ վարդապետն Եղիշէ էր ի ժամանակին յայնմիկ բնակեալ ի գաւառին Ռշտունեաց ի ծովեզերին, յորում տեղւոջ և հանգեաւ իսկ ի Քրիստոս սուրբն Աստուծոյ Եղիշայ: - 130. Իսկ տեղի շիրմին յորում նախահօրն եդան ոսկերք՝ կատարման և կառափման, որ նոյն ինքն է գագաթն և Գողգոթայ ըստ եբրայականին, երկակի անուամբ. – 34. Իսպառ ստորև ամրականին ի գոգաձև տեղւոջն … շինեաց եկեղեցի հրաշագործ հրաշազան յօրինուածով եկեղեցի ի տաշեալ քարանց ի Մանազաւեան քաղաքին ի Վանտոսպ, և հիմնեցուցեալ յանուն սրբոյն Սիօնի, որ ի սուրբ քաղաքն Երուսաղէմ. – 390. Հասեալ ի տեղիս յայս ի պատմութիւն Աբգարու թագաւորի Հայոց – 76. Մատուցեալ առ թագաւորն Արշակ ասէ. ,,ոչ բարեօք իմացեալ առաջնոց թագաւորացն, զի ոչ կալան զտեղիս զի զայս ի բնակեալ ճոխութեան թագաւորական վայելչապէս խրախճանութեանց. – 100. մինչ տայր պատերազմ ընդ Սպանիացիսն վասն ոսկեհան տեղեացն. – 80. Մինչդեռ կայր ևս կենդանի՝ ետ կանգնել փայտ մի մեծ և բարձր

յոյժ, և դնել զնա ի ծայր փայտին, ունել ի բարձրաւանդակ տեղւոջ. – 290. Յայնմ ժամանակի էին եղբարք բռնակալք ոմանք ի կողմանս ապառաժ Արաբիոյ ի տեղւոջն Փառան որ այժմ կոչի Մաքայ, արք պատերազմողք /156/ զօրագլուխք, պաշտօնատարք մեհենին Ամովնացւոց պատկերին, որ կոչի Սամամ և Քաբար: - 158. Յորում տեղւոջ բանակ կրօնաւորաց կարգեաց, և հաւատաց զառաջնորդութիւնն նախասացեալ քահանային – 394. յորում տեղւոջ յառաջագոյն ապարանք պարսպաւորք եղեալ էր Վարդ պատրկի Ռշտունւոյ հայկազնոյ – 394. յորում տեղւոջ քաղաքն Տարունոյ շինեալ էր, ուր բնակեալ բայանայր զօրավարն Տաճկաց, զօրհասական արջոյն բերելով նմանութիւն, որ յաւուրս ձմերայնոյ արմատովք պարենաւորեալ՝ ի մէջ կենաց և մահու անցեալ որջանան ի բոյնս իւրեանց: - 188. Նա և տեղիք սրբութեանց տունք աղօթիցն զշարժմանն կիրս կրեալ, պատառմամբ որմաշարժ լինելով – 358. Նմանապէս, կամ թէ ևս հրաշափառագոյն զյաղթութեան մարտսն յօրինեալ յարդարեաց զպարտութիւն ի վերայ ազգին Իսմայէլի մեծ զօրավարն Գուրգէն, և իսպառ կանգնեաց զնշանակ յաղթութեան ամենեին ամենայն ուրեք ընդ ամենայն տեղիս.–312. նորա զՍամուէլն զայն կացուցանէ ի տեղի եպիսկոպոսապետութեանն Հայոց – 118. նորա լուեալ էր ի պարսկէ ումեմնէ, ի ձորոյն Շատուանոյ, որ էր ընդ դահիճսն, և ի սկզբան վկայութեան մինչ ի կատարումն սրբոյն՝ ի տեղւոջ անդ հանդիպեալ լինէր – 206. շինէ և անդ ամրական տեղի, դժուարամատչելի ասպատակող հինից, դնելով ի նմա նմանապէս ապարանս փողոցայարդարս, տաճարակերտս սենեկագործս, բաւական ի պէտսն պատրաստեալ – 392. Որ անսայթաք հաւատով յառաջացաւ առ աւարտումն պատերազմին փութացեալ, և ելեալ յամրական տեղւոյն սակաւաձեռն զօրականաւն, որ պահէին զպահպանութիւն Շամիրամ բերդին – 400. որ և ոչ տեղի գերեզմանի անգամ երևեցաւ նոցա մինչև ցայսօր: - 402. որ էին ի տեղւոջն յայնմիկ - 268. որոյ գալուստն ազդ եղեալ գնդի այլազգեացն՝ փախեան գնացին բացագոյն, կալան զամրական տեղիս, ցրուեալ ընդ լեռնայինսն անյայտ թաքստեամբ: - 402. Որոց դիպօղ ժամ գտեալ՝ արտաքս ելեալ ի բանակէն, զերծեալք իբրև զայծեամն ի հնարից որսորդաց՝ գնացին խաղաղութեամբ յիւրեանց տեղիս և զնա թողին լքեալ ամօթալից: - 344. որք դատեցին ի սուրս իւրեանց, և եկեալ ի տեղի բանակի նոցա՝ առին աւար բազում - 162. ունելով զտեղիս տեղիս, տալով ձեռս յովպէտ և ժամագիւտ դիպուածք ումեք հանդիպանայր – 68. պատշաճագոյն զպատերազմին խրոխտական բարձրավզութեամբ վանել զախոյեանսն, և առեալ զբանակն յաւարի, և ընդ սուր հանեալ յոլովս քան թէ սակաւս, հասին ի զոգ տեղի մի ի Մղունիս գեօղ: - 402. Սապէս և Գուրգէն կատարելագործեալ ի բարձրաւանդակ ի սարաւանդակ տեղւոջն բարեձևագունի վայելչացուցեալ զհրաշակերտ յաջմէ և յահեկէ սեղանոյն երկուս ևս եկեղեցեօք: - 396. Սովորութիւն է գրոց, որպէս զիրն նոյնպէս և զտեղին վերաբերեալ, կամ ըստ ծանօթութեան, կամ ըստ պատուոյ: - 288. սուրբքն ոչ եթէ զերևելի տեղիս ախորժեն, զի թէ ոչ այսպէս, ո՞չ նոքա զնեղ և զանձուկ կեանս կան մահու չափ,,: - 100. փոխէ անդ գեօղս և շինէ զբլուրն, որ տեղի բանակի դաշիկ առնելոյ էր տանն Արծրունեաց, և անուանեաց յանուն իւր զձեռակերտն Գագկակերտ: - 396. փոքր ինչ ի վայր խաղացեալ ի տեղին որում Զորք ասեն: - 392. քանդեն աւերեն զգեղեցկաշէն ամրական տեղիսն - 104. Քանզի էր և տեղին այն յառաջագոյն տեղի մեհենից Վահեավահանի: - 334. Քանզի էր և տեղին այն յառաջագոյն տեղի մեհենից Վահեավահանի: - 334. քանզի յառաջագոյն տուեալ էր զնոսա ի ծառայութիւն քեռ իւրոյ Տիգրանուհեայ կնոջ Աշղահակայ, յասացեալ տեղիս բնակեցուցանելով: - 64. քարինս տաշահոս հոլովեալ ի նիւթ եկեղեցւոյն ի Մանազաւեանն նահանգէ ընդ Բզնունական ծովն բերեալ մատուցանէ առ կատարումն հրաշագեղ դիտանոցին սրբոյն Սիօնի, այլովքն սրբական անուանակոչութեամբ տեղեաց տնտեսականին բանին Աստուծոյ մարդ եղելոյ: - 396. Եւ ելեալ ի տեղին սրբութեան և կատարեալ զաղօթսն՝ ելին շրջել զբօսնուլ յայլ ևս տեղիսն: - 100. Եւ եղեալ պատերազմ մեծ Արշակայ և Խոսրովու յեզր ծովուն Գեղամայ ի մօրին տեղւոջ – 112. Եւ եղև իբրև հասին ի տեղի կատարմանն ասպարիսի նահատակութեանն՝ ծունր եդեալ կային յաղօթս

– 266. և մուտ եղեալ ի տեղին … ետուն տանել զթուղթն, լի թիւնիւք սատանայական իմացմանց, իբրև զկապարճս լի նետիւք դեղեալ ի գաղտնիս ի գրկաց թռուցանել ի նպատակն: - 234.

ՏԵՂԻ ՏԱԼ - այլ նա ոչ տայր տեղի բանից նորա, քանզի քաջագոյնս գիտէր զբարս նորա խաբեբայս: - 278. Այլ քանզի յոյժ առաւելեալ էր իմաստութեամբ Գագիկ՝ տեղի տայր բովանդակ գաւառապետաց զօրագլխաց աշխարհիս, գնայր ընդ նոսա իմաստութեամբ խորագէտ հնարաւորութեամբ, ըստ անձնիւր գահու մեծարեալ պատուադրութեամբ հաճոյանալ ախորժէր նոցա: - 354. բայց այլ ամենայն իշխանք արևելեայք խոյս տուեալ յերեսաց նորա՝ ետուն տեղի, ելին կալան զամրական տեղիս, ի բերդս և ի քաղաքս և ի լերինս, ընդ ինքեանս գումարեալ զզօրս և զբնակիչս աշխարհաց իւրեանց ամենայն պատրաստութեամբ: - 270. բայց մինչ էաք յաշխարհին մեր՝ առաջնորդքն մեր ոչ ետուն տեղի ընդունել զասացեալսն ի սահմանին խոստովանութեան: - 132. Բայց նոքա քանզի ապաստան լեալ յանկասկածելի յամուրս և ի բազմութիւն զօրացն և ի քաջութիւն արանց պատերազմողաց՝ և ո՛չ առ փոքր մի խոնարհեցան ի բանս նորա կամ ետուն տեղի պատասխանւոյ. – 274. Բայց ոչ ետ տեղի Գուրգէն այսմ՝ յերկուց պատճառաց, մի՝ զի մի՛ ապստամբ երևեցայց Տաճկաց բռնաւորին – 316. Բայց քաղցրաբարոյ իշխանն Աշոտ, հեզն և ամենայն բարեօք յղփացեալն, տեղի ետ ասացելոյն: - 362. Եւ դարձեալ պատասխանի ասէ, մի՛ տալ տեղի՝ լսել հրամանի թագաւորին. թէ վտանգ ինչ հասանէ՝ կրել հանգոյն զինչ կրեցինն: - 132. և ոչ առ փոքր մի ինչ ներեաց կամ անսաց /264/ տալ տեղի պատասխանոյ, այլ հրամայեաց դահճացն տալ ի վերայ նորա զվճիռ մահու, փութով զրաւ առնել նոցա ի սատակումն սրոյ: - 266. զի և այլազգիքն տեղի ետուն և փախեան յերեսաց Ապումկդէմայ. – 304. Իսկ Ասուդ գհետ Դարէհի ելեալ ի պատերազմ ընդդէմ զօրագլխացն Աղէքսանդրի՝ Հերակղեայ նահատակութեամբն դիւցազնաբար ի դիմի հարեալ՝ ի բաց նահանջէ զուժեղագոյնս զօրագլխացն Աղէքսանդրի հարուստ ժամ մի, մինչ հիացումն զօրօքն արկեալ՝ տային տեղի փախստէի. – 68. Իսկ Գրիգորի ոչ բերելով զընդդիմակացսն նորա կատարել՝ խօսի ընդ նմա սիրով խաղաղութեան, և բաժանել զաշխաս յերկուս՝ տեղի ետուն միմեանց ի խաղաղութիւն: - 310.

ՏԵՂԻ ՏՈՒԵԱԼ - Բայց հասեալ Բուխայ անց ընդ գետն մեծ զոր Կուրն կոչեն, և յորձանուտ շարժման գարնանային հոսանացն տեղի տուեալ ելանել զօրուն և բնակել շուրջ զքաղաքաւն. – 270. Զորոց տեղի տուեալ գնացին յամուրս իւրեանց – 362.

ՏԵՂԻՍ ՏԵՂԻՍ - և ոչ ըստ տեղիս տեղիս ցուցանէին գհանդէս մարտիցն և զյաղթութեանն քաջութիւն, այլ բոլորովիմբ ամենայն ուրեք ախոյեանայարձակ սլացմամբ ընթանայր. – 312. և գլխաւորք Հայոց մեծաց ամրանային ի քարանձաւս ամրաշէն բերդիցս, ըստ տեղիս տեղիս և ըստ աշխարհս աշխարհս. – 124. ունելով զտեղիս տեղիս, տալով ձեռս յովպէտ և ժամագիւտ դիպուածք ումեք հանդիպանայր – 68.

ՏԵՆՉԱՆՔ - և ցանկութիւն տենչանացն աճէր. – 70.

ՏԵՍԱԿ - և զոր օրինակ ոք զբոլոր անդամս մարմնոյ յօշիցէ ի մասունս, և ոչ երևի տեսակ կենդանի մարդոյն, որպէս է գոյացութիւն խառնուածոյն. – 194. այլ որպէս արմատն՝ նոյնպէս և ուռն և պտուղն. եթէ սկիզբն սուրբ է՝ ապա և արմատն, ապա զինչ ուռն՝ նոյն և տեսակ: - 258. զի եղեալն՝ ի նիւթոյ և ի տեսակէ է, որ ի նիւթոյ է՝ ոչ է անմարմին, և ոչ անբաւ զօրութիւն ունի: - 54.

ՏԵՍԱՆԵԼ - Իբրև ետես կայսր Հայրակղէս զչարիսն ամենայն, որ եկին հասին ի վերայ նորա՝ ակամայ կամեցեալ ցուցանել բարեկամութիւն՝ ել ընդ առաջ նոցա, մեծարել իբրև զվաստակեալս և զհիւրս, ընկալաւ զնոսա մեծամեծ /142/ ընծայիւք. – 144. ,,արիք երթայք առ զօրավարն, տեսէք հաւաստի, և ի վերայ հասեալ գիտասցուք, թէ ի՞ւ իւիք կարասցուք հաճել զմիտս նորա ի խաղաղութիւն,,: - 214. ,,և զտանջողացն, ասէ, զճողփիւնն լսէաք, և զհարուածսն եկեալս ի վերայ թիկանցն տեսանէաք – 50. ,,զի՞ զվայր կոխես զաստուածոյ զտուն տեսանել, Աղէքսանդրէ. – 50.,,տեսէք, արհամարհոտք, և զարմացարուք և եղծարուք – 200. ամբարձին զաչս իւրեանց և տեսին, զի զկանայս և զմանկունս իւրեանց

տեսին ընդ աշխարհական գերիսն: - 220. ամբարձին զաչս իւրեանց և տեսին, զի զկանայս և զմանկունս իւրեանց տեսին ընդ աշխարհական գերիսն: - 220. այլ և մարդոյն ևս յստակագոյնս տեսանել զիւրաքանչիւրոցն ի նոցանէ մտածութիւն. – 22. այլ ի վերայ դնիցի բարձրաբերձ աշտանակի առաքելական եկեղեցւոյ, որպէս զի տեսցեն և փառաւորեսցեն զՀայրն երկնաւոր: - 204. այլ հրամայէր միայն զգուշանալ և ոչ ելանել պատերազմաւ ընդդէմ նոցա, մինչև տեսցէ զելս իրացն. – 162. այլ տեսից զքեզ զինու և աղեղամբ և սրով, քաջ արամբք և ընտիր երիվարօք. – 278. այն որ յստակագոյնս գիտէ և տեսանէ զամենայն, յառաջ քան զլինել իւրեանց. – 28. Ապա թէ ոչ՝ տեսից վասն քո,,: - 236. առաջի տեսանելով զկապուտակ ծիրանափայլ դաշտաձև ծովն. դաստակերտս մեծամեծս շուրջ զեզերբն անտառախիտ ծառովք և գինեբեր որթովք և զանազան պտղովք. – 86. Ասեն. թո՛ղ տեսցուք զելս այսր համբաւոց: - 352. Ասէ երանելին. ,,տեսանեմ զքեզ որպէս զմի ի զառանցելոց խելագարեալ որպէս խօսիսդ. – 294. արդ տեսանեմք զերկնային մարմինն, զի կարգաւորաբար անդադար շարժութիւն ունի, այսինքն արեգակն և լուսինն և աստեղք և այլք նոյնպիսիք.– 54. արդ տես, մեղք քան զմեղս և տանջանք քան զտանջանս: - 336. բայց զտանջողսն ոչ տեսանէաք: - 50. Բայց նոքա ոչ վերակնեալք յօրէնս Տեառն, այլ ստացան իւրեանց անունկնդիր լսարանս, զչարագոյնն իժի և զանբժշկականն քարբի, արբեցան գինով յիմարութեանն. ստացան աչս, որովք ոչ տեսանիցեն, և ականջս, որովք ոչ լուիցեն. – 182. Բայց քանզի արդ տեսանեմք զձեզ անձնեայս և գեղեցիկս, և գեղ երեսաց ձերոց պատշաճագոյնս և վայելուչս, և որդիք թագաւորացն այսր աշխարհի լեալ էք դուք, և արժանի էք արգահատելոյ – 244. բայց ազդ լինէր իշխանին ի նոյն գնդէն Տաճկաց՝ մի տեսանել զերեսս նորա, ծանուցանելով նմա՝ զոր ինչ խորհեալ էր վասն նորա և վասն աշխարհին նորա: - 184. Բայց եթէ այդ այդպէս ոչ եղիցի, որպէս ասացի՝ աւելի ևս տեսցես քան զոր տեսեր, սուր և պատերազմ,,: - 286. Բայց եթէ այդ այդպէս ոչ եղիցի, որպէս ասացի՝ աւելի ևս տեսցես քան զոր տեսեր, սուր և պատերազմ,,: - 286. Բայց երանելիս այս Գէորգ … դարձաւ ի դահիճն կոյս պատճառաւ աղաչելութեան՝ տեսանել, թէ ընդէ՞ր ոչ հատանիցէ սուսերն – 266. Բայց Յամանիկն իբրև լուաւ ի դարձուցանելն Աշոտի զԱհմաթ լի անարգանօք, և զխորհուրդն զոր խորհեալ էին ի վերայ Հայոց ցրել՝ զօրհասն ի վերայ իւր համարեցաւ տեսանել. – 350. դու ընդէ՞ր ոչ երկիրպագանես Բէլայ, եթէ ո՞չ տեսանես ո՞րչափ ուտէ և ըմպէ: - 38. Ես ինքնին աչօք իմովք տեսի զայրն զայն, որ հարեալն էր զնա, և ի նմանէ ստուգեցի վասն նորա: - 190. Եւ առհասարակ ամենայն տիեզերք ծխեալ տեսանիցեն, և ի քէն ամենևին հուրն ոչ պակասեսցէ յաւիտեան, իբրև զհնոց խեցագործաց այրեսցիս, և քեզ ոչ եղիցի հանգիստ: - 164. Եւ զարեգակն ևս ոչ տեսանէաք, այլ ընդ աղօտ օդ յաւուրս Ժ. – 50. Եւ ընթանային ամենեքեան յաճիւռ՝ տեսանել զնոսա և ի վերայ հասանել, թէ զիա՛րդ ի գլուխ ելանիցէ ատեանն: - 242. և կարաւան գաղթականին տեսանէր զփայլիւն զինուցն և զշողոլ սուսերացն, և այսր և անդր խուճապական լեալ հալածելս, իբրև զոչխարս ի գայլոց: - 228. Եւ տեսին առ հասարակ ամենայն բազմութիւն կարաւանին: - 224. Եւ ամենայն մեծամեծքն հանդերձ խառնաղանճ /240/ ամբոխիւն դռոթ տուեալ, ոչ միայն ըստ հրամանի թագաւորին ելանել զհետ աղաղակի փողոյն և արքունի կոչնականացն՝ այլ փութացան տեսանել, թէ ո՛վ ոք և ո՛րպիսիք են սոքա – 242. և ասէր, թէ ,,զայս ամենայն զոր գրէ կաթողիկոսն Հայոց և առ ապստամբութիւն խորհել առ ի քէն, և զնախարարսն Հայոց զՅունաց թագաւորին խորհել հնազանդութիւն. արդ տեսանել պարտ է վասն այդր,,: - 130. Եւ արդ յայտնի լիցի, զի որչափ բաւէ զօրութիւն իմ և իցեմ կենդանի՝ կացից ընդդէմ զօրութեամբ և ուժով տեառն Աստուծոյ, և ոչ տեսից զքեզ սիրով խաղաղութեան. – 278. Եւ գրէ առ իշխանաց իշխան՝ ի բաց լքանել եթէ ունիցի ինչ անօգուտս խորհել, ապա թէ ոչ՝ տեսից զքեզ, ասէ, ի զէն և յասպազէն և ի ճակատամարտ. – 322. Եւ դարձեալ՝ ետես Տէր Աստուած զերկիր և էր ապականեալ. – 28. և դու նոյնպէս սակաւուք եկ, կամ թէ ևս աւելի արամբք, և տեսցուք /226/ զմիմեանս,,: - 228. Եւ ելանէին գունդք գունդք շտապով և ճեպով մի զմիոյ կնի, և ամենայն ոք որ տեսանէր՝ ընդ մեծաւ երկիւղիւ ներքաղրեալ լինէր: - 284.

Եւ եղև զի ամբարձ զաչս իւր և ետես, զի պնդեալ գայր հեծեալն զկնի նորա – 230. և զայսոսիկ թէ բարիոք ումեք թուեսցի տեսցուք. – 24. և զորդիս ձեր և զմանկունս տեսանելով ի գութ խանդաղատանաց ի գիրկս իմ ընդունէի ընծայիւք մեծաւ զգուանաց, իբրև զառ ի յինէն ծնեալս: - 216. և ինքն գնաց անտի և եմուտ ի Պարտաւ՝ ամերել անդ, և տեսանել վասն յետին կատարածին աշխարհիս Հայոց, թէ որպէս ի գլուխ ելանիցէ. – 298. Եւ խնդութեամբ մեծաւ լցեալ զաշխարհս, որպէս զոք ի մեռելոց եկեալ տեսանիցեն: - 372. և խնդրէին տեսանել թէ ո՛րպէս կարասցեն գտանել զելս իրաց վտանգին ի վերայ հասելոյ: - 206. և կամեցեալ իմ պատմել և ձեռնարկել տեսանել ի ձեռն ծառայից, ուր էր երջանկացն վայր - 50. Եւ կոչնականքն ընդ այգն ընդ առաւօտն փութացուցեալ ասեն, ,,եկ, տեսցուք զմիմեանս սիրով խաղաղութեան,,. – 352. և կուտէր խումբս սինկղիտոսաց զամենայն իմաստունս Ասորոց և Բաբելացւոց տեսանել վասն գործոյս այսորիկ: - 180. Եւ յայնմ ժամանակի երթեալ ժողովէին ի քաղաքն Եդեսացւոց արք ԺԲՌ յամենայն ցեղիցն Իսրայէլի զի տեսին եթէ մեկնեցաւ անտի զօրն Պարսից, և թողին ի բաց զքաղաքն. – 156. Եւ նոցա ընկալեալ զխնդիրսն՝ հաւանեցան առնել ըստ կամաց նորա, մինչև տեսցեն եթէ զի՞նչ պատասխանի եկեսցէ նոցա յարքայէն իւրեանց, և կամ զօրուն զի՛նչ հրամայեսցէ առնել: - 144. և ոչ ևս այնուհետև ինչ ոչ տեսանէաք, ոչ հաւ և ոչ գազան, բայց զերկին և զերկիր: - 50. և տեսանելով մեր զխնամարկութիւն բարի կամաց քոց ի վերայ աշխարհի, և զսէր երախտեաց որ առ մեզ՝ յօժարագոյնս եղիցուք և մեք մտերմութեամբ ծառայել և փութով մեծաւ կատարել զհրամայեալսն ի քէն,,: - 186. Զաչս ի վեր ամբարձեալ իշխանն Աշոտ՝ ետես զմի ոմն հարեալ ի զօրաց իւրոց. – 174. զի և որք յոյժ ատեցողքն են մեր և թշնամիքն՝ տեսցեն և յամօթ լիցին, և բարեկամքն և սիրելիքն յոյժ ուրախ եղիցին,,: - 218. զի զմահուն սպառնացեալ հօրն պատուհաս՝ աչօք իւրովք տեսցէ – 22. զի զօրհասն ի վերայ ինքեանց առանց երկբայութեան հաստատեալ տեսանէին: - 312. Զի թէ իջանիցես յանդունդս ծովու՝ ձգեցից զցանցս իմ և ըմբռնեցից զքեզ. և ապա տեսանիցես զիս այնպէս՝ որպէս դու ոչ կամիցիս,,: - 146. զի տեսանեմ զքեզ այր պոռտաբան, /138/ զի յանձն քո խրախուսես և ոչ յԱստուած, ի բազմութիւն զօրաց և ի փղաց զօրութիւն. – 140. զի տեսցէ Տէր զնախատինսն զոր նախատեաց զնա թշնամին: - 146. զոր ետես ի մեծի հինգշաբաթոջն: - 120. Ի վեր կառուցեալ զաչս սրբոյն Վարդանայ՝ տեսանէ զանօրէնն Վասակ Սիւնեաց տէր – 128. Իբրև ետես իշխանն Հայոց զզօրսն Տաճկաց եկեալ բազում կազմութեամբ, հայեցեալ և յիւրեանց սակաւութիւնն՝ գիր պաղատանաց փութանակի տայր առ քաջ նահատակն Աշոտ իշխան - 172. Իսկ նախարարքն Հայոց իբրև տեսին յերկոցունց կողմանց զանկարգ և զանտեղի աշխարհիս պիտաւորութիւն՝ յապաշաւանս դարձեալ ի վերայ անցիցն անցելոց զոր ախորժելովն խնդրեցին՝ դարձան առ Վռամ – 118. Իսկ իբրև տեսին զբազմութիւն պարսկային զօրուն՝ վհատեալ գնդին Հայոց լքին զմիմեանս և գնացին յետս կոյս – 134. Իսկ նորա յղեալ առ նոսա դեսպան զԱբդլայ ոմն … տեսանել թէ իցէ՞ հաւատարիմ զոր ինչ խօսին ի ձեռն դեսպանաց, թէ պատիր խաբէութեամբ ջանան կորուսանեն զնա: - 226. Իսկ Վահրամ տեսանէր զնա մերձ առ սպանդանոցն. – 222. լաւ համարեցան զկեանս պանդխտութեան յօտարութեան առնել, քան տեսանել կապեալս արգելեալս ի բանդի զորդիս իշխանին իւրեանց, զիշխան աշխարհիս. – 364. մինչև կատարեցաւ ասացեալն ի ձեռն Եսայեայ մարգարէի, ,,լսելով լուիջիք և մի՛ իմասջիք, տեսանելով տեսջիք և մի՛ գիտասջիք. /ճիշտը՝գիտասջիք/ – 182. մինչև կատարեցաւ ասացեալն ի ձեռն Եսայեայ մարգարէի, ,,լսելով լուիջիք և մի՛ իմասջիք, տեսանելով տեսջիք և մի՛ գիտասջիք. /ճիշտը՝ գիտասջիք/ – 182. յայնժամ ամօթալից աչօք տեսցես զբազմափառ և զպայծառացեալ նշանս դրոշմացն բարձրացելոց: - 148. Յայնժամ բնակիչք լերինն իբրև տեսին, թէ վարեցաւ իշխանն ի գերութիւն … հասին միաբան բազմութիւնն մեկնակազէնքն Խութայ ի հնարս արուեստգիտութեանն իւրեանց, զոր ի պէտս օժանդակութեան ձմերայնոյ հնարաւորեալ էին: - 190. Յայնժամ դարձեալ ի խորհուրդ եմուտ թագաւորն հանդերձ մեծամեծօքն իւրոյ տէրութեանն, տեսանել զանվրէպ և զանսխալ իմացումն կատարածի ի վերայ աշխարհիս Հայոց: - 196. Յայնժամ

իբրև ետես անօրէն զօրավարն Մուսէ, թէ ոչ ելին ի գլուխ խորհուրդ չարին յօժարութեանն … փութացաւ արձակել գուժկան յարքունիս, ծանուցանելով արքայի զոր ինչ գործեաց Աշոտ իշխանն Վասպուրական: - 176. յորմէ լսէաք խօսս մարդկան հելլենական, և որք խօսէինն ոչ տեսանէաք: - 50. Նոյնժամայն իբրև ետես տիկինն, եթէ վարեցան որդիք նորա ի գերութիւն՝ գնաց և ինքն զհետ նոցա, զհերս խզեալ և զօձիս պատառեալ, կոծելով և աշխարելով – 238. Ո՞չ ապաքէն դու իսկ տեսանէիր, զի մտանէի և ելանէի ի սուրբ եկեղեցին ընդ ամենայն հաւատացեալսն – 222. որ առ հիւսիսի առ ի շեղ տեսանի – 390. որ փութացան տեսանել զնահատակութիւն սրբոցն – 266. որք և մատուցեալ առ Փիլիպպոս որ ի Բէթսայիդայն, ասեն Կամիմք զՅիսուս տեսանել,,. – 76. Տե՛ս, ով սիրելի, զի թշնամանելն՝ լեզուին բարբառ է, և ոչ ներէ ստեղծիչն լեզուին զուրացութիւնն բարբառել, զի ոչ եթէ այլ ոք է որ ստեղծ զլեզուն, և այլ ոք է որ արար զսիրտն. – 258. Տես և զմիւս ևս նման սմին ի գրոց Գործոց առաքելոց: - 258. տես քեզէն և ծանի՛ր, զի ոչ գոյ վնաս իմ յիրիդ յայդմիկ կամ կարողութիւն արձակել զքեզ,,: - 238. տեսանեն զկողմանս արևելից, դաշտ յոյժ մեծանիստ, լայնատարած, հարթայատակ, անվայրափակ առ ի սահման, անբաւական ի տեսութիւն աչաց, սաստիկ լուսով զարդարեալ ի գիշերի, բազմակերպ երևմամբ – 48. Տեսցէ տէր և դատ արասցէ և հանցէ իրաւունս ինձ, որպէս սովոր է արդար դատաւորն,,: - 330. քանզի ասեն զկնոջէն, յորմէ նեռնն է ծնանելոց՝ ճանապարհորդել յԵգիպտոսէ յաշխարհին Պաղեստինացւոց, և ցանկացեալ տեսանել զարձան կնոջն Ղաւտայ երթեալ դադարէ անդ հանգստութեամբ. – 158. քանզի բանականն յերիս յայսոսիկ տեսանի, ի հրեշտակս, ի մարդիկ և ի դևս. այլ ոչ ի հաւս կամ ի յայլ կենդանիս: - 52. քանզի ի ներքս նստելոյ յարքունիս՝ ոչ ոք տեսանէր զնոսա, բայց թէ հարճք և արք կանացիք: - 56. քանզի կամէի տեսանել զկատարած երկրի. – 50. ,,զի աներևոյթքն աստուածայինք յարարածոց աստի, ասէ, իմացեալ տեսանին, այսինքն մշտնջենաւորութիւն և զօրութիւն և աստուածութիւն նորա – 54. Տե՛ս և զերանելին Եսայիաս զինչ ասէ – 258. Բայց իբրև ետես բռնաւորն զանդառնալի միտսն և զաներկբայութիւն հաւատոցն և զաներկիւղ և զյանդուգն պատասխանիսն և զմեծ անարգութիւնն զոր հասոյց ի վերայ նորա և նոցին օրէնսդրին…բարկացեալ յոյժ հրաման ետ փութով զրաւ առնել կենաց նորա: - 206.

ՏԵՍԱԻՈՐՈՒԹԻՒՆ - մինչև նոքա խոնարհեալ առ նորայն խորհրդական առ յապա պատահմունսն, որ հանդերձեցաւ աշխարհիս Հայոց, իբր մարգարէական իմն գոգցես տեսաւորութիւն – 114. Նաև սրբոց հրեշտակացն ի տեսաւորութիւն ձևացեալ, որոց սարսափմամբ առ նորա զնայեցած յապուշ միտքն կրթեալ, շուրջ փակեալ զնայեցածն՝ ի հարց մատուցեալ ասէ – 386.

ՏԵՍԵԱԼ - և բնակեցուցանէ զնոսա ի գաւառն Աղբագ, յետ բնակեցուցանելոյն զնոսա ի Ջողախել, ի Վրնջունիս և ի Հախրամի, տեսեալ մինչև ի ժամանակս ինչ – 64. Եւ տեսեալ զայնպիսի կորուստ՝ ոչ ևս համարձակեցան ի նոյն գործ, այլ տարածեալ կալան զերկիրն ամենայն: - 146. և տեսեալ զուարակ մի՝ գողացաւ և տարեալ մեկուսի յազեաց զնա և կարկառեալ քարամբք՝ մնայր երեկոյինն –46. Զնոյն տեսեալ ազատացն Վասպուրականի, անտանելի մնալով առ դիպուածն զոր ինչ գործեաց Ապումրուան՝ ելին գնացին առ Ատոմ որդի մեծին Գուրգինայ յամուրն Կանգուար, գտանել զելս իրացն – 364. Զսա տեսեալ Մահմէտի՝ /162/ կոչեաց և յարեցոյց առ ինքն, հրամայեալ նմա գրել գիրս օրինաց ազգին իւրոյ, ձեռամբ Աբութուռաբայ իսմայէլացւոյ. քանզի ինքն ոչ գիտէր գիր և ոչ դպրութիւն: - 164. Իսկ աբեղայն արիոսեան, զոր յառաջագոյն ասացաք վարդապետ Մահմէտի, տեսեալ զյաջողութիւն իրացն՝ յարուցեալ եկն առ Մահմէտ, ցուցանել նմա զգութ երախտեաց, իբրև յիւրմէ վարդապետէ ուսեալ եհաս այնպիսի իրաց. –162. Իսկ հաւատացելեցն տեսեալ, եթէ բարի խոստովանութեամբ ննջեաց տէր սուրբ Գրիգոր՝ գոհութիւն մատուցանէին ամենազօրին Քրիստոսի – 254. Յայնժամ տեսեալ Երուսաղէմացւոցն զանհնարին դիպուածսն անօգնականութեանն՝ առին զաստուածային սուրբ նշանն տէրունական հանդերձ այլ սպասիւք եկեղեցեացն, փախուցին ի քաղաքն թագաւորական

ի Կոստանդին. – 162. որոյ տեսեալ զբարձրաբերձ վայելչութիւն հասակին և զպատշաճ գեղ երեսացն, զփաղփեալ գոյնն ի տեսիլ արուսեկի ի մէջ սպիտակափայլ ալեացն պատուաբերի – 204. ուշ եդեալ ուժեղութեամբ և քաջութեամբ սրտիւ ընդդիմանալ, մանաւանդ ի Ծանարացն զնա տեսեալ ի պարտութիւն մատնեալ և յաղթահարեալ: - 276. Տեսեալ կնոջն զՄահմէտ այր հաւատարիմ և ուշմագոյն յամենայն իրս աշխարհականս՝ եղև նմա կին և ետ ի ձեռն նորա զամենայն հոգս տան և ընչից: - 158. Տեսեալ Մահմէտի զյաջողութիւն իրացն և զմիաբանութիւն Հրէիցն՝ ասաց զինքն գլուխ և առաջնորդ ամենեցուն: - 160. Քանզի տեսեալ, ասէ, որդւոցն Աստուծոյ զդստերսն մարդկան զի գեղեցիկ էին՝ առին իւրեանց կանայս յամենեցունց զոր ընտրեցին: - 28.

ՏԵՍԻԼ - այլ եկ պատմեաց նոցա զհանգամանս տեսլեանն – 120. և զօրինակ մահու նորա, և որպէս զմռեալ դի նորա բարձաւ ի գաւառն Հարքայ ի տեսիլ բազմաց: - 42. Եւ առ վտանգի երկիւղի զօրավարին՝ ածին ի մէջ զիրս տեսլեանն, որ երևեցաւ յերկնից հրեշտակ Աստուծոյ. – 234. և գրեթէ /գրքում՝ գրէթէ/ ոչ ամենևին ուրեք երևեցաւ այնպիսի ահաւոր տեսիլ զօրու և սպառազէն կազմութեան՝ ամենայն թագաւորաց, որ կացեալ էին ընդ ծագս տիեզերաց. զորոյ սաստիկ և ահագին որոտումնն և ճայթումնն և փայլիւն զինուցն, և որ ինչ յայնժամ զարդարեալ և զինեալ պատրաստեցան զօրքն Տաճկաց: - 284. ոչ միայն ի տեսիլ խտղտման աչաց և զուարճումն հոտոտելեաց՝ այլ և ի կազմութիւն դեղոյ բժշկական հնարագիւտ իմաստասիրութեանց կազմեալ Ասկղեպեայ վարժմամբն: - 86. որոյ տեսեալ զբարձրաբերձ վայելչութիւն հասակին և զպատշաճ գեղ երեսացն, զփաղփեալ գոյնն ի տեսիլ արուսեկի ի մէջ սպիտակափայլ ալեացն պատուաբերի – 204. Որպէս ընթեռնուս ի գիրս մարգարէականս զհանգամանս այսոցիկ. որպէս և ի վեցերորդ տեսլեանն Դանիէլի և Զաքարիայի բանագործութեանն – 398.

ՏԵՍՈՂ - Այսպէս և զամենայն ըմբռնեալսն վտանգաւոր մահու տառապեցուցանէին ընդ մէջ կտրելով, ահարկուս տեսողացն զնոցայն վտանգսն կացուցանելով:- 372. և ընդ նմա Գրիգոր որդի Վասակայ, և սա նմանապէս ոգեզուարճ իմաստութեամբ առ լցեալ հոյակապ և անուանի ի մէջ Հայկականացս և ցանկալի լսողացս և ուրախարար տեսողաց. – 344.

ՏԵՍՈՒԹԻՒՆ - Այլ և տեսութիւնք ևս յայնս սաստկագինք և նորանշանք. – 28. Աստանօր և ի դէպ ելանէ մարգարէութիւնն Դանիէլի, տեսութիւն անհեղեղ պատկերին բազմախառն նիւթոքն ի վերայ խեցեղէն և երկաթեղէն ոտիցն: -156. և ապա յառաջիկայիցն եկեսցուք տեսութիւն: - 18. և զանձկալից տեսութիւնն հրաշափառապէս և անճառաբար ի վարշամակի տպաւորեալ ելից զկարօտութիւնն Աբգարու աղբիւրն կենաց Քրիստոս: - 76. և զի էր վարժեալ ուսմամբ Աստուածաշունչ գրոց և ընդել և ծանոթ էր ճարտասանական հրահանգիցն՝ եդ առ յայն ժամու իմացական տեսութիւնն զերգս – 284. Թէպէտ և ոչ ինչ նպաստաւորութիւն առաջիկայ տեսութեանս ունին հետագայից ցոյցք որ վասն Բէլայ և նոցուն իսկ Քաղդէացւոց դիւցազնական զառանցութեանցն – 36. Իսկ զգերազանցութիւն գեղեցկութեանն որ բերան բաւեսցէ ասել բան մարդկային, միանգամայն և զաստուածազործ տնկոցն հեշտալի տեսութիւն. – 20. Իսկ ըստ բաւականութեան աչաց տեսութեանց դաշտավայրին ի մուտս կոյս, և առ եզերբ ծովուն պարսպաւորս յօրինէ զգոգն - 88. Իսկ նա անդէն և անդ հերքեալ ապաժամանակ առ ուղղակի տեսութիւն մեղանաց՝ առ Աստուած վերաբերէ զպատճառն – 20. Որպէս կայ և այս ի գիրս տեսութեանն Յովելեայ մարգարէի: - 240. տեսանեն զկողմանս արևելից, դաշտ յոյժ մեծանիստ, լայնատարած, հարթայատակ, անվայրափակ առ ի սահման, անբաւական ի տեսութիւն աչաց, սաստիկ լուսով զարդարեալ ի գիշերի, բազմակերպ երևմամբ – 48.

ՏԵՍՉՈՒԹԻՒՆ - և զատուցանէ զօրավարն վանիցն գեօղս բաւական առ ընկալումն հիւրոցն և ի տեսչութիւն աղքատացն: - 394. և կարգէ զդասս պաշտօնէից կատարել զպաշտօն Տեառն ի տուէ և ի գիշերի անձանձրոյթ աշխատութեամբ և առատաձեռն տեսչութեամբ աղքատաց, զի գտցեն զողորմութիւն ի Քրիստոսէ: - 122. Քանզի հարցեալ և բռնազբօսեալ զերկոսին գլխաւորին Տաճկաց, անունկնդիր լինելով ասացելոցն, և ի տեսչութենէ

Աստուծոյ թողացուցեալ նոցա առանց վտանգից՝ որպէս հաճոյ թուիցի կեալ ի հաւատսն Քրիստոսի համարձակաբար. – 324. Քանզի ոչ կարացեալ իմանալ զդէմ փախստէի Արտաշէսի, և այն ի տեսչութենէ Աստուծոյ այնպէս պահեալ լինէր – 84.

ՏԵՐԵՆՏԻՈՍ - Բայց ինքն Պապ նշկահեալ զկայսր Թէոդոս, զոր ի բուռն առեալ Տերինտեայ զօրավարին Յունաց՝ խաղացուցանէ կապանօք առ կայսր – 108. Եւ մինչդեռ զայս խորհէին՝ եհաս լուրն առ կայսր ի ձեռն Տիրենտեայ զօրավարին. – 110.

ՏԵՐԵԻԱԹԱՓ - և հասեալ ի վերայ ծառոց ի բարձրաբերձ գագաթունսն տերևաթափ առնիցէ /260/ և ընդարմացուցանէ զզօրութիւն արմատոյն – 262.

ՏԵՐՈՒԹԻԻՆ - Եւ եղև ի վախճանելն Խոսրովու Հայոց թագաւորի, որ եկաց ի տերութեանն ամս Դ – 114.

ՏԵԻԵԱԼ - - և տնեալ զաւուրս Խ՝ փոխի յաշխարհէս ամենեցուն պատկառելին, մանաւանդ թէ ընդհանուր ցանկալին և սիրելին ճոխից և անազգեաց, աղքատաց և փարթամաց, մեծամեծաց և փոքունց: - 384. Արդ Աշոտի կեցեալ ամս ԺԹ, տնեալ իշխանական ճոխութեանն ԺԶ ամ յառաջ քան զգերութիւնն Հայոց, և Ե ամ ի գերութեանն արարեալ - 336. որոյ ժամանակ կենացն տնեալ ձգեալ ամս ՃԻ լի և պարարտ ծերութեամբ – 122.

ՏԵԻԵԼ/ԻԼ/ - դառնալ անդրէն ոչ կամէին, զի կարի սաստիկ ամօթս համարէր զգործեցեալսն, կալ տնել ժուժկալել ընդդէմ նոցա ոչ կամէին, զի բազում անկան ի զօրաց իւրեանց: - 276. Եւ յայնմհետէ բարձաւ տէրութիւնն Պարսից և ազգին Սասանայ, որ տնեաց ամս ՇԽԲ: - 166. զի մի ամենևին ոք կայցէ յակաստանի, մանաւանդ զի ոչ ոք տնեաց ընդդիմանալ ձեռին նորա. – 296. որ առեալ զթագաւորութիւնն Պարթևաց՝ տնեաց մինչև ի ժամանակս Յազկերտի, որ վերջին կացեալ թագաւոր Պարսից՝ սպանաւ ի Տաճկաց: - 166. սա իսպառ գերեաց զտասն…<հազար մարդու> <խաղա>ցուցանելով ի լերինս Մարաց և եբարձ զթագաւորութիւնն … որ և տնեաց ամս ՄԾ: - 60. որ տնեաց ամս ՆԺԵ և վախճանեցաւ: - 120.

ՏԵԻՏԵՍԱՅ – Եւ արդ են մի ըստ միոջէ թագաւորք Ասորեստանեայց այսոքիկ … Մաւտանէս ամս ԼԱ … Տևտեսայ ամս Խ: Ոթինես ամս Լ: – 58.

ՏԷՐ - ,,ամենայն ազգք շրջեցան զինն, և անուամբ Տեառն վանեցի զնոսա,, - 136. ,,Աստուծոց պատուական և ամենայն թագաւորաց, տէր երկրի և ծովու, ծնունդ մեծին Արամազդայ Խոսրով թագաւոր. առ Հայրակղոս անմիտ և առ անպիտան ծառայ մեր: - 146. այլ բազմացան չարիք մեր, զի մեղաք առաջի տեառն Աստուծոյ մերոյ և յետս հարաք զիրաւունս պատուիրանաց նորա – 242. այլ ես ասեմ քեզ, եթէ Տէր կամեսցի՝ վաղիւ պատելոց է զքեզ պատերազմ քաջաց. և ճեթեսցեն ի վերայ քո իբրև զամպս երկնից ի բռնալիր նիզակօք անցանիցեն ընդ մէջ բազմութեան քո իբրև զփայլատակունս հրոյ շանթից: - 140. այլ և ոչ տարաբարձական, որպէս և /48/ արդ ևս ոմանք կարծեն, ոչ գիտելով զասացեալսն ի Տեառնէ աւազակին՝ այսօր ընդ իս իցես ի դրախտին: - 50. Այլ և Վահան Ամատունեաց գաւառին փախստեայ եկեալ ի ձորն, որ մերձ է յամրոցն, ուր տէրն իւրեանց կայր: - 208. այլ ըստ օրինակի ասացելումն ի Տեառնէ Մովսէսիւ՝ առ ի յանդիմանութիւն արտաքնոցն, զճարպ մեռելոտւոյ տանել ի գործ ինչ արտաքին, այլ ոչ թէ ի կերակուր: - 54. այլ իբրև եմուտ Բուխայ յաշխարհս Վասպուրական՝ ել գնաց Գուրգէն առ Քուրդիկ Մամիկոնէից տէր ի Բագրևանդ գաւառ, և անդ լինէր, զի էր Քուրդիկ քեռի Գուրգինայ: - 302. Այլ նահատակեցան արիաբար և ետուն պատասխանի թագաւորին մեծաւ համարձակութեամբ , յուսացեալ ի մին միայն ի թագաւորն թագաւորաց և տէրն տերանց, ի Քրիստոս յորդին Աստուծոյ: - 292. Ապա համբարձեալ զձեռս իւր յերկինս՝ ասէ, ,,յիշեա՛ զիս, Տէր, յորժամ գաս արքայութեամբ քո,,. – 254. առատապէս հեղեալ զգութ … և ի ձեռն հովուապետին սրբոյն Յովհաննիսի եպիսկոպոսի և ճգնաւոր քահանայի Գրիգորի, որք միշտ զողորմութեանց խնդրուածս վասն ժողովրդեանն տեառն ի վեր առաքէին, զոր օրինակ և հրեշտակն տեառն աղերսէր Աստուծոյ, ասէ – 314. Բայց նոքա ոչ վերակնեալք յօրէնս Տեառն, այլ ստացան իւրեանց անունկնդիր լսարանս, զչարագոյնն իժի և զանբժշկականն քարբի, արբեցան գինով յիմարութեանն. ստացան աչս, որովք ոչ

ՅՈՒՑԱՆԵԼ - ապա ցուցին զտեղին ուր ծածկեալն էր. զոր առեալ վարեցին ի գերութեան, և ոսկի և արծաթ անբաւ խաղացուցին ի դուռն թագաւորին: - 142. և ցուցէք յականէ յանուանէ մի ըստ միոջէ իւրաքանչիւր զվնասս զոր գործեալ եմ, դի՛ք ի լսելիս համագունդ զօրականացս, և մի՛ պատկառէք խօսել զճշմարտութիւնն: - 214. ,,Ձայն իմն ահաւոր հրեշտակի անկեալ ի վերայ իմ՝ հրամայեաց երթալ պատգամաւոր յազգն իմ, ցուցանել զԱստուած արարիչ երկնի և երկրի. առնուլ ինձ անուն գլխաւորութեան, և զստութիւն հաւատոց որ ի կուռս՝ յանդիմանել և քակտել,,: - 158. ,,որովհետև գտի շնորհս առաջի քո, և արարեր մեծարանս երեսաց իմոց, և առաւել քան զամենայն իշխանս Հայաստանեայց և մեծամեծս արքունի զիս նախամեծար և մեծարգի ցուցեր – 218. այլ ի մարդկապէս բարբառոյ աստի ցուցանէ ի հրաժարականն ի սպառ վախճան: - 28. անկեղծաւոր և աննենգ տիրասիրութեամբ ցուցանել հնազանդութիւն հպատակութեամբ, մինչ յարիւն և յապաժոյժ նահատակութեամբ առնուլ վրէժս ի Պարսկացն հինիցն՝ զաւեր եկեղեցեացն Հայաստանի և զնեղութեանցն և զգերփանացս և զսաստիկ արիւնահեղութեանցն զքրիստոնէից և զուխտի մանկանց եկեղեցւոյ սրբոյ: - 134. Բայց դուք, Հայք, տարաժամ ցուցանէք զտիրասիրութիւն. – 138. Բայց թէ է՞ր աղագաւ պատմութիւն վկայութեան Վահանայ ոչ է գրեալ ի գիրս պատմագրի՝ ստուգապէս առանց յերկուանալոյ ցուցանեմ քում ուսումնասէր քաջահմտութեանդ: - 128. և ամենայն ուրեք բարեացապարտ զինքն ցուցանէր. – 168. և առ եղբայրականն զինազանդութեանն չափ ցուցանելով, անկշիռ վայելչութեամբ զմիմեանս լաւ համարելով քան զանձինս, հասարակ զճոխութիւն իշխանական գահընկալութեանն վարկանելով – 360. և առ իւր ազգն ցուցանէր մտերմութիւնս առաւել քան զամենայն առաջինս: - 168. և աստի և անտի երիվարի փորոյն տախտակագործ գրգեալ ըստ փորոյն չափու մածուցեալ ի ձև վահանի զգործ արուեստի զինուն ցուցանեն: - 208. Եւ զայս առ այժմ բաւական համարեալ նշանակութիւն ցուցանել զլաւութիւն երանելի առնն Խուրանայ Արծրունւոյ, խոհեմագունիցն բաւականանալ առ բովանդակ իմացմունս: - 78. Եւ Խոռեմայ առեալ զթագաւորութիւնն՝ յաւուր միում զգեցեալ էր հանդերձ թագաւորական և հեծեալ յերիվար արքունի, և շրջէր ի մէջ ամենայն զօրացն իւրոց, ցուցանել զինքն և քաջալերել զզօրսն. – 154. Եւ նորա կամեցեալ ցուցանել թագաւորին՝ ի սոյն աւուրս վախճանեցաւ Հայրակղէս. իսկ որդի նորա Կոստանդին ոչ ունէր յանձին ըստ կամաց նորա պատասխանի. – 162. և ոչ ըստ տեղիս տեղիս ցուցանէին զհանդէս մարտիցն և զյաղթութեանն քաջութիւն, այլ բոլորովիմբ ամենայն ուրեք ախոյեանայարձակ սլացմամբ ընթանայր. – 312. և որոց ոչ գործք ինչ և ոչ քաջութիւն

ուրուք յայտ յանդիման ցուցանիւք. – 68. և փոխանակ զգեստու հարսանեաց զգեստ մկրտութեանն ծանուցեալ ցուցին, զոր ջրով և Հոգւովն սրբով զգեցեալ էին – 266. զկամս Աստուծոյ և զօրէնս բնութեան ցուցանել ազգաց եկելոց որ յետ իւր: - 34. զոր եցոյց նմա Հոգին սուրբ՝ որ ինչ առ յապա ժամանակս գործելոց էր – 120. զոր և վեր անդ յիշատակեալ ցուցաք զորպիսութիւն – 388. զոր ի կարգի իւրում հարկեցայց ցուցանել: - 248. զոր յառաջ խաղացուցանելով զբանն՝ ցուցից յիւրում կարգի – 182. զոր ցուցանեմ յայլում տեղւոջ, և զոր ինչ արար արքայն Պարսից ընդ տունն Արծրունեաց ի սադրելոյ Բարծումայի ամբարշտի: - 130. զոր ցուցանեմ յիւրում կարգի ի բանս համառօտս: - 272. թէպէտ և ոչ համարձակեաց զամենայն բառնալ, այլ յոյժ պատկառանօք ամաչեցեալ՝ լքաւ ի ստութենէ անտի, որ յանդիմանեցաւ ի թղթոյ կայսերն, և ի ձեռն այսորիկ ցուցանէր բարեմտութիւն մեծ առ ազգս /166/ քրիստոնէից. – 168. Իբրև ետես կայսր Հայրակղէս զչարիսն ամենայն, որ եկին հասին ի վերայ նորա՝ ակամայ կամեցեալ ցուցանել բարեկամութիւն՝ ել ընդ առաջ նոցա, մեծարել իբրև զվաստակեալս և զիւրս, ընկալաւ զնոսա մեծամեծ /142/ ընծայիւք. – 144. Իսկ աբեղայն արիոսեան, զոր յառաջագոյն ասացաք վարդապետ Մահմէտի, տեսեալ զյաջողութիւն իրացն՝ յարուցեալ եկն առ Մահմէտ, ցուցանել նմա զգութ երախտեաց, իբրև յիւրմէ վարդապետէ ուսեալ եհաս այնպիսի իրաց. – 162. Կինն Սահակայ որդւոյ Իսմայէլի, զորոյ զհանգամանսն ցուցաք, զմեռանելն Սահակայ և զկնոջն հրապարակագոյժ լինել, վասն որոյ պատճառանաց սպանանի այրն նորա. – 326. Յանձն առի պատմել ստուգապէս զսքանչելագործ յայտնութեանն հրաշիցն, որ ցուցաւ ի զօրավարութեանն Գագկայ. – 378. Յերկարեալ վտանգ նեղութեան Հայոց, որպէս ցուցանեն բազումք ի պատմագրաց, մինչ ի ժամանակս Ջամասպայ և Կաւատայ, մինչ ի Խոսրով արքայ: -134. Յղէին պատգամս առ որդիսն Իսմայէլի և ցուցանէին զմտերիմ հարազատութիւն, թէ ,,որդիք Աբրահամու եմք մեք և դուք, եղբարք. պարտ է ձեզ գալ յօգնականութիւն մեզ, և առցուք զերկիր ժառանգութեան մերոյ,,: - 156. Ոչ կարծողականս ինչ ըստ առաջնոցն Բէլայ ասացելում, կամ այլոց ստուերականացն երևեցելոց երազականաց և խաբեբայ դիւաց, այլ ձեռագործ մեռելականս իսկ եցոյց ի պաշտօն – 40. որով զեղծագործ ապականութիւն նոցա յայտ առնէ, յուսակորոյս յայնմանէ, որ զպատիւ սիրոյ եցոյց ի նոսա՝ որդիս իւր ասելով – 28. որպէս գրեալ ցուցանին հանգամանք իրացն գործելոց – 94. որպէս և ցուցանէ քեզ պատմութիւնք սրբոց Վարդանանց – 48. որպէս ցուցանեն յիշատակարանքն որք յառաջ քան զմեզ հոգացան, զոր ինձ աւելորդ թուի երկրորդել: - 324. որպէս ցուցանեն մեզ առաջինքն ի պատմագրացն. – 62. Որպէս ցուցանեն յիշատակարանք հաւատարիմ պատմագրացն. մանաւանդ թէ աւետարանիչն և առաքեալն Յոհաննէս, որդին որոտման, տիեզերաց հնչեցոյց զորոտումն աւետեաց Աւետարանին Քրիստոսի – 76. որպէս ցուցանեն յիշատակարանքն առաջնոց պատմագրաց, զաւերումն Հայոց և զյաճախել նեղութեանցն և զանթիւ բազմութիւն վկայից, որք վասն Քրիստոսի նահատակեցան, և զքաջապէս արիանալ սրբոց քահանայիցն – 128. ՎԱՍՆ ՍՔԱՆՉԵԼԵԱՑՆ ՈՐ ՅՈՒՑԱՒ ՅՈՍՏԱՆՆ ՌՇՏՈՒՆԵԱՑ ՅԱՄՍ ՋՕՐԱՎԱՐՈՒԹԵԱՆՆ ԳԱԳԿԱՅ: - 378. Քանզի վաղիւ առաւօտուն ցուցանեմ ձեզ փիղս վառեալս, և ի վերայ հզօր սպառազէնս ի քաջաց – 138.

ՅՈՒՑԵԱԼ - այլ անդ կեցեալ և անդէն վախճանեալ, ոչ արժանի ինչ գործ յիշատակաց ցուցեալ: - 110. և անդ բազում իրս քաջութեան ցուցեալ յախոյանայարձակ պատերազմունսն – 84. և անդ Գուրգէն բազում արութիւն ցուցեալ ընդդէմ յունական զօրացն, ոչ միանգամ այլ բազում անգամ – 302. և ելեալ ի վերայ Պարսկահայոց գռեհացն և անդ բազում քաջութիւն նահատակութեան ցուցեալ՝ յոլովից գերելոցն ընդարձակեաց, հանելով /400/ և զաւարն ի ձեռաց նոցա – 402. և կացուցեալ զնոսա ի կարգի ստրկութեան, որոյ զփոյթ հպատակութեան ցուցեալ՝ կարգէ զնոսա ի գործ ծառայութեան, կրել արծուիս և բազէս. – 64. Նոյնժամայն դարձուցեալ զերասանակ երիվարին ի պատերազմ յառաջանալ, և անդ բազում արիութիւն նահատակութեան ցուցեալ, սակայն ոչինչ օգուտ բերեալ: - 368. որ յետ հաւատոցն որ ի Քրիստոս բազում ուղղութեամբ և երկիւղածութեամբ կրօնս ըստ

արժանի հաւատոյն ցուցեալ, գրէթէ ի ծայրս առաքինութեան զաճումն հաւատոցն տարեալ հասուցեալ, որ ինչ յորդորումն աւետարանական վարժիցն ունին դաստիարակութեան ցոյցք: - 78.

ՑՈՒՑՈՒՄՆ - Նոյնպէս և զպայման ժամանակացն յանբաւ բիւրս ամաց ձգեն որ ոչ և ըստ միոյ յեղանակի հաւաստանայ առ ի ցուցումն, ոչ արեգական բերմամբ ի նոյն կէտ ամսոց և աւուրց և ոչ ըստ չորից փոխմանց առ ի յեղումն ժամանակի տարւոյն, այլ և ոչ ըստ լուսնական լրութեանն և սուզականութեան: - 18.

ՑՈՓՈՒԹԻՒՆ - և ելեալ ի հրապոյրս ցովիութեան ըստ խրատու առնն, յուսացեալ յամրոցն և ի գանձսն, և ի ցանկութիւն իշխանասիրութեան համբարձեալ զաչս – 346.

ՑՐԵԼ - Բայց Յամանիկն իբրև լուաւ ի դարձուցանելն Աշոտի զԱհմաթ լի անարգանօք, և զխորհուրդն զոր խորհեալ էին ի վերայ Հայոց ցրել՝ զօրհասն ի վերայ իւր համարեցաւ տեսանել. – 350.

ՑՐՈՒԵԱԼ - Եւ սկսաւ երկիրս առնուլ զնորոգումն, և եկեղեցիքն պայծառանալ ի զարդ և ի պաշտօնս շքեղութեան, և ցրուեալքն դառն տուեալ դարձան յիւրաքանչիւր տեղիս՝ շինել, տնկել, մոռանալ զցաւսն և զտրտմութիւնսն զոր կրեցին: - 318. որոյ գալուստն ազդ եղեալ գնդի այլազգեացն՝ փախեան գնացին բացագոյն, կալան զամրական տեղիս, ցրուեալ ընդ լեռնայինսն անյայտ թաքստեամբ: - 402.

ՑՐՈՒԵԼ - Ապա թէ փութաս ելանել ի կենաց աստի առ զայրուցս կատաղութեան քո և զոսկերս ցրուես յանապատս և լինել կերակուր գազանաց երկրի և թռչնոց երկնից՝ քո կամք լիցին, և ես քաւեալ եմ յարենէ քումմէ – 278. և այլքն ցրուեցան յո՛վ և աճապարեաց ոք. – 332. և զօրքն ցրուեցան քայքայեցան ընդ ամենայն երեսս երկրին: - 238. հարից զհովիւն և ցրուեցին ոչխարքն. – 238. Յայնժամ սկսան ամենայն նախարարքն Հայոց ցրուել մեկնել ի միմեանց. – 238. և ամենայն խորհուրդք իւր ապականեալ ցրուեցան. եթէ զի՞նչ գործիցէ ոչ գիտէր. – 280. այլ քայքայեալ ցրուեցան յոր կողմ և աճապարել ախորժեաց ոք - 116. Եւ բնաւ աշխարհս քայքայեալ ցրուեցան՝ յով և կարաց աճապարել փախչել այր իւրաքանչիւր. – 92.

ՑՐՈՒՄՆ - և կանխավաղ ցրմամբն ի վերուստ՝ զմիաբարբառ լեզու մարդկութեան շփոթեաց յայլաբան խլրտիւնս. – 40.

ՑՕՂ - զնոցին օրհնութիւնս զամենայն գիշեր օրհնէին և զնոյն ցօղ օրհնութեան յամենապարգևողէն Քրիստոսէ խնդրէին: - 252. որոց և շիթք ցօղոյն ունէր զանհամեմատ անուշահոտութիւն: - 50.

Փ

ՓԱԽՈՒՍ - Եւ արքայ Խոսրով զարհուրեալ պատրաստի ի փախուստ, քանզի զօրացաւ յաղթութիւնն Հայրակղի. – 148. Եւ ընդոստուցեալ Խոսրով ի յահէն և զարհուրեալ մեծաւ դողութեամբ՝ խնդրեաց իւր տեղի փախստեան, աղաղակեաց և ասէ՝ ձի, ձի, և մտեալ յասպաստանն՝ ոչ հանդիպեցան ձիոյ: -152. և մնացեալքն փախստեամբ ի Մանազաւեանն անկանէին քաղաք: - 382. Եւ ուսեալ Հրէիցն զպատճառս փախստեանն՝ խրախուսեցին ի միաբանութիւն, ճշմարիտ ասել զասացեալսն, իբրև նախանձախնդիրք Աստուծոյ և որդիք Աբրահամու և եղբարք միմեանց:- 160. և սրբոյն Վարդանայ մտրակեալ զերիվարն ի փախուստ զախոյեանսն Պարսից դադրեցուցեալ և զկողմն իւրոյ ձեռին զնդին զօրացուցեալ – 128. զոր ոմանք ի պատմագրաց ասեն՝ փախստեամբ դարձեալ գնաց յԱսորեստան: - 42. ընդ առաւօտանալն սկսեալ՝ ի ժամս բովանդակ՝ յաղթութիւն սատարեաց և ի

փախուստ դպրձոյց զբազմութիւն զօրացն Ովայի – 178. Իսկ իբրև գիտացին եթէ սպանաւ զօրավարն, և խորտակեցաւ բազուկ աջոյ ձեռին, եղեալ ի փախուստ դպրձալն – 306. Իսկ քաղաքապետն Սահակ ելեալ ընդ դուռնն, որ ելանէ ի բերդն Շամշղտայ, սամոյր զինքեամբ արկեալ և գաւազան ի ձեռն առեալ, յիմարեալ մտօք կորոյս զփախուստն իւր, որ կարող էր գնալ յով և կամիցի. – 272. Հարին հալածեցին և ի փախուստ դպրձուցին զզօրսն. – 232.

ՓԱԽՈՒՅԱՆԵԼ - Յայնժամ տեսեալ Երուսաղէմացւոցն զանհնարին դիպուածսն անօգնականութեանն՝ առին զաստուածային սուրբ նշանն տէրունական հանդերձ այլ սպասիւք եկեղեցեացն, փախուցին ի քաղաքն թագաւորական ի Կոստանդին. – 162.

ՓԱԽՈՒՑԵԱԼ - և փախուցեալ նա անկաւ ի զօրն Թետաղաց, որ էին եկեալ նմա յօգնականութիւն, որ և սպանին զնա հրամանաւ Իսմայէլի, կալեալ զթագաւորութիւնն ամս Ի: - 166.

ՓԱԽՉԵԼ/ԻԼ/- Եւ բնաւ աշխարհս քայքայեալ ցրուեցան՝ յով և կարաց աճապարել փախչել այր իւրաքանչիւր. – 92. և ըստ Եսայեայ՝ թէ ,, բարբառոյ միոյ հազարք կորիցեն, և ի բարբառոյ հնգից բազումք փախիցեն,,: - 202. և իբրև հարան զօրքն՝ մտրակ ի կուշտ արարեալ երիվարացն՝ նախ նոքա փախեան: - 232. և մնացեալքն կէսքն փախեան երեսաց յո՛վ և կարաց ոք զերծանել – 400. և փախեան այլազգիքն յերեսաց Գուրգէնի մի կողմն: - 308. Եւ փախեաւ Յազկերտ յերեսաց /164/ նոցա և ոչ կարաց ճողոպրել. քանզի հասին զհետ նորա մերձ ի սահմանս Քուշանաց, և կոտորեցին զամենայն զօրս նորա. – 166. զի և այլազգիքն տեղի ետուն և փախեան յերեսաց Ապումկդէմայ. – 304. Յայնժամ ձայն բարձեալ Քսերքսէս և Արշէզ լի իմաստութեամբ, որպէս թէ ի զօրացն Լիդէացւոց իցեն, ասեն՝ հարան /64/ զօրքն Կիւրոսի, և փախեաւ արքայն: - 66. որոյ գալուստն ազդ եղեալ գնդի այլազգեացն՝ փախեան գնացին բացագոյն, կալան զամրական տեղիս, ցրուեալ ընդ լեռնայինսն անյայտ թաքստեամբ: - 402.

ՓԱԽՍՏԱԿԱՆ - գնաց Արշակ փախստական յԵկեղէց գաւառ և անդ վախճանի իւրով մահու, թագաւորեալ ամս Է: - 112. և ինքն գնաց փախստական ի Պարսից ի կողմանս Խաղտեաց: - 106.

ՓԱԽՍՏԱԿԱՆ ԱՆԿԱՆԻԼ - այլ մնացեալքն ի սրոյն փախստական անկանէին յամուրս մայրեացն: - 176.

ՓԱԽՍՏԱԿԱՆ ԱՐԱՐԵԱԼ - և զմնացեալսն փախստականս արարեալ հետամուտ լինելով հանին ի սահմանացն Հայոց. – 136.

ՓԱԽՍՏԱԿԱՆ ԳՆԱԼ - և ինքն Ովայ զերծեալ սակաւ ոմամբք գնաց փախստական ընդ կողմն Բերկրոյ: - 178. Եւ Խոսրով արքայ փախստական գնաց, և անցեալ զԴեկղաթաւ ի Վեհկաւատ՝ հրամայեաց զլար կամուրջացն կտրել. – 150. Եւ խօսէր ընդ նոսա սաստիկ և ահագին դատաստանօք և սպառնալեօք, թէ ընդէ՞ր և դուք ոչ մեռարուք ի պատերազմին, քան թէ ելեալ փախստական գնացէք գալ առ իս և տալ համարձակութիւն ծառայի իմում ի յայսքան վնաս. մի՞թէ արդեօք զԽոսրով մեռեալ կարծէիք,,: - 150. և որդի Որմզդի Խոսրով գնաց փախստական առ Մուրիկ թագաւորն Յունաց՝ զոր առեալ քեռիք նորա Վնդոյ և Վստամ գնացին փախստական ի դուռն կայսերական: - 136. Եւ Վահրամ գնաց փախստական և անկաւ ի Բախտ Շախստան. որ և յետոյ իսկ սպանաւ ի հրամանէ Խոսրովայ: - 140. և քակեցին զռազմն և աւերեցին զճակատն և լքին զմիմեանս, և թողին զպատերազմն և գնացին փախստական ամենայն այր յո՛վ և կարաց զերծանել. – 306.

ՓԱԽՍՏԱԿԱՆ ԴԱՌՆԱԼ - և հարան զօրքն արքունի ի հարուածս մեծամեծս և դարձան փախստական ի բանակն իւրեանց և մտին յապարանսն զոր շինեալ էին. – 282.

ՓԱԽՍՏԱԿԱՆ ԵՂԵԱԼ - և փախստական եղեալ Մահմէտ և Ալի և ընդ նոսա իբրև արք Խ՝ եկին ի քաղաքն Մադիամ – 160.

ՓԱԽՍՏԱԿԱՆ ԼԻՆԻԼ - Եւ ոչ կարացեալ ունել զդէմ զօրն Վահրամայ՝ փախստական լինէր առաջի զօրացն Յունաց. – 140.

ՓԱԽՍՏԵԱՅ - Այլ ելեալ արտաքս ի ռազմէն՝ դարձաւ փախստեայ ընդ ճանապարհն Հողցայ. – 368. Այլ և Վահան Ամատունեաց գաւառին փախստեայ եկեալ ի ձորն, որ մերձ է յամրոցն, ուր տէրն իւրեանց կայր: - 208. այր իւրաքանչիւր մազապուր զերծեալ փախստեայ գնացեալ հասին յաշխարհն իւրեանց: - 354. Բայց ինքն կարծեցեալ մարզպանն փախստեայ անկանի ի բարձրաբերձ եկեղեցին – 190. Եւ իբրև ազդ եղև Դերենկին՝ գնաց ընդդէմ նորա պատերազմաւ, և դառնայր փախստեայ: - 320. և ահա իբրև արք Ռ ի յընտրելոցն Աղուանից պատահեալ նոցա հարին զնոսա և ածին փախստեայ ի բանակն և ինքեանք դարձան ողջանդամ, և ոչ մի ոք վիրաւորեցաւ. – 282. և այն ինչ ի քթթել ականն դարձուցին զղաշիկն, և զհետ մտեալ փախստէիցն սուր ի գործ արկեալ՝ դիթաւալ կուտակս կուտակս արկանէին. – 382. և անտի գնացեալ ի ձորն Աձանայ ի խնդիր փախստէիցն և հասեալ ի յետոյ կողմանցն՝ ի սուր և ի գերութիւն զբազումս ի նոցանէ արկանեն: - 202. և առաջի դնէ Երուանդայ զպատճառս փախստեանն – 82. և զերծեալքն փախստեայ անկանէին ի կողմանս կողմանս աշխարհաց, յաւեր դարձուցեալ զբնաւ աշխարհն, բայց ի լեռնայնոցն՝ որ յամուրս իւրեանց մնային ի լերինն Խոյթ անուանեալ: - 188. և զփախստեայսն տանին անցուցանեն յայնկոյս քան զքաղաքն Նախճաւան – 126. և թագաւորն յանկասկածս լինելով՝ փութացան ելին ի բանակէն փախստեայ հարուստ ասպարիսօք: - 380. և ինքն Աշոտ ճողոպրեալ միաձի ելեալ եհաս փախստեայ մինչ յՈստանն Ռշտունեաց, թողլով զբուն բանակն ի նմին տեղւոջ. – 332. և լեռնային զօրքն Ապումուսէի զհետ մտեալ փախստէիցն՝ իջուցին ի լեռնէ անտի և դարձան առնել դիակապուտ – 282. և կէսքն զհետ մտեալ փախստէիցն, մինչ թանձրացաւ մութ գիշերին՝ հանին ի սահմանացն Հայոց, էր որ ի կողմն Ելոյ և էր որ ի կողմն Ատրպատականի և Պարսից: - 232. և փախստեայ գնացին զհետ մինչ ի սահմանս իւրեանց. – 308. Իսկ Ասուդ զհետ Դարէհի ելեալ ի պատերազմ ընդդէմ զօրագլխացն Աղէքսանդրի՝ Հերակղեայ նահատակութեամբն դիւցազնաբար ի դիմի հարեալ՝ ի բաց նահանջէ զուժեղագոյնս զօրագլխացն Աղէքսանդրի հարուստ ժամ մի, մինչ հիացումն զօրօքն արկեալ՝ տային տեղի փախստէի. – 68. իսկ իբրև եկն Ապումրուան զհետ փախստէիցն ի Վանտոսպ զկնի թագաւորին՝ և խորհուրդն Գագկայ հաստատնագոյնք զկատարումն առին: - 368. Իսկ իշխանքն զհետ մտեալ փախստէիցն անկելոցն յամուրսն՝ ածեն մերձ ի պաշարումն զքաղաքն և զամրոցն 176. ճողոպրեալ Գարեգինն անձնապուրծ գնաց փախստեայ առ կայսրն Յունաց. – 102. մինչ ինքն Հերովդէս փախստեայ անձնապուր լեալ հանդերձ Ուրեղիանոսիւ զինակրաւ՝ անկանի առ քեռին իւր որդի Հիւրկանու քահանայի ի քաղաքն Ասկաղոն: - 78. Քանզի ոչ կարացեալ իմանալ զդէմ փախստէի Արտաշէսի, և այն ի տեսչութենէ Աստուծոյ այնպէս պահեալ լինէր – 84.

ՓԱԿԵԱԼ - և Ահմատայ ընդ մէջ փակեալ զղաշիկն՝ յանխնայ հարուածովք հարին, մանաւանդ զհետևակազօր գրոխսն և զգռեահսն որք ընդ նոսա. – 368. Եւ ահա լոյս սաստիկ իջեալ յերկնից և ցոլացեալ ի վերայ սուրբ մարմնոյն, և շուրջ փակեալ զտեղեաւն, թէ ուրեք յարեներ նորա ցայտեալ կայր: - 224. և Արշէզայ շուրջ փակեալ վահանաւորօք զԼիդէացւոց թագաւորաւն, տագնապ մեծ լինէր. – 64. և յաւեր դարձան գեւղք և ագարակք և աւանք, ի բաց մերկացեալ զզարդ և զբարեձևութիւն, և ընդ ազգականութեամբ փակեալ զանազան բոյսք և տունկք, որ ի վերայ երեսաց երկրի. – 238. Եւ նոյն ժամայն շուրջ փակեալ զքաղաքաւն հրձգութեամբ, և դիզեալ բորբոքէր հուրն ի դիւրաճախ փայտէն մայրից և գիոց: - 272. Եւ նոյնժամայն շուրջ փակեալ բազմութեան՝ արգելին զնա իբրև յամուրս անձաւաց, զվարմ մահաբեր, շուրջ ձգեալ ի կործանումն քաջ նահատակին: - 352. Իբրև իմացան զօրքն Տաճկաց, թէ եմուտ իշխանն յամրոցն՝ զհետ մտեալ բազմութեանն այնուհետև, և շուրջ փակեալ անդէն զամուրն զանել գառագիղն: - 208. Իսկ զօրավարն Բուխայ կայր ի կոր կործանմանն, ի տարակուսանս ըմբռնեալ փղձկէր ի միտս իւր, ցնորակոծ լինէր, հնարէր ելս իրացն գտանել ի վրանայարկն փակեալ, և ոչ առնոյր դուլ և դադար: - 282. Իսկ զօրքն Տաճկաց գումարեալ ի վերայ նոցա. շուրջ փակեալ, ձերբակալ արարեալ /220/ ածին առ զօրավարն - 222. նազելով և սիգալով, իբրև զկորիւն առիւծու

ճեմէր, անկասկածելի մնալով, առ ոչինչ համարելով զհէնն եկեալ հասեալ, փակեալ շուրջ զնովաւ. – 210. շուրջ փակեալ զՄեհուժանեան գնդիւն, զի մի ճողոպրել ինչ աճապարիցի: - 106. Նաև սրբոց հրեշտակացն ի տեսաւորութիւն ձևացեալ, որոց սարսափմամբ առ նորա զնայեցած յապուշ միտքն կրթեալ, շուրջ փակեալ զնայեցածն՝ ի հարց մատուցեալ ասէ – 386.

ՓԱԿԵԼ - ախոյանայարձակ լինելով քաջացն Վասպուրականի … փակեցին զբանակն և դարձուցին զզօրագլուխսն – 368. գունդ կազմեալ ռազմ արարեալ զբոլոր դաշտաձև հովիտն ի ներքս փակէք, վառեալք զինու և ամենայն պատրաստութեամբ ընդդէմ գնդին Հայոց: - 172. և ընդ այգն ընդ առաւօտն, մինչ նոքա ննջէին յիւրաքանչիւր վրանաց օթոցի՝ և զօրքն շուրջ փակեցին սուսերօք և վահանօք և նիզակօք և վառեալ մոմեղինօք, և մտեալ ի ներքս ըստ հրամանի զօրավարին իւրեանց – 296. և աներկբայութեամբ փակես զամենայն ընդ լծով հնազանդութեան քո: - 196. Եւ արգելին փակեցին զպահակս ամրականացն և զկիրճս ձորոց, որ հանէին յերկիր նոցա մտանել յամուրսն: - 274. Եւ զօրքն Տաճկաց պնդեցան և փակեցին շուրջանակի ի ներքս զգունդն Աղուանից և դիմեցին յանդուգն ի վերայ նոցա. – 284. և կարգեցին ճակատս և ռազմ բոլորեցին, և վահանաւորքն փակեցին զառաջակողմն ճակատուն և կացին ի թիկանց հետևակազօր նահատակացն. – 306. և կարգեցին ճակատս, և բոլորեցին ռազմ, և գունդս գունդս յընտրելոց զօրացն ըստ ազգս ազգս, շուրջանակի ի ներքս փակեցին զլեառնն և դրօշս և նշանս բարձրագոյնս լայնատարածս կանգնեցին. – 280. և յանկարծակի ի մէջ գիշերին Գրիգոր ախոյեանայարձակ դիմեալ շուրջանակի փակեցին ի ներքս զբանակն, սրով և աղեղամբ /330/ վէրս մահաբերս ի վերայ եղեալ՝ յոլովք անկան ի զօրուէն. - 332. և շամփուր շողացուցեալ մանուածոյս փակէ ի ներքս զզագաթն ամբարշտին. – 108. և ոչ են կամք իմ փութալ պատմել ընդ գրով փակել զկործանումն տերանց իշխանաց մերոց - 240. Եւ փակեաց Տէր Աստուած արտաքոյ նորա, ասէ, զտապանն: - 32. և փակեցին ի ներքս զոտն լերինն իբրև զծով շուրջանակի, ի վեր ձգելով զկուտակումն ալեացն ի բռնութենէ հողմոցն վարելոյ. – 276. Զոր մարդկային կարողութեան անհնար է /196/ փակել զբացումն դրանն ի կորուստ. – 198. իբրև զորսորդս ինչ առիւծուց կամ այլոց ինչ նոյնպիսեաց, շուրջ ձգեալ զգառագիղն՝ ի մէջ փակել զկորովին և զքաջ արանցն զիշխանն Աշոտ – 202. նոքա երթեալ մտին անդ, փակեցին զդրունսն և ամրացան ի նմա և սկսան ապստամբել ի Հռովմայեցւոց տէրութենէն: - 156. որպէս և գրեալ է, թէ ,,փակիցէ, և ոչ ոք իցէ որ բանայցէ, և բանայցէ, և ոչ ոք իցէ որ փակիցէ,,: -198. որպէս և գրեալ է, թէ ,,փակիցէ, և ոչ ոք իցէ որ բանայցէ, և բանայցէ, և ոչ ոք իցէ որ փակիցէ,,: -198.

ՓԱՂԵԳ - զոր սովորութիւն թէ առցէ ոք արդեօք ասել ի վերայ Փաղեգայ որդւոյ Եբերայ և կամ Առանայ որդւոյ Թարայի: - 40.

ՓԱՂՓԵԱԼ - որոյ տեսեալ զբարձրաբերձ վայելչութիւն հասակին և զպատշաճ գեղ երեսացն, զփաղփեալ գոյնն ի տեսիլ արուսեկի ի մէջ սպիտակափայլ ալեացն պատուաբերի – 204.

ՓԱՅԼԱԿՆԱՀԱՐ - Եւ յանդուգն դիմեցուածովն ի վեր քան զզարմանս՝ այն ինչ ի քթթել ական դարձուցին / 328/ զխրոսակսն, և զռազմն դաշիկ քակեցին և զյառաջագահ ախոյեանսն փայլակնահաւք արարեալ դիաթաւալ կացուցին – 330.

ՓԱՅԼԱՏԱԿՈՒՄՆ - Զի թէ միոյ փայլատակման ընթացք և ճայթումն ամպոց բաւական է պակուցանել քաղել զուշեղութիւն ոգւոց, զի՞նչ ինչ յայնժամ կրէին ոգիք մնացելոցն յերկրի, ի սահանաբաց և յանդնդաքակ վրդովմանցն հոսելոց, նախ քան զջրհեղեղ ջուրց սատակումնն: - 32.

ՓԱՅԼԱՏԱԿՈՒՆՔ - - այլ ես ասեմ քեզ, եթէ Տէր կամեսցի՝ վաղիւ պատելոց է զքեզ պատերազմ քաջաց. և ճեթեսցեն ի վերայ քո իբրև զամպս երկնից ի բռնալիր նիզակօք անցանիցեն ընդ մէջ բազմութեան քո իբրև զփայլատակունս հրոյ շանթից: - 140.

ՓԱՅԼԵԱԼ - և արևն ի վերայ հասեալ սպառազէն զարդուն՝և մերկ սուսերացն փայլեալ՝ ճառագայթս արեգականայինս յինքեանց ձգէին շուրջ զլերամբն. – 208. արկեալ զիւրև պատմուճան լուսակիզն փայլեալ իբրև զարուսեակ, և յաջոյ ձեռինն ունէր սուսեր, և ի

ձախոյն՝ բուրուառ լի խնկով – 232. և թէ զիա՛րդ գունդք գունդք հրեշտակաց մի զմիոյ կնի ելնելս առնեն, և զիա՛րդ փայլեալ նշանն տէրունական ահաւոր ճառագայթիւք – 284. և փոխանակ մանեկաց՝ զսուրն փայլեալ ի պարանոցսն ընդունէին: - 266.

ՓԱՅԼԵԼ - Եւ ի սաստիկ բախմանէ խառն նիզակացն և ի զինուց փայլելոյ և շողալոյ սուսերացն և սրնգելոյ աղեղանցն լարելոյ՝ հրաձգութիւն իմն արտաքս ելանէր իբրև յամպոց ճայթմանէ – 232.

ՓԱՅԼԻՒՆ - և իբրև զմի անձն, վառեալ ի զէն և ի սուր և ի ճակատամարտ՝ հասեալ յամուրս՝ տապալէր զզօրութիւն նոցա սրով և աղեղամբ, ի փայլիւն սուսերի և նիզակի և ի գիշերամարտ նահատակութեանց, ըստ նմանութեանն քաջ զօրավարին Իսրայէլի Յեսուայ կամ Գէդէովնի կամ թէ նոյն ինքն նահապետին Աբրահամու, ի վերայ հասեալ Քանանացւոց, զյաւէտ յաղթութեան նահատակութիւն նահատակեալ՝ և դառնայ մեծաւ յաղթութեամբ: - 312. և կարաւան գաղթականին տեսանէր զփայլիւն զինուցն և զշողալ սուսերացն, և այսր և անդր խուճապական լեալ հալածելս, իբրև զոչխարս ի գայլոց: - 228. և գրեթէ /գրքում՝ գրէթէ/ ոչ ամենևին ուրեք երևեցաւ այնպիսի ահաւոր տեսիլ զօրու և սպառազէն կազմութեան՝ ամենայն թագաւորաց, որ կացեալ էին ընդ ծագս տիեզերաց. զորոյ սաստիկ և ահագին որոտումնն և ճայթումնն և փայլիւն զինուցն, և որ ինչ յայնժամ զարդարեալ և զինեալ պատրաստեցան զօրքն Տաճկաց: - 284. և ի սաստիկ փայլմանէ զինուցն և սուսերացն շողալոյ, և ի փայլիւնն սպառազէն երիվարացն վառելոցն՝ զկարծիս բերէր զհրոյ վառեալ լերինն – 228. Եւ իբրև գիշերն տարածեցաւ և խաւարն թանձրացաւ և սկսան ամենեքին մտանել ի քուն յանձնիւր օթանոցս՝ յանկարծակի փայլիւն սուսերաց և մոմեղինաց վառելոց և գունդք խորհրդականացն և Հասան ընդ նոսա. – 348.

ՓԱՅԼՈՒՄՆ - Երևեալ նմա յայնժամ ի բանտին այր մի գեղեցկատեսիլ ի կերպարանս ալևորի, լուսակիզն փայլմամբ՝ ասէ ցԳուրգէն – 318. և աղաղակեալ զկնի նորա՝ զի թերևս ի լուր ձայնին և ի փայլումն զինուցն և ի շողալ սուսերին և ի խխնջիւն քաջ երիվարին և ի վազս երագութեանն ուժոյ ազդ լինիցի և դարձցի ի ձայն նոցա և ծանիցէ, և դարձցի ի կորստական ճանապարհէն – 228. և զի մի՛ ճրագն եօթնաստեղն ընդ գրուանաւ զփայլումն լուսոյն ծածկիցէ – 204. և ի սաստիկ փայլմանէ զինուցն և սուսերացն շողալոյ, և ի փայլիւնն սպառազէն երիվարացն վառելոցն՝ զկարծիս բերէր զհրոյ վառեալ լերինն – 228.

ՓԱՅՏ - դուզնաքեայ երասանակալ փայտիւն վազս առեալ սիգաքայլ ճեմարանօք ընդ կապուտակաձև երկնագոյն լեռնային և դաշտական ասպարէզս – 396. ետ բերել փայտս, և եդեալ ի վերայ փայտին զերանելին Սողոմոն՝ և մօտ առ փայտն կացուցին զսուրբն Կահայ, զի գոնեայ մինն ի միւսոյ տանջանացն երկուցեալ հնազանդիցի հրամանի թագաւորին: - 292. ետ բերել փայտս, և եդեալ ի վերայ փայտին զերանելին Սողոմոն՝ և մօտ առ փայտն կացուցին զսուրբն Կահայ, զի գոնեայ մինն ի միւսոյ տանջանացն երկուցեալ հնազանդիցի հրամանի թագաւորին: - 292. ետ բերել փայտս, և եդեալ ի վերայ փայտին զերանելին Սողոմոն՝ և մօտ առ փայտն կացուցին զսուրբն Կահայ, զի գոնեայ մինն ի միւսոյ տանջանացն երկուցեալ հնազանդիցի հրամանի թագաւորին: - 292. և կերիցեն քարինք և փայտք և այլ կահք երկաթեղէնք, որպէս և զայն որ ի նմայն պատարագի մարմին և արիւն որդւոյն Աստուծոյ, մանաւանդ թէ ինքն իսկ ճշմարտապէս որդին Աստուծոյ. – 396. և դահճացն հանեալ զսուսերն՝ դիմեցին ի վերայ նոցա իբրև զգազանս արիւնարբուս, և ծեծէին սրովն, իբրև ոք զի հատանիցէ փայտ ի մայրս անտառախիտս հարեալ կացնաւ, և յանխնայ անողորմ յօշէին անդամ անդամ: - 266. և զկէսն մահու դատապարտեալ, զգլուխս նոցա հատեալ ի փայտի բարձրացուցանէին ի վերայ դրանդեաց պարսպին: - 372. և զՇիրոյ կախեն զփայտէ ի վերայ կրակարանին. – 126. և ի փայտից մայրեաց շինեալ էր քաղաքն նոցա, պարիսպք և պատուարք և ապարանք նոցա և ամենայն տուն բնակաց քաղաքին և ամենայն կազմած պատրաստութեան նոցա: - 270. և իջուցեալ ի փայտէն հատին սուսերաւ զգլուխ նորա. – 290. և կատարեալ զխնդիրն իջուցանէ զԱնիանոս ի փայտէն – 76. Եւ հրամայեաց ածել ոսկերիչ և նորոգեալ նորացոյց զանյաղթ փայտ խաչին Քրիստոսի, մատուցեալ զբեկորսն

առ իւրաքանչիւր յօդս, պատեալ մաքուր արծաթով վայելչագոյն քան զառաջինն, ի պարծանս քրիստոնէից և յամօթ և ի նախատինս թշնամեաց խաչին Քրիստոսի: - 378. և ճախր առեալ ի ներքուստ ի վեր ի լեառն Վարագ և երկրպագեալ աստուածազարդ քրիստոսապսակեալ փայտի /ավելի ճիշտ՝ փայտեայ/ խաչին Քրիստոսի, պատուանդանի ոտիցն Աստուծոյ - 392. Եւ նոյն ժամայն շուրջ փակեալ զքաղաքաւն հրձգութեամբ, և դիզեալ բորբոքէր հուրն ի դիւրածախ փայտէն մայրից և գիոց: - 272. Եւ ոսկեգործ ականակապ կազմեալ՝ պատեաց ոսկով զփրկագործ սուրբ խաչն, և ընդելուզեալ մարգարտով զարդարեաց զսխրագործ փայտն, հիւսնեալ ի մէջ անուշահոտ փայտից, թողեալ մասն ինչ արտաքս ոսկեպատ պահարանին, յառաջնում իւրոյ քառածրագիծ խաչակերտ փայտեղէն գզրոցկանն: - 394. Եւ ոսկեգործ ականակապ կազմեալ՝ պատեաց ոսկով զփրկագործ սուրբ խաչն, և ընդելուզեալ մարգարտով զարդարեաց զսխրագործ փայտն, հիւսնեալ ի մէջ անուշահոտ փայտից, թողեալ մասն ինչ արտաքս ոսկեպատ պահարանին, յառաջնում իւրոյ քառածրագիծ խաչակերտ փայտեղէն գզրոցկանն: - 394. զի Քրիստոսն այն, որ զանձն իւր ոչ կարաց ապրեցուցանել ի Հրէիցն, այլ կալան զնա և սպանին ի վերայ փայտի՝ իսկ արդ զքեզ զիա՞րդ կարէ ապրեցուցանել ի ձեռաց իմոց: - 146. զի էր կախեալ զփայտէ – 76. զոր և սուրբքն ասեն, եթէ ձայն դակուացն և բախումն խմբիցն առ ի հեղուսել զփայտսն՝ /28/ այնպէս իբրև յորոտման ամպոյ յամենեցունց հնչէր լսելիս, ի մօտաւորս և ի հեռաւորս, առ ի յերկիւղ և ի զգուշութիւն անզգամ ազգին, թերևս դարձցին և կեցցեն. – 30. Իսկ վասն ձեանն անկայուն զօրութեանն որ այն ինչ յամպոյն ի վայր զեղեալ լինին՝ հնարաւորեալ իւրեանց փայտս իբրև զանուրս չուանօք պարունակեալ շուրջ զոտամբք, դիւրաւ ընթանան ի վերայ ձեանն իբրև ընդ ցամաք երկիր: - 192. Մինչդեռ կայր ևս կենդանի՝ ետ կանգնել փայտ մի մեծ և բարձր յոյժ, և դնել զնա ի ծայր փայտին, ունել ի բարձրաւանդակ տեղւոջ. – 290. Մինչդեռ կայր ևս կենդանի՝ ետ կանգնել փայտ մի մեծ և բարձր յոյժ, և դնել զնա ի ծայր փայտին, ունել ի բարձրաւանդակ տեղւոջ. – 290. Նշանն քրիստոսեան քառածրագիծ փայտիւ արուեստագործեալ ճարտարապետի ումեմն հիւսնեալ – 378. Նոյն ժամայն ել հրաման յարքունուստ, զի զսուրբն Սողոմոն ի նմին փայտի սպանցեն, նետաձիգ լինել ի նա: - 292. որ ի բախմանէ քարի և երկաթոյ կայծակունք արտաթափին, այլ և ի փայտից ընդ միմեանս յիրար շփելոյ, որպէս և անուոյ բնաւորեցաւ լինել, որ ի սաստիկ շրջագայութենէ սայլիցն բազում անգամ և առեղք փայտիցն վառմամբ հրոյ հրդեհին: - 52. որ ի բախմանէ քարի և երկաթոյ կայծակունք արտաթափին, այլ և ի փայտից ընդ միմեանս յիրար շփելոյ, որպէս և անուոյ բնաւորեցաւ լինել, որ ի սաստիկ շրջագայութենէ սայլիցն բազում անգամ և առեղք փայտիցն վառմամբ հրոյ հրդեհին: - 52. Որգունակ հնչումն տաշելոյ փայտիցն առ Նոյիւ ազդեցութեամբ հիւսնական գործեացն՝ զհեղեղածուփ անդնդաձիգ սահանացն երկնահոս զուգաճանապարհորդութեանն յապրուստ հաւատարիմ առնն յԱստուած յուսացեալ համամիտ ընտանեացն գործակցութեամբ: - 396.

ՓԱՅՏԱԿԱՐԱՆ - և հրաման ետ հասանել ի վերայ քաղաքին Տփղիք կոչեցեալ. որում յառաջագոյն Փայտակարան անուանէին. – 270.

ՓԱՅՏԱԿՇՏԱՆ ԳԵՕՂ - և սլացեալ իբրև զարծիւ ի վերայ որսոյ՝ պատահէին անհուն բազմութեանն ի Փայտակշտան գետող – 400.

ՓԱՅՏԱԿՈՏՈՐ - և զկէս գերւոյն ընդ իւրեանց ունելով ի քաղաքին, լինել իւրեանց ջրկիրս և փայտակոտորս. – 188.

ՓԱՅՏԱՀԱՐ - ելցեն ի քեզ փայտահարք բազումք և կոտորեսցեն զմայրս քո մեծամեծս և զմատաղատունկս բարձունս. – 148.

ՓԱՅՏԱՏ - և զնոյն ոռոգեալ ոտիւք ի միջոցս պրակացն, կամ երկմատնի փայտատովք սերմանեալ. – 192.

ՓԱՅՏԵՂԷՆ - և արծաթագործ եօթնփորձեան հրաբորբոք ճարտարապետն ի բովս հալոցացն զուտ և վճիտ արծաթ ընտրելով, արծաթեղինաւն զփայտեղէնն պատեալ արտաքուստ –

378. Եւ ոսկեգործ ականակապ կազմեալ՝ պատեաց ոսկով զփրկագործ սուրբ խաչն, և ընդելուզեալ մարգարտով զարդարեաց զսխրագործ փայտն, հիւսնեալ ի մէջ անուշահոտ փայտից, թողեալ մասն ինչ արտաքս ոսկեպատ պահարանին, յառաջնում իւրոյ քառածրագիծ խաչակերտ փայտեղէն զզրոցկանն: - 394. որջացեալ ի մուտս կոյս յափն ծովուն ի փապար յարձանախիտ քարին և մանրեալ զարծաթեղէնն ընդ փայտեղինին. – 378.

ՓԱՊԱՐ - և բնակութիւն նոցա ի խորաձորս և ի փապարս լերանց և ի պրակս մայրեաց, ի գագաթունս լերանց: - 190. որջացեալ ի մուտս կոյս յափն ծովուն ի փապար յարձանախիտ քարին և մանրեալ զարծաթեղէնն ընդ փայտեղինին. – 378. զզարնանայինսն ի բարձրագոյն գագաթունսն լերանց և ի փապարս վիմաց և ի վերայ բարձրաբերձ ծառոց կենցաղավարին – 262.

ՓԱՌԱԿԻՑ - և հաւատալն նորա ի մի Աստուած Հայր և մի Որդի նորա ի Բանն Աստուած Յիսուս Քրիստոս և ի մի Հոգի սուրբ, զուգակից և բնութենակից և փառակից Հօր և Որդւոյ, ի մի Աստուածութիւն կատարեալ. – 94.

ՓԱՌԱՄՈԼ - Բայց հրաման քո ճոխութեանդ ձգեաց զիս յայս մեծ ձեռնարկութիւնս, սակս որոյ բացաձգեցայց արտաքոյ շաղակրատոյ լեզուաց փառամոլ ոգոց: - 122. մատուցեալ առ Վռամ հանդերձ Սորմակաւ ումեմն Արծկեցւոյ մոլեգնոտ փառամոլ աբեղայի՝ սկսան ազգի ազգի լեզուագարութեամբ չարախօսել զսրբոյն Սահակայ – 118.

ՓԱՌԱՄՈԼՈՒԹԻՒՆ - Եւ նորա ըստ ցանկութեան սնոտի փառամոլութեաննն կատարեալ զխնդիրն. – 124.

ՓԱՌԱՆ - և ելեալք ի վերայ Փառանու՝ արարին մեծ խորտակումն դիմադարձացն, սպանին և զԱպղջէհրն և զբազումս ի զօրէն Ամովնացւոց և Մովաբացւոց – 160. Եւ եկեալ ի Փառան՝ զնոյն ասաց երկրորդել զբանս զայսոսիկ առ հօրեղբօրն իւրոյ որ կոչէր Ապղջէհր: - 158. Յայնմ ժամանակի էին եղբարք բռնակալք ոմանք ի կողմանս ապառաժ Արաբիոյ ի տեղւոջն Փառան որ այժմ կոչի Մաքայ, արք պատերազմողք /156/ զօրագլուխք, պաշտօնատարք մեհենին Ամովնացւոց պատկերին, որ կոչի Սամամ և Քաբար: - 158.

ՓԱՌԱՑԻ - զյոյժ փառացի և ճոխ և նազելի զնախագահ նստեալ զարմէ – 300.

ՓԱՌԱՒՈՐԱԳՈՅՆ - Այսոքիկ զաւառք անուանիք, զոր յառաջին ժամանակս իւրոյ իշխանութեանն սեփհականս իւր արարեալ ունէր հայրն նենգութեան Մարդպետն կոչեցեալ … և մանաւանդ քաղաքն Շամիրամայ հռչակելին և յոյժ փառաւորագոյնն յամենայն կողմանց Վասպուրականի: - 388. Եւ նոքա էին արք փառաւորագոյնք ի տանէ Արծրունեաց և յայլոց նախարարաց, որոց Տէր եղիցի այցելու: - 402.

ՓԱՌԱՒՈՐԱՊԷՍ - Եւ այսպէս կատարեցաւ սուրբն ամենայաղթ նահատակն Քրիստոսի Մուկաթլ փառաւորապէս ի Հայր և յՈրդի և ի Հոգին սուրբ, որում փառք յաւիտեանս ամէն: - 290. Եւ կատարեցաւ սուրբ վկայն փառաւորապէս ի Հայր և յՈրդի և ի Հոգին սուրբ - 224. Եւ կացեալ անդ մինչ ի ժամանակս առաջինն Ղևոնի կայսեր՝ մեռանի անդ Վասակ և Տաճատ և փոխին ի հանգիստ փառաւորապէս ի գերեզմանս մեծամեծացն Յունաց: - 132. Զորս առեալ քրիստոնէից զպատուական մարմինս նոցա՝ ծածկեցին փառաւորապէս թաղմամբ, ամ ըստ ամէ տօնիւք զօր կատարմանն յիշատակել, որք են արք թուով է: - 268. մեռան նոքա անդ և թաղեցան փառաւորապէս ըստ օրինի քրիստոնէից յուխտէ Յակոբկաց, որ անդ են հաւատացեալ ժողովուրդք, և զխոստովանողական անուն ստացեալ փառաւորեցան յերկրի և պսակելոց են ի Քրիստոսէ ընդ ամենայն սուրբս. ամէն: - 324.

ՓԱՌԱՒՈՐԵԼ - ,,և ո՛վ տայր ինձ վկայել ի վերայ ճշմարտութեանն և մեռանել վասն անուանն Քրիստոսի, և զարիւն իմ փոխանակ արեանն Քրիստոսի հեղուլ և զմարմին իմ փոխանակ մարմնոյ նորա ի մահ մատնել և զչարչարանս իմ ընդ նորա չարչարանսն խառնել, զի և ընդ նմա փառաւորեցայց. – 290. այլ աստուածայինն Պօղոս ճշմարտագոյնս զայսոսիկ յայտնէ ասելով՝,,ծանեան զԱստուած, և ոչ իբր զԱստուած փառաւորեցին կամ գոհացան. – 52. այլ ի վերայ դնիցի բարձրաբերձ աշտանակի առաքելական եկեղեցւոյ, որպէս զի

տեսցեն և փառաւորեսցեն զՀայրն երկնաւոր: - 204. մեռան նոքա անդ և թաղեցան փառաւորապէս ըստ օրինի քրիստոնէից յուխտէ Յակոբկաց, որ անդ են հաւատացեալ ժողովուրդք, և զխոստովանողական անուն ստացեալ փառաւորեցան յերկրի և պսակելոց են ի Քրիստոսէ ընդ ամենայն սուրբս. ամէն: - 324.

ՓԱՌՔ - Եւ սոցա այսպէս նահատակեալ կատարեցան վկայութեամբ ի փառս Աստուծոյ, և զմարտիրոսական անուն ժառանգեցին ի Քրիստոս ի պատիւ ամենասուրբ Երրորդութեանն: - 266. այլ և աստուածականն ցանկացաւ փառաց – 20. Այսպէս վկայեցին երանելիքն ի փառս սուրբ Երրորդութեանն յաւիտեանս յաւիտենից: - 294. Ել գնաց զկնի փառաց իշխանասիրութեանն ցանկութեան յորմէ վրիպեացն: - 236. Եւ ամենեցուն բերան լցեալ խնդութեամբ ետուն փառս Աստուծոյ: - 136. Եւ այսպէս կատարեցաւ սուրբն ամենայաղթ նահատակն Քրիստոսի Մուկաթլ փառաւորապէս ի Հայր և յՈրդի և ի Հոգին սուրբ, որում փառք յաւիտեանս ամէն: - 290. և աւանդեաց զոգին երանելին Յովնան ճշմարիտ խոստովանութեամբ ի Հայր և յՈրդի և սուրբ Հոգին, որում փառք յաւիտեանս: - 296. և բազմութիւն քրիստոնէիցն … գոհացեալ միաբան ետուն փառս Աստուծոյ, որ զօրացոյց զսուրբսն և արար յամօթ զսատանայ հանդերձ գործակցովքն իւրեանց: - 268. և ընկալան զվճիռ մարտիրոսական և կատարեցան վկայութեամբ ի փառս սուրբ Երրորդութեանն – 222. և ընկալեալ զվճիռ մարտիրոսութեան կատարի ի փառս սուրբ Երրորդութեանն – 104. Եւ ըստ հրամանի բռնաւորին դահճացն ձգեալ ի նա նետս շուրջանակի՝ աւանդեաց զոգին ի փառս Աստուծոյ երանելի նահատակն Քրիստոսի: - 292և կատարեալ զաղօթսն և գոհացեալ՝ ետուն զփառս Աստուծոյ և հատուցին զամէնն և նստան ուտել հաց. – 228. և հիացմամբ առ նորայն հայելով, թէ ո՛վ ոք էր, և ո՛րպիսի, և ո՛րպէս կորեաւ՝ ասեն, ,,զիա՞րդ դադարեաց պահանջողն, հանգեաւ տագնապօղն. եթէ ո՛րպէս իջին ի դժոխս փառք նորա,,: - 376. Եւ վասն իւրեանց թուլամորթութեանն և անհաստատ և յողդողդ մտաց սիրեցին զփառս մարդկան առաւել քան զփառս Աստուծոյ. – 246. Եւ վասն իւրեանց թուլամորթութեանն և անհաստատ և յողդողդ մտաց սիրեցին զփառս մարդկան առաւել քան զփառս Աստուծոյ. – 246. և փոխեցին զփառս /52/ անեղծին Աստուծոյ ի նմանութիւն գոյիցս եղծանելեացս,,: - 54. զոր փառս իւր անուանեաց – 76. ո՞չ ապաքէն ըստ այնմ և ելքն ի նմանէ լինիցին շահ ի փառս Բաբելացւոցն ըստ կարծեաց նոցա: - 38. Ոչ ամենևին /գրքում՝ամենեւին/ գոնէ փոքր մի խոտորեցան ի բանս նորա և ոչ առին յանձն ի պատրել մեծութիւն ընչից և ոչ անսացին հնազանդել փառաց աշխարհական ցանկութեանց – 264. որ դիւրամոռաց զերախտիսն Քրիստոսի համարէին, միայն զկնի փառաց աշխարհիս ընթանային և մոգութեան մոխրապաշտութեանն հետևէին: - 112. որում փառք յաւիտեանս. ամէն: - 254. որում փառք յաւիտեանս. ամէն: - 254.

ՓԱՌՕՔ - անհասական իմն շնորհիւ փառօք և պատուով պսակեալ զմարդն իշխանական ճոխութեամբ՝ վայելեցուցանէ դրախտին, տալով նմա բազմամեայ կենաց սահման իբրև զմի օր - 20. և ի վերայ նորա շինեաց եկեղեցի զհամբարձմանն ի յերկինս ի Հօրն գահակցել աթոռ, և զերկրորդ գալստեանն զյիշատակ ունելով, որ գալոցն է հայրենի փառօք, ըստ հրեշտակացն առաքեալսն զմխիթարականն և զքաջալերականն աւետիս նոցա առբերելով: - 390. զոր չառեալ յանձն սուրբ տիկնոջն Համազասպուհեայ՝ տանին հանեն ի բարձրաւանդակ ամրական բերդաքաղաքն, մերկանան ի հանդերձիցն, զի քրիստոսեան փառօքն զգեցցի. – 102.

ՓԱՐԱԻՈՆ - և երաժշտականքն երգս առեալ զյաղթութեանն Փարաւոնի՝ գոչէին ,,Տէր խորտակէ զպատերազմունս, Տէր է անուն նորա,,: - 232.

ՓԱՐԹԱՄ - և տնեալ զաւուրս Խ՝ փոխի յաշխարհէս ամենեցուն պատկառելին, մանաւանդ թէ ընդհանուր ցանկալին և սիրելին ճոխից և անազգեաց, աղքատաց և փարթամաց, մեծամեծաց և փոքունց: - 384.

ՓԱՐՇՄԱՆ - ինքեանք պատրաստեալ են զնոյն փարշմանն կրել զոր դաշտայինքն կրեցին – 190.

ՓԱՓԱԳԵԼԻ - և հրաման հարկեցուցանող ճոխութեան քո ստիպէ զմեզ, ճեպել փութալ առ գիւտն հանդիսանալ և կարգել ոճով զփափագելին յայտարարական գրով, դրոշմել կանոնել ի գիրս աստ – 12.

ՓԱՓԱԳՈՒՄՆ - Բայց թէպէտ և ունէր զպատճառ զբարեկամանալն Արէտայ ընդ Աբգարու և ընդ Խուրէնայ՝ այլ Աբգար և Խուրան առ փափագումն որ ի Քրիստոս, և առ լուր սրբոյ Փրկչին, և որ ինչ գործեացն Հերովդէս՝ ոխացեալ ընդ Հերովդի – 78. գրելով և զպատասխանի թղթոյն ի ձեռն Թովմայի առաքելոյ, և զխոստաբանութիւն՝ զԹադէոս առաքեալ լնուլ զփափագումն խնդրոյն. - 76.

ՓԱՓԿԱՆԱԼ - և ինքն թագաւոր, փափկասցի, և բռնաւորք խաղալիք նորա, և ինք ընդ ամենայն ամուրս խաղալով խաղասցէ,,: - 200.

ՓԱՓԿԱՑԵԱԼ - Ընդ ժամանակսն ընդ այնոսիկ Աշոտ թագաւորն Հայոց փոխի յաշխարհէս ի բարիոք ծերութեան, փափկացեալ և յղփացեալ խրախութեամբ, ձեռն նորա յամենեսին և ամենեցուն ձեռք ի նա – 356.

ՓԱՓԿՈՒԹԻՒՆ - ,,իբրև զդրախտ փափկութեան երկիրն առաջի, և զկնի նորա դաշտ ապականութեան – 238. Եւ եհան արձակեաց զնա Տէր Աստուած ի դրախտէն փափկութեան՝ գործել զերկիր ուստի առաւ: - 22. և ոչ քաղցր թուէր նմա քուն գիշերոյն, և փափկութիւն տունջեան յոչինչ համարեալ լինէր – 242.

ՓԱՓՈՒԿ - որպէս ասաց Ամովս մարգարէ, ,,գերծիր և կտրեա ի վերայ փափուկ որդւոց քոց, լայնեա զխզումն քո իբրև զարծուոյ, զի գերեցան ի քէն,,: - 238.

ՓԵՌԵԿԵԱԼ - և ոչ եղեն ունկնդիր մաղձահամ և ժախահոտ բանիցն, իբրև ի փեռեկեալ գերեզմանէ զնեխահոտութիւնն արտաքս արկանելոյ. – 292.

ՓԵՌՈՏԱԿ ԳԵՕՂ - Իսկ նա չանսաւորութիւն անխոնարհելի մնացեալ, և անցեալ օթագայեցեալ ի գեօղն Փեռոտակ յանդիման քաղաքին: - 352.

ՓԵՍԱՅ - անտրտում խնդութեամբ դիմեցին ի տեղի սպանմանն, իբրև ի հարսանիս երիտասարդական ամուսնութեանն, ուրախ լինել որպէս փեսայ առ հարսին. – 266. Եւ կայսր Մուրիկ հաւանեալ նմա՝ յղէր առ նա զՓիլիպիկոս փեսայ իւր. և տայր տանել նմա գիր ընդունելութեան, և առնոյր ի նմանէ երդումն: - 138. թերևս արտաքոյ տանջանացն կայցեն մնայցեն, թէպէտ և ոչ ընդ փեսային վայելեն ի հարսանիսն: - 338.

ՓԵՍԱՅԱՑՈՒՑԱՆԵԼ - Ընդ որ յոյժ ուրախացեալ Շապուհ՝ խոստացաւ փեսայացուցանել զՄեհուժան ի քոյր իւր Որմզդուհի: - 102.

ՓԵՍԱՅԱՑՈՒՑԵԱԼ - Բայց յաւելեալ լինի պատճառ ունելոյն զնա զայս օրինակ, եթէ էր փեսայացուցեալ զԴաւիթ զեղբայր կորապաղատին ի քոյր իւր Մարիամ. – 342. մանաւանդ զի փեսայացուցեալ էր Շապուհ զԳագիկ ի դուստր իւր. – 364.

ՓԵՍԱՅՈՒԹԻՒՆ - Եւ արարին նաւակատիս մեծ հարսանեաց փեսայութեան Դերանկին, ի թուականութեան Հայոց ՅԺԱ-երորդ ամին: - 322.

ՓԻԼԻՊԻԿՈՍ - Եւ կայսր Մուրիկ հաւանեալ նմա՝ յղէր առ նա զՓիլիպիկոս փեսայ իւր. և տայր տանել նմա գիր ընդունելութեան, և առնոյր ի նմանէ երդումն: - 138.

ՓԻԼԻՊՊԷ - որոց անուանք ճանաչի սոցա … Սահլ Սմբատայ որդի, Շաքեոյ տէր , որ զԲաբանն կալաւ, և իշխանական Վասակ Վայոց ձորոյ տէրն, և Փիլիպպէ իշխանն Սիւնեաց – 298.

ՓԻԼԻՊՊՈՍ - բայց կանոնեցի զանուանս ի մատենիս: Տիգրան. Աղրամելէք. Ներս. Ներսէխ. Մարոդ. Արշամ. Արշաւիր. Ասուդ: Պարսից թագաւորք. Քսերքսէս. Արտաշէս երկայնաձեռն. Դարեհ. Արտաշէս. Ողոքոս. Զարսէս. Դարեհ: Ապա Աղէքսանդրոս Փիլիպպեայ Մակեդոնացի տիեզերակալ թագաւոր: - 68. որք և մատուցեալ առ Փիլիպպոս որ ի Բէթսայիդայն, ասեն Կամիմք զՅիսուս տեսանել,,.–76. Սիմոն Սամարացի մատուցեալ առ Փիլիպպոս զհոգւոյն պարգևաց լեզուացն, և սրտին կեղծաւորութեամբ զիա՛րդ պատժապարտեցաւ. – 258. Սորա որդիք հինգ ծնանի, յորոց մինն Հերովդէս և միսն Փիլիպպոս, զորոյ կինն հանեալ Հերովդէի՝ թող զկինն իւր զառաջին, զդուստր Արէտայ արքայի Պատրէացւոց. – 78.

ՓԻԼԻՍՈՓԱՅ - Ի դէպ ելանէ և հին առասպելն Ոլպիանու փիլիսոփայի, որ վասն առիւծուն և զուարակացն են բարառնութիւնք. – 196.

ՓԻԼԻՍՈՓՈՍ - Զոր Փիլոն Աղէքսանդրացի փիլիսոփոս և վարդապետ հնոյն՝ Ջրարբի ասէ, թերևս զննդականութեան և զաճողական բազմամարդութեանն պատճառ նշանակեալ յառաջատեսէ հայրն. – 24.

ՓԻԼՈՆ - Այլ և զՓիլոնեայսն ասացաք երկրորդել զառն քաջի և զյոյժ հմտագունի իմաստասիրութեան - 34. Զոր բան և վասն օձին սքանչելապէս ուսուցանէ Փիլոն Աղէքսանդրացի՝ յառաջ քան զդրժանացն դիպուածս՝ յոլովութիւն իմաստից ունել ամենայն շնչականաց. – 22. Զոր ի մեկնութեան Եբրայականացն անուանց ասէ Փիլոն – 34. Զոր Փիլոն Աղէքսանդրացի փիլիսոփոս և վարդապետ հնոյն՝ Ջրարբի ասէ, թերևս զննդականութեան և զաճողական բազմամարդութեանն պատճառ նշանակեալ յառաջատեսէ հայրն. – 24. Իսկ Փիլոն ասէ – 32.

ՓԻԼՈՆ ԱՂԷՔՍԱՆԴՐԱՑԻ - Զոր բան և վասն օձին սքանչելապէս ուսուցանէ Փիլոն Աղէքսանդրացի՝ յառաջ քան զդրժանացն դիպուածս՝ յոլովութիւն իմաստից ունել ամենայն շնչականաց. – 22. Զոր Փիլոն Աղէքսանդրացի փիլիսոփոս և վարդապետ հնոյն՝ Ջրարբի ասէ, թերևս զննդականութեան և զաճողական բազմամարդութեանն պատճառ նշանակեալ յառաջատեսէ հայրն. – 24.

ՓԻՂ - և զհետ նորա աճապարեալ արկանեն զնա ի յամրափակ զինեալ վաշտն ի մէջ փղացն. – 128. զի տեսանեմ զքեզ այր պռոտաբան, /138/ զի յանձն քո խրախուսես և ոչ յԱստուած, ի բազմութիւն զօրաց և ի փղաց զօրութիւն. – 140. Քանզի վաղիւ առաւօտուն ցուցանեմ ձեզ փիղս վառեալս, և ի վերայ հզօր սպառազէնս ի քաջաց – 138.

ՓԻՒՆԻԿԵՑԻ - քանզի Յունաց հուսկ երբեմն յետոյ գտաւ գիր ի Կադմեա յումեմնէ Փիւնիկեցւոյ: - 18 .

ՓԼՈՒԶԵԱԼ - Բայց ոչ ժամանեալ կատարման պատերազմին, զաշտարակն, զոր շինէր որդին Աբգարու փլուզեալ ի վերայ սպան զնա, վրէժխնդիր եղեալ մահուն Ադդէի սրբոյ: - 80.

ՓՂՁԿԵԼ - Իսկ զօրավարն Բուխայ կայր ի կոր կործանմանն, ի տարակուսանս ըմբռնեալ փղձկէր ի միտս իւր, ցնորակոծ լինէր, հնարէր ելս իրացն գտանել ի վրանայարկն փակեալ, և ոչ առնոյր դուլ և դադար: - 282.

ՓՇՈՑ ՎԱՆՔ - և ետուն ի սուրբ եկեղեցին Դ ագարակս. զվանքն Փշոց և զագարակն Ահավանք, յանդիման եկեղեցւոյն որ ի կղզին, և զքարն Մանակերտ, որ է հանդէպ հարաւոյ կուսէ, և զԲերկրի և այլ բազում տեղիս – 356.

ՓՇՐԵԼ - տայր հրաման փշրել և խորտակել զկենդանագրեալ պատկերս ճշմարիտ մարդեղութեան Փրկչին և նորին աշակերտաց: - 168.

ՓՈԽԱԴՐԱԿԱՆ - Որ և այլոց կարող տուիչ լինել ժամանակաց, որպէս և արանցն որ յառաջ քան զջրհեղեղն քառասուն ևս աւելի բիւրս ամաց և դարս փոխադրական այլաձևս և խժականս, շարս և ներս և սոսս - 38.

ՓՈԽԱՆԱԿ - Եւ փոխանակ նորա ժառանգէ զաթոռ հայրապետական երանելին տէր Յօհաննէս, որ և սնեալ և ուսեալ առ ոտս սրբոյն Մաշտոցի. – 376. ,,և ո՛վ տայր ինձ վկայել ի վերայ ճշմարտութեանն և մեռանել վասն անուանն Քրիստոսի, և զարիւն իմ փոխանակ արեանն Քրիստոսի հեղուլ և զմարմին իմ փոխանակ մարմնոյ նորա ի մահ մատնել և զչարչարանս իմ ընդ նորա չարչարանսն խառնել, զի և ընդ նմա փառաւորեցայց. – 290. ,,և ո՛վ տայր ինձ վկայել ի վերայ ճշմարտութեանն և մեռանել վասն անուանն Քրիստոսի, և զարիւն իմ փոխանակ արեանն Քրիստոսի հեղուլ և զմարմին իմ փոխանակ մարմնոյ նորա ի մահ մատնել և զչարչարանս իմ ընդ նորա չարչարանսն խառնել, զի և ընդ նմա փառաւորեցայց. – 290. ,,հատուցից չար փոխանակ բարւոյ, ատելութիւն փոխանակ սիրոյ իմոյ,, - 214. ,,հատուցից չար փոխանակ բարւոյ, ատելութիւն փոխանակ սիրոյ իմոյ,, - 214. ,,վա՛յ քեզ, եղուկ դու, ազգ Տաճկաց, արանց և կանանց ամենայն ծովեզերեայ քաղաքաց. փոխանակ անաւրէնութեան լեզուիդ և պղծութեան կարգաց, որով բացեալ զբերանդ պղծութեան զանաւրէնս բարբառէիր: - 164. այլ փոխանակ սոցա մատեայ ի տեղիս յայս,

ձեռն արկեալ անիմաստաբար լի անհմտութեամբ և անհանճարութեամբ բուռն հարկանելով զմեծ զայս քերթուածութենէ: - 122. Արշակ թագաւորեալ փոխանակ Տիրանայ հօր իւրոյ – 98. Բայց քանզի աւերեալ էր զՆինուէ Նաբրովթայ ի բռնանալն ի վերայ Սեմեացն, և զԲաբելոն /16/ փոխանակ նորա շինեալ – 18. Եկն այնուհետև Շապուհ որդի թագաւորին Աշոտի և ետ զիշխանութիւնն ի ձեռս Աշոտի որդւոյ Դերանկին, փոխանակ հօր իւրոյ: - 354. ետուն զոյժ զմահուանէ թագաւորին և կացուցին փոխանակ Վաղարշու թագաւոր զորդի իւր զԽոսրով ձեռնտուութեամբ Արտաւանու Պարսից արքայի: - 92. Եւ յաջորդեալ փոխանակ նորա կացեալ յաթոռ սրբոյն Գրիգորի երանելին Մաշտոց, ելեալ ի կղզոյն Գեղարքունի լճէն, զՅօհաննու Կարապետին զվարուցն բերեալ զօրինակ. – 376. և տիրեսցէ փոխանակ եղբօր իւրոյ բոլոր աշխարհի իւրոյ: - 226. Եւ դարձեալ՝ եթէ յարոյց ինձ Աստուած զաւակ այլ՝ փոխանակ Հաբէլի զոր սպան Կայէն: - 24. և ընկեցեալ զԽոսրով յաթոռոյն՝ կացուցանէ փոխանակ զՎաղարշ զեղբայր Խոսրովու: 112. Եւ թագաւորեաց կայսր Թէոդոս փոխանակ Պապայ զՎարազդատ ոմն յԱրշակունի տոհմէ, այր քաջ և պատերազմող, ահարկու մեծամեծաց և փոքունց. – 108. և թագաւորեաց փոխանակ Տիբէրի Գայիոս փոքրն ամս Գ և կէս: - 80. և թագաւորեցուցանէ զնա ի վերայ Հայոց փոխանակ հօր իւրոյ Սանատրկոյ, ի տեղի թագաւորութեան քաջացն Արշակունեաց: - 86. և ինքն թագաւորեաց փոխանակ /318/ ընդ հօր իւրոյ, և յետ Զ ամսոց մեռանի: - 320. և հրովարտակ արքայի ի ձեռս քարոզչացն, թէ յղեաց արքայ զԳրիգոր որդի Աշոտոյ յերկիր իւր՝ տիրել աշխարհի իւրոյ փոխանակ հօր իւրոյ: - 314. և մեկնեաց յինքենէ զԱբրահիմ ոմն և յղեաց զնա հազարապետ Հայոց, և վերակացու ի վերայ հարկաց արքունի, և տիրել փոխանակ իշխանաց սորա: - 298. և յարձակեալ բազում անգամ ի վերայ յունական զօրուն որք ընդդէմ զօրաց քոց պատերազմէին՝ և անդ ոչ սակաւ հեղմունս արեանց արարեալ փոխանակ զօրաց քոց ի զօրացն Յունաց. – 304. և նմա յանձն առնէ զաշխարհս, փոխանակ հօր իւրոյ Ապուսէթի. – 184. և տացէ ի ձեռս նորա զիշխանութիւնն Վասպուրականի փոխանակ եղբօր իւրոյ – 226. և փոխանակ զգեստու հարսանեաց զգեստ մկրտութեանն ծանուցեալ ցուցին, զոր ջրով և Հոգւովն սրբով զգեցեալ էին – 266. և փոխանակ ծաղկեալ պատմուճանի գունագոյն երանգ երանգ անկուածոցն՝ զսուրբ և զվարդագոյն կարմրատեսիլ արիւնն իւրեանց ի վերայ սուրբ մարմնոյն, և փոխանակ ոսկեհուռ թագակապ զարդու պսակացն՝ զերկրպագութիւնն Քրիստոսի. – 266. և փոխանակ ծաղկեալ պատմուճանի գունագոյն երանգ երանգ անկուածոցն՝ զսուրբ և զվարդագոյն կարմրատեսիլ արիւնն իւրեանց ի վերայ սուրբ մարմնոյն, և փոխանակ ոսկեհուռ թագակապ զարդու պսակացն՝ զերկրպագութիւնն Քրիստոսի. – 266. և փոխանակ մանեկաց՝ զսուրն փայլեալ ի պարանոցսն ընդունէին: - 266. Եւ փոխանակ նորա թագաւորէ Սմբատ որդի Աշոտի, այր քաջայայտ և հանճարեղագոյն, լի և առոյգ յամենայն իրողութիւնս՝ որ ինչ ընդ երկրաւս համառօտաբար լրութիւն պատկանաբար պիտանան, հաճոյ Աստուծոյ և ընտիր մարդկան: - 356. Եւ փոխանակ սուրբ մկրտութեանն՝ հանապազ ողողանիլ ջրով, և զայն բաւական համարել ի սրբութիւն: - 164. Եւ քանզի ոչինչ հաղորդութիւն ունէր Յովսէփ առ ծնունդն Քրիստոսի՝ մտանէ յազգահամարն փոխանակ Մարիամու կնոջ իւրոյ -16. և քարոզն աղաղակէր, թէ ,,առաւ իշխանութիւնն Վասպուրականի աշխարհին ի ձեռս Գուրգէնի փոխանակ եղբօր իւրոյ Աշոտոյ տիրել ընդ նոսա,,: - 236. Ընդ այն ժամանակս տէր Զաքարիայ հանգեաւ ի Քրիստոս, կեցեալ ի հայրապետութեանն Հայոց ամս ԺԸ, և հաջորդէ փոխանակ նորա տէր Գէորգ: - 338. ընդդէմ արաբացի ասպատակողացն յարիւն և յապաժոյժ ի վերայ հայրենի աշխարհի մարտուցեալ և զհոգի և զմարմին փոխանակ սրբոց եկեղեցեաց Քրիստոսի և ի նոյն հաւատացելոց ի Հայր և յՈրդի և ի Հոգին սուրբ, առ զնոսա ամբողջ և անբիծ պահելոյ – 300. Թագաւորէ Խոսրով որդի Տրդատայ փոխանակ հօր իւրոյ, հրամանաւ Կոստանդիանոսի – 96. Մշկանս այս փոխանակ Արտաշրի մեր թագաւորի մտեալ ունի զաշխարս հրամանաւ Վռամայ Պարսից արքայի: - 118. Չիցէ՞ լուեալ ձեր զոր ասաց Սողոմոն, թէ ,,որ հատուցանէ չար փոխանակ բարւոյ՝ չար ի տանէ

նորա մի պակասեսցէ,,: - 214. Պտղոմեայ հասեալ ի տէրութիւն ժառանգաւորութեանն՝ փոխանակ իւր կացուցանէ զԱսուդ, տալով ի ձեռս նորա զբոլոր իշխանութիւն Եգիպտոսի և Հնդկաց - 70. Վաղարշակ թագաւորեալ փոխանակ հօր իւրոյ Տիգրանայ, և տուեալ պատերազմ ընդ հիւսիսայինն Հազրաց՝ մեռանի ի կորովաձիգ աղեղնաւորացն: - 92. ՓՈԽԱՆԱԿ ԱՇՈՏԻ ԹԱԳԱՒՈՐԵԼ ՍՄԲԱՏԱՅ: - 356.

ՓՈԽԱՆԱԿԵԼ - Եւ մեր ընկալեալ և հաւատացեալ ճշմարտութեանն՝ և ոչ կարեմք փոխանակել զճշմարտութիւն ընդ սնոտի, առասպելաբան և կարկատուն, ստայօդ և պաճուճազարդ մոլար ուսմանդ ձերոյ: - 246.

ՓՈԽԱՆՈՐԴԵԼ - ԹԷ ՈՐՊԷՍ ԵՂԵՒ ԲԱՐՁՈՒՄՆ ՉԱՐ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆՆ ՊԱՐՍԻՑ, ԵԻ ՓՈԽԱՆՈՐԴԵԱՑ ՄԻՒՍ ԵՒՍ ՉԱՐ ԻՍՄԱՅԷԼԱԿԱՆ: - 156. որ զծայրագոյն շնորհացն Աստուծոյ առեալ պարգևս՝ կենդանւոյն ի կարգս անմահիցն փոխանորդեաց վերագրիլ, որ և յառաջ քան զփոխիլն ծանոյց զհամաջինջ բարկութիւն Աստուծոյ խոտորեալ ազգին և որդւոցն անհնազանդից – 26. որով զաստուածերանն լքեալ զերկիր՝ զախտականս զայս և տաժանելիս փոխանորդեաց վիճակ, անբժշկական և ողորմելի յեղափոխմամբ. – 22. ոչ պիտոյացեալ եկամուտ լուսոյ, որով նսեմասցի առ ի հասանել երեկոյին, ոչ ապաժամանութիւն արեգական առ ի մերժել զմութ գիշերի լուսազգեստ ստեղծուածոյն, որ յետ առաջնոցն կարգի և դասու՝ զերկրորդն փոխանորդեցաւ վիճակ, ոչ կերակուր հոսանուտ առ ի լրութիւն տարաբարձ ունակութեանց անապականին, որ դոյզն ինչ փոքրագոյն քան զհրեշտակս գոլ. – 20.

ՓՈԽԱՐԷՆ - Արդ եթէ Սոդոմայեցիքն, որ հրով զվրիժուցն հատուցին փոխարէնս, և դարձեալ տանջելոց են՝ որ բովանդակ չարիւք անդր երթալոց են ո՞րպիսի ակնկալութիւն տանջանաց զանց արասցէ զնոքօք. – 336. Բայց Գուրգէն թէպէտ և գտանէր զնենգիչսն իւր՝ ոչ ումեք զփոխարէն չարին հատուցանէր. – 310. Եւ արդ այսոքի՞կ են փոխարէնք, զի ետուք յօժարութիւն նենգագործ խորհրդով՝ լինել յարգելանի, և առնել դիւր որսալ ի խնդրողաց անձին իմոյ և իմոց զաւակաց – 216. Եօթներորդ՝ զի զվարկ փոխարինին լուեալ ի Տեառնէ՝ ոչ զարհուրեցաւ վերադարձիլ արտասուօք ի ջնջումն մեղացն. – 24. որ ըստ արժանի խորհրդոցն ընկալաւ զփոխարէնն:- 100. որով ժամ ի դէպ իսկ է, առ յայնժամ զարժանապէս նոցա ասել փոխարէն և անմեղադրելի բազմաց, եթէ այնչափ մթերեալ համբարք կերակրոց կուտեցին ի հալոցսն Բէլա – 38.

ՓՈԽԵԱԼ - Գունդ մի հարուստ անցեալ մնացին ի Համբոյրազան աւանի Մարդաստան գաւառի, ուր եպիսկոպոսական աթոռ մարդպետականին յայնժամ փոխեալ դնէր ի Նախճաւան քաղաքէ. – 372.

ՓՈԽԵԼ - Դահեկին/ճիշտը՝դայեկին/ նորա մնալով ի ներքոյ կախաղանին՝ ամփոփէ /102/ զսուրբ գանձն ի ծոց իւր, տարեալ փոխէ ի վկայարան հանգստի ի ձեռն սրբոյն Ներսէսի – 104. Եւ դարձոյց անդ զսահմանս անդր փոխելոյ գեօղիցն: - 396. և փոխենն անդ զկաթողիկոսն Հայոց զԳիւտ – 126. և փոխեցին զփառս /52/ անեղծին Աստուծոյ ի նմանութիւն գոյիցս եղծանելեացս,,: - 54. ի թագաւորելն Նինոսի առնու զԲաբիլոն /ճիշտը՝ Բաբելոն/ և շինէ զՆինուէ, և փոխէ անդ զթագաւորութիւնն Ասորեստանի: - 18. իբրև շունք համրացեալք, որ ոչ կարեն հաջել, որպէս ասէ Եսայի մարգարէ, ընդդէմ Տեառն փոխելով զկատաղութիւն մահածին թիւնիցն սատակչական զօրութիւնն – 210. փոխէ անդ գեօղս և շինէ զբլուրն, որ տեղի բանակի ղաշիկ առնելոյ էր տանն Արծրունեաց, և անուանեաց յանուն իւր զձեռակերտն Գագկակերտ: - 396.

ՔԱՆԶԻ - քանզի ասեն զկնոջէն, յորմէ նեռնն է ծնանելոց՝ ճանապարհորդել յԵգիպտոսէ յաշխարհն Պաղեստինացւոց, և ցանկացեալ տեսանել զարձան կնոջն Ղաւտայ երթեալ դադարէ անդ հանգստութեամբ. – 158. Քանզի ասէր Ալի անգաւոր ինքեան զգլխաւորութիւնն Տաճկաց: - 166 Քանզի որպէս գրեցաւն՝ Ասուր ի Սեմայ շինէ զՆինուէ – 14. այլ նա ոչ տայր տեղի բանից նորա, քանզի քաջագոյնս գիտէր զբարս նորա խաբեբայս: - 278 Այլ նոքա քանզի հաստատուն մտօք ունէին զմիաբանութիւն դաւաճան խորհրդոյն որ առ բռնաւորն Տաճկաց՝ ետուն պատասխանի և ասեն – 216. Այլ քանզի յոյժ առաւելեալ էր իմաստութեամբ Գագիկ՝ տեղի տայր բովանդակ գաւառապետաց զօրագլխաց աշխարհիս, գնայր ընդ նոսա իմաստութեամբ խորագէտ հնարաւորութեամբ, ըստ անձնիւր գահու մեծարեալ պատուաղրութեամբ հաճոյանալ ախորժէր նոցա: - 354. Բայց քանզի արդ տեսանեմք զձեզ անձնեայս և գեղեցիկս, և գեղ երեսաց ձերոց պատշաճագոյնս և վայելուչս, և որդիք թագաւորացն այսր աշխարհի լեալ էք դուք, և արժանի էք արգահատելոյ – 244. քանզի ընդարձակ էր պահն Հողցայ՝ փութանակի եկն եհաս Ժիրաք ի գաւառն Ռշտունեաց և զզօրսն առխթեալ ի ձորն Առուանից, ի սահմանս Մոկաց. – 202. Բայց Աւշին որդի Ապուսեճի, քանզի էր այր խռովասէր, ատեցող զխաղաղութիւն, անյագ առ արբումն արեան մարդկան, և զայն բարգաւաճանս անձին քաջ լաւ համարէր. – 370. Բայց մեք քանզի ոչ երբէք ստունգանեցաք հրամանի թագաւորին և ոչ խափանիչ գտաք հարկաց արքունի, իբրև զապստամբս և զանհնազանդս և զստահակս ի ծառայութենէ տէրանց – 178. Բայց նոքա քանզի ապաստան լեալ յանկասկածելի յամուրս և ի բազմութիւն զօրացն և ի քաջութիւն արանց պատերազմողաց՝ և ո՛չ առ փոքր մի խոնարհեցան ի բանս նորա կամ ետուն տեղի պատասխանւոյ. – 274. Բայց քանզի ամենայնիւ ամենայն ուրեք ոչ ոք զօրեաց կալ ընդդէմ նորա յամենայն գործս զոր և կամք իւր ախորժէին՝ սկսաւ ձեռնամուխ լինել կարգաւ ընդ բոլոր աշխարհս արևելեայս – 274. Բայց քանզի անպատերազմելի էր ամրոցն, միայն բաւականաւն ռոճկաց մի վատնիցի՝ առեալ զՎարագ ի ձեռանէ Տաճկացն - 332. Բայց քանզի աւերեալ էր զՆինուէ Նաբրովթայ ի բռնանալն ի վերայ Սեմեացն, և զԲաբելոն /16/ փոխանակ նորա շինեալ – 18. Բայց քանզի խոնջեալ երիվարացն ի յերկայնագոյն ընթացիցն և վասն թանձրամած ձեանն կուտակմանց պակասեալ ուժոյն երիվարացն – 372. Բայց քանզի հաւատացեալ էր վերակացութիւն աշխարհիս Հայոց Աշոտի, որ իշխանաց իշխան՝ ձեռն ի գործ արկեալ նուաճել զիշխանս Հայոց, զՎրաց և զԱղուանից, որ եղև իսկ: - 322. Բայց քանզի մեր ոչ ոք

յայնժամ հանդիպէր ի պատասխանատրութիւնս երանելոյն՝ և ոչ գրել արժանի համարեցաք: - 206. Բայց քանզի յերկնուստ էր հասեալ վտանգն, և աստուածառաք էր բարկութիւնն՝ և ոչ ոք զօրեաց և եկաց ընդդէմ նորա ելանել ի պատերազմ, այլ որ եհարն՝ նոյն և բժշկեաց: - 374. Բայց քանզի ոչ բաւէ աղքատիմաստ իմոց /384/ խոհարանաց շարժումն պատկանաբար առ ողբոցն վարել բանակարգութիւն՝ թողի այժմ այլում զօրաւորի կամ այլում ժամանակի: - 386. Բայց քանզի ոչ ոք յայնժամ ընդ գրով զայնոսիկ ներքաղրեաց, որպէս օրէն է թագաւորաց՝ և ոչ մեք երկրորդել պատկան վարկաք: - 246. բայց քանզի պատմագրութեան է ժամս և ոչ գովասանականութեան՝ արտաքոյ եղէց յոլովից բանբասանաց. – 300. բայց քանզի տէր մատնեաց զնա ի ձեռս նոցա, որպէս ասաց Դաւիթ՝ և եղև ահ տեառն ի վերայ ամենեցուն. – 354. գրէ թուղթ հաւատոց առ Ղևոն կայսր Յունաց, և ընկալեալ ի նմանէ պատասխանիս՝ բազում ինչ ի Կուրանէ անտի իւրեանց արտաքս ընկէց զյոյժ առասպելագոյնն, քանզի ստուգապէս ծանեաւ զզօրութիւնն. – 166. Դարձեալ քանզի Մեստրիմ ի Քամայ ըստ բաժանման ազգին և աշխարհին շինէ զԵգիպտոս և անդ հարստանան ազգապետաբար – 18. Եւ Ալի էր այր քաջ. ասէ ցնա, արի՛ ելցուք, քանզի են և ընդ մեզ արք բազումք, թերևս լիցի ելք իրացդ պիտանութեամբ: - 160. Եւ անցանելով ընդ գաւառն Բզնունական գայ մտանէ ի Խլաթ. քանզի կամէր աննսալ ժամու դիպողագունի, զի որսայցեն նենգութեամբ խաբել: - 186. և արդ քանզի խօսեցայ ընդ ձեզ բանիւք ողոքանաց՝ և դուք թերևս յայդ գայթակղեալ խաբեցայք և պնդեալ կայք յամառեալ: - 246. Եւ արդ քանզի կարգ բանիցս էած զմեզ առ այս խնդիր՝ պարտ է նախ գիտել թէ որով օրինակաւ Քաղդէացւոցն մատենագրութիւնք զթիւ նահապետացն տասամբք համարին թուով ըստ աստուածահրաման գրոցս - 18. Եւ արքայ Խոսրով զարհուրեալ պատրաստի ի փախուստ, քանզի զօրացաւ յաղթութիւնն Հայրակղի. – 148. և դարձեալ՝ թէ ,,դատաստանս արդա՛ր դատեցարուք, և ողորմութիւն և իրաւունս արարէք, քանզի առ ձեզ են բանք իմ, ո՛վ բռնաւորք,, , ասէ Սողոմոն. – 182. և երիվարին ընդ վազս փռնգալիր խրոխտանացն փրծուցեալ զնա ի ցաւոցն, քանզի այն ինչ կազդուրեալ էր Գուրգէն ի հիւանդութենէ և ի կրից աշխատութեանցն և ի տառապանաց բանտին: - 320. Եւ յարգելուլ զնա ազատագունդ վաշտիցն՝չանսայր, քանզի լուեալ էր նոցա, եթէ շրջաբերական թղթով դարան գործեալ էր նմա Աշոտոյ իշխանաց իշխանի: - 352. և նա տրտմեալ գնաց ի տուն իւր, քանզի հանապազ ստիպէր ի դիւէ անտի, թերևս թոյլ տալովն Աստուծոյ, զոր համարէր ի հրեշտակէ զանկանելն ի մտաց: - 160. և սկսան այնուհետև աներկիւղ տարածանել ի վերայ երկրին. քանզի ոչ կասկածէին ի պատերազմէ իմեքէ: - 162. Եւ ստրջացաւ Աստուած քանզի արար զմարդն: - 28. Եւ փախեաւ Յազկերտ յերեսաց /164/ նոցա և ոչ կարաց ճողոպրել. քանզի հասին զհետ նորա մերձ ի սահմանս Քուշանաց, և կոտորեցին զամենայն զօրս նորա. – 166. Եւ քանզի թարգմանի Աբղլայ ծառայ Աստուծոյ ըստ հագարական լեզուին. – 168. Եւ քանզի ոչինչ հաղորդութիւն ունէր Յովսէփ առ ծնունդն Քրիստոսի՝ մտանէ յազգահամարն փոխանակ Մարիամու կնոջ իւրոյ -16. Եւ քանզի այն ինչ վախճանեալ էր կին Դերենկին՝ գրէ Գուրգէն առ Աշոտ, ասէ. – 322. Եւ քանզի առեալ էր Կոռնեայ իւր կին զՌեա յազգէ Զրուանայ – 14. Եւ քանզի էին բանակեալ ի խառնուրդս Երասխայ և Մաւրին մեծի՝ պատահի յառաջ Շաւասպ Արծրունի – 126. Եւ քանզի էին երեքին սոքա անքակ անխզելի առ միմեանս, զմիաբանական կապակցութիւն շաղկապեալ, Աշոտի և Գագկայ և Գուրգինայ, որդիք Դերանկին – 364. Եւ քանզի էր Բաբելոն վիճակեալ Սեմա՝ և բռնազբօսութեամբ Նեբրովթ յինքն գրաւէ և հաստատէ անդ զթագաւորութիւնն Եթովպացւոց: - 14. և քանզի էր կին գեղեցիկ – 272. Եւ քանզի իշխանութիւնն Պարսից յոյժ լքեալ էր՝ և աներկիւղ շինեցին զքաղաքն Մադիամ և բնակեցան ի նմա: - 156. Եւ քանզի հաւատացեալ էր զգաւառն Բուխայի ի ձեռն սպարապետին Սմբատայ՝ գրէ առ ամիրայն Նախճաւանու Աբրահամ անուն, զեկուցանելով նմա զզօրացն Վասպուրականի. – 304. Եւ քանզի յետ մահուանն մեծին Սահակայ Բագրատունոյ սպարապետի ասպետի և զօրավարի Հայոց, հաւատացեալ էր Թէոդոսի կայսեր զսպարապետութիւնն Հայոց Համազասպ Մամիկոնէի և որդւոյ իւրում

Վարդանայ – 122. Եւ քանզի յոյժ անկասկածելի էր ամրոցն, և գանձս ոչ սակաւս մթերեալ ի նմա ի բազում ամաց – 346. Եւ քանզի որպէս ասացաւ՝ ի յերկարագնացս աշխատութեանց երիվարացն և հեծելոցն ծանրութիւն ի տքնութենէն ի վերայ հասելոյ, և տօթն արեգականակէզ տապախառն ջերմութեանն, և թանձր ծարաւոյն պասքեցելոց երիվարացն հանդերձ հեծելովքն – 402. Եւ քանզի վախճանեալ էր Համազասպ Մամիկոնեան … ոչ ոք այնուհետև առաջնորդէր Հայոց աշխարհիս. – 116. Եւ քանզի վավաշոտ մոլորութեամբ վարելով ոչինչ փոյթ զորդւոց իւրոց առնէր – 44. Ջսա տեսեալ Մահմէտի՝ /162/ կոչեաց և յարեցոյց առ ինքն, հրամայեալ նմա գրել գիրս օրինաց ազգին իւրոյ, ձեռամբ Աբութուռաբայ իսմայէլացւոյ. քանզի ինքն ոչ գիտէր գիր և ոչ դպրութիւն: - 164. ընդ կրունկն դարձիր, թշուառական, քանզի զերջանիկ կամարարացն կղզիս կոխել ոչ կարես. զի՞ յերկինս ելանել բռնանաս,,: - 50. Իսկ Աշոտ եղբայր Վաչէի քանզի էր մանկագոյն տիովք՝ առեալ դայեկին իւրոյ մատուցանէ առաջի Երուանդայ – 84. իսկ նա քանզի ի հրեշտակէ ասէր ունել պատգամ և ոչ ի մարդոյ՝ յոյժ դժուարեալ ընդ իրսն՝ սպան զնա ի գաղտնիս: - 162. Իսկ նոքա քանզի ի հանգստեանն էին՝ դիմեցին ի վերայ նոցա – 162. Իսկ նոքա թէպէտ և հաւանէին՝ այլ էր և հակառակութիւն մեծ ի մէջ նոցա. քանզի որոշեալ էին պաշտամամբ կռոց ըստ իւրաքանչիւր կամաց: - 156. Իսկ սրբոցն որ ի Սուկաւէտ լերինն, քանզի էին համաշխարհիկք և հաւատարիմք Սաթինիկայ եկեալ զկնի նորա – 88. Խորտակէր և զնշան տէրունական Խաչին, զոր ուրեք ուրեք կանգնեալ լինէին. քանզի յոյժ ստիպէր զնա հոգին մոլեկան: - 168. Մի ջանասցի քանզի յԱստուծոյ հաստատեալ է, և բառնալ զսա անհնար է, բայց թէ Աստուծոյ այնպէս հաճոյ իցէ՝ կամք Աստուծոյ կատարեսցին: - 144. յեղակարծում հանգստեամբ դիմեալ ի վերայ նոցա, քանզի նոքա կային յանհոգս – 402. շահատակելով գունակ ի խաղս գնդակաց, զսակաւաւորութիւնն իւր հազարաւորս համարելով, քանզի ոչ ունէր աւելի քան զերկու հազարս հեծելոց: - 334. Քանզի ասէր զինքն՝ մխիթարիչն, զոր խոստացաւ տէր Քրիստոս առաքել աշակերտացն իւրոց – 164. Քանզի Ասիականք արևելից Սեմայ լեալ վիճակ՝ խոյս տուեալ Հայկայ գայ հատուածեալ ի Բէլայ ի Բաբելոնէ յարևելս Ասիական. – 42. քանզի բանականն յերիս յայսոսիկ տեսանի, ի հրեշտակս, ի մարդիկ և ի դևս. այլ ոչ ի հաւս կամ ի յայլ կենդանիս: - 52. քանզի խորհեցան թագաւորեցուցանել զնա ի վերայ Հայոց, զի էր այր սրտեայ և ուժեղ, քաջախորհուրդ և իմաստնախորհ, խոնարհ, առատաձեռն և զուարթամիտ: - 126. քանզի հէնք բազումք կալան զերկիրս: - 116. քանզի նուազագոյնքն և տկարք՝ թափառեալք աղքատութեամբ վտանգէին, իսկ կարողագոյնքն և բռնաւորք ըստ բնութեան գազանաց վայրենամիտք լեալ, անամօթ և անարգել յափշտակութեամբ վրդովէին զբոլոր երկիրս: - 300. քանզի ոչ եթէ մարմին ինքնաշարժ է, այլ հոգին է ինքնաշարժ. – 54. Քանզի սոքա յառաջ քան զհարս իւրեանց ասին վախճանեալ. – 40. քանզի ,,բանակք հրեշտակաց Տեառն շուրջ են զերկիւղածովք իւրովք և պահեն զնոսա,,: - 252. Քանզի այնչափ թանձրացաւ յաճախութիւն սովոյն՝ որ ոչ միայն անսուրբ կենդանիս ուտէին ըստ սրբութեան կարգի, այլ և զսարսափելի և զդժնդակ, որ զգազանայինն անցուցանէ զվայրենամտութիւնն, զմարմինս մեռելոց՝ առանց խղճելոյ ուտէին, ի գերեզմանացն հանեալ զհետ միոյ և երկուց ամաց թաղելոյ: - 374. Քանզի առաջնոցն ուրուականք և ստուերականք ոմանք՝ ըստ իւրաքանչիւր կարծեաց թուելոց վրիպեցան յաստուածածանօթն գիտութենէ հոգեշահ նահապետացն: - 40. քանզի ասեն զբարձրութիւն նորա լինել վաթսուն կանգուն. – 38. Քանզի ասեն սկիզբն աստուածոց՝ զհին ոմն Բելոս, հայր Դիայ, որ կոչի հայերէն Արամազդ՝ ՄԺԵ բիւր ամաց աւուրս ունել և ևս յառաջ. – 36. Քանզի ասէ, թէ ,,էին ոմանք յելելոց անտի հեթանոսաց, որք եկեալ էին յԵրուսաղէմ ի տօնն, զի երկիրպագանիցեն. – 76. Քանզի ասէ՝ բազմացան չարիք մարդկան ի վերայ երկրի – 28. քանզի արդարև զգալի և շօշափելի էր դրախտն, և ոչ իմանալի կամ ի մէջ երկուց աշխարհաց – 48. Քանզի բազում աշխատութեամբ է գտանել զշար ազգաբանութեան տանն Արծրունեաց, վասն հեռաւոր ժամանակաց կացեալ և դիւանացն անյայտութեանց ի մէջ Հայաստանեայցս – 12. քանզի գրեալ է, ,,թագաւոր

արդար կանգնէ զաշխարհ, կործանումն է աշխարհի թագաւոր անօրէն,,: - 182. քանզի դեռ միաբանք և միախորհուրդք և հաւասարք առ միմեանս բնակէին իշխանք Հայոց ազատագունդք բազմութեամբ և զօրաց նոցա – 194. քանզի Եթովպացի իսկ ասի Քուշ որդի Քամայ. – 42. Քանզի և զոստանն Նախճաւան տուեալ էր ի կալուած զյաղթութեանն մանազաւենին Կայսկի: - 382. Քանզի և ի ժամու անդ յորում զմեծն Գրիգոր առեալ տանէին ի քաղաքն Կեսարացւոց ձեռնադրել զնա ի քահանայութիւն, ի լուսաւոր վարդապետութիւն աշխարհիս Հայոց – 94. Քանզի և սա ասի թագաւորեալ ամենայն Ասիաստանի և Լիբէաստանի, բայց միայն ի Հնդկաց – 44. քանզի էին Ադամայ և այլ ուստերք և դստերք բազումք, այլ ոչ արժանաժառանգք պայազատութեան աշխարհահայր լինելոյ. – 24. քանզի էին բարեկամացեալ ընդ միմեանս Կիւրոս և Տիգրան և յամենայնի համանմանքն, համակամքն, միասիրտքն, քաջախոհեմքն և բազմադրուատքն: - 62. քանզի էին հնազանդեալք յառաջագոյն ընդ թագաւորութեամբն Յունաց – 142. քանզի էին մանկագոյնք տիովք. առին գնացին յամուրսն Տայոց. – 98. քանզի էին որդիք նորա յոյժ մանկագոյնք – 44. Քանզի էր և տեղին այն յառաջագոյն տեղի մեհենից Վահեւավահանի: - 334. քանզի ըստ օրինակի իսրայէլականումն, որ յաւուրս անիշխանութեանն էին անկարգութիւնք, և այր իւրաքանչիւր զհաճոյս աչաց իւրոց առնէր՝ սոյնպիսիք և այժմուս եհաս լինել. – 300. Քանզի թէ Աստուած կամեսցի՝ տանելոց է սաստկութիւն հողմոյ զզօրութիւն քո իբրև զփոշի,,: - 140. Քանզի թէպէտ և անվաւեր ի նոցանէ գրեցեալքն ասացան՝ այլ բազում ինչ և առ ճշմարիտն ստուերաբանեն – 18. Քանզի թէպէտ և տարաժամ լրմամբ ժամանակի չափաբերեալ կենացն Աշոտի՝ հաստատնագոյն և անվրէպ լուծման կենացս առ հոգևորսն և յաւիտենականսն և անվախճան կենացն առաւելութիւնն անցեալ գնացեալ ժամանեաց – 386. Քանզի ի գնալ նորա զօրացուցանել զքեռին իւր զթագաւորն Հայոց, իսկոյն յելանելն նորա ի տանէ իւրմէ ի Վան քաղաքէ՝ տիրէ ի վերայ նորա ցաւք հիւանդագինք կարապետք մահու, անմերձենալիք ճարտարաց բժշկական ձեռնարկութեանն: - 384. քանզի ի ներքս նստելոյ յարքունիս՝ ոչ ոք տեսանէր զնոսա, բայց թէ հարճք և արք կանացիք: - 56. Քանզի իբրև լուաւ երանելին Զաքարիայ, եթէ ըմբռնեցաւ Գուրգէն՝ փութացաւ և եկն հանդերձ եպիսկոպոսօք աշխարհին. – 320. Քանզի խառն դրակցութեամբ սահմանին առ միմեանս Փոքր Աղբագ և աշխարհն Կորճէից և Պարսկահայոց՝ և հանապազ առ միմեանս զգժտութիւն կեղծաբերէին, մարզպանն և որ զԿորճէիցն ունէին զգործավարութիւն. – 400. քանզի կամէի տեսանել զկատարած երկրի. – 50. քանզի կասկածանս ունելով ի թագաւորէն և յորդւոցն – 88. քանզի կարի ախորժելով ունկն դնէր և յօժարէր բառնալ զթագաւորութիւնն Հայոց - 118. քանզի կարի սիրելի էր նմա խոռվութիւն և արիւնհեղութիւն. – 170. Քանզի հարցեալ և բռնազբօսեալ զերկոսին գլխաւորին Տաճկաց, անունկնդիր լինելով ասացելոցն, և ի տեսչութենէ Աստուծոյ թողացուցեալ նոցա առանց վտանգից՝ որպէս հաճոյ թուիցի կեալ ի հաւատսն Քրիստոսի համարձակաբար. – 324. քանզի հարցեալ ցնա որք նորին ուղեկից՝ թէ ո՞րպիսի պատճառաւ անկեալ եղեր ի մտաց՝ ասէ – 158. քանզի յառաջագոյն տուեալ էր զնոսա ի ծառայութիւն քեռ իւրոյ Տիգրանուհեայ կնոջ Աշղահակայ, յասացեալ տեղիս բնակեցուցանելով: - 64. քանզի յետ ջրհեղեղին ոչ երևի լինել դարձեալ որդիս նահապետին. – 30. քանզի յետ վախճանի Ասպուրակայ նստուցեալ էր Խոսրովու յաթոռ հայրապետութեան Հայոց զսուրբն Սահակ որդի սրբոյն Ներսէսի. – 112. Քանզի յոյժ պատկառ կայր ի պաշտօնատարութիւն հայրապետին իշխանն Տարունոյ, և նա սաստիկս հոգայր վասն նորա, թէպէտ ոչ օգտէր յիրին յայնմիկ: - 346. քանզի յոյժ սիրեցեալ եղև ի զօրավարէն, և առաւել քան զամենայն մեծամեծսն ընդունէր պարգևս և պատիւս – 216. քանզի Յունաց հուսկ երբեմն յետոյ գտաւ գիր ի Կաղմեա յումեմնէ Փիւնիկեցւոյ: - 18 . քանզի նա խաբկանօք առն մոգի և կախարդի ասաց լինել որդի Ամովնայ և Արամազդայ, այլ ոչ ուրացաւ մահկանացու գոլ: - 36. քանզի ոչ էր օրէն թագաւորացն և օրինադրացն զկանանց ազգի թիւ ազգաբանութեան շարել, բայց միայն ըստ ժամանակագրութեանն կանոնի, որպէս և յԻսրայէլի զԳոթողիայ, և յԵգիպտոս զԿղէոպատրեայ դուստր

Պտղոմեայ Դիոնիսեայ: - 16. Քանզի ոչ կարացեալ իմանալ զդէմ փախստէի Արտաշէսի, և այն ի տեսչութենէ Աստուծոյ այնպէս պահեալ լինէր – 84. Քանզի ոչ յարմարական՝ բարւոյն և չարին ի միասին առկայանալ, և ոչ լուսոյն ընդ խաւարի, և կամ զի առողջութեանն ընդ հիւանդութեան. – 258. քանզի ոչինչ ունէր զկարծիս դրժանաց առ թագաւորն և առ զօրս նորա – 186. քանզի ոչինչ վնաս գիտէին զանձանց և ոչ մի ինչ իրս մեծ կամ փոքր. – 98. քանզի որդիքն Սենեքերիմայ մեծաւ ցասմամբ և անզրաւ հաշտմամբ ընդ Աշդահակայն լինէին – 62. Քանզի սա առաջին ի հեթանոսական թագաւորաց սկիզբն արար ի Քրիստոս հաւատոց: - 76. Քանզի Սամուէլ որդի Վահանայ գնաց ընդ առաջ հօր իւրոյ: - 106. Քանզի սուրբ Գրիգոր Հայոց լուսաւորիչն ասէր, թէ „ի մէջ օձիցն էր բնակութիւն իմ, և կոտռային զանդամօք իմովք„: - 252. քանզի սուրբ նահապետացն տասանց բնաւ ոչ երբէք ումեք երևի ասել ի Մէջերկրայս ունել բնակութիւն: - 30. Քանզի վաղիւ առաւօտուն ցուցանեմ ձեզ փիղս վառեալս, և ի վերայ հզօր սպառազէնս ի քաջաց – 138. Քանզի Վարդան անցեալ գնացեալ էր սուրբ վարդապետաւն Մաշտոցիւ առ կայսր Թէոդոս և առ Ատտիկոս արքեպիսկոպոս հանդերձ թղթովք սրբոյն Սահակայ, տանելով ընդ իւրեանց և զգիր և զբառ հայերէն դպրութեան. – 116. Քանզի տեսեալ, ասէ, որդւոցն Աստուծոյ զդստերսն մարդկան զի գեղեցիկ էին՝ առին իւրեանց կանայս յամենեցունց զոր ընտրեցին: - 28. քանզի Քամայ տուաւ ի հօրէն Եգիպտոս և Լիբէաստան և մինչև յարևմուտս հարաւոյ: - 34.

ՔԱՆԻ - Խնդրէ և տեղեկութիւն թէ քանի՛ դրօշք /198/ են, կամ քանի՛ նշանք, և կամ քանի՛ առաջս զօրքն բաժանիցին, և կամ քանի՛ փողք գոչիցեն, և կամ քանի՛ թմբուկք դափիցեն: - 200. Որպէս Պօղոս ուսուցանէ. „արհամարհեալ ասէ, ուրուք զօրէնս Մովսէսի՝ մեռանէր, ի բերանոյ Բ կամ Գ վկայիւք. քանի սաստկագոյն համարիմք զայն, որ զորդին Աստուծոյ առ ոտն եհար„ , և որ ի կարգին է: - 380. Տեղեկանայր … և զայն ևս, թէ քանի՛ սպառազէնք են … և կամ քանի՛ սաղարք միայնամարտիկք ախոյեանք իցեն … և կամ քանի՛ այնոքիկ, որք վահանաւորք հետեւակաց են … և կամ քանի՛ ըմբշամարտիկք, և կամ քանի՛ գունդսաղարք իցեն … և կամ քանի՛ նիզակաւորք, և կամ ո՛րչափ թիւք աղեղնաւորացն են … և կամ քանի՛պարագլուխք իցեն զօրուն … և քանի՛ սաղարք սուրհանդակաց իցեն: - 198. իսկ եթէ առ փոքրն այնչափ ամբաստանէր զանձն մարգարէին՝ քանի՞ ևս ողբոց և արտասուաց արժանի են՝ որ յՈրդին Աստուծոյ ամբարշտեն շրթամբք իւրեանց: - 258.

ՔԱՋ - և քաջքն և հոյակապքն ելևէջս զմիմեամբք առնէին ախոյեանայարձակ խրոխտանօք: - 328. „ վնասս և զբեկումն հարկաց արքունի և զկոտորումն զօրաց քոց Աշոտ գործեաց, և նա է պատճառ ամենայն ապստամբութեան Հայոց ի քումմէ թագաւորութենէդ, ասեն, ո՛վ քաջդ և հաւասար աստուածայնոց կարողութեան ինքնակալ, և ընդհանուր իշխեցօղ կենաց և մահու„: - 180. „հա՛ պա, քաջք Հայոց, և յայսմ ծանիցեն զմեզ և զարիանալն մեր„: - 328. „հապա, քաջք, վառեալ ի զէն և յասպազէն, արիաբար մարտիցուք. – 134. „քաջք քաջաց պատահեալ՝ անմեղադրելիք կան մնան զյաւականութեամբքն – 68. Ազդ եղև քաջին Վահանայ, եթէ զօր բազում առեալ Հազարաւուխտ յընտրելոցն Պարսից և ահաւադիկ հասեալ գայ ի վերայ: - 134. ախոյանայարձակ լինելով քաջացն Վասպուրականի … փակեցին զբանակն և դարձուցին զզօրագլուխսն – 368. այլ ես ասեմ քեզ, եթէ Տէր կամեսցի՝ վաղիւ պատելոց է զքեզ պատերազմ քաջաց. և ճեթեսցեն ի վերայ քո իբրև զամպս երկնից ի բռնալիր նիզակօք անցանիցեն ընդ մէջ բազմութեան քո իբրև զփայլատակունս հրոյ շանթից: - 140. Այլ և զՓիլոնեայսն ասացաք երկրորդել զառն քաջի և զյոյժ հմտագունի իմաստասիրութեան - 34. այլ և նկարագիրս ոմանս պատկերաց զպատկեր քաջաց արականս և շքեղաւորս կենդանագրել: - 42. այլ տեսից զքեզ զինու և աղեղամբ և սրով, քաջ արամբք և ընտիր երիվարօք. – 278. անդ հասեալ քաջացն մերոց եղբարցն երեցունց ազատագունդ սակաւաձեռն գրոխիւ ի ձմեռնային ժամանակի, և ընդ լրթնատեսիլ լուսոյն վազս ի վերայ եղեալ՝ հանին ընդ սուր յոլովս քան թէ սակաւս: - 372. Անդանօր քաջն մեր Աշոտ զհիւանդութիւնն կեղծաւորեալ ի տեղւոջ օթոցին անկեալ դնէր, մինչ ակն ունէին յառաջանալ ի գործ պատերազմին: - 328. արդ հաճոյ թուիցի քեզ,

քաջ զօրավար, զսորայս գործեցեալ քաջութիւն ի վերայ զօրացն Յունաց,,: - 304. Բայց Աւշին որդի Ապուսեճի, քանզի էր այր խռովասէր, ատեցող զխաղաղութիւն, անյագ առ արբումն արեան մարդկան, և զայն բարգաւաճանս անձին քաջ լաւ համարէր. – 370. Բայց ոչ միայն քաջքն Հայոց նահատակեցան ի մեծ պատերազմին այլ և անմարմին զօրք երկնաւորք մարտակից եղեն զնդին Հայոց. – 232. բայց պարտեալ եղև գունդքն Տաճկաց ի քաջէն Գուրգինայ և բեկաւ զօրութիւն նոցա: - 308. գիտակ են այդմ արք քաջք. և որ միշտ ի պատերազմունս /280/ զդեգերումն առնեն – 282. գրէթէ անցուցանէր զանցուցանէր զքաջութեամբքն Արշակայ Պարթևի, ընդ քաջացն Քուշանաց, Մարաց և Ելիմացւոց. – 72. Եւ /106/ նոյնժամայն հուպ ընդ հուպ ի դիմի հարեալ Մեհուժանայ և կարթակոտոր զասպազինեալ երիվարն արարեալ քաջին Սմբատայ՝ տոռն արկեալ ի պարանոցն Մեհուժանայ ասէ. – 108. Եւ Ալի էր այր քաջ. ասէ ցնա, արի՛ ելցուք, քանզի են և ընդ մեզ արք բազումք, թերևս լիցի ելք իրացդ պիտանութեամբ: - 160. և աղաղակեալ զկնի նորա՝ զի թերևս ի լուր ձայնին և ի փայլումն զինուցն և ի շողալ սուսերին և ի խխնջիւն քաջ երիվարին և ի վազս երագութեանն ուժոյ ազդ լինիցի և դարձցի ի ձայն նոցա և ծանիցէ, և դարձցի ի կորստական ճանապարհէն – 228. և անդ զբարիոք պատերազմն պատերազմեալ՝ որպէս քաջ հովիւ զանձն իւր եդ ի վերայ հօտին – 104. և անդ նորա զդատավճիռն ընկալան ի սրոյ քաջացն Վասպուրականի, որպէս գրեցաքն – 398. Եւ անդ Վահան Արծրունի խոյակապ և յականաւոր քաջամարտութեամբ ընդ սրբոյն Վարդանայ ճակատ առ ճակատ վառեալ զպատերազմն, իբրև հուր ընդ եղէգն ճեմելով ի մէջ քաջ ախոյեանացն Պարսից: - 128. և անյապաղ փութով զգործ պատերազմին վճարեալ քաջք ընդ քաջս ելեալ. – 64. և առաջնորդ կացուցանէին իւրեանց զԱպուջափր Արծրունի, և ընդ նմա Սահակ Ապումկդէմ քեռորդի Ապուջափրի, այր քաջ և պատերազմող: - 304. Եւ բարձեալ զօրքն Հայոց դիակապուտ արարեալ զզարդ և զզէնս զարի արանց և զքաջ երիվարաց, առեալ աւար բազում՝ գնան յիւրաքանչիւր տեղիս մեծաւ յաղթութեամբ: - 178. և գունդք ճակատելոցն ելին կացին մօտ առ քաջն մեր Աշոտ և ընտիր զօրավարն Հայոց առ մեծն իշխանաց: - 210. և եհան զզօրսն մինչ մերձ ի գլուխ լերինն և ընդ նոսա նշանս բազումս, իբրև Ռ արանց ընտրելոց քաջ երիվարօք. – 284. Եւ երթայր աներկիւղ համարձակութեամբ, քաջալերեալ ի միտս և խորհուրդս իւր ըստ պնդութեան արութեան իւրոյ քաջ նահատակն Ապումուսէ: - 288. Եւ զայս Եղկղեսիանոսք. բայց ինձ այսպէս թուէր, թէ աղանդն Եղկղեսիանոսաց վաղուց շիջեալ խափանեալ լինէր ի քաջաց վարդապետացն սրբոց, զոր եղեն Աստուած յեկեղեցւոջ. – 254. և զրկեալ լինին Հայք ի լուսաւոր վարդապետէն և ի քաջ հովուէն սրբոյն Ներսիսէ. – 108. Եւ թագաւորեաց կայսր Թէոդոս փոխանակ Պապայ զՎարազդատ ոմն յԱրշակունի տոհմէ, այր քաջ և պատերազմող, ահարկու մեծամեծաց և փոքունց. – 108. և թագաւորեցուցանէ զնա ի վերայ Հայոց փոխանակ հօր իւրոյ Սանատրկոյ, ի տեղի թագաւորութեան քաջացն Արշակունեաց: - 86. Եւ ի բազում և քաջ խորհրդոց զայս և եթ հաստատուն խորհուրդ ընտրեցին սինկղիտոսքն, և ասեն ցթագաւորն. – 196. և իբրև զմի անձն, վառեալ ի զէն և ի սուր և ի ճակատամարտ՝ հասեալ յամուրս՝ տապալէր զզօրութիւն նոցա սրով և աղեղամբ, ի փայլիւն սուսերի և նիզակի և ի գիշերամարտ նահատակութեանց, ըստ նմանութեանն քաջ զօրավարին Իսրայէլի Յեսուայ կամ Գէդէովնի կամ թէ նոյն ինքն նահապետին Աբրահամու, ի վերայ հասեալ Քանանացւոց, զյաւէտ յաղթութեան նահատակութիւն նահատակեալ՝ և դառնայ մեծաւ յաղթութեամբ: - 312. և իբրև զպարիսպ անդամանդեայ՝ այնպէս եդին զանձինս ի վերայ բազմութեան գաղթականին աշխարհակոյտ ամբոխիցն, իբրև քաջ հովիւ ի վերայ խաշանց մեռանել յանձն առին: - 230. և իբրև զքաջ հովիւն դրուատեալ ի փրկչէն՝ զանձն իւր եդ ի վերայ խաշանց ընդդէմ ապականարար գայլոցն, յարձակեալ յանխնայ դիմեցուածովք, յարիւն և յապաժոյժ, ի սատակումն և ի ծախումն սրոյ մատնեաց բոլորովիմբ զյարձակեալս նեղիչս աշխարհիս. – 312. Եւ մինչ երթայր և խորհէր՝ խոցեալ նորա երիվարն, և յանկարծակի այն ինչ ոտն երիվարին շաղեալ ընդ փոքր թուփ մի, որպէս ասեն, զուլումբեալ ի վերայ գլխոյն

ջարդեալ զողն ու լարն՝ ի բաց ընկէց զհեծեալն զքաջ զօրավարն Ապումկդէմ: - 304. Եւ մինչդեռ զայսքան և զայսօրինակ մարտն գրգռէր՝ ահա յանկարծակի հասանէր քաջն մեր Աշոտ. – 174. Եւ յետ սակաւ աւուրց վախճան առեալ կենաց նորա, ձիոյ խրոխտացելոյ զանձն ամբերթեալ ելոյծ ի կենաց զքաջարանցն զմեծն տերանց զքաջ զօրավարն և զզօրագլուխն Հայոց մեծաց: - 364. Եւ նոյնժամայն շուրջ փակեալ բազմութեան՝ արգելին զնա իբրև յամուրս անձաւաց, զվարմ մահաբեր, շուրջ ձգեալ ի կործանումն քաջ նահատակին: - 352. Եւ նորա զեկուցեալ վասն նորա Բուխայի՝ ասէ. ,,այրս այս Գուրգէն ի տոհմէն Արծրունեաց, այր քաջ և պատերազմող, ի յահէ քումմէ անցեալ գնացեալ զկողմամբքն Յունաց – 304. և սպանանի Գուրգէն իշխան որդի կորապաղատին նենգութեամբ ի զօրագլխացն Ահմաթայ, այր քաջ և երևելի և քաջայայտ ի մէջ Հայաստանեայցս: - 358. և սրոյ ճարակ զամենեսեան տային, խիզախելով իբրև զքաջ նահատակս. – 174. և վառեալ ի զէն և յասպազէն՝ արձանացան իբրև զմի այր՝ և յանդուգն դիմացուածով խուռն յարձակմամբ հարեալ ի դիմի, ուր քաջքն այլազգեացն ճակատէին ընդ աջաթև /380/ կողմն. և պատառեցին զգունդն, և պարտեցին զախոյեանսն. – 382. և քաջն Վահան Արծրունի ընդ նմա նիզակակցեալ՝ մեռանին ի միասին քաջքն և ընտիրքն, մեծ նահատակք Վարդան և Վահան – 128. Զայս և առաւել քան զսոյն խրատէր և ուսուցանէր սուրբ հայրապետն և քաջ հովիւն տէր Յոհաննէս կաթողիկոս Հայոց մեծաց: - 182. զայս խորհելով թէ զայսպիսի քաջ այր և պատերազմող ոչ պատշաճ վարկանելի է ի հեռաբնակ վայրս ի դրանէ արքունի կացուցանել: - 330. զի այնու թերևս քաջ կարասցէ գլել զինքեամբ զզօրս Հայոց նախարարօքն հանդերձ. – 114. Զի այր քաջ է և պատերազմող, և միաբանք են որք ընդ նմա են զօրքն, և զանձինս ի մահ դնիցեն ի վերայ տանց և աշխարհաց և ազանց և տոհմից իւրեանց: - 212. զի Գուրգէն եղբայր իշխանիս և այլ տոհմն Արծրունեաց և բազմութիւն ազատաց և ազատորդեաց և նոցուն զօրաց քաջաց Վասպուրական տէրութեանս … անցեալ գնացին ի կողմն Ատրպատականի – 212. զի է անդ լիճ մի մեծ մօտ ի տեղին, որ էր տեղի ասպարիսի ճակատամարտ զօրու նահատակութեան քաջացն մերոց իշխանացն Վասպուրականի – 226. զի էին ազգք ճոխք և երևելիք, քաջք և անուանիք, և ամենեցուն պատկառելիք – 98. զի ի մատեանս առաջնոցն ունէին պատուէր ի թագաւորացն զնշանաւոր իրս քաջաց գրել, և ոչ վատաց. – 42. զի մի /68/ վատութիւն քան զքաջութիւն ճոխասցի, որ կանանցաբարոյիցն քաջ յարմարի, թէպէտ և յարիւն և յապաժոյժ զզօրսն կենացն առնուցուն,,: - 70. զի յայն վայր ոմանք ի զարմից Աշդահակայ Մարի բնակէին անդ, արք քաջք, կորովազէնք և դիպաղեղունք – 90. Զի ոչ միայն առ շինութիւնն՝ այլ և յարիւն և յապաժոյժ առաքինաբար զանձինս եդեալ ի վերայ խաշանցն մեռանել իբրև զքաջ հովիւ – 392. զինքն գոլ ասել սկիզբն քաջաց և թագաւոր առաջին - 44. զոր ընկալեալ սուրբ հայրապետին և բարեպաշտ թագաւորին Թէոդոսի հինգ թղթովք և հինգ պատասխանեօք՝ կարգէ զսուրբ վարդապետն ընդ վարդապետութեան աթոռակալութեան սրբոյն Յոհաննու Ոսկեբերանի և այլոց քաջաց և գլխաւոր վարդապետացն – 116. զոր շարագրեալ յայտարարութեամբ յանդիման կացուցաք քեզ, քա՛ջդ բանասիրաց, Գագիկ Վասպուրական և մեծ զօրավար Հայոց – 122. Է՞ր աղագաւ կամ վասն ո՞յր պատճառանաց. զի ի քաջէն իմմէ և ի մեծ իշխանէն, ի քաջատոհմիկ և ի բարեփառ գլխոյն իմմէ զրկեալ լինիմ: - 384. ընդ որս էր և քաջն մեր Աշոտ ախոյեանայարձակ զօրութեամբ և ելեալ զհետ արքունի զօրուն. – 328. իբրև զորսորդս ինչ առիւծուց կամ այլոց ինչ նոյնպիսեաց, շուրջ ձգեալ զգառագիղն՝ ի մէջ փակել զկորովին և զքաջ արանցն զիշխանն Աշոտ – 202. իբրև բազումք առաքինացան մեծաւ ուժով և քաջ նահատակութեամբ ի հանդէս մարտին. - 202. Իբրև գիտաց բռնաւորն, եթէ յաղթեցաւ ի սրբոց արանցն, մանաւանդ ի քաջէն Գրիգորէ – 250. Իբրև ետես իշխանն Հայոց զզօրսն Տաճկաց եկեալ բազում կազմութեամբ, հայեցեալ և յիւրեանց սակաւութիւնն՝ գիր պաղատանաց փութանակի տայր առ քաջ նահատակն Աշոտ իշխան - 172. իբրև զքաջ հովիվ եդեալ զանձն ի վերայ խաշանց մեռանել, նմանակերպեալ պատկերակից լինել որդւոյն Աստուծոյ – 300. իբրև ի մեծ և յանկասկածելի ամուր

ապաւինեալ լինէին ի քաջ զօրավարն Գուրգէն և որք ընդ նմա զօրք Հայոց. – 226. Իսկ յետ Կ ամի անցանելոյ Աղէքսանդրի և անիշխանութեանն Հայոց և Պարսից՝ թագաւորէ Արշակ Քաջ Մարաց և Պարսից և Եգիպտացւոց և Ելիմացւոց ի Բախլ քաղաքի. – 72. Իսկ եթէ սովորութիւնն այլանդակեալ ի չարէն ի սոյն, կանգնել պատկերս սկայից և քաջաց և բարբարոսական թագաւորաց ի պատիւ – 40. Իսկ եթէ վատացն՝ արութի՛ւն զերկիւղն համարելի է, ո՞րչափ ևս առաւել քաջացն քաջութիւն ստացեալ երկիւղիւն պատսպարել իւրեանց: - 354. Լուր եղև այս առ քաջն Գուրգէն պարտումն Վասպուրականի ի Տաճկաց և իշխանանալն Վասակայ: - 306. մինչ կալ մնալ միայն երեսուն արանց ընդ քաջին Վահանայ, Մերշապուհ և Յաշկուր Արծրունիք, և Կամսարն Ներսէհ, և ի տանէն Ամատունեաց՝ զորոց զանուանսն անգիտանամ – 134. Յայնժամ ողորմագին զաչսն շրջշրջեալ առ քաջ նիզակակիցսն իւր, թէ ո՛վ ոք արդեօք թերևս յօգնութիւն ինչ նմա հասանիցեն. – 354. Յայնժամ տէր Գուրգէն առ /306/ չժուժել սրտին, մտրակեալ զքաջ երիվարն յորում նստեալն էր՝ և եհար զգունդն զձախակողմն Տաճկաց և պատառեաց զոռազմն և դարձոյց զերեսս նոցա- 308. յաւուր միում … ետ հրաման իշխանն առնն կորովի եղբօր իւրոյ Աբասայ Հայոց սպարապետի՝ վառել պնդակազմ պատրաստութեամբ, զօրու և զինու և զարդու ամենայարդար հնարաւորութեամբ, որպէս օրէն է նահատակաց քաջ արանց – 344. Յետ բառնալոյ իշխանութեանն ի Վասպուրական երկրէն մնացին տոհմք Արծրունեաց ըստ ազգս ազգս՝ քաջն Գուրգէն և Մուշեղ եղբայր իւր – 298. Նախ զի և լեզուքն շփոթեալք՝ունէին զանմիաբանութեան փոյթս, կամ թէ զի և վատութիւնք քաջաց ապիհարկեալք ոչ գրեցաւ ի մատենագրաց անտի Քաղդէացւոց – 44. Որոյ երթեալ առ Շապուհ յիշեցուցանէ նմա զհարազատէն իւրմէ Մեհուժանայ՝ միամիտ և հպատակ /108/ լինիլ արքայի, և զպատերազմացն գործ և զբազում աւարառութիւնս և զգերփանս Հայոց աշխարհիս ի Մեհուժանայ, և զմահն նորա ի ձեռանէ քաջին Սմբատայ Մամիկոնէի- 110. որոց յիշատակ նոցա եղիցի բազմաց նպաստ յարութիւն քաջութեան և ի զօրութիւն անարեանցն և ի յորդորումն քաջ նահատակացն: - 202. որք հեղին զարիւնս իւրեանց … և վասն ճգնութեան երանելւոյն Գրիգորի Արծրունոյ քաջ նահատկին, յաղթող վկային, խոստովանողին Քրիստոսի – 314. սրբոյ թագաւորին և քաջ նահատակին Տրդատայ զբարիոք պատերազմեալ ընդդէմ անմարմին և մարմնաւոր պատերազմողաց, փոխի յերկրաւոր աշխատութեանցս ի հանգիստ, մեծաւ պատուով թագաւորական շքեղ և երևելի դիազարդութեամբ – 96. Վա՛յ քեզ, եղո՛ւկ դու, այր քաջ, արքայդ մեծանուն, յորժամ կարկառիցէ բարձրեալն զձեռն իւր ի կործանել զքեզ և ի խորտակել զգաւազան ամբարտաւանութեան քո:- 148. Տեղեկանայր և զայն ևս ըստ իւրաքանչիւր գնդից, զքաջացն և զկորովացն պատերազմողաց ըստ իւրաքանչիւր անուանց – 198. Քանզի վաղիւ առաւօտուն ցուցանեմ ձեզ փիղս վառեալս, և ի վերայ հզօր սպառազէնս ի քաջաց – 138. քաջքն խիզախէին, /208/ սաղարքն կանչէին, նահատակքն գոչէին – 210. և քաջն Վահան_Արծրունի ընդ նմա նիզակակցեալ՝ մեռանին ի միասին քաջքն և ընտիրքն, մեծ նահատակք Վարդան և Վահան – 128. յորոյ վերայ կալեալ և կանչեալ քաջն Վարդան իբրև զառիւծ, իբրև զկորիւն առիւծու, և առ ուժոյ և երագութեան ձեռինն ի վերայ ձգեալ զմիողնին՝ յերկուս կտրէ զՇաւասպն: - 126.

ՔԱՋԱԲԱՆ - իսկ որպէս գրեալ հաստատեալ կայ հաւատարմապէս վարդապետացս քաջաբան և լի իմաստութեամբ շարագրածք հրաշափառագոյնք: - 122.

ՔԱՋԱԳՈՅՆ - այլ նա ոչ տայր տեղի բանից նորա, քանզի քաջագոյնս գիտէր զբարս նորա խաբեբայս: - 278. Իսկ իշխանն Աշոտ և իշխանն Մոկաց և զօրքն Անձաւացեաց քաջագոյնս արիացան կացին յոտնկայի. – 380. որ և նա քաջագոյն ևս տիրեաց ամենայնի, որոց և Նինոս – 44..

ՔԱՋԱԼԵՐԱԿԱՆ - և ի վերայ նորա շինեաց եկեղեցի զհամբարձմանն ի յերկինս ի Հօրն գահակցել աթոռ, և զերկրորդ գալստեանն գյիշատակ ունելով, որ գալոցն է հայրենի փառօք, ըստ հրեշտակացն առաքեալսն զմխիթարականն և զքաջալերականն աւետիս

նոցա առբերելով։ - 390. որոյ զպատասխանիսն դարձուցեալ լի քաջալերական խրատու յորդորմամբ մարտիրոսական ակնկալութեան պսակաց – 400.

ՔԱՋԱԼԵՐԵԱԼ - Եւ երթայր աներկիւղ համարձակութեամբ, քաջալերեալ ի միտս և խորհուրդս իւր ըստ պնդութեան արութեան իւրոյ քաջ նահատակն Ապումուսէ։ - 288. Եւ զօրացն քաջալերեալ ընթացան յիւրաքանչիւր զէնսն և հեծեալ յընտիրս երիվարացն՝ կացին ի հանդիպոջ և հանդիսացան գումարեցան ի մի վայր և պնդեցան կարգեցան մածեան հոլովեցան յինքեանս – 230.

ՔԱՋԱԼԵՐԵԼ - Բուռն հարեալ սպարապետն զձեռանէ նորա և հանեալ արտաքս, քաջալերելով լինել առանց /344/ երկիւղի. – 346. Եւ Խոռեմայ առեալ զթագաւորութիւնն՝ յաւուր միում զգեցեալ էր հանդերձ թագաւորական և հեծեալ յերիվար արքունի, և շրջէր ի մէջ ամենայն զօրացն իւրոց, ցուցանել զինքն և քաջալերել զզօրսն. – 154.

ՔԱՋԱԼԵՐԻԼ - Եւ արդ քաջալերեցարուք, լերո՛ւք արք. ելէք ի վերայ աշխարհին Հայոց սովով և սրով և գերութեամբ. – 198. Եւ որո՞վ օրինակաւ թևացեալ քաջալերեցաւ առ այս. – 26. և քաջալերեցան դարձեալ ի վերայ գնդին Հայոց, և հարեալ ի հարուածս մեծամեծս: -304.

ՔԱՋԱԼԵՐՈՒԹԻՒՆ - Նոյն ժամայն աճապարեալ Վահանայ խրախուսեալ յԱստուած, ձայն քաջալերութեան առ նախարարսն Հայոց ասէ. – 134.

ՔԱՋԱԽՈՀԵՄ - քանզի էին բարեկամացեալ ընդ միմեանս Կիւրոս և Տիգրան և յամենայնի համանմանքն, համակամքն, միասիրտքն, քաջախոհեմքն և բազմադրուատքն: - 62.

ՔԱՋԱԽՈՐՀՈՒՐԴ - Այս լուր քաջութեան և քաջախորհուրդ զպատերազմացն մղելոյ զյարձակմունս եհաս առ զօրագլուխն Բուխայ. – 308. և անհակառակող հաւանութեամբ հեզահայեաց առ միմեանս սիրոյ յորդորմամբ արտաքոյ վատթարին խոհականաբար մնալով, քաջախորհուրդ առատաբուղխ խաղացմամբ իմաստութեանն զմիմեանս բռնահարելով, զօտարոտին ի բաց վարատելով զբղջախոհութեան անհանճարութիւն՝ զլաւն և զյոյժ օգտակարագոյն ընտրութեամբն գիրկս արկին. – 388. քանզի խորհեցան թագաւորեցուցանել զնա ի վերայ Հայոց, զի էր այր սրտեայ և ուժեղ, քաջախորհուրդ և իմաստնախորհ, խոնարհ, առատաձեռն և զուարթամիտ: - 126.

ՔԱՋԱԿԱՐԾՐԱԳՈՅՆ - բայց իբրև գիտացին զօրքն որ ընդ նմա եկեալ էին զնորա քաջակարծրագոյն արիութիւնն՝ և պատճառանօք այս ինչ այն ինչ դարձեալ դարձան յանցնիւր տեղի: - 310.

ՔԱՋԱՀԱՃՈՅ - ,,և այս ևս քաջահաճոյ թուիցի քեզ, վեհդ և ամենեցուն գիտելիդ. և զի եղիցի ի մէջ քո և Դերենկիդ անկասկած միաւորութիւն՝ զդուստր քո տացես կնութեան Դերենկիդ, տիկնութեան Վասպուրականի,,: - 322.

ՔԱՋԱՀՄՏԱԳՈՅՆ - Այլ և ուսումնական բանգիտութեանն քաջահմտագոյն, անընչասիրութեամբն մեռելագոյն. առատաձեռնութեամբն կենդանագոյն: - 376.

ՔԱՋԱՀՄՏՈՒԹԻՒՆ - Բայց թէ է՞ր աղագաւ պատմութիւն վկայութեան Վահանայ ոչ է գրեալ ի գիրս պատմագրի՝ ստուգապէս առանց յերկուանալոյ ցուցանեմ քում ուսումնասէր քաջահմտութեանդ: - 128.

ՔԱՋԱՄԱՐՏԻԿ - Ապա բարեկամացեալ ընդ Աբգարու թագաւորի Հայոց և ընդ մեծ զօրավարին Խուրանայ Արծրունւոյ՝ յղէ նմա պատարագս և առնու յօգնականութիւն զԽուրէն Արծրունի, զայր իմաստուն և քաջամարտիկ, կորովի յաղեղն և ի զէն և յասպազէն. - 78. և այլքն զաղաղակ բարձեալ ի ձայնարկու աշխարանս՝ խնդրեցին զապրուստ ի սրոյ քաջամարտիկ ախոյանէն Շերեփեանն Թադէոսի: - 400. և ժողովեալ ազգք ազգք յընտրելոց զօրաւորաց արանց քաջամարտկաց, զզօրս Կապուտկացւոց, զՎրաց և զԱղուանից և զԱյրարատեան գազանամարտիկ զանճռռնի զօրսն և զբոլոր բովանդակեալ գունդս զօրացն և զորդիսն Սենեքերիմայ, ամենայարդար պատրաստութեամբ անհուն բազմութեամբ, աճապարել երագել անյապաղ լինել նախ քան զԱշղահակայ դիմեցումն – 62. և ոչ միոյ ումեք կորնչել, բայց ի միոջէ ումեմնէ, որում /գրքում՝ որուն/ անուն Աշխէթ ճանաչէր, այր պերճ և անուանի ի զօրուն քաջամարտիկ, ունելով ընդ ինքեան գունդ հարուստ /270/ իբրև ծով առելոյ զօրավարաց. – 272. Եւ տայր նմա զօր կայսերական

յօգնականութիւն, և զՅովհան պատրիկ ի Հայոց կողմանէ, և զՆերսէս ստրատեղատ յԱսիւրոց, և զՄուշեղ այր քաջամարտիկ և հզօր զօրութեամբ, և զամենայն զօրս Յունաց և Հայոց, Վրաց և Աղուանից – 138. իսկ թագաւորն Մարկիանոս ընկալաւ զնոսա սիրով ի խաղաղութեան, մեծաշուք պատուով ի բարձ և ի պատիւ յառաջ ածեալ, իբրև զքաջամարտիկ ախոյեանս - 132. Շինեաց և եկեղեցի մի յԱմրական քարանձաւի, ի կատար քարանձաւին, յանուն քաջամարտիկ զօրավարին սրբոյն Գէորգեայ - 390. որ մեծաւ ախորժանօք յանգուցանէ առ ինքն զնոսա իբրև արս պատուաւորս և քաջամարտիկս զօրաւոր զօրութեամբ, և մանաւանդ զի բազում անգամ զանուն յաղթութեան ստացեալ ունէին: - 366. որոց Շերեփայ որդիք անուանէին, ի յԱկէացի տոհմէ, քաջամարտիկք և հմուտք պատերազմողական յարդարմանց – 362.

ՔԱՋԱՄԱՐՏՈՒԹԻՒՆ - Եւ անդ Վահան Արծրունի խոյակապ և յականաւոր քաջամարտութեամբ ընդ սրբոյն Վարդանայ ճակատ առ ճակատ վառեալ զպատերազմն, իբրև հուր ընդ եղէգն ճեմելով ի մէջ քաջ ախոյեանացն Պարսից: - 128.

ՔԱՋԱՅԱՅՏ - Այլ զմեզ գիտես ո՛վ ոք եմք և ուստի՛ և յումմէ, և թէ զի՛նչ անուն է մեր՝ կարի քաջայայտ է քեզ - 242. Եւ եղև յելանել նախարարացն Հայոց յերեսաց ամիրային՝ մնայ առ նմա միայն Մուշէղ Մոկաց իշխեցողն, այր քաջայայտ և բարձրագահ – 344. և սպանանի Գուրգէն իշխան որդի կորապաղատին նենգութեամբ ի զօրագլխացն Ահմաթայ, այր քաջ և երևելի և քաջայայտ ի մէջ Հայաստանեայցս: - 358. Եւ փոխանակ նորա թագաւորէ Սմբատ որդի Աշոտի, այր քաջայայտ և հանճարեղագոյն, լի և առոյգ յամենայն իրողութիւնս՝ որ ինչ ընդ երկրաւս համառօտաբար լրութիւն պատկանաբար պիտանան, հաճոյ Աստուծոյ և ընտիր մարդկան: - 356. Ի սորա ժամանակս տիրէր Վասպուրական աշխարհիս Աշոտ ի տանէն Արծրունեաց, այր քաջայայտ և ճոխ ի բարձրագոյնս. – 170.

ՔԱՋԱՅԱՐՄԱՐԱԳՈՅՆ - Որկեն և եղեցանն առ նորա բերեալ բացայայտ ի խորհուրդ տապանին, ի Փռիւգացւոց ապարասանութենէ ի մեզ ճախրեալ ապրուստն. ի տունն Աստուծոյ զընթացսն քաջայարմարագոյն հաւատով բերեալ: - 396.

ՔԱՋԱՆՈՒՆՈՒԹԻՒՆ - և առեալ զյաղթութեանն քաջանուանութիւն, առաւել զհանճարեղութեանն խոհեմութիւն՝ յառաջանայր ի գահ, ի բարձ և ի պարգև - 72. մտեալ Վահան աղերսէր համոզէր՝ մի կալ մնալ, մինչ զքաջանուանութիւնն ընդ վատասրտութիւն կարծել յոմանց խառնել, թէպէտ և անկարծ վարկանէր զկեղակարծն: - 328.

ՔԱՋԱՊԷՍ - ,,զգոյշ լեր, արիաբար մարտեաց, քաջապէս վառեաց, Քրիստոսի զինուորեաց: - 318. Արշակ տուեալ պատերազմ ընդ Մակեդոնացիսն՝ և անդ Կիւրոս քաջապէս արիացեալ առաւելանայր ի գործ պատերազմին. – 72. Բայց տէր Ապուջափր և որ ընդ նմա՝ քաջապէս մարտեան ընդ այլազգիսն և առին: - 306. ճակատ առ ճակատու ձգին խումբ և անհնարին խառնուրդ. և մարտուցեալ ընդ միմեանս յայգուէ մինչև ընդ երեկս քաջապէս - 140. որ յետուստ՝ մոլի բռնաւոր, որ և զՏրովական դժուարամարտիկ իրս քաջապէս և կարողաբար վանեալ՝ աստուած ի նոցանէ ասացաւ, նա և ոչ աշխարհակալին Աղէքսանդրի Մակեդոնացւոյ - 36. որպէս ցուցանեն յիշատակարանքն առաջնոց պատմագրաց, զաւերումն Հայոց և զյաճախել նեղութեանցն և զանթիւ բազմութիւն վկայից, որք վասն Քրիստոսի նահատակեցան, և զքաջապէս արիանալ սրբոց քահանայիցն – 128. Քաջապէս մարտուցեալ Գուրգէն եղբայր իշխանին և Վահան Հաւնունի՝ առին անուն յաղթութեան, անցուցանելով ընդ սուր զկողմն թշնամեացն. – 178.

ՔԱՋԱՍՐՏԱԳՈՅՆ - Եւ ինքն /302/ անցեալ գնայր առ իշխանիկն ի յամուրն Աշխարհաբերդն կոչեցեալ. և անտի արիաբար քաջասրտագոյն դիմացուածով ելեալ գնաց դարձեալ առ սպարապետն Սմբատ: - 304. և դիմեցին քաջասրտագոյնս ի վերայ սուսերամերկք զինեալք ի մէջ ամբոխին, Արտաւազդ և Վասակ Մամիկոնեանք - 98. Եւ զի հուպ առ հուպ են խառն աշխարհք երկոցունցն, և քաղաքն ի հովտաձև դաշտին՝ նպաստաւորէր խոշոշ վիրագին քաջասրտագոյնս լինել: - 352. Եւս քաջասրտագոյն Շաւասպ Արծրունի, խաղս ձիընթացիկ արշաւանաց գնդակացն՝ զհետ մտրակեալ հանէ ի նմանէ զգնդակն բազում

անգամ ասելով – 114. զի մի քաջասրտագոյն կարծիցի Մարն քան զՀայկազնեայն: - 62. մանաւանդ/370/ թէ նախախնամող և պահպանական աջն Քրիստոսի հովանաւորեալ առ ապրուստ հրածին կարկտաբեր հասեալ կորստական դիպուածին, օգնութիւն հասեալ յԱստուծոյ՝ քաջասրտագոյնս զնա գործեաց և շութափեալ զնա ի ժանեաց գազանին – 372. Նորա խորհեալ հաստատնագոյնս վասն Ապումրուանայ՝ քաջասրտագոյնս լինել ի սպանումն. – 368.

ՔԱՋԱՍՐՏԱՊԷՍ - Երրորդ վասն արիութեան քաջութեանն, արծուաբար քաջասրտապէս խիզախութեանցն ի մարտս պատերազմացն՝ յարծուիս առակեցին զնոսա: - 72.

ՔԱՋԱՍՐՏՈՒԹԻՒՆ - Բայց Գուրգէն կասկած ունելով յԱշոտէ, թէ գուցէ իբրև զապստամբէ ումեմնէ զեկուցանիցէ զնմանէ առաջնորդին Տաճկաց՝ ել գնաց կեալ շրջաբերական յեղափոխմամբ, արիական քաջասրտութեամբ, սիրեցեալ ընդ բնաւ աշխարհաց: - 322. Ընդ որ սքանչացեալ ընդ քաջասրտութիւնն և ընդ իմաստուն բանակարգութիւնն Պտղոմէի և Սելևկեայ զօրագլխացն Աղէքսանդրու՝ խնդրեցին պարգև ի թագաւորէն զԱսուդ. - 70. Իսկ զՎահազն Հայկազնեայ … կացուցանեն ի դրան արքունի, յառաջանալ ի գործ պատերազմին մեծաւ աշխատութեամբ՝ կամ մեռանել ի սրոյ թշնամեաց դիպելոց, կամ յաղթել քաջասրտութեամբ: - 70. որոց թողեալ զգործ պատերազմի ամրոցին՝ դարձաւ գնաց աներկիւղ քաջասրտութեամբ ընդդէմ նորա օժնդակ զօրու Գուրգէնի – 334.

ՔԱՋԱՎԱՅԵԼՉԱԳՈՅՆ - քաջավայելչագոյնս զթագաւորութեանն կատարելագործեալ զժամանակն, Ե ամ յիշխանական ճոխութեան, ԻԵ ամ յիշխանաց իշխանական պետութեանն, Դ ամ ի թագակապ շքեղութեանն. – 356.

ՔԱՋԱՎԱՅԵԼՉԱՊԷՍ - Եւ դադարումն լինէր յաւուրս սորա հինից և ասպատակաց ի վերայ երկրիս, և քաջավայելչապէս բարեձևանայր կարգ սրբոյ եկեղեցւոյ Քրիստոսի, և երկիւղ և կասկած և ոչ ուստեք: - 338.

ՔԱՋԱՏՈՀՄԻԿ - և եկեալ ի մի վայր Գագիկ և Գուրգէն եղբարք համահարք և միոյ մօր ծնունդք, յերկուց քաջատոհմիկ գահակալութենէ Սենէքարիմայ և Դաւթի – 388. Է՞ր աղագաւ կամ վասն ո՞յր պատճառանաց. զի ի քաջէն իմմէ և ի մեծ իշխանէն, ի քաջատոհմիկ և ի բարեփառ գլխոյն իմմէ զրկեալ լինիմ: - 384. Յաւէտ խրախճանութեամբ բուռն հարկանել ախորժելի է ինձ զպատմութենէ քաջատոհմիկ և բարեփառ բարեյաղթ նահատակէն , զԳուրգինայ ասեմ – 300.

ՔԱՋ ԱՐԱՆՑ - Եւ յետ սակաւ աւուրց վախճան առեալ կենաց նորա, ձիոյ խրոխտացելոյ զանձն ամբերթեալ ելոյծ ի կենաց զքաջաբանցն /հայկազյան բառարանում այս բառը տրված է անջատ գրութբամբ՝ քաջ արանց. Տե՛ս ՔԱՋ/ զմեծն տերանց զքաջ զօրավարն և զզօրագլուխն Հայոց մեծաց: - 364.

ՔԱՋԱՐՈՒԹԻՒՆ - զոր առաջնոցն մատենագրեալ դրոշմեալ կայ ի գիրս ընդ ժամանակս ժամանակս սոցա քաջարութիւնք և արժանաւորք յոլովագունի և մեծամեծաց գովութեանց: - 96.

ՔԱՋԲԵՐՈՒՆԻ - Փութանակի և վաղվաղակի իւրաքանչիւր զօրօք անդր հասանէին … և այլք ի նախարարացն Վասպուրական իշխանին, Սմբատ Ապահունի, Գրիգոր Քաջբերունի, Վահան Հաւնունի, սեպուհն Դաւիթ, Գազրիկն Ապուհարազ, Թոդորոս Վարազն, Խոսրով Վահևունի, Խոսրով Ակեացի, Վարդան Գաբայեղէն, Սմբատ Մարացեան, սեպուհ մի Սահակ, Պատրիկն Անձևացի, Գորգ Հարմացի, Դաւիթ Գունդսաղար. – 174.

ՔԱՋՈՒԹԻՒՆ - Այլ թէպէտ զայս ախորժելով լսէր Պտղոմէոս առ լաւութեան քաջութեան առնն՝ սակայն յայտնել ոչ զօրէր Աղէքսանդրի – 70. այլ և ոչ զծիծաղականս նոցա համբաւեալ քաջութիւն, որպէս կարծեն՝ առանց եպերանաց անցից զխելագարութեամբքն: - 36. Այս լուր քաջութեան և քաջախորհուրդ զպատերազմացն մղելոյ զյարձակմունս եհաս առ զօրագլուխն Բուխայ. – 308. արդ հաճոյ թուիցի քեզ, քաջ զօրավար, զսորայս գործեցեալ քաջութիւն ի վերայ զօրացն Յունաց,,: - 304. Բայց նոքա քանզի ապաստան լեալ յանկասկածելի յամուրս և ի բազմութիւն զօրացն և ի քաջութիւն արանց պատերազմողաց՝ և ո՛չ առ փոքր մի խոնարհեցան ի բանս նորա կամ ետուն տեղի

պատասխանւոյ. – 274. բեկումն սրտի, քան թէ քաջութիւն պնդութեան ի ներքս դիմեն. – 384. գրէթէ անցուցանէր զանցուցանէր զքաջութեամբքն Արշակայ Պարթևի, ընդ քաջացն Քուշանաց, Մարաց և Ելիմացւոց. – 72. դարձեալ զի թէ և գեցաւ ևս՝ այլ քաջութիւնք արութեանն Նինոսի, ըստ օրինակի Բէլայ, առաւել ամբարձաւ անձնասէր ամբարտաւանութեամբ – 44. Երրորդ վասն արիութեան քաջութեանն, արծուաբար քաջասրտապէս խիզախութեանցն ի մարտս պատերազմացն՝ յարծուիս առակեցին զնոսա: - 72. և անդ բազում իրս քաջութեան ցուցեալ յախոյանայարձակ պատերազմունսն – 84. Եւ առ վատացի քաջութեան աղագս զդէմ տանին բերեալ ասէ, ,,զվատ երկիւղ ապրեցուցանէ,,: - 354. և բացեալ զտուն դիւանապահ մատենիցն և գտեալ զսերունդս Սենեքերիմայ, և զգործս նոցա զմիոյ միոյ ուրուք յանուանէ զառն իւրաքանչիւր զանուն և զքաջութիւն իւր, նոյնպէս և զայլն ամենայն ըստ տոհմից տեղեաց - 74. և ելեալ ի վերայ Պարսկահայոց գոեհացն և անդ բազում քաջութիւն նահատակութեան ցուցեալ՝ յոլովից գերելոցն ընդարձակեաց, հանելով /400/ և զաւարն ի ձեռաց նոցա – 402. և զանուն քաջութեան քո քեզէն կորուսանես, որով ամենայն աշխարհ զարհուրեալ դողաց և ոչ ոք եկաց ընդդէմ քո – 282. Եւ զարմանք կալան զամենայն բազմութիւնն ի վերայ պնդութեան սրտին և զօրութեան ուժոյն և քաջութեան նահատակութեանն, զոր գործեաց երանելին Գէորգ. – 268. և ինքն գնացեալ ի Միջագետս՝ հնազանդեցուցանէր ինքեան քաջութեամբ զԵմաթ և զԱրբաթ և զամենայն կողմանս Դամասկոսի և Կիւլիկեայ և զայլ բազումս: - 60. և մերկ կապուտ կողոպուտ առնէր զնոսա, մինչև զարմանալ զօրավարին ընդ սորայս քաջութիւն՝ գրէ առ Միքայէլ թագաւորն Յունաց զեկուցանելով վասն նորա: - 302. Եւ յարձակեալ քաջութեամբ և արիական ձայնարկութեամբ՝ դիմէր ի վերայ թշնամեացն. – 178. և ոչ ըստ տեղիս տեղիս ցուցանէին զհանդէս մարտիցն և զյաղթութեանն քաջութիւն, այլ բոլորովիմբ ամենայն ուրեք ախոյեանայարձակ սլացմամբ ընթանայր. – 312. և որոց ոչ գործք ինչ և ոչ քաջութիւն ուրուք յայտ յանդիման ցուցանիւր. – 68. և պատմեցին նմա՝ զոր ինչ գործեցին զիրս քաջութեանն: - 222. և քաջութեամբ վանեաց ամս ԾԲ - 44. զի և զբազումս պատերազմեալ պէսպէս մարտիւք, և ոչ ինչ կարացեալ ստնանել անմարտնչելի ամրոցացն և քաջութիւն արանցն որ ի նմա՝ ողոքական բանիւք կոչէր ի հաւանութիւն: - 278. զի մի /68/ վատութիւն քան զքաջութիւն ճոխասցի, որ կանանցաբարոյիցն քաջ յարմարի, թէպէտ և յարիւն և յապաժոյժ զզօրսն կենացն առնուցուն,,: - 70. զծանականաց և զամօթալեաց իրս՝ քաջութեան ասել - 38. զոր և անդրի ոսկեղէն կանգնեալ թագաւորին Բաբելացւոց՝ արձան քաջութեան առ ի յիշատակ: - 38. Իսկ եթէ վատացն՝ արութի՛ւն զերկիւղն համարելի է, ո՞րչափ ևս առաւել քաջացն քաջութիւն ստացեալ երկիւղիւն պատսպարել իւրեանց: - 354. մեղք մեր արարին և ոչ քաջութիւն ձեր: - 144. յիշեցուցանէր զոր ինչ գործեաց ընդ Աշոտ և ընդ աշխարհ նորա, յուշ առնէր և զքաջութիւն արիութեան նորա – 268. յորում ոչ սակաւ քաջութիւն նահատակութեան զօրացն Հայոց, որ ի զարմանս կրթեաց զբովանդակ զօրս Պարսից բարբարոսօքն հանդերձ: - 66. Նորա ծաղր արարեալ զնովաւ՝ ընտրեաց զկապանս և զբանդ, նաև զմահ քաջութեամբ վասն անուանն Քրիստոսի, քան զկեանս խղճիւ: - 318. Նոցա գեղեցիկ խորհուրդ ի մէջ առեալ՝ ընտրեցին զմահ քաջութեամբ քան զկեանս խղճիւ: - 222. որոց անուանք քաջութեան իւրեանց հռչակ հարկանէր ընդ ծագս տիեզերաց – 242. որոց յիշատակ նոցա եղիցի բազմաց նպաստ յարութիւն քաջութեան և ի զօրութիւն անարեանցն և ի յորդորումն քաջ նահատակացն: - 202. ուշ եղեալ ուժեղութեամբ և քաջութեամբ սրտիւ ընդդիմանալ, մանաւանդ ի Ծանարացն զնա տեսեալ ի պարտութիւն մատնեալ և յաղթահարեալ: - 276. Վահրամ ոմն Մեհրեւանդակ … այր հզօր զօրութեամբ՝ քաջութեամբ իւրով եհար զզօրս Թետալացւոց – 136.

ՔԱՌԱԾՐԱԳԻԾ - Եւ ոսկեգործ ականակապ կազմեալ՝ պատեաց ոսկով զփրկագործ սուրբ խաչն, և ընդելուզեալ մարգարտով զարդարեաց զսխրագործ փայտն, հիւսնեալ ի մէջ անուշահոտ փայտից, թողեալ մասն ինչ արտաքս ոսկեպատ պահարանին, յառաջնում

իւրոյ քառածրագիծ խաչակերտ փայտեղէն զզրոցկանն: - 394. Նշանն քրիստոսեան քառածրագիծ փայտիւ արուեստագործեալ ճարտարապետի ումեմն հիւսնեալ – 378.

ՔԱՌԱՍՆՈՐԴՔ - զորոյ զպաղատանս ոչ անտես արարեալ Քրիստոսի՝ ներէ նմա հանել ի գլուխ զսուրբ քառասնորդսն, խաչակից լինելով Քրիստոսի, մինչև ի պարտ զատկին – 254.

ՔԱՌԱՍՈՒՆ - երկոտասան արդու ալեր և քառասուն ոչխար ի միում գիշերի ուտել Բէլայ. – 38. Որ և այլոց կարող տուիչ լինել ժամանակաց, որպէս և արանցն որ յառաջ քան զջրհեղեղն քառասուն ևս աւելի բիւրս ամաց և դարս փոխադրական այլաձևս և խժականս, շարս և ներս և սոսս - 38.

ՔԱՌԱՍՈՒՆ ՀԱՋԱՐ - Առ որ զբարեկամութիւնն ողջ պահելով յղէ զնոյն Քսերքսէս և զԱրշէզ որդի նորուն քառասուն հազարաւ. – 66.

ՔԱՐ - Այլ և պատկանաբար իմաստութեամբ պատրաստեաց ջրմուղ ներքսագոյն երկրի ի քարանց տաշելոյ փողոցս գնացից ջրոյն կազմեալ – 392. և կերիցեն քարինք և փայտք և այլ կաիք երկաթեղէնք, որպէս և զայն որ ի նմայն պատարագի մարմին և արիւն որդւոյն Աստուծոյ, մանաւանդ թէ ինքն իսկ ճշմարտապէս որդին Աստուծոյ. – 396. և ետուն ի սուրբ եկեղեցին Դ ագարակս. զվանքն Փշոց և զագարակն Ահավանք, յանդիման եկեղեցւոյն որ ի կղզին, և զքարն Մանակերտ, որ է հանդէպ հարաւոյ կուսէ, և զԲերկրի և այլ բազում տեղիս – 356. և կանգնեցին պատնէշ և կուտեցին քարինս և կանգնեցին մեքենայս և կացին ի պատրաստութեան: - 280. և նախ քան ընդ պատժական տանջանաւոր խոշտանգանօք արկանելն զմեզ՝ բանիւք քո իբրև քարամբք հարեալ զմեզ՝ շտապ տագնապի ի վերայ արկանես թափել զոգիս մեր: - 242. և ռամիկքն ամբոխին ոմանք ի կողմանէ մխեցին զձեռս ի գործ պատերազմին քարամբք: - 232. և տեսեալ զուարակ մի՝ գողացաւ և տարեալ մեկուսի յազեաց զնա և կարկառեալ քարամբք՝ մնայր երեկոյինն – 46. Եւ քանդեն աւերեն զմեհեանն և յատակեալ զտեղին՝ շինեն նորին քարամբք զմեծ եկեղեցին զսուրբ Գրիգորն ի Բլուր տեղւոջն – 126. զոր ժողովեալ պահեալ և կնքեալ ունէր յօր հատուցման վրիժուց՝ հատուցանել մեզ ըստ գործս մեր, ի հարկանել զքարի զոտս մեր. – 196. Իսկ շուրջ զբերդանման ապարանօքն՝ պարսպէ զբլուրն շուրջանակի յապառաժուտ տաշելոց քարանց, քաղաք ամենալից զհովիտն ամրացուցանելով: - 86. հարուստ մի հեռի զքարանցն տաշելոյ զհոլովումն բերելով առ տրամադրութիւն կոչարանին իբրև ասպարիսօք երիւք, զբացագոյնն մօտագոյնս գործելով սայլիցն հոլովմամբ. – 396. որ ի բախմանէ քարի և երկաթոյ կայծակունք արտաթափին, այլ և ի փայտից ընդ միմեանս յիրար շփելոյ, որպէս և անուոյ բնաւորեցաւ լինել, որ ի սաստիկ շրջագայութենէ սայլիցն բազում անգամ և առեղք փայտիցն վառմամբ հրոյ հրդեհին: - 52. որջացեալ ի մուտս կոյս յափն ծովուն ի փապար յարձանախիտ քարին և մանրեալ զարծաթեղէնն ընդ փայտեղինին. – 378. սոցա ի թիկունս հասեալ և հովիւ մի՝ պարսատկաւ քարինս ի վերայ արկանէին. – 202. ՎԽսպառ ստորև ամրականին ի գոգաձև տեղւոջն … շինեաց եկեղեցի հրաշագործ հրաշազան յօրինուածով եկեղեցի ի տաշեալ քարանց ի Մանազաւեան քաղաքին ի Վանտոսպ, և հիմնեցուցեալ յանուն սրբոյն Սիօնի, որ ի սուրբ քաղաքն Երուսաղէմ. – 390. քարինս տաշահոս հոլովեալ ի նիւթ եկեղեցւոյն ի Մանազաւեանն նահանգէ ընդ Բզնունական ծովն բերեալ մատուցանէ առ կատարումն հրաշագեղ դիտանոցին սրբոյն Սիօնի, այլովքն սրբական անուանակոչութեամբ տեղեաց տնտեսականին բանին Աստուծոյ մարդ եղելոյ: - 396.

